



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**



Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>





ORIENTAL INSTITUTE  
LIBRARY




OXFORD UNIVERSITY

FOL. 694.45

ALI

694.45



**305033588Z**











$\frac{68}{243}$  Sisayev

**ՄԻՍԱԿԱՆ**





# Մ Ի Ս Ա Կ Ա Ն



ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս Ի Ի Ն Ե Ա Ց Ա Շ Խ Ա Ր Հ Ի



Ի Ջ. ՂԵԻՈՆԴԵԱՅ Մ. ԱԼԻՇԱՆ

Մ. ՄԻԻԹԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՄԻԻԹԱՐԱՑ ՎԱՆՍ. Ի Ս. ՂԱԶԱՐ


1893





14 MAR 1968

# Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն



ԱՆՉի զծանօթս երկոցուն յառաջ քան զայս տեղագրութեանց աշխարհաց Հայոց՝ համարիմ խնդրողս երրորդիս այսորիկ, ի յառաջաբան նոցին՝ եւ մանաւանդ երկրորդին (Այրարատայ) յուշ առնեմ՝ ակն արկանել, եթէ կամիցին, առ ի գիտել զդիտումն գրողիս եւ զօրէնս կամ զհանգամանս գրուածոյս, եւ մի՛ երկրորդել ինձ զնոյնս. մանաւանդ զի եւ հարկ ժամանակիս զգուշութիւն պահանջէ եւ լուռութիւն. զոր եւ ես յօժարութեամբ համբուրեմ. առ որ՝ եւ շրջան կենաց խոնարհեալ ի բոլորումն՝ իւրովք անհրաժարելի սայթաքանօք, ոչ նուազ յարտաքնոցն՝ ի ներքուստ յորդորէ։ Չայս միայն ծանուցից. զի զոր ի

նախայիշեալ յառաջաբանի սնդ ասէի՝ ըղծացեալ տեղագրել մանրամասին զքսանեսին եւս Աշխարհս Մեծաց եւ Փոքուն Հայոց, վստ ուրեմն՝ երեսուն եւ աւելի ամօք յառաջ՝ արարեալ իսկ էի չափաւոր իմն քանակաւ, զերեք մասն (ի չորից), ըստ այնր ժամանակի գիտութեանս եւ կամաց. յետ որոյ աճելով աճեցին ծանօթութիւնք աշխարհագիտականք՝ տեղագրութեամբ, պատկերագրութեամբ, հնաքննութեամբ, եւ սյլն. յորմէ յայտ է՝ զի առ չափով նորոց գրելոցս (Սիսուանայ, Այրարատայ եւ Սիսականի) համառօտք եւ նուագունք էին նախագրեալքն, միահամուռ իբրեւ զմի եւ կէս հատորոցս այսոցիկ. եւ ի դէպ էր ըստ իւրաքանչիւր արժանեաց՝ աճեցուցանել զնոսին, եթէ կամք էին ի չափ երեցունցս հասուցանել, զմասն թերեւս յողջոյն հատոր մի. զայլս երկուս երկուս կամ երիս՝ ամփոփելով ի միում. զի ոչ ամենայն աշխարհք Հայոց ընդարձակք եւ ծանօթք են ի պատմութեան՝ որպէս սոքա, կամ Գուգարք, Տուրուբերան եւ Վասպուրական, այլ գոն եւ անձուկք եւ սակաւածանօթք կամ ոչ հայաբունք, որպէս, Փայտակարանն եւ Պարսկահայք, մասամբ եւ Արցախ եւ Ուտի, եւ մեծ մասն հարաւային Հայոց, Աղձնիք, Կործայք եւ Մոկք. Թող եւ զաշխարհս Փոքուն Հայոց, որք թէպէտ եւ յոյժ հետաքննականք իցեն՝ այլ խառն՝ եւ ուրեք առաւելեալ օտարագգի բնակութեամբ, եւ յորս չէր իմ ձեռն արկեալ, բայց միայն յեզերական նահանգս Պոնտոսի։ Այսպէս գիտասցեն յետամնացք իմ, որոց թէ աւանդեսցի հին գրածն այն, թերակատար գոլ եւ ոչ անթերի. եւ եթէ զայցէ ինչ նոցա ի պէտս եւ թէ ոչ՝ լիցի ըստ կամս նոցա, ոչ եւս է ինձ փոյթ։

Իսկ նորընծայս այս ՍԻՍԻԱԿԱՆ կամ Տեղագրութիւն ՍԻՒՆԵԱՅ ԱՇԻՍՏՆԻ, մի ի *քաղաքակրթական* ի հնգետասան հին աշխարհս մեր, (որպէս յուսամ հաւաստել ստորագրութեամբս), բովանդակեալ տասն ամալ յառաջ՝ ուղղեցաւ եւ յաւելաւ ցվերջ տպագրութեանն, գիտելեօք նորոց ճանապարհագրութեանց եւ պատկերագրութեանց՝ որ ի ձեռն ազգայնոց եւ որ օտարաց։ Ի յետնոցս յայսցանէ՝ հնոց եւ նորոց՝ քաղեալ է իմ ինչ ինչ, այլ ոչ բազում ինչ. վասն որոյ եւ ոչ կարգեցի ցանկ հեղինակաց՝ որպէս յԱյրարատն, ուր կարեն գտանել խնդրողք եւ զմակագիր գործոց նոցին, զորոց ուրեք ուրեք նշանակեմ եւ ի ստորոտս լշից այսր մատենի՝ զանուանս եւ զգիրս, զանց զբազմօք եւս արարեալ նշանակելովք յիմում բնագրիս, զի ոչ համարեցայ ի պէտս կամ դիւրագիւտ բազմաց. կամաւ յանձն առեալ զայս թերութիւն, եթէ այսպէս դատեսցի ի մանրախնդիր եւ տարրույծ բանասիրաց ոմանց, քան բազմախուռն անուամբք, թուօք եւ չափովք ճապարհել զլուսանցս եւ զքղանցս մատենին. սակայն, որպէս ախորժէ ոք այնպէս վարկցի. սոյնպէս եւ զամենայն գրած իմ եւ վարկած, եթէ յայսմ եւ եթէ յայլ երկասիրութիւնս. շատ է թէ եւ իւր վարկածն ընդունելի իցէ ողջախոհ գիտնոց, եւ ոչ ըստ իւր ուրոյն կարծեաց եւ քմաց, որպէս յաճախեալ իմն երեւի արդ առ մերայինս, յաջ եւ յահեակ դատել եւ դատափետել, եւ քան զհեղինակն հեղինակագոյն պանծալ. կամ զսխալանս ինչ նորուն ցուցանելով՝ գիտնագոյն եւ ծայրագոյն։ Քննադատութիւն՝ զգուշագոյն է ի գիտութիւնս, նա եւ գիտութեանց գիտութիւն։ Այլ ես, որպէս յառաջնում քան զայս մատենի, ինքնին խոստովանիմ, եւ ամենայն հմուտ արգահատէ, զի չիք ի գիտութիւնս փոփոխական քան զաշխարհագրութիւն եւ դժուարին ի ճշտել եւ ճշգրտել զբնականն եւ զբնակչական. մանաւանդ ուր ի միում (որպէս ի սմին ի Սիսականի) ոչ ընդարձակ աշխարհի կամ նահանգի՝ իբրեւ 3000 տեղիք իցեն յիջեալք՝ հին եւ նոր, յորոց կարեւորքն եւ ծանօթագոյնք մուծեալ են ի տեղացոյց տախտակին, որ ըստ նիւթական տարածութեանն փոքր է քան զԱյրարատայն եւ զՍիսականայ, այլ հաւասար է նոցին աշխարհագրական չափովն,  $\frac{1}{800,000}$  եւ յանձնութեան անդ իւրում յոլովագոյնս բովանդակէ անուանս, զորս եւ հարկ էր նրբագունիւք զծագրել տառիւք, որ եթէ ոչ ամենեցուն աչաց է դիւրամատոյց, բայց լաւագոյն դատեցաւ՝ առ ի զնոյն զառաջնոց քարտիցն չափ անփոփոխ ունել, զպակիս օգնական ընծուել աչաց, քան ի բաց թօթափել զհնաւանդ եւ զպանծալի անուանս հայութեան, որք յաճախ՝ առ ի չգոյէ այլոյ իրիք յիշատակի նոցուն՝ ինքնին իսկ մէն յիշատակարանք են յաւելտալուք։ Նա զի ըստ բաղդի եւ ըստ անկշիռ երախտեաց պատմչի աշխարհին Սիւնեաց՝ ՕՐԲԵԼԵԱՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, յոգնածիւ քան զայլոց աշխարհաց՝ աւանդեալ են մեզ անուանք տեղեաց սորին. եւ ըստ մեծ եւս բաղդի՝ ոչ սակաւք յայնցանէ ծանօթք են ցարդ եւ դրիւք եւ նովիմք կամ այլայլեալ կոչմամբք, շատից եւս ունելով յիշատակս պատմականս եւ արձանս եւ ձեռակիրոտս, զորովք զանց առնել՝ անհնար էր ինծ եւ աններելի։

Աթոռակալք եւ յաջորդք հեղինակի այնր պատուական մատենի, յաւելեալ են ըստ իւրաքանչիւր ժամանակի՝ ի վերջ գրոցն՝ զթեմս, զգեօսս եւ զազարակս նորուն, հանդերձ չափով եւ համարով հասից նոցին, որ եւ առաւել մասամբ մուծան ի կարգի տեղագրութեանս։ Յետ սոցա՝ յազգայնոցս գրողաց՝ օժանդակք եղեն ինծ ըստ տեղեաց սեղեաց, ԲԲԵԱՇՄ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Պատմութիւն անցից իւրոց և Նատյր Շահի. — Պատմութիւնն Ղափանցոց կամ Դարի Բեկի, զորոյ հեղինակ անճանօթ՝ ծանուցեալ է իմ (յէջ 301). — ՄԱՍԻԿԻ Գ. ԿԻՄԻՆԵԱՆՍԻՈՅ Սիսական վանից Պատմութիւն, տպագրեալ յԷջմիածին յամի 1871. — ԱՐՏԵԱՅԵՍ Գ. այժմ Եպիսկոպոսի ՍԵՐԱՔԵԱՆ՝ Երևան կամ Հնոքիւն Հայրենեաց, 1872. — ՄԵՐՈՎԳ արքեպիսկոպոս ՍԵՐԱՅԵԱՆ, ծանօթաբանութեամբ հայրենեացն եւ ազգատոհմին. — սակաւ ինչ եւ վաղածանօթ տեղագրութիւնք ՇԱԽԹՈՒՆԵԱՆ եւ ՋԱԼԵԱՆ եւ պիսկոպոսաց։ — Սոցին ատոռակից ՄԱՍԿ Եպիսկոպոս Լուսարար Երուսաղեմի վանաց Ս. Յակովբեանց՝ այլ ազգ ձեռնտու եղել ինծ, փոքր ի շատէ, պատմական յիշատակարանօք ձեռագիր մատենից, էր որ իմ խնդրով եւ էր որ իւրով ինքնայօժար նուիրմամբ. վասն որոյ եւ յայտնապէս շնորհ ունիմ նմա եւ կայցէ մատենանս ի ձեռնն նորա։ — Բայց քան զամենայն ազգային գրուած եւ գրող՝ պատուական եղել ինծ Պր. ԳԱՐԻԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ գիտնական բժիշկ, ՔԱՋԲԵՐՈՒՆԻ անուամբ հրատարակող Ճանապարհորդական նկատողութեանց իւրոց, յԱրարատ օրագրի էջ

միաճիւի. ոչ միայն զի հաճոյ էր ինձ եւ ի պէտս, այլ զի եւ աւագ աջօք քննեալ եւ ոճով եւ ուշով գրեալ քան զայլս ի համազգեաց. յորս՝ յաւել ինձ եւ նամակաւ հարցեալ՝ գիտելիս ինչ-վասն որոյ եւ ընկալցի արդ լիուլի զշնորհակալիս իմ, եւ ի ժամու՝ գրովանդակողն յինքեան զօժանդակութիւն իւր: Ըղծալի էր յոյժ, եւ աւանդ, զի չէր նմա գործի կամ առ նմա անձն Լուսանկար, որպէս Պ. ՄԱՏԹԷՆՍ ՓԱՓԱՋԵԱՆ. սա՝ յայսմ մասին՝ (գարդու եւ ակներեւ ցուցակութեան տեղագրելոցս վայրաց) երախտաւոր քան զայլս է. 50 եւ աւելի պատկերահանութիւնք նուրա՝ երեւին ի կարգի գրոցս, յանուանէ նշանակեալք եւ ի ցանկին. յորս է ինչ՝ զի ըստ իւրոց կամաց՝ շրջեալ եւ հանեալ էր, եւ է որ ըստ խնդրոյ իմոյ. ընկալցի եւ նա ընդ շնորհակալեացս՝ որպէս երբեմն զդոյզն նուէր քաջալերական, եւ այժմ գրովանդակութիւն տեսարանացն ի Սիւսականիս, ընդ նմին եւ զմաղթանս իմ յառ յապա յաջողութիւն իւր: — Բստ այսմ մասին՝ մարթ էր ինձ յիշել յօտարաց՝ զԾանօթն արդ կովկասաքնակ համազգեաց մերոց՝ զԵՅՆՎԻ ՓՈՒՆԿՄԱՐՈՒՄ ԳՐԱՆԿՄԱՐՈՒՄ, ընդ որում փոխանակեցաք ծանօթութիւնս ինչ, նա ի տեսոյ, ես ի գրոց. որ եւ մինչ չեւ էր հրատարակեալ ի ձեռն տիկնոջ ամուսնոյ իւրոյ զուղեւորութիւն իւր, *À travers l'Arménie Russe* (յօրագրին *Tour du Monde*, Հատ. ԿԱ, 369-416, ԿԲ, 225-288. ԿԳ, 179-224), ետ ինձ քանի ինչ ի լուսատիպ պատկերացն. այլ իբրեւ խնդրեցի ի տպագրողէ գործոյ նորին՝ զերիս ի հրատարակելոցն (զտեսարան Մեղրոյ եւ այլն), տալ իմովսանն փորագրել վասն Սիւսականիս, սա ոչ հաւանեցաւ:

Արդ որ զիարդ եւ է, եթէ ոչ ըստ չափու ըղծիցս եւ ոչ ըստ յուսադրութեան ումանց ի սատարել իւրք, (այլ որպէս յաճախն՝ եւ ոչ իւրք), գէթ ըստ չափու կարողութեանս գլխաւորեալ զյետին զայս երկասիրութիւն տեղագրական Հայաստան կողմանց, ընծայեմ ոչ սոսկ հայրենասիրաց՝ այլ մանաւանդ եւ բանասիրաց, որք կարողք իցնն ոչ միայն հասարակօրէն ընթեռնուլ կամ դիտել զսա իբրեւ զմասն ինչ Հայաստան պատկերի, այլ իբրեւ զմասն՝ որ ընդ նմանեաց այլոց ունիցի եւ սեփական տիպս, եւ ըստ բնութեան երկրին եւ ըստ բնութեան բնակչացն. որպէս անկ իսկ է ակն ունել եւ պահանջել զայս ի միոյ միոյ աշխարհաց կամ նահանգաց՝ որոյ եւ է երկրի եւ հայրենեաց. զի թէպէտ նոյն հող եւ ջուր է ամենայն ուրեք՝ այլ ոչ եւ նոյն բերք եւ բոյսք: Եւ ոչ փոքր եւ վարկպարագի տախտակ պարզէ Սիւսական, տառատպեալ ի համագոյից Հաստչէն, առ քնաքնին եւ հասու տեսանելիս, կոյտ կոյտ կոհակացեալ եւ բրգածեւ բարձամբքն, եւ որակ որակ քարեղէն մետաղական եւ բրածոյ կազմուածովք, որք բազում ինչ ունին ասել եւ ուսուցանել մտացի քննողաց. այլ եւ ի վերին երեսս նայողաց՝ չեն անզանազանք. շատ իցէ ակն մի եւեթ արկանել ընդ չորեսին կողմանս երկրին. եւ ահա յինքն կրթէ հիւսիս՝ հրաշատեսիկ կասլուտակային ծաւալմամբ գեղածիծաղ ծովուն Գեղամայ, ընդարձակագոյն եւ բարձրագոյն քան զգերահամբաւեալ լիճս եւ ծովակս Հելուետիոյ եւ իտալիոյ, եւ հոխագոյն վտառ վտառ ճննդովք համեղամշակ լուղակացն. — հարաւ՝ վակժոյժ սպառաժահոս՝ այլ եւ քերդողաշարժ՝ քարավէժ վագիւք Երասխայ, յոր՝ իբրեւ յըղծալի ծոց մայրական՝ խուռն խայտալով եւ կայսուելով խաղան թափին գետակք եւ վտակք բազմահերձ ծորոց եւ գաւառաց, եւ քամիք լեռանց Դարուայ, եւ աջուցանել երիտասարդացուցանել իմն գոգջիր զանճերանալին զայն այրարատեան մայր եւ մատուռակ արգասու արտորայից եւ հուժկու արանց եւ հզօրեղ եւ հանճարեղ կանանց. որպէս յանդիման արասցէ եւ դոյզն յիշատակ ի բնագրիս (յէջ 7). եւ որպէս, օրինակ իմն, անջինջ եւ անզեղ կան եւ մնան կերպարանք երկրին, նոյն գունակ փոքր ի շատէ եւ բարք բնկացն՝ ի սկզբանէ յայտնութեան նոցին ի պատմութեան մինչեւ ի մերս ժամանակ, ընդ այլեւայլ անկեալ եւ անցեալ իշխանութեամբք տոհմից եւ լեզուաց, այլ զնոյն իշխողական եւ տիրական կրելով ոգի՝ յաւուրս Հայկազնեան եւ Սիւսական նահապետաց, ի նախարարութեան խորխտ տերանց Սիւնեաց, առ նորագոյն հարրստութեամբք Հայոց, մինչեւ կանգնել ինքեանց եւ թագաւորական գահոյս, եւ յես այնր իսկ պերճանալ եւ սիգալ ի համահոգի տոհմս Տաթեւեանց եւ Օրբելեանց, Զուանշէրեանց, Մահեւանեանց եւ Համտունեանց. եւ հուսկ՝ տանուտերութեամբք մէլիքաց Գեղաքունեաց, որք զչորեքհազարամեայ թագաւորս աւուրց Արրամամու եւ Յեսուայ յիշեցուցանեն. — Մեծոգի եւ աշխարհաշէն բարուց նոցին ոչ փոքր նշանակք նշմարին եւ ի գիրս,





ինծ չյառել միանգամ եւ բազում անգամ եւս պշուցեալ աչօք եւ մտօք՝ ի յետինն յայն կենդորն հայոգի հանճարոյ, որ զօղեալ իմն յանծուկ եւ ի զանխուկ խորշ մի լերանց, յանդիման առնէ, յաջմէ անզուգական օժանդակին իւրոյ Երասխայ՝ զերկայնատող ուղտերամակ կարաւանաց, բարձոդս աղխամաղխի բազմաբիւր բեռանց տարուբերեալ մեծերից եւ պայուսակաց ոսկւոյ եւ արծաթոյ, ի վայելս եւ ի գրգանս կենաց իսկ յահեկէն, աւարդ, կուռն ի կուռն տողեալ կանգուն եւ կիսականգուն կոթողք՝ իբրեւ շտեմարանք հասկ հասկ հնծեալ հասակաց. — անտուստ՝ հնարք եւ հայթհայթանք՝ իբրեւ անսպառ բարեկեցութեան, խաժամուժն շարժմամբ եւ խառնախօս աղաղակաւ. աստուստ՝ անիբացբառնալի լսեան մուայոյզ եւ սրտատրոփ անցաւորութեան, սպառման եւ լուռութեան համահարակ մահու. Գերեզմանք մոռացեալք... Այլ օ՛ն անդր, թողեալ իմ զայսոսիկ եւ զայսպիսիս՝ ի հանճար եւ ի հանոյս ընթերցողաց զտեղագրութիւն վայրացս, յետ միանգամ եւս շնորհ ունելոյ վերոյիշեցեալ երախտաւորացն ինծ՝ որպիսի եւ է ծանօթութեամբ, զնոյն շնորհ ունիմ եւ հասարակաց, որոց միանգամ երկամաւ յառաջ կամեցան եւ բաժանորդակից եղեն գրոցս՝ այսքան յապաղելոյ յամբոկ տպագրութեանն, (մասամբ՝ ի սակս ոչ թեթեւ խօթութեան պատահելոյ՝ յորմէ հաճեցաւ Տէր Թափել զիս). այլ եւ Հօր եւ եղբարց կրօնակցաց, ըստ առաջին նուագին պէսպէս օրինակաւ օգնական եղելոց. — յորոց ի վերագոյն եւս ակնարկեալ՝ ի Հեղինակ կամ ի հիմնադիր ուխտիս, որոյ ահա վերջացեալս այս ամ (1893) երկերիւրամեակ է. յղութեանն ի լուսաւորեալ միտսն, ՏԵՕԼԵՄԻ ՏԻՐԱՊՕՐԸ ի ՍԵԼԱՆ կղզւոջ (տ. յէջ 88), յայսր յիշատակէ՝ ըղծամ նմին ինքեան

## ՄԵԾԻ ՄԽԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՅՕՐ



վերագրել պատկառանք՝ զդուզնաքեայս զայս վաստակ, աղերսելով ներողութիւն, եթէ զառանցայ ինչ երբէք ընդ երկար դեգերանօքս ի ստուերական Հայրենիսս, եւ շնորհս՝ արժանաւորելոյ անստուերին եւ անդրժեւոյ ի փոփոխմանց եւ ի յաչաղանաց. ողորմութեամբ յուսոյն իմոյ ՅԻՍՈՒՍԻ եւ ԿՈՒՍՄՄՕՐՆ. որոց՝ երկրպագութեամբ՝ փառք ի կենցաղումս եւ ի յաւիտեանսն:





# ՄԻՍԱԿԱՆ



**Մ**ԵՓԱԿԱՆ տիպը հայկականը ոչ ուրեք՝ բաց Սուրբառատեան բընաշխարհէն՝ այնպէս ճշգրիտ երեւին յերկրի Հայոց, որպէս յաշխարհիս Սիսական. զի թէպէտ և Տուրուքերան կենդրոնագոյն է քան զայլսն և հարուստ ազգային յիշատակօք, այլ Սիւնիք յամառագոյն իմն թուին հանդիսացեալ ի պահուստ ազգային ոգւոյ և տւանդից, յուրվագոյնս ունելով նշխարս և արձանս նախնեաց գրաւորս և անգիրս. և այս իսկ է զարմանաց, զի որ ի վաղ ժամանակս ոչ այնքան սերտ երեւէր յարեալ ընդ համաշխարհական վարչութեան ազգին, սերտագոյն պահեալ է զազգային ոգի. և այս անշուշտ սակս

ազատաւէր բուսոյ բարուց բնակչացն, և զոյգ նմին կորու վոյ քաղութեան. որով և ընդերկարագոյն դիմակալեցին օտարաց բռնութեան, օժանդակս ինքեանց ունելով և զբնական հաստուած և զդէրս երկրի իւրեանց, որպէս յետագայքը ցուցցեն բնական և պատմական ծանօթութիւնք. և որոց գլխաւոր այն, զի յետ վաղ ուրեմն խափանման հնոյ Հայկազնեանն իշխանութեան և անուան՝ յերկրէ անտի զոր կալան Արշակունիքն, և յետ նոցին հարստութեանն բարձման, միայն Սիւնեաց իշխանք կոչին Հայկազունք, առ հարստութեամբ Բագրատունեաց, որպէս և յառաջ և յետ նոցին: Ընդ սմին ոչ աննշանական է և այն, զի աշխարհագրական դրիւքն՝ օտարախառն իմն է երկիր Սիւնեաց. զի թէպէտ ի միոյ կողմանէ փարեալ է հարազատ հայկական գաւառք Այրարատայ և Վասպուրականի, այլ յայլոց կողմանց այլալեզուօք կամ կիսահայովք, եթէ օրէն իցէ այսպէս ասել. որպիսիք են Ուտիացիք ի մասնէ հիւսիսոյ, Արցախայիք՝ յարեւելից կուսէ և մարտպարսացի Ատրպայիկք՝ ի հարաւոյ. թող և զմերձաւորութիւն վրախառն Գուգարաց:

Պարզագոյն եւս կամելով նկատել զդէրս՝ Սիսական նահանգի, հին աշխարհագիր մեր համառօտիւ սահմանագրէ զՍիւնիս, ասելով. «Յելից կայ Այրարատայ», ընդ մէջ Երասխայ և Արցախայ: Արդարեւ ընդ բնաշխարհին Այրարատայ զօղեալ է աշխարհն Սիւնեաց յարեւմտից կողմանէ, հաւասար ի հիւսիսային ծագացն մինչեւ ցհարաւայինն. այսինքն է, ի վարածնունեաց մինչեւ ցՇարուր և ցՈտն Մասեաց, անջրպետ ընդ նոսին ունելով զարեւմտեան պար լեռանց ծովեզերն Գեղամայ, և որ ի նորին հարաւոյ են լեռինք Վայոց ձորոյ. զորոց սպառուածով քերելով Երասխայ՝ բոլորեալ պատէ զամենայն զհարաւ-արեւմտեան և զհարաւային սահմանս Սիւնեաց, անջրպետելով ընդ նա և ընդ Վասպուրական և ընդ Ատրպատական Հայոց, մինչեւ յանուանի կամուրջն Խիւտաֆէրիյն, և ի ստորոտս լեռանց կամ բարձրաւանդակին՝ որ անջրպետէ ընդ օժանդակս իւր և ընդ

կուր գետ, ուր և գործէ զարեւելեան սահման աշխարհին, զատուցանելով յԱրցախայ. թէպէտ և ոչ է քաղանիշ յայսմ մասին սահմանագիծն, որպէս և ոչ քաղաքական վարչութիւնն, մինչեւ կցորդաբար կոչիլ Արցախոյ՝ Փոքր Սիւնիք: — Հիւսիսակողմն Սիւնեաց անձուկ է, փակեալ ընդ մէջ արեւմտից հիւսիսոյ Ուտիացոց աշխարհի և արեւելից հիւսիսոյ Այրարատայ, յորս գրեաթէ խառնին և արեւելեան հարաւային եզերք Գուգարաց: — Այլ յուշ լիցի աստէն ի սկզբան բանիցս, զի զԵրասխ սահմանելով յարեւմտից Սիւնեաց աշխարհիս՝ ի ներքս ի նոյն փակեցաք և զգաւառն Նախճաւանի, որ առ նախնեօք երբեմն՝ և յաճախագոյն իսկ՝ ի համար Վասպուրական աշխարհի էր կարգեալ, վասն որոյ և սաստիկ վէճք հակառակութեան եղեն տերանց երկոցուն աշխարհացն. այլ բնական դիրք՝ Սիւնեաց պահանջն զայն, ըստ այժմեան ընթացից գետոյն մեծի, որ թերեւս յառաջին ժամանակն հպագոյն էր յայլ գաւառս՝ աշխարհին, և արտաքս (յաջմէն) թողոյր զՆախճաւանն գաւառս:

Երկու մասունք որիչք են աշխարհին Սիւնեաց. մի հիւսիսային՝ անձուկ և բարձր, այն է պարատափ կամ տաշտ Ծովուն Գեղամայ, որ՝ եթէ ոչ զկէս՝ գրեաթէ զերիւր մասն երկրին ծաւալեալ գրուէ. և ամենուտ լեռամբք շրջապատեալ՝ ընդունի գետակս, անհաղորդ մնալով այլոց մասանց երկրին և գետոց, բայց միայն ի միոյ ծայրէ արձակելով զառուն Զէնկի, որ գործէ ըզհարազան գետ Այրարատայ. և զի այսպէս զատուցեալ է ի բնուտ ի մեծէ զանգուածէ աշխարհին Սիւնեաց, մինչեւ առանձինն իսկ Երասխ կամ Աճուրջ Գեղատաք կոչիլ, թողոյր զբնական նկարագիր նորին ի տեղագրութիւն երկոցուն գաւառացն (Գեղաքունեաց և Սոթից) զոր նայն բովանդակէ: Իսկ երկրորդ և մեծագոյն մասն աշխարհին Սիւնեաց՝ է հարաւայինն, որ յատկապէս ընդ մէջ կայ Երասխայ, և աշխարհացն Վասպուրականի և Արցախոյ, ձուածեւ իմն ձգեալ ի Հս. Մ. ընդ Հր. Ել. իրրեւ հարիւր մղոն ընդ երկայն և եօթանասուն ընդ լայն:



# ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ



**ԵՐԻՆՔ.** — Գրեթէ բովանդակ երկիրն Սիւնեաց լեռնակոհակ է, ի հիւսիսակողմանն և ի միջակողման՝ բարձր ց' 8000', յարեւմտակողմն խոնարհեալ ի դաշտ Երասխայ, ընդ որում եւս քան զեւս գիջանի ընդ հարաւ ց' 1800', և եւս նուազ յերս սահմանացն: Թէպէտ և ոչ որպէս զԳեղամայ պարատափին՝ միայար գօտիք իցեն լեռանցն Սիւնեաց, այլ և զատ ի մեկնակ լեռանց երեւին և կցորդք կամ չարք ինչ նոցին, որք և յայլ և այլ դէմս ի լուցանեն գետս. և զլիսաւոր նոցին գրելի է զմիջակացն պար, որ ի հիւսիսոյ կուսէ, այսինքն ի հարաւ-արեւելեան ծայրէ Գեղամայ պարատափին (կամ լեռանց Սոթից) խաղայ ուղիղ ընդ հարաւ արեւելսառն, մինչեւ յԵրասխ, և զարդիս յանուն հարաւագոյն զլիսաւոր զազաթանցն՝ առ հասարակ կոչի Ղազանկէտ լեռինք. յորմէ ի վեր ընդ հիւսիս ելանելով՝ նշանակին ի պարուն լեռինքն Շէքի-սու, Առնէ? — բարձրագոյն լեռանց աշխարհին որպէս և մի ի բովանդակ Հայս, Գափոռնիկ, 12060'. — Արանկիզ, Սարմուսագր, Աղրի, Արաստան, Տէվէկիզ, որ հիւսիսագոյն սար համարի պարուս, որպէս հարաւագոյն Սարիփափախ ի Մ. ի Հր. Ալանկէզի և ի Հս. Մեղրեայ: — Հիւսիսային մասն պարուս յարեւելից կուսէ, և հարաւակողմն պարատափին Գեղամայ՝ ի հիւսիսոյ կուսէ՝ պարսպեն զՎայոց ձոր գաւառ, որպէս և այլ լեռինք ոչ նշանաւորք՝ ի հարաւոյ, և նուազագոյնք եւս յարեւմտից, գործելով լայնածիր ձոր մեծ. զորոց հաւաքելով զաղբերս՝ յորանայ Արփա գետ, և հուն գործեալ ընդ արեւմուտս՝ իջանէ ի դաշտն Շարուրայ, թափել յԵրասխ: — Նման իմն՝ այլ երկայնածեւ տաշտ կամ ձորագաւառ գործեն լեռինք չրափակք ոչ բարձունք՝ ի հարաւակողմն աշխարհին՝ զհովիտ Չափրեղտը գետոյ, որ և վասն այդ օրինակ առանձնութեանն և ամբողջեանն՝ կոչեցաւ ի հնումն յատ.

կասէս Չորք, և յետոյ՝ Աջխարի կամ Երկիր Ղափանու, այսինքն կապանու, յանուն զլիսաւոր և իշխանանիստ ամրոցին. և ըստ ռամկաց՝ վասն չրապարտը ամրափակութեանն՝ ծուղակ իմն համարեալ և կոչեցեալ, զի զայս նշանակէ անունդ ի Թուրք լեզու: — Արեւմտեան պատուար ձորագաւառիս է հարաւային մասն վերոյիշեալ Ալանկէզ լեռանց. հիւսիսայինն՝ խաչպօրոշ լեռինք կոչին<sup>1</sup>. Իսկ հարաւակողմանն զլիսաւոր լեռն է Խոռտոռնի, 9885': — Արեւելեան լեռինք անջրպետք օժանդակաց Երասխայ և Կուրի և երկոցուն աշխարհացն Սիւնեաց և Արցախոյ՝ չեն ինչ բարձունք, կամ ոչ նշանակեալ այնպիսիք. իսկ արեւելեան հիւսիսայինք՝ որք զայժմեան նահանգն Գանձակայ զատուցանեն ի Գարապաղէ (Սիւնեաց), յայտնանիք և հաստակաւոյք եւս են. որպէս արեւելագոյնն Գրքք-կիզ, 8770', Շարփա, Խաղիսու, և բարձրագոյնն Սարիկար-Սրուչաու, 10705', որ կայ յարեւելեան հարաւային ծայր պարատափին Գեղամայ և ի Հս. Տէվէկէզի: — Ի միջնաշխարհին, ընդ մէջ գետոցն Որոտան և Հազարու՝ կան սեպուհ լեռինք Մղկաց Գրգըլ-պօրագ, որ Թուրի նոյն ընդ կոչեցելումն ( ի Տիպուայ ) Օղղախ-արմագ, իբր 11070'. Ըլղիսու, 10870'. Քէլայ տաղ, 9990'. Ճանգոռքարան, և այլն: — Յարեւելից հարաւոյ Տաթեւու նշանակի թափասար լեռն<sup>2</sup>, և ի Մ. Հր. սորա՝ Քամկի 10800': — Ի վայոց ձոր յիշի Այրիձու լեռն. ընդ մէջ նորին և Մղկաց՝ Միխրոշխան բարձր լեռն 11180': Ընդ մէջ Մղկաց և Չորոց՝ Խաչքիէ լեռինք 9000'. Կասպէլ որ է Գագրոյք նախնեաց, «մեծ և դիտաւոր սար» կոչեցեալ ի Մ. Տաթեւոյ, ուր նշանակին յաշխարհացոյցս Գարսուցաս և Մոռոշ կամ Մոռաշիկն? — Ի Հարանդ նախնեաց յիշի Չափրեղտ լեռն՝ ի կողմանս Շնհերոյ և Խոտոյ. իսկ յԱղահէճք՝ Եղեղտի-խոտ սար. զարդիս նշանակի Չաչպոռոն 8900': Խնդրելի է ի սոյն կողմանս և Քոռախախաղաց լեռն<sup>3</sup>: — Իսկ յարեւմտակողմն

1 Ըստ Գատուրեան Ղափանեցոց, կամ Գաւթի բէկի:  
2 Փոխանակ այսօրին՝ յայլ բարտս զի Արճուք լեռնն?:

3 Ուսակախաղաց գրեալ յայժմեան օրինակ պատմութեան Ստեփանոսի Օրպելեան:



ազատաւեր բուսոյ բարուց բնակչացն, և զոյգ նմին կորովոյ քաջութեան. որով և ընդերկարագոյն դիմակայեցին օտարաց բռնութեան, օժանդակս ինքեանց ունելով և զբնական հաստուած և զդիրս երկրի իւրեանց, որպէս յետագայք ցուցցեն բնական և պատմական ծանօթութիւնք. և որոց զյխաւոր այն, զի յետ վաղ ուրեմն խափանման հնոյ Հայկազնեանն իշխանութեան և անուան՝ յերկրէ անտի զոր կալան Արշակունիքն, և յետ նոցին հարստութեանն բարձման, միայն Սիւնեաց իշխանք կոչին Հայկազունք, առ հարստութեամբ Ռազրատունեաց, որպէս և յառաջ և յետ նոցին: Ընդ սմին ոչ աննշանական է և այն, զի աշխարհագրական դրիւքն՝ օտարախառն իմն է երկիր Սիւնեաց. զի թէպէտ ի միոյ կողմանէ փարեալ է հարազատ Հայկական գաւառք Այրարատայ և Վասպուրականի, այլ յայլոց կողմանց այլաբազուք կամ կիսահայովք, եթէ օրէն իցէ այսպէս ասել. որպիսիք են Ուտիացիք ի մասնէ հիւսիսոյ. Արցախայինք՝ յարեւելից կուէ և մարապարսացի Ատրպայիկք՝ ի հարաւոյ. Թող և զմերձաւորութիւն վրախառն Գուգարաց:

Պարզագոյն եւս կամելով նկատել զդիրս Սիսական նահանգի, հին աշխարհագիր մեր համառօտիւ սահմանագրէ զՍիւնիս, ասելով. «Յելից կայ Այրարատայ, ընդ մէջ Երասխայ և Արցախայ»: Արդարեւ ընդ բնաշխարհին Այրարատայ զօրեալ է աշխարհն Սիւնեաց յարեւմտից կողմանէ, հաւասար ի հիւսիսային ծագացն մինչեւ ցհարաւայինն. այսինքն է, ի վարածնունեաց մինչեւ ցՇարուր և ցՈտն Մասեաց, անըրպետ ընդ նոսին ունելով զարեւմտեան պար լեռանց ծովեզերն Գեղամայ, և որ ի նօրին հարաւոյ են լեռինք Վայոց ձորոյ. զորոց սպառուածով քերելով Երասխայ՝ բոլորեալ պատէ զամենայն զհարաւարեւմտեան և զհարաւային սահմանս Սիւնեաց, անըրպետելով ընդ նա և ընդ Վասպուրական և ընդ Ատրպատական Հայոց, մինչեւ յանուանի կամուրջն Խիւտաֆէրիյն, և ի ստորոտս լեռանց կամ րարձրաւանդակին՝ որ անըրպետէ ընդ օժանդակս իւր և ընդ

Կուր գետ, ուր և գործէ զարեւելեան սահման աշխարհին, զատուցանելով յԱրցախայ. Թէպէտ և ոչ է քաջանիշ յայսմ մասին սահմանագիծն, որպէս և ոչ քաղաքական վարչութիւնն, մինչեւ կցորդաբար կոչիլ Արցախոյ՝ Փօքր Սիւնիք: — Հիւսիսակողմն Սիւնեաց անձուկ է, փակեալ ընդ մէջ արեւմտից հիւսիսոյ Ուտիացուց աշխարհի և արեւելից հիւսիսոյ Այրարատայ, յորս գրեալ է խառնին և արեւելեան հարաւային եզերք Գուգարաց: — Այլ յուշ լիցի աստէն ի սկզբան բանիցս, զի զԵրասխ սահմանելով յարեւմտից Սիւնեաց աշխարհին՝ ի ներքս ի նոյն փակեցաք և զգաւառն Նախճաւանի, որ առ նախնեօք երբեմն և յաճախագոյն իսկ՝ ի համար Վասպուրական աշխարհի էր կարգեալ, վասն որոյ և սաստիկ վէճք հակառակութեան եղեն տերանց երկոցուն աշխարհացն. այլ բնական դիրք՝ Սիւնեաց պահանջն զայն, ըստ այժմեան ընթացից գետոյն մեծի, որ թերեւս յառաջին ժամանակն հպագոյն էր յայլ գաւառս՝ աշխարհին, և արտաքս (յալմէն) Թողոյր զՆախճաւանն գաւառս:

Երկու մասունք որիչք են աշխարհին Սիւնեաց. մի հիւսիսային՝ անձուկ և բարձր, այն է պարատափ կամ տաշտ Մովուն Գեղամայ, որ՝ եթէ ոչ զկէս՝ գրեալ է զերիր մասն երկրին ծաւալեալ գրաւէ. և ամենուտ լեռամբք չընկապտեալ՝ ընդունի գետակս, անհաղորդ մնալով այլոց մասանց երկրին և գետոց, բայց միայն ի միոյ ծայրէ արձակելով զառուն Զէնկի, որ գործէ ըզՀրազդան գետ Այրարատայ. և զի այսպէս զատուցեալ է ի բնուտ ի մեծէ զանգուածէ աշխարհին Սիւնեաց, մինչեւ առանձինն իսկ Երզնի կամ ԱՇԽԱՐՀ ԳԵՂԱՄԱՅ կոչիլ, Թողոյք զբնական նկարագիր նորին ի տեղագրութիւն երկոցուն գաւառացն (Գեղաբունեաց և Սոթից) զոր նայն բովանդակէ: Իսկ երկրորդ և մեծագոյն մասն աշխարհին Սիւնեաց՝ է հարաւայինն, որ յատկապէս ընդ մէջ կայ Երասխայ, և աշխարհացն Վասպուրականի և Արցախոյ, ձուածեւ իմն ձգեալ ի Հս. Մ. ընդ Հր. Ել. իր. րեւ հարիւր մղոն ընդ երկայն և եօթանասուն ընդ լայն:



# ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ



**ԲՐԻՆՔ.** — Գրեթէ բովանդակ երկիրն Սիւնեաց լեռնակոհակ է, ի հիւսիսակողմանն և ի միջակողման՝ բարձր ց' 8000', յարեւմտակողմն խոնարհեալ ի դաշտ Երասխայ, ընդ որում եւս քան զեւս զիջանի ընդ հարաւ ց' 1800', և եւս նուազ յեւս սահմանացն: Թէպէտ և ոչ որպէս զԳեղամայ պարատափին՝ միայր գօտիք իցեն լեռանցն Սիւնեաց, այլ և զատ ի մեկնակ լեռանց երեւին և կցորդք կամ չարք ինչ նոցին, որք և յայլ և այլ դէմս իջուցանեն գետս. և գլխաւոր նոցին գրեթէ զմիջակացն պար, որ ի հիւսիսոյ կուսէ, այսինքն ի հարաւ-արեւելեան ծայրէ Գեղամայ պարատափին (կամ լեռանց Սոթից) խաղայ ուղիղ ընդ հարաւ արեւելախառն, մինչեւ յԵրասխ, և զարդիս յանուն հարաւագոյն գլխաւոր զագաթանցն՝ առ հասարակ կոչի Ղազանկէրո լեռինք. յորմէ ի վեր ընդ հիւսիս ելանելով՝ նշանակին ի պարուն լեռինքն Շեքեր-սոռ, Ալուն ? — բարձրագոյն լեռանց աշխարհին որպէս և մի ի բովանդակ Հայս, Գափոռնիկ, 12060'. — Ալանկէզ, Սարմուսագլը, Ալլի, Արաստան, Տեփկէզ, որ հիւսիսագոյն սար համարի պարուս, որպէս հարաւագոյն Սարիփափախ Մ. ի Հր. Ալանկէզի և ի Հ. Մեղրեայ: — Հիւսիսային մասն պարուս յարեւելից կուսէ, և հարաւակողմն պարատափին Գեղամայ՝ ի հիւսիսոյ կուսէ՝ պարսպեն զվայոց ձոր գաւառ, որպէս և այլ լեռինք ոչ նշանաւոր՝ ի հարաւոյ, և նուազագոյնք եւս յարեւմտից, գործելով լայնածիր ձոր մեծ. գորոց հաւաքելով դաղբերս՝ յօրանայ Արփա գետ, և հուն գործեալ ընդ արեւմուտս՝ իջանէ ի դաշտն Երուրայ, թափել յԵրասխ: — Նման իմն՝ այլ երկայնածեւ տաշտ կամ ձորագաւառ գործեն լեռինք չրջափակք ոչ բարձունք՝ ի հարաւակողմն աշխարհին՝ զհովիտ Չափընդոր գետոյ, որ և վասն այդ օրինակ առանձնութեանն և ամբողջեան՝ կոչեցաւ ի հնուքն յատ-

կապէս Չորք, և յետոյ՝ Աղխարն կամ Երկիր Ղափաւու, այսինքն կապանու, յանուն գլխաւոր և իշխանանիստ ամրոցին. և լստ ուսմկաց՝ վասն չրջապարոյր ամրափակութեանն՝ ծուղակ իմն համարեալ և կոչեցեալ, զի զայս նշանակէ անունդ ի թուրք լեզու: — Արեւմտեան պատուար ձորագաւառիս է հարաւային մասն վերոյիջեալ Ալանկէզ լեռանց. հիւսիսայինն՝ խաչաօրո լեռինք կոչին<sup>1</sup>. իսկ հարաւակողմանն գլխաւոր լեռն է Խոռստուշի, 9888': — Արեւելեան լեռինք անջրպետք օժանդակաց Երասխայ և Կուրի և երկոցուն աշխարհացն Սիւնեաց և Արցախոյ՝ չեն ինչ բարձունք, կամ ոչ նշանակեալ այնպիսիք. իսկ արեւելեան հիւսիսայինք՝ որք զայժմեան նահանգն Գանձակայ գատուցանեն ի Գարապաղէ (Սիւնեաց), յայտնանիք և հաստակառոյցք եւս են. որպէս արեւելագոյնն Գրք-կէզ, 8770', Շալփա, Խաղսոռ, և բարձրագոյնն Սարիեար-Սրուարոռ, 10705', որ կայ յարեւելեան հարաւային ծայր պարատափին Գեղամայ և ի Հ. Տէփէկէզի: — ի միջնաշխարհին, ընդ մէջ գետոցն Որոտան և Հագարու՝ կան սեպուհ լեռինք Ծղկաց՝ Գըզըլ-պօղազ, որ թուի նոյն ընդ կոչեցելուքն ( ի Տիւպուայ ) Օղլախ-արմազ, իր 11070'. Ըլլիսոռ, 10870'. Բէշալ տաղ, 9990'. Ճանգոռքարան, և այլն: — Բարեւելից հարաւոյ Տաթեւու նշանակի թափասար լեռն<sup>2</sup>, և ի Մ. Հր. սորա՝ Բամպիլ 10800': — ի վայոց ձոր յիլի Ալլիճոռ լեռն. ընդ մէջ նորին և Ծղկաց՝ Մեխրոշխան բարձր լեռն 11180': Ընդ մէջ Ծղկաց և Չորոց՝ Խոչքիկ լեռինք 9000'. Կասպի որ է Գագրոյնք նախնեաց, «մեծ և գիտաւոր սար» կոչեցեալ ի Մ. Տաթեւոյ, ուր նշանակին յաշխարհացոյցս Գարսոգայս և Մոռոռչ կամ Մոռալի: — ի Հարանդ նախնեաց յիլի Չագեճորոյ լեռն՝ ի կողմանս Ենկերոյ և Խոտոյ. իսկ յԱղազէնք՝ Եղբերոշի-խոռ սար. զարդիս նշանակի Չալպոռոռն 8900': Խոչքիկ է ի սոյն կողմանս և Գոռապախաղազ լեռն<sup>3</sup>: — իսկ յարեւմտակողմն

<sup>1</sup> Ըստ Պատմութեան Ղափանեցոց, կամ Դաւթի բէկի:  
<sup>2</sup> Փոխանակ այսօրին՝ յայլ քարտս գրի Աբուլք լեռն?:

<sup>3</sup> Ուսակախաղաց գրեալ յայժմեան օրինակս պատմութեան Սեփանոսի Օրպելեան:

Միւնեաց յԵրնջակ և ի Կախճաւան՝ Օրաժիճ՝ 9910՝. Երջակառ (Օձուտ), 7482՝, ի Հս. Ե. Զուղայ, Թիոռ ? 8428՝. Դարոռ՝ ի Հս. Զուղայու և ի Հր. Երլանլուի, (Թըւի գրեալն Տաղրի ի ուսւ աշխարհացուցի, 5980՝), որ է նոյն իսկ լեառն Գարոռայ, այսպէս սխալ ընթերցեալ կամ գրեալ ի պատմութեան Միւնեաց Օրպելեանի: Ի կողմանս յայտոսիկ և Զորոց գաւառին են և Երխ ետրքի, 11178՝. Ազնաբերոց, 8900՝. Մարիպապիս կամ Մարիեադաի՝ ընդ մէջ Որդուատայ և Մեղրեայ, 8322՝:

3. Գեճճ. — Յոլովութիւն լեբանց աշխարհին Միւնեաց ինքնին յայտ առնէ և զԼուրցն յոլովութիւն և բազմադիմի ուղղութիւն. որոց վկայէ և հին աշխարհագիրն՝ ասելով զգաւառացն, «անցնիւր համանուն գետովքն». որոց գլխաւորք են Արփա ի Վայոց ձոր, որ ի չըւբողոր լեբանց իւրոց ժողովէ գբամիս նոցին և խաղացուցանէ յԵրասխ, անցեալ կտրեալ զդաշտն Եարուրայ. օժանդակք իւր՝ յաճմէն կամ ի հիւսիսոյ՝ են Ճանի-չայ, Քեթան-չայ, Արագեազ որ է Եղեգեաց գետն, Ապանա, Էրիին, և այլն. յահեկէ և ի հարաւոյ, Քեօմիւր չայ, Եագտ ? Եոտրք չայ, Բոշաք-չայ, Գիկիչիք չայ (Կնիչիկ), Թամաշալը կամ Ախոշրա չայ, և այլն: — Յետ Արփայի գետք արեւմտեան կողման Միւնեաց՝ են Կախճաւանո գետն, որ ի Թիկանց լեբանց Վայոց ձորոյ և Եղկաց իջանէ, ոչ սակաւ օժանդակք. — Երրնջակո գետն՝ Արնաւ-չայ ըստ Թուրքաց, որ առ Զուղայու անկանի յԵրասխ: Ի հարաւային դիմին են ոչ սակաւ մանր գետակք հնոյն Գողթան և Արեւեաց գաւառի, և կոչին այժմ Գիլեան չայ, Տիսի չայ, Որոտատայ գետ, Մեղրայ գետ, և այլ ոչ սակաւ գետակք, զորս ընկալեալ Երասխ ի հարաւագոյն մասին՝ դառնայ ընդ արեւելս հիւսիսոյ: — Յայսմ արեւելեան փեղկի կամ պառակի բարձրաւանդակին Միւնեաց՝ հզորագոյնք են գետք, յարեւմտից կուսէ գիւմեալք. և նախ՝ սկսեալ ի հարաւոյ կուսէ՝ ուր ժամանեցաք՝ Պաստոդ, սպա Չաշընդոտայ գետն, որ է Զորոց գաւառին (կամ Ղափանու) և Կովսականի (Գրհամ). և որ յաճմէն՝ ի հարաւոյ արեւմտից ընդունի ՂՈՂԻ գետակ: Ի հիւսիսոյ և յելից Չաւընդուրի երկրքին հզորագոյն գետք՝ Բարկոչատայ և Հագարո՝ զմեծ մասն Միւնեաց ոռոգանեն, և մերձ ի վախճան ընթացիցն՝ յիրար խառնեալ անկանին յԵրասխ ի սպառուածի անդ սահմանաց աշխարհին: Առաջինն բազմաթիւ վտակք իջեալ ի Թիկանց լեբանց Վայոց ձորոյ և Սոթից՝ արբուցանէ զմեծ և զմիջին մասն Միւնեաց, յագուսք օժանդակք մանր գետակք. որպիսիք են յահեկէն՝ որ է ի հիւսիսոյ՝ Պալլըղը, որ Թուի Զիկարածի գետն ըստ նախնեաց, Մոշխորոյեանն, Քեչի սոռ, Կորեպի լուրն, Հալիճորոց գետն, և այլն. յաճմէն կամ ի հարաւոյ, Արիղի չայ ? Սիսիանո գետն, Արի չայ, Որոտան գետն, Տարեշոյ

լուրն, Զեռո գետակն ի Բաղս, և այլն: Ի սկզբանն՝ գետս այս մեծ կոչի Պագար չայ, ի միջակողմանն՝ յանուն Որոտան, և ապա յանուն Բարկուչատայ: — Զուգակից նորին Հագարո գետն, որ Թուի կոչիլ ի հնունն Ագարակի, (զի է գեօղ մի յԱղահէջ Ագարակու գետ անուանեալ), զարեւելեան մասն Միւնեաց ոռոգանէ, զԱղահէճ, զՀարանդ, զՔաշունիս, և գետանայ յաղբիրաց լուրց իջից ի Թիկանց լեբանց Սոթից և Արցախոյ, մանունս ընդունելով օժանդակս յահեկէն, զի անձուկ է մասն այն հովտին, յերի կալով լեբանց Արցախոյ. և են գետակքն՝ Արեւալի, որ Թուի Արահէջոց գետն ըստ անուն գաւառին, Չիւսանի ?, Մեչիք, Մոշաշիման ?, և այլն. աշակողմեան օժանդակք են Ղորչի չայ ?, Ինտերեմ և Ղոյախ-չայ, որք յիրար խառնին, Ագողան կամ Ագսոռ, որ ընդ այլոց վարարէ գրուն գետն. Թուին սոյա Քաշաքաղոց գետ կոչեցեալ ի հնունն. յետ այսոցիկ փոքունս ոմանս ընդունի վտակս Հագարի յայսմ կողմանէ (յաճմէ), զի անձուկ երկիր անջրպետէ ընդ նա և ընդ Բարկուչատ: Այսոցիկ ամենեցուն խառնուրդք գործեն զգլխաւորս զայս գետոց Միւնեաց, (զայժմեանս Պագարչայ — Բարկուչատ — Հագարի), որ կոչէր առ նախնիս Արահէջոց գետ Միւնեաց, ըստ վկայութեան Սարգսի կաթողիկոսի Ա, զորմէ ասէ (ի կոնդակի միում), ընդ Աղահէջ գաւառ իջեալ «հատանէ մինչեւ ի Քարավազին կամ մուրջն» : — Յիչին ի նախնեաց և Գիկանեան գետ փոքր, ի սահմանս Ենհերոյ. — Վարարակ որ և Զագեճորոյ չորս ի սահմանս Տաթեւու, Թերեւս նոյն իսկ գետակն որ առ նովու անցանէ, և բղիւր ի համանուն Զագեճոր լեանէ: — Են և ոչ սակաւ գեօղք՝ գետ բառիւ բարդեալք ի նախնեաց անտի, նշանակք գետակաց՝ յորոց առին կամ ետուն գանուանս. այսպիսիք են ի Վայոց ձոր՝ Արի գետ, Արոտոց-գետ, Երտոյ-գետ, Միջագետք. յԱղահէճ՝ Արտագետ, Ագարակո-գետ. ի Եղուկս՝ Ապարանից-գետ և Գետակիցք. ի Բաղս՝ Կրաշագետ և Արաշագետ. յԱլլախ՝ Բորոտի չորս, Գիկանեան-գետ և Ուտական-գետ. ի Ճահուկ՝ Արիկո-գետ. Թերեւս և Եսախ-գետ ի Կովսական, որ Եսախիկտ գրի: Եւ ի Սոթս խորրա-գետ գիւղ: — Դարձեալ յոլովաղոյն եւս (ոչ պակաս քան գերեսուն) համարին գեօղք Զոր բառիւ բարդեալք, որք նոյնպէս երեւին նախակիչք մանունց վտակաց, միանգամայն և խորանիստ գրից կողմանց իւրաքանչիւր գաւառացն<sup>3</sup>, յորս են և ոմանք փոքր բառիւ կցորդեալք, որպէս Բակափոր և Ամեանափոր ի Սոթս, և այլր այլուր:

4. Լիճճ. ԱՂԲԵՐՔ ԵՒ ՀՆՔՔ. — Արեւմտեան հիւսիսակողմն միջնաշխարհին Միւնեաց կամ Եղուկք գաւառ՝ մինչեւ ի սահմանս Վայոց ձորոյ, ամայի և ոչ փոքր մասամբ քարուտ և խճուտ է, այլ և ճախնային. և են անդ չորր կամ հինգ լիճք Արան-կեօլ կոչեցեալք, միտնաչափ կամոր, Սապատանոր. — յԱլլախ՝ Գոթանոր գեօղք երկու, Մեծանոր, Սաղատանոր. — յԱղահէջ՝ Քեղանոր. — ի Հարանդ՝ Զանանոր, Մարգանոր, Բահիլանոր. — ի Կովսական՝ Խողանոր, Վախտանեանանոր, ուր և Լիմախովիտ. — յԱրեւիս՝ Վարդանանանոր. — ի Սոթս՝ Բերդանանոր, Սնանոր, Զաղացանոր գեօղք երկու, Ունչի ձոր, Ագարակի ձոր. — ի Գեղաքունիս՝ Ոփեաց ձոր, Գողանոր, Գոնոյ — ձոր:

1 Որպէս սորա և այլոց եւս ոմանց վերոյիշեցելոց երկբայական են ինձ անուանք նշանակեալք ի վարտս. վասն որոյ և զանց արարի և զայլովք, ոչ գտեալ ստուգազոյն ինչ լեռնագրութիւն: 2 Օրպելեան, Գլ. Ե՛: 3 Ի գաւառին Բաղս են Արկանանոր, Արանանոր, Ագրերան, Զիւնեաց — ձոր, Եղեգեաց — ձոր, Ուղէձոր, Կարմրեանոր: Ի Միւս Բաղս՝ Տահկանոր, Անատանոր. — ի Երուկս՝ Մեծանոր, Մըլ-

երկայնութեամբ, առաւել կամ նուազ, թերեւս մնացուածք Շադատոյ լճին ըստ նախնեաց. մեծագոյն եւս լճակ Գարակեօլ անուն կայ ի բարձրաւանդակի ի միջի բարձրաբերձ լեռանցն Ղշըխլը, Քէչալ տաղ, Ճանդուրթաւան, թերեւս բաժակ մեծի հրաբլդի շիջելոյ: — Են և ի կողմանս Դնհերոյ յամայի վայրս լճակք մանունք, յորոց մին յիւր անուն կոչի. ուրանօր և հանրաղբերք ոչ սակաւք ընդ մէջ Իւչթէփէ լեռանց, ի հիւսիսոյ նորին և ի հարաւոյ Բարկուչատայ գետոյն. որպէս Խաչիչ պոչազ, Էտի պոչազ, Սոռզ պոչազ, և այլք: Ի և ի միջոցի Ազպուլազ և Ղօչախ գետոց աճակողմեան սժանդակաց Հազարնայ՝ անապատ տեղի Գարաքէշիչ կոչեցեալ: — Հանքաղբերք ածխայինք և երկաթահամք գտանին բազում ուրեք, որպէս յԱխլաթեան գեղ Մղկաց, ի Գարապապա Նախճաւանու. — Ջերմուկք առ Սատանայի կամ մըրլաւ Տաթեւու, ուր և բաղանիս հաստատեալ է: — Եթմուրաչարք Տանձիկայ ի վայոց ձոր: — Նանաւորք և պիտանիք քան զՂուրսն են Աղանանք Նախճաւանու, զորոց ճառեցի ի տեղագրի գաւառին:

Յազգս հողային և հանածոյ բերոց՝ ծանօթք են Ոխրա զեղնագոյն՝ որով ներկեն զասր, ի վայոց ձոր, ուր և Արչասայ և Պաղեղ. գտանի Արլասայ և ի Դնհեր. Երժուր, Գաձ, Սոտա ի Նախճաւան. — Ջառեկ առ Եպսճի գիւղիւ յԱրդուատ. ուր յայտնեցաւ և Կապար արծաթախասն. որպիսիք գոն և ի վայոց ձոր, ուր և վասն արծաթոյն գետն կոչի Կիւմիշխասնէ, թէպէտ և չեն ի գործ արկեալ տեղիքն. նոյնպէս և որ ի Նորաչէն գեղ Նոյն գաւառի: — Յայտ է ի հողային նիւթոցս և յողովութիւն պէսպէս քարանց. յորս պիտանեգոյն ի տնտեսութիւն է Երկանաքար Երնլակայ: ի հրահայելեաց՝ միայն Պղինձ հատանի առատապէս ի Գեղաբունի գաւառի, յԱրեւիս՝ յԱգարակ գեղ, ի Կաւարտ և յայլ ինչ գետոց Բաղաց:

Տ. ԲՈՒՍԱՅԱՅՔ ԵՒ ԿՆՏՈՒՅՔ. — Պիտանեգոյն բերք Սիւնեաց՝ են բուսականքն, անտառայինք և դաշտայինք, որովք մեծ մասն երկրին ծածկեալ է, միսյն արեւմտեան մասին Մղկաց նուազեալ գոլով. վասն որոյ և բովանդակ երկիրն՝ հանդերձ զբացեալն Արցախաւ՝ Գարապաղ անուանեցաւ յայլազգեաց, որ նշանակէ Սեւա այգի, իբրու եթէ յայգեաց բազմութենէ ստուերացեալ: Հին աշխարհագիր մեր յիշէ ի բերոցն բուսականաց՝ զՄուրա՝ ի վայրի ծառոց, զՆուսն՝ ի պտղոց, և զԳերերի. զայս՝ Ստեփ. Լեհացի գետ-երի համարի, նոյն ընդ անուանելոյն Potamogeton, որ թարգմանի ստուգիւ Գետաւեքձ, այլ յայժմուցս՝ Նայադ (Najade) կոչի. և արգարեւ նշանաւոր է մեծութեամբ զչիսոյն ջուրք՝ Նուսնոջարն Բաղաբերդու. սակայն հին բժշկարան մեր գրէ. «Գերերի՝ Քիմն է». իսկ Ամիրտօլլաթ ասէ, «Ֆուրմ՝ Քիմն է, Խաղողին տակն է»: Փուանկ հայագէտն Սէն

— Մարգէն՝ Geranium թարգմանեալ է զԳերերի, որ է ծանօթ ծաղիկն Աղանակտուց ի մերոցս արդ կոչեցեալ: — Ի վայրի կամ յանտառային ծառոց՝ ծանօթագոյնք են Կաղնիք ոչ բարձունք, որպէս և ոչ այլք ի ծառոց, վասն գետնոյն բարձրութեան և ցրտութեան, բաց յափանց Երասխայ, ուր մեծամեծ Սօսիք լինին. Թեղի, Գի, Տօսախ, և նմանիք սոցին: — Մայրեաց գուշակք են և գետոք այդու անուամբ լծորդեալք, որպէս Դիցմայրի և Լուցմայրի ի Կովսական, Թաղաւայրի յԱրեւիս, ուր և լոկ Մայրի գիւղ, որպէս և Մայրադուրք ի վայոց ձոր, Ըշողմայրի ի Մղուկս, և Գանձադանտառ ի Գեղաբունի: — Ի պտղաբերաց՝ ունի զամենայն ազգ հասարակ պտղոց. յորոց և զազնուպոյնսն յիշէ Ստեփ. Օրպելեան՝ ի սահմանս տարփալոյն իւրոյ Տաթեւոյ, զՋիբեկի և ըզթօգնի, որ արդ ոչ երեւին. թերեւս յետինն պտղի յԱրախեան ձորահովտի: — Ի կարեւոր տնտեսական բուսոց՝ բաց ի հասարակ ընդեղինաց, հատեղինաց և խաւարոց, մշակին ի Սիւնիս և Բրիւնձ և Նիսախոտ, Մեկոն, Բաւրակ, Կանեփ. և ի ձորակողմանս Երասխայ՝ Թրեկի շատ՝ ի դարման շերամ որդան, յորմէ հանեն մետաքս պատուական, մանաւանդ ի կողմանս Ազուլեաց և Մեղրոյ. ուրանօր են և ազնիւ Այգիք, որոց՝ բնակիչքն ճարտարք են ի մշակութիւն, որպէս և ի դարման մեղուաց, հանելով Մեղր ազնիւ: — Ի բազում կողմանս են ընդարձակ և պատուական պանարասուն արօտավայրք:

Ի սեռս կենդանեաց՝ լերինքն և անտառք գուշակին ասպնջականք երէց վայրենեաց. զազանպոյնքն որ ի նախնեաց յիշին, Ասիւծ և Ինձ, ոչ յայտնին արդ. իսկ յերէց անտի ճանային Այծեռուք և Ասիւք, Եղջերու և վարագ, և չորքոտանիք մանունք. թող զընտանի անասունս և զհասաւ, յորոց սեռէ գտանին Կաքաւ, Տուսեձ, Փասիանձ, և գիշատիչք: Միով բանիւ համառօտէ զճուտութիւն կենդանական սեռի՝ պատմիչ աշխարհին. «Լեւրինս որսասուն և բազմալոյր վայրացն Սիւնեաց», աւսելով. այլ ցաւէ մեզ զի պակասէ սկիզբն բանից երրորդ գլխոյ մատենին, յորում ըստ վերնադրին՝ ցուցանելոց էր, «Թէ զինչ ունի պարարտութիւն ի պէտս մարդկան». և ի վախճանին ասէ. «Եւ արդ այսքան տեղեկութիւն քեզ յերոց պարարտութեանց». այլ ի միջին չկայ ինչ, ըստ առ մեզ հասելոց օրինակաց մատենին:

Յերեցուն եւս ազգաց բնական արգասեաց, ի բրաժոյից, ի բուսականաց և ի կենդանականաց՝ գոյ ակնուներ պիտանեաց և կարեւորաց յաշխարհիս Սիւնեաց, ի յաղողել մանր խաւարկութեան գիտնոց. զի թէպէտ և երկիրն անվտանգ է արդ, այլ ըստ անհարթ բնութեանն ոչ ունելով պողոտայս և ուսնս արքունիս, յոյժ սակաւուց եղեւ ցարդ անցանել ընդ այն Եւրոպէացուց և բնազնին արանց, բայց եթէ իցեն ոմանք անծանօթք ինձ:

1 Ըստ Շահնազարեանի. ի Պատմ. Սիւնեաց, Ա. 16:

2 Ստեփանոս Օրպելեան, Գլ. ԺԱ:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ



**ԱՏՄԱԿԱՆ.** — Սկզբնաւորութիւն բնակութեան՝ որով և պատմութեան աշխարհին Սիւնեաց՝ ըստ աւանդութեան պատմչաց մերոց, գրեաթէ աներկրայ՝ ի զարմից Հայկայ է, այլ և յառաջնոց եկաց. և թէպէտ այլ ևս տոհմք խառնեալք ի նոսին և գրաւեալ իցեն զկողմանս կողմանս, այլ միշտ՝ և մանաւանդ ի վերանորոգութեան իշխանութեանց ազգիս յ'Թ և ի Ժ դարս, հռչակեալ է Հայկազանց տոհմ՝ յաշխարհի աստ: Մովսէս Խորենացի (Ա, 36) և այլք ըստ նմանէ ասեն, հինդերորդ ի Հայկայ ձեռ լինել զՍիսակ՝ զանուանատու աշխարհիս, « զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և զեռ » ղեցկաղեղն ». որոյ հայրն Գեղամ, « Սմա՝ զմեծ մասն » ընչից իւրոց տուեալ, և ծառայս՝ անձինս բազումս, » սահմանս հատանէ նմա ժառանգութեան՝ ի Մովէն » (Գեղամայ) ընդ արեւելս մինչեւ ցդաշտ մի, ուր գետն » Երասիս հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ » խոխոմս ձիգս և նեղս, ահագին զըզըլմամբ ի շանէ ի » դաշտն: Աստ բնակեալ Սիսակ՝ ընու շինութեամբ զսահ » մանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով » անուամբն Սիւնիք. այլ Պարսք յատակազոյն ևս Սիսա » կան կոչեն »: Արդարեւ յատակազոյն և բնական էր ի Սիսակայ՝ կոչումն Սիսակիս, որպէս ոչ միայն Պարսք այլ և յետ նոցա Արարացիք կոչէին **سيساك** Սիսակ անուն. յորմէ անբնական և անյարիւր է ածանցել՝ զՍիւնեաց անուն. վասն որոյ հաւանելի և ընդունելի ևս է ինձ միւս աւանդութիւն՝ այլոց պատմչաց, Սեւուկ անուն նահապետ մի լինել, յորմէ և Սեւորդեացն ազգ, գրակիր Սիւնեաց. աստուստ թերեւս և անուն կղզւոյ ծովուն Գեղամայ՝ Սեւան, և ի սմանէ Սիւնիք՝ իբր Սեւուկիք<sup>1</sup>: Հարկ իսկ էր ստոյգ և նշանաւոր լինել Սեւկոյ նահապետի,

պետի, կամ որոյ և է առն՝ յորմէ Սիւնեացդ անուն ածանցի, զի այդպէս սովորաբար կոչիցի աշխարհն այն ի համարէն ազգայնոց մերոց՝ ի սկզբանց և այսր, որպէս և յերկրորդի նորոգմանն՝ նովին անուամբ ծանօթանալ և զրիւ ևս ի Յունաց ժամանակին՝ Սիւնիս, Σουνίς<sup>2</sup>. բայց առ հին հեղինակս նոցին և լատինաց՝ անծանօթ են երկրքին ևս անուանքդ. և ոչ առ նոսա միայն, այլ և ոչ ի հնագոյն յիշատակս պետութեան ազգիս՝ յիշին Սիւնիք, և գրեաթէ ոչ յառաջ քան զմուտս քրիստոնէութեան: Մի յառաջնոց անտի գրչաց մերոց (Կորիւն)՝ ՍԻՒՆԵԱՆ աշխարհի կոչէ զերկիրս այս, որպէս յետինքն՝ ՍԻՍԱԿԱՆ աշխարհի. իսկ Կաղանկատուացին՝ հանդերձ բնակչքն՝ ՍԻՒՆԱՍՏԱՆԻՔ:

Յառաջնում վերանորոգութեան ազգիս յետ աշխարհակալութեան Մակեդոնացւոց՝ ի ձեռն Պարթեւազանց, նահապետն Սիսակեանց ոչ միայն կարգեցաւ կողմնակալ արեւելեան մասին Հայաստանեայց, այլ և ի նմին ցեղէ գտեալ ոմն « Աւան՝ անուանի և քաջ կար » գեցաւ ի Պարթեւէն վաղարչակայ կողմնակալ բիրաւ » լոր<sup>3</sup>: Այս անուն Առան քաջ ծանօթ է առ արեւելեան պատմիչս, և ի մերոցս՝ ի Մովսիսէ Կաղանկատուոց և այսր, որք այնու իմանան և նշանակեն զմիջագետս Երասիսայ և Կորի, յաւէտ զերկոսին աշխարհս Հայոց զԱրցախ և զՈւտի, այլ ընդարձակօրէն և ի վերայ արեւելեան մասին Սիւնեաց ձգի, որում և ի ճահ գայր լինել կողմնակալ բիրաւոր, որպէս և էր Սիւնեացն նահապետ գլուխ արեւելեան զօրաբանակին Հայոց, գրեաթէ համակ յիւրոյին աշխարհէն հաւաքելով զմարտիկսն՝ իբրեւ երկուս բիրս արանց: Այլ թէպէտ և այսպէս կարգեալ ի վաղարչակայ և յայլոց, չերեւի սերտ հաղորդութիւն Սիւնեաց ընդ այլոց տոհմից Հայոց և ընդ պետականին, մինչեւ ցաւուրս Տրդատայ. նա և առ սովաւ իսկ և յետոյ՝

1. Եթէ արժան իցէ զԳեղն Ս. Գրոց՝ ի նշանակի անդ եղեմական վայրացն՝ համարել զԵրասիս, ըստ բազմաց ի մեկնչաց նոցին Գրոց, քաջ իսկ և զանուն Եթովպացւոցն, (զորովք փարբեր գետն այն, և որոյ անուամբ Ղիսաւս իմանան մեկնիւք), ոչ իցէ

անճառ պատշահեցուցանել անուան Սեւուկեացդ Սիւնեաց:  
 2. Կոստանդին Պերթեուկոսն այսպէս գրէ զիշխանն Սիւնեաց, Ἄρχων τῶν Σουνίς.  
 3. Մովսէս Խորենացի, Բ. Ը:

յաճախ առանձնութիւն իմն , կամ ապստամբութեամբ  
 և ինքնակացութեամբ , կամ միաբանութեամբ ընդ այլոց  
 դրացի ազանց , և առաւել միտելով և հպատակելով տի-  
 րապետաց Ասիոյ , իմա Պարսից , ի ծանօթագոյն ժամա-  
 նակս պատմութեան . և այս ըստ նախնոյն իւրեանց Սի-  
 սակայ սեգ բարս ունելով , որով և կորովութիւն և քաջու-  
 թիւն . զոր ոչ միայն լռելեայն յայտ առնէ պատմու-  
 թիւն , այլ և յայտնաբան գրիչք մեր . յորոց երիցագոյն  
 Վորիւն՝ կոչէ իսկ գագաւնաւիտ , վայրենագոյն , ձիւարա-  
 քարոյ կողմանս զՍիւնեաց սահմանս , « և ի նոցունց իսկ  
 » ի վայրենացն՝ եպիսկոպոս տեսուչս եկեղեցւոյն Սիւ-  
 » նեաց կարգել , որոյ անուն կոչէր Անանիաս » : - Ոչ ինչ  
 ընդհատ յարանց՝ մեծողիք և վեհազունք հանդիսանան ի  
 վէպս՝ և կանայք Սիւնեաց , պէսպէս չքնաղ և վսեմական  
 կերպարանօք , առաւել քան յայլ աշխարհս Հայոց . զոր  
 օրինակ , ճարտարաբան աշխարհածուհիքն Սահակիա և  
 Բիւրեղ . մուսայասարաս կուսանակն Սահակադուխտ՝  
 քոյր մեծիկն Ստեփանոսի Սիւնեցւոյ . քոյրն Վահանայ  
 Գողթնեցւոյ , կամ ուր և իցէ երգահան Չարանաւայի շա-  
 րականի նորին . հրաշագեղն և հրանժոյգ Շահանդուխտ .  
 վկայանորհն Շուշան՝ կին Աշոտոյ որդւոյ Փիլիպպէի , որ  
 չքեղ յոյժ արար յուղարկաւորութիւն առն իւրոյ , իսկ  
 ինքն , աւաղ , առաքինորէն ժուժկալութեամբ մեռեալ  
 բանտարգել ի Գունի՝ բացընկեցիկ լինէր . — և պա-  
 տուաստն զուգեալ ի տէրն Սիւնեաց՝ Սոփիա , դուստր  
 Գերեմկանն Արծրունւոյ , այն որ գիտաց պատշաճեցու-  
 ցանել ի կապիճ մատանւոյ հրաշակերտից Վայոց ձորոյ՝  
 զակնն դերափայլ . — Մարիամ տիկին , դուստր Աշոտոյ ,  
 քաջաց և առաքինեաց մայր . և դժպտոնիս անդամ սպա-  
 նիչ մեծիկն այն Ստեփանոսի քերդողի , սեւաշուք նշու-  
 լիւքն և ինքնադատ ապաշաւանօքն՝ սոսկումն ածէ , տպա  
 և հիացումն :

7. Առիթ իմն այսպիսոյ բնաւորութեան լինէր և եր-  
 կրին բնութիւն և գիրք , լեռնաշատ գոլով և ամուրս տպա-  
 ստանի բնականս և ձեռագործս ընծայելով , ազատարա-  
 րոյութեան տածիչս , որք և մի ի նշանաւոր երեւութից են  
 աշխարհին . յոր սակս հին աշխարհագիրն յետ սակաւուց  
 բերոց երկրին՝ կնքէ գրանն , « և ամուր տեղիք » . նոյնպէս  
 և սեփական պատմիչն (Օրպելեան) անդասին յետ ա-  
 նուանց գաւառացն յաւելու . « Ամուրք անառիկք ի ամա .  
 » որ ի մարդկան հնարից հեռացեալ են , բայց միայն թէ  
 » Տէր մատնեսցէ » . դարձեալ , « Ամուրք գովելիք , անվախ  
 » և անսասան ի հնարից մարդկան » . ապա թուեալ յա-  
 նուանէ իբրեւ քսան և չորս բերդս , յաւելու . « Եւ այլ եւս  
 » յորպէս , զորս աւելորդ համարեցաք գրել » : Եւ յետոյ  
 այլ ուրեք վասն Բաղաց թագաւորութեան միայն՝ որ ի  
 ԺԱ-ԺԲ դարու , ասէ բերդս ունել 43 : Նշանակեալքն ի  
 պատմէն Սիւնեաց ի սկզբան անդ բանիցն և յիշեցեալքն  
 յայլ և այլ գլուխս , և ի ցանկի գիւղորայից կամ յայլոց ,  
 այսօրիկ են , այբուբենական կարգաւ , յորոց շատք ծա-  
 նօթասցին ի տեղագրութեանս , և ոչ սակաւք անծանօթք .

Ազնաբերդ  
 Աղընցոց բերդ  
 Անապատ բերդ

Անդուկաբերդ  
 Արփաբերդ  
 Բաղաբերդ  
 Բաղակայ բ . կամ Քար Բաղակու  
 Բարկուշատու բ .  
 Բերդ  
 Բերդաթաղ  
 Բերդածոր (գիւղ)  
 Բերդատակ գ .  
 Բերդի գլուխ  
 Բերդիկ (յերնջակ)  
 Բերդիկ (ի Բարկուշատ)  
 Բերդի մայր գ .  
 Բղենոյ բ .  
 Բոլորաբերդ  
 Բորոտնոյ բ .  
 Բորտոյ բ .  
 Գեղաքունոյ բ .  
 Գեղի  
 Գիւլաբերդ  
 Գրիամ  
 Դայեկի քար  
 Դղեակ խոսրովու ?  
 Եղնաքար  
 Երնջակայ բ .  
 Եռնաբերդ (վիճակ)  
 Ընջղակաբերդ  
 Լիգբերդ  
 Խոզաբերդ  
 Խոժուաբերդ  
 Ծիծուանաքար  
 Կապան որ է Բաղաբերդ  
 Կապոյտ բ .  
 Կարճաւան  
 Կաքաւաբերդ կամ Կաքաւուց քար  
 Կկուաքար կամ Կրկոց քար  
 Համբատայ բ .  
 Հայրաբերդ  
 Հրաշկաբերդ . Հրասեկայ բ .  
 Զագաբերդ . Զագեծորոյ բ .  
 Ճանճի բ .  
 Մացրի  
 Մեղրոյ բ .  
 Նորբերդ (ի Ճահուկ)  
 Նորբերդ (ի Վետի)  
 Շահապօնից բ .  
 Շամբ  
 Շլորուտ  
 Որձաբերդ  
 Որձաքար  
 Որոտն  
 Ուուաց - քար  
 Պահու բ .  
 Պաղաբերդ  
 Պելեւ

- Պուղաքար
- Պուղուտարերդ
- Սիւնեաց բ.
- Սմբատայ բ.
- Սուլիմարերդ
- Վահանայ բ.
- Վայոց ձորոյ բ.
- Վժնաբերդ
- Յախացքար
- Յուր
- Քաշէթաղուց բ.

Եթէ նոյնը և եթէ օտարը յանձանօթից սոցին՝ ոչ գիտեմ, յիշին արդ և թուրք անուամբ բերդորայքս .

- Ազգալի (Սպիտակ բ.)
- Գղըլձա (Կարմիր)
- Կեալուր գալիսի
- Սագարդան գալիսի (Կաշաղակի կամ Անձեղի բ.)
- Քեշի գալիսի (Աժուց բ.) :

Իսկ ըստ դրիցն՝ որպէս վերագոյնդ ցուցաւ, Սիւնիք՝ յարեւմտից միայն ունէր սահմանորդ զքնաշխարհն Հասաստանեսայց, իսկ յայլ ամենայն կողմանց զխորթացեալն, զԳուգարս, զԱրցախ, և զայլս. վասն որոյ և լեզու բնակչաց իւրոց ընդ եզերական բարրառս Հայոց համարեալ լինէր՝ հանգոյն այլոց հնգիցն կամ վեցից, որպիսիք Կորձայն, Տայեցին, Արցախացին, և այլն: Բայց արժան է արտաքոյ այսր վայրենութեան և օտարաձայնութեան՝ ունել զպարատափ Մովսէս Գեղամայ, ուր երիցագոյն սերունդք Հայկայ սփռեցան, և հարուստ դարս հարազատաբար Հայկազունք կոչէին, որպէս ի վերջ նշանակեցաք. և ի դէպ էր որիչ իմն աշխարհ համարել զայն, ըստ անհաղորդ բնութեան երկրին, որպէս ի տեղագրին ցուցցի:

8. Երկոտասան գաւառս Սիւնեաց համարին ամենայն պատմիչք մեր և աշխարհագիրք, յորոց հնագոյնն (Մ. Խորեն.) յարեւմտեան սահմանաց աշխարհին սկսանի թուել և դասել. իսկ Օրպելեանն՝ որ և զնորագոյն անուանս իւրոյ ժամանակին ընդ վաղեմեացն զուզաւորէ, ի գլխաւորէն՝ այսինքն է յիշխանականէն (որ և մէջբերեայն է) սկիզբն արարեալ, այսպէս կարգաբանէ . « Գաւառս ունի երկոտասան. Առաջինն՝ որ ունի զբուն » գահ իշխանացն և հայրապետաց՝ Մարտի գաւառ, անուանեալ ի Միկայ գաւառապետէ: Բ. ՎԱՅՈՑ ՁՈՐ, որ ի հասարակական դիպուածոց ողբոց և աշխարանաց՝ կոչեցաւ Վայոց ձոր: Գ. ԳԵՂԱՔՈՒՆԻ, որ ի Հայկեան » Գեղամայ կոչեցաւ Գեղարքունի: Դ. ՍՈՔՈՅ ԳԱՎԱՐ, որ սակս հանապազորդեան բքոց և դառնալունչ օղոցն՝ կոչեցաւ Սոթք: Ե. ԱՂԱՆԷՔ ԳԱՎԱՐ, որ այժմ կոչի » ՔԱՇԵՐԱՂ և ԽՈՒՅՈՒՅՐԵՐԴ: Զ. ՀԱՔԱՆԴ ԳԱՎԱՐ: Է. ԲԱՂՔ ԳԱՎԱՐ, որ այժմ կոչի ԱՃԷՆ, որ ի Բաղսկայ » անուանեցաւ: Ը. ԿՈՎՍԱԿԱՆ ԳԱՎԱՐ, որ այժմ ԳՐԶԱՍ » կոչեն: Թ. ԱՐԵՆԻՔ ԳԱՎԱՐ, որ այժմ կոչի ԴԱՇԵՐ և » ՄԵՂՐԻ: Ժ. ՉՈՐՔ ԳԱՎԱՐ, որ ունի զանմատոյց ամուրն » Բաղաբերդ, և այժմ կոչի ԿԱՅԱՆ: ԺԱ. ԵՐԱՅԱՎ ԳԱ » ւառ և ԳՈՂՔ: ԺԲ. ՃԱՂՈՒԿ ԳԱՎԱՐ ԵՐ և ՉՈՐՆ, որ

» ՇԱՆՏԱՊՅՈՒՆ կոչի: Ահա այսորիկ են գաւառք երկոտասան » սանք գլխաւորք Սիւնեաց. բայց այլ եւս ունի գաւառս » յուսով՝ զոր ոչ յիշեցաք. է որ փոխեալ են անուանք սո » ցա, է որ յայլ եւ այլ գաւառս բաժանեալ են »:

Քաջիկ և բարուր զայս ծանուցանէ պատմիչն, այլ լաւ եւս էր մեզ աւանդել զայլոցն եւս փոփոխեալ անուանան և տրոհմունս առանձնակ գաւառացն. զոր ոչ ունելով ճշդիւ գտակաւ՝ ոչ սակաւ տարակոյս է մեզ զսահմանաց ոմանց նոցին իսկ երկոտասանեցուն հին գաւառացն: Չէր ինչ ապաքէն զժուարութիւն այլեւայլ անուանս ունելն միոյ և նոյն գաւառի, որպէս Վայոց ձորոյ կոչել և ԵՂԱԿԵՍ ՁՈՐ, կամ նա և միոյ գաւառի բաժանիլ յերկուս ծանօթ մասունս, որպէս Ճահուկն և Շահապօնք, այլ շփոթումն ածեն միով նոր անուամբ կոչիլ մասանց երկուց գաւառաց, որով զժուարանամբ և անկարողանամք ճշգրտել և զսահմանս հնոց պատմական գաւառաց. մասնաւոր զի հանդերձ հնովքն այնորիք երկոտասանեքումք՝ քառասնիւ շափ անուանք լաին գաւառաց Սիւնեաց տ. միջին և յետին գրիչս մեր: Արդ որչափ ինչ հաւաստի կամ հաւանական երեւի մեզ, կարգեցուք աստանօր, մինչեւ միեալ ի տեղագրութիւն միոյ միոյ ի նոցանէն, զի և կարեւոր իսկ է ի ծանօթութիւն պատմական յիշատակաց աշխարհին:

Եւ նախ ի պարատափի Մովսէս Սեւանայ՝ են երկու գաւառք, յորոց առաջինն ԳԵՂԱՔՈՒՆԻ՝ կոչի և ԳԵՂԱՄՍԵ ԵՐԿԻՐ, և ըստ մասին ԿՈՔ, և յայլագեաց՝ ՄԷՂՐԷ. — Երկրորդն՝ ՍՈՔՔ, որ արեւելեան հարաւային մասն է պարատափին, կոչի և ԱՐՏՈՅ ԳԱՒԱՐ, և երբեմն ընդ սահմանակից մասին Արցախոյ՝ ՄԱՐՏԵ ԵՐԿԻՐ: Կից հարաւոյ ծովուն Գեղամայ՝ է գաւառն (Գ) ՎԱՅՈՑ կամ ԵՂԱԿԵՍ ՁՈՐ, զարդիս Տարալղղ ըստ այլագեաց. յեւրոյ նորա կայ (Գ) ԱՂԱՆԷՔ, զորոյ միջնադարեան անուանս ծանոյց պատմիչ աշխարհին, իսկ զարդիս մասն է Չանկեալօր գաւառի: Սոցին ի հարաւոյ՝ (Է), նա և առաջին գաւառաց ըստ Օրպելեանի՝ ՄԱՐՏԵՔ, որ ՎԵՐԻՁՈՐ կոչի ըստ հիւսիսային մասին, և ԱՅՈՑ ըստ հարաւայնոյն, ըստ արդեաց Պազարքէնտ, գէթ ըստ մասին: Յեւրոյ սորս հարաւախառն (Զ) ՀԱՔԱՆԴ, որ մասամբ կամ բոլորով կոչի և ՔԵՏԱՂՔ, և մասն համարի Չանկեալօրի. նոյն դարձեալ և ընդ Միկայ կոչի ՍԻՍՍԱԿ Ի մերոցս, աղաւաղմամբ Սիսական անուան, որպէս և ընդ Աղահէճոյ մասնակցեալ՝ միւս ՔԵՏԱՂ կոչի: Ի հարաւոյ և յեւրոյ հարաւոյ սոցին կան Է և Ը, ԲԱՂՔ և ՉՈՐՔ, որոց սահման զժուարորոչ է, քանզի և ի նախնու մեծութիւն մի գաւառ կամ վիճակ լինել Բաղաց քաջակին տոհմի, ապա տրոհեալ յերկուս, ԲԱՂՔ և ՄԻՍ ԲԱՂՔ կոչելով. պատմիչն՝ զբուն Բաղս սսէ ԱՃԷՆ կամ ԱՃԱՆՍ կոչիլ, որ և թուի արեւմտեան հիւսիսային մասն երկրին. իսկ Միւս Բաղքն՝ կոչի և ՔԱՇՈՒՆԻՔ, այլ և ՄՍԱՆՁ, և միանգամայն ի յետնոց՝ Բայրկուշատ: Իսկ Չորք՝ նոյն համարի ընդ արեւմտեան Բաղաց, զի մայրաքաղաք Թագաւորաց նորին էր Բաղաբերդ, յոր անուն եւս կոչի երկրին, որպէս երբեմն և ԳԵՂԱՔՈՒՆԻ. դարձեալ ի յետին ժամանակս երկրին ևս Բաղք և Չորք՝ յարակից սահմանորդքն՝ ԿԱՅԱՆ կոչեցան ի սակս ամուր ամուր տեղեաց և

բերդին, և բավորէն Ղափան, որով անուամբ ծանօթագոյն է ի յետին ժամանակս: — Ի հարաւոյ համօրէն Սիւնեաց առ Երասխաւ կայ (թ) գաւառն Արեւծեաց, տրոհեալ ի գանազան վիճակս, որիչ կամ խառն, ՄԵՂՐԻ, ՏԱՅՅՅՐ, ՄԱՅՐԻ, ԿԱՔԱՒԱՔԵՐԻ: — Յելից նորին առ գեւտօն է (ձ) ԿՈՎՍԱԿԱՆ, որ նոյնպէս առ յետինս պէս պէս անուամբ կամ մասամբ կոչի, ոչ միայն ԳՐԶԱՄ ըստ պատմչին, այլ և ԳՐԱՅԵՐԻ, ՉԱՂՆՎՈՒՐ, ԽՈՐԶՈՐ, ԿԵՆԱՌԶ: յետինս այս՝ ըստ ոմանց՝ թարգմանութիւն է Արեւեաց անուան, իբրու Կիլիկիոյ, արեւադէմ նշանակելով թուրքարէն: — Արեւմտեան գաւառք Սիւնեաց առ եզերք Երասխայ, են (ձԱ) ՃԱՆՈՒԿ հանդերձ ԾԱՅՊՊՈՒՆԵԱՑ ձորով, և (ձԲ) ԵՐԶԱԿ, ԱՂՆԵՍՅԱՅ՝ ըստ այլազգեաց, որ ի քաջ հնուան բովանդակիւր ի պարագրեալն իւր արդ (ձԳ) ի ՎՈՂՔՆ. ընդ սին իբրեւ առանձին վիճակք յիշին ԱԳՈՒԼԻՍ, ՈՐԳՈՒՄՑ (Օրտուպատ), ՏԱՍԻՒՆ, ՊԵԼԵՆ, ՉԻՆԱՅԱՔ. և հոչակագոյն քան զբնաւս ՎԱՆԱՅԻ, խառն ի սոցունց մասանց, որոց՝ կրելով զանուանս մեծամեծ գիւղաւանից՝ յայտնի են և գիրք: — Յայսոցիկ վերայ յաւելումք մեք ձԿ և զՆԱԽԶԱԽԱՆ գաւառ, որ ի հնուան և ըստ Խորենացոյ՝ ի Վասպուրական համարի էր. այլ անդստին ի սկզբանէ Ը դարու համարեցաւ ընդ Սիւնիս, որպէս և պատշաճ ցուցաւ ի բնական գրիցն: — Զարդիս ընդ Ռուսաց տէրութեամբ՝ երկուց նահանգաց նոցին բաժին է աշխարհս Սիւնեաց, ԵՐԵՎԱՆԵԱՆ և ԳԱՆՃԱԿԵԱՆ, այսինքն է ԵՂՍԱՔԵՐԻՍՏՈՒՅՈՒՆ, առաջնուան վիճակեալ է պարատափն Սեւանայ ծովու՝ ՆՈՐ ՊԱՅԵՔԻՍ և ԳԱՆՃԱԿՈՅԵՆԱՅ, և ՆԱԽԻՋՆԱՅ. երկրորդուան՝ բովանդակ մնացեալ մեծ և բուն մասն Սիւնեաց՝ ԶԱՆԵՍՏՈՐ կոչմամբ:

Ոչ առ ընդարձակութեան ինչ, թէպէտ և կոչիցի ՄԵՍ ՍԻՆՈՒՔ յորդումն ի Փղքուէն, (որ է մասն մի Արցախոյ և կողմն Ամարասայ), ունի այլքան յորովութիւն գաւառաց, կամ մանաւանդ մանրամասն բաժինս, այլ յաւէտ վասն նախասացեալ բարուց բնակչացն՝ սիդութեան և խորխուման, որով բազումք գլուխ ամբարձեալ տիրանային գանազան կողմանց ինքնիշխանաբար. բայց զօրէն այլոց աշխարհաց յաջողեաց և միոյ ի տերանցն (որպէս թուի բնիկ Հայկազնոյն կամ լաւ եւս զարմին Արանայ), նուաճել զայլն ընդ ձեռամբ՝ ըստ տանուտիրական օրինաց, և պերճանալ բարձրագահութեամբ, նա և ի կարգի այլոց նախարարաց և ազատաց Հայաստանեայց, և կոչել Սիւնեաց Տէր. այսպէս և յեկեղեցականին տեսչութեան՝ վերամբառնայր եպիսկոպոս մի Սիւնեաց ի վերոյ այլոց գաւառական եպիսկոպոսաց: Ի ճաչ գայ ասացելոցս և բան չըջարեական թղթոյ Սարգսի Ա կաթողիկոսի՝ ի սկզբան ԺԱ դարու (յամի 1006), յորում և զգաւառս Սիւնեաց թուէ և զթեմս եպիսկոպոսին, և ըզՆախնական ի նոսին, ասելով. « Այս իսկ են գաւառք » վիճակեալք հօտի նոցա. ՍԻՆՈՒՔ, ԲԱՂՔ, ԱՐԵՒԵԱՑ » ՏՈՒՆ, ՈՐԳՈՒՄՑ, ԱՐԳՈՒԼԻՔ, ՎԱՆԱՅ, ԵՐԶԱԿ, ՆԱԽԻՋԱՅԱՆ, ԶՈՒՂԱՑ՝ որքան Երասխայ գետն հատանէ,

» ՃԱՆՈՒԿ, ՎԱՅՈՑ ՁՈՐ՝ Խաչերոյ խոռոչն, ԳԵՂԱՔՈՒՆԻ՝  
 » ԿՈՎԱՔԱԿՈՅՆ, ԵՐԻՇԱՑ, ԶԱՂԱՑԱՅՈՐ, և ՓՈՐԱԿ ԻՍԿ  
 » բոլորովին, յորում բազում հակառակութիւնք լեալ  
 » էին, և մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթոս  
 » ղիկուքն Հայոց: Հատանէ և զսահման Աղուանից ԸՈՒՐԻ  
 » խոռն, ԾԱՐ գաւառ, ԱՂԱՆԷՔ՝ ընդ որ Աղուանոյ գետն  
 » հատանէ մինչեւ ի Քարավազին կամուրջն, և ՀԱՐԱՅԻ  
 » գաւառ. և յԵրնջակայ սահմանին ԲՕՏԻ ՁՈՐ, զոր Գող  
 » թնացիքն էին առեալ. նա և ՎԱՆԱՅ և ԳՈՂՔՆ բոլոր  
 » բովին. որոց թէպէտ եպիսկոպոս լեալ էր և կայր սա  
 » կաւ վայրացն, այլ ի ներքոյ Սիւնեաց վիճակեալ էր՝ »  
 Յայսմ բանի բաց ի կովսականէ յիշատակին ամենայն հին գաւառք Սիւնեաց, առաւելաւն հանդերձ, թէպէտ ոմանց անուանք լռելայն կամ փոխանակութեամբ. որպէս, փոխանակ Ծղկաց՝ Սիւնիք ասին, զի անդ էր ոստան Սիւնեաց, Բաղք՝ բովանդակեն և զՉորս, Զաղացածորն և այլք ընդ Գեղաքունեաց թուեալք՝ յայտ առնեն զՍոթս, որպէս և Ծար ի սահմանին Աղուանից, այսինքն Արցախոյ:

9. Ծանուցալ վերագոյն, զի թէպէտ հաւաստի է ըսկիզբն բնակութեան երկրին Սիւնեաց, մանաւանդ ի պարատափի ծովուն Սեւանայ, այլ ոչ և մեծի մասին աշխարհին, և ոչ զէպք և անցք իրաց տեղոյն, մինչ գրեալ թէ ցվերջին դար հարստութեան Արշակունեաց. որպէս զի յետ երկոցուն նախահարց ազգին (Սիսակայ և Արանայ), առաջին նահապետ՝ կամ նախարար՝ յիշի զկիսով Բ դարու Քրիստոսի, Բակուր առ ԱՏԻՐԱՆԱՅ, զորոյ զհարձ չքնաղաքեղ զՆԱԿԻՆԻԿ անուն՝ ի ժամու ընթրեաց, մի ի կոչնականէն՝ ՏՐՈՒՄ Բազրատունի՝ « յիւրն քար » յեսց ի բազմականն... և զբարձակիցսն ի բազմակա » նացն ի բաց պուղեաց... և այնպէս յիւր վանսն եկեալ, » իսկոյն ի ձի ելեալ՝ հանդերձ հարձին ի Սպեր գնաց »: — Յետ դարու և կիսոյ՝ ի սկիզբն ԳՅ՝, ի ժամանակի լուսաւորութեան Հայաստանեայց, ընդ յուղարկեալն ընդ Լուսաւորչին ի Կեսարիա, առանց անուան ի կարգի վելտասանիցն դասի իշխանն Սիւնեաց՝ յԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԷ, ըստ մերս օրինակաց. այլ պատմիչն Աղուանից (Մովսէս Կաղանկատուացի) ասէ յիշեալ եօթնեւտան բարձս, և զՍիւնեացն՝ ձԿՅ. յայտ ուրեմն զի յրագոյն էր հին օրեակ գրոցն. ուր՝ երկրորդ անգամ ի կարգի երեքտասան իշխանաց թուելոց ուղեկցաց Տրդատայ և Ս. Կրիզօրի՝ յերթն առ Կոստանդիանոս, ք դասի Սիւնեացն: Սա ընդ արիագոյնս ի նոցանէ նահատակեցաւ ի դարձին ի Կեսարիոյ՝ ի պատերազմունս, ընդդէմ քրմացն Տարսնոյ և առաջնորդին նոցա Արձանայ. և զգասալիք՝ այլ զգոռ իշխանին Հալտենից՝ Խորճէմն կոչեցելոյ, որ խորխոսայրն ի վերայ իւր, « հարեալ մրճոյն զսաղաւարտն՝ և կտրեալ » զնա ի զօրացն, փախստական արար... և հանեալ հան » դէպ իննականեան վանուցն՝ մղեալ ընկէց յերկալէն, » և իջեալ դանակաւ կտրեաց զգլուխ նորա՝: Նա ինքն և իբր առաջնորդ բանակին՝ յետ սպանման քրմապետացն՝ հնչեցոյց զփոյ պատերազմին ի խաղաղութիւն:

1 Սահեփանս Օրպելեան, ԳԼ ԾԵ:  
 2 Մասնաւոր յիշատակք գաւառաց տեսչին ի տեղագրութեան:

3 Զսոյն երկրորդէ և Օրպելեան յիւրն պատմութեան, ԳԼ ԹԻ:  
 4 Զնոր Գլակ ի Պատմութեան Տարսնոյ:



Յետ ամաց ի դառնալն ի Հոռովայ և գալ ի նոյն տեղիս ի Կուսուս, արքունի բանակաւն և Ս. Գրիգորիւ, հրամանաւ սորա կանգնեաց անդ իշխանն Սիւնեաց թալ մեծ, որոյ առաջի զպաշտօնն մատուցին. ուրանօր ի գալ և յարձակել հիւսիսական հինիցն Կեդոնհոնի, Տրդատ արքայ յիշխանս այս Սիւնեաց տայր զալ թեւ բանակին իւրոյ, որով եհար զՀոնն, և զթեւապետ աղջ գնդի նոցին ի մենամարտ կարդաց. և զերիվարս միմեանց նախ սպանեալ՝ « երկօքեան զոյգ ի վայր անկան և բուռն հաւ » ըին զմիմեանց... և աճապարեալ նստաւ ( Սիւնեցին ) » ի վերայ (այլոյ երիվարի), և դարձեալ կտրեաց զգլուխ » նորա, ձգեալ ի մահաղն, և դարձաւ » : Եւ ի վաղիւն ի միւսանդամ բաղխիլ բանակացն՝ ի նեղ անկեալ իշխանին Մոսիաց՝ յագնութիւն կարդայր զՍիւնին. « և նորա » հասեալ իրրեւ զարագաթուիչ արծուի՝ հալածեաց » զարան ի նմանէ » : Սա ինքն խնդրեալ էր ի Ս. Գրիգորէ և ընկալեալ զոմն Ասորի վարդապետ և ուսուցիչ քրիստոսական օրինաց. ընդ որում « մեծաւ ուրախութեամբ եկն յաշխարհ իւր, և զամենայն ընտանիս իւր » մկրտեաց աւազանին լուսաւորութեամբ, և կործանեաց » զամենայն բազինս կռոցն. և դարձոյց զաշխարհն ամենայն » նայն ի քրիստոնէութիւն » : Ապա ի գալ մեծին Գրիգորի քարոզութեամբ անդր, « ընդ առաջ ելեալ մեծ նախ » արարն Սիւնի, բերեալ յաշխարհ և ի տուն իւր, և » մեծածախ ընծայիւք և արքունական պատարագօք պա » տուէ զնա . և շրջեցուցեալ ընդ գաւառսն ամենայն » հաստատէ ի հաւատս . և ի պատշաճաւոր տեղիս շինէ » եկեղեցիս, և կանգնէ զնշանն տէրունի » . և յետոյ խընդրեալ առաջնորդ ազգային, ընկալաւ ի նմանէ ի Վաղարշապատ զԳրիգորիս ոմն աշակերտ նորին, « լի ամենայն » հմտութեամբ, երիտասարդ հասակաւ... տանել » վիճակեցուցանել յեպիսկոպոսութիւն աշխարհիս Սիւնեաց . աստանօր սկիզբն եղեւ եպիսկոպոսութեանս » Սիւնեաց . որ և եկեալ մեծաւ ջանիւ հաստատէր ի » հաւատս զնորածին քրիստոնէայսն » : Զիդլ է զի ոչ յիշն պատմիչք մեր զանուն այսքանոյ քաջի և մեծահաւատ նախարարի . այլ պատմիչ մի Վրաց յիշէ, ոչ զիտեմ զսա թէ զայլ ոք ժամանակակից՝ օտարախորթ իմն առնուամբ, Պետլուծավոր Սիւնեցի, առնթերակայ գտեալ փոխման սրբոյ կուսին Կոնստանդ, յամի 333 :

Ոչ հետեւող նմին՝ այլ և ամենեւին օտար երեւեցան իշխանք Սիւնեաց ի վերջին ամս կենաց մեծին Տրդատայ. զոր և դաւաճանել կամելով ընդ այլոց ոմանց անզգամաց, սաղբանօք Սասանեանն Շապուհոյ, իրրեւ խոյս ետ ծերունի Արշակունին ի գաւառն Եկեղեաց, « զկնի նորա » զնացին մանաւանդ ազատքն Սիւնեաց, որք առաւել » հրամանակատարք Շապուհոյ լինէին, վասն աշխարհին » իւրեանց խաղաղական մնալոյ . յորոց և խոցեալ լինի » թագաւորն, որպէս թէ յանգէտս ուստեք դիպեալ պա » տահեաց նետն » : Զէր համախոհ նոցին որ առ որդուով մեծին Տրդատայ նահապետն Սիւնեաց, Վաղիւնակ առնուն, սիրելի խորովու, որում ետ սա ի կնութիւն զմա,

1 Բուզանդ, Գ. Թ :  
 2 Բուզանդ, Գ, Գ :

տաղ դուստր Բակրոյ ապստամբ բղեջխին Աղձնեաց՝ սպանելոյն, և զտունն Աղձնեաց, և արար « զնա բռ » դեայիս, և պայազատ տան նորա . ժառանգն բազմացաւ, » և հանդերձ աշխարհաւն և ամենայն ուժովն կայր բը » դեային Վաղիւնակ ի ծառայութեան արքային հանա » պազ<sup>1</sup> » . մինչեւ յետ ժամանակաց դարձաւ ժառանգու » թիւնն ի թիշա որդի Բակրոյ, զերծեալն ի կոտորածէ աղ » զատուճմին<sup>2</sup> : Վաղիւնակայ որդի թուի Անդովկ իշխանն Սիւնեաց, որ ընդ այլոց տարաւ ի Կեսարիս զՍ. Ներսէս ի ձեռնադրութիւն, և անուանի եղեւ ի բազում դէպս առ Արշակաւ Բ, պայազատեալ զՎաղիւնակ՝ նա և յիշխանութեան Աղձնեաց . քանզի սահմանակցի նորին մեծի քաղաքին Տիգրանակերտի, այն է Սմաղայ, քաղաքապետ ասի լինել ի ժամանակի պաշարմանն ի Շապուհոյ, և զդէմ ունել նորա զառաջինն՝ որեւրիմ թշնամութեամբ . քանզի յորժամ մեծաւ եղեռնագործութեամբ էառ Արշակ ի կնութիւն զդուստր նորա զԵղանին Փառանծնմ, դաւաճանելով զայրն՝ զեղբորորդին իւր Գնէլ, և յետոյ Շապուհոյ առ ի ձգել զԱրշակ յիւր հաւատարմութիւն՝ կամէր զիւր դուստրն տալ նմա ի կնութիւն, ըստ Բուզանդայ պատմութեան, կասկածեալ հօրն ընդ անարգանս դատեր իւրոյ թագուհոյ՝ խորամանկեալ և կաշառեալ բազում ոսկով զհաւատարիմս երկոցուն թագաւորացն՝ ուժացոյց զնոսա ի միմեանց, և արկ թշնամութիւն և պատերազմ ի միջի նոցա, որով ոչ փոքր վտանգեցաւ աշխարհս Հայոց : Բայց այլ պատմիչք ( Աղուանից և Սիւնեաց ) այլ իմն պատճառս տան թշնամութեան Անդուկայ ( եթէ նոյն նա իցէ ), միանգամայն և նշանակ սէգ և խորատ բարուցն . զի ի նուաճել Շապուհոյ զաշխարհս մեր՝ յետ գերութեանն Արշակայ, քննեալ զկարգ բարձից նախարարացն Հայոց, ըստ գրոց Ագաթանգեղեայ, հրամայեաց Անդովկայ ունել ի խնջոյն՝ զ՝ճր գահ . « և նա » հպարտացեալ ոչ ինչ ճաշակեաց . և զգացուցին թա » գաւորին վասն այնր . ոչ ինչ փոյթ լինէր նմա » : Եւ իրրեւ դէպ լինէր յայնմ ժամանակի՝ Խաղարաց արշաւել ի սահմանս Պարսից, և Շապուհոյ զօրաժողով եղեալ յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իւրով, հանդերձ իշխանօքն և զօրօք Հայոց՝ խաղալ ընդդէմ նոցա, գրեալթէ թա » փուր թողով զաթոռանիստն իւր զՏիգրան քաղաք, խորհուրդ քաջայանդուզն կամ յուսահատ վրիժու արկ ի միտս իւր Անդովկ, և հատուածեալ յարքունի բանակէն « զօ » ղաքն իւրովք՝ հազար ութսուն (կամ հազար եօթնհա » ղուր<sup>3</sup>) արամբք, ժիր և քաջազնաց երիվարօք հասա » նէր ի Տիգրան, և զզօրսն թաքուցանէր արտաքոյ քաղա » քին. ( և սպա մուծեալ ի ներքս )... առին զզանձ ոսկոյ » և արծաթոյ անհամար, և գոհարս ակունց պատուակա » նացն, և զաւարն բազմազին, և զոր ինչ բառնալն կա » ռացին ի թագաւորական տանէ և յամենայն մեծամե » ծաց տանց՝ աւար առեալ յոյժ անբաւս . ժողովէ զա » մենայն ի Բաղարբերդ, և զամենայն զաւառացն իւր » դարմանս անասնոց այրել հրամայէր . և զոր ինչ ու » տելի է մարդոյ ի բերդն հաւաքեալ, և զէն, օճառս և

3 Եւստ է թէ երկաթազիր առուիք գրեալ էր թիւն ի կն օրե նակին, զոր ոմն ՌԶ ընթերցեալ է, և այլ ոմն ՌԶ :


» կազմած» հեծելոց . և տուեալ հրաման Անդոկայ՝ ա .  
 » մենայն Սիւնեաց փախչել, և գտունս և զհամբարս այ .  
 » բել . . . ցրուեցան ընդ ամենայն երկիր . և ոչ զք իշխէր  
 » զանուն Սիւնեաց ասել . և զքսան և հինգ տարի՝ յա .  
 » պալեր անմարդ կայր երկիրն այն : Ապա եկեալ Շա .  
 » պուհ . . . ի ցասմամբ ետ ամենայն զօրացն հրաման՝ ե .  
 » լանել ի Սիւնիս, գերել զխոսուն և զանասուն . և ե .  
 » կեալ ոչ ինչ գտանէին . . . ( և ոչ կարելով առնուլ զա .  
 » մուրն Բաղարբորդ, ստիպէին ) շորջ զամրոցան աւե .  
 » բել : Յայնժամ Անդոկայ պարապորդ գտեալ ժամ,  
 » թողու զբերդն, և մեծ աւարովքն անցանէ յաշխարհն  
 » Հռովմայեցոց . և անդ մեծագոյն առեալ պատիւ՝ ան .  
 » դէն մեռանի » : Իսկ Շապուհ առ քէն վրիժուն հրամա .  
 » յեալ էր զնել յարքունի դրանն « ասնդ պղնձի . . . ի մու .  
 » խրով հնոցի . և որ գայրն ի սեղին յայն՝ կոփէր ի նմա  
 » և ասէր . Սիւնեաց տէրութիւնն ընդ այս մոխիր ի վայր  
 » լիցի, և կեանք և խորհուրդ » : Այլ յաջողեաց բառ .  
 » նալ զսանդն այն և զվրէժ՝ նորին իսկ Անդովկայ որդին  
 » « սօսասարսան և գիրսասուն պերճապաճոյճն և գեղանին  
 » այն Բարիկ, գործով գովելի և հաւատով գերազանց  
 » բնաւից », որպէս գրուատէ պատմիչ տոհմին՝, մենա .  
 » մարտեալ և սպանեալ զչոնն Հոնանգոռ, որ զՇապուհ  
 » ինքն ի կուր կարգայր . և սա դարձոյց ի Բարիկ զտէրու .  
 » թիւն աշխարհի նորա, « և աւանդէ նմա պատիւ ընդ Բա .  
 » գրատունիս և ընդ Մամիկոնեանս համապատուի » :  
 » Այս յետին դէպք Բարկայ պայազատութեան՝ իրբեւ յամի  
 » 378 յինի՝ . եկաց նա յիշխանութեանն ամս քսան և մի :  
 » Յաջորդ նորա Սամ՝ ոչ էր յազգէն Սիւնեաց, այլ  
 » Գնթունի, և Սենեկապետ Բարկայ, և զամ մի կալաւ  
 » զգահ իշխանութեանն ( 399-400 . բայց ըստ բանից Բու .  
 » զանդայ թուի և նա ի նմին Սիսական տոհմէ, քանզի ա .  
 » սէ, ի նաւաճելն Մանուելի մամիկոնեանի յետ վտարան .  
 » դութեան Վարազդատայ ( 377-80 ), և ի զալ առ նա  
 » մնացորդացն « ի տանէն Սիւնեաց, պատանեակք երեք  
 » մնացեալք ի կոտորածէն Պարսից . . . և անուանք նոցա՝  
 » միւսմն Բարիկ, և միւսուսմն՝ Սամ, միւսուսմն Վաղի .  
 » նակ . և ընկալաւ զնոսս զօրավարն Հայոց Մանուէլ,  
 » և եղև նոցա սգնական, և դարձ արար նոցա յերկիրն  
 » իւրեանց, և կայոց զԲարիկ ի վերայ երկրին, և զեր .  
 » կուսն եւս ըստ իւրաքանչիւր չափու . և էր Բարիկ՝ նի .  
 » զակակից զամենայն աւուրս կենաց նորա » : Ի մեծի  
 » պատերազմին Բագաւանայ՝ ի մենամարտել ուրացելոյն  
 » Մերուժանայ, ընդ Մանուելի, և յանկանել սորա յերի .  
 » վարէն՝ « Բարիկ տէր գաւառին Սիւնեաց՝ հասանէր,  
 » նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գե .

» տինն, և ոչ կարէր յառնել . . և զՄերուժանայ զգլուինն  
 » ի բաց հատանէին » : Զդուսար Բարկայ էառ ի կնու .  
 » թիւն արքայն Արշակ Գ, որ ի Յունաց բաժնին՝ Հայոց  
 » թագաւորէր . վասն որոյ հաւատարիմ եկաց առ նմա  
 » Դարա որդին Բարկայ, կարգեալ ի նմանէ սպարապետ,  
 » և քաջութեամբ մարտացեալ ընդ Խոսրովայ Գի արեւ .  
 » երեան թագաւորի Հայոց, յերբեւ զաշտի վանանդայ,  
 » մեռաւ անդ ի պատերազմին :

Յետ Սամայ պայազատեաց Վաղինակ եղբայր Բար .  
 » կայ՝ յամս 401-410 : Առ սովաւ մեծ վարդապետն Մես .  
 » րովայ, վասն հրատարակելոյ զնորագիւտ հայերէն տաւան  
 » « ի Սիւնական աշխարհն ելանէր . և անդ աստուածասէր  
 » « հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց՝  
 » որ էր Վաղինակ անուն, բազում օգնութիւն գտեալ ի  
 » նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչև հասա .  
 » նել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց . և  
 » ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն . .  
 » « ասպ և զերկիրն Սիւնեաց դաւուք վանականաց լը .  
 » նոյր » : — Զսա յաջորդեաց նշանագոյնն ի տեարս Սիւ .  
 » նեաց, այլ ձախողակ նշանաւ, վատշուէրն Վասակ, որ .  
 » դի Բարկայ, կատարեալ օրինակ սիսական սիզութեան,  
 » կրկին մասամբք՝ լաւութեանց և յոռութեանց, որ զառա .  
 » ջինսն ծածկեցին և անջնջելի անուամբ ոռոցեցոյ կնքե .  
 » ցին » : Երիցագոյն թարգմանիչք մեր ժամանակակիցք նո .  
 » րին՝ գովութեամբ յիշեն . Խորենացի՝ լուելայն, յիշելով  
 » զփոյթ նորա, զի « անդանդաղ արձակեաց մանուկն Վա .  
 » սակ Սիւնեաց՝ տէր ( զԲենիամին թարգման ), ի ձեռն  
 » Անանիայի եպիսկոպոսի իւրոյ », առ մեծն Մեսրովայ,  
 » հնարել զտառս Աղուանից . իսկ Կորիւն՝ յայտնապէս և  
 » յերկար . « Յորում ժամանակի պարգևեալ յԱստուծոյ  
 » հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սի .  
 » սական Վասակ, այր խորհրդակալս և հանձարեղ և յա .  
 » « քայիւնաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ՝  
 » բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանա .  
 » գործ վարդապետութեանն, իրբեւ որդւոյ առ հայր՝  
 » հպատակութիւն ցուցեալ ( Մեսրովայայ ), և ծառայեալ  
 » ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան  
 » զհրամայեալսն ի գործ բերէր » : Իսկ կրսեր Թարգ .  
 » մանիչք ( Եղիշէ և Ղազար ) մեծապէս դարովն զնա  
 » վասն յետին գործոցն, և զառաջինն իսկ՝ որ ինձ երկ .  
 » բայութեան թուի, զայն՝ զոր ի դաստապարտութեան  
 » նորին յուչ առնէր նմա սենեկապետն Յազկերտի, եթէ  
 » « ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց  
 » աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ  
 » սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ, և յինքն տա .

1 Եթէ ամբ իշխանութեան յաջորդաց Անդոկայ ստոյգք իցին  
 նշանակեալք, զիբողագոյն թուի 13 ամ ասել զմիջոց անիշխանու .  
 թեան քան 25 :  
 2 Մովսէս կաղանկատ . Բ . Ա :  
 3 Ստեփ . Օրդեղեան, ժգ :  
 4 Որ և ի դէպ զայ 68 ամի թագաւորութեան Շապուհ, որպէս  
 ասէ պատմիչն Սիւնեաց . այլ ոչ համաձայնին այլ թուականք զոր  
 առ նմին կարգէ, և ոչ կաղանկատացոյն՝ որ քսան կամ քառա .  
 սուն ամա յառաջ ասէ քան զթագաւորութիւն Զարին Յազկեր .  
 տի ( 440 ), թերեւս և ոչ քսանեկինգ ամ ամպութեանն Սիւնեաց :  
 5 Բուզանդ, Ե .

6 Կորիւն :  
 7 Ըստ պատմեաց պայտէս երեւի ազգատունն Վասակայ .



» րաւ զտէրութիւնն իբրեւ քրտիկար յարքունիս » . բայց ծանուցանէ պատմիչն ( Եղիշէ ) զի այս յանցանք ոչ յիւնացան յարքունի ատենին ընդ այլ ոճիրս նորա , կամ զի ոչ էր ստոյգ , և կամ զի նախատինք հասանէին յիշատական և թագաւորին Պարսից <sup>1</sup> : Այլ ստոյգ ասի վասն գոռոզ մեծագութեան նորա , զի յորժամ աւետեաց նմա Սամ<sup>2</sup> եթէ տուաւ նմա յարքունուտ տէրութիւնն Սիւնեաց՝ յետ մահուան հօր իւրոյ , « ոչ եթէ աւետեաց ինչ » չնորէ նմա , այլ ցուրտ և ապաշնորհ պատասխանի աւարեալ նմա՝ ասէ . Բայց եթէ զիս առնէ տէր , մինչ » բնական իմ հարցն է ժառանգութիւն Սիւնեաց » . վասն որոյ և թագաւորն Պարսից ( Վրամ ) սրամտեալ՝ զՍամ կացոյց տէր Սիւնեաց , և յետ նորա զՎաղինակ : Սակայն Վասակայ էր ընդ հպարտութեանն և հնարագիտութիւն և պնդասրտութիւն , որով յաջողեաց ոչ միայն նկուն առնել զհակառակորդն , որոց զլուխ՝ իւր իսկ զստրայրն էր Վարազվաղան սեպուհ Սիւնի , ( որ և հալածեալ յաներոյն չոգաւ ի դուռն Պարսից , և նախ առաջին ընկալեալ զդեն նոցին՝ պատճառք եղև ամենայն չարեաց աշխարհիս ) , այլ և յառաջագոյն գտանել աւագութեամբ՝ քան զամենայն նախարարեանն Հայոց , մինչեւ կարգել մարգպան բովանդակ աշխարհին , որ է ասել երեսփոխան թագաւորին Պարսից . և ի վեր եւս ամբարձեալ զակնկալութիւնն՝ ի գլուխ իւր խոճոճէր նորոգել զթագ արքայութեանն Հայոց , որ միայն պակասէր ի լըրումն չքոյ տարազուն . յորժամ՝ « ըստ կարգի օրինացն » արքունի՝ արկանէր զպատուական հանդերձն , զոր ունէր ի թագաւորէն . կապէր և զպատուաւորսն , և ըզ » խորն սակեղէն դնէր ի վերայ , և զկուսակառ ձոյլ » սակի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք » պատուականօք ընդ մէջ իւր ատէր , և զգինդան յա » կանջն , և զգումարտակն ի պարսնոցին , զսամոյրան » զթիկամբքն , և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ » արկեալ . . . չքեղ և երեւելի քան զամենեանեան երեւէր » բազմութեանն <sup>3</sup> » : Յիշեցաք զայս ոչ ի բարանս նմին , ըստ պատմիչին , այլ ի ցոյց օրինի հանդերձանաց նախարարաց մերոց և տերանց Սիւնեաց <sup>5</sup> . յորոց յամենայնէ , այլ և ի պատուոյն և յառաջին գովանի անուանէն , և ի սուրբ կրօնից և ի կենաց գլխովին զրկեալ մերժեցաւ , աւաղելի կատարածիւ , որ ամենեցուն է ծանօթ մերայոց , ի պատմութեանց Փարպեցւոյն և Եղիշեայ : Սա արդարեւ ստորանկումն փայլակնաձեւ բարձրացելոյն , խոստովանի զրեալ զայն՝ « ի կշտամբումն յանգիմանութեան մեղաց » նորա . զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ՝ նզովս ի » հետ արկցէ , և մի լիցի ցանկացող զործոց նորա » , ուրացութեանն և մատնութեան . յորս զթեաց յաւէտ շարաշար ռիսութեամբն ընդ փեսային և նախանձորդին

իւրոյ Վարազվաղանայ , և անարի սիրով որդուցն երկուցուն՝ Բարկայ և Ատրնետրսեհի ( Ամիրնետրսեհ ) , զորս ստիպեալ էր թողուլ պատանդ ի դրան արքունի : Զսմա իբրեւ քառասուն ( 412-52 ) կալեալ էր Վասակայ զտէրութիւն Սիւնեաց , « և ի նմին աւուր ( մերժմանն ) զթշնա » մին նորա զսեպուհն Սիւնի զուրացողն զՎարազվա » ղան , տէր ի վերայ աշխարհին Սիւնեաց կացուցա » նէին » , զվատթարագոյնն քան զաներ իւր , որ և յերկարակեաց լեալ յիշխանութեանն ամս 25 ( 452-476 ) , « բազում արարեալ անիրաւութիւնս , և բազում մոխրա » նոցս շինեալ յաշխարհին Սիւնեաց , ի գայթակղութիւն » տանն իւրոյ , բազմաժամանակեայ տանջեալ ի դիւէ , » դաւն մահուամբ սատակեցաւ շարաշար <sup>4</sup> » :

Միւս եւս ամպարիչտ փոխանակեաց զնա ( 480-486 ) յազգէ Սիւնեաց , այլ անյայտ տոհմիւ , « անհեղեղ հակայն » Գրիգորն , որ անպարտելի էր զօրութեամբ և միշտ պատերազմէր ընդ մնացորդս Հայոց <sup>5</sup> » , յաւուրս ասլըստամբութեան քաջին Վահանայ մամիկոնեանի . մինչեւ ի միում նուագի յԼչտէ գեղ Նիրակայ՝ « հարեալ խոցէին » ( զնա ) նիզակաւ ընդ անութ կարեվէր . . . և զահաւորա » լուր ամբութիւն զինուն՝ յոր պանծացեալ յուսայր ան » օրէնն , ցելեալ վեր ի վայր թափ ընդ լեարդնն զնիզա » կատէզն հասուցանէին . որոյ դառնակող շարալուկ » հեծմամբ յաւուրս սակաւս վճարեալ զոգին՝ աստակէր » անխոստովան . որ պարծէրն ամբարտաւանութեամբ և » ասէր , թէ Ես՝ ընդ Վահանայ և ընդ այլ Հայերդ՝ ոչ ե » թէ նետիւ կուռիմ , այլ զղզղելով պոզեալ զբալորս » ցնդեմ , օ՛ն և անդր , ցիր և ցան արկից ձորոցդ և » դաշտացդ . . . ( Եւ իբրև ոչ զգաստացաւ ) ընկալաւ » զսատակումն ամօթոյ իւրոյ զաստիս և զհանդերձելոյ <sup>6</sup> » : Որքան դժխեմ գտաւ նա և անիծապարտ , այնքան վսեամ և երանելի՝ եղբայր նորին սեպուհն Յազը <sup>7</sup> . որ գերեալ ի Պարսից ի մարտի , վկայական մահուամբ կատարեցաւ ի Բագաւան Բագրեւանդայ , առ Նպատ լերամբ , ի 16 Հոռի ամսոյն <sup>8</sup> :

Անդրանիկն Վասակայ Բաքիկ՝ թուի վաղավախձան լեալ և ոչ հասեալ պայազատութեան , յանիրաւ բռնակալութեան երկոցուն ուրացողացն , քեռառնն իւրոյ և Գրիգորն . այլ գովի ըստ հաւուն իւրոյ հոմանուան՝ լիւնել « Լաւ այր Բաքիկն Սիւնի . . . ( որ յետ գերժմանն ի » դրանէ Պարսից , երկուցեալ՝ ըստ նմանեաց իւրոց ) ի » հոգեպանութենէ մոլեկան թագաւորին և ի կտտա » ղութենէ ամպարչտեալ ժամանակի իշխանացն , որպէս » նապաստակք ի սլացմանէ գիշակեր արժուեաց ի ծերպս » վիմաց և կամ ի մացառուտ տեղիս մայրեաց ղօղեալք » թաքչէին . կարեւոր համարէին համբերութեամբ ի » քրիստոնէական կարգի վախճանել՝ քան թէ փառա » ինդիր յաժմամբ պատահել ուրացութեան և կորըս »

<sup>1</sup> Թերևս Սամ էր դաւաճանեալն , զորմէ ասէ պատմիչն Սիւնեաց՝ վախճանեալ արքունցմամբ մուրիսեղի , այլ չստէ որդի ձեռամբ :

<sup>2</sup> Եղիշէ , է :

<sup>3</sup> Օրպելեան ( Գլ . Գ ) մեծացուցանելով զիշխանս տոհմին իւրոյ՝ ոչ միայն ասէ զնոսա մեծապէս պատուեալս ՚ի թագաւորաց Հայոց , Պարսից և Յունաց , այլ և « գաւոյս ունել արժամքի և վարսակալ ատէլ մարգարտեայ , և մատանի ունել վարազագիր ,

» նաև կօշիկ կարմիր , և մական սակի՝ ունելով ի վերայ զբեռլ զա » նուն և զպատու ցեղին » :

<sup>4</sup> Վազար Փարպեցի , ԽԶ :

<sup>5</sup> Ստեփ . Օրպելեան , ԺԷ :

<sup>6</sup> Վազար , 29 :

<sup>7</sup> Օրպելեանն կուէ զնա եղբայր կայենատիպն Գրիգորնի :

<sup>8</sup> Ըստ Վազարայ Փարպեցոյ , ՀԶ , և ըստ Յայամուրաց :

» տեան<sup>1</sup> »: — Մերձաւոր սորա, այսինքն տոհմակից թուին երկրորդն եղբարքն Բարգէն և Բակուր. զի և պարագլուխք դասին առաւինի ազատորերոյն՝ « որք կա » մաւ յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի ետուն » զանձինս ի կապանս արքունի »: և յետ արձակման իւրեանց անտի՝ Բարգէն նիզակակից եղեւ հաւատարմացն Վահանայ, վասն որոյ և առ բռնակալքն՝ զնա « անուա » նեցին ի ժամուն իշխան տէրութեան Սիւնեաց<sup>2</sup> »: և ըստ Բարկայ կոչէին և զնա « լաւ Սիւնին Բարգէն »: որ և յետ բազում անգամ առաջնորդելոյ միոյ ի թեւոց բանակին, ի մեծի մարտին զոր մղեցին ի Վիրս ընդդէմ Պարսից, յորում նահատակեցան Վասակ եղբայր Վահանայ, անկաւ և ինքն խոցեալ « ի զորացն Պարսից կա » ընկէր. զոր հեծուցեալ (Վահանայ) ի վերայ իւրոյ » նժուգի և հանեալ ի պատերազմէն ապրեցուցանէր<sup>3</sup> »: Սա իցէ թերեւս որ յետ Վրամայ յաջորդին Գրիհնի (հինգ կամ եօթն ամ), Վասակայ (մետասան ամ), Աշիրայ (ինն ամ) և երից եւս ամաց պարագայ, պայազատեաց զտէրութիւն նախնեաց իւրոց ամս տասն, յառաջին քառորդի 2 դարու: — Յառաջ քան զսոսա առկայերութեամբ Լեւոնի՝ յիշէ պատմիչն Վրաց՝ զԱրեւոմն տէր Սիւնեաց, որ ժամանակակից հանդիպի Վարազդադանայ, և երկրայելի է: — Բարգենի կամ լաւ ևս Աշիրայ՝ թուի կին Սահակիա (գուցէ դուստր Սահակայ կամ արականի), որ յետ մահուան առնն՝ ի պարագլութեան գահուն Սիւնեաց՝ տիրարար յանձնածէր. և ի մեռանել եպիսկոպոսին իւրեանց Մուշի, զեսպանս առաքեալ հրաւիրէր և բերէր յոստան իւր զկաթողիկոսն Մուշէ, ընդ առաջ ելեալ նմա « որդուով իւրով և ամե » նայն ազատագունդ հեծելքն, և բազում ամբոխիւք » քահանայիւք և տանուէրօք... և հեծուցանէ զնա » յոսկիապատ կաւս սպիտակ չորեց » և տարեալ յԵրիցու վանս, տայ ձեռնադրել զճգնաւորն Երիցուկ յեպիսկոպոսութիւն: — Սակաւուք յետ սորա կացեալ թուի և միւս տիկին Սիւնեաց Վարազդուխտ անուն, որ յառաջ քան զհայ թուականն (551) յինեալ էր զՍիոնի վանս ի Վայոց ձոր:

Յետ Բարգենի մի ըստ միովէ ի 2 դարու կարգէ Օրպելեան զյետագայս, հանդերձ որքանութեամբ ամաց իշխանութեան նոցին, այլ ոչ թուականան յորում կացին, և ասէ. « կալան զիշխանութիւնն որդի ի հօրէ պայազա » տելով, թուով քսան, ամս 333 »: այլ այս գումարի ի Բարկայ Ա մինչեւ ցՔրորոյ. հանդերձ միջոցովք պարագայ, որոց առաջին ասէ յետ Բարկայ՝ եղեալ ամս 11, և ասպա,

Յովհանն, ամս	18
Վասդուշ?	1
Գրիգոր	10
Միհր - Արտաշիր	23
Ընդ մէջ	3

1 Ղազար, ԿԳ:  
 2 Ղազար, ԿԸ:  
 3 Ղազար, ԶԳ:  
 4 Ս - Թուի « Տիգրամ մեծ նահապետ ի Սիոնիան տունէ, » որ

Տիրան <sup>4</sup>	1
Ընդ մէջ	2
Սարգէս	2
Ընդ մէջ	3
Սահակ	10
Պարսիկք	13
Գրիգոր	16
Հրահատ	16
Յովհանն	27
Քուրդոյ	18

Ի սկիզբն իշխանութեան Բարկայ որ է հաւանորէն ամս 379, յաւելեալ զ'332 ամս յաջորդացն և զպարագայ, վերջ իշխանակալութեան Քուրդոյ ժամանէ յ'711 ամ փրկչական թուականին, որ և ճշգրիտ է. այլ թիւ կամ կարգ տերանցն Սիւնեաց և ամբ իւրաքանչիւր պայազատութեանց և միջոցն՝ անստոյգք. որպէս, վասն Վարազդադանի 25 ամբ և Գրիհնի 17 ամբ իշխանութեանն (եթէ այսպէս գրեալ իցեն և ի հեղինակէն) սխալ են, և ի դէպ է միոյն տասն ամբ նուազ լինել: Գումար ամե նայն ամաց նշանակելոց ի պատմչէն, ըստ մերս օրինակաց՝ պակաս լինի իբր 10 ամբ (քան զ'332) և ժամանէ յ'702 թիւ Փրկչին: — Բայց Սերիոս պատմիչ յիշէ և այլ իշխանս Սիւնեաց յայսմ միջոցի՝ յերրորդ քառորդի 2 դարու. զՎահան, յառաջ քան զպատարեւելն Հայոց և սպանանելն զՍուրէն մարզպան (571), որ և զատուցեալ ի միաբանութենէ այլոց նախարարաց՝ « խնդրեաց » ի Խոսրովայ արքայէն Պարսից, զի տարցնն զգիւան աշ » խարհին Սիւնեաց ի Դրենայ՝ ի Փայտակարան քաղաք, » և կարգեացէ զքաղաքն ի Շահր - մար (մայրաքաղաք?) » Ատրպատականի, զի մի եւս կոչեցի անուն Հայոց ի » վերայ նորու. և կատարէր հրամանն »: Նուին ազգուրաց ոգուով և (որպէս թուի յաջորդ նորա) Փիլիպպոս Սիւնեաց Տէր՝ զօրավար իսկ եղեալ Խոսրովու Անուշաբուանայ, իբրեւ յամս 573-4, երկիցս մարտ տուեալ ընդ Հայոց « և յերկոսեան պարտեցաւ. եկաց նա (անդ) ա » միս եօթն և գնաց<sup>5</sup> »: Արդ սոցա ժամանակ ի դէպ է միջոցի 26 ամաց՝ զոր Օրպելեանն գրէ Միհր - Արտաշրի և պարագայ: Առ յետինս այս իշխան՝ գրեաց Յովհաննէս Բ կաթողիկոս (557-74) թուղթ ժողովական, կոչելով « Մեծավայելի և փառաւորելոյ Միհր - Արտաշրի Սիւ » նեաց տեառն »: Ըստ Սերիոսի՝ Սահակ Սիւնեաց տէր կեայր յելս 2 և ի սկիզբն է դարու. զի յամի 595 ընդ այլոց ոմանց նախարարաց գնաց ի դուռն Խոսրովու Ապրուէզի՝ եղբորորդի նորա Ստեփանոս, և կացեալ ամս ինչ և մղեալ զպատերազմունս թագաւորին, իբրեւ դարձաւ « պայքարէր վասն տանուտէրութեանն ընդ հօրեղբոր » իւրում Սահակայ. իսկ Սահակ գրէր ի վերայ նորա գիր » մահապարտութեան, և կնքէր մատանեաւ իւրով և » տանն եպիսկոպոսի, և մատանեօք այլ եւս իշխանաց, յի » շեցուցանելով թագաւորին զվնաս նորա ապստամբու.

յիշէ յարձանագրի ուրեմ Սոգէց գաւառի յամի 925, և ասի իւր խառնութեամբ տուեալ նորա զՎաղաւեր գիւղի կալուած եկեղեցեաց Տաթեւոյ:  
 5 Առ Սերիոսի ընթեանումք ամս եօթն, այլ սխալ է:

» թեանն: Յայնժամ հրաման ետ արքայն կապել զՍտե-  
 » փանոս և զնել ի բանտի. և գլխատեցին զնա ի բուն  
 » աղուհացն ի զատկին շարաթունն »: - Ի յետին ամս այսր  
 Բ Խոսրովու (590-628) կեցեալ է և Գրիգոր՝ որ Քա-  
 ջաց Նոռիակ կոչեցաւ. և յարքունիս Պարսից գորով եր-  
 բեմն, ի ժամ խնջոյից ի բացավայրի ( զոր նստոյ-դարպաս  
 կոչէ Օրպելեանն ), իբրեւ գիշակեր հաւ մի մեծ և սեաւ  
 ( Թռչնաքաշտ<sup>1</sup> կոչեցեալ ) կամէր ինչ յափշտակել ի սե-  
 ղանոյ թագաւորին, և ոչ որ շարժէր վանել զնա, « ապա  
 » Գրիգոր առեալ զհաստաբետ աղեղն իւր, և լայնայի՛ծ  
 » գրկօք կորովակի փրթուցեալ զնեան ի վեր յօղն՝ յոյժ  
 » բարձրագոյն, ընկէց զթռչունն ի վայր առաջի թագաւ-  
 » ւորին, աւ սեղանոյն. իսկ թագաւորն լցեալ խնդու-  
 » թեամբ՝ կոչէ յառաջ զԳրիգոր. և հրամայէ նմա զժան-  
 » րագոյնն խնդրել խնդիր. և Գրիգոր Սիւնեաց տէր ա-  
 » սէ. Տէր իմ արքայ, մինչ հրամայեցեր խնդրել՝ տացի  
 » զուստր արքայի ինձ ի կնութիւն: Եւ առժամայն կա-  
 » տարեցաւ խնդիրն, բազում և մեծ պարգեւօք և բար-  
 » ձրագոյն փառօք. և խնդացին ամենայն տունն Սիսակա-  
 » նու ». ընդ որս կանխեալ և պատմչին՝ պանծայ ընդ  
 ազգախառնութիւն տերանց Սիւնեաց և ընդ Արշակու-  
 նիս. և այլուր՝ սաէ զնոսս խառնեալ « և երբեմն ընդ  
 » Խազրաց թագաւորութեանն. և հուսկ յետոյ ընդ Բա-  
 » գրատունիս »: — Թէ այս կին ընկալաւ և զհաւատս  
 Քրիստոսի, և թէ ոյլ որ, սակայն ի զէս գայ այսմ ժա-  
 մանակի, Բիւրեղն կոչեցեալ Տիկին Սիւնեաց, որ ել  
 ընդ առաջ կայսեր Հերակլի՝ ի խաղալ նորա ի վերայ  
 Պարսից (627-8), և մատոյց նմա « գանձս բազումս և  
 » հանդերձս, ձիս և լորիս, և սպառազէնս, զրահս հա-  
 » զար, և զէնս ոսկէկոռոս չորս հազար, և սաղաւարտս  
 » հազար, և արբ պատերազմի 3000 զկնի նորա. և էր  
 » կինն գեղեցիկ և իմաստուն յոյժ »: . որ և ի դառնալ  
 կայսերն յաղթութեամբ և սրբազան աւարաւ քրիստո-  
 տակիր խաչին՝ գերեթափ արարելոյ, իբրեւ « եկեալ բա-  
 » նակեցաւ ի Գաշտին Գերատայ՝ մերձ ի քաղաքն Սա-  
 » նատրուկ Շաւարչայ, եկն դարձեալ տիկինն Սիւնեաց  
 » ընդ առաջ արքային, և խնդութեամբ երկիր եպագ-  
 » սրոյ խաչին, բերեալ պատարագս բազումս առաւել  
 » քան զառաջինն ». և խնդրեաց մասն ի կենարար փայ-  
 տէն, որ և հրաչիւք, ասեն, հատաւ ինքնին. և տարեալ  
 տիկնոջն շինեաց եկեղեցի և վանս ի Հացիւնեաց աւանի,  
 և անդ հանգոյց<sup>2</sup>: — Ոմն ի հնագոյն պատմչաց մերոց<sup>3</sup>  
 սաէ զԽոսրովայ, ի վերջին ամսն, « զՍիւնեաց իշխանն  
 » ձեռացկոծ հանել տայր՝ որպէս զնենգաւոր և զխա-  
 » բող ազգ ». ոչ յիշելով զպատճառն, զոր մարթ էր կար-  
 ժել միտումն ի Յոյնս, ընդ արեւմտեան Հայոց. այլ Գրի-  
 գոր երեւի կացեալ հաւատարիմ Պարսից՝ որպէս և ամե-  
 նայն նախորդք իւր, և վասն նոցին՝ առ Յազկերտիւ յետին  
 թագաւորաւ մարտուցեալ հազար զօրականօք իւրովք ընդ  
 Արաբացոց՝ անկաւ ի մեծի պատերազմին Վաղեսեայ  
 ընդ սպարապետին Պարսից Ռըստամայ, հանդերձ միով

որդուով իւրով, յամի 636: Յետ ամաց ինչ ի միել Արա-  
 բացոց ի Հայս և նուաճել ի հնազանդութիւն զնախա-  
 րարսն, տէրն Սիւնեաց յաջորդ Գրիգորի՝ զղէմ կալաւ  
 մարտիւ. բայց զօրավար նոցա Հապիպ յաջողեաց առ-  
 նուլ զամուր Բերդն Հայոց, որով և այլքն զիջան ի դաշն  
 հաշտութեան և հարկի<sup>4</sup>: — Յետ բարձման պետութեան  
 Սասանեանց՝ ի գալ Կոստանդնի կայսեր ի Հայս (652),  
 հնազանդեցաւ նմա և տէրն Սիւնեաց, որ թուի շրա-  
 փատ: Երջնպէս և յերկրորդում նուագին (657) միարա-  
 նեցան ընդ նմա Սիւնիք սարտուցեալք յԱրաբացոց-  
 յորում ժամանակի տէր Սիւնեաց թուի Յովհանն, որոյ  
 27 ամք համարին իշխանութեան. այլ թերեւս յայն ամս  
 կամ ընդ մէջ նորա և Քուրդոյի՝ դասելի է և Բաբգէն,  
 զոր ի կարգին ոչ յիշէ պատմիչն, այլ յետոյ ուրեմն ընդ  
 Քուրդոյի, որպէս և Կաղանկատուացին ի վարս Ստե-  
 փանոսի մեծի եպիսկոպոսի Սիւնեաց: Առ սովաւ կամ  
 զէթ յայսմ ժամանակի ( յամի 683-4 ), ի շփոթս բար-  
 ձաձգութեան ամիրապետաց՝ ապստամբեցին Հայք, ընդ  
 որս և Սիւնիք, որք և գերի վարեցին զմայր Եգիտի որ-  
 դոյ Էսէիտայ, « դստեր նախարարին Խլաթայ », ըստ ա-  
 րաբացի Պէլածօրի պատմչի:

10. ՆՈՐ ՆԱՀԱՅԵՏԷ ԵՒ ԹՅԱԳՒՈՐԷ ՍԻՒՆԵԱՑ. — Յետ  
 Քուրդոյի « Սիւնեաց տէր և իշխանաց իշխեցող » ճանաչի  
 վասակ. առ որով Մրվան որդի Մուհամմէտի ոստիկան  
 ( յետոյ ամիրապետ ) կարգեալ ի Հայս, եկն ի Սիւնիս,  
 զոր աւերել կամէր, ըստ պատմչի մերոյ. այլ վասակ  
 օգնութեամբ Բաբանայ Պարսկի բռնակալի կողմանց  
 Ատրպատականի՝ հանէ զնա յաշխարհէն, և ինքն ի նմին  
 ամի (734) վախճանի: Սակայն շփոթէ Օրպելեանն զան-  
 ձինս և զժամանակս, իբր դարու միով կանխելով զապա-  
 գայնս: — Ատրնեբսեմ որդի Փիլիպպէի՝ որ յիշի ուրիշ  
 « աստուածապահ և բնիկ տէր Սիւնեաց » կոչմամբ,  
 կեայր ի կէս Ը դարու, և յետ կիսոյն: Օրպելեանն յետ  
 վասակայ կամ Քուրդոյի ցմիւս վասակ նահապետ նո-  
 րոց իշխանաց Սիւնեաց՝ երկուս կամ երիս ազգապետս  
 եւս կարծէ ինել՝ անժանօթս ինքեան. այլ մարթ է  
 զայդոսիկ համարել զյիշեալը Ատրնեբսեմ, և համարել  
 սորա որդի մի Փիլիպպէ անուն, թէպէտ և ոչ ուրեք յի-  
 շի. այլ զի յայդ անուն կոչին հայր Ատրնեբսեմի և որ-  
 դի նոր նահապետին վասակայ, մարթ է համարել ի նոյն  
 անուն և զհայր սորա, և կարծել որդի յիշեցելոյ Ատրնեբ-  
 սեմի, և կեցեալ յետ կիսոյ Ը դարու: — Եթէ սորա որ-  
 դի իցէ և եթէ ոչ՝ ի վերջ կոյս այն դարու ի բարգաւա-  
 ճելն Բազրատունեաց և պայազատել ի Շիրակ, երեւի  
 արծարծեալ և Սիւնեացն իշխանութիւն. և վասակայ  
 միապետական իմն ձեռնբրիցութեամբ նուաճեալ զբա-  
 զում կողմանս աշխարհին՝ անուանի նոր Նախապետ տուն-  
 մին, որ դարս երիս և կէս ազգաւ պայազատեաց, հա-  
 սեալ և ի թագաւորական փառս, որպէս ցուցցէ և ազ-  
 գաշառաւեղ պատկերդ, յերկուս զատուցեալ զխաւոր  
 ոստս, յերկուց որդուց վասակայ. որ զանդրանիկ իւր

1 Եթէ չիցէ ընթեռնել թուշտուրը:  
 2 Օրպելեան, ԿԵ:  
 3 Պատմութիւն Հացիւնեաց Խաչի:

4 Յովհաննէս Մամիկոնեան:  
 5 Պէլածօրի պատմիչ արաբացի. Թերեւս փոխանակ Հայոց  
 վայոց կամէր ասել:





Փիլիպպէ՛ կարգեաց տէր ընոյն և միջակողման Սիւնեաց, զկրօնըն Սահակ՝ տէր երկրին Գեղամայ, որոյ սերունդքն կոչեցան Հայկազունք, վասն ժառանգելոյ զպարաստափն զայն Ծովուն Գեղամայ Հայկազնոյ. զորս թողում յիշատակել ի տեղագրի այնր երկրի. նոյնպէս և զայլ իշխանս ոմանս, որք տիրէին առանձին գաւառաց. քանզի, որպէս ասէ և պատմիչն, «ի ցեղէ հայկական» յորովք էին զարմբ և արինը, բայց մեղ փոյթ զգլխաւոր » գահակալ իշխանացն միայն էր »:

Արդ առ Վասակաւ նահապետաւ երկոցուն զլիսաւոր իշխանութեանց Սիւնեաց, յամի 811, Սեւադա ոմն այլազգի ի Կայսիկ տոհմէ, զոր Առաքանչան կամ Առարաւըն մականուանեն պատմիչք մեր, յետ սասպատակելոյ յայլեւայլ կողմանս Հայոց, « դառնայ ի Սիւնիս, և ամ » րանայ ի բերդատեղն աւանին Շաղատու, որ է ի գոււա » ոին Ծղկաց, և տէր Վասակ Սիւնեաց՝ ածեալ զԲա » րան ի Պարսից՝ եհար զնոսա և արար փախստականս. և » Սիւնեաց տէրն ի նմին ամի վախճանեցաւ. և նոյնժա » մայն առ Բարան զդուստրն Վասակայ Սիւնեաց տեա » ոքն ի կնութիւն... Յետ այնորիկ անհրամանակատար » եղև գաւառն Բաղաց յանօրէն Բարանայ ». որ աւե » րեաց և զԳեղամայ երկիրն և զայլս. մինչև յետ իբր եօթնեւտասն ամաց (837) քաջն Սմբատ Առանշափիկ (յԱղուանից իշխանաց) կալաւ զնա և մատնեաց ի ձեռս ամիրապետին, յորմէ և պատուեցաւ մեծապէս: — Առ պայազատ որդուով Վասակայ, այն է Փիլիպպէ, արարա » ցին իպն Խալիտ սասպատակեաց յԱղահէջ գաւառ Սիւնեաց (846-7), և յարկանելն զձեռն յաւեր եկեղեցւոյ միոյ՝ հուլածական եղև, ըստ ոմանց և սպանաւ իսկ վանողն էր Բարզէն, որպէս թուի եղբայր Փիլիպպեայ. իսկ յաղթեալն կոչի յոմանց Ապրիկոս Ջահապեան: — Յետ Փիլիպպէի († 848) մի ըստ միովէ պայազատեցին երեքին որդիք նորա, Բարզէն, (որ սպան պատերազմաւ զԳրիգոր Սուփան Հայկազնն ի կէս թ դարու), Վասակ՝ իշխանիկ մականուանեալ, և Աղոտ, ոչ սակաւ տառապեալք և տարագրեալք ի հարստահարութեան Բուղայի, և գերի վարեալք հանդերձ մարք իւրեանց ի դուռն ամիրապետին. այլ յաջողեաց նոցա յետ զարձին ի գերութենէ և սրբելոյ զաղտ ակամայ ուրացութեանն՝ օգնականութեամբ և խրատուք Աշոտոյ Բագրատունոյ (յետոյ թագաւորի), խաղաղութեամբ տիրել, և երկաւրակեաց լինել Վասակայ անդր քան զթագաւորել Աշոտոյ Բագրատունոյ (886) Ա<sup>1</sup>, և Աշոտոյ անդր քան զըսկիզբն Ժ դարու, իբրև յ'909 ամի<sup>2</sup>, որպէս գուշակի յարձանաց եկեղեցւոյն զոր կանգնեաց այրիացեալ տիկինն նորա Շուշան, առնելով նմա մեծաշուք յուղարկաւորութիւն, յոր եկն և թագաւորն Հայոց Սմբատ Ա մանայն իշխանօք իւրովք<sup>3</sup>: — Յաջորդեաց զնա անդրանիկն Սըմբատ, առեալ իւր առանձինն բաժին զՎայոցձոր և զՃահուկ գաւառս, թողեալ եղբարց իւրոց՝ Սահակայ, Բարզգենի և Վասակայ՝ զՄուղկ, զԲաղս և զայլ կողմանս, և

Փիլիպպէի՝ որդւոյ եղբոր իւրոյ (Վասակայ) զՀարանդ: Առեալ էր ինքն ի կնութիւն զՍովի դուստր Դերենկան՝ զմեծի նախարարին Արծրունեաց: Վտարանջել երբեմն (903) խորհեցաւ ի Սմբատայ Ա թագաւորէ Բագրատունեաց, և զհարկն՝ ինքնին տալ կողմնակալին Պարսից. « և » ինքն ժողովեալ զզորս իւր տասն հազար արանց զօրա » ւորաց՝ եկն եմուտ յամուրսն Վայոց-ձորոյ ». այլ ի հասանել ի վերայ նորա թագաւորին՝ քսանեւհինգ հազարօք, և Աշոտոյ տայգեր իւրոյ տեառն Արծրունեաց, միջնորդութեամբ սորին հանդարտեաց, « մինչ գալ Սահա » կայ եղբոր (իւրոյ), ընդ իւր բերելով զհարկս »: ի հըրոսել Յուսիպ ի վերայ թագաւորին Սմբատայ՝ կամէր ըմբռնել և զՍիւնին Սմբատ. այլ սա ժողովեալ զզօրսն՝ եղբարքն հանդերձ « կալաւ զանցս և զկիրճս ճանապար » հացն, և զբազումս սատակեցին ». իսպա առեալ զմայր իւր և զկին և զնու, ստնդեայ մանկամին, ամրացոյց յանառիկն Երնջակ. և ինքն գնաց յերկիր աներոյ իւրոյ, որպէս և Սահակ յիւրոյն (ի Գուգարս). իսկ Վասակ զնաց յուսով առ Յուսուփ, և խաբեալ և ի բանտ արկեալ տարեւոր ժամանակաւ ի Դուին, « յաւուր միում » ի նսեմանալ երեկոյին՝ կոչեալ յօգնութիւն զվերին » կամս, և կնքեալ զինքն՝ ասէ. Օգնեցէք ինձ Սիւնեաց » եկեղեցիք. և առեալ զսուրն պողովատիկ և ի գործ ա » ծեալ զպահապանսն դիաթաւալ կացոյց. և ինքն վա » զեալ հարուստ մի՝ գնաց, և կախեալ ընդ պարիսպն » իջաւ. և զի ունէին ծառայք նորա ձի պատրաստական, » ել յերկարն և փախեաւ... ընդ այլեւայլ ճանապարհս, » անց գնաց յամուրս աշխարհին իւրոյ »: Տիրացեալ Յուսուփայ բերդին Երնջակայ՝ գերի վարեաց զտիկնայնն ի Դուին, ուր ի բանտի մեռան Շուշան (913) և մանկիկն Սովիպ. իսկ զսա և զկինն Սահակայ՝ վարեցին յԱտրու պատական, ուստի և զերծեալք յետոյ ուրեմն եկին յերկիր իւրեանց. այսր կանխեալ հասեալ էին և արք իւրեանց և տայգերք, և լային՝ տեսանելով « քակեալ զար » քունական ապարանսն իւրեանց, աւերեալ զեկեղեցիս, » և անքնակ անապատացեալ զմեծամեծ աւանս և ըզ » գեղեցիկ դաստակերտսն, ունայնացեալ զամբարս ցո » րնոյ և խորտակեալ զզուրս գինւոյ... (այլ յետ սա » կաւուց) աւերն ամենայն փութապէս յառաջին լրու » թիւն շինութեան հասեալ լինէր յապարանս նոցա »: Միաբանեալ ապա չորից եղբարցն՝ պահանջեցին զԵրնջակ ամուր իւրեանց ի գրաւողէն՝ յամիրայէն Գողթան. և յոչն կամել նորա տալ, կոչեցին յիւրեանց թիկունս « զՍկիւթացի Թուրքս, որք խորանօք բնակեալ էին յաջ » խարհի նորա<sup>4</sup> ». և հարին զՀագարացիս. բայց Թուրքացն « խորհուրդ իմն դիւարախ ի մէջ առեալ, և միա » բան ի վերայ Վասակայ յարուցեալ դիաթաւալ յերկիր » ընկենուին (յետուստ հարեալ), և ինքեանք դէմ եղեալ » փախչէին զկողմամբք Նախիջևանու. իսկ զգիսակ գե » ղեցիկ երիտասարդին բարձեալ եղբարքն՝ ի տեղովէ » ճակատուն, անբաւ ողբովք և բարձրակառաչ աղաղա »

1 Օրդեւեան, 15, և Յովհան Կաթողիկոս: 2 Օրդեւեան, 18: 3 Օրդեւեան, 107:

4 Այս առաջին յիշատակ է Թուրքաստանեաց յաշխարհի մեբում. զորս Յովհանէս Կաթողիկոս Գաբաւանացիս կոչէ, որպէս սովոր է մերոյոց կոչել և զԳնչուս (Չինկիտէն):



» կաւ, տարեալ եղին ընդ հօրն իւրում Աշոտայ, արաւ...  
 » բեալ կոծ մեծ ի վերայ նորա »: — Յեա ամաց ինչ (933)  
 Նշոր փոխանակ առաքեալ ի Յուսփայ, խարէութեամբ  
 կալաւ և արգել ի բանտի ի Գուին՝ զՍտահակ և զԲարգէն,  
 որք խանդային միմեանց, եմուս և ի Սիւնիս. այլ տե-  
 սեալ զպատարասութիւն Սմբատայ և զամբութիւն ու-  
 տանի նորա Եղեղեաց, խօսեցաւ ընդ նմա ի խաղաղու-  
 թիւն, և առեալ փրկանս՝ արձակեաց զեղբարս նորա.  
 և այնուհետեւ միաբան սիրով կեցին: — Յեա մահուան  
 Սմբատայ պայազատեաց որդի իւր և արի և հանձարեզ  
 » իշխանն վասակ » (Գ), որպէս կոչէ պատմիչն. և զի  
 անդորրացեալ էր յայնժամ երկիրս Հայոց ի հորատու-  
 թեան Բագրատունեաց, խաղաղութեամբ թուի կեցեալ  
 և սորա ի միջոցի 958—963 ամաց, « յեա բազում իշխա-  
 » նութեանց <sup>1</sup> և զովելի գործոց »: Արագավախձան քան  
 զնա թուին եղեալ երկրորին որդիք նորա Սմբատ և Գա-  
 զիկ, որք միանգամ եւեթ յիշին <sup>2</sup>. ապա զգահերէց իշ-  
 խանութիւնն ժառանգեաց Սմբատ (Բ) որդի Սահակայ  
 հօրեղբոր վասակայ. սա առաջին թագ կապեաց ի Սիւ-  
 նիս հրամանաւ սուլտանին Պարսից, ըստ պատմիչին,  
 և բարեխօսութեամբ Սթապէկին Ատրպատականի, ա-  
 միրային Աւանայ և իշխանացն Աղուանից, զորոց զլիա-  
 ւորին զՍեւադայի դուստր՝ Դահանդուխու՝ առեալ էր  
 ի կնութիւն, և խնամեցեալ Գազկայ Ա թագաւորի  
 Բագրատունեաց, տիրապետողին և սահմանաց վայոց  
 ձորայ, տալով նմա կին զԹոռն իւր կատրամիդէ ըզ-  
 դուստր վասակայ անդրանկան իւրում. ոչ յիշի ամ  
 թագաւորելոյ նորա, այլ լեալ է յեա 963 ամի. յորում  
 իբրև իշխան միայն յիշի յարձանս. Արդ թագ կապեալ  
 Սմբատայ՝ «ճոխ և երեւելի փառք յարդարէր զարքայու-  
 » թիւնն, ըստ օրինակի ինքնակալ թագաւորաց. և յեա  
 » բազում ճոխութեանց և երեւելի արքունական գործոց՝  
 » վախճանի (իբր յամի 998), և դնի զի նորա ի մեծ  
 » սրբարանին և յաստուածաբնակ աթոռին Տաթեւոյ,  
 » բազում և աշխարհագումար հանդիսի »: Եւ պայազա-  
 տէ « զտէրութիւն նորա մանուկ որդին իւր վասակ (Գ).  
 » որ և սա մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազ-  
 » ոմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց և Բաղաց, ձե-  
 » ուամբ Տեառն Գրիգորի Սիւնեաց եպիսկոպոսի. և  
 » զեղբայր իւր զՍեւադա՝ կացուցանէ իշխան իշխանաց  
 » ազատակոյտ զօրաց իւրոց »: — Յառաջին ամս ԺԱ դա-  
 բու վախճանեցաւ բարեպալտ թագուհին Դահանդուխու,  
 և հանգուցաւ ի դրան դաստակերտի իւրոյ Ս. Ստե-  
 փանոս եկեղեցւոյ վաղաղնոյ վանաց: Ըստ պատմիչին՝  
 էր « վասակ այր քաղցր և աստուածասէր և յաջողած  
 » յամենայն գործս. որ տուեալ էր զքոյրն՝ կին Աշոտոյ  
 » ի նոյն Սիսական տոհմէ, որ էր իշխանաց իշխան ամե-  
 » նայն Գազաւորութեանս, և ունէր երկուս որդիս, Սըմ-  
 » բատ և Գրիգոր »: Սրբա մի զհետ միւսոյ պայազատե-  
 ցին և թագաւորեցին, զի չգոյր ժառանգ որդի վասա-

կայ, և թուի վախճանեալ նորա յեա առաջնոյ քառօրդի  
 ԺԱ դարու <sup>3</sup>. սրբա կոչեցան Աւագ Աշոտանսը. Սմբատ  
 արագավախձան եղև, այլ Գրիգոր յերկարակեաց, բայց  
 երկրորին եւս անդուակք. վասն որոյ ես բերել Գրիգոր  
 յԱղուանից՝ զեղբայր կնոջ իւրոյ Դահանդիսայ (զստեր  
 թագաւորացն իշխանին Սեւադայ և Սոփիայ), զՍենե-  
 քերիմ « մանուկ յայժ զեղեցիկ տեսեամբ և առոյգ հա-  
 » սակաւ, հանձարեղ և իմաստուն, նաեւ երկիրազած  
 » յԱտուռոյ. և ստանայ զսր ժառանգ իւրեանց թագա-  
 » տութեանն՝ ամս ինչ. և վախճանի և սա », որպէս  
 թուի, յերրորդ քառօրդի ԺԱ դարու. իսկ կին նորա Դա-  
 հանդուխա յամի 1118:

Առ սովաւ նուազեալ էր իշխանութիւն Սիւնեաց, որ-  
 պէս և ամենայն Հայոց, յարչաւանաց և ի տիրապետու-  
 թենէ Սէլջուկեանց. առ սուլտան սոցա Մելիք-Դահ-  
 զնացեալ Սենեքերիմայ և մեծարեալ ընդարձակեաց  
 զառձմանս իւր. ընդ որ նախանձեալ կողմնակալին Առա-  
 նայ և ոչ կարացեալ մարտիւ և պաշարմամբ տիրել ա-  
 մուր բերդին Բազաց, նենգաւ կոչեաց զնա ի ձեռն Գրի-  
 գորի Ապրիատի <sup>4</sup>. իշխանի Դերակայ, և սպան անգթու-  
 թեամբ յեւ կոյս ԺԱ դարու. թագեցաւ նա ի վահանու-  
 վանս, թողով երիտ որդիս՝ զԳրիգոր, զՍմբատ և ըզ-  
 Սեւադա, և դուստր մի կատա անուն: Յաջորդեաց  
 Գրիգոր նուազեալ թագաւորութեամբ, վասն սոսկատա-  
 կի և յափշտակութեան երկրին ի մերձաւոր ամիրայեց  
 Թուրքաց, որոց զլիաւորն Չորթման՝ սխալեալ քինու ընդ  
 Սենեքերիմայ, զի չեա ինքեան զգուստր իւր, պաշարեալ  
 էա զամուր քաղաք թագաւորութեանն՝ զկապան, այլ  
 ոչ կարաց ի բուռն արկանել և զբերդն. սակայն յեր-  
 կրորդում ամին էա զՍրտոն, և ի միւսում՝ զԲղին: Յետ  
 նորա և այլոց՝ Հարոն օմն ամիրայ « բնաշինը արար զտուն  
 » կապանին և զԱրեւիք դաւառ, և էա զբերդն կաքա-  
 » ռու և զԳարն Բազակու ». և այսպէս մի ըստ միովէ  
 զամենայն ամուր տեղիս: Զայստակ տեսեալ թագաւո-  
 րին Գրիգորի, քանզի և չունէր որդի արու, որպէս և ոչ  
 եղբայր իւր Սմբատ, « ետ ածել ի Խաչենոյ իշխանացն՝  
 » մանուկ մի, Հասան անուն, (որդի վախտաեղայ Սակը-  
 » աեանց), ի Գետաքարեացն, և ետ զգուստր իւր կա-  
 » տայն նմա ի կնութիւն, և կացոյց ժառանգ թագաւո-  
 » րութեան իւրոյ. և ինքն և եղբայր իւր Սմբատ յառաջ  
 » քան զառնուլ (Բազայ) բերդին մեռանին ՚ ՈՒՅԵ  
 » (1166) թուին »: իսկ իբրև յամի 1170 Թուրքք պաշա-  
 րէին պնդութեամբ զանառիկն Բաղարբոզ, զապաւէն և  
 զոստան թագաւորաց Բաղաց և Սիւնեաց, « Հասան՝  
 » կացոյց բերդապաւս. և ինքն առեալ զկին իւր և զըն-  
 » տանիս, ի գիշերի ել ի բերդէն, և անց գնաց ի գա-  
 » ռա և ի տուն իւր ի Խաչէն »: Յրուեցան և մնացեալ  
 իշխանքն Հայազունք յայլեալ կողմանս աշխարհին կամ  
 արտաքոյ նորին, ուր և անբոյթ կարծէին: Եւ « ահա  
 » զայս օրինակ, ասէ պատմիչն Սիւնեաց, բարձաւ տէ-

<sup>1</sup> Որովհ. ԵՍ. Թերևս զնա-Յիւնոց բնութեան էր:  
<sup>2</sup> Որովհ. Գ. կոչէ զստա որդիս « մեծ իշխանաց իշխանին վա-  
 » սակայ, որ էր իշխանոց Հայոց և Վրաց? . որպէս մեծին Սմբատայ  
 » Սիւնեաց գահերէց իշխանի »:

<sup>3</sup> Վասակ թագաւոր յիշ յարձանս և յամի 1025:  
<sup>4</sup> Վարդան՝ Վասակ կոչէ զիշխանն Դերակայ, Թերևս վասն  
 մտանութեանն, և կամ սպանութեան Սենեքերիմայ, յամի 1084.  
 այլ յարձանս յիշէ նա և յամս 1086 և 1089:

» րուժիւն Սիւնեաց և Բաղաց. և եղև վախճան տոհմին  
 » Սիսակայ և նախարարութեան Սիւնեաց. քանզի ամե-  
 » նայն որ կային յառաջագոյն՝ յաւուրս Սմբատայ և  
 » Սահակայ, իւրաքանչիւրքն՝ էր որ անզաւակ մնացին,  
 » և էր որ կիսորեայ փոխեցան. էր որ սպանան և գերե-  
 » ցան»: Եւ ունէր յայնմ ժամանակի Թագաւորութիւնն  
 Բաղաց « բերդս 43, և անուանիքն ի նոցանէ երկոտասան.  
 » և վանորայս 48, և գիւղս 1008, և մայրաքաղաք ըզ-  
 » կապանն<sup>1</sup>»: — Այլ թուի յետ մեկնելոյ Հասանայ  
 Թագաւորեցելոյ՝ ի բնիկ երկիր իւր ի խաչէն, համանուան  
 իւրոյ իշխանի որդւոյ Համտունի՝ մնացեալ տակաւին ի  
 Բաղս. որոյ որդի Համտուն Բ երթեալ ապա կրօնա-  
 ւորեցաւ յանապատի Նորալանից, առ եղոր իւրում՝  
 Տեառն Յովհաննու եպիսկոպոսի, և անդ վախճանեցաւ  
 յամի 1231<sup>2</sup>:

Գլխաւորեալ համառօտիւ զազգարսնութիւն և ըզ-  
 պատմութիւն տերանց Սիւնեաց, առաջի կացցէ աստա-  
 նօր վերստին ժամանակագրութեամբ՝ կարգ յաջորդու-  
 թեան նոցին, ի սկզբունէ Հայկազանց մինչև ի կէս ԺԳ  
 դարու.

Նախարարք եւ Թագաւորք Սիւնեաց.

Ն. Քս.	
2100	Սիսակ
150	Առան
Յ. Քի.	
150	Բակուր
301	Ա. Ա. մրցող և յաղթող քրմաց Տարօնոյ
332	Պետրոսավր?
346	Վաղինակ (Ա) առ Բ Խոսրովաւ
363	Անդովկ Պարապ 15 ամ
379	Բաբիկ (Ա) 21
400	Սամ Գնթունի 1
401	Վաղինակ (Բ)
402	Վասակ (Ա) 39
452	Վարազվսղան 15
468-470	Պարապ
471	Գրիգոր 15?
...	Արեւ
480	Բարգէն առ Վահանաւ
492	Վռամ 5 կամ 7
497	Վասակ (Բ) 11
508	Աչիր 9
517-9	Սահակիա տիկին խնամակալ
520	Բարգէն (Բ) 10
530	Յովհան 18
547	Վասդուղ 1
548	Գրիգոր 10
558	Մինր-Արտաշիր 23 (13)

570	Վահան
574	Փիլիպպոս
585	Պարապ 3
588	Տիգրան 1
590	Պարապ 2
592	Սարգէս 2
594	Պարապ 3
597	Սահակ 10 Պարապ
608	Պարսիկք 13
621 + 36	Գրիգոր, Քաջաց Նուիրակ, 16
637	Հրահատ 16
655	Յովհան (Բ) 27
683	Բարգէն (Գ)
693	Քուրդոյ 18
712 + 34	Վասակ (Գ)
735	Փիլիպպէ (Բ)
750	Ատրնետրսն 1 Փիլիպպէ (Գ)
7. . + 821	Վասակ (Գ) նոր նահապետ Սիւնեաց
822	Սահլ բռնակալ
822 + 48	Փիլիպպէ (Գ) որդի Վասակայ Նահապետի
849	Վասակ (Ե) իշխանիկ որդի Գ Փիլիպպէի
890 + 91	Աշոտ որդի Գ Փիլիպպէի
91 . .	Սմբատ Մեծ որդի Աշոտոյ
958?-83	Վասակ (Զ)
964 + 998	Սմբատ (Բ) առաջին Թագաւոր
999 + 1010	Վասակ (Է) Թագաւոր
10 . .	Սմբատ (Գ) Թագ. որդի աւագ Աշոտոյ
10 . .	Գրիգոր Թագ. եղբայր Սմբատայ
1084	Սենեքերիմ Թագ. որդի Սեւադայ
11 . . + 1166	Գրիգոր Թագ. ո. Սենեքերիմայ
1166-1170	{ Կատայ դուստր Գրիգորի եւ Հասան խաչենեցի
1170	Վերջ Թագաւորութեան Բաղաց և Նա- հապետութեան Սիւնեաց
1170	Համտուն Ա. իշխան Բաղաց
1200?	Հասան որդի Համտունի
+1231	Համտուն Բ կրօնաւորեալ.

11. Ոստան Տեարց Սիւնեաց ի հնումն էր ի Մշկաց  
 գաւառի, այլ Վասակեան հարստութիւն հաստատեաց  
 զիւրն ի Վայոց ձոր, երկրորդական զարմին թողեալ ըզ-  
 Մղուկս, որպէս յայտնապէս ասի վասն Մեծին Սմբա-  
 տայ՝ հօրեղբօր առաջնոյ Թագաւորին Սիւնեաց. իսկ սա-  
 թուի հաստատեալ զաթոռ Թագաւորութեանն ի Կա-  
 պան քաղաքի Բաղաց, առ անաթիկ ամրոցան Բաղա-  
 բերդի, որոց առանձինն իշխանք տիրէին յ'Ը—Ժ դարս,  
 յոլովք Չագիկ և Ջուանշէր անուամբ, որպէս տեսցի  
 յուրոյն տեղագրի գաւառին: Մղուկք, ըստ որում ան-  
 շուշտ և Աղահէճք մինչև ցգետն Հագարու՝ ժառանգու-

1 Ի շրջս կամ հինգ գաւառս միայն Սիւնեաց՝ որք էին ընդ իշ-  
 խանութեամբ Բաղաց Թագաւորաց՝ հազարիւ չափ գիւղից գոլով,  
 իսկ ի շրջառասան գաւառս աշխարհին 677 թուելով յանուանէ,  
 և զայն ցանկ կամարեալ յառաջ քան զԹագաւորելն Սիւնեաց,  
 Նահապետեան վարդապետ հակառակասաց կամարի գլխակէտնն.

2 Օրպէլեան, ԿԱ:

Թիւն եղեն Սահակայ եղբոր Մեծին այն Սմբատայ. իսկ Բարգեւն եղբայր նոցա տիրէր փոքու միոյ մասին, որպէս Թուի արեւելեան հարաւային կողման Սիւնեաց. մինչ Փիլիպպէ հորեղբորորդի նոցա տիրէր Հարանդ գաւառի, Չազիկեանք՝ Բաղաց, Հայկազունքն Սիւնիք՝ Կեղաքունոյ և Սոթից. և այլ մանր իշխանք՝ փոքունց վիճակաց ի կողմանս Բաղաց և Քաշունեաց. յետնոյ՝ ի կէս Թ դարու՝ տիրէր Հրահատ որդի Հայկազնոյն Սահակայ, ընդ նմին և Կովսական գաւառի, ըստ Օրպելեանի (1Թ): Իսկ արեւելեան Սիւնեաց և հարաւայնոյն (Նախճաւա նու և Գողթան) այլազգիք տիրէին. բայց Ճահուկ բաժին էր իշխողացն Վայոց ձորոյ: — Մնացին անշուշտ ի տոհմէ իշխանաց Սիւնեաց աննշանք ոմանք յերկրի նախնեաց իւրեանց և յետ մեկնելոյ Հասանայ, ընդ բունակալութեամբ այլազգեացն, այլ չեհաս առ մեզ յիշատակ նոցին. մանաւանդ զի յետ իբր քառասուն ամաց բարձման Թագաւորութեան Բաղաց, վերանորոգողք հայկական պայազատութեանց՝ Զաւրարեանքն աշխարհակալք մեր՝ Թաիեցին և զՍիւնիս յայլազգեաց, յամի 1211. և յետ ամաց ինչ Աթաբէկէն Իւանէ զմասն մի երկրին՝ զՎայոց ձորոյ և զԾղկաց՝ ժառանգեցոյց Լիպարտի՝ յՕրպելեան տոհմէ, Թուրի համանուանն դաւաճանելոյ ի Վրաց (յամի 1177). որոյ և հայրն իսկ Ելիկում արդէն տիրէր կողմանց Ճահուկ և Երնջակայ, հրամանաւ Ելտուզ ա. միրայի մեծի. իսկ զմեծ մասն մի եւս Վայոց ձորոյ՝ ետուն Հաղբակեան կամ Վարդանեան քաջարի իշխանացն՝ Վասակայ և որդւոյ նորա Պուօղի, որոց զարմ աւելի քան զգար մի փայլեաց զօրութեամբ և յինութեամբք ի Սիւնիս և այլուր, նոյնպէս և Օրպելեանցն, ցվերջ ԺԴ դարու. զորոց տեսցի յետոյ ի տեղագրին Վայոց ձորոյ, զի այն էր սեփական երկիր իշխանութեան նոցին:

Յետ համայնջինջ հրոսից աշխարհաւերն Լէնկթիմուրի, որք ըստ ասից Մեծօփեցոյն, « չուեալ ի Նախս » նաւան քաղաք և յամենայն երկիրն Սիւնեաց՝ յերկուս տասան գաւառան՝ աւերեցին, և զբազումս սպանին և զերեցին. և յետ հակառակութեանց և պատերազմաց որդւոց նորա և երկուց խոյանչան Թուրք տոհմից (Սեաւ և Սպիտակ), որք ուժաբեկ արարին զմիմեանս, յաջողեաց սերնդոց ոմանց նախայիշեալ տոհմից մերազնեայց, տանուտէրաբար ունել զվիճակ նախնեաց իւրեանց, կոչելով զինքեանս մէլիքս. որպիսիք կային և ի դրակից աշխարհին Արցախոյ՝ հարստագոյնք եւս. այլ և ի բնիկ յայսմ աշխարհի հիւսիսակողմանն, յերկրին Գեղամայ. յորոց ի սկիզբն ԺԶ դարու, յամի 1513, յուխտ եկեալ երկոտասան տանուտէրք և մէլիքք (որպէս կոչեն զինքեանս), ի Տաթեւ, ձեռնագրով հաստատէին զերկիր իւրեանց Թեմ լինել այնր աթոռոյ: — Ի նմին դարու բարգաւաճանք վաճառականութեան Հին Զուղայի և կողմանց Երնջակայ և Կողթան՝ յայտ առնեն և զչափաւոր իմն ազատութիւն և անդորրութիւն բնակչաց նոցին և մերձակայիցն, որք ոչ սակաւ վրդովեցան յարչաւանս Շահ Աբասայ և ի վարել նորա զբազմութիւն Հայոց ի Պարսս. ընդ որոց իշխանութեամբ և յետ այնր ոչ սակաւ տառապանք հասին Սիւնեաց, մանաւանդ յազաւտազուրկ և բռնաւոր իշխողացն Գարապաղու և ապրս-

տամբաց ի դրանէն Պարսից: Ի վերջ կոյս ԺԷ դարու (1693) զրէ երէց ոմն Սիւնեցի՝ զՊարսից, « իբրեւ զա » հեղ զազանն տեսլեան Դանիէլի՝ մանրեն ուտեն և զմնացորդն առ ոտն հարկանեն: Եւ եղեւ զի ի սոյն ժամանակի շարագոյն զօրագուրի ոմն եղեալ ի Թագաւորէն... մինչեւ եօթն անգամ շրջեցաւ յերկիրս Արցանից, Կանճայու, Գեղարքունեաւ, Սիւնեաց և Բարգուշատու և մասն ինչ ի Գողթնեաց. ոչ կայ առնելով ի տեղի ուրեք, և ոչ ամենեւին կասկած ունելով ի Թագաւորէն և կամ այլոց մեծամեծաց. և բազում սուտ քրիստոնեայք զսուրբ և զհմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին ընդ օրինացն Մահմէտի և միաբանեցան ընդ Պարսից. և այնքան մշտաւ և աւերս զօրեցին, և մանաւանդ որդիք անիծելոյն Վասակայ՝ Սիւնեցիք, որ բազում սուտ կարգաւորք և օրինազանց աշխարհականք, որք անուամբ միայն են քրիստոնեայք և գործովք վատթար քան զայլազգիս, և զնացեալ յարեցան ընդ զօրս նորա, և առեալ սիրեցան ընդ տմենայն երկիրս. զգաւառս, զգեօղ, զվանք, զանապատ, որք ի լերինս և որք ի դաշտս, ազգ և ազգ ստուգութեամբ պատճառս յօղելով, և ոչ մնաց տեղի որ ոչ կոչեցին ոտք նոցա. և այնպէս աւեր դարձուցին զերկիրս ամենայն և կողոպտեցին ի ստացուածոց առ հասարակ զամենեւեան, ահաբեկ և սրտակոտոր արարին. վայ և եղուկ անձանց մերոց »:

Յայսպիսեաց հարստահարութեանց ինքնազուրկս բրնաւորաց և յընդդիմամարտութեանց երկոցուն տէրութեանց Օսմանեանց և Պարսից, որք բաժանեալ ունէին զաշխարհս մեր, և ի յարձակմանց Լեկաց կովկասայնոց, զօրս ոչ կարէին կամ ոչ կամէին արգելուլ նոքա, զգուեալ յոյժ բնակչաց Առանայ և Սիւնեաց՝ ի սկիզբն կոյս անցելոյ դարու, խնդրեցին և ընկալան առաջնորդ ի Թագաւորէն Վրաց՝ զԻաւլիթ ոմն բէկ Հայկազն. և առաջնորդութեամբ նորին և զօրաւարաց իւրոց՝ որք էին Մխիթար, Պալէ, Պապ, Տէր Աւետիք և այլք, զամս իբրեւ տասն (1722-30) արութիւն մեծ քան զկարծիս ցօցին, սակաւաւոր զնդովք զդէմ կալեալ բիւրաւորաց, ամուր ապաստանի և իբր ոստան կարգելով զԲերդն Հալիձորոյ, ազատեցին զբազում վիճակս միջնաշխարհին Սիւնեաց ի լծոյ այլազգեաց, ոչ աւելի քան զ5000 ունելով զօրս, ընդ ձեռամբ քառասուն և աւելի մեծ և փոքր զօրավարաց. այլ ի մեռանել Կաթի (1738) և ի սպանանել Մխիթարայ (1730), նուաճեցան անդրէն ընդ իշխանութեամբ Օսմանեանց՝ զօրացելոց յայնմ ժամանակի ի վերայ Պարսից: Սակայն և ի վերջ կոյս անցելոյ դարու և ի սկիզբն մերոյս՝ կային տակաւին տանուտեարք պերճացեալք իշխանօրէն և արիաբար, ի բուն ի միջնաշխարհին Սիւնեաց, այսինքն գաւառաց Ծղկաց, Բաղաց և Հարանդայ, և ոմանք ի կողմանս Արեւեաց. որպիսիք, Դաւիթ Բէկ ի Տեղ, Մէլիք Քէսրամ ի Բարկուշատ, Մէլ Սաֆուազ ի Սիսիան, Մէլ Փարսաղան ի Հարանդ, Յոհան ի Մեղրի, և այլն: — Նա եւ առ մեզք յետ նուաճման աշխարհին ի Ռուսաց՝ յիշատակին պատուաւոր տանուտեարք յՕրպելեան տոհմէ, Մանուչար և Ռոստոմ և եղբարք նոցին ի Տաթեւ. յայլոց զարմից՝ Մէլիք Թան

կրի և եղբարք իւր ի Բոնակոթ. Մէլիք Ֆարամազ ի Խնձորէսք. Մէլ. Յարուժիւն ի Կորէս. Մէլ. Յովիան ֆարսադանեան ի Հարանդ, և այլն: Յայտ է զի սքաւ և զարմք սոցին և նմանիքն կացին և կան արդ ի սպասու և ի բանակի Ռուսաց տէրութեան, զնախնեաց իւրեանց հաւաստելով արութիւն քաջութեան, անմոռաց յիշատակօք աշխարհին իւրեանց:

12. ԿՐՕՆԱԿԱՆ ՏԵՍՁԹՈՒՒՆ. — Ոչինչ ընդհատ յաշխարհական ազգային տնտեսութենէ, նշանաւոր և յատկաշնորհ գտան Սիւնիք և յեկեղեցականին. զորոց, շնորհիւ պատմչին իւրեանց Ստեփանոսի Օրպելեանց և այլուստ օժանդակութեամբ՝ սննիմք գրեթէ անպակաս զլար եպիսկոպոսաց ի Գ կամ ի Է դարէ անտի ցմերս: Ըստ աւանդութեան նորին և Խորենացոյն՝ անդստին յԱռաքելոց Քրիստոսի ծագեաց լոյս կենսաբեր կրօնից ի Սիւնիս, գէթ ի մասին միում հարաւայնում, ի Գողթն, ի Բարդողիմեայ և ի նորին աշակերտաց, որպէս աւանդեսցի յուրոյն տեղագրութեան այնր գաւառի. և աղստ աղօտ մնաց ուրեք, մինչեւ յերկրորդ լուսաւորութիւն ազգիս՝ ի Ս. Գրիգորէ: Սա նախ՝ ըստ խնդրոյ հաւատացեալ սեռուն Սիւնեաց՝ ետ զԱսորի ոմն առաջնորդ, և ապա զԳրիգորիս զիւր աշակերտ և մերձաւոր. որոյ յաջորդք ցԱնանիա՝ ի սկիզբն Ե դարու, ոչ յիշին անընդհատ: — Ըստ աւագութեան՝ ի կարգի երեսնից բարձրեկալ զխաւոր եպիսկոպոսաց Հայոց՝ եօթներորդ կարգեալ էր Սիւնեացն ի Ս. Լուսաւորչէն, այլ յետոյ յառաջացաւ պատուով և բարձիւ. նախ, առ վերոյիջեալ Անանիայիւ, որում ետ, ասեն, թագաւորն Աղուանից՝ զվառ իւր ոսկեղէն գնտու՝ տանել առաջի. և ապա յերկայս Զ դարու՝ ի կաթողիկոսաց և ի ժողովոյ իսկ՝ սուաւ եպիսկոպոսին Սիւնեաց նախագահութեան պատիւ և մետրապօլիտութեան, այլ անուամբ և խաչակրութեամբ և գաւազանաւ եւեթ, և ոչ ձեռնադրութեան իշխանութեամբ. և այս վասն զերծանելոյ ի բամբասանաց Յունաց, իբրու ոչ ունել Հայոց պատրիարք, այնու զի ոչ գոյին եպիսկոպոսապետի նոցա աւագ եպիսկոպոսք ընդ ձեռամբ. վասն որոյ, ասի, զկաթողիկոսն Աղուանից՝ (որ ի մերոյս առնոյր զձեռնադրութիւն) Արքեպիսկոպոս կոչել, և զՍիւնեացն՝ Մետրապօլիտ. այսպէս պատուեալ զսոսա վասն զգօծութեան և իմաստութեան առաջնոց եպիսկոպոսացն և հպատակութեան առ կաթողիկոսն, յորմէ ընդվզել իմն համարեցան զեպիսկոպոսն Մարդպետական, որում նախ տուեալ էին զպատիւն, և նա կամէր ընդ ձեռամբ իւրով ունել գէթ երկուս կամ երիս եպիսկոպոսունս: Էլին և ընդ ձեռամբ Սիւնեաց եպիսկոպոսին՝ բնական իմն կամ քաղաքական իրաւամբք՝ եպիսկոպոսք ոմանց ի գաւառաց աշխարհին, այլ իբրեւ քորեպիսկոպոսք համարէին, և միշտ իբրեւ միապետ յիշի էպիսկոպոս Սիւնեաց երկուսասան գաւառացն. և զայս բազում անգամ յիշեն և պատուիրեն կոնդակք կամ չրկաբերական թուղթք կաթողիկոսաց ի ձեռնադրութեան նոր եպիսկոպոսաց Սիւնեաց: Յերս Ժ և ի սկիզբն

ԺԱ դարու՝ ոմանք ի թոցանէ անհնազանդութիւն ցուցին առ կաթողիկոսն, որպէս և յերս Զ դարու յերկփեղկել կաթողիկոսութեանն Հայոց, և ոչ ի նմանէ՝ այլ յԱղուանիցն առնուին զձեռնադրութիւնն և զմիւռոն. այլ ի միանալ կաթողիկոսական աթոռայն՝ միաբանեցին և նոքա. իսկ ի վերջնում նուագիս հարկ եղեւ կաթողիկոսին (Անանիայ) գալ ի Սիւնիս և ընդ բանիւ առնել զանհնազանդն և աւերել իսկ զաթոռն, մինչեւ ի զեղջ գալ և նուաճիլ. այլ առ ի պատիժ՝ բարձաւ ի նմանէ առ ժամ մի պատիւ խաչին և գաւազանին և նախագահութիւնն. և յետ ոչ բազմաց դարձեալ շնորհեցաւ (ի Սարգսէ կաթողիկոսէ): Զայսոսկ մանրամասն յիշէ պատմիչն Սիւնեաց, որպէս և զիւր ձեռնադրութիւնն յերս ԺԳ դարու և զպատուին ի կաթողիկոսէն և ի թագաւորէն՝ Բ Լեւոնէ Ռուբինեանց, « կարգեալ յաստիճան մետրապօլիտութեան, և կոչիլ Պատոֆրոնիէս՝ պատրիարքին » Հայոց », զոր մարթ էր վերապետուել անուանել: Յայնմ դարու կամ զկնի երեւին հաստատեալ օրէնքն չձեռնադրելոյ կաթողիկոս Հայոց՝ առանց հաւանութեան կամ ներկայութեան շորից զխաւոր եպիսկոպոսական աթոռոց ժամանակին, յորոց մին էր Սիւնեացն. և էր սա հաստատեալ ի Տաթեւ յ'Թ դարէ հետէ, զի յառաջն ի զխաւոր գաւառին Մղկաց և յոստանին Սիւնեաց նըստէր: Յ'ԺԳ դարու ի շինութեան Նորավանից՝ հաստատեցաւ և անդ եպիսկոպոս, որով յերկուս հերձաւ տեսչութիւնն, այլ անդրէն միապետեաց Օրպելեանն Ստեփանոս, վճռելով, մի եպիսկոպոս՝ այլ երկուս ունել նիստս, երբեմն ի Նորավանս և երբեմն ի Տաթեւ, զի մի լիցի խաւորութիւն վիճակելոցն, և զի ի խափանել կամ յաւերել միոյն՝ միւսն լիցի աթոռ միապետական: — Տեւեալ անընդհատ աթոռակալութեան եպիսկոպոսացն մինչեւ ցմերս դար, ապա յամի 1837 դադարեցուցին զայն կաթողիկոսունք Էջմիածնի, ընդ երեսփոխանի իւրեանց արքեպիսկոպոսան Երեւանու՝ արկեալ զթեմն Սիւնեաց, և փոխանորդ մի առաքելով ի Տաթեւ:

Թէպէտ եւ ըստ վերոյգրելոցս երեւին երբեմն և գաւառական եպիսկոպոսունք ի Սիւնիս, այլ ոչ միշտ և ոչ յամենեպէս. դարձեալ, ի յետին դարս նստոց եպիսկոպոսաց լինէին և մեծամեծ վանորայքն, զսեփական վիճակ կամ կալուածս նոցին հովուելով կամ ժառանգելով: Արդ ամենայն եպիսկոպոսանիստ տեղիք (գաւառք կամ վանք), զորս գտաք ի գիրս, հանդերձ նորովք որ ի ցանկին Ոսկանայ, այսպիսի են.

- 1 Սիւնիք (զխաւոր կամ միապետ եպիսկոպոսն)
- 2 Գողթն
- 3 Մղուկք
- 4 Երնջակ, Ս. Թովմաս
- 5 Մաղարդ, Ս. Ստեփանոս վանք
- 6 Վանանդ
- 7 Նախճաւան
- 8 Տաթեւ
- 9 Նորավանք

1 Φροντιστής, նշանակէր Հոգեւոր, և մի էր ի պաշտօնէից պարիաքորանին Յունաց, որոց զխաւորին հարկ էր Πρωτοφροντής

կոչել, այլ ոչ գիտեմ թէ գոյր այսու պետական կամ առաջնութեան պատուով կարգեալ ոք ի Հոգաբոյս եկեղեցայ նոցին:

10 Օճոպ  
 11 Վանավան  
 12 Խրամ. Ս. Ստեփաննոս Տարաշամբի  
 13 Աստապատ  
 14 Սեւան  
 15 Հայր Յովհաննավանք  
 16 Մաքենոց  
 17 Շողագայ վանք  
 18 Կապոյտ վանք  
 19 Հերմոնի վանք  
 20 Մեղրի  
 21 Ածպտեր? Ի Շահապունիս  
 22 Կապիս? վանք, յԵղեգնաձոր  
 23 Դերբավանք

Տասն կամ մետասան առաջինքն են յիշեալքն ի գիրս  
 Իբրեւ Քեմք, Հետեւեալքն՝ յՈսկանայ ժանուցեալք յ'Ճի-  
 դարու, յորս Սծպտերն և Կապիսն, (Carpis գրեալ լատի-  
 նարէն), անժանօթք իսկ ինձ են անուամբ և դրիւք:

Այսչափ ինչ շատ համարեալ ասել վասն եպիսկոպո-  
 սական վիճակաց Սիւնեաց, կարգեսցուք զշար գլխաւոր  
 եպիսկոպոսացն կամ մետրապօլտաց, յարմարեալ ըստ  
 կարի զժամանակացոյց թուականն, ըստ չափու ամաց  
 աթոռակալութեան իւրաքանչիւրոցն, զոր միայն նշանա-  
 կէ պատմիչն, ուղղելով ըստ կարի զկարգեալսն ի նը-  
 մանէ և յաւելլով այլուստ զմնացեալսն կամ զյետինսն:

Եպիսկոպոսունք Սիւնեաց

303 Մովսէս Տարօնացի, որ թուի Ասորին  
 320 Գրիգորիս, ամս 46 (?)  
 366 Մաշտոց, կարգեալ ի Մեծէն Ներսիսէ  
 ... Տիրոտ  
 ... Յովակիմ  
 Պարապ քսանեհինգ ամ.

415 Անանիա, կարգեալ ի Վասակայ, 42  
 458 Նուն, 8  
 466 Գաղատ, 17  
 483 Մուշէ, 36  
 519 Երիցակ, 1  
 520 Մակար, 20  
 547 Պետրոս, 10  
 556 Գիգան, 3  
 558 Վրժանէս, 23  
 580 Գրիգոր, 15  
 595 Քրիստափոր, 10  
 605 Դաւիթ, 27  
 631 Մամուկաղայ, 18?  
 645-52 Պարապ, 8

653 Արրահամ, 30  
 681 Յովսէփ, 19  
 700 Յովհան, 12?  
 ... Մովսէս, 7  
 720 Անանիա, 7  
 736 Յովհան, 9  
 736 Ստեփանոս Մեծն, 1  
 736 Յովսէփ, 13?  
 749 Յովակիմ, 17  
 764 Սաղովկ, 38  
 801 Յովհաննէս, 2  
 803 Սողոմոն, 7  
 808 Եղիա, 8  
 815 Թէոդորոս, 18  
 832 Գէորգ, 8  
 839 Դաւիթ, 17  
 856 Յովհաննէս, 10  
 866 Սողոմոն, 17  
 882 + 918 Յովհաննէս, 38  
 918 Յակոբ, 41  
 958 Վահան, 6  
 963 + 992 Աշոտ, 17 ?  
 985 Յովհաննէս, որդի Աշոտոյ, 8  
 993 Սամուէլ, 5  
 999 Յակոբ  
 ... Գրիգոր  
 1006 Յովհաննէս, 50  
 1057 Գրիգոր, 58  
 1117 + 1143 Ստեփանոս, 27  
 1143 Բարսեղ, 5  
 1149 + 1168 Գրիգոր, 20  
 1170 + 1216 Ստեփանոս, 46  
 1216 + 1251 Յովհաննէս, 36  
 Ի Նորավանս  
 1216 Յովհաննէս Կապանեցի  
 Սարգիս, 20  
 Ստեփանոս, 12  
 Գրիգոր, 1  
 Սարգիս (1285), 24  
 1251 + 1290 Հայրապետ, 40  
 1271 Սողոմոն ընդ Հայրապետի, 20  
 ? Յովհաննէս, 3  
 1286 + 1309 Ստեփանոս Օրպելեան  
 ? Շմաւոն  
 1310 Յովհաննէս Օրպէլ  
 1329 Ստեփանոս Օրպէլ, որդի Զաւալայ  
 1337 Սարգիս<sup>1</sup> և Ներսէս  
 ...

1 Օրպելեան է և սա, գուրով որդի Հասանայ և Վախախայ, և  
 եղբայր Իւանէի եւր Յովհաննու Որոտնեցոյ: Ընդ Սարգսի յիշի,  
 և պատկերաւ նկարեալ կայ ի Մամուկաղայ ժամանի գրեւոյ ի  
 Թուին 22Գ, և Ներսէս. այսպէս ասելով գրչին (Ա-իւոյ). «Մեծ  
 և ամենհրշմանիկ մետրապօլիտն և արհիական գլուխն այսմ նա-  
 նաքիս՝ Տէր Սարգիս, ինչորոշ լեալ... ի վայելումն անձին  
 իւրոյ սրբազանի և եղբորորդոյ իւրոյ Յովհաննիսի՝ կուսակրօն քա-

ն նանայի, որ բազում ժամանակս դեզերի յուսումն անտուժա-  
 յունչ նին և նոր կտակարանաց և արտաքնոցն եւս: ... Այլ և ա-  
 ղաչեմ. յիշել յամենայն սրաէ զարհիական գլուխն զՏէր Ներս-  
 սէս, և զազգայինս նորա զամենայն, զհայրն Գրիգոր, և զեղբայ-  
 ր ըն նորա Սարգիս սարկաւազն՝ ի Քրիստոս: Եւ զարձեալ կրկին  
 ազաչեմ յիշեցէք և Աստուած ողորմի տաացէք Ներսէս Բաբու-  
 յան Օրպելեանի, որ թուի որիչ յարհիական գլխոյն. սորա անունն



Faint, illegible text or a title line, possibly a header or a section title, located in the upper middle part of the page.







*St. Pollexato-Venezia*

ՍԱՐԳԻՍ ՄԵՏՐԱՊՈԼԻՏ ՍԻՆԵՆԱՅ ԵՒ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ, Ի ԹՈՒԻՆՆ 222

SERGES ET NERSÈS ARCHEVÊQUES ARMÉNIENS

PEINT PAR AVAC, EN L'AN 1337



- 1407 Առաքել, քեռորդի Գր. Տաթևացոյ
- 1422+ Ստեփանոս, որդի Սմբատայ Օրպելեան
- 1464 Ստեփանոս միւս, որդի Իւանէի? Որոտնեցոյ
- . . . Շմաւոն յազատ տանէ
- 1478 Յովմաննէս
- 1483 Ստեփանոս, եղբորորդի Շմաւոնի
- 1495-1523 Եղիշէ Օրպելեան
- 1571 Առաքել
- 1576 Ստեփանոս
- 1611 Աւետիք
- 1620-42 Մեսրոպ
- + 1651 Զաքարիա
- + 1652 Ներսէս
- 1653 Ստեփանոս
- + 1673 Մեսրոբ
- . . . Սիմէոն Ընկեղակոծեցի
- . . . Յովհաննէս Դաւանօղի<sup>1</sup>
- Զաքարիա
- Մարտիրոս Մեղրեցի
- Յովսափ Սղուերծեցի
- Առաքել Սատախ-օղի
- Կիրակոս Սղուերծեցի
- Թումաս
- Ներսէս
- Աստուածատուր Մըզմըզ-օղի
- Յովմաննէս Տաթևացի
- Մինաս Շինաթաղեցի
- Ղազար Բեղեցի
- Աբրահամ Աստապատցի + 1777
- Յովակիմ
- 1820 + 1830 Մարտիրոս Սիւնեցի
- 1837+ Սիմէոն Ուստա-քէօլէեան Տաթևացի
- . . . Թադէոս Տէր Դանիէլեան
- . . . Յովմաննէս Ասլանեանց
- 1886 Յովմաննէս Վ. Ղալամեան

- անուանս վանաց, ծանօթս և անծանօթս. ընդ նոսին կարգեալ և զգեօղս որոց անուանք վանք բառիւ բարդեալ են, համարելով այնպէս կոչեցեալ՝ վասն լինելոյ ի նոսին և վանաց:
- Աբկայ վանք.
- Ադա Անապատ (ի ցամաքակղզւոջ Արեգունոյ)
- Աճոբի վ.
- Ագուլեաց վ. Ս. Աստուածածին
- Արեւմտի վ. որ և Քարէվանք
- Աղբերք վ. տ. Գլածոր
- Աղուոյ վ.
- Ամաղու Անապատ
- Ամասրոյ վ.
- Ամենափրկիչ վ. (Զուղայի)
- Անհից Անապատ (Ս. Մինաս)
- Ապարաներոյ վ.
- Ապրակունեաց վ.
- Աստապատայ վ. Կարմիր վ. Ս. Ստեփանոս
- Աստուածածնի Անապատ (ի Յախաց-քար)
- — ի Հալիձոր (Կուսաստան)
- — ի Շինահեր (Կուսաստան)
- — ի Նորատուս (Կուսաստան)
- Ս. Աստուածածին վ. ի վայոց ձոր
- Արանց Անապատ
- Արատինից վ.
- Արարուց վ.
- Արտաւազի ապարանք, Անապատ
- Բակուրի վ.
- Բաղակու քար վ.
- Բիւրոտի վ.
- Բոլորաբերդ Անապատ
- Բըստոյ վ. Ս. Ստեփանոս
- Բրտիայրեայ Անապատ
- Գաղավանք
- Գանձափարախու վ.
- Գարավանք?
- Գլածոր (Գայլեձոր) վ.
- Գնդայի վ.
- Գեղոյ վ.
- Գէթի վ.
- Գնդեվանք. Գնդայի վ.
- Գողեվանք. Գուղավանք
- Գողջտի վ.
- Գողորեաց վ.
- Ս. Գրիգորի վ. ի վանեվան
- Դաղէի վ. Դուղէի վ.
- Դափուց վ.
- Դերբավանք
- Երիցավանք.
- Երկտասանց վ.
- Երնջակու վ. Ս. Կարապետ
- Ս. Գէորգ.

Յետինքդ որոց չկան թուականք, առաջնորդք են Տաթևու, ոմանք եպիսկոպոս և այլք ոչ. բայց անյայտ է ինձ ստոյգ կարգ յաջորդութեան սոցին և ժամանակ.

13. ՎԱՆՈՐԱՅՔ.— Մեծ վկայ կրօնական բարգաւաճանաց և բարեպաշտութեան Սիւնեաց են բազմաթիւ և նշանաւոր վանորայք աշխարհին, յորոց միայն ի թագաւորութեան Բաղաց լուսաք քառասունևութ վկայեալ ի պատմէն, այլ թուի ինձ եթէ զմեծագոյնսն եւեթ նշանակիցէ դա. և ըստ այնմ ի համօրէն Սիւնիս հարկ էր հարիւրաւորաց լինել, որոց և ոչ սակաւուց մնան ցարդ շատ կամ սակաւ աւերակք, ոմանք յայտնիք և ոմանք անյայտ անուամբ. որպէս և յիշատակեալքն ի նախնեաց՝ կէսք յայտնի են և այժմիկ և այլք ոչ, և յոյժ սակաւք ոմանք ցարդ ի շինութեան, որպէս տեսցին ի տեղագրութեան իւրաքանչիւր գաւառաց. յոր՝ մինչչեւ միտեալ՝ պատշաճ համարիմ կարգել աստանօր որչափ ինչ գտի

Սիւնեաց և ոչ յայլ յիշատակարանս. ոչ յիշին և յաջորդք սոցոմինչեւ ի սկիզբն ժիշ գարու՝ ցամա 70:  
 1. Յեթի առ թագաւորութեամբ Շահ Հիւսէինի (1694-1722):

զբեալ է ի վերայ գլխոյ միոյ յերկուց եպիսկոպոսացն նկարեւոց, միւսոցն անորոշ թաւ, այլ հաւանօրէն է Սարգիս, և յիս նորա կոչեալ Ներսէս յաթոն, զոր ոչ զաի ոչ ի կարգի եպիսկոպոսաց



Զաւաչրի վ.   
 Զուարի վ.   
 Թանախտի վ.   
 Թանատէ վ.   
 Թովմայի վ. յԱգուլիս   
 Իլկէվանից Անապատ կուսանաց   
 Լատիկ Անապատ   
 Լերինդ ? վ.   
 Լէհէվանք կամ Լոհայ վ.   
 Լուսկէվանք   
 Խաչասորոյ վ.   
 Խաչի վ. ի վանանդ   
 Խոլավանք   
 Խոտակերաց վ. Քարակոփ   
 — Հին վանք. Ուռոց քար   
 Խորուծոր Անապատ   
 Ծիծեռնավանք   
 Կալերոյ վ.   
 Կաչավանք   
 Կապից վ. վանք ?   
 Կատարոյ վ.   
 Ս. Կարապետի Աւագ Անապատ   
 Կարճեւանու վ. Ս. Ստեփանոս   
 Կարմիր վ. տ. Աստապատու և Որոտան վ.   
 Կթանոցի վ. վանական   
 Կնեվանք, Կիւնէի վ.   
 Կոթայ Անապատ կուսանաց   
 Կուռափայ ձորոյ վ.   
 Կուսանաց Անապատ ի Նորատու   
 Կուրավանք   
 Կուքի վ.   
 Կտչոյ վ.   
 Հալի ձորոյ Անապատ կուսանաց   
 Հայր Յովհաննավանք   
 Հարանց Անապատ   
 Հերմոնի վ.   
 Զեռատի վ.   
 Զիւնասարայ վ.   
 Ղօշայ վ. Յախաց-քար   
 Մաղարդայ վ. Ս. Ստեփանոս   
 Մամասայ վ.   
 Մանլեու ( Ամենափրկիչ ) Անապատ   
 Մասրուց Անապատ   
 Մաքենոց վ.   
 Մեղրոյ վ. Ս. Յովհաննէս   
 Մկրտչի վ.   
 Մցգուհի վ. Ս. Ստեփանոս   
 Յովհաննավանք   
 Ս. Յովհաննու վ. յԱստապատ   
 Նորավանք. Ամաղու   
 Նորավանք միւս ( ի Բղենս )   
 Շահապօնից վ. Ս. Աստուածածին   
 Շամբի վ. տ. Մաղարդայ վ.   
 Շաղատայ վ.   
 Շաղուագայ վ.

Շատանեայ վ.   
 ՚ Շատի վ.   
 ՚ Շատիկ Անապատ   
 Շաքէի վ.   
 Շոռոթայ վ. Ս. Լուսաւորիչ   
 Ոստին գեղլ վ.   
 Որդիշոյ վ.   
 Որոտնայ վ. Կարմիր վ.   
 Պաղաւերցի վ.   
 Պատանդավանք   
 Պետրոսկայ վ.   
 Պուհավանք   
 Պօղոսի վ.   
 Զաղաց վ.   
 Զուղայի վ. տ. Ամենափրկիչ   
 Սալկուտի Անապատ   
 Սափչի Անապատ   
 Սեւան   
 Սիոնի վ.   
 Սիւնի վ. կամ Անապատ. տ. Շաղատայ վ.   
 Սպիտակաւոր Աստուածածին. Կիւլվանք   
 Ս. Ստեփանոսի վ. տ. Մաղարդ, Շամբ, և այլն.   
 Սրկղօնից վ. Ս. Գէորգ   
 Վահանու վ.   
 Վաղանդնոյ վ.   
 Վանավան, տ. Կթանոց   
 Վանաց վան կամ վանական միւս   
 Վառիոյ վ.   
 Վարդավանք կամ վարդանեաց Անապատ   
 Վարոսի վ.   
 Տաթեու վ.   
 Տանձափարախ   
 Տեռնավանք   
 Տեւի վ.   
 Տախացքար վ. Ղօշավանք   
 Տուրայ վ.   
 Տուրտաբերդի վ.   
 Փառաւորոյ վ.   
 Քարատակի վ. տ. Աստապատու վ.   
 Քարեվանք   
 Քարկոփ. տ. Խոտակերից վ.   
 Քոնոյ վ.   
 Քոլատակի Անապատ Աստուածածինի   
 Քրօնից վ.   
 Օծոպոյ վ. Ս. Աստուածածին

Աստրիկ թերեւս սակաւք ի բազմաց: Բայց Սիւնիք ոչ յաշխարհի իւրեանց միայն, այլ և ի հեռաւորն յԵրուսաղէմ վանայէնք գտան քան զյուզիս ի տոհմից Հայոց. քանզի յիշին անդ յանուն նոցա վանք Ս. Գէորգայ, երկու եւս վանք առանց անուան՝ յարեւելակողմն Երուսաղեմի, և միւս ի Զորն Սարայի, դարձեալ միւս եւս ի Զորն Յովսափատու. նոցին շինած Թուի և Բատրոյ առնուանեալ վանքն:


Նոյն ինքն պատմիչն ( Օրպելեան ) Թուի ի վախճան գրոցն կարգեալ և զորքանութիւն հասից Եկեղեցւոյ,

այսինքն եպիսկոպոսական աթոռոյ, ըստ հին սահմանին, գիւղորայից երկոտասան գաւառաց աշխարհին, և դասակարգեալ են յանուանէ 677 գեօղք, յայտ է թէ հարկատուքն միայն, և նշանակի իւրաքանչիւր շափն, որ է քեան ցորենոյ. չիք նուազ քան զվեց բեռն, և ոչ աւելի քան զքսան, (բաց ի միոյ Շնոյնէրք աւանէ, որոյ հարկ է 24) : Ի յետին դարս նուազեալ է հարկն, մանաւանդ թէ թիւ գիւղորայից՝ աւերելոց կամ բնակելոց յայլազգեաց. և ընդ ժամանակս ժամանակս միաբանից Տաթեւու արարեալ է նոր ցուցակս հարկաց կամ տրից վանիցն, երբեմն շահի և աքսսի դրամը Պարսից, և երբեմն չափուք արմտեաց, որպէս յիշեսցի և ի տեղագրութեան Տաթեւու :

Արժանի է նկատման ոչ սակաւ վանաց կոչիլ կամ նուիրիլ յանուն Ս. Ստեփանոսի Նախավկայի, որպէս Թանահատին, Մաղարդայ կամ Շաւրի, Աստապատուն, Վաղարշոյ, Կարճանանի, Նորավանից, Բըստոյ, Մցգունի, Գլաձորոյ, և այլն. Թուի թէ մասն ինչ նշխարաց Սըրբոյն էր բերեալի Հայս, գուցէ յառաջ իսկ քան զլուսաւորին մեր, և բաժանեալ յայլեւայլ կողմանս նահանգիս, մանաւանդ յեզերս Երասխայ : — Նշանաւոր է ի սմին և յուլուութիւն Անպատից Կուսանաց, որպիսիք Շնհերոյն, Հօջանցն, Դափուց, Իլկեվանից, Նորատուաց, և այլն. յայտ է թէ ի նորգութեան վանական կարգաց յ'Ժէ դարու, հաստատեցան և Կուսաստանք, այլ և յառաջին դարս երեւին ծաղկեալ կուսութեամբ և անպատք Սիւնեաց : — Նշանաւոր հանդէս կամ երեւոյթ մի եւս կրօնական ի Սիւնիս՝ եղեւ կարգն և եկեղեցի անուանեալ Միաբանոցաց (ընդ Հոռովէականին) յԵրնջակ գաւառի և ի Ճահուկ և ի մերձաւոր սահմանս ուրեք, որ և տեւեաց անդ առանձին եպիսկոպոսու և վանորայիք աւելի քան չորս դար (ԺԴ—ԺԷ), որպէս յիշեսցի ի տեղագրի կողմանցն՝ ուրոյն դրուագաւ :

14. Ըստ եկեղեցականին յառաջագէմ գտան Սիւնիք և յիմաստասիրականն կամ ի դպրութիւնս, մինչեւ առաջին և երեւելի լինել ընդ բովանդակ Հայս՝ վարդապետարանի Սիւնեաց. զորոյ սկիզբն՝ սիրէ պատմիչն հանել մինչեւ ի սկիզբն դպրութեան ազգիս, կամ յաւուրս Մեծին Սահակայ և Մեսրոպայ, յաշակերտեալն նոցին Անանիա եպիսկոպոս. որ արդարեւ մեծ սատար եղեւ վարդապետին իւրում Մեսրոպայ, նախ յաշակերտութիւն իւրոյ աշխարհին, ապա և ի ձեռն ընկերակցի իւրոյ Բենիամինի Թարգմանչի՝ ի յօրինուած տառից լեզուին Աղուանից և Թարգմանութեան գրոց : Յետ հարիւր ամաց քաջանշան հանդիսացաւ զըլութեամբ Պետրոս եպիսկոպոս Քերդոյ մականուանեալ, զոր և մեծի Քերդողահօրն Մովսիսի ասեն աշակերտեալ, թերեւս ի յոյժ ծերութեան միոյն և ի տղայութեան միւսոյն : Նշանաւոր եղին և Վրթանէս եպիսկոպոս՝ նոյնպէս Քերդոյ կոչեցեալ՝ յես կոյս 2 դարու, և ի սկիզբն Է՞՞ Մաթուսաղայ, զոր վեհագոյն ամենայն վարդապետաց համարեալ՝ Կոմիտաս բանիբուն կամ ողիկոս, նմա հաւատաց ի դաստիարակութիւն զթէոդորոս զեղբորորդի իւր : Քաջուսումն էր և Մովսէս եպիսկոպոս յես կոյս Է դարու, յորմէ մարգեցաւ վեհագոյնն իմաստասիրաց Սիւնեաց և

անհամեմատն Ստեփանոս. աւաղ տարածամ դժպիհ մահուանն, և նուազեալ նշխարաց ինքնագիր գրուածոցն, եթէ չիցեն նմա շատ յանմահութիւն՝ Շարականքն Խաչին, և յաւէտ Աւագ օրհնութիւնք Յարութեան կարգին. ունեւոյլ յայսմ մասին (երգահանութեան) մրցակից՝ զիւր զհարազատ քոյրն Սախալաղուլսու, որոյ՝ նոյնպէս աւաղելի է մեզ կորուստ երգոցն՝ զորս նուագէր հրեշտակակերպ ձայնիւ՝ ըստ վկայելոյ պատմչաց, յորմէ չիթ մի միայն մնալ մեզ կարծի, տուն Շարականին՝ « Սրբունի Մարիամ Սափոր ոսկի », և այլն. — Վարդապետարանն անուանի հաւանելի է թէ առ սղաք էր ի նոյն ինքն ի նստոցի իշխանաց և եպիսկոպոսաց աշխարհին՝ ի Շաղատ. այլ յետ սոցա յ'Ը և յ'Թ դարս բարգաւաճեցին՝ որպէս կրօնաւորական կարգը՝ այսպէս և դպրութեամբ՝ վանորայք Սիւնեաց, մանաւանդ Մաքենոցացն (յորմէ ընծայեցան կրկին Սոլովմոն վարդապետը), որոյ հայրենաւանդ կարգաց պահպանութիւն հուշակէր և յաւուրս Ն. Շնորհաւոյ յետ կիսոյ ԺԲ դարու, որ և ետ բերել անտուստ (որպէս և ի Թեղենեաց) զօրէնս ժամասացութեանց : Իսկ ի յաջորդ դարուն՝ Գայրեձորոյ վանքն զլեաց զամենեքումք որ ի ժամանակին, և կոչեցաւ Համաշարան վարդապետաց, ուր Եսայիլ Նչեցի՝ յես դարուն և ի սկիզբն յաջորդին՝ երկար ամօք համարէր վեհագոյն վարդապետաց, և ասի 360 աշակերտաց տուեալ գաւազան վարդապետութեան, յորոց մի և Յովն. Երզնկացի, որ՝ ըստ մնացելոց գրաւոր վաստակոց նորին. գերազանց գտանի քան զիւր վարդապետն. և ունէր իսկ սա օճան և նպաստ աւաւելութեանն՝ զհետաքնին ուղեւորութիւնսն ընդ բովանդակ Մեծ և Փոքր Հայս և ի Վիրս, և զընտելութիւն լատին լեզուի, որ առ իւրեւ մուծաւ ի Փրանկիական և յաւէտ ի Դոմինիկեան քարոզչաց, յորոց և Միաբանողացն հաստատեցաւ կարգ ըստ կանոնաց Ս. Դոմինիկոսի. սղաք Թարգմանեցին աղաւաղ ոճով, ոչ սակաւ հոգեւոր և աստուածաբանական գրեան ի լատինաց, ընդ որս և զՍ. Թովմայի Ակուինացոյ գերագոյն Աստուածաբանի : — Եսայեայ ժամանակակից դրուատեալ է Բաբունացեալ և մեծ վարդապետ և հետոր կոչմամբ Տիրատուր՝ ի Հերմոնի վանս, ուր յետ դարու միոյ համարէր Յովնանէս վարդապետ՝ նոյնպէս Հետոր անուանեալ : — Յետ Գլաձորոյ համարեցաւ Տաթեւու վանքն, ի վերջ կոյս ԺԴ և ի սկիզբն ԺԵ դարուց, հուշակաւ երկոցուն վարդապետաց, Յովնաննու Որոտնեցոյ յՕրպելեանց տոհմէ, և Գրիգորի Տաթեւացոյ Եսամեծն անուանելոյ, Էին թերեւս սղաք գիտնագոյնք ի համանմանս, այլ ոչ հաւասարեալք Գլաձորոյ վարդապետացն, ոչ կարգաբանութեամբ և ոչ հայկաբանութեամբ. բայց Տաթեւու վանաց համբաւ, որպէս յառաջ քան զնոսա դրուատեալ էր յՕրպելեան պատմչէն, յերկարեաց և յետ նոցա. և ցայսօր իսկ գէթ իբրեւ զմի ի հուշակաւոր վանորէից Հայոց լսի, թէ և գրեալթէ նուազեալ յամենայնէ, այն զի խափանեցաւ և եպիսկոպոսական աթոռն Սիւնեաց, որ յանուն սորին Արտ Տաթեւու հուշակիւր ի յետին դարս. այլ զայսմանէ տեսցի ի տեղագրութեան գաւառին և վանացն, յոր արդ ժամ է մեզ բուռն հարկանել :



1. Խաչարձան Գրիգորոյ ի կոթ գեղջ (Ատիեսանսն\*) .

\*Ի տեղագրութեան Գեղարձանեաց տեսքի և ընթերցելի ծանօթութիւն և գրուած Խաչարձանիս պատրիկ :

# ԳԵՂԱՔՈՒՆԻՔ ԵՒ ՍՈՒՔ



**Մ**ԻՍԻՍՍԵՒՆ մասն Սիւնեաց՝ որ է երկիր զուգակից գաւառացն Գեղաքունեաց և Սոդից, մի ի յաւսանց է բովանդակ Հայաստանն աշխարհի, ընդարձակ և կապուտակ կոնքովն, և շրջապարտը բարձրակառոյց շրթամբ նորին<sup>1</sup>։ համայն և պայծառութեամբ օդոց և

լուրց, պողպատմամբ պորփիրեայ քարալերանց, վայրենագեղ բուսաբերութեամբ, երէտվքն և լուղականք։ Ի միջոց բարձրատափ սահմանորդ աշխարհաց Արարատայ, Գուգարաց, Ուտիոյ, Արցախոյ և բնիկն Սիւնեաց<sup>2</sup>, բարձրագոյն եւս կառուցեալ սա՛ հին հըրարուղիս ներգործութեամբք, արդ իրրեւ մեծ տաշտաձեւ բաժակ մի բիւրղափայլ՝ թուի ի բնարոյս յատակէն կարկառել յերկինս։ զխոժոռութիւն իսկ ժայռիցն՝ խաժագոյն ալեօքն զուարթացուցեալ, և զսաստկութիւն ձմերային եղանակին՝ գարնանային առոյգ ծաղկաբերութեամբն մոռացուցեալ։ Մովակն և տաշտն կամ շրջապատ երկիրն՝ զնոյն զմի ձեւ ծովուն ունին, ընդլայնեալ յարեւելից հարաւոյ, ձգելով ընդ հիւսիս արեւմտախառն,

և անձկանալով՝ տկաձեւ իմն քան ձուաձեւ։ զի նեղ ի հիւսիսային մասին, և եւս նեղանայ ի միջակողմանն, վասն երկուստեք ցամաքին անդանօր ի ներքս խաղալոյ, յարեւելից՝ բարձրակարկառ հրուանդանաւ, իսկ յարեւմտից կուսէ՝ ցածագոյն ցամաքակղզեաւ։ Իբրեւ զքառորդ կամ զ 2/3 մասն բովանդակ շրջատափ երկրին ունի ծովն այն, 1200 քառակուսի բնամղոն<sup>3</sup> տարածութեամբ, 180 շրջապատաւ, և իրրեւ 70 ընդ երկայնն, 34 լայնագոյն մասնն հարաւային, և կիսով չափ նորին՝ հիւսիսակողմն։ Եւ է իրրեւ 6000 (5996) ոտնաչափ բարձր յերեսաց Պոնտոս ծովու<sup>4</sup>։ յորմէ յայտ է զի բարձրագոյն եւս է պարատափն, զրեաթէ քան զամենայն ընդարձակ բարձրաւանդակս աշխարհիս Հայոց, քան զԿարին և զՎանանդ, և զայլս։ Իսկ շուրջ պատուար սահմանափակ լերանցն՝ երեք և չորք և հինգ հազար եւս ոտնաչափ բարձրագոյն կատարս ունի։ Են և ի միջոցի և ի կռան տաշտին լերինք անջատք կամ շեղձաձեւք, ոչ սակաւ բարձունք։ և զրեաթէ ամենեքին զհրարողիս հաստուած արտայայտեն, իբրու հասարակաց խառնարան ունելով զծովակն ծաւալասփիւռ։ « Մարթ է, ասէ ոմն » ի գիտնոց, առանց ինչ աւելազանցութեան նմանեւ » ցուցանել զլինն այն՝ կապուտակ կապերտի՝ տարածեւ » լոյ ի պորփիրեայ տաշտի<sup>5</sup>։ Լերինք պորփիրեայք՝ ամենայն հնարաւոր զանազանութեամբ կարմիր և մա-

1 ԺԿԼ (ՅԷԼ 293 քրոցն) կոչէ զիւն, Ce lac qui est une des merveilles de cette partie de l'Asie. — Եւ Քոխ ասէ, մի 'ի յաւէտ գրանչելի երեւութից Հայ աշխարհի։ Eine der interessantesten Erscheinungen Armeniens. — KOCH, Kaukas. Istm. II. 441.

2 Առաքել զատմիչ համառօտիւ սահմանագրէ, ընդ մէջ Եղեգնեանոց (Վայոց ձորոյ) և Լոււոյ (Տաշրաց) սանլով։

3 Ըստ վրակների 1126 վերտա քառակուսի։

4 Բեցուլտ ասէ 6570 անգղիական ոտս բարձրութեան։

5 On peut, sans exagération, comparer ce lac à une

nappe d'azure étendue dans une coupe de porphyre. — Montagnes de porphyre offrant tous les tons rouge-violet possibles : rochers pareils, de la forme la plus bizarre : du porphyre partout, jusque dans les constructions les plus humbles ; (une étable par exemple, dont les murs étaient en blocs de cette belle pierre) : une terre arable noire, à fond rougeâtre, formant des champs encadrés dans une steppe d'un vert sombre. Tel s'offrirait le paysage autour du moi. J'en étais émerveillé. — GILLES. Lettres sur Caucase, 293.

» նիշակային գունոց. հանգոյն նոցին և քառաժայռք ի » սպառ անհեղեղ կերպարանք. ամենայն ուրեք պոր- » փիւր, նաեւ յամենեւին անշուք շինուածս (օրինակ » իմն, յախոռ մի, որոյ որմունք կանգնեալ էին ի կոշկո- » ոց գեղեցիկ վիմիս) . հող դիւրափութիւր թխորակ » կարմրայատակ՝ կազմէ զարտորայան, զորս շուրջ պար- » փակէ երէզ թխականաչ. երեւոյթ զարմանալիքան» :

16. ԼԵՐՈՒՔ ԵՒ ԳԵՑՔ. — Թերեւս աւելի քան զհա- ռիւր որիչ կատարք լերանց իցեն ի չրջատափ պատուարի անդ և որ ի մէջերկրեայս. յորոց զգլխաւորագոյնսն յի- շեսցուք, սկսեալ ի հիւսիսոյ արեւմտակողմանն՝ որ ան- ջրպետ կայ գաւառաց Արարատեան նահանգի: Ի ծագ հիւսիսակողման լճին և հանդէպ կղզոյն Սեւանայ ամ- բառնան բլուրքն Մարտոցներ կոչեցեալ. որոց մերձագոյն ի Հր. Ել. և առաջին բարձր լեւան է Պոչոս-թեփե (Յա- գոչիս), զոր սմանք Պոչոս-թեփե (Յորենասար) գրեն, 7410՝. ի հարաւոյ նորին Գըլլ տաղ (Կարմիր Լ.), և ի- նեկ-տաղ (Կով-սար), և ի նորին հարաւոյ բարձրն Ահ- մանկան 9848՝. և ի սորին հարաւոյ բարձրագոյն եւս լեւան 10084՝, Իւշթեփեդէր (Երեք գագաթունք). բայց կռ- չին յայս անուն և այլ երեք լեռնակք գրեալքէ հաւա- տարբ բարձրութեամբ, շեղձաձեւք, հրաբղխեայ կազմու- թեամբ և մնացուածովք՝. ընդ մէջ սոցին և ծովափին ի զառիկակի անդ յերի նոցին կան և այլ լեռնաբլուրք: Երկրորդն սոքա Աճմանկան և Երագագաթնեանն՝ համա- րին բնիկ լերինք Գեղամայ, յանուն նահապետին, որ՝ ըստ Խորենացոյն՝ ի շինելն զեզր ծովակին՝ « յիւր անուն և » զլեռանն անուանէ Գեղ» . և սա ցարդ անաղարտ պահէ զձեւ երբեմն հրաբուդիս բաժակին: Միւս եւս կա- տար ի հարաւոյ Երագագաթանն՝ յոմանց նոյնպէս Ահ- մանկանկոչի և յայլոց Գանչը կեօլ (Արեան լիճ), յանուն փոքու լճակի որ ի ստորոտ նորին: Ի հարաւոյ սորին ամ- բառնայ բարձրն Դաշ-թեփե մահկաձեւ կամ պայտաձեւ սար, և ի սորին հարաւոյ արեւելից ի ծովակողմնն՝ լեռ- նակն Քեչի-գալեփ (Այծից բերդ). յորոց յերկոցուն միջի կայ լճակ Արփա-կեօլ անուն. Յետ որոց՝ Ագ-տաղ (Սպիտակ լեւան) հաւասար բարձրութեամբ Աճման- կանի: Ի սարաւանդակի ուրեմն Ագ-տաղ լերին նշմա- րին առնապատկեր անդրիք երկու, և յայլում կողման՝ գերեզմանք, և սիւնք երկու գլորեալք. զորս՝ ոչ գիտելով առ որով գիւղիւ լինել, յիշեցաք աստանօր: — Ընդ մէջ Աճմանկանայ և ծովուն՝ Արբուն-տաղ (Ոսկի լեւան) լեռնակ. ի հարաւոյ նորին Սըլան-տաղ (Մկնա- լեւան), կշիւ հանդէպ հարաւային արեւմտեան ընջոյ ծովուն. յորոյ ի հարաւագոյն մասին արեւմտակողման պատուարին՝ կան լերինքն Տեփեկեօզ (Ուղտու ակունք), Արփալան, Իրիճիդէր, այսինքն Երկեակք կամ Երկգա- գաթն 8348՝ բարձր: — Աստի և անդր լերինքն զհարա- լային պատուար տաշտին Գեղամայ բլորքն ի հեռուստ, և հրաբղխեայք են բնութեամբ, որպէս և արեւմտեայքն. նախ ի մէջերկրեայն, այսինքն ընդ մէջ Երկեկի սարիցն

և ծովուն՝ ամբառնայ մեկնակ տափազագաթն հրաբուղ- խըն, Արդա-սար կամ Ապտիչ-սար, 8753՝. այսպէս կոչեցեալ ասեն յանուն նահատակի միոյ, զորոյ կրէ և զուխտատեղի գերեզման ի գագաթանն<sup>2</sup>: Նման իմն նմին կան գերեզմանք և ի հանդիպակաց Գիտափանք կամ Գիտափանք լերին, և ի միջոցի երկոցուն՝ երկվար մի քարեղէնն<sup>3</sup>: — Ի բնիկ հարաւակողմանն ի պատուարի լեռ- նագօտոյն ամբառնայ բարձրն Ճանի-Գանտիչ լեւան, 10610՝. և ի հիւսիսոյ նորին ի բազուկ մի երկայնեալ ի ծովն կոյս՝ Ճանիկ կամ Եանիզ (Բորբաքեալ), 10474՝. երկոցուն եւս անուանք զհին հրաբղխեայ բնութիւն յայտ առնեն. յետինն կոչի եւս Շանկոչազ (Արքայաղբիւր), որպէս և որ յելից կուտէ առաջնոյն ամբառնայ՝ միւս եւս լեւան համանուն (Շահպուլազ): Ի սորա հիւսիսոյ ա- րեւելից բարձրագոյն քան զառաջինն կայ Կիզգէլ-տեփե (Ազնուածոր) 10888՝. որոյ ոտք ձգին ընդ հիւսիս ի ծո- վակողմն՝ ի հովիտս Կոթայ գետոյն, ուր ամբառնան լեռ- նակքն Գարա-եղ-խանա և Ալալաչի-թեփե. Թուի մի յայտցանէ կամ մերձաւոր լեւան մի՝ կոչեցեալ Սիւշի- մանայ-սար յԱռաքէլ պատմէ: Կշիւ յարեւելեան հա- րաւային անկեան տաշտին Սիւնեաց ամբառնայ Տիք-Փի- լաքան կամ Տիքձե փիլիսոսքեւտ, և յարակից նմին Տիք-Մի- նիլի-քենտ. յելից նոցին Գըլլ-տաղ, Թուի ինձ առա- ջինն կոչեցեալ՝ Կորայ կամ Կորակայ-քար, յոր անուն յիշի գեօղ մի կամ երկու՝ տուեալ ի կալուածս Վանա- վանու, որ կայ յեզր Կոթայ գետոյն, որպէս ցուցցէ տե- դագրութիւնն: — Ի հարաւոյ սոցին առանձնակ իմն ամբառնայ պարատափ փոքր, հաւանօրէն Փորակն յի- շեցեալ ի Սարգսէ կաթողիկոսէ, իբր 10 մղոն ընդ եր- կայնն (Մ. — Ել.) և կիսով չափ ընդ լայն, և Թուի յա- ռաջն երբեմն ծովակ եղեալ, զի տանիւ չափ լճակք են ի նմին, որոց մեծագոյն Ալաճ-կեօլ կոչի, իբր երկու մղոն ընդ երկայնն, և շատք՝ առուք հաղորդին ընդ Բ- րեարս: Ի լճէ անտի մեծէ ելանէ առու մի Մաքենոցաց գետոյն, և առ նմին ամբառնայ շեղձաձեւ յիջեալ հրա- բուդիս լեւան Ալաճ-կեօլ Երարսին? — պաշ կոչեցեալ: Թուին երկուք ի սոցանէ կոչեցեալքն Գիտափանաց ծով և Արարափանաց ծով յարձանս Վանեվանայ: — Աստի ընդ արեւելս դառնայ պատուար լերանցն, յորս համա- րին ոմանք մշտաձիւն գագաթունս լինել<sup>4</sup>. և են լերկ և մերկ պորփիւր քարաժայռք: Եւ նախ ի հարաւակողման անդ՝ լերինքն կոչին յանուն Քեթի աւանի. և ապա ի վեր ընդ Հս. Ել. խաղալով, փեայ-պաձար? լեռնակ- փեօլիչ տաղ, և Գըլլ-գալեփ, բարձրագոյն քան զմեր- ձաւորսն, Ռարսասայ հայկական անուամբ, զոր օտարք յեղեալ են յ'Ուտուլ-պասար: Յարեւելագոյն անկեան տաշտին ամբառնայ բարձրն Գունկոչ տաղ<sup>5</sup> 10373՝. և յարեւմտից Հս. նորին Ազճա գոչ. և այսպէս ընդ Մ. Հ. խաղալով մի ըստ միոյ՝ Շիլ-գայա, Սատանախայ (կամ Սադանախայ), Գարա-արխայ, 9488՝, Շահ-տաղ, եր- կայնաչար լեռնագօտի՝ որ զմիջին և զանձկագոյն մասն

1 In deren Umgebung allenthalben mächtige vulca- nische Auswürflinge, worunter auch glasiges Krater — gestein wie Pechstein, Perlstein und Obsidien mit weis- sem Bimstein, vorkommen. — WAGNER, Ararat, 41.

2 Տիւպուա, Գ. 510: 3 Արբիւր, Գ. 452: — Տէր Աւետիսեան, 39: 4 Տիւպուա: — Քոխ, Կովկաս, Բ. 441: 5 Ի ոռու աշխարհացուցի գրի Թիւ-լ-տ-լ:

ծովուն պարսպէ, յորում պարու ամբառնայ Այրաձէ, 8187', յարեւելից Ատա-թփիէ ցամաքակղզւոյ. և ի Հս. Մ. նորին կիւղէր-տաղ լեռնակ. ի սորա Մ. Գիրքիքի տաղ, 8462'. մերձ նմին Օձաղ-տաղ. յորմէ և անդր զհիւսիսային արեւելեան մասն ծովուն զրեաթէ անընդմէջ պատեն լերինք անջրպետք սորա և Միափոր գաւառի Ուտիոյ, որոց զխաւոր է Սոռզ-պուշագ 8112', և մերձաւորն ի Հր. Շիշ-թփիէ. մերձագոյն ի հիւսիսային արեւելեան ունջ ծովակին՝ Մարալըձա լեռնն ի Հս. Ճապոտիկ գեղը, 8022'. և յարեւելեան հիւսիսային անկեան տաշտին ֆեօմիւրիչ, 6982'. — Աստի մինչեւ ի Յլապուին, յորմէ սկսաք զլեռնագրութիւնս, չիք լեռնն, զի ընդ այս միայն կողմն գիլանի երկիրն և խառնի ի դաշտավայր Նիգ գաւառի Այրարատայ, և ընդ այն արձակէ գառուն Չանկի՝ զօժանդակն Հրազդանայ. միակ առու ելեալ ի ծովէն, ըստ ոմանց՝ բնութեան ինչնին գործեալ նմա զելն, և ըստ այլոց՝ ձեռին մարդոյ օժանդակեալ ի նոյն, վասն որոյ և Սուտ Չանկի կոչեն:

Փոխանակ միոյն այնորիկ փոքրաքանակ արտաՀոս ջրոյ՝ 26 գետակք համարին՝ մտանել ի Ծովն. յայտ է թէ հզօրագոյնքն ի հարաւոյ կուսէ, ուր ընդարձակ են ափունք տաշտին, և նուազունք յարեւելից՝ ուր անձկազոյն է սահմանն, և պատուար լերանցն զրեաթէ ի վերայ ալեացն կարկառի: — Առաջին գետ որ ի հիւսիսոյ կուսէ ի կողմանէ Ուտիոյ մտանէ ի ծովն՝ կոչի Պարզ-չայ (Չկնագետ), և թուի ի համանուն լճակէ ուստեք ելանել, ի վարաժնունեաց դաւառի, արտաքոյ երկրիս Գեղամայ, զսա կոչնէք Ճապոտիկ գետ, քանզի և այժմ յոմանց կոչի ի ռամկական անուն զեղն, Չիպուզու: Արեւմտակողմանն մեծագոյն գետ է Գաւառագետ, յանուն այժմեան զխաւոր աւանի գաւառիս, ուրանօր և միանայ յերից գետակաց, այսինքն են Գանձակայ գետ, Գոշիլի, և Տիշի-գարտաշ, և անցեալ ընդ Նորատուս թափի ի ծովակն, յանձկագոյն մասին անդ նորին. յառաջագոյն կեօք-չայ կոչի յայլազգեաց, հանգոյն ծովուն. — Չագայ գետակը երկու, որք յիրար անկեալ երթան ի ծով. մի ի սոցանէ կամ որիչ վտակ մի թուի Արամիսանի ջուրն. — Երկրորդ ջուրն, այսպէս կոչեցեալ վասն անցանելոյ ընդ կամրջածեւ քարայրիւ, յորոյ վերայ անցանեն կարաւանք: — Շորագայ գետն, իջեալ յԱթուն տաղ լեռնէ. — Կողայ կամ Կողակայ գետ յանուն ձկանց ծովուն, յԱրզլասարէ իջեալ, հանդերձ Արիտ օժանդական՝ որ յԱրջալան և ի հարաւային Աճմանկան լերանց իջեալ թափին ի հարաւ-արեւմտեան ծոց ծովուն. նոյնպէս և որ յաջմէ նոցին և յարեւելից՝ փոքրիկ վտակն Եղնանիստ կամ Էզնանիստ. և յերից սորա՝ Կորայ գետն, օժանդակօքն Ատիւսանս, Արի կամ Այրի չայ, զոր ասեն այսպէս կոչեցեալ վասն յոլով քարայրից լերանցն, յոր սակս և Մարալըձանի կոչն թուրքք: — Կզնուտների գետ, զի յերկուց վտակաց միացեալ, և յայլազգեաց Գարանլըգ-չայ կոչին Վերին և Ստորին.

սքա ի հարաւոյ կուսէ յարեւմտից յարեւելս գնալով թափին ի ծովն. — Վարդենոնց գետն՝ թուրքոյնու կոչեցեալ յայլազգեաց. — Գորատակու գետն՝ որ է ըստ այլազգեաց կիւղէր-տեղի. — Կորիկ գետակ (Ալիչալու), որ և կրանոց ըստ նախնեաց, և վաղագոյն եւս կոչեցեալ Վանախնոց ձորակ. — Մարքենոց գետն (Գորլ փանք-չայ կամ Երափուզու) համարի երկայնագոյնն գետոց Գեղամայ, և չէ աւելի քան զ35 բնամղոն. — Ի հարաւային արեւելեան ծոց ծովուն թափի հզօրագոյնն գետոց տաշտին, Սոռից գետն՝ Մեզրէ կոչեցեալ զարդիս, երկուստեք ժողովելով բազում գետակս օժանդակս. որպիսիք են յաճեկէն (ի հարաւոյ)՝ Ալանից գետակն, Կարմիր-աղբիւր (Գորլ-պուշագ), Կարմուռ-չուր (Գորգպուշագ), Վասակաշէնի ջուր (Խօշպուշագ), ֆեթի և Արաշտ գետակք (Թամուռ պուշագ). — յաջմէն (ի հիւսիսոյ)՝ գետակքն Նիշարոց և Չարսագաձորի, և այլք մանունք եկեալք ի կողմանց ֆեօլանի կոչեցեալ հանգրուանաց Թուրքաց: Այս ամենայն գետակք որք յաջմէ և յաճեկէ Սոռից գետոյն՝ թափին նախ ի շամրուտ լճակ մի սակաւուք տարանջատ ի ծովէն, և անդուստ միանոյ մտանեն ի ծովն. — ՅԱրեւունի կողման երկրիս՝ ըստ անձկութեան նորին յայտ է զի և մանունք են գետակք, և կոչին յանունէ գիւղորայից. ի հարաւոյ արեւելից ընդ հիւսիս գնալով՝ Շիշչայս կամ Շիշթփիէ, Կուշ՝ որ ցուցանէ զհին կուշկուսիք գեօղ Սոռից, Շրնիփուր կամ Շամփուր կամ Շնիփուր, ճիլ կամ ճիշ, Արտաշուձ, Գետիկ (Արպուշագ) և Դրախտիկ (Թօխուճա), հիւսիսագոյն վտակ Արեւունուոյ:

17. ՄՈՎ ԳԵՂԱՄԱՅ. — Յայսքանեաց բազմաթիւ և ի մշտահոս գետակաց՝ ծովն Գեղամայ, ըստ մանր հաշուի գիտնոց ոմանց, ընդունելով աւուր աւուր 33,000,000 քառակուսի ոտնաչափ ջրոյ, և արձակելով միայն ի Հըրազդան 432,000՝ քառակուսի, զարմանս ածէ հանապաղ ի նմին չափու կալով, և ոչ ըստ սահմանն արտաքս ելանելով և ողողելով. ընդ որ հիացեալ բնագիտաց՝ համարին առատապէս կամ սաստիկ շոգիանալ և յամպ լուծանիլ ջուրցն. քանզի և յաճախ տեսանի մառախուղ մակաւասար զերեսօքն, և այսու նուազէ յաւելուածն և ի հաւասարութեան մնայ: Սակայն բնակք կղզւոյն Աւանայ և Գեղարունեաց՝ երկար տեսութեամբ վկայեն, զաղտնի իմն օրէնս ունել Ծովուն, պարագայիկ ամբարձման և զիջման, կամ աճման և նուազման. և ընդ այս չիք երկրայել. քանզի բազում գէպք ակներեւ ցուցին և ցուցանեն զնշանս վերացման և ցածման ջուրցն, ըստ որոց մերթ ծածկին և մերթ մերկանան ժայռքն և եզերք, և երեսք իսկ ցամաքակղզեաց. մերթ խափանեալ անշարժ մնան ջրաղացքն. և մերթ ստիպին բնակք զտունս և զարտորայս պատուպարել ի յորդութենէ ջուրցն հոտանաց. այլ տակաւին ոչ է ճշգրտեալ (կամ մեզ ծանուցեալ) ժամանակ և չափ այլայլութենէ ծովուն. զոր ոմանք երկմարդաչափ ասեն բարձրանալ կամ ցածնուլ, այլք

1 Ոմանք ասեն մինչև 30 և 35. զի կէսք միայն զբերանս կամ զուստն թուեն, և կէսք նաև զհզօր գետակիցսն ուրոյն գետս հաճարին: Մարիէ ասէ 13 գետ, Ժիւլ աւելի քան 20, Տիւպուս՝ 55, Գեթի՝ 40. Չաքար Գուլասպեան, 26. Շահխաթունեան, 24:

2 One of the characteristics of the lac is the constant array of clouds by which it is surrounded, caused by the evaporation, which returns again in frequent showers. — MORIER, 337.

կրկին և եւս առաւել. իսկ զժամանակն՝ ոմանք տասն ամ ասեն և այլք քսան կամ չորեքտասան զվերանալոյն և զցածնըլոյն: Կարծիք են այլոց՝ ստորերկրեայ գնացս և ելս օւնել չուրց ի զանազան կողմանս, և վարարել ըզգետս Արարատեան նահանգին և զԱրցախոյ: — Ոչ է ինձ յայտ ճշգրիտ չափ խորութեան զանազան կողմանց ծովուն. այլ այս ինչ, զի արկեալ երբեմն Ռուսաց լար ի միջակողմանս և իջուցեալ Չափս 80, ոչ գտին զյատակն:

Առ բարձրութեան դրից երկրին՝ ի ձմերանի զուգախառնութիւնն իջանէ ց-200 Ռէոմ. շատ կամ սակաւ պագին չուրքն և երբեմն բովանդակ մակերեւոյթ ծովուն՝ ոչ սակաւ թանձրութեամբ, մինչեւ հետիոտս երթեւեկել ընդ այն: Սաստկասառոյց եղև պաղու մի ծովուն յամի 1660. քանզի կարի ցրտային ծանր ձմեռն եղև, « և » պաղեցաւ ծովն Գեղամայ և Սեւան կղզին որ է ի մէջ » ծովուն. սորին բնակիչքն՝ որքան ամուր էր պաղն, զբ » րեսօք պաղին երթ ային և գային. և յորժամ թուլացաւ » պաղն՝ ոչ բառնայր զմարդ. յայնժամ կամեցան չարդել » զսառն, զի ճանապարհ արարեալ արտաքս գայցեն ի » ծովէն: Վասն որոյ առաջնորդ վանից կղզւոյն Բար » սեղ անուամբ վարդապետ՝ էառ ընդ իւր զմէկ արեղայ » և զմի սարկաւազ և զերիս աշխարհականս, մտին ի » տուփ և սկսան կոտորել զպաղն, և կոտորելով հա » սին ի կէս ծովուն. յայնմէտէ սկսաւ հնչել հողմն » ուժգին, և կամեցան յետս դառնալ ի կղզին. ոչ ե » թող հողմն, որ ալեօք չուրցն զկոտորեալ սառն բե » րեալ՝ բառնայր ի վերայ տփոցն, որով ծանրացեալ » տուփքն՝ անցին ի ներքոյ սառին, և սուզան ի ծովն վար » զպայեան և արեղայն և երկու աշխարհականք. իսկ » սարկաւազն և մէկ աշխարհականն փրկեցան ի հեղձ » մանէ ողորմութեամբն Աստուծոյ: — Այս եղև յա » առաջնում աւուր ապրիլի, ըստ ժամանակագրին, յորմէ » առեալ աւանդէ Առաքել վարդապետ. իսկ Մարտիրոս » Գալիի համառօտիւ ասէ. « Ապրիլ ամսոյ Ա. կարի ցուրտ » եղև. ծովն Գեղամայ պաղեցաւ, և ոմանք ի մէջ ծո » վուն պաղասուզեալք կթխեցան » — Բամին 1834՝ յու » բուռն ճանապարհորդէր հետաքնինն Տիւպուս, ի 4 փե » բրուարի ամսոյ պաղեալ էր բովանդակ երես ծովուն, և ի սակաւ աւուրս գնայի եղեալ ոտից: Ի զէպ էր յաճա » խագոյն և թանձրագոյն եւս սառնամած լինել նմին, ե » թէ չէր մրրկաց և սաստկաշունչ հողմոց ստէպ յուզեալ » զայն: Սաստկագայն հողմն յարեւելից շնչէ, ի Սողից » կողմանէ, վասն որոյ և յայս անուն կոչի, իսկ հիւսի » սայինն՝ Բօլ, որ անտառային նշանակէ. արեւմտեանն՝ » Դաչտի քամի, զի յԱրարատեան դաշտէն գայ. հարա »ւայինն՝ Չրնիկիցերոս քամի, յանուն գեղջ միայ Վայոց » ձորոյ: — Ի հանգարտութեան ժամանակի ականակիտ և » պայծառ են չուրքն, և յոյժ կապուտակ երեւին, նաև ի » բարձանց և ի հեռուստ գիտելով. վասն որոյ և պատշա »

ճեցուցին նմա Թուրքք զկողումն կեօքէ տէրես կամ կեօքէ տէրից, Կապոյտ կամ Երկնագոյն ծով. իսկ Պարսք կոչեն Տերեայի Շիրին, Գեղեցիկ կամ Քաղցր ծով. և այս նա և ի սակաւ քաղցր որակութեան չուրցն. զոր ոմանք ասեն բարեհամ որպէս զլաւագոյնս յաղբ » րաց. իսկ այլք ոչ նոյնպէս ի մերձավայրս ափանցն, ի » բրեւ ի սակաւ խառնրոց օտար տարերաց, կամ հանքային » չուրց որ ի յատակէ արեւելակողմանն վերարդինն՝ 3. Ե » մանք ասեն և քարացուցիչ բնութիւն ունել չուրցն 3:

Պատուականագոյն քան զչուրսն և ի չուրսն՝ են բնակք նորին և բերք, այսինքն՝ Չրնիքն, հաշակեալք համեղութեամբ և զանազանեալք տեսակօքն. ըստ այսմ՝ ծով » եզերեայ բնակիչք և կղզեբնակքն աւանդութեամբ համա » րին երկոտասան ազգս ձկանց ուրոյն ուրոյն անուամբք. » որք են, կողակ, պարարտ և համեղ և առատ քան զայլս, » և ծանրութեամբ աւելի քան զերկու կշիս (kilog.). որ և » յաճախ գտանի ի գետս կամ ելանէ ընդ նոյնս ի վեր, և » մտանէ ի չրագղան, և անտի ասեն յԵրասիս եւս. աղած » սորին ընտրելագոյն համարի քան զթարմն: Ոմանք ըզ » ձագօ կողակի՝ և այլք այլ տեսակ ձուկն համարին զԵրա » պուսն կամ զԵրասիտ կոչեցեալ. — Իշխանաձուկն, որոց » պատշաճ համարի ոմն արդարանալ անուանն՝ վասն մե » ծութեան մարմնոյն, զի լինի աւելի քան զ15 կշիս. ըստ » մեծութեանն և համեղ է, և որսացեալ լինի յամարանի » այլք համարին այսպէս կոչիլ նմին կամ վասն յաճախելոյն » յԻշխանագետն, և կամ վասն որ առ գետովն այնուիկ » գերեզմանի և մահարձանի իշխանի ուրուք նահատակի » ի կողմանս Գուգարաց Խրանուշա կոչի սա, քանզի լինի » առատ ի Խրամ գետ. իսկ ըստ բնախօսից՝ է Cyprinus, » և ըստ Փոսանկաց Carpe, զոր կուլտէնչուստ՝ հայախառն » անուամբ զանազանէ Cyprinus Capoeta. Եւ սորա ձագ » կարծի կարապետիկն կոչեցեալ ձուկն, որ ըստ այլոց ո » րիչ տեսակ է: — Անասն, Աղինձան, Բեխուս, Իբրու թէ » մուղս կամ պերեւեչտս ունելով. հարկ է թէ իցէ սա » յազգէ Իշխանաձկան, զի այսպիսու մն նշանակեն բնա » խօսք մուղուստ տեսակ յազգի Cyprinus barbuz ձկանց, » որ է ըստ Փոսանկաց Barbe.— Չախաձուկն, Պեօձէկ, որ » յարեւմտակողմն ծովուն առատապէս գտանի. — Կար » մրախայտ՝ ընտիր, և Չուար կամ Ծուար, որ սակաւա » գիւտ է, և ի սեպտեմբերի երեւին. — Գեղաքոնի, որ » ընդ Գաւառագետ ի վեր խաղայ, ի վերջին ամիսս տա » րոյ. — Բաղդակ, որ առատանայ ի ձմերանի. ունի խա » շանման ոսկր ի գլուխն, վասն որոյ այլադեմք խտրեն » ուտել. սորա ձագք համարին Ճանար, և մանրագոյնն » Մոռթի. — Կոսկրոց, ըստ ձեւոյ ցոկանն, սակաւա » գիւտ է և սա, և ի ձմերանի երեւի: — Ոմանք ի գիտ » նոց քննողաց յերիս եւեթ ազգս վերածեն զայս ամենայն » զանազանեալս անուամբք, և ըստ չափու առաւել կամ » նուազ մեծութեան նոցին համարին այլեւայլ ազգս » կարծել աւակաց. զմի սուզն կոչեն՝ Օձաձուկն գետային,


1 Եւսիսթունեան, Բ. 208:  
 2 Ըստ կարծեաց Տիւպուսոյ:— Աւանդեն տեղացիք եթէ և ի իւսիսային եզեր կղզւոյն ըզիւ է ի ծովէ աղբիւր՝ յոյժ ցուրտ ամա » բանի, շերմիկ ձմերանի, որպէս զի անսառոյց մնայ կալաշափ » տեղի յայնմ կողման՝ ի պաղել այլոցն, բայց միայն ի սաստկագոյն

ձմերանս պաղի և այն եւս մտան որպէս զհասարակն:  
 3 Մորթի:  
 4 Մորթի (337) յայսքան տեսակ ձկանց ծովուն զլիսաւոր » միանգամայն և յոյժ առատ և համեղ զկարմրախայտան ասէ, և ի » Պարսից կոչիլ Գուլ- Աւան:



*Anguilla fluviatilis*, և զմին *Salmo Fario*, տասն տեսակաբ. բայց ոչ միարանին ոչ յանուանսն և ոչ ի տեսական: Շարտէն որ աւելի քան երկու դարուք յառաջ անցանէր քննութեամբ ընդ կողմանս այսօսիկ, ինն ազգս ձկանց ասէ, ընտիր կարմրախայտ և մեծամեծ եռոտնաչափ իշխանաձուկն (*Carpe*)<sup>1</sup>: Բայց, գիտուն և տգէտ դովին զհամեղութիւնն և զմալիր պարարտութիւն նոցին, զի չեն շատ փշուտ որպէս զայլս ի գետային ձկանց. և յայտ սակս յաւուրց անտի ազգայնոց մերոց պայազատաց կողմանց՝ տէրունի համարեալ էր որս նոցին և ընդ հարկաւ արկեալ, կամ կապալաւ տուեալ ի վարձու, որպէս և յայժմուս վարձէ պետութիւնն իրրեւ 30,000 ֆրանկաց առաւել կամ նուազ<sup>2</sup>. (Իսկ կապալառուն միայն յորոց *Քաւառ* և *Մակքար* գետոց՝ ստանայ աւելի քան զ'50,000 ֆր.<sup>3</sup>). և այս վասն այնոցիկ որոց որսացեալ բազմութեամբ տանին թարմ քան աղած յայլեւայլ կողմանս, մինչև ի Տիգրիս և ի Գանձակ, և անդր եւս. իսկ ծով-

եզերեայքն վասն առտնին պարենի իւրեանց որսան անմաքս: — Որինակ որսալոյ ձկանցն այլեւայլ է ըստ ազգաց ձկանցն, է որ փոքր կարթիւ, և է որ երկաթեայ միասայր կամ երկսայրի սլաբք, զոր վարսն ի ձուկնն անցաւոր, կամ ժանեւոր տախտակաք, զոր նոյնպէս ի վերայ կորզեն. դարձեալ, երկայնաձիգ ուռկանաք (աւելի քան զհազար 2.), զոր չարքասան կոչեն, և ցանցատեսակ կողովաք կամ պարկաք. այլ և ուր մարթ է՝ խոտորեցուցանելով զընթացս գետակացն: Գարձեալ, և ըստ յիշեցելու մն յաճախ առ նախնիս՝ քարք գործելով. այսինքն ի ծովեղրն կամ ի գետս՝ ուր դարավազ հոսանք իցեն ջուրց՝ չղջափակ գործել փոս, և ուռնի կամ այլ վայրենի ոտտովք վանդակ ի վերայ ածել, ընդ որ հոսիցի ջուրն, և ձկունքն մնայցեն ի վերայ վանդակին և ըմբռնիցին: Այսպիսի էր կռակածիւ որսն՝ որ համանունն հին անուն է ձկան, ի Մակքար գեղջ՝ առ համանուն գետալու, զոր Աշոտ Ա յառաջ քան զթագաւորելն շնորհեաց



2. Իշխանաձուկն. *Carpe*

ի հասոյթ նորաչեն եկեղեցւոյն Սեւանայ. որպէս և Գրիգոր Սուփան վասն դաստակերտին իւրոյ՝ Աստուածածնի եկեղեցւոյն Մաքենեաց՝ զորսն Բողաչենի (կամ Բաղաչեն):

Ի ջրային հաւուց յաճախեն ի ծովուս ազգ ազգ ճայից

և բաղից, գորշագոյնք և կանաչորակք, որպէս և Որորք, Չկնկոչք և Հողամաղք, որք և ի ցահաքի ի մորացեալ տեղիս խայտան<sup>4</sup>: Բայց մեծագոյն և նշանազոյն քան զուսսա հաւ՝ յիշէ Առաքել Սիւնեցի, քեռորդի Գր. Տաթեւացւոյ, զկարապն, ասելով այսպէս. « կարապն

1 On y prend de neuf sortes de poissons. Les belles Truites et les belles Carpes de 3 pieds qu'on apporte à Erivan viennent de là. — CHARDIN. — Այսպիսու գերմանացի (Բ. 513) այսպէս նկարագրէ ուսումնական լատին լեզուս զերիս ազգս ձկանցն զոր ծանեաւ. Ա. *Salmo Fario*, կարմրախայտ = *Forelle*. Argenteus, dorso cinereo, pinnis omnibus ex rubro nigrescentibus, dorsali parvulis maculis nigris notata, lateribus corporis nigris maculis rarioribus, nonnunquam rubris, nigris admixtis: linea laterali recta, prope caput deorsum flexa, squamulis prosilientibus; iris aurea capite postice, nigro maculato: longitudo corporis ad 1/2 uln. ross. In speciminibus junioribus pinnae lucidiores, immo rubicundae, pinna adiposa nigricans. Maxillae validis dentibus armatae, inferiore paxum brevior.

Բ. կարպուս կամ իրամուլու. — *Cyprinus Capoeta* (*Carpe*). *Macrolepidotus*, rostro prominulo, maxilla inferiore bi-

viore, capite alepidoto, laevissimo, dorso nigro, abdomine ex flavo-albido, pinnis omnibus nigris, cauduli medio subexcisa, lunari: longitudo ultra 1/2 uln. ross.

Գ. Բեխու (Մուրաւաք). — *Cyprinus Barbus* (*Barbe*): *macrolepidotus*, rostro acuminato, cirrhato, cirris 2 maxillae superioris et totidem inferioris prominulis: iris aurea, corpore ex viridi nigrescente, nigro maculato: dorso nigriore, abdomine argenteo-albo, microlepidoto, linea laterali recta, post caput adscendente: dorsali pinna abdominali opposita, caudali lunata, omnibus nigrescentibus. Longitudo ultra 1/2 uln.

Չերկայնութիւն այսր ազգի ձկան (Բեխու) ասէ քառորդ կանգնոյ Ռուսաց և աւելի, որ է իրրեւ 18 կարկերդաչափ և ուռնի. իսկ զառաջինն կրկին մեծ քան զաս, պարկեք 0, 36. զերկրորդըն՝ մեծագոյնն եւս:

2 Ժիւ 7000 ուռկի ասէ. Գրիս 3 կամ 400 մանէթ:  
3 Մշակ, Գ. 2: 4 Վակներ, 43:



» մեծ հաւ է որպէս զոչխար մի, և բովանդակ սպիտակ, » որպէս զձիւն . և լինի ի Ծով Գեղարքունի »<sup>1</sup>:

18. ԲԵՐՔ. Ասորիկ ջրայինքն . իսկ ցամաք երկիր Գեղամայ՝ որպէս ի սկզբանդ ցուցաւ՝ ըստ կարծրագոյն մասանցն, այսինքն հաստուածոյ լեռանցն՝ պորփիրեայ է, և մանաւանդ Արեգունի անձուկ կողմն՝ գրեթէ համակ ապալեր պալպալուն քառաժեռուտ . այլ արեւմտակողմանն լեռինք՝ թէպէտ և ի նմին նիւթոյ ըստ յուրով մասին, բայց ոչ նոյնպէս ողորկք և անգէղք, այլ և քայքայեալք և բուսական հողոյ ունակք . վասն որոյ և ի հալել ձեանց՝ դալարագգեստ լինին, և ըստ լանջաց լեռանց և գոգոց հիւսիսակողմանն և ընդարձակ հովտի հարաւակողմանն՝ իրրեւ կանաչագեղ մանեակ մի մեծաբոլոր պատելով զկապուտակ ծովական, գոյն ի գոյն և գեղ ի գեղ յաւելեալ . թէպէտ և առ բարձրութեան գետնոյն և յերկարութեան ձմերայնոյ՝ ոչ կարեն ծառս մեծամեծս և պտուղս և արմտիս պիտանեգոյնս հասուցանել, այլ թուփս, մարգս արօտից, բանջարեղէնս և ընդեղէնս սակաւ . որպէս Գարի, իսկ Յորեան՝ և ընտիր իսկ, միայն ի սահմանս Հապոտիկայ լինի ի Հս . Ծովուն<sup>2</sup> . բայց յաճախ ի կարկըտէ ի ի խոնաւոյ ապականին հունձքըն, և հազիւ ընդ միոյ 4 կամ 5 արդիւնացուցանեն : — Գտանին անշուշտ և ծառք Ուռնիք և նմանիք նոցին, թերեւ և մրգարերք վայրենիք, զորս հաւաստեն և բուսաբերութիւն Սեւան կղզւոյ յետոյ տեղագրելի, և զուգնաքեայ մնացորդք եւս բանից նախնեաց մերոց . այլ և անուանք ոմանց գիւղից, որպէս Բոփեաց Թոր, որ յայտ առնէ զկաղամախեայ պուրակս, Գանձադաւաթ, որ սյլ իմն ազգ մայրոյ ցուցանէ, Սնձաձոր, Կնձառտ, և այլն . և վկայութիւն հին պատմիչն՝ վասն ցանկալի պտղատուտոյ արգասեօք պարարութեան երկրին : Այլ աներկրայապէս յաղթական սեռք բուսոց կողմանցս՝ են Ալպինայքն կոչեցեալք, Ստորինք և Վերինք, և անկ է յուսալ ծաղկունս գեղանիս ի գեղանուն երկրէ անտի, որոց քաջ քննութիւն ինձ անծանօթ է . զի Քոխ մանրաքնին բուսարան՝ քերեալ էանց յարեւմտից Գեղարքունեաց, և ոչ բաւեաց ստուգել ինչ . Վակնէր՝ յետ նորա պատահեաց անդ ի սկզբան դարնայնոյ, մինչ հազիւ լուծեալ էին սաւաւանիքն, և սակայն երեւէին ի խոռոչս և ի տափս հիւսիսակողմանն՝ գունագոյն ծաղկունք պայծառք, Հիրիկք կամ Պոռտք վարդակապոյտք, Բոքք կամ Ոճիխատոյրք լեղակակապոյտք, Մանուշակք երկնագոյնք, բոսորագոյն Շան-ձորք (Orchides), սակեղեղին խառածաղիկք (Ranunculus), և Թաւրիկնակք (Primula), ընդ արծաթափայլ կորրիգան : Հարաւակողմն երկրին ըստ հարթութեանն՝ քաղաքոյս եւս է, այլ անծանօթ ի քննութենէ քան զարեւմտակողմն և զհիւսիսային, ընդ որս անցք են արքունի պողոտայի : —

Այսպիսի Գերմանացի, որ յառաջ քան զվերոյիշեալ բնախօսս քննեաց սակաւ մի զհիւսիս — արեւմտեան կողմանս ծովատաշտին, նշանակէ անդ, որպէս և ի սահմանս նորին ցԳարադիրիսէ Բամբակայ և զայսոսիկ ընդս<sup>3</sup> .

1 Լուծմունք Սահմանաց, Ի :  
2 Ըստ Տիւրքոյ, Գ . 314 :  
3 Այսպիսի, Բ . 514 .

- Խաղիւրան, Astragalus lagurus, W.
- Աւազուկ, Arenaria heteromalla, Gers.
- Ա . Ա . Arnacantha, M. B.
- Գազ վայրի, Pseudotrigantha, Pall.
- Աստղիկ լեռնային, Aster alpinus.
- Նապաստակի ականջ, Bupleurum baldense, Host.
- Ջանգակձաղիկ եղինջտերեւ, Campanula lamiifolia.
- Տերեփուկ երկայնգլուխ, Centaurea macrocephala.
- Տգիա կովկասեան, Erigeron caucasicus.
- Բոխ գօտեւոր, Ferula nodiflora.
- Յակինթ . . . Hyacinthus comotus, L.
- Լուսաղեղ, Inula Oculus Christi.
- Խաղ փոքրապտուղ, Isatis brachycarpa.
- Արիցու աղցան, Peucedanum alsaticum.
- Վարդ փոշեւոր, Rosa pulverulenta.
- Նկուն, Repens.
- Սիգատերեւ, Pimpinellifolia
- Ճլելեկ սատին, Silene saxatilis.
- տերեւասիւիւ, Spergulifolia.
- Ճակնդեղ . . . Beta trigyna.
- Գառնաղմակիկ փոքր, Sempervivum microcarpa.
- Փշականգառ, Cirsium scleranthum .
- \*Վշինիկ դալմատացի, Linaria dalmatica.
- Խստորուկ սպիտակ, Allium albidum.

Ի սեռս կենդանեաց ( որ նոյնպէս կարօտին գիտնական քննութեան ) հարուստ երեւին միջատք . յերեսս յուրի լեռնային մարգագ ետես Վակնէր յուրս ի Dorcadion ազգէ, և երիս նոր տեսակս ի նոսին . ի վերայ խոնաւ ձիւնաթաց խոտոց զսփականն երկրիս մերոյ՝ պատնաթեւ փոքր և փափուկ, անուանելով Carabus pumilis, որտորդ մանրիկ երկթեւենից (Dipteres) . միւս եւս տեսակ այն ազգի, Carabus cribratus պիտակաթեւ . և նոր ազգ մի միջատ պէսպէս գունով, սեւաւ, կանաչ կամ սկիւզոյն, որ անուանեցաւ Euctroctes mæstus . և զայսոսիկ հաւաստի նշանակս համարէր այլոց յուրից եւս լինելոյ անծանօթ միջատաց<sup>4</sup> :

Չորքոտանեաց, թէպէտ ոչ բազում ազգք կարծին լինել յերկրի աստ, այլ գուն և սեփական տեսակք, յորս նշանաւոր Այծնամն կամ Վիր մի մեծ, ի դժուարութեամբ ժայռից, ուստի երբեմն հարեալ ընկնունն որտորք Թաթարք, որպէս պատմեցաւ Վակնէրի : Ի վայրենեաց՝ Ադուես կարճամազ . վասն որոյ և ոչ յարգի մարթով . Աքիս և Հոլավուռք :

19. ԳՈՂԱՔԱՅԱՆ . — Պատմական ծանօթութիւն տաշտին Սեւանայ զուգածամանակ է, մանաւանդ թէ երկցագոյն քան զհասարակն Սիւնեաց, որ ըստ ազգային անուանութեան՝ ի Սիսակայ Հայկազնոյ, իսկ սորայս ի հօրէ նորին ի Գեղամայ, որդւոյ Ամասիայ թոռին Արմեանակայ . որոյ թողեալ զհայրենի տունն Արմաւրայ՝ յանդրանիկ որդի իւր Հարմա, « ինքն գնացեալ զմիւս կողմ » մամբն (կամ լեռամբ) արեւելեան հիւսիսոյ, յեզր Ծովակի միոյ, շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնաւ :

4 Mancher deutsche Insectenfreund würde an diesem Armenischen See über seine Beute laut aufgejubelt haben. — WAGNER, 144.

» կիչս . և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ » (այժմ Նալ-թէփէ) , և զէննան Գեղաբունի, որով » կոչի և ծովն : Աստ ծնաւ զորդի իւր զՍիսակ . . . բայց » ինքն Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ անդր » ( Արա- բատեան ), և շինէ զդաստակերտն Գեղամէ, որ յետոյ կոչեցաւ Գառնի : Այս աւանդութիւն է ըստ Խորենա- ցոյ կամ ըստ Մարիբասայ . այլ, որպէս բազում ուրեք նկատեցաք, անիմանալի է մեզ այլայլութիւն կամ ան- նմանութիւն կոչման շինից և շինողին, մանաւանդ աս- տանօր . զի դաստակերտն յանկազոյն նահապետին կոչի Գեղամէ կամ Գեղամի, լեառնն՝ կիսով եեթ անուանն՝ Գեղ, իսկ այլ չէնք և ծովն, ապա և գաւառն ողջոյն՝ Գե- ՂԱՔԱՅԻՆ : Հետաքննութեան արժանի էր յետինս այս անուն գլխաւոր, որում դիպողազոյն էր Գեղամունի կո- չիլ, եթէ արդարեւ Գեղամ էր անուն նահապետին, որ- պէս գրի միշտ . իսկ տեղին և ծովն նոյն օրինակ հաստա- տապէս գրին Գեղաբունի<sup>1</sup>, այլ առ յետինս մերթ այս- պէս և մերթ Գեղաբունի, զոր և ստուգարանն ոմանք Գեթոլ-արբունի . իսկ ոմն ըստ պարսիկ ձայնի ստուգարա- նէ Գեղաբունի, իբրու լեառն Գեղոյ<sup>2</sup> : Այսպէս անուա- նէ և յետ Խորենացոյ զտեղին՝ գրիչ Տօնական գրոց, « ի գաւառին Գեղաբունի, որ յորջորջեալ յանուն նախ- » արարին Գեղամայ » : Որքան անստոյգ կամ անյայտ է լեզուական ծագումն անուանդ կամ մասնկանդ, այն- քան ստոյգ համարի յառաջագայութիւնն ի Գեղամայ նահապետէ կամ նախարարէ, եթէ իցէ դա և թէ ոչ այնքան հին՝ որպէս ազգայինս ցուցանէ աւանդութիւն : Բայց յաճախ և անհակառակելի եւս կոչի երկիրն՝ Գե- ՂԱՔԱՅԻՆ ԳԵՂԱՄԱՅ, որպէս է տեսնել առ Մովսիսի կա- ղանկատեցոյ, և յիշատակագրի միոյ ի կէս է դարու, որ յետոյ առաջնով անուամբն եւս վարի, ասելով, « Գա- » ւառն իմ Գեղաբունի<sup>3</sup> » . նոյնպէս կոչէ և Ատողիկ ( Բ- Ե ) : Եւ որպէս երբեմն առանց յարադրութեան գաւառ բառի սոսկապէս Գեղաբունի ասի, այսպէս երբեմն և առանց այնր՝ սոսկ Գեղաք կոչի երկիրն . զոր օրինակ Միսիթար Գոչ ասէ, « ընդ լեռնակողմ Գեղամայ » . և Աւաբէլ, « Երկիր Գեղամայ՝ որ է Գեղաբունի » . իսկ Կիրակոս ի վարս Միս . Գոչի կոչէ և ԱԵԽԱՐՀ ԳԵՂԱՄԱՅ : Յետինքը անուամբ Երկիր Գեղամայ՝ իմանան զքո- վանդակ տաշտ կամ պարատափ ծովուն, որպէս և մեք կամիմք աստանօր . այլ յայտ է զի առ նախնիս՝ բնիկ Գեղաբունի էր արեւմտեանն և մեծ մասն հարաւակող- ման նորին, իսկ արեւելեան հարաւայինն և արեւելեան մեծ մասն՝ ուրոյն գաւառ էր Սողից, զորմէ և ուրոյն լիցի բան . իսկ հիւսիսային և հիւսիսային արեւելեան մասն՝ ոչ գիտեմ ստուգիւ ո՞ւմ վիճակէր : Ստեփ . Օրբե- լեան ուրեք զՍողս բովանդակէ ի Գեղաբունի, յասելն վասն Աշոտոյ Ա, եթէ, « Տայ և ի Գեղաբունի՝ ի Սողից » գաւառի՝ զԽորասանիբակ » : Այլ ինչ յաւելու Սար-

գիս կաթողիկոս ի սկիզբն ԺԱ դարու ( ի կոնդակին ) ի թուելն զգաւառս Սիւնեաց , « Գեղաբունի՝ Գուգարա- կովն » , որ է՝ անշուշտ մասն մի նորին՝ երբեմն ուրոյն վիճակ համարեալ, ի հարաւային արեւմտեան կողմանն : Ի նախագրեալ հին յիշատակարանի Տօնական գրոց , յԸ դարու, անուն կամ մականուն մի եւս ընծայի Մովա- կին, ոչ գիտեմ որպիսի իմաստիւ, « Դաշնաւոր անուա- » նեալ ծովուն Գեղաբունեաց » : Այսպէս հասարակօրէն Մով կոչի մեծս այս ժողով շուրջ, այլ գրի երբեմն ( ի Թովմ . Արծրունեոյ ) և Լիճ Գեղաբունի, որպէս յայժ- մուս սովորաբար Սեւանայ Լիճ կամ Մով յանուն կըղ- զոյն . յաճախ եւս ի միջին և ի յետին դարս՝ ըստ կոչման գաւառին, Մով կամ Մովակ Գեղամայ<sup>4</sup> : Որպէս ընդհանուր աշխարհին Սիւնեաց , նոյն և ա- ռաւել եւս այսր Իրկրի Գեղամայ անյայտ մնան անցք և դէպք հազարամեայ ամօր, և զրեաթէ անյիշատակք յեր- կոսին հին հարատուութիւնս ազգիս, ի Հայկազանցն և յԱրշակունեաց . և թուի յառաջին դարս՝ լերանցն Գե- ղամայ ոչ լինել անըրպետս քաղաքական տեսութեան, այլ երկոցուն եւս կողմանց նոցին ընդ միով իշխանու- թեամբ գոլ . այսինքն և Գեղաբունեաց և գաւառին՝ յո- բում դաստակերտն Գեղամէ ( Գառնի, ի Մազազ Այ- բարատայ ) : Յիշի ի սկիզբն կոյս Բ դարու բանակել առ վայր մի Սմբատայ Այրաբաջի՝ « մանկամբն Արտաշիսի » ( Բ ) առ ափն ծովուն Գեղամայ . ( մինչ ) աճապարէին » հասանել ՚ի բանակն Երուանդայ » : — Ի ծագման հա- յերէն դարուութեան՝ որպէս մեծ Սիւնիք և այս մասն նո- ըին նշմարի արժարժեալ մտաւորական հրահանգօք և բարեպաշտութեան կարգօք, զոր տայ գուշակել և ազգ- արարութիւն Խորենացոյն ի խնդիր թարգմանութեան Եկեղեցական պատմութեան Եւսեբեայ, « ի Գեղաբունի ի գաւառին Սիւնեաց », և շատէ՝ ի վանս ուրեք արդեօք, եթէ առ քորեպիսկոպոսի, կամ առ Թարգմանչին : — Ի վերջին ամս տէրութեան Սասանեանց ( 629 ) յարա- ւանս Խազրաց կամ Հոնաց, հրոսակք նոցա և Պարսից՝ առաջնորդութեամբ Շահր - Վարազայ զօրավարի՝ հա- բան ընդ միմեանս բուռն զօրութեամբ զեզերք ծովուն Գեղամայ . « ի պարտութիւն մատնեալ կոտորեցան Պար- » սիկք . ( և ) ոչ ոք էր որ գուժկան լինէր այնչափ » արանց<sup>5</sup> : Ի սկիզբն Ը դարու ( 703 ) դէպք ինչ դժնդակ անցին յերկրի աստ, յարշաւանս Մահմէտի ոստիկանի, որ եր- կար պաշարմամբ տիրեաց Սեւան կղզոյ . ոմանք ի պատ- մըաց համառօտիւ մթին իմն ասեն զնմանէ, եթէ « Ար- ձակեաց զՄովն Գեղամայ և առ զՍեւան<sup>6</sup> » . և տան կար- ծել արուեստահնարութեամբ կամ ցածուցանելով զՎուրս ծովուն դիւրամատոց եղեալ ի կղզին, կամ ողողեալ զայն ջրովք ծովուն : — Յետ ամաց ի բռնանալ Բարսանայ Պարսկի ի վերայ Սիւնեաց, առնլով զդուստր նահապե-

1 Թերեւս յանկազոյն է այս կառնն՝ անուան Գոչ նահապետի, որ զատի յառաջ քան զնախորդն Զարմայրի : — Նշանելի է և այս զի յիշէ ոչ միայն բերդ մի յանուն Գեղ-տ-նէ, այլ և գեօղի Բար- կուշտա կամ ՚ի Բաղը :  
2 Զաբաբիս վ . Գուլասպեան, ( Հայրենասէր, Թ . 103 ) :  
3 Ի ստորեւ յիշէ զարեւել գանունն, որ ի գաղափարոյէն յա-

մի 1205 գրի անդ Գ առաիւ Գեղաբունի :  
4 Ատողիկ, Սամ . Անեցի, Կիրակոս . Յայտմուտք : Յարաւ- քին հին Նեղիսակաց ոչ ոք յիշէ զծովս զայս, դէթ այսպիսի կամ ծանօթ անուամբ :  
5 Կաղանկատուեցի, Բ . 62 :  
6 Սամուէլ Սեցի, Կիրակոս :

տին Վասակայ, (յորոյ եկեալ էր յօգնութիւն ընդդէմ Մրուանայ ոստիկանի, յետ 727 ամի), «գնաց և ի գա...»  
 «... և առն Գեղաքունոյ, և էարկ ի սուր սուսերի գրնակիչ...»  
 «... սըն, ոգիք իբրև 15, 000. և զհաշակելի ուխտն Մաքե...»  
 «... նոցաց այրեաց և քանդեաց...» Բայց կրօնաւորքն նախիմաց եղեալ «փախեան յայեւայլ կողմանս, ընդ...»  
 «... հօրն Սողոմոնի»։ Զայս պատմէ Օրբելեանն (ԼԳ), որպէս և Յովհ. Կաթողիկոս զդէպս Սողոմոնի գաղթելոյն. այլ ոչ զՄրուան յիշէ և ոչ զՔարան. Թուի պատմըին Սիւնեաց շիթելի մի զերկուս դէպս և սրչաւանս այլազգեաց ի Գեղաքունի, առ երկոքումք համանուն Վասակ իշխանօք, և երկուս Բաբանս համարել կամ կանխել զժամանակ սորա. որպէս և Այրիվանեցին՝ ի միջոցի 720—40 ամաց՝ ասէ, «Բարան զՄաքենոցաց ուխտն այ...»  
 «... րեաց»։ Այլ զի երկոքին եւս մի անգամ յիշեն զՔարան, և յայլոց ստոյգ պատմչաց յայտնի է ժամանակ հոշակաւորն Բարանայ, դարու միով զինի լինել, խնդրեցի յետոյ յիշատակ նորին։ Այս յայտ է զի ի վերջ կոյս Ը դարու պայազատէր զՍիւնիս՝ Վասակ նոր նահապետ տեւրանց աշխարհին. սա, որպէս տեսաք կանխաւ, զբուն զմեծ մասնն թողեալ անդրանկան իւրում Փիլիպպեայ, զԳեղաքունի կամ զամենայն որոտս ծովուն ժառանգեցոյց երկրորդի որդւոյն, Սահակայ, և սորա զարմ և պայազատք կոչեցան՝ Սիսակեանք և Հայկազունք, անշուշտ վասն յայտնի մնալոյ միշտ ի կողմանս անդ սերունդոց Հայկազուն Գեղամայ. զայս հաւաստէ և յիշատակութիւն նոցին ի սկզբան Արշակունեաց պետութեան, յորժամ Վաղարշակ՝ առ ի հալածել զմնացուածս Մակեդոնացոց կուսակալաց, զօրաժողով լինելով արի արանց, ընդ Բագրատունեաց զումարեաց «և զծովագե...»  
 «... րեայն մանկունս, որք ի Գեղամայ, և ի Քանանա...»  
 «... ցոց», և այլն։ Եթէ ընդ ծովագերեայնս Գեղամեանս հարկ իցէ լմանալ և զՔանանացիս եկս, թէ միայն սահմանորդ նոցին գաւառակիցս, ոչ ունիմ ասել։

Արդ, որպէս բնիկ նահապետութիւն Սիւնեաց՝ այսպէս և Հայկազանցս այսոցիկ Գեղամեանց՝ յՊ դարէ սկսաւ բարգաւաճել և պայծառանալ, հանդերձ շինութեամբք եկեղեցեաց և վանորէից, գէթ դարս իբր երկուս՝ յորում պայազատեցինն, որոց սերունդ և յաջորդութիւն տեսցի ի պատկերին զոր կարգեցաք ի պատմութեան նահապետացն Սիւնեաց, քան զորս կարճատեւ է սոցայս, կամ թէ ոչ յիշին ի պատմչաց սերունդք անդր քան զկէս Ժ դարու. այլ որք յիշինն՝ զովանիք վկային բարեպաշտութեամբ և շինարարութեամբ, և ըստ գահերէց կամ անդրանիկ տոհմին՝ կոչին և սոքա Տեարք Սիւնեաց։ Առաջինն սոցա Սահակ որդի Վասակայ՝ տարապարտ ընկալաւ վախճան, թէ և փառաւոր քաջութեամբ. քանզի նիգակակցեալ Մաքատայ Սպարապետի Բագրատունոյ և Սեւադայ Կայսիի (Արարացոյ) խնամեցելոյ ամին (փեսայանալով յԱրուսեակ Բագրատունի), ել ի

մարտ ընդդէմ Հօլայ ոստիկանի, ոչ անսացեալ ողբաւ. կան բանից սորա և Գաւթի կաթողիկոսի, և սպանաւ ի մարտի ի Կաւակերտ առ Հրազդան գետով, ուր անկաւ և սպարապետն Մաքատ, (821). «Բայց զմարմինն» Սահակայ Սիւնեաց տեսան՝ բարձեալ տանէր մեծ հայրապետն Գաւթի ի հայրապետանոցն սուրբ (ի Գուին), և անդ զնէր ի քնարանի մերձ ի սուրբ քաւա...»  
 «... րանն։ Իսկ զկնի Սահակայ պայազատէ զտէրութիւնն»  
 «... զայն Գրիգոր (Ա) որդի նորին, որ փաղաքական ա...»  
 «... նուամբն Սուլիան անուանէր»<sup>1</sup>։ Զայսու ժամանակաւ հանդիպի հոշակաւորն Բարանայ (որ է Պապէք Արարաց) աղանդաւորի՝ ապստամբել յամիրապետաց և բունանալ ի միջոց երկոցուն աշխարհաց՝ Ատրպատականի և Հայոց (յամս 817—37), զոր Վասակ հաւն Գրիգորի կոչեալ էր յօգնութիւն ընդդէմ Սեւադայ Կայսիի, և այն ինչ վանեալ զսա, ինքն վախճանեցաւ. և բունաւորին առեալ զդուստր նորա ի կնութիւն՝ տիրացաւ և գաւառաց երկոցուն բաժնից եւս Սիւնեաց. զորս ապա կալաւ ընդ գերագոյն իշխանութեամբ և Սահն Սմբատեան Առանշահիկ կամ Հայկազն՝ ըստ Կաղանկատեցւոյ<sup>2</sup>, ըմբռնեալ զՔարան (յամի 837 սեպտեմբեր) և մեծարեալ յամիրապետն և յԱփշինէ զօրապետէ առաքելոյ ընդդէմ Բարանայ. կոչի սա և Տէր Սիւնեաց, զի «բունագրօտութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»։ որում սա վայր մի յաջորդեալ երեւի և որդի նորա Ատրնետսին. սորա կինն Սպրամ դուստր Վարազդորդատայ իշխանապետի Աղուանից՝ ի դերութեան առնն իւրոյ ի Պարսս, շինեաց զՆորավանս ի գաւառին Սողոմոն<sup>3</sup>։ Այլ յետ դարձին ի գերութենէն, երեւի դարձ արարեալ առնն ի հայրենիս իւր ի Խաչէն, ուր միւս անգամ ըմբռնեցաւ ի Բուղայէ և Գրիգոր Սուփան պայազատեաց զվիճակ հօր իւրոյ։ Յովհ. Կաթողիկոս պատմիչ՝ ոչ յիշէ բնաւ զդէպս Բարանայ և զՍահիի, և ցուցանէ միահետ իշխանացեալ Գրիգորի յետ Սահակայ, և յամի 840 միաբանեալ ընդ Սմբատայ սպարապետի՝ ի հաստատել վերստին յամրուն զՅովհաննէս Ե Կաթողիկոս, զմերժեալն ի Բագրատայ իշխանապետէ Հայոց, բանսարկութեամբ ոմանց։ — Գժպիի եղեւ կատարած Գրիգորի քան զհօրն, զի ոչ գիտեմ յինչ պատճառս, սա և հօրեղբորորդի իւր «Բար...»  
 «... գէն Սիսական նահապետ՝ զրգուութիւն չար ընդ մէջ»  
 «... իւրեանց զարթուցեալ, և գումարտակ ի վերայ իրերաց»  
 «... կարգեալ ի պատերազմ (յամի 851), սպանանի ապա»  
 «... Սուփան ի Բարգենայ»<sup>4</sup>. և պայազատէ զտէրութիւնն Վա...»  
 «... սակ որդի նորա ընդ նորա, որ ըստ փաղաքական ա...»  
 «... նուանն Գարուռ անուանէր...» (Եւ) վասն զի փեսա...»  
 «... յացեալ էր Աշոտոյ իշխանաց իշխանի (Ա թագաւորի, սա) իշխան զնա Սիւնեաց սպա կացուցանէր, յարքու...»  
 «... նուստ նմա առնելով պատիւ. որ բազում ճոխութեամբ»  
 «... վարեալ զիշխանական պետութիւնն իւր՝ տիրելով մի...»  
 «... անգամայն Սիսական ազգին»։ Զեղեւ և սա երկարա...

1 Յովհաննէս Կաթողիկոս։  
 2 Կաղանկատ. Գ. Ի. «Սահիի Սմբատեան ձերբակալ արա...»  
 «... րեալ զապստամբն Բարան, զմարդախողտոյ աշխարհաւեր ա...»  
 «... րիւնարբու գազանն, ետ ի ձեռս Ամիրմոնոյ. և ըստ վաստակոցն»  
 «... առնու յարքունեաց... իշխանութիւն ի վերայ Հայոց, վրաց և

3 Արուանից, տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար...»  
 4 Կաղանկատ. Գ. Ի. Ի. 1.  
 5 Գրիգոր կամ միւսեալ էր ի սահման Բարգենի ի վայոց ձոր, կամ զերեալ և անդ սպանեալ. քանզի պատմիչն Աղուանից ասէ (Գ. Ի.), «Տէր Սուփան վախճանեցաւ ի վայոց ձոր»։

կեաց՝ քանզի յամի 855 «վախճանեալ և եղեալ ի շիրիմս  
 » հարցն իւրոց, պայազատէր զհայրենի տէրութիւնն  
 » Գրիգոր (Բ) որդի նորա, որ Սուլփանն յորջովիւր: Սա  
 » իմաստութեամբ և աշողաձեռնութեամբ բազմաւ անդր  
 » եւս քան զպայմանն ընդ զչարհ հարցն իւրոց. բայց ա-  
 » ռաւել յեկեղեցեաց Քրիստոսի ի շինութիւն և ի նորո-  
 » գութիւն զինքն վերաբերէր»:

Յաւուրս իշխանապետութեան և թագաւորութեան  
 Աշոտայ և ի սկզբանս որդւոյ նորա Սմբատայ, եղեն ար-  
 դարեւ մեծամեծ շինութիւնքս. քանզի իշխողք կողմանց  
 կողմանց՝ «հանգուցեալք ի հինից ասպատակաց, շինէին  
 » եկեղեցիս վիմայարդ հաստահեղոյս ձուլեալ հրով, ի  
 » մենաստանս և յաւանս և յագարակս. բայց առաւել  
 » եւս քան զյուրով՝ Հայկազանցն գրոհ, իշխանն Գրիգոր  
 » և նորին եղբարք, Սախակ և Վասակ, որք հայրենա-  
 » կան սեպհակաճութեամբ տիրէին գաւառացն՝ որք չըր-  
 » շապատեալ կան շուրջ զեղբր ծովակին Գեղամայ վի-  
 » ճակին, ցանկալի պողատածող արգասիւք պարար-  
 » տութեամբ»<sup>1</sup>: Գլխաւորք շինութեանց Գրիգորի՝ են  
 Մաքենոցաց եկեղեցին՝ Ս. Աստուածածին, Կոթայն՝ ի  
 նոյն անուն, զորս և ճոխացոյց բազում պարգեւովք, որ-  
 պէս տեսցի ի տեղագրին, և Ս. Շիմոնե եկեղեցի, յո-  
 բում և թաղեցան, գաղտ դեղակուր լեալ յանողորմն  
 Յուսիպ (909), որում անձնատուր լեալ էր յուսով ապ-  
 րեցուցանելոյ զանձն և զիւրսն: Իսկ եղբարք նորա Սա-  
 փակ և Վասակ՝ առեալ զճգնազգեցիկ մայր իւրեանց  
 Մարիամ (զքոյր Բագրատունեոյն Սմբատայ Ա), ամրա-  
 ցան նախ ի Սեւան կղզի, և անտի անցին ի Միափոր  
 գաւառ (Ուտիոյ), ուր վախճանեցաւ Մարիամ, յամի  
 910, զոր բարձեալ՝ յետ երկուց ամաց՝ ի խաղաղել եր-  
 կրին՝ բերեալ հանգուցին «ի քնարանի իւրում, մերձ ի  
 » ձեռակերտ եկեղեցին իւր ի Շողագայի»: — Սախակ  
 պայազատեաց զեղբայր իւր, ընդ որում և Վասակ եւս  
 պատուեալ յԱշոտայ Բ՝, «ի նոյն պատիւ պերճութեան  
 » վայելչական կարգք մեծարէր»: Յետ սակաւ ամաց  
 վախճանեցաւ Սահակ, «Թողով իւր ուստր մի մանկիկ  
 » տղայ փոխանորդ. և զննն զնա ի քնարանին առ դուրս  
 » ձեռակերտ եկեղեցւոյն իւրոյ ի գետն Նորատուս»,  
 ուր և կարգեալ էր նորա բազմութիւն քահանայից: Միա-  
 պետաբար պայազատեալ եղբոր նորա Վասակայ՝ խըն-  
 դրեաց յԱշոտայ Բ՝ «յետկար երդման, զի անկասկած լի-  
 » ցի ի մտանելն առ նա և յելանելն»: Քանզի թուէր յա-  
 չըս նորա միտեալ ի հակառակորդն իւր միւս Աշոտ-  
 առ որ միջնորդեալ Յովհ. Կաթողիկոսի պատմչի, «Իմ  
 » իսկ ընկալեալ, առէ, յարքայէ զնամակն, և տուեալ  
 » առ Վասակ, ապա չուէ զնայ առ թագաւորն. և յա-  
 » աջնում նուազին իրրեւ զհամամիտ գործակից և զեղ-  
 » բայր սիրելի հաւատարմացուցեալ իւր՝ ընդունէր զնա  
 » պատուով մեծաւ. իսկ զկնի ապա հրապուրեալ յո-  
 » մանց... կալեալ կապէ զնա երկաթի կապանօք և զնէ  
 » յամրոցի անդ որ Կայանն կոչի... և փոքր ինչ աւուրս

» ժամ եղեալ՝ յանձն առնոյր արձակել ի կապարանէն,  
 » և հաստատել զնա յաշխարհ տէրութեան իւրոյ»: Յոր-  
 մէ յետ ոչ բազմաց արձակեաց զնա Սախակ Սեւա-  
 ղա աներ Աշոտայ՝ ի տուն հօր իւրոյ, հակառակ յա-  
 րուցեալ փեսային իւրում, և ինքնին անկեալ ի բուռն  
 նորին և պատուհասեալ աչացն խաւարմամբ: Իսկ զինչ  
 յետ այնր եղեւ Վասակայ կամ մանկան եղբոր նորա  
 Սահակայ, ոչ է յայտ. և ոչ եւս յիշին Սիսականքս Հայ-  
 կազունք տեարք Գեղամայ. հաւանօրէն գրաւեցաւ սա  
 յԱշոտայ, և ոտնակոխ եղեւ յասպատակաց Նսրի և Բշրի  
 տեղակալաց Յուսիպ, յորոց «աւերեալ և անմարգա-  
 » ցեալ էր ի ընակչաց աշխարհն ամենայն»: այլ և յետ  
 այնր՝ Բշրն այն հետամուտ եղեալ Աշոտի (ԲԷ Երկաթ  
 մականունեւելոյ), զիմէր «յեզր Մովակին, հանդէպ ամ-  
 » րոցին Սեւան կղզւոյ, զի թերեւս անզգուշարար ի վե-  
 » րայ հասեալ Շահանն կոչեցեալ Շահայ, որոգայթս  
 » մահու կամ կապանաց նմա մարթացցէ հաուցանել:  
 » Իսկ նա... վաղվաղակի պատրաստէ նաւս տասն մի,  
 » և ամբառնայ ի նաւս անդ իրրեւ արս եօթանասուն,  
 » արս ազատս և զժառայս իւր՝ լայնալիճ աղեղամբք,  
 » արս քաջակորովս և հմուտս ի ձգումն նետաձգու-  
 » թեանց, որ գրեթէ ի մազոյ ոչ վրիպէին: Եւ ապա  
 » ինքն եւս ընդ նոսին ի նաւսն վերելակեալ, գնային  
 » ծովամարտիկ առ թշնամիսն. և միջամուխ լեալ աշողա-  
 » ձեռն նետաձգութեամբ, զումանս միականիս ի թշնա-  
 » մեացն առնէին, և զայլս բազումս կարեւրէր վիրաւո-  
 » րեալ սատակէին: Եւ այնպէս հատեալ շարժեալ ի բաց  
 » զմարտ ուզմին բազմութեան թշնամեացն, ի փա-  
 » խուստ առաջի նոցա դառնային»:

Յետ Աշոտայ թագաւորի ի յաջորդել եղբոր նոր Աբա-  
 սայ, ի խաղաղել աշխարհիս Հայոց յերեսնամեայ հինից  
 Յուսիպ և արքանեկաց նորին, երկիրն Գեղամայ թուի  
 կացեալ մարդ թագաւորութեան Բագրատունեաց, ունե-  
 լով տանուտեարս փառունս, և զայլոց գաւառաց անց-  
 կրեալ յաշխարհակալութեան Թուրքաց (Սէլջուկեանց)  
 և մնացորդաց Արաբացոց, մինչեւ ի զորանայն Վրաց  
 յետ կիսոյ ԺԲ դարու, և յելս կոչս նորին՝ Չաքարեանց  
 զորավարաց քաջաց և աշխարհաշինաց, որք ընդ առա-  
 չինս գաւառաց կորզեցին և «զգաւառն որ շուրջ զՄովո-  
 » լին Գեղարքունեոյ»<sup>2</sup>. ուր բնակէին Թուրքք անթիւ  
 բազմութեամբ, ըստ պատմութեան Վրաց, և հարեալ  
 զնոսա՝ մինչ բազում աւարաւ յետս դառնային, ժողո-  
 վեալ Թուրքաց առաջնորդութեամբ Ռոստոմայ ուրումն  
 և Ելտկուզի (յԱթապէկաց զարմէ), անկան ի վերայ  
 վերջապահ գնդին Վրաց, այլ վերստին հարեալք չարա-  
 չար խորտակեցան, և նուաճեցաւ երկիրն, մինչեւ ցաշ-  
 խարհակալութիւն Թաթարաց: — Մեծ զօրավար սոցին  
 Չորմաղան՝ յառաջ քան զառումն Անուոյ՝ աստանօր  
 «հարիալ էր զխորանն առ ափն ծովուն Գեղարքունեոյ»,  
 յորժամ անձնատուր եղեւ նմա մեծ իշխանն Աւագ՝ որ-  
 գին Իւանէի: Որպէս յայսմ նուագի և յառաջինսն զոր

1 Թուի և Վասակայ բռնամահ եղեալ, կամ ի պատերազմի ու-  
 բիք վտանգեալ. զի վերջգրեալ պատմիչն Աղուա՝ ից ընդ գալլա-  
 տեան հարկահանի զսրծակալին Բուզայ՝ յիւէ զգէպսն. «ի շորրոր-  
 » գում ամին (գալլատեան Բուզայի) եղեւ գալլն Համաղայ՝ Խալէի

» որդւոյ, և մահ Տեառն Վասակայ Գաբրէին »:  
 2 Յովհաննէս կաթողիկոս:  
 3 Շապուղ պատմչի Բագրատունեաց Թուի հատուած բանիս:  
 4 Կիրակոս պատմիչ:

յիշեցաք (Արտաշիսի Ա, Խազրաց և Շահրվարազայ), և յ՛գկնիսն բազում անգամ դադարք զօրաց և կռուստեղի եղեալ են գեղեցիկ հոյիտք Գեղամայ, Հայոց և յաւէտ օտարաց. ի մերայոցս յիշի և Աշոտոյ Ա յառաջ քան ըզ-  
 Թագաւորելն, յերթալն ի նուաճել զելուզակս կողմանց Վրաց՝ առ կուր գետով, «եկեալ գումարեցաւ ի տեղւոյ միոյ հանդէպ կղզւոյն (Սեւանայ), որ կոչի Բանակետոյ»<sup>1</sup>. ուր հանդիպեցաւ նմա շինող անապատին հռչակաւորն Մաշտոց, և ընկալաւ յիշխանապետէն զմասն կենարար խաչին զպարգեւեալն նմա ի վասլէ կայսերէ: — Առ իշխողութեամբ Թաթարաց՝ յեր ԺԳ դարու, յիշէ Մաղաքիա ժամանակագիր, եթէ «Վէլիտ պէկն Թաւանեաց» ղերկիրն Գեղամայ». այլ ո՞վն և որպէս ոչ է ինձ յայտ: — Յետ քսան ամաց (1319) այլ ազգ աւերած ահաւոր եհաս, երկրաշարժ մեծ, «և ի Գեղաքունի ըն» կըզմիաց զբազում գետոս, հանդերձ արամբք և կանամբք<sup>2</sup>»: — Միւս եւս աշխարհագոյժ աշխարհաւեր բանակեցաւ յերկրի աստ յամի 1387, կազն Թիմուր ի դարձին ի կողմանց Վրաց, և լուեալ զգալուստ դշտոյին իւրոյ (Սէրայի — Միւլք — Խանու, սրդեկօքն Շահ — Ռուհ և Միրզա Խայլ), ել ընդ առաջ նոցա մինչեւ ի Մարանդ, և էած այսր, և աստի շուեաց գնաց ի վերայ ամրոցին Երնշակայ:

30. Ի ԺԶ դարու երեւի անդորրացեալ երկիրն Գեղամայ և բազում մէլիքաց Հայոց պայազատօրէն տիրեալ և շինեալ զվիճակս իւրեանց: Գտանի, յամի 1513, ձեռնարկ մի տան կամ երկոտասան Տանուտեարց մէլիքաց՝ ի դիւանս Տաթեւոյ վանաց, զայս օրինակ. «Մէք Գեղ» արքունու մէլիք ու տանուտէրքս եկաք ի Սուրբ աթոռս» Ստաթէ, կոնդակն կարդացաք, որ Գեղաքունու Թեմն Տաթեւու աթոռինն է. մեք եւս տեսեալ և լուաք որ ստոյգ էր. ինչ մարդ որ հակառակի՝ նալլաթ լինի. Ես Փիրիամգէս որդի Եղիշին և Թոռն Մէլիք Միրզին. Ես Թանկրի-ղուլս որդի Մէլիք Ղուկասին և Թոռն Պուղլիկին. Ես Էկիէս որդի Պուտախին, Թոռն Տէլու-ղարտաշին. Ես Թարխանս Քեթաշինեցի. Ես Շահաւ պաթս Գաւառնեցի որդի Աստուածատուրին. Թոռն Միրանշին. Ես Պաշարաթս կոթեցի. Ես Մամեթոս կածեցի. Ես Այսամալուլս կնճուտեցի. Ես Փիրի որդի Ղուբաթին, Թոռն Պերամին. Ես կունդուլս Գանձակեցի. Տէվուշ՝ Արտաշի որդի»: Հաստատեն զձեռնարկ սոցա սարկաւազունք ոմանք Գեղաքունոյ ի կամնուց և ի Գարանակուց գիւղից. «Վկայենք որ Գեղաքունոյ տանուտէրքն զայս բանս գրեցին, որ ճշմարիտ է Աստուծով»: — Յետ ամաց ինչ (1519) վկայէ այսմ և «Տէր Մէլիքսէմ որդի Միրզա» ցահին, Թոռն Մէլիք իրիցու»: Հաւանութեան է թէ նոցին զուգակից էր, և Թերեւս որդի յիշեալ Մէլիքսէթի՝ Մէլիք Արովն՝ պայազատ կողմանցս և աւանին Սողից, որոյ որդի Մէլիքբէգ + է յամի 1578. և յարձանագրի ուրեմն կոչէ զինքն «շինող տան» Գեղամայ». սորա անդրանիկն Մէլիք Շահնազար (+ 1606) կոչի

«Տէր և իշխան երկիրն Գեղամայ». և յայլում յիշատակարանի՝ «Պարոնաց պարոն և իշխանաց իշխան». սորա յիշին շորք եւս եղբարք մէլիքք, և որդիք բազումք, յորոց մին Եւսրիբէկ, «անողորմ մահուամբ» վախճանեալ ասի. և մին Թուր եպիսկոպոս եղեալ, զի կոչի Պարոն Տէր Բովհանէս. այլք՝ Թեսարէկ, Հախնազար րէկ. Դիլանջի րէկ, Քամալ րէկ, Նիսաք րէկ, և դուստրն Խաթունչա. իսկ աւուն կնոջ իւրոյ Պահրիչանան, մօրն՝ Խաթունչա. Թոռինն՝ Նազարին, Թերեւս որդի Հախնազարայ: Սքազերծան ի գաղթել մերձակայ գաւառացն յերկիրն Պարսից՝ բուռն հրամանաւ Շահ Արասայ, որ և ինքնին յետ այնր և յետ դարձին ի Տիղեաց՝ եկեալ բանակեցաւ ի կողմանքս. որպէս ասէ Առաքել պատմիչ՝ «Ինքն Շահա» րան իջավանեցաւ ի տան Մէլիք Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ (ի Սողս), բնական ի նոյն գեղ» Էն. և էր Մէլիք Շահնազարս յազգէն Հայոց, և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր. որ աւրար հիւրընկալութիւն Շահին, որպէս վայել է Թագաւորի. և էր ինքն բարեկամ և մտերիմ և արդոյ առաջի Թագաւորին. վասն որոյ և Թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք չեղացուցեալ խիւսեաց, և պարգեւեաց նմա զիշխանութիւն մէլիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և զեղորայս, նմա և եղբարց նորա, և հաստատուն նոմոս գրեաց և կնքեաց Թագաւորայն կնքով, և ետ նոցա, զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակի նոցա յազգէ յազգ մինչեւ յաւիտեան»: — Յառաջ քան զարաւանս Շահին՝ երկիրն ընդ իշխանութեամբ Օսմանեանց էր, և Մօլմայդանի որդի ոմն էր կուսակալ ի Գեղամ. յորոյ վերայ առաքեալ Ամիրգիւնէ զանի (Երեւանայ) Պարսից զԴաստաբէկ ոմն՝ կոտորեալ էր զԹուրքան. վասն որոյ զանգիտեալ Շահնազարի ի վրէժմանդուրութենէ սոցին, ի հեռանալ Պարսից՝ «հրաման տայր երկրիս, թէ եկայք մտոյք ի յամուրս, զի մի լիցուք կոխան այլազգեաց. և ինքն գնաց ի Մար և ի Տպէլ? և որք զհետ նորա գնացին՝ զերծան ի սրոյ և ի գերուութենէ այլազգեաց. (սորս) յետ սակաւ աւուրց (եւ կեալ ի կողմանց Գանձակայ) զոմանս կոտորեցին և զոմանս գերեցին, երեք անգամ. Թողին մեծ սուգ և կակիծ մեզ ամենեցուն»: Զայսոսիկ գրէ ոմն ժամանակակից, որ և յիշէ զգիւղթեթել Շահին ի տան Պարոն Մէլիք Շահնազարի, և խրախանալ ի խնջոյս, հանդերձ «քահանայիւք և ազգականք, (որք) հետն կերան և արբին. և շնորհեաց պարգեւս և խիւսայ ամենեցուն, մեծի և փոքու. փառաւորեալն յԱստուծոյ և մարդկան՝ կրկին փառաւորեաց»: Վկայէ և այլ ոմն ժամանակակից և բնիկ երկրիս Գեղամայ, Գաւառի եպիսկոպոս Շողազավանեցի, եթէ յետ գաղթելոյ այլոցն, «Երկիրն Գեղամայ յորժամ տեսին բազում տեղիս անմարդարնակ եղեալ, ուրախացան ի սրտէ, թէ նոքա զրկեցան ապրանաց և հայրենեաց, մեք վայելեմք զպատրաստեալ բարխան մեր: Երբ Շահն հե-

1 Վարք Մաշտոցի կաթողիկոսի գրեալ ի Սահեմնոսէ:  
 2 Սամուէլ Անեցի:— Յայսմ շարժէ կործանեցաւ և Թաղէի

վանքն յԱրտազ, և ոչ սակաւ աւերեցաւ մայրաքաղաքն Անի:  
 3 Այսոսիկ ըստ յիշատակարանաց ձեռագիր մասնեցի:

» ասցաւ, Օմարաց ազգն բազում տեղիս ունէին, ան-  
 » օղորմաբար յարձա՛ցեցան ի վերայ երկրի . . . երկու և  
 » երեք անգամ բազում զօրսք եկին յերկիրն Գեղամայ,  
 » բազումս թալանեցին և բազում ոճիրս արարին յա-  
 » ւուրս ձմերայնոյ, ոչ տեղի թաքելոյ ունէին և ոչ ու-  
 » մեքէ այլ տեղի երթալոյ» . . . Թերի մնայ գրուածն ։  
 Նախայլչեալն Մէլիքի բէկ եւս որդի Միրզին, կոչի իշ-  
 խան Գեղամայ՝ յարձանի միում յամի 1602: — Յիշին և  
 այլ մէլիքք երբեմն հանրաբար յանուն երկրին Գեղա-  
 մայ, որպէս Մէլիք Բէկ ի կէս ԺԷ դարու, և երբեմն  
 միոյ միոյ վիճակաց երկրին ի ԺԶ և ԺԷ դարս, ընդ գե-  
 ռազդն իշխանութեամբ Պարսից, ոչ փոքր ազատութիւն  
 ունելով և ինքեանք. զօր սրինակ մէլիքք և աղայք գիւ-  
 ղից և կողմանց Գաւառայ, Գանձակայ, Աւենդի, և  
 այլովք հանդերձ ։

Նշանաւոր և ճոխ իշխանութեամբ երեւի եղեալ յե-  
 տին յիշեալն Մէլիք Բէկ, զի յետ կողմնակալին (խա-  
 նին) Երեւանսոյ կարգէ զնա գրիչ ոմն ժամանակին յա-  
 մի 1657, « եւ ի մէլիքութեան երկրիս Գեղամայ՝ Մէլիք  
 Բէկին » . . . զորոյ յայտնէ և զազգարանութիւն՝ ծագեալ  
 յԱւանայ իշխանացն, ի սկզբանէ ԺԳ դարու, որպէս զի  
 ԺԵ սերունդ լինել նորա ի մեծ իշխանէն Ղարա Գրիգոր  
 կոչեցելոյ, որոյ առեալ ի կին զԳաւառի քոյր մեծին Զա-  
 քարէի՝ յանուն նորին կոչեցաւ սոհմն՝ Դօփեանս ։ Մէ-  
 լիք Բէկ կոչէր և նախահաւ սորա՝ ԺԲ ի Ղարա Գրիգոր-  
 րէ . որ և ժամանակակից հանդիպի վերոյիշեալ Մէլիք  
 Բէկի հօրն Շահնազարսոյ, այլ ոչ կարեմ և նոյն ասել-  
 երկու որդիք յիշին սորա յազգարանութեանն, մին եպիս-  
 կոպոս Գրիգոր, միւսն քահանայ Յովնանեկս . սորս եւս  
 մի յորդուցն արքեպիսկոպոս վկայի Ստեփանոս անուն,  
 միւս՝ Մէլիք Պալասան, հայր վերջին Մէլիք-Բէկի ի  
 գաւազանի Դօփեանց, որոյ կին կոչիւր Մահպոտս, մի  
 յեղարացն Ղատիքէկ, միւս՝ Ուլուքէկ, իսկ որդին  
 պայազատ Միրզախան, որ յիշ յամս 1670-84<sup>1</sup>, և եղ-  
 բարքն՝ Աթա Բէկ, Մանուչար Բէկ, Ղարա Բէկ, Հա-  
 սան Բէկ, Պետրոս վարդապետ՝ Բարունակեալ կոչե-  
 ցեալ առաջնորդ Գաղի վանաց, և միւս եւս եղբայր արք-  
 եպիսկոպոս Գրիգոր անուն ։ Թուի իմն եթէ ճոխարար  
 ոչ միայն քաղաքականին, այլ և եկեղեցականին թեկն  
 ածէին պայազատք տոհմին ։ Ութ կամ տասն որդիք սոցա  
 յիշին յանուանէ, այլ ոչ որոշակի՝ որոց ի հնգեցուն աշ-  
 խարհական որդուց Մէլիք Բէկի գաւազն իցեն, այլ թուի  
 անդրանկանն (Միրզաքէկի) որդի և պայազատ՝ Եաւրի  
 Բէկ, որ ընդ հօրն, հօրեղբարցն և հօրեղբորորդեաց յիշի  
 յամին 1684, և լինի ազգ ԺԷ ի Ղարայ Գրիգորէ անտի  
 յընթացս հնգից դարուց (ԺԳ-ԺԷ), ըստ այսմ կարգի,  
 (տես յէջ 37), եթէ չիցէ ուրեք սարդեալ վրիպակ ։

Եկեղեցական տեսչութեան ոչ յիշի առ հինս առան-  
 ձին եպիսկոպոս երկրիս Գեղամայ, որ՝ կամ ընդ Գառնոյ

վիճական էր, և կամ ընդ մեծաւ եպիսկոպոսաւ Սիւ-  
 նեաց. բայց ի վերջին դարս երեւի իւրաքանչիւր զխաւոր  
 վանաց գաւառին բաժանեալ զգեօղեանն յիւրաքանչիւր  
 վիճակս, առանձին եպիսկոպոսք կամ թեմակալք. որ-  
 պէս և վերոյգրեալ տանուտեարք երկրին՝ ՚ի ձեռնարկի  
 իւրեանց յամի 1513, ի հաստատելն զԳեղաբունիս լինել  
 սեփական վիճակ Տաթեւու եպիսկոպոսին, յիշեն և ար-  
 գելուն՝ զի մի լիցի « երկրիս եպիսկոպոսացն . . . Հակոառա-  
 » կու՛թիւն անել հետ աթոռիս » (Տաթեւու) ։ Եպիսկոպոս  
 սացդ այդոցիկ՝ ըստ ցուցակին Ոսկանայ վարդապետի՝  
 աթոռք էին Սեւան, Մաքենոց, Շողազայ և Հայր Յով-  
 հաննականք. զորս յիշէ և Սիմէոն կաթողիկոս ի Զամ-  
 բըս մատենին (283-4) և յետ կիսոյ ԺԸ դարու, հան-  
 դերձ իւրաքանչիւր վիճակեալ գիւղորայիք. Սեւանայ  
 19 գեօղ, յորոց զոմանս համարի լինել ի Մաղկունեաց  
 նահանգի. Մաքենոցաց՝ 49 գեօղ և 5 վանք. Շողա-  
 զայ՝ 21 գեօղ և մի վանք. Հայրավանից՝ 22 գեօղ և 23  
 (?) վանս, — Բայց յառաջ քան զայն ժամանակ ի ԺԵ և  
 ԺԶ դարս յիշի եպիսկոպոս երկրին Գեղամայ, այլ նըս-  
 տոցն ոչ անուանի. բայց զի ի միում ուրեք յիշատակի  
 եպիսկոպոս ի Կաճ (կամ Կաժիք), մարի է զայն համա-  
 րել աթոռատեղի ։ Ի յիշատակարանս գրոց գառի զայստ-  
 սիկ միայն եպիսկոպոսունս յանուն Գեղամայ,  
 յամս, 1468 Ստեփանոս եպիսկոպոս .

- 1505 Գրիգոր<sup>2</sup>.
  - 1559 Մելքիսեդ արքեպիսկոպոս .
  - 1578 Կարապետ արքեպիսկոպոս .
  - 1587 Դաւիթ եպիսկոպոս ի Շողազայ<sup>3</sup>.
  - 1670 Խաչատուր բարունակեալ ի Մաքենոցաց .
- Մկրտիչ Պարոն տէր (Եպիսկոպոս) Շո-  
 ղազայ, ի նմին ամի ։

31. ԱՆՆԱՐՉԱԳՐԱՆ ԲՅՈՒՌՔ. — Երկուս գաւառս  
 տրուեալ տեսաք ստոյգ զերկիրս Գեղամայ ՚ի նախնեաց  
 մերոց, ի ԳԵՂԱՔՈՒՆԻ և ի ՍՈՂՈ ի և ԱՐՏՈՑ գաւառ . ա-  
 ռաջինն յարեւմտակողմն, երկրորդն յարեւելեանն, որոց  
 անլրպետ թուին միջագետք Կթանոցի և Մաքենոցի՝ կո-  
 հակքն Տիքճէ Փիլիպոս լիւրանց . երեւի, թէ և ոչ վանն  
 ընդարձակութեան երկրին՝ այլ վանն բազմութեան յինից  
 և բնակութեան՝ ի հնումն իսկ զատուցեալք էին յառանձ-  
 նակ վիճակս, զոր հաւաստէ մեզ յառաջարեւել ըսն  
 Սարգսի կաթողիկոսի . զի ուրոյն՝ այլ յարակից մասն Գե-  
 ղաբունեոյ համարի զԳՈՋԱՐԱՆ . և փոխանակ Սողից՝ կար-  
 գէ մասունս, « զԵՐՏԵԱՑ, ԶԱՐՏԵԱՐՈՆ և ՓՈՐԱՆ իսկ  
 » բոլորովին » . յետինդ՝ որպէս և այլուր յիշեցաք, թուի  
 ընտնափակ ճախճախուտ երկրին սահմանակից Արցախոյ  
 և Մարայ . թէպէտ և այլ ըսն վճռագրի միոյ ի նմին ժա-  
 մանակի ( յամի 1019) ընդարձակ իմն ցուցանէ զՓորա-  
 կըն, մինչեւ առանձին եպիսկոպոս իսկ ունել, զոր այ-  
 լովքն հանդերձ՝ վասակ թաղաւոր դարձուցանէ յաթո-

1 Յայսմ յետին թուականի (ՌՃԻԳ) զրէ ոմն « ի զիւղն Հըմդը-  
 ղ գած (?) . Մէլիք Միրզախաննի ժամանակին ։ Անժանթ է ինձ  
 գիւղն, այլ հաւանիմ լինել ի Գեղաբունիս և ընդ իշխանութեամբ  
 որդւոյն Մէլիք Բէկի ։

2 Սա ոչ ի գրոց, այլ յարձանագրութենէ հոռոյն, չստի յայս-  
 նապէս եպիսկոպոս Գեղամայ, և թուականն ևս թերտա է ։

3 Սոսկապէս Դաւիթ եպիսկոպոս յերկրէն Գեղամայ կոչէ զին-  
 քն՝ յայսմ նշանակեալ ամի (1587), յորում և զազթեալ ի խնուս՝  
 զԵՐԵ զԻՐՍ ինչ ի ԳԵՂՆՈՐԱՆ գեղջ ։ Նոյն դարձեալ յամի 1610 յիշի  
 իբրեւ առաջնորդ Խորոսկոպ Աստուածածնի վանաց ի Զակամ վի-  
 ճակի՝ արտաքոյ Սիւնեաց ։ Գրեալ է նորա և չափաւ բանս ի գա-  
 ղութ Հայոց ի Շահաբասայ, որ տեսցի ի տեղագրութեան Զաւոյի ։

աբն Տաթևու, «զՎայոց Ձոր, գԳեղաբունի, գՓորակն, » զՀամբատ, զԶուղայ, զԵրնջակ»: — Ծար եւս յաճախ մասն համարի Սողից, թէպէտ և ուրոյն գաւառ կոչի, և Աղուանից՝ այսինքն Արցախոյ՝ մասն համարի յայլոց. և է իսկ այնպէս համարելի ըստ աշխարհագրական գրիցն, զի թէ և կից՝ այլ արտաքոյ կայ տաշտին Սեւանայ. բայց ըստ քաղաքականին երեւի ի հնուամի՝ որպէս վասն Նյախ, ճաւանի վէճ էր Սիւնեաց և Արծրունեաց, այսպէս և վասն սորա՝ Սիւնեաց և Արցախեցեաց. յայս ակնարկեն և բանք Սարգսի կաթողիկոսի, զի յետ յիշելոյ զՓորակըն՝ յաւելու. «Յորում բազում հակառակութիւնք լեալ » էին, և մեծամեծ նզովիք ամրացուցեալ էին կաթողի. » կողմն Հայոց (զթեմ Սիւնեաց եպիսկոպոսի). հատա. » նէ և զսահմանն Աղուանից՝ Ըումրի-Խոռն, Ծար գա. » ւառ, Աղահէճ», և այլն: — Ի վերջին ժամանակս Գե. ղաբունի՝ վասն արեւմտեայ գրիցն կոչեցաւ ԾՄԱԿ, որ. պէս և հանդիպակողմն ծովուն՝ արեւելեայն՝ Արեգոնի. այս է ստեղծ Ջաքարիայ Սարկաւազի, «ի գաւառէն Գե. » ղամայ Ծմակ կոչեցեալ»: Ջարդիս՝ կողմն այս կոչի ԳԱԻԱՌ յանուն զիսաւոր աւանին. հարաւակողմն՝ յա. նուն երկուց մեծ գիւղից՝ ԿՈԹ, (որ և ի հնուամի ուրեմն Գաւառ կոչի առանձնապէս, և պատշաճի եւս հին Գրու. ղարակ վիճակի), և Գարանլըզ յիւրից Կթայ, զոր լաւ եւս է հին անուամբ գիւղիցն կոչել ԿՂՈՒՍ: Իսկ արեւելեան հարաւային կողմն և բովանդակ արեւելեանն (Արեգունին) մինչեւ ի հիւսիսակողմն Ծովուն՝ կոչի յանուն Մէզրէ մեծի գեղը, որ է ՍՈՒՔ: Հիւսիսակող. մին ծովուն համարի արդ ի բաժնի Վարաժնունեաց, յոր և մեք գրեցաք ի տեղագրութեան Այրարատայ, դարեւ. մտեան մասնն, զի կայ ի հովտի Չանկի առուի որ խո. նարհեալ խառնի ի Հրազդան՝ յերկրի Արարատեան նա. հանգի. այլ գրուն հիւսիսայինն փոքրիկ մասն՝ որոյ գե. տակն (Ճապոտիկ) ի ծովն խառնի՝ համարիմք սորին տաշտի պատշաճ, և մասին Արեգունոյ:

Արդ այսպէս տրոհելք ի տեղագրութեանս Սիւնեաց՝ զհին վիճակս երկրիս Գեղամայ կամ երկրոցուն գաւա. ռացն Սիւնեաց՝ Գեղաբունոյ և Սողից, ի շորս մասու. նըս. Ա. Գեղաբունի=Ծմակ=Գաւառ. Բ. Գոզա. բակ=Կոթ. Գ. Սողք=Մէզրէ. Դ. Արեգունի. և ար. տաքոյ սոցին՝ այլ առաջնուամի պատշաճագոյն՝ Ե. Սեւան կղզի, և որ ի հանդիպոյ հուպ նմին ծովեզրն: — Ըստ քա. ղաքական տեսութեան Ռուսաց՝ երկիրս Գեղամայ՝ ա. րեւմտեայ սահմանակցան Մազազաւ, (որ արդարեւ ի սկզբան անորիչ տուն էր Գեղամայ նահապետի), մի է ի հնգեցուն վիճակաց կամ Գաւառաց Երեւանեան նահանգի, 8440 վերստ քառակուսի, և 36, 000 բնակչաք

ըստ մարդաթուի 1878 ամին, և կոչի ՆՈՐ ՊԱՅԵՋԻՑ, զի զքաղաքաւանն Գաւառ՝ յայդ անուն կոչեցին նոր բնակիչքն Հայք՝ զաղթեալք ի Պայեզիտոյ Կոգովտի, յամի 1828 — 30 (տունք իբր 400, իսկ այժմ իբրեւ 1000). կոչի և Կէօք-չայ գաւառ՝ յանուն ծովուն:

Յանկ անուանց գիւղից հարկատուաց եպիսկոպոսա. կան աթոռոյ, ըստ հին առհմանին, որ գտանի առ Օրբե. լեանի, ընծայէ 47 անուանս Գեղաբունեաց, 78 Սողից, կամ 80 (ըստ այլ ձեռագիր որինակի), միահամուռ 122 կամ 127. այլ ի նորագոյն ցանկս հասից կամ պտղոց աթու. ռոյն Տաթևու, (յորոց մին արարեալ յամի 1693 յԵրեմիայ Վարդապետէ ումեքէ), ոչ նշանակին ընդ այլոց տասնեակ գաւառաց Սիւնեաց (որպէս ասին)՝ ոչ Գեղաբունիք և ոչ Սողք. վերստին ուրեմն անջատեալ էին յաթոռոյ անտի՝ յետ միաբանութեան և նզովից տանուտեարցն Գեղամայ, և տրոհեալ յառանձնակ վիճակս շորից զլիսա. ւոր վանորայիցն յիշեցելոց ի Սիմէոնէ կաթողիկոսէ. սա միահամուռ թուէ ի նոսին հարիւր գեօղս, (ի բաց թողլով զորս ի բաժնին Վարաժնունեաց), թէպէտ և անուանքն չեն նոյնք, կամ ըստ մասին միայն: Աւելի քան զ՝120 գեօղք հաշուին և արդ յերկրի աստ, յորոց կէս բնակեալք, և կէս անբնակք. ի յետնոցս իբրեւ քա. ռասնից և անուանք իսկ մոռացեալք են, մանաւանդ որոց ի լեւնակողմանսն, ի ստէպ հարստահարութեանց և հինից երկրին ի յետին դարս. և բնակեալքն՝ յանուա. նէ կարգին ի շորեսին վիճակսն, ընդ մեծ և ընդ փոքր վաթսունեակերկու գեօղք. յորս բնակիչք՝ ըստ յետին ծանօթ վիճակագրութեանց, ողիք աւելի քան զ՝78, 000, երկու մասամբ Հայ և մի մահմէտական. բայց յայտ է թէ յայժմուս յաւելեալ է թիւ բնակչացն: — Տեսցին ի մուտս տեղագրութեան գաւառացն՝ հին և հայաշունչ անուանք գիւղորայիցդ ըստ հին ցուցակին, զոր մի ի ցան. կալի նշխարաց պատմութեան կամ աշխարհագրութեան երկրիս Հայոց համարիմ, և պիտանի աւանդից պատմին Սիւնեաց, որում հարկ իսկ է մեզ աստտին երախտա. պարտ լինել: Յաւելեալ ի նոսին և զառ յայլոց յիշեցեալս՝ զտանեմք անուանս ընդ հին և ընդ նոր աւելի քան զ՝220 շինից, ի յիշատափի աստ ծովուն Գեղամայ. որք յուշ առնեն եթէ քանիօն բազմաչէն և մարդախիտ էր երկիրն յաւուրս պայազատութեան Հայկազուն տեարց Սիսա. կանաց: Այժմեան բնակիչք բնիկ Գեղաբունոյ՝ առա. ւելագոյն մասամբ Հայք են, Սողիցն՝ Թաթարք. սոցս սկիզբն բնակութեան կանուխ է քան զհասարակօրէն ծանուցեալ եւս Թաթարաց ճինկիղխանի և զմուտս նո. ցին յաշխարհ մեր յ՝ԵՊ դարու. Թուրքք Գեղամայ չե. րանց կոչմամբ յիշին ի մերոցս և ի կէս ԵՐ դարու:





**Ա. ԳԵՂԱՔՈՒՆԻ = ԾՄԱԿ = ԳԱՒԱՌ**

33. Այսոքիկ են անուանք քառասունեւեօթն գեօղից Գեղաքունեաց ըստ եկեղեցահարկ ցուցակին. յորոց, որպէս տեսցի ի ստորեւ, սակաւք ոմանք արդ հանաչին նովին անուամբք. իցեն թերեւս և այլք ցարդ ի շինութեան, բայց այլազգական կոչմամբք թաքուցեալք, և ոմանք ի սպառ անհետացեալ: Դասակարգ ցանկի գեղորայիցս՝ թուի ցուցանել զմերձաւորութիւն իրերաց. իսկ որ ի հանդիպոյ թիւն՝ ցուցանէ զչափ հարկին, յորմէ գուշակի և մեծութիւն կամ ճոխութիւն նոցին. բայց տեսակ հարկին և չափոյն ոչ նշանակի ի հեղինակէն, այլ թուին արմտիք, սովորական արմտեաց չափով ժամանակին, և կամ դրամն վարուն:

Կոթ կամ Կոթի	20
Կտկոյք	12
Գոնոյ-ծոր կամ Կոնոծոր	12
Սկերտ կամ Ըսկերտ	10
Յըցնի	7
Խնծի-Թաղք	7
Յոփեաց ծոր կամ Ոփեաց-ծոր	6
Նորաշէն	7
Եւանակաց կամ Յիւնակաց հուն	7
Ողնի. Ողնի	12
Գանձաղանտառ	7
Գողծոր	7
Երիզկայք. Երիսկոյք	15
Դաստակերտ	10
Վասակաշէն	10
Զառագարակ. Զառանագարակ	7
*Ամասրիա, (Մասրիք)	15
Վաժոց	10
Կամբրիւն	15
Հոգք. Հագք	15
Խոկառինճ	12
Խորոտն	15
*Արգիճի. Արգանճին	10
Թմոկ	15
Մեհոգաց. Մեհոգած	10
Հովուաց ագարակ	7
*Զագ	17
Կածիք	15
Ութբրուն	12
Յուշապերեկ. Յուլաբերէք	6
Վարդենիք Վերին	6


Վարդենիք Ներքին	15
Թամբարարք	12
Երերուք	15
Աւնճոյ կամ Աւնջոյ հուն	15
Գոմք	12
Պահավանք կամ Զահավանք	6
Կուտրակագոմք	10
Վսնավան	7
Փառականք	10
Բերան	12
Ղեխք. Ղիղք	10
Բրտի այրք	12
Շիկակարքն	15
Գերափու	15
Ծաղկայ. Ծախկայ	7
Ախայիւնք. Ախայենք	15

Յարեացուք ի սոսա և զհայանուն գեօղեանն յիշատակեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ ըստ թեմից վանորէիցն, Ա, Սեւանայ. Բ, Հայրավանից. և Գ, Շաղուագայ, ի բաց թողեալ զայլազգականն. իսկ վասն անուանց որ գտանին և ի հին վերոյգրեալ ցուցակին՝ նշանակեցաք անգ առ նոսին աստղանիշ\*, կամեցեալ ազդ առնել զի նոյնք յիշեալք են և ի Սիմէոնէ:

Ա. Կաղմախի	
Բատակալ	
Վարզել	
Վարզել միւս	
Փշմակալ	
Կորատեղ	
Բ. Փոնաղար	
Իլկավանք	
Ափասար	
Բիղնի	
Նորատուս	
Աւնեղի	
Գանձակ	
Պարոնբէկի (-գիւղ)	
Խշլածագ	
Բերդ	
Ազատքաղաք	
Կարմիրշէն	
Գ. Կորգարակ (Գուգարակն հին)	
Զագ փոքր	

Եզնիսա  
Շղուաք  
Ծակքար  
Քեռափոր (Թուի Քեռաշէնն)  
Կարմիրքար  
Կարմիրքար միւս  
Բալախատափ  
Վրացաշէն  
Ամրբար ?  
Կարմիր աղբիւր  
Գառնակեր

Գիւլիշէն  
Հաքուլ  
Մասրուց անապատ վանք  
Իսկ այլազգի կամ Թուրքանուն գեօղք յիշեալք ի Սի-  
մէոնէ, ըստ երից Թեմիցն՝ են,  
Ա. Պոռտաքեփե. Ղարադաղու.  
Բ. Տէլի դարտաշ. Ղոշայի. Գըշլագ կամ Ղշլախ. Պոսգ-  
խանէ. Գարա գիլիսէ. Դիւդանկի. Եկիդանկի. Սե-  
դանկի (Երկաղանկ, Միաղանկ, Եռաղանկ). Քեռա-  
մանուպոշագ. Հասանպոշագ.  
Գ. Տիլեմի. Եսատիեօրու. Այրուքախտ:



3 Հայր Թովմաննափանք.

23. Գլուխ գաւառիս Գեղարունեաց, հիւսիսային ա-  
րեւմտեան մասնն՝ որ անընդմէջ կայ ի հարաւոյ գետա-  
հովտին Վարաժնունեաց (Չէնկի) մինչեւ ց Գաւառա-  
գետ, իբրեւ տասն մղոն կամ աւելի ընդ երկայնն և սուղ  
պակաս ընդ լայն, երկիր ամայի և անջրգի է արդ, Թէ-  
պէս և նշանակին իսկ աղբիւրք ի ստորոտս (Գզըլ-տաղ)  
Կարմիր քար և Իւլ-Թէփէլէր լեռանց, այլ ոչ ժամանեն  
ի ծովն. և գրեաթէ և ոչ մի շէն կայ բազմաբնակ ի մէջ  
երկրին, այլ ի ծովեղերն, և այնոքիկ սակաւք: — Առա-  
ջին շէն հուպ ի Պորտակ Վարաժնունեաց՝ է Չիյնէլ-քեկտ  
որ և Սարաչու, գիւղ փոքր և Թուրքաբնակ, ի վերայ  
արքունի պողոտային որ տանի ի Գաւառ և Երեւան:  
— Ի Հր. Մ. սորա ամբառնայ Պոռտաքեփե լեռան,

զոր ոմանք Պուդա քեփե ընթեռնուն, որ նշանակէ Ճա-  
գուլիս, իսկ առաջինն՝ Յորենոյ սար, ի երեւս շեղձեւ  
գօրով: Սիմէոն կաթողիկոս յիշատակէ և գեօղ մի յայն  
անուն Պոռտաքեփե ի Թեմի Սեւանայ վանաց: — Ա-  
ռաջին պահակատուն յետ Չէյնէլ գեղջ կայ ի ստորոտս  
Իւլ-Թէփէլէր լեռանց, վասն որոյ և յայն անուն կոչի ի  
Ռուսաց (Իւլ-քեփեյէրաքայա). երկրորդ հանգոյց ի հա-  
րաւային ստորոտս նոցին, առ միւս եւս Սարաչու աւե-  
րակ գիւղիւ, որ կայ յարեւելեան ստորոտս Ահմանկան  
լեռին. յորոյ յԵՄ. Հր. կայ այլ գեօղ աւերակ համանուն  
Իւլ-քեփեյէր լեռանց, իբր փարսախաւ հեռի՝ ի Գաւա-  
ռայ. և մերձ նմին յարեւելից՝ յերի արքունի պողոտա  
յին՝ միւս եւս գեօղ ամայի՝ Գուշու կոչեցեալ:

Իսկ ծովեզերեայ գետոջք են, առաջին, Պեկիի Հիսուսիկն — քէնտ՝ կիսով եւեթ փարսախաւ հեռի ի Պորտակայ. սա եւս մակակոչի Սարաչոռ, որով գուշակի յայդ անուն մեծի թաթար տոհմի բնակեալ ի կողմանսդ. յորոց 43 տունք էին աստ յամի 1873: Հուպ նմին է և Աշխաւն տրոպիքս գիւղիկ 25 տանց մալական Ռուսաց:— Յելից Հր. սորա՝ Էֆեկտի-քէնտ կամ Ռահման-քէնտ 35 տամբք թաթարաց:— Առ սղբք ծովեզերքն մինչեւ յԱգ-գալէ հերձակտուր սարաւանդեալ են. ի միում յայսպիսի վայրուց կառուցեալ կայ Հաձի-Մոռղան կամ Մոռլիսան դիւղ երկու մղոնաւ յԵՂ. Հր. վերայգրելոյն, յորում 55 տունք թաթարաց:— Ի հարաւոյ սորին գոգ իմն կամ խորշ գործէ ծովն. և յանկեան նորին կայ Ախաիթի կամ Աղ-գիպիր գետը 30 տամբք այլազգեաց:— Երկու եւս մղոնաւ յԵՂ. Հր. սորին կայ Հայրուանը գետը, Այրի վանք կոչեցեալ ի ռամկաց, 30 թաթար տամբք, յանկեան այլոյ խորի ծովուն. և յերկոցուն միջի գոգոցս՝ կարկառեալ տարածանի ցամաք իբրեւ թերակղզի՝ երկու մղոն կամ աւելի լայն, հերձակտուր և ժանեւոր արհմբք. ի հարաւային ոստ մի նոցին մերձ ի Հայրուանս կայ Ագ-գալէ (Սպիտակ բերդ) բերդաւոր գետը 30 տամբք: Բովանդակ ցամաքակղզիս այս լի է աւերակզք մեծագործ հայկական դաստակերտաց. որպէս խնամով ազդէ և ուղեւոր մի Եւրոպացի՝ որ և նշանակէ ի տեղացոյց տախտակի իւրում ի հիւսիսային անկեան ցամաքակղզոյն կամ յառաջ նում խորի ծովուն՝ զԳրդիվանք, աւերակ (կարմիր) վանաց, որ ոչ լի առ այլս, և թուի ինձ նոյն ընդ Այրիվանից. փոխանակ այն՝ տեղացոյց Ռուսաց նշանակէ աւերակս աշտարակաց յայլեւայլ հրուանդանս կարկառեալս ի ծովն: Իսկ ի մերագգի զրացս՝ հաւաստէ և եպիսկոպոս սըն Շահխաթունեան, եթէ, է անդ «տեղի մեծի աւերակի մինչեւ կարծել իսկ քաղաքի... աւելի քան 2000» գերդաստանաց. ի միջին տեղով այս աւերածի ի փոքր ինչ բարձր դիրս՝ կային կանգուն ուղղաբերձ որմունք քարամբք և կրով ձուլեալք. անմիջոց յեզերս

» ջուրց ծովակին՝ հիմունք տանց և հովանոցաց. և չէնք » նոցին բոլորովին խոնարհեալ և քայքայեալ. որոց տե. » սիլ եւեթ գրաւէ զուշ մարդոյ ի զարմանս, և զոգի » հայրենասէր՝ ի հառաչանս հոգւոյ ի խորոց արտէ»:— Միակ շինուած նշանակեալ ի սմանէ և ի տախտակս՝ է ի հիւսիսոյ գեղն Հայրուանից և անուանատու նմին՝ Հայր-Յովան վանք, մերձ յԱգգալէ բերդ, ի հրուանդան մի քարակտուր կարկառեալ և միեալ ի ծովն. և անուամբն յայտնէ նշանաւոր մենաստան մի եղեալ ի հնումն, որիչ ի համանուն վանից որ ի մեծ Սիւնիս. միայն եկեղեցին կանգուն կայ տակաւին, փոքր և անսին, սրագագաթն գմբեթիւ. ունի և գաւիթ՝ կրկին մեծութեամբ տաճարին ի վերայ երկուց սեանց, այլ թուի յետոյ շինեալ յառաջ նորդութեան տեղոյն՝ Յովասափայ, ի կէս Եթ դարու: Է նորա և ներքնատուն եկեղեցի, այսինքն անձաւաձեւ դասարկ քարափոր. թերեւս պահարան կահից և ոպասուց: Յարեւմտից և ի հիւսիսոյ կուսէ՝ աւերակք են վանացն և հանգստարանք. իսկ յարեւելից և ի հարաւոյ՝ ծովն կոծէ զպարիսպս. և այնպէս ի հարուստ դարուց հետէ կանգուն կացեալ՝ աստի ի միջի սփիւռ աւերակաց դաստակերտաց, և անտի՝ անդադար ծփանաց ծովակին, դէտ իմն թուի և զուշակ անցից ժամանակաց, զորոյ գաղտնիս ըղձակերտ առնէ հայրենասիրացս հետագոտել. և կարծել զԳրդիվանքն՝ որ յայն կողմն ցամաքակղզոյս՝ գոլ կարմիրէն կոչեցեալ ի Սիմէնէ կաթողիկոսէ, և զքաղաքատեղին աւերակ՝ Ազատ-քաղաք գիւղ, յորում նշմարին պարիսպք իջեվանից կամ կարաւանատանց, անյիշատակք առ ի նախնեաց: Մարթ է և զմի ի տեղեաց աշտարակացն համարել Բերդ գիւղ, և զմին՝ Գեղաքունոյ բերդ, զոր ընդ զխաւոր բերդորայս Սիւնեաց կարգէ պատմիչ այլասահին:— Իսկ Հայրավանիցս գրաւոր յիշատակք են սակաւ, այլ և ոչ քաջ վերձանեալ մնացորդք արձանաց յորմունս եկեղեցւոյն, որոց զխաւոր է գրեալն յալկողմեան որմն թուականաւ 1211 ամի. երկրորդն որ հնագոյն թուի՝ յահեակ որմն.

Թվին ՈԿ. Նորոգեցաւ եկեղեցիս առաջնորդութեամբ Յովասափի եւ Անարայիսի ? մեծ սպարապետ Բուբայ ? տէր երկրիս ետ առու ինչք ? զայգին Ոսկեքակայ, Առուքանակ, (որ է առու Քանաքեռու)՝ Բ ակն ջաղացին, Աշիկ, Տէր վանական իւր Խալթի ձագն ? իւր բերդաժողովուրդն վանիցս. կարգեցաք զՅայտնութեան ճրագալոյցն, Զատկի ժամն կատային տան, մեք տուաք վախմ. ով (ղ)վախմ(ս) հանէ՝ դատի ի Տեառնէ: † Ես Աջահաբս ? եւ Մուծկանց Գրիգորս, Աբելս եւ Առաքելս միաբանեցաք եւ տուաք զՍապուանց այգին ? Երկեւան մուս ի պագան ? եկեղեցւոյս Հայր—Յոհան. Եւ առաջնորդք սորա արացեան Ե ժամ. Ով խափանէ դատի ի Տեառնէ:

Զատ յերկուց աստի՝ ի վերայ հարաւային դրանն արձանագրեալ կայ և յետագայս.

1 Ան իւր է Տիւղուս. Toute la presqu'île, principalement depuis l'église (d'Aïrivank), jusqu' à Akhkala, est couverte de grandes ruines.— DUBOIS, III. 312.  
 2 Փակագրեալ բան թուի ծանօթութիւն ընդօրինակողին:



**Ես Սարգսուկ եւ Բահր շինեցաք երկու խորանս . ես Վահրամ, Ստեփաննոս , Խաչատուր , տուաք այգի ի Ժամանակս Յովասափ առաջնորդի .**

Ջալալեան գաղափարող կամ հրատարակող արձանացս՝ համարի զայս մենաստան նոյն լինել ընդ Մարդահաւնեաց վանացն, զորմէ տարօրինակ իմն սքանչելիս աւանդէ Ղազար կաթողիկոս, այլ ոչ պատշաճի տեղւոյս. քանզի անդ առ զետով միով աւանդի լինել մատրանն, յորում գործեցան իրքն: Իսկ յարձանագրութեանց ստտի՝ հաւաստի վերանորոգութիւն վանացն ի սկիզբն ԺԳ

դարու, և առաջնորդ նորին Յովասափ ոմն, որում ստար լինին բազումք ի նորոգութիւնս և ի հասոյթս վանացն: Փափագելի է վերստին քննութիւն և ստուգութիւն արձանացն, մանաւանդ անուան սպարապետին և տեառնն երկրիս: — Գտանի ի Տիրիկ քաղաքի Փղբուն Հայոց՝ աւետարան մի գրեալ յայս վանս, որոյ Թուական Թուի սխալ կամ Թերի գաղափարեալ ի քննողէն, ճշթ,



4. Առնեղ.— Ս. Գրիգոր վանք.

զոր կարծեմ ՋՂԹ, (1830), « ի հայրապետութեան » Տէր Գրիգորի... յերկիրս Գեղամայ, ի սուրբ ուխտս որ » կոչի Հայր Յովան, ի դառն և ի նեղ Ժամանակի. (յու » բում) եկն յերկիրս մեր Տաճիկ մի, հարկ խնդրէր, ոչ » համարաւք, այլ Թաւարուք<sup>1</sup>, որ է հարկ բեռին»: Գրիգորը համարելի է ԺԱ կաթողիկոս, որ սովորաբար կարծիւր յամի 1836 յաջորգեալ զՍարգիս Գ, այլ ըստ սովորութեան դարուն ի դէպ է Ժամանակակիցս ասել զնոսին<sup>2</sup>: — Յիշէ զովութեամբ զեկեղեցի Հայր-Յովհաննա-

վանից՝ Տիւպուա ուղէգիր քննող մերձակայ սահմանացս՝ (յամսեան փերր. 1834), և ասէ միայն չէն մնացեալ ի միջի բազմախուռն աւերակացն, այլ և վերստին նուիրեալ ի պաշտօն Աստուծոյ, ընդ հնգեցուն այլոց հին եկեղեցեաց գաւառիս<sup>3</sup>:

Յ4. Երկու մղոնք ի Հր. Հայր-Յովհան վանից՝ առ ծովեզերքն՝ կայ Այսպուղան կամ Այսպուղան (Արլախեղդ?) գետը ամայի, առ որով ի հարաւոյ կուսէ հին եկեղեցի կամ մենաստան, որոյ ոչ նշանակի անուն կամ

1 Թէ՛վար ۱۱۳۳ գարսկերէն նշանակէ կաղանս բեռանց:  
2 Մանուսէզ զի վայտ ոմն Վարդաէ կեցեալ երկուր ի վիրս:  
3 Un autre endroit célèbre, le monastère de Aïrivanç

... n'a gardé d'intact que son église... Six des belles églises des temps passés ont retrouvé des troupeaux.— DUBOIS, III. 311.

այլ նշմար: Մղոնաւ եւս ի ստորեւ ի հարաւոյ առ ծով- եզերքն միւս այլ նման գեօղն Ապուշար անուն, թուի մերձաձայն գեօղն Ափատար՝ յիշեալ ի Սիմէոնէ կաթո- ղիկօսէ: — Աստի իբրեւ փարսախ մի է մինչեւ ի բերան Գաւառագետոյ՝ ընդ արեւելս հարաւոյ, ի ներքսպոյն անդ ծայր ցամաքի արեւմտակողման Գեղաբունոյ, և հանդէպ մեծի ցամաքակղզոյն Արեգունոյ, որք երկուս- տեք անձկացուցանեն զՄոլլն ի միջոցին, հնգիւք եւեթ մղոնօք չափ տարակաց մնալով երկոցուն ափանցն:

Ի վերնակողմանս գետոյս՝ որ ի բարձր բարձր լեռանց անտի Գեղամայ և ի լճակէ միջէ Արփա կոչեցելոյ իջանէ

յայլեւայլ կողմանց, յարեւմտից և ի հարաւոյ, կայ աւե- րակ և ամայի գեօղն Գարայ: Ի հարաւոյ նորին առ հիւ- սիսային օժանդակաւ գետոյն՝ փետրիմ ճեւտ, գեօղ շէն այլ սակաւաբնակ: յորոյ յարեւելից առ գետեզերքն յա- հեկէն՝ Գանձակ, այժմ ըստ այլազգեաց ֆետուկ-Մեհմետ, որ է հաւանօրէն Գանձաղանտառ հին ցուցակի Սիւ- նեաց, բարգաւաճեալ ի նոր գաղթելոց Հայոց, զարդիս իբրեւ 180 տանց, ընդարձակ քաջարոյս վիճակաւ: Ունի եկեղեցի հնաշէն յանուն Ս. Գեորգայ, հաւասար մեծու- թեամբ Նորատուաց եկեղեցոյն, կիսաբոլոր խաչաձեւէ: Յորմն աջակողման արձանագրեալ է:

**Ես կուտուղս եւ որդիքս . . . . . Գանձակայ տուաք վախմ՝ զկալերն չըր- շապատ եկեղեցւոյս:**

Արձանագրէ և որդի կուտուղի այսպէս.

**Կաման Աստուծոյ ես Ստեփաննոս քահանայ որդի կուտուղ աղ(այ)ի շի- նեցի զըրշապատ եկեղեցւոյս, յիշատակ ինձ եւ մաւրն իմոյ Արդինին եւ եղ- բարց իմոց:**

Գոյ և տապան մի մեծ յեկեղեցւոյն ի հարաւակողմն, այսու արձանագրութեամբ, յամի 1813.

**ԹՎ. ԶԿԲ. Այս է հանգիստ Աղարիին, որ էր առաջնորդ Գանձակիս. յիշեցէք ի Գրիստոս. Ես Գունազս կանգնեցի զտապանս՝:**

Գմբեթ եկեղեցւոյն կործանեալ է, և փայտայարկ ծածկեալ արդ, կատարի ի նմին պաշտօնն: Թամին 1889, Արսէն Զարարեան իւրովք ծախուք ած պարիսպ զեկե- ղեցեան, յարդարեալ ճեմելիս հովանաւորս ուռնենօք: Մղոնաւ ի ստորեւ կայ ի Հս. Գանձակայ Առնեղձ գիւղ Հայոց իբր 200 տանց<sup>1</sup>, յայլազգեաց կոչեցեալ Փա- շաքեւո կամ Մեհմետ աղայի, և նոյնչափ հեռի ի Հր. Գա- լառ աւանի, ի ստորոտս երկարաձիգ քարաբլրոց, յորոց բղխէ մի յօժանդակաց գետոյն, կեօք-չայ կոչեցեալ յայլ-

ազգեաց: Մնացուածք հին շինուածոց են և ի սին, թէ և գեօղն ոչ յիշատակի ի գիրս ծանօթս մեզ. և է եկե- ղեցի մի մեծ, այլ ի սպառ քայքայեալ, և միւս փոքր ան- կործան, սրբատաշ քարամբ և փոքու կաթուղիկէիւ, յանուն Ս. Գրիգորի. որոյ ժամանակ շինութեան և դէպք անծանօթ մնան, զի ոչ յայտնեցան արձանագրութիւնք ի նմին. այլ միայն բացազոյն ի վէժ մի անջատ և ի բաց անկեալ՝ կայր գրեալ յիշատակ տիկնոջ միոյ, յամի 1849, այսպէս.

**Կաման Աստուծոյ Տատլուղան դուստր Պարոն Գաւթին կենակից Փիր- համզայ աղին ( աղային ), որ նորոգեցի չըրշապատ Սուրբ Գրիգորիս, յի- շատակ հոգւոյ իմոյ . ԶՂԸ.**


Գուցէ Փիրհամզէդ իցէ առաջինն ի մէլիքաց Գեղա- մայ յիշեցելոցն յամի 1813, որդի Եղիշէի, որդւոյ մէլիք Միրզայի, և հայր Զօհրապի + 1805: 28. Իբրու մղոնաւ եւեթ ի Հս. Առնեղի և չորիւք հեռի ի ծովեզերէն, ի գլուխ արբունի պողոտային որ տանի յԵրեւան, կայ այժմեան շինազուրի համօրէն երկրին Գեղամայ կամ կէզըչայ գաւառի՝ Գաւառ,

առ իւրանուն գետով, յորոյ վերայ արկեալ է կամուրջ վայելուչ, աւանացեալ ի գաղթականաց Պայէզիտոյ (Գարօնից), վասն որոյ յայժմուս Նոր-Պայէզիս կո- չի. հին անունն Գաւառ՝ դուն ուրեք գտանի ի գիրս ոչ հինս, և ոչ ի ցուցակի գեօղից պատմին Սիւնեաց. այլ ի տապանագիրս տեղւոյն յայտնի յառաջին կէս ԺԶ դա- րու, և ի ձեռնարկ մէլիքացն Գեղամայ յամի 1813, յու-

1 Ըստ Զաւաւեանի (Բ. 124). 30 կանգուն երկայն, 20 լայն: 2 Կեօքչէի գրութիւն՝ երկբայական թուի: 3 Գուցէ առ նեղութեան ծովուն անգանօր հանգէպ գեղչն՝ կու- շեցեալ իցէ անուն նորին Առ-Նեղ: 4 Այս ըստ Նոր Գարի, Զ, 87: Աշխարհագիր 1873 ամին նշա- նակէ 170 տունս և ոգիս 1407:

բում տէր Գաւառայ կոչէ զինքն «Շահուլբաթ որդի Աւ» տողաճատուրի, թոռն Միրանշին»։ Երկոցուն սոցական տապանավէճք ընդ այլոց բազմաց՝ յարեւելից կուսէ աւանին, ի սարաւանդեալ քարաբլրի վայելչագեղ ձորակի ուրեմն, որոյ մի կողմն եւեթ դիւր զոլով՝ պարսպեալ էր ի հնումն բերդակերպ, իսկ այժմ՝ քայքայեալ, յայն սակս և կոչի Բերդի գլուխ. առ որով են քարայրք և ձեռագործ սենեակք պաղպաղունք, և գետնափոր ուղի աւելի քան մղոն մի՝ տանելով ի գետն, յորում գտան կաւեղէն պատկերք կոռոց, և ուլունք ազուցեալ յաչս նոցին<sup>1</sup>։ Խանգարեալ էր և եկեղեցին հին, զոր փայտայարկ

ծածկեալ գաղթականացն՝ կոչեցին Ս. կարապետ, յանուն եկեղեցւոյ հայրենեաց իւրեանց հին Պայէզիտոյ. և յանուն միւսոյն կոչեցին զմեծն<sup>2</sup> և զնորաչէնն իւրեանց՝ Միրանաշոր Ս. Աստուածածին. ի շինութիւն սորին առատապէս սատարեաց Բարսեղ Աղայ Արծրունի, որպէս և յայլ շինութիւնս, կրպակաց, և այլն. որովք վաղվաղ սկսաւ բարգաւաճել տեղին և զքաղաքի ըստացաւ պատիւ. բայց զի արտաքոյ գտանիւր զծից վաճառականութեան, ոչ սակաւք ի ճոխից բնակչացն լքեալ մեկնեցան անտի. այլ են տակաւին հանդերձ շրջակայիւքն իրրեւ 1800 տունք<sup>3</sup>։ Բնակիչքն՝ յաւէտ յերկրագործական



Յ. Գաւառ—Նոր Պայէզիտ.

վաստակս պարապին քան յարուեստս և ի տուրեւառս. յամի 1873 արուեստաւորք համարէին 390 ոգիք։— Ի գաւաթան բերդատեղւոյն ի միջի գերեզմանաց է մատուռն Ս. Ստեփանոս, և մատրանաձեւ շիրիմերէց եղբոր Բարսեղի՝ Աղայեց Մկրտչին գլխաւորի շինութեան քաղաքաւանին, և կոչի Աղայեց Գմբէթ։— Ի ստորեւ յարեւելակողման է տափարակն Ս. Յովնանէս չիւան (մարզ) կոչեցեալ. մերձ սմին՝ այլ ի դժուարակոխ վայրի՝ է Ս. Գեորգ մատուռն ուխտատեղի։— Երկու դպրոցք են քաղաքին,

մին պետական 60 ուսանողք, միւսն 120 աշակերտօք։ Ի սպասս գլխաւոր եկեղեցւոյն կան մատեանք ինչ սրբաբազանք, նշխարք բազկի Մեծին Ներսիսի, և երկու խաչքեր կրկաթեղէնք, ակունս ի միջակին ունելով, զորս աւանդեն շինեալ Ս. Թադէի, ի կոնքոյ՝ յորում մանկացեալ Տէրն մեր Քրիստոս լուացաւ<sup>4</sup>։ Աստի փոխադրեալ է յԷջմիածին և արծաթեայ տապանակ նշխարաց առաքելոցն Անդրէի և Մատթէի, նորոգեալ յամի 1735 հրամանաւ Գաւառեցի Սիմէոն վարդապետի։— Հետա՛

1 Մշակ, Թ. 172։  
 2 Ըստ Ջաւադ. Բ. 124 յերկայնն 54 կանգուն, 54 ընդ լայն։  
 3 Աշտարակէր 1873 ամին նշանակէր 804 տունս, ոգիս 5365։

4 Յեզր վակասին հիւսեալ է բուն նուիրողին համառատաբարութեամբ. Յիշատակ է վակասս Խաչումի որդի Միքիլիմ ի գեղմ Յղեցի (?) ի դուռն Ամենափրկչիմ. ԹՎ. ՌԾԾԹ. (1710)։

այլ նշմար: Մղոնաւ եւս ի ստորեւ ի հարաւոյ առ ծով-  
եզերքն միւս այլ նման գեօղ Սպարապետ անուն, թուի  
մերձաձայն գեօղն Ափատար՝ յիշեալ ի Սիմէոնէ կաթո-  
ղիկոսէ: — Աստի իբրեւ փարսախ մի է մինչեւ ի բերան  
Քաւառագետոյ՝ ընդ արեւելս հարաւոյ, ի ներքսագոյն  
անդ ծայր ցամաքի արեւմտակողման Գեղաքունոյ, և  
հանդէպ մեծի ցամաքակղզոյն Արեգունոյ, որք երկուս-  
տեք անձկացուցանեն զԹովն ի միջոցին, հնգիւք եւեթ  
մղոնօք չափ տարակաց մնալով երկոցուն ավանցն:

Ի վերնակողմանս գետոյս՝ որ ի բարձր բարձր լեռանց  
անտի Գեղամայ և ի լճակէ միոյն Արփա կոչեցելոյ իջանէ

յայլեւայլ կողմանց, յարեւմտեց և ի հարաւոյ, կայ աւե-  
րակ և ամայի գեօղն Գարայ. ի հարաւոյ նորին առ հիւ-  
սիսային օժանդակաւ գետոյն՝ Քեարիս ջրետ, գեօղ չէն  
այլ սակաւաքնակ. յորոյ յարեւելից առ գետեզերքն յա-  
հեկէն՝ Գանձակ, այժմ ըստ այլազգեաց Քեօսկ-Մեհմետ,  
որ է հաւանօրէն Գանձաղանտառ հին ցուցակի Սիւ-  
նեաց, բարգաւաճեալ ի նոր գաղթելոց Հայոց, զարդիտ  
իրբեւ 150 տանց, ընդարձակ քաղաքոյս վիճակաւ: Ունի  
եկեղեցի հնաչէն յանուն Ս. Գեորգայ, հաւասար մեծու-  
թեամբ Նորատուաց եկեղեցոյն, կիսաբոլոր խաչաձեւ՝  
Յորմն աշակողմեան արձանագրեալ է:

**Ես կուտուղս եւ որդիքս . . . . . Գանձակայ տուաք վախմ զկալերն չըր-  
չապատ եկեղեցւոյս:**

Արձանագրէ և որդի կուտուղի այսպէս.

**Կաման Աստուծոյ ես Ստեփաննոս քահանայ որդի կուտուղ աղ(այ)ի շի-  
նեցի զըրչապատ եկեղեցւոյս, յիշատակ ինձ եւ մալրն իմոյ Արզինին եւ եղ-  
բարց իմոց:**

Գոյ և տապան մի մեծ յեկեղեցւոյն ի հարաւակողմն, այսու արձանագրութեամբ, յամի 1513.

**ԹՎ. ԶԿԲ. Այս է հանգիստ Ազարիին, որ էր առաջնորդ Գանձակիս.  
յիշեցէք ի Քրիստոս. Ես Գունազս կանգնեցի ղտապանս՝**

Գմբեթ եկեղեցւոյն կործանեալ է, և փայտայարկ  
ծածկեալ արդ, կատարի ի նմին պաշտօնն: Յամին 1889,  
Արսէն Զարարեան իւրովք ծախուք ած պարիսպ զեկե-  
ղեցեան, յարդարեալ ճեմելիս հովանաւորս ուռեմնօք:

Մղոնաւ ի ստորեւ կայ ի Հս. Գանձակայ Առնետ՝  
գիւղ Հայոց իբր 200 տանց<sup>1</sup>, յայլազգեաց կոչեցեալ Փա-  
շաքեմտ կամ Մեհմետ աղայի, և նոյնչափ հեռի ի Հր. Գա-  
ւառ աւանի, ի ստորոտս երկարաձիգ քարաբլրոց, յորոց  
բղիտէ մի յօժանդակաց գետոյն, կեօք-չայ կոչեցեալ յայլ-

ազգեաց: Մնացուածք հին շինուածոց են և ի սմին, թէ  
և գեօղն ոչ յիշատակի ի գիրս ծանօթս մեզ. և է եկե-  
ղեցի մի մեծ, այլ ի սպառ քայքայեալ, և միւս փոքր ան-  
կործան, սրբատաշ քարամբք և փոքու կաթուղիկէիւ,  
յանուն Ս. Գրիգորի. որոյ ժամանակ շինութեան և դէպք  
անծանօթ մնան, զի ոչ յայտնեցան արձանագրութիւնք  
ի նմին. այլ միայն բացագոյն ի վէ՛մ մի անջատ և ի բաց  
անկեալ՝ կայր գրեալ յիշատակ տիկնոջ միոյ, յամի 1549,  
այսպէս.

**Կաման Աստուծոյ Տատլուղան դուստր Պարոն Դաւթին կենակից Փիր-  
համզայ աղին ( աղային ), որ նորոգեցի չըչապատ Սուրբ Գրիգորիս, յի-  
շատակ հողւոյ իմոյ. ԶՂԸ.**

Գուցէ Փիրհամզէդ իցէ առաջինն ի մէլիքաց Գեղա-  
մայ յիշեցելոցն յամի 1513, որդի Եղիշէի, որդւոյ մէլիք  
Միրզայի, և հայր Զօհրապի † 1505:

25. Իբրու մղոնաւ եւեթ ի Հս. Առնեղի և չորիւք  
հեռի ի ծովեզերէն, ի գլուխ արքունի պողոտային որ  
տանի յԵրեւան, կայ այժմեան շինազուլիս համօրէն  
երկրին Գեղամայ կամ կէօքչայ գաւառի՝ ԳԱԱՈՒ,

առ իւրանուն գետով, յորոյ վերայ արկեալ է կամուրջ  
վայելուչ, աւանացեալ ի գաղթականաց Պայէզիտոյ  
(Դարսնից), վասն որոյ յայժմուս Նոր-Պայէզիտ կո-  
չի. հին անունն Գաւառ՝ դուն ուրեք գտանի ի գիրս ոչ  
հինս, և ոչ ի ցուցակի գեօղից պատմչին Սիւնեաց. այլ  
ի տապանագիրս տեղւոյն յայտնի յառաջին կէս ԺԶ դա-  
րու, և ի ձեռնարկ մէլիքացն Գեղամայ յամի 1513, յո-

1 Ըստ Զալալեանի (Բ. 124), 30 կանգուն երկայն, 20 լայն:  
2 Կոնստնդնուպոլիսի Երկրաչափական Թուի:  
3 Գուցէ առ նեղութեան ծովուն անդանօր հանգէպ գեղին՝ կո-

չեցեալ իցէ անուն նորին Առ-հեղէ:  
4 Այս ըստ Նոր Դարի, Զ, 87: Աշխարհագիր 1873 ամին նշա-  
նակէ 170 տունս և ողիս 1407:



բուստեր Գաւառայ կոչէ զինքն «Շառուրան որդի Աւ» տուածատուրի, թոռն Միրանշին»։ Երկոցուն սոցական տապանավէմք ընդ այլոց բազմաց՝ յարեւելից կուսէ աւանին, ի սարաւանդեալ քարարլրի վայելչագեղ ձորակի ուրեմն, որոյ մի կողմն եւեթ դիւր զօլով՝ պարսպեալ էր ի հնումն բերդակերպ, իսկ այժմ քայքայեալ, յայն սակս և կոշի Բերդի գլուխ. առ որով են քարայրք և ձեռագործ սենեակք պաղպաղունք, և զետնափոր ուղի աւելի քան մղոն մի՝ տանելով ի գետն, յորում գտան կաւեղէն պատկերք կռոց, և ուլունք ազուցեալ յայս նոցին<sup>1</sup>։ Խանգարեալ էր և եկեղեցին հին, զոր փայտայարկ

ծածկեալ գաղթականացն՝ կոչեցին Ս. կարապետ, յանուն եկեղեցւոյ հայրենեաց իւրեանց հին Պայէզիտոյ. և յանուն միւսոյն կոչեցին զմեծն<sup>2</sup> և զնորաչէնն իւրեանց՝ Միրանաշոր Ս. Աստուածածին. ի շինութիւն սորին առատապէս սատարեաց Բարսեղ Աղայ Արծրունի, որպէս և յայլ շինութիւնս, կրպակաց, և այլն. որովք վաղվաղ սկսաւ բարգաւաճել տեղին և զքաղաքի ըստացաւ պատիւ. բայց զի արտաքոյ գտանիւր գծից վաճառականութեան, ոչ սակաւք ի ճոխից բնակչացն լքեալ մեկնեցան անտի. այլ են տակաւին հանդերձ չըլակայիւքն իրրեւ 1800 տունք<sup>3</sup>։ Բնակիչքն՝ յաւէտ յերկրագործական



Ճ. Գաւառ—Նոր Պայէզիտ.

վաստակս պարապին քան յարուեստս և ի տուրեւառս. յամի 1873 արուեստաւորք համարէին 390 ոգիք։— Ի գաւաթան բերդատեղւոյն ի միջի գերեզմանաց է մատուռն Ս. Ստեփանոս, և մատրանաձեւ չորմերէց եղբոր Բարսեղ Աղայեց Մկրտչին գլխաւորի շինութեան քաղաքաւանին, և կոշի Աղայեց Գմբէք։— Ի ստորեւ յարեւելակողման է տափարակն Ս. Յովնաննկս լիւնան (մարգ) կոչեցեալ. մերձ սմին՝ այլ ի դժուարակոխ վայրի՝ է Ս. Գեորգ մատուռն ուխտատեղի։— Երկու դպրոցք են քաղաքին,

մին պետական 60 ուսանողք, միւսն 120 աշակերտք։ Ի սպասս գլխաւոր եկեղեցւոյն կան մատենաք ինչ սրբազանք, նշխարք բազկի Մեծին Ներսիսի, և երկու խաչք երկաթեղէնք, ակունս ի միջակին ունելով, զորս աւանդեն շինեալ Ս. Թադէի, ի կոնքոյ՝ յորում մանկացեալ Տէրն մեր Քրիստոս լուացաւ<sup>4</sup>։ Աստի փոխադրեալ է յԵջմիածին և արծաթեայ տապանակ նշխարաց առաքելոցն Անդրէի և Մատթէի, նորոգեալ յամի 1725 հրամանաւ Գաւառեցի Սիմէոն վարդապետի։— Հետա՝

1 Մշակ, Թ. 172։  
 2 Ըստ Ջաւաղ. Բ. 124 յերկայնն 54 կանգուն, 54 ընդ լայն։  
 3 Աշտարակէր 1873 ամին նշանակէր 804 տունս, ոգիս 5363։

4 Յեզր վակասին հիւսեալ է բուն նուիրողին համառատագրութեամբ. Յիշատակ է վակասս Խաչումի որդի Միքիլիմ ի գեղմ Յղեցի (?) ի դուռն Ամնմարկչիմ. ԹՎ. ՌժԾԹ. (1710)։




քննելի եւս են վերոյիշեալ գերեզմանք գեղեցիկ քան, հանեալ է ի պէտս շինութեան նորայ եկեղեցւոյն: Շիր-  
դակք և մահարձանք. այլ ցաւէ, զի զշատս քակեալ մին յիշեցելոյ Շաղուբաթի՝ այս է արձան յամի 1594.

**Մեծ սուգ եւ տրտմութիւն եղեւ. Այս է հանգիստ Շաղուբաթ աղային, որ էր տանուտէր Գաւառին. փոխեցաւ առ Քրիստոս. — Սուրբ խաչս բարեխաւս Շաղուբաթ աղային. ԹՎին 22Գ.**

Իսկ հօր նորա տապանագիր տասն ամաւ կանխագոյն ունի զթուականն, այն է 1534.

**† Այս է հանգիստ Աստուածատուր աղային որդի Միրանչին. ԹՎին 22Գ.**



6. Սպասք եկեղեցոյ Գաւառի.


Ի բազմաց անտի գերեզմանաց ընդօրինակեալք են սակաւքս այսօրիկ տապանագիրք.

- † Սուրբ խաչս բարեխաւս Շահ—Սուլթանին. ԹՎին 22Գ. (1534).
- † Այս է հանգիստ Փիրի բէկին որդի Թուման աղային. 2Գ. (1541).
- † Շնորհիւն Աստուծոյ կանգնեցաւ խաչս (բարեխաւս) հոգւոյն Պարոն Հեղինին. ԹՎին 2Գ<sup>հն</sup>. (1548).
- † Սուրբ խաչս բարեխաւս Դավլաթին. Թուվին Ռիտե<sup>հն</sup>. (1596).
- † Սուրբ խաչս բարեխաւս . . . . . Աղին. ԹՎին Ռիտե<sup>հն</sup>. (1596).

† Կանգնեցաւ Խաչա փրկութեան Թուման աղային, որ է որդի Սարուր Աղային. Թվին Ռիթե<sup>հն</sup>. (1596).

† Սուրբ Խաչա բարեխաւս Գիւլ աղային. Թվին Ռիթ<sup>հն</sup>. (1597).

Ամենեքին սորա միոյ մեծատոհմ տան սերունդք և, որոց հնագոյն կամ նախնին՝ ըստ ցուցակութեան արձա-  
րեւին, կեցեալք ի ժՁ դարու, յերկս կամ չորս ազգս, նագրութեանցն ծանուցելոց՝ է Միրանշան:



7. Նորատուս. — Ս. Աստուածածին եկեղեցի.

Տապանագիր մի եւս յաւելու Ջալալեանն, ոչ նշանակելով զտեղին ուր գտաւ, և նոր գրուած երեւի.

Վիշապ հողոյս բացեալ զբերան  
Սա կլանէ զամենեսեան .  
Ո՛վ առիւծ մահ առեր դու դիս ,

Գերեալ եղեր ներքեւ վիմիս .  
Չարչարեցայ ի Գաւառիս ,  
Փող մի չունիմ պահեմ առ իս :

36. Երկու մղոնաւ կամ դոյզն աւելի բացագոյն յա-  
րեւելից Գաւառոայ, և նոյնքան հեռի ի Նորատուաց և ի  
ծովեզերէն՝ կայ Ղըչախ գիւղ Հայոց տանց իննըսնից,  
յալմէ գետոյն, Ս. Աստուածածին եկեղեցեաւ. սնծա-  
նօթ մնայ հին անուն գեղջև, այլ բարդիւ ծանօթ է Նո-  
րատուս՝ կամ Նորատուաց գետոյ, որ արդ Նորատուոզ  
կոչի, երկու մղոնաւ ի Հս. Ղըչախայ, եւ իրրեւ մղոնաւ՝

աւելի կամ պակաս՝ ի ծովէն, յերկուց կողմանց, ի Հս. և  
յՆԼ. գի կայ ի ներքոյ լեզուաձեւ երկրին որ գործէ յայսմ  
կողմանէ զնեղուց ծովուն. և ոռոգի ի ձկնորբ գետոյն  
Գաւառայ, շրջակայ սահմանօքն « սիզաւէտ, ծաղկաւէտ  
և պարարտարօտ », ըստ Ջալալեանն եպիսկոպոսի. այս-  
պէս վայելչացեալ ջրովք և բուսովք և քաղցր օդով, և  
ծովուն ծիծաղմամբ. յոր և առաւել քան զայլ ծովեզե-


1 Ախաւամբ ընդօրինակողաց թուի Նորատուոս՝ գրեալ ի կարգի բանից Պատմութեան Յովհաննու Կաթողիկոսի :



րեայ գիւղականս՝ յածին բնակիչքն նաւարկութեամբ յերթեւեկ այցելուաց կղզւոյն Սեւանայ. և են գաղթականք կողմանց օսմանեան Հայոց, յորս յաւելեալ և այլոց՝ են արդ տունք իբրեւ 280<sup>1</sup>:

Աստանոր յեւս կոյս թ՝ դարու « եղբայր Գրիգորի ( Բ » Սուփանայ ) Սահակ՝ շինէ զպանծալի յարկն ( եկե- » ղեցւոյն ) մեծածախ յորինուածովք, ի Նորատուս գիւ- » ղըս, և կարգէ ի նմա բազմութիւն քահանայից. յորոյ » դրան և ինքն հանգուցեալ կայ ի տապանի », յետ 918 ամի: Սրբատաշ և մեծամեծ քարամբք շինեալ է եկեղե-

ցին խաչաձեւ կիսաբլուր<sup>2</sup>, անսիւն կամարակոպ. այլ տանիքն անկեալ են, որպէս աւանդեն, հրձգութեամբ լեկաց, ի վերջին ժամանակս, հեղձամղձուկ առնելով զապաւինեալսն ի նմին. զորոց ոսկրոտի գտին նոր բնա- կիչքն գաղթականք, ի մաքրելն և ի նորոգել զեկեղեցին փայտայարկ ծածկելով: Արձանադիր սորին ոչ յիշի, և ոչ այլ ինչ. բայց են տապանք և խաչվէմք գեղեցկաքան- դակք շուրջ զնովաւ, յորոց մին մեծ յոյժ, և է Մէլիք Բարեքսէի? իսկ Սահակայն Սիւնեաց իշխանի շինողի տաճարիս՝ ոչ յայտնեցաւ: Ի հարաւային որմն արտա-



8. Նորատուս.— Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի.

քուստ քանդակեալ է ժամացուցակ արեւու, երկոտա- սան այրուբնն տառիւք և երկաթի սլաքաւ, որպէս զը- տանի յորմունս և այլ ոչ սակաւ եկեղեցեաց: Յարեւմտից կուսէ եկեղեցւոյն կայ այլ եկեղեցի փոքր քարաչէն, ան-

սիւն գմբեթաւոր յանուն Ս. Գրիգորի, կառուցեալ ի սկիզբն կոյս ԺԳ դարու, նորոգեալ կամ յաւելեալ այ- լովքն մասամբք յամի 1344, որպէս գուշակի յարձա- նացն, յորոց մին անթուական՝ է զայս օրինակ.

**Ի պարոնութեան Իւանէի եւ Շահնշահի ես տէր Պետրոս Վարդապետ Հանդերձ եղբարբք ընչիւք եւ ստացուածովք շինեցի զեկեղեցիս:**

Դարու միով և աւելի եւս ժամանակաւ յետ այսորիկ արձանագրեալ կայ յամի 1344՝ հետեւեալս.

1 Շտիտաթուն. զբեր յամի 1842՝ տունս 96, Շոբէն՝ յամի 1832՝ տունս 103, ոգիս 603. Զաւալեանի 1858՝ տունս 180. Աշխարհաւ- զիր 1875 ամի՝ տունս 136, ոգիս 364. Փիւլցեան՝ 250 յամի 1888՝ 2 Լստ Զաւալեանի, 44 կանգուն յերկայնն, 24 Լայս:

**ԹՎԻՆ ԶՂԳ.** Շնորհիւն Աստուծոյ ի պարոնութեան Բուրթելին եւ աստուածատուր զաւակաց իւրոց իշխանաց Բեչքենայ, Իւանիկայ եւ Սամեղայ, Ես ծառայ Աստուծոյ Աւագս վասն երկար (կենդանութեան) Պարոնաց մերոց, կամակից եղէ շինութեան վանիցս, եւ ետու իմ հալալ ընչիւք գնած Նորատըվաց ջրոյ մէկ ջրաղաց ի Սուրբ Գրիգորս. միաբանքս սահմանեցին ի տարին Գ պատարագ ինձ Աւագիս. կատարիչք աւրհնին յԱստուծոյ:

Ի պատուանդանի խաչվիմի միոյ քանդակեալ է արձանագիրս այս հին զուգածամանակ առաջնոյն յամի 1211.

**Ի ԹՎԻՆ Հայոց ՈԿ,** ի Թագաւորութեան Աղին<sup>1</sup>, ի պարոնութեան Իւանէին ես Քաջաջաւրս շինեցի զԱւանորջս, կանգնեցի զԽաչս:

Է և արգ կամուրջ ի հարաւոյ գեղջն, այլ ոչ գիտեմ հին եթէ նոր: — Ընդարձակ գերեզմանատեղի գեղջս ձգի յայս կողմն արեւելից ի ծովն կոյս, և են ի նմին յերիմք և խաչվեմք խուռն և խիտ, պէսպէս ճարտար դըրուագօք և նշանօք արուեստի կամ վիճակի Թաղելոցն, արժանիք մանր քննութեան և վերծանութեան: Նշաւ նաւորք են և խումբ մի ետթանց խաչարձանից՝ զորս ճաւանս խաչս կոչեն, իրրեւ ի պահպանութիւն պատահարաց չարաց, ախտից, վնասուց օղոց, և այլն. վասն որոյ և ժողովուրդն գնայ անդր յուխտ և ի մատաղ: Են ի միջի անդ խուռն գերեզմանացն և մատրունք երկու. մին հին, առ Զաքարէի մեծ սպասալարիւ շինեալ յամի 1211, որպէս արձանագրի ի սալաթոռ մեծի խաչի միոյ ի հիւսիսակողման նորին.

**Ի ՈԿ ԹՎ.** ի ժամանակս բարեպաշտ իշխանաց մերոց Զաքարէի եւ Իւանէի ես Մխիթար Փէճարենց որդի Դաւթի, շնորհիւն Աստուծոյ եւ հրամանաւ մեծին Իվանէի եղէ առաջնորդ մեծահռչակ գեօղիս Նորատուաց. կամ եղեւ ինձ կանգնել զԽաչս ի փրկութիւն ննջեցելոց իմոց. Ողք երկըր պագէք յիշեցէք ի Տէր:

Կայ և ի վերայ որմոյն հետեւեալս այս արձանագիր, խանգարեալ և թերացեալ.

..... Թագաւորութեան ..... որդի Մխիթարս որ եղէ առաջնորդ մեծահռչակ գեօղիս Նորատուաց, կամ եղեւ ինձ եւ կանգնեցի զխորանս եւ ըզնչանքս տէրունական յիշատակ հոգւոյ իմոյ և Զուգային, եւ հաւր իմոյ Մխիթարայ<sup>2</sup> եւ համաւրէն ննջեցելոց իմոց. Ողք երկրպագէք սմա զմեզ յաղաւթս յիշեցէք:


Խաչ մի եւս նշանաւոր կայ բացազոյն ի վերայ ճանապարհին, խաչախաչ կոչեցեալ, ընդ որով աւանդեն երկուց ծաղկահասակ տարփածուաց թաղեալ, վասն որոյ և յայց ելանեն նմին նմանիք նոցին. իսկ զանունն ստուգարանեն Հագախաչ, որպէս թէ բժշկարար հագի: Իսկ միւս մատուռնն որ ի հիւսիսակողման գերեզմանատեղոյն է, շինեալ է յամի 1714, ըստ արձանագրութեանցն որ առ արեւմտեան դրամբ նորին.

**Ես Սարգսի թոռ Միրզայի որդի Ալեքսանս շինեցի սուրբ եկեղեցիս. ԹՎ. ՌՃԿԳ էր. Ես Ատիս գրեցի անարժան: — Ես Ալեքսանս որ եկեղեցիս շինեցի խիստ դառն դժար ժամանակ էր:**

<sup>1</sup> Այսպէս գրէ Զաւալ. յայտնի ռիւս. թերեւ լաշիմ, այսինքն լաչայի, և ասանորդական Թուսկանն ևս պակաս թուի, կամ աւանն Զաքարայ, որ կենդանի էր յամի 1211, և յիշել էր եթէ այդ էր Թուսկանն, որպէս յիշի ի միւսում արձանագրի: <sup>2</sup> Եթէ վերոյգրեալ Մխիթար է կանգնողն, ապա Դաւթի պիտի գրել աստ, և ոչ զարձեալ Մխիթարայ:



Հանգոյն վերոյիշեցելոցն են խաչարձանք ինչ յարեւմտակողմն քաղաքաւանին ի մարգարոտս, զոր միահամուռ խաչեր կոչեն, յորոց միջի բղխեն քաղցրահամ սղբերք, և ազուզայիք ընդ երկրաւ անցեալ արբուցանեն զչնն. և յայն սակս և մի ի Թաղիցն խաչեր կոչի, իսկ մի յաղբերացն՝ յանուն վերոյիշելոյն՝ Խազախայի աղբիչը:



9. Կերեգմանք ի սահմանս Նորատուաց.


Ի հարաւակողմն Նորատուաց ի սիւրբ անդաստանացն՝ կան աւերակք փոքր կուսաստանի, Դափուց-վանք կոչեցեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ. կանգուն կայ եկեղեցեակն հին՝ սրածայր կաթողիկէիւ, յանուն Ս. Գրիգորի. որոյ ոչ տեսան արձանագիրք յիշատակի, և ոչ այլ ինչ ունիմք ծանօթութիւն: — Նշմարի վանատեղի կամ



եկեղեցատեղի աւերակ և ի ծայր սարաւանդի ցամաքաւ լեզուին, որ նոյնպէս անծանօթ մնայ յինէն: Կաթողիկոսը զԴափուց վանս՝ Կոչասնոց ասէ, առ երի Նորատուաց, և միւս եւս Անապատ Կոչասնաց ի նոյն Նորատուս գեղջ. Թերեւս սա է որ ի հարաւոյ գեղջն կայ. իսկ Դափուցն վանք՝ յետին նշանակեալ տեղին ի ծովնգերն:

Հարաւային արեւմտեան կողմն կամ գլուխ հովտի Գաւառ գետոյ, բարձրաւանդակ ստորոտք լերանց Գեղայ, Նալ Թէփէի և Ազ տաղի՝ նշանաւորք և արժանաւորք են քննութեան ըստ երկրաբանական տեսութեան. փոքրիկ բոլորակ լճակն Արփա<sup>1</sup>, յորմէ ելանէ առու մի գետոյն, և որ ի Հս. նորին երկաթաւահաւ աղբիւրն, ուրք

և աղբիւրք պէսպէս, յորոց մին կոչի Շաշին, միւսն Արթուն տաղ՝ յանուանէ լերինն և երկուց ամայի զիւղից, վերին և ներքին Արթուն-տաղ. կարծէ ոմն զմի ի յետնոցրս լինել հինն Թառեաց-տափ կամ Ուռեաց-տափ՝ (ըստ այլ ընթերցուածի), զոր Աշոտ Ա արքայ ետ ի կալուած եկեղեցւոյն Սեւանայ. սակայն ոչ է հաւանելի. այլ որպէս այլք ի գեոդից ընդ նմին պարգեւելոց՝ յայտնի են մերձ ի ծովնգերս կղզւոյն լինել, անկ է և այսմ ի նոյն գտանել սահմանս: — Ի հարաւագոյն կողմանս արեւելեան վտակի գետոյն և ի հիւսիսային ստորոտս լերին միոյ (7544՝ բարձու) որ յիւր անուն կոչի՝ կայ գիւղն Պաշ-քիւտ իբր առաջին գոլով շինից այնր մասին, երիւք



10. Նորատուս. — Կամուրջ.

մղանօք տարակաց ի ծովէն. սորա բնակիչք խառն են, իբր 40 տուն Հայ, 25 Թաթար: — Սակաւուք ի ստորեւ ի հիւսիսակողմն՝ Քիւզաձիկ<sup>2</sup> գիւղ Հայոց, (60 տանց յամի 1873), Ս. Խաչ եկեղեցեալ: — Խոնարհագոյն եւս մղանաւ և աւելի ի Մ. Հս. սորին և երիւք ի Հր. Գանձակայ է Տէլի-գարտաչ մեծ գիւղ Հայոց, Թերեւս 300 տանց Ս. Խաչ եկեղեցեալ. յորոյ արեւելեան սահմանս բղխեն

աղբերք, և առու գործեալ Թափին յարեւելեանն յայն օժանդակ գետոյն Գաւառայ, որ բնիկ կեօք չայ կոչի: — Առ սովին գետակաւ՝ մղանաւ հեռի յարեւելից Գանձակայ՝ կայ Գոռչիլի կամ Ղոռչալի մեծ գիւղ Հայոց<sup>3</sup>, առ որով յիշեալ վտակքն միաձոյլ խառնին ի Գաւառագետ: Ունի քարալէն եկեղեցի հին յերի գիւր վայրին՝ զոր կալնի յիւղ (դուրան) կոչեն, Ս. Աստուածածին անուն,

1 Որի է համանուն լճէ վայրցաբոյ, յորմէ գետն Արփա:  
2 Մերձանուն սին գեղ մի Գիւզաձիկ, 46 տուն բնակչոք, առանց եկեղեցւոյ, յիւր յորազրի միում, յամի 1889 (Նոր Դար, 2, 87), զոր ոչ գտանեմ ի քարտս նշանակեալ, և երկրայիմ. քանզի

և մերձ ասէ ի Նոր-չիւ և ի Գիւզ գեղս. անծանօթ է և յետին գեղոջ յայսմ գաւառի, ուլ է կովսականն յիւր ի նախնեաց:  
3 Աշխարհագիր Ռուսաց 1873 ամի նշանակէ տունս 126, ուրիս 1060. բայց Շոբէն բազում ամօք յառաջ 140 տուն գրէր ի նմա:

որոյ խորանն միայն կամարայարկին մնայ կանգուն, այլ մատուցն փայտաշէն յարդարեալ են ի բնակչացն. բայց

արձանագիր մի ի ներքոյ կամարի սեղանոյն ցուցանէ ոչ վազեմի զշինուածն, բայց եթէ նորոգութիւն իցէ հնոցն.

**Շնորհաւքն Քրիստոսի եւ տանուտէր Գասպարս եւ քահանայքս եւ ժողովուրդս միաբան շինեցաք սուրբ Տաճարս յիշատակ հոգւոց մերոց :**

Յարեւելակողմն գեղջն է գերեզմանատեղի, յորում ոչ սակաւ գեղաքանդակ մահարձանք և խաչվէմք, որոց գլխաւոր ունէր գիր կիսեղծ կամ ոչ քաջ վերծանեալ, կիսատ թուականաւ.

... (Բ) ԾԴ Փիրհամգէս . . . . . տանս Գեղամայ ետու կազմել տապանս եւ նկարել զխաչս : Ողբ կարդայք յի(շեցէք) . . . եւ Գրիգոր եպիսկոպոս նկարեցի զխաչս ի խնդրոյ Փիրհամգին ի փրկուեթիւն հոգւոյ որդւոյ իւրոյ Զաւրհապին :

Արեւելեան մասն կէօքայ գետոյ մինչեւ ի ծովն՝ աւայի է և անջրդի ձորափոր, Մանիչար կոչեցեալ. յեզբր ըս ծովուն են աւերակք ոչ սակաւ գետոց, յորոց հարաւագոյն կոչի Գորշոռ-խարապս, որ է Ձոր աւերակ :

Ի կողմանս յայտասիկ, ի թեմի Հայր Յոհան վանից, ըստ Սիւէոնի կաթողիկոսի, խնդրելի է և իլկէ վանք գետոյ, հանդերձ մենաստանաւ, որ կուսանաց էր անապատ, և որոյ յիշատակ չիք ի գիրս :

**Բ. Կ Ո Թ = Կ Ռ Զ Ա Բ Ա Կ**

27. Երկրորդս այս վիճակ երկրին Գեղամայ ունի զհարաւային մասն Գեղաքունեաց, կամ զհարաւային արեւմտեան տաշտի ծովուն, և զկէտ մասնն հարաւայնոյն. յորում այլեւայլ գետակք և հովիտք են, մանաւնք և միջակք. ըստ որոց կարգեմք զտեղագրութիւնս, սկըսեալ ի հիւսիսոյ արեւմտից և դառնալով յարեւելս հարաւախառն : Վասն բնակութեան գաղթականին Ալաշկերտեայց, մասն մի վիճակին Նոր Ալաշկերտ կոչի ի Հայոց : — Առաջին ի գետակացն է Չագ, որ գործէ ձորակ փորելի, իջեալ ի ստորոտից Պաշքէնտ լեռին, և գետոջ երկու կամ երեք ի նմին : Երկրորդ է միայն անուանատու գետակին՝ Չագ գիւղ հին, որ այժմս կոչի Երանոս, Ս. Աստուածաժիւն եկեղեցեաւ Հայոց, որոց տունք էին 106 յամի 1873 : Սիւէոն կաթողիկոս երկուս գետոս ասէ Չագ Մեծ և Չագ Փոքր. որոց մերձ ցուցանէ լինել զկուզարակն կամ Գուզարակ՝ զոր Կորգարակ կոչէ, և

հարկ է ի հնուս լինել մեծ շէն, զի յանուն իւր կոչէր մասն մի Գեղաքունեաց, որպէս կանխաւ ցուցաք : Յերի բերանոյ գետակիս հրուանգան մի է կարկառեալ ի ծովն և կաչի յայլազգեաց, Շէյրան-թէփէ (Գիւլասար) : Իսկ իբրեւ մղոնաւ ի բացեայ ի հարաւոյ նորին՝ թափի ի ծովն փոքր մի մեծագոյն քան զայն գետակն Շողագայ, այժմ վէշի-սողայ կոչեցեալ, որպէս և գիւզն՝ յանուն Թուրքի միոյ բնակելոյ երբեմն ի նմին, որ թերեւս իցէ բէկն վէշիս՝ որ քաղանեաց զԳեղամ . . . և կայ ի ձորավայրի ի վերայ վտակին ի միջի բարձր առապարից. ի հնուս կոչէր Շողագայ կամ մանաւանդ Շողուագայ, « յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածոյնոյ » ըստ Ասողկայ պատմչի. կոչի եւս ի յետոց և Շաղավանք. 93 տունք Հայոց նշանակէին ի նմա յամի 1873, զարդիս թերեւս աւելի քան զ100 : Յարեւմտակողմ գեղջն ի լեզուածեւ սարաւանդակի՝ որ ի միջի երկուս.


1 Դանիաթունեան ընթերցեալ է զայս տեղի որ — Կորշոն — 307. յորմէ չիմանամ և չկարեմ ստուգել ինչ. եթէ իցէ փրկամ.

զէս որդին Եղիշոյ յիշեալ յէջ 34 և 42 կայր Տատուզանի, տեղ է Թուականին լինել ՉԾԴ, 1805 :



տեղ քարաժեռից, կայ սակաւ և սգալի մնացուած սրբա-  
տաշ անսին եկեղեցւոյ<sup>1</sup>, դաստակերտ մեծողւոյ և մե.  
ծահաւատ տիկնոջն Սիւնեաց՝ Մարեմայ, դասեր Ա Աշ-  
տոյ թագաւորի Բագրատունւոյ, կնոջ Գարուն վասա-  
կայ. որ՝ ըստ պատմչին, « Շինէ զմեծապայծառ եկեղե-  
» ցին ի Շողուագայ, յանուն սրբոյ Առաքելոյն Պետրոսի.  
» և կարգէ ի նմա կրօնաշորանոց, դասս բազմահոյլ քա-  
» հանայից, վասն հոգեաց տեսան իւրոյ վասակայ իշ-  
» խանի Սիւնեաց. և գնեալ ի հազարացի մարդկա-  
» նէ զգեօղն Շողուագայ՝ ընդ վաթսուն հազար դրամի,  
» ազատ յամենայն աշխարհական հարկաց, ընծայէ ի  
» ո սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմա-  
» նապէս և գեօղ մի ի Մազազ գաւառի ընդ երեք հա-  
» զար դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին, որոյ

» անուն գեղջն՝ Գմեր<sup>2</sup>. և հաստատէ արձան անջինջ յի-  
» շատակի առաջի Գէորգեայ կաթողիկոսի և Յովհաննի-  
» սի Սիւնեաց եպիսկոպոսի, և Գազկայ Սիւնեաց տեսա-  
» ռըն, և Հրահատայ՝ եղբօր վասակայ, և Արտաւազ-  
» դայ Շաղասնեցւոյ, և այլ բազում ազատաց և իշխա-  
» նաց»: Բարձանագրութենէ եկեղեցւոյն թուի սուսեալ  
զայսոսիկ պատմչիդ. ըստ որոց՝ ժամանակ շինութեանն  
պատշաճի միջոցի 877—886 ամաց, զի է յաւուրս կաթո-  
ղիկոսութեան Գէորգայ և յառաջ քան զթագաւորելն  
Աշտոյ՝ հօր տիկնոջն շինարարի: Այժմ եկեղեցւոյն մի-  
այն հիւսիսային որմն մնայ կանգուն և խորանն. իսկ  
զրուածն պատէր շուրջ զգլխով որմոյն ի հարաւոյ կուսէ  
սկսեալ և յարեւմուտս աւարտեալ անշուշտ. յորմէ սա-  
կաւ ինչ այս բան վերծանի արդ.



11. Շողուագայ. Ս. Պետրոս եկեղեցի.

..... ի թագաւորութեան ..... կանգնեցի ղեկեղեցիս ... հաստատ է սու  
յանուն գլխաւոր առաքելոյն Պետրոսի<sup>3</sup>. . . վասն յիշատակի ծնողացն իմոց  
գնեցի զգլխս :

Արժանագով տիկինս որ յառաջ քան զայս շինեալ էր  
զգերահռչակ եկեղեցին Սեւանայ՝ ի նոյն Առաքելոյ ա-  
նուն, և յետոյ վերակացու կացեալ շինութեան վանե-  
վանայ տաճարին՝ ըստ յանձն առնելոյ եղբօր իւրոյ Շապ-  
հոյ Սպարապետի Հայոց, յետ բազում եւս այլ շինու-  
թեանց և տարաշխարհիկ հալածանաց՝ յելեասց թշնա-

մոյն իշխանաց՝ Յուսիպ, հանդերձ որդւովք իւրովք  
մերթ « ի կատարս լերանց և ի ծործորս ծերպից վի-  
» մաց (աշխարհին իւրեանց, մերթ) գնացեալ արա-  
» վար նաւակաք ի Սեւան կղզին, (և մերթ) ելեալ ան-  
» տի եւս ի գիշերի բազում նաւակաք... յամուր գաւառն  
» Միափորայ... (և անտուտ) յամուր տշխարհն Գարդ-


1 Ըստ Զաւլեանի՝ 20 կանգուն յերկայնն, 14 ի լայն:  
2 Երկբայելի անուն. թուի վերջ բառիդ եր բայ, իսկ սկիզբն

պատաս կամ աղաւաղ. վասն որոյ ոմանք ընթերցան գծեր:  
3 Զաւլեան փոխտեսակ Պետրոսի ընթեանու Պեդոսի:

» մանայ և Արցախոյ... և անդէն իսկ ի թափառական  
 » պանդխտութեանն հասանէր վախճան երանելի տիկնո,  
 » ջըն... զոր խնկեալ և զմոռեալ եղին ի փայտեայ տա-  
 » պանի, և պահեցին մինչեւ յօրն այցելութեան և դար-  
 » ձի իւրեանց ի հայրենի իշխանութիւնն, հանգոյն ոս-  
 » կերացն Յովսեփայ... Ապա ի ժամ դարձին՝ բերեալ  
 » շքեղագոյն պատուով (Սահակ և Վասակ) զմայրն  
 » իւրեանց. և աշխարհաժողով հանդիսիւ եղին ի հան-  
 » գըտի մերձ առ ձեռակերտ եկեղեցւոյն իւր որ ի Շո-  
 » դուազայ» — Ընդ հոչակաւոր վանորայս Ժ դարու  
 պայծառանայր և Շողուազայս, և ընդ գլխաւորս Սիւ-  
 նեաց աշխարհին յիշատակի ի պատմէն. զոր ի նուազել  
 իշխանաց երկրին՝ ժառանգեալ Բագրատունեաց, Գա-  
 գիկ առաջին յառաջ քան զԹագաւորելն՝ ի մանկու-

թեան իւրում ետ Սարգսի (յետոյ կաթողիկոսի) կրօ-  
 նաւորելոյն ի Սեւան, ի տեղի բնակութեան: Բայց  
 կարգ առաջնորդացն և այլ յիշատակք անծանօթ մը-  
 նան, վասն աւերանաց տեղւոյն, որպէս Թուի, բռնու-  
 թեամբ ձեռին: — Յարեւմտից և ի հարաւոյ տաճարին  
 կան ոչ սակաւ գերեզմանք մեծ և փոքր խաչվիմօք. այլ  
 ցանկալին բնաւից՝ դշխոյին Մարեմայ՝ անյայտ մնայ,  
 Թերեւս զդերբուկս դաստակերտին իւրոյ ընկալեալ յիւր  
 Թաքուտ, անարատ մնալ ի հարստահարութենէ Յուս-  
 փեանց և նմանեաց, եթէ չիցէ իւր հանգստարան՝ եկե-  
 ղեցին այն փոքրիկ սագալէն<sup>1</sup>, ի կարմիր քարանց կոփա-  
 ծայից, որ գրեաթէ յարակից է տաճարին: Կայ անդ և  
 այլ եկեղեցեակ մեծագոյն (1Է կանգուն երկայն, 14  
 լայն), առ որով խաչվէմ մի՝ արձանաւս յամի 1234.

**Ի Թուին ՈԶԳ յիշխանութեան Սեւատին ես սուտանուն երեց Յովասաւ փրս որդի արժանաւոր քահանային Խորտինոյ ? կանգնեցի զխաչս. յաղաւ թրս յիշեցէք.**



12. Բնատարձան մերձ յԱրախան.

Երեւի և յամի 1670 շէն գոլ ուխտին Շողուազայ և  
 առաջնորդ եպիսկոպոս ունել Մկրտիչ անուն, որոյ զը-  
 տանի ձեռնարկ մի յաւետարանի միում ի Սեւան. « Ես  
 » առաջնորդ Շողագու<sup>2</sup> Մկրտիչ Պարոն Տէրս գրեցի,  
 վկայեմ », և այլն: — Այժմու եկեղեցի դեղջս յանուն  
 Ս. Աստուածածնի ի հասարակ քարանց շինեալ է. բնա-  
 կիչքն Հայք՝ յիսուն ամաւ յառաջ էին տունք 60:

Իբր կիսով ժամաւ հեռի ի Շողուազայ յարեւելս հա-  
 րաւոյ՝ կայ Ազ գիլիսէ գիւղ ամայացեալ, 30 տուն Թա-  
 Թար բնակչօք. կանգուն կան ի նմին եկեղեցեակ մի զըմ-  
 բեթաւոր, և աւերակք բնակարանաց զնովաւ. խանգա-  
 րեալ են և արձանագրութիւնքն, յորոց ոչ ստուգեցաւ  
 անուն եկեղեցւոյն և ժամանակ շինութեանն. այլ ի խաչ-  
 վիմի միում գրեալ է յամի 1611.

**Օծելոյն արեամբ Յիսուսի, սուրբ Խաչս բարեխաւս է Դաւիթ եպիսկոպոսին նորոգողի սորին. Ի Թվին Հայոց ՌԿ.**

<sup>1</sup> Ըստ Զաւարեանի՝ 8 կանգուն երկայն, 4 լայն: <sup>2</sup> Ընդօրինակողն՝ Շեւիտ գրեալ էր:

Դաւիթն այս եպիսկոպոս էր բնիկ գեղն Շողուազայ, և ի գերեվարութեան Շահարասայ գնացեալ յերկիրն Զակամայ՝ առաջնորդ եկաց Խորոտկան Ասաուածածնի վանաց, և գրեալ է շափաւ ողբախառն զանցս զաղթին Հայոց ի Պարսս, և զսովոյն յամս 1606-7, որպէս ասէն.

« Հազար յիսուն և հինգ թուիս  
Սաստկացաւ սով վերայ երկրիս....  
Երկու ամ բոլոր սով տեսաք,  
Օտար երկիր վրտարեցաք...  
Վայ քեզ Դաւիթ Գեղամեցի.  
Վասն քո մեղացն ամենայնի», եւ այլն:

Իբր կիսով փարսախաւ յԵՂ. հիւսիսոյ Շողուազայ առ գետեղերն կայ Արաւ-խան փոքր գիւղ Հայոց 70 տամբք, Ս. Աստուածածին եկեղեցեալ: Ի սահմանս գեղնս գտաւ բեւեռքանդակ արձանագիր (թիւ 13): — Մերձ ի բերան գետոյն առ ծովեղերն գետը մի է անրնակ և անանուն:

28. Ի հարաւոյ ջրոյն Շողուազայ և հպագոյն ի Կոթայն՝ միւս այլ վտակ է Ծակքար կոչեցեալ, զի անցանէ ընդ փորուած վիմաց, կամրջաձեւ թողլով ի վերայն. յայն անուն կոչի և գիւղն Ծակքար և յայլազգեաց Տէլիք-քաչ. յորում բնակէին Հայք 36 տուն յամին 1873. եկեղեցին կոչի արդ յանուն Ս. Աստուածածնի, իսկ հին



13. Ծակքար. — Բնակամուրջ.

եկեղեցին Ս. Պողոս: — Այս գիւղ համարի կոռակածն կամ կոռակիծ, զորոյ որս՝ Աշոտ Ա յառաջ քան զԹաղաւորեւն՝ շնորհեաց ընդ հնգեցուն գիւղից ի հասոյթ վանաց Սեւանայ. քանզի ընդ Լուրս այս ի վեր խաղան ի ծովէն վտառք կողակ, Աղինճան, կոռակտուց և Զալս անուանեալ ձկանց:


Յետ Գաւառագետոյ ընդարձակագոյն քան զնախազրեալն է ձորահովիտ կողայ կամ կողակագետոյ, յանուն ձկանցն որ առատաբար դիմեն ի սա և ըմբռնին. յայլազգեաց կոչի յանուն թազաքենտ գեղը փոքու, զոր Հայք կոչեն Նոր գիւղ, ոչ զի նոր է, այլ զի ի նորոյ բնակեցաւ յետ ամայութեանն, և էին նոցա տունք 60 յամին 1873. ի ստորին կողմանս ձորոյն է գետըն երկու կամ շո-

րիւք մղոնովք տարակաց ի ծովէն: Ի վերին կողմանն նշմարին աւերակք շինից ի ծործորս լերանց. մի յայսցանէ (լեռնաբլուր) կոչի Նադիր-խանէ, և զի ըստ պարսիկ ձայնի (որպէս և ըստ հայունս՝ նախիր) նշանակէ դադար կամ փարսխ անգէոց, համարիմ ի հնումն կոչիլ ի մերոցս Եզնանիստ, թէպէտ և ոչ գտանեմ յառաջնոցն գիրս զայս անուն, այլ կայ ի թիւս գիւղիցն յիշեցելոց ի Սիմէոնէ կաթողիկոսէ, և ցարդ յայդ անուն կոչի յամանց ի մերազնեայցս՝ վտակ մի փոքրիկ կամ աղբիւր, որ յեղից կուսէ կողակայ թափի ի ծովն, անցեալ նախ ի լճակ մի եղեգնուտ, յոր խառնին և այլ աղբիւրք, և դոյզն ցամաքաւ զատուցեալ է ի ծովէն: Յարեւմտեան հարաւային եզերս նորին տարածեալ է գետըն կէօլ-քէնտ



(Լճագիւղ) բնակեալ ի Հայոց 80 տանց յամի 1873. եկե- վէմք, յորս երկուք մեծամեծք ի վերայ բարձր սալաթա-  
ղեցին Ս. Աստուածածին՝ փոքր մի ի բացէ կայ ի բար- ոոց. և արձանագրեալ ի նոսին, ի միումն յելս կոյս ԺԳ  
ձրաւանդակ վայրի, և շուրջ ղնովաւ գերեզմանք և խաչ- դարու, այն է յամի 1284.

**Ի ԹՎ. ՉԼԳ. ի հապ. (հայրապետութեան) Տէր Գրի(գորի) մեք եւ Եղ-  
բայր Աբրահամ քահանայ անարժան Հայրաւձայն ? եւ այլքս կանկնեցինք  
զխաչ հաւրեղբաւր մերոյ Հայրապետին կուսակրաւն քահանայի բազմաչար-  
չար սնուցողի, եւ ծնողաց մերոց Հայրուտին եւ Խաթունին եւ քվեր մե-  
(րոյ)... յաղաւթս յիչ:**



14. Ս. Պօղոս եկեղեցի ի Մակքար.

Ի միւսումն խաչվիմի վերժանի կիսակտուր այսչափ ինչ բան.

**Եւ էր մեր Բ-ականի<sup>1</sup> չաղացաբար ի նախնեաց չինած<sup>2</sup>, սլահող էաք դաւ-  
րապիս<sup>3</sup> գանձին արքունեաց:**

Նշանաւոր են յետին բանքդ և ցանկալի էր լրութիւն արձանագրին. զի ընդ գանձին արքունեաց յիշեալ բառդ Դարապ յայտ առնէ զարարականն ԲԱՆԾ՝ որ և զարպ, նշանակէ դրամահատութիւն. և արձանագրողքդ յայտ- նին գոլ ոստիկանք Դրամանոցին. այլ ոյք ոմանք և որոյ արքայի գանձապահք: — Թուի ինձ թաթար զանից:


Մեծագոյն ձորահովիտ քան զվերոյգրեալսն ի Գե- զաքունիս՝ է յարեւմտեան հարաւային անկեան գաւա-

ռին և ծովուն, գետոյն կորայ, որպէս կոչի յանուն մեծի աւանին, և ըստ նոր անուան տեղւոյն՝ Արիեւանան-լայ, այլ և Խշխանագետ կոչի ի Հայոց, ըստ նախ յիշեալ ա- ւանդութեան նոցին: Այլեւայլ առաջք և վտակք են գե- տակին իջեալք ի լեւրանց անջրպետաց վայոց ձորոյ, յո- րոց հարաւագոյնն կոչի Արրի կամ Էյրի-լայ, և Ժողո- վեալ ի հարաւային ստորոտս Արդլասարի ի ճակիճ մի, ան տի ընդ անձկացեալ ձորահովիտն իջեալ անկանի միա-

1 Երկուականի՝ այսինքն ընդ երկու բերան հոսեալ չրաղաց: 3 Յորմէ Գորո-իտն կամ զարդիտն, առն և տեղի դրամահա-  
2 Շահաթունեանն գրէ. Ի նխա . . . օչէնած: ստութեան կամ դրամա շինելոյ:

ձոյլ ի ծով: Ըստ (համեմատական) ընդարձակութեան երկրին և գլխաւոր իշխանանիստ տեղւոյն՝ կոչէր երբեմն Կոթ զաւառ (ի Գրիգորէ Մագիստրոսէ), որպէս և շէնն մեծ՝ Կոթ՝ քաղաքագիտ կամ գիտաքաղաք և առան. որ է մերձ ի ծովեզրն և ի բերան գետոյն, կիսով եւեթ փարսախաւ ի Հր. Ել. Կէսլ-քէնտ գեղջ. և կոչի ի Քուրքաց Ստորին Ատիեանան: Սա էր աթոռ Սիսական Հայկազուն իշխանաց Սիւնեաց, տերանց երկրին Գեղամայ, որպէս վկայէ արձանագրաւ ինքնին բազմաշէն իշխանն Գրիգոր Սուփան Բ, որդի Վասակայ և Մարե-

մայ զշխոյի. որ՝ ըստ պատմչին, « շինէ զգարմանակերտ » փարսին բանաւոր հօտի ի գիւղաքաղաքն Կոթայ, յառնուն Սաշր Աստուածածնին, և զարդարեալ մեծամեծ » սպասուք կարգէ ի նմա դասս պաշտօնէից և պարսպէ » մեծամեծ վիմօք, և մեծաւ ժողովով արարեալ նաւառ կատիք, խնդրէ ի կաթողիկոսէն և յեպիսկոպոսացն » և յիւր եպիսկոպոսէն տէր Յովհաննիսէ, երեք քառասունն... և կարգէ յիշատակագիր արձանի ի վերայ » սուրբ եկեղեցւոյն, որ ունի օրինակ զայս. (իւր իսկ պատմչին ընթերցեալ զայն մինչ դեռ շէն էր եկեղեցին):



15. Եկեղեցի Կոթայ վանից.

Ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգեւոր ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ ի կացուածի իմոց նախնեացն, զոր նախ քան զայս պարսպապատ շրջապատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ. Յետ այսր ապա իմոց նախնեացն խորհրդակցեալ կամաւքն Աստուծոյ շինեցի տուն Տեաուն եւ յարկ Աստուծոյն Յակոբայ, անուանակոչութեամբ Արքուհւոյ Տիրամաւր Աստուածածնին, վիմատաշ կոփածոյ քարամբք, եւ ի սմա սենեակս ութ ի վերոյ եւ ի ներքոյ. եւ ապա ի սմին սուրբ քաւարանիս կարգեցի քահանայս եւ զարգարեցի. զԱստուածածնի քահանայքն նախնեաց իմոց եւ այլ սպասաւորս բազումս, ազատ արարի յարքունական ծանրութենէ, եւ ի բեկարէ. եւ սահմանեցի հոզս եւ ջուրս. եւ ետու միոյ միոյ քահանայի յիսուն դրամ ի տարւոջն, որ լինի հնգեցիկս. եւ սահմանեցի չորիցս քառասունս եւ սաղմոս զՆեղութեան կանոնն եւ զառաւաւտուն

սաղմոսն, զի որչափ ես եմ ի մարմնի՝ յաղագս կենացս յաջողման լիցի, եւ յետ վախճանի կենացս մեղուցեալ հոգւոյ իմոյ կատարեն: Եւ յամենայն ամի իւրաքանչիւր ոք ի քահանայիցն չորիցս քառասունս առնիցեն վասն իմ: Եւ արդ՝ եթէ ոք ձեռնարկէ յայս եւ յափշտակել ջանայ զիմ հոգեցատուր հողսդ եւ զայլ ընծայսդ ի քահանայիցդ, եւ կամ զքահանայ ի չար՝ ընկենու զոր ազատեցի ես յամենայն ուրեք, կամ ի զարմից իմոց կամ ի ժառանգաւորաց կամ յայլ աւագաց զկնի մեր, այնպիսոյն բարձցի անունն յերկրէ եւ յիշատակն, եւ դատապարտեալ եւ ամօթալից եղիցի յահեղ



16. Կղնուտ. — Ղարանդիս.

հրապարակին Քրիստոսի, եւ մեղաց իմոց համարս տայցեն յաւուրն դատաւտանի, եւ ժառանկեսցեն զհուրն անչէջ եւ զտանջանսն յաւիտենական: Եւ եթէ քահանայքդ երբէք ստունգանիցէք եւ մոռացումն առնիցէք կարգեալ շարագրութեանցդ եւ կամ ծուլնայք յեղեալ քառասներոյդ, տէր Աստուած դատապարտեսցէ զձեզ զաւակօք եւ զարմիւք, եւ բաժին ձեր ընդ տիրասպան քահանայիցն լիցի:

1 Իմա, եթէ պարտաւոր առնիցէ զժառանգաւորս եկեղեցւոյ զքահանայս հատուցանել որդիսի եւ է հարկս:



— Այլ, աւա՛ղ, դի եկեղեցին այն հոյակապ քարակոփ, թէ և ոչ շատ ընդարձակ, իբր 30 Չ. ընդ երկայնն և ընդ լայնն, քառակուսի արտաքուստ, կիսաբոլոր իմն ձեւով ի ներքուստ և հնգախորան, կիսաւեր է արդ. յարկն ի սը պառ կործանեալ, որով և շերեւի արձանագիրդ՝ զոր ընդօրինակեալ հասոյց մեղ երախտաւոր պատմիչն Սիւնեաց: Ըստ գարնանակերտ շինուածոյն, որպէս ասէ սա, գեղադիտակ են և դիրքն ի սարաւանդակի քարափան գետոյն, յարեւմտից կուսէ գեղջն, զորով նոյնպէս աւերեալ զնին պարիսպքն և բնակարանք. կանգուն մնայ խորանաձեւ մահարձան մի անգիր վիմաւ, զոր Ամենափրկիչ անուանեն Հայք և ուխտիւ պատուեն: Ոչ իշխեմ համարել զսա կամ առ սովաւ և զքնարան մեծոգւոյն այնորիկ և լաւագունի արժանաւոր բաղդի՝ տարածամ զրաւելոյն ի կենաց Գրիգորի իշխանին, դաւադիր դեղատուութեամբ մահահոտն Յուսիպ, յամի 909 կամ զկնի. « զոր սգացեալ Գագկայ թագաւորի (Արծրուն) նւոյ) և Աշոտոյ (Բ) Բագրատունւոյ, ընդ մօր նորա » Մարիամայ և ընդ եղբարցն Սահակայ և Վասակայ, » բարձեալ տարան և եղին ի տապանի յիւրումն ձեռաւ կերտ սրբարանին ի Սուրբն Շիւղեանայ»: — Անծանօթ է տեղի սրբարանիս, ուր խնդրելի էր զհանգստարան կանգնողին. բայց աւանդութիւն բնակչաց տեղոյն համարի զայն ընդ խաչարձանիւն՝ որ յերի մեծի եկեղեցւոյն ի

ստորեւ քարածեռի միոյ (տես թիւ 1 յէջ 24). որոյ արձանագիր վկայէ արդարեւ Գրիգորի ումեք լինել զայն, այլ նորագոյն թուականաւ 1295 ամի, և է այսպէս.

Ի Թ. ՉԽ | Դ կանգնե  
ցաւ Խա | չս ի բար  
եխաւսովթիւն Գրիգորոյ՝

Յեկեղեցւոյ անդ կոթայ պահուր երբեմն սքանչելագործ երկաթեայ խաչ մի (այժմ ի Սեւան), մի յայնցանէ զորս աւանդեն մերայինք ձեռագործս լինել թագէի առաքելոյ, և կոչիր կորայ Ս. Ղաւն: — Ի հիւսիսակողմն հին եկեղեցւոյն ի գերեզմանսն գտանին խաչարձանք՝ գրութեամբ ժՁ և ժԷ դարուց, որք ցուցանեն լինել առ տեղեաւս կնիգ կամ կնիք իմն անուն քաղաքի, որ ոչ ուրեք յիշի ի գիրս, վասն այնորիկ և ընդ երկրայութեամբ է. և աւանդէ զայս Պօղոս Վ. Պետրոսեան յամի 1850, առեալ յԱնտոն. Վէ. Տէր Ստեփանոսեան, իբրու անձամբ ընդօրինակողէ. բայց և չարագրութիւն բանիցն ոչ է անստգիւտ, և են երեքին այսօրիկ, յամս 1817, 1824, 1857.

† Սուրբ Խաչս կանգնեցի Յակովբ քահանայս կնիքեցի քաղաքի բարեխաւս ամուսնոյն իմոյ Մարթայի. ի Թու. 242.

† Սուրբ Խաչս կանգնեցի Մատթէոս վարդապետ կնիգ քաղաքի, բարեխաւս ինձ. 229.

† Ես Մարկոս կնիք քաղաքացի կանգնեցի սուրբ Խաչս բարեխաւս. ի Թիւ Հայոց Ռձ2՝

Այժմեան նոր եկեղեցի եւս անշքեցեալն և նուազեալ գեղջ կոթայ՝ կոչի նոյնպէս Ս. Աստուածածին. բնակիչքըն Հայք էին՝ տունք աւելի քան զ'100 յամի 1873: — Դէպս կամ զբոյց իմն աւանդէ կիրակոս պատմիչ, յամի 1250 համբաւեալ աստանօր. «Յեզր ծովուն Գեղամայ աւան մի է կոթ անուն. ի սահմանս այնր գեղջն հուպ ի լեռան՝ գտին մարդ մի հսկայաձեւ, մեռեալ և կիսաթաղ, նոր հանդերձ ունելով և կօշիկս նորս, և հանգէպ սրտին ծակ, որպէս թէ խոցած էր աշտէիւ, և ի վերայ սակաւ մի բամպակ. և յորժամ առին զբամպակըն՝ սաստիկ վիժէր արիւնն, և իբրեւ դնէին ի վերայ՝ դարձեալ արգելոյր արիւնն. և թէ այլ նոր բամպակ զնէին և ոչ զիւրն՝ նոյնպէս հոսէր արիւնն, մինչ չեւ դնէին զառաջինն. Զայսոսիկ յուրվք շաղակրաստէին. թէ ճմարիտ և թէ սուտ, մեք ոչ գիտեմք»: Դման իւրք այսմ՝ դէպք զարմանալի հանդիպութեամբ եղեն ասուգիւ զվայրօք՝ ի սկիզբն կոյս ԺԷ դարու, յետ գաղթելոյն Հայոց ի Պարսս, առ Շահաբասաւ. յորժամ

Յիսուսեանք երկու՝ յընկերաց այնոցիկ որք ամօք յառաջ զօղացեալ էին զնշխարս Սրբոց Հովհաննիսեանց, ելեալք յԵրեւանէ գային յերկիրս Գեղամայ և անցանէին ընդ լեռանն Սիւղեանայ-տար՝ առ եզերք գետոյն, քանզի նախատեալ էին զմարգարէն մարմանաց ի Նախիթեան առաջի կուսակալին, զորականք սորա ուղեկցեալ նոցախաբէութեամբ՝ հարին զնոսս և սպանին. նոյնպէս և զընկեր մի նոցին մերազգի՝ Աղամիր անուն՝ յԱպրակունեաց գեղջէ հռովմէականաց, որ փախչէր ի կողմն քարանձաւի միոյ. հարին զնա « սրով ի զլուխն, ի պարանոցն, յուսն և յարմուկն. և վիրաւորեալ այրն անկեալ ի գետնի ձեւացուցեալ զինքն թէ մեռայ ». և կարծեալ թէ մեռեալ իցէ՝ վիրաւորոջն « հարեալ է զայր » ըրն ոտիւք և ի բարձանց ի գլխոց քարանձաւին արկեալ է զնա ի ներքոյ վիմին ». իսկ Աղամիր յետ բազում ամաց պատմէր Առաքէլի պատմչի՝ որ գրեաց զայսոսիկ, « թէ յորժամ արկին զիս ի քարանձաւէն ի վայր » ընկեցայ ի մէջ ջրոյ գետին՝ զոր կոթայ գետ ասեն, և

1 ի փորագրեալ պատկերիս խանդարեալ է յոյժ ձեւ տառիցն :

2 Հրատարակեալք ի Մասեաց Աղանի օրագրի, Դ. 60 :



» Լուր գետոյն առեալ տարաւ զիս և էարկ ընդդէմ վի-  
 » մի միոյ, և վէճն այն եղև արգելիչ ինձ, և արգել զիս  
 » մինչ ի մթանալ երեկոյին ցելս աստեղաց... ելի ի գե-  
 » տոյն և գնացի », և այլն. և պատահեալ գիւղականաց  
 բառնան զնա ի գրաստ, և տարեալ դարմանեն. իսկ  
 զմարմինս սպանելոցն « անդէն՝ ի վերայ ճանապարհին  
 » փորեցին վիհ, և ընդ հողով արարեալ ծածկեցին զնո-  
 սա »: Յետ ամաց եկեալ այլ ոմն կրօնակից Յիսուսեանց՝  
 Մելքիոր (Մելզոն) անուն ընդ Շահ Արասայ՝ յերկիրն  
 Գեղամայ, և խնդրեալ ի նմանէ՝ երարձ զոսկերս նոցին  
 և տարաւ յԵրուսէ: Արժան համարեցաք յիշատակել  
 զայստակի՝ զի ի սահմանս Կոթայ են հանգիպեալ, և թեր-  
 եւս աւանգութեամբ ծանօթ իցեն իրքն և տեղին: — Ի  
 նախալիչեալ ձեռնարկի տանուտեարց Գեղամայ՝ վասն  
 թեմին Տաթևու, ի սկիզբն ԺԶ դարու տեսաւ և Պաշա-  
 ղամ Կոթեցի ( յէջ 34 ):

Կիսով փարսախաւ ի Հս. Կոթայ առ եզերք գետոյն կայ  
 և վերին Արտեմանս ի բարձու ձորեղերն. բնակիչքն են  
 Հայք, 54 տունք. եկեղեցին Ս. Գեորգ կոչի: — Աստի ի  
 վեր ընդ ձոր գետոյն ելանելով ընդառաջին հանգրուանք  
 չուարնակաց, Մատինա կամ Մեսինա Ստորին և վե-  
 րին՝ 30 տամբք Թաթարաց. Ըշրգ Բերվանս սերայ, (աւե-  
 րակ կարաւանատեղոյ), ընդ որ մարթ է համարել  
 զճանապարհ վերոյիչեալ Յիսուսեանց, և զդէպս Աղամի-  
 րի, զի և առ երի կայ ջրոյն: Ի վեր քան զսա միւս եւս  
 աւերակ գեօղ Այրիձե, առ գետակցութեամբ երկց օ-  
 ժանդակաց Կոթայ, ուր ջրեղջն է. թերեւս խանգարեալ  
 անուն է սա Արգիճի գեղը որ դասի ի հին ցուցակին,  
 և Էրքեձի կոչի ի Սիմ. կաթողիկոսէ ի թեմի Շողու-  
 զայ վանից: — Յեզր արեւմտեան օժանդակ գետակին  
 կայ Աք-բաշ (Քարաձի) ամայի գիւղ, անշուշտ ի սակս  
 մեծի քարեղէն երկվարի՝ յեզր գետոյն, ի ստորոտս Աք-  
 դըլասարի<sup>1</sup>. և ի ստորեւ ի նոյն անուն աւազուտ ճա-  
 հիճ. նման նմին ճախնային է և միւս գետակիցն որ կոչի  
 Աղլի-չայ, եթէ չիցէ և սա ի նոյն Արգիճի կամ Էրգե-  
 ձի անուանէ աղաւաղեալ. բայց չէն կամ լքեալ տեղի  
 քնակութեան ոչ նշանակի ի վերնակողմանս ձորոց գե-  
 տակացս:

Հանդէպ վերին Ատիեամանայ յարեւելակողմն գետոյն,  
 ի ձորամիջին կայ անուանեալ Գեղեզմանն իշխանի, չիրիմ  
 մեծամեծ վիմաք. աւանդեն<sup>2</sup> զբարեպաշտ իշխանէն յոր-

դորեալ երբեմն զժողովուրդն յազօթս, յորժամ փոխա-  
 նակ ձկանց օձք ընդ գետն ելանէին ի ծովէն, և աղօթք  
 քաջահաւատիցն նհանջեցին զնոսա անդրէն ի ծով, ուս-  
 տի ապա բղխեցին ձկունք առատապէս, զորս և ի պա-  
 արեւ նորա՝ իշխանաձուկն կոչեցին. և ի մեռանել նորին՝  
 ամփոփեցին ի տեղաջ, յոր և ցարգ գան յուխտ և յա-  
 զօթս: Առատ լինի և որս կողակ ձկանց ի սկիզբն յուլիս  
 ամսոյ ի միջոցի ծովուն և կոթ աւանի. ուր յերկուս բա-  
 ժանեալ առուս զլուրս գետոյն՝ ի դիմել ձկանցն ի վեր,  
 զլուր միոյն խառնեն ի միւսն, և ծանծաղ կամ ցամաք  
 գործեալ՝ անարգել ժողովն զընդակոսն: Չի ի վաղուց  
 հետէ հաշակեալ էր առատութիւն որոյ ձկանց Կոթայ,  
 սկնարկէ և զաւելտական բան Գրիգորի Մագիստրոսի,  
 գրելով « Առ կարծեցեալ ոմն զիտնական », զգէպս հա-  
 մանմանոյ նորս ագիտի ուրուան ժամանակակցի. որոյ  
 « Գորտ գտեալ ի վերիացոցն կողմանէ, ասեն, ապուխտ  
 » արարեալ, և ի կոթ գաւառին Գեղամայ ձայնէր, ձու-  
 » կըն զնա կարծելով, զի գնեսցին. որոյ ըստանձնեցու-  
 » ցեալ բառնան նմա յարտակիտեղոցն կողից, կարկա-  
 » տուն կեմովքն կաշկանդեալ »: Կող աստանօր զձուկն  
 Կողակ կամիցի ասել Մագիստրոսդ, եթէ զկճու զբարաւ  
 բեր ըստանձնողին, թողում ի քննութիւն բանասիրաց:

39. Մերձակից ձորոյ և բերանոյ Կոթայ յարեւելից  
 կուսէ կայ բերան անձուկ և երկարածիգ ձորոյ կճՈՒՆՆ  
 ների գետոյն, յանուն գիւղիցն. այլ յի՛նչ պատճառս  
 այսպէս կոչեցին, ոչ զիտեմ, ի սակս Կոթ չորքստանայ,  
 եթէ կղզնեաց տօնմի հնոյ, թէ յայլ ինչ Գեօղքն զար-  
 դիս կոչին Գարանըգ կամ Ղարանըռի, և են երեք, վե-  
 րին, Միջին և Ստորին. բայց մին ամայացեալ է. իսկ այլքն  
 երկողին բնակեալ ի Հայոց. զլիւսարն է Ստորինն՝ հուպ  
 ի ծովեզրն աւելի քան 100 տամբք, և Ստոր Ստատածա  
 ծին եկեղեցեաւ. վերինն կճՈՒՆՆ, 90 տամբք և Ս. Գեորգ  
 եկեղեցեաւ, յանձուկս ձորոյն յարեւմտից ջրոյն: Չառա-  
 ջինն երևի Մեծ և Փոքր մակակոշեալ գիւղիցն, զի գրի ի  
 յիշատակարանի 1673 ամի, «գիւղն կճՈՒՆՆ Փոքրիկ»,  
 յորում Գրիգոր ոմն քահանայ կազմէր « ահիւ և դողու-  
 » թեամբ զսուրբ աւետարանս... ընդ հովանեաւ մեծա-  
 » հուչակ Ս. Աստուածածնին Մաքինանց »: Յերի կայ վե-  
 րին գեղջն Գերեզմանոց՝ բազում խոյածեւ չիրմաք և խաչ-  
 աթոռովք, յորոց մի, այլ ոչ հնագոյն (1688-8 ամի) է  
 այս (Թիւ 17), համառօտ արձանագրաւս:

**Սուրբ Խաչս բարեխաւս Զաքարին եւ կենակցին.**

Յելից կճուտների ձորոյն՝ կայ միւս կամ կրկին ձո-  
 րակք փոքունք նուազ ջրով, յորոց մին կոչի վարդեճոց  
 գետակ, և յայլազգեաց Թոնիտոյրու. զմիւսն ի դէպ է  
 կոչել յանուն Զօրախայի: Երկոցուն եւս վերնակողմանք  
 անչէնք են. յառաջնումն մերձ ի ծովեզրն է գիւղն Ապ-  
 տալ-աղաչը, հայաբնակ, 40 տամբք, և Ս. Աստուածա-  
 ծին եկեղեցեաւ. Ընդ մէջ սորա և Ստորին կճուտի  
 բղխեն աղբերք մանուկք և թափին ի ծովն: Յելից հա-

բաւոյ նորին կայ Այի-ղրաշի կամ Այի-ղրասի գիւղ,  
 նոյնպէս հայաբնակ 85 տամբք և Ս. Պետրոս-Պօղոս  
 եկեղեցեաւ: Թուի ինձ եթէ երկողին սղա գիւղք իցեն  
 վերին և Ստորին վարդեճիք նշանակեալք ի հին ցու-  
 ցակի գեօղից Գեղաբունոյ: — Յերկրորդում ձորակին  
 նշանաւոր տեղի է Զօրախաչ կամ Զօլախաչ գիւղ, յա-  
 նուանէ մեծի միատարր խաչվիմի իրբեւ 4 Չ. բարձր, և  
 մի Չ. լայն, որ ունի և պատուանդան և քանդակո, պա-

1 Ն. Տէր Աւետիսեան, յէջ 39:

2 Շահաթուսեան, թ. 245:

տունեալ և յայլազգեաց. կանգնեալ է, ըստ Ջալալեանի, ի յիշատակ որդւոյ Հասանայ ուրումն իշխանի<sup>1</sup>: Եկեղեցին Ս. Գեորգ յարեւմտից գեղջն կայ ի բարձրաւանդակի, առ որով և գերեզմանք վաղեմիք. յորոց ի միումն վէմ

սեւորակ՝ նշանաւ վարդապետական գաւազանի, և արձանագրաւս,

**Դաւիթ յաղաւ(թս) յիշեցէք.**



17. Խաչարձան ի վերին Կղնուտ (Ղարանդուխ).

Առ ընթեր սորին էլայլ խաչվէմ՝ յորում դարձեալ յիշի անուն Դաւթի, այսու արձանագրութեամբ.

**Յանուն Աստուծոյ եւ Դաւիթ Երէց կանկնեցի գլխաչս յիշատակ հոգւոյ իմ ծնողաց (եւ) իմ:**

Թերեւս Շողագացի Դաւիթն է, եպիսկոպոսն: Բնակիչք Չորախաչի Հայք են աւելի քան 180 տուն և 1400

սգիր: — Կիսով փարսախաւ ի Հս. Չօլախաչի կայ փոքր գիւղիկ կամ հանգրուան վերին Այի-ղրոսխա: Սիմէոն

<sup>1</sup> Ըստ Ջալալեանի ասեալս, Բ. 122, Ջօլ նշանակէ երկայն, զի

և խաչն այն երկայնաձեւ է ինն կանգուն ի բարձրութիւն:

կաթողիկոս յիշէ և զՍևաստ (վանք) վարդենեաց, որոյ որպէսն անծանօթ է ինձ: Թերեւս իցէ կոչեցեալն Անհից անապատ, Ս. Միհնա եկեղեցեալ, որում՝ յամի 1670 ընծայեն վարդենեցիք աւետարան մի, կոչելով զինքեանս՝ վարդենեցի ձամհարս (ժողովուրդ). և ստորագրութեամբ վկայեն զատ յայլոց՝ Մկրտիչ պարոնտէրն Շողազայ, և Կիրակոս տանուտէր Կանիսէի. միւս եւս տեղի կամ գեօղ՝ անծանօթ յայժմուս, և թերեւս նայն ընդ Կնիքն վերոյիշեալ:— Առնթր վարդենոց ձորոյն է Սգնաձորն, որպէս կոչի ցարդ գետն այլազգական թարգմանութեամբ Կիզգիլ-տերե, յերկուց առաջից ձուլեալ, յորոց մին կոչի այսպէս ի համանուն բարձր (իբրև 11000) լեռնէ իջեալ, միւսն՝ յարեւմտից կուսէ՝ Շանպոչագ կոչի. ոմանք ֆօրատակոզ գետ (կամ Գորատակ) կոչեն: Գեօղն Կիզգիլ-տերե փարսախաւ հեռի ի ծովէն՝ կարի ընդարձակ է իբր 200 տամբք, յարեւմտից կուսէ գետոյն ի տափ մի ձորոյն, Ս. Աստուածածին եկեղեցեալ:— Ի հանդիպոյ յարեւելից կուսէ (յալմէ) գետոյն կայ հին գերեզմանատեղի և մատուռն աւերակ ի նմին: Ի հարաւակողմն գեղջն աղբիւր մի է բարեհամ. և ժամաւ և աւելի ի Հս. կուսէ կայ այլ գիւղ համանուն, այլ լքեալ և ամայի: Ի ձորահովտի աստ խնդրելի է և «ֆորատակոզ անապատն՝ որ է անուամբ Ս. Աստուածածին», ըստ Սիմեոնի կաթողիկոսի, ի թեմի Մաքենոց վանաց: Մերձ ի ծովեզրն՝ յալմէ՝ որ է յարեւելից գետակին՝ կայ ֆօրատակոզ կամ Գօրսնը-գրասն (համետարեկ) գեօղ հայաբնակ առ քարաբլրով, 75 տամբք և Ս. Գեորգ եկեղեցեալ:

30. ՎԱՅԱՎԱՅՆՈՒ ՁՈՐ.— Սահմանորդ Ազնուածորոյ և նման նմին է անձկավայր ձորն, որ այժմ յանուն Ալաչալու գետոյ կոչի, այլ ի հնումն վանափանոզ ջոր կոչէր, և ի մերազգեաց այժմ կրանոց, յանուն գեղաւանին, եւս և Կորիկ աղբիւր, որպէս թուի յանուն Կոնակայ-քարի. և զսա համարիմ լինել Ալաչալու-քեփէ լեռնակ ընդ մէջ վերին Կթանոց գեղջ (ի Հս.) և Գարա-Խոյխաւի լեռին (ի Հր.), ի վերնակողմանս ձորակին:— Երեք Ալիալու գեօղք են. վերինն՝ այսինքն հիւսիսագոյն՝ ի ներքոյ արդ յիշեալ լեռնակիդ, բնակեալ ի թաթարաց 85 կամ 80 տանց. հանդէպ նորին՝ յարեւմտից կուսէ, իբր մղոնաւ եւեթ ի բացեայ՝ յեզր ձորակի միում օժան.

դակի՝ Միլիեն, որ ի սպառ ամայի է. Ստորինն թուի կոչեցեալ ի հնումն Կոնաքար գիւղ, որ ընդ այլոց շորից տուաւ ի կալուած վանեփանայ, և է հայաբնակ աւելի քան 80 տամբք:— Ընդ մէջ սորա և Ստորին Կթանոցի կայ և ամայի գեօղատեղի Գիլիսե-խարապա (Աւեր եկեղեցի) կոչեցեալ, որ ըստ Ջալալեանի է վերին Կթանոցըն, յորում կայ արգարեւ կիսաւեր եկեղեցի մի գեղեցկաչէն, համակ սրբատալ քարամբք, ութանկինի կիսաբոլոր ձեւով: Թուի աստանօր եղեալ Միւս վանեփանն, զոր ընդ վանորայս Գեղաբունեաց և ընդ գլխաւորս աշխարհին Սիւնեաց՝ կարգէ պատմիչն. այլ հռչակաւոր քան զայս էր Ստորին Կթանոցն, որ է բուն վանեփան գիւղ, մղոնաւ եւեթ հեռի ի ծովէն՝ յարեւմտեան գետեզերն, Ս. Աստուածածին եկեղեցեալ: Ոչ է յայտ ժամանակ հաստատութեան վանացն, այլ սակաւ ինչ երիցագոյն երեւի քան զչինութիւն հոյակապ եկեղեցոյն՝ յամի 903, որ կայ ի հանդիպոյն յարեւելեան դետեզերն, ի ստորոտս սարաւանդի միոյ ի վայելուչ դարատափի. փորրիկ է չափով, և առանց սեան գմբեթաւորեալ, որ և ըստ բաղդի մնայ կանգուն, շնորհազիւտ լեալ քան զայլն զոր յիշեցաք յերկրիս Գեղամայ և զոր յիշուցո եմք. անաղարտ պահելով և զարձան յիշատակի արժանաւոր շինողին և վերակացուին, զոր և պատմիչն Սիւնեաց զազափարեալ էր շորեհարիւր ամօք զինի շինութեանն, և հնգիւք հարիւրովք նախ քան զմերս ժամանակ, և մարթ է բաղդատել ընդ նորայումն զընագիրն (ըստ ինամով ընդօրինակութեան Շահխաթունեան եպիսկոպոսի) մինչ չեւ է լուսագրութեամբ կամ նկարահալ նութեամբ ի սպառ ճշգրտեալ: Արդ ըստ պատմչին՝ տեսեալ զչինութիւնս վանաց և եկեղեցեաց Սեւանայ, Շաղուազայ, Կոթայ և Մաքենոցաց, զդաստակերտս Մարեմայ և Գր. Սուփանայ, զքեռ և զքեռառն իւրոյ, առոյց սպարապետն Շապուհ եղբայր Սմբատայ Ա, ի ձեռն քեռն իւրոյ «չինէ զփառաւոր տունն Աստուծոյ» յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորիին ի Չորակին վալ» նեփանաց, որ այժմ Կթանոց կոչի. և պայծառապէս «զարդարէ զնա. և բազում տուրս ընձեռէ ի պէտս եղ» բարցն, և հաստատէ տուն կրսնաւորաց<sup>1</sup>. որոյ յիշատաւ «կազրութիւն արձանին ունի օրինակ զայս», գրեալ զգմբեթաւ տաճարին յարեւմտից կուսէ ընդ հարաւ.

**Յանուն Աստուծոյ. Ես Շապուհ Բագրատունի Հայոց սպարապետ, տեւրանց տէր, որդի Աշոտի<sup>2</sup> Հայոց թագաւորի, ի ժամանակս Հայոց թագաւորի մեծի Սմբատայ հարազատ եղբար իմոյ, եւ վերադիտողի Հայոց հայրապետի Տեառն Յեւանիսի<sup>3</sup>, իմացայ եւ ծանեայ թէ ամենայն փառք եւ մեծութիւն սպառելոց են ի վաղիւն եւ կորնչելոց, եւ մեծափափազ տենչանովք վերակացու եւ տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին՝ յիւրում<sup>4</sup> իշխանութեան ի վանափանս տունն Աստուծոյ կանգնել վիմատաշ**

<sup>1</sup> Եւս սակաւ ժամանակի շինութեան տաճարին, Շապուհ «կիսափառ կենդ զնոստիստէր կեանս, վարձանեցաւ...» (և թաղեցաւ) ի քաղաքագեղե Քաղառնու. — 86. Կթիլս:  
<sup>2</sup> Օրբելեան, Ալաչալու:  
<sup>3</sup> Օրբելեան, Յովնիսի:  
<sup>4</sup> Օրբելեան, յիւրում... վանեփան... խնդրելու... խորտուլ:

կոտրածովք շատածախ դանձիւք եւ մեծաջան վաստակովք կատարել: Թերեւս լիցի ողորմութիւն յայնմ աւուրն յորժամ բանք սպառին եւ գործք թաւաւորեն. Եւ տուարք ի քեզ Վանավանու վանական Հայր Արքաանաւ, աղաւթել, եւ վայելել եւ որ այլ յետ քո այլ յաշորդին. Եւ պաշտոնեայք խորանիդ յորժամ ժողովիք միաբան յազաւթս եւ կերակրիք յանմահական կերակրոյն, յիշեալիք զիս եւ զիման, զի արասցէ ողորմութիւն ողորմածն Աստուած. Դ դեղս սահման. Դրամք ի Կոթաքար՝ ՇԼ, ի Բ... տէլեացն. ՈԿ յԱղիբողանաց, ԶՂ ի Կարբին գետերէն եւ նաւերէն: Տէր Սողոմոն. Տէր Աթանաս. Սմիլատ... Աստուծով բերաւ շուր յՈՆճոռ... են. ի թուիս Հայոց ՅԾԲ:

Զվերջին հատուած բանի տրից կալուածոցն՝ այլապէս զոր և Զալալեանն ընդօրինակեալ է աղաւաղանօք. և է և սակաւ ինչ երկարագոյն եւս բանիւք գրէ Օրբելեանն, այս ըստ պատմագրին.

Եւ ետու հինգ գեղոց սահման. Կոթաքարն, Աղաքոյ-վանուն, Շաշառնուհոյն, Գետաւեջն, Կթանոցն, Գետախանաց ծովն. ՄԿ դրամ ի Կոթաքարէն, ՇԼ ի Բրտեկեացն, ՈԿ յԱղաքոյ վանացն ծովէ, ԶՂ ի Կարբին գետերէն եւ ի նաւերէն: Արու՛մ մի որ իշխեսցէ հակառակել. եւ թէ յանդգնի որ յՅԾԸ Հայրապետացն նզովեալ եղիցի, եւ մասն եւ բաժին զՅուդային առցէ. ի թուիս Հայոց ՅԾԲ: Աստ կան ի շիրմի աստուածասգեաց տէր Սողոմոն եւ տէր Աթանաս, Սմբատ բազրատունի:

Մի ի խաղաղելոցդ՝ յանուանէն և ի մերձաւորութենէ ժամանակին թուի Սողոմոն Բ եպիսկոպոս Սիւնեաց. Աթանասդ՝ թերեւս առաջնորդ մի է Վանեվանայ. իսկ Սմբատ՝ որ ի Բազրատունեաց անտի իցէ. — ի դէպ էր լինել Ա, նահատակեալն ի Յուսիպայ: Զտեղի շիրմացն կարծէ Զալալեան, և ոչ անհաւան թուի, լինել ի յետնաչէն և վարկպարազի ժամատան եկեղեցւոյն ի միջոցս խորանացն, յերեսին փոքրիկ մատրունս: Ոչ է յայտ ժամանակ և շինող ժամատանդ, որ ոչ միայն քան զՇապուհ յետոյ է՝ այլ և քան զԳագիկ Ա. զի սա յառաջքան զԹագաւորութիւնն, ըստ պատմիչին, սնորոգէ, » զհրաշակերտ եկեղեցին Վանեվանաց, զսուրբ կաթողիկէն և տայ զԴեղձանագետ ի նա, և պարսպէ շուրջ » զեկեղեցեալն. և գրէ արձան անիծից ոչ յափշտակել » զայն ի սուրբ եկեղեցւոյն »: Բայց ոչ թուի սորա նորու գածն յապուհաչէն եկեղեցին, զի նա Ս. Գրիգոր կոչէր, սա Ս. Կարողիկէ, այլ ըստ ոմանց Միւսոյ Վանավանաց եկեղեցին է, կամ այլ հին և գլխաւոր եկեղեցի այսմ Ստորին Կթանոցի և մեծի Վանեվանաց: — Ի ժամատանն՝ ի վերայ աշակողմեան խորանին՝ գրեալ կայ.


Կամաւ Բանին Աստուծոյ եւ Գիշտեկ եւ ամուսինն իմ միաբանեցար սուրբ ուխտիս Սուրբ Գրիգորոյ. միաբանքս խոստացան Յայտնութեան Բ պատարագ տալ Գիւտին. որ խափանէ դատի ի Տեառնէ. կատարիչք աւրհնին յԱստուծոյ:

1 Զաւալ. Բ. 12, այսպէս ունի. « Դ դեղ սահման. Կոթաքարն, Շաշառնուհոյն, Գետաւեջն, Կթանոց գետ, Սիւնեայ ծով. Մ դրամ Կոթաքար, ՇԼ ի Բրտեկեաց, ՈԿ յԱղիբողանաց, ԶՂ ի Կարբի գետերէն և ի նաւերէն. Տէր Սողոմոն, Տէր Անուս. Սմբատ Բազաւորեաց Աստուծով բերաւ շուրս Անճոռին. ի թուիս Հայոց ՅԾԲ »:

Ի վերայ դրան ձախակողմեան խորանին են արձանագրութիւնք թուականք 1327 և 1330 ամաց.

Շնորհիւ Աստուծոյ ես Սարգիս եւ ամուսին իմ, Սուրբ Լուսաւորչիս արարաք արդիւնս . միաբանքս սահմանեցին ի տարին ի տաւնի Սրբոյն Սարգսի Ա ինձ եւ Ա ամուսնոյն իմոյ . կատարիչք ակրհնին յԱստուծոյ . ԹՎին Հայոց ԶՀԶ<sup>ին</sup> :

† Կամաւ ամենակալին Աստուծոյ , ես Հեձոռայս եւ ամուսին իմ Անիփիսն միաբանեցաք Սուրբ Լուսաւորչիս , արարաք արդիւնս . Միաբանքս սահմանեցին ի տարին Բ պատարագ Խ<sup>Թ</sup> տաւնին . Ա ինձ Հեճուպիս . Ա Անիփին . կատարիչք ակրհնին յԱստուծոյ . խափանիչք դատին ի Տեառնէ . ԹՎին Հայոց ԶԿԹ :



18. Բնեւորման ի կրանոց = վանեվան .

† Կամաւն Աստուծոյ ես Դաւիթ միաբանեցայ սուրբ ուխտիս . միաբանքս խոստացան Ա պատարագ Շառզարդարին ինձ Դաւթիս :

Եւ ի վերայ պատուանդանի խաչվիմի միոյ կայ արձանագիր միոյ նորոց իշխանաց կողմանս (տես յէջ 37), յամի 1502.

Կանգնեցաւ սուրբ Խաչս յիշատակ Մէլքիսէթ բէկին որդի Մերզին Գեղամայ իշխանին . ԹՎին ԶԾԱ .

Գեօղք և շահաբեր տեղիք յիշեալք յարձանին Շապհոյ ի դէպ է թէ մերձաւորք իցեն և ի ձորակիս Վանեվա- նայ, որպէս յայտ առնէ և Կթանոցն ծանօթ, և Կոթա- քարն՝ հաւանական. իսկ ծովակքն Գետավանաց և Աղա- բովանաց իցեն թերեւս երկու լճակքն փոքունք ի գլուխ ձորոյն, մերձակիցք, ի Հր. Գարաիւլիսան լերին. որք և թուին ընծայել ձկունս, որպէս և անծանօթն կարք կամ կարբին. են ի Հաբանդ գեօղք կարբինք, այլ յայտ

է թէ որիչ է յիշեալս աստ, և անկ է ի ծովեզերն լի- նել և նաւակայս եւս ունել և նաւարկութիւն:

Ի Հս. Կթանոցի մերձագոյն ի ծովն կայր փոքրիկ թուրքաբնակ գիւղ կամ հանգրուան Գրչլագ կամ Գարա- սագալ գչլաղը, այլ այժմ ոչ գիտեմ թէ շէն իցէ՞: — Հնագոյն քան զքրիստոնէական շինուածս՝ մնայ բեւեռ- քանդակ արձան յիշատակի ի սահմանս Վանեվանայ, առ Ստորին Կթանոցաւ, որպէս տեսնի (ի թիւ 18):

### Գ. Ս Ո Ւ Ք

31. Որպէս կանխաւ ազդեցաք՝ արեւելեան և արեւ- ելեան – հարաւային մասն երկրիս Գեղամայ՝ ի հնումն առ ուսնձնակ գաւառ էր, մի յերկոտասանից ախարհին Սիւնեաց, այլ ըստ երկրագրական դրից անբաժ մասն է տաղտին Սեւանայ, յոր սակս և վաղ ուրեմն յարեալ ի Գեղաբունիս՝ իբրեւ վիճակ մի նորին. որպէս է տեսա- նել և առ պատմչին Սիւնեաց, որ օւրեք զԽորասանկի- րակ գիւղ ասէ «ի Սողից գաւառի՝ ի Գեղաբունիս», այլ- ուր զՎաղաւեր՝ «ի Գեղամ գաւառի՝ ի Սողից սահ- մանի»: Անունն յաճախ թ տառիւ գրի, այլ և Գ և եր- բեմն և ս Տ. եթէ ըստ կարծեաց մմանց և ըստ բանից Օր- բերեանի «սակս հանապազորդեան բքոց և դառնաշունչ » օղոցն կոչեցաւ Սթք», ի դէպ է թո՛ւ գրել, քանզի սթ նշանակէ խիտտ. (որպէս Սթաւեր՝ խտտամազ). այլ ստուգագոյն ինձ թուի աւանդութիւն մմանց ի տեղա- ցեացն իսկ, յանուն տոհմի միոյ կամ ազգի այդպէս կո- չիլ, զոր ինձիճեան և այլ ոմն բանասէր համարի նոյն ընդ Սողացիս յիշեալս ի Պտղոմեայ աշխարհագրէ, թէպէտ և բանք նորա խորագոյնս ընդ մէջ Աղուանից և Վրաց ցուցանեն զազգը, և թերեւս զԾաւղէացիս: Բայց զի էր անդ յայդ անուն հայկական տոհմն Սողացի, յայտէ և ի զօրաբաժնէն զոր տայր յազգային բանակն, 80 այր, որով ցուցանի և փոքրութիւն տոհմին և երկրին, այլ անունն գրի անդ Գ տառիւ. հաւանօրէն յանուն տոհմիդ գրի և Սողէից գաւառ: Ի հին օրինակի միում Աշ- խարհագրութեան Խորենացոյ՝ Ոստըք գրեալ է անունս այս: Դարձեալ ոչ գիտեմ վասն արտօրայիցն ինչ՝ եթէ յայլ սակս՝ կոչեցեալ է երկիրս և Արտից գաւառ:

Յարեւելից կուսէ դրակից գոլով Արցախոյ, յետ բարձ- ման թագաւորութեան Հայոց խառնեցաւ ընդ նմին,

կամ անկաւ ընդ իշխանութեամբ Հայ – Աղուանից, զու- գեալ ընդ Մարայ վիճակին, մինչեւ ասել աշխարհագրին Վարդանայ, եթէ «Սողից գաւառն՝ Մարայ երկիրն է» . այլ զսա գիտեմք ի Վայկունիս Արցախոյ գոլ, և թողումք ի նոյն՝ կցորդովքն, որք միահաղոյն Փոքր Սիւնեո կոչէին: Երկուցն միջի կայ Փորակն այն՝ զոր ի սկզբան բանիցս յիշեցաք, և պատշաճի Սողից, զի եւ գետ ի մեծէ լճէ նո- րին ելեալ մտանէ ի Սողս, և թափի ի ծովն Գեղամայ:

Եւ զի խառն և զուգակցեալ է Գեղաբունեաց՝ ի պատ- մութեան ոչ է յուսալի գտանել աւանձին քաղաքա- կան յիշատակս և դէպս Սողից, որպէս և ոչ յեկեղեցա- կան տեսչութեան աւանձինն, զի ոչ բնաւ յիշի սմա եւ պիսկոպոս. այլ միայն ի վերջոյս Զ դարու, յաւուրս Մովսիսի Բ կաթողիկոսի, ի ժամանակի յուզման խըն- դրոյ պատուոյ պատկերաց, «Յեսու անուն քահանայ և » թաղէոս և Գրիգոր... գնացին ի Գունայ և ելին ի » Սողից գաւառն, և բնակելով յանապատն, զի կրօնաւ- » ւորք էին, սկսան ուսուցանել, թէ զպատկերս որ յե- » կեղեցիս են նկարեալ՝ ի բաց ջնջեցէք, և ընդ աշխար- » հական քահանայս մի հաղորդիք: Եղեւ խռովութիւն » ի գաւառին, և համբաւ եհաս առ Մովսէս հայրապե- » տըն. իսկոյն գրեաց թէ փութով այսրէն եկայք. նոքա » ոչ անսացին հրամանին, այլ անտի գնացեալ բնակե- » ցան յԱրցախական գաւառս... պղտորեցին զերկիրդ: » Ապա Գարդմանայ Տէրն կալեալ զերեսին արսն. ետ » կապանօք ածել ի Հայս», առ Արբահամ կաթողիկոս, որ խրատեաց զնոսս ի ժողովին, յորում էր և Մայ- րազոմեցին Յովհան վարդապետ պատմող դիպացս, որ և աւարտէ ասելով «զթիւրութիւն նոցա ուղղեցաք». — (իսկ զիւրն ո՛ւմ արդեօք թողոյր ուղղել):

1 Զի ոչ գտանեմ նշանակեալ յաշխարհացուցի Ռուսաց, այլ ի Շորեն, որ միայն երկուս ասուն գրէր լինել ի նմին:

Ի ցուցակի հարկատուաց եկեղեցւոյն Սիւնեաց ըստ հին սահմանին՝ 80 գեողք յանուանէ համարին Սողից, ընդ որս և Մար, զորս նշանակեմք հանդերձ բաժնիւ հարկին, որպէս զԳեղաբունեացն:

Սոմք	20
Մափամաղք	7
Ունջի ձոր	7
Հովուամափք. Հաւսամաղք	7
Աւազան	12
Համամաբակք	7
Արաւիսաբակք	6
Գուկառիմ	15
Տրէտուք. Բէտուք	8
Սափջի անապատ	8
Խորթագետ	8
Վարդանաբակք	6
Նորաբակք	6
Վասակաշէն	10
Կուճն	12
Անապատ	12
Արփունջն	12
Շատրէք	10
Կուչկունիք	10
Բարկոյք. Պարկիս	12
Վաղաւեր	10
Ուռակարք	15
Ամեռնափոր	15
Շատվան	10
Շինիք	15
Աստուածածին	10
Երէզ	12
Բակափոր	12
Մաքենոց	15
Ետեցիք	12
Ջերիշատ	12
Ասխոզ	10
Աղբերածոր	7
Արմնայ. Արմնալ	7
Անապատ	7
Շապուհամաղ	7
Կուտակք. Կատակ	10
Վաջէիբակք	6
Ջաղացածոր	10
Ջաջուրաբակ	7
Պաշուք. Բաշուք	12
Տեռնատեան	12
Բերդածոր	8
Դրունք. Տրունք	12
Որթնիք. Որդնիք	15
Դարանք. Տարոնք	15
Դարանակ	15
Ախոռատուն	15
Ոզմունք	12
Պաշոյ	12

Ջահոյ	12
Խորասանաբակ	6
Որոկիք. Որոզիք	12
Ականք. Ակոնք	10
Գողոց ագարակ	12
Այրք	15
Գեղամաբակ	10
Կախանաղբիւր	8
Սահակաբակք	7
Խոնթաբակ. Խոնթանաբակ	7
Ջաղացածոր	6
Որուց. Որբուծ	8
Դպրաբակ	6
Տկուլաբակ. Դկուլաբակ	6
Ատրմղեմաբակ	12
Խորժայ	12
Մնածոր. Մնծածոր	6
Մար	15
Գետաբակ	10
Երերի	8
Վարժանկայ աղբիւր	10
Հոնջէնք	7
Եղջերուենիկ	8
Անապատ	10
Օձիգետ. Աղձի գետ	6
Քեթաշէն	
Գաւառնի	
Կնձուտ	
Դարանակ	
Կաթունիք	

Նշանելի է յուրվութիւն թակր յօղիւ անուանելոցն: Հնգեքին յետինքդ՝ որոց ոչ նշանակի հարկ՝ ոչ գտանին ի ցուցակի օրինակաց մերոց, այլ յօրինակի Շահխաթունի, որ դասէ ընդ նոսին և զԴիէլի-դարտաշ գիւղ: Յաւելցուք ի սոսա և զթուեալսն ի Սիմէոնէ կաթուղիկոսէ ի Թեմի Մաքենեաց, ի բաց Թողով զորս գրեցաքն ի բաժնի Գեղաբունեաց, և զԹուրքանուանսն:

Յրտագետ	Ոսկէշէն
Հոտած աղբիւր	Անմեռ
Նշխարք	Խսլինակ
Կածի	Էտիլ ?
Բար	Դաւալանոց
Քաւթառանոց	Կալեր
Սալկուտ	Արքաուենէր
Փառակունիս	Երիցաշէն
Ախէնիք	Համարիար
Կաթիկ	Երիշատ
Կաթաշէն	Ոկունիս
Կարմիրշէն	Ջիլ
Բաստամ	Արտաուուճ
Մուկրուկ	Գետիկ
Խօշկաշէն	Կարմունջ



Յետինք ի սոցանէ Արեգունեաց պատշաճին, որ և մասն է Սողից ըստ նախնեաց: Ոչ միայն յուրովութիւն գիւղորայիցս՝ իրրեւ հարիւր և տասանց հայանուանց, ուրոց կէս թուով չափ գտանին և օտարաձայնք, այլ և անուանքն իսկ յայտ առնեն՝ ճոխից և ազատ արանց բընակութիւն եղեալ երկրիս ի հնունս. որպիսիք են, նախ՝ նահապետին և սկզբնաշինողի նորին Գեղամայ, (Գեղաւմարակ), ապա այլոց նովին բակ և շէն բառիւ զուգելոց, զոր է տեսանել ի ցանկիդ, և ցաւել՝ զի գրեաթ է արդ աւմենայնն անծանօթացեալ է, բայց ի Վասակաշինէ, կէսք այլազգի կոչմամբ և շատք եւս ամայացեալք ի սպառ:

Ընդ իշխանազնեայ հոյակապ արանց՝ ընծայեաց գաւաւ

ուրս այս փոքրիկ՝ և արս քաջանշանս յեկեղեցական կարգէ, յորոց՝ անուանք երկու անմոռացք ընուն և զամայութիւնս երկրին, Մաշտոց և Սողումոն, անբաժանելիք ի Սեւանայ և ի Մաքենեաց. մի ի սոցանէ՝ բաղգիւ բնակաւոց և ծովապարփակ դրիցն՝ արդ ի հազար տմաց հետէ կայ տակաւին ի շինութեան և ի պաշտաման, միւսըն պաղատի վերանորոգումն:

Ի բաց առեալ զԱրեգունի՝ բովանդակ վիճակն Սողից յերկուս գետահովիտս բովանդակի, ի Մաքենոցին և ի բնիկ Սողից կամ Մէզրէի, որ է յարակցութիւն յուրովից ձորոց կամ գետոց հաւաքելոց ի մի ժողովարան ջուրոց՝ ի լճակ մի, և անտի խաղացելոց ի ծաղն մերձակայ:



19. Ճամբար շենարեակ թարարաց ի կողմանս Կոթայ:

33. Չորսուսիս ՄԱՔԵՆԵԱՑ, ընդ մէջ կալով Սողից և Վանեվանայ, անձուկ և փոքրասահման է. և կուշի այսպէս յանուն գերահռչակ վանացն, որ զի յայլազեաց Գղու-Վանք (Վարմիր վանք) կոչի, նոյնպէս և գետակն, այլ ի սկզբանն Ալլահ-կէօլ-չայ. զի ելանէ ի համանուն լճէ Փորակին, և կտրելով զպատուարս լեռանց սորին՝ իջանէ խաղայ ընդ Ղս. ի ծոցն Գեղամայ, յերկուս բերանացեալ. այլ ի վերոյ երեք առաջք են նորա՝ որք առ Մաքենոցաւ միանան. աստի և անդր կոչի և Երափոզդու, յանուն գլխաւոր գեղջն մերձաւորի ի ծոցն: Ի գլուխ ձորակացն կամ աղբերաց գետոյս՝ կան

երկու լճակք սակաւ ինչ մեծագոյնք քան զՎանեվանայ ծովական, և այլք փոքրագոյնք, աւելի քան զտասն ի բովանդակ Փորակին: Հազիւ չորք կամ հինգ մնակութեան տեղիք շէնք նշանակին ի ձորահովտիս Մաքենեաց, յուրվագոյն բնակութեամբ թաթարաց. բայց առաջինն, Զաղաչու՝ հայաբնակ է 60 կամ 70 տամբք, յեզր ծովուն յարեւելեան սահմանածայրն: Առ սովաւ յամին 1882 ի քարափան ուրեք գտաւ բեւեռագիր արձան ինն տող. իսկ ի բարձրաւանդակի հին գերեզմանատեղւոյն՝ նշանաւոր է անդրի երկվարի բնականին մեծութեամբ: — Երափոզդու՝ յալմէ՝ որ է յարեւելից գետոյն, կիսով

փարսախաւ եւեթ հեռի է ի ծովեզերէն (40 տամբք Թաւ. Թարաց) : — Գզըլ — վանք երկու մղոնաւ ի վերոյ (ի հարաւոյ) առ գետովն, 48 տամբք նոցին : — Չամուրդոս մղոնաւ ի Մ. Հր. նորին, 35 տամբք. և մերձ ի գետարեւրանն Գզըգ պոչազգ, որ նորաչէն Թուի, հայաբնակ, 80 և աւելի տամբք : Հանդէպ նորին յովմէ գետոյն նշանակի աւերակ գետը Գզըլ — Դաշ, Թերեւս Կարախոյնն Սիւմէնի կաթողիկոսի : Ընդ մէջ գետոյցս յիջեցելոց երեւին ընդարձակ տեղիք աւերակաց, պարսպօք և աշտարակօք և եկեղեցեաւ, զոր տեղացիքն ասեն՝ ի հնումն Ազատ քաղաք կոչեցեալ, ըստ գրութեան ինչ Պետրոսեան Պօղոս վարդապետի<sup>1</sup>, որում ասէին Սեւանեցիք՝ ազատագիր եւս ունել ի Շահից Պարսից վասն ապահարկութեան տեղոյն, և պահիր յէջմիածին :

Մաքենոց մենաստանն բազմադրուատ, հնագոյն հըռչակաւ քան զայլն ամենայն յերկրիս Գեղամայ, յայսպիսեաց միջի օտարարնակ շինից՝ կիսականգուն կիսաւերկայ յարեւելից հարաւոյ Չամուրդուի և Գզըլվանք գեղը, (ըստ կարմրագոյն նիւթոյ քարանց շինուածոցն) : Ի հնումն և գիւղն և վանքն նովին միով անուամբ կոչէին Մաքենոց կամ Մաքենոցաց կամ Մաքենոցաց, այլ և Մաքեստենից. <sup>1</sup> յու՛մէ՛ առեալ զկոչումն՝ ոչ գիտեմ. զի սովորաբար վաներն կամ անապատն ի շինէն առնուն. Իսկ վասն այսր տեղոյ ասի այդպէս կոչիլ մենաստանին՝ օակս մաքենի կամ օգենի նիւթոյ զգետուց միանձանցն, յորմէ ապա և գետն : Մի ի հնագոյն կրօնաւորանոցաց է սա, աներկրայ յառաջ քան զ'ը դար, Թերեւս զուգակից այրարատեան հին վանորէիցն միաբանակեցաց, և ըստ այսմ՝ յատկապէս յիշեալ և պատուիրեալ ի ծերոյ անտի բնակելոյ ի վանս Ակոռոյ՝ ի լերին Մասեաց, առ իշխանն ապաղչարող, երթալ բնակել ոչ յանապատս, այլ ի վանս միաբանից, « յերաշխաւորան կամ ի Մաքենոց » . այլ զհամբաւի հարաւ ի սկիզբն և ի բովանդակ ը դարու, յերկուց (Թերեւս և երից) Սողոմոնից. յորոց երիցագոյնն՝ յառաջին կէս դարուն, վասն շինութեան և բարեկարգութեան վանացն և իմաստութեանն և սրբական վարուցն, միանգամայն և յորոշումն յայլոցն՝ կոչեցաւ Հարանց Բայր. և ի վերայ այլոց պիտանի գործօց՝ յաւել մեզ զպանծագոյնն ըստ կրօնական և ըստ դըպրութեան հրահանգաց, զՏօնական մատեանն, մի ի նշաւաւոր եկեղեցական գրոց Հայաստանեայցս. զոր Այրիւ վանեցի ժամանակագիրն՝ ի սկիզբն ը դարու ցուցանէ հրատարակեալ, ի միջոցի ՃՄ — ՃԿ Թուականաց (701 — 711) գրելով, « Հայր Սողոմոն արար զՏօնականն ի Մաքենիսն » ; Թերեւս զսկզբնաւորութիւնն. զի բուն յառաւարան նորին իսկ գրոցն՝ վկայէ ի ՃՂԶ Թուականի, որ է 747 ամ Փրկչին. և զհեղինակէն ասի հին և խրթին և բարձր ոճով. « Այր ոմն իմաստուն՝ որոյ անուն Սո. » զոմովն, ոչինչ հարուստ ամօք նախագոյն եղեալ յաշ. « խարհէ արեւելից՝ Դաշնառդ անուանեալ ծովուն Գե. » զաբունեաց, վանաց վանական Մաքեստենից ուխտա. » կան, սրբազանից արանց առաջնորդ... հաստատեալ » կանոն տօնից, ժողովոց, և զվսեմական արտադրու.


» Թիւնս հոգէպատումն ճառից պատմութեանց, և զժո. » զովոց արդարոց զգինուորական գովութիւնս... ծովա. » ցեալ բանն Աստուծոյ և գերապանծեալ գիտութիւն » նորա յորդահոս՝ ելից զվայրս զայս... Սա է ծովն տի. » եզերական՝ զոր ասաց նախագոյն մարգարէիցն Մովսէս, » Թէ Հոգին Աստուծոյ շրջէր ի վերայ իրոց. որում հովա. » նացեալ Հոգի Աստուծոյ՝ դայր և երթայր ի վերայ » ծովուս այսորիկ, ծնանելով ի սմա զկայտառուսնս վա. » յելլատեսակս : Սա է լեառն բարձու աստուածական » ցողով պարարեալ, որով խրախանան ի ամանէ և ի ճար. » պոյ սորա հօտք և հօտապետք. անդաստան հոգուաց » լերինն գեղեցկութեան, ի բազմաց լսելիս և ի քիմս... » Սա առակաւոր բանն Աստուծոյ որ յաւետարանան, Թէ » Հանէ ի գանձէ իւրմէ զնորն և զհինն. վասն զի սա » շարադրեալ օրինաւոր մասամբք, հնախօսեան վկայու. » Թեամբք, զարմազան նորոգ պատմութիւնս » . և այլն : Եւ համառօտիւ զբովանդակութենէ Տօնական գրոցն ա. » սէ կանխաւ. ի « սկզբան տարւոյն մինչեւ ի կատարումն » նորա, որ ունի զընթերցումն դիւերային պաշտամանն, » զտէրունական տօնից և զյիշատակ սրոց մարգարէից » և զառաքելոց և մարտիրոսաց և հայրապետաց և Թա. » զաւորաց » :

Այսպիսոյ խոհական և հոգելից առն՝ եղեն և աշտկերտք արժանաւորք, յորս գերազանցեալն բնաւից յառաջին ամս ը դարու, Ստեփանոս իմաստասէրն դէտն Սիւնեաց. որ ըստ գրելոյ համանունան պատմչին (Սրբելեան), յետ զարգանալոյ « ուսմամբ ի տան կաթողիկո. » սարանին Հայոց (ի Դուին) ... հրաժարէր ի բազմամ. » բոխ քաղաքէն, և գնայր ի համբաւատենչ և ի մեծա. » սքանչ Հանդիսարանն, ի հրեշտակերամ կրօնաստանն » սուրբ և յաստուածարնակ առաքինարանն Մաքենո. » ցաց, առ աստուածագեաց և սերովեատիպ Հարանց » հայրն Սաղոմոն, որ էր Էգոնուս մեծի ուխտին, որ » պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ ճգամբք և » անտանելի խտամբեր վարուք... և անդ տուեալ զան. » ձըն ի մեծամեծ տընութիւնս և յանըմբերելի վարս » մշտման առաքինութեանց » : Յետ ամաց ինչ եկն առ Սողոմոն այլ ոմն այր զարմանալի այլով կարգաւ. — մեծ նահատակն և Տէրն Գողթան Վախան, — մինչ եղեալ էր ի մտի « գնալ ի դուռն արքունի (Ամիրապե. » պետին), և յայտնապէս խոստովան լինել զքրիստո. » նէութիւնն... Եւ հասեալ ի վանսն Մաքենոցաց՝ ծա. » նուցանէ զամենայն՝ հօրն՝ ստուգութեամբ... Եւ ընդ. » ունէր ի նմանէ յորդորական խրատս և քաջախերու. » Թիւնս որ ի Քրիստոս. որում անուն էր առաջնորդին » Սաղոմոն, և հաղորդէր մարմնոյ և արեան Տեառն՝ » ի տօնի Սուրբ Խաչին... նա և տեսիլ իմն սքանչելի » ցուցաւ (նմա անդ), լոյս անճառելի երեւեալ և ձայն » լսելի եղեւ որ ասէր, Քաջալերեաց, Վահան, և այլն... » Եւ ամենեցուն փառատրելով զԱստուած՝ յուղարկե. » ցին զնա մեծաւ սիրով և արտասուօք » : — Սուղ զկնի այսր բարւոյ դիպուածի՝ շար մեծ հանդիպի վանացս Մաքենոցաց, որպէս և այլոց կողմանց Գեղամայ և

<sup>1</sup> Եթէ չիտէ շփոթեալ ընդ նախայիջեցելոյն Ազատ քաղաքի, որ ի Գեղաբունիս. տես յէջ 38. 40 :

Սիւնեաց, զոր խառնակ իմն պատմէ Օրբելեանն, որ պէս և այլուր յիշեցաք. զերկուս նման դէպս ի մի ձուլելով, զՄրուանայն և զԲարանայ: Առաջինն էր անուանի ոստիկանն՝ (յետոյ ամիրապետ), որ յամի 734 առաքեցաւ ի Հայս և ի Հոնս. Օրբելեանն (ասէ յամի 737) « ելանէ... աշխարհաւերն Մրփան բաղում զօրօք ի Հայս, » և իրբեւ հուր սաստիկ այրեաց և հրդեհեաց զգեղեց. « կռթիւն աշխարհիս ». և ընդդէմ սորա ասէ Վասակայ Սիւնեաց նահապետի ածեալ զԲարանն պարսիկ, որ յետոյ ուրեմն յամի 831 եկեալ է. իսկ զարդիս ոչ է յայտ յոյր ձեռն եհաս վնասն. այլ ստոյգ է պատմեալ աւերումն վանացն. « Բայց կրօնաւորքն նախիմաց եղեալ և » յերկուս բաժանեալ, կէսքն գնացին ընդ հօրն Սողոմոն » նի... ի գաւառն Շիրակայ ի սուրբ ուխտն Զրեակ... և » կէսքն գնացին յԱղուանս... ի Միհրնբրսեհայ վանքն՝

» որ է Զրվշտիկ »: Դարձեալ սխալէ աստանօր Օրբելեանն ասելով վասն Հօր Սողոմոնի (զոր Սաղում կոչէ), թէ ոչ էր առաջինն՝ « որ Հարանց հայր կոչեցաւ, այլ նոռին աշակերտն ». ընդ հակառակն, երիցագոյն պատմիչն Յովհ. Կաթողիկոս, առանց յիշելոյ զպատճառսն, ի ճառելն զՍողոմոնէ կաթողիկոսէ ասէ. « Բազում առաքինաշան երկոց զանձն տուեալ ի մեծ ուխտին Մաքենոցաց, այլ և վարժեալ եւս էր (անուշտ անդ) ի փիլիսոփայական արուեստս, և առաւել եւս հմուտ լեալ փասղտութեան կրթանաց: Եւ վասն զի ի ժամանակս Սողոմոնի Հարանց հօր՝ յերկուս լինէր բաժանեալ ուխտն Մաքենոցաց, և Հայրն հարանց հասարակ բաժնիւ կրօնաւորական դասուն երթեալ բնակէր ի Զրեակ՝ որ ի Շիրակ գաւառի, զհետ նորա և այս եւս Սողոմոն չուեալ գնայր », և այլն: Այլ յիշի զարձ Սո-



20. Բեռնարձան ի Զաղաղոս (տես յէջ 65).

ղոմոնի անդրէն ի սիրելին իւր դաստակերտ, այլ եթէ անդ գրեաց և աւարտեաց ըստ հին յիշատակագրին զՏօնականն յամի 747, ապա և անդրէն դարձեալ էր և ի նմին հանգուցեալ. բայց, ցաւէ, զի չեհաս մեզ ի գրոց՝ յիշատակ հանգստարանի նորին, առ որ կենդանեաւն դիւմէին ամենեքին ի սատար սրբութեան և գիտութեան. զոր օրինակ կաթողիկոսն Աղուանից յառաջնում քառօրդի Ը դարու՝ կոչեաց զնա ի խրատել ողորով և անվճիք՝ զիշխանս աշխարհին իւրոյ վասն խոտորագնաց վարուցն և ազգախառն ամուսնութեանց:— Իսկ Սողոմոն աշակերտըն՝ յետոյ կաթողիկոս՝ եհարց « զվարդապետն իւր » Սողոմոն որ Մաքենեցացն էր հայր, և նա զրով ուսոյց » զպատճառս հակառակութեան Յունաց ընդ Հայս, վասն ոչ ունելոյ զինն դասս քահանայութեան, և Հայոց՝ յընտրութեան Աբրահամու ի կաթողիկոս՝ կոչել

զնա պատրիարք, զկաթողիկոսն Աղուանից՝ արքեպիսկոպոս, և զեպիսկոպոսն Սիւնեաց՝ մետրապօլիտ: Այլ շատ լիցին այսօրիկ ի յիշատակ բազմարդիւն և բազմաշնորհ Հօրն այն հարանց և պարժանաց Մաքենոցաց:— Համանուն նորին և համանման երկրորդն Սողոմոն մինչ հասեալ ի խորս ծերութեան՝ տքնէր տակաւին ի Զրեակ, հրաւիրեալ և երթեալ ի կաթողիկոսութիւն տանս Հայոց, առ ի սեւել, որպէս ասէր, զԹիւրեալ դէմնն ի շարս նախորդացն ի մեծի կաթողիկէ եկեղեցւոյն, ի սուղ և ի լոկ տարեւոր ժամանակի՝ հայրապետութեանն՝ անմոռաց երախտեօք հոգացաւ նորոգել ըզվարժոց մանկութեան իւրոյ. զոր և ընդ նշանաւոր դէպրս ազգիս նշանակէ համառօտիւ ժամանակագիր ոմն. « ՄԱԷթուին՝ Տէր Սողոմոն շինէ զՄաքենիսն ». այն է ստուգիւ ամ Տեառն 788:— Հազիւ քառասուն ամաց

ի վերայ անցեալ վերաշինութեանն՝ միւսանգամ եհասնըմին քանդումն ի վերոյիշեալ բունակալէն Բարանայ աղանդասար պարսկէ, որ ոչ շատացեալ կտորածիւ Գեղաքունեաց, « և զմեծ մայրաքաղաքն Մաքենոցաց վանան » այրեաց. և էր թիւս Հայոց ՄՀԶ » ( 837 ) : Այլ յետ սակաւուց յանկանել նորա ի ձեռս քային Սահլի, ընդ այլն սկսանէր վերստին շինութիւն առնուլ և տեղիս այս, մանաւանդ զի յայնմ հետէ ցղար մի՝ խաղաղութեամբ տիրեցին և պայազատեցին Հայկազունքն Սիսականք՝ տեարք Գեղամայ. յորում ժամանակի յամին 844 յիշատակի Ստեփաննոս Մաքենոցաց վանական, ընդ ձեռնարկողս պայմանագրի տուչութեան Տաթեւու ի կալուած եպիսկոպոսարանին. սմա աշակերտէր միւս եւս պարծանք Գեղամայ և հեղինակն Սեւանայ վանաց՝ մեծանունն Մաշտոց, որոյ հայր՝ Գրիգոր երէց Եղիվարդեցի՝ ի ժառանգաւորաց Ս. Թէոդորոս եկեղեցւոյ, ի բունութենէ Տանկաց կողմանցն խոյս տուեալ եկեալ էր ի գաւառն Սողից, և աստ « ծնաւ զգեղեցիկ աղաւնին Գրիստոսի՝ զՄաշտոց », որպէս գրէ առ կենդանեալ իսկ սորին՝ աշակերտ իւր Ստեփաննոս, և ետ « ի ձեռն կրօնաւորազգեցի ուրումն » որոյ անուն կոչի Թեոդորոս. վարժեցաւ... ի կրօնա » ստանին որ կոչի Մաքենոցք, ի գաւառին Գեղամայ. և ըն » կալեալ զաստիճան քահանայութեան » ի Գաւթէ եպիսկոպոսէ Սիւնեաց, ապա ել յանապատս միայնութեան, և դադարեաց ի Սեւան, ուր գտցուք զնա ի մտոյ : — Աստ քաջ յամի 854, Յովնաննէս Ե կաթողիկոս Ովայեցի, մինչ « չըջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին Գեղ » արքունւոյ, լցեալ զկէտ կենաց իւրոց վախճանի ի մեծ » ուխտ կրօնաւորական կայանին Մաքենոցաց, և ի նմին » ուխտի սրբոյ ի հանգիստ զնա փոխէին » :

Որպիսի ինչ էին շինուածք վանացն յայնժամ կամ յառաջն եւս, ( զի երկիցս աւերեցաւ և այրեցաւ ), ոչ է մեզ յայտ. Թերեւս առաջին մենաստանն շինեալ էր հեռի և ի հիւսիսոյ կուսէ գեղջն՝ ուր նշանակեցաք զաւերակն Գղըվանք. իսկ յետին և այժմու հազարամեայ շինուածոցն մնացուածք՝ են ի հարաւոյ անշքեցեալ գեղջն Մաքենոցաց՝ որ նոյնպէս Գղըվանք կոչի, և կայ ի վայել

չաղիտակ վայրի ի լանջակողմն լեռնակի, զեզերքք գետոյն, երկու մղոնաւ ի Հր. Եարփուզուի և երեք ի ծովէն. տեղի պարսպապատ, բայց մասամբ քայքայեալ, որպէս և բնակարանք միանձանցն կամ վանատեղին. ի միջակին ունելով կանգուն զեկեղեցին Տիրամօր, ի յետին դարս Աստուածածին Գեղամայ հռչակեալ, և աթոռ եղեալ հոգեւոր տեսչի բովանդակ գաւառին կամ վիճակին : Չափաւոր է ընդարձակութեամբ եկեղեցին ( 28 կանգուն յերկայնն, 24 լայն, ըստ Չալալ. ). խաչաձեւ կիսաբոլոր կամ յութ խորշս տրոհեալ ի ներքուստ. զի Չալալեան ասէ ինն խորանս ունել կամ սեղանատեղիս, իսկ Շահ խաթունեան՝ մի միայն սեղան, և մի դուռն ի հարաւոյ կուսէ. ի վերոյ այսր դրան՝ ի ներքուստ՝ ճարտարապէս քանդակեալ է երիվար յընթացս, զոր գովութեամբ յիշն մերազգի նոր քննողք կողմանցս, այլ ոչ ընծայեն և զպատկերն : Գեղեցիկ է գմբէթն ամբարձեալ ի վերայ կամարաց՝ առանց սեան, բայց քարինքն չեն քաջ սրբատաշք, եթէ չիցեն մաշեալք ի ժամանակէ, որ ոչ սակաւ խախտեալ և խրամատեալ է զորմունսն և ի վտանգի կործանման կացուցեալ, եթէ ոչ հասցէ այցելութիւն նորոգման : Յայսպիսում վիճակի կայր գրեթէ և վեց դարուք յառաջ քան զմեր ժամանակս, և չորիւք զկնի շինութեանն՝ յելս Թ դարու, որպէս հաւաստէ պատմիչն Սիւնեաց, յիշելով և զշինութիւնն և գաղափարելով զարձանագիր նորին, որ յայնժամ կիսամասն երեւիւր, այժմ ի սպառ աներեւոյթ : Գրիգոր Սուփան Բ յետ շինութեան կոթայ եկեղեցւոյն՝ « Շինէ և ( զայս ) զերկնանձեմ » խմբարան՝ ի հրաշազան մենարանին ի փառաբնակ » ուխտն Մաքենոցաց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն » Սրբոյ Աստուածածնին, և պարտպէ վիմօք. և այլ բա » զում շինուածս յորինեալ զարդարէ զնա անխնայ գան » ձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք, նա եւ գե » ղօք և ազարակօք և այգեստանօք՝ ի Գառնի և յԵրեւ » ան և յայլ տեղիս. և կարգէ ի նմա արձան յիշատակի » հարստայոյս արդեանցն իւրոց, ըստ այսմ օրինակի » . որ և ունի բազում նմանութիւն ընդ արձանագրին կոթայ ( տես յէջ 55 ).

Կամաւն Աստուծոյ եւ Սուփան Սիւնեաց իշխան շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս եւ անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք եւ աստուածային կտակարանաւք. եւ ետու զսեփական գեղն մեր ի սա որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածնի ասի, իւր ամենայն սահմանաւք լերամբ եւ դաշտիւ, եւ ետու որս ձկանց գիողաշէն՝ սեղանոյն, եւ Չ դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, Մ դրամ ի Կոթկայ, ՅԾ յԱննեռէն, որ լինի ՌՄԾ դրամ. ետու եւ հինգ կուզպակնի յԱնի, եւ է այգի յԵրեւան, եւ Ե առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, եւ Բ այգի յԵղեգիս, եւ զամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լցի առատապէս եւ փարթամացուցի ներքոյ և արտաքոյ. ետու և ջուլիսու եզանց և ջուկս զուարակաց եւ անդեայս եւ հաւտս ոչխարաց : Եւ արդ մաղթեմք զամենայն աստուածուցելոյ

սուրբ ուխտիդ պաշտօնեայսդ, որում Աստուած է միջնորդ, կատարել վասն մեղուցեալ հոգւոյս զերկու քառասունսն տէրունի պատարագ ինձ. եւ անխափան երգել զերեկորին սաղմոսն զոր կարգեալ եմ յամենայն եկեղեցիք: Եւ Տէր Յովհաննէս Հայոց կաթողիկոսն, ի տանէս մի իշխեսցէ դատ կամ փայքար հանել, եւ մի յիմ որդեաց կամ ի ժառանգաւորաց. այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել ջանայ եւ որ հակառակ անուանեսցի՝ նզովս չարաչար ընկալցի յԱստուծոյ եւ յամենայն աթոռակալաց Սրբոյն Գրիգորի, եւ մասն ընդ Յուդայի մատնչին եղիցի: Եւ դարձեալ խաւսիմ ընդ ձեզ, առաջնորդք եւ կրօնաւորք վանացս, հաստատուն կալ մինչ ի գալուստն Քրիստոսի. եւ վարդապետեն եւ սաղմոսեն վասն իմ անխափան եղիցի. եւ եթէ որ ծուլացի ի քառասնեակ աւուրսդ ամ յամէ կատարել զմեղսաքաւիչ սուրբ խորհուրդն յետ ելից իմոց ի կենցաղոյս, ի Քրիստոսէ որոչեալ եղիցի, եւ մասն ընդ Սիմոնի կախարդի ընկալցի, եւ ի սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի: Շինեցի եւ զեկեղեցին ի գիւղաքաղաքին Արթայ. եւ ի նմա Ըսենեակ. եւ արարի պատիւ ի տան Տեառն, զոր շինեցաք. եւ զԱստուածածրնին քահանայքն ազատ արարաք յամենայն արքունի չարէ. ընդ նոսին և զայլ պաշտաւնեայս եկեղեցւոյ որք ի քահանայական կարգէ:

» Ահա այս իսկ էր արձան Մաքենոցաց, բայց վասն « հնութեանն և խախտելոյ քարանցն՝ ոչ կարացաք զբռնելն » վանդակն իմանալ. այլ բազում բանք և տուրք իշխանացն պակասին. զայս փորք ի շատէ եղաք, զի մի բնաւ « Ննչեալ կորեցէ յիշատակ նոցա »: — Յետ կիսոյ ժէ դարու, յամի 1681, նորոգեալ է եկեղեցիս այս ըստ արձանագրութեանն որ յորմն մի հարաւոյ տաճարին. (քանի ստորին և օտար սճով ի վերոյգրելոյն):

Կամաւն Աստուծոյ, որ Սիւնեաց Սուրբ Սուրբ իշխան շինեաց Մաքենուց եկեղեցիս ի ԳՃ ԹՎԻՆ, ես առաջնորդ սուրբ ուխտիս Զոռոյայեցի Խաչատուռը վարդապետս որդի գուրով Յակոբա վերստին նորոգեցի եւ պայծառացուցի ի ժամանակս սրբազան հայրապետութեան Յակոբայ. եւ միաբանք սուրբ վանացս զՏէր Պարսաւն, զՏէր Գրիգորն, եւ զսարկաւազունս զԳրիգորն, Ղազարն եւ Ստեփաննոսն, տնտես Սարոռիսն, յեջեցէք ի Քրիստոս Աստուած: Եւ որք յիշատակէ զմեզ՝ յիշատակ նոցա խաղաղութեամբ պահեսցի. ամէն. Հայր:

Կայ և յարեւմտեան ճակատու տաճարին միւս այլ արձանագիր յետին դարուց.

Շնորհաւքն Աստուծոյ ես Մէլիք Մէլիքքեկեան որդի մեծ պարոն աստուած(ասէր) Ապաշին եւ շինող տանս Գեղամա վերստին նորոգեցաք եկեղեցիս յիշատակ իմ եւ իմոցն, ամէն. Յեջեցէք Նիազ վերակացու:

Այս նորոգութիւն կանխէ դարու և աւելի քան զՊաշտոն, զի Մէլիք բէկդ որդի Արովի իշխանի Գեղամայ + է յամի 1678, որպէս կանխաւ ցուցաք յէջ, 34: Առաջի տաճարին կայ և ժամատուն յետնաչէն (20 կան. գուն յերկայնն, 8 լայն): Յարեւելից կուսէ գաստակերտիս Սուրբնայ կայ այլ

եկեղեցի<sup>1</sup> փոքր սագաչէն (16 կանգ. երկայն, 8 լայն), ի միջոցի բարձրապարհիսպ վանացն, յորում ոչ սակաւ սենեակք են, սեղանատուն ընդարձակ, գոմք և փարախ, հանդերձ այլովք, դուռն յանկեան արեւմտից հարաւոյ, և քարայտակ մեծագործ ագուգայ կամ ճանապարհ չրոյ: Են և այլ երկու սագաչէն եկեղեցիք արտաքոյ պարսպի վանացն, մին հաւասար մեծութեամբ արդ յիշեցելոյս, միւսն փոքրագոյն եւս (14 կանգ. երկայն, 6 լայն). թերեւս ոմանք ի սոցանէ իցեն հնագոյն քան ըզտանարն Աստուածածնի: Ի միջոց ժամանակի ընթացիս, յետ պէսպէս անցից աւերանաց, յոյժ պայծառացեալ և բարի կարգօք հռչակիւր մենաստանս Մաքենոցաց, և մանաւանդ յետ յինութեան տաճարին ի Քր. Սուփանայ, որոյ պայագատ ժառանգք ձեռնտու եղեն շքոյ և բարգաւաճանաց տեղոյն, մինչեւ գրաւել զերկիրն Գեղամայ ի թեմ և վիճակ նմին, որ զրկանք համարեցաւ միապետական աթոռոյ Սիւնեաց. վասն որոյ ստէ պատմիչն. « Մաքենոցացիքն զԳեղաքունի էին յափըջ » տակեալ ». այլ ի սկիզբն ԺԱ դարու (1006) ի կարգել Սարգսի կաթողիկոսի զՅովհաննէս՝ յեպիսկոպոս Սիւնեաց, անդրէն և զայն՝ որպէս և զայլ վիճակ՝ դարձոյց առ սա. սակայն յետ դարուց. դարձեալ Գեղամ սեփականեցաւ այսմ վանաց, որպէս վերոյգրեալ նորոգողը վկայէ յամի 1661: Յետ տասն ամաց (1670), կոչի առաջնորդ երկրին Գեղամայ՝ Մաքենեաց նորոգողն արքեպիսկոպոս և աստուածարան Խաչատուր րաբունապետ: Սակաւ ամօք յառաջ քան ղնա, այն է յամի 1687, յիշի առաջնորդ վանացն Գրիգոր վարդապետ. ոչ գտի զանուանս յայնորդաց՝ որպէս ոչ և զնախորդաց սոցուն: Ոսկան եւս ընդ եպիսկոպոսական թեմս կարգէ զՄաքենոց, որպէս յետոյ և Սիմէոն կաթողիկոս, թուելով ընդ նորին տեսութեամբ գեօղս 50, այլ և զԱնապատս կոթայ և Վարդենեաց, զՔոյառակի և զՍալկուտի և զԱշա՝ որ ի ցամաքակղզւով Արեգունոյ: — Ի սրբազան սպասուց վանացս յիշատակի Մաքենոցաց սուրբ Լիւան, որ յելս ԺԱ դարու պահիւր յՈւռհայ, առ Թորոսի կիւրապալատի, զոր և առեալ նորա իբր երայխաւոր ուխտի Փռանկ իշխանին, ել ընդ առաջ նորա անձնատուր լինել, այլ դաւաճանեցաւ ի նենգախոհիցն: — Առաւել քան զնիւթականն՝ պատուականագոյնք պահէին ի մենաստանիս Մաքենեաց աւանդք կարգաց սահմանելոց ի նախնի հարց եկեղեցւոյս շայոց, որպէս զի և բազմբախտ հայրապետ մեր Երեսէս Շնորհալի՝ ի նորոգելն զկարգս եկեղեցւոյ, խնդրեալ զայնոսիկ, « ետ բերել ի » սուրբ և ի հռչակաւոր աստուածարանակ և հրեշտակակրօն » սուրբ շարցն մեծ ուխտին Մաքենեացն. և ամենայնիւ » ամենայն կամօք հաճեալ և հաւանեալ՝ զպական ելից » և զսխալն ուղղեաց, և կարգեաց ամենայն Հայաստան » նեայց եկեղեցւոյ անմրելի և հաստատուն աւանդ ա-

» առաջնորդութեամբ Հոգւոյն Աստուծոյ, որ յաջողէ զա- » մենայն բարի յամենայնի՞ »:

Մակդիրքը գովասանականք՝ զորովք գրեաթէ երբէք ոչ առնեն զանց՝ ամենայն յիշողք մենաստանիդ յայլեւայլ դարս, հաւաստեն ոչ միայն զընտիր ընտիր կարգս և կարգապահս տեղոյն, այլ և զյարատեւելն ընդ երկարյոր սակս և առաւել ողբալի առնեն զայժմեան ամայութիւն և զլքումն ի ձեռս և ի վայելս վարկաբարդի այլազգոյ Պարսկի կամ Թաթարի, որոյ միայն այս շնորհ է (եթէ իցէ տակաւին), զի յաւուրս կիւրակէից լուցանէ ճրագ ի վերայ տապանի միոյ ի տաճարի անդ, ոչ է յայտ որոյ առաջնորդի կամ նշանաւոր հանգուցելոյ՝: Փափագելի է փութալ բաղդի և մինչչեւ կործանեալ սուփանաչէն գմբէթին՝ ամրացուցանել զայն, և գարձուցանել զտեղին առ փոքր փոքր գոնեա ի մասն ինչ առաջնոյ վանելութեանն, իբրեւ զմի յարժանաւորագոյն կացրոց մերոց նախնեաց. յոր և ի յետին ամբս ստի ձեռնարկեալ վարդապետի միոյ, ըստ իւրում կարի նորոգելով կամ մաքրելով զեկեղեցին<sup>4</sup>:

33. ԳԵՏԱՆՈՎԻՑՔ ՍՈՒՆՑ. — Արեւելագոյն հարաւային մասն, որ է բնիկ սահման Սողից, ընդարձակագոյն և հարթագոյն է քան զամենայն կողմանս երկրին Գեղամայ, և թերեւս յայս սակս Արտից գաւառ կոչեցեալ. յորում մեծագոյն գետակն՝ այժմս Մեգրի՝ իջեալ յարեւելեան հարաւային գոգոյ լեռանց տաշտին, ճապաղեալ ի դաշտագետինն՝ խաղայ յարեւմուտս անկանել ի ծով, անցեալ ընդ լճակն Թիլլի, յոր խառնին ուրոյն ուրոյն յարեւմտից կուսէ և յելից Մաքենեաց՝ երեք գետակքն, Ախանից, Կարմիր աղբիւր և Կաչեր: — Առ առաջնոյն՝ Ախանից գետակաւ, մղձաւ տարակաց ի ծովէն և իբր երկուք ի Չաղալեայ՝ կայ փոքր գեօղ մի այլազգեաց՝ Գեղարիսպաշ կոչեցեալ 20 տամբք. ի ձորագլուխ երկրորդին՝ Գըրլ պոչագ, որպէս կոչի և գետակն և թարգմանի կարմիր աղբիւր, կոչի եւս Չախարաշ<sup>5</sup>, նոյնպէս բնակեալ յայլազգեաց, 85 տանց: Գոյ ի սմս փոքրիկ և կիսաւելր եկեղեցի հին՝ Ս. Բեդդեհեմ անուն, յորոյ ներքուստ սեղանոյն ելանէ աղբիւր յորդ, բաւական ի պէտս միոյ ջրաղացի. երկու աւազանս կամ գուբս գործեալ են ջրոյն ի յատակ եկեղեցւոյն ի պէտս տեղոյն. իսկ յաւելեալն արտաքոյ ժողովի լճաձեւ, սնուցանելով կարմրախայտ ձկունս: — Չաղալեան առանց ընծայելոյ զարձանագրութիւնսն՝ ստէ զեկեղեցիս այս շինեալ ի Վասակայ ի Սիւսակայ, (որ թուի ինձ Վասակ Սիւսական) և ի Սարգսէ: — Հուպ է ի Չախարաշ և Գանլը Ալանվերտի գիւղ այլազգեաց 28 տամբք:

Ի ձորագլուխ գետոյն Կալերու կայ Գըրգ-պոչագ (Քառասուն աղբիւր) կամ Գարապոչագ (Սեաւ աղբիւր), իսկ ըստ Սիմէոնի կաթողիկոսի՝ Հոսաժ աղբիւր,

1 Շահաթունեանն թուի զսա կոչել մատրանաձեւ շինուած կէտակործան, զոր չկարաց քննել վասն բնակելոյ անդ այլազգւոյ:  
 2 Այսպէս կարգի խորագիր Խորատու ժամակարգութեանց:  
 3 Չաղալեանն կարծէ զՅովհաննու Ե կաթողիկոսի, առ որով չեւ եւս էր շինեալ տաճարս:

4 Տէր Աւետիսեան, 58:  
 5 Չաղալ. Բ, 149. Չախարաշ կոչէ. Շահաթուն՝ որիչ գրէ զՉախարաշ 16 տամբք, Գըրլպոչագ 48 տամբք: Իսկ Տիւպուս և Շոբէն ոչ յիշեն զՉախարաշ. Իտաւ աշխարհացոյց միացուցանէ, որպէս եղաք:



գիւղ Հայոց իբր 60 տանց, մերձ յոյժ երկոցուն վերոյ գրեկոցդ. այսպէս կոչի վասն բազմութեան աղբերաց որք ի ծործորոց լեռնոտիցն բղխեն, և յորդազոյն ի նոսա հարաւայինն՝ բաւական ի պէտս երկուց աղօրեաց. տունք Հայոց են 40 կամ աւելի, եկեղեցին Ս. Գեորգ հնաշէն, զոր նորոգեալ և ծածկեալ փայտայարկիւ յամին 1834

օծին և պաշտեն:— Ի հիւսիսոյ սորին ի դժուարագնաց առապար ձորամիջի կայ աւերակ այլոյ գեղ չին— Գորգ պուշագ կոչեցեալ, և են ի նմա գերեզմանք և խաչվէմք ոչ սակաւք, նշանակ մեծ և բազմարնակ լինելոյ տեղւոյն. որում վկայ և երկոքեան արձանքս. մին գրեալ յամին 1297 ի խաչվիմի, այսպէս.

**Կամաւն Աստուծոյ եւ յիշխանութեան իշխանաց իշխանին Գրիգորի եւ Տաշուշու տէր Զուռնայ՝ կանգնեցի զԽաչս ինձ եւ ամուսնոյն իմոյ Թամ Թայի հոգւոյ փրկութեան, զի էաք անղաւակ. որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս :**

Քննութեան արժանի է ընթերցուած արձանիս, որպէս և յետագայն, մանաւանդ անուն տեղւոյն Զուռնայ? Յայլում խաչվիմի գրեալ է յամի 1553, աւաղական միւսնգամայն և աղուական բանս.

**Ես Սարգիս երեց կանգնեցի զԽաչս հոգւոյ իմոյ եւ կողակցոյն իմոյ Մէլիք խաթունին. չորս որդիքն իմ փոխեցան ի Քրիստոս. Աւետարանի հրամանք է, ամէն ցաւոց փախած ? կը պիտի. մահոյն տեսանք փախած ապրեցան, մնացածն մեռան. այսքանս բաւ է իմաստնոց. ի թվին Հայոց (ՌԱ՞ն):**

Կիսով փարսախաւ ի Հս. Հոտած — աղբեր ի դաշտավայրի յալմէ գետոյն (Կալերու) որ է յարեւելից, կայ վասակաշէն գիւղ Հայոց իբր 120 տանց<sup>2</sup>, զոր այլ ազգեաց կամակորեալ փոխեալ է ի Պասար — կիչիք աւուն. Թերեւս Սիսականին վասակայ Գարուան կոչեցելոյ դաստակերտ. այլ եթէ ցուցակն գեղորէից հարկատուաց եկեղեցւոյ հնագոյն քան զնա իցէ, որպէս կարծեմ, հնագոյն եւս է գեղդ, զի յիչի ի ցանկի անդ, որպէս և այլ գեղ համանուն ի Գեղաբունի, և յորվագոյն եւս վասակակերտք յայլեւայլ գաւառս Սիւնեաց: Եկեղեցին հին քարաշէն՝ կիսով չափ քայքայեալ էր. արդի բնակչացն կրով և փայտի բարձրացուցեալ և յարկեալ ի պաշտօն վարեն<sup>3</sup>. և կոչի յանուն Ս. Աստուածածնի: Ի միջի նորա ի տեղով դասուն կան դամբարանք երկուց վարդապետաց, Սարգսի և Բովիաննու Ծարեցւոյ ժամանակազրի 1571 — 1583 ամաց, որոյ գրածն տպագրեալ է ի Պատմագիրս Առաքելի, որ և ստէ զամսմանէ. « Պատուական մարմինն եղեալ կայ ի յերկիրն » Գեղամայ ի գիւղն վասակաշէն, հուպ դամբարանի » վարդապետին Սարգսի »: Են և չուրջ գեկեղեցեանն տապանք և խաչվէմք, յորս արձանագիրք ԺԵ դարու.

† Մայր Փաշախանում. ԶԵ.  
† Այս է հանգիստ որդւոյ Աւագ խանին:

Ի վերնակողմանս ձորոյս Կալերու՝ նշանակի և ամայի գիւղ մի Քաֆի կամ Քեարի անուն: 34. Յարեւելից և ի հիւսիսոյ ձորահովտաց երից գետակացս՝ տարածանի լայն գետահովտ Մէգրէի, յերից գետակաց ձուլեալ և սա, որոց մեծագոյն կամ երկարագոյն արեւմտայինն է Քեքի կամ Քեքի, միջինն Երիշատ և ըստ յետնոց Արաշատ, արեւելեանն՝ բուն Սողից գետ, զի անցանէ առ նովին աւանաւ: Այժմեան գլխաւոր չէն և աւան վիճակիս է անուանատու գետոյն Մէգրէ կամ Մագրա, Մեծն 125 տամբ Թաթարաց, (զի կայ և Փոքր). և է ի ստորեւ խառնրոց երից գետոցն, ի հարթ դաշտավայրի, հաւասար հեռի (5 մղոնաւ) ի Ծովէն և ի Սողաւանէ: Ի սփիւռ աւերակաց բնակարանաց և մեծաշէն եկեղեցւոյն<sup>4</sup> յայտնի քաղաքաւան մեծ լինել ի հնումն, այլ և ի ԺՁ դարու՝ նորոց տանուտեարց Գեղամայ, առ որս իջեանեցաւ Շահաբաս ի դարձին ի Տփղեաց, որպէս յիշեցաք ի սկզբան (յէջ 34). գերեզմանք նոցին նըր բազանդակք կանգուն կան. որպէս Մէլիք Բէկի որդւոյ Արովայ, յամի 1578.

† Յովհաննէս Ազայ.  
† Քաջ Զոհրաբ, ի Թուին Հայոց ԶԷ.

1 Ըստ Զաւլուանի Իլիսիոս-Բեմի... Տար-բեր... Թանձայի:  
2 Շոբէն 31 տուն գրէր, Շախաթուն 63. աշխարհաւամարն 1873 ամի, 115 տուն և 1300 ուղիս:  
3 Զաւլուան, Բ, 119. գլխիւ կրամած որմնոց կոչէ Սեֆեօս քահանայ, այլ ոչ յիշէ զԹուականն:

4 Միայն զորմունս եկեղեցւոյն կրուէն լինել ստէ Զաւլուան (Բ, 111), և զլափն՝ 40 կանգուն ընդ երկայնութիւն և 24 ընդ լայնութիւն. այլ ոչ գիտեմ որպիսի փաստիւ կամարիցի զսա լինել նոյն և մի ընդ Մարայ եկեղեցւոյն յիշեցելոյ ի Գրեգորէ Մուգիսորոսէ:

**Ի ԹՎին Հայոց Ռիէ. Կամաւն Աստուծոյ, մեք հինգ եղբարքս, ես Պարոն Շահնազարս, Մայիլ բէգս, Տաթևու բէգս, Միրզա բէգս, Մեւքուն բէկըս, մայր մեր Խանում Աղէս կանգնեցաք զԽաչս բարեխաւս հաւրն մերոյ Մէլիք բէկին:**

Սորա որդոյն արձանագիր յիշատակարանի է այս, յամի 1606.

**Այս է հանգիստ Պարոն Մէլիք Շահնազարի, որ էր սա տէր եւ իշխան երկրիս Գեղամայ, մեծաշուք եւ աստուածասէր իշխան էր սա. բարւոք ծերութեամբ փոխեցաւ առ Քրիստոս, ի թագաւորութեան Շահ Աբասի. ԹՎին ՌԾԵ:**

Եւ սորա որդւոյն.

**Այս է հանգիստ պարոն Եւարի բէգին որդի Պարոն Մէլիք Շահնազարին. անողորմ մահուամբ փոխեցաւ:**

Առ երի եկեղեցւոյն է խաչարձանս այս.

**Կանգնեցաւ սուրբ Խաչս բարեխաւս հարազատ մեծ իշխանին Մէլիք բէկին՝ հանգուցեալ Հախնազարին, յամի նեղութեան ? Շահ Թահմազին սա փոխեցաւ առ Քրիստոս. Արհի եպիսկոպոս Տէր Մէլքիսէթին, ձեռամբ Յակոբին:**

Հնագոյն ևս խաչվէմ մի բարձր (8 կանգուն) կայ ի նի, որ Գրիգորի Սուփանայ ընծայէ զայն, թէպէտ և սազալէն մատրան, ՅԼ, ? 881 թուականաւ ըստ Զալալեա. զայլոյ Գրիգորի անուն ընթեռնու և գրէ.

**Ես Գրիգոր Ամիր Աղուանից իշխան կանգնեցի սուրբ Խաչս աւգնական հաւատացելոց. որք երկրպագէք սուրբ նշանիս յաղաւթս յիշեցէք:**

Փոքրն Մէգրե կայ ի Մ. Հս. Մեծին, մերձագոյն ի ծովին, 185 տամբք այլազգեաց: — Դարձ աստի առնելով ի հարաւակողմն, ի զլուխ ձորոյն Քէթեայ, առաջին գեօղ հանդիպի Շորձալի. բնակեալ ի 15 տանց Թաթարաց, ի ստորոտս Աղա-թեփե լերին, ի միջի ձորակաց գետոյն: Ի Հր. նորին փարսախաւ խոնարհագոյն՝ վերին կամ Նոր-Քէթի կամ Պաշ-Քէթի, 55 տամբք Թաթարաց, որոյ յարեւմտից հարաւոյ Ստորին Դաշ-Քէթի կամ Սիւղիմանքեան, և ըստ Տիւպուայ՝ Սինկուզագ ? կոչեցեալ, 70 տամբք. — մլւս եւս Գաշ-Քէթի՝ Սարի Եա. զոչայ մականուանեալ, 30 տամբք: Ի միջի սոցին յարեւմտակողմն և ընդ մէջ կարմիրաղբեր և Քէթի գետոց՝ կայ Դաշքեան գիւղ մեծ, 70 տամբք այլազգեաց, երբեմն քաղաքաւան, որպէս է գուշակել յաւերակացն և ի պարտապաց, առ որովք են և քարանձաք փորածոյք. յորոց սակս արդեօք կոչեցեալ ի հնունն Բրտի-այրք<sup>1</sup>, այլ ի Գեղաքունիս և ոչ ի Սողս դասի այս գիւղ ի հին ցուցակին: Երկու եկեղեցիք են ի նմին սազալէնք հասարակ կոփածոյ քարամբք. մին ունի և ժամատուն, յորոյ դրան վերայ արձանագրեալ է.

**Կամաւն Աստուծոյ. Յաշխարհակալութեան Աբաղայ խանին եւ յիշխանութեան մեծին Հասանայ, մեք որդիք Հայրանունայ ? անարժան քահանայ Ստեփանէս, երէք եղբարք մեր Զունաթ, Սասանայ եւ Վահրամ շինեցաք զե.**

<sup>1</sup> Զալալեան (Բ, 114) ասէ Բերդէ-յոբ<sup>1</sup> կոչել գեղն ի հնունն. ոչ գիտեմ յաւանդութենէ՞ եթէ գուշակելով ի քարանձաքս:

կեղեցիս Սուրբ Աստուածածնի եւ զԺամատունս ի հալալ արդեանց, ի փրկութիւն հոգւոց մերոց եւ ի վայելումն զաւակաց մերոց: Աղաչեմ, ժառանգաւորք եւ սպասաւորք եկեղեցւոյս յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր:

Յաջմէ գրանն արձանագրի բանս յիշատակի Մամբանայ կնոջ Հասանայ, ի զարմէ իշխանաց Խաչենոյ.

Յանուն Աստուծոյ եւ Մամբան (դուստր) Գրիգորոյ, զԶորի ջաղացն, զճալի հողն, Ստեփանոսի Զաւլացադրան խոտն, Սուրբ Աստուածածնիս տուարք. (Հայր) Ստեփաննոս սահմանեաց ճրագալուցի յայտնութեան Գ ժամ Պարոնին Հասանայ. որ խափանէ դատի ի Տեառնէ:

Առ սմին կայ խաչվեմ արձանագրեալ յամի 1046, եթէ ստոյգ իցէ թուականն ՆՂԵ.

**Ես Գրիգոր Իբրամէ ? որդի կանգնեցի զԽաչս :**

Ի ճակատ միւսոյ եկեղեցւոյն՝ գրեն վերոյիշեալքն և որդի նոցա Գրիգոր և կինն Ասփէ դուստր Տարսայիճի.

Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան Տէր Գրիգորոյ, յիշխանութեան Հասանայ ու Մամբանին, Գրիգորոյ, Ասփէին, մեք միաբան եղբարքս Ուհան եւ Սարգիս, Յովհաննէս եւ ամուսին իւր շինեցաք զկաթուղիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց:

Յորմն եկեղեցւոյն կայ խաչվեմ այսու գրութեամբ.

**Ես Յովհաննէս կանգնեցի զԽաչս .**

զորոյ թուական ասէ Զաւլեան

**Ի Թվին Հայոց ՆԿ .**

որ եթէ ստոյգ է՝ այլուստ բերեալ և ազուցեալ է յորմն. զի եկեղեցին ժամանակակից է վերոյգրելոցն, որք ցուցանեն զվերջ ԺԳ դարու և զսկիզբն ԺԴԻ:

Սակաւուք հեռի ի Հս. Սարի Եղուպ Գէլթեայ կայ փոքրիկ գիւղն Գայա-պաշի, (Քարաղուխ), 18 տամբք՝ և ի Մ. Հս. սորա Ղոջա պոռչագ, տունք 30: — Այս ամենայն գեօղք բնակեալք են յայլաղգեաց Թուրքաց կամ Թաթարաց Գեօշանի անուանելոց, ոմանք հաստատարընակք, այլք չուարնակք:

Հովիտ միին գետակցի Մէզրեայ է հին փոքր վիճակն Երիշատ. յիշեալն ի կոնդակին Սարգսի կաթողիկոսի.

զի և ցարդ առ մերայինս պահեալ էր անունն այն յԱյաւ շատ փոխեալ ի վերայ գետոյն. որ և փաստ մի ընծայէ ի մանր մանր վիճակս բաժանման երկրիս Գեղամայ ի Ժ և ի ԺԱ դարս, և մանաւանդ Սողից գաւառի, որոյ իշխանք նման էին մէլիքաց տանուտեարց յետին դարուց: — Ի փոքու հովտիս յայսմիկ (Երիշատայ) նշանակին գեօղք Գարազօյունչոս (Սեւախոյ) ի բարձրագոյն և ի լեռնոտ մասին. մերձ նմին Էյլիճէ գեօղ բազմաբնակ, զի 71 տունք էին ի նմա, ըստ Երթնի: Սա Թուի Զերիշատ ըստ հին ցուցակին, և Երիշատ ըստ Սարգսի կաթողիկոսի: Ընդ մէջ երկոցուն սոցա չէն մի՝ Թերեւս նոյն ինքըն Գարազօյունչու՝ նշանակի (ի Տիւպուայ) Ս. Խաչ անուամբ, զոր արժան է հետաքննել: — Երկու մղոնա կամ անելի ի Հր. սոցին՝ ի միջագետս Երիշատայ և Սողից՝ կայ սակաւաբնակ և բազմաւեր գիւղ Ագ-գիլիսէ կոչեցեալ (Սպիտակ եկեղեցի), զոր ընդ հակառակն Զաւլեանն Գարա-գիլիսէ գրէ. անշուշտ մի ի գլխաւոր գիւղից Սող գաւառի, թէպէտ մնացեալ եկեղեցին սագաչէն ոչ է հին՝ ըստ արձանագրութեանն որ ի ճակատուն.

Ի Թագաւորութեան Աբաս Շահին, ի պարոնութեան Խան Սուլթանին, ի կաթողիկոսութեան Ազուանից Տէր Յովհաննիսի, կամաւն Աստուծոյ եւ Յովհաննէս վարդապետ շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն հոգւոյ իմոյ եւ կրկնակի ծնողաց իմոց. Ուք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս:

Գարձեալ, ի հարաւակողմն եկեղեցւոյն գրեալ է կարեւոր արձանս, որոյ փափագելի էր գիւտ թուականին.

Կամաւք եւ ողորմութեամբ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Աբղ եւ Յովհաննէս վարդապետս որդի Մելքոնին որդւոյ Միրզաջանին որդւոյ մեծին Շահնշահի որդւոյ Պռօշայ որդւոյ Հասանայ որդւոյ Շահնշահի որդւոյ Սարգսի, թուոնեայն Դոտիայ քոյր մեծին Իւանէի եւ սպասաւար Զաքարէի<sup>1</sup>, հանդերձ հարազատ եղբաւորորդւովք իմովք Աթանաս եպիսկոպոսիւ եւ Գրիգոր եպիսկոպոսիւ, յոյժ ջանիւ եւ մեծ յուսով եւ բազում փափաւաւնաւք շինեցաք զՍուրբ Աստուածածինս բարեխաւս եւ փրկութիւն հոգւոց մերոց եւ ծնողաց իմոց Մելքոնին եւ Փիանդին, եւ բազմերախտ ուսուցանողին իմոյ Յովհաննէս բարունապետին Տերանց? Ողորմի ասացէք որք հանդիպիք աղաչեմ. Աստուած ողորմի մեզ եւ ծնողաց մերոց. ամէն:

Ունի եկեղեցին և ժամատուն, յորոյ վերայ քանդակեալ են բնական մեծութեամբ պատկերք և անուանք վերոյիշեալ հարազատ եպիսկոպոսացն, որպէս յայտ առնէ ներքոյ գրեալ տողս.

**Աթանաս եւ Գրիգոր եպիսկոպոսուներ:**

38. Բնիկ գեղեցիկ գետահովիտն Սողեց՝ յարեւելից յարեւմուտս ձգի, ուր ի բարձանց լեռանց փիշիւնք, Գրգգալի, ինակ տաղ և Ռըմբխար՝ իջեալ վտակաց, առ քաղաքաւանան յիրար խառնեալ միաձոյլ ընթանան ի Մէզրէ, ի Թիլլի լիճ և ի ծովն. և են երեք գլխաւոր գետակք և ձորակք. յորոց հարաւագոյնն ունի ի լեռնոտին զառաջին գեօղն Պաշ-քենտ (Գլուխ գեօղից), այլ ամալի և աւերակ. յորոյ Հս. Մ. կիսով փարսախաւ հեռի կայ Զար-գիպիլ գիւղ այլազգեաց իբր 45 տամբք: Առ միջնովն կամ արեւելայնով որ ի Ռըմբխար լեռնէ իջանէ՝ (Ռաւնպասար ըստ այժմեայց), ոչ նշանակի շինաբնակ տեղի, այլ ի ստորոտ լեռինն հին կարաւանատուն մի՞. ի կոնդակի Սարգսի կաթողիկոսի գրի Ռըմբիխոռ, իբրու վիճակ միջասահման Աղուանից (Արցախոյ) և Սիւնեաց, խոս կոչեցեալ ըստ դրիցն յանձուկ խոռոչս լեռանց գոլով: — Հիւսիսային գետակն իջանէ յինակ

(Կով) լեռնէ, որ ի դաշտագետնոյ վերամբառնայ՝ ոչ շատ, ունելով յարեւմտեան ստորոտին զշինատեղիս Ինակ անուն, նոր առ հնով: — Ի սպառուած հարաւային արեւելեան ստոյ լեռինն առ գետեզերքն կայ աւերակ Զաման գեղ, թերեւս հինն Ոգմուկը: Ի կիցս գետակացն, հինգ միոնաւ յել. Մէզրէի, շինեալ է հին գլխաւոր շէն իշխանանիտս և անուանատու բոլոր վիճակիս և միոյ յերկոտասան զաւառաց Սիւնեաց և հին տոհմի, Սողք կամ Սոթից աւան, որ և ի յետին դարս (յամի 1878) մայրաքաղաք կոչի ի յիշատակազրէ. այժմ բնակեալ ըստ մասին յայլազգեաց 120 տանց, և Զօր կամ Զօտ կոչեցեալ ի նոցանէ, զորով շուրջ ընդարձակ աւերակք են. յորոց միջի ամբառնայ վայելչակերտ որոցաձեւ եկեղեցի մեծ ի վերայ չորից սեանց (44 կանգուն յերկայնն, 24 ի լայն), շինեալ յամի 1276 ըստ արձանագրութեանն՝ ի զարմից Պռօշայ և Խաչենեցեաց.

Ի թագաւորութեան Աբաղայ խանին, ի կաթողիկոսութեան (Աղուանից) Տեառն Ստեփաննոսի, եւ ի պարոնութեան Հասանայ, աւզնութեամբ ամուսնոյն Մամբանայ եւ անարժան Աւաքելս շինեցի զեկեղեցիս (յիշատակ կամ ի փրկութիւն հոգւոյ) ամուսնոյն իմոյ եւ զաւակաց մերոց եւ ծնողաց մերոց:

Երկուստեք սեղանոյն են աւանդատուներ. թէպէտ և խախտեալ են քարինքն, այլ տակաւին կանգուն կայ եկեղեցին, զոր պահէ այլազգի ոմն պարսիկ, ընդունելով

նուէրս ի Հայոց. և յարեւմտից կողմանէ ընդարձակ գերեզմանոց, ոչ սակաւ գեղաբանդակ շիրմաք և խաչվիմաք, յորոց երկուք ի վերայ քառակուսի պատուանդանաց

<sup>1</sup> Առ ի վերանալ մինչեւ ի Զաքարէ և յիւանէ հարկ էր բազում և այլոց ազգաց կամ սերբնդոց լինել ի միջի արձանագրելոց:

<sup>2</sup> Զայս գուշակելով առեմ ըստ նշանակաց տեղացոց առիտակին Տեւալույ:

կանգնեալք՝ կաթողիկէս ունելով ի գագաթան. և այլ չորք գրուագեալ սինաձեւ մահարձանօք և գրութեամբս.

## Յակոբ, Բարսաւան (որդի) Դօլփաթ քեկիև, Սոչիսան եւ Մելքուն, եւ Գրիգոր Եպիսկոպոս :

Ի վերայ այլոյ մեծի միոյ պատուանդանի հինգ խաչվէմք են գեղեցիկք, նոյնպէս և ի վերայ տապանի

### Ստեփանոս եպիսկոպոսի,

որդոյ Մէլիք Բէկի, Թոռին Մէլիք Բալասանի: Կայ ի միջի գերեզմանացն և մատուռն մի կիսաւեր ի մանր քարանց հիւսեալ:

Բացազոյն յաւանէս ի ստորոտս լերանցն որ ի հարաւոյ և յարեւելից՝ երեւին գմբեթաւոր եկեղեցիք, այլ ոչ է քննեալ ուրուք և ստորագրեալ, որպէս կարծեմ:

Ի հիւսիսակողմն Սոչից և Մէզրէի են գետակք մանուկք, աշակողման սժանդակք միաձոյլ գետոյն, յոր երբեմն ոչ ժամանէն ոմանք յայնցանէ, սպառեալք ի դաշտամիջին, նուազաժուրք գոլով. են ի խաղս նոցին և ի ստորոտս լերանց անջրպետաց Միափոր գաւառի՝ գեօղք, Սոչիսան-Ալի-ղըշարդ, 40 տամբք. — (Ողորձա, իրբու փարսխաւ յԵՂ. Հս. Փղբը Մէզրէի, (30 տամբք). — Քեաւաման ի հիւսիսոյ բնակից և մերձագոյն ի պար լերանցն, (40 տամբք կամ աւելի): Նշանակի և աւերակ գեօղ Աջաւ-գոռչ (Սպիտակ հաւ) ի հիւսիսային արևելեան անկեան վիճակին Սոչից, ի ստորոտս համանուն լերին՝ որ կայ ի Հս. բարձու Գունկուր լերին, և յերկուցն միջի անցք ճանապարհի որ տանի ի Գանձակ:

Ի հիւսիսոյ արեւմտից փղբունց գետակացս՝ են երկու եւս գետակք զուգընթացք որք անկանին ի հիւսիսային ափունս Թիլի լճի, յոր և այլք ի գետոց Սոչից. հարաւայինն Նշխարոց գետ կոչի, հիւսիսայինն հազիւ մղոնաչափ մի տարանջատ ի միւսոյն՝ Զարացաձոր, որ և կէօքչայ. վասն որոյ և չիք շինանիստ յանձուկ միջոցի անդ, բայց յամէ երկրորդիս և միւսոյ եւս գետակի՝ որ աւանձնակի մտանէ ի ծովն, կայ Շիշգայա կամ Շիշթեփե գիւղ մեծ, 75 և աւելի տամբք սյլազգեաց: Ի հնումն հանգոյն Երիշատայ կամ զոյգ նմին իրբու վիճակ կամ թեմ առանձնակ յիշի և Զաղացափոր ի բազում անգամ յիշեալ կոնդակի կաթողիկոսին Սարգսի: — Ի ծովեզրն առ բերանով Շիշգայայ՝ նշանակի յաշխարհացուցի Ագ-գիլիսե եկեղեցի հին, թերեւս և վանք, այլ որպէսն անծանօթ ինձ:

Յայտ վայր համարիմ զսահմանս վիճակին Սոչից, և այսչափ ինչ տեղիք ծանուցեալք մեզ զարդիս, մանաւանդ թէ մնացորդք և նշխարք տեղեաց գաւառին այնորիկ, որ և յանձուկ տարածութեան ձորոց իւրոց՝ ունէր աւելի քան 120 գեօղս, որոց անուանք հայկականք հըն-

չեն պայծառ ի լսելիս, այլ տխուր առ միտս, վասն բազմաց ի սպառ ամայութեան, և այլոց բնակութեան յանազալնոց և յանբրիստոնէից, տաւաղելոց՝ ոչ միայն յարձակ շէնսն՝ այլ և յաղօթատեղիս և ի կրօնաւորանոցս, յորոց զսակաւս ի բազմաց յիշեցաք:

Յիշէ կաղանկատուացի պատմիչն կամ շարայարող նորին պատմութեան՝ և մենաստան մի Նորավանք աւնուամբ, որիչ ի համանուանցն որ ի Մեծ Սիւնիս, շինեալ ի գաւառիս Սոչից յԱպրսամիկ տիկնոջէ՝ դատերէ Վարազտրդատայ մեծի իշխանի Աղուանից Հայոց, մինչ երկիրս այս անկեալ էր ընդ իշխանութեամբ Սահլի՝ ի նոյն զարմէ իշխանաց, և ամուսին նորա Փիլիպպե որդին Սահլայ՝ կայր յօտարութեան ի դրան Ամիրապետին, յառաջին կէս Թ դարու. այլ ոչ է յայտ տեղի վանացս, որպէս և ոչ Սալկուտ Անապատի՝ զոր Սիմէոն կաթողիկոս յիշէ, և այլոց գիւղից՝ զորոց անուանս ցանկեցաք. և որոց յուսայի է գէթ կիսամասնեայ ծանօթութիւն՝ ի փութոյ հայրենասէր հետամտից, և յայտնութիւն շինանիստ տեղեաց՝ ի լճաշտ լեռնափակ սահմանի անդ, ի հարաւոյ Սոչից վիճակիս և յարեւմտից Մարայ, զոր համարեցաք կոչեցեալն Փորակ ի Սարգսէ կաթողիկոսէ՝ յամի 1006, և ի Վասակայ Թագաւորէ ի վճուագրին յամի 1019, որ նոյնպէս մերձակից Գեղաքունեաց ցուցանէ զնոյն, յորում՝ յընդարձակ տեղացոյց տախտակս իսկ բնաւ և ոչ մի գիւղ կամ հանգրուան ոչ նշանակի. Գարձուցաք ասէ յաթոռն եպիսկոպոսին Սիւնեաց գրոլոր վիճակս երկոտասան գաւառացն, « զՎա » յոց — ձոր, զԳեղաքունի, զՓորակ, զՀամբուդ, զԶու » ղայ, զԵրնջակ » . որոց երեւի ի բանէդ՝ առանձինն եպիսկոպոսունս կարգեալ ինքեանց, և ըստ այսմ ի դէպ է ընդարձակագոյն լինել վիճակի Փորակին քան զնշանակեալն առ ի մէնջ լեռնափակ սահման ճախնային:

Յայսմ վիճակի կամ մերձ ի Մաքենոց՝ անկ է որոնել զԲարկոյք գիւղ հին ցուցակին, նոյն ընդ Պարկիս՝ Սիմէոնի կաթողիկոսի, որպէս կոչէ և յիշատակարան աւետարանի գրելոյ յամի 1687, այսպէս ասելով գրչին. « Գրեցաւ սուրբ աւետարանս յերկիրս Գեղամայ, ի գեղս » որ կոչի Բարկիս. և ես Սարգիս գրիչս եմ ի յերկրէն » Ղափանայ, ի գեղջէն Գորիսայ. որ յազգմանէ չարին » փախեալ եկաք բնակեցաք ի գեօղս Բարկիս... ի դա » նութեան Երեւանայ Ղազախ խանի որդի Նալափ » ղուլուն, և ի մէլիքութեան երկրիս Գեղամայ՝ Մէլիք » Բէկին » : Գրել տուողքն են Միսիքար որդի Խեչու մի և Խաթունճանի և կին իւր Մահրիթ. զատ ի սոցանէ յիշէ գրիչն մի առ մի զեղբարս և զորդիս և զթոռունս Միսիթարայ, այլ և զհաւ նորին Աղբերդան և զհանր՝ Երեւիսի:

## Գ. ԱՐԵՓՈՒՆԻ

36. Յայտանուն իմանալը զարեւելեան անձուկ ափն ծովուն Գեղամայ, որ ի հնումն՝ հաւանութեան է Սողոմոն գաւառի լինել մասն, և ըստ արեւելեայ դրիցն՝ այսպէս յորջորջի ի յետնոց, որպէս և յայլազգեաց՝ Կիսկիք. են և ի սմին գետակը և ձորակը այլ մանուկը՝ ըստ անձկութեան երկրին մտազոյնս պարսպելոյ ի լեռանց, յորոց իջեալ ուղղակի թափին ի ծովն: Սոցա առաջինն, ի հարաւոյ ի հիւսիս գնալով, ի Հս. Շիղգայայ իջանէ ի Սարանար լեռնէ, յոր անուն և գետը մի փոքր առ եզերքն: Դման նըմին և երկրորդն ի Ստանախաս կամ Ստանաղաձ լեռնէ, նոյնանուն հանգրուանաւ 15 տանց. երրորդն ի Գառաարխայ լեռնէ, առ որով առ ծովեզերքն կայ կարաւանատուն մի լքեալ և աւերակ, և փոքր հանգրուան մի մերձազոյն եւս ի ծովն: Չորրորդն կոչի յանուն գեղին Գոռչի-տերեւի (Հաւուց կամ Հաւորսի ձոր) 20 տամբ. արդեօք Հաւսաթաղը գետը Սողոմոն, ըստ ցուցակին? — Հինգերորդ ձորագետակն ունի մերձ ի բերանն զամայի հանգրուանն Շամիռոտը կամ Շիմիթը, ազաւաղեալ աւուն հայեցի, այլ օտար յեղելոցն ի ցուցակին: — Վեցերորդն իջեալ յինչեկ-տաղ լեռնէ, առ ծովեզերքն ունի հանգրուան Քասպաձան-տերեւի անուն, 15 տամբ. որոյ անուն պատշաճի և գետակին. առ որով ի բարձրաւանդակս կան հանգրուանք կամ արօտավայրք բնակչաց Շամիռոտի և Ճիլայ: — Յանուն յետնոյս կոչի եօթներորդ ձորագետակն ի պարուէ Շահ-տաղ լեռանց իջեալ, ունելով զՃիլ կամ Չիլ գետը համանուն 15 տամբ, ըստ Շորենայ, մինչ Շահխաթուն 18 գրէր: Դանակի առ նուաւ և աւեր մեծի եկեղեցւոյ, զորմէ շունիմք ծանօթս: Թշկարան մի միւս եւս անուն ընծայէ գեղջս և սակաւագիւտ րոյս մի, « Այս է Ոսկիխտուն (Sanguinaria Can-» densis), և բուսանի յերկիրն Գեղամայ, որ է Գիւղ-» արքունի, ի գիւղն որ կոչի Ջիլ և Կարմունջ. Սեւա-» նու. ծովի անտիի կողմն է. այսպէս իմա: — Ութերորդ գետակ է Արտանիձ կամ Արտառոձ համանունն գիւղիւ, զոր Շահխաթ. Օրթանիլ գրէ (30 տամբ). հայտանուն և սա՛ այլ ոչ գտանի ի ցուցակին հնում, բայց մերձաձայն նմին Արփունջ: Է արդարեւ գետն յունջ մի ցամաքի առ մէջերկրեայ գոգով ծովուն յայսմ կուսէ, և ընդ լայն գոգոյն Շորենայ յայնմ կողմանէ (յարեւ-

մտից) գործէ զմեծ ցամաքակղզի ծովուն Գեղամայ, հանդէպ Կորատուաց. իբրեւ չորք մղոնք են երկայնութեան ցամաքակղզոյն ի Հս. ընդ Հր. և երեք լայնութեան յՅլ. ի Մ. ի միջակին ամբարձեալ ձգի քորաբլուր Առա-բեփե կոչեցեալ, յորմէ և ողջոյն իսկ ցամաքն այն, որ թուի Աղա կոչեցեալ ի Հայոց. զի յայտանուն ստէ Սիմէոն կաթողիկոս, « Անապատ մի եւս ի մէջ ծովուն որ Աղա կոչի ». և կայ յարեւմտեան սպառուածի կամ ի հրուանդանի. իսկ մերձ հարաւայնումն՝ աւերակ բերդի. որոյ հանդէպ յարեւելեան հարաւային եզերն աւերակ Այրան-սէրայ կոչեցեալ: Այս ամենայն ցուցանէ ի հնումն՝ ըստ պատշաճի անզուգական գրից տեղւոյն՝ բարեչէն և վայելուչ գոլ, և արժանի հետազօտութեան. զի ցարդ կարծեմ չէ ուրուք ի մերայոց տուեալ ծանօթս ինչ ղտեղւոյս, ոչ զչինութեանց և ոչ զբնական հանգամանաց. քանզի և ըստ այսմ մասին նշանաւոր երեւի բարգաւաճ բուսաբերութեամբ, թերեւս և պուրակօք վայրենի թփոց. են և երկու լճակք ի նմին, մի առ արեւմտեան լեզուան, միւս մեծագոյն ի հիւսիսային արեւմտեան անկեան: — Բերի այսր լճի արտաքոյ ցամաքակղզոյն կայ Շորժա կամ Շորձա գետը Ռուսաց, ուր գան նաւք ի Կորատուաց: — Ի հիւսիսոյ սորին ի վերայ լեռին՝ Ագպոչրագ, 25 կամ 30 տամբ: — Ի Հս. սոցին է լեռանցամէջ ձորակն Գետիկ, որ յայլազգեաց Արտա-ւայ կոչի, յամէն ունելով զՏարնա լեռն: — Եւ ի սորա Հս. արեւմտից տասներորդ ձորագետակ Դրախտիկ, յայլազգեաց Թօխրոնա կոչեցեալ, համանուն գիւղիւ, 65 տամբ, ի միջի Գարա-իկեկ և Օձագ-տաղ լեռանց: Բիշատակագիր ոմն ծանուցանէ զի յամի 1500 «Յովհաննէս» արեղէն մարտիրոսացաւ ի գետոս (յայս) որ կոչի Դրախտիկ, ի ղանութեան Աւվանդ Փաթչահին. Թվ. « 2100 »: Փափագելի է գիտել զօրինակ նահատակութեանն: Աստի մինչեւ ի հիւսիսային արեւելեան ծայր ծովուն՝ իբրեւ մղոնաչափ մի միայն է լայնութեան ցամաքին ընդ երկայնութիւն տասն մղոնից, երկիր անլրդի և անչէն, մանաւանդ թէ փափայ անգնալի, զի ուր լեռանց իջանն մինչեւ ի ծովեզրն:

Ի հիւսիսային ծայր ծովուն կիսով մղոնաւ հեռի ի վերայ արքունի պողոտային որ տանի ի Գաւառ, ի Տըփ-

1 Այլ Թշկարան ստէ «Գտանի ի Մասխու ստեղ», և մեք ի տեղագրութեան լեռին Մասխոց՝ նշանակեցաք անդ, հանդերձ


բացատրութեամբ ձեւոյ բուսոյն՝ ըստ Կեղեանի բաժնին: (Տե՛ս յԱրարատ, 463):

դիտեալն և յԵրեւան, կայ նշանաւոր՝ մեծ և բարգաւաճ գետը Հայոց 120 կամ աւելի տանց, զարդիս Զուպոշյուռ կոչեցեալ, ի դիտակ վայրի լանջակողման Մարաշիւքայ լեռին, ի միջի աղբերաց և հուպ ի բերան Պալըզ-չայ գետոյ (Չինագետ)։ բնակիչքն գաղթեալ են յԱրծափայ կսգովտի։ ունին եկեղեցի յանուն Ս. Աստուածածնի, և վիճակս բարգաւաճս մշակութեամբ<sup>1</sup>։ Ճապոտիկ կոչի ըստ մեր լեզուիս գետոյս այս։ զոր յիշէ Կիրակոս պատմիչ յառանձին վարս Մխիթարայ Գոչի, յասելն զնմանէ տեսեալ ի տեսլեան « յերեսս դաշտին մերձ ի գետոյն Ճա » պոտիկ, զոր աշխարհական բառիւ Չիքուկոչու ասեն, ի » ներքոյ գիւղին մերձ ի ծովն կոչս, վրանս բազումս իր » բեւ զաստեղս երկնից, և զօրս անթիւս որպէս զաւազ » առ ափն ծովուն։ և հիացեալ զարմանայր ընդ միտս » իւր և ասէր... Ահա երևի տեսիլդ որպէս երկնային և » ոչ երկրաւոր », եւայլն։ և էր այնպէս ըստ պատմողին։

Սակաւուք հեռի ի հարաւոյ գեղջն է պահակատուն և սուրհանդականոց պետութեան ի վերայ արքունի պողոտային։

Յաւարտ տեղագրութեան երկրիս Գեղամայ նշանակեցուք և զնոր անուանս ինչ ամայի գիւղից՝ որոց գիրք անժանօթ են։

- Թարոսչի ղշարդ
- Ագ եօգոչ
- Հաճի Մոսի խան
- Պեօշիւկ աղա
- Տեմիրձի Պօղոս
- Ախսախ Թառոզ
- Պաշ կիւզէլ տէրէ (Ազնուաճոր)
- Տէլի Յարոսքիւն։



21. Գեղամայ ծով եւ Սեւան կղզի։

<sup>1</sup> Տեւոտա որ ի շրջորդում ամի գաղթելոյ սոցա յայց եւ գեղ-լըս (1834), վկայէ այսմ։ Ils cultivent d'excellent froment,

possèdent de fort beaux pâturages et jouissent déjà d'une assez grande aisance.— DUBOIS, III, 314.



## Ե. Ս Ե Ի Ա Ն Կ Ղ Զ Ի

37. Զետեղեալ ի միջի կանաչազարդ կատարաց՝ իբրև ակն շափիրդայ ի լայնալիճ կապիճս՝ ծիծաղախիտ ծովն Գեղամայ, ունի յանկեան միում գոհար ակնախտիդ զկղզին ՍԵԻԱՆ, միակ մենարան մարդկան ի կենսունակ ամայութեան լայնասփիւռ տատանական դաշտին. զի թէպէտ և իցեն երկու եւս այլ կղզիաձեւ փոքրիկ ժայռք ցցուեալք ընդ երես ջուրցն՝ ի հարաւակողմանն, այլ անընակք են և անկենդանք<sup>1</sup>. Սեւան միայն եղեալ է կենդրոն կենդանութեան ծովուս յանյիշատակ ժամանակաց. քան զոր անծանօթ եւս է սկիզբն կառուցման կղզւոյն ի բնութենէ, այսինքն արտակիտուձն ի հրամուղ զօրութենէ, յետ ընդերկար դողեալ կայոյ յընդերս ջրոց, որպէս յայտ առնեն քարինքն. զի թէպէտ և ի հասարակի նման իմն են վիմաց լեռանցն յընկայից, որձաքար չիկազոյն յատակաւ, և ի վերայն պասալտեան հրաբղխեայ որակաւ, և ցուցանեն շեշաքարս, այլ փայլուն հրաքարք և հետք զուղակի չերեւին ի նմա, և հաւաստի բազում դարուք յառաջ քան զԱրարատեան լեռինս ներգործեալ և դադարեալ. բազում ուրեք յայտնին և կոչկոռք տօփի (Tuf) ջրային ներգործութեամբ այլայլեալք: Գուն ուրեք երեւին արդ մասունք վիմաց ի սպառ լեռիք և ապալեք, որպէս ի հարաւային և յարեւելեան կողմանն, ուր գրեալթէ և առլեփ զառ ի վայր ի ջաննն ի հաւասարութիւն մկանանց ջուրցն. այլ ի հասարակի երեք կղզւոյն մաշեալք և հերձեալք յօղային և ի ջրային ազգմանց՝ վերարկեալ են բուսարեւ տարեթաք. և չէնք և տունկք ծածկեն զառհասարակ մակերեւոյթն. քարեղէն կողքն եւս զաղտնասերմն բուսովք կամ մամուռք վերարկուեալք են: Այսպունակ կերպարանի Սեւան աչաց գիտողացն ի մօտակայ ծովափանց, և ի մտազոյնս մատուցելոց լաստիւ կամ նաւակաւ գոյնագոյն իմն կուտակ հաճոյակերպ կառուցեալ ի վերոյ կապուտակային ալեացն, սրահաւաք կատարաւ գմբեթարդ եկեղեցեաց. մանաւանդ յորժամ յետ ոչ կարճատեւ և ոչ թեթեւ ձմերայնոյ, ի լուծանել ծովուն և սառամանեաց, վաղ վաղ սկսանի բուսարձակութիւն,

և մրցելով իմն ընդ ձեռատընկոց՝ քան զպարտէզս և պահէզս մենաստանին՝ կանխեն բնամատոյց մարգք և գոյն ի գոյն ծաղկունք հոտաւէտք, պճնազարդելով զպառաժն այն ծովապարփակ:

Յազգէ լուսոց յիշեն մերայինք զՄեխակ և զՎարդն վայրի, զատ ի բանջարեղինաց և յուռենեաց և ի վայրենի մրգաբերաց, որպէս Աշուի և Մամխի. ոմն յօտարաց որ ի սկզբան գարնան յայց ել՝ ետես հոյս դեղնորակ խառածաղկաց և Թարդինչակս (Primula veris), նախընթացս այլոց տեսակաց, զորս ոչ գիտեմ եթէ քննեաց ոք մանր և նշանակեաց: Ի հիւսիսակողման կղզւոյն շարք Ոռննեաց և Բարտնաց յարդարեն ճեմելիս հեշտաքայս:

Ըստ տարածութեան երեսացն չէ ինչ ընդարձակ կղզին<sup>2</sup>, սուղ ինչ պակաս մղոնաչափ մի համարի յընկաւտըն. և ձեւովն նման իմն ծովուն՝ երկայնեալ տարածեալ, միայն լայնագոյն ունելով զհիւսիսակողմն. կիսով մղոնաւ կամ սակաւուք աւելի հեռի է ի ցամաքէն յարեւմտից հիւսիսոյ, հանդէպ հայելով Վարաժնունեաց գաւառի, և նաւամատոյց ունելով անդ զՅամաքաբերդն: Չայնահաս մերձաւորութիւն ցամաքին և կղզւոյն՝ գուշակէ զվաշտամանակեայ հաղորդութիւն նոցին, որգունակ և միջնորդութիւն լաստափայտից. և ըստ այսմ մտին՝ մարթէ առել ոչ շատ աւելի քան զերեսս բնութեան վայրացն՝ կերպարանափոխ լեալ արուեստին, զի տակաւին վարկպարագի լաստիւք կամ անհարթ նաւակաք լինի ծովազնացութիւն յայնմ կարեւոր միջոցի:

Հարկ է թէ ի սկզբանց պատմական ժամանակի՝ եթէ ոչ մշտակայ բնակութիւն՝ այլ դաստակերտ իմն հաստատեալ էր մարդկան ի կղզւոյս, և նախ աստուածեղէն զօրութեան նուիրեալ՝ պատկերաւ կամ բազնաւ, կամ զնոյն ինքն զծովարոյս կարկառն սրբագործեալ և դիւցական իմն համարեալ. և այսպէս իսկ աւանգեն եղեալ և բաւեալ մինչեւ ցաւուրս լուսաւորութեան ազգիս ի Ս. Գրիգորէ. որ փոխանակ հեթանոսական պաշտմանց՝ չինէ, ասեն, տաճար փոքրիկ ի գաղաթան քարակղզւոյն յանուն Ս. Յարութեան. որոյ ցարդ եւս կարծի

1 Ոչ նշանակին յընդարձակ տեղացոյցս ժայռք. միայն Վակնէր գերմանացի յիշէ... Erheben sich noch zwei kleine unbewohnte Felseilande in Süden, über die blaue Wasser-

flache.— WAGNER, 40:

2 Հասկաթունեան ասէ երկու վերստ, այլք 800 սաժէն, որ է 1730 Չ. քառակուսի:

Մնալ հիմանցն և որմոց ինչ, և խաչվիմի յարեւմտից կու-  
 տէ՝ օձեւոյ ի նմին Նուսաւորչէ՝. որոյ, աւանդեն պարզ-  
 մըտութեամբ, հաճեցեալ յոյժ ընդ անզրազ միայնու-  
 թիւն տեղւոյն և ասացեալ, արդարեւ Այս է փան, այսին-  
 քըն վանատեղի, և թողեալ անդ զոմանս ի միանձանց  
 ընդ իւր եղելոց՝ հաստատել վանս, և անտի կոչումն  
 Սեւան՝ ընդունելի իցէ այս յաղուական գրոյցս. ոչ հա-  
 կառակելի և հաստատութիւն միանձանց յառաջին դա-  
 րուց անտի քրիստոնէութեան ազգիս. այլ անուան Սե-  
 ւանայ հարկ է հնագոյն յոյժ լինել, ի Հայկազանց ան-  
 տի, և թերեւս պատճառ ողջոյն աշխարհին Սիւնեաց  
 այսպէս կոչելոյ: Բայց զարմանալի իմն շնորհ է նորա  
 նաւիրականութեան. զի ցարդ ոչ միայն ազգայինք մեր,  
 այլ և Պարսք և Թաթարք յայց ելանեն և կան անդ յա-  
 ղօթս իրրեւ ի տեղւոյ սրբազանի. մերազգի ուխտաւորք  
 յաճախեն յաւէտ ի տօնական աւուրս Վարդավառի և  
 Վերափոխման:

Ի պատմական դարս մեր յառաջ քան զվանսն յիշի  
 Անթոց կամ Բէքր Սեւանայ, և այն նախ յաւուրս տիրա-  
 պետութեան Արարացոցո. յորոց՝ ի սկիզբն Ը դարու  
 (յամի իրր 703) եկեալ, ասէ Յովհաննէս կաթողիկոս,  
 ոստիկանն Մահմէտ (որ Բ կոչի), «մարտ ընդ բոլորից  
 » իսկ ամրոցաց Հայոց դնէր, և զորս միանգամ յինքն  
 » զրաւէր՝ տա հասարակ քանդեալ աւերեալ կործանէր.  
 » իսկ Սեւան կղզի որ ի ծովակին Գեղամայ, թէպէտ և  
 » յի սկզբան նուագի անդ ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա,  
 » սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ի ձեռս  
 » նորա. և որ միանգամ բնակեալ կային յամրոցի անդ՝  
 » գերի առեալ տանէր, եւ զկապուտ կողոպուտն յաւարի  
 » առեալ՝ սպառսպուռ քանդէր աւերէր զամրոցն»:  
 Իսկ այլ պատմիչ հին ասէ. «Դարձաւ Մահմէտն ի Չո-  
 » բայ, զայ պաշարէ զՍեւան ծովապատն բերդ ամս երեք,  
 » և ապա առնու, և ի սուր սուսերի արկ զորս ի նմայն  
 » եգիտ»:  
 Յայսմ դիպուածի ոչ կարելով այլազգ յաջո-  
 ղել յառումն ծովապատ ցամաքին, զՄովն արձակեաց  
 ասեն այլ պատմիչք համառօտիչք, և նուաճեաց զկրղ-  
 զին. — Գրեցէ, զհարդ. — ցանկալի էր մանրագոյնս պատ-  
 մել նոցա կամ անկորուստ մնալ ժամանակակից պատ-  
 մրչի, ի ծանօթութիւն պատերազմական և արուեստա-  
 կան հնարողութեանն, զոր կարեւորագոյն է մեզ արդ  
 գիտել՝ քան զաղէտս ամրականացն և զաւերս ամրոցին,  
 որոյ դերբուկք, ասեն, երեւին տակաւին ի ստորոտս  
 կղզւոյն ի չուրս ծովուն. և զի հնարիւք իմն ցածոյց զծո-  
 վըն, զայս տայ կարծել արձակումն չուրցն, զոր այլով

բանիւ՝ փոքրացանկ ցուցանէ վիպասանն Սիմէոն Ապա-  
 րանեցի.

«Յետ երեսուն և ութ ամին՝ դիմեալ ի Հայս Մահ-  
 մէտ վերջին,

Այն՝ որ փրոյց զԳեղամայ ծոցն, առեալ յաւար  
 զՍեւան կղզին»:

Այլ ջրեղէն պարիսպքն մշտակայունք առձեռնպատ-  
 րաստամրութիւն էին տեղւոյն, որպէս զի և առանց ձեռա-  
 գործ աշխատութեան պատուարաց, բազում անգամ և ի  
 զկնիսն ապաւէն եղեւ կղզին մերայոցս՝ յերեսաց Հա-  
 գարացոց, անհմտից ի ծովամարտ. եթէ վտանգ եւս  
 սպառնայր ի հինէ յարեւմտից կուսէ, ամրականքն ա-  
 ճապարեալ նաւեալ անցանէին յարեւելակողմն ծովուն,  
 յ'ամրագոյն և յանմատոյց լերինս Արցախոյ և Գարդմա-  
 նայ: Աւանդի և յայլում նուագի բազում փորձս փոր-  
 ձեալ դաւաճանից ասպատակաց, և ոչ կարելով այլազգ  
 ի բուռն արկանել և յաւարի առնուլ զտեղին, մուծա-  
 նել արս մարտիկս յարկեղս ոմանս, և իբրեւ բնոյնս  
 վաճառուց հանել ի կղզին, Թախանձելով զմիանձունն  
 պահել առ սակաւ մի ժամանակ մինչեւ անցցէ վտանգ յա-  
 փշտակողաց, որպէս ասէին. այլ միանձանցն ըստ գիպաց  
 լուեալ ձայն մարդոյ յարկեղացն, խորհուրդ արարեալ  
 մի ըստ միովէ ընկենուն զայնոսիկ ի ծոցն, երգելով զտունս  
 Շնորհեա մեզ Տէր երգոյն՝ որ ի Խազաղական ժամասա-  
 ցութեանն պաշտի արդ, և ի նոցանէ իսկ յարմարեալ աօթ  
 վանս դիպացս. յայս միտս մեկնեն զբան Խորովու՝ հօր  
 Ս. Գրիգորի Նարեկացոյ, ի մեկնութեան Ժամուց, ե-  
 թէ, «Դեւք և մարդիկ անյազարար միշտ խոկան ի նեն-  
 » գել, որք յայնոսիկ են պարապեալ... Որպէս և ի Սե-  
 » ւանայ կղզւոյն յայտ է. վասն որոյ և զԵրգս աօթ եր-  
 » գել ի յայտնել դաւաճանող թշնամեացն».  
 ասելով. «Չխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ Տէր, զի Աստուած  
 » ընդ մեզ է. և զբանն զոր խոսիք՝ մի մնացցէ առ ձեզ,  
 » զի Աստուած ընդ մեզ է», և այլն — Աներկբայ թուին  
 դէպքս, այլ հանգամանք և ժամանակն անստոյգ, և  
 հաւանօրէն յետ յինութեան վանացն ի Մաշտոցէ:

Այս բարեբոյս քայլընտիր այր՝ յետ վարժիցն ի հոգե-  
 ւոր հրահանգս ի Մաքենիս, ուր տեսաքս, և առանձինն  
 կրթութեանց յանձանօթն արդ մեզ «յլնսպատն Ար-  
 » տաւազի ապարանք», տակաւին ի տիս գոլով երի-  
 տասարդութեան, անզբաղազունի ցանկանալով սրբա-  
 զան օթարանի խոհից և աղօթից, «գնացեալ բնակեցաւ  
 » յապաղեղին յայսմ կղզւոյն», ասէ աշակերտ նորին. և  
 ցուցանէ այնու անբնակ լինել զտեղին, զի և անծանօ-

1 Գոյ ի խաչվիմի թուական ՊՂԵ, 1446-7, (ըստ Չալալ. Բ. 109): Ամիվալա գերմանացի (Բ. 510) յամի 1826, յիշէ տեսեալ երիտ խաչվիմի ի Սեւան, և միւս մեծագոյն ի պատմական տարի- տաճեւ վիմի քանդակեալ գրուագրք, և շուրջ գրուած՝ զոր կարծէր նազոյն հայերէն տառս, յորոց քաջորշազոյնս ասէ զայսոսիկ:

Ժոյն խոտոր կամ յետս շրջեալ, զոր և մեր շրջելով յանդիման լի- նի այս ձեւ.

# ԳԵՂԱՄԱՅԻՆ ԱՂ

# ԺԲԵՃԻՍՅԵՂՅՈՒՄ

զոր և ցուցեալ բազմաց՝ ոչ կարացին ստուգել ինչ. և արդարեւ չէ մարթ իմանալ կամ լուծանել այտի. ըսցե թուի սող գրուա-

յորում մարթ է ընթեռնուլ՝ յետ առաջնոց երկր տառիցն,  
 ԶկարաՊիՏ Քա ՀամաՅ յԱՂ (օթս յիշեցէք կամ աղաչեմ):  
 Որիչ ի սմանէ կարծեմ զմեծ տոբարար խաչն, յորում և քան- զսակասակեր խաչեցելոյն. (Թիւ 28):

Թանալ ի մարդկանէ փափագէր աստուածասէրն այն. և այս լինէր յամի 871-2. այլ շնորհք նորին փայլեալք՝

յաղթէին փափագանացն. հոշակ առաքինի վարուցն վաղվաղակի տարածանէր շուրջանակի՝. զոր և ընդ առաջինսն լուեալ և ծանուցեալ մեծահաւատ տիկնոջն Սիւնեաց Մարեմայ՝ դստեր Ա Աշոտոյ Թագաւորի, Թախանձ արկանէր նմա, «կանգնել զսա (զՍեւան) ուխտ, և » ժողովել եղբարս միանձնականաց դասս, » վասն հոգեաց Տեառն իւրոյ արեւպէտ » վախճանեցելոյ՝ Վասակայ Սիւնեաց իշ- » խանի: Որում բազում անգամ անունկըն- » գիր եղեալ, յետոյ հաւանեցաւ ասելով. » Եթէ յԱստուծոյ է հրամանս՝ ես ոչ ընդ- » դիմացայց»: Աւանդէ պատմիչն Սիւնեաց, եթէ և «հրաման առնու ի տեսիան՝ չինել » եկեղեցի յանուն Երկոտաւան Առաքելոց, » և սահմանել միարանակեացս. յազագս » որոյ և գային առ նա Երկոտաւանքն ի » վերայ ծովուն, յանուրջս. և նշանէին » զտեղի եկեղեցւոյն: Ահա սոյն երեւմամբ » վերին ազդեցութեամբ շարժեալ մեծ » Թագուհին Մարիամ... բազում Թախան- » ձանգ ի հաւան ածեալ զնա, (բայց ժա- » մանակակից և ականատես աշակերտ » Մաշտոցի ոչ յիշէ զտեսիլդ), ձեռն ի » գործ արկեալ շինեն զգեղապանոյճ եկե- » ղեցիսն յանուն Սոսր Առաքելոց, և ըզ- » միւսն յանուն Տիրուհոյ Աստուածածնին. » և զարդարեալ մեծամեծ սպասուք՝ կանգ- » նեն զնա տուն Աստուծոյ և բնակարան » աստուածազգեաց արանց յ'ՅիՊ Թուա- » կանին Հայոց ». որ է 874 ամ Փրկչին:

Ժամանակակիցն Ստեփանոս՝ փոխա- նակ երկուց՝ երիս ասէ եկեղեցիս, նաև զքարալեռանն իսկ յորոյ վերայ վանքն՝ հաւասար ի մի անուն կոչէ, ասելով. « Բը- » նակեալ էր (Մաշտոց) ի վանս (ըստ » ալլոյ օրինակի՝ ի յերինս) յայս, որ է » անուամբ Սուրբ Առաքելոցն եկեղեցիք » երեք »: Եւ են արդարեւ զստ յայլոց ինչ երեք եկեղեցիք հնաշէնք. առաջին և զխա-ւոր Առաքելոցն, զոր ոմանք յանուն զխա-ւորի նոցա Ս. Պետրոս միայն կոչեն, ի հարաւոյ կուսէ վերոյգրեալ նախկին Ռա-րոտրեան տաճարին, ի տափարակի միւսմ, փոքր տարածութեամբ, խաչածեւ կիտարա-լոր անսիւն ի վեր ունելով զկաթսղիկէն-երկզքումբք փոքր աւանդատամբք, որոց հիւսիսայնոյն դուռն հանէ ի վեր ի պատու-հան մի ի վերայ դասին, ուստի ասեն տի-կնոջն Մարեմայ ունկն դնել ժամասացու-թեան: Երկու դրունք են եկեղեցւոյն. ա-

32. Արևմտեան Գեղարանայ Ժողովարան.




1 Միւս աշակերտ նորա Յ. կաթողիկոս գրէ. « Ընդ այն ժամա- » նակն փայլատակեալ պայծառանայր սուրբ պրն Աստուծոյ Մաշ- » ղոց որ ի Սեւան կղզւոյ, որ զքառացն Աստուծոյ անշխնելի » ճառագայթունն յինքն նկարէր, աստուածային ծաւալմամբ և » սրբափայլ կրօնիք կենդանականք, և նախախաղաց տեսու-

» Թեամբք ի տեսականն անդ զանտեսն տեսներ. սակս այնորիկ » ամենեցուն աչք ի նա հայէին, յազգաս տրուել ճանաչել մար- » քեղց նորա զհոգեւորացն մասանց ընտրութիւնս ստուգազէտ, » 2 Ջալալեան՝ 20 կանգուն երկայն ասէ, 18 լայն. իսկ Մարտիէլ վարդապետ՝ 21 1/2 քայլ երկայն, 15 լայն:



առաջի արեւմտայնոյն՝ փայտակերտ գաւիթ յորինեալ է յետ դարուց: Չերեւի արդ արձանագիր հին, որպէս թուի անյայտացեալ ի ժամանակի նորոգութեանն, այլ յայտ է թէ գոյր և յաւուրս պատմչին Սիւնեաց, յելս ԺԳ դարու: և անտի համարիմ կարգեալ նորա զանուանս գիւղիցն և կալուածոց եկեղեցւոյն. որք են, Վարսեր, Յամաքարերդ, Գոմաճոր, Բեդրքն, Ուսեաց տափ, Որսն կոսակրճիկն, « և » այգիս ի Կառնի և յԵրեւան և յայլ տեղիս». աւանայնն պարգեւեալ յԱզոտոյ Ա՝ ի հօրէն Մարեմայ. որ և յամին 883, ի դառնալ իւրում ի կողմանց Վրաց՝ մինչ բանակեալ էր ի Բանակատեղի առ ծովեզերքն, ցանկացաւ տեսանել զդրուատեալ ճգնազգեցիկն. և

« Իբրեւ տեսին զիրեարս՝ բազում ուրախութիւն եղեւ » երկոցունց. ապա յոյժ սիրեցեալ զնա բարեպաշտ իշխանին, շնորհէր երանելուն Մաշթոցի զլոյսն մշտնջնաւոր (Խաչափայտն), զոր արձակեալ էր նմա արքային Յունաց Վասի... զոր պնդեալ էր սուկով և զարդարեալ գեղեցկազան գործով, ընդելուղեալ մարտով. և առեալ եղ ի վերայ աչաց իւրոց և համբուրէր զնա:... Եւ ողջունելով զմիմեանս՝ իշխանն զընաց զճանապարհ իւր, և նա դարձաւ ի մենաստան իւր:» — Երկրորդ եկեղեցին որ յանուն Տիրուհւոյ Ս. Առաքելոսի կանգնեալ յարեւմտեան հիւսիսային կողման կղզւոյն ի դիւրի, մեծագոյն է քան զառաջինն, և



23. Առաքելոց եկեղեցի ի Սեւան. հարաւային կողմն.

նոյնպէս քարակերտ, այլ անգմբէթ սագալէն, երկու երկու սեամբք, դրամբք և աւանդատամբք. չիք և ի սմա հին արձանագիր. առաջի արեւմտեան դրանն յետոյ չինեալ է ժամատուն փայտայարկ՝ յամի 1664, ի Չիրաղեան ազգատուհմէ. և անդ թաղեալ են ոմանք ի վանահարց և ի միարանից, այլ անցիր են տապանքն: Յայսմ եկեղեցւոյ կատարեն սովորարար զպաշտամունսն. և կից նմին են՝ յարեւելից և ի հարաւոյ՝ փոքր և խրթնի

խցկունք միարանիցն. իսկ յարեւմտակողմն՝ նորաչէնք (յամի 1834) և ընդարձակագոյնք, թուով քսան և հինգ: Ի հրապարակին որ ի միջի հին և նոր շինուածոցն՝ կան չորք մեծամեծ ուռնի ծառք: — Երրորդ եկեղեցին զոր արդ ոմանք Ս. Ստեփանոս կոչեն՝ ըստ աւանդութեան կոչի Ս. Կարապետ, յարեւմտից կուտէ Առաքելոցն, անսին գմբէթաւոր, նորոգեալ յամի 1714, որպէս և ծանուցանէ համառօտ արձանագիրս այս.

**ԹՎԻՆ ՌՃԿԳ նորոգեցաւ Սուրբ Կարապետ :**

Ոմանք ասեն տանուտեարց Գեղամայ շինեալ զեկեղեցիս զայս ի ԺԵ դարու։ Այսօրիկ են երբեակ եկեղեցիքն յիշեցեալք ի հին ժամանակագրէն։ Կոնդակ վանացն զշինութիւն նոցին ասէ յամի 880, զոր ի դէպ է իմանալ զաւարտմանն ամենայն ուրաք։

Ընդ եկեղեցեացն զոյգ շինեաց Մաշտոց և զվանան, « և ժողովեաց եղբարս կրօնակիցս, և զարդարեալ բազմախումբն պատուիրանօք (Ս. Գրովք), և վայելչական սպասուք. և անձամբ իւրով օր ըստ օրէ յաւելոյր ըզգործ մշակութեանն և առաքինութեան շնորհօքն Քրիստոսի. և այնչափ յաւելեաց ի մարմնոյ իւրոյ տանջանքս, մինչ զի մեկնէր եւս ի մրգոց և ի ջրոյ անգամ... » զաղօթան հանապազ անխափան կատարէր, և զընթերցասիրութիւն Գրոց սրբոց ոչ պակասեցուցանէր. » այլ ինքն և առնէր և խրատէր զամենեւեան ի նոյն

» կարգ ու Զայտոսիկ աշակերտն ականատես՝ Ստեփանոս, որ և յաւելու, (և ոչ է մեզ զանց առնել, զի և այնպիսոյ և այնպիսեաց գտանին յաշաղկոտք)։ « ի բազում սուտ եղբարց յոլով աշխատութիւն գտեալ... » համբերութեամբ տանէր... այլ և յարտաքնոց նշանաւորաց և յաննշանից... Եւ այնչափ ճգնութեամբն » հեզ էր և լաւակն (կամ լաւակամ), և տեսակաւն » զուարթ և առատամիտ և ընտրող յոյժ, և վայելուչ » հասակաւ մարմնոյն, և մխիթարական բանիւ առ գաւառսն իւրերգով, և զօրաւոր և ահարկու առ հզօրսն։ Զճաշակ երկոցուն եւս բանիցն, զմխիթարականին և զխրատականին, խնամով պահեալ աւանդէ մեզ աշակերտակից պատմչիս՝ մեծազոյն պատմչին Յովհաննէս Զ կաթողիկոս. որոց մին է Թուշդրն (իւր յամի 891) առ Աբաս սպարապետ եղբայր Աշոտոյ Ա, որ մտաւոր ընդ



24. Ս. Աստուածածին եկեղեցի ի Սեւան.

եղբորորդին իւր Սմբատ Ա, ակն եղեալ Թագին, և կուսակից նմա համարեալ զկաթողիկոսն Գէորգ՝ դրգէր զայլըս եւս ընդդէմ նորա՝ բծադրութեամբ. և զի յոյժ մեծ էր վարկ Մաշտոցի յաշա ամենեցուն՝ ջանայր որոսալ զնա հրապուրական թղթովք. որոց պատասխանի առնէ սա խոհական և հզօր բանիւք պաշտպան կայով հայրապետին, և կշտամբելով զգաւաճանն, միանգամայն և ողորջելով. որով ի զգաստութիւն էած զխրոխտ սպարապետն և խոնարհեցոյց՝ խնդրել թողութիւն ի կաթողիկոսէն։ Գտցեն ցանկացողք զերկար գրուածն ի պատմագրութեան Յովհաննու։ Միւսն՝ մխիթարականն թուղթ գրեալ է առ ապրեալսն ի սոսկալի երկրաշարժ կործանմանէ մեծի մայրաքաղաքին Գուռի (893), որ յական քթթել փոխեցաւ յաւեր և ի գերեզման ցաւագին. կամ, որպէս գրէր ինքն Մաշտոց, « բուռն զօրութեամբ մանրեալ ճմլեաց աստուածայինն հնձանահար... և փրչ

» ընաց զմայրս մարդկեղէն անտուաց »։ Զայս եւս գտցեն որք կամինն՝ առ նմին պատմչի, և ի մերումս տեղագրի Այրարատ աշխարհի. — Զայտպիսի շնախարհիկ այր և ամենահաս առ մեծամեծս և առ փոքունս, չէր մարթ երախտագէտ մարդկան թողուլ ի ստուերի հեզաշուք խոնարհութեանն. վասն որոյ ի վախճանել Գէորգեայ կաթողիկոսի յամի 897, Թագաւորն Սմբատ « և » համազգիք իւր... և զահամեծար իշխանք և պատուական արք ազատք... կացուցին զնա յաթոս Ս. Լուսաւորչին Գրիգորի։... Բայց սուրբ այրն Աստուծոյ » մինչդեռ սքանչելագործ գովելի վարդապետութեամբն » իւրով շինէր, հաստատէր և յարդարէր ի կարգս բարեաց զնացից և գործոց զհօտ իւր հաւատացեալ, արտաքոյ բոլոր վշտակիր հեծութեան՝ հանգեալ ի Քրիստոս, ամիսս եօթն միայն կալեալ զաթոռն հայրապետականն »։ ամաց գոլով իբրեւ վաթսունեւից կամ եւ



Թանասուն: Եւ յաջորդեաց զնա որ զայսոսիկ գրէր՝ աշակերտ իւր Յովհաննէս Զ:

Ի միաբանութենէ և յառաջնորդութենէ Սեւանայ վանաց՝ ընծայեցան և ի յաջորդ Ժ դարու կաթողիկոսունք, Ստեփանոս Գ (970) և Սարգիս (992), սիրելին Քաղկայ արքայի, որոյ տուեալ էր նմա յառաջն զՇողազայ վանս, յետոյ առաջնորդ կարգեալ այսմ Սեւանայ. ուր և « էր սա սնեալ և զարգացեալ առ հօրեղբոր իւրոյ, առաւ » քինալան և ժիր մշակին Քրիստոսի... առաքելական խոսրանացն սպասաւոր եղեալ »: — Որպէս զՄաքենեաց՝ և զՍեւանայ վանաց մեծամեծ զովութեամբ գրեն մեր.

ձաժամանակ պատմիչք. որ և ի վերայ այլոցն զանմատոյց դիրսն պաշտպան ունելով՝ տեւեաց բաւեաց ի շինութեան, առաւել կամ նուազ, մինչև ցմեր ժամանակս. և վասն ամրութեանն՝ որպէս յառաջ քան զչինութիւն վանացն՝ նոյն և յետոյ բազում անգամ եղեւ ապաստանարան վտանգելոց. և նախ նորին ինքեան սատարողի շինութեանն՝ Մարեմայ բարեպաշտ տիկնոջ. զոր առեալ որդւոց իւրոց՝ պայազատաց վազամեռ ամուսնոյն Վասակայ, ամրանային աստառ վայր մի յերեսաց Յուսիայ. որպէս և յետ սակաւ ամաց խոյս տուեալ ի գործակալէ նորին ի Բչրայ (Պէշիր)՝ Աշոտ արքայ Բ, « յան-



25. Հարաւային Դռան Առաքելոց և կիղեցոյն.

» մարտնչելի ամրոցին ի Սեւան կղզւոյ առկայանայր »: յորմէ և ելեալ՝ նաւամարտութեամբ վանէր զթշնա, մին որ ի ծովեզերին:

Յետ այսոցիկ յիշեցելոց հոյակապ արանց Ժ դարու՝ փայլէր անդ յառաջին կէս ԺԱ՞ առաջնորդն Սարգիս վարդապետ իմաստասէր<sup>1</sup>, արժանաւոր թղթակից Գրիգորի Մագիստրոսի և ողբակից հասիլոց ազգիս ազէ.

տից ի բարձման Բագրատունեաց Թագաւորութեան<sup>2</sup>: Իսկ յետ այնր մինչև ի միւս եւս Սարգիս, ի սկիզբն ԺԳ դարու, ոչ գտանի յիշատակ վանացս. իսկ սա՛ կոչի ի Կիրակոսէ « միայնակեաց Սեւանայ », որ գտաւ ի ժողովին Լօռույ ընդ Մխիթարայ Գոշի և այլոց:

38. Այլ զայսու ժամանակաւ ընդ այլոց վանորէից և եկեղեցեաց՝ յաւուրս զօրանալոյ Թագաւորաց Վրաց և

<sup>1</sup> Չեռազեր սորա եկաւ մեզ և հրատարակեցաք նմանահանութեամբ ի տեղագրութեան Շիրակայ:

<sup>2</sup> Ի միւսմ ի Բզթոցն Գրիգ. Մագ. յառաջ բերէ զբան Սարգսի,

եթէ, « կարօռէի տեսանել զքեզ, և եկի յԱմբերդ առաքեալ ի մանկամիտ արքայէ... Արքայն մեր զտոռալինն վերջին տանէ և ազաշուանոց զայ ի լուսն »:

Իշխանացն Օրբելեանց և Զաքարեանց, արծարծի և Սե. րադրուագ ընկուզենի դուռն տաճարին Առաքելոց, յա. անն. որոյ նշան համարելի է զարեւմտեան հարտար ման. բուն՝ ի 1243 ամի<sup>1</sup>.

**Ի Թուին Հայոց ՈՂԲ նորոգեցաւ դուռն սուրբ Եկեղեցոյս հրամանաւ իշխանաց իշխան Քրդին, եւ ձեռամբ Յովհաննիսի հիւսանն. որք ընթեռնոյք՝ յիշեսլիք:**

Իշխանն Քուրդ յիշեալ յարձանագրի դրանդ՝ Թուեցաւ ոմանց ըստ ՈՒԵ համարեալ Թուականի՝ մայրենի հաւ Զաքարեանց. այլ Զաքարիա պատմիչ յայտնապէս ծանուցանէ զՔՈՒՐԴ՝ որդի Վաչէի ծառայի Զաքարեանց, որ յետ շինութեան գաւթի Յովհաննավանից յամի 1250, « Եւ ինքն իշխանն Քուրդ Թողեալ ըզ. » մարմնաւոր փառան՝ հետեւեցաւ անանց փառացն. և » գնացեալ ի Սեւան կղզին՝ զգեցաւ հանդերձ միայնա. » կեցի և եղև կրօնաւոր. և վախճանեցաւ անդ և կեն. » դանացաւ առ Քրիստոս. և թաղեցաւ ի գաւթի եկե. » ղեցւոյն՝ որ յանուն սուրբ Կարապետին. զի յարեցէ » փառօք և պսակեացի ի Քրիստոսէ »: Ի սկզբան դա. րուս յամի 1815, և յետոյ ի մաքրել ոմանց զյատակս եկեղեցեաց և զժամատանց Սեւանայ, գտաւ ընդ հողով տապան սորին՝ գրովս.

**Այս է հանգիստ Պարոն Քուրդայ:**

Ձիք երկրայել զի և եկեղեցիքն նորոգեալ են յայնմ ժաւ մանակի, որպէս և յետոյ եւս: Ճարտարագոյն եւս են քանդակք հարաւային դրանն, ծաղկաձեւք և պատկերք, այլ նորագոյն յամի 1522 կամ 1557, ըստ գրուածոյս<sup>2</sup>.

**ԶՀԱ Թուականի  
ԼԵ Թիւ աւելի,  
Յաթուակալութեան Տեառն Սարգսի  
Ի խանութեան Յաղուպ բէկի,**

**Ծաղկեցաւ դուռն տաճարիս  
Առաքելոցն Քրիստոսի,  
Հրամանաւ սուրբ վարդապետի  
Եռամեծիս Դանիէլի,  
Եւ սիրելի որդւոյ սորին  
Եպիսկոպոսիս Տէր Ներսէսի.  
Չեռամբ սորին աշակերտի  
Անարժանիս Աքրահամի,  
Նաեւ եղբաւր մեր սիրելի  
Շնորհաւք ի լի Գրիգորիսի:  
Յոտս անկանիմ ամենայնի  
Հայցեալ Տեառնէ պարզեւ ճրի  
Րաբունապետիս համայն ազգի,  
Եւ ծնողացն իւրոց բարի  
Կարապետ քահանայի  
Եւ մուրն (իւրոյ) Համաւորի:**

Եկեղեցին Առաքելոց նորոգեալ է և ի կէս ժէ դա. րու ըստ արձանին գրելոյ յամի 1654 յորմն հարաւային աւանդատանն.


Շնորհաւք եւ ողորմութեամբ ամենազօր էին Աստուծոյ մեք երեք հարաւատ եղբարքս Սոշիսան, Զալ եւ Զօրապ տվաք նորոգել սուրբ եկեղեցիս յիշատակ մեղ եւ մեր ննջեցելոցն, հաւր Թաղիկն եւ մաւրն Բէկի Սուլթանին, հանգուցեալ եղբօրն Պապի՞ն եւ ամենայն աղգայնոց: Այլ եւ խոստացաք չահ ստացուածոց ընդ սմայ տասանորդեսցուք. Եւ միաբանք սուրբ ուխտիս խոստացան յետ ութօրէիցն աւուր տօնի Սուրբ Կարապետին պատարագ մատուցանել վասն մեր. Նորոգեցաւ ի Թուականիս Հայոց ՌՃԳ, ի հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի, առաջնորդի Մխիթար<sup>3</sup>:

<sup>1</sup> Շահխաթ. և Մանուէլ վարդապետ ՈՒԵ (1176) գրեծ ըզ. Թուականն, որ անճա՛ է, զի ըստ ստորեւ գրելոյ՝ Քուրդ յետ կէ. ույ ժԳ դարու եկեալ և վախճանեալ է ի Սեւան:  
<sup>2</sup> Վակնէր Գերմանացի գովելով զհարաարութիւն քանդակա. գործին՝ ասէ լինել զնա արգելական ող միանն. Die Eingangs. thüre zur hauptliche besteht aus ziemlich hübschen Schni.

tzwerk, welches allerlei Zierathen und Figuren dar. stellt, und die Arbeit eines zur Strafe hieher verbannten Mönchs war, den in seinem armen Exil die Langeweile ärger geplagt haben mag, als seine übrigen Klosterge. fährt. — WAGNER, 80.  
<sup>3</sup> Այսիկքն, յորմն ընդդրոյն Մխիթարայ, ասս յէջ 88.

Յետ եօթն ամաց (1670-1) երկրքին եղբարքն (զի զեկեղեցի Տիրամօրն, որպէս և արձանագրեն յամի 1664 միւսն՝ Զօրապ՝ մեռեալ էր յայն ամս) նորոգեալ են և ի վերայ հարաւային սեան նորին.

Յամի Ռ<sup>երրորդի</sup> ՃԳԺ<sup>աներրորդի</sup> շնորհօք Աստուծոյ հարազատ եղբարք Խօճայ Սուլխանս եւ Զալս ի քաղաքէն Տփխեաց ապէն Չիթղենց որդիք Թաղայի, եկեալ ի սուրբ Անապատս ի Սեւան ծովապատ, զոր ի բազում ժամաւ նակաց մեր կամաւ խոստացաք մեր շահն տասանորդի տանք Սեւանայ. ամէն. զոր շինեցաք Սուրբ Աստուածածնիս եկեղեցիս. յիշատակ մի արծաթի կանթեղ, խաչ, բուրվառ, սկի, հոգոցս հօր մերոյ Թաղային մօր Բէկի-Սուլթանին, եղբար Պապին, Զօրապին, քվերանց որդոց բաժինին. Նա եւ միաբանքս խոստացաք տարին Գ ժամ մատուցանել. կատարողք վարձս առցեն. ի հայրապետութեան Տեառն Յակոբայ :



26. Ս. Առաքեալք (արեւելեան կողմն) եւ Ս. Ստեփանոս եկեղեցիք.

Դարձեալ գրեալ է երկոցուն սոցա եղբարց և ի ճակատ եկեղեցւոյս այսորիկ, ի վերոյ նշանակեալ ամի.

Յամի ՌՃԳԺ<sup>աներրորդի</sup> Շնորհաւք Աստուծոյ մեք հարազատ եղբարք Սուլխան, Զալս ի քաղաքէն Տփխեաց, ապն Չիթղենց, որդիք Թաղայի որդւոյ Միրվէլու եկեալ ի սուրբ Անապատս Սեւան, տեսեալ սուրբ Աստուածածնի եկեղեցիս շինեալ յիշատակ մեր ապրանաց շահի Ժ<sup>անորդ</sup> տար ? զտեղի

բնակողաց. եւ միաբանքս խոստացաք զտարին Գ ժամ մատուցանել սուրբ Զատկին, Վարդավառին, Զրօրհնեաց տանից. Այս եղև ի հայրապետութեան Տեառն Յակոբայ. Առաջնորդ Մխիթար եպիսկոպոս, Բարսեղ վարդապետ հանգուցելոյ՝:

Զորքին բարեպաշտ նորոգողք եկեղեցեացս ԶԹաղեանք՝ Թաղեալ են ի գաւթի նոցին, ի վերայ միոյն թուական ՌՃԼԳ, 1684. արձանագիրքն մաշեալ և եղ-

ծեալ են:— Զմիւսանգամ նորոգութիւն եկեղեցւոյս յետ իրրեւ դարու միոյ ժամանակի՝ յամի 1740, ցուցանէ այս արձանագիրք.

Շնորհ(աւք) Քրիստոսի եւ ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր կնածոյն? ի թուին ՌՃՁԹ, ի հայրապետութեան Տեառն Ղազարի, եւ առաջնորդ Մարտիրոս վարդապետի. Աստուած ողորմի ասացէք տուրք եւ ողորմութիւն տվողացն սուրբ տանս եւ աշխատողաց. եւս Մարտիրոս վարդապետի որդի Աթապէկի որ տուաւ Բ թուման ողորմութիւն:

Վերջին նորոգութիւն Ս. Աստուածածնի և որ շուրջ զնովաւ՝ եղեալ է առ մեզք յամս 1832-36, որպէս ցուցանեն արձանքն՝:

Գոյ և այլ եկեղեցեակ կամ մատուռն մի խորխալեալ ի հիւսիսոյ կուսէ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն, յանուն Ս. Մինասայ, անթուական և անյիշատակ:— Ընդ եկեղեցիս պատուի և տեղի ճգնութեան Մաշտոցի, ըստ աւանդութեան, ի դժուարեղանելի բարձրաւանդակի ի հարաւային արեւելակողման կղզւոյն, ուր արդ կան երկու քարաշէն խցկուներ փոքրիկ դրամբք և լուսամտիւ, և կոչին Մաշտոցներ:

Հին բնակարանք միանձանցն՝ որպէս և ի վերդ նշա-

նակեցաք՝ փոքունք, մթինք և խրթինք էին, շուրջ զեկեղեցեաւ Աւաքելոց և Աստուածածնի, և այլ ուրեք ուրեք, ի յետին ժամանակս նորոգեալք յայլևայլ նուագս, և շատք ի մերում յայսմ դարու. այլ չիք ինչ ի նոսին նշանաւոր:— Իսկ ի սպասս կամ ի սրբութիւնս եկեղեցւոյ, ոչ գիտեմ եթէ պահիցք ցարդ Աշտոտեան կամ Մաշտոցեանն այն խաչ, որպէս պահի կոթայ Ս. Նշանն, զորմէ ասեն Թաղէի առաքելոյ յորինեալ ի Տարսու լուսաման Յիսուսի. Նշալք Ս. կարապետին, Ս. Պետրոսի Առաքելոյ, Ս. Գեորգայ ի պահարանի աւետարանի միոյ, և այլն: Է և խաչ մի արծաթեայ յեկեղեցւոյ՝ արձանագրութեամբ վերոյգրեալ Տիխոնեցւոց, այսպէս.

1 Ըստ այսմ և յարեմտեան լուսամտին արտաքուսս.

Յամի ՌՃԳԺաներորդի, շնորհօք Աստուծոյ, մեք հարազատ եղբարքս Սուլիան, Զալս ի քաղաքէն Տիխեաց, ազգէն Զիթաղեանց, որդիք Թաղայի, որդւոյ Միրվէլոյ, եկեալ ի սուրբ Անապատս Սէվան տեսեալ զՍուրբ Աստուածածնի եկեղեցիս, զոր շինեալ յիշատակ մեր ապրանաց շահի Ժանորդն տալ զտեղի բնակողաց, եւ միաբանքս խոստացան տարէն Գ ժամ մատուցանել, սուրբ Զատկին, Վարդավառին, Զրօրհնեաց տանից: Այս եղև ի հայրապետութեան Տեառն Յակոբայ, Առաջնորդ Մխիթար եպիսկոպոսի, Բարսեղ վարդապետ հանգուցելոյ:

2 ի վերայ փայտեայ սեան գաւթի նոյն եկեղեցւոյ.

Յամի Տեառն 1836. Նորոգեցան ի հիմանէ գաւիթըս Սուրբ Աստուածածնի, եւ մէկ մեծ մառան... չորս օղայ, մէկ երկար քուչայիւ. արդեամբ եւ ծախիւք Լմեցի ծերունագարդ ի Քրիստոս հանգուցեալ Ստեփաննոս Տգնազգեաց վարդապետին, որ նախ քան զվախճանն իւր կտակաւ աւանդեաց զճախսն այսոցիկ՝ միում միաբանից անապատիս՝ Նիկողայոս

վարդապետին, գիտութեամբ առաջնորդի տեղւոյս Յովհաննէս վարդապետին եւ բոլոր միաբանիցս, որ եւ աւանդեցաւ օգնականութեամբ Աստուծոյ, եւ ձեռնտուութեամբ բոլոր միաբանիցս:

Կից նմին գրեալ է.

Կայսրն Ռուսաց Նիկոլայ Պաւլովիչն եկն յաշխարհս մեր ի Հայաստան յամի Տեառն 1837 եւ եւ մուտ ի սուրբ Էջմիածինն ի հոկտեմբերի 4. - եւ ի 8 սոյն ամսոյս՝ յերեւան, եւ ի 6 ի մուտս արեգական յաւուր չորեքշաբաթի՝ էանց հանդէպ նաւահանգստի Անապատիս, օձեւանս արարեալի գիւղն Զիբուխլու մէկ գիշեր, եւ աստի ի Տիխիս քաղաք, եւ անտի եւս էանց գնաց խաղաղութեամբ յամուռն իւր ի Ս. Պ. բուրգ:

Առաջի արեւմտեան դրան գաւթի նոյն եկեղեցւոյ ի վերայ որմոյ արեւմտեան հիւսիսակողման սենեկաց միաբանիցն գրեալ է.


Շնորհիւն Աստուծոյ շինեցան սենեակքս արդեամբք Տիխիսայ Հայոց ժողովրդոց, ձեռնտուութեամբ Տեառն Յովհաննու կաթողիկոսին, յառաջ նորոգութեան բնիկ միաբանի տեղւոյս Յովհաննէս վարդապետին Ղազախեցւոյ, աշխատութեամբ միաբանից տեղւոյս. ՌՄՁԳ:



**Սուրբ Խաչս յիշատակ է Չիթաղ(ենց) Սուլխանին, իւր եղբայր Զալին, Պապենին, Զուրաբին եւ իւրեանց ծնաւզացն, հաւրն Թազուն եւ մաւրն Բէկի Սուլթանին, ի դուռն Սեվանայ Անապատին. ով որ էս յիշատակս յափրջտակէ դուրս տանէ՝ մասն Յուդայէ Կայենէ առցէ. Թվին ՌՃԵ:**

Իսկ պատուական հին ձեռագիր մատենաք՝ որք յաւուրց անտի Մաշտոցի ամբարեալ էին յանբոյթ կղզւոյն յայսմիկ, անայցելու մնացեալք՝ Թերեւս յաղօթասէր այլ ոչ լընթերցասէր միանձանց, ըստ պատմելոյ ամենայն

գրողաց զվանացս, նոցին իսկ ձեռօք ծովակուր եղեն յաւուրս Աիմէոնի կաթողիկոսի, մինչչեւ հասեալ սորա յայցելութիւն կղզւոյն, զի մի տեսցէ զսմայի և զապականեալ դիրս նոցին. և որպէս ասին ոմանք, վտա-



27. Մենաստան Սեւանայ.

ցեալ կաթողիկոսին՝ նզովս արձակեալ ի վերայ նոցա ի բաց դնաց արտմութեամբս Գտանին և յետ այնր հաւաքեալ ինչ ինչ մատենաք ձեռագիրք իբրեւ 300, և տըպագիրք 400:

Սեփական կալուածք վանացս պարգեւեալք նախ յԱշոտոյ առ Մաշտոց և այլք յետ այնր, զինի ժամանակաց կողոպտեցան յամայանալ Գեղարունեաց ի բնիկ ժողովրդենէն, և ի վերջոյ դարձան առ նոյն երկրին գեօղքն Գոմաձոր և Յամաքաբերդ, և նորոգատուր կրպակք և աղօրիք. այլ զարդիս ընդ տեսչութեամբ վիճակաւոր արքեպիսկոպոսին Երեւանայ անկեալ է ուխտս, և նա տնտեսէ զելեւմուտն:

Երթեւեկ միաբանիցն և այլոց ի կղզին և անտի ի ցա-

մաքն՝ լինի անհեղեղ լայնատարր լաստիւ, եօթն ստուար գերանօք և տախտակօք և վանդակապատ խելօք կազմեալ, և երկրորմբք մեծամեծ և հաստարեստ թիովք վարեալ մէն յերկուց և երբեմն յերից արանց. որոց հասանէ ոչ սակաւ աշխատել և տառապիլ ի շնչել սողից հողմոյ, թէ և չիցէ երկար ուղին, և երբեմն ոչ կարելով զդէմ ունել՝ վարին ի հեռաւոր ափունս: Բայց են յայժմուս և երկու նաւակք չափաւոր մեծութեամբ, այլ չեւ ևս է հաստատեալ բարեձեւ նաւուց և նաւարկութեան, թէ և երբէք երբէք փորձ փորձեալ: Գծուարութիւն մատչելոյ ի կղզին յապահովէ զանգրօս առանձնութիւն միաբանակեցացն, վասն որոյ և իրաւամբ Սեւանայ կոչի տեղին քան վանք. և ի սկզբբանէ ցայժմ՝ խստակրօն ա-



նապատակեցական կանոնս եղեալ է կրօնաւորելոցն անդ երկար սողթակացութեամբ, սքնութեամբ և պահօք. և զի սակաւուց տուեալ է այսպիսի հրահանգաց տանել, չէ և բազմաթիւ լեալ ընկերութեանն, որպէս երեւի և ի հնուսն և ի նորումս, և ի չափոյ բնակարանացն. այլ յաճախ զթերին ընուն կամաւոր ճգնասէրք և ուխտաւորք, կամ ապալխարողք՝ ի կաթողիկոսաց առաքեալք և ի դիպահոյ արգելեալք. յորոց սակի յիշին և ըստ ժամանակին անուանի վարդապետք ոմանք, որպէս Յովհան Բեւրիացի՝ հրամանաւ Յակոբայ Գ, Պետրոս վ. Քիւմիւր կաթողիկոսացեալ և բանտարկեալ ի Ղազարայ (1745)<sup>1</sup>, և ինքն Ղազար առ ժամանակ մի, 1748, Յարութիւն վարդապետ Ալամդարեան զգայուն երգահան, Պողոս վ. Տէր Պետրոսեան առ մեզք, և այլք:

39. Առաջնորդք հռչակաւոր վանացս և անապատիս, առաջինք և վերջինք (զի միջինքն չեն յայտ) որչափ ծանուցանն, են յետագայք, և դէպք ինչ որ առ նորք, զատ ի վերոյ նշանակելոցս, և ամք յորս յիշին.

- 872 — 897 Մաշտոց Հիմնադիր վանացն.
- 965 — 69 Ստեփանոս (յետոյ Գ կաթողիկոս).
- 985 — 91 Սարգիս (Ա կաթողիկոս).
- 1040 Սարգիս վարդապետ Թղթակից Գր. Մագիստրոսի.
- 1205 Սարգիս վանական.
- 1471 Դանիէլ վարդապետ, գովեալն՝ հռեւտոր, բանիբուն, քաջ բարունի, ճգնազգեաց և սրբասնեալ կոչմամբ. շատ առաջնորդ՝ այլ Սեռանցի եւեթ:
- 1557 Ներսէս եպիսկոպոս: Սա թուի յիշատակագիր շաշոցի միոյ, որ ասէ.

«Ես Ներսէս (որդի Շապանայ) գնացի Սեւանայ Սուրբ Առաքեալք, 33 տարի կացի վանքն. դատի են » (էին) ձգել ի գիրս թէ մեր այ. ես ալ գացի ի մօտ » Առաջ խալիֆէն. մարդ բերի, խիտ դժար դուրս բեւրի զգիրքս »:

1610. Կարապետ եպիսկոպոս Էջմիածնի, որ յարեալ ի Սարգիս եպիսկոպոս նորոգիչն անապատական կենաց, « զկնի գնաց ի Սեւան կղզին, և զայն տեղին շինեաց » Անապատ, և կայ հաստատ մինչեւ ցայսօր »: Առաքէյի են բանքս, յորոց գուշակի զի խափանեալ էին և ի Սեւան միանձնական կարգք և կեանք, եթէ գոյին եւս սակաւ առանձնակեացք, և ի սկիզբն ժիշ դարուս ընդ այլոց անապատից Սիւնեաց և ծովուն վանայ՝ նորոգեցաւ և Սեւան:

1650 ? Ոնոփրիոս, անարժան կարգին, որ բազում

1 Սա (Պետրոս վարդապետ) պատմէ և զհնարս փոխստեան իւրոյ յարգելանոցն, յետ ամի միոյ (յ'13 սեպտեմբերի) միացեալ նաւարկելով. այսպէս գրէ. « Մէկ նիզով խաղալի ընդ նաւին (շարժել կամելով). տեսի յանկարծակի ընդոտառցեալ սողալով թըռուցեալ անկա ի ծովն. և էր ծովն ի սաստիկ խռովման և յուզման. և մէկ կորած թի առեալ ի ձեռս իմ և միով մաշկաւ մտի ի նաւն. ոչ գիտելով զկերպ նաւելոյն կամ շարժելոյն: Իսկ վերնախնամ զթուփին Աստուծոյ զխուովեալ ծովն կանգարեցոյց, և եղև իբրև զկաթ կայուն. երկու սահմեղմայն հանապարհ մէկ զա՛վէ երկելու չափ ոչ յամեցայ. եհան զիս ի ցամաք ի մէջ խաշանց և հովուաց և պատառաջ շանց. զի սորս

վտանգ հասոցց աթոռոյն Էջմիածնի. և յետ աստանդական կենաց և դաւաճանութեանց, ըմբռնեալ և աքսորեալ դարձեալ ի Սեւան կղզի, աստ մեռաւ անարգաբար: Զայսու ժամանակաւ յամի 1652 Յովհաննէս ոմն Շոռորեցի գրէ. « Եկի յանապատս Սեւան կոչեցեալ՝ որ » ի կղզիս ծովուս Գեղամայ... առեալ բերի (զՔանն. » ձարան գիրս) ի մեծաւայելուչ աթոռս Բլնոյ Սուրբ » Աստուածածնիս, և նորոգեցի և դարձուցի ի տեղի իւր յԱնապատն Սեւանայ »:

1663 + Մխիթար եպիսկոպոս, որ զառաջինն երէց էր Տէլիգարտալ գեղջ Գեղաբունոյ և խոյս տուեալ ի բռնութենէ Փարսադանի տանուտեառնն, առանձնացաւ ի Սեւան, և ձեռնադրեալ եպիսկոպոս ի Փիլիպպոսէ կաթողիկոսէ՝ կարգեցաւ սուսնորդ անապատին: Սորա գործակից էր Բարսեղ վարդապետ, որ սառնասոյց ծովակուլ եղև յամի 1660:

1695 + Մխիթար միւս. առ որով համանուն իւր և հայր ուխտիս մերոյ Սեբաստացի Սարկաւազն Մխիթար, յայնժամ 18 ամաց, եկեալ այսր յուխտ, յամի 1692, արժանաւորեցաւ հրաշալի տեսիլեան և խոստման Տիրամբն, օգնական ինեւելոյ աստուածասէր ըղձանացն, մինչ աղերս արկանէր առաջի պատկերի նորին. որ և ցարդ պահի անդ, թէ և հնացեալ և խանգարեալ, որոյ է օրինակս<sup>2</sup>. և քաջալերեալ՝ յաղղեցաւ նորին Տիրամբն շնորհք հաստատել զկրօնս իւր (1700), շինելով վանքն՝ նախ ի Մեթոն Մոռէայ, և ապա (1717) ի վենետիկ, անուանելով զմիաբանսն Որդեգիրս կոչալիս աստուածայնոյ, որում յանձն արար զնոսա:

1740. Մարտիրոս եպիսկոպոս Զէրէզեանց Շահրիզեցի:

1747-52. Յովհաննէս վարդապետ Նորատուցի, առ որով յարձակեալ երբեմն Լեկաց ի կղզին, յոր ապաստանեալ էին բազում ժողովուրդ և տանուտեարք, զիմելով ի վերայ սառին, զի ձմեռն էր և ճրագալոյց Յայտնութեան, մինչ նա զպաշտօնն կատարէր, բեկեալ սառին ընկղմեաց զասպատակողսն:

1753. Սամուէլ վարդապետ:  
1770 ? Յովհաննէս վարդապետ պարսաւեալ, մանաւանդ վանն ծովակուր առնելոյ զնախնեացն ձեռագիր մատեանս, ըստ վերոյգրելոցս:

- 17 . . Աթանաս վարդապետ Մակոնցի, հինգ ամ:
- 17 . . Ազարիս եպիսկոպոս Գանձակեցի, իբրև ամ մի:
- 17 . . Եղիազար եպիսկոպոս Գանձասարեցի, երեք ամ:
- 1793 — 1805. Գրիգոր վարդապետ Գանձակեցի:
- 1807. Սարգիս վարդապետ Ոսկանապատեցի, որ սա

» յեր ծովուն ննեալ արտի մէջ (անգուցեալ էին. ի միջի նոսրին տեսնելով գնացի. և ոչ ոք ի նոցանէն իմացան: Եւ ելեալ ի զլուստ բարձրագոյն լեռանց ի մէջ անառուտիս ծառոց և խորափոս ձորոց անցանելով երթալի, ոչ գիտելով զարշաւանս իմ. այլ գիտէր նա որ զօրացուցանէր զիս և ուզէր զձեռս իմ: Եւ բազմակերպ զազանաց նախդիպելով, և ոմանք յանցս ճանապարհին կալով, և ոչինչ շտա կրելով ի նոցանէ. շնորհքն Քրիստոսի, զինչ և իցէ ինչ և վեց աւուր ճանապարհն երկու օրն հասի ի կարս, երբեմն բոկ ոտամբ և երբեմն մայղաւ. և անտի եկի ի կարսն »:  
2 Զմանակերպ նկարու գերագունին նկարչաց Ռաֆ. Սանցիոյ:



## ՏԻՐԱՄԱՅԻ ՄԵԻԱՆԱՅ

ՅԻՇԱՏԱԿ ԵՐԿԵՐԻԻՐԱՄԵԿԻ (1692-1892) ՏԵՍԼԵԱՆ

ՄԻԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՅԻ.

նապատակեցական կանոնս եղեալ է կրօնաւորելոցն անդ երկար սորթակացութեամբ, տքնութեամբ և պահգը. և զի սակաւուց տուեալ է այսպիսի հրահանգաց տանել, չէ և բազմաթիւ լեալ ընկերութեանն, որպէս երեւի և ի հնուան և ի նորունս, և ի չափոյ բնակարանացն. այլ յաճախ զթերին ընուն կամաւոր ճգնասէրք և ուխտաւորք, կամ ապաշխարողք՝ ի կաթողիկոսաց առաքեալք և ի դիպահոյ արգելեալք. յորոց սակի յիշին և ըստ ժամանակին անուանի վարդապետք ոմանք, որպէս Յովնան Բերիացի՝ հրամանաւ Յակոբայ Գ, Պետրոս վ. Գիւթիւր կաթողիկոսացեալ և բանտարկեալ ի Ղազարայ (1748)<sup>1</sup>, և ինքն Ղազար առ ժամանակ մի, 1748, Յարուծիւն վարդապետ Ալամուարեան զգոյունս երգահան, Պողոս վ. Տէր Պետրոսեան առ մեզ, և այլք:

39. Առաջնորդք հռչակաւոր վանացս և անապատիս, առաջինք և վերջինք (զի միջինքն չեն յայտ) որչափ ծանուցանն, են յետագայք, և դէպք ինչ որ առ նորք, զատ ի վերոյ նշանակելոցս, և ամբ յորս յիշին.

- 872 — 897 Մաշտոց հիմնադիր վանացն.
- 965 — 69 Ստեփանոս (յետոյ Գ կաթողիկոս).
- 985 — 91 Սարգիս (Ա կաթողիկոս).
- 1040 Սարգիս վարդապետ Թղթակից Գր. Մագիստրոսի.
- 1205 Սարգիս վանական.
- 1471 Դանիէլ վարդապետ, գովեայն՝ հոռտոր, բանիրուն, քաղ ըրարունի, ճգնազգեաց և սրբանեալ կոչմամբ. շասի առաջնորդ՝ այլ Սեւանցի եւեթ:
- 1557 Ներսէս եպիսկոպոս: Սա Թուի յիւստակագիր ճաշոցի միոյ, որ ասէ.

«Ես Ներսէս (որդի Շապանայ) գնացի Սեւանայ Սուրբ Առաքեալք, 33 տարի կացի վանքն. դաւի են» (էին) ձգել ի գիրս թէ մեր այ. ես ալ գացի ի մօտ Ստոնիս խալիֆէն. մարդ բերի, խիստ դժար դուրս բերի զգիրքս»:

1610. Կարապետ եպիսկոպոս Էջմիածնի, որ յարեալ ի Սարգիս եպիսկոպոս նորոգիչն անապատական կենաց, «զկնի գնաց ի Սեւան կղզին. և զայն տեղին յինեաց» Անապատ, և կայ հաստատ մինչեւ ցայսօր»: Առաքելի են բանքս, յորոց գուշակի զի խափանեալ էին և ի Սեւան միանձնական կարգք և կեանք, եթէ գոյին եւս սակաւ առանձնակեացք, և ի սկիզբն ժէ դարուս ընդ այլոց անապատից Սիւնեաց և ծովուն վանայ՝ նորոգեցաւ և Սեւան:

1680 ? Ոնոփրիոս, անարժան կարգին, որ բազում

<sup>1</sup> Սա (Պետրոս վարդապետ) պատմէ և զհետոս փոխառեան իւրոյ յարգելանոցն, յետ ամի միոյ (յ'13 սեպտեմբերի) միացեալ նաւարկելով. այսպէս գրէ. «Մէկ նիգով խաչայի ընդ նախն (չարժեւ կամելով). տեսի յանկարծակի ընդոստուցեալ սողալով թըռուցեալ անկաւ ի ծովն. և էր ծովն ի սաստիկ խռովման և յուզման. և մէկ կտորած թի առեալ ի ձեռս իմ և միով մաշկաւ մօտ ի նաւն. ոչ գիտելով զկերպ նաւելոյն կամ շարժելոյն: Իսկ վերանախամ գթութիւն Աստուծոյ զխռովեալ ծովն հանդարտեցոյց, և եղև իբրև զկաթ կայուն. երկու սակաւ վայն հանապարհ մէկ զամիւն եփելու շափ ոչ յամեցայ. եւան զիս ի ցամաք ի մէջ խաչանց և հովուաց և պատառոզ շանց. զի սարք

վտանգ հասոյց աթոռոյն Էջմիածնի. և յետ աստանդական կենաց և դաւաճանութեանց, ըմբռնեալ և աքսորեալ դարձեալ ի Սեւան կղզի, աստ մեռաւ անարգարար: Զայսու ժամանակաւ յամի 1652 Յովնաննէս ոմն Շոթրեցի գրէ. «Եկի յանապատս Սեւան կոչեցեալ՝ որ» ի կղզիս ծովուս Գեղամայ... առեալ բերի (զԳան. ձարան գիրս) ի մեծավայելուչ աթոռս Բջնոյ Սուրբ Աստուածածնիս, և նորոգեցի և դարձուցի ի տեղի իւր յԱնապատն Սեւանայ»:

1663 + Մխիթար եպիսկոպոս, որ զառաջինն երէց էր Տէրիզարտաչ գեղջ Գեղաքունոյ և խոյս տուեալ ի բռնութենէ Փարսադանի տանուտեառնն, առանձնացաւ ի Սեւան, և ձեռնադրեալ եպիսկոպոս ի Փիլիպպոս. սէ կաթողիկոսէ՝ կարգեցաւ առաջնորդ անապատին: Սորա գործակից էր Բարսեղ վարդապետ, որ սառնասոյղ ծովակուլ եղև յամի 1660:

1695 + Մխիթար միւս. առ որով համանուն իւր և հայր ուխտիս մերոյ Սեբաստացի Սարկաւազն Մխիթար, յայնժամ 18 ամաց, եկեալ այսր յուխտ, յամի 1692, արժանաւորեցաւ հրաշալի տեսլան և խոստման Տիրամօրն, օգնական լինելոյ աստուածասէր ըղձանացն, մինչ աղերս արկանէր առաջի պատկերի նորին. որ և ցարդ պահի անդ, թէ և հնացեալ և խանդարեալ, որոյ է օրինակս<sup>2</sup>. և քաջալերեալ՝ յաջողեցաւ նորին Տիրամօր շնորհք հաստատել զկրօնս իւր (1700), յինելով վանքս՝ նախ ի Մեթոն Մոռէայ, և ապա (1717) ի վենետիկ, անուանելով զմիաբանն Որդեգիրս կոչալն աստուածայնոյ, որում յանձն արար զնոսա:

1740. Մարտիրոս եպիսկոպոս Զէրքէզեանց Շանդիգեցի:

1747-52. Յովնաննէս վարդապետ Կորաստեցի, առ որով յարձակեալ երբեմն Լեկաց ի կղզին, յոր ապաստանեալ էին բազում ժողովուրդ և տանուտեալք, զիմելով ի վերայ սառին, զի ձմեռն էր և ճրագալոյց Յայտնութեան, մինչ նա զպաշտօնն կատարէր, բեկեալ սառին ընկղմեաց զասպատակողսն:

1753. Սամուէլ վարդապետ:

1770 ? Յովնաննէս վարդապետ պարսաւեալ, մանաւանդ վասն ծովակուր առնելոյ զնախնեացն ձեռագիր մատենանս, ըստ վերոյգրելոցս:

17. . Աթանաս վարդապետ Մակոնցի, հինգ ամ:

17. . Ազարիա եպիսկոպոս Գանձակեցի, իբրև ամ մի:

17. . Եղիազար եպիսկոպոս Գանձասարեցի, երեք ամ:

1793-1805. Գրիգոր վարդապետ Գանձակեցի:

1807. Սարգիս վարդապետ Ոսկանապատեցի, որ սա

« յեզր ծովուն հեծեալ արտի ի մէջ հանգուցեալ էին. ի միջի նոց թին անցանելով զնացի. և ոչ ոյք ի նոցանէն իմացան: Եւ ելելով ի գլուխս բարձրագոյն լեբանց ի մէջ անասառախա ծառոց և խորափոս ձորոց անցանելով երթալի, ոչ գիտելով զարշաւանս իմ. այլ գիտէր նա որ զօրացուցանէր զիս և ուղղէր զգնացս իմ: Եւ բազմակերպ զազանաց հանդիպելով, և ոմանք յանցս ճանապարհին կալով, և ոչինչ Քոսս կրելով ի նոցանէն. շնորհքն Քրիստոսի, զինչ և իցէ հինգ և վեց աւուր ճանապարհն երկու օրն հասի ի կարս, երբեմն բոկ ոտամբ և երբեմն մաշկաւ. և անտի եկի ի կարսին »:

<sup>2</sup> Նմանակերպ նկարու գերագունին նկարաց Ռաֆ. Սանցիոյ:





## ՏԻՐԱՄԱՅԻ ՄԵՒԱՆԱՅ

ՅԻՇԱՏԱԿ ԵՐԿԵՐԻԻՐԱՄԵԿԻ (1692-1892) ՏԵՍԼԵԱՆ  
ՄԻԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՅԻ.






տարուծեամբ Տփղիսեցի բարեպաշտից՝ արար բազում նորոգութիւնս ի կղզւոյն. որում գործակից և աշխատաւոր իսկ լինէր Մելքոն ոմն ի նմին քաղաքէ, զամս քառասուն կացեալ ի Սեւան, ձեռօք իւրովք վաստակելով ի մաքրութիւն և ի յարգարումն եկեղեցեսցն: Առ սովաւ համբաւէին բարեկրօն քաղաքավարութեամբ վարդապետքն միաբանք Ռափայէլ, Մխիթար և Մակար. յետինս ջրատոյզ եղև յերթալն ի վերայ սառին, (1-13 մարտի, 1835): Յետ սակաւուց յայց ել վանացս (յ՛7 Օգոստոսի 1813), Մորիէ անգղիացի ընկեր դեսպանին ի Պարսս, և ընծայէ զպատկեր կղզւոյն, առաջնորդ ունելով զԲարսեղ աղայ տանուտէր. և էին յայնժամ 13 միաբանք. ըստ ասից սորա, երեք կամ չորս քահանայք, այլքըն աշխատաւոր եղբարք: Յետ ամաց ինչ և հայրենակից նորա քեր-ֆորդր ետես և ետ ծանօթս ինչ զծովուն Սեւանայ. իսկ յամի 1826 Այխալաղ երկրաբան գերմանացի:

1819 + 1840 Յովհաննէս վարդապետ ի Հաչաճուր գեղջէ Աղստեառ, վասն որոյ և Ղազարիցի կոչի: Առ սովաւ երկու բանասէրք՝ Չաքարիա եպիսկոպոս Գուլասպեանց Տփղիսեցի յամի 1825, և Մանուէլ վարդապետ

Կիւմիշխանացի յամս 1828-30, կամաւորապէս կացեալ ի Սեւան՝ գրեցին զպատմութիւն վանացն. յառաջնոյն օժանդակեցաւ Շահխաթունեանն ի Ստորագրութեան իւրում, յերկրորդէն և ես զրոյս: Յետինն նախանձախնդիր փայլման վանացն՝ խնդրեաց և հաստատեաց կոնդակաւ կաթողիկոսի զկալուածս ինչ և զթեմ նորին. յաւել և ինքն տալ յիւրոց ընչից սպասս և ձեռագիր մատեանս, և յաւարտ պատմութեան իւրոյ մի առ մի նշանակէ զանուանս միաբանիցն այնր ժամանակի (1829-30), վարդապետս հինգ, արեղայս չորս, սարկաւագունս երկու, ուրարակիրս երկու, եղբարս և ուխտաւորս (մահուտս) եօթն: — Առ սոքօք յամի 1834 (փերուար) Տիւրքա ճանապարհագիր բնախոյզ քննեաց զհիւսիսային ոլորտս ծովուն, զոր և նկարեաց, այլ ոչ ժամանեաց մտանել ի կղզին:

1840 Մինաս վարդապետ ի Ճաթղաան գեղջէ կոտայից, իբր ամ մի:

- 1811 Յարութիւն եպիսկոպոս Գանձակեցի, ամիսս:
- 1842 Յովհաննէս վարդապետ Անտոնեան Տփղիսեցի:
- 18 . . Յարութիւն վ. Մէրչանեան:
- 1880 Կարապետ վ. Պիւլպիւլեան:



28. Խաչանդակ տոփարար ի Սեւան. (տես յէջ 79, ի ծանօթ.)

# ՎԱՅՈՑ ԿԱՄ ԵՂԵԳԵԱՅ ԶՈՐ



**ՎԱՅՈՑԻՇՍԱԿ** պատմական և քաղաքական դիպօք և բարգաւաճ վանորէիք քան զքնաւ գաւառս Սիւնեաց, յարեւմտակողմն աշխարհին, կամ ըստ Առաքելի պատմիչի՝ «առ եզերք Գեղամայ և Լուռոյ», և յարեւելից Այրարատեանն բնաշխարհի՝ կցորդութեամբ Շարուրայ դաշտին, և յարեւելից հիւսիսոյ Նախճաւան գաւա-

ռի, ի հիւսիսոյ Ճահկոյ, և յարեւմտից բնագաւառին Սիւնեաց Մղկոյ, գետեղեալ կայ ՎԱՅՈՑ ԶՈՐ գաւառ: Հարաւային շրթունք տաշտին Սեւանայ՝ բնական և ծանօթ սահմանք են նորա ի հիւսիսոյ կուսէ. յարեւմտից միայն ոչ յայտնի բնական սահման, այլ ազատօրէն իմն թուի որոշեալ ի դաշտավայրի, յոր իջեալ գետն Արփայ՝ երթեալ խառնի յԵրասխ, ի Շարուր գաւառի. ի հարաւոյ կուսէ կանգնին լեռինք անջրպետք Նախճաւանի գետոյն և Արփայի. որք են՝ յարեւմտից յարեւելս գնալով, Գարա գոռ, Քեչաշ տաղ, 8490՝ բարձր. յորոյ Հս. գրեաթէ համահաւասար բարձրութեամբ թաշտանին ? գալեսի. յետ այլոց՝ Քեօքիւ տաղ, 9645՝: Իսկ զարեւելեան սահմանն ընդ մէջ Մղկոյ՝ ձեւեն Ալանկեզ լեռանց շղթայալար պարք, որք ի հարաւային եզերաց Գեղամայ ծովուն գրեաթէ անընդհատ ձգին ընդ հարաւ մինչեւ ցԵրասխ գետ:

Երկիր բարձրաւանդակ է վայոց ձոր հանգոյն սահմանակցացն, յերից կողմանց. միայն, ընդ արեւմուտս կոյս յորսայսեալ զիջանի ի դաշտակողմն Այրարատայ, բայց ոչ զոյգ նմին հարթայտակ. այլ բովանդակ երեսք երկրին բաւիղ իմն է բարձանց և ձորոց, կամ հաճոյատես

իմն թուէ և բուհ, անսոգիւտ անկանոնութեամբ բնութեան յարդարեալ, այլորակ քան զԳեղամայն ծով լեռնակոհակ, յախտէաձեւ տարածութեան. յորոյ շրջապար եզերացն բարձանց ի Հս. յԵլ. և ի Հր. ժողովելով վտակս յորդաղեղս գետանայ Արփա, և խուռն ալեօք զեռեալ ծաւալեալ ընդ ամենայն բաւիղս և խինձս ծործորոցն, հարստաբար խաղալով ընդ արեւմուտս՝ ելանէ ի Շարուր, արբուցանել զբազմաբնակ գետեղեանն և մտանել ի ծոց Երասխայ, հազիւ երիս կամ չորս փարսախս արտաքոյ սեփական ախարհին Սիւնեաց: Երկուս բաժանէ զբնիկ գաւառիւր, ընդ Հս. և ընդ Հր. ընդարձակագոյն գոլով առաջնոյն, վասն այն և հզորագոյն օժանդակ ունի անդ զԱլագեազ. ինքն բղխէ յաղբերաց բազմաց ի Հս. Ել. ծայրէ գաւառին և ի գոգոյ անտի Փորակին Գեղամայ և երկրին Շարայ, ի թիկանց բարձու լեռին Սարխար Սրաջառ (10705՝). մի յաղբերացն վտակացեալ կոչէր ի հնունն Զկնարած գետ: Զառաջինն խաղայ ընդ Հր. ապա յետ ընդունելոյ զՆուրս ձորոյն Քէթեայ ի հիւսիսոյ կուսէ՝ և զՔեօմիւր-չայ ի հարաւոյ, դառնայ յարեւմուտս: Եւ մէ կողմանէ, ի Հս. յետ Քեթեան գետոյ (զոր կարծեմ Գոռտեանի կոչելի ըստ հին անուան գեղջ միոյ), ընկալեալ զմանր գետակս Արկազանի և զմիւս եւս՝ ապա ընդունի զհզորագոյնն օժանդակացն՝ զԵրեզեաց գետն, (Ալագեազ), զՃանի-չայ՝ այլովք օժանդակօք նորին, որ ի թիկանց լեռանց Սոթից և ի կիւզգեղտերե-սպայի լեռնէ բարձուէ իջեալ՝ հանգոյն Արփայի խաղայ ընդ Հր. Մ: Ենտ սորա ընդունի Արփա գետակս մանուսս, զԱլպանա, և զԵրթին, (որ թուի յեղեալ յԱղոպեն գեղջ անուանէ): Զախակողմեան օժանդակք Արփայի են Քեօլպեկ ?, Քեօմիւր հզորագոյնն, որ թուի յանուն Գուլք գեղջ, Մարտիրոս, Բոռազ, Այրի և Ախուրի կամ Ախուրա, որ մտանէ յԱրփա ի սահմանածայր գաւառին:

Աղբերավայրք Արփայի հանգոյն Փորակին՝ յորոյ ի

հարաւայ կան, յանթիւ ձորափորս և ծործորս հատուա-  
ծեալ դժուարամատոյցք և ամայիք են. այլ ի բարձանցն  
միայն Ետր-բեփե լեռնակ նշանակի յարեւելս հիւսիսոյ,  
յորմէ գօտի երկայն այլ ոչ բարձր՝ ձգի ընդ Հր. ուր ամ-  
բառնայ թորս սաղ լեռանս: Ի գլուխ Քէթեան ձորոյ  
է Մոսրատ քեփեփե լեռնակ, և ի միջկողմն Գարան-  
լիք քեփեփե. յանկրպետս ձորոց Արփայի և Արկազեանի  
կայ (Մակ-գագաթն) թեփեփե-տէրիկ լեռան: — Ի գլուխ  
Եղեգեաց ձորոյն յանկրպետս Գեղամայ ծովատաշտին՝  
ամբառնայ Շահպոտազ. — յարեւմտագոյն սահմանս օ-  
ժանդակաց նորին՝ Հորս և Թառաւ լեռնակք. յորոց ա-  
րեւմտից ի գլուխ ձորոց Ելքին գետոյ՝ բարձրագոյն լեռան  
թօփ - տաղ 89Է՛: Բազում և այլ լեռնակք և լեռնաբը-  
լուրք են անկրպետք յոգնաթիւ ձորակացն յերկոսին եւս  
կողմանս գետոյն Արփայ, այլ լերինք բարձրաբերձք ոչ,  
բայց միայն սահմանահատքն գաւառին:

Նշանաւոր է Վայոց ձոր բուռաբերութեամբ, և ընդար-  
ձակ արօտավայր մարգօք, որ ասպնջականք են յընա-  
հոյլ տուարածից. մանաւանդ արեւելակողմն գաւառին  
երկուստեք գետոյն, ձորահովիտն Գոմերոյ, ձորահովիտն  
Քէթեանայ, և հիւսիսակողմն՝ որ է օջակողմն Եղեգեաց  
ձորոյն, նոյնպէս և ձորակք Ելքինայ. ուր ընդ մարգաց  
և արօտից՝ անեն առատութեամբ և կարեւորք ի սնունդ  
մարդկան, ըստ տանելոյ բարձրութեան երկրին, որ սա-  
կըս արտաքոյ կարոյ արքունի պողոտայից հաղորդակցու-  
թեան քաղաքաց, ոչ է քաջ ծանօթացեալ և քննեալ ի  
գիտնոց բնաբանից. այլ շատ համարեցի սուղ բան մի  
ծանօթ պատմին, որ կոչէ զայն « Գաւառ բարեկից »:

Ի հանքային արտաբերմանց ծանօթ են հին Զերնուկքն  
ի ծործորս անդ աղբերականց Արփայի, իբրև 12 մղո-  
նաւ ի Հր. Մ. հաշակաւոր Ներմկացն Մարայ: — Այժմս  
բախտան կապար յայտնեալ մերձ ի Գնգեվանս, ուր  
լի ցարդ անուն կիւմիշխանե գետոյ՝ որ արծաթահանս  
նշանակէ: — Բրածոյ հանից կարծիս տայ և անուն փոշա-  
հանք գեղջ. որպէս և Դարբն և Դերր՝ Երկաթոյ, քանզի  
և կոչին իսկ յայլագեաց Տեմիրձիկեր:

41. Սկիզբն շինութեան և բնակութեան գաւառիս  
Վայոց՝ անյիշատակ է, թէ և աներկբայ ի զարմից Սիսա-  
կայ, որպէս և այլք ի գաւառաց Սիւնեաց. իսկ կոչումն  
անուանն նորագոյն է. այլ ոչ որպէս պատմին ասէ,  
« Ի հասարակական դիպուածոց ողբոց և աշխարանաց  
» կոչեցաւ Վայոց ձորը. որպէս թէ վասն սպանման մե-  
ծի եպիսկոպոսին Ստեփանոսի յ'Ղ դարու՝ ձայնս և ող-  
բըս արձակելով բնութեան աւուրս քառասուն. և զիւրից  
ոչ յիշէ՝ զի անդստին ի Ե դարէ գրեն նախնիք մեր  
զայդ անուն՝ և յաշխարհագրութեան և ի յիշատակի  
հայրենեաց Յովսեփայ երիցու, որ կայաւ զաթոռ հայ-  
րապետութեան յետ Ս. Սահակայ և Մեհրովայայ: Յոյժ  
հաւանելի է ինձ այսպէս կոչումն յանուն տոհմի Վայ-  
կուն յելուզակի, որ յաւուրս Արշակունւոյն Տիգրանայ,  
յորմէ և գաւառ մի Արցախոյ Վայկունիք կոչեցաւ, և  
կայ գրեաթէ ի կռան այսր ձորագաւառի: Ի դէպ է թէ  
և չէնք կամ բերդ մի էր ամուր և աթոռ իշխանի յայս ա-

նուն, որ տարածեցաւ ի վերայ համօրէն գաւառին. և  
թէպէտ պատմիչք մեր ոչ նշանակեն որոշակի զՎայոց  
բերդ, այլ երիցագոյն եւս պատմիչք Արաբաց աւան-  
դեն, և շինեալ ասեն յԱնուշտէվանն Խոսրովայ ի կէս  
Ջ դարու, հանդերձ այլովք բերդորայիք Սիւնեաց. և  
այս արդարացուցանէ զյարուժն նահապետաց Սիւնեաց  
ի Սասանականն, որպէս յիշեցաք ի ծանօթութեան քա-  
ղաքական անցից աշխարհին. և կոչեն (Վայոց քերդ) Հըս-  
նի - Վայս, وایس و حصن. Գանդի ոչ յիշի այլ տեղի  
կամ աթոռ գաւառապետի Վայոց ձորոյ՝ զսա անկ էր  
համարել. այլ յետ անցից անցից աշխարհին՝ ի նորագման  
ազգային պայազատութեան յ'թ դարու, զահերէց իշ-  
խանք Սիւնեաց նստան Եղեգիս, յորոյ անուն կոչէր  
ձոր սեփական գետոյն, սրոյ հաշակաւ՝ ողջոյն իսկ գաւառն  
կոչեցաւ ԵՂԵԳԵԱՑ - ՁՈՐ, մինչ յառաջն փոքր մասն մի  
էր առ ընդարձակութեամբ ձորահովտացն Արփայի-  
բայց և ոչ առաջինն խափանեցաւ անուն, այլ մերթ այս  
և մերթ այն վարի. և աշխարհագիրն Վարդան ասէ համ-  
արձակ « Վայոց ձոր՝ Եղեգից ձորն է »: Սոյն անուն  
յեղեալ յայլագեաց յիւրեանց բարբառ՝ մնայ ցարդ և ի  
պաշտօնական դիւանս իսկ Ռուսաց՝ Տարալաղը, այս-  
սինքն Տերեփ ալ - Աղը, Ձոր Եղեգեաց, որպէս կոչի  
և առ մերայինս, եւս և ԵՂԵԳԵԱՑՈՐ. ըստ այսմ և զգե-  
տըն Եղեգեաց այլագիւրդ կոչեն Արաղը կամ Անտաղը:  
Նորալուր իմն՝ այլ ոչ անխորժ անուն ընծայէ գաւառիս,  
ոչ շատ հնագոյն գրիչ ոմն (Շարականի) յամի 1476, « Ի  
» յերկիրս Վարդի-ձորոյ, զոր այժմ Վայի-ձոր և Եղե-  
» գիս յորջորջի », գրելով զայս ձեւ օրինակի.

*Դ ծարսեանն շարունակ ի զանուշե  
հասանելի են՝ Ստեփան պոյլեղբոր  
գործերեաց թաւութեա հաւաւայ իւր  
աղբերութեա հայկազուն. զ ի Ե. թ. ի  
յաւ ժոտակալութիւնս Արշաղայոցատա  
Մ. յոսանեալ ի յերկիրս վազգեձորոյ  
զորայիմ վրայ ձոր և եղեգիս յորջորջի*

Ոչ առ հարստութեամբ Արշակունեաց և ոչ առ ոս-  
տիկանօք առանձինն յիշի Վայոց ձոր՝ ի քաղաքական  
դէպս, անորիչ գուրով յայտոսիկ ի համօրէն մարմնոց աշ-  
խարհին Սիւնեաց. աւանդէ միայն պատմին՝ յետ նա-  
հատակութեան Վարդանանց՝ առ Յազկերտի կամ առ  
Պերոզաւ, փախստէից ոմանց Հայոց նահատակեալ ի  
զօրացն Պարսից « Ի գաւառաւեղն Վայոց ձորոյ. ի գե-  
» տամիջին Եղեգեաց և Մոզանի ». և այլոց ոմանց՝ « Ի  
» ստորոտ բերդաբարի միոյ ի նեղ ձորակի... որ և տեղն  
» կոչեցաւ Անգեղ ձորը. և այլոց եւս՝ « Ի ջրկիցն՝ որ Ու-  
» տինք կոչի և Արտաբոյնք ». և ոմանց դարձեալ՝ « Ի  
» մէջ սահմանաց երկուց գեղն (յիշեցելոց)... կոտորեալ  
» յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց », մերձ  
ի Յախաց-քար մենաստան. զորոց ամփոփեալ զնը-  
խարս հանգուցին ի հոյակապ եկեղեցւօջ, ի ձեռն Գիւ-  
տայ հայրապետի և եպիսկոպոսին Սիւնեաց<sup>1</sup>, յամի իբր  
473: — Յետ այսր դէպք նշանաւորք են գաւառիս քա-

<sup>1</sup> Օրբելեանն՝ (Գլ. ԺԹ) Անանի կոչէ զեպիսկոպոսն. սլ ոչ  
կարի նաւանկան թուի այլքան երկարակեաց զը սմա. զի ի

սկզբան զգրութեան Հայոց Վայի նա կացեալ եպիսկոպոս, և ընդ  
ընտ աք 42 միայն ընծային նմա տթոտկալութեան:

աասնօրեայ դղորդումն և պատառուունք, յամի 735-6, զոր վասն սպանման մեծին Ստեփանոսի եպիսկոպոսի ասնն պատմիչք, և ահեղ իմն նկարագրեն. որպէս Օրբելեանն ասէ. « Կալաւ խաւար շօշափելի զգաւառն ա... » մենայն՝ զաւուրս քառասուն, և շարժումն և գլորդու... » մըն սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ դողացմամբ » յանդընդոց և բարձրանայր մինչեւ ի վեր, և անդէն » իրբեւ զայլս ծովու փուզանիւր. լերինք տապալէին, » վէճք ի հիմանց քակտէին, տունք և ապարանք գեղե... » ցիկք՝ յինէին գերեզմանք բնակչաց. աղբիւրք խղէին, » գետք կորնչէին, և ամենայն տեղի երբէր տատան... » մամբ. և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի » ներքուստ յանդընդոց և ի վերուստ յօդոյ՝ վայ ձոր, վայ » ձոր (!), և կենդանւոյն ընկղմեցան ոգիք իրբւ 10, 000, » զորս գիտէին և ի թիւ արկին, և զանծանօթիցն ոչ ոք » գիտէր զհամարն: Յաղագս որոյ կոչեցաւ անուն զաւա... » ոին Վայոց ձոր ». լաւ եւս էր ասել եթէ ճահագոյն հին անուանն հանդիպեցաւ պատահարս ոյս: Եամա նակագիրն Մխիթար նշանակէ ի համառօտութեանն, « Վայոց ձորոյ ընկղմումն ». և զի և այլք յիշն զայս, ոչ է երկբայելի եթէ սասանութիւն մեծ եղեալ է երկրին՝ վերագարթմամբ հին և հանդարտեալ հրաբուդիս մթերից, թերեւս նոյն իսկ Մակագագթն լերինն՝ որ առ երկ կամ ի կենդրոնի կայ պատմեալ տեղոյդ:

Յառաջ քան զվերանորոգութիւն նահապետութեան Սիւնեաց՝ ոչ յիշն առանձին իշխանք Վայոց ձորոյ, բայց միայն Դաւիթ ոմն ի սկիզբն Ը դարու, եթէ ստոյգ է բան գանձասացին ի Վահան Գողթնեցի, եթէ եկեալ նորա « Ամուսանայ ի Վայոց ձոր, ի տան Դաւթի մեծի իշխանի »:


Իսկ ի նորագել տէրութեան Սիւնեաց՝ զահերէց իշխանքն, անդրանիկ զարմն Վասակայ նահապետի, ժառանգեցին զՎայոց ձոր հանդերձ արեւմտեայ մասամբ աշխարհին, և նստան « յարքունական յապարանն՝ որ » ի գիւղաքաղաքն յԵղեգիս ». վասն որոյ թովմա Արծրունի յատկաբար ասէ, « Իշխանականն Վասակ՝ Վայոց » ձորոյ տէրն ». որ ի կէս թ դարու ընդ այլոց իշխանաց ի Բուղայէ գերի վարեցաւ ի Սամառա, և ապա դարձաւ Այսպէս և Բիւզանդացիք զիշխանս Վայոց ձորոյ ճանաչէին և կոչէին և գրէին առ նոսա յարքունական թուղթս, Α' ρ' χω' τοῦ Βασι' ξορ. որով վկայի և ինքնիշխանութիւն տերանցն այնոցիկ, թէպէտ և զառաջինն ոչ բացարձակ. այլ նախ Սմբատ որդին Վասակայ ի սկիզբն Ժ դարու

1 Գրեաթէ ի սկզբանէ ԺԱ դարու յերեսն զան ի պատմութեան Վրաց և Հայոց՝ Օրբելեանք, զառաջինն առանց իսկ յիշատակութեան տունին. այս և համանունութիւն յաղովից ի նմին տունէ և ոչ բացայայտ զրոյց պատմչաց, զժուարացուցանն որոշել զնմին և զազգասերութիւնն. վասն որոյ իրբեւ հաւանական՝ եթէ ոչ հաստատ՝ ընդունելի են կարգեալքն և յիշեալքն նախ քան զերկոսին զպատմիկ լիպարիտս. և են նախ ՌԱՄ կամ ԸՈԱՄ ոմն անուանի քաջութեամբ զօրավար Վրաց, յիշեալ յԱրխատակեայ Լաստիվարտեոյ և ի Մամթ. Ուռհայեցոյ, որոյ մարտուցեալ ընդ Յոյնս և ի տղմուտ վայրի ի կո շմանս Բասենոյ անկեալ յերի լարէն՝ սպանաւ, իրբեւ յամի 1022. Գրեաթէ ի նմին ժամանակի եղբայր նորա լիպարիտ (Ա) ի Նախնական պատակեցաւ առաջին ասպատակի Սէլուկեանց (բաւ Վարդանայ, ՄԳ) և խոյս ետ. յետ բաւ

ապստամբել խորհեցաւ ի Սմբատայ Թագաւորէ, որպէս ի սկզբանն յիշեցաք, վստահացեալ յամուրս գաւառին իւրոյ, բայց ապա սկն ածեալ ի բազմութենէ զօրաց նորին՝ հանդարտէր, անբաւական կամ անպատրաստ վարկուցեալ զբերդորսյան բուռն պաշարման, և ոչ յոյժ անկասկած՝ զանհարթութիւն վայրացն Վայոց, յոր սակս և նախնիք իւր յասպատակին Յուսիպայ՝ լքին զերկիր իւրեանց և յամրապոյնն եղեն ապաստան. յայս սակս թուի և յաճորդացն թողեալ ի սպառ զնոյն, և երթեալ հաստատեալ զոստան իւրեանց ի Բաղս, յամուրն Կապան, ուր և յետոյ Թագաւորեցին. բայց ի Վայոց ձոր՝ սահմանորդ Թագաւորութեան Բազրատունեաց՝ ասի իշխանական նախապատուութեան գաւառին դրոշալ և զեկեղեցականս բարձրացուցանել զպատու իւրեանց կամ զաթոռ, և ի նմին փառաւոր դարու՝ այսինքն ի ԺԲ, կողպտելով զիրաւունս միապետ մետրապօլիտին Սիւնեաց՝ կարգել առանձին եպիսկոպոս Վայոց ձորոյ. զոր նուաճեաց անդրէն Սարգիս կաթողիկոս ի միութիւն նախնաւան. այլ յետ երկուց դարուց դարձեալ երկփեղկեցաւ, միոյն աթոռ հաստատելով ի Նորավանս և վիճակելով զՎայոց ձոր և զԵրնջակ, և միւսոյն ի Տաթեւ՝ զբաւելով զայլ կողմանս Սիւնեաց. մինչեւ յեր ԺԳ դարու, ի զօրանալ իշխանութեան Օրբելեանց՝ շառաւեղ սոցին պատմիչն Ստեփանոս հաւանեցոյց ի միութիւն զերկոսին վիճակն ընդ գաւազանաւ իւրով, որպէս և այլուր յիշեցաք:

42. ՕՐԲԵԼԵԱՆՔ.— Յետ բարձման Թագաւորութեան Բազրատունեաց և ի տիրապետել Թուրքաց Մէլուկեանց՝ նուազեցին և ազգային իշխանք գաւառիս, մանաւանդ ի բառնիլ և Թագաւորութեանն Բաղաց. այլ իրբեւ յաճորդեաց Զաքարեանց ի սկիզբն ԺԳ դարու Թափել յայլազգեաց զբազում կողմանս աշխարհիս Հայոց, ընդ նոսին կորզեցին և զայս գաւառ, և բաշխեցին յաշողաձեռն և կորովի ազատաց նորին. զմեծ մասն մի ետունն լիպարտի թուին համանունն զրկելոյն ի Գէորգայ Թագաւորէն Վրաց, զորոյ և զիշխանութիւն և զկայս ժառանգեալ էին ինքեանք (Զաքարեանք). վասն որոյ և ինամով ետուն սմա վիճակ տէրութեան, « զՀրաշկա... » բերդ իւր գաւառովն (սահմանօք) և այլ բազում գիւ... » զորէս ի Վայոց ձոր», ընդ որս և զՈրոտն և զԲարկուշատ՝ յայլում կողման Սիւնեաց. իսկ զմասն մի եւս Վայոց ձորոյ ետուն Վասակայ Խաղբակեանց Խաչենեցոյ, հօր քաջին Պուշայ. և զայլ եւս մասն մի գաւառին՝

զում աճաց (1048) սա առաջնորդ կարգեալ համարումք բանակի Հայոց և Վրաց բաշխեցաւ ընդ խուսան և ընդ Տուրքիլ շաճ, յորմէ և զերի վարեալ՝ արձակեցաւ պատուով, և ոչ սպանաւ, որպէս պատմիչ տունին Ստեփանոս զրէ. քանզի պատմիչք Վրաց յիշատակեն զգոռալ նորա ընդդէմ նոցին իսկ Վրաց երկպառակելոց, որոց Թագաւոր Բազարատ եգիտ նարս ըմբռնելոյ զնա և արձակել (իբր յամի 1059): Նոյնպէս և որդի սորա իւլամի զնոյն կիւրս և զէպս կրեաց, ի բարձաձգութեան Թագաւորազանց Վրաց, ոմանց զօրավիզն և ոմանց հակառակ կալով, և զերի վարեալ երբայր Սմբատայ (Գ) թուի Ուլուլէթ, որոյ որդի իւլամի՝ բոտ հաւուն իւրոյ համանուն վարեցաւ ընդ Վրաց, և ողանու ի Դեմետրեոյ Թագաւորէ՝ յամի իբր 1145. յորմէ խոյս տուեալ որդի նորա Թիլը-



Ազգատունն Օրբելեանց






Աթաբէկն իւանէ ետ Մահուանայ որ ի զարմէ իշխանացն Բաղայց, ցուցեալ նմա նստոց զՆրոյն բերդ. և սա յետոյ՝ անզաւակ գոլով՝ պարգեւեաց եկեղեցւոյն Նորավանից, մասամբ միով վիճակին իւրոյ, զմիւս մասնն թողեալ եղբորորդւոյ իւրում Ամիրայի: Բայց առաջին երկուքին տոհմքն արուորագոյնք և շինարարք, Օրբելեան, քըն և Խաղարակեանք, բարգաւաճեցին զվիճակս իւրեանց, և հաճոյ գտեալք յաչս աշխարհակալացն Թաթարաց՝ պայազատեցին առաւել կամ նուազ յաջողութեամբ և փառք: Առաջնոյն պայազատք ցերկոտասան ազգ մինչև ի կէս ԺԵ դարու յիշին անընդհատ, որպէս ցուցցէ Մառք. գտանին և առ նոքոր և յետ այնր սերունդք զարմին, այլ ոչ է յայտ յորմէ՛ շառաւիղէ, ի նշանակելոցք ի դմին՝ եթէ յայլոց հին ոստոց:

Նախահայր պայազատացս այսոցիկ Լիպարիտն (Գ) որդի Ելիկումի որդւոյ Լիպարտի Բ, որդւոյ Սմբատայ, յետ մտից Թաթարաց ի Հայս՝ (ընդ որս մարտեաւ ի Գառնի՝ ընդ ձեռամբ Աթաբէկին իւանէի), զերծեալ ի մարտէն եկն յերկիր իւր, և շինեաց եկեղեցի հոյակապ ի Նորավանս. « յետ ամաց ինչ ի միջորեայ հասակի առ » նու հարուածս ի ճանապարհի յանկարծադէպ նետից, ի զլուխ լերինն որ հանդէպ բերդոյն Բորոտնայ », և

վախճանի ի Գոլոտի վանս և բերեալ Թաղի ի Նորավանս: Պայազատէ զնա անդրանիկ իւր Ելիկում Գ. և ի միւր Թաթարաց ի վիճակ իւր՝ առաջնորդութեամբ Ասլան-Նոյին զսրավարի, ապաստանի յոստանն Հրաչկարեղի, այլ յորդորեալ ի Թաթարէն՝ իջանէ առ նա և հաճոյ եղեալ նմա՝ ժառանգէ կամօք նորին « զՎայոց ձոր » և զԵղեգիս մինչև յԵրեբուն գիւղ, որ է հանդէպ Գառնոյ... և ապա հաստատեցաւ այս լինել հայրենիք տանն » և ազգին Օրբելեանց »: Ետ ամաց ինչ զնացեալ ընդ զորուն Թաթարաց յառու՛մն Մարտիրոսաց քաղաքի՝ անդ հիւանդացեալ մեռանի (1286), և բերեալ Թաղի ի Նորավանս, առ հօր իւրում: Յաջորդէ զնա երկրորդ եղբայրն Սմբատ, « որ էր հանճարով մեծ, խորհրդով ուժեղ, խելօք աննման, հնարիւք բազմագէտ, բանիւ առատ և քաղցր, լեզուաց հմուտ և ճարտար, ի դատարանի դիւանին անպարտելի. զի խօսէր լեզուս հինգ, հայ և վրացի, ուղուր և փարսի և զմուղալն իսկ »: Կասկածեալ սորա յԱւագայ որդւոյ իւանէի՝ իրրու նախանձորդի, չոգաւ առ Մանկու զան ի Թաթարս, հաճոյացաւ յաչս նորա, « և անուանեցին զնա Ենչոռ, որ է Տէրունի... և » ետուն նմա փայիզայ՝ ոսկի, որ էր տախտակ՝ ունելով զանունն Աստուծոյ և զարքայի գրեալ յինքեան. և այս



» էր մեծազոյն պատիւ նոցա. և զրեն եառելիս, որ է հըրաման, զոր մեք սիգէր կոչեմք. և տան նմա զամենայն առածն թրով Ասլանին, և զՈրոտն իւր երկրաւն... և զբերդն Բորոտնայ իւր կերովն, վասն սպանման հօր նորա անդէն Լիպարտի, որպէս զին արեան լեալ. և եհան զՍմբատ ի դուրս յամենայն դաշտարաց ի Վրաց և յայլոց »: Դարձ արարեալ և ծանուցեալ Բաշու Նոյինի զհրաման զանին, « էառ և թափեաց զերկիրն Որոտան թուլանդակ մինչ ի սահմանն Բորոտնայ և Բղենոյ, յորում և կայր ընդ աւեր աթոռն Սիւնեաց Տաթեւ: Էտա և զԵղեգիս և զամենայն գաւառն Վայոց ձորոյ, զՓողանանան, զՈւրծ, և զՎէրի իւր ձորովն մինչև յԵրեբունս և ի կոտայսն և ի Գեղաքունի բազում շէնս

» և աւանս »: Այլ նախանձորդըն Աւագեանք՝ ի ձեռն Արղունի մեծի կողմնակալի Թաթարաց « առին ի Սըմբատայ բազում տեղիս, և զմնացեալն կեղեքէին սաստկապէս. վասն որոյ հարկ եղեւ նմա վերստին զընալ առ Մանկու զանն » (1288). որոյ առաջի՝ խորամանկութեամբ արդարացոյց զԱրղուն՝ զոր ի բանտ արկեալ էր զանին. և սորա հաւատացեալ արձակեաց անդրէն յառաջին գործ կուսակալութեանն կողմանց Հայոց և Վրաց, յանձն առնելով զբարեխօս իւր զՍմբատ. « և վասն մեծի երախտեացն ոչ գիտէր Արղունն, եթէ ուրով պատուեացէ զՍմբատ... որ և տիրեաց ամենայն գաւառաց և զիւղից իւրոց. բայց յետոյ իւր կամաւ վասն սիրոյ և միաբանութեան ոմանց՝ դարձոյց և ե-

ճաշ անկաւ առ Թուրքս: Նմանապէս և միւս իւրում որդի Սմբատայ (Գ) կուսակից եղեալ Գեղեցոյ որդւոյ Գաւթի Թաղաւորի, յետ բազում արութեանց՝ սախեցաւ անձնատուր լինել ի Գեորգի բռնակալ, յորմէ և զրկեցաւ ի լուսոյ սլացն և յորդոյն՝ Սմբատայ, զոր սղան Գեորգի, նոյնպէս և զՔալթաթար զեղբայր նորս, կամ եղբորորդի, եւս և զՉիմա որդի եղբոր (1177) նորա Լիպարտի (Գ): Իսկ սա խոյս տուեալ ի Պարսս, անդէն մեռաւ. ապա երկուքին միւս որդիք իւր դարձան յետս, որոց երկեցազոյն Ելիկում (Ե) առեալ կին զԵթովուն դուստր Աքաւայ շահեցուց ծնաւ զԼիպա-

րիտ (Ջ), յորմէ սկսանի կարգ պատմութեանս Հայոց-Օրբելեանց: 1 ի շէնաց՝ առ որս Ծեղեի կոչի, առեալ էր Թաթարաց զայս նշանակ, զոր ընկալան և Պարսիկք, և կոչէին այսպէս, پاييز کيام فوجتک پاييز. Իսկ Բելի կամ Պելի بالش ստորեւ յիշելի, Բ-բ) նշանակելով ըստ Պարսից, յաճախ և զուստր ինչ գրամոյ նշանակէր: 2 Երեւոյ پاييز, Հրովարտակ կամ Հրամանադիր, լսի և առ Պարսս:

» Թող յետս աստ և անդ ի գիւղից և յազարակաց, և  
 » զայլն հաստատեաց սեպհական հայրենիք իւրոյ ազգի  
 » և զաւակաց: . . Սա շինեաց զհրաշակերտ ժամատունն  
 » ի Նորավանս ի վերայ գերեզմանաց իւրոց, և արար  
 » բազում արդիւնս և փարթամացոյց զնա », և այլն: Սա  
 տուեալ էր ի բաժին իշխանութեան եղբոր իւրոյ Տար-  
 սայիճայ, յետ մահուան այլոցն, զՈրոտն, յորոյ վիճա-  
 կի գոլով Տաթեւոյ աթոռոյն, նորոգեաց և զարդարեաց  
 զայն, և յարձանագրին (յամի 1274) կոչէ զինքն « Իշ-  
 » խող այսմ գաւառաց, ի դրանէն Բարկուշատայ մինչեւ  
 » ցահմանն Բլնուոյ ». յայտ է թէ այս իշխանութիւն եւ  
 » ղեւ յետ մահուան եղբորն՝ Սմբատայ՝ ի Դավրէժ (1273),  
 » զոր՝ անժառանգ գոլով նորա՝ ինքն պայազատեաց<sup>1</sup>. և  
 ըստ գրեւոյ որդւոյ իւրոյ Տեառն Ստեփանոսի, « պա-  
 » տուեալ և սիրեցեալ յաչս աշխարհակալացն և ամենայն  
 » մեծամեծաց՝ վարէր զիշխանութիւնն իւր բարձր և չը-  
 » քեղ փառք, ահարկու ի վերայ ամենայն թշնամեաց:  
 » . . . Եւ զի այր ուժեղ և սրտեայ և պատերազմող էր,  
 » և հասակաւ ահարկու, յամենայն պատերազմունս յոր  
 » և երթայր՝ մեծամեծ քաջութիւնս և անպարտելի զօ-  
 » րութիւնս ցուցանէր, ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս,  
 » ի Համս և ի Համայ ընդ Մարացւոյն, և ի Գարբանդ,  
 » ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ և մղեալ  
 » մարտս. վասն որոյ մեծամեծ պարգեւք պատուեալ լի-  
 » նէր յարքայից արքայէ. և առեալ զոսկի բախի՞ն՝ որ էր  
 » տափարակաձեւ ի չափ թղոյ միոյ և կշիռ լտեր միոյ.  
 » զի այն իսկ էր յաղթութեան պատիւն: — Սա շինեաց  
 » եկեղեցիս և արար բազում արդիւնս ի վանորայս. . .  
 » նորոգէ և բազում եկեղեցիս խախտեալս և հնացեալ  
 » լլս»: — Ի Թագաւորել Արղուն զանի (1284) ետ սի-  
 » րելոյ իւրում Դեմետրի Վրաց Թագաւորի « զամենայն  
 » աշխարհս Հայոց, զտունն Աւագեան և զտունն Շա-  
 » հանշահեան », այլովք հանդերձ. և Դեմետր առեալ  
 » զՏարսայիճ « տարաւ ընդ իւր զնա յերկիրն Աւագեան՝  
 » յԱյրարատ, և բազում թախանձանք բռնազբօսեաց  
 » զնա, և եղ աթարէկ ի վերայ ամենայն տէրութեան  
 » իւրոյ մինչեւ ի Տփիսիս և ի Կարս. . . և յայնմհետէ ու-  
 » նէր Տարսայիճն զաթարէկութիւն աշխարհիս Հայոց.  
 » և բազում դիրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ  
 » ազգիս Հայոց. և գնացեալ ի Տփիսիս՝ ետ բերել զդիւանն  
 » արքունի. . . և զի էին գրեալ ի դաշտարն անուանք վա-  
 » նորէից Հայոց՝ զի ի ներքոյ հարկի և դիւանի կայցեն,  
 » . . . եհան զանուանս վանորէիցն աւելի քան զ՝ 150. . . և  
 » այնպէս ազատեաց զամենայն եկեղեցիս: Նա և այն-  
 » քան ողորմած և զթած եղեւ առ ամենեսեան, զի ի

» Նետիս գիւղ՝ որ է ի վերայ Հրազդան գետոյ՝ խաչ  
 » կանգնէին և անուամբ նորա կոչէին զնա »: Թամի 1280  
 ետ ձեռնադրել զորդի իւր Ստեփանոս ի քահանայ՝ մե-  
 ծաւ հանդիսիւ ի Նորավանս, և յետ ամաց հնգից առա-  
 քեալ ի Կիլիկիա ետ ձեռնադրել յեպիսկոպոս, և « մեռ-  
 » յապօղիտ մեծ աթոռոյն Սիւնեաց ի վերայ այլոց եպիս-  
 » կոպոսացն որ կային աստ և անդ, ոմանք ի Վայոց ձոր  
 » և ոմանք ի Տաթեւ », ըստ գրեւոյ նորին ինքեան Ստե-  
 փանոսի. որ և յաւելու, զի գնացեալ առ Արղուն զան՝  
 ահիւ նորա նախ նուանեաց զնոսա, և ապա յանձն էառ  
 զի կացցեն յաթոռսն մինչեւ ցմահ իւրեանց, և յետոյ  
 միացի եպիսկոպոսութիւն Սիւնեաց: — Իսկ հայր նորա  
 « Իշխանաց իշխանն Տարսայիճ. . . վախճանի յիւրում  
 » զարապասին յԱրփայ » յամի 1290, և Թաղի ի Նորա-  
 վանս: Բայց զործ մի ապօրէն գործեալ էր սորա, զի առ  
 կենօք առաջին ամուսնոյն, (որ էր Արզու խաթուն  
 դուստր իմասելացի իշխողի կողմանց Սիւնեաց և դար-  
 ձեալ ի քրիստոնէութիւն), էառ ի Խաչեն միւս եւս կին  
 զՄիմա խաթուն դուստր Զալալի մեծի իշխանի, յորմէ  
 ծնաւ « որդի մի գեղեցկուղէչ և անուանեաց զնա Զա-  
 » լալ, և դստերս երկու, յորոց զաւագն ետ ի կնութիւն »  
 Գրիգորոյ իշխանի Խաչենոյ, և կրտսին յետոյ հարսնա-  
 ցաւ Մանուելի՝ եղբոր Դաւթի Վրաց Թագաւորի: Ընդ  
 այս գործ հօրն՝ « ոչ հաճեցան, ասէ պատմիչն, օրէնք և  
 » վարդապետք եկեղեցւոյ », ընդ որս և ինքն անշուշտ,  
 որպէս արժանն պահանջէր: Այլ ըստ քաջութեանն և  
 պերճութեանն՝ ոչ միայն առ կենդանեան, այլ և յետ  
 մահուն այնքան հռչակեալ էր Տարսայիճ, զի Խաչա-  
 տուր կեչառեցի ժամանակակիցն՝ յՈղբս իւր վասն ան-  
 չըքութեան Արեւելեան տանս Հայոց, բաղձայր տա-  
 կաւին տեսանել ընդ Պառչեանց և այլոց քաջաց,

« ԸզՏարսայիճ՝ զարմըն վեհազգի,  
 Զեղբայր մեծիւ որ Սմբատ կոչի,  
 Որ պատուեցաւ ի դրան արքունի,  
 Այնմ որ անուն էր Մանկու զանի »:

Եւ յերգ մի հարսանեաց, որոյ հեղինակ անյայտ, ասի.  
 « Այս խաչեղբայրս որ մշտանէ ընդ դրունս քո,  
 Սա նման է Տարսայիճ զօրավարին<sup>2</sup> »:

Ետ մահուան նորա ի վիճել որդւոցն ի վերայ տէրու-  
 թեանն, Արղուն զան զանդրանիկ նորա զԵլիկում կար-  
 գեաց իշխան ի վերայ ամենայնի. այլ նա իրովք կամօք  
 և ժողովով եպիսկոպոսաց և վարդապետաց՝ ետ բաժինս  
 անհամամայր եղբոր իւրոյ Զալալայ, և Լիպարտի որ-  
 դւոյ հօրեղբոր իւրոյ Իւանէի. « և այնպէս կային միաբա-  
 » նութեամբ և վարէին զտէրութիւնն յայսմ նահանգի՝

1 Ժամանակագիրն Մազաքեա գրէ յայսմ ամի 1273. « Սղա-  
 » նաւ ի Բուրթլեանց՝ Սմբատ իշխանն արեւելից, եղբայր Տար-  
 » սայիճ իշխանին »: Շփոթ և սխալ է ի բանս, և ոչ հանաչին  
 յայնժամ Բուրթլեանց, այլ յորդւոյ նորին իսկ Սմբատայ. գուցէ  
 շփոթէ ընդ Բ Սմբատայ թոռին թոռինն Տարսայիճայ, որոյ կատա-  
 բած անյայտ է, կամ թէ սպանեալ նոյնպէս ի Դաւրէժ: Առաջինն  
 այն Սմբատ՝ Արփայ կոչի ի տաղանագրին, և յարձանս ուրեք: Եւ  
 սորա եղբայր մի ԲՈՒՐԹԵՆԻ անուն, որ սակաւ ամօք յառաջ քան  
 զվերոյգրեալ թուականն սպանաւ ի մարտի ի Ղփչաղս, մարտա-  
 կեց գոլով Բերքայ զանի Թաթարաց:

2 Թուի ի միոյ յորդւոցն՝ զոր ծնաւ նմա Միմա խաթուն՝ սեւ-

րեալ տունի միոյ Տարսայիճեանց, զորոյ ոչ գիտեւով ստուգիւ  
 զազգս՝ ոչ կարացաք յօղել ի Մտուն. այն զի պատշաճ իսկ էր  
 թոռին միոյ նորա կողմէ յիւր անուն Տարսայիճ. և յիշէ ոք յոյս  
 անուն (Բ) յամի 1314. Թեքեւս սորա որդի է Խոսրովիկն Տար-  
 սայիճեանց, զորոյ դուստր Գոմցէ՝ էառ ի կնութիւն իշխանն  
 Վախրամ Շաճուր (1345). յիշեցի յետոյ (յէլ 96) (Գ) Տարսա-  
 յիճ անէր Եղեղեաց ի սկիզբն ժն զարու (1408), եթէ չիցէ որդի  
 Գուզունի կամ Գորդունի՝ թոռին թոռին հռչակապատճն Տարսայի-  
 ճի. յորմէ Թեքեւս այլ ոմն (Գ) Տարսայիճ՝ Մեծ մտակողեալ, ու-  
 բոյ որդի Սմբատ յիշի յամի 1498, և սորա որդի Տէր Եղիշէ-  
 գուցէ եղբայր սորա էր վերջին ծանօթ (Ե) Տարսայիճ յամի 1535:

» մեծարգոյ և շքեղաշուք իշխանութեամբ, պատուեալ  
 » և փառաւորեալ յայս աշխարհակալացն և մեծամեծաւ,  
 » ցըն, պահելով զաշխարհս զայս խաղաղութեան և ըզ-  
 » վանորայս ի շինութեան »: — Լիպարտին յիշեցելոյ էին  
 որդիք հինգ, յորոց երկրորդն Յովնաննէս մտեալ յուստ  
 եկեղեցւոյ յաջորդեաց զՍտեփանոս յեպիսկոպոսու-  
 թեան Սիւնեաց, ի 1311 ամի:—Տէր Ստեփանոս Տարսա-  
 յիճեան վերստին շինեաց զՍ. Գրիգոր եկեղեցի Տաթե-  
 ւոյ, և առեալ յեղբորէ իւրմէ Ելիկումէ զԱրիտ գիւղ ի  
 բաժին ժառանգութեան իւրոյ՝ նուիրեաց այնմ եկեղե-  
 ցւոյ. արար շինութիւնս և ի Նորավանս, որում նուիրեաց  
 զՉոռայ գիւղ, գնեալ 21,000 դրամի ի միւս եղբորէ իւր-  
 մէ Ջալալայ. հանդերձ այլովք, յորս են և Սրատիս և  
 Քարկոսի գիւղք, որք « իմ հալալ հայրենաբաժին (էին  
 » ասէ), որ ոչ աւագի և ոչ իշխեցողի, ոչ այլ ումեք ոչ  
 » ինչ հաշիւ կայր ի ներս »: Իսկ մեզ ժառանգութիւն  
 պատուականագոյն և վայելս եթող Ստեփանոս՝ զՊատ-  
 մոսրիս տանն Սիւնեաց, « բազում ջանիւ և յորով աշխա-  
 » տութեամբ, (որպէս ասէն), որոնեալ հաւաքեցաք ի  
 » հին և նոր պատմագրաց Հայոց՝, նա և յարձանագրու-  
 » թեանց եկեղեցեաց և ի հնագոյն նամակաց... էր ինչ  
 » և որ յաւանդութեանց ստուգագէտ արանց, որում  
 » վկայէին իրքն և տեղիքն, զհետ մտեալ ամենայն ճշդիւ  
 » ստուգութեան... որ կոչի Յիշատակաց մատեան »:  
 Աւարտեաց զգրութիւնն ի Նորավանս յամի 1297, (ըստ  
 իւրում հաշուի յամի 1299 Ծննդեան Քրիստոսի). և իւր-  
 բեւ ծնող ի վերայ ծանր երկամբք ծնիցելոյ՝ գգուական  
 բարձեալ բազկօք, որպէս ասէ, տարեալ ընծայեաց « ի  
 » տուն Տեառն՝ խայրիս խորհրդական և դահամունս նը-  
 »ւիրական» եկեղեցւոյ իւրում Տաթեւոյ. յորմէ և ժտէ  
 ընդունելի առնել զլիոյ իւրում Քրիստոսի, « յիւր աս-  
 » տուածային գանձարան զայս պտուղ յրթանց և ծնունդ  
 » հոգւոյ »: Յաւէ զի յաջորդք նորա ոչ յաւելին ըստ այ-  
 որմ ոճոյ զլար պատմութեանն, և ոչ իսկ եհաս մեզ յի-  
 շատակ կատարածի կենաց և ամաց եպիսկոպոսութեան  
 երախտաւորին, (հաւանորէն յամի 1309-10), որպէս և  
 ոչ եղբոր նորա Ելիկումի գործք և վախճան, և յախոր-  
 դացն. զոր մուրացածոյ բանիւք յիշատակարանաց մա-  
 տենից՝ մնայ մեզ փոքր ի շատէ շարայարել:

ԶԵլիկումի որդւոյ Տարսայիճի ոչ գտի այլ յիշատակս.

1 Յեւ ժ.Գ. շարու տակաւն մանկահասակ կոչի սա և յուսման՝  
 ի Գայլէճոր առ Եսայեայ, ի յիշատակագրէ միոյ, որ աղաչէ յի-  
 շեւ « զգնաւորաբոլ ծաղիկն եկեղեցւոյ զՍիւնեանէս զմականունն  
 » Օրբէլ, զհամբանն մշտափայլ, զուարեացեալ ի յիմաստս բանից »:  
 2 Մի յայս պատմագրաց է վարդան Մեծն, որոյ Պատմութիւն  
 գրեալն վասն Ստեփանոսի՝ և մաշեալ կերպութեամբ՝ կայ տա-  
 մեզ, հակերճ յիշատակագրս.

**Չ մտացող մտաքննող-խորհրդարանային  
 ու Չ մտնող ստեփանոս արհիեպիսկոպոս  
 և ե-Չ շնորհաշատ վերջեցեալ յիշեցեալ քիւրս**

« Զհարազեղ կարգապահ և զսքանչելի բարոնապետն զՏէր Ստե-  
 » փանոս սասցել սորա յիշեցէ ի Քրիստոս »: — Միւս եւս ծա-  
 նօթ պատմիչ է թովմա Արթուրի, որոյ ընդօրինակող Դանիէլ  
 վարդապետ յԱղթամար՝ յամի 1303, այսպէս գրուածով յիշա-

ի տապանագրէն ճանաչի հայրանման կորովի և քաջա-  
 մարտիկ գոլ, այլ և վաղաժամեան յամի 1300: Յետ տա-  
 սըն ամի յիշին որդիք նորա իշխանք կողմանցս Սիւնեաց՝  
 Պարոն Բուրթէլ և Պր. Բուրդտա, ընդ որս և Չայսար  
 կամ Չէսար որդի Սմբատայ, որդւոյ Լիպարտի, կառու-  
 ցող հոյակապ հոգետան Սէլիմի. յիշի նա և յամի 1349:  
 Բուրդտայն յետ բազում արութեանց տիգախոցեալ մե-  
 ռանի յամի 1318, ըստ տապանագրի իւրում, ի մեծի  
 պատերազմի. ըստ այլ յիշատակագրի հակառակորդ նո-  
 րա Խուռուճի Թաթար սպանանի հրամանաւ զանինս՝  
 Յառալ քան զայն յամի 1314 գրէ ոմն յիշատակագիր-  
 « Համարողքն ի Վայոճառ եկին, ու մինչեւ ի յամական  
 » տղայն համարէին ». առ Թագաւորութեամբ Էջրայ-  
 դու կամ Խարբանտա զանի Թաթարաց հանդիպի այս:  
 Յետ սակաւ ամաց (1321) յիշին միանգամայն « ի զօրա-  
 » վարութեան և յիշխանութեան գաւառաց »: Բուրթել  
 և Ամիր Հասան Պաօշեան, տիրող միոյ մասին գաւա-  
 ռին. յորում ժամանակի ի կողմանէ Թաթարաց կողմնա-  
 պահ կամ հարկահան կարգեալ էր Չօպան զօրավար ո-  
 մըն: Ճիւղարար և պանծանօք եւս յիշի Բուրթել յետ  
 այնր, հանդերձ զաւակօքն. որպէս գրէ ոմն յամի 1337.  
 « Յիշխանութեան տանս Սիսակայ մեծ սպարապետին  
 » Հայոց և Վրաց՝ Պարոն Բուրթելին, և զաւակաց իւրոց  
 » Պէշքէնի և Իվանէի, որք յՕրպելեանց »: Այլ ոմն ի  
 նմին ամի՝ պերճագոյն եւս գրէ, « ի տէրութեան տանն  
 » Սիսակայ մեծի սպարապետին Հայոց և Վրաց՝ Թա-  
 » գազարմ իշխանին Բուրթելին, և լուսընծայ ծիրանա-  
 » ծին զօրու և գամիր քաջ զաւակաց նորին Պեշքենի և  
 » Իվանէի, որ ամենայնիւ նման գոլ հօրն բարեպաշտի,  
 » այսինքն խոհականութեամբ և մատակարարութեամբ  
 » քըն զաշխարհս և զզօրս, նա և յառաջագէտ յարքու-  
 » նիս և մեծափառ. զի մեծարանս արար Տէր երեսաց  
 » սոցս »: — Յետ ամաց (1341) յաւելու ոմն և այլ պա-  
 տուանուն մի, ընդ սպարապետութեանն կողմով զԲուր-  
 թել և հիշպատուս: Յետ այսր թուականի ոչ գտանեմ  
 զյիշատակ նորա, այլ զորդւոցն. զորոց գրէ ոմն յամի  
 1348. « Յիշխանութեան և ի տէրութեան որ ի կայս և ի  
 » կոյս նահանգաց Սիւնեաց՝ Աստուծով զօրացեալ մեծ  
 » իշխանաց իշխանին Բէշքենայ, և հարազատ եղբորն  
 » նորին Իվանէի, որդւոց բարի պաշտմամբ փոխեցելոյն

տակագրէ. « ի խնդրոյ աստուածաբեալ, զիսական և արհիւնա-  
 » կան վարդապետի, միանգամայն և արհիական աստիճանի արժա-  
 » նացելոյ Տեառն Ստեփանոսի, որ է ակն արհեւելեան և արժուակալ  
 » մեծի Սիւնեաց տանն. և եթէ նախնեքն քննեցուք զնա, ոչ ոք  
 » է յիշխանացն և յիշխեցելոց արհեւելից կողմանց՝ բարձրագոյն քան  
 » զնա. զի ամենեցուն քաջայայտ ազգքն և նախնիք նորա. և նա  
 » այնպէս է ի մէջ նոցա փառաւորագոյն և պայծառ՝ որպէս զարեւ-  
 » դակն ի մէջ աստեղաց. և նա վասն սիրոյն աստուածային՝ խնդը-  
 » բեաց զպատմութիւնս ի մերոյ աստուածընկալ և սրբաւեր և ա-  
 » թուակալ սուրբ Լուսաւորչին ի Տեառն Չաքարայէ. իսկ սա  
 » մեծ ջանիւ եւ զժաղքէլ զսա յազաւս խնդրոյ նորա », և այլն:  
 Այլ ոմն յիշատակագիր ժամանակակից՝ սեփականելով նմա զհօրն  
 անուն, մազթէ, « Տէր Յեանուս, փառակից արա սուրբ Աւաքելոյս  
 » (Պողոսի) զՏէր Ստեփանոս Տարսայիճ, զի սոյնպիսի յօտարու-  
 » թեամբ կերակրէ զիմ ազգատութիւնս », և այլն:  
 3 « ի հիւպատոսութեանն և ի սպարապետութեանն Հայոց Բիւր-  
 » թէլին »: Ի դէպ էր ի կայսերաց Յունաց ունել նմա զպատիւ  
 կողմանս. այլ ոչ զիսեմ եթէ Լիւր զս տակաւնն առ նոսա:

» առ Քրիստոս յոյսն ամենեցուն՝ Պարոն Բիրթէլին » . որ և երեւի ի բանէդ՝ սակաւութեամբ յառաջ վախճանեալ խաղաղութեամբ : — ԶԲեշգէն յաջորդեաց հարազատն ի վանէ, որ յիշի և յամի 1377, յորում ժամանակի « իշխանութիւնս Հայոց էր նուազեալ (գրէ ոմն), և մի » այն մնացեալ ի վանի, որ կոչի ինամնիկ, որդի մեծին » Բուրթէլին, ի մէջ այլասեռից, բազում հարկապահան » յուրթեամբ » : Յառաջ քան զարչաւանս Լէնկթիմուրի վախճանեալ է իւանէ. զոր պայազատեցին Սըմբատ և Բուրթէլ (Բ) որդիք նորա յելս ԺԳ դարու և ի սկիզբն ԺԵԻ՞, արդարեւ ի դառն ժամանակի . յորում յետ ասպատակութեան և աւերանաց ամենայն երկրին Սիւնեաց, Լէնկթիմուր՝ զՄիրանշահ զորդի իւր կարգեաց իշխան աշխարհիս մերոյ և մերձակայից, և նա զիւր որդին զՍմար, « որ և յառաջին ամի իշխանութեան իւրոյ, երեք » իշխան յաշխարհէս մերմէ՝ որ իրրեւ զճիւղ ի մէջ ողիւս » զաց մնացեալ էր ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ » յանհաւատութիւն, զորդին իւանէի զթոռն Բուրթէլին՝ » զԲուրթէլ անուն՝ յազգէ Օրբէլեանց, զտէրն Որո » տան, և զեղբայրն նորին Սմբատ անուն, (զորս) տա » բան ի Սմբատն ընտանեաց իւրովք . որ յետոյ աս » տուածային ողորմութեամբն և աղօթիւք նոցա՝ դար » ձան ի հայրենիս իւրեանց . և զտէրն Եղեզեաց՝ Տար » սային անուն, զորդի Գորգին (կամ Գորգունին) ուրա » ցուցին » . այլ յետ դարձին ի գերութենէ՝ դարձան և յուրացութենէն և « եկին ի հաւատք », ասէ նոյն պատ » միչ : Բուրթել վախճանեալ է յառաջին ամս ԺԵ դարու, քանզի Ասաբէլ եպիսկոպոս Սիւնեաց զեռորդի Գր » Տաթեւացոյն ի յիշատակարանի Ագամգրոցն, նախ առողելով,

« Զիշխանըն մեծ Սմբատ և զՊարոն Բիրթէլէր Ազգագ և զաւակագ ծաղկեցուցէ Տէր՝ » . յաւելու ապա .

« Ննջեաց իւր զաւակագ Պարոնըն Բիրթէլէր . ԶՊարոն Սմբատ՝ որդովք պահպանեցէ Տէր » : Առ սա (Սմբատ) եկեալ էր Գրիգոր Տաթեւացի ի ժա մանակի սովոյն, յետ ասպատակի Զաղաթայ հրոսից Թի մուրին : Յետ մահուան սորա և սպանման Միրան շահի ի Գարա Երուսաղէմ, մինչ հակառակորդ նորա Սուլ դան Ալմատ տէրն Միջագետաց եկն էառ զԻսպրէժ, « Սմբատ զնաց առ նա, խաբեալ ի խրատտուաց իւրոց, և » նորա մեծարեալ զնա՝ ետ զգիւղն Անգեղակոթ նմա » պարգեւս » . ընդ հուպ ի վերայ հասեալ Երուսաղէմ ի բուս ռըն արկ զԻսպրէժ և մարտիւ վանեալ սպան զԱլմատ . և յամի իրր 1407 էառ զՈրոտն՝ զկայանս Սմբատայ : Զի՞նչ յետ այնր եղև սմա, ոչ գիտեմ . այլ որդի նորա և յաջորդ Բեշգէն (Բ՞), որպէս թուի՝ նեղեալ ի բազում ասպատակէ և յերկար հակառակամարտութեանց Աքան

1 Նոյն յայլում յիշատակարանի նման քերթուածոյն յամի 1403, ասէ . « Ալ և զիշխանըն մեծ Սմբատ, ԶԲիրթէլ եղբայրըն հարազատ, Զաւակք նոցա ծնընդեամբ առատ Բազէս Հայոց լինել անհատ » : 2 Թովմ. Մեծօրհնի զԲեշգէն որդի Սմբատայ և թոռն Բուրթէլ լի կոչէ, այլ յիշատակագիրք ցուցանեն լինել թոռն եղբոր Բուր


տար Թուրքի և Թիմուրեանն Շահ-աուհի (1421-1437), որք երկիցս մտին և ոտնակոխ արարին զՍիւնիս, « ա » ռեալ զամենայն կողմն Սիւնեաց և զամենայն գաւա » ռըս չրջակայ մերձ ի Սիւնիս, աւելի քան զ՛6000 քը » ռիստոննայ տունս և ազատեալ ի Շահ-աուհէն՝ հա » սոյց ի կողմն Վրաց . և Թագաւորն (Աղեքսանդր Ա) առ » երեսս պատուեալ զնա՝ տայ նմա զղղեակն Լուու » իսկ նա բարեպաշտ և երկիւղած գոլով, սիրող կարգա » լորաց և աղքատաց, ողորմած և խաղաղատէր առ ա » մենեսեան, ձայն տուեալ առ նա ժողովէին . և նա զա » մենեսեան պատուէր և մեծարէր հացով և սեղանով և » հանդերձով, զամենայն դիմեալս առ նա յազգաց Հայոց : » Իսկ... անդուսն երկուցեալ ի նմանէ սին և սնտի » կարծեաք, զի մի Հայք առ նա ժողովեցցին և աւերումն » լինի կողմանն Վրաց... զաղտնի դեղ մահու տան յայր » մի Ամադին անուն յազգէս Հայոց, խոստանալով մե » ծամեծ պատիւս . և... տայ նմա յանպատրաստիցն դեղ » մահու ի ժամ կերակրոյն : Եւ նորա իմացեալ՝ դեղա » թափս խնդրեալ և ոչ ինչ օգտեալ, աւանդեաց զհո » զին ի ձեռս հրեշտակաց . և տարեալ առ հայրն իւր » Սմբատ և եղբայրն Ստեփանոս եպիսկոպոս սուրբ » ուխտին Տաթեւու՞, ուր հանգուցեալ էին... և սուգ » մեծ եղև ամենայն ազգիս Հայոց և յուսահատութիւն » մերային ազանց . վասն զի ճիւղ մի կայր ի մէջ ողիւս » զաց, և աստղ մի ի խաւար գիշերի, և տեղիք ա » պաւինի ամենայն քրիստոնէից ազգի : Եւ մնաց եղ » բայր մի նմա Շահ անուն, վարժեալ և սնեալ առ որո » վայնամոլ ազգին . և անարի գտեալ, ոչ ի խնդիր ե » լեալ հայրենի գաւառին : Եւ որդի մի փոքրիկ մետա » սան ամաց աւելի կամ պակաս . որոյ յիշատակն օրհ » նութեամբ եղիցի :... Եւ իշխանք նորա վրէժխնդիր » եղեն անօրէն Ամնադնին, ծայրակոտոր արարեալ յո » տից և ի մատանց, և ոչ կարացին ի խոստ ածել ըզ » տուողն մահաբեր դեղոյն՝ որ եհան զիշխանն մեր ի » կենաց » : Այս եղև յամի 1438 : — Բիշի Սմբատայ և դուստր մի՝ զոր ինքն կարծեցեալ դաւաճանն Թագաւորն Աղեքսանդր՝ առեալ էր ի կնութիւն՝ : — Զայտոսիկ աւանդէ մեզ Թովմա Մեծօրհնի յաւարտ պատմութեան իւրոյ . անյայտ մնայ կատարած Շահի եղբորն Բեշգէնի, և որդեկին . որք եթէ դարձան և թէ ոչ անդրէն ի Վայոց ձոր, լուէ կարգ ազգաբանութեան նոցին . սակայն յիշին տակաւին պայազատք տոհմին, որպէս Տարսայի ճեղանքն՝ զոր վերագոյնդ նշանակեցաք ի ծանօթութեան, և որք յիշեցցին յետոյ ի տեղագրի Եղեզեաց : — Սերունդք տոհմին աներկբայապէս տեւեցին և յետ այնր, և ցարդ իսկ տեւեն ռուսայանգ կոչմամբ Օրպիչխանօֆ, որպէս և հեռաւոր ազգակիցք իւրեանց ի կողմանս Վրաց . և մարթէ մանր հետաքննութեամբ յերեւան հանել ըստ ազգա

Թելի՝ այսինքն է իւանէի, որդւոյ Բուրթելի, որդւոյ Ելեկումի : 3 Բիշատակագիր մի կոչէ զսա ոչ միայն արքեպիսկոպոս Սիւնեաց այլ և Պարոն Երեւա՞յ, և ասէ վախճանեալ ի Վիրս յամի 1423 յերիտասարդութեան, և սուգ մեծ թողեալ մօր իւրում : 4 Վրաց պատմիչք ոչ յիշեն զանուն կնոջ Աղեքսանդրի, այլ զորդեսն՝ վախտանգ և Դեմետր, որք մի ըստ միւրջէ Թագաւորեցին ոչ ընդ երկար ամս :



համարին և զղէպս անցից գաւառին վայոց ձորոյ. զորմէ յետ կիսոյ ժե դարու մինչեւ ի սկիզբն ժԷՆ շունիմբ առանձին ինչ ծանօթս. յայտ է զի զհասարակաց աշխարհին բաղդ կրեաց և երկիրն այն, զնախկին հոյակապ իշխանացն պայազատս պահելով ուրեք ուրեք տանուտէրութեամբ Մէլիբաց:— Գտանին և առ մեզ համառօտ ազգարանութիւնք ինչ կամ ազգաշար անուանք Օրբելեանց ժԷ-ժԸ դարուց, այլ ոչ նշանակին յորում գաւառի լինել. այսպիսի է առաջիկայդ, որ ընծայէ եօթն ազգքս՝ իւրաքանչիւր կանանցն անուամբ ի վերջոյ ժԶ դարու ցկէս ժԸՆ, ռամկարան վերնագրաւս.

**ՈՒՌԲԵԼԵԱՆՑ ՑԵՂՆ ԱՅ**



Շահ Աբաս՝ ընդ այլս գաղթեցոյց զՀայս և ի գաւառէս վայոց ձորոյ, որպէս գրէ Գեղամեցին Դաւիթ.  
« Զորն Եղեգան եւ Նախելվան՝  
Զամենեսեան սուրկուն տարան »:  
Ինքն իսկ Շահ Աբաս եկն երբեմն ի վայոց ձոր, ուր բերին առաջի նորա զՄեղքիսեդ կաթողիկոս կապեալ՝ իբրեւ փախստական, և նա առանց տեսանելոյ առաքեաց զնա ի Նախնաւան նովին կապանօք:

43. ԲԱՅՄՔ ՎԱՅՈՑ ԶՈՐՈՑ՝ ի Զաքարեանց տուեալք առ Օրբելեանս և առ այլս, յայտ առնեն զի և յիշխանութեան բնիկ տերանց Սիւնեաց՝ գոյին մանր ինչ բաժանմունք վիճակաց ի գաւառի անդ, թէպէտ և ոչ յիշին որոշակի, բաց յեղեգեաց ձորոյն, զոր և մեք ի տեղազրութեանս զատուցանեմք յառանձնակ վիճակ, և զմնացեալ մեծ մասն գաւառին յերկուս վիճակս եւս՝ ըստ գնացից գետոյն Արփայ, ի Հիւսիսային և ի Հարաւային վայոց Զոր:

Ի հին ցուցակի հարկաց եկեղեցւոյն Սիւնեաց՝ իննըսնիւ չափ գեօղք կամ տեղիք նշանակին յանուանէ՝ ըստ այսմ կարգի, հանգերձ բաժնիւ հարկին:

Գետիկ ( Զայքեմտ )	12
Դերբն	10
Գոլըշտի վանք	6
Ուզի ձոր	10
Արտոց գետ	6
Տեառնավանք	12
Մարտիրոս	7
Ապարանք	6
Բարձիշէն	12
Մայրադուրը ( Մարատուս )	12
Աջողք	10
Մոխրոց	6
Կապոյտք	12
Կտրօնք	10
Դեկն	10
Աղեալ	10
Արուճ	12
Բոր	10
Աջառագաւիթ	6
Փշօնք	15
Գաղատայ. Գաղատատ	10
Խոպաւաս	10
Կորոտիւնք	10
Լիճ	6
Ըրվէնք	6
Կամրջոյ ձոր	8
Խորձայ	8
Աղուպէն	8
Զեղեայ	8
Քաղիմարգ	6
Եկեան	10
Երերունք	10
Գնշին	6
Բակերտ	10
Երդեչ	10
Որգոյերեգի	6
Ապանայ	6
Վարդենիք	10
Մսն	12
Հացիք	7
Ագարակի ձոր	5
Նրբիւն	12
Եղեգնաձոր	12
Նորիք	12
Բերդիւմայր	20
Ամաղու	10
Կուրանք	12
Արկաղուկերտ	6
Հորք	12
Ողեան	10
Խարաշկօնք	10
Արտաբոյն	12
Արար. Արօր	7
Փրակայ	12

Անգեղի ( Հասանքենտ )	12
Գրկիք. Գրկի	6
Եղեգիք	12
Սարկողովք	20
Մոզն	12
Ագարակ	12
Արկազն	12
Երիժու	6
Փշատիք	6
Արենի	12
Երերին	10
Ատշար ( Աքճաքենտ )	6
Խոտորձի ( Չիրաք ? )	12
Երերունք միւս	10
Անգոնք. Անգանք	6
Կէչուտ ( Գոռչձի )	6
Պրակք ( Պիչեաք )	12
Ջերմուկք	12
Աղթաբոյնք	6
Երկայն - արտ	6
Շատախ	6
Շատախ միւս	6
Գուտենի	12
Յրսուգետ	6
Հաւու	6
Միջագետք	6
Բուեղի	8
Խնձորուտ	6
Եճեղի	10
Դրունք	10
Ուռիք	8
Կաքաւուց աղբիւր	6
Գոմք	6
Ունջոռք	10
Եզնանիստ	6
Աղնճոց բերդ	6
Գնդեվանք	10

Քարեվանք
Հերհեր
<i>Չարդիս նշանակին իբրև 68 կամ 70 գեօղք շէնք և 30 ամայիք և անրնակք, յորս հայանուանք են, զատ ի վերայիշելոցդ,</i>
Ախուրա
Խաչիկ
Տանձիկ վերին և Ստորին
Մանիշկա
Սալ
Արտարաս
Ազատեկ
Առինճ
<i>Չատ յայցանէ գտանին և ի սպառ աւերակքս,</i>
Վարդափուլ
Գանձակ
Վանք
Վարդանէս
Բուկերտ ?
Կիրակասար
<i>Վանորայք յիշատակեալք ի վայոց ձոր՝ են.</i>
Թանահատք
Թանատէի վանք
Խորածոր անապատ. Նորավանք
Նորավանք միւս
Խոտակերից վանք որ և Քարկոփ
Հերմոնավանք կամ Քարավանք
Կիւնէի վանք. Կնեվանք
Գայլեծոր
Սիոն
Չիւնասարոյ վանք
Յաղաց-քար
Գնդայի վանք

*Չատ յայցանէ յիշատակին առ պատմիչս և ի գիրս,*

Հողոցիմ
Հրաշկաբերդ. Հրասեկայ Բ. կամ Կապոյտք
Ցախացքար
Ոստինք
Սուլիմաբերդ
Սրկոծնք, Կթէ չիցէ Սարկողովք
Բոլորաբերդ
Փողահանք
Քարկոփ
Հաւուշ
Շատիկ
Չուա

Յետ յանդիման առնելոյ զնախնեաց մերոց կիսա մասնեայ վիճակազրութիւն գաւառիս Վայոց ձորոյ, արժան համարիմ կարգել և զտպմուս, ըստ աշխարհահա մարի 1886 ամի՝ որ ի պատճառս զինուորազրութեան, ըստ իւրաքանչիւր գաւառաց նահանգացն Կովկասու, յորոց մի և Չանկիզուր ( յեյիսաբէթուպօլ նահանգի ), որ բն վանդակէ զՎայոց ձոր և զՄղուկս, զերկոսին գլխաւոր գաւառս Սիւնեաց. յորում համարին գեօղք իբրեւ 330, խմբեալք յ'75 Հասարակութիւնս՝ որք կոչին յանուն գըլխաւոր գեղջ կամ աւանի խմբիցն, և զորս դասեմք այբուբենական կարգաւ, նշանակելով զթիւ տանց և անձանց գիւղորայիցն Հայոց, իսկ զայլաղջեացն՝ կամ զօտարաց՝ միայն զանձանց թիւ: Գումար միահամուրնակչաց ( Չանկիզուր ) գաւառին է 124,000, յորս Հայք 57,500, տունք նոցա իբր 7000:

Աշխարհագիր Զանկիզոյր գաւառի, ըստ 1886 ամի.

ՀԱՍՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ	ՀԱՅՔ		ՀԱՍՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ	ՀԱՅՔ	
	Տուֆ	Ողի		Տուֆ	Ողի
Ահլու	79	562	Բարդազ (Բարդուճաղ)		689
Գուշնի. Թագաքէնտ	69	481	Փուշանլու		265
Ահլուի Ուշաղի			Դալլաքլու		162
Քունապլու - Մուսխանլու		493	Բիջանիս		741
Քատիլու		220	Գարաքէկլի		157
Շահվերտի Ուշաղի		211	Գասում ուշաղի		638
Կիւրնիլու		238	Բիրջեւան		211
Թամուր Մուսխանլու		123	Կէնլիք		318
Տօվուճլու		311	Շէհէրնիք. Թաղլու		95
Նօվու տէրէ		143	Մալադաքէշին		565
Ահլուի Քէնտ	99	883	Բունակոմ	178	2060
Հերու. Հայրի	58	446	Գալէ-տէրէսի	337	2631
Մաղանջուկ. Մահաննու	23	263	Գարազլազ		1720
Քարաշէն. Դաշքէնտ	58	600	Ավրայան. Ախասլու		182
Ահտարա		1077	Դարգիլի		1200
Մալվալան. Մալվրան	41	281	Դարպաս	42	333
Մարգիկերտ ? Մատրակերտ		291	Գետաճաղ	33	265
Ախլանեան	111	1088	Լոր	37	384
Տլորս. Տուլուս	60	563	Շինաճաղ	61	562
Ագքէնտ	42	365	Լճեն	27	211
Բնունիս	36	282	Զանկեալան		226
Անգեղակոմ	179	1631	Ուազում		71
Գարազիլիսէ (Գալանուզ)	43	377	Դունակուլու. Թուրապատ		108
Պալազ. Պիլեազ	39	360	Գրախ Մուշուլան		186
Աստազոր	99	795	Թաճար		345
Թրուտ (Թուուճ). Թխկոտ		199	Մէլիքլու		112
Արճուենիկ	98	855	Իչարի Մուշուլան		236
Զափնի	38	394	Իսկէնտէր բէկլու. Տէմիրնիլէր		214
Միւլքէչան	23	258	Թաճար		251
Սեւաքար	84	694	Քիասլու		85
Եղինգն = Շապատին		261	Գարազօյունլու		142
Բաքալի Գայալի		166	Շամօվու		81
Գարա գայկա		132	Իկտալու կամ Իկիտ-Ալի		110
Խտրրլու		170	Լեւազ. Լեկվազ		375
Լափա - Հէյրանլու		129	Թէյ. Հանիլու. Տեհի		174
Ապտալանլու		145	Ագարակ	17	142
Պալա - Հասանլու		115	Վաղրավար. Պուղավար	19	176
Կէօլնիք		64	Կուրիս	23	190
Շարիֆ - Աղալու		37	Խալանի		308
Բազարչայ		465	Բայտաղ		58
Բայանդուր		869	Սէլիտէր Քամանլու		178
Քէօսալար		315	Շիրվանշահլու		68
Պինանէրի		151	Գարաչիման		225



ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ	ՀԱՅՔ		ՕՑԱՐՔ		ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ	ՀԱՅՔ		ՕՑԱՐՔ	
	Տուևք	Ողք	Ողք	Ողք		Տուևք	Ողք	Ողք	
Գաշնով				31	Խորամա				269
Քէդակլու				206	Պապա Եաղուպ				145
Ինճէվար				92	Մինճեւան				53
Խանածախ				164	Մուղանլու				136
Խոզնավար				102	Ճավատրէկլու				106
Խանտակ				112	Հանի Ալիլու				101
Գարահալու Կիւլապուր				198	Ճաղազուր . Ճաւածոր				287
Գարահալու Չէնալու				181	Չայքէնտ				226
Ճինիկ	613	1219			Սիւմիւքլու				144
Գարագաշլու . Գարահանիլի	188	1465	252		Գարային կամ Գարա եիւզ				105
Խնձորէք	57	509	258		Ջապուկ				112
Խոտ	134	909			Սուս - Ջապուկ				174
Քարունջ	106	976			Մուրատու				190
Խօնաղան Ա				87	Ճէնիմլու Ա				686
Խօնաղան Բ				337	— Բ				151
Խօնաղան Գ				42	Մալիքէկի				950
Ուլաշլու կամ Ուլահլու Ա				77	Ճաղազուր Բ				204
— Բ				55	Մամէտի				219
Գլինան				74	Չինարլու				168
Ապուլնա				123	Կէվէրնիկ				142
Աթուննի				182	Խան - լաւա				63
Քէվսատիկ Ա				175	Գարագաշաղ				52
— Բ				57	Գուշնի				38
Կաւարտ	54	453			Մեղրի	167	947		
Կատար				250	Մուսուլմանլար				830
Պառաւատուն	41	332			Տաքեաղան ?				174
Շահարնիկ				371	Մօլլալար				236
Կէօտաքլար . Կէտակլու					Ուճանապաս	37	317		
Դիլալու Մուսքանլու				212	Ապտալլար . Ուրուճլու				462
Դիլալու - սէրայ				238	Գզընըզ				306
Կիրաթաղ				108	Հոչաս . Հոչսնց				514
Կիկիլու . Քիդի				537	Չէյվա				268
Կիկի Սօֆուլու				416	Մկրիկ . Չիկրիկ				95
Անիլու				254	Մօլի վերին և Ներքին				637
Գուշնիլու Ա և Բ				153	Գարալար				129
Բահարլու				221	Հիւսէին ուշաղի				94
Փիրիլու				61	Քուրդուզան				64
Կորէս . Չանկէզուր	459	3142	257		Ռաշիտ				92
Կուռնիձոր . Կէրէնզուր	219	1334			Նիւղատի կամ Նիւվատի				1083
Կուտկում կամ Ուտկում	48	507			Այնազօր . Էնէզուր				204
Չաքատին . Չքտէն	38	351			Շալվա				468
Բաղաւիրն . Բեխեւերջի	38	324			Գարա պայրամլու				462
Քեարխանա				135	Ռասուլլու				103
Վիչազան	43	385			Գարաչանլու Գումպազլու				118
Բեխ	29	267			Նամլու				162
Հալ				392	Ալագայա Գարաչանլու				187
Մամար				165	Շախսուվարլու				420
Միրլար				98	Պօզլու Արճաքէնտ (Քեամալի)				443
Քազիան				161	— ֆուլ				181
Հարար կամ Խարալ	134	1004			Ագքէօրփի . Պօզնալու				490
Ալիանլու				714	Ալքաուտ				85
Ալիանլու Պաշարաթ				137	Վարագզուն Կէրիք				304
Մինճեւանլու . Ճահանկիրպէկի				218	Միրիկ - Հասանլու				192

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ	ՀԱՅԳ			ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ	ՀԱՅԳ		
	Տուֆ	Ողիք	Ողիք		Տուֆ	Ողիք	Ողիք
Մինքենտ	47	453	147	Համարդու			244
Շաղատ	125	1214	3	Շէհիրճիկ. Արաւիս			148
Մազրա	76	831		Սապատածոր			64
Շէքի			657	Սօֆուլու			125
Արիգի			106	Սալտաշ			202
Պէրտի Գալահիկ. Մալիքի			209	Պալու գայա			130
Շուքեար			218	Գիրս. Գիրկը			169
Գզընթը			287	Աղբիս			81
Փուլքէնտ			121	Հէյեալ			148
Շըխար			306	Ահիպահի. Աջըքէշ			181
Սօֆուլու				Զարալու			926
Հարթիքիշ. Արթէք			495	Վաղուտի. Վաղատու			903
Ալիշար			138	Աղուտի			55
Մուրուլզ			138	Պահարլու			211
Քիվրաք			69	Որտն. Ուրուտ			150
Բուսեակ ?			332	Ռամիս. իրիմիս			480
Շիկահողս	84	744		Վարդանածոր Ա			174
Գիլիսաքէնտ	19	154		— Բ			
Շաշկերտ. Շիշկերտ. Շաշիգետ	27	267		Շեշկերտ. Լիշկ	48	364	
Շիկաւա - Ղամազլու			500	Դեշտին. Դաշտօնք	28	238	
Մուրատխանլու			164	Վանք	34	292	
Ագարլու. Հաքիրլու			170	Կալեր. Քեալուր	30	315	
Գիլաքերդ. Գարահալլու			107	Թաղամայրի. Թաղամիր			129
Շնիեր	186	1509		Վժանիս	36	382	
Հալիճոր	66	534		Ագարուկ	76	969	
Գուրտլար			123	Աղահողդ	67	700	
Եայճի	41	418	1	Սիրքեաղազ կամ Սուրքեաղազ	28	290	
Երիցամուսք. Քուրդիկ	25	222		Զէյվա	59	592	
Ուզ	125	904	8	Էմազլու			244
Գարագիլիսէ	69	680	297	Տամեւ	192	1865	
Ռապանդ			242	Սուարանց	21	269	
Թարաքէմէ			268	Խոտանան			58
Շարիֆան			153	Տանձատափ	31	312	
Խոււհարլու Սարնալու 2 գետղք			97	Տեղ	472	3159	
Սարիլ			119	Արաւիս	15	134	
Գարագիլիսա			42	Տիրի. Տրեայ			325
Սարալլու			1470	Մինճեւան			102
Սարիեաթաղ			272	Դոււպուլ. Տամբատ			138
Մօլլապուրան. Էլիազլը			393	Տունտարլու			328
Սաֆիան			615	Տամուրճիլէր			412
Սուլքանլու			258	Խօճա Մուսախլու			524
Գուշնիլէր			117	Քուպաթլու			326
Մախսուտլու			134	Զարալու			151
Պահիրբէկի - Շիվիտ			795	Քազի Քուրտալու			300
Սէիտլէր			191	Ալաչատրլու Մազմազակ			210
Ալիգուլիքէնտ	76	643	157	Քայքայլու կամ կայկայլու Ա			105
Քայվանլու - Պապատինլու			445	— Բ			127
Պապատինլու			250	Շայիպլու			88
Փիրիճան			181	Պուլոււնլու. Պիրինլու Ա			78
Արտաշաւա			240	— Բ			35
Եաղազին			208	Քէօրճալանլու Ա			284
Սէիտլէր Գալֆալու գշաղը			636	— Բ			254
Սիսիան			633	Խալայճի			200



ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆՔ	ՀԱՅՔ		ՕՏԱՐՔ	ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆՔ	ՀԱՅՔ		ՕՏԱՐՔ
	Տուֆ	Ողբ			Տուֆ	Ողբ	
Մախուտուլ			404	Փիրտովուտան			223
Հաճիլու			299	Շապատին Օխչի			582
Օխթար. Հողար			338	Քաջարանց. Կէճանան	46	465	
Նորաշինիկ	62	421		Օրտակլու. Էօրտէկլու			292
Խոտանան Վերին և Ներքին	41	446		Պահարլու Ա			432
Տակմատակլու			96	— Բ			138
Զօպանլու			338	Զօփատարա. Զօպան - տարա			219
Տօվրուզ			184	Ռիզա - տարա			286
Արջածոր	57	510		Քաղթականք ոչ հասարակորդք			
Ախտախանա	26	279		Մագրա			45
Քարատուզա			332	Տանձաւեր. Տանձավայր			75
Օխչի. Ողջի			1122	Սէյդազ			62
Բուհրուտ	23	242		Զարալու Քեահրիզլու			108
Բանիսլու	33	365		Սուլդանքէնտ (2 շէնք)			151
Քուրտքէնտ	36	442		Պախդիարլու			250
ԱՅքիզ. ԱՅդոյք			120				

Ա. ՎԱՅՈՑ ԶՈՐ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ

44. Աղբերակայք Արփայի՝ որ են բարձրատափը հիւսիսակողման Վայոց ձորոյ, նուազեալք այժմ ի բընակութենէ, թերեւս և ի հնումն՝ վասն դժուարութեան խորածոր և առապար երկրին, աննիազ ունին զգեղեցկութիւն և զհարստութիւն բնութեան՝ հանքային մասամբք, այլ և բուսարերութեամբ. ի Հս. և յԵւ. շրջափակեալ բարձրակարկառ պարու լեռանց, յորս գերածայրեալն յանկեան Հս. Եւ. Սարիեար-Սըրչալը, և ի Հս. Մ. Երար-բեփե, ի Հր. Մ. Գոչոչ տաղ, ի Մտ. Մոչատ բեփե: Մարթ է զլեռնապատ բարձրաւանդակըս այս կոչել զբօսարանս ջրոց, վասն բազմաթիւ կարկազասահ աղբերաց և ականակիտ վտակաց, որք ընդ ծործորս անձուկս զեռալով իջանեն ընդ հարաւ, և միացեալ առ կեչոտ կամ Գոչոչի գիւղիւ՝ գործեն զԱրփա գետ: Մի ի վտակացն՝ յարեւմտից եկեալ ի Մուրատ թէփէ լեռին կուտէ, և խաղացեալ ընդ քարածորս, անտի ապա վիժեալ ընդ ապառաժ գահաւանդս փրփրաղէզ վազիք՝ անկանի ի գետն իբրեւ յ'85 Չ. բարձուէ, գործելով ակնախտիլ կամար ջրեղէն, առ իսդի-սու թաթարանակ անշուք գիւղիւ կամ հանգրուանաւ, (20 տամբք), ունելով ի հանդիպոյ յարեւմտից հարաւոյ ըզճիւրեան գիւղ 15 տամբք, ի գեղածիժաղ վայրի. որում չէր մարթ անտես լինել ի նախնեաց մերոց, և թուի ինձ

գեղջս այսմ լինել հինն Անկանք, յանկմանէ ջուրցն, զի և աներկայ այս սահմանաց պատշաճի նշանակեալն ի հին ցուցակի գիւղորայից գաւառիս, գրեալ ըստ այժմու մերս գրչագրաց Անգանք կամ Անգոնք. նա զի և թուրք անունն շէրեան՝ հոսումն նշանակէ: Չեն քննեալ կամ ինձ ծանուցեալ սահմանք գեղջս, այլ յիսդի-սու վկային հետք շինուածոց և եկեղեցոյ, խաչվէմք և գերեզմանք, և արձանագիրք կիսեղծք, յորոց ինչ որ ոչ ընդօրինակեաց. նոյնպէս և յայլմէ աւերակ գիւղատեղոյ, որ սակաւուք ի բացեայ կայ ի հիւսիսոյ կուտէ: — Իբրեւ փարսախաւ յԵւ. Հս. գեղջս կան Ձերմուկը, յոր անուն գիւղ հին նշանակի ի Յուցակին, և յայտ է թէ ի վաղուց անտի ջուրքն երկաթահամք՝ վարէին ի բաղանիս բժշկականս, որպէս ցուցանէ և հին քարաչէն աւազանն. ոչ սակաւ աղբերք են անդ, յորոց Հինն (որպէս կոչեն) հըզօրագոյն 300 Ռէօմ. ջերմութեամբ. առ նովաւ միւս եւս բղխեաց սակաւ ամօք յառաջ, որպէս ասեն, ի փըրթածոյ և յանկմանէ սառնածոյ վիմի միոյ, որ փոռացուցեալ զկակուղ գետինն՝ բղխեցոյց զջերմուկն: Ի շրջակայ գաւառաց զան այս բազումք, որպէս և ի Մար, ի բժշկութիւն և ի զբօսանս. քանզի և կուտակալ տեսուչք այժմեան գաւառին Եղեզնածորոյ՝ զայս տեղի ընտրեալ էին յամարանոց, ի միջի ծաղկազարդ բարձանց և ծի-

ծաղաղնաց առուակաց: Մի ի տեսչացդ՝ ազգային Լոռեցի Գէորգ Խանազանց՝ յամի 1863 շինեաց յարկ քարակիր ի վերայ հնոյ աւաղանին: Յառաջ քան զնա այլ ոմն և մեծապատիւ ազգային վերատեսուչ գաւառին, զօրական և բանաստեղծ (Սէյադեովա) Պետրոս Մատաթեան՝ ընդ այլոց բազում բարի կարգաց խնամ տա նէր և պիտոյից ջերմեկացն, այլ ոչ եգիտ իւր ձեռնտուս կամ հետեւողս:

Ի Հր. Ել. Զերմուկի ի լեռնակողմն Մղկաց սահմանակցութեան՝ կայ Չիրակ գիւղ փոքր թուրքաբնակ, 38 տամբք, առ որով երեւին հետք հին հայութեան, աւերակ եկեղեցոյ, խաչարձանք և գերեզմանք: Աստի ընդ Մտ. Հր. ցՊիլեաք գիւղ՝ ի սահմանի երեք կամ չորս մղոն տեղւոյ՝ չորք եւս գերեզմանատեղիք են՝ վկայք հին կենդանութեանս: — Յիշեալ գիւղը այժմ թուրքաբնակ 42

տամբք՝ յեղափոխեալ պահէ զհին անունն Պրակք, որ ի տրից հարկացն (12 բեռն)՝ յայտնի ոչ փոքր եղեալ. զնոյն վկայեն և մնացորդք եկեղեցւոյն և գերեզմանքն. այլ արձանագիր օչ խուզեցաւ ի նոսին, որպէս և ոչ ի մերձաւորս նմին. յորոց սակի մերձագոյնն ի նա մղոնաւ չափ՝ և հուպ ի գետն յահեկէն, և յաճմէ այլոյ գետակի, է Գոռչի ըստ թուրքաց, և կեչուտ ըստ նախնեաց. զի և ցարդ ոմանք ի բնակչացն, որք Հայք են տունք 40, կէլիսք կոչեն, և են գաղթեալք ի բաժնէ Պարսից: Գոն և աստ, (որպէս յամենայն կողմանս գաւառիս), կիսաւեր հին եկեղեցի, գերեզմանք և խաչվէմք մեծամեծք. յորս նշանաւորք են երեքին ի գազաթան քարաբլրի միոյ յարեւելից կուսէ, այլ անգիր ասին: Կամուրջ նոր արկեալ էր ի վերայ գետոյն, որ փլոյզ զայն, թողեալ զարձանս այս յիշատակի, ոչ հին.

**Շինեցաւ կամուրջս ի հիմանէ կոփեալ քարամբ աշխատասիրութեամբ եւ հալալ արդեամբ Մարտիրոսի Մատթէոսեանի եւ կին (կնոջ) նորա թեպլի Ղուկասեանի:**

Ի Մ. Հր. կէչուտի իրրեւ մղոնաւ հեռի, և ի նմանատիպ դիրս, յանկեան գետոյն և գետակից վտակի՝ նշանակի գետը մի, այլ անունն ոչ: — Ի սմանէ մղոնաչափ ընդ Հր. յահեկէ գետոյն կայ ամարանոց հանգրուանն Մամարգա — գըրչաղ գեղը 15 տամբք թաթարաց, իրրեւ երիւք մղոնք ի Մ. Հր. յաճմէ գետոյն և յանկեանն՝ զոր գործէ վտակ մի ընդ նմին. կոչի և Գաշեղաշ ի սակս բերդի փոքու ի քարաժեռի ուրեմն, և տայ գուշակել զանուն Գուրջտի բերդի և վանաց, որ էր հաւաստեալ յայսմ սահմանի, որպէս տեսցի ի ստորագրելի արձանէ Գնդեվանից, և որ յիշի ի հին եկեղեցական Յուցակին, հարկելով վեց բեռն: Յայս բերդ Գուրջտի վանից բաւեաց անկանել Լիպարիտն նախահայր Օրբելեան իշխանաց վայոց ձորոյ, նետահարեալ «ի գլուխ լերինն որ» հանդէպ բերդոյն Բորտոնայ. և կոչէ առ ինքն զեպիս. «կոպոսն իւր զՏէր Սարգիս, և հաղորդեալ անդէն վախճանի, և բերեալ զնի ի Կորովանս»:

15. Ընդ մէջ Մամարգա գեղը և հանգրուանին՝ յահեկէ գետոյն և իրրեւ կիսով եւեթ փարսախաւ յարեւմտից լերանց անջրպետաց Մղուկ գաւառի, ի գեղադի-

տակ դալար բարձու ջրարբի վայրի կայ նշանագոյնն նախնի շինից կողմանցս, և ըստ անմուսնալի բանի շինողին իւրոյ Դիւսոյի՝ բովանդակ իսկ վայոց ձորոյ Ալլն ի մատանով՝ Գնդեվանցն, կամ հոյակապ եկեղեցի նորին. որ յաճախ հողովական անուամբ կոչելով Գնդեվանս՝ ի ռամկաց ծեքեալ է ի Գնդեվա կամ Գնդեվագ, և այսպէս արդ յորջորջի և գրի յաշխարհացոյց տախտակի: Գիւղն՝ որ ըստ հին Յուցակին տասն բեռն հարկէր եկեղեցոյ, յայտնի բաւական մեծ լինել յայնժամ. հանգոյն այլոց լքեալ ի մերազգեաց՝ զրաւեալ էր յայլասեռից. այլ ոչ բազում ամբք յառաջ գալով Հայոց յայլեալ գիւղից գաւառին՝ են արդ ի նմին 30 ? տունք, ընդ որս և 15 տունք մահմէտականաց: Ի Հս. գեղին երեւին աւերակք բերդի. յարեւելակողմն՝ հին գերեզմանատուն և խաչվէմք իսկ ի գիւղամիջին՝ ի թուրքաբնակ թաղին՝ կայ եկեղեցի մի ոչ վաղեմի, անտաշ քարամբք և պատկերանկար որմովք, որոյ և հիւսիսային մասն վերնայարկին քակտեալ անկեալ էր, և արդ փայտիւ կարկատեալ է. ի վերայ դրանն արձանագրեալ է հետեւեալ բանս թուականաւ 1686 ամի.


**Ես անարժան Պետրոս վարդապետ յինեցի Սուրբ Աստուածածնի եկեղեցիս վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ ծնողացն Ովանէսին եւ Խանու մին. ԹՎ. ՌՃԼԵ.**

Իսկ ակնադիտակ շէն Գնդեվանից փոքր մի հեռագոյն կայ ի հարաւոյ կուսէ գեղին, ի զուարճագեղ ձորամիջի, զոր յարեւմտից պատէ կարկաշահոսն Արփա, յարեւելից այլ առուակ, ի միջի վայրենի և պտղաբեր ծառոց, ընկուզենեաց, ծիրանեաց, շորենեաց, կեռասեաց և նըմանեաց, և խոպանացեալ այգեաց, յորոց միջոյ ի վեր ամբառնան և կապուտակ գագաթունք ապառաժ բլրա-

կաց. զորոյ դիրս, զորպիսութիւն եկեղեցւոյն և զշինողն՝ այսպէս պատմագրէ Օրբելեանն: Յամի 936 կամ ամբք յառաջ կին Սմբատայ Տեառնն Սիւնեաց՝ դուստր Արծրունեոյն Գերենկան, «Երանելի և բարեպաշտ տիկինն» Սովիա՝ զնաց ի խորածոր վայրն որ Գնդեվանս կոչի, » ուխտի պատճառաւ, առ միայնաւորսն որ կային անդ » բնակեալ. յորում տեղւոյ էին բազմութիւնք նշխարաց

» սրբոց վկայից ի վաղ ժամանակաց, զորս ոչ ծաննաք  
 » թէ ոյք էին և կամ ուստի, և բազում մեծամեծ բժշկւ  
 » կութիւնք լինէին. Տեսեալ տիկնոջն և յոյժ հաճեալ  
 » ընդ տեղին, և մտախոհ լինէր շինել եկեղեցի և բնա  
 » կեցուցանել ի նմա դասս կրօնաւորաց. վասն որոյ և ի  
 » գիշերին երեւեալ վկայիցն՝ խնդրէին կատարել զնոյն  
 » խորհուրդ. ապա յարուցեալ տիկնոջն՝ ետ ածել վաղ  
 » վաղակի արուեստաւորս ի ճարտար քարատաշաց, և  
 » սկիզբն առնէ շինուածոյն՝ կացուցեալ ի վերայ վանաց  
 » երէցն զՀայր Սարգիս, և գործակալ զԵղիշա երէց  
 » և ևնարիչ. և յանձնէ զնա Տեառն Յակոբայ մեծաւ հո  
 » զարարձութեամբ ի կատարումն ածել: Փայլէր և անդ

» մեծամեծ ճգնութեամբ հայրն Սուփան Գնդունի  
 » կոչեցեալ: Կանգնէ զտունն Աստուծոյ և նկարակերտ  
 » յօրինուածօք զարդարեն զառաստաղս և զորմունս նո  
 » րա. և արարեալ նաւակատիս՝ մեծահանդէս ժողովով  
 » սրհնեն զնա և անուանեն անուանակոչութեամբ Սուրբ  
 » Վկայիցն. և կացուցանեն ի նմա դասս պաշտօնէից և  
 » բազմութիւն կրօնաւորաց: — Եւ և զձորն զամենայն  
 » ի պատշաճաւոր տեղիս ընուն անապատօք. և կացու  
 » ցանեն ի նոսա արս ճգնաւորս և խստակրօնս, յորոց  
 » առաւել փառաւորեալ լինէր Աստուած՝ քան ի սինէա  
 » կան հարանցն: Եւ երանելի տիկինն անուանէ զվանսն  
 » Գնդեվանք. և շինէ զգիւղն ի վերոյ վանիցն ի գլուխ



30. Գնդեվանք.

» քարին. և տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն ազատ  
 » յամենայն հարկաց. նմանապէս և ի միւս կողմանէն  
 » զԱտշար գիւղ. և մեծամեծ նզովիւք փակէ՝ յետ ժա  
 » մանակաց ոչ հանել ի տեղւոյն: Եւ այս լինէր ի թուա  
 » կանին Հայոց ՅԶԵ: Իսկ զձորն ամենայն ի վեր և ի վայր

» մինչ ի Գողշտին քարն, հրամայէ առնել տնկախիտս  
 » ի մրգաբերաց ծառոց և յանուշաճաշակ պըտղոց. և տըն  
 » կեալ այգիս վայելուչս յոյժ բարութեամբ ի վայելումն  
 » առատապէս սուրբ եղբայրութեանն և ամենայն կարօ  
 » տելոց: Գրէ արձան յիշատակի սակաւարան այսպէս.

**Ես Սովիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ Տեառն Սինեաց, եւ դուստր Գրիգոր Դերենկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ յարեւշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ եւ որդեկաց մերոց, եւ զարդարեցի զսա մեծածախ սպասիւք. եւ ետու զերկու գիւղս ի ժառանգու**



Թիւն սմա, զոր մի ոք իշխեսցէ խախտել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս . ապա թէ ոչ՝ անլուծանելի նղովիւք անիծեալ լիցին յԱստուծոյ եւ յաստուա ծագումար Սրբոցս .

### ՄԱՏԱՆԻ ԷՐ ԱՆԱԿՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԾԻՆԵՑԻ ԶՍԱ, ԵՒ ԵԴԻ ԱԿՆ Ի ՎԵՐԱՅ՝:

« Դարձեալ յետ ամաց ինչ, ի ՆԽԸ Թուականին Հա-  
» յոց՝ սուրբ հայրն Քրիստափոր շինէ զգաւթսն եկե-  
» ղեցւոյն . ունի և բազում յիշատակ ի տանն յայն՝ երա-  
» նելի և սուրբ հայրն Գուրգէն: Բայց յետ բազում ա-  
» մաց, ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Սարգսի, և  
» ի Թագաւորութեանն Գագկայ՝ որդոյ Աշոտոյ, իսկ ի  
» Սիւնեաց և Բաղաց նորոգ Թագաւորութեանն՝ Վասա-  
» կայ, կացեալ յառաջնորդութեան տանն այն հայր  
» Սարգիս միւսն, և արարեալ բազում արդիւնս, և ա-  
» ծեալ զժուրն ի լեռնէն ի մեծ Դիստաւոր սարէն,  
» ուր ակունքն են քաղցրահամ գետոյն որ Զրկնարած  
» կոչեն, աներեւոյթ հրեշտակի առաջնորդութեամբ,  
» բազում ջանիւ և մեծամեծ ծախիւք բերեալ յան-  
» դատտան վանիցն, և զանհուն առապարն անըդի՝  
» արար ջրարբի և զամենայն լեռնակողմն . յորում ոչ  
» գոյ ումեք հաշիւ՝ ոչ Պրակեցեաց և Կելուտեցեաց և ոչ  
» այլ սահմանակից գիւղարէիցն և ոչ այլ ումեք . և այս  
» ի Թուականին ՆԾԷ (1008), յեպիսկոպոսութեան  
» Սիւնեաց Տէր Յովհաննիսի:— Եւ զրէ ինքեան ար-  
» ձան ի վերայ եկեղեցւոյն սեւադեղով . և ահագին և  
» մեծամեծ նղովիւք փակէ վասն ջրոյն, զի մի ոք իշխես-  
» ցէ կտրել զնա և կամ հարակաշ՞ գոլ և բաժինս առ-  
» նուլ, բայց միայն թէ ըմպեն ի մատակէն մարդ և ան-  
» ասուն . և կարգեալ յիշատակ զոր յիշատակի մեծ զօ-  
» ղաւարին Սարգսի ամ յամէ, և կատարել ութ քառա-  
» սունս միանգամ . և թէ ծուլասցին՝ դատաստանս մե-  
» ծամեծս ընկայցին »:

բեւելեան Սիւնեաց, զոր ընդ մեծի լեռինն և Դիստաւոր  
տարի, ըստ պատմչին (որ անըպետէն ընդ Վայոց ձոր  
և ընդ Մղուկ), խաղացուցեալ բերեալ է վանահայրն  
Սարգիս . զի Արփա խորագնաց, երազասահ և սակա-  
ւաջուր գոլով շէր բաւական պիտոյից վանիցն և գեղըն-  
ցարդ հոսէ առուակն այն, և ի լանջո լերինն երեւին կը-  
րամած կամարք յարգելու զսորսորումն հողոյն և խճի առ  
ի շխանգարել զագուգայն: Աւ մեզք եւս ի գետոյ անտի  
Սիւնեաց առու հանեալ յայս մօտաւոր սահմանաց՝ մու-  
ծին յԱրփա յոռոգումն դաշտին Շարուրայ:— Մենա-  
ստանն Գնդեւլանից կայ ի սարահակի ձորոյն, յարեւելից  
և ի հարաւոյ պատեալ քարորմն պարսպօք, որք արդ կի-  
սաքանդ են, յարեւելից ունելով զդուռնն . հիւսիսային  
և արեւմտեան կողմանքն՝ զձորն ունին պատսպարան . ի  
հարաւակողմանն են սենեակք և այլ շինուածք ի պէտս  
միաբանից, հանդերձ գոմովք անառնոց: Դաստակերտ  
տիկնոջն կայ ի միջին, համակ մոխրագոյն սրբատաշ վի-  
մօք կերտեալ, ոչ ընդարձակ մեծութեամբ, քառակուսի  
կամ ութանկիւնի (10 քայլ ընդ երկայն և ընդ լայն, ըստ  
Զալաւ .), գեղեցիկ կաթողիկէիւ ի վերայ չորից սեանց,  
ունելով երկուս աւանդատունս փոքրկունս աստի և ան-  
տի բեմին, երկու գրուես՝ ի հարաւոյ և յարեւմտից . ի  
վերայ յետնոյս կայր և զանգակատուն վայելչակերտ  
կաթողիկէիւ, որ արդ անկեալ է . և համօրէն եկեղե-  
ցին թէ և կանգուն՝ մեծապէս խարխալեալ, և քարինք  
զմբեթին թօթափեալ յետ առաջնոյ շինութեանն . զի  
բազում անգամ երեւի նորոգեալ, որպէս յամի 1309  
ի Կրիզորոյ ումեմէ, և յամի 1671 ի վերոյիշեալ Պե-  
տրոսէ վարդապետէ շինողէ եկեղեցւոյ գեղըն . որ և զրէ  
աստանօր ի ճակատու արեւմտեան դրանն, յամի 1671 .

Շնորհաւքն Աստուծոյ եւ անարժան Պետրոս վարդապետս վերստին նո-  
րոգեցի սուրբ եկեղեցիս, հանդերձ ժամատնաւք, շուրջանակի պարսպաւք եւ  
ամարաթաւք ամենայն, ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ իմ ծնողացն . հաւրն իմոյ  
Յովհաննէսի եւ մաւրն Խանումին . Թովին Ռձի (կամ Ռձիս):

Չերեւի արդ հին արձանագութիւնն այն տիկնոջն Սո-  
փիայ՝ ըստ ընդօրինակութեան պատմչին, այլ հակիրճ յի-  
շատակ մի նորին ի հարաւային արեւմտեան անկեան որ-  
մոցն արտաբուստ .

### Ես Սոփի տիկնաց տիկին, Դերանկին դուստր, կին Սմբատայ, որդւոյ Աշոտի շինեցի զԵկեղեցիս .

Ի Զայս շքեալ դիւս մտաց և ձեռն Սոփիայ զշրոյ՛ կերպա-  
բանէ վերին մասն պատկերի որ ի տակառ մասենիս, այլ ոչ ըստ  
արժանի մեծօրոյն, որպէս և ոչ լուսաթիւղ նշմար եկեղեցւոյն

(որ յէջ անդիւոյ թիւ 50) զառաջի՛ վայելչութիւն նորին :  
Զ Այլուր հոլորչ գրի, և նշանակէ մասնակից, բաժանորդ .  
իսկ յարձի՛ Թուի աւազանն կամ ազուգայ ջրոյն :

այլ և առ յարկաւ զանգակատանն, թուի ի յետնոց արձանագրեալ յանմուտաց յիշատակ գեղեցիկ ասացուածոյն.

**Մատանի էր անակն, եղեր Սիւնեաց Սոփի տիկին:**

Սոյն արձանագրութիւն երեւի և յայլում վիժի անկե- անձնապանծ այլ և պանծալի գշխոյին: Մնան և այլ հին նոյ առ բնակարանօք միանձանց. այսպէս կրկնութեամբ արձանագրութիւնքի ժամանակէ առաջնոյ շինութեանն. կամեցեալ ազնուայարգ մարդկան պատուել զյիշատակ որպէս յորմն զանգակատանն՝ յամի 931.

**ՅԶ Թուականիս (ես Եղիշայ՝ երէց եւ նկարիչ) արարի առաջնորդութեամբ Սարգսի քահանայի. որք կարդայք Տէր ողորմէ ասացէք:**

Գարձեալ յարեւմտեան ճակատու եկեղեցւոյն ագուցեալ կայ խաչվեմ, արձանագրեալ.

**Խաչս Սարգսի առաջնորդի եկեղեցւոյ է.**

ոչ է յայտ առաջնոյն Սարգսի՝ եթէ երկրորդին: — Ի հարաւոյ կուսէ արեւմտեան դրանն կայ այս արձան.

Ես Գրիգորէս նորոգեցի զայս վկայարանքս ի փրկութիւն հոգւոյ իմոյ. Առաքեալն եւ այլ միաբանք սահմանեցին ինձ Բ պատարագ Աւագ հինգշաբթին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. խափանիչքն դատին ի Տեառնէ:

Ի հիւսիսային որմն զանգակատանն.

Անուամբն Աստուծոյ ես Աշոտ որւի Բաւկկայ? Աստուած ինձ ողորմեցաւ. իմ աւագ որդին ի Քրիստոս փոխեցաւ. ես տուի զմեծ այգի Խարաւոտանին հողն յեկեղեցիս. ի տարին Բ աւր ժամ զՆոր Կիրակէն առնեն Հասա(նայ) . . . :

Ի մէջ կամարի արեւմտեան դրանն խաչվեմ մի է յոյժ տոսի, Սրբոց, հաւուց և ձկան քանդակեալ, և ի ներքոյ բազմադրուագ այլեւայլ զարդուք և պատկերօք Քրիստոսի, Սրբոց, հաւուց և ձկան քանդակեալ, և ի ներքոյ գրեալ է հակիրճ այս բան.

**Ես Ղարտաչ կազմեցի զխաչս. Թվին ՌԻԲ.**

որ է ամն 1873: — Եկեղեցին՝ որ ըստ արձանագրին՝ Ս. Են գերեզմանք և խաչվեմք. յորոց մին փոքր և ի կա- վկայից վերագրի առանց յատուկ անուան Սրբոյ ու պուտակ քարէ, ունի զայս հին արձան, թուականաւ բուր, այժմ յանուն Նախավկային ճանաչի: Շուրջ զնովաւ 967 ամի.

**Զհայր Սոախան կանգնող սուրբ Աննիս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս. ՆԺԶ Թուին շինեցաւ Սրաին:**

Կանգնող խաչին ժամանակակից և երիցագոյն ես նող սրահին եւ գրող թուականին: — Ի հիւսիսակողմն գողով քան զշինութիւն եկեղեցւոյն, թերեւս չիցէ եւ չի- եկեղեցւոյն ի վերայ տապանի միոյ գրեալ է յամի 1543.

**Այս է հանգիստ Պարոն Սուլթանղովին? եւ Պարոն Նազանայ խաթունին. Թվին ԶՂԲ.**

1 Քաջերուտի գրէ. «Ես Եղիշայ Ի Զ Վրէի՝ — Զ արարի » ևւայլն. յայտ է թէ այլ ինչ էր գրեալ և վասն խանգարմանն ան- վերոյն և զայս յետնոց է գրեալ ըստ մտաց իսկական հին որ- ստոյք մնացեալ. թուի թէ հանգոյն ասացուածոյ տիկնոջն՝ ընդ ձանի: Իսկ երէցդ Եղիշայ Նիւրի, իմա քանդակագործ, բազում և այլ ուրիշ գրէ զանուն իւր ընդ պէսպէս քանդակօք:



քանդակեալ են ի վիմին պատկեր թաղելոյն՝ ձիաու-  
րեալ յորս կաքաւուց արչաւելով, և մատուակք առ Ե-  
րի: — Գոն և այլ ոչ սակաւ խաչվէմք կիսեղծ արձանք,  
ԶԾԸ (1309) թուականաւ. յորոց մին համանման է և  
համագիր արձանին Ղարտաչի՝ որ ի ճակատ եկեղե-

ցւոյն. գտանին առ տեղեալս յաճախ ընդ հողով և ա-  
նօթք բրտի, թակոյկք, թոնիրք, կահք տնականք, և  
գուրք կամ հորք դատարկք. և ի միում՝ յամի 1878 գտան  
անօթք պլնձեայք, կատսայք, ունելիք, զանգակք, և այ-  
լըն, հանդերձ արձանագրութեամբք. որպէս

**Յիշատակ է Գնդեվանաց Սուրբ Նախավկին .**

Ի վերայ միոյ յերից պղնձեայ բուրվառից գտելոց՝ գրեալ էր .

**Յիշատակ է Ծատուրի որդի Ակոբին, որ ետ ի դուռն Նախավկային .**

Իսկ ի վերայ ծնծղայից գրեալ էր հանդերձ թուականաւ 1691 ամի .

**Յիշատակ է Գնդեվանաց Սուրբ Նախավկայի . ԹՎ . ՌՃԽ .**

Դարձեալ և ի հնագոյն զանգակի միում մեծի՝ յիշատակ 1307 ամի .

**ԶԾԶ . ԶՍարկաւագ քահանայ յիշէք ի Քրիստոս, որ ստացաւ զսա :**

Ի հատուկտիր արձանագրութեանցս և ի վկայութենէ  
պատմչին յայտնին առաջնորդք վանացս, նախ .

Սուվան Գնթունի ճգնաւորն յառաջ քան զ՝930

- 931-6 Հայր Սարգիս
- 999 Քրիստափոր
- ... Գուրգէն
- 1008 Սարգիս Բ
- 1307 Գրիգորէս
- ? Առաքէլ
- 1688-91 Տէր Պետրոս
- 1878 Ծովմանէս Տէր Բարոտրիւնեան

վարդապետ ծերունի . որ բնակեալ աստ՝ սկսաւ ըստ կա-  
րի սրբել և յարդարել զտեղին, և եգիտ զվերոյիշեալ կահս  
և անօթս, յորոց գոյ յուսալ զգիւտ և այլոց նմանեաց,  
միանգամայն և հաւաստել, եթէ ընդ երկար ժամանակ  
չէն եղեալ իցէ տեղին . թէպէտ և ի ԺԱ դարէ ց՝ ԺԳ և  
անտի ցվերջկոյս ԺԷ, և անտի ցայժմս՝ ոչ յիշատակք և  
ոչ անուանք առաջնորդաց լին, այլ մարթ է մտադլւր  
քննութեամբ խաչարձանացն գտանել գէթ զոմանս եւս :  
Յանկալի եւս է զյիշատակ այնքանոյ նրբանշալակ զչխոյի  
վերականգնել և միւսանգամ ցողացուցանել զակնն վա-  
յոց ձորոյ, յորոյ շինումն՝ թերեւս ոչ խնայեաց մեծոգին  
այն յականս զարդուց գեղոյ և շքոյ տիկնութեան իւրոյ :

վայրի կայ Ագձա գետը, որում ի դէպ է լինել Ատչարն  
հին, պարգեւեալն ի Սոփիայ՝ ձեռակերտի իւրում . յայլ-  
ազգւաց բնակեալ է արդ 15 տանց, այլ երեւին և ի սմա  
աւերակք եկեղեցւոյ և տապանք, որոց արձանագիրք ոչ  
հրատարակեցան : — Նոյնքան հեռի ի Գնդեվանաց ի  
հարաւոյ կուսէ, յահեկէ գետոյն, ի լեռնակողմն կայ Գը-  
լիչի կամ Գըլիչ գետը 8 կամ 10 տամբք թաթարաց : —  
Աստի կամ ի Մամարգայ մինչեւ ի խառնուրդս ձախա-  
կողմեան գետակաց օժանդակաց ց՝ վեց կամ եօթն մղոն,  
ընդ ձորավայր դալարուտ՝ երազընթաց խաղայ Արփա,  
ոչ ունելով շինանիստ յափունսն :

Առաջին յիշեալ օժանդակացդ է Կիւմիւլխանէ չայ,  
որոյ անուն յայտ առնէ զԱրժաթահանսն ոչ անծանօթս  
և յայժմուս՝ կապարախառն նիւթոյն, ուր երեւին և  
գուրք կամ հորք ի վաղ ժամանակս պեղեալք : Ոմանց  
թուեցաւ եթէ այս տեղի իցէ Փողափանքն յիշեալ ի  
պատմչէն Սիւնեաց, զոր ասէ վասն հօրեղբոր իւրոյ Սըմ-  
բատայ նուաճեալ ընդ իւրով իշխանութեամբ, հաճու-  
թեամբ թաթարաց . այլ զի կարգէ ընդ նմին վիճակս  
մեծամեծս, այլ տեղի թուի ինձ : Յերկուց վտակաց ձու-  
լի գետակդ, մին ի Հս . Ել . միւս ի Հր . Ել . և կոչի սա  
Քիլնիյի-չայ ? : Ի գլուխ առաջնոյն՝ որ է բնիկ Կիւմիւլ-  
խանէի չուրն՝ կայ համանուն գիւղն, կիսով փարսախաւ  
ի Հր . Գլըլեայ, բնակեալ յայլազգեաց 28 կամ 30 տանց .  
Հին և աւեր եկեղեցի գեղջս կայ ի բարձրաւանդակի, առ  
որով և տապանք և խաչվէմք . ի միումն գրեալ յամի 1309 .

46. Յարեւմտից Գնդեվանաց կիսով փարսախաւ հե-  
ռի, յալմէ գետոյն, ի բարձրաւանդակ դալարագուարձ

**Ես Գրիգորէս կանգնեցի զԹաչս յիշատակ հաւր իմ Աղբայրանոյդ ? եւ  
մաւր իմ Գոհարին . եւ աղբաւր իմ Բէկին . ի ԹՎ . ԶԾԸ . Ով կարդաք  
յաղաւթս յիշեցէք .**

Երկու մղոնաւ ի Հր . սորին և յանկեան կցուածոյ  
երկացուն վտակացն՝ կայ հին գետն Դերըն, նշանակեալ

ի ցուցակի եկեղեցւոյն Սիւնեաց . մերձ նմին յարեւմտից  
միւս գիւղ համանուն կամ մերձանուն՝ Դարբ գրեալ,

որ ոչ յիշի ի նախնեաց. երկոքին եւս թուրքարնակք են, ընդ ամէն 40 տամբք. և են առ նոքօք աւերակք հին եւ կեղեցւոյ և գերեզմանք: Ի հարաւոյ երկրորդին կայ Տեմիրձիկէր գիւղ (Երկաթագործք), 10 տամբք թաթարաց. որով յայտ լինի զի և առաջինքն նշանակեն զԴարբնաց գիւղս, և հաւաստեն լինել ի կողմանքս բովուց երկաթոյ և արծաթոյ: Ի մնացուածս նախնեաց երեւին բա-

զում խաչվէմք, ի միումն թուական 216 (1493). յայլում,

**Սուրբ Խաչս բարեխաւս Աղաջանին .**

Ի հիւսիսոյ յեաին գեղջո նշանակի համանուն հանգրուան մի կամ ամրոց. իսկ ի հարաւոյ սակաւուք հեռի՝ Չիրահչոս գիւղ փոքրիկ: Երեւին և ի սմա աւերակք եւ կեղեցւոյ և խաչվէմք դամբանականք. ի միումն գրեալ,

**Կանգնեցի Խաչս (բարեխաւս) հոգւոյ Խոցդեղին . տղայ աւրաւք ի Քրիստոս փոխեցաւ . Յիշեցէք . ԹՎ . 216 .**

որ է ամն փրկչական 1461 . յայլում խաչվիմի թերի կամ խանգարեալ արձանս այս .

**Սուրբ Խաչս բարեխաւս Նասիպին . Ով կարդէ ի Քրիստոս (յիշէ) ԹՎ . . . 215 .**

Յայտ է թէ հարիւրանիշ թուականն ջնջեալ է, և էր թերևս 2, այսինքն 1548 ամի: Հնագոյն եւս յամի 1432,

**Այս է հանգիստ Սաւլթան բէգին, որ կիսաւրեայ ի Քրիստոս փոխեցաւ . յիշեցէք ի Քրիստոս . ԹՎիս ՊԶԱ .**

Յայլում խոյանման տապանաբարի . **Այս է հանգիստ Ուջալ բէգին .**

Ի գլուխ ձորակին (Քիչնէի)՝ որ ի թիկունս Խոսիւր լեռին անջրպետի Մղկաց՝ է գեօղ՝ Քօւլպակ կամ Քեօւլպակ իբր 50 տամբք թաթարաց . առ որով աւերակք եկեղեցւոյ և հին գերեզմանք Հայոց: Մերձ ի սա է և Լէյլիկալան՝ գիւղ թաթարաց 25 կամ 30 տամբք, կամ Լէյլիկալան (Սիրուհւոյ փախուստ): Հուսկ ի ստորեւ յարեւմտակողմն յանկեան խառնրդոց Արծաթահանից գետակին ընդ Արփայի՝ կայ Չայքէնս գիւղ (Գետագիւղ), ի դաւարագեղ և ծառուտ գետամիջի անդ . ուր երեւին հետք և մնացուածք նախնի շինութեանց Հայոց, և մեծատարր երկանաբար մի ձիթահանից . թաթարաբնակ է և սա, 15 տամբք . թերեւս ըստ նշանակութեանն իցէ Գեւտիկն հին Յուցակին, յորում՝ առաջին գիւղ ի Վայոց ձոր կարգի, և երկրորդ՝ Դերբն:

հարկէ կոչէր և Մայրադուրս, յորմէ դիւրաւ աղաւաղեալ յայլազգեաց ծագէ անունք նոր . բնութիւն իսկ տեղւոյն (կանաչախիտ) ի սնարս լեռանց և զուգադուր թիւն միւսոյ գեղջն առ նմին, ըստ ցուցակին, յաւերան հաւաստիս . մնայ բարւոյ բաղդի ոչ միայն հաստատել զայս, այլ և քննել զրնական և զշինական հանգամանս տեղւոյն . զի են իսկ անդ մնացուածք ազգային շինուածոց, և ձեռագործ ջրամբար մեծ . որոյ ջուր անցանէ ընդ կիսաւեր եկեղեցեաւ Մայրադուրս գեղջն, որ փոքր է և կրաշաղախ քարամբ, այլ են քանդակք ի նմին, կերպարան արծուոյ և ցլու: Ի մերձակայ բլրին են գերեզմանք . ի միում գրեալ է .

**Այս է տապան Նազարէթի .**

և յայլում մեծի տապանի քանդակեալ տեսարան խընջոյից և որսոց և նուագածուաց: Կայ և ի Զուլ աւերակ եկեղեցի մի, չափաւոր մեծութեամբ, այլ ոչ հին թուականք . որպէս յամս 1703 և 1731 .

**Շինեցաւ եկեղեցիս ԹՎին ՌՃԾԲ .**

եւ ի տապանի միում վերագրեալ է .

**Այս է տապան Յուստաուէին ? հանգեաւ ԹՎին ՌՃՀ .**

Ի միջակի գլխոյ երկոցուն ձորագետոց Քիչնէի և Ճուլայ (յորոյ վերայ կամօւրջ քարաշէն), ամբառնայ շեղաձեւ Զոչոյուն տաղ լեռան ի հարաւ - արեւելեան սահմանս,

ծայր Վայոց ձորոյ . յորմէ կայ մեզ արդ վերադառնալ անդրէն յաջակողմն Արփայ գետոյ, ուստի հեռացաք ի սահմանս գեղջն Գետակայ:

47. ՉՈՐԱՆՈՎՅՑ ԳՈՒՏԵՆԻՈՑ. — Ընդ մէջ պարսպա՝ ձեւ երկայնաձիգ լեռանց որ յալմէ (յարեւմտից) աղբե՝ րականց Արփայի՝ (զոր ցայս վայր տեղագրեցաք), և նոյ՝ նատիպ զուգահեռական երկարաձիգ գօտոյ լեռանց՝ որք ի միջակին ունին զՄակ-գագաթն, ձգի ձորահոյսիտ ֆէօրանդոս գետոյ՝ ընդ համանուան գեղջն, ի Հս. ընդ Հր. ընդարձակ առապար խորափոր գոլով վերին մասամբն, անձուկ՝ այլ քաջ տնկախիտ մայրեւոր դալարագեղ հարաւային մասամբ. ի Հս. կուսէ շարայարեալ լեռինք անջրպետ կան ընդ սա և ընդ Եղեգնեաց ձոր. յորս և Մոռ. րատ-թեփեփի, յորմէ իջանէ համանուն գետակ օժանդակել յարեւելից կուսէ (յահեկէ) զԳուտենի. սորա աղբերակունք են յանկեան այսր և նախայիշեալ լեռնա՝ գօտեաց, սակաւաք հեռի յԵղեգեացն աւանէ: Ի բնական մասանց նշանաւոր է յիշեալ լեռանդ արդարեւ ըստ անուանն Մակ-գագաթն (թեփե-տեղիկ), իբրեւ 8000՝ բարձր, լայնանիստ ստորոտիք, կոնաձեւ սութեալ ի վեր, լայն տափարակ և մասաֆ խորտակեալ չրթամբք անդնդախոր վհին, յորմէ ժայթքեալ են պէսպէս գօւնո՞ղ քարինք մանաւանդ չեղաբարք, այլ ոչ է խրթնատե՛

սիլ, զի բուսաբերութեամբ կանաչացեալ և ծաղկեալ է, որպէս և արսաքին ոլորաք լեռինն: Ի խորուջն կամ ի յատակին, որոյ տարածութիւն է իբրեւ 150-300 քայլ՝ կայ աւերակ մատրան (7 քայլ յերկայնն, 5 ի լայն), և ջրչեղջ մի կամ աղբեր առ երի, և վէմանգիր տապանի, և շուրջ վայրք ապակինի, ըստ աւանդութեան, միանձանց աղօթականաց և փախստէից ի ժամանակի արշաւանաց հինից: — Իբրեւ մղոնաւ հեռի՝ ի ստորոտս լեռինն կայ կոփածոյ կարկառ քարանց (25 կանգուն բարձր, 4 լայն), ի վերայն երկու դրուագեալ խաչվէմք. մին անկեալ, ի միւսումն պատկերքանդակ ալեւոր առաքելոց, ի ստուրենն գրեալ անուանքն,

**Սուրբ Պետրոս. Սուրբ Պաւղոս .**

է և այլ արձանագիր՝ զոր քննողք ոչ կարացին վերծանել վասն խանգարանացն, այլ թուականն երեւ էր 28. (1281): Ի հարաւային դիմի կարկառին քանդակեալ է կիսաբոլոր ժամացոյց, հայերէն տառիք, և շուրջ տապանք և խաչվէմք ոչ սակաւ. ի միւսումն արձանագրեալ ի 1320.

**Այս է հանգիստ վարդապետին Յակովբայ, թվին 24թ.**

յայլում՝ 1279 թուականաւ. **Եւ իւր եղբաւրն Սարգսին .**

**† Այս է հանգիստ Մանուչարին . թվին 21Ը .**

Ի Հս. Մ. կողմ լեռինն կայ Նովոն կամ Նաչոն փոքր գիւղ թաթարաց, և մերձ նմին միւս եւս համանուն Նով. րար կամ Մոգ-Նովար — Ոչ հեռի ի ստորոտս Մակգագաթան՝ ֆեկերէրէ գիւղ 20 տանց թաթարաց: Մերձ ի կիցս երկոցուն գետակացն որ գործեն զգետն, արտաքոյ յարեւմտից կայ նորն ֆէօրանդոս (զի հինն լքաւ առ պակասութեան ջրոյ), ըստ իս յանուն Գուտենի գեղջ հնոյ, և ի գոգ նոցին կէօրարաւ. երկրքին եւս թաթարարանակք: Առաջինն աւանդի մի ի գլխաւոր գեօղից գաւա՛

ռիս լինել ընդարձակութեամբ և յինութեամբ, 40 տամբք. որպէս և է իսկ յարգաւանգ և ի ղուարճագեղ դիրս, առատութեամբ ջուրց և դալարեաց, և ծաղկաւէտ մարգաթ, յորոց քաղեն մեզուք զմթերս քաղցրութեան ընտիր և հոչակեալ աստ մեղեր: Ունի աւերակ եկեղեցի սրբատաշ քարամբք (12 քայլ ընդ երկայնն, 9 ընդ լայն), որոյ արձանագիր ոչ ծանուցաւ. բայց յերի նմին ի բլրի կան գերեզմանք և խաչվէմք. յորս ոմանք ունին թուականս 1606 և 1639 ամաց, այլք՝ ոչ .

**Սուրբ Խաչս բարեխաւս է Դաւիթ բէկին . թվին Ռ2Ը .**

**† Կաման Այստուծոյ ես վարդան կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ Միքայէլ Աղին .**

**† Այս է հանգիստ Գրիգոր բէկին .**

**† Այս է տապան Սէթա Խա(թու)նին . թվին ՌԾԵ .**

Կայ և այլ ընդարձակ գերեզմանատեղի յարեւմտա՝ կողմն ի սարահարթ վայրի, յորում նշմարին քսանեւհինգ խաչվէմք գեղաքանդակք, կէսք կանգունք այլք

տապալեալք, յորոց երեքին յարակիցք. ի միւսումն գրեալ, **Գրիգոր նահատակ . յիշեցէք ի Տէր .**

1 իբրեւ 20,000 ! ոգիք կարեն, զբէ Զուլլեան. (Բ. 135), զհտեղիլ ի խորս գրիս այսորիկ լեռնականի:

† Ես Յովհաննէս կանդնեցի զխաչս ի բարեխաւսութիւն հոգւոյ իմոյ :

† Ի Թուին ԶԱ. Ի բարեպաշտ իշխանութեան Արսէնի կանդնեցաւ Խաչրս. ես Սահակ որդի Սիմոնայ (?), մեծ յուսով կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ :

Անծանօթ է Արսէնը իշխան, և ստուգութեան կարօտին անուանքն և թուականն (ԶԱ, 1282): Իբր երկու մղոնաւ բացագոյն՝ կայ նման վերոյիշե-

լոյն աւերակ կոփածոյ եկեղեցւոյ, որոյ չյայտնեցաւ արձանագիր. այլ ի մերձակայ խաչվէմն շիրմացն են և կառի հնագոյնք իսկ. որպէս ի միում.

Թովին ՅՀԴ կանգնեցաւ սուրբ Խաչս... յանուն Տեառն Աշոտոյ որդւոյ Սահակայ Սիւնեաց :

Յագագար պատկերի իշխանաց Սիւնեաց՝ ոչ գտանեմ Աշոտ որդի Սահակայ. ժամանակն՝ 928 ամ ի դէպ գայ երկոցան Սահակեանց Հայկազնեայց՝ եղբոր և որդւոյ Բ Գրիգորի Սուփանայ, այլ ի պատմութեան ոչ յիշին

սոցա որդիք. իսկ տեղին՝ պատշաճի բնիկ իշխանաց անգրանիկ տոհմին: — Յայլում նրբաբանդակ կապուտագոյն խաչվիմի (իբր երկու և կէս Զ. բարձր), առ հարաւային դրան եկեղեցւոյն՝ կայ արձանս 990 ամի.

Ի Թու. ՆԼԹ՝ ի թագաւորութեան Սմբատայ որդւոյ Վասակայ կանգնեցաւ Նշանս ի ձեռն Գրիգորիկայ .

Ի թիկանց նորին՝ երախտաւոր ոմն իրայարգ և յարգելի, արձանագրելով ծանուցանէ.

Ես Գրիգորի որդի Գէորգ... աստուածային տեսչութեամբ գտի զարձանս բազում աշխատութեամբ եւ մեծ յուսով բերի ի դուռն եկեղեցւոյս, կանգնեցի զնշան սուրբ Խաչիս իմ զաւակաց արեւշատութեան. որ յաւուր գալստեան Արդւոյն Աստուծոյ առեալ զամբար լուսոյ ընդ առաջ (ելցեն) տեսանել զփառս Քրիստոսի. Արք ընթեռնուք զգծագիրս ի վէմն քանդակեալս՝ յիշեցէք եւ զիս զյաւգնամեղս .

Թուականն պատշաճի Ա Սմբատայ թագաւորի Սիւնեաց, Վասակայ որդի լինելն՝ Թոռին նորա Բ Սմբատայ, ըստ պատմչին բանից, եթէ ոչ վրիպիմ:

Ի կէս ԺԳ դարու Դաւիթ թագաւոր Սուանաց՝ փախուցեալ ի կարանաց Բաշու Նոյին զօրավարի Թաթարաց՝ բնակելոյ ի Զագեձոր Հարանդայ, « անցանէր ընդ » գլուխ գեղջն » Գուտենոյ, որոյ տէր Թանկրի-դուչի յազատաց Սմբատայ Օրբելեանց, հեծեալ ձիարձակ լինէր ունել զնա. իսկ նորա իմացեալ զի յարանց Սմբատայ է՝ արկ նմա զքսակն յորում պահէր գոհար ակն մի լուսաւոր յոյժ և մեծագին. զայն մատուցեալ ապա Սըմբատայ առ զանն Թաթարաց, եգիտ մեծ շնորհս:

Երկրորդ գիւղն կեօքարաս կամ կեօյապաս՝ առ երի առաջնոյն ի հարաւոյ կուսէ, 20 տամբք, կայ առ Պոյպուչագ (Յորդաղբիւր) վտակաւ՝ որ խառնի ի Գուտենի գետ.

անուն գեղջո օտարոտի իմն լսի և ոչ գտանի մերձաձայն հին անուանց Յուցակին, բայց եթէ Խոզառանս: Յելից հարաւոյ գեղջն ամբառնան կապոյտ լերինք, ըստ Զալալեանի, այլ գեօղն կապոյտ շատ հեռի է ի հարաւոյ Արփայ գետոյ: Են ի գեղջն կէզբարաս աւերակք կոփածոյ եկեղեցւոյ (18 քայլ երկայն, 10 լայն), և առ արեւմտեան դրամբն երկու խաչվէմք յոյժ գեղեցիկ քանդակաք. « Ի » վերին ծայր միոյ խաչին, գրէ Զալալեան, կայ պատկեր » փրկչական՝ ունելով ի ձեռին զխաչ. յերկուց կողմանց » նորին աղանիք թուցեալք. յաջմէ և յահեկէ պատ » կերք արանց կանգուն կացելոց, նոյնպէս խաչակիրք. » ի ներքոյ այսոցիկ արանց նրբաբանդակ պատկեր արծ » ույ և ցլու, որոց մերձ լուսնաձեւ բոլորակ շրջանակն » շղթայաշար մանուածովք մանր յորինեալ, զորով կայ » գրեալ յամի 1546.

1 Զորս սազարեղ, ստէ Զալալ. այլ ընդ որ կողմն՝ չստէ:

2 Զալալեան՝ ՅԼԹ ընթերցեալ է:

**Ի ԹՎԻՆ ԶՂԴ<sup>1</sup>. Յիշատակ մաւր իմոյ Ուլու խաթունին .**

և ի ճակատ խաչին .

**Ես Վարդանս<sup>2</sup> կազմեցի զԽաչս ի փրկութիւն խաչատուրին :**

Արձանագիր միւսոյն է յամի 1489-90 .

**Կամաւն Աստուծոյ ես խաչատուր Երէց կանգնեցի զայս խաչս հոգւոյ փրկութեան Պարոն Սմբատին եւ իւր թոռին . ով կարդայք յիշեցէք ի Քրիստոս . Թուին ԶԼԸ :**

Են և առ հարաւային դրամին խաչվէմք երեք՝ կիսեղծ արձանագրութեամբք . յորոց մին է ,

**Ես Արղութէս կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հոգւոյ . . . իմոյ Բաբին . յիշեցէք ի Քրիստոս .**

միւսն՝ յամի 1400 .

**Յանուն Աստուծոյ ես Սալամա կանգնեցի զԽաչս եղբաւրն Աժմանդին ? որ մնաց . . . ով կարդայք յիշեցէք ի Քրիստոս . ԸՃԽԹ .**

Իսկ ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն տապան մի է քանդակեալ պատկերաւ նիզակաւոր ձիաւորի , արձանագրաւս .

**Ես Մարդարս կանգնեցի զխաչս եղբաւրս Թադէոսին , որ է որգի Մէլիք բէկին . ՌԾԲ ԹՎԻՆ :**

48. Կիսով փարսախաւ ի Մ. Հր. Կէօքաբառայ յաջմէ Գուտենւոյ և յարեւելից փալանտոզ սարի կայ Հերմեր գիւղ մեծ իբր 100 տանց Հայոց և 80 Թաթարաց . ի հընումն ասի քաղաքաւան մեծ լինել , որոյ նշմարին և մընացուածք , այլ ոչ յիշի ի հին Յուցակին : Թէպէտ քարուտ այլ գեղեցիկ և բարեբեր են սահմանքն և առաւտալուրք , յորս և հանքային աղբերք : Եկեղեցին ամայի

ի միջակի կայ գեղջն , ( 24 քայլ երկայն , 19 լայն ) , ամբարձեալ ի վերայ չորից վայելչաձեւ սեանց , երկուս ունելով աւանդատունս աստի և անտի խորանին , որոյ մընայ և վէմն խաչանիչ . լուսամուտքն են լայնք և քանդակազարդ չրջանակօք . բայց արձանագիր և ժամանակ չի նութեանն ոչ յայտնեցաւ : Ի վերոյ միոյ ի սեանցն ընդ խաչքանդակաւ գրեալ է յամի 1447 .

**Ես Աղբաստ կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հոգւոյ Գամրեկէլին . Թըվին ՊՂԶ .**

Ի ճակատ արեւմտեան դրանն .

**Աստուած ողորմի Խոնդալին եւ դստերն Ղադամչին , եւ ծնողացն հաւրն խաչումին<sup>3</sup> եւ մաւրն Մարպատին . ով կարդէք . . .**

Ի հարաւակողմն եկեղեցւոյն կայ ընդարձակ գերեզմանատուն խուռն խաչարձանօք , յորոց մի յամին 1290 .

**Կամաւն Աստուծոյ Ես Ռատակէս կանգնեցի զԽաչս ինձ եւ ամուսնոյս . ԹՎԻՆ ԶԼԹ .**

1 Թուական է ըստ Քաջբերունոյ . Զաւալեանն ունի ԶՂԴ :  
2 Քաջբերունի , վարդապետի :

3 Խաչմի գրեալ էր յօրինակողէն . ընդ որում ստուգելի են և այլք յանուանցն :



Մեծ խաչարձան մի եւս կայ ի հիւսիսոյ կուտ գեղջն ի վերայ ճանապարհին, այսու գրութեամբ, յամի 1282.

**Ես Գրիգոր որդի Վահրամայ Հայրին ? որ մնաց ի պատերազմի<sup>1</sup>, Հասայ<sup>2</sup> կանգնեցի Ղիտաչա . յիշեցէք . ԹՎին ԶԼԱ .**

Մերձ ի խաչարձանս ի տան ուրեմն երեւի գետնափոր ուղի՝ որ թերեւս հանէր յայն կողմն գետակին յարեւելս կոյս . գոն շուրջանակի և հեաք բնակարանաց և գերեզմանատանց :

Յարեւելից Հերհերայ յայառաժի ուրեմն յոտս մի լեւրին կէօք տաղ կոչեցելոյ՝ կայ քարաչէն բերդ պարսպօք և աշտարակօք . և ի միջի մատուռն անգիր, և երեք խաչվէմք, որոց մին ունի զայս արձան, յամի 1247 .

**Ես Մարգարէս որդի Գագիկ երիցոյ աթոռակալի Կեցոյ<sup>3</sup> կանգնեցի լճաւ . ԹՎիս ՈՂԶ .**

Այս բերդ՝ ըստ նշանակութեան թուրք անուանն կարծի կապոյտ բերդ Սիւնեաց, յորմէ և լերինքն . ըստ նոցին պատմի՝ մի ի նշանաւոր բերդորէից Վայոց ձորոյ էր կապոյտն, այլ ի պատմութեան ոչ յիշի . և թուի սա՝ և ոչ որ յԵրասխաձորն է համանուն բերդն, աղարտեալ ի Վասակեանց և ի Պարսից առ Վարդանամբք . քանզի Եղիշէ՝ յետ այնր անընդմէջ յիշէ և գերկոսին բերդորայս Սիւնեաց՝ զՈրոտն և զՎասակաչատ . նոյն

և գլնի (յ՛է Յեղանակի) ասէ վասն գերծեղցն ի Պարսից՝ ապաւինել « ի մեծ ամուրս կապոյտ լերինն », առանց որոշելոյ զաշխարհն կամ զգաւառ, և ի ճահ զայ կողմանրս, ուր երկայնաձիգ են լերինք և ամաւրք . և ի պատմւչէն Սիւնեաց յիշի գալ ոմանց ի փախստէից Հայոց ի կողմանս Եղեգնեաց ձորոյ և նահատակիլ ի Պարսից : — Ի հարաւակողման բերդասարիս գլորեալ կայ կոչուո մի մեծ, և երկար արձանագիր գծեալ ի նմին, յամի 1243 .

Ի թուականիս Հայոց ՈՂԲ<sup>4</sup>, ես Գրիգոր անարժան կրաւնաւոր ի Հայրապետութեան Յովանիսի մեծահամբաւ լուսաւորչի եկի ի տեղիս յայս եւ բնակեցայ ի տան մեծապատիւ քահանայի Գագիկ երիցոյ աթոռակալ եկեղեցւոյ եւ իշխան ժողովրդեան, եւ եղէ ես ընգ ժառանգորդս նորա, կացի ի միասին . եւ էր պակասեալ քահանայ ի տանէ նորա ի բազում ժամանակաց . Սարկաւազն տղայ հասակաւ էառ զպատիւ քահանայութեան եւ կիսաւրեա ժամանակաւք փոխեցաւ առ Քրիստոս, եւ էած խաւար յետամնաւ ցաց իւրոց . եւ . . . . .<sup>5</sup> որ ? խաւարեալ ի յաչաց տեսութենէ . եւ նա էր լոյս կենաց նորա շիջաւ . . . . .<sup>6</sup> մեք զեկեղեցիս ի բարեխաւսութիւն հոգւոյ իմոյ եւ յաւգնութիւն աշխատաւորաց, ի հաստատութիւն մանկանս իմոյ Գրիգորի եւ յառաջումն Սարգսի վերակացի ժողովոյս եւ տանուտիրա . . .

Յայլում սեպտեմբեր վիմի, ի նմին կողման գեղջն և լեւրինն կայ փոքրիկ սագաչէն մատուռն մի (4 քայլ երկայն, 3 լայն), քարակոփ և բռեալ ի ներքուստ, յանուն Ս . Գեորգայ, փոքրիկ սեղանով, յորոյ որմն քանդակեալ է ա-

ղանի՝ նշանակ Ս . Հոգւոյն . ունի և զաւիթ քառակուսի փոքր մի ընդարձակագոյն, որոյ ձեղուն կամ երդիք՝ երկու մեծատարր քարինք միայն են . վերին շրջակ որմոցն քանդակազարդ՝ ունի զարձանագիրս այս, յամի 1247 .

**Կամաւ հղաւրին Աստուծոյ, ես Շաչս միայնակեաց եւ հարաղատ եղբայրն իմ Մաթուխն շինեցաք զսուրբ եկեղեցիս յաղագս փառաւորելոյ սուրբ Նշանիս որ յանուն Սրբոյն Գէորգայ Զաւրավարին, որ յաղագս**

1 Զաւրեան գրէ, Վահրամայ ու Մանգի դոտերագի :  
2 Քաջբերունի Հոմար :  
3 Ընդօրինակողն Քաջբերունի կարծէ, և ոչ անդէպ, զմասն եկեղեցոյ բառի . քանզի և յայլում արձանագրի տեսցի ստուգվւ պնդէս գրեալ :  
4 Թուական՝ ՇՂԲ (1143) գրեալ է ի Քաջբերունոյ կամ ի

աղագրէն, այլ ոչ միտքանի ընդ վերոյգրելոյն ի Մարգարէ երկցուէ որդւոյ Գագիկ աթոռակալի՝ յիշեցելոյ յերկուսի եւս արձանքս . այն զի չիք Յովանիէս հայրապետ՝ այսինքն եպիսկոպոս Սիւնեաց ի կէս ԺԲ դարու, այլ դոյ մերձ ի կէս ԺԳին :  
5 Ընդօրինակողն գրեալ է Ալեքիշ :  
6 Մշնէ ? :

հանդերձեալ արքայութեանն յուսոյն բազմաչարչար սախատութեամբ եւ մեծ ջանիւ ի յաւարտումն ածեալ կատարեցաւ, ի թվին ԶԽԶ ի հայրապետութեան Տեառն Ստեփանոսի աթուակալի եւ ի պարոնութեան այսմ տեղւոյ գեղապանծ իշխանիս Վարհամայ<sup>1</sup> եւ բարեպաշտուհոյ Մամբանայ, եւ ամուսնոյն իւրոյ Գոնցային, եւ գեղեցկապտուղ շառաւիղացն Ուքանայ եւ Հասանայ, Ամագնայ... հեղ? սիրոյն Քրիստոսի յիշեցէք զՇաշ միայնակեացս եւ զծնողս իմ ի մաքրափայլ աղաւթս ձեր. եւ որ սպասաւոր լինիք փառազարդ խորանիս պարտիք ինձ Գաւր պատարագ ի տարին, զՍուրբ Գրիգորին, զՄառզարդարին եւ զԱւագ հինգշաբաթին ինձ մատուցէք Շաշիս վասն սիրոյն Քրիստոսի անխափան. եւ որ անիոյթ առնէ, դատի յամենակալ բերանէն Աստուծոյ:

Ի Հս. արեւելից Հերհերոյ սակաւուք հեռի ի ձորեզեր ուրեմն կան Մնացուածք Ս. Սիոն անապատի, ի համանուն լերին. որ ըստ պատմչին մի ի հնագոյն վանորէից Հայոց է, շինեալ յառաջ քան զՀայ թուականն ի տիկնու լէն Սիւնեաց Վարազդուխտ կոչեցելոյ. ցանկալի էր գտանել աւելի ինչ յիշատակ զայնր ժամանակի և զինորին: Ի սկիզբն Ը դարու, յաւելու պատմիչն, «պայծա»  
 « անայր ճգնաւոր արամբ յայնմ ժամանակի քան ըզ»  
 « Սինայն և զԱլիւթայն յԵրզրատոս». ուր զառաջինն կամեցան փոխադրել զարիւնաշաղախ մարմին Ստեփանոսի Իմաստասիրի եպիսկոպոսի Սիւնեաց, այլ Արկազնեայքն յանկուցին յինքեանս. էր անդ յայնժամ «Երա»  
 « նեալ ճգնաւորն Աստուծոյ Նուն (կամ Նոյ), որ էր ռբազուս՝ ամբ բնակեալ ի սուրբ լեռնն Սիոնի, և հը»  
 « բեշտակացեալ ամենայն վարուք»: սա ետես զոգի

Ստեփանոսի վերացեալ առաջի Աստուծոյ, և գուշակեաց զպատուհաս գաւառին, ըստ աւանդութեան պատմչաց վարուց նորին եպիսկոպոսի: Այժմ երկու եկեղեցիք փոքունք են ի տեղւոյն (մէն 6 քայլ քառակուսի), քարաշէնք, մի քան զմի հնագոյն, և դրամբ հաղորդեալք ընդ իրեար. վասն որոյ և Ղօշափանք իսկ կոչին ի Թուրքաց, որ զոյգս նշանակէ. ի վերայ արեւմտեան դրան հնագունին կան խաչվէմք նրբաքանդակք, ի վերայ նոյնպէս քանդակազարդ լուսամուտ, և ի վերայն քանդակեալ արծուի մեծ՝ ունելով մագլաքն խոյ կամ այլ արջառ, և թուական ԶԱ, (1382). ի հարաւային որմն քանդակեալ է ժամացոյց հայատառ:  
 Յակեկէ արեւմտեան դրան եկեղեցւոյն գրեալ կայ արձան եպիսկոպոսի միոյ Սիւնեաց յամի 1289-90, և միւս եւս անթուական.

**ԹՎ. ԶԼ<sup>3</sup>. Ես Ստեփաննոս Սիւնեաց արհի եպիսկոպոս զմեր հայրենի գիւղն Զակոշ (կամ զԱկոշ) ի վանս սուրբ ուխտ(իս) տուաք հայրենիք իւրով ժողովրդով ի յիշատակ հոգւոյ իմոյ. ով որ հակառակ կայ ՅԺԸ սուրբ հայրապետաց նզոված.**

**† Ես Յակոբ միաբանեցայ սուրբ ուխտիս. միաբանք Ա ժամ սահմանեցին Սուրբ Յակոբի տաւնին:**

Ի ներքին որմն նորագոյն եկեղեցւոյն՝ որ Ս. Յովնանեա անուանի, արձանագրեալ է յամին 1321.

Կամանն Աստուծոյ ես Բերդակս եւ ամուսին իմ Խաթուն ի Սուրբ Յովհաննէս ուխտս տուաք զինչ այլ հոգւոյ բաժին կէր<sup>3</sup>. վարդապետք եւ միաբանք Բ պատարագ սահմանեցին Յովհաննու տաւնին, մէկ ինձ Բերդակիս, Ա Խաթունին. Կատարիչք աւրհնին յԱստուծոյ. ԶՀ. թվին:

<sup>1</sup> Թուի աստուծոր պակաս անուն չօր Վարհամայ և բառն որդոյ. յարձանագրի միւսմ Ս. Սիոնի՝ Վարհամ կոչի որդի Շահուանեցոյ:  
<sup>2</sup> Եթէ ստոյգ է թուականն՝ պատշաճի Ստեփանոսի եպիսկոպոս  
 սի Նորավանից:  
<sup>3</sup> Այսինքն իոյր. Չալալեանն (140) գրէ. « Չսուրբ Յովհաննէս » ի սուրբ ուխտս տուաք, զինչ այլ հոգւոյ բաժին վէր:

ի խորանի այս եկեղեցւոյ երկու սեղանք են պատահականորէն արձանագրեալ է յամի 1291, ի հարաւարագի՛ սեամբ միով զատուցեալք յիրերաց. ի ճակատ հիւկողմանն՝ յամի 1308. անուանքն ստուգութեան կարօտին.

**Յանուն Աստուծոյ եւ Կուկորս . . . .<sup>1</sup> զԿառարտին հողն տուաք ի սուրբ ուխտս . վարդապետք եւ միաբանք զսուրբ Սարգսին Բ պատարագ սահմանեցին , Ա Խէրխանին , Ա Հուլին<sup>2</sup> (?) . ով խափանէ դատի յԱստուծոյ . ԹՎին 210 .**

**† Կաման հզարին Աստուծոյ . եւ Վարդան վարդապետ զսրանոցիս<sup>3</sup> չարէքն ի հիւսնէն գնեցի ի սուրբ ուխտս տվի . միաբանքս զՍուրբ Աստուածածնին Փոխման Ա պատարագ ինձ պարգեւեցին . ով խափանէ դատի յԱստուծոյ . ամէն տարի ? . ԹՎին 205 :**

ի հարաւակողման եկեղեցւոյն գրեալ կայ հնագոյն եւս թուականաւ 1283 ամի՝ արձանս այս .

Կաման հզարին Աստուծոյ այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի մեծաշուք Պարոնին Վարհամայ որդւոյ Վասակայ թոռն Մեծին Մագիստրոսի եւ բարեպաշտուհւոյ Սանդղտոյ ամուսնոյ իւրոյ , եւ գեղեցիկ պտղոյ նոցա Ուքանայ եւ քաջազարին եւ մեծ սպարապետին Վարհամայ եւ քրիստոսասէր մաւրն իւրոյ Մամքանայ , եւ բարետոհմիկ աւրիորդ ամուսնոյն իւրոյ Գոնցային , որ մեծաջան աշխատութեամբ շինեցին ղեկեղեցիս եւ բազում սպասիւք զարդարեցին յաղագս արքայութեան ? իմոց եւ երկարութեան կենաց ամուսնոյ՝ եւ զարմիցն իւրեանց Ուքանայ , Հասանայ . նուէր ի սուրբ ուխտս ղՔարաթաղին այգին վերին հատովն . . . . կոռ արտով . . . եզրն մեծ առջն ? է գնալա ի վերոյ . . ընկոյզին յԵրիցակալերէն Գ հոգոյ չորբարբ ? . կողճիքն մինչեւ վանքն եւ մեծապատիւ ? հատուցաք պարոնացն Դ մաս . . . Դ պատարագ Ուքանայ . . զատկին , Դ Մամքանայ Վարդ(ավառին) կատարեն . Ով խափանէ դատի յԱստուծոյ . . մարմնով . ԹՎ . 216 գրեցաւ .<sup>4</sup>

Առ հիւսիսային դրանն կան արձանքս գրեալք յամս 1308 և 1317 , և միւս ի 1326 .

Կաման Աստուծոյ եւ Մամաք դուստր Հասանայ (եւ) իմ որգի Վաղթանկ զիմ ոսկի առպնջանի (ապարանջանք) գոնցէն տուաք , սուրբ Սիաւնի տակի հոզն . . . եւ ի սուրբ ուխտս տուաք . Վարդապետք եւ միաբանք Բ պատարագ սահմանեցին Ծառզարգարին , Ա ինձ Ա իմ որդւոյն Սեւադին . ով խափանէ դատի յԱստուծոյ . ԹՎին 245 .

**† Կաման հզարին Աստուծոյ եւ Սմբատ որդի Լիպարտի յազգէն Աւր-**

1 Յայտմ տեղւոյ ի Զալալեանն գրի բաժնոյ :  
2 ԹԿ-ՊԿ , ըստ Զալալեանի :  
3 Սրանոյ՝ աղբիւր է , գորոյ չորբորդ մասն գծէ , եւսյն :

4 Կարելոյ արձանագիր , ուլ ուղղագրութեան կարօտի մեծապէս , առ ստուգել եթէ ո՞ր Մամքան է որոյ իցէ կին , և երկերս յիշեալն Վահրամ՝ նոյն թէ որիւ , և Հասան ոյր որդի :

սլէշեանց որ ի Մար գերի կացի, կամաւքն Աստուծոյ աղատեցայ<sup>1</sup>. զամուսին իմ Ոխթոգ? . որ յետ Բ ամի փոխեցաւ... եւ յետ իմ եղբայրն բաժանեցայ... ինձ հասաւ... ես Սմբատ Վրուինքթին<sup>2</sup> հողն Ս. Աստուածածնիս (տուի) անչարութեամբ. Վարդապետք եւ միաբանքս ետուն ամեն (տարի) Համբարձմանն ինձ Սմբատիս. Ով իմ ազգէս կամ յաւտարէն... եկեղեցոյս... Աստուծոյ ամենակալ բերանէն նզոված եղիցի եւ ՅԺԸ հայրապետաց կապած. ի ԹՎ. Հայոց ԶԿԶ.



31. Հերներ. — Ս. Սիոն եկեղեցի.

† Ես Սաթուն իմ որդիքս Սարգիս Շահերշ զմեր Սուրբ Սիանի տակի հողն ի Սուրբ ուխտս տվինք. Վարդապետք եւ միաբանք սահմանեցին Ա պատարադ Յակոբայ՝ Վարդանանց տանին անխափան. ԹՎին ԶՀԵ.

Ի վերայ հարաւային որմոյն արտաքուստ գրեալ կայ յամի 1315.

Կամաւ ամենակալին Աստուծոյ եւ իշխանութեամբ մեծ Պարոն Բուրթէ

1 Այս Սմբատ Թոռն է Իւանէի էզբոր Տարսայիւնի:

2 Զաւաւեան ընթերցեալ է ՄԻ-ԻՆԻ:

լին եւ որդւոց իւրոց Բէշքինայ եւ Իւանէին, ես Գոնցէ ամուսին Վարհամայ, որդւոյ Շահուռնեցոյ?, դուստր Խոստրովիկայ յազգէ Տարսիճեանց ետու յիմ հալալ արդեանց եւ հայրենեաց իմոց ի սուրբ ուխտս վասն հողւոյ որդեաց իմոց Ուքանայ եւ Ամադինայ, որ տղերաւք՝ ի Քրիստոս փոխեցաւ. անդ ի սուրբ գիրքն իւր հայրենիքն իւր խաչին մտաւքն յԱրմարտեսան ըզ- Գապարափոսին էգին ԲՌ դեկան գնուած, ու ճ դեկան գնուած Բամբակ-հող եւ ի յԱրմարտեսն ու զՈրձաքարին հողն յԱղբրտափի. Եւ միաբանքս հաւ տատեցին ի տարին ԺԲ պատարագ Սուրբ Խաչի տաւնին, Ամադենին Դ, Ուքանայ Դ, Քառասնից տաւնին Բ Գոնցին, Բ Թուխտինայ. կատարիչք ակրհնին յԱստուծոյ, եւ խափանիչքն դատին ի Տեառնէ. Ով հակառակ կայ մերոց կամ աւտարաց մեր մեղացն տէր է սուաջի Քրիստոսի. Թվին ԶՂԴ՝:

† Կաման Աստուծոյ ես Սերովբէ արեղէս առի Բոչարաթի հողն Չաղա ցի դուռն, տվի վախմ Սուրբ Աստուածածնիս. ով հակառակի անիծած է:


Թուի թէ արեղայս այս յետոյ եպիսկոպոսացեալ է, ցին քանդակպատկերաւ ակէզարդ և երկայնազգեստ ծեւ վասն սորա կանգնեալ է խաչվէմ մերձ ի հին եկեղեցիս. րունոյ՝ խաչ ի ձեռին, արձանագրաւս այսուիկ.

Ես Յակոբ արեղէս կանգնեցի զխաչս հողւոյ փրկութեան Սերովբէ եպիսկոպոսի. Թվիս ՌԺԸ.

† Կաման Աստուծոյ ես Գրիգոր Դավիթն որդի յԱւինջ Խաչիտափի այգին ի սուրբ ուխտս տվի վասն ամուսնին իմոյ Ասփին՝. վարդապետք եւ միաբանք սահմանեցին Բ պատարագ Ասփնայ փոխման Աստուածածնի շաբաթ ակրն. կատարիչք ակրհնին յԱստուծոյ. ով զայն այգին յայս ուխտէս հանէ, յԱստուծոյ նզովեալ եզիցի. Թվին ԶԿԶ.

† Կաման Աստուծոյ ես Կարապետս եւ ամուսին իմ Տիկնաց տիկին՝ զմեր հողւոյ բաժին ի սուրբ ուխտս տուաք. Վարդապետ եւ միաբանք Բ պատարագ տվին Սուրբ Գրիգորի տաւնին. Ա ինձ Ա ամուսնին իմ. կատարիչք ակրհնին յԱստուծոյ:

1 Ի դէպ է ընթեռնուլ ոչոյ ուրո, այսինքն կարճորոյ ի տիս տղայութեան վախճանեալ:  
 2 Յայտ է խառնակութիւն գրուածոյս որ քաջ քննութեան կարօտի. Թուականն եւս գրեալ էր ԶՂԴ (1545), զոր ուղղեցի ըստ նախագրեալ արձանագրութեանց, յորս 200 ամաւ յառաջ յիշատակին Վահրամ և Գոնցա և որդիք նոցա Ուքան և Ամադին, եւս և Հասան. որոց զարթն՝ ըստ արձանացս՝ լինի այսպէս\*.  
 3 Ասփա դուստր է Տարսայիճի և Մինա խաթունի:  
 4 Թուի թէ անուն կնո՛ն էր Տիկնոց (անուն որ յա՛ւիս վարէր), և ընդօրինակողին յակելեալ է առ նմին և զտիկն:





† **Կամաւն Աստուծոյ եւ Քօքօրս<sup>1</sup> զԱղբերկայ հողն Աղջրատաւի ոսկովք գնեցի ի սուրբ ուխտս տուի . Միաբանք մի պատարագ տուին իմ հաւր Սարգսին՝ Սուրբ Գէորգի տաւնին . Կատարիչք աւրհնին յԱստուծոյ :**

Առ դրան հին եկեղեցւոյն կայ խաչվեմ՝ պատկերաւ Խաչեցելոյն և բազկատարած ընթերակայիւք, գրութեամբս .

**ԹՎ. ԶԽ . Ես Աղբարոս կանգնեցի զԽաչս որդւոյ իմոյ Շահակին , յաղակթս յիշեցէք :**

Յայլում խաչարձանի գրեալ է յամի 1310 .

**Կամաւ հղարին Աստուծոյ յարհիական քաւչապետութեան՝ Տեառն Յով . եւ ի պատրոնութեան տեղւոյս Ուքանայ , Հասանայ , Ամադենայ , եւ նուաստ հոգի Վարդան վարդապետս կանգնեցի զսուրբ նշանս ի փրկութիւն ինձ եւ հարաղատին իմոյ Մխիթարայ եւ որդւոց նորին . . . ի ԹՎին ԶԾԹ .**

Ի ստորեւ կամ այլուր գրեալ է . **Սուրբ Գրիգոր .**

Մերձ ի սոսա ի հիւսիսոյ կուսէ եկեղեցեացն է և տա . որսորդի , բազէ ի ձեռին , և ցուլ և առիւծ ոգորելով , պան մի , ի վերայն քանդակպատկեր հեծելոյ աղեղնաւոր մատուակք և արբանեակք մահակաւորք , և գրեալ .

**Այս է հանգիստ Ղարպարին՝, որ կիսաւրէ հանգեաւ ի Քրիստոս . ԹՎ. ՌԸ .**

Յայլում գեղեցկաքանդակ խաչվիմի .

**Ես ապաշխարողս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ եւ եղբարց իմոց եւ բովանդակ ազգականաց :**

Երեւին առ սրբօք և դերբուկք պարսպաց վանաց և լին : — Ի քարաժեռի ուրեմն՝ յարեւելակողմն եկեղեցւոյն 30 սենեկաց , և ձիթահանից բազորչի երկանաքացւոյն ի տափարակ տապանի գրեալ է յամի 1296 .

**Ես Վարդան վարդապետ կազմեցի տապանանիս ամուսնոյ Աթերոյս , ոչ որդի ունէր , ոչ աղբեր . ով կարդէք յիշեցէք . ի ԹՎ. ԶԽԵ :**

Առ սովաւ երկու խաչվեմք են , մին կանգուն և միւսն կործանեալ , երկօրին եւս 1649-50 թուականաւ .

**Ես Հայրապետ եպիսկոպոս կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հոգւոյ Մարինային . յիշեցէք ի Քրիստոս . ԹՎ. ՌՂԸ .**

† **Խաչս փրկութիւն հոգւոյ Հայրապետ եպիսկոպոսին . ԹՎ. ՌՂԸ :**

Ի կիցս երկոցուն վերոյգրեալ վտակաց գետոյս , կայ այլ թուրքարնակ , 30 կամ 35 տամբք , որ ոչ յիշի ի հին համանուն երկրորդին Պօլսպուրագ կամ Պոլսպարս փոքր գիւղ կամ հանգրուան , 10 տամբք թաթարաց , հին գերեզմանօք . ի հարաւոյ նորին՝ յահեկէ գետոյն և յանկեան նորին և վտակի միոյ փոքու՝ Աւինն գիւղ հայանուն ,

այլ թուրքարնակ , 30 կամ 35 տամբք , որ ոչ յիշի ի հին ցանկին , այլ ի վերոյգրեալ արձանի Գրիգորի որդւոյ Դուփին : Գեղեցիկք են սահմանքն ըստ դրիցն և բուսարեքութեան , այլ անծանօթ հին յիշատակքն . Մնան միայն որմունք և քառեակ սիւնք եկեղեցւոյ , սեղանով միով և

1 Ոչ կարծեմ այսպէս գրեալ յարձանին , այլ կամ Քոփուր կամ Քաւքար , և կամ Ափուր , որպէս տեսաք յայլում արձանի (յԵՂ 114) :  
2 Քաջբերունի և Զաւալեան Քալաթաութեան ընթերուն :  
3 Զաւալեան՝ Ղաթաթի :

աւազանաւ, և արձանագրաւս ի վերայ պատուհանի .

**Աստուած ողորմիա Եղիսաբեթի :**

Աստի մինչեւ ցիսառնուորդս Գուտենոյ ընդ մեծի գեւտոյն Արփայ՝ չիք այլ շէն, բայց առ խառնըրդովքն կայ փոքրիկ գիւղն Գայալոս՝ որ թարգմանի ապառաժուտ . առ որով երեւի յաջմէ գետոյն՝ մնացուած կրամած քարեղէն կամրջի :

49. ՀՈՎԻՑ ՄՈՋԱՆ.— Յարեւմտից պարու լեռանց՝ (յորում Ծակ-գագաթն, Թեփեփ տէրիկ) պարսպողաց զձորահովիտն Գուտենոյ, կայ փոքրիկ հովիտ մի, որոյ գետ յանունն հին գեղջն առ որով խառնի յԱրփայ՝ ի դէպ է թէ կոչի Մոզն կամ Մոզան գետակ, և յերկուց վտակաց զուգեալ իջանէ ուղիղ ի հարաւ կոյս : Սակաւ գեօղք են ի փոքու անդ տարածութեան (որ և ոչ է քաջարոյս որպէս զստորին մասն Գուտենոյ, այլ ըստ վերնոյն առապար), բայց ոչ աննշանք ըստ ազգային յիշատակաց : Մի ի գիւղիցդ՝ փարատխաւ կամ աւելի յարեւմտից յիշեալ լեռինդ և յահեկէ արեւմտեան վտակին, է Արկազ կամ Արկազն որ և Արկազան գեօղ, զարդիս Արզնագ կամ Արդեգ կոչեցեալ, ի գոգս զուարճատես լեռանց գետեղեալ, զրեաթէ հաւասար բացակայ յերից գետոց՝ Մզան, Եղեգեաց և Գուտենոյ, բնակեալ ի Թաթարաց 40

տանց : Միակ հին յիշատակ գեղջս է սակաւաժամանակեայ հանգստարանն լինել Մեծիկ Ստեփանոսի եպիսկոպոսի, զորոյ մարմին՝ ի տանել պաշտօնէիցն ի մենարանն Ս. Սիովն, « լուեալ Արկազան գեօղն՝ տերամբն » իւրեանց ելին ընդ առաջ, և հաւանեցուցին զսպասաւ » լորսն՝ հանգուցանել ի սենեակն որ յանունն Սրբոյն » Քրիստափորի անյաղթ զօրավարին շինեալ էր . զոր » տարեալ անդէն հանգուցին ի սենեկին . . . . Իսկ յետ » քառասուն աւուր պատուհասի (Վայոց ձորոյ) . . . ժողո » վեալ մնացորդք գաւառին կոչեն զկաթողիկոսն և » առնեն ժողով վանականաց . և բազում աւուրս ցայգա » պաշտն կատարեալ, փոխեն զնշխարս սրբոյն ի միա » բանակեաց վանան Թանահատի վանից » : — Սակաւուք ի բացեայ ի հարաւոյ կուսէ գեղջն՝ կայ Ս. Խաչ վանք . որոյ եկեղեցի էր կոփածոյ քարամբք շինեալ (16 քայլ յերկայն, 14 ի լայն), երկրորմբք աւանդատամբք : Այժմ կոչի սա Արզնագոս Ս. Խաչ, վասն մասին միոյ կենաց փայտին, զոր ասեն զՀացիւնեացն գոլ, այսինքն զտըւեալն ի Հերակլեայ կայսերէ առ Բիւրեղ տիկին Սիւնեաց, և աւանդութեամբ համարին այժմ ծածկեալ զայն ի հիման եկեղեցւոյն, և զան յուխտ նմին մահմէտականք անգամ : Յերի արեւմտեան դրանն կային երեք գեղաքանդակ խաչվէմք և տապանք, այլ արձանագիրքն եղծեալք կամ անվերծանելի մնացեալք, բաց ի միոյն, որ է այսպէս, թուականաւ 1304 ամի .

**Աստուած ողորմի . . . Ոչաւայ խաթունին . ամէն . Թվին ԶԾԳ .**

Հաւանօրէն առ հնութեանն քանդեալ է հին եկեղեցին յետ 1857 ամին, և շինեալ նոր և աւարտեալ օծմամբ յամի 1873, կապուտագոյն այլ դիւրափուխր տաշածոյ վիմօք, բարձր գմբեթաւ, որպէս տեսանի ի պատկերիդ . (22 քայլ ընդ երկայնն, 17 ընդ լայն), ի վերայ չորից ըստուար սեանց, մէն միայն պատուհանս աւնելով ի կողմանն, այլ յուղիս ի գմբեթին : Է եկեղեցւոյն և գաւիթ փոքր, և շուրջ զնովաւ 12 սենեակք միարանից և ուխտաւորաց, և 14 վարկպարագի կրպակք վասն աւուրց տոնաւ վանառի, ի տօնի Խաչին կամ յամսեան հոկտեմբերի, յոր գան բազմութիւն՝ ոչ միայն ի Սիւնեաց կողմանց, այլ եւ յԱյրարատայ, արք և կանայք, հետի և հեծեալ, մինչեւ 6000 սոխք . ընդ որս և Թուրքք և Քուրդք՝ ոչ այնքան յուխտ որքան ի կողոպուտ, ըստ Քաջրեւոնոյ, որ ընդ երկար խորհրդածէ ի ստորագրութեան տեւ

ղոյս, ոչ գովութեամբ : Ըստ իւրաքանչիւր յօժարութեան տան նուէրս ուխտաւորք Ս. Խաչին, յորոց մասն մի առաքի յիջմիածին՝ :

Ի հարաւոյ կուսէ Արկազան գեղջ ի գագաթան բլեր միոյ կայ փոքրիկ քարաշէն եկեղեցի (7 քայլ երկ . 5 լայն), յոյժ վայելուչ դրուագօք, այլ խախտեալ և անյայտացեալ յարձանագրութեանց . ի ճակատ արեւմտեան դրանն է խաչվէմ ի խորանաձեւ շրջանակի, յորում ընթեռնու Զալալեան ,

**Վարհամ խաթուն յաղաւթս յիշեցէք .**

այլ ոչ է հաւանելի Վարհամայ՝ խաթուն լինել : Նոյնպէս ոչ ամենեւին աներկբայ թուին յետագայ գրուածք այլոյ խաչվիմի՝ յեկեղեցւոջն, և որ ի հիւսիսոյ դրանն .

**Ի Թուին մերոյ ԷՃԿԹ Յակոբ երէց կանգնեցի զԽաչս ինձ եւ ամուսնոյն իմոյ . որք կարդայք յաղաւթս յիշեցէք .**

- 1 Աւանդէ Քաջրեւոնին և գովասանութիւն մի ի Ս. Խաչն Արկազու, երգեալ ի Ստեփանոսէ ուսմեօք, ի կէս մերոյ քարուս .
- Քրիստոնեայք, եկէք անկաճ արեցէք,
- Գովասանքը կը տամ պարոն Սուրբ Խաչին .
- Ով որ ուխտ ունի՝ կ'ուռնու մուրաղը .
- Կը տան ողորմութիւն սէրը Սուրբ Խաչին :
- Սարերը ընկել այ մէկմէկու զօշոյ .
- Ուխտաւոր կը գայ թաղաւոր փաշայ .
- Զորս կողմիցն մատաղ կը գայ չամէշայ .

- Կը զոհն մատաղ սէրը Սուրբ Խաչին :
- Ուխտաւորը կը գայ ոսկիէ ոսխտով,
- Մէջքերին կողած է Թիւմայի շալով :
- Զորս կողմից կ'աղաչեն ողբաւով լալով,
- Արտասուքը կ'թափեն սէրը Սուրբ Խաչին :
- Մեղաւորին իրենց մեղքը ասել այ .
- Չենը գնաց Դաղատանը հասել այ :
- Նուսատ Ստեփանը զօրութիւնը տեսել այ ,
- Էլ չի մոռանալ սէրը Սուրբ Խաչին :


# † Եւ ամենավեհ իշխանի Պուշոյ եւ մանկան Էաշոյ եւ մեծահաւատ տիկնոջ Խոտանայ<sup>1</sup>? յորժամ տէր էր տեղւոջս . . . :

Ի ստորեւ սարին ի փոքու խաչվիմի վերժանի Թուականաւ 1297 ամի.

## Կանգնեցաւ Խաչս ի փրկութիւն Ջնարուղայ? աղին . Թվին ԶԽԶ :

80. Յարեւմտից հարաւոյ Արկազան առ միւսով վը տակաւ կայ Թաթարարնակ գիւղն Ղարափանք, 20 տամբք. այսպէս կոչեցեալ վասն սեաւ քարամբ շինուածոյ մերձաւոր աւերակ վանացն, որ յարձանագրաց տեղոյն՝ և ա.

նուամբ եկեղեցեացն և վանացն իսկ՝ յայտնի լինել Թանատի վանք: Պատմիչն Սիւնեաց ի Թիւս վանորէից աշխարհին յանուանէ յիշեցելոց, յետ Տաթեւու՝ առաջին կարգէ զԹանահատի վանս, և ԼԵ մերձանուն նմին զԹա.



33. Արկազն.— Ս. Խաչ.

նատէի վանս, և զսա ասէ լինել ի Վայոց ձոր, և ի նմին «ՉՆՆաբար Սրբոյն Ստեփաննոսի»: Անուանք վանացն և Ս. Ստեփաննոսի՝ չփոթ արկանեն. քանզի և եկեղեցի Թանահատի հին վանաց՝ նուիրեալ էր Ս. Ստեփաննոսի Նախավկայի, և ողբերգորէն խողխողեալ մեծ եպիսկոպոսն Սիւնեաց կոչի Ստեփանոս և իրրեւ Սուրբ Թաղեցաւ ի միում յերկուցս. և յարձանս վանաց տեղւոյս յիշին երկոջին եւս Ստեփանոսք. արդ եթէ որիչ են վանքդ՝ որպէս և են իսկ, հարկ է թէ որ աստ ի Քարէվանք գեղւլըս է, (յորում և վկայութիւն արձանաց Ստեփանո.

սեանց՝) Թանատէի վանքն իցէ. զի և յերկուսեան արձանագիրս՝ (յորս միայն ի բազմացն միջի յիշի անուն վանացս) գրեալ է Թանատի վանք. այսպէս գրեն և Յայամաւորք, Վարդան և Կիրակոս պատմիչք, և հնագոյնն Թովմա Արժրունի՝ Թանաղայ կամ Թանատի վանք՝ զհանգստարան եպիսկոպոսին. իսկ Օրբելեանն ի պատմութեան անդ եպիսկոպոսին՝ Թանահատի գրէ, ըստ մերս օրինակաց, որով առթէ չփոթա՞: Միւս եւս չփոթ կամ անկատար զրոյց է պատմիչն՝ ի նշանակելն զփափազելի տեղի վանացն. « Որ կայ, ասէ, ի վերոյ Սիւնեաց,

<sup>1</sup> Զաւլուէան (Բ. 134), համարի խոտամ կոչել անուան կեռլ Պուշոյ, բաց դիտեմք յայլոց արձանաց զի կոչէր խոթլու խաթում:  
<sup>2</sup> Այսպէս սակաւ ինչ պլլայութեամբ գրեն զվանահոգի Թաղ.

ման իմաստասէր եպիսկոպոսին. Թանոթի, Թանոթի, Թանոթոյ, Թանոթոյ, Թանոթոյ, և ոչ մի ոք ներմուծեալ զ՛Ն առաւ, բաց յՕրբելեան պատմիչն Սիւնեաց, յորմէ ակն ունեիք էր քան յայլոց՝ ստուգադոյն ընթերցուածն:

» յ'ստորոտ լերինն, ( որոյ ), ի բարձրաւանդակի միջ, ի » մէջ անտառին »: Եթէ զաշխարհն իմանայ Սիւնիս' ապա արտաքոյ նորին խնդրելի էր զԹանահատ, այլ ըզ- Մղկաց գաւառն՝ զգլխաւորն Սիւնեաց իմանալի է ան- շուշտ. իսկ զլեւոնն և զանտառն՝ մինչեւ յայտնեացէ նա՝ համարեսցուք զԹաքեայ-տօյտոռոյանն:

Եկեղեցին որ արդ ի միջի գեղջն կայ, փոքրիկ է, կա- մարոյյարկ (9 քայլ ընդ երկայնն և ընդ լայն), և տայ ցոյ- ցըս Պռոչեան դաստակերտաց. հոյակապ և քանդակա- զարդ դրուագեալ, չորիւք որմնայար սեամբք և գեղապա- րոյր կամարօք ամբառնալով գմբէթ երկայնապարանոց, որոյ անկեալ է գդակն. չորք լուսամուտք են նմին և քան- դակք ցլաբարձ արծուոյ և առիւծոյ և ցոյ ոգորելոց. զատ յաւազ խորանէն են և վեց եւս սեղանք յեկեղե-

ցւոյս. յորոց երկուք յալմէ և յաճեկէ աւազ խորանին, և երկուք հինգ աստիճանօք ի վերոյ նոցին, իսկ այլ եր- կուքն յերկոսին կողմանս դրանն: Արտաքին որմուկքն պէսպէս դրուագս քանդակաց ունին խաչաձեւա՝ հիւսի- սայինն և հարաւային, յորում և ժամացոյց արեգակնա- յին առանց տառից. արեւմտեանն՝ ունի չըջանակ ման- րազարդ զլուսամտին. և ի վերոյ քան զայն կից յորմն հիւսիսային՝ կայ մնացորդ վայելչակերտ մատրան (4—6 քայլ). յորոյ դրան վերայ ի բոլորաձեւ վիմի քանդակեալ է երիտասարդ հեծեալ, փաթութաձեւ գլխանոցաւ, մը- խելով զնիզակն յերախս առիւծու, և ի վերոյ նորին սի- րամարդ և հաւ մի. այլ հաւ և այծեամն ի վերայ ձիոյն: — Գլխաւոր արձանագրացն՝ թէ և թերատ ի սկզբա- նէ՝ կայ ի հիւսիսոյ կուսէ արեւմտեան դրան եկեղեցւոյն.

... Թագաւորին եւ խաչեցելոյն Քրիստոսի, յարքայութեան մեծին եւ բարեպաշտին Աբաղայ զանին, հայկազնեայ տոհմիս եւ սեռիս Թորգոմեայ ի կաթողիկոսութեան Տեառն Յակոբայ, եւ յարիական եւ քաջատոհմ իշ- խանութեան Պռաւշայ եւ որդւոցն՝ Պապաքին, Հասանայ, մանկանն Էաչոյ, շինեցաւ սուրբ եկեղեցիս բնակարան փաւացն Աստուծոյ եւ յարկ Սրբոյն Ստեփաննոսի, յերկար կենդանութեամբ Պարոնացն. Եւ սահմանեցաք Փոխման Գ աւր ամէն եկեղեցիքս պատարագել զՔրիստոս մեծ Պատրոնին մերոյ Պռաւշայ. Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. Մեք Պարոնայքս եւ միա- բանքս արձանագրեցաք . . . :

Իսկ յարեւելեան որմն գրեալ է ի միջոցի 1263-7 ամաց.

Կամաւ կենարարին եւ կուսածին անմահ թագաւորին. աշխարհակալ Արլունին իշխանութեան Խաւչաքին<sup>1</sup>, ողորմութիւն Պապաքին, Հասանայ, Էաչոյ . . . բէկ թոռն Խալայշահին. որդի Մխիթարայ տվիզմեր ձեռատունկ այգին զԳայլայից ? հողն ուուրբ Ստեփաննոսի. Միաբանքս սահմանեցին ի տաւնի սուրբ Սարգսի Գ պատարագ Հասանայ եւ Սարգսիս ? իմ աղբե- րացն հոգւոյն. ի թվիս Զ . . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ.

Բազում և այլ արձանագիրք են ի ներքոյ և արտա- զերս խորանացն, այլ կարօտին ստուգագոյն վերձանու- քոյ եկեղեցւոյն, յորմուսս և չուրջ զլուսամտիւք և յե- թեան. և են այսպիկ.

Կամաւն Աստուծոյ ես Յուսիկ շինեցի զայս Սրանոցս<sup>2</sup>, եւ տուի Վարա- գա սուրբ Ն(շա)նիս. Տէր Ստեփանոս Վդ. (եւ) միաբանքս տվին Գ ժամ Բառասնից տաւնին. Կատարիչք աւրհնին յԱստուծոյ. թվին ԶԿ :

† Ես Ամիրշահս տվի զԺախս մատրանս յիմ հալալ արգեանց. եւ սպաւ


1 Ստուգութեան կարօտի արձանս, զի անյարմար են բանք որ զշինողացն և Արղուն զանի, և իտաքին, յոր անուն կոչէին մայր Աւագայ մեծի իշխանի և նու նորին :  
2 Սրբ-նշն տպագրեալ յընչօրինակոյն :



սաւորք սուրբ ուխտիս խոստացան Բ պատարագ Դաւթի եւ Յակովբայ տաւնին . կատարիչք արհնին յԱստուծոյ . ԹՎ. 215 :

Այս ի վերայ կիսաքանդ մատրանն է գրեալ .

Ի ԹՎին . 202 . կաման Աստուծոյ ես Թաշեր դուստր Ուքանի ամուսին Հասանայ ասպարապետին Հայոց որդւոյն Պռոշայ, ետու ընծայ հալալ ընչից իմոյ հայրենի տանս մեր Թանադի վանից սուաջի սուրբ Նըշանիս . որ Հայրապետ եւ միաբանք սահմանեցին Դ պատարագ ինձ աւագ հինգշաբթին արն, Հոգւոյն գալստեան , Բ Փոխման Աստուածածնին . կատարիչքն արհնին :



33. Թանադի վանք .

† կաման Աստուծոյ ես Սիմէոնս տվի վմեր հայրենիքն Պարոնացն ու զորմութեամբն Էաչոյ (եւ) Մամայխաթունին Սուրբ Ստեփանուսիս եւ սուրբ Նշանիս (վասն) Մխիթարայ Հոգւոյն . միաբանքս սահմանեցին Գ ժամ Տեառնընդառաջին , Բ Մխիթարայ , Ա ինձ . ԹՎին 22Ը :

† կաման Աստուծոյ ես Խուլթլուբէկս Պարոնացն ողորմութեամբն Էա



չոյ (եւ) Մամախաթունին զԱղաղտեղին? հողն Սուրբ Ստեփանոսին տվի միաբանքս կարգեցին Բ Ժամ մեր? Սուրբ Ստեփաննոսի տաւնին .

† Կամաւ ամենակալին Աստուծոյ եւ Զումէս թուն Ամիր Հասանայ որ դի էաչոյ եւ կենակից իմ Խոնդչին տվաք զԱւագական ջրաղաց Սուրբ Ստեփ. գերեզմանիս. Վարդապետք եւ միաբանք սահմանեցին Սուրբ Խաչի տաւնին Բ (պատարագ) իմ եղբաւրն .

† Կամաւն Աստուծոյ եւ Ուքանս որդի Վահրամայ Շահուռնեցի<sup>1</sup> տէր միաբանեցայ Սուրբ Ստեփաննոսի եւ տվի հալալ հայրենեացն որ ինձ բաժին էր հասել զԽալին Ըղանին? հողերն իւր Դ հատովն եւ թմբերովն . Վարդապետ եւ միաբանք սահմանեցին Բ Ժամ Սուրբ Նշանին տաւնին . Կատարի . . . ? Թվին Զ<sup>2</sup> . .

† Կամաւն ամենակալին Աստուծոյ եւ Բենա? որդի Սմբատայ<sup>3</sup> թուն Լիպարիտի տէր Փանձաթաղին<sup>4</sup>, եւ ամուսինն իմ Սուսայ միաբանեցաք Սուրբ Ստեփաննոսիս եւ տուաք մեր հալալ հայրենեացն որ ի Փանձաթաղին զՄազմանեց եւ զԱշուշիկեց եզիւ մեր հողւոյ բաժին. Եփրեմ վարդապետ եւ միաբանք սահմանեցին մեզ Աստուածածնի տաւնին Զ պատարագ. եւ ով որ մեր տված վտխմիս հակառակ կայ ԳձԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի. Թվին ԶՂԵ<sup>5</sup> .

† Կամաւն Աստուծոյ եւ Թեկղի միաբանեցայ սուրբ ուխտիս եւ տվի ընծայ. միաբանքս տվին Բ Ժամ Թեկղի տաւնին . Կատարիչքն աւրհնին :

† Կամաւն Աստուծոյ, եւ Ասլան ափայս<sup>6</sup> եւ իմ որդիքս միաբանեցաք Սուրբ Ստեփաննոսիս եւ Սուրբ Նշանիս եւ տվաք ձ դեկան ընծայ . Վարդապետք եւ միաբանք սահմանեցին զչաբաթն Զատկին . Կատարիչք աւրհնին յԱստուծոյ . Թվին ԶՀԵ .

† Կամաւն Աստուծոյ եւ Աւաղ Խաթունս ամուսին Վախտանգայ որդւոյ Խալաչահի տվի ձ դեկան Սուրբ Ստեփաննոսիս (եւ) Վարսագայ Նշանիս. Վարդապետք եւ միաբանք սահմանեցին Դ պատարագ . Բ Ծառ զարդարին, Բ Զատկին . Կատարիչք աւրհնին յԱստուծոյ . խափանիչք դատին ի Տեառնէ :

1 Զալալեան (Բ. 20) Վհոր շահառնեցի... եւ Դաթան :  
2 Հաւանորէն պակասն տասնորդական թիւքն յաւելիչք Զ Թուական տասի, որ է 1251 :  
3 Զալալեան, իս Բիւրբիտի Մահ. Գաջերունին, իս Բիւրբիտի Միտրոս. Բոսն : Յազգացուցակի Օրբելեանց երկու Սմբատք նըշա-  
նակեալ են որդիք Լիպարիտաց, այլ պատիստ անուն Բենա? ոչ է ծանօթ, այլ Զինա կամ Զինան :  
4 Տանջաթաղ ըստ Զալալեանի :  
5 ԶՂԴ ըստ Զալալեանի :  
6 Թեկեալ Ասլան ափայ :

† Կամաւն Աստուծոյ ես Բաւրինայ միաբանեցայ սուրբ ուխտիս եւ տվի յիմ հալալ արդեանց ընծայ Սուրբ Ստեփանոսիս . միաբանք սահմանեցին Ա աւր պատարագ Սուրբ Խաչին . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

† Կամաւն Աստուծոյ ես Արեւհար միաբանեցայ Սուրբ Ստեփանոսիս եւ տվի Ի դեկան եկեղեցւոյս . եւ միաբանք սահմանեցին Ա ժամ Խաչգիւտին . Կատարիչք աւրհնին յԱստուծոյ :

† Կամաւն Աստուծոյ ես Սեթար միաբանեցայ (Ի) սուրբ եկեղեցիս եւ տվի Խ դեկան եւ միաբանք սահմանեցին Բ ժամ Երեւման խոսչին . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

† Կամաւն Աստուծոյ ես Անի ? եւ ամուսին իմ Վախախ<sup>1</sup> եւ Մուրադփաչէս միաբանեցաք սուրբ Նշանիս (եւ) Սուրբ Ստեփանոսի, եւ տվի զմեր գնած էգին :

† Յանուն Աստուծոյ ես Բուբայիս Թոռնս Սամազալին<sup>2</sup> որդին յանուն Աստուծոյ ? ես Սարգիս որ տվի Թաւնադի վանից Սուրբ Ստեփանոսի Զաբնավարին ? հողնացան հայրենիք անքակ . տվին ինձ զՅայտնութեան աւր Թ խորան . Ով խափանէ ԳձԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի :

† Կամաւն Աստուծոյ ես Սանջար ? եւ Թաճմէլիքս<sup>3</sup> միաբանեցաք Սուրբ Ստեփանոսիս , տուաք զԿկուաքարին հողն Հովուենց հողովն . Միաբանքս տվին հինգ ժամ Վարագայ խաչին . աւգնել տուաք ? :

† Կամաւն Աստուծոյ ես Թաճմէլիքս դուստր Մխիթարայ Թոռն Խալաչահին տվի մէկ վեցկի իմ դերեզմանատունս . միաբանք սահմանեցին Դ ժամ Սանդխտոյ տաւնին . Բ ինձ Բ իմ մաւրն . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

† Ես Աւագ Սուկիմս<sup>4</sup> Խ դեկան տվի եկեղեցւոյս . (միաբանքս սահմանեցին) Բ ժամ Ս . Սարգսին . Կատարիչքն աւրհնին :

† Յանուն Աստուծոյ ես Դեղս Գ դեկան տվի մատրանս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց :

† Կամաւն Աստուծոյ ես Ռոստոմ եւ ամուսին իմ Գուռճիկ միաբանե-

1 Զաւալեան՝ Ս-ի-ի :  
2 Յաւաչ կամ յես անուանս պակասէ ոչլ անուն :

3 Զաւալեան՝ Ա-Բ-ճ Մեյ-ի-ի :  
4 Բաշբերունի՝ Ս-ի-ի-ի :

ցաք Սուրբ Ստեփաննոսիս եւ տվաք ի հալալ ընչից մեզ հոգւոյ բաժին. վարդապետք եւ միաբանք սահմանեցին Մառզարդարին Չ պատարագ. Դինձ եւ Բ Գուռճիկին. կատարիչք արհնին:

† Կանգնեցաւ Խաչս բարեխաւս Պետրոսին եւ ծնողաց իւրոց:

† Կաման Աստուծոյ ես Պետրոս յիմ հալալ արդեանց ետու ծախս Չանգակին. Միաբանք սահմանեցին Բ ժամ Երեւման խաչին:

† Որք աղաւթէք յայսմ քաւարանիս զՍահակ յաղաւթս յիշեցէք:

Գրեալ է այս առ խորանաւ միով. որպէս և որ յառաջ մանէ՛ ի բլրակի ուրեմն կան մահարձանք. ի միում միայն քան զայս խաչարձանն: Թուականն ԶԽԶ (1297-8). միւս Թուականաւ 1296 ամի. և միւս եւս անթուական. և են սքա.

Ներսէս քահանայ որ տարածամ փոխեցաւ առ Քրիստոս. Աստուած ողորմի. Թ. ԶԽԴ:

† Դաւիթ քահանայ. յիշեցէք յաղաւթս:

Յարեւելկողմն զճանապարհայն որ տանի յԱրկազ և ի Ս. Խաչ վանս, անկեալ կայր խաչարձան մի գրութեամբս.

Ես Մանուէլ քահանայս կանգնեցի զԽաչս բարեխաւս հարազատ եղբար իմոյ Խաչատրոյ. յաղաւթս յիշեցէք. ԹՎ. ԶԻԶ:

Անդրագոյն եւս այլ խաչարձան կանգուն, բայց անթուական.

Կանգնեցաւ Խաչս (ի) բարեխաւսութիւն Չաղեխիս եւ եղբարց իւրոց:

Ոչ հեռի ի սոցանէ և այս խաչվէմ արձանագրեալ անստոյգ անուամբ.

Կանգնեցաւ սուրբ Խաչս բարեխաւսութիւն Էսվէոյին ?

Այս ամենայն արձանք վկայք են երկրորդի շինութեան կամ նորոգութեան վանացս Թանատէի, շմալով ինչ յառաջնոյն յիշատակ վաղեմի անցից տեղւոյն. ընդ որ ցաւ է, զի այնքանոյ բազմադրուատ մենաստանի ցամա գրեաթէ հազար, ոչ այլ ինչ յիշի՝ բայց բերումն նշխարաց Ստեփանոսի եպիսկոպոսի, և առաջնորդն Միսիբար, որոյ և ժամանակ անստոյգ: Եւ նոր յիշատակք իսկ արձանացս, յայտնիքն Թուականաւ, հազիւ ի դար մի ամաց ձգին, ի կիսոյ ԺԳ դարու ցկէս ԺԴԵ. յորոց ստուգի տեղին ժառանգութիւն լինել կամ ընդ իշխանութեամբ Պառչեան մեծի տոհմի. երկուք միայն յիշին վանահարք յայս միջոց ժամանակի, Հայրապետ՝ յամի 1307, եւ Եփրեմ յամի 1345: Իսկ սրբարանքն են՝ եկեղեցին Ս. Ստեփանոսի Նախավկայի և հանգստարան Ստեփանոսի եպիսկոպոսի, և Ս. Նշան կամ Ս. Խաչ վարա-

գայ. յորմէ կարծելի է երբեմն աստ պահել մեծահռչակ այնր խաչի, որ ի բազում և յայլ տեղիս փոխադրեցաւ՝ իբրեւ զմի ի յոյժ նախանձելի սրբութեանց եկեղեցւոյն Հայոց: — Իբրեւ յետին յիշատակ՝ Գալբերունին նշխարեաց յարեւելեան որմն եկեղեցւոյն զԹուականն ՌԺԳ (1565), այլ ոչ կարաց ընթեռնուլ զարձանն, զի շատ եղծեալ էր: — Ի տեղեաց յիշեցելոց յարձանս՝ Կլուաքարն Թուի ոչ հեռի լինել ի վայրացս, որում մերձ էր և Հովոննց հողն. իսկ Փանճարաղն (զոր Տանձաթաղ ընթերցեալ էր Չալալեան, և ճանաչի իսկ յայս անուն գետը հուպ ի հարաւոյ գեղը Տաթեւոյ, այլ ոչ յիշի ի գիրս), հաւանորէն որիչ է ի յետնոյս որ ի Մուղկա և ի Վայոց ձոր. զի « եղեւ հալածումն ի Վայոց ձոր, (ասէ գրիչ ոմն Մաշտոց գրոց յամի 1498-9, ուր սկսեալ էր գրել զգիրսն), ի գիւղս որ կոչի Փոնձաթաղ »: Եւստի

փախուցեալ գնայ ի Ձորոյ վանս, և «անտի ի Ձորակն » որ կոչի Ծակըար» . յետինս՝ յայտ է թէ չէ Ծակըարն Գեղարունեաց (տ . յէջ 83), այլ յիշեալն ի կողմանս Եղեգեաց յարձանագրին Կնեվանից (տես յէջ 96) : Աստա նոր պատմէ աղուարար գրիչն այն Վառնական անուն, եւ թէ և ոչ անդ « ետ թուլ (թոյլ) սատանա (այլ) ած ի վե . » րայ տանիկ մի փխտայ (հետեւակ), և փախտական » արարեալ զկրօնաւորքս . և իմ առեալ զօրինակն (գրոց » Մաշտոցի) փախչէ ի ստորոտ չերինն . և նորա հետա . » մուտ եղեալ զհետ իմ, և ես առ Տէր աղաղակելով փա . » խեա մղանս մի . և զերծոյց զիս Տէր ի նմանէ, և ոչ կա . » րաց հասանել . (իսկ) նորա դարձեալ ի տեղին՝ որում » զխրճիթն արարեալ էինք, տարաւ դաւանակն վանիցն, » և եթող զբեռն ի վերայ միաբանիցս . զի տէր Աստուած » դիցէ զբեռնս մեղաց սոցա ի յուս նորա, և առաքես . » ցէ՛ ուր ինքն կամեսցի . . . Եւ իմ դարձ արարեալ ի տե . » դին՝ որում հալածեաց տանիկն, զծագրեցի (զմասն ինչ » մաշտոցին) . և անտի ոչ ետ թուլ ոսոխն . էած ի վերայ » իմ իժ մի, և իմ հայել(ով) ի յօրինակն՝ կայր իժ մի » մերձ ի յօրինակն, և բանայր զբերանն առ իս . իմ » զայն տեսեալ զաչի հարեալ՝ փախեա, և իլլի (ի) վանքս » Ձորէվանս : — Տես զվանացս յետոյ ի կարգին :

81. Հեռոստի վանք . — Սկիզբն և շինութիւն վանաց Հերմոնի այսպէս պատմի յՕրբելեանէ . « Յերեք հարիւր » ութսուն և հինգ թուականին (936 ամ) աստուածազօր » իշխանն Սմբատ (Սիւնեաց Տէր) ելեալ յաւուր միում » յարքունեաց իւր՝ որ էր Եղեգիս գիւղաքաղաքի, և » երթայր ի գրօսանս որոց . և պատահեալ խոտակերաց » աստուածազգեաց ճգնաւորաց՝ ղօղեալ ի ծերպս արձա . » նականգ վիմացն, որ ի վերոյ Եղեգեաց՝ ի ձորն բար . » ձրահայեցիկ ի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարէվանս » կոչիւր . և զարմացեալ ընդ ներքեւեալ և ընդ անչքա . » ցեալ տեսիլս նոցա, հարցանէր ի նոցանէ զկեանս նո . » ցա . և նոքա հեղիկ պատասխանեալ ասեն . Հալածեալ » փախտական եղաք յաշխարհէ, թերեւս կարասցուք » ապրել ի դառն ալէկածութենէ սորա : Ապա այնուհե . » տեւ ինդիբր առնէ իշխանն եպիսկոպոսին իւր Տէր Յա . » կորայ . և հրամայէ ձեռն ի գործ ածել և փութապէս » շինել եկեղեցի ի պատշաճաւոր տեղի, զի անդ բնակե . » ցուցէ զսուրբ ճգնաւորն : Եւ նորա եկեալ առ սուրբ » հարան՝ հարցանէ զկամս նոցա . և նոքա ցուցանեն տե . » դի մի տափարակ ներքոյ քարոյն ուղղորդ ի վայր . յո . » րում տեղով սկիզբն առնէ կոփածոյ քարամբք, և չի . » նէ եկեղեցի զմբէթայարկ յանուն Սրբոյն Գրիգորի . և » բերէ զաւագագոյն ծերն՝ որում անունն Արեւմոն, » և զաշակերտն իւր զԱզարիա, այլովք եղարարքն, և » բնակեցուցանէ անդէն : Եւ եկեալ իշխանին օրհնէ զե . » կեղեցին . և բարեպաշտ տիկինն Սոփիա գնէ զգիւղն » Հաւուր՝ որ հանդէպ վանիցն կայ, իւր սահմանովն, և » տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և այլ եւս այգիս » և ծաղկոցս յԵղեգիս : Եւ զարդարէ զնա բազում լու . » պասուք, և փարթամացուցանէ ամենայն պիտոյիք, և » մեծամեծ նզովիք հաստատէ զՀաւուր գիւղն, որ ոչ » հանեն ի նմանէ : Եւ կատարեն ինքեանց յիշատակ ըզ .

» տօն Սրբոյն Գրիգորի, և քառասուն մի պատարագ ըզ . » Վարդավառին . և կոչեն զտեղին յանուն ծերոյն՝ Ա . » րեւմոնի վանք» : Այլ ապա սովորութեամբ Հերմոնի վանք կոչի, որպէս և ինքն պատմիչն կոչէ ի կարգի վա . նորէից Վայոց ձորոյ, նոյնպէս և Վարդան աշխարհագիր . րայց յայլ գիրս ոչ գտանեմ զյիշատակ վանացս, բաց ի սակաւ յիշատակարանաց գրոց . յորս յիշի յամին 1318-9 եկեղեցին Ս . Լուսաւորիչ, և Յովնաննէս ոմն գիտնա . կան սպասաւոր բանի՝ որ ընդօրինակէ զգիրս ինչ Կիւ . սացւոյն, առ ոտս մեծ վարդապետին Եսայեայ (Աւ . չեցւոյ), առաջնորդի հռչակաւորն Գայլեծօրոյ : Առ սո . վաւ գրեալ է և Աւետարան մի, յորում ըստ հին ա . նուանն Արեւմոնի վանք կոչի, և որ նշանաւոր ևս է . եկեղեցին՝ յանուն Ս . Գրիգորիսի : — Սակաւ ամաք յետ սոցա, այսինքն յամի 1338, Գրիգոր ոմն բանասէր զը . ծագրէ աստ զգիրս Ս . Դիոնիսեայ Արիստակազացւոյ, « ի նահանգիս Վայոձոր, ի վանս Հերմոնի, ընդ հո . » վանեաւ Սրբոյն Գրիգորի . . . յիշխանութեան և ի տե . » րութեան տեղոյս մեծ և բարեպաշտ իշխանին Քուր . » թէյի . և զաւակաց նորին՝ Պէչքէնի և Իւանի . և ի » վարժապետութեան ընդհանուր Հայկազեանս սեռի » երջանկի, մեծի և երիցս երանեալ Հանտրի Տիրատուր՝ » առձայնելոյ . առ որ կամք ղեգերեալ ի վարժս կըր . » թութեան . . . որպէս զաւակ առ ծնօղ, որ սփփէ զկեա . » նրա մեր՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ» : — Յայլմէ զըչէ ի նմին մատենի՝ առաջին գրիչն Մեծն Գրիգոր կոչի, և աշակերտ նորա Սարգիս մեծ թաթռնապետ : ՉՏիրատուր մեծ վարժապետ կոչմամբ նաև ի կէս ԺԴ դարու (1350) յիչէ Մովսէս մի ի միաբանիցն, ընդօրինակելով անդ զա . ղօթագիրս Գր . Երեմիայացւոյ, զօր և տայ առ Երեմիայեան արեղայ, և աղաչէ յիշել « սեռն սիրով ի միտս բարիս և » ի պատկանաւոր ինդրուածս զսուրբ վարդապետն իմ և » զհայրն ըստ հոգւոյ զվերոյսացեալք (Տիրատուր), » այլ և զՍամուէլ կուսակրօն քահանայ և զՅովնան . » նէս . . . և զկրտսեր եղբայրն իմ Երեմիս, որ սպասաւո . » ղէր ինձ պղերգութեամբ և յոչ կամաց» : Ս՝ յլ ոմն Սարգիս որդի Հաքիմի, տեղեաւ Ղրիմեցի՝ « վարժա . » պետական տթոռ » կոչէ զվանս Հերմոնի՝ յամի 1418, ընդօրինակելով աստ զգիրս Ս . Կիւրղի, յառաջնօր . դութեան Յովնաննու աշակերտին Գրիգ . Տաթեւացոյ, ռուսմնակից ունելով « զհեզահոգին Տէր Ղազար սպա . » սաւոր բանի» : Ի նմին ամի և մեծահռչակ ոմն Սիմէոն թաթռնապետ Սիւնեցի՝ բնակութեամբ Տաթեւացի՝ տայ աստ ընդօրինակել զԿերսիսի Լամբրունեցւոյ Մեկնու . թիւն Երկոտտան մարգարէիցն, ի ձեռն Գրիգորի ու . ղումն, որ գրէ այսպէս .

« Երգարեցաւ սպիւնեալ զՀերմոնի . զի ձեռամբ գրեցաւ զի : Ըստ նմին հայոց զՂեզ . զ քաղաքեանեկեղ աղաւթեալ զամենեւեալ եւ ես յէջն » եւ զվերոյսացեալք զմեծ քարտէսապետն : որոն . ոյի ձեռամբ է . և առնանեալ այս միւր յարեւել վն տեղոյ զի . և արքայ յոմն նորոգեցաւ զվայել տուցէ և նմն մտաւ . յաւիտեանեանն : »

34. Մեկն ԺԲ Մարգարէից գրեալ ի Հերմոնի վանս .

— Յետ տասն ամաց Գրիգոր արեղայ ընդօրինակէ Շա-  
րական, « յաստուածախնամ և ի հրեշտակահիմն վան-  
» քըս... ընդ հովանեաւ Ս. Գրիգորի և Ս. Յակոբայ և  
» Ս. Սահակայ, և այլ կենսարեւ սուրբ Նշանաց՝ որ աստ  
» գումարեալ կան. ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս  
» տիեզերալոյս և մեծ հոգեարի Յովնաննէս վարդա-  
» պետի, ի դառն և ի նեղ ժամանակի: Արդ ետ գրել  
» Յովնանես օր այժմ կրօնաւոր է և ի մերձակայ աւուրս  
» վարդապետ լինելոց»: Իսկ ինքն գրողն Գրիգոր ան-  
» մեղադրութիւն խնդրէ վասն խոչորութեան գրչութեանն.  
« զի ժամանակս ձմեռն էր, և խուցս մութն և ցուրտ, և  
» նիւթս պակաս, և թանաքս աւեր. և իմ պիտոյնն ոչինչ  
» այլ՝ բայց միայն ցամաք հաց, և խոցած՝ ներքինս թանու  
» արկուէն, և արտաքինս՝ ի բնութեան տկարութենէս<sup>1</sup>»:  
— Պատմիչն Թովմաս Մեծօփեցի զվերոյիշեալն Յովնան-  
» նէս՝ կոլտիկ կոչէ « ի յԵղեզեաց, ի վանից Հերմօնի ».  
և ի ժողովի նորոգութեան աթոռոյն Եմիածնի՝ նախա-  
կարգէ զանուն նորա քան զբնաւից, « Յովնանէս վար-  
» ժապետն և ուսուցիչ ի Ս. ուխտէն Հերմօնի վանիցն ».  
և սա ինքն յայսմ ամի (1441) ընդօրինակելով աստ  
Ճառքնտիր մի՝ կոչէ զինքն « Սեւակիր Հերմօնի վանից »:  
Եղեւ առաջնորդող ընտրութեան կաթողիկոսութեան  
Կիրակոսի, և նոյն ինքն դարձեալ մերժման նորա յաթու-  
ռոյն, յետ երկուց ամաց, թէպէտ և հրապուրեալ և խա-  
բեալ սաղրանօք աշակերտի իւրոյ Մարկոսի եպիսկոպոս-  
տի և այլոց ոմանց հակառակորդայ Կիրակոսի. զի ինքն  
կոլտիկն անցեալ էր զաւուրբք և խլացեալ ակամօք-  
սակայն ձեռներէց ոմն երեւի և յառաջնմէն. քանզի մե-  
ղադրէ զնա պատմիչն բարաւնարար. « Ո՛վ մեծ վար-  
» ժապետ Յովնաննէս, զաթոռն Աղուանից յերկուս  
» բաժանեցեր, և նախանձաւ և դառն ատելութեամբ  
» ի հայրապետական աթոռոյն արտրեցեր զընտրեալն ի  
» Հոգւոյն Սրբոյ... և ի միւս օրն վարդապետութեան  
» գաւազան ամենայն վարդապետօք ի ձեռն նորա եղեր.  
» այժմ զգաւազանն ի ձեռաց նորա յափշտակեցեր, (եւ  
» այլն). դու սկանջօք խլացեալ, սպիտակ մարտքդ ի դե-  
» ղին է փոխեալ, մտեալ գերեզմանի. զԳասաստանս  
» Հայոց ուղղափառ աստուածաբանութեան խափանե-  
» ցեր... դու զամենեցուն բերանն բացեր. կիլիկեցիքն  
» զհամբաւ անգիտութեան և անհամութեան քօ լսե-  
» ցին »: — Յերկասիրութեանց Յովնաննու՝ յիշին Լուծ-  
մանք գրոց Ս. Դիոնեսիոսի, և Քաղաւած Մեկեղաբեան  
Երայեայ: — Յետ սորա և յետ կիսոյ ԺԵ դարու յիշի  
առաջնորդ վանիցս առ կաթողիկոսութեամբ Գրիգորի  
Մակուեցոյ՝ փոխանորդին Կիրակոսի, միւս եւս Սար-  
գիս վարդապետ վերադարձող և քաջ բարունի կոչմամբ,  
յամս 1460 և 1465. յառաջնումն (1460) Չաքարէ ոմն  
ընդօրինակէր Աւետարան մի, « ի Ս. մենաստանս Հեր-  
» մօնի վանք, ի առաջնորդութեան Սարգիս վարդապե-  
» տին, ընդ հովանեաւ Լուսաստրլիս մերոյ, և Ս. Յակով-  
» բիս կենաց բարեխօսի, և Ս. Ստեփաննոսիս և Ս. Յու-  
» փաննիսիս, և այլ սուրբ Նշանացս և նշխարացս Ս. Հեր-

» մոն Ճգնաւորի, և սուրբ Վարդապետացս՝ որք աստ հան-  
» ղուցեալ կան առ Քրիստոս»: Գրել տուողն է կին « Մը-  
» խիթայ ժամակոչի... (և տայ) ի Մեղքիսթ քահանայն  
» վասն իւրոյ յիշատակի», և մահտասի Սամուելի հանգու-  
ցելոյ, որ ետ զթուղթ աւետարանին գրեցելոյ: — Աստիկ  
յետին յիշատակք են Հերմօնի վանաց, ըստ իմս գիտու-  
թեան. յորմէ հաստատի և այն, զի ի նուազել կամ թեր-  
եւս և յաւերել Գայլեձորոյ վանից, այսր ի Հերմօն փո-  
խեալ իցէ սթոռն վարժապետական. յորում վեհա-  
գոյն գաւաւ, որպէս և ի նախակարգեալ յիշատակացդ  
գուշակի՝ Տիրատուր Վարդապետ, մինչեւ դասել զնա ի  
չարս յաւէտ հոշակելոց վարդապետաց, և յեկեղեցա-  
կան երգարանի Դանճուց, ընդ

« Վըկայասէրն եւ Երակացին,  
Գօշ, Վանական, Տիրատուր արին,  
Վարդան մեկնիչ եւ սուրբ Երայեայ », և այլն:

Եւ գրիչ օմն յամին 1428 գովելով զայլ զք իւր վարդա-  
պետ գիտուն, ասէ զնմանէ, « Հետեւեցաւ սուրբ հա-  
» բանցն և առաջին վարդապետացն, Երայեայ, Տիրա-  
» տրոյ, Վարդանայ, Գօշի, Վանականայ », և այլն: Գըլ-  
խաւոր գրուածք Տիրատրոյ երեւին եղեալ Քաղաքքն, յօ-  
րոց յիշին երեսնիւ շափ, յայլեւայլ տօնս տէրուականս,  
և ի սէպպէս բանս Ս. Գրոց՝ մեկնողարար. այլ և « ի Պե-  
» ռիարմենիաս Գրոց (Արիստոտելի) յարմարեալ յաղա-  
» զըս Աստուածաբանութեան »: Գրիչ վարուց կամ վկայա-  
բանութեան Գրիգորի Խլաթեցոյ (+1428) ասէ զսա աշա-  
կերտեալ ճգնաւոր վարդապետին Վարդանայ, « որ հնգե-  
» տասան ամ յանապատի էր բնակեալ, առ մեծ Վարդա-  
» պետն Տիրատուր »: Սակաւս ի բանից կամ ի քարոզից  
Տիրատրոյ գտեալ իմ յընթեռնուել՝ ոչ կարեմի վերայ հա-  
սանել հուշակի անուանն, թէ և շափաւոր գտանեմ զբա-  
նակարգութիւն նորա: — Ընդ գրուածսն յիշի և Տեսաբիան  
Մարգարէի Դաւթի, ոչ գիտեմ ճառ եթէ մեկնութիւն  
Սաղմոսաց նորին, որպէս և Տեսաբիան Աւետարանին  
Մատթի: Չատ յայսցանէ ծանօթ են Հանեղանք նորին  
առաւել քան զ՝20. ոճով Ենորհալոյ, այլ անժամանք ի  
չնորհս նորին. յորոց շատք ակնարկեն յանձինս ծանօթս  
ի Ս. Գիրս և յազգային պատմութեան մերոյ, և զիւրաւ-  
ճանային կամ լուծանին. որպէս.

« Ոմն էր յազգէ արշակունի,  
Մայրնն վաւաչ եւ խիստ մոլի.  
Տեսումն աչացն էր անբարի,  
Հանց որ յաղթէր որձաբարի »: (Երուանդ).

« Է զգալի եւ շերեւի  
Չէ կենդանի ու կու խօսի.  
Թէ զք ընդդէմ նմա խօսի՝  
Չնոյնն առնէ պատասխանի »: (Արճազակ).

Ընթերցողին թողցի լուծանել և զայս.  
« Բանս ի զարմացք ի մեզ լինի,  
Բայց անվարժիցն անգիտելի.  
Չի ճոխութեամբն նըւազի  
Եւ նուազութեամբն ճոխ լինի »:

1 Յիշատակարան գրոցն յորմէ զայս յիշեմ՝ երեւի գրեալ յամի  
1465, « ի հայրապետութեան Տեառն Գրիգորի ընդհանուր Հայոց

կաթողիկոսի », թէպէտ ըստ հասարակ կարծեաց՝ Գրիգոր Կամու-  
րի վախճանեալ յառաջ քան զթուականք այդ:



— Մի ի բանիցն կամ ճառից (զոր չէ իմ տեսեալ), ի բանն՝ «Չգոյ լեր որպէս ցուցաւ քեզ առնել», վերագրի վասն էջմիաժնի. զոր թէ այսպէս էր գրեալ հեղինակն՝ գուցէ կրսեր ոմն Տիրատուր էր և ոչ հռչակեալս այս ի սկիզբն ԺԵ դարու, այլ թուի ընդօրինակողին պատշաճեցուցեալ զվերնագիր բանին՝ որ յԵկեղեցի: — Յաւել-ցուք և աղուական ինչ, ըստ գրելոյ ուրումն յՈսկեփորիկ գիրս. «ՉՏիրատուր վարդապետն ի պաշտօն տարան, և » այն օրն հաց մոռացան տան ուտելոյ. յերեկոյն ժա- » մուն տարան ի տուն. ասէր Պարոնն. Վարդապետ, » քանի՞ տարոյ մարդ ես: Աթէ. Քառասուն, մէկ պա- » կաս: Ասէ (հարցանողն). Մէկն էր պակաս: Աթէ » (Տիրատուր). Օրս այս որ քաղցած պահեցիր, ի ժա- » մանակի կարգ ոչ է »:

Հին գիւղն ՀԱՆՈՒՆ՝ որ հանդէպ կայր վանից Հերմոնի՝ ըստ պատմիչն, և ըստ տրիցն յաթուռն Սիւնեաց (6 շափ) գուշակի փոքրիկ լինել. անհետացեալ յայժմուս, ճանաչի անուամբ անտառին՝ որ կոչի Հառոռ մեշէ:

Մղոնաւ և կիսով, ի հիւսիսոյ Մոզան, (յահեկէ սորին) կայ մեծ գիւղն Մալիշկա. տարածեալ ի միջի պարտիւ- զաց, այգեաց և ծառաւէտ պուրակաց: Ոչ յիշի և սա առ նախնին և ոչ իսկ ցուցանէ հնութիւնս, այլ կարեւոր նորութիւն. քանզի ի գաղթականացն Հայոց որ ի բաժնից Պարոնց և Թուրքաց՝ բնակեալ իրեն ի 135 տանց, բարգաւաճեաց ջանիւք բանաստեղծ ազգայնոյ, և քաղաքական տեսչի գաւառիս՝ Շամախեցի Պետրոսի Մատաթեան. սա յամի 1857 խնդրեաց, և ընկալեալ հրաման ի պետութենէ հաստատեաց տօնավաճառ ի գեղջն, (ի 23 մայիսի—4 յունիսի), հանդիսիւ օրհնեալ զհրապարակն կամ զվաճառատեղին. ուր և փոյթ ընդ փոյթ շինեցան կրպակք վաթսուն. յորս կամէրնա հաստաւ տեղ արուեստաւորս և վարժարան եւս, այլ ոչ յաղողեցան իղճք նորա, և շինուածքն իսկ ամայացան. բայց կամք նորա և անուն պատուի ցարդ առ Մալիշկացիս և առ այլ ազգայինս գաւառիս, զորս ամենայնիւ հոգայր յան- դորրու պահել ի հարստահարութենէ այլազգեաց:— Ի Հս. կուսէ գեղջն կայ աղբիւր երկաթահամ չրոյ:

82. Ի Մալիշկայ մինչեւ ի գետն Արփայ առապար է երկիրն և թոհ և բոհ իմն լերանց և վիմաց. յորս յանուսնէ նշանակին մերձ ի գիւղն, (մին ի հիւսիսոյ արեւելից) Երարիս սար կոչեցեալ հայերէն (8271՝ անգղ.), միւս մերձագոյն եւս իբր երկու մղոնաւ, Սոչրուս քեազախ?, և շուրջ զնորք կարկառք և կոտորք ցնդեալք և ցրուեալք, որպէս թուի ի Թեփիսի-տեղիկ՝ (Մակազաթն) լեռնէ կամ յայլմէ, հրամուղ բունութեամբ արապերեալ. յորոց սպառուածս ի միջի աւերակաց բնութեան և շինու- թեանց՝ առ գետեզերքն թանգուզեալ դնի Մոզն աւան ամայացեալ, 10 տամբք թաթարաց, քսամափուռ յիշա- տական յաւերժացեալ ի 1150 ամաց հետէ. ուրանօր աննման ի պատմութեան մերում, (գոզլի հազիւ յընդ- հանրականն), գործեցաւ գործ ժպիրհ եղերան, ի կնոյէ միոյէ արբեցելոյ քինու և տուփանօք, խողխողմամբ գե- րագոյն հանճարեղի և վսեմագունի բանասիրաց Հայոց՝ մեծի եպիսկոպոսին Սիւնեաց՝ Ստեփանոսի. զորոյ զոր-

պետութիւն զիպաց թողում պատմել անուանակցին և աստիճանակից յաջորդողի. «Հանդիպեալ սորա (յամի » 735 ի 21 յսւլիսի) սակա հողեւոր հարկին՝ ի գաւառս » բարեկից ի Ձորն Եղեգեաց՝ յաւանն Մոզան. յորում » բնակեալ էր կին մի սեղեխ արբեալ յիմարութեան ախ- » տիւն, զոր յառաջ քան զայն երիցս անգամ զգուշա- » ցուցեալ էր զնա ըստ Տեառն հրամանի, և ոչ էր զղջա- » ցեալ. վասն որոյ այն անգամ սաստիկ ցասուցեալ Սըր- » բոյն և վճիռ հատեալ մեծ պատուհասի՝ ելանէ ի գեղ- » ջէն. և վասն ասթաթամուն գնայ յակն քաղցրահամ » աղբերն զոր Աշագ ակն (կամ Աշագական) կոչէին, զո- » վանայ ի նմա. և հրամայէ հարու գիտորանն իւր. և ին- » քըն ի վերայ ուռոյ միոյ դնէ զմահիճան հանգստեան. » և ելեալ առանձինն աղօթէ ժամս յուրվս. և ննջէ ի » վերայ նորա: Իսկ կինն հերատուկ շարժեալ ի կատաղի » բոցոյ ցանկութեանն, առնու ընդ իւր զհոմանին իւր և » գայ սպանանել զՍուրբն, զի համարձակ լիցին ի գործն. » և մերձեալ ի ծառն՝ հանէ ի վեր զայրն, եղեալ զսու- » բըն ի ձեռն՝ զի սպանցէ զՍուրբն: Ելեալ առնն տեսա- » նէր զՍուրբն ննջեալ, և իբր զբոց ցուանայր շունչն ի » վեր, և ճախր առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ » մի կացեալ ի սնարսն հովանի ունէր նմա թեւօքն: Տե- » սեալ զայն առնն՝ կարկեալ թուլանայր, և ամենայն յո- » գուածքն խողայր, շարժէր, դողայր մեծաւ սոսկմամբ. » և այնչափ ուշաբերէր՝ մինչ անդրէն իջանէր ի ծա- » աոյն, և պատմէր կնոջն: Ապա կրկին յորդորէր կինն, » և սաղրէր քաղցր բանիւք պոռնկութեան, և քաջախե- » րեալ անդրէն յուզարկէր. և նորա հրաշափառագոյն » իմն տեսեալ տեսիլ քան զառաջինն, սաստկապէս եւս » թուլանայր, և անզգայ մարմնով իբր մեռեալ անկա- » նէր ի ծառոյն: Ապա կինն՝ մինչ ետես յանհնարին » պատուհաս ըմբռնեալ զայրն, փոխանակ զղլման՝ ա- » ռաւել եւս զչարեալ, և սրեալ ի բանսարկուէն՝ առեալ » զսուրն հուլանեալ ելանէր ի ծառն. և հարեալ զսուրն ի » փորոն Սրբոյն՝ հեղոյր զարիւնն ամբիժ ի վերայ փայտե- » դէն մահճին, որպէս զՏեառն իւրոյ ի վերայ փայտեղէն » գործարանին մահու»: Վասն այսպիսի անպարտ մա- » հուան և մեծի զրկման ազգիս և եկեղեցւոյ, աւանդի քառասնօրեայ պատուհաս երերման և աւերման գա- » ւառին, և բիւրու միոյ մարդկան ընկլուզանել յանդուռն- » զրս: Բայց հաւասար անլուր և անհեղեղ ժպրհութեա- » նըն՝ արար կինն այն հերատուկ և հատուցումն ապաշ- » խարութեան տարօրինակ. քանզի «անազան ուրեմն » եկեալ ի սգաւորութիւն, մերկացեալ զհանդերձն և » առեալ քարինս ծեծէր զկուրծսն. և այնքան բաղխէր՝ » զի իջանէր վտակ արեանց. և մեծ ողբովք և դառն » աղաղակաւ ճչէր և խայտառակէր զչար գործան իւր: » Եւ եկեալ հանդէպ վանացն յարեւմուտս կոյս, յայն » կոյս ձորակին փորեալ զտեղին, և թաղեալ զանձն » մինչ յստինսն՝ զամառն և զձմեռն տապակէզ և ցըր- » տահար լինելով, վայէր և ողբայր զցայգ և զցերեկ, » և զմեզս իւր խոստովանէր: Յաղագս որոյ շարժեալ ի » գութ հայրապետին՝ խնդրէր ի Տեառնէ ողորմութիւն » նմա: Եւ յաւուր միում ի ժամ պատարագին ելանէր » գոչիւն ահեղ ի տապանէ սրբոյն. Թողեալ լիցին քեզ

» յ'ստորոտ լերինն, ( որոյ ), ի բարձրաւանդակի միոջ, ի » մէջ անտառին » : Եթէ զայխարհն իմանայ Սիւնիս՝ ապա արտաքոյ նորին խնդրելի էր զթանահատ, այլ ըզ- Մղկաց գաւառն՝ զգլխաւորն Սիւնեաց իմանալի է ան- շուշտ . իսկ զլեւառնն և զանտառն՝ մինչեւ յայտնեցէ նա՝ համարեսցուք զթաքեայ-տօշտոշրանն :

Եկեղեցին որ արդ ի միջի գեղջն կայ, փոքրիկ է, կա- մարայարկ (Յ քայլ ընդ երկայնն և ընդ լայն), և տայ ցոյ- ցըս Պռոշեան դաստակերտաց . հոյակապ և քանդակա- զարդ դրուագեալ, շորիւք որմնայար սեամբք և գեղապա- րոյր կամարիք ամբառնալով գմբէթ երկայնապարանոց, որոյ անկեալ է գդակն . շորք լուսամուտք են նմին և քան- դակք ցլաբարձ արծուոյ և առիժոյ և ցլոյ ոգորելոց . զատ յաւագ խորանէն են և վեց եւս սեղանք յեկեղե-

ցուոյս . յորոց երկուք յաջմէ և յահեկէ աւագ խորանին, և երկուք հինգ աստիճանօք ի վերոյ նոցին, իսկ այլ եր- կուքն յերկուսին կողմանս դրանն : Արտաքին որմուկքն պէսպէս դրուագս քանդակաց ունին խաչաձեւս՝ հիւսի- սայինն և հարաւային, յորում և ժամացոյց արեգակնա- յին առանց տառից . արեւմտեանն՝ ունի չըջանակ ման- րազարդ զլուսամուտին . և ի վերոյ քան զայն կից յորմն հիւսիսային՝ կայ մնացորդ վայելչակերտ մատրան ( 4—6 քայլ ) . յորոյ դրան վերայ ի բոլորաձեւ վիմի քանդակեալ է երիտասարդ հեծեալ, փաթութաձեւ գլխանոցաւ, մը- խելով գնիզակն յերախս առիժու, և ի վերոյ նորին սի- րամարդ և հաւ մի . այլ հաւ և այծեամն ի վերայ ձիոյն : — Գլխաւոր արձանագրացն՝ թէ և թերատ ի սկզբա- նէ՝ կայ ի հիւսիսոյ կուսէ արեւմտեան դրան եկեղեցւոյն .

. . . . Թագաւորին եւ խաչեցելոյն Քրիստոսի, յարքայութեան մեծին եւ բարեպաշտին Աբաղայ ղանին, հայկազնեայ տոհմիս եւ սեռիս Թորգոմեայ ի կաթողիկոսութեան Տեառն Յակոբայ, եւ յարիական եւ քաջատոհմ իշ- խանութեան Պռաւչայ եւ որդւոցն՝ Պապաքին, Հասանայ, մանկանն Էաչոյ, շինեցաւ սուրբ եկեղեցիս բնակարան փառացն Աստուծոյ եւ յարկ Արքոյն Ստեփաննոսի, յերկար կենդանութեամբ Պարոնացն . Եւ սահմանեցաք Փոխման Գ աւր ամէն եկեղեցիքս պատարագել զՔրիստոս մեծ Պատրոնին մերոյ Պռաւչայ . կատարիչքն աւրհնին յԱստուծոյ . Մեք Պարոնայքս եւ միա- բանքս արձանագրեցաք . . :

Իսկ յարեւելեան որմն գրեալ է ի միջոցի 1263-7 ամաց .

Կամաւ կենարարին եւ կուսածին անմահ թագաւորին . աշխարհակալ Արլուենին իշխանութեան Խաւչաքին<sup>1</sup>, ողորմութիւն Պապաքին, Հասանայ, Էաչոյ . . . բէկ թոռն Խաւչաչահին . որդի Միսիթարայ տվիվմեր ձեռատունկ այգին զՔայլայից ? հողն սուրբ Ստեփաննոսի . Միաբանքս սահմանեցին ի տաւնի սուրբ Սարգսի Գ պատարագ Հասանայ եւ Սարգսիս ? իմ աղբե- րացն հոգւոյն . ի Թվիս Զ . . կատարիչքն աւրհնին յԱստուծոյ .

Բազում և այլ արձանագիրք են ի ներքոյ և արտա- զերս խորանացն, այլ կարօտին ստուգագոյն վերժանու- քոյ եկեղեցւոյն, յորմունս և շուրջ զլուսամուտիք և յե- թեան . և են այսպիկ .

Կամաւն Աստուծոյ ես Յուսիկ շինեցի զայս Սրանոցս<sup>2</sup>, եւ տուի Վարա- գա սուրբ Ն(չա)նիս . Տէր Ստեփանոս Վգ . (եւ) միաբանքս տվին Գ ժամ Բառասնից տաւնին . կատարիչք աւրհնին յԱստուծոյ . Թվին ԶԿ :

† Ես Ամիրշահս տվի ղծախս մատրանս յիմ հալալ արդեանց . եւ սպաւ

1 Ստուգութեան կարօտի արձանս, զի անյարմար են բանք որ զլիտուրացն և Արղուն զանի, և Խաչաքին, յոր անուն կոչէին մայր Աւագոյ մեծի իշխանի և նու նորին : 2 Սբ-նոցն տպատարեալ յընդօրինակոյն :

սաւորք սուրբ ուխտիս խոստացան Բ պատարագ Դաւթի եւ Յակովբայ տաւնին . Կատարիչք արհնին յԱստուծոյ . ԹՎ . ԶԻԷ :

Այս է վերայ կիսաքանդ մատրանն է գրեալ .

Ի ԹՎին . ԶԾԶ . Կամաւն Աստուծոյ եւ Թաշեր դուստր Ուքանի աւուսին Հասանայ ասպարապետին Հայոց որդւոյն Պռոշայ, ետու ընծայ հալալ ընչից իմոյ հայրենի տանս մեր Թաւնադի վանից սուաշի սուրբ Նըշանիս . որ Հայրաստ եւ միաբանք սահմանեցին Գ պատարագ ինձ աւագ հինգչաբթին արն, Հոգւոյն գալստեան , Բ Փոխման Աստուածածնին . Կատարիչքն արհնին :



33. Թաւնադի վանք .

† Կամաւն Աստուծոյ եւ Սիմէոնս տվի զմեր հայրենիքն Պարոնացն ուղորմութեամբն Էաչոյ (եւ) Մամայխաթունին Սուրբ Ստեփանոսիս եւ սուրբ Նըշանիս (վասն) Մխիթարայ Հոգւոյն . միաբանքս սահմանեցին Գ ժամ Տեառնընդառաջին , Բ Մխիթարայ , Ա ինձ . ԹՎին ԶԶԸ :

† Կամաւն Աստուծոյ եւ Խութլուբէկս Պարոնացն ողորմութեամբն Էա

չոյ (եւ) Մամախաթունին զԱղաղտեղին? հողն Սուրբ Ստեփաննոսին տվի միաբանքս կարգեցին Բ ժամ մեր? Սուրբ Ստեփաննոսի տաւնին .

† Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Զուվէս թուն Ամիր Հասանայ որ դի էչաչոյ եւ կենակից իմ Խոնդչին տվաք զԱւագական ջրաղաց Սուրբ Ստեփ. գերեզմանիս. վարդապետք եւ միաբանք սահմանեցին Սուրբ Խաչի տաւնին Բ (պատարագ) իմ եղբաւրն .

† Կամաւն Աստուծոյ ես Ուրանս որդի վահրամայ Շահուռնեցի<sup>1</sup> տէր միաբանեցայ Սուրբ Ստեփաննոսի եւ տվի հալալ հայրենեացն որ ինձ բաժին էր հասել ղԽալին Ըղանին? հողերն իւր Դ հատովն եւ թմբերովն . վարդապետ եւ միաբանք սահմանեցին Բ ժամ Սուրբ Նշանին տաւնին . կատարի . . . ? Թվին Զ<sup>2</sup> . .

† Կամաւն ամենակալին Աստուծոյ ես Բենա? որդի Սմբատայ<sup>3</sup> թուն Լիպարիտի տէր Փանձաթաղին<sup>4</sup>, եւ ամուսինն իմ Սուսայ միաբանեցաք Սուրբ Ստեփաննոսիս եւ տուաք մեր հալալ հայրենեացն որ ի Փանձաթաղին ղՄազմանեց եւ ղԱշուշիկեց եգիս մեր հողոյ բաժին . Եփրեմ վարդապետ եւ միաբանք սահմանեցին մեզ Աստուածածնի տաւնին Զ պատարագ . եւ ով որ մեր տված վտխմիս հակառակ կայ ԳձԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի . Թվին ԶՂԵ<sup>5</sup> .

† Կամաւն Աստուծոյ ես Թեկղի միաբանեցայ սուրբ ուխտիս եւ տվի ընծայ . միաբանքս տվին Բ ժամ Թեկղի տաւնին . կատարիչքն աւրհնին :

† Կամաւն Աստուծոյ, ես Աւլան ափայս<sup>6</sup> եւ իմ որդիքս միաբանեցաք Սուրբ Ստեփաննոսիս եւ Սուրբ Նշանիս եւ տվաք ձ դեկան ընծայ . վարդապետք եւ միաբանք սահմանեցին զչաբաթն Զատկին . կատարիչք աւրհնին յԱստուծոյ . Թվին ԶՀԵ .

† Կամաւն Աստուծոյ ես Աւաղ Խաթունս ամուսին վախտանգայ որդւոյ Խալաշահի տվի ձ դեկան Սուրբ Ստեփաննոսիս (եւ) վարագայ Նշանիս . վարդապետք եւ միաբանք սահմանեցին Դ պատարագ . Բ Ծառվարդարին, Բ Զատկին . կատարիչք աւրհնին յԱստուծոյ . խափանիչք դատին ի Տեառնէ :

1 Զաւլեան (Բ. 20) վհոր շահուռնեցի . . . եւ Դեմա :  
2 Հաւանորէն պականն տասնորդական թիւքն յաւելիւք Զ Թուական տաւի, որ է 1251 :  
3 Զաւլեան, Եւ Բեմարդի Մա՛ւ . Գաջերուռնին, Եւ Բեմարդի Սի՛րաբոյ, Բա՛ւ : Յազգացուցակի Օրբեղեանց երկու Սմբատք նըշա-  
նակեալ են որդիք Լիպարիտաց, այլ պատկառն անուն Բենա? ոչ է ծանօթ, այլ Զինա կամ Զինան :  
4 Տանջաթաղ ըստ Զաւլեանի :  
5 ԶՂԴ ըստ Զաւլեանի :  
6 Թեկղեա՛ Աւլան ուղայ :



† Կամաւն Աստուծոյ ես Բաւրինայ միաբանեցայ սուրբ ուխտիս եւ տվի յիմ հալալ արդեանց ընծայ Սուրբ Ստեփանոսիս . միաբանք սահմանեցին Ա աւր պատարագ Սուրբ Խաչին . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

† Կամաւն Աստուծոյ ես Արեւհար միաբանեցայ Սուրբ Ստեփանոսիս եւ տվի Ի դեկան եկեղեցւոյս . եւ միաբանք սահմանեցին Ա ժամ Խաչգիւտին . Կատարիչք աւրհնին յԱստուծոյ :

† Կամաւն Աստուծոյ ես Սեթար միաբանեցայ (ի) սուրբ եկեղեցիս եւ տվի Խ դեկան եւ միաբանք սահմանեցին Բ ժամ Երեւման խաչին . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

† Կամաւն Աստուծոյ ես Անի ? եւ ամուսին իմ Վախախ<sup>1</sup> եւ Մուրադփաշէս միաբանեցաք սուրբ Նշանիս (եւ) Սուրբ Ստեփանոսի, եւ տվի զմեր զնած էգին :

† Յանուն Աստուծոյ ես Բուբայիս Թոռնս Սամազալին<sup>2</sup> որդին յանուն Աստուծոյ ? ես Սարգիս որ տվի Թանադի վանից Սուրբ Ստեփանոսի Զարնավարին ? հողնացան հայրենիք անքակ . տվին ինձ զՅայտնութեան աւր Թ խորան . Ով խափանէ ԳձԺԸ հայրապետացն նղովեալ եղիցի :

† Կամաւն Աստուծոյ ես Սանջար ? եւ Թաճմէլիքս<sup>3</sup> միաբանեցաք Սուրբ Ստեփանոսիս , տուաք զԿկուպարին հողն Հովուենց հողովն . Միաբանքս տվին հինգ ժամ Վարագայ խաչին . աւգնել տուաք ? :

† Կամաւն Աստուծոյ ես Թաճմէլիքս դուստր Մխիթարայ Թոռն Խալաչահին տվի մէկ վեցկի իմ դերեզմանատունս . միաբանք սահմանեցին Դ ժամ Սանգիստոյ տաւնին . Բ ինձ Բ իմ մաւրն . Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ :

† Ես Աւագ Սուլիմս<sup>4</sup> Խ դեկան տվի եկեղեցւոյս . (միաբանքս սահմանեցին) Բ ժամ Ս . Սարգսին . Կատարիչքն աւրհնին :

† Յանուն Աստուծոյ ես Դեղս Գ գեկան տվի մատրանս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց :

† Կամաւն Աստուծոյ ես Ռոստում եւ ամուսին իմ Գուռճիկ միաբանե-

1 Զաւալեան՝ Ս-ի-ի :

2 Յաւալ կամ յես անուանս զակասէ սյլ անուան :

3 Զաւալեան՝ Ա-Բ-ճ Մեյի-ի :

4 Քալբերունի՝ Ս-ի-ի :



ցար Սուրբ Ստեփաննոսիս եւ տվար ի հալալ ընչից մեզ հոգւոյ բաժին. վարդապետք եւ միաբանք սահմանեցին Մաւղարդարին Զ պատարագ. Դինձ եւ Բ Գուռճիկին. կատարիչք արհնին:

† Կանգնեցաւ Խաչա բարեխաւս Պետրոսին եւ ծնողաց իւրոց:

† Կամաւն Աստուծոյ ես Պետրոս յիմ հալալ արդեանց ետու ծախս Զանգակին. Միաբանք սահմանեցին Բ Ժամ Երեւման խաչին:

† Ողբ աղաւթէք յայսմ քաւարանիս զՍահակ յաղաւթս յիշեցէք:

Գրեալ է այս առ խորանաւ միով. որպէս և որ յառաջ մանէ՝ ի բլրակի ուրեմն կան մահարձանք. ի միում միայն քան զայս խաչարձանն: Թուականն ԶԽԶ (1297-8). միւս Թուականաւ 1296 ամի. և միւս եւս անթուական. և են սղբաւ.

Ներսէս քահանայ որ տարածամ փոխեցաւ առ Քրիստոս. Աստուած ողորմի. Թ. ԶԽԴ:

† Դաւիթ քահանայ. յիշեցէք յաղաւթս:

Յարեւելակողմն զճանապարհայն որ տանի յԱրկազ և ի Ս. Խաչ վանս, անկեալ կայր խաչարձան մի գրութեամբս.

Ես Մանուէլ քահանայս կանգնեցի զԽաչա բարեխաւս հարազատ եղբար իմոյ Խաչատրոյ. յաղաւթս յիշեցէք. ԹՎ. ԶԻԶ:

Անդրագոյն եւս այլ խաչարձան կանգուն, բայց անթուական.

Կանգնեցաւ Խաչս (Ի) բարեխաւսութիւն Զայեխիին եւ եղբարց իւրոց:

Ոչ հեռի ի սոցանէ և այս խաչվէմ արձանագրեալ անստոյդ անուամբ.

Կանգնեցաւ սուրբ Խաչս բարեխաւսութիւն Էսվէոյին?

Այս ամենայն արձանք վկայք են երկրորդի շինութեան կամ նորոգութեան վանացս Թանատէի, շինալով ինչ յառաջնոյն յիշատակ վաղեմի անցից տեղւոյն. ընդ որ ցաւ է, զի այնքանոյ բազմադրուատ մենաստանի ցամս գրեաթէ հազար, ոչ այլ ինչ յիշի՝ բայց բերումն նշխարաց Ստեփանոսի եպիսկոպոսի, և առաջնորդն Մխիթար, որոյ և ժամանակ անստոյգ: Եւ նոր յիշատակք իսկ արձանացս, յայտնիքն Թուականաւ, հազիւ ի դար մի ամաց ձգին, ի կիսոյ ԺԳ դարու ցկէս ԺԴն. յորոց ստուգի տեղին ժառանգութիւն լինել կամ ընդ իշխանութեամբ Պուօշեան մեծի տոհմի. երկուք միայն յիշին վանահարք յայս միջոց ժամանակի, Հայրապետ՝ յամի 1307, եւ Եփրեմ յամի 1348: Իսկ արբարանքն են՝ եկեղեցին Ս. Ստեփանոսի Նախավկայի և հանգստարան Ստեփանոսի եպիսկոպոսի, և Ս. Նշան կամ Ս. Խաչ վարաւ.

գայ. յորմէ կարծելի է երբեմն աստ պահել մեծահաշակ այնր խաչի, որ ի բազում և յայլ տեղիս փոխադրեցաւ՝ իբրեւ զմի ի յոյժ նախանձելի սրբութեանց եկեղեցւոյն Հայոց: — Իբրեւ յետին յիշատակ՝ Քաջբերունին նշմարեաց յարեւելեան որմն եկեղեցւոյն զթուականն ՌԺԴ (1866), այլ ոչ կարաց ընթեռնուլ զարձանն, զի շատ եղծեալ էր: — Ի տեղեաց յիշեցելոց յարձանս՝ Կկուաքարն Թուի ոչ հեռի լինել ի վայրացս, որում մերձ էր և Հովոնեց հողն. իսկ Փանճարադն (զոր Տանճաթաղ ընթերցեալ էր Զալալեան, և ճանաչի իսկ յայս անուն գեօղ հուպ ի հարաւոյ գեղջ Տաթեւոյ, այլ ոչ յիշի ի գիրս), հաւանորէն որիչ է ի յետնոյս որ ի Մղուկս և ի վայոց ձոր. զի « եղեւ հալածումն ի վայոց ձոր, (ասէ գրիչ ոմն Մաշտոց գրոց յամի 1498-9, ուր սկսեալ էր գրել զգիրսն), ի գիւղս որ կոչի Փոնձաթաղ». ուստի

փախուցեալ գնայ ի Ձորոյ վանս, և «անտի ի Ձորակն  
 » որ կոչի Ծակքար»։ յետինս՝ յայտ է թէ չէ Ծակքարն  
 Գեղարունեաց (տ. յէջ 83), այլ յիշեալն ի կողմանս Ե-  
 ղեգեաց յարձանագրին Կենվանից (տես յէջ 96)։ Աստա-  
 նոր պատմէ աղուարար գրիչն այն Վանական անուն, ե-  
 թէ և ոչ անդ «ետ Թուլ (Թոյլ) սատանա (այլ) ած ի վե-  
 » ռայ տանիկ մի փխտոյ (հետեւակ), և փախստական  
 » արարեալ զկրօնաւորքս. և իմ առեալ զօրինակն (գրոց  
 » Մայրոցի) փախչէ ի ստորոտ չորինն. և նորա հետա-  
 » մուտ եղեալ զհետ իմ, և ես առ Տէր աղաղակելով փա-  
 » խես մղան մի. և զերծոյց զիս Տէր ի նմանէ, և ոչ կա-  
 » ռաց հասանել. (իսկ) նորա դարձեալ ի տեղին՝ որում  
 » զխրճիթն արարեալ էինք, տարաւ զաւանակն վանիցն,  
 » և եթող զբեռն ի վերայ միաբանիցս. զի տէր Աստուած  
 » դիցէ զբեռինս մեղաց սոցա ի յուս նորա, և առաքեա-  
 » ցէ՝ ուր ինքն կամեսցի... Եւ իմ դարձ արարեալ ի տե-  
 » ղին՝ որում հալածեաց տանիկն, զծագրեցի (զմասն ինչ  
 » մաշտոցին). և անտի ոչ ետ Թուլ ոսորն. էած ի վերայ  
 » իմ իժ մի, և իմ հայել(ով) ի յօրինակն՝ կայր իժ մի  
 » մերձ ի յօրինակն, և բանայր զբերանն առ իս. իմ  
 » զայն տեսեալ զաչի հարեալ՝ փախեա, և իջի (ի) վանքս  
 » Ձորէվանս»։ — Տես զվանացս յետոյ ի կարգին։

81. ՀԵՐԾՈՒՆ ՎԱՆՔ.— Սկիզբն և շինութիւն վանաց  
 Հերմոնի այսպէս պատմի յՕրբելեանէ. «Յերեք հարիւր  
 » ութսուն և հինգ թուականին (936 ամ) աստուածազօր  
 » իշխանն Սմբատ (Սիւնեաց Տէր) ելեալ յաւուր միում  
 » յարձունեաց իւր՝ որ էր յԵղեգիս գիւղաքաղաքի, և  
 » երթայր ի գրօսանս որոց. և պատահեալ խոտակերաց  
 » աստուածազգեաց ճգնաւորաց՝ ղօղեալ ի ծերպս արձա-  
 » նականք վիմացն, որ ի վերոյ Եղեգեաց՝ ի ձորն բար-  
 » ձրահայեցիկ ի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարէվանս  
 » կոչիւր. և զարմացեալ ընդ ներքեւեալ և ընդ անջա-  
 » ցեալ տեսիլս նոցա, հարցանէր ի նոցանէ զկեանս նո-  
 » ցա. և նոքա հեզիկ պատասխանեալ ասեն. Հալածեալ  
 » փախստական եղաք յայխարէէ, թերեւս կարասցուք  
 » ապրել ի դառն այէկոծութենէ սորա։ Ապա այնուհե-  
 » տեւ խնդիր առնէ իշխանն եպիսկոպոսին իւր Տէր Յա-  
 » կօբայ. և հրամայէ ձեռն ի գործ ածել և փութապէս  
 » շինել եկեղեցի ի պատշաճաւոր տեղի, զի անդ բնակե-  
 » ցուցցէ զսուրբ ճգնաւորանս։ Եւ նորա եկեալ առ սուրբ  
 » հարան՝ հարցանէ զկամս նոցա. և նոքա ցուցանեն տե-  
 » ղի մի տափարակ ներքոյ քարոյն ուղղորդ ի վայր. յո-  
 » ռում տեղով սկիզբն առնէ կոփածոյ քարամբք, և շի-  
 » նէ եկեղեցի զմբէթայարկ յանուն Սրբոյն Գրիգորի. և  
 » բերէ զաւագագոյն ծերն՝ որում անունն Ամերմոն,  
 » և զաշակերտն իւր զԱզարիա, այլովք եղարարքն, և  
 » բնակեցուցանէ անդէն։ Եւ եկեալ իշխանին օրհնէ զե-  
 » կեղեցին. և բարեպաշտ տիկինն Սովիա գնէ զգիւղն  
 » Հաւուլ՝ որ հանդէպ վանիցն կայ, իւր սահմանովն, և  
 » տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և այլ եւս այգիս  
 » և ծաղկոցս յԵղեգիս։ Եւ զարդարէ զնա բազում ըս-  
 » պասուք, և փարթամացուցանէ ամենայն պիտոյիք, և  
 » մեծամեծ նզովիք հաստատէ զՀաւու գիւղն, որ ոչ  
 » հանեն ի նմանէ։ Եւ կատարեն ինքեանց յիշատակ ըզ-  
 »

» տօն Սրբոյն Գրիգորի, և քառասուն մի պատարագ ըզ-  
 » վարդավառին. և կոչեն զտեղին յանուն ծերոյն՝ Ա-  
 » Ռերմոնի վանք»։ Այլ ապա սովորութեամբ Հերմոնի  
 վանք կոչի, որպէս և ինքն պատմիչն կոչէ ի կարգի վա-  
 նորէից վայոց ձորոյ, նոյնպէս և վարդան աշխարհագիր-  
 բայց յայլ գիրս ոչ գտանեմ զյիշատակ վանացս, բաց ի  
 սակաւ յիշատակարանաց գրոց. յորս յիշի յամին 1318-9  
 եկեղեցին Ս. Լուսաւորիչ, և Յովնանէս ոմն գիտնա-  
 կան սպասաւոր բանի՝ որ ընդօրինակէ զգիրս ինչ Նիւ-  
 սացւոյն, առ ոտս մեծ վարդապետին Եսայեայ (Նւ-  
 շեցւոյ), առաջնորդի հռչակաւորն Գայլեձորոյ։ Առ սո-  
 վաւ գրեալ է և Աւետարան մի, յորում ըստ հին ա-  
 նուանն Ամերմոնի վանք կոչի, և որ նշանաւոր ևս է.  
 եկեղեցին՝ յանուն Ս. Գրիգորիսի։ — Սակաւ ամօք յեա  
 սոցա, այսինքն յամի 1338, Գրիգոր ոմն բանասէր զը-  
 ծագրէ աստ զգիրս Ս. Դիոնիսեայ Արիստազացւոյ,  
 «ի նահանգիս վայոձոր, ի վանս Հերմոնի, ընդ հո-  
 » վանեալ Սրբոյն Գրիգորի... յիշխանութեան և ի տե-  
 » բութեան տեղւոյս մեծ և բարեպաշտ իշխանին Քուր-  
 » թէյի. և զաւակաց նորին՝ Պէշքէնի և Իւանի. և ի  
 » վարժապետութեան ընդհանուր Հայկազեանս սեռի  
 » երջանի, մեծի և երիցս երանեալ Հետտրի Տիրատուր՝  
 » առձայնելոյ. առ որ կամք ղեգերեալ ի վարժս կըր-  
 » թութեան... որպէս զաւակ առ ծնօղ, որ սփոփէ զկեա-  
 » նրս մեր՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ»։ — Յայլմէ գրչէ  
 ի նմին մատենի՝ առաջին գրիչն Մեծն Գրիգոր կոչի, և  
 աշակերտ նորա Սարգիս մեծ յարունակետ։ ՉՏիրատուր  
 մեծ վարժապետ կոչմամբ նաև ի կէս ԺԴ դարու (1350)  
 յիչէ Մովսէս մի ի միաբանիցն, ընդօրինակելով անդ զա-  
 ղօթագիրս Գր. Նարեկացւոյ, զոր և տայ առ Նահապետ  
 արեղայ, և աղաչէ յիշել «սեռն սիրով ի միտս բարիս և  
 » ի պատկանաւոր խնդրուածս զսուրբ վարդապետն իմ և  
 » զհայրն ըստ հոգւոյ զվերոյսացեալը (Տիրատուր),  
 » այլ և զՍամուէլ կուսակրօն քահանայ և զՅովնան-  
 » նես... և զկրօնք եղբայրն իմ Ներսէս, որ սպասաւո-  
 » ըէր ինձ պղերգութեամբ և յօշ կամաց»։ Այլ ոմն  
 Սարգիս որդի Հաքիմի, տեղեալ Ղրիմցի՝ «վարժա-  
 » պետական սթոռ» կոչէ զվանս Հերմոնի՝ յամի 1418,  
 ընդօրինակելով աստ զգիրս Ս. Կիւրղի, յառաջնոր-  
 դութեան Յովնաննու աշակերտին Գրիգ. Տաթեւացոյ,  
 օւսուձեակից ունելով «զհեզահոգին Տէր Ղազար սպա-  
 » սաւոր բանի»։ Ի նմին ամի և մեծահռչակ ոմն Սիմէոն  
 յարունակետ Սիւնեցի՝ բնակութեամբ Տաթեւացի՝ տաց  
 աստ ընդօրինակել զՆերսիսի Լամբրունցւոյ Մեկնու-  
 թիւն Երկոտաւան մարգարէիցն, ի ձեռն Գրիգորի ու-  
 բումն, որ գրէ այսպէս.

*«Սրբաբանացս սպիտակեալ Հերմոն  
 » մի. ձեռնամուկ բերեալ ընդ նմին հայոց զՊէր-  
 » ձ քաղաքեան եկել աղաղակ զամենեւեալս ինչ յիշե-  
 » իք զվերոյսացեալ զվանքս արբանապետն. որոս  
 » ոյլ ի նամից և ևս նմանեաց մի ի վարժէ վե տեղոյ ձի  
 » կարգալ ընդ նորա զարմարեալ ծովայնէ տուցէ ևս նման  
 » յառիւսանեալն»։*

34. Մեկն. ԺԲ Մարգարէից գրեալ ի Հերմոնի վանս.

— Յետ տասն ամաց Գրիգոր արեղայ ընդօրինակէ Շա-  
 րական, « յատուածախնամ և ի հրեշտակահիմն վան-  
 » քըս... ընդ հովանեաւ Ս. Գրիգորի և Ս. Յակոբայ և  
 » Ս. Սահակայ, և այլ կենսաբեր սուրբ Նշանաց՝ որ աստ  
 » դումարեալ կան. ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս  
 » տիեզերայոյս և մեծ հոգևորի Յովնաննէս վարդա-  
 » պետի, ի դառն և ի նեղ ժամանակի: Արդ ետ գրել  
 » Յովնանես օր այժմ կրօնաւոր է և ի մերձակայ աւուրս  
 » վարդապետ լինելոց»: Իսկ ինքն գրողն Գրիգոր ան-  
 » մեղադրութիւն խնդրէ վասն խոշորութեան գրչութեանն.  
 « զի ժամանակս ձմեռն էր, և խուցս մութն և ցուրտ, և  
 » նիւթս պակաս, և թանաքս աւեր. և ի՞մ պիտոյքն ոչինչ  
 » այլ՝ բայց միայն ցամաք հաց, և խոցած ներքինս թանա-  
 » րկուէն, և արտաքինս՝ ի բնութեան տկարութենէս՝:»  
 — Պատմիչն Թովմաս Մեծօփեցի զվերոյիշեալն Յովհան-  
 նէս՝ կոլոտիկ կոչէ « ի յԵղեգեաց, ի վանից Հերմանի ».  
 և ի ժողովի նորոգութեան արժուոյն Էլմիածնի՝ նախա-  
 կարգէ զանուն նորա քան զնաւից, « Յովհաննէս վար-  
 » ժապետն և ուսուցիչ ի Ս. ուխտէն Հերմանի վանիցն ».  
 և սա ինքն յայսմ ամի (1441) ընդօրինակելով աստ  
 ձառնտիր մի՝ կոչէ զինքն « Սեւակիր Հերմանի վանից »:  
 Եղեւ առաջնորդող ընտրութեան կաթողիկոսութեան  
 կիրակոսի, և նոյն ինքն դարձեալ մերժման նորա յարձ-  
 ուոյն, յետ երկուց ամաց, թէպէտ և հրապուրեալ և խա-  
 բեալ սաղրանօք աշակերտի իւրոյ Մարկոսի եպիսկոպո-  
 սի և այլոց ոմանց հակառակորդաց կիրակոսի. զի ինքն  
 կոլոտիկն անցեալ էր զաւուրբք և խլացեալ ականջը-  
 սակայն ձեռներէց ոմն երեւի և յառաջնմէն. քանզի մե-  
 ղադրէ զնա պատմիչն բարառնաբար. « Ո՛վ մեծ վար-  
 » ժապետ Յովհաննէս, զաթոռն Աղուանից յերկուս  
 » բաժանեցեր, և նախանձաւ և դառն ատելութեամբ  
 » ի հայրապետական արժուոյն արտրեցեր զընտրեալն ի  
 » Հոգւոյն Սրբոյ... և ի միւս օրն վարդապետութեան  
 » զաւազան ամենայն վարդապետօք ի ձեռն նորա եղեր.  
 » այժմ զգաւազանն ի ձեռաց նորա յափշտակեցեր, (եւ  
 » այն). դու ականջօք խլացեալ, սպիտակ մօրուքդ ի դե-  
 » զին է փոխեալ, մօտեալ գերեզմանի. գիշաւատանս  
 » Հայոց ուղղափառ աստուածաբանութեան խափանե-  
 » ցեր... դու զամենեցուն բերանն բացեր. կիլիկեցիքն  
 » զհամբաւ անգիտութեան և անհամութեան քո լսե-  
 » ցին »: — Յերկասիրութեանց Յովհաննէս՝ յիշն Լոսձ-  
 մուռք գրոց Ս. Դիոնեսիոսի, և փաղաւած Մեկեղեցեան  
 Երայեայ: — Յետ սորա և յետ կիսոյ ԺԵ գարու յիշի  
 առաջնորդ վանիցս առ կաթողիկոսութեամբ Գրիգորի  
 Մակուեցոյ՝ փոխանորդին կիրակոսի, միւս եւս Սար-  
 գիս վարդապետ վերադարձող և քաջ բարունի կողմամբ,  
 յամս 1460 և 1465. յառաջնաւմն (1460) Զաքարէ ոմն  
 ընդօրինակէր Աւետարան մի, « ի Ս. մենաստանս Հեր-  
 » մանի վանք, ի առաջնորդութեան Սարգիս վարդապե-  
 » տին, ընդ հովանեաւ Լոսասարգիս մերոյ, և Ս. Յակով-  
 » թիս կենաց բարեխօսի, և Ս. Ստեփաննոսի և Ս. Յռ-  
 » վաննիսիս, և այլ սուրբ Նշանացս և նշխարացս Ս. Հեր-

» ման ճգնաւորի, և սուրբ Վարդապետացս՝ որք աստ հան-  
 » զուցեալ կան առ Քրիստոս »: Գրել տուողն է կին « Մը-  
 » խիթայ ժամակոչի... (և տայ) ի Մելքիսէթ քահանայն  
 » վասն իւրոյ յիշատակի », և մահտասի Սամուելի հանգու-  
 ցելոյ, որ ետ զթուղթ աւետարանին գրեցելոյ:— Այսօրքիկ  
 յետին յիշատակք են Հերմանի վանաց, ըստ իմս գիտու-  
 թեան. յօրմէ հաստատի և այն, զի ի նուազել կամ թեր-  
 եւս և յաւերել Գայլեձորոյ վանից, այսր ի Հերման փո-  
 խեալ իցէ աթոռն վարժապետական. յօրում վեհա-  
 գոյն գաւառ, որպէս և ի նախակարգեալ յիշատակացդ  
 գուշակի՝ Տիրատուը Վարդապետ, մինչեւ դասել զնա ի  
 շարս յաւէտ հոշակելոց վարդապետաց, և յեկեղեցա-  
 կան երգարանի Գանձուց, ընդ  
 « Վրկայասէրն եւ Երեւակացին,  
 Գռ, Վանական, Տիրատուը արին,  
 Վարդան մեկնիչ եւ սուրբ Երայեայն », և այլն:  
 Եւ գրիչ ոմն յամին 1438 գովելով զայլ ոք իւր վարդա-  
 պետ գիտուն, ասէ զնմանէ, « Հետեւեցաւ սուրբ հա-  
 » ռանցն և առաջին վարդապետացն, Երայեայ, Տիրա-  
 » տոյ, Վարդանայ, Գոռի, Վանականայ », և այլն: Գրու-  
 խաւոր գրուածք Տիրատոյ երեւին եղեալ Քարազքն, յօ-  
 րոց յիշին երեւնիւ շափ, յայլեւայլ տօնս տէրանականս,  
 և ի սէպպէս բանս Ս. Գրոց՝ մեկնողաբար. այլ և « ի Պե-  
 » ռիարմենիաս Գրոց (Արիստոտելի) յարմարեալ յաղա-  
 » զըս Աստուածաբանութեան »: Գրիչ վարուց կամ վկայա-  
 բանութեան Գրիգորի Խլաթեցոյ (+1435) ասէ զսա աշա-  
 կերտեալ ճգնաւոր վարդապետին Վարդանայ, « որ հնգե-  
 » տասան ամ յանապատի էր բնակեալ, առ մեծ Վարդա-  
 » պետն Տիրատուը »: Սակաւս ի բանից կամ ի քարոզից  
 Տիրատոյ գտեալ իմ յընթեռնուլ՝ ոչ կարեմ ի վերայ հա-  
 սանել հոշակի անուանն, թէ և շափաւոր գտանեմ զբա-  
 նակարգութիւն նորա:— Ընդ գրուածսն յիշի և Տեսարին  
 Մարգարէին Դաւթի, ոչ գիտեմ ճառ եթէ մեկնութիւն  
 Սաղմոսաց նորին, որպէս և Տեսարին Աւետարանին  
 Մատթէի. Զատ յայսցանէ ծանօթ են Հանելուկք նորին  
 առաւել քան զ՝20. ոճով Դնորհալոյ, այլ անժամանք ի  
 շնորհս նորին. յորոց շատք ակնարկեն յանձինս ծանօթս  
 ի Ս. Գիրս և յազգային պատմութեան մերոյ, և դիւրաւ  
 ճանաչին կամ լուծանին. որպէս.  
 « Ոմն էր յազգէ արշակունի,  
 Մայրըն վաճառ եւ խիստ մոլի.  
 Տեսունն աչացն էր անբարի,  
 Հանց օր յաղթէր որձաբարի »: (Երուանգ).  
 « Է զգալի եւ չերեւի  
 Չէ կենդանի ու կա խօսի.  
 Թէ ոք ընդդէմ նմա խօսի՝  
 Չնոյնն առնէ պատասխանի »: (Արձագանգ).  
 Ընթերցողին թողցի լուծանել և զայս.  
 « Բանս ի զարմացք ի մեզ լինի,  
 Բայց անվարժիցն անգիտելի.  
 Չի ճօնութեամբըն նըւազի  
 Եւ նուազութեամբըն ճօն լինի »:

1 Յերատակարան գրոցն յօրմէ զայս յիշեմ՝ երեւի գրեալ յամի  
 1465, « ի հայրապետութեան Տեսան Գրիգորի ընդանուր Հայոց

կաթողիկոսի »: Թէպէտ ըստ հասարակ կարծեաց՝ Գրիգոր կամ-  
 րի վախճանեալ յառաջ քան զթուականք այդ:

— Մի ի բանիցն կամ ճառից (զոր չէ իմ տեսեալ), ի բանն՝ «Չգոյ լեր որպէս ցուցաւ քեզ առնել», վերագրի վասն Էջմիածնի. զոր թէ այսպէս էր գրեալ հեղինակն՝ գուցէ կրսեր սմն Տիրատուր էր և ոչ հռչակեալս այս ի սկիզբն ժԵ գարու, այլ թուի ընդօրինակողին պատշաճեցուցեալ զվերնագիր բանին՝ որ յԵկեղեցի: — Յաւելցուք և աղուական ինչ, ըստ գրելոյ ուրումն յՈսկեփորիկ գիրս. «ՉՏիրատուր վարդապետն ի պաշտօն տարան, և այն օրն հաց մոռացան տան ուտելոյ. յերեկոյնն ժաւ մուն տարան ի տուն. ասէր Պարոնն. Վարդապետ, քանի տարոյ մարդ ես: Արէ. Քառասուն, մէկ պաւ կաս: Ասէ (հարցանողն). Մէկն էր պակաս: Արէ (Տիրատուր). Օրս այս որ քաղցած պահեցիր, ի ժաւ մանակի կարգ ոչ է»:

Հին գիւղն Հաւու՝ որ հանդէպ կայր վանից Հերմանի՝ ըստ պատմիչին, և ըստ տրիցն յաթուռն Սիւնեաց (6 շափ) գուշակի փաբրիկ լինել. անհետացեալ յայժմուս, ճանաչի անուամբ անտառին՝ որ կոչի Հառու մէշէ:

Մղոնաւ և կիսով, ի հիւսիսոյ Մոզան, (յահեկէ սորին) կայ մեծ գիւղն Մալիշկաւ. տարածեալ ի միջի պարտիզաց, այգեաց և ծառաւէտ պուրակաց: Ոչ յիշի և սա առ նախնիս և ոչ իսկ ցուցանէ հնութիւնս, այլ կարեւոր նորութիւն. քանզի ի գաղթականացն Հայոց որ ի բաժնից Պարսից և Թուրքաց՝ բնակեալ իբրեւ ի 125 տանց, բարգաւառեաց ջանիւք բանաստեղծ ազգայնոյ, և քաղաքական տեսչի գաւառիս՝ Շամսիեցի Պետրոսի Մատաթեան. սա յամի 1857 խնդրեաց, և ընկալեալ հրաման ի պետութենէ հասաատեաց տօնավաճառ ի գեղջն, (ի 23 մայիսի—4 յունիսի), հանդիսիւ օրհնեալ գհրապարակն կամ զվաճառատեղին. ուր և փոյթ ընդ փոյթ շինեցան կրպակք վաթսուն. յորս կամէրնա հաստաւ տել արուեստաւորս և վարժարան եւս, այլ ոչ յաղոցեցան իղձք նորա, և շինուածքն իսկ ամայացան. բայց կամք նորա և անուն պատուի ցարդ առ Մալիշկացիս և առ այլ ազգայինս գաւառիս, զորս ամենայնիւ հոգայր յանդորրու պահել ի հարստահարութենէ այլազգեաց: — Ի Հս. կուսէ գեղջն կայ աղբիւր երկաթահամ ջրոյ:

52. Ի Մալիշկայ մինչեւ ի գետն Արփայ առապար է երկիրն և թոհ և բուհ իմն լերանց և վիմաց. յորս յանուանէ նշանակին մերձ ի գիւղն, (մին ի հիւսիսոյ արեւելից) կարմիր սար կոչեցեալ հայերէն (6271՝ անգղ.), միւս մերձագոյն եւս իբր երկու մղոնաւ, Սոսրան քեւագաի?, և շուրջ զնոքք կարկառք և կոտորք ցնդեալք և ցրուեալք, որպէս թուի ի Թեփեհի-տեյիկ՝ (Մակագաթն) լեռնէ կամ յայլմէ, հրամուղ բունութեամբ արտադրեալ. յորոց սպառուածս ի միջի աւերակաց բնութեան և շինութեանց՝ առ գետեղերն թանգուզեալ դնի Մոզն աւան ամայացեալ, 10 տամբք Թաթարաց, քստմնափուշ յիշատական յաւերժացեալ ի 1150 ամաց հետէ. ուրանօր անման ի պատմութեան մերում, (գոզջիր հազիւ յընդհանրականն), գործեցաւ գործ ժպիրհ եղերան, ի կնոջէ միոջէ արբեցելոյ քինու և տուփանօք, խողխողմամբ գերազոյն հանճարեղի և վեմագունի բանասիրաց Հայոց՝ մեծի եպիսկոպոսին Սիւնեաց՝ Սսեփանոսի. զորոյ զոր

պիսութիւն դիպաց թողում պատմել անուանակցին և աստիճանակից յաջորդողի. «Հանգիպեալ սորա (յամի » 735 ի 21 յուլիսի) սակս հողեւոր հարկին՝ ի գաւառս » բարելից ի Չորն Եղեգեաց՝ յաւանն Մոզան. յորում » բնակեալ էր կին մի սեղեխ արբեալ յիմարութեան աւ » տիւն, զոր յառաջ քան զայն երիցս անգամ զգուշա » ցուցեալ էր զնա ըստ Տեառն հրամանի, և ոչ էր զղլա » ցեալ. վասն որոյ այն անգամ աստիկ ցասուցեալ Սըր » բոյն և վճիռ հատեալ մեծ պատուհասի՝ ելանէ ի գեղ » ջէն. և վասն սոթաժամուն զնայ յակն քաղցրահամ » աղբերն զոր Առագ ակն (կամ Առագական) կոչէին, զ » վանալ ի նմա. և հրամայէ հարու գիտարանն իւր. և ին » քըն ի վերայ ուսոյ միոյ դնէ զմահիճնս հանգստեան. » և ելեալ առանձինն աղսթէ ժամս յուրովս. և ննջէ ի » վերայ նորա: Իսկ կինն հերատուկ շարժեալ ի կատարի » բոցոյ ցանկութեանն, առնու ընդ իւր զհամանին իւր և » գայ սպանանել զՍուրբն, զի համարձակ լիցին ի գործն. » և մերձեալ ի ծառն՝ հանէ ի վեր զայրն, եղեալ զսու » բըն ի ձեռն՝ զի սպանցէ զՍուրբն: Ելեալ տանն տեսա » նէր զՍուրբն ննջեալ, և իբր զբոց ցուանայր շունչն ի » վեր, և ճախր առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ » մի կացեալ ի սնարոն հովանի ունէր նմա թեւօքն: Տե » սեալ զայն առնն՝ կարկեալ թուրանայր, և ամենայն յ » գուածքն խաղայր, շարժէր, դողայր մեծաւ սոսկմամբ. » և այնչափ ուշաբերէր՝ մինչ անդրէն իջնէր ի ծա » ուոյն, և պատմէր կնոջն: Ապա կրկին յորդորէր կինն, » և սաղրէր քաղցր բանիւք պոռնկութեան, և քաջալե » բեալ անդրէն յուղարկէր. և նորա հրաշափառագոյն » իմն տեսեալ տեսիլ քան զառաջինն, սաստկապէս եւս » թուրանայր, և անզգայ մարմնով իբր մեռեալ անկա » նէր ի ծառոյն: Ապա կինն՝ մինչ ետես յանհնարին » պատուհաս ըմբռնեալ զայրն, փոխանակ զղլման՝ ա » ուել եւս զչարեալ, և սրեալ ի բանսարկուէն՝ առեալ » զսուրն հողանեալ ելանէր ի ծառն. և հարեալ զսուրն ի » փողան Սրբոյն՝ հեղոյր զարիւնն ամբիծ ի վերայ փայտե » ղէն մահճին, որպէս զՏեառն իւրոյ ի վերայ փայտեղէն » գործարանին մահու): Վասն այսպիսի անպարտ մա » հուան և մեծի զրկման ազգիս և եկեղեցոյ, աւանդի քառասնօրեայ պատուհաս երերման և աւերման գա » ւառին, և ըլլաւ միոյ մարդկան ընկրուզանել յանդուռն » դրս: Բայց հաւասար անլուր և անհեղեղ ժարհութեա » նըն՝ արար կինն այն հերատուկ և հատուցումն ապաշ » խարութեան տարօրինակ. քանզի «անագան ուրեմն » եկեալ ի սգաւորութիւն, մերկացեալ զհանդերձն և » առեալ քարինս ծեծէր զկուրծան. և այնքան բաղխէր՝ » զի իջնէր վտակ արեանց. և մեծ ողբովք և դառն » աղաղակաւ ճչէր և խայտառակէր զչար գործն իւր: » Եւ եկեալ հանդէպ վանացն յարեւմուտս կոյս, յայն » կոյս ձորակին փորեալ զտեղին, և թաղեալ զանձն » մինչ յստինան՝ զամառն և զձմեռն տապակէզ և ցըր » տահար լինելով, վայէր և ողբայր զցայգ և զցերեկ, » և զվեղս իւր խոստովանէր: Յաղագս որոյ շարժեալ ի » գութ հայրապետին՝ խնդրէր ի Տեառնէ ողորմութիւն » նմա: Եւ յաւուր միում ի ժամ պատարագին ելանէր » գոյին ահեղ ի տապանէ սրբոյն. Թողեալ լիցին քեզ

» մեղքս քո, ով կին դու: Եւ լուեալ ամենեցուն փառս և  
 » գոհութիւն Ստուծոյ մեծի մարդասիրութեանն և ան  
 » յիշարբարբարութեանն մատուցանէին: Բայց կինն  
 » թէպէտ էառ զթողութիւնն, ոչ ել ի տեղւոյն. այլ կա-  
 » ցեալ ի նմին՝ վախճանեցաւ և թաղեցաւ յապաշխարու-  
 » թեան գրին իւր. և կայ հանդէպ վանացն»: — Յառաջ  
 նուա՛ն ամի եպիսկոպոսութեանն նահատակեալ Ստեփա-  
 նոսի՝ ի դէպ է թէ չէր տակաւին ծերացեալ. նոյնպէս և  
 հարազատն իւր արեամբ և երգահան շնչով քոյրն Սա-  
 Ռակաղուխտ, դեռ եւս հաւատալի է յանձաւս և յան-  
 ձուկս ծորոյն Գառնոյ, ընդ Հովանոցաւ մենասիրին Խոս-  
 րովիղիտոյ՝<sup>1</sup> նայապէս լինել մենացեալ, յաստուածա-  
 խոհութիւն և յաստուածօրհնութիւն. այլ ցանկալի էր  
 մեզ հաւաստել զայս, և մանաւանդ գտանել առ ի նմանէ  
 նուազ մի ողբերգական, զփափկագոյնն և զարտաուշ  
 նուագաց նորին՝ յայսպիսի ողբերգայր և յայսպիսի ողոր-  
 մամահ դէպս նուագեալ, յորում՝ կարէր հոլանել զքոզ  
 պարկեշտ դիմացն՝ թանձրագոյն եւս սգով վարագու-  
 ընդոց. նուազ՝ որ աներկրայապէս ոչ լինէր պակաս, եթէ  
 ոչ և աւելի՝ քան զերգս սիրայնոյն այնորիկ քիռ կամ  
 զուգակցի Գողթնեցւոյն Վահանայ: — Առաւել քան  
 զքսան գրաւորական գործք յիշատակին Ստեփանոսի,  
 շատք մեկնողականք, կարծեմ բոլորից Հին և Նոր կտա-  
 կարանաց, և թարգմանութիւնք Ս. Հարց, այլ և ար-  
 տաքին ինչ գրոց, յորոց սակաւ ինչ մասն եհաս կամ ծա-  
 նուցաւ մեզ: Բայց՝ ըստ բաղդի, գեր ի վերոյն բնաւից այ-  
 դոցիկ՝ սաւառնացեալ բարձրանայ անկորուստ և անկո-  
 ընչելի յեկեղեցւոյ մերում, անզուգական իրանոն Աւագ  
 Օրհնաբեանցն ի Յարութիւն Քրիստոսի. որք բաւական  
 էին ոչ նմա միայնոյ ի փառս, եթէ և չէր այլ ինչ մնա-  
 ցեալ յերկոց նորին, այլ և համօրէն ազգի նորին՝ եթէ  
 ջնջեալ բարձեալ էր բնաւ այլ դպրութիւն սորա: Ի նշուլից  
 մնացուածոյ այդմ՝ միակ գոհարի՝ մարթ էր իմաստասի-  
 ըել բանագիրաց, եթէ որպիսիս և որքանիս արժան էր  
 յուսալ բանաստեղծս յայնպիսեոյ ազգէ և ի լեզուէ. գո-  
 հար, որ արդ և ի միջի ոչ սակաւուց զերծելոց և յայտ-  
 նի բերոց դպրութեան մերոյ, մանաւանդ ի շարս սրբա-  
 զան երգոց, զերազանցօրէն փայլէ, և փայլեցէ՝ մինչեւ  
 երգարանեալն ի նմանէ Յարուցեալն ի մեռելոց՝ յա-  
 րուցցէ զննջեցեալն յուսով՝ յանմահութիւնս: — Յ՛ժէ  
 հրոտից ամոյ, որ է 23 յուլիսի, կարգեալ է ի Յայմաւու-  
 ըրա՝ Յիշատակ նմանելոյն Յովհ. Մկրտչի՝ նահատակի  
 արդարութեան և պարկեշտութեան, որ առաւել քան  
 զնա միով մասամբ. այնու՝ զի ոչ դահճին սրովն դաւա-  
 ճանեցաւ, այլ նորին իսկ աղճկին՝ սիսականն Հերովդիա-  
 դայ, որ անսարսափ կաքաւելով ընդ մահաբեր սանդուղ-  
 սըն ելանէր և ինքնին վճարէր զամենայն, զքէն և զե-  
 ղեռն. թերեւս ժպիրհ քան զղուստրն Հերովդիայ, զի  
 զնա՝ մայրն սրացոյց և թիւնացոյց, իսկ սա անձամբ զան-

ձըն. այլ և բարբառաստիկ յոյժ քան զնա, զի զղջացաւ.  
 և զանպարտ արիւն նորոյ նահատակին Ստեփանոսի  
 փոխանակ բողոքոյ, դարձոյց յողոր և ի բարեխօս. և ու-  
 ըով շարաշարն աղտեղացաւ, նովիմբ և լուացաւ և սրբե-  
 ցաւ: Արժան և իրաւացի էր արդ Սահակաղիտոյ կամ  
 որոյ և է հոգէկրի նորին և նրբազգած իսկուհւոյ, հա-  
 մանմանել օրիորդին այնմ կամ տիկնոջ Գողթան, և փո-  
 խել զերգան տխրականս և զղլականս՝ ի «հոգեւորս և  
 » ուրխարարս, յորդորականս և ներբողեանս», ի պան-  
 ծալիս յայս դիտապետ եկեղեցւոյ Սիւնեաց:

Որքան եղբրական և ողբերգելի դիպուած եղբորն,  
 նոյնքան սիրասարաս և նազելի աւանդեալն զքեռէն, որ  
 «ստացեալ զվարս կուսութեան և աւանձնացեալ ի ձո-  
 » թակին Գառնոյ՝ յայրի միով, անտանելի վարս ճգնու-  
 » թեան կրէր յանձին... Յոյժ հմուտ էր երաժշտական  
 » արհեստին. որ և ի ներքոյ վարագորի նստեալ ուսու-  
 » ցանէր զբազումս՝<sup>2</sup>». Թաքուցանելով յաչաց զշնորհս  
 կուսական երեսացն, զի մի զմայրեալքն յանուշութենէ  
 ձայնին՝ ցանկացին և ի տեսոյն յագնեալ:

Աւագական աղբիւրն յիշեալ յայսմ պատմութեան՝ է  
 վտակ փոքր, որ ի հարաւոյ Արկազան գեղջ անցանէ ընդ  
 արտարայս և ընդ աղօրիս Մալիչկայ և գայ ի Մոզն: Ի  
 հինն Մոզն երեւին բազում աւերակք յինուածոց, այլ ոչ  
 և մի կանգուն, և ոչ արձանագիրք յայտնեալք, բայց  
 խաչվէմք Զի (1471) և ԶԼԲ (1483) թուականօք: Յա-  
 րեւմտակողմն հին աւանին կայ նոր գիւղ համանուն բը-  
 նակեալ ի Թուրքաց:

Հովոթիս Մոզան պատշաճ համարիմ և զմիջոց երկրին՝  
 որ յաւանէ անտի մինչեւ ի լերինս անիրպետս ձորահով-  
 տին Գուտենւոյ, ուր զեզերր (աջկողմեան) Արփայի են  
 մանր զեօղք ինչ այլազգեաց. որոց զխաւոր երկը մզու-  
 նօք յեկից Մոզան՝ Փաշատիզ կոչեցեալ այժմ, անուշտ  
 է Փշաւոխ կամ Փշաւոխք հին Յուցակին. ուրկան և ա-  
 ւերակք ինչ, և բլրածեւ կուտակ մի մանր քարանց, զոր  
 ասեն դրամօ լինել ազահի ուրումն առն անառակի, քա-  
 րացեալս աստուածային ցամամբ:

Հուպ և զրեաթէ կից է Փշատեաց այլ գիւղ կամ հան-  
 զըրուան այլազգեաց Դայրայիւրա, և սակաւուք հեռի յԵՒ.  
 Հր. սորա Դաշ-աղբ (քարատակ): Եւ ի սմանէ սակա-  
 ւուք հեռի ընդ ԵՒ հանդէպ Հայիւրա գեղջ՝ որ ի ձախա-  
 կողմն կամ ի հարաւոյ գետոյն Արփայ, կամուրջ մի է  
 քայքայեալ յեցեալ ի քարածեռս, յորոյ վերայ սենեակք  
 պահապանաց փայտալէն յարկաւ և պատուհանօք, այլ  
 արդ անանց և ամայի: — Սահմանքն մինչեւ ի խառ-  
 նուրդ Գուտենւոյ՝ ծառաւէտք և խոտաւէտք են, և ի  
 ստորեւ յեզր գետոյն կան Հին և Նոր Սոյլան կամ Սայ-  
 շան գեօղք, մին աւերակ, միւսն շինեալ խնամով Բորե-  
 ցւոյ ուրումն Մանուկի: Յաւերակս հնոյն նշանաւոր է  
 խաչարձան մի սեւաքար (ստուգագրելի) արձանաւս:

1 Տես յԱյրարատ, յէջ 564-6  
 2 Նշանաւոր քան մի նմուտեան նորա արտաքնոցն և դասըն-  
 տիր մատենագրաց Հեղինաց, (չորս հաւանօրէն ի Կ. Պօլիս ըն-  
 թեռնոյր), է պատերազմն Դարեհի Ա ընդ Յունաց, զորոյ զերեսին  
 զօրավարսն յիշէ ուղիւ յանուանէ, «Չիբատին, զՏիսափեռնին  
 », և զՄարտոնիսն»: Զայս աւանդէ մեզ Վարդան նմու վարդա-

պետն ի Մեկնութեան մարգարէութեան Դանիելի:  
 3 Ստեփ. Օրբելեալ, ԱԱ:—Սմին նման աւանդեն իտալացիք  
 առնել և համազգւոյ իւրեանց նորիցլայ դատեր Անգրէի իրաւագի-  
 տի վարդապետողի ի Պատուիսն, ի կէս ԺԳ դարու. զի պօղեալ  
 նստեր առ աթոռով ձորն, և ի վաստակել նորա կամ ի տկարա-  
 նալ, ինքն քօզածածուկ և զեղածածուկ՝ բացատրէր զքանն:



**Ի Թուականին ՈՀԱ կանգնեցաւ Խաչս . Ով եղբարք զյոզնամեղս Առաքեալ յիշեցէք . զախմար գրիչս Շապուհ յիշէ ի Քրիստոս եւ Աստուած ըզմեզ յիշեսցէ :**

Գոյ և եկեղեցի փայտաշէն լքեալ ի Հայ բնակչացն , ընդ որոց և Թուրքք ի բաց մեկնեցան , վասն անհարթութեան տեղոյն :

Յետին գիւղ յայսմ կողման ընդ արեւելս , և մերձ ի Գայալու է Կեօկերձին . ընդ մէջ գեղջս և Սոյլանայ և յանուն յետնոյս կայ բերդ աւերակ ի քարաբլրի , 10 տամբք Թաթարաց :

ՅՅ. ՀՈՒՅՑ ԳՍԵԼԵՅՈՐՈՑ .— Ընդ մէջ ձորագետակին Մոզան և մեծի Ձորոյն Եղեգեաց կայ ձորահովիտ մի եւս փոքր , որոյ գետոյն ոչ նշանակի անուն , այլ պատշաճ հաւմարիմ կոչել յանուն Գայլեճորոյ կամ Սրկղօնից . զի ըստ բանից պատմին Սիւնեաց ( ի Գլ . ԺԹ ) , և ըստ վկայութեան նորոյ քննողի՝ յայս անուն կոչէին լերինքն , յորոց իջանեն վտակք գետակին , և գեօղ մի եւս յիշեալ ի գիրս , որ իցէ Թերեւս կոչեցեալն Սարկղողվք հին Յուցակին . քանզի և ըստ կարգի անուանցն մերձ վայրացս պատշաճի գօլ , ընդ մէջ Անգեղի , Եղեգեաց , Արկազանն և Մոզան .— Ձորք եւեթ գեօղք չէնք են արդ ի ձորահովիտս . առաջին ի հիւսիսակողմն ի կիցս վտակաց կամ աղբերաց՝ որովք գետակն յորանայ , Պիչլիչիչ - օլան , Թաթարաբնակ ՅՅ տամբք . ի հարաւոյ նորին են երեքին այլքն շինեալք ի Հայոց գաղթականաց ի Պարսկահայոց . որոց ա-

ռաջին ըստ ընթացից գետակին ի հիւսիսոյ ընդ հարաւ՝ է Պաշքենտ գիւղ , յընդարձակ մշակեալ հովասուն վայրի , տարածեալ յերկասին կողմանս ջրոյն , իբր 40 տամբք . սագալչէն եկեղեցեաւ ի վերայ հին ստուար սեանց . յորմունան ագուցեալ են խաչվէմք և քանդակք գտեալք առ տեղեան , որովք գուշակի եղեալ հին գիւղ , որում վկայ և ընդարձակ գերեզմանատեղիք . ի քանդակն գրեալ կան ի կիսարլորակի այս բանք .

**Յիսուս Քրիստոս Տէր Աստուած .  
Ողորմի Սարգաթանէ ? քահանային .  
† Թ . ՉԻՉ . Սուրբ ՅԲ . ՄԽ . ՎԴ .**

Յետին զոյգ տառից երեւին նշանակել Միսիրար վարդապետ . իսկ առաջինն՝ Յակովբ ?

Կիսով փարսախաւ ի Հր . վերին գեղջն կայ միջինն Օրբաքենտ , նոյնպէս վայիւուչ դրիւք , և իբր 50 տամբք . են և առ սովա մնացուածք հնութեան , աւերակ բրգաւոր շինուածոյ ի Մ . Հր . վարդանի բերդ կոչեցեալ . խաչվէմ մի Չկ Թուականաւ (1311) . և այլ խաչարձան ի բարձրաւանդակի՝ այսու գրութեամբ .

**Այս Խաչս Քրիստոսի արեամբ ներկած է . ԹՎ . Չ .**

Են առ նովաւ և տապանք արձանագրեալք , մին ԶՂԹ Թուականաւ (1550) , միւս հնագոյն՝ 1338 , որ է այս .

**ՉՁԷ . Այս է հանգիստ Գրիգորի :**

Եկեղեցի Օրթաքէնտի կոչի յանուն սրբոց Հրեշտակապետաց , որպէս ցուցանէ արձանագիր աւազանին .

**Շնորհաւք ամենազաւրին Աստուծոյ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արքոյ . Ի Թուոյ մարութեան Բանին Աստուծոյ ՌՈՂԲ , ի Հայկական տումարի ՌՃԽԱ շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն սրբոց Հրեշտակապետացն Գարրիէլի եւ Միքայէլի .**

**Կանգնեցաւ աւազանս Մկրտումեան հոգւոյ եւ Թուլութեան մեղաց , Վարդավառի երկուշաբաթի աւրն , յուլիս ամսոյ քսանին .**

Նոյնքան հեռի ի միջնոյն որքան սա յառաջնոյն՝ կայ Ստորին և մեծադոյն գիւղն Քեշիքենտ ( Երիցագիւղ ) , ի Թերակղզւոյ գետոցն Արփայի , Եղեգեաց և Սրկղօնից , իբր 100 տամբք , գրեաթէ նոյնաթիւ այգեօք , և յուով պտղատու և անպտուղ ծառաստանաւ , ունելով և հօսս ոչխարաց և փեթակա մեղուաց , ձեռագործս և արուեստաւորս , այլ և դատաւոր : Եկեղեցին նորոգ յարգարեալ

է ի վերայ հնոյն , յորմէ շման հին յիշատակք : Բնակիչքն համարին գտեղին կոչեցեալ ի հնումն Տանձաթաղ , Թերեւս Փոնձաթաղն յիշեալ յէջ 124 :

Վերագոյն քան գերեսին գեօղքս՝ յաղբերավայրս , յարեւելից լերանց անջրպետաց Ձորոյն Եղեգեաց և յարեւմտից Սրկղոնից լերանց , կայ ամայի հին գիւղն Պաշքենտ , ունելով ի հարաւոյ նոյնպէս ամայի և աւերակ բերդ համ-

անուն՝ ի միջոցի կրկին ուստոց լերանց: Այս գիւղ լքեալ՝  
 Թուի ինձ հինն Սրկղօնք կամ Սրկղունք և հնագոյնն  
 Սարկողովք. քանզի պատմիչն Սիւնեաց ստուգեալ յար.  
 ձանագրութեանց, ի գրոց և յաւանդութենէ, և ականա-  
 տես վայրացն, վիպէ այսպէս. յետ նահատակութեան  
 Վարդանանց՝ գունդ մի փախստէից Հայոց «կամէին ան-  
 » ցանել յամուր աշխարհն Արցախայ. որոց զկնի պնդեալ  
 » անիծեալ Աթախուդայն (կրակապաշտն)՝ չարահար  
 » զօրօքն Պարսից, և հասեալ ի գաւառամէջն Վայոց ձո-  
 » րոյ, մերձ ի բլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վա-  
 » սըն ամրութեան, ի գետամիջին Եղեգեաց եւ Մոզան,  
 » և մարտուցեալ եղին արեան ձապաղիս. և կոտորեցին  
 » զբազումս և զեղեցիկս՝ որ էին յազատ տուձէ Հայոց,  
 » վասն անուանն Քրիստոսի. յորոց վերայ եղեն նշանք  
 » զարմանալիք ի վերուստ»: Յետ կոտորածի այլոց եւս  
 նահատակաց, «զառաջին Սուրբն՝ սր կատարեցան  
 » առ ըլլաւն (Պաշտէնտ բերդի) ի ժամուն ամբոփեցին  
 » ոմանք քրիստոնեայք. և յայնժամ կաթողիկոսն երա-  
 » նելին Գիւլու լուեալ՝ հրամայէր իննել վկայարան մեծ ի  
 » վերայ Սրբոցն. և ժողովեալ զոսկերսն նոցա ի վկայա-  
 » րանն, ապա ձեռն ի գործ արկեալ Յրեւ և Շամիրէտ  
 » և Արշէն երէց և Արղիու, հիմն արկին սրբոյ կաթո-  
 » ղիկէին, յիննորդոք ամի Գիւտայ երանելոյ Հայոց կա-  
 » թողիկոսի, յամարան ամսամտին որ օր հինգ էր ամսոյն.  
 » և կատարեալ զնա մեծածախ գանձիք՝ կանգնեցին ճե-  
 » մարան իմն երկնանման հրաշայարդար շինուածովք եր-  
 » կազմեթս և եռախորանս, և յերկուց կողմանէ գա-  
 » լիթս և սրահակս, վերնատունս սեամբք և սքանչելի  
 » յօրինուածովք շինեալ: Եւ վայրն ամենայն ի մեծ գե-  
 » տոյն մինչ ի վեր ի յեանկողմն որ Սրկղօնք կոչի, ըն-  
 » ծայեցաւ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն պաշտօ-  
 » նէիցն: Իսկ ի կատարման գործոյն գան հրանելի կա-  
 » թողիկոսն Գիւտ և Անանիա (!) Սիւնեաց եպիսկոպոս,  
 » և բազմամբոխ ժողովով փոխեն ի հանգիստ զՍուրբն,  
 » և առնեն նաւակատիս սուրբ եկեղեցւոյն ութ օր, ի  
 » փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ սրհնելոյն յաւիտեա-  
 » նըս: Բայց այժմ յետ աւերման տեղոյն՝ եղեւ շինա-  
 » նիստ գեղջկաց, և կոչեցաւ տեղին Խստորալէզ: Եւ  
 » ահա զայս ամենայն ծանեաք յիւրոց արձանագրու-  
 » թեանցն, և այլն՝ էր որ ի գրոց և էր որ ի տեղեացն և  
 » ի վկայիցն և յանուանցն և ի հաւաստի աւանդու-  
 » թեանց հնոցն ծանեաք, և տեղեկացեալ ամենայնի ըս-  
 » տուգիւ՝ աւանդեցաք ձեզ»: — Արդ ըստ այսց բանից  
 Թուի ինձ՝ Թէ բլուրն այն մեծամեծ վիմօք պատեալ  
 և ամրացեալ՝ այժմեան աւերակն է Պաշտէնտ բերդի.  
 և նոյն դարձեալ Բոլարաբերդ կոչեցեալ երբեմն, յոր  
 անուն և Անապատ մի, այսինքն մենաստան՝ յիշի յե-

լըս կոյս ԺԵ դարու, յերիցուէ միոյ Դաւիթ անուն՝,  
 որ ասէ. «Ի յերկիրս Վայիձորոյ, ի գեղոս որ կոչի Սըրկ-  
 » ղունս, ընդ հովանեաւ Ս. Գեորգի և Ս. Յակոբի, և  
 » այլ սուրբ Նշանացս՝ որ աստ կան. առ ոսոս արիա-  
 » ջան և բանիրուն Աւագ տէր վարդապետի հօրեղբօր  
 » մերոյ, և եղբարցս իմոց, Տէր Զարարիայ արեղային և  
 » Տէր Արաւան ծաղկողին՝ որ է փարթամ շնորհօք ի լին  
 » և Ակոր միակեցին, և Նահապետ արեղային, և հօրն  
 » իմ Տէրտէր միակեցին, և Աղաձան և Ղուկաս և Արա-  
 » նաս և Աղաչրէկ դպրացս, որք են ի յԱնապատն Բո-  
 » լորաբերդոյ, առ դուռն Ս. Աստուածածինն և Ս. Կա-  
 » ռապետին և Կիչրդի սուրբ աշոյն... և Տէր Եզեկիէլ ըն-  
 » կերակցին իմոյ, և այլ եղբարցս... (ստացող գրոցն է)  
 » գովեան յամենայն լեզուաց, սուրբ և ընտիր, ժրտան  
 » և միշտ ի պաշտօն, գրքասէր և հրեշտականման Տէր  
 » Սարգիս ճգնաւոր և մահչապին, կրօնաւոր և արե-  
 » ղայն, խայրաբարձ և վակասաւորն», և այլն: Յետ  
 տան ամի նոյն Դաւիթ գրիչ յայլ զիրս գովէ զնոյն Ա-  
 ւագ տէր վարդապետ զհօրեղբայր իւր՝ քրտնաջան, արի  
 և քաջ կոչելով, «ի դառն և ի նեղ ժամանակի, զոր նե-  
 » զեալ եմք յանսրինաց և յանիրաւ պահանջողաց». և  
 զստացող գրոցն կոչէ Աղա Բեկտօղմիչ, զկինն՝ Գիշաւա-  
 տատ, զօրդիան սրբանեալ տէր Սիմօն, և այլն:

54. Ի հարաւոյ Պաշտէնտ բերդի և ի հիւսիսոյ Պիւլ-  
 պիւլ-օրան գեղջ՝ մղոնաւ շափ հեռի յերկողուն եւս, յսն-  
 ձուկ միջոցի երկուց վտակաց գետակին՝ նշանակի ամայի  
 զեղատեղի փոյնասար կամ փոյնիսարն անուն, որ Թուի  
 նշանակել զՔայլածոր կամ Քայլիծոր կամ Քայլածոր մե-  
 ծահուչակ մենաստան ի ԺԳ-Դ դարս, յաճախ եւս գրեալ  
 Գլածոր: Զարմանաց է՝ զի պատմիչն Սիւնեաց ոչ յիշ-  
 զայս վանս, թերեւս զի նոր էր հաստատեալ. այլ աշ-  
 խարհագիրն Վարդան ընդ վանորայս Վայոց ձորոյ դա-  
 սէ և «զՔայլածոր, ուր Վարժարանն է, և աթոռ սուրբ  
 » Վարդապետաց մերոց». իսկ բառակարգ այխարհագի-  
 ընն ճշգրտագոյն ևս ասէ. «Քայլածորն՝ ի սահմանս Ե-  
 » ղեգեցձորոյ»: Բառալք քան զայդ երեւի ունել այլ ա-  
 նուն, քանզի ի վարս Միսիթարայ Սանեցւոյ ասի. «Ի  
 » վանս՝ որ այժմ ասի Գլածոր». իսկ ոմն ի յիշատակա-  
 գրաց (Յովհաննէս) յայտնէ զառաջին անունն, զրեւով  
 յամի 1291 «ի մենաստանս՝ որ կոչի Աղբերց վանս և  
 » մականուն Գլածոր». այլ ոք՝ իբր տասն ամաւ երիցա-  
 գոյն առանց մականուանդ նոյնպէս կոչէ, յաւելու և ըզ-  
 մերձաւորուցիւնն ի հանգստարան Ստ. Սիւնեցւոյ.

«Եկեալ յայս գաւառի  
 Որում անուն Վայձոր կոչի,  
 Հուպ ի Շիրիմիսն Սիւնեցի,  
 Ի Աղբերց վանս մենաստանի»:

1 Որոյ ձեռագիրք՝ ձառնարկի մի զրեւել յամի 1478 պահի  
 յԷջմիածին, և Շարահան մի եւս (1487), զոր տեսի ի Լոնտոն առ  
 սեպի միոյ:

2 Յիշէ ապա և զժնողս Սարգսի՝ զԶ-տէր և Գ-տէրէլ, զէզ-  
 բարան՝ Էթիւթ, Զ-տէի, Ա-դ-հիւնի, Ա-Էրիտ, և Գ-տէր սարկա-  
 ւագ և Սրիւտան. և զհոգեւոր եղբայր նորա զՄիւրժի արեղայ և  
 զԿարօղիտ, և զհոգեւոր չայր զՇ-տէի և զԳիւլուտ քոյրն. և զԷր  
 Էսկ չայր զՏէրտէր, զմայրն Գ-նոց, զեղբայրն Մ-տէրոյ, զկին  
 Էւր Փ-տիւտիւն, զորդիան Ալի-տան և Յ-վհաննի. — Գրէ ուրեք

յաւուր աւագ հինգշաբաթի 1478 ամին, ի խիստ ցուրտ տեղուլ և  
 ըր տարւոլ:

«Ի զանութեան նոր փաթշառոյս  
 Խուլե Սո-լիւն նստեալ սյժմոյս,  
 Ահաբեկեալ ի Վրացոյս», և այլն:

Այլուր յիշէ զՊարոն Գ-տէրան, և ասէ. «որ մեզ նոր կարան  
 » գինի էր յուղարկել մին գաւ.»:

3 Ընդօրինակող գրոց Մեկնութեան Յովհաննու աւետարանի:

Արգարեւ ի միջի երկց և շորից աղբերաց կամ վտակաց զետեղեալ է շէնն, որք սուգ ստորեւ միակցին սոս Պիւլ պիւլ-օւան գիւղիւ։ Ոչ ժամանակ շինութեան վանացս է յայտ և ոչ առաջին և ոչ վերջին դէպք. այլ այն՝ զի յետ կիսոյ ԺԳ դարու ցկէս ԺԳՒՅ հռչակեալ էր քան զամեւնայն վանորայս ժամանակին՝ բարգաւաճանօք դպրութեան, մանաւանդ յ'երկար առաջնորդութեան Եսայեայ վարդապետի Նշեցւոյ (1284—1338), որ յաջորդեացն զՆերսէս Մշեցի (+1284). զայն որ յոյժ հմուտ ասի լեզուի, և ժամակարգութեան Յունաց, եկեալ այսր և աշակերտեալ վարդանայ (առուկերտի վանական վարդապետին) « մեծ և հոգեւոր վարդապետի... և յետ » փոխման նորա յաստեացս՝ նստաւ յաթոռ նորին, և լուսափայլեաց զազգս Հայոց ուսմամբ գրոց. և հասեալ

վ. Արճիշեցի Ոսպնակերն, և Մատթէոս ոմն վարդապետ Կիլիկեցի, գրիչ վերոյիշեալ չափարան տողիցըն, որ և յաւելու յետ այնոցիկ.

« Թերկրորդ յԱրճերս պանծարի.  
Առ ոտըս հօր մեր Ներսէսի  
Եւ բարունեաց վարժապետի.  
Հասեալ ի քայր իմաստ բանի...  
Ի գիշերի և տուրնՆնի  
Աստուածային բանիւ բերկրի »։

Նոյն և արձակ բանիւ յիշէ զնա իբրեւ աղխարհածանօթի ժամանակին՝ « վարժապետ, և խրատիչ սուրբ վարդապետն Ներսէս. որոյ հրամանաւ » ընդօրինակեաց անդ յամի 1283 զլամբրունեցւոյ Մեկնութիւն Յայտնութեան և զՀանգստեանն Յովհաննու։ — Այլ գերազանցեաց զՆերսիսի աշակերտ նորին և յաջորդ Եսայի, որ իբրեւ յիսունեւհինգ ամ<sup>3</sup> եկաց առաջնորդ և վարդապետ, մանաւանդ թէ վարդապետաց վարդապետ. քանզի ասեն երեքհարիւր և վաթսուն սպասաւորաց բանի տուեալ գաւազան վարդապետութեան. յորս վեհ բնաւից՝ և քան զնոյն ինքն Եսայի (ըստ մնացածոյ գրուածոց երկոցուն եւս) է Եզնկացին Յովհաննէս, որ զի և տիգօ ոչ կրօսեր քան զԵսայի երեւի գոյ և վաղու իսկ յայտնեալ բանասիրութեամբ, կամ զիւր յոյժ մեծ ուսումնասիրութիւնն յայտնէ կրկին աշակերտութեամբն (գէթ լսողութեամբ), և կամ զարդարեւ մեծ արժանաւորութիւնն Եսայեայ, զոր ոչ կարեմք հաւաստել ի գրուածոցն առ մեզ հասելոց. որպիսիք են Մեկնութիւն Եզնկիելի մարգարէի, Քերականոսիան, Բան վասն կարգաց եկեղեցւոյ և Ժամասացոտեան, ի ինչորոյ վարդապետացն Միւնեաց, Լուծմուսի յԵսայեայ Մարգարէութեան, շատք ինչ մեկնողականք, որպէս, ի բանն՝ Սիրեցից զքեզ, Տէր զօրութիւն իմ, Դաւանոսիանք հաւատոյ, և այլն. Յորս թիւ եւս գլխաւոր է Մեկնութիւն Քերականութեան, կամ որպէս ինքնին իսկ գրեալ է իւրով ձեռամբ վերլուծութիւն. և գրածն է զայս օրինակ. (Թիւ 36)։ — Վերնագիրդ միայն իւր իսկական ձեռնագիր է, և սրբազրութիւնքն կամ եղծածքն կարմրաղեղով՝ յառաջնումս աստ իջի գրոցն, յորում կամեցեալ է նախ եօթն պատճառս կամ ինչորս քննել զՔերականութենէ, և ապա ի շորս ամփոփեալ<sup>2</sup>. և այսպէս (չորս) գտանի յայլ օրինակս. և նշանաւոր է մերս այս՝ իբրեւ սկիզբնագիր, յորում գոն պէտպէս ուղղագրութիւնք և յաւելուածք ի լուսանցս գրեալք, որք յետոյ միակետ գրեալ են ի մաքուր օրինակս, յորոց գտանի և առ մեզ հնագոյն մի իսկ ի սմա՝ որ սկզբնագիր կամ մի յառաջին թելադրելոցն է, պակասէ առաջին տառն ի, որ յայտ է թէ թողեալ էր վասն զարդագրութեան. մասն մի գրոցն և ուղղագրութիւնքն Եսայեայ ձեռնին են, և մասն՝ այլոց յաւարտ իջի ուրեք դարձեալ ինքնին՝ գրեալ է Եսայի յիշեցի։ — Չատ յայսցանէ են Եսայեայ գրեալ և

Ի Թիւ : շէն : Կր եցաւ  
Մեկնութի կարծողեկէն  
ճեռամբ բաւմամեղ և պոստ  
աւուս և կրուս անորի յոհաւ  
Խի աւշէ քրտի բարեի. Ի մաս  
տաւուս որ կուրի աղբերց վաւուս  
և մակաւուսն զլա ճոր լնչ հոյ  
աւեաւս արբոյն առաւն ասի. Ի վա  
րճիւս պէտոս թիւս գիտնեալ ասն  
և արդիւն ական մեծ հուետո  
րի յեւսս. զարշար հէսցեզ  
ամեպտր լնչ քրեպն ասուրս  
և արգաղաւ շէն զամեւն ասն  
բք հասն գիպիք այսմ մաստե  
ի Նշեցւոյ թիւն իւրեւ իւրեւ իմ

35. Մեկն. կարողիկեայց գրեալ ի Գայեճոր.

» բարիօք ծերութեան՝ հանգեալ ի Քրիստոս ի նոյն վանս  
» Գլաճորոյս։ Թերեւս ընդ իւր բերեալ էր այսր զաշակերտ իւր Եսայի, որպէս յառաջն երբեմն խոյս տալով յասպատակութենէ Մարաց՝ ի կողմանց Տարսնոյ տաւրեալ էր զնա ի գաւառն Քաջբերունեաց, փոխադրելով ա ի Ս. ուխտէն Ղազարու, զոր և (ուր) ԺԵ ամ անդ էր » փոխեալ Դասատուն վարդապետացն մերոց», ըստ Յայտնաւորաց։ Ներսեսի աշակերտեցան Մխիթար վ. կերմանեցի կամ Սամսեցի<sup>1</sup> (+ 1337), Յովհաննէս

1 Արժան է գիտեալ, զի գլխաւոր վարդապետք վանացս՝ Եսայի, Ներսէս, Մխիթար, Յովհաննէս, և այլն, Տարսնեցիք և Սամսեցիք են. և ի զէպ է կարծել զնոսին իսկ ի մտողս վանացն և հռչակեալ վարժարանին, պատճառաւ իւրիք ի հայրենեաց իւրեանց ելեալ և պանդխտեալ ի Զորս յայս։

2 Ամփոփին Միւնաս զվախճան Եսայեայ գնէ յամի 1542, որով յիսուն և ինն ամբ լինին վարդապետութեան, ոչլ սովորաբար ասի յիսուն ամ։

3 Ի պարզութիւն բանիցս առաջի տունեմք զնախագրեալն և զուղղագրեալն յետոյ, որպէս գտանի յայլ օրինակս (տ. Թիւ 36)։

Թուրք կրօնականք առ այլեայլ անձինս ի շատագուրութիւն ազգային ծիսից և աւանդութեանց և ընդդէմ չաւտագուլաց լատին եկեղեցւոյ<sup>1</sup> . Թէպէտ ի յետին ամս կենացն և ի հաստատել կարգի Միաբանողացն ի մերձաւոր սահմանս անդ (յԵրնջակ), լուեալ ստուգիւ զվարդապետութիւն նոցա յիւրոյ իսկ աշակերտէն ի Յովհ. Քանեցւոյ (որ գլուխ և առաջնորդ եղեւ նոցին), երեւի և ինքն ոչ անհաւան մնացեալ. նա և յառաջ քան զայն, յամի 1325 Թորոս ոմն գրիչ ընդօրինակէր անդ «մտ ի» մեծ վարժապետին Եսայի», զաստուածարանական գիրքս Թովմայի Ագուինացւոյ, զթարգմանեալն երկու ա-

մօք յառաջ ի Յ. Եզնկացւոյ. և հակառակորդ իսկ նորին հետեւողաց՝ Մխիթար Ապարանեցի վկայէ բազում անգամ, զի և Եսայի Զարթոնաւոր էր, այսինքն կրէր զկրնկուղ կամ զգեցեալ գձեւ սքեմի լատին միանձանց— Թէպէտ չէր եպիսկոպոս՝ այլ վեհագոյն եւս վարկ և պատեունէր Եսայի. և կաթողիկոսունք ժամանակին՝ (յորում վէճ և խնդիր էր համաձայնութեան ընդ գահուն Հռովմայ) առ սա եւս ուղղէին զըջարեական կոնդակս, որպէս Գրիգոր Անաւարդեցին, և ի յետին ամսն (1333) Յակովբ Բ զովութեամբ՝ Մեծ վարդապետ<sup>2</sup> կոչէ զնա՝ Նոյն ինքն անձնապանծ մետրապօլիտն և պատմիչն Սիւնեաց՝ ի պա-

*Քեռնականն— Թէն վերլն— Ծո— Թի,*  
*Բանաստեղծն. Տեւամբ Եսայ*  
*Եւ յա— աքեալ: ...*

*Տեւումու— Թեւնէ հոգւոյն հն*  
*դերձեալ եմք քուանհարկանել*  
*առաւ ջիկատրոզու— Թեանս; նախառ*  
*աւ նեղ արձանէ. Թեզինչէ քերական*  
*նա— Թեանս, Եւ Երրորդ*  
*առ նե անքանք քերականու— Թեան: Ե*  
*կորոզ Թե վասն էր քերականութեան*  
*կոչէ: Երրորդ ոչք եղենգաւարդ*  
*այսմ արուեստի: Եւ Երրորդ*  
*հետս գործուսա՝ անկարգ Եւ Երրորդ*  
*և կատարումն: Եւ Երրորդ և Թե*  
*էր անխաղա— փոյ Թ յան ճին կալեալ*  
*եղենվասնք քերականութեան: Եւ Երրորդ*

«ի ձեռնառութենէ Հոգւոյն հանդերձեալ եմք բուն հարկանել առաջիկա իրողութեանս Նախ՝ ուսանել արժան է Թէ զինչ է քերականութիւն, և երկրորդ՝ կամ զինչ յայտնէ անուն քերականութեան: Երրորդ, Թէ վասն էր քերականութիւն կոչի: Զորրորդ, ոչք եղեն գտաւղք այսմ արուեստի: Հինգերորդ, արհեստ գործ սա, ունելով ենթակա և կատարումն: Վեցերորդ՝ եթէ էր աղագաւ՝ փոյթ յանձին կալեալ եղեն վասն քերականութեանս: Եւ Երրորդ» . . (չյաւելուին յետ այսորիկ, այլ սկիզբն առնէ մեկնութեան, Եւ արդ նախ եկեցուք, և այլն:

Իսկ ուղղագրեալ օրինակք ունին այսպէս .

«ի ձեռնառութենէ Հոգւոյն հանդերձեալ եմք բուն հարկանել առաջիկա իրողութեանս. նախ՝ ուսանել արժան է Թէ զինչ է քերականութիւն, կամ զինչ յայտնէ անուն քերականութեան. և վասն էր գրեալք քերակ կոչի: Երրորդ՝ ոչք եղեն գտաւղք այսմ արուեստի: Զորրորդ՝ եթէ էր աղագաւ փոյթ յանձին կալեալ եղեն վասն քերականութեան: Եւ արդ նախ եկեցուք» և այլն:

36. Նախագիր քերականութեան Եսայեայ Նեցուց:

տասխանի թղթին և ընդունելութեան Մեկնութեան Եզնկեցիի, զոր ըստ խնդրոյ իւրոյ արար Եսայի, գրէ մեծամեծ դրուատիւք, խանդաղատանօք և խոնարհու-

թեամբ<sup>3</sup>. յայտ է Թէ ոչ վասն գիտութեանն միայն՝ այլ և վասն վարուցն ազնուութեան և ծայրացեալ հասակին պատկառելի և սիրելի էր ամենեցուն. զոր և յայտ առնէ

1 Այսպիսիք են, Թուրքն առ Պր. Հիւսթիոս Տերն կոտիկոսոյ (Պատմիչն), յամի 1306. — Առ Գրիգոր Է Անաւարդեցի, 1307. — Վասն խնդրոյ Զրախանութեան ի բաժակն սուրբ, 1309. — Առ Տէր Մարտիոս յետ զաւլս Բարթողիմեայ Քարոզի, 1528. — Առ Վարդապետս Սիւնեաց վասն կարգաց եկեղեցւոյ, և այլն: — Առ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս ընծայական Մեկնութեան Եզնկեցիի, 1305:

2 «Մեծ վարդապետս Եսայի ի Գայլէձորն իւր ամենայն աշակերտք ընտրելովք կրեալ է զԹեանն» . . . «Ընկալան ի Սիւս և ի Գայլէձորն և ի յայլ տեղիս՝ Լաբրան»:

3 «գատասխամի շնորհակալութեամ Տեառն Ստեփանոսի առ վարդապետն Եսայի .

«Յիսուսական համալսարանացն պետ և ձեր իմաստից, պուտս պարտ պօղեմն? Հեմարտնին, հեմեալ նոխապետ առ բոցեղէն սասարիզան, ուր յանախն ի գիտութիւն և հեղմունքն իմաստնութեան. ո՛վ զպրապետ անհառ զպրոցացն, և համակ-գիւտան անհասական խորոցն, վարդապետ Եսայի. ի նուստս Ստեփանոս սէ ծերականգոյց գազաթամբ ողջոյն և գիտութիւն: Զի նուստս առ մեզ Թուղթ ձեր բերկրալից ցնծութեամբ, հանդերձ երկնաուսք պարզեցն, զոր ուրկանաւ մտացչ հանեալ ի խորոց անտի













Եւ Եւ Եւ Եւ Եւ Եւ  
Եւ Եւ Եւ Եւ



Եւ Եւ Եւ Եւ Եւ Եւ



սուղ բանիւ ոմն ի գրչաց յամի 1338. « ի վարժապետու-  
 » թեան Եսայեայ՝ առն հեզոյ և խաղաղարարիս . և հան-  
 » զոյն սլոցոց գրողաց՝ Բարսեղացեալ կոչէ՜ : Միւս աչա-  
 » կերս Մխիթար Եղնկացի՝ ասէ երթեալ յամի 1314, « Ի  
 » մայրն խնատից Գլաձոր առ ոսոս Եսայեայ վարդապե-  
 » տի ի վարժունն աստուածիմաստ գրոց » : Այլք ոմանք  
 ի կարգել զթուական գրութեան իւրեանց՝ ընդ թագա-  
 » ւորի և կաթողիկոսի ժամանակին յիշեն և զվարդապե-  
 » տութիւն Եսայեայ . յորոց մի ոմն ընդ նմին և զայլ որ  
 » յիշէ, յամի 1331. « Ի վարժապետութեան սուրբ և բար-  
 » երջանիկ քաջ հոգևորաց Հայոց երկուց ամուլաց ճըշ-  
 » մարիտ հաւատոց մերոց, Գլաւթի և Եսայեայ . ի հրո-  
 » շակաւոր և սուրբ մենաստան համայնարանիս Գլաւձո-  
 » րոյ » : Ամբ յառաջ (Չկէ, 1318) Յակոբ Թագորցի  
 ընդօրինակէր զգիրս Մարդակազմութեան Երևասցւոյն  
 զայս ձեւ օրինակի (տես յէջ 135), « Ի հրեշտակաբնակ մե-

» ըր Ստուծոյ և Հոգւոյն ընգունողի . խոնկեմ, հեզ, և  
 » արի հոգոյն . յորում կամք դեգերեալ ի դրունս իմաս-  
 » տից սորա՝ յազոռնք աշակերտեալ բանին ճմարտու-  
 » թեան . զոր լուսաւորեալ բացայայտէ զբազում խրթին  
 » և դժուարաշատանելի և անյայտ իմաստս ծածկեալս,  
 » զոր ի գիրս Հիւն և Նոր Կտակարանաց և վարդապետա-  
 » կան տառից, որ ի բազում ժամանակաց խցեալ ի հա-  
 » րանց նախնականաց . զոր մաղթեմ Աստուծոյ՝ զի տա-  
 » ցէ զսա պարագայց ամբք և խաղաղական կենք ընդ  
 » երկայն աւուրս լուսատու և համառօտիչ բանին նուա-  
 » զեալս սեպի հայկեան և տանս Թորգոմայ . և յետ ելի-  
 » ցըս աստեացս մասնակից արացէ սրբոց լուսաւորչացն  
 » և աստուածաբա՛ վարդապետացն, Բարսղի, Աստուա-  
 » ծարանին, Երևսեայ և Սրբոյն Մեսրոպայ » : Այս իսկ  
 թուի յատուկ շնորհ բազմադրուատ վարդապետին, մեկ-  
 » նէ զգիրս դժուարիմացս, յոր թերեւս առաւել ծախեաց  
 զկիսադարեան ժամանակ վարդապետութեանն՝ քան ի  
 » գրել հեղինակօրէն : Եւսմանակակից սին գրիչ (1317)  
 Սարգիս արքայ և սպասաւոր բանի՝ ի հաւաքեալ գիրս  
 » գործոց Երևասցւոյն, Թղթոց Կլայեցւոյն և այլ բազում  
 բանից, գերարուն վարդապետ իւր կոչէ զԵսայի . և այլուր  
 » մեծ վարդապետ և անյարդ հոգևոր : Ծանուցանէ սա  
 յայնժամ զգաւառն Վայոց ձոր՝ լինել ընդ իխանու-  
 » թեամբ « Ամիր Հասանայ, որդւոյ Իսաչէ, որդոյ Ամիր  
 » Հասանայ, որդւոյ Պոսոյ » . և զատ յայլոց՝ աղաչէ յի-  
 » շել, « զՊարոն Լոյսն և զաստուածապարգեւ զաւակն  
 » իւր զդեռարոյս ծաղիկն և զգեղեցկատեսիլ մանուկն  
 » զՄիրմիրն, զի արացէ Տէր ընդ երկայն աւուրս ան-  
 » սասան և անսայթաք կենք ի վերայ երկրի » : Կարեւոր  
 եւս յիշատակս յայտնեն յետագայ բանքս, որովք ա-  
 » զաչէ « յիշել զհոգեւոր ծնողսն մեր՝ զՄեծ Տիկին և  
 » զՄարթա, զԼիւսի, զՀովսեփէ . զգեղայրն մեր ըզ-  
 » Գրիգորէս և զամուսին իւր զՄամախաթուն, և զԺնու  
 » զըս իւրեանց . և զմարմնաւոր ծնողսն մեր, և զարեամբ  
 » ներկեալ եղբայրն մեր Չուստն, որ տարտժամ հասաւ  
 » կի սպանաւ յանօրինաց, և խառնեցաւ ընդ մարտիրո-  
 » սացն » : Գրիգորէսի և կնոջն նկարեալ է պատկեր  
 հանդէպ պատկերի Տիրամարն, որոց նկարիչ իցէ թերեւս  
 » ներքոյ – գրեալն Յովնան . բայց զարդազրոզ գրոցն է  
 Թորոս Տարոնացի Ծաղկող, որոյ տեսցի պատճէն մի  
 (Թիւ 42), ի բնագրին կարմրադեղով գծեալ :

**Փ** արք երանգի եւս Լաւոյանութեւն,  
 որարժան ացոց զանար ժանս . հա  
 » ան և ի վերջին գիծ տառիս պիտոյի  
 » ց . Ի Գործակարանիս հոյկ ազեանստուն  
 » րի . Շի Բ . Ի Գործուն Կերպեաց Տեղիս,  
 » յորում ի ստա գոցն տէր էր ըրժ ալ աս  
 » ետիցն ի վերայ քրիստ ուն էից ևս ստա  
 » և ի վերջին Լաւոյանութեւն զարքա  
 » զուստ քան եւս Լաւոյանութեւն անպի  
 » տանաց սոյ ինչ . յորում զանցս ազրտիտ ից  
 » ն ու կար աղից մի բաւ միջոց է ընդ գործակ  
 » անել . Լաւոյանութեւն ստա Բարսեղացի  
 » ցէ Վայոց ձոր . ի վանս զաւժօր . ընդ հոյս  
 » աւաթ նախապիկայիս . ի վարժապետութեւն  
 » եւ այնոյ ասն հեղոյ և խաղաղարարի . զի  
 » ամբ յորն ասեղ ժամայիս զաննիս .

Գ Լ Ե

37. Գիրք Պիտոյից գրեալ ի Գայնեձոր, յամի 1378.

» նաստանին որ կոչի Գլաւձոր . զոր համարձակիմ զսա կո  
 » չել Երկրորդ Արեւիք և մայրաքաղաք ամենայն խնատից  
 » . . . ի վարժապետութեանս քաջ հոգևորի և ամենիմաստ  
 » ֆիլիսոսոֆայի Երանեծին Եսայեայ, ճմարիտ պատկե-

» մարգարիտ մի լուսաւոր, որոյ ճանաչել սպիտակաթոյր փայլմանն՝  
 » զարմանազեղ մեծազանց հրային խալտեն զտեսողացն զգա-  
 » յարանս . և կոռուցիք ի հիւսուած պսակի տերունեան զազա-  
 » թեան : Եւ զայս հողալով լցեր զփափազ և զիղձ իմ ի բազում  
 » ամաց . բայց չքաւոր աղքատութեանս իմոյ անհետրին բարեկեց  
 » տարակուսանս . զի ոչ ունիմ զհիշու սակի արիտուր փոխարի-  
 » նին, զոր հաւատամ բաւել բոլոր զլոյս եզփականիս . բայց անհե-  
 » ծին և զանծիրելիին պարտիմ փոխազարձել, և բանին՝ զբանե-  
 » զէն զանամանս, Թեզէս ոչ կշուի . և զայս՝ յորժամ տեսոյ կան-  
 » զիղեցոյց : Այլ ծանիր, ո՞վ պայսազատ ճետ արփեալան սե-  
 » րին, զի Թակարդեալ ամենուտ բոլորի գրուեցիք զիս անհե-  
 » ղական սիրով ի կեանս և ի մահ . զոր ոչ խորութիւն և ոչ բար-  
 » ձրութիւն, ոչ որ կանս և ոչ կանգերձեալն, ոչ հուր և սուր՝ ոչ  
 » կարեն մեկնել զմեզ ի սիրոյ սյաթ Աստուծոյ որ ի Բրիտանոս Յե-  
 » սուս ի Տէր մեր : Եւ արդ մաժուցանել զերեսս ի մայրն հասա-  
 » րակաց, նախ Հոգւոյն Աստուծոյ երկրպագիմ մեծաւ զոնու-

» Թեամբ, և ապա հարուստ մեծաննութեան ձեռ . և համբուրեմ  
 » զգարչապարզ՝ որ դէմ եղեալ ուղղեցաւ առ վերին համապար-  
 » նօրութիւն ընդ հետս տիրանորդ ուսին : Եւ զայս պարգեւ տա-  
 » րեալ ընծայեցուցանեմ մեր քո լուսոյ սրբոյ կաթողիկէի : Ե ի  
 » գիտաց ձեռ շնորհաւորելով զնեւ յարկեղ նորին, զանձեւով զսա  
 » զանձ անհիշու ի զանձարան աստուածութեան : Չոր և զբարձրա-  
 » զոյն պատիւն և զհազարապատիկ արիտուրն ընկալիս առ կենք  
 » և յետ մահու, զայն՝ զոր ակն ոչ ետես և ունիկ ոչ լուսաւ և ի  
 » սիրա մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրե-  
 » լեաց իւրոց . Ամէն, և եղիցի : Ողջ լեր Տերամբ Երանախ Գրիս-  
 » տոսի, ի փառս Աստուծոյ և ի պարժանս մեզ :  
 » 1 Նոյն գրիւ աղաչէ յիշել և « զգեղազորով ծաղիկն եկեղե-  
 » ցւոյ զՈղիմոսովս, զմահանունն Օրբել, զհամբակի մշտափայլ զը-  
 » ւարեացեալ ի յիմաստս բանից », որ է հաւանօրէն համշխակ  
 պատմչի (Ստեփանոսի) և յաճորդ յաթոն Սիւնեաց :  
 » 2 Որպէս ինչ և զատիցի պատկերդ՝ ըստ արուեստին, հանց է







թարայ, ուր ի լուսանցան թերեւս յանդիման առնէ զսա-  
ինքն կամ զվարդապետ նորին զԳրիգորիս՝ աղօթական  
ձեւով և կնկղաւոր: Սորին թորոսի թուի և զարդանկար  
ճակատ թղթոց Ն. Շնորհալուոյ (Թիւ 40), ընդ այլոց  
գործոց հաւաքագրեալ Սարգսի ուրումն, որ ասէ զինքն  
համբակ և բանի սրասատր:

Նշանաւոր քան զսա էր աստ ի Գլաձոր՝ միւս Մխի-  
թար նախայիշեալ (յէջ 131) Սասնեցիկ կամ կերտանե-  
ցիկն, երբեմն աշակերտեալ Ներսիսի Մշեցւոյ, և ասպ Ե-

սոցեայ, (զոր կոչէ յնորեալ վարդապետ), ընդ ուսու-  
մնակցին իւրոյ և սիրելոյ Յովհաննու Արճիշեցւոյ  
Ոսպնակեր կոչեցելոյ. որոց առեալ զգաւազան վար-  
դապետութեան յԵսայեայ՝ դարձան յերկիր իւրեանց և  
ի վանս Մեծոփայ: Բայց մինչ զեռ ի Գլաձոր էին, նըս-  
տելով երբեմն ի մարմնաւոր սեզանի, որպէս պատմէ  
ինքն Մխիթար (յետ 30 ամի դիպացն), վիճէին վասն ջը-  
րախառնութեան ի խորհրդեան պատարագի, նորա մե-  
ղադրելով զխառնողսն, և սորա պաշտպան կալով պա-



40. Թուղթք Ներսիսի Շնորհալուոյ գրեալ ի Գլաձոր ի Սարգսի, յամի 1317.

հողաց իւրաքանչիւր աւանդութեանց. և ի նմին գիշերի  
ասէ տեսեալ զերազն, զոր յիշն և Յայսմաուրք (փերբ.  
11), և ինքն յաւելու, եթէ « Կարգաւ առաջի նորա  
» (Ոսպնակերին) պատմեցի՝ ըստ ճշմարտութեան օրի-  
» նակի. վկայութեամբ գիտողին Աստուծոյ, զի ճշմա-  
» ռիտ է զոր ասեմս »: — Սիրող կամ սուրբ թուի Մխի-  
թար երազապատում լինել. զի և մերձ ի վախճան կե-  
նացն՝ բազում տեսիլս անրջականս պատմէր, ըստ վկա-  
յութեան գրչի միոյ վարուց նորին, որ է Մկրտիչ Մե-  
ծոփեցի ծանօթ Թովմայի պատմչի:

Այլ մեք յաւարտ բանի ծանօթութեանցս որ զվանաց  
Քայնձորոյ և զբարեբանեալ հեղինակէ նորին Եսայեայ,  
յուշ և յանձն առնեմք միւսանգամ բանասիրաց՝ զար-  
ժանին քննութեանց. նախ, զկայս և զղիրս տեղւոյն,  
զմնացուած շինուածոցն, և մանաւանդ զարձանագրու-  
թեանց եկեղեցեացն և զգերեզմանաց. որովք մարթ է  
ընդարձակել կամ յերկարել զյիշատակ վայրացն և զան-  
ձանց, որ՝ ըստ նախահաւաքեալ մերս ծանօթութեան՝  
ամփոփի կենսք չափ մեծ ի վարդապետին. և յետ նորա  
թերեւս միակ յիշատակ իցէ անծանօթ մեզ Թուղթ մի



— Յարեւելեան որմն առ դրանն որ մութանէ յեկեղեցին՝ գրեալ են արձանքս (յամս 1331. 1346 և 1433) .

Կամաւն Աստուծոյ ես Պարսամ արեղայ միաբանեցայ ... փոխան այգի տնկեցի Սուրբ Աստուածածնիս , եւ տուի արձանագրով յիշատակ հոգւոյ իմոյ . միաբանք սահմանեցին Բ պատարագ . Հակառակողն զՅուդային եւ զԿայենին առցէ . ԹՎ. 22 .

† Ես Մկրտիչս զիմ հոգւոյ բաժինն տվի Սուրբ Աստուածածնիս . միաբանք ի պատարագն յիշեն . ԹՎ. 276 .

† Զպարոն Խոնթբարն յիշեցէք ի Քրիստոս . ԹՎ. ՊԶԲ .

Լաւութեամբս ան միտար կողեցեղ եղն կայեցի . զնալըս ի մայրն իմա ստեղ  
տեց գլխ ճոր կողեց ելաւ ռաւ էասյա սլոտի ի սարճոմնն սծիմնաւս գր  
ոց . և յորոտըզ զիս սլոտն իմ գրեգորես գրեղ զգրորս զայս յոյճ աշխատաւ  
նաք և հանդիպեղ բարեմիտ և քաղցրաստեանկ լցեղ յիմնաւս ութե  
ևս առաւել գրաւկանութիւն ծաղկողութիւն . ան սն կողեցեղ Բորոսիտա  
րանս գաւառե . ծաղկա զարդեաց զԳիւրս զայս սն յոյճ սիրելոյ զմեզ  
ուլոս հանդիպիք յիշեալիք զինքն և զիտոճն ողնա ի քս մեղաց Թողութի  
ինդր ելոյլ : նաև զմեզ մերայն ուլքն : և քս ամեն եցուռ տա առաւստն յոյճ :



Գուրպ բն ութի յոյճ եղեալ . անհասեղականաց բնութիւն յոյճ անեղև  
անսկիսքն . գուր յոյճ նորն : և կողմնակն ան բաւ ըստ զսփոյն և զսաման . ճա

42. Գրեալ ի Գայեճոր ի Մխիթարայ Եզնկայեցոյ , ծաղկեալ ի Թորոսէ Տարօնեցոյ . (տ . յէլ 135-6)

— Են և յեկեղեցւոյն արձանագրութիւնք յայլեայ կողմանս նորին .

Կամաւն Աստուծոյ ես Սմբատ որդի Լիպսրտի միաբանեցայ Աւագ ա-  
նապատի Ս . Կարապետիս եւ Սպիտակաւոր Աստուածածնիս , եւ տուի ըզ-  
Վախտանկինց այգին իւր ամէն հատով զծառ եւ տունկ , որ հանապազ  
զմեզ ի պատարագն յիշեն . հակառակն եւ խափանողն դատին յԱստուծոյ .  
եւ նա է ... բառցէ ? յամէն խարճէ ազատ . ԹՎ. 229 .

† Յուսովն որ առ Աստուած ես Ամիր Հասան որդի Յէաչոյ ... ես Բու-  
բաք Տէր Զաքարենցս ի Խատորայեզ զՆախասպար ... Եաչիկեկց

այգին, զԴիթենց (Դաշթենց?) այգին, Այտեղին կին ? տուաք Սուրբ... եւ Գրիգորին գերեզման(ին) ի ձեռն սուրբ... մեծ յուսով յիշատակ մեզ եւ (որդ) եցն մերոց սուրբ հարանց սուրբ... կարգեցին տարին Դ ար պատարագ, աւագ հինգշաբթի...

† Յուսովն որ առ Աստուած ես Բուէս ? զԱրաշտեականց այգին որ ի հալալ (արդեանց) գնուած ..տուի յԱնապատն Սպիտակաւոր Աստուածածնիս ի հոգոյ բաժին, ի ձեռն սուրբ Հայր Մկրտչին . եւ սուրբ Հայրն եւ միաբանքն գրեցին փոխարէն Աստուածածնի Բ պատարագ . ի ԹՎ. 22Թ.



43. Սպիտակաւոր Աստուածածին—կիչ վանք, ի Հերկեր.

† Կաման Աստուծոյ ես Ամիր Հասան որդի Պուաւոյ տուի զիմ հոգոյ բաժին ի Սխտորալէզն . ի Ազատ եղբրեղին ? Արահոգենց քէյի ? գետառէն ի գեղէն ի վեր բուռն... ընծայեցի Սպիտակաւոր սուրբ Աստուածածնի բարեխաւս առ Քրիստոս. Սուրբ Վարդանէն ? եւ այլ միաբանք եւ սուրբ հարք սահմանեցին Խ ար... Հակառակոզն սմա զՅուդայի առցէ զվճիռ. Կատարողքն աւրհնին .

† Ես Մարգարէ վարդապետս եւ... Գրիգորս եւ կինս Շնորհաւոր տուաք ընծայ Աստուածածնի զԹաձեք? հողն...



Ընդօրինակող արձանացա խոստովանի հաւատարիմ մտքը, զի սակա դժուարութեանն և փակագրոցն չիցէ թերեւս յաջողեալ ուղիղ ընթեանուլ, վասն որոյ և զանց արարեալ զայլովք, յորս նշմարէր զթուականն ՉՀԱ (1322). դուն ուրեք փոփոխեցի ինչ յընթերցուածին: Նոյն ծանուցանէ զի ի վիճակի հողոց Պաշտէնտի է տեղիս այս, վասն որոյ և զերծ մնայ ի պղծութենէ աւանանց այլադենից:

Յելից վանաց Ս. Աստուածածնի իբր կիսով փարսախաւ հեռի՝ անցանէ վտակ Գզրի — պուշագ կոչեցեալ, զի ի հոսանան նշմարի ոսկեգոյն աւազ, և ընդունի յարեւելից կուսէ միւս եւս վտակ, որոց խառնուրդ գործէ զգետակն Արկղօնից կամ զերից գիւղիցն: Յանկեան սոցա ի բարձու քարաժեռի կայ բերդ դժուարամատոյց, բնական և ձեռագործ բրգամբ. ի միջոցին (իբր 80 քայլ

տրամագծաւ), նշմարին 40 կամ 80 կամարակապ սեւեակք: Բնակիչք կողմանցն համարին զբերդն լինել քաջին Պուօշի, և յանուն նորին կոչեն զկիրճս դժուարակոխ ձորոյն՝ Պուօշի — կապ, և Թուրքք Պաօշ — քեարի, զոր այլք՝ Բուրջի այսինքն Բրգանց կապան: Երեւին ի բերդին քարափոր գուրք ջրլեղջից և այլոց պիտոյից: Ի հիւսիսոյ կողմանէ միայն կան պարիսպք ծածկեալք մացառք և առատաբեր ընկուզենեզք, զայլ կողմանան պարսպեն քարաժեռք: Հաւանութեան է կարծիք քննողի վայրացն (Քաղաքաբունոյ), եթէ սա իցէ յիշեալն ի պատմէն Սիւնեաց « Բրդոն, որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն արն ամրութեան, ի գետամիջին Եղեգեաց և Մոզա » նի: Բայց ոմանք ոչ աստանօր, այլ բացագոյն ի հարակողմանս Վայոց ձորոյ սանն լինել զՊուօշի կապն, որոյ տեսիլ նշմարի աղօտ ի հանդէպդ (Թիւ 14):

**Բ. ԵՂԵԳԵԱՑ ԶՈՐ = ԱԼԱԿԵԱՉ**

ՅՑ. Երանուցաք կանխաւ զի թէպէտ յանուն Եղեգեաց ձորոյ կոչի սովորաբար բովանդակն իսկ Վայոց ձոր, այլ ոչ այսպէս ի քաջ հնումն. ի դէպ էր յայնժամ՝ որպէս և յայժմուս՝ յայս անուն կոչել միայն զընդարձակ ձորն՝ որ ի հիւսիսոյ արեւելից գաւառին ձգի ընդ արեւմուտս, և յանուն զխաւոր հին աւանին Եղեգեաց կոչի. և այսպէս իմանամք ի տեղագրիս զերկիրն մինչեւ ի խառնուրդ գետոյն յԱրփա, յարեւմտից կուսէ ընթացիցն դառնալով ի հարաւ ընդ անձուկ ծործորս, ի ստորեւ Ղըրքոյ գեղլ, յորոյ անուն կոչի ստորին և ըստուար մասն գետոյն այնորիկ: Հանգոյն Արփայի՝ և սորա ակունքն են յարեւելեան հիւսիսային սահմանաժայրս գաւառին՝ ի Թիկունս բարձր բարձր լեռանց Գեղամայ, Տիգրիսեագանայ և Եհպուլազի, յորոց ժողովէ տասնիւ չափ գետակս փոքունս: Քանզի անձուկ է հովիտ իւր 8 կամ 6 մղոնաչափ եւեթ. իսկ ի հարաւոյ կամ յահեակ կողմանէն ամենեւին անձուկ, ուրեք հազիւ թէ մղոնաչափ միայն, զսպեալ ի լեռանց անջրպետաց ձորագետոց Արփայի ցարդ տեղագրելոց. որով յայտ իսկ է զի յայսմ կողմանէ աղբերս ինչ կամ վտակըս եւեթ ունի օժանդակս, և չէնս սակաւ. ընդ նմին յայտ և այն՝ եթէ քանի՛ բնագեղ ախորժատեսիլ հարկ է լինել կերպարանաց երկրի կողմանդ. և ոչ միայն այսորիկ՝ այլ և աջակողմանն, ուր խուռն հոսանք են գետակացն ընդ ծործորս զուարճատեսակ ձորակաց. մանաւ

անդ զի ոչ լոկ խոժոռագեղ քարաժայռք են անդ, այլ և ֆառաստանք զալարագեղք հարուստ բուսաբերութեամբ. որով գեղեցկագոյն մասն Վայոց ձորոյ անկ է ձանաչել զբնիկ Չորս Եղեգեաց. մանաւանդ եթէ և ըզմտաւ ածիցեմք՝ զի յայսմ մասին էին արգունիք կամ ապարանք հին և միջնադարեան իշխանաց գաւառիս Վայոց ձորոյ. և հարկ է թէ բազում հին շինուածոց մնացուածք գուցեն ի նմա, առաւել քան որչափ ծանօթ է յայժմուս: Ընդ բնիկ Չորոյս Եղեգեաց գոգեմք ի տեղագրիս և զոր յարեւմտից նորին մասն Վայոց ձորոյ յայժմ Արփայի, մինչեւ ի դարձ նորին ի հարաւ կոյս հանդէպ դաւտին Եարուրայ:


Նկարագեղ զլուխ Եղեգեաց ձորոյն՝ այս ինքն արեւելեան մասնն՝ զուրկ է ի շինից, գէթ անծանօթ մեզ, մինչեւ ցհարուստ սահման. ապա ընդ առաջ լինին աւերակ կամ ամայի գեօղքն Հին և Նոր Ճանի, յորոց սակի և մերձ Հնոյն՝ Հասանքեկտ գեօղ հայաբնակ 30 տամբք, առ որով հին կամուրջ միակամար ի վերայ Սիլիւ — չայ գետակի առ խառնդողն յԱլակէզ գետ: Խոսնարհագոյն ի ստորոտս երկայնաձիգ լեռանց որ ի Մուրատ քեփեհ ընդ արեւմուտս ձգին, Ստորին Ճանի կամ Չանի, Ճանի աշաղս կոչեցեալ ի Թաթարաց բնակելոցի նմին սակաւ տանց: Թուի մեծ աւանի և չէն տեղոյ լինել հընոյն Ճանեայ, զի յայն անուն կոչին երեք գեօղք, և զըլխաւոր վտակացն (Ճանի — չայ). — Առ կցուածով և

րից և չորից գետակաց նշանակի փոքր շինատեղի Գա-  
փոշոպն անուն, (որ արդարեւ Թուրքարէն կցուածս և  
փարմունս նշանակէ), ոչ գիտեմ ըստ զիպաց, եթէ վա-  
սըն խառնրդոց շուրցն այսպէս կոչեցեալ, զի Թերեւս սա-  
իցէ Գրկիք գեօղ հին Յուցակին, որ ըստ տրիցն երեւի  
փոքրիկ եղեալ: Գրեթէ կից նմին է յարեւմտից հիւսիսոյ  
կալասէր գիւղ Թուրքաց: Յարեւելից սոցին Գապախոշու  
կամ Ղափախի, առ որով կանգուն կայ եկեղեցեակ մի

սագաչէն կամարակապ, և խարխիս միակամար կամըրլի:  
Մերձ սմին ի հիւսիսոյ կուսէ և ի հարաւոյ արեւմտից ճա-  
նի գեղջ՝ երկու գեօղք էիւլլիս տիւզ անուն, որ նշանակէ  
Վարդահարթ կամ Վարդամարգ, և արդարեւ ծաղկաւէտ  
են սահմանքն, այլ ամայացեալ արդ ի շինից: զորոց եր-  
բեմն յօլովութիւն վկայեն աստ և անդ կանգուն կամ ան-  
կեալ խաչվէմք: որպիսի են և արձանագրեալքս այսո-  
քիկ, որոց Թուական ժամանէ մինչեւ իսկիցրն ԺՁ դարու:

**Ես Սանէս (Թերեւս Յովանէս, կանգնեցի) զխօշս բարեխաւսու-  
թիւն ինձ եւ եղբաւր մեր. ձեռամբ բարեմիտ պատանի Սմբատայ որդւոյ  
մեր. Ուր կարդաք յիշէք ի Քրիստոս. Թ. ՉԽ.**

**† Այս է հանգիստ Յովհաննիսին. ԶԾԲ.**



44. Պոշի կապ եւ Գնդեփանք.

Իբրեւ երկու մղոնաւ ի Հս. Վարդամարգ գիւղիցս կայ  
Գարագայս (Սեւ սար) գիւղ Թուրքաց, յորոյ սահմա-  
նըս գտանին հետք եկեղեցեաց և գերեզմանաց Հայոց.  
որպէս և ի Գոտուս վանք գեղջ փարսախաւ հեռի՝ յա-  
րեւելակողմն, յորոյ միում մատրանցն Չի Թուական նըշ-  
մարի: Յայս յետին անուն վանք յիշի յՈրբերեանէ (ԽԲ),  
այլ ի Գառնիձորի որ յԱյրարատ՝: Մատուռնն յիշեալ  
կամ այլ եկեղեցեակ մի ի Գոտուս՝ Սորիկ- վանք կոչի:

Իբրեւ երկու մղոնօք ի Հս. կալասերի առ փոքու վը-  
տակաւ ի բարեբոյս հովտի կայ Այասս կամ Այասաի  
Թաթարաբնակ գիւղ 45 տամբք, յարձանագրութեանց  
հին եկեղեցւոյն ստուգեալ գոյ Արատնք կամ Արա-  
տէս գիւղ հին Յուցակին, յորում և վանքն Արատէ-  
սի, ընդ նշանաւոր վանորէից յիշեալ ի պատմէն Սիւ-  
նեաց, որում և մասն ժառանգութեան վիճակեցաւ ընդ  
այլոց՝ ի հօրէ իւրմէ Տարսայիճէ. և ինքն իսկ Ստեփանոս

1 Այսպէս գրէ յօրինակս ինչ, բայց յայլ օրինակս վերջայանգիւ, Գոտու. տես յԱյրարատ, էջ 317:

ետ ի կալուածս և ի բնակութիւն ամարայնոյ՝ միանձանց մեծի ուխտին Նորավանից, գրելով արձան յիշատակի, զոր և ընդօրինակէ յաւարտ պատմագրութեան իւրոյ. « Սահմանեցաք զԱրատեսի վանքն՝ որ ի վերոյ Եղեգեաց, » տուաք ամենայն հաստատութեամբ զվանքն և զգիւ. » զըն իւր ամենայն շրջակայ սահմանօքն և հոգեցատուր » ժառանգութեամբքն ի սուրբ եկեղեցիս (Նորավանից), » զի սորա կալցին հայրենեօք և վայելեացն զնա. բայց » շինութեան տեղոյն և լուսաւորութեան եկեղեցւոյն աւ » մենայն ջանիւ փոյթ տարցեն, որպէս այսմ տան » : Տաւ կաւին կանգուն կան եկեղեցիք վանացս, թէ և յոյժ խար

խարեալք. որոց գլխաւորն ի վերայ չորից որմնապատ սեանց հաստատեալ, երկդբումբք աւանդատամբք կամ մատրամբք յալմէ և յահեկէ խորանին, յորս և գոն սեղանք պատարագի : Ունի և ժամատուն նոյնպէս ի կոփածոյ քարանց (8 քայլ ընդ երկայն և ընդ լայն), վեցեքումբք որմնապատ սեամբք և երկու խորանօք և պատուհանօք : Արտաքոյ հարաւային որմանն նկարեալ է ժամացոյց արեւային 12 հայկական տուփք : Առ ստորոտով արեւելեան որմոյ եկեղեցւոյն կայ որոցածեւ տապան, արձանադրաւ 1280 ամի. և այլ արձանագիր ի հարաւային որմն ժամատանն. որք են.

**Զերջանիկ Բաբունապետն Հայրապետ նորագող այսմ ուխտի յիշեցէք. ԹՎԻՆ ԶԼԹ.**

† **Ես Մամաքս միաբանեցայ եւ ետու զինչ ունէի ի սուրբ եկեղեցի. Սալա սաւորք սահմանեցին Ա աւր պատարագ Փոխման Աստուածածնի. Կատարիչքն աւրհնին Աստուծոյ, եւ խափանիչքն դատին ի Տեառնէ.**

— Դուռնն հիւսիսակողման մութանէ յերկրորդ եկեղեցի կանգնեալ ի վերայ չորից որմնապատ բարձր և նուրբ սեանց : Առ ժամատամբն է Զանգակատուն վայելուչ կաթողիկէիւ, ութ սեամբք, յորում ճարտար քարաշար քանդակք և պատկերք են Տիրամոր՝ Բիսուս ի գրկի երկ

կդբումբք ընթերակայիւք<sup>1</sup> : Ճարտարագոյն եւս են քանդակք և դրուագք դրան երկրորդի եկեղեցւոյն, պէսպէս ձեւովք խաչից, ողկուզոց և կենդանեաց : Յարձանադրութեանցն որ ներքուստ դրանն և յորմունան՝ յայտնին եկեղեցիքս կոչիլ Ս. Սիոպն և Ս. Աստուածածին :

**Ի ԹՎԻՆ ԶԺԹ. Ի տէրութեան փառաւոր իշխանին Սմբատայ եւ հարազատի իւրոյ Տարսայիճին, ես նուաստ արեղայ Հայրապետ անուն սպասաւոր բանի կրկին շինեցի զվանս եւ նորոգեցի զեկեղեցիս, շինեցի զգաւիթս եւ զայլ ինչ որ... զԿոչոց՝ այգին յՈստին Եւ զԹեղոշտն<sup>2</sup>... Մճռակածորում... գնեցի եւ տվի ի Ս. Սիոնս... հաստատեցաք զսուրբ Գրիգորի շաքաթն եւ կիւրակէն ինձ յիշատակ կրկին... Կատարիչք աւրհնին յամէն Արբոց, եւ հակառակաւ զքն տանջեսցին ընդ Յուդայի եւ ընդ Բելիարայ ի մեծի աւուրն. ամէն.**

† **Կամաւ կարաւղ հղարին Աստուծոյ ես Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս որդի մեծի եւ բարեպաշտ իշխանին Տարսայիճի, ծանեալ զի բազում ժամանակաց ժառանգութիւն էր լեալ այս եկեղեցիս Նորավանից սուրբ ուխտին, հաստատեցի ես զԱրատէս որ մեր սեփական հայրենիք էր, իւր ամէն սահմանաւքն զիւղ եւ<sup>3</sup> հայրենիք հաստատ, ժառանգութիւն եւ հայրենիք սուրբ եւ գերափառ դամբարանին սուրբ Նորավանից. զոր մի ոք իշխեսցէ խախտել եւ խափանել կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց մերոց եւ կամ յաւտարաց. եթէ հակառակին՝ անէծս եւ նզովս առցեն ի սուրբ Երրորդութենէն եւ յամենայն Արբոց. եւ մեր պարտեացս տէր է առաջի**

<sup>1</sup> Զորս Մարտիկոսն կործէր Զաւաւանն, այլ Քալբերուծի գին : մօրուեղ ետես : <sup>2</sup> Յիւսալ յէլ 99 : <sup>3</sup> Գիւղ, ըստ Քալբերուծոյ :



Աստուծոյ . Եւ թէ Տաճկի աւագ փոխի եւ հանել ջանայ , յԱստուծոյ եւ յիւրոյ Մահմէտէ կապի . ապիզար եւ Ռ Ռ նալաթ լինի .

† Ի թագաւորութեան Վրաց Լաչային եւ յաշխարհակալութեան Իվանի Աթաբէգի , Ես Վասակ որդի Խաղբակայ կողմնապահ ի ի Գառնուոյ մինչեւ ի Բարկուչատ , եւ առի զամրոցանիս Եղեգեաց Չորոյս աւգնականութեամբն Աստուծոյ ի հայրապետութեան Տեառն Սարգսի եւ յառաջնորդութեան վանացս եւ Նորավանացն .. հաստատեցաք Գ ժամ . զՀամբարձման ղերեք աւրն զամենայն եկեղեցիք Չորոյս՝ Վասակայ կատարեն . եւ կատարիչքն աւրհնին յԱստուծոյ . ամէն .



43. Արատես .

† Ես թաշմելիքս միաբանեցայ սուրբ ուխտիս . միաբանք սահմանեցին Սուրբ Խաչին շաբաթ աւրն Ա պատարագ .

† Կամանն Աստուծոյ Ես Նուրունս աղախին Քրիստոսի միաբանեցայ ի սուրբ ուխտս Արադէս արդեամբք . եւ սահմանեցին միաբանքս զՍուրբ Սարգսի շաբաթ աւրն պատարագ ինձ յիշատակ , եւ կիւրակէին առն իմոյ Հասանայ . կատարիչքն աւրհնեալ եղիցին յԱստուծոյ .

Ի հարաւային որմն ժամատանն ի ներքուստ գրեալ է դարձեալ Օրբելեան եպիսկոպոսին զայս արձան յամի 1301 .

**Կամաւ կարաւղին եւ հզաւրին Աստուծոյ եւ Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս որդի մեծի եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Տարսայիճի ետու սուրբ Սիւանիս եւ Աստուածածնիս (եւ) Սուրբ Կարապետիս մեր սեփական վիճակէն ի Գեղաքունւոյ զգեղն Վանեվան, զԿթանոցն, զՓառագունի, Մշալաչէն ? , զՇիկարբն<sup>1</sup>, Խուշինակն Քաւթարեանց, զՏարաբանդն<sup>2</sup> . զի մի ոք իշխեսցէ խախտել կամ խափանել ի մերոց կամ յաւտարաց, զի մի պատիժս կրեսցէ . Վասն Աստուծոյ սահմանեցաք որ տեղս մեր նստագահ է, ու մեծ իշխանաց իշխան իմ փառաւոր հարազատին Էլիկումին յիշատակն այլ աստ էր կարգած : Ամ ով զմեր սահմանած կտակն այլ ցեղ առնէ, մասն ու բաժին զՅուդայի առցէ եւ զայլ խաչահանուացն . եւ մեր պարտեացն տէր է առաջի Աստուծոյ . ԹՎին ԶՀ .**

Ի զանգակատանն առ դրամն կայ տապան գեղաքանդակ և արձանագիրս այս .

**Ստեփաննոս պատանին շինեց զԱրատես . ԹՎակ . ԶԶԲ .**

Այս ըստ Քաջբերունոյ . իսկ ըստ Զալալենի կանխէ թուականն 200 և ամօք աւելի (1303-1333) .

**Ստեփաննոս պատանի որդի Կարապետ աղին կրկին նորոգեցի զԱրագէս . ԹՎին ԶԾԲ .**

Երկրին եւս չեն աներկբայք : — Ի խաչվիմի ուրեմն յորմն ագուցելոյ, և ի պատուանդանի այլոյ խաչվիմի գրին .

**Սուրբ Խաչս բարեխաւս Մէհրաբին .**

**† Սահակ երէցս յաղաւթս յիշեցէք . ԹՎին ՆԻԴ .**

Եթէ ստուգիւ Ն իցէ առաջին թուագիրն՝ նշանակէ զամն 978 . — Յերի եկեղեցւոյն ի վերայ տապանի միոյ գրեալ է .

**Այս յարկ տապանի Յովսէփու աստուածախաւս վարդապետի . ԹՎ . ԶԼԱՅ .**

Նորագոյն արձանագիր է ի խաչվիմի յորմն միոյ յեկեղեցեացն, այսպէս .

**Սուրբ Խաչս կանգնեցաւ ( յիշատակ ) Ուլուբէգին<sup>3</sup> . ԹՎին ՌՀԵ .**

Փոքր ինչ հեռի յեկեղեցեացս է հանգստարան, յորում խաչարձան վերոյգրեալ Յովսէփայ վարդապետին, և միւս .

**Խաչս բարեխաւս Նատարզուլին որ տղայհասակ մեռաւ . ԹՎին ԶԶ .**

Բացագոյն ի սոցանէ այսր անդր գտանին այլ եւս մահարձանք . որպէս, նորագոյն թուականաւ 1714 ամի .

**Այս է հանգիստ Սարգսի . ԹՎին ՌՃԿԲ .**

Հեռագոյն եւս ի հարթ դիմի քարածեռ գետեզերն կամ ձորակին քանդակեալ կան աւելի քան զ'30 խաչվեմք .

**ԹՎին ԶԺԳ . Տէր Աստուած ողորմէ Այսախուխին . ամէն .**

**† ԹՎին ԶԺԲ . Նշանս Թանկին է . Աստուած ողորմի նմա . ամէն .**

1 Հաւանորեն Շիկարբն Գեղաքունեաց . տես յէջ 58 :  
2 Դարբանդ, ըստ Քաջբերունոյ :  
3 Քաջբերունի զթուականն ԶԵ գրէ, զանունն ոչ :  
4 Քաջբերունի գրէ Կանխեցայից Գուրբեգին :



### † Սուրբ Նանս Հասան(այ) Է. որք կարգաք յիշեցեք ի Քրիստոս. ԹՎԻՆ ԶԺԵ.

— Անուանք յիշեցելոցն նորագոյն թուին քան զթուականսն :

57. Կիսով փարսախաւ ի հարաւոյ արեւմտից Գաւուշուի գեղջ առ գետեզերքն Եղեգեաց, և իբրեւ նոյնչափ յարեւելից Ալագեազի (Եղեգեաց), կայ փոքրիկ շինատեղին Կիւնէի-վանք, իբր 10 տամբք թաթարաց. այն է հինն Կնէվանք մենաստան. « զորմէ ասեն. մանկունք » անդէորդք արած էին ջողիւր եզանց, և սկսան խաղալ. » և կտրեալ կնիւն մի՝ արարին խաչ և եղին ի վերայ » քարի մի, և սկսան երկրպագել և ասել. « Զոր ինչ ե. » րէցն ասէ և ընթեռնու, այն ի վերայ քո եղիցի. և » յայս եզանցս երեքն քեզ մատաղ եղիցի: Եւ զոր նո. » քա ընդ խաղս արկին՝ Հոգին Աստուած իջեալ տնօ. » րինէր նոյնպէս: Ապա ի ժամ երեկոյին սկսան գնալ. » և թէպէտ ջանացին՝ զայն նուիրեալ մատաղան ոչ կա. » րացին յարուցանել ի տեղոյն. գնացին և ազգ արա. » րին տերանցն. և նոքա եկեալ՝ ոչ կարացին շարժել. » և հարցեալ զպատճառն ի մանկանցն՝ խոստովանեցին

» զուղիղն: Կոչեալ այնուհետեւ քահանայս՝ օրհնեցին » զխաչն և գնինն զեզինսն, և պատուեցին զտեղի կը. » նիւնին: Ազգ լինէր այս իշխանացն Սիւնեաց, և գա. » յին ի տեսութիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի » տեղւոյն, և սահմանեցին զնա տուն կրօնաւորաց. » բայց զտեղի կնիւնին թողին ի մէջ եկեղեցւոյն փոս » մի դուզնաքեայ. և մինչ յաւեր տեղւոյն՝ ձէթ բրդ. » խէլ ի փոսոյն այնքան՝ զի օտար ձիթոյ ոչ կարտա. » նային, այլ եկեղեցւոյն կանթեղունքն նովաւ կերա. » կրիր: Եւ դեռ եւս կայ եկեղեցին և տեղի կնիւնին, » և խաչ եւս, որք վկայեն անսուտ գոյ: Աստուծոյ ըստ պատմչին Սիւնեաց, որ և ցուցանէ բանիւք առ իւրեւ ամայացեալ և լքեալ զտեղին, որպէս և այժմս. այլ երեւի եկեղեցին սագաչն կոխածոյ քարամբք (10 քայլ յերկայնն, 8 ի լայն), չորիւք բուածոյ սեամբք, երկօքումբք աւանդատամբք, մանր դրուագօք քանդակաց: Ի վերայ հիւսիսային որմոյն երեւի արձանագիր եղծ գեղծ, յորում նշմարի անուն հօր պատմչին.

### Տարսայիճ իշխան տուի տաճարիս զԹողանի այգին (ի) սուրբ Գրիգոր յիշատակ հոգւոյ իմոյ. սպասաւորք. . . Աստուածածնի տուին. . . պատարագ. . . Նորողեցաւ. . . թեան. . . Դաւթի Այլաղթ ?

Նշմարին և մնացուածք սենեկաց միանձանցն: Ի դոյզըն արձանէդ յայտնի անուն եկեղեցւոյն Ս. Գրիգոր, որպէս յայտնապէս գրեալ է յորմն հարաւակողման.

որ արգարեւ ոչ ցուցանէ զհնութիւն բանից պատմչին: Են զմենաստանան վայրենի և պողարեր ծառք ամայացեալք յեղտիրս կնիւնարերս. յարեւելեան կողմանն դամբանք ի շարի, մին Սեբովբէի ուրումն եպիսկոպոսի, քանդակաւ օձանիչ գաւազանի. ի միւսում գրեալ է,

### Նորողեցաւ Սուրբ Գրիգոր. Այս է հանգիստ Մահաւզունի. ԶԶԲ.

Ի վերոյ արեւմտեան դրանն գրեալ կայ կամ յետոյ եզեալ վէմ արձանի թուականաւ 1524 ամի.

### Խաչս բարեխաւս Տէր Եղիշա. . . ԹՎակ. ԶԶԳ.

Յերկայցի թուականաւ և գրութեամբ յիշատակաւ Գանձակայ, կան այս նշանաւոր՝ այլ ստուգելի բանք բանի աւետարանի միոյ, որ գտանի արդ յԱբլահ գեղջ պատմականք և անուանք անձանց և տեղեաց.

Ի թվականս ԲՃՂ՝ ? ամին, ես Ամի(ր) Վահապ եւ Սուղի Վասիլ իշխանս շինեցի եկեղեցիս, եւ Գաւառանս առուն հանեցի Այիևեվանոց ձորերէն ու սարերէն. բնակիչք գեղիս խոստացան տարէն Գ ժամ. կատարողն Աստուծոյ աւրհնի: Դարձեալ, Այամոռըջն շինեցի ու Այապն կապեցի. ԹՃ ? անծին յերինջ մորթեցի, ոչխարաց, ղօշից, գառնից սաւս ? այս եղաւ: Դարձեալ, Բոշխասնի մուլքն իմն էր, ջուր չունէր, շապտէննր (չաբաթ) մէկ օր Ծակքարոջն ջուր տվի խթն (խաթունիկն?) համար:


1 Անուատուի է հնութիւն թուոյն սյուիքն 841 թուական Փրէկէն, Թերեւս ԹՃՂ էր գրեալ, որ է 1451:

58. Եղեգիբ կամ Եղեգեաց աւան, յայժմուս Այա-  
գեագ՝ ըստ սյուղագեաց բնակչաց նորին իբր 38 տանց.  
փոքր շինավայր է և մեծ աւերակ, ի բարձրանիստ գե-  
տամիջի Արփայ (յաղմէ նորին որ է ի Հս.) և վտակաց  
օժանդակաց իջելոց ի Թիկանց բարձու (10610') Ճանի-  
գանտիլ-տաղ լերին՝ անյրպետի Գեղամայ ծովատաշտի,  
երբեմն աթոռ պերճափառ իշխանաց Վայոց ձորոյ և համ-  
օրէն իսկ տերանց Սիւնեաց երկրորդի հարստութեան,  
և յետոյ Օրբեղեան մեծաշուք իշխանաց և զարմից նո-  
ցին ցվերջին դարս. վասն որոյ և ոչ միայն գիւղաքաղաք  
կոչեցեալ այլ և մայրաքաղաք. որոյ մեծութեան և շքոյ  
վկայեն ընդարձակ աւերակքն. զորս առանց մանրախոյզ  
առնելոյ հարեւանցի իմն ակնարկելով (Ջալալենի կամ հե-  
ղինակի գրուածոյն յանուն սորա), զբնական և դարտա-  
քին երեւոյթն ստորագրէ այսպէս, համարելով յանուն  
բերդին և վանաց զշինավայրն իսկ Յախաքար կոչե-  
ցեալ, որ ոչ ստուգի ի նախնեացն բանից. « Է, ասէ,  
» արուարձան Յախաքար քաղաքի, այժմ տաճկաբնակ՝  
» օղն առողջարար, ջուրն բարեհամ, և երկիրն սիզա-  
» ւէտ, զետեղեալ ի բարելի ձորամիջի, չրճապատեալ  
» բարձրակատար լերամբք. ուստի յորդառատ խոխոլն  
» անուշահամ առուք, և միացեալ կազմեն զվճիտ վտակ,  
» յորում են կարմրախայտ ձկունք, և այնպէս սրընթաց  
» սահեալ սողուկեալ ընդ Թաւաթուփ անտառս ձորոց  
» չրճապոյտ ակօսի և փրփրադէզ կոհակօք մերթ ար-  
» ծաթափայլ շողալով ի ներքոյ մթին անտառաց, և  
» մերթ աներուութանալով յաչաց ի խորածորս նորին,  
» և մարտ ընդ ապառաժից եղեալ գահավէժ ի բարձանց  
» որոտալով հոսի, և ապա կարկաջելով ընդ պարարտ-  
» արտ և ընդ ծաղկածին վայրս իջանէ ի դաշտն, կազ-  
» մելով միանգամայն զքրանչելի տեսարան բնութեան:  
» Ի հիւսիսակողմն այսր վտակի, անկանի քրանչիլի և  
» միանգամայն ողբալի աւերակն Յախաքար քաղա-  
» քի, յորում են հոյակապ և վիմարդեան եկեղեցիք կա-  
» ռուցեալք վսեմ ճարտարութեամբ և ամրութեամբ:  
» Աւերակք չքեղաշուք տանց և պալատաց մերոց իշխա-  
» նաց, արդէն է բուռց բնակարան և որջ գաղանաց: Պա-  
» հին աստանօր նա և նշխարք յորով նահատակաց և  
» մարտիրոսաց և այլոց Սրբոց. երեւին դեռ եւս ի քա-  
» ղաքամիջի և ի չրճապատս նորին գեղեցկաբանդակ շի-  
» ռիմք և հոյակապ կոթողք և մահարձանք ականաւոր  
» արանց ի զգալի սուգ հայրենասէր սրտից: Գեռ եւս  
» կան մնան հատուածք ընդարձակ փողոցաց և երբե-  
» մըն ճոխութեամբ լցեալ կրպակաց և այլոց հոյակապ  
» շինուածոց, բայց արդէն ընկզմեալք ի խորին տխրու-  
» թիւն՝ ծածկին վարպուրաւ սգոյ և կան ի լուծեան,  
» ակնկալեալ միայն վերին այցելութեան »:

Ոչ է յայտ ժամանակ շինութեան Եղեգեաց, այլ  
գուշակի մի ի հնագոյն շինից աշխարհին Սիւնեաց լինել  
և աթոռ գաւառապետին, և այսպէս կոչեցեալ վասն  
եղեգնաբեր եղտիւրից կողմանցն. ի նորոգութեան իշխա-  
նութեան Սիւնեաց ի Վասակայ նահապետէ աստ երեւի

1 Ըստ Եղեգի (կեսով դարու յառաջ) 4 տունք միայն էին  
հանկացը, իսկ Հայոց նորեկաց ի Պարսից բռնէն 22 տունք, և

հաստատեալ գահու մեծի իշխանին, որպէս վկայի յայտ-  
նապէս վասն Սմբատոյ Մեծի՝ Թոռնորդույն Վասակայ,  
որ յարչաւանս Բչրայ կամ Նարայ զօրավարի առաքելոյ  
ի Յուսիայ յամի 923, « հորդան տունեալ զօրացն՝ ամբոխս  
» բազումս սպայակոյտ զօրու չուրջ զիւրեաւ կացուցանէր  
» յիւրում յարքունական ապարանն՝ որ ի գիւղաքաղաքն  
» յԵղեգիս. եկեալ ապա Նարն, և տեսեալ զնա այնպի-  
» սի պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ,  
» զգուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց անտի,  
» այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա... չուէ և եր-  
» թայ »: Երբմէ երեւի զի ոչ միայն մեծ այլ և քաջ ա-  
մուր և դժուարամատոյց էր տեղին: Եղէ Օրբեղեանն և  
յամի 936 զսոյն իշխան Սմբատ « ելեալ յաւուր միում  
» յարքունեաց իւր՝ որ էր յԵղեգիս գիւղաքաղաքի »:



46. Կնեվանք կամ Կիւնէի վանք.

Պայազատք սորա յետինք, որպէս նշանակեցաք ի յի-  
շատակի նորոց իշխանաց Սիւնեաց, այլոց ոմանց Թո-  
ղեալ գտեղին՝ փոխեցին զգահ իւրեանց ի Բաղս և ի Կա-  
պան. այլ ի Թափել Զաքարեանց և զկողմանքս յայլազ-  
գեացն ձեռաց և տալ Օրբեղեանց, աստանօր հաստա-  
տեցին սրբա զաթոռ իւրեանց, Ելիկումն և որդի նորա  
Սմբատ. իսկ եղբայր սորա Տարսայիճն մեծ՝ ընտրեաց  
յետոյ իւր կայան զԱրփա. բայց Թուի որդւոյ նորին Զա-  
լարայ (որ յերկրորդ կնոջն՝ ի Մինայ խաթունէ) ժա-  
ռանգեալ գտեղիս. քանզի յիշի իշխող տեղւոյս Տար-  
սայիճ միւս յամի 1314, զորմէ գրէ ոմն յայնմ ամի ի Գը-  
լաձոր՝ չափաբերական բանիւ, այսպէս.

տուն մի միայն ի վազեմ բնկացն Հայոց:  
2 Այս ըստ Յովհաննու կոթողիկոսի պատմութեան:



47. Պատկերադրակ ի Ս. Աստուածաժին եկեղեցւոյ Շղեզեաց.

- » Կաեւ կարեկից մեծաղարմիս
- » Աթոռակալ Տարսայիճիս,
- » Որ է մեզ կարեկից յամէն բարիս,
- » Եւ օժանդակ յիւր գաւառիս:
- » Յիշման զսա առնել արժանիս
- » Մնօղիւք եղբարքք օրհնել յաստիս »:

Ի դէպ է թէ Զաւլայ որդի իցէ Տարսայիճն այս, յանուն հռչակաւոր հաւուն կոչեցեալ, որպէս և ամենայն թոռանց զարմից նորա յազգս բազումս. «քանզի (որպէս նշանակեցաք ի ցեղաբանութեան Որբելեանց յէջ 95-6) յիշի և այլ Տարսայիճ որդի Գորգեայ կամ Գորգունի յելս ԺԻ դարու, զոր բունաւորքն Լէնկթիմուրեանք ստիպեցին յուրացութիւն հաւատոյ: Իարձեալ, չորրորդ Տարսայիճ և մեծ կոչմամբ ցուցանէ ոմն յիշատակագիր<sup>1</sup> կեցեալ՝ զկիսով ԺԵ դարու, զի զորդի նորա Սմբատ՝ զհայր Եղիշեայ արքեպիսկոպոսի Սիւնեաց՝ յամի 1495 կոչէ իշխանաց իշխան «ի նախնայիս Վայոցձորոյ ի մայր» րաբաղաքիս Եղեգիս »: որում հաւանօրէն կացին պաշտօնաւ և յողոյն յաջորդ ԺԶ դարու, մինչև ի սկիզբն ԺԷ՞, յորժամ Շահարաս ընդ այլոց գաւառաց և զԵղեգեաց ձորոյ բնակիչս վարեալ վտարեաց ի Պարսութեանս զերծան ոմանք ի սերնդոց նոցին ի ծերպս անշքեցեալ ոստանի պանծալի իշխանացն Սիւնեաց և Որբելեանց, որք զամս 700 աւելի կամ նուազ պերճութեամբ պայազատեալ ի զանխուլ ձորամիջի անդ, հասուցին ցվերջին դարս զանուն իշխանութեան՝ իրբեւ կայծ մի թաքուցեալ ի մոխրի երբեմն մեծահրատ վառարանի:

Զայս ասելի է և զմնացորդաց հին շինուածոց տեղոյն, որք հարկ է թէ ըստ պերճասիրութեան սօսասարաս Սիւնեցւոցն՝ հոյակապք և շքեղք էին. որոց զըլխաւոր համարելի է Բերդն, պահապան արքունեաց և ամենայն ճոխութեանց տեղոյն, կանգնեալ ի Մ. Հս. քաղաքաւանին, կիսով փարսախաւ հեռի ի միջի երկուց ձորակաց, հզոր պարսպօք ամրացեալ տաշածոյ և անտաշ քարամբք, տանեակ խրոխտ աշտարակօք, որք երեքկարգեան են առ դրամբն կամ տկարագոյն կող-

մամբք բերդին որ է ի հիւսիսի, մի ի վերայ միւսոյն. քանզի յայլոց կողմանց քարածայռք պարսպեն զնա. ի հարաւոյ ամբառնայ ապաւէն անմատոց սրազաղաթն լեռոն, կոչեցեալ ի Թուրքաց Թաքնատոյտուրան (Գըղակալի) իրր 9000՝ բարձր: Երեք դրունք են բերդին, աւազն ի հիւսիսոյ կուսէ, որոց տեղիք փեղկիցն և նգաց նշմարին ցարդ. նոյնպէս և իրր 130 սենեկաց առ ստորոտով պարսպացն և ի միջավայր բարձրաւանդակին. անազարտ կան տակաւին ջրամբարք բերդին: Ի դէպ էր Բերդիս կոչիլ Յախաց քար, թէ և մերձակայ մենաստանն եւեթ յայս անուն կոչի ի պատմաց, այլ յայտ է թէ ի քարէն և յամրէն էառ վանքն զկոչումն: Աւանդեն բնակիչք կողմանցն՝ Սմբատայ շինեալ զբերդս, յիւր անուն Սմբատայ բերդ կոչելով. եթէ ստոյգ իցէ՝ ի ճահ գայ այս Մեծն անուանեալ Սմբատայ գահերէց իշխանի, որ՝ ամրութեամբ կայանին ձեռնունայն դարձոյց զգորսավարն Յուսիսայ. բայց, որպէս ակնարկեցի, ոչ յիշի ընդ ամուրս Սիւնեաց՝ յայս անուն բերդ: Առ ստորոտով բերդին և շուրջ զգետիւն և ի խոնարհ մինչև յԵ յՍստին գիւղ, դժուարակիտ ձորավայրն յի է գերբկար տանց, աղօրեաց, ձիթահանից, խաչվիմաց. զորս հետախոյզ առնել գործ տաժանելի է, թերեւս և ոչ անվտանգ: Մնացուածք նոյնզունակ շինուածոց զըլտանին և ի գեղն իսկ Այակեագ, որ արդ թուրքաբնակ է: — Յետին յիշատակողն Եղեգեաց, զոր գտաք՞, յելս ԺԵ դարու, երիս ասէ՝ այլ չորս եկեղեցիս անուանէ ի նմին. ասելով, «ընդ հովանեաւ երից տաղաւարացս, » Սոռք կաթուղիկէիս և Սոռք Աստուածածնիս և Սոռք » Ստեփաննոսիս, և կենդանարար Սոռք Նշանիս »: չորս եկեղեցիս առանց անուան յիշէ և Զաւլայեանն յայլեայլ կողմանս աւանին և բերդին, որ թէ նոյնք և թէ այլք իցեն՝ ոչ գիտեմ, այլ յիշին այսպէս. մին յարեւելս կոյս ամրոցին ի միջի պարսպապատ գերեզմանատան, վայելուչ կաթողիկէիւ, շինեալ ըստ արձանագրին՝ որ ի ճակատու լուսամբտի արեւելակողմանն՝ ի Ստեփաննոսէ պատմէ Սիւնեաց եպիսկոպոսէ, այսպէս ունելով.

**Ես Տէր Ստեփաննոս որդի իշխանաց իշխանի մեծի Տարսայիճին հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հաւր իմոյ...**

**Զեզբրք լուսամտին գրեալ է. Տէր Յիսուս Քրիստոս Աստուած աւգնէ Բուրթէլին, Բէշքէնին եւ Իվանէին.**

Շուրջ զեկեղեցեան կան դամբանք, մին արձանագրեալ յամի 1333, միւսն յամի 1344.

**Թվ. 22Բ. Այս է հանգիստ Խաւչին դուստր Դովիննց Պարոն վահրամին:**

<sup>1</sup> Բանք յիշատակագրիչ այսպիսիք են. «Եւ վերագիտող այսմ նունանդի Պր. (Պարոն) Տէր Եղիշա արքեպիսկոպոսի որդոյ իշխանաց իշխանի Պր. Սմբատ (Սմբատայ) որդոյ մեծին Տասաւ Վր. ևւպլն:»  
<sup>2</sup> Զստեղծութեան, որոյ գրեալ է յԵղեգիս, աւետարան

մի վասն Դհրաթի Ազարթի աշխարհիկ երկնու, (որպէս Սահալայ և Սիլի խաթունի և Յօր Սահալ քանոնայի), որ յետոյ կրօնաւորեալ կոչի սորոս-ձաղարիս և սէրդոյ. և նա վաճառէ զգերսըն եօթն Դարլին (մարշիլ?) Բարդէ ումեմ եղիսկոպոսի. յիշէ ընդ այլս և զՅօրեղարս նորա Յ-ի-Բ ձիւնոս:

† ԹՎԻՆ ԶՂԳ. Այս է հանգիստ Պարոն Վաղթանկին որդւոյ Պարոն Ոմեկին.

Սակաւուք հեռի յեկեղեցւոյս ի ստորոտ քարածեռի միում քանդակեալ է խաչարձան բարձր իրրեւ 3 Չափ.

Թ. Հայոց ԶԻԸ. Ի բարեպաշտ իշխանութեան Տարսայիճին Շիրինշահի ?



48. Անտարտն գրեալ յԵղեգիս ի վերոյիշեալն Չաքարիայե (տ. յէջ 148) յամի 1495-6.



որդի Գրիգոր կանգնեցի խաչս ի . . . ամուսնոյ իմոյ(եւ) զաւակաց իմոց .  
Աստուած ողորմի Տիկո ! . . .

— Երկրորդ եկեղեցին յարեւելակողմն քաղաքաւանին ունի և գաւիթ ընդարձակ (18 քայլ ընդ լայն և ընդ երկայ (10 քայլ յերկայնն, 8 ի լայն), այլ քայքայեալ է. կայն) ի վերայ չորից սեանց. գրեալ է յորմն յամի 1290,

**Այս է հանգիստ Տէր Աւագին. Թուին ԶԼԹ.**

— Երրորդ եկեղեցին բացագոյն ընդ արեւելս, ընդարձակ քան զերկրորդս (20 քայլ երկայն, 18 լայն) ի վերայ չորից սեանց ամբարձեալ սագալէն, յոյժ մանր քանդակօք դրանդեաց և լուսամտից և աւազանին. ունի երկուստեք խորանին աւանդատունս հանդերձ սեղանովք պատարագի. սալարկեալ է և յատակն. յեզերս աւագ սեղանոյն ի միջի քանդակաց նշմարին կիսեղձ անուանք Սմբատ, Աշոտ, Շահնշահ. և ի վերոյ դրանն,  
**Այ : է հանգիստ . . .**

Արդ՝ գրեցաւ ար  
աւ-էտարանս, ի Թվ  
անկնս հայոց շէտոյ,  
ի երաթողիկոս էն ան  
Լարգսի յաթոտար  
կղմիածնի : Եւ վերա  
դիտողայամ նա հա  
նգի արարեղիշա  
արքեպսի որդոյ եշ  
խանայ եշխանի ար  
ամայս՝ որդոյ մեծին  
առասանի՝ գորտրած  
ասացի զառմէղ ընդ

Երկայնս արարաւ  
ղ վերակացո- Թք :  
ի զանոն էն ու ու  
առամ փանթշահի  
ի նա հանգիս վայ  
ո ճորո, իմացրա քա  
ղաքս եղեղիս, լնդ  
հոգան էտ երից  
առաչաւ արացա ար  
կաթողիկէիս և ար  
անծածնիս և ար  
եղիանոսիս, և կէտ  
արարար ար նշանիս :

49. Յիշատակարան Աւետարանին գրերոյ յԵղեգիս, յամի 1495 (տ. յէջ 148-9).


Ի հիւսիսոյ արեւելից եկեղեցւոյն է ընդարձակ գե. ի սոցանէ ի միում սալաթոռի կանգնեալք ունին զար. րեզմանոց, և բազում տապանք և խաչվէմք ի նմին. չորք ձանագիրքս՝ աղօտացեալս ի պատկերիդ (Թիւ 51):

- 1. Մխիթարս կանգնեցի զխաչս հաւրն իմոյ Ամլկան եւ մաւր իմոյ Ամիսթէ :
- 2. Ես Ասլիկ գնեցի հողս քսան եւ եաւթն դեկանի եւ արարի Գե. րեզմանատուն Հայոց .
- 3. 4. Թիվ. ԶԲ. : Կամաւն Աստուծոյ Ես Մարգարէս կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն հոգոյ իմոյ եւ ամուսնոյ իմոյ եւ զաւակաց իմոց .

Չորրորդ եկեղեցին փոքրիկ (6 քայլ ընդ երկայնն և ընդ լայն) է ի Նր. գերեզմանատանս ի ձորափն գետոյն, վայելուչ կաթողիկէիւ. որոյ մէջ յօրինեալ է կարմիր և սեաւ քարամբք, ի վերայ երկուց որմայեց սեանց, ու ներսով աւազան յաջմէ և պատուհան յաշեկէ, և գաւիթ յառաջոյ (10 քայլ երկայն, 8 լայն), մանրաքանդակ շրջ-

լանակաւ դրանն: Յորմն հարաւային քանդակեալ է վիշապ երկգլխի և ժամացուցակ ի միջին: - Յարեւմտակողմն գերեզմանատանն կայ տապան նահատակի միոյ պատուեալ ի Հայոց և ի Պարսից կողմանցն, յորոյ վերայ գրեալ է և նոցա ինչ, որ որպէս և հայերէն գրուած ըն խանգարեալ է, այլ վերծանին բանչս.

... Զհոգիս՝ ճշմարիտ հաւատով եւ ուղիղ սրտիւ եւ լի շնորհաւք. նահատակեցաւ եւ Քրիստոսի լուսոյն արժանի եղեւ, եւ Քրիստոսի ողորմութեանն հասաւ... ամենայն ցաւոց բժիշկ... յաղօթս յիշեցէք եղբարք մեր Սուրբ Ներսէս... վասն անուանն Քրիստոսի.



50. Սմիտսոյ բերդ.

Ի վիմի միում երեւի Թուական ՊԱ (1352):—  
Ի հարաւակողմն պարսպի գերեզմանատանն ազուցեալ է վէմ մի նշանաւոր, քանդակ պատկերաքն Տարսայիճի և կնոջ իւրոյ Մինայ, այրն պերճազգեաց, մա-

նեկաւոր և Թագակիր<sup>1</sup> բազմեալ ի գահոյս. կինն գանգրաշէր և պահուճազգեստ և խոյրակիր, աջ զգօտուով ածեալ, զձախն ի վերայ ծնկանն ունելով. իսկ արձանագիր վիմին է Թուականաւ 1274 ամի՝ այս.

**Ատուած շնորհաւոր առնէ (զ) դարբաս Պարոն Տարսայիճի եւ ամուսնոյն իւրոյ Մինայ Խաթունին. ի Թովին Հայոց ԶԻԳ՝**

<sup>1</sup> Ըստ Քաղաքաբնակչի՝ ճանաչեց լուսոյ են զգլխոյն: Սա ասէ գտեալ զքանդակն ընդ հողով և վերստին ծածկեալ, զի մի խորտակիցի յայլադեհիցի: Ըզմալի էր բանալ և ընդօրինակել:  
<sup>2</sup> Զաւալեան գրէ զԹուականն ԶԻԳ, որ է 1294, անպատշաճ.

զի Տարսայիճ մտեալ էր յամի 1290. Իսկ ամն ԶԻԳ, 1274, ուսման ամ է իշխանութեան նորա, յորում՝ ոչ գիտեմ առեալ էր զՄինա ի կնութիւն եթէ ոչ. վախճան նորա եղև ի Դուրդուսի իւրում յԱրփա, և ոչ յԵղեգիս:

Ի հիւսիսակողմն բերդին կայ ընդարձակագոյն եւս գերեզմանատուն ի ձորամիջի, բազում մանրաքանդակ մահարձանք, յորս նշանաւորք են երկրքին մեծամեծ

խաչվէմք ի միում սալաթուռի, յոյժ ճարտարորէն դըրուագեայք. մին միաստանի վէմ (10 կանգուն բարձր), ունի արձանագիր, յորում պակասէ ինչ բառ.

**Ի բարեպաշտ իշխանութեան Տարսայիճի եւ Աւետիս Մխիթարայ որդի Խոցադեղոյ ... ԹՎԻՆ ԶԼԲ.**

Միւսն (18 կանգուն) հիւսեալ քարամբք և խաչվի մաւ ի միջի, պատկերք և անուամբք Քրիստոսի, Ս.

Աստուածածնի և Յովհաննու աւետարանչի, և ի չըջանակին գրեալ է այս ինչ, յամի 1340.

**Այս գայիսոն մխեալ արեամբ աւծելոյն Յիսուսի, կանգնեցաւ իշխանութեամբ Բուրթէլին<sup>1</sup>. մեք Գրիգոր (եւ) Մխիթար (ի) բարեխաւսութիւն մեզ եւ ծնողսց մերոց. ԹՎԻՆ ԶԶԹ.**

Կէս արձանագրիդ երեւի (ի պատկերին, Թիւ 47) և կէս եղծեալ թուի արդ. Ոչ հեռի աստի կայ այլ արձան-

քանդակ, յորում առ պատկերաւ Տիրամօրն<sup>2</sup> գրեալ է, յամի 1273,

**Աւրհնեալ Աստուածածին (եւ) իւր միածին Յիսուս Քրիստոս Աստուած. եւ թուական ԶԻԲ.**

— Մերձ խաչարձանացս կայ մեծատարր կոչկոռ վիմի, վերին երեսն սեղանաձեւ տաշեալ և կոփեալ: — Ամենայն յիշատակարանքս նշանակեալք ցուցանեն զբարգաւան ժամանակ իշխանութեան Որբելեանց, ի կիսոյ ԺԳ դարու ցկէս ԺԻ ին, որոց յետագայիցն ծանօթութիւն ինդրելի է յարձանս տապանացն:

» Թագաւորութեանն Գագկայ (Բ), հայր ո՞նն վանիցն » վարդիկ անուն՝ չինէ պայծառ եկեղեցիս երկու ի » հանգստարանի սուրբ հարցն. զմին զմեթսայարկ, յա- » նուն սրբոյ կարգապետին, և զմին սագաշէն՝ հրաշալի » յորինուածովք»: Գրեաթէ յիրար կիցք են եկեղեցիքըն. վասն որոյ արդ յայլազգեսց Ղօշափանք կոչի տեղիս (զոյգ նշանակելով, որպէս Ղօշափանքն-Հերհերոյ, և Հոռոմոսին). և ըստ բաղդի կանգուն կան թէ և ոչ բուրովին: Եկեղեցին Ս. կարապետի յարեմտից միւսոյն (10 քայլ երկայն, 8 լայն) մեծամեծ յղկեալ վիմօք պատեալ, ըստ բանից պատմչին ունի սրածայր զըմբէթ՝ ի վերայ շղթայաձեւ դրուագեալ շրջանակի բուրովին՝ ամբարձելոյ ի վերայ վեցից որմնայար կարմրագոյն սեանց. բաց յաւազ խորանէն են ի նմին և այլ չորք մանուկ: Ի հարաւային որմն արտաբուստ՝ քանդակեալ է ի ճարտարակերտ շրջանակի՝ արծաի մագլեալ զցուլ. ի հիւսիսակողմանն՝ ցուլ և առիւծ սպառնալեօք ընդդիմահայեացք. նրբին արուեստակեալ են և քանդակք արեւմտեան և արեւելեան երեսացն: Ի վերայ հարաւային դրանն արձանագրեալ է մեծատառ.

59. Յարեւելից հիւսիսոյ բերդին իբրեւ երկու մղոնաւ բացագոյն ի սարահարթ լեւնավայրի կայ հռչակեալ մեծաստանն Յախաց-քար կամ Յախաքար, գրեալ եւս Յաղացքար, մի յայնց վանորէից՝ որ թ կէս Ժ դարու հաստատեցան առ Թագաւորութեամբ Աբասայ Բագրաւատունոյ, որոյ հիմնադիր կամ առաջին վանահայր եղեւ Ստեփանոս ո՞նն, գովեալ յԱսողկայ՝ (Բ, էօ), վասն բարեւոք կարգաւորելոյ զվանան՝ հանգոյն այլոց վերահաւտատաղաց վանորէից ի նմին դարու, ուսուցանելով կեալ « միաբանական օգնութեամբ անզրաղ յամենայն ինքնաւ սիրութեան հոգոց», և այլն. Բստ այսմ և պատմչին Սիւնեաց, « Բարձրահռչակ և սուրբ առաքինարան » կոչէ: Յետ իբր դարու միոյ հաստատութեանն՝ յամի 1041 « ի

**Տէր Աստուած ողորմեա Գագկայ ի քում գալստեանդ եւ պահեա ի չարէ ...**

Վերոյիշեալ Հօր Վարդկայ մնայ կիսեղծ արձանս. և միւս ի ներքուստ կողմանէ դրանն գրեալ կարմրագեղով.

**Ողորմեա Քրիստոս Աստուած մեր Վարդկայ ի քում գալստեանդ, որ-**

<sup>1</sup> Հաւանօրէն Բուրթէլս այս Թոռն է Տարսայիճի և որդի Եւկուսի՝ եղբոր պատմչին և մեարապօլտին Սիւնեաց:  
<sup>2</sup> Լուսազրոյն զայս արձանքանդակ ետես յայգւոյ մերձ յԵղեզնիս, ուր յայտ է Թէ փոխադրեալ է. զպատկերան կամարի Ս. Աս-

տուածածին և երկուսին Մարեմանս. սակայն կերպարանք փոքրչին նշմարին ի վերոյ՝ և յերուսն իսկ լուսաաղբի:  
<sup>3</sup> Պատկերն (Թիւ 59) ցուցանէ զի յետ ստորագրութեան Զաւլուսանի՝ բթացեալ է գմբէթն, անկանելով զազաթանն:





Ճ 1 . Խաչաքանդանքի զերեզման Ծախաքանդակի (տ. յՖՂ 150) .

պէս աւազակին ի խաչին եւ մաքսաւորին ի տաճարին . Ես Վարդիկ Հայր... այլ սուրբ Կարապետս... արդ՞ որ Սուրբ Սարգիսոյ աւր այս հինգ եկեղեցոջն ժամ Վարդկայ չառնողն ի Սուրբ Կարապետէս եղիցի նզովեալ իսկ առնելին աւրհնած եղիցի<sup>1</sup> .

† Ի ԹՎին Զ<sup>3</sup> . Այս գիր ճշմարիտ յուսոյ յիշատակ հոգւոյ առաջն տեղի ? Տարսայիճի իշխանաց իշխանին որդի մեծին Լիպարիտի , եղբայր Աբմբատայ արքայի կողմնակալի այսմ նահանգի, որ իշխեցաւ Է ի Բարկուշատայ մինչ ցՔառնի սահմանք մեր ? Երասխայ . մեր յոյս Քրիստոս է... զհոգւոց մերոց տուաք ի սուրբ ուխտս զՅախաքարի հողն ի հայրենեաց մերոց , ի Գեղարքունի զգեղն Գառնի եւ ի Մառաշիւտի զմեր ձեռատունկ այգին Ա... ութից . Սպասաւորք Տէր Գրիգոր եւ այլ միարանք սահմանեցին Ձատկի սուրբ տաւնին , առաքելոց Պետրոսի եւ Պաւղոսի . եկեղեցիս ամենայն պատարագն Ա աւուր ինձ առնեն Տարսայիճիս , Ա աւրն ամուսնոյ իմոյ Մինայ խաթունին . Արդ թէ ի մերոց կամ յաւատարաց կամ յիշխանաց հակառակի, ՅԺԸ հայրապետացն նզոված լինի .

Վկայ արձանիս որդի արձանագրողին Ստեփանոս եւ պիսկոպոս ի պատմութեան իւրում՝ ուղղէ զայժմեան ընթերցուածն , այսպէս . « Ետ և ի վանսն Յախաքարոյ՝ » զիւղ ի Գեղարքունի զԳառնակերն , և այգի մի ի Մահ . » ռակածորի , և գրէ ինքեան արձան ի վերայ Սրբոյ » Կարապետին , և կարգէ պատարագս երիս ամ յամէ . » և փակէ ահագին նզովիւք , զի մի խախտեցեն զհո . » գեցատուրն զայն » : — Երկրորդ եկեղեցին՝ զորոյ ա .

նուն ոչ յիշէ պատմիչն . Սուրբ Յովնաննէս կոչի այժմ , և է փոքր , սրբատաշ քարամբք կերտեալ , նոյնպէս և գաւիթըն փոքրագոյն յառաջոյ՝ յարեւմտից կուսէ ( շորս քայլ քառակուսի ) , յորոյ ի վերայ դրանն մատրանաձեւ իձե է փոքրիկ՝ սեղանով պատարագի . յաջմէ և յահեկէ դրանն մէն քանդակագործ խաչարձանք մեծամեծք , իբրեւ երկու և կէս Զ . բարձրութեամբ : Ի վերայ դրան գաւթիս կայ հին արձանագիր շինողի եկեղեցեացս այսպէս .

Ես Հայր Վարդիկ առաջնորդ սուրբ ուխտիս Յախաքարիս շինեցի ըզսուրբ կաթողիկէս եւ կանգնեցի զՆշան<sup>3</sup> Սուրբ Երրորդութեան վասն իմ հոգւոյս փրկութեան , թերեւս ողորմութիւն գտից ի յապագային , ի տիեղերական հրապարակին ուր բանքն սպառնին եւ գործքն թագաւորեն . Արդ ով սրբազարդ քահանայք որք զսուրբ պատարագն համարձակ մատուցանէք , զիս յաղաւթս յիշեցէք առաջի զենլոյն Քրիստոսի . Ամէն շաբաթ աւր զայն ինձ առնէ այն քահանայն որ ի սմա պատարագ մատուցանէ .

Իսկ ի ճակատ արեւմտեան դրան եկեղեցւոյն որ հայի ի գաւթին՝ գրեալ է նոյն առաջնորդ յամի 1061 .

Թուին ՇԺ<sup>4</sup> կամ եղեւ ինձ Հայր Վարդկայ եւ ամենայն<sup>5</sup> եղբայրց գրել զյիշատակ վասն Վարդայ՝ Զպարէի որդւոյ, որ մեծ յուսով երեստ զԲվեալայ


1 Ըստ Քաջբերունւոյ « արեւած է յԱստուծոյ » :  
2 Թուանշանն Զ նշանակ է 1281 ամի , քայց պակասն մանր թիւք , և հարկ է թէ յետ 20 ամաց եւս գրեալ իցէ :  
3 Զաւալեան գրէ , կաթողիկէ սեթեթ , քիչի , եւայլն :  
4 Զաւալեանն և Քաջբերունի ԶԺ ընթերցուածն՝ այլ վերոյգրեալ բանք պատմչին Սիւնեաց և վայելակերտ շինուածն , յայտ առնեն զճնութիւն , որ է ի կէս ԺԱ գարու և ոչ ԺԳ ի :  
5 Փոխանակ տիեղեցի Զաւալեան գրեալ է սրբո :



ւնարգ եւ Սիդայի այգին եւ այլ շատ իրք. եւ մեք գրեցաք որչափ ի հաստատութեան է եկեղեցիս զՎարդավառին շարաթն ժե ժամ. Ար խափանէ ՅԺԸ հայրապետացն նզոված է եւ մեր մեղացն տէր է.

Յարեւմտեան որմն ի ներքուստ գրեալ է յամի 1230. նոյնպէս և ի հարաւային որմն գաւթին.

ԹՎԻՆ ՈՂԹ. զՍամուկնայ յիշեցէք ի Քրիստոս.



ՅՅ. Յախաց քար (Ղօշայ փանք).

† Յանուն Աստուծոյ, ես Մարտիրոս զիմ Եզեզեաց հայրենի հողն զՓռ-րադափնիկն ?, զԼյայռաւեռասնի ? ի Յաղաքարի Սուրբ Յովհաննէս տուի. իմ հայրենեաց անդարձ էր որ իմ մահուն յետեւ Յաղաքարէն որու ոչ ում հետ ոչինչ հաշիւ (չկայ)... Ար զիմ անդարձն յետ դարձուցանէ ՅԺԸ հայրապետացն նզոված եղիցի.

Սակաւուք հեռի ի Յախացքար վանաց յարեւմտակողմին կայ այլ վանատեղի պարսպափակ, թէ և զարդիս քայքայեալ, յանուն Ս. Աստուածածնի, փոքր եկեղեցեալ (9 քայլ երկայն, 8 լայն) ի վերայ չորից որմնայար

սեանց, հինգ սեզանովք. ունելով և ժամատուն ընդարձակ (30 քայլ երկ. 8 լայն) ի վերայ վեցեց որմնայար սեանց, որոյ յարկն անկեալ է: Գուռն ի հարաւոյ կուսէ մուծանէ յայլ մատուռն կամ ժամատուն (12 քայլ

երկ. 5 լայն) հաստատեալ նոյնպէս ի վերայ վեցից որ... տապան Ուքանայ որ թուի յիշխանազանց խաչենոյ, այ-  
մնայար սեանց, համակ կոփածոյ քարամբք. և ի միջի սու արձանագրաւ 1336 ամի.

**Չագնիւն յընտրեալսն եւ ղքաջն ի զաւրականսն զՊարոն Ուքանն յիշե-  
ցէք. թվին ԶՀԵ.**

Ի հարաւակողմն պարսպի վանացս կայ միւս եւս եկե... և 8 ի լայն), և աւերակք բնակարանաց, և զերեզմանք  
ղեցի բարձրայարկ ի վերայ շորից որմնայար սեանց հաս... շուրջանակի: Ի վերայ դրան պարսպի վանացն արձանա-  
տատեալ, ընդարձակ ժամատամբ (20 քայլ յերկայնն գրեալ է յամի 1222.

**Թվին ՈՀԱ. Նորոգեցաւ սուրբ Աստուածածինս ի ձեռն Գրիգորայ ,  
եւ միաբանքս գրեցին իւր տաւնիս Ա ժամ. Կատարիչքն աւրհնին յԱս-  
տուծոյ .**

Իսկ ի վերոյ դրան եկեղեցւոյն արտաքուստ, և ի ներքին կողմն դրանն, և ի հարաւային որմն գրեալ են.

Ես Գրիգոր որդի Սմբատայ Ոստնի տէր, երկու դռնիս ? տնկեցի, ե-  
տու ի Ս. Յովհաննէս. Գրեցաւ ի տարին ԺԲ աւր ժամ պատարագ. Որ  
գրոյս հակառակ(ի) ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի.

† Կամաւն Աստուծոյ ես Էաչի որդի Հասանայ թոռն Պռաւշայ միաբանե-  
ցայ սուրբ ուխտիս Յախաքարոյ, եւ ետու յիմ հայրենեաց ի Արկղունիս  
զմեր ձեռատունկ այդին Նորակերտ իւր ջրովն, մեր ? եղբաւրն Տէր Աւրբէլի  
Ովանէի ? Միաբանքն սահմանեցին ի տարին Գ պատարագ մեզ եւ ծնո-  
ղաց մերոց եւ ամուսնոյն իմոյ Մամայ խաթունին ի տաւնի Դաւթի եւ Յա-  
կորայ. Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. թվ. ԶԿԶ.

† Ի թվին ԶԿԶ. Կամաւն Աստուծոյ ես Գրամիկ միաբանեցայ սուրբ  
ուխտիս Յաղացքարոյ եւ ետու ի հալալ ընչից իմոց... նոյն այգոյն...

Յետնագիր ծանօթ արձան է ի ստորեւ արձանին Էաչոյ, յոյժ Թերի ընթերցեալ, գրեալ յամի 1367.


Կամաւն Աստուծոյ յիշխանութեան Իւանէի, ի հայրապետութեան Տեա-  
ռըն Ներսիսի... որդի Սամիսոնայ (եւ) ամուսին իմ Արուղ խաթունս  
թաղեցաք մեր Սամիսոն որդիս ի վանքս, մեք էլ գերեզմանահարաք ? մա-  
տաղ արարաք եւ ելք ? մեր ապրանաց հրամանաւ ? Արտափինեցի Ք...  
մուխի ար ? ծախեցի ամենայն հարկէ ազատ. Սիրկնայ ? այգին ագինն  
Բուրզա թուղքի... գեղոյ... գերի.. թափեցին ք ? այգի... չորեքս. Ա իմ  
հոգւոյս, Ա ամուսնոյ խաթունի հոգւոյն. Ա Սամիսոնայ հոգւոյն. տուաք  
ի Սուրբ Յովանէս վասն ծովացեալ մեղաց մերոց. Սպասաւորք Ներսէս  
(եւ) այլ միաբանքս տարին վեց պատարագ տուին մեզ (եւ) ծնողաց մե-

1 իմա ոչ զկաթողիկոս այլ զեպիսկոպոսն Սեւեեաց, որոյ է Թերիս պատկերն նկարէն յէջ 20:

րոց . ով Հակառակի դատի յԱստուծոյ . մասն ու բաժին Յուդային այլ խաչահանուացն առցէ . ԹՎին ՊԺԶ .

Գուցէ այս եկեղեցիք են հնգերեակն՝ յորս աղօթել վա- սըն իւր արձանագրէ Վարդիկ հայրն : Ընդ այլոց վանո- րէից և զՅախաջքար սեփականեալ էր Տարսայիճ ի մասն ժառանգութեան որդւոյ իւրում եպիսկոպոսի Սիւնեաց : Այդան յոլովութիւն եկեղեցեաց և արձանք հոյակապ իշխանաց և եպիսկոպոսաց Օրբելեանց՝ յայտ առնեն զի նշանաւոր կրօնական այլ և իշխանական տեղի եղեալ է Յախաց քար, և եպիսկոպոսանիստ իսկ . որպէս ծանու- ցանէ յիշատակարան աւետարանի միոյ ստացելոյ ի Տէր

Ստեփանոսէ եղբորորդւոյ պատմչին, գորմէ ասի (յամին 1332) լինել «զուիս արհի երից աթոռոցս Սիւնեաց, Տա- » Թեւոյ և Նորավանից և Յաղաքքարոյ, պետ ԺԲ գաւա- » զանաց » . բայց առանձին յանուանէ զըզ եպիսկոպոս տեղւոյս ոչ գտի և ոչ զժամանակն : Վերջին ծանօթ ինձ յիշատակ շէն լինելոյ տեղւոյս՝ է 1462-3 ամի . յորում գրեալ է անդ աւետարան «ընդ հովանեաւ Ս . Աստուա- » ծածնիս, և Ս . Կարապետիս երկնամասն կաթուղիկէի» : Իբր 25 ամաք յառաջ քան զայս գտանի գրեալ Շարական



53. Աւերակ Ս . Աստուածածին եկեղեցոյ մերձ ի Յաղաց քար .

մի աի գաւառիս Եղեգեաց, ի վանս Յաւղաց քար ընդ «հովանեաւ կենսարեր Ս . Նշանիս . . ձեռամբ Մատթէոս » քահանայի» : Մարթի վրիպմամբ գրեալ Յաչոյաց, բայց պիտանի է յայտնութիւն անուան (Ս . Նշան) եկեղե- ցւոյ : Արժանի քննութեան է և որ շուրջ զեկեղեցեօքն զերեզմանոցն, ուր խուռն բազմութիւն է խաչարձանաց, յորոց մարթ էր ստուգել ոչ սակաւ ինչ՝ եթէ ուշի ուշով հետազօտեալ էր :

60 ի Հս . արեւմտից Եղեգեաց իբրեւ երկու մղոնաւ բացազոյն յեզր գետակի միոյ ի դալարազուարճ վայրի

է արդ թաթարաբնակ գիւղն Հորվատիս կամ Ղորթա- դիկ 30 տամբք, որոյ մերձաւորութիւն ի քաղաքաւանն պահունջէ ոչ աննշան տեղի լինել երբեմն . բայց անունն այլանդակեալ ոչ ներէ գուշակել որպէս ինչ կոչէր ի հը- նումն . ունի ինչ մերձաւորութիւն ընդ կորոտիւնը ա- նուն գեղջ նշանակելոյ ի հին Յուցակին, այլ ոչ կարեմ հաստատութեամբ ինչ ասել : Աւերակ նոր կամ նորո- գեալ եկեղեցւոյ է ի սմին, զորոյ շինութիւն յայտնէ նոր արձանագիր 1692 ամի . է ի նմին և վիմափոր աւազան կիսեղձ արձանագրու .



» տոնեայ, և զամենայն առուրս իւր սպազաւորէր Սրբոս. » ցըն. որ և յետոյ երթեալ քրիստոնէիցն՝ ամբողջեցին » զՍուրբան, և շինեցին մատուռն ի վերայ »:

Հանդէպ Ոստին գեղի, սակաւուք ի բացեայ, ի հարաւոյ իւր և գետոյն Եղեգեաց (որ է յահեկէ սորա) յարեւելից Հասանքէնտ գեղի և ի հիւսիսոյ Նաճաֆ Արշայ, գրեալ է հաւասար հեռի յերեցուն եւս կիսով փարախաւ շափ, ի բարձու ծառաւէտ և պողաւէտ սարհարթի կայ Շատի վանք, որ և Շատիկ անապատ, զոր ոչ յիշէ յանուանէ պատմիչն, այլ տեղադրութեամբն յայտնէ զնոյն. քանզի ասէ. « Երանելի եպիսկոպոսն » Սինեաց (Յակոբ յամի 929) պատահեալ ի տեղի » մի յԵղեգեաց ձորի. ի վերայ Ոստին գեղի, և յոյժ հիւս » ցեալ ընդ նա վասն առաւել գեղեցկոյքեան վայրացն և » յոյժ զառանց և ապահով գոյոյն, և շարժեալ ի (վերին) » տեսչութենէն՝ սկիզբն առնէ շինուածոյ, հրամանաւ » Սմբատայ իշխանի և Սոփիայ կնոջ նորա, և Սահակայ » եղբոր նորին. և կանգնէ ի նմա տուն Աստուծոյ ի քերա » ծոյ վիանց, և զանազան երանգօք զարդարէ զնա ի նկարս » գեղեցիկս. և կոչէ զՍմբատ և զՍահակ ի նաւակատիս » տաճարին: Եւ սահմանեն ժառանգութիւն նմա զամե » նայն լեռնակողմն և զառ ի ներքոյն նորա ի գետ ան » ղըր, բարաստանս բազումս և արտորայս. և հաստա » տեն զնա տուն կրօնաւորաց ի փառս Աստուծոյ »: —

Վասն դրիցն գրէ Զալալեան, (բայց չփոթեալ ընդ Շատանեայ վանից), « յարեւելից ունի զբարեբեր ծառա » զարդ խորածոր, ընդ որով անցանէ կարկաճասահ և » քաղցրահամ վտակ ջուրց, լի կարմրախայտ ձկամբք. » իսկ ի հիւսիսոյ և յարեւմտից՝ զժաղկածին և զպա » րարտարօտ բարձրաբերձ լերինս »: Բայց ոչ ընծայէ արձանագիր ինչ հին. և զի ի պատմչաց եւս ոչ յիշի մենաստանս, անծանօթ մնան մեզ անցք և յիշատակք նորին ի սկզբանէ անտի ցկէս Ժէ դարու. յետ որոյ, ըստ պատմելոյ Զաքարիայ Սարկաւագի, « Եկին մուղ »

» տեսիք յԵղեգաձորոյ՝ ի Շատիկ անապատէն՝ (առ » Յովհաննէս Կարբեցի ճգնազգեաց առաջնորդ Յով » հաննավանից և Սաղմոսավանից), աղայէին և ասէին. » Մէք ոչ գիտեմք զկարգ և սահմանք անապատի. դու » եկ և կարգաւորեա զմեզ: Եւ ըստ աղաչանաց նոցա ե » լեալ զնաց. և ըստ կարգի անապատի կարգաւորեաց զնու » սին ուղղութեամբ և ամենայն բարեձեւութեամբ: Վա » արն որոյ մասաց սատանայ ընդ բարի վարս նորա »: զի մի ոմն ի միանձանցն Սահակ Շամախեցի՝ դեղ մահու նի » թէ նմա. այլ նա զգայ, և « զանխլարար ելեալ անտի » միաբանօք իւրովք դառնայ յԵջմիածին և ի Սաղմո » սավանս »: — Թերեւս առ նովաւ իսկ կամ դոյզն յետոյ յամի 1666 առաջնորդ վանացն էր Սարգիս վարդա » պետ: — Յետ սակաւ ամաց, այն է յամի 1674, Զու » ղայեցի վաճառական մի ծերունի եօթանանամեայ, որ » պէս պատմէ ինքնին ի յիշատակարանի յիւրում ձեռ » նագիր Մաշտոցի, եկեալ կրօնաւորի աստ « յԱնապատի » որ Շատիկոյ վանք կոչի, բազում սիրով, յուսով և հա » ւատով, բախմամբ սրտիւ... գրէ զկէս գրոցն և իւ » րովք ձեռօք դեղագործեալ գծէ, « Թէ կանոնն, թէ ծաղ » կի թուփն »: Յիշէ ընդ ծնողացն (Աւագ և Եղիսա » բեթ, և կնոջն՝ Անճրեւիւրդ), « զԱնապատիս Հայրն՝ » Տէր Մովսէս վարդապետ, որ բազում տքնութեամբ » զանապատս նորոգեաց և շինեաց զեկեղեցին՝ որ զա » նուն Սոբոր Սիօն կոչէ: Յիշեցէք զՋուղայեցի Ընտրեան » որ վերակացու եղեւ անապատիս, բազում անօթք եկե » ղեցոյ զարդարանք երբ (ի) Զուղայոյ: Դարձեալ » յիշեցէք յանապատիս միաբանքն, որ յիտան փաքսոսն » կրօնաւոր կայ ի ներսն. Տէր Աստուած անփորձ և ան » սասան պահեսցէ »: Կանգուն կալ շինուածոցն՝ յայտնէ և զնորութիւնն, այն զի չգտանի և հին յիշատակարան. և որ կայն՝ այլուստ բերեալ և ազուցեալ է, որպէս առ հարաւային դրան եկեղեցւոյն և ի վերոյ նորին արձան » քըս այսօրեկ »:

(Հրամանաւ կամ կամօք) Բարեպաշտ իշխանին Սմբատայ եւ Վահրամ եւ ամուսինն իմ եւ որդիքն իմ Սմբատ եւ Ուքան տուաք Վաղցաւնոյ ոռոռոյ արտըն ի Ս. Սիոնս Գ. Ժամ. Բ ինձ. Ա ամուսնին իմոյ.

† Ես Տէր Սարգիս տվի Սուրբ Մարտիրոսի իւր մտաւն ու Անգեղի ու Եղնիս Ժողովորդի Սուրբա...

Գտանի և թուական ԶԾԹ (1810) ի խաչվիմի ազուցելոյ յորմն կամարակապ սենեկի միոյ յարեւելակողմն եկեղեցւոյն, որում կից են և այլ երկու կամարակապ տեղիք. նոյնպէս և յարեւմտակողմանն, ուր և մեծ կըրպապատ գուր կամ հոր ցորենոյ: Ի նմին արեւելակողմանն են երկու տապանք, ի վերայ միոյն քանդակեալ ձեւըն գաւազանակիր, և գրեալ,

Դաւիթ Վարդապետ.

Միւսն ունի զքանդակ ողջոյն կերպարանաց հանգուցելոյն, նոյնպէս գաւազան յաջում և գիր յամի 1708.

Սոյն այս տապան Պետրոս դիտի, Գոլով տեղեալ Աստապատցի. Սորին ջանիւք ջուրս բերի. ՌՃԾԶ ԹՎի Առ Տէր մահուամբ վերափոխի.

Ոչ գիտեմ ստուգիւ այս թէ այլ անապատ է Շատիկու, որ հրեշտակաբնակ անուանի, և ուր մեռաւ Նահապետ կաթողիկոս յամի 1706, առաջնորդ գոլով նորին



յայնմ ժամանակի Ստեփանոս վարդապետ (1708). և ուր Ղազար Զահկեցի, յետոյ կաթողիկոս, գրեաց ըզպատմական գիրս իւր յաստուածաբնակ և ի հրեշտակակրօն յանապատն Շատիկու, «հրամանաւ գիտնաւ» կան վարժապատն (իւրոյ) Մեսրոպայ քրիստոսակիր » առաքինապերճ անձին սրբասնելոյ»: — Արդ յայտ յայտոցիկ է՝ զի զանխլացեալ ի միջին դարս չէն էր ի վերջինս. կանգուն կան բրգաւոր պարիսպքն քառակուսի՝ երկու դրամբք ընդ ԵՂ. և ընդ Մ. յորոյ միջի

յտին կայ և եկեղեցին տագաչէն կանգնեալ ի վերայ չորից սեանց, ութ պատուհանօք. որմունք բեմին նըկարեալ են պատկերօք տնօրինականաց Փրկչին, և հինգ խորշք են ի նոսին, երկուստեք ունելով աւանդատունս. որոց մին ունի սանդուղս ելանելիս ընդ մէջ որմոյն ի վերայ տանեաց սեղանոյն, հանելով մինչեւ յարեւմտեան դուռնն. յորոյ վերայ կայ խաչ կանգնեալ ի վերոյիջեալ ծերունոյ վաճառականէն Յակոբայ, բազումամօք յառաջ քան զկրօնաւորելն, այսպէս գրեալ.

**Սուրբ Խաչս յիշատակ է մահտեսի Յակոբ Զուղայեցուն եւ ծնողաց Աւագին եւ Եղիսաբեթին. Թվին ՌՃԵ.**

Առաջի դրանս է ժամատունն ութ սեամբք (18 քայլ երկայն, 8 լայն) քանդակազարդ շուրջանակաւ տանեաց: Ի հարաւակողմն պարսպափակ միջոցի վանացն են երեսնիւ չափ սենեակք քարաչէնք կապուտագոյն վիմով, և ներքնատուն սեղանատամբք ընդ նոքօք (երկայն 100 քայլ, 15 լայն). ի ճակատ բարձու բնակարանի վանահօրն արձանադրեալ են տիրական անուանքս.

**† Տէր Յովհաննէս.**

Քարաչէն է և Սեղանատունն յերկուս բաժանեալ, 12 սեամբք (25 քայլ երկայն, 10 լայն), և աւագան յարեւելեան ճակատուն: Կան և այլ քարաչէն սենեակք յայլ կողմանս, զատ յաւերակացն. գոն և ի միջի աշտարակացն մանր խցկունք: Երկու դրունք են վանացն, մի յարեւելեան միւսն յարեւմտեան կողման: Արտաքոյ պարսպին են գոմք անասնոց նոյնպէս քարաչէն (23 քայլ երկայն, 11 լայն) արձանազրաւս յամի 1739.

**Տէր Աստուած Յիսուս Քրիստոս.**  
եւ ի վերայ այլոյ սենեկի,

Շնորհաւքն Քրիստոսի ի հայկազեան Թուին ՌՃՁԸ<sup>որդի</sup> ես յաջորդ սուրբ Ուխտիս Անտոն վարդապետս նորոգեցի զտեղիք անբանից, ի վայելումն միաբանից.

Յեշատակ շինողի վանացս կայ և ի խաչվիմի ի տապանատանն որ ի Հս. ԵՂ. վանացն՝ ի բարձրաւանդակի.

**Խաչս յիշատակ է Զուղայեցի մահտեսի Յակոբ վաճառականին. Թվ. ՌՃԺ.**

Առ նմին կան այլ եւս տապանք. միոյն արձանագիր է,

**Այս է տապան Բստեցի մահտեսի Պետրոսին.**

միւսոյ՝ որ որորոցաձեւ է. **Այս է տապան Աստապատցի մահտեսի Պօղոսի.**

Ի Հր. արեւմտից վանացս և Ոստին գեղջ մերձ ի խառնուորդս Սուլեմայ գետակին յեղեգեացն, յահեկէ սորին կայ Հասան-քէնտ, հայաբնակ, փոքրիկ գիւղ, 30? տամբք, հաստատեալ ի գաղթականէ եկելոյ ի Պարսկահայոց: — Ըստ նախագրեալ պատմութեան նա հատակելոցն ի Պարսից՝ յայտնի լինել յայսմ սահմանի Անգեղ գիւղ հին Յուցակին, որ և վկայի ի քննողաց՝ իբրեւ մղոնաւ և կիսով հեռի լինել ի Հր. նորոյ գեղջն: Անդ յետ կոտորելոցն ի Սրկղօնս, Պարսիկք «հասեալ

» կիսոց՝ յստորոտ Բերդաքարի միոյ ի նեղ ձորակի անդ, » կոտորեցին, որոց զխաւորին անուն Մարտիրէ. որ » և տեղն կոչեցաւ Անգեղծոր»: Է արդ ընդ բերդաքարին կամ ի լանջս բլրոյ միոյ մատուռն մի քարաչէն յոյժ փոքրիկ (6 քայլ երկայն, 4 լայն), զոր և Ընգեղի մատուռն կոչեն մերձարեւակքն և գան յուխտ. այլ նահատակի նորոյ համարին զայն հանգստարան, աղկան միոյ կամ Թուրք երիտասարդի հաւատացելոյ. է ի միջին վէմ տապանի, յորում գրեալ այլ ոչ ճշգրիտ ընթերցեալ.

**Զնորոգող սուրբ Նահատակիս ղհոգեւորն Պլձոնց յաղաւթս յիշեցէք ՂԿ իրակոս միակեց ի Քրիստոս Յիսուս.**

Կայ և խաչվէմ առ երի մատրանն Չի թուականաւ նրս, և զնահատակն ասէ՝ ի ժամ պատարագելոյն ըսպանեալ ի հինից, ըստ աւանդութեան:

Արտաքոյ արեւելեան դրանն և ի ներքս եւս երեւին հետք ջրմղոյ բերելոյ ի Թաքեաստուտուրան լեռնէ:

Ոչ կարեմ ասել ստուգութեամբ մի՞ յայտնեաց յիշեցելոց վանորէից Եղեգեաց ձորոյս՝ եթէ արդեօք որիչ այլ իցէ Եղեգեաց Անապատն, յիշատակեալ յեւս ԺԵ դարու, (յամի 1498), Ամենափրկիչ եկեղեցեաւ. որում ընծայ ետ աւետարան մի Մատէ կին բարեպաշտօն, դուստրը Ղուսաբի և Գոռնանի<sup>1</sup>:

61. ՍՈՒԼԵՄԱՅ ԶՈՐ.— Վերջին և հզօրագոյն օժանդակ Եղեգեաց գետոյն է արեւմտագոյնն, որոյ ոչ նշանակի արդ անուն, այլ ըստ հնոյ նշանաւոր շինին և բերդի՝ կոչելի է յանուն Սուրբնայ, նովիմբ և զգեղեցիկ ձորն սկահաձեւ տարածեալ, յալմէ և յահեկէ շրջակայ

լեռանցն ընդունելով վտակս մանունս, որք մանրագոյն եւս ձորակս առանձինս ձեւացուցանեն, և առաւել ի հիւսիսոյ, ի թիկանց լեռանց ծովատաշտին Գեղարունոյ . յորոց գետն կոթայ իջանէ անդուստ ի ծովն, և աստի գետակս այս Սուլեմայ, որ առ վերոյգրեալ Հասան—քէնտիւ կամ Անգեղեաւ խառնի յԵղեգիս: Հանդէպ գեղղէ և սակաւուք յոյժ ի բացեայ՝ կայ հին կամարջ քարաշէն միակամար ի վերայ գետակին՝ սուղ ի վերոյ խառնրդոցն, և կոչի Չոռպոզ քեօփրիս, անծանօթ մնալով հնոյ անուանն. քանզի և մաշտալ է արծաւնագրութիւնն որ ի վերայ երկուց խաչվիմաց կանգնելոց ի միում պատուանդանի, սակաւուք հեռի յարեւմտակողմն կամրջոյն՝ ի կռան ըլլակի միոյ . յորում այսքան ինչ միայն վերծանեալ աւանդեցաւ.

**Շինեցի զկամուրջս (եւ) Հոգշոյտուռնս, գնեցի հողս իւր սահմանով (ի) հայրենասիրաց եւ տուի ի սուրբ ուխտս Յախաբար . ով որ յետ մեր առաջնորդ լինի . . . .**

Թէ ոչ Չեսար՝ առաջնորդ մի Յախաբար վանաց շինեալ է զկամուրջն և ընդ նմին զՀոգշոյտուռն, որպէս առաջնորդ Շատի վանաց շինեալ է զկամուրջն Ծատուրի, որ ի ստորեւ տեսցի: Յարեւելակողմն կամրջին սակաւուք ի բացեայ ընդ վիմաւ միով եգիտ ոմն ի մերազգի բնակչաց Հասան գեղջ (յամի 1867 կամ 1868), դրամս և զարգս ոսկեղէնս, այլ ոչ ծանուցաւ որպիսի ինչ էին:

Ընդ ձորս Սուլեմայ ի վեր գնալով՝ առաջին գիւղ՝ այլ աւերակ՝ ընդ առաջ լինի յաղակողմանն, որ է յարեւմտից, կիսով փարսախաւ հեռի ի գետակէն առ ձորակի փոքու, Վախսէ անուն, ի բուսագեղ վայրի, որոյ հընութիւնք և յիշատակք անյայտ մնան, որպէս և անունն՝ ի

գիրս Մղոնաւ հեռի ի Հս. Մ. սորա զեզերք այլոյ ծառագուարճ և պտղաբեր ձորակի՝ կայ մեծ գիւղն Հորս կամ Հորք 80 տամբք Թաթարաց . նշանակեալ է ի հին Յուցակին, այլ ոչ և ի պատմութեան, և ըստ շափու տրիցն գուշակի մեծ լինել ի հնումն. որոյ վկայ և աւերակքն, այժմ այլազգեաց բնակութիւնն<sup>2</sup>. յորս է եկեղեցի մի փոքր՝ սրբատաշ վիմօք ունելով զխորանն, իսկ զայլ մասունս՝ հասարակ կրաշաղախ քարամբք: Ի հիւսիսակողմն գեղջն է հին գերեզմանատեղին, յորում ոչ սակաւ խաչվեմք կանգունք և կործանք. ի միումն երեւի արձանագիր 1349 ամի, պայազատի միոյ Օրբելեանց, կամ ընդ իշխանութեամբ սոցին եղելոց աւագաց:

**Թովին ԶՂԸ, իշխանութեամբ Պարոն Զեսարին ես Տիրի կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ .**

Յայլում, նոյն անուն կանգնողի սորին նշմարի ի կիսեղծ և թերատ գրութեան.

**Կանգնեցաւ Խաչս . . . հոգւոյն Պարոն Խորշահին<sup>3</sup> . . . Տերին .**

Նշանաւոր է և քարաշէն տուն մի (12 քայլ երկայն, 10 լայն) բարձր և կամարակապ դրամբ, յորոյ երկուս ոեք յորմն արեւելեան ի ներքուստ չորք չորք խորք են պատահանաձեւք՝ մի ի վերայ միւսոյ. յարեւմտեան որմն գոյ բացեալ ընդարձակ եւս խորջ (5 քայլ երկայն, 3 լայն) . ի հիւսիսայնումն՝ կամարակապ բուխերիկ, որպէս և յանկիւնան թոնիրք երկու: Աւանդեն Հայ բնակիչք կողմանցս՝ Զեսարի Օրբելեանց դարպաս լինել զայս, որոյ

չքնադագոյն եւս դաստակերտ տեսցի ընդ հուպ ի գըլուխ ձորոյս: Համանուն կամ մերձանուն՝ այլ երիցագոյն քան զկանգնող խաչարձանին՝ Տիրիկ ոմն յամի 1285—6 ընդօրինակեալ է աստ զՎարդանայ Մեկնութիւն Դանիելի մարգարէի, « ի գեղս որ կոչի Հորս, ընդ » հովանեաւ Սուրբ Աստուածածնին, յիշխանութեան բաւ » բեպաշտ Պարոնին Վիպարտի, յառաջնորդութեան ար— » հի եպիսկոպոսի Տէր Սարգսի »:

<sup>1</sup> Յինն և եղբարք Մամէի՝ Բեզպաթ, Աւգիստոս, Հապել, Ղազէ, Մարգարէ, քորք՝ Սելվիկ և Մարիամ. այր՝ Բամարալ?, որդէք՝ Աղբը, Վրթանէս, Վարդան. դստերք՝ Զուլալ, Զուլում, Գայիանէ. (արտուէք՝ Եղիսաբեթ և Աւիսաթուն. մերձաւոր՝ Հէկազն, (Հպկազն), Թաբէ, Նուկար, եւ այլն. և հոգեւոր որդին

Ստեփանոս. իսկ ընդօրինակող գրոցն է Աստուածատուր ոմն: <sup>2</sup> Քաշբերունի տաճկաբնակ ասէ զգիւղս, այլ Շորէն՝ առ իւրեւ միայն երիս տունս թուրքաց նշանակէր ի նմա, իսկ Հայոց աւելի քան 450. Թեւեւս յետ այնիւ թողեալ իցէ Հայոց զանգիս: <sup>3</sup> Յելիւի է զի Խորիշահ կոչէր և կին Զեսարու:

Յանկեան խառնրդոց վտակիս Հորսայ ընդ Սուլեմայ գետոյն ( յալմէն ) կայ Շանկէտի փոքր գիւղ 10 տանց Թաթարաց: — Ի Հս. սորա կիսով փարսախաւ վերա գոյն յահեկէ գետոյն՝ Եափար կամ Ռասիչ—գըլլաղը, փոքր գետը Պարսից, ուր երեւին հետք հին բնակու թեան Հայոց, տապանք և խաչվէմք. և ի սորին հիւ սիսոյ սակաւուք հեռի՝ Սալի կամ Սալլի:

Մղոնաւ ի Հս. Մ. Սալեայ առ եզեր փոքու վտակի միոյ կայ հնանուն գիւղն Քարազլուխ, Թէպէտ ոչ յիշի ի Յու

ցակին և ոչ ի գիրս, որպէս այլ համանուն գետը յայլ գաւառս Սիւնեաց. այլազգիք Քեալաքիչի կոչն կամ Քեալաքիչիս. բնակիչքն Հայք են գաղթականք ի Պարսկահայոց, տունք 35 ( յամի 1873 ), անդէորդք և մշակք. զուարճագեղ և արգաստերեր են սահմանքն, այլ առ բարձրութեան երկրին անընդունակ քաջարեր այ գեաց: Ոչ սակաւ հետք հնութեանց գտանին ի սահմանըս Քարազլուխ, մօտ և հեռի. որպէս ընդ կողմն հարաւոյ խաչարձան մի մեծ կանգնեալ յամի 1290.

**Ի Թալին ԶԼԹ ես Թայիկա դուստր Սարգսի որդւոյ ? Խորիչահի կանգնեցի զԽաչս ի բարեխաւսութիւն եւ յողորմութիւն. յազաւթս յիշեցէք.**

Ի հիւսիսակողմն իբրեւ մղոնաւ և կիսով հեռաւ գոյն ի բարձրաւանդակի ուրեք կայ հիւղեցի աւերակ՝ քարամբք և փայտիւ ծածկեալ արդ յազայնոց, որք

գան այր յուխտ՝ Թոնի Մանուկ կոչելով, և են ի նմա վիշտասան տապանաքարինք, ի միումն արձանագրեալ յամի 1533.

**Այս է հանգիստ Պարոն Գրիգորի որդւոյ Դամուրդաչի. Յորժամ հասաւ վախճան իմ՝ եղայ ի դուռն տաճարիս. Ով կարդէք յիշեցէք ի Քրիստոս եւ Քրիստոս զձեզ յիշէ ի կեանս. Թվ. 22Բ. Հայրապետութեան ? Տարսայիճին հանգեաւ՝.**

Են և արտաքոյ եկեղեցւոյն տասնիւ չափ տապանք ան գիրք: — Սակաւուք հեռի աստի ի ձորամիջի կայ աւերակ գեղ՞ որ համարի հինն Քարազլուխ, և Քեալա կոչի յայլազգեաց: — Յարեւելակողմն սորին ի ծործորս փոքու վտակի՝ աստ անդ երեւին խաչվէմք և դամբանք անգիրք, պէսպէս քանդակօք կենդանեաց և անօթոց և

որսորդ մարդկան. ի միումն գոյ թուական ոչ հին՝ ՌձԾԳԻ 1704: Յայտմ գերեզմանատան է աւերակ զոյգ և յարակից եկեղեցեաց փոքունց, որոց մին (հիւսիսակողմանն) ունի բեմ մի պատարագի, միւսն՝ երկուս. և ի միջի երկուսն սեղանոց սորին՝ ի ճակատ որմոյն արձանագրեալ է կարեւոր այլ անթուական յիշատակս.

Ի ժամանակին յորում ել զաւրն Պարսից յաչխարհս Հայոց՝ եւ զբաղում գաւառս աւերեաց եւ բազում արիւնս հեղին զանմեզաց եւ զայլն գերեցին, ընդ որս եւ զՀայր Պաշտոն զպատուական քահանայն զսնուցիչն իմ սպանին. եւ մեք որք մնալով փոքր մի ի խաղաղանալ երկրիս ես Սեթս քրոջ որդի Պաւղոսի շինեցի զեկեղեցիքս յանուն նորա բարեխաւս նորա. եւ տուի ընծայ յԱրփի զԾաղկելոյն? այգին գնեցի եւ տուի Սոչրք Մաւնաւայ. եւ գրեցաք ի տարում Դաւր ժամ Պետրոսի եւ Պաւղոսի տանի. Բ սուրբ Պաւղոսիս, (Բ) Սեթիս անսխալ բնակին. Հակառակողն ՅԺԸ հայր. նզ(ովեալ եղիցի) եւ մեր մեղացս տէր է.

Ի ստորեւ խանգարեալ և թերատ գրուած մի է, և յայլում կողման որմոյն այլ գրուած յամի 1291.

**Սուրբ արէ ճորտս ? տուի Սուրբ Մամասա զԾաղկելոյն այգոյն զՄարփածին ? Միսիթ... հոգւոյն... իմ հակառակողքն ՅԺԸ հայրապետաց նզովեալ եղիցին.**

1 Բնութեան կարօտի յետին բանս. պակաս երեւի անուն հայրապետին, թերեւս և բառն իխոն-թիւն Տարսայիճի:

2 Զժամանակ էլիցն Պարսից և զվիճոյաց եկեղեցւոյս ցուցէ գտածին Սիւնեաց ի ստորեւ:

† Ի Թու. ՉԽ. Կամաւն Աստուծոյ եւ Խուրչիթ Ուրանշահի (ԹուՄի-րանշահի) որդի . . . . . ուխտի Սուրբ Մամասայ ետու զիմ հայրենիքս Մա-րաք անուամբ . . . .

† Կամաւն Աստուծոյ եւ Գրիգոր որդի Ասպատայ տուի Սուրբ Մամա-սայ զիմ Ղոկարչին հողն .

Ձեկեղեցւոյս Ս. Մամասայ աւանդէ պատմիչն Սիւ-նեաց, եթէ զնշխարս նորին՝ «հին և հարուստ ժամանա-»  
» կօք բերեալ էին յախարհիս յայս և հանգուցեալ ի գա-  
» առիս վայոց ձորոյ, ի սահմանս անառիկ Դղեկիլն  
» Սուլեմայ, ի ժամանակս Թագաւորութեանն Հայոց  
» ցեղին Արշակունեաց . . . իշխանքն Սիսական, որք  
» գնացեալ էին յարածամ ի կեսարացւոց քաղաքն ընդ  
» Սրբոյն Գրիգորի և ընդ Սրբոյն Ներսիսի և յայլ ժա-  
» մանակս . որք ի խնդիր լեալ մեծածախ գանձիք և  
» անհուն ախատութեամբ, եւս առաւել . . . նշխարաց  
» երանելի և մեծ ճգնաւորին Մամասայ՝ որ բնակեալ էր  
» ի մերձ լերինն կեսարիոյ . . . առեալ զանկողնի գանձն  
» զկէս նշխարաց Սրբոյն Մամասայ ի միջն ի վեր զըլ-  
» խովն և բազկօքն հանդերձ . . . և կազմեցին կառս ի  
» սպիտակ լորւոջ, և կողորս արծաթիս արարեալ եղին  
» ի նմա զնշխարս Սրբոյն, և բարձին սաղմոսիք և օրհ-  
» նութեամբ, և տանիկ նժուգօք սրավար երկվարք իրր  
» օղապարիկ Թեօք Թուօցեալ անցին ընդ լայնածիր  
» ասպարէզ երկայն ոահին, և հասին ի բնիկ սահմա-  
» նըս իւրիանց ի Մազազ գաւառ, և անցեալ ընդ Գե-  
» դամ մտին ի Վայոց ձոր . զի դէմ եղեալ էր տանել ի  
» Սիւնիս յարքունական գահոյս իւրեանց, Ալ կամքն  
» վերին ոչ թողացուցին ի կամս նոցա . . . զտեղի առին  
» կառքն ի հարթ տեղւոջ մի ի ձորին Սուլեմայ՝ որ Գեզ-  
» պանարտ կոչի . . և հագիւ ուրեմն յարուցեալ զկառան՝  
» վարեցին իրր ձայնընկէցս երկու . և անդէն գարձեալ  
» զտեղի առին լորիքն ի պատշաճաւոր տեղի մի ի սահ-  
» մանս գիւղին որ Խարաշկօնք կոչի, և այլ ոչ ելին  
» անտի: Ապա կոչեալ զեպիսկոպոսն Սիւնեաց, և ժո-  
» ղովեալ բազմութիւն հարց վանականաց՝ փոխեցին ի  
» հանցիստ, եղեալ ի քարեայ տապանի . և շինեցին  
» մերձ նմին վկայարան կրաշաղախ քարամբք . և ետուն  
» զլայրն շրժակայ՝ ի սահման անդաստանի վանիցն, և  
» բնակեցուցին ի նմա արս կրօնաւորս սպասաւորել Սըր-  
» բոյն: Իսկ ի ժամանակս յետինս յաւուրս սնիշխա-  
» նութեան ախարհիս, ի բունակալութեան Աթաբակ Ի-  
» ւանէի, երկու եղբարք ճգնաւորք և քաջակրօնք, ա-  
» ոաջնորդք սուրբ ուխտին, Սէթ և Պաւղոս կոչեցեալք,  
» բազում ազօթիք և խնդրուածովք հանեն զտապան  
» Սրբոյն և շինեն խորան մի փոքր, և հանգուցանեն  
» յայտերեակի տեսողաց զկափարիչն, ի Թուականին  
» Հայոց . . . . . իսկ զաջն ետուն ի սուրբ ուխտն Արիվա-  
» նից »: Պակասէ Թուական շինութեանն ի պատմիչոյ,

որ հարկ է թէ էր նախ քան զ'1240 ամն, իսկ ելն զօրաց Պարսից՝ Թուի շէլալէտոնեանց արշաւանքն . զինու-թիւն երկրորդ կամ երկուց եկեղեցեացն ի Սեթայ՝ Աբէլ վարդապետ Մխիթարեան ասէ յամի 1251, թերեւս յայլմէ արձանէ ստուգեալ:

Յիշեալք ի պատմութեանս Խարաշկօնք գիւղ Թուի այժմեան աւերակն կարակոզէյ<sup>1</sup>, որ ի հարաւոյ կայ Գարա-զըլիոյ յայլմէ ձորագետոյն Սուլեմայ . իսկ Գեզպանարան խնդրելի է ընդ մէջ սոցս և Թառաթուն գեղջ, որ կայ ի Մ. Հր. Գարազլիոյ՝ իրրեւ մղոնաւ լոկ հեռի, և բնակեալ է ի Հայոց 18 կամ 20 տանց<sup>2</sup>. ոչ յիշի գիւղս ի հին Յու-ցակին, և ոչ հնութիւնք յայտնեցան ի նմին: — Սակաւօք հեռի ի Գարազլիոյ ի Հս. նորին կայ Ագ-քէնտ (Սպիտակ) գիւղ Թաթարաց, 60 տամբ աւելի կամ պակաս . ստացուած Թառաթունեաց Գեորգեայ ուրումն Շուշեցոյ, գնեալ ի Քեալիալի պարսիկ խանէ: Սակաւամօք յառաջ յայտնեցան ընդ երկրաւ աւերակք եկեղե-ցւոյ, զորոյ քարինս վարեցին ի պէտս շինուածոց իւ-րեանց այժմեան բնակիչքն, որք ոչ միայն աւերիչք այլ և գողք կծիլք համբաւին լինել: — Ի Մ. Ագ-քէնտի, յայլ մէ դետոյն Սուլեմայ, և մերձ ի Թառաթուն՝ կայ փոքր գիւղն այլազգեաց Ագ-տերե (Սպիտակ ձոր) ի ստորուտըս լերանց անջրպետաց Արիճու և Ատիեաման (կամ Կոթայ, գետոց Գեղսպունեաց), յորոց ընդարձակ սա-րատափս են արտավայրք Քրդաց առ Գարա-կեօլլէր լը-ճակօք, ուր և Նամագ-Ալի գիւղ նոցին:


Ի վեր քան զԱգքէնտ և զԱգտերէ չկան գիւղք կամ չիւ-նանիստք, մինչեւ ի գլուխ ձորոյն Սուլեմայ և ի սահմանս Գեղաբունեաց այլ հին կարաւանատունք, աներկբայ վը-կայք վերոյիշելոց բանից պատմութեանն, եթէ ընդ այս էր ճանապարհ լեռնագնաց ընդ Գեղամայ երկիրն և ընդ Վայոց ձոր և ի բնագաւառն Սիւնեաց:— Սուղ ինչ ի վերոյ յել. Հս. Ագ-տերէի և ի Մ. Հս. Ագքէնտի կայ կարաւա-նատուն՝ Ըչոգ կամ Իշէկ քերփանսերայ կոչեցեալ յայլազ-գեաց յահեակ ձորեգեր Սուլեմայ, շինուած երկայնածեւ ի Հր. ընդ հիւսիս ի վերայ եօթանեցունց որմնայար սեանց՝ նոյնքան կամարօք, համակ կոփածոյ քարամբք . առաջին կամարն՝ յորում և դուռնն ի հարաւոյ կուսէ՝ կործա-նեալ է . անձուկ է մէջքետինն, զոր ի գոմս անասնոց փոխեալ այժմս մերձարնակ շինականացն՝ աղտեղու-թեամբք լցեալ են զտեղին, և շերեւին ի նմա արձանա-զրութիւնք, և ոչ հին անունն յայտնի: — Աստի մին-չեւ ի միւս նշանագոյն կարաւանատուն (Սէլիմի) որ ի

1 Կարակոզէյ ըստ Թաթարեանց քրդարէն Թարգմանի անարեւ:

2 Շոքէն 10 տուն զբեր յիւրում ժամանակի:

զլուխ ձորոյս Սուլեմայ, որ և Եղեգեաց և Վայոց ձորոյ, և ի սահմանակցութիւնն Գեղարունեաց՝ իբրեւ երեք մը-  
 դոնաչափք են. ճանապարհն անձուկ ընդ լերինս և առա-  
 պարս՝ նախ անցանէ առ շիկաքար բլրով, ուր և քարայր  
 մի, յորում գտան փայտածուղ, և ոսկերք և ափսէ մի  
 պղնձեայ: Սակաւուք ի վերոյ ի Հս. ի միջի երկուց ձո-  
 րակաց ամբառնայ լեռնաբլուր քարածայռ գազաթամբ,  
 ի Հս. ձգեալ ի հարաւ, և յայսմ կողման սակաւ մի տա-  
 փարակ է. երեւին անդ մնացուածք հին Ռերդին Սու-  
 լեմայ, զորմէ ասէ պատմիչն, ի վաղ ժամանակս ի Սու-  
 լեմայ տանուտեառնէ շինեալ. երեւին ցարդ տեղիք բնա-  
 կարանաց, գուրք բռեալք, և այլն, բայց պարիսպք և աշ-  
 տարակք ոչ, զի և անկարօտ էր նոցին՝ ի բնէ անմատոյց:

Բաց մզոնաւ և աւելի եւս վերագոյն ընդ հիւսիսի՝  
 ի սարատափ վայրի է կողեցեալն յայժմուս Կարաւա-  
 նատուն Սէլիմի, շինուած մեծ և հոյակապ, յարեւ-  
 ելից հարաւոյ կողմանէ ունեւոյ զմուտսն կամարակապ  
 և քանդակազարդ ի վերայ երկուց սեանց, յորոց ի կա-  
 մարամէջն ի կիսարդոր վիմի կայ արձանագիր, խառն  
 արաբ-պարսիկ, զոր օրինակ և ի միում սեանցն. ի վե-  
 րայ խոյսկաց սեանցն քանդակեալ են առիւծ վիշապա-  
 տուտն և ցուլ: Արձանագիրն այլազգի՝ զորոյ պատճէն  
 առաքեաց մեզ Գալթերունին, տուեալ օրինակել գիտ-  
 նոյ, ոչ է ամենեւին անողալ, և որ գրեաթէ Թարգմա-  
 նութիւն է հայերէնին, որ տեսցի ի ստորեւ, և է այս-  
 պիսի ինչ՝.



և Թարգմանի. « Էպուսաիտ Պէհատիր Խան. ի ժա-  
 » մանակս տեղեկեալ տէրութեան Թազաւորին ամե-  
 » նայն որդւոց մարդկան (կամ Աղամայ), իշխեցողին  
 » Արաբացոց և Պարսից, և նուաճողի ազգաց և ա-  
 » զանց, զոր հաստատուն պահեսցէ Տէր յիշխանութեան  
 » նորին, և յաւերժացի Թազաւորութիւն նորա. Մեծա-  
 » գործ բարերարն Չեսար որդի Ենարիտի (Լիպարտի)  
 » որդւոյ Իւանէի (և կին նորա) Տուրշահ (Խորիշահ)  
 » դուստր Վարդանայ եւ Թիւփի (Գիւսիփի). Տուեալ (կամ  
 » շինեալ) ի Թուին (հէճիրէի) 727 »:

Չվերջին տողն որ յետ Թուականին՝ ոչ կարացին վեր-  
 ծանել և Թարգմանել՝ քննողքն, այլ միայն զի մաղթա-  
 նաց բան է, որպէս Թուի՝ արձանագրողին Մանուստ  
 անուն: — Մուծանէ դուռնն ի դահլիճ մի հաստա-  
 տեալ ի վերայ չորից զոյգ որմնայար սեանց, ի ձեղու-  
 նէն ընդունեւոյ զոյս. երկուտեք առ որմովքն են վի-  
 մատաշ նատարանք լայնք. ընդ կամարաւ արեւելակողման  
 դահլիճս ի վերայ սեաւ վիմի արձանագրեալ է կարեւոր՝  
 այլ ստուգութեան ինչ կարօտ՝ յիշատակարան հայերէն,  
 հանդերձ ազգային Թուականան որ է ամ Տեառն 1332.

**Յանուն ամենակարող հզաւրին Աստուծոյ, ի թվին 928, յաշխարհա-  
 կալութեան Բուսայիդ Ղանին եւ Չեսար որդի իշխանաց իշխանին Սըմբա-  
 տի եւ մաւրն Անայի<sup>1</sup>, թոռն Իվանէին եւ եզբարց իմ առիւծագեղ իշխանաւ**

<sup>1</sup> Հայերէն տառիք այսպէս լի. « Էպուս Սա'տ Պէհատիր Խան.  
 » Տէր Էյեսամի տէվլէթի սուլթանի ալէմ, փատիշահի պէնի տուէմ,  
 » հիւսիբրան Իւլ Արէպ վէլ Անէմ, մալիքի բիզապ Իւլ Իւմէմ,  
 » Խալլէտ Ալլաուս միւլթէնու վէ Էպպէտէնու տէվլէթէ. Սաիպի  
 » Խայրաթ Չեսար Իպի Էնարիտ Իպի Իվանի. Տուրշահ պիթի

» Վարդան Իպի Իվանի. Թաութ Քի Թարիս սէպա վէ Էյբի'է վէ  
 » սապտիէ: — Չյեսին բառն՝ յառաջ քան զԹուականն՝ պէտպէս  
 » ընթերցեալ, Թուսի, Թուսուր, Թիւղի, կարծեցին անուն զգրան-  
 » շին Չեսարուս:  
<sup>2</sup> Աստ ընթեանու Քալթերունին աննշանակ ինչ Ես Նիբառնաւ:



ցըն Բիւրթելին եւ Սմբատայ եւ Ելիկումին, յազգէ Աւրբէլեանց, եւ կենակից իմ Խորիչահն դուստր իշխանին Վարդանայ եւ Դուսինի յազգէ Սենիբարեմանց ի հալալ արդեանց մերոց շինեցաք զնոզնտոռնս ի փրկութիւն հոգւոց մեր ծնողաց եւ եղբարց ի Քրիստոս ննջեցելոց . եւ կենաց իմոց եւ որդւոցս Սարգսի եւ Յովհաննիսի քաջի, Քրդին եւ Վարդանայ . Աղայեմք զպատահողդ յիշել զմեզ ի Քրիստոս . Սկիզբն (սորա) . . . րաբունապետին Եսաւոյ եւ կատարումն աղաւթիւք նորա . ԹՎին ԶԶԱ .



55. Սիլիսի կարաւանատուն .

ի ներքոյ արձանիս կայր դուռն՝ այժմ անկեալ՝ որ հանէր յայլ սենեակ հինգ կամարօք կապեալ . Դուռն մի եւս մեծագոյն եւ կամարակալ՝ յարեւմտից կուսէ մուծանէ ի մեծ բակ կամ գաւթի յերիս բաժանեալ սրահս կամարօք ընդ երկայնն, որոց միջինն բարձրագոյն՝ հաստատեալ ի վերայ ութ զոյգ քառակուսի բռեալ սենանց, յարեւելից կուսէ ընդ արեւմուտս ձգելով, եւ ի մէջ ձեղունան

կամար զկամար հատանելով աղեղնաձեւ : Ի միջոց սենանցն են ութ աստի եւ ութ անտի փոքր սենեակք եւ մըսուրք նաւակաձեւք, միոյ միոյ ի սոցանէ չորք չորք ծակք տեղիք կապանաց ձիոց դէմ ընդդէմ միմեանց, զգաւական տալով յորմունս, ընդ Հս . եւ ընդ Հր . ընդ մէջ չորրորդ զոյգ սենանցն՝ որմն ածեալ զատուցեալ է տեղի հանգըստեան կամ ննջարան ուղեւորաց ի վերայ բարձր սալայա-

Ամ կարեւոր եւ երկարայի խնդիր է ազգ կամ զարմ Չեսարի, որ ի տաճիկ արձանին գրի որդի Լիպարտի եւ Թոռն Իւանէի, իսկ ի նպում որդի Սմբատայ եւ Թոռն Իւանէի . թայց յայլ գրութեանց ցուցանի լինել որդի Սմբատայ, որդւոյ Լիպարտի, որդւոյ Իւանէի՝ եղբոր Տարսայիէի . սակայն եթէ որդի է Սմբատայ՝ զիարդ ունիցի եւ եղբայր Սմբատ անուն, որպէս գրի ի նպերէն արձանիդ . յորում

եւ նշովումն անուանց եղբարցն ի սեռական՝ ոչ յարմարի շարքանութեանն վնեցա՛ : Վերջ արձանիդ Թուի ասել զսկզբնաւորութիւն շինութեան տեղւոյն եղեալ օրնութեամբ մեծի վարժապետին Եսայեայ որ ի Գայլեձոր, եւ զաւարտ՝ եւս նորին աղբիւք : Իսկ շինուածն Հ՝ Երսա՛ կ չի . զի ողորմածութեամբ եւ սիրով շինեալ էր ի պատասպարան ուղեւորաց :

տակի: Երեք լուսամուտք են յերդիսն ի վերայ միջնակամարին, որ սալարկեալ է մեծամեծ վիմերէն տախտակաբ: Զերկայնութիւն բակիս 40 քայլ ասէ Զալալեան, զայնն 20: Յարեւմտեան կողմն են երկու դրուէք որք հանեն ի մէն մի սենեակ: Ի հիւսիսային արեւմտեան անկեան կարաւանատանս կայ մեծ աւաղան քարեղէն, և խողովակ, ընդ որ գայր շուր յաղբերէ՝ որ սակաւուք հեռի է ի շինուածոյս. էր և այլ աւաղան նման նմին, զոր բարձեալ տարեալ է բնակչաց Վերին Գարանլըզ (58) գեղջ: Ի մեծէ սասանութենէ 1840 ամին մեծապէս վընասեալ և խախտեալ է հոյակապ Հոգետունս այս, մի ի նշանագոյն շինուածոց Վայոց ձորոյ և աշխարհին իւրոյ, և յայսպիսում կառուցեալ հրաշադիտակ բարձու, աստի ի կանաչորակ ձորավայրսն Վայոց հայելով, անտի ի կապուտակ Ծովն Գեղամայ:

63. Դարձ արասցաք անդրէն ընդ կրունկն մինչեւ ի ձորաբերանն Սուլեմայ՝ ուստի սկսաքն զվերելքս, և իջցաք ընդ հարաւադէմ հովիտ Եղեգեաց մինչեւ ի խաւ-

նուրդսն ընդ Արփայի: Հօրագոյն և ստորինս այս մասն գետոյն Եղեգեաց Քոյրոյ կամ Ղոյրոյ կոչի յանուն մեծի գեղջ, այլ ձոր նորին անուանի և Հաջի-սամլոս, որոյ ընդարձակագոյն է վերին կողմն, անձուկ ստորեւն, և կայ ի միջի ձորոյն Սրկղօնից յարեւելից, և Ապսնայ՝ յարեւմտից. շէնք սակաւք են ի նմին և ոչ ինչ կարծեմ նշանաւոր յայտնեալ՝ բայց ի կամրջացն: — Իբր երկու մղոնաւ ի Հր. նախայիշեալ Ձիպուգ կամրջի և Հասան գեղջ՝ յահեկէ գետոյն կայ փոքրիկ վայելչագիր գիւղ այլազգեաց Այիսան-փայտաի, իբր 10 տամբք: — Կիսով մղոնաւ կամ նուազ եւս ի Հր. գեղջս արկեալ է ի վերայ ձորոյն կամուրջ փոքր՝ Երատարի անուանեալ, քարաշէն և միակամար, կմբածե բարձրացեալ ի միջակին, 13 Չ. երկայնութեամբ կողմանէ ի կողմն, իբրեւ 4 1/2 լայնութեամբ և իբրեւ 9 ի բարձրութիւն: Ի հիւսիսային դիմի արեւելակողմանն ի օրրատալ վիմի արձանագրեալ է բանս չափաւ, զոր բազում աշխատութեամբ, վասն բարձրութեան տեղոյն, ընդօրինակեալ է Քալթերունի, և յայտնէ զամ շինութեան 1666.

**Ի թուին Հայոց հազար ամին — Հարիւր եւ հնգետասան աւելին, Ենորհաւք ամենազաւրին — Աւարտ եղեւ այս շինուածին.**

**Կամաւն Աստուծոյ եւ Սարգիս վարդապետ առաջնորդ Եատիկու անապատին միաբանեցաք ձեռնտվութեամբ Ղ միաբանիս (կամ միաբանքս) եւ բազում ողորմութեամբ շինեցաք զկամուրջս ի հայրապետութեան Հայոց Տեառն Յակոբայ, ի թագաւորութեան Պարսից Եահ Սիւլէյմանի.**

Ոչ յարձանէ աստի և ոչ այլուստ ուսանիմք զպատճառ Եատուրի կամուրջ կողմանն:

Երկու մղոնաւ յեղից հարաւոյ նորին առ լեռնոտամբ անջրպետաւ Արկղօնից ձորոյն՝ կայ հանգրուանն Քեաղիդ, որ թուի ինձ նշանակել զանուն Գաղատայ գեղջ հին Յուցակին, այն որ հարկէր 10 բեռն: — Եղեգեան հեռի ի սմանէ ի ստորեւ (ի հարաւոյ) և յաջմէ գետոյն կայ միակ մեծ և հուսկ գեղ ձորագետոյս՝ Քոյրոյ, զոր անուն ոչ կարեմ յարմարել ընդ հին Յուցակին. բայց ասի արդ կոչիւ և Կոտուր. միթէ նշանակիցէ՞ սա զԿտրօնք գիւղ Վայոց ձորոյ. — բնակեալ է արդ ի Հայոց գաղթակաւ նաց ի Պարսից մարզէ. տունքն աւելի քան գլխուն՝ հողաշէնք են և տափարակք, այլ ի միջի ծառոց և այգեաց վայելչանիստք և ի բարձրաւանդակի: Ի գալ գաղթականին Հայոց յամի 1829, տեղի ետուն 4 կամ 5 տուն բնակիչքն թաթարք. Հայք տնկեցին այգիս, յորմէ և գործեն արդ գինի առատ. են նոցա և մրգաբերք, ծիրանիք, խնձորենիք, փլատենիք, այլ և անդք բամբակի, արտորայք ցորենոյ և գարւոյ. գործեն և կտաւ: Բայց զի տեղին սեփական կալուած է Հասան Ալի սուլթան պարսկի Չուազուլ, հարկին նմա ամ ըստ ամէ չափ ինչ ցորենոյ և գարւոյ: — Երկու մղոն բացագոյն ի Ղոյթուլայ ընդ հարաւ ընթացեալ գետն Եղեգեաց՝ թափեալ խառնի ի ծոց Արփայի, յորոյ վերայ սակաւուք հեռի ի խառնրդոցն՝ յարեւելից կուտէ, և մղոնաւ ի Հր. Քէշիւքէնտ գեղջ Սրկղօնից՝

կայ կամուրջ մի եւս կրաշաղախ քարամբք, միակամար, անգիր և անծանօթ ի շինողէ: — Աստ սպառնի և սահմանք գեղեցիկ և արժանայիշատակ Չորոյն Եղեգեաց. այլ որպէս ի սկզբան ասացաք, յարեմք ի նոյն և զձորակսն որ յարեւմտից կամ յալ կողմանէ Հաջիսամլու ձորոյ, և յարեւմտեան մասին աշակողմանն Արփայի:

63. ՉՈՐԱՆՈՎԻՏԳ ԱՐԵՒԾՏՈՒ ԶԻՌՈՍՍՏՈՒ ՎԱՅՈՑ ԶՈՐՈՑ-Բազում ձորակք և գետակք են և յայսմ մասին, այլ երկու գլխաւոր գետակք, Ապսնա և Արտակն (Երին), յորս խառնին և այլքն: Առաջինն որ յարեւմտակողմն է և յերի ձորագետոյն Հաջիսամլու (Ղոյթուլի), յերից վտակաց օժանդակի (ըստ նշանակելոյ յայխարհացուցի), որք իջանեն ի լեռնագետոյն հարաւակողման Սուլեմայ ձորոյն. առ միջնովն կան աւերակք Ապսնայ գեղջ յիշելոյ ի հին Յուցակին, որ ըստ տրիցն յաթոն Սիւնեաց (6 բեռն) փոքր լինել գուշակի. այլ զի յանուն իւր կոչի գետն՝ ոչ աննշան հարկ է լինել, կամ թէ ոչ գոյ այլոց գեղից ի ձորակին, որպէս և ոչ այժմ նշանակին: — Ոչ գիտեմ ըստ պատեհի՞ եթէ և ըստ մերձաւորութեանն՝ առ սմին յիչէ Քալթերունի զբնաշխիք պաշտեղի, որ է թարգմանութիւն անուան գեղջն կաքաւուց աղբիւր ըստ հին ցուցակին, և որոյ հարկ՝ էր ըստ վերնոյն 6 բեռն: — Յեզերս արեւելեան օժանդակին կամ ձորակին ոչ նշանակի բնաւ չէն. իսկ ի գլուխ

միջնոյս այսորիկ ձորոյ՝ կայ փոքրիկ գիւղն Թաթարաց Գուշպան քեփիէն (Չոկատուր կամ Մատաղենիք թարգմանելի)։ ուր թէ գուցեն հնութիւնք՝ ոչ գիտեմ։ — Ի ձորագլուխ արեւմտեան օժանդակին կայ աւերակ գիւղատեղի Իւզգիարտ կոչեցեալ այժմիկ։ որոյ փոքր ինչ մերձաւոր ըստ ձայնին և ըստ դասաւորութեան գիւղից՝ գտանի ի հին Յուցակին օտարոտի իմն կամ սխալ գրեալ

Որգոյերեզի? Թէպէտ տեղայինք ասեն զայն լինել հին Ռինտ գիւղ, որոյ փոխան բացագոյն կայ նորն, զոր և ընդ հուպ տեսցուք։ Առ երի աւերակաց տանց ամայացեալ գեղջա մնան և որմուկք քարաչէն եկեղեցւոյ միոյն յանուն Սրբոյն Ստեփաննոսի, որպէս ցուցանէ արձանագիրն աղաւաղեալ՝ որ ի ճակատ բեմին, ունելով զթուական 1293 ամի.

Կամաւ ողորմածին Աստուծոյ մեք Աւատարկայ ? որդիքս Հասան եւ Խոցադեղ մեր եղբաւորորդովքս մեր սրտի յաւժարութեամբն զմեր հայրենական հողն ի Խու... քանին տուաք ի Սուրբ Ստեփաննոս (վասն) հոգւոյ եղբաւր մերոյ Մխիթարայ փոխեցելոյ առ Քրիստոս. Մխիթար երէց՝ ժառանգ սուրբ եկեղեցւոյս հաստատեաց Աւար պատարագ անեն՝ Յայտնութեան. Արդ թէ մեք կամ՝ որ ի մերոց կամ յաւատարաց աւագաց հանէ զհողն ՅԺԸ հայրապետացն նվովեալ եզիցի. ի Թվին ԶԽԱ.

Սակաւօք ի բացեայ աստի յարեւելակողմն կայ վա... (7 քայլ ընդ երկայն, 4 ընդ լայն), տանիքն կործանեալ. նատեղի Սուրբ Աստուածածնի՝ վանքի տիւղ (վանաց ի ներքս ի հարաւային որմն գոն յիշատակք արձանատի) կոչեցեալ, ուր և փոքրիկ կամարակապ եկեղեցի գրեալք յամս 1288. 1308. 1323 և 1347.

Ես..... ետուն մեզ պատարագ զՂազարու տանին եւ զԾառզարդարին. ով խափանէ մեր մեղաց պարտական է. Թվին ԶԷ.

† Ես Թամթա խաթունս տուի Աստուածածնի սուրբ վանուց քա... բաժակ ի Մարոկաճոր. իմ յետոյ իմ որդիքն տան անխափան. ով չըտայ իմ մեղացն տէր է. ԶԾԷ.

† Ես Տորս ? Սարգսի որդիս զԱյտէքոստոշ ? հողն ու զՏանձին սեւրն, մին կով տուի Ս. Աստուածածնիս. Միաբանքն տուին Բաւր պատարագ Հուսիկին աւագ հինդչաբթի աւրն. Ով խափանէ մեր մեղացն պարտական է. Թվին ԶԶԲ.

† Ես Դաւիթս... միաբանեցաք սուրբ Աստուածածնիս. Սպասուողք սուրբ ուխտիս Պետրոսի եւ Պաւլոսի տանին (տուին) Ա պատարագ անխափան. Կատարողքն աւրհնին յԱստուծոյ եւ խափանողքն դատին. Թվին. ԶՂԶ.

Շուրջ զեկեղեցեան են դամբանք և խաչարձանք. յոմանս ի նոցանէ գրեալ են այսպիսի բանք.

Ես Յովհաննէս կանգնեցի Խաչս ի բարեխաւսութիւն...

† Գրիգոր քահանայ յիշեցէք... † Տղայ տիաւք կատարեալ քահանայ.

1. 2. 3 Գրեալք. Միւրեւեցիք. — ասէ... խաչարձ. մարթ է լինել երկրորդին՝ ի դասէ Յայտնութեան:

Մղոնաւ ի Հր. Իւզուրտի կայ Բզնածոր<sup>1</sup> և ըստ Թուրքաց՝ Այնաղիւր գետը Հայոց 43 տանց : Բնակիչք գեղըս (իբր 400 ոգիք) են բնիկք և ոչ գաղթականք. այլ ի ժամանակի պատերազմին Ռուսաց ընդ Պարսից (1827-8) Աղապէկ ոմն Թուրք զանկեազուրցի եկեալ ի կողմանքս՝ ի դարձին վարէր և զՀայ բնակիչսն յերկիր իւր. բայց հզօրագունից եւս Թուրքաց ի վերայ հասեալ դարձուցին յետս : Թէպէտ և հին երեւի գիւղս, որպէս և է իսկ ի վաղուց հայաբնակ, այլ հնութիւնքն ոչ քննեցան և ոչ արձանագիրք, այսինքն եկեղեցւոյն և գերեզմանաց և կարաւանատան :

Յելից հարաւոյ Բզնածորի, երկու մղոնաւ ի բացեայ՝ առ Ապանայ գետակաւ կայ Նամագ-Ալի անուն փոքր գիւղ մի Գրդոց 35 — 40 տանց, որք աստ միայն գտանին ի Վայոց գաւառիս : — Ի ստորին կողմն ձորոյս Ապանայ երկրք մղոնաւք ի Հր. Բզնածորի կայ միւս հին քարաշէն կարաւանատուն կիսակործան, իբր 85 Չ. ընդ երկայնն և սուղ պակաս կիսով չափ լայն, ամբարձեալ ի վերայ երկկարգեան բոլորի սեանց, որոց միջնոյն ձեղուն բարձր է քան զկողմանցն, հանգոյն Սուլեմայ հոգետաննն. զարդիս ի գոմ հստից փոխեալ է ի մերձարնակ Հալոց և Թուրքաց, և աղտեղութեամբ լցեալ, ոչ ցուցանելով արձանագիր : — Սակաւուք հեռի ի խառնրդոց գետոյն Ապանայ յԱրփա՝ յեղեր սորին յաջում կայ Գզըլ-գըշլագ գիւղ այլազգեաց, 20 կամ աւելի տամբք : Իսկ ընդ մէջ դետախառնիցն և գեղջն՝ կամուրջ մի է ի վերայ Արփայի : — Մղոնաւ կամ գոյզն աւելի ի Մ. Հր. Բզնածորի յուրոյն ձորակի առ իրոջն կայ Ռիմստ նորաշէն գիւղ Հայոց գաղթականաց ի Պարսից բաժնէ, յորում 23 տունք էին յամի 1873 : Մերձ ի խառնուրդ գետակին Ռինտայ յԱրփա, յեղեր սորա կան աւերակք շինատեղւոյ և եկեղեցւոյ, յժախալ անուն. քանզի կաթնակարօտ ստնտու կանայք համարին օգտիլ ուխտաւորութեամբ առ խաչվէմ մի տեղւոյն, և յայն սակայնպէս կոչի : Ըստ այսմ իմաստի՝ սա թուի կամ մերձաւոր սմին քարարուր և քարաբերդ՝ կոչեցեալ ի հնումն Դայեկի քար, յիշեալ ի պատմութեան Սիւնեաց<sup>2</sup> :

64. ԶՈՐԱԿ ԱՂՈՊԵՆԱՅ.— Այսպէս հաւանիմ կոչել ըզհովիտ գետակին Էլբինայ, որպէս և կոչի յանուն զլիւաւոր գեղըս, և թուի ինձ յեղեալ յանուանէ Աղրպէն գեղը հնոյ. յերից կողմանց պարփակեալ ի լեւոսնց և ձորոց, յարեւելից ունելով զնստագոյնս զանջրպետս Ապանայ ձորոյն, ի Հս. Ել. զՍուլեմայ ձորոյն կողմնական լերինս, որպիսիք Թառամ, Հորս, և այլն. ի Հս. զԹօփ տաղ, ի կուան լեւոսնց հարաւային Գեղամայ. յարեւմտից զանջրպետս Չանախճի հովտին Եարուրայ, ի Հր. զԱրփա գետ : Գետակն Էլբինայ իջանէ յարեւմտեան լեւոսնց անտի, այլ օժանդակս ընդունի ի թիկանց Սրկղօնից ձորահովտին : Առ առաջնոյն սկսեալ յարեւելից և յարակից Ռինտայ ձորակին, ի գեղեցիկ քաղաքոյս ձորավայրի՝ առ եզերքն կայ փոքր գիւղն այլազգեաց կօզղուճա, որ թարգմանի Բնկուզուտ, այլ ոչ յիշի ի գիւ-

րըս այս անուն գիւղ ի կողմանքս : — Ի Մ. Հր. սորա կիսով փարսախաւ ի ստորեւ յաջմէ իրոյն (յարեւմտից) կայ աւերակ գիւղատեղի ֆեանավիզա? գրեալ, ոչ գիտեմ ստոյգ անուն թէ կենաւոգ, և որպիսի ինչ ունիցի մնացուածս հնութեան : — Ընդ մէջ այսր և երկրորդի վրտակին օժանդակի ամբաւանայ յետան Արտաղիգի՝ յանջրպետս անդ երկոցուն ձորակացն, յորոց ի զլուխ այսինքն ի վերնակողմանս մերձ ի սահմանս Հորայս՝ մեծագոյն եւս լեւան Ալ Ենդաւ : Առ վտակաւս այսու կան գետք մանունք, բնակեալք ի Միլիի տոհմէ Թուրքաց, Ազգիլիսե (Սպիտակ եկեղեցի) ի բարերոյս յիճակի. ի Հր. նորին Վարքանէս, և ի սորին Հր. Հէշիւ. յերեսին եւս գոն մնացորդք ինչ ազգային դաստակերտից, ոչ մանր քննեալք, զի և ոչ նշանաւորք ինչ համարեալք : Երկրորդ գիւղն հաւանօրէն է վարդենիք հին Յուցակին, զի պատշաճի տեղւոյս և ըստ դասակարգին և ըստ պատմական ինչ աւանդից : Յելից հարաւոյ կուսէ գեղջն կայ փոքր լճակ կամ գուր իրոյ խորայտակ, զորոյ և զմի կողմն պատեալ է ձեռագործ պատուարաւ և ազուգայս գործեալ յոռոգումն անդաստանաց :

Ի հնումն՝ ըստ ակնարկութեան իրիք պատմին Սիւնեաց՝ վիճակեալ էին տեղիքս այսօրիկ Մահեւանեան տոհմի ի իշխանազանց Բաղաց, զորս փոխադրեալ անտի « յաւերման ժամանակին՝ բերեալ էր (այսր) Աթաբէ- » կըն Իւանէ... և տուեալ հայրենեք զՆրբոյն բերդ, » այլովք ազարակօք » : Մահեւանայ յաջորդեաց որդի նորա Ջուրջ, և սմա որդին իւր Մահեւան Բ. յետ կիսոյ ԺԳ դարու, որ « անզաւակ գորով բաժանէ զհայրենիս » իւր ընդ եղբօրորդւոյ իւրում Ամիրայիլն. և առնու ըզ- » կէս բերդին, և որչափ իւրն հատանէ զանդաստանն » որ ի վարդենեաց կողմանն... և ընծայէ զիւր հայրե- » նարածինն զՆրբոյն և զտուն և զայցիս որ յԱրփայ, և » զամենայն ստացուածս իւր՝ ի Սուրբ Նշամն (Նորավա- » նից Ամաղուայ), և զրէ ինքեան արձան յիշատակի, » զի յետ ժամանակաց մի ոք ի իշխեսցէ խախտել զայն հո- » զեցատուր ի սուրբ եկեղեցւոյն. և սահմանէ ինքեան » քսան օր պատարագ ամ յամէ անխափան » : — Յիշեալ բերդն Նրբոյն կամ Նրբիւն, յոր անուն և գետը մի նըշանակի ի հին Յուցակին, և ի սորիցն գուշակի ոչ փոքր լինել, հաւանօրէն է աւերակ բերդն որ ի գագաթան Շրեշ բլրի, յերկայնածիգ գօտուղ բարձանցն որ զերկրորդըս այս վտակ անջրպետեն յարեւմտայնոյն ի բնիկ Էլբինայ : Այսպէս կոչի լեւոսարլուրն այն կոնածեւ ամբարձեալ՝ վասն բուսոյ չրէշի՝ առատապէս աճելոյ ի նմին. յորոց միջի ցրուեալ են մնացորդք բերդին քայքայելոյ. ուր ոչ բազում ամգը յառաջ Պարսիկք ոմանք յուսացան գտանել զանձս ծածկեալս յայրս ուրեք, և ձեռնունայն ելին : Ճանապարհ որ տանի անդր Էլբինայ և ի վարդենեաց՝ առապար է խոժոռագեղ տեսլեամբ անհեղեղ քարածեռից :

Երկու կամ երեք վտակք յարեւմտակողմն Շրէշի և բարձրաւանդակին զուգեն զգետակն Էլբինայ, ունելով ձորակս քաղաքուսակս և զուարճատեսս. յեզր միոյն ի

1 Ի նմանութենէ տառիցն վրիպեալ Բզնածոր գրի ուրեք :

2 Օրբելեան, գրուի կէ. այլ գրի և Դ-Գիլէ քար :

Հս. այլոց գիւղից՝ կայ խնծորուտն հին, Էլմադա թարգմանեալ ի Թաթարաց ՅՅ տանց: - Ի ստորեւ ի կցուածի երկուց վտակաց զետեղեալ է փոքրիկ գիւղն Գեոյնադոյրմէ իբր կիսով մղոնաւ ի ստորեւ միւս եւս վտակ կցի ի նոյնս, և ի խոր մի նոցին յահեկէն (յարեւելից) կայ Էլքին գիւղ իբր 80 տանց Հայոց գաղթականաց ի Պարսից բաժնէ. յորոց խոյս տուեալ յառաջագոյն բնակեալ այլազգիքն գնացին ընդ հիւսիս յԱրտաշատ գիւղ ի գրլուխ ձորակի նոյն վտակին: Ըստ անուանն և գրադարձութեան սա թուի ինչ Աղուլէն գիւղ հին Յուցակին. ի վաղեմի շինուածոց չերիւի ինչ ի նմա նշանաւոր, և ոչ արձանագիրք ի գերեզմանն. այլ հարկ է թէ մանր խուզարկութեամբ գտցին ինչ ինչ ի գեօղեանդ. ընդ որս դասելի է և Գեօսիդի (Աժղուտ) փոքր գիւղ այլազգեաց՝ մղոնաւ ի բացայ ի Մ. Էլքինայ, ի ստորոտս համանուն լերին:

Յետ միութեան ամենայն վտակացն՝ գետակն Էլքինայ խաղայ արեւելախառն ընդ հարաւ, և ի Հս. Արփայ գեղ խառնի ի համանուն գետն մեծ: Միակ գիւղ և ոչ փոքր ի հզօրագոյն մասին աստ գետակին յերկուսին ասփունս նորին, այլ յաւէտ յահեկէն՝ որ է յարեւելից՝ է Չուա, սու բերանով վտակին՝ առ որով Ընկուզուտն գիւղ, իբրև փարսախաւ հեռի յԱրփայ գետոյ, և սակաւ մի առաւել յԷլքին գեղէ: Բնակիչք գեղին խառն են Թաթարք կամ Պարսիքք և Հայք. ի սոցանէ են և տունք ինչ ի վաղեմի բնիկ տեղացեաց. բայց գիւղն ողջոյն կալուած է Հասան Այի սուլդանի, որոյ է անդ և տուն մեծ, և ի պարտիզին աւազան կամ շատրուան, շուրջ պատուարեալ քարամբք դամբանաց Հայոց: - Յարեւմտակողմն գեղջս ի լանջս լերանց որ սահման հատան են ընդ ձորահովիտս և ընդ Չանախանի Դարուրայ, կան աւերակք հին գեղին Չուայ, որ ոչ յիշի ի Յուցակին, այլ ի պատմութեան Ստեփ. Օրբելեան, որոյ և հօրեղբայրն Սմբատ այգիս և անդաստանս ի գեղէ աստի նուիրեալ էր Նորավանից. և յետոյ ինքն իսկ եղբորորդին եպիսկոպոսն պատմիչ, զողջոյն իսկ զգիւղն՝ զմասն բաժ-

նին Ջալալայ՝ ոչ համամօր եղբօր իւրոյ, գնեալ ի նմանէ 33,000 դրամոյ, «ամէն սահմանաքն, հողով և ջրով և » այգեստանեօք և բոլոր բնակչօք», նուիրեաց սիրելոյ աթոռոյն Նորավանից. «ազատ յամենայն հարկաց և ի » դիւանէ անդաշի (անվէճ) և անհաշիւ յամենայն կողմանց, յեղբարց և յաւազաց »: - Ի սպառուած ձորահովտին Էլքինայ առ եզեր Արփայի, յալմէն, կան աւերակ գեօղատեղիք, որոց որպէսն ինչ անծանօթ:

65. Արեւիստեան ՄԱՍԻ ԵՂԵԳԵԱՏ ԵՒ ՎԱՅՈՑ ԶՈՐՈՑ. - Միջնոյ մասին գաւառիս Վայոց ձորոյ, այն է Եղեգեաց, մասն ասացաք (յէջ 140) գրել զարեւմտեան եզերսն որ ընդ մէջ նոցա և Դարուրայ դաշտին, յորոց անջրպետ խաղայ Արփայ գետ, ընդունելով և գետակս ինչ մանունս, որք յարեւելից յարեւմուտս կոյս ընթանան, ի հիւսիսոյ կալով Նախճաւան գաւառի. Զմի յայսցանէ՝ յանուն միակ գեղ ձորակի իւրոյ՝ ի դէպ վարկանիմ կոչել Ճաւաձոր, որպէս և կոչի ի պատմութեան Սիւնեաց: Ի հիւսիսակողմանն ամբառնայ Սայեադ տաղ, յարեւմտակողմն՝ Գարա տաղ, Միր տաղ, լեռնակն Տօշնան գրեալ ի քարտի, այլ թուի ուղղելի յանուն գեղին Տէվէօլան. յորմէ բղխեալ աղբիւր խառնի յարեւմտից եկեալ գետակն, որովք ձեւանայ ձորակն, և ի կիցս երկուցուն վտակացն կայ Ճաւաձոր գիւղ, յայժմուս Ճաղագոյր կամ Ճիլագոյր, բնակեալ ի սակաւաթիւ տանց այլազգեաց: Յիշի Ճաւաձոր յարձանի ուրեմն Սմբատայ որդւոյ Լիպարտի, որ ետ անդ հողս ի կալուած իւրաջն եկեղեցոյն Նորավանից: Են ի սին աւերակք Ս. Սարգիս եկեղեցոյ՝ յոր գան յուխտ ի Վարդաւառի տանին, և խաչվէմք անյիշատակք:

Ի գլուխ ձորակին կայ ամայի գիւղատեղին Գեօսիդադիս կամ Քալատակ, առ ստորոտով լերանց անջրպետաց ձորահովտին Գնիշիկայ, իբրև կիսով փարսախաւ ի Հս. Խաչիկ գեղ, և առ նմին նոյնպէս ամայացեալ՝ մի յանուանի վանորէից Վայոց ձորոյ, Խոտակերացն կամ Քարկոփ յառաջագոյն կոչեցեալ. զորմէ այսպէս գրէ՝

1 Հրատարակեալն ի Ջալալեանէ (Բ, 163) թուի կամաւ և ակաւոյ շքութեալ զՔարկոփախառակերաց վանս ընդ Հերմոնի վանաց, նոյն համարելով, և ընդօրինակելով զբանս և զթուակաւս պատմչին՝ որ զերկուցուն եւս վանացն. ոչ խորհրդածելով զի ըստ այնմ նորագութիւն վանացն (մի և նոյն կարծեցելոյ) 28 ամաւ կանխէ քան զինուածիւնն. և զերկար արձանագիրն ի զրոց պատմչին առանց ինչ այլայլութեան ընդօրինակէ իբրու գտեալ ի հարաւային որք յարտագին կողմանէ ի վերայ լուսամտին. յորէ ազատնոյն զթերսա արձան Սմբատայ Օրբելեան, վկայելով «ըստ միւս» ծի մասին եզմեալ զու: Իսկ Քալատակի աշխատ լեալ ընդօրինակեալ է զըստ արձանն որչափ ինչ մարթ էր ընթեռնուլ ըլլով զթերին՝ բանիւ պատմչին: Զերկուսին եւս ուրոյն կարգեմ, զառաջինն (զպատմչին) ի կարգի տեղագրութեանս, զերկրորդն ի կարգի սաս ծանօթութեանց, որ է այս:

Նախ եւ առաջին վասն զի աւերեալ էր կրանաւորանոց ուխտս եւ քաւարանք որ ի սմա ի վաղընջուց հետէ, այսինքն վանքս խոտակերաց. իսկ ապա տէրն իմ Իրանելին Աշոտ Սիւնեաց աշխատութեամբ շինեաց զսուրբ գեկեղեցիսն, միանգամայն իսկ նորոգապէս զարդարեալ զամենայն շինուածս

կրանաւորական դասիւք: Իսկ եւ իսկ եղեւ տեաւուն իմոյ Աշոտոյ ելանել ի մարմնոյ աստի առ Բաւրս իւր. (Սահմա)նեցին որդեակք մեր զգիւղս Արաստամուղ ի սուրբ ուխտս սահմանովք, զոր իւրեանք Բարքն կերեալ են վասն երանելի իշխանին, եւ իմ Շուշանայ Սիւնեաց... արեւշատութեան... Եւ եղեւ զի հիմնաշարժ... եկեղեցիքն տեառն իմոյ Աշոտի կենաց Բաղորդ կամելով նորոգել զյիշատակ... ան տեառն իմոյ փոռ... շինուածս յանուն Սրբոյ եւ միշտ կուսի Մարիամու... տեառն իմոյ Աշոտի Սիւնեաց իշխանի եւ իմոյ մեղուցեալ Բագոյս... գիւղն զԱրաստամուղ ամենայն սահմանաւ... մինչեւ ցայսաւր... առաջնորդիս Բաստաւտեցի անխախտ պայմանով ի սուրբ Աստուածածնիս... կամակցութեամբ որդեկաց իմոց. եւ զայս պայման... կրանաւորանոցի աստ, զի ի հինգ եկեղեցիսդ այդ վոր ես շինեցի... (մին) եկեղեցիդ որ է (Աստուածածինդ) տեառն իմոյ Աշոտի եւ յիմ



պատմին Սիւնեաց. « Յառաջ քան զայս ի բազում  
 » ժամանակաց բնակեալ էին խոտաճարակ և խարազ-  
 » նազգեստ մարդիկ յատորտն Վայոց ձորոյ՝ ի սահմա-  
 » նին Հրասեկայ բերդոյ մերձ յԱրաստամուղ գետը, որ ի-  
 » ըրր զիտանոց բարձր հայէր ի վերայ դաշտին Եարըրոյ.  
 » և էին յոյժ բազմութիւնք հեռացեալք ի հանդերձից և  
 » ի մարմնաւոր կերակրոց, և ցրուեալք ընդ քարաժայռս  
 » և ընդ խորածորս վայրիցն՝ մշտնջենաւոր աղօթից պա-  
 » րապէին. և ի կիրակէիցն առ միմեանս ժողովէին և  
 » երկնաւոր զենմանն (հաղորդէին). և այն լինէր նո-  
 » ցա վայելումն ի հաց և ի գինի. զայլ աւուրսն բնա-  
 » կէին ոմանք ի ծերպս, ոմանք ի նեղսագոյն խղի, ո-  
 » մանք՝ բացօթեայք, լուռք և անմուռնչք, և սակաւ  
 » ոգեպահովն ի հնդոյ կամ ի բանջարոյ շատանային.  
 » ոմանք շինէին մատուռն ի նեղ ձորակի մի առ քաղ-  
 » ցրահամ աղբերն և անդ բնակէին. որ այժմ Ուռոյ  
 » քար անուանի, յորում կան գերեզմանք նոցին, և  
 » մեծամեծ բժշկութիւնք լինին. ոմանք ի միւս արձակ  
 » ձորին շինեցին խորան, և անդ բնակէին, զոր Հիւն  
 » վանքն կոչեն. և այլքն աստ և անդ ցան և ցիր, և բուն  
 » տունն իւրեանց և եկեղեցին էր մերձ յԱրաստամուխ  
 » գետը, ի պատշաճաւոր տեղի՝ յորում բնակեցուցեալ

» էին զահարկու և զաստուածահարալ սուրբ Նշանն որ  
 » Խոտակերաց խալ կոչեն: Եւ յաւերմանէ աշխարհիս  
 » ցրուեցան կրօնաւորքն այն. և տեղին աւերակ և անբը-  
 » նակ մնաց մինչև յաւուրս Տեառն Աշոտոյ՝ Սիւնեաց  
 » իշխանի: Ապա զգացուցանէ նմա զիրն մեծ եպիսկոպոս-  
 » սըն Սիւնեաց Տէր Յովհաննէս. և նա հրամայէ վերբու-  
 » տին շինել զեկեղեցին և զվանքն և ժողովել զկրօնաւոր-  
 » սըն, և տայ զգեօղն Արաստամուխ ի ժառանգութիւն  
 » եկեղեցւոյն, որ եղեւն իսկ: Եւ ապա վախճանի բարե-  
 » պաշտ և արքայաշուք իշխանն այն Աշոտ. և ի սաստիկ  
 » շարժմանէ տապալին եկեղեցիքն և ամենայն շինուածք  
 » վանիցն. զոր և վերստին ծանուցանէ եպիսկոպոսն եւ  
 » բանելի տիկնոջն Եուշանայ. և նա առաւել աստուա-  
 » ծասէր գուրով և բարեպաշտօն՝ հայցէ յեպիսկոպոսն  
 » փութապէս ձեռն ի գործ ածել և շինել զեկեղեցին և  
 » զտեղին պայծառ քան զառաջինն, զի մի կորիցէ. ասէ,  
 » յիշատակ տեառն իմոյ Աշոտոյ. զոր և անյապաղ փու-  
 » թով կատարեաց եպիսկոպոսն Տէր Յովհաննէս: Եւ կո-  
 » չեն ի նաւակատիս զմեծ կաթողիկոսն Հայոց զՏէր Յով-  
 » հաննէս. և պայծառապէս զարդարեցին զվանքն առա-  
 » լել քան զառաւել, և գրեն արձան յիշատակի ի վերայ  
 » եկեղեցւոյն Աշոտոյ և Եուշանայ, որում էր օրինակ այս.

Նախ եւ առաջին իսկ լեալ էր վանքն Խոտակերաց. եւ վասն զի աւե-  
 րեալ էր կրօնաւորանոց ուխտս եւ քաւարանս որ ի սմա ի վաղնջուց հետէ,  
 իսկ ապա տէրն իմ երանելին Աշոտ աշխատութեամբ շինեալ էր զսուրբ ե-  
 կեղեցիքն՝ միանգամայն իսկ նորոգապէս զարդարեալ զամենայն շինուածսն  
 կրօնաւորական դասիւք. իսկ եւ իսկ եղեւ տեառն իմոյ Աշոտի ելանել ի  
 մարմնոյ աստի փոխելով առ հարսն իւր. սահմանեցին որդեակքն մեր ըզ-  
 գեաւղս Արտասամուխ ի սուրբ ուխտս սահմանաւքն իւրեանց (ղոր) հարքն  
 կերեալ էին, վասն երանելի իշխանին Աշոտի եւ ինձ Եուշանայ՝ Սիւնեաց  
 տիկնոջ, հոգեաց արձան եւ յիշատակ մեզ եւ յարեւշատութիւն որդեկաց  
 մերոց: Եւ եղեւ զի հիմնաշարժ լինելով աւերեցան եկեղեցիքս. եւ իմ տեա-  
 ուրն իմոյ Աշոտի կենաց հաղորդ կամելով լինել, (առ ի) նորոգել զյիշա-  
 տակ նորա փոխելոյն առ Քրիստոս, նոր շինեցի զսուրբ եկեղեցիս կրաւնա-  
 ւորանոց շինուածովք՝ յանուն Արթուհոյ եւ միշտ կուսին Մարիամու Աս-  
 տուածածնին. Եւ վասն փրկութեան երանելի Տեառն իմոյ Աշոտի՝ Սիւնեաց  
 իշխանի, եւ իմոյ մեղուցեալ ոգւոյ եւ որդւոց մերոց Սմբատայ եւ այլոցն  
 երկարաձիգ կենաց եւ յաջողման, իբրեւ զնոյն դիւղն Արտասամուխ ամե-

անուն լիցի (ի տարին Գ) քառասունք (կատարեն  
 մեր)ոց մեղուցեալ հոգեացս. Թերեւս գտցուք ողոր-  
 մութիւն յահեղ ատենին Քրիստոսի... չորս եկեղե-  
 ցիքդ եղիցին որդեկաց իմոց յարեւշատութիւն եւ ի  
 հոգեացն փրկութիւն, եւ ի հոգա... քառասուն: Եւ սորդ մի ոք իշխեսցէ այսմ անսուտ վճուիս...  
 ընդդիմակացութիւն եւ խափանումն առնել. ա-

պա եթէ ոչ այնպիսին ընդ Յուդայի... լիցի եւ մե-  
 դաց մերոց համար տացէ յաւուր անեղ ատենին  
 Քրիստոսի: Եւ մեք Տէր Յովհաննէս Հայոց կաթողի-  
 կոս վկայ եմք այսմ վճուի... անխափան... ունեց  
 ... այնպիսին նզով շարաչար ընկալցի ի Սրբոյ Լու-  
 սաւորչէն Գրիգորէ... ամենայն սրբոց Հայրապե-  
 տաց... Գրեցաւ յիշատակարան կտակիս... Յ...

նայն սահմանօրն նորա զոր կերեալ էին մինչեւ ցայսօր ժամանակի, ի ձեռս վանացս առաջնորդիս հաստատեցի անխախտաւ պայմանաւ ի Սուրբ Աստուածածինս, ի վանս Խոտակերաց մինչեւ յաւիտեանս ժամանակաց, կամակցութեամբ որդեկաց իմոց. Եւ զայս պայման հաստատեցի ի սուրբ կրօնաւորս նոցի աստ, ի հինգ եկեղեցիսդ այդ զոր ես շինեցի. մին եկեղեցիդ որ է Աստուածածինդ՝ Տեառն իմոյ Աշոտի եւ յիմ անուն լիցի, ի տարին երեք քառասունք կատարեն մեղուցեալ հոգւոց մերոց, թերեւս գտցուք ողորմութիւն յահեղ ատենին Քրիստոսի. այլ եւս չորս եկեղեցիքդ լիցին որդեկաց մերոց յարեւշատութիւն եւ հոգեացն փրկութիւն եւ ի պէտս վանացրս: Արդ մի դք իշխեսցէ այսմ անսուտ վճուիս եւ պայմանիս ընդդիմակաց լինել եւ խափանող. ապա թէ ոչ՝ այնպիսին Յուդայի մատնչին մասնակից լիցի, եւ մեզաց մերոց համարս տացէ յաւուր անեղ ատենին Քրիստոսի. Եւ մեք Տէր Յովհաննէս՝ Հայոց կաթողիկոս, մերովք եպիսկոպոսօք, եւ Տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, վկայ եմք այսմ գրոյ եւ վճուի. Գրեցաւ յիշատակ կտակիս այս յ'ՅԾԹԹ թուականիս Հայոց ի կամս ամենակալին Աստուծոյ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն .

Զքովանդակ իսկ զերկար բանս պատմչին կրկնեցաք, այն թերատն այն արձանագիր գրեալ յորմն եկեղեցւոյ քանդի եւ չիք այլ քան զայն յիշատակ վանացս, բայց մի. գեղջն Քեառատադի, եթէ իցէ այն Խոտակերացն.

... Իշխանաց իշխանի կողմնակալի այսմ նահանգի նորոգեցի վերստին, յիշել յաղաւթս ձեր զիս զԱմբաստ եւ զեղբայրն իմ զՏարսայիճ եւ զմայրն իմ զԱսփայն եւ զամուսինն իմ Ռուզուբան .

Անուն Սմբատայ՝ Սմբատ արքայ փակագրովք նշմարի ի բարձու ուրեք եկեղեցւոյն: Առ Ստեփաննոսի եպիսկոպոսաւ թուի ամայացեալ վանացս կամ նուազեալ ի միաբանից. զի գրէ սա. « Ետու զՔարկովի իւր ամենայն » սահմանօք ի վայելումն եւ ի ժառանգութիւն առաջնորդաց տանս եւ այլ եղբայրութեանս » Կորավանից: Եւ զայս առնէր Ստեփաննոս տիրաբար. քանզի ասէ. « Արա. » տէս եւ Քարկովին՝ իմ հալալ հայրենարածին էր, որ ոչ » աւագի եւ իշխեցողի ոչ այլ ումեք ոչ ինչ հաշիւ կայր ի » ներքս» — Եկեղեցին, ըստ Զաւալեանի, հոյակապ էր եւ վայելուչ քանդակօք, ամբարձեալ ի վերայ չորից որմնածեալ սեանց, չորիք պատուհանօք, յորոց կամուրս են քանդակք աղանեաց եւ առիւծուց. բաց յաւագ խորանէն ունէր եւ երկուս երկուս աստի եւ անտի. դարձեալ եւ զան.

գակատուն եւ գաւիթ ի հիւսիսոյ կողմանէ քառակուսի (18 քայլ). այլ զարդիս առաւել եւս խաթարեալ է: — Արձանագիր Շուշանայ վերաշինողի վանիցն Խոտակերաց ասէ հինգ եկեղեցիս շինեալ, յորոց զմին՝ զԱստուածածին՝ սեփականէ ի պատարագիս վանս իւր, եւ զչորեօին վանս որդւոցն չորեցուն, ի դէպ է ըստ բառին ուրոյն ուրոյն եկեղեցիս համարել եւ ոչ լոկ խորանս ի միում եկեղեցւօ՞ր որպէս որ ի գեղջս այս աօի: Կիւտ հետոց եկեղեցեացն՝ դիւրեսցէ եւ զհետազօտութիւն յիշելոցն յարձանին Հին վանիցն եւ նեղ եւ արձակ ձորակացն եւ Ոչտոյ քարի. սա թուի քարանձաւ կզառոր աղբերն, որ յիշեսցի ի ստորեւ: — Առ երի եկեղեցւոյն երեւին եւ հիտք բնակարանաց միանձանցն, իբրև 38 սենեկաց. առ որովք գտաւ ընդ գետնաւ տապանագիրս.

Այս է տապան Մկրտիչ սրբազան կուսակրաւն քահանային. յիշեցէք ի Քրիստոս. ԹՎ. ԶՀԲ.

ոճ գրութեանն նորագոյն է քան զթիւն: Սակաւ ինչ հեռագոյն առ ագուգայիւք հին ջրմղի որ բերէր Շուր ի Շառան անուանեալ աղբերէ՝ կայ խաչվէ՛մ բարձր ի վերայ պատուանդանի, Պողոտաշոր կամ Սասմի (Յասման)

Խաչ անուանեալ:— Ի հարաւակողմանն են մնացորդք յրազացի, և մեծամեծ հատորք վիմաց աւազանի, որոց մին պահ է զարձանս այս յիշատակի պատմիչ եպիսկոպոսին Սիւնեաց, գրեալ յամի 1298.

**Չամենաբարին եւ զլուսաւորինն եկեղեցւոյ զՏէր Ստեփաննոս ի բարի յիշեցէք. Թ. ԶԽԷ.**

Սակաւուք բացագոյն է ի հարաւակողմն ամայի գիւղն Ղարդայ բազար, յորում գիր խաչարձանիս.

**Ի ԹՎԻՍ ԶԼ. Ես Սարգիս կրանաւոր կանգնեցի զԽաչս ի բարեխաւսութիւն ինձ եւ Դաւթին.**

Անդր քան զայն է անուանեալն Ոչրակերի աղբիւր: 86. Անձուկ այլ երկարագոյն եւս ձորակ կայ ի Հր. Ճաւաձորոյ և ի Հս. Ակոռոյ, զոր մարթ է կոչել Սաչկաձոր՝ յանուն Սաչիկ գեղջ. Թերեւս յանուն սորին ողջոյն մասն մի գաւառին վայոց ձորոյ կոչէր երբեմն Սաչերոյ — խոռ, ըստ չրլարերականի Սարգսի կաթողիկոսի, որ ի Թուրքն զգաւառս Սիւնեաց՝ յետ ճահկոյ ասէ, « վա. » յոց ձոր՝ Սաչերոյ խոռոջն». և արդարեւ ոչ միայն տեղիս սահմանորդ է հիւսիսակողման ճահկոյ, այլ և բովանդակ երկիր արեւմտակողման վայոց ձորոյ՝ յահեկէն Արփայի՝ խոռ իմն ձեւանայ ընդ մէջ լերանց ձորաւորսն կնիչիկայ և գաւառաց ճահկոյ և Նախճաւանի:

Այլ այս գիւղը և է, գեղն Սաչիկ՝ որ իրր մղոնաւ ի հարաւոյ կայ Քալատաղի և Խոտակերաց վանաց, և Թերեւս ի նորին իսկ ի սակա հռչակաւոր Խոտակերաց խաչին այսպէս իցէ կոչեցեալ, բարձրանիստ և վայելչագիր, մի է ի սակաւուց գիւղից գաւառիս՝ յորում տեւեցին մնացին ի զարմից նախնի բնակչաց Հայոց, և ոչ են նորեկ գաղթականք, ոգիք իրրեւ 700: Եկեղեցին սագաչէն ընդարձակ (21 քայլ յերկայնն, 14 ի լայն) յանուն Ս. Աստուածածնի, հնացեալ այլ ոչ է հին ըստ շինութեանն ժամանակի, քանզի կանգնեալ է յամին 1681 ի վերայ չորից սեանց, և զարդիս փայտեղինօք ամրացուցեալ, ունի զայս արձանագիր.

**Ի ԹՎ. ՌՃԼ. շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն Աստուածածնին, ի Թագաւորութեան Շահ Սուլեմանին, հայրապետութեան Տեառն Յակոբին. ամէն.**

Ի յետին ամբս Գաբրիէլ Յովնաննիսեան Աղեքսանդրապոլսեցի հաստատեաց դպրոց ի գեղջս յայսմիկ:— Վասն հովասուն վայրուցն՝ բարեկեցիկք մերձակայ և հեռաւոր շինից գան ամարանի ի Սաչիկ:— Յարեւմտից Սաչկայ ի միջի դաշտին ամբառնայ բլրակ մի Թաւառայ

բախտ անուանեալ, ոչ է յայտ վասն էր: Ի հարաւոյ կուսէ երեւին դերբուկք գեղջ Մուսիոզ կոչեցեալ, ոչ յիշեալ ի գիրս: Են և այլ ոչ սակաւ հետք ամայացեալ բնակարանաց՝ գերեզմանաց և ձիթահանից մերձ ի սոսա. ի միում ի ձիթահանիցն արձանագրեալ է, ոչ ի վաղուց,

**Կուկեցի ուստայ Յովհաննէս նկարաքար. Ես Սամոն որդի Տէր Յովհաննէսի Տէր Սամուէլի.**

Իրրեւ մղոնաչափ մի հեռի յարեւելից հարաւոյ Սաչկայ ամբառնայ կատաւաքար բլուր, յորում նշմարի աւերակ գեղջ, եկեղեցեաւ և գերեզմանօք, զոր Հին գիւղ կոչեն Սաչիկեցիք: Հուպ նմին ի հարաւոյ յայլում քաւաքարի կայ աւերակ բերդի, զոր Բերդաքար անուանեն:— Իարձեալ յարեւելակողմն Սաչկայ ամբառնայ կելիլիգայս կամ Գեւալիկոյս (Հարսնասար) լեառն, յորոյ հիւսիսոյ սրաշագաթն և բարձրագոյնն լերանց կողմանցս իրր 8500' (9157' անգղ.) Դուրան օյնախ, հաւանօրէն ըստ նախնեաց Գոռաակախաղաց, ընդ մէջ սուր ի Հս. և կնիչիկայ ի Հր. է փոքր հովիտն Մահրասայ (Վարդապետի):— Ի նոյն կողմանս է և բլրակ մի, յորում գոգաւոր կամ ծակ քար, զոր նուիրական իմն

համարին և բուժիչ ականջացաւոյ, վասն որոյ և կոչեն Անկաձարո խաչ:— Միւս եւս ուխտական վէմ է նոցա խաչանիչ, զոր ընկզարարք կամ Հագարափրիչ անուանեն, և հանդիսիւ պատուեն ի տօնի Համբարձման: Ի հարաւոյ Սաչկայ և ի հիւսիսոյ Աւէշի երկուս եւս ձորակըս մանունս յիչէ Քաջբերունին, զՊոպոքոս և զՈւստոս. որ եթէ այսպէս ցարդ կոչի՝ յիչեցուցանէ զՈւստի գեղ վայոց ձորոյ, որոյ և դասաւորութիւն ի կարգի գիւղորայից ըստ հին ցանկին՝ երեւեցուցանէ յայս կողմանս լինել:

Սակաւ ինչ ի բացեայ ի Հս. Քարկոփ վանաց առ աղբերք միով գտաւ խաչարձան՝ գրութեամբ 1271 ամի. միթէ յանուն գրողին կոչեցեալ իցէ գիւղն Սաչիկ.

**Ի ԹՎ. ԶԼ. Կաման Աստուծոյ ես Սաչիկ կրանաւոր կանգնեցի զԽաչս ի բարեխաւսութիւն ծնողաց իմոց. յիչէք.**

Հուպ սմին են աւերակք եկեղեցւոյ, խաչվեմք և տապանք անգիրք: — Սակաւ ինչ եւս վերագոյն ի հիւսիսակողմն կայ Առնէտ հայանուն գիւղ, որ ոչ յիշի ի գիրքս. Գաջբերունին զսա համարի լինել հինն Արաստամուղ: Աստի մինչեւ յԱմաղու կամ ի Նորավանս՝ ընդ հիւսիս՝ իրրեւ փարսախ մի է հանապարհի:

Ի ստորին կողմն ձորոյն երկու մղոնաւ եւեթ հեռի յեւրոյ Արփայ գետոյ, առ գետակաւ իսկ ձորակիս՝ ի գոգ յրջապատ լերանց, կայ մեծագոյն ամենայն այժմու շինից գաւառիս Վայոց ձորոյ, Երջի աւան այլազգեաց 320 տանց. ունելով ի միջի ի վերայ բլեր բերդ ապաստանի կաւակերտ, ոչ հին: Էր արդեօք և ի հնումն գեօղ մեծաչէն, կամ թէ ի նոր ժամանակս շինեալ և ընդարձակեալ, ոչ ունիմ ասել, և ոչ գուշակել աստանօր զմի ի գեօղից հնոյ Յուցակին, յորս միայն սակաւ ինչ մերձաձայն գտանի անուամբ Եճնղի գիւղ, այլ ոչ հաւաստի յայսմ կողման լինել: Քաջբերունին յանկագոյն համարի լինել զսա հինն Հողոցիմ, ըստ վկայութեան արձանագրին Նորավանից, զոր նշանակեցաք ի վեր անդր. և չիք երկրայել զի չէր հեռի ի վայրացս՝ ուր յայտնի են երկու գեօղք յիշեալք յարձանին, յորս յաւելու հետաքննողն լինել և զյիշեալն Քառանկախադաց սար: — Մղու նաւ ի Հս. Երջեայ քարայր մի է ի Խզանգի անուն լեւորին, դժուարամուտ և մթին՝ այլ կարի ընդարձակ, սիւնաձեւ պաղակաք ի յատակին և ճրագաձեւիք ի վերուստ կողմանէ:

Ի Հր. Երջեայ նշանակի կամրջատեղի, յորմէ սակաւ ինչ հեռացեալ է գետակն. և ի նորին հարաւոյ Դափախառ կամ Գապախառ ? անուն լեռնակ: Ի ժամանակի պատերազմաց Ռուսաց և Պարսից (1828) գեղջաւագ էր Հիւսէին Ալի Սոչրան, որ մասամբ բնակչացն խոյս ետ ի Գիլիսէ-տէրէսի (Եկեղեցաձոր) ի վերոյ քան զճաւաձոր:

Վերջին և ընդարձակագոյն ձորահովիտ այսր մասին Վայոց ձորոյ է Ակոուի, այժմս Ախուրի կոչեցեալ յանուն գեղջն, որ առ կցուածով երկուց վտակաց գետակին. ի գլուխ միոյն կայ Հաւոչ կամ Ալոչ թաթարարնակ գիւղ փոքր, երկու մղոնաւ յԵլ. Հր. Խաչկայ, և է հինն Աւէշ, յիշեալ յարձանագրին Սմբատայ որդւոյ Լիպարտի յամի 1261, հանդերձ Ակոուաւ. զի, որպէս ասէ, ի շինելն և ի նորոգել զեկեղեցիս Նորավանից, «ետու» նախ յիմ հալալ հայրենեացն երկու գիւղ, զԱւէշ և զԱլուապատ, որ յափշտակած էր ի տեղւոյս, և յԱկոուի՝

» զնորատունկ մեծ այգին իւր կիտրակաչքովն ». յետ այնորիկ ասէ յաւելեալ և գետինս ի ճաւաձոր «և ի գլուխ» խրն Ակոուոյ», հանդերձ այլովք. և ի նոյն յարէ. «Ընդ» սմա և զիմ ձեռատունկ այգին ի Ծաղկաձոր»: Զյետին տեղիս եւս համարիմ լինել յայսմ կողման և ոչ յայս համանունս: Բնակիչք Ակոուոյ են այժմ մահմետականք, տունք 60 կամ աւելի: — Ի գլուխ միւսոյ (հարաւայնոյ) ձորակին ի սահմանս արտորէից Աւէշի կայ Տանաչախ կամ Թանաչաչի գեօղ ամայի, յորոյ անուն և ջուրն կոչի: Ի հիւսիսակողմն Աւէշի առ ստորոտով քարաժեռի կան աւերակք եկեղեցւոյ փոքու և տապանալէմք անգիրք: — Մերձ նմին յապառաժից միջոյ և ի քարանձաւէ ծորին ցուրտ ջուրք, զոր Թուրքք Չորաղիսանայ կոչեն, իսկ Հայք՝ կզաչոր, և համարին յանձախն լինել գերեզման ճգնաւորի, յոր և գան յուխտ կանայք ամուլք, որպէս և Թուրքք, կախելով զնուէրս իւրեանց ցնցոտիս զմերձաւոր ծառոյ միոյ, որպէս է նոցա սովորութիւն առնել յայսպիսի ուխտատեղիս: — Ի ստորին կողմանս ձորահովտին յաջմէ գետակին են գիւղք այլազգեաց Տօտ-Ալիպի տիգա, Համգալի տիգա 30 տամք, յանկեան խառնորդոց գետոյն Ակոուոյ ընդ Արփայ, և է չէն ընդարձակ, սակաւուք հեռի ի Հս. Պաշ-Նորաչէն գեղ Շարուրայ: — Ի հարաւոյ ձորահովտին Ակոուոյ կայ փոքրիկ ձորակ մի եւս, գոյզն բարձամք զատուցեալ ի նմանէ, և են ի նմին սակաւ գեօղք փոքունք կամ հանգրուանք այլազգեաց:

Երկիր ամակողման Արփայի արեւմտեան Վայոց ձորոյ՝ որ ընդ մէջ կայ արդ տեղագրելոյ ձախակողման ձորահովտացս և ձորահովտին Աղոպենայ, և յայնմ կուսէ՝ այրարատեանն Սագարակայ և Շարրոյ, ընդարձակ իմն խոպան է, Սանդիզգան ? կոչեցեալ, ունելով լեռնակս ուրեք ուրեք, որպէս Գայա տէրէ, Շափաչախ՝ ի միջավայրին, Գրգ - գալէսի ի հարաւոյ: Հաղիւ ուրեք չէնք նմանրին, որպէս ի հիւսիսակողմն Հիւնուտ գեօղ փոքրիկ, յարեւելակողմն մերձ ի սահմանս Չուայ Զարտի տէրէ աւերակ գեօղ, յոր անուն կոչի և լեռնակ և վտակ մի որ անկանի յԱրփա մերձ ի Տանձիկ Վերին: Արգասիք երկրին են՝ զատ յայլոց ինչ՝ կանեփ և բրինձ: Դրակցութիւն Այրարատեան աշխարհի յարեւմտից և բարգաւաճ ձորակաց Վայոց ձորոյ՝ պահանջէր և զբարգաւաճանս այսր մասին գաւառիս ի հնումն, այլ անծանօթ են մեզ հանգամանք և մնացորդք հնութեանց նորին, և ոչ ստոյգ անջրպետք սորին և Շարուր գաւառի Այրարատայ:

## Գ. ՀԱՐԱԻԱՑԻՆ ՎԱՅՈՑ ԶՈՐ

67. Ի բերանոյ ձորագետակաց Կիւմիւշխանէի և Գուտննւոյ յոր դադարեցուցաք զտեղագիրս արեւելակողմանն Վսյոց ձորոյ, սկսցուք խաղալ ընդ արեւմուտս, յահեկէ գետոյն Արփայի՝ որ է ի հարաւոյ, մինչեւ ցելս սահմանաց նորին ի Շարուր Այրարատայ: - Թեւ ձորակաց Կիւմիւշխանէի և Քիչնէի, առաջին գետաձորակ է Քեօս միւր, յորում և գեօղ համանուն, թերեւս յանուն Գոմոց գեղ չին Յուցակին այսպէս կոչեցեալ, որ ի թիկանց լե-

րանց անջրպետաց Մղկայ և Բաղաց իջեալ, որպէս և որ յարեւմտից հզօրագոյնն քան զնա Եագեռչոտ կամ Մարտիրոս, յարեւելից հարաւոյ ընթացեալ ընդ արեւմուտս հիւսիսոյ, թափի յԱրփա, ոչ հեռի ի խառնըրգոց Գուտննւոյ: Անձուկ է ձորակն և ի միջի կայ այլոց զուգադիր ձորակաց, և ի ռամկաց կոչի Խաչ-տէրեպի (Խաչաձոր) վասն մեծի Խաչարձանի միոյ, յորում և գրեալ է սյսբան, յամի 1288-9.

**Ի Թվականիս Հայոց ԶԼԷ, յիշխանութեան Պապաքին եւ Ամիր Հասանայ, ես Սարգիս եւ որդին իմ Պետրոս շինեցաք զՍյրբիշրս եւ կանգնեցաք զԽաչս . . .**

Ի գեղն (Քէօմիւր) կայ մատուռն չին՝ մեծաւ խաչվիմով, և արձանագիր 1263 ամի շուրջ գնովաւ.

**Ի Թվ. Հ. ԶԺԲ. Ի բարեպաշտ իշխանութեան Պռոշոյ, Մխիթար, Արեւիկ որդի Խոյդանայ կանգնեցաք Խաչս եւ մատուռն. ի գիւղն եկեղեցիս իսկ չկար շինած. զեկեղեցիս այս մեք շինեցաք մեր հալալ արդեամբք բազում աշխատութեամբ մեզ եւ ամուսնոց մերոց. Որք կարդաք յիշեցէք յաղաւթս.**

Գրեա թէ նոյն բան գրեալ է և ի ստորեւ.

**Ի Թվ. Հ. ԶԺԲ. Ի բարեպաշտ իշխանութեան Պռոշայ ես Մխիթար ու Արեւիկ որդի Խոյդանայ հիմնարկեցաք զեկեղեցիս եւ զժամատուռնս. շինեցաք զեկեղեցիս եւ կանգնեցաք Խաչս, բազում աշխատութեամբ, մեզ եւ ամուսնաց.**

Եւ առ երի յորմն. **Մխիթար, Շնոհոր աղբար քարգործ. յիշեցէք.**

Ի չորսին երեսս մատրանն են քանդակք կենդանեաց, և ժամացոյց արեգակնային: Ի հիւսիսակողմանն արձաւ և սովորական արծուին խոյսբարձ, պէսպէս գրուազք նագրեալ է զխաչիւ՝ ի վերոյ դրանն.

**Կազմեցաւ Խաչս ի բարեխաւսութիւն Եգիսէ քահանայի. Որք պատարազէք յիշեցէք ի սուրբ պատարագս ձեր.**



ի ներքուստ յարեւմտեան որմն երեւի կիսեղծ արձանագիրս այս .

### Կաման Աստուծոյ Հասանս Պապաքի . . . Պռոշոյ պարոնութեամբ տուի Շինագլուխն . . .

Արտաքոյ մատրանն ի խաչվիմի միում .

### Խաչս յիշատակ հոգւոյ Հայրապետին (եւ) կնոջ Գիւրբաշին .

Քանի ինչ քայլաչափ ի բացեայ՝ կայ այլ եկեղեցի աւայի և խոպանեալ, անդարդ և անթուական :  
Սակաւ գեղք մերձակիցք նշանակին ի ձորակիս, ի վերնակողմանն (ի Հր. Յլ.) . որոց առաջին ի ձորագլուխուն՝ Թրքաքանակ փոքր գիւղն կապոյտ, որ ի հնումն մեծ և անուանի գուշակի՝ ըստ չափու տրից եկեղեցւոյն (13 բեռն) . են անդ մնացուածք հին եկեղեցւոյ, այլ թէ որպիսի՝ ոչ գիտեմ :  
Կիսով մղոնաւ ի ստորեւ կայ Սխտա վերին, և դոցն աւելի հեռի ի սմանէ՝ Սխտա Ստորին . որք թուին լինել միով անուամբ կոչեցեալն ի հին Յուցակին Աղթարոյնք : Մերձ ի վերինն ի ձորամիջի ի բարձու քարաժեռի կայ եկեղեցի աւեր, և խաչք քանդակեալք ի վիմի . և ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն մահարձան բարձր՝ պատկերաւ Տիրամօր և Յիսուսի ի գրկի . իսկ արձանագիրն եղծեալ է և անվերծանելի (ըստ Ջալալ .

Բ. 105) . տեղսրնակ Պարսիկք համարին սրբազանի ուրուք թողեալ անդ, և տեսանել ի գիշերի լոյս ծագեալ ի վերայն . Են առ նովաւ և այլ խաչվեմք կանգնեալք ի ժամանակի իշխանութեան Պռոշոյ յայս կողմանս . մին ի թվին ՉԺԵ, 1266, ի Ղուկասայ և Եղիայէ վասն հօր իւրեանց Տիրայ երիցու ծերոյ . միւս ի թուին ՉԺԱ, 1262, ի Մխիթարայ և ի Դեղէ վասն Շաշի . միւս եւս ի սմին Դեղէ կանգնեալ յամի 1286, յաւուրս Պռոշի և Ամիր Հասանայ . դարձեալ միւս այլ յամի 1271 (ՉԻ) ի Սարգըսէ և ի Գրիգորէ : Չայստիկ յիշէ Ջալալեան, առանց ընծայելոյ դարձանագիրան, որպէս թուի՝ կիսեղծս գլուով, եթէ չիցեն նոյնք ընդ ստորեւ գրելոցս :  
Ի ստորինն Սխտայ կայ մատուռն փոքր (երեք քայլ քառակուսի) քարաչէն . ի վերայ միոյ դրանցն կայ խաչվեմ փոքր արձանագրաւս .

### Կազմեցաւ Խաչս ի բարեխաւսութիւն Եղիսի քահանային . որք պատաւ րագէք յիշեցէք ի սուրբ պատարագս ձեր .

Ի վերայ պատուհանի միոյ քանդակք են խոյարարձ արծուոյ և անգեղաց : Թարեւմտից մատրանս կանգնեալ կայ մեծ մահարձան, (25 կանգուն բարձր, 10 լայն), և խաչ

վեմ ի գագաթան (10 կանգուն երկայն, 4 լայն), քանդակաւ երկուց չղթայակապ առիւծուց և գրուածովս յամի 1263, նման վերոյգրելոյն և ստորեւ գրելոց .

Ի թուին Հայոց ՉԺԲ ի բարեպաշտ իշխանութեան Պռոշոյ (ի ձեռն) Մխիթարայ որդւոյ՝ Խոյդանայ կանգնեցաւ խաչս եւ մատուռս . ի գիւղս եկեղեցի չկար շինած, զեկեղեցին այլ մեք շինեցաք հալալ արդեամբք բազում աշխատութեամբ (ի բարեխաւսութիւն) մեզ եւ ամուսնոյն մերոյ . որք կարդայք յաղաւթս յիշեցէք զորդին Խոյդանայ՝ Մխիթար . — Շնորհաւոր ախպար քարգործ :

### † Կազմեցաւ Խաչս ի բարեխաւսութիւն Աւտարչահին թռուան Խոյտանայ :

† Թվին Հայոց ՉԺԲ . ի բարեպաշտ իշխանութեան Պռոշոյ եւ Մխիթարս ու Արեւ՝ որդի Խոյդանայ հիմնեցաք զեկեղեցիս եւ զժամատունս, շինեցաք եւ կանգնեցաք բազում աշխատութեամբ, մեզ եւ ամուսնոյն մերոյ :

Յերի մատրանն է եկեղեցի կամ ժամատուն սագաչէն (16 կանգ . երկայն, 10 լայն) չորիւք սեամբք : — Մերձ յԱխտա և առ համանուն նորին վտակաւ ամբառնայ

Գիւրբաշայ (որ թարգմանի կառափնասար) քարաբլուր, և ի կողս նորին Տերեքեկտ կամ Դարաքեկտ փոքր գիւղ թաթարաց :

1 Ջալալ . գրէ . Միւսիւրայ եւ Կորդի Խոյրանայ :  
2 Ջալալ . Յիւրայ եւ Կորդի Միւսիւրայ Միւսիւր :  
3 Ջալալ . Եւ Միւսիւրայ եւ Կորդի Խոյրանայ :  
4 Այլ է անգեղայ եթէ նոյն շինողք զնոյն վերոյգրեալ բանս ար-

ձանագրեալ իցեն անփոփոխ կամ սակաւ փոփոխութեամբ՝ յայլեւ այլ կողմանս դաստակերտացն . սակայն մարթէ է և արձանացն փոխադրեալ լինել տեղուէ ի տեղի, կամ ընդօրինակողացն վրիպել յանուանս տեղեացն :

68. **ՉՈՐԱՀՈՎՅ ՄԱՐՏԵՐՈՍԻ.**— Յարեւմտից Քէօմիւր գետաձորակի տարածանի բազմավտակ գետակն՝ որ ի վերնակողմանն Երզնէտըս կոչի յանուն լերին միոյ կամ լեռնատափի, և ի ստորեւն յանուն գլխաւոր գեղն՝ Մարտիրոս. աղբերք նորա իջանն ի Քեօքի լեռնէ բարձուէ (9550'), և յարեւմտից նորին ի Մարտիրոս սարէ (Մարտիրոս-պաշի), ընդ ծործորս և անձուկս վիմաց խաղացեալ յելից կուտէ ի մուտս, զուգին երեք և չորք վտակք յընդարձակ ձորաբերանն, որ մինչեւ յափունս Արփայի ձգի ընդ հարաւ՝ տնկաւէտ անդովք և այգեղք.

յաջակողմանն ունելով երկուս կամ երիս լճակս, որոց մեծագոյն կէս մղոն երկայն: Սուղ ի ստորեւ գետակցացն յահեկէ կուտէ ի զուարճալի և յարգաւանդ վայրի կայ հին գիւղն Մարտիրոս, ոչ է յայտ յորոյ վկայի յիշատակէ սյսպէս անուանեալ և ի հին Յուցակին: Մեծ մասնն բնակչացն մերաղգիք են գաղթականք ի Պարսից բաժնէ, տունք 75 կամ 80<sup>1</sup>, ընդ որս և Պարսիկք իբր 20 տուն: Յերի եկեղեցւոյն (12 կանգուն երկայն և 8 լայն) առ աղբերք միով դոյ խաչվէմ մեծ (11 կանգուն բարձր, 4 լայն) գեղաքանդակ, արձանագրաւս յամի 1283.

**Ես Մխիթար որդի Դեղկայ հրամանաւ իշխանաց իշխանին Պուաւչոյ եւ որդւոյ իւրոյ Հասանայ շինեցի ղգիւղս Մարտիրոս, եւ կանգնեցի ղԽաչս ի դուռն սուրբ վկայարանիս, ի բարեխաւսութիւն ինձ եւ ամուսնոյն իմոյ Մամիրին եւ որդւոյ իմոյ Խարիբչահին եւ դստերն իմոյ Ռուզուքանին<sup>3</sup>. Կազմեցաւ ձեռամբ Շնորհաւորին. ի ԹՎին ԶԼԲ. որք ընթեռնուք յիշեցէք.**

Յարեւելից ? գեղն, մղոնաւ ի բացեայ կայ այլ փոքր եկեղեցի՝ (9 քայլ ընդ երկայնն և ընդ լայն), համակ վիմափոր գմբեթաձեւ ձեղումբ, յորում և բոլորչի լուսամուտ, փղբրիկ գաւթիւ (3 քայլ քառակուսի). ի յատակին նշմարին 11 դամբանք հողոյ հաւասար: Դուռն ի հարաւոյ մուծանէ յայլ եկեղեցեակ նոյնպէս վիմափոր (5 քայլ քառակուսի) չորիւք միաստանի սեամբք, արձանագրաւս յամի 1286.

տակին նշմարին 11 դամբանք հողոյ հաւասար: Դուռն ի հարաւոյ մուծանէ յայլ եկեղեցեակ նոյնպէս վիմափոր (5 քայլ քառակուսի) չորիւք միաստանի սեամբք, արձանագրաւս յամի 1286.

**Կամաւն Աստուծոյ, ի հայրապետութեանն (Տեառն) Յակոբայ եւ ի քահանայապետութեանն գաւառիս Տէր Սարգսի, եւ ի տէրութեան իշխանաց իշխանին Պուոչոյ եւ որդւոց նորին Պապաքայ եւ Հասանայ... եւ որդւոյ (նորին) Պարոն Եաչոյ եւ մաւր նորին Պարոն... Ես Մատթէոս վարդապետ կանգնեցի... եւ կատարեցի ղեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ եւ Պետրոսի եւ ծնողաց մերոց եւ պարոնաց մեր եւ ամենայն հաւատացելոց. որք մտանէք Աստուած ողորմի ասէք մեզ, եւ ձեզ եղիցի. ԹՎին ԶԼԵ.**

Յարեւմտից եկեղեցեացս ի բլրակի ուրեմն են գեղեզմանք և խաչվէմք. մին գեղեցիկ քանդակք (10 կանգուն ի բարձրութիւն և 4 ի լայնութիւն), ունի արձանագիր զվերայգրեալ վարդապետին յամի 1298.

գուն ի բարձրութիւն և 4 ի լայնութիւն), ունի արձանագիր զվերայգրեալ վարդապետին յամի 1298.

**Կամաւն Աստուծոյ. իշխանութեամբն Ամիր Հասանին ես Մատթէոս վարդապետս կանգնեցի վնչանս ինձ եւ Պետրոսի եւ ծնողաց իմոց. որք երկրպագէք Աստուած ողորմի նոցա<sup>5</sup>. ԹՎին ԶԻԴ<sup>1</sup>.**

Յայլում համաչափ խաչվիմի գրեալ է յամի 1279.

**Կամաւն Աստուծոյ եւ իշխանութեան Պուոչոյ եւ որդւոյ նորա Հասանայ կանգնեցաւ Նշանս յիշատակ Քաւթարին<sup>5</sup>. Աստուած ողորմի նոցա. ամէն. ԹՎին ԶԻԸ:**

1 Զաւալ. Բ. 280, գրէր 36 տուն, Շորէն յառաջ քան զնա՝ 40, և 19 տուն ժակմտականս, Քաւթարունի՝ 73 տուն, ոգէս 644:  
 2 Զաւալ. և Քաւթար. Դուրադաձի:  
 3 Թերեւս պակասէ բուն ասոյնի:  
 4 Այսպէս ընթեռնուն ղթին Քաւթարունի և Զաւալեան, որ է 1275. այլ զի ոչ յիշի յարձանին Պուոչ՝ որ կենդանի էր յայմ ամի, Թուի ընթեռնչի ԶԻԴ, 1295:  
 5 Զաւալ. ծանուցանէ զի Քաւթարս էր եղբայր իւանէի Օրբէլեան սպանելոյ ի Գեորգեայ վրաց թագաւորէ. բայց այս զեղբ հարիւր ամաւ յառաջ եղեալ են:

Յայլում եւս գրեալ է յամի 1384 .

**Յիշխանութեան բարեպաշտ իշխանին Ամիր Հասանայ եւ Արիստակէս , Աթանէս եւ Յովհաննէս կանգնեցաք զԽաչս հաւր մերոյ Մխիթարայ . Որք կարգայք յազաւթս յիշեցէք . ԹՎին ԶԼԳ .**

Ի միւսում եւս խաչվիմի բարձու (6 կանգուն և 3 լայն) գրեալ է յամի 1386 .

**Կամաւն Արտուծոյ եւ իշխանութեամբ Ամիր Հասանայ մէք եղբարքս Աւետիս եւ Մխիթար կանգնեցաք զԽաչս հաւր մերոյ Մխիթարայ եւ ամուսնոյն Վահրամայ ? . . . . տիկնոջն . որք կարգայք Աստուած ողորմի ասացէք . ԹՎին ԶԼԵ .**

Են և ոչ սակաւ գերեզմանք առ եկեղեցեաքն . յորոց ի վերոյ միոյն արձանագրեալ է յամի 1478 .

**Այս է տապան Յովհաննէս բէդին . ԹՎին ԶԻԷ .**

Գոյ և քարայր մի և մատուռն փորրիկ վիմափոր , զոր ճգնաւորի բնակարան համարին շինակարնքն , որք գան յուխտ գլխաւոր եկեղեցւոյն ի տօնս Տիրամօրն , և յանուն նորա կոչեն զայն :

Յարեւմտից Մարտիրոսի , ասէ Զաւալեան լինել զՀնորոցիմ գիւղ , իբրև ականատես . այլ զի ըղձիւք միայն կարծեմ տեսող լեալ է վայրացն և ոչ իսկապէս , երկւայնի են դիրքն , մանաւանդ զի բաց ի վարկպարագի խորհրդածութեանց՝ չտային նշանակ աներկեւան . սակայն չէ անհաւան թէ յայտ հովտի իցէ գիւղն այն ի Հս . Մ . Մարտիրոսի , վերագոյն քան զայն , մանաւանդ եթէ Արատեկ գիւղ (98) իցէ հինն Ազատ , զորմէ ասէ Աբուբարտ իշխան Օրբելեան յարձանագրի Նորավանից , եթէ , « Տուաք զԱզատ գիւղն՝ իւր ամէն սահմանովն , չըլակայ յըրամբ և դաշտով , սկսեալ ի բարձր դիտաւոր սարէն որ » Քոչառակախաղաց կոչի՝ մինչ ի յերեւանն Հողոցմոց և յՃաւաձոր եւ ի գլուխն Ակոռոյ » : Ամենայնիւ արժան էր խնդրել և ճշգրտել զտեղին որ ընծայեաց ի լոյս կենաց զՍ . Յովսէփի երէց գհեզն և զգօն , զարժանաւորն յամենայն ուխտի եկեղեցւոյն Հայոց՝ փոխանակելոյ զմեծան Սահակ և Մեսրոպ , և զբացագոյն յոյժ ի հայրենեաց՝ յԱպրր աշխարհի Պարսից նահատակեալն վսեմական վկայութեամբ . որ թէպէտ և կալաւ զաթոռն հայրապետական զամս հնգետասան , յայնպիսում տազնապալից և զժաւարուղղելի ժամանակի , վասն անիշխանութեան ազգին , հալածանացն Յազկերտի , և վասն շփոթմանցն և փոփոխութեան եկեղեցական դասակարգութեանց , ոչ ժամանեաց առնուլ հանգիստապէս և զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան , թէ և ի գլուխ ժողովոյն Արտաշա-

տու կալով ( յամի 450 ) ստորագրէ կամ գրի ի պատմչէն Եպիսկոպոս Այրարատայ : Գիւղն թուի այժմ եթէ ոչ իսպառ անծանօթ , այլ ամայացեալ . պատմիչքն ժամանակակիցք Յովսէփայ՝ ոմանք Հ և ոմանք Խ տառիւ գրեն , ոմն եզակի և ոմն յոգնակի տառիւ՝ Հողոցիմ , Խողոցիմ , Հողոցիմ , Խողոցիմ , և զհոլովականն՝ Հողոցմանց , Հողացմանց , Հողցիմանց : Ի գեղջէ աստի էր և պատմիչն Մեսրոպ երէց որ զվարս Մեծին Ներսիսի գրեաց յելս Ժ դարու , ( 967 ) , որպէս ասէ յաւարտ պատմութեանն . « Ես Մեսրոպ նուաստ քահանայ ի Վա . » յոց ձորոյ ի գեղջէ Հողոցմանց , ուստի Յովսէփի էր երա . » նելի նահատակն յաւուրս Սրբոյն Վարդանայ . . . Ես » Մեսրոպ , ազգակից սրբոյն Յովսէփայ երիցու իմացու . » ցանեմ՝ ( զի Յովսէփի չէր ձեռնադրեալ եպիսկոպոս ) , » այլ մնաց երէց և ի նմին վախճանեալ : Եւ արդ զայս » ( Պատմութիւն ) հանեալ յԱրեւելից գրոց ի Հայոց Մա . » նագորդացն պատմութեանց , ետու որդիացելոյ իմոց » սուրբ աւագանին ծննդեամբ՝ Վահան Մամիկոնոյ , ի » գեղն որ կոչի Վարժի » : - Անծանօթ է իսպառ և տեղի այսր յետին գեղջ , և լինելն ի գաւառի կամ յաշխարհի աստ Սիւնեաց , կամ ի Տարսն և կամ ի Վարաժնու նիս :

Իբր չորիւք մղոնք ստորեւ Մարտիրոսի ( ի Հր . ) յանկեան խառնրդոց վտակի միոյ ընդ գետոյն՝ կայ Փաշալու գիւղ 55 կամ 60 տամբք Հայոց գաղթելոց ի Պարսկահայոց , թերեւս հինն Փշօնք . այլ ոչ դիտեմ ունիցի՝ ինչ ի մասնէ հնութեանց . որպիսի է խաչարձանն ( ստուգելի ) որ գտանի ի մերձաւոր նորին նորայչէն մատրանն Ս . Վառվառե կոչեցելոյ , թուականաւ 1397 ամի .

**Տէր Աստուած ողորմէ Ասլանին , Էլիկո ? բէգին , Թորոսին ( որ ) ի Քրիւտոս փոխեցաւ երիտասարդ . ԹՎին . ԶԽԶ .**

1 Զայս վաղաքոյն իմացուցեալ էր հնագոյն պատմաց , որպէս Ղազար ֆորպեցի . « Յովսէփի՝ Թեպէտ և երէց էր ըստ ձեռնա-

» դրութեան , այլ վկայութիւնութեան Հայոց զաթոռն ունէր ի » ժամանակին » :

Ի հարաւոյ Փայալուի է մեծագոյնն ընաց, և կարծելի է անդ լինել զհին գեօղն Լիճ, զի և ի դասակարգին չէ հեռի անունն ի Փշնից և ի Բորայ: — Իսկ մերձ ի խառնուրդս գետոյն Մարտիրոսի ընդ Արփայ, յահեկէ առաջնոյն (որ է ի Մտ.) կայ թաթարաբնակ փոքր գիւղըն Գարալար, մերձ ի Սէօյլան և ի Կէօկէրճին:

89. Ընդ մէջ ձորագետոյ Մարտիրոսի յարեւելից և մեծագոյն ձորոյ Կեհիչիկ գետակի յարեւմտից, են ձորակք և գետակք մանուկ հինգ կամ վեց, որք ուրոյն ուրոյն ի հարաւոյ ի հիւսիս ընթացեալ թափին յԱրփա, հան-

դէպ միջոցի բերանոց գետոցն Գուտենույ և Եղեգեաց՝ որ յամէն Արփայ: — Առաջին ձորակ անընդմէջ Մարտիրոսի՝ ունի զփոքրիկ գիւղն ԲՈՐ (Փոռ ըստ Քաջբեր.), որ նշանակի և ի հին Յուցակին Սիւնեաց. բնակեալ է ի Հայոց 80 տանց գաղթելոց ի Պարսից բաժնէ, և ի սակաւուց այլազգեաց. այլ ոչ գիտեմ զինչ ի հնու թեմէ ունիցի. վէմս երկուս հին թուականօք 1273 և 1307 ամաց՝ ետես Քաջբերունի ի գերեզմանսն, բայց այլուստ բերեալս համարի. երկրորդն սնէր և զայս արձանագիր ոչ անթերի:

**Ես Սարգիս, բարեխաւս. հաւր. ԹՎԻՆ 202.**

Սահմանք Բորի գեղեցիկք և քաղաքոյս երեւին գուրբ կիսով փարսախաւ ի Մտ. կայ Փայալուի, նոյնքան հեռի ի Մտ. ունի զմեծագոյն և վայելչանիստ գիւղն Ազատակ, առ աղբերք վտակի միոյ. բնակիչքն են Հայք

գաղթեալք ի Պարսից բաժնէ, տունք՝ որպէս Թուրի՝ աւելի քան 480: Ի հին Յուցակին ոչ յիշի, այլ ի պատմէն կոչի Ազատ. չերեւի և հին յիշատակարան, զի և եկեղեցին նորոգեալ ունի արձանագիրս նորագոյնս, որպէս:

**Կաման Աստուծոյ մեր Ազատակայ ժողովուրդս շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան Տեառն Յակոբայ.**

Ի նորոգութեանն ժամանակի գտեալ են քլոցս, ծլնծղայս և բուրվառ, գրութեամբ անուանց նուիրատուացն.

**Յիշատակ է Աղայակի որդի Կիրակոսին՝ ի դուռն Սուրբ Ստեփաննոսի. ԹՎԻՆ ՌՃԻԶ.**

**† Յիշատակ է Շաղօի որդի Մարտիրոսին, Ազատակի Սուրբ Ստեփաննոսի. ԹՎԻՆ. ՌՃԾԱ.**

**† Յիշատակ է բուրվառս Շուռութցի Կրիքորի որդի Պետրոսին, որ ետ ի դուռն Ազատակու Սուրբ Ստեփաննոս Նախավկային.**

Սակաւուք ի բացեայ ի միջի աւերակաց կանգուն կայ մատուռն փոքրիկ, արձանագրաւս 1623 ամի.

**Յանուն Աստուծոյ, ես աղքատ Մէլիքշահս շինեցի Ս. Ակոր... նա հանգիստ Շարարէկին. ԹՎԻՆ. ՌՃԲ.**

Հնագոյն թուական ի խաչարձանս գտաւ ԶԿԲ, որ է 1313 ամի: — Ի մերձակայ բլրին երեւի եկեղեցեակ մի եւս աւերակ, Ս. Մարինոս կոչեցեալ, ունելով ի վերնակողմանն զԳապախոռ կամ Ղափախոռ գիւղ 35 տամբք թաթարաց, և առ բերանովն զՂախոռ գետիկ, առ որով կայ հին կարաւանատուն:

Համանման ձորակ մի է ի Մ. սորին, որ ի վերնակողմանն բարձու ունի զհին գիւղն Զեղեայ, և կոչի այժմս Զէյրի կամ Զէյրա, բնակեալ յայլազգեաց տանց՝ 30 կամ առաւել: Յուսալի է գտանել ի սմին յիշատակս նախնեաց. Քաջբերունի ետես միայն գերեզմանս ոչ հին մահարձանօք, որպիսիք են:

**Տիլան որդի Աւագին ԹՎ. ՌՃԽԲ. † ԹՎ. ՌՃԿԲ. Տէր Օվանէսի եղբօր.**

**† Տապանս կանդնեց ԹՎԻՆ. ՌՃԿԲ. Տիրղալի խանին.**

1 Յախարազոյց տախտակի նշանակի ընդ Զեղեայ և անուն Զօբբոյ չօժի, որ ոչ գիտեմ զինչ իցէ:

Գոյ և եկեղեցի մի աւերակ ի մերձաւոր բլերն:

Հուպ ի բերան գետակին նշանակի ճաղադաշի գեօղիկ: — Ի հարաւակողմն ի գլուխ ձորակին ամբառնայ լեռնարևուր մի բոլորչի ի Թուրքաց կոչեցեալ Գոռտո-գոռագ-տաղը (Գայլականջ):

Ի ձորամիջի-երկուց այլոց մանունց վտակաց կայ Գոռտ պոն քեսիչեկ (Չոհկտուր) գեօղ:

Ի Մ. սոցին խաղայ հզօրագոյն գետակ փոշրագ-լայ կոչեցեալ, այլ ոչ նշանակի չէն յայն անուն. իսկ ձորն

կոչի և կօզրու տերեկ, այսինքն ընկուզաձոր, և են իսկ ի նմին ընկուզենիք և վայրի վարդենիք. այլ և հանքային կրակաւոն ցրտաղբերք բուժիչք համարեալ բորոտու-թեան: Ի վերնակողմանս ձորոյն է Գոռտո-գոռագ գիւղ Թաթարաց 40 տանց, համանուն վերոյգրեալ լերին, ի-բրեւ մղոնաւ ի բացեայ յարեւմտից կուսէ, յորում եկեղեցեակ մի ամայի ՌՃԳ և ՌՃՁԵ թուականօք, և ան-թուական արձանագրաւ՝ յայտնէ զհին և զնոր անուն Ծուկրուկ կամ Ծկրիկ, զի ասէ:

### Յիտուսի Քրիստոսի հրամանաւ, մեք Ծուկրուկոյ շամուհաթս կանգա-ցրինք Թուշխմանուչ եկեղեցիս, յիշատակ հոգոց մերոց.

Հուպ ի Ծուկրուկ կայ աւերակ եկեղեցի մի եւս, յորում ի խաչվիմի գրեալ է յամի 1740,

### Խաչս յիշատակ է Խարոնին. Թվին. ՌՃՁԹ.

Չտեղիս այս Հայք կոչեն Մոլդիկ. երկու քարեղէն աւազանք են ի նմին, յորս գայ չուր ընդ ստորեր-կրեայ խօղովակս: — Մերձ է ի սա աւերակ բերդի վար-գարուտը կամ վարդափոռոյ կոչեցեալ, թերեւս հինն Բերդիմայր գիւղ մեծ՝ որպէս գուշակի ի տրիցն (20 բեռն). թիկունք լեռանց տեղւոյս որ սկզբնաւորեն զաղբերս գետոյն Նախնաւանի՝ ունին արդարեւ մայրիս: Ի Դաշխալ բլուրն է Ենկիձէ գիւղ փոքր հայարնակ 28 տամբք, որ թուի հինն Նորիք, ի Մ. ջրոյն բացագոյն. իսկ առ բերանոջն կամ յանկեան զոր գործէ՝ կցելով ընդ Արփայի, կայ մեծ գիւղն Այար կամ Ագեար. և սա թուի հինն Արաար, տարածեալ ի միջի այգեաց և սօ-սեաց, բնակեալ ի գաղթականէն Հայոց կողմանն Պար-սից իբրեւ 40 տանց: Ոչ յայտնեցան ի սմա հնութիւնք, այլ արժանի քննութեան է ձորն ողջոյն, յորում կան ոչ սակաւ աղօրիք խափանեալք յեզեր ջրոյն. և երկիրն իսկ հետաքննելի է, զի ասի ոչ միայն Չերմուկս ունեւ թը-թուալուրս, այլ և խափանեալ կապարահանս: Գեօղն Ա-յար ընդ մէջ կայ Մոզան և խառնըրդոց Եղեզեաց ընդ Արփայի կամ Տատաղոս կամրոջի: — Ի լեռնաձեւ բար-ձրաւանդակի արեւմտեան ձորափին կայ բերդատեղի

Շօրձա անուն, ոչ զիտեմ որպիսի շինուածս ունիցի: Ընդ մէջ յիշեալ բարձրաւանդակիդ և արեւելեան լեռ-նապար անջրպետի Գնչինայ՝ կայ փոքրիկ ձորակն Էր-դիլայ, Մարմաս-տերեպի կոչեցեալ ի Թուրքաց, վասն սպիտակ կճափայլ խրճիցն, և առ բերանով նորին յԱր-փայ՝ հին գեօղն Էրդէչ, այժմ թուրքարնակ, գեղեցկա-ղիւր և սօսիատունկ, ի հարաւոյ կողմանէ ունելով բերդ աւերակ ի գագաթն քարաբլեր, և գերեզմանս խանգա-րեալս, յորս խնդրելի են արձանագրութիւնք: — Յելից հարաւոյ գեղջն ի քարարլի ուրեք կայ աւերակ այլոյ հին բերդի, որ կոչի այժմ յանուն Շիրալի խանի, և առ ըս-տորոտով նորին յարեւելից կուսէ՝ աւերակք տանց և գերեզմանք անգիրք. որպէս և ի Հս. կուսէ մնացուածք բնակարանաց, դուռն, քարեղէն սանդուղք ելից ի բեր-դըն. յայժմ կողման ածեալ է և պարիսպ կրաշաղախ-քանգի յայլոց երից կողմանց անմատոյց է քարաբլուրն. տասնիւ շափ սենեակք են ի բերդին և ջրամբար. զար-դիս մակաղատեւ է անդէոց ամարանի: — Ի վերնակող-մանս վտակին երեւին գերեզմանական վէմք ոչ հինք, քանդակօք տանուտերանց բազմելոց ի սեղան, և ձիոց պատրաստելոց ի շու. ի միումն գրեալ է:

### Ես Վերտիչայի (Էրդէչի) տէր Խաչուհմա կանգնեցի Խաչս ի փրկու-թիւն հոգւոյ Արրահամին.

Յայլում խաչվիմի՝ թիւ 21, որ է 1371: — Վերագոյն եւս առ աղբերք վտակի կայ աւերակ գեօղն Մեզրէ կամ Մոզրով, և յարեւմտից նորին առ ստորոտով Էրդիլ-պաղը երկարաձիգ լերին՝ աւերակ Գանձակ գեղջ. որ ոչ յիշի ի հին Յուցակին, այլ ի պատմութեան Սիւնեաց (ԿԵ):

ՅԷրդէչայ մինչեւ մերձ յԱրփա գիւղ կամ ի գետաբե-րանն Գնչինայ՝ խորաձոր մեծի գետոյն Արփայ կոչի Ենդուլի - ձոր, որոյ քարաժայռ դարափունք անհեղեղ կերպարանօք երկուստեք կարկառին ի մեծէ բարձրու-թենէ, ահեղագեղ տեսլեամբ, յորոյ տափարակ միջոցս աճեն թթենիք, և արօք են անդէոց: Քննող վայրացս

Քաջբերունի՝ փոքրիկ իմն օրինակ կամ նմանութիւն ա-սէ զձորատեղիս՝ մեծի պահակին Ալանաց (Գարիալ): Թմածոր կամ Չոր Գնչինայ. — Մեծագոյն և նշա-նագոյն է քան զնախագրեալ ձորակսն արեւմտագոյնս, ձուածեւ իմն ձգեալ յԵլ. հարաւոյ ընդ Մ. Հս. և պա-րուպեալ յերից կողմանց լեռամբք, Էրդէչայ՝ յարեւելից (Էրդիլ պաղը), Թալեալին? - գայաղը (8580՝). ի հարա-ւոյ, որ և անջրպետէ ընդ գաւառն Նախնաւանի՝ Խաչիկ և այլ երկարաձիգ պարու լեռանց յարեւմտից. իսկ ի Հս-գետն Արփա ձեւէ զսահմանն: Գետակն որ ի հարաւայ-նոց անտի լեռանց յայլեւայլ վտակաց հաւաքեալ՝ նախ



ընդ հիւսիս և ապա ընդ արեւմուտս կոյս խաղայ, վերջստին դարձեալ ընդ հիւսիս՝ Թափի յԱրփա, յեւից կուտէ համանուն գեղջն. և այժմ յանուն Ենիշիկ գեղջ այսպէս կոչի. և զի սա ի հնումն կոչէր Գնշին՝ այսպէս և զգետն արժան համարեցայ կոչել ի հայունս: Այլ բան մի պատմչին Սիւնեաց (Գլ. ԿԵ) որ ասէ ըզՔուպակայ իշխանէ տուեալ կայուածս Նորավանից՝ « ՂԱգարակն Աղբերիս իւրով սահմանաքն ջրարբի և ան » ջրղի վայրաք, մեծ ձորովն որ Թւմածոր կոչի և Գրե » շեաց սահմանոյն մինչեւ ի Գանձակայն՝ որ Հայրենացն » — տափ կոչի », ցուցանէ ինձ զայժմեան կնիշիկայ գետըն և զձոր՝ ինեւ նոյն Թւմածոր, որ յօրինակի ուրեմն գրոցն գրի Քմմածոր, որպէս և Հայրենացն տափ՝ Հայրենեաց տափ, և Թուի սա անուանեալն այժմ Էրդիլպաշ, որ է իսկ արդարեւ անջրպետ Գանձակայ և Գրեշինայ: — Ի լերինս որ ի հարաւոյ կնիշիկայ գտանին քարացեալ ժժմակք:

70. Ամաղու Զոր. — Զուգահեռական կնիշիկայ ձորոյն ի Հր. ընդ Հս. ձգի սակաւ ինչ տարանջատ ի նրմանէ՝ յարեւմտից կուտէ անձուկ ձորակս այս, անուանի վանս գերահոչակ Նորավանից ուխտին և Աթոռոյն և Արփայ գեղջ, որ գահանիստ եղեւ գոռոզագունին Օրբելեան իշխանաց, Տարսայիցայ, հօր պատմչին. և հարկ էր յայն ժամանակս (ԺԳ-ԺԴ դար) շինաշատ և մարդաշատ լինել. այլ այժմ հազիւ երկու կամ երեք գեօղք երեւին ի նմա շէնք, և սչ մի ի մեծագոյն մասինն՝ որ է հարաւային արեւմտեանն: Ի կանխագոյն եւս ժամանակս՝ նշանաւոր էր վիճակս այս վասն ամուր բերդի միոյ ի սահմանս վանիցն, և կոչէր Հրաշկաբերդ կամ լաւ ևս « Հրասեկայ բերդ, ի Հրասեկայ շինեալ, ան » հընարին ամրութեամբ, աստուածաստեղծ պարսպաք » ամրացեալ », որպէս ասէ պատմիչն Սիւնեաց. և յանուանէն գուշակի շինեալ ի Հայկազանց ժամանակս, իսկ պարսպքն աստուածաստեղծք՝ յայտ առնեն զքնական ամրութիւն գրիցն ի քարաժեռս դժուարամատոյցս և անկարօտս բազում ինչ ձեռակերտի, վասն որոյ և անասիկ դղեակ կամ ամուր կոչի ստէպ ի նմին պատմէ. ըստ որում և վասն բարձրութեան գրիցն, « իբր դի » տանոց բարձր հայէր ի վերայ դաշտին Շարրոյ » և ճշգրտէ զայխարհագրական դիրսն՝ մերձ ասելով յԱրաստամուղ գիւղ հին, յայժմուս անձանթ, և ի Նորավանս, որ ծանօթն է. այլ և Ստորոտն վայոց ձորոյ կոչէ զսահմանքս Զարդիս ստուգապէս ոչ նշանակի տեղի բերդին ի տախտակս և ոչ առ տեղագիրս, զի քայքայեալ և անկերպարան Թուի եղեալ. բայց հարկ է թէ իցէ մերձ ի վանսն, որպէս բազում անգամ ասէ պատմիչն, ի դժուարուտ քարաժայռ խորանդունդ Ամաղուածորին, որ արդ կոչի Ուլիի-ձոր և յայլազգեաց Զեանկեղոյր. յորում են բազում քարայրք և անձաք, և ի նոսին գոգք ջրամբարք. վասն որոյ և ապաւէնք լինէին բնակչաց վայրուցն՝ ի վտանգս պատերազմաց և հինից, որպէս և ի ժամանակի յետնոյ Ռուս-պարսիկ պատերազմի (1828): Մարթ է համարել զայդոսիկ ստորոտս

կամ արուարձանս իմն հնոյ հոչակաւոր բերդին Հրասեկայ, անշուշտ յաճախագոյն պատսպարանս և պաշտպան եղեալս վիճակին յառաջին ժամանակն, զորոց լուէ պատմութիւն, և առ Օրբելեան պայազատութեամբ յերեւան հանէ. որոյ նախնոյ ժառանգողի կողմանցս (Լիւպարտի) ի սկիզբն ԺԳ դարու, Աթաբէկն Իւանէ « հը » ռամանաւ Թագաւորին (Վրաց) տայ փոխան հայրենեա » ցըն Լիպարտի՝ անանցական գրով զՀրաշկաբերդ, իւր » գաւառոյն և այլ բազում գեղորէս »: Բայց բերդն այն ժամու չէր նախկին ձեռակերտն Հրասեկայ. քանզի իրբել դարու միով յառաջ ի նուազել Թագաւորութեան Բաղաց՝ սպանմամբ Սենեքերիմայ, Յովհաննէս եպիսկոպոս որդի Հասանայ որդւոյ Համուռնի իշխողի կողման միոյ այնր գաւառի, խոյս տուեալ եկեալ նստէր ի խորածորի աստ Ամաղուայ՝ յԱնապատն Ս. Կարապետի յրստորոտ բերդին, և նեղեալ ի Խորասանիկ պարսիկ բերդապահէն, ժպտեալ ի ձեւ պարսիկ՝ գնաց առ սուլտանն Մահմուտ (Բ) ի Սպահան, և հաճոյ գտեալ յաշս նորա, մանաւանդ վասն բժշկութեան մանկան նորին ի ձեռն իւր, « տայ զՀրասեկայ բերդ մանչոր գրով ի ձեռն ե » պիսկոպոսին, և առաքէ ընդ նմա արս հաւատարիմս » սատակել զբերդապահն իւրովք ընտանեք, և տալ ըզ » տեղին յեպիսկոպոսն: Ընդ նմին շնորհէ և մայր Սու » տանին զԱնապատ բերդն 13 ազարակաք՝ նմին Տեառն » Յովհաննիսի, և անսուտ սիզեւաւ և անանցական ման » շուրաւ շնորհէ ժառանգութիւն Ս. եկեղեցւոյն Նորա » վանից: . . Գայ սպա մեծաւ խնդութեամբ եպիսկո » պոսն ի տեղի իւր հանդերձ հրոսակօքն, և ըմբռնեալ » զամիրայն ընտանեք իւր ի Հրասեկայ բերդ՝ քարավէժ » սատակէ, և զտեղին քանդեալ աւերէ: Եւ զմիւսն՝ » որ յԱնապատի՝ հալածեալ, զբերդն ազարակօքն հան » դերձ սեպկականէ եկեղեցւոյն: Բայց յետոյ Հրասեկայ » բերդն շինեցաւ, և բնակեցան ի նմա Պարսիկք. զոր և » վերստին առին յաւուրս Աթաբէկ Իւանէին ի ձեռն » Արփայեցի Ախթամարին և վասակայ իշխանի Խաչե » նեցւոյ, որ էր հայր Պառայ, հրամանաւ և ուժով Ի » ւանէի. իսկ Անապատն մնաց առ սուրբ եկեղեցւոյն » մինչեւ ցայսօր »: — Արդ յայսմ նորաչէն բերդի նըստէր Լիպարիտ, տէր կարգեալ կողմանցս, և յետ նոստորի նորա անգրանիկ Ելիկում, առ որով Թաթարք ախարհակալեցին, յերկրորդ քառորդի ԺԳ դարու. և կողմանքս վիճակեցան Ալան Նոյին զօրավարի մեծի, յորոյ անէ « էր Ելիկումն ա րացեալ իւրայովքն յանառիկ » ամուրն Հրաշկաբերդի. եկն Ալանն այն և շրջեցաւ ընդ » բերդովն, և ծանեաւ զի անհնարին էր ի մարդկանէ. ա » պա իլանէ հանդէպ բերդոյն, և յղէ պատգամաւորս » առ նա և ասէ. Արա ընդ մեզ սէր, և եկ առ մեզ, և » բազում բարութիւնս գտցես ի մէնջ. ապա թէ ոչ՝ մին » չեւ յերբ նստցիս ի քարիդ յայդ. մեք չեմք գնալոց յայ » սըմ աշխարհէ, այլ Աստուած հայրենեք ետ զսա մեզ. » երբ և ելանես ի դմանէ՝ կորուստ լինի քեզ և տան քոյ: » Լուեալ զայս Ելիկումին՝ ոչ ընդդիմացաւ բանիցն. . . » ել ընդ առաջ նորա բազում ընծայիւք »: և ոչ միայն

1 Զսա վերագոյն կոչէ Խուլու՝ որ Թուի ընդ ձեռամբ գոլ բերդապահին Հրասեկայ, և պակոյ սլամ բերդի Անապատի:

զբերդ իւր անդրէն կալաւ, այլ առաջնորդ լեալ Ալա- նայ՝ հրամանաւ նորա տիրեաց մեծի մասին Վայոց ձորոյ և Եղեգեաց, մինչև յԵրեբունս ի սահմանս Քառնոյ: Յայս սակս թուի փոխեալ նորա գնիստ իւր յաւանն Եղեգիս՝ ի հին գահ իշխանաց Վայոց ձորոյ, ուր նստաւ ապա և եղբայր նորա Սմբատ, իսկ միւս եղբայր նոցա և յաջորդ Տարսայիձ, որ կայրն յԱրփա, կտակաւ եթող զՀրաշկաբերդ որդոյ իւրում Ստեփանոսի եպիսկոպոսի, որպէս արձանագրէ սա ի Նորավանս, յիշելով և զտեղի կամ տուն մի « ի Հրաշկաբերդ՝ Քարկոփեղեանքն իւր սահման » նաքն »: Թերեւս Քարկոփայ—վանք ընթեռնի իցէ, զոր և ի պատմութեան իւրում ասէ տուեալ կալուած Նորավանից: Յայնմհետէ անյիշատակ մնայ Հրաշկաբերդն: Քաջբերունին ել և եգիտ ի քարաժեռի ուրեմն աւերակս բերդի միոյ, սենեկաց և գրոց ի Հր. Մ. Ամաղու գեղը և ի Հս. ելից Առնէտի, և զայն համարի Հրաշկաբերդ. և զի անդրագոյն քան զայն յՅ. Հր. յայլում ժայռի կայ զոգ մի խորանանձեւ՝ զոր ճգնաւորի տունն անուանեն մերձակայ բնակիչքն, ի նոյն տնուն հաւանի կոչել և զբերդըն: Ի նմին կողման ( ի Մ. Ամաղուայ և Առնէտի ) են անուանեալ լերինքն ( ըստ քարտից ) Միտ տաղ, Դոյուպան ( 6385՝ անգղ. ) որք արդարեւ հային ի դաշտն Շարլոյ ըստ պատմչին, և չէ անդէպ միոյ յայսցանէ լինել Հրասեկայ բերդին. եթէ զքարձրագոյնն քարձանց կամէր ցուցանել պատմիչն, խնդրիլի է յարեւելակողմն վիճակիս, ուր ի միջի ձորահովտաց նշանակի ի քարտս լեռուն մի անանուն՝ չափեալ և գրեալ 8272՝ անգղ. գրեալ թէ հաւասար հեռի՝ յեռանկեան Խաչկայ, Կնիշիկայ և Առնէտի, քան զոր բարձրագոյն ևս է այլ լեռուն անանուն 9181՝ անգղ. մերձ ի Հարսնասարն ( Կէլին գայա ). բայց սրբա հեռագոյն են քան զվերոյգրեալսն: — Բերդ մի եւս թուրք անուամբ Ստրաղղան գաղտի ( Կաչաղա կաբերդ ) ետես Քաջբերունի ի Հր. Ճգնաւորի բերդին, մերձ յԱռնէտ, բայց ոչ ի բարձու լեռնակի:

71. Ոչինչ պակաս քան զբերդն հարկ է հին և նշանաւոր լինել և Արփա որ և Արփա գեղը կամ աւանի ի հնումն, որպէս զի յանուն նորին կոչիլ արդ մեծի գետոյն Վայոց ձորոյ, այլ չէ յայտ յորմէ ժամանակէ հետէ, զի առ նախնիս սա իսկ թուի ինձ Աղաւնոյ գետն: Առ եւզբեր նորին կայ գետն սակաւուք հեռի ի խառնըրդոց Քնչինեայ ի նոյն, յարեւմտից կամ յահեկէ սորին. այլ հինն Արփա՝ որ այժմս աւերակ է՝ մերձագոյն եւս էր ի սա, որ է ասել յարեւմտեան անկեան երկոցուն գետոցըն, ի բարձրաւանդակի, գիտելով զհոտանս Ղուրցն յերից կողմանց, նա և ի շորից իսկ, զի ի Հս. նորին Աղուպէն գետակ անկանի ի գետն մեծ: Յառաջ քան զՕրբելեանս՝ զլիաւորք բնակչաց աւանի՝ էին « Ախթամարեան » զարմքն, որ ի հին ժամանակաց բնակեալ էին յԱրփայ » գիւղն ». սոցա պայազատն՝ սգնականութեամբ Վասա-

կայ Խաչենեցոյ, որպէս ի վերդ տեսաք, թափեաց ի Պարսից զբերդն Հրասեկայ. որք և ի շինութեան եկեղեցոյ Նորավանից ետուն « յիւրեանց հայրենեացն ըզ- » Դայեկիքարոյ այգւոյն զվերին բաժինն »: Աստանօր խրոխտ իշխանն Օրբելեանց և Չորապետ առձայնեալ, Տարսայիձ՝ շինեալ էր իւր դարպաս, զորոյ վէմ յիշատակի տեսաք փոխադրեալ այլուր, և աստ վախճանեցաւ յամի 1290, և տարեալ թաղեցաւ ի Նորավանս՝: — Աստուա և Տէր Սարգիս եպիսկոպոս Նորավանից « ա- » ռար գործ մի երեւելի. զի ի գիւղն Արփայ ի վե- » ռայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի, տաշա- » ծոյ վիմօք, յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացու- » ցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ աշխատու- » թեամբ, հրամանաւ քարեպաշտին և մեծափառ իշխա- » նին Տարսայիձին »: Չգովասանական բան պատմչիս հաւաստեն ցայսօր աւաղելի մնացուածք արդարեւ մեծի և մեծագործ կամըղին, որոյ խարխիւք ի Ղուրս և արտաւոյ յավակողմն գետոյն յայտնեն եռակամար լինել, համակ սրբատաշ մոխրագոյն քարամբք: — Յիչէ պատմիչն ( ՀԱ ) ի Կաւրդըլախիս, « և երկու ակն ջրաղացս » առ կամըղին. և այս ամենայն հալալ և անխախտ հալ » ընելք էր և ժառանգութիւն սուրբ եկեղեցոյն Նորա- » վանից ». յորս յաւել ինքն՝ այլ այգի գնեալ 2500 դըրամի « ի Բոյոր-ժակոշտ քարէն մինչ ի վեր ի սպառուած » այգւոյն՝ ուր մեծ յայն է »: — Առ սրբօք բնակէր յԱրփա բնիկն և պայազատ Մահեւանեան Կապանեցի իշխանաց՝ Ամիրայ որդի Զուրջի, որ գնեալ ի Տարսայիձայ զՍրբայ այգին յԱրփա՝ 4000 դրամի, ետ ի կալուած Նորավանից ի ձեռս Ստեփանոսի, և սա սահմանեաց վասն նորա « հինգ պատարագ յամենայն ամի անխա- » փան կատարել »:

Ձիք մնացուած դաստակերտի սորա և ոչ նա՛ստգունիցն, այլ յետ սակաւուց Յովհաննէս եպիսկոպոս յաջորդ Ստեփանոսի և թոռն հօրեղբոր նորին՝ շինեաց փղբրիկ վայելուչ եկեղեցի, յանուն Ս. Աստուածածնի. խախտեալ ի մեծէ սասանութենէն Արարատայ, յամի 1840, և զըմբէթն վայրանկեալ, համակ սրբատաշ քարամբք, քառակուսի ձեւով, ի վերայ չորեցունց սեանց, ունելով և լուսաւ մուտս շորս, և դրունս յարեւմտից և ի հարաւոյ, երեք աստիճանօք ելից ի բեմն. ի վերայ սեղանոյն կայ տակաւին վէմն պատարագի. պատկերք կամ նշանք աւետարանչաց յանկիւնս կամարաց ձեղունան քանդակեալք, յորմէ կախեալ մնան երկաթեայ օղք՝ երբեմն բարձիւք կանթեղաց: Աւերեալ է գեղեցկաչէն ժամատունն, յորոյ ի մուտս դրան տաճարին ի վերայ կիսաբոլորին կայ քանդակատկեր Տիրամօր Յիսուսի ի գրկին և ի վերայն գրեալ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ի նրբադրուագ չրջանակի ողկուզոց և ծաղկանց, և ի ներքոյ գրեալ արձան յիշատակի շինողին, յամի 1322.

**Ես Տէր Յովհաննէս Աւրպէլ Սիւնեաց արհի եպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս, յիշել աղաչեմ ( զիս ) եւս եւ զբարեպաշտ իշխանաց իշխան**

1 Յեա 600 ամաց, այն է հերու 1890, Քաջբերունին ասէ անփուռ զտեալ զսակերս հզօրին ի կաւային կարմիր հող, և առեալ ժառանգ:

զարեան մերձուորն իմ զքաջ մենամարտիկն զԲիւրթէլն եւ զըշխոյափառ քրիստոսասէր զոյգն իւր Վախախն , նորաբողբոյ զաւակաւքն իւրեանց Բէշքէնիւն եւ Իւանէիւն . ԹՎին . ԶՀԱ .

Ի ներքոյ արձանիս են և այսօրիկ . ի վերայ հարաւային դրանն արձանագրեալ է յամի 1399 .

ԹՎ. ԶԽԸ. Ես տէր Բա(րսե)ղս ? կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հաւր իմոյ Սահակայ . յիշեցէք ի Քրիստոս .

† Մոմիկ վարդապետ , շարժ եղեւ .

Ի գաւթին են բազում խաչվեմք և տապանք քանդակատեղիք , և արձանագիրք ի նոսին .

Ես Մխիթարս կանգնեցի զԽաչս ... ուրք կարդէք յիշեցէք ի Քրիստոս . ԹՎին ԶԴ .

† Ես Մեհրապս ... կանգնեցի զԽաչս .. որդւոյ .. ԹՎին . ՌԵ .

† Ես ... Մելիքբէկս կանգնեցաք Խաչս Պարոն Յակոբին , Նիկոզոսին . ԹՎին . ՌԸ .

† Ես Աղաճանս կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հոգւոյ Աշոտին , Միրաքին եւ հաւրն Ափրիզոնին եւ մաւրն ...

† Սուրբ Խաչս բարեխաւս Զոհրապին .

† Այս է հանգիստ Պարոն Մեհրապին . ԹՎին . ՌԸ .

Ի վերայ յետնոյս պատկերեալ է արձանագրեալն բազմեալ ի խրախճան , խորոված և գինի առաջի , մատը , ուռակք ի գունճս , աղեղն և կոպարճ և նրան ի վերայ վահանի , երկվար և որսական բազայն առ երի : Դարձեալ

յայլում գիմի վիմին պատկերեալ նոյն հեծեալ ի ձի , բազէ ի ձեռին , և սպասաւորք զինամատոյցք . զգեստքն լայն և կարճ ցծունկս , գլխարկն խոյր օղենի : — Միւս եւս տապան ունի զայս արձանագիր .

Այս է հանգիստ Զաւրհապին ,  
Եղբայր Պարոն Մերապին ,  
Որ է որդի Փիրիբէկին ,

Որ անմեղ ? կոտորեցին  
Ախճվանց ճանապարհին ,  
Եւ թողին սուգ անմխիթար . ԹՎ. ՌԵ .

Ի վերայ սորին եւս քանդակեալ է սեղան պատրաստ և ձի կազմ , հանդերձ մատուակաւ և գուսանաւ և բազէի . և յերկրորդում գիմի վիմին նոյն հեծեալ յ'որս

եղջերուաց հանգերձ որսակցօք : — Են և շուրջ զեկեղեցեան այլ եւս բազում տապանք և խաչվեմք՝ նմանակերպ քանդակօք և գրութեամբք . որպէս .

Այս է տապան հանգստեան Վառանանին , որ է որդի Փիրվէրաթին . ԹՎին . ՌՃԽԴ .

† Այս է հանգիստ Բաբին , որ է որդի Պարոն Փիրիբէկին , եղբայր Պարոն Թհրէգա ? ԹՎին . ՌԺԴ .

Առաջի հարաւային դրանն գտանի տապան քահանայի պատկերեալ ի դիրս հանգստեան փրոնաւ , սաղաւար

տաւ , խաչիւ և գաւազանաւ , համառօտ արձանագրութեամբ 1709 ամի .

**ԹՎԻՆ . ՌՃԾԷ . Ծատուրի որդի Տէր Ովանէսին .**

Յարեւելակողմն տաճարին երեսնիւ չափ խաչվէմք են հասարակք . յորոց յոմանս են այս գրուածք .

**Այս է տապան Փիրվէլաթին , որ է որդի Առաքէլին . ԹՎ . ՌՃԼԵ .**

**† Այս է հանգիստ Թաղոսին , որդի Տէր Զաքարին , թոռն Թամաղուլին . ԹՎԻՆ ՌՃԻԱ .**

Յարտաքին որմն հիւսիսոյ եկեղեցւոյն՝ ազուցեալ կան երկու մեծ անգիր խաչվէմք , մին անկեալ է ի գետին : Գոն և նոր գերեզմանք , զի և այժմու Արփայեցիք զմե .

ուեալս իւրեանց թաղեն առ քնարանօք նախնեաց իւրեանց , բնիկք գոլով հին գեղջս , և ոչ եկք գաղթականք . այլ լլան մաշելոյ գետոյն զհողարլուրն՝ յորում շինեալ է



56. Արփա . — Եկեղեցի աւերակ .

գիւղն , իբր դարու և կիսով յառաջ՝ իջեալ սակաւ մի ի խոնարհ յարեւմուտս՝ հաստատեցին զբնակարանս իւրեանց , և ոմանք թողեալ գնացին ի կողմանս Շարուրն դաշտի . են այժմ իբրեւ 40 ? երդք յԱրփա : Փոքր մի բացագոյն ընդ արեւելս առ աղբերք միով որ Գարա – սո ( Սեւ Ղուր ) կոչի , առ ատորոտով քարարլոյ են հանգատարանք երկուց Նահատակաց , ըստ աւանդութեան , եղբոր և քեռ , կոչեցելոց Գրիգոր և Մարիամ . ի կողմանս ժայռին հատեալ են խաչաձեւք , և ի նիւրոյ մատուռն յոյժ փոքրիկ ,

որ է հանգիստ Գրիգորիդ . և ի վերայ տապանին կան թեղք ուխտաւորաց , որք բազմութեամբ գան ի մերձակայ գիւղից աշակողման Արփայի և մեծարեն աղօթիւք , նուիրօք և ազապիւ զտեղիս այս , սրբազան իմն համարելով նա և զծառս փշատենիս և զյունսպենիս վայրուցրն , և ոչ հատանեն : Յարեւմտակողմն աւերեալ կամրջին վերոյիջելոյ ի բլրակի ուրեմն՝ որոյ սահման կոչի Վարդապետի հող , եթէ իցէ որիչ ի Մահրասայ ( 172 ) , կայ խաչարձան որմնայարկ , հին արձանագրաւ 1303 ամի .

**Յուսով ողորմածին Աստուծոյ եւ աւժանդակութեամբ տեսուն իմոյ Տէր Ստեփաննոսի եւ Սարգիս որդի Սողոմոնի եւ ամուսինն իմ Աբէժա կանգնեցաք զԽաչս բարեխաւսութիւն մեզ եւ ծնողաց մերոց . ԹՎԻԱ ԶԾԲ .**

Ի սկիզբն ժէ դարու մասն մի բնակչաց Արփայի վարեցաւ ընդ այլոց զաղթականաց ի Պարսս . յորոց մի ոմն Գրիգոր անուն « պարթեւահասակ եւ յաղթանդամ, և » սրտին արի, բանիւք և խելօքն հանճարեղ, և հաւա » տոյն և սիրովն Քրիստոսի հաստատ և ջերմագոյն »<sup>1</sup>, բնակեալ ի ներքին Խոյիկան անուանեալ գեղջ Փարիոյ դաւառի, քաջալերէր զգրեկեցան պինդ ունել զհաւատս իւրեանց, զորս յուրացութիւն յորդորէին արբանեակք Շահ Արասի . առ որ և իշխեաց մատչել բազում անգամ և թախանձանօք ստիպել՝ և առնուլ բանիւ և գրով հըրաման համարձակ պաշտելոյ զքրիստոնէութիւն : Բայց նախանձեալ այլադեմիցն ընդ յաղթութիւն նորա՝ ամբաստանեցին որպէս սպանող սպանելոյն յինքեանց, և ստիպէին յուրացութիւն կամ ի մահ . գյետինս ընտրեաց մեծահաւատն այն, և կատարեցաւ վկայօրէն, յամի 1621 : — Ի գեղջէ աստի Արփայ՝ էր և Ազիզ, դուստր խալկայ խօսեցեալ Միսրմանի ումեմն, զոր մատնեցին Մուրատ խանի սուլդանին Նախճաւանի, իբրու զի յառաջ քան զօրինաւոր պսակն եղև ընդ խօսեցելոյն և ծընաւ որդի . և ստիպեալ յուրացութիւն՝ եկաց անդրդուելի ի հաւատս, և կա՛նեալ պարանաւ ի միւրայէ արտաքայ քաղաքին՝ արկաւ ի վայր, և բարձեալ պատուով ի քրիստոնէից թաղեցաւ ի նմին քաղաքի, յամին 1679<sup>2</sup> :

72. ՆՈՐԱՎԱՆԻԿ . — Սուղ աւելի քան մղոնաւ ի Հր. Արփայի առ եզրբ Կնիշիկայ, կամ յԱմաղուաձորին՝ յարեւմտից կուսէ, կայ գիւղն Ամաղու, ի բարերոյս բարձու գետամիջաց Ամաղուաձորոյ և Գնշինաձորոյ, որ ըստ հին Յուցակին հարկէր 10 բուն յաթոռն Սիւնեաց . վասն մերձակայ վանացն և անապատին՝ հարկ էր լինել չէն նըշանաւոր ի միջին դարս, այլ այժմ անշքացեալ բնակութեամբ 30 կամ 30 տանց մահմէտականաց, ընդ որս կային յառաջ քան իբրեւ զամս 30 և Հայք, որք նորոգեալ պահէին զհին եկեղեցին, և ապա լքեալ թողին զտեղին, որ յայժմուս սեփական ստացուած է Եղիազարեան Ստեփանոսի Երեւանեցոյ հանդերձ լեռնօտամբն՝ որ կոչի Արաս բիչանագ :

Ձիք առ պատմիչս առանձինն ինչ յիշատակ գեղջս, իբրու ընկզմելոյ և ծածկելոյ ի նշոյս մեծամեծ յիշատակաց որ առ երի մենաստանին Նորավանից, որ մի ի յոյժ հոչակագոյն վանորէից է Սիւնեաց, և գլեալ զամեներումբք ի գաւառին Վայոց ձորոյ՝ ի նուազել հընազունիցն, ԹանաՀտի, Գնդեվանից և նմանեաց . մանաւանդ աթոռ լինելով երբեմն ինքնազուլս եպիսկոպոսաց Սիւնեաց, և երբեմն առանձին եպիսկոպոսաց Վայոց ձորոյ և Նախճաւանի, և տապսնատուն մեծափառ իշխանացն և եպիսկոպոսաց Օրբելեանց : Չսկզբնաւորութիւն և զինութիւն տեղոյս այսպէս պատմէ պատմ .

1 Աւագել գաւառի . ժ. Գ :


միջ տոհմին Ստեփանոս, որ և ժառանգ և տէր սորին եղև . « Յառաջ . . . բազում ժամանակօք և վաղ ա » ւուրբք և հնազոյն ամօք, ի նեղ և անձուկ ձորակին » յայնմ ( Ամաղուայ ) ի պատշաճաւոր տեղուլ էր շինեալ » եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն Սրբոյ Կարապէ » տին : յոյժ պանշելագործ և ահարկու և անուանի մեր » ձակայ սահմանացն . և բղխէր մերձ նմին աղբիւր քաղ » ցրահամ . և ձորն ամենայն գեղեցկացեալ էր այգեօք և » թանձրախիտ ծառօք մրգաբերօք . նա և ի բանձրանած » կաշկասուտին ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն » սրբոյ Հայրապետին Փոկասու շինեալ . և ի մէջ եկե » ղեցոյն բղխէր ջուր սակառ ի ներքոյ բեմին , և ընդ ջը » լոյն ելանէր ձէք թշկարար . զորմէ լուսք ի հնազոյն » աւանդութեանց, եթէ բերեալ եղև ի նշխարաց սըր » բոյ Հայրապետին Փոկասու և անդ հանգուցեալ, յորոյ » անուն և տեղին Փոկաս կոչեցաւ, և առնէր հրաչս զար » մանախիս . . . և վասն այսր մեծապէս լինէր հնչեալ համ » բաւ տեղոյն ընդ ամենայն աշխարհ » : Բայց յայտնի ժամանակաւ չիք ինչ պատմական յիշատակ տեղոյն և ոչ մնացորդ կամ արձանագիր հնաշէն եկեղեցեացն յիչեցեցոց, այսինքն Ս . Կարապետին և Ս . Փոկասու, մինչև ի սկիզբն ժ. Բ դարու . յորում՝ Յովհաննէս եպիսկոպոս որդի Համոռնեանն Հասանայ՝ « եկն ի Վայոց ձոր » գաւառ, և կամեցաւ բնակել ի Խորաձոր Անապատին » Նորավանից, մերձ անառիկ դղեկին Հրասեկայ բեր » ղոյն, առ հիազօր և մեծաքանչ եկեղեցոյն Սրբոյ Կա » բապետին . . . համարձակ բնակէ ի նմա, ժողովեալ արս » կրօնաւորս և ճգնազգեացս, և հեռացուցանէ ի վայրիցն » զամենայն արս աշխարհականս . և շրջապատիւ սահմանէ » զվայրն ամենայն կանգնելով զնշանն տէրունի, զի միան » ցանիցեն ընդ այն կանայք և լկտի մարդիկ . և առնուն ի » սահմանակցացն հողս և անդաստանս ի ժառանգու » թիւն եկեղեցոյն , ի Գանձակեցեացն և ի Տրխարբե » ցեացն » . ընդ որս սեփականէ և գրբողն կամ զտեղի բերդին Հրասեկայ, զոր ետն կործանել հրամանաւ սուլտանին Պարսից . նոյնպէս և զԲերդն Անապատին . « և » այսպէս կեցեալ բազում ա մս վախճանի ի Թուրն Հայոց » ՈՒ ( 1188 ), և դնի յիւրում աղօթարանին ի մէջ եր » կոչց վիմացն, ի նմին ուխտի . և զօրութիւնք մեծա » մեծք ելանեն ի գրբեզմանէ նորա » : Առ նմա հանգուցաւ յետ երից ամաց և եղբայր նորա Համսուն իշխան, որ եկեալ կրօնաւորեալ էր աստ ի Նորավանս, և վախճանեցաւ յամի 1187 : Անդ հանգուցաւ և Գրիգոր եպիսկոպոս Մեղրեցին + ի Խարձայ գիւղ յամի 1168 : Յետ որոյ որդի նորա « եկն Տէր Ստեփանոս շնորհա » զարդն, որ և Փախըլմսեմ կոչեցաւ ( յԵլտկուզ ) յԱ » թաբէկէն, և բնակեցաւ ի սուրբ ուխտն Նորավանից » ( յերբորդ քառորդի ժ. Բ դարու ), զի հին աթոռն ( Ախ »

2 Չաքարիա Սարկաւազ գաւառի Բ . Ա :



» նեաց) աւերեալ էր և ապականեալ... և հաստատեալ  
 » զնա տուն աթոռոյ եպիսկոպոսութեան» շրջաբերական  
 թղթով Գրիգորիսի կաթողիկոսի եղբոր Շնորհալուոյն,  
 և հրովարտակաւ Ելտկուզի, յորմէ ընկալաւ ի պարգեւի  
 զԱգարակի ծոր գիւղ. « և զամենայն որ ինչ էր վանի-  
 » ցըն արարազատ յամենայն աշխարհական հարկաց, ըզ-  
 » հող և զլուր, զսյգի, զգիւղ և զագարակ, և զԲերդն  
 » իսկ Անապատայ» : Սա վախճանեալ յԱրփա՝ յամի  
 1316, թաղեցաւ ի սիրելի վանս իւրում. յառաջագոյն  
 հոգացեալ և տուեալ ձեռնադրել յեպիսկոպոս զքեռ-  
 որդի իւր Սարգիս (որ և յաջորդեացն), և առաքեաց  
 զնա առ Աթաբէկն Իւանէ՝ խնդրել զԱզազ անուանեալ

Խալ, զոր ընդ երկուց այլոց խաչից՝ կամարակապ և Թի-  
 րեղնակապ կոչեցելոց՝ եղեալ էր ի գրաւական. իսկ վա-  
 սակայ Հաղբակեանց յափշտակեալ՝ տարեալ էր յիւր  
 վանս ի Կեչառուս, և զառաջինն ընծայեալ Իւանէի. և  
 զի յաջողեցաւ սա ի գալստեան Սարգսի՝ առնուլ զբեր-  
 դըն Չարեքայ, շնորհեաց նմա զխնդրեալն, և բերեալ  
 Սարգսի հանգոյց զայն ի Նորավանս. ի փրկանս նորին  
 1000 դահեկան ոսկի ծախեալ էր Լիպարիտն Օրբելեան  
 նախկին ժառանգորդ կողմանցս՝ շնորհիւ նորին Իւանէի-  
 Կարձեալ յետ ամաց վէճ մեծ եղեւ ի վերայ խաչիս,  
 յերկփեղկել եպիսկոպոսութեան Սիւնեաց. զի Տէր Յով-  
 հաննէս հօրեղբորորդի Տեառն Ստեփանոսի՝ որոյ վիճա-



57. Եկեղեցի Նորավանից Անապոյ.

կեցաւ Տաթեւ, կամէր ընդ իւր տանել զայն. յայս սակս  
 գիմեցին առ Իւանէ, և նորա գումարեալ ժողով եպիս-  
 կոպոսաց, մեծամեծ իշխանաց, իրաւագիտաց, ընդ որս  
 և շէյխս և զատիս մեծամեծ Վաղարաց, և վճռեցին Սար-  
 գսի լինել, իբրու զի գերեթափ արարեալ էր զայն. « և  
 » որ ոք զգերեալ թափէ՝ ոչ է ստացողին յայնմ հետէ,  
 » այլ գերեթափին» : Այս « Տէր Սարգիս խորհեալ ընդ  
 » Մեծ Լիպարիտ՝ սկսանին միարան մեծավաստակ աշ-  
 » խատանօք և անչափ ծախիւք շինել զգեղեցկայարմար  
 » եկեղեցին ի Նորավանս (յամի 1316), և աւարտեն  
 » զնա ամս եօթն, ութ խորանօք, ի թուականին Հա-  
 » յոց ՈՂԲ (1323), և մեծահանդէս ժողովով եպիս-

» կոպոսօք, վարդապետօք, իշխանօք, ազատօք և տա-  
 » նուտէրօք, սուրեն նաւակատիս սրբոյ տաճարին. ընդ  
 » որում էր և մեծ իշխանն Բուսպակ, որ և ընծայէ սուրբ  
 » և նորակերտ քաւարանին՝ յիւրոց հալալարդեանց և հայ-  
 » բնեաց՝ պտուղս բոլորահաւատ զագարակն Աղբերիս՝  
 » իւրով սահմանօքն և անջրդի վայրօք, մեծ ձորովն որ  
 » Թմածոր կոչի և Գեղեաց սահմանովն, մինչ ի Գանձա-  
 » յայն՝ որ Հայրեացն տափ կոչի. և հրամայէ գրել վը-  
 » ճիւ արձանի անխախտ պայմանաւ, և հաստատել ին-  
 » քեան յիշատակ յամեն տարի առնել տասն պատա-  
 » րագ մօր իւրոյ. և աւանդէ զայս ի ձեռն Տեառն Սար-  
 » գսի. և էր օրինակ վճռին այսպէս.

Ի ժամանակի թագաւորութեանն որդւոյ Թամարին Լաչային, յամիր ըս-  
 պասաւարութեան Հայոց եւ Վրաց Շահանշահի, եւ յաթարէկութեան Իվա-  
 նէի հարեղբար նորին, եւ մեղուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ՝ իշխա-  
 նաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորավանից առ երջանիկ  
 հայրապետս մեր Տէր Սարգիս. եւ ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց  
 զոր իմ բաղկաւս առեալ էի յայլազգեաց եւ իմ արեամբս թափեալ, եւ իմ  
 պարոնայքն մեծ սիգելով այլ ինձ էին որոշեալ, զԱղբերիս գիւղ իւր ամէն  
 սահմանան, ի սուրբ եկեղեցիս Նորավանից ի սուրբ Ասարապետս եւ ի  
 սուրբ Նախապետս տուի, ազատ յամեն հարկաց. եւ չունի որ հրաման  
 յայսմ հետէ մինչեւ յաւիտեան հակառակիլ այսմ, ոչ յաւագաց, ոչ յիմոց,  
 ոչ յօտարաց. Եւ Տէր Սարգիս եւ այլ միաբանքս հաստատեցին ի տարումն  
 տասն պատարագ՝ ի վարդավառին տաւնին իմ մաւրն հոգւոյն. Արդ թէ  
 որ յանդգնի եւ հակառակել ջանայ այսմ տրիցս՝ մասն եւ բաժին գՅուգա-  
 յին եւ զխաչահանուացն առցէ՝ եւ ընդ ամենայն չարագործացն ի Կայենէ  
 սկսեալ մինչեւ ի Նեոն դատապարտեալ պատժեցի, եւ ի Սուրբ Ելրոր-  
 դութենէն եւ յամենայն Արբոց եւս եւ յերից սուրբ Ժողովոցն նզովեալ ե-  
 ղիցի ի մահ եւ ի կեանք. եւ իմ ազգք եւ զաւակք չունին ոչ ձեռն, ոչ իշ-  
 խանութիւն ի վերայ այսմ տեղեաց. Բայց թէ Տաճիկ աւագ փոխի եւ հա-  
 կառակել ջանայ՝ յիւր Աստուծոյն ապիզար լիցի, եւ յիւր փեղամբարէն  
 որոշած. եւ անհամար հաղար նալաթ ի վերայ նորա եւ յորդւոց եւ յազգի  
 նորա եղիցի յայսմհետէ մինչեւ յաւիտեան. Ի Թուիս Հայոց ՈՂԲ.

« Եւ զի յառաջ քան զայս ( և քան զչինութիւն եկե-  
 » ղեցւոյն ) յափշտակեալ էին զգիւղն Ագարակի ձոր,  
 » վասն որոյ խնդրէ Լիպարիտն բազում թախանձանօք  
 » յամիր սպասաւարէն Զաքարէէ, և թափէ զգեօղն. և  
 » հրամայէ գրել ինքեան յիշատակ ի վսնսն Նորավանս,  
 » և նզովիւք հաստատել, զի մի որ իշխեսցէ հեռացու-  
 » ցանել զնա ի սուրբ եկեղեցւոյն. և ինքն ( Զաքարիա )  
 » գրէ իւրով ձեռամբն, այսպէս. Ես մեղուցեալ ծա-  
 » ռայս Քրիստոսի Զաքարէ Ամիր սպասաւար, որդի Մե-  
 » ծին Սարգսի, Հայոց և Վրաց սպարապետի, դարձուցի  
 » զԱգարակի ձոր գիւղն ի Նորավանս, ազատ յամենայն  
 » հարկաց. և խնդրեցի ի Տէր Սարգսէ առաջնորդէ սուրբ  
 » ուխտին՝ ի տարումն ինձ Ժ օր պատարապ, զոր պար-  
 » տին անխափան կատարել. և յետ մեր մի՛ որ իշխեսցէ  
 » ի մերոց կամ յօտարաց յափշտակել զայս գիւղս ի սուրբ  
 » եկեղեցւոյն. ապա թէ յանդգնին՝ նզովեալ լիցին յԱս-  
 » տուծոյ ամենակալէն և յամենայն Արբոցն, և մասն և  
 » բաժին նորա ընդ Յուգայի և այլ խաչահանուացն և  
 » ուրացողացն եղիցի, և մեր մեղացն պարտական լիցի.  
 » Հաստատ է կաման Աստուծոյ. ի Թուականիս Հա-  
 » յոց ՈՂ » . ( 1211 ) :

հռչականուն մենաստանէս. հիմունք պարսպացն քայ-  
 քայեալք ի մեծէ սասանութենէ 1840 ամին, յորոց հիւսի-  
 սայինն կանգուն կայ կրելով ի վերայ մեծի դրանն զչ-  
 րեքկերպեան քանդակս աւետարանչաց. իսկ ի միջի եկե-  
 ղեցիքն, են Ս. Ստեփանոս հին, և Ժամատուր կամ Սրբ-  
 րարան նորին շինեալ ի Սմբատայ յեղորէ Տարսայիճի.  
 սորա շինածն Ս. Գրիգոր որ և Դամբանարան պայազա-  
 տաց տուվին. Ս. Կարապետ շինեալ ի հօրէ նոցին ի Լի-  
 պարտէ, և Ս. Աստուածածին ի Բուրթելէ: Յեշի յար-  
 ձանս և Ս. Նշան, բայց թուի փոխանակեալ զսա Ս. Կա-  
 րապետն՝ այնքան խնամօք շինեալ և զարդարեալ և փար-  
 թամացուցեալ ամենայն զոյիւք և ժառանգութեամբք,  
 որպէս լուսք ի պատմչէն, և այժմ յանչքութեան մնա-  
 ցեալ կամ մատնեալ ի ձեռս այլադեմից, զրկեալ առ  
 հնութեան ի փառապանծ գմբեթէն, որոյ փոխան փայ-  
 տայարկ ծածկեալ է ի նորումս. կանգուն կայ այլովք  
 մասամբք, համակ սրբատաշ կարմիր քարամբք, չորիւք  
 աստիճանօք բարձրացեալ ի գետնոյ. արտաքուստ խորչս  
 սրանկիւնս ունելով, որպէս կաթողիկէն Անոյ և այլ հին  
 եկեղեցիք ոմանք. քառակուսի ձեւով համաչափ ընդ եր-  
 կայնն և ընդ լայն, ( 13 քայլ ), հաստատեալ ի վերայ չ-  
 րից վայելչաձեւ որմնայար սեանց, չորիւք պատուհանօք

և ութ խորանոց կամ սեղանովք, որպէս և պատմիչն գրէր, զատ յաւագ խորանէն. խորանքն երկու երկու ի վերայ իրերաց կանգնեալ են յաջմէ և յահեկէ բեմին և գրանն, որ բացեալ կայ յարեւմտից կուսէ, ուր և չքնազաչէն ժամատունն հանդերձ կաթողիկէիւ կամ զանգա-

կատամբ, ի վերայ վեցից որմնայար սեանց, վեցիւք լուսամտիւք, յորոց միջի սիւնակք խաչազուլիք ճարտար դրուագօք քանդակաց յամենայն կողմանս. որպէս և խաչըն որ ի կիսարդուրի ի վերայ գրանն՝ համառօտ վերադրութեամբ փրկչական անուանցս,

**Տէր Աստուած Յիսուս Քրիստոս .**

Ի հիւսիսակողմանն քանդակ — պատկեր կարճազգեստ և սաղաւարտեալ երիտասարդի հեծելոյ (միոյ ի քաջացն Օրբելեանց) մենամարտողի ընդ վազեր կամ առիւծու. իսկ ի ճակատ գրանն ժամատանդ՝ պատկեր Տիրամօր

բազմելոյ ի գահ, (առ որով գրեալ է Բանն Աստուած ի դրուագրեալ քանդակի), ունելով՝ զՅիսուս ի գրկի, Հոգին Սուրբ ի վերոյ, և ծերունիք ոմանք յաջմէ և յահեկէ, և գիր 1231 թուականաւ .

**Այս է . . իմ արհնեալ ահեղ անունն Աստուծոյ ի ծագաց մինչեւ ի ծագս ծագի? լոյս . Թուին ԶՀ .**

Ի վերոյ քան զայն քանդակպատկեր Հօր Աստուծոյ ձեռն եղեալ ի վերայ գլխոյն Ագամայ և աղօղ սրհնեհինաւորց կերպարանօք և լայն հանդերձիւք, զձախ լով, և գիր .

**Հինաւուրցն Աստուած . ընդ ստեղծանելն Ագամայ նորոգեցաւ երկինք եւ երկիր, որք միշտ արհնեն զԱստուած .**

Յաջմէ և յահեկէ պատկերք խաչելութեան Քրիստոսի, Աստուածածնի, գրեալի վերայն Աստուածածին, Մագդաղենացւոյ և այլոց: — Սատարող շինութեան եկեղեցւոյն Լիպարիտ գրէ ինքեան երկար և կարեւոր արձան յիշատակի՞ ի վերայ (հիւսիսային որմոյ ի ներքուստ), յամի 1233, այսպէս .

**Ի ՈՀԱ թուականութեանս Հայոց .** Կամաւն Աստուծոյ ես Լիպարիտ որդի Ելիկումին թողն մեծի (Լիպարիտին) Աւրբելեանց, որ եւ հայրն իմ վասն մեծի քինոյն եւ ի հայրենի աշխարհէն իւրմէ եւ ի թագաւորէն Ափխազաց, եւ գնաց ի տունն Պարսից առ Աթաբէկն Ելտկուզ . եւ նա մեծաւ փառաւք եւ գորովագութ սիրով ընկալաւ զնա եւ պարգեւեաց նմա զմեծ քաղաքն Համիան . եւ յետ ժամանակաց եթող զիս որք . եւ մեք անգիտութեամբ խաբեալ ի նոցանէ, ծանեայ ապա զհաւատն իմ հայրենի, եւ ի մանկական հասակիս՝ դարձայ վերստին ի լուսաւոր հաւատ Սրբոյն Գրիգորի, եւ եկի առ մեծ Աթաբէկն Իւանէ . եւ նորա բաղում սիրով ընկալեալ զմեզ ետ փոխան հայրենեաց իմոց զՀրաչկաբերդ իւր կերովն, եւ այլ բազում գիւղս ի Վայոց ձոր, ի Գեղաբունի, ի Կոտայսն եւ ի Կայէն . եւ ես մեծ յուսով շինեցի զվանքս որ կոչի Նորավանս յառաջնորդութեան Տեառն Սարգսի Սիւնեաց վերադիտողի եւ կանգնեցի զսուրբ եկեղեցիս մեծածախ գանձիւք, եւ դարձուցի զԱւագ սուրբ Նշանս բազում ծախիւք ի տանէ Աթաբէկ Իվանէի եւ բնակեցուցի ի սմա . թափեցի եւ զԱգարակի ձոր իւր սահմանովն . ետու եւ զՏխարբ գիւղն իւր ամեն սահմանաւքն, եւ թաղք մի

1 Բայց Քաջբերուի հաստատապէս գրէր և առանձին կարծեալ՝ առ զՅիսուս բազմեցուցեալ յաւանակի :  
2 Այս արձան՝ զոր յեռեալ է պատմիչն ի գիրս իւր, կայ Քասից ցորչ անեղծ, զոյզն զանազանութեամբ, ընդօրինակեալ առ Զաւալեի (Բ. 174) այլ ոչ քաջ հշգրիտ :  
3 Զաւալ Ես Լիպարիտ մանուկ զուով զարձայ, և այլն :



ի Հառնաարի գիւղ<sup>1</sup>: Տէր Սարգիս եւ միաբանքս հաստատեցին ինձ ղաւագ խորանն Գ աւր ժամ կիրակէն, շաբաթն եւ զհինգշաբաթն ի յամէն շաբաթում. եւ կենակցին իմոյ Ասփային սահմանեցին Տեառնդուռաջ աւրն զամեն եկեղեցիքս... Արդ որք ընթեռնուք զգիրս խնգրեցէք ի Քրիստոսէ իմ որդւոցն Էլիկումին, Սմբատայ, Իվանէի, Փախրադաւլային, Տարսայիճին արեւշատութիւն. Արդ որ այս հաստատուն գրոյս հակառակ կայ յիմոց կամ յաւտարաց ի Հայոց կամ ի Վրաց, զայն գիւղորէքն հանել ջանան կամ զժամն խափանել, ՅԺԸ հայրապետացն նղոված է, եւ մեր մեղացն պարտական է. եւ թէ Տաճիկ յաւագ փոխի ու հանել ջանայ, իւր հաւատքէն ու իր Մահմէտէն ապիղար է. Ռ Ռ Ռ նահլաթ նահլաթ.



58. Ժամատուն Երզրակնից շինեալ ի Սմբատայ.

<sup>1</sup> Յայս վայր գրեալ Պատմին ըստ մերս օրնակաց, յարէ զարձան Սմբատայ, և ապա զարձեալ զվերջաբան Լիպարտի.

Եւ ելցեն մեզ պատարագ յամէն շաբաթուն յաւագ խորանն Գ աւր, զկիրակէն, զշաբաթն եւ զհինգշաբաթն. զկիրակէն եւ զշաբաթն՝ իմ մեղապարտ հոգւոյս Լիպարտի, եւ զհինգշաբաթն՝ իմ կենակցին Ասփային: Արդ որք լինիք ժառանգաւորք սուրբ եկեղեցոյս, խնդրեցէք մեզ մեղաց թողութիւն, եւ որդեկաց մերոց Էլիկումին եւ Սմբատայ եւ այլոցն՝ արեւշատութիւն. եւ զմեր յիշատակս կատարէք անխափան: Եւ թէ ոք հակառակի այս հոգեցատուր

գիւղիս եւ կամ այլ արարուածիս, եւ յափշտակել ջանայ ի սուրբ եկեղեցւոյս՝ նզովեալ լիցի հոգւով եւ մարմնով յերից սուրբ Ժողովոցն եւ յամենայն Սրբոց անիծեալ լիցի. ընդ սասանայի եւ ընդ Յուդայի եւ ընդ նեոխնն եւ ընդ ամենայն ուրացողաց դատապարտեցի յահաւոր ատենին Քրիստոսի. իսկ կատարիչքն աւրինեալ եղիցին: Եւ թէ Տաճիկ աւագ փոխի եւ շորթել ջանայ՝ յիւր հաւատէն ապիղար եղիցի եւ յիւր փեղամբերէն Ռ Ռ նալաթ լինի. երկինքն նորա մի ցաւեցէ եւ երկիրս նորա մի պաւղարեցէ:

Իսկ Տէր Սարգիս փնամով շինող եկեղեցւոյն գրեաց հակիրճ գլխատակ իւր ի ճակատ դրան զանգակատանն .

**Ես Տէր Սարգիս քեռորդի Տէր Ստեփաննոսի Սիւնեաց արհիեպիսկոպոսի շինեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ եւ Լիպարտին եւ նախնեաց մերոց եւ երկուց հարազատ եղբարցն որ սպանան ի Թուրքաց պատերազմաց . վասն որոյ աղաչեմ հանդիպողացդ յիշել զմեզ ի Քրիստոս .**

« Յետ ամաց ինչ ի միջօրեայ հասակի . . . յանկարծադէպ » նետից հարուածեալ Լիպարտի հանդէպ բերդին Բո . . . րոտնոյ » և վախճանեալ ի Գոլոշտի վանս, բերեալ Թաղեցաւ ի դրան Ս . Կարապետի, ուր հանդուցեալ էր և մայր իւր քեռուստրն Ստեփաննոսի եպիսկոպոսի, « մեծաւ ճգնութեամբ ապաշխարեալ (անդ) բազում ամս » ի նեղսագոյն խրճթի » :

Յայլ արձանս փոխանակ Ս . Կարապետի յիշի ստէպ եկեղեցի Ս . Նախավկային, յորոյ դրան Թաղեցաւ Ելիկում անդրանիկն և յաջորդ Լիպարտի . զոր փոխանակեալ եղբայր նորա Սմբատ որ Թագաւոր անուանի, շինեաց (անդ) գհրաշակերտ Ժամատունն ի Նորավանս, ի վերայ գերեզմանաց (նախնեաց) իւրոց . և արար բազում արդիւնս և փարթամացոյց զնա, և զարդարեաց զեկեղեցին, և ետ գեղանս և այգեստանս, որպէս գրէ պատմիչն<sup>1</sup> . և այլուր դարձեալ<sup>2</sup>, եթէ, « Շինէ ժամատուն մի

» հրաշակերտ յօրինուածովք՝ տեղի Աղօթարանի, ի դը . . . րան Ս . Նախավկային, ի տաշածոյ վիմաց և ի կոփա . . . ծոյ քարանց . և . . . աննման զարդուք զարդարէ զեկե . . . ղեցին մեծածախ գանձուք յոսկւոյ և յարծաթոյ և ի . . . պատուական մետաքսէից, և շնորհէ հայրենական ժա . . . ուանդութիւն սուրբ ուխտին գեղս երիս և այգիս յԱ . . . կոռի և ի Հողոցմոց, յԱւիայ և ի Չուայ և յԱմալմա . . . ձորի » : Հաստատեաց զայստիկ արձանագրով ի ներ . . . քուստ ժամատանն տողեալ յարեւմտեան և ի հարա . . . լային գօտուջ որմոցն, յամի 1261, որպէս երեւի ցարդ մասամբ եղծեալ, իսկ անթերի մնայ ի պատմութեան եղ . . . բօրորդուոյ իւրոյ Ստեփաննոսի, յորում և յիշին նորոգու . . . թիւնք այլ եւս եկեղեցեաց, և սահմանք պատարագաց վասն ծնողաց իւրոց և եղբարց անդ Թաղեցոց<sup>3</sup>, որոց արդ չերեւին տապանք, որպէս իւրն և յետնոց յայլում դամ . . . բանատան : Այս է արձանագիրն յամի 1261 .

**Ի ԹՎԻՍ ԶԺ . Այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի իմ Սմբատայ իշխանաց իշխանի որդւոյ մեծին Լիպարտի . . . . շինեցի զեկեղեցիքս , վերջստին նորոգեցի . . . . պահարանաւք եւ ետու իմ հայրենեացն Բ գիւղ ի Սուրբ Նախավկայս , զԱշէշ ու Անապատ , և յԱկոռի զնորատունկ մեծ**

1 Օրբէլեան, ԿԶ : 2 Օրբէլեան, ԿԵ : 3 Այս է արձան դատասկերտին աւանդեալ ի պատմիչէ՝ .

Ի Թուականիս Հայոց ԶԺ . Այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի իմ Սմբատայ է իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լիպարտի որ զԱղօթարանս շինեցի եւ զեկեղեցիքս նորոգեցի վերստին, եւ զաստուածամուխ սուրբ Նշանքս եւ զսուրբ Նշխարքս որ հաւաքեցաք աստ, զարդարեցի ոսկի պահարանօք . եւ ետու նախ յիմ հալալ հայրենեացն երկու գիւղ՝ զԱշէշ եւ զԱնապատս որ յափշտակած էր ի տեղւոյս, եւ յԱկոռի զնորատունկ մեծ այգին իւր կիւրակաջրովն : Եւ Տէր Սարգիս եւ միաբանքս սահմանեցին յիշատակ մեզ զաւագ բեմն՝ բովանդակ տարին անխափան պատարագօք՝ զկիրակին, եւ զշաբաթն Լիպարտի, զհինգշաբաթն՝ Ասփային, զերկուշաբաթն եւ զերեքշաբաթն՝ Ելիկումին, չորեքշաբաթն՝ Իվանէին, ուրբաթն՝ փախրադուլային :

Դարձեալ ետու եւ զՀողոցմոց այգին եւ զՉուոյ այգին . եւ հաստատեցաք յամէն եկեղեցիքդ մին օր պատարագ հանին միւրոյ Խաթունին : Յետ այսմ եւ սուաք զԱզատ գիւղն իւր ամէն սահմանովն, շրջակայ լերամբ եւ դաշտով՝ սկսեալ ի բարձր դիտա .

ւոր սարէն որ Քոչասակախաղաց կոչի, մինչ ի յԵրեւանն Հողոցմոց եւ Ճաւաճոր, եւ ի գլուխն Ակոռոյ : Ընդ սմա եւ զիմ ձեռատունկ այգին ի Շաղիաճոր վասն հոգեաց եղբօրորդւոյն իմոյ Բուրմեւիլն որ տղայ հաւսակաւ սպանաւ ի պատերազմի յաշխարհն Խալանդարաց ի դաշտին Խազրաց՝ զոր այժմ Խփչախք կոչեն : Իւ սահմանեցաք նմա պատարագ ԺԵ աւր, որ ամ յամէ անխափան կատարեն՝ զԺ աւրն յԱւագ տաւներին Դաւթի եւ Յակոբայ եւ այլոցն, եւ զԵ աւրն ի Նոր կիւրակէին : Արդ եթէ ոք ի մերոց կամ յաւատարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց զմեր յիշատակս խափանել ջանայ, եւ ինչ եւ իցէ պատճառաւ հակառակել կամ յափշտակել խորհի՝ յամե նաստեղծ հրամանացն Աստուծոյ անլուծանելի անլծիւք ընդ բելիարայ եւ իւրոցն եւ ընդ օձին նզովեալ եղիցի . եւ յառաքելոց եւ ի մարգարէից եւ ի հայրապետաց եւ ի մարտիրոսաց եւ ի սրբոց հրեշտակաց որոշեալ եւ անիծեալ լիցի . ընդ Կայենի եւ Քամայ, Կորխայ եւ Դադանայ եւ Աքիրոսի, Եգաբէլի եւ Գեեգի, Յուդայի եւ Արիոսի եւ ուրացեալ վասակայ դատապարտեալ անշէջ հրովն պատժեսցի ինքն :



այգին իւր կիւրակաջրովն . Տէր Սարգիս եւ միաբանքս հաստատեցին զաւագ խորանն որ հանապազ պատարագ պարոնացն առնեն , զչաբաթն ու զկիրակի՝ Լիպարիտի , հինգչաբաթ՝ Ասփային , զերկուշաբաթ ու զերեքշաբաթն՝ Ելիկումին , չորեքշաբաթն՝ Իվանէին , ուրբաթն՝ Փախրաթուլային . . . . . Արդ որ յետ մեր ժառանգեն ի տեղոյս յիմոց կամ յաւտարաց եւ այս հաստատեալ պայմանիս հակառակել ջանայ եւ կամ ի սուրբ եկեղեցոյս հանել կամ զժամն խափանել՝ մեր մեղացն սլարտական է , եւ զանէծս ցաւագին զվայէնին եւ զՔայիզին առցէ ի բաժին զՅուզային եւ զԽաչահանացն . եթէ դք ի Տաճիկէ յաւագ փոխի ու հանել ջանայ յԱստուծոյ . . . .

Ի վերայ դրան ժամատանն կայ յիշատակ մի եւս Սմբատայ , անթուական զայս օրինակ .

Յուսովն Աստուծոյ ես Սմբատ իշխանաց իշխան իմ սրտի յաւժարութեամբ տվի ի Սոչրք Նախարկայս իմ հայրենեացն զԱզատն իւր սահմանաւքն լերամբք եւ դաշտաւք , եւ զիմ . . . Քիւնէշիկաճոր վասն փրկութեան հոգւոյ եղբարորդւոյ իմոյ Բուրթէլին որ դեռաբոյս նորափթիթ փոխեցաւ առ Քրիստոս պատերազմաւ ի դաշտին Սկիւթացւոց , խաւար էած տեսողաց , եւ . . . . Ք իւր . . նովաւ զաւակ յիշատակի . Տէր Սարգիս եւ այլ միաբանքս հաստատեցին ԺԵ աւր պատարագ . Ե աւրն աւագ տաւ ներն , Ե Պետրոսի եւ Պաւղոսի տաւնին եւ Յովհաննու եւ Յակովբայ եւ Նոր կիւրակէին . Կատարիչքն աւրհնին եւ խափանիչքն դատին ի Տեառնէ . եւ որ զգեզն եւ զայգին հանել ջանայ , ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի .

Հանդէպ առաջնոյ արձանագրութեանն որ ի ժամատանն , կայ և ի հիւսիսակողմանն կիսեղծ արձանագիրս .

Յանուն Աստուծոյ . Ես Սարկաւագ երէց որդի Մկրտչին եկի ի Նորավանս . . . . Նշանիս առաջի , իմ սրտի յաւժարութեամբ զիմ գնած հայրենիքքն . . . զԽաչ . . ըդենց իգին (այգին) , եւ զիմ հոյժատուցն իւր ամենայն . . . եւ Խոտափատուն ? . . յեղեղնաճոր իմ գնած՝ եկեղեցոյս տվի , որ ի տարին Ե ժամ տան . . յիմ հայրենեաց . . . ԹՎ . ԶԻ .

Յետ մահուան Սմբատայ ի Դավրէժ յամի 1273 , և մեծահանդէս յուղարկաւորութեամբ Թաղմանն աստ « ի հայրենի դամբարանն սուրբ ուխտին Նորավանից . . . » շինէ եղբայր իւր Տարսայիճն նմա Տուն տապանի և ե . . . կեղեցի յանուն Սրբոյն Քրիզոթի և անդ փոխէ ի հան . . . » գիտ զեղբայր իւր Սմբատ » : Այս եկեղեցի յարեալ ի հիւսիսային որմն Ս . Կարապետին՝ սագաչն է ի վերայ չորից որմնայար սեանց , և Դամբարան կոչի . անդ յետ Սմբատայ Թաղեցաւ և ինքն շինողն Տարսայիճ և որդիք իւր , որպէս տեսցի ի ստորեւդ . զեղեցիկ և նուրբ են քան . . . դակք սեղանոյն և խաչվիմացն , մանաւանդ որ ի հակատ խորանին արտաքուստ , յորում Թեւս գրեալ է .

**Տէր Աստուած Յիսուս Քրիստոս աւգնեա Բուրթելին .**

Ի վերայ դրանն և ի վերոյ պատուհանի դրանն արձանագրեալ են երկոքին այսոքիկ ի 1278 ամի .

Կամաւն Աստուծոյ ես Տարսայիճ իշխանաց իշխան շինեցի զԴամբարան .

րանն յաղաղս եղբար իմոյ Սմբատայ արքային . վասն որոյ ազաչեմ յիշել . Թուին ԶԻԴ .

† Տէր Աստուած Զիսուս Քրիստոս աւգնէ Տարսայիճին .

Նոյն գրէ և ի հիւսիսային որմն եկեղեցոյն զայս բան , յորում քննելի և պարզելի են բառք ինչ .

Կամաւն Աստուծոյ (այս) իմ գիր է Տարսայիճիս իշխանիս , որ իշխեցող էի Սիւնեաց նահանգիս Արոտան եւ Շնհերոյ . որ եկեղեցի տուի շինել Սիրանէս վարդապետին , ու Հալէճորոյ (ու) Շնհերոյ հայրենիքն տուի իւր սահմանաւքն յորդէց յորդիքն նորա հայրենիքն տվի . ու ինչ զեկեղեցիս լմնեցին խիշայ (?) կու տայաք սպիտակի , այն խիշային փոխան զԱղազար Ըղերձեցին տվաք , նրա հայրենիքն լինի , նորա գեղին կայ յազգէ յազգ . ու զՀալէճորոյ հարկն սահմանեցաք ի տարում վաթսուն սպիտակ տայ , այլ ազատ է յամեն հարկաց . այլ ոչ ամիրայ ոչ պարոն ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալէճորոյ , ոչ շոր տայ ? ոչ այլ ոչ ում . Ով յետ մեր զայս հաստատ վճիռս խափանէ ու զմեր հրամանքս ունայն առնէ , յերից սուրբ Ժողովոյն որոշեալ եղիցի եւ ընդ խաչահանուացն եղիցի . Ես Տարսայիճս իմ ձեռաւքս հաստատեցի զգիրս զայս :

Ի ներքին երես նոյն որմոյ արձանագրէ Մինս խաթուն , երկրորդ կին Տարսայիճի՝ յամի 1292 .

Կամաւ ամենակալին Աստուծոյ այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի Մինայ խաթունիս է դստեր մեծի արքային Զալալին եւ ամուսնոյ մեծարգի իշխանի Տարսայիճին , եւ իմ որդւոյս Զալալիս , որ գնեցաք ի մեր հալալ ընչից զՆորբերդին այգին ի Վէգի եւ զայն ի կորդւոյ գնեցաք ի հայրենաւ տիրացն եւ տնկեցաք , եւ բոլորեցի պորս դեհն . մէկ ճակատն Բնաչահու Ահնուէլըղումին ? այգին , մէկ ճակատն իրիցին այգին , մէկ ճակատն Ողբէգին . (?) այգին , մէկ ճակատն Բրէհիմին այգին , տեղն ԺԲ գրքի ? զոր յառաջ այլ տուած էր վանիցս՝ մեք մեր յաւժարութեամբ վերստին տուաք ի Նորավանս յԱւագ սուրբ Նշանս եւ Սուրբ Ստեփաննոս . վասն հարկից արքայաշուք տեսուն իմոյ Տարսայիճին . Իսկ Տէր Ստեփաննոս եւ միաբան եղբարքս կարգեցին ժամ՝ յիշատակ անջինջ զտարին Համբարձմանն . զի յայնմ աւուր հանրիսիւ աւրհնեսցեն զչիրիմս նորա եւ Ժ աւր պատարագ մատչի . եւ այս տուրքս ոչ ի զրկանաց ոչ ի գեղէ ? ոչ ի պարոնահողաց , այլ մեր ազատ դրամագին ազատ յամէն հարկաց , որ ոչ ում հաշիւ չկայ ի հետ . Արդ թէ ի մերոցն կամ յաւտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց զինչ եւ իցէ պատճառաւ նենդել կամ հանել ջանան զայս այգիս ի Նորաւ

1 Թերեւս Լաւաղոյն իյէ ընթերցուածն կորէից կամ կորէիցին ինչ իմ , այլ ոչ ոմ :

վանից կտրեալ լիցին նոքա յերկուց կենաց, ընդ աստանայի նղովեալ եզիցի յամենակալ բերանէն յԱստուծոյ. զԼայէնին եւ զՅուդային զՅուլիանոսին առցէ վարձ ընդ Վասակայ ուրացողին դատեսցի, յերից սուրբ Ժողովոցն եւ յամենայն Սրբոց անիծեալ լիցի ի մահ եւ ի կեանք. Եւ թէ Տաճկաւ որ փոխի եւ հնարել ջանայ Ռ Ռ Ռ նահլաթ լինի. իւր Մահ մէտէն ապիղար լինի. Ի թվիս ԶԽԱ. Հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ.

Նշանաւոր կամ խորհրդաւոր ինչ են քանդակք լեզուարձակ օձից ի վերայ որմնայար սեանց բեմին, և ի վերայ լուսամտին հանդէպ նոցին: — Իսկ առաջի բեմին դնին յերկկարգ շարի լուին և երկրամած մետասան տապանք հոյակապ և պերճասէր իշխանաց և իշխանուհեաց Օրբելեանց, պէսպէս քանդակք, իւրաքանչիւր թուականք և մի քան զմի ազդողամիտ հանճարեղ արձանագրօք, արժանաւորք փառապանծիցն այնոցիկ և հմտից դպրութեան. որոց առաջին՝ արքայաշուքն Սմբատայ շինողի ժամատանն.

**Ա. ՍՄԲՍ ԱՐՔԱՅԻՆ Է ՏԱՊԱՆՍ. ՅԻՇԵՑԷՔ.— Թ. ԶԻԲ.**

**Բ. Ի ԹՎԻՍ ԶԼԸ.— ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՐՔԱՅԱՇՈՒՔ ԿՈՂՄՆԱԿԱԼԻՆ ՀԶԱԻՐ ԵՒ ՄԵԾ ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ԵՒ ՔԱԶԱՊԱՀ ՄԵՆԱՄԱՐՏԻՆ ԱԹՍԲԱԿ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ.**

Թուականն՝ ըստ պատմչին՝ կանխէ ամառ քան զմահ հզօրին, գուցէ վաղագոյն պատրաստեաց զհանգիստ իւր:

**Գ. ԱՅՍ ՅԱՐԿ ՏԱՊԱՆԻ ԲԱՆԴ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ Է ԵՒ ԳՈՒԲ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՀԸՐԱՇԱԳԵՂ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ՔԱԶԱԶԱԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՓԱԽՐԱԴԱԼԻՆ ՈՐԴԻՈՅ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԻԱՆԻՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ. ՎԱՍՆ ՈՐՈՑ ԱՂԱԶԵՄ ՅԻՇԵԼ.— ԹՎԻՆ ԶԻԵ.**

Ըստ սրտառուչ արձանիս աղէխարչ սրտիւ և բանիւ յիշէ և եղբայր երիտասարդին՝ եպիսկոպոսն պատմիչ՝ յաւարտ գրօցն. « Յիշեմ և զխոցուած սրտի իմոյ, զի... »  
» Հասաւ մեզ սուգ անվերանայի. զի կրսեր և սիրելի եղ...  
» բայրն իմ փախրադուլայն ի զարդ և ի զեղ մանկական  
» հասակի, մինչ տէգ մարուացն փողփեալ լինէր թխա...  
» տիպ տեսակաւ շուրջ բոլորեալ զպատշաճագեղ ծնօտիւ...  
» քըն, և սիրտ նորա զուարճ խնդամտական խորհրդօք  
» ի վայելս քաղցրագրօս կենցաղոյս, և կամք նորա ի  
» վազս և ի թիւս իշխանաշուք փառաց, յանկարծակի  
» հասեալ օրհասն կենաց՝ խղեաց զրոյսն քաջաղէշ և  
» խլեաց զտունկն ծաղկափթիթ, երարձ տարաժամ  
» զբաղձալին ինձ. որ և հրաժարեալ ի մէնջ՝ գնաց յաս...  
» տեսացս առանց իրիք յիշատակի. զոր և տարեալ եղին  
» ընդ հօրն իւրում ի տապանի: Որում տէրն իմ Յիսուս  
» փոխանակ աստի զրկանացս՝ անդ ողորմեսցի, և ան...  
» տես արարեալ զմեզսատեսակ կիրս մարմնոյ նորա՝  
» զուարճացուցէ ի վայելսն անմահական և յուրախու...  
» թիւնսն անզրաւական. ամէն»: — Թերեւս իւր իսկ Տեառն Ստեփանոսի է յօրինեալ զտապանագիրն:

**Դ. ԹԱԳԱԶԱՐՄ ԱՐՔԱՅՈՒՅԻՆ Է ՄԻՆԱՅ ԽԱԹՈՒՆՆ ԴՈՒՍՏՐ ՄԵԾ ԿՈՂՄՆԱԿԱԼԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԶԱԼԱԼԻՆ.**

**Ե. ԹՎԻՆ ԶԻԹ.— ԶԳԵՂԵՑԿԱՏԻՊՆ ԷԼԻԿՈՒՄ ՈՐԴԻ ՄԵԾԻՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ ՈՐ ԱՌԻԹՄԱԻՐԻՆ ԽՐՈՒՏ ՄՌՆԶԷՐ ԸՆԴԴԵՄ ԱՅԼԱՍԵՌ ԳՆԴԻՆ, ԱՂԱԶԵՄ ՅԻՇԵԼ ՅԱՂԱԻԹՍ.**

Ըստ մակդրին քանդակեալ է ի վերայ տապանին պատկեր սիգապանձ թագակիր և թաթեղ աբիւժու:

**Զ. ԶԱՇԽԱՐՀԱՇԷՆ ԴՇԻՈՅԱՓԱՌ ՊԱՐՈՆ ԶԹԱՄԹԱՅ ԽԱԹՈՒՆՆ ՄԱՅՐ ԲՈՒՐԹԷԼԻՆ ՅԻՇԵՑԷՔ.— ԹՎԻՆ ԶԿԱ.**

Սա էր կին Ելիկուժի անդրանիկ եղբօր Սմբատայ և հարսայիճի, դուստր Գրիգորի Մարգարանեանց: Սորա կանգնեալ էր խաչարձան մի, (արդ խորտակեալ) արտաքոյ դրան տապանատանն՝ ի յիշատակ առնն և որդեկաց.

**Զայս նշան Յիսուսի խաչելոյն . . . Տեառն Աստուծոյ վասն փրկութեան**

մարդկան՝ կանգնէ յուսով քրիստոսասէր իշխանուհի Թամթա խաթունն ի բարեխաւսութիւն գլխ . . . իւր մեծափառ իշխանին Էլիկումին, եւ վասն յերկար կենաց զաւակաց իւրոց Բուրդելին եւ Բուրդային .

Է. ՎԱՐԴԱԳՈՅՆ ՏՂԱՅՆ ՍՄԲԱՏ ՈՐԴԻ ԲՈՒՐԹԷԼԻՆ. ՅԻՇԵՑԷՔ.

Քանզի անթուական է տապանս, և երեք և չորք պա. ուիկ յինել, զի փոքրիկ է և տապանն. և ի վերայն երկու յազատք են տոհմիս Բուրթէլ անուամբ, սա անծանօթ աղանիք են քանդակեալք վարդ ի բերան, որպէս թէ մնայ որոյ գոլ որդի. բայց յայտնէ զնա գրուածն վաղամե. ոչ միայն վարդագոյն՝ այլ և քաղցրաբարբառ էր:

Ը. ԵՂԱՅՐ ՄԵԾ ԲՈՒՐԹԷԼԻՆ ԶԳԵՂԱՀՐԱՇ ԲՈՒՂԴԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՍԱԿԱՒ, ՈՐ ՅԵՏ ՅՈՒՈՎ ՔԱԶ ՄՐՏՄԱՆՑ ՏԻԳԱՌՈՑԵԱՍ, ԶԱՆԹԱՌԱՄՆ ԸՆԿԱԼԱՒ ԶՊՍԱԿ. — ԹՎԻՆ ԶԿԷ.

Սա որդի է Ելիկումի և Թուն Տարսայիճի: զրովք և ոմանք անզիր կամ Ննջազիր. ընդ բնաւ 37 տապանս որոշեաց Քաջբերունին, յերիս կարգո, այսու իմն ծանազիրք, այլ յայտ է թէ Օրբելեան պայազատաց են: օրինակաւ, զոր Թուանչանգ և սոսկ անուամբն նշանակեմ ի դիւրութիւն ընթերցման և արդման դրից դամբանացն իւրաքանչիւր և արձանագրութեանց՝ միահամուռ ի ստորեւ կարգելոց:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ
Պր. Թազեմց	Թամթիկ	Ալիկում	Իվամէ որդի Լիպարտի	Փախրա ուլա	Ասփա տիկիմ	Յովնանէս Եպիսկոպոս	Ստեփանոս Եպիսկոպոս 1260	Գրիգոր Եպիսկոպոս 1305	Սարգիս Եպիսկոպոս 1298
	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ	ԺԹ
	Պր. Նաթել. 1313	Նաթիլ տիկիմ	Կայամէ	Մամուէլ	Ա. Ա.	Ուլուս պատածի	Իվամէ. 1294		
		ԺԸ	ԺԹ	Ի	ԻԱ	ԻԲ	ԻԳ		
		Ա. Ա.	Յովնանէս	Ստեփանոս Եպիսկոպոս	Ա. Ա.	Ա. Ա.	Առաքէլ Եպիսկոպոս		

Ա. ՊԱՐՈՆ ԹԱՂԵՆՑԻ, (կամ Թազեմցի, անծանօթի առն և անուան):

Բ. ԱԻՐԻՈՐԴ ԹԱՄԹԻԿԻՆՆ Է.

Ոչ է յայտ ոյր դուստր է Թամթիկ. մարթ է համարել յիշատակ Թամթայ կնոջ իւրոյ յեա իւր յերկարակեաց Թուն վերոյիշելոյն Ալիկումի (Ելիկումի), յանուն և ի եղելոյ՝ կոչեցեալ:

Գ. ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ԱՅԼԻԿՈՒՄԻ Է ՏԱՊԱՆՍ.

Սա է անդրանիկ եղբայր արքայաչուք պայազատացն Սմբատայ և Տարսայիճի, + յամի 1253-4:

Դ. ԳԵՂԵՑԿԱԾԱՂԻԿՆ Է ԻՎԱՆԷ.

Եւ սա այսպէս անուանեալ ի պատմէն՝ միւս հօրեղբայր իւր. զորոց արձանս կամ ինքն Ստեփանոս գրեաց կամ ըստ բանից պատմութեան նարա այլք գրեցին: Յերիտասարդական տիս վախճանեալ է սա յամի 1280, այլ Թողեալ զաւակ զԼիպարիտ՝ հայր Յովնանու եպիսկոպոսի և հաւ Զեսարի:

Ե. ՔԱԶ ՍՊԱՌԱԶԷՆՆ Է ՓԱԽՐԱԴՈՒԼԱՅՆ.

Այսպէս մակակոչեալ և յեղբորորդւոյն ի պատմէն, այսինքն եղբայր Տարսայիճի և Սմբատայ, եւայն:

Զ. ԶԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՅՐ ԻՇԽԱՆԱՑՍ ԶԱՍՓԱՅՆ ՅԻՇԵՑԷՔ.

Կին է սա Լիպարտի հորն Տարսայիճի, դուստր Բուբայ կամ Բուբաբայ իշխանի, և մեռեալ է յամի 1963:

Է. ՏԵՐ ՅՈՂԱՆՆԷՍ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ...

Ը. ՏԵՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ.— ԹՎ. ԶԹ.

Թ. ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ.— ԹՎ. ԶԾԴ.

Ժ. ԱՅՍ ՇԻՐԻՄ ՇՆՈՐՀԱԼԻՐ ՍԱՐԳՍԻ Է ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՆՅԱՂԹ ՀՈՒՅՏՈՐԻ.— ԹՎ. ԶԽԷ.

Երկոցուն եւս յիշեցելոց Յովհաննէս եպիսկոպոսաց լինել որդի Լիպարտի՝ Թոռին միւսոյ Լիպարտի՝ հորն ցանկալի էր գտանել և զԹուականն. ի դէպ է միոյն Տարսայիճի:

ԺԱ-ԺԶ. Զայտոցիկ միայն զանուանեն յիշէ քննողն ինչ կայր ի վէմն. իսկ ԺԲ Թիւն բնաւ և ընդ անանուան (Քաջբերունի). Թուի Թէ և ոչ աւելի քան զայնս գրեալ սըն ոչ յիշի ի նմանէ:

ԺԷ. ԶԳԵՂԵՑԿԱՓԹԻԹ ԾԱՂԻԿՆ ԶՔԱԶՈՒՂԷՇ ՄԱՆՈՒԿՆ ՎԱՂԱԹԱՌԱՄ Ի ՎԱՆԷ ՅԻՇԵՑԷՔ.— ԹՎ. ԶԽԳ.

Թերեւս Զեսարի որդի է մանուկս ոյս. այլ հաւանորէն բազում և այլ համանուանք էին ի տոհմին:

ԺԹ. ՏՈՒՆ ԻՄԱՍՏԻՑ ԵՒ ՀԱՆՃԱՐՈՑ ԱԻՐՊԵԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՉԱԿԱՒՈՐ ՄԵՏՐԱՊՈԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ.

Ի. ԹՎԻՆ ԶԾԲ.— ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՄԵԾԻ ՄԵՏՐԱՊՈԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ.

Արձանագիրս ի ճաչ գայ հռչակեալ պատմիչ եպիսկոպոսին որդւոյ Տարսայիճի, այլ Թուականն՝ ոչ. զի ոչ յամի 1303 այլ ի 1309 երեւի սա վախճանեալ, ապա փոխանակ Բէ ընթեռնելի է Ը:

ԻԱ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱՌԱՔԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՈՐ ՀԱՆԳԵԱՒ ԹՎ. ՌԻ.

Յառաջնում շարի ի հիւսիսակողմանն նախ քան զԱ Թիւն՝ կան երկու եւս դամբանք անգիրք. հաւանորէն և յերկրորդում և յերրորդում շարի այնր կողման են անյայտ դիրք հանգստեան ի ներքոյ նոցին՝ յերեւեալ դատարկ տեղումն, այլոց պայազատաց տոհմին այնորիկ Ուրբելանց. որոց մեծասիրտ գիտակցութիւն անպէտ իմն վարկուցեալ զքեզութիւն շիրմաց և հոյակապ մահարձանաց, սալարկեայ երկրամած տախտակաքն, և մանաւանդ փայլակնացայտ խորիմաց սղարանութեամբ՝ սոսկացուցանէ և յայտուչ կրթէ զնկատողն: Ոչ ուրեք ի գերեզմանս և ի տապանատունս Հայոց (վերջին և ոչ աննշան հաւաստիք անցելոյ մեծութեան ազգին), և ոչ ի հռչակաւորսն և ի դրուագաւորսն անգամ ի Հոռոմոս, ի Հաղբատ և Սանահին, ի Տարսն և ի Վարագ, կարծեմ Թէ ոչ և ի Թանգուգեալն ՚Իրագարկ, կամ այլ ուր և յայտնիք իցեն, գուցէ Թէ ոչ և առ օտարս, ոչ ուրեք յայդքան հակիրճ բանս՝ այնքան հզօրեղապէս արտադրին ազգմունք զգացման գորովոյ և գեղոյ, փառաց և արիութեան, և անմուռնչ հառաչանաց կենցաղասէր ոգւոյ՝ վարողացն այնոցիկ զաշխարհ՝ պերճութեամբ, զօրութեամբ և ազատօրէն, անահ և անկասկած, նա եւ ընդ տիեզերասաստ աշխարհակալութեամբ նետակօտոր խուժիցն Թաթարաց: Ընդարոյս իմն աւիւն Թուի պայազատացդ այդոցիկ կրեալ յինքեանս՝ իբրեւ ի գործ ինչ կամ ի վայելս եկեալ յաշխարհ, և փոքր ի շատէ փարեալ զնո-


վաւ. ոչ յուժեքէ զանգիտեն ի տապանական կտակոն ծախուցանել, զի կամեցան և եղեն յերկրի, և ի Հայաստան երկրի, և յայնպիսունմն ժամանակի՝ իշխանք և իշխանաց իշխանք, մեծափառք և արքայաշուք, այլ և արքայ և բազաւոր, և զիւզակիցս և կողակիցս ունել Տիկնաց տիկնայս, դշխոյափառս և արքայուհիս. և ոչ անման ժառանգութեամբ՝ այլ արդեամբք եղեալ մեծք և հաջակաւորք. մանաւանդ յարիական մասին՝ որ վեհագոյն է յառաքիչնութիւնս հոգւոյ, խոստովանին հզօրք և խրոխտք, քաջագօրք, քաջասպանք, քաջ սպասազենք և մենատարտիկք, այլ և առիժագեղք և առիժապէս մեկնողք ի վերայ ախոյեանից և մահուչափ մրցողք. այլ և անհաղթ ընդ բոլորնութիւն մահու. ընդ որ և զարեալ՝ բողոքեն անբարբառ բերանովք՝ իբրեւ ի յանկարծաւաս գիշերազնաց գաղտագողի հինէ դաւեալք և արկեալք ի բանդ բարկութեան և ի գոչ գերոչքեան, երիտասարդ հասակօքն և կարձօրեայ կենօք, ի միջօրէի պէսպէս փայլմանցն՝ վաղաթառամ եղեալ գեղածիժաղ ծաղկանցն. մանկունքն այնոքիկ և տղայք, օրիորդք և երիտասարդք՝ դեռարոյսք և նորափոքրք, չքնաղք և շնորհալիք, հրաշագեղք, գեղաիրաչք, գեղեցկատիպք, գեղեցկածաղիկք, քաջաղէշք, վարդագոյնք. որոց, որպէս և յետ խամրելոյն՝ անուշահատութիւն ցամաքեալ Թերթից ցուցանէ զօրպիտութիւն ծաղկանցն, այսպէս և սոցին քնքոյ անուանք, Գոզգոռն, Օյիկ, Փալիկ, Թաւրիկ և նմանիք: Եւ յարիականն և ի

1 Նորավանից եպիսկոպոսն է, այլ Թուականն յերկրոյս կացուցանէ, և ի ճաչ գայ ամի մահուան Պատմիչն (Թիւ Ի):



գողարական՝ հզօրք են ի բացատրութիւն. նշանակ ան-  
 նըկուն մեծատար ոգւոյ: Որք և գհարազատս իւրեանց  
 նուիրեալս ի կրօնս հեզութեան յուխտ եկեղեցւոյ, կա-  
 մին տունս իմաստից և հանձարոյ, հնետորս անյադրս, և  
 երկոտստան գաւազանաց վիճակաւորս, միակ մետրապօ-  
 յիտ անուանեալ ի Հայս: Օ՛ն անդր, և գործի արուեստի  
 ինքեանց հանապազակիր ունելով զգէնս, նա եւ զգերա-  
 գոյնն զքրիստոսեանն՝ զպարծանս պսակաց և զբօլուց՝  
 փոխանակ խոնարհ (խաչ) անուան՝ Գայիսն կոչեն,  
 աստուածամուշի արեամբ ամրապնդեալ: Արիակսն մը-  
 տացն և վսեմականին է՝ նշանակ՝ և ուրեք միով լոկով

անուամբ և մակդրաւ բովանդակել զկենցաղականն ա-  
 ւանդելոյն ի հող. (օրինակ իմն. Գեղեցկաճաղիկն է ի-  
 վանէ. կամ Օրիորդ. Թամթիկինն է): Շուարին աստա-  
 նօր միտք, արձանանալ արդեօք ընդ արիական ոգիսն, ե-  
 թէ կորանալ ընդ վաղաթարչամ ծաղկահասակսն. Թեր-  
 եւս և յերկրայս լինել՝ թէ արդարեւ իցե՛ն և դոքս ի  
 համարի յաւիտենից ննջեցելոցն, եթէ ընդ դոյզն հօլա-  
 պատենիւ կենդանաթաղք հսկեն ակնկալուք ծայրակար-  
 միր վաղորդայնոյ՝ արագ արագ վառելոյ պայծառագոյն  
 քան զերեկն՝ զվարդագոյն ծնօտան և զժղիս... այլ անու-  
 շակ և անգիշեր նշուլիւ արեգականն անմահութեան:



ՅՍ. Ամադու. Բուրբելաչէն եկեղեցին.

Աւալի դրան ժամատանն խաչվեմ մի է գեղաքանդակ այլ կործանեալ, ունելով զայս արձան.

**Յիշատակ է հաւրեղբար իմոյ Աւաքէլ եպիսկոպոսին. Թվին ՌձԺ.**

Աւ նմին միւս եւս խաչվեմ կործանեալ, հնագոյն արձանաւ Սրբելեանց դարու, 1308 ամի.

**Ես Թամթայ խաթունս կանգնեցի զԽաչս ի փրկութիւնս հոգւոյ Աթաբէկ Տարսայիճին եւ յարեւշատութիւնս որդւոց իմոց Բուրթէլին եւ Բուզդային. Թիւն ԶԾԷ. — Մոռիկ վարդապետ յիշեցէք՝**

1 Թամթա կեն է Էլիկուսի որդւոց Տարսայիճի. իսկ վարդապետ Մոռիկ Թուրք քանդակողն կամ յորինող բանիս որ յիշէ և յէլ 182:

Յիշատակարան մի Ստեփանոսի եպիսկոպոսի պատմչի գրեալ յեկեղեցւոյ Ս . Կարապետի ընդ արձանաւ հա- համաձայն աւանդելոցն ի վերջ գրոցն՝ գտանի արձանաւ . ւուն իւրոյ Լիպարտի , երկար բանիւ , յամի 1296 .

Ենորհաւք եւ ողորմութեամբ Սուրբ Երրորդութեան , յուսովն որ առ Քրիստոս , Ես յղքնամեղ եւ ապիկար Ստեփաննոս , որդի իշխանաց իշխանին Տարսայիճին , եպիսկոպոս Սիւնեաց եւ տեսուչ երկնահանգէտ աթոռոյս , Տաթեւոյս (եւ) Նորավանից , յիշելով զունայնութիւն վայրկենի կենացս , ետու զիմ հոգւոյ մասն եւ բաժին եւ ժառանգ(ութիւն) սուրբ եկեղեցւոյս զԶովայ գիւղն իւր բոլոր սահմանաւքն ազատ յամէն աշխարհական հարկաց ի դիւանէ ի խալանէ եւ յամէն չարէ , զոր գնեալ էի յիմ ախբարէն ի Զալալէն եւ տուեալ ԻԱ հազար դրամ եւ Փողոսնաւքն , զՍուրբ Սահակ եւ զԱրարաշէն . եւ այլ ետու յիմ հալալ հայրենաբաժնէն ի Հրաշկաբերգ Քարկոփիղեանքն իւր սահմանաւքն յեղեգաձորին , զԱրադէսն իւր գեղաւքն . եւ զամեն հայրենիքն իմ արարի ժառանգութիւն սուրբ ուխտիս Նորավանից անխախտ եւ անվաղք ? մինչ ի գալուստն Աստուծոյ , եւ այլ բազումս . Եւ կամաւ միաբան եղբարցս հաստատեցի ինձ յիշատակ , զի ըզկնի Կրկնազատկին պատարագեսցեն եւ յամէն ար Անբիծ եւ աւետարան ինչ ի Հոգւոյն գալուստն . եւ զար Պենտէկոստէին մեզ յիշատակ կատարեն զենմամբ ղուարակաց եւ առատ ռոճկաւք , եւ յամէն եկեղեցիքս մեզ պատարադ . թերեւս գտից յԱստուած Հոգւոյն ողորմութիւն եղկելի հոգւոյս ի մեծի աւուրն աներեկի , ուր բանքն սպառին եւ դործք թագաւորեն . Եւ արդ եթէ որ զայս խափանել խորհի կամ յափշտակել զտուրքս եւ կամ ի ժառանգաւորացդ ծուլանալ եղեալ սահմանիս , ընդ անլյծ նզովիւք եղիցին յԱստուծոյ ամենակալէն եւ յամենայն Սրբոց յերկնաւորաց եւ յերկրաւորաց , ընդ Կայէնի եւ ընդ Յուդայի եւ Արիոսի պատժեալ խայտառակեսցին եւ մեր մեզացն պարտական եղիցին . եւ թէ Տաճիկ փոխի եւ խլել ջանայ , յԱստուծոյ եւ յամենայն Սրբոց նզոված եզիցի եւ յիւր փէղամբարէն ի Մահմատէն ապիզար հազար նալաթ լինի մեռելեալք եւ կենդանեալք . Ի թվիս ԶԽԵ . հաստատ է .

Առ երի արձանագրաց որդւոյն և հօրն՝ կայ համառօտ թերեւս և թերի արձան մի Տարսայիճի .

Կամուռն Աստուծոյ եւ Տարսայիճս ետու Էրեւնարտն (?) իւր սահմանաւքն Նորավանից վանիս .

Բազում և այլ արձանագիրք են յերկոսին եւս եկեղեցիքս և ի զանգակատանն ի ներքոյ և արտաքոյ , և յոր առ նորք խաչվէմս՝ ի կանգուն և յանկեալ . որոց հնազոյն՝ եթէ ստոյգ է ընթերցուած թուականին ՈԾ (1201), կանխէ քան զինութիւն Ս . Կարապետին , ի խորանի միում ի խաչվիմի . և միւս յայլում խորանի անթուական .


Յիշեա Քրիստոս Աստուած զՍարգսի հոգին եւ ողորմեա . ԹՎ . ՈԾ .



† Յանուն Աստուծոյ . այս գիր է Տէր Սարգսի եւ սպասաւորաց Սուրբ Կարապետիս, որ տուաք զխորանս Հասանայ Ամաղուեցւոյ, որ նորա հալալ արդեամբք շինեցաւ . ի տարին Բ ար ժամ հաստատեցաք զՊետրոսի եւ զՊաւղոսի տանին, Ա Հասանայ, Ա իւր կնոջն, եւ որ հակառակ . . .

— Ի ներքին ճակատ դրան եկեղեցոյս կայ թերստ կամ ընդհատ արձանս այս .

. . . Թագաւորին միաբանեցայ սուրբ Նախավկայ վանից եւ տուի իմ հայրենեացն ի սուրբ Նշանս . . . եւ զիմ բաժին զոր գետու հումա ? արած էր ըզ-



60. վերնայարկ բարձրաշէն եկեղեցոյ Նորավանից .

ճոկանադոկ ? . . . Տէր Սարգիս եւ միաբանք հաստատեցին . . . պատարադ Ե ար Զուրջին, Ե Խութլու խաթունին Զուրջին մաւրն . . . Տիկնաց տիկին . Հասանայ Ա . եւ էր վճ(իւ) . . . յիշխանութեան Տարսայիճի մեծ իշխանի եղ-

բաւրն Սմբատայ արքայի եւ ամուսնոյ իւրոյ Մինայ Խաթունին որ դուստր էր Զալալին Աղուանից արքայի . Եւ որ այս հաստատ վճիռս խափանել չանայ թէ յիմոց թէ յաւտարաց թէ յիշխանաց թէ ձեռնաւորաց , յերից սուրբ ժողովոցն նզովեալ եզիցի , ՅԺԸ հայրապետացն որոշեալ եզիցի , մասն ու բաժին զՅուդայի եւ զԿայէնին առցէ . թէ Տաճիկ յաւազ փոխի՝ յԱստուծոյ եւ յիւր ( փեղամբէրէն ) Մահմէտէ ապիղար եղիցի Ռ Ռ Ռ նալլաթ . Ե աւր Յայտնութեան . Ե աւր Ծառզարդարին . Գ Զատկին . Գ Վարդեւորին . Գ Սուրբ խաչին .

Յեկեղեցւոյ ( Տապանատան ) Ս . Գրիգորի յերի արձանի Մինայ Խաթունի գրեալ է և այս բան յամի 1312 .

Կամաւն Աստուծոյ . Ի հայրապետութեան Տէր Աւրբէլի Յովանէս Սիւնեաց եպիսկոպոսի ես Գրիգոր թոռն Դոփին գնեցի Սիւսն . . . քարոյ ըզՇատենց եւ զՄարգարտայ այգին ՌՇ (1500) սպիտակ , եւ ետու ի սուրբ ուխտս . վասն որոյ ի տարին ամուսնոյ իմոյ Ասիային դստեր արքայաշուք իշխանին Տարսայիճին պատարագ Գ աւր Փոխման Աստուածածնին , Ա Տեառնընդառաջին , Բ Բուն բարեկենդանի շաբաթ աւրն եւ կիւրակէն անխափան . կատարիչքն աւրհնին յԱստուծոյ եւ խափանիչքն դատին ի Տեառնէ . Թիւն ԶԿԱ .

Յօլովաղոյնք եւս են յիշատակք և արձանագրութիւնք նէ Բարայեանց ի խնդրոյ Զալալեան Սարգսի եպիսկոպոսի որ և հրատարակեացն . այլ ոչ գիտելով ստուգիկ կեղեցեացն , և ի խաչվէմնն , ընդօրինակեալք ի Յովհանն զզիրս իւրաքանչիւր , կարգեմք աստանօր միահամուռ .

Կամաւն Աստուծոյ . Ի տէրութեան իշխանաց իշխանի Սմբատայ եւ յառաջնորդութեան Գրիգորի ես Ալփասլան (եւ) Մխիթար քահանայ Աստուծոյ . . . եւ տվի զԴահեկոյ – քարոյ այգին Նախավկայի(ս) կախովն ? եւ գետովն . Գրիգոր եւ այլ միաբանք տվին Համբարձման աւրն զամենայն . . . . . տիրացու ? Դաւիթ . եւ եկեղեցիքս պատարագ Ը աւր . Ա Թամարին , Ե Ալփասլանին , Բ Դամային . կատարիչքն աւրհնին յԱստուծոյ .

Ալփասլանս այս յիշատակեալն է ի պատմէն :

† Գնեալք արեամբ գառին Աստուծոյ երկրպագողք սրբոյ Խաչիս զՄխիթար քահանայ հանդերձ ծնողաւք ( յիշեցէք ) .

† Կամաւն Աստուծոյ ես Խաթունս դուստր Խալայշահի միաբանեցայ սուրբ Նշանիս ու տվի Յ սպիտակ , ի յԱւփա այգի գնեցի մաւտ ի . . . Տէր Սարգիս ու միաբանք սահմանեցին Բ աւր պատարագ Խաթունիս .

† Կամաւն Աստուծոյ ես Գոնցէ թոռն Հասանայ դուստր Պարոն Խոստ .



րովիկայ միաբանեցայ սուրբ ուխտիս Նորավանից վասն բարութեան իշխանաց իշխանայ Բուրթէլին եւ տվի զԽանակեանի էգին Ամագինի հոգւոյն . միաբանք խոստացան Ձ պատարագ Յայտնութեան ութաւրացն . Բինձ . Բ Ամագինայ . Բ Հասանայ . Այս մեր թուղթն է . Թվին ՉԽԴ .

† Ես Աբաս կանգնեցի զԽաչս որգւոց իմոց Սմբատայ եւ Դաւթի որ կէսաւրիայ փոխեցան առ Քրիստոս եւ թողին ինձ կսկիծ . Ուք երկրպագէք յաղաւթս յիշեցէք . ամէն .

† ՉՏիրատուր եւ զամուսին իւր Խաթուն յիշեցէք . Թվին ՉԽ<sup>1</sup> .



61. Քանդակ դրան բուրթելաշէն եկեղեցոյ Նորավանից .

† ՉԽաչատուրն զԳրիգորն յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս .

† ՉՄնոն ապաշխարաւղս յիշեցէք . գրեալ է վերայ լուսամտի միոյ . որպէս յայլում ,

† Գթա Քրիստոս ի հոգի Գրիգորիս վարդապետին եւ ողորմիա .

† Գթա սուրբ Նշան Աստուծոյ<sup>2</sup> ի հոգիս Սարգսի եւ ի ծնաւղս նորա .

† Յանուն Աստուծոյ , ես Շատլոյս եկի ի Նորավանս , եւ եկեղեցւոյս միաբանեցայ ու զիմ ձեռատունկ այգին ի Սուրբ Նախավկայս տվի . Տէր Ստեփաննոս եւ միաբանք Հաստատեցին Աստուածածնի տաւնին Ա պատա-

<sup>1</sup> Յօրհանգիս Զաւառնի թիւն է ՄԻ (791) յայտնի սխալ . ինձ թուեցաւ ՉԽ (1291) , մանաւանդ եթէ Խաթունս այս իցէ գուտար վերոյգրեալ խաւաշակի :  
<sup>2</sup> Յօրհանգի Զաւառնի Նշանս :



րադ ինձ Շատլոյսի. Արդ որ մեր բանիս հակառակ կան ի մերոց կամ յաւտարաց կամ պարոնաց կամ ձեռնաւորաց հակառակին, ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի, իմ մեղացն պարտական եղիցի. Ի ԹՎին ԶԵ. հաստատ է.

† Կամաւն Աստուծոյ. Ես Ամիրայս թոռն Զուրջին եկի ի Նորավանս առաջի սուրբ Նշանիս՝ ու զՅաղթայ այգին որ ի Պարոն Տարսայիճէն գնեցի չորս հազար դրամաւ եւ Գ շորի տփի սուրբ ուխտիս վասն իմ հոգւոյս եւ իմ մաւրն Գոհար խաթունին. Տէր Ստեփաննոս (եւ միաբանք) կարգեցին Գ ժամ. Բ ինձ. Բ իմ մաւրն, Հռիփսիմեանց տաւնին. Արդ թէ ի մեր յետամնացաց կամ պարոնաց եւ յաւազաց հակառակել շանայ ու զիմ չորս հազար գրամն եւ զշորին ի Նորավանիցն (հանէ)... ի Սուրբ Երրորդութենէն եւ յերից սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի եւ բաժին զՅուդային առցէ, եւ մեր մեղացն պարտական եղիցի. Ի ԹՎին ԶԽ. Հաստատ է գիրս կամաւն Աստուծոյ.

† Կամաւն Աստուծոյ. Ես Հաջարի եւ ամուսինն իմ Մէլիք ոչ ունէպք զաւակ, երբ որ խոստացաք զմեր կանգնած երանելի սուրբ Նշանս եւ տուաք զմեր ձեռատունկ այգին ու չորս դուռն տուն մեր շինած ի Զվայ. Տէր Սարգիս եւ միաբանք հաստատեցին ի տարին Գ պատարագ. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ եւ խափանիչքն դատին ի Տեառնէ. ով որ հակառակ կայ ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի.

† Կամաւն Աստուծոյ. Ես Սանջար որդի Տանաղուին ոչ ունելով զաւակ յերկրի՝ ոտացայ ինձ զաւակ զսուրբ Նշան, եւ տուի յիմ հալալ հայրենեաց զՏանձիկ իւր սահմանաւքն եւ այգւոյն ի Նորավանքն. եւ Տէր Ստեփաննոս եւ միաբանք սահմանեցին ինձ ի տարին Ե ժամ. թէ որ խափանել շանայ, ի Սուրբ Երրորդութենէն որոչեալ եղիցի եւ մասն զՅուդային եւ զխաչահանուացն առցէ, մեր մեղացն պարտական եղիցի. Ի ԹՎին ԶԾԲ.

Ի վերայ այլեայլ բանդակազարդ խաչվիմաց գտանին յետագայ արձանք, յորոց հնագոյն է անթուականս այս.

Այս Նշան աւծելոյն Աստուծոյ կանգնեալ ի բարեխաւսութիւն իշխանաց իշխանի Հաւանայ որդւոյ Սենեքերիմայ արքայի որ կէսաւրեայ փոխեցաւ առ Քրիստոս զրկեալ ի հայրենի փառացն աւտար.....

† ԶԺԸ Թուին. Ես Դեղ կանգնեցի զԽաչս յիշատակ հոգւոյ իմոյ եւ բարեխաւսութիւն ապագայիս իւր ?.

1 Յիշէ զայս և գատմին (ՀԱ), որքէ Զուրջին կոչելով զԱմիրայ. «Եւ մեք սահմանեցաք նմա, առէ, հինգ պատարագ, եւ այլն»:

† Այս Գայիսոն մխեալ արեամբ աւծելոյն Յիսուսի, որով հարեալ խոցեցաւ գոռոզն անմարմին. եւ կանգնեցաւ հրամանաւ Սմբատի ի փրկութիւն որդւոյ իւրոյ Բուրթէլին, յիշեցէք.

Սմբատս այս հաւանօրէն արքայաշուք երէց եղբայրն է Տարսայիճի, որ պայազատեացն զնա:

† Ես Եղիշայ Խպիսկոպոս կանգնեցի զԽաչս ի փրկութիւն հաւրեղբար իմոյ Աւաբէլ Եպիսկոպոսին. ԹՎին ՌԺԸ.

Յայլում գեղեցիկ խաչի ձեւակերպեալ է քանդակ մազաղաթի ի ձեռս Փրկչին, և ի նմին գրեալ,

Ես եմ լոյս աշխարհի.

† Ի ԹՎիս ԶԺ. Ի կամս ողորմութեան Արարչին ես Բուրթէլ որդի էլիկումին որդւոյ մեծ Լիպարտին կանգնեցի զԽաչ աստուածընկալ սուրբ Նշանս մաւր իմոյ Թամթայ յիշատակ յաւիտենից. Աղաչեմք յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս.

† Զհայր Տեառն... յիշեցէք ի Քրիստոս.

Այսպէս գրեալ է ի խաչվիմի միում ագուցելոյ ի վեարձանաց՝ յայտնի թերացեալ յանուանցն. իսկ երկուքն իւր զրան եկեղեցւոյն, և յերկոցուն ի ստորեւ գրելոցս այն ողիկ արձանք հակիրճք են սոքա.

Զհայր Տեառն Սարգսի ղՅովսէփ յիշեցէք ի Քրիստոս.

† Զհայր Տեառն Ստեփաննոսի Տէր Գրիգոր յիշեցէք.

Արտաբոյ եկեղեցւոյ Ս. Կարապետին, առ աստիճանօք կամ սանդղօք (չորեքուսեք) վերելիցն՝ ի հարաւոյ կուսէ կայ փոքր տապան մի Օլիկ անուն մանկան. որ թուի նուազական կամ փաղաքական Ելիկում կամ Ալիկում անունն: Առ նմին և այլ փոքր տապան իվանէի որդւոյ Զեսարի՝ նոյնպէս ի տիւ մանկութեան վախճանելոյ, որոյ գիրն է շափաւ, այլ անթուական.

Եղիւր ծաղեալ Աւրբելեցի,  
Ողի Զեսար մեծ իշխանի.

Սակաւ քայլաչափ հեռի ի հարաւոյ կուսէ ժամատանն են այլ եւս դամբանք. ի միումն գրեալ է,

Կայ հանգուցեալ յայս տապանի  
Զքնաղ մանուկ զարմանալի,  
Որ իվանէ անուն կոչի.

Պարոն Մահեւանայ է.


(Տես զազգատոհմն Մահեւանեանց յէջ 168). - Մերձ ի սոսա են երկու խաչվեմք այսու արձանագրովք.

Կամաւն Աստուծոյ. Ես Արագոր որդի Ախթամարին կանգնեցի զԽաչս յաղագս մաւր իմոյ Ասփային. Որ երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս. ի ԹՎիս ԶԼԳ.

† Կամաւն Աստուծոյ. Ես Կուկոր որդի մեծ Ախթամարին կանգնեցի զԽաչս եղբար իմոյ Փալկայ որ կիսաւրեայ փոխեցաւ ի Քրիստոս. ԹՎ. ԶԼԴ.

Սակաւ ինչ քայլս ի բացեայ կիսականգուն կայ եր-  
րորդ եկեղեցի Նորավանիցս, որոյ անունն ոչ յայտնի,  
այլ Թուի նուիրեալ Ս . Աստուածածնի . դաստակերտ է  
Բուրթել իշխանի, ոչ ընդարձակ՝ այլ յոյժ վայելչակերտ  
և նորաձեւ աննման, կրկնայարկ գոյով, որպէս է նշմա-  
րել և ի պատկերիդ (Թիւ 59) . գեղեցիկ է տեսանելով և  
գոյն կոփածոյ դեղնորակ քարանցն: Ի վերայ մանր դը-  
րուագեալ դրան ներքնայարկին կայ քանդակ պատկեր

(Թիւ 61) Ս . Աստուածածնի՝ Բիսուս ի գրկին, բազմեալ  
ի բարձի . ի վերայ գլխոյն բարձրաքանդակ գրեալ «Մայր  
Աստուծոյ» . յաջմէ և յահեկէ Գարրիէլ և Միքայել  
հրեշտակապետք Թեւաքն հովանի առնելով Տիրուհւոյն:  
Բարաւորք դրանն եւս ունին պատկերս հրեշտակաց կամ  
Թռչնախառն մտացածին էակաց: Ի ներքոյ արեւելեան  
լուսամտին արտաքուստ գրեալ է անուն շինողին ի միջի  
դրուագեալ ծաղկանց, այսու օրինակաւ .



26. Երազիագիր անուն Բուրթելի .

### Բուրթել իշխանաց իշխան(ի) Տէր Աստուած աւգնէ .

Երեք կամ չորք աստիճանք սանդղոց իջուցեալ մու-  
ժանեն ի ներքս՝ ի սենեակ կամարակապ կամ ի ժա-  
մատուն, ի վերայ չորեցուն որմնամած սեռնց, երիւք  
պատուհանք . յերեսս որմոցն քանդակեալ են կեն-  
դանակերպք աւետարանչաց . ի յատակին են սակաւ  
դամբանք անվերնագիրք: Երկուստեք դրանն 13 կամ  
15 զոյգք քարեղէն յոյժ նեղ սանդղամատունք առ փոքր  
փոքր յիրար մտեցեալք՝ հանեն ի վերնայարկն նոյն-  
պէս կամարակապ նուրբ որմնայար սեռամբք, և մանրա-  
զարդ քանդակեալ գրամբ (Թիւ 60) . ի ճակատ աւագ սե-  
ղանոյն քանդակեալ կայ Քրիստոս ի վերայ չորեքկերպեան

աթոռոյ, ի միջի երկուց հրեշտակաց . ի վերոյ լուսամտին՝  
Աղանին խորհրդական, ծաղկահիւս տառիւք գրեալ  
Հոգին Սուրբ: Երկուստեք ընմին են և փոքրիկ մա-  
տրունք կամ խորանք, ի վերոյ միոյն քանդակեալ զուխ  
պսակաւոր: Ի վերոյ դրանն արտաքուստ քանդակեալ է  
պատկեր Քրիստոսի՝ աւետարան ի ձեռին, կարկառեալ  
զաջ օրհնարաչիս, և ի ներքոյ գրեալ Երեսու Քրիստոս .  
երկուստեք առաքեալքն Պետրոս եւ Պաւղոս գրով ա-  
նունանցն, և բազայք կամ արծուիք սաւառնաթեւք . իսկ  
ի վերոյ փրկչական պատկերին բարձրաքանդակ տառիւք  
գրեալ է յիշատակ Բուրթելի Թուին մեծին Տարսայիճի .

### Կամաւն Աստուծոյ եւ Պարոն Բուրթել իշխանաց իշխան եւ ամուսինն իմ Վախախ եւ որգիք իմ Բէշկէն եւ Իվանէ կանգնեցուք ղեկեղեցիս ի մեր հալալ արդեանց .

Առ մանրադրուագ հիւսիսային լուսամտին եւս քան-  
դակեալ է պատկեր Փրկչին աւետարանաւն և օրհնա-  
բաչիս աջով և երկուստեք հրեշտակաք: Գմբէթն՝ որոյ ի  
դէպ էր հրաշակերտ ինել ըստ պատշաճի ստորին չքնաղ  
մասանցն, ի սասանութենէ 1840 ամին կործանեալ ման-  
րեալ կայ ի յատակին՝ խառն ընդ փլածոյ որմոցն . ի վե-  
րայ միոյ կանգուն մնացելոյ սեան՝ երեւի քանդակ մո-  
րուեղ սրախոյր երկայնահանդերձ առն գօտեւորելոյ և  
ազուցելոյ հարթ կոյիկս, զահեակ ձեռն ի վայր արկեալ:  
Նմանատիպ և յայլում սեան կայ պատկեր, որ և ունի

ի ձեռին զձեւ եկեղեցւոյն, յայտ է թէ շինող նորին է,  
և ի միւսում եւս բազէակիր սնն . Են և արտաքոյ եկե-  
ղեցւոյն սինք խորտակեալք, միոյն ունելով զպատկեր  
Տիրամօր Աստուածորդւովն ի գրկի . յորոց գուշակի սիւ-  
նազարդ լինել գմբէթին: Ի խառն դերրկացն որ ի ներ-  
քոյ և որ արտաքոյ եկեղեցւոյս՝ հաւանօրէն գտանին և  
նշմարին իսկ ոչ սակաւ քանդակեալ վէմք և խաչարձանք .  
յորս նշանաւոր է արուեստակերտ պատկերաք նման վե-  
րոգրելոցն՝ խաչվէմն կանգնեալ ի Բուրթելէ վասն եղբօր  
իւրոյ, գրութեաւսս .

### Ես Պարոն Բուրթել կանգնեցի գլխաչս ի փրկութիւն հոգւոյ վասն եղ- բար իմ Բուղղային .

Թերեւս գինքեանս զհարազատսն (Բուրթել և Բուղ- դա) կերպարանն քանդակապատկերք երկուց աղօթկեր արանց ի ծուներ անկելոց առ ոտս Խաչին:

Արտաբոյ պարսպաց վանացն՝ յաւերածոց միջի սն.

աւեր կամ կիսաւեր մնայ փոքրիկ սենեակ մի Հիշրա- տուն կոչեցեալ, իբր 5-3 քայլ ի հարաւային որմն ա- գուցեալ կայ խաչվէ՛մ՝ այսու երկար և կարեւոր արձա- նագրութեամբ.

Յուսողն որ առ Աստուած եւ Սարգիս անարժան եպիսկոպոս կամաւ եւ հրամանաւ ամհնաւորհնեալ պարոնացն իմոց Տարսայիճին եղբար Սմբա- տայ արքայի եւ ամուսնոյ իւրոյ Մինայ Խաթունին եւ եղբարց իւրոց Լիբա- րիտի եւ Թաղային շինեցի զՀիշրատունս, եւ ետու հիշրաւնոցս գիւղ զԱւէշ իւր ամէն սահմանաւքն, եւ զերկու ակն ի ջաղացն յԱրփայ, եւ այգի զԱխթամարենց բաժին ի վանքս զԹումային, զՈվանէսին եւ զՊետրոսին, յԱկոուի՝ զՆճնաադոռնո?, ի Վէդէ՝ զՊարոնէ գնած բաժին հող, ի Նրքոյն զՄարակաս փորակ, յԱգարակի ձոր՝ Վարդոռուն, յԱ- գատին՝ զՃագոռն, Սարին՝ զԱկներ, յԱնապատ՝ զԹգեւնիկ. Որ զայսոց մուտքն ի հիւրերին պէտքն անց(ւ)որ աւտարքն եւ կամ ու- տելիքն ուտեն, պարոնացն աղաւթք երախտաւորացն աղաւթք եւ Աստուած ողորմեայ ասին. Յիշելով զիս եւ զիմ աշխատասէր Առաքելն. Որ յետ մեր զայս սահմանեալն... յոյս Հիւրատնէս հանել ջանայ կամ խափա- նել՝ ինքն յԱստուծոյ (գատի) եւ մեր մեղացն պարտական է.

Զպակասութիւն թուականի արձանիս՝ ընուն ա- նուանք Տարսայիճի և Մինայի, յայտնելով զվերջին քա- ոօրդ ԺԳ դարու, և զգեղեցիկ խնամածութիւն և զա- ուսաածնուութիւն շինողաց Հիշրատունն: Մարթ է կար- ծել զմի յեկեղեցեաց Նորավանից՝ սեփականազոյն Ա- մաղուայ, և իբրու առանձին վանք, կամ թէ նոյն ինքն Անապատն կոչեալ Վերին Նորավանք, որպէս գրի ի յիշատակարանի միում գրոց յամի 1329 և վկայի ի սին Վայոց ձոր գաւառի լինել և յիշխանութեան Պարոն Բուրթելի, առաջնորդ ունելով զԳիրիոն Բարունապետ՝ ստոր և այր Աստուծոյ կոչեցեալ և «սպասաւոր սուրբ » գերեզմանի Բարունապետին Դաւթի» (տես յէջ 134). բայց եկեղեցին կոչի Մայր շուշոյ և Ս. Սիոն, վասն ո- րոյ և քննութեան կարօտի:

73. Մինչև և հեռացեալ ի քաջանշան վայրացս և վանա- ցըս՝ կարեւոր համարիմ յուշ առնել, զի յետին յիշատակ բանիս եցոյց երկուս լինել աստանօր Նորավան, և Վերին կոչելով զմին՝ յայտ լինի երկրորդին լինել Ստորին կամ Ներքին, որ հաւանօրէն է նոյն ինքն հոշակաւոր մենա- օտանն խնամարկեալ յՈրբելանց յԱմաղու. յառաջ քան զայսոսիկ յիշեցաք զՆորավանս Գեղաքունեաց (յէջ 78), և յետոյ ուրեմն յիշեցի Նորավանք Բղենեաց, որ ի կէս Ժ դարու շինեալ է թուականէ սորին և յանուանց շի- նողացն յայտ է աներկբայ՝ զի «րիշ է միւս եւս (հին- գերորդ) Նորավանք, որոյ տեղի ոչ նշանակի, այլ շինո- ղըն և թուականն՝ ի վերջ կոյս Ժ դարուն: Եթէ էր այս մի ի զուգիցն Վերին և Ստորին Նորավանից (որոց հիմն- արկութիւն ոչ ցուցանի բացայայտ ի պատմէն Սիւ-

նեաց), զարմանք լինէին լուծիւն սորա կամ անգի- տութիւն. ապա յայտ է թէ զատ և որիշ էր յամենայն վերայդոնդ յիշեցելոց. սակայն դարձեալ ոչ փոքր զար- մանք են շիշել նորս զյետինս (զորմէ ահա ճառելոց եմք), և որոյ սկզբնաւորութիւն այնպէս նշանաւոր և զուգադէպ իմն է՝ որպէս Բղենոյ Նորավանիցն, զոգչիր և Ամաղուայն: Արդ զանծանօթս այս կամ զքննելի Նո- րավանս ծանուցանէ յիշատակագիր հոշակեալ փողոսկրա- պատ Աւետարանին Էջմիածնի, գրելոյ յամի 989. որ յետ մթին ինչ բանից յայտնէ՝ զի հօրեղբայր իւր Ստե- վանոս ի զարմէ Հայկազանց անտի Սիւնեաց «Թողեալ » զհայրենական շքեղաշքութիւնն, քանօն կրօնից միան- » ձանց եղեալ յերկրի, զանմարմնոցն բերեալ օրինակ՝ » նոցին եղեւ հաղորդ, թողով յերկրի իւրայոցս աշակեր- » տելոց՝ օրինակ գնացից կենաց պողոտային, և սան- » դուս ի վերինն Սիոնն՝ զանուանեալ Նորավանս, » հիմնարկեալ ի սմա զվկայարանն նոյնանուն իւր Սըր- » բոյ Նախավկային Ստեփաննոսի: Իսկ ես յետին և ա- » մենանուաստ Ստեփաննոս, մուրական կրօնաւոր և » անարժան քահանայ, նորին աշակերտ և եղբորորդի, » ոչ ըստ նորին օրինակի՝ այլ յոյժ մեղուցեալ, որ թէ- » պէտ եւ ըստ սին և անտի խաբկանաց կենցաղոյս » Հայկազնեա գոլ ստէին ցիս, այլ եմ ըստ ճմարտութեա- » նըն որում եսն վկայեմ ինձ, աննշան և վաթթար և » յետին քան զամենայն մարդիկ... Եւ արդ մեծաւ » զարմացմամբ ցանկացայ գրել զվսեմափայլ չորեք- » ծագեան զհոգեբուղիս տուոս սրբոց աւետարանչացս ի » զարդ գերարփի վայելութեան եկեղեցոյ:... Եւ արդ

» մի՛ դժ իշխեսցէ ի տանէն Աստուծոյ հեռացուցանել զսա  
 » իւր պատճառանք ի Նորավանհոց սուրբ եկեղեցւոյս. և  
 » թէ՛ որ յանդգնի որոշել զայս Աւետարանս ի սուրբ խո-  
 » րանէս, յափշտակողն ի փառաց Որդւոյն Աստուծոյ ու-  
 » բոշեալ լինի: . . . Եւ գրեցաւ յամի թուոյ Հայագանց  
 » ՆԼԸ, և ըստ թուոյ Հոռոմի ՉԽԲ, յիսմայելական բրու-  
 » նակալութեան ՅՆԹ<sup>1</sup>:

+ Տեառն Ստեփաննոսի է սուրբ Աւետարանս: Տա-  
 » ցէ զսա Տէր ի վայելումն մանկանց նոր Սիրովնի:»

Յետ իբր 300 ամաց (1173) Գոռոթի ոմն որդի Վահրամայ՝  
 գնեալ զայս աւետարան՝ տուեալ է ի Մաղարդի վանից  
 Ս. Ստեփանոս — Թողում ապագայի և ապագայից ըզ-  
 յուծումն խնդրոյս նոյնութեան կամ որիչութեան Նորա-  
 վանիցս, ի քնին առեալ և զյետին յիշատակն 1173 ամի.  
 յորում՝ եթէ չէն էր վանքն՝ ուր գրեալն է, առ նոյն ան-  
 շուշտ դարձուցանէր. զայն գնողն բարեպաշտ, և պատ-  
 միչն Սիւնեաց եցոյց զի յետ կիսոյ դարու այնր թուա-  
 կանի սկսեալ է վերաշինութիւն իւրոյ Նորավանիցն Ամա-  
 դուայ. և զի թէպէտ սորայս գլխաւոր եկեղեցի Ս. Կա-  
 րապետ կոչի յաճախ, այլ և Ս. Ստեփանոս, որպէս  
 շինեալն ի համանուն Հայկազնոյն, նա և հին եկեղեցի  
 գոլ նշանակի Ամադուայն:

Սակաւ ինչ հեռի ի Նորավանիցս ի հարաւոյ կուսէ ի  
 բարեբոյս ձորահովտին՝ կայ անկցորդ այլոյ շինուածոյ՝  
 սենեակ կամ մատուռն մի փոքր, ոչ հին, քարաշէն կը-  
 րամած կամարակապ, աւազան ի միջի՝ յոր հոսի նրբա-  
 ծորան ջուր բոշկարար համարեալ, և գան այցելուք յար-  
 բուռն և յօժումն: Ունիցի թերեւս դա զտեղի կամ շինեալ  
 իցէ առ յիշատակէ քաջահին Եկեղեցւոյ Ս. Փոկրասայ, զոր  
 յիշեցաք ի սկզբան տեղագրութեան վանիցս, (տես յէջ  
 184), և զի ջուրն այն « առնէր հրաշա զարմանալիս. »  
 » զի ամենայն անբուժելի ցաւք և անհնարինք ի մարդ-  
 » կանէ, գողութիւնք և բորոտութիւնք և վէրք բազ-  
 » մաժամանակեայ նեխեալք և ապականեալ, ի ժա-  
 » մանելն ի տեղին յայն հաւատովք և ի լուանալ ի ջու-  
 » րըն և յօժանելն ձիթով բոշկեալ լինէին. և թէ մա-  
 » հացու լինէր՝ առժամայն վախճանէր: Եւ վասն այսր  
 » մեծապէս լինէր հնչեալ համբաւ տեղւոյս ընդ ամե-  
 » նայն աշխարհ: — Ապա ի նուազել ժամանակաց. . .  
 » ի ՇԾԳ թուականին (1108) էր եպիսկոպոս ոմն ի  
 » վանս Յովհաննու՝ Յովանէս անուն, լցեալ ամենայն

» առաքինութեամբ և բոլորովին զգեցեալ զՔրիստոս,  
 » յազգէ ազնուական, որդի մեծափառ իշխանին Բա-  
 » ղաց Հասանայ. . . մեծ որդի մեծին Համուռնայ: Այս  
 » Յովհաննէս յետ աւերման իւրոյ աշխարհին՝ բազում  
 » ալէկոծեալ այսր անդր, եկն ի Վայոց ձոր դաւառ, և  
 » կամեցաւ բնակել ի Խորաձոր անապատին Նորավա-  
 » նից, մերձ անառիկ դղիկին Հրասեկայ բերդին, առ  
 » հիւազոր և մեծապառնչ եկեղեցւոյն Սրբոյ Կարապե-  
 » տին. և երթեալ յանդիման լինի մեծի արքային Պար-  
 » սից Մահմուտ սուլտանին, ծանօթանայ նմա և առնու-  
 » ի նմանէ փարման և մանչուր՝ վասն սուրբ տեղւոյն  
 » այնմ. համարձակ քնակէ ի նմա, ժողովեալ արս կրօ-  
 » նաւորս և ճգնազգեսաց, և հեռացուցանէ ի վայրիցն  
 » զամենայն աշխարհականս, և շրջապատիւ սահմանէ  
 » զվայրն ամենայն, կանգնելով զնշանն տէրունի, զի  
 » մի անցանեն ընդ այն կանայք և լկտի մարդիկ: Եւ  
 » առնու ի սահմանակցացն հողս և անդաստանս ի ժա-  
 » ունգութիւն եկեղեցւոյն՝ ի Գանձակեցեացն:» Յետ  
 այսոցիկ պատմի հարստահարութիւն բերդապահին Հը-  
 րասեկայ և քանդումն սորին (տ. յէջ 180):

Չերկոսին եւս տեղիքս՝ զՆորավանս և զԱնապատն Ա-  
 մադուայ, Տարսայիճ իշխան հանդերձ այլովք վանորէիւք  
 և նոցին վիճակք՝ տուեալ էր ի ժառանգութիւն որդւոյ  
 իւրոյ Ստեփաննոսի եպիսկոպոսի, որ իրաւամբ իսկ նըս-  
 տէր աստ իբրեւ յաթոռ եպիսկոպոսութեան կիսոյ մա-  
 սին Սիւնեաց, զոր և միացոյցն յետոյ, (որպէս գրեցաք  
 յիւրում տեղւոյ) և զտեղիս զայս որպէս սեփական հայ-  
 րենի կալուած՝ բազում խնամով յարդարեաց նա ինքն,  
 և ճոխացոյց կալուածովք, սեփականելով նմին զիւր  
 հայրենարածին գեօղոն, յորոց սակի զանձադինն Չուա  
 (169), և վանորայք Քարկոփ և Արատէս. և զստ յայ-  
 լոց նուիրաց՝ ընծայեաց և խաչ մի հրաշափառ, զոր յեր-  
 կրէն Արցախոյ բերեալ էին յայս դաւառ, և տեւաբն  
 Դլիննանք՝ առ կարօտութեան կամէին օտարացուցա-  
 նել. գնեաց ի նոցանէ Ստեփանոս 800 ոսկւոյ, և զպա-  
 հարանն դարձոյց ի նոսա ի հաչիւ 100 ոսկւոյ. և ինքն  
 շինեաց նոր պահարան յոսկւոյ և յարծաթոյ, շքեղա-  
 փայլ չորիւք մարգարտօք և հնգիւք մեծագին ծիրանա-  
 տեսիլ շափուղայիւք, որոց ընդ միջնոնն եղեալ զմասնն  
 կենարար փայտին՝ յաւել զրել ի թիկանց կուսէ նշան  
 բանից համառօտ:

**Այս աստուածորնկալ սուրբ Նշանս կազմեալ ի Տէր Ստեփաննոսէ Սիւ-  
 նեաց եպիսկոպոսէ, բնակեացէ ի յաւիտեան ի սուրբ եկեղեցւոյն Նորավանից.**

Արար միւս եւս մեծագոյն պահարան աղիւսաձեւ,  
 գրեալ ի նմա երկար յիշատակարանն: Եւ զի յամարայ-  
 նի տօթ անհնարին նեղէր զբնակիչս տեղւոյն, սահմա-

նեաց վասն եպիսկոպոսին և սպասաւորաց եկեղեցւոյն  
 « զԱրատէսի վանքն որ ի վերոյ Եղեգեաց. . . ամենայն  
 » շրջակայ սահմանքն և հոգեցատուր ժառանգութեամբ

<sup>1</sup> Հրատարակող յիշատակարանին ապագրութեամբ (առ Միխ-  
 թարեանս ի Վիեննա)(Strzygowski ի Byzantinische Denkma-  
 ler) անհամաձայն ասէ զերեսին թուականքս, և սխալէ ինքն,  
 զՀասանայ կարծելով Յուսաց թուական, որ ոչ է, այլ Հուովմայ  
 երկրորդ հազարեկին է, սկսելոյ յամի 248 Փրկչին, յոր յաւե-  
 լեալ զ'742 (2ԽԲ) լինի 989-90 թիւ Փրկչին՝ որ է ՆԼԸ, Հայոց-  
 իսկ զիսմայելական թուականն՝ գրիչ աւետարանին ոչ ի հե՛հե-

բայէ սկսանի (622) այլ յառաջոյ տե՛ քարոզութեան Մահմե՛տի,  
 որ է 610 ամ Փրկչին. յոր յաւելեալ զ'379 (8ՀԹ) աւա լինի  
 989-՝ՆԼԸ. և այսպէս միտքանին թուականք երեցուն եւս ազգաց:

2 Որ է այսպէս. Բամս կործանման աշխարհիս Հայոց,  
 ի դառն եւ ի դժնդակ ժամանակիս, յորում էր  
 թուականն 919 (1294) ի ժե յորեկինիս, յաշխար-



» բըն ի սուրբ եկեղեցիս », և այլն: Եւ յետ կարգաւորելոյ զայս ամենայն, գրեաց և կնքեաց զգիրս իւր Պատմութեանն Սիւնեաց յամի 1397, ի սոյն յայս « վանս » վսեմական և փառաքնակ ուխտիս Նորավանից, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս և աստուածակիր նշանացս, ի նժդեհ և ի դառնագաժան աւուրաբառս: Կեցեալ յետ այնորիկ աւելի քան զտասն ամ մինչեւ ի 1309 կամ 1310:

Ի տեղեաց անտի յիշեցելոց յարձանան՝ Տխարբ գիւղ թուի յարեւելակողմն հարաւոյ Ամաղուայ լինել և մերձասահման Գանձակայ. առ որով՝ պատմի, զի ի ժամանակս Յովհաննու եպիսկոպոսի Համուռնեանց « կին մի և մանուկ ստնդիայ անկեալ պատահմամբ ընդ մեծ Քարն » որ հանդէպ վանիցն ի Տխարբայ շինոյն. տեսեալ սըրբայն և կնքեալ նշանաւ խաչին հանդէպ, անվնասք մնացին և ամբողջ դարձան անդրէն ի տուն իւրեանց, և և աւելին. Տէր Յովհաննէս կայր ի յատակ քարիս, և երկու ձեռամբ ըմբռնեալ ապրեցոյց զմեզ »: — Համսարի գիւղ իցէ թերեւս Ամասրիա գիւղն Գեղաբունոյ. իսկ Ագարակի ծոր գիւղ և Աղբերիս ագարակ, հարկ է թէ ի մերձաւոր սահմանս Նորավանից իցեն: — Ազատ թուի Ազատակն որ ի կողմանս Բոր գեղջ: Այլ ինչ տեղիք, որպէս Ճաւաձոր, Աւէշ, Ակոռի, Տանձիկ, յիշեալ են յառաջագոյն: — Ի սկիզբն դարուս ժառանգութեամբ ունէր զտեղի Նորավանից Պետրոս Բեգ որդի Մելիք Սամ բէգի, հրովարտակաւ Ֆէթհայի շահի հատատեալ ի նոյն յամի 1813: Բայց զարդիս Ամաղու և վանքն մերձակից սահմանք՝ ստացուած են Ստեփանոսի Եղիազարեանց Երեւանեցոյ, և շատք ի հին կալուածոց աթոռոյն՝ Չուացի Հասանայի սուլթանի այլազգւոյ:

Ոչ հեռի ի կողմանցս և մերձ ի կնիշիկ գեօղս (180), ի վերայ ճանապարհին մատուռն մի է անշուք շինութեամբ՝ Տէրիխալ անուանեալ, յոր գան յուխտ: Անկ է հետազօ-

տել և ի վերնակողմն ձորոյն, ուր ոչ նշանակի ի քարտի և ոչ մի շէն, որպէս գրեալ է ոչ և ի բովանդակ ձորահովտիս. միայն ի ծայր արեւմտեան սահմանացն, առ եզերք իսկ մեծի գետոյն Արփայի՝ կայ Վերին Տանձիկ գիւղ, զի իբր կիսով փարսախաւ ստորեւ կայ Ստորին Տանձիկ յաջմէ գետոյն, ոչ նշանակեալ ի հին Յուցակին, այլ յիշեալ յարձանագրի անդ Սանջարի որդոյ Տանաղուի, որ իբրեւ տէր տեղոյն ետ զայն ի կալուած Նորավանից յամի 1303 ի ձեռն պատմչին Ստեփանոսի: Այժմեան բնակիչք երկոցուն եւս գիւղիցս են սյրազգիք մահմէտականք, իբրեւ տունք 60: Ի միջոցի երկոցուն՝ յաջակողմն գետոյն՝ է անձաւաձեւ սոր մեծ՝ ի բունութենէ ջուրց փորեալ, զոր ուս միկն համարի գոմս ձիոյ Քէօրօղլու դիւցազին և երգչի: Չերեւին ինչ նշխարք հնութեան և եկեղեցեաց ի գիւղքս, այլ աւերակք ի քարակտուր մի յարեւմուտս նոցին, ուր համարի հինն Տանձիկ, թէպէտ և ոչ իսկ անդ յայտնեցաւ նշանաւոր ինչ. բայց բնակքն մահմէտականք պատուեն տեղի մի իբրեւ գերեզման առն սրբազանի՝ ի միջի ծառոց թեղնեաց, զորս և զգուշանան հատանել՝ նուիրականս համարելով: — Մերձ ի Տանձիկ ընդ կողմն Արփայի՝ ծծմբահոտ ջրոյ աղբիւր մի է. իսկ յարեւելից կուսէ (և ի Մտ. Ամաղուաձորոյ) ամբառնան քարաժայռք, յորոց երկուք մերձ ի գետն Արփա՝ ունին ի գազաթան ջրամբար և աւերակս բերդի և բնակութեանց կրաշաղախ քարամբք. մին կոչի Վէյսայի գայէսի, միւսն իռլ գարառաջ գայէսի (Բերդ երից եղբարց): Մի՛ այսորիկ արդեօք իցեն մնացուած քաղաքաւոր բերդիցն Վայոց և Հրասեկայ, և Անաստեոս բերդ: — Դոյզն ինչ վերագոյն քան զՎերին Տանձիկ յաջմէ Արփայի պատուեն բնակիչք կողմանցն և մահմէտականք վէմ մի սեւացեալ ի ծխոյ նուիրաց, զի համարին ընդ նովաւ եղեալ զճգնարան Յովրայ, և զքարացեալ ճճիս բրածոյիցն՝ անկածս ի վերաց նորին. և այս՝ քանզի Օստեր կոչի կողմն այն, որպէս թէ իցէ Աւսիզն հայրենիք համբերող նահապետին:

Բակալութեան Քեղաթու ղանին, ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի եւ ի Թագաւորութեան վրաց Գաւթի, յիշխանութեան այսմ նախաճի ամենօրինեալ զարմիցն Ելիկումին եւ եղբարց իւր, Ես յոգնամեղ պարտաւորս Տէր Ստեփաննոս՝ Սիւնեաց եպիսկոպոս, որդի մեծափառ իշխանին Տարսայիճին, առաջնորդ վսեմական եւ աշխարհադէտ տանցս Տաթեւոյ եւ Նորավանից, վերին տեսչութեամբն պատահեալ անպատու մարգելացս Աստուածընկալ սուրբ Նշանիս. եւ տեսեալ ի սմա զներկուած արեանն Յիսուսի, զոր բերեալ էին ի գաւառէն Արծախայ, եւաց յիս տարփումն սաստիկ եւ զնեցի զսա ի բուն հայրենատէրանցն՝ ի Թոռանցն Դիւնայ 500 դահեկանի՝ միագլուխ ի յայլ բազում պարգեւացն, զոր վասն դառն եւ չար

կարեացն եւ պարտուցն իւրեանց մեծայօժար կամաք ծախեցին մեզ: Եւ մեք առեալ զարդարեցաք յոսկւոյ սրբոյ եւ յականց պատուականաց՝ նախ գիտալն եւ ապա զպահարանն, ի յոյս ի բարեխաւս առ Քրիստոս վասն եղկելի հոգւոյս. Թերեւս գտից ողորմութիւն յանաչառ ատենին: Եւ ընծայեցի զսասուրբ եւ գերափառ ուխտիս Նորավանից հայրենի դամբարանիս մեր: Թէ ոք նենգել կամ հանել ջանայ զսա աստի՝ ընդ կայենի եւ Յուդայի եւ Արիոսի դատեսցի, յերկնաւորաց եւ յերկրաւորաց եւ յամենայն Սրբոց նզովեալ եղիցի:

Արդ յիշեցէք զիս եւ զեղբարսն իմ զարիւ եւ զհաւոր իշխանսն, զԵլիկումն եւ զԼիպարիտն եւ զայլ եղբարսն եւ զբարի քոյրն իմ զՄամբանն. եւ դուք յիշեալ իջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն:

Մ Ղ Ո Ի Կ



**ՄԻՋԱԿԻ** այլոցն կայ զահանիստս այս գաւառ տեարց Սիւնեաց, մասամբ միայն հիւսիսոյ սահմանորդ գոլով Մարայ՝ երկրին Արցախոյ յարեւմտից ունելով զՎայոց ձոր և ի Նստորեւ զՇահուկ, ի հարաւոյ՝ զԵրնջակ և զԱրեւիս, յարեւելից՝ զԲաղս, զՀարանդ և զԱղահէճք։ Ընդարձակ է, որպէս վայել իսկ էր լինել գլխաւորի գաւառաց աշխարհին, այլ արդ գրեթէ կիսով մասամբ չափ՝ հիւսիսայնովն՝ ամայի և անշէն և անծանօթ իսկ. զի և ոչ մի գետը կամ հանգրուան նշանակի անդ և ի մեծի աշխարհացոյց քարտի, այլ և մեծատարած քարուտ կամ առապարախտ երկիր մի բարձր Չինկի կոչեցեալ, լճակք չորք կա՛հ հինգ ի միջին, Ալա կեօլ կամ Ալլահ կեօլ անուանեալք, նմանեալ այսու համարուն սահմանորդացն, ձորակին Սոթից և Մարայ որովք միանգամայն արժանի է քննութեան երկրաբանից. բուցէ մեծի իրիք ժողովոյ ջուրց աւազան եղեալ ի վաղ և յանյիշատակ ժամանակս, զի և ոչ լերինք նշանակին ի նմին, բայց միայն ի սահմանածայրսն. Թերեւս և ի սակս այսպիսի դրից երկրին չըլապտտելոյ ի լերանց և խորանիստ գոլոյ ի միջին՝ ասիցէ ուրեմըն պատմիչն, յիշելով զանուշահոտութիւն յուրեալ ի նշխարաց սրբոց և լցեալ «գամենայն զիտրակ գաւառին»։

Սահմանորդ լերինքն այնպիսի անջատք՝ յարեւմտից հիւսիսոյ են՝ Տէփե-կեօղիշ (Ուղտու ակն), Թերեւս նոյն կոչեցեալ և Այ-չինկի. Մոշտրոքոյիան?, յոր անուն է և վտակ և թուի ածանցեալ յանուանէ Միտր գեղը. ի սոցանէ բղխեն վտակք ինչ Արփայ գետոյ որ երթայ ընդ արեւմուտս, և Պազարչայ որ ընդ արեւելս հարաւոյ. — ի հիւսիսակողմն ձգին Մոշտրոքեան բարձր լերինք 11180՝ անյրպետք Արցախոյ՝ որ ընդունի ի նոցունց զվտակս Տրտուական գետոյն (Թարթաւ), որ երթայ ընդ

հիւսիս. իսկ ընդ հարաւ արեւելախառն իջանէ Հագարի՝ զուգակցան Բարկոչաւաւ, որք են գլխաւորք գետոց Սիւնեաց։ Յարեւելակողմանն՝ ի սահմանակցութեան Աղահէճի են բարձր բարձր լերինք Գզրլ-պողազ (կարմիր կապան) և Գրչալի և Գզրլքիէ, մին 11066՝, միւսն 10370՝. որոց ի հարաւոյ միջասահման Մղկոյ և Աղահէճի՝ Խորտր տաղ, Գրչալի քիփե և բարձրագոյնն Քէչալ տաղ որ և Ըչրիլը՝ Փոքր և Մեծ 10976՝, ի միջի Բարկուշատայ և Հագարու։ Յարեւմտակողմն բարձրաւանդակին՝ Քէքի տաղ և երկայնածիփ պար Գրչալ-տաղ լերանց, անջրպետք Սոթից, Վայոցձորոյ և Մղկոյ։ ի միջասահմանի արեւելեան կողմանն են Քեւայիլի և Այրիլի տաղ?։ յետինս հաւանորէն է Արագչի լեռն յիշատակեալ ի նախնեաց. ընդ մէջ երկոցուն սոցա տարածեալ ընդ արեւելս Ագ տաղ, Շոքար տաղ. — ի հարաւոյ արեւմտից՝ Սայվարդի 10000՝, Օրածիւն?, Չիրախլի. և ի հարաւոյ՝ Տեփրի?, Դարոշ գայս. — ի հարաւոյ արեւելից բարձրն կամպի կամ Դանկելոռ լեռան, 10, 800՝, իբրեւ երկու փարսախաւ հեռի ի Տաթեւոյ։ — Արեւելեան սահման Մղկոյ անստոյգ է, և անյայտ մեզ բարձունքն անյրպետք ընդ նա և ընդ Հարանդ և ընդ Աղահէճ։

Չամայի երկիրս այս զատուցանէ ի հարաւոյ կուսէ գետ մի մեծ. զոր՝ քանզի բղխէ ի գաւառի աստ և ի սըմին խաղայ կիսով չափ և աւելի, արժան էր կոչել Մղկոյ գետ, մանաւանդ եթէ և արժան իցէ լսել հին աշխարհագրին, որ ասէ վասն գաւառաց Սիւնեաց ունել իւրաքանչիւր. զիւր գետ, և յուելու առանձնակի, « և Ա » դաւնոյ գետ ». որ ոչ գիտեմ վերոյիշեալս այս իցէ եթէ այլ գետ. զի թէպէտ յիլի և ի պատմութեան գետն Աղանոյ, այլ ոչ քաջ որոյի կողմն նորին. իսկ յայժմուս գետն այն մեծ որ ի գաւառիս հասարակօրէն Պազարչայ անուամբ կոչի. և արտաքոյ նորին անցեալ ի Հարանդ և ի կովսական՝ կոչի Բարկոչաւ, և խառնի ընդ հզօրագունի եւս գետոյ՝ Հագարոշ. բայց և յանուն զըլ-

խաւոր շինից ի սահմանս նոցին՝ կոչի Որոտնայ գետ, Հաղիձորոս գետ, և այլն: Աշխարհեցաքի վեր անդր զական աղբերս նորին մերձաւորս գետոյն Վայոցձորոյ Արփայի յարեւմտից, և Տրտուի յարեւելից հիւսիսոյ. ուստի և ընդունի ի հարաւոյ Մարայ երկրին ոչ սակաւ գետաւորս, յորոց հզօրագոյն Մոսիսորոյն: յորոյ յաջմէն (յարեւմտից) խաղայ ընդ անձուկ ձորակ (որպէս և սա իսկ) Պարզը վտակ յանուն Չինարած գեղը գաւառիս. յահեկէն՝ Գեղի-սոս. համախառնութեամբ սոցին և այլոց բազմաց վարարեալ գետոյն՝ կոչի յայնմհետէ Պազար չայ. յետ այնր ընդունի յայսմ կողմանէ՝ որ է ձախակողմն իւր և հիւսիսային, գետակ մի Երաղիսիւնէի? գրեալ յաշխարհացոց քարտի (Երաղը սոս?), որ փոքր մի մերձաձայն է Ալլախ անուան տրեւելեան մասին Եղկաց. - անդրագոյն ի սահմանին Հարանդայ հզօրագոյն եւս գետակ, զոր ի դէպ է կոչել Կորէս յանուն մեծի աւանին՝ առ որով անցանէ. յետ այնր՝ զի անձուկ միջազետք են սորա և Հազարու գետոյ՝ ոչ ունին և օժանդակս յայնմ մասին: Իսկ յաջմէ կողմանէ յառաջ քան զխառնուրդս վերոյգրեալ գետակաց ընդունի վտակս մանունս, և ապա զԱրագի գետակն, և այլ եւս վտակս. յետ որոց մեծագոյնս, զՍիսիանոս, որ առ Ոյժաւ թափի ի գետն, օժանդակ իւր առեալ զԱյրիչայ առ Կիրակոսիկ գիւղիւ, զՆորոս կամ Գետարաղոս գետակն՝ որոյ բերան մերձ է յՈրոտն, և զՏարեւոյ Նուրն՝ որ ընդ մէջ անցեալ գեղին և վանացն՝ առ Սատանայի կամըրլու թափի ի գետն: Արտաբոյ Եղկայ՝ ի Հարանդ՝ զխաւոր օժանդակ գետոյն է Չեռոս գետակն: - Ի հարաւային արեւելեան սահմանածայրս գաւառիս ընդ մէջ մեծի գետոյն և Կորէս գետակի՝ կան ընկեր մանունք, և աղբերք վիմարուղիք, որպէս և վերագոյն ի սահմանակցութեան Ազահէճի: - Ի թիւս շինից և տեղեաց Եղկայ հարկատուաց եկեղեցոյն՝ դասին և Ապարանից գետ, Ուտական գետ, Գիմական գետ, որք կարծեցուցանեն գետառուս մանունս, յորոց որոսյ ձկանցն՝ մասն ելանէր եկեղեցոյ: - Բաց ի նախայիշեալ մանր լճակաց (Ալակէօլ) բարձրաւանդակ երկրին, ի փոքու եւս բարձրատափի՝ յարեւելից հարաւոյ նոցին և ի հիւսիսոյ Ղըրիլը լեռին՝ մեծագոյն քան զնոսին կայ լիճ, Դարա կիօլ անուն, յ'8038՝ բարձու, թերեւս ի հրաբխային ներգործութեանց գոգացեալ, զի այնպիսի են երկրաբանական կազմած կամ տարերք գետնոյն, և ձեւ իսկ լճին բոլորակ:

Հարաւակողմն գետոյն Եղկոյ և բովանդակ գաւառին, մանաւանդ արեւելեան մասն, գետահովիտ Տաթեւոյ, Լորու, և այլն, բարգաւաճ է բուսարեքութեամբ, քաղաքեալ աղբերք և վտակք, որոց և ծործորք անձուկք և դժուարագնացք՝ յաւելուն զահեղախառն գեղեցկութիւն վայրուցն. այլ մանրամասն դիտնական քննութիւն և ծանօթութիւն բնութեան նոցին չէ քաջայայտ, զի սակաւուց եւրոպէացի անցորդաց հանդիպեալ է կողմանցս այսոցիկ, և Ռատտէ՝ որ հերու (1890) չրջէր բնագնութեամբ ի Գարապաղ՝ յաւէտ զըջակայ գաւառաց քան զԵղկոյ երկրին տայ ծանօթս:

75. Վասն կարգի և անուան գաւառիս համառօտիւ ճշգրտէ պատմիչն Սիւնեաց. « Որ ունի, ասէ, զբուն գահ

» իշխանացն և հայրապետացն՝ Եղոնի գաւառ, անուանեալ ի Եղկայ գաւառապետէ »: Վասն որոյ և առաջին գաւառաց աշխարհին դասի ի Յուցակի անդ հարկատուաց եկեղեցոյն: Ո՞ր էր գաւառապետն այն և յորում ժամանակի, ոչ է յայտ, բայց չիք երկբայել եթէ ի Հայկազանց անտի իցէ և ի Սիսակեանց, յառաջ քան զԱրշակունիս. անունն ստուգիւ թուի Եղուկ քան Եղուակ, որպէս կարծեցաւ ոմանց, և հոլովի Եղկոյ և Եղուկայ, գրի և յոգնաբար Եղուկը: Եւ զի սա էր բուն գահ Սիւնեաց, ապա և յատկաբար կոչի յոմանց ի նախնեաց Սիսիւթ և Սիսուս, գաւառ, զոր յետիւք այլայլեալ կոչեցին Սիսուս, որպէս ցարդ անուանի մի կամ երկու ի գիւղից գլխոյ գաւառին, առ որովք խնդրելի է և Երաղկայ գիւղ, որպէս կարգ անուանց գիւղորայից Յուցակին պահանջէ, ունելով յայտնապէս զանուն գաւառապետին հնոյ կամ զնահապետի բնակչաց երկրին, թէպէտ յետոյ տեարք Սիւնեաց նստէին ի Շաղատ, որ և այն չէ հեռի ի սոցանէ: Ի դէպ է թէ ի յետին դարս, յորս յաւէտ յիշի այս անուն Սիսիան՝ ընդարձակեալ ձգիցի և անդր քան զսահմանս Եղկայ, որպէս մի ի յետին պատմիչաց մերոց անցելոյ դարու (Արրահամ կաթողիկոս) թուէ գաւառս, « Գանձասար, Ղարան, Սիսիան », և այլն. և ժամանակակից նմին պատմիչ պատերազմաց Գաւթի Բէկի, յաճախ կոչէ Սիսիան գաւառ և Տուն Սիսիանայ, բովանդակելով ի նոյն և զարտաբոյ Եղկոյ վիճակս: Զհնութիւն և զգլխաւորութիւն անուանն յայտ առնէ և Գահնամակն Ներսիսեան, ըստ աւանդութեան Մեսրոպայ. Երիցու ի Ժ դարու, որ ի շարս յընահոյլ բարձից իշխանաց կամ տոհմից Հայոց՝ կարգէ ի զՍիսանեանք. իսկ պատմիչն Սիւնեաց՝ զնախահայր նոցին կամ զառաջնորդ՝ ի սկիզբն Արշակունեաց հարստութեան հանէ, յասելն զՎաղարշակայ կարգել զօրավարս արեւելեան բանակին Հայոց զտեարս Սիւնեաց, « որոյ » անուն առաջնոյն Սիսան կոչիւր »: - Ի Յուցակի անուանց հարկատու գիւղորէիցն յերկուս երեւի վիճակս տրոհեալ գաւառիս, ի բուն Եղոնի և յ'ԱՅԱՅԻ՝ զի առանձինն կարգին առաջնոյն չէք 78 և երկրորդին 26. բայց առ պատմիչս ոչ ուրեք լաի յետին անունք, ոչ առ հինս և ոչ առ նորս. սակայն յայտ է թէ յառաջ քան զՕրբելեանն ճանաչիւր բաժինդ այդ, զի յարեալ է ըզհետ պատմութեանն զհինն զայն վիճակագիր. և անունք գիւղից ինչ նորին գուշակին արեւելեան մասն լինել գաւառին ի ձախակողմն գետոյն, ի յետին ժամանակս կամ յայլազգեաց կոչեցիւն Պազարքէնս: Փոքր մասն մի ևս Եղկայ առանձինն ի յետին դարս կոչի ՎԵՐԻՆ ԶՈՐ, և է գետաձորակն Լորու՝ ընդ մէջ Տաթեւու և Այրիչայի. յորում՝ վիճակագիր ոմն կրսեր քան ըզպատմիչն՝ եօթն գեօղս թուէ հարկատուս եկեղեցոյն յիւրում ժամանակի, և 30 ի Սիսիան, զի այս անուն լըսի առ նմա փոխանակ Եղկոյ. բայց կիսով չափ անուանցըն նորք են, այսինքն ոչ գտանին ի հին Յուցակին, վասն որոյ և զհետ նոցին յարեմք զայնոսիկ ի ստորեւ: Եւ Յանուն հոշակաւոր գեղին Որոտան կոչին ի յետին դարս սահմանք իւր ԳԱԻԱՌ ՈՐՈՏԱՆ:

Գանդի աթոռ տեարց Սիւնեաց էր գաւառս Եղկոյ,

ոչ էր ի դէպ առանձինն ունել իշխանս . և որպէս սոցա՝ նոյն և մեծի եպիսկոպոսի կամ եպիսկոպոսապետին Սիւնեաց աթոռ էր ի սմին , ի Շաղատն քաղաքաւանի , որոյ եւ երիցունք նախապատիւք և նախաթոռք կարգեցան հանուրց երիցանց Սիւնեաց ի Բարկայ՝ ի հօրէն ուրացելոյն Վասակայ , յելս Դ դարու , և նոյն կարգ հանդերձ այլովք՝ զոր սահմանեաց Հայրն Տիրոտ եպիսկոպոս , ասի հաստատ պահեալ ցամա 300 . յորմէ ի դէպ է կարծել եթէ ցայնքան ժամանակս անդ կայր մնայր աթոռն եպիսկոպոսական , և յայնմհետէ փոխադրեցաւ այլուր ընդ իշխանական գահուն . և որպէս Թուականդ ի Բարկայ ց՝ 300 ամ հասանէ ի սկիզբն Ը դարու , ի դէպ գայ ժամանակին Սեւաղայ Աւարանչաւնն կոչեցելոյ այլազգոյ՝ բունացելոյ անդ ի Շաղատ , յորմէ հալածեացն զնա իշխանն Վասակ յամի 737 . և եթէ ոչ ի սմին ժամանակի՝ այլ գէթ ի սկիզբն յաջորդ դարու՝ միւս Վասակ նահապետ նորոց պայազատ Սիւնեաց՝ հաստատեալ էր զգահն ի Վայոց ձոր . ապա և եպիսկոպոսական աթոռն բարձաւ ի Շաղատոյ , և յետ ոչ բազում ժամանակի հաստատեցաւ ի Տաթեւ . բայց վասն առաջին պատուին տակաւին մեծարեալ երեւի Մղուկ և յեկեղեցական տեսութեան , զի յիշի նորա Քորեպիսկոպոս Մանկիկ անուն յամի 841 :

Ոչ միայն նախագահ աթոռ Սիւնեաց եպիսկոպոսաց էր աստանօր , այլ և հռչակեալ վարդապետարանն Սիւնեաց . սակայն՝ որպիսի ինչ էր , նոյն իսկ եպիսկոպոսարանին կղերանոց՝ եթէ զատ ուսումնարան , ոչ ունիմ ասել ստուգիւ . աւանդութիւնք բանից պատմին Սիւնեաց և այլոց ոմանց՝ Թուեցուցանեն անգոտին Սրբոց Թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրոպայ հաստատեալ կամ հաւանեալ նախապատուութեան վարժարանի կամ կղերանոցի Սիւնեաց քան զհանուրց Հայոց , և կոչեցեալ յայնմհետէ վարդապետարան Սիւնեաց , և գերահռչակեալ բնաւից ցղարս երիս կամ շորս . զի ոչ միայն ի Ե և Զ դարս հռչակին վարդապետք նորա և Քերթոյք , Պետրոս և Վրդանէս , այլ և ի սկիզբն Էն , յորում՝ որպէս յիշեցաք ի ներածութեան գրոցս , կոմիտաս կաթողիկոս առաքեաց զեղբորորդին իւր Թէոդորոս ի վարժս ուսմանց , և ի սկիզբն Ըն , զերագոյնն ի մաստասիրաց աշխարհին Ստեփանոս եպիսկոպոս անդ ուսաւ նախ առ ոտս Մովսիսի եպիսկոպոսի . և ի կէս այնր դարու առ Յովակիմաւ եպիսկոպոսի և Ատրներսեհիւ տերամբաշխարհին , « զվարդապետութեանն Սիւնեաց » զնախագահութեանն զնիստ՝ հրամայեցին Գէորգեայ » Շաղատայ վարդապետի . ընդ որ յոյժ զչարեալ Փա . » նոսի Ոյժեցոյ Սիոնի վանականի՝ ակամայ գնաց , և ոչ » ինչ ումեք ի ժողովոյն փոյթ զայնմանէ լինէր » : Բայց յելս յաջորդ դարուն ի հաստատել եպիսկոպոսարանի Սիւնեաց ի Տաթեւ՝ անդր փոխեցաւ , կամ այն եղեւ զԸ . խաւոր վարդապետարան աթոռ աշխարհին , ըստ ասից պատմին . որ և ժովացեալ փիլիսոփայիչք համարի զայն . անդ Թերեւս ուսեալ էր ի սկիզբն ԺԱ դարու և Տիրատուր կապանեցի , զոր ընդ հռչակագոյն վարդապետս ժամանակին տարաւ ընդ իւր ի կ . Պօլիս՝ Պետրոս Գե . տաղարձ : Բայց որ ինչ զՏաթեւոյ է՝ գտցի ի նորին տեղագրութեան :

76. Գեօղք և շէնք Մղկայ գաւառի և յարակցին Ալախայ , ըստ հին Յուցակի եկեղեցոյ Սիւնեաց , են այստեղիկ , հանդերձ բաժիւ հարկին կամ տրոցն .

Նորիք	12
Տաթեւ	10
Յուր	6
Ծացարդ	10
Խովիտ	8
Տաշու	8
Հարժիք	10
Արիտ	6
Բերդկաներեչի	6
Արծիւ	6
Խոսուրք	8
Լծէն	6
Ախնէն	8
Որոսն	10
Բերդն	10
Ոպնի	6
Երիծ	6
Երեմի	6
Ըղուերձ	10
Մոզոյք	10
Մրուց	8
Լոր	12
Մարդակայր	6
Մշկածոր	6
Տատան	6
Սապատածոր	8
Մազագնի	6
Փոքր Ոյծ	8
Տորնիք	12
Տորունիք	10
Տորունկայ	8
Տիւունիք	12
Արծի	12
Թործողու	6
Դաստակերտ	10
Գրուակ	6
Մեծիք	12
Պիսակ	6
Արաթմարաթ	6
Խուրեք	6
Յողունի	10
Մորենի	12
Արեւէս	7
Բնունիք	6
Արժէք	10
Աթղէք	12
Ծննի	12
Որդիքիք	12
Ոգիկի	10
Ըշտկամայրի	12
Գետակից	12
Բղեան	6

Խանք	13	Տնկուլափոս
Ործաքերդ	13	Բարձրաշէն
Ծաղկայ	13	Սղափի
Կորովի	13	Կարմիրշէն
Հեղձի	13	Կլեւանց
Կիրակոսիկ	13	Բլեկանց
Բունակոթ	13	Արուճըլուն
Ագարակիկ	7	Խունձուղ
Կամավանք	10	Փուլ
Գայլոց վանք	10	Բերդատակ
Վասակակերտ	13	Պագարչայ
Մուգք	10	Խարձանց
Շաղատ	13	Մխուր
Շաղատոյ վանք	6	Գեթեվանց (? Գոթածոր)
Ապարանից գետ	10	Շինամաղ
Շոքար	10	Շինատեղ
Մեծածոր	10	Սղանձ
Փեթականոց	6	Սուարանց
Վաղատին	13	Սլէլուա
Աղիտու	13	Ալխամետան
Գովեր	7	Տանձատափ
Կուրավանք	7	
Կաքաւարտի	13	
<b>Բ. ՅԱՅԱՅ</b>		
Քաղատակ	13	
Շաքէ	13	
Շաքէի վանք	13	
Լերին վանք	13	
Դաստակերտ	10	
Անգեղակոթ	10	
Քարունջ	10	
Բորտի (Ներքին)	13	
Բորտի վերին	13	
Գղվրձոտ	6	
Բիւրոտի վանք	6	
Իւղոտամաղք	13	
Սարափարախ	6	
Ուռական գետ	10	
Գինական գետ	10	
Գոթածոր Ներքին	7	
— վերին	10	
Որդանմայր	10	
Ականք	10	
Չկնարած	13	
Մեծածոր միւս	13	
Չղափայրեանք	10	
Կոռոշոփոր	7	
Սապատածոր	8	
Բողոտիջուր	6	

Ոչ սակաւք ի գիւղորայիցս ծանօթք են և այժմ ա-  
 նուամբ և դրիւք. փոխանակ այլոցն բազմաց նշանակին  
 արդ այլ գետիք՝ Թերեւս անուամբ եւեթ օտարք և  
 նորք, այլ իսկապէս նոյնք ընդ յիշեցելոցն ի ցանկիս,  
 զորս ստուգեսցէ արդեօք ժամանակն, ընդ նոսին և ըզ-  
 սահմանս երկոցուն բաժնից դաւառիս, Մզկայ և Այլա-  
 խայ. զոր մեր ոչ կարելով որոշել, որպէս և ոչ զնորա-  
 գոյն բաժանմունս Սիսիանու, Վերիձորոյ և այլոց, ըստ  
 սովորութեան մերում տեղագրեսցուք ըստ հովտաց և  
 ըստ ընթացից գետոց երկրին:

77. Միակ շինավայրք՝ Թէ և ամայիք՝ նշանակին արդ  
 առ խառնորդօք Պալըզը և Մխուր վտակաց ի բուն սկիզ-  
 բըն գետոյն Պագար-չայի, յորոյ անուն կոչի առաջինն  
 յերկոցուն անտի գիւղից ամայեաց, Պագարչայ կամ  
 Պագարքէնտ, իբրեւ յ'ձ100 Չ. բարձու. զոր և հարկ է  
 ճանաչել իբր զլուիս հիւսիսագոյն գիւղից վիճակին, զի  
 տուեալ է զանուն իւր բովանդակ գետոյն մեծի. և ցան-  
 կալի առնէ զյայտութիւն հնոյ անուան, որ իցէ Թերեւս  
 Վասակակերտ, յայս ձեւ (Պագար) Թեքեալ ի Թուր-  
 քաց. զի և ըստ դասակարգութեան գիւղորայից Յու-  
 ցակին՝ այսմ կողման պատշաճի հինդ այդ գիւղ: Թերեւս  
 ոչ միայն գլխաւոր շէն էր կողմանցս, այլ և յիւր անուն  
 կոչէին սօքա. զի գերկոսին եւս մարթ է իմանալ ի յիշա-  
 տակի անդ ազուարանն վանականի, որ «ատմէ, «Չի  
 » եկն Մուրատ խանն ի Շամախոյ, որդի Յաղուպ բէ-  
 » կին, և շուեալ եկն (յամի 1488-9) ի Բագարչայն.  
 » էած հալածումն ի վերայ քրիստոնէից. տանջէր զաշ-  
 » խարհականս և զկարգաւորքս, և ասէր. Տուք զՆիր-  
 » գայն. Թաւառքի շիգրայն. բախսիր ի բաւառք<sup>1</sup>. զի  
 » ոչ գիտէին Թէ զինչ բարբառնջեսցեն և տանջեսցեն  
 » զհաւատացեալս: Եւ եղև հալածումն ի յերկրիս Վա-  
 » յածորոյ. փախեաւ ամենայն երկիրս ի լերինս և ի ծեր-

<sup>1</sup> Ասիական պատմիչի վերին՝ բռնապատէին և ասէին, Տուք զհարկն, և վաղվաղակի ասէք:



» պըս լիմաց». և ինքն՝ յայլեւայլ տեղիս (տ. յէջ 125): Այլ յետ ամսոց հնգից «եկն իպի Սոլտանն ի Դայէ. » վրէժոյ, և եղեւ ճակատ առ ճակատ. և ախտահարեալ » (յաղթահարեալ) զՄուրատխանն, և արար զնա ձեր. » բակալ և եղ ի բանտի. և ինքն գնաց ի Արզրում, ի վե. » րայ Ղասում բակին »<sup>1</sup>: — Յոյժ ամայի և առապար են սահմանք Պազարքէնտի, լքեալ ի բնակչացն Հայոց և թաթարաց, և զարդիս բնակեալ ի Մարդկան աղանդաւոր Ռուսաց, որք ի Պոլուճայ գեղջէ Եռայ եկին յամին 1877, տունք 50, իսկ յայժմուս (1890) 72, ըստ Ռատտէի, որ ազաւ առ նոսա. տնակքն քարաշէնք և հողա. յարկք և ցածունք, այլ սպրկիկք և բարեյարդարք. բայց վասն բարձրութեան և քարուտ բնութեան երկրին՝ ոչ յաջողէ նոցա մշակութիւն, այլ դարման անանոց. հա. րըստագոյն տանուտեարք ունին մէն 50 եղջերուոր պահարս, 100 ոչխար, և 3 — 5 զրաստս, ընտանի հաւս և սառ բազում. իսկ զետն մատակարարէ նոցա կարմրա. խայտ չկունս պատուականս, այլ Հայք ճարտարագոյնք են յորսալ և ի բաց տանել: Վասն այսոցիկ ամենայնի՝ կամէին և Մալուկանքդ լքանել մեկնիլ ի տեղւոյն, որ թէպէտ ցուրտ յոյժ, այլ չէ վատասուն, և զեղ հար. քղղիս ունէին զՎերմաշուրս Գորդ? — Իստիսուի՝ ի հիւ. սիսակողմանն, յ'2800 Չ. բարձու:

Հուպ է ի Պազարքէնտ ի հարաւոյ կուսէ Տոտագ. ջի? գեօղ աւերակ. երկրքին եւս յալմէ գետոյն են. յա. բաձայն երկրորդիս ոչ գտանի ի վերոյգրեալ Յանկի գիւղորայից: — Յետ միութեան վտակաց Չինարածի (Պալըզլը), Միւրի, Քէչի սուի, որովք յորանայ Պա. զարչայ գետ, ընդունի նախ յահեկէն վտակ մի փոքր, առ որոյ խառնրդովք կայ չէն գեօղ փոքր, նոր Գարագի. շիւս որ և Պերտի Գաշէձիկ, թերեւս Բորտի, յոր անուն երկու գեօղք յիշին յԱյլախ՝ Վերին և Ներքին. զի և հուպ նմին կայ յեղից կուսէ Քերան քեփէ լեռնակ, որ յիջցուցանէ զանուն Գծիվանաց կամ Գծէվանց. յե. տին անունդ գտանի յերկրորդ հարկացուցակին Տա. թեւոյ ի թիւս գիւղորայից Սիսիանու. իսկ առաջինն (Գծիվան) յիշ յՈրբիւնաց պատմութեան, յորում և ասի, Տարսայիճ իշխանի «ի Բորտի՝ զԳծիվանս » տուեալ կալուած Տաթեու. ի Յուցակի անդ յիշին եր. կու գեօղք եւս յարանունք՝ Գոմածոր Ներքին և Վե. քին յԱյլախ վիճակի Ծղկոյ. և մարթ է ամենեցուն այ. դոցիկ լինել յայսմ կողման, սուղ ինչ այլայլեալ յոր. ջորմամբ: Յարեւմտից գեղջն մղոնաւ հեռի առ գետ. եզերքն կայ Շաքարձիկ ամրոց կամ պահակատուն:

Երկրորդ գետակ յալմէ կողմանէ թափի ի գետն, իբր երկու մղոնաւ ի հարաւոյ առաջնոյն, և է Արագի ջուրն, ի համանուն իջեալ լեռնէ, ընդ որ են անցք ճանապար. հի երթեւեկելոյ ընդ Նախճաւան և ընդ Ծղուկ գաւառս, որոյ կապանն բարձր է իբր 6610՝ ի դիւրութիւն անցից՝ կարաւանատունք կամ փուտկայք կան հաստատեալք զե. զերքք գետակիս, զորով պատի պողոտայն յահեկէ նո. րին. մի յայնցանէ նշանակի և յաշխարհացուցի Քերվանէ սերայ Մէլիք կեկնի գրեալ: Վերջին շարայարող պատ.

մութեան Սիւնեաց կամ վիճակին Տաթեու՝ ծանու. ցանէ զի ի մերում դարու Բունակոթեցի Մէլիք թան. կրի և եղբայր իւր Ղուկաս և որդին Ղազար սըստ բարե. » գութ ջերմեռանդութեանն իւրեանց չինեալ են ի » գլուխ Արեզլու լեռան կոչեցելոյն բազում աշխա. » տութեամբ՝ զերկոսին քարաւանսարայ թաղբանդ՝, ի » պահպանութիւն և յապահովութիւն երթեւեկաց ի » ժամանակս ձմեռնային սաստկութեան. և մէկ պա. » տուական կամարակապ կամոչոջ անխախտելի չինեալ » ի վերայ Բազարչայ անուանեալ մեծ և ահեղագոչ » գետոյն»: Ի վաղուց ժամանակաց իսկ հարկ է այս. պիսեաց կարաւանատանց լինել ի կողմանքս, ընդ որս և 1200 ա խք յառաջ՝ այնր ժամանակի պատմիչն Սե. րիոս՝ ասէ վասն կոյսեր շերակլի, « գնաց ընդ Ծղու. » կըս, և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախ. » ջեւանի, ի ձմերան ժամանակի», զորոյ զհետ պըն. դէին Շահէնն և Շահվարազ զօրավարք Պարսից: — Միակ գիւղ հին յանուննէ ծանօթ և արդ նշանակեալ ի գետածորակիս՝ է Երզար կամ Երզար, որ և ըստ տրիցն (ԺԲ մեռն) ճանաչի ոչ փոքր լինել. իսկ այժմ թէ որպիսի կամ զինչ ի նմին՝ ոչ գիտեմ. ի սմանէ ե. րեւի առեալ զանունն և վերոյիշլալ բերդն Շէքէրճիկ:

78. Հուպ ի բերան Արագի գետակի ընդունի գետն յալմէ կողմանէն, որ է յարեւելից՝ վտակս երկուս կամ երիս, որոց մի է անշուշտ Ապարանից գետ, ընդ հարկա. տուս եկեղեցւոյ թուեալ ի հին Յուցակին, զի նշանակի առ երի անուան գահանիստ քաղաքաւանին, որ է Շա. ղաւս. և կայ սա ի միջի վտականոյն, կիսով մղոնաւ ի հարաւոյ գետոյն, և մղոնաւ յԱրագեղակոթէ՝ որ ի ձախ. մէ գետոյն, և կիսով փարսախաւ յԵլ. Հր. Երբարայ. այլ այժմեանս գեօղ՝ թէ և ոչ փոքր՝ սակաւ մի հեռա. ցեալ է ընդ հարաւ ի բուն ի հին ոստանէ սիգապանծ տերանցն Սիւնեաց, որոց քաղաքական իմն խորագիտու. թեամբ ընտրեալ է զայս վայր՝ յարեւմտեան միջին սահմանածայրի ընդարձակ աշխարհին իւրեանց, մերձ յաշխարհն Վասպուրականի և յԱյրարատ. և ըստ պեր. ճութեան իւրեանց յարդարեալ և ամրացուցեալ էր զքա. ղաքաւանն, ուր մեծափառ ապարանք իւրեանց և հայրա. պետանոցն հաշակաւոր: Ոչ է յայտ յորոյ անուն և երբ այսպէս կոչեցաւ գահս Սիւնեաց. յիշի զառաջինն յետ կի. սոյ Գ դարու ի դէպս Անդովկայ նահապետի հաւուն Վա. տակայ, որ իրեւ զքաջայանդուզն գործեաց գործ՝ ի Տիգ. բոն, յաւարի առնելով զմայրաքաղաք Արեւաց պետու. թեան, և զիւր աշխարհն ոչ կամելով տալ յաւար վրէժ. խընդրութեան գոռ արքային Շապհոյ, հրամայեաց ամե. նեցուն աղարտել զիւրեանց արարս և փախել և թաքել յո՛ւ դէպ. և « Բազմութիւն ամենայն գաւառացն Սիւ. » նեաց ժողով արարեալ եկեղեցեացն պատուիրանաց » կտակարանաց, և սրբոց խաչից ոսկւոյ և արծաթոյ աւել » թիւ, և նշխարաց սրբոց պատուական և սուրբ մարտի. » ռոսաց, հաւաքեցին զամենայնն ի Շաղատոյ եկեղեցին » քարկոփ գմբէրաւոր. ոմանք յորմս եկեղեցւոյն պա. » տուհանս գործեալ երկաթով զքարկոփ եկեղեցին,

<sup>1</sup> Տես յԱյրարատ, յէջ 329:

<sup>2</sup> Կամարակապ: طاقباند.

» գնէին զիրաքանչիւր սուրբս ի ներքս յորմս եկեղեցւոյն . և ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն ընդ բեման դասնապարտեալ քարկոփս՝ լցին, և ոմանք ի միջի եկեղեցւոյն, և ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն արկեղաք ի վայր իջեալ . և համարէին լալով և արտասուելով զիրաքանչիւր զխաչս և զսուրբս վկայիցն զնշխարս և զկտակարանս սուրբս աւետարանաց, մարգարէից և առաքելոց, յանձն արարեալ սրբոյ եկեղեցւոյն Ս. Ստեփաննոսի . և զուրբ օր խնդրուածոց ցայգապաշտօնս առարեալ ի նմին եկեղեցւոյն ամենայն Սիւնեաց, և կուռն ձամբ թաղեալ բազմութեանն և հողարլուր արարեալ ի վերայ սուրբ եկեղեցւոյն Շաղատայ, որ է ի Մղուկս գաւառի . փախուցեալ ցրուեցան ընդ ամենայն երկիր . . .

» Հասեալ զօրն անաստուած պարսկական ի Մղուկս գաւառս ի Շաղատս զիւղաքաղաք, և անցեալ յեկեղեցարուր ըրն՝ ընդ որով սուրբ եկեղեցին թաղեալ էր, իմացեալ թէ ընդ բլրովն լինի ինչ ի ներքոյ՝ չարիմաց և չարահնար ազգն Պարսից . և ոմանք ի պարսկական պայիկացն ի վեր յեկեղեցարուրն ելեալ, և յանկարծօրէն թնդին որստման և շարժումն եղեւ . և յեկեղեցարլէն արտաքս ձգեալք վերելեալքն Պարսից՝ սատակեցան . և առաջ թաղաղայինքն պարսկական գնդովն իւրեանց ի փախուստ դառնային ի սաստիկ յահի եղանելովն : Յետեւ մաց քսանեւհնգից աւելի կամ սլակաս, առեալ Բարկայ դհայրենի ի իշխանութիւնն՝ հաւանութեամբ նորին Շաղատայ, և յայց ելեալ աշխարհի իւրոյ, « ապալերկ ի մարդոյ » և յանասնոյ և հիմնախիւ արարեալ զգեղեցկայարմար տաւան շինից, զիւղից և ագարակաց . . . անցեալ ի գաւառն Մղուկաց հասանէ յաւանն ի շինանիստն Շաղատայ, և ելանէ յարեւելից կողմանէ ի հանդիւոյ ըրն լուր մի », և անտի յեկեղեցարուրն, ուր՝ սքանչելիք իմն տեսեան եղլերուի և անուշահոտ բուրման՝ իրազգաց լեալ՝ հրամայէ « բազմութեանն պեղել զհող բլրին . և տեսին ի ներքոյ եկեղեցի քարկոփ չքնաղաչէն, որ ոչ ուրեք էր այնպիսի հրաշաճարտար շինուած . զմբէթն և խորանքն չորեքկուսի, մի յարկ մի տանիք, և ոչ ուրոյն ուրոյն որպէս և այլ գաղատոսաչէն եկեղեցիք . և բացեալ զգրուան սրբոյ եկեղեցւոյն Նախապիկային Ստեփաննոսի, և տեսին բազմաչոյլ բազում խաչս ոսկիս և արծաթիս, և այլ սպասս ամենայն եկեղեցեացն Սիւնեաց իւրաքանչիւր գրով զիւղաքաղաքացն . և նշխարք սուրբ և պատուական մարտիրոսացն անհամար, անթիւ, որ յորմն եկեղեցւոյն մնաց : Եւ (եղեւ) յայտնութիւն և գիւտ սրբոյ եկեղեցւոյն Շաղատոյ ի Հոռի ամսոյ որ սր մի էր ամսոյն » . որ և տօն տարեկանի կարգեցաւ . և ի լինել բժշկութեանց՝ զարմացեալ՝ « հաստացին և մկրտեցան Գոր և Գազան երկու եղբարք՝ հանդերձ պարսկական բազմութեամբ գնդին իւրեանց, որ եկեալ էին ի Պարսից գհետ Բարկայ Սիւնեաց Տեառն . (որոյ) վիճակ արկեալ . . . քաջարի արիացելոյն, լալամարտիկն Գազանայ՝ հասանէ վիճակաւ զիւղաքաղաքն Շաղատայ հանդերձ սուրբ եկեղեցեաւն, որ յայնմ ժամանակի Մայր եկեղեցեաց անուանէին : Եւ Բարիկ Սիւնեաց տէր՝ վանական կացոյց և սպա-

» սաւոր զընտրեալն Տիրոտ, հաւատարիմ սուրբ և ներսքանչելիսն և « թաղք մի Շաղատոյ ի լերինն ծովուն ? յեղր ծովակի միով », զորոյ գորտոց զձայնս լուեցուցանէ զբազում աւուրս, և դարձեալ հրամայեալ լուծանէ զլուրթիւնն : Ոչ նշանակի արդ ծով կամ ընակ մերձ ի Շաղատ, այլ կղզիացեալ երկիր ի միջի գետոյն և սյւղոց երկուց գետակաց, որ թերեւս յայնժամ ծովացեալ էր ջրով : Յայլ ինչ սքանչելագործութեան նորին յիշի « Խոռքն Աւստուր, որ է յարեւմտից կոյս եկեղեցւոյն՝ իրբեւ քար ընկէց մի » . և յայլում, զի « Գետոյ միոյ յայնմ կողմանէ էր ջրաղացք մի . և երանելին Տիրոտ ի գետակաւրարսն հանապազ զնշան խաչին արարեալ անցանէր ընդ գետն աներկեղարար . . . Եւ վախճանեալ Սրբոյն՝ եղաւ ի դիր յարեւելից կողմանէ սրբոյ եկեղեցւոյն . որ և բազում այցելութիւնք լինին ի սուրբ գերեզմանէ նորա՝ հիւանդաց : Եւ կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ՝ ի սուրբ եկեղեցին մտանել . և ոչ դարձեալ կանամբի քահանայի սպասաւորութիւն առնել սրբութեան տեղոյն . և այսու կարգաւորութեամբ կրօնիւք եկաց սուրբ եկեղեցին Շաղատայ մինչեւ յամս 300 . . . Դարձեալ յետ բազում ժամանակաց . . . յանկարծակի շարժումն եղեւ անուշահոտ բուրմամբ . և յարեւելից կուսէ խորանին յեկեղեցւոյն աղիւսաձեւ քար վազեաց յորմոյն, և զյատակն եկեղեցւոյն էառ ի վերայ բեմին . և (եկեղեցապահ Յովնաննու) քահանային ելեալ ի բեմն մեծաւ երկիւղիւ, տեսանէր պատուհան մի բարձր, և ի ներքս բազում նշխարք Սրբոց, զրով իւրաքանչիւր առաջնաքն եղեալ ի կողոփս, յի անուշահոտ ցանկալի բուրմամբ . և փոյթ ընդ փոյթ ընթացեալ պատմեաց աստուածապահ Տեառն Խոսրովայ՝ որ էր ի զարմից Կազանայ . . . Եւ հրամայեաց նոյն քարին աղիւսաքրտարով ծածկել զտեղի հանգստարանի սրբոյն : Այս զէպք լինին ի կէս Ը դարու . քանզի պատմի զկնի այսր հակառակութիւն լինել վասն նախազահութեան երիցանց եկեղեցեացն, և Խոսրովու՝ որ ի զարմից Գազանին՝ առաջի առնել լիտրներսեհի Սիւնեաց Տեառն զվճիռ Բարկայ՝ վասն նախաթողութեան երիցանցն Շաղատայ, և վերստին զնոյն հաստատեալ կարգ . յորում ժամանակի և վարդապետութեան նախազահութիւն տուաւ Գեղուգեայ Շաղատայ վարդապետի . յայնժամ այլաց եւս եկեղեցեաց մերձաւոր զիւղաւանից դասակարգք սահմանեցան . (այսինքն, յետ Շաղատայ լինել Բ՝ Եպիս, Գ՝ Աղիտու, Գ՝ Մորենի, Ե՝ Ոյծ) :— Ի տալ Բարկայ զՇաղատ եկաւ՝ նուտ պարսկին՝ թուի ինքն այլուր հաստատեալ ըզգահ տէրութեան Սիւնեաց, և զհին ոստանն պայազատեալ սերնդոց Գազանի . յորոց յետ Խոսրովուզ յիշեցելոյ ի կէս Ը դարու, թուի յելս Թին Արտաւազը Շաղատնեցի . յետ որոյ ոչ եւս յիշի գեողաւանս այս . այլ զի տեղի էր անուանի և ճոխ միանգամայն և հզօր, յայտ է և յասպատակէ Աւարանանն Սեւադայի, որ յամի 737 յետ սպականելոյ զիրկիրն՝ մտեալ ամրանայր « ի բերդատեղն աւանին Շաղատու »<sup>1</sup> . այլ վասակ տէրն Սիւնեաց սգնութեամբ Բարանայ պարսկի հալածեաց զնա-

<sup>1</sup> Կալապան . Գ. ԺԹ : Իսկ Օրբելեանն, ԼԳ, որ համարի զՄրուան բռնացեալ, « Բերդտէղ Շաղատու » գրէ :

Չատ յաւանէն Շաղատոյ՝ թուէ հին Յուցակն և ըզ-  
 Շաղատոյ վանք, որ և հարկէր եկեղեցւոյն 8 բեռն կամ  
 չափ. թուի թէ նոյն էր և Սիւնի վանքն (եթէ չէր սա  
 ի Սիսիան), զոր ընդ նախադասս կարգէ պատմիչն, զի  
 այսպիսի ընդհանուր տոհմական անուն վայելէ այնմ վա-  
 նաց՝ որ առ երի գահանիստ տեղւոյն կայցէ. երաշխաւո-  
 րեն այսմ և բանք պատմիին, ոչ միայն վասն հնութեա-  
 նըն, զի ասէ յառաջ քան զհայ թուականն շինեալ «ի  
 » մեծ բարեպաշտուհւոյն վարագըխտոյ Սիւնեաց Տիկ-  
 » նոյէ. . յանուն սրբոյ Լուսաւորիին». այլ զի « և առա-  
 » ջի վանացն ի մէջ քաղցրահայեաց մեյդանիմ՝ զնեն իշ-  
 » խանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ, և  
 » յամենայն աւուր, ասեն, գային ի ժամ պատարագին»:  
 Անանաւոր էր և եկեղեցին ճարտարպետութեամբ, «չըք-  
 » նաղ և նորակերտ ձեւով կանգնեալ, գմբեթայարկ  
 » խորան երկնաման» : Բայց ի պատմութեան չիք այլ  
 յիշատակ վանացս, բաց յառաջնորդէ միոյ նորին յամի  
 854, այն է «Սիմէոն՝ Շաղատոյ վանական», որ ընդ  
 այլոց՝ ձեռն արկ ի պարգեւագիր Փիլիլիպէի Տեառն  
 Սիւնեաց՝ տալոյ զգիւղն Տաթևոյ յեպիսկոպոսն գա-  
 շառին : — Յետ հազարամեայ մոռացութեան անուան  
 տեղւոյս ի գիրս, յայտնեցաւ ի գալստեան գաղթակա-  
 նին Հայոց ի կողմանց Խոյի այսր, յամի 1839, իրբեւ  
 տանց երեսնից, առ որս իջեւանեալ ագաւ Եղիա Սիսիան  
 Ամերիկացի քարոզիչ<sup>1</sup> (ի 6-7 նոյեմբերի, 1830) գիշե-  
 րըս երկու, մինչչեւ էր նոցա կանգնեալ եկեղեցի, բայց  
 ունէին երէց մի. այլ ոչ ինչ<sup>2</sup> յիշէ զչինէ կամ զաւերոյ  
 տեղւոյն, բայց միայն զի տունքն չէին որպէս զայլոց  
 կողմանց Գարապաղի՝ ստորերկրեայք, այլ կանգունք  
 յերեսս գետին, վասն որոյ և յոյժ ցրտինք յայնմ եղա-  
 նակի, որպէս զի և թոնրիւ ջեռուցեալ զսենեակն, հա-  
 զիւ աստիճան մի քան զկէտ սառուցին վերացաւ անդի-  
 կըն. յոր սակս և փութացաւ քարոզիչն ընդ այցն եր-  
 կուշարաթին անցանել ընդ կապանն (Արագլի լեռին),  
 քան զոր ոչ շատ ինչ ցած էր Շաղատ, և իջանել ի ջեր-  
 մագոյն հովիտս Նախճաւան գաւառի. «քանի՜ զուար-  
 » թագին էին (ասէ) առաջին ճառագայթք արեգակա-  
 » նըն, մինչ ցրտացեալք և բրտացեալք դժուարաբայ-  
 » լէաք ի վերայ ձիւնապատեալ թխորակ լեռանցն<sup>3</sup>» :

79. Հանդէպ Շաղատայ յայնկոյս գետակին (յարեւե-  
 լակողմն) սակաւուք հեռի նշանակի (ի Ռուսաց աշխար-  
 հացուցի) Պալեսաք? անուն գետոյ մի, որ է անշուշտ Բլե-  
 կանցն երկրորդ Յուցակին Սիւնեաց. ոչ յիշի ի պատ-

մութեան, և ոչ գիտեմ զայժմու հանգամանսն, այլ ե-  
 րեւի չէն և ոչ ամայի : — Ի հանդիպոյ սորա ի հիւսիսոյ  
 կուսէ և յահեկէ մեծի գետոյն (Պաղարչայ) իրբեւ կի-  
 սով մղոնաւ հեռի և մղոնաւ չափ ի Շաղատայ կայ միւս  
 եւս մեծ գետոյ, Անկեղակոմ, որ յԱլլախ վիճակի գրի ի  
 հին Յուցակին. յայտ է չէն և ընդարձակ լինել և ունել  
 եկեղեցի, այլոյն ամենայնիւ անյայտ ինձ, զի բազմա-  
 գումար էին տուրք նորա ըստ երկրորդ Յուցակին  
 (10,500 ապասի) քան զամենայն գետոյց Սիսիանու,  
 բաց ի Բանակոթէ : Ըստ յիշատակարանի աւետարանի  
 միոյ գրելոյ ի կէս ԺԵ դարու, եկեղեցին կոչի Ս. Սար-  
 գիս, սր Ստեփանոս եպիսկոպոս գնէ զգիրան, առ Շմա-  
 ընի ըրարունապետին. և չէն կոչի գիշարաքաղաք Անի-  
 դակոթ : Յայլում յիշատակարանի Աղօթագրոց Նարե-  
 կացւոյն, գրիչն Մամոսս երէց, յամի 1431, նոյնպէս  
 գիւղաքաղաք և Անկեղակոյտ կոչէ զտեղին, իսկ զե-  
 կեղեցին Ս. Լուսաւորիչ, այլ և Ս. Թագաւոր (Սիսիան?)<sup>4</sup>  
 Յետ սակաւ ժամանակի, յամի 1459, Գրիգոր օմն « Ան-  
 » գեղակոյցեցի ծիւր և ծերացեալ», որպէս գրէ Ինքն,  
 որդի Թեոդորոսի և Սիմիկի, և եղբայր Շաշիկի և Կոսիկի  
 (քեռ), գաղթեալ զայով ի Ճաւախէդ, ընդօրինակէր  
 աւետարան մի ի Կիկէթ, որբալով զհարուածս երկրին  
 ի Ջհանյահէ, մանաւանդ զմայր իւր, զորոյ « իրբեւ զԱ-  
 » կովիկ՝ հատեցին ասէ, զերկու ձեռն, յարիւն թաւա-  
 » լեցուցին » :

Յելա կոյս ԺԷ դարու տանուտէր Անկեղակոթի էր  
 Մէլիք Շաֆուազ, առ որ ժողովեցան 9 կամ 10 տա-  
 նուտեարք մօտաւոր աւանաց, թելադրութեամբ բազմա-  
 հնար ազգասիրի կամ բաղդակնդրի իսրայէլի Որի ա-  
 նուանելոյ, ի զարմէ Պատեանց, յամի 1699, ի խոր-  
 հուրդ հնարից ազատութեան յայլազգեաց բռնութենէ,  
 և վերականգնելոյ զտէրութիւն Հայոց, որպէս և յառաջ  
 քան զքսան ամ խորհեցեալ էր, և յայն սակա զեգերեալ  
 Որեայ ի դրունս կայսեր Պերմանիոյ և կայսրընտրի Պա-  
 լատինեան ի Տիւսսէլտորֆ, յանկուցեալ զսա ի կամս  
 իւրեանց. և զրեալ երկարօրէն զիրացս (ի 39 ապրիլի)  
 առ քահանայապետն Իննովկենտ ԺԲ, առաքեցին ի ձե-  
 ուն նորին իսրայելի. որոյ յածեալ այլ եւս ամս յԵրու-  
 պա, շահելով և զհաճութիւն մեծին Պետրոսի, զեպպան  
 ի նմանէ առաքեցաւ առ շահն Պարսից. այլ քաղաքա-  
 կան տղմուկք Եւրոպոյ խափանեցին զգործն յուսա-  
 դրեալ, և իսրայէլ յԱժտէրխան բարի համբաւով : —  
 Յանցելում դարու (ԺԲ) Յովսասիի եպիսկոպոս չինէ

1 Missionary, Researches. 251.  
 2 Այլ ընդ երկար խօսի, ըստ ունոյ նորագանք քարոզչաց, զշա-  
 քաթանալոյ Հայոց յաւուր կիւրակէի, եւ այլն :  
 3 The highest ridge we crowd was but little more e-  
 levated than Shaghad. — A smiling sun soon rose wit-  
 hout a cloud. How cheering were his first rays, as chil-  
 ted and benumbed we plodded over the black and snow-  
 covered mountains ! — ELI SMITH. p. 253 :  
 4 Չափական բանիւ յիշէ Մամոսս զազգաստեղծ իւր նորալուր  
 անուամբք. և այլն  
 « Ազ- Սուլթան անուն կոչի,  
 Եւ մօրն իմ Գեղայ մեծ թափիլնի...  
 (Այլ է) Եղբարցն իմ կենդանի,

Ձոր ֆառուսիւն կու անուանի,  
 կրսեր եղբօրն հեղաւորի  
 Սուլթան անուն քալ մշտակի.  
 Եւ նորեղբօր իմ անորդի  
 Իլիւսայ զործովք բարի,  
 Եւ ամուսնոյն իւր թափեմփ.  
 Որք են ննջեալ ի տապանի,  
 Եզբօրորդոյն իմ Սուլթանալի  
 Գալ կարգացող սարկաւազի.  
 Որ վախճանեաց...  
 Ինքեմօս կարգացողի.  
 Ու լաւագին մօրն իմ Հոփիփի  
 Վասն իւր որդոցն վախճանի, ...




առտ կամ նորոգէ եկեղեցի: Այժմեան եկեղեցին կոչի Ս. Ստեփաննոս, ըստ Արարատ Օրագրի:

Ի Հր. Շաղատայ առ նովին գետակաւ կայ մղոնաւ և աւելի հեռի՝ Մէգրէ գետոյ Ս. Աստուածածին եկեղեցեաւ: — Չորիք մղոնօք կամ աւելի յելից Անկեղակոթի, յայ. նրմ կողմանէ (յահեկէն) խառնի ի Պազար գետակն Եղալի-սիւնէի? նշանակեալ. սակաւօք ի վերոյ քան ըզ. խառնուրդն է մի ի գլխաւօք գետոյից Այլախայ՝ Շա. քէ, Թերեւս և բնաւիցն, զի յետ Շաղատոյ նախակար. գեցան երիցունք սորա յաթուակալութեան, որպէս ի վեր անդր ցուցաւ. զատ ի գեղջն կարգի ի Յուցակի հարկատուաց և Շաքէոյ վանք, այլ ոչ յիշի ի պատմը. չն, ոչ ի Թիւս վանսրէից Սիւնեաց և ոչ յայլ դէպս.

անծանօթ են ինչ արդ և այժմու վիճակ գեղջն և մնացուած վանացն՝ եթէ գուցէ: Թաթարք բնակեն այժմ ի գեղջն, առ որս ագաւ Ռատտէ ի գիշերի ՁՅ յունիսի, 1890. — Երկու մղոնաւ բացագոյն յելից Շաքէոյ կայ Գզլընա բերդատեղի, և բացագոյն ևս ի սմանէ ընդ ա. րեւելա՝ ի ստորոտս լերանց սահմանորդաց Աղահէճոյ՝ հանգրուանն Գիւսիար անուն, Թերեւս Գոմեր Մղկոյ, որ մի ի վերջին գետոյից նորին է ըստ հին Յուցակին: Ի սորա եւս յելից Հր. կայ այլ հանգրուան Գիւսիար? զը. րեալ, մերձագոյն ի լերինս:

Երկու մղոնաւ ի Հր. բերանոյ գետակին Շաքէոյ (Եղա. լը-սիւնէի?) յաջմէ կողմանէ անկանի ի գետն վտակ մի փոքր, առ որով կայ ԲՈՆԱԿՈՐ, գիւղ հին և մեծ, հան.



63. Գարագիլիսէ.

գերձ Ս. Գրիգոր եկեղեցեաւ, ոչ գիտեմ հին եթէ շի. նեալ ի Յովասափայ և պիսկոպոսէ յՅԵՂ գարու: Յեր. կրորդ Յուցակի հարկաց Տաթեոյ՝ բազմատուր քան զա. մենայն գետոյ Սիսիանու նշանակեալ է սա: Ի սկիզբն դարուս էին առտ մէլիքն զոր յիշեցաք վերագոյնդ՝ շի. նողք կարաւանատանց Արագլի լերին և կամրոյն, որ ի. ցէ Թերեւս մերձաւորն ի բերան գետառուիս, առ որով կայ Բանակոթ, ի վերայ Պազարչայ գետոյ, յերի Գա. րագիլիսէ գեղջ: Ճանապարհորդ ոմն ազգային յամի 1884 տունս 200 հաշուէր ի Բոնակոթ, յորոց 60 ազատք ի հարկէ. ի նորումն կառուցաւ վարժատուն ի գեղջ, առատաձեռն սատարութեամբ կարապետի Մէլիք Թանկեան, որոյ նախնեաց եւս բազում պիտանի ձեռա.

կերտք են ի կողմանքս, կամուրջ և կարաւանատունք: — Վերոյիշեալ քարոզիչն ամերիկացի էանց առ գիւղիւս՝ յերթալն ի Սիսիանէ ի Շաղատ (6 նոյեմբ. 1830): Գետոյ մեծ է և Գարագիլիսէ (Սիւս եկեղեցի), այսպէս կոչեցեալ վասն գունոյ քարանց հին եկեղեցւոյն, յորմէ և հնութիւն գեղջն գուշակի, որոյ անուն թէ և նոր Թուի. ցի Թուրքարէն կոչմամբ, այլ գտանին անդստին յՅԵՂ դարէ այսպիսի կոչմունք յայլ և այլ կողմանս աշխարհիս մերոյ, ի ժամանակէ անտի աշխարհակալութեան Թուր. քաց և Թաթարաց. և այս իսկ գետոյ Գարագիլիսէ՝ յիշա. տակի ի Սահմանագրի ուրեք կիրակոսիկ և Բնունիք գիւղից, յամի 1291, որպէս տեսցի փոքր մի ի ստորեւ: Բնակիչքն են 70 տուն շայք, 40 տուն Թուրք: Եկեղեցին

յանուն Ս. Բովնանու, հին է, և յարտաքին որմն ար-  
ձանագրեալ կայ (եթէ չիցէ այլուստ բերեալ) վէմ 1017

թուականա Քրիստոսի: Գոյ և քանդակ արեգակնային  
ժամացուցի, յիշատակաւս:

### ԹՎ. ՆԿԶ. Սմբատ որդի Աշոտոյ Սիւնեաց իշխանաց իշխան. Յա- ղաւթս յիշեցէք.

#### † Զգրող ժամացոյցիս յիշեցէք. Ես Գրիգոր գրեցի:

Է առ երի և դպրոց փոքր, որոյ տախտակափակ եր-  
դիք՝ նորանշան կամ անտովոր յայս կողմանս երեւեցան  
Ռատտէի, յանցանելն ընդ այն (25 յուն. 1890). յիշէ  
նա և առ գետեզերքն ոչ սակաւ ջրաղացս ընդ միով  
յարկաւ ի միջի ուռնեանց և կաղամախեաց և ոչ այլ ազգ  
ժառոց:

Բացագոյն ընդ կողմն կորէսի կան աւերակք հին իջե-  
վանի առ Եկտի պոչագ (Եթն վտակք) անուանեալ  
տեղուով, զի աղբերք եթն բղխեն առ տեղեան. և ոչ  
շատ հեռի լճակք եւս են, մերձ յիշխիփիք լերինս:

80. ՉՈՐԱՀՈՎՅՔ ՍԻՍՍԱԿԱՆ ԵՒ ԱՅՐԻՉԱՅԻ.— Կիսով  
փարսախաւ յեկից հարաւոյ գետառուին Բունակոթի Թա-  
փի ի Պազարչայ գետակն Սիսիանու՝ Այրիչայ օժանդա-  
կաւ իւրով. երկրքին եւս գործ են առանձնակ գեղեցիկ  
հովիտս, ընդարձակագոյն գոլով առաջնոյն, որ ի լերանց  
սահմանորդաց գաւառացն ճահկոյ և Երնջակայ յարեւ-  
մտից և ի հարաւոյ, և յանջրպետաց երկոցուն հովտացն  
յարեւելից կուսէ, ընկալեալ աղբերս և վտակս յորովս  
խաղայ ընդ ծործորս ծիծաղախիտս, ի Հս. Ել. և առ  
Ոյծ գիւղիւ խառնի ընդ գետոյն մեծի ի հարաւակող-  
մանն ի միջի աղբերականցն են գեօղք ամայիք յայժ-  
մուս, որոց և ոչ անուանք նշանակին. այլ ի մթնակողմա-  
նըս՝ մեծ գեօղն իշխամի գրեալ յաշխարհացոյց քարտի,  
Թուի Ըշտկամայրի գեօղ հին Յուցակին՝ յահեկէ գե-  
տոյն. որոյ յայմէ և սակաւուք հեռի կայ միւս հին և մեծ  
գեօղ Որդիքիք, ի քարտին գրեալ Արդիքիս. երկրքին  
եւս հարկէին եկեղեցւոյն Տաթեու 12 բեռն, որ նշանա-  
կէ զմեծութիւն նոցին: Նշանակի և բարգաւաճ բուսա-  
բերութիւն վայրացն, որով հաւաստի և ըծորդ կողմն  
առաջնոյ գեօղն մայրի հաւեալ. իսկ առաջին մասն ա-  
նուանն՝ ոչ գիտեմ զինչ նշանակիցէ կամ որպիսի ինչ  
ժառ: — Ի ստորեւ սոցա, ի հիւսիսակողմանն՝ երկու  
մղոնաւ շափ կայ գեօղն Չապղատոր գրեալ, որ է ան-  
շուշտ Սապատածոր հին Յուցակին. այլ և ոչ միոյ ի սո-  
ցանէ առանձինն յիշատակ գտանի ի պատմութեան: —  
Սակաւուք հեռի ի յետնոյս յահեկէ վտակին կան երկու  
քին համանուն գեօղք Սիսիանս<sup>2</sup>, երկրքին եւս ընդար-  
ձակք. ի վերնումն՝ որ է հարաւայինն՝ նշանակի և եկե-  
ղեցի. Ներքինն կամ հիւսիսայինն՝ կիսով մղոնաւ շափ  
տարակաց՝ ղետեղեալ է յանկեան գետոյն համանուն  
և վտակի (Ալէլուայ) օժանդակի յահեկէն (յարեւմտից):  
Կրկնութիւն շինիցն, որ զՍիսան նահապետի կամ զօ-

րապետի առ Վաղարշակաւ կրեն զանուն, որպէս և վի-  
ճակն համարէն, փոխանակելով զհին անուն Ծղկայ գա-  
ւառապետի, և այլ ինչ նշանակք (յաւէտ հետաքննելիք),  
յայտ առնեն՝ զի յետ Շաղատայ աստ եղաւ գահ իշ-  
խանաց կամ տեարց Սիւնեաց, եթէ ոչ և յառաջագոյն  
իսկ. և իբրու այսպիսի տիրական վայր՝ ոչ մասնէ ի թիւ  
հարկատուաց եկեղեցւոյն. և զառաջինն՝ երեւի բնիկ  
անուամբ համարէն աշխարհին Սիւնիք և Սիւնիս կոչե-  
ցեալ, որպէս է զուշակել ի պատմութենէ եպիսկոպո-  
սութեան Տեառն Երիցակայ, զոր Օրբելեանն առեալ ի  
նախնեաց ուրուք զրուածոց՝ յեռու յիւրումն. քանզի ա-  
սէ վասն Մուշէի կաթողիկոսի ի սկիզբն Զ դարու հա-  
սանել նախ ի սահմանս Սիւնեաց, մտանել ի Վայոց  
ձոր և հայցմամբ աղօթից ռոռզանել զայն անձրեւօք-  
ապա՝ «մերձենալ ի գահ իշխանաց ի Սիւնիս». որով յայտ-  
նի ոչ աշխարհն՝ այլ ոստանն. զի և ի մերձենալն անդր՝  
«աւետաւորքն առաջի ընթանային. և ել տիկինն (Սիւ-  
նեաց Սահակիս) որուով իւրով տղայոյ (որում խնա-  
մակալ էր), և ամենայն ազատագունդ հեծելովքն և  
բազում ամբոխիւք քահանայիւք և տանուտէրօք ընդ  
առաջ կաթողիկոսին. և մեծաւ խնդութեամբ պա-  
տահալք՝ իջանէին ամենեքեան ի վերայ ծնկաց և եր-  
կիր պապանէին. կէպ հետեւակք, կէպ հեծեալք ըն-  
թանային յայմէ և յահեկէ, և մեծաձայն աղաղակաւ  
հնչէին գոչէին գերգս օրհնութեան, այնքան՝ մինչ լի  
լինէր փորակ գաւառին իբրեւ յորոտմանէ ամպոց-  
և այնպէս փառաւորութեամբ տարեալ իջուցանէին ի  
խորանն արքունական, և նստուցանէին ի վերայ ոսկե-  
թիւ և մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանա-  
ցնն, ի տեղին՝ որ կոչի կից վտակաց». (անունդ  
այդ ի դէպ գայ միութեան երկուց ջրոցն զոր ի վեր ան-  
դըր յիշեցաք). իսկ տիկինն Սահակիս «ընծայէ նը-  
մա զվրանն արքունի՝ ամենայն կահիւքն և բազմա-  
կանօքն. և հեծուցանէ զնա յոսկիապատ կառս ըս-  
պիտակ ջրոցոց. ընդ որում և ամենայն բազմութիւնն  
գրոհ տուեալ գնացին զկնի», ընդ կողմն Բաղաց գաւա-  
ռի՝ յԵրիցու վանս, ի խնդիր և ի ձեռնադրութիւն Հօր  
Երիցակայ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց: Թերեւս ար-  
ժան իցէ աստ ի վերինն Սիսիան խնդրել զՍիւնի վա-  
նըս՝ զոր նշանակեցաք ի Շաղատ: — Մինչեւ ի վերանորո-  
գութիւն տէրութեան Սիւնեաց ի վասակայ յիշարու՝  
ի դէպ է աստ համարել յարակայեալ զգահ իշխանացն,  
և ապա փոխեալ յԵղեգիս վայոց ձորոյ. այլ ոչ ի սպառ

1 Ըրիթի Թէ Շըթի կամ Շոթի ընթեռնելի. ի հին բժշկարանի  
միջի Շոթի նուազ, այլ ինչ անծանօթ:

2 Հարաւայինն կամ վերինն Սոթիան գրի ի մեծի աշխարհացու-  
ցի Ռուսաց:



անշքեցեալ և առաջնոյն. զի և ի կէս ԺԳ դարու յայտարահակալութեան Թաթարաց՝ առաջնորդ նոցա որ ի Հայս՝ մեծ զորավարն Բալաշ Երայիկ, աստանօր օթազայէր հանգերձ գլխաւորօք բանակին. ուր հանդիպեցաւ նմա թագաւորն Հրթուլ ի դարձի իւրու. Ի Թաթարաց՝ յամին 1255. « և նա յուղարկեաց զնա առ Խօճա Երայիկ, զոր թռն զեալ էր փոխանորդ իւր գլխաւոր զօրուն »: — Յաւուրս արիական մրցմանց Դաւթի բէկի ընդ այլազգիս՝ էր և ի Սիսիան զօրավար մի, որ ոչ յիշի յանուանէ, և 300 մարտիկք ընդ ձեռամբ նորա, այլ թուի ի պայազատաց նախնի ազնուատոհմաց, որք մէլիք պատուանուամբ յաջորդեցին ցաւուրս մեր, և յորոց ի վերջկոյս անցելոյ դարու անուանի էր աստ Մէլիքն Սաֆուազ, « ճարտարախօս » և հանճարիմաց », ըստ յաւելուածի Կոնդակին Տաթելու: — Արրահամ կաթողիկոս յիշէ զտոհմ կամ ըզտոհմապետ մի Թուրքաց վիճակիս Սիսիանու Դոռախայկ անուն, որոյ հանգրուանաց հանդիպեցաւ ի կողմանս Խնձորեպի: — Ի վերնակողմանս վտակին զոր ասացաք խառնիլ ի գետն Սիսիանու և գործել զկից վտակաց, կայ գետն Ալէլուայ կամ Սիլիոն, որ յիշի ի նորագոյն Յուցակի կալուածոց Տաթելու, և ըստ տրիցն երեւի գոյ ոչ փոքր և աննշան. ունի և եկեղեցի յանուն Ս. Գեորգայ որպէս թուի՝ հին. բայց ի պատմութեան ոչ յիշտունք 54 հաշուէին ի նմա յամի 1884, զաղթականք ի Պարոկահայոց: Սահմանքն բերեն կանեփ առատ, այլ բնակիչքն պարսպին և ի խաշնադարմանութիւն:

Օժանդակ Սիսիանու դետոյն որ կոչի ի ստորեւ Այրիայ կամ Այրի առ բղխեալ ի համանուն ( Այրուտաղ ) լեռնէ բարձուէ 10160՝, սուղ ինչ անձկագոյն քան զայն ունի ձորահովիտ. ի վերնակողմանն բղխէ աղբիւր թթուաջուր: Ռատտէ որ յելս կոյս յունիսի (24) հերու (1890) էանց ընդ ձորակս այս, յիշէ բարգաւաճ դալարիս, գիւղացի կորնգան, (Hedysarum, Eparcet) Զափ մի (մետր) բարձրութեամբ, և զգետեզերքն ուռնիս և կաղամախիս. խոնարհագոյն յելս ձորակին գեղեցիկ կոթոճ մի ծաղկեալ երկու փուտ ոգնիանման կուտովք (Acantholimon bracteatum Gir.) իսկ ի վերնակողմն ի լանջս լերինն ի մէջ բարձրութեան 7400-8300՝, զՇուշանն վայրի (Yris Sambuccia), և յայերս խոյացեալ ըզմեծ անգղն Լաշնաւ, Gypetus. Գետօք ոչ նշանակին ի բարձու անդ, այլ փոքր մի ի ստորեւ Դաստակերտ հին Յուցակին, յամէ ջրոյն (յարեւելից). իսկ յահեկէն՝ ի ջանելով ընդ հարաւ՝ նշանակին մի ըստ միովէ Մոսրիտուս ի 6300՝ բարձու, որ ի դէպ է թէ իցէ հինն Մրուց, (Թէպէտ նոր անունն յանկագոյն է Մոսրոց գեղը Վայոց ձորոյ). ոչ նշանակի հնութիւն ինչ ի նմին, այլ տունք անշուքք հողով և անտաքարամբք շինեալք ի կողս լերին: — Այլապար և Շիխար մեծ և բարենիստ գետօք, զորոց ոչ կարեմ գուշակել հին անուանս, եթէ իցեն և սղքա հնաշէնք: Խոնարհագոյն եւս ընդ հարաւ յանկեան գետոյն

և վտակի փոքու ի տափ լերին կայ Ախարեան գետօք, որ յիշի այսու անուամբ ի սահմանագրի 1291 ամին, իսկ ի յետին Յուցակի կոնդակին Տաթելու՝ գրի Ալխաթեան. եկեղեցին կոչի Ս. Սարգիս: Ունի արդ 200 տուն բնակիչս, յորոց սմանք գործեն ասուեայս, սմանք տանին աղ ի Նախճաւանայ ի Եուշի. են և վաճառականք ոմանք: Աստ գիշերօթեաց Ռատտէ ընկերան ի 24 յունիսի (1890), և զձուձ և փոշոտ կոչէ՝, այլ զոհութեամբ՝ զհիւրընկալն: Խոնարհագոյն եւս իւր իբրեւ մղոնաւ մերձ ի խառնուրդս երկոցուն գետոցն ( Սիսիանու և Այրիայի ) յալմէ յետնոյս կայ գիւղն Տրուրք կամ Տրուր, որ և թուի ոչ փոքր լինել, ըստ հին Յուցակին, յիշի և ի վերոյգրեալ սահմանագրի 1291 ամին. ունի արդ իբր 140 տուն բնակիչս: — Յանկեան կցուածոյ գետոցն կայ կոչեցեալն յայժմուս Աղքէնտ կամ Ագքէնտ (Սպիտակ գիւղ), որ է հինն Կիրակոսիկ, մի ի սեփական կալուածոց Տաթելու. եկեղեցին կոչի Ս. Աստուածածին: — Ի հարաւոյ կամ ընդ մէջ սորա և Ախարեանի՝ անկ է խնդրել զմիւս եւս հին և նշանանուն գիւղ Բնուկիք, 30 տամբք, և Ս. Աստուածածին եկեղեցեալ, զի զտոհմի միոյ տայ նշանակ. զոր յելս Թ դարու կամ ի սկիզբն ԺԳ՝ զահրեց իշխանն Սիւնեաց Աչոտ՝ ընծայեաց թեմին Տաթելու, և ըզտեղին ճգարտէ ասելով, ըստ պատմչին, « Բնուկիք ի Սիւնիս ի Մղուկք գաւառի », որով հաստատի առանձնակ վիճակ մի մեծի գաւառին Մղկաց գոյ Սիւնեացս, որ է Սիսիան: Յելս կոյս ԺԳ դարու տէր երկոցուն եւս գիւղիցս, Կիրակոսի և Բնուկեաց՝ էր Մարտիրոս օմն, ի նախնեաց իւրոց ժառանգեալ, որ (կնան իւրով Վաննի, տարածամ մահուամբ որդւոյ իւրեանց Օրբեյի, անպայազատ մնացեալ), վիճակեցոյց աթոռոյն Տաթելու զհայրենիս իւր՝ ամենայն սահմանօք նոցին, զոր և որոշակի նշանակեն. բայց մեր չունելով զբնագիրն, այլ զփռանկութեամբիւն (Պրոսէի, յորոյ ձեռագիր օրինակի գտանիւր բանն), այսչափ ինչ կարեմք ի թարգմանութենէ անտի հաւաստել, զի ջրանցքն որ յայնմ կողմանէ Ախարեան գեղը և պողոտայն որ տանէր ի Կիրակոսիկ՝ Բնուկեաց պատկանէր, մինչեւ ի գետահովիտն Սիսիանու. սահմանք Կիրակոսի էին սարն կաւախի, և պողոտայն որ անտի տանի ի Բոնակոթ, անտի ճանապարհն որ յարեւելս կոյս, ապա երեքին Սեաւ քարինք որ Էղնաքար կոչէին. անտի պողոտայն Արայկեայ (Թերեւս Արայի), որ բաժանեալ տանի ի Գարագիլիսէ և ի Բոնակոթ, և անտի Ամիրգիւնի և Քարն Կիլիկ գայս և Ազուտ գետակ որ թափի ի մեծն (գետն), և յետ խառնդոցն ձգի սահմանն ի վեր կոյս ի Գողաթափ<sup>2</sup>, և ի մօտաւոր ճանապարհն որ տանի ի Նախճաւան. հիւսիսակողմն ճանապարհին պատկանի Կիրակոսի, հարաւայինն՝ Բնուկեաց: Առ միով յերկոցուն գիւղիցս թուի սոցա կանգնեալ զմահարձան որդւոյ իւրեանց, և գրեալ ի նմա այսպէս<sup>3</sup>, յամի 1291.

1 Wir.. stiegen zum unansehnlichen Dorfchen Achlatjan herab, welches grau, staubig und armlich ansieht.

2 Ghogha-Thaph, գրեալ առ Պրոսէի.  
3 Զայս ընդօրինակեալ Պրոսէի վրեպակզն՝ յօրինակէ գրոց իւրոց, առաքեաց ինձ:

Այս է արձանագիր մեծի իշխանիս Օրբելի, որ գրեցաւ ի վերայ շիրմի իմոյ. Երկրպագաւդք աստուածընկալ սուրբ Նշանիս խնդրեմք ի ձէնջ մեք ծնաւդքս սորին, Մարտիրոս եւ Վաննիս, վասն քաղցրիկ եւ անուշատես արեգակնանման եւ ծաղկատեսիլ զաւակին մեր Աւրբելին որ էր աստուածային շնորհաւք լցեալ այնչափ, մինչ զի ի կէս տարւոջ զհայ գիրս եւ ի մի ամուռջ զՄուղալին ուսաւ, զտեսաւղան զամենեսեան զարմացոյց եւ սէրն իւր յորգորէր զամենեսեան. ի նոյն գործ իմաստութեան լինէր սիրելի ամենեցուն, պիտանի Պարոնաց եւ շինականաց, աստուածասէր անձն. ապա կիսաւրեայ փոխեցաւ յաշխարհէ դասեալ ընդ նահատակս Աստուծոյ. թողեալ մեզ դառն կսկիծ եւ անմխիթար սուգ, յիշատակ տեսաւդաց իւրոց. Արգ աղաչեմք զձեզ յիշել ողորմեայիւ զորդին մեր զԱւրբելն եւ զանմխիթար ծնաւդքս ի Քրիստոս. Այս եղև ի թուականութեանս Հայոց ԶԽ, յամսեանն յունիսի ԺԱ<sup>ին</sup>.

Յ՛ժէ դարու ի գեղջէ Բնունեաց ընծայեցաւ Զաքարիա վարդապետ Աղամտան, զորոյ վարս և գովութիւն բովանդակէ տապանագիրն, լատին և աղաւաղ հայ լեզուաւ ի Ս. Մարիամ Եգիպտացի անուանեալ եկեղեցւոյ Հիւրատանն Հայոց ի Հոսով, ուր և հանգուցեալ կայ, յամի 1688.

Յիշատակ Զաքարիայ վարդապետի որդոյ Ազամի ի գաւառէն Սիսիանայ ի գեղջէ Բնունեաց, առն զանազանիւ լեզուագիտութեամբ հմտացելոյ, առաքելականի առ Հայս Քարոզողի, ն' այսմիկ եկեղեցւոյ խոստովանահօր Հայոց ազգի. գրեանց հայկականաց ի տպարանի սրբոյ Ժողովոյն սրբագրողի. Որ լցեալ աւուրբք Հէ ամաց վճարեաց զկեանս իւր եւ փոխեցաւ առ Տէր լի արդեամբ եւ աշխատանօք, թողլով զինչս եւ զստացուածս իւրս այսմ եկեղեցւոյ. ի ԺԵ օգոստոսի, յամի Տեառն ՌՈԶԸ, եւ Հայոց ՌՃԼԶ.

81. Խառնուրդ երկացուն յիշեալ գետոցս ընթացեալ իբրև երկու մղոնաչափ եւս՝ թափի ի Պազարայ. առ արեւելեան կամ աջակողմեան անկեամբ սօցին կայ Ոյծ գիւղ, Ուզ կոչեցեալ յայժմուս. ի հին Յուցակին գրեալ է Փոքր Ոյծ, յորմէ յայտ է թէ գոյր և Մեծ Ոյծ, այլ չըտայր հարկ յաթոռն. նշանակի և եկեղեցի նորա հին: Ի վերոյիշեալ վիճի նորին ընդ այլոց մերձաւոր գիւղից ի կէս ը դարու, երբ ի յանձնապատասանութիւն և աւագասիրութիւն Ոյծեցեաց այլ ի քննութիւն մատուցեալ և հարցեալ զհնագիտակս, «զՈյծեցեացն հաստատեցին ի Վրաց» աշխարհէն լինել պանդուխտ և նժդեհ գոլ ամենայն « Սիւնեաց... (վասն որոյ և գլխտինն) զհինգերորդ գահն » հրամայեցաւ Ոյծեցեաց ունել». ընդ որ թէ և դժկամակեցաւ Փանոս Ոյծեցի՝ Սիոնի վանից վանական, այլ չեղև ինչ փոյթ ժողովոյն: Բայց յետ դարու միւյ (յամի 844) ի պարգեւագրի Փիլիպպէի Տեառն Սիւնեաց ի ձեռնագրողս նորին նախակարդի « Յակոբ Ոյծայ առ » ւագերէց, ոչ միայն քան զՍիմէոն՝ Շաղատոյ վանականն, այլ և քան զՄանկիկ քորեպիսկոպոս Մղկաց,

եթէ արդարեւ այսու կարգաւ գրեալ էին ի վաւերականին: Յայլում պարգեւագրի (Հրահատայ և Գրիգորի տերանց Կովսական գաւառի) ի նմին ամի, ստորագրէ և Մարուաղա որդի սորին Յակոբայ. ի կէս ԺԱ դարու ընդ գիտնական վարդապետս Հայոց դասի և Գէորդ Ուծեցի: Յայտ ուրեմն է յայսցանէ զի նշանաւոր և բանիրուն անձանց տեղի էր Ոյծ ի նախնունն, և փափաղելի է հետազօտութիւն սահմանացն, որպէս և համարէն զուզակ ձորահովտաց Սիսիանու իշխանանիստ վիճակին, զոր մարթ էր կոչել Սիւնիք առանձնակ: Եկեղեցին Ոյծայ կոչի Ս. Գրիգոր. բնակիչք՝ տունք 180:

ՅՈյծայ մինչև ցՈրոտն՝ հինգ մղոնից ճանապարհ ուղիղ գծաւ՝ անձուկ հովիտ է մեծի գետոյն, և շմարթի երկարագնաց վտակս ընդունել. ի կէս ճանապարհիդ յահեակ կուսէ առ գետեզերքն կայ Աղուտի գիւղ, որ է հինն Աղիտու. այն՝ որոյ երիցունք երրորդ կարգեցան յաթոռակարգին: Առ երի նմին կայ ի Հս. Տարիքնտ, որ թուի գիւղ նորաչէն ի ստորոտս միջատահման լեռանց Մղկայ և Աղահէճու, ի 8770՝ բարձու: Ի սորա

Հս. ամբառնայ ի բարձու անկատ լերին Արփա բերդ ի 7418՝ բարձու. և ի նորին Հս. Պոչոտա լեռնաբերդ, յարեւմտից հարաւայ Գոմերայ:

Ի միջոցի Ագիտուի և Որոտան՝ վտակ մի փոքր իջեալ ի կողմանց Արփայի Թափի ի գետն մեծ. յանկեան նոցին է անուանի գիւղն Վաղաղին, յաճախ գրեալ Վաղանդնի գիւղ, հայրենիք Յովհաննու Որոտնեցւոյ. աստանօր Շահանդուխտ առաջին Թագուհի Սիւնեաց՝ ի 1000 թուականին Քրիստոսի, «Շարժեալ աստուածային» իմն ակնարկութեամբ չինէ զգեղեցկայարմար և զվա...  
« յելլադիտակ Վանսն Վաղաղնոյ, որ էր ի վաղուց  
« հետէ տեղի ուխտական արանց. զի եկեղեցի մի էր  
« անդ ի հին ժամանակաց յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր և կարծեմք նորին հիմնարկեալ, և յե...  
« տոյ շինեալ ի Ստեփաննոսէ հօրէ և ի սուրբ ճգնաւոր  
« բէ. և առնէր բժշկութիւն խածկելոց ի Թիւնեաւոր օձից,  
« որպէս Փարբոյն, որ զկատաղիցսուն անբժշկելի՛ բուժէ  
« ի մարդոց և յանանոց, Չսորայս և այժմ՝ իսկ տեսա...  
« նեմք անպատմելի հրաշս. զի զհարեալսն ի Թիւնեաւոր  
« րաց և զսեւացեալսն և զուռուցիկսն մերձ ի պայթել,  
« հանեն ի բարձրաւանդակ լերինսն և ցուցանեն զվանսն,  
« և կամ սակաւ մի հող յեկեղեցւոյն հասուցանեն, առ...  
« ժամայն լուծումն առնէ մակարդեալ Թիւնիցն, փութա...  
« պէս բժշկէ: Վանս որոյ շինեալ մեծ բարեպաշտուհւոյն  
« Շահանդիտոյ կոփածոյ քարամբք եկեղեցի յանուն  
« Սրբոյ Նախավկային Ստեփաննոսի ի ՆԽԹ թուականին  
« Հայոց. և կարգէ ի նմա տուն կրօնաւորաց և բազմամ...  
« բոխ պաշտօնէից: Շինէ և տուն աղօթից կրաշաղխ  
« վիմօք ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործա...  
« տունս. և շուրջ պարսպէ զվանքն. և որպէ՛ նմա ան...  
« դաստանս ի Վաղատնոյ, և տայ զԳոմեր արգարակ ի  
« վանսն. և պայծառապէս զարդարէ զեկեղեցին զանա...  
« զան զարդուք: Եւ ինքն վախճանեալ զնի ի դրան այնր  
« արբարանի: Ապա յետ ամաց ինչ ի ՆԽԹ թուականին.  
« Սեւաղայ որդի նորին Շահանդիտոյ՝ եղբայր Վասա...  
« կայ Թագաւորի, շինէ և մեծածախ աշխատութեամբ ե...  
« կեղեցի մի յոյժ պայծառ և գեղեցկայարմար, գմբէ...  
« Թայարկ յանուն Սրբոյ Կարապետի, և գաւիթ ի դը...  
« բան նորին. որք և կան հանգուցեալ ի դրան նորին.  
« որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, և վարձս բիւ...  
« րապատիկ ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ»: — Յայս  
« վանս Վաղարնոյ, (որպէս գրէ Գրիգոր Տաթեւա...  
« ցի) ընդ հովանեաւ Սուրբ Կարապետին ի Սիւնեաց  
« գաւառին», յարմարեաց նա զՔաղուածոյ մեկնու...  
« Թիւն Եսայեայ, « ի լուսաւոր բանից տեսուն (իւրոյ) և  
« վարժապետի Յովհաննու Որոտնեցւոյ», յամի 1385:  
« Ի գեղջէ աստի էր և աշակերտ իւր Քալուստ վարդա...  
« պետ: — Յամէ գետոյն յայսմ միջոցի (յՈյժայ ցՈրոտն)  
« չիք շէն. այլ հանդէպ Որոտան փոքր ինչ վերագոյն վը...  
« տակ մի օտուկեալ ընդ գեղեցիկ բուսաբեր վիճակ՝ ան...  
« կանի ի նոյն, ունելով յահեկէն՝ որ է յարեւմտից, ըզ-

գետոյն Արաշիս և Պահարշու. Թուի սա թուրքաշէն և նոր ըստ անուան. իսկ առաջինն հաւանօրէն է Արեւէս գիւղ հին Յուցակին, որ ի պատմութեան ոչ յիշի, այլ ի յիշատակարանի գրոց գրելոյ յամի 1487, և յայլում յամի 1471 նշանակի եկեղեցի նորին Ս. Գրիգոր. ի յետին թուականին (1487) յիշի և առաջնորդն Յորդանան վարդապետ, յորմէ գուշակելի է և վանս լինել անգ. և Սարգիս քահանայ, որոյ ծնողք Սարգիսեաց և Քոյիկ ստացողք են գրոցն (աւետարանի):

82. Ի վտակէ աստի փոքուէ մինչեւ ցբերան գետակին Լբուս որ ի նմին (յաջ) կողման, կէս փարսախ ճանապարհի է անչէն. այլ ի հանդիպոյ վտակին, որպէս ակնարկեցաք սակաւուք յառաջ, կայ մի ի նշանաւոր վայրուց Սիւնեաց, ի հնուան վանս ամրոցին և ի յիսանական կայից, ի վերջին դարս՝ համբաւով Յովհաննու վարդապետի կախիկն կոչեցելոյ. այն է Որոտն, յորմէ և նա Որոտնեցի: Բնգ գլխաւոր բերդօրէից աշխարհին կարգէ զայն պատմիչն, և էր մի յայնց ապաստանաց Հայոց պետութեան, զոր ի ժամանակս հալածանաց Յագեկերտի Բի՛ Պարաք ի բուռն արկին, և Վարդանանք Թափեցին ի նոցանէ՛. յետ բազում դարուց և բազմապատիկ անցից պաշտութեան և թագաւորութեան տեարց Սիւնեաց, և յետ սպանման Սենեքերիմայ Թագաւորի և առման Կապանն մայրաքաղաքի, առաւ ի Թուրքաց-Պարսից և Որոտն՝ յամի 1104. յորոց՝ յետ 115 ամաց Թափեաց Աթաբէկն Իւանէ՛ յամի 1319. և յետ ոչ բազում ամաց ի կրկին նուաճման աշխարհին ի Թաթարաց՝ Սըմբատ Օրբելեան որդի Լիպարտի՛ հաւանութեամբ Բաշու Նոյին կողմնակալի վերստին կալաւ « զամենայն եր... » կիրն Որոտան մինչեւ ի սահմանս Բորոտնայ և Բղե... » նոյ՞» և որպէս թուի՛ ետ զայն եղբօր իւրում Տարսա... յիճայ՝ որ տէր կոչի վիճակիս, յառաջ քան զյաջորդելն զեղբայր իւր երէց և երթալ բնակել ի Վայոց ձոր: Ի սոցին զարմէ կացին մնացին պայազատողք ոչ միայն Որոտնայ այլ և Տաթեւու՝ մինչեւ ցմեր ժամանակս, զառաջինն տիրարար, յետոյ ժառանգութեամբ մասանց ինչ և հողոց: Ի նոյն զարմէ էր հաւանօրէն և վարդապետն Յովհանն, զի հայր նորա իւանէ որդի Հասանայ և Վախախի, և եղբայր Սարգսի արքեպիսկոպոսի Սիւնեաց՝ կոչի ամիրայ և պետ երկրին Որոտան, յամի 1337, յորում միւս որդիք նորա Հասան և Չաքարէ՛ անուանին հըսկայազօր և հաստաբազուկ մանկտի. իսկ Յովհաննէս՝ նորընծայ քահանայ, (ծնեալ յամի 1312 կամ 1313): Բայց յելս կոյս ԺԴ դարու և ի սկիզբն ԺԵ՛ տեարք Որոտան էին Օրբելեանքն, պայազատք հզօր և արքայակերպ ի յիսանացն Տարսայիճի և եղբարցն, որպէս ասացեալ եմք ի տեղագրի Վայոց ձորոյ, յիշելով անդ և ըզգերութիւն Բուրթելի տեսուն Որոտան, որդոյ իւանէի, որդւոյ մեծին Բուրթելի, և զըարձ նորա վերստին, և զմահ եղբօր նորա Սմբատայ, յորմէ կորցեաց գրերդն բռնակալ Թուրքն Քարա-Ելուսուֆ յամի 1406 կամ 1407, ոչ


1 Եղբէ: Գ. յեղանակ:  
2 Ստեփաննու Օրբելեան, ԿԱ:—Չնոյն կանխաւ գրէր և Վարդան պատմիչ, (էջ 40-4). « Մեծն իւանէ... ի ՈԿԸ Թուին առնու զՈրոտն և զմերձակայ գրեական, Թեպէտ ոչ զըսվանգակ. քանի՛

» երբ ունէին զիս Հայկազունքն՝ 43 բերդք էին նշանաւորք և 1400՝ » գեղք, և 48 վանորայք: »  
3 Յայսպիսի ինչ ակնարկէ և համառօտաբան ժամանակագիր ԵՄ. « Ի Թուին ՊԼԻ (1386) Թուրքն էաւ զՈրոտն »:



լուեալ ազաչանաց Գրիգորի Տաթեւացւոյ, ըստ Թովմայի Մեծօփեցւոյ: Յիշի զրեաթէ և ի կէս ԺԵ դարու (1447) Տէր Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեաց որդի իւանէի՝ Տնառն Որոտան. հարկ է թէ որիչ ի նախորդէն նոյն պէս իւանէի որդւոյ, զի նա մեռաւ յամի 1422. բայց այս իւանէ՝ որոյ որդի և զհարդ էր տակաւին Տէր Որոտան, ոչ գիտեմ: — Յետ երից դարուց՝ յորս ոչ գտանեմ զյիշատակ տեղւոյս, յամս շահատակութեանց Դաւթի Բէկի՝ նպատակ եղեւ Որոտն նախ Յովնաննու Աւան-խանի իխանի կողմանց Գուգարաց, զոր՝ պատմիչ զիպացն ասէ, 56000! Հայազունդ զօրօք եկեալ պաշա-

րեալ և ոչ կարացեալ առնուլ. այլ յետոյ ի նմին ամի 1723, ինքն Դաւիթ պաշարեաց, և յաջողելով անձրեւի յորդութեան փլուզանել զմասն մի պարսպացն, հորդան ետ ընդ այն և տիրացաւ ամրին, և ընդ սուր եհան զայլ ազգիս: — Որպէս երեւի ի բանիցս ցարդ յիշեցելոց՝ Որոտըն գլխաւոր զիւղ կամ աւան էր կողմանս՝ յԺԳ դարէ և այսր, մինչեւ կոչել կողմանցն Երզնի Որոտս՝ ի Վարդանայ, կամ Որոտս Չոր, որպէս գրէր և Գետաթաղեցին փորգատէ ի ԺԶ դարու, (230) իբրու ասանձ, նակ միճակ: Չարդիս իսպառ աւերեալ և ամայացեալ է գիւղն. իսկ բերդն հզօր հանդէպ նորին յայն կոյս զե-



64. Եկեղեցի Որոտան.

տոն տակաւին կիսականդուն կայ. քանզի յերից կողմանց անձեռագործ պարիսպս ունի զքարաժայռս, չորրորդն ձեռագործ խանգարեալ է. ի ստորոտէ բերդին

փող գետնուղի հանէ յեզր գետոյն առ ի հսինել ջուր ի վեր: Ի բերդամիջին թաւալեալ կայ տապանաքար՝ այսու արձանագրաւ.

**Այս է հանգիստ բարեպաշտ իշխանին արքայադուն Սմբատայ՝ որ կիսաւրեայ ի Քրիստոս փոխեցաւ. Յիշեցէք ի Քրիստոս. Թւին ՊՂԹ.**

Ոչ սակաւ ահեղագեղ է տեսիլ բնութեան ձորոյն, « ընդ որ անցանէ ահագին դղնջմամբ գետն Որոտան. » և ձորն այն լի է այգետսանեօք և դրախտացեալ զանա- « զան բուրաստանօք», ըստ բանի պատմիչն՝ զսահմանաց

1 Ո՛ր որդի կամ պոպազառ է Սմբատոջ վաղածեւ, ոչ գիտեմ. Թերեւս Բեչլեհայ՝ որ Հինգերորդ դարմ է ի Տարսպիւղէ:

Տաթեւու, որ չէ այնքան մերձ ի գետն՝ որպէս Որոտնս այս գիւղ: Յերի սորա կայ վերոյիշեալ Վանքն Վաղարշնի, որ արդ կարմիր Վանք կոչի, և պահէ զհամբաւ Յովհաննու Կախիկ վարդապետի. ամայացեալ է արդ, թէպէտ և ի յետին ամբա Մկրտիչ վարդապետ Տէր Գէորգեան խնամով հսկէ ի վերայ տեղւոյն. յիշին արձանադրութիւնք յեկեղեցւոյն, այլ ոչ են հրատարակեալք, զէթ ըստ իմն գիտութեան: — Յետ Եսայեայ Նչեցայ մեծի վարդապետին Փայլեձորայ՝ որում աշակերտեցան, Յովհաննէս Որոտնեցի եղև անուանի ի վարդապետս յաջորդս նորա, դրուատեալ ի ժամանակակցացն, մանաւ

ւանդ յաշակերտէն իւրմէ ի Գրիգորէ Տաթեւացոյ, որ ոչ կարէ յիշել զնա առանց տնուանելոյ մեծ վարժապետ, ոչ միայն իւր՝ այլ երբեմն և հանուրց. գրէ ներբողս և ողբս, յորս ոչ Օրբելեան ծագմամբ ճանաչէ զնա, այլ « Սգատ պայազատ յազնէ Սիսական բնիկ Հայկազնի » իսկ ըստ բարեմասնութեանցն՝ « Փայլակն արեւելեան » և լոյն անստուեր ազգիս Հայկազեան, զմեծն ասեմ » զՅովհաննէս բարբառոյ ձայնն և զատուածարանն Որոտման, պետն բարունեաց, մականունն Կախեալն ի » սէրն Յիսուսի »: Յայլում չափարան գրուատի ճոխագոյնս ճառէ, այսու իսկ ձեւով և ձեռամբ գրելով:

Ո մն ի յարանտ ազգաց և ազանց. և պայազատս  
 քաղաքս հիւսէ. ի հայկական հասուց նախ  
 նախան. և ի սկզբանց յայտնա բանս և ց  
 ի սիսական ցեղապետս և. տեղս գող վիճակ եւ  
 երկրն որոտան. Այսպէս գրուան լեռ եր  
 ձոնայեալ. որոք բազմաբնին ինչ վիպաբանեչ:  
 բաց միայն զճաշկի աղտու ընկաղեալ. շա  
 քաւ եղին սչանգիտացեալ. Որ յովհաննէս ա  
 նունս յորեթեալ. մակակոջմամբ ի սէր սիրոյն  
 կախեալ և կանխեալ. Որև մանուկ գորով մը  
 տալում. ի աղայւն դիպեալ առ բարին:  
 Այսպէս ընծայեալ մեծ վարժապետին. որ  
 համանունեղ ամուսնա ծնին:  
 Այլ նա ի դեգերանա հորով ետացեալ. հանա  
 սիտաբան ի յերկա աշխատեալ, և արդ ինչացեալ:  
 եւ զարմանալի յորումեղ երեւեալ. ի սչե ետաւան  
 գահ պիտակագին, յատեան հանդիսին:  
 Եւ կատար ման սպաստ ինչորոգին. շօն  
 վիհացեալ համալսարանին. իբր զհակայ վե  
 նական պնդին, բարդ կամարին:  
 Ս աղում զիշխանացն փառապատեալ, մե  
 ճաշաք պատուեալ. Որև զվիճակ միւն եաց  
 յաջորդեալ. փառաց ի փառս գերազանցեալ:  
 Ասկաւ ինչ առայս գոյս ամաչ եցեալ. և զարման  
 ցեալ զոր ոչ ախտս մեալ:

65. Իսկանէ Էտեկարի Գր. Տաթեւացոյ.

Ի նորագիր շարակարգի եպիսկոպոսաց Սիւնեաց յետ գրելոցն ի պատմէն (Ստեփանոսէ), առաջին կարգին Որոտնեցին և Տաթեւացին. թէպէտ յաւելու գրողն, զի սոքա ոչ վասն եպիսկոպոսական յաջորդութեան՝ այլ վաւրն համբաւոյ դիտութեան և երախտեաց՝ արժանացան ի թիւս նոցին դասիլ. սակայն Տաթեւացին՝ յետին իսկագիր տողիւքն՝ ցուցանէ և ստուգիլ յաթոս Սիւնեաց հրաւիրեալ Յովհաննու, այլ հրաժարեալ կամ առ ակնաժողովեան կամ առ անդաղ պարապելոյ ի մակացու թիւս և յաղթս:

« Որ և զվիճակ Սիւնեաց յաջորդեալ Փառաց ի փառս գերազանցեալ », եւ այլն: Յետ այսորիկ յաւելու գրել, « Ապա յետ որոյ տարաշխարհ գալոյ Խաղաղութեան տեսլեանն ուխտելոյ », եւ այլն. նշանակելով զուխտագնացութիւնն յԵրուսաղէմ, և ըզլրին ի բազում կողմանս, ապա գերթալն ի Տփղիս, ուր՝ ըստ հանութեան գրուատողին՝ վիճարանի ընդ Քաղկեդոնականաց՝ յեա մահուան Դաւթի թաղաւորի վըրաց՝ երթայ յուխտ յԵրուսաղէմ, անտի ի Սեպուհ լեա.

1 Եւ յաղթէ, ըստ նորին Գրիգորի, որ և իրզախէ զինքնաւոր յաղթութիւնն այն ասել « վե՛ ին երեւեալ », քան զտաւ.

քիւղն Պետրոսի և Յովհաննու որ ի վերայ կախադասարացն Ամուրի և կիսովոյ:



քըն, ուր և մնայ տարեւոր ժամանակաւ. ապա գնայ ի Տրապիզոն ի դուռն կայսեր, անդ եւս քալ հանդիսանայ, ըստ տփղիսեան տարազուն, և ապա,

« Ի Սիւնական վիճակ հասեալ և գահոյս բազմեալ » . աւարտէ գլխնութիւն Զանգակատանն Տաթեւոյ. և գրէ կամ խօսի յայնժամ « Յօրհնութիւն նորակերտ շինուա » ժոյտանարին և Զանգակատանն առաքելական աթոռոյ » վանիցն Ստաթէի, որ է աթոռ Սիւնեաց վիճակի, ի » բանն, Տէր ի տաճար սուրբ իւրում<sup>1</sup> : Այլ յիշատակա գիրք յամի 1378 այլում եւս մեծի աթոռոյ վիճակեցուցանեն զՅովհաննէս, գրելով. « Որ ունի զվիճակս Հաղ » բատայ և է պասասուր սուրբ Նշանիս » : Յետ այլոց եւս շինութեանց և բարեկարգութեանց, մեռանի յամին 1385 (կամ 1386) ամաց 73, ի պատկեր աւուրն (6 յանուարի ի տօնի Յայտնութեան) յորում և ծնեալ էր. զոր և նշանական իմն համարին աշակերտքն, որպէս և զամենայն ինչ զնորա՝ հանդերձ գիտութեամբքն, այլ և զկազմուած կերպարանացն, « Քաղցր դիմօք, մեծահա » սակ և բարետեսիլ, զուարթամիտ և ողորմած », և այլն<sup>2</sup>. կամ ըստ Տաթեւացոյն, « Գեղեցիկ տեսչամբ » առ որդիս մարդկան կերպացեալ, ըստ կարի իշափ հա » սակի ընտրելոցն նախնի » : — Պիտանի քան զվարկ պարագի վէճան մարթ է համարել զգրուածս Յովհաննու, որք բազմաթիւք են, և ի հասարակի մեկնողականք Սուրբ Գրոց, Աւետարանաց, Սաղմոսաց, Թղթոց Պօղոսի և Կաթողիկեայց և մարգարէին Եսայեայ, Վերլուծութիւնք փիլիսոփայական գրոց Արիստոտէլի, Պորփիրի, Փիրոնի, և այլեւայլ ճառք. ի հասարակի ցամաք և դըպրոցական ոճով. յոր ոճ աղաւաղ մարթ է զսա առաջին անուանել ի նուազման անդ ժամանակի դպրութեան մերոյ, և տակաւին լաւագոյն քան զհռչակեալ աշակերտըն իւր Գրիգոր, որպէս և ոգւով մեղմագոյն և գրչութեամբ զգուշագոյն : — Կիսով դարու յետոյ Ստեփաննոս Որոտնեցի ոմն ի Լով (Լեմպէրկ) քաղաքի Լեհաց գրեալ է յիշատակ ինչ յամի 1435 :

83. Լորաճոր. — Ի զանազան աղբերաց լերանց անջրպետաց Եղկոյ և Բաղաց, ի վանէ գետակն Լորաճ, յարեւմտից ունելով զգետաձորակն Այրիչու, յարեւելից

զՏաթեւուն, իրրեւ ՁԹ բնամղոն եւեթ ընդ երկայնութիւն, և թափի յՈրոտն : Երկուստեք բարձունք լերանցն սիզաւէտք՝ մակաղատեղք լինին խաշնարածաց այլազգեաց, ստորապն այգեւէտք են : Ի պարու բարձանց անջրպետաց Այրիչու՝ նշանակին սարքն Գարա-գայա (Սեւսար) և Մոռոզ-տաղի : — Գիւղն Լոր՝ Ս. Գեորգ եկեղեցեալ, որ ի միջակի ձորոյն կայ՝ յահեկէ Ղրոյն, զլիաւոր եղեալ է ի հնումն այլոցն որ ի նմին, քանզի յիւր անուն կոչի Լորաճոր, և յիշի ի սահմանս Արծիւ և Բերդկաներէջ գիւղից, որք տուան յամի 839 ի կալուած Տաթեւու<sup>3</sup>, մերձ նմին գողով, « յարեւմտից կողմանէ Լորաճորդ՝ քնասարաւն » . կամ, « ի Խոռոն ճանապարհն՝ որ Լորաճորին ասմանն է » : Ի նոր ժամանակս Վերին-ձոր կոչի վիճակս այս կամ ձորակ : Իսկ զգիւղն Լոր՝ յորում են արդ 110 տուն բնակիչք, առանձնակի ի պատմութիւնս ոչ գտանեմ, բայց ի յիշատակարանի ոչ հնում յամի 1669 :

Երկու մղոնաւ կամ աւելի ի Հր. կուսէ Լորոյ՝ ի կցուածս աղբերաց գետակին՝ կայ Շինաթաղ գիւղ ի լեռնամէջս, Ս. Մարտիրոս եկեղեցեալ, և 100 տուն բնակչօք. ոչ յիշի ի հին Յուցակին, այլ ի յետինս ոմանս : Ի գեղջէ աստի էր Յովհաննէս եպիսկոպոս Սիւնեաց Շապան օղի մականուանեալ՝ յելս Ժէ դարու, կամ կանխագոյն. ի նորին զարմէ էր և Մինաս եպիսկոպոս ի կէս ԺԸ դարու : Իսկ ի ներքոյ Լորի, այն է ի Հս. կայ Գետաթաղ 90 տամբ, առ գետեզերքն և յանկեան զոր գործէ ընդ նմին վտակ մի, որոյ և գեղեցիկ և բարգաւաճ նշանակի բուսաբերութիւն. ոչ յիշի և սա ի հին Յանկին, և ոչ ի պատմութիւնս : Ի գեղջէ աստի ելեալ Փիրզատէ ոմն ի Բաստամանց ազգատոհմէ յամի 1886-7, երկար ճանապարհորդութեամբ, անցեալ ընդ Մեծ և ընդ Փոքր Հայս և ընդ Փոքր Ասիա ի Կ. Պօլիս, և անտի ընդ Թրակիա և ընդ Դանուբեան գաւառս՝ ի Լեհաստան, յածեալ է ընդ ամենայն աշխարհս միջին և արեւմտեան Եւրոպոյ, թուի վաճառականութեան աղազաւ. քանզի թերի մընայ ինքնագիր յիշատակարան նորին անոճ և անհարթ<sup>4</sup> :

Սակաւուք ի ստորեւ քան զԳետաթաղ, ի նմին կողման կայ գիւղն Դարապաս. բարգաւաճ պտղատու պարտիզօք ի խորաձորի ամայի լերանց. ոչ յիշի առ հինսն, այլ

1 Երկար ճառ և մեկնութիւն եղեւց բնագրանին, այլ չիք բնաւ բան յիշատակի որպիսութեան շինուածոյն և ոչ նաւակատեցն հանդիսի :

2 Այլ ոմն աշակերտ նորա (Մելիքիսեղ) որ օրինակէր զԳիրս Առաքելութեանց յՈրոտն, յամի 1576, և աւարտէր ի Տաթեւ ի միւսում ամի, ասէ. « Ի դառնութեան ժամանակս... բարեբարն Աստուած լոյս ծագեաց մթացեալ և խաւարեալ ազգիս՝ զմեծ վարձ ժապեան մանկանց Սիոնի... զբազումսպեան վարդապետաց, զՅովհաննէս վարդապետ Որոտնեցի, որդի Խանէի. որ վերջս... տին զարգարեաց զեկեղեցի, և սնուցանէր զմանկուանս Սիոնի, շամբելով զկերակուրն կենաց հոգւոց, և զհանգիստ մարմնաւոր պիտոյից, և զցրուեալսն ի բազում թշուառութեանց՝ ի մի ժողովրդէր, և աներկիւղ պակէր ի գէմս ամենայն պակասութեանց » հոգւոյ և մարմնոյ » :

3 Օրբելեան ԼԹ. ԽԳ :

4 Ի շարապար պատմութեան եպիսկոպոսաց Սիւնեաց ասի յաւուրս Շահ Հիւսէինի լինել, յելս ԺԷ և ի սկիզբն ԺԸ դարու այլ

յա՛նորդ իւր Լարդի Ներսէս յաւուրս Փելիպպոսի կաթողիկոսի, որ էր յառաջին կէս ԺԷին :

5 Անգրագէտ, այլ բազմաշրջութեամբն և սուղ զիտողութեամբքն և աշխարհիկ լեզուան (քաւ ի ողջաւորութեանն), ոչ անարժան նշանակութեան. վասն որոյ և ցաւէ զի թերի Յոյ բանն, սկսեալ այսպէս. « Իս մեղաւոր Փերզատա Պիշիւլապէն, երկիր » Ղապանէն, իւրոտէն մարէն, կէ լոս (ի գեղջէ) Գետաթաղէն, Պատամեցեց ասքէն, Զ-տիբի թոռն, Միլլի (և) Հոստիֆի սասլայ (որդի), Ի-տի-տն, Փարոն, Պահլիս աղբեր. Էն տարին որ Հայոց թով. էր Ռիլ, որ ես իմ ասնէն ելայ, զլիսա առայ, սակական մուլորեցի, օտար աշխարհ եկայ : Առջի քաղաքն վան. էնկից ելայ կինեցի Պաղիշ քաղաքն. էնկից կինեցի Հիզու քաղաքն. էնկից կինեցի Ղարա Հեմիշ քաղաքն. էնկից կինեցի Ուրուպ (Եղեւիտ) քաղաքն. էնկ. կին. Էնտեքիս քաղաքն. է. Կ. Ատանայ քաղ. է. Կ. Գոնիայ քաղ. է. Կ. Ղարաւաւեր. — Քաթիոյ — Իլեհի. — Իլեւայիտ. — Ատանաբուլք, որ խոնգարին թախանայ : — Էն. Կ. Ատանայ քաղ. — է. Կ. Ղարաբաղատան երկիրն, յիչ

գուչակի մեծ և ոչ աննշան լինել սեղի, որպէս և յաւուրըս պատերազմաց Դաւթի պէկի, որ յամի 1737 գումարեաց աստ զորս ի Հայոց կողմանցն և ի Սիսիանէ. և խաղացեալ ի սահմանս Նախճաւանի եհարգիշխան նորին որ զայր յիւր վերայ: Չատ ի նորոյն է ի գեղս և հին եկեղեցի Ս. Ստեփաննոս, շինեալ անդստին յաւուրց Լիւպարոսի, այլ ոչ գիտեմ որպէս նորոգեալ: Բնակիչքն են 75 տուն Հայք և 100 տուն մահմէտական: Յանուն գեղս կոչի վտակ մի խաղացեալ ի մացառուտ ձորակ, յորոյ վերայ արկեալ է կամուրջ քարաշէն և թափի ի գետըն Որոտան: Յայնկոյս հաստատեալ է Դարպասեցոց սամարանոցս և արտորայս, և զտեղին Շամբ կոչեն, զի են իսկ անդ եղտուրք և ճահիճք, վասն որոյ և ոչ առողջատուն: — Մերձ ի Դարպաս յանտառամիջի են հանգըրուանք երկու կամ փոքր գիւղք Թուրքաց, Խոխիս և Բանդրոն: Դարձեալ, մերձ է ի Դարպաս կարմիր կոչեցեալ եկեղեցի աւերակ, 2 ի Թուականաւ. ըստ աւանդութեան՝ շինեալ ի Տարսայիճայ, եթէ չիցէ նոյն ընդ Ս. Ստեփանոսի:

Վերջին գետը Լորաձորոյ մերձ ի խառնուրդսն ընդ Որոտան գետոյն և մերձագոյն ի սա յալմէն, է ԼԾԵՆ հին գիւղ, Ս. Ստեփանոս եկեղեցեալ, որ ոչ թուի մեծ և նշանաւոր ինչ լինել կամ ունել. 30 տունք են Հայոց արգ ի սմա. ոչ յիշի ի պատմութեան. սակայն բովանդակ իսկ գեղեցիկս այս Լորաձոր կարօտի խնամով քննութեան, և հարկ է թէ ունիցի յիշատակարանս ինչ նախնեաց:

Ի Լծենոյ մինչև ի սահմանս Տաթևոյ կամ ի Կամուրջըն Սասանայի մի միայն գիւղ կայ ի ձորեզրն Որոտան՝ յահեկէն, գրեաթէ միջասահման երկոցուն, այն է Եայձի, որ ի գրիցն՝ ըստ պատմութեանց և թուրքացի աղաւաղութեան անուանն՝ գուչակի լինել Հարժիք հին գիւղ Յուցակին և պարգեւազրաց տերանց Սիւնեաց. յորս յիշի նախ յամի 837 իրբու սահմանակից Արծիւ գեղը՝ ի սորին հարաւայ, և Արիտայ. զոր՝ Սմբատ Ա թագաւոր

Բագրատունի՝ յամի 906 գնեալ ի տերանց Սիւնեաց, պարգեւեաց նորաշէն եկեղեցոյ եպիսկոպոսարանի նոցին. յետոյ Հասան որդի կորայ գնեալ էր և փոխանակեալ ընդ այլոյ գեղը, այլ հրամանաւ Վասակայ մեծի իշխանի դարձոյց յեկեղեցին. բայց վերստին կորցեցաւ ի նմանէ, և միւսանգամ յամի 1091 Սենեքերիմ արքայ հրամայեաց ժառանգողացն՝ Մանանայ մեծի իշխանի և Գեորգեայ՝ դարձուցանել ի նոյն, գրեալ վճիռ երկար: Թուի վասն հեռաւորութեանն յԱթոռոյն դիւրաւ բռնաբարեալ, վասն որոյ և միւսանգամ յետ իբր 300 ամաց՝ մեծ Սրբեւեանն Տարսայիճ յամի 1274 գանձագին աբարեալ զկէս նորին՝ բոլորովին դարձոյց յաթոռն, որպէս և արձանագրէ ի սեան նորին եկեղեցոյ: Եկեղեցին Եայճեայ կոչի Ս. Միխա: Ի Յուցակի միւսմ հարկատուաց թեմին Տաթևու՝ ընդ վեցեցուն գիւղիցս յիշեցելոց աստ ի Վերին Չոր վիճակի, եթեքորոք մի դասի, կամ առաջին յեթանեփն՝ Ըղուերծ յիշեալ և ի հին Յուցակին, և մերձ ի Լոր և ի Մրուց դասեալ, յորմէ երեւի որիչ յայնցանէ լինել և ոչ նոյն ընդ Դարապասի, որպէս ասէ նոր ոմն նկատող ճանապարհագիր: Երի Ըղուերծ յամի 1574-8, և եկեղեցիքն Ս. Ստեփանոս և Ս. Աստուածածին, ընդ որոց հովանեալ իսրայել ոմն ընդօրինակէ Դարական մի:

Միակ ծանօթ եւրոպէացի ուղեւոր այցող կամ անցող զանխուլ վայրացս Լորաձորոյ՝ է Սմիտս Եղիս ամբրիկացի քարոզիչն, որ գիշերս երկու (4 և 5 նոյեմբ. 1830) ազաւ ի Լոր գեղը, և արգելեալ վասն փոթորկի և սաստիկ ցրտոյ՝ ի տան գեղջաւագին որդոյ երիցուն, երկարօրէն գրէ՞ գրնակութենէն, զձեւոյ և զհանգամանաց կէս ստորերկրեայ տանցն, և զլեռուցիչ թոնոյն, զյիշաշ Հացէ նոցին. այլ առաւել եւս զեկեղեցական կարգաց և զերիցանց, զհասից նոցին, եւ այլն. գովելով զուշխուլութիւն ասպնջականին և զհարցասիրութիւնն ցետոր գիշեր, զի և հայր նորա երէցն՝ երբեմն զցայզն մինչև

(Եւջ):— Ե. 4. Լէի (Լեւոց) երկիրն. առի՛ր քաղաքն կամայնից, 600 տուն Հայական սակ (աղբ) այ. Լուսայ (Լոր) կայ. մէջն 12 պարոն Հայ շարէթ (զատասան) կ'անեն. 6 եկեղեցի Հայոց ասքն կայ:— Ե. 4. Խուլ քաղաք, Հայոց սար կայ 100 տուն. ա. մէն պարոնէք են, ուրանց գլուխ են:— Ե. 4. Չամոցայ քաղ. Հա. յեական սակ շատ կայ մէջն. իսկի խար(ս)ճ չեն ասլ. ուրանց զլուս պարոնէք են:— Ե. 4. Գրայք քաղ. որ Լէի Թագաւորին թախտն այ:— Ենկից կիսեցի Վարչովք: Ենկից կիսեցի Դանձկայ. ձովի պանդեր այ (շահաստան ծովեղեր):— Ե. 4. Աւամանաց երկիրն. Փառակայ քաղ. (Պրակա), որ Երզնայ Թագաւորի թախտն այ:— Ե. 4. Դելիյանայ (Խաւիոյ) երկիրն. վէնէտիկ, 12 պարոնի ձեռն այ. որ Ս. Մարքոս աւետարանիչին մարմին այ. ձովի մէջ այ. 6000 կարմունկ կայ մէջն, 6000 պարզայ կայ իւր մէջն. խիստ (լաւ?) քաղաք այ:— Ե. 4. Երանցայ քաղ. (Անգրեալ).— Ե. 4. Հուսուոյ քաղ. Ս. Բողոս, Ս. Պատրոսայ մարմին այ. Փափին աթոռըն այ. շատ Սրբոց մասն կայ:— Ե. 4. Յեանարի (Նաքուրի) քաղ. որ Թագաւորի թախտն այ:— Ե. 4. Ճիւրեայ երկիրն (Սիկլիոյ), ձովի մէջ այ. Խաչապուրի թախտն այ, սարայ այ. իւր մէջն 620 քաղաք ու գիւղ. ազա բուրն 665 աղան այ (մղան). աղէք քերտունէք (քրիստոնեայք) են. Հայական սակն խիստ կ'ողեն:— Ե. 4. Կուլ Մալիոյ երկիրն. ձովի մէջ այ. Սուրբ Ովանէսիս խաճկերցին (խաչակիք սպանդ) 60 պարոն զավի կ'անեն:— Ե. 4. ձովով փել լորենցայ երկիրն. մեծ պարոն զի նիստի:— Ե. 4. Լուսայ քաղ. 12 պարոն կի նիստի:— Ե. 4. Միւլեան քաղ.— Ե. 4. Թորին քաղ. որ մեծ

պարոն կայ իւր մէջն:— Ե. 4. Ի Սպանիայ Մարթիլ քաղ. իստական (?) մեծ Թագաւորին թախտն. յանունն այ Թագաւորին Փիւլիք. Թագաւորին իւր ձեռաց սակն կայ, ունի 11 Թագաւորի գեղ (11 Թագաւորութիւն). 15 մեծ պարոն երկիր. ամեն իւր ձեռաց սակ այ. տարին կէտր ունի 50 միլիոն կարմիր փելլորի. մէկ միլիոն 10 գէք այ, 100,000, փլորի այ:— Ե. 4. ձովով ինկէզաց երկիր, Լուիցյան Թագաւոր այ ինկէզն երկիրն, Դենմարքայ երկիրն, Իշկոցայ (Սիլոսիա) երկիրն, Շիվեցայ երկիրն. 4 Թագաւորի երկիր այ. Քրիստոս կայ ճաւատան, Միմուան, Չարչարան, Խաչկուլութիւն, Հա(մբա)րձու. զամեն աշէն կիսեցին մեռունուն, Էն աղայ կիսունք կիսայն. Էն եկեղեցին երեցն իրեք զիրքայ (անգամ) կ'անի Անուն Հաւր և Որդու և Նոգին Սրբուն. պատարաքին չեն ճաւատալ ընդ Քրիստոս, մէկ զիրքայ խաչ կ'աւ, ամեն սուրբորոյ կի ճաւատան. Ս. Մարիամայ սուրբէն պատեխուս (բարեխոս) չեն ստին. խաչ չեն անիլ. զարեքին խիստ կարկինք կ'անեն. Քրիստոսայ ձինունդին 15 աւր ութուրէք զի պակեն. պէնիլ չեն (ոչ գործեն). զուտեն խիմեն, ուրախութիւն անին:— Էնկից կիս. Փառանկ երկիր Փարթլ քաղաք, Թաքայ (որին թախտն այ) . . .

Աստ թերի Յայ ձեռագիրն, որով և կտաղանական տեսութիւնք Փիրգատէի ի քաղանջան երկրի անդ Փոռանկաց և յակնադիտակ մայրաքաղաքին. յորմէ ոչ է յայտ ուր զձեաց և ուստի դարձաւ ի գիւղ իւր Գեոտաթաղ:

1 Նոր դար, Է, 180:  
2 Տասն էլ բան, 240-250 գրոցն:

ցառաւօտ յընթերցմունս և ի հոգեւոր բանս տայր նոցա հսկել: Ըստ բանից նոցա՝ գիւղ մեծ էր երբեմն Լոր և բարգաւաճ, որում վկայ մեծաշէն և հին եկեղեցին. զոր թէպէտ արձանագիր դրանն թուեցուցանէ գրեալ իբրև յամի 1686, այլ թուի ինձ հնագոյն, թերեւս թուականն այն նորոգութեանն իցէ կամ այլ ինչ յիշատակի. և էին ասեն յայնժամ 300 գերդաստանք ի նմին. այլ յաւուրս բռնակալութեան Նատիր Շահի խոյս ետուն բնակիչքն յերկիր Թուրքաց ի կողմանս Կ. Պօլսի, և յետ քառասն. ամեայ ամայութեանն թոյլտուութեամբ Խանին Շուշեայ՝ եկին նոր բնակիչքն, (յամին 1830 էին 13 տունք). զորս հովուէր երէցն այն հայր գեղջաւագին և այլ երէց մի, և աւուցանէր մանկունս հինգ. նոքա հովուէին և զերկուս մերձաւոր գիւղիկս, մէն 15 տամբք, որք թուին ինձ Գե. տաթաղն և Գարապաս, զի ընդ այնս է ճանապարհն որ տանի ի Սիսիան, ընդ որ երթայր քարոզիչն (ի 6. նոյեմբ.) անցանելով ընդ գետոյն երկուսին, զորոց չյիչէ զանուանս. « Ի դադարել փոթորկին ի գիշերին, որ. » պէս զրէ, և առաւօտ անամպ հոտնեալ յանդիման » կացոյց զմեծութիւն լեռնասահման տեսլարանին, որ » զատուցանէր իմն յախարհէ զխորանիստ և զխաղաղա. » կան ձորահովիտն, ուր ապաստանեալ կայաք ի խստու. » թենէ մրկկին՝ զաւուրս երկուս: Գօղ նորընծայ սպի. » տակափայլ ձեան քօղէր զամենայն կողմանս մինչե. » ցկատար բարձրագոյն սարից, որք ի բարձրանալ արե. » զական ընդ ոլորտս, պայծառափայլ ճառագայթիւք նու. » րին շողային: Կազդուրիչներգործութիւն սառնատեսակ » օդոց՝ յորում ջերաչափն եկաց ի-23<sup>0</sup>, տայր իմն առա. » ձգութիւն ուզաց մերոց, և յագելարար զմայլել բովան. » գակ ազդմամբ մեծութեանն և գեղեցկութեան որ զմեզ » չընկալատեալ կայր: Սիրայիր հրաժարմամբ ի վանա. » տրէն մերմէ յուղի անկաք (յինն և 1/4 ժամու) առաւօ. » տուն, և ընդ ձորն ի վայր զնալով սակաւուք այսր անդր » դարձմամբք, անցաք ընդ հուպ ընդ երկուսին նախայի. » շեալ հանգրուանս: Գեռ այն ինչ երեալ էր հովուաց » հանել զհօտս իւրեանց ի ճարակ թփոց և զաղձից ի մի. » ջոյ ձեանն ցցուելոց, մինչ զեղմնաբարձ թիկունք նոցին

1 The storm passed away in the night, and a morning without clouds unveiled to us the grandeur of the mountain scenery, that shuts out from the world the deep and quiet valley, where we had found a refuge from the blasts of the last two days. A drapery of virgin white snow veiled every part to the top of the highest peaks, and, as the sun rose above the horizon, they were brilliantly gilded by his rays. The bracing influence of a frosty atmosphere, in which the thermometer stood at 23°, gave elasticity to our spirits, and enabled us to drink in the full effect of the grandeur and beauty that surrounded us. With an affectionate farewell from our host, we started at 9 and a quarter A. M., and following the valley through a few windings, soon passed the two little hamlets already alluded to. The shepherds were just conducting forth their flocks to browse upon the shrubs and weeds that peered up through the snow, while their fleecy backs afforded a warm and undisturbed footing to a species of magpie, which in these parts dares to face the severity of winter. In ascending the mountain

» ընծայէին ջերմիկ և անընթ ապաւնն աղգ ինչ Սնծեղ » (Magpie) հաւուց, որք ի կողմանս յայտասիկ իշխեն ըզ. » դէմ՝ ունել սաստկութեան ձմերայնոյ: Յելանել մե. » ղում ի լեռանն հանդիպակաց՝ երիվար գլխաւոր ջորե. » պանի մերոյ՝ ոչ գաեալ կառուան ոտից յանձուկ հետան՝ » ի սակս ձեանց, սահեալ անկաւ, և թաւալելով ընդ » գահալէժս՝ գլորեալ զնայր գառ ի վայր ընդ սպա. » առածսն. մինչև բարձրագոյն քան զայլնս ժայռ մի » 80 կամ 100 ոտնաչափ բացագոյն՝ արգել զնա. որոյ » ունելով զգերազանց քաղապնդութիւն ձիոց կողմանցս » յայտոցիկ, ոչ կրեաց վնաս տեսողական. այլ պատա. » հարն այն առաւել եւս զգալի արար մեզ զվտանգն » որ ի վերայ կայր՝ յանցանեկն մեր ընդ գետն Տաթեւոյ » աւուրքք յառաջ (3 նոյեմբ.): Ի գլուխ լերինն (ժամա. » նեայ) գտաք պուրակ մի նկուն կաղնեաց. յետին ժառք » անտառաց լերանցս ընդ որ անցաք. և արդարեւ յե. » տինք՝ զոր տեսաքս այնուհետեւ զճանապարհայն իբր » յ'800 մղոն ընդ զանազան դէմս, մինչև ան ցաք անդր » քան զէրգիւում յուղւոյ դարձի մերոյ ի Կ. Պօլսի<sup>1</sup> »:

84. ՍԱՀՄԱՐ ՏԱԹԵՎՈՑ. — Վերջին մասն զաւառին Եղկայ, այն է արեւելեան հարաւայինն, ընդ մէջ նա. խաղրեալ Լորանոյ յարեւմտից, և զաւառին Բաղաց՝ ի հարաւոյ և յարեւելից, և Հարանդայ՝ ի հիւսիսոյ, նշա. նագոյն քան զնաւն եղև ի հազար ամաց հետէ մինչեւ ի մեր ժամանակս, հաստատութեամբ ի նմին աթոռոյ եպիսկոպոսացն Սիւնեոց, և փոխելոյ ապա ի հաշակ. անուն վանս Տաթեւոյ: Թէպէտ և ոչ ընդարձակ երկիր և առանձինն ինչ վիճակ կարգեալ ի նախնեաց, այլ զի յաճախ շուրջ սահմանքն սեփական գրին աթոռոյն, զոր և մասամբ ցարդ ժառանգէ Ուխտն այն, ոչ է անձակ առանձնակ իմն վիճակ նկատել զնոյն. որում օժանգա. կէ և բնութիւն կամ զիրք երկիրն, գետահովիտ մի գո. լով ընդ մէջ յիշեալ սահմանացդ, ի հարաւոյ ընդ հիւ. սիս ձգեալ. որոյ գետակ (զոր ի դէպ և արժան է Տաթե. տոյ շուր կամ գետ կոչել), եկեալ ի կամպիոյ՝ լեռնէ բար. ձուէ 10800', և ընկալեալ վտակս ի լերանց անլրպետաց

beyond, the horse that carried our chief muleteer, failing by reason of the snow to secure a firm foot-hold in the narrow path, fell, and turned many a somerset as he rolled over and over down the rocky declivity, till arrested by a rock more prominent than the rest some fifty or a hundred feet below. Possessed of the exceeding hardness of the horses of this region, however, he sustained no permanent injury, and the incident only served to make us more sensible of the danger to which we had been exposed in the passage of the river of Datev on the 3rd. On the summit we found a grove of stunted oaks, the last forest trees we passed on these mountains, and in fact the last we saw in travelling not far from 800 miles in different directions afterward, till we were beyond Erzroon again on our return to Constantinople! — ELI SMITH and H. G. O. DWIGHT. p. 250.

2. Յամենայն քարաս Ռուսաց և տեղազբաց կողմանցս (Պոլս. Ապիլի, Ռասաէ, և այլն), նշանակի լեռանս այս սակաւ զանազա. նութեամբ գրութեան (Kambil, Kjambil, Kembil) ի Մ. Հր. Տաթեւոյ, և յոմանց նաև Թրաքսոյ (Trapaşar գրեալ) մերձա.

Լորաձորոյ, առ երի մեծի Անապատին և Սատանայի կամրջին թափի ի յորձանս Որոտան: Թուի ինձ ի հնու մըն՝ մինչև եր նշանաւորեալ Տաթեու եպիսկոպոսական աթոռովն՝ Գինահան գետ կոչել գետակիս, ըստ սահմանադրութեան Շահանդիսոյ՝ որ ի ստորեւոյ տեսցի, ի տեղւոյ վաղից նորին. և միոյ ի վտակացն՝ զոր յաշեկէն ընդունի՝ յարեւմտից, ի դէպ է լինել Յոռոյ գետն. զի յայտ է թէ Յուր յերի Տաթեոյ էր. զարդիս՝ Զրարչան կոչի, ըստ սմանց: Յերիս վտակս կամ օժանդակ շարս երեւի բաժանեալ գետոյն Տաթեոյ, գեղեցիկ բուսաբերութեամբ այգեաց և անդաստանաց. այլ ի խաղըս նոցին ոչ նշանակին ոչ գետը և ոչ մի շէն՝ ի բազմապատիկ տեղեացն մեծաց և փոքունց, ստէպ յիշեցնոց ի պատմէն ի սահմանագրութիւնս և ի նուիրատուութիւնս աթոռոյն. բայց միայն ի ստորին կողմն հովտին՝ երկու գետք՝ Տաթեու յաշեկէ և Տանձատափ յալմէն, և վանորայքն, ոչ ինչ կորի հեռիք ի ձորոյ Որոտան գետոյն. և ոչ միայն սակաւանդանքն տեղիք, այլ և հուշակեալ անապատիցն դիրք և հոշակագոյն Հարսնավազն՝ կամ ոչ բնաւ կամ ոչ քաղ նշանակին յաշտարհացոյց քարտի և ոչ ի մերայոց, մինչև շիշել անգամ զանուն Շահանդիսոյ՝ և զվաղիցն: Դոյզն ինչ բանք գիտնոց հանդիպողաց կողման՝ տան գուշակել խոժոռագեղ երեւոյթս հիւսիսակողման վիճակին, ի բնիկ սահմանս Տաթեոյ և անապատիցն, որոց նիստք վկայն լինել լերինս ոչ ցածունս, այլ և ահաւորահայեացս ի վերայ մտնունց ձորակաց և մեծի ձորոյն Որոտան. և ոչ միայն հաստատուն կերպարանս է անդ նշմարել, այլ և յեղափոխեալս ոմանս ի ներգործութենէ տարերաց. որպէս փրթած լերին և պատառումն երկրի, և վարումն անշէն և շինուածոյ մասանց՝ բացէ ի բաց, հանդիպեալ յամի 1658, զոր յերկարորէն ընթերցցուք յԱռաքել պատմիչ. իսկ հնագոյն պատմիչն Սիւնեաց յիշէ ի սասանութեանց երկրի խախտեալ և յառաջ քան զիւր ժամանակ՝ շինուածոց աթոռոյն, և այն ոչ մի անգամ միայն, սակայն ոչ մանրամասն ինչ աւանդէ: Ռատտէ որ հերու յայց ել և ագաւ ի Տաթեու (39 մայիսի, 1890), դիտելով յարեւելեան պատշգամէ վանացն՝ նշանակէ զգմբեթաձեւ պատարտեան կուտակս և զսեպաձեւ կրաքար ժայտս 100՝ ի բարձրութիւն, առ ափամբք Որոտան գետոյն, և անտառակս յայն կողմն գետոյն. առ որով ի Հս. սահմանաց Տաթեու յիշէ զՍյրտրեփե կոնաձեւ լեռուն, և պուրակս ցածուն ծառոց, և ի բուսոց գետնոյ զմտրակաձեւն Habenario յազգէ Շանձուոց:

Հին սահման թեմի եպիսկոպոսարանին Տաթեոյ անդրտին յ'Թ դարէ սկզբնաւորեալ, և հաստատեալ վերըստին յամի 906 առաջիկայութեամբ Սմբատայ Ա Բագրատունեաց թագաւորի և Յովհաննու կաթողիկոսի պատմիչի, տեարց և եպիսկոպոսին Սիւնեաց, Գագկայ Արժրունեաց տեառն, և բազմահոյլ աւագաց և ուամկաց,

զոյն ի Տաթեու. առ մերայինս ոչ յիշի կամովիլ. ընդ հակառակն Երզրազիքն ոչ յիշն զկապէլ, որ է Գագկայք, որոյ դիրք տեսցի ընդ հուլ՝ վկայեալ ի նախնեաց մերոց լինել յարեւմտակողմն Տաթեու, և զորչիք ի նմին տեղւոյ ուր կամովիլ նշանակի: Ինչն կրկին լերեք, եթէ նոյն է մի, որպէս կարծեմ, մեով տառիւ

այս է. « Յարեւմտից կողմանէդ սկսեալ ի մեծ գիտաւոր » սարէդ Գագրոյոյ (այն է կասպի կոչեցեալն) շրա. » քափովն մինչ ի Խոսիս ձանապարհն որ Լորաձորին » (230) սահմանն է. և ի հիւսիսոյ գեհաց՝ բնասեռովն ի » վայր ի գետն հանդէպ Խոտայ. և գետովն ի Խոտանան, » և անցեալ ընդ գետն փոքր ձորակովն որ ելանէ յԱ. » շագեաց Խոս ի Խոզաց, բլուրկովն նորին, բարակ ճա. » նապարհովն բացանորինն ?, նուրբ անդուր ձորակովն ի » վայր ի Դեղնաձորն և ի կամարջն, և ի կարմիջն ի Քաւ » ընձորն. և Քարաձորին մեծ բնասեռովն ի Սարն, և ի » բուն ճանապարհն որ գայ սարովն ի Հարսնավազն. և » Հարսնավազին ձորակովն՝ դառ ի կողմն յեկեղեցին՝ որ » ի պառակոյ ճանապարհին. և սալարտովն հատեալ ըզ. » Մեծ ձորովն ի միատր քարն՝ որ կայ հանդէպ ի յայն » կողմն մեծ ձորոյն. և հատանելով զմեծ Տափն ի յեր. » կայն խալն, և ջրաթափովն ի մեծ Խոսն, և ի ճանա. » պարհն՝ որ գայ ի Բաղացձորոյ, և անտի ի նոյն լեռու. » նրն Գագրոյ: » Հիւսիսային սահմանն ցուցանի ձոր » գետոյն Որոտան, այլ որ անտի ընդ արեւելս և ընդ » հարաւ՝ ոչ է ինձ արդ քաջայայտ, զի ոչ իսկ նշանակի » խտրոց կամ դարձուած արեւելիցն և հարաւոյ, այլ Թուի » լինել բուն ձանապարհն՝ որ սարովն գայ ի Հարսնավազն. » և Մեծ ձորն Թուի նոյն իսկ ձոր գետոյն Տաթեոյ. իսկ » որ ընդ մէջ արեւելից և հիւսիսոյ Սարն ի միջոցի բնասե. » րի Քարաձորին և բուն ճանապարհին՝ Թուի ինձ լեռունն » այն՝ « յորոյ վերայ Թանահտի վանքն կայ շինեալ », » ըստ Առաքելի պատմիչ: Զհարդ և է, այս սահմանք զը. » րեաթէ հաւասարաչափ երեւին ինձ բնական սահմանա. » ցըն վիճակին Տաթեույ զոր ի սկզբանդ նշանակեցի, քան » թէ հնագոյն սահմանին՝ որոշելոյ յամին 839 ի Փիլիպ. » պէէ Սիւնեաց գահերէց իշխանէ՝ որ վաճառեացն, և ի » Գաւթէ եպիսկոպոսէ՝ որ դնեաց 10, 000 դրամոյ. « լե. » րամբ և դաշտիւ, զոստին և զյրարբին և զարօտ երկիր, » զարտ և զմարգ. և այս էին սահմանքն. Յարեւելից » կողմանէ ուղեկիցքը՝ որ ի Հարժեաց և ի Բերդկաներէ. » լոյ ի գետոյ հատանի, և անտի ի բրտոյ որ ի շինագըլ. » խիդ, և անտի ջրափակն յՍտերջաց գառակ, և բնա. » սեռիդ ի վարդանայ մարգի խոռն, և անտի յԱրժիա » կատար. և յարեւմտից կողմանէ Լորաձոր՝ բնասա. » րաւդ. և ի հարաւոյ կողմանէ Հարժիք՝ որ ի ճանա. » պարհէ ի խաղոյ ելանէ, ձորովդ ի վայր ի Սեւաջուոյ, » և ի վեր ի սարն վաւանց ձորոյն սեռիդ: » Սեւաջուրն » կարծի միջին կամ հիւսիսային օժանդակ Տաթեոյ գե. » տոյն: — Զայսոսիկ կանխեցաք նշանակել առ փոքր ի » շատէ ծանօթութիւն յընթացոյց Տաթեու և համօրէն » տեղեաց վիճակին. յորում զատ ի վերոյիշելոցդ՝ կային » և Յուր և մերձ նմին Տամաղէկ և Արիտ, և Սառնա. » քար՝ զոր էառ Փիլիպպէ յեպիսկոպոսէն Գաւթէ փո. » խան կիսոյ Բերդկաներէչ գեղջ տուելոյ նմա: Անուանք և » տեղիք վաղ ուրեմն լեռեալք և շատք անյայտացեալք, որոց

Մ և Ս այլընտել անուանցն: Կողմն լեռուն յիշի ի պատմու. » թեան Գաւթի բէկի, որոյ զունդ մի զօրաց Կարն անդ զպաղաքիս, » և Թափեցին ի նոցանէ 900 տեսառուն:

1 Զաւալեան որ միակ տեղագրոյ է կողմանցս անձամբ կամ » յայլոց առեալ, ոչ յիշէ զպս տեղի:

փոքան յ'Ժէ դարու ժազեցան և պայծառացան Անապատքն Արանց և Կանանց, այսինքն վանորայք ճգնազգեցից, ի հիւսիսոյ և յարեւելից վանաց Տաթեւու, առ ձորեզերք Որոտան, յորոյ հանապազմառնչ խոխոյանս, աւաղ է, զի ոչ եւս խառնին մրմունջք մենասէր աղօթաւորացն: — Մատիցաք արդ ի քնին սակաւուց յայտնի տեղեաց վիճակիս. յորս՝ եթէ և շատք եւս այլք ծանօթք լինէին, տակաւին ծանօթագոյն և քաջանշան մնայր

85. ՏԱԹԵՒ. և ոչ այնքան գիւղն որքան վանքն՝ որ զնորայն կրէ կոչումն: Սա՝ եթէ արժան իցէ հետեւել հասարակեալ աւանդութեան, կոչեցեալ է յանուանէ Եւստամէի կամ Ստամէի ուրումն առաքեալ կոչեցելոյ, և աշակերտի Ս. Թադէի, իրրու եկելոյ և քարոզողի ի Սիւնիս, և անդէն կասարելոյ, և աղաւաղելով անուանն ի բերանս ռամկաց փոխեալ ի Տաթեւ: Բայց ոչ միայն երկբայելի յոյժ է՝ այլ և անհաւան ինձ. որում գլխաւոր նշանակ այն իսկ, զի պատմիչն Սիւնեաց Ստեփանոս՝ որ այնքան խնամով մանրասպտում առնէ զյինութիւնս երկրին և զայլն ամենայն, որպէս սիրելոյ սեփական աթոռոյ իւրոյ, և յիչէ զհին և զնոր սրբութիւնս հաւաքեալ լլս անդ, բազում անգամ արդեօք յիչէր և զայս, եթէ լուեալ կամ ստոյգ համարէր, ալ և ոչ մի անգամ յիչէ կարծեմ նախ աշխարհագիրն Վարդան ի ԺԴ դարու այդպէս գրեալ է ըստ գրուցաց. այլ թուի թէ և ոչ Եւստամէոս ոք աշակերտ Թադէի եղեալ է. զի ոչ միայն անծանօթ է այլոց եկեղեցեաց, այլ և ի մեր իսկ Յայսմաւորս ոչ գտանի սր տօնի նորա, այլ միայն ի յիշատակի այլոց ոմանց Սրբոց ի հարեւանցի. այն զի, եթէ ստոյգ էր աւանդութիւնն՝ հարկ էր յառաջ քան զայլոց Սրբոց նշխարս՝ զնորայն պահել և գտանել ի Տաթեւ. և ահա ոչ գտանէ և ոչ գիտէ ինչ Որբելեանն: Լաւ եւս էր արդեօք կարծել ըստ ումեմն, յանուն Ս. Թադէի առաքելոյ զվանսն և ոչ Ստամէի կամ Եւստամէի: Ինձ ամենեւին հայկական և հին թուի անունդ Տաթեւ, և հաւանսդն երիցագոյն քան զժամանակս քրիստոնէութեան. երաշխաւոր հնութեանն և հայութեան է և այն՝ զի ի Ներսիսեան Փահնամակի ընդ բարձականսն դասին և Տաթեւեանք. որ միանգամայն յայտ առնէ և զայս, զի ոչ լոկ հին, այլ և նշանաւոր էր տեղի, և բնակալք աւագաշուք տոհմի միոյ, գոնեա ի յիշողի գետածորակիս այսորիկբայց զի ոչ յիչի յառաջին ժամանակս պատմութեան մերոյ՝ չնն ինչ զարմանք, զի ահա և այլ բազում և հոչակագոյն եւս տեղիք Սիւնեաց՝ Թաքուն մնացին: Քրիստոնէական յիշատակօք եւեթ ծանուցաւ տեղիս այս, և այն ի նորհս եպիսկոպոսական աթոռոյն հաստատելոյ ի վանատեղւոյն, յ'Թ դարու, թէ և յառաջնոց դարուց անտի լուսաւորութեան ազգիս՝ սրբարան կամ վանատուն հաստատեալ էր անդ, ըստ պատմութեան երախտաւոր հեղինակի ծանօթարարի աշխարհիս Սիւնեաց: Եւ զի անուամբ Տաթեւոյ երկրքին եւս տեղիք՝ և գեօղն և վանքըն լին, և անունն սեփականագոյն է գեղին, իսկ համբաւն՝ վանացն, արժան է ճանաչել ուրոյն զդիրս նոցին:

Փիւղն Տաթեւ յահեկէ գետակին կայ և սակաւուք հեռի, ի ստորոտ հրաբղխեայ լեռնակի, իբր մղոնաւ և կիսով ի հարաւոյ ձորոյն Որոտան. վանքն յաջմէ ջրոյն իբր կիսով մղոնաւ հեռի ի գեղին, ի Հո. ելից նորին, և կշիռ ի հիւսիսոյ և հուպ Տանձատափ գեղի: Յիշատակօք կամ տեղագրողք ինչ վայրացս՝ շլացեալք շքով վանացն, մոռանան զգիւղն<sup>1</sup>, զբնականն և զքաղաքական նիստոհմին Տաթեւեանց, որոյ դիրք և հայեացք և յախուան հասանք գետոյն՝ հարկ է թէ ոչ սակաւ շքեղք և ահեղք իցեն, և ոչ վայրապար ընտրեալ տեղի բնակութեան տոհմապետին, ի բարերոյս, յառողջարար և ջրառատ և ի շափաւոր գիտակ վայրի, ոչ կարի հեռի ի Գագրոյ լեռնէ՝ յիշելոյ ի հին սահմանին. թերեւս առաւել քան զվանսն մերձ և չորջ ունելով ձորս և խոխոմս խորագոյնս, անսպառելի վիժանաւք և բժժանաք, որք երբեմն և հեղեղս յարուցանեն աւերածուս և մահաբերս իսկ. որպէս և սակաւ ամառ յառաջ (1887, ի 14 սեպտ.) ի յորդութենէ անձրեաց վարարեալ գետակին, ոչ միայն փլոյց և ջրատար արար աղօրիս չորս, և անատուն ոչ սակաւ, այլ և խեղդամահ տարաւ երիտասարդս երիս: Վարի իսկ ընդարձակ է չէնն, և մի ի սակաւուց դիւղորէից աշխարհին՝ որք համակք հայաբնակք իցեն, 200 շափաւոր բարձեւ տամբք՝ որոց երեւք հային ընդ հարաւ, և հին եկեղեցեաւ Ս. Մինասայ: Միակ ծանօթ ինձ եւրոպէացի որ էանց ընդ գիւղս, է քարոզիչն ամերիկացի Սմիտ, զոր տեսաք ի Լորաձոր, տեսցուք և ի վանսն՝ ուր եկաց ընդ երկար, իսկ ընդ դիւղն էանց հապանակով, և խոստովանի՝ զի ոչ ժամանեաց քննել, վասն ցրտոյ և ձիւնելոյ յայնմ աւուր (4 նոյեմբ. 1830), և ի ժամս չորս՝ եհաս ի Լոր, հատեալ անցեալ ընդ ձիւնապատ լեռինս, ուղեկից ունելով ի վանացն մինչեւ ի գիւղն Տաթեւ՝ զառաջնորդն, որ գայր ի պաշտօն հանգստեան նախորդին իւրոյ Մարտիրոսի (+ 16—28 հոկտ.):

Նախնի աւագամեծարութեան Տաթեւոյ յայտարար է և գոն սեփական ժառանգութիւն նահապետաց Սիւնեաց, որպէս գրէր ի վճռին ինքն Փիլիպպէ տէր Սիւնեաց և գեղին, յամի 844, յընծայելն զայն, (յետ հնգից ամաց վաճառելոյ զսահմանս՝ Դաւթի եպիսկոպոսի, որպէս տեսաւ ի վերջ), եկեղեցոյ եպիսկոպոսարանին. այլ յայտ է թէ կային տակաւին ի գեղին առանձինն տանուտեարք և աղնուազգիք, ընդ որս յետոյ և Որբելեանքն, որոց ցարդ գտանին սերունդք, և գլխաւոր ի նոսա Մէլիք Մանուչար, արժանապատիւ այր: Ի ժամանակի գալստեան Դաւթի բէկի յազատութիւն երկրիս Սիւնեաց, յամի 1722՝ Դաւիթ ոմն էր մէլիք Տաթեւու, այլ ուրացեալ և Բաղրի կոչեցեալ, հաւատարիմ կուսակալին Պարսից. վասն որոյ և զինեալ զարս Տաթեւու և ամրացուցեալ զգիւղն՝ պատրաստէր ընդդէմ Դաւ

<sup>1</sup> Կարապետ Մատինեան Աղեքսանդրապօլսեցի կարեւոր գիտելիս հրատարակեալ է զգեղին յԱսորատ օրագրի Էջմիածնի, Գ. 227—232. և ըստ յուսոյ նորս յարգեմք զգրուածն: Բազում գովութեամբ խօսի զբնակչացն, մանաւանդ բազմատեղով ընդ նայրենակիցս իւր Շիրակացիս: Յետ նորս Արգամ ոմն (կեղծոմուն)

ստորագրէ զՏաթեւոյ վանս (ի Ճանապարհորդութեան Նախագրութեան իւրում Եւրոպայի Տաթեւ, հրատարակեալ ի Նոյր Դաւ. Ե, թիւ 40), աւագելով զխանդարեալ և զանխնամ վեհակ վանացն:

<sup>2</sup> Եղիս Սմիտ յամի 1830 առէ, ոմանք 50, այլք 80 տուն աւելին: Տեղագրք ոմանք զԲէլք (ի Մշակ Գ. 8. Գ. 9) տուն 200:




թի. այլ սորա անապարհալ « գայր հասանէր ի վերայ նո »  
 « րա, զամուրսն պաշարէր. և յետ երկուց աւուրց ըզ- »  
 « բաւմբ ածէր և զնա և զամենայն ինչս նորա կալեալ ի »  
 « Շենհայր ածէր, և հրամայէր նմա զաւուրս երկուտասան »  
 « ի մէջ եկեղեցւոյն յանդիման ամենեցուն ասել բարձր »  
 « ձայնիւ զառածս զայս ուամկաց, թէ,

Լոյսն Լուսաւորչի հաւատոյն,  
 Վայ ուրացող մարդոյն.

« ապա հատանէ զգլուխ նորա. և ինքն երթայ բնակի ի »  
 « Տաթեւ »: Յետ երկուտասան կամ երեքտասան ամաց  
 Արաւհամ Գ. կաթողիկոս ի շրջեն յուխտ վանորայիցն՝  
 եկն և ի գիւղա յայս, և աստի հաւաքեաց ինչ ինչ և ա-  
 ուքեաց առ կարօտեալ կուսանս Շենհերոյ անապատին:—  
 Սահմանք գեղին՝ քաջ մշակեալ բերեն ազգ ազգ պիտա-  
 նի արմտեաց, բանջարեղինաց և պտղոց. են և բացա-  
 զոյն ագարակք և գամբ հօտից, և արօտք պարարտք ի  
 սնարս Գագրոյ լեռին: Գտանին անդ և երէվայրիք, այ-  
 ծեմօւնք և եղիւրուք, և հաւք որսականք<sup>1</sup>, յորոց որս  
 կրթին և մանկունք, մանաւանդ ի ձմերանի, որով և ա-  
 բուորագոյնք և կայտառք եղանին և երեւին: Դարմանեն  
 և մեղուս ի փոքու ձորակի, յարեւելից վանացն, Ընկը-  
 զուտ կոչեցելոյ վասն յուրվութեան ընկուզենեաց: և  
 առաքեն զմեղրն պատուական ի վաճառ ի Շուշի և ի  
 Նախնաւան: Տաթեւացիք գրեաթէ առ հասարակ հողա-  
 գործք են և անասնադարմանք, բայց միայն զկարեւոր  
 զգենիխ իւրեանց ինքեանք ճարտարեն, հանդերձս ա-  
 սուեայս և խոյրս օրենիս:

86. ՏԱԹԵՒՈՑ ՎԱՆԻԲ ԵՒ ԵԳԻՍՏՈՒՆՆԵՐՆԵՐ. — Անմարթ  
 է ստորագրել զտեղիս՝ մինչչեւ ընթերցեալ զՆերմաշերմ  
 բանս պատմչին Սիւնեաց. որ՝ վասն նախորդաց իւրոց  
 ասէ, բնակեալս « ի գեղեցկավայր տեղւօջս, որ իբր բար- »  
 « ձրր դիտանոց հայի ընդ արեւելս ի բազում գաւառս, »  
 « հանդէպ շերանցն Իիդափայտու, ուր բազմութիւնք »  
 « սուրբ վկայիցն հանգուցեալ կան. յոյժ առողջասուն, »  
 « և վայրն հարթայատակ, շրջապատեալ բարձր և սուր »  
 « լեռամբք իբր կարակնակերտ կիսաբոլոր: Յառաջոյ վա- »  
 « նիցն ձորք և խոխոմք խորագոյն, յոյժ ընդարձակագոյն »  
 « և գեղեցիկ. ընդ որ անցանէ ահագին զնդնչմամբ գե- »  
 « տըն Ոլրտան. և ձորն այն լի այգեստանեօք, և դրախ- »  
 « տացեալ զանազան բուրաստանօք: Եւ էր ի տեղին ի »  
 « վերայ բարձրագոյն քարին՝ եկեղեցի խրթին, անտաշ »  
 « վիմօք կրաշաղախ ձուլեալ, յոյժ ի հին ժամանակաց, »  
 « յաւուրց անտի Սրբոցն Ներսիսի և Սահակայ. և աս- »  
 « կաւ կրօնաւորք մշտաջան ճգնութեամբ բնակէին ի »  
 « նմա. և էր տեղին հեռի յամենայն հինից թշնա- »  
 « մեաց. զի միջոց էր աշխարհին, յանդոյթ և ի զա- »  
 « ուանց տեղի. և ամրացեալ ի մէջ երկուց արքունական »  
 « գահոյիցն, Սիւնեաց և Բաղաց<sup>2</sup> »: Գեղահայեաց դիրք  
 տեղւոյն, բարձր և սուր լեռինքն, և անուանք իսկ մեր-  
 ձաւորին՝ Քանահտի, և նոյն իսկ Տաթեւու, կարծեցու-  
 ցանեն ինձ մեհնատեղի ոչ աննշան լինել վանատեղւոյն,

և սրբեալ ի պաշտօն Առաւօժոյ ճշմարտի՝ Ս. Լուսաւոր-  
 չէ կամ յորգւոց նորին. որոց ուղեկից « իշխանքն Սիւ- »  
 « նեաց որք. գնացին ի կեսարիա և ի մեծն Հասմ, և »  
 « յայլեւայլ ժամանակս, որք բազում փափագանք ժո- »  
 « ղովեալ էին... զնշխարս առաքելականս և հայրապե- »  
 « տականս և մարտիրոսականս ի գլխաւոր և յերեւելի »  
 « Սրբոցն »: Էր ինչ որ աստ և էր որ յայլեւայլ կողմանս և  
 ի հայրապետանոցին Սիւնեաց պահէին. ի վրդօվել աշ-  
 խարհիս ընդ լծով իշխանութեան այլազգեաց և ի փոփո-  
 խել կայից իշխանաց և եպիսկոպոսաց, « խնդրեալ յի-



86. Դուռն եկեղեցւոյ Տաթեւ գեղը.

« խանացն՝ եպիսկոպոսացն Սիւնեաց զտեղիս զայս, ե- »  
 « կին և բնակեցան ի սմա... բայց զերբն և զառաջին ե- »  
 « պիսկոպոսն որ աստ եկն՝ ոչ ծանեայ. միայն ի Տէր »  
 « Գէորգեայ և այսր գտի նշան... բայց դիտեմ զի բա- »  
 « զում ժամանակօք բնակեալ էին անդ »: Տէր Գէորգ  
 եկաց եպիսկոպոս յերկրորդ քառորդի թ դարու. բա-  
 զում ժամանակքն թուեցուցանեն ողջոյն դարս. քանզի  
 յիշատակագիր Շահանդիստոյ (որ տեսցի սուղ ինչ յե-  
 տոյ), յեւս է դարու կամ առ անազան՝ ի օկիզքն Ղի՞

1 Յորս զբէ կարագետ Մատին. ՎՄ-բ-հ-... Մլ-հ-... Ի-...  
 կ-... և այլն:  
 2 Օրբելեան, ԼԹ:— Ընդօրինակող պատմութեան և շարա-

զորդ յաւորագաց նորին Սիւնեան վարդապետ Շենեցով, յամի 1830,  
 համառօտէ գնկարագիրն՝ բանիւ. « ի բարձրագիւր լեռինս Մատ-  
 յ թէի, ի մէջ բազմաբոյս և անուշահոտ ծաղկանց »:

ցուցանէ արդէն նշանաւոր լինել եկեղեցւոյն Տաթեւոյ՝ որում աւանդեաց նա ընդարձակ կալուածս:— Որ և իցէ առաջին եկն՝ երբ ընդ իւր զսպաս սրբութեանցն. « զաստուածամուկ սուրբ Նշանն՝ որ էր ի կենարար » փայտէն, բերեալ ի յունական աշխարհէն, և ընձե. » ունալ եպիսկոպոսացն Սիւնեաց, ի պահպանութիւն » վիճակեցոց սոցա առաջին իշխանացն . . . և զաստուած. » ընկալ խաչն Բարգեճեանն՝ որ ի Վասակայ որդւոյ Բար. » կայ որդւոյ Անդոկայ՝ կազմեալ էր յարծաթոյ, ի շափ » հասակի առն միոյ, և ունէր յինքեան մասն ի փրկա. » կան փայտէն: . . . Ընդ որս էր և նշխար մեծին Յովհան. » նու, և Ստեփաննոսի Նախավկային և ԵԱ առաքելոց, » և Սրբոյն Գրիգորի, և ալ Սրբոյն Հովսէփմեայ՝ նոյն » մարմնովն. և այլ բազումք որոց ոչ գոյր թիւ. եւս և » գերազանցն մարդկային բնութեան՝ Հերբ Սրբաւոյ » Աստուածածնին: Զայս ամենայն բերեալ հանգուցին ի » սուրբ եկեղեցւոյս, և կազմեցին զսա փարթամ գան. » ձարան աստուածութեանն: Զէր անդէպ անբիւ ասել զՍուրբսն և զսրբազանս, եթէ էին անդ հաւաքեալ 9800 Սրբոց նշխարք, որպէս գրեն յշատակագիրք ոմանք ի յետին դարս:

Յայտնազոյն ժամանակ հաստատութեան և շինու. թեան եպիսկոպոսարանին և վանացն՝ սկսանի յաթու. ռակաւութենէ Դաւթի եպիսկոպոսի՝ յաջորդին Գեորգեայ, որ և յամի 839 զնեաց ի Փիլիպպէէ նահապետէ Սիւնեաց 10,000 դրամոյ զլուրջ սահմանս նոցին, որպէս վերագոյնդ գրեցաք ըստ պատմին. « և գրեցին կտակ » յաւիտենական, և կնքեցին իւրեանց մատանեալ. » և յետ ամաց հնգից (844) նոյն « Փիլիպպէէ՝ ըստ իւրում » մեծահաւատ և մեծախորհուրդ բարեպաշտութեանն՝ » կամէր փարթամացուցանել զվանս Տաթեւոյ, և կեն. » սացուցանէր զամենայն արտաքին գոյսն իւր՝ յիմանա. » լին և յանդոծն. միաբանեալ սուրբ եկեղեցւոյն և զո. » գի իւր ի Ս. Խաչն և ի Տէր Դաւիթ. ընծայէ զմեծա. » գոյնն պարգեւ՝ զանպահական գիւղն իւր զՏաթեւ՝ ի » սուրբ եկեղեցին, հաստատուն և անխախտ պայմանաւ. . . » և է այսպէս վճիռ գրին. « Յերկերիւր իննսուն և երեք » թուականութեանս Հայոց, որպէս կամ եղև ինձ Փի. » լիպպէի որդւոյ Վասակայ Սիւնեաց Տեառն, ետու » զՏաթեւ վանս իմ հոգեացս՝ ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ » Սիւնեաց եպիսկոպոս, յիմ հօրէն յիս հրիտակ հա. » սեալ էր. անխու, էշքարէ՜, ամենայն սահմանաք լե.

» րամբ և դաշտիւ, այգեք և ընկոյղեք, մարգղեանաք » և ջաղացանով, և որ ինչ համորէն սահմանք են. և մի » որ իշխեսցէ յետ իմ անցման՝ իմ որդիք կամ եղբարք » կամ այլ խոստակաբարք, հեռացուցանել զայդ գիւղդ » յայդ եկեղեցւոյդ և ի Ս. Խաչէդ. եթէ ոչ՝ նզովեալ լիցի » յԱստուծոյ և ի սուրբ եկեղեցւոյդ և ի Ս. Խաչէդ, և » ի Հոգեւոր Տեառնէ անէծս կրեսցէ. Ես ետու ամենայն » սրտի մտաք ի ձեզ՝ ի Տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկո. » պոս, վայելել խաղաղական կենդանութեամբ, և որ » յետ ձեր այլք նստին յաթուր՝ վայելցեք մինչև զը. » գալուստն Քրիստոսի», եւ այլն: Վկայ և ձեռնարկու վճռագրին նշանակին ութ աւագ իշխանք Սիւնիք, երե. քին որդիք իւր, և հնգետասան յաղասաց իւրոց, և ինն վանահարք և երիցունք, յորս Գրիգոր՝ դրաներէց, և միւս Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ, Մանկիկ՝ Ծղկոց քորեպիսկոպոս: Զայս վճռագիր ունէր ի ձեռին պատ. մինչ Ստեփանոս յետ 850 ամաց, և « մատանեալն որ » կար ի վերայ մագաղաթի, ասէ, ունէր վեց կնիք զմե. » ժամեծ իշխանացն վանս առաւել հաստատութեանն: »

Յորդորեալ աստի և այլոց իշխանաց ձեռնարկողաց վճռագրին՝ յաւելին և ինքեանք սուրս. որպէս, Հրախատ Տէր կովսական գաւառի՝ զգիւղն Նորայիցիկ, գրեալ ի նմին ամի, 844, հաստատուն վճռագիր և կնքեալ մատա. նեալ իւրով և Գրիգորի Սիւնեաց Տեառն: Յերկոցուն եւս վճռագրոց յայտնի՝ զի եկեղեցի ժամանակին՝ շինեա. լըն ոչ յաւուրց Ներսիսի և Սահակայ, այլ յեպիսկոպո. սաց եկելոց այսր և բերողաց երկոցուն պատուական խաչիցն, ի նոյն անուն Ս. Խաչ կոչէր. իսկ յայսմ ժա. մանակի յամի 848, « երանելի և փառաւոր իշխանն Փի. » լիպպէ՝ շինէ եկեղեցի մի գեղեցկալիչն՝ մերձ հին եկե. » ղեցոյն, ի հարաւայ կողմանէ, յանուն Ս. Լուսաւոր. » լին Գրիգորի. և ինքն վախճանեալ դնի անդէն ի զը. » րանն. . . իսկ եպիսկոպոսն Դաւիթ կտմեցաւ մեծապէս » կարգել յիշատակ մեծի երախտեաց նորս ամ յամէ, և » արձանացոյց գրով»<sup>3</sup>:— Սողումն որ յետ Դաւթի և Յովհաննու եկաց եպիսկոպոս Սիւնեաց ի յետին կէս թ. դարու, « մեծալան ճգնութեամբ զարդարեաց զսուրբ ա. » թուս զանազան կարգաք. և էր հանդիպեալ սմա մա. » սրն ինչ յաստուածարարձ խաչէն՝ որ ունէր յինքեան » նիչս ներկուածի արեամբն Յիսուսի, յորմէ ահադին » և մեծամեծ նշանք լինէին. տայ կազմել խաչ յոսկայ » ի մեծարհեստ ճարտարաց և զարդարէ մեծագին տ.

1 Օրբել. Լիթ:— Անիոս, այսինքն առանց խուկելոյ, ոչ յափըլ. առկեալ, անբունագատ. իսկ եզիւրի, որ և ոչորայ գրեալ առ նախնիս մեր, բառ պարսիկ՝ յայս յանդիման նշանակէ:


2 Որպիսի և իցին ժառանգք:

3 Եւ էր գրեալն այս ինչ. « կամ եղև ինձ Դաւթի՝ Սիւնեաց ե. պիսկոպոսի, յաղաքս աստուածապա՛ Տեառն Փիլիպպէի հոգեա. ցըն փրկութեան և լուսաւորութեան, և մշտնջինուոր. և ան. մտական կենացն արժանի լինելոյ. վասն զի նա զիս առ նոյն կատարեալ մաք ազաւէն և օգնական իւր արար առ Աստուած՝ վասն հանգերձեալ կենդանութեանն. և թէպէտ և ամենայն ազգ մարդկան ընդ մեզք փակեալ է ի կամս իւր, ըստ իմաստ. նոյն բանի. Թէ՛ չիք մարդ որ ոչ մեղանչէ. քանզի ոչ ոք ի հոգե. ծնելոց կարաց հասանել էմարտապէս սրբութեան և կտաա. րեալ արդարութեան, թէպէտ և բազումս գործեցին զառաքե. յութիւնս. թողում ասել զայնոսիկ որք ի կամակատար նշտու.

Թիւնս են հանապարդեալ վայելչութեամբ. սակայն նորս մա. սըն ինչ երամանակատար եղեալ իմում բանի՝ բազում ինչ բարե. պաշտութիւնս գործեաց. յաղաքս որոյ ակն ունէի կատարեալ իսկ թողութեան հասանել ի Տեառնէ. իսկ հասարակացն ժամանեալ վախճան կենացս պարսիկ՝ ոչ ետ ժամանել ըստովմեք մաքրու. թիւնս գործել ի ձեռն զլլմամբ ապաշտանաց, և այլ ինչ պէ. պէս հոգեւոր շինողութեան. այլ ամենայնցն խոփանուած գործե. ցաւ սկզմանցն բարեաց. և մեծապէս աստուածապաշտ նշխարու. թեան շրջապատեաց զիս յաղաքս պարսիկ: իսկ ապա աստուա. ծային իմ ազգեցութեամբ, մանաւանդ զի արժանի իսկ էր, ըստ իւրում կատարելապէս երախտադրութեանցն առ սուրբ եկեղե. ցիս, սահմանոց և ընչիւք և այլ բազում պայծառութեամբք (տա. տասեցի ի սուրբ տեղիս յայստիկ բարւոյ յիշատակ զկնի նորին կատուցումն փոխարինի բարեացն. զի յամենայն աստուալ զուք որ ի սուրբ եկեղեցւոյս էք բնակեալ ի Տաթեւոյ վանս, զմին քտա.

» կամարք և մարգարտով, և զնէ ի նմա զփայտն, և գրէ  
 » ի վերայ զիւրն անուն, և ընծայէ ի սուրբ եկեղեցին, և  
 » տայ ի Ս. Խաչն. և գրէ ինքեան յիշատակ կտակաւ »,   
 յամի 881. յորում ծանուցանէ զի զկոտար Խոտ գեղը  
 տուեալն ի Տէր Գէորգայ ի կալուած Ս. Խաչին և յայ-  
 լոց յափշտակեալ, դարձուցանէ ի նոյն. և յաւելու զԴա-  
 րատափ՝ գնեալ ի Հրահատայ իշխանաց իշխանն 1300  
 դրամի, որ յայտ է թէ սահմանակից էր Խոտայ, զի տէր  
 սորա Վասակ նախ ձեռնարկէ ի վճռագիրն. և զմասն  
 « Աղբնոյն շինին (յորայ) առաջեւ էր երեք դռք երկիր » :  
 — Տասն ամաւ յառաջ (871), Զուանդէր իշխան որդի  
 Սահակայ Տեառն Սիւնեաց փոխանակեաց զԱրուքս  
 գիւղ իւր որ ի Բաղս՝ և ետ ի Ս. Խաչն, փոխանակ Քեխ  
 գեղը Կովսականի, և էտու զայն, երկուստեք հաւանու-  
 թեամբ գրեալ վճիռ : Եւ եւս յառաջագոյն յամի 867

Քուպիդուխտ դուստր Վասակայ նորոյ նահապետի տե-  
 րանց Սիւնեաց և կին Հրահատայ իշխանի, անորդի գո-  
 լով, զիւր սեփական գիւղն Ման որ ի Բաղս, զժառան-  
 գեալն յեղորէ իւրմէ յԱտրներսեհէ, և յ'առնէ իւրմէ  
 Հրահատայ, պարգեւեալ էր ի Ս. Խաչն, հաստատուն  
 վճռագրով : — Յաջորդեալ զՍողոմոն՝ Տէր Յովհաննէս,  
 որ ամս երկար եղեալ էր յեպիսկոպոսարանին և փա-  
 կակալ եկեղեցւոյ Ս. Խաչին, « տեսանէր (զայն) հնա-  
 » ցեալ ի բազում ժամանակաց, նաև ի շարժմանէ իսկ  
 » խարխալեալ, երկիցս և երկիցս երեւեալ նմա հրեշտակ՝  
 հրամայէր քակել զայն և շինել նոր և մեծ « յանուն սուրբ  
 » և զյիւստոր Առաքելոցն, Վիմին Պետրոսի և առաքելոյն  
 » Պողոսի... և իւրով մականաւ ծրագրէր զտեղին » : զոր  
 ծանուցեալ նորա միաբանիցն և ամենայն իշխանաց Սիւ-  
 նեաց, յորդորէին և ձեռնտու լինէին ի շինութիւնն :



67. Տարեայ վանք .

« գլխովին իսկ մեծ իշխանն Աշոտ և եպիսկոպոսն Տէր  
 » Յովհաննէս՝ մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ կա-  
 » յին ի վերայ գործոյն. և աստուածային կամակցու-

» թեամբն սկիզբն առնեն շինուածոյն և արկանեն հիմն  
 » յ'ՅԽԴ (895) թուականին Հայոց » որպէս և արձանա-  
 գրեաց իսկոյն ի սկզբան շինուածոյն .

**Յամին յորում թուականն Հայոց ՅԽԴ էր, եւ Զատիկն ի նաւասարդի  
 Դ, ես Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեացայ եպիսկոպոս Սիւնեաց զկնի  
 Տեառն Սաղաւմանի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս .**

Մեստան ամ տեւեաց շինութիւն եկեղեցւոյն, յոր՝  
 աւանդի, վաստակեալ հարիւր քարահատաց. և այսպէս

կատարեալ զեկեղեցին (յամի 906) « կամար երկնաման  
 » գմբեթայարկ ճեմարան իմն հրեշտակաց և քաւարան

սունս հարկաւորաբար կատարեցէ վաս՝ նորա հոգեացն փրկու-  
 թեան, և զիբանի ում թողութիւն եղև մեղաց սաղմոսը՝ յորում  
 տեղւոյ կարգեալք եմ՝ յամենայն աւուր անխափան աստալիք, և  
 Տէր սղորմեա վաթսուս ի վերայ. Եւ զոր մահուան նորա հանգու-

ցելոյ պաշտամամբք յիշատակ առնելով, որ է ի քաղց ժնին : ...  
 Եւ կեցցի զայս զիւր յիշատակի առ ձեզ, սրբասէր քահանայք և  
 հղանազեաց կրօնաւորք, վասն առ յապագայիցն հաստատութեան՝  
 իմով սովորական մատանեալ, յ'ՄԼԷ թուականին Հայոց » :

» մարդկան. ի տալածոյ վիմաց և ի քերածոյ քարանց,  
 » գաղատասաղէն իմն յարմարեալ, ակնախտիդ տեսո,  
 » դաց. ի 100 կանգնոյ բարձրութիւն նորա, և ի 48 կան-  
 » գնոյ երկայնութիւն նորա, և ի 24 կանգնոյ լայնութիւն  
 » նորա, ունելով յինքեան չորս խորանս՝ բաց յաւագ  
 » խորանէն. և ըստ Սաղմոսեան յարկին կամ Զորա,  
 » բարեշինանին կառուցեալ ի մէջ տանն երկուս սիւնս  
 » հրաշակերտս, զԲայոս և զԲաքոսմ<sup>1</sup>, որք հաստակե-  
 » ղոյս խարսխօք և բարձրաբերձ թակաղակօք պարա-  
 » բարձեալ ունին զաւագին թանձրութիւն երկնաձեղուն  
 » քարակարկառ յարկին. և այս ի խորհուրդ երկուց զըլ-  
 » խաւոր առաքելոցն՝ Պետրոսի և Պօղոսի, յորոց նըլ-  
 » խարացս եղան ի ներքոյ սեանցս. և բազմութիւնք սըր-  
 » բոց նշխարաց անդ գումարելոց... եղան ի հիմունս և  
 » յանկիւնս եկեղեցւոյն » 1-Այժմեան չափ և ձեւ կաթո-  
 » ղիկէի վանացս ոչ պատշաճի ըստ ամենայնի՝ ստորա-  
 » գրութեան պատմիչդ. և այս ի սակս կրկին շինութեանց,  
 » որպէս տեսցի յառաջիկայսդ: « Անգնէ և մերձ եկեղե-  
 » ցւոյն՝ հանդէպ դրանն հարաւոյ, Սիւն մի գարնանայի,  
 » յանուն Սրբոյ Երրորդութեանն, ի մանր քարանց պա-  
 » տուածեալ, ի չափ երեսուն կանգնոյ. պարսպէ և զե-  
 » կեղեցին սրբաքարով, և ապա զվանսն կոփածոյ քա-  
 » բամբը: Եւ զի էր նիստ տեղոյն անյարմար, հարթէ  
 » զթանձրութիւն գեանոյն, և զխորութեան վայրսն  
 » բարձրացուցանէ կրաշաղախ որմովք: Դինէ և Գաղտա-  
 » նոցս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ,  
 » բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն, և  
 » հարթեալ հաւասարեալ զվայրն՝ շինէ և սրբաղէն Տրա-  
 » պիզս և Գործատնիքս, Հաւքարանոցս և Սրբատունս և  
 » Գրատունս: Եւ ի գրան եկեղեցւոյն՝ Տուն աղօթից, և  
 » տեղի Դավթանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց:..  
 » Եւ պայծառանայր (տեղին) քահանայական և կրօ-  
 » նաւորական դասուք ի չափ հինգհարիւր եղբարց. լի էր  
 » և ծովամատոյց փիլիսոփայիք երաժշտական երգոց. ճոխ  
 » էր և վարժարանն վարդապետական կրթութեամբ. նա  
 » եւ արնեստաւորք Նկարչացն և Դրողացն՝ անհամեմտք:  
 » Ապա ի խնդիր լինէր աշխարհախումբ հանդիսի, առ ի  
 » կատարել զնաւակատիս մեծի և առտուածահրաշ տա-  
 » ճարին » . յոր եկին թագաւորն Հայոց Սմբատ Ա. Յով-  
 » նանեկս կաթողիկոս Պատմիչն, Գագիկ Տէր Վասպուրա-  
 » կանի և յետոյ Թագաւոր, Աղուանից կաթողիկոսն Սի-  
 » մեոն. ամենեքին սոքա իւրեանց իշխանօք և եպիսկոպոսօք.

որպէս և ամենայն իշխանք Սիւնեաց և ուխտ եկեղեցւոյն  
 և վանականքն. և յետ ցայգապայտամանն՝ « ընդ լուսա-  
 » նալ առաւօտուն՝ զգետաւորեալ սուրբ Հայրապետացն  
 » և ամենայն եպիսկոպոսացն, ելին ի բնմն. և կատա-  
 » ռեալ զհոգեւորական օրհնութիւնն՝ օծանէին աստուա-  
 » ծագործ իւղովն. և յասելն՝ Օրհնեացի, օժցի, ամենայն  
 » բազմութիւնն այնքան հնչեցուցանէին զՄեկն, մինչ  
 » թուէր լսողացն աւագին որոտմունք և ճայթուան յամ-  
 » պոց հրեղինաց եկեալ. և զղղղէր երկիրն և շարժէր վայ-  
 » ընն... Եւ այսպէս կատարեալ օրհնութիւնն՝ ութ օր  
 » նաւակատիս առնեն ի փառս Աստուծոյ»: Ոչ երկրայիժ  
 զի քան զնկարագիրդ՝ մեծափառ եւս էր աշխարհախումբ  
 հանդէսն այն, որոյ նման թերեւս հազիւ ուրեք երբէք ե-  
 ղեւ ի Հայս ի միջին դարս, բայց եթէ որ ուղղ զկնի ի  
 նաւակատիս Աղթամարեան շինուածոց Գագկայ, որ և  
 ճարտարագոյն հանդիպեցաւ հռչակողի, Թովմայի Պատ-  
 միչի: « Բայց թագաւորն ( Սմբատ ) և իշխանքն Սիւնեաց  
 » տեսեալ զայնպիսի հանդէս և զայնքան շքնաղագոյն  
 » յօրինուած, առաւելապէս սիրեն և պատուեն զտեղին  
 » և մեծ տրօք փարթամացուցանեն, և յոյժ ընդարձա-  
 » կեն զսահման տեղոյն » . Թագաւորն գանձագին ա-  
 բարեալ պարգեւեաց կաթողիկէին՝ աւանս և զեօղս,  
 զկարճաւանս ի Մեղրաձորի, զՀարժիս ի սոյն սահմանս,  
 զԹորասանիքակ ի Սոթս, զԳոտոյ վանս ի Գաւնի ձորի.  
 Աչտ գահերեց իշխան Սիւնեաց՝ զՅօղանի ի Հարանդ,  
 զԲնուանիս ի Ծղուկ, և ի սոյն սահմանս՝ զՅոռն և զՅոռ-  
 րագետ, զՏանձատափ և զԴեղձաձոր. իշխանք Բաղայ՝  
 զՏաղու և զԵղիզն. Սուփանեանք՝ զՄիտիս ի սոյն սահմա-  
 նրս, իսկ յիւրեանցն՝ զԵրկոյնս. և տիկինն Սիւնեաց  
 (քայր Սմբատայ) զՄածարդ և զՔարատնիս. Համաս-  
 պրուհի դուտոր Բարգենի իշխանի՝ զՀայիս գիւղ ամե-  
 նայն սահմանօքն: Եւ զայսոսիկ ամենայն վաւերացուցին  
 իշխանքն Սիւնեաց վճարգրաւ և սահմանագրաւ հրաւի-  
 րելոցն, թագաւորին, կաթողիկոսին, և իշխանաց աւա-  
 գաց. զոր և յետ 400 ամաց, ասէ պատմիչն, « տեսեալ  
 » զայս ամենայն նամակ վճուի ձեռագիր իւրեանց իսկ  
 » շնորհողացն, հնացեալ և ծայրատեալ. զոր ի բազմացն՝  
 » զսակաւն կարացաք ընթեռնուլ. և վասն երկարու-  
 » թեանն տաղտկութիւն համարեցաք լսողացդ... բայց  
 » զմեծագոյն սիգէլն՝ որ զըջլակոյ սահմանն ցուցանէ՝  
 » գրեցից աստ » :  
 Յաջորդն Յովհաննու, Տէր Եակոբ Դուռնացի (918-


1 Ահարկէ ի բան գրոց Գ. Թադր. էջ. 21. «Կանգնեաց (Սաղմոս-  
 մոն) զսիւնս կամարի տաճարին... զվի սիւնն... կոչեաց Յատմ...  
 զսիւնն երրորդ... Բողոք: Անուանքս թարգմանին ի նոյն Ս. Գի-  
 բլոս (Բ Մնաց. Գ. 17). տշակողմեանն՝ Ուղղութիւն, ճարտարու-  
 ժեանն՝ Զօրութիւն:

2 Իմա ընդօրինակողաց մասենից և զարդազրոյւն նոցին:  
 3 «Գիր վճուի շրջակայ սահմանին Տաթեւոյ:  
 Ի ժամանակս աստուածազօր թագաւորին մերոյ Սմբատայ, և  
 աստուածազեաց կաթողիկոսին մերոյ Տեառն Յովհաննիսի, և  
 աստուածապաթիւ և նոքեւոր Տէր Յովհաննիսի՝ եպիսկոպոսի Սիւ-  
 նեաց, մեք նուստ ծառայքս Աստուծոյ Հայկազնի իշխանքս Սիւ-  
 նեաց, Տէր Աւստ՝ որդի ֓իլիպպէի, և որդիք իմ Սմբատ, Սահակ  
 և Բարզէն, և տէր Գրիգոր Սուփան և եղբարք իւր Սահակ և Վլա-  
 սակ, և տէր Զաքիկ և որդի իւր Զեւանէր, և այլ աղաքք և համ-

ազդիք մեր, առաջի աստուածազօր թագաւորիս և սուրբ կաթո-  
 ղիկոսիս և Աղվանից հայրապետիս և իշխանացս, և տեսան Գագ-  
 կայ և Գուրգենայ՝ Վասպուրականի իշխանացս, և այլ եպիսկոպոս-  
 սաց և քահանայից և ազատաց և տանուտերաց, արարաք զայս գիր  
 պղծմանի հաստատուն և անխախտ վճուի վասն շրջակայ սահմանի  
 մեծի, սուրբ և առաքելական աթոռոյն Սիւնեաց՝ մայրաքաղաքին  
 Տաթեւոյ, յաւուր յորում ժողովեցաք ի նաւակատիս սուրբ եկե-  
 ղեցոյս, և առատաձեւն պարգեւք փարթամացուցաք զտունս, զոր  
 մեր յայսմ աւուր և զոր ի նի ժամանակաց նախնիքն մեր՝ առա-  
 ջին իշխանքն Սիւնեաց:  
 Եւ ընթերցաք զհին նամակն զոր մեր հարցն և հաւուց զբեալ է-  
 ին, և ծանեաք զժառանգութիւն Սուրբ Խաչիս և նոքեւոր տէրան-  
 ցըս որ ի մերում իշխանութեանս, և զսահման տեղոյս՝ զոր և մեք  
 հաստատեցաք և ընդարձակեցաք աստուածընկալ սուրբ Խաչիս:

958) եղբորորդի և ձեռնասուն Յովհ. Չ կաթողիկոսի օժեռելի նմանէ, և « եկեալ բազում և երեւելի կայիւք » պայծառացոյց զսուրբ եկեղեցին, և փարթամացոյց առաւել քան զսաւել... Սա... գանձագին առնէ զլուրն » Չագեճորոյ որ վարարակն կոչի, ի Տեառն Փիլիպպէէ » որդւոյ Վասակայ ( որդւոյ Ա Փիլիպպէի) ընդ 12,000 » գրամի և մի լուսաւոր շառահիրի... և բերեալ ի Յարառտն » որ հանգէպ վանիցն՝ յայնկոյս գետոյն. և արար զամենայն վայրն առապար և փշալից՝ վարդուա և տնկալից.

» տնկեաց բազում այգիս. և որթս սորեկս, էարկ տունկս » ի զանազան պտղաբերաց, ձիթենիս և թզենիս և նըռնենի, և յամենայն մրգաբերաց. արար դրախտս զարամանալիս. և զարգարեալ զբոլոր վայրն ընգարձակաց » գոյն թանձրախիտ ծառովք և քաջուղէշ որթովք, ի վայելումն եղբայրութեանն, և ի պէտտ ամենայն կարօտելոց և աղքատաց: Եւ ապա տեսեալ բլուր մի գեղեցիկ ի մէջ դարաստանաց, և հարթեալ զգլուխ նորա՝ արար պարսպափակ, և ելից զմէջն իրր բարձր դիտա-



68. Եկեղեցի Տարեոյ փանաց.

» նոց, որ հայէր ի վերայ ամենայն այգեստանոյն. և շինէ » ի վերայ նորա գմբեթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ » յօրինուածովք. և զորմ և զձեղուն նորա ետ զարգարել

» նկարչաց զանազան երանգօք. նկարել զամենայն տես » ըինական և տէրունական պատկերս և զառաքելոց և » զհայրապետաց, և բոլոր շուրջ զեկեղեցեան՝ սրահակս

և ամեն ժողովով զնացաք ոտիւք մերովք, կորեցաք զսանձանս շրջակայ, որք են այսպէս. Յարեւմտից կողմանէդ (տես յէջ 223): ... Ահա այս իսկ են սանձանք զոր մեք ոտիւք մերովք կոխեալ և առջջ մերովք տեսեալ և ձեռօք մերովք նշանեալ, առանց զբկութեան և յափշտակելոյ զբոցաք և կիւրեցաք մատանեալ մերոյ արքայիս և կաթողիկոսիս և մեր իսկ: Եւ յայսմեհտէ մինչև յաւերտան այս քիցի սանձան Տաթևոյ սուրբ ուխտիս. և մի ոք իշխեսցէ այսմ հակառակել, մի բաղաջիւք և մի՛ Որոտնեցիք և մի՛ վա-

զանգացիք և մի՛ Շնչեհացիք և մի՛ Նորեցիք: Եթէ ոք ընդհակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւազաց կամ ի ձեռնառուրաց և ի խոտաակզարաց կամ ի տանուտէրաց, ի Սուրբ Երբորդութեանն որոյեալ լիցի, և յերից սուրբ Ժողովոյն նզովեալ եղիցի, ընդ Յուզայի և խաչահանուացն և այլ չարագործացն պատժեալ զասանցի: Եւ թէ ի Տանկաց աւագութիւն փոխի, և կարեն լինել իշխեցող, և յափշտակել շանան, յերեսնոց հաւատոյն օղիզօր և զննակրոյս լիցին, և ի քեզմբարեմ ներքեալ եղիցին, զեթ ուրն



» գաւթաց, և զրէ ինքեան արձան յիշատակի », յա-  
մին 932<sup>1</sup> : — Երկամաւ յառաջ (930) « Այս Յակոբ ետ  
» ածել նկարիչս և զառախս՝ որ է պատկերագործ, ի  
» հեռուոր աշխարհէ, Ֆռանգ ազգաւ և զլուսանեմ  
» յարկս աստուածարնակ տաճարիս բազում և անհուն  
» ծախիւք ետ նկարել զբովանդակն, ի վերուստ մինչեւ  
» ի վայր և զփրկչական պատկերն՝ յոյժ ահաւոր տես-  
» լեամբ ետ նկարել հանդիպակիւս աստուածագործ սե-  
» ղանոյն, ի վերոյ, զբոլոր երկինն աւագ կամարին . և  
» ներքոյ նորա շուրջ զսեղանովն՝ զմարգարէական և զա-  
» ռաքեւական և զհայրապետական կենդանագործութիւնս՝  
» յոյժ խորհրդարար . նմանապէս և զբոլորն համակ զար-  
» դարեաց, այնքան՝ զի տեսողաց տեսարանքն շնանային  
» ի նայելն, և երբէք ոչ թուէր ի դեղոց և յերանգոց յո-  
» բնեալ, այլ համայն կենդանիք . յորոց զարհուրեալ  
» խուսափէին տեսողքն . . . Եւ ապա մեծածողով հան-  
» դիսիւ կոչեաց զկաթողիկոսն Հայոց բազում եպիսկո-  
» պոսք և զիշխանսն, ի նաւակատիս օրհնութեան և  
» սրբագործութեան պատկերացն . ոչինչ ընդհատ քան  
» զառաջին հանդէսն՝ որ վասն օրհնութեան տաճարին : —  
Տասն ամաւ յառաջագոյն (930) Սմբատ Տէր Սիւնեաց  
պարգեւեաց վճռագործ զգեօղն Կոկոյս որ ի Գեղաբունի,  
« Ի Սիւնեաց եպիսկոպոս ի Տէր Յակոբ, ի մեր Ս . Խա-  
» շն, և ի լուսանեմ և յաստուածարնակ սուրբ եկեղե-  
» ցիան, վասն հոգեաց մերոց » . և Տէր Յակոբ պատուի-  
» րեաց զբով և կնքով անմոռաց կատարել զյիշատակ  
» Տեառն Սմբատայ, և հայցել թողութիւն մեղաց նորա,  
» և ամ յամէ մին քառասունս առնել նմա » : — Սորա  
հօրեղբայրն Փիլիպպէ՝ վերոյգրեալն, պարգեւեաց ի Ս .  
Խաշ երկուս գեօլս ի Հարանդ գաւառի՝ զՂղաշքօ և ըզ-  
Յոքրակահառն, զբեւով ի վճարն յամին 943, եթէ, « ի-  
» մացայ և ծանեայ զի վաղն թառամելոց է ամենայն  
» մարդ իբրեւ զխոտ, և թօթափելոց է ամենայն փառք  
» մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ . և սարսափումք սասա-

» նեալ դողաց անձն իմ, եթէ իբր փրկեցայց . ապա յոյս  
» եղեալ յայս աստուածարնակ ուխտս՝ ստացայ զՍուրբ  
» Խաշս յիշատակ հողոյ իմոյ և ընծայեցի լիսպտուղ հա-  
» ւատով . . . և ետու իւր սահմանօրդ բոլոր՝ լերամբք և  
» դաշտովք, հողով և ջրով, այգօք և ընկուզօք, ջրաղա-  
» ցովք և ամենայն մտիւք » : — Յամի 935 Չագիկ իշխան  
Բաղաց փոխանակեաց Յակոբայ զգիւղ իւր Տաշտակերտ  
ընդ վաղաւեր գեղջ Գեղաբունոյ, « զոր տուեալ էր վազ  
» ժամանակիք Տիգրան՝ մեծ նահապետ ի Սիսական տու-  
» մէ » ի սուրբ եկեղեցին Տաթեւոյ : — Մեծոգի, այլ և  
մեծամիտ եպիսկոպոսս այս Յակոբ որ 40 ամ կալաւ  
զաթոռն և վայելչացոյց, « քանզի էր այր անձեայ և սէգ,  
» բարձրայօն և մեծաբարոյ, բնութեամբ ազատ և բանիւ  
» ճոխ, հանճարով պայծառ և չրթամբք յոյժ քաղցր . սա-  
» կըս որոյ ինքեան հաւանեալ՝ հպարտացաւ սակաւիկ  
» մի » . և ծանր համարեալ երթալ առ կաթողիկոսն Հա-  
յոց ի յարգութիւն և ի խնդիր մեռոնի, էառ զայն ի  
կաթողիկոսէն Աղուանից . վասն որոյ կոչեաց զնա Անա-  
նիս կաթողիկոս, և իբրեւ ոչ լուսաւ՝ ինքնին եկն ի Սիւ-  
նիս՝ յեպիսկոպոսարանն Տաթեւ, ուր պատկառեալ Յա-  
կոբայ յիշխանացն Սիւնեաց՝ անկաւ առ ոտս կաթողիկո-  
սին և եզիտ թողութիւն . այլ յետ սակաւուց դարձեալ  
ամբաստանեցաւ յապստամութիւն և ի հաղորդութիւն  
ընդ հաւանողս քաղկեդոնեան դաւանութեան, վասն ո-  
րոյ միւսանգամ (յամի 949) եկն Անանիա (ի դարձին  
յԱղուանից) ի Տաթեւ, ուստի խոյս տուեալ Յակոբայ  
ղօղեալ էր յամուրն Բաղաց, և ոչ զայր ի կոչ կաթողի-  
կոսին . որոյ ստիպեալ ի դարձ յաթոռ իւր, « սաստիկ  
» ցասմամբ բարկացեալ . . . աւերեաց զտեղին և քան-  
» դեաց, և շարաշար նզովիւք կապեալ . . . գնաց յիւր ա-  
» թոռն » : Յետ վախճանին Յակոբայ (958) երրորդ ան-  
գամ եկն Անանիա « յանրնակ տեղի եպիսկոպոսարանին  
» Սիւնեաց . և հրաման տայր ժողովել կրօնաւորացն և  
» շինել զտեղին, և ինքն գնայր ի Կապան քաղաք » . ուր

և իւր-յետ արեւոյ ուրացեալ եղիցին, և զՎարդգէս անարգել  
եղիցին . Լաւր հարձ եղիցի . և մինչ ի հազար ամ Նաւթմանոյն  
ի վերայ նորա Թասցէ . երկինք նորա մի՛ ցօշեցէ . և երկիրս նորա  
մի՛ դաւարեացէ : — Եւ Յովհաննու շնորհին Աստուծոյ կաթողիկոս  
Հայոց, վկայ եմ այսմ անխախտ և անխափան վճույս՝ որ աւան-  
դեցաւ ի մեծ իշխանացն Սիւնեաց, և կնքեցի իմով սովորական  
մատանեաւս : — Եւ Սմբատ Բագրատունի՝ Թազաւոր Հայոց, հա-  
տասեցի իմով ձեռամբս զայս վճիռս և եզի ի վերայ զիմ թագա-  
ւորական մատանին ի սարիւս : — Եւ Գագիկ՝ Ասապուրականի և  
Արժրունեաց Տէր, որքէ Գրիգորոյ Դերեմկի, վկայ եմ այս ընծա-  
յից և սահմանադրութեանց աթոռոյս Սիւնեաց : — Եւ նուստ ծա-  
ւայ Աստուծոյ և Ազվանից արքեպիսկոպոս Տէր Սիմէոն, վկայ  
եմ այսմ վճիռս, և իմով մատանեաւ կնքեցի զսա : — Եւ Գրիգոր  
Սոլվամ Սիւնեաց իշխան, վկայ եմ և հաստատիչ այսմ վճիռ զոր  
մերեղէ սահմանեալ : — Մէք Գրիգոր և Նսայի և Ատրմերտնի՝ Ազ-  
վանից իշխանք, վկայ եմք այսմ վճիռի : — Մէք Չագիկ և Հրաթատ  
Սիւնի վկայ՝ մք այսմ վճիռի : — Մէք Սահակ Գարգամապ տէր, և  
Աշոտ վասակ ԳՅԹՈՒՄԻ վկայ եմք այսմ : — Եւ Յովհաննու՝ Սիւ-  
նեաց եպիսկոպոս, հաստատեցի զվճիռս իմով ձեռամբս և կնքեցի  
իմով մատանեաւս . Աստուած շնորհաւոր արասցէ՝ Սուրբ Խաշիս  
և սուրբ եկեղեցոյս և աստուածաբեալ խորապետացն որ սաս-  
նախին : Եւզեւ այս թուականութեանս Հայոց 856 . — Ստիկ .  
Օրբնի . ԽԳ :

1 « Եւ Յակոբ շնորհին Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, զնեցի

զՎարդապետ լուրն յաստուածագաւ Տեառն Փիլիպպէ՝ Սիւնեաց  
Տեառնէ, ընդ 12,000 գրամի և մի պատուական գումարի, և բա-  
զում ծախիւք և մեծամեծ ուխտառութեամբ վերին օգնակառու-  
թեամբն ածի զլուրն ի լեռնէն Չագէձորոյ և բերի ի Վարդառատ,  
և անկեցի որթս սորեկս և այգիս վայելուչս և զբախտս բազմա-  
ծաղիկս և պաղապիցս, ի վայելուք սուրբ խորապետացն որ ի սուրբ  
աթոռս հաստատին և սուրբ ժողովոյս և ամենայն հաստատելոց  
Քրիստոսի : Եւ արդ Աստուած ի վայելուք արտօցէ հասարակաց  
ամենեցուն . և աղերս մատուցանեմ հասարակաց անմոռաց յիշման  
արժանի առնել ի սրբամտոյց յաջօթ . . . մեր զաստուածեալ հոգիս  
իմ : Եւ զկայ յայս Իրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանե-  
ցեաց, ոչ Ծեներացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ  
կտրել և ոչ ի մարդ և ոչ պարտիւզի լուր տալ, զատ ի մատու-  
կէք ըմպելոյ մարդոյ և անասնոյ : Եւ թէ ոք յանդգնի և զտց  
լուրս կտրէ, այնպիսին նզովեալ լիցի յԱստուծոյ և ի սուրբ Նը-  
շանէս և ՅԹՂ խորապետացն որ ի Նիկիոյն դաւարեցան, և յամե-  
նայն Սրբոց և ի մէն ? . և բաժին նորա ընդ ուրացողս և կախարհք  
լիցի յաւուր անեղ ատենին Քրիստոսի . և ընդ սաստանայի և հեշ-  
տակաց նորա հարակ լիցի անշէլ Իրոյն տանջանաց . ուր հուր նա-  
ցա ոչ շիջանի և որչն նոցա ոչ վախճանի : յՅՁԱ Թուականին  
զբեցաւ վճիռս այս իմով ձեռամբս և կնքեցաւ մեր սովորական  
մատանեաւս ի կտմս Աստուծոյ . — Օրբնի . ԽԹ :

2 Ոչ է յայս ազգատուճ Տիգրանայ, որ զի լուր իմանալօտ ասի  
քան զ935 թուականն՝ զէթ յիսուն ամօք յառաջէ :

զորդի իշխանի երկրին՝ Զուանդիրի՝ զՎախան ձեռնադրեաց եպիսկոպոս, որ յետոյ եղև յաջորդ իսկ նորա կաթողիկոս: Սա ոչ միշտ ի Տաթևե կայր, այլ երբեմն և յիւր ձեռնադրութեան տեղին՝ ի Յովհաննու վանս Բաղաց. քանզի տակաւին չէր վերադիմեալ Տաթևե, և «բա»  
 « զուժ բարեկարգութիւնք խափանեալ ի բազում աւուրս,  
 « և յուժ ժառանգութիւնք պակասեալ և յափշտակեալ  
 « յեկեղեցոյն ի մեծ մայրաքաղաքէն Տաթևոյ, զոր և առ  
 « սակաւ սակաւ անդրէն դարձուցանէին իշխանքն»: յոր  
 յաւելան յետոյ այլ եւս. որպէս Շահանդուլիստ թագաւոր  
 « կին առաջնոյ թագաւորին Սիւնեաց, յամի 998 ետ  
 « զգիւղն Տոզ որ ի Հարանդ, և որդիք նորա 6000 դրամ, ի  
 « Տէր Յակոբ եպիսկոպոս, և Փարաւլ որդի Չագկայ զԲաւր  
 « րաբար՝ ի Վրիզոր՝ յաջորդն Յակոբայ: — Իսկ սորա յա  
 « ջորդն Յովհաննէս, երկարակեաց (1006-57) հաւասար  
 « առաջնոյ շինողի եկեղեցոյն գտաւ ի շինել և ի բարե  
 « զարդել, և ըստ առաջին եպիսկոպոսացն միապետել ըզ  
 « հազեւոր իշխանութիւն աշխարհին, և զմետրապօլտական  
 « պատիւն՝ զոր Անանիայ բարձեալ էր յապստամբութեանն  
 « Յակոբայ, և արդ Սարգիս կաթողիկոս կոնդակաւ դար  
 « ձոյց զամենայն ի սա: Մեծ սօփանդակ եղեալ նմա թա  
 « գաւորն Վասակ՝ դարձոյց անդրէն զյափշտակեալ կա  
 « լուածն, ընդ որս և զԳրուակ գեօղ Մշկոյ. և Սակ  
 « ռեանք ետուն զգեօղն Շոռթ: Արդ այսպէս յաշողեալ  
 « նմա զառաջինն « զարդարեաց... զՏաթևե զանազան  
 « զարդաք և մեծ ամեծ սպասուք, և զեղեցիկ կարգօք սա  
 « տուածայնութք, և ելից բազմութեամբ կրօնաւորօք,  
 « անյաղթ փրկիստօյնք և աննման երաժշտօք և բա  
 « նիրուն վարդապետօք և աստուածազգեաց ճգնաւորօք,  
 « նաեւ յօգնապատիկ արհեստաւորօք. և էր այնուհե  
 « տեւ տեսանել զտունն զայն իբր զմայրաքաղաք բազմա  
 « ժողով. քանզի և յինեալ կայր բազմութիւն երդոց և  
 « ամբոխութիւն իբրև հազար արանց:.. Ապա խանդա  
 « ցեալ ընդ այս շարին... մտեալ ի սիրտ իսմայէլական  
 « զօրագլխացն որ ի Մովկան և ի Թալիշ, յԱՆՐ և յԱՐ  
 « տաւէլ և յԱրապատական... խորհուրդ արարին գալ  
 « գաղտագողի ի վերայ վանացն, և յաւարի առնուլ զան

» հուն կարասիս նորա, այսինքն զկահ սպասուց և սրբ  
 « ռութեանց եկեղեցոյն. և յարուցեալ անցին ընդ Ե  
 « րասիս, և զանխլարար եկեալ հասին յանկարծակի ի  
 « վերայ սրբոյ ուխտին, և իբր զհուր սաստիկ հեղան ի  
 « մէջ վանիցն. և որք կարացինն թափեցան ի վայր ի  
 « խրամն և զերծեալ փախեան. և եպիսկոպոսն Յովհան  
 « նէս ոչ պատահէր ի տեղին. իսկ զայլն ամենայն սրոյ  
 « ճարակ տային. և զեկեղեցին՝ որ յանուն Սրբոյն Գրի  
 « զորի Լուսաւորչին էր՝ յցին փայտիւ, և հուր հարեալ  
 « հրօճակեցին զգեղեցկայարմար շինուածն, և քանդեալ  
 « կործանեցին: Կամեցան և զքանչիլի սիւնն կործանել  
 « զՄեծ Տէր Յովհաննիսին, որ երկու ամաւ յառաջ քան  
 « զմեծ եկեղեցին կանգնեալ էր. և տեսեալ հրաշս ինչ՝  
 « ոչ իշխեցին հպել. նմանապէս և ոչ ի մեծ եկեղեցին  
 « (Առաքելոց). այլ զամենայն շինուած վանացն այրե  
 « ցին, և քակեալ յատակեցին զԳործատներն և զՏը  
 « րապէզն մարմնաւոր սեղանոյն, և զամենայն յարկս  
 « կրօնաւորացն և այլ բնակչացն. և զոր ինչ գտին՝ յա  
 « ւարի առեալ զնացին սւստի եկին»: Յետ սգոյն և  
 « արգահատութեան, ձեռն արկեալ եպիսկոպոսին՝ վերու  
 « տին կանգնեաց զեկեղեցին Ս. Գրիգորի գեղեցկայար  
 « մար շինուածով, թաքուցեալ ի գլուխ սեան աւագ կա  
 « մարին զմասն աջոյ Լուսաւորչին, զոր ի կրկին նորոգմանն  
 « եգիտ Ստեփանոս պատմիչն: « Կանգնէ սա և կանարս  
 « ի վերայ աւագ դրան վանացն որ հայէր ընդ արեւմուտս,  
 « և շինէ ի վերայ նորա երկու խորան՝ յանուն Սրբոյ Կա  
 « ռապետին ի քերեալ քուաքատակեայ քարանց: Դինէ և  
 « զամենայն տունս հասարակաց և զյարկս կրօնաւորա  
 « ցնն յոյժ վայելուչ քան զառաջինն զայրեալն և զքան  
 « դեալն յայլազգեացն: Դինէ յետոյ և գառնիս սրբաքա  
 « ռով՝ ի հարաւոյ դրան մեծ եկեղեցոյն, սրահս յոյժ  
 « յարմարս ի հանգիստ եղբայրութեանն. և ժողովեալ  
 « զցրուեալ եղբարսն՝ պայծառացոյց յոյժ քան զառաջի  
 « նըն. Դինէ և խորան մի ի վերայ փոքր դրանն՝ ընդ որ  
 « մտանեն ի գաւիթ եկեղեցոյն»: Ի վերայ սորա է,  
 « կարծեմ, ներքոյ գրեալ արձանագիրն շինող եպիսկոպոսին  
 « որ մնայ ցարդ անեղծ .

**ՉՏէր Յովհաննէս Սիւնեաց Եպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշեցէք ի Քրիստոս .**

Նոյն ինքն « կազմէ ի համակ ոսկւոյ զօխրալին բնաւից  
 « զահարկու և զմեծաաքանչ սուրբ Նշանն... և խորհրդ  
 « դապէս յօրինուածովք զարդարեաց զնա, եղեալ ի վե  
 « րայ պատուական քարանց թուով 24, և ընդելուզեալ  
 « մարգարտայեռ գեղեցկութեամբ. և եղեալ ի նմա ըզ  
 « կենսարային արարածոց զփրկական և զաստուածլն  
 « կալ սուրբ փայտն... և ունէր յինքն յայտնի տեսողաց

» զկաթուած արեանն Յիսուսի Քրիստոսի, յորմէ ելանէ  
 « ին գորութիւնք և նշանք ահաւորք. և էր այս փայտ  
 « խաչանիչ ձեւեալ, և կայր ի ներքոյ միջի ականն, որ  
 « էր ի սպիտակափայլ բիւրեղանման յակնդաց, ընդ ո  
 « ռով թափանց երեւէր սուրբ նշանն. և ետ գրել փս  
 « ռուածով ի թիկանց կուսէ յիշատակ բանի զայս, (յամի  
 « 1017 փրչական թուականին) .

**Տեսուն Յովհաննիսի Սիւնեաց Եպիսկոպոսի է Սուրբ Նշանս, ի Թուականիս ՆԿԶ կազմեալ .**

Առ սովաւ յամի 1046 Դլին օմն իշխան որդի Խաղրակայ  
 « ետ ի սուրբ Նշանն « զՅոտո գիւղն և զԽոտագետոյ մեծ  
 « ո այգին, և ի Վժանիս՝ զԾաղկիկ, որ է տեղի վասն

» բազում անդաստանաց) . և ըստ խնդրոյ նորա սահմա  
 « ջնեաց եպիսկոպոսն « ամ յամէ է օր պատարագ յեղիա  
 « կան պահոց շաբաթ օրն »:

Յաջորդ Յովհաննու Գրիգոր երկարագոյն քան զնա ժամանակս կայեալ զաթոռն (ամս 58), « Կանգնեաց » կառնարս ի վերայ դրան վանացն որ հայէր ընդ արեւ- » ելս. և մերձ նմին տուն սրբաշէն. և ի վերայ սոցա եկե- » ղեցի մի գմբեթաւոր գեղեցկայարմար յանուն Սրբուհ- » ւոյ Աստուածածնին. և էր նա իբր դիւանոց բարձր՝ » որ հայէր ի վերայ վանացն. և ի շորեմին կողմանսն յս- » րինեաց գաւիթս. բայց յառաջի կողմն բարձրաբերձ » սեամբք շինէր սրահս վայելուչս՝ իբր քաղցր Հովանոց. » և գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն. » և հաստատէ ի մի կատարել անխափան ի յիշատակ » իւր . . . Սա առնոյր և զԲողոքաբարն Նորեաց բաժինն » ի Գլինէ՝ որդւոյ Խաղբակայ, և հաստատէր նզովիք ի » սուրբ եկեղեցին »: Ետուն ի նա և թագաւորն Սենեքե- » րիմ և քոր իւր Շահանդուխտ զԱրիտն աւան: — Ի միւ- » սում ամի (1086) Հասան իշխան որդի Գրիգորի դարձոց » յուխտ Տաթեւոյ զՆորաշինիկ գիւղ Կովսականի, և ըզ- » Ջեռատի վանս. նոյնպէս և զայլ գիւղս կորզեալս յե- » կեղեցւոյն՝ դարձուցին իշխանքն և թագաւորն, յամի » 1081. « Գարձեալ և այլ բազում ժառանգութիւնս ե- » տուն ի սուրբ ուխտն. . . այդի մի մեծ ի Մեղրոյ ձորի. » զմերդ-աւագեանց սյգիկ՝ Արուսաւի ոմն տէր Մեղրոյ » բերդին, ի թուականին ԵԼԲ (1083). ետուն և գեղ ի » Բարկուշատի. ետուն և զԽողվանի գեղ ի Վանանդայ- » ձորի. ետ և իշխանն Աշոտ (որդի Կարապիտոսայ) զԱմ- » բրաւաքար ի Ս. Նշանն. . . ի Թուխ Հայոց ԵԼԸ »:

Առ յաջորդան Գրիգորի՝ Ստեփաննոս եպիսկոպո- » սաւ՝ պատահեցաւ մեծ « շարժն Գանձակայ ի ԵՁԷ » (1138) թուականին, և դողաց երկիր ի հիմանց. և զբմ- » բէթն մեծ եկեղեցւոյն ի Տաթեւ բոլորապարտոյ շրջ- » կան թուեաւ և անկաւ ի վերայ Ս. Գրիգորոյն և գաւ- » թին՝ որ ի դրանն կայր, և փոյց առ հասարակ » և վան շիրթելոյ ժամանակին, և բառնալոյ թագաւորու-

թեանն Բաղայ, և առման Բաղարբրի (1170) յորում զերեցան և սպառք եպիսկոպոսարանին և վանաց Տա- » թեւոյ, ընդ որս և 10,000 մատեանք), Մնաց աւերածն » մինչեւ յես կոյս դարուն. ապա ի զօրանալ աշխարհաշէն » քաջացն Զաքարեանց, Ստեփաննոս եպիսկոպոս որդի » Գրիգորի Մեղրացոյ եպիսկոպոսի, « նորոգեաց զխախ- » տեալ եկեղեցին ի Տաթեւ, զՍ. Առաքեալքն. և ետ » դնել զգմբէթն ի ձեռն Նորն Յակոբայ ճահկեցոյ »:

Ետ մահուան սորա յԱրփա յամի 1216, և թաղման » ի Նորավանս, իբրեւ նստաւ աստ յաջորդն և քեռորդին » իւր Տէր Սարգիս, հորեղբորորդի նորա Յովհաննէս » ձեռնադրեալ յԱզթամարայ կաթողիկոսէն նստաւ ի Տա- » թեւ. այս եղև ակիզան յերկուս բաժանելոյ եպիսկոպո- » սութեան Սինեաց, որ և տեւեաց ց'ելս այնր (ԺԳ) » դարու, մինչեւ միապետեաց Օրբելեանն Ստեփանոս » պատմիչ: — Հայր սորա խրոխտն Տարսայիճ՝ « զարդա- » ղեաց զմեծ եկեղեցին Տաթեւոյ ի սպասս և ի զգեստս » գեղեցիկս. և ետ ի սուրբ եկեղեցին զվաղնոց յափը- » տակեալ ժառանգութիւնսն, զՀարժիս՝ իւր սահմանո- » վըն, զՅուր իւր սահմանովն, և զիւր ձեռատունկ այ- » զին ի Խոտագետ, զՔթեվանս իւր սահմանովն. և գրէ » ինքեան արձան յիշատակի՝ ի վերայ սեանն հարաւա- » յին », յամի 1271: Ի նմին ժամանակի և եպիսկոպոսն » Հայրապետ եղբորորդի վերջին յիշեալ Տեառն Յովհան- » նու, որ նստէր ի Տաթեւ, « յետ յիւրեմեան սրբոյ ուխ- » տին Տաթեւոյ, նորոգէ զխախտեալ և զծակոտեալ զը- » լուխս սրբոյ եկեղեցւոյն՝ որ ի շարժմանէ և ի վաղ ժա- » մանակաց հնութենէ ապականեալ էր. և ի ձեռն մե- » ծահնար ճարտարաց՝ քերածոյ քարամբք և կրաշաղախ » ձուլմամբ յօրինէ զսալայարկս ծածկութի գմբեթին և » ստորակայ սաղիցն և գաւաթին որ ի դրանն. և ի սրբել զհին » կազմուած աղիւսածոյ և վիմակարկառ դերբկացն՝ որ » ի վերայ ձեղուանն, գաւանն ի զլուխ առաջին խորա-

1 « Այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի է իմ Տարսայիճիս՝ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լի- » պարտի՝ եղբաւր Սմբատայ՝ մեծ իշխանի, կողմնա- » կալի յայսմ նախնագի, որ իշխեցող էի այսմ գաւա- » ռաց ի Դրանէն Բարկուշատայ՝ մինչեւ ցառնանն » Բջնոյ. միաքանեցայ Տաթեւոյ Սուրբ Առաքելոցս, » եւ տվի զիմ հոգւոյ մասն ի յիմ սեփական ուխտս » ի սուրբ եկեղեցիս՝ գիւղս վեց, զոր լուեալ էաք ի » հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին. ըզ- » Շնիէր, զԹոտն աւան սահմանօք իւրովք, լերամբ » եւ դաշտիւ, եւ ի Խոտագետ եւ ի Խոտ զմեր ձեռա- » տունկ այգին, եւ զՅուր եւ զՀարժիս իւր սահմա- » նովն, զորոյ զվէսն գանձագին էի արարեալ. եւ ըզ- » Բորտի, զՔթեվանս իւր սահմանովն. եւ եպիսկո- » պոսք տեղւոյս Տէր Հայրապետ եւ Տէր Սողոմոն » հաստատեցին մեզ յիշատակ, եւ կարգեցին պատա- » րագ յամենայն ամի մին քառասունք, զԺ՝ զՅայտ- » նուեմանն, զԺ՝ զՄատկին, զԺ՝ Աստուածածնին, զԺ՝ » Աւագ տօներին, զԻ՝ օրն ինձ Տարսայիճիս եւ զԻ՝ » օրն իմ եղբաւրն Սմբատայ: Արդ որ յետ մեր ի » մերոց կամ յաւտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռ- » նաւորաց այս հաստատ պայմանս եւ անքակ վճի- » ռըս խափանել ջանայ, կամ զայն գիւղաւարէքն »

կամ զայգին յայս եկեղեցւոյս հանել խորհի, բաժին » ընդ Յուրայի եւ ընդ այլ խաչահանուացն եղի- » ցի, եւ զկայենին եւ զամենայն չարագործացն առ- » ցէ պատիժս, եւ յերից սուրբ Ժողովոցն նզովեալ » լիցի. եւ Թէ տահիկ աւագ փոխի եւ յափշտակել » ջանայ, յԱստուծոյ եւ յիւր փեղատարեմ ապիգար » եղիցի, եւ ընդ սատանայի ի դժոխս իջցէ, եւ » տամբք եւ զաւակօք ջնջեալ եւ բարձեալ եղիցի- » իւր հարաջն լինի հարում, եւ հազար, հազար, հազար » նարք լիցի. ի Թուխ ԶԻԳ, յամենանս նոյեմբերի » ԺԳ. էւ է վկայ այսմ վճուխ Տէր Սարգիս՝ Նորավա- » նից եպիսկոպոս, եւ Սարգիս փակակալ սուրբ եկե- » ղեցւոյս. եւ յիմ ազատաց Հասան՝ Կարապետի որ- » դի, Որոտշահի՝ Լորայ Թոռն, Միրան՝ Նուերեայ որդի- » Հաստատէ կամաւն Աստուծոյ. Աստուած շնորհա- » լոր արասցէ սուրբ Ուխտիս: — Բուսովն Աստուծոյ » եւ Տարսայիճիս իմ ձեռագրովս հաստատեցի զընծայ- » քըս. Արդ որ յետ իմ յիմ գաւակացս եւ Թոռանց » կամ յայլ իշխեցողաց զմեր հոգիս զրկել խորհի եւ » զմեր յոյսն խափանել եւ զմեր սահմանեալս քակել » ջանայ, յԵԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի ի մահ » եւ ի կեանս, կտրեալ եւ ջնջեալ լիցի յայս կենացս » եւ ի հանդերձելոյն. ամէն ». — Օրբել. ԿԶ:

» նին հիւսիսային կողման՝ առն գաղտանոց, և ի նմա  
 » վթերս անհուն սրբութեանց և նշխարաց առաքելա-  
 » կան, Հայրապետական և մարտիրոսական. յորում և  
 » կայր աստուածընկալ խաչն Բարզնեանն. և մեծապէս  
 » գահութեամբ իջուցանեն յեկեղեցին. և անհուն լինի  
 » խնդութիւն եղբայրութեանն » :

Եպիսկոպոս ծերունի յուխտ երթեալ յԵրուսաղէմ և  
 ի դարձին հանդիպեալ ի Վիլիկիա Թագաւորին Լեւոնի Բ,  
 վառեաց զիղձ նորա ի միաբանութիւն, սյսինքն ի նուր-

ատուութիւն եկեղեցւոյն Տաթեւու. որ և ոչ վիայն ա-  
 ռաքեաց ի ձեռն նորա « ընծայ Թագաւորական սուրբ և  
 » երկնաճեմ եկեղեցւոյն, զգետ սեղանոյն յարքունա-  
 » կան մետաքսից գրուգանդացին<sup>1</sup>, որ ի Յունաց նարտա-  
 » բացն աննման կերտուածօք, և խաչ պատուական ըս-  
 » պիտակափայլ և սառնատեսակ քարանց, համով կեր-  
 » պացեալ և պնդեալ յոսկում, և սկիբ պատուականք  
 » ի զուտ արծաթոյ, և այլ բազում պարգեւս եպիսկոպո-  
 » սին. (այլ) և գրէ իւրով ձեռամբ յիշատակ ինքեան .

« Մարդիկ՝ որ հոգւոյ աչօք յամվախճամ կեանլս հայեցամ  
 Միմչեռ ի մարմնի էլիմ՝ փրկութեամ հոգւոյն Համացամ .  
 Յաղագս որոյ ես Լեւոն Թագաւորս ազգիս Հայլազեամ,  
 եւ խոստովամող ուղիղ հաւատոյ համագոյ Սուրբ Երրորդութեամ,  
 Յայս աստուածընկալ սուրբ ուխտ խնդրեցի լիմել միաբամ,  
 Որպէն զի հաղորդ եղէց ի մմամէ ամեմից որ աստ բարութեամ .  
 Որ եւ աղերսեմ առ ձեզ աստամօր, ամծիմք սրբազամ,  
 Ձի մեզ եւ մսխնեաց մերոց որք համզեամ յուսով յարութեամ,  
 Լիցի սոթթիւք ձերովք հասամել մեղաց թողութեամ,  
 եւ արքայութեամ երկմից արժամի լիմել համզատեամ .  
 Ընդ որս եւ որլուց մերոց եւ զարմից որ գամ մեր փոխամ,  
 Մնալ ի յերկրի կեմաք ընդ երկայն աւուրս բարութեամ .  
 Ի Թվիս Հայոց ՁԱՆ » :

Ձայս գեղեցիկ արքայագիր յիշատակ՝ հաստատեաց եպիսկոպոսն վճռով, արձանագրեալ այսպէս .

**Յեպիսկոպոսութեան Միւնեաց Տէր Հայրապետայ եւ Տէր Յովհաննիսի,**  
 Հօր եւ բարեպաշտ արքայն Հայոց Լեւոն տիրապետեալ արեւմտական նա-  
 հանգի Վիլիկիոյ, մեծագոյն յուսով եւ առատ պարգեւօք միաբանեցաւ ի  
 սուրբ ուխտս միեղէն եղբայրութեանս, որպէս յայտ առնեն վերոյգրեալ  
 բանքք : Արգ որ զկնի մեր գայք բնակել յայս աստուածաբնակ տեղի աղաւ-  
 թից, եւ ամենայն բարեգործութեան որ աստ կատարին, հաղորդ կալլիք ըզ-  
 բարեսէր Թագաւորն Հայոց Լեւոն հանապազորդ յիշմամբ առ Տէրն մեր  
 Փրկիչ օրհնեալն յաւիտեան : Յաղագս այսր յուսոյ եւ սիրոյ աստուածազօր  
 Թագաւորին եղբայրութեամբս կարգեցաք զաւր սրբոյ Զատկի յարութեան  
 միաշաբաթուն յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղե-  
 ցիս անխափան մինչ ի վախճան .

Յաջորդեալ զՀայրապետ Ստեփանոս Օրբելեան պատ-  
 մինն<sup>2</sup>, յետ ոչ սակաւ ընդդիմութեանց յաջողեաց միա-  
 բանել զերկիւնդեալ աթոռ եպիսկոպոսութեանն, իրա-  
 ւախտ լեալ ընդ Նորավանեցիս և ընդ Տաթեւացիս . և  
 իսկոյն ձեռն արկ յերրորդ անգամ շինութիւն Ս. Լու-


սաւորիչ եկեղեցւոյ, « զի փլեալ էր և քակտեալ մինչեւ  
 » յատակն... հաստահեղոյս քարամբք և գեղեցկատեսիլ  
 » ձեւով » . և ի բանալն զհիմն հիւսիսային որմայն՝ եզիտ  
 զնշխարս Սրբոյն « ի փոքրիկ անդուկ փայտեայ՝ կուպղեալ  
 » և մատանեալ կապարեայ կնքով : Եւ յետ շինուածոյն

<sup>1</sup> Այսինքն հիսուած կամ տնկուած կիրպատեայ կամ յայլ նիւ-  
 թոյ, ըստ բիւզանդական նարազիտութեան :  
<sup>2</sup> Յաւուրս ասրին Ստեփանոսի՝ (1293-4) յազմիկ պայպա-  
 սութեան Թաթար Վանից և մարտից Գեղաթուի կամ Գանճեթ-  
 Թուի եղբօր Արզուի, թշնամիք նորա կալեալ « զմեծ կազարազե-  
 ալն Վլատուակ », զհաւատարիմ նորա և բերեալ ի վանս Տաթեւու  
 եզին « ի պահեստի ուուրս բազում », որ և յետոյ ազատեցաւ, ա-

տէ պատմին, և հասաւ յիւր իշխանութիւնն, հրաչիւք սուրբ եկե-  
 ղեցւոյն : Ի նմին շփոթալից ժամանակի Նստուազ զօրավար Ղա-  
 զան Ղանի, այր անուրմ և անպատկառ, հրամայեալ էր քանդել  
 զեկեղեցիս . որոյ զօրք « եկին և ի մեծ աթոռն Սիւնեաց, և կա-  
 » մէին քակ՝ Լ զեկեղեցին . զորս կայառօք և բռնութեամբ ոչ թո-  
 » ղացուցաք » (տէ պատմիչս, և յաւելու) ... « Իսկ այլ աշխարհս  
 » Հայոց՝ զոր իշխանս գետն հասանէ՝ Յայ շնորհքն Աստուծոյ » :

» եղաք (ասէ) ի նմին խորանի ի պատշաճաւոր տեղի ժառանգութիւն, յամի 1297, և ի վերայ դրան եկեղեցւոյն արձանագրեաց, (որպէս թուի զատ յայլ երկար յիշատակէ) յամի 1298.

**ՉԽԴ. ՉՏԷՐ Ատեփաննոս Մետրապալիտ Սիւնեաց որ է Պռաւտաւ-Փռանտէս Հայոց Մեծաց, որչի մեծափառ իշխանին Տարսայիճի եւ շինող սուրբ Եկեղեցւոյս, յիշեցէք ի Քրիստոս.**



69. Սիւնն—Դաւազան

87. Յայս վայր ի գրոց սորին իսկ եպիսկոպոսի աթոռակալի և պատմի տանն Սիւնեաց՝ ծայրաքաղ արարեալ զոր վասն Տաթևոյ բանք և յիշատակք, ակնարկեացուք յայ մեան վիհակ եկեղեցեացն յիշեցելոց, և ապա յայլ եւս յիշատակս ինչ տեղւոյն: — Հանգոյն մեծամեծ վանորէից Հայոց՝ և առաւել եւս շուրջ ամրութեամբ՝ պատեալ են հզոր պարսպօք վանքն Տաթևոյ և որպէս ամուր ապաստանի կարգեալ յաճախ ի ժամանակս հինից, թուին ոչ փոքր մասամբ մնացորդ շինութեանց ԲՅովհաննու շինող եպիսկոպոսի յառաջին կէս ԺԱ դարու. բազմաթիւ են սենեակքն համակ քարաշէնք և կամարակապք. առաջնորդարանն յարեւելակողմն է ի բարձրաւանդակի, գեղահայեաց ի ձորն անդնդախոր շինեալ ի Շապանօղլի Բովիաննէս եպիսկոպոսէ յԺԷ դարու. և մասամբ ի Զաքարիայ եպիսկոպոսէ, դարձեալ և յերրորդ քառորդի ԺԸ դարու յԱրքանաւե Առաքապատեցոյ. բայց ոչ գիտեմ ստուգիւ զայժմեան ձեւ ներքին մասանց շինուածոյն, որպիսիք բնակարանապէն և Գործատներն յիշեցեալք և Տրապէզն (Սեղանատունն), և թէ իցեն արձանագրութիւնք ի նոսին. այն զիարդ (1891) վերստին նորոգի վանքն: — Այլ զլիաւոր ամենայն շինուածոց տեղւոյն և աշորսակ, յայտ է թէ մեծ կաթողիկէն է, բազմադրուատ եկեղեցին այն Ս. Առաքելոց Պետրոսի և Պողոսի. հրաշալի ծնունդ մտաց Ա. Բովհաննու եպիսկոպոսի յեւր թ դարու, և գոռոզ եղբորորդւոյ Բովհաննու պատմիչ կաթողիկոսի՝ Յակոբայ եպիսկոպոսի, և առատուծեմութեան թաղաւորաց և իշխանաց. սակայն որպէս ի սկզբանն նշանակեցաք, ոչ համեմատին կերպարանքն ստորագրեցելոյն ի պատմելէն. այլ զի դարձեալ ոչ յիշի երկրորդ ամբողջական շինութիւն նորին, համարի հասարակ շինուածն՝ նոյն առաջինն, փոքու իւրք այլափոխեալ. շափ երկայնութեանն 48 կանգուն, և լայնութիւնն՝ կիսով շափ, ըստ պատմելին. ըստ նոր սեղազրի, եթէ ոչ սխալէ (ասելով 28 և 12 սաժէն) լինի երկայն աւելի 950 Չ. և լայն կիսով նորին. այլ այսպիսի մեծ եկեղեցի ոչ ճանաչի ի Հայս, բաց ի Բագրեւանդայն Ս. Բովհաննէ. իսկ զբարձրութիւնն 100 կանգնեայ ասէ պատմիչն՝ որ կրկին է քան զերկայնն. նորն Օրբէլ նուազեցուցանէ կիսով շափ զբարձրութիւնն, 24 սաժէն ասելով, իբրեւ 50 Չ. թերեւս յետ վերոյիշեալ ժամի 1138 ամին, որ խլեաց զգմբէթն, ի վերայինութեանն յեւրս կոյս ԺԲ դարու՝ ցածուցաւ բարձրակառոյց կերտուածըն՝ Ոչ իրեւին և հնգեքին խորանքն հինք, այլ ըստ սո-

1 Ըստ համեմատութեան չափոցը՝ կանգուն պատմելին սուղ ինչ պակաս երեւի քան զայժմեան հասարակաց Չափն (mètre). սա- կայն անհաստապի է ըստ այնմ նշուել 130 Չափ բարձրութեան լի- նել ստանարին:



վորական սարազու՝ մի միայն. ոչ և երկրքին սողոմոն նասարաս սինքն, Բաքուրն և Բոթոգ, Թերեւս տապալեալք յիմայելական հինէն. այլ կայ մնայ գարնանային այն երեսունկանգնեան մեկնակ Սիւնն ճօճուն, ի մա նունց քարանց պատուածեալ յառաջին շինողէն յանուն ամենասուրբ Երրորդորքեան, զոր արդ Գառագան՝ կոչեն, ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն. յորմէ նշանս ինչ տեսեալ երբեմն և զարհուրեալ հինիցն իսմայելեանց՝ ի բաց կացին. և ցարդ ամենեցուն յայտնին հրաչք ճարտարութեանն կամ ճարտարապետութեան. զի զրեաթէ հա.

զարամեայ հնութեամբն՝ ոչ միայն կանգուն կայ, այլ և ի յենուլ ուրուք ի նա՝ տատանեալ շարժի և կայ մնայ անկործան. զայս փորձեալ է ոչ միայն տեղացեաց, այլ և գիտնական ուզեւորաց՝ զլուխ սեանն քանդակեալ է պէսպէս դրուազօք՝ իրեւ պատուհան փորածոյ և խաչ ի միջի. իսկ ընդ խորսիսաւ հիմանն հաւանօրէն եղեալ կայ սրբազան ինչ նշխար:

Ի հնագոյն արձանագրութեանց սակաւ ինչ արդ վերծանի ի Ս. Առաքեալքս. և են այսօրիկ. ի վերոյ մեծի պատուհանի արեւմտեան դրանն.

**Աւգնեայ մեղ Քրիստոս. ԶՅովհաննէս անարժանս ի քահանայս յիշեցէք.**

Եկուստեք ի հիւսիսային և ի հարաւային որմունան՝ մեան համառօտ արձանքս.

- † **ԶՀայր Շապուհ յիշեցէք.** † **ԶԳորգ երէց յիշեցէք.**
- † **ԶՇապուհ երէց Խաւտեցի սրբոյ եկեղեցւոյս ծառայ յիշեցէք ի Քրիստոս.**
- † **ԶՀայր Վասակ յիշեցէք.** † **ԶՅովհաննէս երեց որդւովք յիշեցէք.**

Վերին նորոգողք եկեղեցւոյս յիշին կիրակոս եպիսկոպոս Արշակունցի, օժանդակութեամբ Գաբրիէի վարդապետի՝ յժԸ դարու, Տէր Թովհաննէս Տաթեւացի և

այլք յետ սոցա: — Առաջի մեծի արեւմտեան դրան կաթողիկէին կայ գաւիթ կամ ժամատուն ոչ շքեղ, և ի նմին գերեզման առաջին կնոջ Տարսայիճի, արձանաւս.

**Այս յարկ տապանի եւ դիր գամբարան մեծահաւատ կնոջ Արուս խաթունի դստեր Սաղունի եւ ամուսնոյ Տարսայիճ իշխանին. Թվին ԶԼԵ.**

Մերձ նմին այլ եւս քնարանք, յորոց մին ունի արձանագիր 1291 թուականաւ, և այլք նորագոյնգք.

**Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս շինող եկեղեցւոյս. Թուին ԶԽ.**

† **Այս տապան հանգստարան սրբազան արհիեպիսկոպոսին Մեսրովբայ Սիւնեաց նահանգի. ՌՃԺԲ.**

† **Այս հանգիստ Զաքարիայի երջանիկ արհիեպիսկոպոսի. Թուականիս Հայկականի ՌՃ.**

Ի հարաւակողմն եկեղեցւոյն կայ մեծագոյն գաւիթ, զոր նախ շինեաց Բ Յովհաննէսն եպիսկոպոս, ըստ պատմչին, և յետոյ Առաքէլ քեռորդի Գրիգ. Տաթեւացւոյ ի սկիզբն ժԵ դարու: Ոչ գիտեմ ի ճակատ այոր

գաւթի եթէ այլոյ տեղոյ՝ կայ արձանագիր Յովհաննու եպիսկոպոսի. նորին դարձեալ յիշատակ շինութեան Սըրահիցն յիշեցելոց ի պատմչէն, ի սեան միում մեծի գաւթին, հանդերձ թուականաւ 1043 ամի. որք են.

**ԶՏէր Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս շինող սուրբ եկեղեցւոյս յիշեցէք ի Քրիստոս.**

† **Թվին ՆՂԲ. Ի Թագաւորութեանն Սմբատայ որդւոյ Աշոտոյ ես Տէր Յովհաննէս շինեցի զսրահս աւգնականութեամբ Սմբատայ, որք աղաւթէք յիշեցէք ի Քրիստոս.**

1 Կոչի և Գառագան ի քանոնքս, իբրև թէ առ նմին տուեալ ինէր գաւազան վորդապետութեան կամ իշխանութեան:

2 Ապիս գերմանացի հուշակար երկրաքննող կովկասեան նահանգաց, որ և պատմեաց զայս Պրոսէի:

Ի գաւթի աստ է դիր շիրմի մեծահաշակ վարդապետի տեղւոյս՝ Գրիգորի Տաթեւացոյ, ի փոքրիկ մատրան, յոր մուծանէ դուռն ի տաճարէն, գեղեցիկ խաչանիշ քանդակօք դրուագեալ, զոր շինեաց Յովակիմ եպիսկոպոս Անկեղակոթեցի ի սկիզբն դարուս: — Ի ծայր կամ ի գլուխ գաւթիս՝ յարեւմտակողմն՝ կայ վայելուչ Զանգախառն, ամբարձեալ ի վերայ վեցից սեանց փոքու կաթոլիկէիւ, շինեալ ի Յովհաննէ Որոտնեցւոյ՝ զատ յայլոց ինչ շինուածոց, յետ դարձին յուխտիցն, որպէս գրէ

աշակերտ նորին Գրիգոր շափաբանօրէն.  
 « Ի Սիւնական վիճակն Հասեալ և գահոյս բազմեալ, Սուղ ինչ ժամանակ անդ խաղաղացեալ, Չզանգակատունն որ էր հիմնարկեալ՝ նոյն նա կատարեալ՝ »:  
 Չանգակքն Հնագոյն են քան զայժմեան տունն իւրեանց և Հնչեցուցիչք յիշատակի մեծի մետրապօլիտն և պատմչին՝ Ստեփանոսի, կրելով զԻւրեամբք զայսպիսի յարմարագիւտ բանս, յ'ամէ 1302 և 1304.

**ԹՎ. ԶԾԱ. Լսելի արա ինձ, Տէր, դձայն ցնծութեան եւ զուրախութեան, Անեղին ծննդեամբ. ԶՏէր ՍՓ. Սիւնեաց գահին կոչեա ի փառսդ Հայրենեաց.**

**† ԹՎ. ԶԾԳ. Լսելի արա ինձ, Տէր, դձայն ցնծութեան եւ զուրախութեան. եւ ցնծասցեն ոսկերք իմ տառ. Գթա Քրիստոս Աստուած ի Տէր Ստփ.**

Աս սոքօք երեւի յետնոյ ուրուք յարգողի նորին երախտաւոր Ստեփանոսի՝ գրեալ,

**Այս Տէր Սփ. Օրպէլեանց մեծաւ Հանիւ ուղղափառ պահէ զաւանգս յեկեղեցիս Հայոց. Տէր Ստփ. մետրապօլիտ Սիւնեաց, որ է Պրօտօփրանտէս ամենայն Հայոց.**

Ի զանգակատան աստ Թաղեալ է Ներսէս եպիսկոպոս Տաթեւացի ի կէս ԺԷ դարու. զորմէ ասէ շարայարող պատմութեան եպիսկոպոսաց Սիւնեաց, եթէ « արար » բազում ուղղութիւնս և բարեկարգութիւնս եկեղեցաց. » կան և քաղաքական, և շինեաց արեւմտեան կողմի » խուցան և զերեսրացան, և զեկեղեցին ի գեղջիւրում »:  
 Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցեակն սագաչէն է, և կայ ի ծայր Հարաւային մեծի գաւթին, շինեալ նախ ի

Փիլիպպեայ Սիւնեաց իշխանէ ի կէս Թ դարու, յետոյ ի Յովհաննէ եպիսկոպոսէ Բ, և ի վերջոյ՝ ի պատմիչ եպիսկոպոսէն Ստեփանոսէ, զորոյ տեսաք և զհակիրճ արձան յիշատակի ի վերդ, և գնուէրս բարեպաշտիցն առաջնոց՝ ի նախակարգեալ բանքս:  
 Ի յառաջագոյն քան զպատմչին շինութեանց Յնայ քիշտակ և արձանագիր մի ի վերայ գեղաքանդակ ընկուզենի դրան եկեղեցւոյն, յամի 1253.

**Ես Տէր Հայրապետս ծառայ Բարձրելոյն կանգնեցի զՌասերս եւ նորոգեցի զՌուռնս. զիս յազաւթս յիշեցէք աղաչեմ.**

Կից սմին է մատուռնն նորաչէն (յամի 1787) ի յիշատակ Հանգատարանաց Յովհ. Որոտնեցւոյ և Գր. Տաթեւացւոյ, արձանագրութեամբ անուանց Բունակոթեցի սատարողացն ի ծախս շինութեան, ի ձեռն Յովակի Լայարքեպիսկոպոսին:— Յարեւելեան հիւսիսային կողմն վանացս

է քարակերտ փոքրիկ եկեղեցին Ս. Աստուածածին, շինեալ ի Գրիգորէ եպիսկոպոսէ ի սկիզբն աթոռակալութեան իւրոյ, վայելուչ ձեւով և սրածայր « գմբեթաւոր, զեղեցկայարմար », և վայելչագոյն գրիւք, ըստ նախակարգեալ պատմչին բանից, և արձանագրաւս.

**Ի շրջագայութեան տուճարի հայկական թուի ? յորեւեանց ՇՁ թուի՝ Ես Գրիգոր մեղապարտ ծառայ Քրիստոսի ողորմութեամբ նորին եպիսկոպոս Սիւնեաց, կանգնեցի զԿամարքս եւ ի վերա զեկեղեցիս. շինութիւնս է (?), եւ որ այլ աշխատութիւն իմ ի տանս եւ արդիւնք վկայեն եկեղեցիքս. եւ յորժամ յաւարսուամն եկն ամենայն, կամեցան եղբարք եւ կարգաւորք տա նրս վարձահատոյց ինձ լինել, եւ խնդրանաւք իմովք կարգեցին իս մի որ յա-**


1 Տես յէջ 221) զմիշտակ բանին զոր ասացեալ է շինողն վասն ձեռակերտին իւրոյ:

2 Եթիւնակին Թուրք գրեալ է. ըստանգակ իսկ արձանն կարուսի ստոյգ վերծանութեան:

մենայն տարւոյ կատարեն վասն փրկութեան անարժան հոգւոյ իմոյ որչափ սուրբ եկեղեցիքս ի հաստատութեան են . իսկ արդ որ զկնի մեր յաջորդէք ի սուրբ աթոռդ հայրապետք եւ կարգաւորք տանս, պարտական են այդ Քառասնուցդ որ անխափան կատարեն յամենայն տարւոյ . Որ խափանման պատճառ լինի ինչ եւ իցէ պատճառանաւք եւ ոչ կատարէ եւ զրկէ զհոգիս իմ, եթէ ի հայրապետաց եթէ ի կարգաւորաց, զրկեալ են և որոշեալ (լիցի) ի փառաց Որդւոյն Աստուծոյ, այժմ եւ ի հանգերձելումն . եւ անէծս կրիցէ ի Սուրբ Երրորդութենէն, եւ մի գտցէ թողութիւն ի Քրիստոսէ . իսկ հաստատիչք գրոյս ակրհնեալ եղիցին .

Ջերեսին զեկեղեցիքս միանգամայն յիշէ Քովմաս Մեծափեցի յիսկագիր մատենի ուրեք գրեալ անդ յամի 1406 «ի Ս. ուխտս Ստաթէի՝ Սուրբ Առաքելոյս և Ս. Աստուա» ծածնիս եւ Ս. Գրիգորիս» . և զատ յերից աստի այլ ոչ յիշի, գէթ յանուանէ . իսկ հին և առաջին անունն Ս. Նշան՝ ոչ բնաւ . բայց որպէս և ի վերջ ասացի՝ կարօտիմ ստուգագոյն այցելութեան և քննութեան տեղոյս, ուր հարկ է թէ իցեն և այլ յիշատակք հնութեան և արձանք բաց ի գրելոցս աստ, և ի սակաւուց ոմանց այլոց, որոց և շարագրութիւն և գիրք նոյնպէս ստուգութեան կարօտին՝:

89. Յաջորդ և ազգակից պատմիչ եպիսկոպոսին՝ Յովհաննէս Օրբէլեան՝ որ իշխանական պերճութեամբ վարէր յոյժ քան զեղբորորդի հաւուն իւրոյ, ոչ յիշի թողեալ յիշատակս ի Տաթեւ . իսկ իւր յաջորդն և տոհմակից Սարգիս եպիսկոպոս՝ գովութեամբ յիշի և վաղագոյն քան զեպիսկոպոսութիւնն (1337), «գորով սպասաւ» և որ սուրբ ուխտիս և աստուածարեալ մենաստանիցս . յորում ժամանակի վարժէր անդ և եղբորորդին իւր նորնծայ քահանայն Յովհաննէս . այն է հուշակեալ Որոտնեցին, որ՝ որպէս տեսաք, բազում ամաք յետոյ շինեաց զՋանգակատունն : ի յետին ամս կենաց սորին, յեւ ՃԻ դարու և ի սկիզբն ՃԽ՝ պայծառացաւ բազում անգամ յիշատակեալ աշակերտ նորին Գրիգոր . որ վասն յերկար բնակութեանն, ուսման, գրութեանց և վարդապետութեան, մահուանն և թաղման ի վանքս՝ կոչեցաւ յատկապէս Տաթեւացի, և ի յաջորդացն հուշակեցաւ ոչ միայն գերագոյն քան զամենայն յետոյ եկեալ վարդապետան, այլ և քան զյորովս յառաջնոց . թող զանպայման դրուատս գովարանից կամ սքանչացողաց, որք գերագոյն ոմն իմաստուն և քաջարան երեւեցուցանեն զնա . այլ ի կշռադատութեան բանից և յարուեստի՝ ստորեւ գտանի քան զվարժապետ իւր, և մարթի կոչիլ առաջին ի հետեւակ գրիչս յետին դարուց . առաջին թերեւս և ի շատագրութեան, և ոչ յետին յընտրութեան նիւթոյ գրե-



70. Ջանգակատուն Տաթեւոյ վանաց .

լեաց . այլ թերեւս վասն բազմագրութեանն՝ յանախ անընտրող, բռնագրօս ի մեկնութիւնս բազում ուրեք և

1 Եւ են տարբիկ ըստ գրութեան Ջալալեհի (Բ. 301-2) . Արտաւոյ գրան մեծի եկեղեցւոյն յանկեան հարաւոյ .

ի յայս ստապան քնարանի,  
կայ հանգուցեալ նշխար մեծի

Ներսէսի րաբունեաց պետի  
եւ եպիսկոպոսի Սիւնեաց նախնգի .  
Գորով տեղեւ Տաթեւացի  
եւ եկեղեցւոյ շինողի .

դիրահաւան՝ թող և զհնացեալ թերուղիդ տեսութիւնս աստուածարանականս, որովք աղարտին յաչս անգիտնոց անուանք և յարգ գերագունից և ճշմարտաճառ Հարց եկեղեցւոց, և ինքն ստգտանի ի գիտնոց: Այլ թերեւս առ այստիկ գրգեալ իցէ՝ կէս ի հակառակընդդէմ և երբեմն անխոհական բանից և գործոց Միարանողացն անուանելոց Եղբարց, և էէս ի յորդորելոյ իւրոցն մտերմաց, գուցէ և ի յանձին ինչ վստահութենէ, և ի սովորական հետեւողութենէ նախառաջնոցն համակարծիք վարդապետաց. որովք պատճառեցին բանք ի գայթակղութիւն տգիտաց, և յարհամարհութիւն այնոցիկ՝ որք եթէ չէին զկծեալք յայնպիսի բանից, միարանէին արդեօք ի գովեստ բարեմոյն բարուց, պարկեշտութեան և հոգեւորութեան նորին, յորս երեւի գոյ անստգիւտն:

Այլ թողեալ մեր գտեսականս, յիշեսցոք զգործս ինչ կենացն և զգրուածս նորին: Էր հայր նորա (Մարգիս) յԱրճէշ քաղաքէ Քաջբերունեայ, իսկ մայրն ի Փարպոյ, և վասն ասպատակի հինից եկեալ էին ի Վայոց ձոր, ուր ծնաւ Գրիգոր. եօթնամեայ տուաւ յուսումն, և իբր հընդետասանամենի գոլով՝ հանդիպեալ Որոտնեցւոյն ի Տւրի Ղիս՝ աշակերտի նմա զամս քսանեւութ. և հետեւի ամենայն ուրեք. և ներբողէ զնա, որպէս տեսաք իսկատիպ ձեռնագրաւ նորին (219) որպէս թուի ի վասն Որոտան կամ Գլաձորոյ. յորում մատենի է և այս բան.

*Այս էս Ստեփաննոս գրիգոր. վերջինն ի ծնունդոք եկեղեցւոց. և ասորայս բանին աստուածորաց. և ասով ի թոյնն գրուածն աստուայս. Լանի-խորթոն ոչ միտեցոյ: Եւ երեսուն կէսայ աստուայս գաղատահաղարդ. այսմ գեղոյ յիշն բարեկից մտք. զՍեղատակէք. զԳիտոյնիս. և որչափ յիշեցոք քան մտապատիկ և ձեռն շնորհ եացի. և թիւն:*

71. Զեսագիր Գրիգ. Տարեւազոյ.

Առեալ ի նմանէ իշխանութիւն վարդապետել և քարոզել, ի մահու նորա (1386) կարգի փոխանակ նորին վարդապետ և առաջնորդ ի Տաթեւ. (յառաջագոյն զամս երկուս

զնոյն պաշտօն վարեալ էր ի վարժարանս Երնջակայ). և ձեամ կայ յառաջնորդութեան. ստանայ աշակերտս բազում, որոց գլխաւորք համարին և յիշին յանուանէ հընգեւորասան վարդապետք, և առաջին ի նոսա Միսիթար Տաթեւացի, որ մեծ դարունապետ կոչմամբ յիշի յանախ ի յիշատակարանս գրոց (յամս 1406-26), և երկստասան եւս ի Մեծոփայ եկեալ, ընդ որս և Թովմաս՝ անուանի պատմիչն արչաւանաց Լէնկթիմուրի, և վաթսուն քահանայք: Երթայ երբեմն և ինքն ի Մեծոփ, ուր աշակերտակից իւր Յովնաննէս վարդապետ շինէր զՍ. Աստուածածնի եկեղեցին, և զնաւակատիսն կատարեն ի միասին յամի 1408. դարձ արարեալ անտի յետ երկուց ամաց մեռանի ի Տաթեւ (1410 կամ 1411), իբրեւ եօթանասնամեայ, և թաղի մեծաւ յաղարկաւորութեամբ: Մեսրոպ վարդապետ գովասան նորին շափարանէ.

« Զքանս հոգեշահ իբրեւ արձան մեզ թողեր, կըրկին տասամբ և քառ թըւով կազմեցեր, Ոսկի պըսակ զլիտոյ տոհմին մեր եղբր »:

Վկայեն և այլք գատ յայլոց բանից՝ քսանեւորս գիրս գրեալ, գրեաթէ ամենայնն յետ մահուան վարդապետին իւրոյ Յովնաննու. միայն մեկնութիւնք կամ լուծմունք գրոց ինչ Արիստոտելի, ամաք յառաջ քան զայն (1383). յիսկագիր օրինակին ասէ գրեալ

... « Մատամբ տխելո՞ծ և անարհեստ ձեռին ներհունհըս. » կողբ բանին խնդրողի, ի լուսաւոր բանից մեծ » վարդապետին իմ Յովնաննու Որոտնեցւոյ, » ի վարժումն աշխոյժ մտաց ուսումնասիրաց », և այլն. — Զորիք ամաք յառաջ (1379) գրէ յայլում մատենի Պարապմանց Ս. Կիրիլի, գտեալ զայն « ի յարկեղս գրոց առաքելական » աթոռոյն Տաթեւու. որ և ես, ասէ, ըստ կա. » ըի իմում տխելո՞ծ մատամբս մեծագրեցի զսա, » առ ոտս մեծ վարժապետին իմոյ Յովնաննու... և ապա » առեալ ընթացայ ի վերոյասացեալ գաւառն », այսինքն ի « գեօլին Քունա՝ չըջանակ գաւառօք », որպէս գրէ վե.

ի վերայ միոյ փոքրիկ խաչի գրեալ ՅՄԸ, ըստ Զաւաւ. յայտնապէս սխալ է առաջին տառ Քունականին, որ հանէ ի ժամանակագիւտ շինութեան եկեղեցւոյն, իսկ ո՞ր բանին յետին դարուց է.

Յանուն Աստուծոյ եւ վարդան կրանաւորս շինեցի սրանոց չրաղաց Սուրբ Առաքելոցս. ետուն ինձ տարին...

1 Առ որ շատ լիցի մի այս աւանդութիւն, եթէ չիցէ այլոյ յաւելեալ, եթէ ճարտարապետ Նոյեան տապանին կողեր Ներսէս:

2 Մի ո՞ր միաբանիցն և կենակցաց գրէր յամի 1401, ի յիշատակարանի Հարցմանց գրոց նորին. « Առ ոտս երջանիկ և երկցս երանեալ բազմերախտ Նորս մեր և երկրորդ արքիաւորչի Նայկա. » զեան սեռի, Գրիգոր քաջ Նահապետի և աստուածաբան վարդապետի. զոր այս դառն և խաւար ժամանակիս իբրեւ զարեւակն ի միջոցէ պայծառացեալ լուսաւորէ զեկեղեցի. ոչ ունելով հանդիստ մտաց և ոչ մարմոյ. քանզի հանէ զգիշերն ի բուն՝ յազօթն թրս Աստուծոյ, ի յարաստուս բազմաճոս. և ընու զկարտութիւն բազմութեան եզրարցս, որ առ ոտս սորս են ժողովեալ, այլ և զըսուր ազգիս. միշտ զնալով ի մէջ այլազգեաց՝ մեծամեծաց և փոքունց. զի ոչ զոյ իշխան և առաջնորդ բաց ի սմանէ »:

\* Ընդօրինակողն գրեալ էր չփոթ իմ զայն է Գունո՞

Եղեւ փոխեալ ի կենաց աստի Ռձերրորդ. Թուի. Յիշեցէք:

ի վե՞ր սեմոյ որ հանն ի գաւթին.

Կաման Աստուծոյ եւ Գրիգոր փոխեցի զիմ հուղըն. զինչ որ հաստատուն կայր գնեցի եւ փոխեցի. եւ ետու յիշատակ սուրբ եկեղեցւոյս. Որ խափանել ջանայ՝ մեր մեղացս տէրն է. Թովին ԶԳԴ:

ի սեան միում. Յանուն Աստուծոյ այս մեր գիր է Տէր Բարսիլ, որ առի զՏանճուտս ի հայրենեացս. ի տարւոցն Դ աւր ժամ Գրիստափորայ եւ Միսիթարայ. կատարիչք հրամանացս աւրինին յԱստուծոյ:

Ի Յանուն Աստուծոյ եւ Յովնաննէս քահանայ իմ հալալ ընչից գնեցի կոծմակոծն, տուի սուրբ Առաքելոցն յառաջնորդութեան սուրբ ուխտիս Տէր Հայրապետ Տէր Յովնաննէս ետուն ի տարին Զ պատարագ սուրբ Յակովբայ տաւնին:

Ի Այս է հանգիստ Տէր Մկրտչի Որ ի Լեհաց եկեալ լինի. Աստ սուրբ կրօնաւոր առ Տէր փոխի Հազար հարիւր իննեակ թվի:

բազոյն . և համարի այնու յաղթահարեալ զերկարնակս , որք նովին իսկ զինու ընդ նմա և ընդ նորայոց պայքարին . և որ առաւել զարմանաց կամ դիտելի է , զնոցին իսկ Քանեցեաց թարգմանութիւնն ընդունէին և Տաթեւեանք . որպէս և իբրեւ երիւք ամօք յառաջ քան զայդ թուական (1377) գտանի Գիրք Առաքինութեանց՝ որոյ ընդօրինակութիւն սկսեալ յՈրոտն՝ « աւարտ սորա եղեւ » ի Տաթեւոյ Սուրբ Առաքեալքն : — Սակաւ ամօք յետոյ (1384) արար զհամառօտ Մեկնութիւն Երայեայ մարգարէի ի յուսաւոր բանից վարժապետին իւրոյ Որոտնիցոյ , որպէս ասէն , ի Վաղարշուոյ վանս ի Սիւնեաց գաւառին : — Միւս յերիցազոյն երկասիրութեանց նորին է կոչեցեալն Փոքր Հարցմունք , զոր յամի 1387 գրեաց ի խընդրոյ Գէորգայ Եզնկացոյ վարդապետի , զոր հարազատ իւր կողմ և երիցազոյն հարազատ . « ի խոռովութեան ժամու , և յանձուկ տեղուոյ , յորում պաշարեալք » ի հինից Նետողաց կրկին յարուցեալ խորազմ անուանեալ ազանց , որ և անբաւ բազմութեամբ ասպատակեալ աւերեաց զայոց , Պարսիք , Վրաց , և զամենայն արեւելեայս . . . և մեր նստելով իբր ի մետաղա կամաւոր դիպակով Շահապօնս կոչեցեալ ամրոցի » . ուր յարձակին հէնք յաւուր Նոր կիրակէի , և սմանց նախճիր գործեն . զհետ որոյ և սով զայ . « Եւ այսպէս սրտմեալ ոգով և թաղծեալ մտք ընծայեցի սըն իսեղծ մատամբ զխուճախոյ նուէրս բանի » . եւ այլն : — Տասն ամաւ յետոյ (1397) հրատարակեաց զՄեծ Հարցմունց դիրան՝ ի ինդրոյ Առուի ուրուք , որ վազամահ լեալ ոչ ժամանեաց վայելել զգիրսն . և ասէ գրեալ » ընդ » հովանեաւ երկնահանգէտ մեծարգոյ ուխտի Սիւնեաց » նահանգի առաքելական աթոռոյ սուրբ Առաքելոյս , և » այլ չրկակայ հրեշտակարնակ սուրբ մենաստանեաց , որոց » ինամօքն ա հրացեալ փրկեցուք յամենայն փորձութեանց » : — Բառաւ քան զայս ի ինդրոյ նախագրեալ Գէորգայ Եզնկացոյ արարեալ էր զԼուծմունս « Կիրողի » Պարսպունց գրոց , յամի 1391 , ի նեղ և ի ստորասուղեալս ամանակաց . յորում սակաւ ինչ յառաջ հէնքայլ » լասեա զօրացն զերկիրս մեր տապալեաց , զերեաց և աւերեաց . . . և այժմ ինամբ վերնական նայելով ի տաւապանս մեր՝ սակաւ ինչ թոյլ ետ շունչ կանելոյ . թէ » և տակաւին եւս ձեռնն բարձր է ի հարկանել » : Են ի սմա և ի նախայիշելումն և ի յուլսի ի գրոցն՝ մաղթանք երախտահատոյց սրտիւ և գովանի զգոցմամբ առ յիշեալ վարդապետն իւր Յովհաննէս : Սակաւ ամօք յետոյ առ կենդանութեամբ հեղինակին , թերեւս և ի նոյն վանքս ընդօրինակեալ զգիրսն զայն Մեղիքիսեդ ոմն (յամի 1401-7) , գրէ զայս շարժաւ .

« Ի յութ հարիւր Հայոց թուական  
Եւ յիններորդ սկսեալ նոր ամ ,  
Գիրքս գրեցաւ այս հրաշազան

1 Ի նմին ժամանակի գրէր և քեռորդի նորա Առաքել եպիսկոպոս Սիւնեաց զլափաքան վիպասանութիւնս իւր , և ի յիշատակի ուրիշ Առաքելոցն մաղթէ յիշել « Զիմ մեծ բարունակեան » յոյժ իմաստասէր , Գրիգոր մեծ հզնազգեաց , ազեբէք առ Տէր » :  
2. Ժամանակակից Տաթեւացոյն և մերձաւոր բնակութեամբ յիշեցեալ քաղաքացի էր ի Գրիգոր Խլաթեցի , և զի ի դուրս թղթոյն

Հարցարանումն և պատասխան .  
Ի մեծ հոգեոր վարդապետէ  
Գրիգոր անուն և հոկողէ .  
Այն որ զանձառս խորոց յայտնէ ,  
Ճաշակ մըտաց մատուցանէ :  
Նինեաց ըզզիրքս զայս պիտանի ,  
Որ դամենայն իմաստս ունի .  
Թէ որ ի բան ինչ ծարաւի՝  
Սատի ըմպէ որչափ կամի .  
Զի այս հանճար է նորագոյն ,  
Զոր չէր յայտնեալ մինչեւ ի սոյն .  
Սայ նոր ճաշակ է քաղցրագոյն ,  
Ախորժ կամաց ամենեցուն » : . . .

Բայց յետ ամաց ի յիշատակարանի Քաղաքացոյ Մեկնութեան Սաղմոսաց , դարձեալ ողբայ գրել « ի նեղ և ի ստորասուղեալ ժամանակի , յորում բռնակալն Քաւմուր՝ Թղլտուութեամբ վերին խնամոցն՝ տիրեալ էր » բազում աշխարհի և աւերեալ , և կործանեցաւ յայսմ » ամի ՊՄԻ Թուի (1406)<sup>1</sup> : — Զայսու ժամանակաւ եկին ի Տաթեւ վարդապետքն խուսեալք ի կողմանց Վասպուրական աշխարհի , ընդ որս և Մեծօփեցին Թովմաս որ և անդ (յամի 1406) ի բնագրէ Տաթեւացոյն ընդօրինակեաց զԼուծմունս Առաքին գրոցն , այսինքն զԱրիստոտելի , զՊորփիրի , եւ այլն , բայց աշխատութեամբ և շարչարանօք . « զի ի շորս կողմանց նիւսխայ էր արարեալ ի լուստնցս գրոցն ( Իսկազիր նորին և վերջին յիշատակարան է թիւն 71 ) : Նշանաւոր իմն բնական դէպս պատահեալս ի ժամանակի գրութեանն՝ ծանուցանէ ի ստորին լուսանցս մատենկանն , այսու մանր ձեւով .

*Կիրողի Պարսպունց գրոցն և զմեծ արիւնքն . որ յայտնէ թե՛ն է վերեոց էր զվե՛ր . զիշտի տունս իւր գտեալն :*

Սակայն կրկնեալ է շարժն , թերեւս ուժգին եւս . զի յետ երկուց թղթոց գրչութեան , յաւելու եւս նշանակել .

*Երբ արեւալ չընկաւ , զիշտի պատշաճ տաճակու և զանկատունս և գաւազնն՝ որք նայեցին ի թիւն :*

Իսկ ամն է 1407 . քանզի յետ ոչ բաղում թղթոց աւարտեալ զընդօրինակութիւնն՝ թուական տարւոյն ասէ ըզ ՊՄԵ . Ընդ շարժմանն նշանակելի է և դիւրաշարժ Գաւազանն սիւնեղէն : — Թերեւս յայսմ պատուհի գալստեան Թովմայի՝ տուեալ իցէ նմա Գրիգոր զգաւազան վարդապետութեան , որպէս յայտ ասնէ ի թղթի գրելոյ ողջունիւ և առաքելական օրհնութեամբ՝ առ քաղաքացիս « Ար » ճիւղ և Բերկրոյ և Արծկոյ , և այլ չրկապատ գեղերէիցդ » և հրեշտակարնակ մենաստանացդ՝ որ ի կայս և ի կոյս » աշխարհացդ » :

Ի նմին ամի 1407 աւարտեաց Գրիգոր զգլխաւոր գը-

սոսկ անուն Գրիգոր վարդապետի գրի ինդրոյ Բովն յաւելմամբ , որպէս գրէ և իւրեքիցին յայլում թղթի , մարթ էր զսա իսկ կարծեալ գաւազանատու Թովմայի . այլ պիտո՞ւն բանքն և զգուշացուցանելն յԱղթամարոյ աթոռոյն՝ հաւազոյն թուին Տաթեւացոյ . քանզի գրէ . « Զանտուութեամբ Հոգւոյն զսիրելի և զձեռնասունս , աշակերտ մեր զվարդապետը Թովմա , թղթով և քանիւ առ մեզ





առեալ առագրէր, եթէ ստուգէ բանն: Մի յիսկազիր գրութեանց նորին՝ Աւետարան մի՝ ասի ի յարգութիւն ուխտաւորաց պահել ի գամբարանի նորին, և ծածկոյթ նորին աղէնկար հիւսած քեռ նորա Հոսիսիսեայ. թէ պէտ պատմութիւնն ասէ՝ մեռեալ ամենայն որդւոց ծընողաց իւրոց յառաջ քան զծնունդ իւր:

89. Առ կենդանեալ Գրիգորի և վարժապետին նորա Յովհաննու՝ դէպք ինչ ոչ փոքր եղեն ի Տաթև և յառաջ նորզն, անծանօթ ի բազմաց, վասն որոյ արժան համարիմ յիշատակել համառօտիւ: Մի յարեղայիցն պատրեալ ի կրից, առեալ աղլիկ մի «և գնացեալ ի գեղ մի այլ» ազգեաց, և մտեալ ի տուն դատաւորին՝ տանկանայ» քեր յայնժամ առաջնորդ ուխտին Տէր Ստեփանոս եպիսկոպոս, եղբորորդի Շմառնի եպիսկոպոսի, «յազատ տանէ և ի մեծ ազգէ. . . (որ) քանզի ունէր բազում» ճորտս այլազգիս՝ հեծեալ նաքա ի ձի և գնացեալ ի գեղն յայն, քարչեաց զարեղայն և զաղլիկն բռնու թեամբ և բերեալ զարեղայն կացոյց ի տեղի իւր, և զաղլիկն եմոյծ ի կոռուսեացն, և յանձնեաց ի հաւատաւ և որ կանայս և այնպէս արժանացոյց զերկօտին ապաշխարութեան»: Վասն այսորիկ յետ ամաց ինչ (միջոց 1378—83) նենգութեամբ կոչեցեալ յիշխանէ կոյմանցն՝ որ կոչի Սոֆի Խալի, գնաց առ նա ընդ քեռօրդոյն՝ որ եպիսկոպոս էր, և ընդ որդւոյ ջեռայն՝ որ արեղայ էր. զորս անգութ այրն այն՝ առաջի Ստեփանոսի ետ զմին յեռացեալ կատայս խարչել, զմեան հրով խանձել և ըսպանանել, վասն չառնելոյ նոցա յանձն զուրացութիւն և զնա ինքն բազում անգամ տանջեալ շարաշար և քստմընելի նորալուր տանջանալ, զան հինգ նեղէր ի բանտի մինչև քոյր նորա երթեալ ի Դավրէժ առ մայր Եղուպ շահի ծանոց զիրան և դիտայն առաքեաց առ Սֆին պատուէր՝ արձակել զչարչարեալն. իսկ նա քանզի երգուեալ էր սպանանել քան թէ արձակել, ասաց՝ զալ և բանութեամբ կորզել ի նմանէ: Եւ արարին այնպէս. ընդ որ տրամեցաւ արձակելն, զի ոչ մեռաւ վկայական մահաւամբ ի շարչարանն. եկեալ յաթոռ իւր, գնաց յուխտ յԵրուսաղէմ, և դարձ արարեալ յետ ամի միոյ վախճանեցաւ. այն է ամի 1383:

Յաջորդ Գրիգորի եկաց՝ բնիկ Տաթևացին Մխիթար, զլուխ աշակերտաց նորին, կոչեցեալն Մեծ բարունապետ՝ ի բազում գրչաց. յորոց մի է Թովմաս Կաֆայեցի, որ մաղթէ (յամի 1433) յիշել զիւր «վարժապետն և զուսուցիչն՝ զանհաս երաժիշտն և զքաղցրաձայն ֆիլիսոս» փայն զմեծ Պարոն Սարկաւազն, զուսուցիչն մանկանց «նոր Սիւնի»: — Միւս գրիչ է Կարապետ քահանայ (1425—6) աշակերտ՝ Յակոբայ կուսակրօն ճգնաւոր փիլիսոփայ խորազնագգեաց և անյաղթ արեղայի, և էին նորա եղբարք Տէր Թուան, և Սարգիս ոմն վարդապետ: Իսկ եպիսկոպոս Սիւնեաց զայսու ժամանակաւ յայտնի Տէր Ստեփանոս, եղբայր Պարոն Բէշքենի և որդի Պրմբատայ որդւոյ Իւանէի Օրբելեան տեառն Որոտան:

1 Յիշէ սա տակաւն զՄխիթար Բարունապետն, և զսա յայլոց շքեալ և Սարգիս սարկաւազուն սպասաւորս, և զԹորոս զեռարդս կուսակրօն քահանայ:

որոց երթեալ ի Սիւն բերեալ էր անտի զՅայսմաւորս այնր բկեղեցւոյ, յորմէ և Սիմէոն մեծ բարունապետն կոչեցեալ առաջնորդ Այրիվանաց (+ 1438) ետ առնուլ զհաւասարն: Իսկ ինքն Ստեփանոս՝ «յայսմ ամի (1433)» գնացեալ ի Տունն Վրաց՝ առ մայրն իւր, և փոխեցաւ «առ Գրիստոս, և բազում անմխիթար ուղգ եթող»:

Լաեն յիշատակք ԺԵ-ԺԶ դարուց, որպէս գրեալ է յընդհանուր Հայաստանեայս, վասն աղմուկայից ժամանակի և աւերածոց Թիմուրեանց և Թուրքաց տոհմիցն Սեա և Սպիտակ Խոյոց: — Բայց յիշեցաք կանխաւ ըզգալուստ մէլիքաց Գեղարունւոյ յամի 1515 ի Տաթև և զվկայութիւն նոցա, զի երկիր իւրեանց թեմ և վիճակ է Տաթևոյ, զոր հաստատեցին և այլ Գեղարունեցիք յետ ամաց: Գրիչ ոմն յամի 1574—5, ընդ առաջնորդին Սիւնեաց Ստեփանոսի եպիսկոպոսի յիշէ և այլ շորս եպիսկոպոսունս ի Տաթև, երեքն Յովհաննէս անուն, չորրորդն Գրիգոր, փակակալն եւս Յովհաննէս. յիշէ յանուանէ և զմիաբանն, Մանուէլ Մտիդատի, Դերսէս և Յովհաննէս կուսակրօնք. Դուսիք, Շմառն, Մովսէս, Թովմաս, միւս Մովսէս, Ազարիս և Գանիէլ զտացող գրոցն (Շարականաց) որդի Թանուշի և Մանայ: — Ի սկիզբն ԺԷ դարու յառաջ քան զվտարումն Հայոց ի Շահ Աբասայ, եկեալ էին ի Տաթև երկրքին կաթողիկոսունքն Մելքիսէդ և Դուսիթ, փոխանակ իւրեանց ձեռնադրել և կացուցանել զՍրապիոն, այլ ոչ յաջողեաց: Ի խաղաղել աթոռոյն առ Մովսիսիւ և Փիլիպպոսիւ, որպէս այլք ի վանորէից՝ սկսաւ և Տաթև նորոգումն առնուլ. յորում յիշի յամի 1643 Յովհաննէս արքեպիսկոպոս իբրեւ առաջնորդ վանիցն, ուրոյն ի Մովսիսէս արքեպիսկոպոսէ. յետ նորա Դերսէս՝ առաքեալ ի Փիլիպպոսէ կաթողիկոսէ, զորոյ յինութիւնն նշանակեցաք վերագոյն, և ըզտապանն, որպէս և զյաջորդացն ոմանց, զորոց տեսցի և ի կարգի յաջորդութեան եպիսկոպոսաց Սիւնեաց: Ի վերջին ամս Փիլիպպոսի (1655) եղեւ բազում անգամ յիշեալ զալուստ ուխտաւորացն ի վանորայս Հայոց, որք և

« Ի սուրբ ուխտն Տաթև հասեալ՝ Զորութիւնն որ գումարեալ Սեռն սիրով զնաքաք փարեալ »:

այլ յանուանէ ոչ յիշին սրբութիւնքն. յորս օտարազգի ոմն այցելու (յամի 1863) յիշէ մասն Դոյնեան տապալակի մատնաչափ Թանձրութեամբ և ձեռնաչափ մեծութեամբ, յոսկի տփի ամրափակեալ: — Զայսու ժամանակաւ և սուղ զկնի մի ի միարանից Տաթևոյ՝ Գրիգոր արեղայ սարկաւազ, յուխտ Ս. Կարապետին երթեալ ի Մուշ (յամի 1676), և նեղեալ յայլաղենից հրապուրուցաց յուրացութիւն, կշտամբէր զնոսա և զդատաւորն՝ առ որ ձգեցաւ յատեան, և դատապարտեցաւ ի մահ, և ի հատանել զիւրոյն՝ երիցս ասի ձայնեալ Օրննեալ և Ստտուած և Թաղեալ պատուով ի նոյն վանս:

Յելս կոյս ԺԷ դարու, Ստեփանոս Զոռայեցի անուանեալ կաթողիկոս, խորհէր արգելուլ ի Տաթև զՆահա-

2 Այսպէս աւանդի ի Յիշատակարանի Ոսկիփորիկ գրոց՝ որ պահի յԵրուսաղէմ, ի Ս. Յակովբեանց վանս: Գաղափարեալ է սորա և զՔարոզչիւրս Գրիգորի ի վանս Տաթևոյ, յամի 1622:

պետ կաթողիկոս, յորոյ բռնութեանցն տաղտկացեալ էին միարանք Էջմիածնի, այլ ինքն ըմբռնեալ մատնեցաւ յայլ բանտ: — Յայց ել Տաթևոյ և Արրահամ Գ. կաթողիկոս յուխտագնացութեան իւրում ի վանորայս և յանապատս և յիշէ ի պատմութեանն՝ «գրիչտոխտունցի Մեհ. » մանտար Տաթևու Մկրտիչ վարդապետն»: Յաջորդ կաթողիկոսին Ղազար Զահկեցի յիշէ ի որբութիւնս տեղւոյս «գերահաշակ աթոռ Տաթևու կոչելով, զՍազ սուրբ » Նշանն ի կենաց փայտէ, զոր ետ Հերակլ արքայն Յունաց » պարգեւս տիկնոջն Սիւնեաց. այլ և 9800 նշխարս որբոցն » Աստուծոյ» (որոց արդեօք): — Ի վերջ կոչս ԺԼ դարու և ի մերումս՝ թէպէտ ոչ սակաւ նորոգութիւնս արարին Արրահամ, Յովակիմ և Մարտիրոս եպիսկոպոսունք, այլ տակաւին յոյժ անշքացեալ էր և յետնեալ յառաջին փառացն և համբաւոյն, մանաւանդ զի բարձաւ անտի և եպիսկոպոսական յաջորդութիւն (յամի 1837), և թողան տեղակալ առաջնորդք ընդ ձեռամբ աթոռակալին Երեւանայ. որք և հաստատեցին ի Տաթևու դպրոց մի փոքր սակաւթիւ մանկտոյ: Ոմն ի ծանօթարարաց տեղւոյս յա մի 1875 զբէր երկուս վարդապետս միայն լինել անդ:

- Զանուանս ոմանց յառաջնորդաց յաջորդաց յետին եպիսկոպոսին (Սիմէոնի) նշանակեցի ի գաւազանի աթոռոյն Սիւնեաց (յէջ 21). յետ այնր ընկալեալ յայժմեան առաջնորդէ ուխտին զանթերի շար նոցին, որք ստէպ զիրար յաջորդեալ են, կարգեմ աստանօր.
- 1847 Մկրտիչ վ. Շուխեանց
  - 1850 Կարապետ վ. Շահնազարեանց
  - 1857 Յովհաննէս վ. Ալանեանց
  - 1861 Կարապետ վ. Շուխեցի
  - Յովհաննէս եպիսկոպոս Ալանեանց
  - 1864 Յովհաննէս վ. Աղազանեանց
  - 1865 Սարգիս վ. Տէր-Փասպարեան
  - 1867 Յովհաննէս վ. Ղալամեանց
  - Արիստակէս վ. Սեդրակեան (այժմ եպիսկ.)
  - 1868 Յովհաննէս վ. Ղալամեանց (Բ անգամ)
  - 1870 Յովհաննէս վ. Ասլանեանց (Գ անգամ)
  - 1873 Ստեփանոս վ. Մխիթարեան
  - 1876 Յովհաննէս վ. Երեմեան
  - 1879 Յովհաննէս վ. Ղալամեանց (Գ անգամ)
  - 1884 Թադէոս եպիսկոպոս Տէր Դանիելեանց
  - 1885 Յովհաննէս վ. Ղալամեանց (Գ անգամ)
  - 1886 Թադէոս եպիսկոպոս, միւս անգամ
  - 1887 Անանիա վ. Համազասպեանց Երեւանեցի.

Սա յամին 1889 յորդորանօք և նպաստիւք նախանձաւոր ազգասիրաց՝ ձեռն արկ նորոգութեան վանացն:

90. Մի ի կարեւոր գիտելեաց Տաթևոյ վանաց, մանաւանդ թէ թեմին, է հասք կալուածոց նորին, հարուստ և ճոխ քան զյուրովս յաթոռոց Հայոց, ըստ առատատրութեան մեծոգի և մեծահաւատ իշխանաց և դամկաց Սիւնեաց: Տուրք եօթնհարիւրիւ շափ գիւղորայից, զոր Ստեփանոս Օրբելեան նշանակէր իբրեւ հարկ ԺԲ գա.

1 Շահի դրամ Պարսից համարի այժմ 0, 25 ֆրանկի: Երկուց միայն զիւզից պտուղն եղեալ է աղանձ դրամով, որ սուղ ինչ ճըււազ գորի քան զֆրանկի: Բարկուշտայս գաւառի բերքն չափով ար.

ւառացն յեկեղեցին, փոխեցաւ և խառնեցաւ ի վանքս Տաթևոյ ընդ եպիսկոպոսական գահուն. որ՝ զատ յայնցանէ ունէր առանձին ողջոյն իսկ գեօղս և ազարակս, լերինս և դաշտս և շուրս, որպէս տեռաւ ի նախագրեալ վճռադիրս: Ի հոլովել ժամանակաց և ի վրդովել աշխարհիս՝ նուազելով նուազեցին և թիւ հարկատուացն և տրից. այլ տակաւին և ի յետին դարս՝ ոչ փոքր է թիւ գիւղիցն, այն է 260, բաժանեալ ի 14 գաւառս, որպէս և հին Յուցակն. այլ սահմանք նոցին և անուանք փոփոխեալ են, և կոչի Տաթեոյ քեմի պտուղ, և հաշուին պարսիկ շահի՝ դրամով. որոց գումար՝ եթէ ստայց է գրածն հաւաքի ի մեծաքանակ թիւ 580 կամ 600, 000.

Գեղուածոր	15,350
Բաղաբերդ	17,450
Կաքաւաբերդու գաւառն	66,700
Մացրու գաւառն	33,800
Աճանանու գաւառն	50,050
Գիլաբերդու գաւառն	21,700
Մաղանջու գաւառն	22,800
Բարկուշատու գաւառն	11,900
Զեմնկազօրու գաւառն	46,400
Քաշաթաղուց գաւառն	50,150
Զաւնդրու գաւառն	48,700
Ղարատաղու գաւառն	54,462
Վերիծորու գաւառն	28,600
Սիսիանու գաւառն	116,900

Զատ ի պտղոյ 260 գեօղիցն, նշանակին և այլ կալուածք Հոռափար կոչեցեալ, Արտորայք իբր 30, Սրանօք (աղօրիք) 4, յորոց մին միայն չէն էր առննթեր վանացըն. Խոտատեղիք 5, Այգիք 10, Հնձանք 5: Զափք բերոց արմտեաց են Բեան, Մարգարան և Զարեք: Ոչ է ինձ յայտ ժամանակ այսր վիճակագրութեան 260 գիւղից, այլ թուի յ'ԺԷ դարու արարեալ. և ընդօրինակող ոմն յամի 1720 ծանուցանէ, «Զայս Յովհաննէս վարդապետի » դաւթարիցն առեալ՝ աստ գրեցաք, Թ՝ լին ՌձՎԹ, որ » Երեմիա վարդապետին գրեալ թ՝ լին ՌձՄԱ (1702) » մայիսի 10 էր, Տաթևու վանքին Բահրէքն, որ է մուշքն: » Ես Տէր Աղեքսանդրս գրեցի յայն սրայիցն»<sup>2</sup>: — Ի նորագոյն ցուցակի՝ որ թուի յիւս ԺԼ դարու կամ ի սկիզբն ԺԹ՝ արարեալ, նուազեալ իլեալ է թիւ գիւղորայից յ'95, այսպէս ունելով խորագիր. «Սրբոյ աթոռոյս բո » յոր թեմի և վիճակի տասնեակ գաւառքն և գիւղք՝ որք » ներկայայտէս չէն են, նաև պտուղք նոցին՝ են այսո » թիկ, դորս ի ստորեւդ շարեցից»: Եւ շարէ այսպէս, յանուանէ կարգելով և զգեօղսն, զոր մեք զանց առնեմք.

Մղուկ գաւառ	Գիօղք 20 Պտուղ. Շահի 100,950
Բարկուշատ	7 . . . .
Արեւիք	8 65,024
Ղարադաղ վերին	18 161,300
	<hr/>
	53 327,174

մըտեաց զեին (մարզպան և շարեք), և յաւելուն ի նոսին Թիւք հարիւրաւորք, որ հաւանօրէն չ'հի են:

2 Սլու թուրքարէն, կարգ կամ սուղ բանի:

	53	327, 174
Ղարադաղ Ներքին	7	20, 000
Զաւընդուր	2	20, 000
Ղափան	8	17, 000
Բաղաբերդ	6	38, 000
Անանան	7	30, 000
Զանկեագոր	15	49, 000
	<b>95</b>	<b>501, 174</b>

որ է 120, 000 ֆրանկ, և աւելի.

Սարգիս Զաւընեան զարդիս ասէր 70 գիւղ միայն մը նացեալ թեմ Տաթևու. իսկ Արարատ Օրագիր էլ միածնի՝ զոր մարթ է պաշտօնական կոչել, 83 գեղս դասէ ի Յաջորդութեան (Թեմի) Տաթևու, բայց գէթ երեք ի նուցանէ կրկին գրեալք են, և մասն 80. զորս կարգեացուք ըստ այնմ ցանկի, յաւելեալ հանդէպ նոցին զհին գաւառըս նոցին, (և զանձանօթիցն թողեալ դատարկ.) յորս ճանաչի զի ի յետին դարս միայն Մղուկ, Բաղք, Զորք, Հաբանդ, Կովսական և Արեւիք մնացեալ էին ի թեմին. ընդ երկրայութեամբ է և փոքր մասն մի Աղահէնի:

Շինաթաղ	Մղուկ
Լոր	»
Դարապաս	»
Գետաթաղ	»
Լճէն	»
Ախլաթեան	»
Կուրից	»
Աղքէնտ (Կիրակոսիկ)	Մղուկ
Ալէլու	»
Թազագիւղ	»
Բունակոթ	Մղուկ
Մազրա	»
Շատոտ	»
Անգեղակոթ	»
Գարագիլիսէ	»
Ոյծ (Ուջ)	»
Եայնի	»
Շիկափող	? Կովսական
Շրուանիձոր	Արեւիք
Մալեւ	»
Մեղրի	»
Լիճք	»
Վահրաւորա	»
Կորիս	»
Նորաշէն	»
Դաշտօն	Արեւիք
Քաջարանց	?
Փիր-Մազրա, Բըլ Մազրա	Զորք
Բուխրուտ	»
Հանդ	»
Քրդեկանց	»
Բեխ	Կովսական
Գիւտկում	»
Մեղրի-Փոքր Թաղ	Արեւիք
Բաղաւերն	Կովսական
Ճտկէն (Զքատէն)	»

Պառաւաթափ	?
Կաւարդ	Բաղք
Առաջածոր (Արջածոր)	»
Խոսանան	»
Նորաշէն	»
Շրուանենց	} (Թուին կրկին գրեալ)
Խլաթաղ	
Տանձատափ	Մղուկ
Տաթև	»
Կարճեւան	Արեւիք
Կալեր	»
Երիցվանիկ	Բաղք
Զափնի	»
Սեւաքար	»
Էրկենանց, Ըրկեն	(Բարկուշատ)
Ջէլվա	Հաբանդ
Եղավերդ (Աղահորդ)	Բաղք
Ագարակ	—
Խնձորեսկ	Հաբանդ
Նորաշէն	—
Մաղուազ (Մակաղոց)	—
Տեղ	—
Կոռնիձոր	—
Ալիղուլի	—
Քարափունջ	—
Կէօրու (Գօրու)	—
Մուղանջուղ	—
Խոտ	Հաբանդ
Շինուհեր	—
Հալիձոր	—
Բալաք (Բչեկանց?)	Մղուկ
Կորիս	»
Միքէնտ	Աղահէնք
Երիցաթումբ	Բաղք (Մաղանջ)
Բնունիս	Մղուկ
Վաչագան (Վաչգան)	Զորք
Արաուս	Մղուկ
Կուտեմնիս	Արեւիք
Վանք	—
Խոզնավար	Աղահէն
Զկտեն (Կրկնեալ Թուի ճկտեն)	»
Տորտնի	Բաղք
Խտրանց (Խնդրանց)	Բարկուշատ
Վժենիս	Բաղք
Սուարանց	—

Ի միջակ կամ յերկրորդ ցուցակի պտղոց թեմին՝ բնիկ գեղը Տաթևու կարգին հուլավարք յանուանէ տանց կամ տոհմից, զոր՝ իբրեւ հետաքննական ինչ ծանօթութիւնս բնակչաց գեղն՝ նշանակեմ, ոչ երայխաւորելով ստուգութեան անուանցն և թուոց.

- « Մատթէոս Իրիցանց աղբիւրն, 12 մարզպան .
- » Ածին հողն, 5 մարզ .
- » Ղալամանց տներն և Քարթուտին հողն, 12 մարզ .
- » Հնկերվանց, 4 մարզ .
- » Մուլքոնց տներն, 10 մարզ .

- » Արրահամանց տներն, 10 մարզ.
- » Գուլալտոնց տներն՝ թէ վար լինի և թէ ցել կամ
- » ոչ, 3 մարզպան մաղթայէ տալ պարտին.
- » Ճհանկիրանց և Թաթոնց տներն, 6<sup>1</sup>/<sub>2</sub> շարէք.
- » Աւանանց տներն, 7 մարզ. 8 շար.
- » Աւագոնց տղայքն, 9 մարզ. 3 շար.
- » Իսամանց և Ալթունանց, Քեղանցու և Թխկէ ձեռ.
- » նաւորին հողն. սոցա խուրձն կու հանեն:
- » Զիլիկանց Ծածարու հողն, որ այժմս Շլորի կոչեն.
- » սոցա խուրձքն կու հանեն. որք են հողերն վանքին ու
- » ընկերվանց. ու ամէն հողերի խուրձն կու հանեն,
- » տասնէն երկուսն կաւասանանց հողերին»:

Առանձինն եւս Տաթեւոյ գեղըն տուրք և հարկք առ վանսն նշանակի այսպէս. «Տարէ: 24 բեռն ցորեն, և 4 » լիտր մեղր տան, և գլխովին բոլոր գեղովն մէկ օր վար » անեն, երկու օր հունձ անեն, և մէկ օր ալ շառ անեն՝ » ինչ բան որ լինի. և մէկ օր՝ եղնարածքն վանքիս հա. » մար խոտ հարեն»: Յաւելեալ են հարկաւորն և ծա. » նօթութիւն մի առ այս. «Տաթեւու հողավարքն՝ տարին » կէորայ է, (այսինքն ըստ բերոց տարւոյն). զորն՝ թէ » վար լինի և թէ ոչ՝ կու տան. և զորն՝ թէ վար լինի » տան, (թէ) վար չլինի՝ չեն տալ. և այնպէս տեղ կայ » որ խուրձ կու հանեն տասնէն երկու. վասն այն որ մա. » լըն այն հողերու վանքիս տալիս հաքիմի են»: — Պի. » տանեգոյն եւս են արդեօք ըստ աշխարհագրական տե. » սութեան, անուանք Արտավարաց վանուցն, որոց դիրք՝ » անծանօթք առ ի մէնջ՝ դիրագրուտք իցեն տեղացեաց.

- Սատանայի կամուրջի բերանն
- Ուղտաքարն
- Յրուագետ
- Աճի հող
- Քրտնէս
- Հաղաւտ գլուխ
- Հոնճեր
- Ակրու խաչ
- Բոլորդուզ
- Ժողովարան
- Բոլորճոթ
- Ակուավար
- Ծովեր
- Տանձուտ
- Խաչի հողն
- Հաղարու դաշտն
- Օրթուխաներն
- Սուարանձու Հացամարգն եւ Խնձորու կապն
- Երկամճոթեր
- Աղանձու Արփալներն՝ եւ Աղբիւրին տակն
- Խանաղի երկու ճոթն, մին ճանապարհի գլխին
- եւ մինն ճանապարհի քաշն.
- Տանձատափու աղբինքների տակն, եւ
- վլասայ ճակատի հողն
- Հլածորու կարմիր յորուն ? եւ հողն,
- Տաշտունի հողն:

1 Աւելիք թուրքերէն զարեհոց, վիճակ զարուց  
 2 Որք էին, «վէց բեռն և 3 մարզպան ցորեն, և մէկ հազար դեան

Խոտատեղիքն են. Ղազարակապ, Քարահունջի գետէն մինչ ի Ծական. Յաջուտն՝ յԱնցի փոսէն մինչ ի Խաշն և մինչ ի Յից-խալն. կետատաքաւաքէն մինչ ի գետն: Երեւի և Քրդանոց մի լինել ի սահմանս Տաթեւոյ, այսինքն տեղի բնակութեան Քրդաց, յորում էր և սրանոց, որոյ հասից երկուքն վանացն էր և մին Քրդերուն. իսկ յարգասեաց երկրին՝ «երեք բեռն ցորեն, մէկ թիլանի » լիտր մեղր, և մէկ ոչխար տան վանքիս: Այս է դաշինք » սահմանեալ»: Ըստ այսոցիկ և գիւղից Հայոց սահմանեալ են այլ և այլ շափք և տեսակ՝ տրից, անհաւասարք և աննմանք իրերաց. զոր օրինակ, Շնչեր, Խոտ և Հա. լիճոր՝ զատ յայլոց տրից՝ տան շափ ինչ Ընկոյզ, Հոն և այլ միբոս նմանիս. իսկ կից գիւղ՝ 19 ոչխար. ամանք այսչափ բեռն, այլք <sup>3</sup>/<sub>10</sub>:

Յայսոցիկ արտավարաց և խոտատեղեաց՝ ոմանք ծա. նօթ և պատմական իսկ տեղիք են հեռաւորք կամ մեր. ձաւորք. և ի սոցա ի գիւտ և ինդիր ժամ է մատչել:

91. Առաջին և թերեւս գլխաւոր տեղի յետ Տաթեւոյ և հպագոյն նմին ծանուցեալ արդ՝ է Տանձատափ գիւղ, սակաւ խտրոցաւ բացակայ յաջմէ ջրոյն և յարեւելից վա. նացն ի դալարաւէտ վայրի: Սա թէպէտ չէ կարգեալ ի հին Յուցակի հարկատուաց աթոռոյն Սիւնեաց, այլ յիշի ի պարգեւագրի նորայէն եկեղեցւոյն Առաքելոց, յամի 906, պարգեւեալ նմին յԱշտոյ գահերեց իխանէ Սիւ. նեաց. կայ և ի յետին Յուցակի թեմի և կալուածոց Տա. թեւոյ, ուր և գրի, զատ յայլոց հարկաց և պտղոց նորին յաթոռն<sup>2</sup>, եթէ «Քաղաւորքն՝ այս Տանձատափու խա. » բաճն գլխոյ՝ վանքին լուսացու են տուել, որ խարածն » տան վանքիս. և ով որ խափանէ հին Քաղաւորաց հրա. » մանքն՝ իւր հաւատոցն զրկուի, և իւր փեղամբերայն » դառնայ, և նզովից ներքոյ մնացէ», եւայլն. յորմէ ե. բեւի թէ ի ժամանակի գրութեանն՝ կամ մասամբ կամ բոլոր մալիմարնակ էր գիւղն: Ի վերոյ գրեալ Յուցակի ազարակաց վանացն՝ ցուցան և ի սմա երկուք, որոց և դիրք նշանակին յԱղբիւրն, և ի վլասայ ճակատն, յորս երկու բեռան հող էր վանացն: Եկեղեցին Տանձատա. փու կոչի Ս. Մինաս:

Նշանաւոր եւս տեղիք կային ի սահմանս Տաթեւոյ և վանացն, որոց գիրք և անուանք ծածկեալ կան ի մէնջ. բայց զի մերձաւորք էին Աթոռոյն՝ չիցէ թերեւս դժուա. րին գտանել և սահմանել զնոսին՝ քննութեամբ վայ. րացն և աւանդութեամբք: Սոցա գլխաւոր համարելի է Յուր, որ և ի հին Յուցակին նշանակի, և անունն իսկ տայ հաւաստիս հնութեան, և որ ի նմանէն անձնք՝ Յուրագետ, կամ Գետ Յուրայ, Յուրայ վանք, որ և Յուրանք, և Չորոյ-վանք. յելս կոյս Թ դարու յամի 881 յիշի նախ երէցն Յուրագետոյ Սմբատ, և եկեղեցին՝ Տե. րուակակն: Ի շինութեան մեծի եկեղեցւոյ եպիսկոպոսա. րանին Տաթեւոյ՝ նահապետն Սիւնեաց Աշոտ՝ ընդ այ. լոց չինից «չնորհէ (նմին) և զՅուր՝ Բերդովն և ազարա. » կաքն, և զգետն Յուրայ, և զվանքն... բայց թէպէտ և » զայս ամենայն տուրս արտին, զբնակիչս բերդին Յու.

» Հուլավար տան. մէկ օր վարեն, երեք օր նձեն, մէկ օր խոտ եւ. » նեն, և մէկ օր ինչ բան որ հանդիպի՝ շառ անեն վանքիս »:



» րայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենա-  
 » աէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և  
 » ոչ զՏամարդէկա՝ որ մերձ վանիցն էր ի հանդէպն՝ կա-  
 » րացին սեպհականել. զի և նորա նոյնպիսիք էին: Էր  
 » և աւազականոց մի Բեդր անուն հանդէպ վանիցն, յայն  
 » կոյս մեծի գետոյն, յափն քարոյն՝ որ Առաւելարարուն  
 » կոչեն, ի ներքին ուսակին. և զայն եւս ոչ հալածե-  
 » ցին. յորոց՝ վտանգ ոչ սակաւ հասանէր եղբայրու-  
 » թեանն»: Յետ իբր ինն ամաց (Յ15) « Բնակիչք բերդին  
 » Յուրայ... եկեալ ի գիշերի յեղակարծ ժամու՝ սկսան  
 » կողոպտել զեկեղեցին և զգործատներն և զյարկան  
 » կրօնաւորաց. և խնդրէին զեպիսկոպոսն զի սպանցեն՝  
 » և ոչ գտին. ապա զմանս ի Յերոցն սրով հարին, և  
 » զայլն փախտական արարին. զոր ինչ գտին՝ ին-  
 » քեանք առեալ գնացին ի Բերդն. տարան և արծաթի  
 » սափորով զնուոնն և վայթեցին ընդ քարն: Իսկ ընդ  
 » լուսանալն եկեալ եպիսկոպոսին և տեսեալ զայն ամե-  
 » նայն փնտան, ի վեր առին զսուրբ Խաչն և զայլ սրբու-  
 » թիւնսն, և նոզիցին ահագին նզովիւք զԲերդն և ըզ-  
 » բնակիչս նորս. և առժամայն շարժեալ գետնոյն՝ քա-  
 » ըն յերկուս ճեղքեալ, և ամենայն շինուածն փլեալ,  
 » և բազումք ի բնակչացն անյայտ կորեան: Իսկ եպիս-  
 » կոպոսն ոչ իշխեաց բնակել ի տեղւոյն. այլ առեալ ըզ-  
 » խաչն՝ ամենայն պաշտօնէիւքն ել և գնաց յօտար աշ-  
 » խարհ: Այլ իխանն Սիւնեաց զարձոյց զնա յաթոս-  
 » իւր, և հալածեալ զբնակիչս Յուրայ՝ սգտեցին իւր  
 » սահմանովն եւ ի սեպհական ժառանգութիւն եկեղե-  
 » ցւոյն. և հրամայեաց գրել վճիռ ահագին նզովիւք և  
 » կնքել և գնել ի սուրբ եկեղեցւոյն, զի մի ոք յանդրգ-  
 » նեսցի շինել զնա՝: Այլ յեւս Ժ դարու յամի 999,

« Չայ տեղիս առին ոմանք և վերտոին շինեցին, և յա-  
 » րուցին մեծամեծ հալածումն եկեղեցւոյն... և եպիս-  
 » կոպոս Տէր Յակոբ երթեալ էր ի Բաղս, և զարձեալ  
 » զայր անտի. իսկ շնաբարոյքն գաղտ պահեալ զճանա-  
 » պարհն որ անցանէ ընդ Խոսն Յուրայ, յարեան ի վերայ  
 » և սպանին զեպիսկոպոսն. որ և Թաղեցաւ (անդ) ի յի-  
 » շատակ շար գործոյն. և մինչեւ ցայսօր բժշկութիւնք  
 » լինին ի տեղւոյն՝ ի բորոտս, ի պիտակս և յայլ արտա-  
 » ժէտս... (Իսկ Թագաւորն Վասակ ետ պատուէր Գրի-  
 » գորի եպիսկոպոսի) քակել և յատակել և բնակին ի րաց  
 » Ընթել զտեղի Բերդոյն, զոր և արար իսկ անյայտ զտե-  
 » ղին. և գրէ կտակ կրկին՝: Այս տեղի է հաւանօրէն  
 » կոչեցեալն յԱռաքել պատմէ՝ « Չորոյ վանք, որ ասի  
 » Յրուանոց», ուր եկին մենասէր խնդրողք անապատի  
 » սկիզբն ԺԷ դարու, և ոչ հաճեցան: Թերեւս նոյն է Յը-  
 » րուանոց ընդ Սուլարանց՝ զոր տեսաք երկիցս յիւեալ ի  
 » ցուցակս հասից Տաթեւոյ. և որոյ դիրք նշանակին յարեւ-  
 » մտից հարաւոյ սորա (Տաթեւոյ) առ նորին լրով. այլ թէ  
 » գուցէ՝ անդ նշմար Չորոյ վանաց, ոչ ունիմ ստել. իսկ ի  
 » գիրս ոչ գտի զսա յիշատակեալ, րայց միայն ի Վանական  
 » գրէ յեւս ԺԵ դարու (տ. յէջ 112, 131), որոյ փախու-  
 » ցեալ յասպատակէ Մուրատ խանի Շամախոյ, ելեալ ի  
 » կայից իւրոց (Փոնձաթաղէ) եկն այսր, և աստի զերծաւ  
 » այլուր. և յետ պատերազմի և պարտութեան Մուրա-  
 » տայ՝ դարձաւ այսր ի Չորեկանկս, որպէս գրէ, և ինչ  
 » զեկեղեցին Ս. Աստուածածին, զՍՂ « Սրբոյն կիւրղի  
 » հայրապետին, և Մար Մարոնհա Ս. Գարրիելի? և Սըբ-  
 » բոց Վարդանանց նշխարացս, և այլ Սրբոցս որ աստ  
 » կան հաւաքեալ». ուր և աւարտէ զընդօրինակութիւն  
 » Մաշտոց գրոց, (զոր այսր և անդր գրէր ի փախտեանն),

1 Եւ է վճառգիրն այսպէս. « Ես Յովհաննէս՝ շնորհին Աստու-  
 » ծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գրեցի զայս վճիռ իմով ձեռամբս՝ հրա-  
 » մանու սաստաճառք իշխանին Սիւնեաց Սմբատոյ. զի եհաս մեզ  
 » վտանգ տաղանդի ի շար և յանաստուած ելուզակացն որ բնա-  
 » կեալ էին ի Յուրայ-բերդ անուն քարին, որք յանկարծակի յա-  
 » րուցեալ ի վերայ յազնաժողով կարարցն ի գիշերի՝ կողոպտեցին  
 » զՅուրայ ամենայն, և զմանս սպանին ի ճերոցն: Իսկ մէք տեսեալ  
 » զպիղծութիւն աչեա՝ առեալ զսուրբ Խաչն՝ կալածական եղաք յայլ  
 » աշխարհ. և կրօնաւորքս ամեն ցան և ցիր եղին: Ապա ազգ եղեալ  
 » սաստաճառքով տեսան Սմբատոյ, և եկեալ զարձոյց զմեզ այս-  
 » բէն. և ըստ քաջ սրբին և մեծայայտ հաւատոյն, իբրև զսուրբ  
 » մրմառեալ ի վերայ շարացն՝ ցան և ցիր կացոյց զամենեսան. զիտե-  
 » լով ըստ մեծի իմաստութեան իւրոյ զանօգուտ փարն, զի չէ ումեք  
 » շահ ինչ և ոչ նեղէ զզք, ոչ ի Բազանոց և ոչ յայլ կողմանց,  
 » բոց միայն զսուրբ եկեղեցին և զիւր իշխանութիւնս տաղանդու  
 » վշտացոցանէ. զորս իւր և իւր հարանց բազմաուս և անշափելի  
 » ծախիւք և աշխատութեամբ պայծառարաջ վայելչացուցեալ էին  
 » և ցանկալի յարինեալ. և զերծուցեալ անհզոյց զսուրբ Ղլմանս և  
 » զեկեղեցիքս և զմեզ, և ե՛տն յանդորր ի դառն նեղութենէ. և ա-  
 » ւանդեաց ի ձեռս մեր զտեղին. զոր հատուցէ սմա նախ ի մարմնի  
 » տէր Աստուած մեզ ժամանակօք և խաղաղական թաղաւորու-  
 » թեամբ, զաւակօք և զարմիւք վայելել. և յաւիտենական կենացն  
 » և արբոյնութեանն լինել արժանի ընդ սուրբ թաղաւորացն:

Այլ հրամանաւ նորին Սմբատոյ՝ Սիւնեաց իշխանի, գրեցի ի-  
 » մով ձեռամբս կտակ յաւիտենական, և կնքեցի իմով սովորական  
 » մաստանեաւս, և եղի յեկեղեցւոյն, զի յետ ժամանակաց մի ոք  
 » հրամանին մերոյ հակառակի, և անուն զՅուր ի սուրբ եկեղեցւոյս.  
 » և կամ կամի զսուտ փարէք բերդ անուանել, և շինութիւն խորհել,  
 » և կնքին կալածումն յարուցանել սուրբ եկեղեցւոյս, այսպիսին

նզովեալ եղիցի յԱստուծոյ ամենակալէ և յամենայն Սրբոց և ի  
 » մենջ, և մի՛ հասցէ ողորմութեան. այլ եկեղեցին ի վերայ նորս ա-  
 » նէք ցաւազիւք, և եղիցին որդէք նորս ի սաստակում, և յազգէ  
 » Չնկեցի անուն նորս. և յետ այսր ինքն Ընթեալ լիցի ի զարութե-  
 » նէն կենաց. և մասն ընդ սաստանայի առցէ յանջէլ Լուրն: Իսկ  
 » ժամանակին աւագն որ հաստատուն կոյ այս պայսամանիս, որպէս  
 » Սմբատ սաստաճառք իշխանս, զնորին՝ օրհնութիւն և զվարձ  
 » ժառանգեաց. ապա թէ մուսաղեալ անփոյթ արացե՛լ՝ գիրն մի՛  
 » վայելեաց. և ամենայն նզովից որ ի գրես է՝ պարտական եղիցի:  
 » Եղև այս ի Թուականին Հայոց ՅկԴ (915). ահա այսպէս եղև 91  
 » — Օրբեւնս, ԽԼ. ԾԶ:

2 « Շնորհին Աստուծոյ կամ եղև Վասակոյ՝ սաստաճառք և  
 » բարեպաշտ թագաւորի, և Սիւաղայի՝ իշխանաց իշխանի, և մերն  
 » իւրեանց Շահանգիտոյ, ըստ քաջահաւատ յուսոյն և երկիւզած  
 » բարոցն հաստատել զվերայ գրեալ վճիռք երանեալ Տեառն Յով-  
 » հաննիսի՝ շինողի սուրբ եկեղեցւոյս, և շարաշար նզովիւք փակել  
 » յայժմոյս և ի կանգնեմեալ կեանսն վասն Յուրայ քարէք շինողի:  
 » Արդ անփոյթ եղեալ անյոտից և աներկիւղից՝ սկսան և շինեցին  
 » բերդ վասն առժամանակեան օգտի. և ոչինչ շահեալ որդանից  
 » սաստակեցան, պակասեցան, Լորեան վասն անօրէնութեան. իսկ ի  
 » ժամանակս մեր հրամայեցին աւերեալ յատակել: Որ այլ յանդգնի  
 » շինել՝ նզովեալ լիցի ի Հօրէ և յՈրդւոյ և ի Սուրբ Հոգւոյն. որդէք  
 » նորս մուրողք եղիցին և ելցին ի բնակութենէ իւրեանց, և մի՛  
 » հաստակեցան զաւուրս իւրեանց. և թէ ի տանիկ աւագութիւն  
 » փոխի և յափշտակել շնայ զՅուր և կամ յինել զբերդաբարդ,  
 » յԱստուծոյ անիթեալ լիցի. և յիւր Մանթեան աղէկաբ եղիցի, հ-  
 » ւան նախ հարձ, և յիւր Ղլմանի յամբ և սեւերես լիցի:  
 » Գրեցաւ այս կտակ իմով ձեռամբս Տեառն Գրիգորի, և կնքեցի  
 » իմով սովորական մաստանեաւս ի կամս Աստուծոյ 91

« առ ոտս աստուածարան վարդապետաց՝ վարդան  
 » վարդապետի և Արրահամ հռետորի, և առաջնորդ  
 » սուրբ ուխտիս Տէր Զարարիա բարեմիտ րօնաւորի և  
 » այլ րօնաւորացս. զՏէր վրդանէս հայրպետն, զմիւս  
 » Տէր վրդանէս, որ զկէս գրոցս թուղթն կոկեց. և միւս  
 » կեանք երկու, զԱղոթ կուսակրօն և զընկեր նորին ըզ-  
 » Ղուկանն<sup>1</sup> »:  
 Հանգոյն Յուրայ էր և մերձակայն նորին վայր Տամա-  
 լէկս, ի նորոց Տամբալէսը կոչեցեալ, և ընդ նմին պար-  
 գեւեալ եկեղեցւոյն՝ յԱ Աշոտոյ Սիւնեաց, « Տեղի մի  
 » ապստամբաց, (որք) բազում և մեծամեծ վիշտս և նե-  
 » ղութիւնս հասուցեալ էին վանիցն. զոր Տէր Յովհանն-  
 » նէս (Ա) թէ և բազում անգամ ջանաց՝ ոչ կարաց հա-  
 » լած ել զընակիչն և սեպհականել զտեղին: Ապա ի ժա-  
 » մանակս աստուածապատիւ և հոգեւոր Տեառն Յակո-  
 » րայ (եղբորորդւոյ Յովհանն. Զ կաթողիկոսի) եկն մեծ  
 » տրկինն Սոփիա կին Սմբատայ՝ յերկրպագութիւն Ս-  
 » թաղին, և լուեալ զվշտալից դառնութիւն եղբարցն ի  
 » նոցանէ, զուն գործեալ և հազիւ ուրեմն ածեալ ընդ  
 » բամբ գտեղին՝ ընդ գնոյ 1000 դահեկանի, և տայ ի ձե-  
 » ռն Տեառն Յակոբայ. և բառնայ զայն խոյ ի նոցա-  
 » նէ. և այնուհետեւ լինէին յապահով: Եւ հրամայէ ե-  
 » պիսկոպոսին շինել ի նմա եկեղեցի և բնակեցուցանել  
 » անսպասուորս. և գրել արձան անիծից զի մի եւս  
 » բնակեցուցեն ի նմա աշխարհական օք. զոր, և փոյթ  
 » ընդ փոյթ կատարեալ երջանիկ եպիսկոպոսին գրէ ար-  
 » ձան վճռի<sup>2</sup> »: Զայս տեղի կարծեմ նշանակէ նոր Յու-

ցակ հասից Տաթեւոյ՝ գրելով ի թիւս ազարակացն,  
 « կեռ Տամպալաքէն մինչեւ ի գետն »: Յիշեալն Յակոբ  
 եպիսկոպոս նուաճեաց և զ« Ասագահանոցն որ հանդէպ  
 » վանիցն կայր ի վերայ ուսոյն որ Աշխադաշուն կոչեն,  
 » զոր վերագոյն ասացաք. լի էր ելուզակ մարդովք՝ որք  
 » բազում ոճիրս գործէին և յոլով նեղութիւնս հասու-  
 » ցանէին եղբարցն և այլ չըլակայ սահմանացն. յայն-  
 » ժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց, և հը-  
 » րաման առեալ՝ հալածական արար զարսն, և քան-  
 » դեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ  
 » արար. և զտեղին՝ սահմանալն սեպհականեաց եկե-  
 » ղեցւոյն, և մեծամեծ և ահագին նզովիւք փակեաց, զի  
 » մի օք այլ իշխեսցէ անդ բնակել կամ յինութիւն առ-  
 » նելո:

Մերձ ի սոսա հարկ է լինել և Գեղնաձորն (233) կամ  
 Գեղնաձոր, որ ընդ նոսին պարգեւեցաւ յԱշոտոյ ի նո-  
 րալէն եկեղեցին: — Ի Հս. Եւ. սոցին կարծեմ խնդրե-  
 լի է և « զԱրիս գետը սահմանակից Հարժէից և Տա-  
 » մալեկուց », որպէս հաւատտէ պատմիչն, զոր յամի 906  
 Սուփանեան իշխանը Հայկազունը պարգեւեցին Տաթե-  
 ւոյ. և յառաջ քան զայն յամի 881 յիշեալն Սարգիս,  
 ընդ նմին և Պետրոս: Զայս տեղի՝ երբեմն օտարացեալ  
 ի վանացն՝ դարձոյց ի նոյն, յամի 1085, « Սուրբ Թա-  
 » գուհին Շահանգոռիստ և բարեպաշտ թագաւորն Սենե-  
 » քերիմ եղբայր նորին, զԱրիտն առան, որ է մերձ և սահ-  
 » մանակից սրբոյ և մեծի աթոռոյն Տաթեւոյ »: զրեալ  
 Թագաւորին իւրով ձեռամբ վճիռ<sup>3</sup>: Յետ երկուց զարուց

1 Բանդի բազում ուրեք ի վկայութիւն կոչեցաք զաստուածանս  
 վանական, ներքեցի և զմասն աւարաբանութեան նորին յաւե-  
 լու: « Արք եւ վանական չեզ փանաք որ միայն գանուս ունիմ և  
 ոչ զարթս, շնորհք Ս. Հոգւոյն սիսեալ և ողորմութեամբ նո-  
 րին կատարեալ, յիշատակ ինձ և ծնողաց իմոց հոգեւոր վարպետին  
 իմոյ Յովսէփ վարդապետի, և պապոյն մերոյ Արտաշատոսի անաե-  
 սի, և ծնողաց մերոց Երեմիայի, և զմայրն իմ Հովհանն, և եղ-  
 բարցն իմ Գառնի, Մերձուհին, Իողահանուհին, և զՋովհաննիս,  
 զԱրտաշատոսիս, զԹոմոսոյ զպրին. զոր տէր Աստուած վայելել  
 տացէ. և զքեռն մեր զհանգուցեալն առ Քրիստոս, զՄիւսիս-  
 Բառ, զԹաթեւոյ. և զԿենդանիս՝ զՄահիւնար, և զՏորբուր մեր ըզ-  
 թովիւն, և զԳառնուրին, զԿողակիցն Մանիլով, և սիրելի մօրաքուր  
 մեր՝ զՄարգարէ փոխեցեալն առ Քրիստոս ԶԻԶ ԹՅՆ (1497-8). և  
 թող մեզ արամութիւն: — Դարձեալ կրկին անգամ աղաչեմք  
 յիշել ի Տէր զվերայգրեալքս ի սմա, զՏէր Զաքարիա բարեմիտ  
 կրօնաւոր՝ առաջնորդ սուրբ ուխտիս, զեղբայր սորին զԱլօթ միայ-  
 նակեացն, որ զօրինակն շնորհեցին և բազում սպասու ջանացին  
 առ մեզ: Տէր Յիսուս Քրիստոս, զրեա զմեզ ընդ առեալն, զի մի՛  
 քնացուք երկայնի, և արուեստ զմեզ ի ձախսեցոցն, և զասեալ ի  
 դաս աշակողմանս »: . . Ահնարկէ ի բանն Քրիստոսի. « Յայնմ  
 (վերջին) աւուր եթէ երկուք աղայցեն ի մի երկանս՝ մին առցի և  
 միւսն թողցի »:

2 « Այս նմ ձեռին գիր է Տէր Յակոբայ Սիւնեաց եպիսկոպոսի.  
 բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի զՏամալէկս, որ բա-  
 զում նեղութիւն էին հասուցեալ տանս. և Տեառն Յովհաննիսի  
 ջանացեալ էր և չէր կարացեալ թափել: Արք նսագա՛ղեալ մեր  
 նրամանացս Տէր Սմբատ և Սոփիա տիկին՝ առին ընդ գնոյ 1000  
 դահեկանի, և ետուն ի սուրբ Նշանս. և հոգւով և մարմնով զին-  
 քանս մեզ յանձնեցին. և մեք առաք և եկեղեցի շինեցաք. և միայ-  
 նարան հաստատեցաք: Արք զայս տեղս որ մեր մեծ ջանելութեալ  
 լլոս եմք և զհայրենատէրսն անեալ, և անսպաս հաստատեալ, և  
 մասով օք զսա ի կայրենատէրսն տալ կամ կանամբ մարդ ի սմա

բնակեցուցանել, կամ միև ժառոյ և մի թփոյ տէր առնել, Եւր-  
 վեալ եղիցի ի միասնական Սուրբ Երբորդութիւնէն և ի սրբոց եւ-  
 բեշտակաց և յՅովհաննայրապետացն, ի սուրբ Նշանէս և ի մեծել, ի  
 մակ և ի կեանս. և բաժին նորս ընդ Յուզայի եղիցի, և շարաշար  
 ցաւօք զիւր աւուրսն մի՛ հասարակեցէ. Հարակ լիցի անէլ՝ հոյ  
 զեկեղայ, և մի՛ զոցէ ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մե-  
 րոյ »: — Օրբել. ՄԱ:

3 « Կամու կարող Կորնի Յիսուսի, Եւ Սենեքերիմ թագաւոր  
 Նոյոց կացեալ ի Սիսական և Բաղաց աշխարհիս, ընթերցեալ զա-  
 ռալին կայրապետացն և զիշխանացն հաստատալիժ նամակ, կա-  
 մեցաք վերադիւն նորոգել և անգրէն դարձուցանել. և զրեցաք  
 զայս վճիռ պայմանի իմ սրտի յօժարութեամբ, և նրամանաւ բարե-  
 պաշտ և քրիստոսազեկաց քերցս իմոց, թագուելոյս Շահանգոռոյ  
 և սրբասնունչ օրիորդիս կատայիս, որք լինի զերկաւոր փառս  
 աշխարհիս և զհետ երանաւաւ ձայնին Քրիստոսի ընթացան հզնա-  
 զգեստ առաքինութեամբ: Եւ ետու զԱրիս իւր ամենայն սահմա-  
 նօքն շուրջանակի, հոգով և իրով և արտաժառօք և զամենայն որ  
 ինչ իւրն էր, ի Տաթեւոյ սուրբ եկեղեցիքն՝ ի կայրապետանիտս  
 մայրաքաղաքն, ի Սուրբ Առաքեալքն և ի Սուրբ Գրիգորն. ի կայ-  
 րապետութեան Տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և իւ-  
 բանն որդիացեալ Տեառն Ստեփաննոսի: Ետու անկաշիւ, անեա-  
 մեմալ՝, առանց զոք զրկելոյ, առանց ումեք արանիւնոյ. քանզի մեր  
 սեփական (էր) և ոչ ոլլ ումեք, զոր ընծայեցի սուրբ ուխտիք Տա-  
 թեւոյ, յազապս փրկութեան հոգւոյ իմոյ և քառութեան մեզաց ի-  
 մոց և կարազատաց իմոց քերցս, և որդեկաց իմոց կենաց և փըր-  
 կութեան, Գրիգորոյ, Սմբատոյ և Սեւազայի և մօր իւրեանց և  
 քեռն: Եւ կարգեցի քառասունք մի՛ որ ամ յամէ կատարեն ի սուրբ  
 եկեղեցիքն՝ ի տէրունի քառասունքն, զքսան օր թագաւորին Գրի-  
 գորոյ՝ որդւոյ Աշոտոյ, և զքսան օրն՝ իմ մօրն Սոփիայ, զքսան օրն  
 իմ քուերն Շահանգոռոյ առնեն, և զքսան օրն՝ ինձ Սենեքերի-  
 մայ »: — Օրբելեան. Կ:

\* Հափժալ՝ Կալաուակ նշանակէ. ա. հափժալ՝ անեակառակի:

պատմիչ եպիսկոպոսն Ստեփանոս գնեաց զայս գիւղ յեղորէ իւրմէ յԱրիկումէ, զի «վաղ ժամանակօք յափըջ» տակեալ էր ի սուրբ եկեղեցւոյն», և վերադարձոյց յիւրաջն եկեղեցին Ս. Գրիգոր, գրեալ և արձան յիշատակի յամի 1399: — Յարեւմտից Հս. Հարժեաց էր և գիւղն Արժիւ, զոր յամի 839 Գրիգոր եպիսկոպոս գնեաց ի Փիլիպպէէ գահերեց իշխանէ Սիւնեաց, ընդ նմին և գրեորդ կաներիչ գիւղ, 10,000 դրամոց. երկաթին եւ թուեալք ի հին Յուցակին, մէն վեց շափ հարկաւ, որոց նշանակին և սահմանքն ի կոնդակի եպիսկոպոսին. «Յարեւելից» կողմանէ ուղէկիցքը՝ որ ի Հարժեաց և ի Բերդկաներէոյ » գետոյ հասանի. և անտի ի Բյուրոյ որ ի շինագլխիդ, և անտի ջրթափան, Ստերչաց գառակ, և բնասեռիւդ ի վարդանայ մարզի խոռն, և անտի յ'Արժիւախատար. և յարեւմտից կողմանէ Լորաձորդ բնասարաւդ. և ի հաւրայ կողմանէ Հարժիք, որ ի ճանապարհէդ ի Խոռոյդ » ելանէ ձորովդ ի վայր ի Սեւալուրդ, և ի վեր սարն վաւ » ևսց-ձորոյ սեռիւդ»: Ընդ Հարժեաց և ընդ Յուրայ դարձոյց Սենեքերիմ արքայ և զԲերդկաներէչ վերստին յաթոռն Տաթեւոյ յամի 1091, կորզեալ ի ձեռաց Մառնանի և Գեորգայ իշխանաց, գրեալ և զվճիռ հաստատութեան՝: Յիշ և Բերդկաներիւց վանացերեցն յամի 881 Արիսողոմ անուն. իսկ սահմանք նորին առանձինն նշանակին ի վճռագրի Փիլիպպէի, որ զկէս գեղջն տուեալ էր յեկեղեցին, փոխանակեալ ընդ Սառնաքարի, « և այս է սահմանն. Միտանահողովդ ի վայր ի » գետոյ, և ի վերի կատարն գետոյդ ի Սենեակն, Սենեակաւ ի ձոր, և աստի ի Գաւակ » Ստերչաց:

Նշանաւոր քան զսոսա էր Նորիք գիւղ մեծ և առաջին կարգեալ ի ցանկի գիւղիցն Մղկոյ, որ ցուցանէ ի ծայրս սահմանաց գաւառին լինել և ի հարաւոյ Տաթեւոյ. երիցունք նորին Սահակ և Անարոն յամի 844 նշանակին ընդ ձեռնարկողս մուրհակի վաճառմանն Տաթեւոյ: Ի գեղջէ աստի էր Յովհաննէս՝ առաջին շինողն մեծի եկեղեցւոյն Առաքելոց, զոր ասէին « որդի գոլ առն » միոյ այրոյ և մուրացիկ աղքատի ի Նորեաց շինոյն. և ասեալ էր յետոյ կին մի անզգամ՝ որ պահէր զերամս ընդ տանի թռչնոց տեառն գեղջն, և վարէր խորթութեամբ » յաբար՝ ընդ որդւոյն իւրոյ փոքր պատանեկին Յովհաննէս, և հանապազ գանալից և սովամահ առնէր

» գնա. և յաւուր միում կորուսեալ մարկանն բազում » ձագս ի թռչնոցն, ոչ իշխեաց մտանել ի տուն անդր, » այլ փախստական գայ, Հոգւոյն առաջնորդութեամբ, » ի Տաթեւ, և բնակեալ առ կրօնաւորի մի՝ զարգանայ » ուսմամբ և հաստկաւ » և այլն. և հասանէ ի գահ եպիսկոպոսութեան յետ Սողոմոնի: — Յիշ և Նորեաց վանք, և մերձ նմին Բոլորաքար, զոր « իւր ամեն սահ » մանօվն » էառ Գրիգոր Ա եպիսկոպոս ի Փարաշոյ որդւոյ Չագիկ իշխանի, յաւուրս թաղաւորութեան վասակայ. բայց մասն մի տեղւոյն մնաց ի բաժին Նորեաց վանաց. զսա յիւս կոյս ԺԱ դարու՝ առ թագաւորութեամբ Սենեքերիմայ, գնեաց միւս Գրիգոր եպիսկոպոս « ի Դենէ՝ որդւոյ Խաղրակայ, և հաստատէր նզովիք ի » սուրբ եկեղեցին »:

ՅՅ. Այս ամենայն գետոք և տեղիք հանդերձ այլովք, որք ի սահմանագրութիւնս և ի վճռագիրս յիշեցան և որք ոչ, ցուցանեն զխիտ շինութիւն ձորոյն Տաթեւոյ և զբարգաւաճանսն ի տէրութեան իշխանացն Սիւնեաց յ'Թ—ԺԱ դարս, և զնուազելն յ'ԺԲԻ, և միւսանգամ արծարծել յ'ԺԳԻ ի հարստութեան Սրբելեանց, և դարձեալ յետ այնր անկանել և անջքանալ, և բազմաց իսպառ հետախաղաղ իմն լինել և զանխլանալ: Բայց փոխանակ նոցին՝ այլ ինչ ազգ տեղիք և շէնք յանշէնս ի վեր երեւեցան և պայծառացան ի յետին ժամանակս, ի սկիզբն ԺԷ դարու. վայրք խաղաղականք և հոգեհընչողք. Անապատքն, կամ ճգնարանք սրբափրաց առանց և կանանց, որոց ճիզն և հաստատութիւն՝ մի ի յիշատակելի դիպաց է եկեղեցական պատմութեան Հայոց և ԺԷ դարու, յորում ընդհանուր յարեւմուտս և յարեւելս նշմարի խլրտումն նորոգութեան և բարգաւաճանաց. հաճոյ է և մեզ ի նկատի ունել զնոսին ի հուսկ սահմանս աստ գաւառիս Մղկոյ, յոր հասարս, ըստ սճով և խնամով պատմութեան Առաքելի վարդապետի նոցին մերձաժամանակի: — Պատճառք և նորագողք միանձնական կենաց կոչին և իբր չորք հիմունք համարին՝ Սարգիս եպիսկոպոս Ամբերդացի յԱրենի գեղջէ, կիրակոս երեց Տրապիզոնցի, Պողոս Վ. Մուկացի, Արիստակէս Վ. Շամբցի: Առաջինն՝ գտեալ երբեմն զանծանօթ ոմն ճգնաւոր վախճանեալ ի ծերպս Արագած լեռին՝ թաղեաց անդ, և փափագեցաւ նմա-

1 «Այս ձեռագիր է իմ Սենեքերիմայ թագաւորի՝ որդւոյ Սեւադայի, որ մինչ Աստուած անյիշալար եղել առ իս, և ողորմեցաւ ինձ, և կրկին նստատեաց ի յիս զհայրենի տէրութիւն իշխանութեան իմոյ որ խախտեալ էր ի ձեռն իսմայէլականացի. ևս ընթերցոյ զառաջնոցն զգրեալսն և զյափշտակեալ ժառանգութիւնսն սուրբ եկեղեցւոյս և երկնահարաշ աթոռոյս Սիւնեաց, զարձուցի անդրէն ի մայրաքաղաքս Տաթեւ. և կրկին նստատեցի իմով ձեռամբս անխախտ նոցրենիք սմա զՀարժիս, զԲերդկաներէչի, զՅուրայ գետ. և էր այս չորրորդ անգամ նստատութիւն: Եւ ասանդեցի զժոտս իմ ձեռագրոյս՝ յաստուածարեալ և ի սուրբ հայրապետս մեր Տէր Գրիգոր: Եւ արդ չէ որ կարող զիմ գիրդ և ընդ նստատեալ պայմանք ի սուրբ Առաքելոց խախտել կամ յափըջտակել յայսմեանէ մինչև յաւիտեան, և կամ խանգարման պատճառ լինել: Եւ թէ յանգզի որ և մտածէ զայդ՝ յԱստուծոյ և ի սուրբ Առաքելոցն նզովեալ եղիցի, և Յուզայի և Արիստի մասնակից լինի, և ընդ սասանայի դատեցի, և զիւր կիսակն մի՝ վայելեաց. և թէ տանիկ իշխանութիւն փոխի և իւր և ապա-

կանել խորի, նա յԱստուծոյն՝ որ արար զերկինս և զերկիր՝ նզովեալ եղիցի, և յամենայն ընտրեալ Սրբոց նորա. և ի մարգարէից զոր Կիւրճուր կոչեն՝ աղիւզ և անիծեալ լիցի, և յիւր օրէնքադէր Մանգէտն որոյած և նշն եղիցի յազգս: Գրեցաւ ի թղւակակնս Հայոց Շե. յանուն Աստուծոյ. Եւ ևս Մանեան և ևս Գեորգ իրամանաւ աստուածապալ թագաւորիս մերոյ Սենեքերիմայ դարձուցաք զՀարժիս, զԲերդկաներէչի, զՅուրայ-գետ ի Տաթեւոյ սուրբ Առաքեալքս, որ զրկեալ էին յաւերման և ի նեզ ժառանգի, և այժմ կայր առ մեզ: Եւ արդ ոչ մերոց և ոչ ումիք չըկայ իշխանութիւն և հաշիւ նեա այս շինորէիցս, ոչ չարի՞ ոչ Տաթեւաց արկի, ոչ բերդալարի, ոչ գունդգանի, և ոչ այլ իրոց. այլ միայն Սուրբ Խաչիս և հոգեւոր տեառնս է իշխանութիւն: Եւ թէ ոչ յանգզի՝ զվերոյգրեալ նզովչ ժառանգեսցէ: Եւ ևս Ռահիթիկայ եմ թագաւորիս անսուտ իրամանացս և նստատութեանս, և չմարթի որ խանգարման պատճառ լինել, այլ նստատ և կամուն Աստուծոյ »: — Օրբէւ. կ:

\* Յայտնի է թէ չէ նշանակէ սակ կամ արկ:

նագոյն կենաց. հրաժարեալ յայխարհէ՛ գնաց յուխարհու աղէմ, յետ խնդրելոյ յարմար տեղի միայնութեան. զայն լուեալ երկրորդին՝ չոգաւ եգիտ զնա ի սուրբ քաղաքին, և միարան և միախոհ դարձ արարեալ՝ խնդրէին զերծ և անքոյթ տեղի. և լուեալ եթէ գտանին այդպիսիք Սիւնիս՝ եկին ի վանս Տաթեւոյ, և կացին սուկաւ ինչ ժամանակ ի վերոյգրեալ Յրուանս կամ ի Չորոյ վանս, և ապա ի Թաւնահատի վանս, ի յարեւելից հիւսիսոյ կուսէ Տաթեւոյ, մերձ ի գետն և ձորն Որոտան, ի վերայ համանուն լեռին. ապա իջեալ անտի ի սուրոտս ի Մ. Հս. յաջմէ Լրոյն Տաթեւու և ի հիւսիսոյ Տանձատափի, հաստատեցին զբնակութիւն կամ զվնարան իւրեանց, որ անուանեցան Մեծ Անապատ կամ Հարանց Անապատ, շինեալ եկեղեցեակ մի և խցկունս: Ի լուր համբաւոյ նոցա եկին առ նոսա և վերոյիջեալ երրորդ և չորրորդ հիմնադիրքն, և այլք հոգեւէրք, Մովսէս վարդապետ՝ որ յետոյ կաթողիկոս, Ներսէս Մովկացի (Բեխլու) քերթող, որ զԼիմայ անապատն հաստատեաց:

« Իսկ ներքին մասամբ հոգւոյն երկիւղած և ըզգաստական, Խոնարհ էր և հեզ բարուք և սիրող աստուածպաշտութեան. Անապատի սիւն լինէր և զրգէր զըթով հայրական. Մինչ յիշխանութեան միջին՝ Լանք դընէր անապատականն »:

Ի հաւաքել բաւական թուոյ միարանից և շինել բնակարանս, քննութեամբ վարուց Հարանց և նախնեաց աւանդից՝ կանոնեալ հաստատեցին զստոյգ սահման նախնի անապատաւորաց միարանակեցից, և ձեռով զգետուացն ասուեղինաց՝, և որոշեալ եօթն ժամուք աղօթից, ընթերցուածոց, և պատարագի ըստ ազգային ծիսի՝ սարկաւազօք և դպրօք, միարան ճաշակմամբ՝ մի անգամ միայն յաւուր, մշտնջենաւոր պահեցողութեամբ ի մտոյ և ի գինւոյ, այլ և ձեռագործ վաստակովք. որոց մատակարարութեան միտ դնէր և հոգայր Սարգիս եպիսկոպոս, իսկ ուսումնական հրահանգացն՝ զուգակից

« Ուխտեալ ի միում ամի և մահուամբ առ Տէր փոխեցան. Այս չորս սիւնքըս խարըսիտեալք՝ որ աթոռ Տեառն՝ կազմեցան. Խոհեմ արի և արդար ողջախոհ առաքինացան... Քառադէմ կառաց նրման՝ որ առիւծ և եզն ասացան Մարդ և արժըւոյ նրման, փութապէս առ Տէր սըլացան »:

Զայսոսիկ Մովկացին Ներսէս, որ եկաց առ նոսա ամս չորս՝, և ամալ յառաջ քան զվախճան նոցա եկեալ հաս-

թովմաս եպիսկոպոս Տաթեւոյ՝ յետոյ Շամախոյ, Կարապետ եպիսկոպոս՝ որ նորագեաց զՍեւանայ անապատըն, Արիստակէս Վ. Բարկուշատցի, որ զՏանձափարախոյ անապատն հաստատեաց, Դաւիթ եպիսկոպոս ազնուազգի ի Շամքորոյ, ուր հաստատեաց զՀաթերքարերդի անապատն, և այլք ոչ սակաւք. Հոշակազոյն ի սոսա գտաւ Մովկացին Ներսէս, զի ոչ միայն զԼիմայն կանգնեաց անապատ, այլ նովին պատճառ եղեւ և Երտուցայ անապատին. և ի դպրութեան մերում եթող յիշատակս տաղաշափութեամբ՝ ոչ խոտելիս, այլ և գովելիս ըստ այնր ժամանակի. ընդ որս և զչափարան ներբողեան չորեցուն այսոցիկ հիմնադրաց, վասն որոյ հարկ եղեւ մեղ յիշել զայսոսիկ. և յորում՝ չորրորդ հիմնադիր ընդ Սարգսի, Կիրակոսի և Պօղոսի ոչ զայլ ոք ի նմանացն համարի, այլ զՀայկազն իշխանն, զորդի մեծի իշխանին Հախնազարի, կամ Նազարի մտերիմ պաշտօնէին Շահ Աբասայ, զայր քաջամարտիկ և խոհական. ոչ զի ընդ նոսին ճգնեցաւ յանապատի աստ, այլ զի էր

երկիւղած և ըզգաստական, երկիւղած և ըզգաստական, երկիւղած և ըզգաստական. երկիւղած և ըզգաստական.

նորին Հ. Կիրակոս. որոց օգնական, մանաւանդ ճգնական կենցաղավարութեամբն յետոյ եղեւ Հ. Պօղոս Մովկացին, այրն բազմերախտ, հալածեալ ի նախանձուէ կարգակցաց և կաթողիկոսաց. և այլք զխաւորք սոցին յիտ ամաց ինչ մեկնեալ՝ ուրոյն անապատս կարգեցին յայլեւայլ կողմանս. ընդ որս և ինքն իսկ Հ. Կիրակոս ընդ Թումայի եպիսկոպոսի՝ զնաց ի Քշտաղս, և հաստատեալ անապատ ի Հօշանք, անդ եկաց մնաց այնուհետեւ, մինչեւ ցմահ իւր, յամի 1631. յորում ամի վախճանեցան և այլքն եւս երեքին հիմնադիրք (Սարգիս, Պօղոս և Հայկազն իշխան), որպէս եթէ,

« Ուխտեալ էր զԼիմն անապատ. և յաւելեալ ի բանս իւր յերկար դրուատէ, հրճուելով ընդ զոյգ հոգեհարազատսն. « Որովք կարգ եկեղեցւոյ կանոնօք սահմանագրեցան. Երկու պատուական ակունքս որ յերկու կուռն ահարոնեան... Երկու ձիթ ենի ուղէչքն՝ որք յերկրի նոր արմատացան, Գրնդին լուցելոյ յաջմէ և յահեկէ ոստովք բարձրացան. Մինչ ի հովանին սոցա ախտաժէտք բազումք կուտեցան՝ Թաւնահատի անապատս, և ձիթովս այս բժշկեցան. Պարարտ ձիթ ենի գորով Տաթեւու գաւթիս տնկեցան,

1 Նմանաբան այսմ և Զաքարիա Վ. առաջորդն Բովանանաւանից դրուատէ զեզբայր սորա Խօշալ Սաֆնազ, ըստ աստուածպաշտութեան մասին:  
 2 Եսայում քերթու ծի ողբական Մեղաբարութեան անձին Ներսէս զանձէ տակըմ ապ նշմարս ինչ զտարազոյ սքեմին.  
 « Աբեոյ տնուն առի, յայխարհէ շեռով մերկացայ...  
 Որպէս իաչ ուսով բարձեալ խաչելոյն նետեւեցայ...  
 Արկայ սորսորսով հանդերձ, ժուկակի կերպի յառ տնկեցայ... »

Կըլելզովս խորհուրեաց՝ չեզ հարանցն նմանեցայ...  
 Մայրաւոր ողբաբարեւել թէ ոչպէս միւս վեր խոհայ...  
 Ուրբ և ինչ արկեալ թէ լծովս խոր խոնարհեցայ,  
 Որպէս ոգաւոր գորով սոս հաւով անձամբ խաչեցայ,  
 Եւ սիրամարգի նման սիւզալով փերեկեթեցայ...  
 3 Ի վերադրէ քերթուածոցն ասի. « Այս այն Ներսէս է որ Մովկացի է, և զնաց ի Տաթեւոյ Անապատն, եկաց չորս տարի. և անտի եկաւ զԼիմայ անապատն հաստատեաց, ի թով. Ռէշ »:

Եւ պարարտացեալ պտղով՝ Գրիստոսի ոստ ընծայեցան...  
 Ենովքայ և Եղիսյի փոխանորդ յերկրի շրջեցան,  
 Թէպէտ աննըման կենօք՝ այլ գործովք յոյժ համանըման,  
 Դիմաք և ձեւովն իւրեանց, հանդերձիւք խոշորական.  
 Մանուցին սրբուց մարդկան՝ զաշխարհի վայելս ընդունայն:  
 Երկու գրուեք տեսանելիաց կենդանեաց՝ յԱրարչէն եղան,  
 Յատուկ ի միմեանց գոլով մի շաւիղ տեսչեան ընթանան...  
 Մի կամք, մի կարգ, մի կրթութիւն, մի հոգի կառավարեցան:  
 Յընծալ պարտի Հայաստանն և խայտալ խնջոյս հոգեկան,  
 Պարանցի առնել յուսով և երգել զերգ համերական...  
 Գրեան վաղընջ փակած՝ ընթերցան, ոճով մեկնեցան,  
 Եւ յապտերք եկեղեցւոյն գալ ըստեամբ սոցին վառեցան:  
 Բարեւք մեզ նաւաստիք ի ծրփման ծովուս յայտնեցան,  
 Վարեցին թեւք Հոգւոյն, և հասին յանբաւ խորութեան...  
 Թէպէտ սերմանողքն անկան, սերմանեալքն յոյժ արդիւնացան.  
 Մարմնով հեռացան ի մէնջ, բայց հոգւով ոչ որոշեցան.  
 Միայն զյաղթանակն առին, յախտալից կենաց փոխեցան.  
 Անդէն բարեխօս բարի վասըն մեր առ Տէր կացուցան...  
 Ըզ յետնամընաց սոցա պահեսցէ ի խաղաղութեան »:

Գլխաւոր ի յետամնացն էր Արիստակէս Շամբեցի,  
 որ յաջորդեացն զՍարգիս ընդ երկար ամս. յիշէ զնա աշակերտակից իւր Զաքարիա Վալարչապատեցի, և այլոցն ամենեցուն աշակերտելոց Մովսիսի կաթողիկոսի զնա աւելով «Նախկին և առաջին, Մեծի Անապատին Ստարեի» արի և ճգնազգեաց Արիստակէս Շամբեցի »: - Միւս եւս հաշակեալ վարուք ընկեր սոցին էր ըստ Առաքելի, « ճգնաւոր և ընտիր և առաքինագործ արեղայն Տէր Բարուսի », որ ընդ նմին և ընդ երկուց զուգակցացն՝ Թաղեցաւ յուրոյն մատրան միում, յարեւմտից կուսէ Անապատին, ի գերեզմանատան եղբայրութեանն. և իբրեւ շաղկապեալք ուխտիւ կենաց և մահու՝ անբաժանք ի միմեանց և ի հող մահուն, միաձոյլ քետնաւն միաբան սահեալք՝ և ոչ տարբարեցան: Քանզի իբրեւ 48 ամաւ զկնի հաստաւորութեան մեծի Անապատին, այն է յամի 1658, նորատեւիլ իմն աչալյութիւն և նախ պատառումն եղեւ երկրի սահմանաց հիւսիսակողմանն, բովանդակ լեռնէ ի լեռուն յարեւմտից յարեւելս. « և այնքան պատառեցաւ լայն, » ընդարձակ և խորագոյն, զի թէ եզն և ձի կամ այլ անասուն զէպ լինէր անկանել ի խորափոխ պատառածին՝ « ոչ կարէր ելանել »: Յամեան ապրիլի՝ անձրեւային գոլով եղանակին՝ սկսան լայնանալ պատառածքն, մինչեւ գուշակել ամենեցուն, թէ « այսօր կամ վաղիւն սահեալ » հոսելոց է ստորակայ գիւղքն Անապատիս »: և արդարեւ ի 35 ապրիլի ( որ օր էր Ալլխարհամատրան կիրակէին ) « ի մուտս արեւուն սկսաւ պատառել գետինն ի հա » բաւոյ կողմանէ Անապատին ի բարձուէ ի լեռնէ անտի. » իբրեւ զմրրկեալ ամազ դիմեալ զայր ի բարձանց լերին՝ « ահագին դողորմամբ և թնդմամբ և որոտմամբ ճայթ » մամբ իբրեւ զորոտումն կայծակնացայտ ամպոց. այնքան « ահագին էր որոտումն և թնդումն, մինչ զի ամենայն բնա » կիւք Երևանայր քեղջն և Հալիձոր գեղջն լուեալ ըզ » և ձայնն և ելեալք, յանդիմանակացէ տեղու՞ղէ գեղջն » իւրեանց՝ տեսանէին զարհաւիրն զայն. զի յաւիտենից » հաստակառոյց լեռնական վէմք՝ պատառեալք յին » քեանց՝ ի միմեանց ի բաց տրոհէին. և յսկզբանց կառու »

» ցեալք վէմք՝ որք հիմունքն էին գետնոյն, եռացեալք ի » վեր գային յերես գետնոյ. և յուրից ժամանակաց » ծառք և առնկք ամենեքեան, եթէ ընկուզի և թէ » կաղնի, և ընդ նստին մեծամեծ վէմք՝ զառիստորեւ » սուգեալ ի ներքս ի յանդունդս կլեալ աներեւութանա » յին. և մեծամեծք վէմք հատեալք ի լեռնէն և զկնի մի » մեանց հողովեալ զային ի վայր. որոց ի բախելն ընդ մի » մեան՝ փչեալ և խորտակեալ ի բաց ցնդէին. և ուժ » գնութիւն սոցին բախմանցն՝ Թնդումն սաստիկ առնէր » ամենից վայրացն. և ձայն գոռալոյ և որոտման սոցա » խլացուցանէր զլեւելիս և սրտամեռ առնէր զամենե » սեան: Եւ որովհետեւ երեկոյացեալ էր օրն և սակաւ » մնացեալ ժամ աւուրն, և այն եւս էանց և ժամանեաց » գիշերն ի վերայ, սկսաւ անձրեւ թորիլ, և լինել սաստիկ » մթնագիշեր, այնքան՝ զի և առնթերակայ կացեալքն » զմիմեանս ոչ տեսանէին: Եւ ամենեքեան բնակիչք Ա » նապատին ելին յանապատէն, և գնացեալ ժողովեցան » յարեւելեան կողմն յանապատին ի քարեայ լեռան. և » անդ գետեղեալ վառեցին զլապտերս և զմեծամեծ մո » մըս, կային ահարեկ պակուցմամբ, և մնային կատարա » ծին, և ըղձանային լուսոյ առաւօտուն: Բազումք հա » մարեցան թէ Անապատն միահաղոյն քանդեցաւ ընդ » այլ սահեալ գետնոյն. բայց արարչական խնամ գթածին » Աստուծոյ հայեցեալ ի մշտապաղատ մաղթանա որոր » մելեաց եղբարցն, ոչ եթող իսպառ աւերիլ՝ այլ սակաւ » քանզի արեւմտեան կողմն Անապատին, պարիսպն և » հիւրատունն, ախոռք անասնոցն և համբարանօցքն, և » մասն ինչ ի սենեկէ եղբարցն, և արեւմտեան կողմն » մեծի եկեղեցւոյն յետուստ կուսէ արեւմտեան սեանցն, » սղաւ ամենեքեան աւերեցան: Եւ յոյժ ահագին և ահ » ընկէց էր գործեցեալ իրն. քանզի՝ որպէս լեռնացեալ » կուհակք ալեաց ծովու որք զհետ միմեանց սահեալ ըն » թանան, սոյնպէս և հաստահիմ վէմք, քար և հող վայ » բացն այնմիկ եղեն: Զի ի սրտէ յերինն՝ յորայ վերայ » թանակատի վանքն կայ շինեալ, ի խորոց անդնդոց բը » նական վէմք լերինն սկսան պատառիլ, և հողով և խը »



« ճով և մեծամեծիք վիճօք իրրեւ զտունս՝ եկեալ զառ-  
 » իվայր հօտէր. և ի վերուստ եկեալ հոսանն իւրոյ բռնու-  
 » թեամբ և ուժգնիւ հոսամբն զիւր առաջի վայրն ի բը-  
 » նականի տեղոյն ի բաց ստորացեալ՝ ընդ իւր իմիասին  
 » զկնի միմեանց ընթանային իրրեւ յորձանս ծովուց ել-  
 » և էջն առնելով. և այսպէս սահելով գնացին և հասին ի  
 » գետն մեծ Որոտան, որ ի մէջ ձորոյն անցանէ, և ար-  
 » գելին զգնացս ջուրցն իրրեւ ժամս ութ. և ջուր գետոյն  
 » որ ի վերուստ իջանէր՝ եկեալ ծովացաւ եւ լցաւ տեղին.  
 » և ապա ի կողմանէ ինչ եգիտ ինքեան զտեղիս գնալոյ,  
 » և քարինքն և հողքն որք արգելան յեզր գետոյն՝ եղին  
 » բլուր մեծ:  
 » Իսկ գերեզմանատուն անապատուորացն՝ էր յարեւ-  
 » մրտեան կողմանէ Անապատին, և ընդ հոսի վայրացն՝  
 » այս գերեզմանատունս եւս հասարակ միահաղոյն ամե-  
 » նայն ի միասին խորագոյն և անդնդային յատակաւն  
 » իւրով, ոստեալ ի տեղուղէ իւրմէ սահեալ գնաց բազ-  
 » մաւ հեռաւորութեամբ ի վայրի ուրեմն զկայ առեալ կա-  
 » յացաւ: Այլ և ի սոյն տեղուղէ էին թաղեալ սուրբ վար-  
 » դապետ Պօղոս, ( զորոյ զպատմութիւն արարեալ եմք  
 » յայլում ճառիս, և Սարգիս Պարոնտէրն՝ ( որոյ սա-  
 » կըս յանցեալ ճառիդ պատմեցաք ) և Արիստակէս  
 » վարդապետն, որ զկնի Սարգիս Պարոնտիրին եղեւ  
 » առաջնորդ Անապատին, և ճգնաւոր և ընդիր և  
 » առաքինագործ արեղայն Տէր Բարսեղ. ոքս չորե-  
 » քեանս առնթեր միմեանց թաղեալք կային, և ի վե-  
 » ռայ իւրեանց շինեալ կայր մատուռն. և ի ժամ հօսե-  
 » լոյ տեղոյ գերեզմանատանն՝ ինամն Աստուծոյ իբր ըզ-  
 » գործ ինչ զբանջեանց արար ի վերայ օրացս, զի ամե-  
 » նեւին գերեզմանք սոցա ոչ խախտեցան, որ և քարինք  
 » տապանացն ոչ թիւրեցան, այլ զդիրս իւրեանց դէպ ու-  
 » դիղ ընդ արեւելս ընկալեալ կայացան, որպէս և նախ-  
 » կի թաղեալք էին. բայց մատուռն որ ի վերայ սոցա  
 » կայր՝ փլուզեալ ցնդեցաւ: Եւ ի լինելն այսց ամենից գոր-  
 » ծոցս սոսկայի, ինամաքն Աստուծոյ ամենակալի՝ ոչ  
 » ումեք եղեւ վնաս մարդոյ կամ անասնոյ, այլ միայն եղ-  
 » բայր ոմն մնաց ի մէջ իւրոյ խղին, և անդէն մեռաւ ի  
 » ներքոյ հողին. զի ընդ սկսանիլ հոսմանն ի ժամ երե-  
 » կոյին, ոմանք յեղբարցն գնացեալ ազդեցին նմա ելա-  
 » նել անդի՝ զի մի մնացէ ի ներքոյ հողոյ. և նա ի վա-  
 » ղուց ժամանակաց ցանկալով սպասէր մահու, ոչ  
 » եկն արտաքս, այլ մնաց անդէն յուսով ակնկալեալ  
 » Տեառն, զի թերեւս վասն անպարտի մահուան իւ-  
 » ռոյ ընկալցի զայցելութիւն հոգւոյ իւրոյ, ի բազմա-  
 » գութ տեսունէ Աստուծոյ: Իսկ միւս այլք բնակիչք  
 » Անապատին ամենեքեան ժողովեալք էին ի լեռան՝  
 » որ կայր յարեւելից կողմն Անապատին, յորդարդիսիք  
 » արտասուօք և մեծօք հառաչանօք կոծէին զանձինս,  
 » և աղաչէին զԱստուած՝ զի թերեւս զերծցին ի սա-  
 » տակմանէ, և փրկեցի շինուած Անապատին ի փլմանէ:  
 » քանզի յուսահատեալք էին վասն ահագին արհաւիր-  
 » ցըն եղելոց, մինչեւ ցլուսանալ ի լոյս առաւօտու եր-  
 » կուլաբաթին՝ իբր զպաղատաւոր օք յերկունս կային:  
 » Իսկ այն որոյ զթութիւնն բնութեամբ է, աղբիւրն ողոր-  
 » մութեան՝ տէր Աստուած ոչ միայն զնոսա փրկեաց ի

» սատակմանէն, այլ և զԱնապատն եւս ամբողջ պա-  
 » հեաց, և ոչ եթող աւերիլ. զի ամենազոր աշուղն իւրով  
 » անխախտ պահեաց զԱնապատն, բաց յառաջատացեալ  
 » աւերելոցն »:  
 Սակայն, որպէս թուի, խանգարումն գետնոյն կոտ-  
 կածելի գտաւ քան զձեռակերտ շինուածան, և հարկ  
 եղեւ լքանել զնոսին՝ յետ ոչ ըստում ամաց. վասն ո-  
 ռոյ և « Եւրոպ կաթողիկոս բերեալ զմիաբանսն՝ ի ներ-  
 » քոյ Տաթեւու, և անդ հիմնարկեաց զԱնապատն և զե-  
 » կեղեցին. բայց յետոյ աւարտեաց զայն Արիստակէս  
 » վարդապետն » միւս. և ըստ առաջնոցն կոչեցաւ Մեծ  
 Անապատ, իբր զլուիս և առաջին ամենայն անապա-  
 տից որք յայլեւայլ գաւառս և աշխարհս Հայոց հիմնեցան.  
 Իսկ հին մեծ Անապատն կոչեցաւ այնուհետեւ Հարանց  
 անապատ, ի յիշատակ նախակիզքն հաստատողաց կը-  
 րօնին. այլ որք յառաջ քան զինութիւն երկրորդին զը-  
 րէին, Աւաբէլ, Ջաբարիս, Թովմաս վանանդացի և այլք,  
 միայն Մեծ անապատ կոչին կամ Տաթեւոյ Անապատ,  
 կամ Վերին Տաթեւոյ անապատ, կամ սոսկ Անապատ,  
 բայց ի նկատի ունելով զՏաթեւ. որպէս Վանանդացին՝  
 յետ այցելութեան ուխտաւորաց իւրոց ի Տաթեւ, ե-  
 րիւք ամօք յառաջ քան զպատառումն երկրին, ասէր.  
 « Եւ յԱնապատն անդուստ գիմեալ,  
 « Ուր է Սրբոցն բնակ եղեալ »:  
 Որպէս աւերակք Հնոյ քաղաքի առ նորովն՝ պատ-  
 կառելիք և հետաքննելիք լինին զգառոցից, սոյնպէս և  
 տեղիքս այսօրիկ. այլ աւաղելի այն է, զի և Նորն՝ արգ-  
 Հնացեալ և ամայացեալ է: Աբրահամ կաթողիկոս յայց-  
 ելութեան իւրում ի վանորայս ( 1738 ), յամեան մար-  
 տի, եկաց աւուրս ինչ յԱնապատի աստ նորում, և  
 առեալ ընդ իւր ի միաբանիցն և ի վարդապետաց, « Գը-  
 » նացի, ասէ, յուխտ ի Հարանց նախկի մեծ Անապա-  
 » տըն, որ է մայր ամենայն անապատիցն յարեւելս և  
 » յարեւմուտս ազգիս մերոյ, և ի մատուռն ուր թա-  
 » ղեալ կան պատուական նշանաք սրբոց վարդապետացն  
 » Պօղոսի, Սարգսի, Արիստակիսի, և Սարգսի արեղա-  
 » յին. և յետ ուխտելոյ իմոյ և նկատելոյ զԱնապա-  
 » տըն և զկործանեալ տեղի բարձրագոյն լեռան,  
 » յորում հատեալ լերինն և խաղացեալ գետինն և  
 » գերեզմանատունն ոստեալ, և գնալն նետաձիգ մի  
 » տեղի և ապա զկայ յառնուրն, նոյնպէս և մատուռն՝  
 » յորում թաղեալ կային վերոյգրեալ սրբոց մարմինքն.  
 » յորում յետ ուխտիս մերոյ, զճաշու ժամն յԱնապա-  
 » տըն ասացաք, և ապա եկաք զառ ի վայր ի մատուռն,  
 » որ է փոքրիկ եկեղեցի, ուր դամբարանք էին գրե-  
 » ցեալ սրբոց, և անդ կատարեցին զերեկոյեան ժամն:  
 » Եւ անտի անցեալ զգետն Որոտան՝ ձիով, որ է ի  
 » մէջ մատրանն և Շնհերու կուսանաց անապատին » -  
 եւ այն:— Ոչ գիտեմ յառաջ ( որպէս հաւանագոյն թը-  
 ւի) եթէ յետոյ քան զԱբրահամ կաթողիկոս, էին ե-  
 պիսկոպոսքն Սիւնեաց Տէր Յովսափ Աղուերծեցի,  
 և Տէր Ներսէս եղբորորդի համանունան աշակերտին  
 Փիլիպպոսի կաթողիկոսի, յորոց առաջինն շինեաց՝ « Ըզ-  
 » Մեծ Անապատին միաբանակեցաց խուցան », և եր-  
 կրորդն՝ արար շինութիւնս ինչ անդ: Ջարդիս՝ Հարանց

Անապատն իսպառ ամայացեալ է, և աղօթանուէր վայր-  
 քըն « որչ գազանաց » ըստ Ջալալեանի. որ՝ և վասն նա-  
 րոյ Մեծի Անապատին գրէ « . Շինեալ կայ ի լայնածոց  
 » ձորակի Տաթեւոյ վանից յորձանուտ վտակին Որոտնայ,  
 » ի հարթավայր լեզուակի. ձեւն շքեղազարդ, և հա-  
 » մակ որբատաղ քարամբք, ի վերայ վեցից վայելչադիր  
 » սեանց. զառաջեան ունի կիսարաց գաւիթ, կառու-  
 » ցեալ ի վերայ երկուց սեանց, յորս են գերեզմանք  
 » երեւելի վարդապետաց անդէն միարանելոց. ի շըր-  
 » շուպատի ունի զամուր և զլայնանիստ կրայաղաղ պա-  
 » րիսպ, զարդարեալ մեծամեծ աշտարակաք. ի մէջ ա-  
 » նոր պարսպի գտանին վաթսուն և չորս կամարաչէն սե-  
 » նեակք միարանից, նոյնպէս շքեղակերտ սեղանա-  
 » տուն և մեծ շտեմարան: Գրութիւն տեղւոյն և շի-  
 » նուածք սենեկաց Անապատիս առուել գեղեցիկք են՝  
 » քան զգրութիւնս վանիցն Տաթեւու: Զուրն՝ որ ի լանէ  
 » ի հարաւային կուսէ վանիցն Տաթեւու, սահեղով ան-  
 » կանի յԱնապատս այս, ոռոգանէ զայգիս և զար-  
 » ձուցանէ զլրողացս: Կետն Որոտնայ լի համեղանա-  
 » շակ ձկամբք՝ որոտալով անցանէ զառաջեան, ար-  
 » դարեւ զգալի զուարճութիւն ամենայն տեսողաց. ծա-  
 » սազարդ է շրջապատ մենաստանիս, նոյնպէս և ի  
 » մէջ պարսպի գտանին մրգարեր ծառք բազումք. ընդ  
 » որովք և ազբիւր ականակիտ ի հնուան ի պէտս միա-  
 » բանից. իսկ այժմ պիտանի միայն վայրենի զազանաց  
 » և թռչնոց երկնից: Վիտսս, առացի բիրիցս անգամ.  
 » բայց զինչ օրուտ. զի երբ այսպիսի հրաշակերտ Անա-  
 » պատ մնացեալ կայ ամայի, որ երբեմն հանդիարան  
 » էր միարանից բազմաց, և սկզբնապատճառ այլոց մե-  
 » նաստանից, այժմ որպէս այրի մենացեալ՝ հաղ ի գը-  
 » լուի եղեալ խոնարհի ի լաց »: Իսկ ընթերցողաց՝ յոր-  
 » դորին արդարեւ տենչանք սառզագոյն ստորագրու-  
 » թեան, այլ եւ պատկերագրութեան տեղեցաց, որպի-  
 » սի և է արուեստիւ, և ապա նորոգութեանն իսկ:

93. Յանկայի է ընդ սոսին մտադիր խուզողութեամբ  
 որոնել զհետս մեծի հնոյ և գերահաշակ վանաց Թա-  
 նախտի, զոր վկայութիւն Առաքելի հաստատեաց լի-  
 նել յարեւելից հիւսիսոյ կուսէ Տաթեւոյ, ի գլուխ լե-  
 բին, որ անդնդամուղ բռնութեամբ տատանեալ ի վայր  
 ընկէց զայն, ի վերոյիեալ մեծի սասանութեան կողման-  
 ցըս. և զի նոյն իսկ երեւի կենդրոն շարժմանն, ապա  
 և նախ քան զայլ շէնս և աւելի քան զնոսին քայքա-  
 յեալ քանդեցաւ, և ծածկեցաւ ընդ քարեղէն հոսանս-  
 քըն, և ցարդ ոչ եցոյց նշանակ ինչ աւելի քան զհազար-  
 ամեայ հնութեանն և համբաւոյն: Քանզի գրէ պատ-  
 մին Սիւնեաց զսկզբնաւորութենէ վանացս Թանահա-  
 տի, եթէ, « Գտաք յիւրոց արձանագրութեանցն եթէ  
 400 ամաւ՝ յառաջ շինեցաւ եկեղեցին (վանացս) քան  
 » զհայ թուականն, յիշխանացն Սիւնեաց, յանուն Նախա-  
 » վկային Ստեփաննոսի » . որ հանէ զժամանակն ի կէս  
 Բ դարու Քրիստոսի. այլ ոչ իսպառ անհաւատալի, եթէ  
 ստոյգ իցէ հաստատութիւն եկեղեցեաց կողմանցն Գող-

թան ի Բարթողիմեայ առաքելոյ և ի նորին աշակերտաց-  
 յոր սատարէ ինչ և նուիրումն տեղւոյն առ Ս. Նա-  
 խավկայն, որով նուիրեալ են և յալովք ի հնազոյն ե-  
 կեղեցեաց այնր գաւառի — Յութերորդ դարու, ստէ  
 պատմիչն, « Պայծառանայր սուրբ և երկնահարալ կար-  
 » զօք գերափառ և հաշակելի ուխտն Թանահտի վա-  
 » նաց. . . Եւ էին սահմանաւորք մշտապաշտօնք, հեռա-  
 » ցեալք յամենայն փափուկ կերակրոց, միայն աշտուճ  
 » հացիւ և լոկ ջրով վնարէին զպէտս իւրեանց, և զայն՝  
 » յաւաւրն միանգամ ընդ երեկս. լաիկք, հեզարաթք,  
 » որք իրեւ կանթեզունս անչէջ կախեալք՝ լինէին յա-  
 » ղօթս, զցայդ և զցերեկ. և պաշտօնք իւրեանց եր-  
 » բէք ոչ խափանէին զցայս և զցերեկ. և բաց ի սպա-  
 » սաւորացն՝ ընդ դրունս վանացն ոչ ոք ելանէր արտա-  
 » քըս. և թէպէտ բազում անգամ հարկեցան յիշխա-  
 » նացն և յեպիսկոպոսացն Սիւնեաց, ոչ առին յանձն  
 » ի կիրակէքն ի թան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ,  
 » այլ բանջարօք և ընդով շատանային, վասն որոյ թա-  
 » նահատք կոչեցան. և ի գլխաւոր տօնսն՝ ի ձիթոյ ճա-  
 » շակէին, և սակաւ բաժակաք: Եւ զայս ծանոյց մեզ  
 » Պատմութիւն երանելոյն Մաշտոցի որ ի Սեւան »:  
 Ի պատմութեան վարուց Մաշտոցի գրելում ի Ստեփա-  
 նոսէ աշակերտէ նորա՝ չիք յիշատակ զվանսց Թանահա-  
 տի. թուի ուրեմն այս այլ Պատմութիւն, թերեւ զը-  
 րեալ ի նմին իսկ ի Մատոցէ, որ միանգամայն ցուցանէ  
 և զհնութիւն վանացն և զհամբաւ. զերկոսին եւս աներկ-  
 րայ առնէ և փոխադրութիւն մարմնոյ Ստեփանոսի ի-  
 մաստասէր եպիսկոպոսի այսոր՝ « ի միարանակեցաց վան-  
 » սըն Թանահտի վանից, որք էին մշտապաշտօնք հեռա-  
 » ցեալք յամենայն փափուկ կերակրոց, վասն որոյ և  
 » Թանահատք կոչեցան. և չինեալ ի վերայ փորձիկ մա-  
 » տուռ մի. զոր յետոյ 921 (1279) թուականին չինե-  
 » ցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ գե-  
 » ղեցիկ յորինուածովք. և եղին զտապան սրբոյն ի հի-  
 » մըն նորա »: — Սակաւ յառաջ քան զայս ժամանակ,  
 և ըստ կարծեաց ոմանց անդատին ի Ժումանակ ա-  
 ռաջնոյ նորին շինութեանն, « Էր եղեալ հայր վանիցն  
 » որոյ անուն Մխիթար, որ անցեալ էր ճգնութեամբ  
 » ընդ բոլոր հոյս առաքինեաց, և զգազանս վայրենիս՝  
 » զարկս և զգայլս՝ ածէր ի հնազանդութիւն սուրբ ե-  
 » կեղեցւոյն, և ծառայեցուցանէր վանիցս. զոր և ար-  
 » ձանն եցոյց եթէ արար հարկատու մեքորայն, այս ին-  
 » քըն եկեղեցւոյս: Գայլքն զլուրս հօտիցն պահպանէ-  
 » ին զգուշութեամբ և ղանդեայս արջառօցն, և արջըն  
 » քամակաքն բեռնակիրք լինէին: Եւ հանապազ երթայր  
 » յանտառն՝ սուրբ հայրն Մխիթար, և նստէր հանդէպ  
 » վանիցն. և Ժողովէին ամենայն զազանքն և վայրիքն  
 » առաջի նորա, և որպէս զգայունք խնդրէին ի նմանէ  
 » աղօթս և ողորմութիւնս՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից:  
 » Իսկ սուրբ հայրն կարգեալ սահմանաւ զվարուն. և  
 » յետ բազում ամաց փոխի ի կարգս հրեշտակաց. և զը-  
 » նի սուրբ նշխար նորա փայտեայ արկեղօք մերձ յեկե-

1 Եթէ ոչ բաց՝ այլ միայն նշանակաւ տառի գրեալ էր թիւն ի  
 կն օրինակի պատմիչն (Գլ. 17), զիւրու սպրդէր սխալն. այլ ոչ  
 կորեմ զՆ գիր (որ ի թուահամարի 400 նշանակէ), նմանեցուցա-

նել այլում տառի նախակարգելոյ քան զայն, (հարիւրաւորք՝ ձ.  
 8), թերեւ և էր, որոյ յազգ ինչ գրութեան զոյ սակաւ մի նը-  
 մանութիւն ընդ Ն:

« դեցին՝ ի փոքր բլրակի միտլ, յորում շինեալ վիրապ  
 « գեամնափոր և սրբալէն՝ հանգուցին զնա անդ. որ մին  
 « չեւ ցայսօր կայ և կատարէ մեծամեծ սքանչելիս ի  
 « հիւանդա և յախտաժէտս: Որոյ բարեխօսութեամբն  
 « գթասցի Քրիստոս յաշխարհս այս և ի մեզ յետին  
 « թշուառացեալքս »:

Առ երի հանգստարանի մեծարգոյ սպանդին (Ստեփան-  
 նոսի եպիսկոպոսի) հանգուցաւ և սպանիչն, կինն այն  
 զժպչի և ապաշխարող. զի ինքնին զգաստացեալ « ե-  
 » կեալ հանդէպ վանացն՝ յարեւմտա կոյս, յայնկոյս  
 « ճորակին, փորեալ զտեղին, և թաղեալ զանձն մինչ  
 « յստինան, զամառն և զձմեռն տապակէզ և ցրտա-  
 « հար լինելով, վայէր և ողբայր զցայգ և զցերեկ, և ըզ-  
 « մեզս իւր խոստովանէր. . . Թէպէտ էա զթողութիւնն՝  
 « ոչ ել ի տեղւոյն, այլ կացեալ՝ ի նմին վախճանեցաւ  
 « և թաղեցաւ յապաշխարութեան զբն իւր, և կայ հան-  
 « դէպ վանացն »: - Ի վերոյգրեալ բանից պատմչին յայտ-  
 նի քակեալ հին եկեղեցւոյն և շինեալ նոր, որ հանգերձ  
 հնովն և ամենայն արձանագրեալ և անգիր յիշատա-  
 կարանօք ի սպառ զանխլացեալ մնայ. բայց երեւի ոչ  
 անբնակ գոյ մինչեւ ի գեամնադորոզ կործանումն. նա  
 զի և Մովսէսի գովասանն կարգադրաց Անապատից՝ վը-  
 կայէ զնոցանէ, եթէ:

« Ի հովանին սոցա ախտաժէտք բազումք կուտեցան  
 « Թանահտի յանապատս, և ձիթուլս այս բժշկեցան »:  
 Յառաջագոյն եւս յիշի յամի 1491, յորում քահանայ  
 ոմն եկն անտի ի Քաւառ գիւղ Գեղամայ, և կոչի ի գրո-  
 դէն (Ճաշոց գրոց) « Ուր է աթոռ սուրբ հայրապետին  
 « Սիւնեաց Տէր Ստեփաննոսի »: - Յատացելոցս ցայս վայր  
 և ի գրեղոցս ի տեղագրութեան Վայոց ձորոյ (յէջ 119-25)  
 աներկբայ մնայ երկուս լինել և որիչ վանացս Թանահա-  
 տի և Թանատէի. Թերեւս երկոցուն եւս տեղեացն՝ ի  
 հեթանոսական դարս նուիրեալ Անահտի դիցուհւոյ:

94. Սակաւաւք ի ստորեւ ի հիւսիսոյ մեծի Նորոյ Անա-  
 պատին առ խառնորդովք գետոյն Տաթեւոյ յՈրոտոն՝ և  
 րեւի հոչակեալ Սատանայի կամուրջն, որ յիշի ի Յու-  
 ցակի հասից կամ պտղոց վանացն յԹէ գարու, և  
 ասի առ նովաւ լինել Ագարակ մի՝ երկու քոռ ցորենոյ  
 շափ տեղի. անունն յայտ առնէ զխրթնատեօիլ զժուա-  
 րութիւն վայրացն, և զփապարեալ քարածոցն գունա-  
 գոյն պազանձաւօք<sup>1</sup>. ընդ որ ուղիորէն խոխոջանօք ուժ-  
 գընակի անցեալ գետոյն Որոտան, թողու ի վերոյ ըզ-  
 կամուրջն անձեռագործ, իրբեւ 50 քայլ երկայն<sup>2</sup>, յորոյ  
 ի միոյ կողաց է անձուկ և զարհուրատեօակ ճանապարհ  
 անցից երթեւեկի. և մերձ նմին աղբերք կամ ջերմուկք  
 երկաթաձամ և ածղուտ ջրոց. և ի վերայն բաղանիք  
 քաղցր ջրոյ: Չանցս զայս կամ զկապ ճանապարհի կա-  
 մըրջին՝ նորագեաց Մարտիրոս վերջին եպիսկոպոս՝ յա-  
 ռաջին քառորդի դարուս, և ըստ գրելոյ աշակերտի նու-  
 րին, ընդ « որ յոյժ զժուարին էր ձին՝ թամբով անցա-  
 » նելն, այժմ այնպէս քայքայել տուաւ և ետ նորոգել,  
 « որ ձիանքն ձեռամբ անցուցանեն »:

<sup>1</sup> Յառաջ տպագրութեան բանիցս ծանեայ ի յրագրոց Տփղեաց  
 զի Շմամովիկի անուն Ռուս՝ քննեալ զգիրս և զքնութիւն տեղւոյս՝  
 հառօրէն բացատրեալ է ի վարժատան Շուշեայ. այլ չեւ եւս էր

Յայտարար կողմանս թուի լինել և կաքաւասար որոյ  
 աղբիւր և ճանապարհ ջրոյ յիշի ի շարայար պատմութեան  
 եպիսկոպոսաց Սիւնեաց: - Անցեալ ընդ կամուրջն վատ-  
 անուն՝ յահեակ (որ է հիւսիսային) կողմն գետոյն Ո-  
 րոտան (կամ Բարկուշատայ) ընդ առաջ լինին բարեւաբ  
 Անապատք կուսանաց և դեօղք Շնհերոյ և Հալիձորոյ,  
 որոց սերտ առնչութիւն է ընդ Տաթեւոյ, և զլիաւարք են  
 կայուածոցնորին. այլ քանզի յառաջին ժամանակսն ոչ  
 Մզկայ՝ այլ Հարանդ գաւառի վիճակէին, և մեր հին բա-  
 ժանմանցն հետեւեալ ի տեղագրութեանս, թողցուք  
 քննել ի սոյն յետին գաւառիս, յոր և ընդ հուպ կայ  
 մեզ միւր, յետ որոնելոյ և փափագելոյ գտանել և զար-  
 ժանի յիշատակաց տեղի մի ի սահմանս յայս Տաթեւոյ,  
 որոյ և անուն իսկ և դէպք հիացուցիչք են մտաց և սրբ-  
 տի. և է

Հարմաւազն, կէշին գայա (Հարանքար) ըստ այլ-  
 ազգեաց. զոր և ըստ նախագրեալ սահմանագրութեան  
 Թեմին Տաթեւոյ համարիմ լինել յեկից հարաւոյ վանա-  
 ցըն, առ հին ճանապարհան՝ որ ի Բաղաց տանէր  
 (ընդ Մզուկ) յԱյրարատ աշխարհ. և այսպէս աւան-  
 դին դէպքն ի Սիւնեաց պատմութեան, զոր՝ յառաջնոց  
 քան զինքն ճարտարագոյն գրոցաց առեալ յեռեալ է  
 Ստեփանոս յիւրումն (ԳԼ. 14). « Էր դուստր մի վա-  
 րագորդատայ՝ Աղուանից զահերեց իշխանի (ի կէս է  
 « դարու) որում անուն Շահանդուխտ, (որպէս կոչի  
 « եւս տեղին՝ զոր քննեմք). և ունէր պատկեր նոր և օ-  
 « տար, և գեղ նորա յոյժ չքնաղ և զարմացուցիչ տեսո-  
 « ղաց, որ և ոչ ումեք նիւթեղէն կարծիւր, այլ իբրև ի լու-  
 « սատարր սղոյ և յանօար շողից կերպացեալ. որ և խըն-  
 « դրեցաւ հարսն ի տանէ թորգովան: Եւ ել նա յաշխար-  
 « հէն իւրմէ ի հայրենի տանէ, և գնայր ի կնութիւն Հայ-  
 « կազուն իշխանացն. և մտեալ ի Բաղաց սահմանն՝ եր-  
 « թայր ի ճանապարհն յանքոյթ տեղիս յառապարի մի,  
 « յորում էր փրթուած քարի մի ահագին խորութեամբ,  
 « որ իբր յանդուներս հայէր, հանդէպ մեծի հայրապե-  
 « տանոցին Տաթեւոյ: Եւ ահա անդ ղողեալ ծուարեալ  
 « կային բազմութիւնք լէզէճնախումբ զօրաց սուսերա-  
 « մերկաց, որք վասն սխրալի գեղոյ նորա եկեալ էին ի  
 « Պարսից, և պահէին զանցս և զկիրճս ճանապարհացն՝  
 « զի յափշտակեցոցն: Եւ նօքա անիրազել էին բանին.  
 « յանկարծակի յարեան ի վերայ նոցա, և սուր ի վեր  
 « կալեալ սկսան յանխնայ կտորել զքրիստոնեայան:  
 « Ապա տեսեալ զայն մեծահաւատ օրիորդին՝ գիտաց  
 « զպատճառն, և կնքեալ զինքն տէրունեան նշանաւն,  
 « մտրակեաց զերիվարն և թոռեաւ ընդ փրթուածս քա-  
 « ռին: Եւ զի զայս գտաք ի հնացեալ նախկի գրեալ  
 « իւրով իսկ ձեռամբն, որ էր այսպէս. Ես մեղուցեալ  
 « աղախինս Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարագ-  
 « Տրդատայ, երթայի հարսն ի ուննն թորգովան. և ե-  
 « կեալ ի սահմանս Բաղաց, ի զուրի քարիս՝ ընդ որ ան-  
 « ցանէ ճանապարհն. եւ ահա յանկարծակի պատահե-  
 « ցան ինձ իսմայելացիք, որք վասն համբաւոյ գեղոյ ի-

հրատարակեալ տպագրութեան թեմիս:  
<sup>2</sup> Նոր ուղեգիր (Նոր Դար, Ը, 459) 300 քայլ ստէ ընդ երկոց-  
 նըն, 30 ընդ լայն:

» մոյ կամէին յափշտակել զիս . և սուր ի վերայ եղեալ  
 » կոտորէին զհեծելագունդն որ ընդ իս . ապա լաւ համաւ  
 » բեցայ քան ի ձեռն այլազգեացն գայլապատառ կորըն .  
 » չիլ, վասն Քրիստոսին իմոյ գահավէժ մեռանել . և  
 » յիշելով զՍուրբ Աստուածածինն և զՍուրբն Հռիփսիմէ,  
 » յանձնեցի զիս Սուրբ Երրորդութեանն . և կնքեցի զու  
 » զորմելի անձն իմ սուրբ խաչիւն , և դարձուցեալ զերաւ  
 » սանտկ երկվարին՝ Թռեայ ընդ քարս . և ապա յահաւ  
 » գին շնչմանէ հողմոյ և աներեւոյթ զօրութեամբ՝ իջայ  
 » իբր կառօք ի խորութիւն ձորոյս , ես և երկվարն իմ ան .  
 » վնասաւ Եւ դադարեալ անդէն՝ մեծաւ հիացմամբ գռհու  
 » թիւն մեծ վերառաքեցի այնպիսի փրկողին զիս , և  
 » իջեալ ի հեշտավայրն՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի .  
 » և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճանն իմ :  
 » Իսկ իմայելացուցն անսեալ զայն՝ մեծաւ զարմացմամբ  
 » թողին անվնաս զզօրն իմ և զնացին . և ես աստէն ի  
 » տեղւոջս շինեցի մատուռն մի և խցիկ մի . և կրօնաւո  
 » բեցայ ի տեղւոջս զամենայն ժամանակս իմ . թէպէտ  
 » բազումս թախանձեցայ ի ծնողացն իմ և ի հարսնաւ  
 » ծաւ իշխանացն , ոչ շարժեցայ ի տեղւոյս : Եւ կոչեալ  
 » զերանելի եպիսկոպոսն Սիւնեաց՝ յանձնեցի նմա զիս ,  
 » և զամենայն ինչս իմ ետու ի ձեռս նորա , զկէս մասն

» բաշխել ի կարօտեալս , և զկէսն ապա ի սուրբ եկեղեցին  
 » Տաթեւոյ : Եւ և զտեղիքս զայս աւանդեցի սուրբ եկեւ  
 » զեցւոյն ամենայն ձորովս , որ ի Շնհերոյ սահմանէն ի  
 » վեր մինչ ի Գինական գետն : - Ահա այս իսկ իւրով ձեւ  
 » աւմբն էր գրեալ Շահանդիսոյ : Եւ կացեալ ինքն  
 » անդէն՝ այլ եւս կուսանս ժողովեաց առ ինքն , և մեծաւ  
 » մեծ ճգնութեամբ կեցեալ ամս երեսուն՝ վախճանի :  
 » Եւ երթեալ եպիսկոպոսին՝ գնէ ի հանգստի ի նմին  
 » տեղւոյ զերանելի նշխարս սրբոյն . որոյ բարեխսու  
 » թեամբ խնայեացէ Քրիստոս ի տունս յայս և ի վիճաւ  
 » կեալ սեպհական հօտ սորա :

Սիրայի անշուշտ և նորատեսակ կուսական անապատ .  
 որ և հազարամաւ երիցագոյն քան զորս ի վեր անդր յիշե  
 » ցաք , և զոր յետոյ յիշելոց եմք . և վազքն աննմանք՝ երբ  
 » վարաթեւ թռչանօք հրաշափառք վեհագոյնք արդեօք քան  
 » զամենայն վազս՝ սուրբս և անսուրբս , ի Ղեւկադեանց  
 » ցՊեղազեանս . հակառակատիպք գեռ իսկ յիշեցելոյ դրժ  
 » նեայ Կամրջոյն , որ ի բարձանց անտի պակուցանողական  
 » ճնշմամբ թուի ի վհաքատակ խորս հեղձամղձուկ իջուցա  
 » նել զօգի . մինչ սա՝ յանդնդախոր ալուց՝ թեթեւաթիւ  
 » ի վեր ի վեր սլացուցանէ զմիտս և զսիրտ : Փափագելի է  
 » տեղանկարից ճշգրիտ յանդիման առնել մեզ զվայրսն :



# Հ Ա Ր Ա Ն Գ



**ԱՐԱՆԴ ԳՍԻԱՌ** թէ-  
պէտ եւ ի միջնադարէի  
Սիւնեաց զետեղեալ կայ,  
այլ վասն դժուարակոխ  
վայրացն և ի չգոյէ արա-  
հետ ճանապարհի՝ անայ-  
ցելու և սակաւածանօթ  
մնայ. և ոչ միայն յայժ-  
մուս՝ այլ թուի և ի հնու-  
մըն, զի դուն ուրեք յիշի ի  
պատմութեան. և ի վաթ-

սուն և աւելի գիւղիցն ի Յուցակին հարկատուաց նշա-  
նակելոց՝ վեց կամ եօթն միայն. վասն որոյ և դժուարին  
է ստուգիւ գծադրել զգիրս նոցին. բայց աներկբայ է  
յարեւմտից կողմանէ սահմանորդ գոլ գաւառիս՝ յետին  
տեղագրեալ վիճակացն Որոտան և Տաթեւոյ. ի հիւսիսոյ՝  
Աղահէճ գաւառի, բարձամբք անջրպետօք Ազոդլան զետոյ  
օժանդակի Հագարեայ. այս գետ յարեւելից կտրէ ըզ-  
սահմանն, այլ ոչ գիտեմ որքան մօտուստ. իսկ ի հարա-  
ւոյ՝ երկրքին Բաղք են սահմանակիցք, անջրպետ ունելով  
զերինս (Քեօքի, Պարտակաւնո՞ւ? եւ այլս), որք և անջրպե-  
տեն զօժանդակս Բարկուշատայ ի գետոյն Չաւընգուրայ:

Հիւսիսային և արեւելեան մասն երկրին պատկանի գե-  
տահովտին Հագարու. առաջինն՝ յատկապէս Ազոդլանի,  
միջին մասն՝ օժանդակաց ինչ Բարկուշատայ (կամ Որո-  
տան) գետոյ ի Հս. կուսէ ընդ Հր. իջելոց, որոց գնացք և  
դարձուածք չեն քաջայայտք, և երկիրն թուի բարձամբ և  
ձորովք վերիվայրեալ, ոչ ունելով հարթածաւալ տեղիս,  
բայց եթէ մօտ յաջակողմեան ասին Հագարու: Թէպէտ  
և յոլովք իցեն կուտակք լեռանցն, այլ ոչ շատ բարձունք  
որչափ ինչ ստուգեալ է. բարձրագոյնքն յարեւմտեան  
սահմանածայրսն են, այլ գուցէ յաւէտ Յղկայ և Աղա-

հէճի պատշաճելիք. իսկ որ ի բուն Հարանդ ծանօթքն՝  
գրեաթէ՛ շանցանեն զ6000՝ բարձրութեամբ, բայց միայն  
Գագի կիւղիւն ? ի Հս. կտրէսի 6620՝. յելից նորին Չաւ-  
պոշուռն՝ 5700՝, և այլն: Նշանակին բազում ուրեք լեռնակք  
կոնաձեւք կամ կոհակք մեկնակք, թերեւս հրաբղխից եր-  
բեմն գործարանք. ընդ որս և յոլով աւազակոյտք շեղա-  
ձեւք կամ գմբեթաձեւք, մանաւանդ առ երի զլիսաւոր ս-  
լանին՝ կորիսայ, որպէս կոչեն տեղացիք և զկուտակն,  
ըստ ձեւոյ նոցին և որ շուրջ զնոքօք խորափիտ վայրացն:  
Մերձ ի լեռինսն արդ յիշեալս յանուանէ և մերձագոյն ի  
Քարաչէն գիւղ՝ կայ և ծծմբային հանքաղբիւր. և այսպիկ  
փափագելի եւս առնեն զքնասիրացն հետաքննութիւն:

Հարաւային մասն կամ բուն հովիտ Բարկուշատայ որ  
յաճեկէ, ընդունի ի հիւսիսոյ զգետակն Չանկեազուրի,  
որպէս թուի կոչեցեալն Վարարակ ի հնումն. իսկ յաջմէ ի  
հարաւոյ՝ ունի համընթաց օժանդակ (յարեւմտից ընդ ա-  
րեւելս) Չելի-չայ կոչեցեալ, և յոյժ բարգաւաճ երեւի  
բուսաբերութեամբ և արգասեօք, ունելով ձորակս և  
հովիտս գեղեցիկս. զորոց ցաւէ չգիտել զորպէսն ստու-  
գիւ. այն զի ուրեք ուրեք բնական և շինական տեղեաց  
իսկ գոն նշանակք յընդարձակ տեղացոցի կողմանցն, այլ  
ոչ և անուանք առ երի: Անգղիացի ոմն (Միկնեն, Mig-  
nan), որ յամի 1830 ի Շուշայ երթալով ի Գավրէժ,  
էանց ընդ արեւելեան հարաւային կողմանս գաւառիս,  
ետես ի լեռինսն Վիքս մեծամեծս, և մերձ ի դաշտն  
Երասիսայ Փասիանս գեղեցիկս և մեծամեծս<sup>1</sup>:

96. Ոչ է յայտ սկիզբն շինութեան և բնակութեան գա-  
ւառիս, և ծագումն անուանն, որ ուղղագոյն է Հաբանդ-  
զի այսպէս գրի ի ձեռագիր օրինակս աշխարհագրութեան  
Խորենացոյ, այլ ուրեք Խաբանդ, Աբանդ, Համբատ,  
յոր անուն կայ և գաւառ մի Արցախոյ՝ Միւս Հաբանդ-  
կոչեցեալ, որպէս ի սմին աշխարհի Սիւնեաց են Բաղք

<sup>1</sup> Mignan's Winter Journey, through Russia, the Caucasian Alps and Georgia, into Koordistan. 1839



և Միւս Բաղք. յորմէ երեւի ի հնումն սահմանակից լի նել երկոցուն. առ սր հարկ է այսմ Հարանդայ՝ զորմէ բանքս են՝ ձգիլ և յայնկոյս Հագարեայ: Նշանակելի է վերջայանդ անուանն և զուգութիւն ընդ երկուց և երեց այլոց գաւառաց Հայոց, (Վանանդ, Մարանդ, Զարեւանդ): Բազմաց թուի այսր անուան Հարանդայ՝ յեղուլ ի ռամկորէնն Ղափան, որպէս կոչի գէթ յերկուց դարուց հետէ մեծ մասն հարաւային արեւելեան Սիւնեաց. այլ ստուգագոյն թուի ի կապակն Բաղաց փոխումն անուանն ի Ղափան քան ի Հարանդայ. սակայն յետինս այս տիրող անուն ոչ ի վերայ միոյն կամ միւսոյ միայն ձգի՝ այլ յերկոցուն եւս:

Ի նախնեաց Սիսակեանց լինելոյ բնակութեան գաւառիս, վկայէ պատմիչն ի յիշատակի Զագեձորոյ բերդին, որ և Հարանդայ բերդ կոչէր, իբրև զլիաւոր այդպիսի շինից գաւառին, և ի Զագայ կամ ի Զագիկ նահապետէ համարիւր շինեալ, ի զարմից նախահօրն Սիւնեաց: Յիշին ի պատմութեան Զագիկ անուն պայազաք ի կողմանս Բաղաց, հաւանորէն սերեալք յառաջնոյ անտի հին նահապետէ, և որպէս երեւի՝ յետոյ միանալով կամ խառնելով Հարանդայ ընդ Բաղաց, յանուն յետնոյս յիշատակին իշխանքն: Եւսային կէս Ե դարու Փիլիպպէ թոռն մեծ Փիլիպպէի՝ տիրէր Հարանդայ: Եւսուն հնոյ բերդին (Զագեձոր) համարիմ, այլազգեաց բռնազրոս ծեքմամբ, ի յետին դարս և մինչև ցարդ Զանկեազոր կամ Զանկէզուր կոչել զգաւառս Հարանդայ, որպէս ի հնումն ներհակարար յանուն գաւառին բերդն. և միւս եւս ներհակութեամբ, մինչ ի միջին դարս Հարանդ նուազեալ ընկղմեալ իմն թուի ի միջի մերձակայ գաւառաց Բաղաց կամ Մզկայ, զարդին Զանկեազոր անուն՝ որոյ բունն ի Հարանդ՝ տարածանի յընդարձակ սահման, պարագրելով ոչ միայն զԲազս և զԱղահէճ և զՎոլական, այլ և զՄոլուկս և զՎայոց ձոր մասամբ, որպէս նշանակեցաւ յառաջագոյն:

Հին Յուցակ հարկատուաց եկեղեցւոյն Սիւնեաց 59 գեօղս նշանակէ Հարանդայ, որ են այսպիսի, հանդերձ չափով տրից նոցին.

Աղախերդ	13
Խալխալք կամ Խախալք	8
Կատավանք կամ Գաղավանք	8
Խնձորեսկ	10
Վանոցա կամ Վանացայ	20
Մրկաքար	13
Խորժայ	7
Շոռնոխոյ	13
Տանձեակ	7
Թաղթուն	7
Տեղ	13
Քօչագեղ կամ Քօչագիւղ	13
Պատանդավանք	7
Եզնի	7
Նորաշինիկ	6
Խոնաճախ կամ Խանաճախ	20

Վաղատու	13
Ակարդոն	10
Խորխոր	7
Մակաղոց	10
Մակաղոց միւս	7
Կարբինք վերին	8
— Ներքին	8
Տեղի կամ Գեղի	13
Գորու	20
Կովայ կամ Գտաւայ	6
Լուսակունք	10
Բազմածակք	6
Շագուայ	10
Արտաշէն	6
Անձկայք	6
Քրվանք կամ Քրօնք	20
Գնննաթաղք	6
Գնդաշէն	13
Ղոկոնի	8
Բողեան, Բուղեան	13
Յատղոնի, Յօղունի	13
Քարոսան, Քորոտան	15
Ագարակ	8
Ըղուերձ	13
Անձկայք	13
Ականայ	10
Զագածոր	13
Պետրոսկայ վանք	10
Նախանձփոր	8
Աղըլրիկ կամ Աղուոյ ջրիկ	α
Գորայք	10
Ուսկածակ, Ասկածակ	8
Խոտ	13
Սսորին ?	13
Մարգարծոր կամ Մաշկաղոց	8
Բահիզածոր, Պահիզածոր	18
Բոքս, Բաքս	10
Նավակաշէն	13
Արքոյ	10
Թաղարայ	8
Շաթիթաղք	8
Շնոյրերք	24
Հալէ	8
Ի յետին ցուցակս և ի գիրս յիշին և այսպիսի.	
Հիւսնիդարա	
Ալիղուլիշէն	
Քարաշէն	
Արաւիս	
Մաղանջուղ	
Սուլղանի դշախ	
Կուռնիծոր	
Յերկուս վիճակս տրուեմք ի տեղագրիս զՀարանդ, ի Զոր Բարկուշատայ և ի Զագեձոր:	

# Ա. ԶՈՐ ԲԱՐԿՈՒՇԱՏԱՅ

## Ի ՍՍՏԱՆԱՑԻ ԿԱՄՐՁՈՑ ՄԻՆՁԵՒ Ի ԲԵՐԱՆ ՎԱՐԱՐԱԿԻ

ԾԾ. Ի հուսկ սահմանաց Եղկաց կամ ի ձորոյն Տաթեոյ, ուր դադարեցուցաք զսեղագրութիւնս, վերստին սկիզբն արասցաք, անցանելով ընդ անսւանեալ կամուրջն Սատանայի՝ ի ձախակողմն ձորոյն Որոտան կամ Բարկուչատայ. առ որով երեք մերձասահման հին գեօք են՝ սեփական կալուածք Տաթեոյ վանաց և յաճախ յիշեալք ի պատմութեան: Առաջինն՝ իրրեւ ժողովուրդ և կիսով յԵլից Հս. կամրջին՝ Հալէ, կամ Հալիս, որ արդ սովորաբար Հալիձոր կոչի, հանդէպ Հարանց անսպասին՝ (որ յայն կողմն գետոյն), ի գառնիվայրի և յառապարս ձորոյն կալով՝ զժողարամատոյց է, և ազարակքն հեռագոյնք. ունի եկեղեցի սաղաւեն, քառասուն. բնակիչքն Հայազգիք իբրեւ 100 տուն կամ աւելի: Ի պատմութեան յիշի զառաջինն ի սկիզբն Ժ դարու, յորում՝ մեծահաւատ տիկին մի Համասպրուհի անուն դուստր Բաբգնի ի իշանի՝ տիրաբար ընծայեաց նորաչէն եկեղեցւոյն Տաթեոյ, «նախ » զայգին մեծ որ ի Հալիսից գետասին, և յետոյ զգիւղն » իսկ զՀալիս իւր ամենայն սահմանօքն. և զբէ կտակ » հաստատութեան մեծամեծ դաշամբք, զի մի ի իշանցն » խախտել »: Ոչ է յետեալ պատմին զպատճէն դաշանցի ի պատմագրութեանն, յորմէ կարողանայաք գիտել զանունսն շրջակայ սահմանաց գեղին. և միակ յիշատակեալն Փետառն կամ Փետառուն ոչ նշանակի ի տեղացոյց քարտի. Թուի փոքրիկ ջուր ինչ ինեւ յայնժամնա և գետն փոքրիկ համարելի է, ըստ չափոյ տրիցն, առ համեմատութեամբ դրացեացն երկոցուն. բայց անունն՝ յորմէ և Հալեցիք կոչուին բնակչացն, հնութեան և տիրական շինութեան տայ ցոյցս: Սակայն մեծացաւ համբան և բնակութիւնն յառաջին քառորդի ԺԸ դարու, ի յարուցման Սիւնեաց Ղափանեցոց ընդդէմ այլազգեացն հարստահարողաց, և յընտրել առաջնորդի նոցա քաջին Դաւիթի՝ զայս տեղի յիւր ոստան. թերեւ ոչ այնքան վասն ամրութեան տեղոյն, որքան վասն ամրասիրտ բնակչացն, յորոց անմոռաց անուն եթող ընդ նմին՝ Տէր Աւետիս երէց աշխարհիկ, և աներ նորա փարսաղան մէլիք գեղին, և սորա որդին և յաջորդ Պալի զօրավար: Այլ առ աներկեւան ապահովութիւն՝ կառոյց Դաւիթ բերդ հը-

զոր ի Հս. Մ. գեղին՝ ի լանջս լերին, առ որով և Անապատ մի էր կուսանաց. վասն որոյ և կորզել Հանացան գտեղին այլազգիք, բազում անգամ հարեալք ի նմանէ և ի նորին զօրավարաց. և ապա ժողովեալ, յամի 1736, բազմութիւն մեծ յամենայն մերձակայ գաւառաց և կուսակալութեանց, ընդ որս և Ղարաչօղոս անունեալ Թուրքք շուարանակք, այլ և Հայք ոմանք կամաւ կամ ակամայ վարեալք ի գործ մարտի, իբրեւ վեց կամ եօթն բիւր արանց, եկին պաշարել զբերդն ստնհար իւրեանց, մինչդեռ Դաւիթ Թօթափեալ էր յիւրոց մարտկաց պակուցելոց յայնքան բազմութենէ. ապայն ըստ անյողգողք բարուցն արութեան, զօրաւիգն ունելով զնմանիս իւր, զՏէր Աւետիս և զՓարսաղան, յաջողեցաւ գումարել զիւրեւ արս աննկունս. և իջեալ ի բերդէն՝ առաքեաց զունդ մի (160 արանց) ունել զանցս գետոյն, և արգելով զայլազգիսն: Իսկ նոցա գտեալ անցս ընդ այլ հուն, զիմեցին ի գիւղն. յորմէ՝ աճապարեալ Դաւիթ 350 մարտկօք անկաւ յամուր իւր: Փութաքան և Թնամիք պաշարել զայն, և շուրջ պատնիշափակ առնելով՝ ոմաւ կոծէին զաւուրս վեց. այլ ոչ կարէին ստնանել և մերձեալ, զի չարաչար հարեալք լինէին ի պաշարելոցն. ապա կազմեալ զկարեւոր մեքենայս և գործիս բերդառութեան և սանդուղս 36, յերից կողմանց յարձակեցան ելանել ի վեր. այլ առաւել քան զկարծիս գտին զիմակալութիւն. որպէս պատմէ ինքնին մի ոմն ի զօրավարաց անտի Հայոց՝: Եւ զի յետին գործ մեծի մարտի և յաղթութեան է յազգայինս պատմութեան, թոյլ տացուք նմա նկարագրել ըզգէպսն. «Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատաղեալ » զօրացն աղմուկ աղաղակին. զի իբրեւ մեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր և հազարաւոր դրոշակիւրքն յառաջ » աւլ խաղացին. ապա զօրքն ամենայն զկնի հեղանէ » ին իբր յորձանս յորդախաղաց գետոյ՝ ահագին գող » մամբ, և կամ իբրու ամեհի այլս ծովու յուզեալք ի » թունութենէ հողմոց, և դարիւ դարիւ զային մի զմիով » անցանէին, և ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն » գիւղէին. և առ հասարակ յերկոցունց կողմանց Հայն փո » ղոյ և Հայն Թմրկաց, գոյին զօրաց, շառաչուին հրալից

1 Գրող կամ մանուկը Թեղաբող գատմութեամ Դաւիթ Բէկի կամ Ղափամեցոց, որպէս կոչի, համարեալ է Ստեփանոս

Շահումեամ, որպէ վարդապետի. զորմէ տեսիլ յետոյ ի տեղաւորութեան և յիշատակի Եկատանց գեղի:

» գնդակաց, ճայթժուկը հրացանից՝ զականջա խլացուցա-  
 » նէին. իսկ որք ի ներքս էին, իրրեւ զայն ահեղ տեսիլ ի  
 » յամրոցէ անտի տեսանէին, զգնդաց զնդաց այլասեռի-  
 » ցըն գրօշու գրօշու պատրաստութիւն, զնշանացն փող-  
 » փողել և զճառագայթս զինուցն զինուորաց, զզանգակս  
 » Հնչեցուցանէին, զնշխարս Սրբոյն Մինասայ ի բազմոցի  
 » զնէին, և ամենեքեան անկեալ առաջի սրբոյ սեղա-  
 » նոյն առ Աստուած գոչէին, եպիսկոպոսունք, քահանայք  
 » և ամենայն ժողովրդականքն, և կուսանք, (զի էր անդ  
 » նա և մենարան ինչ Կոստանոց, ուր բնակէին քառասուն  
 » կամ յիսուն կուսանք). զի ամենեքեան զմահն առա-  
 » յի աչաց ունէին: Եւ ի յութերորդ ժամու աւուրն, իբ-  
 » ռեւ տեսին՝ թէ բառնի այնուհետեւ յոյս կեցութեան,  
 » Մխիթար սպարապետն և Տէր Աւետիսն խրատոյս բար-  
 » ձին, ի զէն յարձակեցան. յայնժամ զօրքն ամենե-  
 » քեան առ նոսա կուտեցան, (բաց ի պահպանաց պա-  
 » ըրապացն), վառեցան պատրաստեցան. զէն զգեցան և  
 » ի բարկութիւն ըրբաբեցան ամենեքեան ի վերայ թըշ-  
 » նամեցան: Չի խօսիլ սկսան ընդ նոսա Մխիթարն և  
 » Տէր Աւետիսն, և ասեն. Քաջացարուք, մի երկնչիք, ե-  
 » լէք զհետ մեր. եթէ հասեալ իցէ վախճան մեր՝ քաջու-  
 » թեամբ մեռցուք. զի լաւ լիցի մեզ արիութեամբ ար-  
 » տաբոյ պարսպաց մեռանիլ, քան աստէն առաջի աչաց  
 » մերոց՝ տեսանիլ զմահ ընտանեաց և բարեկամաց մե-  
 » ռոց, և զայլ դժնդակութիւնս: Չբանսն ասացին, և  
 » ինքեանք յառաջագոյն անսպարեցին ելին արտաքս ընդ  
 » գաղտնի դուռն պարսպին, և երեք հարիւր վառեալքն  
 » զկնի նոցա: Ո՛վ սքանչեւեացս. ո՛վ մեծի բարեգթու-  
 » թեանցն Աստուծոյ. զի երեքհարիւր վառեալք ի յութե-  
 » ռորդ ժամու աւուրն՝ ձայն ետուն, խրատոյս բարձին,  
 » յարձակեցան միանգամայն ի վերայ եսթանասուն հա-  
 » զարաց. զառաջինն յանկարծակի յարձակեցան ի վերայ  
 » աջակողմեան զնդի նոցա՝ յալ և յահեակ կոտորելով-  
 » իսկ նաքա յանկարծակի իրրեւ տեսին զայն ահեղ յար-  
 » ձակումն և կոտորած ի վերայ ինքեանց հասեալ, առ  
 » հասարակ խռովեալք և խուճապեալք զիմեցին ի յերկ-  
 » ռորդ և ի յերբորդ խռմբան, զաղաղակ բարձեալ՝ թէ հա-  
 » ան կոտորեցին զմեզ քրիստոնեայքն. և զայն իրրեւ լը-  
 » ւան ամենեքեան՝ հիացան ակիցեցան, տկարացան ի իրր-  
 » հուրդս իւրեանց, լքան լուծան, և անկաւ ահ ի Տեսա-  
 » նէ ի վերայ նոցա. զի մինչքե՞՞ ակն ունէին մեծի յաղ-  
 » թութեան, զբաւմբ անեղոյ զամուրն, յանկարծակի ե-  
 » հաս նոցա այն անողորմ կոտորածն: Ուստի առ հասա-  
 » ռակ զարհուրեալք, և սասանեալք ասէին այր ցընկերն.  
 » Որ ոք կամի զանձն իւր ապրեցուցանել՝ փախստեան  
 » ուշ դիցէ. զի բազումք ի նոցանէ բազում անգամ  
 » զգործ առեալք էին քաջութեանցն Դաւթի, և արանց  
 » նորա. և զի ահն, ազաղակն և անհնարին կոտորումն  
 » բանակի նոցա երթալով երթայր և զօրանայր, ուստի  
 » ոչ ոք այնուհետեւ համարձակէր յետս ընդդէմ սոցա  
 » դառնալ, այլ առ հասարակ խռովեալք և խուճապեալք  
 » փախստեայ լինէին: Իսկ սղաւ և որք ի բերդ անդր մեա-

» ցեալք էին՝ համարձակ ի վերայ յարձակէին, հասա-  
 » նէին, հարկանէին, զբազումս առ ետեւ սատակէին, և  
 » զայլս՝ խոցս, վէրս ի վերայ դնելով՝ հալածական առնէ-  
 » ին անտի, մինչ ոչ թողուլ ի նոցանէ երկու ի միասին.  
 » և ի նմին աւուր անկան ի բանակէ օսմանցուցն երեք-  
 » տասան հազար այր պատերազմող, իսկ ի սոցանէ յոյժ  
 » սակաւ ոմանք: Եւ առին ի նոցանէ յաւուր յայնմիկ  
 » հարիւր և քառասուն դրօշակս, և զայլ ամենայն կա-  
 » պուտ կողոպուտ բանակի նոցա »:

Բազում և այլ դրօշուց, յաղթանակաց և գերեաց և  
 գերութեանց՝ հանդիսարան եղև Հալիձոր այլ եւս ամս  
 երկուս, ցմահ Դաւթի (1728) « խաղաղութեամբ ի տան  
 » իւրում », յիշանութեանն և ի փառս: Այլ յերկրոր-  
 դում ամի մահուանն ոչ կամեցեալ Հալեցեաց հնազանդել  
 Մխիթարայ՝ որ փոխանակ նորա կարգեալ էր իլիսան և  
 սպարապետ, ետուն զբերդն ի ձեռս այլազգեաց՝ դա-  
 շամբք. իսկ նոցա դրժեալ՝ յամենայն ընչից կողոպտեցին  
 զարս զօրաւորս, և զոմանս գերի վարեցին, ընդ որս և ըզ-  
 կին և զորդիս՝ Մխիթարայ, թողով վերականգու մնացոր-  
 դացն զՏէր Աւետիս. որոյ ոչ հանդուրժեալ հակել ի  
 վերայ աւերակաց այնքանոյ բերդի, զոր մինչեւ ի հիմու-  
 նըս քանդեալ էին ոսոխքն, լուծեայն խոյս ետ յանդարձ  
 օտարութիւն: Հաւանորէն յայնմ ժամանակի աւերեցաւ  
 և զիւղն և լքաւ, և բնիկքն իջին յայժմեան ստորին դիրս  
 և հաստատեցին նոր բնակութիւն: Նոյնպէս ամայացաւ  
 և Ս. Աստուածածին Անապատն կուսանաց Հալիձա-  
 ռոյ, ուր յամի 1653, « Անապատիս Մայրապետ Հովի-  
 » սիմէն », որպէս կոչէ զինքն, ընդօրինակէր զԽոսրո-  
 վու Մեկնութիւնն ժամագրոց. յիչէ նոյն և « զմարա-  
 » նապետ Ուստիանէն. և այլ միեղէն մայրքս և քորքս »,  
 այլ և « զերջանիկ և գերիմաստ Տէր Մելքիսեդս, և  
 » զվերականգու Անապատիս՝ զսրբամիտ Մանդաւի Միքա-  
 » յելս »: կրկին անգամ յիլելով զսոսա գրէ. « զվերակա-  
 » ցուք Անապատիս՝ զվաստակասէր և ժիր մշակք Յիսուսի  
 » փրկչին մերոյ, զՏէր Մելքիսեդս և զՄիքայէլս, որք ու-  
 » նին սղաւ բազում աշխատանք ի վերայ Անապատիս և  
 » ինձ »: — Աստ սպանին նախանձողք զՍաղաղու (կամ  
 Սանդախու) մականուանեալ Առաքել եպիսկոպոս  
 Սիւնեաց, հատեալ նախ զլեզուն ճոռոմբանս: — Սակաւ  
 ամբք յետ աւերման Բերդին Դաւթի (1785), յուխտա-  
 վնացութեան իւրում էանց Արրահամ կաթողիկոս և ընդ  
 զիւղն Հալիձորոյ, այլ առանձինն ինչ ոչ յիչէ: Ի վերջ-  
 նում ցուցակի հասից աթոռոյն Տաթեւու՝ 3000 շահի նը-  
 շանակի տուրք գեղըս. իսկ նախ քան զայն՝ նշանակին  
 պէսպէս չափք արմտեաց և պտղոց »:

Եկեղեցին Հալիձորոյ կոչի Ս. Մինաս: Մնան ցարդ  
 կիսաքանդ պարիսպք բերդին և քառակուսի աշտարա-  
 կացն, հանդերձ լքեալ և լռեալ մատրամբն, յորում  
 համարի թաղեալ ի յետին դարու դիւցազնացեալն այն  
 Դաւիթ. այլ ոչ է յայտ կամ անվերնագիր մնայ տա-  
 պան նորին, որպէս և այլոց ոմանց. իսկ սակաւ յայտ-  
 նիքն են այսօրիկ, 1712 և 1742 ամաց թուականք:

1 « Ութ բեռն և 8 մարզպան. մեկ լիար թիւանի մեզր տան. 4  
 » խօսիլ խեղճի և մազաշար, 3 ու կէս հուն և ընկուզ. շիրէմ մա-

» սույն կէօրոյ ց. այսինքն քաղցուն կամ գինին՝ ըստ լափու առ  
 » աստութեան բերոց տարւոյն սուեալ լինի:

**Այս է տապան Առաքել վարդապետի առաջնորդի Ստաթէի վանուց . ՌՃԿ .**

**† Այս է տապան Փարսաղանի կողակից Ռեհանին . ՌՃՂ .**

Ունի եկեղեցեակն և դաւիթ կամարակապ և նկուղս կամ ներքնատունս :

Ի յետին ամբս ի ձորակիս յայսմ Հալէի յայտնեցան քանք պղնձոյ <sup>1</sup> :

98. Երկրորդ գիւղ ձորագետոյս և մեծագոյն ոչ միայն քան զՀալիս և զԽոտ, այլ և քան զամենայն գիւղս գաւառին եղեալ է ի հնումն և ի նորումն՝ Շնհեր, և թերեւս յայս սակա ոմանց իմաստասիրեալ՝ Շինահայր գրեն կամ Շինուհայր, և օմն անդրադարձօրէն Հայրաշէն . զի ի հին Յուցակին սա միայն ի գեղոս գաւառին հարկէր 24 բուն, որչափ գրեաթէ և ոչ մի և յայլ գաւառս Սիւնեաց . և դարձեալ, Փիլիպպէ՝ զոր վերագոյնդ յիշեցաք, կոչի տէր Համպատայ և Շնհերոյ, որպէս թէ երկու մասունք իցեն գաւառին կամ երկուքովք անուամբքս ճանաչիցի . Արդ կայ Շնհեր ի նոյն դիրս Հալէի՝ ստորեւ քան զնա ի Հս . Սլ . մղոնաւ կամ աւելի բացագոյն, զի ընդ երկար սփռեալ են շէնքն ի ձորամիջին, և մերձ և հուպ է ի Խոտ գիւղ ի Հր . Սլ . նորին . որպէս զի երկուցուն միանգամայն մի սահմանապիւր կարգեալ է ի պատմութեան Սիւնեաց <sup>2</sup>, արարեալ հաւանութեամբ Զոտանէրի և Զագայ իշխանաց և Յակոբայ եպիսկոպոսի, յառաջին քաւորդի Ժ գարու, և հաստատեալ յԱշոտոյ Բ թագաւորէ Բագրատունեաց և ի Յովհաննէ Զ կաթողիկոսէ Պատմուչէ . յորժամ եզրօրորդի սորա եպիսկոպոսն Յակոբ՝ ի ձեռն Գրիգորի ուրումն իշխանի « զՂուրն Զագէձորոյ բե . » բեալ են մինչեւ ի Խոտայ մեծ Բլուրն, մինչ ի Խաչաժ քարն և մինչ ի Գորգանց, և գետովն մինչեւ ցՈղա .

» կան իւր սահմանովն, և յՈղականայ ի Շրատափն, մինչ » չեւ ի Կոպիձն, և ի Կապիձէն մինչեւ ի Կոդովարին » միջին Խաչն և ի Կեօքարն, ի յԱրժուաքարին խոտն, » մինչեւ ի Յովեկայ սահմանն և Յովեկայ այգին, ի յէշ . » կար խաչն և յԱզագախոտն, և Աւագախոտովն ի Ծովն, » մինչեւ ի Սաքեան և ի Խոտումարգն : Այս են սահմանք » Շնհերոյ և Խոտայ » . որք վերստին հաստատեցան յամի 983 : ի յիշխոցդ վայրաց՝ Արժուաքարն՝ ըստ անուանն թուի լեառն կամ բերդ լինել, և հաւանօրէն նոյն որ ի պատմութեան Դաւթի բէկի Արժուաքար քարի, և ի տըպագրէն սխալակեալ՝ Արժանաքար . առ սովաւ էին երեք գեօղք Թուրքաց, զորս ետ կոտորել Պապ՝ զօրավար Բեկին : Իսկ Ծովն՝ թուի լեակն փոքրիկ ի Հս . Մ . Շնհերոյ, որ և ցարդ յանուն գեղջւ կոչի : — Ըստ Հալէի թուի ի հնումն վերագոյն ուրեք կառուցեալ աւանին Շնհերոյ, և յետոյ ի ինդիր ամրագունի՝ այլ և դժուարուտ վայրի՝ եկեալ այսր, և հաստատեալ բնակութիւնս ի միջի քարաժերպից և անձաւաց՝ ի փուլս ձորոյն . յորոյ ի լանջ ինչ տեղիս տնկեալ են ծառս պտղաբերս և այգիս, և դարմանեն ժրութեամբ . զի արք ուժեղք և հասակագեղք աւին գալ Շնհերացիք <sup>3</sup>, և ի միջոյ գետոյն Որոտան շալաւաւ առնուլ հանել ընդ խորածորն ի վեր գերանս փայտից ի պէտս շինութեան : — Եկեղեցին մեծ և հոյակապ քառակուսի ձեւով (34 կանգուն յերկայնն, 22 ի լայն) յարեւելեան ծայր գեղջն կայ, և թուի չափաւոր հնութեամբ . բայց անունն կամ արձանագրութիւն ոչ յիշին, բաց ի միոյ ի Խաչի ագուցեղոյ յորմն, և է այս .

**Ես Արզուս կանդնեցի զԽաչս Տեառն իմոյ Եզեկի եւ որդւոյ իմոյ Պապկայ հոգւոյն . յիշեցէք ի Քրիստոս . ԹՎԻՆ . . . ԿԱ .**

Յայտ է թէ եղծեալ է առաջին հարիւրորդ թիւն . որով անյայտ մնայ ժամանակ գրութեանն : Այժմեան եկեղեցին կոչի Ս . Ստեփանոս :

Աւ երի Շնհերոյ էր մեծ Անապատն կուսանաց յաւուն Սրբոյ Աստուածամօնին, որպէս և Հայիձորոյն յարեւմտից կուսէ ի բարձրաւանդակ սարստափի, որոյ կան

գուն կայ ցարդ եկեղեցին և պարիսպքն մասամբ սենեկացն <sup>4</sup>, շինեալք յամի 1676, յաւուրս Յակոբայ Դ կաթողիկոսի, այն որ և զմեծ Անապատն Տաթեւոյ զետեղեաց յետ սասանութեան և խանգարման Հարանց անապատին, որպէս ցուցանէ արձանագիրն յորմն սեղանոյ եկեղեցւոյն .

**Շնորհաւք Սուրբ Հոգւոյն շինեցաւ տունս ապաւէն . ԹՎԻՆ Հայոց ՌՃԻԵ ի հայրապետութեան Արքազան Տեառն Յակոբայ <sup>5</sup> .**

<sup>1</sup> Սյուրբիկ ըստ ուղէգրութեան հրատարակելոյ ի Նոր Դար լուրագրի (Ը, 139) . ի ժամանակի սպազրութեան բանիցս, յորում չեւ եւս էր աւարտեալ գրութեան այն, վասն որոյ և գրոջն տակաւին անժամօթ ինչ յանուանէ :

<sup>2</sup> Այս բան սկսարիւր կարգի յօրինակս ինչ պատմութեանն ընդ մէջ կթի և Հ գլխոց, և ի դէպ գոյ ի թ գլխոյ, զի յերկուսին եւս բառք լինին զՂոյն Զագէձորոյ :



<sup>3</sup> ԱՄԼ և երկայնամբուրուք, ըստ Զաւաւ . Բ . 366 :

<sup>4</sup> Ռաստէ՝ որ ներս (1890) էանց ընդ սահմանս, շերեւի սակ եկեղեցին, այլ պարտէզք, և միանձն մի բնակոյ :

<sup>5</sup> Սոյն բան գրի է ի սեան միում . Շնորհաւք Սուրբ Հոգւոյն շինեցաւ տունս ապաւէն . ԹՎԻՆ Հայոց ՌՃԻԵ, ի հայրապետութեան սրբազան Տեառն Յակոբայ եւ ի Թագաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանին, յարքեպիսկոպոսութեան երկրիս Տէր Յովհաննիսի :







ՀԱԻՍՏԱԽՈՐՔ ՀԱՅՈՑ ՅԺԷ. ԴԱՐՈՒ

Դարձեալ և ի վերայ կամարի միոյ արձանագրեալ է յիշատակ Ազրի կամ Ազարիայ անուն շինողի յամին 1676.

**Ազդամամբ Սուրբ Հոգւոյն ես ամենամեղս մահտէսի Ազրիս որ եմ տեղեալ Ագուլեաց դաշտէն, եկի ի Ժողովարանն կանանց և ետու շինել զեկեզեցիս չրջապատաւք եւ սուրբ տամբք. Լ որ. տաք էր ? որ էր յամի ծննդեան Փրկչին՝ Թովին ՌՈՀԶ. Եւ աղաչեմ զամենեսեան որ աստ կայք յաղաւթս ի մէջ տաճարիս, յիշել զմեղ եւ ղծնաւզս մեր, զհայրն իմ մահտեսի Եարղուլին, եւ զմայրն իմ Հուփսիմէն, եւ զկենակիցն իմ զՈսկին, եւ զորդիքն իմ զՊետրոսն եւ զԲենիամին.**

Յայտնաբոյն եւս ծանուցանէ զկուսանաց տեղւոյն արձանն գրեալ ի ճակատ դրանն, ի նմին ամի.

**Ի Թովին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՈՀԶին եղեւ շինութիւն եկեղեցւոյս արդեամբ աղախնեաց որք ժողովեալ կայաք աստ յանապատս թուով անձինս ութսուն. զկնի ամաց շինութեան տանս՝ շարժեալ գնացաք ոմանք յԱգուլեաց երկիրն, եւ եկեալ աստէն բազում աշխատութեամբ ի հալալ վաստակոց իւրոց շինեաց (ն՞վ) զեկեզեցիս. Ապրիլ Դին սկիզբն արարեալ սեպտեմբերի Ըին կատարեաց. վասն որոյ ազաչեմ զկնի մեր եկեալ Քերցդ եւ կուսանացդ զերախտիք եղբաւր մերոյ..**

Յաւելու և որդի շինողի տաճարին գրել յետ բազում ամաց ընդ արձանաւ հօրն, յամի 1730.

**Ես անարժսն մահտեսի Բենիամին որ եմ յերկրէն Գողթնեաց (յԱգուլեաց) Դաշտէն, եւ եմ որդի մահտեսի Ազարին, որ ետ շինել տաճարս. եւ ես (ետու) նորոգել սալն յիշատակ հոգւոյ կենակից Մարգարտին, հանգուցեալ եղբայր մահտեսի Պետրոսին, իւր որդւոյն Նիկողայոսին, որդիքն իմ Յովհաննէսին, Մկրտչին, Կարապետին. Թովին Հայոց ՌՃԿԹին. Յիշեցէք Ուստայ Մուրատն յերկրէն Քրդստանու.**

Գտանի և հին արձանագիր ի վերայ խաչվիմի միոյ, թուականաւ 1281 ամի.

**Ես Հոգէդեզս՝ կանգնեցի զԽաչս հաւրն իմոյ Ատէսայ ? Թվ. Հայոց ԶԼ.**

Սակաւ ամօք յառաջ (1673) քան զշինութիւն եկեղեցւոյն կամ զնորոգութիւն, մի ի կուսանացն Երինի կամ Եռինէ անուն՝ ընդօրինակէր աստ « գեռ թերա » վարժ գոլով (ասէ ինքն) զԺամագիրս ատենի և ընծա. յէր Մանդասի կարապետի և եղբոր նորա Տեառն Բաղտասարայ ծերունոյ ի գետնն Յօջաղ. և յետ կարգելոյ ի յիշատակարանին յերկար զանուանս ծանօթիցն, հուսկ ի վերջոյ յիշեցուցանէ, առ զկծանաց ինչ կամ ծաղու, գրան Հարանց վարուց. « վասն միոյ բաժակի անկաւ

» կամարն ի Սկիտէ » — Ի նմին ամի և այլ ոմն կուսան Մարիամ՝ անուն ընդօրինակէր զՈսկիփորիկ գիրս Գր. Տաթեւացւոյ, « ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս » և հրեշտակարնակ սուրբ մենաստանիս Շեկնէր կոչեցե » լոյ, ի մէջ բազմահոյ և խարագնագգեստ կոչանաց » : Յամի 1735 յայց ելեալ վայրացս՝ Աբրահամ կաթողիկոս, եգիտ յաւեր և յամայութեան, « յորում բնակեալ » էին (ասէ, երբեմն) աւելի քան զ'150 կուսանս, իսկ » այժմ միայն երկուսասն ապաշխարողք կային, և նոքա

1 Երբեմնակի փոխանակ փրկչին գրեալ է Իննիկն !  
2 Զաւալեան. Հ-Գի-Գու գրէ :  
3 Առէ յիշատակ ծնողացն, « Մահասի Մարգարին և Անթա-

» ումին, և հանգուցեալ եղբոր Գասբարին, քեռն՝ Սողոմին, և  
» Կորեգոր՝ Տեառն կիրակոսի երկիւղած և աստուածասէր քաւչի,  
» և որդւոյ նորին Սուքիասին » :

» եւս շիրարեալք և յուսահատեալք... յուսադրեցի զաւ  
 » պաշխարողան. և որ ինչ պակասութիւն գոյր եկեղե-  
 » ցւոյն հարկաւոր, թէ գրեանք և ձեռք մի զգեստ, ըս-  
 » կին, խաչ. այլ՝ կատաղունհան՝ վերայ որոյ կանգնէին  
 » այր մարդիկ յորժամ հանդիպին, և Անապատն՝ էր  
 » քակեալ և աւերեալ. ուր և վաղվաղակի ետու գտանել  
 » հիւան մի, փայտ և տախտակ. և տուեալ զգինս նիւ-  
 » թոցն և ճարտարին, հրամայեցի փութով շինել. և ե-  
 » լեալ գնացի. և... զոր ինչ կարացի ճարել ի գիւղն  
 » Տաթեւու յանօթոց եկեղեցւոյ՝ առեալ յղեցի. և վասն  
 » ոչ ունեւոյ խորակ հացի, սակաւ մի ցորեան ի վանիցն  
 » պատուիրեցի տալ անճարացն»:

Ի միջոցի երկոցուն յիշատակացս (Բենիամինի և Աբ-  
 րահամու) հանդիպի գալուստ Դաւթի բէկի. որ յառաջ  
 քան զԴանիւթիւն բերդին իւրոյ ի Հալիձոր, բնակեցաւ ի  
 Ենհեր, զի էր անդ ամրոց. յետ մահուան նորա հանգոյն  
 կուսաստանին Հալիձորոյ՝ երեւի խանգարեալ և սորայս,  
 որպէս և եգիտ կաթողիկոսն Աբրահամ. և նուազեալ չիւ  
 նութեանց և արդեանց մեծի գեղջն, որ ի խաղաղ ժա-  
 մանակի հարկէր վանաց Տաթեւու (ըստ միջակ Յուցակի)  
 28 բուն, մի մարզպան և 1/3, և յայլոց արմտեաց 1/9 շարեք  
 առ մարզպան, և այգիք մեծամեծք: — Ի վաղուց սեփա-  
 կանեալ էր կամ ընծայեալ գիւղս յեկեղեցին Տաթեւոյ,  
 յոր և անդրէն դարձոց Տարսայիճ հայր Ստեփանոսի ե-  
 պիսկոպոսի պատմչի: — Թիւ բնակչաց Ենհերոյ հաշուի  
 այժմ 230 տուն Հայոց:

Ընդ մէջ Ենհերոյ և Հալիձորոյ դժուարուտ անցք են,  
 զոր յետին շարայարիչ պատմութեան եպիսկոպոսացն  
 Սիւնեաց՝ Խոռթի կապ կոչէ, և ասէ հարթեալ ի Մարտի-  
 րոսէ եպիսկոպոսէ վերջնոյ:

Երրորդ գիւղն Խոտ, 120 տամբ Հայոց, սակաւուք՝  
 որպէս ասացաք՝ ի բացեայ կայ ի Ենհերոյ, յելից հիւսի-  
 սոյ, վասն որոյ և երկոցուն սահմանք խառն համարէին  
 և ի հնումն. որպէս տեսաւդ՝ յառաջին կէս ԺԱ դարու  
 (1048), ժառանգութիւն էր Դիւն իշխանի որդւոյ Խաղ-  
 բակայ, որ և պարգեւեաց ընդ նմին « և զԽոտագետոյ

» մեծ այգին... վասն իւր հոգւոյն ի Տէր Յովհաննէս և  
 » ի Ս. Նշանն. և գրէ ինքեան կտակ վճռի. և խնդրէ ամ  
 » յամէ Ե պատարագ յԵղիական պահոց շարաթ օրն. և  
 » շարաշար և մեծամեծ նզովիւք փակէ, ոչ ումեք յա-  
 » փրչտակել զայն հոգեցատուր ի սուրբ եկեղեցւոյն. և  
 » դնէ զՏէր Յովհաննէսի կնիքն վաւերական ի վերայ»:  
 Նոյնպէս և Տարսայիճ մեծ իշխանն Օրբելեան դարձոց  
 վերստին յուխտ Տաթեւոյ « զԽոտն աւան՝ սահմանովք  
 » իւրովք, լերամբ և դաշտիւ, և ի Խոտագետ և ի Խոտ  
 » (գիւր) ձեռատունկ այգին»: Ի վերջին Յուցակս Տա-  
 թեւոյ՝ Խոտայ մասն էր 4400 շահի. և յայլում նշանակին  
 տուրքն, « Տասն բուն և 3 մարզպան ցորեան, և մէկ թի-  
 » լանի լիւր մեղր, 7 մարզպան հուն և ընկուզ», և այլն-  
 Այժմեան վիճակ գիղս և եկեղեցւոյն, որ ոչ աննշան  
 թուի, և կոչի Ս. Աստուածածին, ոչ է ինձ ծանօթ:

Ի Խոտայ և անդր ցիսառնուրդ Չագեձորոյ ի Բարկու-  
 շատ՝ չիք այլ շէն յահեակ ձորեղբրն. իսկ յայմէն՝ երկու  
 մղոնաւ ի ստորեւ (յարեւելից) յափն ձորոյն կայ՝ Եան-  
 վիտի գիւղ. և անդրագոյն առ ճանապարհաւն՝ որ քե-  
 ղելով զձորեղբրն տանի մինչեւ ի գետախառնունս  
 Բարկուշատայ և Հաքարեայ, նշանակին հանգրուանք,  
 որոց վերջին կշռակի ի հարաւոյ բերանոյ Չագեձորոյ Լը-  
 րոյն՝ կոչի Խանապաւ ամրոց. ոչ գիտեմ զայն տեղի նը-  
 շանակիցէ ի կարգի արտորէից Տաթեւոյ յիշեալն Խանա-  
 դաւ: — Սակաւուք հեռի ի Խանապայ, ի Մ. Հր. կայ նման  
 նմին տեղի Մեղրե կոչեցեալ: — Ի հարաւոյ Խոտայ երկու  
 մղոնաւ բացագոյն, և երկուք յելից Տաթեւոյ, ի լանջս լե-  
 րին՝ որ անմրպետէ ընդ գետն Բարկուշատայ և ընդ օժան-  
 դակ նորին Չամի չայ, կայ Քուրդիկ բերգատեղի, քըն-  
 նելի, զի լսեցուցանէ զանուն Քուրդոյ Տեառն Սիւնեաց,  
 որ յելս է դարու. այլ իցէ թերեւս նոյն Քուրդեր տեղի՝  
 որ յիշի ի Յուցակս պտղոց թեմին Տաթեւու, ուր սրանոց  
 մի էր Հայոց, որոյ հասից երկու բաժինն տուեալ լինէր  
 վանացն, մին Քուրդերին: Նոյն թուի և Քուրդչար աւանն՝  
 յոր առաքեալ ի Դաւիթ բէկէ Մխիթար զօրավար, եհար  
 զայն և յաւարի էառ զինչս բնակչաց նորին:

**Բ. ԶԱԳԵԶՈՐ = ԶԱՆԿԵԱԶՈՐ**

39. Զանկեազօր կամ Զանկիզօր աւան, յորոյ անուն  
 դաւառս, յայտ առնէ զՉագեձորն հին, ոչ այնքան մերձա-  
 ձայն հնչմամբն, որքան նշանակաւ Լրոյն, յորմէ՝ հռչա-  
 կաւոր եպիսկոպոսն Յակոբ՝ իբր հազար ամաւ յառաջ,


1. Վերնատունք. ի հասարակաց եկեղեցիս՝ կանանց կայան էին  
 կատաղունիքն. ըսոյց այս զի կանանց (կուսանաց) սեփական եկե-  
 ցի էր, ապա արանց պատշաճէր կատաղունիքն, ուրոյն թերեւս և

ընդ բազմաշխատ և ճարտար ազուգայս՝ երբ հասոցց ա-  
 ռու, մինչեւ ի սահմանս կամ կայուածս Տաթեւոյ ամրո-  
 ցոյն. և զի ասէ ի վճռագրին շունել ի Լրոյն մասն Խոտե-  
 ցեաց, Ենհերեցեաց և Հալեցեաց, յայտ ուրեմն է զի յաւ

անտեսաբար կալց: իսկ նորաւոր ձայնն թուի ինձ խանգարած  
 Catacumenun բառի, որ նշանակէր զվերնատուն կամ զզոտ-  
 շըզամ հին եկեղեցեաց, ուր կային երախայ հուստացեալք:

րեւելից կուսէ սոցին ածէր զլուրն, որպէս թուի ի միջոյ Կարահունջ զեղլ և ձորայն Բարկուշատայ: Վարարակ կոչէր յայնժամ գետակն այն, և գայր ի Չագեձոր լեռնէ: առ աղբերօք նորին, որ արգ անշուշտ յանուն Չանկէզուրի կամ Կորէսի կոչի, բազում լերինք են բարձունք, որք և սահման հատանեն ընդ Մղուկ գաւառ ի Մ: ընդ Ազահէճ ի Հս., և ընդ Հաբանդ ընդ Ել: Ո՛ր յայնցանէ իցէ բնիկ լեռան Չագեձորոյ, ոչ գիտեմ: Թերեւս ոչ հեռագոյնքն և բարձրագոյնք որ ի Հս. Մ. այլ որ իբր երկու մղոնաւ ի Մ. Հր. կայ հնոյն Գորուայ (Կորէս), 7048' բարձր է:

Լուսք զաւանդութիւն պատմչին Սիւնեաց վասն Չագայ նահապետի ի զարմէ Սիսակայ՝ նախ աստ բնակելոյ, և շինողի Հաբանդայ բերդին, որ յետոյ յիւր անուն՝ յորմէ և սահմանքն՝ կոչեցաւ Չագեձորոյ բերդ, և ընդ նշանաւոր բերդորէից Սիւնեաց դասի ի կարգին, թէպէտ ոչ յիշի յետոյ ի պատմութեան, և հաւանելի է լինել ի սահմանս հնոյն Կորէսի, որ կայ առ եզերք ջրոյն յաջմէն իբր երկւք մղոնօք ի Մ. Հս. նորոյ աւանին, ի 4780' բարձու. զի և վասն հնաշէն դաստակերտին ասէ պատմիչն, «Շինեալ ի վերայ գետոյ միոյ, կոչէ յիւր անուն զձորն » Չագեձոր, և գրերդն՝ Չագեձորոյ բերդ »: Ի գեղեցիկ



73. Կորէս = Չանկեագոր.

սահմանս սորին բնակեալ նստէր երբեմն Բաշու Նոյինն մեծ զօրավար Թաթարաց և հրամանատար արեւմտից, ուրանօր ի բանակին արգելեալ պահէր զԴաւիթ Թագաւոր Սուանաց. իսկ սորա փախուցեալ երիւք արամբք, առ ի գերծանել ի ձեռաց հետամտիցն՝ ի բաց էարկ զճանանչաւէտ լուսաւոր կարմիր գոհար ակնն, յորում և մասն մի ի կենարար փայտէն. որ անկեալ ապա ի ձեռս Սմբատայ Օրբելեանց՝ եղբորն Տարսայիճայ՝ եղեւ սմա պատճառք մեծութեան: Եր այսր Սմբատայ ձեռատունկ այգի ի Չագեձոր, զոր վասն հոգւոյ եղբորորդւոյ իւրոյ Բիւրթէլի՝ տղայ հասակաւ սայանելոյ ի պատերազմի՝ ի դաշտին Խազրաց, նուիրեաց եկեղեցոյ<sup>1</sup>, յամի 1261:

Ի Յուցակի Հին գիւղորայից գաւառիս՝ կրկին, Թերեւս և երեք տեղիք են համանուանք, մին Գորու, որ ի տրիցոն (20 բեռն) վկայի մեծագոյն գոլ. միւսն Գորայք կոչի, և տուրքն կիսով չափ նուազ. ճանաչին և այժմ երեք տեղիք նման անուամբ. յորոց մին կոչի Հիւն և է վերոյնշանակեալն, ի ստորոտս լերին ի բարեգիր և անուշոք վայրի. այլ իբրու ոչ ըստ բաւականին անբոյթ՝ լքեալ ի բնակչացն՝ ոչ գիտեմ երբ: Երկրորդն և այժմ գլխաւոր աւան, նա և քաղաքաւան բովանդակ գաւառին, կորէս կամ կորուս կամ Գորիս, որ և Չանկեագոր, երկու մղոնաւ կամ աւելի յարեւելից հարաւոյ կայ առաջնոյն, յերկոսին ափունս կարկաջահոս և սրընթաց Չա-

<sup>1</sup> Յեւ ժիշ գարու և ի սկիզբ յԼին (1699-1710) Թագոս ոռն Հնդկոցն գերեմակ՝ կայր ի վեհեաթիկ. այլ ոչ գիտեմ ստուգիլ ի բերդատեղւոյ անոր ծննդեամբ, եթէ ի գաւառէն:— Ի Յուցակի

Չեռագրաց Էլմիսթնի կարգի և Մաշտոց մի գրեալ ի գիւրն Հուր-Բաշր յերկրին Մեծ-Վոյ. երկուքն եւս անուանք երկրայինք: <sup>2</sup> Նա և տեղոս ասէ ոռն ի բնկացն:

գեձորոյն, ի դժուարագնաց քարուտ և խարխարուտ ձուրավայրի ի 4000' բարձու, չընկալած ընդ բրգաձեւ բարձամբ և խորափոս խոռոչովք, և սուղ աւելի հեռի ի Մ. Հս. երրորդին որ կերտն կոչի: Թէպէտ յատակ տեղւոյն խոժոռատեսիլ է և ոչ դիւրամատոյց, և ի ձորեզերն փորեալ են շատք ի տանց՝ առ ի սյատսպարութիւն ցըրտոյ, այլ տեսարանքն չեն անգեղեայք, և օղև ջուրք պայծառք, բայց ոչ առողջատուն, որպէս զհինն և վերին կարէս: Երբ և յումէ՛ կարգեցաւ սա զխաւար ի շէնս կողմանցս և էսա զկոչուած Զանկեագոր, յաւուրս իշխանութեան Պարսից և Թաթարաց, ոչ ունիմ ասել: — Գլխաւոր մասն աւանին կայ յաշեկէ գետակին. որ է յարեւելից, ունելով միահամուռ 800 տունս Հայոց և 60 սյլազգեաց, շուրջ Թատերաձեւ կարգ ըստ կարգէ վերամբարձեալս՝ նորանշան իմն տեսլեամբ. յաշեկ գետակին տարածանին ազարակքն և կալտին: Այլ արգ հրամանաւ պետութեան հաստատին քարաշէն բնակութիւնք և պաշտօնարանք և եկեղեցի յայտ կողման, և բարգաւաճէ վայրն՝ միջոգր գոլով և անցք արքունի պողոտայի ընդ Շուշի և Նախնաւան. յամաց հետէ հաստատեալ է անկ և դպրոց փոքր: Բնակիչքն գրեթէ առ հասարակ հողագործք են. սակաւաթիւ ունելով կրպակս կարեւորագոյն պիտոյից, զի զայլ կարեւորն ի Շուշեայ տան բերել: — Գերմանացի ոմն ճանապարհագիր յամարանի 1850 ամի օթեկանեալ աստ առ գաւառապետին, որ էր հայկազն ազնուատոհմ Ճիմանկիր Բէկ անուն, գովութեամբ յիշէ զհիւրընկալութիւնն (և զարմացմամբ), զի և յայնպիսում հեռաւոր վայրի պատուեաց զնա, ի վերայ այլոց՝ և Շահաւանի և Բոյոզր գինեգը: Եգիտ առ նմա և Սարսոնիացի մի առաքեալ ի պետութենէն՝ ի զըննութիւն և ի չափումն երկրին: — Եւսմանակակիցք Հայ գաւառապետին յիշին բնիկք աւանիս «Մէլք Եարու» Թիւն Մէլիք Հիւսէնեան, ի մեծ ազգէ. այր բարեպաշտ և քաջասիրտ, յաջողակ յամենայն բանս և ի գործս իւր. նմանապէս եղբայր իւր Ալլահվէրտի Բէկըն: Եկեղեցին կոչի Ս. Հովհաննէս, սագաշէն, յանհարթ և ի կոփածոյ քարանց: — Ընդ մէջ նորոյն և հնոյն կորէսի և մերձագոյն ի սա, ի 4335' բարձր տեղու՞ կայ ուխտատեղի մատուռն փոքրիկ, գերեզման աղկան միոյ, որպէս աւանդեն, որ առ ի գերծանել ի բունարութենէ ամպարշտաց՝ գահավէժ հոսեալ է զանձն ի բարձանց ի Լիձն Սեւա, որ ի դագաթան լեռնակին. և առ ի վրէժ իմն քինու, կարծէ ուամիկն, եթէ մնալով անդէն՝ ըմբռնիցէ զանկեալսն ի նոյն, և ոչ թողցէ գերծանել ելանել ի վեր արտաքս: — Խանիքով Նիկողայոս աւրեւելագէտ Ռուս՝ յայց ել աւանիս յամի 1848 (նոյեմբ. 16-28): — Ի յիշատակարանի աւետարանի միոյ գրելոյ «ի յերկիրս Զագաձոր, ի գեօղս՝ որ կոչի կորէս», յիշին եկեղեցիքն Ս. Գրիգորիս, և Ս. Աստուածածին, յամի 1667: Յետ սակաւ ամսց (1683) Մօսկա երէց Գորիսեցի գրէ յայլում աւետարանի սակաւատող յիշատակարան ինչ ի Տանատափ գեղ զոր է Տանձատափն (224): — Յօտար երկրի՝ (Սիւրիստէ) յիշի Մկրտիչ որդի կոչուուցի Մանուէլի, ընծայող եկեղեցւոյ քաղաքին, յամի 1745-6, աւետարան մի գրեալ ի Սեղով յամի 1628:

Ընդ մէջ կորէսայ ի հարաւոյ կուսէ, և մեծի գետոյն Բարկուշատայ ի Հս. հաւասար փարսախաշափ հեռաւորութեամբ յերկոցուն եւս, կայ Քարափունջ կամ Քարունջ գիւղ, Ս. Հովհաննէս եկեղեցեալ, յաշեկ վարարակի, և յանկեան՝ զոր գործէ ընդ նմին վտակ մի օժանդակ նորուն, (որոյ աղբերակունք են Սոուգ պարագ և Երտի պարագ), յեռագագաթն Իւշ-Թեփէլէր լերին. յորմէ իջեալ և անցեալ ընդ վերոյիշեալ լճակն, իբր յ'18 Չափ բարձանց քարածեօլց վիժեալ Թափի մեծաւ շառաչմամբ, վասն որոյ և Շաւն կոչի. և Թերեւս աստի ծագեալ է անուն գեղին իբրու հնչողի քարանց: Հին Յուցակն ընդ գեօղս Այլախայ, այսինքն արեւելեան մասին Մղկոյ դասէ զգեօղս զայս փարսահունջ. այլ եթէ արդարեւ կայ ի տեղուս ուր նշանակեցաք՝ ըստ ընտիր աշխարհացոցի, յանկագոյն է Հարանդայ. որում ի դէպ գայ և ճանապարհն զոր արար Արաւհամ կաթողիկոս. զի ի Խնձորեակայ երթալով ի Տաթեւէ՛ էանց ընդ գիւղս այս. և «Տեսաք, սսէ, աւեր գիւղ մի, զոր բանադրեալ էին առ» ուսնորդք Տաթեւու, փարահունջ անուն. աղբրեցին» զիս արձակել. որ և զտեղի առեալ՝ ետու զարձակումն, և օրհնութիւն գիւղոյն. յորում գոյր պատուական եւ կեղեցի մի սրբատաշ քարամբք յինեալ: Յայժմուս են ի գեղին 150 տունք Հայոց հողագործոց: — Սակաւուք ի բացեայ առ գետեզերքն են աղբրք Խտտահաւակ կրային ջրոց: Ի մեծի սասանութեան Արարատայ յամին 1840՝ եհաս աւերած և գեղին, յորում և երկու վիհք բացան պատուամբ, մին ի միջավայրի գեղին, որ և ի հերու (1889) վերստին ընդլայնեցաւ, վասն որոյ հրամայեաց պետութիւնն և հեռացոյց անտի զմերձարնակն: Յերի գեղին յայտնեցան ի վերջին ամբս և գետնափոր բնակարանք և խեցեղէն անօթք:

Ոչ նշանակի այլ չէն յեզերս Զագեձորոյ, որ ի ստորեւ փարահունջի իջեալ ի հարաւ՝ ըստ առաջնոյ ուղղութեանն, և մերձեալ ի գետն մեծ՝ ապա խոտորի ընդ արեւելս. և կիւռ ի հանդիպոյ Խանապայ բերդակի Թափի ի նոյն. մերձ ի խառնուրդսն նշանակի Տափաքոռ գիւղ և բերդատեղի, ոչ զիտեմ յանուն Կաթի Բէկի թէ այլում:

100 Մղոնաւ կամ սուղ աւելի բացագոյն յելից Զագեձորոյ ընդունի Բարկուշատ այլ վտակ մի փոքրիկ, յորոյ ձորաբերանի կայ գիւղիկն Մաղանջուկ, Ս. Հովհաննէս եկեղեցեալ, ընդ մէջ փարահունջի ի Հր. և Տափութլուի ի Հս. ոչ յիշի սա ի հնումն, այլ ի նոր Յուցակս Թեմին Տաթեւու, և զուչակի մեծ չէն լինել. զի ի սկիզբն Ժէ դարու գրի ոչ լոկ դեօղ կամ աւան՝ այլ եւ վիճակ մի, «յերկիրս Մաղանջու. խուկ», յորում պարագրի Տանձաւեր գիւղ: — Մղոնաւ եւս ի սմանէ բացագոյն այլ գետակ մեծագոյն քան զայն՝ Թափի ի Բարկուշատ, զոր ի դէպ է կոչել յանուն Խնձորեակայ, այլեւայլ մանր վտակաց խառնուրդ գոլով ընդ ձորակս անձուկս, յորոց ի մուտս կան գեօղք երեք. մին Այի-Ղուշի քենտ կամ Այիղուշի շեն, կիսով փարսախաւ ի Հր. ելից կորէս աւանի կայ, 150 տուն բնակչք. սոցա պտուղք յաթոռն Տաթեւոյ նշանակին 3300 շահի դրամ: — Մղոնաւ ի Հր. նորին՝ Գօրու, որպէս գրի և ի հին Յուցակին, և ի արիցն (20 բեռն) յայտնի ընդարձակ լինել յայնժամ:



Երբորդ գիւղն մեծագոյնն և գլխաւոր յերեսին, և հիւսիսագոյնն դրիւք, մղոնաւ չափ ի Հս. Ել. Ալիղուլի - քէն տի կայ, և երիւք մղոնաք կամ սուղ աւելի յեկեց Կորէսի՝ Խնձորեակ, ոչ մեծ ինչ ըստ հին Յուցակին, զի հարկն 10 բեռն միայն էր, այլ վասն միջակայ դրիցն և անցից պուղոսային՝ չէն է. ունի և եկեղեցի. Յաւուրս պատերազմաց Ղափանեցոց յիշի և բերք նորին մեծ, ուր յետ մահուան Դաւթի բէկի բնակեցաւ յաջորդ նորա Միխրար սպարապետ. իսկ բնակիչք տեղոյն ստիպէին զնա գնալ յիւր սեփական ամրոցն, և ի շանսալ նորա, « անդ յիւր » ըոցն հարեալ թօփով մեռանէր յամի Տեառն 1730, « յետ երկուց ամաց իջեւելոյն »: Զինի ամաց հնգից Աւրահամ կաթողիկոս որ էանց ընդ այն ի գալն ի Մուղանայ ի Նախնաւան, յետ անցանելոյ ընդ Չորգիչ, Պնաձոր և « Ղուրջիպկի ոպան՝ որ է Սիսիանցի », զրէ կարեւոր գիտելիս զԽնձորեակայ. « Է ի մէջ քարաժեռ լեռանց մեծամեծաց, որ ունի անբաւ բարձրութիւն. » նեղ և անձուկ ճանապարհաւ <sup>1</sup> իջաք ի մէջ ձորուն, « վասն ահի Օսմանեանց և Ղարաչուրու Քրդերոյն. և » ի բարձրաբերձ տեղիս յայնոյս և յայնկոյս դէմ յանձորման միմեանց՝ փորեալ ապառաժ վէմն քարայր, որ են մաղարայք, իւրաքանչիւր ոք վասն իւրեանց տուն բնակութեան շինեալ բնակէին. և այն էր զարմանք, որ կաշփոկովք ելանէին և իջանէին կանայք՝ զստնդեայ տղայս կապեալ ի վերայ ողին իւրեանց, նոյնպէս և զսափորն ջրոյ և հարկաւոր իրաց. այնպէս փոկով ելանէին ի վեր և մտանէին ի բարձրագոյն որս վիմաց, և քարէին զփոկէ առասանն ի վեր. մարդ ոչ կարէր ելանել. իսկ տունք նոցա ի գիւղքն՝ էին քանդեալք ի զարացն Օսմանեաց և ի յաւազակ Քրդաց Ղարաչուրուց: Նախ գայր 3000 տուն ի Խնձորեակ գիւղս այս, բայց այժմ սակաւացեալք են. զի բազումք սպանեալք էին ի Թուրքաց. քանզի փաշայք զօրք իւրեանց քանիցս անգամ եկեալ էին ի վերայ սոցա, և ոչ կարացեալ մուտս առնել, այլ պատերազմեալ ընդ միմեանս՝ յետս դարձեալ էին ամթով. բայց զմի կողմն որ ոչ ունէին յանդիման ինքեանց քարայր՝ որ սգնիցէին իրերաց, վասն որոյ զայն կողմն աւերեալ էին. զկանայս, զօրդիս և զարս ի սուր մաշեալ. որք մնացեալ էին կէս մի և կամ երկից մասանց մի մասն զերծեալք՝ նոքա ունէին զքարայրս իւրեանց յանդիման միմեանց, որք բռնփեկով կարացին զմիմեանս պահել ի թշնամեաց: Ի գիւղս այս պատուական շատ խաչի խաչիչայ գործէին յառաջ, բայց այժմ նուազեալք են յոյժ, և հագիւ թէ ոմանք պառաւունք գտանին գործողք: Եւ աստ գիւղացիք զմեզ ճանապարհորդելով ի Թանձրութենէ ձեանն, և ինքեանք զինուք և թփանկովք հասուցին զմեզ ի Մեծ Անապատն Տաթեւու », անցեալք ընդ Քարահունջ: Վկայի և ի բանից կաթողիկոսին շուրջ զսահմանքն բնակել կամ բանակել Ղառաօսոյն տոհմի Քրդաց կամ Թուրքաց, զորս եւ հարն Դաւթի յԵրեքգագաթնեան լեռնավայրս, և որք յետոյ գումարեցան ընդ այլոց այլազգեաց յաշարհախումբ բանակին ի պաշարել զԲերդն Դաւթի, և վանեցան ի քալ


ջացն Հայոց: Սոցա Թուր հաստատեալ կամ յանուն սոցին Ալիղուլիէնն ի գլուխ ձորագետոյս, որպէս և ձմեռոց նոցին Ալիղուլի - դշտիս ի սպառուած ջրոյն կամ առ խառնորդքն ընդ գետոյն Ռարկուշատայ. յորոց յեկեց կուսէ սակաւուք ի բացէ կայ կամուրջ մի Հիւսեիկն - քօփոհիս կոչեցեալ, — Զարդիս՝ Խնձորեակ կոչի և Խընձորիստան, և ունի 610 երդս Հայոց. եկեղեցիս երկուս, յորոց մին յանուն Ս. Հովհաննիսայ: Ի ժամանակս յետինս երեւելի էր ի գեղջն՝ « Մէլիք Ֆարամազ Դասպաս քան, այր երկիւղած և բարեպաշտ, խոնարհամիտ և խորհրդակոն ի կառավարութեան », ըստ շարայարողի Պատմութեան Սիւնեաց:

Ի Հս. Խնձորեակի և Կորէսի լեռնավայրացն Ղազի կիչիկն և Չալպուռուն՝ իջանէ գետակ մի, և խաղալով ընդ արեւելս Թափի ի մեծ գետն Հագարու: Ի գլուխ ձորոյն՝ ի ստորոտս Չալպուռունի կայ Դաշքեւտ, այն է Քարաշէն ըստ մերազգեաց, որոց են 80 տունք ի ամին. ոչ յիշի ի հին Յուցակին, իսկ ի նորումն՝ 3000 շահի հարկ տայր յաթոռն Տաթեւու: Առ սովաւ ի Հր. կուսէ բղիտն ծծմբային և թթուահամ ջուրք, զոր այլազգիք կօշն Ղօրոս սու: — Ի ստորին կողմանս գետաձորոյն զեզերք նորին երկու գետք են Ճիճիկի կոչեցեալք, մին յալմէ՝ միւսն յահեկէ, կիսով փարսախաւ հեռիք յիրերաց: Յանուն սոցա մարթ է կոչել զգետակն, և զուզութիւն նոցա ներէ կարծել թէ իցեն մի յերկուց զուգից գիւղուրայից Հարանդայ, որք են կարբինք վերին և Ներքին, կամ Մակաղոց և Միւս Մակաղոց: Առ ստորնօղն՝ որ է ի ձախակողմն ձորոյն և մերձագոյն ի Հագարի՝ իբրու փարսախաւ կամ եւս նուազ, վտակ մի փոքրիկ անկանի ի գետակն, յորոյ ձորեզերն կայ կուռնի ծոր կամ կուռնի ծոր գիւղ մեծ, 250 տամբք, բարեբեր սահմանաք. (որոյ անուամբ անշուշտ և վտակն), և որպէս Թուր մեծ է, և ունի եկեղեցի. բայց ոչ ի պատմութեան յիշի և ոչ ի հին Յուցակին, այլ ի նորումն, հարկելով Տաթեւու 4000 շահի: Եկեղեցին կոչի Ս. Յովհաննիս: — Անգղիացի գնդապետն Միկնէն, որ ագաւ աստ երբմն (ի փերթ. 1830) բարեբիկ և պարզաշէն եգիտ զտնկունս բնակչացն, սրոց որմք էին ձողք երկու ոտնաչափ հեռիք յիրերաց, չընապատեալ Թաղեք, այսպէս և ձեղունն՝ ուսնի ձողողք ծածկեալ: Մերձ ի կուռնիծոր ի Հս. Մ. ամբառնայ սրակատար լեռնակն Գեօմիտ - քեփե, 4180՝:

Ընդ մէջ Ճիճիկեայ գետակիս և կուռնիծորոյ, և ընդ մէջ Ագ օղան գետոյ՝ հզօր օժանդակի Հագարու, նշանակի և գետակ մի փոքրիկ, սր առանձինն անկանի ի գետս այս մեծ, ի նախայիջեալ լեռնակողմանց իջանելով յարեւմտից ընդ Ել., յորոյ գլուխ ձորակին կայ Տեղ գիւղ հին և մեծ, իբր 480 տամբք Հայոց, և Ս. Գեորգ եկեղեցեաւ և ագարակաք: Ի հին Յուցակին երկու տեղիք են գրեթէ համանունք, մին Տեղ, միւս Տեղի, երկոցուն եւս հարկ 12 բեռն. նշանակեալս աստ կարծեմ առաջինն է, երեք մղոնաւ կամ աւելի ի Հս. արեւմտից կուռնիծորոյ: Տեղ՝ զաստակերտ է Շահանդիսոյ գլխոյի, յետ մահուան առն իւրոյ Սմբատայ՝ առաջին թագաւո-

<sup>1</sup> Թերեւս այս անուակք են խնջօրի կողմ յիշեալ ի Յուցակի հասից Տաթեւու, որոյ էր և ագարակ « մէկ բեռն տեղի »:

րի Սիւնեաց, վասն հոգւոյ սորին նուիրեալ յաթօն Տաթեւոյ, յամի 998, գրելով վճիռ. « Յանուն Աստուծոյ. » կամ եղև ինձ Շահանդխտոյ դատեր Սեւագայի, տալ » ի Համբանդ գաւառի զանուանեալ շէնդ Տեղ, իւր ամե » նայն բոլոր սահմանովն, լերամբ եւ դաշտիւ եւ այլ մը » տիւք. զոր իմ թագաւորին Սմբատայ ինձ տուեալ էր, » եւ իմ ի կորոյ շէն դրեալ, եւ ես յետ ելից երանելի » թագաւորին իմոյ յաստեացս, իւր հոգւոյն ի Տաթեւ ի » սուրբ մայրաքաղաքն և ի Ս. Նշանն ետու, ի ձեռն » Տեառն Յակոբայ Սիւնեաց եպիսկոպոսի. Եւ յայսմէն » տէ անիշխան հմբ ես և իմ որդիքս Վասակ եւ Սեւադա. » զի ի ձեռն Աստուծոյ եմ տուեալ և ի Ս. Նշանս. եւ » պարտական են յամենայն տարի իմ թագաւորի հո » զւոյն զՎարդապետին քառասունսն պատարագ առնել.



74. Դռան եկեղեցւոյ լոր գեղ \* : — Տես յէջ 231 .

» եւ յամենայն օր զԵրանի ում թողութիւն սաղմոսն ա » սել ի նոյն քառասունսն... Եւ վասն առաւել հաստա » տութեան գրեցի իմ ձեռագրս զայս վճիռս եւ Վասակ » որդի Սմբատայ թագաւորի, հրամանաւ իմ մարտ. » Աստուած շնորհաւոր արասցէ. ի Թուխ Հայւց Նիշի » եւ կնքեցաւ մերով մատանեաւս : — † Այս պատուէր » հրամանի է իմ Յակոբայ (եպիսկոպոսի) ի տունը Սիւ » նեաց առ նախագահ աթոռք եւ լուսաճեմ տաճարդ » Տաթեւոյ, յոր յոյս եղ երանելի թագաւորն մեր. զի » պարտիք անխափան կատարել զեղեալ յիշատակս եւ » քառասունս նորա որ վասն շինոյն Տեղայ. որում եւ

\* Ձ. բնանագրութիւնն որ նշմարի ի կամարամիջի դրանդւոյն՝ երկուստեք խաչքանդակին, այսչափ ինչ կարացի ընթեռնուել ի լուսատիպ պատկերիք. « Շինեցաւ եկեղեցիս ի հասարակ » տրից իւրեանց Ագ(ու)լցի մահդասի Պա.... որդի

» մեք վկայեալ մերով ձեռագրովս՝ կապեցաք անլուծա » նելի կապանք զհակառակողսն այսմ, եւ կնքեցաք » մերով մատանեաւս, ի կամս Աստուծոյ : — Յաջորդն » Յակոբայ Գրիգոր եպիսկոպոս եւս հաստատեալ է ըզ » վերոյգրեալսն, այսպէս գրելով. « Շնորհիւն Աստուծոյ. » եւ ես Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս հաստատեցի զայս » վճիռ որ վասն Տեղոյ շինոյն էր տուեալ սուրբ թագաւ » հւոյն Շահանդխտոյ՝ ի սուրբ եկեղեցիս եւ որդւոց իւ » րոց, յազազս խաղաղարար եւ վայելուչ թագաւորին » իւրեանց Սմբատայ. զի մի ոք իխնացէ խախտել ի » սուրբ աթոռոյս, եւ որ հակառակի », և այլն : — Յըս » կիզրն դարուս գլխաւոր բնակչաց Տեղոյ էր Կաւիթ Բէկ » ոմն ազնուագգի և խոհեմամիտ վկայեալ՝ ի վերջին շարա » գրողէ պատմութեան Սիւնեաց : — Յերի բերանոյ ա » ուին Տեղոյ արկեալ կայ կամուրջ քարաշէն հաստակա » ոյց և զեղեցիկ ի վերայ Հագարու գետոյ և կոչի Խան » քեօփրիս : Գերմանացի ոմն որ անցեալ էր ընդ Տեղ յամի » 1850, զտէր զեղջն կոչէ Էսաստ Բէկ Թաթար, որոյ էին » անդ կոյտք ընտիր ձիոց Գարապաղի, և մեծ մասն ի բնակ » չացն մահմետական էր. յիչէ նա և զքաղմութիւ վրա » նարնական ի բարձրաւանդակի անդ : Իսկ հերու (1890) » յամսեան մայիսի էանց ընդ Տեղ՝ մարդաքնինն Շանդր, » հանդերձ կնուան. սա կանխեալ ի տեղագրել, անշուք » և անդալար այլ և աղտեղի տսէ զգիւղն, իր 480 հողա » փոր տամբք ի լանջս բլրի, յորմէ հեռի են արտորայքն և » ծառատունկք. բնակիչքն, որպէս երեւեցուցանէ, անշն » տեք և անծանօթք նորոց զիւտից, հողագործք և անաս » նադարմանք, խուսափէին (մանաւանդ կանայք) ի տալոյ » լուսագրել զանձինս և ի շափելոյ : Եկեղեցի գեղջն փոքր » և բարձր՝ կամարակապ, հնակարկատ վիմբ, յորս գտն » և արձանք փափագելիք յընդօրինակութիւն, կոչի Ս. » Գեորգ, և պատուի յախտաւորաց. առ երի կայ և ընդ » արձակ գերեզմանոցն, ոչ սակաւ խաչիխմօք և խոյածե » գերեզմանօք : Գրեաթէ յարակից է Տեղոյ յարեւմտից » նորին Աղաւիս գեօղ փոքր, որ ոչ յիշի ի հին Յուցակին. » այլ ի յետնումն :

Յետին գիւղ Հարանդայ ի հիւսիսակողմն՝ ի խաղս վը » տակաց Ագօղլան գետոյ, չորիւք մղոնք ի Հս. Մ. Տեղոյ, » ի գեղեցիկ ձորակի՝ է հինն Խոնաճախ, այժմս Խոնաճախ » ձայնեալ, որ հարկէր Աթոռոյն 20 բեռն, յորմէ զուլակի » մեծ ինել. ունի և եկեղեցի, այլ որպէսն ոչ է ինձ յայտ » բնակիչքն տունք 180, երկրագործք, հովիւք, այլ և վա » ճառականք և արուեստագէտք են բարեկեցիկք : Քառոր » դաւ ժամու ի Հս. Մ. սորա կայ Պայանդոռ դեօղ, և » միւս եւս համանուն նմին ի վերոյ, կրկին նոյնչափ հեռի » ի Խոնաճախէ, երկրքին եւս առ վտակաւ որ թափի յԱգ » օղլան. յորոց Մ. կուտէ ամբառնայ երկայնանիստ լեռն » մի (Պէգօպլի ? տաղ, 7930'), որ և յայնմ կողմանէ սահ » ման հատանէ ընդ Աղաւէճք և ընդ Հարանդ գաւառս :

» Խ(ո)ճայ Պօղոսի եւ որդոցն իւր Յուանգուլլին » եւ միւս հանգուց(եալ) որդւոց Ըստեփանոսն եւ » կրարքն ? Յարութիւն. Յիշեցէք ի Քրիստոս Աս » տուած » :



մայագոյն: Բայց թէպէտ և այսպէս իցէ՝ հարկ է թէ ընդ անհեղեղ կերպարանացն՝ և ահեղս այլ և հաճոյականս ունիցի երեւոյթս, և յայժ փափագելի ի քննութիւն բնական նիւթոցն և բերոց: Ի բովանդակ սուհմանս գաւառին որ ի հիւսիսոյ և յարեւելից, ոչ սակաւ բարձր միաշար գօտիք են լերանց, գուն ուրեք ունելով կապանս անցից և այն դժուարինս. իսկ ի մէջ երկրին՝ թէպէտ և ոչ սակաւ լերինք, այլ ոչ շատ բարձունք. և կարծեմ սակաւք ոմանք անցանիցնն ըստ 7000՝ բարձրութեան, և շատք այնք իցնն որ իրրեւ 6000՝ ունիցին. որպէս տեսցին և ի կարգի տեղագրութեանս:

102. Որպէս բնութիւն երկրին այժմ, նոյն և պատմական դէպք գաւառիս անծանօթք են, և ոչ է յայտ պատճառ անուանն Աղահէճք կամ Աղահէջ, որ և յոգնաբար զրի. և գուշակի ոչ որպէս զխաղս կամ զՄղուկ՝ յանուն հին նահապետաց Հայկազնեայց և Սիսակեանց կոչեցեալ, այլ այլոյ իրիւք աղագաւ. և զի գետ իւր Աղանոյ՝ զրի ևս Աղունից, նոյն և ինքն գաւառն Աղահէճք, կարծիս տայ աղային իմն բնութեան. եթէ ոչ և հաճոյ ու մեք թուիցի ասել յԱղու անուանէ կարծեցեալ նախահօրն Աղունից, որոյ երկիր դրացի է սորա: Որպէս նախկին և հին անուան գաւառիս անծանօթ է ծագումն, նոյն և երկրորդի անուանն՝ ՔԱՇԱՅԱՂՔ, որպէս կոչէր ասէ առ իւրեւ՝ պատմիչն Սիւնեաց, և ի յետին դարս ազաւաղեալ՝ Քշտաղք. որոյ զուգակցութիւն կամ նմանութիւն ընդ Քաշունեաց՝ ակնբերու կայ, և այդու յետին օրինակաւ կոչէր երկրորդաբար արեւելեանն Բաղք: Միև եւս անուն յաւելու պատմիչն զգաւառիս Աղահէճոյ, այն է ԽՈՃՈՐԱՐԵՐԳ. այլ ի դէպ է ասել թէ ոչ բովանդակ գաւառն՝ այլ մասն մի նորին այսպէս անուանէր և մասն մի Քաշաթաղք, զուցէ ըստ երից առաջից գետոյն՝ երեցուն եւս ձորահովտացն որոշեալ միով միով անուամբայսինքն բնիկ Ազարայ գետահովտին՝ Աղահէճ, Հոյանցայ՝ Քաշաթաղք, Ագ-օղլանայ՝ Խոժոռաբերդ. զի և ի նոյն հովիտս գտանին տեղիք ինչ նշանակեալք ի յետին դարս՝ յանուն գաւառաց կամ վիճակաց Քշտաղից և Խոժոռաբերդի, որպէս տեսցի յառաջիկայդ: Իշխան կամ տէր Աղահէճոյ, որպէս այլոց գաւառաց՝ և ոչ մի յիշի, գրեաթէ և ոչ յէպք ինչ քաղաքականք, յորմէ կասկածելի է թէ վազ ուրեմն օտարացեալ էր սա ի բնիկ տեղանց Սիւնեաց, և անկեալ ընդ Աղունից իշխանութեամբ, և կամ մանաւանդ ընդ բռնաբարութեամբ այլազգեաց, որք խափոնեցին զազգային յիշատակս և ըզվայիս վայելչագեղ ձորահովտացն. յորոց յիշի միայն արշաւանք արարացի ոստիկանի որդւոյ Վլթայ փետզոս կոչեցելոյ, յամի 847. որոյ եկեալ ի կողմանց Գանձակայ « յաշխարհն Սիւնեաց, գերի վարեալ զբազմացն սուհմա » նրս, գայ իջանէ յԱղահէճ գաւառ, յաւան մի Արքու. « նազետ կոչեցեալ. իսկոյն հրամայէ այրել զհեղեղեցին » որ Սրբոյն Գրիգորիկայ էր անուանդրեալ. և յայնժամ « զօրութիւն աստուածային հասեալ, հեծեալ մի ի ձիոյն » ճերմակ՝ ճեպով ելանէ յեկեղեցւոյն արտաքս, ակն յայտ « նի ամենեցուն ընթացեալ ի բանակն, շիոթեալ զոյրն » անօրէն հանդերձ զօրքն իւրովք ի փախուստ դարձու. « ցանէր ընդ սարն՝ որ կոչէր Եղլեր-խոս. և անդ հողմն

» դժնդակ մրկեալ չըլապատէ զնոսս. և միայն ի ձի ապաստան փախուցեալք զերծան. և պաղանաւորքն? առ » և ապուրք՝ լերանց վերայ կորեան, և գերեալքն մնա. » ցին խաղաղութեամբ, փառս տալով Աստուծոյ »: Այս ըստ կաղանկատուացոյն (Գ. Ի): — Յօր կողմն գաւառին էր աւանն Արքունագետ, ոչ ունիմ ասել, զի ոչ նշանակի ի հին Յուցակին, և ոչ սարն Եղլեր-խոս, այլ յայտ է թէ յեզերս սահմանաց գաւառին էր սա, ի կողմն Արցախոյ:

Իսկ գեղք գասակարգեալք ի Յուցակի անդ հարկատուաց եկեղեցւոյն Սիւնեաց՝ են 43, և այսոքիկ.

Աւժէն	10
Անէժ	12
Տանձուս	7
Հացեաց աղբիւր	12
Քեղածոր	40
Հակ	15
Արտանգետ	12
Մեղի	12
Ականք	8
Արուական	6
Մշնի	6
Քաշաթաղք	6
Վերին Շէն	6
Չիասար	6
Մատրակերտ	6
Մնի	6
Հունչաք	12
Մարգք	10
Պոխոցոխ	10
Սուրբ Գէորգ	8
Լսորք	8
Ագարակու գետ	10
Շապոկի	7
Կարկասան	6
Պախախոնիք	12
Մոշնք	10
Որբոցոյ քար	8
Արահուծ	6
Միծառնու վանք	10
Կատոհորինք	12
Հայելեակ	6
Մախուլն	10
Խրու	8
Մորացիք	10
Խախիք	12
Վժնաբերդ	12
Հայրի	8
Անուշաւան	12
Սղտառ	6
Շամրթայ	8
Արքոյ	6
Վասակակերտ	12
Ասորոկ	10


Թաւեցուք ի սոսս և զյիշեալն ի յետին ցուցակս ի Քաշաթաղ և ի Խոժոռաբերդ.



Սթունիք  
Աղուէսառագի  
Եզնագուներ  
Փուլ  
Սպիտակաջուր  
Քարագլուխ  
Շրուական  
Խոզնավար  
Հալաքս .

և Թուրքանուանք Դաշու, Ագձաքենու, Երայրուգտամ, Դուշձի, գուցէ և այլք սակաւք ոմանք :

103. Սկիզբն արասցուք տեղագրութեանս յարեւմտից կուսէ, որ ժանսթացաւ մեզ նախագրեալ գաւառօք Մըղկայ և Հարանդայ, և ի հովտէ Ագողլան գետոյ, կամ ի Խոտոռարերդ, վիճակէ, (համարելով զսա յայսմ հովտի) - բայց գեղեանն որ ի նմա գրին՝ մասամբ պատշաճէին Հարանդայ: Գլուխ ձորահովտին (զորոյ ոչ գիտեմ հին անուն, այլ ախորժեմ անուանել Միծեռնալանուց գետ կամ Խոտոռարերդոյ) միջասահման է երկց գաւառացդ, Մղկայ, Աղահէճայ և Հարանդայ, և անստոյգ իմն երկիր կամ ամայի, որպէս նշանակեցաք ի տեղագրութեան առաջնոյ գաւառին (Մղկայ), և ոչ է յայտ ոյր յերեցուն



75. Պնայ վանք?

վիճակէր, կամ երկոցուն մանուանդ առաջնոցն . զի թէ պէտ ըստ չուրցն հաւաքման (եթէ ստոյգ իցէ տեղացոյց տախտակն) պատշաճի Աղահէճոյ, այլ մի ի վտակացն աղբերականց կոչի Երեմէս, որ յիւնցուցանէ զԵրեմի գետը Մղկայ, առ կուսն իակ կալով նորին սահմանաց, և անլըրպետեալ կարմիր լերամբք, որք կոչին Գգրչոտազ մեծ, Գգրչոտազ տերեսի (Ձոր կարմիր կապանի) 10370՝ բարձր, և Գգրչ քեփէ (կարմիր սար) 9700՝ . յերկուց յետնուցըս միջոյ խաղայ վտակն այն ընդ արեւելս կոյս, և ընկալեալ յաջմէ և յահեկէ առուս, միաձոյլ ձեւանայ գետ առ Միւնքենու (?) գիւղիւ այլագգեաց, որ հաւանօրէն է Մննի գիւղն Աղահէճոյ: - Ի հիւսիսոյ սորին իրրեւ մղտնաւ ի բացեայ սար մի է չափեալ յուսումնականաց 5900՝

բարձր . որպէս և ի Հր. բացազոյն միւս, 6150՝ : Ի ստորոտս սորա առ վտակի միոյ որ յաջմէ գետոյն՝ Ապասուխիբ (?) գիւղ, ալաւաղեսալ անուն, բայց հնութեան և հայութեան վկայէ նշան եկեղեցոյ հետաքննելի: Ի Հր. սորա եւս նշանակի լեռնասար 6300՝ բարձր. և իրր երկու միւսնաւ յԵլ. Հս. գեղնառ գետեղբերն՝ յաջմէն՝ կայ հին գիւղն Հայրի, Հէրիկ գրեալ, այժմ այլագգեաց բնակութիւն, որպէս է գուշակել ի նշանակէ մզկիթի. և յահեկէ գետոյն՝ իրրու մասն մի նորին կամ թաղ՝ Պիւնոյ՝ առ որովք բարձրութիւն գետոյն նշանակի 4807՝ : Ոչ գիտեմ թէ առ սովաւ իցէ Պնայ վանքն, որոյ է լուսագրեալ պատկերս (Թիւ 75): - Մղոնաւ ի ստորեւի Հր. Ել. Հայրեայ կայ Պոզտու բերդագիւղ, յահեկէ գետոյն: Ի



հիւսիսայ սոցա ամայի երկիր մի է ի միջի վտակաց՝ Գա-  
րա— գլխագ կոչեցեալ՝ յանուն մեծի գեղը, 8 կամ 600  
տուն բնակչաք, որ փարսախաւ ի Հս. կայ Մինքէնտայ,  
և թուի սեփականութիւն տոհմի միոյ Թուրքաց. են ան-  
դանոր և այլ գեղաք նոցին Գամատի Գանուն ի 3970՝ բար-  
ձու, և Չրադդու— Եկից Պողոտի նշանակի փոքրագոյն  
բերդ Գրքչը անուն, և ի Հս. նոցին Ըղղր քեփէ լեառն—  
Երկու մղոնաւ կամ աւելի յՅլ. Հս. փոքու բերդի առ-  
գետեզերքն յահեկէն (ի Հս.) կայ մեծ գիւղ այլազգեաց  
Գարիպարագ. յեկից սորա կիսով փարսախաւ հեռի՝ Զէչ-  
վա գիւղ այլազգեաց և սակաւուց Հայոց, ընդ բնաւ 50  
տանց, ի 1360 Չ. բարձու, ի ստորոտս դեղնորակ փայլուն  
կաւաքար բրոց, չուրջ ունելով պուրակս կաղնեաց  
և մեծամեծ ընկուզենիս և այլ պէսպէս ծառս և ծաղ-  
կունս վայրիս. յորոց յիշէ Ռատտէ (որ ագաւ ի գեղ-  
ըն ի 11 յունիսի, 1890), Էրդեսպակ (Salvia glutinosa),  
Ադամակտոց (Geranium), \*Հասկագրուս (Cephalantho-  
ra) կարմիր, Պատառտուկ (Sanicula europea, Չարոտ  
(Crathegus), վարդարաշի (Xylosteum), և այլն. և ի հա-  
ւուց՝ Անծեղ և Հասիալ (Columbus Palumbus և Columb.  
oenas)։ ի Հր. Զէչվայ յանկեան գետեզերն և վտակի փո-  
քու՝ կայ Սուրդան գիւղ. Յաւալ խաղայով ընդ գետոյն  
ընդ Հր. Ել. յայտ կողմանէ, յահեկէն՝ նշանակին Ճե-  
ղագոր գեղ և բերդ. միթէ Զիսասը հին Յուցակին.  
Պաշտոնը բերդիկ, Գորդա բերդիկ, Մեյրիպէկ բերդիկ, և  
մերձ ի կցուած գետոյն ընդ Ագարայ՝ Սիւեքիչ. գրեա-  
թէ կից նմին Զասպիս, որ իցէ արդեօք հինն Շապուկի։  
Առ սովաւ է օթեվան կամ կայարան հասարակաց ճանա-  
պարհի, յ՝800 Չ. բարձու. նշանաւոր է ի գեղին մեծ սօսի  
մի, և պողաբեր ծառք, ընկուզենիք, թթենիք. ի դաշտա-  
յին բուսոց ի սահմանս յայտոսիկ հաւաքեաց Ռատտէ ի  
ակիզքն յունիս ամայ (1890) 60 տեակս. ընդ որս յիշէ  
երկու տեակս վայրի վարդից և երկուս գիւղի ծառոց, եր-  
կու \*Պարոտրակս կամ Փինչու (Spiræa crenata և Spiræa  
filipendula). յառապարս և յամայիս՝ Օրոն (Genista), և  
Մեխակ, Մեկուն կովկասեան, Չանգածաղիկ (Campanu-  
la), վայրի Սատա (Eremostachys), Երիւնակ, Երկնաչեղոն,  
Փղակնգառ, Խաղիքան, Իշառոտոյտ, \*Պակուկ (Coro-  
nilla), Երգիւն, և այլն։— Իսկ յաջմէ գետոյն՝ յետ վե-  
րայիչելոցն՝ երկու միայն տեղիք նշանակին, յորոց մին  
է Անիլար. մերձ ի սա առ գետեզերքն՝ հանդէպ Սուլ-  
դանայ էր Միծառնավանքն, նշանակեալ ի հին Յուցա-  
կին 10 բեռն հարկաւ. իսկ այժմ, որպէս երեւի, նշա-  
նակաւ մզկիթի՝ տանկարնակ եղեալ։ Ընդ անուանի վա-  
նորայս Սիւնեաց կարգէ Օրբելեանն զՄիծառնավանս,  
որ կոչի և Միծառնավանք. յիշի և վանահայր նորին Սոե-  
փանոս ի կէս Թ դարու (844). այլ ոչ այլ ինչ ի յիշա-  
տակս ուրեք գտի ծանօթութիւն զամանէ, բայց միայն  
զՎանանդաւուցն Թովմայի, որ ընդ ուխտատեղիսն կար-  
գէ և զսա.

« Անտի ի վանքն մեծ անցեալ  
» Ուր Միծեռան էր կոչեցեալ ».  
յայտ ուրեմն զի և ի կէս Ժ. դարու շէն կամ ծանօթ

էր տեղին. և ընդ հարկատուս Տաթեւայ Թեմին յիշի ի  
յետին ցուցակս նորին, և ի միումն հուսկ տասնեակ վա-  
նորայից Թեմին կարգի « Միծառնեկու սուրբ վանքն »։  
Ի ԺԵ կամ ԺԶ դարու յիշատակի Միծառնեցի ոմն Աւ-  
տուածատուտ, այլ ոչ է յայտ ի կողմանց սուտի Սիւ-  
նեաց իցէ, եթէ ի Տարօնոյ կամ այլուստ։ Զարդիս ուխ-  
տատեղի է Հայոց, ի սոսնի Համարձման և Խաչի. որք  
և աւանդեն ի ժամանակի յինութեանն հարիւրաւոր մա-  
կաց ուտել ճաշ ի միոյ կատայէ, յոր անկեալ երբեմն  
օձի՝ ագաւ մի թեւածեալ զնովաւ ազդէ զվանգն,  
զոր ոչ իմացեալ նոցա՝ սպանանեն զհաւն, և ապա իրա-  
զեկ լիալ, պատեալ թաղեն զգէշն պատուով, կոչելով  
ցարդ զտեղին՝ Ագաւի Գերեզման, և պատկեր օձի կա-  
խեն յեկեղեցւոյն։ Իսկ զանուն վանացն ասեն ի սակս  
նշխարի Սրբոյ ուրումն ճկոյթ մատին՝ զոր ժժեռն կոչն։  
Ի վերջ կոչս 1890 ամի վանապահ կարգեցաւ Մեչգոն Ե-  
րէց Տերգրիգորեանց։— Երկրայութեամբ յիշեցից՝ ոչ կա-  
րելով հաւաստել զտեղին, ասաւ եթէ կողմանց Տարօնոյ  
Միծառնավանքն իցէ, զկոչեցեալն Միծառնաքար Անա-  
պատ, ի հին աղօթամատենի Սարկաւագ վարդապետի  
(գրեւոյ յամի 1314), որոյ գրողն փրիստափոքր ասէ ըզ-  
տեղւոյն, « Ի գաւառս Առաւնի ? Պաղին, ի որբափայլ  
» լերինս Հայր Մակար կոչելոյ, յԱնապատս դժուարաւ.  
» յարկ Միծառնաքար կոչելոյ, ի ծերպս և ի քարանձաւս  
» վիմաց, առ ոտն Սրբոց Չորից Խորանաց »։ Դիք  
կամ բնութիւն տեղւոյն ի ճակ գայ կողմանցս Սիւ-  
նեաց, անունն Պաղին՝ Պաղնատուն գաւառի Դ Հայոց։  
Եկից կուտէ Միծեռնավանքն՝ բազում վտակք ի սաւ-  
մանաց Մղկոյ և Հաբանդայ եկեալք խառնին ի գիւտն.  
զոր ի պատիւ վանացս ասացի ախորժել կոչել յիւր ա-  
նուն, այլ զի սակաւ գեղեանն նշանակեալ ի համար  
Հաբանդայ գաւառի կարգեալք էին ի հին Յուցակին՝  
անդէն և յիշեալ եմք. որպիսիք են երկուքն Պայիկոտը.  
Խոնածախ, և այլն. բայց վերագոյն և արեւմտագոյն և  
մերձագոյն ի Միծեռնավանս է խոզնավար կամ խազ-  
նավար ըստ այժմուս, գիւղ. որ թէպէտ ոչ է յիշեալ ի  
հին Յուցակին, այլ ի յետինն նշանակի իբր վիճակեալ  
Խոժոռաբերդի. և ի յիշատակարանի աւետարանի զը-  
րելոյ սօտ յամի 1490 ասի լինել ի « գաւառս Փաշթաւ  
» զուց », և եկեղեցին Ս. Ստեփաննոս Երախավայ, այ-  
ժմ Ս. Մինաս կոչի<sup>1</sup>. Իբրեւ 70 տուն են Հայ բնա-  
կիչք գեղս և 30 տուն այլազգիք, երկրագործք և խաշն-  
արածք. քանզի ի ձորակի կայ գիւղն և երկուստեք լե-  
րինք են, անձուկ է և սահման մշակութեան, այլ խնամով  
յաջողեալ. նշանաւոր է ի պողատուս՝ կեռասենին, և  
ի խաւարտոս կամ տակս՝ գետնախնձորն։ Մերաղնեայք  
յայլեալ գիւղից կողմանցս գաղթեալ են այսր, յորս  
զլիսաւոր ընտանիք են Միրզաբեկեան, Յարոտրիւնեան,  
Մեյիք Երզնեան, Բանատրեան<sup>2</sup>։

104. Չորսուրտ, Հօսեւոս— Գլուխ միջին ձորոյ եւ-  
առաջեանն Ագարայ՝ յարեւմտակողմն կայ այլոցն երկու-  
ցուն. և աղբերակունք նորին են ի հարաւոյ երկրին Մա-

<sup>1</sup> Ըստ Ատրաւս Օրագրի Էլիփոսի, ԺԲ. 399։

<sup>2</sup> Նոր Դար, է. 72։

րայ, ի թիկանց Միխայիլիան բարձու լերին 11,120' .  
 և են երկու գլխաւորք, հիւսիսայինն յանուն լերին մի-  
 ոյ՝ Գարաւնդգ (Մթին) կոչի, հարաւայինն՝ Ինտերմ-լայ,  
 անջրպետեալք երկայնահիստ լերամբ միով, և միացեալք  
 առ վերին Ազգերփի (Ազ քէօփրիւ)՝, գիւլիւ՝ որ ի 4300'  
 բարձու. յորմէ կիսով փարսախու ի ստորեւ յԵւ. Հր.  
 Ներքինն. երկուքին եւս յահեկէ գետոյն սր է ի Հս. :— Ի  
 սմին իսկ կողման յանձուկ ձորահովտիս առ գետեղերն  
 նշանակին մի ըստ միոյէ յարեւմտից Հս. ընդ Եւ. Հր.  
 գնալով՝ մինչեւ ի խառնուրդս նորին ընդ Ագարայ, Ագ-  
 ձաքենտ, երկու մղանա յԵւ. Ներքին Ագգերփեայ, Առ-  
 նառնտ, Գարաւնանը, Արասյոռ բերդիկ. իսկ յալմէ՝ հան-  
 դէպ Անաւուտայ և հուպ նմին՝ Շարքնար, Արպեան, ո-  
 րոց ի հարաւայ համառանայ Դարաստս պաշի լեառն 6670'  
 բարձր. և ի սորին հարաւայ Չարագոռ սար. Սէյդեր ?  
 գիւղ ի ձորեղբն. յորմէ մղանա կամ դոյզն աւելի ըս-  
 տորեւ հին գիւղն Մշնի ըստ Յուցակին, այժմ Միշ-  
 նի կոչեցեալ և տանկարնակ : Ի Հր. սորա Սոռգ-պոռ,  
 լագ դիւղ ի ստորտս երկայնաձիգ պարու սարից անջր-  
 պետաց ձորոյս ի Միծեռնամիջնաց ձորագետոյն. նշանա-  
 կի ի սմա եկեղեցի՝ աչ գիտեմ շէն թէ լքեալ : Եթէ ոչ  
 սա՝ ի դէպ է թէ ի մերձաւոր սահմանն իցէ լեալ Գաշա-  
 Թաղը հին գիւղ, յորմէ և վիճակն մեծ՝ մասն գաւա-  
 ռին Աղահէճոյ էսոռ զնոյն անուն, զի դասակարգ գիւ-  
 ղորէից հին Յուցակին պահանջէ զայս մերձաւորութիւն :—  
 Հուսկ գեող յայտմ կողման իբր փարսախու յԵւ. Սո-  
 ուգ-պուլազայ, և կիսով ի խառնըրոց գետոյն՝ է ա-  
 նուանաւոր նորին Հօլլաս, որ և Հօլլաս ի գիրս, և Հօ-  
 ջանց ըստ Առաքելի. իսկ ի հին Յուցակին գրեալ Հուն-  
 ջաք, և ի տրիցն գուշակի մեծ իննէ : Այս եկեալ Տէր  
 Կիրակոս ամուսնից Սարգսի ի հաստատութեան Անա-  
 պատից, յետ կարգաւորելոյ զՀարանց մեծ անապատն՝  
 ընդ Թովմայի եպիսկոպոսի՝ միոյ ի զլիւսորաց ճգնա-  
 զգեցիցն, հաստատեաց նոր Անապատ և բնակեցաւ աստ  
 « կրօնաւորական ժուժկաութեամբ, (և) ի նմին տեղ-  
 « ւով՝ մերձ ի գիւղն Հօլլանց յիւրում անապատին եղեւ  
 « վախճան նորա ի Թուսականութեան մերում ՌՂ (1621),  
 « և գնաց առ սիրեցեալն իւր Քրիստոս, որում փախաւ  
 « գեալ հանապաղ՝ կրէր ի յագին իւր, և ի նմին տեղով  
 « կայ թաղեալ պատուական նշխար մարմնոյ նորա », ըստ  
 Առաքելի պատմի. որ և ծանուցանէ զի էր նա հայ-  
 րենեօք ի Տրապիզոնէ, զառաջինն « մտնալ ի կարգ աշ-  
 « խարհի, բայց ոչ վայելեալ. քանզի զկնի սակաւաւուրց  
 « վախճանեալ ամուսնոյ նորա, և ինքն մենացեալ իրեւ  
 « զտառակ ողբախոհ և հանապազօր խոկայր ի պատուի-  
 « րանս Աստուծոյ », եւայն, մինչեւ լուաւ եգիտ և յա-  
 րեցաւ ի Տէր Սարգսի :— Յաւուրս պատերազմաց Օս-  
 մանեանց առ Մուրատու Գ ընդ Շահ Սէֆոյ (1635),  
 յորժամ Պարսիկ կուսական Երեւանայ Թահմազ Ղուրի՝  
 ոչ վատահացեալ զդէմ ունել նոցա՝ թոյլ ետ ժողովը-  
 դեանն զաղթել յո՝ և կամիցին, « կարբեցիք՝ ելին միա-  
 « հաղոյն ի բարեկենդան շարաթի օրն, և դիմեցին դէպ  
 « յերկիրն Քաշթաղու, և հասին մինչ ի գիւղն Հօլլաս.  
 « և անգ բնակեալ էին սեաւ վրանօք բազում տունք  
 « Քրդաց. իրրեւ տեսին զնոսս և ասացին, սղբա փա-

» խըստականք են, եկայք կոտորեսցուք զնոսս և կողոպ-  
 » տեսցուք զինչն : Իսկ կարբեցիքն իմացան զխորհուր-  
 » զս Քրդացն, զինեցան և նոքա ընդդէմ նոցա ի պա-  
 » տերազմ. և անկան Քուրդքն ի վերայ կարբեցուցն  
 » սաստիկ բախմամբ և սպանին հինգ այր, զՏէր Միսի-  
 » րար, զԴադոյուրսն, զԴաշիրն, Գիլասն և Այվազն.  
 » զի թէպէտ և կարբեցիքն եւս սպանին ի նոցանէ, սա-  
 » կայն յաղթեցան. քանզի նոքա հանգիստք և անաշ-  
 » խաւք, և սղբա վաստակեալք և անպատրաստ. և կօ-  
 » ղուպտեցին զնոսս, և զկանայսն մերկացուցին և հասու-  
 » ցին ի վերջին թշուառութիւն, և գերեցին զերիս ման-  
 » կունս և այնպէս կացին մերկ և կողոպուտ. քանզի  
 » գիւղականքն եւս ձեռնտու եղին Քրդացն, վասն զի  
 » երկեան ի նոցանէ, զի մի գուցէ և զինքեանս թալա-  
 » նեսցն : Իսկ կարբեցիքն մնացին անդէն հայելով ի  
 » կատարածն : Եւ էր այր մի ի կարբեցուց՝ որում ասէին  
 « Ժանտննց Միրզայ. և էր նա յայնմ աւուր ի Թուրքի  
 » վաճառականութեան ալազաւ. լուաւ զկոտորումն գիւ-  
 » ղին իւրոյ և կսկծայր յոյժ »... գրեաց աղերս ի  
 դիմաց կարբեցուց և մատոյց առ Շահն. որոյ ընթեր-  
 ցեալ « ճհաս ի վերայ իրաւանցն. և առաքեաց բազում  
 » զօրս ի վերայ Քրդացն. և ետ պատուէր ասելով, Մի-  
 « ողորմիք նոցա. եթէ ոչ մի առեալ իցեն ի Հայոց՝ առ-  
 » ցնն ուղտս. փոխանակ հաւին՝ ձիս առցեն, և ա-  
 » մէն մի սլանելոյ առցեն տասն թուման... Իսկ  
 » զօրականքն գրեցին զամենայն զօր ինչ վնասեալ էին  
 « առ քրիստոնեայն, և ապա ելեալ գնացին առ Քուրդ-  
 » սոն... կալան դարան Քրդացն ամենայն, և կապեցին  
 » զձեռս յետս ամենեցուն և ձաղեցին անողորմ... յա-  
 » փըլտակեցին և կողոպտեցին զինչն և զոսացուածն,  
 » և թափօր արարին յամենայնէ. և ապա կոչեցին ըզ-  
 » կարբեցիսն և բաժանեցին առ նոսս զինչս Քրդացն,  
 » և զգերեալ մանկունն յետս դարձուցին, և զարեան  
 » գինս սպանելոցն առին ինքեանք... Եւ այսպէս եղեւ  
 « զրաւ քործոյն. և մնացին անդէն կարբեցիքն՝ մինչեւ  
 » էսոռ Շահն զԵրեւան. և ապա դարձան և եկին բնա-  
 » կեցան ի գիւղն իւրեանց ի կարբի » :

105. Չորսնգիսք Ագարու.— Յառաջ քան զխառնուրդ  
 Հօլլանց գետոյն ընդ բուն գետն Ագարու, յերիս կամ չա-  
 րիս գետակս բաժանեալ է սա առանձնակ ձորակօք, ո-  
 րոց արեւմտագոյնն և զուգընթաց Հօլլասի կոչի Նարվան-  
 ջայ. գետեղեանն հուպ առ գետեղերն են, սկսեալ ի հիւսի-  
 սոյ, Ղառուշիս, Ազիդ-փաղեասի ?, Զօռ-քեշիչ, մերձա-  
 ւորք միմեանց, յահէկէն. հանդէպ յետնոյս յալմէն՝ Գոռ-  
 յախքենտի. և գարձեալ յալմէն՝ սակաւուք հեռագոյն յա-  
 փանց իրոյն՝ Ոչուշիսն վերին և Ներքին. Ռոռուշուտ առ  
 իրոյն. Շալվա ի Հր. ստորին Ուլուխանի, և Դադոյ (Քա-  
 րուտ) ի 4630' բարձու. թերեւս սա իցլ. Քարագոյուսի գիւղ  
 Քաշարաղոց. ըստ ցուցակի միոյ թեմին Տաթեւու. Աս-  
 տի և անգր ոչ նշանակի շէն, այլ լճակ մի փոքր յան-  
 կան խառնըրոց գետակիս ընդ երկրորդին, որ է Մոռն-  
 ձոխիս : Անձկագոյն է ձորակ սորա ընդ մէջ Նարվանայ և  
 բնիկն Ագարայ. թերեւս այսպէս կոչի յանուն Մոռննք  
 գեղէ հին Յուցակին. այլ ի սկզբանն կամ գլուխն՝ Ղօր-

յի-լայ կոչի, ուր գոյ և ընդարձակ միջոց լերանց, Պագարտիզդի կոչեցեալ, և հանգրուան մի ամուր կամ բերդատեղի Շարի քենս անուն: Գեօղք ձորահովտին են Գարապալիյի, Լոյվարտու, Քիշրձե-պոչրագ, յորոյ հարաւոյ համրառնայ Բեշիչ-քեփե լեառն 7100' բարձր. և Ալենաքի?

Ջորաճովիտ բուն Ագարայ կամ Հագարու գետոյ կայ յեւրոյ երկոցուն նախայիշելոցն, սահման ունելով յարեւելից զլերինս անլրպետս Արցախոյ, զայժմու Գանձակ գաւառի. երկու փոքր վտակք են աղբերացն միակցեալք առ Ալենաքի գիւղիւ, որ թուի Հալաքս ցուցակի միոյ թեմին Տաթեւոյ, կամ թերևս Հայեւեակ հին Յուցակին: Ի Հ. սորա կայ փոքր ամրոցն կամ, հանգրուան Գասիմ ոչաղը. որոյ նման կայ և ի հարաւոյ Շամ-քենտ կոչեցեալ: ՅԵՒ. Հր. սորա առ գետեզերքն՝ Ջուրմանի ի 4880' բարձու: Ընդ մէջ սորա ի Մ. Հր. և Գոտրիսաձի յԵՒ. Հո. յանլրպետս երկոցուն ձորագետոց, ամրառնայ Աշիս-կեփիք լեառն 6475'. որպէս և յահեկէ գետոյն՝ Շարքար 6870' բարձր: Յայտմ կողման է Սոռատ գիւղ, և համանուն հանգրուան, որպէս և Նոչարտին հանգրուան. յորոց ի հարաւոյ ամրառնայ Չիլեսա լեառն 6540' բարձր: Իսկ յալմէ գետոյն երկու մղոնաւ ի Մ. հարաւոյ Սուսատայ՝ մեծ գիւղն այլազգեսայ Բլանին, թերևս Վժնաբերդ հին Յուցակին: Ի կողմանց աստի մինչև ի խառնուրդս Հոչանց ընդ Ագարայ, թափին ի սա երկուստեք մանր վտակք. իսկ գեօղք ի խաղս կամ ի ձորակս նոցին՝ են, յահեկէն՝ Վարդազին, Արտաշաշի?, Պայպատիմ, և հանգրուանք ամուրք յուրք. ի լեռնակողմանս ընդ մէջ գետոյն և սահմանաց Եուշեայ, Հախնագար, Այպասար. Պիշիչ-տիչ, Ետիին. Ազպոչագ յալմէն, որ է անշուշտ անուանեալն Սպիտակաջուր ի նոր ցուցակի թեմին Տաթեւոյ. Այիզոյի քենտ գիւղ մեծ, Ենկիձե, Փիրձան, Արարոչ հանգրուան, Սէյիտիք գիւղ յանկեան խառնըրդոց Հոչանց գետոյն յԱգարա:

Միջոց ձորահովտին Ագարայ ի խառնըրդոց Հոչանց գետոյ մինչև ի Միծառնաւանուցն (Ագողան), անձուկ է յալմէն, և երկու շէնք նշանակին Սոս անուն որ հընութեան ունի ցոյց, այլ ոչ յիշի ի ցուցակս, և թարարուրան: Յարեւմտից սորա և հուպ ի ձորեզր Հոչանց գետոյ՝ ամրառնայ 4678' լեռնակն Մարգիզ գրեալ ի քարտին, որ կրէ ըստ իս զանուն Մարգբ գեղէ հին Յուցակին՝ Իրբու Մարգս: Իսկ ձախակողմն ընդարձակագոյն է և խաղան ընդ նա վտակք Իլեայք ի լերանց յարեւմտից Եուշեայ. զիսաւոր գիւղ ի լեռնակողմանն ի 4480' բարձու՝ է Գաշիտերեփի, որ է Բերդաձոր ըստ Հայոց, և թէպէտ ոչ յիշի ի գիրս, այլ զի այսպէս կոչէր և ի մեր իսկ ժամանակս, յայտ է ի ճանապարհագրութենէ Միկնէն Անգղիացւոյ, որ էանց ընդ գետակն առ նովիմբ, և աղաւաղելով գրէ Բարիսանձոր, Paresanzour: Յոյժ ան.

1 Ագբեր ամազեր, Գ, 36:  
 2 Յիւրբայս գուրվ նոյնութեան և զբից տեղւոյս ընդ Ազաննեանն Ս. Գեորգէայ, ընթրինակեմ զանս Ջալալեփի. « Գովիս ընրք. Ե ուխտատեղի, յորում է շինեալ զմրեթաղարգ եկեղեցի ի վերայ բարձրաւանդակ տեղւոյ, ուստի երեւի շրջակայ գաշտավայրն ի զուարճութիւն տեսանողաց: Այս ուխտատեղի ունի զեկեղեցի վերանորոգեալ ի Յովհաննէս վարդապետ ումեան, որոյ

տառամուր են սահմանքն:— Ի Հս. Մ. Բերդաձորոյ ամրառնայ Լային լեառն 8940' բարձր. և ի Հր. արեւելից Շարքար լեառն 6460'. առ գետեզերքն գեօղք, Ախտար, Գրզնաձա, Գարալիչ. և հուպ ի խառնուրդս գետոցն՝ յարեւելից կուսէ Շիվիտ, կամ Պաղարպեկոչ, հանդէպ Ջս. պուրի:— Ի շարս հին գիւղորայից Արահէճոյ ընթերցաք ընդ մէջ Մարգաց և Ագարակու գետոյ զանուանեալն Ս. Գեորգ, որ թուեցուցանէ մօտ չինին ունել և վանս յայն անուն. եթէ նոյն իցէ և թէ ոչ, սակայն ոչ հեռի ի վայրացս ի սահմանս Արցախոյ, ծանօթ է Պտկի Ս. Գեորգ վանք՝, և զսոյն զայս համարիմ նշանակեալ ի քարտի և առ Ջալալեփի Պտկիսի քերք. յորում ասէ և ուխտիւ պատուել զգերեզման Սրբոյ ուրումն Գեորգայ:՝

Երկրորմաք ժամանակաքն վարարեալ գետոյն Ագարայ խաղայ գրեաթէ անխոտոր ընդ Հր. ԵՒ. Հր. մինչև ի խառնուրդսն ընդ Բարկուչատայ, գործելով նովաւ անձուկ միջագետս, որոյ վերին կողմն մասն է Հարանդ գաւառի, սորինն՝ ոչ գիտեմ ոյր. այլ նշանակեցից աստ զգեօղարն որ յալակողմեան եզերս Ագարու, ի հարաւոյ ձիճիմի գետակի՝ զոր ի Հարանդ գրեցաք. և են Ղազի Գոտրոտոչ գեօղ փոքր, Մարմագակ, հանգրուան. Շոխալս ամուր գեօղ՝ որ յիշեցուցանէ զՇագուլայ գեօղ Հարանդայ՝ ըստ հին Յուցակին. Գարաձաղ գիւղիկ և ամրոց, Գարաձաձի կամ Գարադաձ գիւղ, Բատար գիւղ ամուր. Սարիեաղախ, Մարալրան, և այլն:

Իսկ ձախակողմն գետոյն Ագարայ ի Խանքեօփրիւ կամ մրջէ մինչև ի յիշեալ խառնուրդս Բարկուչատայ, երկիր ընդարձակ, անտառախիտ վերին (հիւսիսային) մասամբ, դաշտային այլ և ամալի՝ հարաւայնոյն, անծանօթ եւս է ինձ, եթէ որում վիճակէր գաւառի. յայց հաւանական կարծեաք՝ Արահէճոյ գրեթի. յիշեցից և զոր ի նմոյն գեղեան, ըստ աշխարհացոյց քարտի, ոչ ունելով այլուստ տեղեկութիւն. Ոչ սակաւ ձորք և վտակք նշանակին անդ իլեալք յարեւելից ի լերանց անլրպետաց գաւառին Եուշեայ. որոց առաջին (ի Հս. ընդ Հր. գնալով) Մէիք, որ խառնի ի մեծագոյնն Մոչառչումն, յորոյ աղբերականց միջի ամուր հանգրուանք, Իճան, Մոչառչումնալար, Ճաւկերախալ (գուցէ Ճամբարախալ նշանաւոր կողմն). Գարազրչագ, Բեշիչքենտ, Տայրան գիւղ յ' 3708' բարձու: Երկրորդ վտակ է Խանալի անուն. ի հարաւոյ նորին միւս անանուն, առ որով Հարար գիւղ. Գտանի աւետարան մի գրեալ ի գեղնս յամի 1868 վասն Մատթէի քահանայի եղոր Պետրոսի կաթողիկոսի Աղուանից, որ և ասի բնակեալ մերձ ի վանս կտոյլ. այլ ոչ է յայտ առ տանսր եթէ յայլում վայրի իցէ վանքոյ:— Ընդ մէջ Հարարայ և Մուսուլմանայ գետակին մերձ ի գետեզերս Ագարայ են գեօղք Չինարի, Սօֆիան, և հանգրուանք Տէկիլմէն, Գոչիլար, Մախսուլոչ, և այլն: Ի հարաւոյ ե.

գերեզման է ի մէջ ալակողման խորանին, և անուն գրեալ է մեծ տառիք ի վերայ առաստաղի նոյն խորանին. առաջի ուր խորանի է փոքրիկ գերեզման յանուն Սրբոյ Գեորգայ. ուլ թէ ով էր առ Գեորգ՝ չէ յայտ: Ի վերայ ալակողմեան սեանց եկեղեցոյն գրեալ է,

Ղուկաս վարդապետ ի թովին Հայոց ՌՄԼ (1781) շինեաց զմի ջրաղաց եւ ես սմա յիշատակս:

լից վտակին Հարարայ մեծագոյն եւս գետակ կոչի Չան-  
քանակեան, ասպնջական բազում վտակաց կամ աղբե-  
րաց ի վերնակողմնն (յարեւելից), ուրանօրնշանակին ամ-  
բոցք կամ հանգրուանք յուղլք. որպէս յալմէն կամ  
յարեւմտակողմանն Դաշ-աղբ, Էլիձա՝ ի ստորոտս համ-  
անուն լեբին բարձու 6630՝. Արփա-կետիք, Փառանան  
մերձ ի Հարար. և յահեկէն՝ Խոզաբերդ գիւղ, երկօ-  
քին յետինքդ հայանուանք ոչ յիշին ի ցուցակս հարկա-  
տուաց աթոռոյն Սիւնեաց և ոչ այլուր: — Մերձ սոցին  
Ճաղատու լեռան երկայնածիք, և ի հարաւոյ նորս թօփ  
աղաձ լեռան 6360՝ և Խաղ գիւղ: Ի հարաւոյ ձորագետոյս  
ձգի միւս հաւասար նմին, այլ սակաւաչէն, յորոյ գլուխն  
ի Հր. Խոզաբերդի ամբառնայ Չեմէն լեռան երկայնա-  
նիստ, և Պօզալ տաղ լեռնակ կոնաձեւ. յորոց ելից մերձ  
ի լեռնասահմանս Արցախական գաւառաց՝ Գինարաղար  
հանգրուան կամ ամրոց, որ յայտ առնէ զԳինեթաղք  
գետը Հարանդայ: — Ի միւսում եւս ձորագետի որ ի հա-  
րաւոյ սորին՝ նշանակի Պաշայեղ հանգրուան, և Գոնջե-  
ձուսքան աղբիւր: Ի միջի երկոցուն սոցա առ գետեզերք  
Ագարու են գետըք ամուրք Մոշրատիւան, Խանտեք, Պա-  
լիստաղանի, Ճիձիք: — Աստի և անդր կերպարանափոխ  
լինի երկիրն, պակասեն անտառք, եթէ ստոյգ ցուցանի-  
ցեն տախտակքն. իսկ գետըք՝ որ յեզերս Ագարայ միայն  
նշանակին, են Խոձիկ հանդէպ Մաշարանի, Էֆենտիդի,  
Տանչիդի, Ռաշիտ Վերին և Ստորին, Խանուխ, Մաֆրուզ-  
լու և Գիշտ Մաֆրուզլու, Սէրայի, և Աջայի առ գե-  
տակցութեամբ Բարկուչատայ և Ագարու: Ընդ Մաֆ-

րուղլու էանց բնաքնինն Ռատտէ, (26 մայիսի, 1890) դի-  
տելով զբազմութիւն սպիտակ արագլաց բունելոց ի կա-  
ղաճախիս, և ի միում ծառի ետես ութ բոյնս: Ի Խա-  
նուխ յիշէ զայգիս և թզենիս շերամարոյծս. ընդ սոսին՝  
Սօսիս, Կաղամախիս բարձունս, Լիդենիս (Celtis) և Կե-  
ռասենիս: — Նշանաւոր քան զսոսա երեւի գոլ որ ընդ մէջ  
Ագարու գետոյ և լեռնասահմանին Արցախոյ՝ ի լեռն-  
ոտին միում կայ՝ Թոռմաս գիւղ կամ Թոռմասլու և լեռան  
համանուն՝ 1836՝. և ի հարաւոյ նորին Թոռմաս—գիւղ  
պեզ, որ Թուրի մզկիթ և ուխտատեղի մահմէտականաց.  
և հանգրուանք ինչ մերձ նմին:

Եւս միութեան երկոցուն հզօր գետոց Սիւնեաց՝ Բար-  
կուչատայ և Հագարու, հովիտն իբր 10 կամ 12 մղոն եւս  
երկայնեալ ձգեալ մինչև յԵրասխ, ոչ գիտեմ ստուգիւ որոյ  
վիճակէր գաւառի, վասն որոյ նշանակեցից աստանօր ըզ-  
գետոյն որի բուն ի ձորեզերս գետոյն են, Թողլով զոր առ  
արեւմտեան կամ արևելոյմեան օժանդակ գետական,  
համարելով զայն Կովսական գաւառի մասն: Արդ առ  
գետեզերք յետին մասին Ագարու, յալմէն՝ գետըք են,  
Գարագիլիս, Սօրալ գիւղիկ, Ռապիւան, Թարար, Սա-  
րիլ, Խարալան, Շարօֆան. և առ Երասխա՝ Խորոզ-  
մաս: — յահեկէն՝ Մոշրանլու միայն, իբր փարսախաւ հե-  
ռի ի վերոյ Երասխայ հանդէպ Խարալանի. այլ վերա-  
գոյն եւս ընդ մէջ Մուղանլուի և Գարագիլիսի՝ երկու  
մղոնաւ ի բացեայ ի գետոյն Ագարայ՝ կայ մեծ գիւղն  
Շարօֆան—աղալու ընդարձակ այգեստանօք և պարտիզօք:  
Բայց շեն ինձ յայտնեալ ազգային յիշատակք ի սոսին:



Բ Ա Ղ Ք



ԵՏ վերանորոգութեան տէրութեան և պայազատութեան Սիւնեաց յ'Ղ և յ'Թ դարս, ըսկրսեալ բարգաւաճել, յիւս կոյս Ժ՞ մինչեւ ցկէս ԺԲ՞ զառաջնութեանն ընկալաւ պատիւ ԲԱՂՔ ի գաւառս Սիւնեաց, վասն Թագաւորական գահու հաստատութեան ի նմին, յայսչմ հարաւակողման աշխարհի Սիւնեաց, այլ ոչ իսպառ յեզր հարաւոյ. զի յայնմ կողմանէ պատին զնովաւ Արեւիք և կովական գաւառք, յարեւմտից հարաւոյ՝ Չորք, ընդ որում գրեթէ անանջրպետ միացեալ էին Բաղք ի Ժամանակի Թագաւորութեանն. ի հիւսիսոյ արեւմտից՝ Մըղուկք. ի հիւսիսոյ՝ Հարանդ գաւառ, և նոյն կամ Աղսհէճք՝ յարեւելից. զի յայնմ կողմանէ անստոյգ են ինձ սահմանք յարակից գաւառացոյ, այլ Թուի Բաղաց ձգիլ մինչեւ ի ստորին ընթացս Ագարայ գետոյ: Աշխարհագիր մեր և պատմիչն Օրբելեան և այլք՝ մի միայն Բաղք գաւառ գրեն ի Թիւս երկոտասանիցն աշխարհին, այլ ի հին Յուցակի գիւղից հարկատուաց եկեղեցւոյ՝ երկու առանձնակ գաւառք գրին. պատմիչն ասէ վասն Բաղաց կոչիլ այժմ ԱՏԷՆ, որ ըստ յետնոց Աճանան. իսկ Յուցակն որ Միւս Բաղք կոչէ զգատուցեալ կէս գաւառին, յաւելու ի խորագրին, «որ անուանի Քաշունիք». զնոյն և պատմիչն հաստատէ ասելով, «Գաւառն Քաշունիք՝ որ այժմ Բարկուշատ կոչի» . նոր ցուցակք և պատմիչք՝ Բարկուշատ կոչեն զայս միւս Բաղս, որով լինի եռանուն, իսկ առաջինն երկանուն. ի սմա համարին գետք 41, ի նմա՝ 52: Որոշել զսահման բաժնի երկոցուն սոցա՝ մեզ զժուարին և աւելորդ իսկ, զի ըստ նախնի աշխարհագրութեան և պատմչաց առնեմք զտեղագրութիւնս. այլ

ըստ բերել կարգին՝ որոշեսցուք երբեմն. և նախ աստէն իսկ, զի Միւս Բաղքն կամ Քաշունիք՝ կայ յարեւելից ԱՏԷՆն կոչեցելոյ, և ի հովտի Բարկուշատայ, գէթ յայմէ սորին, վասն այսորիկ իսկ և Բարկուշատ կոչեցաւ. իսկ ԱՏԷՆն—Բաղք՝ կայ ի հովտի Չաւրերոյր գետոյ՝ ի վերնակողմանն, յահեկէն: Եւ զի զգետովս տարածեալ է գաւառն Բաղաց, ի յետնոց և ցայժմ՝ բովանդակ երկիրն կամ մեծ մասն մի նորին կոչի Չաւրնդուր: Դարձեալ և նոր ցուցակ մի Տաթեւոյ եկեղեցւոյն ուրոյն ուրոյն գաւառս գրէ. զԱճանան՝ 26 զիւղովք, զԲարկուշատ՝ 31, և զՉաւրնդուր՝ 24. յորս յաւելու և զՄաղանջ 12 զիւղովք, որ մասն է միւս Բաղաց. որոց գումար՝ 94, համեմատի Թուոյ հին գիւղից երկոցուն Բաղաց, 91. այլ ոչ հաւաստեալ ամենայն նոյնք են և ոչ բովանդակին ի սոսին. զի սահմանքն անցանեն և ի կողմանս Հարանդայ և կովականի. որովչէ մարթ հաւասարել զնոր բաժանմունս գաւառաց՝ ընդ առաջնոցն: Վասն որոյ ստիպիմ՝ յետ յիշելոյ զսահմանս Բաղաց ըստ նախնեաց, ի տեղագրիս առաւել եւս խընամով միտ դնել ձորոց և գետակաց Չաւրնդուր գետոյ, իմա ձախակողմանն, ուր ասացաք լինել զերկիր Բաղաց:

Չարմանք են զի ոչ յիշի (կամ ոչ գտանեմ ես) առ նախնիս՝ գրնիկ անուն հզոր գետոյս, որոյ են ձորք և հովիտք և առանձինն Թափի յԵրասխ. նախայիշեալ բան պատմիչն Սիւնեաց՝ տայր կարծել եթէ սա իսկ իցէ Աղաւնոյ անուանեալ գետն, և ըստ այնմ բանի գետոայս լինի ընդ մէջ Բաղաց և Բարկուշատայ, և հարկաւ իմն ի ճահ վայ Չաւրնդուրի միայնոյ. մանաւանդ եթէ կանոնական բան Սարգսի Կաթողիկոսի՝ զոր յիշեցաք իսկ. զագրութեան Աղահէճ գաւառի, որոշակի Աղուանից գետ կոչիցէ զԱգարա և ոչ Աղաւնոյ: — Արդ գետս այս բղխէ ի Թիկանց հարաւային արեւելեան լեռանց վիճակին Տաթեւոյ և խաղայ ընդ Եւ. Հր. Եւ. և զը.

1 Տես յԷջ 263: Տղապիւր Շահնազարեանի ունի Ալուանոյ, իսկ օրինակք մեր Ալուանի, այլք Ալուանի կամ Ալուանի:




րեաթէ զնոյն պահելով ուղղութիւն մինչեւ ի սպառ, 6 կամ 7 եօթն մղոնօք յարեւմտից բերանոյ Ագարայ թափի յՆրասիս, վտակս մանուկն ընդունելով ի սկզբան՝ յահեկէն՝ ի բուն Բաղաց երկրի, ի Հս. ի թիկանց լեռանց անջրպետաց Չեւի գետոյ որ ի Հր. Հաբանդայ. ի ստորին մասին գրեաթէ և ոչ մի, վասն անձուկ յոյժ գոյոյ ձորայն. իսկ յաճէն՝ ընդունի ի Չորոց գաւառէ զկապանայ գետն, և այլս եւս յայնմ գաւառէ և ի կովսականէ, ուր թողում քննել զնոսին:— Երկու եւս այլ գետակք փոքունք զուգընթացք Չաւընդուրի յարեւելեան հարաւային սահմանաց Հարանդայ իջեալ խառնին յԱգարա գետ. ոչ նշանակին անուանք նոցին, այլ ըստ գիւղիցն որ յեզերան՝ կոչեցուք զհիւսիսագոյնն վաժնունեաց, զհարաւայինն որ ընդ մէջս է որոս և Չաւընդուրի՝ Ոգարակոս գետ:

Հովիտք գետակացս երկոցուն ի դէպ գան գոլ Միւս Բաղք կամ Քաշունիք, սահմանորդք Բարկուշատայ գետտակովին, և առաջինն գրեաթէ ի նոյն իսկ ի գետն այն մեծ անկանի առ խառնըրդովք նորուն ընդ Ագարայ. երկրորդն սակաուք ի ստորեւ երեւի անկանել ի նոյն ինքն յԱգարա՝:— Ըստ նշանակեալ ընթացից գետոցս յայտ լինին դիրք երկրին Բաղաց ի՝ Հս. արեւմտից ընդ Հր. արեւելից գիջանել. բովանդակն դար և թիր է և անտառախիտ. թէպէտ ոչ նշանակին ի միջին լերինք մեծամեծք, այլ և ոչ սակաւք են պարսպաձեւ բարձունք՝ որք զխորս և զփորս ձեւեն. և ըստ այսմ նման է սահմանորդին իւրոյ և զուգարաղդի Չորոյ գաւառի, հոչակելոյ ամբութեամբն. վասն որոյ և անդ հաստատեցին թագաւորք Բաղաց կամ Սիւնեաց զաթոռ իւրեանց, և կոչէր յատկապէս յանուն երկոցուն գաւառացս, թագաւորութիւն Բաղաց կամ Բաղական. զի գրեաթէ ոչ հառանէր ձեռն նոցա, գէթ ի յետին ժամանակս, ի վերայ այլոցն, բայց եթէ փոքու մասին միոյ Մղկան և կովսականի և Արեւեաց: Ըստ այսմ դրից և կերպարանաց՝ ԲԱՂԱՑՈՐ եւս կոչեցեալ է ուրեք գաւառս այս ի սկիզբն յի դարու: Բայց զքնական կազմուածոց և զբերոց երկրին ստուգիւ ինչ ոչ գիտելով ակն արկցուք ի քաղաքականն:

107. Չանուն և ղծագումն գաւառիս՝ պատմիչն Սիւնեաց հաւաստէ լինել ի Բաղակայ, որ « ի զարմիցն Սիւսակայ... առեալ ղայս գաւառ մասն ժառանգութեան » շինէ զքարն Բաղակու՝ ամրոց », և այլն. արդարեւ հրեւեանց ցոյցս ունի անունն, որոյ նախատիպն էր Բաղ յորմէ Բաղք և Բաղակ, և ոչ ի Բաղակայ՝ Բաղ. և որպէս այլք ի նախնի և ի դիւցածամանակ նահապետաց՝ և ազգակիցք իւր Մղուկն և Չագ, շինէ և սա զամրոցն ի քարայրերն, զմի յամրագոյն բերդորեից աշխարհին Սիւնեաց, նա և ողոյն իսկ Հայոց, որ յետոյ պատուեցաւ յինել ոստան թագաւորաց Սիւնեաց, որպէս տեսցի ի ստորագրութեան Չորոց գաւառի, որում և պատշաճի. այլ և միանգամայն զգացուցանէ՝ եթէ Չորք և Բաղք մի վիճակ

էին ի սկզբան, և յետոյ բունարար իմն բաժանեալք, ստանն ձնաց ի միումն, անունն ի միւսում մասին. և են որք ցարդ մի համարին զԲաղս և զՉորս<sup>3</sup>. այլ ամենայն օրինակք աշխարհադրութեան Խորենացոյ և Պատմութեան Սիւնեաց՝ որիչ և երկուս յերկոտասան գաւառս Սիւնեաց կարգեն զդոսին:— Առանձինն ինչ դէպք ոչ յիշին ի պատմութեան զգաւառէս՝ ի Բաղակայ անտի վիպասանական կամ աւանդական նահապետէ՝ մինչեւ գրեաթէ յաւուրս նորոգութեան իշխանութեան Սիւնեաց, ի սկիզբն թ դարու. յորում՝ յամի 821 Բաբան բունարար կոտորած մեծ գործեաց, որպէս ի ներածութեան Սիւնեաց աշխարհիս ցուցաւ: Չայնու ժամանակաւ, ի բաժանել իշխանացն Սիւնեաց զգաւառս Սիւնեաց՝ երեւի վառան ոմն ժառանգորդ գաւառիս Բաղաց, ժամանակակից վասակայ Տեառն Սիւնեաց և նոր նահապետի Սիսակեանց. քանզի որդի նորին Չագիկ իշխան Բաղաց յիշի յամի 844. այս յետին անուն (Չագ) և Չոռանշէր՝ յաճախ լինի ի պայազատս տոհմին ցվերլ յի դարու, և մարթի կարգել ծննդարանութիւն այսու օրինակաւ.



Յետին Չուանշէրդ հայր կաթողիկոսին վահանայ, երբեմն ասպնջական Յակոբայ եպիսկոպոսի ապստամբելոյ յԱնանիայէ կաթողիկոսէ, յայտնապէս կոչի ի իշխան Բաղաց և կապանի, ուր և ամրացոյց զեպիսկոպոսն այն ընդդէմ կաթողիկոսին. իսկ յետ Փարաջայ՝ ի յի դարու ի պայծառութեան թագաւորութեան Սիւնեաց՝ երեւի սուցա տիրաբար կալեալ զգաւառն Բաղաց, և յանուն սորին կոչել թագաւորութեանն, և ասել պատմիչին յՈղոսն վաղարշապատու,

« Բայց միւս եւս այլ ջահ մեզ լուցին ի տուն Բաղաց Սիսականին ».

և թէպէտ կային և սերունդք Չագիկեանց և Չուանշէրեանց, այլ ոչ յիշին յանուանէ, ըստ իմս գիտութեան. իսկ յիշեալքդ այդոքիկ ի յի դարու՝ ի բազում ինչ իրս սա

1 ի մեծի աշխարհացոյցի Ռուսաց՝ երկրաչափան նշանակին վերջ գետակիս, կամ զի անսայդ է, և կամ զի ոչ ժամանեալ յՆրասիս՝ սպառի:

2 Որպէս Շառնազարեան ի ծանօթութեան Պատմութեան Սիւնեաց, Բ. 515:

3 Օրբեւեան ԼԹ:— 4 Նոյն, ԽԱ. ԽԳ:— 5 Նոյն, ԽԱ. ԽԳ:— 6 Նոյն, ԼԳ. ԽԱ:— 7 Նոյն, ԽԵ. ԽԱ. ԽԲ:— 8 Նոյն, ԽԱ:— 9 Նոյն, ԽԵ:— 10 Նոյն, ԽԲ:— 11 Նոյն, ԽԳ:

տար և հետեւողք եղին նախագահ իշխանացն Սիւնեաց և Թագաւորաց, և առատ տրովք ճոխացուցին զեկեղեցին Տաթեւոյ. նա և պաշտօնեայք կացին ի պայազատ զարմից սոցին, որպէս Վահան եղբայր Ջուանշիրի և Վասակայ, որ կրօնաւորեալ շինեաց զանուանի մենաստանն Վանաւնո՝ վանք որ և Բոնաննավանք, և եղբորորդի նորին համանուն՝ նախ եպիսկոպոս Սիւնեաց կարգեալ զամս վեց, և ապա ընտրեալ ի կաթողիկոսութիւն Հայոց, նշանաւոր եղեւ վասն նորութիւնս ինչ մութանելոյ ի ծէսս, և աթոռանկ լինելոյ կամ հրաժարեալ խոյս տալոյ այլուր, վաղավախնան լինելով:— Յելս ԺԱ դարու և ցկէս ԺԲԻ՞ն ի ժամանակի նուտղելոյ Թագաւորութեանն Սիւնեաց՝ իշխանափայլ ընծայի տոհմն Համտունեանց ի Բաղրս, որոց առաջին Մեծ Համտուն մականուանեալ: Իսկ որդի նորա Հասան ի սկիզբն ԺԳ դարու կոչի « մեծաւ » փառ իշխան Բաղաց, որ ունէր ընդ ձեռամբ զամենայն » ազատս Թագաւորութեանն այնմ » . սորա որդի և պաշազատ է Բ Համտուն, և միւս՝ որդին Յովհաննէս եպիսկոպոս ի Յովհաննու վանս . որ և վասն աւերման աշխարհին գնաց ի Վայոց ձոր և շինեաց զհռչակաւորն Նորավանս, ուր նոյնպէս առանձնացաւ և եղբայր իւր Համտուն հրաժարեալ յաշխարհէ, « և անդ կրօնաւորեալ ի » նմին վախճանի ի ՈԶ Թուականին » (1231)<sup>1</sup>. — Յամին 1104 առին այլազգիք զամուր մայրաքաղաք Թագաւորացն Սիւնեաց՝ զՎապան, և մի ըստ միոյն զայլ ամրոցան, և հուսկ՝ զբնաւիցն ամրագոյն և զպայատանաբան Թագաւորութեանն զԲաղարբերդ, յամի 1170 . այլ Թագաւորին նախազգած լեալ՝ փախուցեալ գնացեալ էր ի հայրենիս իւր ի Նաչէն . որով և բարձաւ, կամ ըստ պատմիին՝ չիփաւ և այս լահ հայկական պայազատութեան . և երկիրն հանգոյն այլոց զաւառաց Սիւնեաց՝ կոխան և որս եղեւ օտարաց, և ոչ իսկ վայելեալ յազատութեանն յոր հանին զմմանս ի նոցանէ՝ Չաքարեանքն աշխարհակալք աշխարհաչէնք:— Ի ժամանակի հարստութեանն ընդ իշխանութեամբ Թագաւորաց Բաղաց (զորոց սահմանս ի վերդ յիւնցաք), էին՝ ըստ պատմիին՝ 2000 կամ 1008 կամ ըստ այլոց զրչագրաց և Վարդանայ երիցադոյն պատմի, 1400 գեօղք, 43 բերդք, յորս անուանիք 12, և վանորայք 48: Յետ 850 ամաց՝ յաւուրս ազատարարութեան Դաւթի Բէկի՝ ծագեաց և ի վաղեմի երկրիս Բաղաց Թագաւորութեան՝ նշոյլ ազատութեան և արիական գործոց, այլ յետ մահուան նորա դարձեալ ստուերացաւ . միայն՝ որպէս յայլ կողմանս Սիւնեաց՝ մնալով և աստ ուրեք ուրեք Մէլիք կոչեցեալ իշխանաշուք պայազատաց և տանուտեարց:

108. Գեօղք հարկատուք եկեղեցւոյն Սիւնեաց ըստ հին Յուցակին այսպիսի են յերկուսին ի Բաղս, հանդերձ տրովքն .

Ա. ԲԱՂՔ=ԱՃԱՆԱՆԱՆ	
Աչաղու, Աճիղու	8
Աճանան	12

<sup>1</sup> Օրբել: ԿԳ: Յայտնապէս վրիպակք են ի թիւսն . զի յառաջագոյն ասէ վասն Յովհաննու լինել եպիսկոպոս ի Յովհաննու վանս ի ՇՄԳ Թուի (1108), և զվախճան նորա ասէ ի ՈԿԳ Թուի,

Բարձրվայր	6
Շէկք	12
Վարդավանք	6
Տորթն	26
Տափեար	6
Աւարագետք	10
Տագամայր	20
Խոտանան	12
Եղինգն	6
Նորաշինիկ	6
— միւս	6
Հիւնեաց ձոր	6
Ոպն	6
Կոտեվանք	12
Ատու	10
Արուքս	6
Հողար	8
Կրաւագետ	6
Խմայճ	6
Կաւարտ	8
Արկանիձոր	10
Տոգող	6
Չարերիկերտ	10
Տատնեղիշէն	10
Տերոնդատ	8
Ագարակ	20
Թուրք	12
Մակարագ	6
Անագոն	7
— միւս	7
Պարքոն	6
— միւս	6
Գեղաքունի	10
Կմեզ	10
Գուկական	10
Փառաւակ	8
Մեծամարգ	12
Կովսական գիւղ	12
Արձանաձոր	6
<b>Բ. ՄԻՈՑ ԲԱՂՔ = ՔԱՇՈՒՆԻՔ .</b>	
Երէց	12
Խողվանի	10
Դաստուկերտ	6
Տանձավայր	8
Վանանդ	10
Ման	7
Անախտաձոր	6
Շոռնոխոյ	8
Լերմենիչէ	6
Խախտք	12
Եւեղի	7
Հատատուք	6

(1214), որ է 110 ամաւ յետոյ . իսկ մտն եղբորն 17 ամաւ եւս յետոյ ! այլ եպիսկոպոսն մեռեալ է հաւտեօրէն յամի 1164, Համտուն է 1181 :

Մոզք	6
Մատախոնի	10
Իցան	6
Տողոր	6
Աւերք	6
Տահկածոր	6
Տեխք	8
Կոճարու	7
Մաղձնատուք	6
Խոտի	6
Ջաւեք	8
Տուտուտուք	7
Մնճնեակ	6
Ակն	6
Բակուրի վանք	12
Տախն . Դախն	12
Մերթակերտ	6
Հացնեան	6
Ծղու	8
Տատայ	12
Բարկուշատ	12
Խիրք	12
Տրեայ	12
Ագատի	8
Ճակկուժ	6
Կորակիժ	6
Անդուկաբերդ	12
Նակորզան	20
Արտէն	10
Նախջաւանիկ	10
Արծիկ	10
Թով	8
— միւս	7
Աղահորդ	10
Պահուբերդ	7
Աժդակ	12
Աթխոյք	12
Երուանդակերտ	6
Վաժունիք	8
Կումեն	6


Երուենանց	Կաշկառոտ
Ջորեր	Խոսորանց
Ղաթար	Գ. Երիցաթումբ
Հալիժոր	Պաշարաջուր
Խնկանց	Հուռիտափ
Ըստամանց	Մազմէ
Քօլու	Սեթանց
Վչքան	Շինոխու
Գրկոմ	Գուշվրանց
Սրիակ	Քօսաքարեր
Ըռակեափ	Նոր գիւղ
Պէճանիշէն	Նակահդար
Բ. Փակահան	Դ. Նատիր
Բերդիկ	Ջան
Չափնի	Սարաշէն
Ըրկենանց	Կեղցափանդ
Սեւաքար	Քարագլուխ
Երիցվանիկ	Թօփ
Սուսնակ	Աւտուռն
Կումէն միւս	Խորձոր
Վժանանց	Տնկունակերտ
Խաչտափ	Կարմրահողուտ
Ծաւիկ	Հանդիքովան
Աղնաթաս	Անձանալի
Ղարիպանց	Ջանալուշէն
Խաթունբաղ	Պրծելանց
Ակադի	Քօթանլար
Փռօջանց	Ղզրլարաղան

Ջատ յայսցանէ ի նորագոյն ցուցակս նշանակին սյլ եւս անուանք գիւղից, (Ա) յԱճանան, (Բ) ի Բարկուշատ (Գ) ի Մաղանջ և (Դ) ի Չաւընդուր:

Ա. Թիլիկանց	Թախսն
Հումանց	Մողէս
Խլաթաղ	Արջածոր

Հաւանական թուի յաւովից որք ի նոր ցուցակիս են գեօղք՝ որիչ լինել ի կարգելոցն ի հնում Յուցակին. զի չիք ինչ պատճառ, նա և անմարթ էր, ի յետին դարս՝ հին գիւղորայից՝ նոր հայ անուանս առնուլ, որպէս հաւանական է շատից ի սոցանէ արդ փոխիլն ի տանկական անուանս. այնպէս զի ի հարիւր յիսնիւ շափ հայանուն գիւղիցս՝ արդ հազիւ թէ հնգետասան գտցին նոյնպէս հայանուն նշանակեալք ի տեղացոյց քարտի, որպէս տեսցի յառաջիկայդ. Թերեւս և յաւովից հին չի նիցն ամայացեալ և նորոց հաստատեալ յայլազգեաց անտի, զի բազմաթիւ են օտարանուն գեօղք ի ստորին հովիտս Բարկուշատայ և Ագարայ. բայց գուցէ ոմանք ի գեօղիցն նշանակելոց ի Չաւընդուր վիճակի՝ պատշաճիցին կոմսական գաւառի:

Յերկուս վիճակս կամ մասունս՝ ըստ բնական դրիցն՝ զատուցանեմք զԲաղս, յԱրեւմտեան՝ որ և Աճանան, և յԱրեւելեան կամ ի Բարկուշատ:



## Ա. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԱՂՔ=ԱՃԱՆԱՆ

109. Բարձրատափ աղբերակունք Աղանոյ գետոյ (Չաւրնդուրայ) շրջափակեալ են յարեւելից կողմանէ լեռամբքանջրպետօք Տաթեւու վտակին, կամ բարձու Ղաւ պիղ լեռին և Թեփեհարի. ի հիւսիսոյ՝ անջրպետօք Զեմի գետակի, ուր Բեօրի լեռան և Պարտականդոն ? նշանակին. ի հարաւոյ՝ անջրպետօք գետոյն Կապանայ, յորս առանձին կատարք Մէլիքտիզիչ, և Չիւկն տաղ, որովք յայսմ կողմանէ Թուին սահմանեալ Բաղք և Չորք. այլ ի նախնուսն՝ Թուի անդր քան զանջրպետս զայս ձգիլ Բաղաց և բովանդակել զփոքր վիճակն Գեղուածոր, ցիւանուրդս գետակին ի գետն Կապանայ, առ որով նըշանակի Սիւրբ գիւղ, եթէ չիցէ նոյն ընդ Օձախոյն, զոր և համարիմ Աչաղու՝ առաջին գիւղ գրեալ ի Բաղս, ըստ հին Յուցակին, որ յիշի և ի պատմութեան. և ընդ նմին իբրեւ որիչ գիւղ Աչաղուայ<sup>1</sup>, տուեալք ի կալուած վահանու վանից, հանդերձ Եէկք և Գետարավայր գիւղովք. առաջինն Եէկքս գրի ի Յուցակին և ի կարգէն իսկ յայտնի՝ մերձ լինել Աչաղուայ. երկրորդն՝ Թուի զըրեալ անդ Բարեւայրք, անընդմէջ յառաջ քան զԵէկքս. բայց և ոչ զմի յայսցանէ գտանեմ նշանակեալ ի քարտի, և ոչ զկարեւորն քան զնոսա և անուանատու վիճակի՝ զԱճանան, որ յետ Աչաղուայ զառաջին տեղին ունի ի Յուցակին, և անուամբն և քանակաւ տրիցն՝ ի զէպ է թէ ունէր և զառաջնութիւն քաղաքական. Թերեւս զտեղի սորա ունիցի արդ Թուրքաբնակ մեծ գիւղն Եհիլիսի կամ Եհարչուի (Քաղաքիկ), յահեկէ գետոյն Կապանայ: Այսօրիկ արտաքոյ բնիկ հովտին Չաւրնդուրայ:— Բաֆֆի (ի վիպասանութեան Դաւթի Բէկի) համարի Աչաղուայ բերդ զկոչեցեալն յայժմուս Ղրղաչայ, ի դազաթան կոնաններ քարալերին, ի ձախմէ գետոյն, շուրջ պատեալ ի մորեաց. յորում են աւերակք աղիւսաչէն տանց, երկու դրունք պարսպաց յարեւելից և յարեւմտից, առ որովք ծակտի նետաձգութեան կամ ուրմարձգութեան: Աւանդեն բնակիչք կողմանցն, ծերոյ ուրումն իշխողի (մէլիք) բնակեալ անդ, և յայլում յարկի՝ զըստեր իւրոյ, յոր սակս Ղրղաչայ (Աղկարերդ) կոչէր մասն այն. յորմէ փոխեցաւ օրիորդն ի միւսն՝ յետ մաս հուան հորն, և ապա ել և գնաց այլուր. բայց մերձաբընակքն ի ժամանակս մարտից և վտանգաց ապաւինէին ի նստին, ի յետին դարս:— Առ ստորոտով բերդին կայ Օ-

ձաղու գիւղ Թուրքաց 30 տանց:— Մերձ սմին կամ բերդին Թուի և Բաքուսը, անծանօթ ի գիրս, յիշեալ ի նոր գրչէ մերայնոյ<sup>2</sup>:

Յարեւելից հիւսիսոյ Եհարչուի է Արջածոր, որպէս գրի յերկոսին նորագոյն ցուցակս Թեմին Տաթեւու. Առաջածոր կոչի այժմ, և Սիւրբոյ յաշխարհացոյց քարտս, մերձ ի Պրնձահանս, բնակեալ ի Հայոց, որոց է և եկեղեցի հին, և պարապին ի մշակութիւն և ի խաշնադարմանութիւն. երկիրն պողարեր է, և յաւելուած պողոցն սուաքի ի կողմանս Մեղրոյ և Նախճաւանու. ունի և ընտիր ձեռագործ անուանեալ Ղափանի կոսա: Մեծ մասն երկիրն ստացուած է Մէլիք Ստեփանեան տոհմի: Երկու վտակք խաղան առ գեղիւն, մին ի հիւսիսոյ՝ յանուն Խրաքաղ գեղի, միւս ի հարաւոյ՝ Չալիկ կօչ. հզօրագոյն եւս գետակ յարեւելից կուսէ իջեալ ի Թրքասար? (Դիւսասար?) լեռնէ, բազում անգամ յորդեալ ապականէ զայգիս և զանդաստանս, այլ օժանդակէ արօրեաց: Բնակիչք Խլաթաղի են Հայք հողագործք, տունք 35, ունին եկեղեցի փոքր:— Սակաւուք ի բացեալ, ի Հասորա և ի սմին կողման գետոյն (ի վեր ելանելով) կայ Ախտախանս գիւղ, անծանօթ ըստ ցուցակաց, նոյնպէս և որ վերագոյն եւս ի Հս. Գարաձա կամ Գարադաձ:— Վերագոյն քան զսոսա գտանին գեօղք յահեկէ գետոյն, և բնաւից հիւսիսագոյն Տորմնի որ և Տորմն ըստ հին Յուցակին. որոց եթէ ստոյգ է նշանակեալ Թու հարկին յեկեղեցին, անկէ մեծ և ընդարձակ գոյ յայնժամ, զի 26 յափ (կամ կապիճ) է, որչափ և ոչ մի այլ գիւղ վճարէր, այլ առ առաւելն 30. բայց ի պատմութեան ոչ յիշատակի. եկեղեցին կոչի Ս. Հսիփախմէ:— Սակաւուք հեռի ի հարաւոյ արեւելից սորին կայ Դաշրառս, որ իցէ Թերեւս Տափեարն անընդմէջ յետ Տորթնեայ գրեալ ի հին Յուցակին, և Տափեարս եւս արդեօք կոչելով յեղեալ յայլազգեաց յայդ նոր ձեւ:— Մերձ սմին ի Մ. Հր. և ուղղակի ի հարաւոյ Տորթնեայ՝ կայ Հոսմանց, ոչ ըստ հնոյն այլ ըստ նոր ցուցակի Տաթեւոյ, ուր աշխարհացոյցն նշանակէ և ամրոց, և մերձ է ի գետեզրն. որպէս և որ յելից նորին՝ ի ստորեւ մղոնաւ կամ աւելի բացագոյն՝ Օխրար ըստ աշխարհացոցի, որ է Թերեւս Հողար հին Յուցակին. որում գրեալ է կից յելից կուսէ՝ Սոսանդոն ? :— ի Յուցակի անդ հնում, առ երի

<sup>1</sup> Օրբեկեան, իւն:

<sup>2</sup> Նոր Դար, է, 129:— 3 Նոյն, է, 81-129:

Հողարայ նշանակեալ է Արուքս գիւղ, զոր յամի 871 Ջելանշիր իշխան որդի Սահակայ Սիւնեաց տեսան՝ ետ ի Սողոմոն եպիսկոպոս, և էառ փոխանակ զՔեիս գիւղ եկեղեցւոյն՝ որ ի կովսականն գաւառի<sup>1</sup>, և զըրէր ի վճռին, եթէ էր այն « յիմ հօրէն և յեղբարց յիս » հրիտակ հասեալ, և իմ հայրենի ժառանգութիւն էր ան և համիմաղ տեղի... Արդ իշխան էք դուք, Տէր Սողոմոն, ուսել և ժառանգել զայդ շէնդ զԱրուքսդ՝ իւր սահմանքն բաշարովմբ, ծառք և այգեք, գետով և ցաւ մաքով, արօտավարք և մարգք, ջրաղացովք և պարտիգք, եկեղեցեալ և այլ շինուածովք... Եւ սահմանքն զայս և Արուքսայ. յարեւելից կողմանէ կըմատուր և է սահմանակից, և յարեւմտից կողմանէ Համնդ-րախա և է նոյն Ս. Խաչիդ սահման. և ի հարաւոյ կողմանէ՝ հին Ջրագնացովք է, մինչև ի Բեխոյ սահմանն. և ըստ հիւսիսոյ կողմանէ Կաւարտոյ սահմանովն է... Եւ տըւաք զԱրուքս իւր սահմանովն և արքունի նեպակովն, որ էր ԺԲ դրամ<sup>2</sup>. Եւ է վկայք վճռիս՝ վասակ Սիւնեաց Տէր, և իմ եղբայրն Արուսման, և իմ որդի Տիգրան, և այլ Բաղաց տանուտէրք և Ս. Խաչին (Տաթեւոյ) պաշտօնեայք. կնքեցաք մերով մատանեալ »:

Փանգի յայտնի են դիրք Կաւարտայ և Բեխոյ, ապա Արուքս յալակողովն Չաւրնդուրի անկանի. և որպէս թուի արտաքն նորին՝ ի մերձակայ ձոր Կապան գետոյ:

Ծանօթագոյն գիւղ միջնաւ ի Հս. Հողարայ և Սօպանուի է Խոտանան, Ս. Սարգիս եկեղեցեալ: Յիշի գիւղս նախ ի սահմանագրութեան Տաթեւոյ յելս Թ դարու. յետոյ յամի 943 Փիլիպպէ Սիւնեաց Տէր ասէ գնեալ ի Խոտանեցեաց զԱղուերձ (գիւղ Հարանդայ): — Ենթահար հանգիստանայ տեղին ի յետին դարս ընծայելով զՄովսէս Բ կաթողիկոս (13 յանու. 1630 + 14 մայիս, 1633). որ յետ խառնակ ժամանակի և գործոց նախորդաց իւրոց, ի սկիզբն ԺԷ դարու և յելս ԺՁ, բարեք կարգաւորեաց զաթոռն Էջմիածնի: Մի ոմն յալակերտաց նորա, Երեմիա կարճաւանցի, գրէր գնմանէ յառաջ քան զկաթողիկոսանալն, (յամի 1635-6). « յորում փայլէ վարդապետս մեր Տէր Մովսէս քաջ րաբունին, յաշխարհէն Սիսակայ, յերկրէն որ կոչի Աճառան, ի գեղջէն Խոտանանու, և յաթոռոյն Ստաթէի, որ այժմ կոչի Տաթեւ<sup>3</sup>, որ լուսաւորէ զազգս Հայկազանն, և ժողովեալ կրօնաւորական դասս, և նորոգեաց զվանորայս և զանապատս կրկին հաստատեալ պայծառացոյց »:

Եւ ապա պատմէ զերթալ նորա յԵրեւան և հաստատել վանս և դպրոց ի Ս. Անանիա: Ճոռոմաբանն Չաքարիա Վաղարշապատեցի աշակերտ նորա՝ բազում գովութեամբ գրէ. « Տիեզերահռչակ երկրորդ լուստուս Հայոց և վերստին նորոգող Ս. Էջմիածնի... կրթեալ վարժեալ ի մամուլս առաքինութեան, ներքոյ ձեռին Սրապիոնի Եղեցացոյ », և այլն: Ընդ Չաքարիայ աշակերտեցան նմանշանաւոր վարդապետք, Փիլիպպոս յաջորդ կաթողիկոսն, Արիստակէս Շամբեցի, Խաչատուր Կեսարացի, Խարայեղ Մեղրեցի, վերոյիշեալն Երեւ-

միս, և այլք, զորս յանուանէ նշանակէ Առաքել պատմիչ, յերկար և ոճով գրելով զՄովսէսէ (ի գլուխն ԻԴ). և ամենայն յիշատակողք նորին ոչ կարեն առանց գովասանական բանից գրել: Կարեւոր գործք նորա են, յետ նորագութեան Էջմիածնի, ջանք և յաջողութիւն Ընկելոյ զպարտս աթոռոյն զբարդեալն ի նախորդաց իւրոց, որպէս յառաջն երբեմն խորհրդակից լինէր վասն պարտուցն Երուսաղէմի աթոռոյն. կարգաւորութիւն Շարականաց քաղաւածոյ ի ժամասացութեան, հաստատութիւն դպրոցաց և կրթարանին Ս. Անանիայ յԵրեւան և ի Յոհաննաւանս. արուեստ զտեղոյ կամ սպիտակացուցանելոյ զմով, վասն որոյ կոչեցաւ և պատուեցաւ ի Դահարաւ սայ: Յիշեալ լիցի և թուղթ նորա առ Վլատիլու թագաւոր Լեւոյ (30 օգոստ. 1632) ի խնամս Հայոց եղելոց յիշխանութեան նորին:

Ի սահմանս Խոտանանու խանն Բարկուշատայ բաղնեցաւ ընդ Մխիթարայ զօրապետին Դաւթի Բէկի, յամի 1724, յորժամ դարձեալ զայր սա ի կօտորածէ Թուրքաց ի կողմանց Հարանդայ. և զի գտնեալ էր յայնժամ ընդ Դաւթի, թուլարար կռուէր և յետանահանջէր վասն որոյ ոչ սակաւք ի քաջացն Հայոց անկան ի մարտին, և գերի վարեցաւ Դահուստանն Ստեփանոս, աւանդող Իրացս, որ և բարեկամութեամբ Թուրքի միոյ զերծաւ: Եր ընդ անկեալան, ասէ, նաեւ Պալի զօրավար որդի Մէլիք Փարսադանին, զորոյ պարանոցն « կիսով չափ հատեալ ընկեցեալ էին ի բացի մերձ ի Խոտանան. ուստի յետ սակաւց ուշաբերեալ լինէր, կարեալ ձեռք զղուխն ի վերայ իւր, երթայր մտանէր ի մացառս վայրացն, մինչև Եւ ցմութ գիշերոյն, և ի գիշերի յուղի անկեալ գայր. և յետ երկց աւուրց ի Հայիձոր հասանէր. և եղև սքանչազում յոյժ ամենայն տեսողացն, զի ոչ մեաւ, այլ կենդանի է մինչև ցայսօր, և է մէլիք ի Հայիձորն »:

Ի հին ցուցակս գիւղորայից հարկատուաց եպիսկոպոսարանին՝ անընդմէջ յետ Խոտանանի կարգի Եղիմզն, և ըստ տրիցն գուշակի ոչ լինել մեծ. ոչ գիտեմ թէ իցէ այժմ ծանօթ անուն կամ տեղի գեղոյ, բայց յիշեցի աստէն, վասն յիշատակելոյ նորին յամի 1616 (ԻԿԴ) ի Միլնասայ քահանայէ, որդւոյ Չաքարեայ երիցու ընդօրինակողէ Հարանց Վարուց « ի տեղիս ուր գրեցաւ, երկրիս Էճանանու, և ի գեղջէս Եղիմզեան, ի ուխտիս Ըստաթէի Ս. Առաքելոյն », յորում էր յայնժամ բարունապետն Մովսէս վարդապետ վերոյիշեալ կաթողիկոսն:

110 Մղոնաւ ի Հս. Ել. Խոտանանու նշանակի գետոյ մի Տայմա-տաղայա? երկրայական ինձ անուամբ. և ի սորա Հր. Ել. երկու մղոնաւ ստորեւ առ վտակաւ միով գետոյն՝ ի լեռնոսին՝ Սեւաքար, որ ոչ յիշի ի հին Ցուցակին, այլ ի յետնումն, և պտուղ նորա՝ այսինքն տուրք՝ յաթոռն Տաթեւու՝ 6 մարդպան. եկեղեցին՝ յանուն Ս. Աստուածածնի: Մերձ է նմին Ել. Հր. և Չալինի, կամ Չալինիս, Ս. Գեորգ եկեղեցեալ. նոյնպէս ի նոր ցուցակին նշանակեալ ընդ գետու Քաշունեաց կամ Բարկուշա-

1 Օրբելեան, Խ:  
2 Ի Ցուցակի գիւղորայից 6 նշանակի սուրբ Արուքսի, եթէ զը.

բամ իցէ և եթէ երկգրաման, կամ այլազ ինչ:  
3 Վասն որոյ և Տաթեւացի կոչի Մովսէս:




տու: ի սկիզբն յարուցման Հայոց ընդդէմ այլազգեաց առ Դաւիթ Բէկեւ, Սափի Ղուլի Մանիչարայ որդի կոչեցեալ, իշխող կողմանց Լեւազու և Մեղրոյ, 300 ըսպառագինքը եկեալ բանակեալ էր ի Չափնի և սպասէր ժողովելոյ այլոց եւս գնդաց. զոր զգացեալ Թորոսի զօրավարի որ նստէր ի Խործոր՝ գիշերագնաց եգեալ՝ ի վերայ եհաս 300 արամբք. յորմէ «զարհուրեալ Սափի Ղուլին» փախստեայ լինէր. և Թորոսն զհետ մտանէր և հարկաւ նէր ի նոցանէ արս 80: Եւ ի ժամանակին յայնմիկ հասնին կոտորեցին երիս գիւղս Թուրքաց, և առին զամենայն ինչս նոցա և դարձան ի Մանլեւ: — Ի Հս. Ել. Չափնեայ կիսով փարսախաւ բացագոյն կէրաքիչ: գեօղ՝ Թուի Գեղարքունի հին Յուսեպի, ի ծործորս անտառախիտս: — Ընդ մէջ յետին յիշեցելոցս ի հարաւոյ արեւմուտից և ընդ մէջ Չաւընդուր գետոյ՝ նշանակին ամուր հանգըրուանք Մարտի, Շորտերի, Խաչալ (Խմայն?), Չիւնարոս, և այլն: Ի ստորեւ մերձ ի խառնուրդս կապանայ և Չաւընդուրի, ի սին ձախակողման՝ մեծագոյն եւս ամուր տեղիք են, Սէյիտի կամ Սէյիտար?, Պայտախ?, Գարա-ձիւնե, Զառիգեան, և այլք: Ի վերոյ առ գետեզերքն կիսով փարսախաւ ի Մ. Հողարայ կայ Նորաշէն գիւղ, մի յերկուց Նորաշինիկ անուանելոց ի հին Յուսեպի, Ս. Ամենափրկիչ եկեղեցեալ: — Երկու մղոնաւ ի հարաւոյ Նորայինի յայնկոյս գետոյն (յաջմէն) կայ միւս եւս ծանօթ գեօղ Բաղաց ըստ հին Յուսեպի՝ կաւարտ, զոր տեսաք և ի վերոյ ի սահմանագրին Արուքայ՝ լինել ի Հս. նորին. եկեղեցին կոչի Ս. Գեորգ: — Կիսով մղոնաւ չափ կամ դոյզն աւելի ի բացեայ ի հարաւոյ կաւարտայ՝ յ'860 Չ. բարձու է Ղաքար գեօղ հայանուն, որ ոչ յիշի ի ցուցակս և ի պատմութեան, այլ միայն կատարոյ վանք: Ի վերջ կոյս մայիսի 1890 ամի Շանդր փռանկ մարդաքնին՝ արար և ի գեղս յայնմիկ զնութիւնս մարդարանականս: — Ի սահման գեղս, սրպէս և կաւարտայ յայտնեալ են Պղնձահանք, կալուածք Յունաց ոմանց և Հայոց Ագուլեցոց, հաստատեալ անդ հալոցս և քուրայս զտեղոյ, որոյ աղազաւ բարգաւաճել առնու գիւղն և սահմանորդն. որք և միարանեալ ի սկիզբն 1891 տարւոյ հանգանակեցին զումար մեծ դրամոյ առ ի հաստատել դպրոցս: Ամի ի հարուստ Պղնձահանիցն և հալոցաց հաստատեաց Նազարեկեանց, որ ուսեալ էր ի Ծրայպուրկ: Առատ է պղինձն, անհալ իբր 360/0, և իբր 20,000 պուր լինին տարեկան հանքն. առ տեղեան վաճառի պուր մի 11 բուպեաց. մասն ինչ առաքի ի Շամախի, և մեծ մասն ի Մոսկուա: Բայց նուազութիւն փայտի և նիւթոյ կրակի ոչ սակաւ ծանրացուցանէ զգործն. իշարեռն փայտածղոյ արժէ 2 բուպլ, իսկ օրավարձք գործաւարաց 60-80 կոպէկ: — Այսոքիկ ըստ Բատտէի որ քննեաց զտեղին (ի 11-12 յունիսի, 1890), գրեալ է ի նոյն աւուր ըստ յորս և Շանդր:

Թուի ի հարաւոյ սորին և ի թիկունս լերին անջրպետի ձորոց Չաւընդուրի և կապանի գոլ միւս եւս վանաց Նորավանք կոչեցելոյ. քանզի ասէ պատմիչն Սիւնեաց վաւրն Ստեփանոսի քահանայի ի Սիսական տոհմէ զկիսով Ժ դարու, յետ ձեռնադրութեանն ի Յովհաննիսէ Սիւնեաց եպիսկոպոսէ, «ցանկացեալ այնուհետեւ աստուա

» ծային իմն գործոյ, կամեցաւ շինել եկեղեցի և հաստաւ. » տել ի նմա տուն կրօնաւորաց և դասս պաշտօնէից. . . զընացեալ ապա ի բիկանց կուսէ կատարոյ վանից, և զընտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ և վայելուչ, ի մէջ երկու ճորոց ի վերայ հարթ ուսոյ միոյ սկասնի շինել եկեղեցի, » օժանդակութեամբ Հրաճաւարայ իշխանի, և կատարէ » զնա, այլ եւս գաւիթս և սրահս եկեղեցւոյն, և բնակու » թիւն կրօնաւորաց: Եւ կոչեալ ի նաւակատիս զՏէր Յուկոր Սիւնեաց եպիսկոպոս՝ սահմանեն զնա Երդայրա » նոց. և զվայրն ամենայն չրվակայ՝ ի ժառանգութիւն » եկեղեցւոյն. և զնեն Գոթեոտունս հանգէպ վանիցն, և » ժողովեալ ուրուկս բազումս անդ դարմանէին. և այս » պէս պայծառացուցեալ ամենայն սպասուք և կարգք » զվանսն յ'892 Թուականին Հայոց, (936). Ինքն երա » նելին և անհամեմատն ի մարդկանէ Ստեփաննոս կե » ցեալ բազում ամս հրեշտակակրօն առաքինութեամբ » . . . այրն երկնաբազալացի, զնաց առ քաղաքապետն » Քրիստոս ի ՆԺԹ (970) Թուականին Հայոց, ի նաւա » սարդի ամսոյ ԺԷ, յաւուր հինգշարաթուղ ի սուրբ » Պետեկոստէին. և զնի ի քնարանի առ սուրբ եկեղե » ցւոյն: Եւ յաջորդէ գաւառնորդութիւն ուխտին Նորա » վանից Հայր Հրաճաւար. և յետ նորա եղբորորդի նորին » Ստեփաննոսի՝ Քրիստափոր, աշակերտ սուրբ Հօրն, » յամենայնի նմանեալ վարդապետին իւրոյ: Բայց յետ » սակաւուց շինեցաւ և եկեղեցի յոյժ գեղեցիկ յորինուա » ծգք. և ի դրանն կամարք զարմանալիք ի զքանչլի » ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք և խարս » խաւոր սեամբք, ի Հայր Գեորգեայ և ի Յովհաննէ » քահանայէ. . . որոց ժամանակ ոչ յիշի, այլ է հաւանս » րէն ի ԺԱ դարու: Բայց երկրայական իմն է տեղի վա » նացս, զի խորագիր պատմութեանս ասէ զայս Նորա » վանս « ի գաւառին Բղննոյ. » և ոչ ուրեք այլ յիշի գա » ւառ յայս անուն, այլ գեօղ մի ի Հարանդ գաւառի, » և Բղննոյ քերդ, որոյ գաւառ ոչ նշանակի. յիշի Բղնն » և այլ ուրեք ուրեք, սակայն դիրք դոցին ոչ ի միում վայրի » Թուին. զի Ջուրն Բղննոյ Թուի լինել հարաւադոյն եւս քան » զտեղազրեալս վայր, իսկ Ջուրն Չաքեձորոյ որ ընդ մէջ » սահմանաց Մղկայ ե Հաքանդայ՝ մերձ ինքեան ցուցանէ » և զԲղնն ընդ Բորոտնայ, ըստ որում զոյգ յիշի և այլ » ար. և Բորտի է յԱլլախ, այսինքն յարեւելեան Մղուկս. » զոր իբրեւ գլխաւոր տեղի կամ ընդարձակ սահման՝ Թա » փեցին Չաքարեանք ի ձեռաց այլազգեաց, և ապա կա » ւու Սմբատ Օրբելեան: Ի դէպ է կարծել թէ ոչ մի՛ այլ » կրկին Բղննք իցեն, որպէս և բազում համանուն գեօղք » են Սիւնեաց յայլեալ գաւառս, նա և ի նմին իսկ ի » միում գաւառի:

Չամանակի և պատեհի Թողեալ յայտնել զայս, խընդրեցուք միւս եւս անուանի վանս, որոյ նոյնպէս ոչ ուրոյ տեղին և ոչ նշանակեալ ի քարտի, այլ է հաւան » օրէն յարեւմտից հարաւոյ ցարդ տեղազրեալ մասին Բա » դոց, ի հովտի ուրեք օժանդակի կապան գետոյ, և է » կոչեցեալն Տանձափարախ, որ ոչ նշանակի ի Յուսեպս » Թեմին Տաթեոյ և ոչ ի քարտի. այլ նախ յիշի ի սկիզբն » Ժ դարու ի շինութեան վահանու վանաց, ոչինչ կարի » հեռի ի սմանէ ի ստորոտ լերին Բալարեբրու, որոյ հան



76. Պրնանանք Կասարայ .

դէպ կայր Տանձափարախ, զլեառն մի և զձոր և զգետ անջրպետ ունելով, այլ և զգեօղոն Աշաղու, Աշաղուայ, Գետարավայր և Շէկք. զոր և « Սուրբ առաքինարան » կոչէ պատմիչն, և զմիայնակեացան՝ Խարազնագգեացս, և սանձանատրս, ուր եկաց ժամանակս ինչ ի ճգնութան վախան որդի Չագկայ իշխանի Բաղասց՝ ի հրաժարելն յաշխարհէ՛: — Յետ բազում դարուց, յամի 1393 Մաւր Յէնս վարդապետ աշակերտ Կրիգորի Տաթեւացոյ աստանօր գրէր զքաղուածոյ Քարոզագիրս իւր, ընդ գրոց Եւագրի և Նեղոսի, որպէս ասէն, « ի ներքազոյն անտ »  
 « Կրտսէս Տանձափարախոյ, յորում նստէաք լուիկ ի »  
 « տան »: Ոչ գիտեմ յառաջ թէ յետ նորս այլ ոմն ընդ օրինակէր անդ այլ ինչ գիրս « ի գիւղս Խնկանց, ընդ »  
 « հովանեաւ սուրբ Անապատիս՝ որ կոչի Տանձափարախ, »  
 « յառաջնորդութեան, սուրբ մենաստանիս՝ Տէր Մովսէս »  
 « սի, որ բարունական գաւազանաւ և քարձրագան իշխս »

» նարեանք տիրէ մերումս ժողովրդեան »: Ի նորագու թեան ճգնազգեցիկ կենաց ի սկիզբն ԺԷ դարու՝ Արիստակէս վարդապետ Բարկուշատեցի շինեաց աստ Անապատ, յայտ է օրիչ ի հնոյն, կամ նորագաւ բոլորովին, սև »  
 « անդ եկաց մինչև ցվախճան կենաց իւրոց և անդէն թա »  
 « ղեցաւ. և տեղին անապատ՝ կայ հաստատուն մինչև »  
 « ցայսօր »: Խնկանց գիւղդ յերի անապատին Տանձափարախու՝ դասի ընդ գեօղս Աճանանու ի նոր ցուցակի: —  
 Ի նոյն կողմանս հարկ է լինել և այլոց ոմանց գիւղից զասելոց ի հին Յուցակին ի Բաղս, և ի նորումն յԱճանան, յորոց յիսնիւ չափ մնան արտաքոյ տեղագրելոցս, և ոչ նշանակին ի քարտի. և զի չէ կարի ընդարձակ սահման արեւմտեանս Բաղաց, թուի թէ խիտ առ խիտ առ երի իրերաց եղեալ էր անդ շինութիւն բազմաբնակ. և հարկ էր լինել այսպէս՝ առ ի բովանդակել ի փոքու թագաւորութեան անդ Բաղաց՝ 1000 կամ 1400 գիւղից:

**Բ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՔ=ՔԱՇՈՒՆԻՔ=ԲԱՐԿՈՒՇԱՏ**

111. Առաջին գիւղից Քաշունեաց կամ Միւս Բաղաց ըստ հին Յուցակին է Երեց, զոր սխալ համարիմ գրեալ յօրինակս ինչ Երէն. քանզի հաւանօրէն կոչեալ էր յանուն Երիցակայ վանահօր և յետոյ եպիսկոպոսի Սիւնեաց, որ շինեացն անդ զհաշակաւոր մենաստանն Երիցու վանք, յորմէ և գեօղն Երիցվանիկ<sup>1</sup>, այլ արդ կոչի և կարմիր վանք: Ի նկարագրէ բանից պատմիչն և ի կարգէ գիւղիցն, և յանուանէ վանք լերին՝ գուշակի գոլ ի սահմանամէջ Երկուցն Բաղաց, երկու մղոնաւ ի Հս. Եւ. Սեւաքար գեղջ և նոյնքան ի հարաւոյ Զեւու: Անայցելու կամ անծանօթ առ յետինս մնացեալ, երախտապարտ և յայսմ գտանիմք պատմիչին, որ վասն դրիցն ասէ. « Էր վանքն այն տեղի գեղեցիկ և զարմանատիպ » ի վերայ բարձրաւանդակի միով, շինեալ եկեղեցի յանուն Սրբոյ Նախավկային, նորին Երիցակայ ձեռամբ, և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ի ներս ի պարըսպին խցկունք թուով միայն 40. մշտնջենաւորք, խաբազնագգեստք, լուռք. որք իբր զկանթեղունս մշտապատ և անչէջս յիւրաքանչիւր խղի հանապաղ տքնու: Թեամբ վառեալք լինէին բոցով շնորհաց Հոգւոյն: Իսկ Երիցակս այս անեալ էր նախ բազում ամաք (ի յետին կէս Ե դարու) ի Բաղք գաւառի, ի տեղի մի քարան:

» ձաւ. և ապա գնացեալ ի վանս երանելոյն Գիւտայ, »  
 « և անդ անցուցեալ բազում աւուրս անտանելի ճգնութեամբ. և ապա օժանդակութեամբ և հրամանաւ սրբոյ Տեառն Գիւտոյ՝ եկեալ ի տեղին յայն 12 կրօնաւորք և բազում ընչիւք, զորս պարգեւեալ էր Հայր ընդ Գիւտ, շինեաց զեկեղեցին որ կոչեցաւ Նոր Երուսաղէմ: Բայց ուրուկքն որ ի ժամանակին հալա ծեալ լինէին յանվայր տեղիս, քնակեցուցեալ էր Սուրբ Հօրն Գիւտոյ յայնմ վայրի. որք հակառակէին շինութեան Երիցակայ. զոր լուեալ սուրբ Հօրն՝ եկն և համոզեաց զնոսս ի խաղաղութիւն. և սահմանեաց զպէտրս ընձեռել ի վանիցն ըստ չափոյ. և ինքն որ ըստ օրէ գործակից լինէր շինուածոյն, և զճաղ շինողացն յղէր: Եւ այսպէս շինեալ տուն Աստուծոյ և կանգնեալ տեղի փառաբանութեան, յարդարէ զնա ի բրնակութիւն հրեշակակրօն անձանց »: Յետ վախճանի Մուշէի եպիսկոպոսի Սիւնեաց (իբրու յամի 519) աշխարհատիկինն Սառակիւս՝ ամենայն ժողովրդեամբն հըրաւիրեալ զհամանուն կաթողիկոսն Հայոց Տէր Մուշէ, խնդրեաց տեսուչ աշխարհին իւրոյ զԵրիցակս զայս, որ շառնոյր յանձն. վասն որոյ ինքնին եկեալ կաթողիկոսին՝ յետ պատգամաւորացն, « ի սրահ նորս, և լի սրտմտու-

1 Օրբեւեան, Լթ. ԽԵ. ԿԲ:  
 2 Բաճիկի նոյն նամարի զԵրեցվանիկ և զՆախավկայի, զար-

ձեալ և երբորք անուամբ կոչել Արծաւմիկ. այլ հին Յուցակն ուրիւ գրէ զԵրեց և զՆախավկայի, իսկ երբորք անունն ոչ գիշի:

» Թեամբ ցասուցեալ կնքեաց նշանա խաչին, ասէ. ընդ-  
 » էր այդպէս յամուռեալ կաս. դեւ գոյ ի քեզ. սաս-  
 » տեացէ Աստուած ի շարն, և հալածեացէ: Յայնժամ  
 » ընդ բան սրբոյն ել ծախ Թանձր իբր զփոթորիկ հող-  
 » մոյ և վերացաւ ի տանէն. և ապա եկեալ երամբ սպի-  
 » տակ աղանեաց իջան ի ցուս սրահին. և մին ի նո-  
 » ցանէ սլացեալ եկն իջաւ ի վերայ Երիցակայ, և չըր-  
 » ՚էր ի վերայ խոտր քուսիթային, և նուազ ձայնիւ խո-  
 » սէր մարդկորէն, Արժան է, Արժան է. իսկ բազմաւ-  
 » թիւնն տեսեալ զայն, մեծապէս զոչէին միարան. Ար-  
 » ժան է, արժան է: Չայն տեսեալ սուրբ Հայրն՝ այլ ոչինչ  
 » ի իշխեաց ընդ իմաստանել, այլ ի գուճանկեալ առաջի կա-  
 » թորիկոսին արտասուած թոր կական: մամբ ասէր. կամբ  
 » Տեառնդ լիցի և ոչ իմս. ապա առեալ Տեառնն գձե-  
 » ւանէն՝ տանի յեկեղեցին, և հանեալ ի բեմն՝ օժանէ  
 » զնա մետրապոլիտ՝ Սիւնեաց, և բերեալ նստուցանէ  
 » յաթուռն... իսկ երանելին Երիցակ կալեալ զաթուռն  
 » ամ մի՝ փոխի ի վերինն Երուսաղէմ՝: — Յիշի մե-  
 » նաստանս և յաւուրս պայծառութեան նորոց իշխանացն  
 » Սիւնեաց, և վանահայր նորին Ահարոն յամի 843: —  
 » Ի վերջոյս դարուն (ԹԺ) Գէորգ Արիսական երիտասարդ  
 » տոհմիկ ցանկացող ներանձնական կենաց՝ թողեալ ըզ-  
 » կին և զձնողս, Երկրորդ անգամ խոյս տայր « զգեցեալ  
 » մազէղէն խոտր և զզղէնս պատառուտունս, գնայր  
 » ի մեծ առաքինարանն Երիցու վանից, առ աստուած-  
 » սազգեաց և սրբախայլ ճգնաւորն՝ մեծ էգոնոմոսն  
 » Թէոդորոս քահանայ. և նա յոյժ ուրախութեամբ  
 » ընկալաւ զնա. իսկ ի հացեալ մօր նորս և կնոջն, և առեալ  
 » զհամազգի ի իշխանան Սիւնի, դիմեցին ի վանսն Երի-  
 » ցու, և բազում և զանազան մողթանօք ջանացին, և  
 » ոչ ինչ կարացին զնա շարժել յայնմ կամաց. — Թողին  
 » զնա ի կամս իւր և գնացին »: Որոյ երթեալ յիտոյ  
 » ի Սեւան՝ առ մեծ ճգնաւոր Հայրն Մաշտոց, և մար-  
 » զեալ ի նմանէ, դարձաւ անդրէն յԵրիցու վանս. միւս  
 » եւս անգամ գնացեալ և առեալ ի նմանէ գիր՝ ձեռնա-  
 » դրեցաւ քահանայ հրամանա Գէորգայ կաթողիկոսի,  
 » և միթառէր թղթովք Մաշտոցի. զորոյ և յետ վախճա-  
 » նի նորա՝ երթեալ « բերէր զընդաման և զկնկողակն խոյ-  
 » բակերայ, և զպարեգոս երանելոյն, նշան՝ յանուն Սիւ-  
 » նեաց. և ինքն բնակէր յԵրիցու վանս ընդ Թէոդորոսի  
 » հրեշտակակրօն վարուք. և անդէն վախճանեալ, եղաւ  
 » արքանեալ մարմին նորա ընդ երիցս երանեալ սուրբ  
 » հորն Երիցակայ, ի նմին սրբարտնի»: — Ընդ նշանաւոր  
 » վանորայս աշխարհին և ի կարգի մշտապալատօնիցն խըս-  
 » տակրօնից՝ դասի Երիցու վանք ի պատմութեան Սիւնեաց:  
 » Քեօղն յարեւմտեան ստորոտս է վանաց լերինն: — Յաւու-  
 » րըս Գաւթի բէկի Մէլիք գեղջն Ֆռանկուլ անհաւատարիմ  
 » գտեալ ազգայնոցն և հաւատոց, և դաշնակցեալ Փաթ Ա-  
 » լի խանի Բարկուշտայ՝ նենգութեամբ ետ կոտորել ըզ-  
 » զօրս Հայոց ի մարտի, յորում սպանաւ քաջ զօրավարն  
 » Թորոս ի իշխան կողմանց Չաւընդուրի: Յետ սակաւուց  
 » Միթար զօրավար հասեալ ի կողմանս գեղջս այսորիկ

» ի վերայ վրանաւոր Թուրքաց Բարկուշտու, յաւարի է-  
 » առ զինչս նոցա և զանասունս: Պատմիչ իրացն ասէ  
 » կոչիլ գեղջն և կարմիր վանք. իսկ կեղեցին Երիցականի  
 » այժմ կոչի յանուն Ս. Աստուածածնի: — Արտաքոյ գեղ-  
 » ջըն է գերեզմանատուն, և սուղ հեռի յուրոյն դիրս ընդ  
 » կաղնեաւ միով ցուցանեն զգերեզման ուրացողին Ֆռան-  
 » կուլի, և ցարդ ընդ Վասակայն՝ նզովս զհետ արձակեն:  
 » Ի գլուխ գետակին հարաւայնոյ՝ զոր ի վերանդր յիշ-  
 » ցաք յարեւելեան Բաղս, որ և մերձաւորն է Չաւըն-  
 » դուրի, նշանակի Սիրքեստազ? գիւղ, ոչ է յայս զինչ ի  
 » հնուքն. այլ ծանօթ է որ մերձ նմին յարեւելից կուսէ  
 » Աղախորդն՝ Ս. Աստուածածին եկեղեցեալ: Աստուծոյ  
 » մշեաց գվերոյիցեալ պատերազմն Փաթ Ալի խանն ընդ Թու-  
 » րոսի զօրավարի, պատրանօք Ֆռանկուլի եկեալ «ինքն և  
 » ամենայն զօրք իւր և բանակեցաւ անդ: Եւ եկն առ նա  
 » Ֆռանկուլն երկու հազարաւ, և եկաց ի մի կողմն Թու-  
 » րոսին. եհաս անդր և Փաթ Ալի սուլթանն, և եղբայր  
 » նորին Աղախի խանն բազում զօրօք քան որչափ էր ընդ  
 » Թուրոսին, կրկնապատիկ և եռապատիկ, և առաւել  
 » եւս, իբրու ութեւասան հազարաւ: Եւ իբրև ճակատե-  
 » ցան ընդդէմ իրերաց զօրքն սուլթանին և զօրքն Թու-  
 » րոսին, զօրքն սուլթանին փախստեայ լինէին, և սղթա-  
 » զհետ լինէին նոցա. և մինչդեռ վանեալս առաջի տա-  
 » նէին զնոսա, անօրէն Ֆռանկուլն արս արձակէր զկնի  
 » սուլթանին, և սսէ. Չինչ գործէք, զիտրօք փախչիք-  
 » դարձարուք ի կրունկս, զի ահա ես ընդ ձեզ եմ. դուք ի  
 » յաւաղոյ և ես զկնի սոցա, խորտակեցուք զսոսա: Եւ  
 » արարին այնպէս. և պաշարեցին զզօրսն Թորոսին ի  
 » յառաջոյ և զկնի, և սկսան կոտորել. և զԹորոս սպա-  
 » նին. և միայն շորս հարիւր արք գերծեալ ի նոցանէ՝  
 » անկան ի Չաւընդուր. և մնացեալքն ամենեքեան ան-  
 » կան անդ »: Չհետ նոցա անկանել և միսլ ի Չաւըն-  
 » դուր խորհէր Փաթ Ալի, այլ լուեալ զի Նուբար և Պապ  
 » զօրավարք գումարին ի վերայ իւր, դարձաւ յետոս:  
 » Ի հարաւոյ Աղախորդի՝ մղոնաւ հեռի առ գետ-  
 » եզերքն կայ Ագարակ գիւղ, որ ըստ հին Յուցակին ի  
 » բաժնի (արեւմտեան) Բաղայ է: Երանչափ հեռի ի մա-  
 » նէ ի ստորեւ յԵլ. Հր. առ գետեզերքն նշանակի ամուր  
 » հանգրուան Էմազտոս? և այլ նոյնպիսի տեղիք երկուստեք  
 » գետակին. որպէս, Արախիւն, գուցէ Արտէն հին Յուցա-  
 » կին, Քեւապոս, Հաւգապոս, Գարագոյռնիչոս:  
 » Առ միւսով գետակաւ որ յաջմէ Բարկուշտայ գետա-  
 » հովտին, ի վերնակողմն նշանակի ամուր գեօզն Փառի-  
 » ճան, որ ոչ յիշի ի ցուցակս Թեմին Տաթեւոյ: Ի Հր. նու-  
 » րա հանգրուան Մաշտաջ. յելից սորա Չարիլի. յորոց ի  
 » Մտ. Հր. և մղոնաւ և կիսով ի Հս. Աղախորդի՝ Վժա-  
 » նիս կամ Վաժուլիք ըստ հին Յուցակին: Առ գետ-  
 » եզերքն յելից հարաւոյ սոցին նշանակի հանգրուան մի ա-  
 » մուր Պոյնաքեար? անուն:

1 Շատ կանխէ պատմիչն. չեւ եւս էր յայնժամ ինչիւր կամ  
 կարծիս մեարագողուութեան:

2 Բաթթի Եղուարը գրէ զանուն գեղջս ի Վիպասանութեան իւ-

րում, և զհակասատեղ մարտին ի Պորսից կոչեցեալ Նուբարի զ-  
 այսինքն՝ Մարգ Նարկէս ծաղկանց. և անդ թապեալ ասի հաւա-  
 տարիմ մելիքն Թորոս:

Քաղաքացի, հարկ է թէ և երկուստեք ստորին ընթացից Բարկուշատ գետոյ՝ սփռեալք իցեն, յոր սակս և յանուն սորին իսկ կոչէին արեւմտեան Բաղք, և գետն յանուն միոյ ի մեծագոյն գեօգից գաւառին՝ Բարկուշատ, ըստ հին Յուցակի, որ ի յետին դարս ի տէրութեան այլազ. գետաց եղեալ է իշխանանիստ, ուր և Փաթ Ալին վերայիչեալ նստէր. այլ ոչ նշանակին դիրք նորին, հաւանորէն առ գետեզերքն. էր նորա ի հնումն և բերդ ամուր՝ ընդ նշանաւորս աշխարհին Սիւնեաց: Ընդ սոսին պատշաճ երեւի և երկայնածիր անձուկ ձորագետոյն Չեմի-չայ կոչեցելոյ, որ ի հարաւոյ Հարանգայ, մասն լինել Քաղաւնեաց զի նշանակի անդ ի քարտի և տեղի ըստ նոր ցուցակի, անուանեալ Բերդիկ. գարդիս այդու անուամբ լեռնակ մի ճանաչի: Դարձեալ, այսմ ձորագետոյ պատշաճել թուի ինձ և Ման գեղը հին Յուցակին. զոր Ատրնեքսեմ որդի Վասակայ նոր նահապետի Սիւնեաց վաճառեալ էր քեռառն իւրում Հրաբատայ իշխանի. և զի անորդիք էին, տիկինն այն Քոչարիդուխտ՝ ի ծերութեան իւրում, յամի 867, պարգեւեաց եկեղեցւոյն Տաթեւու ի ձեռն Տեառն Սողոմնի եպիսկոպոսի, գրեալ և վճիռ, յորում աւսէ... « Ետու ես Քուպղիդուխտ զայդ շէնդ՝ լերամբ և » զաշտով մարգով և արտով, չրով և ցամաքով, ծառովք » և անկովք ի Ս. Խաչդ և ի Տէր Սաղոմոնի Սիւնեաց ե » պիսկոպոս. ես զիմ հոգիս ի քեզ յանձն արարի. արդ իշ » խան ես դու Տէր Սաղոմոնն, և որ յետ քո այլ յաւորք » ի սրբութեանց յաթուգ Սիւնեաց՝ եպիսկոպոսունք, » ուտել և վայելել զայդ շէնդ բողբոմիմբ իւր սահմա » նօքը մինչեւ յաւիտեանս ժամանակաց...: Եւ գրեցի » յ' ՅԺՁ Թուականութեանս Հայոց, վկայութեամբ իմ » եղբորորդեացս, Տեառն Վասակայ և Տեառն Աշոտի և » Տեառն Գրիգորայ և Տեառն Սահակայ, և իւրեանց ազա » տաց, և ամենայն Շնհերեցեաց »... — Մերձ ի Ման կամ ի նմին ձորահովտի թուին ինձ և Տանձավայր գիւղ, ի յետնոց Տանձաւեր կոչեցեալ. և Խողվանի, զոր՝ նոր ցուցակ թեմին Տաթեւոյ առ լինել մէքրե Մայրաշ գեղը. իսկ ի հնումն՝ առանձնակ վիճակ նորին ցուցանի կոչիլ Վանանդաձոր, յանուն Վանանդ գեղը, որ նոյնպէս ի կարգին մերձ Տանձավայրի դասի. ի վերջկոյս ԺԱ դարու, առ Թագաւորութեամբ Սենեքերիմայ « զԽողվանի գեղ ի Վանանդաձորի», բարեպաշտօն տեարք նորին ետուն ի կալուած Տաթեւոյ եկեղեցւոյն: Չտեփական վիճակ կամ գաւառ Տանձաւերի՝ Մաղանջուխ (որ է Մաղանջ) կոչէ Խաչատուր քահանայ որդի Դավիթու և Ազիզու<sup>1</sup>, և աշակերտ Դաւրի ուրումն եպիսկոպոսի, յամի 1619, գրիչ աւետարանի միոյ, ի խնդրոյ բարեպաշտ Խանի տիկնոջ և սուն նորա Խօձաձանի. զեկեղեցին կոչէ Ս. Ստեփաննոս. յիչէ ի կարգի բանիցն լինել յայնժամ ի Տաթեւ գերլանիկ Բարունակետն Տէր Մովսէս (կաթողիկոսն), « նմանեալ որոյն անյաղթ և քաղ քերթողին Մովսէսի »: Ստորին գետահովիտ Բարկուշատու՝ յարեւմտակողմն

լեռնային է, այլ և անհարթ և անտառային, և թուի բունադատեալ մշակութեամբ. բայց բազում մանր բերդորայք են ի լանջս և ի զլուխս լերանց: Չախակողմնն (արեւելեանն) թուի հարթագոյն, այլ ոչ քաղ գալարաւէտ: Ոչ դիտելով ստուգիւ զորպիսութիւն վայրացս՝ նըշանակեցի զգեօլեանն և զբերդեան ըստ աշխարհացոյց տախտակի, ի Հիսուսի-քեօփրիս կամրջէ խաղալով և իջանելով ըստ գետոյն ի հարաւ կոյս: Առաջին բերդիկ յահեկէ գետոյն է Պապայրոս կամ Պեփայլու, որում հուպ ի հանգիստ թաւիկ կամ Մոտեփանչու գեօղ ոչ փոքր. և մերձ սմա ի նմին կողման Ղջշիկ կամ Կեօշիկ? բերդագիւղ. և սմա մերձ առ գետեզերքն՝ Պախախարոս բերդիկ. առ որով վտակ մի յարեւմտից ի սահմանաց Տաթեւոյ եկեալ անկանի ի Բարկուշատ, ունելով յահեկէն որ է ի Հօ. զմեծ և զամուր գիւղն Գարապաղազ. — երկու մղոնաւ ի Հր. սորա առ գետեզերքն, յալմէ, կայ Ճոնաւրոս բերդագիւղ. յորոց Մ. մղոնաւ հեռի ի գետոյն՝ Խաչապա ամրոց. որոց ի հանդիսոյ՝ յահեկէ գետոյն՝ գեօղքն, Քուպարոս և Գարաքեանեալ — ի Հր. Ճամուր լեայ (յալմէ գետոյն), ոչ սակաւ հեռի երկու բերդատեղիք Քերքաձանեան անուն. և միւս եւս առ գետեզերքն՝ Գոյարոս? հանդէպ սորա յահեկէ գետոյն ամուր և մեծ գեօղ Կեօտաղոս. և իբր կիսով մղոնաւ յԵ. Հր. Գոյալուի յալմէ գետոյն մեծ և ամուր գեօղն Տեփրաձիկ (Երկաթաղք), ընդարձակ անգաստանօք և պարտեզօք, մինչեւ ի խառնուրդս Չեմի-չայ՝ գետակի կամ Չեյվայ, որ գայ յարեւմտից ի թիկանց լերանց արեւելեան սահմանին Տաթեւոյ, և խաղայ ընդ անձուկ այլ գեղեցիկ գալարաւէտ ձորակ, ի միջի Քափաս-տազ? երկայնանիստ լերին, յահեկէն (ի հիւսիսոյ), և Քեօաղի և Պարտակահուս, այլ և Ալանչու և Բերդիկ լերանց ի հարաւոյ. ի սահմանս յայտսիկ՝ նշանակէր Բատատէ (27 մայիս, 1800) ի Կորէս գնալով, յազգս բուսոց, Վանշիժակ (Veronica multifida) կաթնակապոյտ ծաղկամբ, Եղեւառու (Xylosteum). Խազիդան սպիտակածաղիկ, Էջեւառու ծաղկագեղ, Յասնիկ վայրի, Լչոտակ, Չեյախ (Celsia), Կիսպսելի (Cypselus apus).

Ի միջակողմանս ձորակին՝ առ եզերք չրոյն յալմէն՝ կայ թաղախտար? ամրոց. բայց զլիսաւոր շէն ձորահովտին է՝ Չեյվա, յալմէ նորին, փարսախաւ յեկից յիշեալ ամրոցիդ. իսկ յեկից կուսէ Չեյվայ բացագոյն նշանակին ամրոցն Չոր և Մագանի? — Հուպ ի բերան գետակին Չեյվայ ի Բարկուշատ՝ կայ յալմէն իբր մղոնաւ ի հարաւոյ Տեմիրճիլէրի՝ նման նմին ամուր և մեծ գիւղ Տոնաւարու. և ի սորին հարաւոյ առ եզերք Բարկուշատայ՝ Միլլար? յորմէ փարսախաւ ի ստորու և նոյնպէս առ գետեզերքն Կալ, և հուպ նմին ի Հր. Մամար. յԵՄ. յահեկէ գետոյն՝ Կիսնէիդ հանգրուան: Երկու մղոնաւ ի Հր. Մամարայ յալմէ գետոյն՝ Ուշայրոս հանգրուան. և գրեալ է կից նմին Օպիձա կամ Տիլիժան<sup>3</sup> գիւղ. և սմա

1 Յիչէ երեցը գրիչ և զեղբոր իւր Խօձա, զկին իւր Կոչուհուր. զորդի Խօձանի՝ յառաջին կնոջէն Յուստիանայ՝ Խօձուր, և ըզկին սորա Խօձուր՝ զգեօառոյս որդիս՝ Մուրատպալաշ, յայնում և ծսաղով. և զՅեօեւառն ի Խանեայ՝ Էվազ, Տէլիք պապ և Գաւար, և զժամադակս նորին ի ծախս գրոցն՝ զկանայս, Սօլում, Կանէ

« որ աւետարանիս մէկ ուղղ երեւոյ (ազատի դրամ), և Մարեանէ՝ որ ի նոյն պէտս ապ «մի փոքրիկ տալ?» »  
 2 Բատատէ ի տեղագրութեան Գարապաղի և ի քարտի նորին Չայի-Գ կոչէ զգետակս այս:  
 3 Այսպէս գրէ Տեղագու, Գ, 60:




նոյնպէս մերձակից խալիսան. առ որով աւերակ տեղի մի կամ ապարանք խալիսան — դարպասի կոչեցեալ, որոյ դուռն գեղեցիկ կոփածոյ քարամբք կերտեալ է, որպէս է և անդատակ ապարանիցն կործանելոց. և շուրջ զնովաւ անգիր գերեզմանք Հայոց: Բնութիւն երկրին որ ի միջոցի գեղջև և Օպլիճայի՝ հրակաղմ է, ըստ քննութեան Տիւպուայի: — Կիսով մզնուա ի Հր. խալիսանի է մեծագոյն գիւղ խօստիսան, մերձ ի հուն անցի գետոյն. այսպէս աղաւաղ կոչեցեալ յայլազգեաց, յանուանէ Խօճայ Յովնան ճօխի առն վաճառականի, զորոյ ինչս յափշտակեաց Փաթ Ալի բռնաւորն՝ ղիմամարտ Դաւթի բէկի, և ազգատ արար: Սակաւ մի եւս ի ստորեւ խառնուրդք են երկոցուն գետոցն Բարկուչատայ և Հագարու, և ի կիցս անկեան նոցին փոքրիկ բերդ կրաշաղախ քարամբք՝ Չիգմէյի անուն:

Ի հին Յուցակի Բաղաց՝ յիշեալն գիւղ Եղնուզն՝ վկայի ի յիշատակարանի միում յամի 1671 ի Բարկուչատ գաւառի՝ Եղնուզ կոչմամբ, զրելոյ վասն Տէր Մեղիքիսեդ քահանայի որդւոյ Յովնանու քահանայի, որ էր ծննդեամբ ի Գաւառ գեղջէ Գեղամայ, և որդեգրեալ էր աստ Սիւմեթի ումնն բարեպաշտի առն, յաւուրս Ա. Շահաբաի, փեսայացեալ ի դուստր նորա Սիմա, և յետոյ մեկուսացեալ յԱնպատն առ ոտս Արիստակիսի վարդապետի որպէս և դուստր մի իւր Սանդուխտ անուն եմուտ ի վանս կուսանաց, և թաղեցաւ ի հօրէն: Երկարորէն կարգէ յիշատակարանն զանուանս օրդուց և թուանց Մեղիքիսեդեկի, յուստերացն և ի դստերաց սերեայս ցհինգ կամ վեց ազգ:

113. Բազում հաւանութեամբ արեւելեան Բաղաց մաւրն է և Ստորին գետափովիտ Չաւընդուրի, որում ի դէպ զան բանք պատմին Սիւնեաց և յիշեալն ի նոսին Աղաւնի գետ, զոր տեսցուք ընդ հուպ. կարգեալ նախ զանուանս նորոց գիւղորայից, ըստ աշխարհացոցի, ըսկրտեալ ի խառնըրդոց փոքունց և յետին օժտողակաց գետոյն որ յալմէն, որ է հարաւայինն. յորում ի ստորեւ Քէղեալի գեղջ կայ Շալիպի, և ի հարաւոյ սորին Մերթիքար կամ Մերթիքարի լեառն ի պարու անջրպետաց Չաւընդուրի և Պասուղի, և թուի բերել զանուն Մերթակերտ գեղջ հին Յուցակին՝ որ յայսմ վիճակի Բաղաց կամ Քաշունեաց: Ի սին կողման խոնարհազոյն մինչեւ ի բերան Չաւընդուրի յԵրասխ՝ են գեղջ աւուրք Բիրչեան, Չարի — Մաշուրան, Դարասարտ կամ Դերի, որ թուի՝ Տրեայ հին Յուցակին, և կայ յարեւելեան անկեան խառնըրդոց Չաւընդուրի ընդ Երասխայ,

ի կողս բլրոյ միոյ իբր 3-400՝ բարձու, յորոյ քարագազաթան կայ աւերակ բերդի: — Աստանօր առ գեղջաւագի Տրեայ ազաւ Տիւպուա, յամի 1834 (ապրիլ 13), և նստեալ ի վերայ դալարոյ՝ ստորագրէր զՀուրջա՝ այ վայրսն, որպէս երեւէին նմա, պղպղակեալ և պղտոր ալեաց գեղնորակ Երասխայ՝ ընդունելով զպայծառ վտակս Չաւընդուրի՝ սահագնացս ընդ մէջ թփոց և արտորէից բըրընձոյ. անդր քան զգետախառնունսն՝ դաշտ գեղեցիկ, անդաստունք և ծառաւտան, և արօտականք՝ որք իբրեւ կէտ մի սեւորակ նշմարէին. ի ձախմէ կողմանէ՝ յայնկոյս Երասխայ՝ եռատակ պարսպածեւ կրային լերինք՝ պակեալք մարգար և զիհեօք. յալմէ՝ պար Ալանկիզի կամ լերանց կապանայ՝ որք աղխաղխեալ յափանց ծովուն Գեղամայ պատուար կանգնին Երասխայ. ի միջոյ ձիւնափայլ գագաթանց նոցին ուրեք ուրեք ցցուին յայտքար (diorite) կատարք ի սպառն ապալերկք. ի զոգ հովտին



77. Շիրիմ. ի խալիսան դարպաս

յորում զեռայ Երասխ՝ լերինք ամենակերպ ձեւօք, և ոմանք ձիւնապատք և ամպամածք. անդրագոյն եւս՝ բլուրք խոնարհեալք իջեալք ի հարթութիւն դալարաւէտ դաշտաց Առանայ, ընդ որս խաղացեալ զնայ գետն մեծ՝:

Յահեկէ Չաւընդուրի ամբառնայ Պեղիք խանէ լեառն, ի ստորեւ առ գետեզերքն Մարշալի հանգրուան, Կեմիք գիւղ կամ Հեմիկ; Մարաքէյին?, Սաֆրեար, Թարար, ԳարաՄուշուրան հանդէպ Սարի Մուշուրանայ և Չանկեարան. և առ խառնըրդովք Չաւընդուրի յԵրասխ՝ երկուստեք յանկիւնս նոցին կան համանուն գեղջքն Մինքեանի?, որ և հնութիւն հնչեն, թէպէտ եւ ոչ նշանակին ի ցուցակս. ի ձախակողմեան ափին գոյ պահակատուն Թուսաց:


Յայսմ կողման վիճակիս Թուի ինձ լինել Նախկորզանն կամ Նակորզան գեղաքաղաք, դաստակերտ քաջին Բաքկայ հօր ուրացելոյն վասակայ, զոր շինեաց ի

1 Superbe paysage: on plane sur l'Araxe, qui ralentit son cours en entrant dans le bassin du Karabagh, et qui serpente en formant plusieurs îles. Ses eaux troubles et jaunâtres se mêlent aux ondes claires et limpides du Tchalouder-tchaï, qui arrive en se glissant au milieu des buissons et des rizières. Derrière ce confluent se développe une belle plaine couverte de champs de céréales et d'arbres, sur laquelle de petits points noirs indiquent le bétail qui pait. A gauche, derrière l'Araxe, s'élançent une haute paroi de calcaire jaunâtre, à trois étages, tapissée de gazon et de genévriers. A droite, derrière ces collines de molasse, s'étend toute la chaîne de l'A-

laghez ou de Kapan, qui des bords du lac de Sévang, vient barref l'Araxe. Ses sommets sont couverts d'une neige brillante que percent de temps en temps des pics de diorite tres-escarpée et entièrement nus. En avant, des collines arrondies et d'autres à parois escarpées, indiquent les serpentines et le calcaire noir. Dans le fond de la vallée où bouillonne l'Araxe, des montagnes de toutes les formes imaginables, et quelques-unes couvertes de neige, se présentent aux regards de l'observateur; les nuages coiffent leurs cimes. Dans le lointain, les collines s'abaissent au niveau des plaines verdoyantes du Karabagh, que traverse l'Araxe.— DUBOIS, Voyage. IV. 56-7.

դարձի իւրում՝ իբրու «նախ զնա կորզիալ առ յինքն  
 » յիւր հայրենեացն», յետ երկտրամեայ տարագրութեանն  
 և ծառայութեան ի Գրան Պարսից. առ որս ցուցեալ մե-  
 ժամեծ գործս արութեան, եգիտ շնորհ բառնալոյ զյուշ-  
 արար նշան վրիժուց հօր իւրոյ Անդովկայ, (զսանդն  
 մոխրալի) և արձակեալ յանշտացեալ երկիր իւր հայրե-  
 նի, զայս նախ շինեաց. և զի մեծ էր տեղին՝ ոչ միայն  
 գիտաբարաց կողմամբն վկայի, այլ և յուսմութեամբ տը-  
 րիցն յեկեղեցին Սլանեաց, (շՍ բեռն)։ Գրից սորա լինել  
 յայսմ կողման՝ վաստս ընծայէ և զրուցախառն պատ-  
 մութիւն Հարն Գիւտայ, որ էր որդի Շարիմայ իշխանի  
 Գողթան և զառաջինն անուանէր Վլասակ, և վասն ժա-

ռանգութեան՝ մարտիւ կռուեալ վիրաւորեալ էր զեզ-  
 րայր իւր Շապուշ մերձ ի մահ. ապա ստրկացեալ մեծա-  
 պէս՝ ուխտեաց հրաժարել յաշխարհէ, եթէ ողլասցի  
 եղբայրն. և եղև այնպէս։ Արդ, ելեալ նորա ի հայրե-  
 նեացն «զնաց ընդ կողմն Բաղուց. և մինչ ի բարձրաւան,  
 » դալ լերինն եհաս... անցեալ ընդ զաւառքն յետ գե-  
 » տոյն Աղաւնոյ, անդ վճարեալ զձմեռնային եղանակն,  
 » անց ընդ միւս վտակն (որ թուի ինձ Զեմի գետակն) ի  
 » կողմն Բերդոյն (ըստ իս Բերդիկ լեռան), ի գաւառն  
 » Քաչունիք... յորձ բլրին, զամս երեք և զամիսս վեց՝ ի  
 » խղի միում. և էր երկիրն այն վայր աւերանի», և այն,  
 որպէս նշանակեցաք յառաջագոյն. և զի անհանգստէին



78. Դաւթի բերդ ի Հալիճոր. (Տես յէջ 256).

զնա մերձարնակքն՝ ել անտի ընդ երեկս, « և անկեալ ի  
 » դաշտն՝ առաջնորդութեամբ հրեշտակի զնաց մինչ ի  
 » ծագել արեգականն, և հասեալ յեզր Երասխայ, եգիտ  
 » ձորակ մի, և ի միջի վէմ մի մեծ, և ի ներքոյ քիւ-  
 » փաքիկ. անդ արար զբնակութիւն իւր զամս տասն »  
 ի կողմանց Բերդիկայ՝ ուր համարիմ զառաջինն մենա-  
 րանն՝ մինչեւ յԵրասխ, իցեն թերեւս մոլոր իբրեւ 20,  
 զոր մարթ էր կտրել ի միում գիւղերի, մանաւանդ առաջ-  
 նորդութեամբ հրեշտակի. երկրորդ մենարանն ասի լի-  
 նել « մերձ յեզր Երասխայ, ի տեղին որ կոչի Քարա-  
 » վազ, որ յերի՝ ճղէ զլուրն ». ոչ կարծեմ զմեծ քա-  
 րավազս գետոյն որ ի կողմանս Որդուատայ, այլ ընդ

մէջ բերանոց Զաւրնդուր և Պասուզ գետոց, և զանունն  
 մնացեալ ի Քարաղէզ հանգրուան՝ որ յեզր երկրորդիս,  
 փարոսխաւ չափ հեռի ի բերանոյն։ Այստանոր ասէ զը-  
 րուցարան պատմութիւնն (զրեալ ի Խովհաննէ եկեղեց-  
 պանէ վանացն), պատահի Գիւտայ արքայորդին Պարսից՝  
 յորս ելեալ, և սքանչացեալ ընդ նա՝ զի կայր ի մէջ ար-  
 ջուց և բժշկէր զվէրս նոցա, հաւատաց ի Քրիստոս, և  
 մկրտեալ կոչեցաւ Քրիստոսասէր. և բերեալ արծաթ  
 բազում « շինեցին և ժողովեցին եղբարս բազումս ». և  
 սատարութեամբ հազար գործաւորաց առաքելոց ի թա-  
 դաւորէն Պարսից, առ սէր սրգւոյն, « փոխեցին զտեղին  
 » ընդ վէմն ի վեր, և հարթեցին զվիմարդեանքն, և շի-

» նեցին եկեղեցիս երիս յանուն Ս. Երրորդութեանն. և  
 » ել համբաւս այս ընդ ամենայն աշխարհ. և գային  
 » բազմութիւնք եղբարց, և ընոր տունն Աստուծոյ: ...  
 » Կարգեցին ի նմա եղբարս 500, երկերիւր ի վանքն,  
 » և 300 ընդ քարանձաւսն և անտառսն, անապատաւ  
 » ւորս »: Ապա յայտնեաց Գիւտ զանձն ընտանեաց  
 » իւրոց, և բժշկեաց զմայրն կուրացեալ. և զեկեղեցին  
 » յանձնեաց եպիսկոպոսին Գողթան, հրաւիրեալ զնա ի  
 » տեղին. « և տայր ընծայ ամ յամէ ութ օր կիտ (ձուկն)  
 » ի գետոյն Երասխայ », ի կեր ժառանգաւորաց եկեւ  
 » ղեցւոյն »: Պատմի դարձեալ հաւատալ ի Քրիստոս և  
 » հօրեղբորորդւոյ Քրիստոսասիրին և փեսայանալ Վաչա  
 » գանայ Աղուանից արքայի, և շինել « թերոյ յեզր գետոյն,  
 » զի անդ բնակեալ պահեսցէ զեղբարսն: ... Սահման  
 » հատին վանիցն և ետուն հինգ գիւղ, սկիզբն արաւ  
 » բեալ ի ՍԵՆՈՒՍԱՐԷ՝ ածեն ի Բոթիբոթեր ի վեր և  
 » վայր, մինչ ուր ի դուրն թագնեղոն և յայգետտան Ուրկա  
 » նոցին, և անտի դնայ հասանէ մինչեւ ի շրջանս գետոյ  
 » Աղաւնոյ, հանդէպ եկեղեցւոյն Նախորդանու, և ան  
 » տի (մինչեւ) ցտունն Աստուծոյ, գետոյք հինգ, այսու  
 » սահմանօքս: Եւ փարթամացեալ էր տունն. զի էր նո  
 » րա արջառ 1000, ոչխար 1400, ուղտ 700, ձի 600, էշ  
 » 400, և այգէգործս կատապանս 700 »: Ըստ այսմ,  
 » եթէ ոչ խարիմ, տեղի Նախկորդանի ի դէպ գայ արեւ  
 » մտեան Մինճեւանի, համարելով միշտ Աղաւնոյ գետ ըզ  
 » Չաւընդուր: Յետ ամաց, ասի որդւոյ կամ թոռին թա  
 » գաւորին այն Պարսից առաքեալ և աւերեալ զվանսն և  
 » զեկեղեցին, կոտորելով զյուրովս ի կրօնաւորացն, և « ըզ  
 » « Քարն արկանեն ի գետն ». այսինքն զբնակարանն  
 » վիմափոր. մնացեալքն « մեծ ողբովք լային ի վերայ եւ  
 » կեղեցւոյն, և փոխէին զեղբարսն ի հանգիստ. և սկը  
 » սեալ այլ նոր կանգնեցին տուն Աստուծոյ պայծառ քան  
 » զառաջինն. և ժողովեցան եղբարք 600. և շինեցին այլ  
 » ուր եկեղեցի, և ետուն զՄանակկայ ? ի ներս, որ կո

» չի վանք նորա (կամ նոր). և սահմանեցին Ուրկանոցս,  
 » և առատ տային զպէտոս նոցա ի վանիցն: Եւ Հայր  
 » Յովկաննէս ի Կապանէն եկն աստ, և առեալ ղեղ  
 » բարսն զնաց յեզր գետոյն. և խնդրեաց ի Տեառնէ  
 » շնորհել ձուկն ի պէտս եղբարցն: ... և այնպէս պար  
 » զեկեցաւ վանիցն կէտ ի գետոյն: Իսկ սուրբ Հօրն Գիւ  
 » տոյ լցեալ զամս կենաց իւրոց ութսուն և չորս »: և  
 » տեսեալմբ Քրիստոսասիրի զգացեալ զմօտալուտ կատա  
 » բումն իւրեանց, յորդորէր զնա շերկնչել. « և առեալ  
 » կերակուր՝ շրջեցան ընդ անապատաւորսն, և կերա  
 » կրեցին. ողլունեցին և օրհնեցան ի նոցանէ, և գային  
 » սաղմոսելով ընդ Մախաղատաւիսն դէպ ի վանքն,  
 » և տեսին զբազմութիւն հեծելոց զի գային. փութա  
 » ցան յեկեղեցին, և մտեալ յաղբիւրն լուացին զին  
 » քեանս. և մտին յեկեղեցին. և համբուրէին զսուրբ  
 » սեղանն և ողլունեղով լային: Եւ ահա պատեաց զօրն  
 » զեկեղեցին, և մտեալ խնդրէին զԳիւտ և զՔրիստո  
 » սասէրն. և նոքա յառաջ կացեալ ցուցին զինքեանս.  
 » ապա ըմբռնեալ կապեցին և տարան ի Գողգորայն, և  
 » ընկեցին ի վայր. զառաջինն ոչինչ վնասեաց, և յերկ  
 » բորդին՝ Հայր Գիւտայ գազաթն փեղկեցաւ, և կամէր  
 » զողին արձակել. ձայնէր առ Քրիստոսասէրն. Չանա  
 » փութա, որդեակ, զկնի իմ. և նոքա սպանին զՔրիս  
 » տոսասէրն ի վերայ քարին. Եւ կատարեցան սուրբքն  
 » ի քաղոց ամսին 15: ... Իսկ ցրուեալ եղբարքն ժո  
 » ղովեալ մեծաւ սգով լացին լալին մեծ և փարէին  
 » զսուրբ մարմնովք Հօրն և Քրիստոսասիրին. և տա  
 » բեալ հանգուցին զԳիւտ ի գաւիթ եկեղեցւոյն, և ըզ  
 » Քրիստոսասէրն յեկեղեցին, և անյայտ արարին ըզ  
 » տեղին »:— Ի վանս յայս Հօրն Գիւտի մարգեալ էր և  
 » ճգնասէրն Երիցակ շինող Երիցու վանից և Սիւնեաց  
 » եպիսկոպոս, որպէս վերագոյնդ գրեցաք. բայց յետ այ  
 » նըր ոչ ի պատմութեան լսի վանքս Գիւտի և ոչ ի կարգի  
 » երեւելի վանորայիցն Սիւնեաց թուեցելոց ի պատմէն:



# Կ Ո Վ Ս Ա Կ Ա Ն



**ԳՐԵԱԹԷ** քան զամենայն զաւառս Սիւնեաց, յետ Աղահէճոյ, սակաւածանօթ մը նացեալ է ԿՈՎՍԱԿԱՆ. ի սակաւուց անտի յայժմուս յանուանէ յայտնի

եղելոց գիւղիցն՝ զուշակին դիրք նորին, ի հիւսիսոյ և յարեւելից՝ երկրորմբ մասամբք Բաղաց սահմանեալ, յարեւմտից՝ Զորովք, և ի հարաւոյ՝ Արեւեաք ըստ մասին, և ըստ մասին Երասխ գետով: Մեծագոյն մասն զաւառին թուի ինձ հովիտ Պասոնդ գետոյ, որ յարեւմտից Զաւրնդուրի՝ իբր փարսախաւ հեռի ի բերանոյ նորին թափի յԵրասխ, կրելով զանուն Բոստ գեղ ին Յուլցակին. իսկ փոքրագոյն մասնն է մանունց ձորակաց օժանդակաց Զաւրնդուրի՝ յաջմէն (յարեւմտից), որոց և ոչ անուն նըշանակի ի քարտի, այլ ի դէպ է կոչել ըստ գիւղից որ առ նորք. և զմեծագոյնն (որոյ երկայնութիւնն ոչ աւելի քան զութ կամ տասն մլոն երեւի) մարթ է կոչել յաւուն խոշորոջիս կամ խոտուշի լերին բարձու 9885', յորմէ բղխէ, և է ի սահմանամիջի Զորոց և Կովսականի. յոր յարեալ և այլոց լերանց՝ ձեւնն զբովանդակ արեւմտեան սահման նորին և զարեւելեանն Արեւեաց, որպէս և այլ շարածիգ լերինք կան անջրպետք յարեւելից ընդ նա և ընդ գետահովիտ Զաւրնդուրի. և դարձեալ փոքր կամ կարճ շարք լերանց՝ հատանեն զերկիրն ի ձորակս ձորակս օժանդակաց Պասոնդ գետոյ: Ի կողս լերին խոտուշիս անուանի ուխտատեղի մի է դժուար ելանելի, և վերագոյն եւս գերեզմանք երկուց ճիւղաւորաց, որպէս առի: — Ի Հս. Մ. սորին ամբառնայ այլ քարաբլուր բարձր, Զրաջրս անուն, թերեւս վասն ջրվէժ հոսանաց՝ որ ցայտեալ ցնդին յէջն: — Հանգոյն արեւելեան Բաղաց՝ անտառախիտ երեւի երկիրն. հաւանելի է և զոյգ Արեւեաց պողարեր և այգեւէտ լի-

նել. բայց աւանձինն ինչ ծանօթս զկողմանցս ոչ ունիմ: Պատմիչն Սիւնեաց ի կարգել զանուանս գաւառաց աշխարհին՝ ասէ վասն սորա. «Կովսական գաւառ, որ այժմ ԳՐԶԱԾ կոչեն». և յետինք ԳՈՒՐԶԱԾ. որոյ կոչմանն պատճառ և ծագումն անծանօթ մեզ, որպէս և հին անունն, որ ըստ այլեւայլ օրինակաց աշխարհագրութեան Խորենացոյն՝ գրի և ԿՈՒՍՍԱԿԱՆ և ԿՈՍՍԱԿԱՆ, և որպէս այլոց գաւառաց ոչ ամենեւեմբ պատշաճին հին և նոր սահմանքն, այսպէս և Գուրհամայն առ յետինս, զի թուին խառնել ընդ մասին Արեւեաց:

Ըստ քաղաքական տեսչութեան՝ եթէ գոյր յառաջին ժամանակս ուրոյն տէր և իշխող Կովսականի, ի կէս թ դարու մի էր սորայն և Քաշանեացն, այն է Հրահատ որդի Սահակայ և եղբայր Գրիգորի և Որոտնանայ: Ոչ գտանեմ զայլոց տեսրց գաւառիս յիշատակս, բայց ըզգեօղից ինչ՝ զոր ստորեւը նշանակեցից:

Ի ցուցակս թեմին Տաթեւու՝ փոխանակ Գուրհամայ՝ յիշի այլ անուն վիճակ ի Կովսական, այն է ԳՈՒՐՅԵՐԳ և յայլում ցուցակի՝ յատկապէս ՂԱՓԱՆ կոչի մասն մի գաւառիս, որպէս և ցարդ ընդ այսու յետին անուամբ բովանդակին հինն Կովսական և Զորք, մասամբք ինչ Բաղաց: Ի հին աթոռահարկ ցուցակի Սիւնեաց՝ 83 գեօղք նշանակին Կովսականի, և են այսորիկ

Իցան	13
Բելս	6
Շտատուկ	6
Ողոյնի. Ողուհի	13
Փառուարտոյ վանք	6
Բեխեւերցի	8
Լոսուձոր. Հուսձոր	6
Վաժնատուք	10
Բոստ	10
Մառակոթ. Մառագատ	13
Գազավանք. Կաշավանք	6
Մենիկ	6

Թամուհարգ. Թարուհարգ	6
Դալք	5
Մարուր	8
Վարոսի վանք	10
Գոն	5
Հոյնոց ծոր	5
Երեգիք	7
Դախարեան՝ Տախ	10
Համուլք. Համուլք	6
Վառամաղբիւր	6
Մաճկան	8
Մանուշակի մարգ	6
Նախկոտան	6
Գիրկն. Գիրքն	8
Լիմ Ստորին	8
Լիմ վերին	8
Չամորտուք	8
Լիմախովիտ	6
Փշատեցարուս	6
Դից մայրի	6
Բերքի	8
Աշտարակ	6
Արգար	6
Կէրէն	12
Սղաթաղք	12
Շիկաճողք	12
Պողոսի վանք	7
Վախտանգածոր	7
Թեղոյկից. Թողոկից	7
Շաշիկետ	10
Արծախամայրի	17
Մանաղու	20
Մառի	6
Բարդուղեաղք	6
Լուցմայրի	6
Նորաշինիկ	8
Արվանոտ	12
Խոզածոր. Խուզածոր	7
Դունակերտ. Տգեունակերտ.	7
Մորի	12
Կից	15

115. Ի վեցից տասանց և աւելի եւս հայանուն գիւղից՝ և ոչ տասանակ մի ծանօթ է արդ անուամբ նոցին կամ դրիւք. գրեաթէ ոչ աւելի և քան զայս թիւ յիշին և ի պատմութեան. նա և այլազանուն գիւղք սակաւք են կամ ոչ նշանակին ի գետահովտի անդ Պասուղայ և հարաւային կամ աշակողմեան օժանդակացն Չաւրնդուրի, յորս համարեցաք բովանդակել զգաւառս կոմսական: Եւ են արդ ծանօթք և նշանակեալք, նախ ի ձորակս անդ օժանդակս Չաւրնդուրի, սկսեալ ի վերուստ, այն է ի Մ. Հս. ուստի խաղայ ընդ Ել. Հր. ի սահմանակցութեան Չորոց և Բաղաց, առաջին գիւղ ծանուցեալ ի հնումս և նորումս՝ Բեխ կամ Բիխ ի Հս. ստորոտս Խուստուփ լերին, ի քարաբլրի յանկեան գետառուի միոյ և մեծի գետոյն. որ և ի գլուխ այլոց գիւղից գաւառին կարգի ի հին Յուցակի հարկատուաց աթոռոյն Սիւնեաց. զի « էր սեպհական ժառանգութիւն » Ս. խաչին և եպիսկոպոսացն, ի հին ժամանակաց ».<sup>1</sup> զոր յամի 871 խնդրեալ ի Սողոմոնէ եպիսկոպոսէ Չեւանշէր իշխան օրդի Սահակայ Սիւնեաց Տեառն, փոխանակեաց ընդ նմա զիւր գիւղն Արուքս որ ի Բաղք գաւառի, որպէս և նշանակեցաք յայնր տեղագրիւ — Յաւուրս պատերազմաց Ղափանցւոց յամի 1726 կամ 1727, կողմնակալ զօրավար Օսմանեանց եկեալ բանակեալ աստ եօթնեակ մի աւուրց՝ հնարէր նենգել զԴաւիթ և զորս ընդ նմա. այլ սոքա գիւղերայն « ի վերայ » հասին նոցա, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, և » զփաշայն հալածական արարին » ի գեղէ աստի էր Ղազար եպիսկոպոս Տաթեւու յերկրորդ կէս ԺԸ գաւուր, որ գետամայն կորեաւ ի փութալն անցանել յահէ իշխողի կողմանցն: Փոքրիկ եկեղեցին Բեխայ նուիրեալ է Ս. Գեորգեայ. — Չարդիս իղձ է կանգնել նոր և ընդարձակ եկեղեցի: Բնակիչքն ազգայիք են 40 տունք երկր մասամբ ի տոհմէ Փարսաղանեան մէլիքաց, որոց և ստացուած է գիւղն և սահմանքն, հանդերձ մերձաւոր Պղնձահանօքն<sup>2</sup>:

Սակաւուք ի բացեայ ի Հս. Մտ. նշանակի ի քարտի՝ սրբազան տեղի, եկեղեցի կամ մենաստան. ըստ դասակարգի գիւղից հին Յուցակին՝ մերձաւոր ի Բեխ գտանի Փառուարտոյ վանքն. իսկ յարեւելից Բեխայ՝ իրր մղոնաւ հեռի և մերձ ի խառնուրդ այլոյ վտակի ի գետն՝ նշանակի կոռզանի բերդագիւղ: Յորմէ վերագոյն ի հարաւոյ՝ առ նովին վտակաւ, նոյնքան հեռի՝ կայ վիչաքեկտ գիւղ, որ և Թուի հինն վաժնատուք: Հանդէպ սորա յաջմէ վտակին, որ է յարեւելից իրր մղոնաւ ի բացեայ, կայ միւս եւս ծանօթ գեղ հին Յուցակին, Բեխեւերջի, արդ կոչեցեալ և գրեալ Պաղաս պոչքի (Պաղաւերճ?), որոյ եկեղեցի կոչի Ս. Հռիփսիմէ: Առ մեծագոյն վտակաւ օժանդակաւ Չաւրնդուրի՝ յա հեկէն (յարեւմտից) միայն հանգրուան մի կայ կամ փոքրիկ գիւղն՝ կիշտկիւս կամ Գոչքիւս, որ ի Գիւրբերդ գրի ըստ նոր ցուցակի Թեմին Տաթեւու. եկեղեցին կոչի Ս. Հռիփսիմէ: Իսկ յաջմէն՝ ի ստորին կողմանս, որ է ի հիւսիսակողմն՝ նշանակին հանգրուանք, Գազանիչի, Ռաւ

Չատ յայտցանէ ի պատմութեան Սիւնեաց յիշին Տրի և Արտաւազուց գիւղք սահմանակիցք Նորաշինիկի, որպէս և Չեւաւտի վանք և Խոշտատայ տափ: Իսկ ի յատուկ Գիւրբերդ վիճակի՝ ըստ նոր ցուցակի Թեմին Տաթեւոյ, են,

Գուծկում	Ալթունանց
Ճգտէն	Ըռոտմանց
Գիւմէշէ	Խազազածոր
Խուկիս	Նոր գիւղ
Նօխօթլու	Չխուրուս:

1 Օրբէկեան, Ի:

2 Նոր Դար, է, 88. Ը, 159:



դա, և մերձ ի Չաւրնդուր գետ՝ Գեղեայի ամրոց և հան-  
 դրուան յանուն մեծի գեղջ որ կայ յանկեան վտակաց  
 և խառնըրդոց ի Չաւրնդուր, որոց ի գլուխս փոքրիկ գիւ-  
 ղն Չոքատին. ի ցուցակի ուրիշ գրի Չկտեն կամ Ճըկ-  
 սեն, Ս. Հոփսիսիմէ եկեղեցեալ: Ի գեղջէ աստի Անուս  
 ամ, որ գրի Չքետեցի, էր ի վենետիկ յամի 1697:—Մերձ  
 ի գետն (Չաւրնդուր) կայ և փոքրիկ գիւղն Կիան կոչե-  
 ցեալ, որ Թուրհինն Գոն, առ որում դասի և Հոյնոց ձոր  
 գիւղ, ի ձեռագիրս Հոյնոցկոր: Հինն Գոն Թուր ի վերջ-  
 նոց կոչեցեալն Կան կամ Կեան, յորմէ էր ի սկիզբն  
 ԺԸ դարու Մահուեսի Աբել փարթամ վաճառական ի  
 վենետիկ չորիւք որդւովք, յորս երեւելի եղև և ճոխագոյն  
 ի վաճառականս Հայոց ի քաղաքի անդ Առաքէլ (որ յիշի  
 ի 1728 ամէ, (եղբարքն՝ Յարութիան, Պետրոս և Յովհան),  
 առեալ ի կնութիւն զղուստր այլոյ ճոխ վաճառականի  
 Մանուկ կոչեցելոյ, և ծնեալ ուրիս 12, որոց զարմք՝  
 ցերիս և չորս ազգս և անդր քան զկէս այսր դարու յի-  
 շին ի քաղաքի անդ նովին Աբել մականուամբ (Apele), և  
 ոմանք յորիորդացն հաւատաւորք եղեալ են ի կուսա-  
 ստանս: Ինքն Առաքէլ վախճանեալ ամաց ութսունևվե-  
 ցից յամի 1792, կայ Թաղեալ ի Ս. Լաւրենտ եկեղե-  
 ցւոյ քաղաքին, այսու լատին տապանագրաւ.

D. O. M.  
 APOSTOLO D'APEL  
 PATRI AMANTISSIMO  
 AETATIS SUÆ ANNO LXXXVI.  
 VITA FUNCTO  
 THOMAS FILIUS MÆRENS  
 SIBI POSTERISQUE SUIIS  
 P. C.  
 V. KAL. SEPTEMBRIS. MDCCXCIII.

Յիշեալն յարձանագրիդ թովմաս անդրանիկ Առա-  
 քէլի՝ սեղանաւոր էր, ծնեալ յամի 1745, ի Մեստրէ  
 աւանի վենետիկոյ յամի 1827:

116. Հովիտ Բոստ (Պասուղ) գետոյ՝ յարեւմտից ի  
 լեւանց անջրպետաց Մեղրոյ հովտին՝ ձգի սակաւ խո-  
 տորմամբ ընդ արեւելս, վտակս ինչ ընդունելով երկ-  
 ուստեք. երկու առաջք նշանակին սորա. ի գլուխ ձորոյ  
 միոյն՝ կայ գիւղն Շեշկերտ (կամ Խշկերտ), Շաշիգետ  
 հին Յուցակին, յորմէ հարիւր յիսուն վառեալք Հայոց  
 դարանամուտ լեալ յանտուախիտ վայրի, արգելին եր-  
 բեմն զանցս զօրաց Փաթ Ալի խանի Բարկուչատայ, և  
 սգնութեամբ այլոց զնդից՝ կոտորեցին ի նոցանէ արս  
 4000: Աստանօր յետ սակաւուց Դաւիթ Բէկ ետ զլիս-  
 տել զգօրավարն Պապ, զի խոյս տուեալ էր յերեսաց  
 Սափիղուլի խանին Որդուատայ, և բազում ինչ ամբաս-  
 տանէին զմանէ: Անտի շուեաց գնաց Դաւիթ ի Կէման  
 զՈւ դաշտավայրն, որոյ դիրք անծանօթ է ինձ: — Մերձ  
 ի կցուածս երկսցուն գետառուացն կայ իմարիդ գիւղ.  
 յորմէ իբր մղոնաւ և կիսով ստորեւ՝ յանկէ գետոյն՝ ա-

մուր գիւղն Պիւնիս, յալմէն (ի հարաւոյ) Սափուրոյ:  
 յորոյ յեկից կուսէ վտակ մի իջեալ ի լեւանց հարաւա-  
 յին սահմանին՝ անկանի ի Բոստ: Ի միջակողմանս գե-  
 տահովտին ի կիցս գետակի միոյ զոր ի հիւսիսայ (յահե-  
 կէն) ընդունի, կայ զլիսաւոր գետոյն Շախառզ կոչե-  
 ցեալ, յոր անուն և լեռան, որ է ըստ իս Շիկահողս կամ  
 Շիկահողք հին Յուցակին, ի տրիցն (12 բեռն) յայա-  
 նեալ՝ ոչ փոքր լինել. մանաւանդ զի կայ և այլ գետ ի համ-  
 անուն ի գլուխ յիշեցելոյ գետակիդ, և ի դէպ է կոչել  
 զայն վերին Շիկահող, և զգետակն իսկ՝ Շիկահողոյ գետ.  
 յորոյ ի միջակողման՝ յալմէն՝ որ է յարեւմտից, նշանակի  
 փոքր գիւղիկ Գիլիսեքքէնտ անուն, որ նշանակէ Եկեղե-  
 ցագիւղ. և զի ի հին Յուցակի անդ անընդմէջ առ Ե-  
 կահողոց դասի Պողոսի վանք, մարթ է զնոյն կարծել այլ-  
 ազգի կողմամբ, և արժանի քննելոյ զտեղիս. այնու ե-  
 ըս մանաւանդ՝ զի լեռանն երկարածիք որ անջրպետ  
 զձոր գետակիս ի Բոստայն՝ կոչի Ճանճի բերդ, Թէպէտ  
 և ի գիրս ոչ գտանի այս անուն:

Ի ստորին մասին գետահովտին Բոստայ մինչեւ ցե-  
 րասխ, նշանակին գետք, Պէխարոյ, Աճիոյ, երկրին  
 եւս յահեկէն, Էօրտեկոյ՝ յալմէ, մերձակիցք միմեանց-  
 խոնարհագոյն եւս, Գարատեք (Սեւաձոր) յալմէ, Գա-  
 րադէք, զոր համարեցաք Գարավազ՝ զյիշեալն ի պատ-  
 մութեան Հօր Գիւտայ. և Մոսղատամ մերձ յերասխ՝  
 մեծ գետ, առ որով խառնի ի Բոստ վտակ մի անձ-  
 կածոր՝ յալմէն, ի հարաւոյ, ի Գոշկոյրաքազ ? լեռնէ  
 եկեալ. և են առ եզերքն գետք փոքուք, յորոց մին  
 Չարատեք: — Առ խառնըրդովք Բոստի յերասխ յերի  
 Մուղատամ գետաւանի հաստատեալ կայ պահակա-  
 տուն Բուսաց յանուն Պէխարուի (Պէխարիեքքի): — Ի  
 հարաւոյ կուսէ Չալտէրէ ձորագետակի մերձ յերասխ  
 կան ամուր հանգրուանքն Համբա: ?, Թերեւս Համուլք  
 հին Յուցակին, և Տոչանցոյ:

Ընդ մէջ գետահովտին Բոստայ և Արեւեաց սահմա-  
 նին, կայ փոքրիկ ձորակ մի որ առանձինն բերանանայ  
 յերասխ, յերից այլոց կողմանց լեւամբք պարսպեալ,  
 որք են, (ըստ ոռւս աշխարհացուցի), ի Հս. կողմանէ  
 Գոշկոյրաքազ, յարեւմտից Շիխարաքազ, ի Հր. Պար-  
 դազ՝. յայս յետին անուն կոչի և զլիսաւոր գիւղիցն և  
 կայ յահեկէ գետակին, և Թուր աղաւաղ կամ կրճա-  
 տեալ անուն Բարդուճաղս, կամ Բարդուճաղք հին  
 Յուցակին: Հանդէպ նորին յայնկոյս գետոյն է Լագարեք  
 գիւղիկ. առ բերանով գետակին յերասխ՝ պահակա-  
 տունն Պարդազայ (Պարդազքի), և ի պարու հիւսիսա-  
 յին լեռնասահմանին՝ ամուր գիւղն Սարալոյ:

Ի գետից անտի դասակարգելոց ի հին Յուցակին՝  
 յիշատակին ի պատմութեան Երուսղիմիկ, և այլք ո-  
 մանք մերձաւորք նմին, բայց Թուր լինել ոչ ի Բոստի  
 գետահովտին, այլ յօժանդակին Չաւրնդուր. վերոյի-  
 շեալն Հրահատ տէր գաւառիս՝ յամի 844 ընծայեաց  
 զայս գիւղ՝ եկեղեցւոյ Տաթեու, ի ձեռն տեառն Դաւ-  
 թի եպիսկոպոսի, ինքնին այսպէս գրելով զպատճառ-  
 արն և զսահմանն. « Ես Հրահատ բաղմամբեղ, ե-

1 Հարկ է նշանական ինչ լինել Դու ձայնի երեցուն եւս գետիցս, զոր ոչ կարացի ստուգել. զուրկ խանգարեալ կայ բառն է Թուր:

» բանեղի Տեառն Սահակայ որդի, վասն իմ չար և ան-  
 » իրաւ գնացից որ որսացեալ էի ի սատանայէ՝ բազում  
 » և ազգի ազգի յանցանօք, և լցեալ իբրեւ զծով ան-  
 » թիւ չարեօք, ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան  
 » յահեղ աւուր դատաստանին. զմտաւ ածեալ զանգա-  
 » ւակութիւն իմ, և զի ոչ գոյր յոյս ապաւինի հոգա-  
 » լոյ զփրկումն հոգւոյս իմոյ, և զիտելով զի մահկանա-  
 » ցու է ազգ մարդկան, զաստուածընկալ սուրբ Խաչդ-  
 » ապաւէն ինձ արարի և փոխանակ որդեաց. Եւ զեօզ  
 » մի ի կովսական գաւառի Նորաշինիկ անուն, որ ոչ  
 » ի յափշտակութենէ և ոչ ի զրկանաց ուրուք և ոչ յայլ  
 » ինչ անիրաւութեանց, այլ միայն յարդար վաստակաց  
 » ստացեալ գնաց արծաթոյ, վասն իմ հոգեացս ի սուրբ  
 » Խաչդ ապսպրուարեցի, իւր բողոք սահմանօք, լերամբ  
 » և դաշտաւ, լեռմաւ և ցրտով, ծառով և տնկով. որոյ  
 » սահմանքն են այսօրիկ. Յարեւելից կողմանէ Տորուաւ  
 » նոտ սահման, և ի հիւսիսոյ՝ Ծորի, և յարեւմտից՝  
 » Տրի և Արտաւազուց. ի հարաւոյ՝ կերէն և Բերքնի  
 » ... Եւ ետու զայս հաստատնամակս՝ ես Տէր Հրա-  
 » հատ Տեառն Սահակայ որդի, քեզ Տեառն Գաւթի  
 » Սիւնեաց եպիսկոպոսի. վկայութեամբ Հօր Յակոբայ՝  
 » Վառլոյ վանականի, և Յովնանայ և Միքատայ՝ Ներ-  
 » աէհի որդեաց. և Յովնանայ՝ Բարկայ որդւոյ, և Ստե-  
 » փաննոսի և Մուշեղի՝ Տեառն Տիրոցի որդեաց, և  
 » Վիժանայ՝ Վարազաիրոցի որդւոյ, և Ըռանձարայ  
 » Գրիգորի որդւոյ, և Խուղափայ՝ Յովնանի որդւոյ, և  
 » Համազասպայ՝ Սահակի որդւոյ, և Բարսղի՝ Մա-  
 » ռաքատայ երէցու, և Սանդուկայ՝ Միխրարայ որ-  
 » դւոյ՝ Ըղուերծոյ երէցու, Հմայելի՝ Վանանդայ երի-  
 » ցու, և Սահակայ և Ահարոնի՝ Նորեաց քահանայից,  
 » և Մաթուսաղայի՝ Յակոբայ որդւոյ՝ Ոյժայ աւագերի-  
 » ցու: Եւ կնքեցի զայս վճիռս ես Տէր Հրահատ իմ  
 » օսվորական մատանեաւս. և վասն առաւել հաստա-  
 » տութեան գրոյս՝ զաստուածապահ տեառն Գրիգորոյ  
 » Սիւնեաց տեառն մատանին ի վերայ եզի: Տացէ Աւ-

» տուած վայելել յաւիտեանս ժամանակաց».— Թէպէտ  
 այսպէս ամրացուցեալ էր զվճուագիրն և նշովիւք փա-  
 կեալ զօտարացուցիչս գեղջն, այլ սակայն օտարացեալ  
 էր. մինչեւ յամի 1087, յաւուրս Սենեքերիմայ արքայի  
 Հասան իշխան որդի Գրիգորոյ վերադարձոց յեկեղե-  
 ցին, ընդ նմին և զՉեռատի վանս որ ի սմին կովսա-  
 կան դաւառի. « որք և վաղ ժամանակօք տուեալ էին  
 » ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Տաթեւոյ. զՆորա-  
 » շինիկ տուեալ էր Հրահատ իշխան ի Տէր Գաւթի, և  
 » զՉեռատի վանս՝ տուեալ էին յաւուրս Յակոբայ մե-  
 » տրապօլտի. վասն որոյ և սա դարձուցանէ անդրէն ի  
 » ձեռն Տեառն Գրիգորոյ. և գրէ կտակ հաստատուն  
 » վճոի առաջի թագաւորին. որ էր այսպէս. Յանուն  
 » Աստուծոյ. Այս իմ գիր է Հասանայ՝ Գրիգորկայ որդւոյ.  
 » այս օրս որ Աստուած ինձ յաջողումն երեստ, և ես գիմ  
 » բերդն ի մշտագաղթեցեալ առի, և զկովսական գա-  
 » ւառ՝ իմ արեամբս յամիրայ Փատլոյն՝ Թափեցի, ըզ-  
 » Նորաշինիկ և զՉեռատի վանս այլ ի Տաթեւոյ Ս. Նշա-  
 » մանաւ, ի ժամանակս աստուածապատու և հոգեւոր  
 » Տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսի և ամեն ա-  
 » զատացս առաջի տուի զայս, սոցա ամենեցուն վկա-  
 » յութեամբ, ազատ յարքունի հարկաց. որ չկայ ի հետ  
 » այս գիւղորէիցս ումք հաշիւ, կամ շատ և կամ սա-  
 » կաւ: ... Ես Սենեքերիմ թագաւոր իմ ձեռովս հաս-  
 » տատեցի զՀասանայ վճիռս, որ զայս շինանիս՝ որ ի  
 » Տաճկաց թափեալ էր իւր արեամբն, այլ ի Տաթեւու  
 » երեստ իմ հրամանաւ. և ես իմ որդւովքս և ազատօ-  
 » քս վկայ եմ, որ որչափ այս եկեղեցիքս ի հաստա-  
 » տութեան կան՝ մի իշխեսցէ յանդրնել և ձեռնարկել  
 » զք վասն յափշտակելոյ զայս տուրս: Եւ եօտու ընդ  
 » ոմին և զԽոշաւտայ տափն: Արդ թէ զք հակա-  
 » ռակի այլ զվերոյգրեալ անէծօղ ժառանգեացէ: Եւ  
 » ես Ռահիրս՝ վկայ եմ այս արարուածիս, զոր մի որ  
 » իշխեսցէ հակառակ կալ, ի թուակամիս Հայոց ՇԼԶ»:

1 Փատլունս է առաջին տիրոզն Անոյ ի Շուարեան տունէ, որ յատուկ անուամբն Մանուչէ կոչի:

2 Եթէ չիցէ այլազգի էշխան, կամ Գղէ կամ զբիւ նորին իսկ Սենեքերիմայ է:



# Չ Ո Ր Ք = Կ Ա Պ Ա Ն



**ՓՈՒՔԻԿ** գաւառս՝ որոյ և անունն յայտ առնէ անձուկս ունել լերանց, յետին հանդիսարան եղեալ հարստութեան Սիւնեաց, և գոգջիր վերջին դաւ Հայթա գաւորացի բնիկ Հայս, ի բուրաձեւ իմն չրջափակի սահմանեալ կայ ի միջի նախագրեցն, Կովսականի՝ յարեւելից, Բաղաց՝ յարեւմտից հիւսիսոյ, Մղկոյ՝ յարեւելից հիւսիսոյ, Պելեւ վիճակի Երնջակայ՝ յարեւմտից, և Արեւեաց՝ ի հարաւոյ: — Բովանդակ երկիրն լեռնային և անտառային հովիտ է նստալ գետոյ օժանդակի Չաւընդուրի՝ յովմէն, յոր և խառնի ի սահմանս Կովսակա նի. ունելով և ինքեան յատուկ գետակս օժանդակս, յովմէն՝ յարեւելից՝ զփոքրն, յահէկէ՝ յարեւմտից՝ զերկարագոյնն, որ է Գեղոռաձորոյ գետակն. ընդունի և ի հիւսիսոյ կուսէ՝ ի Թիկանց լերանց Լորաձորոյ և Տաթեւոյ վիճակաց Մղկոյ՝ ոչ սակաւ վտակս, որովք քաջ իսկ ճշմարտի Չորք անուն գաւառին: Աղբերք գետակցի Գեղոռայ են յանուանի լերինս Ղազանկէյի՝ որ ընդ մէջ Չորոց և Պելեւայ, յորմէ սկսեալ ընդ հարաւ գնալով արեւելախառն՝ լերինք անջրպետք յիշեալ վիճակիդ և Գողթան՝ ի Չորոցս գաւառէ՝ են, Հաձի տաղ, և բարձրագոյնն լերանց համօրէն Սիւնեաց՝ որպէս կարծի, և մի ի բարձանց երկրիս Հայոց, երկգագաթն որձաքար լեռան Գափոռաձորս կամ Գափոռաձիկ կամ նստալուձիկ, 13060՝. յորոյ յելից հարաւոյ նշանակի անջատ և սուր լեռնասար Այրայքայի (Արագլի?) տաղ. որպիսիք են և ի պարուն անջրպետի Չորոց և Արեւեաց, և յանջրպետս երկրոցուն ձորաչետոց Կապանայ և Գեղոռայ՝ Մէլիտ տաղ, Փիրեայի տաղ, և այլն: — Ի բնական կերպարանս

1 Բուզանդ հին պատմիչ մեր յիշէ յերկրորդ կէս Դ դարու ըզ-  
 ֆորուի իշխան Չորոց աշխարհի, որոյ անուն և առ նմին յիշա-  
 տակ Գողթնեաց իշխանին՝ Թուեցուցանեն ակնարկել յայս գա-  
 ւառ. այլ զի առ նորոց յիշի և Կողբայ իշխան, մարթ է ընդ սմին  
 համարել զՉորս՝ Չորոփոր գաւառ Գուգարաց, Թէպէտ և երկու-

երկրին ծանօթ է չրվէժ մի մերձ ի Կապան, եթէ չիցէ Չրաչրան նախածանօթ (յէլ 286):

Այսչափ սակաւ ինչ ըստ վերին երեսս յայտ է ինչ ի բնութենէ երկրին, որ Թէ ոչ ըստ յուսոյ հանքային և այլազգ բերոց՝ արժան էր քննութեան, գէթ ի դէպ էր ըստ շնորհի քաղաքական և ազգային դիպաց տեղոյն, յետին բնակութեանն ասեմ Թագաւորաց Սիւնեաց, և Մնացորդաց մեծահոգակ գահու նոցին Կապանն քաղաքի և ամրոցին Բաղաբերդու:

Չիք երկրայել զի ի սկզբան շինութեան և բնակութեան աշխարհին՝ նահապետն Բաղակ՝ յորմէ Բաղաց դաւառին անուն, աստ հաստատեաց կամ կառոյց ըզբոյն իւր ի Քարն Բաղակայ, որ յետոյ Բաղաբերդ, և վերջին ապաստան ազատորեոյն Սիւնեաց. և բովանդակ գետահովիտ Չաւընդուրի վիճակէր տոհմի նորս, յետոյ բաժանեալ յերիս կամ ի շորս գաւառս, ի Բաղք Աճանան, ի Բաղք-Քաշունիս, ի Կովսական և ի Չորս: Ետինս փոքրագոյն ամենեցուն պատուեցաւ քան զայլս՝ Թագաւորական գահով, ի շնորհս ամրութեանցն, մինչեւ Չորոց Թագաւորս կոչիլ պայազատացն. և վստըն ամուր քաղաքի նոցին՝ գաւառն իսկ ողջոյն Կապան կոչէր ի ԺԱ—Ի դարս, նսեւ մինչեւ ցայժմ իսկ նոյնպէս կոչի, միայն աղաւաղելով ի Ղափան. բայց սահմանք անուանս ընդարձակօրէն ձգին ի վերայ Կովսականի և մեծի մասին գետահովտին Չաւընդուրի. որ է ասել վերադարձեալ ի վաղնջական սահմանս տու-  
 մին Բաղակայ:

Ոչ է քաջայայտ երբ Թագաւորք Սիւնեաց հաստատեցին զաթոռ իւրիանց յամուրս գաւառիս, փոխադրելով ի կողմանց Մղկայ և Վայոց ձորոյ. այլ յայտ է զի ի ԺԱ դարու և անդր քան զկէժ ԺԲ՝ աստ նորուտէին. և առ Սենեքերիմաւ յամի 1070 մինչդեռ « չէն

ցուն իսկ չափազանց թուի ընդարձակօրէն աշխարհ անուանիլ:—  
 Որպէս Չորոցս անուն երկուց տեղեաց՝ անստոյգ Թողու զմիջ-  
 տակն, նոյն և Կապանին, զի զայ և ի Փոքր Հայս այդ անուն  
 քաղաք, և ոչ զիտեմ յորմէ՝ էր Տիրամուժ իմաստասէր վարդա-  
 պետ Կապանեցի ի ԺԱ դարու:


» էին գաւառք կապանին », ըստ պատմչին, որ այնու իմանայ զերկիր թագաւորութեանն Սիւնեաց ժամանակին, տասնէքին յիշատակեալ գաւառքն այնորիկ և բերդեան՝ չորեցուն հին գաւառացն պատշաճին, այսինքն են Մղուկք, Չորք, Արեւիք և Կովսական. և ոչ յիշի և ոչ մի տեղի Հարանդայ և Բաղաց որոց յառաջն տիրէին. յետ այնր թուականի սկսան այլազգիք առ փոքր փոքր նուաճել զգաւառս և զբերդորայս, և հուսկ՝ զամրագոյնն յամի 1170, զԲաղարբրդ. յորմէ՝ ամօք յառաջ խոյս տուեալ էր յետին թագաւորն Հասան՝ ի հայրենի երկիր իւր ի Խաչէն. և բարձաւ ի սպառ արքունի և արքունավայել իշխանութիւն Սիւնեաց ի կողմանց աստի. անմտաց թողալ զկապանն անուն իրրու հզօրագունի տեղոյ նշանակ, և դժուարագնաց կրճից լեւրանց, ընդ որս հարկ է անցանել երթեւեկողացն ընդ վիճակս այս և ընդ Արեւիս. և թերեւ ըստ իմաստից տեղոյ անձուկ անցիցս՝ բարձրապագաթն լեռունն այն Քափուճուխ կոչեցաւ, (Դունակ), քանզի և անցք ճանապարհի են ընդ այն, որպէս նշանակէ գիտնական ումըն անզղիացի անգղաքնին վայրացն. ոչ զիտեմ՝ զիարդ ի հնումն կոչէր, զի հարկ էր այնպիսոյ բարձրութեան՝ ունել իւր անուն սեփական: Ի վերանալ արքունեաց, մանաւանդ յոտնակոխ լինել երկրին յայլազգեաց, խոյս ետուն և ազապքն Հայոց յայլ գաւառս, ուր տակաւին յանդորրու էին ազգայինքն. և Չորք՝ հանգոյն մերձակայ գաւառաց անցին և անկան ընդ փորձանօք թուրքաց և թաթարաց, որոց սերունդք մնան ցարդ սըփուեալք ի կողմանս յայտոսիկ. բայց որպէս ի նոյն մերձակայ գաւառան՝ աստանօր եւս անչէջ մնաց կայծ հրոյ ազգութեան մինչև ի մերս դար, ի ծովս Մէլիքաց, որոց ծանօթ են քաջառնութիւնք յառաջնորդութեան Դաւթի բէկի, որպէս և յիշեցաք ի տեղիս տեղիս նախազըրեալ գաւառաց, յիշեցուք և ի սմին և ի յետագայս:

Ի հին Յուցակի անդ աթուոյն Սիւնեաց գետըք սակաք կարգին Չորոց՝ ըստ անձկութեան երկրին, և են, հանդերձ տրովքն.

ԲԱՂԱՅՐԻ	13
ՆՈՐԱԳԻՒՂ	13
ՏԻՆԻՔ	13
ԲԱԿԱՎԱՆՔ	13
ՇՐԱՂԹԱՆՈՒ	6
ԿԱՌՈՒՐՂ. ԳԱՌՈՒՐԱՅ	6
ԳԵՂՈՅ ՎԱՆՔ	20
ՈՂՃԷԹԻ	6
ԲԵԼՈՐՈՍ	8

Շարաքոյ	8
Բեշ	6
Կաճաճուտ (Կաճաճա)	8
Բոկախու. Բագախու	8
Կիցք	8
Աջաբաջ	10
Վաժուճիք կամ Վաժանիք	13

Ի յետին դարս յերկուս վիճակս որոշեալ երեւի գաւառիս, ըստ նոր ցուցակաց թեմին Տաթեւոյ, և ըստ բնական զրոյց երկրին, այսինքն ըստ երկուց ձորագետոց



70. Չրվեժ մերձ ի Կապան.

զոր ի վեր անդր նշանակեցաք, և են ԳԵՂՈՒՅՈՐ, և ԲԱՂԱՅՐԻ, այսպէս կոչեցեալ սորա յանուանէ հաշակաւոր ամրոցին. և մէն միոյ վեց վեց գետըք նշանակին, որք և են արտաքոյ վերագրելոցդ.

Ամբէժ	Հանդիշէն
Կարդ վերին	Քյանանց
Կարդ ներքին	Փլմագրայ
Գաթու	Արջածոր
Քրդիկանց	

և արտաքոյ սոցս յիշին յայլ գրուածս կալեր և վանքըն, և Ղեղնաւոր:


## Ա. ԳԵՂՈՒԱԶՈՐ

118. Նշանակեցաք ի վեր անդր զգիրս և զսահմանս վիճակիս լինել հիւսիսային մասն Զորոց գաւառի, և կոչի այսպէս յանուն մեծի գեղը որ ի միջակողմանս ձորոյն կայ յաջ եղերն, որ է ի հարաւոյ. ի հին Յուցակին Գեղոյ-վանք կոչի, և ըստ արիցն յեկեղեցին գուշակի լինել բարգաւաճագոյն կամ մեծագոյն քան զամենայն շէնս Զորոց, զի միայն սա վճարէ յաթոռն 20 թեռն, մինչ այլք ոչ աւելի քան զ'12. իսկ ի յետին ցուցակս զրի Գեղի<sup>1</sup>, և ոչ յիշի վանքն. երեւի և ամուր լինել, քանզի դասի ընդ այլ ամրոցս՝ զորս մի ըստ միոջէ կորգեցին այլազգիք յ'ԺԲ դարու ի Թագաւորաց Սիւնեաց: — Աս վտակոջ զորս ի հիւսիսոյ և յահեկէն ընդունի գետն Գեղուայ՝ ի լերանց անտի անջրպետաց Լորաձորոյ և Տաթեւոյ, նշանակին գեղքն Գիտա?, Գիտրտա, որ է անշուշտ կահուրդ հին Յուցակին, յօրինակս ինչ Գահուրայ գրեալ. Զիտիչ, և ի հարաւոյ սոցին բերդ Մանձարայիս?<sup>2</sup> — Աս խառնըրդով միոյ ի վտակացս ի Գեղաձոր, յարեւմտակողմն՝ նշանակի արդ կարդ գեղով մի միայն. առ միւսով՝ որ յարեւելից առաջնոյն՝ Մաննուտոն՝ որ Թերեւս էր Ներքինն կարդ. ի միոյ յերկոցուն սոցս էր Թովմաս եպիսկոպոս Տաթեւոյ, որ գովի առաքինակըրօն վարուքն, և Թաղեալ է անդ: Կիսով փարսախաւ հեռի է ի Մահմուտլուէ ի Հս. Մ. Գեղուոյ և հազիւ մըղանաւ բացակայ ի յետնոյս (ի Գեղուոյ) յահեկէ գե-

<sup>1</sup> Բաժճի ի վիպասանութեան Դաւիթ բէկի նոյն սաէ զԳիտի և զՋեւու բերդ, այլ զիտիչ զոր ստորագրէ՝ ոչ պատշաճի տեղացոյց տախտակաց. այն զի՝ Հայրաձորոյ գետն ոչ է հուպ ի նոյն:

տոյն՝ Փիտիչի. իսկ յաջմէ գետոյն բաց ի Գեղոյ ոչ նըշանակի այլ գեղ:

Ըստ նոր ցուցակաց՝ Գեղուաձորոյ վիճակեալ է կից կամ կիցք գիւղ հին, որ ի յիշատակարանի միւսմ<sup>3</sup> յամի 1657 կոչի Գեց, և վկայի ի նմին լինել « յերկիրս » աստուածապահ Գեղուաձոր»՝ Թուի վասն ամրութեան,



80. Շարական գրեալ ի Գեց.

որ նշանակէ և զանդորրութիւն բնակչացն. եկեղեցի գեղն կոչի յանուն Ս. Ստեփանոսի և Ս. Աստուածածնի և և ամենայն Սրբոցն որ աստ կան հաւատով<sup>3</sup> »: Գրիչն (Պօղոս կարգաւոր) սաէ աւարտեալ զընդօրինակութիւն գրոցն ի Ղեղնաւոր գեղը, ընդ հովանեաւ Ս. Սարգիս Զորայարին, և յայտնէ գրել յաւուրս ձմերայնոյ, զորոյ և զսաստկութիւն՝ ցուցանէ բանին եթէ « Թա » նաք կու սառէր... չէր տայ. վա ինչ մեղաւորիս »:

<sup>2</sup> Շարական գրոց, որոյ յետին Թուղթք խոնգարեալ են, որպէս է գուշակել և ի նմանտախտ գրութեանէք (Թիւ 80):  
<sup>3</sup> Հաստիւ պիտէր գրել:



## Բ. ԲԱՂԱԲԵՐԴ

119. Սեփական փնակ Բաղարբերդոյ՝ զոր Պաղարբերդ կոչեն այժմուքս, է ձոր կապան գետոյ, ի բարձրաբերձ Գափուհուխ լեռնէ իջելոյ ընդ արեւելս կոյս ընթանալով հիւսիսսիսառն. ուր առ Աճրը գիւղիւ ընկալեալ յամէն՝ ի հարաւոյ՝ վտակ մի ի կովսական կուսէ, սակաւաք ի ստորեւ ընդունի զԳեղուածորոյ գետակն, յոր խառնի միւս եւս գետակ յանուն Ողլի գեղը կամ Ողլանց, ապա սակաւ մի եւս ընթացեալ ընդ Եւ. Հս. անկանի ի Չաւընդուր:— Գեղաք սակաւք նշանակին ի տեղացոյց քարտի փնակիս. և են, խաղալով ըստ ընթացից գետոյն, յահեկէ նորին Թապատի?— Ողլի. որ և Ողլից կամ Ողլանց գլխաւոր գիւղ, որոյ անուն ոչ լսի առ հինս. մերձ և գրեթէ յարակից նմին ի Հս. կուսէ կայ գրեալն Արկիգի. յորոց իբր կիսով փարսախաւ յարեւելից առ գետեզերքն՝ Բանալոս? և ի սմանէ մղոնաւ հեռի ի Հս. Եւ. Տէրուչիք:

Յայնմ գետոյն կապանայ առ գետաուռի միոյ մղոնաւ ի հարաւոյ Ողլեայ՝ կայ ֆիրտառուսան կամ Չիրտառուսան գիւղ. բացագոյն փարսախաւ և աւելի մերձ ի գետն (կապան) Մեղրէ գիւղ ի ստորոտս կամ ի լանջն լեռանց կապանի. և մերձ ի վտակ մի՝ որ ի հարաւոյ գայ, և յոր մերձագոյն եւս է՝ Բուլխրուտ, այն է Բելխորոտ հին Յուցակին, միակ գեղ Բաղարբերդոյ արդ ծանօթ գրիւքն և անուամբ, և Ս. Ստեփանոս եկեղեցեալ. յանուն նորին կոչի և մերձակայ երկայնանիստ լեռանն, ըստ պատմութեան Ղափանեցեաց: Մերձ ի սա ի մտից կուսէ ինին խառնուրդք Գեղոյ և Ողլանց գետակաց, յորոց

անկեան միջի է բերդն Չեւուլ՝ ոչ հեռի ի Բաղարբերդէ: Աստ Աստանագ Ղուչի դան կամ կողմնապահ Պարսից զօրաժողով ինէր ընդդէմ Դաւթի բէկի, որ փութացեալ իւրովքն գալ ի Ղարալիսէն գիւղ, և անտի խաղացեալ « պաշարեաց գրերդն Չեւուլ, այլ դժուարին եղեւ առ... » նուլ գայն. զի էր բարձրաբերձ և անառիկ յոյժ. յետ « բաղիւնցն զայն աւուրս երկուս՝ Մխիթար Սպարա... » պետն և Տէր Աւետիքն գրոհ տուեալ ի վեր խաղա... » ցին, իսկ նոքա ի պարսպէ անտի զսոսա ի բաց մեր... » ժեցին. բայց Տէր Աւետիսն խաբանօք ի յամուր ան... » դր բլանէր, և զգլխաւորն նոցա ձերբակալ առնէր: « Յայսմ վայրի զօրքն ամենայն որք շուրջ գրերդան է... » ին՝ ի պարսպացն ի ներքս զեղանէին, և սուր ի վերայ » եղեալ զամենեան զնոսա առ ետեղ սատակէին. » և ի նմին աւուր յամրոցի անդ կոտորեցին ի Թուրքացն » արս 4000. և ի սոցանէ մեռան սակաւք ոմանք՝:— Ան... » տի գան ի Սէրէ (որ է Աջաբաջ հին Յուցակին) և » անդ եւս կոտորեն զամենայն այլազգի բնակիչսն:— Ի գեղլէ աստի էր Սողոմոն որդի Մովսիսի և Եղիսարեթի քեռ Բաղտասարայ Եաւրի Գաղեցոյ, որոյ լուեալ ըզմահ քեռուոյն ի Վենետիկ, շոգաւ անդր (1736), և դատ վարեաց առ ի պահանջել զինչս նորա կտակեայս Սուրբ Խաչ եկեղեցոյ. ապա ստրկացեալ էառ միայն մասն ինչ՝ զկտակեալն վասն իւր (600 դուկատ) և զժախս ճանապարհի, և ստորագրեաց չպահանջել յայնմ հետէ բնաւ և ոչ ինչ՝:— Աւերակ ամայի է արդ բերդն Չեւուլ, նոյն պէս և համանուն գեղն:— Ոչ աւելի չէն կարծեմ և

1 Բաղարբերդոյ արդ երկարէ զվեղատանութիւն պաշարման և առման բերդիս, մտահար հանգամանքս:

2 Եթէ նամարիցի ոչ նտալանութեան արժանի կամ զբոսանայ՝ գիտեմ զզբուած նորա և զհաստատուան, այսպիսի է. « Աստուծով Թիւն ՌճՁՁ. Օգոստոսի Ժիւ ուն, եկի վանայսիկին. ևս Թիւն ՌճՁԷ. մարտի 10 ուն, եղև ներքոյ գրեալն:— Պատճառ զբոյս ոչս է. Որ Ես Ղափանու յերկրէն, որ է գեղէն Արեւիցի, ևս Մառտի որդի Սողոմոնըս, եկի վենետիկ իմ քեռի Եաւրի որդի Պաղտասարին՝ որ Գ ամով առաջ վախճանեալ էր, և պար? ինչ արքանք ունցեալ էր, և ում մտ որ փող ունցեալ էր, մեր շամխա յաթի մօզն, զամէնքն կտակ արարել և վախուր իւր նոզոյն ժամ և պատարազ լինի. և ինչ նամար վեց նարուր տուկազ թողէլ էր բանիւ բերանուն իւրով. որպէս մեր լուսիսութիւն վկայեցային. այսպէս էր ասացեալ: Եւ ես զնայցի դասապահանին արդ արարի, թէ զամի (զստ) տամ. տեսի որ անօգուտ էր իմ մտածային, և իւրջն մշտանայ դէմ և իմ նոզոյս ջնաս. վասն որոյ ես կամալս և յամարութեամբս զազուլ արարի զիմ քեռի Պաղտասարեալ կը... »

ասակին, որ վասն Ս. Խաչի Հայրոց եկեղեցոյն, և թէ Ս. Ղազարիտի Հայրոց վանքին, և թէ իւր կողակից Անկոյն. Եւ ես վերստին նաստատեցի զնորս տասցեալն և արարեալ կտակին. և զիմ 600 տուկազն առի ի Ս. Խաչ եկեղեցուն և Ս. Ղազարու վանքիցին. և որքան կամէի ինչ ևս զնայլուս և զանալուս խարջն ևս ալին 260 տուկազ, և լուսն եղալ 860 տուկազ. Եւ զիս նամէն կողմէ շահեցան. և ես իմ կամովս և յամարութեամբս այս գիրս գրեցի ամի լուսիսութիւն. որ այսու յեղէվ ոչ ես և ոչ իմ որդին և ոչ իմ քեռի Պաղտին ապրանայ և փոզին կողմիսնէ զամի նիզա չու... նեմք բնակին, ոչ տեղին և ոչ նայլում յերկրի յերկէ նայ? որ մին յերկրում յարեալէլիս ում յարեմուտս զայս բանիս բերան բերիմ, և կամ զամի Թալար անեմ. Կախ Հայր ամենակալէն և ԳճԺԸ (318) արքոյ Հայրապետացն նզովեալ պանագրեալ լինիմ. և յեր (երկրորդ) նպիսին 1500 զուրուշ նպիսին լինի. Եւ տեսողաց զգրիս ընթուենիք լինի: Ես ձեռամբ իմով գրեցի ի ներքոյ, և վերայդրեալն ինչ զարուլ է. Ես Մուսէս որդի Սողոմոն վերագրեալն ինչ զազուլ է.

զՈղանց, որ ի հարաւոյ կայ Ջեւու. և ի նորին հարաւոյ՝ փոքր կամ սակաւարնակ այլ մեծանուն գեղն Հայոց՝ Քաջարանց:

130. Ի հարաւոյ Բեխորոտի ձգին երկայնանիստ լերինք հորիզոնական դրիւք ընդ մէջ Արեւեաց և Չորոց. ուրանոր յահեկէ գետոյն Կապանայ խնդրելի են երկոքին զլիսաւոր տեղիք սորին, որք ըստ ոչ բաղդի ոչ նշանակին ի տեղացոյց տախտակի. յայտ է զի աւերակք իցեն, այսինքն Բաղաբերդն կա՛: Բերդն Բաղայ և Կապան քաղաք՝, երկոքին եւս անուանատուք ողջոյն զաւառաց, և ի վերջին ժամանակս հարստութեան Սիւնեաց գերահոչակեալք քան զամենայն հին շէնս և ոստանս ախարհին. Թէպէտ բերդն այն անուանի էր ի սկզբանէ անտի և գլուխ ամենայն բերդորէից երկրին համարէր, և անտակ. մի յայնպիսեաց ըստ պատմիչին, « որ ի մարդկան » հնարից հեռացեալ են, բայց միայն Թէ Տէր մասնեւ » ցէ, Բաղաբերդ. որ և մի ոմն ի զարմիցն Սիսակայ Բա » զակ անուն, առեալ զայս գաւառ մասն ժառանգու » Թեան, յինէ զՔարն Բաղակու՝ ամրոց, որ կոչի Բա » զակի քար և ամրացուցանէ գրբերդն, և կոչէ Բաղա » բերդ: » Յայտ առնենն բանքդ զի նահապետն այն Բա » զակ նախ զքարալեանն՝ որ ուղղորդ ամրառնայ ի ձո » րամիջոյն՝ այդպէս կոչեաց յիւր անուն, և կանգնեալ ի գա » զաթան նորին գրբերդն դժուարամատոյց՝ զայն եւս նոյն » պէս անուանեաց, և ցարդ իսկ նոյնպէս կոչի համբէն վիճակաւ և լերամբն, որ հայի ընդ հիւսիս. « Հանդէպ » Աճանանու », այսինքն ի Բաղս, ի վերայ կողմանցն Ա » շաղուաց և Տանձափարախայ, կանխաւ տեղագրելոց: Ջիփորձ ամրութեան տեղոյն քաջ հաւատեաց խրոխտն Անդովկ մահուչափ սխութեամբն ընդ Շապհոյ մեծ ի ար » քայի Պարսից, յորժամ յաւարի հարեալ զարքունիս նո » րին ի Տիգրան, մինչ նա ընդդէմ Խաղրաց գնացեալ էր ի մարտ՝ համախարհական բանական, հրամայեաց սա, « և բերեալ զանթիւ զաւարն զամենայն՝ հաւաքեցին ի » Բաղաբերդ. և զամենայն գաւառացն (Սիւնեաց) ըզ » համբարս՝ զհացի, զխոտոց, զյարդի, և զքաղմութիւն » զինւոյ, իւրոյ և զզենւեաց և զմեղուի, զպէսպէս մըր » զոց համբարս անթիւս ժողովեցին ի Բաղաբերդ, և ըզ » կազմածս հեծելոց, զզէն, օճառս... Եւ եկեալ Շապուհ

» Պարսիցն արքայ ի վճարմանէ պատերազմին Խաղրաց, » մեծաւ ցասմամբ հրամայէր ամենայն զօրաց իւրոց ե » լանել յախարհն Սիւնեաց... և դարձեալ ժողով աը » լեալ ամենայն բազմութեան գնդին Պարսից և Ա » րեաց. տալ պատերազմն ընդ Բաղաբերդի. և ոչ ինչ » կարացեալ առնել ամրութեան տեղոյն. զի վէմս զը » լեալ ի տեղոյն զառ ի վայրն՝ զամենեանս առ հասա » ռակ սատակէին. և հրամայեալ Շապհոյ արքայի բա » զում քան զայն կրկնապատիկ զօրք զալ ի Պարսից, » վերջապահս թողեալ հրամայաց սաստկացուցանել ըզ » պատերազմն ընդդէմ ամրոցին: Եւ դարձեալ որպէս » յառաջնուամն նոյնպէս և յերկրորդուամն՝ պարսաքարիք » և վիճազլմամբք զանհուն բազմութիւն պարսկական զա » ռուն զամենեանս դիաթաւալ կացուցանէին: Եւ դար » ձեալ երեքկին քան զնոյնն այլ զօր բովանդակեալ Շա » պուհ, և հրամայէ սաստկացուցանել զպատերազմն, և » վերջապահս հրամայեաց թողուլ, և ասաց. Եթէ որ ի » վերջ որ դառնայ՝ սպանէք: Եւ սոքա նոյնգունակ վիճք » և պարսիք կոչկոծեալք՝ առ հասարակ սպառեցան... » Եւ դարձեալ զայրազին լի ցասմամբ եղեալ Շապուհ » արքայն Պարսից ընդ եղմունս իրացն, կամ եղեւ այլ » զօրս անթիւս բովանդակել, առ ի սաստիկ եւս տալ » պատերազմն ընդ Բաղաբերդի: Եւ նոյնժամայն իշխան » զըն մեծամեծ նախարարացն ի ծուր իջեալ առաջի ար » քային Պարսից Շապհոյ, աղայեցին մի եւս պատերազ » մն ընդ անպարտելի ամրոցին Բաղաբերդի՝ և մի տալ » կոտորել զԱրեացն գունդս. և ասացին շուրջ զամրոցեան » յաւեր դարձուցանել նոյնպէս և զամենայն զիջխանու » թիւն գաւառացն Սիւնեաց... Իսկ Անդովկայ Սիւնեաց » տեսանն որ պարսպորդ գտեալ, և ելեալ յամրոցէն » Բաղաբերդի՝ մեծաւ աւարան, անցանէ յախարհն » Հոռոմոց, առ մեծ ինքնակալն Թէոդոս արքայն Յու » նաց. և ի նմանէ պատիւ մեծապոյն գտեալ, այսին » զըն Պատրկաց պատրիկ արարեալ զԱնդովկ, վախճանի » անդէն յախարհին Հոռոմոց »: — Բազում անգամ յետ այնր ապաւէն լեալ է բերդն և փրկիչ վտանգելոց իշխանաց և իշխեցելոց Սիւնեաց՝ յարչաւանս այլազ » գեաց, որպէս ի կէս Թ դարու յաւուրս հարուածոց Բու » զայի, « յսլովք ի տերանցն կուսակալաց յանտոիկ ամ

Եւ Մինաս աի փերվադիան Արքեպիսկոպոս իվերնոյ զւոյ զըբիս միջի եզեալ բանն ես իւրովի հոգացի, և ստորագրեալն Սուրբ զոմոն աի Մովսէսի ձեռնայգիրն է. վասն որոյ ես վկայեմ, գրեցի և կնքեցի, տեսողացն ընդունելի լիցի:

Եւ Ըստէփան աի Վարդանէն Շահումիս վերոյգրեալ պանին վկայեմ:

Եւ Նահապետ աի Պողոս Շահումիս վերոյգրեալին վկայեմ:

Եւ Մանգեթի Պոլոսի որդի Մարտիրոսը վերոյգրեալ բանին վկայեմ:

Եւ զազարի որդի Ուանիս վերոյգրեալ բանին իւր Ղարաբոլն վկայեմ:

Եւ Գասթարի որդի Մանկուս վերոյգրեալ բանին իւր եզրաբով վկայեմ:

Եւ Հայոց Ս. Խաչի եկեղեցուն երիցփոխան Ջ. քարէ որդի Սաֆարիս վերոյգրեալ բանին վկայեմ:

Եւ Թօխաթիցի մահաթաի Անտոնի որդի Պաղտասարիս վերոյգրեալ բանին վկայեմ:

Եւ Բովակիմ աի Մկրտումիս վերոյ բանին վկայեմ:

Եւ Մուրատի որդի Սարաթի/օնիս (Սարաթի) վերոյ բանին վկայեմ:

Եւ Ոսկանի որդի Նիկիթրոսիս վերոյ գրեալ բանին վկայեմ:

Եւ Մաւուրի որդի Խաչիկ վերոյգրեալ բանին վկայեմ:

Եւ Մանկուրի որդի Հայրապետիս Ս. Խաչի Հայոց եկեղեցոյն և Ս. Ղազարի վանկին վարի էի. վերոյ պանն շինեցի և հաստա » ակցի, վկայեմ »:

Առայինն ի ստորագրողաց վկայեցն (յետ Մինասոյ արքեպիսկոպոսի) և նշանուոր անձն, գինակից և սիրելի Գաւթի բեկի, յե » շեալ ի մասնինս և յիջելի յատուկ եւս յետ սակաւուց:

Ի բաժնի առ մեր յանկին կցուածոյ զետոց Գեղուճորոյ և Հալիճորոյ (?), չբխապատեալ լերամբք յանձուկ ձորակի կամ փո » ղոցի, յորոյ ի մի ժոյր դեպ անդէպ կայցեն բերդք Հալիճորոյ և Աջուճուց, ի միւսն՝ Բաղակուց-քար և Շիրուս: Իսկ նոր ուղէզե » ընն առ անըզմէլ յեզեր կամըրի՞ զետոյն կապածոյ, յորս յեր » կոսին կողմանս ամբառան մէն կէս շինուածոց բերդին, յորս են աւերակք պարսպաց, զերեզմանոց և եկեղեցոյ:

2 Ստեփանոս Օրբելեան, Թ:

» բոցն Բաղաց գիմեալք՝ հաւաքեալք փրժանէին ի ձե-  
» աաց նեղչացն »<sup>1</sup> :

Այլազգ իմն օրինակաւ տեղի ապաստանի եղեւ բեր-  
զըս Բաղաց ի կէս՝ Ժ գարու՝ Յակոբայ սիգասիրտ ե-  
պիսկոպոսի Սիւնեաց (եղբորորդւոյ Յովհ. Զ. կաթողի-  
կոսի), յերեսաց Անանիայ Մոկացոյ կաթողիկոսի, յոր  
մէ սարսուցեալ էր, զՋուանշէր ի իշխան Բաղաց և տէր  
բերդիս՝ պաշապան իւր ունեւով, զամս տասն, մինչեւ  
ցամառ իւր. զոր լուեալ կաթողիկոսին՝ եկն անդրէն ի  
Սիւնիս, և յետ տալոյ հրաման շինել զեպիսկոպոսարանն  
Տաթեւոյ՝ զոր ինքնին քանդեալ էր, « գնայր ի քաղաքն  
» կապան. ընդ որոյ առաջ ելեալ բանադրեալ ի իշխանն  
» Ջուանշէր մեծաւ զղմամբ զմեղայ խոստովանէր. նը-  
» մանապէս եկեալ և զահերեց ի իշխանն Սիւնեաց Վա-  
» սակ. և զեղեցիկ խոստովանութեամբ զմեղայ կար-  
» դաց ի միտսին զՔողովիւն յանցանացն. և տարեալ  
» մեծապէս չքով հանգուցին յարբունական գահոյս ի  
» կապան քաղաքի »: Անդ ձեռնադրեաց զորդին Զը-  
ւանշէրի զՎահան յեպիսկոպոս Սիւնեաց, և առեալ զիր  
հաւատարմութեան՝ գնաց: Երեւի ի բանէդ՝ զի յայն-  
ժամ կապան քաղաք՝ լոկ ի իշխանին Բաղաց էր նիստ,  
և յետ այնր սոսան եղեւ նահապետաց Սիւնեաց, յոր-  
ժամ հասին ի պատու թագաւորութեան, և հնարէին  
յապահովել զայն յանրոյթ վայրի, և չգոյր քան զայս տե-  
ղի անկասկած. զի ոչ միայն ի կուան կայր բերդն Բաղաց,  
այլ և ինքնին կապան ամուր էր ի բնէ և յարուեստէ.  
զորոյ հանգամանս սակաւուք յայտ առնէ պատմիչն՝ ի  
յետին չարաչուք արկածի մատուցեան և խանգար-  
ման նորին յայլազգեաց, յելս ԺԱ գարու կամ ի սկիզբն  
ԺԽԶ, որութեամբ Չորթմանայ ուրումն ամիրայի Թուր-  
քաց՝ սիրելոյ Մէլիքչահ օուլտանի. առ որ զուով երբեմն  
Սենեքերիմայ թագաւորի Սիւնեաց՝ ազաչէր զսա այլ-  
ազգին այն տալ ինքեան զդուստր իւր ի կնութիւն. և ոչ  
հաւանէր թագաւորն. այլ առ ի լուեցուցանել զնա ի  
թախանձանացն՝ խոստանայր ի վերին երեսս. և նորա  
ոտոյդ համարեալ՝ խնդրէր պահանջանաք. և մերժեալ ի  
թագաւորէն՝ դարձաւ ի թշնամութիւն. ապա յետ մա-  
հուան Մէլիքչահի և Բէրկիարուիսի՝ մխեալ ի սահմանս  
Սիւնեաց՝ սկսաւ աւերել զերկիրն և քանդել զամուրսն.  
և օրպէս թուի՝ սաղրեաց Փատուոն ամիրայի Գանձա-  
կայ, և սորա հրամանաւ Գրիգոր Ապիրատեան ի իշխա-  
նըն Շիրակայ՝ եկն ամենայն զօրօքն Առանոյ յանառիկ  
ամուրսն « Բաղաց և կապանին, որ և խարէութեամբ  
» հնարեալ մտին անդր, և սպանեալ զՍենեքերիմ ար-  
» քայն հայկազնի... յիջաւ ճրագն որ անդ, և տիրեցին  
» Պարսք »: Ըստ Օրբելեանի՝ Գրիգոր Ապիրատեան խա-  
րեալ և ստիպեալ յամիրայէն (Փատուոն) որ ասէր վասն  
սիրոյ հրաւիրել զՍենեքերիմ, և թէ չածէր զնա՝ հատանել  
զգլուիս Գրիգորի, ի գալ թագաւորին միամտութեամբ՝  
» ստեաց ուխտին, և յարձակեալ մրմունաք ի վերայ՝ եւ  
» պան զթագաւորն, և ինքն անց գնաց յայխարհ իւր...  
» Եւ եկեալ մեծամեծացն և որդեացն իւր՝ կոծ մեծ ա-

» բարին ի վերայ, և բարձեալ տարան ի սուրբ Ոյխտն  
» Վահանու, և անդ եղին ի չիրմի ընդ այլ թագաւորսն »:  
Յետ իրր տասն ամաց (1103), յաւերու նոյն պատմիչ,  
« օր մի յանկարծակի՝ մինչ կային յանհոգութեան քա-  
» ղաքացիքն, մատնեաց Տէր զանառիկն ի մարդկանէ  
» զկապան քաղաք. և անիծեալն Չորդանս վասն քի-  
» նուն իւր յեղակարծում ժամու հեղաւ ի վերայ քա-  
» ղաքին: Նախ բազում հետեւակազօր մարդիկ՝ սորա-  
» մուտք և քարազնացք եղին ի գլուխ ապառաժուս լե-  
» ռինն, և իջին ընդ մեծաւարի՝ հեղեղատն ի քաղաքն.  
» զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին  
» զուոյ մտից մարդկան. և սկսան կոտորել ի Չհտարա-  
» ղոյն. և ապա բացին զդուռն քաղաքին՝ որ ի Խեճորոյ  
» գոյնս հայէր. և մտին զօրքն ամենայն, և հարեալ սա-  
» տակեցին զամենեսեան առ հասարակ: Բայց ի բեր-  
» դըն ոչինչ կարացին ձեռնարկել, այլ գնացին անդրէն  
» ի տեղի իւրեանց: Ահա այս եղեւ սկիզբն աւերման  
» աշխարհին, և օր ըստ օրէ սկսաւ նուազել և պակա-  
» սել ի իշխանութիւնն այն ». զի մի ըստ միովէ առին այլ-  
ազգիք զբերդորայսն. և հուսկ բնաւից յամի 1170,  
« զապաւէնն ամենեցուն և զտեղի ապաստանի, զանա-  
» ռիկ ամուրն զԲաղաբերդ, (զոր Տէր) մատնեաց ի ձե-  
» ռս իսմայելի անիծեալ և զիշխանձ առն, որ բա-  
» ղում զօրօք եկն և ոչ կարաց հնարել ինչ. ապա պա-  
» տրող բանիւք խարեաց զպարզամիտ արս քրիստոնեայս  
» Աչաղուացիս, և նաքաք առ զՔարն կկոց. և ապա ի  
» զիջերի այնու արամբք զօրացաւ զԲաղաբերդ և ա-  
» ռեալ կոտորեաց սաստիկ: Եւ զի վասն անառիկ ամ-  
» րութեանն՝ յամենայն վանորէիցն անդ էին կուտեալ  
» զարբութիւնս և զգրեանս և զսպաս եկեղեցոյ, եւս ա-  
» ռաւել զանհամար և զանման սրբութիւնս և սպաս  
» եկեղեցոյն Տաթեւոյ փարթամ և հարուստ աթոռոյն,  
» խաչ և վկայարանք յոսկոյ և յարծաթոյ, և անգին  
» ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտա-  
» կարանք յուովք որք թուով աւելի քան զտասն հա-  
» զար, զորս ամարեալ էին անդ, ամենայնն առ հա-  
» սարակ գերի վարեցան, և ցան և ցիր եղնն ընդ երեսս  
» աշխարհի:... Ապա մինչ մատնեաց զմեզ Տէր... զայլ  
» բերդերն և զամուրսն՝ իւրեանց կամաւ ետուն յԵլու-  
» կուզ աթարէկն. և ընդհանրական տիրեաց Տաճիկն »:  
Բայց յետինն պայազատաց թագաւորացն Սիւնեաց՝  
Հասան Խաչենեցի փեսայացեալն ի կասալ դուստր  
Գրիգորոյ թագաւորի (+ 1166), յառաջ քան զառնուլ  
բերդին՝ խոյս տուեալ կնան հանդերձ՝ յապահովեալ էր  
ի հայրենիս իւր ի Խաչէն:— Թէպէտ յետ ոչ բազմաց՝  
Զաքարեանք աշխարհակեցոյցք՝ « առին կարգաւ զաշխար-  
» հրս ի Տաճկաց, ի կայնոյ մինչեւ ի Բաղաբերդ », և ոչ  
սակաւ զիւր եղեւ երկրին յաւուրս պայազատութեան  
Օրբելեանց յԺԳ գարու, այլ կապան և Բաղաբերդ ոչ  
եւս յիշին. զի և ազատք երկրին՝ ի մեկնել անտի արքայ-  
ազանցն՝ ցրուեալ գնացին յայլեայլ կողմանս, Համ-  
տունեանքն և Մահեանեանք. միայն իրեւ Վիճակ՝ Բա-

1 Յովաննէս կաթողիկոս:  
2 Վարդան (Եթ) և Միխիթար Այրիվանցի փոխանակ Գրի-  
գորի ստեն վասակ որդի Գրիգորի Մազիսարոսի:

3 Առաջեւ գրեալ յօրինակս գրոցն. քննելի է. բայց նշանա-  
կել երեւի զհուն կամ զձոր նեղեղատին, և կամ մեծավարս և շա-  
տաւուր սակ զնոյն:

զարերդ կոչումն մնաց և մնայ ցարդ: Ի սկիզբն կոյս ան-  
ցելոյ դարու առ տիրապետութեամբ Դաւթի Բէկի՝ Ա-  
դամ ոմն էր զօրավար կողմնակալ Պաղարեբրդոյ, 150  
արամբք: Տակաւին կիսականգուն կայ ամրոցն այն ահա-  
ւոր յահեղախորտ սեպացեալ քարածեփի, որ և թուի  
իմն շուրջանակի արձակել իուզս սրածայրս առ ան-  
մատչելի գործել զտեղին, առ որ սատարէ և գետն յոր-  
ձանահոս շորջ փարելով և ոչ թողով հուն ճանապար-  
հի, բայց կամուրջ մի. սակայն և այն երկուստեք զգու-  
շացեալ ամրոցք, որք մինչեւ ցափունս իրոյն կարկառին.  
Իսկ պարիսպքն և որ ի նոսին չէնք և եկեղեցին՝ քայքա-  
յեալ և խանգարեալ են, կարով և կապարաւ մածու-  
ցեալ քարինքն:

Ընդ կարեւոր հետաքննելի տեղիքս կապանայ և Բա-  
զարեբրդու, խնդրելի է և երրորդ զոյգ նոցին Վահանայ  
վանքն կամ Յովնաննայ վանք, շինեալ ի վահանայ  
որդոյ Ձագիկ իշխանի և եղբոր Ջուանչէրի, յամի 911.  
որ երբեմն դիւարախ ինեյով՝ ապա զգաստացեալ հրա-  
ժարեցաւ յաշխարհէ, և եկեալ ձ ի ստորոտ բարձր լիբին  
» յորում անառիկ ամրոցն կայ Բաղարեբրդու... և զը-  
» տեալ տեղի մի հարթ և յոյժ ի ճահ. հրաւիրէ զեղբար-  
» սըն իւր ի նոյն գործ. և սկիզբն առնէ շինուածոյ եկե-  
» ղեցւոյն և կանգնէ տուն փառացն Աստուծոյ, յոյժ գե-  
» ղեցիկ յորինուածովք, գմբեթայարկ և եռախորան,  
» հաստահեղոյս և տաշածոյ վիմօք. և կարգէ զնա տուն  
» կրօնուորաց. և մեծամեծ և թագաւորական սպա-  
» սուք զարդարէ զնա. և ժողովեալ եղբարս սրբակրօնս  
» աւելի քան զհարիւր. և հատուտեն մասն ժառան-  
» գութեան եկեղեցւոյն՝ որ յանուն Սուրբ Լուսաւորչի  
» Գրիգորի, զՋորն գետովն, յայս գեհոս և յայն, յան-  
» դաստանս և յայգեստանս վանիցն. և զլեւնակողմն  
» մինչ ի վեր ի ծայր բարձրասանդակին, ուր հօրանք հօ-  
» տիցն ինէին և բնակեցող խաչանց. և ի քաղաքին կող-  
» մանէ՝ մինչ ի պատուար պարսպի արտաքին որմոյն, որ  
» ի շենէն սկսանի, և ի Տանձափարախոյ կողմանէն  
» մեծ բնաճորն որ ի լեռնէն սկսանի և իջանէ ի գետն,  
» և զգեղանն որ ի հանդէպ վանացն, զԱշտոյ և զԱլա-  
» դասայ, զԳետարաւայր և զՇէկք. և այլ բազում տու-  
» ըրս և ժառանգութիւնս եկեղեցւոյն հաստատեն ան-

» խախտ վճռաւ: Կոչէ Վահան զվանսն իւր՝ Վահանոս  
» փանք, և որ ըստ օրէ հանդիսանայր նա իրրեւ քաղաք  
» բազմաժողով: Եւ ինքն իսկ Վահան յետ բազում ճը-  
» գանց և աշխատութեանց վախճանի, դնի ի դրան  
» սուրբ քաւարանին: Բայց յետոյ միւս Վահան եղ-  
» բորորդի սորա, այսինքն Ջուանչէրի որդի, ոնեալ և ու-  
» սեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային իմաս-  
» տիւք ի սոյն տան, քահանայացաւ և եղև առաջնորդ  
» սուրբ ուխտին: Սա յաւել բազում շինութիւնս և զար-  
» դարեաց զվանսն հանդիսական կարգաւ. չինէ զմեծ  
» աղօթարանն ի դրան եկեղեցւոյն վիմարդեան մահարձա-  
» նօք, յորում հանգուցեալ կան ի չիւրմի բազում թա-  
» գաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց՝ և բազում  
» իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս: Շինէ և գե-  
» ղեցիկ յորինուածով զգաւթ եկեղեցւոյն, մեծամեծ  
» քերածոյ վիմօք, յերեսուն կանգնոց չափ կանգնէ կա-  
» մար ի դրան վանիցն, և ի վերայ երկու խորան յանուն  
» Պետրոսի և Պողոսի սուրբ առաքելոցն: Շինէ և ի  
» ձուլեալ կրաշաղախ քարանց տրապեզ մի մեծ. և բերէ  
» փողովք զլուրն ի դուռն նորա. այսպէս գեղեցկա-  
» ցուցեալ զնա զանազան յորինուածովք: — Աս  
» Վահան երկրորդ յետոյ եղև եպիսկոպոս Սիսեաց, և  
» ապա ամբարձաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց,  
» յորմէ և մերժեցան՝ իրրեւ նորմաճութեանց մեծիչ  
» կամ ընդունող քաղկեդոնական դաւանութեան. « Բայց  
» յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի Թագա-  
» ռորի Բաղաց, ի Շահանդիսոյ Թագուհւոյն և ի կատայէ  
» և ի Սենեքերիմայ Թագաւորէ՝ բազում և գեղեցիկ չի-  
» նուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահա-  
» նու, կանգնեալ մեծամեծ կամարս, և ի վերայ եկե-  
» ղեցիս և սրանս բազմապիսն բարձրաբերձ, հովանի և  
» խրախարան իշխանացն: Երրոց աւուրս եկն երջանիկ  
» կաթողիկոսն Աղուանից Տէր Ստեփաննոս, և անդէն  
» բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ ի տեղւոյն, և եգաւ  
» ի նմին սրբարանի ». որ և կայ մնայ անդէն ՇԽ (1091)  
» Թուականաւ և արձանագրով տապանին. զոր վառն  
» խանգարմանն ինչ՝ ոչ է ընդօրինակեալ նոր ոմն ծա-  
» նօթարար՝, այլ ըստ բաղդի ընծայէ մեզ զարձան մի  
» կարեւոր Շահանդիսոյ Թագուհւոյ, 1086 ամի.

**Ի Թուին ՇԼԵ. Ես Շահանդուխտ դուստր մեծի արքային Աղուանից  
Թաղաւորին եւ ամուսին Գրիգոր Թագաւորին, որ է որդի Աշոտի կաւաւն ?  
ոչ դողով մեզ ի միասին ? Ժառանգ ըստ մարմնոյ, ես եւ քոյրս իմ կա-  
տայ շինեցաք զՍուրբ Աստուածածինս, փոխարէն գթոց նորա. Որչափ կեն-  
դանի եմ կատարեն զսուրբ խորհուրդն. եւ յետ այնորիկ զմեզ կցորդ ա-  
րասցեն . . .**

1 Եանուանէ յիշի թագաւոր աստէն Սթառ Բ Թագաւոր Սիւ-  
նեաց և Սենեքերիմ Թագաւոր: — Օրբել. ԿԹ:  
2 Նոր Դար, Ը. 159. — Ուզէգիրն Շաղալոյ Գեղէ շին Գեղի-  
ւան, զվահանայ վանս ժառանգութիւնս անէ ի Դաւթի բերդէ՝ որ

ի Հալիօր, և զսա մերձ ի Բեխ. բայց Պատմութիւն Սիսեաց յայլ  
եւայլ գաւառս նաւաստէ ինեկ զտեղիքս. այսինքն է, զՀալէ  
կամ Հալիօր՝ ի Հաղանդ, զԲեխ՝ ի կողմակոս, և զվահանայ  
վանս՝ ի Ջորք:

Յանկալի էր ստուգագրել և զայս արձան, և գտա-  
նել զայլ եւս տապանագիրս ազնուազարմիցն այնոցիկ  
և օրբազանից արանց, և հասու լինել պատմական ան-  
ցից և ցեղարանութեան Սիսակեանցն. զի հանգոյն  
Հռոմոսի վանաց և Հաղբատայ և Սանահնի և մեր-  
ձագունիին՝ Նորավանից, ահա և սա երեւի հունգստա-  
րան լինել հռչականուն մահացուաց, եթէ ոչ ի սպառ-  
սպառ եղծ պղծեաց քանդեաց զնոսին Հարունն այն  
ամիրայ, որ յամի 1126 էառ զԲերդն կարաւու (որ և  
կարաւաբերդ), և զՔարն Բաղակոչ, որ էր վլանք,  
յորում «մթերեալ կայր բազում սրբութիւնք, խաչ և  
» վկայարանք ոսկի և արծաթի և կտակարանք որ գաղ-  
» թեալ էին ի գաւառացն. և ամենայնն ի գերութիւն  
» մատենեցան», ըստ պատմիին:

Մի յամուր տեղեաց Թագաւորութեան Բաղաց էր

բերդն այլն կարաւուց, թերեւս և նոյն որ կոչի կը-  
քերքերդն, և ընդ ամրագոյնս աշխարհին Սիւնեաց դա-  
սի ի պատմչէն՝ ի սկիզբն պատմութեանն, այլ Արե-  
ւեաց երեւի պատշաճել. նոյնպէս և յերկոսին եւս տե-  
ղիս պատմութեանն յիշեալն ընդ նմին՝ Շլորուսի ամուր  
բերդ: — Պատմիչ գործոցն Դաւթի Բէկի և զօրավա-  
րաց նորին՝ պանծանօք կոչէ զգաւառն Ղափանու՝ Եօթ-  
նաբերդ, ոչ նշանակելով որոշակի զոր բերդս իմանայ-  
ցէ. այլ յայտ է թէ նախ զկապան և զԲաղաբերդ, թէ-  
պէտ և զսա միայն հարեւանցի յիչէ ի թուելն զզօրա-  
վարս Հայոց. իսկ զկարաւաբերդ և զՇլորուս՝ ոչ բնաւ.  
և զի ըստ այժմեայցս ընդարձակին սահմանք Ղափանու՝  
ի նմին գրելի են անշուշտ և Բերդն Դաւթի և այլք որ  
ի Մուղիս և որ ի Բաղս, այլ և որ յԱրեւիս գաւառի,  
յոր արդ աւասիկ կայ մեզ մտանել և լինել:



81. Քանդակ յեկեղեցոյ Տարեու\*.

\* Ընթերցի (յէջ 231) զարձանագիր խաչքանդակիս Յովաննու եպիսկոպոսի, յիւր թ գարու, և գրանչացի ընդ ձեռ տառիցն:



# Ա Ր Ե Ի Ի Ք



**ՊԱՅԾԱՌԱՆՈՒՆ** գաւառս Արեւեաց՝ համանման իմն քաղցր անուամբ հովիտ ունի զՄեղրի գետոյ փոքու, որով և գրեթէ բովանդակի, միայն յարեւելից կուսէ ունելով և ձո-

րոց չուրք ի թիկանց Խաչպօղոս լերանց Աովսականի հոսեալք, թափ ընդ թափ վազվազելով ուրոյն ուրոյն անկանին յԵրասխ, ուղղակի ի Հս. ընդ Հր. իջեալ: Յիջեալ լերինդ յայնմ կողմանէ սահմանեն զԱրեւիս, որպէս ի հիւսիսոյ լերինք կապանու կամ Զորոց. յարեւմտից՝ բարձր բարձր լերինք Դարուայ, յորս և Գափուհուխն նախածանօթ, և պար Ալանկեզ լերանց, յորս բարձրագոյն Շըխ-եռչոտ 11,180՝: Ի հարաւոյ Երասխ գետ պատի զեզերք երկրին:— Հանգոյն փոքունց ձորագետակացն՝ գետն Մեղրոյ՝ դոր ոմանք յանուն գեղջ միոյ Զուար լայ կոչեն, ուղղակի ի հիւսիսոյ ի թիկանց լերանց կապանոյ իջեալ խաղայ ի հարաւ, յալմէ և յահեկէ՝ ի պարուց Գարուայ և ի Աովսական կողմանէ յողովս ընդունելով վտակս մանունս, որովք և ի ձորակս ձորակս արահեալ վայելուչս, այգեւէտս, ծառաւէտս և պտղաբերս, մի ի գեղեցկագոյն և բարգաւաճագոյն վիճակաց երկրիս մերոյ հանդիսանայ. բերելով առատ՝ զատ յայլ եւս արգասեաց՝ Շերամ և Քամբակ: Բայց ոչ ըստ բերոցն և կերպարանաց երկրին են և օղք. սաստիկ է տօթ ամարայնոյ, և ցուրտ ձմեռանոյ՝ ի շնչելոյ հողմոց ի բարձրաբերձ լուրանց անտի, որք հազիւ ուրեք զերծանին ի սառամանեաց. զայսր զփորձ առին Ռուրք յամի 1810, ի գրաւելն զերկիրն յառաջնում նուագին, և կորուսեալ սրածութեամբ աւելի քան զ՝ 1500 ոգիս, լքին զղաղարս իւրեանց՝ յետ երկց ամաց:

Ի մնական և յանգործարան բերս երկրին՝ որ ի հասարակի պորփիրախառն յայտքարամբ (Diorite) զանգեալ է, նշանաւոր է՝ թէ և փոքր՝ Արծարահանքն առ կարճաւանաւ, զոր և բրէին յամի 1831, ըստ վկայելոյ Տիւպուայ՝, եթէ ոչ շփոթիցէ ընդ կապարահանան որ նշանակին սակաւուք ի վերոյ ի հիւսիսոյ նորին՝ առ Ագարակ գիւղիւ:

133. Անձուկ են սահմանք երկրին Արեւեաց, որ է իբր 15 մղոն եւեթ ընդ երկայնն ի Հս. ընդ Հր. և գրեթէ նոյնչափ և լայնութիւնն յԵլ. ի Մ. գի թէպէտ յայսմ կողմանէ երկարագոյն եւս է ըստ հարաւային մասին, այլ անձկագոյն ըստ հիւսիսոյ. իբր 320 մղոն գոլով ընդ բնաւ. այլ կարծեցուցանէ ոչ առանձնակ գաւառ կամ վիճակ իշխանութեան լինել ի նախնումն, զի ոչ իսկ յիշխորա նահապետ կամ անձնական անուն. այլ ընդարձակագունի գաւառի (Թերեւս Գողթան) եղեալ մասն, յետոյ յերբեմն ժամանակի անջատեալ և համարեալ ընդ ինքնուրոյն գաւառս աշխարհին Սիւնեաց: Անծանօթ մնայ ծագումն և պատճառ անունն, որ ի հասարակի գրի Արեւիք, այլ ի պատմութեան քարոզութեան առաջելոյն Բարթողիմեայ, զոր ի հնագունէ պատճէ առնու Օրբելեանն, գրի և Արեւելք. իսկ Սարգիս կաթողիկոս ի կոնդակին կոչէ Արեւեաց Տուն. և տանն կոչմամբ ցուցանէ զիտրրկութիւն երկրին, որում աներկաց հաւաստիք են և սակաւութիւն զիւղից նշանակելոց ի հին Տուցակի աթոռահարկին Սիւնեաց, 24 միայն. և են այսպիսի, հանդերձ տրիւքն.

Աղվանք կամ Աղուոյ վանք	7
Կառատի	15
Մացրի	8
Արկավանք	8
Մալունու (Մանլեւ)	8
Տափեար	8

1 Ի կարճաւանաւ հովտին սակ զայս լինել. La vallée de Gartchevan, célèbre par son vin mousseux et par une

mine d'argent assez pauvre, que cependant on exploite.— DUBOIS DE MONTPÉREUX, IV. 44:

Մեղրոյ վանք	20
Լսհավանք. Լսնավանք	30
Որդիշոյ վանք	20
Լուսկայ վանք	12
Խոլավանք	12
Զուլարի վանք	12
Կարճաւան	12
Մուրշան	12
Տաշտուն	12
Կուրավանք կամ Կորօնք	8
Ագարակ	8
Մանաղու կամ Մանուղու	8
Մել	6
Տեհի	8
Կորեկնեկ. Կորեկնէք	10
Թաղամայրի	6
Խոզուղիւղ	6
Վարդանաձոր	6

ընծային, ՄԱՏՐՈՒ. և ԿԱՔԱԻԱՐԵՐԻ, յորս՝ զատ ի վե-	
րոյգրելոցդ որ ըստ հնոյ Յուդայիկն՝ նշանակին յառաջ-	
նումն, (Մացրու) գեօղք,	
Թօս	Յերկրորդումն,
Սղանեակ	Լիճ
Գոմերանց	Սեւատարա
Շուանիձոր	Տիկնատափ
Իչխուն	Քարն
Նաւոն	Նորաշինիկ
Մճնաձոր	Թաղ մեծ
Կարթաթաղ	— Փոքր
Մեզրէն (Մացրի ?)	— Միջին
Ափկէս	Թխկոտն. Թիկոտն
Երկտաստանց	Լէօք կամ Լեկ
Կուավանք. Կուրուս	Կառօն
Վանքն	Քուջերդ
Նուշանց	Կալեր:

Սոցա՝ որպէս տեսանիդ՝ նշանաւոր է յառփից վանք բա-  
 ռիւ բարդութիւն, զոր աստանոր ըստ հասարակ նշանա-  
 կութեան իմանալ անկ համարիմ, այսինքն միանձնակա-  
 նաց բնակարանս. քանզի որքան անծանօթ և անյիշատակ  
 է գաւառս ըստ քաղաքական պատմութեան, այնքան նա-  
 խածանօթ երեւի ըստ քրիստոսական կրօնից, քարոզու-  
 թեամբ Բարթողիմեայ և աշակերտաց նորին, ի սահմա-  
 նորդ երկրէն Գողթնեաց (որոյ թերեւս և մասն էր երբե-  
 մըն) մտեցոց այսր. և հաւանօրէն Լուսկայ վանքն կրէ զա-  
 նուն աշակերտի միոյ առաջելոյն Լուսիկ կոչեցելոյ, ըստ  
 պատմութեան. բայց ոչ եթէ լոկ վանք միանձնաց էին  
 տեղիքդ ըստ ցուցակին, այլ և գեօղք ոչ աննշանք, զօ-  
 րոց հին և հեթանոսական անուանս թուին խափանեալ-  
 զի գոյ եւս կարծել յոյժ պաշտօնասէրս գրնակիչս կող-  
 մանցս՝ ընդ Գողթնեացն, և գրեաթէ աներկրայ արե-  
 գուննապաշտոս:

Մանուցանէ Օրբելեանն զի առ իւրեւ փոխանակ Ա-  
 րեւեաց՝ երկուս անուանս տային երկրին, ԴԱՏՏՅՈՒ և  
 ՄԵՂՐԻ, յանուն երկոցուն գիւղիցն, որոց մին գրեաթէ  
 ի գլուխ ձորահովտին կայ, միւսն գրեաթէ ի սպառուած  
 նորին առ Երասխ գետով. յետինս գլխաւոր գոլով համ-  
 օրէն շինից՝ գետն և ողջոյն իսկ գաւառն երբեմն կո-  
 շեցաւ եւս ՄԵՂՐԱՅՈՐ. այլ ի վերջին ցուցակս թեմին  
 Տաթեւոյ փոխան դոցին այլ երկու անուանք և վիճակք

Զատ յայսցանէ յիշատակին ի գիրս՝ յաւէտ ի պատ-  
 մութեան Դաւթի Բէկի, և այս տեղիք.

Գտանիս (Գիտեմնաս)	Լեւազ
Վահրավայ	Լեզկին կամ Լեշկին
Պուղաքար	Քիս կամ Աքիս

Ի յիշեալ պատմութեան Դաւթի՝ միջակողմն Մեղրա-  
 ձորոյ կամ մեծ մասն՝ կոչի նոր անուամբ ԿԵՆԱՌԻՋ,  
 իսկ վերոյգրեալ անուանք վիճակացն՝ բնաւ ոչ յիշին:

Արեւեաց գաւառ հարաւագոյն մասն է Սիւնեաց  
 աշխարհի, որով և երկրի իշխանութեան թագաւորացն  
 Բաղաց կամ Կապանին, ընդ որում և քննաշինք արար-  
 եալ ասէ զայն պատմիչն ի Հարօն ամիրայէ, յամի 1126  
 կամ 1128. և յայնմ ժամանակէ հետէ թուի ոմանց ի  
 գիւղիցն և բերդիցն աւերեալ և ծածկեալ ի մոռացօնս.  
 որպէս և անգղիացի ճարտար և ուղմագէտ տեղագրին  
 ոմն ի սկիզբն կոյս դարուս, ի ձեռագրիժ ընդարձակ տախ-  
 տակի իւրում զրէ յայսմ միջոցի, ի թիկանց լերանց Կա-  
 պանայ, «բազմութիւն աւերեալ եկեղեցեաց և գիւղո-  
 » ռայից՝ 1 » Այլ ի վերոյգրեալ վաթսնիւ շափ գիւղից  
 տակաւին երիւր մասամբ ծանօթք են և անուամբք և  
 զրիւք ի Մեղրաձոր. և թերեւս էին ոմանք ի նոցանէ  
 ի ձորակս փոքունց գետակացն, յորս սակաւ գեօղք նշա-  
 նակին օտար անուամբք, զորս և առանձինն երկրորդ վի-  
 ճակ համարեսցուք ԿԵՆԱՌԻՋ անուամբ:

1 Այն է Մոնթիթի զօրպետ և ուղտարհագիր. A great number of ruined churches and villages. — MONTHEITH.



## Ա. ՄԵՂՐԱԶՈՐ

134. Վերին կողմն ձորահովտի Մեղրի գետոյ՝ ուր բազում ձորակք և վտակք ճղճղկէն իմն հատանեն գերկիրն, էր վիճակն ԴԱՇՅՈՒՆ, հիւսիսային մասն Արեւեաց, ըստ պատմիչն. քանզի անդ ի վերոյ (ի հիւսիսոյ) ամենայն գիւղորայից և ի գլուխս ձորոցն կայ գետն համանուն, որ գրի և Տաշտօն, և ըստ Բաղրամու՝ Դաշտունի. և հարկ է թէ բարգաւաճ և մեծ շէն էր, այլ ոչ գտանեմ ի պատմութեան գիշատակ ինչ նորին, բայց միայն ի յետին ժամանակս, յամի 1684 յիշի Գաղառտ ոմն իրր կազմիչ գրոց ի Քաղէի վանս. որ ասէ զինչն «ի յերկրէն» Ղափանոյ, ի գիւղն իմ որ կոչի Տաշտուն»: Յաւուրս Դաւթի Բէկի՝ յաւեր և յաւար մատնեցաւ գիւղս այս յասպատակաց խանին Որդուատայ, և բնակիչքն փախուցեալ գերծան ի Չաւընդուր: Եկեղեցի Դաշտունի կոչի Ս. Ստեփանոս:


Սակաւուք ի հարաւոյ գեղջն խառնի ի նորընծայ գետըն Մեղրեայ՝ յալմէն՝ որ է յարեւմտից, մի ի մեծագոյն վտակացն յԱլանկէզ լեռնէ իջեալ, Սարի տէրի կամ Սառիտար, որ և Լիչկ կոչի յանուն գեղջն՝ որ յանկեան խառնըրդոցն, և յաշխարհացոյց տախտակի՝ Եկեղեցի գրի. այլ կարծեմ սխալեալ և շփոթեալ ընդ գեղջն կոմսականի. իսկ Լիչկ է ի Ղափանեցեաց պատմութեան կոչեցեալն Լէչկին կամ Լեչկին, ուր՝ և գետակն Ղօզ դօզ կոչի: Աստանօր երկուքի գորավարաց գնդին Պապայ գումարեալ կամէին դաւաճանել զնա, յորոց խոյս ետ, և Դաւիթ Բէկ ի ձեռն այլոյ զօրավարի հաշտեցոյց զնոսա: Յիշեցուցանէ ընդ աղստ անուն գեղջս զհինն Լուսիկա վանք Արեւեաց, և այս հաւանօրէն յանուն Լուսիկ կոչեցելոյ աշակերտի Ս. Բարթողիմեայ՝ վախճանելոյ ի կողմանս Վանանդայ, ըստ պատմիչին Սիւնեաց:

Ի հարաւոյ գետակիս և հուպ նմին միւս եւս անանուն և յոյժ անձուկ ձորակ խառնի ի նոյն, ուրանօր և յալմէն այլ եւս երկու գետակք կամ հեղեղաքք, մին (արեւմտագոյնն) կոչի Թաղաւերի, յանուն Թաղամայրի հին գեղջ որ յերկից կուսէ ձորեղբրն կայ. յաւուրս Դաւթի Բէկի բնակէին ի սմա 60 տուն Թուրքք, որոց տեսեալ զկոտորած համազգեացն ի ձորն Լեւազու, աղբրս արկին զօրաց Պապայ՝ խնայել յինքեանս, և խնայեցան. այլ իբրեւ խանն Որդուատայ Սափի Ղուլի՝ գիշերայն եկեալ կոտորեաց ի Սայպոն? երկուս գիւղս Հայոց, նոյնպէս արար և Մխիթար զօրավար հրամանաւ

Դաւթի՝ ընդ Թաղամերացիս: — Ջերկրորդ գետակն ի դէպ է կոչել յանուն կալեր գեղջ, (որ կեայի գրի ի մեծի աշխարհացուցի Բուսաց). աստի էր Պապ զօրավարն որդի Սրապիոնի, զոր բազում անգամ յիշատակեցաք, և որ ձերբակալ եղեալ աստ հրամանաւ Դաւթի Բէկի՝ զլ'սապարտ գրաւեցաւ ի Եկեղեցիտ: Եկեղեցին նուիրեալ է Ս. Աստուածածնի: — Յալմէ գետակիս կալերու՝ մղոնաւ կամ դոյզն աւելի հեռի ի սմանէ, և մերձագոյն ի Թաղամայրի կայ Վանք գիւղ, որ ի կաքաւարեղ վիճակի գրի, որպէս և կալերն. ի սոցա երկուցուն միջոցս ամրացեալ կային բնակիչք մերձակայ գիւղորայից յարչաւանս անդ խանին Որդուատայ. և իբրեւ խոյս ետ ի սմանէ Պապ՝ փախեան և նոքա, և անցեալ ընդ լերինս Խաչալու գերծան ի Չաւընդուր գաւառ:

Ի հիւսիսոյ կալերու առ միով ի վտակացն նշանակի Եկտաստան աւան, կամ Երդաստայց նոր ցուցակին, որ ոչ յիշի ի հնումն. և է հայրենիք թելազրի Պատմութեան Ղափանեցոց, կամ Դաւթի Բէկի, որպէս և յիշեցաք ոչ սակաւ ուրեք. այն է Ստեփանոս Շահումեանց, որդի վարդանիսի կամ վրթակիսի, միոյ ի զօրավարաց նոցին. զոր իբրեւ զլիւսուր կամ սիրելագոյն անձն՝ ընտրեալ է Ռաֆֆի ի ծանօթ վիպասանութեանն, պէսպէս դիպուածս ստեղծաբանելով ըստ քմաց հաճոյից. որ ինչ ստոյգ էր՝ յիշեցաք ի կարգի տեղագրութեանս. իսկ որ յետ այնց դիպաց՝ անծանօթ մնայր նա, և զի մի եւս մնայցէ, և մի օտարոտի լիմ կարծիցի՝ գալուստ նորա յարեւմտս և յարիլ ընդ միաբանս Հոմէական եկեղեցոյ, (որպէս կարծէ հեղինակ յետին՝ ծանօթութեան վիպասանութեանն, և փոփոխէ զաթոռն յոր դիմեաց միւս եւս նշանաւոր ներգործող յոնցս պատերազմացն՝ Տէր Աւետիք), արժան համարիմ յայտ առնել. զի բազում ժամանակօք յառաջ ծանօթ էր տոհմն Շահումեանց ի քաղաքի աստ Իտալիոյ՝ յորում գրեմս, և ուր հօրեղբայր Ստեփանոսի՝ Ոսկան որդի Սահակայ՝ անդստին ի կէս Ժէ դարու (1650 կամ յառաջագոյն եւս) եկեալ և հաստատեալ էր տուն վաճառականութեան, ուր յիշի և ի վերջին ամս դարուն, և հաւանօրէն անդ վախճանեալ է: Ի պէսպէս գիւրանաց Ս. Խաչ եկեղեցոյ և պետութեան վերնետկոյ, սոյնապի ինչ ստուգի ազգարանութիւն զարմին.

1 Ի տպագրեալ Պատմութեանն պակասէ անուն գետակին, այլ գտանի ի բնագրին որ կայ ի մերում գրաստն:



Ի կիսոյ ժէ դարու ցկէս ժրհ հաստատեալ բար-  
գաւածէր ի Վենետիկ՝ վաճառատուն Շահումեանց, ու  
րոյ գլուխ և առաջնորդ կացին մի ըստ միջէ, յետ մա-  
հաւան Ոսկանայ, Պողոս որդի Հայրապետի, Զաքար  
որդի Դաւթի, Նահապետ որդի Պողոսի (յամի 1738),  
ընդ որում և Ստեփանոս, ապա Թորոս որդի (միւս)  
Դաւթի։ Վկայեն այսմ ազգային վաճառականք՝ յատե-  
նի դատաւորաց, ընդ նոսին և Մինաս Փէրվազեան  
արքեպիսկոպոս Զմուռնիոյ։ Վկայէ և Հայրս մեր Մխի-

Թար Արքայ, զի երեքին պայազատքն՝ Շահումեանք՝  
Ստեփանոս Վարդանիսեան, Զաքար որդի Դաւթի և  
Նահապետ որդի Պողոսի, յամին 1736 ետուն շինել յե-  
կեղեցւոյ վանաց իւրոց (ի Ս. Ղազար կղզւոյ) վայելուչ  
խորան մի՝ պատկերազ հանդերձ, յանուն Ս. Լուսաւորչի,  
և ապա (1737) առաջի սեղանոյն պատրաստեցին զտա-  
պան հանդստարանի իւրեանց, արկեալ ի վերայ կա-  
փարիչ վէմ կարմիր կճեայ քառակուսի (մի Զափ հա-  
ւասար), և արձանագրեալ այսպէս։

**Ղափանեցի Շահումեանց տան  
Պարոն Զաքարն որ է Դաւթեան,  
Պարոն Ստեփան Վարդանեսեան,  
Պարոն Նահապետն Պողոսեան .**

**Ետուն շինել զայս սուրբ Սեղան .  
Եւ ընդ նմին զայս Դամբարան,  
Ի յիշատակ եւ ի կայան  
Բնաւից որք են ճիւղք նոյնոյ տան .**

Արդ յայսմ ժամանակի թելադրեալ է Ստեփանոս և  
տունեալ յերկրել միոյ ի Հարց աշակերտաց Մխիթա-  
րայ, այն է Հ. Ղուկաս Ստեփանեան Սեբաստացի,  
(+ 1751), զՊատմութիւն մարտից Ղափանեցոց։ Նահա-  
պետ + 50ամեայ ի 28 մարտի, 1758, բերեալ և Թա-  
ղեալ է ի դամբարանի անդ. Ոսկան + ամաւ յառաջ  
(12 մարտ, 1757) թաղեալ է ի քաղաքին, ի Վենետիկ<sup>2</sup>։  
Իսկ Ստեփանոս՝ զորմէ ինդիրն է, յայտ է զի + է նախ  
քան զ1782 ա ՚, այլ երբ և ուր, ոչ գտի. յամէ 1733 ցամն  
1750 յիջի յայլևայլ գիւանս Ս. Խաչ եկեղեցւոյ, որոյ  
և կարգեալ էր Էրեւնափոխան, յամի 1743, այն է տեսուչ  
և հոգացող (Guardian ըստ Իտալացոց), որ համարէր  
գլուխ հասարակութեան Հայոց այնր տարւոյ, և յամս  
1745—6, Սնդիկոս, զի այսպէս կոչէին երկու պաշտո-  
նեայք՝ օգնականք Երեւնափոխանին։ Ի դասակարգի ժողո-  
վականաց Հայոց միշտ ընդ առաջինս կարգի, և ի նուի-  
րատուս՝ առատագոյն, նշանակ փարթամութեան և յաջ-  
ղութեան առի եւ տրին. յամի 1734 ի պէտս շինութեան  
տապանակի Ս. Խաչ եկեղեցւոյ՝ տունեալ է 100 լիւրայ վե-  
նետկեան, որ ըստ այնր ժամանակի կրկին և աւելի ար-  
ժէր քան յայժմուս. և յազգահամարի Հայոց Վենետիկոյ

1750 ամի, յետ ազնուաշուք զարմին Շէհրիմանեանց և  
Յ. Սեղորոսեան, և Միրմանեանց շինողաց եկեղեցւոյն,  
առաջին կարգի քան զայլս<sup>3</sup>. — Դիւսաւոր նիւթք վաճա-  
ռաշահութեան Շահումեանց՝ երեք ազգք էին, Դա-  
մակեան կեղարաք, Հայելիք և Ճրագարանք ապակեղէնք,  
թող զայլեւայլ նիւթս արեւելեայս. որոց որպիսութիւն,  
գին և շահ՝ տեսցի յետոյ ուրեմն, յորժամ զընդհանուր  
վաճառականութենէ Հայոց բան լիցի։ Յիշելի է զի գոր-  
ծակից և վաճառակից Շահումեանց էր ի Վենետիկ և  
տուն Նուրեմանց։ Յամի 1735 ի զիւրութիւն տարուբերի  
վաճառուց՝ Ստեփանոս միարանեալ ընդ Նահապետի և  
Աղամայ որդւոյ Մարկոսի, գնեցին մէն զչարրորդ մասն  
նաւու միոյ (Թորոսի Պրիլի), գնոց աւելի քան զ՛2000  
դուկատի, և յանուն նաւուն որ կոչէր Ս. Մարիամ Շը-  
նորանց՝ յաւելին զՍ. Խաչ. որ և շնորհս եգիտ ի պետու-  
թենէն՝ վասն հալածելոյ երբեմն գյելուզակս Բարբարո-  
սաց և զերծուցանելոյ զայլ նաւ. — Ոչ գիտեմ. յորում  
ամի, այլ որպէս թուի՝ մերձ ի հասարակել (ԺԸ) դարուն  
ամուսնացեալ է Ստեփանոս ի քաղաքի աստ (Վենե-  
տիկ), առեալ ի կին զՌոզալպա (Ճերմակ Վարդ) Մա-  
րիամ Վառվառէ (Ժն. ի 1732), դուստր Յարութեան

1 Սորա որդի թուի Յովնանէս Շահում, որ յամի 1881 ի Լի-  
վոնոյ էր, երկուստասանամեանի մուճեալ ի վանս (1786) և ելեալ։  
2 Ի Ս. Մարիամ Խորոսի (S<sup>a</sup> Maria Formosa) եկեղեցւոյ,  
3 Ոգիք 70 (արուք) են ընդ բնաւ ի ցանկին, յորս 12 Շէհրիմա-  
նեանք, յետ որոց 4 այլք, ապա ժէ Ստեփանոսս այս։

(որդու բանասիրի և բարեպաշտի առն Գէորգայ Գարազաշեան) և Թագուհոյ Աննայ դստեր Զուլազ Խաչատուրոյ, զոր՝ Ռոսսի (Կարմիր) մականուանէին իտալացիք: Երիտ միայն որդիս գտի նշանակեալ Ստեփանոսի՝ երկու առաջինք Յովնան և Մարթա ընդ ծնանելն մկրտեալք և մեռեալք, միւսն Մար. Աննա Աննելա (ծն. ի 1750) 30-ամեանի պսակեալ ընդ քաղաքացոյ Մկրտչի Ռեպի (յ՛Յ ապրիլի, 1780) ի Ս. Խաչ եկեղեցոյ Հայոց, + է ի 15 յանուարի 1783, դժուարածին երկամբք: — Վերջին յիշատակ Ստեփանոսի ի Վենետիկ ծանօթ ին՛՛ է վերջգրեալ ազգահամար Հայոց՝ յամին 1750, յամսին օգոստոսի, և ծնունդ երկրորդի դստերն յամսն հակոթ ի նմին իսկ ամի: Յետ սակաւ ամաց այն է 1757 (յորում + Ոսկան), ի կոտր անկեալ է, այսինքն անանկացեալ կամ փակեալ վաճառատուն Շահումեանց, յետ հարկւրամեայ շահավաստակ գործառնութեանց. յորմէ թուի վնասեալ և Ստեփանոսի՛, որ եթէ այնուհետեւ մնաց աստէն ի Վենետիկ եթէ գնաց այլուր, ոչ գիտեմ. բայց դեռարոյս հասակ դստերն և կեալ սորա ի Վենետիկ, շտան կարծել զհեռանալ հօրն անտի իսկոյն:

125. Զորեքին վերոյիշեալ գետակքն, երկու աստի և երկու անտի, համահաւաքին ի մի ի Հր. Վանից և Թաղամայրեայ. և մերձ ի կցուածս նոցին գեղ մի մեծ կայ, զոր աչ. արհացոյց Ռուսաց օտարոտի իմն անուամբ գրէ Պինարափոքը՞, բայց այլ տախտակ՝ որպէս պատշաճացոյն թուի՝ գրէ Զուար, նշանակեալ ի հին Յուցակին Զուարի վանք. և ըստ պատեհ գրից սորա, թուի և ըստ մեծութեանն՝ գետն Մեյրոյ՝ որպէս ի վերջ նշանակեցաք, կոչի և Զուար-չայ. ի պատմութեան անդ Ղափանեցեաց առան կոչի. ուր առաքեաց Պապ գկապուտ կողուպուտ գիւղորայից Թուրքաց Լեւազու ձորոյն, և կացոյց պահապանս ի վերայ նոցա: Աւերեալ է սրդ գեօղն հին, միայն եկեղեցին կանգուն մնայ, յոր և յուխտ գան ի տօնի Վարդավառին:

Ի հարաւոյ Զուարայ ընդունի գետն յաջմէն երկուս եւս վտակս ի նոյն յԱլանկէզ լեռանց, յորոց երեցուն անկեան միջի կայ կիս ի կամ կիս գիւղ, որ թուի նշանակել զԼիճք գիւղ Կաբաւաբերդ վիճակի, Ս. Գեորգ եկեղեցեալ: — Ընդ մէջ սոցա և Լեւազու ձորոյն կայ յաջմէ գետոյն փոքր գիւղ հին Յուցակին Տեհի, որ այժմ թեի գրի յաշխարհացոցի: — Երկու մղոնաւ ի Հր. սոցա՝ անկանի ի գետն վտակ մի փոքրիկ իջեալ ի կողից բարձու Շեյխ կամ Շրխեռչտ կոչեցեալ լեռին (300), և յանուն նորին կոչի: Յանկեան խառնըրդոցն յաճեկէն կայ Վերին Լեւազ գիւղ. բայց թերեւս ոչ սա՛ այլ որ յարեւելից հարաւոյ նորին մեծագոյն գետակն՝ իցէ բուն Լեւազի ձորն, զի առ խառնըրդօք նորին յաջմէն՝ ի հարաւոյ՝ կայ Ներքին Լեւազ, որ և մեծագոյն քան զՎերինն է, իրրեւ չորիւք մղոնօք հեռի ի նմանէ: Ազգային

ոմն ստորագրող տեղոյն համարի՞ Լիճքիւզ կոչելի, վասն հոսանաց ջուրց գետոյն, կամ լնակաց Ալանկէզ լեռանց (զոր Արագած կոչէ), և այլ ոք Լեղկուած գրէ՞. գեօղն ասի իննել ամարանոց Մեղրեցեանց, չրհպատեալ վայրենի և ընտանի ծառովք (յորոց յիշին Տիկի. Մախրի, Հացի, Հունի, Ողնի, Խնձորենի, Շարենի, Գայլ-կեռասենի, Մասուրի?, Թրրորի? Յախաւելի, Խէշի, Մացառի, Լայլն): Յիսնիւ չափ տունք են գեղն յափունս ջրոյն, այլուտ գաղթեալք իրր Քառասուն ամաց հետէ (1850), առ հնով գիւղին, որոյ երեւին հետք տանց և եկեղեցոյն: Յիշին առ նովին գետակաւ այլ եւս երկու գեօղք Թուրքաց՝ Միւլք և Մնալ, որք թուին յիշեցոցանել զհին գեօղս՝ Մարուն և Մոլոյան: Թերեւս զկարծիս Լիճքիւզ կոչման յաւելցէ և լնակն ի բարձու լեռին, յորմէ ասիականակիտ աղբեր հօսել: — Յերի տեղոյս թուի և յիշեալն ի նոր ճանապարհագրէ (1891) օտարալուր փերդոփտան ուխտատեղի հռչակեալ ի կողմանն, առ թուրքարնակ գիւղիւ:

Ի զլուխ ձորակի փոքուն Լեւազու ի ստորոտս Շրխեուրտ լեռին կայ Պոչաքար գիւղ, յիշեալ ի պատմութեան Ղափանեցեաց, յոր թափեցան զորք խանին Ուղուատայ՝ անցեալք ընդ լեռինսն, և զԹուրք բնակիչս գիւղորայից ձորոյն Լեւազու խաղացոցին յՈրդուատ, յապահովել յերեսաց Հայոց. մնացին միայն երեք գեօղք, Դամալի, Շրդի և Պիտեանց, (չորրորդն թուի Թաղամայրի), զորս Պապ ետ հարկանել, և յաւարի ասնուլ զինչ նոցա, և Դաւիթ բէկ բաժանեաց ընդ զօրս նորս և ընդ ապստամբեալսն ի նմանէ երկուսն զօրավարս: Զգեօղս զայստակ ձորոյն Լեւազու՝ պատմիչն Ղափանեցեաց ասէ լինել ի կողմանս Արձանաքարին, որ ոչ գիտեմ զինչ իցէ, լեռնն եթէ յիշատականոց ինչ: — Հուպ և յանդիման Վերնոյն Լեւազու՝ յաճեկէ գետոյն կայ գիւղն Նոչլինկ (գրեալ ի քարտի), որ է անշուշտ Նուշանցն Կաբաւաբերդ վիճակի: — Ի միջավայրս Ստորին Լեւազու-ձորոյ ի հարաւոյ՝ որ է յաջմէ ջրոյն՝ կայ Վախրաւար գեօղ, որ գրեալ է և Վայրավառ, Ս. Գեորգ եկեղեցեալ, ուր գարձ արարեալ Պապ յաւերէ այլոց գեօղից Լեւազու, եգիտ երիտ տունս ուրացելոց, կոտորեաց զամենեսեան և զինչ նոցա առեալ գնաց: Իսկ յաճեկէ հանդէպ Վահրաւարայ է հինն Աբկավանս, զի զայս համարիմ նշանակեալ ի քարտին Տիւպուայ Abshavaza. — Մղոնաւ ի հարաւոյ Ներքին Լեւազայ միւս եւս գետակ և հուսկ յայսմ (յարեւմտեան) կողմանէ՝ յաջմէն, թափի ի Մեղրաձոր, եկեալ յԱղեւաբերդ լեռնէ որ միջասահման է Արեւեաց և Գողթան, 8000՝ բարձր, և ի ձորակի նորին են Գտանիս և Ունանապաս, աղաւաղեալ հայեցի առնուն, և Ագարակ դասակարգեալ ի հին Յուցակին. առ սովաւ գտանի Կապարահանք: Ընդ մէջ Ագարակու և Գտանիսայ՝ Կոչրուս, որ նոյն է անշուշտ ընդ Կորսնք

1 Ի սակս վիճից և նախնանց վասն կրօնից խոյս տուեալ է սորա ի կոտորանքնուղղոյ ընտանեքն ի Վենետիկ, ուր է + յամի 1729, եղեալ կայ ի ստապանս Ս. Ղազարու եկեղեցոյ վանաց Միսթարայ:

2 Քանզի և գուտար նորա Մ. Անտի իրրեւ զմի ի կարօտելոց օրիորդաց Հայոց ընդունէր զվիճակ 40 դուկատաց, (24 ապրիլ

1780), զոր ամի ամի հանէին ի սրից Եւալքի Բազառասարայ, (տես յէջ 295) վասն այնոցիկ՝ որք մտանէին ի կուսանոց կամ հարանանային, որպէս և սա որ պատկեալ է յամի 1780:

3 Մշակ, ԺԲ, 160:  
4 Նոր Գար, Ը, 139:  
5 Ի ուսս քարտի՝ կիճանս գրի:



կամ կուրավախս հին Յուդայական, կամ կուրավախք նոր Յուդայական թեմին Տաթևոյ<sup>1</sup>։

Յահելէ Մեղրաձորոյ, այսինքն յարեւելից, յետ կալերոյ ձորակին՝ մի միայն ձորագետակ է փոքր մի մեծագոյն, և մղոնաւ կամ դոյզն աւելի յՆՂ. Հր. Նուշանց գեղը թափի ի գետն, և անկ է կաշի գայն վարդաճաւ ծոր, յանուն երկուց գիւղից որ յաշակողմեանն, յարեւմտեան ձորափին։ Յանկալ՝ անունը գտանի ի հին Յուդայական, այլ ըստ տրիգն գուշակի փոքրիկ գիւղ մի լինել յայնմ ժամանակի, իսկ այժմ երկու գետոջ են և ոչ փոքունք. վերինն կայ ի գլուխ ձորակին ի ստորոտս Աշնալի լեռին, Ստորինն երկու մղոնաւ խոնարհագոյն, և իբր մղոնաւ և կիսով հեռի յեղից Տեհեայ։ Առ բերանով վարդաճաւոյ կայ լեկ կամ Լէօք գիւղ, յերկուսին կողմանս ջրոյն տարածեալ։ Ի հարաւոյ սորին վտակ մի եւս փոքրիկ թափի ի Մեղրաձոր, որպէս և այլ վտակ ի ստորեւ Ներքին Լեւազու. ոչ նշանակին ի քարտի շէնք առ նոքր, և ձորակն անձուկք են և փոքրիկնք, որպէս ծործորք ինչ. այլ մի ի նոցանէ հարկ է թէ Շրուանի ծորն իցէ համանուն գիւղիւ. հանդէպ երկրորդին լինի խառնուրդ գետակին Ագարակայ։

126. Իբր կիսով մղոնաւ մերձ ի խառնուրդս դոցին՝ ի հարաւոյ կուսէ, և իբրու երկու մղոնաւ լոկ ի հիւսիսոյ ափանց մեծի գետոյն Երասխայ կայ գլխաւոր և գեղեցկանիստ շէն գաւառին Արեւաց և անուանատու գետոյն՝ Մեղրի աւան, տարածեալ յերկուսին եզերս նորին, և ի միջի այգեստանեայց, թթենեաց, անդաստանաց բամբակի և պողատու պարտիզաց. և այսպէս աւանդի կոչեցեալ վասն պատուական մեղեր կողմանցն։ Տիւպուս ճանապարհագիր՝ որ ընդ կողոուտու կարճաւանի դժուարաբայլ եմուտ ի սահմանս Մեղրոյ (ի 11 ապրիլի, 1834), « Թուէր իմն, առէ, ի դրախտ անդրաւ » փոխիլ. ուսենիք գնտակս արձակեալ, ծորենիք ծաղկեալք, պահէզք, այգիք տնկեալք ի դարեւանդս, տունք հողայարկք, սրագագաթն քարածայոք՝ կրելով » զաշտարակս հնաշէն բերդի, յանդիման առնեն տեսաւ » բան նկարագեղ ». այլ տակաւին ոչ բաւականաչափ զարգացեալ եգիտ գրուսարբերութիւն յայնմ եղանակի, վասն խստութեան կլիմային, և այն ի պատճառս լեռանցն բարձանց արգելոյ զկանուխ ժամանումն և զանագան վերացումն ճառագայթից արեգական, և ցրտագին սոգոց շնչելոց յԱլանկէզէ. որոց ներհակաբար և տօթ աւարանի վատառող լառնէ գտեղին. վասն այնորիկ բընակիչքն ելանեն ի հովս Լեշկայ։ Իսկ Ռատտէ որ ի կէս յունիսի (17, հերու 1890) ագաւ աստ, նոյնպէս գովէ զԼուրս և գրոյս Մեղրեայ, ամենուրեք դալարին նկատելով և պողարերս, Թզենիս և Նանենիս, Թթենիս, Աշորիս, Կեռասենիս, լայնասաղարթ Սօսիս և բարձր բարձր կաղամասիս. և ի պարտէզան վարդենիս Մայիսի անուանեալս ըստ Պարսից, և Լաւատրի (Lavatera) յազգէ մոլոխից. յիշէ և զառատութիւն բամբակի և ըզբերս շերաւոյ, նա եւ զքարուտ և ապառաժ սահմանն՝

ցամաքասէր բուսովք և փշովք պատեալ։— Յերիս թաղս տրոհեալ է Մեղրի, երբեմն քաղաք, գէթ քաղաքաւան բազմաբնակ. մին ի ձախմէ գետոյն կայ, որ է յարեւելից, երկրքին այլքն յաջմէն, բայց մի ի սոցանէ գրեթէ ի սպառ աւերեալ է ի դարէ հետէ, և մարթ է գտանել ինչ արժանի քննութեան յաւերակսն<sup>2</sup> և յաշտարակս կամ ի մանր բերդորայս, զորս յիշէր վերոյգրեալ ուղեւորն (Տիւպուս), և որք տակաւին փոքր ի շատէ կանգուն կան ի կատարս բլրոց պատեւոց զշինիւն, և քաջ ամուր վայր յարդարեն զաւանն, վասն որոյ և կոչի Մեղրոյ բերդ։ Այսոքիկ են կոչեցեալքն Մեծ, Փոքր և Միջին բաղք ի նոր վիճակագրութեան թեմին Տաթևոյ, որոց միահամուռ բնակիչք են իբր ոգիք հազար<sup>3</sup>։ Մի մի եկեղեցիք են թաղիցն՝ Մեծի և Փոքուն, և բարեշէնք, ըստ վկայութեան յետին յիշեալ եւրոպացի ուղեւորին<sup>4</sup>, այլ ոչ թուին և բարեխնամք. որպէս և ոչ Մեղրոյ վանքըն Ս. Յովհաննէս, որ կայ յարեւելակողմանն, սակաւք հեռի ի շինէն. յորում բաց յառաջնորդէն թուի թէ չգոցեն միարանք, այլ պահապանք ոմանք, թէպէտ և կայուածս ոչ սակաւ ունի մենաստանն։ Ի սկիզբն ԺԸ դարու յիշի Դանիէլ վարդապետ Մեղրեցի ընդ ձեռնաւ կողս կտակի Աշեքսանդր կաթողիկոսի։ Յետեալ գտանի Մեղրի և յուսումնական հրահանգս, որում ոչ թուի փոյթ մեծ ունել ժողովրդեանն զբաղելոյ ի մշակութիւն բամբակի, շերամոյ և այգեաց, որոց գովի կարմիր գինին։ Գժուարիմանայի է և բարբառ նոցին, հանգոյն Գողթնեցեացն, խառնութեամբ պարսիկ ձայնից և ռոյ, և առաւել՝ ծեքանք հայերէն բառիցն։ Այլ յուսալի է կրթութեամբ՝ որպէս կորովիս նոյն և արս հանճարեղս ընծայել Մեղրոյ, որպէս երբեմն յ' ԺԷ դարու զԵրեմիա վարդապետ, յորինող Բառարանի միոյ կամ մեկնութեան բառից Ս. Գրոց, և զիսրայէլ վարդապետ՝ աշակերտ Մովսիս կաթողիկոսի։— Արրահամ կաթողիկոս Գ ի շրջագայութեան իւրում եկեալ այսր յամի 1735, գրէր. « Եկաք ի Մեղրի, յորում կայր փոքրիկ վանք մի պատուական և հանոյական. որ և մնացի անդ երեք որ, սփոխելով և գնտաս »։ Ի պատմութեան յեւս ԺԱ դարու, յամի 1083, յիշի Արուստիլ ոմն Տէր Մեղրոյ բերդին, որ ընծայեաց եկեղեցւոյն Տաթևոյ « այգի մի մեծ » ի Մեղրոյ ծորի, (զկոչեցեալն) Բեդրաշագեանց այգի »։ Յառաջին կէս ԺԲ դարու յաւանէ աստի ընծայեցան յեպիսկոպոսութիւն աթոռոյն Սիւնեաց երկու եղբորք, նախ Բարսեղ, որ « սակաւ ինչ կեցեալ՝ անկանի պատահմամբ ինչ ի գետն Երասխա, մօտ յԱստուպատ » գեղ, ջորսմն հանդերձ՝ յոր հեծեալ կայր. և մտեալ » լողորդաց հանին յայն կողմն, և լոյս մեծ ճառագայ. » թեալ ի վերայ ջրոյն, և տարեալ թաղեցին զնա ի Մա. » զարթոյ վանք »։ Ապա Գրիգոր, որ աւագերէց էր Մեղրոյ աւանին, « յերիւրեալ (յորդորեալ) ի սրբասէր և ի » մեծաշաւատ տիրուհւոյ իւրմէ Մամամ կոչեցելոյ. որ » ասէր. Ով երէց, ամայացաւ աթոռն Սիւնեաց. փու. » թաւ և լեր քահանայապետ. զի և որդեակս մեր լիցի

1 Ըստ Տիւպուսայ Kourouz . չիք ի ուսու աշխարհացուցի։  
2 Շառք (Chantr.) փոսնկ մարդաքնին և հետխոյզ, յամի 1890 ի սկիզբն յունիսի, ետ բարձր և կրկանել թիւ մի, ի սահմանս

Մեղրոյ, և եղիտ պղծեաց զարգս, օղտմանեակս և զէնս։  
3 Մշակ, ԺԸ, 36, գրէ տունս 165, ոգիս 955։  
4 Տիւպուս (Գ. 45), մի եկեղեցի միայն յիշէ։

» որդի քահանայապետի... Յորմէ համարձակեալ գնայ  
 » առ Տէր Գրիգորիս եղբայր Ներսէսի Հայոց կաթողի-  
 » կոսի, և անդ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ գայ ի վիճա-  
 » կըս Սիւնեաց. և տեւեալ ամս քսան՝ մեռանի ի Վայոց  
 » ձոր ի Խարափայ գիւղ, զի չըլէր ընդ վիճակեալսն, ի  
 » թուականին ՈՒՅ » (1168): — Տասն կամ մետասան  
 ամառ յառաջ քան զայն՝ այլազգիք գաղտագողի յար-  
 ձակմամբ արհրացան Մեղրոյ, և հանին ի ձեռաց վերջին  
 տկարացեալ թագաւորացն Սիւնեաց՝ Գրիգորի և Սըմ-  
 բատայ. և ոչ յետ բազում ինչ ամաց առեալ զԲաղա-  
 բերդ « քնաղինը արարին զտուն կապանին, զԱրեւիքն  
 » գաւառ », ըստ պատմչին: Բայց և ցլետին դարս յա-  
 ջողեաց Մեղրեցեաց պահել զէթ զազգային ոգի և զառ-  
 տընին տեսութիւն, նա և զճոխութիւն, քաղ մշակու-  
 թեամբ վիճակացն և տուրեւառիկ վաճառականութեամբ  
 յօտար երկրի. և զի բազմաթիւ էին բնակքն և ձեռնտու  
 ունէին զմերձակայ գիւղականս, զորք մեծ արուձեան  
 ցուցին ընդդէմ այլազգեաց յաւուրս անդ պատերազմաց  
 Դաւթի Բէկի. յորժամ եկին Որդուտոցիք և այլ Պարսի-  
 սիկք ի կողմանց Սեւա լեռանց (Դարաստաղ), 18,000 աւ  
 և պաշարեցին զաւանն. առաջնորդք Մեղրեցեաց կոս-  
 տանդին, Յովհան, Սարի, և Աւարբէլ 400 զօրակա-  
 նաք, բաժանեալ յերեսին թաղան՝ վառեցան ընդդէմ  
 նոցա. ոչ կարացեալ զսուաղինն զդէմ ունել, իրի եւ մը-  
 խեցան այլազգիքն և կալան զՓոքր թաղն, սոքա բար-  
 ձեալ զկամուրջս անցիցն, հրաձգութեամբ վանէին և ոչ  
 տային թոյլ մտանել յերկուսին միւս եւս թաղս. առաքե-  
 ցին և սա զօրավարս Դաւթի խնդրել օգնութիւն. յորոց  
 փութացաւ գալ զվիճել Պայինգուր, գումարեալ ի կող-  
 մանց կովական գաւառի 2000 մարտիկս. այլ մինչեւ  
 էր հասեալ նորա, Մեղրեցիք գիշերայն յարձակեալ ի  
 Փոքր թաղն, արարին կոտորած մեծ, և զբազումս ի փա-  
 խուստ դարձուցին յՈրդուտոց, հանդերձ զխուսարու նո-  
 ցին: Հասեալ և Պայինգուրայ ի վաղիւն, յերիս գուն-  
 ղըս բաժանեալ զզօրսն, մէն միոյ 860 արամբք, և ժա-  
 մրս ետթն կուռեալ սաստկապէս՝ կոտորեցին ի թշնամեաց  
 անտի 11,000 այր. կալան և զմի ի գլխուսոր առաջնոր-  
 ղաց նոցուն Հաճի Շափի անուն, և արկին ի բանտ, ա-  
 ուին և աւար բազում. բոյց անկան և յուրեանց կողմա-  
 նէ ոչ սակաւ արք քաղք, ընդ որս քալանթարն Լեւա-  
 զու՝ Մուրում, և հրեղբորորդի նորին: Եւ իբրեւ ի միւ-  
 սում ամին եկն եղբայր խանին Երեւանու յՈրդուտոց և  
 լուաւ զգէպսն, կոչեաց ի դատ զՄեղրեցիս. այլ քնը-  
 նեալ և ի վերայ հասեալ զի Որդուտոցիք նախ վնասե-  
 ցին Մեղրեցեաց՝ արդարացոյց զսոսա և արձակեաց ա-  
 ղատս. արձակեցին և երկոքին կողմանքն զգերեալսն  
 իւրեանց, և արաւին հաշտութիւն առ ժամանակ մի:  
 Յետ սակաւուց (1726-7) փոխան Պարսից հասին թուրքք  
 հզօրագոյն եւս բանակու, զոր դարձեալ յայողեցան  
 Հայք՝ դարանամուտ լինելով՝ առաջնորդութեամբ Մխի-  
 թարայ և Տէր Աւետեաց՝ շփոթել և ընկրկել յանձուկ

կիրճս անցիցն Ուզունպէնա կոչեցելոց, որ տանի հանէ  
 յԵրասխ, և անդ ի նեղ արկեալ էր զոր կոտորեցին և  
 էր զոր գետամոյն արարին, և առին աւար անբաւ, ընդ  
 որս և զծրարս թղթոց հարկին՝ թուով 32,000, և հրով  
 ծախեցին: Սպանին և զՆորվիչ ոմն Դաշտեցի՝ ուրացող  
 քրիստոսական հաւատոցն:

Յաջորդք և ժառանգք քաղացն՝ մէլիքութեան պայա-  
 դատութեամբ տեւեցին և տեւեն ցարդ. յորս գովու-  
 թեամբ յիշին յելս անցելոյ դարու և ի սկիզբն ներկա-  
 յիս, Մէլիք Յօհան և Պարոն Աղաբաբա: Բայց ի բազ-  
 մադէմ անցից պատերազմաց թուրքաց և Պարսից և  
 խանից Գարապազու նուազեալ է ժողովուրդն. յամի  
 1879 Մեղրեցի ոմն՝ գրէր 728 ոգիս միայն լինել յաւա-  
 նին ընդ այր և ընդ կին. նոյն և ի հնգեօսին գետուն՝ Դի-  
 րուանի ձոր, Մանլեւ, Վահրաւա, Գիտեմիս (զոր Գիտե-  
 մընաս գրէ), և կուրուս, 684 ոգիս միայն համազգիս: Իսկ  
 ալ ոմն Մեղրեցի յամի 1880 ասէ 150 ծուխս լինել ի  
 Մեղրի, և Մէլիք սեղուոյն՝ Ալաքանեաց: Յերրորդում  
 քառորդի անցելոյ դարուն (1766) Էմին Յովսէփ՝ յան-  
 ցանեն ընդ Մեղրի՝ զոր քաղաք կոչէ, և հասարակա-  
 պետութիւն իմն, 3000 տունս ասէ նմին. յիշէ և զմշա-  
 կութիւն քաղաքի սյգեաց, հասարակութիւն մետաքսի և  
 բամբակի, և զճարտարութիւն կանանց ի գործուած նո-  
 ցին. գօթէ և զքաղութիւն Մեղրեցեաց՝ զի մերժեցին ըզ-  
 բոնաւորսն յարուցեալս յետ սպանման Նասիր Շահի,  
 և ուր ուրեմն յանձն առին հնազանդել Խարակիւմ խանի  
 տիրոջն Գարապազու:

Ձի ոչ յերկրագործութիւն միայն պարապէին նախնիք  
 Մեղրեցեաց, այլ և ի վաճառականութիւն հանգոյն այլոց  
 Ղափանեացոց, վկայեցեցն անշուշտ դիւաւք երոտպական  
 քաղաքաց, մանաւանդ վենետկոյ, ուր յաճախէին քան  
 յայլ քաղաքս իտալիոյ. անդ յառանջին դիւաւս Ս. Խաչ  
 եկեղեցւոյ Հայոց, յիշին յ'ՕՒ և ԺԸ դարս, Մեղրեցիքն  
 կոստանդ ողդի Աղամայ (յամէ 1676 ց' 1730), որ և երե-  
 ւի մի ի գլխուսորաց ազգայնոցն, և ի տասանց ի նոցունց  
 կարգեալ գործակալ և դատավար ընդդէմ նաւապետի  
 միոյ (Copessich). այրի գողով՝ աւնու կին զԱզգառային  
 Գաբրիէրա, պսակի ի Մուրան կղզուղ (27 սպրիլ, 1694).  
 վախճանի 80 ամեայ (16 յուլ. 1730) ի Ս. Սեւեր թաղի  
 վենետկոյ, ուր տայ աւնել նմա յուղարկաւորութիւն կին  
 նորա՝ պաշտօնէիւք եկեղեցւոյն՝: — Յակոբ որդի Տէր  
 Զաքարիայ, որ յամի 1689 ի նորոգ շինութեան Ս. Խաչ  
 եկեղեցւոյ ընծայեաց կանթեղ մի պղնձեայ, և 20 դու-  
 կատ ի շինութիւն արծաթեայ կանթեղաց: — Ոսկան  
 որդի Պապղուլի, որ յամի 1695 ընդ այլոց քսանից համ-  
 ազգեաց աղերսէր զՀասարակապետութիւնն միջնորդել  
 առ Սպանիացիս և թափել զվաճառս իւրեանց, զոր դե-  
 ըեալ էին դաշնակիցք նոցին Նէպոլեոնեցիք նաւաւն հան-  
 դերձ, և ասէին ի տասն ամաց հետէ կալով աստանօր (ի  
 վենետիկ) իբրեւ հպատակք պետութեանն, շահաբեր լի-  
 նել նմին վաճառականութեամբ իւրեանց, մանաւանդ

1 Խաչատուր Մ. Մամուլեանց, ի Մշակ, Ը, 81:  
 2 Հաւ քաղաքանութ բանասէր գիտնականին Մկրտչի Էմին:  
 3 Ի Պատմագիրս յիշեալ եկեղեցւոյն՝ Zancomar Պարսից կամ  
 ի Պարսից անուանի կոստանդ, որ ոչ գիտեմ զիչն նշաւակէ. Իսկ

ի մահացուցակս նորին՝ սցապէս նշանակիմա՝ նորին. Il. Sig. Cos-  
 tantin d'Adamo, Armeno, d'anni 89 in circa, amalato da  
 febre e paralisia, mesi 14 in circa. Medico l'Eccelente  
 Cumano. Lo fa sepelir sua Consorte, con Capitulo.

յայնմ ժամանակի՝ զի նուազէր շահավաճառ վնենտացի՝ նոյն և յերկրորդում ամի (1696) պահանջէր ի ժառանգաց այլոյ նաւապետի՝ (Ֆրանգոսի) զինչ իւրեանց բարձեալս ի Զմիւռնիա։ — Սոցին ժամանակակիցք են Ալտոնն, Բաղի, Պողոս ոմն, և խաչիկ Արարոնենց որդի Մարութի, ոչ յիշի յամս 1738 — 1745:

Երկրորդ նշանաւոր տեղի յԱրեւիս՝ ի յետին ժամանակս՝ եղեւ Կարճաւան, որ սուուգիւ արտաքոյ երեւի բնիկ Մեղրաձորոյ (Թէ և պատմիչն ի ամին պարփակէ), հուպ նմին յարեւմտից լերանցն, և սահմանակից Որդաւատայ, փոքրիկ առանձնակ ձորակաւ, գեղեցիկ և այգեւէտ սահմանաք, որոց գինի փրփրոտ գոլի. այլ յաւէտ եւս նշանաւոր է երկիրն վասն բովուց կապարի և արծաթոյ, կամ արծաթախառն կապարի, բայց զորպէսն ոչ գիտեմ: Ի պատմութեան յիշի Կարճաւան ի սկզբանէ Չիզարու, յորժամ Ա Սմբատ Թագաւոր Բագրատունի ի գալն ի նաւակատիս եկեղեցւոյն Տաթեւոյ, ընծայեաց սմա՝ ըստ պատմչին՝ զսեօ առանն Կարճուան «յարեւիք գաւառի ի Մեղրաձորի, ընդ գնոյ ստացեալ»: Մի ի կարեւոր և ամուր շինից էր և առ Թագաւորաքն Արեւեաց, յորոց ձեռս մնաց և յետ կորստեան Կապանին, անազան ուրեմն ընդ այլոց բերդորէից նուաճեալ յայլազգեաց: Բնակիչքն մերդոցիք, ի ժամանակի վիճակագրութեան Երեւնի իրր 40 ամու յառաջ՝ էին տունք 29, և ոգիք 154 համարեալք: յայտարհագրի 1873 ամի նշանակին տունք 35, սգիք 366, և տուն մի Ռուսաց. յայտ է թէ զարդիս անցեալ եւս են: Տիւպուա ի սկիզբն ապրիլի (1834) անցանելով ի Կարճաւանէ ի Մեղրի, ընդ սակաւուց ծաղկեալ բուսոց յիչ տեսակ մի Աբար-

բիոնի (Euphorbia rigida), և առ նմին սողալով յաւազի և ի ժայռս զպարուրածեւ Կողղինջն Զուղայի՝: Եկեղեցի աւանին նուիրեալ է Ս. Աստուածածնի: — Իբր երկու մղոնաւ հեռի ի Մ. Հր. աւանին՝ առ այլով վտակաւ կայ Կարճաւանու Սուրբ ուխտն կոչեցեալ. կամ Ս. Ստեփանոս վանք: Աստի էր Եսայի վարդապետ աշակերտ Մովսիսի կաթողիկոսի, որ շինեաց և առաջնորդ եկաց Ս. Կարապետի վանաց Երնջակայ. յիշի և յամի 1665. նոյնպէս և եղբայր նորին Տէր Յովնաննէս, որ ազաչեալ զգիտնական վարդապետն Ստեփանոս Լեհացի, ետ Թարգմանել, յամի 1660, զՅովսեպոսի Պատմութիւն Պատերազմաց Հրէից՝ ի լատին լեզուէ, յոր յարէ և ինքն զյիշատակարանս այս. «Ես Յովան զառածեալ մե» » դօք, անպիտան ի գործ պաշտաման բանին քարոզու» » Թեան, եղբայր ըստ մարմնոյ Եսայեայ շինողի Սուրբ » Կարապետի վանիցն Ապրակունեաց, բայց քեցեալ և » տարակցեալ ի գործոց արիութեանց և քաջարտու» » Թեան նորին, գաւառաւ ի Մեղրոյ և գեղջաւ Կարճա» » ւանցի. լսէի միշտ ի գիրս ամենայն պատմութեանց » Հայոց՝ յաղաքս Յովսեպոսի, և տեսանէի զվկայութիւն» » սրն առ ի նմանէ, և ցանկայի բազում տարփանսք, և » ոչ երբեք տեսանէի ի մէջ ազգիս մերոյ. վասն այսորիկ » ընդ այլոց սրբազնագոյն եղբարց մերոց Թախանձէի » զերջանկապատիւ զեղբայրն մեր զՏէր Ստեփանոս » վարդապետն Լեհացի, առ ի Թարգմանել. որոյ խո» » նարհեալ յաղաչանս մեր՝ սիրով Թարգմանեաց. և ետ » նորին ընչիւքն ընդօրինակել ետու»:

Ընդ մէջ բերանոյ երկուց վտակաց առ ավին Երասխայ կայ և իջեւան մի Կարաւանաբոն Կարճաւանայ կոչեցեալ

Բ. ԶՈՐԱԿՔ ԱՐԵՒԵԱՑ=ԿԵՆԱԻՈՒՉ

127. Զմասն երկրին որ ընդ մէջ Մեղրաձորոյ և գեւազուտին Պատուղայ՝ համարեցայ արեւելեան մասն Արեւեաց գաւառի, և որպէս կարծեմ նոյն և Կենաւուզ պատմութեանն Ղափանեցեաց. գէթ արեւելեան մասամբ: — Յայսմ վիճակի ի թիկանց լերանց անըրպետաց Կովսականի՝ իջանեն տասնիւ շափ մանր վտակք, և ընդ անձուկ յոյժ ձորակս ուղղակի խաղացեալ ընդ հարա-

ւակույմն՝ Թափին յԵրասխ. և են յետագայք, սկսեալ յարեւմտից ի սահմանակցութենէ Մեղրոյ: Ի գլուխ առաջնոյն նշանակի աւերակ գետոյ մի Սեւաստանունն, որ թուի Սեւաստար նոր ցուցակին Տաթեւոյ. որում հուպ ի հարսուոյ կայ կեղոյու կամ Գեղայու (ըստ ռուս աշխարհացուցի), զոր կարծեմ լինել Գառասն, ընդ որ էանց Աբրահամ կաթողիկոս յերթալն ի Մանլեւէ ի Մեղրի:

1 Նշան տնուանէր Ս. Աբրահամ Պատուղայի. իսկ Ոսկան գրի յիտաւ լականն Uskan di Babuli: — Ոստիկանք վաճառականութեան Հասարակապետութեանն՝ Թէպէտ ոչ կամարէին զՀայս հաստատութեան ի վիճակի, այլ քանզի հրաւիրեալք էին անդր յամէ 1623, արժան է սանն համարել կամաւոր նպատակս (devonisi con-

siderare in figura de sudditi volontari), և պաշտպանել զնոսս, մասնաւոր գի բացեալ էր նոցա և վաճառատունս ի մայրաքաղաքի աստ:

2 Et l'Hélice de Djoulfa rampait sur le sable et les rochers. — DUBOIS, IV 34.

Չերկրորդ ձորակն երկարագոյն քան զայլ՝ մարթ է կոչել յանուն Մանլելու, որ և Մալել, մի ի գլխաւորագեղից գաւառիս ի յետին ժամանակս, առ կուան Մեղրաւ ձորոյ. ի հին Յուցակին գրի Մալուկու, (ի մեծի աշխարհացոցի Ռուսաց Մարտիկան). այլ ի պատմութեան ոչ յիշի, բայց միայն յաւուրս Դաւթի Բէկի, առ որով յիշեալն Ստիի Ղուլի որդուտեցի կամեցաւ առնուլ և աւերել զայն. բայց Հայք փութացան ամրացուցանել ըզտեպին, առաջնորդութեամբ Թորոսի զորավարի կողմանց Չուրնդուրի. և ի գալ սյազգեաց զիւզիցն Քիս և Գաց կամ Իգաց (որք մերձաւորք և յարևելեանս եզերս Մեղրաւորոյ թաւին), յապահովելով զընտանիս իւրեանց, « ի բարձրագոյն գագաթն՝ որ հանդէպ աւանի » նոցա էր, Թորոսն ի զխոյ Մանլելուն ընդ առաջ լի. » նէր նոցա, և ի դիմի հարեալ զրազուծս ի նոցանէ » անդանոր սատակէր. և զսյսն մինչեւ ցՔիս ի փա.

» խուստ տանէր. և ինքն հրաման տայր զորացն՝ մի » եւս պնդել զկնի նոցա, սյլ երթալ հարկանել և այրել » զտունս նոցա. առնուլ զամենայն ինչս նոցա և դառնալ: » Եւ իրրեւ կատարեցին զայն ամենայն դարձան ի Ման. » լել: Եւ եկաց Թորոս ի Մանլել զաւուրս երիս. և կա. » ցոյց անդ զՊապ Կալերցի, զորդին Արապիսի՝ զորա. » պետ և կառավար ի վերայ երկրին Կենտուզայ»: Ի միւսանգամ յարձակել այլազգեաց ի միճուկս յայս՝ Հայք պատսպարեցին զչինականսն ի միջոցի աստ Մանլելու և Կալերու, Քիսայ և Վանք գեղը, վասն ամրութեան վայրացն. ուստի յետոյ յամրագոյն և ի հեռագոյն եւս դիմեցին ի վայր, տեսեալ զերկմտութիւն Պապայ:— Յի շատակ միվանաականաց Մանլելու գտանի ի Վենետիկ ի Սթաշ եկեղեցւոյ Հայոց, այն ի պատկեր Ս. Լուսաւորչին, նկարեալ յամի 1714, և ի ստորոտն զրուս զա. նուանս նոցին և զթուակսնն, սյսպէս.

**Յիշատակ է պատկերս Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, Ղափանցի ի գեղէ Մանլելայ Անդրեասին եւ եղբորն Ուփանեասին եւ Մարտիրոսին եւ ծնողացն մահտեսի Պողոսին եւ մօրն Խաթունիկն, ի Սուրբ Խաշ եկեղեցոյ Հայոց. Նկարեցաւ 1714, եւ Հայոց ՌՃԿԳ ամի.**

Յիշեալք մականուանէին Ջիւղիտանք, և հաստա տեցին զընակութիւն իւրեանց ի Վենետիկ, (ուր և թաղեալ է Մարտիրոսը կոչեցեալ Սողոմոնեց (1743), ի նմին Ս. Խաշ եկեղեցւոյ, սյսու տապանազրաւ.

**Այս է տապան Մարտիրոսի Որդւոյ Ղափանցի Պողոսի. 1743. 17 Ապրիլի<sup>1</sup>.**

Չայսու ժամանակաւ (յամի 1743) Կէորդ ոմն արեւոյ Մանլելցի գրեալ է գովեստ ինչ տաղաչափական ի Գրիգոր Տաթեւացի, ի Սալա գեղ Հոնաց (Լրիմու). հե տեւակ բան, տպագրեալ յԱմարսն հատորի Քարոզգըրոց նորին Գրիգորի, աւարտելով սյսպէս.

« Սղազեկ գրուածս սյս երգարանեալ ի Կէորդայ գործակալէդ պիտակացեալ, Հազար նըրսուն թուին լեալ, Ներ գեղն Սալայ որ երկիր Հոնաց կոչեալ »:

Ի թեմի վանորէից Տաթեւու ըստ նոր ցուցակի՝ դասի և Մանլելու Ամենափրկիչ Անապատն կուսանաց, այլ ոչ յիշի ի պատմութեան, և ոչ յԱրարհամէ Գ կաթողիկոսէ յուղեւորութեանն և յանցանելն ընդ գեղոս այս: Իսկ եկեղեցին Մանլելու նուիրեալ է Ս. Գէորգեայ:

Մղոնաւ ի շո. Մանլելու ի ծայր ձորոյն կան աստի և անտի զիւզքն Գարապաղ յաջմէ, Ափկիս ի ձախմէ, հուպք յիրար. ոչ գիտեմ զայր ի հին գիւղորայից տեղի ունիցի առաջինն, զՔարն արդեօք եթէ զՄթնածոր,

եթէ զայ տեղի. երկրորդն յիշի ի պատմութեան Ղափանցոց ի հարեւանցի.— Նոյնքան հեռի ի Մանլելոյ յեւրոյ կուսէ (ի ձախմէ ձորոյն) կայ աւերակ զիւզն թիգ զրիւս յաշխարհացոցի, որ է հաւանորէն Թօս՝ Տաթեւու ցուցակին:— Ի հարաւակողմն ձորոյն երկու մղոնաւ եւեթ ի բացեայ յԵրասխայ՝ զեզբբք Նոյն կան մերձք յիրար և դէմ յանդիման՝ Մարգիգետ և Ալիսերե կամ Ալտարա. առաջինն անծանօթ է ինձ, եթէ չիցէ Մէգրէն՝ նորոյ ցուցակին Տաթեւու. զերկրորդն՝ մեծ և զեղեցիկ գեղ թաթարաց կամ Պարսից՝ կոչէ Տիւպուա (Դ, 47), որ էանց ընդ այն (12 ապր. 1834) ի միջի այգեաց և ձիթենեաց, և պատուեցաւ ի զլիսաւորաց զեղջն: Յանուն Ալտարայ կայ պահակատուն կամ իջեւան յափն Երասխայ ի բերան ձորագետոյն:


Երկրորդ ձորակն փոքրիկ է յոյժ և շէն ինչ ոչ նշանակի ի նմին. բայց դէմ յանդիման երկոցուն գեղոց երկրորդին՝ կան զոյգ մի գեղոց մղոնաւ եւեթ բացագոյն, յեզերս չորրորդի ձորակին, նոյն քան և յԵրասխայ հեռիք. հարաւայինն է Թխկոտն նորոյ ցուցակի

<sup>1</sup> Ամաց 70 վախճանեալ է ի թագի Ս. Սեւեր եկեղեցւոյ. անդէկոս (համարակալ) գրուով յայնժամ եկեղեցւոյն Հայոց, որում քանզի պարտական էր 280 լիրս վենետիկան, հատուցանէ եղբորորդի նորս 8-15-ննիս:— Մեռելագիրն իրաւացի ասէ. 1743,

April 20. Il Sig. Martino da Pauli d'anni 70 in circa, oppresso da gravissima malattia di petto, di mesi 2. passò di vita la notte decorsa: come dalla Fede dell' Ecc. Cumano: si sepolisce con Capitolo.

թեմին Տաթևոյ, որ ի քարտին գրի թուշտուտ. այսպէս գրի այլ և թիսկուտ՝ ի յիշատակարանի աւետարանի միոյ, զոր յամի 1671 Նագար Ղափանցի ընծայէ Ս. Յակոբ եկեղեցւոյ գեղջն: Հիւսիսայինն՝ իրրեւ քառորդաւ ժամու հետի՝ է Աստազոր որ արգ կոչի Ախտախան, և ոչ յիշի ի ցուցակս և ի գիրս. այլ վերոյգրեալ ուղեւորն ասէ բնակեալ ի Հայոց. միանգամայն և պանդաղեալ անդ ընդ գեղեցիկ և բարձր կամրջածու միակամար ազուգայ ջրոյ ի վերայ ձորակին, վասն որ ոգման պարտիզաց: Հռչակեալ է ազնիւ գինի Աստազորի, զոր կչուով ասնն վաճառել, քաղցրահամ և սակաւ ինչ անդաթթու<sup>1</sup>: Յանուն Աստազորի կայ և պահակատուն

յեզր Երասխայ, առ բերանով Հինգերորդի ձորակին, առ որով ոչ նշանակի գետոյ, բայց աւերակ մի, նոյնպէս և առ վեցերորդաւն: Իսկ եօթներորդ գետաձորակն կոչի Սարի տերե, ունելով ի զլուխ միոյ ի ծործորոցն՝ գետոյ մի մեծ յարանուն կարճաւանի, զի զրի ի քարտին Գարալեփան. բայց ոչ գիտեմ նորաչէն իցէ եթէ Հին: Իսկ ի ստորին կողմանս ձորակին՝ յաջմէն կայ մեծագոյն եւս գետոյ Թաթարաց՝ Նիւղատի կամ Նիւղատի անուն, երկու մղոնաւ չափ ի Հս. Երասխայ: Վերոյգրեալ ուղեւորն Հելուեախացի, որ ի Մեղրեայ գայր այսր, հասանելով անցանելով ընդ դժուարին և դժոխածեւ սեւաւոյն ժանգաւար և ապալեր քարաժեռոս, բրդածեւ ամբար-



82. Նիւղատի

ձեալս 1800՝ կամ 2000՝ յերեսաց Երասխայ, զմուլեալ ի մուտս ձորահովտիս այսորիկ՝ ընդ գեղեցկութիւն վայրացն և ընդ խաղաղական նիստ գեղջն (զոր և զծագըրեաց), նորորինակ իմն ովասիս կոչէ, ճարտարութեամբ վաստակոց պտղաբեր գործեալ յամուլ վայրի. տունք ի սեւաւ քարանց մի զմիով յեցեալք ի քարաժայռն, և վերամբարձիկ որմովք կայկայեալք են, և ազուգայք ոռոգմանց ի բարձունս առկախեալք. մշակութիւն այգիաց և թթենեաց ի պէտս որդանց շերամոյ զոր դարմաննն, և

առ եղերր գետակին ընդ մեծամեծ ընկուզենեպք վառարունս՝ զործեալ եռացուցաննն զբոժոժոն. իսկ զբերս այգեացն վաճառն Հայոց, որք առաւել ցքի հաննն քան գինի. ընտիր են ի ստուղս և նուսնք պարտիզացն: Գեղջուազն որ քաջ մեծ արեաց զհիւրն, ասէր թերեւս ի հարար ամաց հետէ հայրենի պայազատութեամբ ժտտանգել զտեղին. զոր թէպէտ աւելազանց համարի ուղեւորն՝ այլ զուցէ ասէ ի Հայկազանց անտի սերեալ իցէ<sup>2</sup>. և նովին պանչաւօք ընդ նորընծայ գեղեցկութիւն զարնայ-

1 Astasour, petit village arménien, où, je fus étonné de voir un bel aqueduc d'une seule arche et d'une grande hauteur, qui conduisait l'eau d'un côté de la vallée à l'autre pour l'irrigation des jardins — DUBOIS. IV 47.  
 2 Le Seigneur de ce village tatar, séparé du reste du monde, éloigné de toute communication, se trouva fort honoré de notre visite... Depuis une longue suite de sié-

les il en n'avat changé dans Nougadi: notre hôte nous assurait que peut-être depuis un millier d'années, sa famille occupait et possédait ce village; il avait sans doute de l'exagération dans cette assertion; mais qui viendrait porter la guerre dans ces contrées, si bien défendues par la nature?... Mon hôte pouvait fort bien être un Haïgazmi ? — DUBOIS, IV. 49, 50 52.



## Ա. ՄԵՂՐԱԶՈՐ

124. Վերին կողմն ձորահովտի Մեղրի գետոյ՝ ուր բազում ձորակք և վտակք ճղճղկէն իմն հատանեն զերկիրն, էր վիճակն ԴԱՇՅՕՆ, հիւսիսային մասն Արեւեաց, ըստ պատմչին. քանզի անդ ի վերոյ (ի հիւսիսոյ) ամենայն գիւղորայից և ի գլուխս ձորոցն կայ գետն համանուն, որ գրի և Տաշտօն, և ըստ Բաղրամու՝ Կաշտունի. և հարկ է թէ բարգաւաճ և մեծ չէն էր, այլ ոչ գտանեմ ի պատմութեան գլխատակ ինչ նորին, բայց միայն ի յետին ժամանակս, յամի 1684 յիշի Գաղաշտ ոմն իբր կազմիչ գրոց ի Թաղէի վանս. որ ասէ զինչն «ի յերկրէն» Ղափանոյ, ի գիւղն իմ որ կոչի Տաշտուն: Յաւուրս Դաւթի Բէկի՝ յաւեր և յաւար մասնեցաւ գիւղս այս յասպատակաց խանին Որդուտայ, և բնակիչքն փախուցեալ զերծան ի Չաւրնդուր: Եկեղեցի Կաշտունի կոչի Ս. Ստեփանոս:


Սակաւուք ի հարաւոյ գեղն խառնի ի նորընծայ գետն Մեղրեայ՝ յամէն՝ որ է յարեւմտից, մի ի մեծագոյն վտակացն յԱլանկէզ լեռնէ իջեալ, Սարի տէրէ կամ Սաքիտար, որ և Լիչկ կոչի յանուն գեղն՝ որ յանկեան խառնըրոցն, և յաշխարհացոյց տախտակի՝ Շեչկերտ գրի. այլ կարծեմ սխալեալ և չփոթեալ ընդ գեղն կոչուականի. իսկ Լիչկ է ի Ղափանեցոց պատմութեան կոչեցեալն Լէչկին կամ Լեշկին, ուր՝ և գետակն Ղօզոզ կոչի<sup>1</sup>: Ատանօր երկուքի զօրավարաց գնդին Պապայ գումարեալ կամէին դաւաճանել զնա, յորոց խոյս ետ, և Դաւիթ Բէկ ի ձեռն այլոյ զօրավարի հաշտեցոյց զնոսա: Յիշեցուցանէ ընդ աղօտ անուն գեղն զհինն Լուսկավանք Արեւեաց, և այս հաւանօրէն յանուն Լուսիկ կոչեցելոյ աշակերտի Ս. Բարթողիմեայ՝ վախճանելոյ ի կողմանս Վանանդայ, ըստ պատմչին Սիւնեաց:

Ի հարաւոյ գետակիս և հուպ նմին միւս եւս անանուն և յոյժ անձուկ ձորակ խառնի ի նոյն, ուրանօր և յաջմէն այլ եւս երկու գետակք կամ հեղեղատք, մին (արեւմտագոյնն) կոչի Թաղամերի, յանուն Թաղամայրի հին գեղն որ յելից կուսէ ձորեգերն կայ. յաւուրս Դաւթի Բէկի բնակէին ի սմա 60 տուն Թուրքք, որոց տեսեալ զկոտորած համազգեացն ի ձորն Լեւազու, աղերս արկին զօրաց Պապայ՝ խնայել յիջեանս, և խնայեցան. այլ իբրեւ խանն Որդուտայ Սափի Ղուլի՝ գիշերայն եկեալ կոտորեաց ի Սայպուն? Երկուս գիւղս Հայոց, նայնպէս արար և Մխիթար զօրավար հրամանաւ

Դաւթի՝ ընդ Թաղամերացիս:— Չերկրորդ գետակն ի դէպ է կոչել յանուն կալեր գեղն, (որ կեայի գրի ի մեծի աշխարհացոցի Ռուսաց). աստի էր Պապ գօրավարն որդի Սրապիտի, զոր բազում անգամ յիշատակեցաք, և որ ձերբակալ եղեալ աստ հրամանաւ Դաւթի Բէկի՝ զլսապարտ զրաւեցաւ ի Շեչկերտ: Եկեղեցին նուիրեալ է Ս. Աստուածածնի:— Յամէ գետակիս կալերու՝ մղոնաւ կամ դոյզն աւելի հեռի ի սմանէ, և մերձագոյն ի Թաղամայրի կայ Վանք գիւղ, որ ի կաքաւարեղ վիճակի գրի, որպէս և կալերն. ի սոցա երկուցուն միջոցս ամրացեալ կային բնակիչք մերձակայ գիւղորայից յարչաւանս անդ խանին Որդուտայ. և իբրեւ խոյս ետ ի սմանէ Պապ՝ փախեան և նորա, և անցեալ ընդ լերինս Խաչաօլու զերծան ի Չաւրնդուր գաւառ:

Ի հիւսիսոյ կալերու առ միւր ի վտակացն նշանակի Ելտաստան աւան, կամ Երդաստայց նոր ցուցակին, որ ոչ յիշի ի հնումն. և է հայրենիք թելադրի Պատմութեան Ղափանեցոց, կամ Դաւթի Բէկի, որպէս և յիշեցաք ոչ սակաւ ուրեք. այն է Ստեփանոս Շահումեանց, որդի Վարդանիսի կամ Վրթանիսի, միոյ ի զօրավարաց նոցին. զոր՝ իբրեւ զխաւսոր կամ սիրելագոյն անձն՝ ընտրեալ է Ռաֆֆի ի ծանօթ վրպասանութեանն, պէսպէս դիպուածս ստեղծարանելով ըստ քմայ հաճոյից. որ ինչ ստոյգ էր՝ յիշեցաք ի կարգի տեղագրութեանս. իսկ որ յետ այնց դիպաց՝ անծանօթ մնայր նա, և զի մի եւս մնայցէ, և մի օտարոտի իմն կարծիցի՝ զարուստ նորա յարեւմուտս և յարիլ ընդ միաբանս Հուճական եկեղեցւոյ, (որպէս կարծէ հեղինակ յետին՝ ծանօթութեան վրպասանութեանն, և փոփոխէ զաթոռն յոր դիմեաց միւս եւս նշանաւոր ներգործող յանցս պատերազմացն՝ Տէր Աւետիք), արժան համարիմ յայտ առնել, զի բաղում ժամանակք յառաջ ծանօթ էր տոհմն Շահումեանց ի քաղաքի աստ Իտալիոյ՝ յորում գրեմս, և ուր հօրեղբայր Ստեփանօսի՝ Ոսկան որդի Սահակայ՝ անդստին ի կէս Ժէ դարու (1650 կամ յառաջագոյն եւս) եկեալ և հաստատեալ էր տուն վաճառականութեան, ուր յիշի և ի վերջին ամս դարուն, և հաւանօրէն անդ վախճանեալ է: Ի պէսպէս դիւանաց Ս. Խաչ եկեղեցւոյ և պետութեան Վենետիոյ, սյուշափ ինչ ստուգի ազգարանութիւն զարմին.

<sup>1</sup> Ի տղազրեալ Պատմութեանն պակասէ անուն գետակին, այլ գտանի ի բնագրին որ կայ ի մերում գրատան:



Ի կիսոյ ժէ դարու ցկէս ժԸ հաստատեալ բարգաւաճէր ի վենետիկ՝ վաճառատուն Շահումեանց, որոյ զուգար և առաջնորդ կացին մի ըստ միտջէ, յետ մահուան Ոսկանայ, Պողոս որդի Հայրապետի, Զաքար որդի Դաւիթի, Նահապետ որդի Պողոսի (յամի 1738), ընդ որում և Ստեփանոս, ապա Ռոբոս որդի (միւս) Դաւիթի։ Վկայեն այսմ ազգային վաճառականք՝ յատենի դատաւորաց, ընդ նոսին և Մինաս Փէրվազեան արքեպիսկոպոս Զմիւռնիոյ։ Վկայէ և Հայրս մեր Միսի-

Յար Աբբայ, զի երեքին պայազատքն՝ Շահումեանք՝ Ստեփանոս Վարդանիսեան, Զաքար որդի Դաւիթի և Նահապետ որդի Պողոսի, յամին 1738 ետուն շինել յեկեղեցւոյ վանաց իւրոց (ի Ս. Ղազար կղզւոյ) վայելուչ խորան մի՝ պատկերաք հանդերձ, յանուն Ս. Լուսաւորչի, և ապա (1737) առաջի սեղանայն պատրաստեցին զտպան հանգստարանի իւրեանց, արկեալ ի վերայ կափարիչ վէժ կարմիր կենայ քառակուսի (մի Զափ հասասար), և արձանագրեալ այսպէս։

**Ղափանեցի Շահումեանց տան Պարոն Զաքարն որ է Դաւիթեան, Պարոն Ստեփան Վարդանեսեան, Պարոն Նահապետն Պողոսեան.**

**Ետուն շինել զայս սուրբ Սեղան. Եւ ընդ նմին զայս Դամբարան, Ի յիշատակ եւ ի կայան Բնաւից որք են ճիւղք նոյնոյ տան.**

Արդ յայսմ ժամանակի թելադրեալ է Ստեփանոս և տուեալ յերիւրել միոյ ի Հարց աշակերտաց Միսիթարայ, այն է Հ. Ղուկաս Ստեփանեան Սերաստացի, (+ 1751), զՊատմութիւն մարտից Ղափանեցոց։ Նահապետ + 50ամեայ ի 28 մարտի, 1758, բերեալ և թաղեալ է ի դամբարանի անդ. Ոսկան + ամա յառաջ (12 մարտ, 1757) թաղեալ է ի քաղաքին, ի վենետիկ<sup>1</sup>։ Իսկ Ստեփանոս՝ զորմէ խնդիրս է, յայտ է զի + է նախ քան զ1783 ա՛ր, այլ երբ և ուր, ոչ գտի. յամէ 1733 ցամն 1780 յիշի յայլեւայլ դիւանս Ս. Խաչ եկեղեցւոյ, որոյ և կարգեալ էր Երեսփոխան, յամի 1743, այն է տեսուչ և հոգացող (Guardian ըստ Իտալացոց), որ համարէր զուրի հասարակութեան Հայոց այնր տարւոյ, և յամս 1745—6, Սնդիկոս, զի այսպէս կոչէին երկու պաշտօնեայք՝ օգնականք Երեսփոխանին։ Ի դասակարգի ժողովականաց Հայոց միշտ ընդ առաջինս կարգի, և ի նուիրատուս՝ առատազոյն, նշանակ փարթամութեան և յաջողութեան առի եւ տրին. յամի 1734 ի պէտս շինութեան տապանակի Ս. Խաչ եկեղեցւոյ՝ տուեալ է 100 լիւրայ վենետիկեան, որ ըստ այնր ժամանակի կրկին և աւելի արժէր քան յայժմուս. և յազգահամարի Հայոց վենետիկոյ

1780 ամի, յետ ազնուաչուք զարմին Շէհրիմանեանց և Յ. Սեղրոսեան, և Միրմանեանց շինողաց եկեղեցւոյն, առաջին կարգի քան զայլս՝ — Դիսաւոր Նիւթք վաճառաշահութեան Շահումեանց՝ երեք ազգք էին, Դամակեան կերպասք, Հայեյիք և Ճրագարանք տպակեղէնք, թող զայլեւայլ նիւթս արեւելեայս. որոց որպիսութիւն, զին և շահ՝ տեսցի յետոյ ուրեմն, յորժամ զընդհանուր վաճառականութենէ Հայոց բան լիցի։ Յիշելի է զի գործակից և վաճառակից Շահումեանց էր ի վենետիկ և տուն Նուրեանց։ Յամի 1735 ի դիւրութիւն տարուբերի վաճառուց՝ Ստեփանոս միտրանեալ ընդ Նահապետի և Աղամայ որդւոյ Մարկոսի, գնեցին մէն զչորրորդ մասն նաւու միոյ (Ռոբոսի Պրիլի), զնոց աւելի քան զ3000 դուկատի, և յանուն նաւուն որ կոչէր Ս. Մարիամ Շընորնաց՝ յաւելին զՍ. Խաչ. որ և շնորհս եգիտ ի պետութենէն՝ վասն հալածելոյ երբեմն զյելուզակս Բարբարոսաց և զերժուցանելոյ զայլ նաւ։ — Այլ գիտեմ. յորում ամի, այլ որպէս թուի՝ մերձ ի հասարակել (ժԸ) դարուն ամուսնացեալ է Ստեփանոս ի քաղաքի աստ (վենետիկ), առեալ ի կին զՌոզալպա (Ճերմակ Վարդ) Մարիամ Վառվառէ (ծն. ի 1733), դուստր ԵարուՅեան

1 Սորս որդի թուի Յովհաննէս Շահում, որ յամի 1881 ի Լիւզոնոյ էր, երկոտասանամեան մուժեալ ի վանս (1756) և ելեալ։  
2 Ի Ս. Մարիամ Խորոսի (S. Maria Formosa) եկեղեցւոյ.

յորոյ թաղի բնակէին շատ ոք ի վաճառականաց Հայոց։  
3 Արդ 70 (տրուք) են ընդ բնաւ ի ցանկին, յորս 12 Շէհրիմանեանք, յետ որոց 4 այլք, ապա ժէ Ստեփանոսս այս։

(որդու բանասիրի և բարեպաշտի առն Գէորգայ Գարա գաշեան<sup>1</sup>) և Թագուհոյ Աննայ դստեր Չուլագ Խաչատրոյ, զոր՝ Ռոսսի (Կարմիր) մականունէին Խաչատրոյ: Երիտ միայն որդիս զտի նշանակեալ Ստեփանոսի՝ երկու առաջինք Յովնան և Մարթա ընդ ծնանելն մկրտեալք և մեռեալք, միւսն Մար. Աննա Աննելա (ծն. ի 1780) 30. ամենի պսակեալ ընդ քաղաքացոյ Մկրտչի Ռեպի (յՅ ապրիլի, 1780) ի Ս. Խաչ եկեղեցոյ Հայոց, + է ի 18 յանուարի 1783, դժուարածին երկամբք: — Վերջին յիշատակ Ստեփանոսի ի վենետիկ ծանօթ ինձ՝ է վերոյգրեալ ազգահամար Հայոց՝ յամին 1780, յամսիսն օ. գոսոսի, և ծնունդ երկրորդի գոտերն յամսեան հոկտ. ի նմին իսկ ամի: Յետ սակաւ ամաց այն է 1787 (յուրում + Ոսկան), ի կոտր անկեալ է, այսինքն սնանկացեալ կամ փակեալ վաճառատուն Շահումեանց, յետ հարիւրամեայ շահավաստակ գործառնութեանց. յորմէ թուի մնասեալ և Ստեփանոսի<sup>2</sup>, որ եթէ այնուհետեւ մնաց աստէն ի վենետիկ եթէ գնաց այլուր, ոչ գիտեմ. բայց դեռարոյս հասակ զստերն և կեալ սորա ի վենետիկ, շտան կարծել զհեռանալ հօրն անտի իսկոյն:

125. Չորեքին վերոյիշեալ գետակքն, երկու աստի և երկու անտի, համահաւաքին ի մի ի Հր. Վանից և Թաղամարայ. և մերձ ի կցուածս նոցին գեղ մի մեծ կայ, զոր աչխարհացոյց Ռուսաց օտարոտի իմն անուամբ գրէ Պինաքսիտարք? բայց այլ տախտակ՝ որպէս պատշաճագոյն թուի՝ գրէ Չուար, նշանակեալ ի հին Յուցակին Չուարի վանք. և ըստ պատեհ դրից սորա, թուի և ըստ մեծութեան՝ գետն Մեղրոյ՝ որպէս ի վերդ նշանակեցաք, կոչի և Չուար-չայ. ի պատմութեան անդ Ղափանեցեաց առան կոչի. ուր առաքեաց Պապ գկապուտ կողուպուտ գիւղորայից Թուրքաց Լեւազու ձորոյն, և կացոյց պահապանս ի վերայ նոցա: Աւերեալ է սրդ գեօղն հին, միայն եկեղեցին կանգուն մնայ, յոր և յուխտ գան ի տօնի Վարդավառին:

Ի հարաւոյ Չուարայ ընդունի գետն յաջմէն երկուս եւս վտակս ի նոյն Սլանկէզ լեռանց, յորոց երեցուն անկեան միի կայ կիւղ կամ կիւղ գիւղ, որ թուի նշանակել զԼիմք գիւղ Կաքաւարբերդ վիճակի, Ս. Գեորգ եկեղեցեալ: — Ընդ մէջ սոցա և Լեւազու ձորոյն կայ յաջմէ գետոյն փոքր գիւղ հին Յուցակին Տեհի, որ այժմ թեի գրի յաշխարհացոյցի: — Երկու մղնաւ ի Հր. սոցա՝ անկանի ի գետն վտակ մի փոքրիկ իջեալ ի կողից բարձու Շէյխ կամ Շիխեռտո կոչեցեալ լեռին (300), և յանուն նորին կոչի: Յանկեան խառնըրդոցն յահեկէն կայ Վերին Լեւազ գիւղ. բայց թերեւս ոչ սա՛ այլ որ յարեւելից հարաւոյ նորին մեծագոյն գետակն՝ իցէ բուն Լեւազի ձորն, զի առ խառնըրդը նորին յաջմէն՝ ի հարաւոյ՝ կայ Ներքին Լեւազ, որ և մեծագոյն քան զՎերինն է, իրրեւ չորիւք մղոնք հեռի ի նմանէ: Ազգային

ոմն ստորագրող տեղոյն համարի՞ լիճքիւզ կոչի, վասն հոսանաց շուրջ գետոյն, կամ լճակաց Ալանկէզ լեռանց (զոր Արագած կոչէ), և այլ որ Լեւազու գիւղ գեօղն ասի իննել ամարանոց Մեղրեցեաց, չըսպատեալ վայրենի և ընտանի ծառովք (յորոց յիշին Տիկի, Մախրի, Հացի, Հունի, Ոգնի, Խնձորենի, Արորնի, Գայլ-կեռասենի, Մասուրի?, Թրրոյ?, Յախաւելի, Խէշի, Մացառի, Լայն): Յիսնիւ չափ տունք են գեղն յափունս ջրոյն, այլուտ գաղթեալք իրր թառասուն ամաց հետէ (1850), առ հնով գիւղին, որոյ երեւին հետք տանց և եկեղեցոյն: Յիշին առ նովին գետակաւ այլ եւս երկու գեօղք Թուրքաց՝ Միւրք և Մնաչ, որք թուին յիշեցուցանել զհին գեօղա՝ Մալուն և Մոյրան: — Թերեւս զկարծիս Լիմքիւզ կոչման յաւելցէ և լճակն ի բարձու լեռին, յորմէ ասի անկանակիտ աղբեր հոսել: — Յերի տեղոյս թուի և յիշեալն ի նոր ճանապարհագրէ (1891) օտարալուր Փերդոփտան ուխտատեղի հռչակեալ ի կողմանսն, առ թուրքաբնակ գիւղիւ:

Ի զլուս ձորակի փոքուն Լեւազու ի ստորոտս Արեւուր լեռին կայ Պոռաքար գիւղ, յիշեալ ի պատմութեան Ղափանեցեաց, յոր թափեցան զուրք խանին Ուղուտայ՝ անցեալք ընդ լեռինսն, և զԹուրք բնակիչս գիւղորայից ձորոյն Լեւազու խաղացոցին յՈրդուտայ, յապահովել յերեսաց Հայոց. մնացին միայն երեք գեօղք, Դամալի, Շրդի և Պիրանայ, (չորրորդն թուի Թաղամարայի), զորս Պապ ետ հարկանել, և յաւարի տունուլ զինչ նոցա, և Դաւիթ բէկ բաժանեաց ընդ զօրս նորա և ընդ ապստամբեալսն ի նմանէ երկուսին զօրավարս: Չգեօղ զայստակ ձորոյն Լեւազու՝ պատմիչն Ղափանեցեաց ասէ լինել ի կողմանս Արձանաքարին, որ ոչ գիտեմ զինչիցէ, լեւան եթէ յիշատականոց ինչ: — Հուպ և յանդիման Վերնոյն Լեւազու՝ յահեկէ գետոյն կայ գիւղն Նոյնիկ (գրեալ ի քարտի), որ է անշուշտ Նուլանցն Կաքաւարբերդ վիճակի: — Ի միջավայրս Ստորին Լեւազու-ձորոյ ի հարաւոյ՝ որ է յաջմէ ջրոյն՝ կայ Վախրաւար գեօղ, որ գրեալ է և Վայրավառ, Ս. Գեորգ եկեղեցեալ, ուր զարձ արարեալ Պապ յաւերէ այլոց գեօղից Լեւազու, եւ գիտ երիս տունս ուրացելոց, կոտորեաց զամենեանս և զինչ նոցա առեալ գնաց: Իսկ յահեկէ հանդէպ Վահրաւարայ է հինն Արկավանս, զի զայս համարիմ նշանակեալ ի քարտի: Տիւպուայ Abshavaza: — Մզոնա ի հարաւոյ Ներքին Լեւազայ միւս եւս գետակ և հուպ յայսմ (յարեւմտեան) կողմանէ՝ յաջմէն, թափի ի Մեղրաձոր, եկեալ յԱզնարբերդ լեռնէ որ միջասահման է Արեւեաց և Գողթան, 8900՝ բարձր, և ի ձորակի նորին են Գոսանիս և Ուճանապատ՝, աղաւաղեալ հայեցի առնուն, և Ազարակ դասակարգեալ ի հին Յուցակին. առ սովաւ գտանի Կապարսահեք: Ընդ մէջ Ազարակու և Գոսանիսայ՝ կոչոռա, որ նոյն է անշուշտ ընդ կորսնք

1 Ի սակս վիճից և հալածանաց վասն կրօնից խոյս տուեալ է սորա ի կոստանդնուպոլսոյ ընտանեգրն ի վենետիկ, ուր և + յամի 1729, եղեալ կայ ի տապանս Ս. Ղազարու եկեղեցոյ վանաց Միւրթարոյ:

2 Քանզի և դուստր նորա Մ. Աննա՝ իրրեւ զմի ի կարօտելոց օրիորդաց Հայոց ընդունել զվիճակ 40 դուկատաց, (24 ապրիլ

1780), զոր ամի ամի Լանէին ի սրից Ետեր Բազասարայ, (տես յէջ 295) վտան այնոցեկ՝ որք մտանէին ի կուսանոց կամ Կարսանայի, որպէս և սա որ պսակեալ է յամի 1780:

3 Մշակ, ԺԲ, 160:  
4 Նոր Գար, Ը, 159:  
5 Ի ուս քարտի՝ կիճանս գրի:

կամ կուրավաճս հին Յուդայական, կամ կուրավաճս նոր Յուդայական թեմին Տաթևոյ<sup>1</sup> :

Յահելէ Մեղրաձորոյ, սյսինքն յարեւելից, յետ կալերոյ ձորակին՝ մի միայն ձորագետակ է փոքր մի մեծագոյն, և մղոնաւ կամ դոյզն աւելի յՆՂ. Հր. Նուշանց գեղը թափի ի գետն, և անկ է կաշիլ գայն վարդաճաւ ծոր, յանուն երկուց գիւղից որ յալակողմանն, յարեւմտեան ձորափին: Յանկալ՝ անունդ գտանի ի հին Յուդայական, այլ ըստ տրիցն գուշակի փոքրիկ գիւղ մի լինել յայնմ ժամանակի, իսկ այժմ երկու գեօղք են և ոչ փոքունք. վերինն կայ ի գլուխ ձորակին ի ստորոտս Աճալի լեռին, Ստորինն երկու մղոնաւ խօնարհագոյն, և իբր մղոնաւ և կիսով հեռի յիւրից Տեհեայ: Առ բերանով վարդանաձորոյ կայ լեկ կամ Լէօք գիւղ, յերկուսին կողմանս ջրոյն տարածեալ: Ի հարաւոյ սորին վտակ մի եւս փոքրիկ թափի ի Մեղրաձոր, որպէս և այլ վտակ ի ստորեւ Ներքին Լեւազու. ոչ նշանակին ի քարտի շէնք առ նոքրք, և ձորակքն անձուկք են և փոքրկունք, որպէս ծործորք ինչ. այլ մի ի նոցանէ հարկ է թէ Շրուաւնի ծորն իցէ համանուն գիւղիւ. հանդէպ երկրորդին լինի խառնուրդ գետակին Ագարակայ:

126. Իբր կիսով մղոնաւ մերձ ի խառնուրդս դոցին՝ ի հարաւոյ կուսէ, և իբրու երկու մղոնաւ լոկ ի հիւսիսոյ աիւանց մեծի գետոյն Երասխայ կայ գլխաւոր և գեղեցկանիստ շէն գաւառին Արեւեաց և անունատու գետոյն՝ Մեղրի աւան, տարածեալ յերկուսին եզերս նորին, և ի միջի այգեստանեայց, թթենեաց, անդաստանաց բամբակի և պողատու պարտիզաց. և այսպէս աւանդի կոչեցեալ վասն պատուական մեղեր կողմանցն: Տիւպուս ճանապարհագիր՝ որ ընդ կողոպուտս Կարճաւանի դժուարաբայլ եմուտ ի սահմանս Մեղրոյ (ի 11 ապրիլի, 1834), « Թուէր իմն, ասէ, ի դրախտ անդրաւ » փոխիլ. ուսնիք գնտակս արձակեալ, ծորենիք ծաղկեալք, պահէզք, այգիք տնկեալք ի դարեւանդս, » տունք հողայարկք, սրագագութն քարաժայռք՝ կրելով » զաշտարակս հնաշէն բերդի, յանդիման առնեն տեսաւ » բան նկարագեղ ». այլ տակաւին ոչ բաւականաչափ զարգացեալ եգիտ գրուսարբերութիւն յայնմ եղանակի, վասն խառնութեան կլիմային, և այն ի պատճառս լեռանցն բորձանց արգելոյ զկանուխ ժամանումն և զանագան վերացումն ճառագայթից արեգական, և ցրտագին օդոց շնչելոց յԱւանկէզէ. որոց ներհակաբար և տօթ աւարանի վատառողլ առնէ գտեղին. վասն այնորիկ բընակիչքն ելանեն ի հովս Լեշկայ: Իսկ Ռատտէ որ ի կէս յունիսի (17, հերու 1890) ագաւ աստ, նոյնպէս գովէ զԼուրս և գոյսս Մեղրեայ, ամենուրեք դալարչս նկատելով և պողարբրս, Թզենիս և Նաենիս, Թթենիս, Շրօրիս, Կեռասենիս, լայնասաղարթ Սօսիս և բարձր բարձր Կաղամասիս. և ի պարտէզան վարդենիս Մայիսի անուանեալս ըստ Պարսից, և Լաւատրի (Lavatera) յազգէ մոլոխից. յիշէ և զառատութիւն բամբակի և ըզբերս շերաւոյ, նա եւ զքարուտ և ապառաժ սահմանն՝

ցամաքասէր բուսովք և փշովք պատեալ:— Յերիս թաղս տրոհեալ է Մեղրի, երբեմն քաղաք, գէթ քաղաքաւան բազմաբնակ. մին ի ձախմէ գետոյն կայ, որ է յարեւելից, երկուքին այլքն յալմէն, բայց մի ի սոցանէ գրեթէ ի սպառ աւերեալ է ի դարէ հետէ, և մարթ է գտանել ինչ արժանի քննութեան յաւերակսն<sup>2</sup> և յաւտարակս կամ ի մանր բերդորայս, զորս յիշէր վերոյգրեալ ուղեւորն (Տիւպուս), և որք տակաւին փոքր ի շատէ կանգուն կան ի կատարս բլրոց պատեւոց զշինիւն, և քալ ամուր վայր յարդարեն զաւանն, վասն որոյ և կոչի Մեղրոյ բերդ: Այսոքիկ են կոչեցեալքն Մեծ, Փոքր և Միջին բաղք ի նոր վիճակագրութեան թեմին Տաթևոյ, որոց միահամուռ բնակիչք են իբր ոգիք հազար<sup>3</sup>: Մի մի եկեղեցիք են թաղոցն՝ Մեծի և Փղքուն, և բարեշէնք, ըստ վկայութեան յետին յիշեալ եւրոպացի ուղեւորին<sup>4</sup>, այլ ոչ թուին և բարեխնամք. որպէս և ոչ Մեղրոյ վանքըն Ս. Յովհաննէս, որ կայ յարեւելակողմանն, սակաւք հեռի ի շինէն. յորում բաց յառաջնորդէն թուի թէ չգոցեն միաբանք, այլ պահապանք ոմանք, թէպէտ և կալուածս ոչ սակաւ ունի մենաստանն: Ի սկիզբն ԺԸ դարու յիշի Դանիէլ վարդապետ Մեղրեցի ընդ ձեռնաւր կողս կտակի Աղեքսանդր կաթողիկոսի: Յետեալ գտանի Մեղրի և յուսումնական հրահանգս, որում ոչ թուի փոյթ մեծ ունել ժողովրդեանն զբաղելոյ ի մշակութիւն բամբակի, շերամոյ և այգեաց, որոց զովի կարմիր գինին: Գժուարիմանայի է և բարբառ նոցին, հանգոյն Գողթնեցեացն. խառնութեամբ պարսիկ ձայնից և ռոյ, և առաւել՝ ծեքանք հայերէն բառիցն: Այլ յուսալի է կրթութեամբ՝ որպէս կորովիս նոյն և արս հանճարեղս ընծայել Մեղրոյ, որպէս երբեմն յ՝ ԺԷ դարու գերեմիա վարդապետ, յորինող Բառարանի միոյ կամ մեկնութեան բառից Ս. Գրոց, և զիսրայէլ վարդապետ՝ աշակերտ Մովսիս կաթողիկոսի:— Արբահամ կաթողիկոս Գ ի շրջագայութեան իւրում եկեալ սյար յամի 1735, գրէր. « Եկաք ի Մեղրի, յորում կայր փոքրիկ վանք մի պատուական և հանոյական. որ և մնացի անդ երեք օր, » սփոփելով և գնոսաւ: Ի պատմութեան յելս ԺԱ դարու, յամի 1083, յիշի Արուստիլ ոմն Տէր Մեղրոյ բերդին, որ ընծայեաց եկեղեցւոյն Տաթևոյ « այգի մի մեծ » ի Մեղրոյ ծորի, (զկոչեցեալն) Բերդառագեանց այգի: Յառաջին կէս ԺԲ դարու յաւանէ աստի ընծայեցան յեպիսկոպոսութիւն աթոռոյն Սիւնեաց երկու եղբարք, նախ Բարսեղ, որ « սակաւ ինչ կեցեալ՝ անկանի պատահմամբ ինչ ի գետն Երասխ, մօտ յԱստուպատ » գեղ, ջորւովն հանդերձ՝ յոր հեծեալ կայր. և մտեալ » լողորդաց հանին յայն կողմն, և լոյս մեծ ճառագայթեալ ի վերայ ջրոյն, և տարեալ թաղեցին զնա ի Մալարթոյ վանք»: Ապա Գրիգոր, որ աւագերէց էր Մեղրոյ աւանին, « յերիւրեալ (յորդորեալ) ի սրբասէր և ի մեծահաւատ տիրուհւոյ իւրմէ Մամամ կոչեցելոյ. որ » ասէր. Ով երէց, ամայացաւ աթոռն Սիւնեաց. փուլ » թաւ և լեր քահանայապետ. զի և որդեակս մեր լիցի

<sup>1</sup> Ըստ Տիւպուսայ Kourouz . յից ի ուսս աշխարհացոցի:  
<sup>2</sup> Շանդր (Chantr.) փռանկ մարդաբնին և նախող, յամի 1890 ի սկիզբն յունիսի, ետ բանալ և կրկանել թիւ մի, ի սահմանս

Մեղրոյ, և եգիտ պղնձեայ զարդս, օղամանեակս և զէնս:  
<sup>3</sup> Մշակ, ԺԸ, 36, գրէ տունս 165, ոգիս 955:  
<sup>4</sup> Տիւպուս (Գ. 45), մի եկեղեցի միայն յիշէ:

» որդի քահանայապետի... Յորմէ համարձակեալ զնայ  
 » առ Տէր Գրիգորիս եղբայր Ներսիսի Հայոց կաթողի-  
 » կոսի, և անդ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ գայ ի վիճա-  
 » կըս Սիւնեաց. և տեւեալ ամս քսան՝ մեռանի ի Վայոց  
 » ձոր ի Խարձայ գիւղ, զի չըլէր ընդ Վիճակեալն, ի  
 » թուականին ՈՒՅ » (1168): — Տասն կամ մեռասան  
 ամառ յառաջ քան զայն՝ այլազգիք գաղտագողի յար-  
 ձակմամբ փրփոցան Մեղրոյ, և հանին ի ձեռաց վերջին  
 տկարացեալ Թագաւորացն Սիւնեաց՝ Գրիգորի և Սըմ-  
 բատայ. և ոչ յետ բազում ինչ ամաց առեալ զբարա-  
 բերդ « բնալինջ արարին զտուն կապանին, զԱրեւիկն  
 » գաւառ », ըստ պատմչին: Բայց և ցյետին դարս յա-  
 ջողեաց Մեղրեցեաց պահել գէթ զազգային ոգի և զառ-  
 տընին տեսութիւն, նա և զճոխութիւն, քաղ մշակու-  
 թեամբ վիճակացն և տուրեւառիկ վաճառականութեամբ  
 յօտար երկրի. և զի բազմութիւն էին բնակքն և ձեռնտու-  
 ունէին զմերձակայ գիւղականս, զորժ մեծ արութեան  
 ցուցին ընդդէմ այլազգեաց յաւուրս անդ պատերազմաց  
 Դաւթի Բէկի. յորժամ եկին Որդուատցիք և այլ Պար-  
 սիկք ի կողմանց Սեաւ լեռանց (Կարատաղ), 18,000 աւ  
 և պաշարեցին զաւանն. առաջնորդք Մեղրեցեաց կոս-  
 տանդին, Յովման, Սարի, և Աւարէլ 400 զօրակա-  
 նօք, բաժանեալ յերեսին թաղան՝ վառեցան ընդդէմ  
 նոցա. ոչ կարացեալ զառաջինն զդէմ ունել, իրեւ մը-  
 խեցան այլազգիքն և կալան զՓոքր թաղն, սքաւ բար-  
 ձեալ զկամուրջս անցիցն, հրաձգութեամբ վանէին և ոչ  
 տային թոյլ մասնել յերկրսին միւս եւս թաղս. առաքե-  
 ցին և առ զօրավարս Դաւթի խնդրել օգնութիւն. յորոց  
 փութացաւ զալ զվմել Պայլինգուր, գումարեալ ի կող-  
 մանց կոխական գաւառի 2000 մարտիկս. այլ մինչեւ  
 էր հասեալ նորա, Մեղրեցիք գիշերայն յարձակեալ ի  
 Փոքր թաղն, արարին կոտորած մեծ, և զբազումս ի փա-  
 խուստ դարձուցին յՈրդուատ, հանդերձ զխաւարու նո-  
 ցին: Հասեալ և Պայլինգուրայ ի վաղիւն, յերիս գուն-  
 դըս բաժանեալ զզօրսն, մէն միոյ 860 արամբք, և ժա-  
 մըս եօթն կուռեալ սաստկապէս՝ կոտորեցին ի թշնամեաց  
 անտի 11,000 այր. կալան և զմի ի գլխաւոր առաջնոր-  
 դաց նոցուն Հաճի Շափի անուն, և արկին ի բանտ, ա-  
 ոին և աւար բազում. բայց սնկան և յիւրեանց կողմա-  
 նէ ոչ սակաւ արք քաղք, ընդ որս քալանթարն Լեւա-  
 զու՝ Մուրուլ, և հորեղբորորդի նորին: Եւ իբրեւ ի մե-  
 սում ամին եկն եղբայր խանին Երեւանու յՈրդուատ և  
 լուաւ զդէպսն, կոչեաց ի դատ զՄեղրեցիս. այլ քնը-  
 նեալ և ի վերոյ հասեալ զի Որդուատեցիք նախ վնասե-  
 ցին Մեղրեցեաց՝ արդարացոյց զսոսա և արձակեաց ա-  
 զատս. արձակեցին և երկրքին կողմանքն զգերեալսն  
 իւրեանց, և արախն հաշտութիւն առ ժամանակ մի:  
 Յետ սակաւուց (1726-7) փոխան Պարսից հասին Թուրքք  
 հզօրագոյն եւս բանակու, զոր դարձեալ յաջողեցան  
 Հայք՝ դարանամուտ լինելով՝ առաջնորդութեամբ Մխի-  
 թարայ և Տէր Աւետեաց՝ չիփեղ և ընկրկել յանձուկ

կիրճս անցիցն Ուզունպէնու կոչեցեաց, որ տանի հանէ  
 յԵրասխ, և անդ ի նեղ արկեալ էր զօր կոտորեցին և  
 էր զօր գետամոյն արարին, և առին աւար անբաւ, ընդ  
 որս և զծրարս թղթոց հարկին՝ թուով 32,000, և հրով  
 ծախեցին: Սպանին և զՆորվիչ ոմն Գաշտեցի՝ ուրացող  
 քրիստոսական հաւատոցն:

Յաջորդք և ժառանգք քաջացն՝ մէլիքութեան պայա-  
 դատութեամբ տեւեցին և տեւեն ցարդ. յորս դովու-  
 թեամբ յիշին յեւս անցելոյ դարու և ի սկիզբն ներկա-  
 յիս, Մէլիք Յօհան և Պարոն Աղաբարա: Բայց ի բազ-  
 մադէմ անցից պատերազմաց Թուրքաց և Պարսից և  
 խանից Գարապազու նուազեալ է ժողովորդն. յամի  
 1879 Մեղրեցի ոմն՝ գրէր 728 ոգիս միայն լինել յաւա-  
 նին ընդ այր և ընդ կին. նոյն և ի հնգեօսն գետօսն՝ Շի-  
 րուանի ձոր, Մանլեւ, Վահրաւա, Գիտեներս (զօր Գիտե-  
 միւսս գրէ), և կուրուս, 684 ոգիս միայն համազգիս: Իսկ  
 ալ ոմն Մեղրեցի յամի 1880 ասէ 150 ծախս լինել ի  
 Մեղրի, և Մէլիք սեղաոյն՝ Աւարեանց: Յերրորդում  
 քառօրդի անցելոյ դարուն (1766) Էմին Յովսէփ՝ յան-  
 ցանելն ընդ Մեղրի՝ զօր քաղաք կոչէ. և հասարակա-  
 պետութիւն իմն, 3000 տունս ասէ նմին. յիշէ և զճա-  
 կութիւն քաղաքի այգեաց, հասարակութիւն մեծաքօի և  
 բամբակի, և զճարտարութիւն կանանց ի զորժուած նո-  
 ցին. գօթէ և զքաջութիւն Մեղրեցեաց՝ զի մերժեցին ըզ-  
 բոնաւորսն յարուցեալս յետ սպանման Նատիր Շափի,  
 և ուր ուրեմն յանձն առին հնազանդել Իպրահիմ խանի  
 տիրողն Գարապազու:

Զի ոչ յերկրագործութիւն միայն պարասէին նախնիք  
 Մեղրեցեաց, այլ և ի վաճառականութիւն հանգոյն այլոց  
 Ղափանեցեաց, վկայեցեցն անշուշտ դիւաւք եւրոպական  
 քաղաքաց, մանաւանդ վենետկոյ, ուր յաճախէին քան  
 յայլ քաղաքս Խաւրիոյ. անդ յառանջին դիւա՝ ս Ս. Խաչ  
 եկեղեցեոյ Հայոց, յիշին յ'Յիւ և ԺԼ դարս, Մեղրեցիքն  
 կոստանդնոպի Աղամայ (յամէ 1676 ց' 1730), որ և երեւ-  
 ւի մի ի գլխաւորաց ազգայնոցն, և ի տասանց ի նոցունց  
 կարգեալ զորժակալ և դատավար ընդդէմ նաւապետի  
 միոյ (Copessich). այրի գողով՝ առնու կին զԱլզոտոֆնէ  
 Գաթեղբարս, պսակի ի Մուրան կղզուղ (27 սպրիլ, 1694).  
 վախճանի 80 ամեայ (16 յուլ. 1730) ի Ս. Սեւեր թաղի  
 վենետկոյ, ուր տայ առնել նմա յուղարկաւորութիւն կին  
 նորա՝ պաշտօնէիւք եկեղեցեոյն՝: — Յակոբ որդի Տէր  
 Զաքարիայ, որ յամի 1689 ի նորոգ շինութեան Ս. Խաչ  
 եկեղեցեոյ ընծայեաց կանթեղ մի պղնձեայ, և 20 դու-  
 կատ ի շինութիւն արժաթեայ կանթեղաց: — Ոսկան  
 որդի Պապաղուլի, որ յամի 1695 ընդ այլոց քսանից համ-  
 ազգեաց աղերսէր զՀասարակապետութիւնն միջնորդել  
 առ Սպանիացիս և թափել զվաճառս իւրեանց, զօր դե-  
 րեալ էին զաշնակիցք նոցին Նէպոլեոնցիք նաւաւն հան-  
 դերձ, և ասէին ի տասն ամաց հետէ կալով աստանօր (ի  
 վենետիկ) իբրեւ հպատակք պետութեանն, շահաբեր լի-  
 նել նմին վաճառականութեամբ իւրեանց, մանաւանդ

1 Խաչատուր Մ. Մամուլեանց, ի Մշակ, Ը, 81:  
 2 Հաւ քաջածանօթ բռնասէր գիտնականին Մկրտ. Էմին:  
 3 Ի Պատմագիրս յիշեալ եկեղեցեոյն՝ Zancomar Պորսից կամ  
 ի Պարսից անուանի կոստանդ, որ ոչ գիտեմ գինչ նշա՝ակէ. Իսկ

ի մահացուցակս նորին՝ պաղէս նշանակեմա: նորին. Il. Sig. Cos-  
 tantin d'Adamo, Armeno, d'anni 80 in circa, amalato da  
 febre e paralisia, mesi 14 in circa. Medico l'Eccelente  
 Cumano. Lo fa sepelir sua Consorte, con Capitulo.



յայնմ ժամանակի՝ զի նուազէր շահավաճառ վենետացի. նայն և յերկրորդում ամի (1696) պահանջէր ի ժառանգաց այլոյ նաւապետի՝ (Ֆրանգոյի) զինչ իւրեանց բարձեալս ի Զմիւռնիա: — Սոցին ժամանակակիցք են Ալտոն, Բադի, Պոլոս մն, և Խաչիկ Արարոնենց որդի Մալումի, որ յիշի յամս 1738-1745:

Երկրորդ նշանաւոր տեղի յԱրեւիս՝ ի յետին ժամանակս՝ եղև Կարճաւան, որ ստուգիւ արտաքոյ երեւի բնիկ Մեկրաձորոյ (թէ և պատմիչն ի սմին պարփակէ), հուպ նմին յարեւմտից լեռանցն, և սահմանակից Ուղուստայ, փոքրիկ առանձնակ ձորակաւ, գեղեցիկ և այգեւէտ սահմանաք, որոց զինի փրփրոտ գովի. այլ յաւէտ եւս նշանաւոր է երկիրն վասն բովոց կապարի և արծաթոյ, կամ արծաթախառն կապարի, բայց զորպէս ոչ գիտեմ: Ի պատմութեան յիշի Կարճաւան ի սկզբանէ Չարաւ, յորժամ Ա Սմբատ Թագաւոր Բագրատունի ի գալն ի նաւակատիս եկեղեցւոյն Տաթեւոյ, ընծայեաց ոմա՝ ըստ պատմիչին՝ զմեծ առանն Կարճաւան «յԱրեւիք գաւառի ի Մեղրաձորի, ընդ գնոյ ստացեալ»: Մի ի կարեւոր և ամուր շինից էր և առ Թագաւորօքն Միւնեաց, յորոց ձեռս մնաց և յետ կորստեան Կապանին, անազան ուրիմ ընդ այլոց բերդորէից նուաճեալ յայլազգեաց: Բնակիչքն մերազգիք, ի ժամանակի վիճակագրութեան Երեւնի իբր 40 ամաւ յառաջ՝ էին տունք 39, և ոգիք 154 համարեալք: յայխարհազրի 1873 ամի նշանակին տունք 35, ոգիք 366, և տուն մի Ռուսաց. յայտ է թէ զարդիս անցեալ եւս են: Տիւպուս ի սկիզբն ապրիլի (1834) անցանելով ի Կարճաւանէ ի Մեղրի, ընդ սակաւուց ծաղկեալ բուսոց յիշէ տեսակ մի Արար-

բիոնի (Euphorbia rigida), և առ նմին սողալով յաւազի և ի ժայռս զպարուրածեւ կողղինջն Զուղայի՞: Եկեղեցի աւանին նուիրեալ է Ս. Աստուածածնի: — Իբր երկու մղոնաւ հեռի ի Մ. Հր. աւանին՝ առ այլով վտակաւ կայ Կարճաւանու Սուրբ ուխտն կոչեցեալ. կամ Ս. Ստեփանոս վանք: Աստի էր Եսայի վարդապետ աշակերտ Մովսիսի կաթողիկոսի, որ շինեաց և առաջնորդ եկաց Ս. Կարապետի վանաց Երնջակայ. յիշի և յամի 1665. նոյնպէս և եղբայր նորին Տէր Յովհաննէս, որ աղաչեալ զգիտնական վարդապետն Ստեփանոս Լեհացի, ետ Թարգմանել, յամի 1660, զՅովսեպոսի Պատմութիւն Պատերազմաց Հրէից՝ ի լատին լեզուէ, յոր յարէ և ինքն զյիշատակարանս այս. «Ես Յոհան զառածեալ մե»  
» ղօք, անպիտան ի գործ պաշտաման բանին քարոզու»  
» թեան, եղբայր ըստ մարմնոյ Եսայեայ շինողի Սուրբ»  
» Կարապետի վանիցն Ապրակունեաց, բայց քեցեալ և»  
» տարակացեալ ի գործոց արիութեանց և քաջասրտու»  
» թեան նորին, գաւառաւ ի Մեղրոյ և գեղջաւ Կարճա»  
» ւանցի. լսէի միշտ ի գիրս ամենայն պատմութեանց»  
» Հայոց՝ յաղազս Յովսեպոսի, և տեսանէի զվկայութիւն»  
» սնն առ ի նմանէ, և ցանկայի բազում արարածք, և»  
» ոչ երբեք տեսանէի ի մէջ ազգիս մերոյ. վասն այսորիկ»  
» ընդ այլոց սրբազնագոյն եղբարց մերոց Թախանձէի»  
» զերջանկապատիւ զեղբայրն մեր զՏէր Ստեփանոս»  
» Վարդապետն Լեհացի, առ ի Թարգմանել. որոյ խո»  
» նարհեալ յաղաչանս մեր՝ սիրով Թարգմանեաց. և ետ»  
» նորին ընչիւքն ընդօրինակել ետու:»

Ընդ մէջ բերանոյ երկուց վտակաց առ ակն Երասխայ կայ և իջեւան մի կարաւանատուն կարճաւանայ կոչեցեալ

### Բ. ԶՈՐԱԿՔ ԱՐԵՒԵԱՑ=ԿԵՆԱԽՈՒՉ

127. Զմասն երկրին որ ընդ մէջ Մեղրաձորոյ և գեւազավտին Պատուղայ՝ համարեցայ արեւելեան մասն Արեւեաց գաւառի, և որպէս կարծեմ նոյն և Կենաւուզ պատմութեանն Ղափանեցեաց. գէթ արեւելեան մասամբ: — Յայսմ վիճակի ի թիկանց լեռանց անջրպետաց կովսականի՝ իջանեն տասնիւ շափ մանր վտակք, և ընդ անձուկ յոյժ ձորակս ուղղակի խաղացեալ ընդ հարաւ-

ակոյմն՝ Թափին յԵրասխ. և են յետագայք, սկսեալ յարեւմտից ի սահմանակցութենէ Մեղրոյ: Ի գլուխ առաջնոյն նշանակի աւերակ գետոյ մի Սեւաստան անուն, որ թուի Սեւաստար նոր ցուցակին Տաթեւոյ. որում հուպ ի հարաւոյ կայ կերայոս կամ Գերայոս (ըստ ուս աշխարհացուցի), զոր կարծեմ լինել Գառան, ընդ որ էանց Արարհամ կաթողիկոս յերթալն ի Մանլեւէ ի Մեղրի:

1 Եւան անուանէր Ս. Անտոն Պոլոսոյի. իսկ Ոսկան զբի յիտաւ լականն Usan di Babuli: — Ոստիկանք վաճառականութեան Հասարակապետութեանն՝ Թէպէտ ոչ համարէին զՀայս հաստատութեակս ի վենետիկ, այլ քանզի հրաւիրեալք էին անդր յամէ 1623, արժան է ասեն համարել կամաւոր նպատակս (devoisi con-


siderare in figura de sudditi volontari), և պաշտպանել զնոսս, մասնաւոր զի բացեալ էր նոցա և վաճառատունս ի մայրաքաղաքի սաստ:

2 Et l'Hélice de Djoulfa rampait sur le sable et les rochers. — DUBOIS, IV 34.



Թեմին Տաթևոյ, որ ի քարտին գրի թուշխտաւ. այսպէս գրի այլ և թիվառտ՝ ի յիշատակարանի աւետարանի միոյ, զոր յամի 1671 Նագար Ղափանցի ընծայէ Ս. Յակոբ եկեղեցւոյ գեղջն: Հիւսիսայինն՝ իրրեւ քառորդաւ ժամու հետի՝ է Աստազոր որ արդ կոչի Ախտախան, և ոչ յիշի ի ցուցակս և ի գիրս. այլ վերոյգրեալ ուղեւորն ասէ բնակեալ ի Հայոց. միանգամայն և պանչացեալ անդ ընդ գեղեցիկ և բարձր կամրջածեւ միակամար ազուգայ ջրոյ ի վերայ ձորակին, վասն ու ոգւան պարտիզաց: Հռչակեալ է սգնիւ գինի Աստազորի, զոր կըսով ասնն վաճառել, քաղցրահամ և սակաւ ինչ ած դաթթու: Յանուն Աստազորի կայ և պահակատուն

յեզր Երասխայ, առ բերանով հինգերորդի ձորակին, առ որով ոչ նշանակի գետը, բայց աւերակ մի, նոյնպէս և առ վեցերորդան: Իսկ եօթներորդ գետաձորակն կոչի Սարի տերե, ունելով ի գլուխ միոյ ի ծործորոցն՝ գետու մի մեծ յարանուն կարճաւանի, զի գրի ի քարտին Գարալեփան. բայց ոչ գիտեմ նորաչէն իցէ եթէ հին: Իսկ ի ստորին կողմանս ձորակին՝ յաջմէն կայ մեծագոյն եւս գետը Թաթւորաց՝ Նիշդատի կամ Նիշվատի անուն, երկու մղոնաւ չսփի ի Հս. Երասխայ: Վերոյգրեալ ուղեւորն Հելուեփացի, որ ի Մեղրեայ գայր այսր, հասունելով անցանելով ընդ դժուարին և դժոխածեւ սեւադոյն ժանգասար և ապաւեր քարաժեռոս, բրգածեւ ամբար-



82. Նիշդատի

ձեայս 1800՝ կամ 2000՝ յերեսաց Երասխայ, զմալեալ ի մուտս ձորահովտիս այսորիկ՝ ընդ գեղեցկութիւն վայրացն և ընդ խաղաղական նիստ գեղջն (զոր և գծագրեաց), նորորինակ իմն ովասիս կոչէ, ճարտարութեամբ վաստակոց պողաբեր գործեալ յամուլ վարի. տունք ի սեւա քարանց մի զմիով յեցեալք ի քարաժայռն, և վերամբարձիկ որմովք կայկայեալք են, և ազուգայք սոողմանց ի բարձունս առկախեալք. մշակութիւն այգեսոց և թթենեաց ի պէտս որդանց շերամայ զոր դարմանեն, և

առ եզերք գետակին ընդ մեծամեծ ընկուզենեք վառարանս զործեալ եռացուցանեն զրոժոժսն. իսկ զբերս այգեացն վաճառեն Հայոց, որք առաւել ցքի հանեն քան գինի. ընտիր են ի պտուղս և նուալք պարտիզացն: Գեղջուաւգն որ քաջ մեծարեաց զհիւրն, ասէր թերեւս ի հարաւս ամաց հետէ հայրենի պայազատութեամբ ժառանգել զտեղին. զոր թէպէտ աւելազանց համարի ուղեւորն՝ այլ գուցէ ասէ ի Հայկազանց անտի սերեալ իցէ՞. և նսվին սբանչաւօք ընդ նորընծայ գեղեցկութիւն զարնայ-


1 *Astasour*, petit village arménien, où, je fus étonné de voir un bel aqueduc d'une seule arche et d'une grande hauteur, qui conduisait l'eau d'un côté de la vallée à l'autre pour l'irrigation des jardins — DUBOIS. IV 47.  
 2 Le Seigneur de ce village tatar. séparé du reste du monde, éloigné de toute communication, se trouva fort honoré de notre visite... Depuis une longue suite de sié-

les il en n'avat changé dans Nougadi: notre hôte nous assurait que peut-être depuis un millier d'années, sa famille occupait et possédait ce village; il avait sans doute de l'exagération dans cette assertion; mais qui viendrait porter la guerre dans ces contrées, si bien défendues par la nature? .. Mon hôte pouvait fort bien être un Haïgazani? — DUBOIS, 1V. 49, 50, 52.

նոյ՝ մեկնեցաւ յերկրորդում աւուր գիշերօթեալ (յ՝ 12 ապր. 1834)։ — Ռատտէ որ Հերու (1890, ի 16 յունիսի) եկն ի Նիւղատի, ի խնդութեան եգիտ զընակիչն՝ վասն յաջող և առատ բերոց շերամոյ, իբր զի միոյ սուրտնիկ (4, 25 գրամ) իտալական ձուոց որդանցն՝ բերեալ 30 ֆունտ բոժոժից, որ լինի իբրեւ 12 կշիւ (քիւրգր.) և շափազանց թուեցաւ նմա, զի ի Մեղրի հագիւ 22 ֆունտ համարէր յաջողագոյնն։ — Նշանաւոր և շքեաղ ի բուսականս գտաւ ի սահմանն նորածանօթ բոյն Միչաւիա (Michauxia laevigata Vent. յանուն փոանկ բուսախընդիր բուսաբանից, հօր և որդւոյ), որ ի ճառագայթաձեւ արմատոց արձակէ բուն մի, 1 կամ 1 1/2 Չ. բարձր. ծաղկունքն դեղնորակ թերթիք կոր ի կոր վայրահակին. լի է բոյն խիժային կաթամբ։ Ի կենդանական բերոց նշանաւոր է դեղթափ այժեամբ Βέζοαρժ, որ յոլով գտանի ի մայրիս Նիւղատեայ։ — Առ բերանով Սարի տէրէ ձորադետակին կայ պահակատուն մի եւս յանուն գեղջն. յորմէ սակաւաք ի վերոյ այլ ձորագետակ (աթերորդ) խառ-

նի ընդ առաջնոյն, ունելով ի վերնակողմանն զգիւղն ԸՆՆԱՅՈՐ, Էռնագիտ գրեալ ի քարտի, յորոյ անուն ի գէպ է ստուգել և կոչել զձորակն. ի ծանօթ գեղոյ Արեւեաց՝ զոր կանխաւ դասեցաք, բաց յերկուցն յիշեցելոց ձոր բարգութեամբ՝ միայն մնայր Մթնածոր անյայտ գրիւք։

Իննբերորդ ձորակն յելից աթերորդիդ՝ փոքրիկ է յոյժ, և միայն աւերակ գեօղ մի նշանակի ի նմին վաղտ աւուն, որ ոչ յիշի ի գիրս կամ ի ցուցակս։ — Երկու եւս փոքրաքոյնք քան զայդ ձորակք են ի լեռնակողման սահմանաց Կովսական գաւառի, յորս ոչ նշանակի շէն կամ աւեր տեղի, այլ ստորեւ պահակատուն մի առ ափն Երասխայ, ուրանօր գետն մեծ կռուելով իմն ընդ կողմառս քարսժայռ փըլիցն՝ յառաջէ վազելով. այլ յետ անցանելոյ ընդ սահմանն Արեւեաց՝ առ փոքր փոքր հանգարտէ, և հովիտն առ սակաւ սակաւ ընդարձակի, և օձաքարուտ և կրաքարուտ պորփիրախառն քարածեռիցն յաջորդեն դաշտակք փոքունք, յորս երեւի և թզենի վայրի, և այգիք յոլովք։



83 Աշերակը վաղանդեի վանից (Տիւ յէլ 217. 218)

# Ժ Ա

## Փ Ո Ղ Թ Ն



ԻՒՆԻՔ և Վասպուրա-  
կան՝ երկուքին նախանձ-  
ընդդէմ ախարհք Հայոց,  
մրցէին երբեմն սեփա-  
կանել ինքեանց զփոքրիկ  
զայս վիճակ, զետեղեալ  
ի միջի իւրեանց. որ և ին-  
քընդիխանութեամբ երեւի  
վարեալ իբր առանձնակ

ի վաղընջուց. այլ զի ի յետին ժամանակս՝ Սիւնեաց աշ-  
խարհի վիճակեալ էր անհակառակ, և մանաւանդ զի բը-  
նական իսկ դրիւք նմա պատշաճի, ի նմին և տեղագրել  
հարկ և արժան է. թէպէտ և Խորենացի յաշխարհա-  
գրութեանն ի Վասպուրական դասէ, այնպէս թերեւս  
առ իւրով ժամանակաւ գոլով քաղաքական օրինաք. բայց  
և ինքնին Երասխ գետ որ անջրպետ է երկոցուն աշխար-  
հացն, ի Սիւնիս կցորդէ զՔոզլթն, ընդ այլոցն գաւառաց  
ի միջի փակելով յահեկէն, որ է ի հիւսիսոյ. — Սահմա-  
նօրդք Գողթան են, յարեւելից կուսէ՝ վերջին տեղագը-  
րեալ գաւառքն Արեւիք և Չորք. ի հիւսիսոյ՝ Մղուկ և  
Երնջակ ըստ մասին, որ և յարեւմտից բովանդակ սահ-  
մանակից է նորա: Հիւսիսակողմն ընդ մէջ Չորոց, Մըղ-  
կայ և Երնջակայ անձուկ է, վասն որոյ և եռանկիւնու-  
ձեւ իմն երեւութանայ երկիրն, երկարագոյն գոլով կող-  
մանցն որ ձգին ընդ Մ. Հր. և ընդ Ել. Հր. իբր 218 մը-  
ղոնաւ կամ պակաս, իսկ լայնութիւնն առ Երասխաւ՝  
20 մղոնաւ չափ, կամ սակաւ աւելի: — Մեծագոյն մասն  
երկիրն՝ արեւելեանն՝ յայսմ կողմանէ և ի հիւսիսոյ դէպ  
յարեւմտեան հարաւ, զնստագոյն է, հերձեալ ի տաս-  
նիւ չափ ձորակս, որոց չուրք ըստ այնց դրից՝ ի թիկանց  
Ալանկէզի իլանեն ընդ հարաւ արեւմտախառն յԵրասխ,  
և ըստ տակաւ յառաջին յարեւմուտս կոյս՝ մի քան զմի  
երկարին, թէպէտ և ամենեքին փոքրասահմանք. իսկ ա-  
րեւմտեան մասնն ունի միակ երկարագոյն քան զընաւս

գետ և ձոր՝ ուղղագոյն ձգեալ ընդ հարաւ, և է անուա-  
նեալն Բստաձոր, այլ այժմ՝ կոչի Կիլիւան-չայ, թուի ի  
հին անուն Ազատ Գիրանայ: Զայլս ի գետակացն ի  
դէպ է կոչել ըստ գլխաւոր աւանից որ յեզերս նոցին.  
զառաջինն (յարեւելից սկսեալ), Գետանայ չուր, որ իջա-  
նէ յԱզնարեթը լեռնէ 8900՝ բարձուէ, ի հարաւոյ բար-  
ձրագունին Շրխեռարտի. երկրորդն Որդուտայ գետ, եր-  
րորդն Ազոչեաց, չորրորդն՝ Տեւեհս, զոր մարթ է և  
յանուն Վանանդայ կոչել. հինգերորդն որ ընդ մէջ  
սորա և Բստաձորոյ՝ Ուստուփի, որ և Չինանար: Ո-  
մանց ի սոցանէ են և օժանդակք կամ գետակիցք, կող-  
մնական մանր ձորակօք: — Զարեւելեան սահմանն՝ որ-  
պէս նշանակեցաք՝ պարսպեն միայար բարձր բարձր լե-  
րինք Ալանկէզի և Ղազանկէլի. յարեւմտակողմն՝ մի-  
չասահմանք Երնջակայ ամբառնան Դիռու տաղ՝ ի հիւ-  
սիսի՝ 8428՝ բարձր, Պեղեզ գաղտի, Դաշ-պաշի (քարա-  
գլուխ), և համօրէն լեռնագօտի ձգեալ մինչեւ ցԵրասխ,  
այլ ոչ բարձր. ի մէջերկրեայս նշանակին Ուշուս և  
Էլդի լերինք ընդ մէջ Ուտուփի և Բըստի. կեալուր գա-  
լտի ի Հր. Ուշուսի, առ Չինանարաւ՝ Խարուռ-տաղ?  
յարեւմտից Ստորին Ազուլեաց: — Հիւսիսակողմն եր-  
կիրն՝ մանաւանդ Բստաձորն՝ անտառային է, հարաւա-  
յինն պիտանի բուսաբերութեամբ բարգաւանձեալ, այ-  
գեօք և պտղաբեր ծառովք, և ըստ վաղեմի հռչակին՝  
քաջ գինաշէտ. և վասն այսր և վասն այլոց եւս հանգա-  
մանաց՝ Գեղեցիկ առձայնեալ ի պատմէն: Յայժմուս  
հաղորդ պարծանաց հին այգեաց Գողթան, և թերեւս  
չահարբ քան զնոսին՝ գտանին և թրեկիք, սնունդք շե-  
րամոց և նիւթք մետաքսի. թէպէտ և ոչ շատ բարգա-  
ւանձեալ է անդ արուեստն, և յետնեալ գտանի քան  
զՈրդուտայ յայսմ մասին:

129. Ի սակաւ նշանակաց բանիցս գուշակի գաւառին  
Գողթան կամ Գողթնեցեաց ի վաղ ժամանակաց մեծ  
իմն հանդէս ցուցեալ յաշխարհիս մերում, զօրութեամբ



և կրթութեամբ, ըստ տանելոյ դիւցախառն դարուցն, և իբրեւ զմի յառանձնակ աշխարհաց և տոհմից Հայկազանցն պայազատեալ ընդ երկար ժամանակս, և առ փոքր փոքր նուազեալ, մարդ կալով երբեմն Վասպուրական աշխարհի, որպէս և ի Ե դարու. զի որպէս վերագոյնդ յիշեցաւ, ընդ գաւառս նորին գրի յաշխարհագրութեան Խորենացոյ, և յետոյ Սիւնեաց. որպէս գրի յՕրբելեանէ, թէ պէտ սա զՎողթն և զՍրնջակ մի գաւառ թուէ Բայց Արծրունին թովմաս յայտնապէս վկայէ յետ նա հաստակութեան Ս. Վահանայ՝ իբրեւ յամի 737, վիճակել Գողթան ի քամին Սիւնեաց՝ որում և տնկ էր ոչ միայն ըստ բնական դրիցն (զոյգ և հաւասար այլոց նորին գաւառաց՝ որոց ի միջի անկեալ կայ), այլ և նոյն ինքն Խորենացի խոստովանի, եթէ զԳողթնեցիս՝ գտի պատմեալ ի Սիսականէն արդարեւ հատուած, « ոչ զի » տեմ թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, եթէ » յանուն գաւառացն զնախարարութիւնն կոչեցեալ »<sup>1</sup>։ Որ զիարդ և է, անունն խորթալուր է և ոչ պայծառ որպէս զայլոց սիսական գաւառաց. և այս թերեւս վասլն խառնութեան բնակչացն ընդ Մարաց գաղթականին և գերութեան, յորոց ի դէպ է կարծել և զլեզուին այլայլութիւն, որով և ի նոր ժամանակս և ցարդ զանազանի բարբառ Գողթնաց. այլ հաւանական թուի ինձ յանուանէ առն միոյ նահապետի այնպէս կոչիլ երկրին, զի յիշի մերձայանդ Գորոչք իշխան սահմանակից վիճակին Վանանդայ. (յիշելի է և Շոթոք աւան, և Շարիք՝ մի ի սովորական անուանց իշխանաց Գողթան)։ Մանօթ էր անունս և հոռոմ աշխարհագրին Պողոմեայ<sup>2</sup>, ժամանակակցի պայծառութեան գաւառիս՝ վիպասանաբն, յաւուրս Բ Արտաշիսի, այն է ի կէս Բ. դարու Քրիստոսի, համաձայն հայտնու (Փոյրիմի) Քոլմոյո՞ գրելով, և ըստ լատինաց Coltene. նշան մեծութեան կամ զօրութեան երկրին, որ անշուշտ յայն և ի հնագոյն եւս ժամանակս տարածանէր և ի վերայ սահմանակից գաւառաց. որոյ միւս եւս նշան՝ ընդարձականիչ կոչումն Գողթնատուն<sup>3</sup>, և առաձնական Գողթան սուուն<sup>4</sup>, այլ և Գողթանց գաւառ, որպէս կոչէ վերջին պատմաց մերոց՝ Առաքէլ։

Ի պատմութեան մերում զառաջինն յիշի վեց դարուք նախ քան զգալուստ Փրկչին, Տիգրանայ Հայկազնոյ ըզգերութիւն զարմից Աժդահակայ բնակեցուցեալ « մինչեւ » ի սահմանս Գողթան »<sup>5</sup>. այլ զի և ի նոյն ինքն ի Գողթնն էին գորս փոռեալք, տայ գուշակել այլ բան նորին պատմչի, որ ասէ վասն Արտաշիսի պարգեւել սպարապետին իւրում և գայեկին Ամբատայ՝ « զմասն արքունի » որ ի Գողթն »<sup>6</sup>.

Ի կարգի տեսարց՝ նահապետք երկրին թէպէտ և սակաւք յիշին ի պատմութեան, վասն առանձնութեան տաւնըն այնորիկ, և ապա՝ ըստ այլոց Սիւնեաց՝ սակաւահա-

ղորդ գոյով ընդ թագաւորս Հայոց, այլ հնագոյն քան զյուլովս աշխարհաց և գաւառաց՝ յիշին. Շար կամ Շաբիմ ի կէս Ա դարու Քրիստոսի, և կին նորս Նշնա, որդին Խոսրով և թուռն վախան. այս երկու անուանք եւս յաճախեալ են ի տոհմի պայազատաց Գողթան։ Յետ սոցա առաջին տէր Գողթան յիշատակի յերրորդ քառորդի Գ դարու՝ Ատոմ անուն<sup>7</sup>, յորում ժամանակի ի ներսիսեան Գահնամակի ի 46ր բարձի դասի Գողթնեացն տէր, և ի Սահակայն՝ ի սկիզբն Ե դարու՝ բարձրագոյն եւս տեսանի Եր գոյով ի թիւս մնացելոց 70 ից անուանց գահուցն. իսկ յարքունի բանակին՝ զօրաբաժին Գողթնեաց էր 800 այր, որ է միջակ ընդ բազմութիւն և ընդ նուազունս։ Ի սին յիշեալս ժամանակի էր նահապետին Գողթնեաց (միւս Շաբիմ կամ Շաբամ<sup>8</sup>) որդի՝ Գիւլտ, և սորա որդի եւս թուի կոչեցեալ Շաբիմ. սորա յելս կոյս այնր դարու՝ ծանօթ են որդիք Վասակ և Շապուհ. որոց « էարկ սատանայ աղմուկ և նախանձ » մեծ ի մէջ նոցա, վասն բաժնի ժառանգութեան հայրենեաց իւրեանց, և կուռէին ի վերայ գեղեցիկ գեղն » Որդուատայ. և ի ճակատելն զօրք ընդ միմեանս՝ եհար Վասակ սրով գեղաբայն, և խողխողեաց մերձ ի մահ. և ապա զղլացեալ եղաբայրական գթով, կոծէր և մաղձէր և գտանէր զբժշկութիւն եղբօրն, և թողեալ նմա զամենայն ժառանգութիւնն, ինքն խոյս տայր ի տանէ և յաշխարհէ, և կրօնաւորեալ կոչիւր Հայր Գիւլտ, որպէս է գուշակել՝ յանուն հաւուն իւրոյ։ զորոյ և զպատմութիւն աւանդեցաք այլուր։ Յետ սոցա դար մի ողջոյն անծանօթ մնան յինէն իշխանք և դէպք Գողթան. ապա ի սկիզբն Է դարու երեւի սպայազատն Վուամ<sup>9</sup>. ի կէս դարուն (յամի 652) ասպատակեն Արարացիք ի գաւառս այս, և զգերութիւնն հանդերձ այլովք անցուցանեն ընդ հունն Ջուղայու յայնկոյս Երասխայ<sup>10</sup>։ Յելս կոյս դարուն եկաց Խոսրով, հայր երանելոյ և հաշակելոյ վկային Վահանայ, որ յատկաբար Գողթնեցի կոչի, նահատակեալ յամի 737. աշխարհածանօթ վկայաբանութիւն նորին ծանուցանէ լռելեայն և զաւեր և զխաւար գեղեցիկ՝ գինաւէտ գաւառին իւրում Գողթան, ընդ սահմա նակցին Նախճաւանայ, և զարտառուչ հայցուած նորա, կամ զիմաստասիրութիւն պատմչին, մինչ ի դրան և ի սպասու ամիրապետին կայր յԱսորեստան, փափաքել և ասել. « Արձակեցէք որ տեսանեմ զօրչափութիւն աւել » ըստոյ երկրին իմոյ հայրենեաց » և սուռեալ հրամանս՝ սլացաւ եհաս յղձալին։ Այլ տուաւել քան զլինուածոցն և զայդեաց խոպանն և աւեր՝ ետես զիւր զներքին աւերած, թէ և զակամայ. զի չորեքամեսոյ գերի վարեալ՝ կրթեալ էր ի դեն կուրանին։ Գանձասացն Խաչատուր (կեչառեցի) այսպէս նուագէ գիղձս Վահանայ, զգալուստն և զընդունելութիւն ի հայրենիսն.

1 Խոր. Բ. Ը. Զայս բան Խորենացոյ ընդարձակեալ Ստեփանոս Օրբելեան՝ գրէ (ի գլ. Զ.) « իշխանք Գողթանն՝ ոչ եթէ յայլու մէ տակէ էին, այլ ի նոյն Սիսական ցեղէ, ըստ մասին ի ժառանգութիւն առեալ էին զայս գաւառ. որպէս ցուցանէ քեզ Մովսէս Խորենացի »։  
 2 Պաղտէոս, Ե, ԺԳ։  
 3 Թովմա Արծրունի։

4 Կարին։  
 5 Խորենացի, Ա. Լ։  
 6 Նոյն, Բ, ԺԳ։  
 7 Բուզանդ, Գ. ԺԲ։  
 8 Որպէս գրէ ի պատմութեան կորեան։  
 9 Սեբեոս պատմիչ։  
 10 Ղեւոնդ պատմիչ։

« Յիշեաց զաւանդ ուխտին ազգայնոյ,  
 Կարօտացաւ երկրին հայրենոյ.  
 Խնդրեաց հրաման վասըն իւր գնալոյ  
 Ի բնիկ գաւառ Գողթըն կոչելոյ.  
 Համբաւ հասաւ իւր ազգակայնոյ.  
 Ելին ընդ առաջ. . . ողլունոյ.  
 Աւին զնըշան խաչին Քրիստոսի,  
 Ելին ընդդէմ գալոյ վահանին:  
 Տեսեալ զնըշան մեր Մարդասիրին՝  
 Գարձուցանէր զերեսն յերկիւղին.  
 Զարհուրանօք լինէր ընդ գործին,  
 Եւ արտասուէր յորդ ի հանդիսին.  
 Յիշէր զպատգամս աւետարանին,  
 Հեղձամղձուկ լինէր ի սրտին.  
 Ահապնախոց առնէր ըզհոգին  
 Ի սպառնալեաց մեծի ատենին.  
 Լըւեալ բնակիչքն իւրոյ գաւառին  
 Եւ արտասուս յորդոր հոսէին.  
 Մի երկընչիր, որդի Խոսրովին,  
 Մէք պաղատիւք մերոյ արարին,  
 Միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին,  
 Որ քեզ թողու զմանուկ հասակին  
 Ըզթողութիւն պարտուցն առաջին »:

Հատոյց նա զպարտան լի անթերի և առաւելեալ, զկեղան բանի և օտարոտի ջնջելով յորդ արտասուք, և ճգնութեամբք, ապա և նուիրական արեամբն. իսպառ հրաժեշտ տուեալ և սիրոյ նորահարսին՝ (զոր ածին նմա աւագ իշխանք տանն Սիւնեաց), և ցանկալի հայրենեացն և բնաւ աշխարհի թերեւս ի սակա խնամութեանն՝ նոյն իշխանք Սիւնեաց գրեցին յայնմ՝ հետէ զԳողթն ընդ գաւառս աշխարհին իւրեանց. որում յետ 30 ամաց տէր ճաւաչի Սահակ, յիշեալ ի ժողովի Սիւնի կաթողիկոսի իսկ յետ նորա ոչ եւս գտանեմ յիշատակ իշխանի կամ տեառն Գողթան. և որ յելս կոյս Ժ դարու յամի 980 անուանի Խոսրով իշխան Գողթան՝ ի կտակագրին Հովփաթիմայ դստեր Ալտոյ Ողորմածի, ընդ երկրպայութեամբ է, վասն երկրպայական լինելոյ և գրուածոյն. նա զի և յետ ոչ բազմաց թուի Արարաց գրաւեալ և հաստատեալ անդ ուրոյն կողմնակալ կամ բռնաւոր. յայտնապէս իսկ յիշի Ամիրայ Գողթան ի սկիզբն Ժ դարու, յետ հարուածոց Յուսիայ, յորմէ խնդրէր Սմբատ գահերէց իշխան Սիւնեաց զԵրնջակ բերդ և զգաւառ՝ իրրեւ սեփական մասըն վիճակի իւրոյ. « Զոր ամիրայն ոչ կամէր տալ, այլ »  
 « ասէր, յարքունուստ ինձ իսկ պարգեւեալ է: Լուեալ »  
 « ապա զայն Սմբատ, և զոր գումարեալ ի պատերազմ »  
 « ահագին իմն սաստկութեամբ, ընդ իւր բերեալ և զՍկիւ »  
 « րացի թոռոջն, որք խորանօք բնակեալ էին յաշխարհի »  
 « նորա. ելանէ ընդ առաջ և ամիրայն. և ի խառնիլն ընդ »  
 « միմեանս՝ յաթահարեալ լինէր Հազարացին: Անդ ա »  
 « պա զօրքն թուրքաց՝ որ ի ձախ կողմանն՝ յետուստ թի »  
 « կանցն վասակայ կային, խորհուրդ իմն դիւարախ ի

» մէջ առեալ, և միարան ի վերայ վասակայ յարու »  
 « ցեալ, դիւթաւալ յերկիր ընկենուին. և ինքեանք »  
 « դէմ երեալ փախչէին զկողմամբն Նախջաւանու »:  
 Ի վերջ կոյս դարուն (Ժ) Ապուստոլոսի կամ Ապուստոլոսի ոմն էր ամիրայ Գողթան, որ յամի 983 ասպատակեաց ի ճուաչ և ի սահմանս վասպուրական աշխարհի. այլ յետ ամաց ինչ՝ իւր իսկ երկիր աւերեցաւ յԱլպիէնայ որդոյ Ռովադայ ի մեծէ ամիրայէ Վարպատականի. բայց Ապուստոլոսի դարձեալ զօրացեալ էաւ և զԴուին քաղաք յամի 989, և դաշն հաշտութեա՝ եղ ընդ Սմբատայ Նահանջաչի. սա ի դրժել ուխտին՝ ետ զօրս յազնականութիւն Սալարի հակառակորդի նորուն: Ոչ գիտեմ ցերբ տեւեաց աստ իշխանութիւն ամիրայիցն, այլ թուի թէ ց'ելս թաթարաց. յՈրդուստ հաստատեալ էր բնակութիւն նոցա, ուր և ցմեր մամանակս կային կուսակալք կամ գաւառապետք Պարսից. և ոչ է հաւանութեան եւ թէ յառաջին կէս Ժ դարու Գէորգ եղբայր Յովհաննոս Քանեցոյ իշխան իցէ Գողթան, որպէս յիշատակագիր մի ժամանակակից գրէ. այլ ի կողմանս Երնջակայ ունէր նա իշխանութիւն. սակայն չիք երկրպայել զի որպէս յայլ կողմանս Սիւնեաց կացին մնացին հայազարմ իշխանք կամ աւագ մարդիկ, մէլիքք, այսպէս և ի Գողթան վիճակի ընդ տիրապետութեամբ Պարսից, յորոց և գտին շնորհս ազատութեանց յոյժից գիւղից իւրեանց, ուղղակի ընդ արքունի պաշտպանութեամբ լինելոյ և նմա վճարելոյ զհարկն, որք և կոչէին ըստ պարսիկ հրահանգաց խաւ գիւղք. այլ ոչ մնացին անվտանգ ի ժամանակս պատերազմաց Պարսից և Օսմանեանց, անդստին յաւուրց Շահ Արասայ, որ կերպարանափոխ իմն արար ըզկէս մասն աշխարհիս Հայոց, սրով, գերութեամբ և գաղթիւ. և տազնապ տատանմանն եհաս մինչեւ ի սահմանս Գողթան: Զդիպուածս իրացն թուի գրեալ ուրուք առանձինն ռոմով, այլ վերնագիրն միայն այլաձեւեալ գտաւ: Պատմէ հակիրճ և յիշատակագիր ոմն յելս կոյս Ժ է դարու (յամին 1692-6), զ'գալ ի Պարսից զօրագլխի ուրումն, իրրեւ ի վերայ վրաց երթալով, խարէութեամբ եթին անգամ ասպատակել ի Հայ-Աղուանս և ի Սիւնիս և ի « մա »  
 « սըն ինչ Գողթնեաց... և բազում ուստ քրիստոնեայք »  
 « զճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին ընդ... »  
 « օրինացն Մահմէտի, և միաբանեցան ընդ Պարսից, և »  
 « այնքան վնաս և աւերս գործեցին, և մանաւանդ որ »  
 « դիք անիծելոյն վասակայ Սիւնեցիք, որ բազում սուտ »  
 « կարգաւորք և օրինազանց աշխարհականք... զնացեալ »  
 « յարեցան ընդ զօրս նորա, և առեալ սփռեցան ընդ ա »  
 « մենայն երկիրս, զգեօղ, զգաւառս, զվանք, զանապատ, »  
 « որք ի լերինս և որք ի դաշտս, ազգ և ազգ ստութեամբ »  
 « պատճառս յօդելով, և ոչ մնաց տեղի որ ոչ կոխեցին ոտք »  
 « նոցա. և այնպէս աւեր դարձուցին զերկիրս ամենայն »  
 « և կալուպտեցին ի ստացուածոց, առ հառարակ զամե »  
 « նեսեան ահաբեկ և սրտակոտոր արարին»: Այսպէս և յաւուրս գործոց Գաւթի բէկի Գողթնացիք և սահմանա

1 Սահփ. Օրբւլեան. ԼԸ:  
 2 Դէպ եզեւ ինձ տեսնել ի մատենաստան Օքսֆորտ քաղաքի Անգլիոյ ի Թերթ մի կայլաթին այրուքներէ, սոցին տառիւք զբրեւ սոցապէս. Sachs tibuiazuzz hajasdaneaiZe eueus cha-

varin Araradoi eu masin Chugtan chavari schsial i thsisin hajozz 1084 en. որ է հայերէն այս բան. Սակս դիպուածոց Հայաստանեաց եւ եւս գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի թուին Հայոց ՌՄԴին (1605):

կիցք նոցին հակառակ նմին յաւէտ զկողմն Օսմանեանց կալան, օտարացեալք ի Պարսից, զորոց կողմն ունէր Գաւթ և օգնութեամբ նոցին եհար զՕսմանեանս. այլ վասըն դաւաճանութեան Ազուլեցուց ոչ կարաց իսպառ նուաճել, որպէս տեսցի ի տեղագրութեան այնր քաղաքաւանի: Արարհամ կաթողիկոս յայցելութեան իւրում ի կողմանքս, ասէ հրաւիրեալ յիշխանացն Գողթնեաց և երթեալ յԱզուլիս:

130. Այնաւոր է Գողթն քան բնական բերովքն՝ և քաղաքական անցիւք՝ յաւէտ կրօնական հանդիսիւ. Ժողովուրդն քաջ պաշտօնասէր գուշակի և ի հեթանոսութեան կրօնս, և պնդապահ հին աւանդութեանց, որոց որպէսն գրեաթէ իսպառ ծածկեալ է արդ ի մէնջ. բարեբաղդ գտաւ փոխանակ այնր կանուխ լուսաւորութեամբ քրիստոսական հաւատոց ի ձեռն Բարդողիմեայ առաքելայ, որպէս աւանդեն պատմիչք մեր, Թերեւս և Թովմայի. և ըստ այսմ՝ ոմանք նախահաւատս ասեն զԳողթնեցիս և զՍիւնիս քան զամենայն Հայս. ի հարաւային գաւառս աշխարհին ասի քարոզեալ Բարդողիմեայ, յԱրեւիս, յոր եմուտ յԱտրպատականէ գալով ի Բաղս և ի Գողթն. աստանօր շինեաց նախ եկեղեցի զոր կոչեցին Տեանն ընդ առաջ, և հետախաղաղ կորոյս զվնասակար ջուրս Որդուտայ. մկրտեաց զիշխանն Շար հանդերձ տամբն, և կացոյց առաջնորդ եպիսկոպոս զԿոմսի ոմն յիւրոց նախնի աշակերտաց և հետեւողաց. յորոց մի էր և Լուսիկ՝ որ վախճանեցաւն ի վանանդ, և հանդուցաւ ի մատրան փոքու. անդ շինեաց, ասեն. և վանս յանուն առաքելոյն Թովմայի, որ և կայ ցարդ. բայց ոչ է հաւանելի շինութիւնն ի Բարդողիմեայ, այլ ի յետնոց ոմանց: Յաշակերտաց անախ առաքելոյս համարի սկըզբնաւորութիւն և կարգ եպիսկոպոսաց Գողթան յառաջ քան զընդհանուր լուսաւորութիւն ազգիս ի Ս. Գրիգորէ, այսպէս.

Կոմսի, խաղաղական մահուամբ վախճանեալ.  
Բարեկաս, ազգաւ Խուժիկ.

Մուշէ, ընտրեալ և ընծայեալ առ Թաղէոս առաքեալ, բայց ոչ ժամանեալ Թուի առնուլ զձեռնագրութիւն, և խափանեալ եպիսկոպոսութեանն, այլ և քրիստոնէութեան, կամ սակաւուց մնացեալ անդ զաղտութեամբ, զողելով ի լերինս Գարուայ, որպէս և ի վերին Հայս, մինչեւ ի ժամանակս Լուսաւորչին: Իսմանէ կարգեցաւ եպիսկոպոս Գողթնեաց Մովսէս ոմն, որ ԺԹ է ի Թիւս երեսնից վահակալաց և յայտնի անկախ գոլ յեպիսկոպոսէն Սիւնեաց, և ոչ որպէս Օրբելեանն համարի, եթէ յառաջ քան զԼուսաւորչին առանձինն և ինքնակաց էին եպիսկոպոսուէր Գողթնեաց. « իսկ ի լուսաւորել Սրբոյն Գրիգորի զՀայս և ի կարգաւորել զբարձ » և վաստիճան եպիսկոպոսացն, և զսոսա (զԳողթան եպիսկոպոսունս) յանձնեաց եպիսկոպոսացն Սիւնեաց, » զի նոցա հրամանաւ և ի ներքոյ կացցեն հնազանդութեամբ. որում վկայ առաջին կաթողիկոսացն չրջարեւոյս թական Թուղթք և հին գաւազան գաւառացն՝ որ վասն » հարկաց եկեղեցւոյն. զի լիով ունի գրեալ յինքեան

» զբովանդակ գաւառն Գողթան»: Անմարթ էր այսմ այսպէս լինել ի սկզբանն. զի ոչ ունէր Գողթն ոչ յառաջ քան զԼուսաւորչին և ոչ առ նովաւ և ի մերձաւոր յետագայ դարս՝ մասն քաղաքական վարչութեան ընդ Սիւնեաց, Թէպէտ և ի Սիւսականէն ծագեալ էր առհմն, այլ յաւէտ ի վաստուրականն յարեալ էր, և ի նոյն իսկ ի Յուցակի հարկաց եկեղեցւոյն, զոր ինքն Ստեփանոս կարգէ յաւարտ Պատմութեանն, ընդ գաւառս Սիւնեաց, չիք ի նմին ոչ բովանդակ այլ և ոչ մասն գաւառին Գողթան, բայց լըրընջակ ուրոյն. ապա Թէ գրեալ եւս էին և գեոռք Գողթան ընդ այլոցն՝ այդ յայտ է Թէ յետոյ եզեալ է, յորմէ հետէ և քաղաքական օրինօք անկաւ Գողթն ի բաժին իշխանութեան Սիւնեաց յԸ գարու կամ զկնի. զի եպիսկոպոսուէր նորա առանձինն յիշին և գտանին ցայն ժամանակս, մինչ այլոց գաւառաց Սիւնեաց ոչ բնաւ, կամ հազիւ երբեմն, և այն ոչ օրինօք, այլ իբր ապօտամբութեամբ. վասն այնորիկ և անդրէն վերածեալ մօտեալ ընդ իշխանութեամբ մեծի եպիսկոպոսին, որ յանուն բովանդակ աշխարհին Սիւնեաց կարգեալ նախ ի Լուսաւորչին, և հաստատեալ ի յաջորդաց նորա, նախանձաւորութեամբ պահիւր ի տեարց աշխարհին և ի նոյն իսկ եպիսկոպոսաց պահանջիւր յաթոռակալել իւրեանց. և զի յառաջ քան զԺԱ դար անկեալ էր և Գողթն ընդ նոցին վերատեսչութեամբ, հաւաստէ չրջարեական թուղթ Սարգսի կաթողիկոսի Ա., յամի 1006, զի ոչ միայն ի վիճակ Սիւնեաց եպիսկոպոսին Թուէ ուրոյն ուրոյն զՈրդուտոս, զԱզուլիս և զվանանդ, որ Գողթնեաց գաւառսն է մասն, այլ և յաւելու դարձեալ. « Եւ յիշնջակայ » գաւառին՝ Բստեձոր, զոր Գողթնեցիքն էին առեալ, » նա և զվանանդ և զԳողթն բոլորովին, որոց Թէպէտ » եպիսկոպոս լեալ էր և կայր սակաւ վայրացն, այլ ի » ներքոյ Սիւնեաց նուաճեալ էր »:

Արդ ի Լուսաւորչէ հետէ մօտ ց' Թ դար առանձնակ եպիսկոպոս Գողթան յիշեալք յամս 303, են

- Մովսէս Տարօնացի
- Սահակ Տարօնացի
- Ջրուանդատ
- Ստեփանոս
- Յովհաննէս
- 500 = 550 Մուշէ
- 550 = 580 Անաստաս
- 594 Սինոն
- 628 Մարտիրոս
- 768 = 773 Եսայի (յետոյ կաթողիկոս).

Եթ դարէ գրեաթէ ց' ԺԴ ոչ յիշին եպիսկոպոս Գողթան, յայտ է զի ընդ մետրապոլիսօք Սիւնեաց գալով գրաւեալ. այլ յայնմհետէ դարձեալ երեւին անկախք ի Սիւնեաց կամ ի Տաթեւոյ Թեմէն, և են ծանօթքն ինձ, ընդհատ ժամանակօք,

- 1280 — 1300. Սարկաւագ
- 1424 Տէրունական
- 1669 Խաչատուր
- 1680 Պետրոս 1.

1 Սա յետ մահուան Յակոբայ Գ կաթողիկոսի՝ հրաւիրակ առաքելաց յարեւելս առ Եղիազար և երբ յաթոռն կաթողիկոսական:

- 1691 — 1712 Թովմաս վանանդեցի
- 1708 Թովմաննէս
- 1737 Թովմաս
- 1740 Թովմաննէս
- 183.. Սիմէոն վերջին եպիսկոպոս.

զի յամի 1837 բարձաւ աթոռ եպիսկոպոսութեանն և կարգեցան լոկ առաջնորդք որոց յետինք են ,

- 1870 Յակոբ վարդապետ
- 1871 կարապետ վարդապետ
- 1881 Անանիա վ. Համազասպեանց
- 1883 Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան :

Ի սկիզբն ԺԸ դարու ի ձեռնարկոց կոնդակի Ազեքանդրի կաթողիկոսի (յամի 1708) յետ Արտագուարքեպիսկոպոսին՝ առաջին գրի Գողթան արքեպիսկոպոսն Յովհանն, նախ քան զԲլնոյն իսկ :

Ի կրօնական դէպս գաւառիս՝ յետ քարոզութեան առաքելոյն Բարդղղիմեայ և Ս. Լուսաւորչին, արժանայիշատակ է լրումն գործոց նոցին ի ձեռն հոր դպրութեան մերոյ Ս. Մեսրոպայ, որ երկիցս լուսաւորեաց զսոյն, նախ յառաջ քան զգիւտ հայերէն տառիցս, իբրև մեծնասէր աստուածախոհ անձն մեկուսացեալ այսր. ուր տեսեալ զի տակաւին մնայ « զօղիալ աղանդն հեթանոս » սական, թաքուցեալ յաւուրն Տրդատայ մինչև ցայն » ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարի թագաւորութեան Արշակունեաց. զայն երարձ օգնակա՝ նութեամբ իշխանի գաւառին, որում անուն էր Շարիթ. ուր նշանք աստուածայինք լինէին, որպէս աւր Սրբազն Գրիգորիւ, հարածական լեալ զեւք մարմնաւոր տեսչեամբ ի կողմանս Մարաց » : Յետ գիւտի հայերէն տառիցն վերադարձաւ Մեսրոպայ աի նախնի աշակերտեալն Գողթն », որպէս ասէ Մ. Խորենացի, կամ « յառաջին դաստակերտն իւր », ըստ Կորիւնի, և կրկին աւետարանեալ « կարգէր յա՛ւննայն զիւղս գաւառին » դասս սրբոց վանականաց. որում և հասեալ ժամանեալ » հայրաբարուն Գոտայ՝ որդւոյ Շարաթայ, առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն՝ իբրև հաւանարի սրբւոյ՝ վարդապետն անէր » : Կախ քան զվաներդ՝ յառաջնում գայտեանն հաստատեալ էր վանս մի, որ յիւր անուն կոչեցաւ յետոյ ծեղմամբ կամ համառաստեղով Մասրեւան, ուր և կամէին ոմանք հանգուցանել զմարմին նորա, բայց ոչ եթող վահան Ամատունի, այլ յիւրականն տարաւ յՕշական : — Ի նոյն տեղիս առանձնութեան և քարոզութեան Ս. Մեսրոպայ՝ առանձնացաւ առ վայր մի և Աղան արծրունի առաքելնակրօն աշակերտ Ս. Սահակայ և ուսուցիչ Ղազարայ Փարպեցւոյ : Զարմանալի իմն հանդիպութեամբ իբր 13 դարուք յետ նոյա՝ ի նոյն սահմանս քարոզէր և մի յերկից զլուսաւոր հարց նորոգողաց անապատական կենաց ի Հայս, ի սկիզբն ԺԵ դարու, Պօղոս վարդապետ, որ և հարածանս ոչ սակաւ կրեալ՝ ստիպեցաւ յետոյ երթալ ի մեծ Անապատն Տաթեւոյ :

131. Երկրորդս այս գալուստ Մեսրոպայ ի Գողթն, թէպէտ և ոչ անմասն ի կրօնական կրթութենէ, այլ էր յաւետ վասն գրականութեամբ զնոյն յապահովելոյ և

անեցուցանելոյ. զի յայսմ եւս մասին առանձնաշնորհութիւն և սեփական կնիք ունի երկիրս այս, առաւել քան զայլ կողմանս աշխարհիս մերոյ, ընդ հեթանոսական պաշտամանց՝ պահելով պնդութեամբ և զդիցազնական աւանդութիւնս նախնեաց, և զարիական գործս քաջաց և զթագաւորաց Հայոց, զանուանեալ Երգս բռնեցաց և զվ իպասանոյրիսնս, զոր յայլոց և զոր յիւրեանց բնիկ բանաստեղծից յօրինեալս. զորս բազում անգամ յիշէ և ի վկայութիւն կոչէ պատմահայր մեր Խորենացի Գլխաւոր երկու վիպասանութիւնք երեւին առ նոսա պահեալք, կամ երկու մեծ դրուագք ի միում երկարաշար վիպասանութեան. այսինքն են՝ Գործք Տիգրանայ Հայկազնոյ, կամ, Պատերազմն ընդ Ա ժողահակայ, և գործք Արտաշիսի Բ, և որ առ նոցին ժամանակք. յետինս թերեւս նորին իսկ Արտաշիսի որդւոյն Վրուրի բանաստեղծի էր հիւսուած : Ի սոսա ակնարկել թուի և Բուզանդ մեղադրելով զՀայս, զի սիրելով և երգելով զնախնեացն իւրեանց Վ իպասանութիւնս՝ Թուլանային ի քրիստոսական կարգաց, յետ մահուան Մեծին Ներսիսի, և չէ հեռի ժամանակն յառաջնոյ քարոզութենէն Մեսրոպայ. զորս « պահեցին ախորժելով իմն (ասէ Խորենացին), որպէս » լսեմ, մարդիկ կողմանն գինաւէտ գաւառին Գողթան », և համառօտէ զնիւթ բանից Երգոցն. յորոց էր անշուշտ և քաջածանօթ հատուած երգոյն զվահագնէ, Երկնէր երկին, երկնէր երկիր. զոր « երգելով ու » մանց բամբուսի՝ լուսք իսկ ակառնք մերովք », ասէ : Ի վիպասանութեանց աստի թուի և երկտող բանն բաղձանաց բարեկենդանութեան Արտաշիսի, ի ժամ մահուն, և տեսանել սակաւին « զծովն ծխանի և » զառաւօտն Նաւասարդի, զվազելն եղանց և զվազել » եղիբուաց » : զոր ի ԺԱ դարու քաջիմացն Գրիգոր Մագիստրոս աւանդեաց մեզ, ոչ գիտեմ յումմէ յառաջնոց մատենագրաց մերոց առեալ : — Բայց մեր թողեալ զհրապուրական իրացս քննութիւն, շատ համարեցուք ճանաչել սովիմք զբարս և զախորժակս Գողթնեցեաց, ոչ պակաս քան զքաղցր գինոյն իւրեանց՝ զքաղցրագոյնն պաշտելով նուագս մտաւորականս, Որչափ ինչ հատուկտիր բանք երգոցդ գտանին առ երկոսին մատենագիրս յիշեալս, յընտիր կամ ի պարզ հայկական բարբառ են, և ոչ ի ումկական լեզու Գողթնեաց, որ՝ որպէս և յառաջն յիշեցաք՝ վկայի ոչ սակաւ զանազանել յայլոց հայերէն խօսից. հին քերականք մեր, յորոց և Մագիստրոս և որք յետ նորա, յեզերական բարբառս Հայոց դասեն և զՍիւնեցիին, այլ ոչ և զԳողթնացիին, որ քան զայլ կողմանցն Սիւնեաց օտարանայ յԱյրարատեան լեզուէն. թէպէտ և առաւել ի ծեղանաց բառիցն և ձայնին է օտարութիւնն, բայց է սակաւ ինչ և քերականական ոճով կամ բացատրութեամբ. որ ոչ վրիպեցաւ ի յուշոյ կամ ի լրոյ մերձաւորացն իսկ վայրք, որպիսի է Մլխիթարն Ապարանեցի, ի սկիզբն ԺԵ դարու. որ ասէ ուրեմն զայս բան վարկպարագի. « Ի Գողթն գաւառ միտտ ասեն, Անս » գան հինգ անձինք, և զնացին այսքան անձինք. կամ, » նստան կամ կերան, եւ այլն. և, Այդ հանդերձդ կամ » այգիդ ո՛ր անձին է. և պատասխանեն, իմ, չո, նորա »

» անս, դմս, սոցա. որ և սղբա զանձն նշանակեն՝ ըստ  
 » քերթողաց »: Նա և օտարազգեաց լեզուաքնին բա-  
 նասիրաց Եւրոպէացեաց՝ նորալուր թուեցաւ բարբառ  
 նորոց Գողթնեաց, իմա՛ Ագուլեցեացն, որոց վաճառու-  
 կանք յ'ԺԷ և ԺԸ դարս յաճախէին յայլ և այլ շահա-  
 ստանս արեւմտեան պետութեանց, որպէս յիշեցի և ըզ-  
 կնի ի տեղագրութեանս: — Բարբառ Ագուլեցեաց յա-  
 տուկ և հետաքննելի անուամբ Զօկ կոչի, զոր իմաստա-  
 սիրեն ոմանք ի Զօհաք անուանէ (որ է Աժդահակ) ըստ

Պարսից, իբրու ի սերնդոց նորին խառնուրդ զօլ Գողթ-  
 նեաց: Սարգիս Սարգսեան՝ որ յամի 1883 հրատարակեաց  
 ի Մոսկուա Լեզուաբանական հետազոտութիւն զԱգուլե-  
 ցեաց բարբառոյ, Զօկերի լեզուն, և առ որ առաքեմ զգիւ-  
 փաքողս ծանօթութեան սորին, հաւանի իմն կարծեաց  
 Պատկանեանի, եթէ Զօկ իցէ հայցական հոլով Զօկ կամ  
 Օկ դերանուան, զոր յաճախ կրկնելով նոցա ի խօսս, յօ-  
 տարաց նոնպէս կոչիցին հենգնօրէն: Ոչ յատուկ Ագու-  
 լեցեաց բնակիչքն միւսյն՝ այլ և Յղնեցիք և այլք ոմանք



84. Մեծ Սօսի յՍրբոհաստ (Տես յէջ 318).

մերձաքնակք՝ վարին այդու բարբառով. որոյ մերձաւոր  
 իմն համարի գրիչդ յիւեալ՝ զբարբառ Զեյթունեաց, ծա-  
 գէ ի ծագ աշխարհիս Հայոց հեռաւորաց՝: Կարծեցին ու-

մանք կամաւ ծեքել նոցա զբառս և զբանս, առ տնիմա-  
 նալի լինել այլազգեաց՝ անբարեկամաց և ազաւհողաց  
 ընչից և վաճառուց իւրեանց. նա և յականջս ազգայնոց

1 Երեւելք ի գերան Գանջ Արտան լուսի, որիչ որիչ բարբառ-  
 ուս համարի զՍիւնեաց, զՋուղայեցեաց և զԱգուլեցեաց. և է դէ-  
 մաց սոցին և է բերանոյ՝ գովէ զբարբառն, երգով.  
 « Խօսի լեզուն՝ մոյն լեզու ա.  
 Մեծիւ (ժուռ) մեռ խօսուղ Զուլեցին ա,  
 Որն տակն՝ Գանջ Կօլման ա.  
 Լեզվի քանդուղ Վափանցին ա:  
 Մեր վիւրաթի լեզուն պօրզ ա.

Աման լեզու պօրզ խօսիւ ա.  
 Քօրդի, Ֆարսի, թա Ֆրանդի ա.  
 Հէնց երդիս, թա իւր լեզուն ա »:  
 2 Յերկուս մասունս բաժանեալ է զբառս Սարգիս Ա մասն  
 135 էջք, յեա պատմական տեղեկութեանց ինչ՝ Գերբառնական  
 է. երկրորդն (72 էջք) Ժողովածու անուանեալ, սյգդիսի իմն է  
 արդարեւ պէտքէս տսից և բանից ի Զօկ բարբառ, ոչ սակաւ երկրոր  
 ծանօթութեամբք:



օտարալուր և արուական իմն հնչէ բարբառն, վասն որոյ և լեզուակորոյսք կոչին Ագուլեցիք յերգ մի աամկական Նազելոյ կամ Նազիլայի ուրեմն Մեղրեցոյ: Այլ զի-արդ և իցէ լեզուն, խօսողքն հանճարեղք և բանագտակք վկային յաւանդութեանց անտի նախնեաց՝ զոր ի վերոյ յիշեցաք. և թէ չքոյր նոցին այլ պարծանք՝ արժանաւոր էր յիշատակի երկայնամիտ լան և աջողութիւն երկոցուն վանանդեցեացն, Թովմայի եպիսկոպոսի և քեռորդայ նորա Ղուկասու, որք ի վերջին քառորդի Ժէ դարու և յառաջնունն ԺԼ ին՝ բազում մատենա տպագրութեամբ ի լոյս ընծայեցին յԱմսդերտամ քաղաքի Նոյանտիոյ, յառաջացուցեալ զսկզբնաւորեալն անդ յՈսկանայ վարդապետէ:

133. Յետ բարձման հայրենի սայազատութեան Գողթնեաց՝ բարձաւ և անուն նորին ըստ գաւառական տրումանց, և փոխանակեաց զայն Որդուատ, զէթ առ սյլազգիս, յորոց ամիրայ ոմն նստէր ի քաղաքաւանի անդ և նուաճէր գրովանդակ հինն Գողթն. և յետ այնր ի Պարսից և յՕսմանեանց տիրապետութեան, և ապա ի Ռուսացն եւս, մինչև ցայսօր յայս անուն ճանաչի և կոչի գաւառս, վիճակակից կուսակալութեան Նախճաւանի. բայց Պարսք կոչէին զայն և Էզատ-Ճիրան, ըստ մեզ Ազատ-Գիրան, առ որ ընդ հուսկ դարձցի բանս: Թէպէտ և ոչ ընդարձակ երկիր և գետակք ոչ հզօրք ի նմին, այլ մէն միոյ ձորք և ձորակք (որ ի հնունն անշուշտ փոքրիկ գեհք և բաժինք էին իւրաքանչիւր տանուտեւրամբք), ընդ իշխանութեամբ այլազգեաց ի զանազան վիճակս գատուցեալ կային, և ցայսօր իսկ ճանաչին ի հինգ մասունս. որոց առաջին՝ սկսեալ յարեւելից (ուրտեղազբութիւնս դադարեաց յԱրեւիս), և զիսաւոր ըստ քաղաքական տեսութեան՝ է Որդուատ, իւրով գետակաւ. Բ. Ագուլիք իւրայովն. Գ. վիճակն կոչի Տասղին, այլ ըստ մեզ ճահագոյն է կոչել վանանդ և վանանդաձոր վասն անուանի գեօղաւանին, կամ գուցէ պանծագոյն եւս Տրունիք, որոյ պատճառ ծանուցի ի կարգին: Դ. վիճակն կոչի այժմ Չինանաք որ ընդ մէջ է վանանդայ և Բատաձորոյ, և կոչելի է Յղնա: Ե. վիճակն կոչի արդ Պելել, այլ առ նախնիս գտանի ընդ այլոյ գեղ՝ գետովն հանդերձ կոչեցեալ Բատաձոր, և Թուի ի նախնազայն ժամանակս յատկապէս Ազատ կոչեցեալ և Գիրան, զի ցարդ գետն իւր կոչի Գիրան, և յայն անուն կայ եւս աւերակ տեղի:

Ըստ հնգից այսօրիկ տրուելոց վիճակաց՝ կարգեցի տեղագրութիւնս. յիշելով վասն գիւղորայիցն, զի Որթելանն զԵրնջակ և զԳողթն մի գաւառ գրէ և 30 գեօղից անուանս միայն նշանակէ. որոց՝ զի երիւր մասն միայն ծանօթ է մեզ դրիւք, անգիտանամք որոյ յերկուց գաւառացն պատշաճիցին մնացեալ քսանեքին անծանօթքն. և միահամուռ կարգեմք աստ զամենայն, հանդերձ տրուվքն յեկեղեցի, ըստ այլոց գաւառաց Սիւնեաց, ի փակագծի նշանակելով զծանօթիցն գաւառ. զայս եւս առ-

նելով յայտ, զի յօրինակս ինչ գրոց պատմութեան նորին՝ միայն Երնջակ գաւառ կարգի, տասամբք հետք գիւղովք-

Բուստ	13 (Գողթն)
Տելի	13 (Նոյն)
Ամասրոյ վանք <sup>1</sup>	13 (Նոյն)
Նորակերտ	13
Ողոհի	13 (Գողթն)
Թեղեակ	13
Գունդավանք	8
Ոսկեձոր միւս <sup>2</sup>	13
Անգուղիք	13
Նորագիւղ	13
Արեւէք	8
Շաղկերտ	8 (Գողթն)
Ս. Գէորգ <sup>3</sup>	(Երնջակ)
Ջաւաչրի վանք	13
Ապարանք	13
Վան	13 (Գողթն)
Դաղ	13 (Երնջակ)
Գոչնն	8 (Գողթն)
Ոփիք	8
Մայրեակ	13
Վանանդ	13 (Գողթն)
Ագուլիք	13 (Նոյն)
Քէրէկունիք <sup>4</sup>	13
Ամառաշէն	10
Ողդաւ կամ Ողդու	13
Քուովնա	8
Ապրակունիք	13 (Երնջակ)
Քարկոփ	13
Բերդիկ	13 (Երնջակ)
Ռապատ	13

Ջատ յայսցանէ յիշին սոյնքան եւս գեօղք ի գիրս և յարձանս՝ ի բաժնի Գողթան և ի նոր վիճակագրութիւնս,

Թագաւորամարգ <sup>5</sup>	Գետցիկ
Դաշտ. Ստորին Ագուլիս	Գեղերեցիկ
Յղնա	Նունից
Ռամիս	Որդուատ
Բուհրուտ	Վաղաւեր
Փառակա	Փառակերտ
Շրջու	Փորադաշտ
Աղաբեցիկ	Մցգուն
Դաստակ	Աստուածածնի գիւղ
Տրունիք	Բազմաուի
Տնակերտ	Գանձի
Օրովանիս, Ունուս ?	Դեղսար
Քաղաքիկ	Սալ
Անապատ	Պելել
Անդամէջ	Խուրս
Վելուն ?	

1 Մասրեւանն ըստ նորոց:  
 2 Յայտ ուրեմն է զի կայր և այլ Ոսկեձոր գիւղ:  
 3 Ս. Գէորգայ կարին նշանակի «Բ գահեկան և 8 գրամ»:

4 Ըստ այլ Օրինակի Բէքերունիք:  
 5 Քննելի ուր, զի ոչ գտանեմ ի Յիշատակարանս, և Թուի նոցն ընդ աւերն Տարգամարդի որ յԵրնջակ:

» անա, դնա, սոցա. որ և սորա զանձն նշանակեն՝ ըստ » քերթողաց »: Նա և օտարազգեաց լեզուաքնին բանասիրաց Եւրոպէացւոց՝ նորալուր թուեցաւ բարբառ նորոց Գողթնեաց, իմա՛ Ազուլեցեացն, որոց վաճառուկանք յ՛ԺԷ և ժԸ դարս յսճախէին յայլ և այլ շահաստանս արեւմտեան պետութեանց, որպէս յիշեցի և ըզկնի ի տեղագրութեանս: — Բարբառ Ազուլեցւոց յատուկ և հեաաքննելի անուամբ Զօկ կոչի, զոր իմաստասիրեն ոմանք ի Զօհաք անուանէ (որ է Աժդահակ) ըստ

Պարսից, իբրաւ ի սերնդոց նորին խառնուրդ Կոլթնեաց: Սարգիս Սարգսեան՝ որ յամի 1883 հրատարակեաց ի Մոսկուա Լեզուաբանական հետազոտութիւն զԱզուլեցւոց բարբառոց, Զօկերի լեզուն, և առ որ առաքեմ զփափաքողս ծանօթութեան սորին, հաւանի իմն կարծեաց Պատկանեանի, եթէ Զօկ իցէ հայցական հոլով Զօկ կամ Օկ դերանուան, զոր յաճախ կրկնելով նոցա ի խօսքս, յօտարաց նոնպէս կոչիցին հենգնորէն: Այլ յատուկ Ազուլեցեաց բնակիչքն միայն՝ այլ և Յղնեցիք և այլք ոմանք



84. Մեծ Սօսի յՍրբոստատ (Տես յէջ 318).

մերձաբնակք՝ վարին այդու բարբառով. որոյ մերձաւոր իմն համարի գրիչք յիշեալ՝ զբարբառ Զեյթունեաց, ծագէ ի ծագ աշխարհիս Հայոց հեռաւորաց՝: Կարծեցին ու

մանք կամաւ ծեքել նոցա զբառս և զբանս, առ անիմա նալի լինել այլազգեաց՝ անբարեկամաց և ազաւհողաց ընչից և վաճառուց իւրեանց. նա և յականջս ազգայնոց

1 Երեւելք ի գերան Գանջ Աբու-Կան լեզուի, որիչ որիչ բարբառսն համարի զՄիւսեաց, զԶուլեցեաց և զԱզուլեցեաց, և ի դէմաց սոցին և ի բերանոյ՝ գովէ զբարբառն, երգով.  
 « Խօսի լեզուն՝ մոյն լեզու ա.  
 Մեծիւ (ժուռ) մօռ խօսուղ Զուլեցին ա,  
 Որն ասեին՝ Գուլէ Կօլման ա.  
 Լեզվի քանդուղ Վափոնցին ա:  
 Մեր վիշաթի լեզուն պօրզ ա.

Աման լեզու պօրզ խօսիւ ա.  
 Քօրդի, Տարսի, Թա Տրտնդի ա.  
 Հէնց Նիզիս, Թա իւր լեզուն ա »:  
 2 Յերկուս մասունս բաժանեալ է գրուած Սարգսի և Ա մասն 135 էջք, յետ պատմական անդեկութեանց ինչ՝ Քերականական է. երկրորդն (72 էջք) Ժողովածու անուանեալ, սյաղխի իմն է արդարեւ պէտքէս ասից և բանից ի Զօկ բարբառս, ոչ սակաւ երկուր ծանօթութեամբք:

օտարաւուր և աղուական իմն հնչէ բարբառն, վասն որոյ և լեզուակորոյսք կոչին Ագուլեցիք յերգ մի աւմիական Նազելուոյ կամ Նազիլայի ուրեմն Մեղրեցւոյ: Այլ զի-արդ և իցէ լեզուն, խօսողքն հանճարեղք և բանագտակք վկային յաւանդութեանց անտի նախնեաց՝ զոր ի վերդ յիշեցաք. և թէ չքոյր նոցին այլ պարծանք՝ արժանաւոր էր յիշատակի երկայնամիտ լան և աջողութիւն երկոցուն վանանդեցեացն, թովմայի եպիսկոպոսի և քեռոր-դւոյ նորա Ղուկասու, որք ի վերջին քառորդի ժէ գարու և յառաջնունն ժ ին՝ բազում մատեանս տպագրու-թեամբ ի լոյս ընծայեցին յԱմսդերտամ քաղաքի Հոլան-տիոյ, յառաջացուցեալ զսկզբնաւորեալն անդ յՈսկանայ վարդապետէ:

132. Յետ բարձման հայրենի սայազատութեան Գողթ-նեաց՝ բարձաւ և անուն նորին ըստ գաւառական տրու-մանց, և փոխանակեաց զայն Որդուատ, գէթ առ սյլ-ազգիս, յորոց ամիրայ ոմն նստէր ի քաղսքաւանի անդ և նուաճէր գրովանդակ հինն Գողթն. և յետ այնր ի Պարսից և յՕսմանեանց տիրապետութեան, և ապա ի Ռուսացն եւս, մինչև ցայսօր յայտ անուն ճանաչի և կո-չի դաւառս, վիճակակից կուսակալութեան Նախնաւա-նի. բայց Պարսք կոչէին զայն և Էզատ-ձիրան, ըստ մեզ Ազատ-Գիրան, առ որ ընդ հուսկ դարձցի բանս: Թէպէտ և ոչ ընդարձակ երկիր և գետակք ոչ հզօրք ի նմին, այլ մէն միոյ ձորք և ձորակք (որ ի հնունն անշուշտ փոքրիկ գեհէք և բաժինք էին իւրաքանչիւր տանուտե-րամբք), ընդ իշխանութեամբ այլազգեաց ի զանազան վի-ճակս զատուցեալ կային, և ցայսօր իսկ ճանաչին ի հինգ մասունս. որոց առաջին՝ սկսեալ յարեւելից (ուրտեղա-գրութիւնս դադարեաց յԱրեւիս), և զխաւոր ըստ քա-ղաքական տեսութեան՝ է Որդուատ, իւրով գետակաւ. Բ. Ազուլիք իւրայովն. Գ. վիճակն կոչի Տասդին, այլ ըստ մեզ ճահազոյն է կոչել վանանդ և վանանդա-ծոր վասն անուանի գեօղաւանին, կամ գուցէ պանծա-զոյն եւս Տրունիք, որոյ պատճառ ծանուցի ի կարգին: Դ. վիճակն կոչի այժմ Չինանաք որ ընդ մէջ է վանան-զայ և Բատաձորոյ, և կոչելի է Յոնա: Ե. վիճակն կոչի արդ Պելել, այլ առ նախնիս գտանի ընդ այլոյ գեղջ՝ գետովն հանդերձ կոչեցեալ Բատաձոր, և թուի ի նախ-նագոյն ժամանակս յատկապէս Ազատ կոչեցեալ և Գի-րան, զի ցարդ գետն իւր կոչի Գիրեան, և յայն անուն կայ եւս աւերակ տեղի:

Ըստ հնգից այսոցիկ տրուելոց վիճակաց՝ կարգեացի տեղագրութիւնս. յիշելով վասն գիւղօրայիցն, զի Օրբե-լեանն զԵրնջակ և զԳողթն մի գաւառ գրէ և 30 գետից անուանս միայն նշանակէ. որոց՝ զի երիւր մասն միայն ծանօթ է մեզ դրիւք, անգիտանալք որոյ յերկուց գա-ւառացն պատշաճիցին մնացեալ քսանեքին անծանօթքն. և միահամուռ կարգեմք աստ զամենայն, հանդերձ տը-րովքն յեկեղեցի, ըստ այլոց գաւառաց Սիւնեաց, ի փա-կագծի նշանակելով զծանօթիցն գաւառ. զայս եւս առ-

նելով յայտ, զի յօրինակս ինչ գրոց պատմութեան նորին՝ միայն Երնջակ գաւառ կարգի, տասամբք հւեթ գիւղովք՝

Բուստ	13 (Գողթն)
Տելի	13 (Նոյն)
Ամասրոյ վանք <sup>1</sup>	13 (Նոյն)
Նորակերտ	13
Ողոհի	13 (Գողթն)
Թեղեակ	13
Գունդավանք	8
Ոսկեծոր միւս <sup>2</sup>	13
Անգուղիք	13
Նորագիւղ	13
Արեւէք	8
Շաղկերտ	8 (Գողթն)
Ս. Գէորդ <sup>3</sup>	(Երնջակ)
Ջաւաչիւր վանք	13
Ապարանք	13
Վան	13 (Գողթն)
Գաղ	13 (Երնջակ)
Գոչնն	8 (Գողթն)
Ոփիք	8
Մայրեակ	13
Վանանդ	13 (Գողթն)
Ազուլիք	13 (Նոյն)
Քէրէկունիք <sup>4</sup>	13
Ամառաշէն	10
Ողդաւ կամ Ողդու	13
Քոլովնա	8
Ապրակունիք	13 (Երնջակ)
Քարկոփ	13
Բերդիկ	13 (Երնջակ)
Ռապատ	13

Ջատ յայսցանէ յիշին սոյնքան եւս գեօզք ի գիրս և յարձանս՝ ի թաժնի Գողթան և ի նոր վիճակագրու-թիւնս,

Թագաւորամարգ <sup>5</sup>	Գետցիկ
Դաշտ. Ստորին Ազուլիս	Գեղերեցիկ
Յոնա	Նունից
Ռամիս	Որդուատ
Բուհրուտ	Վաղաւեր
Փառակա	Փառակերտ
Շրջու	Փորադաշտ
Աղահեցիկ	Մցգուն
Դաստակ	Աստուածածնի գիւղ
Տրունիք	Բազմաւի
Տնակերտ	Գանձի
Օրովանիս, Ունուս ?	Դեղսար
Քաղաքիկ	Սալ
Անապատ	Պելել
Անդամէջ	Խուրս
Վեուն ?	

1 Մարեանն ըստ նորոց:  
 2 Յայտ ուրեմն է զի կայր և ուլ Ոսկեծոր գիւղ:  
 3 Ս. Գէորդայ հարկն նշանակի «Բ գահեկան և 8 դրամ»:

4 Ըստ ուլ Օրբեակի Բէքերուճի:  
 5 Քենեկի ուր, զի ոչ գտանեմ ի Յիշատակարանս, և թուի նոցն ընդ աւերն Տարգամարգի որ յԵրնջակ:

## Ա. ՈՐԴՈՒԱՏ = ԳՈՂԹՆ

133. Վիճակն Որդուատայ՝ հարաւային արեւելեան մաւրն է գաւառին Գողթնեաց, սահմանակից Մեղրաձորոյ, ընդ մէջ բարձրաբերձ լեռանց Գարուայ, ձորոյն Ագուլեաց և Երասխայ, եռանկիւն իմն երկիր գրեթէ հաւասարակողմն երկուս, ունելով գետակս, միզ Որդուատայն և միւս ընդ մէջ նորին և Կարճեւանայ. երկիրն համարէն լեռնավայր է և առապար, այլ ուր և մշակելի՝ քաղաքեր է: Փանգի ի գլուխ այլոց վիճակաց գաւառին Գողթան կայ սա, ի բազում դարուց հետէ յորմէ անկաւ ընդ այլազգեաց իշխանութեամբ, հարկ է թէ և ի հնումն գլխաւոր շէնն կամ ոստանն ի սմին էր, այլ ոչ Որդուատ, որ առ մերովք ազգային պայազատօք՝ գիւղ մի եւեթ ճանայի. և ի դէպ է խնդրել աստ գրեթէ յայր բազմաշնորհ գաւառին զԳողթն, թէ և ի գիրս նախնեաց յայս անուն միշտ գաւառն յիշի, և ոչ շէն աւանձնակ. այլ զի էր և այն՝ ակնբերու իսկ կայ ցարդ յեզերն Երասխայ իբրև շորիք մղոնօք յելից հարաւոյ Որդուատայ և հնգիւք ի հարաւոյ Մ. Կարճեւանայ, Գեայիք կոչեցեալ ըստ այլազգեաց. այլ, աւաղ, անշքեցեալ, անծանօթացեալ, և Թաթարաց եզեալ բնակութիւն իբրև տանց երեսնից՝ ոչ յումեքէ կարծեմ ջննեալ, եթէ գուցէ մնացուած ինչ ի դաստակերտաց և ի գրօսարանաց խրախաւսէր և երգասէր տերանց Գողթան, կամ եկեղեցեաց՝ Իոսանակելոց զմեհեանս վիպասանից գաւառին այնորիկ: Բան պատմին Սիւնեաց վասն գալստեան առաքելոյն Բարդուղիմեայ ի Գողթն, և չինելոյ անդէն ի տեղւով բնակութեան իւրոյ և աշակերտացն՝ զՏեառն ընդ առաջ եկեղեցեակ, Թուեցուցանէ աստ իսկ լինել զվայրն. բայց զի անգէն և անդ յՈրդուատ փոխէ զբանն և ի մնասաբեր ջուր նորին, ընդ երկրայութեամբ մնայ. և ոչ գտանելով ստոյգ և վաւերական վկայութիւն զտեղւոյս փոքրկացելոյ, միայն զհին հանդէս տերանց Գողթան ընդ աղօտ կարծեօք նշմարեմք, զերգս վիպասանիցն, զգովեսոս գուսանացն և զբարբառս բամբուանցն. այլ առաւել եւս սխորթելի են մեզ և սրտաշարժ՝ հեկեկանք նորանշան քաղազին և գողարիկ գեղեղանք վիհագնոյն. եղբրական դէպք և նահատակութիւն Գողթնեացն աշխոյժ ի խեցողի Ս. Վահանայ, և սրբազան ոգբերգութիւն սիրայնոյն. մի ի յաւերժայիշատակ դիպաց պատմութեան

ազգիս, որ թէ և ըստ փափկագոյն մասին՝ աւանդութիւն լով իցէ, ի հազարամեայ դարէ հետէ բերան ի բերանոյ, մանաւանդ թէ սիրտ ի սրտէ փոխանցեալ հասեալ մինչեւ առ մեզ, տակաւին և այնպէս ընդունելի և պաշտելի է. և ոչ կրտեր քան զկորուսեալ և զանծանօթ վիպասանութիւնս հեթանոս երգչաց մերոց՝ գրելի են հինգ տունք շարականին ի նոյն ի վահան Գողթնացի, զոր տանն քեզ նորին արտաբղխեալ. և անհնար է թէ չիցէ քոյր կամ հարսն՝ սիրայինն այն, զմայլեալ ի ձայնս ողբոց սիրեցելոյն՝ քան յերգս երաժշտականաց. թէպէտ և արիացեալ վսեմացեալ, գերազանցեալ քան զամենայն քոյր և հարսն. քանզի և զգալով և զարհուրելով իսկ ընդ խոտամեր նորա հանութիւնսն, եւս առաւել ընդ արիւններանգ նահատակութիւն նորին, համայն և այնպէս չառնու յանձն գիշանել յանզուսպ դրդմանց սրտին, և յօրինել երգս զՂականս. այլ զի անպայման էր ցաւն և գորովն և սաստկութեամբ և օրբութեամբ, առ ոտն հարեալ զտխրականսն՝ ընտրէ նուագս սհոգեւորս և ուրախարարս, յորդորականս և ներբողեանս... սս... ստուածարեալ և ոգեշահ:» շին պատմութիւնք ազգիս սիրեն երբեմն ընծայել մեզ զոյգս հարազատաց սիրելեաց եղբոր և քեռ՝ (որոց սուսջինք՝ Տիգրան և Տիգրանուհի հայկազունք), և բաղդիւ իմն թուի սոցին իսկ Գողթնեաց վիպասանից նուագեալ, և Գաւառի ուրումն ի նոր ձեւ յեղանակեալ զնոցին գորովանս, յորմէ և առ զըս երեք ոչ դիւրիմացս՝ ածեալ ի վկայութիւն՝ հին քերականից մերոց, յիշատակողս մահուան Տիգրանուհեայ մեկնեն, որպէս ասէ ոմն. «Այնպէս լաց ասէր Իողարն,» որ է շարական ողբերգական... որ զՏիգրանայ միտքն՝ ո զինչ ի միտքն ցաւ և կակիծ էր և կայր՝ ցուցանէր» իսկ աստանոր քանի՛ այլազգ ներգործէ քրիստոսաշնորհն ողբերգուհի, ի վերայ սեւայ սզոյն անթաւամս սփռելով վարդս ուրախութեան... բայց և ի դասաւորելն իսկ զնահատակն իւր սիրելի ընդ անմարմնականսն՝ ոչ մոռանայ զի ի մարմնաւորացս աստի էր «Գողթնեացն իշխեցող: ի Ռուծափ քաղաքի Միջագետաց յափունս Եփրատայ կատարեալ վկային՝ անդէն և ամփոփեցաւ ի քրիստոնէից տեղւոյն, ի փոքու վկայարանի առ մեծաշէն եկեղեցեալ. այլ եթէ և աստանօր առ մշտամը-

1 Շոքեմ տունս 28 դրէք, և ոգիս 104. իսկ յամի 1873 հասնէին 168 ոգիք՝ յ'32 տունս:  
2 Այսօրիկ են սողքն թերիս աղաւաղեալք ի գրչաց.


«Նւարգ ներգործող ի միտան երեւիւր առ խորհուրդս փողբերձ՝ Մեծողայ Տիգրանայ՝ գեղտնիք Տիգրանուհի իւր, ներածեալ կոլբաղ, նա և աղամբա աշխարհածուհի:»

առնչ ալեօք Երասխայ կանգնեաց նմա շիրիմ կամ վը-  
կայարան կամ արձան յիշատակի՝ նորն այն Խոսրովի-  
գուխտ, լռեն զայն պատմութիւն և աւանդութիւն-  
բայց հաւանին միտք և մանաւանդ սիրտ:— Հաճիմ հա-  
ւանել եւս զի կայր անգանօր և դաստակերտ մի հօր  
նահատակին և քեան սիրայնոյ, Դղեակ Խոսրովու վը-  
րակաշեալ, յորմէ և շրջակայ վայրքն՝ զի ի կոնդակի ու-  
րեմն Ա. Խաչկայ կաթողիկոսի, ի կարգի գաւառաց կամ  
վիճակաց (յարեւելից յարեւմուտս դասելով), յետ Մա-  
րանգայ՝ կարգի անփանօթ Շիրին Թաղն, ապա ընդ մէջ  
սորա և Ազատ-Գիրանայ՝ Դղեակն Խոսրովու, յետ

Գիրանայ՝ Չուղա և Աստապատ:— Ախորժեմ, գար-  
ձեալ, յայս ձգել զբան երգչի կամ գանձասացի միոյ, որ  
ասէ զվահանայ.

« Տեսեալ ըզՊողթըն իւր ցանկալի՝  
Եւ միամըտեաց երկրին հայրենի.  
Բնակի ի մեծ Դղեակն աւերոցի,  
Եւ ապարանս շինէ հրճուալի »:

Իսկ եթէ հայր վկային Խոսրով՝ էր շինողն, եթէ այլ  
աք, ստուգել անհնար թուի, միայն փափաքելի և յոյժ  
փափաքելի քննութիւն վայրացս և յայտնութիւն վաղե-  
մի յիշատակաց, և մի մնալ բնավայրին Գողթան յամաւ



85. Որդուատ.— Ապարանք

յացեալ միայնութեան, որպէս երեւիդ ի տեղացոյց քար-  
տի ի սահմանափակ ձորակի, ոչ մի շէն և ոչ այլ ջուր  
շարժուն ունելով մերձաւոր, բայց միայն զհանապազա-  
գնացն Երասխ, որ ահաւորագոյնս և առիւծօրէն իմն  
աստանօր որոտայ և շառաշէ, ի միջակի գոլով կրկին քա-  
րավազիցն, Որդուատայն և Մեղրոյ:

Յարեւմտից կուսէ մենացեալ վիճակին՝ կայ ձորակն  
անձուկ յոյժ, որպէս թուի հազիւ կէս մղոնաչափ լայնու-  
թեամբ, ընդ որ օձաձեւ սողոսկեալ վտակ մի յԱզնաբերդ  
լեռնէ բարձուէ, 8810՝, սահեալ անկանի յԵրասխ,

մղոնաւ և կիսով յարեւելից բերանոյ գետակին Որդուա-  
տայ, մի միայն շէն փոքրիկ ունելով յալմէն ի միջավայր  
ընթացիցն, Գետաւ կամ Քեղան, զորմէ ինչ ոչ գիտեմ,  
բայց զի յամի 1873 բնակիչքն էին Թաթարք 100 ոգիք:

134. Յարեւմտից սորա և յելից Ազուլեաց վիճակին՝  
կայ ձորագետակն Որդուատայ զուգեալ յերկուց վտա-  
կաց իջելոց ի բարձրաբերձ արեւմտեայ ուսոց լեռանցն  
Դարուայ, յորս և բուն աղբերավայր լեռն գետոյն Ու-  
ղուատայ Քիտն կոչեցեալ ի պարսիկ պիտարհագրէ (Եւ-  
գութի). բայց կարծեմ գրովանդակ իսկ զպար Դարուայ



այսպէս անուանել նոցա, քանզի նոյնպէս Քիան կոչէ այլ ոմն աշխարհագիր և զԼեւանն յորմէ իջեալ զայ գետըն Աջատայ:

Ի ստորին կողման ձորոյն իբրեւ մղոնաւ և կիսով եւեթ հեռի յԵրասխայ՝ կայ այժմու գլխաւոր շէն համօրէն գաւառին Գողթնեաց, քաղաքն Որդուատ կամ Որդւատ, և յառաջագոյն եւս Որթվատ ըստ վարդանայ աշխարհագրի, իսկ յայժմուս այլազգօրէն Որտուպատ (Չէյճոյ) կամ ՈՒՐԱՍՈՒՄԱՏ. ստուգաբանութիւն անուանն և ծագումն անծանօթ է, յայտ է թէ հին, այլ ոչ յիշի ի պատմութիւնս իբրեւ տեղի նշանաւոր, բաց յաւանդութենէ գալտեան Ս. Բարգողիմեայ և հետակորոյս առնելոյ զչար ջուրս տեղւոյն: Զառաջինն ի սկիզբն ԺԱ դարու ի կոնդակի Սարգսի կաթողիկոսի՝ յիշի իբրեւ վիճակ կամ գաւառակ, յայտ ուրեմն զի և յառաջ քան զայն ժամանակ աւան մի մեծ և բազմաբնակ լեալ էր. և առ թագաւորութեամբ իսկ Սիւնեաց անկեալ ընդ իշխանութեամբ այլազգեաց. զի գայս համարիմ նիստ աւիրային Գողթան Ապուտիոյ, զոր յիշեցաքս ի վեր անգըր: Թէպէտ և ոչ ունի քաղաքն՝ հին կամ երեւելի շինուած, այլ գեղեցիկ է դրիւքն և չրկապակ ճոխ բուսաբերութեամբ, այլ և վայրենի իմն կերպարանս շնծայէ անձկութեամբ ձորոցն երկոցուն, յորոց կցուածս կառուցեալ կայ, և փոքր մի ի վերոյ եւս, և յաւէտ ի ներքայ երկարեալ ձգեալ ըստ ընթացից գետակին յԵրասխ կոյս, և մերձակայ խոժոռ և ապալեր լեռանցն կառուցմամբ, մանաւանդ յարեւելից կողմանէ, անանցանելի պատուարաց Գարուայ, և ի հարաւոյ՝ մեծաշառաշ խոխոջանք Երասխայ. յատակ և թիկունք իւր, եթէ օրէն իցէ ասել, յեցեալ են ի հերձուտ և ի պորփիւրեայ սեւուրակ ժայռս, յորս գահաւորեալ կայ իբր յ'2826՝ բարձու յերեսաց ծովու, (ընդ 38<sup>0</sup>, 49', 20' լայնութեամբ, և 63<sup>0</sup>, 13', 20" երկայնութեամբ), հազար ոտնաչափ միայն ի վերոյ ալեաց Երասխայ<sup>1</sup>. և զի հազիւ երկու մղոնաչափք են ընդ քաղաքն և ընդ գետն մեծ, յայտ է թէ մեծապէս առ ի շեղ անկեալ խոնարհի երկիրն, և գետակն յոյժ երազաւ հոս իջանէ թափիլ յոչ նուազ քան զինքն երազասահն Երասխ: Ըստ այսմ դրից՝ և տանցն վերուստ ի վայր ձգելով և պարտիզաց և ծառոց ի մէջ անկանելով, ընծայեն քաղաքին տեսիլ նկարագեղ. բայց մէջն տղեզ և ազտեղի է, նեղ և դժուարանցանելի ունելով փողոցս, և գձուձ շինուածս. միայն նորակառոյց շէնքն ինչ սակաւ մի շնորհաւորք են. յորոց սակի եկեղեցին Հայոց (իբրեւ տանց 50ից) ի բարձու քարափան, յանուն Ս. Ստեփանոսի, որ յառաջն Ս. Վարդան. պարզ և անպաճոյճ, այլ վայելուչ սալայատակ ճեմելեօք կամ ուհիւ, որ իլուցանէ ի քաղաքն: — Մեծագործ եւս է եկեղեցին Ռուսաց շինեալ ծախիւք Արասխանեանց Պ. Ազուլեցոյ, որոյ յարդարեալ է և զչաւահան ճանապարհն յեզերն Երասխայ՝ որ տանի ի Գարապաղ: Ի բռնութենէ Պարսից խոյս տըւեալ մերայոցս ի քաղաքէս, յետ նուաճման ի Ռուսաց, եկին գաղթականք ի պարսիկ մասնէ յամի 1827, և հաս-

տատեցին նոր բնակարանս: Մնայ անդ և աւերակ հին աղիւսաշէն շուկայի կամ կարաւանատան նոցին, յորում գոյ մուտք ստորերկրեայ՝ որ տանի յեկեղեցեակն շինեալ որպէս աւան, ի Բարգողիմեայ Աւաքելոյ, ի կոչեցեալն Տեառն ընդ առաջ<sup>2</sup>. Ի հինգ թաղս բաժանեալ էր Որդուատ առ իշխանութեամբ Պարսից, Աւարաւս, Քիարտիս քաղ, Սար-չաղար, Միսկիս, և իճ տիւզանկայ, յորս ընդ բնաւ 638 բնակարանք էին, 6 մեծ մզկիթք, 25 աղսթանոցք, 3 դպրոցք, 6 կարաւանատունք, 70 աղբերք և կամուրջ մի քարայէն. այլ յայտ է թէ զարդիս յաւելեալ են կարեւոր շինուածքն: Բայց նշանաւոր քան զձեռակերտս է յՈրդուատ՝ հինաւորց հաստուած մի բնութեան, Սոսի մի ստուարաբուն (թիւ 81) զոր մեծագոյն ի համացելուն կոչէ բնաքնինն այցելուն Բեցհուլք<sup>3</sup>, յամի 1863, որոյ գազաթն շանթահարեալ՝ այլ ստորին կողմն ընդլայնեալ է յոյժ. և կայ ի վերնակողմն քաղաքին ի հրապարակի մզկիթի միոյ. վեց ոտնաչափ ի գետնոյ ի վեր՝ չրկապատ արմինն էր 32՝ ըստ չափելոյ Տիւպուայ (ի 10 ապրիլի, 1834), և իբրեւ 40 ի տեղւոյ բաժանման աճիւնաճիւղ ստոցն. իսկ վերագոյն՝ միջին չափ ստուարութեանն է 13՝. մէջն փապարեալ իբրեւ 8՝ կարէ տանել 10 մարդ. յորում ախորժեն պաշտօնեայք Ռուսաց կամ այցելուք տեղւոյն՝ դնել սեղան, ըմպել թէյ և զբոսնուլ:

Իսկ յարուեստէ կամ ի ճարտարութենէ՝ նշանաւոր են գործարանք մետաքսի հաստատեալք ի շանթամիջեցի Փափազեան կարապետէ յամի 1870, շոգեշարժ մեքենայիւք, գեղեցիկ խորհրդով յօգուտ ածեալ զառատութիւն և զլաւութիւն թիթենեաց վիճակին Որդուատայ. երկու ընդարձակ սենեակք կամ գործատունք են. ի միում՝ արք զառաջին գործ շերամեփեցութեանն կատարեն, յերկրորդում կանայք հայազգիք քարչն զթելուն և ուլորեն. երկոցուն եւս սենեկացն միանգամայն են իբրեւ 500 կաթսայք և ջահրուք, և գործաւորք 250 իւ չափ, և երեք ազգ գործուածոց: Ոչ միայն յայսմ գաւառէ՝ այլ և ի մերձաւորացն Սիւնեաց և Նախճաւանի այսր առաքին բոժոժք, իսկ մետաքսն գործեալ սովորաբար առաքի ի Մոսկուա: Թէպէտ և ոչ այսպէս կատարեալ յարդարունք, այլ են և այլ գործարանք Արասխանեան և Նուսնուսեան տեարց<sup>4</sup>: Յամի 1887 հրդեհ մեծ եղեւ ի քաղաքին, և իբրեւ 100 կրպակք այրեցան, և համարեցաւ կորուստ աւելի քան զմիլիոն Ֆրանկաց:

Յայտ է եթէ մեծ մասն բնակչաց Որդուատայ թուրք և պարսիկ է, յորս անշուշտ և սերունդք նախնի նուաճողաց տեղւոյս ի միջին դարս. որոց որպէսն և անցք ոչ յիշին ի պատմութեան, կամ ինձ անծանօթ. միայն առ Շահաբասաւ յիշի Պարսիկ իշխող տեղւոյն Ղասապ Հաճի ոմն, զոր հալածեցին Ռամսնեանք. և ի գառնալ Նորա վերստին օգնութեամբ Շահին՝ յամի 1603, ձերբակալ արարին: Յաւուրս պատերազմաց Դաւթի Բէկի յիշի Սափի Ղուլի գլխաւոր և զօրավար Որդուատեցոց, որ բաղում անգամ կռուեցաւ ընդ Հայոց. և օտքս հրամա-

1 Ըստ Ապիխայ. քաղաքին բարձրութիւնն ըստ ուսու քարտի:  
2 Պատմիչն Սիւնեաց ասէ (Գլ. 9.) վասն Աւաքելոյն, շինեալ զայն եկեղեցի «ի Գողթն, յարեւմտից եղերն, ի վերայ վիթի միոյ,

3 յերեւանց հանգստեան տեղւոյն, ուր վանքն էին կուլտուլ:  
4 Petzhold. Der Kaukasus, etc. 1867. I 263  
5 Աւաքելի ըստ ազգային օրագրաց, յառաւ քան զամս ինչ:

նաև Դաւթի գիշերայն յարձակեալ ի քաղաքն՝ կոտորեցին ի զօրաց նորին 300 այր, և զայլոն հալածեալ ի քաղաքէն՝ առին աւար բազում: Դարձեալ և յետ մահուան Դաւթի՝ յաջորդ նորա Միսիմար՝ միւսանգամ պաշարեալ էառ զքաղաքն, և յուարի առեալ եբարձ անտի 160 ուղտուց բեւինս կարասեաց, և մեկնեցաւ: — Ի ժամանակի նուաճման քաղաքիս ի Ռուսաց (1828), կողմնակալ տեղւոյն Եանեա խան կոչէր. նա և յետ նուաճմանն՝ յազգէ Պարսից կարգեցան քաղաքապետք և վիճակապետք. որպէս Շէյխ Ալի խան և եղբայր նորա

Էջուան խան, ասպնջականք Տիւպուայ յամի՝ 1834: Վիճակագրութիւն Ռուսաց 1873 ամի 840 տունս նշանակէ Որդուատայ, բնակիչս 3500:

135. Բարեւելից հարաւոյ Որդուատայ յեզերն Երասխայ հաստատեալ է Ռուսաց պահակատուն՝ յանուն քաղաքին, առ բերանով գետակին Գետամայ. իսկ ի հիւսիսոյ արեւելից՝ մղոնաւ հեռի ի քաղաքէն՝ իրրեւ արուարձան նորին է գիւղն Անապատ. ըստ անուանն և իրքն երբեմն քաղաքաւան ընդարձակ և բազմաբնակ, զուցէ և անապատաւորաց էր անդ միայնարան կամ կացարդք



86. Որդուատ. — Շուկայ աւերակ.


Ս. Մեսրոպայ, ուր և կամէինն ոմանք թաղել զնա. և ի կամելոյ աստի յանուն նորին կարծի յոմանց Մաւրեան կոչեցեալ. քանզի գրէ ոմն յիշատակարան յամի 1387, գնեալ աւետարան մի ի գերութենէ Թուրքմանաց 500 դահեկանի, (վաճառելով զկապայ իւր և զզլխանոց), և տուեալ «ի գերեզման Սուրբ Մեսրոբ վարդապետին». ի կէս ժիւ դարու աւետարանն փոխադրեալ էր յեկեղեցի Տեւի գեղջ. յորմէ հաւատի՛ գի գերեզման

Սրբոյ վարդապետին զայս տեղի իմանալի է և ոչ զՕշական. նուիրատուն երեւի ընչեզ և տօճմիկ այր, Աւագ Սարգիս կոչեցեալ, (ոչդի Հնդուլի, և Արուստարունի, կինն կոչի Աշքաղեա): Մասրուանս այս թուի նոյն սր և Ամասրոյ վանքն դասեալ ընդ վանորայս Սիւնեաց ի պատմէն: Ըստ վիճակագրութեան 1873 ամի 8 տունք թաթարաց էին ի Մասրեան, զարդիս (1890) յիշի 30 տուն Հայոց: Ունի աւերակ եկեղեցւոյ յանուն Ս. Ստե.



փանոսի, անտաշ քարամբք շինեալ, յորում խաչվեմք և աւազան քարեղէն: Յարուարձանէ աստի իսաղուլի կամ իսաուլ ոմն որդի Թադոսի յամի 1663 վկայեցաւ ի վենետիկ ի համագգեաց<sup>1</sup> և ի Պարսից, գոյ այր տոհմիկ և ընչեղ, և ինքնին զիւր վաճառս բերել<sup>2</sup>, զորոց խնդիր լինէր և կարծիք՝ ստարաց գոյ, վասնորոյ և դատ վարէին ընդ նմա այլք ոմանք յազգայնոցն. և թերեւս յայն սակս հեռացեալ կամ տարագրեալ էր ի քաղաքէ անտի, ուր եղեալ էր ի շահասեղանս՝ արծաթ դրամս 2650 դուկատաց, սայմանաւ առնլոյ ամսոյ ամսոյ 100 դուկ. և զի յսպաղէին պաշտօնեայքն ի հատուցանել, ի ձեռն գործակալաց իւրոց բազում անգամ մատոյց աղերս առ ծերակոյտն, որ չորիցս վճռեաց, և հուսկ յամի 1678 ետ

հատուցանել նմա և զմնացորդ պահանջիցն:— ի կէս անցելոյ դարու ասի բնակչացն զաղթեալ ի Զմիւռնիա, և զի Միարանողքն կաթողիկէ գաղթեցին անդր յԵրնջուկայ, մարթ է կարծել նոյնպիսիս և զՍնապատացիքս<sup>3</sup>.  
Մղոնաւ կամ սակաւ աւելի ի հիւսիսոյ Անապատի առ արեւմտեան գետակաւ որ մեծագոյն է քան զարեւելեան կցորդն, կայ Հանդամէջ կամ Անդամէջ գիւղ, յաջմէ չրոյն, յերկուս բաժանեալ ի վերին և ի ներքին. շրջավայրն՝ որպէս և համարէն միջոց ճանապարհին ի քաղաքէն և այսր ծածկեալ է այգեօք և թթնեօք և պէսպէս պտղատու ծառովք, իբրև միատարր պարտէզ մի. այլ աստի և անդր ամայութիւն է՝ անբոյս անպեղեայ քարաժայռ լերանց, յարեւմտից մինչև ի սահմանս Ազուլեաց,



87. Աւերակ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ յԱնապատ գեղ.

ի Հս. ցղլուս գետաձորոյն. յորում՝ ի հիւսիսոյ վերնոյն Անդամիլի՝ կայ Գիւրեանան գեօղ, և երկու մղոնաւ վերագոյն Նուսնուս, որ Թուրի Նուսնից գիւղ հին ցուցակին: Իսկ առ արեւելեան գետակաւ կայ Գանձի գիւղ կամ Գանձակ, ըստ Թուրքաց Գասնայ կամ Գեանաւ. սա է հեռագոյնն ի գիւղից Միարանող անուանեալ կաթողիկ Հայոց, որոց գիւղապետ (կամ Մէլիք) յիշի յամի 1542 Սիլուան<sup>4</sup> անուն (Siluan գրեալ լատինարէն):

ի սկիզբն ժիշ դարու (1603) կային անդ նոցա տունք 70, յափահաս ոգիք 200 և 150 մանկունք, և 20 տունք մահմէտականք: Սակաւուք ի բացեայ էր ի գեղլէն վանատուն մի փոքր և եկեղեցի յանուն Ս. Առաքելոց Անդրէի և Յակովբայ. այլ յետ կիսոյ դարու՝ մի տուն միայն և ոգիք հինգ մնացեալ էին ի նոցունց. և եկեղեցին կոչի յայնժամ յանուն Տիրանօր, զոր պահէին երկու միաբանք, Բայց Թուրի և յետ այնր ոչ սակաւ ժամանակս

<sup>1</sup> Հայազգի վկայք՝ էին Միքայիլ որդի Եսայի, Հայրապետ որդի Գաբի: Սուրբ-Սուրբ Մարտի: Սահմ. Աբրահամ, որ և Թարգման, Յովն. Չիլի-Նոյն միջորդ, Ստեփան վրացի:


<sup>2</sup> Hanno... attestatoet attestano affermano conoscer benissimo.. D. Isaul Tatos mercante Armeno-persiano, deila città di Ordovar d'Anabat, nella Persia, esser persona civile gentilhomoo.. qual era opulente di facoltà

et negociava del suo proprio grossissime mercantie, &: — Յիշին ի դիւանս վիենտկոյ աւել ետ խնդիրք և զատք իսաղուլի, պարտքն 200 դուկատաց վճարեալ առ զարծակաւ Տէր Սահակայ քահանայի Հայոյ (1665). վէճ և իրաւաբտուութիւն ընդ Նահապետի Գուրնազարոյ Ազուլեաց, զորմէ տեսցի ի տեղաբտութեան Ազուլեաց, (1667, հոկտ. 2):

<sup>3</sup> Ազուլեան, Աբուլ-Մոյն:

բաւեալ մնացորդաց նոցին անդէն, քանզի և յամի 1725 վաճառար մի յիշեալ տեղւոյդ օտորագրէ ի միաբանական թղթի ուրեմն. « Ես Գանձակայ վանից մեծաւոր, որպէս ի վերոյ, Տէր Պետրոս »: Յաշարհագրի 1873 ամին վերին Անդամիլայ գրին 33 տունք, ոգիք 277, թաթարք. Ստորնոյն՝ 18 տունք և ոգիք 167. Նուսնուսի՝ տունք 39, ոգիք 201, նոյնպէս թաթարք. Գանձակայ՝ տունք 26, ոգիք 150: — Յեկեղեցւոյ Գանձակայ է քանդակս այս, որ թուի պատուանդան Խաչարձանի, զի գրեալ է ի նմին յամի 1577.

Խաչս յիշատակ. ԹՎ. ԶԻԵ.



88. Քանդակ յեկեղեցոյ Գանձակայ.

Այսպիսի սակաւթիւ են տեղիք ծանօթք ի փոքու սեփական վիճակի Գողթան կամ յՈրդուատ. այլ ի վերայ պատմական սիրալի յիշատակացն և բնական բերոց, ունի միւս եւս սիրալի և ահեղաբանչ տեսարան բնութեան՝ ի սպառուած հարաւային սահմանացն, այն է յափուճն Երասխայ, և յինքն իսկ յԵրասխ. որ, որպէս յայտ է՝ գալով յարեւմտից ի միջոյ Արարատեան դաշտին և Վասպուրական նահանգի, քերէ զհարաւով Սիւնեաց, և առ սակաւ սակաւ սահմանափակի, լերամբք երկուստեք ամփոփելով դաշտագետնոյն, մինչեւ մտանելով ընդ մէջ զաւառիս Գողթնեաց ի հիւսիսոյ և Գարատաղի ի հարաւոյ, պատահէ աստի և անտի կողից բարձրաբերձ լերանց Գարոռայ՝ ի Սիւնեաց կողմանէն, և փեամքիս կոչեցելոյն ի Պարսից՝ ի Վասպուրականէ.— և զի աղխաղխեալ սոցա պարսպածեւ ձգին անընդհատ, որպէս լերինքն Գարուայ՝ ի հարաւային ափանց ծովուն Գեղամայ մինչև յԵրասխ, և յամէ սորին միւս այլ լերինք՝ ցերկար սահման ընդ հարաւ,— հաւանին գիտուն երկրաբանք՝ զի անանջրպետ կցեալ էին երբեմն երկրքին պարք լերանցդ, և հարկ էր Երասխայ ի հասանելն անդր՝

խափանիլ, ծաւալիլ և ծովանալ. այլ ի մեծէ իմն երկրագործ յեղափոխութենէ՝ պատուեալ լերանցն բռնապէս, անժոյժ ալեաց գետոյն ուժգնակի՝ անցա գործեալ է, աննկարագրելի իմն վազիւք, զեւամարք և ուղիւօրէն հասանաք, թաւալախառն ընդ կողուս քարանց, իբրեւ ընդ խոխոմաձեւ խողովակս անցանելով և խընդրելով զդաշտն դիւրագնալի: Ի զէպ է յայս ձգել զքան պատմահօր մերոյ, եթէ, « Ուր գետն Երասխ հատեալ » զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմա ձիգս և նեղս, ահագին դղնչմամբ իջանէ ի դաշտն ». վասն այնորիկ և Քարավազք Երասխայ կոչեցաւ տեղին ի նախնեաց անտի, և յայլազգեաց այժմ կոչի Էրեւսպար: Աշխարհագիրք Պարսից գրոյցս իմն աւանդեն, ի պատուհաս բնակչաց երկրին ամպարչտայ՝ փակեալ զնոսա Ստորնոյ ի ձեռն Քաջաց ոմանց՝ ի միջի կրկին լերանց, ի ներքոյ Որդուատայ երես Երասխայ, որպէս ի վերոյ նշանակեցաք, բարձր է յերեսաց Կասպիականին 1940'. անտի և անդր մտեալ ընդ խոխոման անձուկս, խոնարհի գետինն հետ ընդ հետ, ամփոփելով ի միջի կատարահերձ կաւաքարուտ սեւազոյն ապառաժից, յորս ընդմտանեն և այլ տեսակք այլազոյն ապալեր վիմաց. առ որոց ստորոտովք գրեաթէ առ պղպլակեալ և սրշաւասոյր ալեօք գետոյն՝ ձգի ահաւոր և նեղ ճանապարհ գնացից ի Մեղրի, և ընդ սրեւելս՝ մինչեւ ի հոչակեալ կամուրջն Խիւտաֆէրիյն. յետ իբր 9 կամ 10 մղոնաչափ ընթացից՝ և եւս անձկանայ հուն գետոյն ի խոխոմա ձիգս և նեղագոյնս, յորոց ահեկէ (յարեւմտից) ամբառնան պորփրեայ կատարք ցուրանածեւք, բրգունք և կոթողք սլաւտարազք, ամենեւին լերկք և մերկք. և ի հեռուստ ի թիկանց նոցին բարձրանայ երկնաբերձ ձիւնագագաթն Ալանկէզ: « Չայսպիսի խոչ և խութ գտեալ Երասխայ՝ սաստկացուցանէ զոյժ հոսանացն. զի ոչ եւս են կաւա » յին և կրային սեւա գայլախազուտ հերձոտեալ զան » գուածք դիւրամղելիք, այլ կողկոռք մեծամեծք իբ » ռեւ զտունս, ընդ որս հարկ է ջուրցն յանձկութեան » անդ յատակին՝ փրփրել և վազս առնուլ: Չմի ի կոչ » կոռոց այտի ցուցեալ Եւս Արասայ առ դրանիկան չո » ղոմարարս՝ ասէր. Ահա այդպէս արժան է զղէմ ունել » թշնամոյ: — Դիւրին է առնել զայդ, պատասխա » նեաց ոմն ի նոցանէ, զայսպիսի ունելով պատուարս » և մատնանիլ ցուցանէր զստուարատարր զանգուածան՝ » որ չընապատեն զքարավազան: Զիք ուրեք տեսանել » վայր խոթոռագոյն և ամեհագոյն քան զըլապատեալս » այս դժոխաձեւ ջրովք. յաղօտապայծառ երեսս արեւ » մտեան ափանցն՝ թանձր և ուղղաձիգ ստուերք կերպա » րանեն ձեւս անկիւնաւորս և պատուուուածս երկայնս » գորչագոյն և ժանգագոյն ժայռից, զորոց հազիւ սա » կաւ ինչ բուսակ ծածկէ զմերկութիւն. կարկառք թա » ւայեալք և կուտակեալք՝ ամբարտակ իմն ահընկէց » կանգնեն ի գետեզերն, և ի միջոյ վիճիցն վերաձգին » թուփք ինչ հանապազ ողողեալք ի ցայտից խոնաւական » փուռոյ, զոր հոսանք գետոյն վերացուցեալ ցնդեն և

1 Յեշէ և Օրբել. ի Ա. « Գարավազն (Երասխայ) ուր յերես ճղէ տէ, լուրն, բաց գտեղին ցուցանէ անդրագոյն յորեւելս ի կող »

մանս կովսակտեի, ուր Գիւսի վանքն էին, և ուր ձգեաց խաչեղջիւր երէն վայրի՝ գրեթէսոսաւեր՝ որչի թաղաւորին Պարսից: »

» ընուն զայերս: Իսկ միւս գետափն խրթնագոյն և ա-  
 » ապարագոյն՝ ստուերանայ ստուարակարկատ սեւա-  
 » սարաս ուսովք լերանց, որք թուին ջանալ պինդ ունել  
 » զհաստուածոն մերձ ի տապալել»: Տիւպուա՝ որ այս-  
 պէս նկարագրէ, համարի յՈրդուատայ ցմեծ Քարավազն  
 իբրեւ 800 ոտնաչափ խոնարհել ցածնուլ գետնոյն և  
 գետոյն. զՔարավազն համարի գէթ իբր 100՝ վայրահակ,  
 իսկ զմեծ քարահոս սահանս ջուրց Մեղրեայ 400՝, ընդ

ընաւ 1300՝, և անտի մինչեւ ցաւարտ ընթացիցն 1200՝.  
 բայց չափազանց են թիւքդ, զի և ինքն խոստովանի կար-  
 ծեօք ասել զայս, զի չեւ եւս էր յայնժամ գետնաչափեալ  
 տեղեացն. զարդիս ի նոր և մեծ աշխարհացուցի Ռուսաց՝  
 բարձրութիւն գետոյն ի ներքոյ Մեղրեայ՝ սակաւ աւելի  
 քան զ՝300 ոտս նուազ նշանակի քան յՈրդուատ. և եթէ  
 իցեն մղոնք իբրեւ 15 յայնմ միջոցի երկայնութեան գե-  
 տոյն, ոչ շատ աւելի քան զ20՝ լինի ցածնուլն առ մէն




89. Քարավազք Երասխայ.

մղոն, մինչ Տիւպուա համարէր իբրև 80՝: Թողեալ զչափ-  
 արն և վերստին ակնարկելով ի տեսիլն, « անբաւաչափ  
 » գեղեցկագոյն են, (ասէ նոյն այր) սահմանք ջուրցս,  
 » թէպէտ և փոքրագոյն սահանքն քան զՏնեբեր գետոյ,  
 » որոյ ափունք ոչ ի միջի այսպիսեաց հսկայածեւ քարա-  
 » ժեռից են պարսպեալք»: Այլ ոմն նոր աշխարհագիր  
 փռանկ՝ ասէ. « Ի բարձրաւանդակ երկրէ իջանէ Երասխ՝

» երկար յորձանօք, սահանօք և մղեղեալ ցայտիւք յՈւր-  
 » տապատայ ցՄեղրի... Պատառուածս այս կամ բա-  
 » ցուած Երասխայ որ խոժոռի ընդ կաւեարջս իւր<sup>1</sup>, մի ի  
 » յաւետահրաշ տեսարանաց է հնոյ աշխարհի»: Այլ արդ կայ մեզ հակառակ ընդդէմ հոսանացն Ե-  
 րասխայ, դառնալ յարեւմուտս կոյս, և մտանել յեր-  
 կորդ վիճակ Գողթան, որ է ձորահովիտն Ագուլեաց:

<sup>1</sup> Ոնեախոս Ռեզլիւ, ակնարկելով ի եւչտիւսուր ասացուածն վերգիւն այ լատին բանաստեղծի:





## Բ. ԱԳՈՒԼԻՓ

136. Վիճակս Ագուլիաց սահմանի փոքրիկ և անձուկ ձորակա միով, ընդ մէջ Որդուատայն՝ յարեւելից, և Տրուսեաց՝ յարեւմտից. հազիւ չորք կամ հինգ գետք են ի նմին, յեզերս վտակին, որ ի Խօշի լեռնէ իջանէ յերկուց աղբերաց՝, և առատացեալ ի հալս ձեանց՝ երկ-

ուստեք ձորափակ լերանցն՝ իբրեւ ի 20 աղբերակաց եւս, ոչ սակաւ յօրանայ և վնաս իսկ գործէ. որպէս յամի 1872 ի տարափահոս անձրեաց (յ՛7 ամսեան օգոստոսի ըստ նոր տօմարի). և սաստկագոյն և աղիտարեր եւս յոյժ յամի 1884 (2 յունիսի)՝ գորմէ ի ստորեւ. այլ



90ր Ագուլիս.


ամարանի այնքան նուազէ մինչ գրեաթէ շժամանել յՄրասիս: Լերինքն ձորեզերեայք խափանելով զծաւալունն ճառագայթից արեգական՝ սաստկացուցանեն զցուրտ ձըմերանի, և չգերծանին ի սառամանեաց մինչեւ ի յառաջել գարնայնոյ. ներհակարար յամարանի՝ սաստիկ ցուացուցանելով զճառագայթսն, (քանզի ամենեւին լերկք և

անբոյսք են), սաստկացուցանեն զտօթ: Այլ փոխարէն՝ այսոցիկ զնուազութիւն ջուրց վտակին ընուն ամարանի՝ առատարուղիս աղբերքն քաղցունք, ընդ որս են և յօռիք՝ վարեալք ի պէտս ոռոգման. իսկ զխտութիւն ձմերայնոյ մխիթարեն արգասիք երկրին, այգիք, թթենիք և ազգ ազգ պտղոց և մեղր պատուական:

1 Շորէն կոչէ զաղբերսն անծանօթ և երկբայելի անուամբք, վարդան և ինն? :

Ինակիչքն բարեկազմք և արուսրագոյնք են և մտր-  
թին կոչիլ Հարազատագոյն սերունդք Գողթնեաց, որք  
և կոչն զինքեան Չոկ կամ Չօկ, և զլեզուն, զոկերեն,  
որով վարին ի միջի իւրեանց, այլ ընդ արտաքինս խօսին  
պարզագոյն հայերէն: Փափագողաց ծանօթութեան այսր  
բարբառոյ՝ յուչ առնեմք զողջոյն իսկ գրգոյկ (Չօկերի

չեզոչ) և զնաչակս ինչ բարբառոյն արձակ և չափական  
բանիւք, զոր ամօք յառաջ (1887) հրատարակեաց ի Մոս-  
կուա բանասէր ոմն Սարգիս Սարգսեան, որ և ծանու-  
ցանէ յաւէտ յԱզուլիս և ի Յղնա գեղլ լսել բարբառոյն:  
Ի գլուխ ձորոյն կամ գետակին կայ Նիգեդեն գիւղ  
Թուրքարնակ, որ մեծապէս վնասեցաւ ի հեղեղէ 1873



91. Ագուլիս.

ամի, և որ յետ այնր. Շորէն, 14? (տունս) միայն գրէր ի  
նմին և ոգիս 61. ոչ յիշի յաշխարհահամարի Ռուսաց, այլ  
ի քարտս նոցին նշանակի յայնմ տեղւոյ Նիգալի անուն:  
— Ի միջին կողմանս ձորոյդետակին յահեկէն կայ փառ-  
անունն Փառակներտ, բարեբեր այգեօք և պարտիզօք,  
այլ ոչ յիշի ի պատմութեան, ըստ մերս գիտութեան, և  
ոչ յայժմեան գրութիւնս. ըստ վիճակագրութեան Շո-

բէնի 12 տունք Թուրքաց էին ի նմին, և 36 տունք և 333  
ոգիք Հայոց:

Իբրեւ մղոնաւ ի հարաւոյ Փառակերտի կայ Ագուլիս  
ուան, որ յետ Որդուատայ առաջին շէն է գաւառիս, ի  
վաղուց հետէ այսպէս եղեալ՝ յետ անշքանալոյ բուն ոս-  
տանին Գողթան. զանունն պիտակօրէն ստուգարանն  
Այգեօք-լիք, և է իսկ արդարեւ այգեւէտ: Մաղրագոյն



եւս է աւանդութիւն ոմանց, իբրու թէ Թաղէի առաքելոյ ննջեալ ի գիշերի ընդ բարձրակարկառ վիմաւ միով, (զոր և ցուցանեն մերձ յԱնդամէլ), զարթնու ի լոյս տուրն-ջեան, վասն այն ասի Այն ի իոյս, յորմէ աղաւաղեալ Ագուլիս: Զայս գրէ Գերմանացին որ եհան զպատկեր վիմին, լուեալ ի տեղացեաց, որք և ցարգ պատուեն զտեղին լուցանելով ճրագունս, եւ այլն: Բայց յառաջնում և գրեալ թէ ի միակ հին յիշատակի տեղոյս՝ ի կոնդակի Սարգսի կաթողիկոսի ի սկիզբն ԺԱ դարու՝ գրի, յաւելուածով ը տառի՝ Արգուլիք. այսպէս գրէ և գիտնական վարդապետն Զաքարիա Վաղարշապատեցի ի կէս ԺԷ դարու,

ի յիշատակարանի Աստուածաշունչ գրոց: — (Ընդ ձորակն ի վեր և մանաւանդ ի վայր ձգեալ տարածանի աւանն, և պարտիզօք և այգեօք ժամանէ մինչեւ ի Դաշտ գիւղ, որ կոչի արդ Ստորին Ագուլիս, վասն որոյ և բուն աւանն՝ վերին Ագուլիք. տունքն կառուցեալք յայսպիսի ափափայ դիրս ստուար որմովք՝ երկայարկ և եռայարկ իսկ են, նշանակ երբեմն մեծութեան և բարգաւաճանաց տեղոյն, վասն որոյ և քաղաք իսկ կոչի ի սկիզբն ԺԷ դարու, և ի պատմութեան Ղափանեցոց. ըստ որոց՝ (որ շափազանց յոյժ թուի), 10,000 տունք էին ի նմա? ոչ փոքր էր եթէ և 10,000 ոգիք լինէին. սակայն և Նալեա-



92. վիւճ հանգստեան Սաքելոյն Թաղէոսի.

նըն ասէ. « Այս գիւղաքաղաք Ագուլիս երբեմն ունէր » 8000 տուն Հայ, այժմ հազիւ թէ կայ 1000 տուն»: Ետ-բէն առ իւրեւ 50 տուն նշանակէ Թուրքաց որք ունէին յԱգուլիս մզկիթ մի, 122 տուն և 770 ոգիս Հայոց: Յամին 1872 ոմն ի տեղացեաց գրէ 165 տունս Հայոց, 63 Թուրքաց, այլ ցուցանէ իմն անհաւանութիւն և նուազ զթիւն: Այսարհահամարն Ռուսաց 1873 ամի՝ յերկուս բաժանեալ Թաղս զվերին Ագուլիս, զԹաթարացն գրէ ոգիս 400 ի 54 տունս, Հայոց տունս 170, ոգիս 1200. իսկ ի Ներքին Ագուլիս՝ միայն Հայս 100 տուն, ոգիս 880. իսկ յամի 1880 քահանայ ոմն բնիկ՝ գրէր 400 տուն Հայոց ի վերին Ագուլիս և ի վերին Գետ անուանեալ Թա-

ղի, և 50 տուն Պարսից. այլ ոմն յամի 1883 զթիւ բնակչացն համարի 4 կամ 5000. ի նմին ամի միւս եւս որ ազգային՝ 207 տունս և 1653 ոգիս Հայս՝ գրէ, 65 տուն և 453 Թուրք: — Ասի լինել 100 կրպակաց յԱգուլիս հասարակ արուեստաւորաց, յորս նշանաւոր կտաւագործքն և ասրագործք. դատարան և 3 դատաւորք, չորք գիւղազուլիք (էդրովս ըստ Ռուսաց): — Զմեծութիւն և ճոխութիւն շինիս ցուցանէ և յուլութիւն եկեղեցեաց, ընդ մեծ և ընդ փոքր 11 Թուով. ի կէս ԺԷ դարու՝ Առաքել վարդապետ, և յառաջին կէս ԺԸ Է՛ Աբրահամ կաթողիկոս՝ չորս եկեղեցիս ասեն լինել յԱգուլիս, որք նորագեցան յաւուրս կաթողիկոսաց Մովսիսի և Փիլիպպոսի,

զատ ի վանացն, որ ի լեռնակողմանն է, ընդ մէջ աւանին և վերին-գետ թաղի: Մարթ է գլուխ կոչել և առաջին եկեղեցեաց, զՍ. Թովմաս վանս, հաստատեալ՝ ըստ աւանդութեան, յառաջելոյն Բարդողիմեայ, այսինքն չինեալ ի նմանէ եկեղեցի և անդ թողեալ զաշակերտն իւր կումսի. յոր սակս և յետոյ աթոռ եպիսկոպոսի եղեալ Գողթան, և մի ի նախագահ եպիսկոպոսաց, որպէս վերաբոյնդ յիշեցաք: Չեն ծանօթ հանգամանք առաջին չինաւածոյն և բնակութեանն, զի ոչ ի զիրս առանձինն ինչ պատմի և ոչ արձանագիրք հինք յայտնեցան ի նմին. այլ որք ենն՝ ի յեախն չինութենէն կամ ի նորագութենէ անտի են, այն է յամէ 1694. յորոց մի արձանագրեալ ի ճակատ մեծի դրան եկեղեցւոյն (ուր քանդակեալ է և Ս. Թովմայի ձեռնմխութիւն ի կող Փրկչին), աւանդէ յետ Բարդողիմեայ զգալուստ Ս. Լուսաւորչին և սեփականել վիճակին զգեօղս ինչ, այսու անարուեստ ոտանաւոր բանիւ թուերով յանուանէ.

Բարդուղիմէոս ի Հայս եկեալ,  
 Ջտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ,  
 Սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ.  
 Կոմսի անուն գիւր աշակերտն  
 Տեսուչ տեղւոյս զնա եղեալ.  
 Որ եւ ըզտուն Գողթ գաւառիս  
 ի նա յանձնեալ ըզհօտն ընտրեալ.  
 Մերձ Ազուլիս եւ Դաշտ գովեալ,  
 Յոնա, Թամիս սըմա յանձնեալ.  
 Բուստ, Փառակա եւ ըս տըվեալ.  
 Բուհրուտ, Տեւի անքակ եղեալ.  
 Եւ Շրջու ընդ Մասրեան,  
 Աղահեցիկ ցանկ հաստատեալ.  
 Դաստակ, վանանդ կցորդ եղեալ.  
 Տրունիս, Տնակերտ միաքանեալ,  
 Օբովանիս եւ Քաղաքիկ  
 Եւ Անապատն Հանդամիջաց,  
 Վեռն?, Գետցիկ եւ Կեղերեցիկ,  
 Նունիս, յՈրդվատ բաժին կարգեալ:  
 Սուրբըն Գրիգոր յորժամ եկեալ՝  
 ի Առաքելոյն նոմոս տեսեալ,  
 Չեռագրով զայն հաստատեալ.  
 Եւ նզովիւք ամրափակեալ.  
 Յամի Տեառն ԳՃ եւ հինգ հասեալ  
 Լուսաւորչին պատճէն գրեալ  
 Արձան գրիս որ աստ եղեալ:

Ի դէպ է համարել եթէ այսպիսի ինչ կայր աւանդեալ ի գաւազանս եկեղեցւոյն, ըստ բանից պատմչին Սիւնեաց, և անտի առեալ նորոգողաց տաճարին՝ այսու ոճով փոխարեքեցին ի ճակատ նորին: — Ի յիշատակս զբոց՝ հնագոյն աստ գրեալ ծանօթ է ինձ Նարեկացւոյ աղօթագիրքն՝ յամի 1375, ի վարդաւանայ ումեմնէ, և ապա

1 Առդ ի գրատան Էջմիածնի:  
 2 Կազմող գրոցն կոչի վարդան արեղայ որդի Բաճանչայի և Նուշխաթունի:  
 3 Պատմէ և արկած ինչ. «Յայսմ ամի որ Թիւն Հայոց ՊՂԴ էր, զմեր աշակերտի եղբայրն՝ զեռ տարու և անյայտ արար. և ան-

զիրք Հարցմանց Տաթեւացւոյն յամի 1434, յեպիսկոպոսութեան Տեառն Տէրունականի, զոր գրիչն գովութեամբ կոչէ սուրբ և երանեալ. զի ի «նեղ և յեախն ժա.» մանակիս առաջնորդ և լուսաւորիչ է եկեղեցւոյ, և յաղցեցելոց կերակրիչ և աղքատաց մխիթարիչ, զերեաց յազատիչ և ամենեցուն սփոփիչ»: Իսկ վարդապետ տեղւոյն ըստ այնր վկայութեան էր «քաջ և արդիւնական ըստ բարեմտեան և հոգեւոր հայր և վարժապետ Յակոբ» յիշին և միաբանքն, Յակոբ արեղայ, Բարսեղ շնորհալի գրագիր, Յոնանենս եկեղեցական, Ստեփանոս հայր վանացն. յեղբայրական կարգէ՝ Սատոն, և Վիկտիչ, որ զարդիւնքս հասարակաց կու ժողովէ յեղեմարաւ նըս. և տնտեսս Յրատոնի՝ որ կու սպասաւորէ միաբանիցս», և այլն: Իսկ զորոչն է Մատթէոս վարդապետ եղբայր Խաչատուր քահանայի. որ և յիչէ ըզկարեւոր քաղաքական անցս ինչ ժամանակին, զմահ (Գարա) Եղսուֆի բռնաւոր թուրքմանի, և զթագաւորել որդւոյ նորին Սկանդարի. որ՝ զի «յայժ ողորմած էր ազգիս Հայոց, եւս առաւել մեր գեղիս Աջուրեաց, իւր խաս արար, և մէկ տարի քարիտան արար» (ապահարկ): Մանուցանէ եւս զի էին յայնմ ժամանակի «առաջնորդք աստուածապահ գեղոյս Աղա Գէորգ, Լուսինա Սահր Բէկ, և տանուտէր՝ Էդիլչայ, որ բարեպաշտութեամբն իւրեանց տածող և խնամածու էին Աջուրեաց, և հայր որբոց և այրեաց»: — Գրեալ է ի նոյն ամս (1436) զրեալ է աստ Պատմութիւն Ս. Թէոդորոսի զօրավարի այսու յիշատակաւ և ձեւով.

Գրեցա զպատմութիւն ի  
 Բուսականութեանց ոյ.  
 Դէն. ի Բիգրաթէ. Բորգ  
 ամա. ասկանտարի. որդի  
 ուս էրին. Էր ի հայր ոյ  
 ետ աթէ. ան կատանդ  
 եւ. ի վան աս գ ու զ լ ո յ  
 ընդ հովանեաւ սրբոմ  
 այի. Զեամբ բաղմանը  
 գիլի. յովհաննէս վարդ  
 ապետի:

93. Գրեալ ի վանս Ս. Թովմայի.

Յետ այսր յիշատակի ցամա 300 անծանօթանայ ինձ տեղիս, ապա վերականգնի յամի 1636, ի ձեռն Խաչաւորոյ առաջնորդի՝ աշակերտի Մովսիս կաթողիկոսի. որ, ասի, «Նորոգեաց ի հիմանց զսուրբ ուխտս Թումայի, ըստ բարձրաբերձ կամարակապ և գմբեթաձեւ՝ զսուրբ եկեղեցին, և բարձր պարսպով և շորեքանկիւնի խուցերով և մոտոքախերով զարդարեաց. և բազում նեղութեամբ և շարշարանօք շինեաց»: Գրէ և աշակերտակիցն Խա.

մխիթար սուգ եղէ ծնողաց իւրոց և մեզ յոյժ գառնութիւն, որ չէ եղել նոցն զառն կակի՞՞ որ եղէ յանկարծակի. որ աղցցին անունն Յնաղմուրչայ էր. զոր Տէր Աստուած իւր տեսուն և երկնից արքայութեանն արժանի արասցէ. ամէն»: Զինչ արեղագ տէր զվան արկածից 1884 տարւոյ:

չատրոյ Չաքարիա վարդապետ վաղարշապատեցի. «Սա  
» նոր նորոգեալ պայծառացոյց զաթոռն զայն, շքեղա-  
» պանծ վայելչութեամբ, ի հիացունն կարգեալ տեսո-  
» ղաց, իբրև գղթախա Աստուծոյ զարդարեալ ազգի ազ-  
» գի ճսխութեամբ, հոգեւորօք և մարմնաւորօք»: Բայց  
ամենայն արձանագիրք եկեղեցւոյն նշանակեն յամի

1694 - Յ զչինութիւնն. որպիսի է և Թուական խաչքան-  
դակի՝ յորոյ վերայ արձանագրեալ է Խաչատուր. բայց  
կամ այլ որ Խաչատուր է գրող քանդակին, կամ Թուա-  
կանն յետոյ գրեալ յՈճոփրիոսէ ումննէ. զոր այսու  
ձեւով ընդօրինակեալ է գերմանացի նկարիչն Գէտդնէր  
յառաջ քան ոչ սակաւ ամս.



94. Արձանագիր Մկրտարանի Ս. Թովմայի վանաց, յԱզոչիս.

Սովին Թուականաւ , 1694 - Յ ամի է և արձանագիր դրան եկեղեցւոյն.

**Յիշատակ է դուռնս Դաշտեցի Խօջա Սէթուն եւ ծնողացն Աստուատու-  
րին եւ Խաթունջանին եւ եղբարցն. ԹՎ. ՌՃԻԳ.**

Հարկ է ապա վերաշինեալ ասել զեկեղեցիս, Թերեւս  
խախտեալ գոլով ի մեծէ սասանութենէն Արարատայ  
յամին 1679, որպէս կասկածէ և Շահխաթունեանն:  
Յառաջ քան զերկրորդ շինութիւնն եկեալ էին այսր ուխ-  
տաւորքն յիշեալք ի Թովմայէ վանանդեցւոյ, որք

«Չվանս Ագուլեաց համբուրեցին.

Որ է յանուն Սուրբ Թովմային.

Բազում աւօրս անդ արարին»:

Ի օկզրան ԺԼ դարու (1704) յիշին ի միաբանից վա-  
նացս վարդապետքն Խանանկ, Աստուածատուր, Յովնան-  
նէս, Արեքսանդր, որք ընդ միաբանից Էջմիածնի և այ-  
լոց՝ ձեռն արկին յանուանեալ կտակն Աղեքսանդրի կա-  
թողիկոսի: Կանգուն կան և արդ յիշեալ պարիսպքն հը-  
զօրք, քառակուսի չրվափակելով զմենաստանն. յան-  
կեան հիւսիսոյ արեւմտից լունելով զառաջնորդարանն  
կամարակապ քարաչէն, զսենեակս միաբանիցն՝ ի հիւ-

սիսոյ կուսէ և յարեւելից. զնորքախերն (խոհանոցք)  
գմբեթաւորս յանկեան ԵՂ. Հս. ուր և աղբիւր ինքնա-  
բուղիս. զամբարանոցն ի Հր. Մտ. յորոց վերայ կառու-  
ցեալ է ի վերջնոց՝ վարժարան մանկուոյ իբր 180 կամ  
200: Յարեւմտակողման պարսպին է մեծ դուռն մտից  
վանացն, որ հայի ուղղակի հանդէպ արեւմտեան դրան  
եկեղեցւոյն: Սա կանգնեալ կայ ի միջակի պարսպացն  
կամ վանացն, ըստ նորին ձեւոյ քառակուսի ընդարձակ,  
չափաւոր բարձրութեամբ ի վերայ չորից ստուար սեանց,  
յորոց վերայ ամբառնայ կաթողիկէն վայելուչ, որպէս և  
երեք այլ փոքունք իբրև զանգակատունք՝ ի վերայ երե-  
ցուն դրանցն չորիւք զանգակօք. երկուստեք սեղանոյն  
են փոքրաւանդատունք. վէմն պաղպաղուն ալապասդր է,  
բայց նկարուք տգեղացեալ՝ ի վերայ հիւսիսային դրանն  
գրեալ է յիշատակ վերջին շինութեանն. այլ Թուականն  
կարծեցուցանէ յամի 1631.

**Ի Թուականիս Հայկականի.  
Մի յորեղեան երկչրջանի,  
Եռակ տասանց որով վարի,  
Սա կառուցաւ քառակուսի.  
Չեռամբ Յոնան վարդապետի**

**Որ է յաջորդ յայսմ գահի.  
Բազում ծախիւք անթուելի.  
Չորիւք ամօք սա կատարի,  
Երեք դրամք ըստ խորհրդի,  
Կամարակապ զարմանալի.**

1 Քեդէնէր Առաքելոց գտակերս ասէ զեկարս, զորս ի զէպ է կարծել նկարեալս ի կնափայլ որմունս խորանին:



Անուամբ մեծին Ս. Թուռնայի .  
 Նման վերնոյնըն Սիովնի .  
 Սա մեզ շնորհեաց պարգեւ բարի  
 Զաստուածամուխ աջըն ճրի ,  
 Ամուրք պատուարք բոլոր թեմի .


Պաշտոնէից իւր հովանի .  
 Պարծանք է սա Գողթ գաւառի  
 Եւ ցնծութիւն Հայոց ազգի .  
 Նպաստութեամբ Տեառն Յիսուսի .  
 մի եռակի :

Իսկ ի վերայ հարաւային դրանն ի ներքոյ կաթողիկէին գրեալ է .

Իշխանութեամբ Պարսից ազգի  
 Շահ Հիւսէին թագաւորի ,  
 Դիւանբէկութեամբ Մուսարէկի  
 Որ էր տեղեալ Ագուլեցի ,

Եւ Յովհաննու առաջնորդի՝  
 Վերաիշխող յայսմ թեմի .  
 Որոց յաւուրս սա կանգնի .  
 Այս վայելուչ եկեղեցի :

Ի վերայ այս դրան ագուլեցալ է վէժ յունագիր արձանաւ , և ի հանդիպոյ պարսկերէն գրուած յորմն փոքր զանգակատանն : Իսկ յաջմէ և յահեկէ մեծի (արեւմտեան) դրանն գրեալ են անուանք շինողաց եկեղեցւոյն .




95. Ս. Թովմաս վանք Ագուլեաց .

Յիւեցէք Ագուլեցի քալանթար Ովանէան , վանքիս վէքիւ Հայրապետն ,  
 Մէլիք Ասկարխան , Մզտեսի Հայրապետն , Վարդանն , Աւարէլն , Ալեքսանն ,  
 Աղամջանն , Ովանէան , Նահապետն , Մելքոնն , Թասալին , Աղա-



միրզէն, Մաթեոսն, Ամիրն, Ղուլին, Մուշկին, Գուլպասարն. որք օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս :

† Յիշեցէք Ռամեցի Խօշայ Աւետիքն եւ եղբարքն իւր Նաւասարդն եւ Նառչն?, եւ երէցփոխան Վարդանն, եւ Գրիգորն եւ Պետրոսն, Փիրին, Նուրին, Արզանին, Վարդանն, Բարաքեան, Գրիգորն, եւ Տէր Գրիգորն, որ բազում օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյս :



96. Ագուլիք. — Եկեղեցի Ս. Թովմայի.

Ի վերոյ քան զսոսին ընդ մեծաւ պատուհանան փորագրեալ է միայն մեծատառ, ԹՎ. ՌՃԽԳ: Երբի վանացո ի հիւսիսոյ կուսէ կայ փոքր մատուռն հին ցածուն սեամբք երկրքումբք, զոր կոչեն յանուն աշակերտին Բարդողիմեայ Կուլմսի, և անդ համարին թաղեալ զնա. աւանդեն և գտեալ երբեմն ի բրածս տեղւոյն բեկորս աւրինաշաղախ քարանց ծրարեալս ի կտաւի, և վերստին ծածկեալ ընդ հողով: Պարիսպ ածեալ է և մատրանս, զորով են և գերեզմանք, և համարեալ է ուխտատեղի:

Գլխաւոր եկեղեցի Ագուլիքաց զարդիս՝ է Ս. Քրիստոս, փոքր, որ յիշի և ի գիրս յառաջ քան գլխտին վերայինու. Թիւն Ս. Թովմայի վանաց. աստ հաստատեալ է այժմ և վարժարան աղլկանց: Ի թաղի եկեղեցւոյս յամի 1682

Յովնանեան Շողոմեցի, որպէս թուի՝ երգիչն, ընդօրինակեալ է զգիրս Յովսեփոսի պատմութեան պատերազմաց Նրէից զոր յայտ առնէ իսկատիպ գրուածն (Թիւ 97): Ի նախագրեալ յիշատակարանի 1424 ամի՝ ընդ եկեղեցւոյ Ս. Թովմայի յիշին և Ս. Նշանք, ոչ գիտեմ՝ ի նմին մենաստանի գոլով եթէ արտաքոյ յայլ եկեղեցիս: Մի յեկեղեցեացն կոչի Ս. Աստուածածին, որ և Անսպառ, սակաւ ինչ արտաքոյ կալով աւանին, յարեւելից կուսէ ի ձորատափի, ի գեղազուարճ դիրս, վասն որոյ և զբոսատեղի է Ագուլեցեաց: Միւս եկեղեցի է Ս. Սիմեոն կամ Շմանոն յաւանամիջին, աստ որով կարծեմ և կուսաստան եղեալ. գտանին խաչվեմք յեկեղեցւոյս, համառօտ արձանագրութեամբք:

**Խաչա յիշատակ Փիրղուլի. ԹՎ. ՌԾԲ.**

**† Խաչա յիշատակ Բինիթին. ԹՎ. ՌԾԲ.**

**† Սուլբ Խաչա յիշտկ Զրտ... ն... ԹՎ. ԶԷ.**

որ է 1488, բայց երկբայեթ է թուականն:— Ս. Յովհաննէս եկեղեցիի ստորոտ լերին, անհարթ վիմօք շինեալ, բայց ճակատն և զմբէթ՝ աղիւսով, զանգակատունն՝ փայլ

տայարկ. նշանաւոր է դուռնն բազմագրուագ, մանր մա սամբօք փայտից, սատախով և փղոսկրիւ կիտուածեալ, յորում և գրուած յամի 1683.

**Յիշատակ է գուռնս այս Հախումին.**

**Եւ կողակցին եւ որդոց նոցին.**

**Աստուած ողորմի աշխատաորացն. ԹՎ. ՌՃԼԱ:**

է անդ և տապանագիրս այս 1663 ամի.

**Այս է տապան Շայմուրադին. ԹՎ. ՌՃԺԱ.**

Միւս եկեղեցիք և մատուռք Ագուլեաց կոչին, Ամե մափրկիչ, Ս. Աստուածածին փոքր, Ս. Մինաս, Ս. Ստե փանոս, Ս. Յակոբ Աշիեան, Ս. Հնձանաց լոյս: Մի յայս ցանէ թուի Ագուլեաց Ներքին Եկեղեցին որ և Խոզաճո թի եկեղեցի կոչեցեալ և յիշեալ յԱռաքել պատմէէ (Գլ. ԻԷ), ի պատմութեան նահատակութեան Տեառն Ան դրէի, որ հայրենեօք ի Նախնաւանայ էր, և զաղթեցաւ այսր ի ծնողացն, և ի Մովսիսէ (յետոյ կաթողիկոսէ) կարգեցաւ ուսուցիչ մանկուոյ. զորոց զազաթունս գեր ծեալս նշմարեալ Շահ Աբասայ ի գալն այսր յամի 1617, և քննեալ թէ ո՞ զայն արար, յառնուրն Անդրէի յինքն զվնասն, (եթէ էր վնաս), մատնեցաւ ի զանս և ստիպեցաւ յուրացութիւն. զոր ոչ առեալ յանձն և քաջալերեալ ի ծնողաց իւրոց՝ առաքինարար նահատակեցաւ (յ՛18 նոյն յեմբերի):

Աւանդէ Առաքել պատմիչ ի վարս Պօղոսի վարդապետի Մօկացոյ, միոյ ի նորոգողաց անապատական կե նաց, եթէ ի քարոզելն նորա յԱգուլիս՝ ի սկզբսն ԺԷ դարու, կայր եկեղեցի մի դաստակերտ Ս. Թադէի ա

ռաքելոյ, որպէս ասէին, փակեալ դրամբ, զոր չէր լեալ հնար բանալոյ. իսկ Պօղոսի ցայգապաշտօն արարեալ ի կիրակամբտին, և յերկրորդում աւուր Դաւնբացէք, բա իեաց երիցս և ինքնին բացաւ դուռնն. ընդ որ հորդան տուեալ եմուտ ժողովուրդն, և կատարեցին զպաշտօն աւուրն և զպատարագ. յորմէ և մեծապէս հռչակեցաւ համբաւ նորա, մինչեւ շարժել ի նախանձ զկաթողիկոսն Մեքքիսեդ և զայլս. և յետ ոչ սակաւ ժամանակս քարոզելոյ նորա աստ յԱգուլիս և ի սահմանսն, բունադատեցաւ հրաժարել և մեկուսանալ ի Մեծ Անապատն Տաթեու, որպէս և այլուր յիշեցաք:

Չատ յեկեղեցեաց՝ նշանաւոր շինուած է Կրանուրջն քարեղէն, որ ի շուկայն, վայելուչ կամարաւ ի գեղադիտակ դիրս (տես յէջ 334). աստի և անտի արձանա գրեալ է յիշատակ շինութեանն յամի ՌՃԿԲ (1713), հայերէն և տաճկերէն. զառաջինն նմանագրեալ է գերմանացի նկարիչն (Քէսդնէր), այլ ոչ աներկբայ է վերծանումն. նշանակին ի նոսին անուանք և տուրք սատաւորաց շինութեանն.

**Աղէն տվեց Ժ Թուման, Մանգասար տվեց Զ Թմ. Զարի տվեց Զ (?), Սիմոն (?), տվեց Դ Թմն, Հուռուճն տվեց Գ ոսկի. Դարալէ տվեց Ա ոսկի. Էլսիբ (?), տվեց ԺԵ ոսկի. Անասիոյէրս տվի... Սիմոն (?), ... Թ. ՌՃԿԲ:**

Գոյ միւս եւս կամուրջ մերձ ի Ս. Թումայի վանս, այլ փոքր և աննշան: Տեղի շուկային մասն է հնոյ և մեծի գերեզմանատան, զորոյ և զայլ մեծ մասն կամ էր զարդիս յարդարել ի պարտէզ հասարակաց, փոխադրելով զտապանաքարսն ի շինութիւն և ի նորոգութիւն եկեղեցեաց:

Ի պատմական յիշատակս Ագուլեաց վերջին դարուց (զի առաջինքն անյայտ են), գտանեմ զանուանս գլխաւորաց ոմանց նորին, որպէս թուի ի ԺԶ դարու, որք թափեալ ի գերողաց զաւետարան մի վարագայ վանաց՝ առաքեն անդր. և են «Սուրղաթմիշ և Սաթըլմիշ և Տիրատուր

» յադգար (աքտեր) և Յօշոտշ Շաքար... վասն այնոր ո ողարկեցաք յԱգուլեաց ի վարագ, որ լսել ենք թէ » վարագադիրքն գերի չէ լինել. և զմեզ յիշեօյիք առաջի » սուրբ Նշանացդ »:— Յայսմ ԺԶ և մանաւանդ ի յաւորդ ԺԷ դարու, ընդ Զուղայի՝ և յետ աւերման նորին, երեւի բարգաւաճեալ յոյժ Ագուլեաց՝ առեւտրիւ վաճառականութեան և փարթամութեամբ. և այս շնորհիւ խնամարկութեան Թագաւորացն Պարսից. որոց, որպէս տեսաւ ի վերդ՝ անդոտին ի ԺԶ դարէ խաւ կարգեալ էր զտեղին, այսինքն սեփական ինքեանց հարկատու. այսպէս թուի արարեալ և Շահաբասայ. վասն որոյ և յեր

Ժէ գարուն և ի սկիզբն ԺԸ՛ն գարձեալ քաղաք անուանի ի յիշատակարանս և ի պատմութեան Դաւթի Բէկի: Սա՛ քանզի Թուրքք ամրանային ի կողմանսն, առաքեաց ըզգորավարս իւր զՄխիթար և զՏէր Աւետիս ի վերայ նոցա, որոց եկեալ բանակեցան անդ ի վանս Ս. Թովմայի. եկն և Դաւիթ, և խիւսեաց զգորական տեղւոյն. գային և քաղաքացիքն համբուրել զձեռս նորա, ընդ որս և քաղաքապետն (մէլիք) Մուսի. որ գաշնադիր էր Թուրքաց. վասն որոյ կասկածեալ Դաւթի կամէր ընդ կառափն հանել նորա, այլ միջնորդութեամբ մէլիք Փարսադանայ՝

**Ա**րդ գրեցաւ զսա իբրև  
արուլիս Է հաղանեաւ արջ  
գրեաւսնորի սք վային քի:  
Է-իւնն ամբողջս արբոյն թալ  
մոյի ստապեղոյ. որ զձեռն իւր  
վեռաց իմք կտն կեճարին քի.  
Կառչնորդութե ԼՄՆ արտար  
ութի արհի եպիսկոպոսի:  
Ի հայրապետութե ԼՄՆ եղի  
աղարու կլծկնի. որ յայսմ  
ամի եղանեան սգոստութի Խ  
եկեալ բնակեցաւ իմք ամբո  
նն Էզմաճիս. ի թունականիս  
հայոց Էճ լա. ի թագաւոր  
ութեն պարտոց շահ պէշմանին.

**Ա**րդ գրեցաւ զսա ձեռամբ  
յով նախնան գայրի. ի գեւ  
ղին շտառոց: և հայրն իմ ըզ  
տէք յահանն հրանգուցեալն  
Խճ: և զձեռուն իմ յիշեալեք  
Խճ բերան: յիշալոր յիշեալ  
լիջիս ի սեռանն:

97. Մատնան գրեալ ի փանս Ս. Թովմայի.

եթող նմա: Երեցս յայնժամ և չորիցս յարձակեալ Օսմանեանց յԱզուլիս, հալածեցան ի Դաւթեանց. ապա ի հասանել զորաց բազմութեան ի թիկունս նոցին և միտանգամ ի մարտ միտի, լքին Պարսիկք զՀայս. իսկ սոցա արիարար դիմակալեալ՝ վանեալ զթշնամիսն, յետս դարձուցին և զփախտեայ նիզակակիցսն, և զոչ դարձողաց Խանից նոցին դուռնս և զընտանիս յաւարի առեալ վարեցին ի Հալիճոր: Այլ յետ աւուրց դաւաճան քաղաքապետն Մուսի գրգռեալ զքաղաքացիս ետ հը-

րացանաւ հարկանել զհամազգիսն բանակեալս ի Ս. Թովմաս, սպանանելով և զՄէլիք Փարսադան՝ որ գարձեալ միջնորդ խազադութեան կամէր լինել: Յայնժամ զորք Դաւթի քակեալ զկողմն մի պարսպի վանացն՝ խոյսեառն, զճանապարհայն յաւարի հարեալ զոր ինչ և զըտին զԱզուլեցեաց, ընդ որս և 1300 ոչխարս զենիս. և վերստին եկեալ ի վերայ քաղաքաւանին՝ կրկին դարձան և ի բաց գնացին, քան զի ոչ կարացին արտաքս ձգել զԱզուլեցիս ի գրգիռ մարտի: — Յետ իրր տասն ամաց յայց ել Ազուլեաց յարահամ կաթողիկոս, օրպէս պատմէն. « Եւ ի նոր կիւրակէի, զի յանուն Ս. Թովմայի » Առաքելոյ էր վանքն, հիանալի և զարմանալի տեսողաց » զի և որդեակն իմ առաջնորդ նոցա Յովիմանէս վար » դապետն պարկեշտաբարոյ հեզահոգի և հանճարեզ » վաղածանօթ գոլով ինձ, ի սէր նորա և վասն ախտի » վանիցն՝ որ լինի ի նոր կիւրակէի, և վասն ժողովոր » դեանն աղաչանաց, մնացի անդ այսքան օր. այլ և ի » չորս եկեղեցիս՝ զոր սենին, հրաւիրեցին զիս, ի կիւրա » կէին և յայլ պատշաճաւոր օրերն՝ ետուն ինձ մատու » ցանել պատարագ, և օրհնել զնոսա, որպէս և եղեւ » իսկ. որ և ի նոյն օրն կարմիր կիւրակի՝ մատուցեալ իմ » զսուրբ պատարագն, ձեռնադրեցի եպիսկոպոս զաւագ » երէցն Ազուլեաց զՏէր Թուլմայն՝ միաբան սուրբ Էջ » միածնի »: — Յիշեալդ Յովիմանէս վարդապետ ձեռասուն Արրահամու, յետ մահուան նորա եղեւ տեղապահ աթոռոյն յամի 1737, ի մերժման Ղազարու կաթողիկոսի յերեսաց թահմազ Ղուլի թագաւորի: — Յետ մահուան սորա յամի 1781 (հոկտեմբ. 12), Ազատ խան կողմակալ Ատրպատականի՝ Աթղան զօրականօն յաղարտ վարեաց զբարգաւաճ քաղաքաւանն, նախճիր մեծ գործեալ, և վարեալ գերի բազում, որով անչքեցաւ և ամա յացաւ տեղին. զի և ոչ սակաւք ի գերծելոցն գաղթեցին յարեւմուտս ի բաժին Օսմանեանց ի շահաստան քաղաքս և ոմանք ի Հնդկիս: Ժամանակակից ոմն այսպէս պատմէ զանցս աղետիցն, յիշելով և զանուանս ամենայն եկեղեցեաց աւանին:


Սուգ եւ կոծ ի վերայ գիւղաքաղաքիմ Ազուլեաց,  
որպիսի լինելմ.

« Աւաղ կարդալով սգալից սրտիւ, արտասուաթոր աչաք և թարչամեալ բերանով, վայ տալով յանձինս մեր, յայտ առնեմ սիրելի հարցդ և եղբարցդ, և ի սմա հանդիպողացդ ամենեցունցդ: Յայտ իսկ է, որ յերկիրն Արեւելեան յառաջմանէ էին փարթամ հարուստ և ամենայն ընչիւք ճոխացեալ և բազում զանազանիւք զարդարեալ, ևս առաւել յերկիրն Նախիջեանու և ի գիւղաքաղաքն Ազուլիս. որ սա էր յոյժ և ամենայնիւ պերճացեալ ճոխացեալ և առատացեալ. և յայս գիւղաքաղաքում կայր կառուցեալ սրբալէն գմբէթով և խաչ զլիտն կանգնեալ եկեղեցիք, որոց յատկապէս ծանուցանեմ որքան լինելն, և որում անուամբ կառուցեալն: Նախ՝ Աթոռն մեր, որ է բազում պայծառութեամբ շինեալ և գահիւք զարդարեալ, և անուամբ Սրբոյն Թովմայի



Առաքելոյն կառուցեալ, որ զայս Ս . Տաճարին փառաբանիչքն էին սեւազուլիք, և ի գաւառին Գողթնեաց հովուապետ և առաջնորդ կարգեալն ի սմա բնակէր . Երկրորդն է Սրբոյն Յովնաննու Մկրտչին անուամբ կառուցեալ . Երրորդն Սրբոյ Առաքելոյն Շմառնի . Չարրորդն Սրբոյն Յակովբայ Արփեան . Հինգերորդն Սրբոյն Փրկատապարհի . Վեցերորդն Սրբոյն Ստեփանոսի Նախավկայի . Եսթներորդն Սրբոյն Մինասայ Չորավարի . որ այսօրիկ էին բազում զարդուք զարդարեալ և ամենայնիւ բարութեամբ լցեալ և անօթիք ճոխացեալ . որ միշտ Ս . Խորհուրդն և ամենայն փառաբանութիւն կու մատուցանէին տիւ և գիշեր : Եւս այլ կայր յեզր գիւղիս կառուցեալ անուամբ Ս . Աստուածածնայ . որ այս Ս . տաճարս է տեղի ուխտից, որ ամենայնում աւուր փառարանութիւն կատարի . կայ և ի մէջ գիւղիս կառուցեալ տաճար՝ կրկին անուամբ Ստոր Աստուածած

նայ, որ և տասի կոչանաց երգս ելանէ : Եւս կայ փոքր տաճար անուամբ սրբոյն Աննապիլի . կայ եւս փոքր տաճար անուամբ Սրբոյ Յակովբայ Մփրեայ Հայրապետին : Որ այս գիւղս այսպիսի բարիք ունեւում իբր տկարացեալ կեանք կենցաղավարի . բայց մեք հպարտացեալքս և գոռոզացեալքս լցաք ամենայնի շարութեամբ, որ սիրտք մեր բնակարան սատանայի արարաք և ստուածայինսն մոռացաք, այլ միշտ սատանայի հետեւեցաք . վասն որոյ ամենազարն Աստուած սաստկացաւ ի վերայ մեր . այսինքն՝ նախ ետ ի ձեռս անիրաւ դատաւրաց, որ միշտ հարկապահանջութեամբ վշտացուցանէին և պլսպէս տառապանս յարուցին ի վերայ մեր . բազում արք և կանայք ի ներքոյ փայտի մեռան, և բազումք ևս ցիր և ցան եղին . իսկ մեք մնացորդքս եղաք չքաւորք . սակայն այլ ոչ դարձաք ի մեղաց մերոց, կըրկին ևս անօրինաբար վարեցաք, որ և Աստուածն ամե



ՅՑ . Ս . Յովնաննու եկեղեցի Ագուլեաց .

նայն ետ սաստկութիւն . այսինքն սով և սղութիւն, որ և բազումք ևս եղին՝ սովամահ . իսկ մեք յիմարացեալքս կրկնապատիկ յառաւելացուցաք զանօրէնութիւնս մեր, որ ամենայնի բարեացն հեռացաք և ի պէսպէս մեղօք շողախեալ եղաք, և Արարիչն մեր կրկին ձանձրացուցաք, որ առաւելապէս բարկութեամբ շարժեաց, որ ստուածասաստ պատուհասն ետ . որ և ի սին ամի ոչ գոյր Թագաւոր յերկրի մերում, բայց մի ոմն ի մարդադէմ գազանից անիրաւ դատաւոր և սաստիկ պահանջող և քարափրտ բռնաւոր, որ և ի ամենայն շարութեամբ, ի ցեղէն Աղուանից Ազատ խան կոչեցեալ, որ և սա էր յերկրին տիրապետ . Աստուածն հզոր մատնեաց ի ձեռն սորա, որ այս պատառատու գազան բազում հեծելօք և անթիւ զօրօք Թօփիւք և Թօփխանօք եկն ի վերայ սգով լցեալ գիւղիս Ագուլեաց . Թէ նոյնպէս կայր ի քաղաքի մերում բազում մարտնչողք, բայց Աստուած մեր բարկացեալ

էր, ոչ ետ հանդուրժել, այլ սաստկացոյց սիրտն անօրէն բռնաւորին, որ ի մէջ երրորդ ժամուն, Ս . տաճարն քայքայեալ ջախջախեցին, և Սրբոց մաքուր մասունքն ամենայնն գերեցին . փառաբանչաց բազումքն ոուր սուտերի արարին, և անթիւ քրիստոնեայք արք և կանայք, երիտասարդք և մանկունք սրով անցուցին . որ զամենայն հողն արեամբ ներկեալ շողախեաց, և զաւուրս երիտայս գիւղս բնակեցան . Թէ եկեղեցիք և Թէ բնակութիւնք ամենայնի մերկացուցին որ իբր մերկ ի մօրէ ծընեցեալք : Եւ յետ այսքան սրախողութեան յետ մնացեալ քրիստոնեայքն կողոպտաբար գերեցին . որ Թէ ողորմելի Ագուլեաց և Թէ բոլոր շրջակայ գիւղարէիցն մինչ ի ՌԲՃ (1200) քրիստոնեայ գերեցին, և Ս . տաճարն խանգարեցան և եղին անմարդարնակ, իբր Թէ տասնամեան տւերեալ : Որովհետեւ այսպիսի բարկութիւն եկն ի վերայ մեր, ուրեմն պարտիւք մեք շարեօք



լցեալքս. և մեղօք շարախեալքս դառնամք ի մեղաց, զզլամք և մեղայ գոչեմք, և մեր զանօրէնութիւն լալագին խոտտովանիմք, որ զԱստուածն ամենայն ի գութ շարժէ, որ մեր գերեացն ազատութիւն պարգեւէ:

» Եւ այս եղկելի սուգս և անախորժելի տառապանս և աններելի ցաւքս և անբժշկելի վէրք եկն ի վերայ մեր ի թուականիս մերում ՌՄ, յամենանն. հոկոբմբերի ԺԲ, և օրն շարաթ»:

Ի խաղաղել երկրին Պարսից յերեսաց հակառակամարտ գահասիրացն, զիւր եղեւ և Ագուլեցուց հանգոյն այլոց՝ պարապել վերստին ի հայրենի վաստակս և ի վաճառականութիւն, յոր և ցարդ նկրտին յաջողութեամբ, առաւելապէս ի շահաստանս Ռուսաց ինքնակալութեան երթալով, և տանելով զվաճառս իւրեանց. սոցա գլխաւոր և գրեաթէ միակ՝ է մետաքսն, արգասիք ընտիր թըթենեաց իւրեանց, որոց մի ազգն ընտրելագոյն թեղանայ

կոչեցեալ քաղցր է և գեղնագոյն պտղով, զոր և շորացուցեալ պահեն յուտեստ. միւս ազգն չատ կոչեցեալ մթագոյն և ոչ այնչափ քաղցր՝ վարի ի պէտս ցըւոյ: Պատուականազոյն քան զպտուղս՝ տերեւակեր շերամն էր, զորոյ սերմն ընտիր՝ գրեալ է հատին սպառեցին Փռանկք՝ գնոյ առեալ, և զարդիս Ագուլեցիք ի Խորասանէ տան բերել զօրմն. դարմանեն, և ինքեանք հանեն զթելն և գործեն զմետաքսն. այլ գործարանք նոցին ստորին են քան զՌուսոտայն: — Բաց ի մետաքսէ առաքեն ի վաճառ և ասր, քանթակ, կոսախս (չիթ) և մեղո: Սակայն այդու ամենայնիւ (ըստ փոփոխել ժամանակի և ճանապարհաց և օրինաց վաճառականութեան), ոչ կարեն հաւասարել յաջողութեան և հարստութեան նախնեաց իւրեանց, որք ոչ միայն ի Ռուսաստան այլ և ի զանազան կողմանս և շահաստանս Եւրոպիոյ երթեւեկէին: Մանօթագոյն մեզ ի սոսա է քաղաքս Վենետիկ, յորոյ դիւանս և յեկեղե-



39. Ագուլիս — Դռան Ս. Յովհան եկեղեցոյ.

ցուլ Հայոց (ի Ս. Խաչ) գտանին ոչ սակաւ յիշատակք Ագուլեցի վաճառականաց: Այսպիսիք են Մելգոն Մէլիքեան կամ Մալումեան, որ յամի 16Ե0, (օգոստ. 6), գործակալ իւր կարգէ զՂազար որդի Պետրոսի և դատավար ընդդէմ Թոմայի որդւոյ Ոսկանայ. եւ ի 24 հոկ.

տեմբեր) զԱղաւէտ կամ Աղասիկ որդի Աղամալի, վասն այլոյ ինչ խնգրոյ. ի միւսում ամի ի նաւելն ի Զմիւռնիս հալանւպացի նաւու՝ մեռանի ի ծովու: — Նուրի Նուրնց, մեռեալ ի մաքսատան (Lazaretto) կղզեկի քաղաքիս յամի 1676, և անդէն թաղեալ և տապանադրեալ:

### Այս է տապան Ագուլեցի Նուրենց Մարտիրոսի որդի Նուրին. Թ. ՌՃԻԷ.

— Ոսկան (Կոստանդին) մականուանեալ Աղուզ, որդի Տէր Մարտիրոսի որ ի բազում դէպս յիշի ի քաղաքիս՝ յամէ 1674 ցամ մահուանն (80ամենի) ի 1731. սա զատ ի սպասուց նուիրելոց յեկեղեցին Հայոց, իւրովք ծախուք տայ տպագրել ի Վենետիկ Անտարան՝ յամի 1686, ընտիր տառիւք. առնէ կտակ գրեալ հալերէն ի ձեռն Խաչատրոյ մեծանուն վարդապետի եկեղեցապանի, (զոր

Միսիթար Աբրայ թարգմանեալ է իտալերէն), որով յետ բախելոյ զամենայն ինչս իւր յողորմութիւնս, ասէ. « Ես » իմ յօժար կամօքս կացուցանեմ և հաստատեմ ժառանգ » իմ զիմ ամենասիրեցեալ հոգիս: Կացուցանեմ, հաստատեմ, յայտնեմ իմ յօժար կամօքն զիմ գովիսարո » և կատարիչս կտակին իմոյ, զպարոն Պաղին և զԵրան » թի օղոռ պարոն Բօվանեան. և աղաչեմ զի յօժար կամօք


» Հոգայցեն զհոգի իմ, զոր յանձնեմ ամենատուրք Երրոր  
 » դուքեան, զի բարեխօսութեամբ Սրբուհւոյ Ատուռա  
 » ծածնին և ամենից Սրբոց՝ կարասցէ հասանիլ յերկնա  
 » յին երանութիւն. որում և զձեզ արժանաւորս արաս  
 » ցէ. ամէն. Ես Ագուլեցի Մարտիրոսի որդի Ոսկանս,

» որ ֆռանգայվար կ'ասեն կոստանդին դէ Մարտին,  
 » իմ յօժար կամօքս վերայ գրեալ կըտակըս արի. ինձ դա  
 » պուլ է, որ և մհրեցի » Թաղեալ է ի նմին Ս. Խաչ ե.  
 կեղեցւոյ Հայոց, (յ'31 մայիս ամսոյ, ըստ նոր տօմարի),  
 այսու տապանագրաւ.

**Այս է տապան Ագուլեցի Մարտիրոսի որդի Ոսկանին, որ փոխեցաւ առ Գրիստոս. Թ . ՌՃՀ . Մայիսի Ի .**

Յիչէ Ոսկան ի կտակի իւրում և զայլ ոմն Ագուլեցի Յովհաննէս անուն: — Այլ Ագուլեցիք յիշեալք ի վենետիկ յեւ ժէ դարու (1694-97), Մարկոս որդի Յովհաննէս, Եղմուր, Խաչասուր, եւ այլն: — Այլ քան զամենայն վերոյգրեալսն երեւելի հանդիսացեալ է ճախութեամբ, ազնուութեամբ և ազգասիրութեամբ Նա. հապետ որդի Գուլնազարայ, որ յիշի յամէ 1653 ցամն 1694, յորոյ տարէմտի աւուրն մեռեալ է (ամաց 65, ջրգողութեամբ ախտացեալ). բազում սպասս նուիրեալ է ազգային եկեղեցւոյն (Ս. Խաչի), զատ յայտց Յայս. մատարք մի տուեալ գրել ի Կ. Պօլիս յամի 1676, ծա

խեալ 110 դուրուշ (ըստ ժամանակին իրրեւ 800 ֆր.) պայման եղեալ՝ զի թէ ոք կամիցի բառնալ կամ տպագրել, տացէ նախ հաւասար զնոյն նշանակելոյ՝ անօթ ինչ յեկեղեցին: Ուսումնասիրութեան նորին և բարեպաշտութեան վկայեն և գրեանն զոր ետ տպագրել. որ պիտիք են թուղթն Դաշակց յամի 1695, գործակցութեամբ Զուղայեցի Խարտաշենց պարոն Անտոնին, Պարզարևոտիան Սարգսոսց՝ ի ձեռն Տեառն Յովհաննէս վարդապետ ի Կ. Պօլսեցոյ, յամի 1687, յորում նախա կարգեալ է զպատկեր իւր այսու տարազու, և յերկար չափական բանիւ յիշատակագրեալ.



100. Կամուրջ յԱգուլիս.

« Ես Նահապետ նուաստ հոգի,  
 Որ եմ որդի Գուլնազարի,  
 Գեղջիւ բընիկ Ագուլեցի,  
 Զոտանաւորս շարագրեցի  
 Ի նախերգանս Մեկնելի  
 Բուն Սաղմոսին մեծին Գաւթի.  
 Զոր փափաքմամբ յոյժ խնդրեցի  
 Եւ օգնութեամբ Տեառն գտի.  
 Տեառնելով ի յայլ լեզուի  
 Յօժարեցայ յայսրմ բանի.....  
 Աշխատանք Յոհաննէսի .

Ստամպոյցի վարդապետի...  
 Բազում գրամբս վատնեցի  
 Ի նեղութեան ժամանակի  
 Մինչդեռ ըզոս տպագրեցի  
 Եւ ի վախճան իւր հասուցի »:  
 Գրամբն ծախեցան, որպէս արձակ յիշատակարանն ասէ, « Ի ձուլումն գեղեցիկ տառիս, ի շինումն նորա » կերտ Տպարանիս, ի գտումն պատրաստական թըզ. » թոյս, և ի յօրինումն ամենայն իրաց պիտանաւ » րաց..... Յիշեցէք ևս զԱգուլեցի Մարտի Աստուածա » տրի որդի զսպասաւորն իմ զԹովմայն, որ ամենայն Հա

» նիւ անձանձիր աշխատեցաւ ի տպագրատանն և օգ-  
» նեաց արբազրութեան սորին, և ձեռնառւ եղև միշտ  
» Յոսեփէս վարդապետի »: Զսպասաւորս զայս գործա-

կալ իւր արարեալ է Նյահայետ, և կտական պարգեւէ  
նմա 40 ոսկի վենետիկեան. իսկ վասն հոգւոյ իւրոյ՝ (նշա-  
նակ բարեպաշտութեանն և փարթամութեան), զատ ի



101. Նյահայետ Ազուրեցի որդի Դուրյանգարի, յամի 1687.

տաճմանեղեացն ի կտակակատարէն, պատուիրէ ի սա-  
կաւ աւուրս տալ մատուցանել երկու հազար պատարա-  
զքո. թողու նմա 800 դուկատ. ընդհանուր ժառանգ կար-  
գէ զԹառունս իւր, զորդիս դստեր իւրոյ թէրիֆաղայ

և զփեսային Աւարելի օրդոյ Թէսսալեայ Ազուրեցոյ.  
Փափագէր թաղել ի Ս. Խաչ, յոր սակս կտակէ 200 դու-  
կատ, և սպասաւորի իւրում 250. բայց ոչ գիտեմ վասն  
էր ոչ յեկեղեցւոյն Հայոց՝ այլ թաղեալ է ի մերձաւոր

Ս. Յուլիանոս Թաղերիցական եկեղեցւոյ Լատինաց՝ յուրոյն տապանի: Ինչք և վաճառք նորա գտանէին ի Կ. Պօլիս, ի Զմիւռնիս, ի Հոլանտա և ի Լիվոնոյ: —

Ի վերջնում յայտմ քաղաքի Տոսկանայ եւս գոն տապանք և տապանագիրք Ագուլեցւոց ոմանց, որպէս յեկեղեցւոյն Հայոց.

**Այս է հանգստարան Ագուլեցի Մկրտչի որդի Սիմոնին. հանգեաւ ի Տէր Թիմէ ՌձԿԲ. սեպտեմբերի Ժ.**

Բազում ամօք յառաջ քան զնա, մինչ շե էր շինեալ եկեղեցին Հայոց, Փանոս Աղաջենց յամի 1668 Թաղի

յեկեղեցւոյ Փրանկիական միանձանց, որպէս ցուցանէ տապանագիրքս.

**Այս է հանգիստ Ագուլեցի Աղաջենց Խաչատուրի որդի Փանոսին, որ հանգեաւ ի Քրիստոս ՌձԺԷ. հոկտ. Ծ. ամաց.**

Յիշին ընդ այլ Սիւնեցի նուիրատուս վանաց Գաղատիոյ՝ ի Փոքր Ասիա, և Ագուլեցիք. որպէս Ծատուր ոմն Իկէս ԺԷ դարու. յորում ժամանակի և Շահնազար սարկաւազ Ագուլեցի ընդօրինակող գրոց ինչ Տաթեւացւոյն: Ի յիշատակելս զհանգիստ Ագուլեցւոց յօտար կողմանս, չկամիմ զանց առնել և զմիով՝ զորոյ տապանագիր միայն գաի և ոչ գիտեմ ուր և որպէս. այլ յօրինուած մանին գուշակէ զնոր ոճ, Թերեւս մերոց Հարցի վենետիկ. և է այս.

« Կարթ մահուն կարծրառասան Որսայ յայս անձուկ ուռկան՝ Զծերունիս յոյժ պիտեւան Մահտեսիս Յօսէփ զիպան. Էր որդի անձին Ոսկան<sup>1</sup>, ՅԱգիշեաց արեւելեան. Հոգվերտի տոհմին պատկան, Դիւցազինս վեհանձնական: Սա գովուց ճահ եւ արժան, Զի բարեօք էր ուռնական.

Աստ ժրտէ աղերսարան Աւ ասել զՏէր ողորմեայն » :

137. Երկու մղոնաւ չափ ի հարաւոյ բնաւանին Ագուլեաց կայր Դաշտ գիւղ, յիշեալն յարձանագրին Ս. Թովմայի, « Մերձ յԱգուլիս և Դաշտ գիւղ գովեալս. զորի միւլցի 1820—5 ամաց՝ գնեցին Հայք յԱպպազ Միրզայէ Թազաժառանգէ Պարսից, և կոչեցին Ներքին կամ Ստորին Ագուլիս. են արդ ի նմին տունք իբր 200, համակ Հայոց. երեք Եկեղեցիք, Ս. Երրորդորդիւն, Ս. Սարգիս և Ս. Միհաս. Հուպ ի գեօղս յայս ի Մ. կուսէ յանձըրպետս Տրունեաց ամբառնայ Խարոնք՝ լեառն 4378՝. ընդ որով ասեն լինել ստորերկրեայ ուղի որ տանիցի հանել յեզր Երասխայ. — Յելս կոյս ԺԷ դարու գտանէին ի վենետիկ և Դաշտեցի վաճառականք, Յովսէփ և Մա նուկ որդիք Սիմոնի, յամի 1689, Յովհաննան, 1697, նուիրատուք Ս. Խաչ եկեղեցւոյ Հայոց, որպէս և Մկրտտում, որ յամի 1698 տուեալ է նկարել զպատկեր Մըկրտտութեան Քրիստոսի, և ի ստորեւն գրեալ.

**ՅԶ. (յիշատակ) է Խապալանցի Դաշտեցի Մկրտումին եւ որդի Յարու Թիւնին.**

Ի նմին եկեղեցւոյ Թաղեալ է և Աճապխան (Աննա) զուսոր Դանիէլի Դաշտեցւոյ, կին Ռափայեցի Բաբուս.

մեց, վախճանեալ յամի 1773, որպէս յայտ առնէ և տապանագիրն.

**Այս է տապան բարեպաշտի Կնոյ Բաբումէնց Ռափայէլի. Պարկեշտ տիկնոյ Աճապխանի, Հանգեաւ ի Տէր յամին 1773. Դասեր Դաշտցի Դանիէլի, Ի յուլիսի 15.**

Կայ և ի Լիվոնոյ յեկեղեցւոյ Ս. Գրիգորի՝ տապան կարեւոր արձանաւս.

**Այս է տապան հանգստեան Դաշտեցի Գասպարի Որդւոյ Յովանջանն, որ հանգեաւ ի Քրիստոս ամաց Զից, եւ աւելի. Քանզի սա երգեաց քաղցրանուագ ձայնիւ ժամակարգութիւն եւ՝ դպրութիւն սուրբ պա-**

<sup>1</sup> Ի մուսուլմանական եկեղեցւոյ միոյ վենետիկոյ, ուր ոչ սակաւ Հոյք Թաղեալք են անգաստին ի ԺԶ դարէ, նշանակի իտալուէի վիճ-


գեանիս՝ սրբի Յուսէփ Ուլո, d'Iseppo Oschan, մուսուլմանաց 86, ի սկիզբն զարուս (3 նոյեմբ. 1806) և Թուր կին Ագուլեցւոցս:



**տարագին . Հանգեաւ ի Տէր ամի Տեառն 1746 , ամսետնն մարտի 31 , ի Լոննո .**

Ընդ մէջ վերնոյն և ներքնոյս Ազուլեաց՝ մերձագոյն ի սա կայ Հանգրուանն կամ փոքր շինատեղի Դիգա կամ Միրգա - Ճեաֆէր Դիգե անուանեալ, յորում տուն մի միայն բնակիչ նշանակի ի վիճակագրութեան Շորէնի. իսկ յաշխարհագրի 1873 ամի երկու տունք և 10 ողիք, Թաթարք: — Միջոց կամ ի միջոցի Ազուլեաց և Երաս. խայ է կողեցեալն ի պատմութեան Դաւթի բէկի՝ Մա. ՐԱԼՈԼ ԴԱՂՍԻ, ոչ գիտեմ յէր սակս կամ յոյր անուն, բայց զհնութեան ունի ձայն:

Յաւարտ տեղագրութեան և յիշատակաց Ազուլեաց՝ զոր վաղագոյն հաւաքեալ էր իմ, յաւելաւ աղէտալի ար. կածն, ի 21 մայիսի = 3 յունիսի 1884 ամի, յետ միջօրէի. նախ կարկուտ ձուաչափ մեծութեամբ, որ սպականեաց զայգիս աւանին և եհար զգեհս հօտից Նիգեդեհի. ա. պա տեղատարափ ուժգին, որ վարարեալ յարոյց զգե. տըն, և անհնարին ոաստկութեամբ հեղեղեաց զմեծ մասն աւանին, իրատար արարեալ ոչ միայն զժառա. ստան և զայգի, այլ և տունս իբր 70 հիմնովին կամ մե



102. Շիրիմ մերձ յՈրդոնատ.

ծաւ մասամբ, ընդ որովք և 44 ողիք կորեան. և լցաւ ա. ւանն տղմով, և մանաւանդ սեաւ սզով, ի վերայ կորու. տեան գեղեցիկ այգեացն և բնակարանաց, միլիոն կամ առաւել ֆրանգաց արժէից, ի գեղեցկագունից եւս մա. տաղ հասակաց անկանգնելի Թառամելոց, զորոց ողբա. լով գրեցին լրագիրք ժամանակին, որպէս Մշակ (ի թիւ 58 ԺԳ տարւոյ), և Արձագանգ (ի թիւ 23 Գ տարւոյ),

առ որս երթիցեն խնդրողք մանրագոյն եւս գիտելեաց արկածիցն: Ի նպաստ մնասելոցն և ի դարման՝ հան. գանակութիւնք եղեն յայլ և այլ քաղաքս, և ձեռն արկին ի վերանորոգութիւն: Սակաւ աւուրքք յետ աւերածու. հեղեղին վախճանեցաւ յԱզուլիս՝ հիմնարկու վարժարա. նաց տղայոց և աղկանց Աւետիս Տէր Մկրտչեան, ա. մաց 93, այր փարթամ և շինարար:



## Գ. ՎԱՆԱՆԻԱԶՈՐ = ՏՐՈՒՆԻՔ = ՏԱՍԴԻՆ

138. Սակաւ ինչ ընդարձակագոյն քան զԱզուլեացն և երկարագոյն է ձորակն որ յարեւմտից նորին, նմանապէս զսպեալ ի միջի երկարաձիգ պարսպաց լեռանց, և նոյնպէս զուարճացեալ այգեօք և պտղաբեր ծառովք, յորս առաւելապէս գովի Միտրան ընտիր, և առատագոյն եւս ջրով ոռոգեալ. վասն որոյ ծանօթագոյնն և երախտաւոր ի տեղացեաց Թովմաս եպիսկոպոս՝ առաջնորդ Ս. Խաչին, ի յիշելն զհայրենիսն ի պանդխտութեան յօտար աշխարհ (Հողանտա), միշտ կոչէ վայելոյզ կամ ամենափայլեալ Չոր Վանանդու, Գողթնեաց գաւառին. և գինքն « ի մասնէ տենչալի վայրից Վանանդու »: Քանզի յանուն գեղջն, այսպէս կոչէր երբեմն վիճակս այս և Չոր, իբրեւ զխաւսոր մասն մի Գողթնեաց, որպէս ասի և վասն Ս. Վահանայ գալ յօտարութենէն ի Գողթն և ի Վանանդու: Այլ թերեւս յառաջ քան զայն և յետոյ իսկ կոչէր և Տրունեաց ձոր, յանուն այլոց գեղջ կամ աւանի. որպէս սոյն իսկ յիշեալս Թովմաս՝ գրէ ի շափաբանութեան ուխտատեղեացն.

« Ապա ի վանք Խաչին ելին,  
Որ կառուցեալ յանդրթ վայրին  
Ի գագաթան Տրունեաց ձորին »:

Անունը ծագեալ է ի Տուրայ ումեմէ, որ ընտանի գոլով և յարձունիս Երուանդայ արքայի՝ քսութիւն առնէր առ Սմբատ դաստիարակն Արտաշիսի Բ. և իմացեալ Երուանդայ՝ սպան զնա. իսկ Արտաշիսի յաջողեալ թագաւորել՝ իբրեւ փոխարէն արեան երախտաւորի իւրոյ, « զորդին Տուրայ պատանիս հինգ հանդերձ տասամբ՝ » յանուն հորն իւրեանց Տրունիս» անուանեալ կարգեաց ի տոհմն ազատաց Հայոց. յորս ի Գահնամակի Ս. Սահա-

կայ դասի Մէ, և ի զօրարածնին ընծայէ 300 մարտիկըս: — Սակաւք ոմանք յիշին տեալք կամ տոհմապետք Տրունեաց, և այնք ընդ ազատս Վասպուրական աշխարհի, որպէս և Գողթն ինքն մարդ էր երբեմն այնմ աշխարհի: Թութերորդ դարու յապստամբութեան Հայոց ի Հագարացոց և ի մարտս, ընդ զխաւորան յիշին Տրունիք, յորոց և սեպուհք ոմանք անկան մարտնչելով յԱրճէշ: Ի կէս Թ դարու յիշի Վահրամ Տրունի առ Բուղայիւ, և ի սկիզբն յաջորդին՝ Յիսէ Տրունեաց տէր, որդի Հունաւարայ:

Չարդիս Տասղին կոչի վիճակս այս, և գուշակի յանուն Տասղ աւանի, որ կայ յերս ձորոյն անընդմէջ յեղերն Երասխայ, և է Դաստակն յիշեալ յարձանագրի թեմի Գողթան, յեկեղեցւոյ Ս. Թովմայի: — Յաղագս այսպիսի գետեզերեայ դրից հարկ է թէ և ի հնուքս բարգաւաճ էր, թէ և ոչ յիշի ի գիրս. այլ վկայեն մեծութեանն և այժմեան բնակիչքն մահմէտականք՝ յորովութեամբն, զի գրեաթէ երկր մասն էին բովանդակ բնակչաց վիճակին 14 դեղից. առ Շորենիւ տունք 116, իսկ ի բովանդակ վիճակին էին տունք 379, ոգիք 1879. յորս միայն 62 տունք Հայոց և ոգիք 346. իսկ յաշխարհագրի 1873 ամին 200 տունք և ոգիք 1300: Ոչ գիտեմ թէ գուցէ՞ ինչ ի գեղջն մնացորդ ազգային շինուածոյ կամ հնութեանց. նոր ոմն համագրի ուղեւոր՝ յիշէ միայն հրապարակ մի գեղեցիկ և մեծաւ սօսեաւ հովանացեալ, և աղբիւր ընդ նովաւ: — Ժրութեան և վաճառասիրութեան նախնի բնակչացն վկայ է յօտարութեան, ի Լիվոնոյ քաղաքի Իտալոյ, յեկեղեցւոյն Հայոց՝ տապան մի, արձանաւս 1734 ամի.

## Այս է տապան հանգստեան Դաստակեցի խօջայ Պեգի որդի Պաղտատարին, որ հանգեաւ ի Քրիստոս, թիջն. ՌՃՀԳ, նոյեմբերի ԻԹ.

Այս գեղ է անշուշտ որ գրի Դաստակերտ ի կոնդակի տրեք Գաղատիոյ վանաց, յիշելով ընդ նուիրատուս եկեղեցւոյն զՓիրի որդի Մարգարէի Դաստակերտցի, ընդ որում յիշատակին բնիկք այլոց եւս մերձաւոր գեղից կողմանցս:

139. Իբրեւ փարսախաւ ի Հս. մեծի գեղջս՝ ընդ ձորն ի վեր, մերձակիցք իրերաց կան թուրքաբնակ գեղօք մանունք Խան – աղս 36 տամբք, Աղդի 16 տուն, և Ալլահովեր-


տի Դիզապի. որոց ի Հս. նոյնքան վերագոյն յալմէ ձորափին յարեւմտից, կայ հին անուանատու վիճակին գեղջն Վանանդու. վերջ անուանն և զուգութիւն ընդ գաւառի միոյ Այրարատայ՝ նշանական է. այլ ցաւ է գի ոչ են յայտարդ ի նմա ազգային յիշատակք, որպէս էր ակն աւնելայլ և հուպ նմին յահեկէ ձորոյն կայ տխրակոչն Վաղաւեր. և երկրորդն եւս յայլազգեաց բնակեալք, առաջինն 118 տամբք և 600 ոգւով, երկրորդն 20 տամբք: Մի ի

1 Շորեն առ Իւրեւ գրէր միանգամայն 64 տունս երկոցուն գիւղիցն վանահոյ և վաղաւերի:

կայից քարոզութեան առաքելոյն Բարդողիմեայ աւանգի լինել Վանանդ, և անդ վախճանեալ նախայիշեալ աշակերտի իւրոյ Ղուսիկ անուն, « զոր ի նմին տեղւոյ եղին » ի հանգատի, և շինեցին փոքրիկ մատուռն մի ի վերայ . » և կատարին մեծ սքանչելիք և բժշկութիւն մինչև ցայս օր . և զամեհիս յոյժ հնազանդեցուցանէ հող գերեզման մանին : Էր և անդ բողոքին մի . կործանեաց և զայն, և շինեաց ի տեղին խրթին եկեղեցի, և կոչեաց յանուն » Սրբոյն Թումայի . և անդ լինին բազում նշանք » : Փանձ սասցն խաչատուր՝ յիշատակ մի եւս յաւանդութենէ յաւելու աստանօր՝ զՎահանայ Գողթնեցոյ հանդերձ բարեմասնութեամբ և տոհմային անուամբ տեղւոյն . յետ ուխտագնացութեանցն՝ ասէ ,


« Դառնայ վերջստին սրտին բաղձանաց ,  
 ի գեղեցիկ գաւառըն Գողթնեաց ,  
 Էրթայ ի գեղըն Վանանդունեաց ,  
 Շրջապատեալ մէջն այգեստանեայց .  
 Ողկոյզ խնդրէ ի պահապանաց .  
 Որք ճանաչեն զՎահան ի դիմաց ,  
 Եւ ազդեցին ծանօթից բազմաց .  
 Թէ մեր իշխանն է այլազունած .  
 Եւ զայս լրեւալ Վահանն ի բազմաց  
 Եւ հեռանայր ի սրբուաց » :

Նոր իմն ազգ լուսաւորութեան ազգիս ծագեցաւ ի Վանանդայ , այլ ի հեռաւոր աշխարհի արփիւարեալ . այսինքն , ի ձեռն առաջնոց երկաջան տպագրողաց ազգիս ,



103. Շինուած գձանկապարհայն Որդուատայ .

որք յաւանէ աստի ընծայեցան . բազում անգամ յիշեալն Թովմաս բանասէր եպիսկոպոս Գողթան կամ Սրբոյ Խաչին ի ձեռն եղբորորդոյ իւրոյ Ղուկայ բանասիրի , և քեռորդոյ Մատթէի , որոց ազգ այսպէս գրի .



Թովմաս յիշի ի կիսոյ Ժէ գարուն անդր քան զսկիզբն ԺԸԽ . ի մանկութենէ սիրող երեւի և վարժ հրահանգաց

դպրութեան . անդստին յամէ 1652 երկասիրեալ արարեալ է հաւաքումն ինչ Նախադրութեանց Ս . Գրոց և Յանկա , օգնականութեամբ այլոց . կոչի յայնժամ առ կենդանեաւ ծնողացն՝ լոկ բանասեր : Յետ երից ամաց (1655) գրեալ է չափաւ (284 տող) զՈւխտատեղեաց Հայոց , (գորոյ բազում անգամ տողս ի մէջ ածաք) , ի խնդրոյ երկուց եղբարց՝ Սահակայ և Ասլանի որդւոց Աւագայ յԱյրարատեան երկրէ . որոց ձանձրացեալ յայնարհէ փափաքեցին տեսանել զբրազան տեղիս , զորս մի առ մի թուէ թովմաս , յիշելով զոր ի նստին սրբութիւնն . այսպէս ասելով զպատճառս գրութեանն և զթուականն՝ այլաբանօրէն .

« Յամին յորում ըզսա չափեալ՝  
 Թիւն Հայոց զՆոնգ <sup>1</sup> ցուցեալ .  
 Աւարտագիծ այս բանիս ճառ ,  
 Ի սակաւուց խնդրոց պատճառ .  
 Ի ձեռն ումեմն որ է անանձ  
 Եւ յիմաստից տկար և կարճ :  
 Զձեզ աղաչեմ բաղձանաք յոյժ՝  
 Տալ մեղապարտ անձինս ոյժ » :

Յետ երեքտասան ամաց (1668) գրէ և ի հեռագոյն եւս իննել ափունս . « Ես յետինս ի բանասիրաց և անարիս ի » հոյս սպառազինաց , նուաստ ոգի թուամ , գոլով յԱ . » տրբպատական նահանգէ , ի մասնէն Գողթնեաց , ի » վայելչադիր գեղջէն Վանանդայ , պատճառանք չըլա . » գայութեան անցեալ եղէ յամենավայելուչ կղզին կիպ . » բոս ասացեալ , յամի ՌձԺԶ թուականիս մերոյ , և ա . » բարեալ ի կղզւոյն յայնմիկ տարի մի և կէս . և յաւուրան » յայնոսիկ եղև նորոգումն Սրբոյ տաճարիս , որ է յա . » նուն Ս . Աստուածածինն » , ի Նիկոսիա . և պատմէ զգիւտ Անձրեւարեր Խաչի և զպատմութեան նորին , ե . ղելոյ յամի 1457 և կազմելոյ յամի 1460 : Յետ ոչ բա . զում (ամաց 1680) , թուի կացեալ եպիսկոպոս Գողթան , կամ որպէս ինքն ասէ Սրբոյ Խաչին . զի յայնմ ամի յիշի տակաւին Պետրոս եպիսկոպոս . ոչ է յայտ յորում ամի էանց յարեւմուտս և գլուխ եկաց տպագրատանն յԱմրս . դերսամ , ի ձեռն վերոյիշելոցն , Ղուկայ վարժ և հմուտ բանասիրի , և Մատթէոսի , որ հանգոյն համանունան Մարեցոյ սկզբնաւորողի տպագրութեան յայնմ աշխար . հի , յոյժ ճարտար և աշողակ գտաւ յարուեստին , վար . ժեալ նախ 14 ամ առ Ոսկանայ , և իրաւամբք կոչի « յոգնեալիս և միակ բուն տպագիր Հայոց » . որպէս թուի ի խափանել զործատանն ի ձեռն յաշողկոտաց՝ հրաւիրեաց զհօրաքննորդին իւր զեպիսկոպոսն , և զեղ . բօրորդի նորին , և միաբան ջանիւք տպագրեցին ոչ սա . կաւ մատեանս ցամն 1717 : Առաջին տպագրութիւն թով . մայի (յամի 1695) է ցանկալի մատեան պատմութեան Մովսիսի Խորենացոյ , որոյ և զեղեցիկ յառաջարան կարգէ , և կոչէ ի նմին զհայրենիսն՝ « Վայելուչ քաղաք

Վանանդու Գողթնեաց » . այլ Մատթէոս 20 ամաք յա . ռաջ ի յիշատակարանի գրոց ճարտասանութեան տպա . գրելոյ ի Մարսիլիա , գիշոյ կոչէ .

« Ես Մատթէոս Յոհաննիսեան  
 Որ ի գեղջէ եմ Վանանդեան ,  
 Եղէ բարդող փոքերս գրքկան » :

Ի նմին ամի (1695) թովմաս հանդերձ եղբորորդւովն վասն բանի տպագրութեան մատենից՝ եկեալ էր ի Հա . նովէր քաղաք , ուր հանդիպեցաւ մեծի փիլիսոփային Գերմանացոց լայպնիցի , որ և գրէ առ հայագէտն Ա . կոլուտոս ( ի 10 հոկտ . ) զթովմայէ , լինել ծեր և անգէտ եւրոպական լեզուաց . իսկ երիտասարդին բանք ոչ թուե . ցան նմա հաւաստիք : <sup>2</sup>

Յերկրորդում ամին (1696) ընծայեցին զպանծայի և զմեծածախ Աշխարհացոյց , զերկնագունտն և զերկրա . գունտ յընդարձակ ճարտարագիծ պղնձեայ տախտակս , որոյ քան զտառսն գերազանցեն պէսպէս պատկերք դի . ցարանականք յանկիւնս և ի միջոցս քարտին զծեալք սքանչելի նրբութեամբ . գործ արդարեւ վեհագոյն քան զպայման ազգիս ի ժամանակին . արարին և զբոյլ մի՝ Բանայի Համատարած աշխարհացոյցին անուանեալ , « զոր » ի լոյս էած (ասեն) հայկական տառիւք՝ վեհանձն և » սրբափայլ հայրն մեր Տէր Թովմաս աստուածազգեստ » բարունին և առաքելագործ եպիսկոպոս Սրբոյ Խաչին . » Շարադրեցեալ ի Ղուկասէ ապաշորհ ջահընկալէ Վա . » նանդեցոյ . տպիւք և ծախիւք թօմասու վարդապետի . » Շարադրութեամբ քաջ զպիր Տեառն Մատթէոսի » ներհուն տպագրի Հայոց » : Ոչ գիտեմ երբ և ուր վախճանեցաւ եպիսկոպոսն երախտաւոր , այլ ի յիշատա . կարանաց տպագրեալ գրոցն երեւի կենդանի և յամի 1705 , և վախճանեալ նախ քան զ՝ 1713 , կամ մերձ յայս ժամանակ . զի ի սմին ամի ի յիշատակարանի Հայեցի Ա . տոռածաշունչ Գրոց՝ որբայ Ղուկաս զորբանալն ս ի հեզա . » հոգի հաւուն (իւրոյ) թօմայ եռափայլ եպիսկոպոսէն » ի Տէր հանգուցելոյ » : Իսկ զինքն Ղուկաս՝ հօրեղբայրն անդստին յամի 1695 կոչէ « Ծիլիսօֆա , որ է վարժ գա . » նազան լեզուաց » . և ինքն զինքն յայնմ ամի կոչէ « Տրուպ զպիրս Ղուկաս , ծնունդս Գրիգորի , սերունդս » Նոռիջանի , սնունդս Հոսմայու , և մատուցողս այսր » Գործակի » : Վերջին յայտնի մեզ երկասիրութիւն և տպագրութիւն նորա է համառօտ Ժամագիրք վասն վա . ճառականաց , յամի 1717 , որոց վասն իբր 20 ամաւ յա . ռաջ (1699) արարեալ և տպագրեալ էր զպիտանի գըր . քոյկն « Գանձ Չափոյ , Թոռոյ , Կշոյ » . յետ այնր ծածկի և անուն նորա և գործակցին իւրոյ Մատթէի , հանդերձ տպագրատամբն . գորոյ տառս՝ յետ երկոտասան ա . մաց՝ ի ձեռն բարեկամաց ոմանց ետ գնել Մխիթար Աբբայ և փոխադրեաց , ի նորաջէն վանս իւր ի Ս . Ղա . զար , ի Վենետիկ :

1 Աստիւք Թիւք Ն 400 + Ո 600 + Ճ 100 + Դ 4 = 1104 թուական Հայոց , որ է 1655 ամ Փրկչիւն :

2 Fuere apud nos nuper duo Armeni, unus senex, qui se dicebat Archiepiscopum Coctanensem, alter ejus comes ætate vegeta, qui te vidisse ante annos ajebat, quod et credo: de cætero narrationes hujus mihi non vide-

bantur sinceræ: variabat enim et diversis narrabat. Senem illum ajebat libros in Batavis excudi curasse; mox dictitabat typographum cum omni apparatu in Armeniam ducere constituisse. . . . Ipse senex ex nostris linguis nullam callebat; unde muta cum ipso conversatio erat. ( L.F.IB.NIZ. VI. II. 141 ).



140. Երկու մղոնաւ ի Հս. Վանանդայ յահեկէ գե. տաճորոյն կայ Սալ կամ Սաղ փոքրիկ գիւղ այլազգեաց: Ընդ մէջ երկոցուն սոցա խնդրելի է Դեղսար գիւղ, խա. ուրն բնակեալ ի Հայոց 12 տանց և Թաթարաց 17 տանց, զոր ոմանք Դիսար գրեն, ընդ մէջ Ազուլեաց և Յընայ: Ի սահմանս Կեղսարայ Ռատտէ ընաքնին նշանակէր ( ի 31 յունիսի, 1890 ) վայրենի ցամաք բոյսս, կոժոժ, Խա. գիրան, և տեսակս Ափարրիոնի ( Euphorbia gerardiana և Euph. glareosa. ):- Յելից Հս. Սալայ մղոնաւ տարա. կաց է Լիւրֆալի - Սուրբան փոքր գիւղ Թաթարաց, առ

որով և Տնակերտ գիւղ Հայոց, 60 տանց և աւելի եւս: Ի կոնդակի Գաղատիոյ վանաց Տօնակերտ զրի անուն գեղջս, որ և ուղղագոյն երեւի, յիշելով անդ զոմն նուի. բատու բնիկ տեղոյս, Առաքէլ որդի Յովհաննու, ի կէս Ժէ դարու: - Ի սմին կողման սակաւուք ի վերոյ ի ձոր. եղերն կայ և Տրունիս, այժմ Տեունիս կոչեցեալ, յայտ. նապէս հին ստանն Տրունեաց, յորմէ և անուն ձորոյն. յորում յամի 1873 էին 63 տունք և 317 ոգիք Թաթարք. Շորէն յիշեր և տունս չորս Հայոց 25 ոգւոց: Փափաքելի է քննութիւն երկոցուն ևս հայանուն և հնանուն տեղեացս.



104. Մզկիթ և Շիրիմ Ալիժականայ? մերձ յՈրդուատ.

նայնպէս և Քաղաքիկ հայաբնակ գեղջ, որ վերագոյն եւս կայ ի նմին կողման ձորոյն, յորում միայն 24 տունք Հա. յոց 260 ոգւոց և եկեղեցի հին նշանակի: — Դարձեալ խնդրելի և յայտնելի է աստանօր և Ս. Խաչի վանքն, որոյ եպիսկոպոս վկայեցաւ ի յիշատակարանս տպագրեալ գրոցն՝ Թովմաս Վանանդացի, որ և ասէ.

« Կառուցեալ յանքոյթ վայրին, ի գագաթան Տրունեաց ձորին ».

և յայլում գրուած ի կոչէ զինքն, « Եպիսկոպոս Ս. Խաչի » վանիցն Գողթան, որ կառուցեալ կայ ի կատար վայե. » լուչ Ձորոյն Վանանդու. և այսպէս յայտնէ զերկու. սին անուանս ձորոյս. մինչև ցարդ ուխտատեղի է Ազու.

լեցեաց. այլ որպէսն ինձ ոչ է ծանօթ: Քաղաքիկ յաղմէ կայ ջրոյն, առ նմին և սակաւուք ի վերոյ՝ Ունուս դիւղ, որ Թուի Որովանիս արձանագրութեան Ս. Թոմայի, և կայ ի կիցս երկոցուն վտակաց՝ յորոց զուգի ձորն Վա. նանդայ. բնակեալ է ի Թաթարաց 30 տանց:— Առ արե. լեւիան վտակուն կայ Բազմառի գիւղիկ հայանուն այլ Թաթարաբնակ, որպէս և հանգրուանն Դիգաձի Ճեա. ֆար-խան:

Ի պատմութեան Սիւնեաց յիշի և տոհմական անուամբ գեօղն Խողուանք ի Վանանդայ-ձորի, զոր տեւաբն ետուն ի կալուած Տաթեւոյ եպիսկոպոսական աթոռոյն, յիւս կոյս ԺԱ դարու:

Դ. ՅՂՆԱ = ՉԻՆԱՆԱԲ

141. Թերեւս ընդարձակագոյն քան զվանանդայն իցէ ձորն որ յարեւմտից՝ ընդ մէջ նորին և Պելեւայ, յանուն գեղ միոյ և գետակի՝ արդ Չինանար կոչեցեալ, որ երբեմն և յանուն Ռամիս գեղ. սորա բնակիչքն Հայք են, 30 տունք և 350 ոգիք, և տեղին որ արդ Որոշմիս կամ Ռոշմիս կոչի, թուի լինել ի զլուս ձորոյն, կամ ի միջոցի երկուց և երից ձորակացն՝ յորոց զուգի ապա բուն ձորն և գետակն ի ստորեւ: Ի ներքոյ խառնըրդոց երկոցուն զլիսաւոր վտակացն, յալմէն (յարեւմտից) կան մերձ յիրար գեօղքն Ուղուփի և Չինանար. առաջինն Թրքարնակ է, 85 տամբ կամ աւելի: Ի սահմանս սորին քաղեաց Ռատտէ (21 յունիս, 1890) 60 տեսակս բուսոց, յորս նշանաւոր երկու տեսակք գեղաղէջ \*Տարաթելիկ ծաղկան (Aethionema pulchellum). առ գեղջաւագին ետես Բազայս որսականս՝ որք բերէին նմա կաքաս: Երկրորդն (իրբու ի 1500 Չ. բարձու), որ և զլիսաւոր գիւղուրայից և անուանատու վիճակին հայարնակ է, 76 տամբք և 800 ոգուով՝ (յամի 1873), ընդ որս երեք միայն տունք էին մահմետականաց: — Յարեւմտից գեղջն ամբառնայ Կեաւ վոշր գալիսի լեռան: Բնիկ հայկական անուն գեղջն է Յընա, որ հարկ է թէ մեծ և նշանաւոր էր ի հնումն. որոյ եկեղեցին կոչի մեծ և բարձրագմբէթ, նորոգեալ առ Մովսիսիւ կաթողիկոսիւ: Յընացւոց յատուկ է բարբառն Չոկաց: Ի դարուց հետէ յայտնեալ են Յընացիք իրբու սիրողք վաճառականութեան, վասն որոյ և բազմալըր. ջիկք. հաստատեալ են ի գեղջն և գործարանս մետաքսի: — Յառաջին ամս Ժէ դարու՝ ոմն յաւագաց գեղջն Յընայ Խօջայ Հայրապետ անուն, հրաւիրեաց և եբեր զՊողոս Մոկացի առաքինակրօն վարդապետն ի քարուղութիւն. և միւս ոմն ցընացի վաճառական Մարգարա անուն Թաքոյց ի բեռինս կարասեաց իւրոց զԱլ Սրբոյ Լուսաւորչին, յամի 1638. զոր Փիլիպպոս կաթողիկոս Թափեալ էր ի Սաֆարեանց՝ ի Նոր Ջուղա, և հասոյց յԵմիածին ի ձեռս կաթողիկոսին: Չայսու ժամանակաւ, յառաջին կէս Ժէ դարու, ի կոնդակի միում վանաց Քաղատոյ՝ զրի այսպէս. « Աստուած ողորմի Յընեցի վաճառականացն որ ի քաղաւ (Անկիւրիա) են, մանաւանդ » Խոճանց Աղումին, որ խիստ օգուտ (բերին) վանիցս, » Թէ ողորմութեան թէ ձէթի և թէ ժամուցի. Սուրբ Աստուածածինս իւրեանց բարեխօս, ինչպէս որ նորա են

» այս եկեղեցւոյս. Աստուած Հետ իւրեանց լիցի. Աստուած ողորմի: — Աստուած ողորմի ցընեցի » խօճա Պունիաթի ծնօղացն, որ լաւ փէշքի մի ետուր. » Աստուած ողորմի ասէք: — Աստուած ողորմի խօճա » Պաղու մի ծնօղացն, որ մէկ սկու ծածկոց ետուր, և » մէկ փէրտէ, և կով մի, Աստուած ողորմի ասէք »: Յելս կոյս այնր դարու, յամս 1688-89 գտանէին ի վեներտիկ ցընացի վաճառականք Յակոբ և Սոլեման որդի Փանոսի: — Ի նոյն ամս (1691, փետր. 3) յերթալն ի Կարին՝ ագաւ ի Յընա Հ. Վիլյոդ Բիսուսեան, որ գեօղ մեծ կոչէ զայն (Tsegna) և Թուրքարէն Ճալանա (Dehalana), 300 տամբք Հայոց, և գեղեցիկ եկեղեցեալ, յորում ետես զպատկերս Ս. Լուսաւորչին և Ս. Սեղբեստրոսի. իսկ տէր գեղջն էր ի իւրան ոմն վրացի Տառոշ Միրզա անուն: Չարդիս բնակիչք Յընայ ազգայինք են իբր տունք 60 կամ 70: — Ի նոր դար օրագրի, (Չ, 102), երկար յարուած մի բանի է զբարուց և սովորութեանց ցընայեցւոց: Գտանի յիշատակ յամի 1549 (զի այսպէս կարծեմ ՋՂԸ ընթեռնուլ՝ զընդօրինակեալն ՋՂԸ՝ ի նոր գրչէ). « Աստուածային զինու վառեալ և շնորհօք Ս. Հոգւոյն » զարդարեալ, ի բարեաց բարունակէ շառաւիղեալ, » աստուածասէր և բարեպաշտ տանուտէրն Դանիէլ կոչեցեալ, որդի Խաղոքնի որդւոյ Պետրոսի, ազգաւ ցըղ. » նայեցի... ի դառնացեալ և վշտայից ժամանակիս, յորում զօրացեալ է ազգն Խամայէլի, և բազում նախա » տանօք և արհամարհանօք տանջն և նեղն զազգս » քրիստոնէից, մինչեւ զոմանց տունս բոշտանօք (զըր » պարտութեամբ) և հերձօք և զուր բանիք աւերել լա » նան. զոր և սմա իսկ Դանիէլ տանուտրօջ՝ բազում » անգամ արարին, որ ի սուր և ի շուր մատնեցին, և հա » զար դահեկան առին... ստացաւ զսուրբ աւետարանս » յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց՝ Խաղոքնի, » Ենօհֆորի, և կենակցի իւրոյ Թաճին, և զաւակացն՝ » Խաղոքնի և Խեթմի և Առիւծուն... եւ ետ զսա » անջինջ յիշատակ ի գեղեցիկ և աստուածաբնակ տա » ճարս Յիմնոյ մեծի Ամենասուրբ Աստուածածնին »... — Մի յաւագ տանուտերանց Յընայի էր առ Եահաբասաւ՝ Խօջայ Անձրեւ, զորոյ կին մայր կոյմամբ պատուէր Եահն, այլ ոչ լուաւ աղաչանաց նոցա յԱզուլիս, ի խընդրելն արձակել զՏէր Անդրէաս. ( զորմէ տես յէջ 330 ):

1 Անհամեմատ երեւի թիւ տանցն և բնակչաց: 2 C'est un fort gros village habité par plus de 300 familles arméniennes: le Prince Géorgien (Daut - Mirsa)

en était le seigneur, aussi bien que des autres villages d'alentour. — Voyage d'un Missionnaire, 148. Աստուած վեբարդի մասեանն, ծածկելով նեղինակին զանուն իւր:



Հաւասար հեռի ի Յղնայ ի Հր. և յԵրասխայ ի Հս. այն է իբր շորիւք մղանք յերկոցուն եւս, յաջում ձորեզեր կայ Տիւղիան գեօղ Թաթարաց 46 տանց, և հանգրուան մի նորին համանուն Տիւղիան դիգէ Յ տամբք, և Թուի աղաւաղեալ անուն մի հայերէն:

Ջատ ի շինից աստի սակաւածանօթից նշանակին և

գետոք ինչ աւերակք յայսմ ձորակի. որպէս, Քեաշան որ է Գոշեն հին ցուցակին, սակաւաք ի բացեայ ի հիւսիսոյ Տիւղիանի. Աստուածածնի գիւղ, և Միւղիան, որպէս կոչէ և Արրահամ կաթողիկոս յԱգուլեաց եկեալ « ի Յղնա, Միւղիւնոյ վանքն », և աստի անցեալ ի Հին Զուղա. յառաջ քան ծանօթ մեր Վանանդացի




103. Լիւեղեցի Յղնայ.

Եպիսկոպոսն Թովմաս, գրէ վասն ուխտաւորաց իւրոց. « . . . . Եկեալ հասին

- » Ի Գողթ գաւառըն ցանկալի,
- » Յեկեղեցին Սոսիանոսի,
- » Ար մականուն Մցգուն կոչի.

» Եւ խնդութեամբ այնու լցեալ  
» Տեսեամբ մասին Յովհաննու լեալ »:

Զգիրս սոցին ոչ գտի յաշխարհացոյց տախտակի, այլ գուշակին լինել ի հարաւակողմն ձորակիս և մերձ յԵրասխա. յորս կարեւոր է քննութիւն վանացն Մցգունի:



Ե. ԲՍՏԱԶՈՐ = ԱԶԱՏ ԳԻՐԱՆ = ՊԵԼԵԻ

143. Ընդարձակագոյն և երկարագոյն քան զամենայն ձորահովիտս Գողթնեաց է Բստածոր, որոյ գետոյն զարդիս Գիրան կամ Կիլեան կոչեցելոյ և հնոյն Գիրանայ՝ յատուկ աղբերակունք ուղղակի ի հիւսիսոյ իջաննն, ի թիկանց լեռանց Չորոց գաւառի, առեւալ և օժանդակս ի բարձրագոյն լեռանց Դարուայ կամ ի Կապանայ. որոց վերին կողմանք անտառախիտք են, ստորինն հանգոյն արեւմտեայ վիճակացն քաջ արգասաբեր: Առ մեզք Առ շետիս Տէր Մկրտչեան էարկ կամուրջ քարաշէն ի վերայ գետոյս: Բայց որպէս դրակից վիճակքն՝ և սա անծանօթ մնայ և անայցելու ի բանասիրաց, և գեօղեանն գրեթէ անյիշատակ ի գիրս. այլ միայն, որպէս յըսկըզբան յիշատակեցաք, հին անուն վիճակիս Բստածոր՝ անդատին ի ԺԱ դարէ յայտնի ի կոնդակի Սարգսի կաթողիկոսի, և իբրեւ արժանաւոր ինչ մասն երկրի, զոր եպիսկոպոսն Գողթան գրաւեալ էր և հանեալ ի մեծ աթոռոյն Սիւնեաց, առ որ վերադարձոյց կաթողիկոսն. ի հնագոյն եւս ժամանակս, որպէս յաւուրս Ս. Վահանայ Գողթնեցոյ կոչէր Ազատ և Գիրան: Իսկ նոր անունն Պելել, Բելել գրեալ յԱռաքել պատմէ, յանուն գլխաւոր գեղջն՝ անծանօթ է ի պատմութեան, և ոչ գիտեմ երբ յառաջացեալ:

Սկսեալ ի վերուստ ձորոյն, առ վտակաւ միով՝ զոր յարեւելից կուսէ ի թիկանց բարձու Կափուճիկայ ընդունի, կայ Նասիրապատ գեօղ ի բարձրաւանդակ վայրի, յորում յամի 1873 էին 18 տունք Հայոց, ոգիք 200, և 11 տունք Թաթարաց: Վերագոյն եւս քան զայն Թուի գոլ ֆէրիմ-դուշի դիզէ, Թաթարաբնակ: Եւ եւս վերագոյն առ բնածորով կայ Նուրդուտ? կամ Տէրե-Նիշրդիստ 25 տամբք Թաթարաց. և ի հարաւոյ յանտառամիջի կան ամայացեալ գեօղքն Խուրս և Ազնաւիդի: Հանգէպ սոցա առ փոքրիկ վտակաւ օժանդակաւ՝ նշանակի երկրայելին անուամբ Տարեա-Մարիկ կամ Տարդաւնար: — Առ կցուածով վտակիս ընդ բուն գետակին կայ Ողոմի գիւղ հին ցուցակին, այժմ կոչեցեալ Ալեանդու կամ Ղեւանի, բնակեալ ի Հայոց աւելի քան 30 տանց: Մերձ ի սա է հանքային աղբիւր Թթուաջուր: — Իբրեւ փարսախաւ ի ստորեւ օժանդակ վտակն այն արեւելեան (առ որով Նասիրապատ) խառնի ի գետակն Բըստոյ, և յանկեան նոցին կայ Բուստ կամ Բիստ անուանատու վիճակին լստ նախնեաց, իբր 70 տամբք Թաթարաց և 100

1 « Հասաք ի քաղաքն յիտալիս (Ատալիս?)... Տէրն առաջնորդէ որ զեւոք ի սուրբ Երուսաղէմ: »

տանց Հայոց, հին եկեղեցեալ և վանօք: Ի գեղջէ աստի էր Յակոբ վարդապետ աշակերտ Յովհ. Որոտնեցոյ և Գր. Տաթեւացոյ, յորոյ խնդրոյ գրեաց սա զՓօքր Հարցմանց Գիրան, որպէս և յիշատակագրէ չափաւ բանիւ.

« Այլ և զըրոյս այս խնդրողի Յակոբ բարուն համբիրակի ի տանէ Գողթնեաց ի Բուստ բնակողի, Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի »:

Ի սկիզբն ԺԼ դարու (1708) յիշի Տէր Ղուկաս Բըստացի, որ ընդ Տեառն Փիլիպպոսի Ագուլեցոյ, և Դաշտեցի Պարոնի միոյ և այլոց երթայր յԵրուսաղէմ. որպէս գրէ ի կողս գրոց ուրեք<sup>1</sup>: Արբահամ կաթողիկոս յուխտական այցելութեանն՝ դրուատեօք կոչէ. « Պուստ » մեծ գիւղն, յորում կայր պատուական եկեղեցին. և » յետ ուխտելոյ յեկեղեցին, ելի ի վանքն աղաւնա. » նման աղինասարաս, ի վայելուչ բարձրանիստ տեղի, » լի պարտիզօք, ջրարբի և բարեբեր հողով, և պարզ » և առողջարար օգուով. զուարճացաւ սիրտ իմ, մոռանա. » լով զաշխատութիւնս ճանապարհին. այլ և առաջնորդ » Տէր Պետրոս վարդապետն այր խոհեմ և բարեբարոյ. » միաբանք՝ սիրով և հնազանդ. և մեացի անդ երկու » օր »: Եւ այցէ՞ արդեօք և արդ կանգուն վանքն այն, և որպէս կոչիցի. ոչ գիտեմ: — Ի բերոց դրուատեալ պարտիզաց Բստոյ ընտրելագոյն յազգի իւրեանց ասին Ընկոյզ և Խնձոր<sup>2</sup>:


Հանգոյն Բըստոյ զուարճալի և քաջաղիտակ հարկ է լինել և Տելի (Դիվա յայժմուս) գեղջ հնոյ, կիսով փարսախաւ հեռի ի հարաւոյ կուսէ, առ վտակի միոյ օժանդակի, յանտառաւէտ վայրի, յորում 68 տունք Թաթարաց էին յամի 1873, իսկ առ Դոբեմիւ էր և տուն մի Հայոց: Արբահամ կաթողիկոս ասէ զտեղւոյս յամի 1733, յայցելութեան վայրացս, « կայր աւեր, և վանքն ամա. » յի, և ի կուսանաց անապատն եօթն միայն ապաշ. » խարօղ. որ և նոցա այցելութիւն արարեալ, վանիցն » և Անապատին, անցեալ գնացի ի նոյն օրն ի Պուստ » մեծ գիւղն »: — Առ նոյին վտակաւ ի վերոյ նշանակի աւերակ գիւղ մի Սիւրգիս? արդեօք Երջու արձանագրին Ս. Թովմայի, զի և անընդմէջ յետ Տելեայ կարգի անդ:

Յետ այլոյ փոքրագոյն վտակի միւս այլ մեծագոյն ընդունի Բստածոր յահեկէն, որպէս և զայս՝ ի բարձ-

2 Ըստ Նոր Հոյաստան աշխարհագրութեան. ցանկալի է Կորագոյն քննութիւն սահմանացս:

րազոյն լեռնէ անտի պարուն Գարուայ, զոր և մարթ է կոչել յանուն Փառակայ գեղը, զի կայ սա ի միջակողմանս ձորակի նորին յալմէն, ուր և կամուրջ արկեալ է, այլ ոչ գիտեմ հին եթէ նոր. զի ոչ յիշի գիւղս քաջանուն ի հին պատմութեան, բայց յարձանագրի թեմին Գողթան: Ի միջոցի 1653-65 ամաց Փառակցի ոմն Մանուէլ վաճառական՝ որդի Տեառն Ոսկանի՝ գտանի ի վենետիկ, և ընծայէ անդ եկեղեցոյն Հայոց խայիլայ մի (կապերս): Է ի Փառակա մենաստան շինեալ կամ նորոգեալ ի սկիզբն ԺԸ դարու, խնամով բնակչացն, յանուն Ս. Յակովբայ Հայրապետի, ուր և Աբրահամ կաթողիկոս իջեւանեցաւ ի դաշն ի Շոռոթայ և յերթալն ի Տեւի: Փառակա յալմէ կայ վտակիս, ի հիւսիսոյ, և են ի նմին 60 տունք Հայոց. ըստ աշխարհագրի 1873 ամի՝ տունք Հայոց էին 44, այլ ոգիք աւելի քան 650 գրին,

և 8 տունք թաթարաց. եկեղեցին հին կոչի՝ յանուն Ս. Սիմեոնի: Ռատտէ՝ որ ագաւ աստ (ի 22 յունիսի, 1890), միայն շի մահմէտականս առ գրնակիչան: Առնակէ սա յազգս բուսոց տեղւոյս գեղեցիկ Մեկոն, Մանդանակ (Lathyrus tuberosus), Եղեսպակ (Salvia), կատախոտ, խոյորձ, Եզնաչեզոս, և այլն. այլ պիտանի քան զսոսա են թրեկիքն գովեալք, և ի կենդանական սեռից մեծ կաքան (Ոչր քեքլիկ, Megaloperdix): Բազեկէ ջրոյն ի հարաւայ, մղոնաւ հեռի է Բուրուտ կամ Բելլարուտ գիւղ փոքր, Թաթարաբնակ: Ի գեղջէ աստի ընծայեցաւ ի սկիզբն ԺԸ դարու նահատակ մի յոտար աշխարհի, Սահակ անուն, իր 17 ամաց վաճառականութեան աղագաւ երթեալ յԱզախ քաղաք շահաստանի, յունջ համանուն ծովակին. ուր այլադէնից հարեալ ի գեղ և ի հասակ ազնիւ պատանեկին բազում



106. Բուստ.— Ս. Ստեփանոս եկեղեցի.


հնարիք յորդոր լինելին յուրացութիւն, խոստմամբ և սպառնալեզք, բանտիւ և խոշտանգանք. այլ նա ի վեր քան զհասակն արիարար ընդդիմանայր, և իմաստութեամբ առնելով պատասխանի՝ զմահ քան զանքրիստոնեայ կեանս ընտրէր. ընդ որ սքանչացեալ գրչի նահատակութեանն (Ստեփանոս քահանայ Առաքայեցի), բացագոչէ. « Ո՛վ երանեալ մանուկ, զայդ մեծ պատերազմ ուստի՞ » ուսար, կամ ո՞ ցոյց քեզ. զիարդ իշխես զայդ առնել. » ո՛ւմ վասն մերկանաս. ո՛ւմ վասն կապեցար. ո՛ր գնաս. » քանզի յիշատակ մահուն դողացուցանէ զմեզ. փոխա՞նակ կաթին բաժակ մահու ըմպես »: Երբ ողորմաշարժ այլ և ողորմամահ եղեւ կատարումն մանկանն. զի և դահիճն թուլացեալ երկիցս հարկանելով եհատ զուս և ըզմասն երեսացն, յարին յապաժոյժ թաւալելով զնա. և ազա սաստիւ հրամանաւ դատաւորին՝ եզն զնա իբրեւ զգառն, և արկ զսուրն ի գետին, յորմէ ձայնք արհաւրաց

հնչեցին, ըստ պատմչին, որ այսպէս աւարտէ. « Սի թուա՞ կանիս Հայոց Ռճկի (1715) ի հոկտեմբերի ձե, կատարեցաւ սուրբ վկայն Սահակ, ի փառս Քրիստոսի » օրհնելոյն. ամէն: Ի ձմերայնի զբաղեալ սուղ ժամա՞նակի՞ երեւեցաւ վարդ մի փթիթ և զարմանալի և ա՞նուշահոտ, որ ելից զտիեզերս ամենայն. Գեզ աւետի՞ն » երկիրդ Գողթան, և ուրախ լեր որ ունիս արմատս բա՞րութեան և հիւղս օրհնութեան: Ուրախ լեր երկիր » Ղրիմու, որ թռեաւ յարեւելից ակն մի պատուական » և հանգեաւ ի քեզ »: Անուն հայրենի գեղը նահատակին Բրուտ գրի ի վկայաբանութեանն: 143. Միջոց երկոցուն գիւղիցս Փառակայ և Բուհրուտի՝ քաջ մշակեալ ծածկեալ է պարտիզք և անդաստանք: — Իբրեւ մղոնաւ ի բացեայ ի նմին կողման վտակին և հուկ ի խառնուրդսն ընդ Բստաձորոյ կայ զլիաւոր գետի և անուանատու վիճակին՝ Պելլու, Թաթարաբնակ, 120

տամբք կամ եւս աւելի<sup>1</sup>, — Ի հարաւոյ արեւմտից Պե-  
լեւի մերձ նմին և գետոյն ամբառնայ Եջրի, և յեյից նո-  
րին Ուշուս լեռան. առաջինն յեղեցուցանէ ըստ ձայնին,  
զՈՎՂՈՒ գիւղ հին ցանկին: — Ի Պելեւայ և Ի վայր անձ-  
կանայ Բստաձոր և ցերկու փարսախ չկան շէնք՝ Ի ձոր-  
եզերսն, յետ այնր սակաւ և փոքր գետոջ պլազգեաց  
Դիգա կոչմամբ բարդեալք, որ նշանակէ ամրոցս. գլխա-  
ւոր Ի նոսա հիւսիսագոյնն է յահեկէ գետոյն, Խիստա-  
վերտի պեկ-դիգէ 30 տամբք. Հիսուհիս խան պեկ-դիգէ  
կամ Քոչա-դիգէ, Միրզանասան-դիգէ, Քալանդար-դի-  
գէ, Սոսարդան-դիգէ: Յետ սոցին Ի ստորնագոյն մասին  
ձորոյն և մերձ Երասխս են երեք գետոջ մեծագոյն մա-  
սամբ հայարնակք: Տէր, Թերեւս գրեալն Տեռն յարձա-  
նագրի Թեմին Գողթան, հազիւ մղոնաւ շափ տարակաց  
Երասխայ, յովմէ գետոյն Բստոյ, համակ հայարնակ,  
յորում 60 տունք էին յամի 1873 և՞ ոգիք 480. առ սովաւ

անցանէ արքունի պողոտայն որ տանի յՈրդուատ, և Ի  
Նախնաւան. առ որով և Ի հանդիպոյ յահեկէ գետոյն  
հուպ Ի Տէր և Ի Քալանդար-դիգէ կայ վերին Ազա  
գետոջ, որոյ անգաստանք են բամբակի կէս մղոնաչափ  
ձգեալք ընդ հարաւ, ուր յարակցին ընդ Ներքին Ազայն-  
աստի և անդր կէս մղոն ճանապարհի է ցափն Երասխայ,  
առ որով պահակատուն Բուսաց յանուն Ազայ: Վերին  
Ազայի 130 տունք են Հայոց (700 ոգիք) և 4 տունք Թա-  
թարաց, Ներքնոյն 30 տունք Հայոց (ոգիք 100), 40 տուն  
Թաթարաց. միայն Ի վերնումն գոյ եկեղեցի:

Ընդ մէջ Տէրի և վերնոյն Ազայ արկեալ է կամուրջ  
հնգակամար, ծախիւք Տէր Միրզանասան Անտեսաց Ազու-  
լեցոյ: Թուի ինձ երեցուն գիւղիցս ունել զտեղի հնոյ  
մեծի շինի Ազատն կոչեցելոյ, որ զոյգ ընդ Գիրանայ  
վիճակ մի էր հնոյն Գողթան: Ոչ գիտեմ եթէ գուցեն  
անդ այլ եւս հետք հնութեանց, բայց վերագոյն Ի հիւսի-



107. Շիրիմ յԱզա.

սակողմն երեւին աներկբայ աւերակք հինն Գիրանայ,  
եկեղեցիք և տունք, արժանիք խնամով քննութեան, և  
տեղին կոչի ցարգ Խարապա-Գիլան: Ոչ նշանակին դիւրն  
յաչխարհացուցի. Թուի Ի միջոցս օտարաբնակ Դիգէիցն:  
Իսկ ընդ մէջ գիւղիցս Ազայ և Երասխայ կան երկու աւե-  
րակք գմբեթաւոր շինուածոց՝ որպէս Թուի շիրմաց կամ  
մզկիթաց, աղիւսաշէնք բակալք Ի ներքուստ. են առ նոքօք  
և այլ ինչ գերեզմանք: Յարեւմտից յիշեալ գիւղիցս ձգի  
երկայնաչար պար ցածուն լեռանց, որք անըպետեն զվի-  
ճակս դայս Երնջակայ, յորս և քարալեռնակ մի Սարյ-  
գայա (Գեղին-սար) երկու մղոնաւ Ի Հս. Երասխայ:  
Անդր քան զայն (յարեւմուտս) Ի լեռնակաց անտի իջա-  
նէ վտակ մի փոքր Ի գետն Երասխս, առ որով Ի գլուխ  
ձորակին կայ Դիգէ-Քեարիմ-գոչի գիւղ Թաթարաց:  
Իսկ յաւարտ ձորակին, այն է առ բերանով վտակին ԵՍ-

րասխ, մեծ գետուանն Թաթարաց Եայձի, 150 տամբք  
և նոյնպէս ընդարձակ ազարակօք, առ որով և պահա-  
կատուն:

Յաւարտ տեղագրի գաւառիս Գողթան՝ ընդ փոքր Ի  
չատէ ծանօթ վայրաց՝ յիշեցի և անծանօթն ինձ զը-  
րիւք Շաղկերտ. զոր որիչ համարիմ Ի Շանկերտէ Ե-  
րընջակայ, և զոր Առաքէլ պատմիչ ասէ մերձ լինել Ի  
Նախնուան, իսկ զՇաղկերտ՝ Զաքարիա պատմիչ ասէ լի-  
նել Ի Գողթն. երկուքն եւս քաջ հմուտք ճանաչին դրեց  
վայրացն յիշատակելոց: Գեղոս այս յիշի Ի յետնոյն իւ-  
րեւ հայրենիք Թամամ (կատարեալ) օրիորդի, դասեր  
Մալխասայ գիւղապետին, յորմէ պահանջէին գիւղա-  
կանքն զհամար տանուտէրութեանն, և նա « ետ զհա-  
» մարն, այլ և մնաց Ի վերայ նորա բազում եւս. և խըն-  
» դրէին ճնշիւ: Իսկ նա պատրեաց զնոսա, և ասէ. Թոյլ

1 Ի Նոր Դար օրագրի 1890 ամի (թիւ 99) յոյժ առաւելութեամբ 300 տուն գրին բնակիչքն Թաթարք:



» տուք ինձ աւուրս երիս, և ես հատուցից. և նա ելեալ  
 » փախստեամբ գնաց յԱպահան առ իշխանն Նախ.  
 » Ղուանու Մահմատ Ազայ-խան և ասէ. Ձդուտր իմ  
 » տաց որգւոյ քում. և դու զերծ գիտ ի գեղականաց ան.  
 » տի: Իսկ իշխանն արար ըստ կամաց նորա. զրեաց առ  
 » շինականն Շաղկերտոյ, թէ՛ ես առի զհամար դորա, և  
 » ինձ եհաս ամենայն. և դուք շունիք հրաման խօսիլ ընդ  
 » դմա »: Գրեաց և առ որդի իւր Մուրթուզայ Ղուլի:

որ « էր յԵրեւան նստեալ տեղապահ յետ Զալին. . թէ,  
 » առաքեա ի Շաղկերտ, և բեր առ քեզ զգուտր տան.  
 » ուսէր Մալխասին »: Բերաւ առ նա կոյսն. որ և հաւա-  
 տարիմ պահելով զկուսութիւնն և զհաւատս, քաջու-  
 թեամբ նահատակեցաւ ի ձեռն այլոյ վատարտազոյն  
 գիւղապետի Եղուարգայ, յամի 1891, որպէս աւանդեալ  
 է մեր ի տեղագրութեան այնր աւանի, և զայլ ինչ գէպս  
 արիական սրտի նորա: (Տես յԱյրարատ, էջ 198-9):



308. Զրադացք յՈրդուտ.



Ժ Բ

Ե Ր Ն Ձ Ա Կ



Չ ընդարձակ քան գյետին տեղադրեալ գաւառս Սիւնեաց, այլ սակաւ ինչ երկարագոյն է զրիւք գաւառս Երնջակայ, ըստ ընթացից գետոյ իւրոյ ձգեալ ի հիւսիսոյ ի հարաւ. և ունի սահմանորդս՝ յարեւելից զՎողթն, յարեւմտից զՃահուկ և զԿախնաւան, ի հարաւոյ զԼիրասխ.

զարձեալ ի հիւսիսոյ սահմանակցի Ճահուկ և Մղկոյ: — Ի Թիկանց լեռանց յետնոյս՝ ի բազում աղբերաց բըղխեալ Երնջակայ գետն՝ որ կոչի յայլազգեաց Ախնա-չալի, գրեաթէ ուղղակի իջանէ յԵրասխ, սակաւ ինչ ընդ արեւմուտս խոտորեալ՝ ընդ երկար ձորահովիտ, զըսպեալ ի միջի լեռանց, մանաւանդ յահեկէն, որ է յարեւելից կողմանէ, ուր և բազում ոստս տարածեալ լեռանցըն՝ գործեն ձորակս անձուկս, հունս վտակաց սժանդակաց, պէսպէս անուամբք, Մոչրգա-դոչի, Ծոր-չէշիկ (Աղի աղբիւր), Խօշ-չէշիկ (Գեղեցիկ աղբիւր), Խաչափառախ, Դաչադոչագ, Հոփիփիակ (որում և ախտարոյժ դորութիւն ընծայեն տեղացիք), Հաձի ֆեյիմ պոչագ, Սարբ չէշիկ, ֆէօր չէշիկ, Արաշանակ, և այլն. աջակողման գետահովիտն, հարթագոյն է, և սակաւ և փոքունք են վտակք այնր կողման:

Ի միջնագաւառին և առաւել ի հարաւակողմն՝ երկու շափաւոր բարձրութեամբ նշանուոր լեռինք են ի գաւառիս, երկրքին եւս բազում ոստս կամ ոտս տարածեալ չուրջանակի. մին՝ իբր ի միջակի երկրին յահեկէ գետոյն,

որ է ի կողմն Վողթան՝ Երչան կամ Երչանդոս տաղ (Օձասար) կոչեցեալ յայլազգեաց, երբեմն և Ինան կամ Խրան). իսկ ի Հայոց սովորաբար կոչի Քոչոս կամ Քոչոս-Սար, աշտարակակերպ վերացեալ ի ձորահովտէն, 7503՝ բարձրութեամբ: Միւսն՝ չըջատարած եւս՝ Դարոչոյ լեռան է, Դարոչո կամ Տաղրի տաղ կոչեցեալ և յայժմուս, 6450՝, յարեւելից հիւսիսոյ Ջուղայի և սակաւ մղոնք ի Հս. Երասխայ. յորմէ հատանեն ընտիր երկանաքար, ի վաճառս կոչեցեալ յանուն Դախնաւանի, և առաջեալ ընդ ամենայն հայկական գաւառս Ռուսաց: Եթէ ոչ բարձրութեամբ այլ պատմական դիպօք նշանուոր է և լեռան բերդին Երնջակայ, յաջմէ գետոյն, և անջատ լեռանակք, որպէս Պաղլը գայա (Մեղրասար), ի հարաւոյ Շահկերտի, այսպէս կոչեցեալ վասն մեղուաց բունելոց յանմատոյց գագաթան նորին, յորմէ առատապէս ծորի մեղրն՝ ի վայելս մերձակայ աւանին, որոյ և ինքն լեռանն ամուր ապաւինի է ի ժամանակս պատերազմի: Այլ քան զընաս հոչակեալ է նախայիշեալն (Օձալեռան) Քոչուսար, որ թէպէտ 5 կամ 6000՝ եւեթ ի վերոյ կայ Երասխան մկանանց, այլ յոյժ բարձր և բրգածեւ կառուցեալ երեւի: Գասեւնիէ՝ որ ետեսն զայն՝ նմանեցուցանէ սրակատարն Տեներիֆայ, և ձեւոյ գիր մի չաքարի. և ասէ զաղբերս իրոց ստորոտիցն՝ բուժիչս օձահարից, և սատակիչս օձից<sup>2</sup>: Իսկ Օգոստինոս Բաշենց<sup>3</sup> նման ասէ Մոնսերագոյ լեռին Սպանիոյ: Ոմանք առասպելեն ամի ամի գումարել անդ օձից յերկուս բանակս, և տալ պատերազմ, կատորելով յոյժ զիրեար. այլք առասպելածոցն եւս, իբրու գի եթէ կարիցէ մի յօձից լեռինն կեալ ամս


1 Ի պատմութեան Սա. Օրբելեան՝ ի ծանօթ օրինակս գրոցն Գորոչոյ լեռն գրեալ է. քայց այսպիսի տնուն ոչ լիի արդ. այլ զլեռանս այս սահմանաց Երնջակայ և Վողթան՝ որոշակի Գորոչոյ Dary, զրէ Ապիէ ի քարտի իւրում, իսկ Ռասաէ և մեծ քարս Ռուսաց՝ Տաղի կամ Գաղի, Dagry, Գոփ Տաղուլ, Dagrul. Ընդ հակառակն երեքին եւս յետինքդ Գորոչո, կամ Գորի կամ Գիբի գրեն զլեռան մի արտաքոյ սահմանաց Սիւնեաց, ի Հս. Խիւսաֆերիկ կամ ըրլի, 783 Չ. բարձրութեամբ:

2 Il y a une haute montagne séparée de toutes les autres, et faite en pain de sucre comme le Pic de l' Isle de Tenerife. Au pied de cette montagne il y a quelques sources qui ont la vertu de guérir ceux qui ont esté mordus d'un serpent; et mesme si l'on porte quelques serpens à cette montagne ils y meurent aussitost. — TAVERNIER, I. 42.  
3 Եպիսկոպոս Մեղրանոյ Հայոց Կախնաւանի թեմի:

ՁՅ անտես ի մարդկանէ, կարէ այնուհետեւ մտանել յոր և է կերպարան և պատրել զմարդիկ: Եւ այլք դարձեալ ասեն, եթէ Մեծին Աղիքսանդրի աստ է բնակեցուցեալ զկանայս իւր և զօձնս պահապանս կարգեալ նոցին: Ըստ ոմանց իրան-տաղը կոչի լեառնն, այլ ոչ է հաւանելի յանուն իրան աշխարհի Պարսից այնպէս կոչիլ: Կարեւոր եւս գրէ (յատինարէն) հայագգին Պետիկ ականատես լեւրինս և որսացող Այծեմանց և Կաջառաց ի նմին և այլոց նմանեաց (յամս 1672-4), յոյժ խոտաւէտ և ծաղկաւէտ գոլ, և նշանաւոր ի սոսին քան զբնաւս ծաղիկ մինմանաձեւ օլնդրի, այլ ցած քան զայն, և անուշահոտ յոյժ մէկանման, վասն որոյ և Մշկի ծաղիկ կոչի ի տեղացեաց: Աւանգէ, ըստ նոցա, յայսմ լեւրին նահատակեալ զ10,000 (Այրարատեան) վկայս, վասն որոյ և ամի ամի ի տօնի Ամենասուրբ Երրորդութեան գալ յամենայն

գեղջէից վինակին բազմութեան հաւատացելոց՝ քահանայիւք, (այլ և մահմէտականաց), և զաւուրս երիս կատարել պաշտօն՝ պատարագաւ և ժամերգութեամբ և զի զըժուարին են ելք լեւրինն՝ իբրեւ շորից ժամուց հետի ոտիւք զնալով, անգ օթեն բերեալ զկարեւոր պաշար կերակրոյ: Անդր ապաստանին և ի վտանգս մարտից, որպէս և ի յետին կուռի Պարսից և Օսմանեանց՝ զաւուրս հինգ անգ զերծեալ կային:

Ի բրածոյ բերոց, ոմն ի մերագգի տեղագրաց, ոչ միայն ազգս ազգս քարանց, կաւոյ, կըրի, գահի և ածղոյ, այլ և պատուական հրահալելիս, ասէ, ունել Երնջակայ, ոսկի, արծաթ և պղինձ<sup>1</sup>, որ ստոյգ հաւաստեաց կարօտի. այլ պղինձն աներկբայ է, զի յարուեստէ պղնձագործութեան Շահկերտեայց՝ զեօղաւանն մինչեւ ցարդ Ղազանձի կոչի: — Ի բուսական բերոց հարթավայրքն ըն-



109. Բօլու սար—Երջան տաղ լեառն.

ծայեն զպիտանի արմտիս առատապէս, եւս և Բամբակ և Կնճիթ և Կտաւատ, խաւարտս, և ազգս ազգս պողոց, յորս ընտիր Երիւանն և Դամոն, այլ և ուրեք Երուս և Թոռզ, և այգեստան ընդարձակ, գունագոյն զինեաւ: Ի բարձրադիր և ի սակաւահող վայրս ընտիր և առատ արօպք են, մանաւանդ ի սահմանս Խաչափարախ գեղջ, ուր և զամն ողջոյն գտանի ճարակ պահարաց: Վերոյիջեալ մատենագիր մեր (Պետիկ) ազնուագոյն ի պտուղս Երնջակայ ասէ զՏանձն Մարաջի կոչեցեալ, հասարակ մեծութեամբ այլ զեղեցիկ սպիտակ և կարմիր գունով, յոյժ քաղցրահամ, և նրբակեղեւ, որպէս զի և առանց

ի բաց բառնալոյ ղայն՝ չաքարակերպ հալի, և մարթ է պահել զամն ողջոյն, և պատեալ բամբակաւ առաքի ընծայ առ Թագաւորս և առ իշխանս հեռաւորս: 2. Վիլլոզ կանաչագոյն ասէ զտանձն (Սպարաներոյ) և յազգէ Պերկանոյ կամ Պեկ-արմուտ կոչեցելոյ: Ըստ գրիցն և նկարագեղ կերպարանաց, ըստ առատութեան աղբերացն և պէսպէս բերոց՝ արժանապէս «Պեղեցկանիստ երկիր» կոչէ ոմն ի գիտնոց տեղացեաց, Յակովբ Թարգման սուղ ինչ կրօնք ժամանակաւ (յամի 1331) քան զՕրբէլեան պատմիչն:

145. Պատմիչս այս Սիւնեաց՝ ի յիւնչն զանուանի բեր-

1 Արխասկէս եպիսկոպոս Սեզրպեան:  
2 Ubi et genus omnes fructuum in copie habetur, speciale quoddam *Pyrorum*, quod *Malaci* vocant. Pollent pyra haec magnitudine ordinaria, coloris autem ab amoenitate rari laudem sortiuntur; alba enim et rubicunda sunt, odorisque suavis et dulcissimi saporis, una cum cortice

ori imposita liquefiunt ut saccharum. Cum aliunde humana solertia per annum integrum valeant asservari, manentia tunc eo in vigore ac si recentior arboribus essent decepta; prout et sic asservata transportantur nonnunquam ad principes et Regem, bombaci involuta, cistisque reclusa. — BEDIG, 381.

գորայս աշխարհին, ժանուցանէ, զի ա մի ոմն ի կանանց  
 » նահապետացն (Սիսակեանց) Երնջիկ անուն՝ շինէ և  
 » զանհնարին ամուրն Երնջակ, և յիւր անուն՝ բերդն և  
 » զաւառն կոչի Երնջակայ. և դնեն ի նմա տուն զանձու և  
 » հարկաց աշխարհին»: Յամրութենէ տեղւոյն, որ տեսցի  
 ստորեւ, տարածեցաւ համբան, և կրկնադիմ բաղդի եւ  
 ղեւ պատճառք, փրկութեան և կորստեան. փրկութեան՝  
 վասն բազում անգամ ապաւինելոյ անդր իշխանաց և  
 ռամկաց ի վտանգս մարտի և զերծանելոյ, և կորստեան՝  
 վասն ստէպ պաշարման և նեղելոյ ի թշնամեացն. և եր-  
 բեմն և մատնութեան՝ նենգաւ կամ բռնութեամբ, և չա-  
 րաչար պատուհասի ամրացելոցն ի նմա՝ հեղմամբ բազում  
 արեանց, որպէս ի Յուսիայ առ Ու. Սմբատաւ, ի Լէնկ-  
 թիմուրէ և յայլոց յետ նորա. յորոց և հուսկ գործոց՝ ի  
 սպառ քանդումն բերդին, և համբաւոյն միայն մնալ  
 տիրաբար: Ոմն ի յետին դարուց զբլաց մերոց կոչէ և  
 Արինջակ զգաւառն, ոչ զիտեմ ըստ արտասանութեան  
 եթէ սխալագրութեամբ:

Յետ մեկնելոյ աստի դժնդակ բռնաւորին Յուսիայ  
 քստմնելի ոճրագործութեամբն, ամիրայք Գողթան գրա-  
 ւեցին զԵրնջակ. յորոց ջանահնար եղեն թափել իշխանք  
 Սիւնեաց ի խաղաղել երկրին. և ի չկամելն նոցա տալ՝  
 իբր յարձունուտ ընկալեալ, պատերազմաւ իլել ջա-  
 նացան, և հարին զգորս ամիրային օգնականութեամբ  
 թուրքաց ոմանց, որք յետոյ դաւաճանեալ սպանին զՎա-  
 սակ զեղբայր նախագահ իշխանին. զոր սգալով՝ մոռանայ  
 պատմիչն յաւելուլ զելս իրաց մարտին, եթէ տիրացան  
 Սիւնիք և գաւառին եթէ ոչ և բերդին: Այլ գուշակի գի  
 և ի յետին դարս երբեմն ընդ հայկական ձեռամբ նուա-  
 ճեալ էր տեղին:

Նշանաւոր գտաւ Երնջակ և ըստ կրօնական տեսու-  
 թեան. երբեմն նախ առանձին եպիսկոպոս ունելով, թէ  
 և ոչ օրինաւորապէս, որպէս ժանուցանէ Սարգիս կա-  
 թողիկոս ի սկիզբն ԺԱ դարու, յորմէ յայտ է ի Ժ դարու  
 լինել անդ եպիսկոպոսացն, այլ ե՛րբ ս'սեալ՝ այն ոչ է  
 յայտ. իսկ ինչն խափանեաց և խառնեաց ի մեծատարած  
 թեմն Տաթևոյ. բայց դարձեալ յետ ժամանակաց կա-  
 ցին անդ եպիսկոպոսք, թէպէտ նոյնպէս պարականոն,  
 ըստ պատմիչին. զի ասէ վասն Յովհաննու Ապրակու-  
 նեցոյ որչաւ Սեդրաքայ երիցու, գնացեալ առ կաթողի-  
 կոսն Կոստանդին, յետ կիսոյ ԺԳ դարու, « և պա-  
 » տրեալ զնա խարող բանիւք՝ ձեռնադրի եպիսկոպոս, և  
 » գայ յԵրնջակու վանս, յօղելով պատճառս ոյսպիսի.  
 » եթէ և այս աթոռ է եպիսկոպոսաց, զի գոն աստ գե-  
 » ռեզմանք հայրապետաց. որք էին պատահմամբ եկեալ  
 » վասն ամրութեան բերդին, ի ժամանակս եպիսկոպո-  
 » սացն Սիւնեաց, և անդ վախճանեալ: Եւ թիկունս ա-  
 » ռարեալ յայլազգեացն հազարապետ մի, բռնաբար  
 » յափշտակեաց զԵրնջակ գաւառ. վասն որոյ ելեալ եւ  
 » պիսկոպոսացն Տէր Սարգսի ի Նորալանից և Տէր  
 » Յովհաննէս ի Տաթևոյ », գնան առ Յակոբ կաթո-  
 ղիկոս յաջորդ Կոստանդինի, զգացուցանեն զիրան, և ա-  
 ռեալ ի նմանէ գիր արգելական, մատուցանեն առ  
 Պառչ քալ և հզոր ի յսան, թեւարկու եպիսկոպոսին, և  
 առնուն ի նմանէ ձեռագիր հրաժարական. ապա կա-

լեալ զՅովհաննէս կապտեն ի նմանէ զձեւն և զկար-  
 գըն: — Յետ դարու միոյ ի շինութեան կամ նորոգու-  
 թեան վանաց Ս. Կարապետի, թուի առաջնորդարան  
 եղեալ վիճակին, այլ ոչ եպիսկոպոսարան. բայց յետ  
 կրկին վերաշինութեան տեղւոյն ի կէտ ԺԷ դարու, դար-  
 ձեալ յերեւան գան եպիսկոպոսք Երնջակայ, և առաջ-  
 նորդք Ս. Կարապետի, որպէս

16.. Առաքէլ Բուպիկ, որ վախճանեալ է ի Հոռովմ  
 յամի 1680.

1693.. Մատթէոս Ապրակունեցի

1708.. Սիմէոն

1737 – 47 Մկրտիչ

1822.. Մատթէոս

Չսոսա իրրեւ եպիսկոպոսութեամտէրս համարիմք, իսկ  
 զյաջորդսն իբր ոչ եպիսկոպոսունս՝ այլ առաջնորդս Ս.  
 Կարապետի վանաց՝ յիշեսցուք ի կարգի տեղագրու-  
 թեան հանդերձ նախորդք նոցին:

Երկրորդ և նշանաւոր կրօնական երեւոյթ յԵրնջակ՝ է  
 ընկերութիւն Միաբանող անուանեալ Հայոց, և կրօ-  
 նաւորաց նոցին յարելոց ի կարգ Քարոզողաց, այսինքն  
 Դոմինիկեանց, որք զի ըստ մասին յեղին զժէտ իւրեանց  
 ի լատինականն, խորթացեալ և օտարացեալ յոյժ հա-  
 մարեցան յազգայնոց, այլ և տարապայման կարծեաք ա-  
 տեցողք նոցին. բայց յանաչառ քննութենէ՝ երեւի ի  
 սկզբան յերկոցուն եւս կողմանց չարաչար նախանձաւո-  
 րաց՝ ոչ սակաւ գործեալ անպատեհս, յետոյ ի հաստատել  
 նորոյ ընկերութեանն հանդերձ առանձին եպիսկոպոսաւ՝  
 հաճութեամբ Հոռովմայ Քահանայապետին, և կար-  
 գապետին Միաբանողաց յուրոյն գաւառ Դոմինիկեանց,  
 Նախիջեռանեան կոչմամբ, պարապեալ նոցա հանդարտ-  
 օրէն ի հովուութիւն հօտի իւրեանց, կրելով ստէպ հա-  
 լածանս յազգայնոց և յայլազգեաց, և պինդ կալով բա-  
 ւել աւելի քան չորս դարս, թէպէտ և նուազելով, մինչ-  
 չեւ ի սպառ աւերած երկրին ի բանակաց Պարսից և Օս-  
 մանեանց, զաղթեցին յայլ և այլ կողմանս հեռաւորս.  
 ընծայելով և անձինս առաքինակրօնս, գիտնականս և  
 գործունեայս, մինչեւ դեպպանութեամբ առաքիլ ի դրա-  
 նէ Շահից Պարսից ի դրունս եւրոպէական պետութեանց  
 և Հոռովմայ, և ի սոցանէ առ Պարսիկն: Եւ զի տեսարան  
 մի կամ դէպք մեծ և նոր է յեկեղեցական պատմութեան  
 մերում, և բազմաց անծանօթ գործք և կարգ նոցին (բաց  
 ի ծագմանէն), և վայրապար կարծիք և գրոյցք զնոցուն,  
 ոչ անդէպ համարիմ, մինչ հասաք ի տեղի բազմաժողով  
 կացրոց նոցին, իբրեւ աշխարհապատում տեղագիր տալ  
 տեղեկութիւնս, զոր չէ ցարդ ուրուք ի մերայոցս լիովին  
 հաւաքեալ. թողով իւրաքանչիւր ախորժակաց ընտրել  
 զդատելին, այլ արդարութեամբ կամ գէթ ճմարտասի-  
 րութեամբ: Իբրեւ յաւելուած կարգեցից Գրուագ մի  
 ծանօթութեան՝ յետ ստորագրութեան տեղեացն:

146. Ըստ տարածութեան երկրի ոչ մեծ ինչ առաջաք  
 զԵրնջակ, զի մի գետ միայն ունի և ձորակս մանունս,  
 ոչ տրոհեալ յայլ և այլ դեհս կամ վիճակս, մանաւանդ  
 զի և զմեծ մասն մի երկրին գրաւեն ոտք լերանցն, յորս  
 ոչ նշանակին շէնք. միայն յարեւելակողմն ի սահմանա-  
 կըցութեան Գիրանայ կամ Բատաձորոյ, կայ գետակ մի ի

Թիկանց շերանց սորին աղբերացեալ՝ յերկուց ականց,  
(որոց մին կոչի Ժարաժուր), և մարթ է կոչել յանուն Շո-  
աթին աւանի, բայց անյայտ է վերջը նորին, և թուի հե-  
տախաղաղ լինել կամ սպառել մինչչեւ հասեալ ի ծոց  
զգետոյ: — Իսկ շէնք կամ գետը գաւառիս Երնջակայ՝  
ըստ հին ցուցակի Սիւնեաց աթոռոյն, քանզի խառն էին  
ընդ Գողթան՝ անդ է և նշանակեցան. իսկ աստանօր  
կարգեսցուք զորս այժմեան վիճակագրութիւն ճանաչէ,  
սկսեալ ի հիւսիսոյ՝ ըստ ընթացից գետակին և հանգու-  
ցեալ ի հարաւ, յԵրասխ:

- Լեաքաճաղ
- Արաւսեակ. Արաւիս
- Զուվալա
- Ղազանճի. Շահկերտ
- Թէվազ
- Անգիր վերին
- Միջին
- Ներքին
- Շոռոճ Շոռոճ

Թերիս մասունն սորոհմբ զգաւառս ի տեղագրութեանս ի Ժարաժուր, յԵրնջակ առանձինն և ի Զուզա.

- Կեալ = Գաղ = Ժարաժուր
- Փարաղաշտ. Փորաղաշտ
- Խօշկաշէն
- Խան - աղա
- Նորաշէն
- Խաչափարախ
- Ուալիճաղ
- Պանանեար. Ապարաներ
- Քունա
- Ապրակունիք
- Գզըլճա
- Արագին
- Ճամալտին - Պաշ
- Եախ
- Քիւզնիւտ. Կզնուտ
- Զուզայ
- Միւլախ կամ Միւլան
- Եւ աւերակք, Մագրա, Բերդիկ, Տարգանարգ որ է
- Թագաւորամարգ, և Հուղս, որոյ դիրք անյայտ:

### Ա. Զ Ո Ր Ա Կ Ժ Ա Ր Ա Ժ Ո Ւ Ր Ի

147. Քանզի յարեւելից կողմանէ գաւառաց Սիւնեաց  
յառաջ խաղամբ ընդ արեւմուտս ի տեղագրութեան  
հարաւային մասին աշխարհիս, նշանակեսցուք և նախ  
զարեւելեան մասն գաւառին Երնջակայ, թէ և զփոքր,  
այլ և զանջատ՝ ի բուն գետածորոյ գաւառին. այն է  
Զորակն Ժարաժուրի, որ յերկուց վտակաց և ձորա-  
կաց ձեւանայ. որոց արեւելեանն անտառամբ երեւի  
վայր, և թէպէտ ընդարձակ քան զսրբեմտեանն՝ այլ  
շէնք ոչ նշանակին ի նմին. իսկ երկրորդս այս դարձեալ  
և ինքնին յերկուց փոքրագոյն վտակաց և ձորակաց զու-  
գի (ըստ աշխարհացուցի), և յանկեան կցուածոյ նոցին  
ի տափարակի կայ գլխաւոր շէն բովանդակ ձորոց Ժա-  
րաժուրի, մեծ և անուանին երբեմն գետուան Շոռոճ  
կամ Շոռոճ, փարսախաւ և կիսով յարեւմտից գեղջն  
Բատոյ. Նորայուր անուն շինին յիջեցուցանէ զգողթնա-  
կան հին անուանս, և սահմանակից զուով Գիրանայ՝ ի  
դէպ է առնչակից համարել Գողթնեաց: Բայց թէպէտ  
և մեծ և բարդաւաճ և զիւզազաղաք եղեալ, անծանօթ  
է մեզ ի պատմութեան և ի յիշատակարանս յառաջ քան  
զժիէ դար. իսկ յայնմ դարու պայծառացեալ ճոխու-  
թեամբ և վաճառականութեամբ, որպէս և շինութեամբ

կամ նորոգութեամբ եկեղեցեացն, յաւուրս Մովսիսի  
կաթողիկոսի. որ և յառաջ իսկ քան զկաթողիկոսու-  
թիւնն (1630-3) գործակցութեամբ Պողոսի վարդա-  
պետի Մովազուց (հիմնադրի Անապատի), հաստատեաց՝  
որպէս յԱզուրիս՝ և աստ դպրատուն, « զի ի չրջակայ  
» գիւղորէիցն անդր ժողովեցին մանկունք առ ի յուսու-  
» մըն »: Եւտ կիսոյ դարուն (յամի 1630) յիշի ի Հոսովմ  
Տէր Զաքարիա Շոռոթեցի խոստովանահայր Հայոց,  
ուր եկեալ էր յուխտ, և յետ երկուց ամաց գտանի ի  
վենետիկ, և զրէ զինքն՝ « Գողթնացի ի գեղջէն Շոռօ-  
» թեցի »: այլ ուղղագոյն եւս այլ ոմն (յամի 1652), « Յով-  
» աննէս » սպասաւոր բանի, (ասէ զինքն) յերկրէն Ե-  
» ընջակայ որ յարեւելս Նախիջեւանայ, ի գետը Շոռօ-  
» թու »: ի գեղջէ աստի էր և Առաքել վարդապետ ի  
նմին ժամանակի, երբեմն սպասաւոր Փիլիպպոսի կաթո-  
ղիկոսի յերթալն ի Կ. Պօլիս և այլուր. և յամին 1648  
էր եպիսկոպոս և առաջնորդ Երնջակայ, յետոյ արքե-  
պիսկոպոս Նախճաւանի, և հանգուցեալ ի Հոսովմ յեկե-  
ղեցուը Հայոց, յամի 1680, որպէս հանդերձ գործովքն  
յայտնէ յերկար տապանագիրն ի հայ և ի լատին լեզու,  
որոց առաջինն այս է.

**ԶՇորթթցի Բորիկ Առաքէլ վարդապետն որ նախ ձեռնադրեալ եպիսկոպոս Ֆահրապատու, եւ ի թվին ՌՈՄԹ դաւանեալ ի Հռովմ գհաւատն ուղափառ, եղեւ յետոյ արքեպիսկոպոս Նախշվանայ եւ առաջնորդ վանից եւ վիճակին Երնջակայ Արքոյ Կնարապետին. իսկ ի թվին ՌՈՀԹ դարձեալ առաքեցաւ այսր ի Տեառնէ Յակորայ Ճղայեցի կաթողիկոսէն ուղղափառէ վասն ընդհանուրց միաբանութեան Հայոց աղգին. Զվիշտս և գհալածանս կրեաց բազումս. Գոլով ամաց Կէ լի արդեամբք եւ աշխատանօք հանգեալ ի Քրիստոս, յաւուր Զ օդոստոսի, ՌՈԶ, եւ Հայոց ՌՃԻԹ.**

Ընդ մէջ գրութեանս և լատինականին քանդակեալ է կնիք նորա բողոքածեւ այսու չըջագրութեամբ.

**Յիսուսի Քրիստոսի ծառայ Առաքէլ վարդապետ Եպիսկոպոս Արքոյ Կարապետի. ԹՎ. ՌՂԷ.**

և ի միջակին, Բօպիկ:— Յելս կոյս Ժէ դարու գտանի և Սարգիս ոմն Շոռթթցի յԱստապատ, ուր ընդօրինակէր զԴատաստանագիրս Մխիթարայ Գոշի:

Մեծութեան և ճոխութեան Շոռթթի՝ տիրազգեցիկ վկայ արձանանան գարդ վայելչաչն բնակարանքն, և այլ կարեւոր տեղիք, կէպք կանգուն և այլք կիսաւեր, որպէս և երեքին կիսաքանդ քարայէն կամուրջք ի վերայ արեւմտեան վտակին Ժարաժուրի, և աղբերք և ջրամբարք յողովք. այլ բնակութիւնն նուագեալ իբր ի 40 տունս Հայոց և ոգիս 520, և ի 10 տուն Թաթարաց, ըստ աշ-

խարհագրի 1873 ամի: Եկեղեցիքն միայն մնան արդ արժանայիշատակք. յորոց զերկուս յիշատակագիր ոմն յամի 1668, անուանէ Ս. Աստուածածին և Ս. Լուսաւորիչ. այլ թերեւս իցեն նոքա մատրուքք կամ խորանք մեծի Ս. Յակոբ եկեղեցւոյն. սակայն էին և նոյնանուն վանորայք երկու. առաջինն սակաւ ինչ արտաքոյ գեօղաւանին՝ Անապատ կոչասանաց, քառասնից ըստ աւանդութեան, քարայէն և կամարակապ, բազում խաչվիմօք յորմունս բեմին. յորոց մին մեծ և գեղեցիկ ծանուցանէ զչինոզն և զԺամանակն, որ է ամն 1661.

**Սուրբ Խաչս յիշատակ է Վարդանա քահանայի սկիզբն եւ շինող Սուրբ Աստուածածնիս, եւ քեռ իւրոյ Մարիամին մաւր՝ Ուխտիս եւ միւս քեռ Եղիսաբերին. ծնողացն Սուլթան բէկին, Միհրապին. ԹՎ. ՌՃ. եւ Ժ.**

Գոյ հնագոյն եւս թուական առ դրանն ի կապոյտ խաչվիմի (1621 ամի).

**Սուրբ Խաչս կանկնեցաւ հոգւոյ փրկութեան Ղազարին? Մարգարին? Ռ.Հ. ԹՎին.**

Նոյնպէս և յահեկէ դրանն ի կապոյտ խաչվիմի կիսեղծ անուանքն, **Մըքին Թմօ Մխիթրն.**

Գոյ և յիշատակ նորոգողի տեղւոյն ի նմանատիպ վայելուչ խաչվիմի, այլ թուականն եղծեալ է.

**Սուրբ Խաչս յիշատակ է Յովհաննէս քահանայի հոգաբարձու եւ վերջատին նորոգող սուրբ ուխտիս, եւ ծնողացն Գրիգորին եւ Զօրիկին, կողակիցն Սօղվմին. որդ. Մարգարին. եղբարցն Թաթոսն, Հայկազ.**

Այլ եւս արձանք, յորս հնագոյն այս. **Խաչս յիշատակ է Խաթունին, ԹՎ. ՌՄԴ.**

† **Սուրբ Խաչս յիշատակ է Փր... Մաթոսին եւ մայրն Հռոմնին, Մարիամին, թոռն սորա Օվանէսն, որ փոխեցաւ ի Քրիստոս. ԹՎին ՌՃԻԹ.**



կամարակապ դաւիթ եկեղեցւոյն կործանեալ է . երեւին ի նմին երեք սիւնք , յորոց առ միովն է գերեզման խօջայ խառոււմի , զոր խանն Նախնաւանու ետ խեղդամահ առնել յաղազս աւերելոյ նորա մզկիթ մի , ի վրէժ հրապուրելով կրօնաւառցի իսլամաց զամանս ի ժողովրդեանէն և ի կուսանացն . ցուցանեն ցարդ զաւերակա

ապարանից Թառոււմի և կամարակապ ջրամբարից . 1500 տունք Հայոց էին , ասեն , յայնմ ժամանակի ( յորոց 300 այլադենից ) , և 44 մեծատուն վաճառականք . կուսատանն քարայէն շուրջ զեկեղեցեան և յաւէտ ի հարաւակողմն՝ կիսաւեր մնայ . ի հիւսիսակողմն են գերեզմանք 80իւ չափ . յորոց մին 1701 Թուականաւ , միւս՝ 1703 .

Այս է տապան Պետրոսի դուստր Առաքիւն . փոխեցաւ առ Քրիստոս ԹՎ . ՌՃԾ .

† Այս է տապան Փանկկէի դուստր Անուշէին , փոխեցաւ առ Քրիստոս ԹՎ . ՌՃԾԲ .



110. Ս . Յակովբ եկեղեցի Շուսի .

Մի ի կուսանաց Անապատիս՝ Գոմարինի կամ Գոմարանուն՝ յամի 1687-8 ընդօրինակեալ զԱղօթադիրս Նաւրեկացւոյ , յիշատակ գրէ , յետ այլոց բանից . « Ես կոչուս սակրան Գօմարս եղէ ցանկացող և եռափափագ սիրով ո ստացող այս հողիալունչ մատենիս . որ ջերմեռանդ սիւսրով զտա գրեցի ի փրկութիւն հոգւոյ և ի վայելումն » անձին իմոյ , և յիշատակ յաւիտենական ինձ և ծնունդաց իմոց Պետրոսի և Հովհաննիս . և հարազատ եղարարցն՝ Պր . Գրիգորին , Պր . Պողոսին՝ Հանգուցելոցն

» առ Տէր Յիսուս . և եղբորորդւոցն իմոց Պր . Պետրոսին , Պր . Պողոսին և Նազարէրին , և քերցն իմոց Եղիաարթին և Մարիամին , Հանգուցելոցն առ Տէր , և եղբոր դստերացն իմոց՝ Մարիամին և Հանգուցելոցն իմ Մարիամին՝ որ յայսմ աւուր փոխեցաւ առ Քրիստոս . և հողեւոր դստերց իմոց՝ Եղիաարթին և Դովհարթին և Սանդուխտին » . . . Նոյն և ի չափարան յիշատակարանի՝ զոր Թերեւս այլուժ տուեալ իցէ յօրինել , աղերսէ

առնել յիշատակ ընդ վերոյգրեւոյն, եւ ասէ այսպէս.

« Եւ իմ դասերն հոգեւորի՝  
Կոկող Թղթիս Մարիենային...  
Որ ծառայ եմք Աստուածածնին,  
Եւ սպասաւորք սիրոյ նորին »...»

Միւս եւս կուսան ծաղկեալ յԱնապատիս՝ Շուշանի՝  
Թուի ընդօրինակող զրոց պատմեաց մերոց Խորենացոյ,  
Եղիշէի, և այլն, որոյ զրութեան իսկատիպ պատճէն է  
մասնս յերկար յիշատակարանի արձակ և չափաւ բանիւ,  
յորում Թաքուցանել ճգնի զանուն իւր, ծանուցանելով  
լինել ամաց 43, այլ յայտ առնէ տնազրուս տառիւք մա-  
սին միոյ յիշատակարանին, անուանիլ Շուշան (Շուս-  
շան) ըստ աւելորդ երկուց տողից.

« Ա արաւ վիրացս ո՛վ սրբեցէ.  
Բայց կուսածինն միթէ բժշկէ.  
Ճ ՚վ եղկելի և Թշուաւացեալ  
Անձն իմ մեղօք դատապարտեալ.  
Դ Իւթից շնորհաց շողօյն եմ ծարաւեալ,  
Եւ ողորմութեան Տեառն պաղքեալ.  
Ե Եւ եմ հոգւով հիւանդացեալ,  
Բնաւ անկար եմ մընացեալ.  
Զ Իւար եղէ զազիր գործով,  
Ունայն գոսյ բարեաց յուսով.  
Ը ո գութ սիրոյ զձեզ յանձնելով,  
Միտ ի յաղօթս ձեր զմեզ յիշելով.  
Ը ուսատ ոգով և խոշոր արհեստով  
Յերես անկեալ պաղատելով » . և այլն .

Յետ այլ ես տողից ինչ աւելով զինքն,  
« Յոյժ անպիտան կրօնս սպայխարութեան,  
Եւ տգէտ եմ խիստ գրչարհեստութեան »,   
երեւի յապախարող կանանց դասուէ լինել, բայց ոչ  
որպէս մեղադիր լինի անձին՝ խիստ տգէտ գրչարհեստա-  
րեան և ի շարաքանութեան, այլ և չափաւոր դիտուն, և  
պարծելի առ հաւատչեայ բարգաւաճանաց ընդ կրօնա-  
կան կարգաց նա և դպրութեան՝ ի կուսական Անապա-  
տըս անդ Սիւնեաց, միջոցաց ընդ Անապատս Արանց և  
Հարանց, որոց ցանկալի էր առաւելագոյն ծանօթու-  
թիւն. Յիշէ Շուշան և երկուս քորս Մարիամ և Եղիսա-  
բքս կուսակրօնս, և որոց էին այլ երկու քորք Մենիշ և  
Սասա, վասն եղբոր սոցա « քրիստոսասէր և երջանիկ  
ո վարդապետի » Ա, գրէր զմատեանն. որ Թուի ինքն  
Արիստակես վարդապետ Շամբեցի, զոր սակաւ ամօք յե-  
տոյ (1671) այլ գրիչ ասէ ստացող գրոցն. իսկ առաջին  
գրիչն յիշէ զհամանուն հօրեղբայր նորա « Տէր Արիս-  
» տակէս բարունի հեզահոգի վարդապետ », և զծնօղս  
նոցա Մահդասի Մկրտիչ (որդի Մարտիրոսի) և Դիշ-  
խոն կամ Երար: Կարեւորագոյն եւս գիտելի է հայրենիք  
գրիչն (Շուշանայ), զոր այսպէս ծանուցանէ, ընդ տիտցն.

Շնորհաւք ամենազաւրին Աստուծոյ չինեցաւ կաթողիկէ եկեղեցւոյս աշ-  
խատութեամբ Գրիգոր վարդապետին տրաւք եւ ողորմութեամբ Շոռո-  
թու ժողովրդեանն, օգնականութեամբ Մահդասի Յովսէփի որդի Նա-

1 Ոչ սակաւ գետք են Նոր-Վիչի անուն ի Սիւնիո. գուցէ մերձողոյն սեզւոյս՝ որ ի ճանակ իցէ Կարենիո Շուշանայ:

« Ո՛հ, անպիտան գժօղ տառիս  
Նորաշինկեցի՜ զառածեալ գերի.  
Յորժամ ի յայտ չափս հասի  
Քառեակ տասնեակ եւ երրորդի,  
Չգործեցի ժամ մի բարի.  
Վայ որ մեղաց ծառայեցի.  
Պարտական եղէ Փրկչին ձայնի,  
Եթէ, լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրօգի ».  
Եւ մեզ շատ լիցի այգանս ի հաւատարմ անապատս,  
առն բանասէր կուսանացս, և մեծոգութեան Սիսակու.

անապատ եղև յայտարարի  
ի թվականիս հայկայ սեռի.  
Երկ քառեակ և երկ հարիւ-  
րի. երկ յոբելեանս և երկ հն  
գեակ ինոյս յարի. և երբեկ  
Թիւ այլ յարաբարդի. ԼԶՄ  
սեանն յուսաց սպրիկի.  
Էռեակ հնգեակ և քառակի.  
և Թիւ մի այլ աւելի. երկիքս  
Երբնջակ ասի ի վիճակս նք  
կրտի. առաջնորդութե մն  
յեսայի հեղահոգի վրտի.  
և կիճիկաութե հայոց նք էջ  
միտնի յախորայ յարա-  
նապետի. գծադրեցաւ սո  
նա ցանկալի ասացեալ եղի  
շէի Թարգմանողի ի դեօրն  
չօթօվերա կոչի ի դուսն  
նրածածնի ը հոլանեաւ  
նք լուսաւորչին:

111. Պատմագիրք գրեալ ի կուսաստանի Շոռորոս.  
հեաց՝ զորոց ոգւոյ և հանճարոյ ակնարկեցաք ի ներա-  
ծութեան գրոցս (յէլ 7):  
Բացագոյն յարեւելից կուսէ առաջնոյն, կայ երկրորդ  
վանքն Ս. Լուսաւորիչ, վերանորոգեալ կամ վերստին  
չինեալ, ըստ Թուականին (1708) գրելոյ շուրջ զաղի-  
սակերտ կաթողիկէիւն՝ արտաբուստ.

զարեքին, եւ կողակից Մարիամին. ի թագաւորութեան Շահ Սուան Հիւսէյնի, ի հայրապետութեան Տեառն Աղէքսանդրի եւ յառաջնորդութեան Սուրբ Կարապետին Սիւսեոն վարդապետին, եւ գեօղիս մէլիք Փարսադանին, եւ վանից միաբանիս Տէր Մարկոս, Տէր Միքայէլ եւ Տէր Յովսէփ. ԹՎ. ՌՃԾԷ.

Կաթողիկէն ամբառնայ ի վերայ երկուց սեանց, տանկքն սազաձեւ են, ունի և գաւիթ վայելուչ չորիւք սեամբք. յորմունսն երեւին հետք գունագոյն նկարուց: Առաջի գաւթին են երկու կիսաւեր սենեակք, և ի միին գերեզմանք երկուց եպիսկոպոսաց՝ որպէս կարծի. չուրջանաւ կի պարիսպքն կիսականգունք կան, բայց բնակարանք վանականացն աւերեալք և քայքայեալք են: Ի հարաւոյ կուսէ եկեղեցւոյն կայ աղբիւր խանդարեալ, այլ պահեալ են զվէմ յիշատակարանին, որ ունի այսպէս, թուականաւ 1663 - 6 ամի.

Արդ ի թուականիս ՌՃԺԴ մեք Շօռօթեցի Փշրկանց Խօճայ Սահակս եւ Զարարեայս բերաք աղբիւր ի գեօղս յիշտակ մեզ եւ ծնողացն Մահդասի Մարդարին եւ Նազլուխանին, եւ կողակցացն մերոց Մարեամեանցն, եւ մեր որդւոցն Թումասին ... Ի ժամանակս հայրապետութեան Տեառն Յակոբայ եւ թագաւորութեան Փոքր Շահաբասին. Յիշողքդ յիշեալ լիջիք.

Այս բան գրեալ է և պարսիկ լեզուաւ: Կան մնացորդք շինուածոց և արտաքոյ պարսպին. որպէս, ի հիւսիսակողմն ջրամբար մեծ ի պէտս աղօրեաց վանիցն, զորոյ առաջեւ անցանէ առուակ մի: Մերձ ամին է և գերեզմանատունն, յորում երեք հոյակապ շիրիմք: Գեղեցիկ և շրջադիտակ են սահմանք վանիցն. ճոխ էր և կարուածովք, զոր յայտնէ և վէմ մի հանեալ ի դարանաձեւ խորչէ ի հիւսիսակողման գաւթին, այսու գրութեամբ.

**Մուլք վանիցն ԾԱ խալվար .**

Գլխաւոր եկեղեցի Շոռթու է Ս. Յակոբ յաւանամիջի անդ, մեծ և հոյակապ, քարաշէն, սազաձեւ, չորիւք սառուար սեամբք և աղիւսակերտ կաթողիկէիւ, երիւք գրամբք և երկու աւանդատամբք. ի վերայ դրան միոյ ի նոցանէ արձանագլեալ է համառօտ արձանս, թուականաւ 1643 ամի.

**ԹՎին ՌՂԱ շինեցաւ Սուրբ Յակովբս .**

Առ նմին ի 1669 ամի յիշտակ մի եւս Փշրկանց տոհմի, որ գուշակի մեծատուն լինել.

ԹՎին ՌՃԸ կանդնեցաւ Խաչս յիշտակ Փշրկանց Խօճայ Մարգարին, կողակցացն Նազլուխանին եւ Մարգարիտն, որդիքն Սահակն, Զաքարէն, Սուքիասն եւ միւս մերձաւորք նոցա .

Յաջմէ սեղանոյն ի վիմի որմասեանն գրեալ է յամի 1676.

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս . Օրհնեցաւ սուրբ սեղանս ձեռամբ . . . . ամէն. ԹՎ. ՌՃԻԵ, յիշտակ Շօռօթայ հասարակութեան.

Երեւին և այլ հակիրճ արձանագրութիւնք յեկեղեցւոյն. իսկ չուրջ զգմբէթին արտաքուստ մեծատառ գրեալ է.

Շնորհաւքն Աստուծոյ շինեցաւ կաթողիկէս եկեղեցւոյս ի հայրապետութեան Տեառն Աղէքսանդրի եւ առաջնորդութեան Սուրբ Կարապետին Սիմէոն վարդապետի. արդեամբ Շօռօթայ իշխանաց Սամուէլին, Էջիպագին ... ԹՎ. ՌՃԾԳ՝.

1 Առ Սեդրակեանի վերջմամբ ազգարեալ է ՌՃԺԳ, 1664, յորում ժամանակի Յակովբ էր կաթողիկոս և ոչ Աղէքսանդր:

Հանգոյն եկեղեցոյն էր վայելչալէն և գաւիթն չորիւք նմին խաչարձանք գեղեցիկք, մին Հնագոյն Թուականաւ սեամբք, որ կործանեցաւ ի ժամէ 1840 ամին. էին ի 1493 ամի.

**Սուրբ Խաչս կանդնեցաւ ի Թվիս ԶԽԲ, հոգւոյ փրկութեան Աղազարին եւ իւր կողակցին Նուշիկին, եւ իւր ծնողացն Խուժլի Բէկին, Զաքարին, Հուռումսին, Մեսիւրին.**

Յայլում խաչի գրեալ է յամի 1646.

**Սուրբ Խաչս յիշատակ է Ամիրին, ծնողացն . . . . Մարիամին, որդւոյն Ազիզբէկն Ասպահանայ? Թվ. ՌՂԵ.**

Պարիսպ ածեալ է գեկեղեցեաւս, այլ բնակարանք պաշտօնէիցն աւերեալ են: — Ի հարաւոյ կուսէ սոցին կայ և այլ եկեղեցի աւերակ, Ս. Նշան կոչեցեալ, որոյ եւ թեւին տեղիք չորից սեանց, և գաւթին՝ երկզքումբք սեամբք, և արձանագիր ի ներքուտ հարաւային դրանն, պակասաւոր Թուականաւ, այլ գուշակի 1612 ամի.

**Թվկ . . . ԿԲ. Սուրբ Խաչս յիշատակ է Սալուրբէկին, որդւոյն Հայրապետին .**

Արտաբոյ գեօղաւանին ի հարաւակողմն ի բլրակի միում կայ աւերակ մատուռն Ս. Եղիա անուն, և բացառոյն իբր փարսախաւ ի նմին կողման ի սրածայր գագաւ. Թան լերին այլ մատուռն Ս. Ստեփանոս անուն, խառն քարամբ, հողով և աղիւսով շինեալ, փոքրիկ խորանաւ. որոյ հանդէպ ի գեղեցիկ խաչվիմի գրեալ է յամի 1628.

**Սուրբ Խաչս կանգնեցաւ հոգւոյ փրկութեան Ախթիարիս, Սաւլիանի, Նեկահ . . . . .**

և ի պատուանդանի խաչին քանդակեալ է աւարտ արձանագրութեանն և Թուականն.

**Աստուածատուրի Շնահորին Սիրայմարգին Մեւքիսյեթին, Տատում Ղադամին? Գուլիմին . Ի Թվիս ՌՀԵ .**

Առաջի մատրանն Թուի լեալ գաւիթ կամ կրկնայարկ սենեակք երկու, այժմ աւերեալ, ի ժամանակս հեթանոսութեան կարծի տաճար կամ բազին կոոց լինել ի տեղով մատրանս: Երկու եւս մատրանք յիշին իբրեւ Ռւխտատեղիք, Ս. Յովնաննէս ի հիւսիսակողմն աւա, նին, և Ս. Սարգիս յարեւելակողմն: Ի հիւսիսակողմն Շոռոթի է ամայացեալն արդ վաճառանոց նորին, Բագարի-մէյտան կոչեցեալ. իսկ ի հրապարակամիջի անդ կանգեալ կայ խաչարձան մի՝ ջընլեալ Թուականաւ.

**Սուրբ Խաչս կանգնեցաւ հոգւոյ փրկութեան Վարտին. . . Թվիս .**

Անդր քան զայս է ընդարձակ գերեզմանատեղին, յորում բազում տապանք և շիրիմք վայելչակերսք, և զըլ. խաւորքն՝ տոհմին Փշրկանց. տապանագիրք ոմանց են յամս՝ 1643, և Հնագոյնն 1599, ՌԽԸ.

**Այս է տապան Ղազարի որդի Դիւանբէկի աղա Մուրատին, որ փոխեցաւ առ Քրիստոս Թվին Հայոց ՌՂԲ.**

**† Այս է տապան Փշրուկ հազարապետի տղա՝ Մուրատին որ փոխեցաւ առ Քրիստոս արքայն, Թվին Հայոց ՌՃԲ<sup>ն</sup>.**

**† Այս է տապան Փշրուկի որդի Խօջայ Սահակին<sup>2</sup>, որ փոխեցաւ առ Քրիստոս արքայն, Թվին Հայոց ՌԽԸ<sup>ն</sup>.**

1 Ասպէս կարծեմ ընթեանլի է ոչ ուր: 2 Թուի հաւ միւսոյ Սահակի՝ յեղեւս յէլ 335:



† Այս է տապան Սարուսի որդի աւագերէց Տէր Օհանին, որ փոխեցաւ առ Քրիստոս ի թվին Հայոց ՌՃԾ<sup>1</sup>ն.

Ի ժամանակի բարգաւաճանաց աւանիս, սր է ժէ գար և սկիզբն ԺԲԻ, հանգոյն հին դրացեաց իւրեանց Զուղայեցւոց, յաճախէին Շոռոթեցի վաճառականք յերուպական շահաստանս. յորոց ծանօթ է մեզ յԱմուղեքտամ Հոլանդաց՝ Մարգար որդի Ղարիբջանի, որ յամին 1677 սաստարեաց՝ ընդ երկուց այլոց ազգայնոց՝ ի տպագրութիւն Սաղմոսի ի ձեռն Տեառն Ոսկանայ: Յառաջ քան զնա երեւեցան ի Վենետիկ յամի 1651 Անանիա որդի Փանոսի և Տավուժ որդի Թոմայ, զոր վերաւորեալ էր արքանեակ մաքսառուին և խնեալ զինչս նորա, վասն որոյ գործակալս պահանջողս կարգեցին անդ զազգայինս ոմանս: Յետ նոցա եկք և բնակք ի քաղաքի առ (Վենետիկ) գտանին և այլք որպէս, կարապետ որդի Սիմոնի, յամս 1683-1713, որ յառաջնում յիշեալ ամին ետ

տպագրել անդ Սաղմոս ի ձեռն Յովհաննու վարդապետի. իսկ ի վերջնում ամին հրաժարեցաւ ի պաշտամանէ միջնորդութեան վաճառուց. բազում անգամ կարգեալ էր գործակալ և Թարգման ազգայնոց ի խնդիրս նոցին. հաւանօրէն և վախճանեալ է ի նմին քաղաքի, Երիցագոյն քան զնա է Աթիլ ոմն յիշեալ յամս 1670-80: Յերկարագոյն եւս ժամանակագրածանօթ է Առաքէլ որդի Նիկողոսի Քարաձգենց, մականուանեալ ինկիլիզ (յամս 1718-58). որ և ամուսնացեալ ընդ Մագգաբայ կետիմի (Ghedini) վենետուհւոյ և ծնեալ որդիս, 88 ամաց մեռանի յամի 1758 (նոյեմբ. 20): Նման նմին յերկարակեաց գտաւ և ճոխագոյն՝ Գուլիազ որդի Արիստոյ (1710-1746), † ամաց 81, և Թաղեալ ի Ս. Խաչ եկեղեցւոյ Հայոց՝ այսու տապանագրութեամբ.

Այս է տապան Աբեսաղոմի որդի Գուլիազին. որ փոխեցաւ ի Քրիստոս յամի 1746 ապրիլի ԻԲ.

— Յառաջ քան զսոսա վախճանեալ է յամի 1735 Ասլան որդի Պողոսի վաճառական, որ յիշի անդ յամէ 1710, և ստի հայագիր կտակ նորին: « Թիվն 1734 փետրվարի » 3, Վենետիկ: Անուն Բիսուսի Քրիստոսի փառաւորեալ » է. Տէր Բիսուս, իմ հորդս քեզ աւանտում: Ես Պողոսի » որդի Ասլանս որ իմ հօժար կամօքս փայայտ (կտակ) » արի առաջի Աստուծոյ, առաջի Մայր ողորմութեան որ » է Աստուածածին: Այս է իմ Ասլանիս տղայ Զվան » Պատիշտայն (Մկրտիչ) Ղոկ խօսքս, որ ոչ պայլառ » չի գտանէ. Այս է որ իմ մեծ մորէ է 2 .. սորայ մէրն » մին ստակ տօթ (օժիտ) չէ բերայծ. Էս յետի գինս » (Քասպարինս Բոնքի, Ronchi) պտղայրել (bagatella, » շնչին), տօթ է բերած. իմ վայսաթլամէս այս է. որ » չորս աղիկ ունիմ (Աննա Մարիամ, Լուցիա Ռոզա » † 1791, Մարիամ Գոմինիկա, Վննա Մարիամ), երեք » տղայ (Մկրտիչն յիշեալ, Պետրոս Յովհան և Յովսէփ » Յովհան), որ է եթին. եթին էլ մին աղբէր լինեն. որ » տան ըսօպին զայդ (զատ ի կահուց տանն) ինչ փող » որ ունիմ՝ եթին էլ պարապար աղբեր են. մնաց տանն » ըսօպին, ինչ որ կայ՝ իմ կողակից Քասպարին լինէ. » Քասպարին էլ օրիշ տօթ չի արամիշ արէ: Համ իմ կո » զակից Քասպարինայն՝ պարունայ է (տէր է, padrona), » ինչ որ գարէ՝ թէ փողին թէ տանին զայդերին՝ ինչ որ » զառէ (առնէ) պատրուն այ. օրիշ մարդ կօնթայ չիկայ » (հակառակ). իմ էս 7 զավակիս որ մինն զայդը չի լի-

» նէ կոնթայ. կամ իւրեանց մօր Քասպարին, կամ իմ » կողակից Քասպարինայն, պատրուն, ինչպէս որ կ'ո » ղենայն՝ իմ հօգիս էնպէս հոգայ, ինչպէս որ կու կա » մենայ: — Ես Ղափանցի Քասպարի որդի Բարիս՝ » Պարոն Ասլանին խօսկոյն գրեցի, որ ինքն կարաց ոչ » գրել, ինչ ասեց ես գրեցի. ինքն տակոյն ձեռն գրեց: » — Ես Պողոսի որդի Ասլանըս վերոյգրեալ վաստթլա » մէս՝ աղայանք արի Ղապանցի Քասպարի որդի Պա » պին, գրեց. ինչ զայուլ այ վերու գրելըն: — Յետ » սակաւ աւուրց (7 փետր.) վախճանեալ է Ասլան ամաց » 60, և հանդիսիւ թալեալ ի Ս. Սեւերոս եկեղեցւոյ: » — Սորին ժամանակակից գտանի և Մկրտիչ որդի Մի » քայիլի, յամս 1710—1733, որ էր միջնորդ վաճառուց » (սէնսալ) նոյնպէս կանամբի և հայր զաւակաց. որոյ կին » երկրորդ (Nicoletta Ghedini) էր ի նմին կէտինի տահմէ » յորմէ և Քարաձգենցն Առաքելի: Յայտ է թէ և այլք » Շոռոթեցիք, թէ ոչ հաստատուն բնակութեամբ ի քաղա » քի աստ, այլ կացեալ են ժամանակս ինչս — Ի կէս ժէ » դարու յիշին և Դաւիթ ոմն վաճառական Շոռոթեցի » գրեալ, յԱնկիրիա, որ ետ ընծայ եկեղեցւոյն կան » թեղ մի արծաթեայ, և Սիմոն՝ որ ետ զգեստեղէնս: » — Իսկ ի բնիկն ի Շոռոթ՝ յայս ժամանակս և յետոյ » եւս ծանօթ են ինչ գրոց աչակերտք, Յովնաման գը » պիր որդի Յովհաննոս երիցոս, որոյ ձեռագիր մատենանք » դտանին յամին 1682. — Յակոբ երէց ընդօրինակող Շա-

1 Յամի 1752 (1 օգոստ.) ընդ այլոց ազգայնոց վկայէ զաւագ. երեքուէ Ս. Խաչ եկեղեցւոյ իւրեանց (ի Վենետիկ), այսպէս. « Ես Շոռոթեցի Նիկողոսի որդի Առաքելըս խաղար ում (զիս տեմ), որ ինչ ի այս օր խաչայտուր վարդապետեալ մեր խօսառ. » (ով) անհար այ, մեզ, քարուղիչ այ: »  
2 Այս առաջին կին նորա կոտորիչն զուսար Սիմոն, † է 21 ամեայ (29 նոյեմ. 1719), ծնեալ ուստերս 5 և զուսար մի, յորոց միայն յիշեալն ի կտակին Պողոսի (Մկրտիչ) (Մի. 18 յունիս, 1717) եկեաց և յետ մահուան ծնողացն: Երկուք ի վաղ. մեռելն որպէս և միւս յերկրորդ կնոջն՝ Պետրոս անուանեցան, յանուն հաւուն իւրեանց. քաղաք և ինքն Ասլան որ որդի Պողոսի գրեալ է՝ որդի է Պետրոսի, և ի մկրտագիրս մերթ որդի Պետրոսի գրի, մերթ Պողոսի: Բայց մթին է բանն ի՞նչ օրէ ե, ասելն էր կարծեմ յառաջին կնոջն լինել:



րականի, յամս 1661-7. — Սարգիս որդի Բագարատայ երիցու. և սորա եւս կան ձեռագիրք յամս 1688-1709. զմին գրէ վասն « մայրաքաղաքի բարեմիտ և յոգնահան» ճար Աղամալին ». սա ծանօթ է իբրեւ զմի ի տոհմիկ և մեծատուն արանց գիտաքաղաքին, որպէս կոչէ զհայրենիս: — Ի նմին ժամանակի (յամի 1708) յիշատակի Գրիգոր վարդապետ Շոռոթեցի ընդ ձեռնարկողը թղթոյ Աղեքսանդրի կաթողիկոսի, և թուի առաջնորդ աւանին կամ վանիցն: — Յամի 1735 յետ այցելութեանն ի Ս. Կարապետ Երնջակայ՝ եկն ոյսր Աբրահամ կաթողիկոս, որպէս գրէն, « Եւ ի Շոռոթու վանքն » և յԱնաստան, և հրահրեցայ ի տուն հանգուցեալ » Պարոն Աղամալին (վերոյիշելոյ), յորդոյ իրմէ նախա» ծանօթ Պարոն Աղեքսանդրէ. և յերեկոյին կրկին ե» յաբ ի վանքն Ս. Լուսաւորչի. և յայգն գնացաք ի Փա» ոակայ »: Այսր Աղեքսանդրի որդի է անուանեալն առ մեզ Հ. Սուքիաս միաբան ուխտիս Մխիթարայ ի վենետիկ, հեղինակ թուարանութեան գրոց (1781), վախճանեալ ի Պենկալայ (ամաց 81) յամի 1789: — Յետ ոչ բազում ամաց այցելութեան Աբրահամու կաթողիկոսի՝ հասին աղէտք Շոռոթայ, ի պատերազմունս Պարսից առ կենդանեաւ և յետ մահուան Թահմազ Ղուլի խանի, որ ետ խաւարեցուցանել զաչս Աղեքսանդրի. վասն այնորիկ ոչ միայն ոչ վերադարձան վերոյիշեալ վաճառականքդ ի հայրենիս իւրեանց, այլ և շատր որ էինն անդ՝ լքեալ թողին զտուն և դարարս և գաղթեցին յարեւմուտս յերկիր Օսմանեանց և անդր եւս, և նուազեաց յոյժ բնակիչ աւանին, որպէս և ի վեր անդր նշանակեցաւ, և ոչ եւս դարձաւ յառաջին պայծառութիւնն: Յետ այնր արկածից յերկրորդ կէս ԺԼ դարու, յամի 1775, յիշի Մկրտիչ արքեպիսկոպոս Շոռոթեցի, իբրու « նախկին հե» ղինակ. . փորագրութեան ի պողովատեայս », տառից և ձեռոց տպագրատան Էլմիածնի, զոր կանգնեաց Սիմեոն կաթողիկոս, և այսպէս վկայէ ի յիշատակարանի Տնացուցին տպագրելոյ Գրեաթէ ժամանակակից սորին է Ղազար վարդապետ առաջնորդ Կարնոց եկեալ,

յամի 1782, որպէս ինքնին գրէ ի Յիշատակարանի գրոց իրիք: — Նշանաւոր քան զսոսա մարթ է համարել, իբրեւ գրագէտ, զՅովնաթան Նաղաշ Շոռոթեցի, ոչ գիտեմ վերոյիշեալ դպիրն եթէ որիչ, սրոյ են երգք խրատականք ի գիներբուս, յորոց յայտ է ի բարորութեան հայրենեացն երգեալ. այլ թերեւս և զապագայան գուշակելով արկածս, յաւելոյր նուագել.

« Այլ կեր խրմէ հետ ընկերաց,  
Քանի որ Ֆրսանտ կայ ձեռաց.  
Գալ տարի ո՛վ սաղ ո՛վ մեռած .

Խարճէք, եղբարք իմ, ցնծայով » և այլն:

Ընդ քաղաքականին և կրօնականին՝ վկայեն և գրաւորական բարգաւաճանաց Շոռոթայ յ'ԺԷ դարու, վերոյգրեալքս, և ոչ սակաւ ձեռագիր մատենանք՝ որ ցարգ գտանին. յորոց գրողն այն Գոհարն կուսակրօն՝ յիշէ զառաջնորդ թեմին այսպէս. « յաթոռակալութեան մերոյ » նահանգի Անդրէաս մեծ փարձապետի »:

148. Մղոնաւ հեռի ի հիւսիսոյ կուսէ Շոռոթայ կայ մեծ լնածեւ Նրեղլ, այժմ ցամաքեալ կամ խցեալ ի Խրճից և ի հողոյ հեղեղաց, մնայ միայն մասն ինչ չընկալատ քարաչէն որմոյն, և լայն խողովակք ազուգային. ի վիմի ազուցելոյ յորմն անդ հարաւային՝ արձանագրեալ է յիշատակ շինողացն Փշրկեան եղբարք Սահակայ և Զաքարիայ, որոց և այլ յիշատակք տեսան վերագոյնդ <sup>1</sup>:

Մղոնաւ և կիսով չափ բացագոյն ի Հս. Մ. Շոռոթայ. ի սարահարթի ուրեք կայ Փորաղաշտ կամ Փարադաշտ գիւղ, բնակեալ իբրեւ ի 40 տանց Հայոց. ունի փոքր և անշուք փայտայարկ եկեղեցի Ս. Գեորգ անուն, և մատուռն մի աւեր Ս. Եղիա անուն ի մերձակայ լեռնակին, յարեւմտից կուսէ: Սակաւ ինչ արտաքոյ այժմեան շինին է հին գիւղն ի զառիվայր լեռնակի, աւերակօր քարաչէն տանց և եկեղեցոյ, զոր Ծրանկի եկեղեցի կոչեն, իբրու Միաբանողացն, որպէս և գերեզմանատունն ի ձորամիջի. յաւերակս եկեղեցոյն համառօտ արձանագիր մի միայն յիշէ քննողն, ի խաչվիմի, յամի 1627.

**Թ. ՌՆԶ. Սուրբ Խաչս յիշատակ է Արունին Ղազարին.**

Յամէ 1835 ցամն 1856 երէց գեղն էր Տէր Աբրահամ Մմբատեան, ուր և ծնեալ է անդրանիկ իւր Դրիգոր (10-22 մարտի, 1833), որ կոչեցաւն յետոյ Մեսրոպ, եպիսկոպոս (1872), աւլա (1888) արքեպիսկոպոս Շամսխեայ. որ և գրէր խնդութեամբ յայսմ ամի (1892). « Իմ » սիրելի հայրենիքն է Փորաղաշտ գիւղն, և հայրենա» կիցքս՝ Փորաղաշտեցիք. յորս քանիք, Յովհան քահա»

» նայն, Մէլիք Թոռմանն, և այլն, դասընկերք են ինձ և խաղի ընկերք, ց'1847 ամն, ցգնալն իմ յԷլմիածին »: Երկու մղոնք ի Հս. կուսէ Փորաղաշտի ի սարատափ ձորակի միոյ կայ Ս. Ստեփանոս վանք, պարսպապատ, բարձր որմովք, այլ փոքր և անշուք փայտայարկ եկեղեցեաւ. ունի և աղբիւր Նանատակի կոչեցեալ, և գերեզմանս. ընդ որս և խաչվեմ մի՝ արձանագրաւ 1683 ամի.

**Ի հայրապետութեան Եզիազարու եւ մեր եպիսկոպոս Մարկոս վարդապետին, ես Մուղղուսու Դանիէլս ձեռամբ իմով շինեցի զայս պարիսպս, եւ զայս յիշատակ ինձ եւ իմ ծնողացն, զհայրն իմ Սահակն եւ զմայրն իմ**

<sup>1</sup> Զայս . իշէ ուլ չէ ընդօրինակեալ զարձանս՝ Սեդրաքեան եպիսկոպոս: Տես յԷԼ 355:

**Խուլածիկարն, եւ վանից միաբանքն . ամենեցուն բերան մի ողորմի ասէք թՎ. ՌՃԼԲ<sup>հն</sup>**

— Անուանի եղև Փորագաշտ վասն անդ մահուան Մաղաքիայ երիցու Ղրիմեցւոյ, յամի 1384, նախանձա- յոյզ հակառակորդի և հալածողի Միաբանողացն, յորոց հանեալ էր բազում վանորայս պէսպէս հնարիւք, և ի ջատագովութիւն իւրակողմանն հաստատեալ երկուս վարժատունս ի կողմանս Ապրակունեաց, և յանձնեալ ի Յովհաննէս Որոտնեցի, գերագոյնն վարդապետաց ժամանակին, և ի Սարգիս վարդապետ ճգնաւոր. վա- սըն որոյ ի մեռանեղն ի ժամ կերակրոյ՝ համբաւեցաւ, եթէ « Դեղակուր եղև ի սանամորէն իւրմէ... զի կինն » այն ասն աղթամայ էր Ֆռանգ դաւանութեամբ եր- » կարնակ ». որոց հակառակ և շարաշար գրէ Միսրար Ազարանեցի ժամանակակիցն, պարագլուխ նախանձա- յոյզ՝ միւսոյ կողման. մարմինն բարձեալ թաղեցաւ ի Ս. Գէորգ վանս Երնջակայ. — Ի լերինս սահմանաց Փորա- դաշտի յայտնեցան Պրնճահանք, զոր սակաւ ինչ բրեալ բնակչացն՝ առ ի չգոյէ կարեւորաց ի յառաջատութիւն դորժոյն՝ լքեալ թողին :

Ընդ մէջ Շոռթայ և Բուլուսարի, առ ոստով սորին կայ Գաղ հին դիւղ, որ Գեալ կամ կեալ լսի ի բերանս ժողովրդեան, և Գեալ-Ճարածոշր եւս. մնացորդք չի-

նուածոցն մանաւանդ բերդի և քաղաքորմոց՝ վկայեն, զի հանգոյն Շոռթայ մեծ և հարուստ գեօղաւան էր. նա և բնակիչքն Հայք՝ (զարդիս 20 տունք), յորս և եկք ու մանք, աւանդեն երբեմն 700 երգս լինել անդ, և ճոխ վաճառականս, որք ի սակս հարստահարութեանց Նա- տիր շահի և յաջորդացն՝ խոյս տուեալ գնացին յայլ եւ այլ կողմանս, շատք ի Զմիւռնիա: Բազմամարդութեա- նըն նպաստէր և օղոցն լաւութիւն և ջուրց, որովք և գեղեցիկ բուսաբերութիւն, յոր արդ վայելեն նուա- զունք, կէսք մշակութեամբ այգեաց և անդոց, այլք խաչ- նաղարմանութեամբ, եւս և մեղրաբուծութեամբ: Ե- կեղեցին մեծ և հաստակաւոյց՝ նորոգեալ (որպէս և այլք ռմանք սահմանակից գետից), յաւուրս Յակովբայ կաթողիկոսի, քարաչէն է, ի վերայ չորից ստուար սեանց բաւնալով զկաթողիկէն, խախտեալ ի սասանութենէ 1840 ամին. առ սեղանոյն են և աւանդատունք փոքունք աստի և անտի, և ի միոյն մուտք և վերելք ընդ մէջս ձե- դուանն, ի գաղտ դարանս. աւերեալ է գաւիթն ընդար- ձակ, խառն քարաչէն և աղիւսաչէն. զորովք երեւին և մնացորդք սենեկաց բնակութեան: Ի վերայ դրանն ի խաչվիմի արձանագրեալ է յամի 1656.

**Այս քարս յիշատակ է Մահդսի Սահիբին, կողակցին, թոռան, դստեր Անդալի եւ Մարիամայ. թՎ. ՌՃԵ.**

Յաջմէն գեղեցիկ խաչվեմ մի է, արձանագրեալ թուականաւ 1627 ամի.

**Սուրբ Խաչս յիշատակ է հոգւոյ փրկութեան Զօհրապին եւ կողակցին Գիւլ խաթունին, ամէն. թ. ՌՃԶ.**

— Ի ձախմէն նոյնպէս ի խաչվիմի Ռ. (1551) թուականաւ, եթէ չպակասիցին մանր թիւքն.

**Սուրբ Խաչս (աստուածընկալ) աւգնական հոգւոյ փրկութեան Տէր Բարդուղիմէոսի որդի Ներսէսի. թՎ. Ռ.**

Յայլում խաչվիմի, թուականաւ 1611 ամի գրեալ է.

**Սուրբ Խաչս յիշատակ է Փախլաթին, Տաղմիլին. Խանուէկէ? Մկրտիչ բէկ? թ. ՌԿ.**

Արտաքոյ գեղին յարեւմտակողմն կան մատրունք, մին Ս. Յովհաննէս կոչեցեալ քարաչէն և անաղարտ. միւսն՝ յարեւմտից նորին առ ստորոտով լերինն, Նսնատակ կո- չեցեալ, հոգաչէն և փայտայարկ. յոր յաճախն ուխտա-ւորք, և ախաթէտք՝ յաղբիւրն, որ ելանէ ի ներքուստ նորին գաղջ ջրով. — Ի սորս եւս յարեւմտից ի բրակի ուրեմն է Անապատ կոչեցեալ աւերակ մատրան. առ որով և աղբիւր, յորմէ երբեմն խողովակօք տանէին ջուր ի գետին: — Ի հիւսիսոյ կողմանէ գեղին ի սրածայր կա-

տար լերին միոյ Ս. Եղիս մատուռն կիսաւեր: Իսկ յա-րեւմտեան հարաւային կողման ի միջի այգեստանեաց երեւի աւերակ եկեղեցւոյ, զոր վանք կոչեն, զի և այն-պէս եղեալ է երբեմն: Բերդ կիսաքանդ պարպօք կանգ-նեալ կայ ի կատար դժուարամատոյց լեռնակի յարեւե-լից գեղին, բազում անգամ ապաստան եղեալ բնակչացն, և վկայ քաջիկ դիմակալութեան նոցին. են և առ սովաւ բերդք, մին յարեւմտից կուսէ, միւս ի հիւսիսոյ՝ Սոշրք Սարգիս կոչեցեալ, առ որով և խաչվեմք: Ի սմին կող-

ման է և մեծ ջրամբար մի Առաքելի կեօլ (լիճ) կոչեցեալ, յանուն շինողին, որպէս և միւս եւս առ Նահատակի աղբերն. է և ի շինամիջին ջրամբար կամ աւազան մի մեծ, յարբումն և յայլ պէտս:

Բարգաւաճանաց Քաղայ վաճառականութեամբ՝ միան վկայ և յիշատակք ինչ ի հեռաւոր օտար աշխարհս, որպէս ի Վենետիկ. ուր յիշին յամս 1698-1735 Տիրացու Աստուածասուր ոմն, Յովնան, և Յակոբ՝ որ փորագրեալ է զանուն իւր ի վերայ արտաքին սեան միոյ դրան Ս. Մարկոսի մեծի եկեղեցոյ. և երեւելին ճոխութեամբ Բաղի (Բաղտասար) որդի Երաչի, հաստատեալ անդ տուն

և ընակութիւն, և շ 85 ամաց, յամի 1733 (հոկտ. 24), գրեալ կտակ ի ձեռն մեծանուն վարդապետին Խաչատրոյ, կտակելով Եկեղեցւոյն Հայոց Ս. Խաչի, 4000 գուկատ (իբր 13,000 Ֆրանգ), յորոց մի հազարն վասն պատարադի, միւս ի պէտս սպասուց եկեղեցւոյն, միւս վասն սպասուորաց նորին, և չորրորդն վասն օժտի տղքատ օրիորդաց ազգայնոց քաղաքին. յորմէ՝ ցրարձումն հասարակապետութեան Վենետաց (որով կորեաւ և դրամագլուխն), ամի ամի հանէին երկուս վիճակս վասն ամուսնանալի կամ կրօնաւորելի օրիորդաց: Քաղեալ է ի նմին եկեղեցւոյ, և արձանագրութիւնն յայտնէ զի է կանամբիէր.

**Այս է տապան Ղափանցի Եաւրուի որդի Պաղտասարի. որ հանգեալ յամի Փրկչին 1733, հոկտեմբերի 24<sup>էն</sup>. Նա եւ յիւր կողակցին Ակնէսին.**

ամա թողեալ էր 3000 դուկատ, զատ ի կարասեաց տանն <sup>1</sup>: — Հնազոյն քան զվաճառականքս երեւին եկեղեցականք Քաղեցիք, ի Միաբանողաց անտի, ի Փլորենտիա քաղաքի Տոսկանայ, յամի 1571, ուր ի լատինահայճաւ շոջի գրէ ոմն «Տէր Աբել գաղեցի.» և այլ ոմն, «Ես Ֆրայ

» վարդանս որդի Յարութին, գրեցի զայս յիշատակաւ. «րան» ի թիւն մեր Հայոց ՌԺԹ»: — Աբրահամ կաթողիկոս ի գալն յԵրնջակայ Ս. կարապետէն և յերթալն ի Շոսթ, էանց ընդ Քաղ, այլ ոչ յիշէ զեկեղեցիս նորին, որպէս սովորաբար զայլոց տեղեաց:

<sup>1</sup> Յետ ամաց քեռորդի Նորա Սողոմոն բազում վէճս յուզեաց վասն ժառանգութեանն, որպէս յիշեցաւ ի տեղագրութեանս յէջ 293:



111. Սպիտակ Խաչ ի Լոր գեղջ Մրդկոյ. (Տես յէջ 330).

## Բ. ԵՐՆՁԱԿ ԱՌԱՆՁԻՆ

149. Ի բարձրաւանդակ և յանտառագեղ աղբերավայրս  
գեառոյն Երնձակայ, ի սահմանակցութեան Մղկոյ և Ճահ-  
կոյ են գեողք ինչ մանուկք և սակաւածանօթք. որոց  
անգրագոյնն է Լեարեարախ, անծանօթ ըստ գրոց, բնա-  
կեալ ի Թաթարաց իբր 20 տանց, ընդ որս և 4 տունս  
Հայոց նշանակէր Շորէն: — Յայեւմտից նորին իբր փար-  
սախաւ հեռի առ վտակաւ միով է հայսնուն գիւղն Արաւ-  
սեակ կամ Արաւիս, այլ ոչ հայարնակ, 33 տամբք  
այլազգեաց: Ի սորա եւս արեւմտից նոյնքան հեռի առ  
այլով վտակաւ կայ Զուպապա գեող սակաւարնակ, որոյ  
անուն մասամբ յուշ առնէ զՉաւաչրի վանք գեող հին  
ցանկին: — Ի հարաւոյ երկրոցուն սոցա առ եզերք գետա-  
ցեալն Երնձակայ կայ Միլապա գիւղ փոքր, որ արդ մասն  
կամ յարակից համարի Ղազանճեայ:

Ի հարաւոյ արեւելից գեղն հեռի փարսախաւ առ ե.

զերք վտակի փոքու՝ որ առ հին աւանան Երնձակայ  
խառնի ի գետն, կան երեքին Անգուր կամ Անգիր կո-  
չեցեալ գեողք, Վերին, Միջին և Ներքին, կամ ըստ  
Թուրք բնակչացն Պաշ, Օրբա, և Տիպ Անգուր. զանունն  
ստուգարանեն յաղաւաղեալ Բնկուզաձոր կոչմանէ, զի  
ընկուզենիս շատ ունի ձորակն այն. միահամուռ իբր 60  
տունք են այլազգեացդ ըստ աշխարհագրի 1873 ամի, այլ  
Թուրի նուազ նշանակեալ. յերեսին եւս դոն հայկական յի-  
շատակք ոչ սակաւ, մեծամեծ քարալէծ ընակարանաց,  
եկեղեցեաց և շիրմաց. որովք յայտնի երևի շէն մեծ և  
բարգաւաճ լինել ի նախնուսն հանգոյն Շոռոթայ և  
Շահկերտի: Վերնոյն Անգուրի եկեղեցի փոքր է, տանի-  
քըն կամարակապ սիւնարարձ, բայց արդ անկեալ, առ  
սեղանովն են փոքրիկ աւանդատունք աստի և անտի. ի  
վերոյ դրանն արձանագրեալ է ի վիճի յամի 1719.

### Հիմնարկեցաւ? ի Թուականիս ՌՃԿԸ, առաջնորդութեամբ մերս Տեառն Մատրեոսի արհի եպիսկոպոսի.

Ընդարձակ գերեզմանատուն է յարեւմտից գեղջ վեր-  
նոյն Անգուրի: — Առաւել եւս աւերեալ է եկեղեցի Միջ-  
նոյն, յորում չերեւի ինչ նշանաւոր. բայց ի հարաւոյ և

յարեւելից սորին եւս տարածանի գերեզմանավայր, յոր-  
մէ գերկոսին գայտոսիկ միայն արձանագիրս ընդօրինա-  
կեաց քննողն, 1681 և 1697 Թուականք.

† Այս է տապան Մաթոսին. Թուին ՌՃԼ.

† Այս է տապան Աննիկին Տէրտէրին? Թ. ՌՃԽԶ.<sup>ն</sup>.

Կիսաւեր է և Ներքին Անգուրի եկեղեցին, այլ մեծ և սովաւ ընդարձակ գերեզմանատեղի, յորմէ են տապա-  
հոյակապ երեւի քան զայլսն, չորիւք սեամբք: Կայ և առ նազիրքս.

Այս է տապան Նաւասարդի որդի Աստուրին. Թվին Ռ.

որ է 1551 ամ. այլ Թուրի Թէ մանր Թուականքն պակասեն, զի այլքն ամենայն նորագոյնք են քան զսա.

† Այս է տապան Ծատուրին, որ հանգեաւ առ Քրիստոս. Թվին ՌՂԳ.

† Այս է տապան Նուաստ Սարգսին. Թվին ՌՃԺԶ.

† Տապանս է վարդիկին. Թվ. ՌՃԾԳ.

Ի գիւղամիջին կայ անկեալ քար մի ձիթահանից արձանագրեալ Թուականաւ 1701 ամի.

Այս սրանոցն Ալէքսանի որդւոյն... Թվին ՌՃԾ.

Սակաւուք հեռի ի գեողիցս, ընդ մէջ սոցին և Շահկերտի է Թեյվազ գիւղ, նոյնպէս անծանօթ ի գրոց, և

հանգոյն երեցուն նախայիշեցելոցն բնակեալ յայլազ-  
գեաց 30 տանց . իսկ Հայոց Մեան աւերակք բնակարա-  
նացն . եկեղեցին սակաւ ինչ խանգարեալ , չափաւոր մե-  
ծութեամբ , վայելուչ ձեւով , չորիւք սեամբք և կամարք ,

երկու աւանդատամբք . այլ արձանագիր ոչ յայտնեցաւ  
քննողին . բայց գերեզման մի անդիր առ միով ի տեան-  
ցըն . իսկ ի գերեզմանատանն խաչվէմ մի մեծ թուակա-  
նաւ 1608 ամի .

**ԹՎԻՍ ՌԾԳ . . . . ի բարեխաւսութիւն Ղաւթի .**

Յարեւմտից ներքին Անգուրի երկու մղոնաւ և աւելի՝  
յանկեան գետոյն Երնջակայ ի ձախմէն , և վտակի միոյ  
օժանդակի՝ նոյնքան հեռի ի հիւսիսոյ կուսէ բերդին Ե-  
րնջակայ , ի բարձրաւանդակ վայրի կայ անուանին հզօր  
դիմակալութեամբ բնակչացն՝ յանցելում դարու՝ ընդ-  
դէմ սոսկաւորաց Պարսից , Շահկերտ գեօղաւան հին ,  
որ արդ Ղազանէի կոչի ( կաթսայագործաց գիւղ ) , վասն  
արուեստաւորաց պղնձոյ , զոր բրեն ի մերձակայ լեռանց ,  
յորս և Մեղրածորն այն լեռուն ի հիւսիսոյ Ել . ( Պաղլը  
գայա ) . մի ի բարգաւաճ աւանից կողմանցս , հանգոյն  
Շոռթայ . թէ և սակաւք յիշին սորա վաճառականք բը-  
նիկք՝ յօտար աշխարհս , քանզի և առաւել քան ի վա-  
ճառականութիւն՝ յարուեստ պղնձագործութեան պա-  
րապէին . ըստ աւանդելոյ բնակչացն երբեմն 1500 երդ  
եղեալ է յաւանին , և 42 աղօրիք . զարդիս Միլիաւ  
հանդերձ են իբրեւ 80 կամ 100 տունք , ոգիք աւելի քան  
700 , կէսք սերունդք նախնի բնակչացն և հանգոյն նոցին  
արիականք և կորովիք , և կէսք գաղթականք ի Պարսկա-  
հայոց . են և թաթարաց տունք իբրեւ 40 : Անծանօթ է  
պատճառ անուանն , զոր այժմ ստուգարաննն ի պարս-

կական լեզուէ Մուսք Շահի կամ Շահն երեստ ( չաճ-  
գիրդ ) . այլ ընդ գեօղս Երնջակայ հարկատուս Աթոռոյն  
Սիւնեաց՝ ի վազուց նշանակեալ է , թէ և ոչ գտանեմ  
այլ յիշատակս պատմականս , և ոչ համարիմ զյիշեալն յԱ-  
ռաքելէ՝ մերձ ի նախնուան , զոր և յառաջն յիշեցաք ( յէջ  
350 ) : Ստէպի Պարսից նեղեալք՝ այսր անդր գաղթե-  
ցին Շահկերտեցիք , և մեծ մասն ի Շուշի , ուր թաղ  
մի քաղաքին և եկեղեցի կոչի յանուն Ղազանեց . ըստ  
նուագելոյ ժողովրդեանն՝ դադարեալ է և պղնձագոր-  
ծութիւնն . ի հասարակ արուեստս պարսպին արդ , յա-  
ւէտ յերկրագործութիւն և ի դարման շերամոյ և մե-  
ղուի , այլ և պաճարաց :— Մեծութեան և հին բարգաւա-  
ճանաց աւանին մեան վկայք՝ աւերակք բնակարանացն ,  
աղօրեաց , չրանցից , և այլն . Ալեհափրկիչ եկեղեցին մեծ  
և հոյակապ , կոփածոյ քարամբք , չորիւք հաստամուր  
սեամբք և կամարք վերամբարձ ունելով կաթողիկէ փո-  
քրր այլ վայելուչ , զորով ի ստորեւն գրեալ է արձանա-  
գիր , կիսեղծ և անվերծանելի մնացեալ . յաջմէ խորա-  
նին կան և այլ երկու սեղանք մանունք . և դաւիթ ա-  
ռաջի , յորում տապան մի արձանագրաւ 1733 ամի .

**Այս է տապան Խօճայ Յովհաննէսին , որ փոխեցաւ առ Քրիստոս , ԹՎԻՆ ՌՃԶԱ .**

Ի Խաչվիմի մեծի դրան եկեղեցւոյն գրեալ է յամի 1684 .

**Թ . ՌՃԳ շինեցին .**

Թուի թուական վերանորոգութեանն : Կայ և յաւանա-  
միջի աւերակ հեղեղաքանդ եկեղեցւոյ Ս . Յովհաննէս  
անուն , յորոյ դրան վերայ նշմարի թուական ՊԳ ,  
( 1355 ) :— Նշանաւոր ի շինուածսն է թէ և մասաւր

խանգարեալ՝ հին կարաւանատունն կամ իջեան մեծ ,  
զորով պատեն դերբուկք այլոց բնակարանաց :— Սակա-  
ւուք ի բացեայ անտի կանգուն կայ մեծ խաչվէմ կիսեղծ  
արձանաւս .

**Ես Գրիգոր կանկնէցի զԽօչս զայս իմ հոգւոյս . . . . ԹՎ՝**

Ի հարաւոյ կուսէ գեղջն կամուրջ քարաչէն կամարակապ  
արկեալ է ի վերայ գետոյն ի Պօղոսէ ումեմէ , որոյ ար-  
ձանագիր ինդրէ վերծանութիւն :— Չորն որ յարեւելից  
աւանին՝ կոչի Շահիբէկի ձոր , և աւանդի այսպէս կոչե-  
ցեալ վասն գալստեան . այսր մեծ Շահ Աբասին , և մե-  
ծարեւոյ խնջոյիք ի Խօչայ Դօստի մեծատուն հայազ-  
գւոյ , որ՝ ասեն հրամանաւ նորին շինէ զաւանն և կո-  
չէ Շահ-գիրդ : Անստոյգ և անհաւան աւանդութիւն ,  
այլ ստուգագոյն և արժանայիշատակ է գործ Յովհանն-  
նու Խանդամիրեան՝ Բերդիկն կիսաւեր , մզոնաւ չափ  
և աւելի յարեւելից աւանին , ի կատար շեղձաճե քարա-  
լեքին . ամուր ապաստանի եղեալ յամի 1748 ի ժամանա-  
կի շիփութեանն իշխանութեան Պարսից և պատերազ-

մաց . յորում Հէյտար կուսակալ Նախնաւանի՝ թշնամի  
գրով Հայոց՝ վասն ամբաստանութեան նոցա առ Խաչա-  
հիմ խան Պարսից , կալաւ և սպան զՂազար քաջ զօրա-  
վար Շահկերտցի , և եղ յարգելանի զՎարդազար եղ-  
բօրորդի Խանդամիրեանն Յովհաննու իշխանի աւանին ,  
խաղաղով ի վերայ սորա բազմութեամբ զօրաց . իսկ Յով-  
հաննէս զերծուցեալ յապահովի զբնակիչս Շահկերտի ի  
բերդն և առ բերդին , էած փութանակի պարիսպ շուրջ  
զնովաւ և զինեաց զկարողսն և զկորովագոյնս՝ արս 500 .  
կառոյց և աշտարակ մի ամուր առ ստորոտոյն առ վտա-  
կի միոյ , յորմէ հարկ էր հանել չուր ի վեր ի բերդն , զի  
չկայր ի նմին ըմպելի . և կարգեաց անդ արս 15 հզօրո-  
որք լքին զայն ի դիմել անդր գունդագունդ Պարսից . և

1 Սիւրբաբեանն յաւելու սակաւ մի բացաւոյն ի ԹՎ . Շ , որ է Թիւ Փրկչէն 1084 , այլ չէ հաւանելի , թերեւ յետին տառ է թուականին :



զի ապաստան սոցա լինէր տեղին ի մարտնչին ընդ բերդին, Գրիգոր ոմն այր քաջասիրտ՝ տասն ընկերոք յարձակեալ տապալեաց զայն և դարձաւ ողջանդամ. ցարդ հռչակեն զնա Շահկերտցիք Սարու Գրիգոր կոչմամբ: Յետ բազմօրեայ կռուոյ և հրանօթովք բաղխելոյ զբերդըն, անառիկ գտեալ, միանգամայն տեսեալ և զկուրուտ ոչ սակաւուց յիւրոցն, զիջաւ Հէյտար հաշտութեամբ վճարել զգործն. առաքեաց արս աւագս պատգամաւորս, ընդ որոց խօսեցեալ կուրացեալն Աղեքսան դէր Շոռթեցի, հաւանեցան ի խաղաղութիւն, իրրեւ ի պատանգ առաքելով զօմանս յազնուաց աւանին՝ բնակել ի Նախճաւանի, ընդ որս և զընտանիս Յովհաննու. որ և ինքնին յետոյ առ սէր նոցին չգրաւ անդր, և առ երեսս մեծարեցաւ ի Հէյտարայ. այլ յետ սակաւուց դաւաճանեալ ի խրախուս խնջոյց դեղակուր եղեւ. յորմէ սոսկացեալ այլոց պատանդից՝ ճողպարեցին զանձինս փախստեամբ: Յիշատակ քաջին Յովհաննու կենդանի է առ Շահկերտեայ, զորոյ ցուցանեն և զտեղի տան և զայգեաց և կոչեն զնա Խօջայ վանի (Յովհաննու): Յիշատակի գեօղո՝ (միով տառիւ այլազրեալ), յամի 1672, յաւետարանի տուելոյ « յեկեղեցին ի Ս. Ամենա » փրկչին, ի յերկիրն Նախջիվան, ի դաւառն Երնջակ, » ի թեմ Ս. Կարապետին, ի գեօղն Շահկերտ » — Յելուս Ժէ դարու գտանէին ի վենետիկ վաճառականք Ղազանճեցիք յամս 1697-9 Ամբրոս, Կարապետ, ՅարուԹիւն. և յետոյ եւս յամի 1741 Նազար ոմն:

150. Յարեւելից կուսէ Բերդի իջեալ ճորագետակն Անգոր խառնի ի գետն Երնջակայ՝ յահեկէն. որոյ հանդէպ յաջմէն յանգի բազուկ մի բարձրաբերձ քարածայռ լերին, յանկեան անդ երազագնաց խոխոլաձայն ջուրցն կրելով զհռչակաւոր և զաղիտայի Բերդն Երնջակայ ի 5650՝ բարձու, յորոյ ի ստորեւ կայ արդ անշուք գիւղն այլազգեաց Խան-աղա 50 տամբք. և մղոնաւ հեռի ի Հր. Ալից՝ աւերակ շինի, քննելի, առ փաբու վտակաւ որ խառնի ի մեծագոյն, և սա ի ստորեւ կամրջի Նորաչէն գեղը՝ ի գետն Երնջակայ. և սակաւ ինչ ի ստորեւ մերձ ի գետն և ի վտակն՝ կայ միւս աւերակ Ենկիձէ կոչեցեալ: Մի յերկուցն է անշուշտ հին քաղաքն Երնջակ, բազմաբնակ և մեծ ի ժամանակի պայծառութեան իշխանաց երկրին, ոտտան Երնջիկ տիկնոջ ի Հայկազնեայց դարու, որոյ անունն սփռեալ է ի վերայ համարէն գաւառին և գետոյն, շինիցն և բերդին. այլ միջոց երկոցուն աւելի է քան երկու մղոն, բերդն յաջմէն, քաղաքաւանն յահեկէ գետոյն: Սակաւ ուրեք յիշի ի պատմութեան, և երեւի յ'Թ և Ժ դարս բարգաւաճեալ. յամին 840 անդ գումարեցան ի ժողով իշխանք և եպիսկոպոսունք ի քննութիւն և արդարացուցին զՅովնանմնէս կաթողիկոս, զոր իշխանապետն Հայոց Բագարատ՝ մերժեալ էր յաթոռոյն՝ դիւրանսաց լեալ ամբաստանողացն: Ի Ժ դարու յետ հարուածոց Յուսիպայ իշխանք Սիւնեաց պահանջեցին ի Հազարացուց զվիճակ Երնջակայ, յայտ է թէ վասն բերդին և քաղաքին, որ յայնմ դարու վասն բարգաւաճանացն՝

եղեւ թեմ առանձին եպիսկոպոսի, թէպէտ և ոչ օրինապէս, որպէս յիշեցաք վերագոյնդ: Այլ արդ աւերք անգամ շինից քաղաքին զրեաթէ անհետացեալ են, է ինչ որ անինամ մնալով և ընդ հողով ծածկեալ, և է որ քակտեալ ի բնակչաց Խան-աղայ գեղը և վարեալ յուճպէտ, բայց եթէ մանր քննութեամբ գայցեն յերեւան. միայն գերեզմանք ընդարձակք կան ի տիրալի նշաւակի, և այնք եւս անայցելուք և ի կոխան այլադենից. յորոց զմիոյ միայն թուական (1573) յիշէ հարեւանցի քննողն.

**ԹՎԻՆ ՌԻԲ.**

Ոչ ինչ ընդհատ ի քաղաքաւանէն աւերակ և ամայի է և Ս. Գեորգ վանք Երնջակայ որ ի զլուխ դժուարեւ քարալերին ի Հա. նորին. որմուք եկեղեցոյն եւեթ կան կանգուն, երկու դրամք, և սեղանն. և կից նմին ի հիւսիսոյ աւերակ մատրան. և ի սորին հիւսիսոյ ոչ սակաւ բացագոյն՝ քարաչէն սենեակ մի ի ստորոտ առապարի քանդակօք և նկարուք, և գերեզման ի նմին ճգնաշրի ուրուք, որպէս կոչի, և պատուի իրրեւ ուխտատեղի. ի վերայ կափարչին խորտակելոյ երեւի հին թուական ՆՂԷ, որ է 1048, եթէ ստոյգ զննեալ իցէ: Յարեւմտից մատրանն ի զառիվայրի քարալերինն սփռեալ կան գերեզմանք յուճպէ: Ի վանս յայս Ս. Գեորգայ թաղեցաւ Ղրիմեցին Մաղաքիա վարդապետ որ ի Փորագալտ յանկարծամահն եղեւ: — Ի սկիզբն ԺԸ դարու ընդ ձեռնարկողս կտակի Աղեքսանդրի կաթողիկոսի դասի և Սիւնեաց վարդապետ յԵրնջակայ:

Առաւել յոյժ քան զքաղաքն և զվանսն, և զամենայն իսկ գաւառն, Բերդն Երնջակայ գրաւէ զուշ քննողաց « անննարին անուրն », ըստ պատմչին, ի սեպացեալ սուրբեալ քարալերին, յերեւանի կալով չրջակայ ընդարձակ սահմանաց, որպէս ասէ ականատես լատինագիր հեղինակ մեր Պետրոս Պետիկ յամի 1678 Վ. երբեմն տուն հարկաց և գանձուց պայազատաց Սիսակեանց, և յետոյ բազում անգամ ամուր ապաստանի բազմաց ցԺԵ դար, և դժպէի թատր եղերական և արիւնըուշտ պատահարաց, մանաւանդ անբաւաշափ ողբալի կատարածի Սըճ բատայ բարեպաշտ թագաւորի Բագրատունոյ. առ որով յարչաւանս ռիւերիմ բանաւորին Յուսիպայ՝ եղբայր նորա և իշխանք Սիւնեաց և այլք ոչ սակաւք՝ յամրութիւն տեղւոյն վտտահացեալ, զգանձս և զցանկալիս իւրեանց քան զգանձս՝ զտիկնայսն՝ աստ յապահովեալ էին, կարգելով պահապանս բաւականս ի զգուշութիւն: Յոր դիմեալ անգութ ոստիկանին, իրրեւ մարտիւ և պաշարմամբ ոչ բաւեաց ի բուռն արկանել զանձեռնարկելին, խորհեցաւ ի ձեռն Սմբատայ թագաւորի, (զոր օրինակ իջոյց զնա կամով յամրէն Արտագերից), զայս եւս կորդել ամրոց. և ի զլանալ բերդականացն՝ յանհնարին տանջանս մատոյց առաջի աչաց նոցին առ ստորոտով բերդին, զբազմերախտն և զյոյժ լաւագունի բաղդի արժանին թագաւոր. որ գերազանցեաց համբերատար ժուժկալութեամբ և աներկմիտ հաւատով՝ քան զյուճովս ի սրբոց նահատա-

1 Aix quendam visitur mirae et artis et naturalis structurae iu summitate cujusdam montis non adeo lati,

altissimi tamen, et per totam undiqne planitiem eminentis, sub custodia militari cujusdam principis Naxiva:n.

կաց . այլ տանջանացն յիշատակ քստմունսն ածէ և սոսկումն և զայրոյթ . և ըստ ժամանակակից ծանօթ պատմելին , « Տեսիլն տուեալ շարչարանաց նորա ի հայեցողսն » : առաւել ողորմելի և սարսափելի էր քան զգործսն զըլ . « խովին . որ և յիշատակուս իսկ եօ կշտամբեալ ցնդիմ » : « յարտասուս . » այսպէս արտասուէր և գրէր մտերիմն այն և զուգափառ թագաւորի՝ կաթողիկոսն Հայոց Յովհաննէս Զ , և բուռն առնէր սրտին և գրչին նշանակել զանչուր զդ՛ւպհի վերջին տանջանսն , զոր և ինձ կրկնել ծանր է . և յօժարիմ փութալ լսել , եթէ , « յետ այսպիսի » : « անհնարին և դառն կտտանաց և խոշտանկանաց և քրրա » : « նահար աշխատութեանց՝ հատանէին սրով զգլուխ նօ » : « բա , վճարեալ ի կենաց աստի . » : « խորթելի եւս անշուշտ լսել ի նմին պատմէ , զի « ի տեղւոյ անդ յորում զե » : « բանելի և զերկանիկ թագաւորն բեւեռակապ ի փայտին » : « բարձու պրկեալ էին , ոմանք ի հաւատացելոց , և յան » : « հաւատից եւս , ասէին , տեսանել լոյս ճառագայթաւէտ » : « վառեալ իրբեւ զճրագ ճածանշաւոր նշողիք հարուստ » : « ի վեր քան զգլուխ թագաւորին կշառագտեալ հաւա » : « սար նմին . և որք ասէինն զայս՝ ստուգութեամբ իմն » : « հաւատի գրանն առնէին . բայց մեք զայսոսիկ ի տե » : « սողս անդր թողացուցեալ , և զոր աչք իսկ տեսեալ է » : « մեր , ոչ դանդաղեցուք պատմել . վասն զի հող երկրին » : « յորում ի պատուական մարմնոյն աւելչքն որ անտի կա » : « թեալ իջեալ էր , բազում բժշկութիւնս հիւանդաց և » : « վտանգելոց և ախտաժէտաց կատարէր . և սակս այսօ » : « ցիկ նշանաց՝ ոմանք ի հեթանոսաց անտի ի հաւատս » : « քրիստոսականս զանձինս վերածէին : Բայց ոստիկանն » : « անօրէն արձանացեալ , և մարտ զամրոցան յընջակու » : « եղեալ , ոչ հեռանայր անտի , մինչեւ գաղտաբար յինքն » : « գրաւեալ յափշտակէր զամրոցն , դուռն կորստեան քնա » : « կելոցն ի նմա բանայր , և զբազումս ի նոցանէն բազմա » : « խողիտող երկաթոյն տայր կերակուր » : « և զտիկնայսն վարէր ի գերութիւն ի Դուռն մայրաքաղաք . ուր մայր իշխանացն Սիւնեաց , և դեռարոյս թոռնիկ նորին վախճանեալ թաղեցան ի միասին . այլքն յագտեցան յետ ոչ բազմաց . իսկ զամրոցն յընջակու ետ Բուսուփ « ի ձեռս Գողթան բռնակալին » . յորմէ՝ ի խաղաղել երկրին՝ պահանջէին իշխանքն Սիւնեաց , և վասն այնորիկ մարտ եղեալ յաղթահարէին զնա , որպէս յիշեցաք ի վեր անդր . ընդ նմին և զտարակոյս մեր՝ եթէ նուաճեցան արդեօք բերդն այն ընդ ձեռամբ նոցա թէ ոչ : Անծանսթ մնայ մեզ ոչ այս միայն , այլ և ամենայն յիշատակք տեղւոյն ցԺԳ դար . յորում յառաջ քան զելս թաթարաց՝ աթաբէկն կամ սուլտանն Պարսից պարգեւեաց գերդն և զճահուկ և զսահմանս նոցին՝ Ելիկուսի Օրբելեանց . որպէս որդիք գտին շնորհս յայս թաթարաց և հաստատեցան ի նմին ժառանգութեան : Թուի ի ձեռս քրիստոնէից մնացեալ տեղւոյն ընդ երկար , զի Միաբանողքն հայալատինք վտաճարար բնակէին ի գեօղս նորին ի ԺԳ դարու , որպէս տեսցի յառաջիկայդ . և զայս հաստատէ ինձ կիսեղծ բան յիշատակագրի միոյ յամի 1358 , ասելով . « Եկ ա » : « նօրէն Սաքրվիչն ի բերդ յընջակայ , և շատ եկեղե » : « ցիք տապալեաց վասն մեղաց իմոց . և զգիրքս գերի են » : « բերել ի բերդ . . . ( պակասէ ) բազում աշխատանք ու

» ընչիւք թափեցի զգիրքս » . յորմէ թուի թէ ասպատակողն այն անծանօթ՝ զսահմանս և եթ աւերեաց գերդին , ուր կային քրիստոնեայք , առ որս բերաւ գիրքն այն ( Մեկնութիւն Պատարագի ) , և թափեաց քարկով ոմն , կամ Յովնանեկս երէց որդի Դաւթի երիցու : Եւ աչ այսչափ միայն , այլ ըստ Միաթարայ Ապարանեցւոյ ժամանակակցի , ի նոցին իսկ Միաբանողաց ձեռս եղեալ է բերպըն . քանզի ասէ վասն վերոյիշեալն Մաղաբիայ Ղլիմեցւոյ , եթէ տարեալ ընդ իւր « գումանս ի յաշակերտաց » : « Սարգիս Վարդապետին ի բերդն յընջակայ . և ետ ա » : « հացուցանել զնոսա շարչարանօք մահու , զի ուրացին » : « զճնամրտութիւնն , և ապա տարեալ զնոսա ի վասն իւր՝ » : « լլկեաց զնոսա բազում շարչարանօք , և փետեաց զա » : « մենայն հերս նոցա » : :

Ետ սակաւ ամաց եհաս ի վերայ անառիկ բերդիօ՝ համատարած հարուածն չինից և ամրից , հրոսն Լէնկթիմուրի ի գարնայնի 1387 ամին , առաջնորդ ունելով զՄեհեմեդ Երչիզ Պերչաս , յորմէ խոյս ետ Գարա Երշուրֆ գոռ իշխանն Սեւասոյ Թուրքմանաց , որք զտեղեան դադարեալ էին , և ապա եթող օգնական նմին զԹիմուր խօձայ որդի Ազրոյայի , յետոյ և զորդի իւր Միրան Շահ , որ պաշարեալ նստաւ զբերդան ընդ երկար ամիսս . զի ոչ միայն ի պաշարելոցն եգիտ հզոր ընդդիմութիւն , այլ և ընդդիմամարտութիւն . քանզի ի թիկունս հասին նոցա արտաքուստ Գէորգ արքայ Վրաց , օգնութեամբ Ալանաց ( Օսից ) , և այլ իշխանք նեղեալք . եհար թագաւորն զբանակ որդուց աշխարհաւերին առ բերդին , ազատեաց զբերդապահն կամ զապաւինեալն ի նմին թիր՝ կամ Դանիք , ըստ ոմանց որդի Ալմէտի Ճէլայիրեան՝ իշխողին Բաղտատու . այլ թուի տէր Գողթան , զի և պատմիչ ոմն Վրաց կոչէ զնա տէր Ճալաթայ , և անուանէ թիր Սուրան : Տարէգիր ոմն մեր գրէ համառօտիւ յամի 1391 . « Եր սուլդան Ալմաթի որդին » : « Դայիրէ յԱլմուշ բերդն . և Վրաց թագաւորն եկն ի » : « վերայ բերդին և էառ . սուլդան Տայիրն տարաւ և Տըպ » : « զիս » : Լուեալ զայն Լէնկթիմուրի և սրտմտեալ՝ հրամայեաց զանիւ պատուհասել զթուլացեալսն և զփախրստեայ զօրավարսն , և առնուլ տուգանս զերկվարս նոցուն և բաշխել զօրակունին . վարձատրեաց զԱպուպիքըր թուռն իւր , որոյ նստահար սպանեալ էր ի մարտին զՍիտի Ալի տէր կամ թագաւոր Շաքէոյ : Ի յերկարել դիմակալութեան յընջակեցեաց՝ աւելի քան զամս երկուս՝ հասին յօգնութիւն պաշարողացն նորանոր գունդք թիմուրայ , ընդ որս և որդի նորս միւս՝ հոշակաւորն Շահ - Ռոռն , և Ֆիրուզ - Շահ , և այլք . այլ մինչեւ հասեալ յետնոցս , ի սպառել պարէնի նս եւ մորթոց և նըմանեաց՝ զոր առ ի չգոյէ այոյ ուտէին , ստիպեցան պաշարեալքն անձնատուր լինել : Ետ ամաց յերթալն ի կողմանս Աղուանից ինքնին իսկ Լէնկթիմուր եկն տեսանել զամրոցն՝ որ այնքան աշխատ արար զզօրս իւր , բերեալ ընդ իւր և զտիկնայսն և զտիրելիսն . ել մինչեւ ի զագաթն քարալերինն , զնեաց խնամով զամենայն և դարձաւ : — Ետ մահուան սորա՝ Սեւասոյեան Թուրքք յալողեցան , ոչ գիտեմ զորպէսն , թափել զբերդն ի ձեռայ թաթարաց , և սնդ ամրացեալ պատերազմատէրն

Իսպանոսեր որդի Գարա Երուսուֆի՝ յորժամ Շահ-Ռուհ որդի Լէնկթիմուրի եկն ի վերայ նորա (1435), և պաշարէր մեքենայիւք զբերդն, եղիտ հնարս խոյս տալոյ. թերեւս և կասկածեալ ի մասնութենէ. և յետ այլ եւս աս պատակութեանց և արիւնհեղութեանց՝ յորմէ զզուեցան իւրքն և թողեալ զնա զնացին առ եղբայր նորա ճիւղանշահ: « Ինքն մնացեալ սակաւ արամբք՝ մտապարծ » եղեալ յեղբորէն իւրմէ, գաղտագողի երթեալ յամուրդն Երնջակու ձմեռն մի լման անդ անցոյց զկեանս իւր » ի բերդին, արբեցութեամբ: Իսկ եղբորն յրջապատեալ » պաշարեաց զնա զօրօք իւրովք՝ մինչ ի յեղանակ քար » նանային ժամանակին, ամբոցս և բնակութիւնս շինե » լով շուրջ զամբոցանս: . . . Եւ էր Աբուդարայ որդի մի, » Շահուքաթ անուն, միաբանեալ ինքն և մայր իւր և » տասն զօրեղ զօրականս և քաղ մենամարտիկս, և ի » գիշերի երթեալ գահն զնա ի քուն, արբեալ ի գինւոյ, » հանեալ զսուրս իւրեանց սրախողխող արարեալ սպա » նին զնա. ոչ գիտելով բարեկամաց նորա . . . և զգլուխ » նորա հատեալ ետուն տանել զնա առ եղբայրն իւր » Ջահնշայ, որ շուրջ նստեալ պաշարէին զնա. և նորա » տեսեալ ուրախութիւն մեծ արարեալ և նաւակա » տիս կատարեալ՝ փառս տային Աստուծոյ, զի զթշնա » միս իւրեանց՝ ծնեալ որդին ի նմանէ սիրեցեալ՝ սպան, » և ոչ ինքեանք սպանին զնա. և բարձաւ շարն ի մի » լոյ ո. այս եղև յամի 1437:

Յայտ է թէ յետ այնորիկ մնաց դարձեալ բերդն ի ձեռս նոցին Թուրքմանաց, այլ ոչ գիտեմ ցերբ: Յամին 1480 յիշի տիրող տեղւոյն Ալանգի Ալանգի, 1 առ որում արգելական կայր Ռիադեմ որդի Մագուստի, Թուրք կամ Թուրքորդի Ուզուն Հասանայ առաջին Թագաւորի Պարսից ի Սպիտակախոյ տոհմէ Թուրքմանաց, և արձակեաց զնա ըստ ինդրոյ իշխանաց Գարատաղի: Յետ ոչ բազմաց ի սկիզբն ԺՁ դարու ի Թագաւորել Շահ Իսմայիլի՝ այլոյ Թուրք Ուզուն Հասանայ, բերդատէրն Երնջակայ զամս հինգ հակառակ կայով նմա և հաւատարիմ ոստիի նորին Ալանգի, ի մեռանել սորա՝ զիջաւ հնազանդել Իսմայիլի, տալով նմա զգանձան ամբարեալս յամրին: Վենետիկցի ժամանակակից պատմիչ իրացս (Կատերինոյ Մենոյ) անդատին Ալանգայ գալիսի կոչէ զբերդն (Alangia Calai), դեպանութեամբ երթալով առ Ուզուն Հասան: Իսկ զնուաճմանէն ի ձեռն Իսմայիլի՝ ժանօթս ետուն Հայք ոմանք ի Կիպրոս, և կուսակալ կղզւոյն Ժանոյց պետութեան Վենետկոյ (յ՛. սեպտ) 1503, Լինգիա (Lingia) կոչելով և ընդարձակ երկիր (grossa terra), ուր բանակաւ գնացեալ բանագնացութեամբ աւարտեաց ըզգործն: Միւս եւս զեսպան Վենետկոյ (Ալեսանտոյի) իբր դարու միով յետ առաջնոյն (յամի 1571) երթալով առ Թահմազ Շահ, յահէ փաշային Կարնոյ որ հետամուտս առաքեալ էր, ասպատան եղև յամրոցս յայս Երնջակայ, և եկաց ի նմին աւուրս 18. զոր Ալինգիա (Alingria) 2 գրէ, և բնակեալ ասէ բովանդակ ի Լատինաց, այսինքն ի Լատինածէս Հայոց, զորս Պարսիկք Փռանկս կոչէին.

և զառաջինն ապահարկս արարեալ զնսսա՝ յետոյ յայնժամ խստիւ պահանջէին զհարկն: — Ի սկիզբն ԺԷ դարու յարչաւան Շահ Աբասայ ի վերայ Օսմանեանց, սիրելի նորա Ավիրգիանէ խան՝ առաջին կուսակալն Երեւանայ, նստէր (յամին 1603) ի բերդիս Երնջակայ, յորժամ լուեալ զասպատակ Օսմանեանց յերկիրն Գեղամայ, առաքեաց ի վերայ նոցա զԳատարէկ և վանեաց ի սահմանս Կոթայ: Հաւանորէն և յետ այնր ի յետին դարս անցեալ են անցք ընդ բերդս այս, յոր պահապանս կարգէին կողմակալք Նախճաւանի, մինչև ի սպառ լքումն և ամայութիւնն՝ հանդոյն քաղաքին իւրոյ, բայց դէպքն անծանօթ են ինձ. միայն զի որպէս Շահկեր. և այլ մերձաւորք՝ ի ժամանակս Նատիր շահի և յետ մահուան նորա վտանգեցան և անջքեցան, Թուրի ի նոյն ժամանակս ամայացեալ և սորա և լքեալ:

Բերդս այս անհնարին և անառիկ վկայեալ ի պատմաց մերոց և հաւատեալ ի պատմութենէ, մի ի կարի նշանաւորաց աշխարհիս Հայոց, երկուս ելս դժուարինս ունէր, ի հարաւոյ կուսէ և ի հիւսիսոյ, քանզի յարեւմտից լերինք և յարեւելից գետն Երնջակայ պատասպարէին. երկրքն եւս ելք զատ ի բնական արգելիցն՝ ունէին և ձեռագործս, մարտկոցս և պատուարս, որք երեւին և ցարդ ոչ փոքր մասամբ. ի հարաւակողման կան ի միջի պատուարացն և բնակարանք կամ ասպատանարանք քաղաքէնք: Հիւսիսակողմանն շինածք և ճանապարհ՝ առաւել խաթարեալ են, և փրթածք քարանց և դերբուկք ծածկեն, սակայն մարթ է հետի կուսան ոտից գտանել և ելա նել: Երկուստեք եւս երրակի պարիսպք պատեն զերեսս լերինն մինչև ցարտեւանն. ստորինն կիսաքանդ է, մի յինն մասամբ եւեթ, իսկ վերինն կամ ներքին ստուար և հզօր՝ կանգուն կայ տակաւին. և առ նոքօք սենեակք քաղաքէնք և աղիւսաշէնք, նոյնպէս և ի միջի յրջախակին բազմաթիւք այլ անձեղունք. յարեւմտեան հարաւային ծագ քարալերինն կանգուն կայ և աշտարակ դիտանոց: Ինն ջրամբարք են փորեալք ի քարածեղին քառակուսիք (24 քայլ ընդ երկայն, 6 ընդ լայն), յորս ժողովի ջուր անձրեւաց և հալից ձեանց: Երկու գագաթունք են քարալերինն, արեւմտեան հիւսիսայինն բարձրագոյն է և լերկագոյն. ի սմին են վայելչագոյն շինուածք, կամարակապ ընդարձակ սենեակք և սրահք՝ քաղ ճարտարապետեալք, իբրև իշխանանիստ դղեակ մի կամ ասպարանք, զոր և կոչեն իսկ տեղացիք Շահ քախալ: (Թագաւորագահ): Գեղեցիկ և ընդարձակածաւալ է և տեսարանն ի բարձուէ անտի, ի հարաւոյ նկատելով զՍրասիս և զլերինս Գարատաղի, յարեւմտից զԱյրարատ՝ բարձրաբերձ լեռամբք նորին, ի հիւսիսոյ և յարեւելից՝ զբարձրաւանդակս Սիւնեաց: Նշմարին և առ ստորոտով բերդին հետք հիմանց սլարսաց և պատնիսաց, որպէս և ի հիւսիսոյ կուսէ ի կողմն Շահկերտի ի բլրակի ուրեք աւերակք, զոր աւանդեն մերձաբնակքն՝ ինել բանակատեղի պաշարողաց բերդին, Թերեւս Լէնկթիմուրեանց: Ընդ մէջ սոցա երկոցուն ի կողմն լերինն՝ են գերեզմանք մեծա.

1 Թերեւս և առ Թուրք Ուզուն Հասանոյ:  
 2 Alingria. . abitato tutto da Latini, sebben non usi-

no altra liugua che turca, persiana ed armena, i quali oggi dalli Persiani sono chiamati Franchi. — Alessandri.

մեծք և բազմաթիւք, թերեւս կոտորելոցն յայլեւայլ նուազք՝ առ բռնաբարեալ և դժուարմբռնելի բերդիւն: — Կարծէ՛ր արդեօք հայկասիրտ կինն այն Երըն-ջիկ, կամ որ աւանդեացն նախ զայն վէպ, եթէ այդքան արեան ճապաղիք հեղլոց էին առ ոտամբ երկնաբերձ վիմին, յորոյ գազաթան խորհեցաւ գետեղել վստահարար զգահ իւր. և թէ հոմասեռք իւր հովասուն տիկնայք սիսականք՝ անդ զերծեալք անտուտ և կալա-նակապ վարելոց էին ի գերութիւն՝ ի Դուին, զհետ շարակողո՞ճ դիակն նահատակելոյն անդանօր թազաւորին Սմբատայ. որոյ արիւն՝ եթէ հաշտեալ եւս իցէ՞ ոչ արգելու տակաւին զարտասգու ողորմագինս, և թերեւս առաւել ինչ պահանջէ, գէթ զտօնական յիշատակութիւն վկայական նահատակութեանն:


151. Երկու մղոնաւ յարեւելից աւերակաց Երնջակայ քաղաքի, նոյնքան և ի Հր. Մ. Փորադաշտի, սակաւ ինչ աւելի ի Հր. Ել. բերդին և Խանաղայ, ի հիւսիսային ստորոտս Բալուսար լերին կայ Խօշկաղէն, մի ի վերջին հնգեցուն գեօղից Միաբանողաց Երնջակայ, որոյ եկեղեցին գրի նուիրեալ Ս. Գեղարդուն Քրիստոսի, զարդիս գրեալ թէ հիմնայտակ եղեալ և փոխեալ ի պարտէզ միոյ ի մահէտական 30 տուն բնակչաց գեղջն <sup>1</sup>, որչափ էին ի սկիզբն Ժէ դարու. իսկ Հայոց յայնժամ 130 տունք, ոգիք շափահաք կամ հաղորդընկալք 700 և տղայք 300. իսկ ի վանսն էին միաբան Հարք հինգ, կղերիկուք երկու, և եղբարք աշխատաւորք հինգ: Բամի 1641 աւետարան մի նուիրէր եկեղեցոյս՝ Բարդողիմոս - վարդաւնես ոմն, որդի Թանդրիվերմիչի և Խանգետէի, թոռն Թոռնանի, պանդխտեալ ի հայրենեաց անտի իւրոց և բնակեալ և ամուսնացեալ ի Սպահան <sup>2</sup>: Արտաքոյ շինին ի վերայ լերին կայր և եկեղեցի մի յանուն Ս. Առաքելոյն Թարգէի. Պետիկ առ իւրեւ (1671) 70 տուն միայն ասէ զՀայս, և զեկեղեցին կոչէ յանուն Ս. Ստեփանոսի Նախավկայի. նոյնպէս Ստեփանոս կոչի և ի մատենի գրելոյ յամի 1675, ի Տօնիկեան կղերիկոսէ: Բառալ քան զնա Հ. Նազարեան 60 տունս միայն գրէ և ոգիս 700, իսկ յետ նորա այլ ոմն կրօնակից՝ յամի 1699 տունս 80: Ի վանահարց Խօշկաղինի յիշին, յամի 1540, (յորում ժամանակի գեղաւազն կամ մէլիք էր Սափար անուն),

- 1540 Թովհաննէս
- 1684 Միքայէլ Թովհաննիսեան
- 1696 Անդրէաս

1 Հայրն Pio ի վարս Հ. Մատթէի 150 տուն ասէ:  
 2 Զաւետագրանն՝ որ արդ զաստի ի կողման Սալմաստոյ՝ գրեալ

1703 Ստեփաննոս  
 1705 Պետրոս  
 1735 Գումինիկոս Մարիա իտալացի ի Լատի քաղաքէ:  
 Մի յերիցագոյն ծանօթ վանականաց Խօշկաղինոյ է Ճրա Զաքարիա որդի Նորիճանի և Գոռչապի, որ յամի 1568 եկեալ ի Հռովմ ընդ Նիկողայոսի արքեպիսկոպոսի, վասն ծերութեանն ոչ իշխեաց վերագառնալ ընդ երկար և դժուար ուղին, և մնաց յիտալիա. յամին 1570 էր ի Փլորենտիա, և գնեալ անդ հայերէն ժամագիրս մի կրօնին իւրոյ 14 ֆլորինաց, զրէր զյիշատակ իւր. յետ ամաց ինչ մեռաւ և թաղեցաւ յԱնդանա, յեկեղեցւոյ Դամինիկեանց: Ընդ նմին ի Փլորենտիա էր և այլ ոմն Խօշկաղինցի, Թովհաննէս որդի Խոտրումի: — Բամի 1598 դէպք իմն դժպհի անգթութեան հարստահարողաց եղեն ի Խօշկաղէն, ի վանսն. թուրք մի իշխանաւոր՝ եկեալ անդր 80 հեծելովք, մինչդեռ միաբանքն գնացեալ էին յայգիս, և կայր միայն առաքինակրօն Հ. Մատթէոս, և ի ժամուն պատարագ մատուցանէր. մտեալ յեկեղեցին՝ քարչեաց զգգեստոց պատարագողին՝ դի փութացի գալ ծառայել նմա. և յասել եղբորն որ սպասաւորէր նմա՝ համբերել առ վայր մի մինչև աւարտեցի պատարագն, ոչ հանգուրծեալ նորա ժոյժ ունել, չեւ ընթերցեալ զվերջին աւետարանն՝ ձգեաց զքահանայն ուժգին և բաղխեաց ի քարինս սեղանոյն, պատառելով զզուխն, և հայհոյանք յանդիմանելով վասն դանդաղանացն. և յասել նորա հեղօրէն թէ ոչ կարէր թողուլ զպատարագն, ընդ կառափն հանել հրամայեաց, և ետ նմա ծունր դնել: Խնդրեաց նա սակաւիկ մի աղօթել, և այն ինչ աւարտեաց զաղօթան՝ յանձն արարեալ Աստուծոյ զուգին, ի մի հարուած հետ ընկէց ժանտն այն զզուխս պաշտօնէին Աստուծոյ, և մեկնեցաւ: Դէպ եղեւ ի նմին ժամու կնոջ միոյ մտանել յեկեղեցին և տեսալ լոյս մեծ ի վերայ արիւնաշաղախ մարմնոյն, չքաւ պատմեաց, և դիմեաց ամենայն ժողովուրդն ի տեսիլն յայն. վասն որոյ և մեծաւ յուզարկաւորութեամբ բարձեալ թաղեցին ի նմին տեղւոյ նահատակութեանն առ սեղանոյն, և յիշատակ նորա անմուռաց պատուէր: — Ի նմին ժամանակի էր ի վանսն Խօշկաղինի և Հ. Մատթիա համբաւեալ ընդ գիտնագոյնս ի կարգակցացն: Ի գեղջէ և ի վանաց աստի էր և Հ. Մովսէս, որ յամի 1638 զրէր ի Հռովմ, « Թվ. ՌՈՒԸ յունիսի » ի Դորն, Թովհաննէս Մկրտչի տօնն, մտայ Հուռուճայ » ընդ նմա էր ուղեկից և « Քուռդ անուանեալն Տէր Իո.

է Պիտրոս քահանայ ի Լառու քաղաքի Հնգկաց, յամի 1635, ի իւր գրոյ վարդանիսի՝ Յիշատակարանն այսպէս ցուցանէ զլորմ սորո:



մինիկոս » : — Ի հասարակաց գրատան վիճակաց քաղաքի խտախոյ պահի թերթ մի գրչագիր հայերէն՝ Պարգարանորիւն Տերունական աղօթից, գրեալ « Ի յանպիտան տան քահանայ Պատրի (Հայր) Բօհաննիսէ Խօշկա » շինեցոյ, Ի կարգէ Քարոզողաց, Ի պրովինցէ (Provin » oia) և Ի գաւառէն Նախիվլանու » :

Ի սկիզբն ԺԸ դարու վաճառականք ոմանք Խօշկաշինեցիք բարեպաշտօնք և ընչեղք ետուն տպագրել գիրս հոգեւորականս յիտալիա և Ի Փաւսնկաստան, ուր եկեալ էին . որպէս, ԲուՆիաթ որդի Խօջայ Ազարիայի, յամի 1706 ետ տպագրել Ի վենետիկ զՃամագիրք Ս. Աստուածածնի անուանեալ աղօթամատոյց, և զՃամանատոյց յաղագս Ս. Գրիգորի Լուսաւորչի եպիսկոպոսի անուանեալն . զառաջինն յետ 63 ամաց (1768) վերջստին ետ տպագրել Ի նմին վաղաքի՝ որդի նորա Հ. Թովմաս Խաւվերտեանց, յետին ծանօթ միանձն Ի կարգէ անտի Միաբանողաց կամ Գոմինիկեան Հայոց, որ յետ աւերման կամ չքման վանորէից իւրեանց յԵրընշակ, զեզերէր յարեւմուտս : Սմին նման և Յովնաննէս որդի Միխասայ ետ տպագրել Ի Մարտիիա, յամի 1708 զնոյն Ճամագիրս Ս. Աստուածածնի . և զՄտաժանան աղօթից գիրս, զԹարգմանեալն Ի Պետրոսէ վարդապետէ Տիգրանեցոյ՝ : — Սակաւ ամօք զկնի, ոմն Ի վանականաց՝ որ ղանուն իւր լուէ, վերստին յերկրեաց ըզթարգմանութիւն շաշոց գրոց (Միսալ) կարգին իւրոյ, զԹարգմանեալն նախ Ի հիմնադրէն իւրեանց Եր. Բարդաղիմեայ և ապա Ի Գրիգորէ Մործարեցոյ, որ և ապա

գրեալ է Ի Հոռով և Ի վենետիկ : — Չայնու ժամանակաւ (1738) յիշի և վաճառական ոմն Խօշկաշինեցի Պետրոս տի Միտսի Յովնան, Թերեւս որդի վերոյգրեալն Յովնաննու, յԱմադերասամ մայրաքաղաքի Հոլանտաց :

183 Մերձագոյն բնակութիւն յԵրնշակ՝ է Նորաշէն գիւղ, իբր մղոնաւ և կիսով Ի Հր. Մ. բերդին, և կիսով շախ այսր միջոցի Ի Հո. Մ. աւերեալ քաղաքին, Ի սպառուած Բայուսար լերին, յալմէ գետոյն, յորոյ վերայ արկեալ է կամուրջ գեղեցիկ, որ Ի բանութենէ հեղեղի 1871 ամին քայքայեցաւ . Թուի կառուցեալն յԱղասայէ Դոռութեցոյ, երբեակ կամարք : Բնակիչքն են իբր 46 տուն, Թաթարք, և իբր 40 տուն Հայք, շատք Ի սոցանէ գաղթեալք են Ի Պարսից մասնէ : Թուի լինել մի յերկուց գիւղից Երնշակայ ըստ հին ցանկին, Նորակերտ և Նորագիւղ, որոց առաջին յիշի յԱռաքել պատմէ համանուն վտական և գուշակի ընդ մէջ Դոռութի և Յղնայ գոյ . համարի և սա ընդ գիւղս Միաբանողացն Հայոց, այլ ոչ յիշի Ի կարգի նոցին, վասն որոյ Թուի ինձ Թէ սա իցէ Մեծաշէնն Թուեալ ընդ նոսին յԱզարիայէ Յրիտոմե եպիսկոպոսէ նոցին Ի սկիզբն ԺԷ դարու, զի և զեկեղեցին կոչէ Ս. Աստուածածին, որպէս կոչի և ցարդ, մեծ 5 և հոյակապ, հանդերձ կաթողիկէի Ի վերայ շորից ստուար սեանց, և ութ եւս որմասեամբք կամարակապեալ . երկուստեք խորանին կան աւանդատունք և Ի վերայ նոցին մատրունք . երկու դրունք են եկեղեցւոյն, Ի վերայ հարաւայնոյն արձանագրեալ է Ի վիմի յամի 1593 :

**Հիմնադրեցաւ սուրբ եկեղեցիս Ի Թվ. Հայոց ՌԻԱ.**

սակայն քննօղն և նկարող գերմանացին (Քէսդնէր) հընազոյն քան զԹուականդ եւս համարի զչինուածն, հիացեալ ընդ մեծութիւնն և ընդ շքեղութիւն : — Ի ներքոյ արձանին գրեալ է յամի 1661 և այս .

**Ես Նորաշէնցի Մարկոսս Ափռաօվս իմ յօժար կամաւս Ժ խաւվար Նախվանի վախիմ արեցի Աստուածածնի յեկեղեցուն . ԹՎ. ՌՃԺ .**

Ի վերոյ արձանագրութեանս կայ և այլ գրուած, որոյ վերջն միայն երեւի և Թիւն 1873 .

**Ի մնա . . . եծախ սուրբ յեկեղեցիս Ի Թվ. Հայոց ՌԻԱ.**

Իսկ Ի վերայ մեծի արեւմտեան դրանն ազուցեալ է վեմ լոյ, այլ անթուական գրութեամբք . որոց վերջինն Ի վեմբ երիւք խաչքանդակօք, մէն յանուն միոյ հանգուցեալայ սեան միոյ՝ է այս, և այլքն որ զհետ սորին .

**Յիշատակ է Դուռս ? մահտեսի Աթանասի որդի Ղազարին .**

† Յիշատակ է Խաչս մահտեսի Գրիգորին եւ որդւոյն Մանուկին .

† Յիշատակ է Խաչս Հայրապետի որդի Միքայելին .

† Յիշատակ է սիւնս մահտեսի Ազարեայ եւ ծնողացն մահտեսի Եղիա յի եւ Խէր խաթունին .

1 Յարում ամի սակ զեկք լինել ամոց 64ից :  
2 Գրէ սո Ի յՆաապարանին . « Այս Դրոմուտ արթն ետ խօշկապիցի Միխայի որդի Յովնաննէս պատմայ ամի, ինձ յիւս .  
3 սակ և ծնողաց իմոց . ով ոք Եանդիդի կամ կարգայ և որինակէ մեկ Հայր մեր եւ յի՛նէ :  
5 Սեպտեմբեր 30 քաղ սակ ընդ երկուսն՝ արտադուստ, 18 Լոյն :



Կայ և գնալիք վայելուչ առաջի տաճարին՝ չորիւք սեամբք տարանչաց հանդերձ անուամբքն . ի վերայ հիւսիսային կամարակապ . յորոց ի գլուխս պատկերք չորից աւե սեանն և հարաւային դրանն գրեալ են .

**Յիշատակ է Խաչս Ուհանին , կողակցին Նազլույին .**

**† Յիշատակ է սուրբ պատկերս Մարկոսի որդի Ովանէս վարդապետին .**

Յարեւտեան որմն տաճարին ի վերայ քան զգաւթն՝ գրեալ է յամի 1638 .

**Յիշատակ է Սուրբ Խաչս Էյվազի որդի Հարօնին . Թ . ՌՃԷ<sup>ին</sup> .**

Այլուր կայ և այս արձան թուականաւ 1611 - 3 ամի .

**Խաչս յիշատակ է Մարտիրոսին եւ կողակցին Խաթունին դուստր Գուլի-խան . ԹՎ . ՌԿ .**

Յարեւմտակողմն գաւթին է բնակարան երիցու , և նո-  
րօգեալ ի նոյն պէտս վարի . յարեւելակողմն աղբիւր  
քարաղէն կրկին կամարակապ աւազանսք , այլ արդ ազու-  
գայքն խցեալ են և անվարուն : — Է և մատուռն մի ա-  
ւերակ Ս . Յովհաննէս անուն ի միջի ծառաստանի գեղջն ,  
որոյ սեղանն և մասն ինչ տանեաց կանգուն կայ . յորմն  
խորանին եօթն խորք են պատուհանաձեւք մի մի խաչ-  
յիմաք , ի միումն թուական 217 , որ է 1488 . երեւին և  
հետք փռքունց աւանդատանց յաջմէ և յահեկէ : — Գտա-  
նին մատեանք ինչ գրեալք ի գեղջս յայսմիկ , մին յամի  
1669 , յորում և մեռեալ է գրիչն Ալեքսան քահանայ ,  
որպէս ծանուցանէ ելլալսն նորին Դեմիուպ , տալով նկա-  
րել զպատկեր նորին ի նմին մատենի <sup>1</sup> . յիչէ նա զՅով-  
հաննէս վարդապետ գիւր հօրեղբայր , զՅովհան վարդա-  
պետ հոգեւոր , զՅովսէփ վարդապետ , հանդերձ այլովք , և  
զհոգեւոր մայրն Հոփսիմե , որոյ միամօր որդի Աստուա-  
ծատար « յերիտասարդական հասակի յստար աշխարհի  
» փոխեցաւ առ Քրիստոս » : Յայլում մատենի գրելոյ  
յամս 1692 - 8 ամի վանն եկեղեցւոյն , « ընդ հովանեու  
» Սուրբ Աստուածածնի , Ս . կարապետի և Սուրբ Նա-  
» խավկայի տաճարիս , որ ի թուին ՌՃԼԶ ( 1687 ) ամին  
» հիմն արկին բազում աշխատութեամբ և վշտակու-  
» թեամբ , և յողով ծախիւք » . յիչէ գրողն՝ Մովսէս ե-  
րէց , զեպիսկոպոս փնճակին Տէր Մատթէոս արհեսպի-  
կոպոս Ապրակունեցի , յայտ է թէ ոչ ի Միաբանողաց  
անտի , և յաւելու . « ի սոյն ժամանակի էին քահա-  
» նայք մեր Տէր Աստուածատուրն , Տէր Ովանէսն , Տէր  
» Թումայն , Տէր Գրիգորն , Տէր Գալուստն . և վերա-  
» կացու ժողովրդեան էր վարպետ կողմասն » . Ժո-  
ղովրդեանդ՝ Թուի շինողացն ճարտարապետ . իսկ թուա-  
կան շինուածոյն ոչ միաբանի ընդ արձանագրութեանցն ,  
և հարկ է դարձեալ նորոգութիւն համարել , կամ մասն  
ինչ շինուիման : — Ի հիւսիսակողմն գեղջս ի վերայ հա-  
սարակաց ճանապարհին կայ հողակոյտ՝ յանուն Ղանտի-  
մագրայ կոչեցեալ , զոր աւանդեն լինել աւազակ ահար-  
կու , բազում ջանիւ ըմբռնեալ և հրամանաւ Կահ Ա-


բասայ հեղձավղձուկ անդ արարեալ , կուտելով ի վերայ  
նորա հող բազում պարկաք :  
Մշոնաւ չափ ի հարաւոյ Նորայինի և Բօլուսար լերին  
առ եկերր Երնջակայ է գիւղն Սալթաղ , մի ի շինից  
Միաբանողացն , յորոց դրուածս ինչ կոչի և Սալիմաղ ,  
և ստուգարանի Թաղ Ապարաներ աւանի , շինեալ ի սա-  
լաքարի լեռնոտին . ի վերջ ԺԶ դարու 120 տունք էին ի  
նմա . վանքն և եկեղեցին փոքր կոչէր յանուն Ս . Գէոր-  
գայ , որոյ վանահայր էր յամի 1540 Հ . Չաքարիա , և  
զիւղապետն կամ մէլիք Աղաբէկ , ստորագրողք Թղթի  
միոյ վկայականի առ Պօղոս Քահանայապետ Հռոմայ .  
իսկ յամի 1696 վանապահն կոչէր Հ . Բարդողիմէոս  
Նազար , առ որով գրեալ է անբնակ էր գիւղն , զի և  
ըստ Պետիկայ՝ որ իբր 28 ամաք յառաջ եկն անդր , 8  
տունք միայն էին , և ոչ կարգաւոր վանականք , և եկե-  
ղեցին էր ընդ տեսութեամբ Ապարաներոյ քահանայից :  
Ղազար Ճահկեցի կաթողիկոս տօէ ի սակա հալածա-  
նաց և աղարտման երկրին՝ զբնակիչս Սալթաղայ դար-  
ձեալ ի դեն մահմէտական , յորոց զարդիս են ի նմին  
իրբե 45 տունք երկրագործաց և խաչնադարմանից : Ե-  
կեղեցին իսպառ քանդեալ է , հիմունքն միայն երեւին .  
և գերեզմանք և խաչյիմաք յողովք առ ճանապարհայն՝ ի  
հիւսիսոյ գեղջն . այլ և շատք ի նոցանէ խախտեալք և  
վարեալք ի պէտս շինութեան նորոց բնակարանաց և տ-  
գուգայի Նուրց :  
Ի լերին անդ Բօլուսարի՝ « որ է բարձր քարանձաւ »  
ըստ Առաքելի պատմչի , Թաքուցին երբեմն զմասն նշխա-  
րաց Ս . Հոփսիմեանց՝ լատին կրօնաւորքն գողացողք  
նոցին , և խոչտանգեալք յԱլլուռն Ալեաթիք Աստապատ-  
ցւոյ , որ արքունի հրամանաւ առաքեալ էր ի խնդիր նո-  
ցին , յայտնեցին զտեղին , յորմէ և բարձաւ . այլ առ յիշա-  
տակէ շինեցաւ անդ մատուռն փոքրիկ՝ որ ցարդ եւս կո-  
չի յանուն կոչանաց , և ուխտատեղի է մերձաբնակ Հա-  
յոց , որք կոչեն անդ զլեռունն Հայրսն ոչ փեռայ . աւան-  
դելով , նորապսակ ամուսնաց փախուցեալ ի ձեռաց ա-  
ւազակաց և ելեալ ի գլուխ լերինն և վիմատառեալ ան-

<sup>1</sup> Եթէ քահանայ ոչ իցէ պատկերին՝ երթիցէ խնդրել և քննել ի Սեւան կղզւոյ , ուր գտանի մատեանն յիշեալ :

ղէն. և զայս զրուցեն վասն երկհիւղ կամ կրկնագազաթն ձեւոյ նորին: — Անշատ ոտտ մի համարելի է նըմին զկոչեցեալն Տապան քեփեփի, բլուր մերձ յԱպարաներ, յոր աւանդեն Պարսիկք թողեալ Ալեայ մարգարէին իւրեանց զկնիք գարշապարացն. վասն որոյ և այնպէս կոչեն (կատար կամ Բլուր գարշապարի), և պատուեն անդ քար մի, ընդ մատրանաձեւ շինուածով, որ թերեւս երբեմն սրբարան և ուխտատեղի էր Հայոց:

153. Գրեաթէ կից ի Սալթաղ ի հարաւոյ նորին և առ զետեզերքն կայ յաջմէն՝ զեղն Բանանեար, որ է Ապարաներ կամ Ապարան, մեծ աւան կամ գիւղաքաղաք, ըստ Օգոստինոսի Բաշենց բնկի տեղւոյն, յընկերքն Ժէ դարու. պիտուր չէն բնակութեան Միաբանողացն եղեալ և աթոռ եպիսկոպոսի նոցին, փոխադրելոյ այսր ի Նախնական քաղաքէ. բարգաւաճեալ ոչ միայն կրօնական կարգօք, այլ և մշակութեամբ և արգասեօք

երկրի, ի ձեռն կարգաւորաց նոցին և աշխարհականաց: Չայս սքանչանօք իմն յիշեն ամենայն արեւմտեայ ճանապարհորդք որք անցին ընդ կողմանքս, և որք առ դաւանակցութեան իւրեանց և գտանելոյ անդ լսողս և խօսողս եւրոպական լեզուաց, գային և դադարէին անդէն որչափ և կամէին. մինչեւ կոչել զայս միոյ ի ճանապարհագրացն սակաւ ամօք յետ կիսոյ Ժէ դարու, « Մի ի » գեղեցկագոյն վայրաց բովանդակ Ասիոյ, զուարճացեալ » այգեք և պտղաբեր ծառովք եւ ամենայն որ ինչ պիտանացու է կենաց: <sup>1</sup> Երկիրն յայտ յանդիման հաստատէ ցարդ զհանոյական վկայութիւնդ, այլ ոչ և չէնքն, զի գրեաթէ խալաթ խաթարեալ է վայելչութիւն ձեռագործ, և միայն հետք երեւին ընդարձակ բնակութեանց, քաղաքորմոց, և գերեզմանք բազում ի հիւսիսոյ և ի հարաւոյ գեղջն, այլ և այնք խախտեալք յայժմու պարսկադէն ընկալաց՝ իրրեւ 120 տանց. թուեցաւ ոմանց եւ



113. Ապարաներ.

Թէ ի նախնուսն քաղաք մի մեծ էր տեղիս, և ըստ կարծեաց Տիգրանակերտ մի, այլ չկան հաւաստիք. այն զի, և ոչ միջնագարեան շինուածքն կանգուն կան: ի սկիզբն Ժէ դարու 800 տունք հաշուէին յԱպարաներ Միաբանողացն, և եկեղեցին մեծ և եպիսկոպոսական կոչէր յունուս Ամենայն Որբոց, կառուցեալ խոշոր քարամբք ի

բարձրաւանդակի յաւանամիջին, յերիս բաժանեալ երկկարգ կամարօք. տանիքն աղիւսակերտ ի սասանութենէ 1848 ամին անկեալ են, և երեւին չորք սիւնք և երեք գմբէթք ի վերայ երեցուն խորանաց, ի խորանի բեմին կան խաչվէմք գեղաբանդակք. ի միումն թուական 1289 ամի կիսեղծ արձանագրաւ.

**ԹՎ. ԶԸ. — Քրիստոս Աստուած յիշեալ ղՏիկին.**

Են և այլ խաչարձանք հին թուականօք սակաւօք ի վերոյ ի յատակէն ընդ մերձաւոր կամարօք խորանին. ի միումն.

1 Դաւեանիւ. Ա. *Aberener*. . . Un gros bourg qui est un des plus beaux lieux de toute l'Asie; le vin et les fruits y sont excellents, et on y trouve en abondance tout ce qui est nécessaire pour la vie. ի բանից սորա և այլոցն հաւաքեալ ուրուք պսպէս գրէ զարդաստեղութենէ Ապարաներոյ.  
Le pays d'Abraner peut être regardé comme le plus agréable de toute l'Arménie: il est couvert de vignes, de jardins, et d'une infinité d'arbres, dont les fruits sont d'un goût exquis: l'abricot surtout y est délicieux, aussi l'appelle-t-on en latin *Malum Armeniacum*, parce qu'il n'en croît nulle part, ni en si grande quantité, ni d'aussi excellent qu'en Arménie. Les abricotiers y sont

tous à haut vent, et l'on y en voit plusieurs aussi gros et aussi touffus que les plus gros chênes de nos forêts: ils sont tellement chargés de fruits, qu'en temps de leur maturité on en trouve tous les matins la terre couverte; on les ramasse, on les fait sécher au soleil sur des claies, pendant deux ou trois jours: on les garde tout l'hiver et même durant plusieurs années: et en les cuisant doucement dans leurs propre suc, ils reviennent à leur grosseur, à leur couleur, et à leur goût naturel, et donnent un syrop qui vaut nos meilleurs confitures, sans y mettre ni sucre ni miel.  
*Mémoires Géographiques, Physiques et Historiques.* — *Séa* և յէլ 373:

**ԹՎ. ՈԾԱ. Կանգնեցաւ Խաչս ի բարեխաւսութիւն Պատրոն Ճարին. Յիշեա Քրիստոս Աստուած եւ ողորմեա.**

**† Կանգնեցաւ Խաչս բարեխաւս.... ԹՎ. ՉԾ.**

Երեք խաչվէմբ եւս կան ի հիւսիսակողման մատրանն ուսնոցն իցեն և այս հին արձանագիրք կիսեղծք. հնա- կամ խորանին. ոչ գիտեմ ի միում ի սոցանէ եթէ յա. գոյնն յամի 1194.

**ԹՎ. ՈԽԳ. Յիշեա Քրիստոս? զՄա.**

**† Ի ԹՎ. ՈԿԳ.... (որ) դի Եզիկ... անի.**

**† Ի ԹՎ. ՉԼԶ.... Կազմել եւ կանգնել.**

... ան-նակ սուրբ Նշանս յինքեան ունելով ի բարեխաւսութիւն Մուսիսի Վարդա (պետի) ն. աղոյն....

Հնագոյն եւս Թուականաւ 1174 ամի և կարելոր տապանագիր է այս.

**ԹՎ. ՈԻԳ. Ես վաշուտ ծառայ Քրիստոսի կամ ի տապանի եւ սպասեմ գալստեանն Տեառն, աղաչեմ յիշել.**

Վաշուտութեի նախահայր Քուրդ իշխանաց պաշտօնէից Սարգսի Սպասաւարի: — Էր և ներքնատուն ընդ եկեղեցեանն, որ յայտնեցաւ յամի 1870, յորմէ հանին այլազգի բնակիչքն սպասս ինչ և անթա, այլ նշանաւոր ինչ ոչ երեւեցաւ: Փոխանակ եկեղեցւոյն արդ կառուցեալ է մզկիթ մի Պարսից, որք պարսպին ի մշակութիւն և ի խաշնադարմանութիւն, ոմանք ի վաղուց այլք ի նորոյ հաստատեալ անդ բնակութիւն, և բաց ի սակաւուց ոմանց՝ գաւհիկք և աղքատք են: — Թուականք նշխարեալ արձանաց եկեղեցւոյն յայտ առնեն զի և յառաջքան զհաստատութիւն ուխտի Միաբանողացն՝ չէն էր տեղիս: Ի սկիզբն Ժէ դարու եպիսկոպոս նոցին յիշէ և այլ հինդ մատրունս ի սահմանս Ապարաներոյ, յորս միայն ի տօնական աւուրս կատարէր պաշտօնն: Նշանաւորն ի բնիկ տեղոյն և յանխոհական նախանձայուզութեան Մխիթար, որ Ֆրա Մխիթարիչ կոչէ զինքն, և 50 ամ ասէ զեզերեալ ի գիրս (1360-1410), զառաջինն աշակերտեալ Մաղաբիայ և Սարգսի վարդապետաց, ի յիշատակարանի այլոց գրոց (որիչ ի հակաճառութեան խառնակ մատենէն), զեկեղեցի վանացն կոչէ յանուն « Սրբռնչոյ Աստուածածնին, և Ս. Ստեփանոսի Նախապը» կայի և Ս. Յակոբոսի առաքելոյ և Ամենայն Սրբոց, հա» զարապետաց խորհրդոցն Աստուծոյ » և ապա առնէ յիշատակ միաբանիցն, « Ֆր. Տէրունական Փրիօրի » (վանահօր), և Վիքարի (աթոռակալի) ԿԳ ? Ֆր. Մխիթարիչ վարդապետի ձյնարսի. Ֆր. Գրիգորի որ մականուն կոչեցեալ Մակկց. Ֆր. Մովսէսի, Ֆր. Մը» խիթարի, Ֆր. Մկրտչի, Ֆր. Սիմէոնի, Ֆր. Յովնան» նիսի, Ֆր. Չվանի (Յովհան), Ֆր. Ղուկասի, Ֆր. Յովանէս Միակեցի ». ոչ գիտեմ ինքն իսկ էր ձյնարսիս

վարդապետն այն և վիքար Մխիթարիչ, եթէ այլ ոք համանուն. յիշէ և զտոհմայինան, զհայր իւր, « Գորգիկ որ » հանգուցեալ է ի Քրիստոս.... զմայրն իմ Երախ որ կու » աշխատի. երկրորդ զեղբայրն իմ զՇահն և զքոյր իմ » զԹուխտէնիկ ». և վանն անձեւ գրութեանն խնդրէ չքմեղս, զի « Ժամանակն զայս երբ... և յօրէ յայնմանէ » յորմէ սկսայ զգիրքս՝ մինչեւ ի վերջին գիրն՝ Թալան » (աւար և աւեր) և փախուստն ոչ վերացաւ ի մէնջ »: — Յայլ ինչ գիրս գրեալ ի Մակու, յամի 1393, նոյնպէս կոչէ զինքն « Ֆր. Մխիթարիչ, սոսկ անուամբ քահանայ » և աշակերտ բանի »: — Գտանին ձեռագիրք և վերոյիշեալն Ֆր. Ղուկասու Ապարանեցւոյ, որ գրէ ուրեք և վասն մօր իւրոյ, « Սամուրտատն յիշեալիք ի Տէր, զի » հայցէր գրել զանունն ի Թխթիս »: — Ժամանակակից է Մխիթարայ և Թովմաս Ապարանեցի, որ յամի 1435 (19 դեկտ.) ընտրեցաւ ի Քահանայապետէն Հռովմայ՝ եպիսկոպոս Սուլտանիոյ<sup>1</sup>:

Յառաջնորդաց վանացս Ամենասրբոց և յանցից անցից տեղոյն, գտանեմ զյիշատակս Հ. Գրիգորի վանահօր, որ յամի 1475 ընդ գաւառահօր վանորէիցն՝ Հ. Մատթէի Քոնստանդուպոլսոյ զառնայր ի Հռովմէ յերկիր իւր: Յամի 1540 վանահայրն էր Յովնաննէս, զիւղապետն Միւրանց կամ Միրանշայ. Թուի սոյն այս Տէր Յովհաննէս յԱպարանից վանից, որ յետ ամաց գտու ի Պաւլիքա, առ Ալպերտ դքսիւ, որպէս զրէ աղաւաղ<sup>2</sup> ի խորհրդատետարի պահելոյ յարքունի մատենադարանի մայրաքաղաքին (Մոնակոյ): Ի նոյն ժամանակս գտանէր և Ղուրնցիոս Ապարանեցի ընդ այլոց Միաբանողաց՝ ի Ֆիւրենցա, յամի 1570: Անդ էր և Ֆր. Մկրտիչ Ապարանեցի յամի 1576, որ ասէ եկեալ ի Հռոմ « յուխտ, էն տա»

<sup>1</sup> Ռիբոլ (Ripoll Thomas, Bullar. Dominic). Բ. 680.  
<sup>2</sup> « Ես Տէր Յովնանէս Ապարանից վանից որ եկա քաղաք Բաւա»

» իւրոյ Սուրբ Յակովբայ գերեզմ Բաւարիայ քաղաք. Աստուած » գահէ Պարուն զուքս Ալբերգու Էրազմուս »:

որին որ սուրբ դուռն բացին, 1876 յ, այսինքն յամի յուրելինի: — Նշանաւոր յեպիսկոպոսունս վիճակին հանգիսացաւ Նիկողայոս Ֆրիտոն Ապարանեցի, երկար աւագ կացեալ յաթոն, (1861-98), չորիցս գնացեալ ի Հոռովմ, բազում տառապանս կրեալ յայլազգեաց և յազգայնաց. յորոց՝ ոմն ուրացեալ՝ կամելով շինել մզկիթ յԱպարաներ մերձ ի վանսն, իբրեւ չթողոյր եպիսկոպոսըն, ամբաստան եղեւ առ շահն. կոչեցաւ Նիկողայոս ի Սպահան 12 միարանօք. եւ իմաստութեամբն հաճոյ եղեալ շահին, հրամայեցաւ հանդիսիւ պատարագ մատուցանել, ընդ որ հաճեցաւ շահն, այլ զպատարագի զգեստսն զրաւեաց. իսկ ուրացողն այն յետ սակաւոց սպանաւ:

Ի կորզել Օսմանեանց զկողմանքս ի ձեռաց Պարսից՝ բազում տազնապ տառապանաց հասուցանէին քրիստոնէից. յորոց նեղեալ զեղջաւազն Ապարաներոյ Ասպահան անուն՝ գնաց ի Կ. Պօլս առ սուլտանն ի բողոք, և էաժ ընդ իւր լախոշ մի դատող. ընդ որ զչարեալ կողմակալին Նախճատեանի՝ ետ գաղտ սպանանել զԱսպահան, և համբաւել թէ Ապարանեցիք գետամայն հեղձուցին զնա. վասն որոյ և եկն խնդրել վրէժ յեպիսկոպոսէն և ի գլխաւորացն. խոյս ետ եպիսկոպոսն (Նիկողայոս) միարանիքն, թողեալ վանապահ զեղբայր մի Պօղոս անուն. զոր կալեալ բռնաւորին հանդերձ 15 ծերունեօք քաղաքաւանին՝ խոշտանգանօք և անհնարին տանջանօք ստիպէր տալ խոստովանել զինքեանս սպանիչս. և ոչ առեալ նոցա յանձն զստութիւնն՝ Պօղոս և երկուք ի ծերոցն մեռան՝ ի տանջանսն (կախեալ գոտից գլուխ ի ջուր աղի). իսկ այլքն առ վտանգին մեղադիր եղեն անձանց, և դատապարտեցան ի մահ. բայց բարեխօսութեամբ վաճառականաց ոմանց մահմէտականաց զերծան ի մահուանէ, տալով տուգանս 8000 վահանադրոյմ դրամ. յայմաւնէ շքաւորեցաւ յոյժ աւանն բարգաւաճ: — Յետ տասանց ամաց եւս (1896) այլ իմն դէպք եղեն ողորմագին և սիրալի. փաշայ մի եկեալ յԱպարաներ ի գրօսանս, ետես աղջիկ մի գեղեցիկ որ երթոյր ի գործ յայգին ընդ մօր իւրօմ, և ետ յափշտակել և բերել յապարանս իւր. եւ գիտ կոյսն հնարս փախելոյ, և խրատու ուրումն՝ գաղտ եմուտ և թաքեալ ի շտեմարանս վանացն. այլ զտեալ և անդ ի խնդրակաց շամբելոյն՝ տարեալ եղեւ առ նա վերստին. որոյ ոչ շատացեալ այնու յանցաւոր համարել զեպիսկոպոսն ծերունի (Նիկողայոս), եւ քարչել և գանակոծ առնել զոտս և զգլուխ և զթօվանդակ մարմին նորա, գրեալ ի դուռն մահու հասուցեալ. յայնժամ փոխանակ նորա զինքեանս ի գրաւ եւ ի մահետուն աթոռակալ նորա Ազարիա Ֆրիտոն (և ապա յաջորդ յեպիսկոպոսութիւն), և հարք հինգ, (Թաղէոս, Պետրոս, Մատթիա, Յովնանսէս և Բենեդիկտոս), և թափեցին զնա. իսկ ինքեանք կապեալ արկան ի բանտ ամսօրեայ ժամանակաւ, երկիցս և երկուցս յեօթնեկի գանակոծ լինելով և ստիպելով յուրացութիւն. և իբրեւ անդրդուելի մնացին, ետ բռնաւորն ի ձեռն դատաւորի վճիռ մահու հատանել ի վերայ նոցա, զերկուս ի խաչ հա-

նել, զերկուս ընդ ցից, և զերկուս ի հուր արկանել. և բարձեալ նոցա զփայտս պատուհասիցն վարէին ի բարձրաւանդակ մի արտաքոյ շինին, ուր սովորութիւն էր զմահապարտսն սպանանել. ոմն ի դատապարտելոցն յերթալն ի խարոյկ՝ լայր և ասէր. Միթէ անկ էր ինձ զեղբոր իմոյ փայտ խարուկի իմովք գրկօքս տանել. այսպէս և այլք, կէպք ողբային և կէպք քաջալերէին. և հասեալք ի տեղի կատարմանն՝ խնդրեցին տեսանել զծերունի և զչարակողկոճ եպիսկոպոս իւրեանց, խոստովանել և հաղորդել. արարեալ այնպէս, իբրեւ մերձենայր ժամ դժպիտ տեսարանին, և շուրջ կուտեալ էր ամբոխ բազում ի քրիստոնէից և յայլադեանից, իբրեւ 10,000 արանց, որք յերկօրեայ հեռաւոր վայրաց եկեալ հասեալ էին անդր՝ ի լուր իրացն, սկսաւ սքանչելի իմն վէճ հակառակութեան ընդ ութանամեայ կիսակենդան եպիսկոպոսն և ընդ վեցեակն դատապարտեալսն. զի նա ասէր ինքեան նախ վիճակեալ զմեռանելն, և ոչ կամել զի երաշխաւորքն փոխանակ իւր մեռանիցին, և նոքա պնդէին մինչեւ ցմահ յանձն առեալ զերաշխաւորութիւնն. և համօրէն տեսարանն ի գութ շարժեալ գորովէր: Ապա բարեխօս իւր գտեալ եպիսկոպոսին վաճառական մի պարսիկ իւր մշտեբիմ, անկաւ յոտս բռնաւորին, և տուեալ 600 վահանադրոյմ՝ զերծոյց որպէս հովուապետ քաջ՝ զընդ ձեռամբ իւրով հովիւս հօտին, և դարձոյց ի փարախ իւրուր և յետ ոչ բազմաց հանգեալ ինքն ի Տէր լի ամօք և արդեամբք: Այլ և յետ մահուն կրեաց հալածանս. զի շտուն թոյլ այլադեանքն թաղել զնա, ասելով անժառանգ գոյ, և խնդրէին զինչս նորա. յոր սակս և զլլգարիա արկեալ ի կոճեղս՝ զաւուրս հինգ բրածեծ արարին. զբաւեցին և զայգիս և զկալուածս վանացն, մինչեւ վաճառականք Ջուղայեցիք տուեալ 3000 վահանադրոյմ՝ զերծուցին, և այլ եւս ինչս տուեալ հանին զդատաւորն ի վանացն՝ ուր կամէր բնակել, իբրեւ յարջունիս գրաւելով զստացուած անժառանգի: Իսկ Ազարիա ընտրեալ ի յաջորդութիւն աթոռոյն՝ զնաց ի Հոռովմ, և ի խնդրոյ զըլխաւորաց եկեղեցւոյն և Հարց կարդին Գոմինիկեանց՝ ետ գրով ծանօթս զիրացս և զմիոյ միոյ յ'12 գիւղից և վանաց վիճակին. յորում ասէ վասն Ապարաներոյ ունել 500 տունս յիւրոցն, և 20 տուն մահմէտականաց. ի վանս Ալեքանյն Սրբոց՝ 18 Հարս քահանայս, նշանաւորս ի նոսա գիտութեամբ զՀՀ. Թաղէոս և Մատթէոս, 8 սարկաւազունս, 12 դպիրս և 30 միարանս գործաւորս, յորոց մի էր և Եղ: Անդրէաս հարիւրեմեան առոյգ ծերունի սրբակաց և ճգնազգեաց:

Ոչ ժամանեաց Ազարիա Ֆրիտոն դառնալ ի հայրենի իւր, զի ձեռնադրեալ յարքեպիսկոպոս յամի 1604, զընաց ի Սպանիա, և դարձ արարեալ անդրէն ի Հոռովմ՝ անդ վախճանեցաւ ի սկիզբն 1607 տարույ, ամաց գոլով 45Թ. եղբայր նորա Նիկողայոս շինեաց նմա տապան յեկեղեցւոյն շնորհելոյ Հայոց ի Ս. Մարիամ Եգիպտացի, զրեալ ի վերայ և արձան յիշատակի, զատ յերկար լատին տապանագրէն՝ և աղճատեալ հայերէն, զայս օրինակ:

**Տէր Ազարիա Ֆրիտոնու առքեպիսկոպոս Նախճիվանի ի Մեծ Հայաստան .**

Առ յաջորդաւ նորա (Մատթէոս) յետ նուանելոյ երկրին ի Շահ Աբասայ հանդիպեցան իրք գողութեան նըշխարաց Սրբոց Հռիփսիմեանց ի Բիսուսեան կրօնաւարաց, որք եկեալ այսր յԱպարաներ, Թաքուցին զմասն մի ի տան ուրեք և զմասն ի Բօլու-սար լերինն, որպէս վերագոյնդ նշանակեցաք (յէջ 368):

ՅԱպարաներոյ էր հայրենեք և Հ. Օգոստինոս Բաջնց, որ եկաց յաթոռ եպիսկոպոսութեան գաւառին յամն 1622 - 51, բազում վաստակօք և ուղեւորութեամբք ի պէտս հօտին, որոյ վասն և հառտատեաց վարժոցս սատարութեամբ արեւմտեայց: Գրեաց զպատմութիւն վարուցն և զանցս ժամանակին, յամի 1614, յորում ձեռնադրեցաւ քահանայ ի Հոռովմ. և ասէ ութամենի մտեալ ի վասն Ամենայն Սրբոց յուսումն, և վարեալ ի Շահ Աբասոյ ընդ այլոց՝ յօտարութիւն. « Թողին, ասէ, տունն » ապրանքով լի, հօտն ի դաշտին... Ճնացին եկեղեցիքն » Աստուծոյ առանց քահանայի և առանց պատարագի... » Յետեւ... (Շահ Աբաս) հրամանք առաքեաց մեզի » քող իշխանին, որ Նախիջևանայ գաւառին և Երինջա » կայ գաւառին ժողովուրդն դարձո՛ իւր տեղն. և դու » գնա ի մէջ նոցա նստիր պահէ... Եկինք հասանք մեր » աշխարհն, տեսանք ամենայն ապրանքն թալանած. շատ » տուն և վանք կրակ տուած կրած. դառն դարտակ ժռ » զովուրդն Ճնացին, Աստուծոյ փառք տալով »: Պատմէ ապա զճանապարհորդութիւն իւր յարեւմուտս ընդ Փռանկաց ղեսպանին, ընդ Ռուսաստան, Լեհաստան, Գերմանիա, Լուսիտանիա, Սպանիա և Իտալիա, մինչեւ ի Հոռովմ, երեքամեայ ուղեւորութեամբ (1610). դարձ

առնէ ի Գրագով քաղաք Լեհաց, և կրօնաւորի ի վանօ Գոմինիկեանց. յետ երից ամաց վերադառնայ ի Հոռովմ և ձեռնադրի քահանայ (1614): Աստ սպառին բանք նորա. այլ ժամանակակից նորին հուշակաւոր ուղեւորն իտալացի Պետրոս Della Valle, ծանուցանէ, զի Օգոստինոս դարձ արարեալ յերկիր իւր, յետ սակաւուց (1617) միւս անգամ գնաց յարեւմուտս, դեգերեալ յայլեւայլ արքունիս վասն պիտոյից վանորէից իւրոց. և յամին 1619 իրրեւ նուիրակ նոցին եկեալ ի Սպահան՝ մատոյց առ Շահաբաւ թուղթօ ի Գահանայապետէն Հոռովմայ և ի Թազաւորաց Փռանկաց և Սպանիոյ, վասն պաշտպանութեան քրիստոնէից:

Մի ի վերոյիշեալ շարչարակից Հարցն, Հ. Մատաթիա Ապարանցի՝ էր ի Հոռովմ յամի 1630 - 4, որպէս ինքնին գրէ, իրրեւ խոստովանահայր և հրահանգիչ Հայոց՝ քահանայից և աշխարհայնոց: Անդ ի Հոռովմ ի մատենի ուրեք յիշատակագրէ յամի 1643 և այլ զք ապարանեցի դայօ ինչ գիտելի. « Ես Ֆրա Յակոբս Բիսուսի, (եւ) իմ » եղբարորդի Գոմինիկոսն եկինք ի Հոռովմ, արտաքօեալ » Երնջակայ գաւառէն, անօրէն իշխանէն Պարսից, որ » կոչի իմամ զուլի Սուլթան, որդի Մաղսուտ Սուլթան » նին Քանկաուլու »: Գրէ ինչ յիշատակ և եղբարորդին այն նորա Գոմինիկոս, որ ամաւ յառաջ եկեալ էր ի Հոռովմ յուսումն լատին լեզուի:

Հանգոյն եկեղեցականաց և աշխարհիկ Ապարանեցիք ոչ սակաւք՝ եկեալ են ի Հոռովմ, և ոմանք անդէն Թաղեալք յեկեղեցւոյ Հայոց, որպէս թոփմաս ոմն, յամի 1683, որոյ այս է տապանագիր.

**Այս է տապան Սէվատուին որդի Թուամասին Ապարանեցի. — Հանգեալ ի Տէր Թովին ՌՈ-ԼԳ.**

Հարիւր ամաւ յիտոյ յայտնի անդ Բովնանեն ոմն որդի Թաղվերտիչի, որպէս յայտ առնէ տապանագիրն.

D. O. M.

**Այս է տապան Ապարանեցի Թաղվէրտիչի որդի Օվանէսին, որ հանդեալ ի Տէր Թուին ՌՉԼԲ, փետվրի ի Գ. Ով զք ասիցի մի Հայր մեր Եւ մի Ողջոյն վարձս Աստուծոյ առէ. Ամէն.**

Յայնմ ժամանակի էր ի Հայս անուանի քարոզիչն իտալացի Պիօղոս Պիրոմալի (Piromali), եկեալ յԱպարաներ յամի 1633, և զամս 22 կացեալ ի Նախճաւան, և ի գաւառի անդ Միարանոզաց, որոց և եպիսկոպոս եկաց յետոյ (1684). ուսեալ էր զհայ լեզու և գրէր, այլ

բազում անգամ և առաւելազանց վիճարանութեամբ. վասն որոյ և հարկ եղև դառնալ նմա յիւր հայրենիս յիտալիա և անդ մնալ: Առ սովաւ Հ. Գոմինիկոս Նազաւրեան հաստատեաց յԱպարաներ վարժարան մանկուոց ձեռնտուութեամբ Սրբազան Հայրապետին Հոռովմայ Ը. Ուրբանոսի և Հաւատասփիւռ ժողովոյն, յոր շէր յաւիղեալ Պիրոմալի, որպէս և ոչ այլք յաւաջագոյն առաքեալք ի Գրիգորէ ԺԵ. (1621-3), որ սահմանեալ էր յայս սակս տալ 800 ոսկի:

Յաջորդ Պիրոմալիայ Մատթէոս Բովնաննիսեան, որ զամս բազումս աթոռակալ էր վիճակին, այր յաջողակ և եռանդուն, ի Հայրապետէն Հոռովմայ և ի բազում պետութեանց ղեսպան կարգեցաւ առ շահն Պարսից. զոր և յորդորեաց և յաջողեցաւ առաքել փոխադարձ ղեսպան առ նոսա զերկուս յիւրոց միարանից Հայոց. և յերթալն միւսանգամ առ շահն ի Վազուին վասն խնդրոյ իրիք, հակառակորդքն արքունցին նմա դեղ մահու, և մարմինն բարձեալ բերաւ և մեծահանդէս շքով Թաղեցաւ առաջի բեմի եկեղեցւոյն Ամենայն Սրբոց. (1674):<sup>1</sup> — Առ սղբք յայց ելին Ապարաներոյ և այլոց վանորէից

<sup>1</sup> Սա ինքն թուի գրել յիշատակարանի բանիս ի Ճաւոց գէրս Իւրեանց, յամի 1631. « Ես Ֆրա Մաթաոսս դպիր օրհնեցայ յունիս »

» Իրն, Երեւոնդ Բոլա՛նու Մկրտչի տօնին. օգոստոս ամսին ի Լ. Օգոստինոսի եպիսկոպոսի տօնին կիսաաղակաւ օրհնեցայ »:



Միարանողաց՝ փուսնկ ուղեւորք. նախ Դաւեանիէ, զորոյ զգովութեան բանս նշանակեցաք ի վեր անդր. ապա Շարտեն որ զԱպարաններ անուն ստուգարանէ յ'սպարանք բառէ, իբրև վասն շահարեութեան արգաւանդ երկրին, Champ fertile. Յայսմ ժամանակի նորոգեցաւ եկեղեցին Ապարաներոյ հարուստ հանգանակութեամբ ոսկւոյ, զոր շնորհիւ թագաւորին Սպանիոյ վերոյիշեալն Հ. Յակոբ Յիսուսի մականուանեալ՝ ի Կէժկոյ և Հ. Անտոն Ապրակաւնեցի, ձրի նաւարկութեամբ երթեալ (զկիսով Ժէ դարու), հաւաքեալ էին յԱրեւմտեան շնչիկս (Ամերիկա), և մասամբն հատուցեալ զպարտս իւրեանց, և 12,000 դուկատ եղեալ ի շահ ի վենետիկ, ուստի ընդունէին միարանքն և յետ աւերման վանացն, նա և ցամն 1781, զչա՛հ կիսոյ այնր գումարի: — Ի սմին ժամանակի և ազգային մատենագիր մեր ի լատին լեզու՝ Պետրոս Պետիկ, եկեալ ի Հոռովմայ՝ ընդ Մատթէի, եկաց զամս ինչ ի գաւառիս Երնջակայ, յԱպարաններ և յայլ վանորայս, զորոց տայ և ծանօթս. և զաւանէս ասէ 300 տունս ունել Հայոց, մէն 20 կամ 15 կամ 10 և առ նուազն 5 բնակչօք, զորս ոչ բաւէր տանել եկեղեցին, վասն որոյ ցանկային ընդարձակել. կառուցեսլ էր յանուն Ս. Յակոբայ Ասաքիոյ, այլ սովորաբար կոչէր յանուն Ամենայն Սրբոց վանականքն էին Հարք երբեմն 10 և երբեմն մինչև 20 էին յաւանին և 60 տուն մահմէտականաց: Ի նոյն ամս (1673-4) եկն անդր ի Հոռովմայ իբրև Կոնստանտնուպոլիսի շահաւոր շահն Երթալոց էր, որպէս և այլ անգամ գնացեալ էր. և զումարեաց ժողով համօրէն վանականաց ամենայն վանորէիցն, և յետ մահուան Մատթէի՝ գնաց ընդ Պետիկայ առ շահն: — Ի նոյն ամս (1673) էր յԱպարաններ Հ. Գրիգոր Ծործորեցի, թարգմանիչ վարուց Սրբոց Իսմինիկեան կարգին և այլոց գրոց:

Սակաւ ամօք զկնի յիշի վանահայր Ապարաներոյ Հ. Օգոստինոս Բաջննց (1684) եղբորորդի համանուն եպիսկոպոսին. և Հ. Բենեդիկտոս Բազուսննց (Pazon գրեալ իտալերէն), որ յամի 1688 էր ի վենետիկ և առնոյր զտոկոսիս 2800 վենետիկեան դուկատից եղելոց անդ ի շահարեք պայտօնարանի ուրեք, վասն պատարագաց եկեղեցւոյ վանաց իւրոց:


Յամարանի 1692 ամին (26 յունիսի) եկն յԱպարաններ Հ. Վիլլոդ Յիսուսեան, և սքանչանայր ընդ առատութիւն և ազնուութիւն պտղոց երկրին, հանգոյն Շարտէնի և Դաւեանեայ, և քաջարեւոյն քան զամենայն կողմանս Հայաստանի ասէր, դրուատելով մանաւանդ զԺիրանն, որոյ հանգոյն ոչ ուրեք գտանի ազնիւ և առատ, և ծառքն մեծամեծք էին հանգոյն կաղնեաց անտառի. ի զիշերի թօթափէին անբաւ պտուղ, և ժողովեալ և շորացուցեալ աւուրս ինչ ամբարէին ի պահեստ ողջոյն ամի և ամաց իսկ բազմաց. յեփելն առնուին գաւառիցն գոյն և համ իւրեանց. իսկ օշարակ նոցին առանց շաքարոյ և մեղու լաւագոյն էր քան զԵւրոպական քաղցրաւենիս: Գովէ և զազգ պերկանդ շաքարահամ տանձի, որպէս յիշեցաք ի նիւթութեան զաւառիս: — Սակաւ աւուրքք յառաջ անցեալ էր ընդ Ապարաններ և այլ

ոմն Յիսուսեան (P. Bauvoillier) իբրև դեսպան երթալով առ շահն. ի ձեռն սորա խնդրեալ էին միարանքն՝ յետ հնձոց վճարել զսակն արքունի առ կուսակալն Դավրիժու, որ և հաւանեալ էր. այլ որդի նորա Միրզա ի հով ելեալ ի կողմանս աւանիս, խստագոյն պահանջեաց զհարկն. և իբրև ոչ ունէին առ ժամն հատուցանել, հրաման ետ զօրականին պատել պաշարել զվանսն, սպառնալով մի՛ մեկնիլ ի գեղջէն մինչև առցէ անթերի. միարանքն, որպէս սովոր էին յայսպիսի դէպս, փախուցեալ փակեցան ի սենեակս իւրեանց, զոր չէր օրէն բռնաբարել Պարսից և միսի ի ներքս: Ի՛կ հիւրք նոցա Յիսուսեանք ոչ գիտելով զայսպիսի օրէնս՝ ի լսել զսղմուկն ելին արտաքս, և ձերբակալ եղեալ շղթայակապ արգելան ի սենեկի ուրեք ընդ պահպանութեամբ երկուց զինուորաց: Եկն յայտամ հրամանատար զօրականին ընդ գեղաւազի Հայոց՝ քննել և տեղեկանալ, թէ ոչ իցեն արգելականքն. և մինչ դեռ խօսէին՝ հնչեաց աղաղակ մեծ ամբոխի ի սրահին. բազմութիւն կանանց Ապարաներոյ միարանեալ զային զերծուցանել զկապեալսն. ի սպառնալ պահպանացն վարել ի բաց նաեւ հրացանութեամբ, նոցա ոչ ինչ զանգիտելով յառաջ դիմէին. փութացան պահպանքն անկանել ի սենեակն, և զբուռն ընդդէմ փակել. այլ աներկիւղ կանանոյն խորտակեալ զբուռնն ի ներքս խոտեցին, արձակեցին զկապեալսն, և նոցին կապանօք կաշկանդեցին զօրականսն պահակս. քանզի հրամանատարն ահաբեկ լեալ՝ ընդ պատուհանն օստուցեալ զերծեալ էր. իսկ կանայքն յաղթողաբար մուծին զՀարան ի բնակարանս նոցա, և միարանքն թագուցեալք ելին արտաքս: Յայս վայր գործ քաջութեան կանանց ազգի. բայց արքն ի խժդժագոյն արկին գործ զձեռս՝ ի վրէժ հարստահարութեան Պարսից. հանեալ ի գերեզմանէ ըզդիակն երկօրեայ թաղելոյ աղջկան միոյ, և վիրաւորեալ և արիւնաներկեալ արկին առաջի դրան մենաստանին, գուժելով եթէ զօրք Միրզային արարին զայդ. յորմէ լցաւ խոռվութեամբ աւանն համօրէն. և սոսկացեալ Հարցն Յիսուսեանց փութացան խոյս տալ ի տեղւոյն և գնացին ի Ջահուկ: Եթէ սակաւ երբեք այսպիսի պընդութիւն ցուցանէին բնակք գեղջիցս, այլ հարստահարութիւն և հալածանս ստէպ կրէին ի թուրքոց և ի Պարսից, որպէս ցուցաւ և այլուր և ցուցցի եւս:

Յետին ծանօթ վանահարք Ապարաներոյ են Յովնաննէս, յամի 1695, Տէր Պետրոս տէ Մարիա Միրզեցի, ի 1698. Միքայէլ ի 1703. Յովնան, ի 1705. Հ. Թովմաս ի 1725, որ ստորագրէ յաղերսագրի ուրեք առ ժերակոյտն Վենետիկոյ. « Ես Ապարաներոյ վանից մե » ձաւորս Պ. (Պատրէ, որ է Հայր) Թոմասս որպէս ի » վերոյ »: Առ սղօք յիշի յամի 1708 Տէր Յովնաննէս Ապարնեցի, ոչ վանական, որ ի Մարսիիս գոլով՝ ընդօրինակեաց զԱստուածածնի Ժամագիրք անուանեալ գիրս, որ և տպագրեցաւ անդ ի նմին ամի: Աստի և անդըր ոչ գտի առանձին ինչ յիշատակս զԱպարաներոյ և զվանացն, որք յայտ է թէ հանդերձ այլովքն ի քաղաքական շփոթս և ի հակառակընդդէմ պատերազմունս Պարսից՝ լքին իսպառ զգաւառ իւրեանց և մեկնեցան

յարեւմուտս կոյս ի բաժին Օսմանեանց. բայց վաղու ուրեմն սկսեալ էր նուազումն աւանին, զի յորում ի սկիզբն ԺԷ դարու 800 տունս համարէր Ֆրիտոն, Պետիկ յետ եօթանասուն ամաց 300 տունս ասէ, և այլ ոմն յերս դարուն (1699) միայն 200 տուն. նուազագոյն եւս գրէ Հ. Դովինիկն Ազարեան յամի 1654, 150 տուն և ուրիշ 1800. ըստ այսմ և Ֆրիտոն 500 ուրիշ չափահասս:

— Իբր կիսով մղոնաւ հեռի յԱպարաներոյ ի վերայ պողոտային կայ սահմանախաչ մի յորում էր կարծեմ և արձանագիր կանգնողին:



114. Սահմանախաչ յԱպարաներ.


184. Կիսով մղոնաւ եւեթ ի հարաւոյ Ապարաներոյ, յահեկէ գետոյն Երնջակայ է Քոննս գիւղ, ոչ մեծութեամբն ինչ այլ նախերիցութեամբ նշանաւոր ի շէնս Միաբանողացն, հայրենիք գորով պարագլխոյ նոցին և հեղինակի, այն ինքն է Յովհաննէս վարդապետ, առաջնորդ հին վանաց Քոննայ, քեռորդի գեղաւազին (որ կոչէր Գէորգ և կին նորա Էլթին կամ Էլթիկ տիկին). էր նա մի զլիսաւոր աշակերտաց հաշակաւորն Եսայեայ Նչեցւոյ, և նորին թելադրութեամբ գնացեալ ի Մարաղա, յամի 1338, առ Բարդղղիմէոս եպիսկոպոս Պօլնիացի Գովինիկեան, աշակերտեցաւ նմա, և ուսաւ զլատին լեզու, և բերեալ զնա ընդ իւր ի Քոննս (1330) ինքնայօժար կամօք, և ոչ եւս խրատու Եսայեայ վարդապետի, այլ և համախոհութեամբ այլոց 12 վարդապետաց և քահանայից և աշխարհայնոց հաստատեաց զկարգն Միաբանողաց Հայոց, ըստ ծիսից ինչ լատին եկեղեցւոյ և ըստ կանոնաց Գովինիկեանց, յոր մեծապէս սատար լինէր քեռի նորա Գէորգ. և մեծաւ եռանդեամբ վառեալ՝ յաւուրս 60 կամ 70 կանգնեցին եկեղեցի մի յանուն վերափոխման Ս. Աստուածածնի, զոր ոմն Ս. Եղիաքբեր կոչէ, ի բարձրաւանդակ քարատափին, յեզր գեղին. ուր յետ ամաց երից (1333) թաղեցաւ յար-

զութեամբ Բարդղղիմէոս, կրեալ ոչ սակաւ հայածանս յայլադեմից եւս, այլ յետ մահուն բազումք և ի նոցանէ գային յուխտ գերեզմանին, և պատուէին որպէս սքանչելագործ. վասն որոյ և ծակ արարեալ ի սնարս քնարանին, զրգալաւ հանէին ի հողոյն և տանէին ի բ՛շկութիւն մինչեւ ի յետին ժամանակս շինութեան տեղւոյն. որ իբրև խմբարան Միաբանողաց և կացուրդ Բարդղղիմէայ և Յովհաննոս՝ բարգաւաճ գտաւ զառաջինն, և ի սակաւ ամս թարգմանեցան և գրեցան բազում մատենք ի լատինէ. որպէս, մասն Աստուածաբանութեան Թովմայ, յի Ակոնիացոյ և Այրերտի, Գիրք Առաքիւնութեանց և Մոյսիականց, Գիրք Դատաստանաց, Սոյր Պետրոսի, Քարոզգիրք, Ժամագիրք և Ճաշոց Գովինիկեանց, Գիրք յաղագս Հոգոյ, և այլն: Գլխաւորք թարգմանչաց էին ինքն Բարդղղիմէոս հմուտ պարսկերէն լեզուի, և Յովհաննէս առաջնորդն, Պետրոս Արագոնացի ազգաւ, որ համարի և հեղինակ Դատաստանաց գրոցն, Յակոբ ոմն, և միւս Յովհաննէս վարդապետ: Գտանին բազում ուրեք ոչ միայն թարգմանութիւնքն, այլ և առաջին օրինակք գրոցն՝, գրեալք յամս 1344-Ց: Ի յիշատակարանս նոցին, որպէս (Դատաստանաց գրոց, ասի) յամի 1331, « Թարգմանեցաւ զիրքս Դատաստանացս ի լատին բարբառոյն ի հայս, հաւաքեալ ձեռամբ Ֆր. Պետրոսի ազգաւ լատին և աշխարհաւ Արագոնացի, ի կարգէ Քարոզողաց Սրբոյն Գովինիկոսի, որոյ թարգման էր Յակոբ վարդապետ ազգաւ Հայ, և նա ի կարգէն Քարոզողաց Ս. Գովինիկոսի, ի վերին վանքս Քոննայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, որոյ առաջնորդ և հոգարարն էր Յովհան վարդապետ, որ մականունն կոչի Քոննեցի. յորոյ անուն շինեցին զսուրբ ուխտս աստուածասէր և բարեպաշտ Պարոն Գորգն և ամուսինն իւր տիկին Էլթին. և սքաւ երեքին, Յովհան վարդապետ և պարոն Գորգն և տիկին Էլթին, ինքնայօժար կամօք նուիրեցին զվանքս՝ կարգին Քարոզողաց Սրբոյն Գովինիկոսի, տուրք յաւրոնեական: Արդ վերասացեալ վարդապետն Յովհաննէս՝ եղեւ պատճառ բազում բարութեան. զի ժողովեաց աստ վարդապետք ի Լատինացւոց և ի Հայոց, տածելով վասն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և թարգմանէ գիրս բազումս ոգեշահս և լուսաւորիչս »: Ի նմին ամի (1331) ի նոյն վանս թարգմանեալ Յակոբայ վարդապետի զՔարոզգիրսն, գրէ յետ այլոց բանից. « Հասայ առ ոտս անն Աստուծոյ Տէր Բարդղղիմէոսի, իբրև ծարաւած ոք գտեալ ջրհորս ի կեանս լի կենդանի ջրով, և խեցեղէն բեկեալ ամանով հանի սակաւ մի յաղբերէս, և զուրկացաւ զպապքումն մեր. զի Տէր Բարդղղիմէոս ուսեալ էր զպարսիկ լեզուն. նա և ես սակաւ մի ծանօթ էի պարսիկ լեզուին. որով զգիրքս զայս բազում ջանիւ փոխեցաք ի Հայս, ի գեղեցկանիստ երկիրս որ կոչի Երնջաւոյ, ի գեօղս Քոննոյ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, որ նոր շինեցաւ զօրութեամբ Ս. Կուսին, յեօթանասուն օրն: Եւ այս ամենայն բարութեանցս եղեւ պատճառ ուսումնասէր և արիալան վառեալ աստուա-

1 Որպէս ի գր. տան Էլթիածնի նշանակեալքն թիւք Ձեռագրաց 110, 112, 117:

» Ժային հրովն ի սէր միաբանութեան սուրբ եկեղեցւոյն  
 » Հռոմայ՝ Յռհան վարդապետ, որ Քրոնեցի կոչիւր,  
 » եւս որ յոյժ հմուտ եղեալ էր ի մէջ ընկերաց իւրոց  
 » Հայաստանեայցս ուսման. և այնու ոչ լցաւ փափաք  
 » բանասիրութեան իւրոյ, զի առեալ էր սակաւ մի գնաւ  
 » շակ գիտութեան Հռոմայեցւոյն... երբր ի նոցանէ պլւ  
 » տուղ գեղեցիկ և ողկյզ բարեհամ՝ լծակաւ բազում նե,  
 » զութեամբ, զվերոյ գրեալ այրն Աստուծոյ զՏէր Բար-  
 » զուգիմէս, և բնակեցոյց ի գետոս Քոնայ, ծառայե-  
 » լով նմա իբրեւ մի ի Սրբոցն. և ետ շինել զհրաշալի ե-  
 » կեղեցիս և զքանկութիւնս՝ բարեպաշտ առն պարոն  
 » Գէորդ առաջնորդի գեղջս Քոնայ » . և այլն: — Մխի-  
 թար Ապարանեցի զվարդապետս զայս Յակոբ՝ կոչէ  
 « Ճարտասան և խորհմաց քարգանձող »: Է սորա և տա-  
 դաշափ արուեստակեալ յիշատակարան թարգմանու-  
 թեան ժամագրոց, յամի 1338, որոյ զոյգ տողազուխ  
 տառք կապեն « Յոհան վարդապետն որ կոչեցեալ Գոնե-  
 « ցին », և անավերջ տառքն՝ « Յակոբոս քարգանձի

« կարգէ Գարդողացն էր » . ի միջին՝ գնոյն զվերոգրեալ  
 բանս յիշէ, յաւելլով և զայլ ոմն,  
 « Նա և ուղղափառութեան ամուլն Մարգարէ  
 Ներհուն դասէ յայսում խըմբէ,  
 է ընտրեալ յոյժ նպատաւոր,  
 Եւ ի հանդէս մարտի քաջ զօրաւոր »:  
 Ոչ հեռի աւք թուին և « կարապետ ոմն Յովհան.  
 » նավանցի ի յազգէ Գնծկանն, » որ գրէ ի նոյն վանս  
 Քոնայ զԱռաքինութեանց գիրս, և Ֆր. Դոմինիկոս՝ որ  
 ընդօրինակէ զՍոբր Պետրոսի անուանեալ հաւաքածոյ  
 գիրս: — Ոչ միայն Միաբանողքն այլ և օտար վարդա-  
 պետք հանգիստին աստ ի նմին իսկ ի ժամանակի կեն-  
 դանութեան Բարդուղիմեայ. որպէս յամի 1332 գրէ ոմն  
 փափաքող ստացման և գրել տուող Աստուածաշունչ  
 գրոց, « Ներսէս, անուամբ վարդապետ, բայց գործով  
 » վերջացեալ հող և մոխիր վարդապետաց, որդի վահրա-  
 » մայ յախարհէն Տարօնու, ի գաւառէն Սանսնու, ի վա-  
 » նացն Ղազարու, ի գեղջէն որ կոչի կոռ... (յետ բա-



115. Սենրակ Քոնայ փանից եւ Բոշուսար.

զում ուրեք երթալոյ ի հաւաքումն դրամոյ վանս գրոցն)  
 » պնդեցի զմէջս իմ և ուղղեալ գնացի ի Քոնայ առ  
 » Սոբր եպիսկոպոսն Տէր Բարդուղիմոս, և առ վարդա-  
 » պետքն Հայոց որ առ նմա կային յայնժամ. և Մարգա-  
 » րէ վարդապետ չէր անդ՝ որ կազմող էր գրոց, այլ գնա-  
 » ցեալ էր ի Ճահուկ », և այլն: — Որպէս յայտ է ի պատ-  
 մութենէ, յետ մահուան Եր. Բարդուղիմեայ՝ Յովհան-  
 նէս առաջնորդ Միաբանողացն գնացեալ առ Քահանա-  
 յապետն Հռովմայ՝ ետ հաստատել զկարգն. և առա-  
 ջնորդ նորին ծանուցեալ, հովուեաց նովին ժրութեամբ  
 մինչեւ ի սկիզբն 1348 ամի, յորում հանգեաւ ( ի 6 յա-  
 նուարի ), և հաւանորէն թաղեցաւ ի նմին եկեղեցւոյ  
 Ս. Աստուածածնի. գուցէ նորա իցէ մի յերկուց գերեզ-  
 մանաց որ ցարդ տեսանին անդ: Եթէն ամաք յառաջ  
 վախճանեալ էր ( յ '3 յունիսի 1847 ) Հ. Պետրոս Արա-  
 գոնացին, այն ինչ աւարտեալ զԹարգմանութիւն Եթէն  
 Խորհրդոց՝ գրոց Ս. Թոմայի Ակուինացւոյ, գործակցու-  
 թեամբ Հ. Յակոբոսի յաջող թարգմանչին: — Զիք երկ-  
 բայել զի ի սկզբան անդ՝ Քոնայ էր առաջնորդարան կամ

մայրավանք Միաբանողացն, և Նախճաւան՝ եպիսկոպո-  
 սարան նոցին. այլ յորժամ փոխադրեցաւ անտի աթոռ  
 եպիսկոպոսին յԱպարաներ, Թուի և գաւառահօրն ի  
 վանս սորին հաստատեալ: Իսկ ի Քոնայ՝ որպէս և ի  
 նոյն իսկ ի մայրավանսն՝ կայր սոսկ վանահայր, զոր օրի-  
 նակ և յերաքանչիւր ի վանորէիցն, Պրիոր (Prior) կո-  
 չեալ և գրեալ լատին ձայնիւ, ըստ օրինի Դոմինիկեանց  
 և այլոց արեւմտեան միանձանց՝ Առաջնորդ կամ Մեծա-  
 ւոր նշանակելով, զոր մեք սովորաբար վանահայր ասեմք.  
 և գտանմք ի Քոնայ սակաւս ոմանս յիշատակեալ, նախ՝  
 յետ Յովհաննու՝ ի կէս ԺԶ դարու, յորում ժամանակի  
 գեղջաւագն էր Պոռտախ,  
 1540 Հ. Թովմաս  
 1600 Հ. Դոմինիկոս, քաջ գիտնական կոչեցեալ.  
 1646 Հ. Մատաթ Մուրախա կամ Մորագա  
 1671 Հ. Դոմինիկոս Խօչկաչինեցի  
 1696-1705 Հ. Ազարիա  
 1723 Հ. Թովմաս  
 1756 Հ. Ազարիա Ակուան. վերջինս այս յետ աւեր-

ման վանացն էր ի Չմիւռնիա, և ոչ ասի վանահայր: — Ի վերոյգրեցող Հ. Մատաթ Մորազա յամին 1646 էր ի Պարիզ, ի խնդիր նպաստի վանորէիցն հարոտահարեւոց, և ետ Դոմինիկեանց Ս. Ոնորիու (St. Honoré) Թաղի, հայերէն զիրս եկեղեցականս:

Գլխաւորութեան Քոնայ վանաց յառաջնումն անդ դարու հաստատութեան կրօնին, վկայէ և Գրիգոր Տաթեւացի ի յիշատակարանի իւրագիր Պարապմանց գրոց Ս. Կիրիլի, յամին 1379, ըստ իւրում ոճոյ մեղադրութեամբ յիշելով զընծիւղել քաղկեդոնական դաւանութեան « ի կոչեցեալ զիւղն Քոնայ՝ շրջաքնակ գաւառք... » (ուր տուեալ ասէ զգաղափարեալն զայն զիրս) ընթացս « ցար ի վերոյ ասացեալ գաւառն, և պարսաքարեալ սոս » վաւ հարաք զ... ճակատն »: Եթէ անդ էր դիպեալ Մխիթարայ Ապարանեցւոյ հակառակորդի նորայոցն, զիսորդ արդեօք կատարէր ճակատամարտն պանծայեալ: — Եւր յՊ դարու 70 տունք Հայոց էին ի Քոնայ, յորս 200 հազորդընկալք. 15? տղայք, ի վանսն 5 Հարք, 2 սարկաւազունք, 3 զուրք, 10 գործաւորք: Բնակէին անդ և 40 տուն մահմէտականք: Ետ 70 ամաց գրեաթէ ի սպառնուազեալ էին քրիստոնեայք, և յամս 1654, 1671, 1691 երկու տուն միայն յիշի Հայոց և ողբ տան. բայց զեկեղեցին և զվանսն տակաւին պահէին, որպէս յայտ է և ի յիշատակէ վերոյնշանակեալ վանահարցոյ. առ սաւտիկ հարստահարութեան հակառակողացն և այլազգեաց՝ սակաւաւոր մնացեալքն ի Քոնայ ասին շրջեալ ի դեն պարսկական, յորոց սերեալ համարին և այժմու 50 կամ 55 տունք պարսկադենք այգեգործք. զորս ցասկուտըս և կուտարարս բարուք ասեն լինել, վասն որոյ և կոչին յայլոց զեղջից Տէրի-Քոնայ (յ.մար կամ զիժ Քոնայի): Եամի 1671 Պետիկ աւելի քան 160 տունս ասէր մահմէտականաց ի Քոնայ:

Եկեղեցին այն շինեալ յամի 1330-1 յամիսս երկուս, է չափաւոր մեծութեամբ, քառակուսի ձեւով, աղիւսակերտ, երկուս ունելով սիւնս և երկուս որմասիւնս, այլ զմբէթն արդ անկեալ է. հինգ դրունք են, և երեք խորանք և սեւանք, և բաղում խորչք քանդակազարդք, որ թուին նշխարանոցք Սրբոց, զի վկայի լինել անդ յուլիոց նշխարաց. կոթող մի է ի միջի տաճարին, որպէս և արտաքայ մեծի դրանն, որում մերձ ի ներքս երկու գերեզմանք են. մին կարծեցաւ յոմանց լինել Եր. Բարդուղիմայ, այլ հին գրիչք ասեն զնա թաղեալ ընդ սեղանով միով կամ հուպ սեղանոյն: Երեւին և հետք վանացըն յարեւմտեան և հիւսիսային կողմանս եկեղեցւոյն, իսկ ի հարաւայնումն կից նմին մնայ աւերակ կամարակապ պաթի կամ սենեկի մեծի, երկայն քան զեկեղեցին, այլ կարի նեղ քան զայն: Կոշտաքեր անուանեն արդ զեկեղեցիս զայս, և դիմեն յուխտ, և որպէս ասի ընդունին բժշկութիւն խելագարք և նմանիք, այլ և անասունք կատաղեալք. ի սակս նշխարաց Հոփսիմեանց բերելոց յայս գաւառ, կարծէ նոր տեղաքննողն (Արիստ. եպիսկոպոս Սեղրաք.) զանուեն Կուսաբեր. սակայն ռամկական աղաւաղանք են Կենսաքեր կոչման, զի այլպէս մակ-

անուանէր եկեղեցին այն Ս. Աթուածածնի, յոր խօսուրն դիմէին ուխտաւորք՝ քրիստոնեայք և մահմէտականք յամենայն կողմանց գաւառին Նախճաւանի և ի հեռուստ եւս, որպէս պատմէ ակննատեսն Պետիկ (1671-5). քահանայքն ընթեռնուին ի վերայ նոցա աւետարան և սրկէին ջուր օրհնեալ, և նոցա ողբով և լալով երկիւղածութեամբ ընկալեալ՝ գոչէին. « Հէյ Մէյ » յեւ անէ, սէն քէյեմ էյլէ պանէ<sup>1</sup> » . և վասն այսորիկ ոչ միայն պատուէին զքահանայսն՝ Քեչիչ-պապս կոչելով, այլ և ոչ մերձենային ի կալուածս եկեղեցւոյն՝ յայգիս և ի սարտէզս. նա մանաւանդ ի շքաւորել նոցին՝ սատարելին առ ի վճարել զսակն արքունի, զոր ծանրացուցեալ էր հարկահանաց մինչև ի 100 սկի կայսերական (Imperiale). և ոչ տեղացիք միայն, այլ և եւրոպէացիք, առաքէին նուէրս. որպէս երբեմն Աննա Թագուհի Սպանիոյ (կին Գ. Փիլիպպոսի) առաքեալ էր սկիհ մի և բաժկամանս, ի ձեռն Հ. Թումայի Թաթուլմենց: Պատմէ նոյն Պետիկ և զքանչելիս առ իւրեւ իսկ եղեալ, կնով միոյ Շոտթեցւոյ երկամեայ մանկիկ գոլով ախտացեալ անբուժելի, յետ միանգամ բերելոյ զնա ի Կենսաքերն՝ ի կախարդասար հեթեթանս զիմեալ, և կշտամբեալ վասն այնր ի տեղեան, ապաւինեցաւ վերստին առ նոյն Կենսաքեր Տիրամայրն, և վաղվաղակի առողջացաւ մանկիկըն, զոր և թափօրիւ և ջահիւք լուցելովք բերեալ էին ի տունարն, ուր հանդիպեցաւ պատմողն և զգուեաց զաղջայն, մինչ սա համարձակ մարդէր զերբեմն կարկամեալ թաթկունսն:

Մենաստանս այս Քոնայ՝ ըստ դրիցն համեմատելով՝ կոչեցաւ վլէրին, զի ի հարաւոյ նորին սակաւուք ի բացեայ ի ծայր ազարակացն, ի ստորեւ՝ ըստ գնացից գետոյն և ի դաշտավայրի՝ կայ մնացուած Հին վանացն, որպէս և տեղացիք կոչեն զայն թուրքարէն՝ Ղատրի գիլիսեհի (հին եկեղեցի). սակաւ ինչ որմունք հիման փոքու եկեղեցւոյ կանգուն կան արդ, կոփածոյ քարամբք և կրով: Արձանագիր ոչ յայտնեցաւ և ոչ ի միում յերկոցուն վանացս կամ եկեղեցեաց: Երեւելից կողմանէ վերին վանացն գրեաթէ կից յորմն փորեալ և պատեալ է աւազան ազուզայիւք հանդերձ, ի հաւաքումն ջրոյ ի պէտս անդաստանաց: — Ի հարաւակողմն եկեղեցւոյն ի բլրակի միում կայ գերեզման մի հին, ուխտատեղի տենդաւարաց, պատուեալ ի Հայոց և ի Պարսից, թերեւս միոյ ի հիմնադրաց վանացն և միաբանութեանն. նոյնպէս և յայլում բլրակի յԵլ. Հս. առաջնոյն կան երկու գերեզմանք հնացեալ կափարչք, որոց չերեւին արձանագրութիւնք: Գարձեալ և ի խորանիստ վայրի ի հիւսիսոյ կուսէ երկրորդի բլրակիս կան բաղմաթիւ խոյածեւ և այլաձեւ գերեզմանք Հայոց, որպէս և անուանեն զնոսա այժմու պարսկադենքն (Եյումանի գէպրիստան):

165. Կիսով մղոնաւ եւեթ հեռի ի Քոնայ յարեւմտեց նորին և յալմէ գետոյն՝ կայ միւս եւս անուանի զիւղ Միաբանողաց, և որպէս թուի հին՝ հանգոյն Ապարանեւոյ, այն է Ապրակունիք, որոյ և ձեւ անուանն ցուցանէ բնակութիւն հին և հարուստ տոհմի, յորմէ թերեւս

<sup>1</sup> Ասպէս գրէ Պետիկ լատին տառերք. Hei Meiren ane, sen hiremh heile bane. — BEDIK, p. 371.

երկրքին եւս գեղքն այնպէս կոչեցան. զարդիս ի Քուրքաց կոչի Գարա գիշխէ (Սեաւ եկեղեցի), և այս ի սակրո հոշակաւոր վանաց Ս. Կարապետի որ առ երի կայ յարեւմտից կուսէ: Հանգոյն Ապարաներոյն թուի և եկեղեցւոյ գեղջս Ս. Կեղոր կոչեցելոյ հին լինել. ի նոյն անուն է և վանքն՝ զոր Մխիթար Ապարանեցի վերին վանք կոչէ, անշուշտ համեմատութեամբ Ս. Կարապետի վանաց, և ասէ խնդրեալ զայն Մաղաքիայ վարդապետի Կաթայեցւոյ և ճարտարութեամբ առեալ, և հաստատեալ ի նմին վարժարան ընդ ձեռամբ Սարգսի վարդապետի, և անդ թաղեալ. այլ յետ այնր կարծեմ վերստին գրաւեալ ի Միաբանողաց: Յայս անուն յիշեն միշտ սքաւ զվանս իւրեանց, յորում ի սկիզբն ժէ դարու 13 միաբանք էին, հինգն միայն քահանայք, և երկուք կղերիկութիսկ տունք նոցա էին յայնժամ 100, շափահասք կամ հաղորդընկալք ողիք 400, տունք մահմէտականաց 40. այլ ի կէս դարուն մի ոմն ի նոցին Հայոց՝ 30 տուն միայն ասէ իւրեանց և ոչիս 200. սակայն և յետ այնր յամի 1671 Պետիկ 70 տուն գրէ, այլ ոմն յամի 1699 տունըս 40: Ըստ Զահկեցւոյ կաթողիկոսի՝ մեծ մասն ի մնացելոց Ապրակունեաց դարձան ի դեն Պարսից, և մնացին նուազունք ոմանք հաստատուն ի հաւատս իւրեանց, և մինչեւ ցմերս դար նայնպէս մնային ծերունիք ոմանք:

- Ի վանահարց նոցին յիշին յամս
- 1540 Յովհաննէս, առ որով գեղաւազ Խաչիկ (Ազգիկ գրեալ ի լատինն)
- 1653 Ա. Ա.
- 1684 Հ. Անտոն Նազար
- 1695-8 Հ. Գրիգոր, որ ստորագրէ, « Ես Յր. Գրիգոր մեծաոր Ապրակունեոց վանից սուրբ Գէորգայ ».
- 1703 Հ. Բաղտասար
- 1706 Հ. Գեորգ
- 1725 Հ. Գովհնիկոս

Եղեալ էր սոցա ի պաշտօնարանի միում վենետիկոյ գումար ինչ (1500 դուկատից) վանս պատարագաց, և ցկէս ժԸ դարու ընդունէին զահն. յոր սակս եկեալ էր ի քաղաքն յայն և յետին յիշեալ վանահայրն: — Անունի եղեւ ի նոսին Հ. Անտոն Նազարեան, քեռորդի կամ որդի եղբոր Օգոստինոսի եպիսկոպոսի Բալննց, գիտութեամբ և աշողակութեամբ ի գործս. վանս որոյ Մատթէոս արքեպիսկոպոս ի դառնալն յԵւրոպիոյ (1669) դեսպանութեամբ առ շահն Պարսից, ձեռնադրեալ զսա ի քահանայ՝ տարաւ ընդ իւր ի Սպահան, և շահն ընտրեաց զնա և զՀ. Ազարիա Զահկեցի դեսպանս իւր առարեւմտեայս, տուեալ թուղթս առ Պապն Հռովմայ, առ թագաւորն Փանկաց, առ դուքս Տոսկանայ և վենետկոյ: Ետդի անկեալ նոցա յամի 1670, ընդ աշխարհն Ռուսաց, վանս պատերազմի զկայ աւին ամիսս 22, և հասին ի վենետիկ յամի 1673 (յամսեան յունիսի), ուր և մնաց Հ. Ազարիա. իսկ Հ. Անտոն յետ կատարելոյ զդեսպանութիւն իւր ի Տիրոնեցա և ի Հռովմ, զնաց ի Պարսիգ. և ըստ օրինի հրահանգաց և չքոյ դեսպանաց մուծաւ

առ թագաւորն Լուդովիկոս ԺԴ. մատոյց զգիր շահին, և ընկալաւ ի նմանէ պարգեւ 1000 տուրնեան լիւսյս: Էր նա յայնժամ ամաց իբր 35. Ժամանակակից փոանկ պատմիչ Դոմինիկեան կարգի՝ մեծամեծ գովութեամբ նկարագրէ գրարս նորա, այլ և զկերպարանս, վայելուչ, շափ հասակաւ, սեւակն, մարուեղ, կարմրաշուրթն. ազնուարարոյ, զգուշախօս, սակաւապէտ, և ամենայն բարեձեւութեամբ լի<sup>1</sup>: Խնդրեցին ի նմանէ կարգակիցքն, և նա զրեաց համառօտիւ զպատճառս դեսպանութեան իւրոյ ի հայ բան, և թարգմանեալ ի լատին՝ ստորագրէր, « Չգրող սորա Յր. Անտոն Նազարոս ծառայ, սուրբ աստուածայրանութեան լէքթօր. — Fr. Antonio Nazari » L.º Armeno, Ord. Pred. Apracunensi, manu propria. » An. 1674, 24 Aprili ». Անդ ի վանս կարգակցացն (Ի Ս. Ոնոր/ոս թաղի) գտեալ զձեռագիր ուղեւորութեան Օգոստինոսի Բալննց<sup>2</sup> զիւրոյ սազականի, գրոյմեաց ի ստորեւ զյիշատակ իւր: Յետ վանահայրութեանն ի վերոյնշանակեալ ամի՝ իբր զկնի 10 ամաց երեւի միւսանգամ յարեւմուտս (1693), և խնդրէ ի վենետիկ լինել քարոզիչ կամ հոգաբարձու Հայոց, մանաւանդ զի տեղեակ եւս էր լեզուաց. բայց ոչ թուի յաջողեալ: — Համանուն սորա և հայրենակից երիցագոյն Հ. Անտոն Ապրակունեցի, յառաջ քան զկէս ժէ դարու ընդ Հ. Յակովբայ Կեթիկացոյ երթեալ էր յարեւմտեան Հնդկիս և հաւաքեալ դրամ ի պէտս վանորէից իւրեանց, որպէս յիշեցաւ վերագոյն, և եղեալ մասն մի ի շահարանս վենետիկոյ (1653). զայն գումար Նազարեանս այս խնդրէր փոխադրել յայլ տեղի ի նմին քաղաքի: — Ի լատին և յիտալական գրուածս որ զվերոյ գրելոցս ճառեն՝ պէսպէս օրինակաւ այլայլեալ գրի անուն Ապրակունեաց գեղջս, Abbaracundi, Agraveni, Agravari, Aragenense, և այլն:

Ի գեղջէ աստի էր Աղամիր ընկեր Յիսուսեանց հանուղաց նշարաց Ս. Հռիփսիմեանց, զոր՝ սպանողք նոցին այլազգիք՝ վիրաւորեալ ընկեցին ի Սուլիմայ-բերդ լեանէ ի վայր ի գետակն, և ել նա անվնաս, որպէս յիշեցաւ ի ստորագրութեան տեղոյն: Աստի էր և Մատրեոս եպիսկոպոս առաջնորդ Ս. Կարապետի վանից (1674):

Զարդիս 43 տունք Հայոց են յԱպրակունիս, սակաւք ի սերընդոց հին բնակչաց, յորոց մի է տուն Սահակեանց, որ և Ֆուանկեցն կոչի վանս լատինածէս նախնեացն. շատք ի Սալմաստայ գաղթեալք են. և են զգաստ և ժիր երկրագործք, որք յաւարտելն զհունձս իւրեանց՝ երթան ի Սիսիան (Մղուկ գաւառ), և անտի ի Շարուր օգնել հնձողաց ցորենոյ և բրնձոյ, և ի հեռագոյն գաւառս, և դարձ առնեն շահուք. զոն և արուեստաւորք ի նոսին, և ճարտար քարակոփք: — Հին եկեղեցին այն Ս. Գեորգ՝ գրեալ է հիմնովին նորոգեցաւ յամի 1868 քարիւ և աղիւսով, պահելով զհին խորանն և զսեղան. ի բրել զհիմունսն՝ յայտնեցան խաչվէմք, ի միումն թուական ՇԱ (1053): և գանեայ պատկեր Տիրամօր՝ Յիսուս ի գրկի: — Սակաւք հեռի ի հարաւոյ կուսէ յառապար վայրի կայ կիսաւեր մատուռն մի յանուն Ս. Յովհաննէս, ուր յամս


1 Vir per omnia compositus, rari sermonis, urbanus, paucisque contentus. — ECHARD, Bibliot. II. 632.

2 Մատեանն այն պահի արդ ի մեծի հասարակաց մտտեանգարանի մայրաքաղաքի Պարսիգու:



նայն կիրակամուտս յաճախեն պաշտօնասէրք՝ մանաւանդ կանայք ճրագալուցութեամբ: Կային և հնացեալ խաչվէմք առ նովաւ, որպիսիք գտանին և յայլում առապար բարձրաւանդակի ի հիւսիսոյ գեղջն, երեք մեծամեծ արձանք, զորս և ոահմանախաչս ասեն լինել. ի միումն երեւի արձանագիր եղծեալ և թուական ՌԾԳ (1604). առ ստորոտովն սփռեալ և գրեալ է ընդ հողով ծածկեալ են բազմաթիւ գերեզմանք Միաբանողացն այնցիկ: — Աշխարհագիր Ռուսաց 1873 ամի՝ 68 տունս մահմէտականաց եւեթ գրէ յԱպրակունիս:

186. Յարեւմտից Ապրակունեաց իրրու երիր մասամբ մղոնի եւեթ հեռու կայ անուանի վանքն Ս. Կարապետ, որ և յաճախ յանուն բովանդակ գաւառին կոչի՝ Երընջակայ Ս. Կարապետ, ի դէր և հարթ գեղեցկատես վայրի. և որպէս յայժմուս ուխտատեղի է մերձաւոր վիճակաց, այնպէս և ի վաղուց հուսաւոր լինել, թէպէտ և ոչ լսի ց'ՃԻ դար ի գիրս. այլ ընդ սկզբնաւորութեան կարգի Միաբանողաց յիշի նախ վարդապետ մի յԱպրակունեաց, ընդ ժողովելոցն առ Յովհաննու Քանեցոյ ի հաստատել զկարգն. բազում անգամ յիշեալ հակառակ:



116. Ս. Կարապետ Երնջակայ.

Կորդ նոցին Մաղաքիս վարդապետ՝ նորոգեաց զվանքս զայս, յորում ժամանակի Ստեփանոս ոմն էր փակակալ տեղւոյն, և էաժ անդր զմեծանուն վարդապետն Կախիկ, այն է Յովհ. Որոտնեցի, ժողովեալ աշակերտս բազումս, յորոց միջի մեռաւ սա յամի 1388, և թաղեցաւ առ Մաղաքիայի ի Ս. Գէորգայ վանս: Եւրոպեաց զնա զխաւոր աշակերտացն՝ հռչակեալն Գրիգոր Տաթեւացի, զամս երկուս, և խոյս տուեալ զարձաւ ի Սիսական. քան զի որպէս գրէր ինքնին ի նոյն ժամանակս,  
 « Հէնք Նետողաց Թամուր Լանկի  
 Երկիրըս մեր կրկին չարժի.  
 Ի սով ի սուր ի գերութիւն  
 Աւար առնէ զամենեսին »:

Մինչև ցկէս ԺԷ դարու դարձեալ անհետանայ ի պատմութեան ուխտս այս. յայնմ ժամանակի առաջնորդ նորին գլով Եսայի վարդապետ ի Կարճաւան գեղջէ Մեղրոյ, ըստ վկայութեան ուսումնակցին իւրոյ Զաքարիայի Վ. Վաղարշապատեցոյ, յաշակերտաց Փիլիպպոսի կաթողիկոսի, « բազում աշխատութեամբ և անհոնգիտոս » սութեամբ լինեաց զեկեղեցի Սրբոյ Կարապետին, « պարսպաւն ամենայնիւ և կոփուածոյ վիմօք և ձուլա » « ծոյ կրով »: Մերձաժամանակ նորին և ականատես Պետրիկ՝ յոյժ գերապանծ վկայէ զչինուածն <sup>1</sup>, և զթեմն մեծավիճակ: Պարիսպք վանացն հանդերձ բրգամբք հողալէն են, իսկ եկեղեցին քարակոփ հոյակապ և գեղեցիկ,

1 Conventus est superbissimus sub nomine S. J. Baptistæ, ubi et residet.. Archiepiscopus maximæ jurisdictionis.

չինեալ յԵսայեայ, օգնութեամբ Ղազարայ վարդապետի, յամի 1658. զմբէթն միայն աղիւսալէն է, կանգնեալ ի վերայ չորից մեծամեծ սեանց, և կամարակապ երկուստեք սեղանոյն են կրկնայարկ աւանդատունք կամ

մատրունք. ի միումն պահին պատուական նշխարք Սրբոց, և ներքնատունք ընդ նոքօք, յորս դտան ձեռագիր մատեանք առ մեզք: ի վերայ դրանցն կան խաչվէմք, ի միումն գրեալ յամի 1475.

**Սուրբ Խաչս յիշատակ է Տէր Աղարիայ եպիսկոպոսին եւ ծնողաց նորին, հաւրն Ալթունդաչին եւ մաւրն Փայխաթունին. յիշեցէք ի Քրիստոս. ԹՎին ԶԻԴ.**

յայտ է Թէ ի նախնի շինուածոցն պահեալ և ազուցեալ է աստ վէմն այս. ի վերայ միւսոյն գրեալ յամի 1608.

**Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս Մահտեսի Կիրակոսի և ծնողացն Շահումին... ԹՎ. ՌԾԴ.**

ի գմբէթին և ի վերնակողմն խորանին երեւին պատկերք ծին (արեւմտայնոյն) կայ խաչարձան և գիր ի ներքոյ և գեղանկարք: Երկու գրունք են տաճարին. ի վերայ մեծ ի միջակի խաչին.


**Եսայի և Ղազար վարդապետ շինողք ԹՎ. Ռ...**

**† ԹՎ. ՌՃԷ.**

որ է 1658: Յորմն հիւսիսակողմանն եւս ի վերոյ պատուհանին կայ խաչվէմ և արձանագիր համառօտ 1655 ամի.

**Եսայի վարդապետ շինող ԹՎ. ՌՃԴ.**

— Խաչվէմ մի եւս մեծ կայ ոչ գրեմ մ յորում կողման, այսու ձեւով և արձանագրաւ յանուն ուրումն խոցարեղի: Ժամատունն աղիւսակերտ զառաջեալ տաճարին քանդեալ է մերձ ցհիմունս, յորոց վերայ մի ի յետին առաջնորդացն Երեմիա վարդապետ՝ կանգնէր զանգակատուն, զոր ոչ կարաց աւարտել վասն կանխելոյ մահուն (1868): — Կից է ի հարաւային որմն մատուռն մի գեղեցիկ քարալէն յանուն Ս. Ստեփանոսի, որոյ Թուական շինութեան (1714) և յիշատակ շինողին կարմրաղեղով գրեալ կայ ի վերայ կամարի ի ներքուստ.



117. Խաչվէմ ի Ս. Կարապետ Երևնակոյ.

**Ի Թուոյ ազինս մեր Հայկի  
Հաղար հարիւր վաթսուն եւ երեքի,  
Խօջայ Այվազըն գովելի  
Յոյժ բարեպաշտօն եւ ցանկալի,  
Տեղեալ գոլով Շօռօթեցի,  
Շինեաց տաճարս այս նաղելի  
Յանուն Ս. Ստեփաննոսի  
Նախավկային մարտիրոսի.  
Իւրն յիշատակ է միշտ կենդանի,  
Որով Քրիստոս պատարագի.  
Մասըն եւ բաժին իւրըն լիցին (րիև  
Եւ ծնողացն Մկրտչիև և Կարոս.**

**Եւ կողակցին Թառիկին,  
Եւ քերցն Աննայուն եւ Փառան.  
Եւ գստերացն, եւ իւր տան (կուն,**

**Արբանեակն է Մարգարիտն .  
 Չոր Տէր Աստուածն ամենայնի  
 Զինքն ի ցասմանց անփորձ պահի ,  
 Երկար կենօք յայս աշխարհի ,  
 Պայծառ փառօք ի յատենի .**

**Աթոռ մեծին Յովհաննիսի .  
 Իւրն օղնական միշտ լինիցի  
 Թէ առաջնորդ թէ միաբանք  
 Եւք յԱյվազէն շնորհակալ .**

Ի վերայ զանգակատանն արձանագրեալ է յամի 1708 .

**Յիշատակ է զանգակատունս Նախշուանցի Աղաջանի որդի Պարոն Աղա-  
 մալին, ի ՌՃԾԳԻ Թուի .**

— Ի վերայ մատրանս ամբարձ վերոյիշեալ վարդապետն Երեմիա միւս եւս յարկ ծախուք Շահմուրատեան կա-  
 րապետի Շուշեցոյ : Յիշատակագիր ժամանակակից  
 նորագութեան տաճարին, յամի 1689, զուգարար առաջ-  
 նորդս Ս. Կարապետի կոչելով զԵսայի և զՂազար  
 վարդապետս՝ յիշէ և զմիարանսն, Տէր Արիստակէս,  
 Տէր Շմառն, Տէր Զաքարիա, զսարկաւազունս Պարոն  
 Յակոբ և Մարգար, և Շմառն արեղայ (գրողն) : յի-  
 շատակէ և այլ եկեղեցի կամ մատուռն, և քահանայս  
 « Սուրբ Շողակարիս քահանայքն, Տէր Սիմեօն, Տէր  
 » Պօղոս, և դպիրքն Աստուածատուրն, Մարգարէն և  
 » Մարգիան, որ կան միշտ ի սպասաւորութեան սուրբ  
 » Շողակաթիս... Ստացաւ զսուրբ աւետարանս Ճակե-  
 » ցի Շահրիստանն, կողակից Յովհաննիսին, հայրն Փիրիւն-  
 » ջան, մայրն Բեկոյն... ետ զսա յիշատակ ի դուռն նո-  
 » րակնունք Սուրբ Շողակաթիս, որ յայսմ ամի օրհնե-  
 » ցաւ » :

Հուշակեալ է ուխտ Ս. Կարապետիս իբրեւ բուժիչ  
 օձահարից, որք դիմեն անդր, նա և այլադէնք. և առ-  
 նուն յօրհնեալ հողոյ որ պահի յաւանդատան միում տա-  
 ճարին, և զնեն ի վերայ խայթուածին և ի բերանն . զայս  
 յիշէ և տեղագրող ուխտատեղեաց՝ Թովմաս Վանանդե-  
 ցի, գրեաթէ ժամանակակից նորոգութեան տաճարին .

« Եւ աստանօր եկաւորեալ  
 Յերընջակայ վիճակ մըտեալ,  
 Հողն օրհնութեան օձահարի  
 Որ է յայտնի յամենայնի » :

Ի սրբութիւնս պահեալս աստանօր գերհուշակ է  
 Հագարափրիկի խաչն յոսկէզօժ պահարանի, յորում  
 կարծի ամփոփեալ մանն ի կոնքոյ լուսոցարանի Քրիստո-  
 սի, կամ թաշկինակ նորին . ըստ ոմանց նոյն է սա ընդ  
 Մարդադաւանեաց Խաչին . յաճախ տանին թափօրով յայլ  
 եւ այլ կողմանս ի պէտս բժշկութեան, որպէս և ի սկիզ-  
 բըն 1878 ամի յԱզուլիս, ի ճարակել անդ ախտից : —  
 Են այլ եւս խաչք յորս ամփոփեալ են մասունք նշխա-  
 րաց Սրբոյ Կարապետին, որպէս և աջ նորին և Ս. Ոս-  
 կիբերանի՝ յոսկէզօժ պահարանի . մի ի խաչիցն պար-  
 գեւեալ է ի Յակովբայ կաթողիկոսէ յամի 1686, յայտ  
 է թէ ի նորոգութեան տաճարին : Ընդ սոսին պահին և  
 ձեռագիր մատենանք ինչ հին և նոր կտակարանաց, զորոց

մին (Աստուածաշունչ) Խօջայ Իմիրզայ որդի Հայրա-  
 պետի Զակեցոյ՝ յամի 1664 ընծայէ յիշատակ « առ  
 » սուրբն Սիօն (?) բարձրարեքձ գահն և յերկնաքատակ  
 » աթոռն Երնջակու » . միւս եւս Աստուածաշունչ գիրք՝  
 ամաւ յառաջ (1663) ընծայի « ի վանս Երնջակայ, ի  
 » վայելումն հեզահոգի մեծ վարժապետին Երայեայ, զոր  
 » յայս աւուրս նոր նորոգեալ կօփածու վիմով և գեղեց-  
 » կազան յօրինուածով զսուրբ եկեղեցին որ Ս. Կարա-  
 » պետ վերածայնի . որ և իսկ յորդորիչ եղեւ սուրբ  
 » գրոցս, զի անջնջելի յիշատակ կայցէ ի սուրբ ուխտս  
 » Ապրակունեաց » : Ի նոյն ամս և մահոցախ Հայրապետ  
 որդի Խոջենց Մակայի և Մարգարտի և եղբայր Երիւ-  
 նայ նուիրէ աւետարան մի « հոգեբաժին ի դուռն Ս.  
 » Կարապետին » : — Բնակարան վանացն քայքայեալ  
 էր, միայն առաջնորդարանն կայր՝ յոր յաւել Երեմիա  
 վարդապետ սենեակս ինչ :

Հուշ ի հիւսիսային պարիսպ վանացն է բլրակ մի գե-  
 րեզմանատեղի նորին, և առ ստորոտով պարսպացն  
 հնազոյն գերեզմանք խոյածեւ վիմօք . յայտնեցան և  
 գետնափոր բռեալ սենեկածեւ գերեզմանք ի հարաւա-  
 կողմն պարսպին, սոսկ ոսկերոտեաւ : — Են վանացն բա-  
 ւական կալուածք գետնոյ, ձիթահանք և աղօրիք, յորս  
 յաւելուն ոչ սակաւ նուէրս ուխտաւորք, մանաւանդ ի  
 տօնի վարդապառի, և սրբութիւնքն՝ զոր տանին յայլ  
 և այլ կողմանս Նախճաւան զաւառի : — Յարեւելից կու-  
 սէ եկեղեցւոյն կայ զուր մի քարափոր, որ ընդ ի կա-  
 թուածոց և ի քամեաց ջրոյ, վասն որոյ և կոչէր Ս. Կա-  
 րանք, սրբազան իմն համարեալ, և թէպէտ այժմս ցա-  
 մաքեալ, տակաւին պատուի խնկով և մոմով ի կիրա-  
 կամուտս :

- Սակաւք ոմանք յիշին յառաջնորդաց ուխտիս, որպէս
- վերագոյնդ ծանուցար, և նախ բազում անգամ յիշեալն
- 1648 Առաքել Բոպիկ, Շառութեցին .
- 1654-68 Եսայի վարդապետ նորոգողն <sup>1</sup> .
- 1674 Մատթէոս արքեպիսկոպոս Ապրակունեցի .
- 1708 Սիմոն վարդապետ .
- ... Կարապետ Վ. Նախիջեւանեցի .
- 1820 Մատթէոս եպիսկոպոս Նախիջեւանեցի .
- ... Փիլիպպոս եպիսկոպոս .
- ... Կարապետ վարդապետ .

<sup>1</sup> Ի Յեղատակարանի ուրիշ իբրեւ զուգածամանակ ի միասին  
 յիշին երկուքն սուրբ յամի 1668 . « Ի յառաջնորդութեանս այ-

» սում նահանգիս (Ս. Կարապետի) Յեղայեայ և Աւագեալ քալ  
 » բարունապետացս » :



1860 Երեսմիա վարդապետ Մեղիք Թանկեան Աիւնեցի  
1890 Միքայէլ արեղայ, տեսուչ կարգեալ:

Յարեւմտից Ս. Կարապետի յերկարածիք լեռնա-  
շար երեւին կատարք բրգածեւք, յորոց մին կոչի Եր-  
լանք, զուգանուն Բալուսար լերին. Թերեւս ի սմա եւս  
գտանին օձք, զորոց հարուածս բժշկէ հողն օրհնութեան:

187. Մղանաւ հեռի յԱպրակունեաց յարեւմտից հա-  
րաւոյ նորին, յահեակ գետեզեր Երնջակայ նորալէն գիւ-  
ղիկ մի է Գզլլձա անուն, ի սակս կարմրահող բլրոց հա-  
րակողմանն, որք ոստք են պարու կցորդողի երկոցուն  
բարձրաբերձ լերանց՝ Բալուի և Դաղրուի, յորոց հատա-  
նի երկանաքար: Առ գետափին վէժ մի է մեծ վանաքար  
կոչեցեալ, զոր համարի տեղագրողն՝ սահմանածայր վա-  
նաց Ս. Կարապետի: Բնակիչք գեղլն են 16 տունք.  
յորս միայն հինգն Հայոց:


Իբրու փարսախաւ յարեւմտից հարաւոյ սորա՝ յալ-  
մէ գետոյն և հեռի ի նմանէ ի վերայ արբունի պողոտա-  
յին կայ Արագին գիւղ փոքր, ի մրգաւէտ սահմանի, զոր  
մշակեն բնակիչք Թուրքք 40 տուն և Հայք 30 տուն, գաղ-  
թեալք ի Պարսից բաժնէ, ունելով և եկեղեցի անշուք:

Կիսաժամաւ յարեւմտից հիւսիսայ Արագինայ է մեծ  
գիւղն ԿճՆՈՒՄ կամ Գզնոք, որոյ անուն յայտ առնէ  
զազգային հնութիւն, այլ ի գիրս ոչ յիշի. գեղեցիկ են  
սահմանքն և բարեբոյսք, այլ սակաւաշուր. բնակքն հողա-  
գործք Հայք են գաղթեալք ի Սալամաստոյ, տունք 300,  
յորոց ոգիք 70 մեռան ի մաղձախտէ յամի 1871. գոն և  
վաճառականք ի բնակիչն և ընչեղք: Եկեղեցին նորա-  
լէն է կաւակերտ, փայտայարկ և անշուք: Հասարակաց  
արուեստ երկրագործութիւն է. առ ի չգոյէ այգեաց և  
մրգաբերաց և առ նուագութեան ջրոյ, կամէին բնակիչքն  
առու հատանել ի փեռտուկ բլրոյ ի սահմանաց Ապրա-  
կունեաց: Ոչ սակաւք ի մշակացն երթան ի վաստակ  
յայլ: այլ դեօղս:

Սակաւուք ի բացեայ ի հիւսիսայ արեւմտից Կճնուտի,  
փոքր գիւղ մի՝ որպէս Թուի նորալէն և Թուրքարնակ,  
նշանակի յաղխարհացուցի՝ Չէլլիկ պասար անուն:

Միւս եւս հայանուն գիւղ և հեռագոյն քան զրնաւս  
ի սահմանաց Երնջակայ ընդ արեւմուտս, հինգ մղոնք ի  
Հս. Մ. Նորայինի է Խաչափարախ. և սա անժանօթ ի  
զրոց և ի յիւստակաց, Թէպէտ և ի դիւրի կայ, այլ չըր-  
ջափակեալ է ի լերանց. իբրեւ 50 տունք են ի նմին մահ-  
մէտականաց երկրագործաց և խաչնադարմանից: Բըր-  
գածեւ հողակոյտ մի է ի շինամիջին, ոչ գիտեմ յինչ պէտս  
կանգնեալ, և աղբիւր մի, որոյ ջուր հոսեալ ի լճակ՝ վա-  
րի ի պէտս: — Յարեւմտակողմն գեղլն մղոնաւ և աւելի  
բացագոյն կան ընդարձակ աւերակք հնոյ գեղլ, զորոյ ա-  
նուն առեալ է այժմեանս: — Ի հիւսիսայ արեւելից Խա-  
չափարախի և յարեւմտից Շահկերտոյ լեռնաբլուր մի է  
Ասալի-քնայ ձայնեալ ի մահմէտականաց, քարակոյտ ի  
վերայն և դժնիկ ծառ ի միջի, յորոյ վերայ կախնն պա-  
տառս հանդերձից, իբրեւ հմայս. և ասեն Թաղեալ ընդ  
նովաւ շան ճգնաւորաց երկց փախուցելոց յերեսաց աս-  
պատակաց Լէնկթիմուրի և սպանելոյ անդէն, և յարե-  
նէն վերարուսեալ դժնիկին այնորիկ՝ ունելով գորութիւն  
յերմահալած: — Ի վերոյ քան զայն՝ առապար է դժուա-  
րակոխ՝ յորոյ եզերս երեւին և որմածք, տանի ի քարայ-  
րըս և խռոչոյ. ի միումն կայ կամարածեւ խորջ և ի նը-  
մին վէժ սպիտակ պարսիկ արձանագրութեամբ. աստա-  
նոր ասեն ապաստանեալ զճգնաւորսն այնոսիկ, և 300  
ամս ի ջուն եղեալ, ապա զարթուցեալ և իջեալ ի շէնն  
իւրեանց: Բազում և այլ քարոյրք և փապարք են աստ  
և անդ, և մնացորդք պարսպաց, որպէս Թուի յամուր  
ապաստանի գործեալք:

Երկու մղոնաւ ի հարաւոյ Արագինայ յահեակ գետա-  
փին Երնջակայ է Ճամալտին գիւղ այլազգեաց, որ Նոր  
կամ Այսիս (Ստորին) մականուանի. քանզի երկու մը-  
ղոնաւ բացագոյն ընդ արեւելս կայ և Հինն կամ Վերին՝  
Պաշ Ճամալտին՝ սակաւարնակ, ուր բազում աւերակք  
են շինուածոց և կամարակապ բաղանեաց, և Թուի ի հը-  
նումն քաղաքաւան եղեալ. երկոցուն միանգամայն 60  
տունք են: — Մերձ ի գիւղն է Ալի-Մահմատ ձորակ,  
որոյ ծառք իբրեւ սրբազանք պատուին ի գեղջէիցն:



118. Դարոնայ (Դաղրոն) լերինք. — Տես յէջ 298. 348.

1. Պատառուած. — 2. Խառնանոյլ կարմիր քուարց. — 3. Դեղին լումպիկ (nummulit). — 4. Կարմիր կրաքար.

# Գ Ր Ո Ւ Ա Գ (Ա)

## ՄԻԱԲԱՆՈՂ ԵՂԲԱՐՔ Ի ԳԱԽԱՌՍ ԵՐԵՋԱԿԱՅ ԵՒ ԶԱՀԿՈՑ

Թէպէտև փոքր ի շատէ ծանօթ է ծագումն և պատճառ կարգի Միաբանող կամ ըստ լատին բառի Ունիթոր անուանեալ կարգաւորաց և ժողովորդեան, որք ի Ժ'ի դարէ հաստատեալ անդր քան զկէս ԺԼԻ տեւեցին, նախ ի գաւառին Երնձակայ և ապա Զահկոյ, և յայլ եւս կողմանս ինչ, մինչև արտայոյ աշխարհի մերոյ՝ ի գաղթականն, ի Ապֆա, - այլ զի գրեաթէ անծանօթք են բազմաց դէպք անցից անցից որ ի վանորայս և ի գեօղըս նոցին հանդիպեցան, յաջորդութիւնք եպիսկոպոսաց նոցին և գաւառահարց, այս ինքն ընդհանրական առաջնորդաց համօրէն վանորէիցն, և երթեւեկք նոցին և գործք յԵրուպա, կարեւոր համարեցայ տալ աստէն տեղեկութիւն, (զատ յորոց ըստ իւրաքանչիւր վանաց և գիւղից կարգեցի՝ զսեփականն նոցին, և զոր կարգելոցս եմ ի տեղագրին Զահկոյ), որպէս պահանջէ ծանօթութիւն իւրաքանչիւր վայրի, ըստ իմս կալեալ ոճոյ. թող զի և ոչ փոքր նշանաւոր դէպք են ի քաղաքական՝ և առաւել եւս յեկեղեցական պատմութեան ազգիս, զորով չէ օրէն զանց առնել ազգայնոյ բանասիրի, և ապա որպէս արժանն է կամ ախորժէ՝ դատել:

Ի սկիզբն ԺԳ դարու և վերականգնման թագաւորութեան Ռուբինեանց, հաստատեցան առ լատինս երկու կարգք կրօնաւորաց, աննմանք առաջնոցն (որք ի հասարակի հետեւողք էին Ս. Բենեդիկտոսի), յանուանէ հեղինակացն Սրբոց կոչեցեալք Փրանկիսկեան և Իոմիւնիկեան. երկոցուն եւս ի գլխաւոր իրս նման էին օրէնք մանաւանդ ի կեալ յոյժ աղքատօրէն և մուրդաբար իսկ, և ի քարոզել զբանն կենաց առ հաւատացեալս և անհաւատս. որ և առանձին իմն պարտք էին երկրորդ կարգին, վասն այնորիկ և Քարոզիչք կոչեցան (Predicatores)<sup>1</sup>. Իսկ առաջինքն՝ զի առաւել իմն խնամով հետեւել ցանկացան երանելոյն ի Քրիստոսէ աղքատութեան և խոնարհութեան, ըստ խրատու և ըստ օրինակի հրաշալի և հրեշտակահանգէտ առաջնորդի իւրեանց (Փրանկիսկոսի), կոչեցան Մինորք (Minores) որ ի

գիրս մեր ՄՆուր գրի, և նշանակէ կրտսերս և Նուաստս: Հոգեկեցոյց վարք և եռանդն հեղինակի նոցին և աշակերտացն՝ սքանչացուցին զաշխարհ, նախ զԵրուպէ՝ զընթացեալն յայնժամ յասպետական շահատակութիւնս և ի նազանս, և ապա զաշալուրջն յԱսիա, յորս առաջին՝ թէ ոչ միակ՝ մերս գտաւ Հայոց ազգ: Քանզի, թագաւորութիւն տանն Կիլիկիոյ այն ինչ բողոքեալ բարգաւաճէր, և յինքն ձգէր դասս դասս արեւմտեայց, ոչ միայն զմերձաւոր լատինական տէրութեանց երկրին Ասորոց և Պաղեստինոյ, այլ և զքնին Երուպիոյ. և այս թէպէտ վասն երթեւեկի Խաչակիր զօրաց, թէպէտ վասն վաճառականաց յաճախելոյ ի մեծ շահատանն Այասոյ, զոր ճարտարութիւն ազգիս գիտաց գրեաթէ առաջին եմփորիոն կարգել յայնժամ ժամանակի ընդ աշխարհ համօրէն. յոր սակս գրեաթէ յամենայն արեւմտեայ պետութեանց դաշինք առի եւ տրի ընդ մերումս կռէին. այլ և վասն անցից և զնացից դեսպանաց ընդ երկիրս Փոքուն և Մեծի Հայոց, մանաւանդ առ այն ժամու ինքնակալ տիրապետողն Ասիոյ, առ դանս Քաթարաց: Սոքա՝ զի չեւ եւս էին ընկալեալ զմահմէտական օրէնս, այլ հեթանոսք նանրահաւատք, դիւրալուրք գտա՛: քրիստոնէութեան, մանաւանդ զի և ռեսերիմ թշնամիք էին տիրողաց արեւմտեան Ասիոյ՝ առ հասարակ մահմէտականաց, յորոց նեղէին քրիստոնեայք. և զի մեծ էր յայնժամ յարեւմուտս հեղինակութիւն և ահանայապետացն Հռովմայ, սոքա լինէին առաջնորդք բանագնացութեան ընդ ահարկու ինքնակալսն այնոսիկ Քաթարաց, ի նիզակակցութիւն ընդ քրիստոնեայ թագաւորութեանց, և ի միաբանութիւն հաւատոց: Իսկ միջնորոյ առ այսպիսի գործ և հրաւէր, թուէր նախախնամութեան յարուցեալ ի նմին ժամանակի զանձնանուէր միանձունս երկոցուն կարգացն. որք ոչ միայն քարոզիչք առաքեցան, այլ և առաջին դեսպանք Քահանայապետին և թագաւորաց արեւմուտից, որպէս յետոյ և աշակերտեալք նոցին և հետեւողք՝ մերազգի Միաբանողքն: Երախտապարտ է սոցա Եւրո-

<sup>1</sup> Զոր ի Փռանկաց և մանաւանդ յԱնգղիացոց լեզուէ լուեալ մերայոց՝ ծերմամբ գրեն երբեքս Բրեկուր:





ՀԱՅ ՄԻԱՆՁՆ  
ՄԻԱԲԱՆՈՂ ԿԱՄ ԴՈՄԻՆԻԿԵԱՆ



պէ, ոչ վասն սյսոցիկ եւեթ, այլ և վասն կարեւոր ծաւնօթութեանց հեռաւոր աշխարհացն, զորոց գրեթէ բընաւ ինչ ոչ գիտէր, կամ յոյժ աղուաղ. վասն որոյ և մեծ յարգիւ ընկալաւ, և ցարդ քննէ և լուսաւորի գրութեամբք առաջնոց քարոզիչ դեսպանացն, (որպիսիք Բլանգարէն, Բիւպրիւք), և այլք, զորոց ոչ է տեղոյս ճառել, այլ յիշեցուցանել միայն՝ զի անցին դըքա և ընդ երկիրս մեր, ծանօթացան և ծանօթացուցին. մանաւանդ յետինն, որ յամի 1254, յամեսանն փերրուարի, կայր և տեսանէր և նշանակէր զհարիւր եկեղեցիս Անուոյ, և յետ ամսոց ինչ յարժունիս Կիլիկիոյ՝ զուրախական հանդէս արքայորդեացն և զարքայահօր (Կոստանդնի), ընդ լուր յաջողակ ճանապարհորդութեան թագաւորին իւրեանց Հեթմոյ ի խորս Ասիոյ և ընդունելութեանն ի ճամբար մեծի զանին Թաթարաց: Ահետ Դոմինիկեանց եկին և Փրանկիսկեանք ընդ նոյն ճանապարհ. երկրքեան եւս ծանեան զուշիմութիւն և զընտելատէր բարս մերայոց, որպէս և զիսաւորք մերոցս՝ իշխանք՝ զնոցա հմտութիւնն և զգուշակեցնաղ վարս, և զառաւելութիւն բազում մաւամբք քան զիւրեանցայինս. վասն որոյ և ոչ միայն յօժարութեամբ ընդունէին, այլ և յարժունիս տային նոցա վանս բնակութեան. և ոչ լոկ այսչափ, այլ և ցանկացան թագաւորքն և թագուհիք ունել զոմանս ի նոցանէ անմեկին առ իւրեանս՝ հաստատ բնակութեամբ. և զի փոքր ի շատէ փառնկ և լատին լեզու լեւիլի էր յարժունիս և յապարանս իւրեանց, խօսակից ինէին ընդ նոսա և ախորժէին ընդ բանն. կրթէին և նըքա ի հայ լեզու, Դարձեալ, ի սկզբանէ հաստատութեան նորոյ թագաւորութեան մերոյ գրեթէ ցարձուռն՝ անընդհատ լինէր թղթակցութիւն Փահանայապետաց Հռովմայ ընդ թագաւորս և կաթողիկոսս Հայոց, որոց յաճախ թղթարեք լինէին յիշեալ կրօնաւորքդ: Եւ այս յառաջ իսկ քան զկէս ԺԳ դարու, որ է ասել ի ժամանակի պայծառութեանն Հեթմոյ Ա, քաջի և զգօնի, և համատիպ բարեպաշտուհւոյ դէպոյի նորին Զապելլ. յորոց խնդրոյ, ասի, սահմանեալ ի ժողովի Դոմինիկեանց (ի Տրեվիր քաղաքի Փռանկաց) յամի 1265, հաստատել վանս մի ի Հայս, ընդ տեսութեամբ զաւառահօր Պաղեստինու. նոյն բան հաստատեցաւ յետոյ և յայլ ժողովս նոցին, ի Վենետիկ յամի 1331, ի Պերպինեան 1337. յիշի և վանք մի նոցին ի Տիփղիս անդատին ի 1242 ամէ: Եւ նոյնպէս և Փրանկիսկեանց յառաջ քան զԺԳ դար հաստատեալ ասի զաւառական վանս յաշխարհի մերում, յորոց և ոմանք նահատակեցան յայլազգեաց յԵրզնկա, յամի 1314: Եւ ման սոցին և Դոմինիկեանց յառաջ քան զհաստատութիւն կարգի Միաբանողացն՝ հաստատեալ էր Գառառ Հայկական ի (Փոքր) Հայս. և յիշի իսկ յանուանէ Վիլգելտ կամ Վիլգելտ աթոռակալ Դաւառին Հայոց յամի 1331, առ որ յանձնեաց Փահանայապետն (Յովհ. ԻԲ) քննել զգիրս Սանուդոյ Տորչելլոյ: Ի դէպ է ի միտ առնուլ յայսցանէ, զի և յառաջ քան զՄիաբանողան՝ ոչ միայն մուտ գտեալ էր լատին կրօնաւորաց ի Հայս, այլ և Հայոց ոմանց ի կրօնս նոցին, և իւրեանց երկրի և ի նոցայն:

Ոչ դը անգիտանայ զնորանշան գործ Հեթմոյ Բ՝ արքայի մերոյ, միանգամայն և Փրանկիսկեան կրօնաւորի՝

Եղբայր Յովհաննէս Կոչեցելոյ, անդատին յամէ 1293, որ առաւել քան յիւր ազգայնոց համակրօնիցն՝ ի Լատինաց պատուի Երանելի կոչմամբ, և պատկերօք ձեւով Փրանկիսկեանց կարգի, թաւարծի ցնցոտեան, որ յամենայն վանորայս նոցին գտանին. և երբեմն եւս նովին տարազու կերպարանի հեծեալ և սուսերամերկ հետամուտ ասպատակաց երկրի իւրոյ և եղբորորդւոյն Լեւոնի Գ թագաւորի: Յիշի և յԵրոպէ յամի 1318 Գուլիտուն ոմն Հայ Դոմինիկեան ի վանս Բոլոնիայ, որ իբրեւ զգօն այր՝ ընդ այլոց ոմանց առաքեցաւ առ թագաւորս Երանելի Սիլիկիոյ, արգահատել զնա վասն վիրացն զոր ընկալաւ ի դաւաճանաց ի քաղաքի անդ: Այլ զայսոսիկ հեռագոյն ի մերոյ առաջարկութիւնէս համարեալ, մերձեցուք ի սոյն:

Բ. Զվերոյ նշանակեալ հաղորդակցութիւն ընդ արեւելեայս և յաւէտ զլան ծաւալելոյ զքրիստոնէութիւն առ անհաւատս, և զհռովմէական դաւանութիւն առ քրիստոնեայս, աճեցոյց յոյժ Յովհաննէս ԻԲ քահանայապետ, որոյ կան հարիւրիւ չափ թղթեան առ թագաւորս և իշխանս և առաջնորդս եկեղեցւոյ մերոյ, թերեւս իցեն ոչ սակաւ և անծանօթք: Սա ինքն առ տեւողական առնել զգործ իւր, ոչ միայն բազում քարոզիչս առաքեաց, այլ և թեմս մեծամեծս հաստատեաց յարեւելս, երկոցուն յիշեցելոց կարգացն կրօնաւորաց, յամի 1318, Փրանկիսկեանց տուեալ զհեւսիսակողմն, Դոմինիկեանց՝ զարեւելեայն. զսոցա արքեպիսկոպոսն հաստատեաց ի Սուբտանիա մեծի քաղաքի Պարսից ինքնակալութեան, և ընդ ձեռամբ նորին եպիսկոպոսունս վեց. և ընծայական թղթով առաքեալ առ թագաւորն մեր Օշին՝ խնդրէր դիւրել նմա զճանապարհն և յանձն առնել ազգայնոց իւրոց. նոյնպէս գրէր և վասն այլոց եպիսկոպոսաց. առաքէր և առ նա ինքն թագաւոր մեր և թագուհի՝ զոմանս ի Քաւրոզաց, ըստ նոցին իսկ խնդրոյ: Ընդ նոսին համարին ոմանք առաքեալ նա և զԲարդուղիմէոս փոքր կամ Պրոզ մականուանեալն յիւրեանց լեզուն (Parvus), և ըստ ազգատոհմի Pisciuilis կամ Pizzoli, ծննդեամբ ի Բոլոնիայ քաղաքէ Խաւիոյ, ի կարգէ Քարոզացն, հոչակեալ սրբութեամբ վարուց և գիտութեամբ, ըստ ոմանց՝ աշակերտեալ երբեմն մեծի և գերագոյն աստուածաբանին Ս. Թովմայի Ալուինացւոյ: Զեռնադրեցաւ սա յեպիսկոպոսութիւն Մարաղայ քաղաքի Ատրպատականի, բարգաւաճելոյ անդատին սօսնդակութեամբ Հուլաղու զանի և աստեղագիտի նորին (Նասրէտտին), վասն որոյ և զանուանի դիտարանն կանգնեաց: Առեալ սորա յընկեր զքաղաքակից իւր և զկարգակից Յովհ. Անգելոս կամ Անկլոս (Anglus, Angelus), որ յետոյ եղեւ եպիսկոպոս Տիփղեաց, և զեղբայր մի Յակոբ անուն, եկն և հաստատեաց զաթոռն. և համարձակութիւն գտեալ ի կողմնակալէն, քարոզէր համարձակ և մկրտէր զհաւանեալսն. ապա ի յաջողել գործոյն՝ շինեաց և վանս ի զերծ և ի բարձրաւանդակ տեղով, յորմէ սփռէր զվարդապետութիւնն ի յրլակայ սահմանս: Եւ տարածեցաւ վաղվաղակի համբաւ բանին և վարուցն հանդերձ սքանչելեք, որպէս ասեն, զոր հոչակէին և մերազգիք այնր քաղաքի, ուր և յորդորեալ և եւս յաճախէին եկք. մա-

նաւանդ զի վարժեալ Բարդողիմեայ ի պարսիկ լեզու՝ այնու քարոզէր և վիճէր, և գրէր և թարգմանէր զիւր և զայլոց զիրս: Կրդեալ ի համբաւոյն համարի և մեծանուն մատենագրի մերոյ այնր ժամանակի և առն զգծնի, Յովհաննու Եզնկացւոյ՝ եկեալ առ նա, և սատարութեամբ իրերաց թարգմանեալ զմեծի Վարդապետին Ս. Թովմայի զիրս զԵօթն խորհրդոց Եկեղեցւոյ: Ի նոյն համբաւոյ ընդոստուցեալ միւս եւս և հռչակագոյն առ իւրան Վարդապետ և Վարդապետաց Վարդապետ՝ Եսայի Նչեցի, ցանկացաւ տեղեկագոյնս գիտել զվարդապետութենէ լատին եպիսկոպոսին. առաքեաց առ նա զՅովհան վարդապետ Քոնայցի՝ զառաջնորդ տեղւոյն, զայր բանիրուն և խոհական. որոյ առեալ ընդ իւր զհայրենակից իւր Յակոբ վարդապետ, գնաց յամի 1328 ի Սուլտանիա, ետես լուաւ զգործան և զբանս Բարդողիմեայ. և գերագոյն գտեալ քան զոր ցայնժամ լուեալ և ուսեալն էր, կապեցաւ ոգի նորա ընդ նմա, նոյնպէս և ընկերակցին իւրոյ, վասն որոյ ոչ կամեցան դառնալ յետս. թերեւս թլլթով ծանուցեալ զիրան, և կամ գնացեալ և վերստին դարձ արարեալ. և կացին առ նմա ամ մի և կէս, ուսան զլատին լեզու, և ուսուցին նմա, սակաւ մի և ընկերաց նորին՝ զԼուրեանց հայ բարբառ. յորս քաջուս գտաւ Պետրոս ոմն Արագոնացի ի Սպանիոյ, որպէս և ի մերոցս՝ վարդապետն Յակոբ, որ և յայն սակս յատկաբար թարգման կոչի. երկոքին սղա ձեռն արկին թարգմանել ի լատին լեզուէ զիրս աստուածաբանական և խրատականս, ընդ որս զնորին իսկ Բարդողիմեայ Քարոզս և զՄեկնութիւն Վեցօրեայ արարչութեան, հանդերձ այլովք: Եւ ոչ շատացեալ այսօրիւք, յորդորեալ բերին ընդ իւրեանս զնոյն ինքն զեպիսկոպոսն ի գաւառն իւրեանց և ի վանս Քոնայ (1330). որում ընդունելութիւն մեծ արար գեղջաւազն Գէորգ քեռին Յովհաննու վարդապետի: Իսկ սա հրաւիրեաց զբազումս յուսումնակցաց իւրոց ի Քոնա, յաշակերտաց Եսայեայ, յորս գլխաւորք յետ Յակովբայ՝ յիշին վարդապետքն Մարգարէ Յօծոպոյ, Հայրապետ յԵսթնաբլուր գեղջէ, Սիմէոն ի Բասենոյ, Յովհաննուէս ի Ծուանայ, Ներսէս ի Տարսոնէ՝<sup>1</sup>, Առաքեալ և Լալ յԱրտազ գաւառէ, Գրիգոր յԱպրակունեաց, Կոստանդին և Յովհան ի Կաղզուանէ, Սիմէոն ի Խաչենոյ, և այլք ոչ սակաւք. որք ժողով իմն գումարեալ յետ երկար վիճման և քննութեանց՝ հաւանեցան բանից վարդապետութեան Բարդողիմեայ, և դաշինս եղին ընդունել յամենայնի զգաւանութիւն տիեզերական եկեղեցւոյն Հռովմայ և հնազանդել:

Ոչ է յայտ զինչ բանք եղեն յայնժամ կամ խորհուրդք Եսայեայ մեծի վարդապետին, քանզի գրեաթէ ի նոյն ամրս մեռաւ նա ալեւորեալ. թէպէտ և ասի խրատեալ մի յախուռն և ինքնագլխաբար մուծանել նորածեւութիւնս. յայնպիսոյ ականածելի անձնէ աներկեւան մնացեալ միաբանելոցն ընդ Բարդողիմեայ և ընդ Քոնեցւոյն, միանգամայն քաջ գիտելով զանցս ժողովոց Սոսյ և Ատանայ և զգիտեան որ ի Կիլիկիա, ոչ յուսային հա-

<sup>1</sup> Գաւառս գրէ ի Թարսոն գաւառէ. Թերեւս ի Տարսոնց էր:  
<sup>2</sup> Կանխաւ եւս թարգմանեալ վկայի այս ըստ վերոյգրեւոյն:  
<sup>3</sup> Յուսարտն գրէ յօրինակի միւում. « Կատարեցաւ Գիւրգ երկուց

ւանութիւն գտանել ի գլխաւորաց ազգին. սակայն հաւաստե Մխիթար Ապարանեցի՝ չատագով նոցին կացեալ զՅակոբ կաթողիկոս՝ թղթովն ի 6 մարտի 1333 ամին, գրելով. « Հասկացաք, եթէ ոմանք յաշակերտաց մեծ » վարդապետին Եսայեայ ի գիտնոցն և ի կատարելոցն » և ի պարկեշտիցն և ի մաքրիցն... ընթացան առ մայրն » ամենայն գիտութեանց, որ անխառն և յատակ ունի » զվարդապետութիւնն, ի համատարած ծովէն Հռովմայ » մայ »: Յաւելու ապա պատմիչն, եթէ « յետ այսպիսի » գովասանական բանից, յորդորէ զամենեւեան ի նոյնն, » և իննել սգնական հոգեւոր և մարմնաւոր պիտոյիւք. » և հրամանակատար լտղացն՝ հաստատէ օրհնութիւնս » և փառս, և հակառակացն անէծս և վիշտս, որպէս » յայտ է ի նամակաց նորա »: Շատ էր նոցա այս քաջալեր, որով անկասկածք և անակնածութիւն եւս քան զեւս պնդեցան ի խորհուրդս իւրեանց և ի գործ. և առ տեւական առնել զայն՝ խորհեցան հաստատել և կարգ մի կրօնաւորական ըստ հրահանգաց արեւմտեան միաձանցն, և մանաւանդ Քարողացն՝ զորս ակն յանդիման ունէին, և կոչեցին զայն կամ զինքեանս իսկ՝ Միաբանող Եղբարս ընդ եկեղեցւոյն Հռովմայ, և ըստ Լատինաց Fratres Unitores, յորմէ և ժողովուրդն իսկ հետեւող նոցին նոյնպէս կոչեցաւ: — Լուեալ՝ ըստ ոմանց, Քահանայապետին Հռովմայ զիրան, հաճութեամբ հաստատեաց նոր աթոռ եպիսկոպոսութեան ի Նախճաւան, և աթոռակալ զնոյն ինքն զԲարդողիմէոս. բայց, ըստ այլոց՝ այս հաստատութիւն եղև յետ ամաց քսան և հնգից: Երիտ ամս եւեթ եկեաց նա ի Քոնա, սնդուլ վաստակեալ ի կատարումն ձեռնարկեալ գործոյն, յոր սակս կարեւոր վարկաւ ըզթարգմանութիւն հոգեւոր և աստուածաբանական գրոց, որոց արդարեւ կարօտէր ազգս մեր ըստ ժամանակին պիտոյից. և իբր ի տասնամեայ միջոց ժամանակի՝ և շատք առ կենդանեաւ Բարդողիմեայ, թարգմանեցան յաւէտ ի ձեռն նախագրելոցն Յակովբայ վարդապետի և Պետրոսի Արագոնացւոյ՝ ոչ սակաւ մատենաք, յորոց ծանօթքն մեզ տան գուշակել՝ որքան ջան էր նոցա և որքան յողովագոյնք եւս յեղեալք էին ի լատին լեզուէ ի հայ, որք արդ ոչ իսկ երեւին. ծանօթքն մեզ հանդերձ թուականք թարգմանութեանցն՝ են յամս,

- 1339 Քարոզգիրքն Բարդողիմէոսի.
- ... — Նորին թարգմանեալ կանոնական թուղթ, յորմէ ծանօթ է մեզ բան մի վասն Յարութեան մարմնոց.
- Նորին Յաղագս Վեցօրեայ արարչութեան.
- Ս. Թովմայի Ոկուինացւոյ, Յաղագս Խորհրդոց Եկեղեցւոյ, զորմէ գրէ Արագոնացին ի Դատաստանագիրսն, եթէ « Բայտր թարգմանեալ է յԵ » պիսկոպոսէն Բարդողիմէ »<sup>2</sup>:
- Նորին, Գիւրգ ընդդէմ Հեթանոսաց, սատարութեամբ Բարդողիմեայ.
- Յաղագս Բնութեանց և Անձնաշարժութեան Քրիստոսի. գրքոյկ թարգմանօրէն յերկրեալ Յովհ. Քոնեցւոյ և Բարդողիմեայ.<sup>3</sup>

<sup>2</sup> Ընդունել և մի անձնաւորութեանն ի Քրիստոս, ի ձեռն Յովհաննու Քոնեցւոյ և Ս. Բարդողիմէոսի եղբակազոսի, ի փառս յ Յետուսի Քրիստոսի, և այլն:



1334-5 Գիրք Դատաստանաց, Պետրոսի Արագոնացւոյ յերիւրեալ և թարգմանեալ:

— Նշանաւոր և հարստագոյն ի գրեանքս համարելի է Կանոնագիրքն կամ Իրաւագիրք Արագոնացւոյն, զորմէ գրէ ինքնին ի յառաջաբանին, յետ յիշելոյ զի ոչ գտանէր առ արեւելեայս այսպիսի մատեան. « Յաղագս այնորիկ ես Ֆրա Պետրոս » նուաւս ի կարգս Քարոզողաց Սրբոյն Դոմինիկոսի. « ձեռնարկեցի առնել համառօտ հաւա » ջուան Կանոնաց իրաւանց եկեղեցւոյ, եւս ա » ռաւել հաւաքեալ ի բանիցն Ֆր. Ռէմունդի և » երանելոյն Թոմայի, և Գաֆրեոսի <sup>1</sup>, և այլոց » վարդապետաց իրաւագիրտաց, և թարգմանեալ » ի լատին լեզուէ ի հայ բարբառ... Վասն որոյ » զսակաւ և դպատուական հաւաքումնս զայս՝ ա » ղաչեմք սիրով ընդունել:... Այլ յայտ ոչ համ » արձակեալ ձեռնարկեցի իմով զօրութեամբս, » բայց յեցեալ յուսով ի ծայրագոյն բարին, որ » սիրէ զարգարութիւն և զուղղութիւն, և առնէ » միայն մեծամեծ զբանչելիս, և տայ խլից լսել և » համերց խօսել: Արդ բաժանի գիրքս այս ի Ե » մասունս. Ա. է վասն Դատաստանաց (գլուխք 86). » Բ. վասն Դատաստանաց (գլ. 26). Գ. ի Վա » րուց և ի համեստութենէ. (գլ. 42). Դ. ի Պա » կէն (գլ. 29). Ե. ի Պատժոց մեղաց » (գլ. 51):

1334 Յաղագս Եօրն Մեղաց, զորք Արագոնացւոյն <sup>2</sup>, թարգմանեալ ի Սարգսէ վաշննց.

1339 Առաջինորեանց գիրք. ի ձեռն Յակոբայ վարդապետի և Պետր. Արագոնացւոյ.

— Յղ. Մոլորեանց.  
— Յղ. Խոստովանորեան, ի Բարդողիմեայ և յԱրագոնացւոյն.

133.. Գիրք Դժոխաց. թարգմանութիւն Բարդողիմեայ և Քանեցւոյն.

— Սոյր Պետրոսի. թարգմանութիւն Յակոբայ վարդապետի և Արագոնացւոյն.

1333 Երանգիրք Դոմինիկեանց, ի Բարդողիմեայ. և — Միսայ, որ է Պատարագամատոյց նոցին.

133.. Այսպետի Աստուածաբանորեան. թարգմանեալ յԱրագոնացւոյն.

1343 Վերջնորեան Ստորագորեանց Արիստոտելի. Յակոբայ վարդապետի և Արագոնացւոյն.

133.. Կանոնք Ս. Օգոստինոսի.

133.. Կացոցմունք կարգի Եղբարց Քարոզողաց. այսինքն, կանոնք կարգի Դոմինիկեանց, Քանեցւոյն թարգմանեալ. լատին բնագիրն կոչի Constitutiones Fratrum Ordinis Prædicatorum. գտանի ի ձեռն մեր թարգմանութիւն Ա. մասին, որ են գլուխք 20, յորս յաւելեալ է և գլուխ ի Ա, Յաղագս Գործոց և Գործակալաց, որ չիք ի ծա

նօթ լատին տպագրութեան Պարիզու յամի 1873:

— Գիրք յաղագս Հոգոց, և

— Յաղագս Հրեշտակաց.

— Կայծականց ? Գիրք Բեղայի. թարգմանեալ ի Յովհաննէ Զահկեցւոյ <sup>3</sup>.

— Քանձ վարդապետորեան Քրիստոսի (?)

1354 Մեկնորեան Պատարագի Իննովկեանեայ Գ. թարգմանեալ ի Թարէե եպիսկոպոսէ Կաֆայի:

Հանգոյն հնոց ձեռագիր մատենից հարազատ դպրութեան մերոյ, հարածանօք և հինահարութեամբ նուազեալ և կորուսեալ են և շատք ի լատինէ թարգմանելոցն, որպէս վկայեն յետին տպագրողք ժամագրոց իւրեանց Միաբանողքն՝ ի սկիզբն ԺԼ դարու. և ի գերծեղոց անտի է գուշակել ոչ միայն զյուլիոսի թարգմանելոցն յառաջին ժամանակսն (ՅԳ դարու) և յըզկընիսն երբեմն, այլ և զազդումն նոցին ի միտս և ի լեզու ազգիս. ի միտս, հարկ է խոստովանել, զի լոյս և գիտութիւն բազում մուծին, թէպէտ և ըստ դպրոցական յայժմուս անախորժ ոճոյ. այլ ի լեզուս՝ ոչ փոքր աղաւաղութիւն և այլաձեւութիւնս, զի լատին լեզու չէր իբրեւ զհլլէնն յանկազոյն ի յեղումն ի մերս, և զի շատք ի թարգմանութեանց եղեն ի ձեռն կամ գործակրցութեամբ նոցին Լատինաց թերահմտից հայկականս բարբառոյ, յորմէ հարկ իմն անհրաժեշտ և անհամբոյր էր խառնակութեանն, որ առաւել եւս յաւելաւ առ յետինս, հմտագոյնս թերեւս լատին լեզուի՝ քան նախնեացն իւրեանց յստակ բարբառոյ: Սակայն չէ օրէն այսու եւեթ խանգարիչս զսոսա ասել համօրէն հայ լեզուի կամ զըպրութեան, որպէս սովոր է ոմանց լայնաբար մեղադրել. դժուարին իսկ էր սաէպ ընթերցողաց զնոցս մատեանն՝ շտարանալ շատ կամ սակաւ ի յստակութենէ հայրենի բարբառոյն: Հարկ է դարձեալ խոստովանել, զի թէպէտ թերացան նոքա ի պարզութենէ լեզուին իւրեանց, և ի հայրենի ծիսից, այլ ոչ սակաւ օգտեցան յիմաստս կրօնականս և բարոյականս, որովք գերազանցէին քան զանհաշտ յամառեալսն յոր և է հայրենատուր համարեալ աւանդութիւնս, առ սրս ի ժամանակէ անտի ցմօտ դարս մեր՝ գրեաթէ չերեւեցաւ զրուած ինչ հանճարեղ և լուսաւոր, անհազորդ կալով գրոց և վարդապետութեան աւրեւմտեայց սովորեալք միայն զիւրեանց բնիկ վարդապետացն բանս յեղյեղել և ընդօրինակել. թէպէտ և ոմանք՝ մանաւանդ Տաթեւացին, հակառակք իսկ գոլով Միաբանողաց, ի նոցին թարգմանեալ գրոց յայտնի կամ լուրեւայն՝ առնուին բանս և յերիւրէին բազում անգամ ի ճառս իւրեանց. և գտանեմք ի գրոցն անտի թարգմանելոց՝ գրեալս եւս ի վասն Որոտան և Տաթեւոյ, առ կենդանեալ նոցին իսկ պարագլխոցն և եռամեծ անուանեալ վարդապետացն Յովհաննու և Գրիգորի:

Գ. Բայց ոչ այնքան լեզուին՝ այլ խնդիր հաւատոցն՝ յարոյց, որպէս յայտ է, երկպառակութիւն, խռովս և

<sup>1</sup> Կոփրեոսո Տրանիացի (ի Trani քաղաքէ Իտալիոյ) նաւապետ և մեկնող օրինաց և կանոնաց. իսկ Ռեմունդն թուի նշանակաւոր լուսնայ, ժամօթացեալ մերայոց ի Կելիկիա: — Տ. Սեւոսեան, 394:

<sup>2</sup> Որ գրէ ի յառաջաբանի. « Եւ վասն օգտակարութեան եղ

» բարց և ընկերաց մերոց սիրելեաց ի սեռական ազգէ Հոյոց և » սպասարարաց զրոց, սկսայ զայս փոքրիկ գործիկս. Նախ, յոր » խօսիմք վասն նասարակաց մեղաց », և այլն:

<sup>3</sup> Ըստ Պրոսէի ( Voyage, I.) թարգմանող գրոցս է Թաղեոս եպիսկոպոս յամի 1421:



կախու. և թերեւս չէր մարթ չլինել աստանօր այսպէս, մինչ ի բուն ի կայս թագաւորութեան և հայրապետութեան ազգին՝ ի Արիկիա՝ նոյնպէս լինէր, մինչեւ կաթողիկոսաց աթոռընկէց լինել և թագաւորաց դաւաճանիլ. և այս՝ յաւէտ ի յետին կէս ԺՂ դարու, յետ վախճանի հիմնադրաց Միաբանողացն և խոհական վարդապետաց, և ի փոխել նոցին բազում մասամբք ի ծէս լատին եկեղեցւոյ, պահելով միայն զհայ լեզուն, ծայրայեղութեամբք հանդերձ, յոր՝ ոչինչ ընդհատ և հակառակորդքն բերէին. որպէս աներկբայ է տեսանել ի գրուածս մոլեռանդն Միաբանողին Մխիթարայ Ապարանեցւոյ՝ յիւս ԺՂ դարու և ի սկիզբն ԺԵԻ՞, որ ոչ պատկառի խոստովանել և գրել՝ զի կրկին մկրտէր. մկրտէին և իւրանըմանքն զեկեղան կամ զղարձեալսն յիւրեանց դաւանութիւն. որոց փոխարէն և ընդդիմակքն նոյնպէս գործէին, կրկին ձեռնադրութեամբ. և այս ոչ ի բնիկ աշխարհին Հայոց եւեթ, այլ և յիտալիա, ուր յաճախէին յայնժամ Հայք ի կրկին եւս դաւանութեանց: Սակայն այսպիսի անհեղեղ արարուածք նուազեցին՝ թէ ոչ և իսպառ դադարեցին. յետ այնր առաջնոյ դարու, մերկապարանոց եղեւ որոշումն երկոցուն կողմանցն. հատա իսպառ խորհրդակցութիւնն, մանաւանդ յետ փոխադրութեան կաթողիկոսական աթոռոյն յԷջմիածին. Միաբանողքն կոչէին այնուհետեւ Հատինահայք, և յատկազոյն որպէս գրի իսկ ի ԺԵ = Է դարս՝ Յռանգաւսայք, Natio Franca - Armena ի լատինն, և Franchi - Armeni յիտալացի ճանապարհորդաց. և մնաց միայն խորշումն ի միմեանց, և անտի հալածումն կամ հարստահարութիւն բազմաւոր մասինն, սատար պատրաստական առ այս ունելով զայլադեման տիրոզս կողմանցն. և սակաւաւորացն՝ ի պաշտպանութիւն անձանց, մերթ առ նոսին իսկ տիրապետողն զիմելով և մերթ ի գրունս Քահանայապետին Հովմայ և եւրոպէական պետութեանց: Տեսաք ի տեղագրութեան Ապարաներոյ և Խօղիսլինի զինչ անցք անցին ընդ վանականսն, և խոստովանողական մահունք, որպիսիս կայ և յետոյ տեսանել. ոչ անհաղորդ գտաւ ի հալածանաց և խոշտանգանաց՝ նոյն ինքն առաքինակրօն հեղինակ կամ առիթ Միաբանութեանն, եպիսկոպոսն Բարդուղիմէոս, որպէս շատք ի պատմաց վարուցն վկայեն, թէպէտ և այլք անգիտանան, որպէս և զայլ հանգամանս վարուց նորին և զժամանակ քարոզութեանն և մահուան: Զառաջինն՝ որպէս ի Մարաղա՝ և աստ յԵրընջակ անարգել ընդունելի եղեւ նա ի թաթար կամ ի պարսիկ կուսակալէ գաւառին, այլ յետոյ ի սաղրանաց հակառակորդաց՝ արկաւ ի կապանս և ի բանտ և ի խոշտանգանս. սակայն որ տայրն տանջել զնա՝ նոյն և ետ արձակել, տեսեալ զպանչելի համբերութիւն նորին և զհեղաշայեաց զէմն. և եւս հանել ի գոյ՝ յոր արկեալ էին զնա անագորոյնք ոմանք. այլ յետ սակաւուց դարձեալ կալան զնա և չարաչար եւս մատուցին տանջանս, եղեղունս արեալս վարելով ընդ ըղձնգունսն, և ապա ատրաշէկ երկաթովք խարուկելով զոտան, և սաղաւարտ ջեռուցեալ ի գլուխն ադուցանելով, և այնպէս կիսամահ թողին. զոր բարձեալ իւրայոցն տարան հանգուցին ի խոտեկին, ուր կեցեալ աւուրս տասն, անդադար խրա-

տելով զնոսա և յորդորելով ի համբերութիւն, և տուեալ նոցա յետ ամենայնի ուեմոն զկնիք իւր խաշանիչ, ննջեաց խաղաղութեամբ ի Տէր, ի 15 օգոստոս ամսոյ՝ յամի 1333: Թողեցաւ մեծահանդէս յուղարկաւորութեամբ առաջի սեղանոյ Վերափոխման եկեղեցւոյն Քո՛ւայ. և ցորչափ շէն էր եկեղեցին ցկէս ԺԼ դարու, հաւատացեալք և մահմէտականք իսկ հանապաղ զիմէին յուխտ ի տապան նորին, առեալ անտի հող, յորմէ և բազում բժշկութիւնք եղին: Ի դասս Երանեղեաց պատուի նա արժանապէս և ի կարգակցացն Հատինաց, զոր առ կենդանեալ իսկ նորին ոմանք ի մերոց գրչաց ականատեսոց, և ի Միաբանողացն և յոչ միաբանողաց, կոչեն Սոչրք Վարդապետ: Զատ ի գրուածոց նորա և ի թարգմանութեանց՝ զոր ի վեր անգր յիշեցաք, յիշի և այլ ինչ ճառ կամ գրքոյկ զպէսպէս դիպաց խղճի մտաց, և թոռոյ մի առ Հայս, թարգմանեալ ի Յովհաննէ Քուլեցւոյ, որ այժմ անծանօթ է:

Ետ արագահաս մահուան նորա՝ առ յապահովել զձեռնարկեալն գործ՝ փութացաւ Քոնստանտինոպոլս առ Քահանայապետն Յովհաննէս ԻԲ յԱլեքսիոն, և նորին հեղինակութեամբ խնդրեաց և ետ հաստատել զկարգ Միաբանողացն, ըստ կանոնաց Սրբոյն Օգոստինոսի և կարգաց Ս. Դոմինիկոսի, զորս և թարգմանեացն ի Հայ. և դարձաւ առ իւրսն, և նոքք հանդերձ՝ ըստ հրահանգաց արեւմտեան կրօնաւորաց ուխտեաց զուխտ կարգին՝ առաջի եպիսկոպոսի միոյ Հատինաց, իբրեւ երեսփոխանի Սրբազան Քահանայապետին, և կարգեցաւ ի նորին դիմաց առաջնորդ ամենայն վանահարց ուխտին, որպէս մի ըստ միովէ գրէ ինքնին ի թղթին՝ զոր առաքեաց առ Հայս, իբրեւ յայտարար նորոց իրաց: Ոչ զբտանի արդ անթերի և անտարակոյս այս թուղթ, որպէս ոչ և Բարդուղիմայն (և ոչ կոնդակ հաստատութեան կարգին ի Քահանայապետէն Յովհաննէ, կամ անծանօթ ման առ յինէն):

Դ. ի սկզբան անդ միաբանութեանն, ասեն, երեք քաղաքք և 30 գեօղք հաւանեալ ընկալան զբանն, ոչ յիշին յանուանէ քաղաքքն, այլ թուին Նախճաւան, Մարաղա և Սուլտանիա, թէ ոչ մերձաւորքն քաղաքաւանք Երընջակ և Զահուկ. զի ոչ կարծեմ ակնարկել ի հեռաւորսն ի Տիգրիս, Կաֆա, Աժտէրխան և ի Կարաքանթ (Քարաքէնտ) մերձաւոր նոցին վիճակ և աւան, յորս՝ կամ յեւս մերձաւորս ի Մակու և յԱրտազ՝ յամենեալն շատ կամ սակաւ ընդունելի եղեւ նոր վարդապետութիւնն: Ոմն ի պատմագրաց Գոմինիկեանց ասէ ի Հայկական Գաւառի կարգին եղեալ ի սկզբան 50 վանաց և 700 վանականաց, յոր՝ եթէ ստոյգ է, յայտ է թէ ոչ միայն զՆախճաւան և զԵրընջակ է իմանալ, այլ և զԱրտազ, զԱտրպատական (Մարաղա, Սուլտանիէ), զԼրիմ, թերեւս և զՎրաստան: Ոչ յիշին յայնմ ժամանակի և անուանք գիւղիցն, որոց թիւ նուազեաց առ փոքր փոքր՝ ի հալածանաց զոր կրեցին յայլախոհիցն և յայլադեմից դար մի և կէս՝ ի ժամանակի բազմութեան իւրեանց, իսկ յերրորդ քառորդէ ԺԵ դարու և այսր՝ բազում իտալացի և փաանկ ուղեւորք ականատեսք նոցին և եկեղեցապատումք՝ յիշեն և զթիւ գեօղից փոանք Հայոցն կամ Հա-

տինահայոց, որպէս կոչեն. հնագոյնքն մինչև 19 զեօղ, միջինք 10 կամ 12, վերջինք յետ կիսոյ Ժէ դարու 8 կամ 7: Զարչարակիր եպիսկոպոսն Ազարիա Ֆրիտոն հարցեալ ի Հոովմ յամի 1602, ետ գրով զթիւ և զհամար բնակարանացն և զընակչաց, զչափահասօին կամ հաղորդողաց և զմանկտունն, հանդերձ անուամբք եկեղեցեացն, և թուով տանց մահմէտականաց ի գեօղս ուրեք բնակելոց, զոր ցանկեալ կարգեցից աստ ի հանոյս հետաքննից. կանխելով ծանուցանել՝ զի զոն վրիպակք ի թիւան՝ ի տպագրէն կամ ի գաղափարողէն սպրդեալք. ինքն զգիւղսն թուէ 12, զտունս հաւատացելոցն 1830,

ոգիս 14430, և հանդերձ ցրուելովքն՝ 19000: — Յետ կիսոյ դարու այլ ոմն ի Միաբանող եղբարց, Հայր Դոմինիկոս Նազարեան, մատոյց նոր վիճակագրութիւն, նշանակելով և զհասս միոյ միոյ պիւղիցն կամ վանաց, զչափ հարկին հաշուեալ վահանագրով (սկուտ) դրամով, զոր հատուցանէին պետութեան Պարսից: Թիւ բընակչացն կամ տանց յոյժ նուագեալ տեսանի ի ցուցակի սորա, այն զի և բազում ամօք յետ նորա գրողք՝ առաւելագոյն համարին, թէպէտ ազգ առնէ նոյն ինքն Նազարեանն, եթէ ի միում տան բազում ընտանիք բնակեն և ոչ մի միայն, որով հարկ է բազմաթիւ լինել անձանցն:

Վիճակագիր Միաբանողաց յամին 1601 .

Նախնական քաղաք	Գաւառ	Եկեղեցի	Տուրք	Հարկ-ընկալք	Տղարք	Տուրք մահմէտականաց
Նախնական քաղաք	—	Ս. Թովմաս	80			
Ապարաներ	Երնջակ	Ամենայն Սուրբք	500	5000?	250	20
Ապրակունիս	Ն.	Ս. Գէորգ	100	400	80	40
Գրունայ	Ն.	Վերափոխումն	70	350	20	40
Սալթաղ	Ն.	Ս. Գէորգ	120 <sup>1</sup>	800		
Խօշկաշէն	Ն.	Ս. Գեղարդն	130	1000		20
Միտցէն (Mettsen)	?	Ս. Աստուածածին	50	250		2
Գանձակ	Գողթն	Ս. Անդրէաս և Ս. Յակովբոս	70	350		20
Շահապունիս	Ճահուկ	Մնունդ Ս. Աստուածածնի	150	600		50
Ճահուկ	Ճահուկ	Ս. Յովնաննէս Մկրտիչ	50?	500		40
Գարագուշ	Ն.	Ս. Աստուածածին	50	150		1
Կէժուկ	Արտազ	Ս. Աստուածածին	60	160		
Արդախ ?	?	?	30	100		

Յամի 1654 ըստ Հ. Դոմինիկ. Նազարայ՝ էին .

Նախնական քաղաք	Տուրք	Ուրք	Հարք	Տուրք
Ապարաներ	150	1500	600	150
Ապրակունիս	30	220	70	20
Գրունայ	2	10	200	50
Սալթաղ	3	20		
Խօշկաշէն	60	700	100	20
Գանձակ	1	5		
Շահապունիս	35	250	50	16
Ճահուկ	100	1000	100	30
Գարագուշ	4	30		
Կէժուկ	9	50		

Իւրաքանչիւր գիւղից էին մէն մի վանք, կամ լաւ եւս ասել՝ ամենայն եկեղեցականք էին կրօնաւորք կարգին Միաբանողաց, բնակեալք առ եկեղեցեօք՝ որք միանգամայն վանք կոչին և զրին. և ի յետին ժամանակս յԺԼ դարու՝ եօթն վանք միայն յիշին յանուանէ: Ի վիճակագրութեան Ֆրիտոնի ի սկիզբն Ժէ դարու էին 100 միաբանք կրօնաւորք, յորս 57 քահանայք, այլքն դպիրք և եղբարք: Բայց և յամի 1671 ոմն ի լատին Դոմինի-

կեանց յաղերսագրի առ ժերակոյտն վենետկոյ, աւելի քան 14 վանորայս ասէ լինել յայնժամ ի Հայոց գաւառին (Նախնականի): Եւ յամի 1692 Պօղոս Մկրտիչ արքեպիսկոպոս՝ ասէր առ նոյն ժերակոյտ 12 վանորայս լինել ի գաւառի անդ: Յելս այնր դարու Հ. Բարդուղիմէոս Ս. Յակինթեան լատին՝ միայն եօթն վանս յիշէ յանուանէ և վանականս ի նոսին իբրեւ 40, ոգիս 3000. Երբեմն, ասէ, էին 10,000. այլ զի իբրեւ 600 տունս հաշուէ յայլեւայլ գեօղս, հարկ է թէ աւելի քան զ'3000 էին և բնակիչքն:

Ե. Յովհաննէս Քոնեցի հեղինակ Միաբանութեանն վախճանեցաւ ի սկիզբն 1348 ամի (6 յանուարի). ոչ բազմօք յառաջ (յՅ յունիս, 1347) վախճանեալ էր արդիւնական մատենագիրն և թարգմանիչ Արագոնացին Պետրոս, հաւատարիմ կացեալ մինչև ցվախճան ընդ Հայս: Յակոբայ վարդապետի յաջող թարգմանին և այլոց երկոտասանից նախընծայ Միաբանող վարդապետացն՝ անծանօթ է ինձ կատարածն և ուրոյն ինչ գործք: Սոցա մերձաժամանակ թուի Ֆրա Մամէշ Ղարաքանրեցի, որպէս կոչէ գինքն ի հակիրճ յիշատակարանի ուրեք (Դատաստանագրոց Արագոնացոյն):

Ի պակասել սոցա կամ ի նուագել, քանզի չեւ եւս էր քաջ ձեւակերպեալ կամ հաստատեալ կրօնի Միաբա-

1 Միայն ի գեղջև յայտիկ նշանակէ Հայրն Ազարիա Ֆրիտոն՝ զաս ի Միաբանողաց և 50 տունս էլ՝ միտցեական Հայոց:

նողացն, հարկ եղեւ յապահովել դարձեալ զնոյն. յոր սակս ժողովեալ ընտրեցին զերկուս հարազատս Ջահկեցիս, արս ուչիմս, զԹովմաս և զՍամուէլ, (զոր Ելեւթերոս կոչէ Դալանոս), և առաքեցին առ Քահանայապետն Իննովկենտիոս Ջ. և սա կոնդակաւ յամի 1386 (31 յանուարի) սահմանեաց զՄիարանող Եղբարսն լինել ընդ իշխանութեամբ կարգապետի Դոմինիկեանց, և ունել նոցա յերկրի իւրեանց կառավարիչ (Governator) վերատեսուչ համօրէն վանորէից տեղւոյն. զորոց և տեսուչս կամ վանահարս ինքեանց անկ էր ընտրել կամ փոխել, կամ յաւելուլ վանորայս, ամի ամի յաւուրս Պենտեկոստէից առնելով ժողով: Հաւանեցաւ ընդունել նոցա և վարել կանոնք Ս. Օգոստինոսի և կարգք Դոմինիկեանց, թոյլ տուեալ ըստ խնդրոյ նոցա՝ ուտել մըսեղէն (երիս աւուրս յեթնեկի), և տնտեսել զստացուածս իւրեանց, (քանզի ինքեանք իսկ էին և հովիւք ժողովրդեանն), և ընդունել երբեմն Այցելուս՝ զոր առա-

քեացէ ընդհանրական կարգապետն Դոմինիկեանց: Եւ վին կոնդակաւ՝ կառավարիչ կամ Քաւառահայր (Provinciale) կարգեաց զնոյն ինքն զՍամուէլ. իսկ զեղբայր նորա զԹովմաս՝ ձեռնադրեալ՝ հաստատեաց յեպիսկոպոս Եւսիմուանու, ընդ որոյ եկեղեցական գաւազանաւ փակէր զՄիարանողս կողմանց Երնջակայ, Ջահկոյ և Գողթան: Ի սոցունց սկզբնաւորեալ ողջոյն դարս շորս և մինչեւ ի սպառել կարգին՝ կացին մի ըստ միովէ գաւառահարք և եպիսկոպոսունք, յորս գոն ոմանք և լատինք ազգաւ, որոց գրեաթէ անընդհատ ժանօթ է յաջորդութիւն. իսկ առաջնորդացն ոչ անթերի, և ոչ է յայտ քանիսնութիւն ամաց կալոյ նոցին ի պաշտամանն: Արդ որչափ ինչ եհաս ինձ գտանել՝ կարգեցից աստէն, մինչ չեւ ճառեալ ըստ կարգի ժամանակաց զդէպս և զանցս իրաց նոցին. թողով տեղադրութեան միոյ միոյ գիւղորայիցդ ի վերոյ նշանակելոց զանձնիւր դէպո, որպէս արարաւ Երնջակայ գիւղիցն:

**Ն Ա Խ Ճ Ա Ի Ա Ն Գ Ա Ի Ա Ռ Մ Ի Ս Բ Ա Ն Ո Ղ Ա Ց**

**Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ո Ի Ն Ք**

- 1330 Եր. Բարդողիմէոս Բուրնիացի
- 1356 Թովմաս Ջահկեցի
- 1374 Գովհաննէս Դարիժեցի
- 1396 Գովհաննէս (յետոյ եպիսկոպոս Սուլտանիոյ)
- 1397 Փրանկիսկոս Դարիժեցի (անհրաման ընտրեալ)
- 1398 Ստեփան Պետրոսեան De Seghes, Միներ
- 1403 Գովհաննէս (Լսենց?) Lyons
- 14 .. Միխիմար + 1417
- 1419 Մարտինոս De Chiari
- 1431 Թադէոս
- 1433 Պետրոս Քանեցի
- 1438 Մատթէոս կամ Գովհաննէս Գովհանիկեան
- 1463 Գովհաննէս Սիմոնեան
- 1478 Բենեդիկտոս Ա
- 1494 Մկրտիչ Ա (?)
- 1498 Մկրտիչ Բ (?)
- 1503 Բենեդիկտոս Բ
- 1511 Գրիգոր որդի Ատուածատրոյ + 1538
- 1543 Բենեդիկտոս Գ + 1543
- 1546 Ստեփանոս Գաբործեան + 1559
- 1560 Նիկողայոս Ապարանեցի + 1598-9
- 1604 Ազարիա Տրիտոն + ի Հռովմ
- 1607 Մարկոս կամ Մատթէոս + յուղւոյ
- 1607 Մատթէոս Երազմոս (Հայ) + 1620
- 1631 - 7 Պող. Մարիա Զիտտադինոյ Բուրնիացի
- 1627 Օգոստինոս Բաջենց + 1653
- 1653 Գակոբ ընտրեալ ի Հայոց
- 1654 - 64 Պողոս Փիրոմալի
- 1668 - 74 Մատթէոս Գովհանիսեան
- 1674 - 83 Պարապութիւն աթոռոյ
- 1676 Թովմաս Թադումեան (ընտրեալ ի 27 ապր.)
- 1682 - 91 Սեբաստիանոս Քնապ (Knab)

- 1693 - 1703 Պողոս Մկրտիչ Աւանիկեան
- 1703 - 8 Ստեփանոս Շիրան
- 1709 Գովհան Վինջենց կաստելլի, Լուբարտացի
- 1709 - 33 Պետրոս Մարտիրոս Պարմացի
- 1723 - 33 Արկանցելոյ Ֆինի Խալապի ի Պարբիսայ
- 1732 - 66 Դոմինիկոս Մարիա Սալվինի Լոգիացի

**Գ Ա Ի Ա Ռ Ա Հ Ա Ր Ք**

- 1333 - 48 Գովհաննէս Գոնացի
- 1356 Սամուէլ առաջին Գաւառահայր
- 1399 Ղուկաս Շահապօնեցի
- 1415 Գովսէփ Շահապօնեցի
- 1423 - 43 Գովսէփ
- 1471 - 5 Մատամիա Քանացի
- 1549 Անդրէաս, աթոռակալ
- 1586 Պողոս
- 164.. Անտոն Լուսիտանիացի
- 165.. - 60 Գակոբ Բիտուսի ի Կէժկոյ.
- 1673 Գրիգոր Մործորեցի
- 167.. Անտոն Նազար
- 1676 Թովմաս Թադումեան
- 1692 - 1703 Ստեփանոս Շիրան
- 1703 - 7 Գակիմ Դաթեան
- 1709 Անցելոյ Սմոլինսքի, հայազէտ
- 1714 - 6 Պետրոս Շահապօնեցի կամ Ճահկեցի
- 1724 Բեռնարդին Տերտինանտ Պորկոմի Միլանցի
- 1729 - 37 Ալեքս Ալեքսանեան
- 1743 Պետրոս Ղօռան
- 175.. Թովմաս Իսավերտենց
- 1756 Եւսեբ. Տրանցոզինի
- 1763 - 9 Սերովբէ Բենդիլոյ
- 1773 Թովմաս Վեզգիոյ
- 1782 Բենեդիկտոս Ումիտ, սնդիկոս

Յետ Դովինիկոսի ոչ յիշի յատուկ եպիսկոպոս վիճակին, զի սպառեալ կամ ցրուեալ էին Միաբանողքն, այլ անուն Նախճաւանեան աթոռայ պահէր մինչեւ մերձ ի կէս մերոյ դարուս :

Նշան և կնիք Նախճաւանեան գաւառի Հայոց - Դովինիկեանց, որով վարէին ի պաշտօնական և հանդիսական գրուածք՝ էր այս, լատին գրութեամբ. SIGILLUM PROVINCLÆ NAXIVANENSIS IN ARMENIA MAIORI. այսինքն, ԿՆԻՔ ՆԱՅԻՋՆԱՎԱՆԵԱՆ ԳՅՈՒԱՐԻ Ի ՄԵՍ ՀԱՅՍ :



119. Կնիք Նախճաւանեան գաւառի Միաբանողաց .

Չ. Չեն յայտ գործք առաջնոց գաւառահարց վանորէիցն՝ սկսեալ ի Սամուէլէ մինչեւ յելս այնր առաջնոյ (ԺԴ) դարու, նոյնպէս և եպիսկոպոսացն Նախճաւանու, որոց առաջինն այն Թովմաս եղբայր Սամուէլի, Թարգմանող կայծականց գրոց Բեդայի, ասի ի ծովագնացութեանն ի Պոնտոս նաւաբեկութեամբ վախճանեալ, ոչ գիտեմ յորում ամի. և յաջորդացն եւս կարգ և ժամանակ աթոռակալութեան ոչ է աներկրայ. զի չիտթ էր ժամանակն իսկ գլխովին, յորում անցին անցք անշնորք հակառակութեան երկոցուն ծիսից Հայոց, պատմեալքն յԱպարանեցոյն Միսթարայ, և ի յիշատակողաց Որոտնեցոյն, Տաթեւացոյն և Սարգսի, զորս Մաղաքիս վարդապետ կաֆացի կարգէր վարժապետս իւրակողմանն, ոչ միայն բանիւ մաքառելով ընդ Միաբանողացն, այլ և ձեռնորդութեամբ քաղաքական իշխանաց կորզելով զվանորայս նոցին, մինչեւ, և թէ արժան իցէ հաւատալ Միսթարայ, վասն զմի եւեթ վանս ի բուռն ածելոյ՝ տուեալ էր կաշառայլազգեաց 120,000 դահեկան, որպէս ասէր պանծալովի ի սակս չիտթիցս եւս ոմանք ի Միաբանող եղբարցն, (որոց թիւ էր իբր 100 յամի 1373), երթային յիտալիա, մտանել ի վանորայս Դովինիկեանց և ոչ գիտելով լատին լեզու, նոր իմն չիտթութիւն լինէր և անդ յարեւմուտս և աստ ի գաւառին Հայոց. վասն որոյ Քահանայապետն Գրիգոր ԺԱ կոնդակաւ (6 մարտի, 1374) պատուիրեաց կարգապետին Դովինիկեանց՝ մի եւս ընդունել զոք ի նոցանէ, այլ եթէ գայցէ եւս ոք՝ դարձուցանել առ գաւառահայր նոցին ի Հայս, և օգնական լինել սմա խորհրդակցութեամբ և այցելութեամբ: Գրեաց (9 ապրիլի) և առ լատին Քարոզիչս որ ի Հայս, առաքելով անդր զՀ. Եղիա (Petis) փռանկ ազգաւ, երեսփոխան (վիգար) կարգապետին, նորին ձեռամբ առաջնորդել, և ի մահու նորա՝ ընտրել զայլ ոք տեղակալ: Այլ յաջորդ Գրիգորի՝ Ուրբանոս Զ լուեալ զչիտթսն և զհայաժանս

Միաբանողաց ի Հայս, թոյլ ետ (1381) կամեցողացն մըտանել ի կրօնս և ի վանս Դովինիկեանց, և կարգապետի սոցա ետ իշխանութիւն (3 ապրիլի), ըստ պատշաճի փոխել կամ հաստատել զգաւառահայր վանորէիցն Հայոց. և զի վախճանեալ էր ի Հայս Հ. Յովնան De Gallo, Քենիչ, ետ նմա և տեղակալի նորա իշխանութիւն՝ ընտրելոյ և կարգելոյ զայլ ոք, որում յանձն լիցի և վիճակն Վրաց: — Յայսմ ժամանակի յիշի յիտալիա Եղ. Օգոստինոս Աւետիք ոմն Միաբանող կարնեցի, ի Վենետիկ, որպէս և գրէ ինքնին ուրեք, արձակ և շափական բանիւք.

« Յամի ծննդեան Տեառն Յիսուսի  
Ռա և Յի և Չա թըւականի,  
Ես Օգոստինոս Արզրումցի  
Ըզրանքս զայս շարադրեցի »:

եւս. « Զնուստ Ծր. Օգոստինոս երբեմն Աւետիք կո- » յեալ ի կարգէ սուտ (այսպէս) եղբարցն Փրէշիքաթօ- » ռաց, յիշեցէք ի Տէրն Ե .

Ի վերջին ամս դարուն (ԺԴ) եկն ի Հոռով Հ. Ղուկաս Շահապօնեցի Գաւառահայր, խնդրել դարձեալ տնօրէնութիւն վանս պահոց, և ի կարգապետէն՝ զի ըստ երից երից ամաց առաքեսցէ Այցելու ի վանորայս իւրեանց. քանզի այլք ոմանք գլխաւոր եկեղեցականք կամ քարոզիչք ինքնիշխանաբար մխէին ի տեսչութիւն վանորէիցն և ի քննութիւն. վասն որոյ և Քահանայապետն Վոնիփակիոս Թ կոնդակաւ (1 յունիս, 1398) պատուիրեաց կարգապետին զի մի ոք յանգէտս նորա՝ ձեռնամուխ լիցի ի Միաբանողսն, այլ վայելիցսն սոքա ազատօրէն յամենայն շնորհս և արտօնութիւնս պարգեւեալս կարգին իւրեանց: Ի կոնդակի աստ ընդհանրական մեծաւոր կամ Առաջնորդ կոչէ զգլխաւորն նոցա (Prior Generalis), զոր նախորդք իւր և ինքն յայլում կոնդակի կառաւարի կոչէին (Gubernator). Եւ զի ամալ յառաջ կարգեալ եպիսկոպոս գաւառի նոցին զՅովնանեկս՝ փոխադրեալ էր յաթոռ Սուլտանիոյ, և փոխանակ նորա սահմանեալ զՓրանկիսկոս Դաշիթեցի Դովինիկեան, և սա մինչ չեւ ընկալեալ զկոնդակ հաստատութեանն ի Քահանայապետէն՝ ձեռնադրեալ էր և կայեալ զաթոռն, փոխանակ նորա կարգէ (26 օգոստ, 1398) զՍտեփանոս Պետրուսեան, de Sogheas, ի կարգէ Միտորից: Նոյն Քահանայապետ այլով եւս կոնդակաւ ի միւտում ամի (28 ապր. 1399) ծանուցանէ, զի ընդ իշխանութեամբ Գաւառահայրն Հայոց էին և ի կաֆա երեք վանք Միաբանողաց, (Ս, Յակոբ, Ս. Նիկողայոս, և Ս. Պետրոս - Պօղոս), ուր պատանէին նեղեալքն ի հարստահարութեանց ի Հայս, և գաւառահայրն զայր ի գաւառէ Նախճաւանի քննել զվաներն կաֆայի, և աստի ծագէին դժկամակութիւնք. վասն որոյ պատուիրէ կարգապետին Դովինիկեանց զի ինքն այնուհետեւ երթիցէ կամ ղտեղակալ իւր ամի ամի առաքեսցէ այցելու ի կաֆա, և զի և այցելուն մի կացցէ յերեսին անդ վանորայսն՝ ի ծանրութիւն նոցին, այլ յիւրեանց առանձինն վանս: Ի նմին աւուր այլով կոնդակաւ տայ իշխանութիւն ընտրելոյ 25 խոստովանահարս ի քահանայից իւրոց, որոց և առանձին կոնդակաւ շնորհէ իշխանութիւն արձակելոյ միանգամ զխոստովանողս ի վերապահեալ մեղաց: Ի սկիզբն ԺԵ դարու յա-

մի 1402 (յուլ. 26) նոյն քահանայապետ Վանիփակիոս կոնդակա կարգեաց յարքեպիսկոպոս Նախճաւանու ըզ-  
 Յովհաննէս Lycopis Ալաման՝ ի Պրուժ քաղաքէ, փոխա-  
 նակ Յովհաննու փոխադրելոյ ի Սուլտանիա, ոչ յիշելով  
 զնախակարգեալն յիւրմէ Ստեփանոս Պետրոսեան: —  
 Ի սմին ամի դարձաւ Ղուկաս Շահապօնեցի ի Հոովմայ  
 (ուր թուի երկրորդ անգամ եկեալ), բերելով ընդ իւր  
 ի Հայս, զատ ի կոնդակացն վերոյիշելոց, և բազում  
 սպասս եկեղեցոյ: Դարձեալ ի սմին ամի՝ աշխարհա-  
 սաստն Լէնկթիմուր ընկալեալ դեսպան զնախորդ արչ-  
 եպիսկոպոսն Նախճաւանու՝ զՅովհաննէս (յայնժամ ե-  
 պիսկոպոս Սուլտանիոյ), զնոյն և ինքն առաքեաց յիւր-  
 մէն դեսպան առ Քահանայապետն Հոովմայ և առ Թա-  
 զաւորս արեւմտեայց:

Չայսու ժամանակաւ (1410) Մխիթար Ապարանեցի  
 յսխուռն շահատակ Միաբանողաց՝ աւարտեաց զլիճո-  
 ղական մատեան իւր. մինչ ի նոյն ամս Հ. Յովսէփ Շա-  
 հապօնեցի, (որ թուի առաջնորդ կացեալ վանորէիցն, և  
 « գերասպարտի և գերասրաշ հայր մեր ըստ հոգւոյ » կոչե-  
 ցեալ ի ժամանակակցէ), Թարգմանէր զմասն մի Աս-  
 տուածարանութեան Ս. Թովմայի Ակուինացոյ. « և ոչ  
 » առեալ զաւարտն վասն վրդովման ժամանակին և  
 » խստութեան այլազգեացն, (թուի Լէնկթիմուրեան  
 » պատերազմաց), և մնացեալ թերատ բազում ամ, և  
 » յետոյ շնորհեաց մեղ ի խնդրոյ մեր ընդ զթերին ».  
 զոր յամի 1415 ընդօրինակէ Ֆր. Գրիգոր ոմն որդի Խո-  
 ցադեղի և Թանկիկայ, և եղբայր Բէկի, վայելուչ ծանօ-  
 թութեամբք, յորս յիշատակ առնէ Եղբարց, « Ֆր. ԼՕ.  
 » րէնց, Ֆր. Մարտիրոս, Ֆր. կոստանդ, Ֆր. Յոք, և  
 » այլ նորարողոյ մանկանցս որք կան »:

Յետ վերոյգրեալ Յովհաննու Պրուժեցոյ եկաց եպիս-  
 կոպոս Մխիթար, որոյ անուն յայտ առնէ և զազգն, այլ  
 ոչ յիշի գեօղն և ազգատոհմն և ոչ այլ ինչ. չհաւանիմ  
 թէ Ապարանեցին իցէ: Ի վախճանել սորա յամի 1417,  
 յետ իբր երկուց ամաց Մարտինոս de Chiari, որ թուի  
 ազգաւ իտալ, այլ առ Միաբանողան կրօնաւորեալ, քա-  
 հանայացեալ և ուսեալ հայերէն <sup>1</sup>, ի համանուն Քահա-  
 նայապետէն Մարտինոսէ Ե. յամի 1419 (9 հոկտեմբ.)  
 կարդեցաւ եպիսկոպոս գաւառին. ի կոնդակի հաստա-  
 տութեանն բազում գովութիւնք ընծային նախորդի նս-  
 րին՝ Բենեդիկտոսի: Եւ զի իբրեւ երկամեայ ժամանա-  
 կաւ պարապութիւն լեալ էր աթոռոյն և մարթ էր դար-  
 ձեալ լինել, վասն հեռաւորութեան երկրին, շնորհեաց  
 Միաբանողացն (այլով կոնդակաւ ի 21 հոկտ. 1419) իշ-  
 խանութիւն՝ ցամս երեսուն, ընտրել ինքնին զյաջորդ ե-  
 պիսկոպոս, և տալ ձեռնադրել եպիսկոպոսին կաֆա-  
 յի կամ այլոյ մերձաւոր եպիսկոպոսի, ընթերակայու-  
 թեամբ այլոց եւս երկուց՝ եթէ գտցին: Եւ միւսով եւս  
 կոնդակաւ (26 հոկտ.) վերահաստատեաց զամենայն  
 արտօնութիւնս շնորհեալս նոցա ի Վանիփակիոսէ Թ: —

1 Te, Ordinis Fratrum Prædicatorum Unitorum in il-  
 lis partibus nuncupatorum, ordinem ipsum expresse profes-  
 sillum et in sacerdotio constitutum... et Armeniæ  
 fidelibus qourum idioma bene intelligis et intelligibiliter  
 loqueris, և այլն. այսպէս գրի ի կոնդակին:

Սա ինքն Մարտինոս հաստատեաց և զյաջորդ Մարտի-  
 նոսի վախճանելոյ յետ սակաւ ամաց, զՊետրոս Քանացի,  
 յամի 1423 (13 հոկտ.) գրելով ի նմին աւուր ուրոյն ու-  
 րոյն առ Միաբանան վանականս և առ ժողովուրդն՝ զե-  
 պիսկոպոսէն, և պատուիրելով հնազանդել նմա. գրեաց  
 և առ եպիսկոպոսն Սուլտանիոյ (Յովհաննէս) իբրեւ առ  
 մետրապօլիտ՝ յանձնելով նմա զնորընծայ եպիսկոպոսն:  
 Յետ երկուց ամսոց (12 դեկտ.) առաքեաց առ Միաբա-  
 նողան, ըստ խնդրոյ նոցա՝ զպատճէն կոնդակին Վանի-  
 փակիոսի՝ որ վասն այցելութեան վանորէից նոցին ի  
 կարգապետէ Դովինիկեանց: Ի նմին աւուր գրեաց և  
 առ Յովսէփ վարդապետ նոցին <sup>2</sup> (Թերեւս վերոյգրեալ  
 Թարգմանիչն Ս. Թովմայի), շնորհելով իշխանութիւն  
 արձակելոյ զվերապաշտանն առ Պապն, ի գաւառի անդ  
 Նախճաւանու և ի Սուլտանիա, ցամս 20: Առ Յովսէփս  
 այս արժանաւոր վարդապետ՝ Թուի գրել նախապիշեալ՝  
 Ղուկաս, յետ 20 ամաց (1442) ի Միասալ գիրս. « Պա-  
 » տուական վարդապետ Ֆր. Յովսէփ, վարդապետ կար-  
 » գիս Միաբանողաց, ընկալ զսակաւ աշխատող և զկար-  
 » կատող գրոցս զՖր. Ղուկաս զանարժան Շահապօնե-  
 » ցիս, և յիշեալ զիս ի քո սուրբ աղօթսդ, և Աստուած  
 » յիշէ և զքո ննջեցեալսն ի յարքայութեանն երկնից,  
 » ամէն: Ի թուի Մարդեղութեան Տեառն Ռեխթիս: —  
 Դարձեալ ի նմին աւուր կոնդակաւ հաստատեաց զՅով-  
 հաննէս վարդապետ ի Միաբանողացն կարգէ <sup>3</sup> և զն-  
 տրեալն ի նոցուն՝ յաթոռ արքեպիսկոպոսութեան Սուլ-  
 տանիոյ՝ փոխանակ համանունան նորին վախճանելոյ, ու-  
 բում յաջորդեաց յետ երկուց ամաց (1425, դեկ. 19)  
 Թովմաս յԱպարանեցոյ, Թերեւս յիշեալն յամի 1415  
 Յովր՝ էր Մակուեցին, զոր նոյն Պապ՝ կոնդակաւ (յ՝ 13  
 մարտի 1424) կարգեաց յարքեպիսկոպոսութիւն Մա-  
 կուայ կամ Ս. Թադէի վանաց, մերժեալ անտի զՀէրո-  
 նիմոս ոմն անարժան այնր աստիճանի կամ ուխտա-  
 դրուժ: — Ի սկիզբն 1431 ամի պատրաստեալ էր նոյն  
 Քահանայապետ թուղթ առ եպիսկոպոսն Նախճաւանու,  
 և մահուն ի վերայ հասեալ, յաջորդ նորին Եւզենիոս Դ  
 առաքեաց, իւրովն եւս նոր կոնդակաւ, (ի 11 մարտ),  
 տալ Յովսէփայ Ապարանեցոյ գիտնոյ և քալ քարոզողի՝  
 զիտյր (biretum) և զայլ ձեւս քարոզչաց, (զի նա՝ զգա-  
 ւազանն միայն շատ համարէր, և ստգտեալ լինէր յս-  
 մանց), նոյնպէս և այլոց հմտից և փորձելոց յաստուածա-  
 բանական հրահանգս: — Յիշի յայտ ժամանակի և Յո-  
 վասափ Ապարանեցի ի կաֆա: — Ի սմին Եւզենիոսէ  
 Քահանայապետէ հաստատեցաւ յաթոռ Նախճաւանու  
 յամի 1438 Մատթէոս Աւենիկեան (Avenicensis),  
 մի ի գիտնագոյն բնիկ վարդապետաց Միաբանողաց,  
 որ յետ երկար ամաց (որպէս թուի) յուղեւորութեան  
 զոլով հիւանդացեալ վախճանեցաւ ի կիպրոս կղզւոյ,  
 և թաղեցաւ չքով մեծաւ: Յետ նորա յիշի Յովհաննէս  
 եպիսկոպոս ձեռնադրեալ ի Հոովմ առ Պիոսիւ Բ, որ

2 Dilecti filio Josepho Ordinis Fratrum Prædicatorum  
 Unitorum nuncupatorum, in Armenia Majori, Magistri.  
 3 Te Ordinis Fratrum Prædicatorum Unitorum nun-  
 cupatorum Professorem in Sacerdotio constitutum, և  
 այլն:



բազում նուիրօք և սպասուք և քաջայեր յորդորմամբ առաքեաց զնա (1462): Այս քահանայապետ յառաջելն յարեւելս զՊանդուխտ անուանեալ Քարողիչս (Peregrinantes) յամի 1464, ընդ նոցին տեսուքեամբ արկ զՄիաբանողսն: - Սակաւ ամօք յետոյ համանուն նորին Յովհաննէս Եմաւոնեան<sup>1</sup> յաջորդեաց յաթոն առ Պաւղոսի Բ քահանայապետաւ յամի 1463, և հովուեաց ցամն 1477: - Առ սովաւ յամի 1475, առաջնորդ գաւառահայրն Քանայի Հ. Մատաթիա էր ի Հոռովմ. և ընկալեալ թուղթս ընծայութեան առ համօրէն վանահարս Դովինիկեան կարգին, մեկնեցաւ անտի ընկերօքն, որք էին Հ. Գրիգոր կամ Գէորգ վարդապետ յԱմենասրբոց վանից Ապարաներոյ, և Հ. Լաւրինտ Յովհաննիսեան<sup>2</sup>: Յ'ազանել սոցա ի Գեներուս ի վանս Քարողիչս, հաշակաւոր հնասէր պատմին Աննիոս Վիտերբացի, վանահայր տեղւոյն, ասէ, ի սոցանէ ընկալեալ՝ զմնացորդս հին և ցանկայի պատմչաց, զոր և հրատարակեալ՝ անբաւ վիճարանութեանց եղև առիթ, ոմանց ընդունելով և ոմանց մերժելով. զարդիս յամենեցուն խոտեալ են իբրեւ մտացածին կարկատանք. այլ ո՞ իցէ հեղինակ խաբէութեանն, այս տակաւին ընդ վիճիւ է:

Չայսու ժամանակաւ միապետեալ Պարսից աշխարհի Ուզուն Հասան կամ Հասան Պէկ, զահ իւր տարածանէր յարեւելս և զհամբաւ մինչև յարեւմուտս, և տայր յուսացուցանել ոգորել ընդ զօրութեան Օսմանեանց՝ նորոգ նուաճողաց և բարձողաց զարեւելեան կայսրութիւն Յունաց. յորմէ խրախուսեալ Վենետաց՝ նեղելոց ի նոցանէ, առաքէին ստէպ դեսպանս առ Պարսիկն ի դաշնակցութիւն պատերազմի: Յայս սակս դէպ լինէր դեսպանացն անցանել ընդ գաւառ և ընդ գեօղս Միաբանողացն և տայ ծանօթս զնոցանէ. որոց առաջին Ամբրոսիոս Կոնտարինի յամի 1474 նախ իջևանեալ (յուլիս 1-2) ի Չահուզի առ Միաբանողսն, յ'2 օգոստոսի եկն յաւան մի Երնջակայ, զոր ոչ անուանէ, այլ յոյժ հաւանելի է Ապարաներն լինել, անցեալ ընդ գետն այլատարազ իմն նաւակաւ. « ի ձախմէ գետոյն՝ էին ասէ 11 » գեօղաւանք Հայոց մի առ միով, ամենեքին կաթողիկէք, » ունին իւրեանց եպիսկոպոս, և են հնազանդ Պապին. » ընդ բովանդակ աշխարհն Պարսից չիբ իբրեւ զայս եր. » կիր գեղեցիկ և ամենայի<sup>3</sup> »: ի միւսում ամի ի դարձի իւրում ի Գավրիթոյ դարձեալ եկն այսր (ի 28 յունիսի 1475) եկաց առ եպիսկոպոսին զաւուրս երիս<sup>4</sup>. էր ընդ նմա և Եղ. Լուդովիկոս ոմն Բողոնիացի Մինոր՝ Պատրիարք Անտիոքայ անուանեալ, դեսպան դքսին Բորգունեայ, առ որ և դառնայր ընծայիւք յՈւզուն Հասանայ:

1 Cavaliere ( պատմիչ ) նախ որիչ երկուս ցուցանէ և ապա մի միայն Յովհաննէս Սիւրենեան:

2 Գեներուսի զունցն կաթայի և պաշտօնեայք յ'18 յուլ. 1474 ամին ընծայական թղթով գրին զսոցանէ առ պաշտպանս դրամասեղանոյ Ս. Գէորգայի Գեներուս, զՄատաթիա կոչելով Generalis Ordinis Prædicatorum Armenus, զընկերսն Գէորգ և Եղ. Լաւրինտ, յոյժ զովութեամբ, զի երթային ի Հոռովմ վանս զզուանոց զոր կրէին ինքեանք և վանք իւրեանց Ս. Նիկողոս անուն: — Քահանայապետն կոնդակաւ հաստատեաց զԼաւրինտ առաջնորդ Ս. Պաղոս — Պետրոս եկեղեցւոյ ի կաթա:

Յայսմ նուագի ինն գեօղաւանս ասէ Միաբանողաց, յորոց առեալ պաշարս էանց ընդ գետն և գնաց ի Վրաց աշխարհ: Երկամաւ յետոյ (1477) եկն էանց ընդ գաւառս այս միւս եւս դեսպան հոշակագոյն, Յովսափատ Բարբարոյ, նոյնպէս նախ ի Չահուզի բերդ եկեալ (Cagri), զորով բազում գեօղք են ասէ Հայոց կաթողիկաց. զըլխաւորն կոչի Երնջակ (Alengia), և ունի 50 միանձունս որք կեան ըստ կանոնաց Ս. Բենեդիկտոսի, պատարագն ըստ մերս ծիսի, այլ իւրեանց լեզուաւ. յետ դարձին իմում, ասէ, ի Վենետիկ՝ մեռաւ վանահայրն, և եղբայր նորա եկեալ պաղատէր՝ զինքն (զՅովսափատ) միջնորդել ի ձեռն ժերակուտին առ սրբազան Քահանայապետն, վասն յաջորդելոյ զեղբայր իւր: Ոչ գաւառահայրն թուի՝ զորմէ ասէն, այլ եպիսկոպոսն, որ արդարեւ ի նմին ժամանակի վախճանեալ էր, զի զգաւառահայրն ինքեանք Միաբանողքն կացուցանէին:

Չեպիսկոպոսն Յովհաննէս յաջորդեաց Բենեդիկտոս Ա որ եկեաց ցամն 1492: — Յաջորդ նորա եղև Մկրտիչ ըստ ոմանց երկու համանունանք կացին մի ըստ միոյն<sup>5</sup>, այլ հաւանօրէն մի միայն է, ի նոցին հայագգի Միաբանողաց, յամէ 1494 ցամն 1501: Չսա յաջորդեաց Բենեդիկտոս Բ, և եկեաց ցամն 1510: — Առ սովաւ եկն ի վիճակ նորա վաճառական ոմն (անանուն) Վենետիցի, որ տայ մանրապատում ծանօթութիւնս զգործոց Շահ Իսմայէլի, և ինչ ինչ զՄիաբանողացս. զտէր Երնջակայ բերդին (Alangiachana), ասէ լինել քրիստոնեայ, և ի նուաճել ամենայն քաղաքաց ընդ իշխանութեամբ յաչին, սորա ժուժկալեալ զամս հինգ դիմադրութեամբ. այլ ի լսել զմահ Ալուանդ սուլտանի՝ հակաակորդի Իսմայէլի, զիջեալ ի հաչտութիւն և տուեալ ի ձեռս նորա գրեբդն և զգանձան՝ զոր յապահովեալ էին անդ Ուզուն Հասան և որդի նորա Եղաղու: Ի վիճակի անդ Երնջակայ ասէ գտանին իտալերէն մատենանք, յայտ առնելով զՄիաբանողացն. 18 գեօղս ասէ կաթողիկաց ընդ Երնջակաւ. պատրիարք կոչէ զարքեպիսկոպոսն, որ և ամի ամի, ասէ, առաքէ ի ձեռն երկուց նուիրակաց՝ խառնի՝ ընծայ առ Պապն, յորմէ առնու հաստատութիւն, և որ առաքեալ էր նմա միթր մի գեղեցիկ. և աղուարար իմն ասէ, զպաշտօնն կատարեն ի հայ լեզու, զի մոռացեալ են զիտալականն. և մինչ ինքն ի Գավրէթ էր, բերին առ նոսա իտալերէն քերականութիւն և զիրս աստեղաբաշխութեան: Յիչէ ի բերոց գեօղիցն զՈրդան կարմիր խոշոր: — Ի հանդարտել աշխարհին Պարսից ընդ իշխանութեամբ Իսմայէլի և յաջորդացն Սօֆեաց՝ յաճախեաց երթեակ Միաբանողացն յիտալիա:

Յետ մահուան Բենեդիկտոսի ընտրեցին Միաբանողքն

3 Con una barca d' una strana foggia . . . Da banda sinistra vi sono 11 casali di Armeni, uno appresso l' altro, tutti catholici, ed hanno il loro vescovo, e sono sotto il Papa. Et per tanto paese la Persia non ha il più bello, nè il più abbondante d' ogni cosa. — Ambrogio Conturini.

4 Arrivammo alli 9 casali d' Armeni Catholici, come habbiamo detto per avanti, dove fossimo ben visti et udimmo messa catholica: dimorammo quivi tre giorni, per formarci.

5 Ըստ Գաւառնոսի մի Մկրտիչ է կեցեալ ցամն 1510:

(1510) զԳրիգոր որդի Աստուածատրոյ, որ եկեալ ի Հռովմ (1511) և ոչ գտեալ անդ զՔահանայապետսն (Յուլիոս Բ) չոքաւ ի Բոլոնիա, և ըստ խնդրոյ Պապին ետ մանրապատում ծանօթս զվիճակէն իւրմէ (որ անծանօթ է մեզ) . դարձաւ ի Հռովմ, ձեռնադրեցաւ, և բազում սպասուք և թոշակաւ ճանապարհի դարձ արար յերկիր իւր, և հոլուեաց ցամն 1537: Աշխնակեն պատմիչք կարգին, զի Թարգմանաւ խօսէր սա ընդ Քահանայապետին, և ասէր, բաց յիւրոց ազգայնոց չլինել յայնժամ օտարազգեաց ի վիճակի իւրում. տեսողքն ուչի ուշով քննեալ զծէսս նորա և զընկերացն՝ համամանս գտանէին լատինականին՝ բաց ի լեզուէն: Ետ Գրիգորի Աստուածատրեան, ոմանց թուեցաւ կացեալ միւս եւս Գրիգոր, և մինչեւ ժամանեալ յաթոռն՝ վախճանեալ ի Կիպրոս. այլ ոմն ասէ ոչ ի գրոց այլ յաւանդութենէ լուեալ, զի յետ Գրիգորի եկաց Բենեդիկտոս. և յետ նորա միւս Բենեդիկտոս, որ ի դառնալն մեռաւ ի նաւի և թաղեցաւ ի Տրապոլիս. սորա յաջորդն (Ստեփանոս) հանդիպեալ ի դարձին՝ երարձ զմարմին նորա և տարաւ յերկիր իւր: Այլ հաւանութեան թուի մի միայն լինել Բենեդիկտոս որդի Փիրգատէի նախճաւանեցոյ, որ յետ երկուց ամաց մահուան նախորդին՝ ընտրեցաւ ի միարանիցն յամի 1540 (յ՝30 նոյեմբեր), որպէս և գրեն նոքա առ Քահանայապետն Պօղոս Գ. ստորագրողքն (ի լատին, զի չերեւի հայ բնագիրն) են Հ. Անդրէաս, աթոռակալ Զահկոյ և փոխանորդ գաւառահօր Հայոց,

- Հ. Ազարիա Վանահայր Շահապօնից
- Հ. Յովնաննէս Վանահ. Ապարաներոյ
- Հ. Յովնաննէս Վանահ. Խօչկաշինի
- Հ. Յովնաննէս Վանահ. Ապրակունեաց
- Հ. Զաքարիա Վանահ. Սայթաղայ
- Հ. Թովմաս Վանահ. Քունայ
- Հ. Պետրոս Գանձակայ.

Յախարհականաց ստորագրեն գեղլաւադքն (Priores Villarum),

- Պետրոս՝ Զահկոյ
- Պետրոս Յովնան՝ Շահապօնից
- Միրանշայ՝ Ապարաներոյ
- Սաֆար՝ Խօչկաշինի
- Խաչիկ (Accio կամ Accioch) Ապրակունեաց
- Պուտուխ՝ Քունայ
- Աղաբէկ՝ Սայթաղայ
- Սիլուան ? Գանձակայ.

Ի թղթի անդ ծանուցանեն և գտառապանս իւրեանց յայազգեաց, որք և զընտրեալն իւրեանց յեպիսկոպոսութիւն՝ կապեալ բանտարգել արարին ամիսս ինն, և հարկ եղեւ նոցա վաճառել զսկիհս և զխաչս անգամ՝ առ հայթայթել 300 ոսկի ի փրկանս և թափել զնա: Քահանայապետն տուեալ նմա բազում սպասս եկեղեցւոյ՝ յուղարկեաց. այլ նորա ոչ ժամանեալ ի հայրենիքն՝ որպէս վերագոյն ասացաւ, մեռաւ ի նաւելն: — Մինչեւ եկեալ յաջորդին յիտալիա, Քահանայապետն (Պօղոս, կոնդակաւ ի 27 փետր. 1544) պատուէր առաքեաց ամենայն վանորէից Գովինիկեանց ընդ որս

անցցեն այնուհետեւ եպիսկոպոսունք Նախճաւանու և ընկերք նոցա, մեծարանօք ընդունել և դարմանել ցորչափ կացցեն առ նոսա, և ի սահմանս տէրութեան իւրոյ չպահանջել ի նոցանէ մաքս կամ այլ ինչ, և ի հասանելն ի Հռովմ բնակեցցեն ի Ս. Մարիամ Միներուայ՝ ի մայրութանս Գովինիկեանց, և ծախք ճանապարհին՝ ի գալն և յերթն և ամենայն ոռճիկն վճարեցին ի գանձուց քահանայապետին, հանդերձ սպասուք և որ ինչ կարեւոր իցէ նոցա. և ամենայն եպիսկոպոսք՝ ի գալն ի Հռովմ՝ լինիցին ի դասու և ի պատուի նախակարգից Տան Քահանայապետին (Prælati Domestici), վայելելով զամենայն շնորհս պարգեւեալս այնր դասու եկեղեցականաց և զայս ամենայն, ասէ Քահանայապետն, ինքնաբերաբար սահմանեալ մշտնջենաւորապէս, և ոչ յայլմէ օւմեքէ աղերսեալ: Յիչէ եւս զի (որպէս ի վեր անդր տեսաւ) սովորութիւն էր Հայոց ութից վանահարց զլեւաւոր վանորէից և ութից իշխանաց նոցին զիւղից ընտրել զեպիսկոպոսն: Այսպիսի պատրաստ ընդունելութեամբ եւ հաս ընտրեալն՝ յաջորդ Բենեդիկտոսի՝ Ստեփանոս Գառնործեան յելս 1545 ամի. և զի ըստ արեւելեան աշխարհիկ տարազու զգեցեալ էր ինքն և իւրքն, զի մի խուեսցին ի ճանապարհին, ի մտանելն այնպէս առ նոյն Քահանայապետ (Պօղոս Գ), ասաց օտ. « Ահա մոզք » յարեւելից եկին » . և նոցա իմացեալ՝ իսկոյն յաւելին. « Քանզի տեսաք զաստղն նորա յարեւելս և եկաք երկիր » պազանել նմա » : Չեռնադրեցաւ նա ի 15 յանուարի 1556 ամի, և ըստ առաջնոցն և աւելի եւս շքով և սպասուք դարձաւ յերկիր իւր, (տարեալ ընդ իւր զմտորմին նախորդին իւրոյ թաղելոյ ի Տրիպոլիս) . իսկ ինքն վախճանեցաւ և թաղեցաւ յեկեղեցւոյ իւրում յամի 1559: Չսա յաջորդեաց բազմորդին և չարչարակիր և ամենայն մասամբ դրուատեալն և տեսլեամբն բարեձեւ և բարձր հասակաւ, Նիկողայոս Ապարանեցի, որ յերկտասարդական տիս իբր ամաց 33 կամ աւելի ընտրեալ, հոլուեաց ամս 40, բազում աշարջութեամբ, այլ և սասապանօք յայլադենից, որպէս և յիշեցաք ի տեղագրութեան Ապարաներոյ. բազում անգամ եկն յիտալիա, զի սահմանեալ էր ի Քահանայապետէն յամենայն ութ ամի գալ եպիսկոպոսաց առ ինքն. զառաջինն յամի 1560 ի ձեռնադրութիւն (ի 25 հոկտեմբ.) առ Գ Պիոսի. երկրորդ անգամ յամի 1568 առ Ե Պիոսի. և զի սա եղեալ էր յառաջն ի կարգէ Գովինիկեանց, բազում սիրով ընկալաւ զնա իբրեւ կարգակից, և առատատուր նուիրօք և արտօնութեամբք դարձոյց. բերեալ էր նորա ընդ իւր և զՀ. Զաքարիա Ժերունի Խօչկաշինեցի, որ մնաց յիտալիա, և յամի 1570 ընդ օրինակէր զժամագիրս կարգին իւրոյ ի Փլորենտիս. « Ապա ես էի, ասէ, տկար » մարմնով և վատ աչօք և տխուր օրտօք. . և ոչ ունի ընկեր համեմատելի, էի միայն » . յիչէ անդ զխոստովանահայր իւրեանց զՀ. Բենեարդոս, որ թէ չէր Հայ, հարկ է թէ հայագէտ էր, զի ինքեանք օակաւ ինչ գիտէին իտալերէն. սա վախճանեցաւ յԱնգլանտ. իսկ եպիսկոպոսն՝ ընդ օր վանս և անցանէր՝ սիրելի լինէր, վասն սրբասէր, ողորմած և միանգամայն զուարթ պարզունակ և ընտել բարուցն. զարմանային մանաւանդ կարգաւ

ւարձն արեւմտեայք՝ ընդ մկակական հմտութիւն նորա և իւրոցն. զի շրջելով երբեմն ի պարտիզի վանաց նոցին յՈրվիետոյ քաղաքի, հանեալ զկտրոց իւր սկսաւ յստել զորթա՝ յոյժ բարեքիկ, որպէս պասով ընդունողն զնա հայր վանացն. զի սովոր էին վանականքն Միաբանողք գործել զերկիր կամ դարմանել զայգիս իւրեանց, յետ կատարելոյ զաստուածային պաշտօնն, վասն աղքատութեան իւրեանց և ստէպ հարստահարութեան այլազգեաց, հայթայթել քրտամբը երեսաց զպարէնիկն և զսակ հարկին առ կեղեքողսն: Չատ ի վերոյիշեալ Չաքարայէ ունէր և այլ ուղեկիցս, զի ընդ սմա յիշին ի Փլորինտիա, իբր վկայք գնեցել նորա անդ Միսալ մի 14 Փլորինաց, Տէր Աբել և Յր. վարդան Գաղեցիք, Յովհաննէս Խօշկաչինեցի, որդի Խուրամի, Լորնցնիս Ապարանեցի, Մեսրոբ Զուղայեցի Փաշի որդի, Մուրատ Հասիլ Նախնուանեցի. — Յառաջում նուազի դարձին՝ Պիոս Գ (կոնդակաւ 23 յուլ. 1562) յանձն արոր նմա հաստատել զԱթի-Յեզդ ասորի արքեպիսկոպոս Գրիգորէի՝ ի պատրիարք Քաղէացւոց, և թողուլ առ նմա զամանա յիւրոցն՝ ի հրահանգիլ զհօտ նորա: Իսկ յայսմ նըւազի՝ Պիոս Ե յերկարեաց երկուս եւս ամա զպայման ժամանակի պարտեան եպիսկոպոսացն, փոխանակութեանորդ ամի գալ ի Ժու՝ սակայն Նիկողայոս մինչեւ լցեալ պայմանին՝ կանխեաց միւսանգամ գալ ի Հուովմ առ Գրիգոր ԺԳ. և յասել սորա՝ թէ վաղ եկիր, պատասխանեաց, Հուովմ հարեմիք իմ են: Հանեցաւ ընդ նա և Գրիգոր, և յոյնպէս բազում տրիւք արձակեաց: Ումա՞ք ասեն և յաւուրս Սեքստոսի Ե եկեալ նորա ի Հուովմ, այլ ստուգալոյն գրող ստէ վասն ծերութեանն և հարկի գործոց՝ փոխանակ իւր սուաքեալ զհամարարոյն իւր զաթոռակալն Հ. Ազարիա Յրիսոն: Յիշեցաք ըզկիրս նորա ի տեղագրութեան Ապարաներոյ, նախ յուրացելոյ միայ յամի 1579, և սպա (1586) ի թուրք հարստահարող կողմնակալէն Նախճաւանու, և յետ այնր յամի 1596 (յայլմէ փաշայէ, որ գրեալթ է ի դրունս մահու հասոյց զնա խոշտանգանօք, և զորտառուչ դէպս դատու պարտութեան վեցեցուն հարցն) և ազատութեան. և ի արդեամբք և տառապանօք և սիրով ոչ միայն իւրոյոցն այլ յուովից եւս այլոց, և նոցին իսկ այլաղենից, հասեալ ի վախճան խոստովանողական կենացն, խօսելով երկար յորդոր առ իւրսն, ինքնին էարկ զիւրեւ զպայիւումն քահանայապետակոնն, և ընդ երկինս նայելով՝ ննջեաց ի Տէր յերա ԺԶ դարու կամ ի սկիզբն ԺԷ: — Թէպէտ բազում աղէտք անցին ընդ վիճակ նորին ընդ երկար ամա հովուութեանն, այլ և առաւել հոշակեցաւ և ծանօթացաւ յարեւմուտս, և առ նովա իսկ յամի 1583 դասեցաւ ուխտ Միաբանողացն հաւասարապէս ի թիւս կրօնաւորական գաւառաց Գովինիկեանց. և յամի 1630 տաւաւ գաւառահօր նոցին իրաւունք քուէի կամ վճռոյ յընդհանրական ժողովս կարգին Քարոզչաց:

Հոգեկիր նորին և շարչարակից աթոռակալ Ազարիա Յրիսոն ընտրեալ ի յաջորդութիւն աթոռոյն յետ բազում

տառապանաց և զրկանաց, անկեալ ընդ պարտուք վասն փրկանացն, մեկնեալ յամսեան սեպտեմբերի 1601 ամի, և անցեալ ընդ հարուային Հայս՝ ի Բերիա, անտի նաւեալ ի Կիպրոս, ի Զակիւնթոս, ի Վենետիկ, ի 15 օդոսու. 1602 ամին եմուտ ի Հուովմ, յետ կրելոյ ոչ սակաւ վիշտս և յուղւոյ, ի ծովու և ի ցամաքի, ուր և թաքուցանելով զկարգ իւր, մերթ դարմանէր զգրաստս կարաւանին, մերթ իբրեւ բեռնակիր վարեալ լինէր ի գործ: Պատմեաց զամենայն անցս իրացս. այլովք հանդերձ, և ետ գրով ծանօթութիւն զվանորէից և զգիւղորայից թեմին, որպէս ի վեր անդր նշանակեցաք. զոր մտաղիւր հուաքեալ գիտնական Գովինիկեանն Հ. Գրաշիմա եյեղ յիտալ լեզու, անուանելով զգիրսն Պատմութիւն քրիստոնէութեան Հայոց և վիճակի Գովինիկեան Հայոց<sup>1</sup>. յորում պատմէ և զվկայական կատարած օմանց ի նոցանէ յայն ամա, զՀ. Պողոսի, զՀ. Մատթէի Խօշկաչինեցւոյ և զՀ. Ռափայէլի Զահկեցւոյ, զորո յիշեցաք յանձնիւր տեղիս դիպացն: Իբրեւ զնահատակ կենդանի ընկալաւ զնա քահանայապետն Կղեմէս Ը. և ետ ձեռնադրել յիւրում մատրան, յամի 1604 (յ 9 մայիսի) ձեռամբ Ալկոյլ ծիրանաւորի, որ, որպէս այլ կարդինալքն՝ յոյժ մեծարեցին զնա և սէր բազում ցուցին, շինեալք ընդ քաղաքավարութիւն նորին, որպէս և ամենայն ականատեսք, մանաւանդ ազնուատոհմն Ալտապրանտիեի կարդինալ, որ Պաշտպան Հայոց կարգեալ էր ի Քահանայապետէն, և նորին հրամանաւ յիւրում պալատան ի 4 յուլիոի սյնր տարւոյ՝ ետ նմա զՊաշտպան արքեպիսկոպոսական: Ի վաւերական օրինակի միում վկայականի տրից այսր Պաշտպան, որ կայ ի ձեռս մեր, գրեալ է յայնժամ ոմն ի կռանն. « Այս է Պոյն Ռաշիմի, որ արքեպիսկոպոսի ուրար է, որ Հայոց հովապէտն լուսապայս ծառ և պատուական կարդինալ Սան Ճոնճի Ալտոպրանտին սուրբ Փափին քորոն որդին՝ առեալ ի սրբոց » առաքելոց գերեզմանէն ետուր Տէր Ազարիայ արքեպիսկոպոսի անարատ Նախճաւանու հովիւի. ի թմնութիւն ի Հուովմ սուրբ քաղաք ու – Բազում շահ սգօրի և լուսաւորութիւն ժողովրդեան ակն ունելի էր անշուշտ յայսպիսոյ խոհական և հոգեշնան անձնէ ի հովուութեան իւրում. այլ վերին կամք այլ ազգ սնօրինեցին. զի տարեկան ժամանակիք արգելեալ մնաց նա յարեւմուտս, կամ վասն ուղեւորութեանն ի Սպանիա, և կամ յաւետ վասն քաղաքական վրդովմանց երկրին Հայոց, յընդգիւմամարտութեան Օսմանեանց և Պարսից առ Շահ Աբասաւ, որ ընդ այլ գաւառս՝ վարեաց և զբնակիչս Երզնշակայ գաղթել ի Պարսկաստան, այլ սպա եթող զնոսա միայն դառնալ յետս՝ յեղծեալ և յստնակոխեալ հայրենիս իւրեանց. որ, ըստ Քարանոսի « խանգարեալ էր » յաղապս ժանդից, սրածութեան, գողոց և հարամկաց » կողպատութեան և մարախոյ », յամա (1604-5). և յետ դարձին ի Սպանիոյ՝ հանգեաւ ի Տէր ամաց գովով 45, ի քաղաքամայրն Հուովմ, յ 9 յանուարի, 1607, և թաղեցաւ յեկեղեցւոյ Հայոց ի Ս. Մարիամ Եգիպտացի, ի

1 Breve descrizione dello stato della Christianità, e della Religione di S. Domenico nella Provincia d'Ar-

menia. Per il Rev. P. Domenico Gravina di Napoli, Lettore di Sac. Theologia, etc. etc. Roma, MDCV.

տապանի զոր պատրաստեալ էր վասն իւր եղբայր նորա Նիկողայոս, որ և ի ստորեւ երկար լատին արձանագրի գրէ հակիրճ և հայերէն. « Տէր Ազարիա Ֆրիտունա » առքեպիսկոպոս Նախճիվանու ի Մեծ Հայաստան »:

F. AZARIÆ FRIDONIO ARMENO  
Ordinis Prædicatorum  
Qui præsens a Clemente VIII. Pont. Max.  
Creatus Archiepiscopus Naxivanensis.  
VII Id. Maij. MDCIV.  
Cum inde mox ex Hisp. rediisset, hic  
Obiit VII. Id. Januarii, anno ætatis suæ  
XLV. solutis. MDCVII.  
Nicolaus Fridonius fratri carissimo  
Quo loco is vivens sibi sepulcrum  
Delegit.  
F.

Նոյն հրաւէր մահու արագ արագ եհաս և յաջորդի նո-  
րա Մարկոսի ի նմին իսկ ամի (1607), մինչ յետ ձեռ-  
նադրութեանն չլիջր յուխտ սրբութեանց, և թուի յա-  
ռաջագոյն իսկ գտեալ ի Հոռովմ, թերեւս և ընդ Ազարիայ  
ուղեկցեալ և եկեալ. որոյ միւս եւս ուղեկիցն ի Սպա-  
նիա՝ հաւանորէն է Հ. Անդրէաս, որ յամի 1608 յիշի գոյ-  
անդ (ի Սպանիա), ընդ նմին և յաշխարհականաց Անտոն  
Կէճկացի և այլք<sup>1</sup>. որպէս և յետ սակաւ ամաց գնաց  
անդր եպիսկոպոսն Օգոստինոս Բաշենց Ապարանցի,  
նախ յուխտ ապա ի խնդիր դրամոյ ի պէտս գաւառին:  
Հուեալ Միաբանողաց զմահ Ազարիայ՝ ընտրեալ էին  
գլխատմէնս ոմն և առաջէին ի ձեռնադրութիւն. այլ  
մինչև հասեալ՝ լուաւ զի Քահանայապետն արդէն  
ընտրեալ և տուեալ էր ձեռնադրել (22 հոկտ. 1607)  
զայլ ոմն Մատթէոս որդի Միրանշայի, որ էր յիտալիա-  
զսա Երազմոս մականուանեն Դոմինիկեան գրիչք պատ-  
մութեան կարգին իւրեանց. զմիւսոյն՝ ասէ Գալանոս,  
մեռեալ ի ճանապարհի: Սորա ուղեկից էին Հ. Պետրոս  
Միրանշայ և Եղ. Նիկողայոս, և վերոյիշեալն Օգոստ-  
Քաջնց, յայնժամ երիտասարդ դպիր, որ գրէ զդէպս ու-  
ղեւորութեան իւրեանց՝ ընդ Պարսկաստան և Կարբանդ,  
ուստի նաւեցին յԱժտէրիան. անդ ասէ « գտաք Տէր  
» Դադիոսն վախճանաց, գնացինք գերեզմանն օրհնե-  
» ցինք »: Անտի ընդ ճանապարհ անապատ՝ յարեւելս  
Կազրիականին գնան ի Ռուսաստան. ի Կայրոջս վախճա-  
նի Ե. Նիկողայոսն, մինչ Օգոստինոս գնացեալ էր ի  
Մոսկուս. ուստի դարձ արարեալ յառաջ խաղացին ի  
Լեհաստան, և անդ ի Գրազովիա մնաց Օգոստինոս ամ  
և կէս. իսկ Հ. Մատթէոս և Պետրոս մեկնեցան գնալ  
ի Հոռովմ. և թերեւս յայսմ ճանապարհի վախճանեալ է  
Հ. Մատթէոս իրր յամի 1608 կամ 1609. զի Օգոստինոս  
(յետ ամի և կիսոյ ելեալ և անցեալ ընդ Գերմանիա, նա-  
ւեալ ի Լիզպոնա, յամեալ ի Սպանիա, և ի Պարցելլո-  
նայ նաւեալ ի Ճենովա, ուստի եկեալ է ի Հոռովմ յամի  
1610), չիշէ ինչ բնաւ զվարդապետն իւր Հ. Մատթէոս:  
Շրջեալ ապա ինքն յուխտ և այլուր, զառնայ ի Լեհս ի  
Գրազովիա, զի ուսեալ էր զլեզու աշխարհին. և կրօնա-  
ւորեալ առ Դոմինիկեանս ամս երիս, վերադառնայ ի

Հոռովմ յամի 1614, և ձեռնադրի քահանայ (9 հոկտ.)  
խնդրէ ի Քահանայապետէն (որպէս թուի թելադրու-  
թեամբ արքեպիսկոպոսի իւրոյ Մատթէոսի) թուղթ առ  
Կարգապետն Դոմինիկեանց, և երթեալ առ նա ի Բոլո-  
նիա, թախանձէ առաքել զոք ի բանիրուն վանականաց  
իւրոց ի Հայս, ի խնամս և ի հրահանգ Միաբանիցն<sup>2</sup>:  
Ընտրի առ այս գիտունն և մաքրակենցազն Հ. Պողոս  
Մարիա Չիտտադիինի Բաշենցի, իրրեւ ընդհանրա-  
կան երեսփոխան, զոր և հանդերձ այլովք միանձամբք  
ի կարգէ Կորմեզականաց և Օգոստինեանց, և նովմբ  
եպիսկոպոսաւն Մատթէիւ և Հ. Օգոստինեաւ, ընծայա-  
կան թղթովք առաքեաց Քահանայապետն Պողոս Ե  
(1615) յարեւելս ի քարոզութիւն և ի դեսպանութիւն  
առ Շահ Աբաս արջայ Պարսից: Հասեալ առ սա յեր-  
կոյս այնր ամի, հանդիպեցան ի Յաւրոպայա քաղաքի  
(13 դեկտ.) մեծ արեաց նա յոյժ զնուիրակ Քահանայա-  
պետին հրաւիրելով երիցս ի ճաշ, և շնորհեաց նմա զխն-  
դիրսն որ վասն գաւառի Միաբանողացն Հայոց. այսինքն  
փոխանակ Պարսկի՝ կարգել Հայ վերատեսուչ. մի եւս  
առնել անդ մանկածողով. յետս դարձուցանել զամենայն  
սպասա եկեղեցեաց, զոր և թափեաց գնով, և այլս այս-  
պիսիս. և հրովարտակաւ նորին Շահի եկեալ յԵրմճակ  
և ի Զահուկ, չրջեցաւ յամենայն վանորայս և յայլ եւս  
կողմանս Հայոց իրրեւ ամս երկուս կամ երիս (1616-18),  
և բազում ուղղութիւնս արար թիրութեանց և մնտի  
կարծեաց սպրդելոց ի տգիտութենէ կամ ի սովորութե-  
նէ, յորս և էր ինչ անմեղադրելի՝ այլ օտար ի ծիսից  
Լատինաց, որ չար թուեցաւ նմա. բայց յիրս իրս ստգտու-  
նելի ցուցանէ զեպիսկոպոս ժամանակին: Զքննութիւն  
և զտեսութիւն իւր ի Հայս և ի Վիրս՝ հրատարակեաց  
յեսա ամաց ինչ (1621) յիտալիա, համառօտ բանիւ: Շա-  
րադրեաց և զբքոյկս երկուս ի պէտս Հայոց գաւառին, ըզ-  
ֆրիտունեակակն վարդապետորդիւն ըստ Բելլարմինոսի, և  
զՕգոստ Խորհրդոյ Ս. Հաղորդորդեան և զՎարդարան աղօ-  
թից, զորոյ կիրառութիւն եմոյժ առ նոսա: — Յետ  
կատարելոյ զքննութիւնն և զհրահանգս, ուղեւորեցաւ  
Չիտտադիինի ի Կոստանթնուպոլիս և զհրահանգս, ուղեւորեցաւ  
Լուսիսանացոց, հաւաքել դրամ ի պէտս գաւառին  
Հայոց, ուր՝ վասն ստէպ հարստահարութեանց՝ պակա-  
սէին յեկեղեցիս ուրեք և վայելուչ անօթք սրբոյ խոր-  
հրդոյն: Յայս սակս, ոչ գիտեմ, ընդ նմին եթէ առան-  
ձինն յամի 1617 երթեալ էր և Հ. Օգոստինոս Բաշենց  
յԵւրոպա, և չրջեալ ի բազում աշխարհս և պետութիւնս,  
ուստի դարձաւ յամի 1619. և ի 23 հոկտեմբերի յանդի-  
ման եղեալ Շահին ի Սպահան, մատոյց նմա զթուղթս  
Պապին, զթաղաւորաց Փռանկաց և Սպանիոյ և զդեօ-  
պանի նորա Շէրլէյի անգղիացոյ՝ որ ի Սպանիա, և  
պատկերս ինչ, զոր մեծազգի հաւատաւոր մի վեղարա-  
կիր փռանկ՝ առաքէր առ նա, և բերանացի պատգամաւ  
նորին խնդրէր զնիզակակցութիւն Շահին ընդ արեւմը-  
տեայց ընդդէմ Թուրքաց. որում առ ժամս վեր ի վերոյ  
պատասխանի արարեալ նորա՝ յանձնեաց տալ թարգմա-  
նել զթուղթն. որոց իմաստ էր աղերս առ Շահն ի

1 Դիւանաբարոց վէճերու ժանուցանն զպատմիկ:  
2 Աստ սպառի ինքնագիր պատմութիւն Օգոստ. Բաշենց:

պաշտպանութիւն համադասանից իւրեանց Միաբանո-  
զացն. զի թէպէտ և յառաջ իսկ քան զՇահ Արաս թա-  
գաւորք Պարսից առեալ էին ընդ սեփական խնամով իւ-  
րեանց զգեօղեանն, ուղղակի պահանջելով զհարկն, վասն  
որոյ և խառն կոչէին գեօղքն, սակայն հարկահանքն չա-  
րաչար կեղեքէին:

Ի վախճանել Մատթէի արքեպիսկոպոսի յամի 1630,  
վանահարքն ընտրեցին փոխանակ նորա զյաջողակն Հ.  
Օգոստինոս Բաշենց. այլ Գահանայապետն Պօղոս Ե կան-  
խառ իսկ պատրաստեալ էր յաջորդ զվերոյ գրեալ այց-  
ելուն և զհայագէտն Հ. Պօղոս Չիտտադիսի, թէպէտ և  
իրագրել լեալ սորա՝ խոյս առեալ մտեալ էր յուխտ խըս-  
տակրօն կարողութեանց. յորմէ հանեալ ետ ձեռնադրել  
արքեպիսկոպոս յանուն Միւրայ քաղաքի, իրաւամբ յա-  
ջորդութեան Նախճաւանի, ուր և առաքեացն. իսկ ի  
գալ Օգոստինոսի ի Հռովմ, Գրիգոր ԺԵ Պապ զսա ետ  
ձեռնադրել փոխանակ Պօղոսի յանուն Միւրայ արքե-  
պիսկոպոս, և յաջորդ նմին ի Նախճաւան. որպէս և ե-  
ղև իսկ յետ փոխման նորա ի կենաց յամի 1627: Քա-  
հանայապետս այս (Գրիգոր ԺԵ) հաճեցաւ ըստ ինդրոյ  
կարգապետին Դոմինիկեանց հաստատել վարժարան ի  
գաւառին Նախճաւանու. յոր սակս և ընտրեցաւ (1633)  
ի մայրախանից Միներուայ գիտնական ոմն ի նոցանէ  
Հ. Գրիգոր՝ Ուրախեոյ մականուանեալ, որ ի նաւեին ան-  
կաւ ի ձեռս յելուզակաց. յետոյ այլք փորձեցին զգործն  
և ոչ յաջողեցան. մինչև ի Հ. Յովն. Դոմինիկոս Նա-  
զարեան ի բնիկ Միաբանողաց անտի, որ ուղղեաց ըզ-  
վարժարանն, և ընկալաւ ի Հաւատաստիւն ժողովոյ  
800 վահանակ դրամ: Ընդ Գրիգորի կամ յետ նորա  
առաքէր Գահանայապետն և այլ Հարս ի Քարոզչաց ան-  
տի՝ ուսուցիչս (Professores), ի Հայս որպէս ծանուցա-  
նէ կանդակաւն, ի 4 փերբուարի 1623 ամի, շնորհելով  
նոցա եկեղեցական ներողութիւնս:

Ի հասանել լրոյ մահուան Չիտտադիսեայ ի Հռովմ,  
գնաց անդր Բաշենցն՝ առնուլ զհաստատութիւն յաջոր-  
դութեան. և թուի յամեալ անդ բովանդակ ամս, (զի  
սչ համարիմ երթեալ և կրկին դարձեալ), քանզի յամի  
1629 գտաւ անդ ընդ գլխաւորս կարգին Դոմինիկեանց  
յընդհանրական ժողովի նոցա. և ի միւսում ամի (1630)  
դարձեալ անդ գրէր վկայութիւն (իրբեւ հմուտ լեզուա-  
գէտ) վասն Պարգաբանութեան ֆրիստոնեակաւն փարդա-  
պետութեան անուանեալ գրոց թարգմանելոյ ի Հ. Պե-  
տրոս Պօղոս կրօնաւոր հայ քահանայէ. « Ես Ֆրա  
» Օգոստինոս Բաշենց ի կարգէն Քարոզողաց Սրբոյն  
» Դոմինիկոսի, յաշխարհէն Հայոց, յերկրէն Նախիջեաւ  
» նայ, ի գաւառէն Երբնջակայ, ի գիւղաւորաղաքէն Ապա-  
» րաներ, զի եկի ի մայրաքաղաքն Հռովմ վասն հնա-  
» զանդութեան գերադրական աթուոյն սրբոց գլխաւոր  
» Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և յաջորդի նորին  
» Ը Ուրբանոսի Փափին, ի թվին ծննդեան Յիսուսի  
» Քրիստոսի Տեառն մերոյ ՌՈՂ. գրեցի զվկայութիւնս  
» ձեռամբ իմով. Մայիսի Գ »: Չնոյն վկայութիւն գրէ  
և իտալերէն, համառօտիւ, և ստորագրէ. Fra Agosti-

no Bagezzi: Ընդ Օգոստինոսի գորով և ոմն ի միաբա-  
նիցն գրէր յայլ ինչ գիրս. « Ես Ֆրա Մատաթէս ի  
» յերկրէն Նախիջեաւանայ ի զիւղէն Ապարաներոյ, եկի  
» ի մեծն Հռովմ, թվին ՌՈՂ, Ապրիլ ամսին ԺԳ...  
» Խոստովանահայր գառայ? <sup>1</sup> Հայոց տան: Դաւանեցաւ  
» իմ ձեռամբս. Տէր Զարարիայ Շուռուկեցի սուրբ  
» հաւատն ուղղափառ հռոմայական, թվին ՌՈՂԱ...  
» Ես Տէր Մատաթէս Ապարանեցի ի կարգէն Սրբոյն  
» Դոմինիկոսի »: — Երկամաւ յառաջ (1628, յունիս 24)  
եկեալ էր ի Հռովմ և Հ. Ֆր. Մովսէս Խօշկաշինեցի:

Հմուտութիւն Օգոստինոսի Բաշենց, ծանօթութիւնն ընդ  
արեւմտեայց և երկարատեւ եպիսկոպոսութիւն (1627-  
1653) ոչ սակաւ զարգացուցին զվիճակ իւր բազում մա-  
սամբք, հայթայթանալ բարեկեցութեան և մտաւոր հրա-  
հանդաց. որոց սատար մեծ եղև վարժարանն հաստա-  
տեալ յԱպարաներ և վարժիչքն հմուտք ուսաքեալք յի-  
տալիոյ. յորս գլխաւորք են երկրորդն հայագէտ և հայա-  
գիր Հարքն, միանգամայն և ծանօթացուցիչք վիճակի  
գաւառին Հայոց, Պիրոմալի Պօղոս (յետոյ եպիսկո-  
պոս տեղւոյն) ի կարգէ Քարոզչաց, և կլեմէս Գալա-  
նոս ի Թէադօրեան ուխտէ: Առաջինն ծննդեամբ ի Սի-  
դեանոյ քաղաքէ կալարրիոյ, նախ եկն յԱպարաներ յամի  
1633 յաւուր տօնի ծաղկազարդին, և եգիտ անդ 300  
տունս կաթողիկաց. և մեկնեցաւ փութով ի Նախճաւան,  
ուր յերկարեաց կալ տարեկան ժամանակաւ. և շրջեալ  
ի կողմանս Այրարատայ, յԵրեւան և յԷջմիածին յայլ-  
եալ նուագս, եգիտ ընդունելութիւն, որպէս ասէ, և ի  
կաթողիկոսէն, որ էր յայնժամ խոհականն Փիլիպպոս  
Առ սա իսկ գրեաց Ուրբանոս Ը յամի 1640 (14 յուլ.) ի  
ձեռն սորին Պիրոմալեայ ի կրկնում ուղեւորութեանն,  
առաքելով ընդ նմին և զտպագրեալ պատճէն կոնդակի  
Միաբանութեան Հայոց ի Փլորնտեան ժողովի. ի նմին  
աւուր գրելով և թուղթ ընծայութեան Պիրոմալեայ առ  
Թագաւորն Լեհաց, ուր նախ պատուէր տուեալ էր սմա  
երթալ և խորհրդակցելով ընդ Թագաւորին՝ ջանալ խա-  
ղաղել զիրողվեալ գաղթականն Հայոց յաշխարհածանօթ  
գործոյ Նիկոլի եպիսկոպոսի նոցին: Թուի տարեւոր ժա-  
մանակաւ յամեալ և աստ. և յամի 1642 երեւի վերըս-  
տին ի Հայս, յետ գրելոյ Փիլիպպոսի (ի 20 յանուա-  
րի 1642) երկար թուղթ գրուուն գնացից Նիկոլի, և շրջէ  
ինչ բնաւ զթուղթ Պապին և զՊիրոմալի, առ որ դարձ-  
ցի բանս ընդ հուպս — Երկրորդն, Գալանոս, հանդերձ  
այլովք՝ յամի 1636 առաքեցաւ ի կողմանս Վրաց և Ե-  
գերաց ի քարոզութիւն, յոր և եկաց զամս 13, այլ ա-  
ռաւել յաճախեալ առ Հայս, զորոց ուսաւ և զլեզու, և  
գրէր իսկ համարձակ. և անշուշտ յայսմ ժամանակի հե-  
տախուզեալ ծանօթացաւ ծագման և անցից Միաբանո-  
ղացն, և գրեաց ոճով զնոցանէ և զկարգ եպիսկոպոսաց  
նոցին ցաւուրս իւր. այլ, որպէս երեւի, է ինչ որ ըստ  
բերանացի աւանդութեան, զի գոն և սխալք ժամանա-  
կի և անուանց, թերեւս և ի թարգմանութիւնսն: Սա  
եւս գնաց ի Լեհս առ Հայս. և յետ ամաց դարձ արարեալ  
ի Հռովմ, հրատարակեաց այլեւայլ գիրս կրօնականս և

<sup>1</sup> Թերեւս գոթոյ իբրև գոթոյ կամ գրուեցայ, այսինքն կարգեցայ խոստովանակոյր:



իմաստասիրականա՝ ի պէտս Հայոց, ի նոցին բարբառ և ի լատին: յորս գլխաւոր է մեծահատոր մատեան Պատմութեան Միաբանութեան եկեղեցեաց Հոովմայ և Հայոց-յորում ոչ սակաւ պատուական գիտելիք են և նշխարք գրուածոց նախնեաց, մանաւանդ որ ի ժամանակս Ռուբինեանց, հանդերձ ծայրայեղ ինչ տեսութեամբ կամ երանդեամբ, յսր շատք ի նմանեացն առաքելոց քարոզչաց զթեցին, այլ և թերուղիղ ինչ բանք:

Ի նմին ժամանակի յամի 1637, առաքեաց Քահանայապետն և զերրորդ օմն բանիրուն այր, Թովմաս Վիտալ անուն ի Մոնղէ - Ռէպէ քաղաքէ Իտալիոյ, ուսուցիչ վարժարանի Երնջակայ գաւառի, տարով նմա գիր ընծայութեան (յ' 13 հոկտ.) առ Շահն, և աղաչելով մարդասիրել առ դաւանակիցս իւր Միաբանողս՝ յ' 300 ամաց հետէ հաստատեալս անդ, և առ ամենայն քրիստոնեայս պետութեան իւրոյ: Սորա առանձինն գործք չեն ինձ ծանօթ. այլ այս յայտ է, զի վարժարանն բարեք զարգանայր, վասն որոյ յընդհանուր ժողովի իւրեանց, յամի 1644, սահմանեցին Դոմինիկեանք, զուշեղազոյնսն ի մանկուսոյն վարժելոյ ի Հայս՝ տալ մերել ի Հոովմ, և աստ յաւարտ ուսմանց և կրթութեան հասուցեալ՝ վերադարձուցանել ի հայրենիս նոցին, և անդ տալ ձեռնադրել և կարգել ի հոգ վարժատանն և ժողովրդեան. զի մի քահանայանստով յիտալիա՝ փափաքիցեն մնալ անդ, թերեւս պիտանի օտարաց լինելով այլ ոչ իւրեանց ազգայնոց. և այսպէս առնէին յայնմ հետէ և առ յապա: Եւ տեսեալ զի օր ըստ օրէ անէր և բարեկարգէր Քաւառն Հայոց՝ ինամով արթուն եպիսկոպոսին Բալենց և վարդապետաց վարժարանին, յամի 1650 սահմանեցին, որպէս նշանակեցաք ի վեր անդր, ամենեւին հաւասար այլոց գաւառաց կարգի իւրեանց համարել և զՀայոցն, և զգաւառահայրն ընդունել ընդ վճռատուս յընդհանրական ժողովս իւրեանց<sup>1</sup>: Իսկ ի նախայիշեալ ժողովի անդ (1644) սահմանեալ էին և զայս, զի ընծայեալքն ի կրօնաւորութիւն՝ ընկալեալ լիցին և մարգեացին նախ ի վանս Զահկոյ, և ապա անցեալ յԱպարաներ՝ անդ զգեցցին զգեմ կարգին, և յետ փորձոյ տարւոյն առաքեացին ի Հոովմ, կրթիլ ի լեզուս և յիմաստասիրական և յաստուածարանական գիտութիւնս, և տացի նոցա թոշակ ճանապարհի վասն զարձին՝ ամի ամի 65 վահանակ (ի գումարէն եղելոյ ի շահ առ

գլխին Պարմայ): — Մի յեկաւորաց անտի պատանեաց յաւարտումն ուսմանց ի Հոովմ՝ համարի Դոմինիկոս ի Կէթուկ գեղէ Նախճաւանի, եկեալ անդ յամի 1642, որպէս և ինքնին յիշատակագրէ ի Միասալի իւրեանց: Սորա հորեղբայր էր Հ. Յակոբ Յիսուսի մականուանեալն, որ գրէր ի նոյն գիրս, եթէ, « Եկինք ի Հոովմ արտաքեալ » Երնջակայ գաւառէն, անօրէն իշխանէն Պարսից, որ կոչի իմամ Ղուլի սուլթան. որդի Մաղսուտ սուլթանին Քանկաուլու: » Այս Հ. Յակոբ, (որ և ի կէս ամսեանն յունիսի 1643 ամին ի Հոովմ էր), թուի ի նըմին իսկ ամի ընդ Ղ. Անտոնի Ապրակուսեցոյ երթեալ ի Սպանիա, և ինդրեալ ի թագաւորէն (Փիլիպպոս Գ) հրամանագիր հաւաքելոյ տուրս ողորմութեան վասն պարտոց և շինութեան գաւառին Հայոց. և թագաւորին հարցեալ ի Հոովմ և ստուգեալ, ոչ միայն թոյլ ետ այլ և ձրի նաւարկութեամբ առաքեաց յԱրեւմտեան Հնդկիս, ուր և յամեցին երկար ամս (իրբեւ ութ կամ տասն), և բերեալ գումար մեծ (որպէս թուի աւելի քան 25,000 դուկատ ժամանակին), կիսովն հասուցին զպարտս վանորէիցն<sup>2</sup>, և նորոգեցին զհնացեալսն և զաւերեալսն. և զկէս եղին ի շահ, ի վենետիկ, (1652) ի Դրամանոց՝ (Zocca), վասն պիտոյից վարժարանին: Մերակոյտն չճռեաց զառաջինն տալ շահ 7% յետոյ զիջոյ ի 8 և ապա 3%: զոր և տայր ի ինդրել նոցին կամ գործակալացն, և յետ բարձման իսկ վանորէից նոցին ի Հայս, և ի գաղթելն ի Զմիւռնիա: — Վասն պիտոյից վանորէից Նախճաւանու գաւառին և պաշտպանութեան, եկեալ էր և Հ. Մատաթիա Մուրախա? (Moraca) վանահայր Քոնայ յԵրրոպա, և էր ի Պարթզ յամի 1646 (յամսեանն ապրիլի), որպէս յիշեցաւ (յէլ 376):

Միւս եւս նշանաւոր գիտութեամբ վարդապետ Միաբանողացն ծաղկեալ յաւուրս Բալենց եպիսկոպոսի և յետոյ յերրորդ քառորդի Ժէ գարու, էր Գրիգոր Ծործորեցի, քաջ հմուտ լատինականին, թարգմանիչ գրոց, առեալ զաստիճան ընդհանուր վարդապետութեան կարգին, և յետոյ և գաւառահայր կարգեալ. սա հրամանաւ հաւաստափիւռ ժողովոյն ջննեալ ետ գրով վկայութիւն վասն ուղղութեան իմաստից գրոց Միաբանութեան Քալանոսի (17 մայիսի 1648), գրով « ի Հոովմ, ի վանս » Սրբոյն Կղէմէնտի »: որպէս տեսանի տպագրեալ ի կուսն Ա հասորոյ գրոցն, և ստորագրէ, « Տէր Գրիգոր

1 Այսպէս վճռելով ժողովոյն. Concedimus, quod P. Provincialis Armeniæ possit habere vocem in Capitulis Generalibus cum ejus Provincia tam Conuentuum quam Fratrum numero incipiat florere.

2 Պետիկ սուէ 16000 Իֆերիւլ ծախեալ ի հասուցումն պարտուցի, նոյնչափ եւս եղեալ ի Դրամանոցն վենետիկոյ: Մինչեւ ջամս 150 (1782) ըստ պայմանեալ ժամանակի վաղ կամ անազան առնուին զշահ գումարին և զայլոց եւս մի ըստ միովէ եղելոց յայլ և այլ գումարանոցս Հասարակապետութեանն. այլ յետ 20 ամաց (1672) զիջոյց պետութիւնն զտոկոսին ի 5%: և յետ երկուց ամաց 3%: զի այսպէս առնէր և այլոց: Զառաջինն Հ. Յակոբ հաւաքող դրամոցն, կամ այլ ոք յիւրոցն առնայր զշահն. այլ իրբեւ Պիրոմալի յաշորդեաց յեպիսկոպոսութիւն, ինդրէր ի ծերակուսէն ինքեան տալ (1658), ասելով Հարցն անհրաման հաւաքեալ, և ամի ամի ընկալեալ 500: գուկատ ծախել ըստ կամի:

Ընդդէմ որոյ բողոքեաց Հ. Յակոբ (1660), զի չէր եղիսկոպոսին Իրաւունք ի վերայ նիւթական ընչից Միաբանութեանն. այն զի մինչ ինքն երբ և աւանդեաց զգումարն, Պիրոմալի ոչ միայն եւ պիտոկոս չէր, այլ և գերի տնկեալ կայր ի ձեռս Թուրքաց: Վճռուեաց ձերակոյտն (14 օգոստ.) տալ նմա զխափանեալ շահն, և յայնմ հետէ ի վեց ամսոյ ի վեց ամիս: Եւ զի չէր մարթ միւս գառնել Միաբանողաց ի վենետիկ, զմի ի Դոմինիկեանց քաղաքին, և ապա մշտնջենաւորապէս զլանահայր նոցին կարգեցին զործակալ, և վկայագրով իւրեանց վանաւորցն և իրազապետին Դոմինիկեանց՝ ընդունէին ի ձեռն նորս, ոչ միայն զտոկոսին՝ այլ ըստ պիտոյից և փոխ, կամ մասն ի գումարէն կանէին, և զայտասիկ կամ փոխանակագրով կամ ծրարիւ առաքելին սովորաբար ի Զմիւռնիա. և անտի հասուցանէին ի Հայս: — Յայտեալ գառս զիւրեանց վենետիկոյ պահին մուրհակը գումարիցս և սովորեաց, և թղթեան վանաւորց և զործակալաց նոցին վնասըրոցս:

« Մործորեցի ի կարգէն Քարոզողաց, հայկական սեռէ » :  
 Յամի 1686 վերստին յերկրեաց սա զհին թարգմանու-  
 թիւն յամագրոց կարգին իւրոյ, յաւելմամբ նորոց կա-  
 նոնաց (տօնից, և այլն) . որպէս յիշեն գովութեամբ՝ աս-  
 տուածարան վարդապետ կոչելով զնա՝ տպագրողք մա-  
 տենին յամի 1714 : Ամս բազումս կացեալ է նորա յարեւ-  
 մուտս, և ի բազում կողմանս . յամին 1673 (սեպտեմբ.)  
 էր ի վենետիկ<sup>1</sup>, և ինդրէր զտոկոստիս դրամազրկոյ վա-  
 նորէից գաւառին . ի միւսում ամի 1673, յԱպարաներ  
 թարգմանէր զվարս Սրբոց կարգին Գովմիտիկանց, որ-  
 պէս գրէ յաւարտ վարուց Ս . Լուդովիկի Բերդրանդի .  
 « Փութով ի կիր արկայ և աւուրս հինգ կատարեցի ի  
 » մէջ բազմադիմի զբաղմանց և արգելմանց՝ որ յարեան  
 » ի վերայ իմ : Արդ թարգմանեցաւ ի թուին ՌՈՂԳ,  
 » յունվարի Ե . Յր . Գրիգոր Մործորեցի յետին պաշտօ-  
 » նեայ, Տ . թարգման Տ . ի գիւղաքաղաք Ապարաներ,  
 » ի վանս Ամենարոց » : Յետ երկուց ամաց չափարա-  
 » նութեամբ գրէ ի Հռովմ (յաւարտ վարուց Ս . Վարս  
 դուհեայ (Ռոզայ) .

« Թարգմանեալ ի հայ բարբառ՝  
 Չեռամբ փծնոյս մեղսամակարդ  
 Գրիգոր Մործորոյ սերեալ,  
 ի յընտանեաց վրտարանդեալ,  
 Բազում ամօք յաշխարհ չրջեալ .  
 Հուսկ յետին ի Հռովմ եկեալ .  
 Եւ զվարս զայս սիրով տեսեալ,  
 Բոլոր սրտին ըղձակեցեալ,  
 ի բուն լեզու արտարեցեալ  
 Առ ծննդական ձօն պարգեւեալ .  
 Ի թիւն ՌՈՂԵ, զեկտ . Ի Ե վերջ արարեալ » :

Թուի և այլ ևս գրաւոր վաստակօ ունել սորա որք շին  
 մեզ ծանուցեալք . որպէս և ոչ գրուածք եպիսկոպոսին  
 Բաղնց, բաց ի հայագիր պատմութենէ առաջին կե-  
 նաց իւրոց . յիշի և ի տեղեկութեանն զոր ի սկզբան ե-  
 պիսկոպոսութեան իւրոյ ետ ի Հռովմ առ սրբազան  
 Քահանայապետն, և համառօտ գրուած ինչ զխորհրդոյ  
 Ապաշխարութեան, զոր՝ յիշողն ասէ պիտանի և խոստո-  
 վանողաց և խոստովանահարց : Կնքեաց զբազմարդիւն  
 կեանսն յամի 1653 : Յետ 20 ամաց Հ . Անտոն Նա-  
 զար քեռորդի նորա գտեալ ի Բարիզ զինքնագիր պատ-  
 մութիւն վարուց նորա, յաւելու . « Յիշատակն օրհնու-  
 » թեամբ եղիցի, զի անպատմելի է բարեբարութիւն  
 » սորա վասն վանորէից և ժողովրդեան մերոյ » : — Առ  
 սովաւ Հ . Հռոտ (P. Rhodes) Երուսաղեմ եկն ի Նախ-  
 ճաւան, յանձնել եպիսկոպոսին զպատանի մի Չինացի  
 մկրտեալ, զի հնարեացի առաքել ի Հռովմ, քանզի զան-  
 գիտէր ինքն յաչէ Թուրքաց . և եպիսկոպոսին մեծա-  
 րեալ զնա տարաւ ի մօտակայ վանսն, ուր էին 22 միան-

ձունք բարեբարոյք, և ուսուցեալ պատանւոյն զհայ լե-  
 զու, յետ վեցից ամաց՝ ի ձեռն ոմանց ի Հարց իւրոց հա-  
 սոյց անվտանգ ի Զմիւռնիա, ուստի առաքեցաւ ի  
 Հռովմ<sup>2</sup> :

Ի նմին ամի մահուան Օգոստինոսի դարձ առնէր Պիրո-  
 մալի ի Հայոց յիտալիա, և ի նաւարկութեանն գե-  
 րեալ ի հինից տարեալ արգելաւ ի Տունիս, և իրրեւ ա-  
 զատեալ եկն ի Հռովմ, հասեալ էր լուր մահու Բա-  
 լեցւոյն . վասն որոյ Քահանայապետն իրրեւ գերախաւ-  
 ւոր վասն 22 ամաց առաքելութեանցն յարեւելս, և բա-  
 զում գրուածոց յօգուտ նոցին քրիստոնէից, անուանեաց  
 զնա յարքեպիսկոպոսութիւն Նախճաւանի, յամի 1684,  
 մինչ Միաբանողքն ընտրեալ էին անդ ի միջի իւրեանց  
 զՀ . Յակովբ . իրրեւ ամս ինն եկաց Պիրոմալի յաթոռ  
 եպիսկոպոսութեան Քաւառին Հայոց . և թէպէտ լի էր  
 ողմտութեամբ և անարատ վարուք, այլ առաւելագանց  
 եռանդե մբ և պահանջմամբ (որպէս է գուշակել ի վե-  
 րոյգրեալ դիպաց տոկոսեաց գումարին գանձելայ ի վե-  
 նետիկ), վրդովեցաւ խաղաղութիւն տեղոյն՝ յոր վայե-  
 լէին յաւուրս նախորդին . « Մինչ զի, ըստ գրելոյ Հ .  
 » Անտոնի Նազարեան, կարգաւորք և աշխարհականք  
 » ընդդէմ եպիսկոպոսին, և եպիսկոպոսն ընդդէմ նորա  
 » անձին՝ ամբաստանութիւն գրեցին առ Սուրբ հայրա-  
 » պետն . և նա տեսեալ որ այսքան խռովութիւնս լինի,  
 » առաքէ քննիչս զի իմացի ստոյգն, Տէր Անտոն Թա-  
 » նիֆի գեներալն : Յորժամ սոյ հասանի անդ՝ կամենայ  
 » հաշտեցնել, այլ ոչ կարասցի . սայ զամենայն ի գիր  
 » (հարկանէ) զոր ինչ անցանի . ընդ արքեպիսկոպոսին  
 » դառնան ի Հռովմ . իսկ հասանելն նոցա ի Հռովմ, Ժո-  
 » ճովքն դատի որ այլ ոչ դարձցին երկրպետն, այլ մնա-  
 » ցին ի տեղիս իւրեանց » : Յայնժամ (1664) Քահա-  
 նայապետն Աղեքսանդր Է անուանեաց զՊիրոմալի ե-  
 պիսկոպոս Պիսինիանոյ քաղաքի Նէպալոյոյ ուր և վախ-  
 ճանեցաւ յետ ամաց երեց (28 դեկտ . 1667) : Բազում  
 ինչ պատմի զմանէ գովութեամբ և սքանչելախառն, այլ  
 և երկրայական, շփոթելով զգործս նորա ընդ Քալանո-  
 սին, մանաւանդ զբուն միաբանութեան Կիրակոսի պատ-  
 րիարքի Կ . Պօլի ընդ եկեղեցւոյն Հռովմայ<sup>3</sup> : Աներկ-  
 բայ են գրուածք նորա ի հայ, ի լատին և ի պարսիկ  
 լեզու . յորոց մի է և տպագրեալն հայերէն ( ի Հռովմ,  
 1674), « Յաղագս ձընարտոքեան հաւատոյն քրիստոնէակա-  
 » նի առ Շահ Ապպաս (Բ) արքայ Պարսից » . աղաւաղ հա-  
 յարանութեամբ . — Յաղագս երկուց քնոքեանց Քրիս-  
 տոսի, ընդդէմ Սիւսեանի վարդապետի, ընծայեալ առ  
 Գէորդ արքեպիսկոպոս Լիպարեայ . յորոյ ի Յառաջար-  
 նին յիշէ, զի գրեալ էր այլեւայլ ճառս կամ զբընդիս զկրօ-  
 նական խնդրոց, զմին առ Տէր Ստեփանոս, զմիւս առ  
 Տէր Ներսէս, թարգմանութիւնս թղթոց Ս . Լեւոնի և

1 Ուր և յանդորրաբն մուրհակի ուրից ստորագրէ . Io Fra Gregorio Zuorzorense Armeno... della nostra Provincia, և այլն :

2 Aussitôt que ce bon et vertueux Archevêque sut mon arrivée, il n'attendit pas que je l'allasse voir en son logis; il s'en vint au mien avec des témoignages d'une très grande charité: il me pria d'aller avec lui dans un

monastère voisin des frères de Saint Dominique, où il y a vingt-deux religieux de très-bonne vie. — P. Rhodes, Voyages P. 419.

3 Գալանոս, Ա . 128 . հրատարակէ և զթուղթ Պարպերիոյ կարգեալի (31 մայիս, 1642) առ ինքն ի խնդակցութիւն վասն միաբանութեան Պատրիարքին (Կիրակոսի) ի ձեռն նորա ընդ ընդհանրական եկեղեցւոյ :

Կիրոզի և Պատմաբան Ժողովոյն Բաղկեցողնի. և ի լեզուականին՝ ընդարձակ Բառագիրս Հայ — շատին, իբր 35,000 բուռից, որ անտիպ մնայ ի մատենադարանի Հաւատաստիւն ժողովոյն. — Քերականոցիս հայերէն, Բառագիրս պարսկերէն, և աշխատարան պարսիկ-լատին: Չեռն արկ ի Թարգմանել ի լատինէ ի հայ և զՍ. Գիրս, և ուղղել գեկամուտ կարծեցեալ բանս ի Թարգմանութեան գործոց Հարց ի գիրս Հայոց: Չայցանէ և զառաջին առաքելութենէ նորա ի Հայս գրէ մանրապատում եղբայր նորա Բովհան միանձն Մինոր յատուածարանական գիրս ինչ իւր, (Directorium Theologicum).

Յաւուրս եպիսկոպոսութեան Պիրոմալեայ յիշի ի Միարանոզաց Հ. Թադէոս, յամի 1657, որ գրէ խանգար լեզուաւ զանձնէ զգիտելիսս. « Ես Տրա Դաթէոս » քահանայս յազգաւ Հայ և յերկրէն Նախնիւնայ ի » գիւղն Եհրունեցի և ի կարգէն Քարոզողաց, եկի » այս մայրաքաղաքս (Հոռով), Չ ամիս նստեցայ. այս » միսալիս օրինակովն մէկ միսալ գրեցի. յետոյ ելայ » այս տեղէս դէպ Ըսպանիա գնացի. ԹՎ. ՌՈՄԷ. յո. » գոստոս ամիս Չ »: Ի նոյն ամս (1659) Բուլիէ (Pouillet) ուղեւոր փռանկ յերթալն ի Դավրէժ ազաւ առ Միարանոզն, որք Փռանկք կոչին, ասէ, և պատարագն լատինարէն առանց հասկանալոյ. փոխանակ ասելոյ, Թէ լատին ծիտով պատարագն հայերէն, զոր ինքն ոչ հասկանայր:

Առ սովաւ և յամի 1661 առաքեցաւ յարեւելս ի Հաւատաստիւն ժողովոյ և ի կարգաւորէն Դոմինիկեանց Հ. Սեդրեստրոս Բենսիզի (Bendis), որ ի նաւելն ի Լիվոնոյէ գերեցաւ ի հինից Տունիսացոց (8 նոյնմբ). և ստեալ փրկանս ի միւտում ամի, ուղեւորեցաւ ուր դէմ եղեալն էր, և զրեաց զգործոց իւրոց առ առաքողն, որ մեզ անծանօթ մնայ:

Աղեքսանդր Է Քահանայապետ խնդրեաց դարձեալ ի Եռնիէս յամի 1664, (որպէս Թուի ի ձեռն վերոյիշեալ քննչի գործոց Պիրոմալեայ), շնեղել զՄիարանոզն ծանրութեամբ հարկաց. և դարձեալ սահմանեցաւ ուղղակի յարքունիս վճարել նոցա զսակն տարեկան (9000 իրա Փռանկաց): Այլ փոխանակ դիւրութեան (խորհրդածէ Եարտէն ուղեւոր), առաւել վնասէր նոցա այս. քանզի զչարեալ կուսակալաց Նախնաւանի՝ չարաչար կեղեքէին զգեօղեանն: Յետ մեկնելոյ Պիրոմալեայ ի Նախնաւանայ աթոռոյն, Միարանոզն ընտրեցին զխոհական և զառաքինակրօն գաւառահայր իւրեանց Մատթէոս Բովանիսեցի (Avanicensis), և առաքեցին ի Հոռով, փորձելով եթէ իցէ մարթ նմա յընտրութեանն հաստատիլ. եկեալ նորա ի քաղաքն մեծ, յուղելով զգիւնան մայրավանից կարգին իւրոյ՝ եզիտ ըզպատճէն կոնդակի առաջնոց քահանայապետաց, վասն ընտրութեան եպիսկոպոսի գաւառին՝ յուխտէ նորին եկեղեցոյ և յաշխարհականաց, և խնդրեաց զի յուղեցի և քննեցի և ի գիւնան Սրբազան Ժողովոյն, և ըստ զրեւոյն կատարեցի. և ինքն եթող և գնաց ի Պարիզ

(1667) Ժտել ի Թագաւորէն (Լուդովիկ. ԺԴ) Թուղթ առ Եռնի Պարսից վասն պաշտպանութեան գիւղորէից իւրեանց. և ընկալեալ զոր խնդրէրն՝ դարձ արար ի Հոռով, ուր և անհակառակ ըստ հին արտունութեան կոնդակին գտելոյ և ստուգելոյ, ձեռնադրեցաւ յարքեպիսկոպոսութիւն Նախնաւանի, ի 14 մայիսի 1668 ամին: Ընկալաւ ի Քահանայապետէն (Կղեմեայ Թ) զատ յընծայից և սպասուց, իբրեւ դեսպան՝ Թուղթ ընծայութեան առ Եռնի, և մեկնեցաւ փութով, յետ տալոյ տեղեկութիւն զվիճակէ գաւառին իւրոյ: Էառ ընդ իւր անդ զճարտար և քաջուս երիտասարդն Պետրոս (երբեմն Մանուկ) Պետիկ, հայրենեօք ի Քիլիսէ, որդի Մուրատայ, որդւոյ Պետիկի՝, որ ուսանէր յՈւրբանեան վարժարանի, և քաջ հմուտ գոյով լատին բարբառոյ գրեաց յետոյ (1678), մինչ ի սպասու կայր կայսեր Քերմանիոյ, նշանաւոր մատեն մի ի լատին լեզու անուանեալ Չիլ-Միւսար, կամ զիւրաց Պարսից, յորում գրէ երկարորէն և զՆախնաւան գաւառէս, և զգործոց եպիսկոպոսիս Մատթէի: Ընդ սմա անցեալ Մատթէի ընդ Տիրենցիա, և ընկալեալ ի մեծէ դքսէն Թուղթ ընծայութեան առ Եռնի, նոյնպէս և ի վիճակի՝ ի Եւրակուտէն, (յորմէ և վասն ծախուց ճանապարհի ընկալաւ 158 դուկատ 'ի 11 օգոստ. 1668, և զեռամեայ հասըս դրամագլխոյն, 12,000 դուկատից), գնեալ եւս պէսպէս սպասս, վարդարանս և նկարեալ պատկերս, մինչչեւ մեկնեալ գրեաց աստի (15 յուլիոսի), Թուղթ իտալերէն առ կարդիմալն, որում յանձն էին իրք արեւելեայց, խնդրելով զի ի լինել ընդհանրական ժողովոյ կարգին Դոմինիկեանց ի Հոռով, ընտրեցի Սահմանիչ (Definitor) և ընտրիչ մի յօտար գաւառէ, որ վաղվաղակի ազդ արասցէ 'ի Հայս, և Միարանքն առաքեցեն երկուս յիւրեանց ի ժողովն, ծանուցանել զպէտու գաւառի իւրեանց. Չայս Թուղթ կնքեալ յանձնեաց գործակալի իւրեանց (Չեչեստիճոյ Նեկրի կոչեցելոյ ի Հարց Դոմինիկեանց մեծի վանաց Ս. Յովհան-Պօղոսի ի վեներակի), զի ի դէպ ժամու առաքեցէ առ կարդիմալն: Առ որ գրեաց և 'ի Լիվոնոյ (19 հոկտ.), ուստի մեկնեալ ի 26 ամսոյն, նաւել կամելով ի Չմիւսիա, մրիկ մեծ առ Ստրոմբուլեա ցրուեաց զնաւատորմն (8 նաւուց), և զիւրն՝ յորում կային չորք ի Միարանից իւրոց, վարեաց յափունս Նէապոլոյ. ուր և ելին, յ12 նոյնմբ. ի Սուրբ Պետրոս վանս կարդին իւրեանց. զայս եւս գրով ծանոյց նմին կարդիմալի: Եւ յետ այսպիսեաց երկար դեգերմանց և չորեքամեայ պանդխտութեանն յայլեայլ կողմանս արեւմտից, ի խնդիր նպաստից վասն գաւառին իւրոյ, (Թէպէտ ոչ շատ ինչ եզիտ, ըստ ասելոյ իւրոյ առ ծերակոյտն վեներակոյ), հասեալ յաթոռ իւր Սպարաներ (1669) ձեռնադրեաց ի քահանայ զաղողակն Հ. Անտոն Նազար Սպարակունեցի. ապա ընդ Պետիկայ և ընդ այլոց գնացեալ ի Սպահան՝ մատոյց առ Եռնի զԹղթեանն Պապին, զԹագաւորին Փրոնականց և զերկոցուն դքսիցն. որ սմեծաւ պատուով ընկալաւ (ասէ Նազարեանն) և կատարեաց զխնդրե-

1 Սա ի ծառայութեան գոյով Օսմանեան դրան, առ նախնեմու ոմանց զլիառեցաւ առ Սուլտան իւրաւանմա (1639-49):

» ին, և (գրեաց) պատասխանն ամենեցունց զորս ու-  
 » նէր . . . և այս պատասխանիքս յանցնեաց մեզ . քանզի  
 » թագաւորն Պարսից այսպէս կամեցաւ, զի ինքն, այս  
 » ինքն մեր արքեպիսկոպոսն տեղն մնացէ, և մեզ ա-  
 » ռաքեացէ առ ի հասուցանել զպատասխանին իշխա-  
 » նացն քրիստոնէից . և վասն այս պատճառիս զմեզ (զիս)  
 » որ էաք ընդ ինքեան ի դուռն թագաւորին, և զՏէր  
 » Ազարիայն Ճառկեցի Յովհաննիսեան, ի միտսին  
 » յղեաց աստի յԵւրոպայ . զորս պատուիրեաց այլ եւս՝  
 » զի ի վերայ Մոսկով գնալ » : — Թուղթ Եահին առ  
 Քահանայապետն գրեալ է ի 25 յուլ . 1669, զերից խն-  
 դրոց նորին, վասն նիզակակցութեան ընդ քրիստոնէից,  
 որում ոչ համարի պատշաճ զժամանակն . վասն Նախ-  
 ճաւանայ գաւառին, ասէ, առաքել պաշտօնեայ հաւա-  
 տարիմ, և թեթեւացուցանել զչափ հարկին, զոր մի այլ  
 ումեք լիցի իշխանութիւն պահանջել . և այսպէս ուղ-  
 զեալ՝ բարգաւաճեաց վաճառաշահութիւն ընակչաց երկ-  
 րին . և վասն պաշտպանութեան քրիստոնէից՝ որ ընդ  
 իւրով իշխանութեամբ՝ խոտանայ տունել այնպէս : —  
 Երկրորին Հարքն դեպանք՝ ըստ պատուիրանի Եահին  
 ճանապարհ արարին ընդ Ռուսաստան, որպէս գրէ Նա-  
 զարեանն, « Նախ ի Գարբանդ, անտի Հանթարիան,  
 » անտի Մոսկովն, անտի Լէհն . ի Լէհէն՝ վիէնայ . անտի  
 » վանայտիկ . վանայտիկէն Ֆիրէնցիայ . Ֆիրէնցիոյ  
 » Հոսմ . Հոսմայ՝ այլ վանայտիկ . վանայտիկէն Թու-  
 » րին . Թուրինոյ՝ Փարիզ » : Սակայն վասն խռովութեանց  
 և արգելից ճանապարհին ի սահմանն Ռուսաց, գրեալ է  
 երկու տմ յերկարեաց ուղեւորութիւնն . յամի 1673 հա-  
 տին յիտալիա, և ետուն զթուղթս Եահին առ Քահանա-  
 յապետն (Կղեմէս Ժ), առ դուքսն Տոսկանայ, և ապա առ  
 վենեականն . որ և յանձնեաց նոցա զպատասխանին (ի  
 23 յուլ . 1673) պարգեւելով և 100 վահանակ արծաթի,  
 և 50 դուկատ եւս վասն ճանապարհին մինչեւ ի Փլորեն-  
 տիա : Հ . Ազարիա մնաց յիտալիա, իսկ Հ . Անտոն Նա-  
 զար միայնակ գնաց ի Փանկաստան, յանդիման եղել  
 Լուդովիկոսի Ժի ի վերայ, որպէս յիշեալ եմք այլուր  
 (յէջ 377), հանդերձ նկարագրաւ բարուց և կերպարա-  
 նաց նորին . և ինքն համառօտ բանիւ ի մի թուղթ գրէ  
 զայստիկ ի վերջ կոյս ձեռնագիր պատմութեան Օգոս-  
 տինոսի Բաղնց, ի 30 ապրիլի 1674 ամին, ի Պարիզ, ի  
 վանս Դոմինիկեանց, ոտորագրելով հայերէն և լատի-  
 նարէն, « Չգրող սոր » Անտոն Նազարոս ծառայ սրբոյ  
 » աստուածարանութեան լէքիօր . Fr . Antonio Nasari  
 » L . Armeno. Ord. Pred. Apracunensi, manu propria.  
 » An 1674. 20 aprilli » . Ի 24 մայիսի մեկնեցաւ ի Պարիզէ,  
 թղթով պատասխանեոյ թագաւորին, որպէս ընկալան  
 և յայոց՝ որոց մատուցեալ էր զթուղթս Եահին, դառ-  
 նալ առ նա իրրեւ պատգամաւոր նոցուն : — Ի նմին ժա-  
 մանակի Հ . Ազարիա էր ի վիեննա նոյնպէս նուիրակ և  
 աղաչաւոր գնացեալ առ կայսրն . զորմէ գրէր առ գոր-  
 ծակալ իւրեանց (Նեկրի) հայերէն . « Գիտեմ որ կայսրն  
 » մեզի շուտով պատասխանի կու տայ . այլ ուրիշ պատ-  
 » ճառ չէ ունիմ տեղս մնալոյ . . . . . գրեցաւ ապրիլի Ե  
 » (18) . Թիւն ՌՈՂԳ . Պատրի Ազարիա վարդապետ աղօ .

» Թող հրամանեցդ » : Կատարեալ երկոցուն եւս զպատ-  
 գամաւորութիւն իւրեանց՝ թղթովք Քահանայապետին  
 Կղեմայ Ժի և Պետացն՝ վերագարձան ի Պարսկաստան,  
 յելս 1674 ամի կամ ի սկիզբն 1678ի, իրրեւ պատգա-  
 մաւորք նոցին . Նազարեանն կարգեցաւ գաւառահայր  
 յետ Գրիգորի Մործորեցոյ . այլ զեպիսկոպոսն Մատ-  
 թէոս վախճանեալ գտին :  
 Սա մի ի նշանաւորաց և ի գործօնէից, ի սակաւ ամս  
 ակոսակալութեանն արար ոչ սակաւ ուղղութիւնս,  
 կրեալ նոյնպէս և վիչտս և նովին իսկ առեալ վախճան :  
 Զառաջինն յետ կատարելոյ զղեկապանութիւնն առ Ետն  
 (1669) ի Սպահան, մեծարոյ գտաւ յաչս ամենեցուն,  
 և անհաւատից անգամ, յորոց և ոմանք հաւատաղին ի  
 Քրիստոս և մկրտեցան ի նմանէ, վասն որոյ հակառա-  
 կորդքն սպանանել կամէին զնա, այլ զերծաւ պաշտպա-  
 նեալ յայոց : Ի ձեռն սորա և մեծատոճմն և մեծահա-  
 ռուստ տունն Եհրիմանեանց որ ի Նոր Զուղա՝ միա-  
 բանեցաւ ընդ ուխտի եկեղեցւոյ նոցին, և շինեաց անդ  
 եկեղեցիս և վանս կաթողիկաց, առաջնորդութեամբ  
 Հ . Ղուկայ, զոր առաքեաց անդր եպիսկոպոսն . յետ  
 ամաց ինչ փոխարեբեալ զիսաւորաց տոճմին . ընտանեօք  
 ի վենետիկ, և պատուեալ կոմսութեան շքով ի կայսե-  
 րէ, պայծառացան ի քաղաքի անդ մինչեւ յաւուրս մեր :  
 Յամին 1673 կարգահայրն Դոմինիկեանց առաքեաց իբ-  
 բեւ ընդհանրական երեսփոխան իւր և այցելու Գաւառին  
 Նախճաւանու զՀ . Փրանկիսկոս Պիսկոպ (Franciscus  
 Piscopus) Նէպոլսեցի, զայր փորձ և հմուտ, զոր յա-  
 ռաջն Աղեքսանդր է առաքեալ էր ի կողմանս Ազարու և  
 ի Լեհս, և արդ Կղեմէս Ժ յանձն առնէր նմա զքարո-  
 ղիչս արեւելից . առաքէր և առանձին թղթով առ Յա-  
 կովբ Դ կաթողիկոս Զուղայեցի : Հասեալ սորա ի գա-  
 ւառն Հայոց յամսեան դեկտեմբերի, նախ ի Սալթաղ  
 մատոյց հանդիսական պատարագ, յետոյ յԱպարաներ ի  
 ժողով գումարեաց զամենայն վանականս, ըստ հրամա-  
 նի կարգահորն (Roscoboni) . այլ քանզի նախորդ սորա  
 (Մկրտիչ Marini) բացարձակ իշխանութիւն տուեալ էր  
 արքեպիսկոպոսին Մատթէի ի վերայ ամենայն վանո-  
 րէից Գաւառին, ծանր թուեցաւ յաչս նորա գերիշխա-  
 նութիւն քննչին, և յաւէտ յաչս այլոց միաբանից և աչ-  
 խարհականաց ոմանց, իրրեւ նուազեցուցիչ հեղինակու-  
 թեան արքեպիսկոպոսի իւրեանց, յորմէ պատկառէին և  
 էջմիածնական Հայք և այլադեմք անգամ . բայց միջնոր-  
 դութեամբ Պետիկայ (ըստ իւրոց բանից) առաքինի մը-  
 տօք միաբանեցան ի տեսութիւնս մտերմարար, մինչեւ ի  
 փոխանորդ իւր կարգել զնոյն ինքն զՀ . Պիսկոպ, յոր-  
 ժամ հարկեղեւ Մատթէի երթալ (1674) ի Գաղուին առ  
 Ետն, վասն կարեւոր ինչ խնդրոյ վիճակին իւրոյ և ըս-  
 պառնալեաց հայածանաց . և ոչ վերագարձաւ անտի  
 կենդանի . քանզի թշնամիք ոմանք դեղ մահու ասեն  
 տուեալ, և շիջուցեալ զլոյս նորա, (ի 14 ամսեան յուլի-  
 սի) . իսկ հաւատարմացն բարձեալ զմարմինն բերին և  
 հանգուցին առաջի բեմի եկեղեցւոյ իւրոյ յԱպարաներ :  
 Քսան ամօք զկնի մահու անն՝ պատմագրող ոմն կարգին  
 Դոմինիկեանց <sup>1</sup> ի կարգել զյիշատակ սորա՝ Երաքայ Աս-



1 CAVALIERI, Galleria dei sommi Pontefici ecc... dell'ordine dei Predicatori. — Benevento, 1696.

տառձոյ կոչէ, որպէս կոչին հանգուցեալքն սրբական համբաւով:

Յետ մահուան Մատթէի դամու ութ թափուր մնաց աթոռն, այլ յառաջին աման հսկէր ի վերայ հօտին կարգեալն ի նմանէ տեղակալ և երեսփոխան կարգապետին Քարոզչաց՝ Հ. Պիսկոպ: Սա ի ժամանել երկոցուն պատգամաբեր հարցն (Աղարիայ և Անտ. Նազարու), յորդորանօք Միաբանիցն՝ առեալ զնոսա ընդ իւր և երիս եւս ի գլխաւորայ աշխարհականաց, ի սկիզբն փերուար ամսոյ (1675) շոգաւ ի Գաղուին, մատուցանել առ Շահն զթուղթսն բերեալս ի նոցանէ. զոր և արարին յ' 12 մարտի, մատուցանելով և ընծայ ժամացոյց մի մեծ ի վերայ սեան, և այլ ինչ ինչ ոչ ծանրագին պատուով ընկալու զնոսա Շահն և կոչնովք մեծարեաց. հասին անդր յետ սակաւուց և այլ ոմն ի Հարց և աշխարհիք երկու ի խորհրդակցութիւն, քանզի տարածայնէին երկրքին հարքն ի Պիսկոպայ. և միաբանեալ ամենեցուն մատուցին աղերս վասն թեթեւութեան հարկաց գաւառին և անդորութեան. որոյ պետք (որպէս և այլուր նշանակեցաք) յաւուրց անտի Շահ իսմայելի արքունի սեփականութիւնք համարէին, և ինքեանք գեղջաւազքն հաւաքեալ զտուրան ի նաւասայ դս տարէմտին Պարսից (Նէյրուզ) ինքեանց ձեռօք մատուցանէին առ զանձապետն արքունի. և էր գումարըն իրրև 280 թուման ժամանակին. բայց ծանր թուէր այս յաչս խանին կողմնակալի Նախճաւանի, և մերթ սա, մերթ նորին իսկ գանձապետքն ի ժամու և տարածամու պահանջէին և կեղեքէին զգիւղորայան<sup>1</sup>, մոնաւանդ ի յամել սոցա քան զպայմանալ ժամանակն. Ենորհեաց Շահն զոր միանգամ և խնդրեցին, եթող և զ' 70,000 լիբր պարտս գեղջէիցն. և ըստ կամաց նոցա յանձնեաց զնոսա ի խնամս մեծի վզըրկին Գալիթու (Միրզէ Իպրահիմ): Այլ որպէս յայլ նուագս, յետ սակաւ ամաց նոյն տազնայք հասանէին գաւառին: Խիլայեաց զՊիսկոպ, տուեալ ի պարգեւ հանդերձս և արծաթ 1800 ֆրանգաց ժամանակին, և արձակեաց յամամտին սեպտեմբերի տասն երիվարօք և վարչաւ միով, պատուրեալ հասուցանել յանդորրու մինչեւ ի սահմանս Մոսկովաց. պատասխանի արարեալ ամենայն թղթոց զոր երբ Պիսկոպ, միայն անպատասխանի եթող զթուղթ կարգաւոր նորին, որ խնդրէր վսնս հաստատել ի Սպահան կամ ի Ջուղա, և բերանացի ետ ասել եթէ գրեալ է զայնմանէ առ Պապն: Իարձ արարեալ պատգամաւորացն յերընջակ, յետ յարգարելոյ զաւտնին իրս, յամենան մարտի 1676 ամի մեկնեցաւ անտի Պիսկոպ ընդ Պետիկայ. և եկեալ յԵրեւան կատարեաց զպատուէր Քահանայապետին, խօսելով ընդ կաթողիկոսին Յակովբայ, և առնելով ի նմանէ թուղթ միաբանութեան առ Ս. Պապն, և միւս եւս թուղթ խնդրոյ առ կոյսր Գերմանիոյ: Ուղեւորեալ ընդ երկայն ճանապարհ յԱժտէրխան, ստիպեցան մնալ անդ զամիսս վեց, ի հրամանէ ինքնակալին Ռու-

սաց, և ապա անցեալ ընդ Մոսկուա եկին ի Վիննա. մատուցին կայսեր զթուղթ կաթողիկոսին և զողջոյնս Շահին. ապա զնաց Պիսկոպ զճանապարհ իւր ի Հոռմ, և անդ, հանդերձ այլովք, ետ (1677) ծանօթս զգաւառէն Հայոց առ կարգահայրն և առ Սուրբ Ժողովն: Իսկ Պետիկ շնորհս գտեալ մնաց ի Վիննա ի սպասու դրան կայսեր, ուր ի միւսում ամի եկին և երկու Հարք Միաբանոք յաղերս առ կայսր:

Ի միջոց ժամանակի պարապութեան եպիսկոպոսական աթոռոյն յամի 1677. Մործորեցի զրազէտ վարդապետն Հ. Գրիգոր, զոր ի վերջ 1675 տարւոյն թողաք ի Հասով, ըստ սոսիցիւրոց վերստին յաշխարհ շրջեալ՝ եկն յԱղեքսան. դրեակ քաղաքէ մերձաւորին Կիլիկիոյ ի Վենետիկ, և յետ երկար հիւանդութեան՝ անդ կիլիկեաց զվաստակաւոր կեանսն<sup>2</sup>: Էր ընդ նմա և Հ. Բարդողիմէոս. ապա և Հ. Օգոստինոս ոմն ի Վենետիկ, ուր եկեալ էր և Հ. Ստեփանոս Եիրան Շահապուսեցի, յետոյ գաւառահայր, վասն հասից վանորէիցն<sup>3</sup>, և Հ. Բենեդիկտոս Բազումնց յԱպարաներոյ՝ որք դարձեալ գործակալ կարգեցին զՀ. Չելեստինոյ Նեկրի:

Մինչ չեւ էր ուրուք յաղորդեալ յաթոռ Մատթէի, յետ մեկնելոյ Պիսկոպի՝ անտերունչ իմն համարելով զերկիրն՝ առաւել եւս համարձակեցան հարստահարողք կեղեքել զընակիչան. դիմեցին սոքա աղայանօք առ նորահաստաս փոսնկ եպիսկոպոսն Բարիլանի՝ Պիքէ (Piquet), որ ի Պարսկաստան էր յայնժամ. գրեաց նա առ անուանի և կարող Յիսուսեան Հայրն Լաչէզ (P. La Chaise) խոստովանահայր արքունեաց ԺԳ Լուդովիկի, և թագաւորն գրեաց առ Շահն յամի 1682, առաքելով ընդ թղթոյն ի ձեռն Յիսուսեանց, մեծամեծ մեքենաւոր աստեղացոյցս և ժամացոյցս. յետ ամի միոյ, հասին սոքա ի Սպահան (3 հոկտ 1683): Ընկալեալ Շահին ի ձեռանէ նոցին և Պիքէի զընծայան, հաճեցաւ յոյժ յոյժ, և ըստ խնդրոյ նորա խոստացաւ վերստին պատուիրել վսնս զգուշութեան գաւառին: Հայոց, որպէս և վսնս հաստատելոյ եկելոց նուիրակացն Յիսուսեանց վանատուն յԵրեւան: — Ի նմին ժամանակի և յետ ութամսայ պարապոյն կարգեալ էր արքեպիսկոպոս Նախճաւանայ Սեթասիանոս Քնապ (Knab), որոյ անուն երեւեցուցանէ լինել ազգաւ Հոլանտացի: Սա ի վերջ կոյս 1682 ամին եկեալ ի Վենետիկ աղերսէր զծերակոյտն, նախ վսնս տոկոսեաց դրամազլիսոյ իւրեանց, շնորհել ըստ առաջին սահմանին 7 1/2% և երկրորդ, թուղթ ընծայութեան առ Շահն, որպէս ընկալեալ էր ի Քահանայապետէն Հոռմայ և ի դքսէն Տոսկանայ. զոր և ընկալեալ, յերկար ուղեւորութեամբ ժամանեաց ի Հայս. յետ երկուց ամաց գրէ ի (25 ապր. 1686) ի Սպահանէ ի Հասով, ծանուցանելով զի ի 20 մարտի նախընթաց ամին (1685) մատոյց առ Շահն զթուղթս Պապին, զկայսեր, զթագաւորին Լեհաց և զայլոց, և ինքն արգելեալ կայր անդ ամիսս 18, որ յօրէ յերկարաձգելով Շահին զգործն, այլ

1 Այսոցիկ վկայէ և Շարտէն փոսնկ ուղեւոր, որ եկաւ ի Գաղուին յամամտուան յունիսի (1675), մինչ անդ էր Պիսկոպ. Les Gouverneurs oppriment (les villages) et surchargent d'impôts de temps en temps.

2 Յետ կիսոյ յուլիս ամսեան 1677 ամի, զի յայնժամ իբրեւ հիւանդ յիշի ի հալուէզէրս գործակալ Միաբանոքացն ի Վենետիկ: 3 Եւ ընկալաւ 2280 դուկատ. զխափանեալ շահս ի մարտէ 1672 ցյուլիս 1678 ամի:



չդոյր ակնկալութիւն նիզակակցութեան նորա, և այլն: Չասէ ինչ զիւրոյ գաւառէն ի թղթի աստ, իսկ ի թղթին գրելոյ յԱպարաներոյ ի 24 օգոստոսի այն տարւոյ՝ առ գործակալ իւրեանց ի Վենետիկ (Հ. Նիկրի), ծանուցաւ նէ զի ոչ մատոյց առ Շահն զթուղթ դքսին Վենետիոյ, քանզի փոխանակ Շահ Սիւլէյման անուան նորա՝ գրեալ էր ի վերայն անուն հօր նորին Շահ Արաս (Բ): Զթուղթս զայս երբ գաւառահայր վանորէիցն Հ. Պողոս Յովա. նիսեցի (եղբորորդի Մատթէի եպիսկոպոսի), որ ամառ յառաջ էր ի Հոռովմ, յամին 1693 ի Սպանիա, և ի սկիզբըն 1684 ամին ի Մարսիիա, ուստի գրէր առ նոյն գործակալ առաքել զհաստիւրեանց ի Լիվոնոյ առ Հ. Թովմաս իսրայէլեան ի վանս Դոմինիկեանց, ուր և ինքն գալոց էր. և ի սկիզբն հոկտեմբերի տարւոյն (1684) ընտրեալ Պաւառահայր՝ գրէր առ նոյն յԱպարաներոյ, մուրհակ վասն ընդունելութեան 1000 վենետիկեան դուկատաց ի Հ. Լէոնարտոյ Մարքի (Marchi) վենետիկեցի Քարաղէ, հանդերձ ստորագրութեամբ եօթանեցուն վաճառար: Հ. Պող. Մկրտիչ՝ որ յայսմ նուագի (1686-7) եկեալ էր ի Հոռովմ վասն կարեւոր խնդրոց Պաւառին իւրոյ, որպէս գրէր առ Նիկրի ի Հոռովմէ յամսեան մարտի, ոչ գիտեմ դարձաւ ի հայրենիսն փութով՝ եթէ յամեաց յարեւմուտս բովանդակ ամս. քանզի յելս 1688 ամին ի Քարաղէայ Սպանիոյ գրէր, զնացեալ ի Փոսանկաստան ի խնդիր ողորմութեան վասն վանորէից իւրոց, այլ ոչ շատ յաջողեալ. անտի եկեալ ի Սպանիա, և աստի կամէր նաւել ի Լիվոնոյ, ուր՝ խնդրէր զի առաքեսցի ի Վենետիոյ շահ զրամագլխոյն առ Ամբրուս աղա Միրմանեան՝ վաճառական, զի առեալ դարձցի ի գաւառ իւր. զնոյն երկրորդէր և ի Լիվոնոյէ (6 մայիս, 1689) ուստի նաւելոց էր ի Զմիւռնիա. — Յետ երկուց ամաց դարձի իւրոյ ի հայրենիս՝ վախճանեցաւ արքեպիսկոպոսն Քնայա, և փոխանակ նորա ընտրեցաւ ինքն Հ. Պողոս — Մկրտիչ, վասն որոյ եկն միւսանգամ յիտալիա: 2 — Ի 24 մայիսի տարւոյն (1692), հաստատեցաւ նա յարքեպիսկոպոսութեան գաւառին Նախճաւանու յիննովկենտեայ Եթէ, ամաց գորով յայնժամ 1858. սովորական պարգեւօք

Պապին և ընծայական թղթովք եկեալ ի Վենետիկ, (ի 24 յունիսի) խնդրեաց և ի ծերակուտէն նոյնպիսիս գրել առ Շահն ի պաշտպանութիւն և ի վերականգնումն երկուց եկեղեցեաց կործանելոց, և վճռով սորին (ի 23 օգոստ. 1692) պատուիրեցաւ տալ նմա 150 դուկատ ի պէտս ճանապարհին, և (ի 3 սեպտեմբերի) թուղթ ընծայական. զոր ընկալեալ եպիսկոպոսին՝ հաստատեաց վերստին (25 օգոստ.) ի գործակալութեան զՀ. Նիկրի, յանձնելով նմա ընդունել և զտուրսն վասն ծախուց ճանապարհին, և փութացաւ ինքն յուղի անկանել դառնալ ի գաւառ իւր: — Յայս ամս (1694) յընդհանուր ժողովի Դոմինիկեանց հաստատեցան վերստին սահմանեալքն 50 ամաւ յառաջ վասն դաստիարակութեան նորընծայից Միարանողացն՝ գալ նոցա յիտալիա, մարզիլ ի վանորայս իւրեանց և վերադառնալ անդրէն: 3. Ի ամին ամի (1694) Պոլսնիացի Քարաղիչ Հ. Դոմինիկոս առաքեալ ի կարգահօրէն եկն յԱպարաներ (8 յունիսի):

Իրրեւ տասն ամ եկաց Պողոս Մկրտիչ ի հովուութեան իւրում մինչեւ ի սկիզբն Եւ դարու. և ի դէպ է թէ ոչ սակաւ անցք անցին ընդ վիճակ իւր յամսն այնտիկ, և վաստակեցաւ ըստ ժրութեան իւրում և ըստ շնորհաց հարեղոր իւրոյ, այլ անծանօթ մեան յինէն գործք նորա. քանզի յողովք ի ճոխարան պատմեաց կարգին Դոմինիկեանց՝ երիցագոյն են քան զնա, կամ առ նովմբ դադարեն ի գրելոյ: Տեսի զթուղթս ինչ նորա գրեալս առ նոր գործակալ իւրեանց ի Վենետիկ, այն է Հ. Գալլոյ Տրանչիսկոս, զոր յետ մահուան Նիկրեայ՝ կացուցին գաւառահայրն Ստ. Շիրան և եօթանեքին վանահարքն յամի 1695 (նոյեմբ. 7). որոց ստորագրութիւնքն են այսպէս.

- « Ե՛ս Տէր Բովանէ՛ս մեծաւորս Ամենայն Սրբոց ի վանիցն Ապարաներոյ.
- « Ե՛ս Տէր Թումայ մեծաւոր ճահկոյ.
- « Ե՛ս Տէր Անդրէաս մեծաւոր Խօշկանեց.
- « Ե՛ս Տէր Բաղտասարս կէծկոյ.
- « Ե՛ս Տէր Գրիգոր մեծաւորս Ապրակոնաց վանից Սուրբ Գէորգայ.

1 Որոց շուք հոցերէն ստորագրեալ էին, երեք իտալերէն, այսպէս. Fra Antonio Nazarij Prior Agravenis (Ապրակոնեաց). Fra Agostino Bacense Prior di Abaraner, (Կաւառորէն եղբորորդի Կամանու եպիսկոպոսին). Fra Michiel di Giovanni Prior Cossanen (Խօշկանիոց): 2 Ի Զմիւռնիոյ նաւեալ ի Լիվոնոյ, ուստի գրէ (3 դեկտ. 1694) առ Նիկրի՝ առաքել առ ինքն զնոս վանորէիցն, զի առեալ էին անդ փոխ ի վաճառականէ միոյ ազգայնոյ 780 ոսկի ունկար. յայլում թղթի (1 յունուարի, 1692) խնդակցելով զի Նիկրի կարգեալ էր վանահայր, ծանուցանէ զի կարգակիցք իւր Հ. Հ. Սրբիւսն Շիրան և Բիւնթրիսոն (Բաղտասար) դարձ առնէին ի շնորհաց, այլ մեծի նաւակաթութեան նանդիպեալ կորուսեալ էին զմեծ մասն արիցն նաւակուց. եկին ի Հոռովմ, և զմասն մի արծաթոյն եղին ի Յառնէզեան շահատան, և ապա եկեալ ի Վենետիկ՝ յ'8 յունիսի) եղին ի դրամանոցս նարին ի շահ 7000 դուկատս, և կարգապէս փոքրոջացն Հ. Քլոքէ (Cloche) ի Հոռովմէ դարձակալ կարգեաց դարձեալ զՀ. Նիկրի, յանուն երկոցուն Հարցն և վանաց Շահապոնեաց և Ամենաբարոց:

3 « Quia in dicta Provincia (Armenia) adolescentes „ habitum Religionis suscepturi, prius per aliquod annos

„ in nostris conventibus aluntur, instruuntur, et diurnis „ ac nocturnis precibus una cum aliis Fratribus adesse „ solent, statu mus primo, ut magis apti et idonei eligantur, et habitu ordinis inducti aptiores in Italiam „ transmittantur, ut philosophicum ac theologicum curriculum absolvere possint. Quibus Magister ordinis in „ Provinciis Italiæ aut in aliis ad studia peragenda de „ conventu per assignationem providebit, injungentes „ R.R. PP. Provincialibus omnium Provinciarum Ordinis ac Vicariis Congregationum ac Conventuum Superioribus, ad quos mittentur, ut eos in spiritu charitatis fraternæ suscipiant, et ipsis vestiarium, sicut cæteris Religiosis assignatis subministrant. — Ordinamus „ ut studiis absolutis, ad propriam Provinciam reverti debeant, neque possint vel in Italia, vel extra in alienis Provinciis deputari, assignari, vel affiliari, unde omnes affiliationes dictorum Fratrum Armenorum factos vel faciendos in alienis Provinciis irritamus et irritas esse declaramus „ Զայստիկ ըստ ժողովի Դոմինիկեանց՝ երկրորդէ Բենեդիկտ. Եթի ի կոնգրակ իւրում, յամի 1748:

- « Io P. Fra Bartolomeo Nasario Vicario di Sibalt.
- « Ես Տէր Ազարիայ մեծաւորս Քոնոյ վանքին »:
- Յայլում գրի գործակալութեան Հ. Պետրոսի ճումանայ, ստորագրեն ի 25 օգոստ. 1698, այսրիկ.
- « Ես Տէր Պետրոս գէ Մարիա մեծաւոր Ապրաներոյ վանից յԱմենից Սրբոց.
- « Ես Ֆրա Զվան Թումաս մեծաւոր ճահկոյ վանից.
- « Ես Ֆրա Ազարէս Քոնոյ վանից մեծայոր.
- « Ես Տէր Մատթիա Արաղիանի մեծաւոր Եահրունեաց վանից.
- « Ես Ֆր. Անդրիաս Ռումեցի մեծաւոր Վօշկեցի (Խօշկաչէն ?)
- « Ես Տէր Բենեթիկոս.
- » Io Fra Bartolomeo Nazario Pred. Generale Vicario di Convento di Siekal. (Սալթաղ ?).
- « Ես Ֆր. Գրիգոր մեծաւոր Ապրակունոց վանից Ս. Գէորգայ »:

Ի միջոցի երկոցուն այսոցիկ գրուածոց՝ գտանի միւս եւս ի 1 մայիսի 1696, որոյ ստորագրողք են, Յովհաննէս՝ Զահկոյ, Յովհաննէս՝ Ապրաներոյ, Գրիգոր՝ Ապրակունեաց, Ազարիա՝ Քոնայ, Մատաթիա՝ Եահապոնեաց, Անդրէաս՝ Խօշկաչիոյ, Բաղդասար՝ Կէժկոյ, Բարդուղիմէոս Նազար՝ աթուակալ Սալթաղայ<sup>1</sup>: Թուղթ եպիսկոպոսին գրեալ է ի 6 յունիսի 1696. յորում յանձնէ Քալլոյի ընդունել ի ժերակուտէն զ150 դուկատան շնորհեալս ինքեան. և զթղթոց նոցին զոր մատոյց առ Եահն, ասէ. ընկալեալ ի սմանէ պատասխանիս, և յանձնեալ սղգայնոյ ումնն, զոր սպանին ի ճանապարհի աւազակք՝ յերկրին Սամանեանց, և Թուղթքն կորեան: Քրէ առ նա և յետ երկուց ամաց (1 սեպտ. 1698), զի եհաս Հ. Յովհ. ճուման՝ բերելով ի Հոռովէ գհասոյթ իւր (400 վահանակ), և վերստին դառնայ ի վենետիկ. աշխարհն Պարսից վրդովեալ է յապստամբաց, յորոց և տագնապք և զրկանք բազում հասաննն իւրոյ գաւառին. իսկ ինքն յամէ հետէ հիւանդագին կայ, և ոչ գտանի անդ ոչ բժիշկ ոչ դեղ, յԱստուած միայն ապաստան լինի<sup>2</sup>:

Յիչէ զնա յանուանէ և (ի յաջորդ ամի, 1699, յամսեան ապրիլի) լատին Քարոզիչն Հ. Բարդողիմէոս Ս. Բակիներեան (A Santo Hyacintho), ի Սպահանէ գրելով առ Պրեններ Եուէտ, (որ տպագրեաց ի լատին լեզու զհամառօտ պատմութիւն Հայոց Խորենացւոյն), և տայ մանրամասն ծանօթութիւն զվանորէից Քաւառին Նախնաւանու, յորմէ նշանակեցաք ինչ ինչ ի վիճակագրական ցուցակին. նշանակէ և զամենայն ցեղ լատին միանձանց վանորայսն (14 թուով) ի Հայս, ի Վիրս և ի

Պարոս, և զԴոմինիկեանց ասէ ունել վանս մի ի Նոր Զուղա ի կարապատ կամ Քարակտուր թաղի. ուր կայր և միարան մի յԱպարաներոյ, և միւս Լոմպարտացի քահանայ, և էր ընդ իշխանութեամբարքեպիսկոպոսին Նախնաւանու. — Թուի Պօղ. Մատթէի վախճանեալ յամի 1702, քանզի որ տակաւին յայնմ ամի գաւառահայր էր Ստեփանոս Շիրան 3, վկայի թղթով վանահարցն՝ ի նմին ամի ընտրեալ յեպիսկոպոսութիւն, և յամեան նոյեմբերի գտանէր ի Հոռովմ, ուստի և առաքէր զգիր գործակալութեան իւրոյ ի դիմաց վանահարցն, որք են Յակինթ Գաւթեան՝ գաւառահայր, Միքայէլ Ապարաներոյ վանից, Ստեփանոս Խօշկաչիի, Բաղդասար Ապրակունեաց, Ազարիա՝ Քոնայ, Յովհաննէս՝ Զահկոյ, Մատաթիա Եահապոնեաց: Յետ ձեռնադրութեանն եկեալ ի Վենետիկ փոխանակ իւր կարգէր վերստին (3 օգոստ. 1703) զՀ. Գալլոյ Դոմինիկեան, և մեկնէր անտի թղթով կղեմայ ԺԱ (17 ապրիլի) առ Եահն (Հիւսէին), յորմէ խնդրէր Քահանայապետն ընդունել զա, թոյլ տալ Միարանողացն յինել զեկեղեցիս իւրեանց, մանաւանդ զԽօշկաչիի և զԵահապոնեաց, և մի ծանրացուցանել զսակ հարկի աղքատ քրիստոնէիցն: Երկու մաւ յառաջ եւս գրեալ էր առ նոյն (30 ապրիլ, 1701) ի պաշտպանութիւն քրիստոնէից Սպահանու և Քարոզչացն զորս առաքէր, յանուանէ նշանակելով չորս խաւացիս և մի Հայ անուն Յովսէփ Մարեմեան, (Joseph Mariae), ի նմին աւուր նոյնպէս գրէր և առ Նահապետ կաթողիկոս՝ անդորր առնել նեղելոցն ի դարէ հետէ: Գրեաց դարձեալ առ Եահն ի պաշտպանութիւն քրիստոնէից և յամի 1705 (15 յուլ.) յանձնելով, նմա ընծայական թղթով զիսրայէլ Որի:

Ստեփանոսի՝ որ յերկար ամս վաստակեալ էր յօգուտ վանորէիցն՝ պանդխտութեամբ և մուրալով յօտար աշխարհս, գործակալութեամբ և վերստեօշութեամբ վանորէից, յեթնամեայ ժամանակի եպիսկոպոսութեանն, (զի՛ յամի 1708), անծանօթ մնան առ յինէն գործք: Հաւատաւիւր ժողովն տայր նմա հասոյթ 3 կամ 400 վահանակ, որպէս և նախորդին, ի ձեռն գործակալին Վենետկոյ, ուր երբեմն կորգէին վանահարքն (զատ ի Հ. Գալլոյ) և զայլ ոք, որպէս յամի 1705 զկոմսն Ստեփ. Շէրիմանեան<sup>4</sup>. և ստորագրողքն հայերէն ընդ Յակինթոսի գաւառահօր, են, Հ. Յովհաննէս Ապարաներոյ, Յովհաննէս Զահկոյ, Ազարիայ Քոնայ, Գէորգ՝ Ապրակունեաց, Պետրոս՝ Խօշկաչիոյ. որոց ստուգութեան վկայեցին ի Վենետիկ (8 յանուար 1706) Հարքն Պետրոս Մարեմեան Մերսեքի (Mersechi) ի Եահապոնեաց, և Պօղոս ի Բատաւանէ (Batavan): — Յայնմ

<sup>1</sup> Երեսփոխան առաքեցին սղգա զՀ. Յովհաննէս ճուման, որ զի ոչ գիտէր քաղ իտալերէն՝ թարգման եկաց քաջամուտան Հ. Անտոն Նազար, գոլով սորա ի վենետիկ, ընդ նմին վկայ և Հ. Պետրոս Զահկոյ: Առանձինն և գաւառահայրն Շիրան և Հ. Բարդողիմէ Բազումեցի, վասն գումարին զոր յանուն իւրեանց աւանդեալ էին ի դրամասնական, կացուցին զնա իւրեանց գործակալ (28 յուլ. 1697), և զթուղթ նոցա վաւերացոյց արքեպիսկոպոսն Պօղոս Միքայէլ, և իբրև նօտար քարտուղար նորա Ֆր. Պետրոս Թուման Եահապոնեցի, զորոց զամենեցուն ձեռնադիրս ստոյգ լինել վկայէր Հ. Անտոն Նազար:

<sup>2</sup> Benedetto questo paese, non si trova nè medico nè medicina; sto in mano di Dio.  
<sup>3</sup> Եղբորորդի սորա Թուման Շիրան յիչի յամս 1700-1 ի Հոռովմ, յուսումն:  
<sup>4</sup> Մեծառոճ կոմսն Շէրիմանը անդառնի ի նոր Զուղայ գալով սիրով յարեալ էին ի Միարանողացն, յորոց ձեռն ընկալան զհոռովեական գաւառութիւն. յայնմ ժամանակի (1704) Սահրաւորդի Մուրաւայ՝ չորեքօր (Գասպար) Ստեփանոսի, ստագրեաց իւրովք ծախիւք ի Վենետիկ զչորրորդ մասն Քարոզչացոց երանելոյն Բարդողիմեայ, զոր բերեալ էր ընդ իւր ի Պարսից աշխարհէ:

ամի (1706) քաջածանօթ Հայրն (և երբեմն դեսպան) Անտոն Նազար մեկնեցաւ ի Վենետիկ, ուր յամի 1693 խնդրեալ էր կարգիլ հոգարարձու եկեղեցւոյն Հայոց, դառնալ ի գաւառ իւր: Եւստակաւ յառաջ (1703) ի 34 նոյեմբերի վախճանեալ էր միւս ծանօթ Ապարանեցիին Հ. Բարդողիմէ Բագրամենց, ի վանս վեղարաւորաց, ի Մատրաս, ուր երթեալ էր ի մայր. և կարգահայրն Դոմինիկեանց (Քլոքէ) գրէր առ գաւառահայր Հայոց (Յակինթ) ի միւսում ամի (30 սեպտ. 1704) տալ քննել անդր, և զհաւաքեալ դրամն անցուցանել ի Վենետիկ ի շահարեւութիւն, ուր անդատին յամէ 1693 եպիսկոպոսն Երանանեան եղեալ էր յանուն Շահապունեաց վանից՝ 3200 դուկատս:

Յաւուրս նորին Ստեփ Երանայ եպիսկոպոսութեանն լցեալ (վեցամեայ) ժամանակ գաւառահայրութեան Հ. Յակինթեայ Դաւթեան՝ (1707), իբրև ամենեքին հրատարէին յայնմ պաշտամանէ, կարգահայրն Քլոքէ աղաչեաց զնա դարձեալ յանձն առնուլ (մայիս 30). զնայն ծանոյց և արքեպիսկոպոսին: Յետ մահուան սորա (Երանայ) իբրև շահունին յանձն Հարքն Միաբանողք զալ յիտալիա և յամել յերկար ժամանակս, որպէս նախորդք իւրեանց, այլ առաքեալ էին զաշխարհական ոմն Պողոս Արքամամեան ի Հռովմ, խնդրել ի Քահանայապետէն զյաջորդն, կարգահայրն Քլոքէ գրէր առ գործակալ նոցա (Հ. Գալլոյ) ի Վենետիկ, խօսել ընդ Ստեփ. կոմսի Եէհրիմանեանց բարեկամի նոցին, զի առաջարկեացէ զմի յարեւմտեայ Քարողաց, այր պատշաճաւոր. և նա առաջարկեաց զՀ. Յովիան Վինգենտ Կաստելլի (Castelli) լոմպարտացի, ընդ որ ուրախ եղև կարգահայրն. բայց ոչ գիտեմ զիտրդ փոխանակ նորա ընտրեցաւ և կարգեցաւ Հ. Պետրոս Մարտիրոս Պարմացի (Petrus Martyrus) յամի 1709, որոյ հայրենեաց անուն իտալական, այլ իւր կոչումն հայերէն լիի, և զոյ առ մեզ իսկազիր թուղթ և ստորագրութիւն նորա անսխալ հայերէն գրեալ ի 28 յանուարի (առ առաջնորդն կաթողիկ Հայոց Կարնոյ, յորմէ խնդրէր ձէթ ի պէտս միւսոնի և հիւանդաց իւղոյ օրհնութեան): Ի Պարմայէ կոչէ զնա (a Parma) և կղեմէս ԺԱ յընծայական թըղթին առ Շահն (15 յունիս, 1709), աղաչելով զնա ընդունել զարքեպիսկոպոսն և խնամ տանել կաթողիկաց քրիստոնէից հպատակաց իւրոց, և առանձինն Քարողացն: — Առ որ հոգացաւ Ս. Ժողովն առաքել և ընծայ պատշաճաւոր 200 վահանակաց արժէիւք, զոր և ընկալաւ ի Վենետիկ վերոյիշեալ նուիրակն Միաբանողաց<sup>1</sup>: Ի նմին ամին կարգահայրն (Քլոքէ) կարգեաց գաւառահայր Հայոց զՀ. Աննիոյ Սմոլենսքի, որոյ մականունն

յայտ առնէ զհայրենիան, և էր ի Լէոպոլտոյ, ուր բազմութիւն գոլով Հայոց, ի զէպ է թէ ուսեալ էր անդ և զլեզու նոցին, զի վկայէ կարգահայրն զնմանէ հայագէտ լինել (8 յուն. 1709). ընդ նմա երթային ի Հայս և երկու կրօնաւորք ի նմին (Լէոպոլտ) քաղաքէ, և Հ. Գրիգոր Կոլլինար ի Հռովմէ: Ի թղթի աստ ծանուցանէ կարգահայրն և զայն, զի և ի շահասեղանս դքսին Պարմայ կայր գումար ինչ վանորէից Միաբանողաց<sup>2</sup>:

Ոչ է ինձ յայտ չափ ժամանակի եպիսկոպոսութեան Պետրոսի Մարտիրոսի և մահուան նորին. (որոյ է այսօրինակ կնիք հարեալ ի մուրհակի ուրեք. է որ համարի




120. Կնիք Պետրոսի Մարտիրոսի.

յամի 1722 յաջորդեալ զնա Արգանցելոյ Ֆինի իտալացւոյ ի Պարիսայ, սակայն վկայէ ծանօթ ոմն նորին Կարմեղական կրօնաւոր ի Սպահան, յամի 1738, զի երկիցս խնդրեցաւ նա յեպիսկոպոսութիւն Եթովպոյն Նախաւանու, և ոչ միայն հրատարեաց, այլ և խելայեղութիւն կեղծաւորէր՝ զի մի բռնադատիցի յայն: Թերեւս այլ ոք եկաց յետ Պետրոսի և յառաջ քան զԴոմինիկոս Սալվինի իտալացի ի Լոդի քաղաքէ, որ վերջին եղև արքեպիսկոպոս գաւառին, ի 1732 ամէ՝ ցիսարիանումն կամ աւեր վանորէիցն յամի 1757: — Մի միայն թուղթ պապական առ թագաւորն Պարսից ծանօթ է ինձ յայս միջոց ժամանակի, զՄիաբանողացս. այն է կղեմայն ԺԲէ յամի 1737 (յուլիս 17), յորում Նատիր Շահ Թահմազ – զուլի յինքն շորթեալ էր զթագաւորութիւնն, յետ բազում վրդովմանց աշխարհին, և ոչ սակաւ վտանգաց Քաւառին Հայոց, (որպէս նշանակէ Քահանայապետն ի թղթին), և ոմանց մահ իսկ ի սրոյ և ի սովոյ, քանդումն և այրումն տանց և եկեղեցեաց, այլոց թաքթաբուր պանդխտութիւն, և այլն<sup>3</sup>. և աղաչէ թեթեւացուցանել զգլխահարկն, և մարդասիրել ի գաւառահայրն Հ. Ալեքսան Ալեքսիանոսեան, որ զայր անդր ընդ Հ. Պետրոսի Յովիաննիսեան: — Հայրս այս Ալեքսան Ալեքսանեան (Alexius Alexij, Alessio Alessi կամ Alvisi կոչեցեալ ի լատին և յիտալական գրուածս), մի ի գլխաւոր Միաբանողաց առաջնոյ կիսու ԺԸ դարու է. յառաջին ամեն էր վանահայր Շահապունեաց, և նովին պաշտամամբ կարգեալ ի Միաբանիցն գործակալ վան հասութից նոցին առաքեցաւ ի Վենետիկ, որպէս դարձեալ և

<sup>1</sup> Որ և ստորագրէ մուրհակին, յ'9 նոյեմբ. 1709. « Վերոյ ք գրեալ երկգործիւր 29 տակաւն յիս խասու... Պողոս զէ Ա. բրիւամ. այս իմ ձեռացայգէրս սյ. ինձ զապուլ սյ:

2 ... Io fò il possibile per ritirare dai ministri del Ser.<sup>mo</sup> di Parma 200 Scudi romani dovuti di frutti scorsi a favore della Provincia d' Armenia.

3 Aliqui ipsorum fame, alii ferro absumpti, reliqui incensis domitibus dirutis, expilatisque templis, dispersi, profugi, errantes, vitam omni morte duriorem vivunt, una cristiana caritate istic detenti, ecc. ne Catholici Armeni, quos rerum sacrorum cultu instruere consueverunt, ope sua pœnitus destituantur, etc.



յամս 1712 և 1718, յորս նոյնպէս վանահայր գորով Եահապունեաց՝ եկեալ էր ի Վենետիկ, և ի յետնումն նուազի փոխանակ իւր կարգեաց զկոմսն Ստեփ. Եէհ-րիման (19 փետր. 1719). իսկ յերկրորդումնս ի դառնալն ի հայրենիսն (1714) նաւարկութեամբ, ի վտանգել նաւուն մերձ ի Դուրացոյ, (որ մտեալ յայլ նաւ ի մերձենալն ի Թեսաղոնիկէ՝) մատնեցաւ ի ձեռս յելուզակաց, հանդերձ այլվք ընկերօք, և միայն կինացն չընորհս գտեալ՝ յետ լիանաց, կապտեցաւ և ի հանգանակեալ դրամոցն, ի տրից Հաւատաստիւն ժողովոյն և այլոց, զոս յայլ լինից՝ և 600 ունկար ոսկւոյ, զոր տանէր ի պէտս գաւառին և եպիսկոպոսին: Դարձեալ յամի 1729 գաւառահայր գորով եկեալ էր ի Վենետիկ. ուր ի գանձարան ոսկւոյ և արծաթոյ եղ 3000 դուկատ ի շահ 4%, և մշտնջենաւոր գործակալ կարգեաց զվանահայր Դոմինիկեանց քաղաքին. քանզի ի մեռանել նախորդ գործակալին (Հ. Գալլոյ, 1724) գաւառահայր ժամանակին Մեդիոլանեցին Հ. Բեռնարդոս Պորկովի որ և Ֆէրտի. նանդ կոչի՝, և ամենայն վանահարքն խնդրեցին ի ծերակուտէն Վենետիկոյ այնուհետեւ և առ յսպա՝ վանահոր յիշեալ վանացն լինել իւրեանց գործակալ և երեսփոխան. և ստորագրողն (ի 22 յուն. 1725) են, յետ իտալացի գաւառահորն՝ հայագիրք այսոքիկ.

- « Ես Ապարնեայ վանից մեծայորս Պ. (Պատրէ, Հայր) Թումասս, որպէս ի վերոյ.
- « Ես Ճահկոյ վանքի մեծաւոր Ֆր. Յովնաննէս.
- « Ես Եահրունեաց վանից Պատրի Գրիգորս.
- « Ես Ֆր. Ազարեայ Ղարայղուչոյ վանից.
- « Ես Եահրունեաց վանից մեծաւոր Տէր Մադաթեայ.
- « Ես Քրնոյ վանից մեծաւոր Պ. Թումասս.
- « Ես Գանձակայ վանից մեծաւոր Տէր Պետրոս.
- « Io Fr. Domenico di Abraconis, affermo.
- « Io Fr. Domenico Maria di Lodi Superiore Co- scason.

« Ես Ֆր. Ակոբ կթկոյ վանից մեծաւոր »:

Որոց վաւերութեան վկայեաց ի Վենետիկ Հ. Յովսէփ Զաքարեան ի նոյն Հայոց գաւառէ, որ կայր յայնժամ ի վանս մի Դոմինիկեանց (ի Sulle Zattere Թաղի քաղաքի):

Ի միւսում ամի, այն է 1730 նոյն Հ. Ալեքսան տպագրեաց ի քաղաքի անդ զգրքոյն ժամք կարգի անուանեալ, իբրեւ ժամագիրս տօնից Սրբոց ոմանց, յորում կոչէ զինքն « Լոյս ւածող սորա՝ Ֆր. Ալեքսանս Ալեքսանսոսեցի, ի գիւղաբաղաքէն Ճահուկու, և որդի Եահրայնեաց վանից. ամի Տեառն ՌՁԼ »: — Յետին յիշատակ Հօրս էր ի վերոյիշեալ Թղթի Քահանայապետին առ Եահն Պարսից, յամի 1737. Նոյնպէս յիշեալ գաւառահայրն Պերկովի ի միւսում տարւոյ (1738, ապր. 13) գորով ի Ֆերրարա ի վանս կարգին իւրոյ, զրէ հայերէն վկայութիւն ուղղութեան Թորոյ Գեորգայ վարդապետի

1 Թերեւս սխալմամբ վկայից՝ յիշեալ ստորագրութեանցն: Սա ինքն Պերկովի յամի 1735 զրեալ է վկայութիւն ուղղաբանութեան զորս վարդապետի միոյ. « Ես Պատրի Պեռնարտոս Պերկովի, ի կարգէ Տօմինիկեանց, երբեմն առաքելական քարոզիչ

կ. Պօլսեցոյ առ Սարգիս Ղալֆայ որդի Համի Գեորգի. « Ես Պատրի Պեռնարտոս Պերկովի ի կարգէ Տօմինիկեանց, երբեմն առաքելական Քարոզիչ և գաւառահայրն առաջնորդ Գաւառին Նախնջեանու »:

Նշանաւորք գտան գործունէութեամբ և զրոց հրատարակութեամբ և երկրքին Հարքն Ճահկեցիք, Պետրոս Փեռլիւան և Գրիգոր կուլնար. առաջինն տայ ծանօթս զանձնէ յիշատակագրելով ի ձեռագիր մատենի ուրիք յամի 1703. « Ես Ֆր. Պետրոս անպիտան կրօնաւորս ի կարգէն Քարոզողաց ազգաւ Հայ, ի Մեծէն Հայաստանոյ, ի գաւառէն Նախշուանոյ, ի գեղջէն Ճահկոյ, ի յայս սուրբ մայրաքաղաքս Հոսմ վանս ուսման, յամի փրկարար Մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՌՋ... և մնացի աստ ի մեծ վանն Քարոզողաց որ կոչի Մինիրվայ, մինչեւ յամին ՌՁԳ (յուլիս 18)... պատճառաւ զալտեան պատուականագուսն յեղի Տեառն Ստեփանոս Երևան արհիեպիսկոպոսին աստ, վանս ձեռնադրութեան իւրոյ վերասացեալ գաւառին », և այլն: Ի նմին մատենի յաւելու գրել շափաքերական բանիւ եւս.

- « Կամիմ զի լիցիք դուք եղբարք
- » Մարմնով առողջ հոգովով յօժարք.
- » Ինձ եւս եղիցիք օգտակարք
- » Թշվառականի եղկելոյս:
- » Ոչ հրամանօք այլ մաղթանօք
- » Խնդրեմ ի ձէն՛ աղաչանօք,
- » Իսկ ընկալիք յօժար կամօք
- » Յանձնել զիս յաղօթըս ձեր:
- » Այլ ձեզ փոխարէն հատուցէ
- » Որ զպէսպէս զաղտըս սրբէ,
- » Տէրն այսինքն, որ փրկիչն է,
- » Ի կապանոց զձեզ ազատէ:
- » Պետրոս անուամբ Ճահկեցի
- » Զիդք բանս աստ գրեցի,
- » Յամի Տեառն Յիսուսի
- » Հազար եօթն հարիւր և երրորդի »:

Երկրորդն յիշի նախ յամի 1709, որպէս նշանակեցաք ի վեր անդր, ընդ Մմուլնաքի գաւառահոր ի հայրենիսն երթալով, և Թուի ընդ նմին կամ սակաւօք յառաջ զընացեալ և Հ. Պետրոսի ուսումնակցին. զի յերկար և ի կարեւոր յիշատակարանի յամագրոց իւրեանց զոր տըպագրեցին ի Վենետիկ յամի 1714, ասեն. « Յետ դառնալոյն մերոյ ի յուսմանց ի համալսարանէն յարեւմտեան՝ ի գաւառն մեր, տեսեալ զնուազութիւն սրբոյ մատենիս. ճանաչելով ոչ պատճառեալ ի հեղձութենէ սրբակաց կրօնաւորացն այնոցիկ... այլ ի շքաւորութենէ և յանկարութենէ գրելոյ և տպագրելոյ, վանս ծանրութեան լծոյն հարկի որ ի վերայ կայ. ուստի... ընկալաք զհրամանն ի գաւառական և ի վանական առաջնորդաց, և ելեալ ի գաւառէ և յերկրէ մերմէ... դիմեցաք ի կողմանս արեւմտեան, ոչ սակաւ ծախիք

» և Գաւառական առաջնորդ գաւառին Նախնջեանու, մտադրութեամբ ընթերցայ, և այլն: Գրեցաւ ի Ֆերրարայ քաղաքին, ի մէջ վանքին մերոյ Սրբոյ Տօմինիկեան. Թուին Քրիստոսի ՌՁԼԵ. ապրիլի ԺԺ »:

« և աշխատանք ճանապարհի... ի Հոսմ, ուր հնգամայ  
 « ժամանակաւ աշխատեցաք սակա հրամանի տպագրու-  
 « թեան սուրբ գրքոյս, զոր և ընկալաք իսկ յառաքելա-  
 « կան իշխանութենէ և Սրբոյ Ժողովոյն, և զօգնութիւն  
 « ինչ ի բարերարաց: Յետ որոյ դարձաք ի Վենետիկ, ուր  
 « սկսաք զտպագրութիւն մատենիս, թուին Փրկչին 1713,  
 « յամենան գեկտեմբերի, մեծաւ ճգնութեամբ. մինչ զի  
 « եւս հարկ եղև զորոյն կրկին անգամ գրել, և մեծաւ  
 « զգուշութեամբ ըստ ամենայնի և ամենայն համաձայնել  
 « ընդ լատին Ժամադրոյն կարգին Քարոզողաց, նորոք  
 « տպեցելոյն. ըմբոն համարեմիք յիշել ի օրբանուէր ա-  
 « ղօթս զամենայն բարերարսն, որոց ողորմութեամբք և  
 « զոյիւքն սկսաք զսուրբ Գիրք», և եւս զամենայն աշխա-  
 « տաւորս սորա՝ մանաւանդ զբրտնալան առաքելական  
 « Միսեոնարն զՎերապատուելի Հայր Խաչատուր աս-  
 « տուածարան վարդապետ Էրզրումեցի. որում յան-  
 « ձնեալ էր ի Սրբոյ Ժողովոյն զվերատեսչութիւն և  
 « զուղղագրութիւն սրբոյ մատենիս ..... Աւարտեցաւ  
 « տպագրութիւն սուրբ մատենիս... յամի փրկչին 1714.  
 « հոկա. 10 »<sup>1</sup>.

Յետ 14 ամաց (1728) վերստին տպագրեցաւ անդ մա-  
 տենան հանդերձ Միսասյիչ (Պատարազամատոյց), քըն-  
 նութեամբ նորին Խաչատուր վարդապետի և Մխիթա-  
 րայ Աբրահոր, որոց յանձնեալ էր Ս. Ժողովն, և վերըւ-  
 տին յերկրամաք թարգմանութեանն ի Խօշկաչիներցի  
 Միսեոնարէ, որ թաքուցանէ զանունն, թերևս իցէ Հ.  
 Թովմաս իսավերտնց, որ յայնժամ երիտասարդ էր  
 24 ամեայ. հայր նորա և ինքն իսկ յետոյ տպագրեալ  
 են այլ եւս գիրս: — Յետ աւարտման առաջնոյ տպա-  
 գրութեան Ժամագրոցն յերկրորդում ամի (1715), նոյն  
 երկրորդն Հարց տպագրեցին ի նմին քաղաքի Համաօտ  
 Գրիստոնեակյան վարդապետոքիսն: — Հ. Գրիգոր յետ

20 ամաց տպագրութեան ժամագրոցն (1735) էր ի Վի-  
 տերպոյ քաղաքի ի վանս կարգին Քարոզաց (Madonna  
 della Quercia), և ի վեց ամաց հետէ պարապէր ի Թարգ-  
 մանել, որպէս գրէ առ Մխիթար Աբրայ (26 մարտի).  
 « անպատմելի աշխատանք<sup>2</sup> Ֆրանկաց Այստառոյն, որ  
 « կոչի Ֆլոս Սանքթորում (Flos Sanctorum, Մաղիկ  
 « Սրբոց), կամ Լէգենդարիօ (Legendario, Ընթերցա-  
 « յան).... ոչ շատ գրարար և ոչ շատ աշխարհաբար,  
 « զոր օրինակ որպէս Սաղմոսի Մեկնիչն կամ Թէ Ա-  
 « ռաքէլ վարդապետի Պատմութիւն »:.....

Յայս միջոց ժամանակի յիշին եւս Հ. Պետրոս Ղօ-  
 ըան Ջահկեցի, որ յամս 1719-24 գնացեալ յԱմերիկա  
 ի դրամատոգով, և կացեալ անդ ամս երիս<sup>3</sup>, ի հանգա-  
 նակէն 3000 դուկատ եդ ի շահասեղանս Վենետկոյ,  
 ուր և յիշ գումարն յամի 1758, և 1772 յանուն նորին.  
 ինքն յիշի եւս յամի 1758: — Հ. Գիմնիկոս Ապրակու-  
 նեցի, որ յամի 1723 բերէր ի Հոռովմէ ի Վենետիկ ըզ-  
 օրբագրեալ թարգմանութիւն Միսասյիս. և յանուն իւր  
 եդ անդ 1500 դուկատ ի շահասեղանս, որ և յիշի  
 յամս 1739 — 59: — Հ. Գիմնեսիոս Ջահկեցի (1740),  
 որ թարգմանէր զպատմական զործս ինչ բազմազմուտ  
 Հիւեդ եպիսկոպոսի Աւրանչայ:

Է. Մինչդեռ սղա յօտարութեան ջանային յապահովել  
 զհասոյթս վանորէիցն, տեղիքն ոտնակոխ լինէին զօրաց  
 Պարսից՝ ի խաղալն նոցա ընդդէմ Օսմանեանց, յաւուրս  
 Նասիր Շահի, և ոչինչ օգտէր աղերս կղեմայ (ԺԲ) առ  
 խտտասիրտն այն կամ առ ինքնազուգն զօրավարսն և  
 կողմնակալս. վասն որոյ խորհեցան վանահարքն հանել ի  
 վենետիկեան շահասեղանոց զգումարս ինչ իւրեանց. ա-  
 ռաքեցին անդր զՀ. Ազարիա Ակուան, որպէս թուի  
 երբեմն վանահայր Գարազուչի. որոյ հասեալ ի Վենե-  
 տիկ յետ եօթնամեայ ճանապարհորդութեանն (10

1 Չոս յայլոց՝ 77 օրեակս ի գրոցս յանձնեցին առ զործակալն  
 իւրեանց (Հ. Գալլոյ) առաքել ի Հայս, որոց ժախք կազմին եղին  
 55 գուկոտ, ճանապարհին ի Վենետկոյ մինչև ի Հայս 50 գու-  
 կոտ. իսկ զմարտն ի Վենետկոյ ց՛կ. Պօլիս՝ ազատ արար Հաս-  
 րակապետութիւնն:

2 Որոյ պատճառ մի ասէ վասն « պակասութեան լուսոյ աշացն  
 յ իմոց, քանզի շատ նուազեալ է, սակա տեսանեմ »:

3 Ի մտադաշխեայ կողս թարգմանութեան միասլի Լատինաց  
 դասնի ձեռնադիր ճանապարհադրութիւն Ղօրանի, այսպէս.

« Թովմե ՌՁԺԹ (1719) հոգանքերի ԺԲ օրն մասնք նաւ,  
 յ վասն երթալոյ Վանայտին. ԺԱ օր ֆորպաղ (Գորֆու) նըս-  
 տեցինք. նովեմբերի 2 հասանք Վանայտակ. Գ օր Մալայ-  
 մուք (Malamocco, կղզեակ) կացինք. նովեմբերի Ժ եկինք  
 Վանայտակ կուշտին. արկաթ զցեց, նստեց նազարէթն. կամի  
 (նաւուն) մէջ կայցինք: Դեցեմբերի իԱ օրն ելանք կամէն (նա-  
 ւէն) գնացինք Վանայտակ մեր վանքն, որ անուն է Սան Զվան  
 ֆաւլու այ. Բ ամիս տեղն կացինք:

Թովմե ՌՁԻ. փետրուարի ԺԸ, Վանայտակէն ելանք. մարտի  
 ԺԳ օրն հասանք մեծն Հոսմ. կացինք ԼԸ օր: Հոսմս ելանք ժողով  
 Ե օրուսն հասանք Ալեկոնայ, մայիսի աւաշինն. տեղն կացինք  
 իմ առաք. Ալեկոնայ ելանք ժողով գնացինք Ճենովայ, Գ օրուսն,  
 մայիսի իԵ օրն. մին ամիս կացինք Ճենովայ մեր վանքուսն, որ ա-  
 նուն է Սոյս ֆոտիս: Սուրբ Յովանէս Մկրտիչի տօնին հասանք  
 նաւ, առ ի երթալ Ըսպանիայ: — Յուլիսի ԺԲ օրն հասանք Ըսպա-  
 նիոյ, առաջի քաղաքն որ է Ալիսնայ. Է այս քաղաքին մեր վան-  
 քում օժտալ արինք ուր օր. ապա ելանք կալէրօվ, Դ օրուսն հասանք

Սան Ֆելիչ, մեր վանքն. տեղ կացինք Ե օր. ապա գնացինք Վալիս-  
 յեայ. յուլիսի իԲ գնացինք Վալիսիոյ. որ է Սուրբ Վէսենտիոսի  
 վանքն, որ է մեր վանքն, և պատարազ մատուցինք Սուրբ Վէ-  
 սենտիոսի խուցուս. և Պոստինք այս վանքուսն ԼԲ յաւուր, վասն  
 ժողովի. և ելանք այս վանքէն Սեպտեմբերի 2 յաւուրն դեպ ի  
 մայրաքաղաքն Մոյսրիզ: — Վալիսիոյ Ը օրուսն հասանք Մա-  
 տիլ. Սեպտեմբերի ԺԳ օրն Մոյսրիզ. մին ամիս և Դ օր կացինք  
 մեր կարգի օսպիցուսն. յետ նորա գնացինք Ե օրուսն Սոսիայ (Սե-  
 կովիս), մեր վանքն, որ է առ՛ի վանքն Սուրբ Նայրն մեղոյ Գովե-  
 նիկոսի, որ Սուրբ Հայրն Գովինիկոս Սպանիայ յերկրուսն սանա-  
 նել էր սրբազան կաղք. և պատարազ մատուցինք ի վերայ բեմին  
 և օթեւանին, որ սուրբ մեր Գովինիկոս բազում ժամանակ այս վե-  
 րորդեալ խցուսն կացել էլ: Եւ տեսինք Սպանիայ Թաղաւորն ֆէ-  
 լուս շինիերոքոն և Թաղուհին՝ մեր վանքի դասին: Այս վանքուսն  
 ԺԴ օր. որ է Թովմե ՌՁԻ. հոգանք (ԻԸ) Սեմեթի և Յուզպի  
 տօնին: ..

Թովմե ՌՁԻԲ յունվարի ի մասնք ի երկիրն Փորթուգալի, որ  
 է Մերթուայ, ի վանն Սուրբ Իսրայէլ Ֆրանցիսկոսի. Հայր Պա-  
 տրի վարտեանն էր Պատրի Պետրոս Սանդայ կատարինայ:

Թովմե ՌՁԻԳ, յուլիսի Ե օրն մասնք նաւ և Թ օրուն ելանք  
 ճանապարհ. մէկ օրէն յեան՝ էլ երկիր չի երևայ. մինչև Թ օրուսն  
 հասանք կոնտիլայ (կղզին). մէկ օրէն յեան էլ երկիր չի երևայ,  
 մինչև Փօրթ Ը-իտօ (Porto Ricco). վերջն կի օրուսն հասանք  
 Հնդկաստան (ՍԱմերիկա). առաջի քաղաքն Լայ Մրոյ Գրոսզ:

Ես Ֆր. Պետրոս Ղօրան և Զվանն Պրեզիդիսլթօր ճենիերեալ  
 գնացի նոր Հնդկաստան. Պոստին գեղն Գ տարի »:



հոկտ. 1743), գրէր յարգելանէ զգուշատանն առ Մխիթար Արքայ. « Այս ներկայ ժամանակիս՝ Պարսից... »  
 « Թագաւորն՝ եկաւ մեր գաւառն, բազում հարկս ա... »  
 « առ հնազանդելոց, շատ և շատ զուլմ և նեղութիւնս »  
 « տվաւ քրիստոնէից ժողովրդեանն, մանաւանդ մեր »  
 « ուղղափառ աղքատ Պրովէնցի (Քաւառի) վանօրէից »  
 « և կարգաւորաց. որ վանքերն ամէն բազում պարտուց »  
 « մէջ անկան, և ոչ ունին բաւականութիւն ապրելոյ, և »  
 « բազում վիշտս և նեղութիւնս են գրում: Եւ վասն այ... »  
 « սորիկ ժողովեցան մեր Պրովէնցի մեծաւորքն և ձայ... »  
 « նաւորքն խորհրդով և կարգով, անարժանս վաբիլ և »  
 « Պրէտեքաթօր շինեցին, ուղարկեցին այս յերկիրս որ »  
 « գամ ի վենետիկ . . . . մեր նախնեաց թողեալ ստակ »  
 « ունեմք, առնեմք և տանեմք առ Պրովէնցն մեր, և »  
 « տամք վանօրէից պարտքն և պակասութիւնն, և ա... »  
 « զատվիւք ի ձեռաց անսրենաց: Ետ նորս եթէ Աս... »  
 « տուած կամենայ պիտի աստից երթամ ի Հռօմայ, »  
 « վասն ծանուցանելոյ մեր Չենեարայն մեր կարգի և »  
 « վանօրէից գրեալ ցաւ և նեղութիւնն, և այլ ամենայն »  
 « որպիսութիւնն հասկացցնել և իմացցնել. ապա ետ »  
 « դառնալ Ալեկօնա, և գնալ գաւառն մեր »:

Մինչև երթեալ նորս ի Հռօմ, հարցաւ անտի (25 յան. 1744) ի կարգահօրէն (Հ. Թովմա Րիբոյ) ի ձեռն միոյ ի վենետիկեցի Դոմինիկեան Հարց, յորոց վանս կայր, եթէ ունիցին Միաբանողքն ի Սպահան վանատուն և վարժարան, ոչ միայն նորնձայից իւրեանց այլ և աշխարհիկ մանկանց, որոց վասն Հաւատաստիւած ժողովն յամէ 1699 մինչև ցայն ժամանակ ամի ամի տայր 150 վահանակ. ոչ շատացեալ պատասխանեալն կրկին գրէր (15 փետր.) կարգահայրն առ նոյն Հայր՝ տեղեկանալ ստուգագոյնս յԱլեկանէ, և ի Հ. Պետրոսէ Ղօսան (զոր ընտրեալ էր ի գաւառահայր Նախճաւանի), և գերկոսին եւս փութացուցանէր դառնալ անդր, ոչ կարելով ընդունել նպաստ ինչ ի Ս. Ժողովոյն: — Ոչ միայն Միաբանողքն այլ և լատին կարգաւորք նեղէին յայնժամ ի Պարսից. վասն որոյ գրէր Բենեդիկտոս ԺԴ մեծիմաստ Քահանայապետ՝ առ Նատիր Շահ, (30 յուն. 1742) զթալ ի նոսա, և յաւէտ ի վեղարաւոր միանձունան և ի հաւատացեալս կողմանց Վրաց, Քանձակայ և Սպահանու, և վանահօր մայրաքաղաքիս (Հ. Դաւիթան) քամալներս մատուցանէր թղթով (14 սեպտ. 1743). յորմէ յայտ է գի և վասն Միաբանողաց նոյնպէս հօգայր և հնարէր. և յայտնապէս երեւին խնամք նորս և հոգ ի թղթին զոր գրեաց (10 ապր. 1748) առ Դոմինիկեանս գումարեալս ի Պոլոնիա յընտրութիւն կարգահօր, եթէ ի ժամանակի վրդովման աշխարհին Պարսից յետ սպանման Նատիր Շահի մինչ գաւառն Նախճաւանի՝ յորում ուղղափառ հաւատք մերձ էր ի կորնչել, պահեալ « բար... » գաւառեալ էին ի 400 և աւելի ամաց, սաէ, վաստա... » կովք և հեղմամբ արեան ». և երդմնեցուցեալ յանուն հնազանդութեան՝ զամենայն փոյթ ի վար արկանել ի զարգացումն գաւառին, ըստ սահմանաց ժողովոց նոցին,

մանաւանդ որ յամս 1644 և 1694 վճռեալ էին, առաջումն աջողադոյն նորնձայից Միաբանողացն յիտալիա ի կատարումն վարժից և վերադարձ ի հայրենիս իւրեանց <sup>1</sup>: Այլ քաղաքական պատահարք աշխարհին Պարսից՝ ոչ ներեցին ըստ ըղձից Քահանայապետին վըճարել. յարուցմունք գահաօրոյց ի վերայ իրերաց և բանակաց նոցին, և ինքնազուլս տիրապետութիւնք ի կողմանս կողմանս ի կէս ԺԸ դարու, չար քան զառաջին ժամանակս ապականեցին և զգաւառն Նախճաւանի, և զգիւղորայս և զվանորայս Միաբանողացն. և ոչ միայն ընչից և շինից վնաս և աւեր հասուցին, այլ և կենաց և կրօնից. և զի ոչ ի մերձաւորաց ազգայնոց և ոչ յօտարաց գոյր յոյս օգնութեան, ի վերահաս տագնապ ժամանակին, խորհեցան զխաւորքն ապրեցուցանել նախ զօգիս, ապա և զկեանս և զինչ՝ որչափ ինչ մարթ էր, և բարեաւ — մնա ասել հայրենեաց իւրեանց, սւր զամս 120 գրեալէ անդու հալածանք և հարստահարութեամբք՝ պահպանէին զաւանդ դաւանութեանն՝ զոր ընկալան յերանելոյն Բարդուղիմեայ և ի Յովհաննէ Քոնեցոյ, և զանքակ միաբանութիւն ընդ Հաօվմէական եկեղեցոյ: Արքիատիրս և զգօն գաւառահայր ժամանակիս՝ Հ. Թովմաս Իսավերտունց որ բազում վաստակօքն սիրելի իւրայոցն և պատկառելի էր օտարաց, և նոցին իսկ այլադէնից, (յորոց և զոմանս մկրտեալ, և ի նահատակութիւն իսկ ընծայեալ էր զոմն ի զխաւորացն, բազում հնարագիտութեամբ և հաւատով), նախ զմեծատունան՝ ընչիւք նոցին հեռացոյց ի բաժին Օսմանեանց, և ապա զեպիսկոպոսն Սալվիեի, յետոյ զամենայն կարող և առողջ անձինս: Իրազեկ այսոցիկ եղեալ տիրողաց տեղւոյն՝ կալան և ի բանտ սրկին զնա և դատապարտեցին ի մահ. այլ յաջողեաց նմա ոչ միայն զերծանել, այլ և զերծանել՝ բաց ի սակաւուց ոմանց՝ զամենայն մնացեալն առկարս, զծերս և զմանկունս և զկանայս, և եռամեայ զժուարակիր և տառապագին ուղեւորութեամբ հատանել անցանել ընդ բովանդակ Մեծ և Փոքր Հայս, և հասուցանել ի ծագ Փոքուն Ասիոյ, ի Զմիւռնիոս քաղաք, ոգիս աւելի քան զհազար. ընդ որս եկին և սակաւք ոմանք ի Հարց մնացեալ վանօրէիցն. այլք ոմանք ցրուեցան յարեւմուտս, և ոմանք մնացին ի Հայս: Ի Զմիւռնիա եկաց և յաջորդն Թովմայ գաւառահայր, իտալացին Էլսեքիոս Ֆրանցոզինի, որում յաջորդեցին և երկուք ոմանք նշանակեալք ի ցուցակին. իսկ հօւսկ յետին Բենեդիկտոս Ումետ կամ Ումուտեան հայազգի, ոչ գաւառահայր կոչմամբ յիշի, այլ Սինդիկոս (Sindacus) գաւառին:

Այլ յորում ամի եղեւ գաղթ սոցս, կամ զհարգ և սրով կարգաւ տեւեաց տակաւին ցամա 30 կամ աւելի և պակաս կրօն Միաբանողացն ի Զմիւռնիա, և երբ և որպէս իսպառ դադարեաց վանական միաբանութիւնն, զայսոսիկ ոչ կարացի ստուգել: Ի դիւանս վենետկոյ մինչև ցամա 1782 գտանին մուրհակք պահանջից և տրից առ այլեւայլ Հարս կարգին, որք հրեմն զտակօսիս և

1 ... Cattolica fides.. in Provincia Naxuana Armeniæ Najoris confirmata, et per quadragentos et amplius annos tot laboribus atque etiam effuso sanguine con-

servata et aucta, ob tot elapsis annis in Persia concitatis et tandiu protractas seditiones rerumque publicarum perturbationes, prope ad interitum preparaverit.

երբեմն զդրամագլուխս իոկ խնդրեն և անցուցանեն ի Զմիւռնիա. ակն իակ ունելով վերադառնալ և վերականգնել զլքեալ դաստակերտսն ի հայրենիս իւրեանց:

Ջառաջինն ի սկիզբն 1758 ամի (27 յանու.) ժողովեալք ի միասին ի Զմիւռնիա ընդ Ֆրանցոզիների գաւառահօր՝ Հարքն Յակինթ Աղազար աթոռակալ, Ազարիա Ալուան ի Քոնոյ վանից, Հ. Թովմաս իսավերտենց ի Խաչկաշինէ, հաւանութեամբ բացակայիցն Հ. Ալեքսի կուլինար և Հ. Օգոստինոսի Բանի, ընտրեցին վերջոստին իւրեանց գործակալ զվանահայր Ս. Յովհանն — Պօզոս վանաց Դովինիկեանց վանետկոյ: Յետ երկուց ամաց (1758) Հ. Պետրոս — Յովհանն Ղօրան զ՝ 3000 դուկատսն յանուն իւր եղեալս ի շահ՝ փոխադրելով յայլ շահատեղան՝ ասիմանէր յետ մահուան իւրոյ անցուցանել ի պէտս Զահկոյ վանաց. նոյնպէս փոխադրէին և զ՝ 3000 դուկատսն Եւստակիոսի վանաց, և յետ ամաց (1769) զ՝ 1500 դուկատ դրամագլուխ Ալարիկունեաց վանաց զեղեալն ի Հ. Դովինիկոսէ<sup>1</sup>: Վերջին գրուած դիրացս է թուղթ Հարցն յ՝ 18 յունիսի 1783 ամին, յորում չիք անուն գաւառահօր, այլ Հ. Բենեդիկտոս Ումետ կոչի սրնդիկոս, Հ. Պետրոս Մարտիրոս՝ աթոռակալ, և Հ. Դովինիկոս d' Artiren. ոչ վանս այլ վանատան կոչն զրնակարան իւրեանց (Ospizio), և խնդրեն զի փոխանակ այլազգ դրամոց՝ վանետեան ծեղին ոսկիս առաքեսցէ գործակալն:

Յառաջին ամս պանդխտութեան իւրեանց յափունս Յանիականին՝ մինչ չեւ եւս էր հաւաքեալ անդր Հարցն ցրուելոց այսր անդր, այլ միայն ծերոց ոմանց տկարաց մնացեալ առ ժողովրդեանն, զրեցին սղբա աղերս առ Ս. Ժողովն (15 ապր. 1764), խնդրելով դարձուցանել առ նոսա զքաջ առաջնորդն իւրեանց Հ. Թովմաս իսավերտենց, որ գնացեալ էր յԱնկոնա (1763), պատմելով սրտառուչ բանիւք և կարեւոր գիտելեք զաղէտս իւրեանց և զողորմ վիճակ... « Ի ժամանակէն յերանելի » Բարթողմէոսի մինչեւ ցայժմ շնորհքն Քրիստոսի » պահեցաք զսուրբ հավատն ուղափառ ի յերկիրն Պարսից ի մէջ անհավատից. բայց վանս մեղաց մերոց բազմացան նեղիչք մեր, որ ոչ կարացաք տանել. վասն այսորիկ թողաք զհայրենի յերկիրն մեր և բնակու թիւնն մեր, եկաք աստ ի քաղաքն Իզմիռ, և մասն մի ի քաղաքն Թիրազիր (Թիւատիր), որ եմք թվով 700 « անձինք... Այժմ որք մնացաք մեք և առանց հոգեւոր մխիթարութեան, որպէս որդիքն Իսրայելի ասէին... Առ գետս Բարբրացոց սովեալ նստեաք. նոյնպէս մեք » եղկելիքս հոգեւոր բանիւ սովեալ կամք... մեք ոչ լամք » վասն պայծառութեան աշխարհին մերում, և ոչ վասն յայգետանաց և բուրաստանաց, ընչից և ապրանաց մերոց, զորս անդ թողաք. ոչ լամք վասն խանգարեալ եկեղեցեաց մերոց, նա և վասն պակասելոյն հովուաց

<sup>1</sup> Յամին 1763 փոխանակագրու անցուցանեն ի Զմիւռնիա 17.700 լիւրս վանետեան. ստորագրողքն են Սերգիս Pentillo գաւառահայր. « Յր. Ալեքսի — Ալուան. Յր. Օգոստինոս զի Բանի, և Յր. Թոստոս Բանի »: Ի միւսում ամի (1764 սեպտ. 18) անցուցանեն այլ ևս 4720 լիւրս, որոյ ստորագրողք են յիշեալ Գաւառահայրն, և Յր. Յր. Յովինիկոս Եւստակիոսի Սելուկիւն: և Դովինիկոս d' Arthiren?

մերոց: Զի արդ ոչ է ամենեցուն յայտնի, որ ի ժամանակի յերանելի Բարթողմէոսի որքան յերանելի պտղապայծառութեամբ առատանային ի յերկրի մերում, բազմացան սեղանք Աստուծոյ ըստ տեսեան Սրբոյն Ղրիզորի, հօտքն լուսակիզն, արօտքն դալարի, հովիւքն արթունք, լսողք քաղցրալուրք... (Ապա վասն մեղաց իւրեանց ասեն) յազթեցաւ ողորմութիւնն յարդարութենէն, և երարձ ի մեղացելոցս հոգու իրաւունքն և մարմնոյ խաղաղութիւնն... Թէպէտ մեղաք, այլ ոչ եմք յուսահատեալք յողորմութենէն Աստուծոյ... Աղաչեմք զի առաքիցէք մեզ խոստովա. նահայրս կամ քարոզիչս և ուսուցիչս օրինին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի աստ ի մեր յազգէս գոյ երեք կարգավորք, երկունս ծիր և տկար, որ ոչ ունին կարողութիւն հովուելոյ զմեզ. միւսն էլ հրամանաւ Պարսի Պրովէնցիալին մէկ Իտալիան կարգավորի հետ գնալոց են ի գաւառն Նախելանոյ, առ ի այց առնել և հովուել անդ մնացեալ ժողովուրդս, որք են թուով 60 կամ 70 անձինք. բայց մեք մնամք աստ որք և անմխիթար. Թէպէտ գոյ աստ երկու փառօք (Paroco, թաղերէց), բայց սոցա մէջ ոչ գոյ մեր հայ լեւուս գիտցող, զի ընտանիքն մեր կէսն այլ ուրիշ լեզու ոչ գիտեն, բայց միայն լեզուս Հայոց. ո՛ր պիտի սղբա խոստովա. նիլ, վասն որոյ աղաչեմք... պարգևէք մեզ մեր գավառի նորընծայքն որ յաժմուս կան ի Իտալիայ. մանաւանդ մեր բազմայայտատ և քարոզիչ Պատրի Թօմաս իսավերտենց, որ այժմուս կայ ի քաղաքն Անքոնայ, որ երկու տարի եղեւ հրամանով Հայր Զէնէնային գնաց, զոր ոչ գիտեմք զպատճառն. միայն զայս գիտեմք որ մեր ուղղափառ ժողովրդեանն մխիթարիչն և քարոզիչն նայ էր... կարգավորն մեր մեք անպիժ և անաբատ գետեմք, և կու վկայեմք որ այսքան ամ Հայաստան կամ տեղս մեզ հովիվեաց. ամենայն կողմանէ ոչ տեսաք արատ ինչ ի դմայ. կրկին անգամ խնդրեմք որ մեզ անմխիթար չի թողնէք... մնամք մեք հօտ առանց հովիվի, որպէս երկիր անլրդի, որպէս կերակուր անաղի... մնամք միշտ ի վերայ այսր վիժի հաստատ և անյաղթ մինչեւ ի կատարած աշխարհի. ամէն. — Գրեցաւ քաղաքին Իզմիռ, 15 յավուրն ապրիլի. 1764.

- » Օվանէս զի Դովինիկոս
- » Օվանէս զի Մուրատ
- » Թովմաս զի Մանուկրեկէնց
- » (Ալ) Բերթոս տի Մինաս
- » Յովանէս զի մահտեսի Պետրոս
- » Սիսկոս զի Գալուստ
- » Մկրտիչ զի Զաքարիայ
- » Ստեփան զի Մաթի
- » Բէնէթ զի Սավրիար

ren? Դարձեալ յամի 1769 նանն 5900 և 4130 լիւրս. ստորագրեն նոյն գաւառահայր և Հարք Թովմաս վիճիչ աթոռակալ, Բեյքիչոս Ուրտ. Դովինիկոս d' Arthiren. նոյնպէս և յամս 1772-3, յորս զատ ի վերայելոցք՝ ստորագրեն Հ. Պետրոս Մարտիրոս de Andrei, վիճիչն Լարօսա. — Ի գիւտեն վանետեան գաւառին և այլ ոչ սակաւ այսպիսի մուրհակք:

- » Ես Հանէս դի Միրզայ
- » Եղիա դի Հայրապետ
- » Դամինիկոս դի Մաթոս
- » Պողոս դի Դամինիկոս
- » Անանիա դի Ազարիա
- » Օվանէս դի Յաղմ էր
- » Փիոս դի Հեաղուպ
- » Կառլոյ դի Հերեջան
- » Դամինիկոս դի Պետրոս
- » Մանուկ դի Ազարիա » :

Յետ հնգից ամսոց (17 սեպտ.) յաւելուն, զի զաղերս աագիրս այս տարսն առ վիզարն<sup>1</sup> իւրեանց, և ոչ կամե-

ցաւ ստորագրել, ասելով.

« Այս ձեր խնդիրքն ես  
 » կու հոգամ. այս եղեւ  
 » պատճառն որ թուղթս  
 » մնաց տեղս մինչեւ ցայ  
 » ժամ: Վերոյիշեալ երկու  
 » տկար կարգավորքն վախ  
 » ճանեցան, և միուս յի  
 » շեալն գնաց ի յերկիրն  
 » Պարսից, մեք մնացինք  
 » լալով աչք և անմխի  
 » թար. մեզ այլ ուրիշ հո  
 » գացող ոչ գոյ. միայն  
 » դիմեմք առ հայրաթիւն  
 » ձեր, որ մեզ անմխիթար  
 » չի թողնէք, մեր հոքսն  
 » քաշէք: Վերջ բանիս » :  
 — Ստորագրեն հինգ ի  
 վերոյ գրելոցն:


Հաւանօրէն մի յերկուց ծերոց Հարցն վախճանե-  
 լոց՝ է Հ. Ազարիա Ակաւս,  
 որոյ ձեռնարկ գոյ ի մուր-  
 հակի խնդրոյ տոկոսեաց  
 իւրեանց՝ յամի 1763, այլ  
 յիրկորդումն (1764) ոչ  
 եւս գտանի ընդ այլոցն. միւսն թերեւս իցէ Հ. Պետրոս  
 Յովհան Ղորան:

Իսկ քազմաշխատն այն և արդիւնաւոր Հ. Թովմաս  
 Խսավերտինց, առաջնորդ գաղթականին և վերջապահ  
 համօրէն Միարանողաց կարգի, եթէ դարձաւ միւսան  
 գամ յայցելութիւն հօտին հանելոյ յանդօրր, ըստ խըն  
 դրոյ նոցա, ոչ գիտեմ. այլ այս յայտ է ինձ, զի էր նա  
 յԱնկոնա և ի սկիզբն 1767 ամի (ՅՑ) յանու. ուստի գրէր  
 առ յաջորդն Մխիթարայ Աքբահօր (Ստեփանոս Մելգո-  
 նեան տալ կրկին տպագրել 500 օրինակ ժամագրոց Ս.  
 Աստուածածնի « վանն մերոյ Նախիջեւանու և Ճահուկոյ  
 » գաւառի ուղղափառ Ֆրանկ ասացեալ ժողովուրդոց » .  
 զոր և ի յետագայ ամի տպագրեալ, գրէր ի յիշատակարաւ  
 նին. « Ես անպիտան և անարժան քահանայ և յետեալ

» ծառայ փառաւորեալ Կուսին, Պատրէ Թոմաս Խա-  
 » վերտեանց Խօշկաշինեցի, ի կարգէ Գարողաց Սրբոյ  
 » Հօրն Տոմինիկոսի և յազգէ Հայոց ի յիրկրէն Հայա-  
 » ստանու, ի գաւառէն Նախիջեւանու և Ճահուկու, նա  
 » և թռն նոյն վերոյիշեցեալ խօշայ Ազարիայի, որ-  
 » դի Բունիաթին, գոլով ի քաղաքն յԱնքոնա, մինչ  
 » էի հասակաւ 64 ամսոց լսէի և տեսանէի զՎերմեռանդն  
 » իղձս բազմաց, նա և անպիտանս տենչայի և բաղձայի  
 » մեծաւ փափաքանօք վերատին լուսածումն սուրբ մա-  
 » տենիս: Արդ յաջողութեամբ Տեառն... ի յամի կենա-  
 » րարին 1768... ի Վենետիկ. նորատպեցաւ սուրբ  
 » մատեանս, նոյն գաղափարաւ յորմէ տպեցաւ ի յամի

» Տեառն 1706 », ժախիք  
 հոր իւրոյ Բունիաթի:

Յետ այսր թուականի  
 (1768) Հայրն Խսավեր-  
 տենց ոչ եւս տեսանիկամ  
 յայտնի մեզ ի հասարա-  
 կաց կեանս. այլ թուի յետ  
 առաջնորդելոյ և յայսա.  
 հովելոյ զվիճակ իւրայոցն,  
 նոր իմն մովխարար գաղ-  
 թականութեամբ, ուր տե-  
 օաքն ի վեր անդր հաս-  
 տասեալ զվանատուն, և  
 ժողովեալ հարս Միարա-  
 նողս, հանդերձ գաւա-  
 ռասհարք և անդիկոսիւ  
 ցամն 1782, ինքն ոչ միայն  
 հին Հայրենեացն այլ և  
 նորոյն և բովանդակ աշ-  
 խարհի կրկին հրատարա-  
 կան տուեալ, մեկուտա-  
 ցեալ ի մենաստանի Ս.  
 Դամինիկոսի՝ ի նմին յԱն-  
 կոնայ քաղաքի, ներանձ-  
 նական կենաց և պատրաս-  
 տութեան հանդերձելոցն



131. Աղիտոս. (տես յէջ 216).

պարապելով իսպառ՝ ամս յոլովս, ի յագօւրդ « խորին մը-  
 » տաց սրտին »<sup>2</sup>. ոչ ելանելով բնաւ արտաքս ի կամաւոր  
 արգելանէն, բայց միայն ի դործ հոգևոր խնամոյ ազգայ-  
 նոց ոմանց աշխարհայնոց և եկեղեցականաց և կուտա-  
 նաց զերծելոյ յայն քաղաք. բանիւք՝ և առաւել եւս  
 օրինակաւն շինելով զամենեսին, և առտնին զվանա-  
 կանսն՝ յորոց միջի կեայր, յերկարակեաց եղեալ անցեալ  
 զիննսնամենիւք, ըստ մաքուր և ճգնագգեցիկ վարուցն  
 կնքեաց զկեանսն քաջահաւատ մահուամբ. ունելով յա-  
 ջում ձեռին զնշանն կենսունակ, և ի ձախում մտմեղէն  
 վառեալ, աչք պղուցելովք ընդ երկինս. յ' 19 դեկտեմբե-  
 րի 1704 ամի, և թաղեցաւ ի նոյն վանս: Այն ամ 165  
 էր ի հաստատութենէ կարգին Միարանողաց. և այս  
 հուսկ յիշատակ նոցուն հասեալ յիմս գիտութիւն:

1 Այսինքն, առ փոխանորդ գաւառահօր իւրեանց:

2 Իւր իսկ ասացուած է այս բան ի վերոյիշեալ Թղթին:

## Զ Ո Ւ Ղ Ա

159. Ի Շամալտինայ և անդր, ուր դադարեցաւ տեղագրութիւնս (յէջ 381), մինչեւ ցխառնուրդսն յԵրասխ՝ ոչ երեւի այլ շէն առ եզերքք Երնջակայ, որ երկուստեք զսպեալ ի լերանց, աստի յուսոց Կարուայ և անտի ի

կրաքարուտ կարմրագոյն և դեղնագոյն քարածեօից, երագասահ խոխոջանք իջանէ ի գետն մեծ, ի յառաջեալն ի գոգոյ հերձակտուր քարալիբին, արմունկն իմն նեղ գործելով: Ի հուսկ ասիւնս անդ Երնջակայ (առաւել յաջմէն) և Երասխայ, յարեւմտեան անկեանն, ի խորչս և ի խառնուրդս ջուրց և ժայռից՝ Թագուցեալ Թուի մի ի քաջանչան կայից հայկական ճարտարութեան և ճոխութեան, միանգամայն և սրտառուչ հան-



122. Ի Մանարձանաց Հին Չուղայի.

գիտարանի սեաւ դիպաց, զոր թերեւս անկ էր յարել ի պատահարն Անույ . այն ինքն է ճՈՒՂԱ կամ ճՈՒՂԱ, յայտմուտ՝ Հին մակակոչեալ, ի սակս նորաչէն սուանի միոյ (Նոր Զուղա) գաղթելոցն յիւրմէ յերկիրն Պարսից, որպէս և յայլագգեաց կոչի արդ էսքի Ճուլֆա . զի այսպէս յաւելուածով ֆ տարի անուանեն զայն, որպէս և ամենայն Եւրոպէացիք պէսպէս այլայլեալ գրութեամբք, Djoulfa, Giulfa, Iulfa, Zulfa, Julfa, Sulfa, Diulfa, Tulfa <sup>1</sup> Iula <sup>2</sup>, Chiulfa <sup>3</sup>, Zugba <sup>4</sup>, Usulfa <sup>5</sup> .

Ըստ աւանդութեան պատմութեան մերոյ՝ Հայկազնն Տիգրան ի բերելն ի Հայս զգերութիւն Մարաց՝ յետ պարտութեան Աժդահակայ, զտիկնաց տիկին նորին զԱնույշ և զյուլիս ի հարճիցն և յարբանեկաց՝ բնակեցոյց ի միջոցի Մասեաց և Նախճաւանի, և առանձինն յերիս աւանս, յորոց մի էր այս Զուղա . որոյ և անուն ի դէպ գայ օտարալիզու ծագման, զի ոչ լսեցուցանէ զհայկական պայծառ հնչմունս ժամանակին : Որ զիարդ և է, յայտնի անդստին ի վաղ ժամանակաց լինել ոչ վարկարար շէն, այլ առան բազմաբնակ, որպէս յիշ և ի միջին դարս, և ի յետինսն քաղաքաւան, և քաղաք իսկ՝ ըստ յոյովութեան բնակչացն ի ԺՁ դարու ի ծանօթ ժամանակի պայծառութեան իւրում . յորում՝ ոմանք աւանդեն 4000 տանց լինել ի նմին, և է որ 40000 բնակչոս ասէ, և ոմն 10000 տունս իսկ . այլք անմարթ ստեն այլք քանեաց տանել անձուկ տեղոյն, և առ նուազն համարին 2000 տունս . ապա թիւ 10 կամ 12, 000 բնակչաց՝ որ հասարակօրէն ընծայի նմին՝ ոչ է աւելագանց, գուցէ և շատ իսկ պակաս :

Յելս կոյս է դարու յաշխարհաւեր ասպատակի Արաբացուց, յամի 688, ընդ երկոցուն զուզակից աւանացն տուելոց ի Հայկազնոյն ի բնակութիւն Մարաց, որ են խորաւ և խօշակունիք, հազորդ գտու վնասու հարստահարութեանց նոցին . « զի զարսն հարկապահանջու » թեամբ խորտանգէին, և զկանայս զազրալից պղծու » թեամբ խորհէին խայտառակել . . . Ազդ եղեւ առ իշ » խանն Աշոտ՝ համբաւ չարեաց նոցա . և վաղվաղակի » հրաման տայր զօրացն ելանել ի վերայ նոցա . հարին » զամենեսեան սատակմամբ սրոյ, և զմնացորդսն վա » խըստական առնէին : Իբրեւ ետես (այլագգին) զհէնն » ի վերայ սաստկացեալ, հրաման ետ զօրաց իւրոց ըզ » զանձան ժողովեալ՝ ցրուել ի դաշտին առաջի զօրացն » Հայոց . իսկ նոցա անխորհրդարար դարձեալ յաւարն, » թուլացան ի հետոցն նոցա . բայց միայն իշխանն Աշոտ » սակաւ արամբք պնդեալ երթայր զկնի նոցա . և զօրա » ցեալ թշնամեացն դարձան ի վերայ նոցա, և հարեալ » վիրաւորեցին զիշխանն Հայոց . ապա ճիշ բարձեալ զօ » րացն, և նոքա վաղվաղակի հասեալ՝ հարեալ սաստա » կէին զթշնամիան, և ինքեանք առեալ ածէին զիշխանն » ի կողովիտ » , <sup>6</sup> և այլն :

Յետ այսր բովանդակ դարս անծանօթանայ ի մէնջ Զուղա, բայց միայն ի գիւտի նշխարաց Սրբոյ կարապետին՝ անդ ի սկիզբն կոյս Ժ դարու՝ ի յայտ գայ, զոր յա-

մի 962 բերեալ էին այսր ի Խրամ քաղաքէ : Ի սկիզբն ԺԱ դարու Սարգիս կաթողիկոս ի կանգակին՝ ոչ միայն նշան տայ մեծութեան շինին, այլ և առանձին իմն գաւառակ ցուցանէ, զի ընդ վիճակս Սիւնեաց եպիսկոպոսին կարգէ ընդ այլոց գաւառաց, « Խրնջակ, Նախջուան, » Զուղայ՝ որքան Երասխայ գետն հասունէ, Ճահուկ » , և այլն : Յերկրորդ կէս ԺԴ դարու աստի ընծայեցաւ Մատթէոս վարդապետ, մի ի գլխաւոր աշակերտաց Գրիգորի Տաթեւացոյ, և միակ իսկ՝ որոյ ինչ ինչ գըրուածք հասին առ մեզ : — Յելս կոյս այն դարու (1386), առաջին յիշատակ լինի Զուղայ պատմական դիպուածով, և միոյ ի գլխաւոր շինուածոց նորին, որոյ միայն մնան տակաւին դոյզն նշխարք, յիշեցուցիչք նախկին մեծագործութեանց, յամենայն իրաքննին ուղեւորաց նշանակեալ . այն է կամուրջն հոյակապ, և որպէս թուի եռատակ, յիշեալ նախ ի թուրք պատմէ գործոց Լէնկթիմուրի, որ էանց բանակաւն ընդ սա, և կոչէ զայն Չիա իւլ միշք, իսկ զաւանն (Զուղայ) Երասխայ կամ Ճուլֆայ ստէ, « գեղեցկագոյն քան զամենայն » կամուրջն երկրի, կոփածոյ քարամբք շինեալ . ան » օսասնելի ամրութեամբ, հարթ և ուղիղ . ամրու » թիւնն, գեղեցկութիւն և պատշաճաւոր հիւսուածք » քարանցն՝ հիացուցանեն զամենայն ճարտարապետս . » երկուք ի կամարացն յոյժ բարձունք և լայնք են, մին » 60 կանգուն (կէզ), միւս 55, որպէս չափեցաւ ի նուա » զութեան ջուրց գետոյն . և զի ի բարձրանալ ջրոցն՝ » սաստկագոյն ուղիւք հեղեղացն անցանն ընդ կամա » րան մեծաւ, որ մերձ է ի լեռանն, վասն որոյ և ըզ » գլուխն յարեալ կցեալ են ի նոյն լեռան, իսկ փոքուն » դատարկ մնալով ի ջրոյ՝ շինեալ են ի նմին կարաւա » նատուն . . . Յերկոսին գլուխս կամրջին շինեալ կան » զրունք ի քարաժեռի անդ, աննմանք գեղեցկու » թեամբ » :

160 . Իբրեւ դարու միով յետ այսր, այն է ի վերջին քառորդի ԺԵԻ՝ սկսանի յիշատակ վաճառականաց Զուղայի, ոչ մեծահարուստ հոխիցն, այլ փորձգիկքն անուանելոց, որք ըստ Առաքելի պատմի, « գրաստուք և իշովք » յընելով գիւղէ ի գիւղ . . . (երթան) վաճառել զկտաւ և » զատար, զչիք և զալաջայ, և զայլ ինչ » : Այսու օրինակաւ ոմանք ի նոցանէ եկեալ մտեալ էին յԱղթամար կղզի, ուստի բարձեալ Վրթանիսի եպիսկոպոսի՝ այլափոխելոյ ի կերպ կաղ մղտեսոյ, զԱԶ Ս . Լուսաւորյիւն, այլովք նորին սպասուք, և թաքուցեալ և կարեալ ի կորդին իշոյ, առաքեաց ի Զուղա, ուր եկեալ և ինքն, յետ կատարելոյ անդ հանդէս տսնի, տարաւ ի Նախճաւան և անտի յԵջմիածին : Այս դոյզն այլ առաջին յիշատակ է ճարտար վաճառականաց Զուղայ, որ ի զանխուլ խօրչս անդ խառնըրդոց երկոցուն գետոցն՝ եղեւ մեծագանձ շահաստան աշխարհիս մերոյ, յետ անջրանալոյ և դադարելոյ հին և իշխանանիստ աշխարհամուտ վաճառաշատ քաղաքացն, Արծինն, կարուց, Անույ, և այլն : Այլ երբ սկիզբն և հաստատութիւն եղեւ այսպիսոյ իրագործու-

<sup>1</sup> Ալեսաստուրի վենետկեցի, յառաջ քան զաւերն Զուղայի :  
<sup>2</sup> 3 . 4 . Դիւանք վենետկոյ :

<sup>5</sup> Պուլէյ Լըկուզ :  
<sup>6</sup> Ղեւոնդ երեց պատմիչ :



Թեան ի Զուղայ, Թաքուն մնայ ցարդ, զի քան զայդ յառաջ բերնալ յիշատակդ՝ ոչ գտանեմ հնազոյն. և յետ այնր յամի 1541 ի կոնդակի Գրիգորի ԺԱ կաթողիկոսի կոչեցեալ « աստուածախնամ զիւղաքաղաքն Զուղա », որով յայտ առնէ զբարգաւանանս: Իսկ կամուրջն վերայն շինեալ և մանաւանդ կամրջավայրն ինքնին՝ յայտ առնեն վաղուց սկսեալ բարգաւանաց տեղոյն, զի այն է զլիսաւոր անցք գետոյն ի Հայոց և ի Վրաց՝ յաշխարհն Պարսից. և հարկ իսկ էր կայից այսքան յաճախեալ երթեւեկի կարաւանաց և սոսկականաց՝ շահաբեր յոյժ լինել տիրոջ երկրին եւ բնակչացն: Ոչ է յայտ և առաջին շինող զիպողադիր կամրջին, որ նոյնպէս հարկ է թէ հին իցէ, և յողթող ըմբոստ ալեաց Երասխայ. և զի որչափ ինչ յայտնին ի նշխարաց աւանին կամ յիշին ի պատմչաց, միայն հայարեակ վկայի այն և ոչ օտարազգի, ի դէպ է համարել ի նոյն իսկ ի Հայոց կանգնեալ, որպէս էն ստուգիւ շինող կարաւանատանցն յերկոսին կողմանս նորին. և հաւանօրէն ընդ իշխանութեամբ Պարսից և Թուրքաց կապալառու որ Հայ հաւաքէր զմարան, հատուցանելով յարքունիս գսակն սահմանեալ: Ասի իսկ եթէ մինչ նուաճեալ էր ընդ ձեռամբ Օսմանեանց, Զուղա բոճիկ կարգեալ էր մեր սուլտանին (Վալիտէ սուլթան), և պաշտօնեայք ի Գրանէն եկեալ առնուին զհասն: — Ի ժամանակի պատերազմաց սուլտան Մուրատի Գ ընդ Խիւտավէնտ շահի Պարսից ի վերջ կոյս ԺՁ դարու, ի էյվան փաշայ 1500 հրացանաւոր զորք եկն ի վերայ Զուղայի. բնակիչքն խորագիտութեամբ և առատ տրուիք չիջուցին զցասումն նորա. և յետ այնր ի վերայ հասեալ Ալիդոյի խանի Պարսից 3000 զօրականք, զնա եւս նոյնպէս հաճեցուցին ի չքմեղս լինելով և զերծան: Իսկ ի յետնում նուազի ի մերձեալ Շահ Աբասայ նախընթաց առնելով զՉրագ Սոդրան, հալածեցին Հայք զթուրք պաշտօնեայն (Մուսա դաֆա աղայ), և զգանձն հաւաքեալ մատուցին Շահին: Այլ Թուի թէ առ իշխանութեամբ Պարսից՝ հանգոյն գեղորէից Միարանող Հայոց Երնջակայ՝ երբեմն և Զուղա խաս էր արքունի, մերթ ապահարկ լինէր, և մերթ շարաչար կեղեքեալ: Պատմէ ակնատես Վենետկեցին Վինչ. Ալեսանտրի, որ գտաւ անդ յամի 1571, առ Աթահմազ Շահիւ, զի ի վեց ամաց հետէ ապահարկ արարեալ էր նորա զԶուղա, և յայնմ ամի միահաղոյն պահանջէր զանցելոց ամաց հարկն, և զառ յայնմանէ՝ առաքեալ զվերակացու տան Քեարիմ բէկ Հայտար Միրզայի փոխարքայի, խնդրէր և ՁՅ բեռն հանդերձից և կօշկաց ի վաճառել <sup>1</sup>:

Ի յիշեալ Թուականէ աստի (1571) սկսանին ի յայտ գալ ինձ (ի զիւանաց Վենետկոյ) Զուղայեցի վաճառաւ.

կանք, եկեալք յարեմուտս, և յաւէտ յիտալիա, մինչ ազգային յիշատակք գրեաթէ իսպառ լաեալ զինդագին աւուրս բարեկենդանութեան քաղաքաւանին, սկսանին և աւարտեն տխրական գաղթիւ բնակչացն և աւերածով բնակարանացն առ Շահ Աբասաւ, ի սկիզբն ԺԷ դարու. և թէպէտ ծանօթութիւնք պահեալք յօտար զիւանս՝ ոչ զնեղքին անցս և զհանգամանս Զուղայի յանդիման առնեն, այլ քաջիկ զժրութիւն և զբազմութիւն վաճառականաց նորին, և զանուանս ամանց ի տոհմից և անձանց, զորս չէ մարթ գտանել այլուր, Թերեւս և ոչ ի քարինս անբաւ զերեզմանաց նոցին, վասն մամուապատեղծման արձանագրութեանցն, կամ ցարդ անհետախայք մնալոյ. վասն որոյ և մինչ չեւ ի մահահոտ աւերակսն մեալ, ոչ անհաճոյ համարի՛մ կարգել ստատնօր գոյնեալն յստար աշխարհի զբնիկս տեղւոյս: — Վերայն յաւելուին և դեսպան Հասարակապետութեան Վենետկոյ՝ ծանուցանէ ի թղթի միում, զի յառաջ քան զայն եկեալ էին ի Վենետիկ գործակալք վաճառականացն, և արդ (ի կէս սգոստ. 1571) տեսար նոցա ի Վազուին հարցանէին, և ինքն հաւատարմացոյց, զի ծերակոյտն արձակեալ էր զնոսա ընչիւք նոցին. և էին նոքա (որք ի Գաղուին) յաւագացն Զուղայ, որք և դիւրեցին դեսպանին զմուտս առ արքայորդին, զի համարձակ էին ի դրանն: Թետ դարձի նորա ի Վենետիկ՝ գրէին առ նա (1 հոկտ. 1572 կամ 1573) զլիսաւորն Զուղայ. Թէնէքէսիս ? Tenechesiss, Միրիման և Մարութա, ծանուցանելով, զի առաքեն ի Վենետիկ գործակալ զՏէրման և զԿոնդուզ (կամ Սոնտոդ) վասն պահանջից իւրեանց ի Գոլֆին դրամասեղանոյ (Banca), և խնդրեն զի ձեռնտու լիցի նոցա, որպէս ինքեանք սգնեալ էին նմա ի դրան Պարսից, և խոստանան նոյնպէս առնել և այլոց հայրենակցաց նորին. միանգամայն և ազդ առնեն նմա լսել յեկեղոցն ի գաղտ՝ զքաղաքական զէպս ինչ. որ էր պատրաստութիւն Շահին ընդդէմ Օսմանեանց, սպարապետ կարգելով զկուսակալն Լրեւանու, և նոցա ամբացուցանեն զբերդորայս իւրեանց: Յառաջնում ամին, 1570 գտահիւր ի Ֆլորենցիա Զուղայեցին Մեսրոպ Փաշի՝ որդի Գայրի ? (Gayri), որ ի Վենետիկ հատուցանէր 285 դուկատ առ Ամդեցին Յովհաննէս որդի Տէվլէթեարի: Ի նմին ժամանակի (1573) ի Վենետիկ էր և Զուղայեցին Սկանդար որդի Էմերի և գործակալ իւր կարգէր զոմն ի Մուրան կղզեկէ Վենետկոյ: — Ի միւսում ամի (1574), Շաւալաթ որդի Գուպաթայ հիւանդ գտով մահացու՝ գրէր կտակ հայերէն <sup>2</sup> ձեռամբ Նասիպայ (որդույ Մանուէլի) նոյնպէս Զուղայեցույ, և յետ երկից աւուրց (մարտ 4) տայր հաստատել զնոյն, Թարգմանաւ խօսելով Թուրք և պարսիկ, գործակալ և

1 Nel tempo che io mi trovava alla Corte, nella terra di Tultá, abitata tutta da uomini, i quali erano stati esenti per sei anni dal tributo; ed in una volta il volse tutto del tempo passato, con danno e rovina di quei poveri cristiani; oltre lo aver mandato Carimbeg maestro di casa di Sultan Caidar Mirza, luogotenente del re, a riscuoter detti denari con 25 some di drappi e scarpe da vendere. — VINC. ALESSANDRI.

2 Հայերէն բնագիր կապիւն ոչ գտաւ, այլ իտալ Թարգմանութեան վաւերական պահի, յորմէ քաղմ գրաւքս ինչ:

Io Sciavalat Armeno di Chiulfá sotto il Re di Persia, fù di Cubat... Perche non scio la lingua italiana, però ho pregato Messer Marcantonio di Elletti fù Mes. Michiel da Venetia, che vogli ad esso nodaro interpretar nella lingua persiana quello che io nella lingua turca dirò. Commissario di tutto quello che io mi ritrovo in

կտակակատար կարգեալ զՄուրվէլի որդի Յակոբայ հօրեղբոր իւրոյ. վկայեցին առաջի նօտարի այլ հայազգիք յստար քաղաքաց, զի յուր ամսոց հետէ ճանաչէին զՇաւաղաթ լինել որպէս ասէրն, և որպէս զրեալ էր և նուն նորա ի մաքսատան: — Ի նմին ամի մեռեալ էր և Յովսէփ Զուղայեցի որդի Պետրոսի Պասայ կամ Բասայ որդւոյ Մարգարէի, կտակելով զինչս իւր կնոջ իւրում (որպէս կարծիւր) Դոմինիչիլայ d'Alà անուն. յետ երկուց ամաց եկեալ Բասաս և Յովհաննէս որդի կարապետի, Աղեքսանդր որդի Անդրէի, Մուրատ, Կիւրակոս կամ Կիրակատում (Chiragatom), Միրիճան (Missajan), և այլ Զուղայեցիք, ասէին Յովսէփայ Թողեալ ի Զուղայ մանկիկ մի իննամեայ կամ եօթնամեայ. այլք հակառակէին ասելով, եթէ Յովսէփ ի 15 ամաց հետէ յիտայիւս էր. իսկ կինն այն ասէր՝ խնդիր յուզեալ զիրացս ի Գենուա և մերժեալ զհակառակորդսն. վասն որոյ ի դատ կոչեցան վկայքն, և իրեւ չեկին՝

բաց յերկուց, դատապարտեցան իրրեւ սուտ վկայք ի տարազրուութիւն և ի մահ իսկ. իսկ երկուքն եկեալքն՝ Բասաս և Յովհանն որդի կարապետի՝ որք պնդէին ստոյգ ասել, արկան ի բանտ. առաքեցաւ նօտար մի ի Գենուա՝ քննել զիրսն. և քննեալ եղիտ սուտ զԴոմինիչիլայ. արձակեցան կալանաւորքն, և սուան Բասայի ամենայն ինչք Յովսէփայ, որոյ որդի Հայրապետ կոչի, և կինն այն պարտաւորեցաւ հատուցանել զծախո դատին յիւրոց ընչից. յոր սախ և առեալ էր Բասայի փոխ յԱղեքսանդրէ, (որոյ հայրն Շաւաղաթ Բերիացի էր յայնժամ վարպետ ի դրամահատոցի Հալպայ, Mastro di Zecca), վկայ կարգելով զվերոյիշեալն Նասիպ որդի Մանուէլի. և վճռեցան իրքս յ'3 սեպտեմբրի 1679 ամին: — Ամա յառաջ (1578) վախճանեալ էր ի Հոովմ այլ ոմն Զուղայեցի, և Թաղեալ յեկեղեցւոյ անդ Հայոց, զորոյ անուն յայտնէ տապանագիրդ.

**Այս է տապան ճուղեցի Նորիճանի. Հանգեալ Թվին Հայոց Ռիէ.**

Յամի 1587 ի տպագրել Տէր Յովհաննու Տերզնցոյ զՍաղմոս հայերէն, էին անդ ի վենետիկ Զուղայեցիք, յորոց եգիտ օժանդակութիւն, այլ յանուանէ յիշէ միայն զԽոնճա Շահուլու ձեռնատուր (ձեռնտու): — Յամի 1593 յիշի ի քաղաքի Տիրան Զուղայեցի, պարտական (110 դուկատաց) Բարսղի Նախուանեցոյ. և յամի 1599 (մայիս 7) Գէորդ Սէրտար, որ ընդ այլոց վկայեաց, զի Տէր Յակոբ Ամրեցի գնացեալ էր ի Պարսքս և ի Վիրս, տանելով Թուղթս, վասն որոյ կալան զնա Թուրքք ի Գանձակ, և այրել կամէին, այլ Զուղայեցի վաճառականք տուեալ փրկանս զերծուցին: — Առ սրբօք կամ յառաջ քան զսոսա Յակոբ Զուղայեցի էր ի Քալմիր Հնդկաց ի սպասու Էքպէր - շահ սուլտանի: — Ի սակաւ առաջին ամս Ժէ դարու, մինչ տակաւին ի շինութեան էր Զուղա, յիշին յաշխարհաշրջիկ վաճառականաց նորին, յամի 1601 կարապետ որդի Նասիպի կամ Ալեանաց (Carabiet de Iulfalini Persiano del q<sup>m</sup>. Nassip, seu Ventura.), պարտատէր (360 դուկատից) Խաչատրոյ որդւոյ Յովսէփայ Համկրայեցոյ. — 1602, Աւետիք որդի Խուտապաղի պարտատէր (50 դալէրից) Ղազարու Սսեցոյ. Գրիգոր որդի Մարտիրոսի և Գէորդ՝ Անտոնի որդի. որք վաճառեալ էին մետաքս՝ Գոնագոչիլի (Tornaquinci) փորնետեան վաճառակաւնաց բնակեցոց ի վենետիկ, որում վկայէր և այլ ոմն Զուղայեցի՝ Գանիէլ՝ Տէրվիշի որդի. և սա յետ աւուրց գործակալ ինքեան կարգէր զայլ ոք վասն իւրոց պա-

հանջից ի բամբակագործէ միոյ՝ որում վաճառեալ էր 13 հակա մանուածոց. Ի սկիզբն յաճորդ ամի 1603 յ'3 յանուարի վախճանի ի քաղաքի աստ (ամաց 63) ի տան ազնուատոհմ վենետիկացոց, Յովհաննէս Պապայ որդի <sup>1</sup>, զրեալ կտակ (ի 16 դեկտ. 1602) և կատարիչ կարգեալ զուղէկից իւր և զհայրենակից Սիմոն, պատուիրելով բառնալ տանել զինչս իւր ընդ Ասորիս ի Զուղա, և յանձնել Սէֆէրի՝ որդւոյ Խաչկայ հանգուցելոյ <sup>2</sup>. — Յառաջ քան զայս (1600 - 1), Էրտամ ոմն որդի Ստեփանոսի բերեալ էր բազում վաճառս յարեւմուտս, և որպէս Թուի ի սաղրանաց այլադենի կասկածելի լեալ՝ ի բանտ արկեալ էր ի Սիկիլիա (1604 - 5), վասն որոյ հայրենակիցք նորա ի վենետիկ՝ Մուրատ որդի Խասումի ? (Cossam), Սաֆար որդի Յակոբայ, Մուրատ՝ Մարգարայ որդի, վկայեն զմանէ (25 մարտի, 1605), ըստ խնդրոյ Յովհաննու ճիոռան ? մակաւնուանելոյ, եթէ մեկնեալ էր նա ի Զուղայէ քառեմաւ յառաջ, և էր իրրեւ 40 ամեայ, միջահասակ, կապուտակն, շիկահեր: — Էր յայսմ ժամանակի և ի բազմաց հետէ ի վենետիկ Ղազար Յովհաննու որդի, փորեղիկ, որ ի մեծի հրապարակի (Ս. Մարկոսի) քաղաքին նստէր ի վաճառել, և յիշի զառաջինն ընդ այլոց ազգայնոց յամի 1606, որք առաքեցին զքահանայ իւրեանց Տէր Յակովբ Մարգարեան <sup>3</sup> ի Հոովմ ի խնդիր Աստուածաշունչ գրոց: — Նոյնպէս յամաց հետէ բնակէր ի քաղաքի անդ և Մուրատ կամ Ամուրատ Սէֆէրի

questa città... instituisco et voglio che sia Mureveli mio cugino, fiol fù de Iacob... Heredi certamente de tutto il mio lasso l' istessi a quali ho instituito in un altro mio Testamento fatto in lingua armena, scritto in questa città, già tre giorni in circa, per mano di Nascip Armeno; il quale in tutto et per tutto comfermo, et voglio che sia fermo et stabile, etc.

<sup>1</sup> Զսա յամի 1596 փոխանակ իւր կարգեալ էր Աւետիք Բերիացի, առ ի հանգանակել ողորմութիւն վասն Թափեցոյ ի գերու-

թենէ Թուրքաց զընտանիս իւր, ընկալեալ յայս սակս Թուրք վեկայութեան ի կլեմայ Ը (1595, յուլիս 12):

<sup>2</sup> Commissario di questo mio testamento voglio che sia Mes. Simon Armeno Chiulfalino, venuto insieme con me dal viaggio di Soria: potendo lui... finir la mia roba, ed il tratto di essa, voglio che 'l lo porti in Soria, et poi di Soria in Chiolfia mia patria, et che 'l lo consegui in mano del Signor Suffer q<sup>m</sup>. Casich Armeno, pur Chiulfalino...

<sup>3</sup> Այն է Ամրեցին, յեւեալն սակաւուք յառաջ:

որդի, վաճառակից ֆրիստափորի կամ խաչատրոյ Ասուրոյ Տոնա կամ Տոնատոյ (Donà, Donado) կոչեցելոյ, ճոխ վաճառականի, ընդ սոսին յայտ է թէ և այլք բազումք գտանէին միտ ի վենետիկ. վասն որոյ և ի յաճախութենէ նոցին՝ երբեմն զամենայն իսկ Հայս՝ Չուդայեցիս կոչէին Վենետիցիք, (Chiolfalini, Քիոլֆալինի կամ Չիոլֆալինի), և շատք ի քաղաքագրաց նոցին՝ ըզփողոց մի քաղաքին՝ Rugga Gajusa կամ Giusa համարին յանուն Չուդայեցեացոյ կոչեցիալ, սակայն հմտագոյնք ըստ առեզեցին յայլ ինչ սակս անուանիլ տեղւոյն. բայց աներկբայապէս ի նմին փողոցի և ի մերձակայ թաղս բնակէին յուրվագոյնք ի Հայոց ի ԺՁ — Է դարս, և ոմանք ի հիւրատան Ս. Խաչ եկեղեցւոյն իւրեանց. թող ըզցրուեալն սակաւաւորս յայլեւայլ թաղս — Ի դիւանաց քաղաքիս Վենետիկոյ այսօրիկ ծանօթացան մեզ, բայց եթէ քննիցին և դիւանք այլոց վաճառաւորաց քաղաքաց խաչիոյ և այլոց եւս աշխարհաց, չիք երկբայել զի յայտնիցին և այլք (Չուդայեցիք) յառաջ և յետ աւման և աւերման քաղաքաւանին ի Շահ Աբասայ: — Արդ զի ի սորա ժամանակս եհաս յիշատակ Չուդայեցւոց, արժան համարիմ զկայ առնուլ, և յետոյ ուրեմն յիշել և զայլս՝ որ յետ այնր պատահարի գան յերեւան. և մինչեւ տեսեալ զեղերական հանգէս գաղթին. քննել փոխադարձօրէն և զեկս յօտար աշխարհաց ի Չուդա, և զսա ինքնին առանձինն, այսինքն զչինուածան և զորպէսն՝ յելս ԺՁ դարու և ի սկիզբն ԺԷ՝:

161. Տասն ամբք յետ Վենետիցւոյն Ալեսսանտրի, զոր տեսաք յամի 1671 ի Չուդա, և 25 ամբք յառաջ քան զաւեր քաղաքաւանին՝ եկն անդր Անգղիացի ոմն Նիւպորթ անուն (Newbery, ի 4 դեկտ. 1581), և մարթ է զսա ասել (ըստ մերս գիտութեան), առաջին ծանօթ վաճառական այցելու տեղւոյն, որ և յիշէ զքարայէն կամուրջն Երասիայ, այլ վաղուց կործանեալ ասէ. և զի յետագայք չէն ասեն և ի Շահ Աբասայ աւերեալ, յայտ ուրեմն զի երկիցս և երկիցս չինեալ և կործանեալ է. ըզթիւ բնակարանացն ասէ 3000, որով և զբնակչացն ի դէպ է համարել իբր 15 — 20, 000. ասէ և եօթն եկեղեցիս ունել, որում վկայեն յետոյ և զգալիքն: — Տասն ամաւ եւս յետոյ (1690) եկն այլ ոմն անգղիացի վաճառական և ճանապարհագիր, Քարտրայրտ, Cartwright, մականուն. սա նուազմամբ՝ 2000 տունս և 10, 000 ոգիս ասէ զբնակիչսն, Հայս և Վիրս, պարապեալս ի վաճառականութիւն մետաքսի և այլոց նիւթոց՝ քան ի զէնս: Նշանակէ և զբնութիւն և զդիրս տեղւոյն, զի ափափայ և անբեր է, վասն որոյ ի Նախճաւանայ և յԱրտաշատայ ընդունի զպարէնն, բաց ի գինւոյ. զայս՝ շատ ուստի ընդունել, այլ զընդունողսն՝ քալ արբեցողս, սակայն անջնասս և անկախա, և յարբեցութեանն իսկ ազօթասէրս, ստէպ կարդալով զՍ. Աստուածածին. և ի հասարակի բարս համբոյրս և մարդասէրս ունել: Յիշէ ապա եթէ որպէս ի ժամանակի պատերազմաց Պարսից

և Օսմանեանց սակաւ ամբք յառաջ հարտարութեամբ զերկոսին կողմանս եւս ողբեցին և զերծան ի հարստահարութենէ նոցին: Իսկ վասն շինուածոցն վկայէ յոյժ վայելուչս լինել, ի հասարակի անտաջ քառակուսի քարամբք կերտեալ: Եւ որպէս յետագայ ուղեւորք վկայեն, և ինքնին իսկ մնացորդք չինին, յերկոսին կողմանս գետաձորոյն, և ի մերձակայ լեռնարլուրս, հուպ և հեռի կանգնեալ էին ամրոցք և պարիսպք ի պահպանութիւն քաղաքին. որովք՝ եթէ յաշխարհակալաց ոչ մնացին ազատք, այլ գէթ յաշխարհաւեր հինից. և զսովորական հարկն արքունի՝ առաւել կամ նուազ վճարելով, պարապէին ըստ կարի յանդորրու՝ յարարս և ի վաճառս իւրեանց. և ըստ ներելոյ ժամանակին և աշխարհի հրահանգաց՝ ոչ անբարեբաստիկք ոմանք էին Չուդայեցիք. և եթէ ոչ շատ պատերազմականքն՝ այլ յաւէտ տօնականքն հնչէին ի նմա փողք և տաւիղք, և անագան արձագանգք երգոց մերձաւորին իւրեանց Գողթան: — Ականատես շինութեան և ցնծութեան տեղւոյն, ապա և ամայութեանն, Գաւիթ Գեղամեցի, հաստատելով զդիտողութիւն նախայիշեալ անգղիացւոյն՝ զթուոյ եկեղեցեացն, շափարանէ այսպէս.

« Չուդա քաղաք անգիւ չինած,  
Քօշք և սէրայք բարձրացուցած  
Եւ գունըզգուն ծաղկեցուցած.  
Նա հիացումն էր տեսողաց.  
Եօրն ժամատեղ էր հաստատած,  
Եկեղեցիքն զարդարած.  
Բուրվառանին օսկէջըրած  
Ծածկոցըններն օսկէթելած,  
Աւետարանքն եւ սուրբ խաչեր՝  
Անգին ակամբք էր զարդարած.  
Սեղանըններն եւ սրբութիւնն՝  
Ուրախութիւն էր նայողաց »:...

Առաքել պատմիչ որ յերկարագոյն նկարագրէ զպատահարն և զգաղթ Չուդայեցւոց, համառօտիւ յիշէ ուրեք զնախկի պայծառութիւնն. « գիւղաքաղաքն Չուդայ, » որ էր մեծ և երեւելի ի ժամանակին յայնմիկ ի մէջ « արեւելեաց աշխարհիս ». յիշէ և զպարիսպս քաղաքաւանին, զկարաւանատուն և զկամուրջ. այլ ոչ նա և ոչ այլ ոք՝ զորպիսութիւն և զանուանս եկեղեցեաց. բայց ի հարեւանցի ինչ յիշատակէ և ի դոյզն մնացուածոց արձանագրութեանց և յաւանդութեանց՝ յայտնին սակաւք ոմանք. որպէս Ալեքսանդրիկ, որ և վաճաք կոչի արտաքոյ չինին ի բարձու քարարլի. Ս. Գեորգ, Ս. Աստուածածին՝ վերին կարան կոչեցեալ ի չինամիլին, և արտաքոյ պարապացն՝ միւս եւս Ս. Աստուածածին եկեղեցի. Պրանկի եկեղեցի, որպէս թուի Միսրանողացն Հայոց, որոց էր միւս եւս նովին անուամբ (Պրանկաց) եկեղեցի արտաքոյ չինին, և յայն կողմն Երասիայ: — Ի վերջին ամս շինութեան և պայծառութեան սոցին, ըստ դրուատի Գեղամեցւոյն, ի սկիզբն ԺԷ դարու, եղև

1 Very faire, all of hard quarry stones. And the inhabitants very courteous and affable; great drinkers of vine, but not braulers in that drunke humour: and when


they are most in drunke, they poure their prayers especially to the Vergin Mary, as the absolute commander of her son, Jesus Crist. ecc. — CARTWRIGHT.

գալ այսր Սրապիոնի Ոռնայեցոյ արքեպիսկոպոսի Ամգայ, հրաւիրեալ ի կաթողիկոսաց Ժամանակին՝ փոխանորդել ինքեանց և գերծուցանել ի պարսուց աթոռոյն Էջմիածնի. որում և ընդ առաջ ելին նոքին իսկ կաթողիկոսունքն և եպիսկոպոսունք, և ինքն մեծարեալ ի բնակչացն, կացեալ անդ աւուրս ինչ, « Հանապաղ ուսուցանէր և լուսաւորէր զամենեանն լուսաովիւս վարդապետութեամբն. առ որ հաճեալ և հաւանեալ Ջուղայեցոցն և ամենայն արեւելեայց, ուրխացեալք օրհնուցութիւն ի բարձունս վերառաքէին: Ապա առեալ զվարդապետն ածին ի բարձրագահութիւն... ձեռնադրեցին ի կաթողիկոս », (ի 14 օգոստ. 1603): Այլ յետ սակաւուց ուր փառք ընտրեցաւ՝ անդ դարձեալ (ի Ջուղա) ըմբռնեցաւ ի հարկապահանջից Եահին, և բրածեծ գանիւ խոշտանգեցաւ. վասն որոյ առեալ փոխ և տուեալ նոցա որչափ ինչ կարաց, գերծոյց զանձն յառաջին աթոռ իւր, և անդ վախճանեցաւ (1606, յապրիլի 23):

163. Ի նոյն ամս ծագեցաւ մեծ պատերազմն Պարսից և Օսմանեանց. և իբրև կորզեաց ի սոցանէ Եահ Աբաս զԻսպրէժ, խորհեցան Օսմանեանք յաւարի առնուլ ըզՋուղա և ի բաց երթալ. այլ կանխեաց փութացաւ Եահ Աբաս առաքել հրոսակս ի վերայ Նախճաւանի. մի ոմն ի զօրավարացն նորին Չրագ Սոչդան՝ յաշնայնի 1603 ամին եմուտ ի Ջուղա խաղաղութեամբ, զի բնակչացն կանխեալ հարածեալ էր զՄուստաֆա հարկահան թուրքտիրեաց և Երնձկայ. յետ սակաւուց ինքնին իսկ յաթականն և խորագէտ Եահն Աբաս ի խաղայն ի վերայ Նախճաւանի և Երեւանայ՝ եկն եմուտ ի Ջուղա, ուր պատրաստեալ էր բնակչացն ընդունել զնա ըստ մեծութեան նորին և ըստ ճոխութեան իւրեանց. « Իշխանք և ծերք և երիտասարդք ի զարդ և ի զէնս ոսկեհուռն » սիրատեսիլ հանդերձիւք պճնագարդեալք ընդ առաջ ընթանային. և նորաբողոք դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ և զազնիւ զինի մատուցանէին. լուցեալ մոմեղինք և խնկօք և կնդրկօք՝ քահանայք և մարմնաւոր երգեցիկք առաջի ընթանալով՝ յարմարական ձայնիւ նուագէին. և զճանապարհս անցից արքայի զարդարեցին. և յեզերէ գետոյն մինչեւ ցապարանս խօջայ խաչիկին՝ արկին փայտեքազ առաթուր թագաւորին պատուական և վայելուչ զուգուցաւ. որոց վերայ էանց թագաւորն և զնոց ի տուն խօջայ խաչիկին: Եւ ի տան անդր խօջայ խաչիկն զոսկի ըսկուտեղ լցեալ ոսկեով, եղեալ ի ձեռն որդւոյ իւրոյ՝ մատոյց առաջի թագաւորին. նոյնպէս և ամենայն մեծաւ մեծք Ջուղայոս մատուցին զընծայս, որպէս վայել է թագաւորի: Եւ զաւուրս երեք եկաց անդ Եահն, և Ջուղայեցիքն պատուեցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ զինեաւ... Եւ յետ երեք աւուրց ելեալ ի Ջուղայոյ՝ զնաց ի Նախուան » — Անդանոր ի Ջուղայ հանդիպեցան Եահին ընկերք դեսպանի Ռոտովոս կայսեր, (որ ի ճանապարհի մեռաւ), որոյ զխաւորն Տեքտանդէր (Teetander Zalokemeny), որ և գրեաց զանցս դեսպանութեանն, յաւելու մեզ և այլ ծանօթութիւնս զհանդիսադրութենէ Ջուղայեցոց, Souf'a կոչելով. և ասէ քաղաք ամուր լինել բնակեալ միայն ի Հայոց,

որք բազում սիրով ընկալան զթագաւորն. և ի պատիւ նորա լուսաւորեցին զէնսն. և զի տունքն ոչ ունէին երդիս՝ այլ պատշգամս, ծածկեցին զնոսին աւելի քան 80,000 լապտերօք, և լուցանէին զդիշերն օգլոյն:

Այլ այն ամենայն, աւաղ, յետին հանդէս էր բարերաստին այնր և ճոխահարուստ քաղաքաւանի. և թերևս ի նոյն աւուրս տարէդարձին՝ վախճան եղեւ ի նմա, նա և ողջոյն իսկ տեղոյն. և այնքան աշխարհամուտ հրապարակ վաճառականաց դարձաւ ի համատարած գերեզման, լուս և թափուր — Քանգի յետ մեկնելոյ անտի Եահ Աբասայ՝ պաշարեալ և առեալ զԵրեւան քաղաք, պաշարեաց և զկարս (1604). այլ իբրև լուսեթէ մեծ սպարապետն Օսմանեանց Չրաջ օղլի՝ ծանուրանկաւ յարուցեալ ի կարոյն խաղայ ի վերայ իւր, փութացաւ և ինքն դառնալ ի Իսպրէժ. կանխեալ յառաջոցն պատուէր բուռն հրամանի առնել և ստիպել զբնակիչս ամենայն երկրին Հայոց՝ զոր նուաճեալն էր, թողուլ զտուն և զտեղի և զաղթել ի Պարսս. առաքեաց և ի Ջուղա ոստիկան մի թախմազ դոչի բէկ անուն, վերացի ուրացեալ, և հանգոյն այլոց զաւառականաց (որք արդէն հանեալ յիւրաքանչիւր կայանից բռնութեամբ, և անհնարին տագնապաւ հասեալ էին ի սահմանս Ջուղայի), վարել և զՋուղայեցիս մինչև ի Սպահան՝ յիւր մայրաքաղաքն. և զի բանակն Օսմանեանց զհետ պընդեալ էր պարսկայնոյն, ոստիկանն երիս աւուրս միայն շնորհեաց Ջուղայեցոց ժողովելոյ զինչս իւրեանց և լըքանելոյ զհայրենիսն, մահ սպառնացեալ անհնազանդիցն. և զերիս սյն աւուրս մունետիկն մահագոյժ, անյոյս քան զՅովնանուն, ոչ դադարէր ի կարգալոյ ըզկորստական հրաւերն: Ոչ գոյր հնար գերծման և ոչ օգուտ ի յապաղման. հարկն յուսահատ զօրանայր քան զամենայն կիրս, « և պատրաստեցան յելանել »: Եւ զժողով և սրտառուչ, ողբալի և զրեաթէ անլուր ի պատմութեան. զոր թողցուք Առաքէլի՝ մերձաժամանակ պատմչի ստուգարանել: « Բահէ սպառնացեալ մահուն՝ ոչ ինչ դանդաղեցին Ջուղայեցիքն, այլ առժամայն կատարեցաւ առ նոսա հրաման թագաւորին, և պատրաստեցան յելանել: Բայց վասն փութով և յանկարծակի ելանելոյն՝ ոչ գտանէին զգրաստ և բեռնակիր անասուն, յոյժ վտանկէին ժողովուրդքն. զի ինչք և ստացուածք նոցա ցրուեալ և անկեալ կայր առաջի իւրեանց, և ոչ կարէին բառնալ ի տանիլ առ ի չգոյէ գրաստուց: Եւ զոր ինչ կարացին բառնալ բարձին, և զոր ոչ կարացին բառնալ՝ իւրաքանչիւր դք պատու և թաքուստ արարեալ թաղեցին: Բայց ընչից նոցա յուրմըն ի կորուստ և յափշտակութիւն զնաց. քանզի ոչ միայն այն զօրքն՝ որ ընդ թախմազ դոչի բէկին էին եկեալ՝ նոքա միայն հարկէին զժողովուրդն վասն փութով ելանելոյ, այլ և բազումք ի մահմէտականացն որք ի շրջակայ գեղորէիցն գային, և որք ի զօրացն Պարսից՝ որք ի բուն բանակէն իւրեանց յառաջեալ գային և խառնեալ լինէին ընդ զօրացն թախմազ դոչի բէկին, և որ աւուր յաւելանային Պարսիկքն ի մէջ Ջուղայոս. և գումարեալ մահմէտականացն ի միասին, էր որ տասն, էր որ քսան, էր որ երեսուն, մտա-



123. Լառանգը Երասխայ.



» նէին ի տունս քրիստոնէիցն. զնոսս ստիպէին ելանել  
 » և գնալ, հարկանէին սաստիկ հարուածով, այլ և յըն-  
 « չիցն և ի կարասեսաց ինքեանք յափշտակէին, որոց միտք  
 » իւրեանց հաւանէին՝ և զայլսն ցրուէին, զորս այլք  
 » յափշտակէին. և այսպէս յափշտակումն և կորուստ  
 » էր ընչից քրիստոնէից:

» ոչ կարէին ի գնալ. զաղաղակ բարձեալք աղիողորմ  
 » ձայնիւ արտասուօք և աշխարհականիւ կականիւ առ  
 » հասարակ ողբային. ոմանք զտունս և զյարկս, ոմանք  
 » զքնակութիւնս և զհայրենիս, ոմանք զեկեղեցիսն, ո-  
 » մանք զնախնի հարց գերեզմանս և զդամբարանս, և  
 » ոմանք զանկարութիւն մարմնոյ առ ի գնալ. լային և  
 » ողբային, և յորդ արտասօր յաչաց հեղուին. ոչ որ էր  
 » որ ողորմէր նոցա և օգնէր. քանզի փակեալ էր դուռն  
 » ողորմութեան գթածին Աստուծոյ ընդդէմ նոցա: —  
 » Եւ գրանալի եկեղեցւոյն՝ զոր վերին կարան ասէին՝ ա-  
 » բին քահանայքն, և յորժամ ելին ընդ դուռն պարօպին  
 » Ջուղայու, և ի հասանելն առաջի եկեղեցւոյն՝ որ ա-  
 » նուամբ Աստուածածնին կայ շինեալ արտաքոյ Ջուղայոյ,  
 » իբրեւ հայեցան և տեսին զԱստուածածին եկեղեցին, և  
 » բազումք քրիստոնեայք եկեալ խառնեցան ընդ քահա-  
 » նայսն որ և նոքա ևս բերին զքանալիս տանց իւրեանց,  
 » և ի միտին զաղաղակ բարձին աղիողորմիւ ձայնիւ  
 » փղձկեալ սրտիւ և արտասուալի աչօք, դուային և  
 » լային, և աղաղակելով կանչէին ընդդէմ Աստուա-  
 » ծածնին և ասէին. Ո՛վ սուրբ Աստուածածին, այսպիկ  
 » բանալիք որոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ  
 » յանձին լիցի. և դու դարձուցես զմեզ ի տեղիս մեր՝  
 » յօտար երկրէն ուր տանին: Եւ զայս ասացեալ արկին  
 » զքանալիսն ի գետն, և մարմնալով յուր ժամս ձայն  
 » բարձեալ լացին. և ապա գնացին:



124. Մանարձան մի Ջուղայի.

» Եւ ի դուռնագոյն շարեացն Պարսից, զորս ածէին  
 » ի վերայ ժողովրդեանն, հարկանել և կեղեքել և հա-  
 » ըրտահարել, անճարակ լեալ ամենից բնակչացն Ջու-  
 » ղայու՝ յակամայ կամօք իւրաքանչիւր որ ելին ի գնալ.  
 » և թէպէտ կարողքն մարմնով և կամ ուրք ունէին  
 » գոյք ստացուածոց, նոքօք հանդերձէին ի գնալ, բայց  
 » որք էին տկարք, այսինքն տնանկը և այրիք և ծերք,

» Եւ այսպէս ժողովուրդք Ջուղայոյ հարուստք և չքա-  
 » ւորք ելին ի Ջուղայոյ՝ և գնացին յեզր գետոյն Երաս-  
 » խայ առ ի յանցանել զգետն. և անդէն բանակեալ  
 » զետեղեցան մինչեւ ամենայն ժողովուրդքն ելին ի գեղ-  
 » ջէն և ժողովեցան ի ժողովատեղն յեզր գետոյն: Եւ  
 » յորժամ սպառեցաւ զայն ժողովրդեան, յայնժամ  
 » հրաման եղեւ ի Պարսիցն առ ժողովուրդն թէ անցէք  
 » զգետն: Եւ յաւուրս յայտասիկ թագաւորն Շահարաս  
 » հասեալ էր ի Ջուղայ և բանակեալ յափն գետոյն Ե-  
 » րասխայ. և յայնժամ ժամու իբր թէ առ ի յողորմիլ  
 » և յսգնել ժողովրդեանն Ջուղայեցւոց՝ թագաւորն  
 » Շահարաս հրամայեաց զօրապետացն իւրոց՝ զի և նո-  
 » քա հրամայեցեն իւրեանց զօրացն զի օգնեսցեն ժո-  
 » ղովրդեանն, և անցուցեն յայնկոյս գետոյն՝ երի-  
 » վարօք և ուղտօք. և ի յանցուցանելն հեծելոցն Պար-  
 » սից զժողովուրդան քրիստոնէից, որոց և հաւանէին  
 » սիրտք իւրեանց, եթէ կանանց եթէ աղջկանցն, եթէ  
 » տղայոց՝ եթէ ապրանաց, որոց և հաւանէին՝ առեալ  
 » գնային ուր և կամէին. և տեսաք նոցա ոչ կարէին զը-  
 » նալ զկնի նոցա. և նոքա գնային ի կորուստ: և ի գե-  
 » րութիւն. և որք տկարք էին թափեալք լինէին ի ջուրն,  
 » և ծփալով և ճշալով գնային ընդ երեսս ջրոյն. և յո-  
 » լովք հեղձնուին ի ջուրն՝ և մեռանէին. և յերկու կող-  
 » մէ յեզերս գետոյն ցրուեալք էին գէչք և դիք մարդ-  
 » կան խեղդելոց ի ջրոյն: Եւ այսպէս տառապանօք ան-  
 » ցին ժողովուրդք զգետն Երասխ. և սակաւ ինչ յառաջ  
 » գնացեալ՝ բանակեցան մինչեւ ամենեքեան ժողովե-  
 » ցան ի բանակետոյն:  
 » Եւ ի նմին տապնապելի աւուրան հանճարեղն ի խոր  
 » հուրդս շարեաց Շահարաս, նորագոյն շարիս խորհեալ

» վասն Զուղայու, կոչեաց առաջի իւր զնոյն հանիս ?  
 » Քահմազղուլի բէկին, և հարցանէր, թէ յետ հանելոյ  
 » քո զքնակիչան Զուղայոյ այրեցեր զչինուածս նորա :  
 » Իբրեւ պատասխանեալ եղեւ ի նմանէ՝ թէ ոչ էր հրա-  
 » մայեալ մեզ ի թագաւորէն, վասն որոյ և ոչ այրեցաք :  
 » և անդէն յետ բազում մեղադրանաց՝ հրամայեաց իս-  
 » կոյն դառնալ յոլով գորօք, և այրել դամենայն շի-  
 » նուածս տանց և այլոց յարկաց : Որոց չեշտակի հասեալ  
 » ի Զուղայ՝ բազում հրոսակօք, և առեալ ի ձեռս իւ-  
 » բեանց լահս լուցեալս և զամբարս ելեգանց, և նաւթիւ  
 » կազմեալ լապտերս, և սկսան այրել և հրդեհել, և  
 » քանդել զառաստաղս, և տապալել զչինուածս որմոց :  
 » և ոչ բնու թողին յարկ ծածկեալ կամ շէն, այլ յա-  
 » լեր և յապականութիւն դարձուցին : Իբրեւ կատա-  
 » թեցին զչարեաց զործս իւրեանց, դարձան և եկին ի  
 » բուն բանակն, և յանդիման եղեալ արքայի պատմե-  
 » ցին՝ թէ եղեւ, տէր, զոր հրամայեցեր : Այնուհետեւ  
 » հրամայեաց շահն՝ Քահմազղուլի բէկին, թէ մի եւս  
 » թողուցուս զժողովուրդն Զուղայու նստել, այլ վարեալ  
 » և տարեալ հասուցես ի Քաւրէզ, և նորա եկեալ իս-  
 » կոյն շուեցոյց զժողովուրդն յետեղէն յորում բունա-  
 » կեալ կային : Եւ ի յորն և ի ժամն յորում բառնայր  
 » իւրաքանչիւր ոք զբեռն իւր, երկինք և սղք իւր ի միս-  
 » սին խռովեցան ի վերայ ժողովրդեան քրիստոնէից :  
 » քանզի խառնակեցան ամպք և խռովեցան օդք, և  
 » մթացան երկինք, հնչեցին հողմք ուժգնակի, փայ-  
 » լատակեաց կայծակն մեծաւ ճայթմամբ, տեղացին  
 » ձիւնախառն անձրեւք, և հարեալ տանջեցին զքրիս-  
 » տոնեայսն : Եւ որք էին կարօղք մարմնով կամ գրաս-  
 » տիւ՝ գնացին. իսկ տկարքն յետ աւուրց ապա եկեալ  
 » հասանէին բազում տառապանք և չարալիրութեամբ :  
 » Եւ բազում վշտիւք և տաժանմամբ բերեալ հասուցին  
 » ի քաղաքն Ղազրէժ՝ որ է Քաւրէզ : Եւ անդէն ի Քաւ-  
 » ըէզ չարք ոմանք ի շար գանձուց սրտից իւրեանց խօ-  
 » սեցան զբանս շարս վասն Զուղայու՝ ընդ շարին թահ-  
 » մազղուլի բէկին. վասն զի յիշեցին թէ տակաւին կան  
 » ի Զուղայ մնացեալք ժողովուրդք, զի յոլովք ոմանք  
 » փախստականք եղեալք ի լիւրինս և ի ձորս, և այլք  
 » պատճառեալք զտկարութիւն և ոմանք զժերութիւն,  
 » ոմանք վաղրատութիւն, և այլք այլ ինչ պատճառա-  
 » նօք ոչ եկին այլ անդէն մնացին, և այժմ կան ի Զու-  
 » ղայ : Եւ ի լսելն զայս Քահմազղուլին զայրացաւ յոյժ  
 » սաստիկ բարկութեամբ, բայց ոչ կարէր շար ինչ առ-  
 » նել՝ զի ոչ էր ձեռնհաս. և թողին մնալ մինչ ի դա-  
 » բունն. և ի սկսանել գարնանն՝ պատրաստեաց զայր  
 » ոմն երեւելի յիւրոցն արանց՝ որում անուն կոչէին  
 » Հանքաւ աղայ, յոլով զօրօք, այլ և զհրովարտակ հրա-  
 » մանի առեալ ի թագաւորէն ետ ի ձեռս նորա, և ա-  
 » ռաքեաց ի Զուղայ բերել զմնացեալ ժողովուրդն : Եւ  
 » եկեալ Համգամ աղէն զօրօք ի Զուղայ, կոչեաց զմնա-  
 » ցեալ ժողովուրդն առաջի իւր, և խոսեցաւ ընդ նոսա  
 » սաստիւ և բռնութեամբ. թէ հնազանդեալ անսաք  
 » հրամանաց թագաւորին՝ ելէք ձերովք ընտանեօք և  
 » ստացուածովք, զի ի միասին երթլցուք, և թէ ոչ կու-  
 » միք գնալ, զարուս և զկարօղս ձեր սրով կոտորեմք, և

» զինչս և զընտանիս ձեր ի գերութիւն առնուք : Այլ  
 » և զնացեալ ի լիւրինս և ի ձորս ի տեղիս փախստէիցն՝  
 » զաին զփախուցեալսն, և բերին ի Զուղայ. և յինանց  
 » երկրորդում կիրակէի երկուշաբթ սրն շուեցուցին ի



128. Ի Մանարձանաց Զուղայի.

» Զուղայոյ, և ուղեւորեցին դէպ ի Քաւրէզ : Եւ անցաւ-  
 » ցեալ զայնու՝ բերեալ հասուցին առաջին բանակին  
 » ժողովրդեանն ի քաղաքն Ղազրին, և ընդ նոսա զե-  
 » տեղեցուցին անդէն ի քաղաքին Ղազրինու և ի գեղս-

» րեայս նորա, վասն ցրտոյ ձմեռան: Եւ ի շնչել հողմոյն  
 » գարնայնոյ վերատին վարեցին զնոսա մինչև տարեալ  
 » հասուցին ի քաղաքն Սպահան՝ և անդէն բնակեցու-  
 » ցին զնոսա, տուեալ նոցա զտեղի շինութեան »:


Եթէ հաճոյ կամ հարկ թուիցի ազգայնոցս և յետ գը-  
 րեաթէ երից դարուց աղէկիզելով նկատել զայսպիսի  
 պատահար, թերեւս աղետալի գտցէ քան զԱնույ լը-  
 քումն ի մնացորդաց բնակչացն. գէթ անյայտութիւն  
 հուսկ դիպաց սորին՝ չյաւելու յոյժ ծանրութիւն ի սիրտ.  
 Իսկ աստանօր ամենայն յայտնի և գրեաթէ ակներեւ  
 տեսանի, նորօրինակ իմն գերութիւն բիւրաւոր քաղա-  
 քացեաց, և վարումն անբանօրէն. կակիժք աղէկտուրք,  
 մահուովք պէսպէսք ի տարապարհակ ճանապարհի և ի  
 ջուրս անդ ցանկալի գետոյն Երասխայ, որ երբեմն  
 դայեակ հարստութեան նոցին, արդ կամ գերեզման  
 կամ սահման անդարձութեան ճակատագրի. Քլլանելով  
 անիօխարէն վերկնարացիկ բանալիս խնկանուէր եկե-  
 ղեցեաց Տիրամարն, և զծնելական կայանիցն, զոր այն-  
 քան վսեմական, սրտակոտոր և անգերազանցելի ըզ-  
 գայմամբ և բանիւք բռնածիգ արկին ի խորս ալեաց նո-  
 րին: Եւ ոչ իսկ էին պէսք գիւտի նոցին. քանզի մինչ-  
 չեւ էր շատ հեռացեալ բնակչացն ի ցանկալի բնակարա-  
 նացն, ահա ծուխ հրակիզման և փոշի աւերածին ընդ  
 մէջ անկանէր հայրենեացն և անծանօթ երկրին՝ յոր վա-  
 րեալ լինէին. վարագոյր խաւարաբորբ և կրճիմն յուսա-  
 սպառ: — Այս վախճան եղեւ յետին շահաստանի և  
 կրթարանի ճարտարութեան շայոց, ճոխակեցիկն Ջու-  
 դայի. զոր յիշելով ականատեսն այն Գեղամեցի, « Գե-  
 » ղեցկալէն և հիանալի քաղաք, կոչէ, ի դառն և ի վըշ-  
 » տաշատ ժամանակի, որ գրով ոչ կարեմք բաւել և կամ  
 » ծանուցանել զեղեալ չարիան և աւերումն բոլոր աշ-  
 » խարհի »: այլ թերեւս միովն այն հիանալի մակդրիւ  
 քաղաքաւանին, շատ իսկ ազդէ և տայ գուշակել քան  
 զողորբագեալն ապա զհետ գովական նկարագրի տե-  
 ղւոյն, զոր ի վերդ կարգեցաք, յարելով այսպէս.

« Ժամատեղին խափանեցաւ,  
 Պաշտօնէից ձայնըն հատաւ.  
 Լայն և կանթեղքն խաւարեցաւ,  
 Պայծառութիւնն աւեր դարձաւ:  
 Ջուղա քաղաքն և Երեւան՝  
 Եօջ քաղաքին բնակեցան,  
 Ի յայն տեղին հաստատեցան.  
 Յետ դառնալոյ չըկայր հրաման »:

Այնքան արագ արագ կատարեցան այլևք: Ջուղայի  
 ի սաստէ Եահ Աքասայ, զի որ գրեաթէ միօրեայ օթեվա-  
 նաւ եւեթ հեռի գտանէր ի նմանէ՝ հետամուտ սպարա-  
 պետն թուրքաց Օսման Ջղալիօղլի, լուեալ՝ « մեծաւ  
 » զարմացմամբ հիացեալ ապուշ մնաց... վասն որոյ  
 » պատրաստեաց լրտեսս երկուս, և հրամայեաց նոցա  
 » գնալ մինչ ի Ջուղա, տեսանել և իմանալ զիսկն քա-  
 » նից և բերել նմա համբաւ ճշմարիտ. իսկ լրտեսացն

1 Փափաքելի և կարեւոր էր գիտել ստուգիւ զտիրական օր և  
 ժամանակ ելիցն Ջուղայեցոց ի նպրեկնաց իւրեանց. ըստ Առա-

» գնացեալ տեսին զամենայն ըստ ասացելոց բանիցն  
 » զբաւեալ, նա և շինուածքն Ջուղայու հրդեհեալք, զի  
 » տակաւին ծխէին խանձողքն. և անտի դարձան առ  
 » Ջղալիօղլին, թէ ստոյգ են ամենայն ասացեալքն: Եւ  
 » անդէն մտախոհ եղեալ Ջղալիօղլին ի սրտի իւրում



126. Ի Մանարճանաց Ջուղայի.

» ոչ գնալ ընդ ճանապարհն Ջուղայու... այլ չուեալ ի  
 » Նախշուանայ և մերձ գեղըն Աստապատու Էանց զԵ-  
 » րասխան, և գնաց ի քաղաքն վան »<sup>4</sup>: Ոչ միայն ընդ

գիւրի պատմելի եղեալ են գլխաք ի թուին ՌՄԴ, որ է ըստ սով-  
 բական հաշուի՝ 1608 հոկտ. — 1606 հոկտ. փրկչականին, և ի գար.

արագութիւն Պարսից էր զարմանք նորին, այլ ընդ բնաւ ինչ քանդումն այնպիսոյ շահաբեր տեղւոյ. բայց շառնայր ի միտ, և ոչ այլ որ, եթէ խորհուրդ էր խորագէտ բռնաւորին յետ այնքան շարեացն՝ հայթայթել բարի ինքեան, և նոցին իսկ մնացորդաց Զուղայեցոց, յերկրի նորոյ պանդխտութեան հնարելով նոր ասպարէզ և նոր ճանապարհ ճարտարութեան, և ընդարձակագոյն եւս վաճառականութեան, որպէս և օժանդակութեամբ իւրով եղեւ և յաշողեցաւ այս ի Նորն Զուղայ, զոր ոչ պակաս ի հնոցն, այլ մեծապէս եւս շինեցին և պայծառացուցին տարազրեալքն անտի: Իցեն արդ և թերեւս ոչ սակաւ տոհմք՝ սերեալք ի գաղթականաց անտի Հնոցն Զուղայ ի Նորն, ի Պարս, ի Հնդկիս և այլուր, որք ազգաբանութեամբ գիտեցն և դանուանս ելելոցն անտի նախնեաց իւրեանց, որպէս Լազարեանք և Սաֆարեանք, և այլն. յորոց մի և Էմիլեանց. գաղթեալն յայսմ տանէ կոչիւր Աստուածատուր որդի Էմիլի, յորմէ ութերորդ սերունդ էր ծանօթ բանասէրն Մկրտիչ Էմիլ, վախճանեալ հերու (1890) ի Մոսկուս:

Զճարտարս և զուշմագոյնս ի Զուղայեցոց՝ իւր իսկ գործակալս վաճառաշահութեան առնէր Եահ Արաս, և առեալ ի ձեռս նոցա մետաքս բազում՝ առաքէր ի շահաստանս Եւրոպիոյ. այլ և պատգամաբերս և դեսպանս ի նոցանէ ընտրէր յաճախ. որով աւերեալն Զուղայ ներգործէր տակաւին ի ձեռն ծննդոց իւրոց ընդ ամս ոչ սակաւ: Երիցագոյն ի սոցանէ է Խօճա Շիօշ որ յերկրորդում իսկ ամի ամսյութեան հայրենեացն (1606 - 7) առաքեցաւ յարքայէն՝ որպէս գործակալ և դեսպան ի վենետիկ և յայլ արբանիս իտալիոյ, թղթովք նորին՝ ի սկիզբն 1609 ամի (16 յանուարի) մատոյց նա առ դարձն վենետիկոյ զթուղթն, և պարպալէր ի վաճառել զինչն զոր երեր, և զնել զխնդրեալսն ի Եահէն: — Ի միևսում ամի եկն այլ ոմն դեսպան համաքաղաքացի, Խօճայ Սէֆէր որդի Խօճայ Եղիկեարի, սենեկապան Եահէն, զգօն և զգուշխօս երիտասարդ 33 ամեայ, թղթովք թագաւորին, որ գրեալ էր և առ դուքն Տոսկանայ, առ թագաւորն Սպանիոյ, և առ Քահանայապետն Հռովմայ. և ի 22 յանու. 1610) մատոյց ըզթուղթն. ծերակոյտն արար նմա ընդունելու ի ին և պատիւ, ծախեալ 100 դուկատս, և ի պարգեւի մասին 200 եւս. հայրն Սէֆէրայ տուեալ էր նմա առանձինն թուղթ

ընծայութեան առ վենետիկեան գունցն Ասորոց (Բերիոյ). յորմէ յայտ է թէ և յառաջ քան զգաղթն ի Զուղայէ վաճառակցէին ընդ միմեանս. գունցն հտ նմա փոխ 200 ոսկի (ծեգին), և գրէր առ ծերակոյտն մեծարել զՍէֆէր, որպէս և մեծարեցաւ աստ և ի Փորենտիա. Գրեաց ծերակոյտն և առ երեսփոխանս իւր ի Կ. Պօլիս և ի Բերիա՝ մտադիւր ընդունել զնա և դիւրել ի պէտսն: Յամանան յուլիսի մեկնեցաւ Սէֆէր թղթով զքսին և բազում մթերուք, երթալ ի Հռովմ և ի Սպանիա, և դառնալ ի Պարս, նաւելով յՈրմաս. տարեալ ընդ իւր և զինչն զոր այլ գործակալ Պարսիկ թողեալ էր ի վենետիկ. յանդորրագրին զոր հտ (17 փետր. 1610) ստորագրեն իսմայէլ Զուղայեցի, և Կոտիս Հայ 2: Յառաջ քան զսոսա առաքեալ էր Եահէն և զՅովհաննէս Մարտիրոսի որդի Զուղայիցի՝ ընչիւք ի Կ. Պօլիս, զայր քառասնամեայ, շիկահեր, որում վկայեցին ի վենետիկ (14 օգոստ. 1608) այլ Զուղայեցիք, Մուրատ՝ Անտոնի որդի և Անտոն՝ Չարուխի (?) որդի, և ծառայ նորա Առաքէլ Լաթլու կամ Տարաղլու: Ի նմին ժամանակի (սեպտ. 1609) եկեալ էին նաւա ի Կ. Պօլսոյ ի վենետիկ Տէր Գաբրիէլ Անդրէասայ որդի, Գալաբէկ՝ Տէր Սահակայ (Papas Taga) որդի, և Խօճայ Ուլուգ՝ Արդի բէկի որդի, բերելով 31 հակա մետաքսի: — Յետ ամաց ինչ (1613) Մարկոս և Մուրատ որդիք Միրիմանի Զուղայեցիք, վաճառաբերք, եղեալ դրամս ի շահաստանս վենետիկոյ, կարգէին անդ գործակալ իւրեանց զվերակացու տանն Հայոց (Գեորգ որդի Յովհաննէս): Յետ երկուց եւս ամաց էր ի վենետիկ և երթալոց էր ի վիեննա Յովհաննէս՝ Աւետեաց որդի, կաթոլիկ դաւանութեամբ, որպէս վկայէին Ախիման Գուպաթայ որդի և այլք: Յիշին անդ Զուղայեցիք և ի յետագայ ամս, Պետրոս օմն մեծարոյ այր (յամի 1620). — Մուրատ Խան 3 (1623), որոյ եղեալ էր գումար մեծ դրամոց ի շահաստանս, ակունս և այլ ինչս, և կարգէր վասն նոցին բազում գործակալս (ի 11 նոյեմբ.) և յետոյ (ի 15 մարտի 1624) ջրէր զգիր գործակալութեան նոցին, և վկայ առ այս լինէր Զուղայեցին Պահիս. — Ծատուր՝ Յովհաննէս որդի (1631), որոյ բերեալ էր ի վենետիկ 17 արկեղս խաշնդեղոյ և Որդնարեղոյ կամ Աղուիճակի (Semencina), և ինն եւս հակա այլոց նիւթոց, որոց վասն կարգէր գործակալս զերկուս ի Հայ

կարս. ձեռք է վան, և նաւեալ անտի յԱրժիէ՝ երկոյ յԵրզնում, ուստի յամի 1605 զայ երկրորդ անգամ՝ ի սկիզբն օգոստոսի ի Սալմաստ, ի 6 նոյեմբ ամսոյ լինի մեծ պատերազմ յափուսս Որմեայ ծովուն, պարտութենն և փախուստ, և մահ յԱրժի յ'2 զեկա. պիւր 1605 ամի:

1 Իտալ թարգմանութիւն թղթոյ թագաւորին առ զամանէ. . Abbiamo determinato di mandar ora costì l'onorato fra i pari e simili suoi Chogia Chieos, mercante cristiano Zufalino; çosi per fare questo complimento a lei come anco per fornirsi di là di alcuae robe e merci che fanno bisogno per uso della nostra real Corte.

2 Io Chogia Seffer figliuolo di Chogia Iadigar, Armeno Zufalino, agente del serenissimo re di Persia . . .

Io Ismail Zufalino testimonio della ricevuta.

Io Codis Armeno testimonio come sopra.

3 Հաւանորէն նախաւոր Ապրոյեանց աղնաւալուց տունի:

նոցն յաշորք ամի 1606 երթալն ի Սպանիս. (յետ ձեռեկոյ ի Գաղուին, Անար և այլուր). և զաւուրսն առէ մերձ ի Գաղուի տան Տաճկաց, որ է ի նոյեմբերի: Զերկրորդ զան Զաւուրուի տան ի Ռիւք ամի (1606 - 7), ի վանոյ խոյս տուեալ նախ՝ յետ ձեռեկոյն անդ, և երթալոյ յԵրզնում, և աստի զարձ առնելով, և մղելով պատերազմ մեծ առ Սֆիւնաւ, ի 25 նոյեմբերի, յորում պարտեալ փախչի զնոյ յԱրժի, և անդ մեռան ի 6 փետր. Ռիւք (1608): Մետաքսնի այսմ և յիշատակագիր ոմն ժամանակակից և ականառանս. « Եան որ զԵրեւան և զԶուղայ և զՆախիւնիվան այրեաց, և յ բնակիչքն քնց տարաւ ի Սպանիս, թիւն էր Ռիւք, յ Բացրոյսյա տաղոյն նամարել անկ է զքանս Յովհ. Մախոնցոյ, որ զթիւն առէ Ռիւք, ոյլ յեւս աւելեաց և ի մուսս նաւասարդի, որ է սակն զըսկիզբն վտարանդութեանն յետ կիսոյ նոկեմբերի 1605 ամի, և ի սկիզբն 1054 թուականին Հայոց: Համէր զերմանացի ըստ այլոց օամանեան պատմաց, զառաջին զարուստ Զաւլի առէ յամի 1604, ի 15 յուլիսի մեկնեալ ի կարնոյ, և յ'8 նոյեմբերի եկեալ ի

միջնորդաց քաղաքին: — Յիշին զայնու ժամանակաւ (1633) ճոխ վաճառակաւնք Ջուզայեցիք (յանուանէ),



137. Մահարձան Սուրբան վաչի (տ. յեղ 137).

Խօձայ մերտի Խաչատուր, Խօձայ Շերում, Խօձայ Շարգատ, Խօձայ Փիրիզուլ, Խօձայ Էյվազ, և այլն:

1 Ի մահազիրս վենեակոյ Actial կամ Aciar գրի տնուն սորս այսպէս. 1637, adi 9 Genaro. — Actial Armeno d'anni 70 in circa, ammalato da febre et cataro, giorni 15; visitato dal medico Agapito կամ Agabieto. Յայլ գիւանազիրս և ի կտակէն՝ գրի Ectiar, ոյլ և Vetiar del qm. (որդի) Giovanbacs.

2 Miei nepoti, cioè Pietro, Agapiri et Zuchias figliuoli de miei fratelli, che partino egualmente trà di loro: ma il primo di essi che venirà et che capiterà di qua, a quello sia consegnato non solo essi Reali 700 ma tutta la mia robba; cioè due Sanduchi overo cassette de Smaltini in mazzi 641; oltre le quali vi sono mazzi di Collane delli stessi smaltini N°. 186, cioè quatro dozene per mazzo. Et trovando anco creditor di Balli de Zuane Armeno sanser, di Reali 106 1/2. anco questi lasso alli miei nepoti a tutti egualmente.

Ի սկիզբն 1637 ամի (յ՝ 2 յանուարի) վախճանեցաւ անդ ի վենետիկ ի տան Հայոց, Եղիկեար <sup>1</sup> որդի Յովիան բէկի. 70 ամեայ, կտակելով (յ՝ 3 յանուարի) և աւանդելով ի ձեռս Մարկոսի որդոյ Մարտիրոսի, 700 բէալ դրամ՝ եղբորորդեաց իւրոց, Պետրոսի. Աղափիրի և Սուքիասայ, և որում ի նոցանէ վաղ եկեացէ այսր՝ զվաճառան 641 որցակ խճապակոյ (Smaltito) և 186 քայրամանեակս ի նմին նիւթոյ, և այլ պէսպէս ինչս <sup>2</sup>, հաւասար բաժանելիս ընդ երեսին եղբորորդիան. և վան գերեզմանի Թողմանն ի Ս. Գեորգ կղզեվանս՝ Թողոյր 30 դուկատս, յանձնելով զամենայն՝ հայազգի միջնորդաց քաղաքին. և այսոքիկ վկայութեամբ Բարսիլի որդոյ Գեորգայ և Պալի միջնորդի որդոյ Յովիանեոս: Բայց արդ թողեալ զցրուեալուն Ջուզայեցիս, դարձցուք անդրէն յամայացեալ բուն նոցին:

163. Անյնիւնի սէր հայրենական վայրաց՝ Թէպէտ յօժարեցուցանէր զբազումս ի գաղթելոցն՝ դառնալ անգրէն ի նոյն, այլ սակաւուց ոմանց յաջողեաց Թաքլստեամբ և յամառութեամբ՝ որպէս հաստարմատ տունկս՝ կռուիլ մնալ ի կարկառոյտ դերբուկան, և ոչ իսպառ թողուլ իրրեւ անկենդան և մեռեալ յաւիտենից զայնքան ինամով զգուեալ զոգն: Աւանդեն, եօթն արանց միայն թողեալ անդ Շահ Աբասայ ի պէտս նաւավարութեան անցից ընդ Երասխ, և ի նոցանէ անեցեալ, և ի կէս ԺԹ դարուս յարեալ ի նոյն նորոց գաղթականաց, որովք են արդ ի Հիմն Զուրա տունք Հայոց 80, և ողիք իրր 800, բնակեալք սակաւուք ի Մ. Հօ. աւերակաց նախնի շինին. առ որս խոտորեցան բազումք յուզեւորաց գիտնոց՝ ակն արկանել իրրև ի յիշատականոց մի մեծ, կամ ի ժանօթութիւն խանձարոց ճոխիցն սերունդոց, զորս տեսանէին առ երի մայրաքաղաքին Պարտից (ի Նոր Զուղա), և յիշեն պէտպէս տեսութեամբք. և շատք ի քննողացն են ազգաւ Փռանկք: Մի յառաջնոց անտի տեսողաց է Պուլէյ - լը - կուզ, յառաջ քան ըզկէս ԺԷ գարու, որ և ազաւ յերի աւերակացն (ի 25 նոյեմբ. 1647), և եզիտ հիւրընկալութիւն ի վարգապետէ տեղւոյն <sup>3</sup>: Յետ իրր 12 ամաց (1639) էանց ընդ այն Բուլիէ (Pouillet), որ ի նշմարացն զուշակէր <sup>4</sup> մի յաւէտ բարեշէն քաղաքաց կողմանցն եղեալ զայն. տունքն համակ քարաշէնք, որ հազուադիւտ է ի Պարսս, և հասարակաց տեղիքն ընդարձակք. նշանակէ և զգիրսն, ի միջի կրկին ափափայ ժայռից զետեղեալ շուրջ թատեր ձեւով,

3 Un village appelé Eski Usul'a, en françois Le Vieil Usulfa . . . A peine fusmes nous campez, que le Vertabète nous envoya un mouton bouilly tout entier pour faire *Korban*. Le Kiarvanbachi le fit distribuer à ceux de la Karavane, et ensuite fit faire la queste pour l'Évesque. Je reconnus que leur costume n'estoit pas de donner ce qu' ils vendoient. --- BOULLAYE LE GOUZ.

4 Les vieux vestiges de ceste ville marquent qu'elle a esté des mieux basties de ces quartiers - là: les maisons y estoient toutes de pierres, qui est une chose assez extraordinaire en Perse, et les lieux publics raisonnablement grands. La situation de ceste ville est enfermée entre deux grands rochers escarpez, et plus droits qu'une muraille, qui lui servent de closture, et qui s'arrondissent comme un amphiteatre, en sorte qu' il n'y a qu'un pas-



որոյ երկրքին ծագքն անձուկ ելք էին գետաձորոյն՝ ընդ որ լաստիւ անցաննն : — Դաւեոնիէ որ յամի 1668 (փերր.) էանց ընդ նոյն ճանապարհ՝ նոյնպէս գրէ զգիրսն, այլ զլինուածսն՝ ըստ մնացորդացն և ըստ գրիցն գուշակելով՝ ոչ գեղեցիկս ինչ համարի ելեալ, գքարինսն անտաշս և անկիր կուտեալս, և զքնակարանս նման նկըղից քան տանց, յորոց շատք էին ի հիւսիսակողմանն. վասն պարարտութեան չրջակայ սահմանացն՝ եկեալ բնակեալ էին յայնժամ գերդաստանք ինչ Հայոց և կէին յանդարտ : Եւ թէ և զկարաւանատունս զոր երկուստեք կառոյց Խոնայ Նազար՝ քալանդարն Հայոց (Նոր Զուղայ) ի յիշատակ հին հայրենեացն, ծախեալ աւելի քան 100, 000 վահանագրամ, և ոչ կարաց աւարտել, կանխելով մահուն : — Միւս եւս անուանի փռանկ ուղեւոր տեղագրող, Շարտէն, որ յետ սակաւ ամաց (1673, ապրիլ 13) ետես, անուանէ թուրք կոչմամբ Էսուկի Ճուլֆա, Esqui Julia, և համարի ըստ ոմանց զհինն Արիամնէ : և արդարեւ հին, ասէ, զի համակ աւեր և տապաստ կայ, և ոչ ինչ ճանաչի ի նմա, բայց որ երբեմն մեծութիւնն. անցքն ի բնէ դժուարինք և ամուրք ըզգուշացեալ էին բազում բերդորէիք. թէպէտ և 4000 տունս ասէին եղեալ ի նմա, այլ հազիւ կիսով չափ գուշակեն աւերակքն, և այնք ծակտիք են և քարայրք ի լերինն փորեալք, պաճարաց պատշաճաւորք քան մարդկան ի բնակութիւն. Թուի (նմա) Հինն Զուղայ անբեր և անգեղեցիկ եղեալ քան զամեայն երկիր, ուր ոչ ծառ տեսանի և ոչ բոյս, թէպէտ և մերձաւոր սահմանքն բարեմոյնք և արգաւանդք իցեն, այլ սա համակ քարուտ և ցամաք. բայց դիրքն գեղեցիկք իբրեւ զուրջ թատեր. բնակեալ էր յայնժամ յ30 տանց Հայոց : — Հայրենակից սոցա Հ. Վիլլոր Բիսուսեան ետես գտեղիս յամի 1688 (1 փերր.) և նոյնպէս վկայէ զգիրսն մահկանան և Թատերաձեւ յեզերս Երասխայ, հզօր ամրոցաւ յախափայ քարաժեռի և կործանեալ կամրջաւ : 3 :

Յետ փռանկացս յամի 1694 (19 յունիսի) իտալացին Ճեմսլի՝ յանցաննն ընդ Երասխա՝ ետես զաւերակս

Զուղայի, և կոյտ մի կաւոյ կոչէ և ստորերկրեայ այրից. կործանեալ էին և կարաւանատունքն շինեալք ի Խոնայ Նազարէ. բնակէին յայնժամ սակաւք ոմանք ի Հայոց, վասն պատուականութեան մօտակայ երկրին : 4 :

Յիշատակի և ի մերայոց զայսու ժամանակաւ Զուղայ, ոչ միայն բնակեալ այլ և առաջնորդ ունելով յետ կիսոյ Ժէ դարու՝ գերախաւար եպիսկոպոսն Յովնաննէս, որ ուսու յիտալիա զարուեստ տպագրութեան և եմոյծ ի Նոր Զուղայ. ուստի յետ տպագրութեան այլ և այլ զըրոց՝ կարգեցաւ ի Փիլիպպոսէ կաթողիկոսէ առաջնորդ Ամենափրկիչ վանաց տեղւոյն. և եղբրական մահուան հանդիպեցաւ ամենայն վանականսքն, յանիրաւորակալութենէ Քանկարու թուրքի միոյ, (յորմէ փրկանս տալով զերծուցեալ էր զգուստր տառապելոյ ուրուք, և զորդի նորա պահէր ի վանսն). սրիկայիւք մտեալ անօրինին ի վանսն խողտողեաց զամենեօն և յաւարի առեալ զանօթսն ի բաց չոգաւ : Իսկ գիւղականացն ոչ զոք տեսանելով ելեալ ի վանացն յաւուրց հետէ, « ելին ի » զլուխս բարձր քարանցն՝ որ ի վեր քան զվանքն, և տեսին փայտեայ սեղան ի վերայ դրան եկեղեցւոյն, և ի վերայ նորա հաց և խորտիկ և պնակ գինւոյ և բաժակ, և և արք երկու անկեալ յերկիր. ծանեան թէ սպանեալք են. և ազդ արարին գեղջն, և զրոհ տուեալ գեղջն և եկին բազումք, բերելով ընդ ինքեանս ասնդուխս. և կապեցին երկու և երեք ի մի, և ելին ի պարիսպն. և զոմն ի յուրցին ի մէջ պարսպին, որ երաց զդուռն, և մտին ի ներքս. և տեսին կոտորեալ զամենայն բնակիչս վանիցն և աւար առեալ զամենայն ինչսն. և ազդ արարին իշխանին Նախըւանայ, և նա հրամայեաց թաղել զսպանեալսն. և ապա որոնեցին ըզգօղսն և գտին. բայց ոչ ինչ կարացին առնել, զի հաստարիմք բազումք ունէին, այլ փոքր ինչ յանօթոց եկեղեցւոյն դարձուցին յետս, և այլն ամենայն կորեաւ : — Եւ թէ զսա (ոչ յանուանէ) Հ. Հոդ, (P. Alex. de Rhodes) քարոզիչ Բիսուսեան, որ յանցաննն ընդ Զուղայ յամի 1648, հրաւիրեցաւ ի վարդապետին ի

sage fort estroit aux deux extremittez de la ville, qui n'a guère plus de largeur que le lit d'un fleuve passablement grand, le quel traverse ceste ville, et que l'on passe avec un baq. — POUILLET, II. 159.

1 Zulfa . . . est une vile pressée entre deux montagnes, où passe l'Aras qui laisse très peu de terrain de costé et d'autre . . . Ny par ce qui en reste ny par son assise on ne voit pas qu'elle ait jamais eu aucune beauté : les pierres estoient grossièrement assemblées sans ciment, et les bastimens ressembloient mieux à des caves qu'à des maisons. Le coste du nord-ouest estait le plus habité, et il n'y avoit presque rien d'autre. — TAVERNIER, II, 46.

2 On a veritablement raison d'appeler celle-ci Vieille, car elle est toute ruinée et abbatue, on n'y connoit plus rien, excepté la grandeur qu'elle avoit. Elle estoit située sur la pente d'une montagne, le long du fleuve et sur les bords. Les avenues, qui sont naturellement difficiles et fortes, étoient gardeés par plusieurs forts. La ville avoit 4000 maisons, à ce que disent les Arméniens; cependant à en juger par les ruines, il n'y en pouvoit pas avoir la moitié, encore n'étoit la plupart que des trous et des cavernes, faites dans les montagnes, plus propres à retirer

des troupeaux qu' à loger des hommes. Je ne pense pas qu' il y ait au monde un endroit sterile et plus hideux que celui de Iulfa la Vieille : on n'y voit ni arbre ni herbe : à la verité il y a dans le voisinage des endroits plus heureux et plus fertiles, mais toujours est-il vrai qu' il ne se peut voir de ville située en un lieu plus sec et plus pierreux. La figure en étoit belle en récompense, ressemblant à un long amphithéatre. Il n'y a présentement qu' environ 30 familles qui sont toutes arméniennes. — CHARDIN.

3 C'étoit une ville de 3000 maisons, rangées en amphithéatre et en forme de croissant le long des bords de l'Araxe, avec un fort château sur un roc escarpé, et un beau pont sur le fleuve qu'on ne passe plus aujourd' hui qu' en bâteau. — Voyage d'un Missionnaire, 181.

4 Zulfa oggidì si può dire affatto disabitata . . . Quello nondimeno che ne rimane sotto aride pietre a sinistra dell' Arasse, fa ben conoscere non essere stata città molto ragguardevole, essendo un mucchio di fango e di caverne fabbricate sotto terra. . . E intanto v'abitano que' pochi Armeni, in quanto che un miglio indi lontano v'è un ottimo e fertile terreno. — GEMELLI, II. 20.

վանսն, մնալ անդ ամիսս ինչ, ոչ էտո յանձն, և յետ մեկնելոյն լուաւ զեղերական կատարած նորին <sup>1</sup>:

Յիւն և յամի 1678 ի Ջուղա Գրիգոր նորընծայ երէց, և Յովհաննէս կրօնաւոր: Յաւուրս պատերազմաց Դաւթի Բէկի ընդ այլազգիս՝ եկին առ նա, և « որդիքն « Մաղամէլիքին Ջուղայու », ի նիզակակցութիւն: — Աբրահամ կաթողիկոս ի շրջագայութեանն յուխտս և յերթալն առ Նատիր Ետէ, հանդիպեցաւ « ի Հին Ջուղայ, ուր կայ, ասէ, մեծ և զարմանալի կամուրջն երբք — տակ, բարձր և հիանալի տեսողացն, զոր (ուր) » Մեծն Շահապազն գայ ի ժամանակին զՋուղա քեցաց, » և այժմ աւեր կայ, և ճանապարհորդք նովաւ անցաւ » նեն ի Ջուղայու և գնան ի Թաւրիզ »: — Թողով յիշել զայցելութիւնս յետին ուղեւորաց, որոց տեսութիւնք ոչ ընծայեն նոր ինչ, յիշեցից զՏիւպուայն միայն, որ դարու միով յետ յիշեալ կաթողիկոսիդ եկն և ագաւ ի Ջուղա (1834, յ'8 ապրիլի) ի տան Սրբուն կամ Յարութիւն Մէլիքի որդւոյ Ստեփան Մէլիքի <sup>2</sup>:

164. Չիք և ոչ մի շինուած կանգուն մնացեալ ի Հինն

Ջուղա, այլ ամենայն խառն ի խուռն իմն կուտեալ յանձուկ և ի դժուարին ձորավայրի, ընդ որ ամենայն տեսողք զարմանան՝ եթէ զիարդ մարթ էր այնքան հազարաւոր ընտանեաց բովանդակիլ և բնակել. կամ զիարդ իսկ անցեւորաձ առնել յափափայն: Ի կոյտս աւերակացն յընդարձակութենէ որմոցն գուշակին երկու մեծ շէնք իբրու կարաւանատունք. և մերձ յԵրասխ՝ բաղանիք մի կամարակապ սրահօք և սենեկօք, որոյ երեսին և լուսամուտք և աւազանք: — Սակաւօք հետի անտի է ուր քարաբլուրն յորոյ գազաթան Ամենափրկիչ վանքն և եկեղեցին փոքր, այլ վայելուչ քարաշէն, կամարակապ, գմբեթաւոր, երկխորան, երկգումբ, ունելով և ժամատուն փոքր երկսիւն, և շուրջ խցկուես և այլ շինուածս, և պարիսպս: Ոչ միայն ի յիշատակ տաճարիս կանգնեցաւ Ամենափրկիչն Նոր Ջուղայ, այլ և աւանդեն ի հողոյ և ի քարանց հնոյն փոխադրեալ և խառնեալ ի շինութիւն նորոյն: Երկուստեք դրան տաճարին են խաչվէմք, ի միում արձանազրեալ յամի 1894, ի միւսումս յամի 1873:

**Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս փրկութեան Թէոդոսին. Թ. ՌԻԳ.**

† **Խաչս յիշատակ է Խօջայ Էպրումի. Խօջաջան Աղաբէկին . . . Խօջայ Նազար բէկի. Թ. ՌԻԲ.**

Կսն և այլ խաչքարինք ագուցեալք ի ճակատ տաճարին և ի հարաւոյ նորին մերձ ի պարիսպն մեծամեծ խաչարձանք, ի միումս գրեալ յամի 1546, և յայլ ի մերձաւոր նորին յետագայ ամս.

**Կանգնեցաւ Խաչս բարեխաւս Իգնատիոս ար(եղայ) ին. Թ. ՋՂԵ.**

Են անդ և մատրանածն շիրիւք, է որ անաւեր և է որ կիսաւեր, և խաչվէմք մանրաքանդակք, հանդերձ թուականօք հանգոյն վերողրելոյն զկիսով ԺՁ դարու. որպիսիք են յետագայդք.

† **Խաչս յիշատակ Մաթէոսին եւ ծնողացն Թադէոսին . . . . Թ. ՋՂԹ.**

† **Կանգնեցաւ Խաչս փրկութեան հոգւոյ Տէր Հայրապետ եպիսկոպոսին ևւ իւր ծնողաց. Թ. ՋՂԴ:**

† **Խաչս յիշատակ է Խաչատուր արեղին, վարդապետին Տէր Պետրոսին եւ ծնողացն Մերուրին (?), Ա Արդունին. Թ. ՋՂԹ:**

† **Խաչս յիշատակ Մանուէլ արեղին. Թ. ՋՂԹ:**

1 Un célèbre docteur parmi les Arméniens de ceux qu'ils appellent *Vartapiètes*, avait bâti une église sur une montagne voisine, et y avait beaucoup de réputation, vivant en ce lieu désert, éloigné du commerce des hommes, il avait été autrefois à Rome où l'on disait qu'il avait bien amassé de l'argent. Aussitôt qu'il sut que j'étais arrivé à Julfa, il me vint voir avec beaucoup de courtoisie, et voulut à toute force que j'allasse visiter son église: il me pressa de m'arrêter quelques mois avec lui, me pro-

mettant qu'il mènerait à Rome avec assurance; je l'en remerciai, parce que je me tenais bien plus assuré avec ma caravane d'Arméniens . . . Quelques jours après que je l'eus quitté, les Curdes croyant qu'il était venu de Rome avec la bourse bien garnie firent un complot pour l'aller massacrer la nuit, pour avoir de l'argent: ce qu'ils firent, et tuèrent tout ce qui rencontra dans sa maison. — P. Alex. de RHODES, Voyages et Missions. 2 DUBOIS, IV. 33.

Յարեւմտակողմն մահարձանաց վանացս հոսի աղբիւր  
ի վիմէ ի միջի ծառոց, և անցեալ ընդ քարափոր ա-  
գուզայս իջանէ մինչեւ յափն Երասխայ ոռոգանել զայ-  
զիս վանատեղոյն, զոր կոչեն Վանքի Մակուտայ բաղ  
(այգի): — Առ դրան հին աւանին արտաքոյ և յերի նո-  
րոյն՝ կայ աւերակ այնր սգասարաս Ս. Աստուածածին

եկեղեցւոյ, որում՝ լալով յանձնեցին բռնարարեալ զաղ-  
թականքն Զուղայի զբանալիս այլոց եկեղեցեաց և ըզ-  
տանց իւրեանց. որմն մի միայն նորա կարմիր կոփածոյ  
քարամբք մնայ արդ յառակ յիշատակի, և գերեզմանք  
հնացեալք շուրջ զնովաւ, գեղաքանդակ խաչվիճօք. որոց  
միոյն արձանագիր է այս.

**Սուրբ Խաչս յիշատակ Ղարղաչին, Վասաթին, Խաթունին հոգուն. ԹՎ. ՌԼ.**

այսինքն յամի 1599: — Ի հիւսիսոյ եկեղեցւոյս ի սե-  
պացեալ քարափանն Երասխայ երեւին պարիսպք և բնա-  
կարանք և մատուռն մի յանուն Ս. Աստուածածնի, կա-  
մարակապ կանգուն հանդերձ սեղանան. սա թուի

կաշեցեալն վերին կարան Աստուածածին, զորոյ գրանա-  
լիս աւանդեցին ստորնոյն: Առ դրամբ սորին եւս կան  
ազուցեալ կամ գերծ խաչվիճօք արձանագրեալք և ան-  
արձանագիրք. որպէս.

- † Աստուած ողորմի Աղամալին .
- † Խաչս յիշատակ է Մկրտչին . Աստուած . . . . ԹՎ. ՌԼ.
- † Խաչս յիշատակ Սահակին :

Քարաժայռն բարձրակարկառ որ յարեւելից մատրանս՝  
կոչի Աստուածածնի բաղ: — Յարեւմտից կուսէ սորին  
ամբարձեալ քարալեռան կրէ զբերդն Զուղայի, զոր և  
Դարպագրի գլխի բերդ կոչեն. զի ստորեւ նորա և առ  
ափին Երասխայ եղեալ է մեծ Դարպաս, որոյ դոյզն ինչ  
մնացորդք նմարին. յորոց մի համարելի է և քարակոչ-  
կոս մի ի ջուրս Երասխայ զլեալ, Շահ - բախր կոչե-  
ցեալ, որպէս եթէ տաճար լինել սպարանից Խօջայ Խա-  
չիկի, և անդ բազմել Շահ Աբասայ ի խնջոյս, և ընդու-  
նել ոսկեզէն սկուտեղբ մրգունս ոսկեղէնս: Եւ զի արդ  
շուրջ զկոչկոռովն յըջան առնուն ջուրք գետոյն՝ կոչեն  
Պտրտան. և անդ ասեն արկեալ գրանալիս ցանկալեացն,  
յորոց արդեօք պատկառեալ գետոյն՝ սպաս հարկանէ  
անդադար պարտիկ խուժանաւ այեացն. — Ի միջի ա-  
ւերակաց Զուղայ երեւին և տեղիք Ս. Փետրք և ճրանկի  
եկեղեցեաց. յայս անուն, (որ նշանակէ գեկեղեցի կա-  
թոլիկ կամ Միարանող Հայոց), կայ և այլ եկեղեցի  
յայն կողմն (ի հարաւոյ) Երասխայ, սրածայր կաթողի-  
կէիւ, վասն որոյ Պոմբրօզ կամ Պօրօզ կոչի, մերձ ի կիս-  
եզծ Կարաշանատունն շինեալ ի Խօջայ Նազարէ. որոյ  
հանդէպ ի հիւսիսակողմն կայ զոյգ նորին, երկոքին եւս  
սրբատաշ քարամբք<sup>1</sup>: Ի միջի երկոցուն սոցա արկեալ էր  
Կամուրջն մեծ և հիանալի, զորոյ առաջին շինութիւն ու-  
մանք Պոմպէի ընծայեն. շորեքին մոյթք կամարացն եւեթ

նշարին արդ վերամբարձք ընդ ջուրսն, և զամենայն  
ուզեւորաց գերեն հայեցուածս. համակ կոփածոյ քա-  
րամբք շինեալ էր, շորիւք կամարք 80՝ բացուածով, եր-  
կուքն ի ցամաքի էին և երկուք ի վերայ յորձնեռանդն  
լրօցն, զորս առ ի նուաճել՝ ստուարակարկատ յոյժ հա-  
րըստեալ էին խարիսխքն, որպէս և ցարդ երեւին: Արդ  
նաւակաւ լինին անցք ընդ գետն մաս ի կամրջատեղին:  
Մերձ ի կամուրջն և յեզր Երասխայ կանգնեալ կայ ա-  
ղիւսակերտ կամ կարմիր կակուղ քարամբ աշտարակա-  
ձեւ շինուած երկյարկ, պարսիկ ոճով, կիշիխտան կոչե-  
ցեալ (վարգոց), և Գմբէթ օրիորդի Գիշուկեզ - ի - տոչի-  
տէր. զօրիորդդ այդ համարին ոմանք ի լինել դուստր  
Խօճայ Նազարի. 12 սնկիւնի է վերին յարկն, պէսպէս դը-  
րուագք. ստորինն քառակողմն, ընդ որ մուծանէ դուռն  
ի կամարակապ սենեակ, ունելով ի վերոյ գլանաձեւ ծակ  
կամ բացուած. ընդ որ հայեցեալ ետես ոմն յուզեւորաց  
ի սկիզբն դարուս, աղաւնիս բունեալս ի վերնայարկին:  
— Առ դրան Ֆռանկի եկեղեցւոյն՝ որ ի շինամիջին՝ ի  
գեղեցիկ կճեայ տապանի թաղեալ կայ Խաչապապա  
ճոխ Զուղայեցի, զոր ետ սպանանել Խիւտապէնտէ Շահ  
յամի 1581. որպէս վկային արձանագիրքն, զոր անփոյթ  
արարեալ է ընդօրինակել ազգային քննողոց տեղոյս, և  
օտարազգին Տիւպուս փռանկ թարգմանութեամբ ըն-  
ծայէ, յորմէ վերափոխեմք ի հայ.

**Այս է տապան հանգստեան Պարոն Խաչապապայի, որ յանիրաւի մատ-  
նեցաւ ի ձեռս անհաւատից. Աղաչեմ որք ընթեռնոյք յիշել զիս յաղօթս.  
Դարձեալ աղաչեմ յիշեցէք զիս ի սուրբ յաղօթս ձեր, զի եւ դուք յիշես-  
չիք առաջի դառինն Աստուծոյ. Հանգեալ ի թուին ՌԼ. Հայր մեր:**

<sup>1</sup> Տիւպուս ոչ զմեծ Խօջայ Նազարն որ առ Շահ Աբասու, այլ  
զոչլ ոմն առ Թահմազ Ղուլի խանիւ սսէ շինող կարաւանս.  
տանցս. յայտ է ինչ սխալի զի փռանկ ուզեւորքն բաղում ամբ  
յառաջ քան զժամանակս Թահմազ Ղուլի խանի յիշեն զօրիորդի:

165. Այսպիսի են ծանօթ մնացորդը հասարակաց շի. նուածոց Չուղայի. իսկ ի տունն որ առ հասարակ սփռեալ են յեզերս գետոյն և ի փուլք ձորոյն, յափափայ քարաբլուրս և ի խոռոչ, շերեւի նշանաւոր ինչ կամ անթերի. չիք ինչ կենդանի ի բնակարանս անդ, ասէ Տիւպուա, բայց կարիճք մեծամեծք քան զտավորականն, որք գրեաթէ յամենայն ամի խայթեալ սպանանեն զմի ոք ի բնակչացն<sup>1</sup>: Քննասէր ուղէգիրս այս և այլք ամենեքին, որ պէս տեսաք, աննշանս ինչ վկայեն գրնակարանս, որչափ ինչ արտաքուստ նշմարէին ի դոյզն՝ մնացուածոցն, այլ ոչ նոյնպէս և զհանգստարանս մեռելոց. միարարին աստանօր ամենայն տեսողք տեղւոյն յամենայն ազգաց՝ ի զարմանս և ի պակուցումն, ընդ համափիւռ տարածութիւն խուռն բազմութեան կարմրաքար և գորշագոյն

գերեզմանացն, ընդ արեւմուտս կոյս քաղաքաւանին, արտաքոյ պարսպացն, զորս նմանեցուցանէ ոմն հնձոց որայից. և բազմաց յառաջին ակնարկութեան ի հեռուստ՝ կարծեցան բանակք բազմութեան զօրաց ճակատելոց. զի են իբրև 3000 և աւելի, և ըստ ուղեւորի միոյ, ի կէս Ժէ դարու, աւելի քան զ 10, 000<sup>2</sup>. յուրվք երկայնաձեւք են, 7'—9' բարձրութեամբ, կոթողեալք ի սնարս տապանի հանգուցելոցն, և ոմանք խոյաձեւք. զատ յարձանագրացն և գեղաքանդակ դրուագաց զարդուց, ունելով ոմանց և պատկերքանգակս խորհրդաւորս կամ այլաբանականս, կիրպարանս հեծելոց, և կամ բազմելոց ի խրատնան, սպասաւորաց և մատուակաց առ ընթեր կայով և գուսանաց, և այլք այսպիսիք<sup>3</sup>. յորս նշանաւոր է մեծ խոյաձեւ շիրիմ Մանուկ Նազարի.

**Այս է հանգիստ Մանուկ Նազարին ԹՎ. ՌԻԷ.**

Թուականդ է 1578—9 ամի. իսկ թաղւալն համարի նախահայր մեծատուն տոհմի Լազարեանց հիմնողաց ուսումնարանին կամ ճեմարանին ի Մոսկուա: Չընտիրս ոմանս ի քանդակազարդ տապանաքարանցն (չորք

կամ հինգ) յամի 1871 բարձեալ տարան ի Թանգարան Տփղիսու: Գտանին և մատրանաձեւ շիրիմք, որպիսի է խօջայ խաչկի, որ Թուի որդի Մանուկ Նազարի, յորոյ խաչվիմի գրեալ է յամի 1604.

**Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ Խաւջայ Խաչիկին, որ ի ՌԾԳ Թուականին հանգեալ ի Քրիստոս. Խաչս յիշատակ Խաւջայ Խաչիկին եւ կողակից Մարիամին:**

Եթէ մանր որ քննէր՝ սրբելով զվէման և վերծանելով կամ լուսազրելով, մարթ էր արդեօք բովանդակ զբոցոյկ մի յօրինել և վերականգնել այնու զյիշատակ անբաւ մեռելութեանց: Սակաւք յոյժ ի բազմաց անտի գտեալք՝

կարգեցան աստանօր. ընդ որս և լուսատիպ պատկերք ոմանց՝ յորս աշխատութեամբ նշմարեցի աւելի կամ նուազ մասամբ զգրեալսն, և եթէ ոչ վրիպիմ՝ նա և հին Թուականս ԺԲ դարու:

- † Այս է նշան փրկութեան բարեխաւս Խուամարզէ հոգոյն. (Տես Թիւ 124).
- † Խաչս յիշատակ է Մարիֆարին (?) հոգւոյն. ՌԻՄԳ.


1 Tout autour, jusqu' à un verst de distance sur le bord uni du fleuve dans les ravins, sur les rochers pittoresques et contre leurs parois escarpées, sont disséminées les habitations, à demi-écroulées, à demi-enterrées, à demi-lavées par les pluies, à demi-entraînées par les torrents. Il n'y reste de vivant que le terrible scorpion noir de Djoulfa, plus grand et plus venimeux que les scorpions ordinaires... A ma grande surprise, je ne trouvai aucun des édifices de Djoulfa très-remarquables soit par la richesse, soit par la majesté de son architecture; l'incendie qui causa leur ruine les a trop maltraités. Toutes les maisons étaient en pierres de grès bigarré, liées avec de l'argile rouge. Les églises étaient un peu mieux construites, mais sans approcher du luxe ordinaire des églises arméniennes. — DUBOIS. IV. 26.

2 Հ. Նուրգ Թիսուսեան տեսալ յամի 1648, զբեր սյապէս. Hors des murailles de cette ville qui maintenant n'est qu'un desert, je vis un beau monument de l'ancienne piété des Arméniens. C'est une campagne fort étendue, où il y

a pour le moins dix mille tombeaux de marbre, merveilleusement bien travaillés. Sur chacun, on voit une grande pierre de marbre blanc de douze pieds de hauteur et huit de large, gravé de plusieurs belles figures, et au dessus une grande croix. Cette grande quantité de marbres est fort belle à voir. — P. ALEX. DE RHODES.

3 C'était dans leurs tombeaux que les habitants de Djulfa mettaient leur gloire et leurs richesses... Est il rien de plus beau que ces milliers de pierres sépulcrales dressées et pressées à côté les unes des autres comme une riche moisson d'épis, et qui recouvrent une grande étendue de terrain le long de l'Araxe. Ces pierres ont 8 à 9 pieds de hauteur, et présentent un labyrinthe de morts, où les vivants, après trois siècles, peuvent venir trouver toute une génération dormant comme si elle venait de mourir la veille: car ces monuments en grès de Tarvagh, couverts de sculptures, d'arabesques, de bas reliefs, sont frais comme s'ils sortaient de la main des sculpteurs. — DUBOIS, IV. 76.






128. Շիրիմ Խօնայ Մանուկ Նազարայ.



- † Սիրական Գրիգոր . Թ . Ռիթ .
- † Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս մանուկ Գրիգորին . Թ . Ռիթ .
- † Թ . Ռիթ . Խաչս յիշատակ է Գուհարի հոգուն .
- † Սուրբ Խաչս յիշատակ է Աստուածտուրին . Թ . Ռի . Ի (սրայ) էլ կազմող .
- † Սուրբ Խաչս յիշատակ է Աւետիսին . ԹՎԿՆ . Ռիթ .



129. Մանարձան ի Զուդրս .



130. Կիւլիստան . (տես յէջ 425) .

- † Ի Թվականիս Ռիթ . Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս Սէրա-  
նին հոգուն .
- † Խաչս յիշատակ է Վարդազարին . Ղարիպ մնաց միայն . Միրաքն երեր ?  
ԹՎ . ԶՂԹ .
- † Խաչս յիշատակ եւ բարեխաւս առ Քրիստոս փրկութեան հոգուն Խաւ-  
ջա Շիխէ ? . Թ . Ռիթ .
- † Գրիգոր վրդ . Թ . Ռիթ .  
Այս է նշան տէրունական  
Եւ բարեխաւս է փրկութեան <sup>1</sup> .

<sup>1</sup> Այս բանք փորագրեալ են ի խաչքանդակի մուշարձանին, որ պատկերագրեալ է ի ԹԻԵ 126 .

† Սուրբ Խաչս յիշատակ Խուժուլ — փաշին . Թ . ՌԻԷ .

† Սուրբ Խաչս յիշատակ Յովհաննիսին . Թ . ՌԼԱ .

† Սուրբ Խաչս բարեխաւս Աղա Փիրէ (կամ Քարէ) . Թ . ՌԻԱ .

† Թ . ՌԾԱ . Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս Պարոն Յովհաննիսին հոգուն .

† Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս վասն փրկութեան հոգւոյ Սալվար խանին .

Սուրբ Խաչս յիշատակ է Սալվար Խանին . Թ . ՌԾԱ .

† Սուրբ Խաչս յիշատակ եւ բարեխաւս առ Քրիստոս Սալթան վալէ հոգոյն .

Ձերեւի Թուական ի սին, այլ նրբութիւն քանգակացն շատ ինչ ծանուցանէ . տես Թիւ 127 .

† Խաչս յիշատակ Յովանիսին որդոյն Մկրրտչին .

† Սուրբ Խաչս յիշատակ է Պետրոսին հոգոյն .

† Սուրբ Խաչս յիշատակ Անդրիասին .

Ձեք երկրայել եթէ հնագոյնք եւս քան զսոսին գտցին մահարձանք, ըստ ոմանց նա և յէ կամ Ը դարէ, այլ առ հնութեան և եղծման գրուածոցն, կամ առ ոչ մանր խուզարկութեան՝ ցարգ ծանուցեալքն հնութեամբ շան .

ցանեն քան զկէս ԺԵ դարու (ՋԺ = 1461), բաց յայն ցանէ յորս նշմարեցի Ո Թուական, ԺԲ դարու նշանակ, և ոչ Ռ, որպէս այլքն . այսպէս և մահարձանն (Թիւ 128), որոյ այս է գրուած բաժանեալ յերկուս սիւնակս .

**Սուրբ Խաչս բարեխաւս փրկութեան հանգուցեալ Գրիգորին հոգոյն . Մխիթ . . . նիսէ . . ՌԻ ԹՎ .**

Սիւնեով ոմն ուուս որ առ մեզ իբրեւ 35 ամօք յառաջ տեսեալ էր զգերեզմանս Զուղայի, համարէր 3000 ար . ձանագրութեանց լինել ի նոսին :

Զճանապարհայն որ ի գերեզմանաց անաի տանի յԱ մենափրկիչ վանս, քարաժայռ մի կայ սակաւ ինչ մարդաձեւ, զոր ա՛ռուանին կոչոյիկ Մամ, և ասեն լինել վի .

մատառեալ պառաւ մի՝ որ գողանայր զսոս կամ զխստոր վանացն <sup>1</sup> :

Ի նորաչէն գեղջ այժմեան Զուղայ շէրք ինչ տակաւին նշանաւոր . եկեղեցին Ս . Գեորգ՝ յանուն հնոյն և աւերելոյ, փայտայարկ է և անշուք . յորմն նորին հանգէպ աւազանին ազուցեալ կայ վէժ մի արձանագրաւս .

**Սուրբ աւազանս յիշատակ է Մխիթարի որդի Ովանէսին ի յարկս Սըրբոյն Գէորգեայ Զօրավարին, ի Թուին ՌՃԼԶ .**


Հարկ ուրեմն է զի և եկեղեցիս այս հաստատեալ իցէ զայնու ժամանակաւ, այսինքն ի վերջին քառորդի ԺԷ դարու :

Յորեւելից կուսէ աւերակացն Զուղայ անցանէ արքունի պողոտայն, և երկու մղոնաւ ի ստորեւ՝ ընդ գետն Երասի (նաւակօք) . առ որոյ ափամբք երկուստեք հաստատեալ են մաքրատունք և մաքսատունք Պարսից և Ռուսաց . ի շինութեան են արգ և այլ կարեւոր իջեվանք

և պաշտօնարանք սոցա, որովք յուսալի է վերակենդանութիւն մեռելատիպ վայրացս, մանաւանդ եթէ յազուղեացի ձգել մինչեւ այսր զերկաթուղին, որպէս ասի . և ի սակս այսոցիկ աճէ արդ բնակութիւն գեղջն, յորում իբրեւ 100 տունք են Հայոց <sup>2</sup>, որոց առաջին արուեստ է քարահատութիւն (երկանաքարի), ապա մշակութիւն և խաշնադարմանութիւն . կանայքն ճարտարք ասին ի հիւ .

1 Մեղու օրագիր, ԻԲ . 92 :

2 Ոմանք թուազուղայ գրին զԹիւ բնակչացն :



131. Մահարձան մի Զուղայի.

սուած գորգոց և կապերտից: — Ի բնական կազմուածի երկրին նշանաւոր է ի սահմանս Զուղայ կարմրագոյն խնաքարն, և ի վերայ նորին գեղնագոյն կաւաքար, զանգեալ կմբրածեւ լումայիկ (nummulite) քարիւ. յորում գտանին քարացեալ ոտրէք և խխունջք բազմատեսակք, զանազան ձեւք որոշեալք Սպիտայ և յայլոց բնաբանից պէտպէս անուամբք, յորոց զսակաւս ի բազմացն յանդիման առնէ պատկերս, և ըստ նշանակեալ թւոցն այսօրիկ են ուսումնական անուանքն, զորս բացատրել դժուարին էր ինձ թերեւս և անօգուտ.

1. 1 ա. Spirigera epigona n. f.
2. 2 ա. Nautilus convergens n. f.
3. 3 ա. Amplexus Henslovii Miln. Edw.
4. Amplexus corolloides var. geniculatus.
5. 5 ա. Zaphrentis Omalusi Miln. Edw.
6. Macrocheilus indetermin.
7. 8. Michelina tenuisepta de Kon.
9. 9 ա. 9 բ. Amplexus cornubovis Miln. Edw.
10. Goniatites striatus Mart.
11. 11 ա. Amplexus cornubovis Miln. Edw.
12. 12 ա. Clisophyllum turbinatum M. Coy.
13. 13 ա. Orhoceras turritellum n. f.
14. 14 ա. Caratites tropitus n. f.
15. Polypora fastuosa de Kon.
15. ա. Ceratites Djulfensis.
16. 16 ա. 17. 17 ա. Chrinoiden Stielglieder Poterocrinus ?
18. Pecten Tortilis Semenof aff.

Սյսօրիկ և այլք յորոք ըստ Սպիտայ բնաբանութեան՝ յանկենդանեաց հարըստութենէ. իսկ ի կենդանեաց՝ յառաջ քան զնա նշանակեալ էր Տիւպուա (Ի, 24.) զատ յայլոց և երկուս տեսակս իբրեւ սեփականս Զուղայի, կօշեւով զմին Schizaster Dulfensis, զմիւսն Helix Dulfensis, կողղինջ պարունակածիւ, զոր ետես ի վերայ փնջից կորընգանի, և գեղեցիկ կապուտակ յակինթ ծաղկան՝ որ ի սորս ժայռիցն փթըթէր: Անժխատ շնորհք ամայութեանց, և սփոփիչք սգայիչատակ սահմանաց:







LIT. A. PELLIZZATO VENISE

ՔԱՐԱՅԵԱԼ ԺԺՄԱԿԲ Ի ՍԱՀՄԱՆՍ ՋՈՒՂԱՅԻ







# Դ Ր Ո Ւ Ա Փ (Բ)

## Հ Ա Մ Ա Տ Ա Ր Ա Ծ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Ո Ց

166. Ահա տակը և անուն իսկ Հնոյն Զուղայ, մանաւանդ եղբերական վախճանն կամ դադարումն յարաշարժ երթեւեկութեան համադարձիկ վաճառականացն այնուցիկ, խորամուխ իմն ազդէ զգացումն ի ծանօթս պատմութեան մերոյ, հաւասարեալ մասամբ գիպացն և արկածից՝ մեծամեծաց և վաղեմի բազմամբոխ և շահաստան քաղաքացն Այրարատայ, և մասամբ առաւելեալ քան զքնաւս. այնու՝ զի, (Թէպէտ և զուրկ ի մեծաշուք յիշխանական և ի զինուորական փայլմանց նոցին), այլ աշաւորը շահավաճառութեամբն ի փոքու սահմանի իւրում՝ և առանց արքունի կամ ստանիկ հովանաւորութեանց, թուի լուելայն մրցեալ և հանդիսացեալ ընդ նոսին. և այնու եւս, զի յետ ամենեցուն՝ յանկարծօրէն իմն երեւեալ է ինքնունակ հայաշարժ քաղաքաւանմարթ է ասել՝ թէ և աւարան և աւերածով փակեալ զվերջին դրունս աշխարհամուտ քաղաքաց Հայոց. և դարձեալ այնու, զի մերձագոյն և նորագոյն է յիշատակութեանս. ի շարս շահաստանացն այնոցիկ, ոմանց ամայացելոց և ոմանց այլափոխելոց: Ի դէպ է իմաստասիրել կամ երեւակայել, եթէ հայկականն Տիր կամ Երմէս՝ զյետին կնիք թեւահարով ասիցն՝ եթող ի Զուղա. որպէս և եցոյց կարծեմ փոքր ի շատէ կարգ բանից տեղագրութեանս. և նոյն իսկ դրդէ զմիտս և հարկ իմն առնէ՝ աւագագոյն ակնարկութեամբ խնդրել զհետս նորին և ընդ բնաւ Հայս, կամ զհետս Հայոց ընդ բնաւ երկիր. զի շատ իսկ ծանուցեալ և հռչակեալ է յօտարաց՝ աշխարհաքաղաքացի գոլ Հայոյն, և ոգի կամ ընտելութիւն իմն բնածին ունել վաճառականութեան ի սկզբանցն և այսր, և ի ժամանակի ինքնիշխանութեան և ի նուաճմանն յայլազգեաց. որոյ զի յետին կենդրոն կամ չուարան ի բնիկ ի Հայս՝ եղև տեղիս այս (Զուղա), պատշաճագոյն վարկայ աստանօր ղկայ առնուլ, և քննել զնշանաւորս զայս սեփականութիւն կամ հանճար հայութեանս. բայց ոչ ըստ բազմադիմի տեսութեանց՝ յոր տարածեալ ձգէ քննութիւն պէսպէս գիտելեաց վաճառականութեան, (և վասն որոյ բովանդակ իսկ մատեան թերեւս չիցէ բաւական), այլ ըստ պատմական դիտման, և որչափ անհրաժեշտ հարկ իցէ ի ճառելն զվաճառակաւ նութենէ ազգի միոյ:

Աշխարհածանօթ գոլով վաճառասիրութեան Հայոց և երկրայածութեան, միտք քննասէրք՝ իբրեւ ի համասփիւռ եզերաց՝ ի կենդրոն անդր ընթանան, ի բնիկ աշխարհ նոցին, զիտել թէ որպիսիս ունիցի դիրս բարեպատեհս ի բարգաւաճանս վաճառականութեան, հանգոյն աշխարհացն և ժողովրդոց համբաւելոց ի հնումն և

ի նորումս: — Ի վերին երեսս ոչ երեւի Հայաստան զեւտեղեալ ի դիպողագոյն վայրի վաճառականութեան, հեռի կամ գէթ անհուպ գոլով ի ծովէ, որ համատարած և համաշարժ ճանապարհն է վաճառականութեան, և շահաստանքն կամ եմփոռոնք ծովեզերեայք՝ համամթեր շտեմարանք բերոց և գոյից ծագաց երկրի: Սակայն անկ է յիշել, զի վաճառականութիւն ոչ ի ծովու ծնաւ, այլ ի ցամաքի, և առաջին առեւտուրք կամ փոխանակութիւնք վաճառուց՝ ընդ ցամաք եղին. ընդ սա փորձեցան, բացան, զծեցան նախաշաւիղք վաճառականաց, օձանդակ ունելով արդարեւ՝ ոչ անագան՝ և զշարժուն շաւիղս գետոց, և յետ այնր առ սակաւ սակաւ կամ ահ ընդ ահ՝ մերձենալով, մխելով և յառաջելով ընդ ահաւոր ամայութիւնս երկդիմի ալեաց ծովու:

Առաջի ունելով զաշխարհացոյց քարտէս Ասիոյ՝ տեսանեմք զաշխարհս Հայոց ընդ միջերկրեայսն, այլ ոչ շատ հեռի ի ծովուց, մանաւանդ եթէ միանգամայն նկատեսցուք զՄեծ և զՓոքր Հայս, և ըստ ժամանակի ընդարձակագոյն տիրապետութեան Հայոց. ի հիւսիսակողման երկրիս մերոյ՝ զրեաթէ անանջրպետ պարիսպ պատեալ կայ հարստակողն Կովկաս, որոյ անընդհատ շարք լեռանց՝ ոչ յորդորեն զընթացս վաճառականութեան, այլ թուին և փականս դնել սակաւուց դրանցն: Յարեւելից կուտէ դարձեալ մասն մի Կովկասու և կովկասայնոց, և անդրագոյն երկարաձիգ և խորանիստ Ծոփն Կազբից՝ նշնայէս ոչ դիրագնաց և դիրահաղորդ երեւի: Ի հարաւոյ Հայաստանեայց պատեն դարձեալ լերինք Տարրոսականը, այլ ոչ միապաղաղք և անանցք, և ի ստորոտս նոցին տարածեալ լայնասփիւռ դաշտք Միջագետաց և տիեզերակալ աշխարհ տէրութեան Փաղդէացոց և Ասորեստանեայց, դիրագնացք՝ և ըստ բնութեան երկրին և ըստ քաղաքական հնարից: Իսկ յարեւմտից՝ չկան մեծ ինչ անջրպետք լեռանց ընդ Հայս և ընդ այլազգիս, այլ յաւէտ մեծ գետն Եփրատ և այլք մանունք, ոչ այնքան արգելք՝ որքան դիրիչք գնացից. բայց մանր մանր կտորումն կամ բաժանմունք ազգաց և աշխարհաց հնոյն Փ. Ասիոյ, չեն քալ օժանդակիչք հարուստ վաճառակաւ նութեան, որ դիրս խնդրէ և համարձակ սահմանս տեղափոխութեան. միանգամայն և զյորդորական գնացս հզոր և լայն գետոց, մինչ չեւ եւս էին ճանապարհք յարդարեալք ի ցամաքի. իսկ ուր այսպիսի ձեռնտուութիւն կամ զուգութիւն չրոյ և ցամաքի, անդ վստահ բարգաւաճանք վաճառականութեան:

Եւ է տեսանել զայս յայտնապէս ի սկզբանց անտի, ի մեծամեծ և զլիաւոր կենդրոնս և ճանապարհս վաճառականութեան:

ճառականութեան . որպիսիք նախ , սկսեալ ի մերձաւորագունէն մերոյ աշխարհի , (յորմէ և ընծային իսկ) անգաղար գնացարանքն Եփրատ և Տիգրիս , ի կենդրոնս շահաստանաց Բաղդէացոց և Ատրեստանեայց ի Բաբելոն և ի Երեւոս , և ի քաղաքս ոմանս Միլադետաց և Ատրուոց : Որոց յարեւմտից և ի հարաւոյ՝ ի Լիբիա՝ երկրորդ մեծ ճանապարհ և շտեմարան աշխարհահոյակն է եգիպտականն Եգիպոս . երրորդ՝ յարեւելից հարաւոյ՝ Հնդկաստան՝ Փակգետիս իւրով և Ինդոսիս . չորրորդ , ի հիւսիսոյ արեւելից սոցին և հանուրց՝ կիսապօղեալ աշխարհն Ճենաց՝ մեծամեծ գետովք իւրովք (Հոսնկոյ , Երանքսի) . և ի միջոցի մեծատարած անապատաց Թուրքաստանի՝ Որքոս և Երաքաստ գետք , յարախաղաց հետք անհետ կարծեցեալ աւազուտ տարածութեանն , ճանապարհք մթազգածք և անհիւրընկալք ի սկզբանց մարդկութեան մինչեւ ցայժմ , և դեռ իսկ ի մեր աւուրս հարթեալ և յորդորեալ կամ բացածանուցեալ՝ հզոր զօրութեամբ պետութեան Ռուսաց և Նանիւ դիտնոց և քննողաց երկրին : — Սակայն և ընդ այս իսկ արեւելեան հեռաւոր և դժուարագնաց մարզս երկրի՝ վաճառականութիւն բացեալ և գտեալ էր հունս ի հնազոյն ժամանակաց հետէ , ոչ միայն յիշեցելովք գետովքն , այլ և մականուանեալ ցամաքայու կենդանի նառուք , այսինքն է կարաւանօք ոչորոց , որք ոչ միայն զԱրարացոց անապատս կոխէին ստէպ անդղորդ գարշապարօքն , այլ և զընդարձակագոյնն Թուրքաստանեայց և Սկիւթացոց :

Բ . Զանապարհք վաճառականութեան . — Բնաւոր և բունաւոր բերուած ոգւոյ յառեւտուր , կամ առ հարկի կամ առ հեշտութեան , որ հնարեաց զամբոխ կարաւանաց և տորմոցաց , յաճախագոյն եւս սոսկականօք ոմամք անձամք՝ իրբեւ լռելեայն և զանխակի կրթի ի վաստակ իւր . և հանգոյն գետոցն՝ զորովք քերէ յաճախ , բանայ բունութեամբ անցս գնացից ընդ անծանօթ և ընդ անկոխ վայրս , մինչեւ հասցէ յեզերս համատարած սուպընջականին , ծովու , կամ յարգասու և ի շահաստան քաղաքս և ամբարանոցս . ոչ ինչ առնելով փոյթ և խրտիր ընդ ազգ և ընդ լեզու , որք փոփոխին , անկանին և կանգնին , և վաճառականն՝ հին կամ նոր՝ հանապազօրդէ ընդ նոյն ճանապարհ , կամ նորանորս և դիւրագնալիս եւս բանայ առ նոյնս և կամ առ նոր հանգոյցս և կայանս շահարբոս : Ոչ է ապա առաւելագանց գրաւոր աւանդութիւն հինաւորց ազգին Ճենաց , որք (28 և աւելի եւս դարուք յառաջ քան զթուական Փրկչին) ասեն ընդ արեւելեան երկարածիգ ճանապարհս երթեւեկեալ վաճառականաց , յարեւմտից ծովուն կազրից , և յանդրադոյն եւս մարզից , մինչեւ ի սահմանս իրեանց և Սերաց . և ի սոցունց սաստի յարեւմուտս անդր դիմեալ , գոնեա ի մերձաւորագոյն ինչ սահմանս Թուրքաստան անապատի , յորում էին ի վաղ ժամանակս ուրեք ուրեք կայանք , այլ և քաղաքք բազմարնակք :

Սովորական ճանապարհ էր , ի նախայիշեալ գետոց Ճե-

նաց սկիզբն առնելով , գնացք Որքոսի (Հմու տէրեա) մեծի գետոյ Սկիւթաց կամ Թուրքաց , որ ածէր ի Պատախաշան և ի Բահլ մեծ շահաստան Բակտրաց , կամ ի միւսն՝ ի Մերոս (Մերով) , բազում գարուք յառաջ քան զՎարդանանս ծանօթացեալ Հայոց <sup>1</sup> , ոչ իրբեւ շահաստան միայն , այլ և քաջաց նոցին շահաստակութեան հանդիսարան : Այս հասանէր և կարաւան մի մեծի համալխարհական շահավաճառի Հնդկաց . և սաստի տանէր ճանապարհն կամ ի կողմանս Պարսից ընդ ցամաք , և կամ յափունս կազրիական ծովու և ի բերան զաւազայլ գետոցն Հայոց և Վրաց , կրրի և Երասխայ , ընդ որս յառաջ եւս անցեալ՝ հասուցանէր ի մեծ շահաստան աշխարհին Հայոց միանգամայն և յիշխանանիւստն՝ յԱւտաշատ , (հաւանօրէն յառաջ քան զայն՝ յԱրմաիս) . յորմէ՝ ընդ այլ և այլ ճանապարհս՝ ի Միլագետս ի Պոնտոս , և ի Փ . Ասիա <sup>2</sup> : Ի դէպ է յայս ձգել զբան հին աշխարհագրին մերոյ , եթէ իցէ արդարեւ Խորենացոյ կամ այլոյ ազգայնոյ՝ և ոչ յոյն բնագրի , ասացեալն վասն կազրիական ծովուն , եթէ , « ՋՅուսականաւն (ծոս) » վով) և զկազրիցն՝ և ի մէջ մարդիկ շուր անցին , » նոյնպէս վարկանիմ և զՀնդկայինն » : Բայց բազում անգամ , որպէս և ի միջին դարս , եկքն յարեւելից՝ որպէս խոտորէին ընդ հարաւ արեւմտից , հեռացեալք ի կազրից կողմանց , այսպէս և զհիւսիսով նորին պատեալ՝ միւսին ընդ կողմանս Սարմատացոց և կովկասայնոց , ուստի հարկ էր ընդ հոչակեալ Դրոսնս կամ Պառնկս ճորայ և Արանաց մտանել ի Վիրս , ի Հայս և յեզերս Պոնտոսի , և կամ շրջան առեալ գերկարածիգ հիւսիսային ստորտովք կովկասեան լեռնապարու՝ երթալ ի տարիական կողմանս :

Իրբեւ պատմական ստուգութիւն համարեալ է դեպանութիւն արեւմտեան ազգի միոյ (Թուի Բաղդէացոց) , 2380 ամք յառաջ քան զթուական Փրկչին՝ առտիրապետն Ճենաց . ժամանակ յորում ըստ աւանդութեանց մերոյ տոհմիս՝ ծագէր և հարստութիւն Հայկականց , և Թերեւս հիմն արկեալ էր մայրաքաղաքին Արմաշայ , այն որ բարգաւաճէրն և յաւուրս առաջնոց Արշակունեաց մերոց ց՝ վերջ կոյս Ա դարու Քրիստոսի , մինչեւ Երուանդ փոխադրեաց զգահն յիւր դաստակերտ հուպ ի բերան Ախուրեան գետոյ . և ի դէպ է համարել զայն որպէս աթոռ իշխանութեան Հայոց՝ նոյն և առաջին շահաստան նոցին նախ քան զԱրտաշատ , զՎաղարշապատ և գրուին : Եւ վայել իսկ էր այսմ այսպէս լինել . քանզի ոչ ունեւով աշխարհիս մերոյ ծովեզերեայս վաճառանոցս , ի դէպ էր ի մայրաքաղաք անդր ուղղել զեկս շահարբ վաճառականաց , կամ զնոյն ինքն զմայրաքաղաքն յարդարել նոցին դիւրամատոյց , բանալով և ձգելով անտուտ գիծս ուսից մինչեւ յեզերս սահմանաց Հայաստանեայց , և կցելով զնոսին ընդ ճանապարհս համաշխարհական վաճառականութեան . և զի չորեքին եւս յիշեալ մայրաքաղաքք մեր (որք ստոյգ պատմու-

<sup>1</sup> Տես ի Ղազար Փարպեցի , էջ 238 (նոր ախլ) :  
<sup>2</sup> Հռչակեալն ի սմա դարուք յառաջ և յեւ Փրկչական Թուականին՝ շահավաճառութեամբ միանգամայն և զեղիսութեամբ՝ կո-

ման , մեծ տանովաւանոց շրջակայ քաղաքաց և ազգաց , վեցիկ ի Հայոց աշխարհէ ընդունել զնիւթս շահեցն և շուսլութեան : — ՍՅՐԱՐՈՒՆ , ԺԲ , Գ , 36 :

Թեամբ գէթ աւելի քան զհազար ամ, (մինչեւ ցԺ դար) բարդաւանճեցին, մերձակիցք իրերաց հաստատեալք ի կենդրոն Այրարատեան աշխարհի և փոխանակեալք մի զմիւս, ապա և չէր հարկ ճանապարհաց փոփոխութեան, որք միշտ վարուն մնացին, և մարթ է ասել՝ եթէ են և մինչեւ ցարդ յետ միւս եւս հազար ամաց: — Յայլում մասենի ի տեղագրութեան Դունայ նշանակեցաք զգիծս ճանապարհացն որ ի մայրաքաղաքէ անտի ձգեալ ընդ այլեայլ կողմանս տանէին յեզերս երկրիս Հայոց և յաշխարհս դրացիս, և կարեւոր մասունք էին հասարակաց կամ շահաւան ճանապարհաց, որովք վաճառակա նութիւն՝ իրրեւ սարդն որոսաէր (եթէ ներեսցի նմանութեանս) ներգործեալ յինքենէ՝ զաւիզան՝ յընդհանուր կողմանս ցանցակերպ պատէր զերեսս ցամաքի և հասուցանէր յեզերս ծովուց: Սիրողաց այսպիսեաց հայրենի հետաց և յիշատակաց՝ հէշտ է քննել զվերոյիշեալ գրուած մեր, կամ զլաւագոյնս եւս և զլիագոյնս ի մատենան պատմութեանց վաճառականութեան, յորս զըսցեն և զգիտելիս զայոց զերեսուն եւս մեծամեծ կենդրոնիցն և ճանապարհաց, զՀնդկայնոյն, զԵգիպտականին և զԲաբելոնականին. որք որպէս շահ-երակք են երկրի, և յորոց՝ կամ առ որս՝ ձգին մանր երակքն, պողոտայք փռքունց կամ առանձնակ աշխարհաց, անհրաժեշտ կարեւոր մասունք մեծամեծացն և արբունականաց. և որոց սկիզբն բացման և յարդարման, ըստ սովական առակին՝ այնքան հինք են՝ որքան երկիր մարդաբնակ, կամ ընկերական և ստացուածասէր ոգի մարդկութեան:

Գ. Ոգի վաճառականորքեան, ասացից և վաճառաւորութեան կամ շահասիրութեան, որքան հզոր և ծաւալեալ է ի Հայում, այն՝ գիտակցութեամբ իմն անձին՝ յայտնի է նմին, ոչ ինչ նուազ ծանուցեալ և վկայեալ

1 Les Arméniens sont d'autant plus propres pour le negoce qu' ils vivent de grande épargne, et sont fort sobres comme j' ay dit, ou par vertu ou par avarice. Quand ils sortent de leurs maisons pour de longs voyages, ils font provision de biscuit, de chair de buffe fumée, d'oignons, de beurre cuit, de farine, de vin et de fruits secs... Toutes ces provisions leur coûtent peu de voiture; . . un marchand qui charge six chameaux de marchandises, en a un septième qui ne luy coûte rien pour porter toutes ses provisions et son bagage. . . Quant ils sont arrivés à une ville où ils doivent faire quelque séjour, ils se mettent cinq ou six ensemble, louent une chambre vuide qu' ils ont aussi -tôt meublée, chacun portant son matelas et sa couverture et ses ustensiles de menage, ce qui est assurément une grande épargne. Au reste ils sçavent si bien menager leurs provisions, qu' il est souvent arrivé qu' en revenant de France ou d'Italie ils en ont rapporté chez eux. Quand ils vont en Chrétienté, ils prennent avec eux du *Safran*, du *Poivre*, des *Noix muscades*, et d'autres épineries et c'est de cela qu' ils payent dans les villages le pain, le vin, le beurre, le fromage, les laitages et autres denrées qu' ils achettent des pauvres femmes. Quand ils viennent de Crétienté ils rapportent toutes sortes de mercerie et de quinquaillerie de Venise et de Nurenberg, comme des petits *Miroirs*, des *Bagues de leton* et d'*Email*, des *Perles fausses*, et autres choses de cette nature, dont ils payent aussi les vivrens qu' ils prennent dans les villages. — TAVERNIER, liv. IV, 6.

և յօտարաց, իրրեւ զմի ի զլիաւոր կամ զլիաւորագոյն յայտկութիւն հայութեան, երբ և կամիցին ճառել զազգէս՝ յաշխարհագրական, ի պատմական և ի ճանապարհական գիրս իւրեանց. և շատ իցէ յիշել զտեսութիւն առաջնոց անտի եւրոպէացի ճանապարհորդաց յարեւելս, և քաջանշան մատենագրաց ոմանց նոցին: Յորոց մի ի նշանաւորաց և ինքն իսկ անուանի վաճառական, Դաւեթեհի, ի կէս ԺԷ դարու, բազում անգամ ուղեւորեալ և զեգերեալ ի Պարսս, և երթեւեկեալ կարաւանք ընդ Հայոց, ծանաթ և մեծատանց նոցին ի Նոր Զուղա, յերկար նկարագրէ զբարս նոցին, մանաւանդ ըզճարտարութիւն, զերկայնմտութիւն և զտակաւապիտութիւն, զոր և ամենայն ճանապարհագիրք դարուն և յետագայք կրկնեն և երեքկնեն. որպէս տեսցի ստորեւ ի ծանօթութեան 1:

Նշանաւոր լրագիր մի անգղիացի անցելոյ դարուն, անձնատուրս ի համաշխարհական վաճառականութիւն կոչէ զՀայս, և հռչակեալս ի հաւատարմութեան: — Ժոպիր որ յելս ԺԸ և ի սկիզբն ԺԹ դարու դեսպանութեամբ գնայր ի Պարսս, աներկբայ, ասէ, զհաւատարմութիւն և զճարտարութիւն Հայոց ի վաճառականութեան. և որպէս Յոյնք յԵւրոպիական թուրքիա և Ղփտիք յԵգիպտոս, սորա ժառանգաւորք են բոլորում ասիական թուրքիոյ, սփռեալք ընդ ամենայն երեսս Ասիոյ, մինչեւ ի Հնդկիս իսկ. ամենայն ուրեք վարին հյուսարք և բարեկարգութեամբ, վասն որոյ և ամենեքին վստահք են ի նոսս, և յաջողին:

Ըստ այսմ և Պոռտիեր. Սնձնատուրք ի վաճառականութիւն, և ուղէգնաց վաճառականք, զմեծ մասն կարաւանաց կազմեն. գրեթէ ի ձեռս նոցին միայն է առ և տուր Պարսից և Հնդկաց:.. Քաջ գիտեն յարմարել

ՍԻՐԻԻՑՍՍ ԳՐԷ ԵՄԻ 1672. Les Arméniens sont fort propres pour le negoce: et c'est à cause qu' ils sont fort sobres et qu' ils vivent d'économie. . . Le commerce des Arméniens s'etend si loin, que la plupart savent plusieurs langues, surtout la turque, la persienne, l'italienne et la françoise, qui leur sont presque aussi familières que celle qui leur est naturelle: et outre cela ils en ont une qui n'est sue que des Ecclésiastiques. Անուշտ զգրոց մեր բարբառ իմանայ վարել եկեղեցականաց ի պաշտամոն. այլ անուանի աշխարհագիր ոմն ԺԶ դարու (Թարգմանեալ վաղ ուրեմ ի հայունս), աստարակէ և զնոսս ընդ աշխարհիկս, ասելով. « Քաւանայք և աշխարհականք (Հայոց) շրջին յերկրէ յերկրէ ի վաճառականութիւն »:

ՊՐԻԻՍ Սկզբաբանք. ի կէս ԺԸ դարու գրէր. De tous les peuples semés dans l' Orient, les Arméniens sont sans contredit, les plus remarquables pour leur patience et leur sobriété. Ils parlent en général les differents langages de ces contrés. Robustes, forts, extrêmement soigneux des animaux et des marchandises qu' on leur confia, et pleins de franchise et de bonne foi, ils se contentent d' un léger profit.

Ըստ այսմ և Ֆիլիպպի վենետիկցի ի Յելաստիկս նախնի նայրեւ նակցացն. Nell' Asia gli Armeni passarono sempre per la nazione più svegliata e più attenta e brava nel commercio, come ella era ed è in fatti. Seppero gli Armeni conservare la loro industria in mezzo a le oppressioni dei Persiani, Parti, Greci, Romani, Saracini, Tartari, Turchi, Crociati, ecc. — FILIASI, Memorie de' Venti Antichi.

զանձինս ընդ ազգաց ընդ որոց տուրևառիկ լինին :

Ըստ այսոցիկ վկայեն և այլք մերձստամանակք՝ եթէ ոչ միայն յառաջ քան զհաստատել Անգղիական ընկեթեանց ի Հնդկս՝ Հայք էին տեարք վաճառականութեան երկրին, այլ և սուղ ինչ յառաջ քան զմեր ժամանակս՝ բարգաւաճագոյն էին Հայ վաճառականք քան զգործակալս Ընկերութեանն Անգղիացոց :

Նորին իսկ անուանի աշխարհապատումք Անգղիացիք ԺԸ դարուն (այսինքն գրողք հոչակեալ Տիեզերական Պատմութեան ասեն) . « Այժմեան Հայք, ըստ դիպաց » կամ բաղդի, մեծագոյնք են քան զամենայն վաճառացիս » կանս աշխարհի » . և զարմանան՝ զի ոչ այսպիսիս լինել վկայեալ իցեն ի նախնի ժամանակս : — Սակայն եթէ քաջ հետաքննեալ էր նոցա զնախնեացն յիշատակս, և միտ եղեալ ընդարոյս բարուց ազգաց, զԻրին էր իմաստասիրել, զի անտերունչ յայնժամ ազգի միոյ այլքան հանրածաւալ վաճառականութեան՝ չէր մարթ յանկարծ երեւեաց լինել « յայժմուս՝ ըստ դիպաց », որպէս ասենն, այլ հարկ էր ի հաւուց և ի նախնեաց ժառանգութեամբ իմն կամ սերընդեամբ ունել զոգի և զարուեստ վաճառականութեան, առ որ դիրք կամ կայք երկրի իւրեանց և զրակցութիւն նախայիշեալ ազգաց, և ծանօթութիւն և եկք ստարազգի վաճառականաց՝ ոչ փոքր սատարք էին : Ի դէպ էր և ի հնագոյն և գոգ ի նախապատմական դարս, (որպէս ի յետինս ի ստուգագոյնս յաւուրս ինքնակալութեան Մարաց և Պարսից) լինել և Հայոց ի դրան միահեծան աշխարհատեարցն Ասիոյ՝ Բաբելացոց և Ատրեստանեայց, ոչ միայն պաշտօնեայս, գործակալս և զօրավարս, այլ և դեսպանս և վաճառականս նոցին . և եթէ յառաջ քան զմերս երկուս և երիս դարս՝ մեծ մասն կարաւանի վաճառականաց Ասիոյ՝ Հայագոցեաց էր, ո՞ ոչ հաւանեցի՝ եթէ և ի հնագոյն կարաւանս Ասիոյ և զրակցի նորին Ափրիկոյ՝ գոյր և տարր հայկական, և ոչ փոքր, և յՅՅՅ ամաք նախ քան զփրկչական թուականն՝ գնայր և գայր Հայկազնն ընդ մետաքսաբերաց և մորթաբերաց ձենաց և Թուրքաց, ընդ ակնավաճառս և համեմաբերս Հնդկաց, ընդ խնկարբեր և ռետինարբեր վաճառական խամայելացիսն՝ (որք զեղբայրադաւ նահապետն Յովսէփ գնեցին ի Պաղեստին, յոչ շատ հեռի սահմանս Եփրատական մարզից և իջուցին յԵգիպտոս) : — Եւ եթէ գերահաշակ Արգոնաւորդք ի հելլենական և թեսսալական մարզից եկին մինչեւ ի Կողքիս՝ ի խնդիր առասպելեալ Ոսկեգեղմանն, և ըստ ծանծաղ կարծեաց կամ առ ձեռն պատրաստ հնարագիտութեան Յունաց, ոմն նոցին նաւորացն՝ Սյունիոս՝ յայնժամ տայաւորեաց զանուն իւր ի վերայ աշխարհիս մերոյ (!), ո՞ զիւրագոյն և զգոնագոյն իցէ մեզ ասել, եթէ յայնժամ լաւ եւս ծանեան նոքա զանուն մերոց նախնեաց Արմենացս կամ Արամազնեայց, որք և վաղագոյն քան զարգոսիկան զայնոսիկ՝ եթէ ոչ ընդ ծով՝ այլ ընդ ցամաք տանէին պէսպէս վաճառս յերկիր նոցին և ի մերձակայսն : Եւ ոչ արդեօք խորագէտ և երկարատուկ

վաճառականքն Հայկազունք՝ ընդ առաջինս լինէին մխիլ յաւազուտ անապատն՝ զոր սակեսփիւս յարդարէր իմաստունն Սողոմոն, կանգնելով զմենափառ շահաստանն Թատուր՝ զհրաշագեղն Պարփրաս, զուզակից Արեւաքաղաքին (Պատարպէրաս) . յորում և յետ 1300 ամաց պանծայր թագուհին հռոմէամարտ (Ջենորիա) զահարկեալ ի թագուհուց անդ քաղաքաց ամայութեան, դաշնակիցս իւր ունել ընդ այլոց և զՀայս : Ոչ է անհաւան գայուստ սոցա (Արգոնաւորդացն) ի կողմանքս, ի Կողքիս և ի մերձաւոր նոցին ի յրանախ (Կիւմուշխանէ) և ի Սպեր, խնդրել և բառնալ ոսկի և արծաթ, որոց խանութք ի վաղուց մինչեւ ցայժմ ծանօթք են, և առ մեք իսկ յայտնեցան նորք որպէս ի միջին դարս՝ ի նոյն իսկ ի Մեծ Հայս : Համարձակագոյն քան զմեզ՝ Նեստոր աշխարհագրաց ժամանակիս (Սէն Մարգէն Վիլիէն) համարի զԱրգոնաւորդք՝ ճարտար բովազործս ելեայս ի Հայոց, ի խոյզ արծաթոյ հանից ընդ մէջ Պոնտոսի և Ալիւս գետոյ : Ոչ երկբային և այլք ի հմտաց եթէ ոսկեգործ Խաչիւքք Հոմերի իցեն Խաչոփք մեր, ուր արդ նշանակեալ ծանօթ բովքն են : Եթէ չէր Սպերս մեր Սովփերն Սողոմոնի (որպէս յանուանէն հրապուրեալ կարծեաց և պնդեաց հնասէր Հայրս մեր Ինճիճեան), սակայն չիք փաստ ժխտելոյ՝ եթէ գուցէ և աստուստ ի մերոց սահմանաց հատան ելին հարուստ բերք երկրի, զորովք Յոյնքք հեաւորք և Փիւնիկեցիք վաճառայողք քան զբնաւս՝ շառնէին զանց . ընդ որս հարկ էր և Հայոց ունել գործ, թերեւս և ոչ փոքր . և գուցէ ելով նոցա առաջինս կամ հեղինակս ծովալու վաճառականաց, լինել յայնժամ և Հայոց առաջինս ի ցամաքագնացս, և հանդիպել իրերաց, թէպէտ ի սահմանս Պոնտոսի՝ թէպէտ յափունս Միջերկրականի . և աներկբայ համարել զերթեւեկ Հայոց բնիկ և օտար վաճառուք՝ ի գերահաշակ և զոգչիր ի նուիրական եմիոսիոնս նոցին, ի Տիւրքս և ի Սիւրս, եթէ ոչ դրամք, այլ փոփոխութեամբ նիւթոց շահավաճառ լինելով :

Գ. Փիւնիկեցիք, և Եգիպտոս . — Ամենայն ճառողք զվաճառականաց Փիւնիկեցոց, ընդ երիս ճանապարհս նշմարեն զնոսա երթեւեկել . մի ընդ հարաւ, յԱրաբիս, յԵգիպտոս և ի Հնդկիս . միւս՝ յարեւելս, յԱտրեստան և ի Բաբելոն . և երրորդ՝ ընդ հիւսիս, ի Պոնտոս, ի Հայս և ի Կովկաս . յայտ ուրեմն է զի ընդ այս ճանապարհ և Հայք գնային առ նոսա, հանդերձ դրացեօք իւրեանց, զորս միանգամայն Եգեկիէլ մարգարէ՝ ի սքանչելի նկարագրի մեծութեան Տիւրոսի (Իէ, 13-4), կոչէ Տոն Թորգոմայ, Թորեյ և Մոսոք . և թէպէտ ոմանք զՓոնիզացիս և զՍարմատացիս, այլ ոչ սակաւ զՀայս ճանաչեն ի բանին, « ի տանէ Թորգոմայ՝ Չիոլք և հե » ՝ ժելօք և չորսովք լցին զվաճառս ք » . քանզի երբայեցի բնագիրն՝ Թորգոմ զՀայն իմունայ, որպէս Հայք զնախաւ հայրն իւրեանց : Կրկին և երիցս աւերեալ և նորոգեալ ծովաբոյն շահատանն այն՝ ոչ սակաւ բարգաւաճեաց առ Խաչակրաք, յորոց մեծապատիւ իխանի միոյ նիւտ եղեւ .

1 D'industriex mineurs, très probablement sortis de l'Arménie exploitaient les gites argentifères qui existent

sur la côte du Pont-Euxin, à l'Orient de Halys. — *VIV. S. MARTIN, Asie Mineur, I, 181.*

և այնքան յաճախէին անդ վաճառականը Հայոց յ' ԵՐ դարու, զի իշխանասպան Աւագակը (Հայկիք) ի տարազ Հայոց ծպտեալ մտին համարձակ ի քաղաքն, և սպանին զտէրն Տիրուտի (Կոնրադ Մոնֆերրատոյ): Իսկ բերք նոցին ի ծովամայրն այն շահաստան՝ երկուս իմաստս ընծայեն. եւ բերել Չիս և Չորիս, որք հաշակեալ էին ի Հայս, (և յորոց երբեմն բիւրս երկու հարկէին Պարսից), եւ նորմիք իսկ անդուարեան բերել այլ և այլ աղիսամաղիս. իսկատիպ իմն ազգային հնարագիտութեամբ՝ և զկողոսն և զկրեալս, կամ զբեռն և զբեռնարձ՝ փոխելով ի նիւթ վաճառոյ: — Այսպիսի իմն օրինակաւ ի նմին ժամանակի՝ ճանապարհ առնէին Հայք ցամաքախառն ի հարաւ կոյս. ընդ որ հիացեալ սքանչանայր և զբէր հայրն պատմագրաց՝ Երոզոտոս. եթէ, սրպէս ի բարձրաւանդակ երկբէ անտի իւրեանց՝ նաւակս վաճանաձեւ ողորակողս և մորթապատս իջուցանէին Հայք ընդ Եփրատ, բարձեալ և գրաստ մի կամ աւելի ի նոսին, մինչեւ ցոր վայր մարթ էր նաւարկել, և բերել ի Բաբելոն զգլխաւոր վաճառ իւրեանց, զՊիկի և զՕղի մրգածոր, (Արմաւոզի ըստ հեղինակին), ապա ընդ նոսին վաճառէին և զկողս կամ զկմախս նաւուցն, իսկ զմորթեանն բարձեալ գրաստուց՝ դառնային ընդ ցամաք յաշխարհ իւրեանց. քանզի դժուարին էր ընդ զառ ի թափ հոսանաց գետոյն ի վեր գնաւն վարել: Յետ ամենայն հրաշակերտից մեծի մայրաքաղաքին Բաբելոնի՝ երկրորդ զարմանալի զայսգունակ հայկական վաճառարութիւն համարեցաւ քննասէրն այն Երոզոտոս:

Ի վերոյիշեալ վաճառակարգութեան Եզեկիելի ի Տիրոս՝ զՄոսոր և Թորել յիշեցաք ըստ երրայական բնագրին և լատին թարգմանութեան, զի ի մերուս (ըստ «Եսթանասից») գրի, «Յոյնք և ամենայն որ շուրջ ըզս նովաւ էին՝ մարդավաճառք քո, և Անթուս պղնձիս եւ առն ի վաճառք քո»: բայց զի Յոյնք յիշին և յայլ տունս նկարագրին (7. 19), վասն այնր և վասն մերձակարգութեան ընդ Թորգոմայ՝ ճահողագոյն է իմանալ զկողմանս Վրաց և զՄեսխաց, ուր ծանօթ են պղնձահանք. Թէպէտ և յետ ոչ բազում ժամանակի, ասէ Քսենոփոն և զԿորդուաց՝ դրակցաց և կցորդաց Հայոց Մեծաց՝ ունել յուղովութիւն պղնձեայ անօրոց:

Հեղինակս այս (Քսենոփոն ի Կիրամարզին) տայ նշանաւոր եւս հաւաստիս վաճառականութեան Հայոց յայն ժամանակս, (Զ դար նախ քան զՔրիստոսի թուական). իբր զի պատուիրէր Կիրոս՝ աղաչել զՀայս, զի բերցեն վաճառս կամ տնիկս և ըմպելիս ի ճամբար զօրաց իւրոց, և առցեն զգինսն դրամով: Մարթ է թէ ոչ վաճառականք մեծամեծք, այլ փոքունք և փերեզակք ու մանք էին ազերսեալ Հայքդ, սակայն յաճախ և փոքունք մեծաց են նշանակք, որպէս մեծքն փոքունց գրուականք. այն զի նոյն ինքն Քսենոփոն ի նոյն գիրս ասէ զԽաղտեաց և զՀայոց՝ ստէպ երթեւեկել ի Հնդկիս իսկ:

Թերեւս միայն ղյոյնատակս զայսոսիկ Երոզոտոսայ և Քսենոփոնի յ' ուշի ունելով՝ Հէէրէն և հետևողք նորին, համարին առ հարստութեամբ Աքեմենեայց Պարսից՝ չեւ եւս կրթեալ Հայոց ի մեծաքանակ վաճառականութիւն, այլ ի դուզնաքեայ ասեւտուրս. սակայն նախա-

կարգեալ մեր բանք կարծեմ չընդունին զկատկածդ. և գէթ յաւուրց հզօրին Նարուքոդոնոսորի տիեզերակալութեան, որոյ բարեկամ և նիզակակից դոլ աւանդին Հայք, համարձակեալ էին ճանապարհք վաճառականութեան սոցա. առ այս գործակիցս և սատարս ունելով և զեկան Հրէից ի գերութեան Երուսաղեմի. որոց ազգակիցք գերեալք ի Հայոց՝ և յետ հնգից դարուց՝ առ Տիրանաւ Արշակունով՝ նպաստաւորք եղեն ի նոյն. յոր սակս և յետ այլ եւս դարուց՝ Սասանեանք զսերունդս նոցին փոխադրէին ի Հայոց աշխարհէ յիւրեանցն:

Ե. Աղեքսանդր. — Պարթեք. — Հոփմ. — Նշանակեցաք յանյիւատակ դարուց բացեալ զճանապարհս վաճառականութեան ասիական կողմանց երկրի, որոց տիրակալք յաշորդեալ գիրեար, (այսինքն Ասորեստանեայք. Բարեխայիք, Մարք և Պարզ), զնոյն օրէնս և զնոյն ճանապարհս պահեցին. իսկ ի տապալել երկհազարամեայ նոցին հարստութեանց և ի միահեծան տիրապետել Աղեքսանդրի նաեւ կողմանց Հնդկաց և մասին արեւելեան Ասիոյ և Եգիպտոսի, ձեռն արկ գրեալք է ի վերայ չորեցուն գլխաւոր ճանապարհաց վաճառականութեան, և առաւել եւս հարթեաց և յորդորեաց զնոսին, ազդեցութեամբ հելլենական կորովի հանճարոյ, փորձելով և նորանոր շահիդս յանձանօթ կամ ի սակաւածանօթ կողմանս, այլ հաստատուն ունելով կամ սակաւ ինչ այլայլելով և խոտորելով գնախակոխ վարուն գիծս. Օրինաք իսկ ասի պատուիրեալ նորա զայնոսիկ այնպէս ունել. որպէս հաւաստէ (Թէ և ոչ յամենայնի հաւաստապատում) որ ի մերում լեզուի կամ թարգմանութեան գտանի Պատմաքիս վարտոց նորին, յեզեալ և յերիւրեալ ի թարգմանչաց մերոց՝ գրեալք է ի մէջ ժամանակի հարստութեան Սասանեանց. Պատուիրեալ, ասէ Աղեքսանդրի (որպէս իմանամ լ), անկուի լինել այլեայլ ազգաց՝ ոչ կրել զէնս, «բայց յաղազս վաճառականութեան միայն» ապազէն (կամ սպառազէն). և այս իբրու քսանս «րանց. վաճառականք դարձեալ ամենեքին նովիմք այս սու գործելով վարեցին, որպէս առ Դարեհիսն կատարէիք. Չճանապարհս Պարսից զվաճառ առնել խաղաղութեամբ հանդերձ հանդարտութեամբ. որպէս զի որք յԵլլադայն իցեն՝ դիւրաւ յորում կամին ի քաղաքս Պարսից երթիցեն. քանզի յԵփրատայ գետոյն անցիցն և յիսկզբանէն ի ճանապարհի կէս շափ յարոյ, և լարով իւրաքանչիւր ումեք նախարարի՝ առաքեցի ճանապարհ առնել և գրել ի վերայ՝ ուր ճանապարհն տանի, և նշանակ ինչ՝ եթէ երկու ճանապարհք գիպեցին և կամ յուղվք, որպէս և են յայն ճանապարհք և անբաւ ցամաք. և այս յայտ եղիցի, զայն որ ի ճանապարհսն եղեւ հոգ առ Դարեհիւ և կարգեցաւ ծախս սովորական՝ շնորհեմ ի մեհեանս աստուածոց»: Ի մթին բանիցդ այս ինչ յայտնի, զի (Ա) պատուիրէ Աղեքսանդր վարիլ օրինաք որք պահէին ի ժամանակս Դարեհի, յաւէտ վասն եկացն յարեւմտից ի Բունաց կողմանց. (Բ) զի յԵփրատայ և անդր լարիւ, այսինքն մղունաչափով սահմանս տայր հատանել և նշանակս կարգել և արձանագրել զչափսն և զանուանս. և (Գ) որ ինչ վասն



ճանապարհաց պահպանութեան բաժ կարգեալ էր ցայն՝ ժամ, զայն շնորհէ (Աղեքսանդր) ի նուէր դից ի մեհեանս: — Թերևս առաւել եւս վարուն մնացին ճանապարհքն առ յաշորոք Աղեքսանդրի ի բաժանման Թագաւորութեան Սելեւկիացոց, Պտղոմէացոց և Բակարիացոց, զորս մի ըստ միովէ բարձին Պարթևք (առ ուրովք և մերս Հայ-Արշակունիք) և Հռովմայեցիք:

Սքառ յետինս հարազոյն տիեզերակալք միանգամայն և զգոնագոյնք կամ քաջահրահանգք, ի դարձութիւն գնացից յաղթասէր լեզէոնաց իւրեանց՝ նորոգեցին և նորս եւս յարդարեցին ճանապարհս, նաեւ ի բնիկ մերում աշխարհիս՝ Հայոց. յորոց է որ դեռ ի յետին ամբս յայտնեցան ի կողմանս Դ Հայոց, յանհետացեալսն ընդ Թափառական զարշապարք Քրդաց:

Զ. Շահաստանք Հայոց. — Յաւուրս մեծագոր և մեծատարած ինքնակալութեան սոցա՝ սկսաւ հոչակիլ ի զրչաց նոցին՝ մայր քաղաքաց աշխարհիս մերոյ, միանգամայն և մեծ շահաստան Արտաշատ, որպէս նշանակեցաւ ի վեր անդր, և զորմէ ընդարձակագոյն ճառեալ է ի տեղագրութեան Այրարատայ, և զբարգաւաճելն անդր քան զԻ և Ե դարս. յոր ժամանակս սկսաւ պայծառանալ և գերազանցեաց մերձաւոր նորին կամ մասնակից Դոռիկն՝ ց՝ Ժ դար, այլ յաւէտ ի Զ-Ը դարս. և այս յայտնապէս նշմարի՛ի դաշանց երկուց հզոր ինքնակալութեանց ժամանակին, Ռիզանդացոց և Պարսից 1, որք բաժանեալ ունէին յինքեանս զաշխարհս մեր. զի մինչ յամի 410 առ Փոքր Թէոդոսի և Ա Յագկերտի ընդ երիս շահաստան կայանս կարաւանաց նոցին՝ հիսսիսագոյնն Արտաշատ դասի, յեա դարու և կիսոյ (564) ի դաշնադրութեան Յուստինիանոսի և Խոսրովու Ա ի Դարա քաղաքի, փոխանակ Արտաշատու կարգի Դուլին 2. որ Թէ որքան զարգացեալ էր իբրեւ շահաստան մի մեծ ընդ մէջ արեւելից և արեւմտից, յայտ առնեն յիշատակեալ (հնգեքին) գիծք ճանապարհաց կարաւանից, որք ի կեդրոնէ անտի Հայոց Մեծաց՝ ճառագայթեալ շուրջանակի հասուցանէին ընդ այլեւայլ դէմս, մինչեւ ի սահմանս Ճենաց, Հնդկաց (ընդ Պարսկային ծոց), Եգիպտոս, ի վաճառաստանս Միջերկրականի, ի Պոնտոս և մինչեւ Եւրոպէ: Զի ի վաղ ժամանակաց հետէ ծանօթ էին մղոնաչափութեամբ՝ գիծք կարաւանաց՝ յԱրտաշատայ, վկայեն և յիշատակք ինչ Պլինեայ յԱ դարու. որ ի մայրաքաղաքէ անտի ց՝ Մծբին՝ ասէ (Զ. ծՁ) 175,000 քայլ, իբր 110 բնամղոն, իսկ ցՊանձակն Ատրբայատականի (Զ. ծԵ) 45,000 (որ սակաւ է): — Ի միջակէտ ժամանակի բարգաւաճանաց երկոցուն զուգակից մայրաքաղաքացս (Արտաշատայ և Դուլեայ) գամ մի փայլեաց և Կոր քաղաքն վաղարշապատ, գահանիստ եղեալ երից հզոր Թագաւորաց մերոց վաղարշու, Խոսրովու և Տրդատայ ցձար և կէս. այլ և երկու և աւելի դարուք եւս յառաջ՝ ի նստուցանել անդ աշխարհակալին Տիգրանայ զգերութիւն Հրէից Պաղեստինոյ, եղեալ էր

այն քաղաքագիւղ վաճառօք, ըստ բացատրութեան Խորենացոյ (Բ, 46). Թերևս զայս նշանակիցէ և Ըուտստակ կամ Թուստակ կոչումն նորին առ Ագաթանդեղի 3:

Պատուականագոյնք յաղխամաղխս այլեւայլ կողմանց: Թերևս Հնդկայինքն էին, զորոց բերս յԱրտաշատ՝ յայտնապէս յիշէ Պոսկոպիոս (Պարս. Բ. ԻԲ), և այն երբեմն ընդ ծով Հնդկաց և Պարսից, և յաճախ ընդ ցամաք՝ ընդ Թուրքաստան, ուր միանայր զիծն հնդկային ընդ գծի խորին արեւելից, ի մետաքսաբեր Սերաց յառաջաւորեալ ի կասպիականն և Եւրասիս գետս. զսա՛ ի դէպ է նաւամատոյց Արտաշատայ անուանել, և նաւահանգիստ հեռաւոր՝ զՓայտակարան քաղաք համանուն աշխարհի կամ նահանգի միոյ ի 15 բաժնից Հայոց Մեծաց: — Հոչակեալ ճանապարհագիր և ուխտաւոր վաճառականն ճենացի (Հիուէն - ցանկ) որ իբր յամի 620 կոխէր զհետս ճանապարհացս, յիշէ ի կողմանս Պամիսնայ (հիւսիսային Հնդկաց) ազգ մի վաճառակիրթ՝ որ տանէր զվաճառսն ընդ Հս. Ս. 4. և ըստ հաւանութեան քննչաց՝ հասուցանէր զպատուական նիւթսն՝ մինչեւ ցԱրտաշատ, և կամ անտի ի Միջագետս, որոյ զխաւոր շահաստանք և սահմանեալ հրապարակք վաճառականաց՝ ի դաշնադրութեան Յուստինիանոս՝ անուանեցան Մծբին և Դարա, և հեռաւորն կալինիկոն — Թակկա՛ առ Եփրատու:

Ոչ փոքր հաճութեան և սքանչանաց է յանդիման առնել մտաց զհրապարակս Արտաշատու և Դուլեայ՝ յառաջին ութ և ինն դարս փրկչական Թուականին, լցեալս Թանկագին և ցանկալի բերովք ծագաց հիւսիսոյ, արեւելից և արեւելեան հարաւոյ Ասիոյ. և մանաւանդ զայլատարազ և զայլալեզու բերողն, զմորթագգեաց և զմորթաբեր Սկիւթացիս, և զնրբագգեաց հոսաւոր Հնդկին, զբարձրախորակ Թուրքաստանիկն և զԲակոպիացիս, զԹուրքարս և Շախրիս, զՀոնն և զՀեփրաղ, և զԴոնոժիկն՝ ոչ եւս խուժ դուժ, այլ երախտապարտ, յետին սպասորկու Ս. Ղեւոնդեանց, « որոյ ըստ օրինի վաճառականութեան շատ անգամ ճանապարհորդեալ էր թ » Հայս », (ըստ Փարպեցոյ). և զազգ ազգ խառնիճաղանճն միջին Ասիոյ, մինչեւ ցհեռաւոր և զզուլաքայլ խորագէտ Ճենացին, որոյ ազգակիցք՝ ըստ մերոցս աւստութեան անդստին յՊ դարէ գաղթականութեամբ բնակեալ էին ի Հայս, և յորոց՝ ծագումն հոչակաւոր տոհմի Մամիկոնեանց մերոց. այլ եթէ զզուլահայեաց մետաքսաբերք նոցին ոչ միտէին մինչեւ յայսկոյս Գաղբից, հաւանութեան է զի յանդգնագոյնքն Հայկազունք հեռագնաց եղեալ կոխէին զսահմանս նոցին, և զՀընդկաց՝ ի նոյն և ի հետեւեալ դարս. քանզի Սասանեանց հաստատեալ էր դուրսն վաճառականութեան ընդ Ճենաց և զործակալս իսկ բնակութեամբ՝ ի Հնդկիս. և զի մեծ մասն Հայոց ընդ իշխանութեամբ էր նոցին (Պարսից), Թերևս և յառաջագէմ քան զբնիկ Պարսն՝ լինէր Հայն ի հեռաւոր շահաստանն, ըստ բնաբեր ախորժակաց իւրոց և երկայնամիտ ժուժկալութեան:

1 Յուստինիանոսն Օրէէք. Դ. Տիւրու. ԿԳ:  
2 Պոսկոպիոս. Պատերազմ Պարսից, Բ. 25. 30:

3 Տես յԱրարատ, 204:  
4 Հայտ, փոսնի Թարգմանութիւն, Ա. 6:

Չ. Բնիկ Բերք և վաճառք Հայոց աշխարհի և ներս-  
մուտք. — Ի դարաւանդից Գունայ, ի Նախճաւանէ և ի  
Քանձակայ դիմելով յայլեւայլ հետս հասնալս յերկրէ  
իւրմէ՝ յուրաւս բարեբեր աշխարհաց, տանէր արդեօք  
Հայն ընդ վաճառելեացն զորս յայլեւայլ սզգաց ընկալաւ  
յիւրում ուտանին, և զիւրոյ երկրին սեփականագոյնս,  
զայնս՝ զորս նշարեցաք ի Բարելոն և ի Տիւրոս, և ընդ  
նոսին զԱլս և զԲանթակ գունագոյն նարոտիւք, և ըզ-  
նիւթ գերաչոյն ներկոյն՝ զանզուգական Որդանն կար-  
միր, ընդ նմին և զանուանեալն Roms քաղ կարմիր,  
զոր հաստեալ և կապեալ խրճունս՝ տանէին ընդ Որմս  
ի Հնդիկս, ի ներկանել զանուանի կտաւս աշխարհին. որ-  
պէս վկայէ ականատեսն Գաւեռնիէ, ի կողմանց Ատաւ  
պատայ. — Մագտաքէ, Գորդր և Տորոն, այլովք եւս ներկ-  
արար նիւթովք. ընդ որս և հողայինքն՝ Հայկան  
համբաւեալ կամ Աղտնցի կառ, Հայ-հողն (Armenia  
Globa), Սուսըն, Աղն, Արաւսայն (Պրուկ-Էրմանի).  
Ծծունք (յԱրագած, ի Վան, և այլն). և պէտքէ՝ փա-  
րինք մեծաւատորք, յորոց զարմանալիքն Նինուէի և  
Բարելոնի կերտեցան, և կորոն բարձրարեւծ միաստա-  
նի 150՝ ընդ եօթն հրաշալիս դասեալ. այլ և փայտք չի-  
նուածոյ, և մետաղք, կապար, Երկար, Պղինձ շատ, (յոր-  
մէ զանօթան կազմէին կորդուացիք), տո որս և Չա-  
սիկն, որոյ տեսակք յիշին ի գիրս Ներկարանութեան,  
Քարագառնի, Ոսկեգառնի, Տաշեղ-գառնի. Թերեւս և  
Արծաթ: Եւս առաւել պատուականագոյնք և կենսա-  
տածք ընդեղէնքն, Յորեանն, և Գարին՝ որ և ինքնարոյս  
ասի ի Փայտակարանի. Պտուղք պատուականք պէս-  
պէսք, մանաւանդ Երիւանն՝ որ և յանուն Հայ աշխարհի  
լիցարդ յԵրուպէ (Armeniaca)<sup>1</sup>, և չիւնորին. — Խնձորն  
(Խաթայ). որպէս և գերագունին պաղոց (Խաղողոյ)  
Չամիկն, և Շիրեկիք, որոց բնավայր համարի Հայա-  
ստան<sup>2</sup>, և տեսակ մի քաղցրահոտ սեփական նմին դո-  
վեալ ի Պլինեայ (Ե. Ե. ԺԲ), զոր ոմանք համարին զնոյն  
զծիրանն և այլք սայրո: Մանրագորն (Մոկաց), Խաշն-  
դեղն Տարօնոյ, Մեղրն և Մոմ, Գազպէն, և կտաւատի  
իւղն: Արխանիք և այլ եւս մոշուակք հանդերձ խայտա-  
բղէտ մորթովք գազանաց. Թերեւս և Հաչ պարարտք և  
գեղափետուրք, բազմահոյք ի լիճս բարձրաւանդակաց  
երկրին, որպէս ի շամբն կարնոյ: Ի չոքոտանեաց՝ զատ  
ի գրաստեղինաց յորս պանծալի Երիվարն հայկական,  
Պաճարնդեկն, մանաւանդ Ուլխարք, և երէվայրիք՝ Վիթ,  
Երչերու, կիճ, Յիս, որոց հոշակեալ էին որսատեղիք  
աշխարհին, յաճախեալք և յօտար իշխողաց և մեծա-  
տանց: — Ի լուղակաց սեփականագոյնն ծովուն Բզնու-

նեաց Տառնին, յորոյ անուանէ Հելլէնք սովորեցան կո-  
չել զամենայն ձկնաչիր, և զոր ի հազարաց ամաց հետէ  
մատակարարէ ծովն այն՝ բնիկ աշխարհին և սահմանոր-  
դաց, և մեղմէ նովաւ գիտատութիւն պահոց: Յիշելի իցէ  
արդեօք և աղիկքն (խաւեար), զոր ձկունք Երասխայ և  
կլրի ընծայեն ընդ բերան իւրեանց ի կասպականն  
Թափելով:

Յայտոցիկ և ի նմանեաց՝ է ինչ զոր յանուանէ յիշն  
աշխարհաչիրք և պատմիչք, և է որ լուեղայն իմանի-  
է եւս որ ցարդ իսկ ծանօթ արտասուք բերք է երկրիս.  
ճրքան և այլ արդեօք իցեն նիւթք երբեմն ծանօթք և  
խնդրեալք և հանեալք յերկրէս Հայոց, որք կամ իսպառ-  
անծանօթք են մեզ այժմ, կամ ոչ եւս մուծեալք ի վա-  
ճաւ. յորս զլիսուոր համարելի են թժշկական բոյսքն յի-  
շեալք յոմանց բժշկապետաց Յունաց և Արարացւոց,  
Համաւ (Amomum) կամ կիւնանումն Տմորեաց և Ու-  
տիոյ<sup>3</sup>, զորոյ հայկական տեսակն՝ Դիոսկորիտէս գերա-  
գոյն (optimum) ասէ քան զՄարացն և զպոնտականն. —  
Աղբերաց արիւն, Ալաճանի (Alizari). Սրոնունք (Ri-  
cium). Հայ-Շէհ կամ Սերմն Եղեւնոյ, դեղ ճաղատ  
գլխոյ. Գար կամ Խաշարծիլ. այլ և փարսիւնիկ  
(Արցախոյ) և Հայիւնիկ փեճեկաւոր, յիշեալ ի հին և  
նոր բժշկարանս մեր: Սակս սոցին և այլոց եւս անծա-  
նօթ յայժմուս տեսակաց՝ Խնկարքեր կոչեաց (thurifera)  
փափկարան քերթողն Լատինացւոց զմերս Հայաստան<sup>4</sup>:  
Սոցին նման սեփական աշխարհիս մերոյ Թուի և յի-  
շեալն ի հին բժշկարանի Հայ-Ֆիոչ<sup>5</sup> ընդ Խնձորկոտիկ,  
միւս եւս անծանօթ բուսարեր, ընդ այլ դեղոց: — Խեժ  
Հայկական (Gomma Armeniaca)<sup>6</sup>, և Ուպան կամ Ան-  
ձիւտան որ և Չարնոս (Laserpitium կամ Silphium), ո-  
րոյ հոյզ այնքան ախորժեղի համարէր ի քիմս արեւե-  
լեայց ոմանց այլ և Հաովմայեցւոց, զի դից վայել ուտելի  
ասէին սոքա, և ընդ ոսկոյ կոչէին: Այլազք ցուցանեն  
բժշկարանք: — Ընկոյզ Հայկական?, որ յԵգիպտոս ի  
յունիս ամսեան հասողնանայր, ըստ կողմնայ աշխար-  
հագրի Չ դարու:

Արժան իցէ յիշել և զհրաշխառն բոյսս զոր բերէր  
բազմերան երկիր Հայոց. զչնորհաշատ Հանասիխա կամ  
Հանասպրամ, զՄարդաստակ կամ Լոշրակ<sup>7</sup>: Օրէն իցէ  
յիշել և զառաւելահրաշ քարինսն. զՍիկիոն քար լե-  
րանց Երասխայ, զոր մեծաւ զգուշութեամբ պահէին  
կուսանք ի սրբատունս. և յորժամ պատգամ ելանէր  
մարդասպանութեան, կուսանք երկու բերէին ի բազին  
դից խնամակալուաց, և քրմին հատեալ դանակաւ՝ ցոյ-  
տէր արիւն յորդ. և հանդիսականացն կական բարձեալ,

1. 2 Պլին ԺԵ, ԺԲ. Ingens turba Prunorum... nec non ab  
externa gente Armeniaca, quæ sola et odore commendan-  
tur.

3 Պլինիոս յիշէ յՈւտի (Otene). աշխարհագիր մեր (Խորենա-  
ցի) ի Տմորիս. Սալուտոս և Յովսէպոս (Հնախոս. Ի. Բ) ի  
կորդուս: Յիշէ և Էպոս Սիւս, զիճանուն բերեալ ի Լեբանց Հա-  
յոց, որթանման պատասուկ, բարձրոյն և անուշահոտ. զոր և  
ի ԺՉ դարու նշանաւոր բուսախնդիր ուղեւորն գերմանացի Ռո-  
սուէ՝ խնդրեալ ընկալաւ ի Հայոց: Ի նմին դարու և իտալացի ոմն  
աշխարհագիր (Լորենցոյ Անանիս) ականատես՝ վկայէ բերել: Հա-

յոց. Molta copia d' Amomo, che gli è una semente, sicco-  
me ho veduto, molto odorifera, della grandezza poco  
maggiore del pepe. — LORENZO D'ANANIA, Cosmo-  
grafia, 207.

4 Տերուլոս:  
5 Եթէ ուղիւ իցէ գրեալն:  
6 Մի յիտալական վաճառականաց յեանն դարուց ի վենետիկ,  
Գիւրտ Միլոն, յամի 1757 գրէր ի կատիկ իւրում, առաջեալ ի  
Բերիոյ ի Լիւլոնոյ 220 ոխալ (rotolo) Հայկական խեժի:  
Տես յԱրարատ, էջ 19:

տանէին անդրէն դարն ի պահարան իւր: Զայս ասէ Պլուտարքոս (Յաղագս Գետոց) ընթերցեալ ի գիրս Դոբթեայ Քաղղէացոյ, որ զՔարանց. — և զԱրամանդիկն կարծրակուռ (Adamantis) <sup>1</sup>, զոր մերձեցուցեալ յառիժունս՝ տապաստ անկանէին բերանարացք. — զԿուսատեաց Երասիսեան խոտն, յոր՝ թէ մերձենայր կոյս՝ արիւն ցայտէր և թառամէր <sup>2</sup>. — նման նմին և Վլայրենի Գարի Կարան? լերին մերձ ի Տիգրիս, զոր եւաջուցեալ և իւղախառն օծեալ զմարմինս՝ մինչեւ ցմահ անախտ կէին. և բարեբաստագոյն ի նոսա Կաւրոն պարսիկ նախարար Հուքրանեայ կեցեալ 300 ամս թաղեցաւ ի Մգուր կամ Մնձուր լերին <sup>3</sup>.

Այսպէս և նմանքն՝ բնական արգասիք երկրին Հայոց. իսկ ի Զեռագործաց նոցին առ օտարս առաքելոց, ոչ յիշի շատ ինչ, բայց ի զգեստեղինաց և հիւսածոց. որպէս Կապեղոսը ասուեայք, թերեւս և ստեղծեղիք <sup>4</sup>, Բամբակեայ բեհեզը նրբիք, յորոց սակի հոշակեայքն ի միջին դարս, Boccassini կամ Bucherami (Պոդասի) Եղընկայ և Կիլիկիոյ. և եթէ ըստ յետին դարուց տարազագործաց Հայոց, զորոց գունատիւ կնդկակտաւս և մսլեանս (massolini) գերազանցս քան զբնաւ եւրոպականաց զրէր ոմն համաշխարհական պատմիչ (Ֆերրարիոյ), գործէին և նախահարք նոցին, որպէս է հաւանութեան, ի դէպ է մի ի քաղաքներ արտահան վաճառուց նոցին ասել զնմանօրինակ ձեռագործս. գուցէ այսպիսիք էին և պետադասիք? կերպասագործեալ և գեղագեղեալ զարդք և պատանք եկեղեցւոյն Գարդմանայ՝ ի գմբեթէն մինչեւ ցրաբաւորս դրանն, զոր բազում ծախուք տայր գործել Զուանէր ի իսանն Աղուանից, (ըստ պատմիչի նոցին Մովս. Կաղանկատուացոյ) ի սկիզբն է դարու: Բայց և հազար ամբ յառաջ քան զայն՝ վասն Հայկազնոյն Տիգրանայ՝ որ առ Կիւրոսի, վկայէ Խորենացի (Ա. ԻԳ) զատ յայլոց ճոխութեանց, և « Մթերս . . . զգեստուց և » պիսպիս գունոց և անկուածոց արանց և զվանանց . . » բազմացոյց », թէպէտ բնիկ և թէպէտ օտար արուեստագիտաց ձեռք:

Յայլ ազգ ձեռագործս յիշելի և քննելի է Սսկէքարն <sup>5</sup>, գործեալ ի Դավրէժ, զոր՝ որպիսի և էր՝ աներկայ տանէին և յօտար երկիր: — Յիշման արժանի են և տեսակէ հայկական գինուց. Հայնալիճ Աղեղունք, Տեգք և Նիզակք, որք և զքովանդակ Հայաստան կամ զՀայ ազգ կերպարանէին ի դրամս և ի քանդակս Հռովմայեցոց. և ի նորագոյն ժամանակս՝ ահարկու Սոսերք և Սակերք Սեւորդեաց, զոր քստմնելով իմն յիշեն արարացի պատմիչք (Մատուտի):

1 Պլին. ԻԳ. չԲ. Aliam deinde Atamantida Armeniæ, Cappadociæque alumnâ. Hac admota leones resupinari cum hiatu laxo: nominis causam esse, quod conteri nequeat.  
 2 Պլուտարքոս, Յաղագս Գետոց:  
 3 Այսպէս համարիմ կռել զգրեալն ի յոյն Մատուր. և զանուն նախարարին յորմէ և լեռան բուսածոք՝ կոտն կամ կոտնով. նշանական ինն հանգիղելով անուանն և զէղքն աւանդեալք ի մէջայնոց վասն կոտնակայ սպարազեալ մերոյս Խոսրովու Ա. կեալ 160 ամ: Թերեւս Հայկազնոյն կոտնակայ զիղեալ էր այս բազք:

Այսպէս, եթէ ոչ ամենայն՝ այլ ստուգիւ շատքն, բերք են երկրիս Հայոց, արտահանեալք ի մերոցս և տարեալք յօտար աշխարհս. իսկ արտաքուստ եկամուտք ի Հայս, և աստանօր ծախեալք կամ անդրէն արտահանեալք և սիւռեալք ի խնդրոցս նոցուն յայլ և այլ կողմանս, յայտ է՝ թէ ոչ անթիւք այլ բազմաթիւք և բազմորակք էին, և զորս աւելորդ է քննել և թուել, մինչ ծանօթ են բերք իւրաքանչիւր աշխարհաց, յորոց զպատուականագոյնս և զաւարեբոս՝ բառնային մերքս և բերէին և տունէին յով և պէտ, և զորոց թերեւս լիցին յետոյ բանք ի յիշատակելն զգնացս Հայոց յայլ և այլ աշխարհս: Բայց չկամիմ զանց առնել աստանօր զերեւելի ինչ նիւթով, որ կամ յաճախութեամբ բերեալ լինէր ի Հայս և կամ յաճախ ի Հայոց. զարմանալին այն ըստ հայթայթանաց, և զժուարագիւտ քան զբնաւս ի հնումն, և յոյժ ցանկալի և հեշտալի համարեալ՝ մինչեւ ցայժմայն է Մետաքան, սեփական ճարտարութիւն և ճոխութիւն ձենաց. ուստի, որպէս յայտ է ամենեցուն, զայր Ապրիլոնն և կերպասն յարեւմուտս մինչեւ ի Հռովմ, անցեալ ընդ ահագին տարածութիւն Թուրքաստան անպատի, ընդ յառաջ նշանակեալ ճանապարհս. մեծ շտեմարան կամ վաճառանոց մի նորին լինէր և մերս Արտաշատ-Դուին: Իսկ բերողքն՝ մինչեւ ցալի մի ճանապարհին՝ զառաջինն նորին ինքեանք ձենացիք էին, ի քաղաքս կամ կայանս ուրիշ <sup>6</sup>. յորոց ապա բնիկք տեղեացն Սկիւթացիք, Թուրք և Պարսիկք՝ յառաջ վարլին յարեւմուտս. և արեւմտեայք՝ ընդ որս և Հայք՝ ընդ առաջ ելեալ բառնային. այլ ցոր սահման արեւելից յառաջէին սղաքս ի սկզբանն, ոչ գիտեմ, բայց առ փոքր փոքր մինչեւ յեզերս և ի մուտս իսկ ձենաց աշխարհին՝ ոչ է երկրայելի: Խորենացի ի պատմութեան հասուած գալոյ անդուստ Մամիկոնեանից ի Հայս՝ յառաջին կէս Գ դարու իբրեւ ականատես նիւթոց երկրին (ձենաց) առբերելոց, կամ ականջալուր համազգեացն տեսողաց՝ յիշէ զնոսին և զաշխարհն (Բ. ՁԱ). « Քրքմաւէտ և սիրաւ մարգալատ և բազմաւետաքս. (ուր) անբաւութիւն » Յամուրաց և Հրեշից, և որ Էլչայծեմուսնոք անուանեն. » ուր հասարակաց կերակուր՝ ասեն՝ զառ մեզ պատուաւ » կան և սակաւուց ճաշակելիս՝ զժրասեան և զՊոր և այլ » այսպիսիս: Այլ զսականց և զմարգարտաց՝ ոչ ասեն » գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ » մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք, հասարակաց » նոցա է զգեստ », կերպասն մետաքսեայ անշուշտ. քանզի բամբակեայք, և կտաւիք, ասուեղէնք և բեհեզք և ծիրանք՝ այլուստ բերեալ լինէին և ի Հայս. իսկ մե-

և ճամբաւեալ առ Յոյնս, որպէս Արայի զէղքն յիշեալ ի Պլատոնէ, և յետիւք Հայոց մերձեցուցին յիւրեանց ժամանակն, այսինքն յԱրշակունեացն:  
 4 Այսպիսի կարծեմ զկռեցեալն իտալերէն Felzade, զորոց հակ մի բերք Գիւրգ ոմն յամի 1587, ի Դուրբոցոյ, և Յոյնք զազացեալն ի նուուն՝ փախեան:  
 5 Յիշեալ է Պատմութեան Խաչին Հայքիւնեաց:  
 6 Դուն ուրիշ ի բնիկ արեւմտեան Արտա և անդր եւս յԵւրոպէ մեկին ձենք, որպէս երբեքս զեղապէք նոցին կամ Սերբոս՝ առ Օդոստոս կայսր և յետոյ առ Մ. Արեւիտս յամի 160:

տաքաղ յաճախութեամբ զայր մանաւանդ առ տիրապետութեամբ Բակարիացոց, Պարթեւաց և Սասանեանց, որոց և առանձինն սակս պատուականի այնր նիւթոյ՝ դաշինս գնոյ և բաժից հաստատեալ էր. որպէս յետոյ և Բիւզանդացոց և յաւէտ առ Յուստինիանոսիւ. առ որ՝ դէպ եղեւ յամի 571-7, Վարդանայ Մամիկոնենի, ոչ վաճառականորէն այլ մարտկորէն, սպանանելով զմարդպանն Սուրէն Պարսիկ՝ կողոպտել զաղիս նորա, և տանել մետաքս շատ. — Դրանօթ է ամենեցուն յայնմ ժաժամանակի զառաջին նուագ գողունի բերումն սերմանց որդանն շերամոյ ի Բիւզանդիոն, և շերամատածութեան սկիզբն, և անտի սփռել յարեւմուտս. յոր սակս և խնամով դարման թթենեաց և յաշխարհի մերում, զոր և նշանակեն յայնմ հետէ պատմիչք մեր՝ ուր ուրեք և դէպքն պահանջեցն. որպէս պատմին Աղուանից (Մ. Աղաւանկ.), սակաւուք յետ յայտնութեան շերամոյ՝ ընդ առաջինս ի բերոց իւրոյ աշխարհին գրէ և զԱլպրիշուս. ուր և մինչեւ ցարդ ծանօթ և հռչակեալ են բերքն, ի Շամախի, ի Փանձակ, և յայլ մերձաւոր վիճակս: Իսկ Ասողիկ (Փ. Գ.) թերեւս առաւելագանցութեամբ ասէ, յերս թ դարուն և ի սկիզբն ԺԽ, այնքան անդորրանալ և ճոխանալ Հայոց ընչեղութեամբ, «մինչեւ հովուաց և սնդէորդաց, մետաքսեայս զգենուլ պատմուհանս»:

Է. Շահաստանք Հայոց ի Միջին դարս: — Ի Մեծ և ի Փոքր Հայս և ի Արիւսիս, թէպէտ և ոչ այլալեցան գիծք վաճառականութեան՝ ի բարձման տէրութեան Սասանեանց և ի տիեզերակալել Արարացոց յ' Է դարէ և անդր, այլ կենդանեմք մթերանոցք փոխեցան, և ուղղեցան ընդ հին ճանապարհն բարեկական ի նիստ Ամիրապետին, ի Սէրամէնայ, և ի Նորն Բարեղոն, այն է Բաղտատ. որոյ թէպէտ և յետ երից դարուց նուազեցաւ միակեծան իշխանութիւն, այլ տակաւին ցարձուքն նորին ի նորոց աշխարհակալաց Թաթարաց՝ ցկէս ԺԳ դարու, մի ի նշանաւոր շահաստանաց և համալսարհական հրապարակաց վաճառականութեան եկաց. և զի խափանեցաւ կամ ամփոփեցաւ ուղղակի երթեւեկն ի շահաստան և յաթոռ կայսերացն արեւմտից՝ առ ստէպ թշնամութեան Արարացոց՝ ընդ Բիւզանդացիս, ոչ նուազեաց յաջողութիւն Հայոց, միջարնակք գոյով երկոցուն մեծաց պետութեանցն. մանաւանդ ի թեւարկել ոստիկանաց Արարացոց խնամով յօգուտ իւրեանց և մերայոցս. որպէս նշանակէ զայս ուրեք Ղեւոնդ պատմիչ վասն Մահմէտի որդւոյ Աբդըլլայ յերս Է դարու. եթէ, «Համարձակեաց գիտունս մարզից հանել զվաճառականս ի վաճառան իւրեանց. . . և եղեւ առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցաւ»: Դրունքը մարզից՝ թուին պահակքն, կամ սահմանեալ տեղիք գաւառաց և բաժտունք: Ըստ այսոցիկ սակաւուք յառաջ քան զայն՝ առ Հերակլիւ և Բ Խոսրովու յիշին ի Մ. Կազանկատուացոյ՝ կիցք ձանապարհաց, զորոց գանձաւորին Պարսիկք, թէ «մինչեւ ցե՛րք պնդեալ կապեալ» կայցեն, յարգելուլ զչաչս վաճառաց կողմանց կողմանց» մասնց. իսկ յորժամ սկսաւ նուազել զօրութիւն աւմիրապետաց վասն խլրտման և ձեռնբրիցութեան Թուր-

քաց և պաշտօնէից նոցին, և ի զօրանալ Բիւզանդացոց՝ ի կիսոյ թ դարու ցկէս ԺԱԽ, խրախուսեցին և Հայաստանեայքս արժարժել և վերականգնել զնախահարցն հարստութիւնս և նահապետութիւնս և Թագաւորութիւնս՝ յայլ և այլ հին աշխարհս իւրեանց, յԱրարատ, ի Սիւնիս, ի Վասպուրական, յԱւտի, յԱռան, որպէս յայտ է ծանօթից պատմութեան մերոյ. ընդ նոսին յայնժամ երեւցան նոր շահաստանք կամ վերափայլեցին ճոխութեամբ. յայտ առնելով դարձեալ, զի ընդ քաղաքական իշխանութեան Հայոց անմեկին զարգանայր և արուեստ վաճառականութեան, մանաւանդ յիշխանանիստս նոցին, յորս անկ է արգ և մեղ կառուցանել զակն. թէպէտ և աւանդ է, զի յարկածս անկման և եղծման նոցին՝ լինին յիշատակք հարստութեանն. իբր թէ յորհասի մահուան մեծի ուրուք՝ յայտնեցին ցայն վայր անծանօթ կեանք նորին և դարձք:

Յայս յիշատակ՝ միւր իսկոյն ընթանան յԱՍԻ, ի գերահամբաւեալն յայնմ ժամանակի, ի գեղապաճոյճն և ճոխահարուստ ի քաղաքս Հայոց, աթոռ Թագաւորի և քահանայապետի, նոյն և շահաստան մեծ, թէպէտ և արտաքոյ շահահ վաճառագնաց պողոտայի. զոր ճիզն և ճարտարութիւն Բագրատունեացն և խուռն երթեւեկք ի մարզից մարզից՝ մերձեցուցին բազմամթեր բերովք աշխարհաց. որպէս շատ իսկ տան նշմարել և աւանդեալքն ի տեղագրի այնր քաղաքի (Շիրակ 91-2), փնդռալք նորին և կոռոյակք և բազմազան բաժք և մաքք, և դրունքն որ հանեալ տանէին դէպ ուղիղ յայլեւայլ շահաւէտ քաղաքս. նա և կշտամբանք որբասաց պատմչին վասն վախառուաց բնակչացն, իբրու զի «ամուրն Անի և որ շուրջ զնովաւ դստերք իւր՝ առաւել» յամբարտաւանութիւն կրթեալ ընդդէմ երկնից կայթս» հարկանէին». վասն այնորիկ համարի մատնեալ յաւար և յաւեր Սէլուկեան Թուրքաց Արփասլանայ, յամի 1064. այլ որպէս ցուցանէ տեղագրութիւնս մեր՝ ոչ անազանեաց Անի կանգնիլ անդրէն և յօրանալ մինչեւ ցԺԳ դար, և թերեւս սակաւուք կամ ոչ ինչ ընդհատ՝ վարուն շարժուն ճոխ և փարթամ և զարմանալի երեւել յայս բնկաց և օտարաց, և յառասպելաց կարգ անկանել ի գրոյցս: Բայց զի մի երկրորդեացուք զվաղ ուրեմն ասացեալքս այլուր, դարձցուք յայլ և ի մօտաւոր և ի զուգակից նորին քաղաք, ի Կարս: Այլ ոչ և աստ յերկար դեգերեցուք, զի և զսորա տեղագիր արարեալ և յիշեալ է մեր, (Արարատ, 85-86). շատ լիցի և վասն սորա զնոյն ողբասաց պատմչին (Ղաստիվերտոցոյ) յիշեցուցանել մեղադրանս՝ զբնակչացն, զի «յանհոգս և յանկասկածի էին, հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ. . . մեծաւ» հարկի և պատուական վաճառակալք» նորին: Ամաւ միով կանխեաց հարուած քաղաքիս քան զԱնոյ՝ ի նոցին աւերողաց, այլ և հանգոյն նմին՝ վերականգնեցաւ, և թերեւս առաւել քան զառաջինն, յետ եկաւորութեան Խաչակրաց յԱսորիս և յԵգիպտոս, և վաճառականաց ազատ քաղաքաց Խաչիոյ սպրդելոց յԱսիա և ի կողմանս Հայոց. յորոց մի յ' առաւել զարգացելոցն՝ հասաւ բակապետութիւն Փենուայ, ասի ի սկիզբն ԺԳ դարու

գալինս վաճառակցութեան կնքեալ ընդ իշխեցորին  
 Կարուց, և յամի 1287 մի ոմն յատենակալաց իւրոց էր  
 եղեալ երբեմն վաճառաչաւ ի Կարս. յորմէ ի դէպ է  
 քուչակել, եթէ որոց մինչեւ ի կեդրոն վանանդայ  
 դային յիտալիոյ, ոչ էր մարթ զանց առնել զմայրաքա-  
 ղաքան Շիրակայ. քան զոր քաջաբաղդ գտանի Կարս,  
 զի և յայնմ հետէ և մինչեւ ցարդ փոքր ի շատէ եկաց  
 մնաց ի գործ առի և տրի, յետ բռնազմադիմի անցիցն և  
 բռնաբարելոյ ի հզոր պետութեանց վասն հզորագոյն ամ-  
 րոցին իւրոյ:

Ճոխագոյն իմն քան զերկոսին քոյրաթիւ քաղաքքս  
 (Անի և Կարս) և իբր 18 ամսք կանխեալ օրհասիւ (1080),  
 և ոչ եւս վերականգնեալ՝ հռչակի բամբիչն Կարնոյ  
 գալտին՝ Արծն, որ. « հոյակապ և ականաւոր էր ամե-  
 » նայն՝ աշխարհաց, իբրեւ զքաղաք՝ որ ի վերայ լերին  
 » կայցէ. և ծով և ցաւաք երկնէր և առատանայր կրել  
 » ի սմա զգորութիւն իւր . . . նման իմն էր նորահարսն  
 » կնոյ, որ գեղոյն վայելչութեամբ և զարդուցն պայծա-  
 » ռութեամբ՝ ցանկալի զոլ ամենեցուն . . . վաճառականք՝  
 » եկեղեցւոյ շինողք և զարդարիչք, կրօնաւորաց օթե-  
 » ւանք: և հանգուցիչք, և առ աղքատս ողորմածք և  
 » դարմանիչք . . . փառաւորք և օգնողք թագաւորաց:  
 » Եւ իբրեւ ակն մի պատուական լուսագեղ պայծառու-  
 » թեամբ փայլէր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեւին  
 » գեղեցիկ, ամենեւին զարդարուն »: Այլ զի յետոյ ու-  
 » րեմի՝ ասէ ողբասպատումն, յոռացան բարքն, յաճախե-  
 » ցին կաշառառութիւն, « վախից և տոկոսեաց օրէնք եղան  
 » և ցորենոյ բազմապատկութիւն », ի վերայ եհաս և  
 » պատուհասն սկիւթական, սրով և հրով, որում՝ և « օ-  
 » ղոյ ձեռնտուութիւն եղև կործանական աւուրն. զի  
 » հողմ ուժգնակի շնչեցեալ՝ բորբոք արկանէր հրատին,  
 » մինչեւ ծուրն ծառացեալ յերկինս հասանէր », շինա-  
 » ծախս և մարդածախս, որպէս զի « ամենայն քաղաքն լի  
 » էր դիակամբք անկելոցն. վաճառափողոցք, կրքափո-  
 » ղոցք և շնորարձակ սրահք »: Ընդ անկեալսն ի թիւ ար-  
 » կան 180 քահանայք « որք վիճակի տեարք էին և եկե-  
 » ղեցւոյ: Բայց յեկամոցն, և որք յաւենայն աշխար-  
 » հաց անդր հանդիպեցան, զնոցա ով կարէ բերել զհա-  
 » մար ու: Կրկնակի յողթս հատեալ Արիստակեայ (զի  
 » բնիկ էր տեղւոյն), ոչ բաւէ մանր եւս յիշատակել զճո-  
 » խութիւն և զաւար հայրենեացն. այլ յաղորդ նորա  
 » պատմիչ Ուռհայեցին Մատթէոս՝ յաւելու, զի այն  
 » « Բուչակաւոր և քաղմամբոխ քաղաք Հայոց . . . ան-  
 » թիւ բազմութեամբ լցեալ արանց և կանանց (ուներ)  
 » և անհամար յափս ոսկոյ և արծաթոյ . . . այլ զոսկւոյ  
 » և զարծաթոյ և զիւրաքանց՝ աւելորդ է ասել. վասն զի  
 » ոչ արկանի ընդ դրով . . . Քորեպիսկոպոսն՝ որ ասէին  
 » Դաւթոս, . . . 40 ուղտոյ բարձաւ զանձատուն նորա, և  
 » վեց գիւհ եզանց ելանէին ի տանէ նորա »: Միաբանի  
 » սոցա և յոյն պատմիչն Կեդրենոս՝ ասել, զի յետ այր-  
 » ման քաղաքին՝ գտան ի նմին ոսկի բազում անհալ և  
 » զէնք շատ: — Քաղաքս այս յգիտեցեալ մեծութեամբ, որ  
 » զրեւութէ սակս յետին արկածիցն յերեւան գայ ի պատ-  
 » մութեան, յայտ է թէ էր ի վերայ մեծի ճանապարհին  
 » որ ի նախալիչեալ մայրաքաղաքաց Հայոց՝ այլ և ի հեռա-

ւոր ծաղաց՝ ձգէր ի բուն Քաղաքն Կարնոյ ի Թէոդո-  
 սուպօլիս, և անտի տանէր յԵզնկա, ի Մաժակ, ի  
 Մելտենի, և ընդ այլ զիժ՝ ի վաճառատանս Պոնտոսի.  
 Հարկ է թէ և ինքն մեծ քաղաքն Կարնոյ էր և յայնժամ,  
 (և առաւել եւս ասպնջականելով զգերծեալսն ի հրոյ և  
 սրոյ Արծինն), որպէս և յետոյ, մի ի նշանաւոր շահա-  
 ստանաց համօրէն Ասիոյ, ոչ պակաս անուանի և ամրու-  
 թեամբն, որով և զերծաւ ի պատահարէ զուզակցին իւ-  
 րոյ Արծինն. զի աշխարհաւերն այն սուլտան « ելեալ ի  
 » վերայ գահին (Փայսնտէօքէն կամ Տէվէ պոյնու) որ  
 » հայի ի Կարին, ետես զքաղաքն վառեալ ամենայն  
 » պատրաստութեամբ. և նայեցեալ յերկար ժամս՝ դար-  
 » ձաւ անդրէն », ոչ յուսացեալ ստնանել նմին: Աներկ-  
 » քայ ծանօթ է սկիզբն շինութեան միանգամայն և ամ-  
 » րութեանն և մեծութեան քաղաքիս, յառաջին կէս Ե  
 » դարու, ըստ միաբան պատմութեան մերոցս պատմչաց և  
 » Բիւզանդացւոց, որոց նախապարիսպ գիմամարտ կար-  
 » գեցաւ ընդդէմ Սասանեանց. և յայնմ ժամանակէ հե-  
 » տէ կայ ի զլուխ մեծի մասին աշխարհին Հայոց, երբեմն  
 » հակառակորդ և հաւասար Դունայ, և մինչեւ ցայժմ այս  
 » 14 դարք հանդիսացեալ կրկին ձրիւքն, ամրութեան և  
 » վաճառաչաւութեան, ընդ ամենայն պետութեամբք որք  
 » փոխանակելով զիրեար տիրեցին կողմանցս, Բիւզան-  
 » դացիք, Արաբացիք, Սելջուկք, Վիրք, Թաթարք, Պար-  
 » սիկք և Օսմանեանք: Յետինքդ առաւելուն զարդիս  
 » թուով ի բնակիչսն, յորս գտանին և Պարսք և Յոյնք և  
 » Փոչսյք, և այլ եկամուտք, այլ յամենայն դարս զառաջ-  
 » նութիւն կալեալ է Հայոց և բազմութեամբ և ճարտա-  
 » րութեամբ արուեստից և վաճառականութեան. մարթի  
 » և արդ նախադաս համարել զղա ի քաղաքս Հայոց. զօ-  
 » րոյ բարգաւաճութիւն և կեդրնական դիրս յիշեն՝ յետ  
 » Յունաց՝ և Արաբացի պատմիչք և աշխարհագիրք, և եւ-  
 » րոպէացի ճանապարհադիրք յ' ԺԳ դարէ և այսր, որպէս  
 » փոքր ի շատէ ծանօթ է հասարակաց:

Չուզակից ժամանակաւ և բաղդիւ կամ անբաղդու-  
 թեամբ վերոյիշեցելոցս՝ գտաւ և Մելտենի մայրաքաղաք,  
 խառն բնակեալ ի Հայոց և Յունաց, երկօցուն եւս մըրց-  
 մամբ. այլ և թուրք և օսար եկաք մամբք՝ յառաջեցեալ  
 ի շահավաճառութեան. որպէս զի նոյն ողբասպատում  
 մեր՝ յատկաբար Շահաստան կոչէ զուս, և նմանեցուցա-  
 նէ երեմեան երընջի, ուժեղ, « զիրգ և փափուկ գոլով.  
 » որով վաճառականք փառաւորք երկրի, և օգնողք սորա՝  
 » թագաւորք ազգաց, որք ի գահոյս փղոսկրեայս հանդ-  
 » չէին, և միշտ զպարզեալ գինին ըմպէին, և անոյչ իւ-  
 » ղով օծանէին »: և վախճան՝ ըստ նախագրեցոցն լի-  
 » նէր, ի սուր և յաւար մատնել այլազգեաց (յ՝ մի 1088).  
 » և առ փոքր փոքր վերանորոգիլ, և ընդ նշանաւոր քա-  
 » ղաքս դասիլ ի ժամանակի թաշակրաց և յետոյ, և զար-  
 » գիս իւր ոչ յետնեալ առ նմանեօքն:

Մանր համարիմ ճառել քննութեամբ և զայլոց փոքր  
 ի շատէ վաճառաչաւ քաղաքաց, որք յերկրի կամ ի սահ-  
 մանորս Հայոց, ի ժամանակի անդ տիրապետութեան  
 Արաբաց և Սկիւթաց. որպիսիք են, յարեւմտակողմանն՝  
 Բաբերդ, Սեբաստիա, Եզնկա, և այլն. յարեւելս՝ եր-  
 կոքին Գանձակը, որ յԱղուանս և որ յԱրապատականի



(Դավրէժ), որ և յատուկ Շահաստանն կոչի և է և յայժմուս. փայտակարան յեզր կասպից ծովու, նախ՝ ճաւան, վան, Մանազկերտ. և որ շուրջ կամ մերձ ի Հայս, Տիփղիս ի հիւսիսի, Ամիդ, Մծքին, ի հարաւա- կողմն, և այլն. յորոց ի շատս մերայինք էին առաջին վաճառականք կամ ընդ առաջինս. թող զայլ և այլ քա- ղաքս Ասորոց և Փարսն Ասիոյ, յորս յաճախ երթեւե- կէին, և ոմանք հաստատարնակք իսկ էին, և յաւելուին ի տազնապել հայրենի աշխարհին՝ նորանոր գաղթա- կանս առաքելով ընդ արեւմուտս, անդր իսկ քան զե- զերս Ասիոյ մինչեւ յԵփրատս:

Այսոցիկ ի վերայ եհտս յեղակարծուց իմն փոփոխու- թիւն մեծ և նոր զօրութիւն և շախիզ վաճառականու- թեան, ընդհանուր աշխարհաց ազգաց, և առանձինն մերոյս հայկականի, կրկին քաղաքական իշխանութեանց ծագմամբ. մի՛ տիեզերական կամ համասիական, թա- թարաց աշխարհակալութիւնն, որ տապալեալ զվեց- դարեան տիրապետութիւն Արաբացոց, և զնորընծիւղ խորագմայս և զայլս բնութիւն, կալաւ զընդարձակ մասն աշխարհի, ի խորոց անթափանցելի ձեռնաց՝ մինչեւ յա- փունս Միջերկրականի և ի սահմանս Եգիպտոսի. և զի զսա ոչ կարաց նուաճել ի սպառ զինու զօրութեամբ, հնարեցաւ նուազեցուցանել ի վաճառաշահութենէ, փո- խելով կամ յորդորելով զվարուն ճանապարհ նորին ի Պնստոս կոյս, և հաստատութեամբ շէլաղունեան հարըս- տութեան յԱսորպատական. կրկին վերափայլեաց յայն- ժամ շահաստան նորին Դավրէժ, ի կենդրոնի կարա- ւանաց միջին Ասիոյ և Հնդկաց, և եկացն յարեւմտից: Որչափ ինչ վնասեցին և որչափ ինչ շահեցան բարբա- րոզքք ի մերայոց, ծանուցանէ պատմիչ մեր ժամանա- կակից (Վիրակոս, ԵԵ). ի 1255 թուականի, ընդ հար- կաւ առնելով զաշխարհս մեր, ասէ. « Ի վաճառակա- » նացն բազում ինչ առեալ և շահեալ, կուտեցին բա- » զում զանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուա- » կանաց . . . Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մե- » ծատուն վաճառական Ուսմէկ անուն, զոր ինքեանք Ալիլ » կոչէին », և այլն <sup>1</sup>:

Իսկ միւս նորութիւն և զօրութիւն ի մասին վաճա- րականութեան ընծայեցաւ ի մերոյս ազգէ, հաւաք- մամբ գաղթելոց ի Վիրիկիա և կանգնելով տէրութիւն արքայական ոչ անշուք, բազմահնար ճարտարութեամբ Լեւոնի Թուրքիեանց, որ ոչ այնքան զաթոռ իւր բարձ- րացոյց, որքան զողջոյն ազգս Հայոց՝ ի մէջ ազգաց ժա- մանակին, և աշխարհածանօթս արար և ետ եւս առնել յաջորդօքն, մինչեւ ցայսօր: Ի հաստատել նորա ի գահ թագաւորութեան՝ հաստատեցաւ յայնմ մարզի (Վիրի- կիոյ) և ոգի հայկական. շնչեցին շունչ մի և բնիկքն ի հայրենի իւրեանց աշխարհին և որք ի սփիւռս: Բարե-

բարձր գտաւ և նա և իւրքն՝ յետ իւր յանձանձիլ և բար- զաւածող թողլով նորահաստատ տէրութեանն՝ զխորա- գէտ և հզոր ազգական իւր զԵդեսոսեան Պայլ, և յա- ջորդ՝ զորդի սորա հարամոյն և արժանաւոր իւր փեռայ զՀեթում Ա, առ որով ի գերագոյն ծայր բարգաւաճա- նաց եհտս պետութիւնն, ընդ նմին և վաճառականու- թիւն ազգին՝ կառուցմամբ և բացմամբ աշխարհամուտ նաւահանգստին Սլասայ, որ յաղթահարեաց առ վայր մի զհակառակորդ իւր զմեծն և զհին Սղեքսանդրիա <sup>2</sup>, թերեւս և զրեաց զամենայն շահաստանք նաւամուտ երկրի՝ յիւրումն (աւաղ, ոչ յերկար) ժամանակի. այլ և ի համառօտ պարագայի անդ տուրեւառիկ կենացն՝ թերեւս այնքան յոյով վաճառականս յամենայն ազգաց Ասիոյ և մանաւանդ Եւրոպիոյ և առաւելագէս յիտա- լիոյ՝ ձգեաց յինքն՝ ի ծովէ և ի ցամաքէ, այնքան պա- տուական աղխամաղխս երկուստեք և փոփոխութիւնս նոցին, և այնքան ոսկւոյ և արծաթոյ ելելուտ ընդ հրապարակս, ընդ փնդուկս, ընդ բաժտունս իւր և ի գանձ արքունի, որպէս թէ ոչ այլ մի ի քաղաքաց և ի հանգրուանաց նաւուց: Շահաստանն Այաս, կամ որ նոյն է ասել կենդրոն հայ վաճառականութեան, մի ի կարի նշանաւոր և նախադաս գիպաց և տեսարանաց է յընդհանուր պատմութեան վաճառականութեան ազ- գաց. վան որոյ և արժանի էր երկար և մանրամասն ճառից և ցուցմանց. զոր և ըստ մերում կարի ջանացաք ասնել և հրատարակել այլուր (Սիսուան, 335-89). և սի- բողաց ծանօթութեան վաճառականութեան ազգիս Հա- յոց՝ յուչ առնեմք մտադիւր վերծանել և ի վերայ հասա- նել փոքր ի շատէ, և եթէ հնար է՝ հասուցանել եւս զԵւ- րոպէացի բազմաքնին հմուտս և անհմուտս, որոց թէ- պէտ և շիջէ տեղին այն անծանօթ՝ այլ ոչ որչափ և ար- ժանն է ծանօթ. ունիցի Այաս ինչ ինչ անշուշտ յայտ- նել նոցա առ յապա, գէթ զյիշատակարանս և զմնա- ցուածս նշխարաց նախնեաց նոցին անդ զեգերելոց, և զգաստակերտացն մոռացելոց, մանրելոց, ամայացելոց և ցարդ ոչ ըստ արժանայն բրնոց և ի լոյս բերելոց. — Ի տեղագրութեանն և յառանձին դրուագի անդ Բաժ- տան Այասայ՝ թուեալ են յանուանէ (յէջ 358 - 60) եկքն իտալացիք, Պրովենցալք և այլ Եւրոպացիք. յի- շեալ են և փոխադարձ (յէջ 371 - 3) մերազգեացս յԱ- յասայ և յայլոց կողմանց Սիսուանայ գնացք յաշխարհս և ի քաղաքս նոցին և յաւէտ յիտալիա, և հաստատու- թիւն եկեղեցեաց և վանորէից՝ ոչ միայն ի ծովեզերս Ազրիականին և Տիւրքականին և Լիգուրեան գոգոյն, այլ և ի միջերկրեայ քաղաքանին <sup>3</sup>. յորս՝ հարկ է թէ ոչ երիցունք և միանձունք միայն էին Հայոց, այլ և եկք աշ- խարհիկք, ոմանք առժամանակեայ և այլք հաստատ բը- նակութեամբ, որպէս աներկբայ յայտ է այս ի նաւագը-

<sup>1</sup> Խորհրդածէ և Տոսգարինի վեհեմ ի Պատմ. Դպրութեան ազ- գի իւրոյ. Tartari . . e insieme gli Armeni . . pensar dovet- tero a distogliere da quel cammino (յԱսորեաց) le mercan- zie dei regni loro, portandole sulle spiagge del Mar Nero, verso dove i primi già incominciavano le conquiste. — M. FOSCARINI, *Storia della letteratura Veneta*.  
<sup>2</sup> Սահաստայ եմուս իրացս և ակակոտուս պայծառութեան Ա-

յասայ ի սկիզբն ժ՛՛ դարու, վերադաս զբեր պատուականութեամբ զվաճառու Այասոյ քան զԱղեքսանդրիոյ:  
<sup>3</sup> Որպէս, Դիւն-Պոլիսի կոչուելու ի Պերուզիա ի սկիզբն ժ՛՛ դարու (1316). յեւս կոյս յաջորդին (1496) հայազգի ուն, Donado զբեալ յիտալացոց, թերեւ Տէրապոլ, եկեալ ի սոճալաճառ Պեզարոյ (Pesaro) քաղաքի, և ի վեհեմիկ. որպէս և ուն ի ժ՛՛ դարու ի սոճալաճառ Պատուիոնի:

նաց քաղաքն, ի վենետիկ, Գենուա, Անգոնա, յետոյ և ի Լիվորնոյ. այլ և սքաբ և մանաւանդ ցամաքսյինքն՝ տակաւին կարօտ են քննութեան և յայտնութեան յիշատակաց, զորոց յետ սակաւուց յաւելցուք ինչ ծանօթս:

Ի պշնուլ մերում յառիթն հեռաւոր յիշատակացս այսոցիկ յԱյաս, յուշ լիցին և այլք ի նաւահանգստաց Հայակիլիսիոյ, որ փոքր և որ շատ ծաղկեալք յայն ժամանակս՝ վաճառաչաւորութեամբ և նաւարկութեամբ. Սատալիա, Կոռիկոս, Տարսոն, Աղեքսանդրեակ, և այլք, տեղագրեալք ընդ Այասոյ (ի Սիսուան): Այն արկեալ է մեր անդ յանհեղեղ կարծիս կամ զրոյց. (Թէպէտ և ի փաստ մեծի բարգաւաճանաց և ընդարձակութեան ճանապարհաց վաճառականութեան, գործակցութեամբ Հայոցս և արեւմտեայց). որպէս թէ միոյ ի Թագաւորաց Հայոց կամեցեալ համառօտել զերկարութիւն ճանապարհին որ ընդ Գանայիս, ընդ Վրկա և ընդ Մէովտեան ծովայինն, արկ 120 կամուրջս ի վերայ ձորոց լեբանց Կովկասու, ընդ 15 փարսախ ճանապարհի (ի միջոց Կուր և Ճորոխ կամ Փասիս գետոց). որով յաջողէր շահավաճառ ծովեղբերեայցն Պոնտոսի, Կաֆայի, Տրապիզոնի և Կ. Պոլսի, այլ Թաթարք եղծին զայն վայրապար, և ճանապարհ վաճառականութեան դարձաւ վերստին ընդ Ստորիս յԵգիպտոս 1: Հիմն կամ ծաղումն աւանդութեանս Թուրի Հին, ըստ վկայութեան Ստրաբոնի (ԺԱ. Գ. 4), որ ասէ 120 կամուրջս արկեալ ի վերայ Փասիս (Ճորոխ) գետոյ, ի չորեքօրեայ միջոց ճանապարհի Ստրապոս կամ Սարաւան քաղաքի Կողքեաց և Փոսիքս կամ Իդիեւա քաղաքի Վրաց. քանզի անմարթ էր կարաւանաց հատանել կտրել զկիրճս և զանձուկս լեբանց այնր կողման՝ ընդ որ հարկ էր անցանել: Սմին նման է և վարկածն, ի նմին ժամանակի Գենուացոց շինելոյ բերդս կամ ամուր կարաւանատունս ի վերայ ճանապարհին որ ընդ Հայս անցանէր, յորոց մի ասի և ամուրն Աւնիկ, (տ. Այրարատ, 28): Ոչ գիտեմ ո՞ զառաջինն աւանդեալ է զայս. Թուրի հրաշացող ք ընդ ճարտարութիւն Հայոց, որպէս և միւսն ընդ աշալըրջութիւն Գենուացոցն. որում համախոհապէս խրատէ և զրիչ մի մեր յառաջ քան զամն 1327. « Ամենայն իմաստուն վաճառաւ » կան, ասէ, այսպիսի արթնութեամբ պլտի հոկէ, » որպէս այժմ Ֆաւանկ վաճառականք »:

Ը. Հայք ի Կաֆա եւ յԱզախ. — Զարմանալի իմն հանգիստութեամբ զրեաթէ ի սմին յայսմ ժամանակի և շեշտ կշիռ ընդ նոյին աստիճանօք զրից երկայնութեան երկրի, այլ ի հիւսիսի իբր 10 աստիճանօք լայնութեան վերագոյն յափունս Պոնտոս ծովու, ոչ ի հարաւայինսն ծանօթս ասեմ (ի Տրապիզոն, Սինոպ, յԱմիսս, և

1 Un Imperatore dell' Armenia diede comodità, che per la via degli Iberi, degli Albani che oggidì sono i Zorziani, dette spezie si conducevano dal Mar Caspio sino al fiume Arasso . . . e di là nella città di Trapezonda. — RAMUSIO, Գ, 154. — Յաւելուածով քրէ Տարիս ի Պոստմութեան վենետիկ, ԺԵ, Ե. — Un Roi d' Arménie imagine d' abréger ce trajet en évitant la navigation du Volga, Tanais et de Palus Méotides: il établit une communication di-

այն), այլ ի հիւսիսայինսն և յեզերս Մէովտեան ծովաճին կամ ծովուն Ազախու և Տարիական Պերսոնի, բարգաւաճել սկսան վաճառականութեամբ ի ձեռն Հայոց և իտալացի նաւողաց, մանաւանդ Գենուացոց, վենետաց և Պիզացոց, զիսաւոր երկու շահատանք Կաֆա և Տանա որ և Ազախ: Յետինս յառաջին քառօրէի ԺԳ դարու շնորհեցաւ ի կայան յիջեցելոց ազանց իտալացոց, իսկ մերայոցս՝ ոչ է յայտ սկիզբն բնակութեան ի նմին. յիշին ի կէս այնր դարու (յամս 1355-8) զէպք վաճառականաց մերոց նաւելոց անդ գննուացի նաւօք և գերելոց ի ծովու ի վենետաց, և աղերսարկութեամբ առ Պերտի զան կողմանցն, ոչ միայն փրկելոց այլ և ըստացողաց զհաւասար ընչից իւրեանց կողոպտելոց, առատաձեռնութեամբ Թայտէլու կամ Թայտոլա խաթան տիկնոջ Ճանիբէկի կուսակալի կողմանցն, որ յիւրոց գանձուց պարգեւեաց զմեծ մասն պահանջից նոցա. յորմէ գուշակի շնորհս ունել Հայոց յաշտ տիրողաց երկրին այնորիկ, որ կոչի երբեմն ի մերոցս Հոնաց երկիր և երբեմն՝ որպէս և յարեւմտեայց՝ Խազրաց երկիր, այլ և Կոլմանիա. և յայտ է թէ յառաջ քան զնաւարկութիւն իտալացոցը հաստատեալ էր ի կողմանսն բնակութիւն Հայոց, որպէս և զեզերքք Թերակղզոյն Տարիոյ կամ Ղրիմու. և ոչ վարկայարագի բնակութիւն, այլ շուրջ սփռեալ զծովեզերքն, մինչեւ կոչել նոցին յոմանց ի միջին դարս՝ Մովեզերեայ Հայաստան, Armenia Marittima. զոր օրինակ և ի հարաւակողմն Փոքր Ասիոյ ի Միջերկրականին՝ Մով Հայոց կոչեցաւ Մոցն Խսոսի կամ Աղեքսանդրեկի. աշխարհալուր վկայք սփռման և վաճառականութեան Հայոց յերկստին եւս տարակաց կէտս ծովուցն այնոցիկ միջերկրեայց. այլ ի միջի որպիսեանց այլազան և այլանուն ազգաց: Թերեւս ի սկզբան արչաւանաց Թաթարաց գաղթեցին Հայք ի կողմանքս, բայց վաղագոյն եւս է անշուշտ գալուստ վաճառականաց նոցին: Խորտատպէ արաբացի աշխարհագիր՝ ըստ այլ ճանապարհագրաց, ասէ ուրեք վասն Հրէից՝ յԱրմինիէ երթալ ի քաղաքն Խազրաց (Էթիլ, մերձ յայժմեանս Սփտէրխան), անտի ընդ ծով Կասպից՝ ի Բահլ և մինչեւ ի Չինս. ոմանց Թուեցաւ Ճերմինիէ ընթեռնուլ և իմանալ զՊերմանիա. այլ էր յայնժամ սարակեալ յայնքան Հրէից մինչեւ դիմել նոցա յաշխարհս հեռաւորս, և մանաւանդ անտուստ առանց յիշելոյ զայլ աշխարհ՝ զալ յեզերս Կազրից. յիցէ՞ ուղղագոյն ընթեռնուլ զանուն Արմենիոյ, և զՀայս՝ փոխանակ Հրէից ձեռքել ի նշանակեալ շաւիղսն և յաշխարհս, և որպէս յայտ է և այլուստ, ոմանց ի վաճառականաց և նոյն իսկ Խազրաց ընդ (Վրկա) գետ ի վեր խաղալով՝ խոտորեալ ընդ արեւմուստ գալ յԱզախու քաղաքն 3, և անտուստ եր-

recte entre le Cyrus qui se jette dans la mer Caspienne, et le Phase qui court vers l'extremité du Pont-Euxin. Le trajet par terre n'était que de 15 lieues. Cent vingt ponts furent jetés entre les montagnes pour rendre cette route praticable au commerce: et attestent encore la grandeur, l'utilité et les difficultés de l'entreprise. — DARU.

2 Այսինքն ի վերոյիշեալ Տանա իտալաց, Tana.

Թալ մինչև ի Կ. Պօլիս: — Անանաւոր յիշատակ է տեղւոյս և ժամանակիս տիկնոջ միոյ Հայայ, այն է ԱՖէնտի գուստր Նրախարունի, որ յամի 1341 — 2 երկու տու գըրամով 1 գնէ աւետարան մի, և տայ ընծայ « ի Ս. Գրի. » գոր յԱզախ քաղաքի եկեղեցին (ի ձեռն Տէր Մանուէ. » լի), յիշատակ հոգւոյ իմոյ (ասէ) և հանգուցեալ որդւոյ » իմոյ Սիր-պէկի, զոր Տէր Աստուած յարութիւն պար. » գեւեցէ նմա »:

Յայտ է ամենեցուն, զի ողջն գար մի յետ բարձման տէրութեան Ռուբինեանց մերոց, առաւել կամ նուազ տեւեաց վաճառաշահութիւն քաղաքիս, որպէս և քաղաքացն Ղրիմու ընդ իշխանութեամբ Գենուացոց, մինչև ի նուաճումն նոցին ի Թուրքաց յամի 1475, և յայնմ հետէ մնաց ի ձեռս Հայոց և Յունաց, և մինչև ցայսօր իսկ այսպէս է մասամբ: Երկու ամբ յառաջ քան զԵլիթալ թուականդ, այն է, յամի 1472, զԳոնդարինի գեւ պան Վենետաց, յանցանելն ընդ Կաֆա, յորդորեցին Հայք ոմանք երթալ ի Գանա (Ազախ). բայց մի ի նացանէ որ ասէր գեասպանութեամբ երթալ ի Հոօվմ, նշաւակեցաւ լինել խաբարայ զօշաբաղ:

Քաղաքայտ է զի երեւելի էր քան զԱզախ և զԼիւսաւոր ամենայն քաղաքաց կողմանս և շահաստան մեծ՝ Կաֆա որ և Թեոդոսիա: Ոչ է գործոյս ճաւել զժազմանէ քաղաքիս կամ զբարգաւաճանացն առ Հելլենոք և առ Բիզանդացւոք յառաջին դարս. այլ զի ի ժամանակս Թաթարաց եհաս օճ բանիս, ի ճահ է յիշել՝ զի գրեթէ և առ նոքոք սկսանի նոր պայծառութիւն տեղւոյն, նաւարկութեամբ վաճառասէր Իտալացոց. յորս՝ յաշտեաց Գենուացոց՝ շնորհիւ մեծի Մանգու զանի և առանձնակ տիրողի տեղւոյն, գրեթէ սեպկականել ինքեանց զքաղաքն այն, յամի իբր 1267. յորում ժամանակի չիք երկրայել զի հաստատեալ էր անդ Հայոց և աճեալ բնակութեամբ<sup>2</sup>. ըստ սովորական աւանդութեան նոցին՝ գաղթելով յԱնուոյ, կամ Թերեւս յԱնեցոց նախ այլուր գաղթելոց, օրինակ իմն յԱզատբայ, յԱժտէր. խան. և անտի ի վեր կոյս վարեալք ընդ Աթիլ (Վոլկա) գետ և հասեալք յեզերս տուրիական թերակղզւոյն, ի մայր քաղաքաց նորին ի Հին Ղրիմ, որ է Սոչդար, ի Սոչտաղ և յայլ քաղաքս, բայց առաւել ի Կաֆա. ուր յաւէտ բարգաւաճեցին, և թուով առաջինք էին ի բազմաբնակ և բազմալեզու քաղաքին յայնմիկ, յորում՝ ի նուազմանն և յանկմանն ի ձեռս Օսմանեանց՝ 70,000 բնակիչք ասին գոլ յամենայն ազգաց, արեւմտեայց և արեւելեայց, և մեծ մասն նոցին՝ Հայք, 30,000: Բազում և յերկար յիշատակք են Հայոց քաղաքիս՝ ի վերջ կուսէ ԺԳ դարու մինչև ցայժմ, յընթացս 600 ամաց. զորոց ճառեալ է բազմաց և ի մերայոց<sup>3</sup> և յօտարաց. մեզ շատ լիցի աւել աստէն, զի ի սկզբանէ ԺԳ դարու ճանաչի անդ հաստատեալ եպիսկոպոսական աթոռ Հայոց, որ և տեւեաց մինչև ի սկիզբն մերոյ դարուս, և զի առաւ

ել Քան զ30 եկեղեցիք էին նոցա, և վանորայք զատ յեկեղեցեաց, այլ և վանք Միաբանողաց, որոց երբեմն եկաց անգ և աւանձինն եպիսկոպոս: Իսկ ըստ աւանդութեան և ճոխարան յիշատակագրին, « Զօրացաք » մեք, ասի, և քաղմացաք, և շինեցաք զգիւղս և զգաւա. » ուրս՝ իշխանք և ազնուականք, ի Ղարապազարէն սկը. » սեալ մինչև ի Սուրխաթ և ի Ֆէօդոսիայ, ի լերինս և » ի դաշտս լի արարին վանորէիք և եկեղեցեօք. և չինեց. » ցաք տունք 100,000 և զեկեղեցիս հազար, և ի ահէ Հո. » նականաց պարսպեցին ի քաղաքն Ֆէօդոսիա »:

Հարիւրաւոր ձեռագիր մատեանք գտանին և պահին ցարդ գրեալք ի Կաֆա և յայլ քաղաքս Ղրիմու, վկայք բազմութեան բնակչացն, եկեղեցեաց և վանորէից, և ոչ արհամարհ յիշատակօք: Այս ամենայն հաւաստիք են բարգաւաճանաց և ճոխութեան վաճառականաց Հայոց թերակղզւոյն և ի մասնաւորի՝ Կաֆայի, որ յետ ամայանայ Սուլթանայ՝ առաւել եւս պայծառացաւ. դրաւ ողջ նորին երբեմն Գենուացիք՝ յիշեն ի պաշտօնական թուղթս իւրեանց՝ առ անուանեալ Պաշտօնարան Խազարաց (Officium Gazariæ), պատկառ կալ և զանգիտել ի Հայոց, զի մի յայլազգիս ձեռն տուեալ ընկճեցնեզինքեանս:

Բայց զի մի խոտորեսցուք յիշատակօքս՝ դարձցուք յառաջին կարգ բանիս և ի բուն հայրենիս մեր, յետ նուազելոյ ստացական հայրենեաց Կիլիկիոյ, որ գերօրինակ գտաւ վաճառաշահութեամբ և վաճառակցութեամբ ընդ Եւրոպացիս դարս երկուս (ԺԳ-Ի), և յետ այնր օչ իսպառ կամ իսկոյն դադարեաց երթեւել երկոցուն կողմանց: Մանօթ են վորձք դաշնակցութեան Վենետաց ընդ նոր տիրողս կողմանցն, ընդ Գարամանեանս, ընդ դէմ Եգիպտացոց և Օսմանեանց ի ԺԷ դարու, և եկք Հայոց ոմանց վաճառականաց՝ ի Սոչ, յԱտանայ և ի Կոստանդնուպոլսոյ, որպէս և յայլ կողմանց՝ ի Վենետիկ ի ԺԵ-ԺԷ դարս. մինչև նորոգել իսկ նոցա յամի 1496 զհին տուն իւրեանց ի Վենետիկ. և միւս անգամ եւս Թափել զայն (յամի 1578) յօտարազգի բընակչացն: Այլ՝ որպէս ամենայն քաղաքական և մտաւոր հրահանգք խանգարեալ և աղօտացեալ են նա և ի բուն ի Մեծ Հայս ի պատմութեան մերում, յետ նուազելոյ միահեծան տէրութեան Թաթարաց, և արշաւանաց Կաղին թիմուրայ, և որ յետ այնր բարձաձիգ հարուստարութեան Խոյանչան Թուրքմանացն ի ԺԵ դարու, նոյնպէս և յոյժ ընդ աղօտ նշմարին հետք վաճառականութեան մերայոցս, թէ և ոչ դադարեալք. և խուն առ խուն արծարծեալ ի կայկայել նորոյ հարըստութեան Պարսից ի տոհմէ Սօֆեաց ի սկիզբն ԺԶ դարու. — Յայսմ դարու (ԺԶ) ի համաշխարհական շահաստանս այս ծովու (Վենետիկ) յաճախէին Հայ վաճառականք յԱսորոց երկրէ, ի Բերիոյ, ի Մէրսինէ, ի Դամասկոսէ, իսկ յետ կիսոյ նորին սկսանին երեւել վաճաւ

1 Սո՛, Sommo ըստ Իտալաց, հուստար համարէր յայնժամ 5 սակոյ նոցին (գուկտա կամ Ֆլորին):

2 Երկար յիշատակագիր ոմ Յայտմաւորաց ի ԺԷ դարու, ասէ վասն զազմեականն Հայոց նախ յԱտանայ քաղաքեալ յամի 1299, և յետ 30 ամաց եկեալ այսր ի Կաֆա. սակայն նազոյն

եւս յիշատակք Հայոց գտանին ի Կաֆա: S. Ճոնսօպօրտի. Ի Կոնստան. 338:

3 Գլխաւոր և առաջին ի մերայոցս է պատմական գործ Հ. ՄԻ նասոյ վ. Բաշկեան յուստէս Մեթիթարայ, երկար ամա տուաւորք կացելոյ կաթուղիկ Հայոց տուրիական կողմանց:

ռականքն Չոռոյայ, որպէս նշանակեցաք ի տեղագրին, որք<sup>1</sup> առաւել եւս բազմացան յետ տեղափոխութեանն ի Հնայն և հաստատութեան ի Նորումն, հզօր ձեռնարկութեամբ Շահարասայ:

Թ. Շահարաս. Նոր Չոռոյա. — Հայք մետաքսաբերք (ի վիենետիկ): — Որպէս ի քաղաքական պատմութեան արեւելից, և մանաւանդ յիւրում սեփականին ի Պարսս, անուն մեծ և գրեթէ աշխարհաբարոզ արար և եթող Շահարաս, և իրաւամբ Մեծ անուանեցաւ, ըստ վարկի մեծութեանց երկրի, նոյնպէս նշանաւոր գտաւ և յաճեցումն վաճառականութեան, ձեռնտուութեամբն և ձեռն երեցութեամբ Հայոց. որոց որքան աղիտաբեր և զնասապարտ եղև քանդմամբ Հնոյն Ջուղայ և դաղթմամբ նոցին յԱյրարատեան աշխարհէ՛ յօտար և ի հեռաւոր սահմանս, այնքան թերեւս և երախտապարտ՝ կառուցմամբ Նորոյն Չոռոյայ, վերականգնելով և տարածանելով զանուն Հայոց յԵրրտս Ասիոյ և Եւրոպոյ. և գէթ դար մի (ԺԷ) ճոխագոյնս և ճարտարագոյնս երեւեցուցանելով զսոսա ի վաճառականս երկրի, և յաւուրց անտի մինչև առ յապա ծանօթս ամենայն ազգաց. վերջին կամ հզօրագոյն դրող և հզօրիչ հայ հանճարոյ յայսմ արուեստի, այլ գողջիր և դաշնակից և ընկերակ նոցին. միևեամբ օգտեալ և յաղողեալ. նա պաշտպանութեամբն և սքա հնարագիտութեամբ. և որպէս ասաց ոմն յառաջին ճանապարհորդաց ԺԷ դարու և քաջ ծանօթից նոցին (յամի 1618, Պետրոս Տէլլա Վալլէ), այնպէս պիտանիք էին Հայք՝ Շահին Պարսից, որպէս Գեոուացիք թագաւորին Սպանիոյ, զի ոչ սա առանց նոցա և ոչ սքա առանց նորա կարէին կեալ<sup>2</sup>. — Սնդոսին ի հիւրամեծար ընդունելութեանն իւրում ի Հինն Ջուղա, նկատեալ սուր և ազաւ աչքն՝ զճարտարութիւն և զփարթամութիւն Հայորերոյն, երկնեաց ի մտի գերկզիմի խորհուրդն. և զի ակն ածեալ մեծի զօրութեան հակառակորդաց իւրոց Օսմանեանց, ոչ յուսայր ընդ երկար ընդ ձեռամբ իւրով նուաճել զՀայաստան, ապա հնարեցաւ զընակիչն տեղափոխել յաշխարհ իւր, արմատսքի իմն կամ կենդանւոյն խելով զնոսա, անհրաժարելի չարաչար խոշտանգանքն, որպէս յայտ է ամենեցուն ի պատմութենէ Առաքելի և յայլոց և ի տեղագրութենէ աստի: — Ենտ գերութեանն և փոխարընակութեանն Հայոց ի Պարսս և կանգնման Նորոյն Չոռոյայ՝ ի կռան մայրաքաղաքի նորին ի Սպահան, անդան.

դաղ ձեռն արկ Շահն յերկոսին դիտմունս իւր կարեւորս, ի բեկումն զօրութեան թշնամւոյն և ի բարգաւաճանս վաճառականութեան, առ հայթայթել ինքեան գանձս գործադիւրս: Առ ձեռն պարաստ ունէր արդ զՀայս. այլ զի առ երկոսին եւս դիտմունսն՝ պիտոյանայր ճարտար և հզօր օժանդակութեան, եթէ ոչ ի ցամաքէ՛ այլ ի ծովէ, և յերկոսին միանգամայն աղողակ և գործակիցս՝ ըստ մտացն և յօժարութեան՝ ծանեալ զհեռաւոր և ծովագօր հասարակապետութիւն վիենետկոյ, զվաղեմի ոտին Օսմանեանց, և զհնազոյն եւս վաճառակիցն Հայոց, սկսաւ ի սկզբանէ ԺԷ դարու առաքել անդր դեսպանս և պնդադեսպանս և գործակալս վաճառականս: Յառաջ քան զգաղթն Հայոց առաքեալ էր Պարսիկս ոմանս, զԼ. ֆետ պէյ գործակալ (1600), ապա զՊէրի պէյ դեսպան (1603), հրովարտակաւ և ընծայիւք, որոց հաւասար փոխանակեցաւ նմա ի վիենետկեան պետութենէ. այլ զի ի վերայ եհաս ծանր և երկար պատերազմն ընդ Օսմանեանս՝ արգելաւ դեսպանն յուղոյ, և ընծայքն զոր բերէր՝ կէս առ գունց վիենետաց ի Բերիա մնացին, և կէս յետս ի վիենետիկ դարձան. ապա անդէն և անդ յաւարտել մարտին և կնքել դաշին խաղաղութեան, և ի գետեղել Հայոց ի նորատուր երկրին առ ոստանի իւրում, ընտրեաց և ի ձեռն էառ զմի ոմն ի նոցին ի Հայոց ազնուացն և ճարտարաց, Շիօշ անուն, (1607), թերեւս ի նախահարց անտի մեծատառակի Արղութեանց, յորոյ զարմս լսի այս անուն<sup>3</sup>, և առաքեաց ի վիենետիկ Թղթով. յորում՝ ասէր զամանէ (ըստ իտալական թարգմանութեանն յայնմ ժամանակի). « Առաքեմք զպատուականն ի հաւասարս և » ի նմանիս իւր զԽօշայ Շիօշ վաճառական քրիստոնեայ » Ջուղայեցի, ի նշանակ բարեկամութեան, այլ և առ ի ն հայթայթել այդր ինչ ինչ կարասի և վաճառս պիտա. » նիս արքունի դրան մերում, վասն որոյ փափագեմք և » յանձն առնեմք », և այլն<sup>4</sup>: Հարցանէր և զնախառաքեալ դեսպանէն (Ֆէթհի) և զընչից նորին: Հասեալ Շիօշի ի վիենետիկ՝ ընկերակցաք վաճառականօք և պէսպէս վաճառելեօք, մուծաւ հանդիսիւ յատեան Դքսին և ծերակուտին (ի 16 յանուարի 1610), և ի ձեռն Նորէսի կրետացի թարգմանի՝ մատոյց առ դուքսն զծրար թղթոցն յոսկեճամուկ թաւիչեայ քսակի, համբուրելով ըզքղանցս զգետու նորին, ըստ օրինի հրահանգաց, ծանուցանելով եւս զի մնացէ աստ մինչև վաճառեացէ զոր ինչ բերեալն էր և զնեացէ զպատուիրեալսն ի Շա.

1 Յաճախելոյ Հայոց ի վիենետիկ յայսմ ժամանակի վկայէ և մի յազնուականաց քաղաքին, Թովմաս Կոնտարինի (Tommaso Contarini), ի իսոսն առ Մերակոյտն՝ վասն հաստատելոյ դրամասեղան. բաց յայլոց ազգաց, ասէ. Qui si trovano tanti . . . Armeni . . . il Greco con l' Armeno, l' Armeno con l' Italiano . . . potranno unirsi a trattar i negotij con quella credenza, la quale supplisca ai bisogni.  
2 Sono (gli Armeni) in somma al Re di Persia appunto come i Genovesi al Re di Spagna, che nè essi posson viver senza il Re, nè il Re senza loro. — PIETRO DELLA VALLE. III. 90.  
3 Որպէս Կրեպապըն և Կըքորդէին Յովսեփոս, արքեպիսկոպոսի Արղութեանց:

4 Essendoci levata l' occasione di poter mandare costì delli nostri uomini di corte, per esser impedito e vietato il passo, abbiamo determinato di mandar ora costì l' onorato frà i pari e simili suoi Chogia Chieos, mercante cristiano Zu'f'atino; così per fare questo complimento a lei, come anco per fornirsi di là di alcune robe e merci che fanno bisogno per uso della nostra real corte. Però desideriamo che sia da lei commesso ed ordinato alli suoi onorati ministri ed agenti, che vogliano per amor nostro favorirlo et ajutarlo in ogni sua occorenza; affinché egli possa spedirsi presto e bene delle sue faccende, e ritornarsene qui quanto prima può con le robe che gli sono state da noi commesse ed ordinate, etc.

հէն: Հաճութեամբ և գոհութեամբ ընկալեալ դքսին զԹուղթն՝ յանձն արար ի Թարգմանիչն, և զդեսպանն՝ ի խնամա (Հնգեցուն Գիտնոց)՝ պաշտօնէից վասնաւ կանոնութեան, զի կատարեսցի անխափան ըստ կամաց իւրոց յոր գործ եկեալն էր: — Այն ինչ ձեռն արկեալ էր Եօջի ի գործ իւր, եհաս ի Վենետիկ միւս եւս ազնուատուհմ Զուղայեցի գործակալ Եահին՝ Խոջայ Սաֆար, որդի Խօճա Երիկարի. որոյ անցեալ էր և ընդ Փլորենցիա, պատգամաւորութեամբ և Թղթով Եահին և պատուեալ ի դքսէն Տոսկանայ, որպէս ինքնին պատմեաց, և գնեալ ի քաղաքի անդ ինչ ինչ վասն տեսուն իւրոյ. և յերթալ նորա յուխտ Ս. Տաւինոսի Հայազգոյ ի Ղուկա, պատուէր առաքեաց դուքսն այն առ քաղաքացիս՝ չքով մեծաւ պատուել զնա. ոյլ և ըստ խնդրոյ նորին արձակեաց զՀայս ոմանս գերեայս ի ծովու՝ Թուրքաց հպատակս կարծելով: Եւսնոց Սէֆէր զի ունէր Թուղթըն յարքայէն և առ Պապ և առ այլ պետս վասն խընդրոյ պատերազմի Թուրքաց, եւս և Թուղթս ի Պարսից և ի Հայոց: և էր ասի, ինքն սենեկապետ Եահին, ամաց 33. և մուծեալ առ դուքսն (33 յանու. 1610) չորիւք պարսկազգեստ արքանեկօք, արկաւ նմա աթոռ ի վերոյ քան զՀինգ գիտնոցն, և կատարեաց ըստ օրինի ըզպատգամաւորութիւնն, մատուցեալ և զԹուղթ Եահին, յորում դարձեալ խնդրէր սա զինչս նախառաքելոյ դեսպանին: Գրեալ էր և գունցն Վենետաց Բերիոյ (Սակրետոյ), զի Սէֆէր որդի էր գործակալի իւրեանց ի Պարսս, այր հաւատարիմ, և արժանի խնամոց հասարակապետութեան, վասն որոյ և անկասկած տուեալ էր նմա փոխ 200 սակի: Սահմանեաց և դուքսն տունել նմա պատիւ 100 դուկատ ծախուք. և ի մեկնելն պարգևել նմա 200 դուկատ. գրելով վասն նորա և առ գունցն և առ պայլն ի Կոստանդնուպօլիս: Եւսնոց Սէֆէրի ի Վենետիկ բովանդակ ամիսս վասն գործոց յանձն նմա եղելոց յազգակցացն և ի Եահէն, մեկնեցաւ (յամուեան յուլիսի) բաղում ընչիւք դուքսն ի Պարսս, երթալով նախ ի Փլորենցիա, ի Հոլով և ի Սպանիա, ընդունելով և ի պետաց նոցին Թուղթս առ Եահին: Եւսնոցն այլ նուկետեւ և յաճախեցին վաճառականք Հայոց սփռիլ

յԵրրոպա, մանաւանդ Զուղայեցիք և հին զրացիք նոցին՝ Ազուլեցիք. զորոց վկայէր ոմն և յատենի նորին իսկ Եահարասայ, եթէ « Ժողովուրդքն Զուղայեցոց և » Գողթն գաւառին՝ յորոց բազումք են վաճառականու. » Թեամբ այժմ ի Ֆուանկաստան »:

Գլխաւոր գործ դեսպանացն Եահ Արասայ էր հաստատել դաշինս վասն վաճառարեւութեան Մետաքսի, որ յայնժամ նմա և Հայոց՝ գրեալքէ զողջոյն զայն դար առատագոյն աղբիւր եղեւ շահու. և անկ է ասել, զի յաւէտ ի ձեռն նոցա կատարէր այս գործ կարեւոր, առաւել քան ամենայն ազգաց. շահէին և մեծանային Հայք և խորագէտ ձեռնտու նոցա և տէր. որ կամէր մեծ իմն վաճառ առնել այսր պատուական նիւթոյ. այսինքն նախ ստանալ զամենայն մետաքս բերեալ որ յարեւելից և յիւրոց կազրիական գաւառաց, կամ յանձնել վաճառականաց, զի տարցն յարեւմուտս, վճարելով ինքեան զոր ինչ սահմանէր, կամ գնեացն յիւրմէ՝ տալով զգինն և զսակ, և աւելին ինքեանց լիցի: Եւ զի փորձեալ զայս ի ձեռն իւրոց Պարսից և Իտալացոց ու մանց յարեւելքս բնակելոց, ոչ յաջողեցաւ, սակս անհաւատարմութեան նոցա կամ նենգութեան, խորհեցաւ երբեմն իբրեւ կապալաւ կարգել իւր գործակալ զոր զքառաւելագոյն հատուցէ նմա սակ. և հրաւիրեալ առ այս զդեսպանն Անգոլոյ, գերեսփոխանն Թագաւորին Սպանիոյ (որ էր առաջնորդն կարմեղական միանձանց), և զգլխաւորս Հայոց, յայտնեաց զկաման. հրաժարեցան առաջինքն, իսկ Հայք յանձն առին տալ բաժ 50 Թուման և առ մէն հակ 36 պարմանաց՝ որ էր կշիռ 650 լըտերց. ընդ որ հաւանեալ Եահին՝ ի Հայս միայն ապաստան արար հրապարակաւ զչափաւաճառ մետաքսի, և առանձինն զՎենետիկ և զՍպանիոյ, յորժամ (1627) Վենետ ոմն սպան ի Սուրադ՝ զգործակալ իւր Անտոնիո Դ'Օրո միջագետացի (Իտալացի կամ ասորի ազգաւ), զոր ուսմիկն և ճանապարհագիրք կոչեն Խօճայ Արքան: — Յայնժամ բազմացան վաճառականք և կարաւանք Հայոց՝ յարեւելեան Ասիոյ և ի Կիլանայ, ի Նուխոյ, ի Գանձակայ, և այլն, բառնալ մթերս անբաւ զուտ և անզուտ մետաքսի այլ և ոյլ որակաւ և տեսակաւ, և ող-

1 Այսպէս անուանէին, Cinque Savi, ինչ առաջ պաշտօնեակց կարգեալք ի վերառեւելութիւն վաճառականաց, մանաւանդ օտար ազգաց և արեւելեաց, որոց առանձինն վճռով և խնամով յանձն արարան Հայք յայլեւայլ նուազս:

2 Գերագոյն իմն խորհեցաւ առնել զարեւմտութեամբ ծերանաւոր եպիսկոպոսն Միլանո՝ Փրեստրիկոս, առաքել ի ձեռն Սաֆարայ զմասն ինչ ի շուրջառէ հրաշքարդ յօրեղբոր իւրոյ Սկարլոտի Պոտոմէոսի, յուսով դարձի Եահին ի քրիստոնէական հաւատս, ըստ պատմելոյ Պետ. Վալլէի (Գ. 60). ոյլ է յայտ զի՝ եղև պատուական մասինն. քանզի Սաֆար, ոչ զիտեմ առ ի՞նչ երկմեալ յարքայէն՝ խոտորեցաւ երթալ ի Հնգիկս, ընդ իւր տարեալ զամենայն նամականի թագաւորաց և պետաց Երբուպոլոյ. և յեա բազում ամաց (1649) մինչ ի Մողուս էր, և Թերսեւս անդ մեռեալ. Սպանիացիք առաքեցին զարկչ նորա առ Եահարասս, որ բացեալ եզիս ընդ նամականոցն և զհաշուէզիրս Սաֆարայ, և ետ Թարգմանել կարմեղական միանձանց:

3 Ըստ վերոյգրեւոցն յանձն առնէր Եահ և զՍաֆար առ զազան. Venendo ora costì, con questa nostra real lettera, l'onorato fra i pari e simili suoi Chog'ia Seffer figliuolo di

Chog'ia Jadigar, cristiano Sulfatino, nostro fidato agente, desideramo dalle loro eccelse persone, che siano contenti di fare consegnare tutte quelle robe che ritrovano costì di nostra ragione al sudetto Chogia Seffer nostro agente, bollate ed inventariate per mano delli loro onorati ministri ed agenti, acciocchè vengano da lui condotte qui sane e sicure, insieme con tutti quelli mercanti che saranno ricoverati nei loro paesi. E pertanto le pregamo a voler prestar per amor nostro ogni favore et ajuto al nostro inviato nelle sue occorrenze.

4 Թուման՝ ժամանակին ըստ Պետրոսի Տէլլա Վալլէ, նուաճար էր յայնժամ 40 Վենետիկեան սակոյ (ճեզգիկ), ըստ այժմուս = 140 կամ 120 ֆրանկաց: Դաւեռնիէ ի կէս Ժի զարու նուաճարէ 46 փուռնի լիբոյից (Պարիզու) որ է գրեալքէ կէս նուռին Վալլէի, իսկ յայժմուս արժէ իբր 8 ֆրանկ:

5 Որք կոչէին Artassi, Heggi, Metaffi: ի նայազիր կասկի Պոտոմի որդւոյ Աղազարի, (+ յամի 1675, 46 մարտի), նշանակի փոքր ողբու՝, փոքր շարքա՝ օղբու՝. զորս Թարգմանեն իտալերէն Seda Ardasena և Ardasina.



չոյն իսկ կարաւանս բեռնաւորեալս մետաքսիւ, ըստ ա, սից ականատես Յիսուսեան քարոզչի. և ըստ այլում քարոզչի (Ղ. Լա Մազ) Առաքել ոմն ժերուհի՝ ամի ամի բառնայր ի կիրանէ Յ միլիոն (լիրայից) մետաքս, տանել Ստորիս, ի Կ. Պօլիս, ի Ռուսս, ի Հոլանտա, յայլ և այլ քաղաքս իտալիոյ, յաւէտ ի Լիվոնոյ, և աւելի եւս ի Վենետիկ: Աստանօր անդատին յամէ 1576, յորում սկսաք նշմարել զՋուղայեցիս՝ սահմանեալ էր ժերակուտին (օգոստ. 19) զեղջել զհարկ մետաքսի բերելոյ ընդ ցամաք, (որպէս յաճախ առնէին Հայք), և հաստատեալ զնոյն վճիռ յամի 1589 (դեկտ. 29): Իսկ զարդիս ի հաստատել դաշանց ընդ Եւրոպայս և ի յաճախել նորոց Ջուղայեցոց մետաքսաբերաց՝ նոր օրինաք և վճիռ ուր յամի 1614 (Յ մարտի, 2 մայիսի և 10 յուլ.) հաստատեաց զազատութիւն կամ զԹեթեւութիւն հարկի մետաքսի բերելոյ ի Պարսից, կամ որ ընդ Սպալատոյ քաղաք Գաղմատոյ 1:

Առաւել եւս հաստատութեամբ և հռչակաւ վճուեաց Հասարակապետութիւնն յ7 սեպտ. 1623 ամի, զոր և բազում անգամ վերահաստատեաց, Թեթեւացանել վասն Հայոց և Պարսից զբաժն զոր անկ էր վճարել առ Պայլս (Baillaggio), և սահմանեաց վասն նոցա 20% դուկատ ըստ արժէից, և գունցից Գամակոսի կամ Բերիոյ 10%: Իսկ ի մուծանելն ի Վենետիկ՝ երբեմն ընդ Զմիւռնիս և երբեմն ընդ ցամաք, ոչ ըստ արժէից՝ այլ ըստ վարկի մաքսել 20%, և երբեմն 1 1/2. նոյնքան կամ աւելի ի հանելն ի Վենետիկ. և այս չորրորդ մասն էր հարկին՝ զոր յայլոց պահանջէին 2, Հակ մի մետաքսի (36

պարթման) ըստ տեսակին համարէր կշաւ 8 կամ 600 լիպրայ 3, և զին 850 կամ 600 դուկատ 4: Ի դէպ է անհամար ասել զքանակ մետաքսի բերելոյ ի քաղաքս յայս և ի Լիվոնոյ. (ի յետնումս յիշի ուրեք բերեալ յամի 1640՝ հակ կամ ծրարս 900, զնով 500, 000 վահանադրամոց (սկուտ), 906 հակ՝ յամի 1693-4. իսկ ի Վենետիկ յամս 1632-8 հակք 2452 = լիպրայք 713, 788, որոց սակ մաքսի եղեն 41867 դուկատք. յամս 1640 - 58, հակք 5225. յամի 1652 հակք 1223. յամի 1653 հակք 710. յամի 1668 միայն մի ի վահանականաց (Գրիգոր որդի Միկրտումի) բերեալ էր հակս 810 5:

Հնագոյն ցուցակ մի Վենետոց նշանակէ ամ ըստ ամէ զքանակ մետաքսի բերելոյ ընդ երկիր Ստորոց, ի յուսիս ամսոյ 1590 ամի ցփերբ: 1613, և գումարէ միահամուռ հակս 23, 724. (ընդ այս միջոց ժամանակի՝ յամի 1608 յիշին երեք Հայք Խօճա Ապան, Յովհաննէս և Անդրէաս բերեալ հակս մետաքսի 25 = լիպրայս 6090): — Եարտէն ի կէս ԺԷ դարու ասէ ամի ամի 22, 000 հակս մետաքսի հանել ի Պարսից երկրէ ի վահան. յայտ է զի եթէ ոչ բար ալ մեծ մասն ի ձեռն Հայոց:

Ժ. Պեսպէս նիքք վասնառ Հայոց ի Վենետիկ. — Ի գրասանս այսպիսեացս հետաքննողաց կարգեմ ցուցակ մի 6 պէսպէս աղիսամողիս զոր բերեալ էր Հայոց յամս 1709 և 1710, ի վերջտասան նուագս, այլ և այլ նուաք, յորում մի առ մի նշանակի քանակ և զին նոցին ըստ վարկի, և սակ բաժին 3%, համարելով առ 100 դուկատ արժէից՝ կրոչ մի, որ է դոյզն ինչ աւելի քան զՖրանց 7:

1 Յամի 1639 վահանականք ոմանք Քլամանք խնդրէին անմաքս անել ի Վենետիկ մետաքս, զոր բերէին անգր ամենայն ազգք, Բոյս Բանաստեղծ Հոյս, սանն:

2 Վասն մետաքսի բերելոյ ի Հայոց ընդ Կ. Պօլիս, վճուեալ էր յ' 18 հոկտ. 1611, վճարել ի Վենետիկ միջոց զ Cottimo անուառնեալ սակ՝ զսահմանեալն վասն Լանդոնի:

3 Բայց նորք կամ գաւառ մետաքսի ծրարն կշաւ 278 լիպրայ. ըստ այսմ Գամակոս Գուլնազար յամի 1667 վասն երկու հակից 356 լիպրայի՝ հատոյց մաքս 14 դուկատ, 20 կրոն:

4 Յայլեւայլ դատաստանական գրուածս 1668 ամի՝ ուրեք յիշի զին լիպրայ մի մետաքսի 2 դուկատ. այլուք՝ զին 9 հակից՝ 5820 դուկատ:

5 Ի նմի ամի բարձին ի Վենետիկ Զուլայս 5703 հակս. զին սոցա և մետաքսին միտումուռ համարեցաւ աւելի քան 4, 500, 000 դուկատ, որ ըստ նիւթական արժէից է աւելի քան 4, 500, 000 Քր. այլ ըստ իսկական կամ դոյական արժէից՝ Թերեւս կրկին:

6 Տես ի անդիպակայ էջն (448):

7 Ձատ ի բամբէն 30% պաշտօնեալքն առեալ էին վասն այսպիկ սակ 5927: 6. և զարձեալ աւելի 2767: 6. որպէս նշանակի մի առ մի, այլ ոչ զիտեմ յինչ կայի կամ յիրաւունս. որովք միտաւ մուռ սակ 632, 000 արժէից վահանոցն՝ լինի 40, 838 դուկատ: Բայց Հայք ի բողոքի իւրեանց զոր հառն առ դուքոն յայսմ ամի՝ միայն զերբեմն յիշին զսահմանեալն ինքեանց յ' ամէ 1636. այլ զանգառան զի մաքսապետքն փոխանակ 300 լիպրայ համարելոյ զհակ մետաքսի՝ իբր նենդեալ և բարդեալ գրելով փոխանակ 550 դուկատ վարկի արժէից՝ 1000 դուկատ վարկանէին, և ըստ այսմ յաւելեալ պահանջէին զբամբն 30% ի մուտան, նոյնչափ եւս յելան. այլ զի ոչ զամենայն վահան արտաքս հանէին Հայք՝ շտապանց զկէս բամբ միջոցն (8 կրոն) պահանջել յելան, այսինքն 4 կրոն առ 100 դուկատ: Պեսպէս Հայք զի լիպրայ մետաքսի արժէր 36 կամ 37 կրոն և առ մէն հակ սահմանեալ էր հատուցանել 44 կրոն. յիշե-

ցուցանեն և զայն՝ զի յորժամ այդ օրէնք սահմանեցան (յամս 1623-1636-1669) բարգաւառեալ էր վահանականութիւն և առատութեամբ բերէին, իսկ զարդիս (1710) յոյժ նուազեալ: Եւ յետ երկար վիճից ընդ մաքստարսն, Պետութիւնն վճուէ (1711, ապրիլ 6) ընդգէմ սոցա և ի նպաստ Հայոց:

Իսկ Անգլիական սակոյ՝ որպէս հակ մի համարեալ էր կշաւ 500 փոքր լիպրայ, զառաջինն սահմանեալ էր մաքս 18 դուկատ ի մուտան, և 10 առ 0% արժէից՝ յետն ի Վենետիկ. այլ զի ժամբ Թուրքացաւ պա, վճուեալ յամի 1637 և 1661 հատուցանել 6 դուկատ ի մուտան և 6 յելան. յետոյ յամի 1684 յորինադրելն առնուլ դուկատ մի առ 100 լիպրայ, բողոքեցին Հայք և օտարք, ցուցանելով մի առ մի զժախտ նանաղարի և մաքսի զոր առնէին, ի Զմիւռնիոյ բերելով ի Վենետիկ՝ նուառ, անտի ընդ ցամաք տանելով յԱմստերդամ կամ յայլ քաղաք Հոլանտայ, առ մէն մի հակ լինէր 70 դուկատ. (ի Վենետիկ յԱմստերդամ 27 դուկատ). իսկ ի Զմիւռնիոյ ընդ Լիվոնոյ բերելով և տանելով անգր (յԱմստերդամ) 62 դուկատ լինէր բովանդակ դուկատ ծախուց: Զայսոսիկ քննեալ ժերակուտին՝ շնորհեաց Թեթեւացուցանել գոսկ մաքսին. բայց և յետ այբր դատանին նշանակեալք, ի հաշիւս այլ և այլ վահանականաց,

	Հակ	Լիպրա	Մաքս
1685	2	350	5: 12
1687	2	370	3: 17
1689	63	20,808	208: 2
1690	17	592	52: 22
1690	53	16,350	163: 12

Ի հաշուէզիրս էլի և մտի պաշտօնեից վահանականութեան՝ նշանակի յամս 1693-4 ի Զմիւռնիոյ բերեալ ի Վենետիկ սակ

Սիրողաց թողցի համարել զտարեկան բերս մետաքսի ի Հայոց միայն յայս քաղաք (Վենետիկ), (ի վերջին քառորդէ ԺԶ դարու ցառալին ԺԼԻ, յորում միջոց ժամու նակի գտի զայստսիկ նշանակեալ), և զուժարել միլիոնաք զգին, զսակ և զմաքս, ըստ վերոյնշանակելոցս, այլ և զլահ վաճառականացն և զթագաւորին Պարսից. զի յետ այնր՝ թուի վասն զարգացման և մրցման Անգղիացոց և Հոլանտաց, և վասն յաճախելոյ շերամադարմանութեան յիտալիա, և ի սակս թուլութեան թագաւորաց Պարսից և շարաշար վարչութեան, թուլացեալ և Հայոց յայսմ շահարբեր տուրեւառէ. տակաւին ժրութեամբ բերելով զազգակից մետաքսի, զՅփսի, և զՍտեռանկիստիան, որ հնազոյն և յայտնագոյն քան զմետաքսին էր շահավաճառ՝ ի ձեռս Հայոց, և անդստին յաւուրց թագաւորութեան տան նոցին Ռուբինեանց, ի նրբաթել ստեւոյ ուլոց իւրեանց, և ի հիւսուածոյ գործարանաց Եջնկայ, որոց ձեռագործք, կամ ձեռահիււրք Bugram, և Bocassini կոչմամբ յ՝ ԺԳ դարէ ցվերջ կոյս անցելոյ գարուն՝ հռչակեալ են ընդ բովանդակ իտաւ.

իտա, այլ և յԱնգղիա և յայլ եւս աշխարհս Եւրոպոյոյ: Ոչ պակաս ի մետաքսէ՝ օրէնս և հրամանս կարգեալ և կրկնեալ էր՝ Հասարակապետութեան Վենետիկոյ և վասն այսր նիւթոյ, և սահմանեալ մաքս 1% ի քաղաքին. որպէս և թագաւորք մեր յիւրեանց ժամանակի կարգեալ էին սակս Վենետոց և այլոց օտարաց վասն այսր նիւթոյ և Ասուի:

Միւս եւս յաճախարբեր նիւթ վաճառոյ Հայոց յայս քաղաք (Վենետիկ) և յայլս՝ էին կերպասք և ոսկերիչք կամ այլ ազգ յիպսիք յաւանակոյս<sup>1</sup>. ի սոցունց և յոսկի բիրդանց՝ միայն յերիս ամս 1740-3 տուն մի վաճառականաց (Նոյրի-Շահուսեան) հանեալ էր ի վաճառ աւելի քան զմիլիոն մի ֆրանգաց ժամանակին. և յամս 40 (1703-43) երկրքին շահընկեր տունքը<sup>2</sup> վճարեալ էին մաքս (արծաթի դրամովք ժամանակին) աւելի քան զ՝ 130,000 ֆրանգ. և զի այնքան թեթև տեսաք զմաքսն, ապա մեծ էր յոյժ և գրեթէ հարիւրապատիկ զուժար առեւտրի նոցա. և ըստ այսմ անբաւապատիկ մարթ է ստել զմիահամուռ այլոց եւս վաճառականաց Հայոց. ո.

Նիւթ	Հակք	Կշիւ (լիպրայ)	Արժէք (դուկատ)	Բաժ 3/100
Մետաքս . . . . .	214		117700	558
Մում . . . . .	267	530000	91000	455
Մանած (Filladi) . . . . .	870	870000	139300	696
Բամբակ . . . . .	1890	945000	94500	473
Ստեւ ուղտու . . . . .	235	225000	36000	180
Փափէ . . . . .	90	45000	11350	56, 6
Կտակեղէն (Tollarie) . . . . .	90	53350	33750	168, 18
Մորթ . . . . . Հաս	10000		10000	50
Փղթոր . . . . .	50	50000	35000	175, 12
Խաշնդեղ . . . . . Արկղ	75	23500	28125	141
Սակամոնի . . . . . Մրար	44	4400	5500	25, 12
Ստեւ այծենի . . . . .	34	10300	5100	28, 20
Մաղթ (Փաղբան) . . . . .	24	7200	6000	30
Փոճազմ . . . . . Մրար	10	2000	4000	15
Աղուհնակ. Ոյլադեղ (Semenzina) . . . . .	20	6000	2000	10
Ափիոն . . . . . Արկղ	22	4000	4400	20
Ասր . . . . .	50	25000	2000	10
Պիտակ . . . . .	7		420	2, 4
Միաման (Pippe) . . . . . Արկղ	9		800	6
Սեկ (Cordoani) . . . . .	16		1500	7, 12
Լեղակ . . . . . Արկղ	6		5000	25
		Գումար	633, 245	3130, 84

ւոյ հակա 1192, իսկ ի Զմիւռնիոյ ի Լիվոնոյ՝ հակա 2900: Գարձեալս յ՝ ամէ 1680 ց՝ 1690 նշանակի բերեալ 54,000 լիպրայ սակւոյ, որոյ մաքս 842 դուկատ:

Բամբակի՝ որ մի էր ի բազմամթեր նիւթոց բերելոց այսր ի մարտոց, երեւի ի ցուցակէք զին՝ դուկատ մի առ 10 լիպրա, մաքս 20%: Ի շահաբաժանս յայսմ յեղանակի յիլին Ստիվոսո ոմն Բաթիլոնոց: որդի Յոսեփի՝ բերեալ 4 հակա շամբակի յամի 1595, և Ուզուրու որդի Յովիթոյ՝ 9 պարկ յամի 1605:

1 Նահապետ Գոթալուր (1667), վասն կերպասոց և ոսկերիչաւ կաց 23,000 դուկատից՝ վճարեալ էր մաքս 1574 դուկատ: Ստիվոսո

նոսի որդոյ Յովիթոյ այրեցան կերպասք ի Մարա, 60,000 դուկատաց, որպէս և ի նաւաբեկութեան (յամի 1683) կորեան վաճառք Հայոց 80,000 դուկատաց: Յայսմ յեղանակի նազոյն յիշատակ անկերական ցփսոյ բերելոյ ի վենետիկ դասնեմ յամի 1590. յամի 1574 Ատոնիւս ոմն երթալով ի կ. Պոլոց ի Լէւո, առաքէ ի վենետիկ, ի ձեռս արքանեի իւրոյ՝ 18 տախտակ (Tavola) ցփսեաց:

2 Տես զոր ասացաք զՄահուսեանց ի կարգի տեղադրութեանս յէջ 300-4: Գտանին ցարդ տղազրեալ փուրթիք կամ դառաք նոցա վասն վաճառական խնդրոց:

րոց և ի յետին նուազութեան ժամանակի ԺԸ դարու՝ էին տունք իբրու 30, ի ծովամայր քաղաքի աստ, յորմէ յամի 1733 — 88 ի բաց մեկնեցան 12 տունք, այլ մինչեւ ցերս դարուն (ԺԸ) կային մնային տակաւին նուազունք ոմանք:

Միւս գլխաւոր չափաբեր վաճառք Հայոց ի Վենետիկ և յայլ մեծամեծ քաղաքս էին, Դոնար ակունք յաճախ ի Հնդկաց աշխարհէ բերեալք. յիշի երբեմն (յառաջ քան զ1639) բերեալ նոցա ընդ Պարսից ոմանց և Հնդկաց, ականս 300,000 դուկատաց, որոց մաքս (9%) եղև 18,000 դուկատ: Յիսուսեան Հայրն որ յամի 1688 վկայէր վասն յուլովութեան բեռանց մեաքսի զոր բառնային Հայք, յաւելու զի մաքսիւ նոցին կուրացուցեալ զաչա Թուրքաց և Պարսից՝ ազատ անցուցանէին զկարկենհան, զԱրամանդ, զԳոնազմ և զայլ գոհարս բերեալս ի Պեկուայ և ի Կոլզոնտայ. և էին որք մի կամ երկու մի լինն արժէից ականս Թագուցանէին ի գրպանս իւրեանց: Ճոխագոյնքն յեկս և ի բնակս վաճառականաց Հայոց ի Վենետիկ, Շահրիմանեանք յելս կոյս ԺԷ և ցկէս ԺԸ դարու ի վաճառոյ ականց ստացան զհաշակեալ փարթամութիւն իւրեանց, որոց հայուեգրոցն՝ ականատես եղաք խիտ առ խիտ տող առ տող նշանակաբանուանց գոհար ականց: Մանօթ է մերայոց և բազում անգամ յիշեալ մեծագին գահն արքայական, զոր ի ձեռն Զաքարայ որդւոյ Սահրատայ Շէհրիմանեանց ընծայեցին Հայք յամի 1660 Ալեքսի կայսեր Ռուսաց, յորում յեռեալ էին 2100 ընտիր ընտիր ակունք և երեք շարք մարգարտաց: Պատուական քարանցս իբրեւ գուգակից ընկեր է և ծովածինն Մարգարիտ. զորով չէր իսկ մարթ գանց առնել Հայոց յաճախելոց ի Մոցն Պարսից՝ դարուք յառաջ քան զՇահ Աբաս, և որ անդառին յաւուրս Ռուսիանց մի ի չափաբեր գոյից նոցին էր յԱյաս: — Ընդ մարգարտոյ յիշի երբեմն և Ռուստ բերեալ ի Հայոց, (որպէս յամի 1688). այլ մեծ եւս շնորհիւ, զի ասի Հայոց ուսուցեալ ի Վիվոնոյ՝ զարուեստ յղկելոյ և յարդարելոյ զայն:

Անբաժ է ի յիշատակէ Հնդկաց և ազգ ազգ Համեմանց նորին, զորոց ի միջին գարս վկայեն իտալացի գրբիչք՝ եթէ բերեալ լինէին ընդ Ազախ, այլ ճարտարութիւն Թազաւորաց Հայոց փոխեաց զճանապարհն, և տայր բերել ընդ Տրասիլոն. իսկ յայսմ նորոգեալ դարու վաճառականութեան (ԺԷ-Ը) յորում կանխեալ Լուսիտանացիք և այլք զբաւեալ էին զբազմադաչ զայն բերս՝ և մուծանէին յԵւրոպ, աստուստ եւս բառնային Հայք և տանէին ի Ռուսաստան և ի հիւսիսակողմանս:

Ընդ մեծաշահ և պիտանի վաճառս յիշելի են և Մորթիք և Մոշտակք, զորս երբեմն Վենետք երթային խընդրել ի Կլիլիեան Հայս, և ի յետին դարս՝ Հայք և այլք յարեւելեայց բերէին այսր, ազգս ազգս Սեկի (Cordoani), Օդենի, (Moltoline կամ Moltoni), Արչասենիս (Cuoi

bovini), և այլս նմանիս: Յամի 1660 ազերս արկանելով դքսին յիշեցուցին Հայք, զի ամի ամի 80,000 դուկատ շահ լինէր նմա ի մաքսէ մորթեաց: Յազգէ ազնուազոյն մորթեաց կամ մոշտակաց յիշին յամի 1644 Ալքիսենի և Կատոնենի, բերեալ ի Գեորգայ ո. Յակոբայ Բերիացւոյ 2, — Ընդ մորթեղինաց ի դէպ իցէ արգեօք յիշել զընկերակից նոցին՝ այլ զոչ նմանի, զՄշխարտուն և զՄոշկ 3:

Մի մուսացի ի շատ բերելոց նիւթոց և Լեղակ, որ երբեմն հակիւ յիշի և արկեղբ, և երբեմն կշուով (իւպրայի). յառաջնումն նուազի, յամի 1618, յորում 13 Հայք, (որոց գլխաւոր խօշոյ Մատտար, շիսանտար գրեալ յիտալականն, Giandur), բերեալ էին ի խորոց Պարսից 120 արկեզս, (և զի Թերեւս վասն շատութեանն ոչ համարեցաւ յարգի և ստիպեցան զիւրազնոյ վաճառել), խնդրէին բերողքն զի շնորհեսցի նոցա զմասն ինչ գնոյն իբրեւ 1000 ուէալ՝ ոչ փոխանակութեամբ ընդ այլ վաճառուց, այլ իսկական դրամով՝ հանել տանել ի քաղաքէն: Ի սկիզբն 1636 ամի Ղազար Միթիդ (Մուրատ) բերեալ էր յայսմ նիւթոյ ի Վենետիկ, և եզեալ ի գրաւ վասն 1000 դուկատ պարտուցն առ Յովն ո. Յովսեփայ: Յիշի դարձեալ յամի 1663, բերեալ Հայոց առասուրբեամբ 2000 լիպրայ:

Դարձեալ չափաբեր վաճառ ի վաղուց հաշակեալ ի բերս Հայոց, որ ի 1575 ամէ ց'դար մի ողջոյն յիշի աստ (Վենետիկ), է խաշնրեղն, վասն որոյ յամի 1630 հատուցին մաքս 110 դուկատ. յամի 1643 բերեալ էր ուրուք 3450 լիպրայս. և այլ ոմն յամի 1668՝ զնով 814 ունկար (ոսկեաց), որ է առաւել քան զ10,000 Ֆր.: Նախ քան զնոսա Լամի ոմն յամի 1602 բերեալ էր 444 ուէալ արժէից քանակաւ և զայլ եւս չափաբեր նիւթս, Անգոմատ կամ Մադր, Խեժ, (Ոչխաղեղ Staphysagria), և այլն, որպէս է տեսանել ի վերոյիշեալ ցուցակիդ:

Այլատեսակ վաճառ մի եւս և կարի պատուական բերեալ ի Հայոց յայս կողմն իտալիոյ, է Մոմ, երբեմն դեղին, և յաճախ գտեալն և սպիտակ, Թերեւս յետ զիւտի արուեստիս ի ձեռն Մովսիսի Կարողիկոսի յառաջ քան զյաջորդելն յաթոռն. զի յիշեալ մոմաբերքն (հանդիպեալք ինձ ի գիրս) են յ' ո և յ' 9 քառորդի ԺԷ դարու, աւելի քան 400 հակից կամ բեռանց (ոչ գիտեմ որքան և որպիսի կշուով). վերայիշեալ մորթեբեր ազերս արկուք մի յերից գլխաւոր բերոց իւրեանց անուանեն զՄոմ, ընդ Մետաքսի և ընդ Մորթեաց. յորմէ յայտ է թէ և բերէին շատ և մեծաւ շահիւ: — Աւելորդ համարիմ յիշել կամ երկրորդել զայլ եւս ազգս աղիտամաղիս բերեալս ի Հայոց այսր (Վենետիկ), ի Տոսկանա և ի Գեներուս. այլ անկ է յիշել զի ի դարձի իւրեանց՝ ոչ միայն զգին վաճառելոցն տանէին ի սկզբան վաճառականութեան իւրեանց, աւելի քան զ800,000 վաճառագրով դրամ զատ ի նիւթոց, ասէ Դաւեռնիէ (Դ. Ք), այլ և

1 Il y a tel Arménien qui passe impunément ayant dans sa poche des pierreries pour plus d' un ou deux millions.  
2 Սեֆեր Սեկի յամի 1620 բերեալ էր ի Վենետիկ Օդենիս և այլ ազգս մորթեաց:  
3 Մերտէ Փերտէ յամի 1635 առաջեալ էր ի Փերտենիս 79

Չկապորտս, 63 ունկի կշուով: — Յովն Լուսիտանի լեւուց յամի 1634 վաճառեաց 200 Չկապորտս, յորոց զտեցաւ 45 ունկի, մէն 30 դուկատ արժէիք, 9 ունկի եւս ոչ ընտիր, մէն 8 դուկատ: — Յովսեփ Գորտիլէ (1671) բերեալ էր ի Հնդկաց հաչ մի Չկապորտս և աման մի մեծ Ատիտուց, (Zibetto, Civette).

պէսպէս վաճառու և ձեռագործս, մանաւանդ հիւսուածս Դիպակաց և անկուածս, Չուխայս Անգղիոյ և Հոլանտայ, Ասրակի, Հայնիս 1, Ակնոցս և Ռադանս Վենետկոյ, պէսպէս Չարդս, Ժամացոյցս, Սար, Օձառ, Միսանելիս, Դաւնակս և նմանիս. իսկ յաննմանեաց՝ Հնդկանաւ և որձառս սրարարեացս, զոր Հայք ի Վենետկոյ ուսեալ մուծին ի Պարսս, ի մեծ հաճոյս քմաց սոցին:

Յայսմ ամենայնէ ասացելոցս զվաճառականաց Հայոց եկելոց ի Վենետիկ ի նորագութեան վաճառականութեան օժանդակութեամբ Եհաբարայ, այս ինչ քաջայայտ լինի. նախ, յալովութիւն համազգեացս եկելոց յերեսին դարս ԺՁ-Ը, յաւէտ ի միջնումն, բազմաց անդրէն ի հայրենիս իւրեանց դարձելոց, այլ և ոչ սակաւուց տուն և բնակութիւն և վաճառանոց հաստատելոց անդ 2, ա իւսնացելոց և մեւելոց. որոց միանգամայն աւելի քան զ'2500 անուանս գտեալ և ցանկեալ է իմ իսկ գրուածք զպէսպէս խնդրոց, առից և գործոց նոցա ի դիւանս քաղաքիս կարեն գումարել բովանդակ հաստորս մեծամեծս քան զմատենան որ առաջի կայ ընթերցողիդ: — Բ. Անթիւ գումար արծաթոյ և ոսկոյ՝ զոր չահեցան և մեծացան, մեծանելով և հանելով զվերոյի

չեալ վաճառու և զայլս: — Գ. Շահ և օգուտ զոր գործեցին Հայք շահատէր և մեծահարուստ հասարակապետութեանն այնմիկ. որ եթէ առ անբաւ և աշխարհաքարոզ մեծութեամբ և հոխութեամբ նորին՝ ոչ էր մեծ ի դարս պայծառութեան իւրոյ՝ մինչև ցվերլ կոյս ԺԵԽ, այլ յայնմհետէ՝ յորում սկսաւ նուազել Վենետիկ, և յետ գիւտի Ամերիկոյ և Գլխոյն Բարեյուսոյ, նուաճման Արարոսի յՍամանեանց և աշխարհակալութեան սոցա, և բարգաւաճանաց Սպանիացոց, Անգղիացոց և Հոլանտացոց, այլ և Տոսկանացոց, արդարեւ մեծ եղև օգուտ և օգնութիւն՝ զոր Հայք գրեաթէ անտէրունչք և անթիկունք, ինքնարոյս ճարտարութեամբ և հանճարով իւրեանց մատուցին. և յանգէտս իսկ մերայոցս՝ քաղաք անգամ յատենի մեծամեծաց և ծերակուտի նոցին՝ բերանով և գրով դքսին, աւագորերոյն և պաշտօնէիցն, դաւանեցան և հուշակեցան օգտաբերք, նրախատարք, հաշտարիմք, այլ և միակ յոսին ունող զվաճառականութիւն Վենետկոյ. վասն որոյ և ամենայն մտադիր մարդասիրտքեան, պաշտպանտքեան, արգանատարքեան արժանաւորք 3: Այսոցիկ վկայք լուինք արձանանան դիւանք նոցին յ' ԺԳ դարէ և այս, ընդ այլոցն ամբա-

1 Յամբ 1635 Պերրո Մոնոլ դեհալ էր նայելիս 111 դուկատայ. Թերեւս նոյն Պերրոս է որ յիշէ և յամբ 1668 զնոզ նայելեաց: Ամբ յառաջ (1667) Յմբ. Եսթի զաղա ի տան իւրում սայր գործել նայելիս, վասն որոյ և ի դատ ձգեցաւ իսկ ի միւսում ամբ (1669) Գրիֆոր ո. Առաքել պատուիրէր 1800 ապակիս (da ebreo) նայելեաց՝ մէն 2 լիւրոյ զնոյ:

2 Նշանակեալ տունք վաճառականաց Հայոց ի Վենետիկ նախնին, (Թող զմոռացեալս), յամս

- 1388 — 1750 Գերբաք Միքման
- 1650 — 1757 Շահմանեան
- 1612 — Մարդոս Շահնազ (կառուաւաճառ.)
- 1697 — 1800 Շէշբմանեանք
- 1663 — 17.. Աթանահ
- 1665 — 1780 Ակահ
- 1667 — 1712 Սիւսան (Պերրոս)
- 1690 — 1737 Մարտիրոսեան (Մարտին իտալացոյ)
- 1703 — 1750 Նուրի
- 1716 — 1800 Մանուկեան
- 1690 — 1713 Զանդ Աւետիք Աղամիրի
- 1650 — 16.. Ռուբան
- 1667 — 1700 Փանոս Շամբեկեց
- 1633 — 1695 Գուշաղար Նաւապետ
- 1653 — 1730 Վէլիւան
- 1670 — 1742 Դաւթեան Ստեփան (վանեցի)
- 1666 — 1789 Եսարի Երէջանեց
- 1690 — 1713 Նաւապետեան Ղափանեցիք
- 1718 — 1738 Առաքել Քարաձեկեց Շոտթեցի (տես յէջ 337)
- 1717 — 1757 Նորատունկեան
- 1732 — 1789 Աղտուկան (Գրիգոր)
- 1742 — 1800 Աւերսանեան (կ. Պուլսեցի)
- 1735 — 1753 Նեկրի (Մեքսիկէ)
- 1746 — 1830 Սեղբոսեանք
- 1733 — 1780 Աղամեան
- 1712 Միսանեան (այժմ ի Տրեւս)
- 1741 — 1857 Գոռվալիկ
- 1729 — 1779 Աբելեան
- 1707 — 1720 Բալասան
- 1740 Աւան (Լիոնի) Բարսել
- 1689 — 1711 Պապոյ Զուլպեցի

- 1744 — 1780 Այսէ (Իբրահիմ)
- 1750 — 1769 Բարակ (Իսալատուր)
- 1750 — 1810 Բուզպեան
- 1761 — 1800 Ճիւրոյի (Ֆիկեր, Figher)
- 1785 — 1826 Դրապուռն իտալի (Մեքսիկէ)

3 Անգլոսին յամբ 1591 պատուիրէր պետութիւնն առ դուքս և պաշտօնեայս իւր խնամով վարել ընդ Հայս. Usate ogni conveniente cortesia et buon trattamento, per beneficio del commercio.

1625 (յուլ. 13). « Յամենայն ժամանակի յանձն արտրեալ են շայք Հասարակաց հաւանութեամբ, վասն անշարհադ առեւարի նոցա ի քաղաքիս յօգուտ հասարակաց ». Questa nazione Armena è sempre stata per Publica deliberatione raccomandata... Essendo grandemente in proposito per ogni rispetto di tener consolata questa Nazione, e di prestarle ogni giusto et conveniente sollievo per il continuo traffico che tiene in questa città con publico beneficio.

1632. Հայք և Պարսիկք դրեաթէ միակ տածողք վաճառակաւ նութեան յԱսորիս. Armeni et Persiani in particolare che tra forestieri sono li più frequenti, e quasi solo che sostengano il negotio in quelle parti.

1640 (օգոս. 28). Երախտաւորք և դրամաբերք. Questa Nazione (Armenia) benemerita, e che traffica summe rilevanti di denaro.

1643 (ապր. 24). Il consolare però questa nazione che frequenta il concorso di questa città con negotij et di Sedi in particolare, sarà effetto del Publico servitio. « Հասարակաց օգուտ և արդաւտանել զՀայս որք յանխեն դրերս վաճառաց ի քաղաքիս, մանաւանդ զճեռաքիս »:

1651 (յուլ. 7). Acciò il negotio de Armeni, che si può dir unico in questi tempi della città, possa maggiormente confluire, et essi esser prontamente espediti. « Յայսմ ժամանակի դրեաթէ Գուշոյց ստեղծուր է ի քաղաքիս, զոր արժան է եւս յորդորել, դիւրեւով նոյս »:

1653 (օգ. 13). Questa Nazione che con le mercancie apporta considerabili beneficij a questa città.

1654 (փետր. 27). Hora mò che tanto s'è avanzato questo comercio (di Sede), et che hanno pur li stessi Armeni formato qui più di una Casa, con proposito di stabilirvi

րեալ և զմուրհակս և զպատճենս գործոց և գործակաւ լաց իւրեանց և Հայոց . և եթէ ներեսցի ասել, քարինք իսկ հոյակապ ապարանից նոցին, և սեանց գերահռչակ և անզուգական կաթողիկէին՝ Սրբոյն Մարկոսի՝ լուռ . թեամբն ազաղակեն, յ' 300 ամաց հետէ կրելով զա . նուանս վաճառարեր Հայոց, և մնացուածք արձանազք . րաց քնարանաց նոցին ի Ս . Գեորգ Մեծի կղզւոյ և յայլ . եւայլ եկեղեցիս, և նոյն ինքն Տոն և Եկեղեցին Հա . յոց (Ս . Խաչ) հաստատեալք ի կէս ԺԳ դարու, և յետ այնր նորոգեալ (յամս 1496 . 1579 . 1689) . և թէպէտ առ մեզ գրաւեալ է սերունդ հայ գաղթականին, և սա . կաւ ինչ նշխարն մնացեալ՝ իտալացեալ է լեզուաւ և ա . մենայն հանգամանօք, և վաճառականութիւն Հայոց բարձեալ բնաւին, սակայն եկեղեցի նոցա անընդհատ պաշտի ցարդ հայրենի ծիսիւ և լեզուաւ, սպասաւորու .

negotio. « Ոչ սակաւ բազում տունս հաստատեալ է Հայոց ի քա . յ զաքիս ի պարտաւումս առևտրի, մանաւանդ մեծաբնի : »

1653 (սեպտ . 20) . Vediamo in ragione de' Armeni in bre . ve spazio di tempo esser capitato in questa città Sede, Cera ed altro, per somme considerevolissime. « Բազում յոյժ » զնոց մթերս Բարսիլոնէ, Բարսիլոնէ և այլ նիւթոց բերեալ է Հայոց ի » սակաւ մամանակի : »

1658 (յուլ . 13) . Nella congiuntura di tempi presenti, che il negotio di questa città è molto ristretto, e questa Nazione lo *sostenta in gran parte*; il sforzo delle Sedi et del Levante essendo in sue mani, con beneficio de' Datij della Serenità Vostra, d' Intra et d' Uscida. « Վաճառք մե . » ապաքի և Արեւելից ի մեռա Հայոց գործով գրեալ է նաքս զմեծ » մասն առևտրի վենետիկց պէնդ ունին, շահ մեծ բերելով ի մար . » սէ յիւս և ի մեռա վաճառելեացն, ՝ Ջոնի բան հաստատէ և վճիւր . ժերակուսին յ' 8 օգոստ . սակելով ի ծագաց նուաւորաց գալ Հայոց և յոսին պահել զառևտուր քաղաքիս . Il negotio è molto ri . stretto, e viene in gran parte sostenuto dalla Nazione medesima .

1660 (նոյ . 6) . Il concorso della quale (nazione Arme . na) deve esser facilitato, per il riguardo di publico profitto. « Պարս և յորդորել զգաւաւս Հայոց յօգուս հասարակաց » շահու : »

1664 (ապր . 2) . Alla Nazione (Armena) *molta benemerita* deve procurarsi ogni aggiustato sollievo. « Առ բազմերորտա » ազգ Հայոց գիւր առնել յամենայնի : — Նոյն վկայութեամբ յառաջ քան զամս ինչ (1657, նոյ . 22) վճիւր լինէր ապառել զմեծ Յակոբ Գալստիոսի թիւոց, վասն երախտեաց ազգին՝ որ օգուս է հասարակաց . Riguarda anco il pubblico servizio il consolar Nazione tanto *benemerita*. Յետ ամաց (1671, մայ . 4 . 16) նոյնպէս շնորհի պղում ումեք (Բազաասարայ) ի թիւ ար . զեւլլայ, վասն երախտեաց ռիւիլի ազգին . Nazione Armena molto amata dalla Signoria Nostra riceveva tale testimonio della publica predilezione verso di essa. — Այսպէս և յա . մի 1667 (յուն . 19) ներքին Յակ . Երաբոյ զթաղուստ նայելեաց ի մարտէ, քանզի պատճառ լինէր ծագելից արուեստին նայելա . զբոնութեան) :

1695 (յուն . 23) . Պաշտօնեայք վաճառականութեան յիշեցու . ցանն Դրոսին, զի առանձինն վճաք պետութեան նրախրեցան Հալք ի վենետիկ . արգաստակ զնոսս և յորդորել զվաճառա . կանութիւն՝ նոյն մի բան է . Questa è una Nazione che fu in . vitata al negotio di questa scala con decreti particolari dell' Ecc. <sup>mo</sup> Senato . . . con espressioni, che « Il consolare » e favorire gli Armeni sia medesimo che render maggior » mente copioso e fruttuoso il commercio . » Նոյնք դարձեալ յամի 1710 (մայ . 15) յիշեցուցանեն զի Հալք արժանաւորեցան և զափեյան՝ Երաբոստօրք կոչմամբ հասարակօրէն վկայութեամբ .

թիւամբ միանձանց ուխտին Մխիթարայ, զոր յամի 1717 . հաստատեաց սա ի փոքու կղզւոյ ուրեք (Ս . Ղազար) . որ և յետ մեծամեծ յեղափոխութեանց քաղաքական աշխարհի, բառնալոյ և Նիկիոյ հազարամեայ մեծապանծ և մեծահարուստ Հասարակապետութեանն այնորիկ, և ստուերակերպ իմն խուսափելոյ համաշխարհական վա . ճառականաց Հայոց՝ անբաւ զանձուք լցողաց զհրապա . րակ Ս . Մարկոսի, կայ մնայ աստուածային տեալու . թեամբ և Աստուածամօրն հովանաւորութեամբ, այս 170 ամք են, և բարգաւաճէ հայերէն դպրութեամբ և պաշտամամբ, յերկարաձգելով իմն և շարունակելով ըզ . ծանօթակցութիւն Հայոց և Վենետաց, զսկզբնաւորեան ընդ ԺԳ դարու, և գրեալ է անդադար հետեւեալ հաս . աւատուն և անհաստատ բնակութեամբ Հայոց վաճառա . կանաց և ոչ վաճառականաց մինչեւ ցաւաւորս մեր ՝ :

Meritarsi il titolo di *Benemerita*, come anche fù decorata con publici documenti. Երեւոյնս հաստատեաց զբան նոցա (30 օգոստ .) յաւելլով և զյոսիւր Ռիւիլի մ . Կիւր . La Benemerita e Predileta Nazione Armena .

1712 (սեպտ .) . Նոյն պաշտօնեայք թեւազբն ուղղել զՀայոց զի մի դազարեացին յառևտրայ՝ վասն խակաւորութեան ինչ զու . ցին Ջիւրաւիոյ, զի ի նոցանէ կախեալ էր շահ առևտրի երկրոսն նուաւանգասացս . Nazione da cui dipende il maggior sfor . zo del traffico di quella scala con questa piazza .

1719 (փետր . 26) . Տեսուչք ուսմանց որ ի համալսարանի Պա . տուոյ կային, ի խնդրի նայերէն ապազրութեան՝ Ազգ Երաբոս . տօր կոչին զՀայոս, (Nazione Benemerita), և օրինակս ուղղու . թեան՝ (Esemplari) զնորիկ Մխիթարեանս :

1742 . Պաշտօնեայքն ազալին զԴիւս Ալիստիոսի կ . զուրիցի նաբ . ասր ձեռարուեստ՝ չմեկնել ի վենետիկ, կարգել նմա թոշակ ամ . սական 12 զուկաս . և ի յանձն առնուլ նորս հաստատել զոր . ծարան նիւստածոյ և զուսուար կտաւեաց, շնորհ նմա պետա . թիւն 4000 զուկաս, և 6000 եւս ի փոխ . որպէս յետ տան ամբ (1760) որպէս նորա Արտիլ թոշակ ամսական 30 զուկաս, վասն նորոց գործարանին զանց պատե անկիւրական :

Եւ մեր ի վախճան Հասարակապետութեան յամի 1764 (մայ . 17) վկայեն Պաշտօնեայք Ներքին Հոգաբարձուք (Procuratori di Citra), ոչ միայն երախտաւորս այլ և օգտակարս պետութեան զՀայոս թէ եւ նուազեալ էին յայնժամ և սպա . Una Nazione quanto *benemerita* altrettanto *accetta et utile* alla Serenità Vostra .

1 Ոստատակելով իմն ընդ սանզուք մամանակի՝ մարթ է յետ բարձման աւերութեան Սիսուանեայց (1375), շարապարզա զաշ . նակեացն վենետաց համարել ի վենետիկ զՀայոսաւս յիշատա . կեալս՝ (յաւէտ) ի գիւտն սոցին, մինչեւ ցնչանակ Շահ Աբա . սայ, յորմէ և այսր յիշեցաք յուրով . որդիսք են ,

- 1375 Թոյմաս Եպիսկոպոս Հայոց Իսաւրիոյ .
- 1380 Եզրայր Աւետիք Օգոստինոս կարնեցի .
- 1394 Անտոն որդի Բարսիլի, եաւազն .
- 1395 Յովնանէս կաթաղի, կանամբի .
- 1414 Անտոնուս Աբրայիմ (Աբրահամ) .
- 1434 Պարոն Յակովբ որպէս իւրովք .
- 1469 Միքայ, զեսպան Ուզուն Հասանայ .
- 1471 Վաճառականք ծանօթք զեսպանաց վենետիկ .
- 1490 Մարտիրոս Եպիսկոպոս Մերտիոյ և Վրթանէս սարկաւազ .
- 1496 Ըսնասայ (Տիրասուր?) վաճառական .
- 1496 Վաճառականք նորոգաք Հայոց տան և եկեղեցւոյ .
- 1504 Վաճառականք ծանօթք Շահ Իսմայիլի .
- 1519 Գեորգ Թարգման Դամասկացի .
- 1523 Յակովբ Խաւիլի ծանուցեալ Հայ ապազրոյ .
- 1530 Զաքար, Սիմոն, Գեորգ Կ . Պուլեցիք .
- 1540 Մարկոս Ֆոտալլան որդի Գեորգայ Թարգման .



ԺՈՒ. Հայ վաճառականք յիտալիա եւ յարեատիա. — Գանգի վենետիկ՝ նոր Տիրոս և Սիդոն միջին դարուց սքանչելի եղեւ ընդ ամենայն աշխարհ, և ցամաքաբնակ Հայկազն ի յետին դարս սակում և արծաթով պնդելով զթուլացեալ թեւս ծովածին առիւծուն՝ գործ մի մեծ կատարեաց զանխակի, ոչ վրիպեալ ի սրաքնին աչաց յարգարարատ պատմութեան, յայս վստահացեալ՝ յերկարեցան բանքս զվաճառաչաւութեան Հայոց և Վենետաց, արժան է յետ այնր ակնարկել և որոնել զմերայինս յայլեալ քաղաքս և կողմանս մերձաւորս Իտալիոյ՝ յորս յաճախեցինն քան յայլ կողմանս Եւրոպիոյ։ Բայց յառաջ քան զայնոսիկ՝ ոչ անճակ վարկաւ նիմ ընդ Վենետիկոյ յիշել և զմի ծովեզերեայ մարզից՝ ընդ սորին իշխանութեամբ եղելոյ, ի հանդիպակողմն Ազրիականին (յարեւելս), զԴալմատիա, յոր անուն նախնիք մեր կոչեցին երբեմն զԼատինս և զԷզու նոցին, որպէս գրի և յաւետարանս (Ղուկ. ԻԳ, 38. Յովհ. ԺԹ, 20), յայտ է զի ծանօթագոյն էր նոցա աշխարհն այն ուրով և է պատճառաւ։ Ծանօթացան և վաճառաչակ քաղաքս նորին մերայոցս Զուղայեցոց՝ յայսմ յեղանակի, Բաղազա, Սարաւորոյ, Մարս, Մաքարաքս, որպէս և Ալպանիականքն Դարացոց, Ալունս, գուցէ և այլք։

Նախ քան զԺԷ դար երեւին ի Ռակուզա իտալատոր և Չատա (1588—91), առ ի թափել զպահանջ իւրեանց ի ժառանգաց Բրոչիտայ ուրումն։ Յառաջ քան զնոսս Ատանա Դովինիկ Հայ կարգէ զեղբայր իւր Գրիգոր ի նոյն գործ՝ յայլմէ պարտականէ Ռակուզացոյ — Յամի 1612 Հայք ոմանք բարձեալ վաճառս ի Ռակուզայէ բերէին ի Վենետիկ. անուանի հէնքն ծովուն Ռաքօք կոչեցեալք՝ կողպտոնն զնոսս ի նաւուն և զոմանս կառափնատեն։ — Այսան՝ մի ի նախահարց ծանօթ և ճոխ տոհմի այժմու Ալպրոնեանց՝ առաքէր անդր (1624) զՅակոբ ընտանի իւր, և ի վաճառ՝ Պղպեղ բարձեալ յԱնկոնայ։ Յամի 1652, Հայ վաճառականք 23՝ որոց վաճառք վտանգեալ էին ի նաւարկութեան առ Տալմոտտայ կղզեաւ, գործակալս կարգեն զՄոչրանում ո. Յովհաննու և զայլ ոք՝ առ ի խնդրել զինչս իւրեանց, և յետոյ խոտանան տալ զկէս նոցին յանձնառուին ի հանել զայնու սիկ ի նաւէ անտի ընկղմելոյ։ — Յիշին և այլք նման սոցին և յերրորդ քառորդի ԺԷ դարու. ընդ որս արժանի է յիշատակի վախճանեալն անդ ի Ռակուզա յամի 1665 Գեորգ, հաւ համանուան հոչակաւոր գիտուն բժշկի Պակրիվի մականուանելոյ իտալերէն, և թաղեալ յեկեղեցւոյ Դովինիկեանց։

Իսկ ի Սպալատորոյ յիշին Միլեսա Անկիարացի ո. Աւրա-

նայ յամի 1699, որ տարբերել անդր ի Վենետիկոյ Չուխայ նոնագոյն, և այլք յամս 1640. 1646, և այլն։ Անդ + էր ի սկիզբն 1678 ամի Մարգիս որդի Յովհ. Շատրուկ, որ յԵւրոպիոյ բերեալ էր անդր վաճառս յանձնեալս նըմա ի Մոչրանիկոյ ո. Թասաթեայ։ — Նշանաւոր եւս է ընդ գործակիցս Ռակուզայց Պարսկահայ ոմն ո. Մոչրատայ իտալական Բեռնարդին անուամբ, արուեստիւ նաւապետ, տէր Բարեյաչոյ կամ Անտարեր Մոչրք Ատոռատածիկն նաւու (S. Maria di Bonaventura), որոյ յիշի նաւարկութիւն ի Կորկիւրա և ի Մեսսինէ, յամս 1640—1, և խնդիրք կամ վէճ նորա ընդ Հայոց և Իտալացոց. պարտական գոլով սորա ումեք՝ (Գիլերային անուանեալ) պաշտօնեայք Վենետիկոյ գրաւեցին զգործիս նաւուն (1640). Իսկ նա երաշխաւոր կարգեալ ըզ-Գեորգ Գոքիլիոյ ծանօթ միջնորդ Հայոց, Թափեաց ըզ-գործիս։ Ի Դոչրացոց յիշի՝ զէթ հանդիպեալ՝ Յարուքիւն Մերձան Բաղիլեցի, երիւք դարուք յառաջ (1587)։ — Յամի 1660 Յակոբ Ամիր և Անտիք որդի Առաքելի Պարսկահայք՝ ի բերելն ի Կ. Պօլսէ Մետաքս, Յիսի, Մորթիա, Մոմ դեղին, Ականս գոհարս և այլ ինչս, գերեցան ի նաւու և վարեցան ի Մաքարաքս. Հայք 34 ի Վենետիկ վկայեցին, առ ի զերծուցանել զնոսս առաջի նօտարի, զի ծանօթ վաճառականք էին ի քաղաքիս։

ԳԵՆՈՒԱ (Ճենովա). — Ի ծանօթութեան Բաժտանն Այասոյ (Սիսուան) յիշեալ է դաշնակցութիւն հասարակապետութեան Գենուաց ընդ մեծին Լեոնի, որ կանխէ մնաք ինչ քան զՎենետացն, և տեւեաց ոչ միայն յաւուրս Թագաւորութեան Ռուբինեայց, երկիցս կամ երկիցս վերահաստատելով դաշնանց, այլ և անակնկալ բաղդիւ գար մի եւս աւելի՝ յօտար և ի հեռաւոր քաղաքս Եւքսինեան և Ալպիու ծովուց, ի Դանա, ի Կաֆա և ի մերձաւորս սորին. յորոց յայտ է զի հարկ լինէր Հայոց Տարիոյ գործ ունել և ընդ մայրաքաղաքի պետութեանն՝ ընդ Գենուայ, բովանդակ դարս. այլ զի դիւանք սորին չեն ինձ ծանօթք որպէս զՎենետիկոյ, յուսայի է հետամտից խուզողաց՝ ոչ սակաւ ինչ յայտնել ըստ այսմ մասին. այն զի զիտնական ոմն նոցին (կոմս Կոռնելիոս Տեսիւնի) ի վերջին ամբս հրատարակեաց 200 իւ չափ մուրհակս կամ գործս երկուց նօտարաց Գենուացոց յԱյաս, յամսն 1274 և 1279. գրաւական յուրովութեան այնպիսի գրուածոց եղելոց անդ՝ մինչ ի յաւերն Այասոյ ի կէս ԺԴ դարու։ Ետտ լիցի յիշել աստանոր զի ի վտանգել մեծապէս աշխարհին Սիսուանայ՝ դժպհի դաւաճանութեամբ Թագաւորասպան Թաթարին

- 1547 Ստեփանոս Կաթողիկոս.
- 1553 Ալպիս ? և որդի իւր տեսուչք Հայոց տան.
- 1555 + Սիմոն ի Հայոց տան.
- + 1557 Սիմոն որդի Յակովբայ.
- 1557 Խաչատուր Եթովպացի չափաբան տեղագրող.
- 1557 Խաչատուր Դաւրեթեցի Թարգմանիչ զրոց.
- 1559 — 88 Անտոն Սուրբեան մեքենադէս և որդին Յովսէփ.
- 1565 Աբգար սպարաբեր.
- 1570 Գեորգ ո. Յովհաննու, սուրբանդակ.
- 1572 Յակովբ Մերթեցի.

- 1572—5 Հին Զուղայեցի վաճառականք.
- Աղաքանդը տնպահ Հայոց.
- 1573—93 Յովհաննէս, սէնաւ.
- 1574—607 Գեորգ որդի Թեոդորի, սէնաւ.
- 1575 Յովհաննէս որդի Խաչատուր, սէնաւ.
- 1577—609 Գեորգ կարաւանապետ.
- 1577 Թադէոս կաթողիկոս.
- 1579 Հայք բազմացեալք նորոգողք տան իւրեանց.
- 1585—608 Մկրտիչ որդի Զաքարիայ, Պարսկահայ, սէնաւ.
- 1587 Տէր Յովհաննէս Տէրբլեցի սպարաբեր.

Պիլարդուի, յամի 1307, խուսափողը յերկրէ անտի Հայոց՝ նախ ի Գենուա հաստատեցին վաճառ, և եկեղեցի յանուն Ս. Բարդողիմեայ (1308), յորմէ ապա սփռեցան և հաստատեցան վանորայք յայլեւայլ քաղաքս մերձաւորս, և վանականքն կոչեցան Հայ Եղբարք, Թէպէտ յուրովք ի նոցանէ, մանաւանդ յետոյ, Իտալացիք էին, և յայս անուն Հայ Եղբարք տեւեցին ցկէս ԺԷ դարու, կարգաք և սքեմա Գոմինիկեան միանձանց մայրավանքն (Ս. Բարդողիմէոս Գենուայ) ոչ էր մոռացեալ ի Հայոց, մանաւանդ զի դուքս պետութեանն (Լէոնարտոյ Մոնտալչոյ) շնորհեալ էր նմին (1376)<sup>1</sup> զԴաստատակն սուրբ, որ և ցարդ պահի անդ և մեծահանդէս պատուի. և այլ ոմն ազնուական (Մարկոս Սպինոլա) յամի 1430 ետ ըզձախ ոտն Ս. Բարդողիմեայ, ի յատակի եկեղեցւոյն վերժանի տապանազիր Գողթնացւոյն կամ Ազնարերդացւոյն Հայրապետի յամի 1687. (զորմէ տես յ' 309 էլ զրոցս): Յետ 15 ամաց (1703, մայիս 10) արձանագրութեալ է յեկեղեցւոյ Տիրամօր Ենորհաց (S. Maria delle Grazie) տապանազիր Գրիգորի Ղապանցոյ որդւոյ Տարվանենց Ամիրի: Յայտ է ապա զի մինչև ի սկիզբն ԺԸ դարու գային և այսր վաճառականք մեր: — Յամի 1633 (դեկտ. 30) յորում Հասարակապետութիւն Վենետկոյ շնորհեաց Հայոց արտունութիւնս և թեթեւութիւն մաքսի, ընդ Գենուացւոց ոմանց միաբանեալ Հայք և Պարսիկք խնդրեցին և ի հասարակապետութենէ տեղւոյն, և հաւանեալ հաստատեցին Բնկերոշրիւն վաճառականութեան Արեւելեան Հնդկաց, որում միայնոյ շնորհեաց յետոյ (1647) պետութիւնն՝ նաեւ ի Հնդկիս, արգելով զայլս և տուգանելով: Սակաւ ամաք յառաջ (1613) միանձն մի Հ. Մարկոս մականուն Origerius, սերեալ ի հայկական զարմէ կանգնեաց խորան յեկեղեցւոյ անդ Ս. Բարդողիմեայ յանուն Ս. Կատարինեայ վկայուհւոյ: — Յիշեցաք վերագոյն զաւանդութիւն բերդաշինութեան Գենուացւոց ի Հայս, որ Թէ ոչ ստոյգ, այլ նշանակ է յաճախելոյ նոցա վաճառականութեամբ յերկրի մերում, որպէս և յիշի Հերոնիմոս Սան Ստեֆանոյ ոմն ի նոցանէ յելս կոյս ԺԵ դարու ի կողմանց Հնդկաց եկեալ յՈրմոս և յարեալ ի վաճառականս Հայոց, ընդ նոսին գնացեալ ի Դավրէժ և յայլեւայլ կողմանս Պարսից: Յաճախելոյ եկաց թերեւս և բնակութեան Հայոց ի Գենուա ց ԺԸ դար, յետ վերոյիշեալ տապանազրաց, վկայեցէ և թուղթ Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Զուղայ, յամի 1688, որ հասարակարար գրէր « Գիր օրհնութեան աս. » տուածաշէն քաղաքացն Վենետիկ, Ալէկսոնայ և Զէն. » վայ եղեալ քրիստոսասէր և բարեպաշտօն Զուղայեցի » վաճառականաց, սիրելի և հարազատ եղբարց »:

**ՏՈՍԱԿԱՆ.** — Նախանձաւորք և հակառակորդք և ապա ընկճեալք ի Գենուացւոց, Պիլագիք, ընդ հնագոյն և ժրագոյն վաճառականս Իտալիոյ հանդիսացեալք ի ԺԱ-Դ դարս, վաղ ուրեմն ծանօթացան մերազնեայց ի Սիսուան և Սլաւս. և հաւանօրէն հանգոյն այլոց ընկալան ի մեծէն Լեոնէ պարգեւազիր և դայինս վաճառականութեան.

աւանդութեան. քանզի և սորին հաճութեամբ և ձեռնադրով յամի 1316, եղբորթոռն նորա Ռուբէն Բրինձ Անտիոքայ՝ նոյնպէս շնորհէր նոցա, որ և պահեալ մնայ ցարդ ի դիւանս: Յելս կոյս դարուն (ԺԳ) յիշին Պիլագի վաճառականք Սլաւս, և ի սկիզբն ԺԴ-Բ գունց նոցա Բինդոնէ, Bindone Seccamarenda անուն: Զիք ապա երկրայել՝ եթէ և փոխանարար և Հայք Սիսուանեայք որպէս ի Վենետիկ և ի Գենուա՝ գային և ի Պիլագ. այն զի և յամի 1118 արեւելեայք այլադեմք յիշին եկեալ ի նաւահանգիստ նորին. և զի յամի 1320 կանգնեցին Հայք վանս և եկեղեցի յանուն Ս. Սթաստոնի, (ի Spasavento Թաղի Պիլագայ), ուրանօր կայր յամի 1353-73 արքեպիսկոպոս Հայ Գրիգոր. յորում ժամանակի և Պետրոս որդի Միքայիլի կամ Միքայիլ, որդւոյ Սաղաչիկոյ? Հայ վաճառական (+ 1366), և կին նորա Վարդէ կտակաւ թողին զամենայն ինչս իւրեանց առ ի կառուցանել զանուանի Կարդուսարան վանս (Cortosa) մերձ ի քաղաքն, ի (Val di Calee) ձորակի. հայրն Պետրոսի Միքայիլ յիշեալ է ի դիւանս քաղաքին յամի 1382. յորմէ գուշակի և այլոց վաճառականաց համազգեաց գալուստ, ոչ միայն ի միջին անդ դարս, այլ և ի վերջինքս ի նորագարծարծ ման վաճառականութեան Զուղայեցւոց: — Յելս կոյս յետին դարուն (ԺԸ, 1788) տոհմիկ ոմն Կ. Պօլսեցի Դուչիլի Արքանաւ ընտանեօքն բնակէր ի Պիլագ:

Ի նուաճել երբեմն մեծի շահաստան քաղաքիս յեապէսպէս յեղափոխութեանց՝ ընդ իշխանութեամբ դքսին Տոսկանայ, մայրաքաղաք սորին հոյակապս Փլորինցիա (Firenze) առաւել եւս ձգէր յինքն զվաճառականս առ րեւելեայս. որ Թէպէտ և հետի ի ծովէ՝ անդստին առ հարստութեամբ մերոց Ռուբինեանց՝ առաքէր ի Սիսուան զգործակալս մեծահարուստ սեղանաւորաց և վաճառականաց իւրոց, Բարդի (Bardi) և Պերուցցի (Peruzzi) տանց, որոց գործակալ Բալդուչի Պեկոլոտտի (Balducci Pegolotti) ի ժամանակս Դ Լեոնի եկեալ ի Կիլիկիա և ծանօթացեալ մերայոց՝ յիշատակ առնէ վաճառոց և դրամոց Սլաւոյ, ի պատուական և հուշակեալ մատենի իւրում վաճառականութեան, (որպէս նշանակեալ է մեր ի Սիսուան), և խնդրեալ և ընկալեալ էր անդ ի Թազուորէն դաշնագիր, ըստ այլոց վաճառախնդիր ազգաց. բայց յայտ է զի դարու եւս յառաջ ծանօթացեալ էին Փլորինցեայք ընդ Հայոց. զի աքազրեալք վաղ քան յայլ քաղաքս Իտալիոյ, և յառաջ քան զհասարակել ԺԳ դարու՝ հաստատեալ էին վանս և եկեղեցի յանուն Ս. Բարսիլի՝ ի Փլորինցիա, որ և տեւողագոյն գտաւ քան զայլ նմանիս. մինչև յառաջին կէս ԺԵ դարու զաւելջտարան քերդոյն Բուչիլիոյ (Burchiello) լսէր զճառաւանջայն եղանակ երգոց Հայոց, (la zolfia degli Ermini), և անազան եւս, մայր վարդի պատմիչի (+ 1568) պատմէր սմա զհայալեզու պաշտօն մերազնեայցս. քանզի ցամն 1491 ասի տեւեալ անդ վաճառականաց կամ քահանայից Հայոց. բայց (զարմանաց է) զի ոչ յիշին ի հուշակաւոր դէպս մեծի ժողովոյն յամի 1439 և միաբանութեան Հայոց ընդ եկեղեցւոյն Հոռովմայ

<sup>1</sup> Յայտ ժամանակի մի ի միանձանց վանացն վկայի իննել Հայ ազգաւ, Հ. Մարտի անուն:

ի ձեռն նուիրակաց կաթողիկոսին (Կոստանդնի), այլ ցարդ չեն քաջ յայտնեալ գրաւոր յիշատակարանք իւրացս: — Իսկ մեր աստանօր կարեւոր յիշատակ և խընդիր է ընդ եկեղեցական դասուն գալուստ վաճառականաց Հայոց ի ծաղկելն Փլորենցիոյ, ուր յաճախ յիշին ի ԺՋ դարու եկք և երկար բնակութիւնք Հայոց, մա նաւանդ Միաբանիցն Ունիթորաց՝ ի Ս. Մարիամ Նոր վանս Դամիսիկեանց, ուր և ժողովն մեծ գումարեցաւ մի ի նոցանէ (Ֆր. Չարքար Խօշիպիկեցի) գնէր անդ լատինաժէս ճաշոց մի հայերէն, և վկայէին ստորագրութեամբ Գաղեցի, Ալպարանցի, Նախիչեանցի և Խօշիպիկեցի Հայք ոմանք ժամանակակիցք և թերեւս ընկերակը Հին Ջուղայեցոց: Ի նոյն ամս (1574-8) այլք ոմանք վաճառականք նաւելով վենետիկեան նաւու ըզժողովեցերք տէրութեան Տոսկանայ՝ գերեցան ի զինեալ նաւէ մեծի դքսին, և կողոպտեցան իբրեւ թուրքահպատակք. վասն որոց դեսպան նորին և Աղեքսանդր Հայ գլխաւոր Հայոց ի Հռովմ՝ գրէին աղերս: Նոյնպիսի դէպք եղին և յամի 1608-9, Հայոց վաճառականաց Բերիացոց և ընկերացն (Միանասր որդի Բերեայ?, Յաւոր ո. Սահակայ, Արասպահ ո. Պալեայ, Մոռաստ ո. Սարգսի, և այլն). վասն որոց հատոյց դուքան աւ Շինազ որդի Սեֆերի կամ Չաֆէր) 7000 վահանագրով, և նա անդէն ետ Միաւերի կամ Միանասրի զբաժին նորա 360 (սկուռ), և զայլոցն առաքեաց ի վենետիկ և ուր և էինն): — Յայսմ դարու (ԺԷ) եւս յիշին եկք եկեղեցականք և աշխարհիկք, յորոց և ոմանք թուին հաստատ բնակութեամբ, ընդ որս վերոյիշեալն Ղուշիկի Արասիւմ, որ զգիսկն որդւոյ իւրոյ Պետ. Մանուկ վահանեցելոյ ի Բաղնիս՝ յուսումնարանին, ետ փոխադրել այսր ի ձեռն Տեառն Միքայելի Մոռաստեան, որ և սա մեռեալ է ի սմին քաղաքի յամի 1799:

Բայց զվաղեմի և զպանծալի վաճառաշահութիւն քաղաքին (Պիզայ) և նաւահանգստին խանգարելոյ ի Գե. նուացոց՝ ժառանգեաց մերձաւոր նորին և նորընծայ քաղաք Լիվոռնոյ կամ Ալիվոռնա, յարդարեալ նաւահանգիստ և շահաստան դքսութեան Տոսկանայ, կամ ճգ և լանիւ մեծի Դքսին Ֆերտինանտի. որ և յամի 1593 (ի 10 յունիսի) հրաւէր կարդաց ընդ այլոց ազգաց՝ և Հայոց գալ անդր ի շահավաճառութիւն, շնորհելով արտօնութիւնս և թեթեւութիւն մաքսի. և անդէն սկսան որք ի վենետիկ գային Հայք՝ մատչել և ի նորամուտ շահաստանն Լիգուրեան ծովու. յորոց յիշի ի սկիզբն ԺԷ դարու (1608) Պողոս կոզմի ոմն, որ և զործակալ իւր կարգէր (18 օգոստ.) զոմն ի վենետիկ. և առ սակաւ սկսան յաւելլուլ և հաստատել տունս և վաճառանոցս և անսւանի լինել ճոխութեամբ. յորոց հրաչակէ յորդորեալ Յովն. Վ. Չուրայեցոյ՝ եկն յամի 1640 հաստատել տպագրատուն, երախայրի վայելուչ ընծայելով զՄաղնոսն յամի 1643-4, ձեռնտուութեամբ բարեպաշտ վաճառականացն. և ապա բարձեալ զգործիս տպագրութեանն տարաւ ի հայրենիս իւր ի Նոր-Ջուղա:

1 Յեշտատկարան մի գրոց ասէ. « Ի դուռն Ս. Եկեղեցւոյն » (Կղզմայ) ուր դեռեղեալ կան Հայոց վաճառականք. ուր և

իսկ աստ ապա եկեալ (1662) անուանի եպիսկոպոսն Ոսկան, հաստատեաց նոր տպագրարան, յորմէ յամէ 1670 ց՝ սկիզբն ԺԸ դարու ընծայեցան երկտասնեակ մի գրոց: Խոհական խորհրդով առ խաղաղօրէն պարսպել ի վաստակս Լւրեանց՝ միաբանեցին յայնժամ Հայք կարգել իւրեանց գլխաւոր մի և վերակացու գործոց իւրեանց, և ընտրեցին ի բնկաց երկրին զփլորենցիացին Անտոն Բորձի (Borgi) գունց (consolo) անուանելով, որ յիշի յամի 1646 և յետոյ եւս. յետ 20 ամաց յիշի Պետրոս Աւագ Հայ նովին պաշտամամբ: Ի սմին ամի (1646) ի կատարման մեծի հանդիսի ի Լուկկա քաղաքի ի պատիւ պաշտպանի նորին հայազարմն Սրբոյ Տաւրնոյ կոչեցելոյ (թերեւս Չաւէն), գնային անդր իբրեւ երեսփոխանք և ուխտաւորք ի Լիվոռնոյէ 13 վաճառականք, յորս 6 կեսարացիք էին, 3 Զմիւռնացիք, 2 Եւդոկիացիք այլքն Անկիւրացի և Սսեցի (Խօճա Սեֆեր, որդի Խօճայ Սինանի), և ստորագրեցին (30 յուլիս) վկայելով (ոչ գիտեմ որպիսի՞ հաւաստեօք) զի հայազգի էր Սուրբն. զորոյ և զմասն նշխարաց զողացեալ բերին ի Լիվոռնոյ:

Յետ ամաց ինչ (1649) ի լինել խնդրոյ իրիք ի վենետիկ վասն Թովմայի վարդապետի՝ որ ասէր զինքն պատրիարք եղեալ Հայոց, հարցեալք անտի՝ հակառակ վկայեցին Հայք Լիվոռնոյ, որք ասէին լինել անդ 150 ուղիք, և 40 ի նոցանէ յանուանէ գրով և մրով կնքեցին, որոց գլխաւոր (Patrono) էր Սաֆարն այն Սսեցի: Էր նոցա յայնժամ ժողովարան առ երի Ս. Կողմայ և Գամիանու եկեղեցւոյ<sup>1</sup>, հաստատեալ ընկերութիւն կամ Եղբայրութիւն (confraternita ըստ իտալաց), ուր կատարէին զպաշտամունս իւրեանց, և զննջեցալուն թաղէին յեկեղեցւոյ Փրանկիսկեան միանձանց, որոց ոմանց կան միան անդ տապանադիրք հայերէն տառիք. հնազայն ծանուցեալ է իբր յամի 1651 Անտոնի ոմն, որոյ որդիք էին ի վենետիկ. և միւս ոմն Աւետիք Բաթինենց, Ջուղայեցի † 1657. յառաջ եւս քսն զնա † էր Առաքէլ վարդապետ, թերեւս հովիւ նոցա, զորոյ հոգեբաժին խնդրէր թղթով (1657, մարտ 14) Աստուածատուր պատրիարք Երուսաղեմի. զբերով առ խօջայ Թէոդորոս Քթուեղնց, յիշելով և զխօջայ Գրիգոր Բաբերդցի, և նպաստ հայցելով յայլոց եւս վաճառականաց տեղոյն. որպէս ամաւ յառաջ գրեալ էր և առ խօճայ Աւագ:

Ի կիսոյ ԺԷ դարու ցկէս ԺԸ-ի երեւի բարգաւաճազոյն յեղանակ վաճառականութեան Հայոց ի Լիվոռնոյ, որոց առանձինն իմն խնամօք և մեծարանօք պաշտպան կային Դուքսք տեարք երկրին, և փոխարէն ընդունէին զմաքս շահավաճառին, որպէս դուքան վենետաց: Յերկոցուն վաճառաշահ քաղաքացս բազում անգամ երթեւեկէին վաճառականք մեր փոփոխութեամբ վաճառաց. որպէս յամի 1657 Սիմոն Պտոլմ բերէր ի Լիվոռնոյէ ի վենետիկ վաճառս 40,000 ուէալից: Մի ոմն ի վաճառականաց ժամանակին Սուքիաս որդի վարդանայ որդւոյ Չաղիէի (յամի 1662) ուսմկարար իմն գրէ (ի Զմիւռ-

Թաղեալ վկայէ յառաջ քան զամ 1660: ՎԱԿ:——-ի որդի Տեւոսեան Բաբէի:

նրա) . « Էի վաճառական ընչից, երթայի քաղաքէ ի » քաղաք յայլ երկիր՝ որ կոչի Տալիա, ի քաղաքն Լիկուա . » նայ, ի Թագաւորութեան Գրան դուկայ (Gran Duca) » Տէրդինանզուս Մէդիչի . . . ուխտ եղի սրտի իմում . » ի տեղի երկրի Տալիու գնացեալ », և այլն .

Յայնմ ժամանակի գլխաւորք ի վաճառականն էին վերայիշեալն Թէոզորոս Գթաշենց և եղբայր նորա Պետրոս, Ատեփանոս Խանոնց, (սատարողք Ոսկանայ տպագրութեանն), Մատթէոս Աթաճան, Գրիգոր Սուլթանում, Ստեփանոս որդի Եղումի, և այլն, և Սարգիս օմն Չէլէպի՝ Թուի Սպարտիան տոհմէ . որ զի գօտեալ էր ընդ Թէոզորի, առ ի խափանել զգայթակրութիւնն՝ խոհական կաթողիկոսն Յակովբ Դ գրէր առ վաճառականն և առանձինն առ Ստեփանոս (1665, մարտ 10) ջանահնար լինել ի հաշտութիւն, յոր սակս գրեաց և առ նոյն ինքն Մեծ Դուքան <sup>1</sup> :

Ի բազմանալ մերազգեաց ի քաղաքիս և ի հաստատել բնակութիւն, հարկ լինէր և կանգնել յատուկ եկեղեցի, զի ունէին ազգային երիցունս և արեւելեան տօմարաւ վարէին, զոր Թէպէտ կամ էր Հռովմայեցոց փոխել ի նորն (յամս 1673-4), այլ Հայք ոչ առին յանձըն, բայց միայն (յամի 1699) հաւանեցան դադարել ի ծառայական գործոց ի հրամայեալ տօնս նորոյ տօմարին : Յետ 10 ամի այնր առաջարկութեան (1683, յ' 17 ամեան յունիսի) գումարեցան Հայք ի ժողով, որոց 27 տունք ասին յայնժամ լինել անդ . իսկ ժողովեալքն էին 34 անձինք, յորս գլխաւոր մեծատոհմ և մեծատուն Գրիգոր Գերաք Միրման (յետոյ վերաշինող Ս . Խաչ եկեղեցւոյ Հայոց ի Վենետիկ), և ի խորհուրդ մտեալ վասն կառուցման եկեղեցւոյ, (որպէս յաճախ պատահէ յայսպիսի դէպս խնդիրս յուզել և դանդաղել ), յետ իբր 10 ամաց (1692, փետրուար 19) առաջնորդութեամբ Գեորգայ որդւոյ Ապրոյ Չէլէպոյ գնեցին զեկեղեցաւ տեղին 8490 իրվաճեան կամ փլորենցեան (pezze) դըրամոց, որ է 26, 800 իտալական լիրայ կամ Ֆրանզո ինքնին դուքան Փերտինանտ հաճեցաւ տալ զձեւ շինութեան եկեղեցւոյն . այլ վասն կրօնական խնդրոց և հանգանակի շինութեանն՝ յապաղեալ, ուր ուրեմն նախ ի ձեռն Ազարիայ կրտսողիկոսի Սոյ օրհնեցաւ տեղին (1698), ապա հռովմէական կոնդակաւ եղև հիմնարկութիւն ի մուտս ԺԸ դարու (1700), նախաձեռնութեամբ մեծատուն և ազնուատոհմ Աղայի Մաթուս Տէրտերեան Օղլանքէշիշեանց, որ և կանխեաց տալ 60,000 դրամ (pezze), վերակացութեամբ Մարգարայ Ճլապխանի, և սատարութեամբ բազմաց, ոմանց հանգանակելով գումարս ինչ, այլոց շինելով զխորանս կամ զայլ

ինչ մասն եկեղեցւոյն, կամ սպասս նուիրելով . պայման եղեալ առ փոքր փոքր հատուցանել Աղայի՝ զառաւել մասն արոց նորա . յոր սակս յետոյ բազում վէճք եղեն, և շար քան զայն՝ դաւաճանեալ սպանութիւն նորին (Աղայի) յամի 1709 յիւրմէ վրացի սպասաւորէ (Միրիճան որդի Փարսաղանայ) : Բայց Հայք հնարս հնարեցան խնդրել ի զքօէն՝ զի յաւելցէ սակ ինչ ի վերայ վաճառուց ի նպատ, և այսու դիւր եղև խնդրոյն և հատուցման պարտուցն և շինութեան հայկապա և վայելչագեղ եկեղեցւոյ . որոյ՝ ի մուտս կաղանդաց 1714 ամի եղեն նաւակատիք և օծումն հրամանաւ արքեպիսկոպոսի Պիղայ, յորոյ վիճակի էր քաղաքն . և յայնմ ժամանակէ մինչև ցայժմ պաշտի հայկական ծիսիւ և կաթողիկէ դաւանութեամբ, որպէս յանձն առին յառաջ և ի ժամանակի օծմանն՝ Հայք տեղւոյն միաբան ստորագրութեամբ . և անդ թաղեալ կան յուրվք ի ննջեցելոց նոցին 30 և չափ հայերէն արձանագրութեամբը : - Բովիւն որդի և ժառանգ Աղայի այր գիտնական, եկաց հոգաւոր եկեղեցւոյն ընդ երկար ամս . և ցարդ սերունդք սակաւ ընտանեաց մնացելոց ի Հայոց իտալացելոց, նախանձու հաւուց իւրեանց պահպանեն զիրաւունս նախնեացն : Գլխաւոր և ազնուական ընտանիքն են Գերարքանն որ և Միրման, Ադամեան (Adami), և Ալեքսանտան (Alessandri), յորոց զարմէ ընծայեցան և գիտնականք և քաղաքապատիւ և քաղաքագլուխ արք . այլ երթեակ վաճառական Հայոց վազ ուրեմն դադարեաց անդ <sup>2</sup> :

ԱՆԿՈՒՄ. — Թէպէտ եւ ոչ նման Գեներալ և վեներտկոյ մրցեցաւ ի շահավաճառ՝ քաղաքս այս և նաւահանգիստ վայելչադիր յափուռն Ազրիականին, այլ և ոչ յետեալ և յայնմ և յայլ պէսպէս շնորհաց . և որ զարմանալին է՝ վազագոյն քան զյուրով յիտալական քաղաքաց ասպնջական եղեալ ուխտաւորաց և վանականաց Հայոց, յայտ է թէ և վաճառականաց, նոյնպէս և գրեթէ անագանի եւս քան զյոգունս ունելով մերային յիշատակս . տինա և հովանաւոր պաշտպան մի իւր՝ զոմն ի սրբազանից Հայկազանց, որպէս աւանդի և ցարդ պաշտի անդ . այն է կոչեցեալ Ս . Լիբերիոս . որ Ազատ թարգմանի, և ասի յոմանց լինել որդի Հեթմոյ Թագաւորի Հայոց . կամ լաւ եւս հնագոյն Թագաւորի կամ մեծի իշխանի՝ յուխտ եկելոյ ի կողմանքս և անծանօթաբար մեռելոյ, այլ յայտնութեամբ և մեծաւ պատուով թաղելոյ ի ձեռն Ս . Տրասոսի եպիսկոպոսի տեղւոյն, յիւ Ե դարու կամ ի սկիզբն Չին . յիշի եկեղեցի Սըբրոյն և ի կէս ԺԱ դարու . և կատարի մեծահանգէս տօն յիշատակի նորա ամ ըստ ամէ ի 27 ամեան մայիսի :

<sup>1</sup> « Չինչ որ գրեալ եմ հասարակ վաճառականաց թղթին՝ յաճեալ սիրով յորդորէք, ամենեցուն խօսքն մէկ սրբաբէք, որ լոխու լեզուի տէրն՝ քան չկարէ սերմանել ի մէջ Չէլէպոյն և Թէոզորոսսին . լինի բարեբարն Աստուած զթոյ նոցա, և մեր աղաչանքն անստի շունէ, և նոցա սէր և խաղաղութիւն պարգևէ : Սիրեալ լի որդի, կամէի Ստեփաննոս վարդապետն առաքել վասն զոցա հաշտութեանն . այլ զիմաց և բանբասանաց՝ չտուաքեցի . աստուածային օրհնութեամբ և իմով թղթիւս զձեզ աղաչեմ, որ չափ ձեր կարն է շանք և հնարք արարէք զոցա հաշտութեանն :

<sup>2</sup> Դարձեալ, օրհնութեան և աղաչանց թուղթ գրեցի Գրանզուկէ վասն զոցա հաշտութեանն . որպէս պատշաճ ամարիք՝ այնպէս տուք » :  
<sup>2</sup> Փափազողք լիազոյն ժանօթութեանց զմերազնեաց ի Լիւվոնոյ, զայցն ի « Պատմութեան Հայոց Գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքէ Կանդաքճ յաւելուածովք . գրեաց Միսրոպ վարդապետ Ուզուրլեան (յետոյ) « Ժողովրդապետ ի Մեծ կղզի », և աղաչեցցաւ ի մերս Ս . Ղազար, ի հրու, յամի 1891 :

Բայց ստուգիւ առ Թագաւորութեամբ Հեթմայ Ա եղեալ է աստ սկիզբն բնակութեան Հայոց, որոց չէր անդէպ ի նաւերն ի վենետիկ՝ հանդիպել և յայս նաւահանգիստ։ Ըստ սովորութեան այնց դարուց՝ արտաքոյ պարբու պաց քաղաքին զետղ առեալ էր Հայոց (առ Calamo անուանեալ դրամբ), հաստատելով զՀոգեւոր իւրեանց, զոր անդատին յամի 1248 (սեպտ. 22) Ս. Հոգի (S. Spiritus) կոչէ քահանայապետն Իննովկենտ Դ՝ ի կոնդակին, և Թոյլ տայ կանգնել եկեղեցի, և ընդործակել զայն յետոյ յամի 1262, յորում ժամանակի Ուրբանոս Դ շնորհեաց 40 օրեայ հոգեւոր ներողութիւն նպաստողաց շինութեանն, Աղքատս կամ Պանդախտ Հայս զնոսա անուանելով (Pauperes Armeni). որով յայտնադոյն լինի ոչ լոկ միանձանց ոմանց այլ և ախարհայնոց լինել ընդ նոսին, հաւանօրէն եկեալս վաճառականութեան աղագաւ. յոր սակս մատչէին անդ և այլք յարեւելեան ազանց։ Յոր ժամանակ Մնացին Հայք ի հոգեւանս յայտնիկ և պաշտեցին զեկեղեցին, կամ զինչ անցք անցին ընդ նոսա, ոչ զհոտեմ. այլ ոչ երկբայիմ՝ զի որպէս ոչ զադարեցին վաճառականք նոցին յայնմ դարու և ի միւսումն (ԺԻ) յաճախել ի Գնեուա և ի վենետիկ՝ նոյնպէս և ասա, և զուցէ առաւել եւս. քանզի Մաղաքիս դպիր հաւաքող տարեգրութեանց՝ կարգէ այսպիսի ինչ յիշատակ. յամի 1403, « Ի նոյն ժամանակ » յետ բառնարոյ Թագաւորութեան Հայոց ի Սոյ, Ժո » զսկիցան Թագաւորազունք և իշխանք և բազումք ի Ժո » զսկիցոց, մտեալ ի նաւ՝ գնացին ի Ֆրանգաստան. ի » յԱնգոնիա գոն բազում գերեզմանաքարք հայ գրով » փորագրեցեալք. որք երեւին մինչեւ ցայսօր, որ եմք » ՌՃԾ՝. 1701. Աւաղ է զի ոչ և այժմ երեւին քարինք, և ոչ առ ստորագրողս քաղաքին գտանին նշանակեալք, որպէս յայս ոմանս ի քաղաքաց Իտալիոյ. և հին հոգէտունն այն Հայոց առ դրան քաղաքին՝ ի սպասանյայտացեալ է, մանաւանդ ի շինութեան պատուարացն և պարսպաց յամի 1538 հրամանաւ Կղեմայ Է ի յամրութիւն քաղաքին։ — Բայց գրեաթէ ի սին իսկ յիշեալ տարուով վերստին յերեւան գան Հայք յԱնգոնա և առ յապա, և ոչ աննշանք ոմանք. որոց առաջին Գէորգ որդի Մուրատայ, մեծափարթամ վաճառական, որ ընկալաւ (1539, մայիս 6) ազատագիր ի քաղաքապետէն (Անտոն Benerius) հաճութեամբ Պօղոսի Գ Պապի՝ երթեւեկել և բնակել անդ ընչիւք և սպասաւորք (mercoibus, rebus, bonis, et famulis suis). Չառաջինն առ մի ամ սահմանեցաւ նմա ժամանակ բնակութեան, այլ յետոյ վկայի բնակիչ լինել քաղաքին (Giorgio Murato Armeno, in detta città habitante), և սատարեալ իսկ ի վայելութիւն նորին. որպէս պատմէ Ժա մանակակից մեծ արուեստագէտ հեղինակն Վազարի, եթէ կոչեալ Գէորգայ զանուանի նկարիչն (Պելլեգրինո փրանկիսկոս Պելլեգրինոյ Պելլեգրինի, Pellegrino Pellegrini, ըստ այլոց Պրիմիտիցիոյ, Primiticio), ետ նկարել յեկեղեցւոյ Ս. Օգոստինոսի մեծ և գեղեցիկ պատկեր մի Մկրտութեանն Քրիստոսի։ Նոյն Գէորգ դարձեալ

յամի 1560 մեծածախ արիւք ետ շինել նոր աւագ սեղան մայր եկեղեցոյն (S. Ciriaco, որ է Ս. Կիրեղ — Յուդա), և ի նմին կանգնել գաճեայ պատկեր Յարութեան Քրիստոսի մանր դրուաքօք, (ի ձեռն Տիպալոյ (Tibaldi) ճարտարի, որ յոյժ յարգոյ դատեցաւ, և վերստին ետ գրել զյիշատակ իւր լատիներէն. զարդիս պատկեր նկարէն (Ֆաւա նկարչի) փոխանակեալ է զգաճեղէնն։

Չայնու ժամանակաւ (1549) մեծ յորդոր եղեւ վաճառաչահութեան Անկոնայ խրախոյս պետութեանն (Հոովմայ), և եկին յարեւմտից և յարեւելից վաճառականք, ընդ որս յիշն պատմիչք յանուանէ և զՀայս, և ի գէպ է Թէ և Ջուզայեցիք. զի ի ժամանակի գալստեան սոցա ի վենետիկ և այլուր՝ երեւի և աստ յաճախութիւն Հայոց, որք զի և բազմաթիւ էին և հաստատաբանալք՝ յայտ է յերկուց. նախ, զի յիշ յամին 1580 գոռց կամ գոռնոչ նոցին ոմն Հերոնիմ Թոմասեան. և երկրորդ, զի վաւերական դաշամբք ստացան իւքեանց զՍ. Անաստասիա եկեղեցի, և անդ պաշտէին ազգային ծիսիւ ցամա 200. Մի ի գլխաւոր վաճառականացն Սիմոն Սինանեան ի նմին ժամանակի (1581) նաւաբեկութեամբ ՚ էր, և ինչքն գրաւեալ ի գունցէն. զորս՝ եկեալ ի Հոովմայ Ստաչանչահ որդի Աբգարու տպագրողի՝ Թափեաց և սեփականեաց եկեղեցւոյս։ Թերեւս յայտմ եկեղեցւոյ էին մահարձանքն յիշեալք կամ տեսեալք ի Մաղաքիայ Դպրէ։ — Ի նոյն ամս (1583-4) յիշին յԱնգոնա Յովն. Իսկէնտէր Սափրիչ, և Միքայէլ որդի Չաքարիայ<sup>1</sup>, որում յանձնեալ էր առաջինն՝ գումար ինչ, զոր պահանջէր Յակոբ Մէրտինցի ի վենետկոյ։ — Ի սկիզբն Ժէ դարու Շահարասեան դրոումն վաճառականութեան ազդեաց և յԱնգոնա, ուր յատուկ յիշատակի գալուստ Հայ և Պարսիկ վաճառականաց յամի 1626, և ի միւսումն (1627) ՚ Յովսեփայ կեսարացոյ որդւոյ Թեոդորի<sup>2</sup>, և ժառանգ նորին Մարկոս Չաքարեան սարկաւագ, հանդերձ այրովք։

Յայնմ ժամանակի վերակացոս (Soprintendente) հոգեւանն Հայոց լսի օտարազգի ոմն Բեռնարդ Եսթեր ի կէս դարուն՝ (1655-6) վասն նորոգութեան եկեղեցւոյն (որպէս և Հոովմայն) երէց ոմն՝ Տէր Վարդան որդի Հայրապետի չրչէր ի Նէապոլիս հրովարտակաւ փոխաբայի տեղւոյն՝ հանգանակ առնել։ Յ՛ելս կոյս ԺԼ դարու պաշտէր եկեղեցիս այս ի ձեռն Հայոց երիցանց և եպիսկոպոսաց ոմանց անդ կացելոց կամ հանդիպելոց, ընդ որս և Գրիգոր Պաւմաձի (1777) երբեմն պատրիարք Կ. Պօլսի, Ղազար Ասմարմին եպիսկոպոս, որ և աստ վախճանեցաւ (18 փետր. 1783), ուր յետոյ (1794 դեկտ. 19) և յետինն ի Միաբանող Հարց Իննսնամեան Հ. Թովմաս Իսապետեանց։ Յետ այնր Թողին Հայք զտեղին, բարձեալ զամենայն սպասս և յիշատակարանս իւրեանց և փոխադրեցին ի Ս. Հերոնիմոս եկեղեցի, կոչելով զսա յանուն Ս. Գր. Լուսաւորչի։ — Առ սորք յամին 1786 հաւատաւորք ոմանք մերագնեայք եկեալք ի Չմիւռնիոյ խորհեցան հաստատել կուսաստան, և կէին միաբանօրէն առ եկեղեցաստան Ս. Անաստասայ, ուր և Թաղեալ

1 Էր սա ի վենետիկ յամի 1588

2 Էր եղբայր Գէորգայ յիշեցելոց ի ժամօթութեան 449 էլի։



կան երիցազոյնք ի նոցանէ, համբաւ սրբութեան թողեալ. յաւելեալ ապա և նորոց եկաց՝ հաստատեցին կայանս միաբանից առ երի հռչակաւոր ուխտատեղւոյ տան Տիրամօրն, ի Լաշեկնտոն (Լօրեղոյ) (1780), ուստի ապա փոխադրեցան ի Կաստել Ֆիդարդոյ (Castelfidardo) (1787). ապա յետ ամաց յիսնից դարձան յԱնգոնա (1838), և դադարեցին առ ընթեր հին և նոր եկեղեցեացն Հայոց. յետոյ ստտարութեամբ Գրիգորի Նուտի (Չրպլազեան) լատինածէս կանոնիկոսի հայազգւոյ և հայասիրի (+ 1863), կանգնեցին կուսաստան (1848) առ երի Ս. Բարդղղիմէ եկեղեցւոյ, յանուն Սրբոյ Լուսաւորչի մերոյ, և զհնքեանս կոչեցին Հռիփսիմեանս. բայց յետ ոչ բազում ամաց (1859) կաթողիկոսն կաթողիկ Հայոց փոխադրեաց զնոսա ի Հռովմ: — Իսկ յԱնկոնա մնան սակաւ սերունդք Հայոց (իտալացեալք կամ լեզուակորոյք), յորս յայտնի Ումուտեանք ծաւմամբ ի Գաղատիոյ, յորմէ զարմէ էին Թագուհի՛ մի յառաջին եկեղոց կուսանացն, (+ 1819,) և Տէր Ստեփանոս Ե. կեղեցապանն երկարակեաց ցկէս դարուս. որոյ եղբորորդւոյ ընտանիք կեան ցայսօր: — Վասն նուազեալ սերնդոց երբեմն ճոխից վաճառականացն Անգոնայ, յելս կոյս ԺԸ դարու (1793) Տէր Պօղոս Սիվրիհիսարլլ մականունեալ՝ կտակեալ էր զումար ինչ, որպէս և ի պէտս սպասուց եկեղեցւոյ նոցին: — Յասացելոցս յայտոցիկ գուշակի բազում ազգային յիշատակաց ակն ունել ի դիւանաց քաղաքին և եպիսկոպոսարանին, և ժողովրդապետական եկեղեցեաց:

Րիփիւնի. — Հաւասար հնութեամբ երեւի հաստատութիւն Հայոց՝ ոչ կարի հեռի յԱնգոնայէ և ի նմին ծովեզեր (Աղբիոյ) ի Հս. նորին, յԱրիմինի կամ Րիմինի քաղաքի, զոր Ռիմ գրէ ընդօրինակող Յաճախապատում գրոց անդ ի Հոգետան Հայոց, յամի 1254, առանց ինչ յիշելոյ զսկզբնաւորութիւն կամ զչինութիւն տեղւոցն, յորմէ գուշակի զի վարու իսկ հաստատեալ էր, և եկեղեցին կոչէր յանուն Սրբոց Աւետարանչացն Յովհաննոս և Մատթէի. և մարթ է ի սկիզբն ԺԳ դարու համարել, եթէ յիշեալն ուրեք յամի 1215 առաջինն ի հոգէտունս կամ հիւրատունս (Ospitali) քաղաքին՝ Ս. Յովհաննէս, նոյն իցէ, որպէս հեղինակ մի պատմիչ քաղաքին (Tonino) հաւանօրէն զՀայոցն ասէ լինել, (probabilmente era quel degli Armeni). զի և այլ ոմն ի պատմչաց տեղւոցն վկայէ յԵրուսաղեմէ եկեալ Հայոց՝ բերելով ընդ իւրեանս նշխարս Սրբոց, զորս և պահէին խնամով. մարթ է անդրաձգել զգալուստ նոցին յառուժն քաղաքին ի Սալահէտտինայ յելս կոյս ԺԲ դարու (1188): Ընդօրինակող վերոյիշեալ մատենին (վարդան) յայնմ ամի (1254) յիշէ ի հոգէտանն ընդ այլս և զառաքելաշնորհ Եպիսկոպոսն Յովանէս. բայց յետ ոչ բազում ամաց (1265) փոխադրեցան անտի Հայք յայլ կողմն քաղաքին, ի Ս. Վլյաս եկեղեցի, հաւանութեամբ Կլեմայ Գ. Թեւարկէին նոցա և այլք ի քահանայապետաց, որպէս Նիկոլայոս Գ յամի 1291. առ որով Թովմաս Վարդապետ վերանորոգեաց կամ շինեաց զտեղին, և ցարդ պահին վէմք երկու համաձայն արձանագրօք յամի 1296-7.

**Ի ԹՎ. ԶԻՇ. Ես Թովմա վարդապետ շինեցի վտունս.**

**Ի ԹՎԱ. ԶԻՇ. Շինեցաւ Տունս Աստուծոյ Թովմա վարդապետէ.**

Յիշատակին ի դիւանս քաղաքին Հայ Եղբարք և յամի 1311. մինչև ցերբ տեւեալք, ոչ գիտեմ, բայց զայս՝ զի տեղին այն յամի 1443 տուաւ օտարաց, Հերոնիմեան միանձանց: — Կարեւոր մեզ գիտելի այս է, զի՝ որպէս գուշակն և իտալացի պատմիչք քաղաքին, ի սակա վաճառականաց Հայազգեաց շինեցան հոգէտունքն այնուքիկ. և հարկ է թէ որպէս յԱնգոնա՝ մատչէին և յայս նաւահանգիստ. կարծեն ոմանք եթէ և ի Պեգարոյ և Սինիգալիա քաղաքս, որք ընդ մէջ կան երկոցուն նոցին: Իսկ ի Հս. Րիմինեայ կայ հինն և հոյակապն Հուաւենս, որ յառաջադոյն յիշեցաւ ի Զ-Է դարս աթոռ լինել հայազգի փոխարքայից և հայկական զնդից, յորոց զօրականացն յանուանէ յիշին ոմանք ի հին կտակս և վկայագիրս քաղաքացեացն և եպիսկոպոսաց, և ի բազմութենէ նոցին Հայաստան, Armenia կոչուժն Թաղի միոյ Կլասսէի (Classe, Classis), որ և սա ծովեզերեայ մասն էր Հուաւենայ. և զի յայնպիսի գրուածս վկային լինել անդ յայնժամ և ասորի վաճառականք մետաքսաբերք, հաւանագոյն է և Հայոց ոչ զոլ յետնեալ քան զնոսա ի մասինս. բայց ի միջին և յետին դարս ոչ գտի յիշատակ տան կամ եկաւորութեան Հայոց վաճա-

ռականաց ի Հուաւենայ, որոյ մասնակիցն Կլասսիս ամալ յացեալ էր իսպառ: Ընդ արեւելեան ծովեզր Աղբիականին ի վայր ընդ հարաւ խաղալով, ստոյգ յիշատակաւ հայկաց տեղի նշմարի ընդ հռչակեալ հրուանդանաւ Գարգանոյ (Garzano) անընթ գոգոյ, մերձ յերբեմն Սիպոնդիոն և յայժմուս Մանֆրեդոնիս քաղաք, Յազիլիլի աւան, ուր կան գնեցաւ և վերականգնեցաւ եկեղեցի Հայոց յամս 1313-4. և հաւանօրէն ոչ անդ միայն՝ այլ և յայլ բարգաւաճ քաղաքս Աղբիականին՝ հարաւագոյն մասին Խոտլիոյ՝ ի Պուլիա՝ մատչէին վաճառականք Հայոց: — Իսկ ի հանդիպակողմն Խոտլիոյ յափունս Տիւաենական ծովուն՝ ի հարաւոյ Պիզայ և Լիվոռնոյ, հարկ էր և նաւահանգիստ համարելոյն տիեզերական քաղաքին Հռովմայ՝ (հինն Ուտիա) այժմուս Զիվիտավելկիա, ասպնջական լինել Հայոց վաճառականաց և ուխտաւորաց, որոց երաշխաւորէ և եկեղեցի նոցին յիշեալ ի կէս ԺԳ դարու (1340) յանուն Ս. Հոգոյ, որ որպէս տեսաք՝ նշանակէ զհոգէտուն կամ զկայսուրդ նոցին: — Սահեալք ընդ ոչ քաջանչան ծովեզերս՝ որ ի Հր. նորին և Հռովմայ, և մետեալ ի գեղեցիկ սահմանս Նէպոլսոյ, առաջին յուստ-



ւոր լինել Հայոց ի Մեսսինէ և յառաջնում քառորդի ԺԸ դարու, վկայի ի միաբանութենէ նոցին գնալոյ յուխա յորելեան տարւոյ (1728) ի Հռովմ. յիշին և յետ այնր Հայք անդ որպէս և ի Պալերմոյ:

Սա յայժմուս մայրաքաղաք Սիկիլիոյ (ըստ աւանդական պատմութեան հնագրաց նոցին՝ շինեալ յԱրաւեանց որդւոց Նոյի յետ 117 ամի ջրհեղեղին), յաւէտ սիրելի եղև Հայոց՝ ի յետնում դարու, յորժամ (յամի 1783) միաբան ժողովով և ուխտիւ քաղաքացեաց՝ կարգեցին Պաշտպան և պահպան նմին զՍ. Լուսաւորիչ մեր, բեռեալ մասն ի նշխարաց նորին. էր յայնժամ անդ երէց մի Հայագզի յերկրէ Լեհաց, յորմէ տեղեկացեալ ինչ ինչ զմերոցս, գրիչ ոմն իտալացի՝ համարի ի Հայոց բնակելոց վաճառականութեան աղազաւ ի միում գլխաւոր քաղաքացն Սիկիլիոյ՝ մուծեալ առ քաղաքացիս սովորոյթ ինչ հայկական՝: — Ի կէս ԺԷ դարու յիշին ի Վենետիկ վաճառականք ոմանք Հայք, որք յամի 1641 տանէին անտի ի Պալերմոյ 100 բռն վաճառելեաց, և յամի 1659-67 դաշնակիցք Սիկիլիացի վաճառականի. յամի 1682 այլք պարտատեսարք ազգայնոց իւրեանց՝ (Սքետեաց և Տիրասորոյ? Dirato) ի Պալերմոյ: Աստ էր յելս դարուն կամ ի սկիզբն յաջորդին (ԺԸ) Ասլան Յակովբեան փեսայ Աղայ Մաթուսի, կնան (Լուցիա Եզտէխան), և որդւոջն (Ճիվան):

Ոչ շատ հեռի ի Պալերմոյ յարեւմտեան եզեր կղզւոյն և ոչ աննշան քաղաք է Տրապանի (Trapani) 2, ուր, որպէս և որ ի հանդիպակողմն կղզւոյն ի Կասաւնիա (Castania) և յայլն եւս չէ անյուսալի գտանել հետս Հայոց վաճառականաց. նոյնպէս եթէ և յամենայն բազմաբնակ և աղողակ քաղաքս և նաւահանգիստս ընդարձակ և երկայնածէ երկակողմն ափանց խաւիոյ՝ երկայնամտիցէ որ հետազօտ լինել, սկսեալ ի Վենետիկոյ կամ ի Գենուայ շուրջ պատեւով զՍիկիլեաւ: — Իսկ մեզ շատ լիցի այսքան յիշեցութիւնս. բայց մինչև ի բաց գնացեալ ի գեղեցկանսիհ աշխարհէս խաւիոյ, յուշ լիցի և զարմանալին եւս, զի ոչ ի ծովեզերեայ շահաստանն միայն, այլ և ի միջերկրեայ քաղաքանին՝ և յոչ սակաւ՝ կանգնեցան եկեղեցիք, հոգեւորնք և վանատունք Հայոց յ' ԺԳ և ԺԵ դարս, ոմանք վաղ այլք անագան մինչև ի ԺԵ բաւեալք՝ ազգային ծիսիւ և լեզուաւ, (զատ յանուանեալ Հայ Եղբարց իտալացւոց՝ որք ցկէս ԺԷ դարու): Կանխաւ եւս և այլուր իսկ յիշեալ է մեր զքաղաքան զայնոսիկ, միանգամ եւս գէթ յանուանէ յուշ արասցուք. ի դքսութեան Վենետաց՝ զՊատաւիոն 3. — Ի Լոմբարտիա Միլան (և Բաւիա). — Ի Տոսկանա՝ նախ յիշեալքն Փորթեցիա, Պիզա, Սիենա և Պիստոյա. — Լուկա յԵմիլիա. — Ի Հռովմէական մարզո՝ նախ ինքն մեծն Հռովմ, Վիտերբոյ, Ֆորլի, Ֆարֆաանոյ, Բոյոնիա, Պարմա, Ֆրանցա, Ֆրաչարա, Թուրթէ և Պեզարոյ և Իմոյա. — յԱմբրիա՝ Գոչչոյոյ, Օրվիետոյ և Պերուզիա: Եւ զի սկզբնաւորութիւն սոցին կամ հիմնարկութիւն ոչ միայն ի չքեղ ժամանակի թագաւորութեան Հեթմոյ եղեալ է, այլ և յանջութեան կամ ի նուազութեան Լեւոնի ԴԷ, (որ է առել իբր ի 1226 ամէ ց' 1340), յայտ է՝ զի ոչ առ աստուածապաշտութեան կամ աներկեանութեան միայն այլ և առ սէր շահու և բարեկեցութեան՝ զայն ի ծովային շահաստանս և ի ցամաքայինս, յորս յոմանս աշխարհաժողով տօնաւաճառք լինէին, և հիմնէին աղթաւանս, 40 իւրաքի՜ գրեաթէ ընդ բովանդակ խաւիա՝ ծագէ ի ծագ 4, որպէս և յայլս ոմանս աշխարհս Եւրոպոյոյ, յորս կայ արդ մեզ ակնարկել, ոչ ընդ երկար դեգերանք:

ԺԲ. Հայք յայլեայլ աշխարհս Եւրոպոյոյ. — ՓՌԱՆԿԱՍՏԱՆ. — Ծանօթութիւն ծանօթագուծին եւրոպական աշխարհաց՝ Փռանկաց կամ Գաղղիոյ՝ ոչ նոր է և առ Հայս. և ոչ երկրայելի՝ եթէ անդստին ի կիսոյ Զ դարու ընդ այլոց արեւելեայց զային այս և մերքս. զի մի ի հնագոյն պատմչաց նոցին՝ Ս. Գր. Տուրոնի եպիսկոպոս՝ յիշէ ի քաղաքի անդ զՍիմոն դոմն եպիսկոպոս Հայ յամի 891, (որպէս յՈւլէան կին մի Ատորի): Յայժ հաւանութեան է ընդ Արաքացւոց նուաճողաց երկրի իւրեանց՝ գալ և Հայոց վաճառականութեան աղազաւ՝ մինչև ի կողմանքս արեւմտից, մանաւանդ յաւուրս բարեկամութեան և բանազնացութեան Հարուն ամիրապետի ընդ Մեծին Կարողոսի. առ որ թերևս ընդ ընծայաբեր դեսպանն էին և ի մերազգեացս 5. Յայտնի է ամենեցուն որ առ Խաչակրոք ծանօթութիւն, նիզակակցութիւն, խնամութիւն, թղթակցութիւն Ռուբինեանց մերոց ընդ Արիական ազգին՝ որպէս կոչէին պատմիչք մեր յայնմ ժամանակի, և գրեաթէ ընդ դրունս Հայոց մտին դորա (Խաչակրոք) յԱտորիս՝ զոր նուաճեցինն. և անտուտ ի վերոյ ԺԱ դարու ցվերլ կոյս ԺԴԻ՝ մինչև ի մահ Լեւոնի ԵԷ՝ վերջնոյ թագաւորի մերոյ՝ ի մայր քաղաքաց նոցին ի Պարիզ, անընդհատ եղեն և քաղաքական հաղորդութիւնք երկոցուն ազգացս, հարկ է թէ և վաճառակցութիւն. քանզի ծագկեալ էր և յաշխարհի անդ վաճառականութիւն ի Կաստիլիա և Պորթուգալիա նահանգս, և յաւէտ ի քաղաքս Մոնպելիէ, Նիմ և Մարսիլիա՝ առաջին շահաստան նաւահանգիստ. յորոց եկք ի Կիլիկիա հաւաստիք են 6. հաւանական և ի Կիլիկիոյ երթք անդր. որոց վկայք պատուականք պահին առ նոսս

1 Եւ ծիճաղական. իբրու եթէ կանանց յղեաց Հայոց՝ պահել կորին զայլոյ, և ի ծնանել զաւակին՝ ոսլ զենուլ զկորինն ի սեամս դբան սան իւրեանց. և յայտանէ կարծէ զբիշ զսովորութիւն կանանց քաղաքի իւրոյ՝ ազուցանել նորածնելոց իւրեանց մուճակս զայլելիս:  
2 Մերձ ի սա նաւելով Տէր Բոգոստոս անուն երէց կայազգի ի սկիզբն 1730 ամի՝ † և ծովընկէց եղեալ է:  
3 Տրանչ. Հայ գործակից Նովելլի Ամբրոս վենետիկեցոյ՝ աւուրքի ի սմանէ վաճառք ի Տօնավաճառ Պատուոյ, ի սոնի պաշտպանի քաղաքին Ս. Անտոնի, յամի 1586:

4 Տես ի Սիսուան, յէջ 372:  
5 Եթէ ոչ հաւաստեալ՝ ոսլ Կարտաստորէն առ պատմիչ զորոց ինքնակալին, Միսնի Սուրբ Գուլլ վանաց (Monachus Sangallensis) ի գիմաց դեսպանացն եկելոց. ընդ որս և Հայք, ի Կամբուլոյ նորին զարեւոբեալս յերկրի իւրեանց՝ առաւել քան յուրէ խալիփային. Nos Persæ et Medi, Armeniique et Indi, Parthi et Elamitæ: omnesque Orientales, multo magis vos quam dominatorem nostrum Aaron timemus.  
6 Յամին 1295 վաճառական ոմն Պորթուգալի բերեալ էր ի Կիլիկիա՝ կայելիս, կարոցս և մոմեղէնս, և այլն:

համառօտ հրովարտակը կամ շնորհագիրը Լեւոնի ԴԻ, ստորագրեալը ի Հեթմանց պաշտօնէից նորին (1321), առ « Մուկրուզիէրցի վաճառականքն », առ որս ասէ և հօր իւրոյ Օշի տուեալ համանք (հրովարտակ) թէ և անյայտացեալ արդ: Այնքան կարեւոր համարեալ էր ասէ ոմն ի պատմաց փռանկաց (Vaisette, Պատմ. Լանկը-տագայ), զի Փիլիպ. Վալուայ թագաւոր նոցա յանձն էառ խաչակիրս յարուցանել (յամի 1335) յօգնութիւն Հայոց, այլ ոչ արար, վասն որոյ և տրտմեցոյց զնոսա: Ի նորագել անդ ի ԺԵ դարու Յակոբայ (Cobur) զտուն վաճառականութեան, ընդ այլոց արեւելիւնց վկային եկեալ և ի Հայոց. իսկ ի Շահարասեան դարու կամ ի Զուղայեցոցն յեղանակի, վկայ գալստեան սոցա այսր արձանագրեալ կայ (զատ յայլոց) հրովարտակ ԺԳ Լուդովիկի և հռչակաւոր պաշտօնէի նորին Ռիչլիոյ ծիրանաւորի, տուեալ ըստ խնդրոյ նոցին և Շահարասայ՝ յամի 1629 (28 նոյեմբ), որով համարձակեցուցանէ զերթեւեկ նոցա ի Մարսիլիա, ուր՝ յայտ է թէ կանխաւ իսկ գալին, (որպէս և յիշին ի դիւանս Վենետկոյ եկք յամի 1612). և իբրեւ զծանօթ տեղւոյն հաստատէ նոցա անդ թարգման զհամադգի նոցին Անտոն Արմենի (Հայ) մականուանեալ և գործակալ զփռանկ Լուդովիկ Ժրեժիս: Ատեան ելելմտից Պրովենցայ արձանագրեալ զհրովարտակն ի դիւանս իւր ԵԿ (Aix) <sup>1</sup> յամի 1646, յաւել նմին հաստատութիւն: Յաջորդ ճարտար պաշտօնէին և նման նմին ծիրանագրեացն Մագարե՝ առ գերահռչակ թագաւորաւ ԺԴ Լուդովիկաւ, զուն գործեաց եւս քան զեւս բարգաւաճել զվաճառաշահութիւն Մարսիլոյ, և յայն սակս խորհէր և զաղթականս ի Հայոց հաստատել անդ, որոց յաճախութեան վկայէ և տպագրատունն զոր ուղղեաց Ոսկան վարդապետ և յաջորդ նորա Վանանդեցիք (Թովմաս և Ղուկաս), ուր յամէ 1673 մինչեւ ցամա 1718 տպագրեցան 30 իւ շափ մատեանք՝ ծանօթ մեզ 2, ի վերահաստատել հրովարտակի արտօնութեանց վաճառականացն յամի 1660, արդարեւ յորդորեցաւ առեւտուր քաղաքին գալստեամբ մերայոց և այլոց արեւելեաց, ի վնաս և ի նուազութիւն խաւարկանացն մերձաւորաց՝ Գնեուայ և Լիվոնոյ: Կրկին վերահաստատեցաւ հրովարտակն և յամի 1703, որպէս և յամի 1706, վասն ազատ ներթրուութեան արեւելեան կտաւուց:

Յերկրորդ կէս ԺԵ դարու ի թիւս վաճառականաց Հայոց յիշին ի Պարիզ, Աղազար որդի Սիմոնի (1651), զոր եղբայր իւր Անտիք ի Վենետկոյ կարգէր իւր գործակալ, առ ի պահանջել զինչուն գրաւեալս ի Փռանկաց ի (società անուն) նաւու. և Մարտիրոս յամի 1678, որոյ հայրն Մարգար Աւագնեց (Avacesciuz գրեալ երիցս) մի էր յազնուականաց և ճոխից հինն Զուղայ՝ վա-

րեալ ի Շահարասայ ի Նորն. և երկուքն միւս որդիք նորա էին ճոխ վաճառականք ի Հնդկիս, և համօրէն ընտանիքն ընդ նախապատիւս ի Սպահան, խնամեցեալք ընդ ազնուագոյն տոհմից Զուղայեցոց, և կին նորա (յայնժամ +) յարքայական զարմէ Անեցոց համարեալ էր լինել <sup>3</sup>. զայս վկայեցին 10 Զուղայեցի վաճառականք ի Վենետիկ առաջի նօտարի. (և զի ոչ այլ ազգ ինչ յիշեն, բայց զմահ կնա՛ն, մարթ է կարծել եթէ կամէր վերատին կին ածել): — Իսկ ի Մարսիլիա յիշին յամի 1689-90 վաճառականք Մարգար Մարտիրոսեան, Անտ. Տէր Աստուածատրեան, Գարուստ Արսայ, Փանոս որդի Մայիպայայ, Պասպաճան Սոչրանուռ: Զյետինս զայս յամի 1691 գործակալ իւր կարգէր անդ Յովհան Աղազար ի Վենետկոյ, որպէս ամաւ յառաջ զՄարգար որդի Մարտիրոսի, նոյնպէս ի Մարսիլիա, առ ի պահանջել և թափել զգրաւեալսն ի Մարեկ փռանկ յելուզակէ՝ զերկուս ծրարս իւր, յորս էին 2000 էւ շափ մատանքարինք աւկաղք, և աւելի քան 3000 զոյգք գնդաց ի նոյն քարէ, և 250 փերթք հնդկակտաւուց: — Յերրորդ քառորդի ԺԸ դարու յիշին ի Մարսիլիա Աստուածատրոյ Ղալարիացի (յամս 1749 — 89), Գրիգոր Ագոչեցի (1765), Յովհ. Թովմասեան՝ յետոյ քահանայացեալ (1769): — Յայտ է արդ ամենեցուն յայժմուս յաճախել ոչ սակաւ վաճառականաց Հայոց ի բարեխոնման քաղաքի անդ մեծի:

**ՍՊԱՆԻԱ.** — Ոչ փոքր և ոչ անագան ծանօթութիւն և յարնչութիւն եղեալ է Հայոց և ընդ Սպանիացիս, և թերեւս յառաջ քան զՄիջին դարս, ի պատճառս ուխտի Ս. Յակովբայ Առաքելոյ ի Կոմպոստելլայ, յոր՝ յամենայն աշխարհաց դիմէին ուխտաւորք, և զոր առաւել քան զայլս պատուէին Հայք, ժառանգաւորք դուով պատուական զլիտոյ Սրբոյն և մեծակառոյց վանացն յԵրուսաղէմ, ուր և պատրիարք կոչմամբ պատուեալ արքեպիսկոպոս մի նստի նոցա յաւուրց մեծի Վկայասիրին Գրիգորի. և ըստ այսմ մասին՝ ի դէպ է ընկերչակս ասել զերկոսին ազգս՝ և մտերիմս: Եւ է իսկ պահանջել՝ զի յիւրերաց խնդրեցին խնամով՝ առաւել եւս տեղեկանալ զպաշտպանէն իւրեանց (Ս. Յակովբայ), Հայք անդատին յ՝ ԺԳ դարէ կամ եւս վաղագոյն, ի ձեռն Յովհաննու ուրումն վարդապետի, գնացելոյ յայն սակս ի Սպանիա և թարգմանել տուողի զՊատմութիւն Գլխատման Առաքելոյն. իսկ Սպանիացիք՝ ի ԺԶ դարու առ մեծաւ թագաւորաւ իւրեանց Կարոլոսի, որ դեսպան կամ նուիրակ առաքեալ էր առ Հայս, որոյ որդին (Աարքոյ) եպիսկոպոս Մուրցիայ, ետ թարգմանել ի Յայմաւուրաց կամ ի Տօնամակաց Հայոց՝ զաւանդեալն առ մեզ պատմութիւն <sup>4</sup>. Առ թագաւորութեամբ Ռուբինեանց վը-

1 Ի քաղաքի աստ վահանակէ Էր յամի 1639 կամ յառաջ քան զայն ինչոյ փռանու ճոխ վաճառակ, ան Հայ, թուի անկտակ. վասն որոյ ինչքն ան՝ անէին թագաւորին (ԺԳ Լուդով.) որ և հրովարտակաւ 13 մայիսի, 1639, շնորհեաց զամենայն՝ Շալլանոյ պաշտօնէի իւրում երախտաւորի:  
 2 Իսկ ի մարգարագրեցին (Պարիզ) անդատին յամի 1653 տպագրեալ էր հայ-լատին բառադիրք Ռեւելոյ:  
 3 La defonta moglie d'esso D. Martino era della casa

d' Ania derivante dal sangue reale d' Armenia Maggiore.  
 4 Կ Նշանաւոր իմն է քաղաքական գործառնութիւն Հայոց ի Սպանիա՝ յայսմ ժամանակի. դեսպանութիւն Բագրեոյ տապառի առ Հայս՝ վկայեալ է ի խնդրի պատմութեան Ս. Յակովբայ, այլ պատճառն ոչ: Առ յաջորդաւ Կարոլոսի՝ Փիլիպպոսի յաճախն եկք ի Հայոց. յամի 1585 շահն իբրտավէնտ առաքէր առ նա պէսպէս պարզեալք զիւր, հաւանօրէն ի ձեռն Հայոց ոմանց, զի նոքա թարգմանեցին յիտալ լեզու, որպէս թափ է վենետիկ, և անտր

կայեալ իսկ է վաճառարարձ նաւաց Սպանիացոց (Պարցելնացոց, Մայորիկաց և Սելիլեայց) մատչելի շահաւորանս Կիլիկիոյ, որպէս յիշի ի հռչակաւոր մատենի Մովսէսի օրինացն, (Consolato del Mare). յիշի և խնդիր թագաւորին Արագոնայ յամի 1393 ի թագաւորէն Հայոց, ընդունել ազատաշնորհութիւնս նման Վենետաց և Գենուաց. և թէպէտ չկան ի միջի թուղթք դաշանցն, այլ չեն երկրայելիք: Զարմանալի իմն ի պատմութեան է և այն, զի ի դադարել իշխանութեան ազգիս և ի գերել Լեւոնի Եր, շատագով եկաց սմա թագաւորն Սպանիոյ և աղերսիւ թափեաց յեզրպտական արգելանացն, այլ և պարզեւեաց նմա զտէրութիւն և զվայելս ի կեանս իւր՝ զայժմեան մայրաքաղաքն Մատրիտ, հանդերձ այլովք որպէս վկայեն պարզեւագիրք թագաւորին Սպանիացոց և մուրհակքն Լեւոնի: Թողցուք զանստոյգ աւանդութիւն Յովն. Թագաւորի գալոյ և կրօնաւորելոյ յԱլիկանդէ քաղաքի. այլ ստոյգք են նախայիշեալ եկաւորութիւնք ուխտաւորաց, յորոց մի է և Մարտիրոս եպիսկոպոս Մէրտինոս յամի 1541, որպէս և ինքնին գրէ. « Գը » նացի. . ի Ս. Յակօբն ի Կալիցի, և դարձայ. յայս ժամն » էր թվական Հայոց ԶՂ ամի, յորժամ դարձայ ի Ս. » Յակովբայ ո: Տեսաք և զվերոյշեալ Ղափանեցին Փիրզատէ յերս այնր (ԺԶ) դարու եկեալ ի Մատրիտ. իսկ ի միւսումն (ԺԷ) յաճախեն քան զայլս՝ Միաբանող Եղբարք և Հայք, մերթ յուխտ 1 և մերթ ի հանգանակ արժաթոյ՝ վասն վանորէից իւրեանց, յոր սակս և արքունի հրովարտակօք երթան մինչև յԱմերիկեան գաւառս նոցին:

Բայց զի մեր խնդիր զվաճառականաց է, յիշեցուք յետ Փիրզատէի նախ զոմն Աստոն որդի Հայրապետի յամի 1599 ի Կրանատա և ի Սելիլիա, ուր առաքէ զորդի իւր Սիմոն (23 ամեայ, բարձրահասակ, սեւազոյն, սեւամօրուս, և այլն), պահանջել յԱլվարէս Տաւիլայ Սպանիացոյ՝ զտուեալն նմա փոխ 600 ուէալ և զայլ ինչ: Յետ այնր ի սկզբանէ ԺԷ դարու ցկէս ԺԸ ին անընդհատ գտանին յիշատակք Հայոց ի Սպանիա, այլ ոչ որպէս արժանն էր քննեալք ի դիւանս նորին, մանաւանդ ի Գատիս, ի Սելիլիա և ի Պարցելոնա. որպէս, Արամ որ մեռեալն էր ի նաւելն (1608), և որդի նորա և եղբոր որդի ի Վենետիկ՝ զործակալ և պահանջող ընչից նորա ի Սպանիա՝ կարգեցին զԱնտոն Լուդայեցի ի կէժկոյ: — Անդ էր յայնժամ և Հ. Անդրեաս ի Միաբանողացն՝ պարտական վախճանելոյն: — 1616. Սիմոն որդի Յովսէփայ, ընդունի զինչս Յովսէփայ որդւոյ Հերոնիմայ Տրիպօլսեցոյ, վախճանելոյ ի Սելիլիա ի սկիզբն 1611 ամի: — 1623, Սոքրիաս Մոկացի ի Վենետիկ խոստանայ առ Բանսի Զոռայեցի հատուցանել զպարտս իւր ի Սպանիա կամ ի Գենուա: — Երթացս 20 և աւելի ամաց, 1617 —

յեզուս և սոզազբեցու զերմաներէն խոշոր զօթման տառիք՝ ի նմին ամի: Յէլի ի գիւանս Վենետիկոյ դալուստ երէց դեպտանաց շահին ի Լիզպոնա, և առաջումն անտի ի Պարոս դեպտանի թագաւորին, որ անցանկէց էր ընդ իտալիս, Ասորիս, Եփրատ, ի Պարսից Մոց՝ յՈրմոս: Զարմանալի եւս է առաջումն Սելիլի վազապետի (յառաջ քան զամն 1618) ի Գաւթէ կաթողիկոսէ առ թագաւորն, վասն վիճի Կախաւակութեան ընդ Մելիթեոզի կա-

37. բազմաց զործակալ վկայի ի Սելիլիա Լորենց Հայ որդի Մարտիրոսի. — 1624. Յովն. որդի Պօղոսի, պատուիրէ առաքել յԵրուսաղէմ զարծաթն որ գալոց էր ի Սելիլիոյ: — 1638-9. Գեորգ որդի Յակովբայ Պայեզիոցի էր ի Սելիլիա, (ուր և Յակովբ), և առաքէր յետոյ ի Վենետիկոյ յայլ քաղաք Սպանիոյ՝ եօթն արկեղս ուլունից: — 1654. Մկրտիչ որդի Կիրակոսի պարտական 530 սելիլիացի ուէալից առ Սահակ որդի Առաքելի: — 1661-7. Պոռտախ, և Մնացական որդի Ռոստամայ էին ի Սելիլիա, ուր գնայր և փեսայն Պաւստասայ Մարտիրոս որդի Մկրտիչի: — 1663 ի Գատիս էին Անտ և Պիլատ եղբարք, յորոց խնդրէր զարկղ իւր Հայրապետ Փիրզատէ ի Վենետիկ: — Անդ էր և Թեփոս ֆեաւեալ յամի 1664, և կային առ նմա 253 փերթք սպիտակ ցփսեաց, և Մկր. Յովնանեկս որ առաքէր անդ զԱնտ Մնչգոն բերել զայնոսիկ: — 1676. Թորոս Վարդանուլի եղբայր Ստեփանոսի զրազտ վարդապետի, ի Սպանիա: — Ի վերջին քառորդի դարուն (ԺԷ) հաստատեալ էր և մեծահարուստ տանն Միրմանեանց զործատուն ի Գատիս՝ որպէս ի Վենետիկ և ի Լիվոռնոյ, ուր և էին նոցա ստացուածք բազում. և յետոյ ի կէս ԺԸ դարու զործակալ նոցա Պօղոս որդի Թադէի, առաքէր անտի ցորեան ի Լիվոռնոյ: — 1685 Արա Մարոս առաքեալ էր ի Գատիս առ Գր. Ոսկան 227 լիպրա Խաշնդեղի, զորոյ գին պահանջել անդ ի նմանէ՝ յանձնէր յամի 1690, առ Յովն. որդի Զարարիայ և Մանուկ Միևսեան: — 1695-6. Վարդան առ և տուր ունէր յԱլիկանդէ, առաքէր և ի Մատրիտ առ Բաղդասար ոմն պէսպէս վաճառս և « 3 » զուժի ֆուէն 2, 3 արկղ խաշիլի ո: Առ սմա ի Գատիս իրբեւ առ ծանօթի առն՝ ագաւ ամիսս վեց (յամի 1719-20) Յարոտրիան եպիսկոպոս Կեսարիոյ Պաղեստինոյ, և յրջեալ յայլեայլ քաղաքս, ել և առ թագաւորն ի Լիզպոնա (1731): Գնայր անդր և Տէր Ենրուս Խոռաբերան եպիսկոպոս Անթապոլս յամի 1733: — Հաւանօրէն էին և ընտանեօք իսկ բնակաւոր Հայք ի մեծի շահաստանի անդ Սպանիոյ՝ ի Գատիս, որպէս Բաղդասարն և Եղիսէ ոմն որդի Տէր Բարոտրեան, որ գրէր անտի յամի 1737, կին ունել և որդիս: Ի կէս դարուն (ԺԸ) (իւր յամի 1751) յիշի Պր. Ֆիտան վախճանեալ ի Սպանիա:

Ի ժամանակի անդ յաճախելոյ վաճառականաց Հայոց ի Սպանիա՝ ընդ սոցա իշխանութեամբ էր և յարակից ախարհն Պորտոգալ, և չիք երկրայել զի յածէին և անդ մերայինքս. նա և վաղազոյն իսկ եղեալ էր ծանօթութիւն ընդ սոցա, հռչակաւոր դեպտանութեամբ Մատրիչի հայազգւոյ վաճառականի ի թագաւորէն Եթովպիոյ առ թագաւորն Էմմանուէլ, ի սկիզբն ԺԶ դարու (1509-12). և թէպէտ չեն ամենեւին աներկբայ աւանդեալքն զՄատթէէ, այլ ոչ յետ բազմաց պատմի և

Թողիկոսի, յիշեալ ի սպանիացի պատմիչէ (Ֆիկերոսոյ), իբրեւ առ իրուարար կամ հաշտարար?

1 Ի դիւանս հոգեաան Հայոց ի Հոռով յիշին յանուանէ յայլեայլ ամս (1665-9) կինդ ուխտաւորք երթեալք կամ զարձեւաք ի Ս. Յակովբայ, բնիկք Սեբաստիոյ, Սոս, Բերիոյ, Եւզոպիոյ և Եւզեպոյ:

2 Թուի մուշկ ի պորայ կենդանեաց:



Պերմուտեզի ընտրելու պատրիարքի Եթովպաց տանել ընդ իւր ի Լիզպոնայէ Եթովպիա՝ (յամի 1538) երկուս Հայս զԱնտոն զմականուանեալն Ֆերնանտեզ և զԳասպար Սոչոյանոյ, թերեւս Բերիացի (Ատորի): Աբրտէր գրիչ հայ-լատին քերականութեան յամի 1711, Խուելով զայսարհս և զբաղաքս՝ ուր երթեւեկէին Հայք վաճառականութեամբ, առաջին զՊորտոգալացն կարգէ, (In regno Lusitanæ et Hispaniæ). — Յիշի Անտիք որդի փանոսի յառաջ քան զ1667 ամ ի Լիզպոնա գործակից Ֆրանչիսկոսի Չիմայ:

Վաղազայն նշմարի ընաելութիւն Հայոց և ընդ այժմեան դիտոյին ծովուց և վաճառականութեան, Անգլիոյ քան այլոց ազգաց Արեւմտեան Եւրոպոյոյ. զի անդատին ի կէս ԺԳ դարու երեւին անդ մերայինք, ոչ լոկ ի կիլիկոյ այլ և ի Մեծաց Հայոց, թէպէտ և փախուտեայք յայսարհադորդ թաթարաց. յամի 1252 Եւրիկ Գ զրէ առ մերս Հեթում՝ զպատրաստելն ի խաչակիր արշաւանս. նա և կանխագոյն եւս (1228) յիշի զալուստ Հայ եպիսկոպոսի միոյ ուխտաւորի, յորմէ հըռչակեցաւ զրոյց կենդանի մնալոյ Կարտափիլոսի (Cartaphilus) ապտակողին Յիսուսի, և անտի ասի ստեղծաբանեալ որ այժմս հռչակի և վիպարանի թափաստական Հնէայն: Առաւել քան տասնեակ մի թղթոց և գրուածոց գտանին թագաւորաց Անգղիոյ և մերայոցս, և դեսպանաց սոցին և եկաց, ի ԺԳ-Գ դարս, զատ ի գրեւորն յաւուրս պանդխտութեան և երթեւեկի Լեւոնի վերջնոյ յԱնգղիա և ի Գաղղիա: Այլ յաւէտ նշանաւոր է ի պատմութեան միանգամայն քաղաքականի և վաճառականի, յարնչութիւն երկոցուն ազգացն՝ ի շահաբասեան յեղանակի՝ ի Հնդկաստան, ուր կանխեալ սփռեալ էր Հայոց և գրաւեալ զչահավաճաւ ընդարձակաստարր գոհարաշատ և ամենաբեր այնր աշխարհի: Համարձակին գրել գիտունք՝ զի Հայք երբեմն գանձողք և համարողք հարստութեան երկրին՝ ուսուցիչք հնարից նորին եղին Անգղիացւոց, յորոց ապա նուաճեցաւ աշխարհն այն և ինքեանք (Հայք) ի նմին՝ զօրութեամբ զինուցն և նաւուց, որպէս տեսցի և ի յիշատակի Հնդկաց. մեծ եզեւ կորուստ Հայոց, այլ ոչ անփառունակ տեղի տալն այնպիսոյ մեծի և զգօն ազգի ծովակալի:

Մի ի գլխաւոր վաճառաց զոր յարեւմտից բառնային Հայք մետաքսաբերք՝ էր Չոնիայն անգղիական, յոր սակս յարուեստաւոր քաղաքս Բրիտանիոյ և յաւէտ ի մայրաքաղաքն Լոնտոն՝ լինէին եկք վաճառականաց մերոց. ընդ որս ի խռանի խառնիճաղանջ այնր Բարբրոնի՝ ասէր ճարտասան զննողն Էտիպըն՝ ընդհարկանիլ ի շրջին. իսկ Հայտ որ զազանդոց Պարսից կրակապաշտից գրեաց, բազում ինչ ասէ ուսեալ և տեղեկացեալ զժիւսից նոցա՝ ի Հայոց անտի, և առաւել ի Շաֆտսգեան Անտեաց. ի գիտնոց նոցուն անշուշտ դրդեալ և վիխրոնեանց նախ առաջին ձեռն արկին թարգմանել ի լատին

լեզու զերկոսին հռչակեալ գործս զերապանծ հեղինակի մերոյ Խորենացւոյ, զՊատմութիւնն և զԱշխարհագրութիւն: Փոխարինաբար իմն և յառաջ իսկ քան զսոսա՝ ինքնաբուսակ պուետիկոս մի մեր՝ Տէր Յակոբ Գրիգորեան որ « աշխարհատեսութեան պատճառաւ » ասէ եկեալ յԱնգղիա յամի 1674-5, զրէ յԱբսթորտ շափաւ՝ գովասանութիւն « վասն այսր Պրիքսանիս կղզոյս և այլ » լոց բանականաց մեծի և փոքոյ, առ հասարակ ամենեւն « ցուն »: — Ի սկիզբն ԺԼ դարու (1701) Խոճայ Պապասոն և ընկերք իւր կողպածաք ի Քիտ անուն յեղուզակէ, ինդրէին դատիւ զինչս իւրեանց. աղբրսագիր նոցա և քննութիւնն պահի ի դիւանս Գանձատան Լոնտոնի՝: — Յետ ամաց ինչ յիշի ի Լոնտոն Հաձի Յարոտիան եղբայր Հաձի Սարգսի, յորոց ընկալեալ էր Պետրոս Սիման, մի յերեւելի և ճոխ վաճառականաց Վենետկոյ, 920 մորթս գամշոյ և փոխանակադիր 4100 դուկատաց, և պատուիրէր ի կտակի իւրում (1712) հատուցանել Յարութեան զգին մորթեացն յորժամ վաճառեսցին: — Յայսմ դարու (ԺԼ) երեւի յաճախել Հայոց, թերեւս և յեկաց Հնդկաց՝ ի Լոնտոն, և ոմանց բնակել ընտանեօք. յորոց մի Ազոնցեցին Պետրոս որդի Պողոսի (Բեդրոյ Բաշոյ կոչեցեալ), յիշի յամս 1767-90, յետոյ վասն հակառակութեան իրիք եղելոյ՝ մեկնեալ յԱժտէրիսան: — Հայք ոչ զարեւելեան միայն վաճառս տանէին յԱնգղիա, այլ և զիտալականս, և յաւէտ զապակեղէնս Վենետկոյ. ուստի՝ յամի 1641 բառնայր Պապա Խաչատուր 30 արկեղս հայելեաց, 14 արկեզս ուլունից և 7 արկեղս բաժակաց, վճարելով ի նաւոդչեայ 300 աւալ:

ՀՈՒՆԳԱ. — Եթէ ոչ ի միջին դարս՝ այլ ի յեզանակի Չուրայեցւոց կանխեալ է առնչութիւն վաճառականաց մերոց ընդ Հոլանդացիս քան ընդ Անգղիացիս. յառաջ քան զԺԷ դար, յորժամ բարգաւաճագոյն էր վաճառականութիւն նոցա քան զբրիտանիականն: Մանթաֆոյն են իրք մերայոցս յայսմ աշխարհի հրատարակեալք յայլեայլ օրագիրս ազգայինս՝. յորս յաւելցուք ինչ ինչ աստանօր: — Ելանակ յաճախութեան վաճառականաց Հայոց յիշի եկեղեցի մեծ առ երի զերեզմանատան իւրեանց, յանուն Ս. Կարապետի, որոյ վէճ մի մնայ և պահի արդ ի Մարսիլիս, արձանագրեալ յամի 1663-4, կազմեալ « Արդեամբք Չաքարի որդոյ Դաւթի » ճիւղայեցոյ և ենթագրոտքեամբ Կարապետի բանի » սպասառքի»: Բայց ի սկիզբն ԺԼ դարու շինեցին Հայք նոր եկեղեցի (1714), Ս. Հոգի անուն օժանդակութեամբ նշանաւոր և բազմաշրջիկ վաճառականի Պապաձանի որդոյ Սոչոյանոսի. որոյ արար նաւակատիս թովմաս վանանդեցի. վերանորոգեաց յետոյ հանդերձ հոգեւորմբն՝ Յովնաննէս վարդապետ Անասիացի որդի Տէր Միկայայ, յամի 1749, օժանդակութեամբ Պր. Առաքելի որդւոյ Առաքելեանց Պողոսի, և մոր նորա վալտի դասեր Բարադանոս Շեհրիմանեանց:

1 Տօգս էրբ 280 ութուստն ազգաբնակ յամի 1875:  
2 On 5 may, 1701, a Clam was made to them (Attorney and Solicitors) by one Coga Baba and other Armenian merchants, who pretended they had been robbed of the

goods by Kidd.  
3 Աբաւայս Աբարատեան, Թիւ 650. 1057: — Աբմեհա. Գ. 12. 13. 15. 16. 17: — Հարեհե. 160. և այլն: — Աբարատ էլմ. Գ. 142:

Նշանաւոր չան զաւակաւաճան՝ այլ նորին իսկ օտտաբուծեամբ՝ եղեւ հաստատութիւն հայ Տպագրատան յԱմբարշտում, որ գերազանցեաց զնախ այլովքն և քան զյուրովս ի յետնոց, մտադիր ճարտարութեամբ Երարեցոյն Մատթէի<sup>1</sup>, վաստակօք և արդեամբք քաջածանօթ Ոսկանայ վարդապետի և եղբորն Աշտնեաց և յաջորդաց նորին Վանանդեցւոց, որք յամս իրր 60 (1660-1718) ընծայեցին աւելի քան 9<sup>50</sup> տպագիր մատեանս ծանօթս, որոց զուրկ պարծելի Ատուածաշունչն (1666-8): Ի խափանել յետոյ ուրեմն տպագրութեանն՝ զառաւան ետ գնել Հայրս մեր Մխիթար Աբբայ և փոխադրեաց յիւր նորակառոյց մենաստանն ի Վենետիկ:

Ի ժամանակի առաջնոց տպագրութեանց յԱմբարշտում, ի յիշատակարանս գրոցն յիշին ազգայինք ոմանք. և զատ ի նոցանէ Սեֆեր օմն (1658-9), որոյ վէճ էր և պահանջ ի Ֆան Հայտ Հոլանդացոյ:— Յակոբ որդի Ստեփանի (1667) նոյնպէս պարտատէր Հոլանդացի վաճառականաց:— Մովսէս Գաղուստեան վաճառական անկիրական Ստեփոյ, ընդ նմին և Գր. Սարգիսեան (1667):— Ի նմին ժամանակի (1668) Յովն. Երարի ի Վենետիկոյ առաքեալ էր Յակ մետաքսի ի Գոսօ? քաղաք Հոլանդացոյ, 16, 478 դուկատաց (հանդերձ նաւորչէին) և այլք նոյնպէս առաքէին մետաքս և ստեւ, և միջնորդք նոցա (սէնսալք) վիճէին ընդ մաքսապետաց՝ վասն ազատօրէն հանելոյ ի Վենետիկոյ, և յաղթէին:— Թերեւս սակաւինչ յետ սոցա Առաքէն այն ծերունի վաճառական՝ որ ամի ամի հանեալ ի Վիլնայ քերէր մետաքս 8 միլիոն արծիից, տանէր յԱմբարշտումս յԱպահան ազգ ազգ աղխամաղխի, յորս ի դէպ է զառաջին տեղին ունել Չոչիայից: Վաղու իսկ ձգեալ էր Հոլանդացւոց առ ինքեանս զմետաքսաբեր Հայս, յորժամ (1633) ոչ յաջողեցաւ դքսին Հոլլանդի համադկեր լինել մեծի դքսին Մոսկովաց՝ թոյլ տալ մետաքսաբերացն գալ ի դաստակերտ իւր Տրետերիկոյատ:— Մինչեւ ցվեր յԵրզնու և անդր եւս յաճախէր յԱմբարշտում երթեւել վաճառականացն Հայոց, որոց շատութեան՝ միանգամայն և կրօնասիրութեան վկայէ ի ժամանակի շինութեանն նորոյ եկեղեցւոյն՝ (1717) տպագրութիւն համառօտ յաւմագրոց վասն վաճառականաց, որպէս և կոչի զբրոյնս: Երկին յայնժամ յանուանէ Պր. Թարգիսեան որդի Խօժայ Բանանի, Պր. Աշտ, Պր. Սահրատ, որք ետուն նկարել զպատկերս եկեղեցւոյն և ստորագրել զանուանս իւրեանց:— Աղանայ որդի Երատուրի, Սահարմայ, Մանուէլ որդի Աղանայի, Մարտիրի որդի Տէր Պողոսի, Պետրոս որդի Գորգեանի. տասն ամօք յետոյ Պետրոս որդի Յովն. Խօշկաշինեցոյ, Յարութիւն Գարագաչ Կ. Պօլսեցի. առ որովք քահանայ նոցա Տէր Երիսէ գժտեալ ընդ ժողովորեանն՝ փակեաց զեկեղեցին առ վայր մի. ապա գուն գործէր բանալ և զտպագրատունն, մինչ վաճառեալ իսկ էր կէս տառիցն:— Յամի 1741 յիշին Խօժանայ որդի Գրիգորի, Յովնանչեան որդի Յակոբչեանի, Պօղոս որդի Ոսկանի, Կազարէք որդի Մկրտումի. առ որովք

և յետոյ վերանորոգէր զեկեղեցին՝ Ամասիացին Յովհաննէս վարդապետ, որ յօրինեաց բառագիրս Հայ-լատին, և մի ի յաջորդաց նորին՝ Տէր Յովն. Բագրատունի որդի Սիւնեացի Սարգարի, աշակերտ Ղազարայ կաթողիկոսի, կամէր աւա տպագրել ի Վենետիկ (1790):— Էին առ սքօք և տանուտեարք տեղաբնակք, որպէս Ազուրեցի Պետրոս, որ կին ածէր ի Զօֆանեան տոհմէ (1765). փարթամն և բարեպաշտօն Առաքի որդի Պողոսի, † 1773, որ կամէր թարգմտել ի հին եկեղեցւոյն առ որդոյ իւրում. իսկ միւս որդին և ժառանգ Բաղդատ յայնժամ ի Մոսկուա էր, և եկեալ դատ վարէր յերկար ընդ Շէհրիմանեանց. կտակակատարք հօրն էին անդ Առաքի որդի Երայեայ, Սահարմ, Արքիսանդր որդի Մասիի, Աշտիս որդի Ատուածատրոյ, ընդ որս և Սահրան որդի Դանիէլի, և Դիմաս սպասաւոր եկեղեցւոյն: Բարազամ յիշի ցվեր լոյս դարուն իրբեւ զխաւոր նուազեալ վաճառականացն, և համախօս Յովհաննէս Կիրակոս Եղանովի կոչեցելում և Բագրատունեոյն, որք ոչ կամէին փակել և վաճառել զեկեղեցին և զհագետունն, որպէս օտիպէր կաթողիկոսն (1790) ի ձեռն գործակալի իւրոյ Զմիւռնացոյ, և դատ վարեալ յաղթող գտան վաճառականքն. և եկեղեցին տակաւին մինչեւ ի սկիզբն դարուս պաշտեալ լինէր, և լուեաց յետ մահուան վերջին վաճառականի՝ Ստեփանի որդի Գարգիսի, յամի 1836. ապա երէց ոմն նորաղանդ իրբեւ ի վարձուունէր զտեղին ցամն 1851, յորում ի օպառ փակեցաւ. և կալան ի վարձու կուսանք Քորք Գթութեան, որք և գնեցին յամի 1874 հաճութեամբ Գէորդայ կաթողիկոսի, 12,000 հոլանդեան ֆլորինաց. ընդ որս և 18,000 ֆլորին հաւք կալուածոց նորին՝ առաքեցան յԱլիսիսիս. իսկ զմնացորդ գործեաց հին տպագրատանն՝ Գեորգ Արծրունի գնեալ շնորհեաց Ներսիսեան վարժարանի Տփղեաց:

ՊրիիԺ, զարդիս փնակեալ Բեզիկոյ պետութեան՝ այլ ի միջին դարս անանջատ ի Հոլանդիոյ կամ Տլամանաց, և ցարդ զխաւոր քաղաք Տլանտրա նահանգի՝ մի յերեւելի շահաստանաց ժամանակին էր, յորում ստի անդատին յ' ԺԲ դարէ հաստատաբնակ լինել եկաց 17 թագաւորութեանց, հանդերձ այլովք որ ի հեռաւոր աշխարհաց. ընդ որս ի դէպ է կարծել և զՀայս. զորս ընդ Կիպրացւոց և Երուսաղեմացւոց՝ յիշէ իսկ պաշտօնեայ մի նոցին հանդերձ նեհիւ դրամոց նոցին. և այլ առ պատմիչ (Balteo) ասէ, զհետ այլոց արեւելեայց եկեալ զՀայս և զԹուրքս ի թագաւորութեան Յովն. Վալուայ (1399-419). Գարձեալ և այլ ոմն ի նշանակելն գնեւ մաքսատանց՝ յիշէ նաւահանգիստ մի. Lascaso in Arabica գրեալ, փոխանակ գրելոյ Layaso in Armenien, որպէս հաւանի հրատարակող ծանօթութեանցս (Վանսէն Պիւլ), ըստ խնդրոյ մերոյ<sup>2</sup>. և ի գիրս մի վիպասանից Փոսանկաց ասի, Բաւրակ և այլ պէսպէս՝ Համեհոնք ի Հայոց գան ի Պրիւս և յերկիրն Տլանդրաց: Ի կէս ԺԳ դարու շինեցաւ անդ հոգետուն մի կամ ապաստանարան

<sup>1</sup> Մինչեւ անարտեալ երախայրեաց տպագրութեան Յիսուս Որդոյ. մեռաւ ի 22 յանուարի յամի 1664:

<sup>2</sup> Ce ne peut être autre chose que Lajazzo. — VANDEN BUSSCHE. Une question d'Orient.

եկաց և պանդխտաց, ընդ որս յիշին և Հայք փախուցեալք յարչաւանաց Սառակինոսաց. և ի հաշուէգիրս Պրիւժ, Տամ (Damme) և Եկլիւզ (Ecluse) քաղաքաց Յլանտրայ՝ նշանակին տուրք ողորմութեան բաշխեալք աղքատաց և պարդեւք քահանայից Հայոց յամս 1357. 1369. 1416. 1447-8. 1478: — Հաւաստագոյն եւս է վկայութիւն հեղինակին Պեկոլոտոսեայ որ համեմատեալ զուգէ զ՛րոտը կշիւ Հայոց ընդ 14 յիպրայից Պրիւժի, և զմարկ մի Պրիւժի՝ աւէ 6 ունկի և 13 ստաուլին ի Հայս: — Ի վերջ կոյս ԺՂ դարու (իբր յամի 1390) շնորհեցաւ արտօնութիւնն Հայոց և Թուրքաց ի Պրիւժ՝ վաճառել զկապերառ իւրեանց առաջի դրան Ս. Դոնատ եկեղեցոյ. (որպէս յետոյ և ի հրապարակի Ս. Մարկոսի ի Վեներիկ՝ հանդէպ դրանց հրաշակերտ տաճարին): — Միւս եւս պատմիչ Յլամանաց (կէյլեար Gaillard) առանց յիշելոյ՝ յանուանէ յիշէ զգալուստ Արեւելեան վաճառականաց ի Պրիւժ յամի 1340, և առ գփտութեան ինչ մեկնել յամի 1354, և վերադառնալ յետ չորից ամաց (1358). որք և յամի 1478 կառուցեալ իւրեանց պանդոկ հոյակապ, զպաշտամունս իւրեանց կատարէին յեկեղեցու՝ կարմեկականաց: — Այս ամենայն յիշատակք շատ իսկ հաւաստեն զվաճառակցութիւն և զգալուստ Հայոց ի Յլանդորս ի ԺՂ-Ե դարս. յետ այնր ոչ յիշին. սակայն չէր մարթ կարծեմ յաճախելոցն յՍմադէրտամ՝ զանց առնել իսպառ զայնպիսի քաղաքօք, որպիսիք էին Պրիւժ, Սեկերաս, (ուր ոմն ի Բոլլանդեանց ետես և խօսեցաւ ընդ արքեպիսկոպոսի Հայոյ, յամի 1699, որ Թուր վանանդեցին թովմաս). Կանր, որոյ մի ի սրբոց պաշտպանաց է հրաշագործն Ս. Մակար Հայ ազգաւ, եկեալ և հանգուցեալ անդ ի սկիզբն ԺԱ դարու:

**ԳԵՐՄԱՆԻԱ.** — Երանթութիւն մեծ և գործառնութիւն Հայաստեպցս առ մեծագործն Լեւոնիւ ընդ Գերմանացոց, կանխէ քան զդաշնակցութիւն նորա ընդ Խաւալացիս՝ ի Թագաւորութեան իւրում. յառաջ քան զայն նա և քան զգալուստ մեծին Փրետրիկայ խաշակիր գործն, և մահուանն ի սահմանս Ռուրինեանց, որոյ բանակացն և դադաղաց ընդ առաջ և զհետ ընթանային Պարոնայք Հայոց և կաթողիկոսն, և Ն. Լամբրունցի՝ ասպնջական զորավարող արքեպիսկոպոսի Միւնսդէր քաղաքի. ապա յորդոյ նորա (Ենրիկոսէ) ընկալեալ Լեւոնի զցանկացեալ թագն՝ յառաջին հրովարտակս իւր գրէր զինքն իբրեւ ին կայսեր, և առաքէր դեսպանս ի դուռն նորա, զեղբայր Ս. Լամբրունցոյն (1211, զՀեղի-Հեթում), որպէս և յաջորդ իւր Հեթում Ա. Թագաւոր՝ զայլս: Չէ ստարոտի ընդ դեսպանաց սպրդել և վաճառականաց ի միջնաշխարհ անդր Եւրոպիոյ, այլ ոչ ունիմ առձեռն հաւաստիս զայնր ժամանակի. բայց համարին հմուտք զարեւելեան դրամս (արարացիս) յոլովութեամբ գտեալս յեզերս Պաղդիականին, արգասիս գալլուսեան անդր արեւելեան վաճառականաց: Իսկ ի յետին դարս, զորոց յաւէտ բանքս են, Թէպէտ և Նոյնպէս պակասեն ինձ յիշատակարանք, այլ չէ երկրայեկի այցելութիւն մերոց. մանաւանդ ի շահաստանսն զաշնակից (anséaticque) քաղաքաց Պաղդիականին և ի ճարտ-

արուեստան, յորս երթեւեկ նոցա ի կիսոյ ԺԷ դարու և յ՝ ԺԸ-ի յիշի ի բազմաց, յորոց մի վերոյիշեալն Աբրտէր. զատ յայլոց ի Հանպոչիկ, Ֆրանկֆորտ, Պրեզրաւ, Դրեզրա, ուր էր Մարկոս Ական յամս 1750-1. Լիպսիա, ուր ետես Աբրտէր զվանանդացիսն Թովմաս և Ղուկաս, ընդ որում և խօսեցաւ. Եւրեմիկի՝ յորմէ զարդեղենս և պաճուճանս բառնային Հայք՝ ըստ վկայութեան Դաւեռնեայ. և ի ծովեզերեայցն՝ աք, և բազմագոյն եւս ձեռագործս ի վաճառաշատն Լիպսիոյ. ուր և առ մեզք ի սկզբան վերստին եկաւորութեան մերայոցս՝ յառաջնում ամին (1824), ըստ նշանակութեան վաճառահամար ցուցակաց քաղաքին՝ վեց Հայք գնեցին ինչո 600,000 ֆրանգաց, և տարան ի Տփղիս և յՍտեաս, յերկրորդում ամին 1,200,000, ի միւսումն 2,800,000:

**ԱՒՍՏՐԻԱ.** — Ի դրան մերոյս Լեւոնի Մեծագործի՝ յիշի և դեսպան Իքսին Աւստրիոյ. այլ եթէ վասն վաճառականական գործոյ և Թէ այլոյ իրիք՝ ոչ է ծանուցեալ, և ոչ այլ յարընչութիւն կամ գալուստ Հայոց յայս աշխարհ ի միջին դարս. բայց չիք երկրայեկ եթէ յայց ելանէին ոմա դրացիքն՝ վաճառականք Լեհահայոց. իսկ արտաքուստ՝ ի Շահաբասեան յեղանակին՝ նշարի և այսր մուտ գտանել Չուղայեցոց: Օրինակ իմն, յամի 1615 Յովն. որդի Ալեոնաց երթայր անդր ի Վենետիոյ, և աղայիքն ոմանք երդմամբ վկայէին առաջի նօտարի՝ զի այր բարի և ուղղափառ քրիստոնեայ է նա: Բայց առաւելաւ երթեւեկն յետ կիսոյ ԺԷ դարու. յորոյ վերջ կոյս և ի սկիզբն ԺԸ-ի Եւրպես ոմն քահանայ էր անդ հաճոյացեալ կայսեր և համարեալ ընդ դրան երիցունս նորին. զոր և տանուտեարք Սիւնեաց ի Թղթին որ առ Պապն (1699) կոչեն « պատարագ մատուցանող մեծ Թա » գաւոր Իմփաւատորին » . ի նմին ժամանակի և Շահրիւման Շահրիւմանեանց գրէր անտի առ իւրսն՝ զամանէ, « Իմպրաթօսին կապելան այ (capellan, մատրանապետ) . » շատ յառաջ այ (յառաջադէմ) . . մին լեւ խայ (Հայ) ե . » պիսկոպոս » . և սա ինքն ի ձեռն այլոյ երիցու Թոյլ ետ ընծայել ի բերելոցն անդր՝ մորթի մի (մուշտակ) « Իմ » պրաթօսին պատիկ աղջկան » . Թերեւս յայսմ նուազի ընկալաւ զպատիւ կամութեան վասն համօրէն ընտանեացն: — Գտանէր անդ ի նոյն ամս և Տէր Թովմանէս ոմն քահանայ, որ յամի 1719 վկայի 114 ամաց լինել: Յիշին և յետ այնր ստէպ Հայ երիցունք ի Վիենա, Տէր Միւնաս յամի 1729. Տէր Մանուէլ Քեֆէցի +, 1740. Բարդոյիմէոս վարդապետ, 1733. Հ. Դաշիք ի կարգէ Քարոզողաց, 1737. քահանայք երեք յամի 1747. և այս հաւանօրէն վասն յերկար կալոյ սոցա և բազմանալոյ վաճառականաց. որպէս զի արքեպիսկոպոս մայրաքաղաքին շնորհեաց նոցա մատուռն մի յամի 1753, մերձ ի կաթողիկէն Ս. Ստեփանոս, զի էին յայնժամ աւելի քան 30 և ոմանք ամուսնացեալք, որպէս և յետ այնր. և ոմանք մտեալք ի սպասու պետութեան կամ յարուեստս պարապեալք. որպէս Առաքել սուրհանդակ (courier), Մարգար Ղանվեճի (1737-51). Յարոչիսն պարսկանայ մունեստիկ ակնավաճառաց (1749), Հաճի Տեղվէք ոսկերիչ (1730). և ի սկզբան դարուս (1804) Օգոստինոս Ա-

դառնալեան թարգման արքունի: Չանց առնեմ զանուամբք վաճառականաց յիշեցելոց ի բովանդակ ընթացոյ դարուս (ԺԸ). որք յամի 1771 ընկալան ի կայսերէ առանձին հրովարտակ վաճառականութեան ի քաղաքի անդ, ուր գտանէր յայնժամ թոռն մի Տեառն Կոմիտասայ նահատակի և խնամի նորին (Յովնան Մօսնհայմ): — Յատկագոյն առեւտուր կամ արուեստ Հայոց ի Վիեննա երեւի ոսկերչութիւն և ակնավաճառութիւն, որպէս և ի մերում ժամանակի. յորում ոչ է անճահ զրել ընդ ազգային ճարտարութեան և զարգասիս մեծի գործատան սպազրութեան, զոր հաստատեցին անդ՝ ընդ վաճառք իրեանց՝ Հարք Միսիթարեանք փոխադրեալք ի Տրիեստէ՝ ի սկիզբն դարուս:

Յետինս այս քաղաք՝ զոր կարգ բանիս յիշեաց, առաջին ծովային շահաստան կայսերութեան Աւստրիոյ, անազան անցեալ ի համար այնպիսի քաղաքաց, եղև և Հայոց վաճառականաց ասպնջական՝ յանցելում դարու և յայժմուս, այլ և եկեղեցականաց, յառաջ իսկ քան զքրնականալ անդ Միսիթարեանց (1775). ի մայր եկեղեցոյն (Ս. Յուստոս) թաղեալ կան կարպետ եպիսկոպոս Բաղիշոյ (1756) մեծ համբաւով սրբութեան վարուց, և Յարոքիւն Բասենցի (1796). յամի 1789 Յովն. փարպետ ունի կարգեալ էր եկեղեցասլան: ի գարմից ընտանեաց Հայոց են ցարդ սերունդք իտալացեալք, յորոց յազնուացն է տուն Հերմեթեանց, մեծարեալ և քաղաքական պաշտամամբք:

**ԼԵՀԱՍՏԱՆ.** — Առաւել քան զամենայն աշխարհս Եւրոպիոյ ընտանեցաւ Հայոց երկիր և ազգ Լեհաց, սեփական իմն սերտութեամբ և հնութեամբ. զի աւանդի գրեաթէ անդստին ի ժամանակի բարձման թագաւորութեան Բագրատունեաց գալուստ Հայոց ի նահանգս Պօղոսիոյ, հրաւիրմամբ դքսի երկրին Թէոդորի յամի 1062, ի կամենից և ի սահմանսն. այլ ստուգագոյն և բազմագոյն եւս եկօք յարչաւանին թաթարաց ի կէս ԺԳ դարու, և սուղ զկնի. և յայտնի թուականաւ յամի 1280, հրաւիրանօք Լեւոնի Դանիելովիչ, ի նորաչն քաղաք իւր ի Լով կամ Լեւկոբոկ, յճանուն բնակութեան նորին և վաճառականութեան. յորմէ սփռեալ և յաւելեալ նորանոր գաղթականօք յայլեւայլ քաղաքս երկրին՝ հաստատեցին Հայք և աթոռ եպիսկոպոսութեան, այլ և սեփական օրէնս վարչութեան ըստ հայրենի հրահանգաց, զլիսաւորաւ վոյք անուանելով, 12 դատաւորօք, այլ և 40 ատենակալ խորհրդականօք, որք և Եղիարք կոչէին վարելով Դատաստանագրովք Միս. Գոյի՝ ըն-

կալեալ բազմապատիկ հրովարտակօք առանձնաշնորհութիւնս ի թագաւորացն Լեհաց. անեցին, զարդացան, ստացան կալուածս, այլ և պատիւ և աւագութիւն և ազնուութիւն և պաշտամունս, և փարթամութիւն մեծ առիւ եւ արիւ. զորոյ հնարս ուսուցին և ասպնջականաց իւրեանց բնկաց երկրին՝ 3. յորում և այլ մեծամեծ իշխանք կամ կուսակալք՝ ի բարգաւաճանս բաժնի իւրեանց՝ բազում արտունութեամբք ձգէին զՀայս առինքեանս. և մինչև ցայժմ՝ թէպէտ և նուազեալք թուով կամ ըստ մասին անյայտացեալք խառնութեամբ ընդ Լեհս, և մոռացութեամբ հայրենի լեզուին, այլ պահեն սերունդք հին գաղթականացն (այսուհետեւ բնիկք եղեալ), զնոյն լեզու յեկեղեցւոյ, անընդհատ վեցդարեան յաջորդութեամբ եպիսկոպոսաց և արքեպիսկոպոսաց իւրեանց, զարդիս միաբանից ընդ Հոովմայ, և պատուեալք են յաշխարհի անդ ընդ երբեակ կայսերական պետութեամբք, որովք նմանեալ երեւի Լեհաստան՝ սեփականիս մերում Հայաստան աշխարհի, ընդ երիւք ինքնակալութեամբք այժմիկ գրաւելոյ: — Սքանչելի իմն մարթ է համարել իմաստասէր պատմաբննաց՝ զգալթականս զայս Հայոց, զրեաթէ կշիւ ի կենդորոնի Եւրոպիոյ կայացեալ, հաւասար հեռաւորութեամբ ի չորեցուն ծագացն, և առաւել քան զամենայն գաղթականս՝ (զոր տեսաքս ի բազում կողմանս նորին), յուղագոյն, հաստատագոյն և տեւողագոյն. նա՛ յաւելցուք թէ և ծանօթագոյն, զոր առաւել եւս ծանօթացուցին արդ բազմապատիկ գրուածք յայլեւայլ լեզուս. վասն որոյ և աւելորդ համարիմ մտանել ի քնին և ի ճառ խնդրոյս շատ իցէ յիշեցուցանել զմանս ի ծանօթարար սցին գրոց, յորոց՝ փոփազողացն մարթ է ուսանել բազում ինչ՝ 5: Բայց գէթ ի հարեւանցի յիշեցին ի ճահ յեզանակի յոր հետազօտէալք զվաճառականական իրագործութիւնս Հայոց, վկայութիւնք ժամանակակցաց սմանց, ի ԺԶ դարու. յորոց մի Սեբաստիանոս Միւնդէր, ի Տրիեքերագրութեանն (Cosmographia) յոգնութիւս առէ ի Լով և ի կամենից զվաճառականս Հայոց՝ բազմամուտս յարուեստին. որք անգուստ երթեալ մըտանեն ի կաֆա, ի կ. Պօլիս, յԱղեքսանդրիա, ի Գաահրէ և ի Հնդկիս՝ 6: Ի նմին դարու և Հեր. Լիպպոման ծանօթատու վենետիկեան պետութեան, յիշելով զՀայս ի տօնավաճառի Լուպլինայ (յամի 1575), և 60 տունս նոցա ի Լով և 300 ի կամենից, համարձակ երթան, ասէ. վաճառականութեամբ ի թուրքաստան, ի Պարսկաստան, յԵգիպտոս և ի Հնդկիս՝ 7: — Ի յիշատակել սորա զԼուպլին՝ ի յուշ գայ մեզ՝ զատ յայլոց՝ և Սնիտոյիս, ուր

1 Յեղեալ ի Լտտին լեզու, յաւելեալ և այլ ինչ օրէնս ի նոյն և ի թաթար լեզու. զլտտինն հրատարակեաց Յերաթիման Պիւլոֆ, յամի 1862, ի Վիեննա:  
 2 Չաղաքեաց կամ զվաւերական ծանօթութեանց և արքունի հրովարտակց վասն Հայոց Լեւկոբոկայ, հաւաքեալ զբնաց վերոյիշեալն Պիւլոֆ գերմաներէն, յամի 1864. Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg. Herausgegeben von D. FERDINAND BISCHOFF. Wien, 1864.  
 3 Ի սցին սակի են, Հ. Միւնսայ Բժշկեան Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, 1830:  
 — Առաքել պատմիչ. գլ. իԸ.

— Բազմովէպ ԽԸ. 58:  
 — Մոսեայ Աղանի. Գ. 175:  
 4 In civitate Camenyensi et similiter in Leopoli sunt multi Armeni, mercatores peritissimi, penetrantes ad Caffam, Constantinopolim, Alexandriam Egypti, Alkairam et partes Indiæ, et mercas afferentes.  
 5 I quali Armeni abitatori della Russia (Rossa) fanno poi mercanzia andando con robbe in Egitto, in Persia, in Indie, e praticando liberamente co' Turchi, fra i quali sono esenti da ogni gabella, per la legge di Maometto, che ha così comandato, per esser stato allevato e aver

ոմն ի մերայոց երկցանց (Տէր Բակոյր Բաղդասարեան) յամի 1704 զրէ տեսեալ ի տօնավաճառի յաւուր Մնըն, դեան Տեառն, արեւելեան Հայս, Երեւանեցիս, Նախի: Ընկանցիս և Կանանցիս (Թուի Կան գիւղ, տես յէջ 288): Նոյն այր վկայէ յայնժամ մաքսապետ պետութեան երկրին Լեհաց իննել զմերազգին Դանիէլ Ծրանուկեան:

Յանկազոյն իմն Լեհահայոց մարթ է գրել և զգաղթական մերազգեաց յՈՒՆԳԱՐԻԱ, որ Թերեւս վաղագոյն իսկ ծանօթացեալ և ընկալեալ էր զՀայս<sup>1</sup>: Ծանօթ է ի պատմութեան մերում գալուստ Անդրէի Թագաւորի նոցա առ մեծազործս մեր Լեւոն յամի 1317, և բանապետութիւն սոցա վասն փեսայացուցանելոյ զորդի նորա համանուն ի Զապել՝ դուստր և ժառանգ մերոյս, յոր սակս եւ աւաքեալ սորա դեսպանս յՈւնգարիա, և յամել նոցա մինչեւ ի մահ առաքողին. և թէպէտ ոչ յաղթեաց ինամութիւնն, այլ Թուի յայնմ ժամանակէ հետէ ոչ միայն կոխեալ Հայոց զճանապարհս այնր աշխարհի, այլ եւ բնակեալ ի նմին: Քանզի անդասին յ'ամի 1343 թագաւոր նոցա Բելա Գ վերանստատէր զազատութիւնն շնորհեալս ի նախնեաց իւրոց առ Հայս, և հարիւր ամառ յետոյ (1343) եպիսկոպոս մի էր Հայոց՝ մերձ ի մեծ քաղաքն Ստրեզոնիա (Կոսն). և երկցապետ Հայ ի կէս ԺԵ դարու այցելու կարգեալ լատին եկեղեցեաց Մեղեովիոյ Թեմի, ի Սիւպին և ի Պրաշով: Յիշին Հայք յաշխարհի անդ և ի յաջորդ դարս. յորս յաւելան բազմութեամբ յամի 1654, և մանաւանդ ի 1673, գաղթականք ի Մոլտաւիոյ. ի Տրանսիլուանիա, և ընկալան ի Միքայելէ Ա Ափաֆի իշխանէ՝ ազատութիւն բնակութեան և վաճառականութեան, և սփռեցան յայլ և այլ քաղաքս նահանգին, յաւէտ ի Ճիւրճեռ, այլ և սղջոյն քաղաքս կանդնեցին. զմին ստացեալ 100,000 սակայ ծախուք (1703) սեփական անուամբ Հայաքաղաք կոչելով. այն է Արմենուպոլիս որ և Կեռայ և Սոնոյչֆար (Szamos Ujar) ըստ Ունգարաց, հրովարտակաւ կարողութիւն Զ, յամի 1726 և զեղեցիկ յարդարեցին. և զԵլիսաբեթուպոլիս կամ Պէշփովլոյ՝ հրովարտակաւ 1738 և 1747 ամաց. յորս, (նուազեալք յերկրորդին) բարգաւաճք յառաջնումն, ազգային լեզուաւ և խառն ծիսիւ պաշտեն զեկեղեցական կարգս, ի վերջ կոյս ԺԷ դարու միաբանեալք ընդ հոռովէականս:

Զոր ինչ ի Լեհս արարին Հայք՝ զնոյն և աստ, պարապեալք ի վաճառականութիւն՝ յաւէտ մորթեաց և արջառոց. քանզի և յոլովք ի դարման սոցին պարապին, և առ սակաւ սակաւ յայլ եւս արուեստս, այլ և յազատականս և ի քաղաքականս, յորս և յառաջագէտք և պատուեալք գտանին, հաւասարեալք ընդ բնիկս երկրին (Ունգարս), յետ խլրտման սոցին յամի 1848, և ապա սերտիւ միութեան ընդ Աւստրիոյ: — Եւ որպէս ի Լե-

հահայս Հ. Սաղովկ Պարոնչ հայրենի ոգևով գրեաց զերեւելի և համբաւեալ արանց ազգայնոց վարս, և աստ նովին ոգևով առաւելեալ գիտնական ժողովրդապետ երէցն Խաչատուր Լուգաչ (Ղուկասեան) գրեաց զՊատմութիւն Տրանսիլուանեան Հայոց՝ ի լատին լեզու<sup>2</sup>:

Ի դէպ էր աստանօր յիշատակ առնել և զրակցաց Ունգարաց աշխարհին՝ սլաւական նահանգաց այժմեան Ռումբնիոյ, Վլախաց և Մոլտաւաց, այլ զի Հայք առաւել եւս հաստատուն բնակութեամբ կացին և կան ի սոսա, ի պատմութիւն գաղթականութեանց նոցին վերաբերի խնդիրն, զոր մարթ է գտանել յայլ և այլ գրուածս և յիշատակս<sup>3</sup>, և զպէսպէս անցս որ ի ԺԶ դարու անցին ընդ նոսա, հանդերձ հալածանք և կոտորմամբ ի Մոլտաւիա յամի 1651, և յառաջադիմութեամբ ի Վլախս, ուր ոմն որդի Մատթէի եհաս գրեաթէ յառաջին բարձ աւագութեան յետ իշխանապետի երկրին, և դաւաճանեալ բանտարգել եղեւ (1692):

Ընդ սոսին մարթ էր յուզել զհետս վաճառականաց մերոց և ի նահանգս հարաւակողման (աջակողման) Դանուբայ, ի Սերուիա, Բոսնիա, Բուլղարիա՝ ուր հնագոյն է գաղթ Հայոց, և ձգիլ անդրագոյն ի Մակեդոնիա և Թրակիա, յորս յաճսխագոյն եւս են յիշատակք Հայոց, և գաղթականութեան նոցին կամաւ կամ բռնութեամբ Բիւզանդացոց յ' Թ և Ժ դարս, Թերեւս և վաղագոյն, բազմազէմ բաղգիւ և պատահարօք: Իսկ ի յետնումն յիշեալ նահանգի՝ ուր ի 16 դարուց հետէ գրեաթէ մայրաքաղաք հաստատեցաւ համօրէն երկրի, նախ յինութեամբ Կ. Պոլսի և կայսերաց ինքնակալութեամբ և ապա Օսմանեանց տիրապետութեամբ, յայտ է զի յաւուրց անտի մեծին Կոստանդիանոսի մինչեւ ցայժմ, որպէս անպակաս եղեւ բնակութիւն Հայոց և աճեաց յոգնախուսն բազմութեամբ, քան յայլ որ և է համաշափ մասն կամ քաղաք երկրի, և ուր յ' ԺԳ դարէ եպիսկոպոս ազգային հաստատեալ էր, ընդ նմին հին և մեծ էր վաճառականութիւն Հայոց. և որպէս հասարակաց՝ նոյն և սոցա համաշխարհական հրապարակ և նաւահանգիստ էր գալոյ և մեկնելոյ անտի ի զանազան կողմանս Եւրոպիոյ, Ափրիկիոյ և ծովեղերեայց Ասիոյ. յորմէ և իրեւ ի բնիկ հայրենեաց իւրեանց՝ երթային Հայք յայլեւայլ աշխարհս երեցուն մասանց հնոյ աշխարհի:

Գիպողագոյն եւս էր հետաքննել զվաճառականութիւն Հայոց ի Ռուսաստան, եթէ չէր արդ գրեաթէ կիսոյ կամ երրո մասին նոցա և երկրի իւրեանց՝ մարզ և հպատակ եղեալ մեծի ինքնակալութեանն. և եթէ չէր սորա ի հին և ի միջին դարս եղեալ մեծ հանգոյց մի ի միջի արեւմտեան և արեւելեան Ասիոյ, ընդ որ հարկ էր անցանել եկաց յերկոցուն կողմանց անտի. ապա և

ricevuto molti benefizi da quella nazione. — HIER. LIP-POMANO, Relaz. Europ. VI. 28).

1 Լուգաչ կարծեաց սուէ Թերեւս ընդ Մանուսայ և Խաղբոց եկեալ պար:

2 Historia Armenorum Silvaniae a primordiis gentis usque nostram memoriam; e fontibus authenticis et Documentis antea ineditis; per CHRISTOPHORUM LUKA-

CSI Parochum Armenopolitanum. — 1859, Viennæ. Typis Congregationis Mechitharisticæ.

3 Որպէս ի նախապիշեալ գիրս շնորհաբար հորդորութեան Լեհաց Բժշկեան Հ. Միկայ:

— Մասեաց Աշխարհի. Գ. 97.  
— Համբաւաբեր, Թ. 64.  
— Լուգաչ, 16.



գրեաթէ անհրաժեշտ էր Հայոց ի խորս արեւելից դիմելոց՝ վաճառակցել և ընդ Ռուսաց, բառնալ ի բերոց երկրի նոցին և մատուցանել յառքերելոցն արեւմտականացն և հարաւայնոց: Օրինաւոր կամ հաստատուն վաճառականութիւն ընդարձակեաց Հայոց դուքսն Քիեւայ ի ԺԱ դարու (1063). ուր յետ սակաւուց, առ Մոնոմախ Վլատիմիրաւ, կանգնեալ էր և եկեղեցի Հայոց, ըստ վկայութեան մեծի պատմիչ նոցին Գարամզինայ: Արժանի յիշատակի է և վկայութիւն Յայամաւորաց մերոց ի նմին ժամանակի, զի ի պատմելն զնահատակութիւն Գաւթի և Ռոմանոսի, (յամի 1172) յաւելու վասն ըստ քանչեւագործութեան նոցին, « որոց բազումք ի մերում » այսարնէ տեսողք եղեալ՝ պատմեն մեզ »: — Բայց ի նորում յեղանակի (Շահաբասեան) յ'ամէ 1626 համարի սկիզբն յաճախելոյ նոցին Ջուղայեցւոց ի Ռուսս. Թէպէտ և յառաջ քան զայն յիշին եկք նոցա, որպէս ի Սմոլենսք՝ յամի 1611. և վաղագոյն եւս ի խնդրոյ իշխողաց երկրին՝ որ յայս կոյս պարսպաձեւ լերանցն: Մի տմն ի դեռպանաց կամ նուիրակաց տէրութեան Վենետիոյ յամի 1657, ծանուցանելով զոր ետեսն և քննեաց ի Ռուսաց աշխարհի, համարձակեալ ասէ յայնժամ ի Մոսկուա և զմուտս Պարսից, այլ յաւետ Հայոց ի Գլորիկրատ (? որպէս և ի Նովկորոտ, յՄտորխիան<sup>1</sup> և ի Ղազան<sup>2</sup>. յ'որս բերէին մետաքս, ակունս, համեմունս, և մանաւանդ ընտիր գէնս, և զարմանալի եւս Ջկուսն անտիւնդոս ի Կազրից ծովէ ի Մոսկուա. և չէր յայնժամ շոգի կամ հողմն որ վարէր զկարաւան վաճառականացն այնոցիկ, որք և ընդ ցամաք գնալ առաւել քան թէ ընդ ջուրս նաւարկել սովորեալ էին: Նոր իմն յեղանակող և յորդոր վաճառականութեան Հայոց ի Ռուսս ի նորում ԺԱ դարու, արժան է ճանաչել և զնորոզոն Ռուսաց զՄեծն Պետրոս, որոյ խնամ և խստումն մեծ էր առ Հայս, ընկալեալ մարդասիրապէս և զնուիրակ նոցին զամենամուտն Խորայի Որի (1701), և աներկբայ կամք նորին, եթէ չէր կանխեալ մահուն, և ոչ յար զրաղեալ ի պատերազմունս. որոց ըստ իմիք ձեռնտու եղեն և Հայք, զսրաժողով լինելով ի կողմանս Սիւնեաց և Արցախոյ, և բերելով նմա ճարտարս հմուտս շինելոյ հրանթոս, առաջնորդութեամբ Նազարայ Արեգովիչ՝ ի Լեհահայոց անտի: Առ յաջորդօք նորին, մանաւանդ առ Կատարինեաւ դիւտոյիւ և առ Պողոսիւ, առաւել եւս ազատութիւն և բնակութիւն գտին Հայք, որպէս ամենեցուն է յայտ, յայլեւայլ նահանգս Ռուսաստանի, ուր և ողջն քաղաքս կառուցին ինքեանց (Կատարինասլաւ, Նոր Նախջեւան, Գրիգորուպոլիս, Նոր Արմաւիր, և այսօրիկ յառաջ քան զգրաւել կիսոյ

մասին Հայաստանեայց ի Ռուսաց՝ յերկրորդում քառորդի դարուս, որով յերոպական ոճ հրահանգաց մուծաւ և վաճառականութիւն ազգայնոցս ի մեծի ինքնակալութեան անդ, և յասպարէզ մրցանաց ընդ սլաւեանս և ընդ այլ խառնիճաղանճն ազանց:

Եթէ յետ այսքան յածելոյ ընդ արեւելս և արեւմուտս և ընդ հարաւ Եւրոպոյ, հարկ իցէ ակնարկել և ի դժուարամտոյց ի ցրտագին աշխարհս հիւսիսոյ նսրին. — ոչ պակասն և ի սոսա հեռք ամենակախ վաճառականաց մերոց, ի Շոււետս և ի Դանիս, նա և բազմաթիւ կամ խմբովին լինել վկային, եթէ ոչ իցէ մեծարանօրէն ասացեալ<sup>3</sup>: Իսկ եթէ անդրաշոյն եւս մինչեւ ի սառնապատ սահմանս զնացեալ իցէ մերայոց ի խնդիր մորթոց և մուշտակաց՝ անասնոց նոցին, զայն ոչ գիտեմ, բայց զի և այդքիկ մի ի զխաւոր վաճառոց նոցին էին՝ այն արդէն յիշեալ ուրեք ուրեք: — Այլ արդ թողեալ զԵւրոպա համօրէն՝ վերադառնալ պիտի մեզ յԱսիս ի բնական մեր մասն երկրագնտի:

ԺԲ. Վաճառականք Հայք յայնչայն աշխարհս Ասիոյ: — Դճանակեցաք ի սկզբան բանիցս զդիրս աշխարհիս մերոյ և զձկտումն բնակչացն ի վաճառականութիւն ի հեռուոր կողմանս երկրի և յօտար ազինս. առ սրս ի դէպ էր թէ ոչ լոկ զսեփական երկրի իւրեանց զբերս տանէին կամ փոփոխէին ընդ նոցայոցն, այլ և զ'առ ի յայլոց առեալսն և բերեալս. տեսաք եւս զի ըստ բնական իմն հարկի՝ սկսեալ էր Հայոց ընդ սահմանակցաց իւրեանց վաճառակցել, և ոտն առ ոտն յառաջել ընդ սահմանս նոցին, ընդ Կովկաս ի հիւսիս, ընդ բազմասեռ ազինս Փղզուն Ասիոյ և Պոնտոսի՝ յարեւմուտս, ընդ մեծամեծ պետութիւնս Միջագետաց ընդ հարաւ և ընդ Պարս, Մարս և Թուրքաստանեայց՝ ի խորս արեւելից: Բնական իմն է ընդ մերձաւորացս առեւտուր, աւելորդ և զյիշելն համարիմ. շատ լիցի զհիւսիսայնոյն վկայութիւն Ստրաբոնի (ԺԱ. է) որ վասն Առքս, Δορσ, Թերեւս Աւարք և Սիրակ կամ Շիրակ անուանեալ տոհմից Սկիւթաց կամ Սարմատաց, (որոց թէ և չէ քաջածանօթ տեղի բնակութեան՝ այլ յայս է լինել ի հիւսիսոյ Կովկասու և ծովուց Պոնտոսի և Կազրից), որք գային բառնալ ուղտուց զվաճառս Հնդկաց և Բարբելացոց՝ զբերեալսն ի Հայոց և ի Մարաց: Եթէ հաճոյ իցեն և գեղեցիկ զրոյցք մերոց վիպասանից՝ յաւելցեն փաստս վաճառականութեան Շիկափոկ պարանք Թազաւորին իւրեանց սրաթեւ երիվարան վարգելոյ ընդ Կուր գետ, առ ի կարթել զաչագեղ զօրիորդն Աւանաց. « յայլառ » շատ, և ոսկի բազում տուեալ ի վարձանս » նմին, զի

1 Աստ Անդգիտիք ուղեւորն Ճէ. քինսըն յամի 1559 հանդիպեցաւ Շամախեցի վաճառականաց:  
 2 . . . Mosca nella quale altri mercanti non erano ammessi già, oltre a paesani che i Lithuani, i Polacchi; ma hora vi vengon assai Persiani, ma più Armeni, nella città di Clopigrad . . . Nel ducato Nungardiense (Novgorod) . . et in Nungardia . . in Citracan e nelle Isole dei Mercanti appresso Casan, praticano Tartari, Persiani et Armeni . . I Persiani et Armeni portano Spetiarie, Lino, Panni di

Seta, et altre cose che producono le provincie loro prosime, et quel che al Duca molto importa armi finissime. Dal Mar Caspio fino a Mosca si portano Pesci perfettissimi in gran copia. Cresce di continuo il traffico in quelle parti, et più in Citracan (Ստաւերխան) che nelle altre. — FR. TIEPOLO, *Discorso delle cose di Moscovia*.  
 3 Ջայս վկայէ բազում անգամ յիշատակեալն Սքրոտէր ի Քեբականութեան իւրում. Item, Holmiam Svetiæ et Hafniau Daniæ turmatim excurrunt.

ազգայինը նոցա ներկեցեցն ի կարմիր՝ զմորթիս իւրեանց: Իսկ զնորոց և զմերոց ժամանակաց՝ ներեսցի յիշել զբան նորագոյն ճանապարհազրի ուրուք (Եռնեստ Թիլման), որ կոչէ զՀայս Թագաւորս վաճառականորեան կովկասու, և յաղթուս մրցողացն ընդ ինքեանս Ռուսաց՝: — Ընդհանրական պատմութեան վաճառականութեան անկ է ցուցանել մեզ զբարգաւաճանս աւրուեստին՝ յարեւմտեան դրակիցս Հայոց, ի Պոնտոս, ի Գամիրս և յայլեայլ աշխարհս Փ. Ասիոյ, ի ձեռն բնկաց և յաւէտ հելլենական տոճմից և գաղթականաց սփռելոց ի միջաշխարհին և յսփռունս Եւրասիեան ծովու, առ որս ի հնումն և ի նորումս՝ այնքան բնական իմն էր յաճախութիւն Հայաստեից, զի և անգամ աւելորդ յիշելն. բայց եթէ գբան մի Ստրաբոնի (ԺԲ. Բ), որ ի ճառքն զմեծ և շահաստան քաղաքէ Կոնստանյ Պոնտոսի, ճոխ շտեմարան ասէ զայն ամենեցուն որոց գային և բերէին ի Հայաստանէ, յայտ այսու առնելով զբազմութիւն վաճառականաց մերոց՝: — Ընդ հարաւային դրացիս իւրեանց վաճառակցել Հայոց, կամ լաւ եւս, դարմանել զնոսա պէսպէս բերովք, այնքան բնական և հարկաւոր էր, որքան զի դանդաղ և անհարթ էին բարք մերձաւորացն այնոցիկ, նոյնպէս և սակաւ մի բացակայիցն՝ երբեմն հզորաց և աշխարհակալաց (Բարեւազուոց ասեմ և Քաղդէացուոց), զորս ի սկզբան բանիցս յիշեցաք, ուր բարգաւաճէին ի հնումն՝ Բարեւոն, Նիւնուէ, Ռագաւ 3, Եկրատան. և ի միին դարս՝ Մծբին, Դարս, Ռակկա կամ Կալինիկէ, Ամիդ 4, Բերիս 5, Երեսիս, (զոր ողբայրն Ն. Շնորհալի), և յայժմուս Բաղրատ երբեմն աթոռ ամիրապետաց մալիմանաց:

Ի սկզբանց անտի, և առաւել եւս ի Շահարաոեան յեղանակի՝ դիրակոխ ճանապարհ կամ կամուրջ տնցից Հայոց՝ յարեւելս և ի հարաւ՝ էր Աշխարհն Պարսից, զորս և մերձաւոր ազգակիցս մարթ է համարել, որպէս և լեզուք նոցա վկայեն, թող զսերտ յարընչութիւն պատմական՝ յառուրց կիւրոսի մինչեւ ցայժմ, և վաղա՛ գոյն եւս ընդ Մարաց, որք թերեւս մերձաւորագոյնք եւս էին Հայոց, որպէս են աներկբայապէս աշխարհաբն:

Սկզբնաշաւիղ դիրազնաց վաճառականութեան ազ-

գաց ծանուցան գետք, և հրապարակք՝ բերանք նոցին, այսինքն յինավայրքն ուր գետքն նաւագնացք Թափին ի ծովս. այսպիսի տեղի մի էր յունջ Պարսկային Մոցոյն կամ Հնդկայինն ովկիանու (վասն մեծամեծ ինքնակալութեանց երկրին՝ Բարեւազուոց, Քաղդէացուոց և Պարսից) ծանօթ քաղաքն Ռոմոս, այսպէս կոչեցեալ յանուն Սրմոզոն հրուանդանի, ըստ Դիոնիս. Պեռեկիգեայ հին ծովաբնին աշխարհազրի, իսկ ըստ Նիկեփորայ Վլիմիրայ 6 Սրմենիոս լերին՝ յանուն Հայոց բնակելոց առ նովաւ: Որ զինչ և է անունն, յայտ է թէ յոյժ հին է շտհավաճառ տեղւոյն, յաւէտ արծարծեալ ի ժամանակս մեծի աշխարհակալին Աղեքսանդրի, այլ յետ այնր նուազեալ՝ յաճեւութեան Աղեքսանդրիոյ Եղիպտոսի, և զըրեաթէ զանիւլացեալ հազարամեայ պարագայս, մինչեւ ի սկիզբն ԺՁ դարու (1808) Լուսիտանացին Ալպուքէրք ձեռն արկեալ և նուաճեալ զայն, ի դիւր նաւելոցն ի Հնդկիս, վերակենդանացոյց և երաց ասպարէզ ամենայն ազգաց առի և տրի, բաց յԱնգղիացուոց նախանձորդաց: Չեն պէտք յաւելուլ եթէ ընդ դիմողան անդր կանխեալ գտան և Հայք 7. նա և յառաջ քան զայն յելս կոյս ԺԵ դարու յիշէ անդ զՀայքս Գենուացի ոմն վաճառական. իսկ տեղեկագիրն (Անդրէաս Կորսալի, Corsali) զրէ յամին 1818 ընդ Թուրքաց և Պարսից՝ զՀայս, և ի կղզւոյ անտի ասէ անցանէին ախայխիւրքն ի Հայս և ի Թուրքիս. և բնակիչքն ասէ Պարսիկք են այլ և Հայք 8, զովելով զճարտարութիւն նոցա միանգամայն և ըզմարդասիրութիւն: Ընդ այլոց ազգաց յիշին մերքս և ի քարոզութեան Հ. Պարզէի (Յիսուսեան) ընկերի Ս. Յրանչ. Քասեբեան. նոյնպէս և ի վերջ կոյս դարուն՝ (1888) զրէ ոմն 9, եթէ երբ և գայցէ ոք յՌոմոս՝ գտանէ ընդ այլոց և զՀայս. իսկ ժամանակակից նորին Նիւպլըրի վաճառական Անգղիացի՝ յիշէ (1884) զարգելումն ազգայնոց իւրոց ի հարստահարութենէ Լուսիտանացուոց. յորոց յետոյ լուծին վրէժ, դրդելով զՇահարաս կորզել ի նոցանէ զՌոմոս, որպէս և արարն յամի 1632, և ընդարձակեաց Անգղիացուոց. իսկ սոքա առ փոքր փոքր գրաւեցին զմեծ մասն վաճառականութեան տեղւոյն, որպէս և ամենայն ուրեք, որպէս զի ի սկիզբն ԺԸ դա-

1 Ces rois du commerce caucasien . . . les Arméniens, leur font une rude concurrence.  
 2 Մասուակ արաբացի աշխարհազրի ի Ժ դարու յիշէ զՀայս ի առաւմտեանս Տրապիզոնի. և նորագոյն ոմն զնաւարկութիւն Հայոց ի շահաստանն յայն ի կէս ԺԵ դարու: Քաղաքն թէ բարգաւաճանք քաղաքին առ սեփական թագաւորութեամբ Յունաց կոմնենեանց յժԳ-ԺԵ դարս:  
 3 Ուր ձերուին Տուրքիթ կէտալ էր զարծաթ իւր առ Հոսուսուկայ, և զոր աշխարհազրի ոմն Ժ դարու կենդրոն ասէ վաճառականութեան Հայոց Արաբաստականի և Խորասանի:  
 4 Հաշակուոր էր առաւմտեան Ամիդայ և առ Թագաւորութեամբ Արշակունեաց մերոց, և ի նոյն աւուրս տեղիցն պաշարեալ առաւ ի Շաղկոյ յամի 389, այլ մեծ մասն բնակչացն վաղազոյն խոյս ետ:  
 5 Պաշտոնեայ մի վենետկոյ ի կէս ԺՁ դարու (1553) յիշէ ըզգործարանս և զգին ծեարի բերիոյ, ամի ամի 200,000 դուկատաց, զոր տանէին ի Մեծ և ի Փոքր Հայս, ի Թուրքիս, ի Պարսս. և այլն:  
 6 Duo opuscula Geographica, ապագր. Լիպսիոյ. 1848:  
 7 Մարթ է զերթեւեկ Հայկազանց ի ժովափունքս և անդրա-

զոյնս՝ անեւ ի մթին և ի նախաղատմական ասացեալ դարս, զուշակելով ի ժամակացն՝ (որք բնական են ծովուն այնմիկ) գտելոց ի գերեզմանս Գուգարաց, ըստ նոր յայտնութեանց և պեղմանց Մորկամի փռանկի, որ գնութիւն գերեզմանացն համարի կինդ դարուք յառաջ քան զքրիչական թուականն:  
 8 Ormuz, alla quale fanno capo tutti i mercanti Persiani, Turchi, Armeni, o di Arabia Felice, che vogliono con ca' alli e altre mercanzie passar in queste parti, per levare Spezie . . . Di questa isola passavano (le Spezierie) in Armenia e Turchia e per tutte le provincie di Persia . . . Sono gli uomini di questa terra massimamente Persiani ed alcuni Armeni, molto liberali e piacevoli, pieni di discezione e gentilezza, amorevoli e virtuosi, e di ogni opera intelligenti. — ANDREA CORSALI. Lettere edite nelle Relazioni de Viaggiatori. II. 64. 118. Venezia.  
 9 Բուենոտենցի Նուշոն Լիւսոտենցի. Hugo Linschotensis in Regnum Congo. "Quocumque tempora adveneris, habebis ibi Persas, Turcos, Armenios, et omnium nationum homines, " etc.

րու (1701) ուղեւոր ուն բժիշկ (Ֆերրանդ. Ferrend) 12,000,000 հաշուելով զերեւմուտ վաճառաց Պարսկային Մրցոյն, զերկու մասն գրէր Անգղիացւոց և զմին աւրեւելեայց, երկիցս ընդ սոսին յիշելով զՀայս: — Ի կէս անցելոյ դարու բազմաշրջիկ երէցն Ջուղայեցի՝ Իգնատիոս Չադատեան ի ծովածոցի անդ և ի Պենտեր ապասի և ի Պասրա, ս բազում և մեծամեծ Հայ վաճառականք « են », գրէր. ընդ որս յիշելի էր և զՌուշիա քաղաք: — Ցուցանեն յիշատակքս զՈրմոս ոչ միայն շահաստան այլ և մրցարան վաճառականաց, յորս եթէ երբեմն զառաջին տեղին ունէին և Հայք թէ ոչ, հաւաստի է առաջնութիւն նոցա ի բնաշխարհին Պարսից, յաւուրց անտի Շահաբասայ և կանխագոյն եւս, մինչև մօտ ի մեր ժամանակս. մինչ զի ի սկզբան դարուս՝ հետաքնին ուղեւոր ուն փռանկ (Բուսիէր) գրեաթէ զբովանդակ վաճառականութիւն Պարսից և Հնդկաց՝ ի ձեռս Հայոց իննել գրէր. որոց, ի միջերկրեայս՝ աշխարհածանօթ և վաղեմի և գրեաթէ սեփա՛ան իսկ էր Դավրէժ մայրաքաղաք Ատրպատականի, բարգաւաճեալ յոյժ ի միջին դարս, յաճախութեամբ Խտալացւոց (Վենետաց, Գենուացւոց, Փլորենտեայց, և այլն), և մինչև ցայժմ գրեաթէ նոյն պէս առաջին շահաստան Պարսից: Ոչ պակաս կամ սակաւ ինչ նուազ ի Պարսկայնոյն՝ ծաղկեալ էին և կասպիականին վաճառաստանք, մանաւանդ Աժտերիսան ի դիպան վայրի՝ առ եօթանասնավտակ բերանով աշխարհագնաց գետոյն Վրկայ, յիշատակեալ ստէպ յամենայն ուղեւորաց կողմանցս և ի տեղագրաց, ի միջին դարուց և ցայսր (Էթիլ կոչմամբ), անանջատ ունելով գլխատակ Հայոց վաճառականաց: Ոչ է մոռանալ և զՌէշդ նաւահանգիստ մետաքսաբերն կիլանայ, յորմէ յիշեցաք (յէջ 444) միոյ եւեթ վաճառականի 8 միլիոնի մետաքս հանել. և ի սկիզբն դարուս դեսպանն Նարոյէտնի Ժուպէր՝ գլխողակ վաճառականութիւն Հայոց յիշելով անդ, 300,000 Ֆր. հաշուէր զսակ մաքսին, <sup>9</sup>/<sub>100</sub> յելս և ի մուտս վաճառոց նոցին: Անդրագոյն (ընդ հիւսիս) քան զՌէշդ, ոչ շատ հեռի ի ծովէ՝ բարգաւաճ էր և Շամախի հին քաղաք Հայ-Աղուանից, զորոյ վաճառականս ետես Ճէնքիսըն անգղիացի յԱժտերիսան, յամի 1659, և որ յիշ յամենեցուն որք զմետաքսի առեւտրոյ ճառիցեն:

Այլ արդ թողեալ զափունս կազբից, և զբազում գիմօք նշանաւոր ծովահայեաց նորին քաղաք գիարաբստ, զմիջակառոցն ընդ բարգաւաճեալ և ընդ բարբարիկոն մարզս երկրի, և զերբեմն սահմանակալ քաղաք Հայոց, ընդ նմին և զորս յայնկոյս կովկասու, ըզթարքոս, զՂջիւտար, և այլն, բնակեալս և ի Հայոց, դարձ արասցուք ի Պարսկայինն, և նաւարկեալ ընդ Որմոս, կամ թէ հաճոյ ումեք թուեսցի ընդ մէջ երկրի Պարսից աշխարհին, (այց արարեալ և Շիրազայ ի Յարսիստան՝ ուր երբեմն 800 տունք Հայոց էին), մտցուք յաշխարհահարաւէր շտեմարանն բազմապատիկ ցանկալի բերոց, ի լայնածաւալն

1 Որպէս առակախօս խրատաւու ո՞ն ասէ. « Զոր օրինակ վաճառական որ զնայ ի Հնդկաստան, տեղն կենալու համար չի երթալ, այլ վաճառ առեւտուր առնէ իւրեանց. բեռն կապէ ուրիշ, արծաթ, սննդ և շարք բերնով դառնայ ի հայրենի

ՀՆԻԿԱՍՏԱՆ. — Որքան հարուստ, տարփալի աշխարհակալաց և ընչաօրաց էր սա՝ ի վաղեմի դարուց մինչև ցօրս այս՝ անգաղար ըղձակերաութեամբ, ծանօթ է ամենեցուն, և հարկ է իրրեւ հետեւանս ցայս վայր ասացելոցս՝ նկատել և խնդրել ի նմին զմերայինքս, ի ժամանակէ անտի Հայկազանց. և աւաղիկ երաշխաւորք կացին մեզ առ այդ ժամանակակիցքն Քանթոն, և Ստրաբոն առ Արշակունեօք (տես յէջ 433) մերձ ի փրկչականն թուականս: Սովորութիւն իմն է պատմւաց կամ գրչաց մերոց ի ճառելն զճարտութենէ ուրուք կամ զտեղւոյ, յիշել զՀնդկաց բերս, զոր համարիմ ի ծանօթութենէ յաճախ երթեւելի ազգակցաց իւրեանց անդր՝:

Եթէ և յառաջն երթային Հայք ի Հնդկաստան, յայտ է զի առաւել եւս յորդորեցան ձեռնտուութեամբ Շահաբասայ, առկայանալով ի զանազան գաւառս և քաղաքս ընդարձակատարր աշխարհին. ուր յանցելում դուրու և ի սկզբան մերոյս՝ գլխաւոր կեդրոնք էին երկաթին մեծամեծ քաղաքքն կալիպաս և Մատրաս: Կարի նշաւաւոր և հին դէպս ինչ յիշեցուցանէ յետինս այս տեղի, յաւէտ ի քրիստոնէական պատմութեան, այլ միջնորդաւ վաճառականութեան, ի Դ դարու, ի ձեռն Մարթովնա կրանա ուրումն մեծահարուստ Հայ վաճառականի ճախացելոյ ի շահավաճառէ Հնդկաց, որ ընտելացուցեալ բնկաց կռակաշտից սահմանացն այնոցիկ՝ զքրիստոնէական կրօնս, հաւանութեամբ և ձեռնադրութեամբ Եւստաքեայ եպիսկոպոսապետի Անտիոքայ, երբ անդր ոչ միայն եպիսկոպոսունս և քահանայս այլ և զաղթականս քրիստոնեայս, յաւէտ Ասորիս, և զնոցին լեզու կամ զքաղղէականն եմոյժ յեկեղեցիս և ի վարժոցս՝ զար չինեաց անդ մերձ ի Գրանակոր՝ ի դաստակերտ քաղաք իւր, որ կոչեցաւ հնդկերէն Մանա-տեվա-բադամ, այսինքն է Մեծին Ատոռոճոյ քաղաք. որոյ և մնացուածք և ո՞ն իսկ շինութեանն տեսանի օտար ի հնդկականէն՝ իշխողք տեղոյն (ի Փիրումալ տոհմէ) Մալապարճ՝ Թոյլ ետուն նոցա, և աճեաց քրիստոնէութիւնն անխափան, մինչև ի մուտս Յիսուսեան քարոզչաց ի ԺՉ դարու, որք սրբեցին զաղանդ նոցին (արիոսական կամ նեստորական) յուղղափառ հաւատս, և ցարդ սերեալքն ի նոցանէ կոչին Գրիստոնեայք Ս. Թովմայի, (ոչ վաճառականին այլ Առաքելոյն), որ համարի առաջին քարոզիչ և աւետարանիչ աշխարհին և անդ նահատակեալ, և պատուի ցարդ յեկեղեցւոյն ի բարձու բլեր. առ որ երանելիս քարեղէն սանդրոց 160 աստիճանօք՝ ետ շինել մեծատուն վաճառականն Պետ. Ոսկան յամի 1726. նըմարին անդանօր՝ և զերեզմանք համազրեացն: Զարտուութիւն համարիցի բանս, այլ ոչ օտար, զի պատճառք իրացդ վաճառականութիւն Հայոց եղեւ, զի Հայ և ոչ Ասորի կամ Քաղղէացի ասեն զհեղինակ գործոյն՝ ամենայն յիշողք, թէպէտ և լեզու օտար եմոյժ, զի չեւ եւս էր հայ դպրութիւն: — Եթէ մի ոք վաճառական այդ

7 տունն. ապա ճանապարհին պատրաստ կենայ, զլուսն ի զիշերն յ վառ պահէ, զսուրն կապեալ և զազնգն ի ձեռն լարեալ. զի մի 7 գող և աւազակ սպանցէ զինքն, և կողոպտեալ տունն զզտնն 7: 2 Նման օրինակ սմին և մերձ ի Սեփոպոս առ Մամլան գետիւ

պիսի ինչ մեծ և հողեկեցոյց գործեաց, գէթ շահասիրութեան իւրում հետեւողս համազգիս եգիտ և յայնժամ և ի յաջորդ դարս, թէպէտ և ոչ յիշեցին, այլ աներկբայ համարելի է և շատ կամ սակաւ անընդհատ առեւտուր Հայոց ի Հնդկիս, յորմէ ի կէս Ժ դարու ճախատէր թագաւորն մեր Սմբատ Բ Բագրատունի՝ տայր բերել զակն լուսոյ հրաշափառ կաթողիկէին Անույ՝ ըզ-Ջանն քիչքեղեայ 8 կամ 80,000 ոսկւոյ գնով: Եւ զի յետ այնր յառաջ քան զՇահարասեան յեղանակն իսկ գոյր երթեւեկ Հայոց Ջուղայեցւոց ի Հնդկիս, տեսաք ի վեր անդր զվկայութիւն Լիպոմանոյ, յամի 1878: Բաղում ամօք եւս կանխադոյն ի կէս ԺԶ դարու պատմի Յակոբայ ուրումն գալ ի Քաշիկր կնաւ հանդերձ, և անդ ծնանել զորդին Ղուչղանի, զոր որդեգրեաց ինքեան անուանին Աբգարաշահ մինչ ոչ ունէր որդի ի թագուհւոյն. յայնժամ եկեալ և այլոց բազմաց շինեցին եկեղեցի յԱրարատապատ քաղաքի. շնորհեաց ապա շահն որդեգրելոյ իւրում զողոյն քաղաքն Հոչլի, և այլ կալուածս ընդարձակս ի Բենկաշա և ի Լանոս, յորոց յետոյ մասամբ հրաժարեալ սորա՝ կեայր իբր մենակեաց և երգահան լինէր: — Յաճախութեան Հայոց ի մեծի քաղաքի անդ (Լահոս) յառաջ քան զուեր Հնոյն Ջուղայ՝ վրկայէ և այս, զի Հ. Կոնէս Բիսուսեան կամելով անտի երթալ ի Չինս, զգեցաւ զտարազ զգեստու Հայոց. և ի միւսում արքայական քաղաքի՝ ի Տէրի, առաջին նուրակն Անգղիացւոց յամի 1616 եգիտ զՀայս՝ կանխեալս անդ վաճառականութեամբ. իսկ իբրեւ միջամուկ եղեն սորա (Անգղիացիք) ի Հնդկիս և զօրութեամբ զինու և ճարտարութեամբ արկին մի ըստ միովէ ընդ իշխանութեամբ կամ ընդ պաշտպանութեամբ իւրեանց զյուրվս ի նահանգաց և ի պետութեանց աշխարհին, ի ձեռն հռչակաւոր Հնդկային Ընկերորդեանն, ստիպեցան Հայք կողմանցն տեղի ալ հզօրագունից (ուրեք ոչ անկախ) և զիջանել ի պայմանս դաշանց և կամ արտօնութեանց. և յետ ոչ բազում ամաց հաստատութեան Ընկերութեանն, յամի 1688 (յունիս 23) նախագահն և պաշտօնեայք կնքեցին ընդ իօջայ փանոսի քալանթորի Ջուղայեցւոց՝ երեսփոխանի Հայոց՝<sup>1</sup> դաշինս, շնորհելով ի բազում իբր հաւասար իրաւունս, և համարձակութիւն բնակութեան և նաւարկութեան<sup>2</sup>. և վասն վաճառուց՝ զոր յօտար աշխարհաց բերէին Հայք՝ սահմանեցին սակ շափաւոր, որպէս զի երկոցուն կողմանց եւս լիցի օգուտ: Այլով եւս առանձին հրովարտակաւ ի նմին աւուր շնորհեցան Հայոց կալուածք և եկեղեցիք ուր և ուրեք զըստցին 40 ազգայինք նոցին: Ընդարձակագոյն եւս իրաւունս տուեալ էր անշուշտ ինքնակալաց և թագաւորաց Հնդկաց առ Հայս յիւրաքանչիւր նահանգս. որոց որպէսն ոչ է բացայայտ: — Մի ի նորագունից համարեալ է տուեալն ի Պէտրշահէ որդւոյ հռչակաւորն Աւրէնկզէպի, յելս կոյս ԺԷ դարու, ի ձեռն Ստեփանոսի վար-

դպետի Ջուղայեցւոյ, որ միայն 3 1/2% պահանջէր սակ մաքսի. և յայլ ամենայն իբր տայր ազատութիւն Հայոց յերկրի իւրում: Թողեալ զհետաքննութիւն այսպիսեացս՝ յիշեցուք զգլխաւոր քաղաքս Հնդկաց ըստ այժմեան քաղաքական կուսակալութեանց Անգղիացւոց, ուր կանուխ կամ յետոյ երթեւեկիւ կամ հաստատ բնակութեամբ կրթէին Հայք ի շահավաճառ:

Յառաջնումն կուսակալութեանցն ի Կալկադայ՝ որ գրաւէ զմեծ աշխարհն Բենկաշա, ի մայրաքաղաքի անդ՝ թէպէտ եւ նուազեայք՝ բայց տակաւին յօրովագոյն են Հայք (իբր տունք 100) քան յայլ ամենայն կողմանս Հնդկաց, և ունին եկեղեցի (չինեալ յամի 1724), վարժոց և ընկերութիւնս մարդասիրականս. իսկ ի վաճառականս նշանաւոր եղեւ ի դարուս տունն Աբգարեան: — Գտանին Հայք յոյժ սակաւք ի Սիտապատ, ուր երբեմն էին գործատունք մետաքսի, որպէս և ի մերձաւորան Մախստապատ և Խասիմապատ<sup>3</sup>. — ի Մոնրիտապատ երբեմն մայրաքաղաք ինքնակալաց, ուր ի կէս ԺԸ դարու Գրիգոր Գորգի խան հայազգի եղբայր Պետրոսի Յարուսթեան էր զօրավար Հայոց և Հնդկաց<sup>4</sup>. — և ի Հնադոյն մայրաքաղաքին Տագզա, յորում արդ տունք իբրեւ 18, և եկեղեցի (չինեալ յամի 1781). — ի Բարնա որ ի Պահար գաւառի, ուր յիշի յետ կիսոյ ԺԸ դարու Հէքիմ Յովհ. Մատարեան վաճառական. — ի Չինստար ի վերայ Հուղի դետոյ, — ի Բոննա՝ որ ի Նիտամ գաւառի երկրին Տէգանայ, — ի Հայտերապատ գլխաւոր քաղաք նորին Տէգանայ. և այլն: — Ի կուսակալութեան Մատրասայ յորում պարագրի արդ Մալապար դրացի ծովուն Օմանայ, ի վաղուց ծանօթացեալ մերայոցս, ի համանուն մայրաքաղաքի որ ի Գառնադիկ գաւառի, ոմն ի մերայոց ի կէս անցելոյ դարու գրէր, «Շատ մեծամեծ վաճառականք և ժողովուրդք և եկեղեցիք»: արդ սակաւ տունք գտանին (18, աւելի կամ պակաս)<sup>5</sup>. եկեղեցի նոցա Ս. Աստուածածին չինեալ է յամի 1772. Բայց էր նոցա հնագոյն եկեղեցի (1712), զոր քակեցին Անգղիացիք: Պտուղ բարի ճոխից վաճառական քաղաքիս՝ ընծայեալ ի սկիզբն դարուս՝ յարատեւէ զանունս նուիրողացն Սամ. Մուրատայ և Եղուարուայ Ռափ. Ղարամեան, ծանօթ վարժարանքն ի վեներիկ: — Գալիքոպ, փոխին, հին և անուանի շահաստանք Մալապարայ, Չանտեանա, կոր ի Գառնադիկ, ուր յամի 1740 քարոզիչ ոմն Յիսուսեան ետես զժերունի Հայ վաճառական ծանօթ Նատիր շահի, և այլն: — Յափունս Մալապարայ ընդ իշխանութեամբ Լուսիտանաց ի կոս շահաստանի՝ ի ԺԶ դարու իսկ բնակեալ էր Հայոց, ըստ վկայութեան ժամանակակից պատմչաց և աշխարհագրաց, նոյնպէս և ի Տիոն կղզւոյ:

Ըստ այլոց մայրաքաղաքաց նուազեալ են և Հայազգիք Պոմպայի կուսակալութեան անգլիական Հնդկաց, յորոյ սահմանս բարգաւաճէր և Չիլրա վաճառականու-

1 Ինքեայ ճա սանդուզ 153 տարեանոց՝ եկեղեցւոյն Լատինաց, և արկ կամուրջ ի վերայ Աղբիւր դետոյ:

2 Ի զարմէ սորին ի Կալկադա էր խափ Առօրեւոն (+ 1790) ճոխ և բարեբաղոյ, պատուեալ յազգայնոց և յօտարաց. — Տ. Բազմեւոյ, ԼԸ. 246:

2 Ազգասէր օրագրք, Բ. 132:  
 3 Աշխարհագր. Աւիոյ 73. — Բազմաձեպ ԼԸ. 242:  
 4 Աշխարհագր. Աւիոյ, Ա, 68:  
 5 Հայք յամի 1877 կամաքէին ի Մատրաս 64 անձինք միայն: — Աւրբոտ, ԺԱ. 78:

Թեամբ Հայոց, որոց եկեղեցի չինեալ է յամի 1698: Յայսմ կուսակալութեան համարի և Գոռնարդ գաւառ համանուն քաղաքաւ որ և Անատոպատ, մերձաւորութեամբն յՕման՝ յաւէտ ծաղկեալ. նոյնպէս և Սոչրադ մեծ և բազմամարդ քաղաք, ուր և բազմութիւն էր վաճառականաց մերոց, և դարու յառաջ չորք երիցունք էին եկեղեցւոյ նոցին, և միւսոյ եւս արտաքոյ քաղաքին: Առտանօր հանդիպեցաւ Գրաւեռնիէ փռանկ վաճառական տեղագիր՝ որդւոյ ճոխի առն Պետրո. Զոռոյայեցոյ, որ վաճեալ էր զմեծ մասն ընչից հօրն (և † ի Բեկու): Յետ կիսոյ ԺԸ դարու անդ էր և Գրիգոր Սանարձի գործակալ ԲՑ. Սեդրակի վենետկարնակ մեծատան: Իսկ ի Գաւկայա որ առ բերանով Միա գետոյ, յիշին Հայ վաճառականք անդստին ի ԺՁ դարէ (1585), յորմէ գուշակի լինել նոցին և յայլս արդ յիշեցելոց քաղաքաց Գուճրադայ: — Այսպէս համարիմ և յԱրա կամ Աքարապատ մայրաքաղաք Դ կուսակալութեան Անգղիահընդկաց, և երբեմն Մոդոլից, զի յիշի եկեղեցի Հայոց, յառաջ քան զամն 1563, գերեզմանքն իսկ վկայեն այդմ. նա և համեմատեալ ընդ այլոց քաղաքաց յիշեցելոց, յետ Կալկադայ՝ ի սմա գտանին այժմ առաւելութեամբ Հայք, իրր 35 տունք, ընդ նմին համարեալ և զմերձաւորն Գոռնարդեր: Ի սմին մարդի է և վերոյիշեալն մեծ և արքայանիստ Տէրի քաղաք, աւերեալ և աւարեալ ի Լէնկթիմուրէ և ի Նատիր (Թահմազուլի) շահէ: — Արտաքոյ անգղիահընդիկ չորից կուսակալութեանց էին և ի մեծի աշխարհին Պիրմանայ վաճառականք Հայք յայլեւայլ գաւառս նորին, որպէս ի Բեկու և ի Հաւա մայրաքաղաքի, ուր յանցելում դարու շինեցաւ եկեղեցի ի Զաղատեանց տոհմէ, յորմէ և քահանայք կային անդ Տէր Պետրոս և Տէր Իգնատիոս (որ պատմէ) յետ այլոց. ոչ վաճառականք միայն այլ և պաշտօնեայք հայազգիք կային ի սպասու թագաւորին Վեդիկո կոյմար պատուելաք և զանձապետ եւս արքունի Նիկողայոս Աղայառննց ոմն, ընդ որոց ոչ կարէին յայնժամ մրցել Անգղիացիք անգամ, ըստ Պիլիսկայ. այսպէս և ի Սրիկնի ծովափնեայ շահաստանի, ուր եկեղեցի հոյակապ կառուցեալ էր Հայոց ձեռնտուութեամբ Նիկողայոսի և այլոց, որ շինեաց և Լատինաց եկեղեցի և վանս: Էր և ի Լէնկ գեղլ եկեղեցի Հայոց: — Զարգիս քան զայլ քաղաքս աշխարհին և քան զբազումս ի Հնդկայնոց՝ բազմաբնակ է հայութեամբ Բրանգուն քաղաք, 20 տամբ և եկեղեցեաւ. ի սահմանս նորին են և այլ բնակութիւնք Հայոց սակաւուց: — Վաճառական մի մեծատուն Հայ յիշի և ի Լուզնով քաղաքի Հնդկաց, յԺԸ դարու:

Վաճառք դոր բառնային կամ խնդրէին Հայք ի Հընդիկս՝ յայտնէ երկիրն ինքնին աշխարհաքարոզ արգասեպն, յորս պատուականացոյն Գոհար ակունք և Աղամանդն էր սիրելի Հայոց, այլ և համբաւեալ ձեռագործ վարչամակնք կամ շալք Քալմիրի, ուր և յաճախէին Հայք, և այլ եւս Հնդկակտաք, Հոտաւտ Եհարք, յորոց յիշէ հին մեկնիչն կամ լուծիչ խրթին բանից Ս. Բարսղի, Բարքարուսական Եղս կոչելով, և յատուկ « Անբար ի » Հնդկաց, Մոռչի ի Թաթրաստանաց »:

Եթէ և ի հարաւակողմն անդրազանգիսեան թե.

բակղզւոյն Հնդկաց, ի Շիամ և ի Գոչինչին՝ յառաջեալ էին վաճառականք Հայոց, ոչ անհաւանական թուրայց զի անդրազոյն եւս վարեալ են ընդ Մալակա և միեալ ընդ մէջ երկուց ովկիանոսաց, Մեծին և Հընդկայնոյն, ի մեծամեծ կղզիսն Սուլտայ, յայտ է, մանաւանդ զալուստ և հաստատութիւն նոցա ի մեծ կղզին Ճեսաւ. բայց այս անագան ուրեմն յելս ԺԸ դարու, յորում Գեորգ Մանուկեան եկեալ ի Մատրասայ հաստատեաց զտուն իւր ի Պարախա և անդ մեռաւ (1827), թողեալ ստացուածս առաւել քան 4,000,000 ֆրանգաց. յորմէ յորդորեալ եկին և այլք ոմանք յամի 1830, այլ և ի Սամարանգ և Սոչրաբայա քաղաք, յորս միահամուռ են արդ տունք իրբու 40 կամ 45, եկեղեցեաւ և բարեկանոն ընկերութեամբ: Նոյնպէս և ի Պիւնակ կղզի և ի բարգաւաճն Սիւկարտը՝ կուսան բնակութեան է Հայոց իրր 10 տանց, որք թերեւ և զլիսաւորք վաճառականաց տեղոյն են. ոչ զիտեմ թէ իցեն և ի մեծի կըղզուոյն Պոռնէոյ: — Բայց յառաջ քան զսոսս յանցելում դարու, թերեւս կանխաշոյն եւս, նաւեալ յայց եւլանէին վաճառականք մեր ի Փիլիպպեոս և ի Մանիլան կղզիս, մինչ տեարք տեղոյն Սպանիացիք՝ ոչ ներէին այլոց ազգաց՝ մանաւանդ եւրոպէացւոց վաճառաչահ լինել անդանօր: Մեծանուն և եղբրամահ նաւողն Լարերուզ՝ յիշէ զՀայ վաճառականս ի Մանիլայ:

Կարգ տեղագրական հետեւողութեան վաճառականութեան Հայոց՝ ի կղզեաց աստի ծագաց արեւելից՝ առաջնորդէ յարեւելազոյն և ի մեծագոյն, թերեւ և հնագոյն աշխարհ Ասիոյ, ի ՉինԱՍՏԱՆ, ըստ մերոց նախնեաց ձեռնաց աշխարհ, որում քան զբազումս ազգաց առաւել ծանօթք էին. մանաւանդ եթէ աներկբայ իցէ գալուստ անտի նահապետաց Մամզունեանց տոհմի ի Հայս, յաւաւրս Վաղարշակայ. այլ սոոյդ է շատ կամ սակաւ ծանօթութիւն աշխարհին առ հարստութեամբ Սասանեանց և յետ այնր Արարացւոց և Բիւզանդացւոց, բերմամբ մեծաչահ շերամ որոյ, որոյ պատուական հիւսուածն (կերպաս) վաղազոյն եւս ծանօթ, այլ յոյժ թանկագին պատմուճանս ընծայէր ճօխից արեւելեայց և Հոռովայեցոց: Ի վերոյիշեալ կղզեաց անտի (Փիլիպպեանց) և ի համօրէն Հնդկային օփանց նաւք վաճառարեք և վաճառախնդիրք զային՝ մանաւանդ ի Միլին դարս, որպէս և ցարդ ի մեծ շահաստանն Գոնդոն, ուր անտարակոյս է և մերոցս գալ ընդ նոսին, թերեւ և ընդ ցամաք, յետ յայց ելանելոյ համաշխարհական մայրաքաղաքին (Փէքին): Ի նուաճել Թաթարաց զաշխարհն՝ տիրապետող նորին Ղուպիլա զան՝ համարձակեաց զերթեւեկ վաճառականաց, որպէս և նախորդ տիրապետքն Արարացիք յաճախէին նաւարկութեամբ, բերելով դախայիտիս Հնդկաց և բառնալով աստի՝ զատ ի կերպասեղինաց՝ զհամբաւեալ Յախմարակիս: Եթէ ոչ յիշի շատ կամ անընդհատ գալուստ Հայոց այսր, բայց ամենայն յիշատակողք վաճառականութեան Հայոց նըմարեն զնոսս և ի Չինս, և առանձինս ի մեծս յայս շահաստան, յորում զկիսով ԺԸ դարու ծանօթ է Խօժտ Շիչքը Պրուսացի, գործակալ վերոյիշեալ վենետկարնակ փարթամ վաճառականին Յովհաննու Սեդրասեան:



Բայց առաւել սիրտի է մեզ ազգային յիշատակ՝ ի վերագոյն ուրեք քան զԳանդոն, ի Ֆրաչիան նահանգի, յայլ չահաստան ծովու, որ ի միջին դարս կամ առ Ռուս բինեամբք մերովք՝ էր յայնմ կողման երկրի՝ զուգակից իմն Այսոյ (ծագաց ի ծագս բացակայք յարեւելս և յարեւմուտս) և է կոչեցեալն Չայթուն յԱրարաց՝ (Zaytun, և Saiton կամ Cayton ի քարոզիչ ճանապարհագրաց եւրոպեացոց, իսկ ըստ Չինաց Tsuen-tcheou-fou, յանկագոյն եւս ի հնուէն Tsé-Thoug), յայժմուս խանգարեալ աւազոյ կուտակութեամբ. այլ ի ժամանակի բարգաւաճանացն՝ յորում բնակէին ի նմա և մահմէտականք և եկք ի Պարսից, գրեաթէ հաւաստի է և Հայոց՝ ոչ միայն գալուստ այլ և բնակութիւն. քանզի ի սկիզբն ԺԳ դարու կամ յելս ԺԳԻ տիկին մի հայազգի մեծատուն ետ կանգնել անդ եկեղեցի մեծ և հոյակապ, և ի մահուն յանձնեաց նորոնծայ լատին Փրանկիական արքեպիսկոպոսի (Գերարդոյ, Gerardus)<sup>2</sup>, որոյ երկրորդ յաջորդն Անդրէաս՝ ծանուցանէ զայսոսիկ ի թղթին՝ զոր գրեաց առ հայրենակիցս իւր Պերուճիացիս, յամի 1336. սուղ ինչ յետոյ ծանուցանեն և այլք զի էին անդ երեք եկեղեցիք Փրանկիականց, և փնդուկ վաճառականաց: Սեփական վաճառ քաղաքիս էր կերպասն նուրբ՝ որ յանուանէ տեղւոյն կոչեցաւ յԱրարացոց զայրուցնիկ, յԽալազոց ժեղանի, և ի Փռանկաց սադէն, որպէս և ցարդ կոչեն: Արժան համարիմ յուշ առնել աստանոր զի առաջին Եւրոպեացի ճանապարհորդք որք գնացին ի Չինս և ի մեծ մայրաքաղաքն Փէքին (ի Թաթարաց կոչեցեալ Խանպոլիս այսինքն Քաղաք Ղանի), երկրորդն եղբարքն Ռոյոյ Վենետք, ի դարձին եկին և կացին յերկար յԱյսոս (ի վերջին ամս Հեթմոյ Ա և ի սկիզբն Թագաւորութեան Բ Լեւոնի, 1269-71). և անտի վերագարձան ի Չինս, տանելով ընդ իւրեանս զգերաւհրաչակ ճանապարհորդ և տեղագիրն Մարկոս (Marco Polo) որդի միոյ յերկուց եղբարցն. յայտ է թէ յերկար բնակութեան և ծանօթութեան իւրեանց առ Հայս ի Սիսուան, բազում ինչ պատմեցին նոցա կամ յաւելին ի զրոյցս Հեթմոյ Թագաւորի և եզօր նորա Սմբատայ Գունդատապի, որք զկէս այնր երկարածիգ ճանապարհի արարեալ էին՝ իբր 20 ամբք յառաջ, յերթալն իւրեանց ի Գարագորում յերկրին Խալխասաց յաթօս տիեզերակալ խաքանին, և բազում ինչ աւանդեալ համազգեաց իւրեանց, յորմէ առեալ պատմեն՝ եղբորորդի նոցին Հեթում տէր կոռիկոսի և պատմին կիրակոս: — Մարթէ յայնմ ժամանակէ ասել և զգնացս Հայոց յաշխարհն Չինաց, եթէ ոչ կանխաւ եւս. այլ ցորքան ժամանակ՝ ոչ գիտեմ. բայց զի և ի ԺԶ դարու ծանօթք էին կողմանցն, յայտ լինի յառաքելութենէ լատին քարոզչաց (Յիսուսեանց), զի, բազում ուրեք ցուցաւ վաճառական

նութեան կամ ունկիրայ լինել քրիստոնէական քարոզութեան, կամ զհետ երթալ քարոզչացն. և որպէս այլուր տեսաք՝ վկայի և աստանօր ի սկիզբն ԺԷ դարու (1603) Յիսուսեան քարոզչի (Հ. կոէս Բենեք), հայանուն և հայազգեստ մտանել ի Չինս: — Սղբա յաճախ ի Հնդկաց կուսէ եկեալ ընդ ծով մտանէին ի նաւահանգիստ Չինաց. իսկ հնագոյն վաճառականք միեւրով ի խորս Ասիոյ ընդ ցամաք, և հատանելով զանհուն անապատս Թաթարստանի և զաշխարհս՝ ոչ կամ յոյժ ընդ աղօտ ծանուցեալս՝ ի Յունաց և ի Հռովմայեցոց ընդ նոյն անկնիք շաւղս՝ ընդ Պարսկաստանեաց և Արարացոց հետեւէին և Հայք, մանաւանդ յետ տիրապետութեան Թաթարաց, առ որոց խաքանս ստէպ երթալին և զային և Թագաւորք մեր Ռուբինեանք, և ի իշխանք վերին Հայոց, Օրբելեանք և այլք, բազում ուղեկցօք և անբաժանելի վաճառականօք, որպէս և ի հնագոյն դարս անդ խնդրողքն մետաքսի՝ ի սկզբան ճառիս յիշեցեալք: Նշանաւոր քան զտիկնաշէն եկեղեցին Չայթունի յարեւելեան ծագս շենաց, համարիմ զհետաքննելի նըշխարս Ս. Մատթէոս վանաց, զոր Հայք կանգնեալ էին ի զանխուլ խորս անապատաձեւ վայրացն, ի հիւսիսակողմն Խասիկոյ լճի, անդր քան զՊուխարա և զՍմբրղանտ, ի հարաւոյ մեծագոյն Պալքալ լճի. որ և յայտ առնէ զի դէթ հանգրուան մի վաճառականաց Հայոց հաստատեալ էր անդ, եթէ ոչ և շէն մեծ, թերեւս ի սկզբան աշխարհակալութեան Թաթարաց. քանզի յիշի ի կէս ԺԳ դարու ի Բիւպրիւք ճանապարհագիր քարոզչէ, իսկ զաւերական յիշեն մեծագոյն երկրագիրք գարուս<sup>3</sup> Հուսթուլտ և Մըրչիսըն: Չիցէ՛ արդեօք օրէն իմաստասիրել յայսմանէ, եթէ ի դէպ էր Հայոց հաստատել հանգրուանս և այլ ուրեք ուրեք իբրեւ կարաւանատունս, ի վերայ երկարածիգ ճանապարհի վաճառականութեան իւրեանց. և շէ բնաւ զարմանալ եթէ և յամենայն զըշխարս քաղաքս Չինական Թուրքաստանի և սահմանակըցաց արեւմտեան պետութեանց կամ նահանգաց, հաւաստեալ իցէ նոցա բնակութիւնս, և յոմանս լոկ երթեւեկեալ. որպէս ի Պոլոս, ուր ի վերջ կոյս անցելոյ դարու յիշի վաճառական ոմն Հայ Գոռալոգ անուն (Kurlak) ըստ գերմանացի գրողի. առ որ տայր գիր ընծայութեան կոռքս (Guka) հաւանօրէն Ղոչկաս՝ ի Քաշկար քաղաքի, որ է ի Հր. Խասիկէօլ լճի, բացագոյն. ուր 838 Հայք էին ըստ Գէորգայ Լուզվիկ ճանապարհագրի, և եկեղեցի նոցա կանգնեալ ի սկիզբն ԺԷ դարու (1615). անհաւատալի թուեցաւ այս մեծանուն աշխարհագիրտին անգղիացոյ Ռաուլինսընի, այլ Խանիքոֆ նոյնպէս հմուտ աշխարհագիր ուսու՝ հաւատարմացոյց, յիշելով և զրնակութիւն Հայոց ի Հերաթ, թէ և այժմ գաղարեալ: Ղուկասն այն յիշեալ՝ գտեալ կամ տեսեալ էր ոսկէհանս ի

1 Այսպէս կոչեցեալ ասն ոմնք՝ յԱրարացոց, վասն իւզայնն ծառայ միոյ այլք կողման՝ նման Էթիոպոս:

2 Ըստ բանից լատին քարոզչաց ժամանակին՝ կրկնէ Հ. Քերտեր. Est quædam magna civitas juxta mare Oceanum, quæ vocatur lingua persica Cayton, in qua civitate una dives domina Armena ecclesiam erexit praeclaram satis et grandem, quam quidem de ipsius voluntate per Ar-

chiepiscopum in cattedralem, cum competentibus dotibus, Fratri Gerardo episcopo et Fratribus qui cum eo erant, donavit in vita, et in morte reliquit, qui eadem cathedralem suscepit.

3 Հուսթուլտ ի մտանին, Asie Centrale, և Մըրչիսըն ի Բուխարսութեան (Adress) 1870 տարւոյ յայտարարագրական Ընկերութեան Լոնտոնի:

սահմանս անդ, խափանեալս ի Չինաց, և եցոյց ձոյ մի սեաւ նիւթոյ յորում երեւէին երակք ոսկւոյն: — Էին (իցեն թերեւս և արդ) ի Քապուչ Հայք բնակեալք, իւրեւ 30 տունք՝ ի սկիզբն դարուս, առ որս առաքեցան քահանայք ի Հռովմէ: և յԷջմիածնէ. և հանդիպեցաւ նոցա գիտնական ուղեւորն Էժրօսի յամի 1822. բազմաթիւ եւս էին ի կէս ԺԸ դարու, վարեալք այսր կամաւ կամ ակամայ ի Նատիր շահէ և յԱհմէտայ, ի կողմանց Մէշէտայ և Նոր Զուլայի. այլ հնագոյնս եւս յայտնեն տապանագիրքն. բայց ի կէս մերոյ դարուս նուազեալ յոյժ էին Հայք ի Քապուչ և ցրուեալք այսր անդր, որպէս ցաւելով ասէր Սիւնն Մկրտիչ՝ Սիւնիյանն կոչեցեալ՝ առ ուղեւոր ոմն անգղիացի (Պըննէս). էր նոցա և եկեղեցի փոքր:

Յաճախագոյն եւս են յիշատակք՝ որպէս և երթեւեկք վաճառականաց Հայոց ի շահարասեան յեղանակի՝ ի ծանօթագոյն մեծամեծ քաղաքս Ասիոյ, ի Պոչխարա (ուստի բերէին կոճապղպեղ), ի Սմիդանտ, ի Պահի, և այլն. և հարկ է թէ ոչ պակաս քան զվերոյիշեալսն բազմաթիւ և բնակք և եկք. որոց հետեւողս ի դէպ է ասել զայժմեանս, յետ նուաճման մարզիցն այնոցիկ ի Ռուսաց, մանաւանդ յետ գիւրելոյ և երազելոյ ճանապարհաց՝ կովկասեան և անդրակասպեան երկաթուղիք:

Արչաւանք Մողղաց և մեծամեծ բաժինք իխանութեանց նոցին յասիական աշխարհս, զհետ ձգեցին՝ էր որ բռնի և է որ յօժար բազմաթիւ գրոհս և յազգէս մերմէ, առաւելապէս ի Հ. Մ. սահմանս, ի մարզս Ղիչլախ Թաթարաց, որք ի հիւսիսոյ կովկասու և կազրից տարածեալ ձգէին յարեւելս կոյս սորին, և ի պատմաց ժամանակին յաճախ կոչուեցին կոչիւր, յանուն հզօր տոհմի միոյ Թուրքաց, և ի մերոցս բազում անգամ՝ Հուկաց երկիր, բովանդակելով ընդ նոսին՝ և գթերակղզին Տաւրիոյ (Ղրիմ). ի դէպ է թէ և յառաջ քան զմեծ ասպատակն Թաթարաց՝ գոյին յազգէ մերմէ բնակք ցըրուեալք յայլեւայլ քաղաքս կողմանցն այնոցիկ, այլ ի միջին դարս այնքան յաւելան, մինչև եպիսկոպոս իսկ նստուցանել (ոչ միայն ի կաֆա) այլ և ի բուն ի նիստ կուսակալացն Ղիչլախաց ի Սարայ քաղաքի, որպէս յիշի ի սկիզբն ԺԴ դարու. յորում քահանայ ոմն Խաչատուր անուն ընդօրինակելով աւետարան յամի 1319, յետ ասելոյ զանձնէ, եթէ, « Բնական կայանք չունէի, » ապա ի տեղւոյն ի տեղի դեգերէի, (և զի) սիրտս վշտացեալ էր », յաւելու թուրքարէն բառախառնութեամբ. « Այս աշխարհիս ձմեռն խիստ է, ու հաւայն չէ գրաս » գրու լայեխ. բայց դրեցաւ սա ի մայրաքաղաքիս Սարայ, և է ի հիւսիսոյ կողմ մերձ առ ծովուն կասփիաս » կանի, ընդ որում չուրջ պատէ զնովաւ մեծ և հզօր » գետն Էթիլ (Վոլկա), և ընդ հովանեաւ Ս. Աստուա » ծածկին և կենսակիր Ս. Նշանին »: Սարայ՝ զոր չինեաց զառաջինն առ Աթուրպա օժանդակաւ արեւելեան Վոլկայ՝ Բաթու զան, առ որ եկն անդր Հեթում Ա արքայ (1283), յետ ոչ բազում ամաց՝ փոխադրեցաւ անուամբ և մասամբ բնակչացն ի նոր քաղաք բացագոյն

ի կասպիական ծովէ, առ այժմեան Զարեա քաղաքաւ Ռուսաց, և զոր Լանկթիմուր աւերեաց յամի 1396: Գոյր երրորդ մի եւս համանուն փոքրիկ քաղաք Սարայ-ձրգ, առ ժամանակեայ նստադահ զանիցն հիւսիսոյ, առ Եյսեխ կամ Ուրալ գետով, իր 30 մղոնաւ հեռագոյն ի բերանոյ նորին առ կասպիականաւ: Այնիս կոչի գետս ի յիշատակի ճանապարհորդութեան Հեթումոյ, որ էանց ընդ այն յերթալն ի հին Սէրայէ և ի դրանէ Բաթուի՝ առ Մանգու զան. յետ իր դարու միոյ քարոզիչ ոմն Լատին (Paschalis de Victoria) պատմէ զնաւարկութիւն իւր ընդ Հայոց ոմանց ընդ գետն Էթիլ (զոր Տիգրիս կոչէ, որպէս և զծովն կազրից՝ Վատուկ յանուն՝ Պագուի) և զգալն այսր ի Սարայձուգ (Sarajuc գրելով): —

Ոչ սակաւ հեռագոյն և վերագոյն ի սոցանէ (իր ընդ 80<sup>0</sup> Հս. լայն.) շահաստան մի եւս էր հիւսիսայնոց ազանց յարեւելեան Բուլղարս, համանուն նոցին Բուլղար քաղաք, ի գետախառնունս Քամայ ընդ Վոլկայ, ուր անդրստին յ'Թ դարէ Արարացիք և որք ընդ իշխանութեամբ նոցին՝ գային նաւեալք ընդ կասպիականն և ընդ Վոլկա. և բառնային մորթս և մուշտակս. ուր ոչ միայն երթեւեկ էր մերայոց, այլ և հաստատ բնակութեան նոցին տիրական վկայք կան գերիզմանքն արձանագրեալք. մին ՉՁԴ (1335) թուականաւ, ազնուականի ուրումն, զի Պարուն կոչի՝ — Եթէ փոքր մի եւս ի վեր կոյս խաղացոյք ընդ հիւսիս, ահա աստակասառոցն Սիբերիա, (յոր մերձեցաք և յառաջագոյն ընդ այլ ճանապարհ). ուր եթէ բնակել ոչ՝ այլ ի դէպ էր յառաջել ի վաճառաշահ քաղաքս ցուրտ աշխարհին, և հայթայթել որպէս ի Բուլղարի՝ մորթիս և մուշտակս. զոր օրինակ առնէին իսկ մերայինք յիւրպիք քաղաքի, ուր բերէին զանգղիական վաճառս. զորս առ վայր մի արգել պետութիւն Ռուսաց ի սկիզբն դարուս (1807):

ԺԳ. Հայք յԱփրիկէ. — Թողեալ արդ զհուսկ ցրտային սահմանքս՝ ական արկցուք ի հարեւանցի և ի բուն Էբրմայինսն, յԱփրիկէ, ուր՝ յայտ է հասարակաց առաջին և գրեալթէ միակ հանրածանօթ աշխարհ Եգիպտոս, յորոյ անեղծանելի և հինաւուրց արձանս յ'3000 և 4000 ամաց հետէ դրոշմեալ համարին ոմանք ի գիտնոց զանուն ազգիս Ալեքսէնէն, ընդ որում և երբեմն բաղխեցան աշխարհակալ Փարաւոնքն Հաւամիսեանք, վաճառակիցք Փիւնիկեցոց. ընդ յետնոց՝ և երբեմն առանձինն՝ ի վաղեմի դարուց հետէ հորդեալ էր Հայոց ճանապարհ. և զի ի սկզբանէ պատմական դարուց և տիրապետութեանց միշտ բարգաւաճեկաց աշխարհն այն այլեւայլ մայրաքաղաքօք և շահաստանօք, անընդհատ գրելի է և զմերոցս վաճառական յարընչութիւն, մանաւանդ ի միջին դարս. յորժամ առ փոքր փոքր աճեաց անդ զաղթականութիւն Հայոց, մինչև բիւրաւոր տանց լինել յելս կոյս ԺԱ դարու, յորժամ մեծ Վկայասէրն Գրիգոր այց արար նոցա, և այցելու կացոյց զքեռորդի իւր համանուն: Ի նմին ժամանակի և յետոյ եւս ընդ երկար ամս հաղարապետ և գրեա-

1 Զորոյ անուն Ալեքսէն Էթուրէն, այլ ոչ են նման տառքն՝ և ոչ հզգիս ընդօրինակեալք և վերագրեալք:

Թէ վարիչ տէրութեանն էր (Պետր էլ-ձեմալ) Հայազգի ոմն, Թէպէտ և ուրացեալ, որպէս և այլք ոմանք համապաշտօնք յ' ԺԲ դարու, յորում և հաճութեամբ հզօրին Սալահէտտինայ՝ Թափեցին Հայք ի Ղփտեաց զերկուս յեկեղեցեաց իւրեանց գրաւելոց. աներկբայ է յայնժամ յաջողակ զոլ և վաճառականութիւն Հայոց, որպէս և առ յսպա. և Թէպէտ յերկուսին յաջորդ դարս ԺԴ-Դ, բազում անգամ հակառակութիւն եղեւ ընդ օուլտանս Եգիպտոսի և ընդ Թագաւորս մեր Սիսուանայ, մինչեւ ի նուաճումն սոցա, այլ ի միջոցս հաշտութեան՝ էր նոցա դաշնակցութիւն վաճառականութեան. և եթէ ստոյգ իցէ զրոյց ոմանց (որպէս Լեւոնի Ափրիկեցոյ) մարդավաճառ եւս առնէին, զստրուկս ածեալս ի հրապարակ Այասոյ՝ առաքելով ի Գասհիրէ: Այլ ոչ սակաւ տենչալի նիւթ խնդրեալ ի Կիլիկիոյ՝ էր Երկաթ երկրին, որում փափագէին ի վաղուց և Փարաւոնքն Եգիպտոսի: Իսկ ի յետին դարս և ի շահարանան յեղանակի՝ յիշեսցի միւսանգամ վկայութիւն Վենետկեցոյն (Լիպպոման) ի ԺՁ դարու, զոր ի դէպ է իմանալ և վասն նորագոյն եւս դարուց. յիշել և զայն, զի որպէս ի ԺԱ-ԺԲ դարս, և յայժմուս իսկ յառաջադէմ պաշտօնեայք և հազարապետք վարչութեան երկրին կացին և կան Հայք, մանաւանդ յառաջ քան զմիջամուխ լինել անդր Անգլիացոց և այլոց օտարաց:

Յետ Եգիպտոսի նման նմին հին և միակ ծանօթ հրաւանգեալ աշխարհ և պետութիւն ի Լիբիա՝ Թէպէտ և փոքր ի շատէ, էր և Եթովպիա. ի սմա եւս նշանաւոր է ի յետին դարս եկեղեցական յարընչութիւն Հայոց, փոխանակ հազարապետաց զբան Եգիպտացոց՝ վերատեսուչս եկեղեցեաց ընծայելով Եթովպացոց. այլ ոչ անմասն յաշխարհական պաշտօնէից, մինչեւ գանձապետս իսկ կարգիլ ոմանց մերազնեայց՝ Թագաւորաց նոցին յանցելում դարու. որպիսի էր Սէլէֆ ուստա կոչեցեալն Արարկերցի, որում յաջորդեաց յամի 1762 Յովն. Թովմանն, և ապա որդի սորա Պօղոս: Յայտ է Թէ նախնեաց նոցին յաճախ վաճառականական եկաւորութեամբ ծանուցեալ եւս էր, մինչեւ (որպէս և այլուր տեսաք) ի ԺՁ դարու (1577 և 1603) Յիսուսեան Հարց (Մելգոն Սիլվոս, Պետրոս Պաիզ, Pazy) հայազգեստ մտանել անդր: Հուլակագոյն եւս է յես ԺԵ դարու և ի սկիզբն ԺՁ-ին (1490-1520) զարմանալի առն Մատթէոսի կրօնաւորի և վաճառականի գետպանութիւն ի կրկին արքու նիս՝ Եթովպացոց (Հեղինեայ Թագուհոյն) և Լուսիտանացոց Պորտուգալաց (Մանուելի Թագաւորի). որպէս և յիշեցաւ սակաւուք յառաջ (յէլ 458-9) այլովքն հանդերձ: Հնագոյն յարաբերութիւն Հայոց ընդ Եթովպացոց գուշակի ի Թելադրութենէ խորատես քաղաքագիտի և զրչի Հեթմոյ տեսան Կոռիկոսի՝ առ քահանայապետն Հուովմայ, զի գրեսցէ առ Թագաւորն Եթովպացոց յորդոր ի խաչակրութիւն, և առաքեսցէ զԹղթեանն առ Թագաւորն Հայոց, զի տուեալ նորա Թարգմանել յԵթովպացի լեզու՝ տարցէ առ Թագաւորն նոցին: Ծանօթ է պատուականագոյն ի վաճառս զարմանալի աշխարհին այնորիկ՝ և յուովագոյն քան այլ ուրեք Փոթուկրն կամ Ժանկիջ փղաց՝ մեծագոյնք քան ըզ-

Հնդկացն, մինչեւ սոցա իսկ, այլ և Չինաց, խնդրել զայս նիւթ՝ ի նաւահանգիստս Ափրիկեայ, յորս՝ ի նաւարկութեան իւրում՝ մեծ տեղաքնինն և տեղագիւտ՝ Վասոյ տի կամա՝ ետես, և նշանակէ զվաճառականս Հայոց:

Վաճառականացն այնոցիկ ծանօթից Եգիպտացոց և Եթովպացոց՝ անմարթ էր անծանօթս լինել՝ և վաղեմի Թագաւորացն վաճառականութեան Լիբիոյ, Թերես և համօրէն աշխարհի՝ Կարքեդոնացոց սասեմ, Թէպէտ և չգուցեն, կամ չիցեն ինձ այսմ հաւաստի յիշատակք. և հարկ էր Թէ այց առնէին և այլոց շահաստան քաղաքաց Միջերկրական ծովու այնր կողման, որպէս և յետոյ այժմու բարբարիկ և մահմէտական տէրութեանցն (Մարկաց, Տունիսայ, Տրապուզայ, Ճէզայիրայ), Թերես և խորոց կասկածելի Անապատին մեծի: Աստուատ և անդր շմայ մեզ տեղի զհետ կրթելոյ ամենահաս վաճառականաց մերոց, բայց եթէ հեռացեալ յերեսաց հնոյ երկրագրնտի՝ ի Նորն Թեւակոխիցեմք, ապաստանեալք ի նաւս Սպանիացոց, Պորտուգալաց և այլոց պետութեանց Երուպէացոց, յորոց աշխարհս դեգերէին մերազնեայք, որպէս տեսաքս ի վեր անդր, և բնական իմն էր շահասիրաց մերոց և բնածին վաճառականաց՝ հետեւել նոցա ընդ ոչ բնական ինքեանց ծովային շաւիղս. և ոչ լոկ վաճառականաց, այլ և միանձանց (անուանելոցն Միաբանողք), յորոց նաւեցին ոմանք և յԱմերիկա ի հանգանակութիւն զբամոյ կամ ողորմութեան, յԺէ դարու, որպէս յիշեցաք ի Դրուագի պատմութեան նոցին: Իսկ իբրեւ յատուկ վաճառական գնացող կամ խնդրող ամերիկեան նիւթոց՝ յայնմ ժամանակի, համարիմ զոմն Միկտիլ որդի Յովնանու, որ գործակալ կարգէր ի Գատիս Սպանիոյ զԱւետիք Մելգոնեան (1664) առ ի խնդրել (ի Թեվոմայ?) 7, 253 փերթ սպիտակ ցփսեաց (Zambellotti) առաքեալս նմա ի Նոր Հնդկաց (da India Nova), որ սպանիականն Ամերիկա գուշակի:

ԺԴ. Փարթաւոտիւն: — Յետ ընդ երկար յածելոյ գրեաթէ յառհասարակ երեսս հրահանգեալ երկրի, ընդցամաք և ընդ ծով, զհետ համաշխարհական վաճառականաց մերոց, առաջին խնդիր մտաց քննողի է, եթէ վասն էր և զիարդ, և զինչ օգուտ կամ արգիւնք նոցին: — Աղուական իմն էր երկրայելն և խօսել անգամ՝ եթէ շահասիրութիւն կամ ընչաբաղցութիւն էր գլխաւոր գրգիւ և պատճառ. և ըստ այսմ՝ ի վերին երեսս տեսութեամբ՝ եպերելի իսկ մարթ է կոչել զայն՝ քան գովելի, եթէ ոչ արդարութեամբ իցէ շահեալն և արդարապէս ծախեալ կամ վարեալ: Իսկ եթէ արդարեւ ըստ այնքան վաթտակոց և շարակիր պանդխտութեանց՝ շահեցան, հարստացան վաճառականք մեր, շահեցուցին և զհայրենիս. — հարկ է խոստովանել զ'այն վասն անձանց, մասամբ և վասն հայրենեացն: Չարմացեալ օտարաց ոմանց ազգագրաց քննողաց զպատմութիւն ազգիս, ընդ յիշատակս փարթամութեան աւագաց մերոց և սուկականաց, հարցանէին ընդ միտս՝ Թէ ուստի՞ դոցա այնքան մեծութիւն, մինչ ինքնին երկիրն Հայոց, Թէ և արգասաբեր, այլ ոչ յորդառատ ինչ աղբիւր պատուա-

գրեալքէ անհրաժեշտ էր Հայոց ի խորս արեւելից դիմելոց՝ վաճառակցել և ընդ Ռուսաց, բառնալ ի բերոց երկրի նոցին և մատուցանել յառբերելոցն արեւմտականացն և հարաւայնոց: Օրինաւոր կամ հաստատուն վաճառականութիւն ընդարձակեաց Հայոց դուքան Քիւեւայ ի ԺԱ դարու (1063). ուր յետ սակաւուց, առ Մոնոմախ Վլատիմիրաւ, կանգնեալ էր և եկեղեցի Հայոց, ըստ վկայութեան մեծի պատմչի նոցին Գարամգինայ. Արժա նի յիշատակի է և վկայութիւն Յայամաուրաց մերոց ի նմին ժամանակի, զի ի պատմելն զնահատակութիւն Գաւթի և Ռոմանուի, (յամի 1173) յաւելլու վասն ըսքանչեւագործութեան նոցին, « որոց բազումք ի մերում » այլարնէ տեսողք եղեալ՝ պատմեն մեզ »: — Բայց ի նորում յեղանակի (Շահաբասեան) յ'ամէ 1626 համարի սկիզբն յաճախելոյ նոցին Ջուղայեցւոց ի Ռուսս. Թէպէտ և յառաջ քան զայն յիշին եկք նոցս, որպէս ի Մուրեմսք՝ յամի 1611. և վաղագոյն եւս ի խնդրոյ իշխուցաց երկրին՝ որ յայս կոչս պարսպաձեւ լերանցն: Մի ամն ի դեսպանաց կամ նուիրակաց տէրութեան Վեներտոյ յամի 1657, ժանուցանելով զոր ետեսն և քննեաց ի Ռուսաց աշխարհի, համարձակեալ ասէ յայնժամ ի Մոսկուա և զմուտս Պարսից, այլ յաւետ Հայոց ի Գլորիկրատ (?), որպէս և ի Նովկորոտ, յԱժտերխան<sup>1</sup> և ի Ղազան<sup>2</sup>. յ'որս բերէին մետաքս, ակունս, համեմունս, և մանաւանդ ընտիր գէնս, և զարմանալի եւս Չկոնս անտիսեդոս ի Կազրից ծովէ ի Մոսկուա. և չէր յայնժամ շոգի կամ հողմն որ վարէր զկարաւան վաճառականացն այնոցիկ, որք և ընդ ցամաք զնալ առաւել քան Թէ ընդ լուրս նաւարկել սովորեալ էին: Նոր իմն յեղանակող և յորդոր վաճառականութեան Հայոց ի Ռուսս ի նորում ԺԸ դարու, արժան է ճանաչել և զնորոգողն Ռուսաց զՄեծն Պետրոս, որոյ խնամ և խոստումն մեծ էր առ Հայս, ընկալեալ մարդաօտրապէս և զնուիրակ նոցին զամենամուտն Խորայիլ Որի (1701), և աներկրայ կամք նորին, եթէ չէր կանխեալ մահուն, և ոչ յար գրաղեալ ի պատերազմունս. որոց ըստ իմք ձեռնտու եղեն և Հայք, զորաժողով լինելով ի կողմանս Սիւնեաց և Արցախոյ, և բերելով նմա ճարտարս հմուտս չինելոյ հրանթոս, առաջնորդութեամբ Նազարայ Արեգովիլ՝ ի Լեհահայոց անտի: Առ յաջորդօք նորին, մանաւանդ առ Կատարինեաւ ոչխոյիւ և առ Պողոսիւ, առաւել եւս ազատութիւն և բնակութիւն գտին Հայք, որպէս ամենեցուն է յայտ, յայլեւայլ նահանգս Ռուսաստանի, ուր և ողջոյն քաղաքս կառուցին ինքեանց (Կատարինասլաւ, Նոր Նախջեւան, Գրիգորուպոլիս, Նոր Արմաւիր, և այսօրիկ յառաջ քան զգրաւել կիտոյ

մասին Հայաստանեայց ի Ռուսաց՝ յերկրորդում քառորդի դարուս, որով յերոպական սճ հրահանգաց մուծաւ և վաճառականութիւն աղգայնոցս ի մեծի ինքնակալութեան անդ, և յասպարէզ մրցանաց ընդ սլաւեանս և ընդ այլ խառնիճաղանճն ազանց:

Եթէ յետ այսքան յածելոյ ընդ արեւելս և արեւմուտս և ընդ հարաւ Եւրոպիոյ, հարկ իցէ ակնարկել և ի դժուարամտոյց ի ցրտագին աշխարհս հիւսիսոյ նսրին. — ոչ պակասն և ի սոսա հեռք ամենակոխ վաճառականաց մերոց, ի Շոււետս և ի Դանիս, նա և բազմաթիւ կամ խմբովին լինել վկային, եթէ ոչ իցէ մեծարանօրէն ասացեալ<sup>3</sup>: Իսկ եթէ անդրաշոյն եւս մինչեւ ի սառնապատ սահմանս գնացեալ իցէ մերայոց ի խնդիր մորթոց և մուշտակաց՝ անասնոց նոցին, զայն ոչ գիտեմ, բայց զի և այդքիկ մի ի զլիաւոր վաճառոց նոցին էին՝ այն արդէն յիշեցաւ ուրեք ուրեք: — Այլ արդ թողեալ զԵւրոպա համօրէն՝ վերադառնալ պիտի մեզ յԱսիս ի բնական մեր մասն երկրագնտի:

ԺԲ. Վաճառականք Հայք յայլեւայլ աշխարհս Ասիոյ: — Դաճակեցաք ի սկզբան բանիցս զդիրս աշխարհիս մերոյ և զձկտումն բնակչացն ի վաճառականութիւն ի հեռաւոր կողմանս երկրի և յօտար ազինս. առ որս ի դէպ էր Թէ ոչ լոկ զսեփական երկրի իւրեանց զբերս տանէին կամ փոփոխէին ընդ նոցայոցն, այլ և զ'առ ի յայլոց առեալն և բերեալս. տեսաք եւս զի ըստ բնական իմն հարկի՝ սկսեալ էր Հայոց ընդ սահմանակցաց իւրեանց վաճառակցել, և ոտն առ ոտն յառաջել ընդ սահմանս նրցին, ընդ Կովկաս ի հիւսիս, ընդ բազմաթեւ ազինս Փղքուն Ասիոյ և Պոնտոսի՝ յարեւմուտս, ընդ մեծամեծ պետութիւնս Միջագետաց ընդ հարաւ և ընդ Պարս, Մարս և Թուրքաստանեայս՝ ի խորս արեւելից: Բնական իմն է ընդ մերձաւորացս առեւտուր, սւելորդ և զյիշելն համարիմ. շատ լիցի զհիւսիսայնոյն վկայութիւն Ստրաբոնի (ԺԱ, է) որ վասն Արս, Aorsæ, Թերեւս Աւարք և Սիրակ կամ Շիրակ անուանեալ տոհմից Սկիթաց կամ Սարմատաց, (որոց Թէ և չէ քաջաժանօթ տեղի բնակութեան՝ այլ յայտ է լինել ի հիւսիսոյ Կովկասու և ծովուց Պոնտոսի և Կազրից), որք գային բառնալ ուղտուց զվաճառս Հնդկաց և Բարբելացոց՝ զբերեալն ի Հայոց և ի Մարաց: Եթէ հաճոյ իցեն և գեղեցիկ զրոյցք մերոց վիպասանից՝ յաւելցեն փաստս վաճառականութեան Շիկափոկ պարանք Թաղաուրին իւրեանց սրաթեւ երիվարուն վարգելոյ ընդ Կուր գետ, առ ի կարթել զաչագեղ զօրիորդն Ալանաց. « յայքս » շատ, և ոսկի բազում տուեալ ի վարձանս » նմին, զի

1 Առա Անգղիայի ուղեւորն Ջէ. քիւնըն յամի 1559 անդիպեցաւ Շամախեցի վաճառականաց:

2 . . . Mosca nella quale altri mercanti non erano ammessi già, oltre a paesani che i Lithuani, i Polacchi; ma hora vi vengon assai Persiani, ma più Armeni, nella città di Clopigrad . . . Nel ducato Nungardiense (Novgorod) . . et in Nungardia . . in Citracan e nelle Isole dei Mercanti appresso Casan, praticano Tartari, Persiani et Armeni . . I Persiani et Armeni portano Spetiarie, Lino, Panni di

Seta, et altre cose che producono le provincie loro prosime, et quel che al Duca molto importa armi finissime. Dal Mar Caspio fino a Mosca si portano Pesci perfettissimi in gran copia. Cresce di continuo il traffico in quelle parti, et più in Citracan (Սժաւերսան) che nelle altre. — FR. TIEPOLO, *Discorso delle cose di Moscovia*.

3 Ջայս վկայէ բազում անգամ յիշատակեալ Սքրուտեր ի Գերակոնութեան իւրում. Item, Holmiam Svetiæ et Hafniam Daniæ turmatim excurrunt.

ազգայինը նոցա ներկեացնել ի կարմիր՝ զմորթիս իւրեանց: Իսկ զնորոց և զմերոց ժամանակաց՝ ներեցի յիւշել զբան նորագոյն ճանապարհագրի ուրուք (Երևանս թիւման), որ կոչէ զՀայս թագաւորս փառապատուութեան Կովկասու, և յաղթելու մրցողացն ընդ ինքեանս Ռուսաց <sup>1</sup>: — Ընդհանրական պատմութեան վաճառականութեան անկ է ցուցանել մեղ զբարգաւաճանս աւուեստին՝ յարեւմտեան դրակիցս Հայոց, ի Պոնտոս, ի Գամբրուս և յայլեայլ աշխարհս Փ. Ասիոյ, ի ձեռն բնկաց և յաւէտ հեղինական տոհմից և գաղթականաց սփռուլոց ի միջաշխարհին և յափունս Եւքսինեան ծովու, առ որո ի հնումն և ի նորումս՝ այնքան բնական իմն էր յանախութիւն Հայաստանից, զի և անգամ աւելորդ յիշելն. բայց եթէ զբան մի Ստրաբոնի (ԺԲ. Բ), որ ի ճառքն զմեծ և շահաստան քաղաքէ Կոնստանդ Պոնտոսի, ճոխ շտեմարան ասէ զայն ամենեցուն որոց գային և բերէին ի Հայաստանէ, յայտ այսու առնելով զբազմութիւն վաճառականաց մերոց <sup>2</sup>: — Ընդ հարաւային դրացիս իւրեանց վաճառակցել Հայոց, կամ լաւ եւս, դարմանել զնոսս պէսպէս բերովք, այնքան բնական և հարկաւոր էր, որքան զի դանդաղ և անհարթ էին բարք մերձաւորացն այնոցիկ, նոյնպէս և սակաւ մի բացակայիցն՝ երբեմն հզօրաց և աշխարհակալաց (Բարեւազուց ասեմ և Քաղզէացուց), զորս ի սկզբան բանիցս յիշեցաք, ուր բարգաւաճէին ի հնումն՝ Բարեւոն, Երևան, Բագաւ <sup>3</sup>, Երզրատան. և ի միջին դարս՝ Մծբին, Դարա, Բակկա կամ Կալինիկէ, Ամրո <sup>4</sup>, Բերիս <sup>5</sup>, Երզնիս, (զոր ողբայրն Ն. Շնորհալի), և յայժմուս Բաղրատ երբեմն աւթոռ ամիրապետաց մօլիմանաց:

Ի սկզբանց անտի, և առաւել եւս ի Շահաբանեան յեղանակի՝ դիւրակոխ ճանապարհ կամ կամուրջ տնցից Հայոց՝ յարեւելս և ի հարաւ՝ էր Աշխարհն Պարսից, զորս և մերձաւոր ազգակիցս մարթ է համարել, որպէս և լեզուք նոցա վկայեն, թող զսերտ յարձուութիւն պատմական՝ յաւուրց Կիւրոսի մինչեւ ցայժմ, և վաղագոյն եւս ընդ Մարաց, որք թերեւս մերձաւորագոյնք եւս էին Հայոց, որպէս են աներկբայապէս աշխարհագրն:

Սկզբնաշուիղ դիւրագնաց վաճառականութեան աղ-

գաց ծանուցան գետք, և հրապարակք՝ բերանք նոցին, այսինքն շինավայրն ուր գետնն նաւագնացք թափին ի ծովս. այսպիսի տեղի մի էր յունջ Պարսկային Մոցոյն կամ Հնդկայինն ովկիանու (վասն մեծամեծ ինքնակալութեանց երկրին՝ Բարեւազուց, Քաղզէացուց և Պարսից) ծանօթ քաղաքն Ուրմու, այսպէս կոչեցեալ յանուն Արմազոն հրուանդանի, ըստ Դիոնիս. Պետեկիդեայ հին ծովաբնին աշխարհագրի, իսկ ըստ Երկեփորայ վլիմմիդայ <sup>6</sup> Արմենիոս լերին՝ յանուն Հայոց բնակելոց առ նովաւ: Որ գինչ և է անունն, յայտ է թէ յոյժ հին է շահավաճառ տեղւոյն, յաւէտ արծարծեալ ի ժամանակ մեծի աշխարհակալին Աղեքսանդրի, այլ յետ այնր նուազեալ՝ յաճելութեան Աղեքսանդրիոյ Երկպտոսի, և զըրեաթէ զանխլացեալ հազարամեայ պարագայս, մինչեւ ի սկիզբն ԺՁ դարու (1505) Լուսիտանացին Ալպուքէրք ձեռն արկեալ և նուաճեալ զայն, ի դիւր նաւելոցն ի Հնդիկս, վերակենդանացոյց և երաց ասպարէզ ամենայն ազգաց առի և տրի, բաց յԱնգղիացուց նախանձորաց: Չեն պէտք յաւելուլ եթէ ընդ դիմողան անդր կանխեալ գտան և Հայք <sup>7</sup>. նա և յառաջ քան զայն յելս կոյս ԺԵ դարու յիշէ անդ զՀայքս Գենուացի ոմն վաճառական. իսկ տեղեկագիրն (Անդրէաս Կորսալի, Corsali) գրէ յամին 1515 ընդ թուրքաց և Պարսից՝ զՀայս, և ի կղզոյ անտի ասէ անցանէին ախայսիլքն ի Հայս և ի թուրքիս. և բնակիչքն ասէ Պարսիկք են այլ և Հայք <sup>8</sup>, զովելով զճարտարութիւն նոցա միանգամայն և ըզմարդասիրութիւն: Ընդ այլոց ազգաց յիշին մերքս և ի քարոզութեան Հ. Պարզէի (Յիսուսեան) ընկերի Ս. Տրանչ. Քասաբեան. նոյնպէս և ի վերջ կոյս դարուն՝ (1585) գրէ ոմն <sup>9</sup>, եթէ երբ և զայցէ ոք յՈրմոս՝ գտանէ ընդ այլոց և զՀայս. իսկ ժամանակակից նորին Երևանի վաճառական Անգղիացի՝ յիշէ (1584) զարգելումն ազգայնոց իւրոց ի հարստահարութենէ Լուսիտանացուց. յորոց յետոյ լուծին վրէժ, դրդելով զՇահաբաս կորգել ի նոցանէ զՈրմոս, որպէս և արարն յամի 1622, և ընդարձակեաց Անգղիացուց. իսկ սոքա առ փոքր փոքր զբաւեցին զմեծ մասն վաճառականութեան տեղւոյն, որպէս և ամենայն ուրեք, որպէս զի ի սկիզբն ԺԸ դա-

1 Ces rois du commerce caucasien . . . les Arméniens, leur font une rude concurrence.  
 2 Մասուտի արաբացի աշխարհագիր ի Ժ դարու յիշէ զՀայս ի տեղավաճառս Տրապիզոնի. և նորագոյն ոմն զնաւարկութիւն Հայոց ի շտեմոսանն յայն ի կէս ԺԵ դարու: Քաղաքանոթ է բարգաւաճանք քաղաքին առ սեփական թաղաւորութեամբ Յունաց Կոմ. Կենեանց յԺԳ-ԺԵ դարս:  
 3 Ուր մերձեին Տոլբէթ եղեալ էր զարծաթ իւր առ Հուսուրեւայ, և զոր աշխարհագիր ոմն Ժ դարու կենդրոն ասէ վաճառականութեան Հայոց Արաղատականի և Խորասանի:  
 4 Հուսուրեւոր էր տեղավաճառ Ամրոյ և առ թաղաւորութեամբ Արշակունեաց մերոց, և ի նոյն աւուրս տեղիցն պաշարեալ առաւ ի Շապուր յամի 359, այլ մեծ մասն բնակչացն վաղագոյն խոյս ետ:  
 5 Պաշտոնեայ մի վիենեակոյ ի կէս ԺՁ դարու (1553) յիշէ ըզբարձարան և զգին ծառի բերելոյ, ամի ամի 200,000 դուկատաց, զոր ասնէին ի Մեծ և ի Փոքր Հայս, ի Թուրքիս, ի Պարսս. և այլն:  
 6 Duo opuscula Geographica, սպաղբ. Լիպսիոյ. 1818:  
 7 Մարթ է գիրքիսկ Հայկազանց ի ծովափունքս և անդրա-

զոյնս՝ անեւ ի մթին և ի նախապատմական ասացեալ դարս, զուշակելով ի ժամակացն (որք բնական են ծովուն այնմիկ) գտելոց ի գերեզմանս Գուգարաց, ըստ նոր յայտնութեանց և պեղմանց Մորկամի փոսակի, որ զնութիւն գերեզմանացն կամարէ կինգ դարուք յառաջ քան զփրկչական թուականն:  
 8 Ormuz, alla quale fanno capo tutti i mercanti Persiani, Turchi, Armeni, o di Arabia Felice, che vogliono con cavalli e altre mercanzie passar in queste parti, per levare Spezie . . . Di questa isola passavano (le Spezierie) in Armenia e Turchia e per tutte le provincie di Persia . . . Sono gli uomini di questa terra massimamente Persiani ed alcuni Armeni, molto liberali e piacevoli, pieni di discrezione e gentilezza, amorevoli e virtuosi, e di ogni opera intelligenti. — ANDREA CORSALI. Lettere edite nelle Relazioni de Viaggiatori. II. 64. 118. Venezia.  
 9 Բուենիացին Հուսուրեւայ. Hugo Linschotensis in Regnum Congo. "Quocumque tempora adveneris, habebis ibi Persas, Turcos, Armenios, et omnium nationum homines,," etc.



րու (1701) ուղեւոր ոմն բժիշկ (Ֆերրանդ. Ferrand) 13,000,000 հաշուելով զելեւմուտ վաճառաց Պարսկային Մոցոյն, զերկու մասն գրէր Անգղիացուց և զմին առեւելեայց, երկիցս ընդ սոսին յիշելով զՀայաստան — ի կէս անցելոյ դարու բազմաշրջիկ երէցն Ջուղայեցի՝ Իգնատիոս Չաղատեան ի ծովածոցի անդ և ի Պենտեր ապասի և ի Պարսա, « բազում և մեծամեծ Հայ վաճառականք » են », գրէր. ընդ որս յիշելի էր և զՔուշիս քաղաքը — Յուցանեն յիշատակքս զՈրմոս ոչ միայն շահաստան այլ և մրցարան վաճառականաց, յորս եթէ երբեմն զառաջին տեղին ունէին և Հայք թէ ոչ, հաւաստի է առաջնութիւն նոցա ի բնաշխարհին Պարսից, յաւուրց անտի Շահաբասայ և կանխագոյն եւս, մինչև մօտ ի մեր ժամանակս. մինչ զի ի սկզբան դարուս՝ հետաքնին ուղեւոր ոմն փռանկ (Քուսիէր) գրեաթէ զբովանդակ վաճառականութիւն Պարսից և Հնդկաց՝ ի ձեռս Հայոց ինել գրէր. որոց, ի միջերկրեայս՝ աշխարհածանօթ և վաղեմի և գրեաթէ սեփական իսկ էր Դավրէժ մայրաքաղաք Ատրպատականի, բարգաւաճեալ յոյժ ի միջին դարս, յաճախութեամբ Խոյսացուց (Վենետաց, Քենուացուց, Փլորենտեայց, և այլն), և մինչև ցայժմ գրեաթէ նոյն պէս առաջին շահաստան Պարսից: Ոչ պակաս կամ սակաւ ինչ նուազ ի Պարսկայնոյն՝ ծաղկեալ էին և կասպիականին վաճառաստանք, մանաւանդ Աժտերխան ի զիպան վայրի՝ առ եօթանասնամիտակ բերանով աշխարհագնաց դեռտոյն Վրկայ, յիշատակեալ ստէպ յամենայն ուղեւորաց կողմանցս և ի տեղագրաց, ի միջին դարուց և ցայսր (Էթիլ կոչմամբ), անանջատ ունելով զյիշատակ Հայոց վաճառականաց: Ոչ է մոռանալ և զմիջոց նաւահանգիստ մետաքսաբերն կիլանայ, յորմէ յիշեցաք (յէջ 444) միոյ եւեթ վաճառականի 8 միլիոնի մետաքս հանել. և ի սկիզբն դարուս դեպքանն Նարոլէոնի Ժպպէր՝ զյաջողակ վաճառականութիւն Հայոց յիշելով անդ, 300,000 Ֆր. հաշուէր զսակ մաքսին, <sup>9</sup>/<sub>100</sub> յելս և ի մուտս վաճառոց նոցին: Անդրագոյն (ընդ հիւսիս) քան զՈւէշը, ոչ շատ հեռի ի ծովէ՝ բարգաւաճ էր և Շահնախի հին քաղաք Հայ-Աղուանից, զորոյ վաճառականս ետես Ճէնքինսըն անգղիացի յԱժտերխան, յամի 1859, և որ յիշի յամենեցուն որք զմետաքսի առեւտրոյ ճառիցն:

Այլ արդ թողեալ զափունս կազրից, և զբազում զիմք նշանաւոր ծովահայեաց նորին քաղաք զԴարսքանտ, զմիջակառոցն ընդ բարգաւաճեալ և ընդ բարբարիկոն մարզս երկրի, և զերբեմն սահմանակալ քաղաք Հայոց, ընդ նմին և զորս յայնկոյս կովկասու, ըզթարդոս, զՂզիխար, և այլն, բնակեալս և ի Հայոց, դարձ արասցուք ի Պարսկայինն, և նաւարկեալ ընդ Որմոս, կամ թէ հաճոյ ումեք թուեսցի ընդ մէջ երկրի Պարսից աշխարհին, (այց արարեալ և Շիրազայ ի Ֆարսիստան՝ ուր երբեմն 800 տունք Հայոց էին), մտցուք յաշխարհահրաւէր շտեմարանն բազմապատիկ ցանկալի բերոց, ի լայնածաւալն

1 Որպէս առավելոս խրատաւոր ոմն ասէ. « Չոր օրինակ վաճառական որ զնայ ի Հնդկաստան, տեղն կենալու համար չի երթալ, ոչ վաճառ առեւտուր առնէ իւրեանց. բռն կապէ ոտի, արծաթ, օրն և Բրբրէր. և ծանր բիւնով զառնայ ի կայրինի

ՀՆԴԿԱՍՏԱՆ. — Որքան հարուստ, տարփալի աշխարհակալաց և ընչասիրաց էր սա՝ ի վաղեմի դարուց մինչև ցորս այս՝ անդադար ըղձակերտութեամբ, ծանօթ է ամենեցուն, և հարկ է իրբու հետեւանս ցայս վայր ասացելոց՝ նկատել և խնդրել ի նմին զմերս. յինքս, ի ժամանակէ անտի Հայկազանց. և աւաղիկ երաշխաւորք կացին մեզ առ այդ ժամանակակիցքն Քոնստոն, և Ստրաբոն առ Արշակունեաք (տես յէջ 433) մերձ ի փրկչականն թուական: Սովորութիւն իմն է պատմեաց կամ գրչաց մերոց ի ճառելն զճոխութենէ ուրուք կամ գտեղոյ, յիշել զՀնդկաց բերս, զոր համարիմ ի ծանօթութենէ յաճախ երթեւեկի ազգակցաց իւրեանց անդր 1:

Եթէ և յառաջ երթային Հայք ի Հնդկաստան, յայտ է զի առաւել եւս յորդորեցան ձեռնտուութեամբ Շահաբասայ, առկայանալով ի զանազան գաւառս և քաղաքս ընդարձակատարր աշխարհին. ուր յանցելում դարու և ի սկզբան մերոյս՝ զլիաւոր կեդրուք էին երկաթին մեծամեծ քաղաքն կալիպոս և Մատրաս: Կարի նշանաւոր և հին դէպս ինչ յիշեցուցանէ յետինս այս տեղի, յաւէտ ի քրիստոնէական պատմութեան, այլ միջնորդու վաճառականութեան, ի Դ դարու, ի ձեռն Մարթովմա կանա ուրումն մեծաւարուստ Հայ վաճառականի ճախացելոյ ի շահավաճառէ Հնդկաց, որ ընտելացուցեալ բնկաց կռապաշտից սահմանացն այնոցիկ՝ զքրիստոնէական կրօնս, հաւանութեամբ և ձեռնադրութեամբ Եւստաքեայ եպիսկոպոսապետի Անտիոքայ, երբ անդր օչ միայն եպիսկոպոսունս և քահանայս այլ և զաղթականս քրիստոնեայս, յաւէտ Ստրիս, և զնոցին լեզու կամ զքաղզէականն եմոյժ յեկեղեցիս և ի վարժոցս՝ զոր չենեաց անդ մերձ ի Գրանակոր՝ ի դաստակերտ քաղաք իւր, որ կոչեցաւ հնդկերէն Մանա-տեփա-բադամ, այսինքն է Մեծին Ատոռոժոյ քաղաք. որոյ և մնացուածք և ոճ իսկ չինութեանն տեսանի օտար ի հնդկականէն՝ իշխողք տեղոյն (ի Փիրումալ տոհմէ) Մալապար՝ թոյլ ետուն նոցա, և անեաց քրիստոնէութիւնն անխափան, մինչև ի մուտս Յիսուսեան քարոզչաց ի ԺՉ դարու, որք սրբեցին զաղանդ նոցին (արիտական կամ նետառական) յուղղափառ հաւատս, և ցարդ սերեալքն ի նոցանէ կոչին Գրիստոնեայք Ս. Թովմայի, (ոչ վաճառականին այլ Առաքելոյն), որ համարի առաջին քարոզիչ և աւետարանիչ աշխարհին և անդ նահատակեալ, և պատուի ցարդ յեկեղեցւոյն ի բարձու բլեր. առ որ ելանելիս քարեղէն սանդղոց 160 աստիճանք՝ ետ չինել մեծատուն վաճառականն Պետ. Ոսկան յամի 1726. նըմարին անդանօր 2 և զերեզմանք համազգեացն: Չարտուրութիւն համարիցի բանս, այլ ոչ օտար, զի պատճառք իրացդ վաճառականութիւն Հայոց եղեւ, զի Հայ և ոչ Ստրի կամ Քաղզէացի ասեն զհեղինակ գործոյն՝ ամենայն յիշողք, թէպէտ և լեզու օտար եմոյժ, զի չեւեւ էր հայ դպրութիւն: — Եթէ մի ոք վաճառական այգ

2 Կանա օրինակ սին և մերձ ի Սիւրբապո առ Մամլան զեղեւ

պիսի ինչ մեծ և հոգեկեցոյց գործեաց, գէթ շահասիրութեան իւրում հետեւողս համազգիս եգիտ և յայնժամ և ի յախորդ դարս, թէպէտ և ոչ յիշեցին, այլ աներկբայ համարելի է և շատ կամ սակաւ անընդհատ առեւտուր Հայոց ի Հնդկիս, յորմէ ի կէս Ժ դարու ճախասէր Թագաւորն մեր Սմբատ Բ Բագրատունի՝ տայր բերել զակն լուսոյ հրաշափառ կաթողիկէին Անւայ՝ ըզՋառն քիչքիչեայ 8 կամ 80,000 ոսկոյ գնով: Եւ զի յետայնր յառաջ քան զՇահարասեան յեղանակն իսկ գոյր երթեւել Հայոց Ջուղայեցոց ի Հնդկիս, տեսաք ի վերանդր զվկայութիւն Լիպոմանոյ, յամի 1878: Բազում ամաք եւս կանխադոյն ի կէս ԺՁ դարու պատմի Յակոբայ ուրումն գալ ի Քաշիկր կնաւ հանդերձ, և անդ ծնանել զորդին Ղուրմանի, զոր որդեգրեաց ինքեան անուանին Աբարաշահ՝ մինչ ոչ ունէր որդի ի Թագուհոյն. յայնժամ եկեալ և այլոց բազմաց շինեցին եկեղեցի յԱբարաշահայ քաղաքի. շնորհեաց ապա շահն որդեգրելոյ իւրում զորդոյն քաղաքն Հոռիի, և այլ կալուածս ընդարձակս ի Բնկիւրս և ի Լանոս, յորոց յետոյ մասամբ հրաժարեալ սորս՝ կեայր իրր մենակեաց և երգահան լինէր: — Յաճախութեան Հայոց ի մեծի քաղաքի անդ (Լահու) յառաջ քան զակեր Հնոյն Ջուղայ՝ վրկայէ և այս, զի Հ. Կոէս Բիսուսեան կամելով անտի երթալ ի Չինս, զգեցաւ զտարազ զգիտութեան Հայոց. և ի միւսում արքայական քաղաքի՝ ի Տէրիի, առաջին նուիրակն Անգղիացոց յամի 1616 եգիտ զՀայս՝ կանխեալս անդ վաճառականութեամբ: Իսկ իրբեւ միջամուկ եղեն սորս (Անգղիացիք) ի Հնդկիս և զօրութեամբ զինու և ճարտարութեամբ արկին մի ըստ միով ընդ իշխանութեամբ կամ ընդ պաշտպանութեամբ իւրեանց զյուրվս ի նահանգաց և ի պետութեանց աշխարհին, ի ձեռն հուշակար Հնդկային Բնկերոսեանն, ստիպեցան Հայք կողմանցն տեղի տալ հզօրագունից (ուրեք ոչ անկուի) և զիջանել ի պայմանս դաշանց և կամ արտօնութեանց. և յետ ոչ բազում ամաց հաստատութեան Բնկերութեանն, յամի 1688 (յուսիս 23) նախագահն և պաշտօնեայք կնքեցին ընդ իօջայ Փանոսի քալանթորի Ջուղայեցոց՝ երեսփոխանի Հայոց՝ զաշինս, շնորհելով ի բազում իրս հաւասար իրաւունս, և համարձակութիւն բնակութեան և նուարկութեան 2. և վասն վաճառուց՝ զոր յօտար աշխարհաց բերէին Հայք՝ սահմանեցին սակ շափաւոր, որպէս զի երկոցուն կողմանց եւս լիցի օգուտ: Այլով եւս առանձին հրովարտակաւ ի նմին աւուր շնորհեցան Հայոց կալուածք և եկեղեցիք ուր և ուրեք զըստցին 10 ազգայինք նոցին: Ընդարձակագոյն եւս իրաւունս տուեալ էր անշուշտ ինքնակալաց և Թագաւորաց Հնդկաց առ Հայս յիւրաքանչիւր նահանգս. որոց որպէսն ոչ է բացայայտ: — Մի ի նորագունից համարեալ է տուեալն ի Պէտրլահէ որդւոյ հուշակարուն Արէնկղէպի, յելս կոյս ԺԷ դարու, ի ձեռն Ստեփանոսի վար-

դպետի Ջուղայեցոյ, որ միայն 3 1/2% պահանջէր սակ մաքրի. և յայլ ամենայն իրս տայր ազատութիւն Հայոց յիւրկրի իւրում: Թողեալ զհետաքննութիւն այսպիսեացս՝ յիշեցուք զգլխաւոր քաղաքս Հնդկաց ըստ այժմեան քաղաքական կուսակալութեանց Անգղիացոց, ուր կանաւե կամ յետոյ երթեւելիւ կամ հաստատ բնակութեամբ կրթէին Հայք ի շահավաճառ:

Յառաջնումն կուսակալութեանցն ի Կալկադայ՝ որ գրաւէ զմեծ աշխարհն Բնկիւրս, ի մայրաքաղաքի անդ՝ թէպէտ եւ նուազեալք՝ բայց տակաւին յօրովագոյն են Հայք (իրր տունք 100) քան յայլ ամենայն կողմանս Հնդկաց, և ունին եկեղեցի (չինեալ յամի 1724), վարժոց և ընկերութիւնս մարդասիրականս. իսկ ի վաճառականս նշանաւոր եղել ի դարուս տունն Աբարաշահ: — Գտանին Հայք յոյժ սակաւք ի Սիստապատ, ուր երբեմն էին գործատունք մետաքսի, որպէս և ի մերձաւորան Մախստապատ և Խասիմապատ 3. — ի Մոռչիտապատ երբեմն մայրաքաղաք ինքնակալաց, ուր ի կէս ԺԼ դարու Գրիգոր Գորգի իսն հայազգի եղբայր Պետրոսի Յարուսթեան էր զօրավար Հայոց և Հնդկաց 4. — և ի հնագոյն մայրաքաղաքին Տագգա, յորում արդ տունք իրբեւ 18, և եկեղեցի (չինեալ յամի 1781). — ի Բադնա որ ի Պահար գաւառի, ուր յիշի յետ կիսոյ ԺԼ դարու Հէքիմ Յովիմիտոսեան վաճառական. — ի Չինստրա ի վերայ Հուրլի գետոյ, — ի Բունս՝ որ ի Նիտամ գաւառի երկրին Տէգանայ, — ի Հայտերապատ գլխաւոր քաղաք նորին Տէգանայ. և այլն: — ի կուսակալութեան Մատրասայ յորում պարագրի արդ Մալապար դրացի ծովուն Օմանայ, ի վաղուց ծանօթացեալ մերայոցս, ի համանուն մայրաքաղաքի որ ի Գառնադիկ գաւառի, ոմն ի մերայոց ի կէս անցելոյ դարու գրէր, «Շատ մեծամեծ վաճառականք և ժողովուրդք և եկեղեցիք»: արդ սակաւ տունք գտանին (18, աւելի կամ պակաս) 5. եկեղեցի նոցա Աստուածածին չինեալ է յամի 1772. բայց էր նոցա հնագոյն եկեղեցի (1712), զոր քակեցին Անգղիացիք: Պտուղ բարի ճոխից վաճառական քաղաքիս՝ ընծայեալ ի սկիզբն դարուս՝ յարատեւէ դանունս նուիրողացն Սամ. Մուրատայ և Եղուարուայ Թափ. Ղարամեան, ծանօթ վարժարանքն ի Վենետիկ: — Գալիքոզ, Գոլիկ, հին և անուանի շահաստանք Մալապարայ, Չանտեանայ կոր ի Գառնադիկ, ուր յամի 1740 քարոզիչ ոմն Յիսուսեան ետես զժերունի Հայ վաճառական ծանօթ Նատիր շահի, և այլն: — Յափունս Մալապարայ ընդ իշխանութեամբ Լուսիտանաց ի կոս շահաստանի՝ ի ԺՁ դարու իսկ բնակեալ էր Հայոց, ըստ վկայութեան ժամանակակից պատմչաց և աշխարհագրաց, նոյնպէս և ի Տիոն կղզւոյ:

Ըստ այլոց մայրաքաղաքաց նուազեալ են և Հայազգիք Պոմպայի կուսակալութեան անգլիական Հնդկաց, յորոյ սահմանս բարգաւաճէր և Չիլրա վաճառականու-

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

3 Աշխարհագր. Ասիոյ 73. — Բազմազգայ ԼԸ. 242:

4 Աշխարհագր. Ասիոյ, Ա. 65:

5 Հայք յամի 1877 համաքէին ի Մատրաս 64 անմիկք միայն: — Աբարաշահ, ԺԱ. 78:

2 Ազգասէր օրագիր, Բ. 132:

Թեամբ Հայոց, որոց եկեղեցի չինեալ է յամի 1695: Յայտ կուսակալութեան համարի և Գոռնար գաւառ համանուն քաղաքու որ և Անատոպատ, մերձաւորութեամբն յՕման՝ յաւետ ծաղկեալ. նոյնպէս և Սուրադ մեծ և բազմամարդ քաղաք, ուր և բազմութիւն էր վաճառականաց մերոց, և դարու յառաջ չորք երիցունք էին եկեղեցւոյ նոցին, և միւսոյ եւս արտաքոյ քաղաքին: Աստանօր հանդիպեցաւ Գաւեռնիէ փռանկ վաճառական տեղագիր՝ որդւոյ ճոխի առն Պետր. Չորայեցոյ, որ վասնեալ էր զմեծ մասն ընչից հօրն (և † ի Բեկու): Յետ կիսոյ ԺԸ դարու անդ էր և Գրիգոր Սահարձի գործակալ Յհ. Սեդրակի վենետկաբնակ մեծատան: Իսկ ի Գամպայա որ առ բերանով Միա գետոյ, յիչին Հայ վաճառականք անդստին ի ԺՁ դարէ (1585), յորմէ գուշակի լինել նոցին և յայլս արդ յիչեցելոց քաղաքաց Գուճրադայ. — Այսպէս համարիմ և յԱրա կամ Աքպարապատ մայրաքաղաք Դ կուսակալութեան Անգղիահընդկաց, և երբեմն Մոզոլից, զի յիչի եկեղեցի Հայոց, յառաջ քան զամն 1563, գերեզմանքն իսկ վկայեն այդմ. նա և համեմատեալ ընդ այլոց քաղաքաց յիչեցելոց, յետ Կալկադայ՝ ի սմա գտանին այժմ առաւելութեամբ Հայք, իր 35 տունք, ընդ նմին համարեալ և զմերձաւորն Գոռնարիէր: Ի սմին մարդի է և վերոյիշեալն մեծ և արքայանիտ Տէրի քաղաք, աւերեալ և աւարեալ ի Լէնկթիմուրէ և ի Նատիր (Թահմազդուլի) շահէ: — Արտաքոյ անգղիահընդիկ չորից կուսակալութեանց էին և ի մեծի ախարհին Պիրմանայ վաճառականք Հայք յայլեւայլ գաւառս նորին, որպէս ի Բեկու և ի Հաւա մայրաքաղաքի, ուր յանցելում դարու շինեցաւ եկեղեցի ի Ջաղատեանց տօհմէ, յորմէ և քահանայք կային անդ Տէր Պետրոս և Տէր Իգնատիոս (որ պատմէ) յետ այլոց. ոչ վաճառականք միայն այլ և պաշտօնեայք հայազգիք կային ի սպասու թագաւորին Վիզիր կոչմամբ պատուեալք և գանձապետ եւս արքունի Նիկողայոս Աղայառնեց ոմն, ընդ որոց ոչ կարէին յայնժամ մրցել Անգղիացիք անգամ, ըստ Պիչինկայ. այսպէս և ի Սրիկն ծովափնեայ շահաստանի, ուր եկեղեցի հոյակապ կառուցեալ էր Հայոց ձեռնտուութեամբ Նիկողայոսի և այլոց, որ չինեաց և Լատինաց եկեղեցի և վանս: Էր և ի Լեչիկ գեղէ եկեղեցի Հայոց: — Զարդիս քան զայլ քաղաքս ախարհին և քան զբազումս ի Հնդկայնոց՝ բազմաբնակ է հայութեամբ Ռանգուն քաղաք, 20 տամբք և եկեղեցեաւ. ի սահմանս նորին են և այլ բնակութիւնք Հայոց սակաւուց: — Վաճառական մի մեծատուն Հայ յիչի և ի Լոզգեով քաղաքի Հնդկաց, յԺԸ դարու:

Վաճառք զոր բառնային կամ խնդրէին Հայք ի Հընդիկս՝ յայտնէ երկիրն ինքնին ախարհաքարոզ արգասեպն, յորս պատուականագոյն Գոռնար ակունք և Արամանդն էր սիրելի Հայոց, այլ և համբաւեալ ձեռագործ վարչամակքն կամ շաղք Քաշմիրի, ուր և յաճախէին Հայք, և այլ եւս Հնդկաստանք, Հոտաշտու նիւրք, յորոց յիչէ հին մեկնիչն կամ լուծիչ խրթին բանից Ս. Բարսղի, Բարբարոսական Եղս կոչելով, և յատուկ «Ամբար ի» Հնդկաց, Մոռչի ի Թաթրաստանաց »:

Եթէ և ի հարաւակողմն անդրազանգիսեան թե-

րակղզւոյն Հնդկաց, ի Արամ և ի Գոչինչին՝ յառաջեալ էին վաճառականք Հայոց, ոչ անհաւանական թուրայց զի անդրագոյն եւս վարեալ են ընդ Մալակա և միեալ ընդ մէջ երկուց ովկիանոսաց, Մեծին և Հընդկայնոյն, ի մեծամեծ կղզիոն Սունտայ, յայտ է, մանաւանդ գալուստ և հաստատութիւն նոցա ի մեծ կղզին Ճնասա. բայց այս անագան ուրեմն յելս ԺԸ դարու, յորում Գեորգ Մանուկեան եկեալ ի Մատրասայ հաստատեաց զտուն իւր ի Պարաշիա և անդ մեռաւ (1827), թողեալ ստացուածս առաւել քան 4,000,000 Քրանգաց. յորմէ յորդորեալ եկին և այլք ոմանք յամի 1830, այլ և ի Սանարանգ և Սուրաբայա քաղաք, յորս միահամուռ են արդ տունք իրբու 40 կամ 45, եկեղեցեաւ և բարեկանոն ընկերութեամբս Նոյնպէս և ի Պինանկ կղզի և ի բարգաւաճն Սիեկարտը՝ կուսան բնակութեան է Հայոց իր 10 տանց, որք թերեւս և զլիսաւորք վաճառականաց տեղոյն են. ոչ գիտեմ թէ իցեն և ի մեծի կղզւոյն Պոնէնոյ: — Բայց յառաջ քան զսոսա յանցելում դարու, թերեւս կանխաշոյն եւս, նաւեալ յայց ելանէին վաճառականք մեր ի Փիլիպպեան և ի Մանիլան կղզիս, մինչ տեարք տեղոյն Սպանիացիք՝ ոչ ներէին այլոց աղգաց՝ մանաւանդ եւրոպէացւոց վաճառաչակ լինել անդանօր: Մեծանուն և եղերամահ նաւողն Լարբուրդ՝ յիչէ զՀայ վաճառականս ի Մանիլա:

Կարգ տեղագրական հետեւողութեան վաճառականութեան Հայոց՝ ի կղզեաց աստի ծագաց արեւելից՝ առաջնորդէ յարեւելագոյնն և ի մեծագոյն, թերեւս և հնագոյն ախարհ Ասիոյ, ի ՉինԱՍՏԱՆ, ըստ մերոցս նախնեաց ձեռնաց աշխարհի, որում քան զբազումս աղգաց առաւել ծանօթք էին. մանաւանդ եթէ աներկայ իցէ գալուստ անտի նահապետաց Մամզունեանց տօհմի ի Հայս, յառուրս Վաղարշակայ. այլ ստոյգ է շատ կամ սակաւ ծանօթութիւն ախարհին առ հարստութեամբ Սասանեանց և յետ այնր Արաբացւոց և Բիւզանդացւոց, բերմամբ մեծաշահ շերամ որոյ, որոյ պատուական հիւսուածն (կերպաս) վաղագոյն եւս ծանօթ, այլ յոյժ թանկագին պատմուածանս ընծայէր ճոխից արեւելեայց և Հռովմայեցւոց: Ի վերոյիշեալ կղզեաց անտի (Փիլիպպեանց) և ի համօրէն Հնդկային ամփանց նաւք վաճառարեւք և վաճառախնդիրք զային՝ մանաւանդ ի Միլին դարս, որպէս և ցարդ ի մեծ շահաստանն Գառդուն, ուր անտարակոյս է և մերոցս գալ ընդ նոսին, թերեւս և ընդ ցամաք, յետ յայց ելանելոյ համախարհական մայրաքաղաքին (Փէքին): Ի նուաճել Թաթարաց զախարհն՝ տիրապետող նորին Ղուպիլա զան՝ համարձակեաց գերթեւեկ վաճառականաց, որպէս և նախորդ տիրապետըն Արաբացիք յաճախէին նաւարկութեամբ, բերելով զախայխիրս Հնդկաց և բառնալով աստի՝ զատ ի կերպասեղինաց՝ զհամբաւեալ Յախմապակիս: Եթէ ոչ յիչի շատ կամ անընդհատ գալուստ Հայոց այսր, բայց ամենայն յիշատակողք վաճառականութեան Հայոց նըմարեն զնոսա և ի Չինս, և առանձինն ի մեծս յայս շահաստան, յորում զկիսով ԺԸ դարու ծանօթ է Խօճա Շիչքր Պրուսացի, գործակալ վերոյիշեալ վենետկաբնակ փարթամ վաճառականին Յովհաննու Սեդրոսեան:

Բայց առաւել սիրալի է մեզ ազդային յիշատակ՝ ի վերագոյն ուրեք քան զՔրիստոսն, ի Ֆրոնիսն նահանգի, յայլ չահաստան ծովու, որ ի միջին դարս կամ առ Ռուսիներամբ մերովք՝ էր յայնմ կողման երկրի՝ զուգակից իմն Այասոյ (ծագաց ի ծագս բացակայք յարեւելս և յարեւմուտս)։ և է կոչեցեալն Չայթուն յԱրարաց <sup>1</sup> (Zay-tun, և Saiton կամ Cayton ի քարոզիչ ճանապարհաւորաց եւրոպացւոց, իսկ ըստ Չինաց Tsuen-toheou-fou, յանկագոյն եւս ի հնումն Tsé-Thoug), յայժմուս խանգարեալ աւազոյ կուտակութեամբ. այլ ի ժամանակի բարգաւաճանանցն՝ յորում բնակէին ի նմա և մահմէտականք և եկք ի Պարսից, զրեաթէ հուսաստի է և Հայոց՝ ոչ միայն գալուստ այլ և բնակութիւն. քանզի ի սկիզբն ժԳ դարու կամ յելս ժԳԻ տիկին մի հայազգի մեծատուն ետ կանգնել անդ եկեղեցի մեծ և հոյակապ, և ի մահուն յանձնեաց նորընծայ լատին Փրանկիսկեան արքեպիսկոպոսի (Քերարդոյ, Gerardus) <sup>2</sup>, որոյ երկրորդ յաջորդն Անդրէաս՝ ծանուցանէ զայստիկ ի թղթին՝ զոր զրեաց առ հայրենակիցս իւր Պերուհիացիս, յամի 1336. սուղ ինչ յետոյ ծանուցանեն և այլք զի էին անդ երեք եկեղեցիք Փրանկիսկեանց, և փնդուկ վաճառակաւնաց։ Սեփական վաճառ քաղաքիս էր կերպան նուրբ՝ որ յանուանէ տեղւոյն կոչեցաւ յԱրարացւոց զայրուցնիկ, յխալաջւոց ծեղանի, և ի Փռանկաց ստոյն, որպէս և ցարդ կտեն։ Արժան համարիմ յուշ առնել աստանոր զի առաջին Եւրոպացի ճանապարհորդք որք զնացին ի Չինս և ի մեծ մայրաքաղաքն Փէքին (ի Թաթարաց կոչեցեալ խանկադիս այսինքն Քաղաք Ղանի), երկաթին եզրարքն Բոյոյ վենետք, ի դարձին եկին և կացին յերկար յԱյաս (ի վերջին ամս Հեթմոյ Ա. և ի սկիզբն Թագաւորութեան Բլեւոնի, 1369 - 71). և անտի վերագարձան ի Չինս, տանելով ընդ իւրեանս զգերահռչակ ճանապարհորդ և տեղագիրն Մարկոս (Marco Polo) որդի միոյ յերկուց եղբորցն. յայտ է թէ յերկար բնակութեան և ծանօթութեան իւրեանց առ Հայոց ի Սիսուան, բազում ինչ պատմեցին նոցա կամ յաւելին ի զրոյցս Հեթմոյ Թագաւորի և եզրոր նորա Սմբատայ Քանդատապլի, որք զկէս այնր երկարաձիգ ճանապարհի արարեալ էին՝ իբր 30 ամբ յառաջ, յերթալն իւրեանց ի Գարազորում յերկրին խալխասաց յաթոս տիեզերակալ խաբանին, և բազում ինչ աւանդեալ համազգեաց իւրեանց, յորմէ առեալ պատմեն եղբորորդի նոցին Հեթում տէր կռիկոսի և պատմին կիրակոս։ — Մարթ է յայնմ ժամանակէ ասել և զգնացս Հայոց յաշխարհն Չինաց, եթէ ոչ կանխաւ եւս. այլ ցորքան ժամանակ՝ ոչ զիտեմ. բայց զի և ի ժՉ դարու ծանօթք էին կողմանցն, յայտ լինի յառաքելութենէ լատին քարոզչաց (Յիսուսեանց), զի, բազում ուրեք ցուցաւ վաճառակա-

նութեան կամ ունկիրայ լինել քրիստոնէական քարոզութեան, կամ զհետ երթալ քարոզչացն. և որպէս այլուր տեսաք՝ վկայի և աստանոր ի սկիզբն ժԷ դարու (1603) Յիսուսեան քարոզիչի (Հ. կոէս Բենեդ), հայանուն և հայազգեստ մտանել ի Չինս։ — Սքա յաճախ ի Հնդկաց կուսէ եկեալ ընդ ծով մտանէին ի նաւահանգիստ Չինաց. իսկ հնագոյն վաճառականք միեւրով ի խորս Ասիոյ ընդ ցամաք, և հատանելով զանհուն անապատս Թաթարստանի և զաշխարհս՝ ոչ կամ յոյժ ընդ աղօտ ծանուցեալս՝ ի Յունաց և ի Հռովմայեցւոց. ընդ նոյն անկնիք շաւիղս՝ ընդ Պարսկաստանեայց և Արարացւոց հետեւէին և Հայք, մանաւանդ յետ տիրապետութեան Թաթարաց, առ որոց խաբանս ստէպ երթալին և գային և Թագաւորք մեր Ռուբինեանք, և իշխանք վերին Հայոց, Օրբելեանք և այլք, բազում ուղեկցօք և անբաժանելի վաճառականք, որպէս և ի հնագոյն դարս անդ խնդրողքն մետաքսի՝ ի սկզբան ճառիս յիշեցաւք։

Նշանաւոր քան զտիկնաչէն եկեղեցին Չայթունի յարեւելեան ծագս շենաց, համարիմ զհետաքննելի նըշխարս Ս. Մատթէոս վանաց, զոր Հայք կանգնեալ էին ի զանխուլ խորս անապատաձեւ վայրացն, ի հիւսիսակողմն Խասիկեոյ լճի, անդր քան զՊուխարա և զՍմըրղանս, ի հարաւոյ մեծագոյն Պալքաշ լճի. որ և յայտ առնէ զի գէթ հանգրուան մի վաճառականաց Հայոց հաստատեալ էր անդ, եթէ ոչ և չէն մեծ, թերեւս ի սկզբան աշխարհակալութեան Թաթարաց. քանզի յիշի ի կէս ժԳ դարու ի Բիւպրիւք ճանապարհագիր քարոզչէ, իսկ զաւերական յիշեն մեծագոյն երկրագիրք դարուս <sup>3</sup> Հումբուլու և Մըրչիսըն։ Չիցէ՛ արդեօք օրէն իմաստասիրել յայսմանէ, եթէ ի դէպ էր Հայոց հաստատել հանգրուանս և այլ ուրեք ուրեք իբրեւ կարաւանատունս, ի վերայ երկարաձիգ ճանապարհի վաճառականութեան իւրեանց. և չէ բնաւ զարմանալ եթէ և յամենայն զըշխաւոր քաղաքս Չինական Թուրքաստանի և սահմանակըցաց արեւմտեան պետութեանց կամ նահանգաց, հաւտատեալ իցէ նոցա բնակութիւնս, և յոմանս լոկ երթեւեկեալ. որպէս ի Պոչոս, ուր ի վերջ կոյս անցելոյ դարու յիշի վաճառական ոմն Հայ Գոռալուգ անուն (Kurlak) ըստ գերմանացի գրողի. առ որ տայր զիր ընծայութեան կոռչա (Guka) հաւանօրէն Ղուկաս՝ ի Քաշխար քաղաքի, որ է ի Հր. Խասիկէսլ լճի, բացագոյն. ուր 835 Հայք էին ըստ Գէորգայ Լուգվիկ ճանապարհագրի, և եկեղեցի նոցա կանգնեալ ի սկիզբն ժԷ դարու (1615). անհաւատալի թուեցաւ այս մեծանուն աշխարհագիրտին անգղիացւոյ Ռադլինսընի, այլ խանիքոֆ նոյնպէս հմուտ աշխարհագիր ուսու հաւատարմացոյց, յիշելով և զանակութիւն Հայոց ի Հերադ, թէ և այժմ դադարեալ։ Ղուկասն այն յիշեալ՝ գտեալ կամ տեսեալ էր ոսկէհանս ի

1 Այսպէս կոչեցեալ ասէն ոմանք՝ յԱրարացւոց, վասն իւրաւորին ծառայ միոյ այնք կողման՝ նման ձիթենուց։  
 2 Ըստ բանից լատին քարոզչաց ժամանակին՝ կրկնէ Հ. Քերուէր. Est quedam magna civitas juxta mare Oceanum, quæ vocatur lingua persica (Ayton, in qua civitate una dives domina Armena ecclesiam erexit praeclaram satis et grandem, quam quidem de ipsius voluntate per Ar-

chiepiscopum in cattedralem, cum competentibus dotibus, Fratri Gerardo episcopo et Fratribus qui cum eo erant, donavit in vita, et in morte reliquit, qui eadem cathedralem suscepit.  
 3 Հումբուլու ի մոտենին, Asie Centrale, և Մըրչիսըն ի Բախտուլեան (Adress) 1870 ասրւոյ յաշխարհագրական լեկերութեան լոնտոնի։

սահմանս անդ, խափանեալս ի Չինաց, և եցոյց ձոյլ մի սեաւ նիւթոյ յորում երեւէին երակք ոսկւոյն: — Էին (իցեն թերեւս և արդ) ի Քապուչ Հայք բնակեալք, իբրեւ 30 տունք՝ ի սկիզբն դարուս, առ որս առաքեցան քահանայք ի Հոռովմէ և յԷլմիածնէ. և հանդիպեցաւ նոցա գիտնական ուղեւորն Kōrōsi յամի 1822. բազմաթիւ եւս էին ի կէս ԺԸ դարու, վարեալք այսր կամաւ կամ ակամայ ի Նատիր շահէ և յԱհմէտայ, ի կողմանց Մէշտայ և Նոր Զուղայի. այլ հնագոյնս եւս յայտնեն տապանագիրքն. բայց ի կէս մերոյ դարուս նուազեալ յոյժ էին Հայք ի Քապուչ և ցրուեալք այսր անդր, որպէս ցաւելով ասէր Սիմոն Մկրտիչ՝ Սիշէյման կոչեցեալ՝ առ ուղեւոր ոմն անգլիացի (Պըննէս). էր նոցա և եկեղեցի փոքր:

Յստիսագոյն եւս են յիշատակք՝ որպէս և երթեւեկք վաճառականաց Հայոց ի շահարասեան յեղանակի՝ ի ծանօթագոյն մեծամեծ քաղաքս Ասիոյ, ի Պոնապարս (ուստի բերէին կոճապղպեղ), ի Սիւրսուս, ի Պանչ, և այլն. և հարկ է թէ ոչ պակաս քան զվերոյիշեալսն բազմաթիւ և բնակք և եկք. որոց հետեւոցս ի դէպ է ասել զայժմանս, յետ նուաճման մարզիցն այնոցիկ ի Ռուսաց, մանաւանդ յետ դիւրելոյ և երազելոյ ճանապարհաց՝ կովկասեան և անդրակասպեան երկաթուղեօք:

Արշաւանք Մոզուլաց և մեծամեծ բաժինք իշխանութեանց նոցին յասիական աշխարհս, զհետ ձգեցին՝ էր որ բռնի և է որ յօժար բազմաթիւ գրոհս և յազգէս մերմէ, առաւելապէս ի Հս. Մ. սահմանս, ի մարզս Ղիչախ Թաթարաց, որք ի հիւսիսոյ կովկասու և կազրից տարածեալ ձգէին յարեւելս կոյս սորին, և ի պատմաց ժամանակին յաճախ կոչումնիս կոչիր, յանուն հզօր տոհմի միոյ Թուրքաց, և ի մերոցս բազում անգամ՝ Հունաց երկիր, բովանդակելով ընդ նոսին՝ և զԹերակղզին Տաւրիոյ (Ղրիմ). ի դէպ է թէ և յառաջ քան զմեծ ասպատակն Թաթարաց՝ գոյին յազգէ մերմէ բնակք ցըրուեալք յայլեւայլ քաղաքս կողմանցն այնոցիկ, այլ ի միջին դարս այնքան յաւելան, մինչեւ եպիսկոպոս իսկ նստուցանել (ոչ միայն ի կաֆա) այլ և ի բուն ի նիստ կուսակալացն Ղիչախաց ի Սարայ քաղաքի, որպէս յիշի ի սկիզբն ԺԴ դարու. յորում քահանայ ոմն Խաւաւտոյ անուն ընդօրինակելով աւետարան յամի 1319, յետ ասելոյ զանձնէ, եթէ, « Բնական կայանք չունէի, » ապա ի տեղովէ ի տեղի դեգերէի, (և զի) սիրտս վշտա » ցեալ էր », յաւելու թուրքարէն բառախառնութեամբ. « Այս աշխարհիս ձմեռն խիստ է, ու հաւայն չէ գրա » գրու լայնիս. բայց դրեցաւ սա ի մայրաքաղաքիս Սարայ, և է ի հիւսիսոյ կողմ մերձ առ ծովուն կասփիա » կանի, ընդ սրում շուրջ պատէ զնովաւ մեծ և հզօր » գետն էթիլ (Վոլկա), և ընդ հովանեաւ Ս. Աստուա » ծածնին և կենսակիր Ս. Նշանին »: Սարայ՝ զոր չինեաց զառաջինն առ Աքթուպա օժանդակաւ արեւելեան Վոլկայ՝ Բաթու զան, առ որ եկն անդր Հեթում Ա արքայ (1253), յետ ոչ բազում ամաց՝ փոխադրեցաւ անուամբ և մասամբ բնակչացն ի նոր քաղաք բացագոյն

ի կասպիական ծովէ, առ այժման Զարէ քաղաքաւ Ռուսաց, և զոր Լանկթիմուր աւերեաց յամի 1396: Գոյր երրորդ մի եւս համանուն փոքրիկ քաղաք Սարայ ձրգ, առ ժամանակեայ նստազահ զանիցն հիւսիսոյ, առ Եսյեխ կամ Ուրալ գետով, իբր 30 մղոնաւ հեռագոյն ի բերանոյ նորին առ կասպիականաւ: Այնիս կոչի գետս ի յիշատակի ճանապարհորդութեան Հեթումոյ, որ էանց ընդ այն յերթալն ի հին Սէրայէ և ի դրանէ Բաթուի՝ առ Մանգու զան. յետ իբր դարու միոյ քարոզիչ ոմն Լատին (Pasohalis de Victoria) պատմէ զհաւարկութիւն իւր ընդ Հայոց ոմանց ընդ գետն էթիլ (զոր Տիգրիս կոչէ, որպէս և զժովն կազրից՝ վատոակ յանուն՝ Պագուի) և զգալն այսր ի Սարայճուզ (Saracuc գրելով): —

Ոչ սակաւ հեռագոյն և վերագոյն ի սոցանէ (իբր ընդ 80<sup>0</sup> Հս. լայն.) շահաստան մի եւս էր հիւսիսայնոց ազանց յարեւելեան Բուլղարս, համանուն նոցին Բուլկար քաղաք, ի գետախառնուն Քամայ ընդ Վոլկայ, ուր անդրտին յ'Թ դարէ Արարացիք և որք ընդ իշխանութեամբ նոցին՝ գային նաւեալք ընդ կասպիականն և ընդ Վոլկա. և բառնային մորթս և մուշտակս. ուր ոչ միայն երթեւեկ էր մերայոց, այլ և հաստատ բնակութեան նոցին տիրական վկայք կան դերեղմանքն արձանագրեալք. մին ԶԶԴ (1335) թուականաւ, ազնուականի ուրումն, զի Պարոն կոչի՝ — Եթէ փոքր մի եւս ի վեր կոյս խաղասցուք ընդ հիւսիս, ահա սաստկասառոյցն Սիբերիա, (յոր մերձեցաք և յառաջագոյն ընդ այլ ճանապարհ). ուր եթէ բնակել ոչ՝ այլ ի դէպ էր յառաջել ի վաճառաշահ քաղաքս ցուրտ աշխարհին, և հայթայթել որպէս ի Բուլղարի՝ մորթիս և մուշտակս. զոր օրինակ առնէին իսկ մերայինք յիւրպիք քաղաքի, ուր բերէին զանգղիական վաճառս. զորս առ վայր մի արգել պետութիւն Ռուսաց ի սկիզբն դարուս (1807):

ԺԳ. Հայք յԱփրիկէ. — Թողեալ արդ զհուսկ ցրտային սահմանքս՝ ակն արկցուք ի հարեւանցի և ի բուն Վերմայինան, յԱփրիկէ. ուր՝ յայտ է հասարակաց առաջին և գրեաթէ միակ հանրածանօթ աշխարհ Եգիպտոս, յորոյ անեղծանելի և հինաւորոց արձանս յ' 3000 և 4000 ամաց հետէ դրոշմեալ համարին ոմանք ի գիտնոց զանուն ազգիս Արմենեկ, ընդ ուրում և երբեմն բաղխեցան աշխարհակալ Փարաւոնքն Հաամիսեանք, վաճառակիցք Փիւնիկեցոց. ընդ յետնոցս՝ և երբեմն առանձինն՝ ի վաղեմի դարուց հետէ հորդեալ էր Հայոց ճանապարհ. և զի ի սկզբանէ պատմական դարուց և տիրապետութեանց միշտ բարգաւաճ եկաց աշխարհն այն այլեւայլ մայրաքաղաքօք և շահաստանօք, անընդհատ գրելի է և զմերոցս վաճառական յարընչութիւն, մանաւանդ ի միջին դարս. յորժամ առ փոքր փոքր աճեաց անդ գաղթականութիւն Հայոց, մինչեւ բիւրաւոր տանց լինել յելս կոյս ԺԱ դարու, յորժամ մեծ Վկայասէրն Գրիգոր այց արար նոցա, և այցելու կացոյց զքեռորդի իւր համանուն: Ի նմին ժամանակի և յետոյ եւս ընդ երկար ամս հազարապետ և գրեա-

1 Զորոյ անուն Աւն ընթեանու Պրոսէ, այլ ոչ են նման տառքն՝ և ոչ հզօրիս ընդօրինակեալք և վիճադրեալք:



Թէ վարիչ տէրութեանն էր (Պետրոս էլ-մեմու) հայազգի ոմն, Թէպէտ և ուրացեալ, որպէս և այլք ամանք համապատասխան յ' Երզնկայ, յորում և հաճութեամբ հզօրին Սալահէտտինայ՝ Թափեցին Հայք ի Ղփտեաց զերկուս յեկեղեցեաց իւրեանց գրաւելոց. աներկբայ է յայնժամ յաջողակ գոլ և վաճառականութիւն Հայոց, որպէս և առ յապա. և Թէպէտ յերկոսին յաջորդ դարս Եր-Պ, բազում անգամ հակառակութիւն եղեւ ընդ սուլտանս Երզնկայոսի և ընդ Թազաւորս մեր Սիսուանայ, մինչեւ ի նուաճումն սոցա, այլ ի միջոց հաշտութեան՝ էր նոցա դաշնակցութիւն վաճառականութեան. և եթէ ստոյգ ի-ցէ գրոյց ոմանց (որպէս Լեւոնի Ափրիկեցոյ) մարդավաճառ եւս առնէին, զստրուկս ածեալս ի հրապարակ Ալ-յասոյ՝ առաքելով ի Գասիւրէ, Այլ ոչ սակաւ տենչալի նիւթ խնդրեալ ի Կիրիկոյ՝ էր Երկար երկրին, որում փափազէին ի վաղուց և Փարսուքն Երզնկայոսի: Իսկ ի յետին դարս և ի շահարասեան յեղանակի՝ յիշեցի միւսանգամ վկայութիւն Վենետիկեցոյն (Լիպպոման) ի Երզնկայ, զոր ի դէպ է իմանալ և վասն նորագոյն եւս դարուց. յիշել և զայն, զի որպէս ի Եր-Երզնկայ, և յայժմուս իսկ յառաջադէմ պատմեանայք և հազարապետք վարչութեան երկրին կացին և կան Հայք, մանաւանդ յառաջ քան զմիջամուխ լինել անդր Անգլիացոց և այլոց օտարաց:

Յետ Երզնկայոսի նման նմին հին և միակ ժանօթ հրաւանգեալ աշխարհ և պետութիւն ի Լիբիա՝ Թէպէտ և փոքր ի շատէ, էր և Եթովպիա. ի սմա եւս նշանաւոր է ի յետին դարս եկեղեցական յարնչութիւն Հայոց, փոխանակ հազարապետաց դրան Երզնկայոց՝ վերատեսուչս եկեղեցեաց ընծայելով Եթովպացոց. այլ ոչ անմասն յաշխարհական պաշտօնէից, մինչեւ գանձապետս իսկ կարգիլ ոմանց մերազնեայց՝ Թազաւորաց նոցին յանցելում դարու. որպիսի էր Սէլէֆ ուստա կոչեցեալն Արարկերցի, որում յաջորդեաց յամի 1763 Յովն. Թովմանան, և ապա որդի սորա Պողոս, Յայտ է Թէ նախնեաց նոցին յաճախ վաճառականական եկաւորութեամբ ժանուցեալ եւս էր, մինչեւ (որպէս և այլոր տեսաք) ի Երզնկայ (1577 և 1603) Յիսուսեան Հարց (Մելգոն Սիլվոս, Պետրոս Պաիզ, Pags) հայազգեստ մտանել անդր: Հաշակագոյն եւս է յերս Երզնկայ և ի սկիզբն Երզնկայ (1490 - 1520) զարմանալի առն Մատթէոսի կրօնաւորի և վաճառականի դեպքանութիւն ի կրկին արքունիս՝ Եթովպացոց (Հեղինեայ Թազուհոյն) և Լուսիտանացոց Պարտոզալաց (Մանուելի Թազաւորի). որպէս և յիշեցաւ սակաւուք յառաջ (յէլ 1558-9) այլովքն հանդերձ: Հնագոյն յարաբերութիւն Հայոց ընդ Եթովպացոց գուշակի ի Թելադրութենէ խորատես քաղաքագիտի և գրչի Հեթմոյ տեսան Կոստիկոսի՝ առ քահանայապետն Հուովմայ, զի գրեցէ առ Թազաւորն Եթովպացոց յորդոր ի խաչակրութիւն, և առաքեսցէ զԵթովպեանն առ Թազաւորն Հայոց, զի տուեալ նորա Թարգմանել յԵթովպացի լեզու՝ տարցէ առ Թազաւորն նոցին: Մանօթ է պատուականագոյն ի վաճառս զարմանալի աշխարհին այնորիկ՝ և յովմագոյն քան այլ ուրեք Փղոսկրն կամ Ժանիք փղաց՝ մեծագոյնք քան ըզ-

Հնդկացն, մինչեւ սոցա իսկ, այլ և Չինաց, խնդրել զայս նիւթ՝ ի նաւահանգիստս Ափրիկեայ, յորս՝ ի նաւարկութեան իւրում՝ մեծ տեղաքնինն և տեղագիտ՝ Վասոյ տի կամա՝ ետես, և նշանակէ զվաճառականս Հայոց:

Վաճառականացն այնոցիկ ժանօթից Երզնկայոց և Եթովպացոց՝ անմարթ էր անծանօթս լինել՝ և վաղեմի Թազաւորացն վաճառականութեան Լիբիոյ, Թերես և համօրէն աշխարհի՝ կարգեղոնացոց ասեմ, Թէպէտ և չգուցեն, կամ շիցեն ինչ այսմ հաւաստի յիշատակք. և հարկ էր Թէ այց առնէին և այլոց շահաստան քաղաքաց Միջերկրական ծովու այնր կողման, որպէս և յետոյ այժմուս բարբարիկ և մահմէտական տէրութեանցն (Մարկաց, Տունիսայ, Տրապոլեայ, Ճէղայիրայ), Թերես և խորոց կասկածելի Անապատին մեծի: Ստուտս և անդր շնայ մեզ տեղի զհետ կրթելոյ ամենահաս վաճառականաց մերոց, բայց եթէ հեռացեալ յերեսաց հնոյ երկրագրնտի՝ ի Նորն Թեւակոսիցեմք, ապաստանեալք ի նաւս Սպանիացոց, Պորտուգալաց և այլոց պետութեանց Երոպեացոց, յորոց աշխարհս դեգերէին մերազնեայք, որպէս տեսաքս ի վեր անդր, և բնական իմն էր շահասիրաց մերոց և բնածին վաճառականաց՝ հետեւել նոցա ընդ ոչ բնական ինքեանց ծովային շաւիղս. և ոչ լոկ վաճառականաց, այլ և միանձանց (անուանելոցն Միաբանոք), յորոց նաւեցին ոմանք և յԱմերիկա ի հանգանակութիւն դրամոյ կամ ողորմութեան, յԵրզնկայ, որպէս յիշեցաք ի Գրուագի պատմութեան նոցին: Իսկ իբրեւ յատուկ վաճառական գնացող կամ խնդրող ամերիկեան նիւթոց՝ յայնմ ժամանակի, համարիմ զոմն Մկրտիչ որդի Յովնաննու, որ գործակալ կարգէր ի Գատիս Սպանիոյ զԱւետիք Մելգոնեան (1664) առ ի խնդրել (ի Թեովմայ) 7, 353 փերթ սպիտակ ցփսեաց (Zambellotti) առաքեալս նմա ի Նոր Հնդկաց (da India Nova), որ սպանիականն Ամերիկա գուշակի:

Եր. Փարթամուրիս: — Յետ ընդ երկար յածելոյ գրեալքէ յառհասարակ երեսս հրահանգեալ երկրի, ընդցամաք և ընդ ծով, զհետ համաշխարհական վաճառականաց մերոց, առաջին խնդիր մտաց քննողի է, եթէ վասն էր և զիարդ, և զինչ օգուտ կամ արդիւնք նոցին: — Աղուական իմն էր երկրայեւն և խօսել անգամ՝ եթէ շահասիրութիւն կամ ընչաքաղցութիւն էր զխաւոր գրգիւռ և պատճառ. և ըստ այսմ՝ ի վերին երեսս տեսութեամբ՝ եպերելի իսկ մարթ է կոչել զայն՝ քան գովելի, եթէ ոչ արդարութեամբ իցէ շահեալն և արդարապէս ծախեալ կամ վարեալ: Իսկ եթէ արդարեւ ըստ այնքան վառատկոց և շարակիր պանդխտութեանց՝ շահեցան, հարստացան վաճառականք մեր, շահեցուցին և զհայրենիս. — հարկ է խոստովանել զայն վասն անձանց, մասամբ և վասն հայրենեացն: Զարմացեալ օտարաց ոմանց ազգագրաց քննողաց զպատմութիւն ազգիս, ընդ յիշատակս փարթամութեան աւագաց մերոց և սուկականաց, հարցանէին ընդ միտս՝ Թէ ուստի՞ դոցա այնքան մեծութիւն, մինչ ինքնին երկիրն Հայոց, Թէ և արգասաբեր, այլ ոչ յորդառատ ինչ աղբիւր պատուա-

կան բերոց կամ ձեռագործ ունէր. և անգէն ի վերայ հասին՝ յարգատեաց վաճառականութեան լինել, յորմէ նախ ինքեանք վաճառականքն ճոխացան, և ապա սահմանեալ սակօք և հարկօք՝ ճոխացուցին զտիրոջս երկրի իւրեանց, որք առանց աշխարհալրիկ լինելոյ՝ դիտէին ի ձեռն այլոց վաճառաչան լինել: Եւ թէպէտ չիցեն մեծի պարծանաց իրք, (բայց եթէ զհարտարութիւն և զերկայնմտութիւն նկատելով), իբրեւ պատմական գէպս և վկայութիւն մարթ է յիշել զհամբաւեալս ոմանս փարթամութեամբ, և զարմանալ իսկ, եթէ որպէս յայնքան հարստահարեալ երկրէ և յազգէ՝ այնքան գանձք ելին:

Սկիզբն ստուգագոյն պատմութեան ազգիս՝ ընծայէ մեզ զսիրելագոյնն թագաւորաց մերոց Հայկազանց, թէպէտ և խառն վիպասանութեամբ, զՏիգրան Երրորդն, զոր տեսաք ազնուագոյն նիւթովք զգեստաւորել և զաւմիկ ժողովուրդն անգամ. և որոյ սեփական հայրենի գանձ էր, ըստ Քսենոփոնի, 3000 տաղանդ արծաթոյ, որ եթէ ատտիկեանն էր (մէն 5750 Ֆր.), գումարի առաւել քան յ'17 միլիոն, ըստ նիւթական արժէից, իսկ ըստ այն ժամանակի յարգի՝ արդարեւ առասպելեալ իմն լինի գումարն, եթէ և տասնապատիկ համարեցիք քան զայժմուս: Այսպիսի յոյժ ընդ երկրայութեամբ են, այլ միայն նշանակ և վկայութիւն հարստութեան Հայկազանց՝ զուզընթանայ այնր ժամանակի վաճառականութեան նոցին: Բայց ընդ Արշակունին Տիգրան (Ա) թագաւոր թագաւորաց, ոչ եւս է երկրայել, որոյ արծաթի չորեքրամեանք գտանին յաճախ և ցայսօր. և որ ըստ վկայութեան գրեաթէ ժամանակակից Ստրաբոնի՝ պարտեալ զինուք ի հռովմէական երկաթոյ՝ յաղթեաց նոցա արծաթով, և առժամայն բաշխեաց բանակին Պոմպէի 6000 տաղանդ արծաթոյ, որ ահա կրկին է գանձու Հայկազնոյն Տիգրանայ. թող զառաջին տուրսն առ Լուկուլլոս, այն՝ որ ըստ վկայութեան Նիկ. Դամասկացոյ (առ Աթեն. ԺԴ. ծր.) նախ առաջին եմոյժ ի Հռովմ զըռայութիւն, լցեալ յաւարէ երկոցուն դաշնակից թագաւորացն՝ Տիգրանայ և Միհրդատայ, և էին նորա, ըստ բանից պատմչաց Հոռոմոց, 130,000,000 Ֆր. նոյնքան և Անտոնիոսի, որ գերեացն զԱրտաւազդ որդի Տիգրանայ՝ և արծաթեղէն շքեայիւք կապեալ պարգեւեաց հոմանոյ իւրոյ Ալէոպատայ, կողոպտեալ նախ զմասն գանձուցն՝ զորս հայր նորա ամբարեալ էր յԱրտազերս, ի Մծրին, ի Մոփս և յայլ ամուր ամուր տեղիս իշխանութեան իւրոյ: Արժան էր արդեօք ի համար գանձուց Տիգրանայ հաշուել և զգին ականակուռ և մարգարտախառն պատմուճանին, խուրին և գօտոյն, և ամենայն օրինի թագաւորական ձեւոյն, զոր ոքտնչացմամբ իմն յիշատակին պատմիչքն Հոռոմք, համեմատ գտանելով ճոխութեան այնքանոյ խրոխտ թագաւորի, որոյ անդրուվարք կառաց՝ թագաւորք էին նուաճեալք. և չին զարմանք ճոխութեան չքոյ նորա, յորժամ տեսանեմք և զսրբոյ մերոյ Տրդատայ պատմուճանն՝ զպարգեւեալն առ Ս. Պրիգոր՝ իբրեւ միաստանի ոսկեձոյլ ան-

կրկնելի կանգնել՝ երբ ի բաց դնէր յանձնէ: Աւելորդ է յիշել և զօրէնս պերճութեան հանդերձից թագուհեաց և տիկնայց, զի առ ամենայն ազինս նոյն սովորութիւն և զարդասիրութիւն է. այլ արժան է յիշել զաշխարհաքաղաքական և զվարչական օրէնս Հայաստանեայց, յորում բազմաթիւ էին յոյժ արքայաշուքք, շատ կամ սակաւ ազատ իշխեցողք և տեարք և տիկնայք հարիւրաւոր գաւառաց, ի թիւս հազարաց, զորոց քաղց և յագուրդ պաճուճանաց՝ հարկ էր ընուլ հզօր օժանդակութեամբ վաճառականութեան. և յայսմ ոչ վրիպեցին Հայք:

Պատմիչք միջին կամ երրորդի հարստութեան թագաւորաց մերոց Բագրատունեաց՝ յայլեւայլ յիշատակս յայտ առնեն, զի թէպէտ և նուազեալ էր առ նոքօք զօրութիւն իշխանութեան, այլ ոչ և շինութիւն և ընչեղորհիւն, և հասարակաց լինէր մետաքսեայ զգեստ. այսոցիկ վկայ կիսականգուն կայ մայր քաղաքաց նոցին Անի, կողոպտեալն ի դարուց, յազգաց և յաւազակաց, տակաւին զառատաձեռնութիւն շինողաց և զարդարողաց իւրոց անբարբառ քարոզելով, առ որ ոչ են պէտք կրկնել մեզ զասացեալքս այլուր. այլ միայն յիշեցուցանել, զի ի նմին ժամանակի (ի Ժ-ԺԲ դարս) ոչ մի՛ այլ բազում էին արքունիք և թագաւորք Հայոց և հաւասարաշուք նոցին իշխանք և տեարք և տիկնայք: Մի ի սոցանէ, (այլ երիցագոյն, ի մարդպանաց և պատրկաց ժամանակս), Բիւրնդ տիկին Սիւնեաց յառաջին կէս Է դարու, արդարեւ տիկնարար և արքայարար հիւրընկալեալ զՀերակլ կայսր՝ ոսկէպատ կառօք, ընծայէր նմա 1000 զրահս և 1000 սաղաւարտս, զէնս ոսկէկուռս 400, և ձիս և ջորիս, և արա մարտիկս 3000: — Յետ դադարելոյ թագաւորութեան Շիրակայ, փոքրագոյն նորա զուգականն՝ թագաւորն Կարուց Քազիկ (Ք) պատմի կուշտնս տուեալ սուլտանին Սէլջուգեանց 100,000 զահեկանաւ (ոսկւոյ) և « լսեցաք, սո՛՛ս պատմիչն (Ուռհայեցի) » ցի), եթէ մէկ գառին վերայ զոր խորովեաց՝ ծախք եւս հան 1000 դահեկան »: Ոչ հեռի ինչ ի նմանէ ժամանակաւ և Արծրունեացն թագաւոր Սենեքրիմ ի թողուլն զերկիր իւր և ի գաղթել ի Սերաստիա, բաւնայր տանէր զոսկին՝ 300 ջորովք, և պէսպէս արտոքիանս (կազմածս, զարդս) և 1000 ձի տանիկ, զստ յայլոց կահից և կենդանեաց: — Ոչ ինչ ընդհատ ի թագաւորմիցս ճոխանային և որք ի ժամանակին և յետ ասպատակութեան թաթարաց՝ ազատորեարն, յորս յառաջադէմ և ոչ պակաս յարքայական իշխանութենէ և ճոխութենէ՝ տոհմն Զաքարեանց. սոցա պայազատ Շաիրնշան իսկ անուանեալ, « Կազմեալ էր (ի Լոսի աւսէ Կիրակոս) տուն գանձոց ամբազոյն, զոր օչ էր » հնար ումեք տեսանել. զի նեղ արարեալ էր գրերան » գրին, որ միայն արկանելոյ էր բաւական, իսկ հանելոյ « ոչ եւս <sup>1</sup> »: Սմին նման էր արդեօք և գետնափոր տուն գանձոց թագաւորացն Սիսուանայ, որ յայտնեցաւ յաման քաղաքին ի Պնտուխտարայ, և միայն « ի միում « ամանի լինել ասէին 160,000 կարմիր » (սակի) ըստ

<sup>1</sup> Յաւանական էս տեղիս թագուցանել զգանձս սովորեցան ամենայն ուրեք. որում վկայ մի և շարաշար չբարբառն վրասակ,

որ Կարուց, « Եթէ կայցե՞ ինչ Բոնչ է Գրեգորոս Կարեանցն, մերոց. և Եթէ գտեալ էր նորա՞ հանէր և տայք »: — Նղիշէ:

Վարդանայ պատմիչի, եթէ ստոյգ այսպէս գրեալ է<sup>1</sup>: Չաղ-  
բերէ հարստութեան այն երկրի՝ գլխաւայ՝ ճառեալ է  
մեր այլուր յերկարագոյն, և աստ եւս վերագոյն: —  
Ի սմին գրեաթէ ժամանակի (1254) Թաթարք հարկ ար-  
կեալ ի Մեծ Հայս, « Ի վաճառականացն բազում ինչ  
» ուսեալ և շահեալ կուտեցին բազում գանձս ոսկոյ և  
» արծաթոյ և ակունց պատռակաւանց . . . Բայց մեծա-  
» րեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական, Ու-  
» մէկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այր բարե-  
» գործ . . . որ ապրեցաւ յաւերն Կարնոյ քաղաքի ի Թա-  
» թարէն, հանդերձ որդւովքն. և էր յայնժամ ի Տփիսիս  
» քաղաքին բնակութիւն կալեալ, և հայր անուանեալ  
» Թազաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ ի Վանէն՝  
» գրով, և յամենայն աւագացն<sup>2</sup> »:

Այսպէս ի միջին դարս և առ աւագաց առ հասա-  
րակ. իսկ ի նորագոյնս և ի զանազան աշխարհս գաղթա-  
կանսն Հայոց՝ յիշին ոչ սակաւ ընչեղք վաճառականու-  
թեամբ ճոխացեալք. որպէս մին այն ի Ղեհաստան, յորմէ  
խնդրեալ Վլաստիսլաւի Գե փոխ 100,000 դահկեան,  
եհարց, ոսկի թէ արծաթ, թէ պղինձ. և յասել նորս  
յերեցուն եւս նիւթոց, երբ վաղվաղակի և թափեաց  
առաջի Թազաւորին: — Փարթւամութիւն վաճառական  
Ջուղայի շատ իսկ ծանուցաւ և յիշեցաւ ի գալստեան  
անդր Շահարասայ, առ որ ոսկեղէն բաժակսք ոսկի մա-  
տուցանէին յարբումն ազահութեանն, և ափսէիւք՝ գո-  
հարս պատուականս. այլ թերեւս առաւել եւս յետ գե-  
րութեան, կողոպտման և պէսպէս վտանգաց իւրեանց,  
յորժամ վարեալք ի Սպահան կանգնեցին զՆորն Ջուղա՝  
« Հրաշալի յորինուածովք, և կամարակապ փողոցք,  
» թեւաւոր ապարանք և ամարատուն հովանոցք, բար-  
» ձրաբերձ և արքայակերպ շինուածք, զարդարեալ և  
» յորինեալ ի ծաղիկս ոսկոյ և լալվարդի և պէսպէս  
» երանգաց ակնախտիտ տեսողաց: Սոյնպէս շինեցին  
» և զեկեղեցիսն հրաշագան յորինուածովք՝ ըստ արժա-  
» նոյն փառացն Աստուծոյ, երկնանման խորանք և  
» գերամբարձ կաթողիկէիւք, բովանդակ ծաղկեալ պէս  
» պէտ երանգովք ոսկով և լալվարդով. և ի գլուխ կա-  
» թուղիկէից ամենայն եկեղեցեաց կառուցեալ զնշան  
» սրբոյ խաչին՝ նոցին եկեղեցեացն, ի պսակ և ի պար-  
» ծանս քրիստոնէից »: ըստ Աւաքելի (Գլ. Ե):

Անդ թօջայ Շաֆուազ գլխաւորն և քալանդար Հայոց  
մեծարեալ ի Շահարասայ, հրախրեալ զնա ի հարսանիս  
որդոյ իւրոյ՝ պարծենայր և խոստանայր արգելու ըզ-  
լուրս Ջէնտերուտ գետոյ սրժաթալիւր պարկք. արդա-  
րեւ առասպելաց բան, սակայն ի բաղմաց պատմեալ-  
զոր և յետոյ առ Հիւսէին Շահիւ՝ մի ոմն յաւագաց նո-  
րին՝ Միրվէիզ խան՝ յիշեցուցանէր, (փոխեալ զանձնն)  
եթէ տունն Շէհրիմանեանց յետս դարձոյց զգետն՝ պար-  
կով արժաթի դրամոց, և զգուշացուցանէր զթագաւորն  
զանգիտել ի փարթամութենէ Հայոց: Նման նմին և ճա-

խակերպ եւս թօջայ Նազար մտերիմն Շահարասայ՝ ի  
գալ առ նա դեպանին Անգղիոյ, յամի 1627, առնէր  
նմա կոչունս համակ ոսկէձոյլ նուագք: Տունն այն Շէհ-  
րիմանեանց՝ ոչ միայն անդ ի հայրենիսն անուանի ե-  
ղեւ մեծութեամբն և բազում պիտանի շինուածովք մա-  
նաւանդ եկեղեցեաց, վասն Հայոց և Ղաթինաց, այլ և  
յԵւրոպայ՝ մի յառաջին վաճառական տանց Ժէ դարու  
ծանուցաւ, մանաւանդ ի Վենետիկ, ուր և փոխադրեալ  
ի Նոր Ջուղայէ երեքին եղարք ընտանեօքն՝ բնակեցան  
այնուհետեւ անդ, ստացեալ ապարանս հանգոյն փարա-  
զանց Հասարակապետութեանն, և խնամեցեալ ընդ  
նոսին, եղեալ ի գալստեան իւրեանց ի դրամատեղան  
պետութեանն 720,000 դուկատս, որ ըստ նիւթա-  
կան արժէից է իբրեւ 2, 200,000 ֆր. այլ ըստ իրակա-  
նի ժամանակին, կրկնապատիկ: Առ մեք զկիտով դա-  
րուս զրաւեցաւ անդ տոհմ նոցա, ամուրի մնալով յե-  
տին պայազատացն, որոց վերջին Մկրտիչ † 1854, ա-  
ւելի քան 1,000,000 ֆր. կտակաւ եթող բարերարու-  
թեան և կրթութեան տանն, զոր նոյնպէս կտակաւ հաւ-  
տատեալ էր յետին և ապարադդ դուքս հասարակապե-  
տութեան Վենետիկոյ (Մանին, † 1806). իսկ Հայս այս  
թերեւս ճոխատուր քան զնա՝ գործակից եղեւ յետին  
փառաց և բարեաց ծովադիւտոյ քաղաքին, յորմէ և պա-  
տուեցաւ անդրեաւ և արձանագրութեամբ և պատկե-  
րօք<sup>3</sup>: — Անուանի էին առ սոքք ճոխութեամբ ի Ն.  
Ջուղա և Ջնոտ Միմաս կոչեցեալ ոմն, որ շինեաց երիտ-  
ապարանս հոյակապս. — Խօձա Պոթոս շինող Ս. Ստե-  
փանոս եկեղեցւոյ. — Խօձա Աւետիք, շինող Ս. Աս-  
տուածածնի եկեղեցւոյն ի հրապարակամիջի՝ զորմէ բա-  
զում գովութեամբ ճառէ անուանի ճանապարհորդն  
հռովմայեցի Պետրոս Տեյլա Վալլէ. ոչ միոյ՝ այլ բա-  
զում եկեղեցեաց շինող ասելով և զարդարիչ ի գլուղո-  
րայս և ի քաղաքս, և դարմանող պաշտօնէիցն. որ և ի  
ժամանակի պատերազմաց ի ցրուել Հայոց և Վրաց՝  
թափեաց աւելի քան 4000 զերեալս, և զքաւորսն դար-  
մանելով հասոյց առ ընտանիս նոցին. և վասն այնքան  
ծախուցն՝ դատարկացեալ ի պատրաստ դրամոյ, յանօթ  
եղեալ զմետաքս իւր առ խանին Շրուանայ (որ և սա  
ազգաւ հայ էր) էառ փոխ և հատոյց: Արժան է խոստո-  
վանել աստանօր. զի սա զիտաց վայելչապէս յոյժ ծա-  
խել զոր ստացան վաճառականութեամբ. և որ վեհա-  
գոյն եւս է՝ բազում ինչ ի բարեացն առնէր զանխուլ և  
յանուն այլոց: — Միւս եւս հոչակաւոր ճանապարհորդ  
փռանկ (Դաւեանիէ), յիչէ զայլ ոմն ճոխ վաճառական  
լուղայեցի, թօջայ Պետրոս, որ շինեաց զեպիսկոպոսա-  
րանն և զմեծ եկեղեցին և զհրապարակն՝ հանդերձ կըր-  
պակօք, և ի մեռանեղն՝ եթող, զատ յոսկեղէն և արծա-  
թեղէն անօթոց, կահից և պէսպէս ստացուածոց՝ 40,000  
թուման պատրաստ դրամ, որ ըստ այնր ժամանակի  
յարգի՝ ի միլիոն գումարի. բայց որդի նորս զմեծ մասն

1 Մարթէ գլխին ընթեռնուել աւելի եւս այլ ոչ պակաս. իսկ  
նշանակեալք գումար՝ ըստ քանակի նիւթոյն համարի գէթ 2,500,  
000 ֆր. ըստ արժէից ժամանակիս՝ եռապատիկ կամ նշագապտիկ  
զուցէ և առաւել:

2 Կիրակոս պատմիչ, Գլ. Ե Ե:

3 Սովորութիւն է քաղաքիս ի կողմնդս ամանորոյ կրատարա-  
կել պատկեր ինչ նշանացոյց Բարերարութեան կամ Բարերարի,  
և Բարեխիւրաց առնուլ զնոյ որչափ և կամիցին, և զգումար զնոյն  
բաշխել ազգասաց և Բարերարութեան տեղեաց. յամի 1865 պատ-  
կեր Միլետի Շէհրիմանեան Բարերարի կրատարակեցաւ:

ընդիցն ծախեաց ի դրունս աւագաց Պարսից, շանահնար լինելով միջնորդութեամբ նոցին կորզել յորդուց Խօջայ Նազարայ զպատիւ քալանդարութեան, այլ ոչ յաջողեալ գնաց ի Հնդկաստան և մեռաւ ի Բեկու: — Յիշեցաք (յէջ 467) յաշխարհի անդ և գայլ ոմն Պետրոս Բարսիլաննան մեծատուն՝ հանդերձ մեծագոր եղբարն: — Միւս եւս Պետրոս մականուն Ոսկան՝ հանգոյն առաջնոյն՝ զգօն և խորագիտազոյն ըստ աշխարհի, նշանաւոր եղև փարթամութեամբ և մեծագործութեամբ ի Հնդկաստան, ի կէս ԺԸ դարու վախճանեալ ի Մատրաս, այն որ արկ անդանօր կամուրջի վերայ գետոյն, և զ'133

աստիճանեայ քարեղէն սանդուղան շինեաց ի Մամլան գեղը (տես յէջ 467): Սա զատ ի մեծէ գումարէ ստացուածոցն՝ կտակեաց 60000 ոսփի կաթողիկէին Ս. Պետրոսի Հռովմայ, նոյնքան և Էջմիածնի, 50,000 Երուսաղեմի Ս. Փրկչին, 30,000 Մշոյ Ս. Կարապետին, այլ և 30,000 Մէքքէի մայրմանաց. և ի հարցանել խոստովանահօրն եթէ ընդէր առնես զայդ՝ վասն այլազեմիցն, ասաց. « Ես այդ (գերեզմանիդ) կունըկով միլիոն » մի վաստըկեր եմ, թող այս ալ անօր » . և ի վերայ տապանին ետ արձանագրել այսպէս, ի զկծանս նախան, ձորդաց իւրոց .

« Ես կ'ասէի՝ Ես ես եմ, դու ալ կ'ասես՝ Ես եմ .

Արա՛ ընդոր ես եմ, դու ալ կ'ըլնաս զոր ես եմ » :

Աս սոքօք կացին և ճոխքն այնքիկ որք զականակուս գահն և զմեծ աղամանդն յարջունիս Բուսաց տարանն (յիշեալ յէջ 446) . որոց հանգոյն բաղում և այլ վաճառականք մեծացան և յօրացան յառեւտրէ մետաքսի և գուհար ականց, քան յայլ նիւթոց: — Նշանաւոր եղև փարթամութեամբ և պատուով ի կէս ԺԷ դարու Անտոն Չէշիպի Պրուսացի, որ ունէր անդ և ի Չմիռնիա և ի Կ. Պօլիս ապարանս ոսկէգօծս, ծանօթ ի դրան Օսմանեանց և Պարսից, այլ և Տաանկաց, որ և ըստ խնդրոյ Փիլիպպոսի կաթողիկոսի սատար եղև նմա ի շինութիւն Չանգակատան կաթողիկէին Էջմիածնի:

Այլ զի անմարթ, թերեւս և անօգուտ է հետաքնին լինել մեծածոխ վաճառականաց մերոց յերես երկրի՝ ուր տեսաքս զնոսս սփռեալս, ակնարկեսցուք զամ մի և ի վեր կոյս, ուր դասակցեալ ընդ Սրբոց գրեն Յայսմաւուրք մեր երկուս ընկերս վաճառականս կոստիար և Մարիաս Սսեցի, որ ի մեռաննն եթող 80 լիտր ոսկուոյ, սկանս և մարգարիտս պատուականս, և այլ եւս ինչս . այլ շասնն զժամանակն յորում եկեաց, առ թագաւորօք Սիսուանայ եթէ յառաջագոյն: Իսկ եթէ անկ իցէ հայել և ի խոնարհ քան զերկիր, (եթէ ոչ ի խրատ՝ գէթ առ ի գրօսանս), Լուկիանոս երգիծարան ճարտար գրիչ (յի դարու), ի տրամախօսութեան Մեռելոց յիւն երիս համբաւեալ ընչեղս յընչեղաց, յորոց մի Արչակ նախարար Մարաց, նետահարեալ ի Թրակացուց և գետամոյն եղեալ յԵրասիս . միւս՝ սոսկական ոք Հայ Վրիդ (Որիդէս) անուն, ցաւած ոտիւք և անկարող ի կալ կանգուն, վասն որոյ և ի մեռաննն՝ (հեզնելով ասէ), ըստ անձին բարձեալ զնա Հերմայ զից վաճառականութեան՝ տանի ի նաւակն Խարոնի, անցուցանել ընդ Ախսրոն յաշխարհ մեռելոց . բայց ոչ կարծեմ հասուցեալ յերանաւայրն Ելիսեան:

զայն ծանիցուք գանձուց և մեծութեան երկրաւորի՝ ի վերայ այնքան վաստակոց, տաժանակիր և բազմահօդ ուղեւորութեանց ընդ ծով և ցամաք, ընդ լերինս գժուարակոխ և ընդ անապատս անջրդիս, կասկածաւոր՝ և բազում անգամ՝ անդարձ պանդխտութեամբ: Արք միանգամ ի փախկութիւն վաղանցուկ կենաց իւրեանց ծախեցին զարգախիս արուեստի իւրեանց, ընդ նոսին՝ ի դէպ է ասել թէ և զրաւեցան. անցին և բարերարքն, այլ զգանձ բարոյական՝ յսպահովեաց տուիչն ամենայն բարեաց յանապական փոխադրեալ գանձարան: Բարերաստիկք՝ ըստ մեզ աշխարհայնոց՝ գտան նոքա, որոց ձեռագործ կամ արդիւնական ինչ յիշատակ մնայ ասկաւին, որպէս կտակք ի պէտս կրթութեան նորարայ մարգուկութեան, կամ ի դարման կարօտելոց, վարժարանք, հոգեւտանք, պանդոկք, կամուրջք, և այլն . որպիսիք թէ և ոչ յօրովք՝ նշմարին ցարդ, բայց առաւել Եկեղեցիքն, զորս զուխ յիշատակարանաց ազգիս արժան է խոստովանել, ոչ լոկ բարոյական տեսութեամբ, այլ և քաղաքական և արուեստական . և ոչ սակաւ են այսպիսիք ի Ե դարէ և այսր . յայտ է թէ յօրովք ի նոցանց չեն շինածք վաճառականաց, այլ յօրովագոյնք եւս են շինեալք յարգասեաց վաճառականութեան, յընչից և արծաթոյ առատութենէ . և սխալի և սփոփական է այս մտաց և սրբտի . զի եթէ ընդարձակատարր մեծութիւն և հրաշազարդ արուեստ ոչ տեսանիցի ի նոսին, այլ գրեաթէ յամենայն առ ի նախնեաց մերոց մնացեալ կանգուն կամ տապալեալ շինածս նուիրականս, փայլէ չափակցութիւն և վայելչութիւն, և այս ոչ փոքր է արուեստ և ճաշակ . առ որ եթէ ոչ իցէ ի դէպ ասել զԵղիշեայն, եթէ « Այս պարզութիւն՝ զվերնոյն բերէ զմամանութիւն » ոչ է ուրանալի՝ եթէ ի վերինն հայեցուցանէ: Եթէ բազմութիւն էին եկեղեցիք ի քաղաքանին Հայոց, մինչև ի թիւս հազարաց կամ 500 կամ գէթ հարիւրաւորս, բազմաթիւ եւս էին շինողքն առանձնականք, մեծատունք կամ մեծօգիւք . և հարկ էր սոցա չափաւորս ինչ շինել . զի քաղաքական օրէնք իսկ վարչութեան ազգիս ի սկզբբանց անտի և ձեւակերպութիւն երկրին՝ տրուեալ ի բազում մասունս ձորօք և փորովք՝ բազմացուցին զթիւ

ԺԵ . Բարոյական տեսութիւն . — Այլ արդ թողեալ զառասպելք և զառասպելանման տարախիս ոսկուոյ ընդ շահորակ ձեռս, և զառժամանակեայ վայելս վաճառականացն, և զամ մի յառեալ ի վերոյ նշանակեալ մարդասէր փարթամացն բարեգործութիւնս, առաջին օգուտ

զաւառաց, տոհմից և սեփականութեանց. և քրիստոնէական վարչութիւն բաժանէր զծառխ հաւատացելոց ըստ թուոյ երիցանց, և ըստ միոյ միոյ՝ մի մի եկեղեցի. ապա հարկ էր յօրնաթիւ՝ այլ փոքունս իննել եկեղեցեաց:

Յուդեոքութեան այլ և ի պանդխտութեան իւրեանց՝ երեւի ընկերական ոգի և ձեռնտուութիւն ի վաճառականս մեր, վկայեալ յօտարաց, վկայեալ և ի հաստատութենէ ազգային ինչ ընկերութեանց, հոգեւանց և եկեղեցեաց յօտար աշխարհս՝ ուր բազմաթիւ գտանէին, յաւէտ յիտալական քաղաքս, յորս և յիշեցաք, մի ըստ միոյէ: Այլ սակայն դուն ուրեք նշմարի, մանաւանդ թէ պակասն ընկերութեանք վաճառականաց, որպէս այժմս իմանամք. և այս ոչ փոքր թերութիւն է օգտի, եթէ ոչ վաճառականացն՝ այլ ազգի՝ որոյ են վաճառականքն. եթէ էր նոցա յառաջին դարս հաստատեալ այսպիսի ընկերութիւնս՝ յուրվագոյն և մեծագոյնս եւս թողուն մեզ յիշատակս, նա և տեւողագոյնս. և մինչ երբեմն յառաջ և յետ Շահաբասեան յեղանակին, զրեաթէ ի ձեռս Հայոց էր մեծ մասն վաճառականութեան աշխարհաց Պարսից և Հնդկաց, եթէ ընկերութեամբ՝ եկքն և բընակք կողմանցն այնոցիկ, մանաւանդ որք ի սփիւռս Հնդկաստանեայց, կապակցեալք էին ընդ միմեանս և իրրեւ շղթայաշար յեռեալք, բնիկ աշայրջութեամբն և հեռատեսութեամբ, թերեւս ոչ սակաւ տասնեակս աւմաց՝ եթէ ոչ և դար բովանդակ՝ անագանէր յաղողութիւն այժմեան տիրապետաց լայնածաւալ աշխարհին այնորիկ և զանձապետաց աշխարհի, չիկահեր ծննդոցն Բրիտանիոյ. անհնար էր արդարեւ անտերունչ սոսկականաց՝ յաղթողաբար մրցել ընդ նոսա ընդ երկար՝ թող թէ վանել, այլ ըստ առակին՝ և Քալոթեամբ տեղի տալ քաջագունից՝ ոչ է հեռի ի յաղթութենէ:

Որ զիարդ և դատիցին յայսմ մասին, ի ճարտարութեան արուեստին, որպէս ասացաք բազում անգամ, այլ և ի բարեմոյն վարս և զնացս, զովեալ են վաճառականք մեր, մանաւանդ թէ և դրուատեալ յԵրոպէացւոց հանդիպողաց նոցին՝ և ի ճանապարհի և ի քաղաքս իւրեանց, և անբասիրք ի կծծութեան կամ յանպատշաճ ինչ զնացս. նաև ասպնջականութիւն նոցին յայնքան քաղաքս և զաւառս այլեւայլ պետութեանց ի զովեստ և ի պարծանս է նոցա և մեզ:

Ընդ ամենայն երկիր յածելով՝ աշխարհաքաղաքացիք ոմանք եղեն Հայք, կամ աշխարհածանօթք ամենայն ազգաց. զորոց յուրից ուսան զլեզուս, և ընդ լեզուագէտս համարին ստուգիւ: Այլ բաց յօգտէ շահավաճառութեան՝ ոչ զիտեմ՝ ոչք առաւել օգտեցան ի լեզուագիտութենէ Հայոց, ինքեանք եթէ օտարք, որպէս և յայլ

ինչ ձրից իւրեանց կամ սեփականութեանց. զի եթէ բազում ուրեք և ի դէպս՝ լեզուագիտութեամբ շահեցան ոչ սակաւ, այլ և նովին զիտութեամբ աշողեցան իննել թարգմանք և թարգմանիչք, առաջնորդք կարաւանաց<sup>1</sup>, դեսպանք և պաշտօնեայք պետութեանց, որպէս տեսաք. զնոյն զգիտութիւն նոցա յօգուտ առին և օտարք՝ թարգմանս ունելով զնոսա և ընկերս յուղէգնացութեան, և ոմանց կրթելով իսկ ի վարժութեան լեզուի Հայոց՝ յիւրեանց պէտս և ի շահ. յորս անկ է յիշել առաջին զԹուրքիկն երանելի, ականատես վկայ նահատակութեան Սրբոց Ղեւոնդեանց, և Ժողովող գերագունի գանձու՝ նշխարաց նոցին. իսկ որք երկար ժամանակաք ոչ կարէին կրթիլ ի մերս լեզու, առձեռն պատրաստ գտեալ զտարազ զգեստուցն՝ հայաձեւք մտանէին յաշխարհս՝ ուր միայն ամենամուտ Հայոց համարձակ էր մտանել, որպէս բազում ուրեք յիշեցաք:

Լեզու և ձեւ կամ տարազ Հայոց՝ գերագունի եւս իրի օժանդակ եղել, ինքեանց և օտարաց. այն ինքն է աւետարանութեան քրիստոնէական կրօնից, որպէս տեսաք ուրեք և զայն. յետ քարոզութեան Առաքելոց՝ վաճառականք Հայոց և Եղեւսացիք՝ ասին մուծիչք քրիստոնէութեան ի Պարսս, ըստ Սողոմոնի. տեսաք և զքրիստոսադաւանն թովմա կանա ի Հնդկիս, արդիւնացուցիչ սերմանց համանունս իւրոյ Սրբոյ Առաքելոյ<sup>2</sup>, և զՅիսուսեանս՝ բազում անգամ հայազգեստ մտեալ ի Հնդկիս և ի Չինս որպէս և զաշխարհիկ ուղեւորս ոմանս յիւրեանց պէտս օգտի:

Գարձեալ, և ծանօթութեան արեւելեան իրաց՝ ոչ սակաւ սատար եղեն Հայք վաճառականք և լեզուագէտք, սկսեալ ի ժամանակէ Խաչակրաց, եթէ ոչ կանխաւ եւս. Պատմութեան թարգման կամ Երազիկ Արեւելեան պատմութեան Հերմոյ՝ տեսան Կոստիկոսի ոչ փոքր ցուցակ եղել Երոպէացւոց յայնմ ժամանակի, յորում և Մ. Պաւղոս զգերահռչակ Միլիոն (գիրս) իւր թելագրէր. և թէ ոչ հաւասար սմին, այլ ցարդ պատուի և քննի գրածն կամ թելագրածն Հեթմոյ. որոյ հետեւող իմն մարթի ասել ի սկիզբն մերոյ դարուս՝ զՄոզարաձաւ՝ Ոհտն, թարգման ի դրան Շուեւոց և ընտիր գրիչ Պատմութեան թարգման: Հայտ անգրիացի որ յառաջին կէս ԺԼ դարու գրեաց զաղանդոյ Պարսից կրակապաշտից, խոստովանի բազում ինչ տեղեկացեալ ի վաճառականաց Հայոց (ի Լոնդոն). ըստ այնմ և այլք բազումք, թէ ոչ գրիչք հեղինակօրէն այլ թարգմանաբար:

Այլ աստանսր ցաւ է մեզ, զի ոչ որչափ մատակարարեցին օտարաց՝ զարեւելեայցն ծանօթութիւն, գէթ նոյնչափ և իւրեանցն ազգայնոց հաղորդեցին մեացաբար

1 Որպէս անգամին յժԳ դարու ԱՄԱԳ Կաթողիկոսի կոչեցեալ և թարգման կարաւանաց ընդ Տրապիզոն և ընդ Գաւրէժ:  
2 Այլ ոմ թովմա Գոնայ մականուն վաճառական Հայ, և ըստ ոմանց քաղաքացի, ասի յՊարսս՝ սիրելի եղեալ թարգմարաց Գոչինոյ և Գրանկանոբոյ, նորոգեալ վերստին զաւետարանութիւն առաջին: — Ասիակ. Օրագիր Լոմոնոսի. 1834:  
Պատմէ և Պարզուլ Լուսինանիցի (+ 1821) յեւ ԺԵ դարու կամ ի սկիզբն ԺԶին եկեալ Հայ եպիսկոպոսի, յետոյ և քաւանայից ի Գուլամ Մալապարաց, քարոզեալ և միտեալ ըւ-

բազումս. և նորալուր իմ ասէ, առ ի չղոյն անդ գինւոյ՝ չամիչ թրլեալ և եղեալ ի պարզի, և այնու պատարագեալ: — Ռոմանօսֆոյ, Ա, 312, — ի նմին դարու, յամի 1567, յէնչ դարձեալ ի Գոչին Հայ եպիսկոպոս որ հակառակէր Լատինաց կամ Յիսուսեանց. և ներկայաբար այսմ յետ ամաց (1589) Գրիգոր սարկաւազ Հայ ծանօթ յարեւելիս Էջմէր շահի ի Լահու, զայք անտի ի կոս ինչքեւ ի փոխադրեցին Պորտուգալաց քարոզիչս Յիսուսեանս: — Նոյնի իսկ Հալք Յիսուսեանք և պատմիչք նոցին յէնչ զայսուսիկ ի մտտեանս և ի թուղթ իւրեանց:



ընչիցն ծախեաց ի դրունս աւագաց Պարսից, ջանաճնար լինելով միջնորդութեամբ նոցին կորզել յորդուց Խօջայ Նազարայ զպատիւ քալանդարութեան, այլ ոչ յալօղեալ զնաց ի Հնրկաստան և մեռաւ ի Բեկու: — Յիշեցաք (յէջ 467) յաշխարհի անդ և զայլ ամն Պետրոս Յարաբիւնեան մեծատուն՝ հանդերձ մեծագոր եղբարն: — Միւս եւս Պետրոս մականուն Ռսկան՝ հանգոյն առաջնոյն՝ զգօն և խորագիտագոյն ըստ աշխարհի, նշանաւոր եղև փարթամութեամբ և մեծագործութեամբ ի Հընդկաստան, ի կէս ԺԸ դարու վախճանեալ ի Մատրաս, այն որ արկ անդանօր կամուրջի վերայ գետոյն, և զ'133

աստիճանեայ քարեղէն սանդուղան շինեաց ի Մամլան գեղջ (տես յէջ 467): Սա զատ ի մեծէ գումարէ ստացուածոցն՝ կտակեաց 60000 ուրփի կաթուղիկէին Ս. Պետրոսի Հռովմայ, նոյնքան և Էջմիածնի, 50,000 Երուսաղեմի Ս. Փրկչին, 30,000 Մշոյ Ս. Կարապետին, այլ և 30,000 Մէքքէի մայրմանաց. և ի հարցանել խոտովանահօրն եթէ ընդէր առնես զայդ՝ վասն այլադեմիցն, առաց. « Ես այդ (գերեզմանիդ) կունըկով միլիոն » մի վատրկեր եմ, թող այս ալ անոր » և ի վերայ տապանին ետ արձանագրել այսպէս, ի զկծանս նախանձորդաց իւրոց.

« Ես կ'ասէի՝ Ես ես եմ, դու ալ կ'ասես՝ Ես եմ.  
Արա՛ ընդոր ես եմ, դու ալ կ'ըլնաս զոր ես եմ » :

Աս սրբօք կացին և ճոխքն այնորիկ որք զականակուռ գաճն և զմեծ աղամանդն յարքունիս Ռուսաց տարան (յիշեալ յէջ 446). որոց հանգոյն բազում և այլ վաճառականք մեծացան և յօրացան յառեւտրէ մետաքսի և գուհար ականց, քան յայլ նիւթոց: — Նշանաւոր եղև փարթամութեամբ և պատուով ի կէս ԺԷ դարու Աւտոն Չէլիպի Պրուսացի, որ ունէր անդ և ի Զմիռնիա և ի Կ. Պօլիս ապարանս ոսկէզօծս, ծանօթ ի դրան Օմուս նեանց և Պարսից, այլ և Ֆաանկաց, որ և ըստ խնդրոյ Փիլիպպոսի կաթողիկոսի սատար եղև նմա ի շինութիւն Զանգակատան կաթողիկէին Էջմիածնի.

Այլ զի անմարթ, թերեւս և անօգուտ է հետաքնին լինել մեծաճոխ վաճառականաց մերոց յերեսս երկրի՝ ուր տեսաքս զնոսա սիւսեալս, ակնարկեսցուք զամ մի և ի վեր կոյս, ուր դասակցեալ ընդ Սրբոց գրեն Յայսմաւուրք մեր երկուս ընկերս վաճառականս Կոստիար և Մարիաս Սսեցի, որ ի մեռանելն եթող 80 լիտր ոսկւոյ, սկանս և մարգարիտս պատուականս, և այլ եւս ինչս. այլ չասեն զժամանակն յորում եկեաց, առ թագաւորօք Սիսուանայ եթէ յառաջագոյն: Իսկ եթէ անկ իցէ հայել և ի խոնարհ քան զերկիր, (եթէ ոչ ի խրատ՝ գէթ առ ի զբօսանս), Լուկիանոս երգիծարան ճարտար գրիչ (յի դարու), ի տրամախօսութեան Մեռելոց յիշէ երիս համբաւեալ ընչեղս յընչեղաց, յորոց մի Ալչակ նախարար Մարաց, նետահարեալ ի թրակացուց և գետամոյն եղևալ յԵրասխ. միւս՝ սոսկական ոք Հայ Վրիդ (Որիդէս) անուն, ցաւած ոտիւք և անկարող ի կալ կանգուն, վասն որոյ և ի մեռանելն՝ (հեգնելով ասէ), ըստ անձին բարձեալ զնա Հերմեայ գից վաճառականութեան՝ տանի ի նաւակն Խարոնի, անցուցանել ընդ Ախերոն յաշխարհ մեռելոց. բայց ոչ կարծեմ հասուցեալ յերանաւայրն Ելիւսեան:

ԺԵ. Բարոյական տեսութիւն. — Այլ արդ թողեալ զառասպելք և զառասպելանման տարաբա սոկուոյ ընդ շահորակ ձեռս, և զառժամանակեայ վայելս վաճառականացն, և զամ մի յառեալ ի վերոյ նշանակեալ մարդասէր փարթամացն բարեգործութիւնս, առաջին օգուտ

զայն ծանիցուք զանձուց և մեծութեան երկրաւորի՝ ի վերայ այնքան վաստակոց, տաժանակիր և բազմահոգ ուղեւորութեանց ընդ ծով և ցամաք, ընդ լեռինս դժուարակոխ և ընդ անապատս անյրդիս, կասկածաւոր՝ և բազում անգամ՝ անդարձ պանդխտութեամբ: Արք միանգամ ի փափկութիւն վաղանցուկ կենաց իւրեանց ծախեցին զարգասիս արուեստի իւրեանց, ընդ նոսին՝ ի դէպ է ասել թէ և զրաւեցան. անցին և բարերարքն, այլ զգանձ բարոյական՝ յտպահովեաց տուիչն ամենայն բարեաց յանապական փոխադրեալ գանձարան: Բարեբառտիկք՝ ըստ մեզ աշխարհայնոց՝ գտան նոքա, որոց ձեռագործ կամ արդիւնական ինչ յիշատակ Մնայ տակաւին, որպէս կտակք ի պէտս կրթութեան նորարոյս մարգուլութեան, կամ ի դարման կարօտելոց, վարձարանք, հոգեւտանք, պանդոկք, կամուրջք, և այլն. որպիսիք թէ և ոչ յորովք՝ նշմարին ցարդ, բայց առաւել Եկեղեցիքն, զորս զլուխ յիշատակարանաց ազգիս արժան է խոստովանել, ոչ լոկ բարոյական տեսութեամբ, այլ և քաղաքական և արուեստական. և ոչ սակաւ են այսպիսիք ի Ե դարէ և այսր. յայտ է թէ յորովք ի նոցանց չեն շինածք վաճառականաց, այլ յորովագոյնք եւս են շինեալք յարգասեաց վաճառականութեան, յընչից և արժաթոյ առատութենէ. և սխարլի և սփոփական է այս մտաց և սրբտի. զի եթէ ընդարձակատար մեծութիւն և հրաշքարդ արուեստ ոչ տեսանիցի ի նոսին, այլ գրեաթէ յամենայն առ ի նախնեաց մերոց մնացեալ կանգուն կամ տապալեալ շինածս նուիրականս, փայլէ չափակցութիւն և վայելչութիւն, և այս ոչ փոքր է արուեստ և ճաշակ. առ որ եթէ ոչ իցէ ի դէպ ասել զԵղիշեայն, եթէ « Այս պարզութիւն՝ զվերնայն բերէ զնմանութիւն » ոչ է ուրանալի՝ եթէ ի վերինն հայեցուցանէ: Եթէ բազմաթիւ էին եկեղեցիք ի քաղաքանին Հայոց, մինչև ի թիւս հազարաց կամ 800 կամ գէթ հարիւրաւորս, բազմաթիւ եւս էին շինողքն առանձնականք, մեծատունք կամ մեծոգիք. և հարկ էր սոցա չափաւորս ինչ շինել. զի քաղաքական օրէնք իսկ վարչութեան ազգիս ի Եղբարանց անտի և ձեւակերպութիւն երկրին՝ տրոհեալ ի բազում մասունս ձորք և փորովք՝ բազմացուցին զթիւ

գաւառաց, սոհմից և սեփականութեանց. և քրիստոնէական վարչութիւն ըստանէր զժուխ հաւատացելոց ըստ թուոյ երկցանց, և ըստ միոյ միոյ՝ մի մի եկեղեցի. ապա հարկ էր յորնաթիւ՝ այլ փոքունս լինել եկեղեցեաց:

Յուդեւորութեան այլ և ի պանդխտութեան իւրեանց՝ երեւի ընկերական ոգի և ձեռնտուութիւն ի վաճառականս մեր, վկայեալ յօտարաց, վկայեալ և ի հաստատութենէ ազգային ինչ ընկերութեանց, հոգէտանց և եկեղեցեաց յօտար աշխարհս՝ ուր բազմաթիւ գտանէին, յաւէտ յիտալական քաղաքս, յորս և յիշեցաք, մի ըստ միոյն: Այլ սակայն դուն ուրեք նշմարի, մանաւանդ թէ պակասն Ղնկերոսիքն փաճասականաց, որպէս այժմս իմանամք. և այս ոչ փոքր թերութիւն է օգտի, եթէ ոչ վաճառականացն՝ այլ ազգի՝ որոյ են վաճառականքն. եթէ էր նոցա յառաջին դարս հաստատեալ այսպիսի ընկերութիւնս՝ յուրվագոյն և մեծագոյնս եւս թողուն մեզ յիշատակս, նա և տեւողագոյնս. և մինչ երբեմն յառաջ և յետ Շահարասեան յեղանակին, զրեաթէ ի ձեռս Հայոց էր մեծ մասն վաճառականութեան աշխարհաց Պարսից և Հնդկաց, եթէ ընկերութեամբ՝ եկքն և բընակք կողմանցն այնոցիկ, մանաւանդ որք ի սփիւսս Հնդկաստանեայց, կապակցեալք էին ընդ միմեանս և իրրեւ շղթայաշար յեռեալք, բնիկ աշայրջութեամբն և հեռատեսութեամբ, թերեւս ոչ սակաւ տասնեակս ամաց՝ եթէ ոչ և դար բովանդակ՝ անագանէր յաղողութիւն այժմեան տիրապետաց լայնածաւալ աշխարհին այնորիկ և զանձապետաց աշխարհի, շիկահեր ծննդոցն Բրիտանիայ. անհնար էր արդարեւ անտերունչ սոսկականաց՝ յաղթողարար մրցել ընդ նոսա ընդ երկար՝ թող թէ վանել, այլ ըստ առակին՝ և Քալութեամբ տեղի տալ քաղաքունից՝ ոչ է հեռի ի յաղթութենէ:

Որ զհարդ և դատիցին յայտմ մասին, ի ճարտարութեան արուեստին, որպէս ասացաք բազում անգամ, այլ և ի բարեմայն վարս և զնայս, գովեալ են վաճառականք մեր, մանաւանդ թէ և դրուատեալ յԵրոստէացոց հանդիպողաց նոցին՝ և ի ճանապարհի և ի քաղաքս իւրեանց, և անբարիք ի կծծութեան կամ յանպատշաճ ինչ զնայս. նաև ասպնջականութիւն նոցին յայնքան քաղաքս և գաւառս այլեւայլ պետութեանց ի գովեստ և ի պարծանս է նոցա և մեզ:

Ընդ ամենայն երկիր յածելով՝ աշխարհաքաղաքացիք ոմանք եղեն Հայք, կամ աշխարհածանօթք ամենայն ազգաց. զորոց յուրից ուսան զլեզուս, և ընդ լեզուագէտս համարին ստուգիւ: Այլ բաց յօգտէ շահավաճառութեան՝ ոչ գիտեմ՝ ո՞ք առաւել օգտեցան ի լեզուագիտութենէ Հայոց, ինքեանք եթէ օտարք, որպէս և յայլ

ինչ ձրից իւրեանց կամ սեփականութեանց. զի եթէ բազում ուրեք և ի դէպս՝ լեզուագիտութեամբ շահեցան ոչ սակաւ, այլ և նովին գիտութեամբ աշողեցան լինել թարգմանք և թարգմանիչք, առաջնորդք կարաւանաց<sup>1</sup>, դեսպանք և պարտոնեայք պետութեանց, որպէս տեսաք. զնոյն զգիտութիւն նոցա յօգուտ առին և օտարք՝ թարգմանս ունելով զնոսա և ընկերս յուղէգնացութեան, և ոմանց կրթելով իսկ ի վարժութեան լեզուի Հայոց՝ յիւրեանց պէտս և ի շահ. յորս անկ է յիշել առաջին զԵՐՈՒԺԻԼԻՆ երանելի, ականատեսս վկայ նահատակութեան Սրբոց Ղեւոնդեանց, և Ժողովող գերագունի գանձու՝ նշխարաց նոցին. իսկ որք երկար ժամանակք ոչ կարէին կրթիլ ի մերս լեզու, առձեռն պատրաստ գտեալ զտարազ զգետտուցն՝ հայաձեւք մտանէին յաշխարհս՝ ուր միայն ամենամուտ Հայոց համարձակ էր մտանել, որպէս բազում ուրեք յիշեցաք:

Լեզու և ձեւ կամ տարազ Հայոց՝ գերագունի եւս իրի օժանդակ եղել, ինքեանց և օտարաց. այն ինքն է աւետարանութեան քրիստոնէական կրօնից, որպէս տեսաք ուրեք և զայն. յետ քարոզութեան Առաքելոց՝ վաճառականք Հայոց և Եղեւսացիք՝ ասին մուծիչք քրիստոնէութեան ի Պարսս, ըստ Սողոմոնի. տեսաք և զքրիստոսադաւանն թովմա կանա ի Հնդկիս, արդիւնացուցիչ սերմանց համանունս իւրոյ Սրբոյ Առաքելոյ<sup>2</sup>, և զՅիսուսեանս՝ բազում անգամ հայազգեստ մտեալ ի Հնդկիս և ի Չինս որպէս և զաշխարհիկ ուղեւորս ոմանս յիւրեանց պէտս օգտի:

Գարձեալ, և ծանօթութեան արեւելեան իրաց՝ ոչ սակաւ սատար եղեն Հայք վաճառականք և լեզուագէտք, սկսեալ ի ժամանակէ Խաչակրաց, եթէ ոչ կանխաւ եւս. Պատմութեան թարարաց կամ Երազիկ Արեւելեան պատմութեան Հերմոյ՝ տեսան կոտիկոսի ոչ փոքր ցուցակ եղել Եւրոպէացոց յայնմ ժամանակի, յորում և Մ. Պաւլոս զգերահուշակ Միլիտոն (գիրս) իւր թելադրէր. և թէ ոչ հաւասար սմին, այլ ցարդ պատուի և քննի գրածն կամ թելադրածն Հեթմայ. որոյ հետեւող իմն մարթի ասել ի սկիզբն մերոյ դարուս՝ զՄոզարսաճատ՝ Ոհտոն, թարգման ի դրան Շուեւոց և ընտիր գրիչ Պատմութեան թարարաց: Հայտ անգղիացի որ յառաջին կէս ԺԼ դարու գրեաց զաղանդոյ Պարսից կրակապաշտից, խոստովանի բազում ինչ տեղեկացեալ ի վաճառականաց Հայոց (ի Լոնդոն). ըստ այնմ և այլք բազումք, թէ ոչ գրիչք հեղինակօրէն այլ թարգմանարար:

Այլ աստանսր ցաւ է մեզ, զի ոչ որչափ մատակարարեցին օտարաց՝ զարեւելեայցն ծանօթութիւն, գէթ նոյնչափ և իւրեանցն ազգայնոց հաղորդեցին մնացարար

1 Որպէս անգամ յՅԳ դարու ԱՄԱԳ Կաթողիկոսի կոչեցեալ և թարգման կարաւանաց ընդ Տրապիզոն և ընդ Գաւրէտ:  
2 Այլ ոմ թովմա Գոնալ մականուն վաճառական Հայ, և ըստ ոմանց քաղաքացի, ասի յՅԳ դարու՝ սերելի եղեալ թաղաւորաց Գոչինայ և Գրանկանորայ, նորոգեալ վերստին զաւետարանութիւն առաջին: — Ասիակ. Օրագիր Լոմոսովի. 1834:  
Պատմէ և Պարտիզ Լուսիտանիացի (+ 1521) յեւ ԺԵ դարու կամ ի սկիզբն ԺԶ ին եկեալ Հայ եպիսկոպոսի, յետոյ և քաւառայն ի Գուլամ Մալապարոց, քարոզեալ և միտեալ ըւ-

բազումս. և նորալուր իմ ասէ, առ ի չղոյն անդ գինւոյ՝ յամիչ թրջեալ և եղեալ ի պարզի, և այնու պատարագեալ: — Ռոմոսգիւ, Ա, 312. — Ի նմին դարու, յամի 1567. յիշէ դարձեալ ի Գոչին Հայ եպիսկոպոս որ հակառակէր Լուսինաց կամ Յիսուսեանց. և ներհակաբար այսմ յետ ամաց (1589) Գրիգոր ստրկաւոր Հայ ծանօթ յազգունիս Էքզէր շահէ ի Լահու, զայլ անտէ ի կրտս ինչքեւ ի փոխադրեցն Պարտիզալաց քարոզիչս Յիսուսեանս: — Երբին իսկ Հարք Յիսուսեանք և պատմիչք նոցին յիշեն զայստիկ ի մտեանս և ի թուղթ իւրեանց:

զայնքան անբաւ ծանօթութիւնս աշխարհաց և ազգաց, զոր մարթ էր նոցա առնել տեղագրութեամբք և անմահական թողուլ յիշատակ աշխարհի. յորմէ թափուր և ամօթապարտ մնայ դպրութիւն մեր և պատմութիւն, քանզի չէ մարթ զամենայն՝ եթէ գրեալ էին՝ համարել ի կորուստ մատնեալ. և առ այս, յոչ կամս ի յուշ անկանի սրտառուչ մեղադրութիւն պատմաճօրս մերոյ:

Տեսաք ապաքէն ի կարգի գրոցս (յէջ 230) զստուերակերպ ինչ կմախս տեղագրութեան, մանաւանդ թէ անուանագրութեան, որոյ նմանս մարթ է գտանել և այլս, այլ և ժամանակագրութիւնս ինչ ի Ղեհն կամ այլուր, աւելի կամ պակաս, այլ ոչ պարծանաց ինչ կամ մեծի օգտի ձեռնառուս <sup>1</sup>: Արգահատելի է եթէ ըստոյդ իցէ վարկած ուրումն գիտնոյ, եթէ Հայ իցէ հեղինակ ոչ աննշան լատինագիր աշխարհագրութեան է դարու, որ Հոսաննեան կոչի <sup>2</sup>, զի գրեալ է ի քաղաքի անդ Հուսանայ, ուր տեսաք Հայ կուսակալս Իտալիոյ, զօրավարս և զօրս հայագունգոս. յիչին ի գիրոն յայն բաղում հեղինակք ոչ լոկ Յոյնք և Հռովմայեցիք, այլ և Եգիպտացիք և Գոթք, և Արշակ ոմն իբր Պարսիկ:

Սակայն ոչ ի սպառ անճաշակս և անսիրոցս ուսմանց ասել զմերայինս դատիցիմք. զի և անմարթ էր այդմ լինել յերկար ժամանակօք բնակելոցն ի բարգաւաճեալ քաղաքս Եւրոպիոյ, մանաւանդ ի Փոլանկաստան և յԻտալիա. յորս՝ նախ, մեծապէս օժանդակեցին վաճառականքն մեր ընդհանուր դպրութեան ազգիս՝ օստարեւ լով շատ կամ սակաւ առատաձեռնութեամբ՝ ի հաստատութիւն առաջին տպագրատանց մերոց ի Վենետիկ <sup>3</sup>, յԱմսդերտամ, ի Մարսիլիա և ի Լիվոռնոյ. և ոմանք տալով տպագրել գրքոյկս ինչ ի սէտս ինքեանց վաճառականաց, որպէս զՉափոց և Կլոսոց և Դրամոց գիտելիս յԱմսդերտամ, և ըստ հոգեւորականին՝ Համեսոս յանագիրս Վաճառականաց. իսկ ոմանք այլեւայլ գիրս ետուն երկասիրել, թարգմանել և տպագրել, որպէս մեծատունքն Շահրիմանեանք և Նահ. Գոչնագար (զՍաղմոսաց պարզարանութիւն), և այլն:

Այլ առաւել քան մերոյս՝ դարձեալ օտարաց դպրութեան գանձեցին սերունդք վաճառականաց մերոց՝ ընտելացեալք և ընտանացեալք ազգացն՝ յորոց միջի բնակէին և ի նոցին լեզու գրէին հաւասար նոցին, մանաւանդ որք ի Լեհաստան, յԱւստրիա, և յՈւնգարիա, յորս երեւեցան պատմիչք և քերթողք զովանիք ոչ սակաւք, այլ և յԻտալիա. որպէս Շեհրիմանեանն Չաքարիա քահանայ վիպասան և երգահան. Գեորգ Պակիլի մի ի հմտագոյն բժշկապետաց ժամանակին († 1707), և այլ բժիշկք և փաստաբանք հմուտք յժԸ և յԹ դարս, ի Վենետիկ և ի Լիվոռնոյ:

Այլ քան զգրաւորականն ի դէպ էր, ըստ ընդարոյս բերման ազգայնոցս, զարուեստականն և զգործնականն

<sup>1</sup> Նշանազոյն և իսկատիպ իցեն թերեւ իաշատրոյ Եթովպացի մակոնուանեւոյ չափաբանեալ տեսութիւնք զՎենետիոյ, և Յակոբայ վարդապետի զԲրիտանիոյ, նոյնպէս չափաբան. երկօքան եւս նրատարակեալք, առաջինն ի Բազմավիտի, Ե. 172, երկրորդն ուրոյն անգլիարէն թարգմանութեամբ, յամի 1873:

<sup>2</sup> Այլք զթոթոցի կամարին զհեղինակ գրոցն:

ակնկալել ի նմանէ՝ յօտար բնակութեանն, մանաւանդ ուր բազմագոյնք էին գաղթեալք, և արս կենցաղօգուտս և ճարտարս. որպիսիք ի քաղաքի աստ յորում գրեմս, ի ԺՉ դարէ ցմերս՝ գովութեամբ յիշատակին աղողակք ոմանք, մեքենագէտք (որպէս բաղմահնարն Ախսոն Սուրեան, 1550-88, Հայն, լ'Արմենո, մակակոչեալ <sup>4</sup>, հանօղ նաուց ընկղմելոց, և հետեւող որդի նորա Յովսէփ. արուեստագէտք հիւսուածոց, ցփսեաց և նմանեաց պաշտպանեալք ի պետութենէ (Եղիա Ալեքսանեան † 1753 և որդիք իւր). — զործողք հնդկակտաւուց, Բարսեղ Ասլան, Բաղտասար և Յովհաննէս Ճիկեր. — նաւապետք, նաւատեարք և նաւաչէնք, (Պետրոս որդի Եղիայ ի սկիզբն ԺԷ դարու, Պետրոս Բարսաւան ի կէս ԺԸ, նայնպէս Յակոբ Արաճան, Ռոստոմ † 1753). — Թեոդոր Մանուկ զտող շաքարի ի կէս ԺԸ դարու. — Խաղախորդք կամ յարդարողք սեկի (Մեյգոն Դաւթեան և Մարտիրոս Թումասեան), և այլն:

Ընդ սոսին և թերեւս առաւել քան զսոսա երախասւորոն համարելիք են որք յԵւրոպիոյ յարեւելս կամ յարեւելից յԵւրոպա մուծին ուր ինչ արուեստ կամ նիւթ, կամ որպիսի և է պիտանի և հաճոյական. օրինակ իմն յաճախախնդիրն և զբոսացուցիչն Գաֆէ, զոր Յարուծիւն Հայն եմոյծ նախ ի Մարտիլիա (1673) ապա ի Պարիզ (1673) և ի Լոնդոն, յերկուսին քաղաքագլուխ տրեւմտեան աշխարհի: Ըստ ոմանց Հայք մուծին զկերպասագործարիւն ի Ռոսաստան, և զդարման թթենեաց կամ չերամոյ ի կողմանս Թերեքայ, և այլուր այլ ազգս մշակութեան. զարուեստ գործելոյ կամ հարթելոյ գրտաս՝ ի Լիվոռնոյ. այլ և զամենակարեւորն վաճառականութեան արուեստ կամ զգիտութիւն համարողորքեան՝ ի կողմանս կողմանս արեւելից, ըստ չափու իւրեանց գիտութեան:

Շատ համարեցին յիշատակքս՝ զոր մարթ է ընդարձակել մանր եւս խուզարկութեամբ: Բայց մի մոռացին քննասէրք ընդ այսոցիկ յիւել և զերախտիս նոցա՝ ոչ միայն աւագաց մատուցեալս, այլ և իւրեանց ստորակալից և սպասաւորաց՝ յօտար աշխարհս և յազգս, ուր յաղաղիաց նոցա բարգաւաճել և ընդ ձեռամբ ունել ի բընկաց տեղեացն՝ արբանեակս և զործակիցս. յորոց սակի փոսակ զօրավարն այն և տեսուչ Ս. Մարիկ (S. Martice) կղզւոյ Հնգկային Ովկիանու, երբեմն գրազիր գոլով վաճառականաց Հայոց ի Պենկալա և ի Մատրաս, սակաւ ինչ ուսեալ և հայերէն, և նոցին միջնորդութեամբ հասեալ յայն աւապութիւն, (ի վերջին կէս ԺԸ դարու), երախտապարտ խոստովանէր նոցա զանձն, և մեծարէր զհանդիպեալն անդր զՀայագրիս:

Որպէս երախտաւորաց և երախտապարտից արժան է հաւասարել ազնուութեամբ, նոյնպէս և մեծարողացն և մեծարելեաց. և ոչ փոքր պարծանաց է սոցա, մերազ-

<sup>3</sup> Ոչ միայն երախտալիք կամ խոնձարուք կայերէն տպագրութեան ի քաղաքէ աստի ընծայեալ ճանաչի տեղասին յամէ իբր 1520, այլ և տպագրատուն մի հաստատեալ յանուն Սահրատայ Շէհրիմանեանց յամս 1686-7, միւշէն էր որդւոց նորա փոխու ի Պարսից՝ ընտանեօք ի Վենետիկ:

<sup>4</sup> Տես ի Բազմավեւոյ օրագրի տարւոյս (1892) յէջ 285:

գեացս ասեմ, զի գրեաթէ յընդհանուրս ուր տեսաք ըզնոսա սփռեալս՝ ճարտարք, արգոյք և բարեհամբաւք հռչակեցան. և որպէս սովորութիւն է արդ ստեղձ և համակիրք. և այս մեծագոյն և մնայուն գանձ է քան զոսկոյն և արծաթոյ նոցին շահավաճառութեամբ, որոց գումար բրգունս և բլուրս արդեօք կանգնէր եթէ ի մի վայր հաւաքեալ կուտակեալ լինէր. և այնքան հաճոյացան օտարաց, մինչեւ ի միջին դարս՝ կրել նոցա (օտարացն) հայկաթեան անուանս, այլ և զգետստ, պճնասէր իտալուհիքն այնորիկ<sup>1</sup>. և այս չէ զարմանաց ի նորասէր ճաշակս կանանեայ. այլ զարմանալի, եթէ ստոյգ իցէ, զի դիցապէս պատուեալն ի Փռանկաց Ժ. Ժ. Ռուսոյ՝ զձեւ Ջուզայեցոց միայն մարդավայելուչ համարէր և զգնեայր. Չէ բնաւ զարմանաց՝ եթէ և ազգախառնեալ իցէ օտարացն ընդ Հայս՝ յայն ժամանակս, որպէս և յետոյ՝ ի բնականալ սոցա յԽտալիա, ուր ի ԺԴ դարէ հետէ լոին Հայ - անուն տոհմք (Armeni<sup>2</sup> կամ Armenia) ի Սիենա, ի Լոմբարտիա, ի Նապոլի, ի Մեսսենէ, ի Սիկիլիա, ի Մալտա, և այլ ուրեք. որոց ոմանց յայտնի և ոմանց անյայտ է հաւն և ծագումն. էր և ի հնումն համանունն (Armenius) տոհմ Հռովմէացոց, և նոյնանուն պաշտօնեայք և հիւպատոս իսկ (Armenius Peregrinus), և կնիքք և արձանագիրք յայս անուն յԱ - Դ դարս: Իսկ Արմենիա յատուկ անուն կանանց յաճախեաց յոյժ՝ ի յաճախել Հայոց ի Վենետիկ, յորոյ եկեղեցական դիւանս (յընթացս 80 ամաց միջոցի ԺԶ և ԺԷ դարուց) աւելի քան զքառասուն գոյի նշանակեալ յայդ անուն Armenia. Գոյր արդեօք հզօրագոյն քան զայդ հնար՝ առ ի սիրելի և փառելի առնել կամ ցուցանել զՀայազունս պանդխտեալս առ իւրեանս, կամ մերոցս՝ պատուականագոյն քան զայդ վաճառ՝ յարգեցուցեալ առ ասպնջականս իւրեանց:

Բայց էր և ընձեռեցին Հայազունք մեր պանդխտեալք՝ ազնուագոյն իմն, տինա և գերագոյն շահավաճառ՝ ըստ Առաքելոյն (Ա Տիմ. ք. 5) զԱստուածպաշտականն. զարդարիչք լինելով եկեղեցեաց պէսպէս օրինակաւ, ուրումն՝ (Միտանց ի ԺԴ դարու) կանգնել տալով զհոյակապ կարդուսարանն ի Պիզա. այլում (Գէորգ Մոռաստ ի ԺԶ դարու) տալով ճարտար նկարչի նկարել գեղեցիկ պատկերս (յՍնգոնս). իսկ այլոց կանգնելով եկեղեցիս վասն ազգայնոց իւրեանց, յորոց ոմանք ցարդ սեփա-

կան ծիսիւ կան ի պաշտաման (ի Վենետիկ և ի Լիվոնոյ)՝ Վեհագոյն եւս, ոչ միայն եկեղեցիս կանգնեցին եկքն այնորիկ Հայք ի միջի լատինաժէս ազանց, այլ և եկեղեցեաց նոցին ընծայեցին երիցունս և եպիսկոպոսունս, աւագ պաշտօնեայս, այլ և միանձունս և կուսանս, որպիսիք ոմանք Ստ. Գոմինիկ Շէֆրիման (+ 1806) եպիսկոպոս Կլոգիոյ (Գիոնիա, Chiogia), մերձ ի Վենետիկ. - ամբողջապա եպիսկոպոսաց և երիցապետս, ի քաղաքս և յաւանս, որպէս Տէր Յովսէփ Մանուկ ի Տարվիտոն, Տէր Գոմինիկ Մանուկ, Տէր Պօղոս Աժարան, Տէր Բարսեղ Շէֆրիման, ի Վենետիկ, - Տէր Յովսէփ Վալլէ (այսինքն է Չոզոչոբեան) բազմերախտ աւագերէց Լորենտիայ գեղլ Պատալիոնի, - Տէր Պետրոս Սէֆէր կանոնիկոս և վերատեսուչ կղերիկոսարանին Վենետիկոյ (+ 1843). և այլք սոսկ երիցունք և կարգաւորք միանձունք, և հաւատաւոր կուսանք յայլեւայլ կարգաց և ի խստակրօնից անգամ. որոց գործք արդիւնականք և անունք՝ օրհնութեամբ յիշին ցայսօր. և որոց սպասաւորութիւն առ օտարազգիս՝ ոչ ինչ նուազեցոյց ի սեփականէս մերոյ, այլ և պարծանս յաւել, նաև օրինակ, այլ և յանդիմանութիւն իմացողացն. զի արդարապէս գիտացին կամ դիւրեցին օտարքն շահեցուցանել զհայ քանքար ընտիր վարուց և գիտութեան. որ եթէ թողեալ էր ի բնիկ երկրի անդ, թերեւ իսպառ և անմշակ և անշահ էր մնացեալ և անձին և այլոց. որպէս կարեն քալ իմաստասիրել գիտակք ազգային ապարդդ գարուց և բարուց: Իսկ առ Աստուծոյ՝ առ որում չիք խտիր ազգի և ազգի, կամ հոգւոյ և հոգւոյ, վաստակք նոցա և արդիւնք չեն ինչ պակաս քան զառաքինի լուսաւորչաց մերոց և առաջնորդաց բնահայոց, զորս տօնէ եկեղեցիս մեր, մոռացեալ կամ անգիտացեալ զըսասակիցս նոցին յերկինս, զհամազգիս իւր Սուրբոս, ժողովեալս և փառաւորեալս յեկեղեցիս օտար ազգաց և լեզուաց, զՓիտենդ, զՏաշին, զՄակար, զՍիմոն, զԳրիգոր, այլովք հանդերձ, յԽտալիա, ի Փռանկաստան, ի Բելգիա կամ Հոլանտաս - Սոքա և որք ըստ սոցայն՝ համարիմ եթէ իցեն իմաստնագոյնքն վաճառականաց, գովեալքն ի Քրիստոսէ, ինդրողք և յարգողք արքայունակ մենափայլ մարգարտին. ի գիտողուպէտ մամոնայէն՝ գանձողք յերկինս գանձս բազմաշահս, և անկողոպուտս ի կծծութենէ զողոյ և ցեցոյ, աշխարհի և ժամանակի:

1 Որպէս գրէ Կառապետ Կոմսեան պատմչաց նոցին Գանդու:  
 2 Իցեն թերեւս և ոմանք յունապարզք Արմէնի կոչեցեալք՝ յարուեստէ նաւարկութեան:  
 3 Ազգայնորէ ես ինքնին սգտանէի՝ եթէ իսպառ լուէի զյձուստակ երանաշնորհ Նախաւոր ուխտիս իմոյ, զոր՝ գրեաթէ յաճախ երթեակ վաճառականաց մերոց ի Վենետիկ՝ ձգեաց անդր, յետ արկածի նորակրթմ մենաստանին և միաբանութեանն ի Մոսկոյ Մու-

սէպ. և սաս յամէ 1715 ցոյսօր շնորհիւ Տեառն և պաշտօնութեամբ Տիրամերն՝ գետեղեալ կայ ի կղզեկի միում (Ս. Ղալար). և ոչ միայն սզգային ծիսիւ և լեզուաւ կատարէ զպաշտօնն և զգորութիւն, այլ և զնոյնս սերմանել և մշակել ի բուն ի հոյրենիսն՝ ի ձեռն միաբանից իւրոց՝ շնոյ ըստ կարի իւրում և ըստ ներկելոյ պարագայից և ընդունելութեան ազգայնոց. նոյնպէս և որք ի մոյր քաղաքաց Աւստրիոյ նառատեալ ճամկործնքն:



# ՃԱՀՈՒԿ ԵՒ ՇԱՀԱՊՕՆՔ



**ՈՒՍԿ** բնուից ի բնիկ գաւառս Սիւնեաց, և մի ի սակաւածանօթիցն յայժմուս, կարգէ պատմիչ երկրին զՃԱՀՈՒԿ, յարակցելով ընդ նմին, « որ » (ուր) և Ձորն՝ որ ՇԱՀՍ « ՊՕՆՍ կոչի » . նոյն և այլուր (ԾԵ.) ասէ, « ՉԴահա » պօնս, որ է Ճահուկ » գաւառ », իբրև անբաժանելի մասունք, կամ

լաւ եւս ասել՝ յերկուց վիճակաց միաւորեալ գաւառ. կայ ի հիւսիսոյ արեւմտից նախագրեալն Երնջակայ, յարեւելից սահմանակից գոլով Ծղկոյ, ի հիւսիսոյ՝ Ծղկոյ և Վայոց ձորոյ, յարեւմտից՝ այրարատեանն Շարուրայ, և ի հարաւոյ՝ Նախճաւան գաւառի: Որչափ ինչ ցուցանէ մեզ աշխարհացոյց պատկերն, համակ երկիր լեռնային է Ճահուկ, և անտառաւէտ իսկ ի հիւսիսի և յարեւելակողմանն՝ թէպէտ խիտ առ խիտ երեւին լեռինքն, այլ ոչ և բարձունք, բայց միայն յեզերս սահմանացն, յորոց զարեւելեայնն՝ յիշեալ եմք ի տեղագրի սահմանակից գաւառացն. իսկ յարեւմտակողմն՝ յանջրպետս Ճահկոյ և Ծղկոյ՝ ամբառնայ ի վերոյ քան զայլս թեւալեանին? գաղեսի 8583', ֆելչալ տաղ 8492', և ի հարաւոյ սոցա Գարագոշ լեռինք. ի մէջերկրեայն նշանակի լեռունն Ազնարերդ 5500' որիչ ի բարձունէն որ ընդ մէջ Գողթան և Կապանի: Յանուանէ նշանակին և յաջմէ Շահապօնից գետոյն (ի հարաւոյ) ի սահմանս Նախճաւանու՝ Սարը տաղ (Դեղին Լ.) և Գարադաւ տաղ, մերձակիցք:

Ի սակաւ ինչ յիշատակս գաւառիս ի նախնեաց՝ գտանի ըստ բնական հանգամանացն յիշեալ և Շաւր ճան-

կոյ, այլ ոչ են ինձ յայտ գիրքն. զի ոչ նշանակի արդ այսպիսի ինչ տեղի ընդարձակ ի քարտս, բայց լճակ մի ի հիւսիսոյ արեւելից Նախճաւանի, յոր և մտանէ առու մի, և անունն գրի Քաղան: Գոյ փոքրագոյն եւս լճակ ի հիւսիսային սահմանածայրս, Գանլը կէօլ անուն, որպէս և լեռուն համանուն: — Այլ ինչ ոչ գիտեմ զբնական հանգամանաց գաւառիս, բայց զի գտանին Արանանք կամ աղբար ի լեռինս Ճահկոյ:

Իսկ գետք յուրք նշանակին ի սմին, ամենեքին ի հիւսիսոյ կողմանէ իջեալք ի թիկանց լեռանց Ծղկոյ և Վայոց Ձորոյ. որք յիբար անկեալ խառնին ի գետն Նախճաւանու, նա՛ մանաւանդ գետացուցանեն զայն, և ուղղակի ընդ հարաւ իջուցանեն յԵրասխ: Յերիս խումբս մարթ է զատուցանել զջուրքս, յարեւելեան, յարեւմուտեան և ի միջին: Արեւելեանն է Շահապօնից գետն, որպէս արժան թուի ինձ կոչել, որ և գործէ զառ ի նախնեաց անուանեալ Ձորն, այլ ստուգապէս բազում ձորակք և գետակք են յարեւելեանս յայսմ մասին գաւառիս, և զլիաւոր ի նոսա՝ որ յարեւելից հիւսիսագոյն սահմանաց իջանէ յԱրագլի լեռնէն, յարեւելից Քջնաղ լեռին, և առ Գարապապա աւանաւ ընդունի յաջմէ և յահեկէ օժանդակս, զորս մարթ է յանուն զլիաւոր գիւղիցն անուանել Սախնջ և Նորս, և զբուն զմեծ գաւառանն՝ Կժաճոր, զոր սուղ ինչ ի ստորեւ խառնըրդոց երկոցուն նոցին՝ ընդունի յահեկէն՝ բուն գետն Շահապօնից, որ գայ յելից կուտէ ի թիկանց բարձու (9910') Օրաժիկն? լեռին Սիսիանու. յետ այնր ընդ արեւելս հարաւախառն խաղացեալ՝ միանայ ընդ արեւմտեան ջրախմբին ի սահմանակցութեան Նախճաւան գաւառի: Այս խումբ է Ճահկոյ գետոյն, հզորագունի քան զՇահապօնիցն, որոյ միջին և զլիաւոր առաջք ի հիւսիսոյ ի սահմանակցութեան Վայոց ձորոյ իջանեն ուղղագոյն ի



հարաւ, յաջմէ՝ (յարեւմտից) ընդունելով զՔարազոռչ, յաչեկէ զայլ օժանդակ անանուն, հանդերձ Գրչք - պոռագ վտակաւ. երեքին սրբա միանան առ Աղնաբերդ լերամբ՝ յարեւելից կուսէ, և գործեն զբուն շահկոյ գետն: Իսկ միջինն ի մանունց երից և չորից վտակաց ձու լեալ՝ յոյժ փոքր է քան զառաջինն, և իջանէ (ըստ քարտին) ի Սարգսիսան — Սանգար լեռնէ, որ ի Թիկանց Մարտիրոս պաշտի և բարձու ֆիչքի լերանց (9647) սահմանակցութեան Վայոց ձորոյ, և խաղացեալ ընդ հարաւ՝ անկանի ի գետն Եահապոնից առ Մարանին գիւղիւ. ի գիւրութիւն տեղագրութեանս՝ (մինչ չեւ է մեզ ծանուցեալ ստոյգ անուան գետոյս) կոչեցուք Նշուտ, այսպէս Թարգմանելով զանուն Պատեմի միակ զլիսաւոր գեղ՝ որ ի խաղա նորուն:

168. Պատմին Սիւնեաց ի համարել գերրորայս աշխարհին, ծանուցանէ յարեւելեան մասին գաւառի՝ կարեւոր գիտելի, զԵահապոնից բերդն շինեալ ի Եափապայ ումբէ Պարսկէ, և անուանեալ « Զձորն յիւր ա » նուն՝ Եափապոնից ձոր, որ հատուածի պատճառաւ » եկեալ էր առ նահապետքն Սիւնի »: Երբն անյայտ իսկ զժագմանէ անուանն և ժամանակի ճահուկ բնագաւառի՝ չասէ ինչ, որպէս և ոչ այլ հին պատմիչք. այլ Ղազար կաթողիկոս՝ բնիկ երկրին՝ ախորժէ ստուգարանել « վասն պատուականութեան տեղեացն ձաճ և » ըմբոն, այսինքն գեղեցիկ հարկաւոր և կարի պատշաճ »: Գրի երբեմն, այլ ի յետոց, և Զ տառիւ. բայց առաւել բնակիչքն կամ Միարանոքն հռովմէականք՝ կոչին Զաֆկեցիք, որք և ճահոսկք: — Ոչ սորա և ոչ Եահապոնեաց ոչ յիշին բնաւ իշխանք կամ տեարք, զորէն այլոց գաւառաց Սիւնեաց. այլ ի հնուսն Թէպէտ Թուի յառաջին անունն յաւէտ կոչիլ բովանդակ գաւառին, սակայն տիրող եղեալ Եահապոնեացն տոհմ. ի Ներսիսեան գահա նամակին ընդ յետին բարձս ազատաց Հայոց կարգին և Եափապոնիք:

Ի պատմական դիպաց գաւառիս յիշի միայն յեւ Զ դարու՝ իշխանաց ոմանց Հայոց ապատամբելոց յերկոցուն ինքնակալացն՝ Յունաց և Պարսից, բանակել և նստել « ի Եափին որ կոչի ճահուկ »: այլ առանց պատերազմի՝ ոմանք նուաճին, ոմանք խոյս տան: — Ի նորոգել տէրութեան Սիւնեաց՝ նախագահ իշխանն Սըմբատ՝ Թոռն Փիլիպպէի՝ էառ իւր բաժին ընդ Վայոց ձորոյ և զգաւառան ճահուկ և Եահապոնիս. ի բառնիլ տէրութեան և Թագաւորութեան նոցին յեւ կոյս ԺԲ դարու, յետին իշխանք աղնուատոհմք՝ Համտունեանք՝ Զուրջ և Խոսրովիլ, մեռեալք ի Նախճաւանի՝ բերան և Թաղեցան ի ճահուկ. յայտ ուրեմն զի սեփական վիճակ էր նոցին. այլ զի սպառեցաւ տոհմ նոցին կամ տեղի ետ անտի, Աթաբէկն Պարսկահայոց՝ ընդ Երնջակայ և զճահուկ ետ Օրբելեանն Ելիկուսի. յետոյ Պաօշեանց մեծի տոհմի եղև սեփականութիւն. զի Թոռն մեծիս այսորիկ իշխանի, Իսլի՝ գրէ ի պահարանի Խոտակերաց Խաչին. յամի 1399, « Տիրեցի հայրենի երկրիս իմոյ Եահ-

» պունեաց, և այլ յորով գաւառաց »: յորոց մի տեսաք և զմասն Վայոց ձորոյ. այսու և նախկին տէրութեամբ Սիւնեաց գահերէց իշխանին՝ տեսանի ճահուկ գրեթէ անանջատ ի Վայոց ձորոյ. ըստ որում և ի բաժանել յերկուս եպիսկոպոսական աթոռոյն Սիւնեաց՝ ի սկիզբն ԺԳ դարու, Սարգիս եպիսկոպոս սեպհականեաց ինքեան զերկոսին զայնոսիկ գաւառս հանդերձ Նախճաւանիւ: — Ի սկիզբն ԺԵ դարու, աշխարհաւերն Թիմուր Լէնկ ի մարգաց Նախճաւանի խաղալով ի Գեղաբունի, էանց ընդ Զորն Եահապոնեաց՝, որպէս յիշէ պարսիկ պատմիչ նորին, այլ ինչ ոչ յաւելեալ, բայց միայն զի գնայր զլեռանելեանայն:

Յեկեղեցական կարգի Թէպէտ և ոչ ասի որոշակի առանձին եպիսկոպոսական աթոռ լինել ի գաւառիս, որ յայտ է Թէ ընդ այլոցն՝ վիճակ էր մետրապոլիտին Սիւնեաց, այլ զի յիշին եպիսկոպոսք ոմանք յայլեայլ ժամանակո՝ ի վանս Օժոպոյ, հարկ է Թէ լեալ էր և այն երբեմն Թեմ եպիսկոպոսական, եթէ օրինաք և եթէ ոչ. Թէպէտ և եպիսկոպոսունքն ոչ յանուն գաւառին յիշեցին՝ այլ վանացն, ուր և նշանակեցուք զնոսին:

Բայց նշանաւոր եկեղեցական դէպք են միարանութիւն մասին միոյ ժողովրդեան գաւառիս հանգոյն Երնջակայն՝ ընդ եկեղեցւոյն Հռովմայ, քարոզութեամբ Երանելոյն Բարդուղիմեայ Պրոնիացւոյ և Յովհաննու Պրոնեցւոյ, հաստատողաց զկարգն Միարանողաց կամ Ունիթորաց, որք զի յերկար ժամանակս տեւեցին աստ և մեծ աւանն ճահուկոյ զլիսաւոր տեղի էր նոցին, սովորութիւն եղև զօղջոյն իսկ ժողով նոցա կամ զուխտ՝ կոչել Զանկեցիս կամ ճահոսկս, որպէս կանխեցաք ծանուցանել և ուրոյն դրուագաւ բանի. իսկ զառանձին տեղեացն դէպս անցից ըստ իւրաքանչիւր գիւղից կամ վանաց՝ նշանակեցուք յառաջիկայս տեղագրութեան, որպէս արարաք ըզ յինից Երնջակայ:

169. Ստեփանոս պատմիչ ի ցուցակի հարկատուաց աթոռոյն Տաթևու կամ հին եպիսկոպոսարանին, 48 գետոս կարգէ գաւառին ճահուկոյ, անբաժան մի և նոյն համարելով զճահուկ և զԵահապոնս, զոր մեք զատուցանել ունիմք ի գիւր տեղագրութեանս. և են այսոքիկ հանդերձ չափով տրիցն.

Ճահուկ	20
Աղբերխաչ	50
Խախ	12
Կարմիր եկեղեցի	12
Որդոք	12
Բլուր	12
Պահեստ	12
Ղաբէն	12
Բզղոն	12
Նորագիւղ	10
Ընչլակերտ	12
Փուքի	12
Խոռատունիք. Խոռատափք	12

1 Թարգմանելն փոսակ առ կիրճ փոխանակ Զորոյ. Alla au détroit de Chahboz et entra dans les montagnes. բայց

զտեղին կարծէ նուազոյն ուրեք, այսինքն ի Լերիս վրաց: — PETIS DE LA CROIX, Գ. 381:

Տիգէն	13
Գեֆենիք	13
Արմաւաշէն	10
Սաղուասօնք. Սաղսօնք	8
Չաղայ	8
Հեծանայ	8
Թամաշաղ կամ Թամաղաչ	13
Ոփիք	13
Նորագիւղ միւս	13
Թամերք	13
Շամեն կամ Շաւին. Շատին?	13
Նորքերդ	13
Ակուռի. Ակուռի	13
Եզատունք	13
Ագարակ	8
Դաւարինք	8
Քրդն	8
Քոյլք	13
Խոռունիք	6
Դրախտիկ	6
Ծաւալք	13
Աղու	12
Գայլակալ <sup>1</sup>	10
Ջուր	8
Ունի	8
Բարունք. Բաքանք	13
Տախտակք	8
Արկուզետ. Արգազետ	13
Անուշավանք	13
Աղուալ	6
Նորաշինիկ	6

Շմրթայի. Շոմրթայի	8
Արքոյքայ	6
Վասակակերտ. Վասակերտ	10
Աւերակք	13
Յաւելի են ի սոսին յիշեցեալք յայլ զիրս <sup>1</sup>	
Շահապօնք	
Օճուպ	
Յեցիկ	

Չարդիս բովանդակ Ճահակ համարի մասն Նախ-  
ճաւան գաւառի, այլ առանձին վիճակ և դեհք են ի նը-  
մին. որպէս, Մաւազի Խամրուն որ ունի զբուն Ճահկոյ  
միջակողմն, Թերեւս և Խոք՝ սահմանախառն Շարուրայ.  
ինն գեօղք համարին ի Մաւազի Խաթուն, և են,  
Ճաղրի (Ճահուկ)  
Ճանի քէնտ  
Իր գրասն  
Կեսրմեալաքայի  
Տիգին  
Պոզգադսոս (Բզղօնք)  
Քիւռեատիս (Խոռատունիք)  
Օղպուն  
Սոյդանպէկ  
Չատ ի սոցանէ ընդ աւերակս համարեալ Բայիս, որ է  
անշուշտ Պահեստ. այլ յաշխարհացոց քարտի նշանա-  
կին և այլ ոչ սակաւ գեօղք, յորոց յիշին սմանք և ի վի-  
ճակագրութիւնս ինչ, և երեւին չէն և բազմաթիւք զու-  
գորս յիշեցուք ըստ կարգի տեղագրութեան, թէպէտ  
և ոչ փոքր ի շատէ ունիցիմք ծանօթութիւն զնոցանէ,  
զրեաթէ բաց յանուանցն. յերկուս վիճակս բովանդա-  
կելով զամենայն առ հասարակ ըստ հին անուանցն ի  
Շահապունիս և ի Ճահուկ:

### Ա. Շ Ա Հ Ա Պ Ո Ւ Ն Ի Ք

170. Յարեւելեան հարաւային ծագէ գաւառիս կա-  
մելով սկիզբն առնել տեղագրութեանս, որ է յարեւ-  
մտեան հիւսիսային սահմանակցութենէ Երնջակայ, ա-  
ռաջին ձորակ նշանակեալ ի քարտի՝ տեսանի գետակ մի  
անանուն, և սնխառն յայլ գետ՝ մտանել ի ֆաղան  
կամ ֆաղափ լիճ՝ զոր ի վերոյ յիշեցաք, առ որով և գիւղ  
համանուն 50 տամբ այլազգեաց, և միւս եւս գիւղ Նազ-  
շի ներկիզ (Նարկիզանկար), 8 եւեթ տամբք այլազգեաց,  
ըստ աշխարհագրի 1873 ամի. առ որով աւազան մի է  
ածխային հանքաջրոյ, յոր անբարբառ մերձենան եկքն,  
զի թէ ձայն արձակեցեն՝ ի կարմիր ներկանի, ասեն,  
լուրն: — Ոչ նշանակի այլ գեւղ ի ձորակին, այլ միայն  
ի գլուխ նորին յանտառախիտ վայրի Խոռնի բերդ, որ

կրէ զանուն Խոռունիք գեղլ հին ցուցակին և տոհմի  
միոյ, եթէ ի Նայկազնոյն սերելոյ և եթէ յայլմէ. յոր ա-  
նուն մարթ էր կոչել և ղճորակն կամ զգետակն: — Ի  
հիւսիսոյ նորին է հարաւային օժանդակ Շահապունեաց  
գետոյն և բուն իսկ Շահապունեաց գետակի, զոր նշա-  
նակեցաք վերագոյնդ՝ իջանել ի Թիկանց բարձու Օրա-  
ժին? լերին, յորմէ երկու մղոնաւ հեռի, յարեւմտից՝  
կայ կէլիորոս կամ ֆիւլիւրոս գիւղ Թուրքաց. ի սմա  
յամի 1878 երկրագործք գտին ընդ հողով թաշ մի  
պղնձեայ իբր 0,45 Չ. երկայն և 0,37 Թեւէ ի Թեւ,  
ձուլածոյ, պատկերաւ Քրիստոսի և ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏ-  
ՏՈՍ գրութեամբ. իսկ ի Թիկանց կուսէ նորին փորա-  
գրեալ է (յամի 1631) այս բան.

<sup>1</sup> Յօդինակի ուրիշ պատմութեան Սիւնեաց միտեա գրի ընդ հեռեւելոյն, իբրեւ մի գեօղ՝ Գոյլ-լ-լէ Էւր:

**Խաչա յիշատակ է Էվազին եւ որդւոյն Կարապետին ի դուռն Ս. Գրիգորին . Թուականին ՌՁ :**

Ի միակողման ձորոյն ի վերայ գետոյն կայ յայմէն (ի հիւսիսոյ) մեծագոյն գիւղ Քիչիչու, որ է աներկայ հինն Քոյլք, ըստ որում կոչէր և Քոյլս, զարդիս բնակեալ ի 80 տուն Թաթարաց. որոյ և ընդարձակ արտորայք կամ պարտէզք նշանակին, և սակաւուք տարակաց ի նմանէ՝

յարեւելից կուսէ երեւի աւերակ հին եկեղեցւոյ. զորոյ որմունս պեղելով այլազգի բնակչացն՝ յամի 1881, դըտին ի յատակին սպասս և անօթս եկեղեցւոյ պղնձեայս, որպէս, ջահ մի և ծնծղայս, յորս գրեալ էին յամս 1663 և 1681, այս բանք.

**Յիշատակ է ճառս Աստապատեցի Արզիմանի որդի Շահվերտուն եւ կողակից Թիրվանդին, որ ետուր ի դուռն Սուրբ Արջակապա. Թվ. ՌՃԺԱ :**

**Յիշատակ է Սարգիսին որդուն Ամիրվալէի ի դուռն Սուրբ Արջակապա. Թվ. ՌՃԼ :**

Չայտոսիկ Թափեալ յայլազգեաց Տէր Սահակ եղբայր Տեառն Մեսրոպայ արքեպիսկոպոսի Սմբատեանց՝ առաքեաց յԷջմիածին: — Յիշեալն յարձանագ Արջակապ՝ ի բարձու ձորեզեր գետոյն (Շահապունեաց), ուխտատեղի է՝ ճգնաւորի միոյ, որոյ տիրաբար ասեն կայեալ կամ նուանեալ զարջ ի ծառայութիւն, և կայ յարեւմտից Քիւլիւսի: Ընդ մէջ երկոցուն սոցա է ամայացեալ գետաւտեղի Ագարակ կոչեցեալ: — Սակաւուք ի բացեայ ի հիւսիսոյ կուսէ Քիւլիւսի է բերդիկ մի Աշքեան կոչեցեալ:

« սերամերկ կորովայից Նետողաց, որ պատեալ պաշառեալ պահէին զմեզ . . . այլ և ի դուռն կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մինն փրկեալ և միւսն գերեալ: Եր և տեսանել անդ աղիողորմ տեսիլ, միայն արտասուալ լի դիմօք և կականաբարձ հառաչմամբ, ազգք և սիրեւ լիք, ծնողք և եղբարք՝ այլ ինչ ոչ օգնել ի գերութիւն վարելոց . . . Եւ առ այս եկն սով՝ քաջ զուգակիլու հասարակութեանց մեծատանց և աղքատաց . . . փոխանակ խրախուժեանց՝ ճիշտ աղաղակի. ընդդէմ հեշտալ լեաց՝ անհանգիստ ի խշտի. յերեկորեայ զառաւօտ խնդրէաք, և ի նմա զեռանդն երանեմք: Եւ զայս ոչ շարաթու և աւուրց սպասեալ, այլ ամսոց երից սորին յերկարեալ, և գործելոց վրէժք՝ ոչ կլիու հատուցեալ: Եւ այս աղէտ յրջապատեալ զմեզ յրջապայութեամբ տօմարի հայկազեան սեռից հարիւրից կրկնակի՝ քառուից և վեցեակ վեցից : . . . Եւ այսպէս տրտմեալ սրգով և Թախժեալ մտօք՝ ընծայեցի տխեղծ մատամբ զխուճախոյ նուէրս բանի », և այլն:

Ի ստորեւ (յարեւելից կողման) մօտ ի խառնուրդս գետակին և գետոյն՝ ի յանձուկս ձորոյն, յահեկէն՝ որ է ի հարաւոյ, յեզեր ջրոյն կայ հին աւանն Շահապունս կամ Շահապունիք, Շարունեաց ձոր եւս գրեալ առ Առաքէլի, Շահպոռզ կոչեցեալ զարդիս յայլազգեացն բնակչաց 80 տանց: Տեսաք ի վեր անդր յոյր անուն կոչեցաւ և շինեցաւ բերդն, որ ընդ նշանաւորս դասէր յաշխարհին Սինեաց, այլ ոչ գիտեմ յորում կողման աւանին, և թէ մնայցէ այժմ նշխար նորին. հարկ էր արդարեւ ամբողջեամբ կամ մեծութեամբ երեւելի լինել, զի տարածեաց զանունն ոչ միայն ի վերայ ձորոյն՝ այլ և բովանդակ գաւառին, հաւասար բնիկ ճահուկ անուան նորին: — Ամբողջեան բերդին վկայէ և սպաւենեղն ի նոյն Տաթեւացւոյն Գրիգորի՝ յարչաւանս Լէնկթիմուրի, յամի 1387, և գրել ի յիշատակարանի Լուծմանց Հարցմանցն Գէորգայ վարդապետի. « Ի խռովութեան ժամանակի » և յանձուկ տեղաւ, յորում պարառեալ ի հինից Նետողաց կրկին յարուցեալ Խորազմ անուանեալ ազգաց. զոր և անբաւ բաղմութեամբ ասպատակեալ աւերեաց զաշխարհս Հայոց, Պարսից, Վրաց, և զամենայն արեւելեայս . . . Որ և մեր նստելով իրր ի մետաղս կամաւոր զիսպահով Շահապունս կոչեցեալ ամբողջի, ոչինչ ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստկասարսուռն ատենի . . . Նմանապէս և աստ յաւուր Նոր կիրակէի ասացեալ կրկնոյ զատկի, յանկարծահաս ժամու հասեալ հեղեղաց ուղիսից խռովութեանց, սաստկագին գոչմամբ և ահազնատեսիլ սու-

Չասկաւ ինչ յիշատակս քաղաքականս և զսեփականել տեղոյս տոհմին Պաթայ՝ նշանակեցաք ի վեր անդր: Ոչ գիտեմ զինչ ի նախնեաց անտի կամ ի Միաբանողացն կրօնական շինուածոց կայցէ այժմ ի Շահապունս. որոյ բնակիչքն մահմէտականք, որպէս հաշուին արդ 80 տուն և իրր 400 ոգիք, նոյնչափ հաշուէին և յելս ԺՁ դարու. իսկ Հայոց միաբանողաց էին յայնժամ տունք 180 և 400 ոգիք շափահազ կամ հաղորդընկալք և 200 տղաք: Ի կէս ԺԷ դարու, 40 տուն միայն յիշին սոցա, և յելս դարուն 38 տուն և 250 ոգիք: Յետ Ապարաներոյ և Ճահկոյ՝ սա էր գլխաւոր աւան Միաբանողացն, և վանքն ընդարձակ յանուն Ս. Աստուածամօնի Մենդեան. որոյ և կնիք միաբանութեանն էր, յրջագրեալ Sig(illum) Con(ven)tus Sciabunensis Nativit(atie) B(eatæ) M(arie) V(irginis). այսինքն, կնիք Շահապունեաց վանաց Մենդեան Ս. Մարիամայ կուսի: Ի սկզբան ԺԷ դարուն էին անդ միաբանք 10 քահանայք, 2 սարկաւագունք, 4 դպիրք և 5 եղբարք աշխատաւորք: Ժամանակակից առաջնոց Միաբանողացն, այլ ոչ ի նոցին կար-

գէ թուի ոմն Եղ. Մխիթար Շահապօնեցի, որ յամի 1370 գրէր վիսայ մի (ճաշոց Լատինաց թարգմանեալ) ի Սիենա քաղաքի Իտալիոյ: — Ի նոցուն զլիսաւորացն յայտնապէս էր մերձ ի կէս ԺԵ դարու, Յր. Ղուկաս Շահապօնեցի, որ առաքեցաւ առ Վոնիփակիոս Ը քահանայապետ ի Հռովմ (1394—1403), խնդրել արտօնութիւն մտակերութեան, և Քարոզիչ այցելու ի Դոմինիկեանց՝ ըստ երկց երկց ամաց: Սոյն սա ի յիշատակարանի վիսայ գրոց զոր նորոգէր, գրէ յամի 1442, առ « Պատուական վարդապետ Յր. Յովսէփ, վարդապետ » կարգիս Միաբանողաց, ընկալ զսակաւ աշխատող և » զկարկատող գրոցս զՅր. Ղուկաս՝ զանարժան Շահանց պնեցիս, և յիշեա զվեզ ի քս սուրբ աղօթիդ: » —



132. Կնիք Շահապօնեաց վանաց:

Նորին ժամանակակից և հայրենակից Յր. Թադէոս յամի 1450 գնայ ի կաֆա, ի Ս. Նիկոլ վանս, և գնէ ի Լատինացոց ղհայերէն ժամագիրս կարգին իւրոյ, և տայ վերստին կազմել: Զնոյն գիրս ի սկիզբն յաջորդ դարուն (1505) Շմաւոն ոմն եպիսկոպոս՝ առէ բերեալ ի վանս (կարծեմ Օծոպայ) . իսկ Յր. Տէր Պետրոս Շահապօնեցի որդի Ամիրդատի և Մէլիք Խաթունի, եղբայր Ամիրխանի և Ամիրջանի, հօրեղբայր Մերիջանի և Ամիրդատի սարկաւազի, յամի 1517 գնէ 500 դահեկանի, և տայ կազմել Բաներգեսի ումեք. վախճանին յամի 1552 (ի փերր. 17): — Ի վանահարց Շահապօնեցի յիշին Հ. Ազարիա յամի 1540, առ որով գեղաւազ էր Պետրոս՝ Յովմաննու որդի, Հ. Մատաթիա Արագխանի յէս ԺԷ դարու, և յառաջին քառորդի եւս ԺԸԻ, Հ. Ալեքս Ալեքսիանոսեան նոյնպէս ի սկիզբն ԺԸ դարու: — Ի Միաբանիցն Շահապօնեցոց յիշատակին Յր. Թադէոս, որ գրէ ի Հռովմ յամի 1647 ի միտալ գիրս, « Ես Յրա Դաթէոս քահանայս յասգաւ » Հայ և յերկրէն Նախիջեանոյ ի գիւղն Շահապօնեցի » և ի գարբէն Քարոզողաց, եկի այս մայրաքաղաքս, » վեց ամիս նստեցայ. այս միտալիս օրինակովն մէկ միսալ գրեցի. յետոյ ելայ այս տեղէս՝ դէպ Ըսպանիեա » գնացի. Թվ. ՌՈՄԷ, յօգոստոս ամսի վեց »: Յայտ է թէ որպէս և այլքն՝ երթայր ի խնդիր ողորմութեան վասն պիտոյից վանացն. և հաւանորէն նա երբ և զգումար 3200 դուկատաց, զոր յետ բազում ամաց (1692) Հ. Պետրոս Շահապօնեցի գաւառահայրն՝ եղ ի շահասեղանս վենետկոյ յանուն իւր և Ս. Աստուածածնի վանաց Շահապօնեաց, և ընդունէր զշահն ի համար 300 պատարագեաց, կամ ինքնին անդ ի վենետիկ գօլով,

կամ ի ձեռն գործակալաց: Յետ որոյ միաբանք վանիցն զվանահայր իւրեանց Հ. Ալեքսիանոս կարգեցին (գործակալ) վաքիլ, որպէս գրեն ի 16 մայիսի, 1707, և ստորագրեն,

« Ես Տէր Գրիգորս Շահապօնեց վանից որդի. Ես Յր. Մանուէլ ղէ Մարիա Պրէքիկաթօր ջեներալ և որդեգիր Շահապօնեց եկեղեցւոյն՝ յօրջորջեալն Մենդեան սուրբ Աստուածածնին. »

Ես Տէր Պետրոս ղէ Մարիա, Միրզեցի. Ես Տէր Մատաթիէս Ղարամեցի, որպէս ի վերայ որդի վանիցս: »

— Նոյնք դարձեալ յետ երկուց ամաց (10 յունիսի, 1709) հանդերձ վանահարբն Հ. Ալեքսանիւ, փոխանակ նորա՝ կարգեն ի վենետիկ գործակալ զՀ. Գալուլի Դոմինիկեան. դարձեալ յետ երկց ամաց (20 հոկտ. 1712), վերստին զնոյն վանահայրն Ալեքսան առաքեն ի վենետիկ յապահովել զշահ մասին ինչ վերոյգրեալն գումարի, որ յատուկ ստացուած համարէր հանգուցեալ Ստեփաննօի Շիրան, և չէր ինչ նորա կտակեալ զայնմանէ. յայսմ թղթոյ ստորագրեաց և արքեպիսկոպոսն Յրա Պետրոս Մարտիրոս: Այսպէս արարին և յամի 1718 (ի 10 դեկտ.) . յայսմ յետին նուագի ստորագրողք են Հարբն Մատաթիա, Գրիգոր և Մանուէլ. իսկ Հ. Պետրոսն նախագրեալ յամս 1713—6 գաւառահայր էր վանօրէիցն: Առ սրբօք կամ սակաւօք յառաջ էր և Հ. Յովմաննէս չուլման Շահապօնեցի, գործակալ կարգեալ ի համօրէն ուխտէ վանօրէիցն, յամին 1696, վասն հասարակաց շահադրամոցն ի վենետիկ. և Հ. Պետրոս Թոմաս ի նմին աւանէ, իրբու նօտար և քարտուղար ժողովոյ նոցին յամի 1697: (Յիշեալ գումարդ, (3000 կամ 3020) դուկատից որ եղեալ կայր ի շահասեղան Մետաքսագործաց վենետկոյ, ըստ խնդրոյ Հարբն յամի 1758 փոխադրեցաւ յայլ շահասեղան՝ Ամենանոր անուանեալ (Deposito Novissimo) ի նմին քաղաքի): — Յայնմ ժամանակի խափանեալ էին վանօրայք գաւառին Հայոց Միաբանողաց, և ժողովուրդն գաղթեալ էր ի Զմիւռնիա. այլ քանի՞ ոք մնաց ի Շահապօնս, կամ երբ իսպառ լքաւ ի Հայոց, ոչ գիտեմ. որպէս և ոչ զայլոց վանաց և եկեղեցեաց. զի զատ յեկեղեցւոյ վանաց Ս. Աստուածածնի Մենդեան, գոյր և եկեղեցեակ մի յանուն Ս. Ստեփաննօսի արտաքոյ չինին: — Ի սկիզբն ԺԸ դարու երկու եղբարք Եհապօնեցիք որդիք Բալասանի, վաճառականք ընչեղք ընակէին ի վենետիկ, Աղաջան կամ Յովմաննէս և Պօղոս. առաջինն վախճանեալ 78 ամեայ ի սկիզբն 1720 ամի թաղեցաւ ի Ս. Խաչ եկեղեցւոյ Հայոց, որում ընծայեալ էր արծաթեայ սպասս և կապերտ 220 դուկատաց. երկրորդն որ ամուսնացեալ էր ընդ Աննէլայ վեգգիս իտալացւոյ, և ծնեալ որդիս վեց, յամի 1717 ետ գրել կտակ, յորում գանգատի վասն կնոջն չուայլութեան զի տնանկացոյց զինքն, 50 դուկատ միայն ունելով յայնժամ յամենայն ստացուածոցն. և կարօտէր նպաստից եղբորն <sup>1</sup>, զոր և թուի ժառանգեալ. քանզի և ինքն

1 Dichiaro che havendo havuto per mia somma disgratia una moglie, la quale per la sua mala diretionione è sta-

յետոյ ընծայեալ է եկեղեցւոյն կապերտ մի, և վախճա- նեալ յամի 1731: Ի վերայ տապանի եղբորն գրեալ է:

D. O. M.

Այս է տապան Շահ Պունեցի Պալասանի Որդի <sup>Δ</sup> Աղաջանին <sup>Δ</sup> որ Փոխեցաւ առ Քրիստոս ԹՎին Ռ <sup>Δ</sup> Ճ <sup>Δ</sup> ԿԹ Յունվարի <sup>Δ</sup> 20 <sup>Δ</sup>

Anno MDCCXX.

Անդրանիկն Պողոսի Պետրոս Անդուն Բալասան (ծնեալ յամի 1708) եղեալ է նաւապետ և նաւատէր, երբեմն իւրով յատուկ նաւու և երբեմն օտարաց՝ նաւե- լով և տանելով վաճառու յայլ և այլ կողմանս, և յիշի սաէպ յամս 1740—49. Յիտալական գրուածս պէսպէս օրինակաւ գրի մականունն սոցա, Balassan, Balansan, Belassan, Pallassan, Valassan, Barbasan.

171. Մերձ է Շահապօն խնդրելի է անյիշատակն արդ Օժոպ կամ Օժոպի գիւղ, ես և Աժոպ <sup>1</sup> (Եթէ չի- ցէ մոռացեալ տառն է) և Ս. Աստուածամօնի վանքն, արժանիք քննութեան. զի որպէս ի սակաւ ակնարկու- թենէ յիշատակագրաց նշմարի՝ երեւելի վանք էին և ա- թոռ եպիսկոպոսի վիճակին, վասն այնորիկ և համա- րիմ մերձ բերգին և աւանին լինել: Յիշի զառաջինն յՈրպելեան պատմչէն, ի պատճառս կամարակապ կո- չեցեալ խաչի, զոր յելս ԺԲ դարու կամ ի սկիզբն ԺԳ-ին, Ստեփանոս եպիսկոպոս Սիւնեաց տուեալ էր ի պահեստ՝ « առ եպիսկոպոս մի յԱժոպոյ վանս՝ ի Շահապօնս, ո Պետրոս անունն. զոր և իմացեալ կողմնակալի այսմ » կողմանց Վասակայ իշխանի, հօր Պօսայ, առնու բըռ- ո նաբար », և այլն. և յայտ լինի այսու՝ զի անդստին ի սկզբանէ ԺԳ դարու Խաղթակեան իշխանն այն՝ կողմնա- կալ էր Շահապօնից, զորոյ թոռնորդւոյն տեսաք վկա- յութիւն գիրացս: Իսկ Առաքել պատմիչ ասէ զտեղւոյս և զմիոյ ի միաբանիցն զլիսաւորաց. « Մերձ մայրա- » քաղաքին Նախջուանու կայ գաւառ մի՝ զոր անուանեն » Շարունուց ձոր, և յայսմ գաւառի կայ գիւղ մի՝ զոր

» անուանեն Օժօպի, և մերձ այսմ գեղջ կայ ինեալ ի » վաղեմի ժամանակաց վանք մի յանուն Սրբուհւոյ Աս- » տուածածնին, զոր անուանեն Օժոպու վանք. և (ի) » միաբանից այսմ վանիցս եպիսկոպոս ոմն, որոյ անունն » էր Վրթանէս եպիսկոպոս, այր խորագէտ և խելա- » մուտ ի գործս իւր և ճարտարարան ի խօսս, սա գնա- » ցեալ ի յԱղթամար գողացաւ զԱջ Սրբոյ Լուսաւորչին, » և երբր դարձեալ ի սուրբ Էջմիածինն ». և պատմէ երկարօրէն զղէպս իրացն, որ արտաքոյ է սուղար- կութեան մերոյ. այլ յիշելի և այն՝ զի վասն այնպիսի գողութեան՝ կարգեցաւ նա աթոռակալ յԷջմիածին՝ « մինչ ի ժամանակ ծերութեան իւրոյ. և ապա վասն » անկարութեան մարմնոյն՝ գնաց ի վանքն Օժօպու, » մերձ իւրոց ազգականացն, վասն պաշտպանելոյ իւրոյ » ծերութեան, և անդէն վախճանեցաւ, և թաղեցաւ ի » թուին ԶԹԲ (1493), որպէս և գրեալ է ի վերայ տա- » պանին իւրոյ: Իսկ կաթողիկոսունքն Էջմիածնի՝ իբրեւ » զհայրենապատուէր կտակ աւանդութիւն ունէին ի » մէջ իւրեանց, զի ամենայն ամի ի տարւոյն միանգամ » գնային ի վանքն Օժօպու, մատուցանէին պատարագ, » և զպաշտաման դրամն բաժանէին վանականացն, և » կերակրէին զաղքատս, վասն հոգւոյ Վրթանիսի և » պիսկոպոսին. և մինչ ի ժամանակս Դաւթի կաթողի- » կոսին և Մեքիսեդեկի կաթողիկոսի կայր այս աւան- » դութիւն, որ զային կաթողիկոսունքն և կատարէին: » Իսկ վերոյճառեալ պատմութիւնս . . . . հաստատուն » և հայրենատուր աւանդութեամբ պատմի յամենայն » գաւառս՝ որք են շուրջ Վախճան քաղաքուսն, և մա- » նաւանդ ի գաւառին Շահրունոց ձորու, և որք մերձ » նմա Վանորայքն են, զի ամենեքեան եկեղեցականք և » աշխարհականք միաբանութեամբ պատմեն զայս պատ- » մութիւն »: — Թէպէտ ոչ Վրթանէսս այս և ոչ նա- խայիշեան Պետրոս՝ վիճակատէր եպիսկոպոսք կոչի- ցին Շահապօնեաց, այլ մարթ է այնպէս համարել՝ գէթ զառաջինն. իսկ աներկրայ իբրեւ թեմական եպիս- պոս Օժոպոյ յամի 1307 յիշի Շմաւոն եպիսկոպոս ի ժողովին Սոյո: Թուի ինձ թէ և համանուն նորին որ յետ սակաւ ամաց մահուան Վրթանիսի և ի վեր անգր յիշե- ցաւ, նոյնպէս ի վանաց աստի էր: — Ի գեղջ Օժօպոյ էր և Մարգարէ վարդապետ աշակերտ Խայեայ Նշեցոյ, աշակերտակից և գործակից Յովհ. Քունեցոյ: Ի սկիզբն ԺԸ դարու (1704) առաջնորդ վանացն Օժօպու էր Թա- դէոս վարդապետ 2:

« Մերձ ի սահմանս Օժօպոյ » յիշի ի գրչէ միոյ (Սիսի- ջան անուն) յամի 1661, Յեցիկ գիւղ, յորոյ եկեղեցւոյ

ta l'ultimo eccidio della mia casa, havendomi reso di be- nestante che io ero, sopra la nuda paglia; tacendo quel di più potrei dire per la mia particolar modestia.

1 ՅԱրաթա օրագրի Էջմիածնի (Բ, 276) փոխանակ Օժոպոյ՝ Մեծոյ գրեալ է:

2 Յուստոսիանի գրելոյ սոս յամի 1486—7 յիշին սոսոցոյքն:

Գասապար — կիժժ չաջի

Գաղտասար. Գրիգոր. Մելգուժ. չերապետ. Գաղի. Տէր Սիմոն Կ. Սամուելիտ Մարիամէ. Մարգարիտ. Զիլփիխամ.


Շահմազար, Կ. Նազուկիամ Մարիամէ Տէր Յովհաննուս, Կ. Գուլօզար (Կիլիկար) Գալասամ, Կ. Խամոււ



եղ նա ժամագիրս, և փոխանակ անուան եկեղեցւոյն յիշէ զԹնողն Սարգիս և Խարոնըն, և ղեղբայրն Յովհաննէս, և զորդիս նորին Աստուածատուր, Բայրում և Ներսէս, և զորդիս (որոյ?) Հագարեկ և Թարթարեկ, մաղթելով յիշել և « զամանս հաւատացեալս, որք մասամբ իւրք ետուն ինչս ի գինս սորին »:

Յանկեան գետակին և բուն գետոյն առ որով Շահապօնք, նշանակի շինատեղի՝ յունջ երկարաձիգ լեռնագոտոյ կամ բարձրաւանդակի՝ անջրպետի երկոցուն ձորոցն. անդ կարծեմ զԲեդրն Շահապայ, կամ յայլ ինչ կողմն այսր լեռնագոտոյ, եթէ չիցէ վերայիշեալն Աշքեան՝ մերձ ի Քոյլս:


173. Ի հիւսիսոյ գետաձորոյն Շահապունեաց և զուգընթաց նմին է այլ ձոր, մանաւանդ թէ բազում ձորակք ձեւացեալք յաղբերաց իջելոց ի Թօխլիդայա (ոչխարասար) լեռնէ, որպէս կաքառաղբիւր, Շօս չուր, Սալարիս, և այլն, յարեւելից կուսէ, որք միաձոյլ անկանին ի գետակն Շահապունեաց. յանկեան երկուց ի նոցունց կայ մեծ գետն Նորս, յոր անուն պատշաճ համարիմ կոչել և ղգետաձորակն. յորոց յարեւմտից կուսէ տարածանին ընդարձակ անդաստանք և ազարակք գեղջն, իրրեւ յատուկ իմն մասն նորին՝ Նորսի մագրայ կամ Մագրայ-Նորս անուանեալ: Բնակիչքն 155 կամ 160 տունք Հայք՝ յուլովազոյն մասամբ գաղթեալք են այսր ի Պարսկահայոց, յամս 1827-30. Ի բնիկն նշանաւոր է գերդաստանն Սմբատեանց, (համարեալ ի Բագրատունեաց զարմէ) որ և Տերտեղանց տուն կոչի, վասն քահանայական զարմի անընդհատ յաջորդութեան յեօթն ազգ, յերկուս դարս. յառաջ քան զնոսս յիշին վեց ազգք եւս (ընդ բընաւ 13 ազգք կամ սերունդք), ի սկզբանէ ԺԷ դարու. որոց առաջին Սմբատ ճոխ տանուտէր ի Նախճաւան՝ յիշի յամի 1625. և այս կարգ է ուղղագիծ ազգածնութեան նոցին, թողեալ զբազմաթիւ կողմնագիծ սերունդս.



**Յամի Տեառն 1875 եւ Հայոց ՌՅԻԵ, ի կայսերութեան Ռուսաց Բ Աղէքսանդր Նիկոլայեւչի, ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Տ. Տ. Գէորդայ Դ.**

**Ի տոհմէն Սմբատեանց շինի յիշատակ**

1 Պատրաստեալ է ի հրատարակութիւն և զմանրամասն տեղէ կութիւն Գոտտուաց Գիւղերտեանայ և ՆախիՄասնայ, յորմէ նամա-



Առ մեզ տանուտէր տեղոյն էր (յամէ 1856) Աբրահամ անագ քահանայ (իննանամայ + յօգոստոսի 1890), երկուք յորդուցն նոյնպէս քահանայք, մին օգնական իւր Տէր Սարգիս և միւս Տէր Սահակ՝ յայլում գեղլ (Վարդաբլուր. Կիւլ թէփէ), իսկ երրորդն որ և անդրանիկ՝ յառաջադէմ բնաւից և ծանօթ՝ Տէր Մեսրոպ (Գրիգոր Սմբատեանց), զարդիս Արքեպիսկոպոս Շամախեայ, իբրեւ ի 40 ամաց հետէ միաբան Էջմիածնի, զանազան պաշտամար և վաստակք օպատարեալ Աթոռոյն, ամս 16 ի վարչութեան Սիւնհոգոսին, կալով երբեմն և յաջորդ Երեւանեան թեմի, և ի Տաթեւ և այլուր. պարապեալ է և ի գրաւորականս, առանձինն խնամով ի հետազօտել զբեւեռաձեւ արձանագրութիւնս կողմանց Այրարատայ և Սիւնեաց, առաւել քան զքսան հրատարակելով յԱյրարատ օրագրի Էջմիածնի, և առաքեալ առ գիտնակեանս ազգայինս և արեւմտեայս ի վերծանութիւն և ի թարգմանութիւն նոցին. գրեալ և ուրոյն ընդարձակ ծանօթութիւն զայնցանէ՝<sup>1</sup>, որպէս և առ Հնարանական ընկերութիւն Մոսկուայ, յոր սակս և անուանեցաւ նմին կաճառակից Երեք եւս յեղբարց նորին (Գարրիէլ, Միքայէլ, Հայրապետ) յարքունի և ի սիւնհոգին պաշտաման կարգեալ էին. և տուն բնակութեան նոցին շինութեամբ և պարտիզօք յերեւանի կայ ի գեղջն, յոր բերեալ է և ջուր ի վերուստ յառուէն և աղբիւր շինեալ, արձանագրութեամբս.

բիւմ զչնորհեալն ինձ զիւրոյ կայրենի գեղջէն. և զԺամանակէն Գոտտիւն ԺԹ գորտս, և զՊատրաստեալ վերոյիցն Շամախեայ:

Աղբիւր բխեցելոյ ջրոյ անքանակ ,  
 Սարգիս քահանայի ծախիւք Նորսարնակ  
 Որդւոյ Աբրահամու Տեառն խաչունակ :  
 ԶԱմբատազունս յիշել ինդրի , գբահանայապետն զՄեսրոպ ,  
 ԶՍարգիս քահանայն շինող սորին , ղգպիր Խահակն եւ ղՅակոբ ,  
 Գաբրիէլ , Միքայէլ պաշտօնակալք են , Հայրապետն ընդ նոսին .  
 Աւագերեց Աբրահամու այս են որդիք եօթնեսին :

Նորս հաւանորէն մի էր յերկոցուն Նորագիւղ աւաննեալ գիւղորայից ճահկոյ , որը հարկէին Տաթեւոյ մէն 12 բաժին . և աւանդեն ի հնումն 700 տանց լինել ի նմին . որոյ ընդարձակութեանն վկայեն և հետք ինչ չըր- շապատ պարտպաց . իսկ հնութեանն՝ գերեզմանք և խաչ- արձանք առ եկեղեցւոյն , որ կոչի յանուն Ամենասուրբ Երրորդութեան , և է քարակերտ սագաղէն , նորոգեալ՝ որպէս Թուի յայլեւայլ ժամանակս , և հուսկ յամի 1878 , ձեռնարկութեամբ վերոյիշեալն Աբրահամու աւագերի- ցու , որպէս և արձանրագրեալ է .

Յամի Տեառն 1875 եւ կայսերութեան Ռուսաց Բ Ալէքսանդր Նիկօլա- յեւչի եւ ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Տեառն Գէորգայ Դ. նորո- գեցաւ Սուրբ Երրորդութեան եկեղեցիս արդեամբք ժողովրդոց Նորս գեղջ , վերակացութեամբ Աբրահամ աւագ քահանայի Տէր Կարապետեան Սմբատեանց եւ որդւոյ նորին Սարգիս քահանայի եւ երեսփոխան Պօզոսի Եաւրիեանց .

Ի հնագոյն յիշատակաց ծանօթք են խաչվեմ մի առ դրան եկեղեցւոյն արձանագրու 1274 ամի .

ԹՎ. ԶԻԳ. Ես Աբելիկ կանգնեցի զՍուրբ Խաչս վասն հողւոյ խնկիկին .

Ի վերայ բարաւորի դրան եկեղեցւոյն եգեալ կայ նորագոյն խաչարձան գրութեամբ 1654 ամի .

Սուրբ Խաչս բարեխօս է Վարդանին եւ կողակից Նիգարին եւ որդւոյն Մկրտչին Մարտիրոսի եւ Աւետիսին . ԹՎ. ՌՃԳ .

Տօն մեծ կատարի յեկեղեցւոջ Նորոի ի Վարդավա- Սուրբ (Գիւտ) Խայի , փոքրիկ եկեղեցեալ , որոյ կանգուն ուի , յոր դիմեն ուխտաւորք ի բազում կողմանց : կայ որմն հիւսիսակողման , և ի վերայ դրանն արձանա- Յարեւելից կուսէ գեղջն կայ աւերակ վանաց յանուն գիր 1251 ամի .

ԹՎ. Զ . Յանուն Աստուծոյ . Ես Լիանոս շինեցի զսուրբ Խորանս վասն փրկութեան եւ յիշատակ հողւոյ ինձ եւ ծնաւղաց իմոց եւ եղբարց . եւ տվի ղիմ ամէն հայրենի հողերս եւ ջրաղացս եւ . . .

Յանուն շինողիս կոչի տեղիս այս Լիանոսի վանք . Մոսկուա : — Մերձ ի վանատեղին կանգնեալ կայ խաչ- Մանուցանէ արքեպիսկոպոսն Սմբատեան գի սերունդք Լիանոս տոհմի գտանին այժմ ի Տփլիս , ի Պագու և ի վեմ մի մեծ , համառօտ այլ կարեւոր և հին Թուականաւ 1336 ամի , այսու գրութեամբ .

### Ի ԹՎ. ՉՀԵ. Կանգնեցու Սուրբ Խաչս յիշխանութեան Պռոշո . . . որք երկիր պագանէք յաղաւթս յիշեցէք .

Ի Թանգարանի Էջմիածնի պահի խաչ մի արծաթեայ մասամբ նշխարաց և գրութեամբս յամի 1717 .

### Սուրբ Հռիփսիմէի Մասունքս Շահապունուց ձորի Նորեցի Տիրատուրի որդի Պիճնաքիճն է յիշատակ . ԹՎին Հայոց ՌՃԿԶ .

Երկամաւ զկնի այսր Թուականի (1719) յիշատակին ի վենետիկ Նորեցի վաճառականք՝ Եղնազար և Փլիլիպպոս ընդ նուիրատուս Ս . Խաչ եկեղեցւոյ . — Ի գեղջէ աստի համարին գաղթեալ բնակիչք Նորք Թաղի Երեւա նայ և յանուն նորին կոչեցեալ զայն :

Ի սահմանս Նորս գեղջ ոչ շատ հեռի՝ յարեւմտակողմն՝ ի վերայ ճանապարհի Նախճաւանու ուխտատեղի մի է Նախատակի, Չիարադ կոչեցեալ յայլազգեաց . և միւս ի հիւսիսակողման՝ Թռչիս մանուշ կոչեցեալ :

173 . Իրր երկու մղոնաւ յարեւմտից Նորսի է Մահ մուտապատ գեօղ այլազգեաց . և առ խառնըրդովք գե տակին՝ ի միջին առաջն՝ մեծ գիւղն Գարապապա կամ Ղարաքարս, հայարնակ 20 տամբք, և հին աւերակ ե կեղեցեալ, ուր Շորէն քառասուն ամբ յառաջ նոյնքան տունս Թաթարաց գրէր և մի տուն միայն Հայոց : Գոն ի սահմանս գեղջ ուրք հանքային բնածղուտ չրոց :

Ընդ մէջ գետածորակին Նորից և արեւելեան օժան դակաց կամ ձորակաց կժածորոյ՝ նշանակին յանուանէ երկու լերինք, մին Ազայար կամ Աղաւթար Եայրաւր, որ յիշեցուցանէ զհին անուանս գիւղիցն Ակոռի և Արքոյք, միւսն ի հիւսիսոյ նորին՝ Պոռոշուռ — զայստաղ, որ Թարգմանի Շոգեւոր քարալեռան, յորմէ ի դէպ է կար ծել հրարդխային զքնութիւն երկրին, մանաւանդ զի և կիսով փարսախաւ ի հիւսիսոյ նորին նշանակին և հան քային Թթուալուրք : — Ի փոքու և ի ծառաւէտ ձորակի, առ երի և ի հարաւոյ կուսէ կայ Գոմեր կամ (Քեօմիար ?) նշանաւոր գիւղ . զորոյ զանուն և զորպէսն փափաքելի է ստուգել, զի ի սմա միայն նշանակի ի քարտին եկեղեցի, յայտ է թէ հին . 13 տուն Հայ բնակիչս դնէր ի սմա Շորէն . յաշխարհագրի 1873 ամին ոչ յիլին Հայք, այլ 74 տուն Թաթարք . բայց Տէր Սմբատեանց առէ 118 տունս Հայոց : — Յանկեան խառնըրդոց փոքու ձորագե տակիս ի կժածոր՝ նշանակի հանգրուանն Մոյրակի կամ Մոյրատակի, զի զօրանիստ էր Ռուսաց, որ յետոյ փոխեցաւ ի Բիջնակ մերձ ի գետեզր Շահապունեաց, և անտի այլուր : — Կիսով մղոնաւ ի Հր . սորա և յահեկէ, և սակաւուք աւելի նոյնպէս յահեկէ գետոյն՝ կայ նշանաւոր անուամբն կժածոր գիւղ հայարնակ, 86 տամբք՝ յամի 1890, և եկեղեցեալ : — Երեւմտակողմն կժածորոյ իրր փարսախաւ հեռի՝ առ ջրովն կայ Հոփուսանայր, իրր ուխտատեղի հովունց . իսկ ի հարաւոյ կժածորոյ առ Խաչի անուն ձորակաւ՝ աւերակ տեղի մի է մեծ

Չարսոս — քաղար կոչեցեալ, և համարի հին քաղաքա վայր : — Ընդ ձոր գետոյն ի վեր գնալով՝ յահեկէն, զի և ընդ այս իսկ է արահետ ճանապարհն, երկու մղոնաւ ի Հս . Գոմերոյ հանդիպիմք յամէ փոքու ձորակի հայանուն Չառնատուն <sup>1</sup> գեղջ, բնակեալ յայլազգեաց 40 տանց . իցէ արդեպ հինն Եզնասուն : Մերձ են նմին և այլ երկու գեօղք հայանուանք, յորոց մին հազիւ մղոնաչափ ի Հս . Մ . կայ առ գետեզերքն, վերոյիշեալն Բըլնաղ կամ Բջնակ, Բիջնակ ըստ այլազգեաց . և սակաւուք հեռի ի սմանէ միւսն՝ Խնձորակ, Խաղաքիակ : — Երկու մղոնաւ ի վերոյ սոցին յԱ . Հս . նշանակի գեօղատեղի փոքր յահեկէ գետոյն, այլ ոչ և անունն . և վերաւ գոյն եւս գրեաթէ նոյնչափ հեռի ի վերջնոյս, ի սահմանածայրս և ի բարձրակահակ Թիկունս պարու Արագի լերին և աղբերաց համանուն գետոյն Մղոյ, կան հետաքննելի աւերակք հին Բջնակ գեղջ :

Յամէ գետոյն կժածորոյ երկու մղոնաւ ի Մ . Հր . Խնձորակի և նոյնքան ի Հր . Բլնաղ կամ Բիջնակ լերին, առ վտակաւ միով է Մարաքա զըչաղը (Քարայր ձմերոցք) գեօղ Թաթարաց 26 տանց . — կիսով փարսախաւ ի Հր . նորին Այի Մեհմետ զըչաղը 13 տամբ . — մղոնաւ ի սորին հարաւոյ և ի կժածորոյ՝ Քեօլանի — զըչաղը իրր 30 տամբք : — Երկու մղոնաւ յԱ . Հր . վերին գեղջ յահեկէ և մերձ գետոյն՝ բղիւ է Սարի պոռչագ (Պեղին ազրիւր) :

Արեւմտեան օժանդակ չրոց Շահապունից Արաւաչի գետակ՝ ծաւալի մանր առուք, յորոց միջի է լճակն Գանլը ի Մ . Հր . համանուն լեռնակի : Յերից կողմանց բնական պատուարք են լճակին՝ լերինքն, ի միւսոյ կողմանէ ձեռագործ որմն, առ հաւաքումն չրոյ, զոր և ի կարեւոր հարկի արձակեն ի գետն առ ի վարարել և ընուզ զպէտս ոռոգման կողմանց Նախճաւանու : Ի Հր . լճակին առաջին գիւղ յամէ չրոյն՝ գրի Խօզրամիթ ? հանդէպ նորին մղոնաւ չափ տարակաց՝ ի ձախմէ չուրց Չանել 18 տամբք Թաթարաց . առ որով յարեւելից կուսէ չեղջաձեւ լեռնարլուր մի : Անուանք սոցին՝ Թերեւս աղաւաղեալք՝ հայկական ձայնիւն փափաքելի առնեն զվարացն հետազօտութիւն . մանաւանդ զզոյզն ինչ ծանօթն քան զնոսին, որ ի Մ . Հր . առաջնոյն կայ մղոնաւ հեռի կամ սակաւ աւելի՝ Գուլքի, ի ստորոտս համանուն բարձու լերին (կոռքի) 9650՝ . յիշեալ ի հին ցուցակին Տաթեւու, Գուլքի, լաւ եւս կուլքի ըստ հնագոյն յիշատաւ

<sup>1</sup> Յոնուն զառիկ բրածոյ նիւթոյ համարի Տէր Սմբատեանն այսպէս կոչեցեալ զանուն գեղջս . ի նոյն սակս Թերեւս կոչիցի և

մերձաւոր նորին Չանել, Թեզու և ցարք նիւթն կամ հանքն յայտնեալ չեն :

կարանաց, յորոց մին (Մալտոց) գրեալ ձեռամբ Մա-  
նուելի ուրումն յամի 1493, որոշակի յայտնէ և զգա-  
ւառն. « Ի Ձորս Շահապունեաց ի գեօղս Կուքի, ընդ հո-  
» վանեաւ սուրբ եկեղեցեացս, և սուրբ Խաչերոյս, և  
» վարդանեանց սուրբ Նահատակացս » . . . Ստացողն է  
» Տէր վարդան քահանայ սրբասէր և առաքինի, որ յոյժ  
» փափաքանօք ետ գրել զՄալտոցս յիշատակ իւր և  
» ծնողաց իւրոց, հօրն իւր Մոնարստին և մօրն իւր Խոնտ  
» Խաթունին, և մօրքուերն Թագաւելեքին . . . Ի վայե-  
» լումն որդւոյ իւրոյ վանական քահանային և Ան-  
» տանին » : Հնագոյն եւս յիշատակարան 1333 ամի՝ յաւե-  
լու զժամօթութիւն Խաչերոյն, և յայտնէ վանս լինել  
ի տեղւոյն, վկայելով և զիխանութիւն Պատրիարքանց ի  
վերայ տեղւոյն. մատենան է Պատարագամեկնիչ Լամ-  
բրոնեցւոյն.

### Ձորը

Հիւ- խնդիրքարար էալ զարտ  
ու- սականս քարեմիտ մարդսս  
կրօն ա- ոք. և յետոյ գտեալ  
դրո- աղքետաց ըստ պատշաճ  
ին : Եւ- արեղեալ ի վանակ  
քոյ ի տան մեծի սրբարան  
իս. և անձա բնակ առաճ արքա  
անձանքս և սք. և ահեղ հը  
զոր նշանիս հաղարտ բոր  
այն չեղեք և ծնողաց երոց :  
Արդ- պրեչա- սա ի ժաման  
ուկս հարցալ ի ստան ի ստաց  
ան յակ ուլեա. և ի Թագա-  
արու- Թնն լեւոնի. և ի բաբ-  
ուս, ապետին յեսանա. և ի  
յիշխանութեան համարի մե-  
լոյ Թոտին պողա զոր ի յաղ-  
զէ եւս վաւարանաց վատեա  
վար ան յերկար արանցի զժա-  
մանականոցս. ի իսողութեան  
պու. սա ի սիրտոր. Ժր. երամ  
իսանութեանորա. Լիյա-  
աղի սորդու թե ախտ ի սակե  
այնք սարկաւա- աղքէն .

133. Պատարագամեկնիչ Ն. Լամբրոնեցոյ.

Յիչէ գրողն և զվարդապետս իւր և զեղբօրն՝ ըզ-  
Սարգիս և Յովհաննէս, (զհարս նոցին խոցարեղ և  
Միսիթոր, և զմարսն՝ Հոտր և Թումամ. զեղբարսն՝  
Շարան, Դաշիթ, Ճոներ և Գրիգոր). և վասն գրչու-  
Թեան իւրոյ անմեղադրութիւն խնդրելով՝ ծանուցանէ,  
« զի առաջինն է և այլ չէի գրել, և օրինակն խիստ դը-  
» ժար էր » : Նորագոյն ծանօթ յիշատակարան մատենին  
է 1471 ամի, գրողն Յովսէփ կրօնաւոր :

Տասն ամաւ յառաջ քան զյետին Թուականս, այս-  
ինքն յամի 1462, այլ ոմն Յովսէփ եպիսկոպոս գրէր անգ  
Պատարագատետր մի աստ « Ի Ձորս Շահապունից, ի  
» վանքս Կուգոյ, ընդ հովանեաւ Ս. Խաչիս՝ որ կոչի  
» Հազարաբուրք, և կաթուղիկէ Ս. Ստեփանոսին և  
» Ս. Աստուածածնին, և Ս. Նշան, Սրբոց փառասնից » :  
Յելս կոյս ԺԵ դարու (1496) Գուգալ և Խոնտ ամու-  
սինք տան գրել ի գեղջս Աւետարան մի « ընդ հովանեաւ  
» Հազարաբուրոցս և Ս. Նշանիս, և այլ Սրբոցս որ աստ  
» կան ի բողոքակայս մեր » : — Մնան ցարդ աւերակք  
վանացն և եկեղեցւոյ, այլ ոչ հետազօտեալք : Բնակիչք  
տեղւոյն են Թաթարք իբր 30 տուն : Յանուն գեղջն կոչի  
և լեառնն մերձաւոր, մի ի բարձրագունից ի կողմանքս :

Երիւք մղոնօր ի Հր. Կուքոյ յահեկէ գետոյն կան եր-  
կոքին Արմաւաշէն գեօղք վերին և Ներքին, անուանն  
ծամածուեալ յայլազգեաց՝ իրանելին. ի վերնումն 30  
տունք են նոցա, ի Ներքնումն՝ աւելի քան 40 : — Աս-  
տի մինչեւ հուպ ի գետախառնունսն՝ չկայ այլ գեօղ-  
իսկ մերձ ի նոյն և ի Քարապապա՝ է ընդարձակ գիւղն  
Առինն, ընդարձակագոյն եւս ագարակօք. սա ոչ յիշի  
ի հին ցուցակին, և ոչ գիտեմ հին իցէ՝ եթէ նորաչէն ի  
զաղթականէ անտի Պարսկահայոց, որոց էին յամի 1873  
տունք 34, ոգիք 262, և եկեղեցի մի : — Մղոնաւ ի ստու-  
րեւ Առիննայ խառնի գետակն ի Կժածար, որոյ ընկա-  
լեալ փոքր մի եւս ի ստորեւ գրուն Շահապունից վտակն՝  
միանոյլ դառնայ ընդ արեւմուտս. մինչ չեւ ընկալեալ  
և զՆուտ գետ՝ ի միջի խառնըրդոց նօրին են փոքրիկ  
զեօղք, Սյւանդո կամ Սյւանձրկ 6 տամբք Թաթարաց,  
և Դայրախոս 16 տամբք : — Հովիտ Նուտ գետակի,  
զոր ասացաք միջակայ Շահապունիցն և Ճահկոյ, փոքրա-  
սահման է, և գրեաթէ գեօղ մի միայն մարդաշատ գոյ  
ի նմա, յարեւելակողմն, այն է Պատեմոն (Բաստակոն),  
զոր Թարգմանեցաք Նուտ. բայց ձորակն անդ կոչի Մե-  
ժոփ. եկեղեցի գեղջն Թուի հին և նշանաւոր ի բարձրա-  
ւանդակ սարի յարեւելից կուսէ գեղջն : Բնակիչքն յամի  
1873 էին 50 տունք Հայոց և իբր 800 ոգիք. կէսք բնիկք  
և կէս գաղթականք ի Պարսկահայոց, և 18 տուն Թա-  
թարաց : Չատ յեկեղեցւոյն կայ իբր մղոնաւ և կիսով  
հեռի՝ հին մենաստան ամայի, և բերդ, և հանքային  
լուրք, ուր և ուխտատեղի ֆամոչիսալ կոչեցեալ, բազ-  
մութեամբ այցելուաց ի կիրակէի Երկրորդ Մաղկա-  
զարդի. մենաստանն կոչի յանուն Ս. Աստուածածնի,  
առ որով և զերեզմանք Թուականօք ԺԵ դարու, աղ-  
բիւր հոսեալ յաւաղան քարաչէն և չուրջ ընկուզենիք :

Առ արեւմտագոյն վտական կան Տասի աւերակ, և  
հանգրուանք կամ փոքրիկ գիւղք, Գարապոյտ՝ 13 տամբք  
այլազգեաց, Շատի կամ Շադոս, 10 տամբք : — Յետ

կցուածոյ վտանկացն ի ստորեւ (ի հարաւ) մերձ ի խառնուորդս գետոյն ընդ Շահապօնիցն, և առ եզերքն կայ Սարգստու կամ Սարաշու, 25 տամբք այլազգեաց, որ է անշուշտ Սաղուասօճնք հին ցուցակին:

Հանդէպ գետախառնիցն ի հարաւոյ կուտէ, որ է ի ձախմէ միաձոյլ գետոյն Շահապօնից, կայ Մարայիկ գիւղիկ ի միջի ագարակաց, 13 տամբք այլազգեաց: Ի հարաւոյ սորին են բազմատեան լերինքն Սարոս և Գառադան: — Երկու մղոնաւ յարեւմտից Մարայիկայ առ գետեզերքն, յահեկէն (ի հարաւոյ) կայ Վայիմի գիւղ այլազգեաց, 24 տամբք. և սակաւ մի նուազ հեռի ի սմանէ՝ յարեւմտից կուտէ՝ Խալխալ գիւղ, ընդարձակ ագարակօք, թերեւս հինն Գայլակալ, յեղափոխեալ

յայլազգեաց, որոց հինգ տունք միայն էին առ Շորէնիւ, և 47 տուն Հայոց գաղթականաց ի Պարսից բաժնէ. զարդիս 60 տունք են սոցա, ոգիք 300 և եկեղեցի մի: — Աստի և անդր գետն Շահապօնից ուղղակի խաղայ ընդ հարաւ՝ իրրեւ չորս մղոնաչափ և խառնի ընդ գետոյն Ճահկոյ, ունելով սուղ ինչ ի վերոյ խառնըրդոցն՝ յահեկէն, որ է յարեւելից, զգիւղիկն Մագրայ-Ալպիօզ, արգասարբեր սահմանօք, և բնակեալ ոչ գիտեմ բալոր եթէ մասամբ՝ ի Հայոց: — Մերձ ի Վայիմի՝ ի հիւսիսոյ կուտէ վտակ մի փոքրիկ նշանակի անկանել ի գետն Շահապօնից յահեկէ Նչուտ գետակի, և առ եզերք նորին փոքր գիւղն Թերքէշ 28 տամբք Թաթարաց: — Աստանօր համարիմ զանջրպետ Շահապօնից և Ճահկոյ:

### Բ. Ճ Ա Հ Ո Ի Կ = Մ Ա Ի Ա Ջ Ի Խ Ա Թ Ո Ի Ն

174. Գեղեցիկ և լեռնաձոր մասն բուն գաւառին Ճահկոյ, որ արդ ՄԱԻԱՋԻ ԽԱԹՈՒՆ կոչի, սակաւս երեւեցուցանէ բնակավայրս շէնս, աւերածու ձեռաց և ոտից հանդիպեալ, որպէս Թուի, ի յետին դարս: Գետն, որպէս նշանակեցաք յառաջագոյն՝ ընդունի երկուստեք օժանդակս. արեւելեանն՝ որ մերձակից է Նչուտի և փոքու գետակին առ որով Թէրքէշ, ի վերնակողմանն, (ի հիւսիսի) միայն ունի շէն մի չափաւոր մեծութեամբ, այն է Սոռդան-րեկ բնակեալ ի Հայոց գաղթելոց ի մասնէ Պարսից, որոց են այժմ տունք աւելի քան 475 ոգիք իբր 700. ունին եկեղեցի հին, առ որով և գերեզմանք վաղեմիք: — Սակաւօք ի հարաւոյ կան աւերակք հնոյ գեղ Վորու, առ եզր Գըրգ-պոչաք վտակի, որ խառնի ի գետակն. և առ խառնըրդովքն կայ Կետարմաչատախ անուանեալ գեօղիկ այլազգեաց 15 տանց. անունն երեւի ծեփեալ ի հայկականէս կամրջաճաղ, յոր կոչումն գեօղ մի նշանակէ հին ցուցակն յԵրնջակ:

Միջին կամ բուն առաջք գետոյն Ճահկոյ զուգի ի բազում աղբերաց և վտակաց իջելոց ի գոգաձեւ լեռնոտանց Վայոց ձորոյ. որոց արեւելեանն մերձ ի սահմանս Մարտիրոս գեղը և Հօղոցմանց, ի Թիկունս լեռանցն կրէ գեօղս աւերակս կամ ամայիս, զՃանիքիստ, որ և լիւսպին, թերեւս Ղաբէն հին ցուցակին, եթէ չիցէ սա այժմեանս Օդպին յորում 16 տունք այլազգեաց և 10 Հայոց, հին եկեղեցեաւ և գերեզմանօք: — Յելից հարաւոյ սորին կայ փոքրիկ գիւղն Սէս, բնակեալ ի Հայոց, իբրեւ 80 տանց և 300 ոգւոց, եկեղեցեաւ և հին գերեզմանօք: — Մեծագոյն և շինագոյն գիւղ ձորակին յարեւմտից հարաւոյ սոցին է Իր-գըսան, յարեւմտից կուտէ համանուն լերին, 40 տամբք այլազգեաց: Առ խառնըրդով վտակացն կայ աւերակ Ստորին Իր-գըսան գեղը, որ և Թուի հնազոյնն. այլ ոչ կարեմ ստուգել զհայկական անունն, իսկ Թուրքարէնն նշանակէ ճաբակ կամ շնակտար:

Միջին վտակացն է բուն սկզբնաղբեր Ճահկու գետոյ և հիւսիսագոյն բնաւ կողմանց գաւառին, ի Թիկանց լեռին որ անջրպետէ զայն ի սահմանաց Վարդարուտ գեղը Վայոց ձորոյ. յորմէ իրրեւ փարսախաւ շափ ի հարաւոյ կայ փոքրիկ և սակաւաբնակ գիւղն Ղորատիգ կամ Քիւռեատիս կոչեցեալ. այն է հինն Խոռատունիք, և յանունէն յայտնի ոչ աննշան վաղեմի տոհմի լինել բնակավայր, և այժմ բազմաբնակ է քան զայլ մերձակայ գեօղեանն. և բնակիչքն են ազգայինք գաղթելալք ի Պարսից բաժնէ, տունք 65 ըստ աշխարհագրի 1873 ամի, որ նշանակէ և եկեղեցի և հին գերեզմանս: Յօրինակս ինչ ցուցակին Խոռատափք գրի: Ոչ գիտեմ ըստ գիպաց եթէ իսկապէս զօրդիս և զԹոռունս Հայկայ յիշեցուցանիցէ սա և մերձաւոր իւր Սէս, զԽոռ և զՍիսակքննութեան կարօտի և որ ի միջոցի նոցին փարսախաւ յելից հարաւոյ Խոռատունեացօք, ի ստորոտս սահմանափակ լեռանց Վայոց, յեզր առուի միոյ, Ախաւ յայժմուս կոչեցեալ գիւղ փոքր, և առ նմին հին եկեղեցի, թերեւս և վանք. զոր և կարծեմ լինել ըստ հին ցուցակին Աղբերախաչ. բնակիչքն են 30 տուն, կէս Հայ և կէս Թաթար: — Արեւմտեան վտակ աղբերականցս Ճահկոյ ի Թաշեանին գայստ բարձու լեռնէ իջեալ, անցանէ առ Օդպին գիւղիւ. և երիւք մղոնօք ի ստորեւ յելից հարաւոյ, յալմէ ջրոյն կայ Տիգին-էլմաք, որ կրէ զանուն հին Տիգէն գեղը, և է բնակեալ արդ ի Հայոց գաղթելոց ի բաժնէ Պարսից 40 տանց՝ ըստ աշխարհագրի 1873 ամի, որ զբնակիչսն բազմաթիւ գրէ 460 ոգիս, և եկեղեցի հին և ուխտատեղի ոչ հեռի ի շինէն: Չյարակից անունն առեալ է յաւերակ Էլմաք (Խնծորուտ) գեղէ, որ մղոնաւ ի բացեայ կայ յարեւելից կուտէ յանկեան խառնըրդոց վտակիս ընդ միջոյն:

Երեցունց վտակացս կամ յաղբերականց ձուլեալ Ճահկոյ՝ առ Ստորին Իթ-գըսան գիւղիւ՝ խաղայ ի հարաւոյս, և յետ փարսախաւ ճանապարհի ընդունի յալմէն



վտակ մի փոքրիկ, և յանկիւնամէջն՝ զոր զործէ ընդ նմին՝ յանտառամու վայրի՝ ծածկէ զաւերակս հնոյ Բզղօն գեղը, որ այժմ Պոզգրով կոչի, որպէս և որ յանուն նորին վերականգնեցաւ երկու մղոնաւ ի Հս. Մ. ի զլուս վտակի՝ Թաթարաբնակն Պոզգրով 30 տամբը: — Յաւերակաց անտի Բզղօնից մինչեւ ի գետակցութիւն երկից առաջից գետոյն Ճահկոյ, այսինքն՝ արեւելեան օժանդակին զոր յիջեցաք՝ և Գարագուշի (յոր արդ մատչիք) ընդ բնիկ Ճահկոյ, չիք այլ շէն յընթացս 6 կամ 7 մղոնից, բայց միայն աւերակ մի յալ կողմանէ, լի զբերդ կամ լի զբրտրդ անուն, ի հարաւոյ Քէչալի լեռին, 10 տամբը Թաթարաց:

Գարագուշ յարեւելից կուսէ համանուն լեռանց՝ էր հիւսիսագոյնն ի բնակատեղս Միարանոզ Հայոց, և մի ի փոքրագունիցն. զի Ֆրիտոն ի սկիզբն ԺԷ դարու 80 տուն նշանակէր ի նմա, 180 հաղորդընկալս և 100 տղայս. եկեղեցին կոչէր յանուն Ս. Աստուածածնի: Յետ կիսոյ դարու՝ Հ. Գովինիկ Նազար չորս տուն միայն նշանակէ և ոգիս 30. Պետրիկ՝ յամի 1674 տունս հինգ. իսկ յերս դարուն և ոչ մի. ի սկզբանն ընդ 80 ից տանց Հայոց միայն մի տուն այլադենից էր անդ: Չկայր վանք ի գեղն, այլ վանատուն կամ եկեղեցատուն, յորում կայր քահանայ մի կղերիկոսան սպասաւորաւ, և ի նուազել բնակչացն՝ ի Ճահկոյ գայր երբեմն քահանայ հովուել զնոսին. Թէպէտ և կոչիցի և վանք, որպէս յամի 1738, ի կարգի ստորագրութեան այլոց վանահարց գաւառին՝ ձեռն արկանէ և « Ֆրա Ազարեայ Ղարայ » ղուշը վանից »: Ոչ գիտեմ երբ աւերեալ լքաւ ի բնակութենէ գիւղն, և փոխանակ ինեցաւ այլ գիւղ համա նուն, բայց արտաքոյ այսր ձորագետոյ ի Խոք վիճակի. իսկ ի սմին զատ յաւերելոյ անտի չիք այլ շինատեղի:

Վետակցութիւն երեցուն առաջից Ճահկոյ, որպէս ասացաք, լինի յերի Աջնաբերդ լեռին, յարեւելից նորուն, և Ճանի աւերակ գեղը, որ յահեկէ և յարեւելից: Մղոնաւ կամ սակաւ աւելի ի ստորել միութեանն՝ կայ փոքրիկ գիւղն Թերեւս և ամայի՝ Բայիս, որ է անշուշտ հինն Պառնսսա. երկու եւս մղոնաւ խոնարհագոյն՝ յարգասաբեր սահմանի յալմէ գետոյն՝ շարանունն Եշյդանաբաւ փոքր գիւղ:

175. Մղոնաչափ մի եւս ի ստորել յահեկէ և յարեւելից գետոյն, յայլոց կողմանց չրջապատեալ այգեք և անդաստանաք՝ տարածանի մեծ և հին աւանն Ճառուկ, յայժմուս Ճաղրի, զոր մարթ է և քաղաքաւան կոչել, մանաւանդ զի և անհամեմատ մարդաշատ է քան զայլ ամենայն գետեան գաւառիս. ի ժամանակի վիճակագրութեան Երբենի 130 տունք Հայոց էին ի նմա, 7, 8 ոգւովք, տուն մի վրացի, և 207 տունք այլադենից և 1136 ոգիք. իսկ ըստ աշխարհագրի 1873 ամի՝ տունք Թաթարաց 344, ոգիք 2100, Հայոց տունք 148, ոգիք 886: Անյայտ է ծագումն անուան Ճահկոյ յորմէ և գաւառին, նոյնպէս և հին անցք և դէպք նորին մինչեւ ի

ժամանակս Միարանոզաց, որոց զլիաւոր աւան բնակութեան եղեւ յայսմ գաւառի, վասն որոյ և յիւր աւան կոչեցան համօրէն հետեւողք այնր դաւանութեան Ջառուկ կամ Ջառուկցիք. առ սոքաք յաճախ այսպէս գրի տեղին քան ճ տառիւ, իսկ յօտարաց կոչէր և կոչի արդ Ջաղրի, որպէս և յիտալացոց ի ԺԵ դարու Chiagri կամ Chiagri, մերթ և ըստ հայումս Giabug կամ Ciachuch, որպէս գրէ Թարգմանն կամ հրատարակող բանից Ֆրիտոնի և այլք: Աստի էր Մարգարէ վարդապետ Օժոպեցի աշակերտակից Յովհաննու Քանեցոյ յամի 1332, գրակազմն: — Գլխաւոր եկեղեցին կոչէր յանուն Ս. Յովհաննոս Մկրտչի, ուր և հաստատեցաւ վանք Միարանոզացն, յորում՝ յերս ԺԶ դարու կային 12 քահանայք միարանք, 2 սարկաւագունք, 8 կղերիկոսք և 10 եղբարք գործաւորք. 500 տունք էին յայնժամ, 5000 Գ հաղորդընկալք և 250 տղայք. իսկ այլոց Հայոց տունք 40, մահմէտականաց տունք 20. ի կէս ԺԷ դարու 100 տունս միայն ասէ ոմն ի Միարանոզացն և 1000 ոգիս. սակայն և յետ այնր յամս 1674 և 1699՝ այլք 200 տունս գրեն: Չատ ի վանաց Յովհ. Մկրտչի էին նոցա և այլ վանք, որպէս յիշէ Ազարիս Ֆրիտոն, այլ յառաջ քան զերս ԺԶ դարու գրաւեալ էր յայլոց ազգայնոց: — Յամի 1474 Ամբրոս. Կոնտարինի (Ambrogio Contarini) դեսպան վենետկոյ առ Ուզուն Հասան՝ ազաւ ի վանս Ճահկոյ աւուրս երկուս (յուլ. 30-1) և Chiagri քերդ կոչէ զտեղին<sup>1</sup>, Յետ նորա էանց ընդ կողմանքս (1477) միւս դեսպան, Պարպարոյ, և Chagri գրէ զանունն. ի Ջահկոյ էին հարագատըն Թոմաս և Ելեւթեր կամ Սամուէլ, մին արքեպիսկոպոս միւսն Հարանց հայր կամ գաւառահայր<sup>2</sup>: Որպէս Թուի վանահայր տեղոյս՝ Արքեպիսկոպոսին Նախնականու՝ որ նստէրն յԱզարաներ, զի այսպէս գտանին երբեմն կոչեցեալ առաջնորդքն, մինչ այլոց վանացն միօրինակ Մեծաշոր կամ Պրիոր (Priore) գրին: Այսպէս ստորագրէ նախ վանահայրն Անդրէաս որ և փոխանորդ գաւառահօր, յամի 1840, յառաջ քան զայլ ամենայն վանահարս, յաղերսագրին առ Քահանայապետն Հռովմայ 5. գեղջաւաք ժամանակին էր Պետրոս ոմն. Յետ նորա յիշի, և ի կարգի նահատակաց նշանակեալ ի Յայսմաւուրս Գովինիկեանց, ի 16 նոյեմբեր ամսոյ, Հ. Ռափայէլ. յորոյ վանս (ըստ սովորութեան իւրեանց) տիրաբար մտեալ 200 Թուրք քաց՝ յամի 1897, կերան և արբին, և յերթալն պահանջէին 80 վահանագրամ եւս, և ի չքաւորել Հօրն՝ զըլլաւոր խրմբին ետ կախել զնա զլիսիվայր և հարիւր անգամ հարկանել ի ներբանն. և յասել նորա Թէ զայդ հատուցանէ փոխարէն կերակրոյն, սրտմտեալ խուժին՝ եհար երկաթեայ լախտիւ ընդ կառափնն և արկ տապաստ. դիմեցին եղբարքն բառնալ զնա, և հազիւ ժամանեցին պաշտել նմա զխորհուրդս ապախարութեան և վերջին օժման, և անդէն աւանդեաց զոգին: — Յաջորդ սորա Հ. Պետրոս Ջահկեցի, և ընդհանրական ա-

1 Arrivammo ad un Castello d'Armeni-Franchi, che si chiamano Chiagri, dove stemmo fino adì 31, che ci riposammo alquanto, perchè havemmo pane, galline e vino. — AMBROGIO CONTARINI.


2 Տես ի գրուածքի Մեարանոզաց, յէջ 388:  
3 P. Andreas Vicarius . . . villæ quæ dicitur Giachucch et Subprovincialis totius Provinciæ Armenorum Catholicorum.

Թուակալ կոչեցեալ ի սկիզբն ԺԷ դարու, գիտնագոյն համարեալ էր ի կրօնակիցսն: — Յետ սորա գրեաթէ ողջոյն դար մի ծածկին յինչն անուանք վանահարց շահկոյ, և յելս կոյս դարուն և ի սկիզբն յաջորդին (1695-1705) յայտնի Յովնաննէս-Թումաս. ոչ գիտեմ նոյն թէ այլ ոք Յովնաննէս էր վանահայր և յամի 1725. և զկիսով ԺԸ դարու Հ. Պետրոս-Յովնան Ղօժան, որ հաւաքեալ գրամո ողորմութեամբ՝ եղ ի շահասեղանս Վենետկոյ: — Նշանաւոր գտաւ ի միաբանս վանացս և քնիկ աւանիս՝ Հ. Ազարիա որ ի Թագաւորէն Պարսից գեպական առաքեցաւ ընդ Հ. Անտոնի Նազարու առ Պապ և առ պետս արեւմտից, և ի նոցանէ նոյնպէս առ Շահն դարձուցաւ յամի 1674: — Ի սկիզբն ԺԸ դարու երկու շահկեցի միաբանք Հ. Պետրոս Փէհլէվան, (որ յամէ 1696 յամն 1703 եկաց ի Հռովմ յուսուսն, որպէս ինքնին յիշատակագրէ արձակ և ոտանաւոր բանիւ), և Հ. Գրիգոր Կուլիար բազում աշխատանօք և երկար աւճօք վաստակեալ յուղղագրութիւն ժամագրոց կարգին իւրեանց, յաջողեցան տպագրել ի Վենետիկ, յամի 1714. որպէս և կանխաւ յիշեցան այսօրիկ: Յետ ամաց ինչ յիշին ի Վենետիկ և աշխարհականք Ջահկեցիք Ռայիմոնտ կամ Ըւեմոնտոս վաճառական, և Պօղոս: — Բնիկ էր տեղւոյս ծննդեամբ և Ալեքսան Ալեքսանոսեցի միաբան Շահապօնեաց վանից, որ յամի, 1730 տպագրեաց զԺանք անուանեալ գրքոյկ, այսինքն կանոնս կամ ժամագիրս տօնից ինչ կարգին Քարոզողաց, և ստորագրէ զինքն՝ « Լյոս ասօղ սորա Տր. Ալէքսանս Ալէքսանոսեցի, ի գիւղաքաղաքէն Ճահուկոյ, և որդի

» Շահբոյնեաց վանից, ամի Տեառն ՌՁԼ »: — Եկեղեցի էլմիածնական Հայոց որ յանուանէ ոչ յիշի, եթէ Շահակար էր և եթէ այլ, նորոգեցաւ ընդ այսն սր յաւուրս Մովսիսի և Փիլիպպոսի կաթողիկոսաց: Զարդիս ոչ գիտեմ որ և քանի եկեղեցիք իցեն Հայոց, և զինչ մնացուած վանաց Միաբանողացն կամ այլ յիշատակք, որ հարկ է թէ գտցին՝ որպէս յեկեղեցիս և ի գերեզմանատունս Երնջակայ տեսաք:

Յաւարտ յիշատակի ծանօթ բնակութեանց Միաբանողացն հասեալ ի տեղագրութեանս, ի գաւառիս Ճահկոյ, ի դէպ է կարգել աստանօր և զԱրդաք գիւղ օակաւածանօթ բնակից, զի միայն Ազարիա Տրիտոն յիշէ զսա, 30 տունս ասելով ի նմին, 100 հաղորդընկալս, և 70 տղայս. ոչ վանս ի նմին այլ մատուռն մի, և տուն քահանայի միոյ և միոյ կղերիկոսի: Գիրք գեղջն անյայտ, այլ զի զՃահուկ միօրեայ հեռի ասէ նա յԱպարաներոյ, և զսա աւուրք և կիսով, հարկ է ի հիւսիսոյ և յարեւմտից Ճահկոյ խնդրել զտեղին, և ճանաչել զայն Ուղըք հին ցուցակին:

Յաւանէն Ճահկոյ երիւք մղոնօք ի խոնարհ, ընդ հարաւ, և իբր երկուք միայն հեռի ի խառնըրդոց երկօցուն գետոցն՝ Ճահկոյ և Շահապօնից, կայ Նազարապատ կամ Տեմիր զընտան (Երկաթի բանտ) գիւղ. յաջ գետեզերն, չրթապատեալ անդաստանօք, յորում են 60 տունք Հայոց, 10 մահմէտականաց. և ի մերձաւորն կիսով մլոնաւ տարակաց ի Տիտիվար գիւղ՝ 25 տունք Թաթարաց, Թերեւս և քանի ինչ տունք Հայոց. անունն մերձաւոր ցուցանէ զԳիտաւոր լեառն, այլ ոչ և դիրքն:



134. Մատանայի կամուրջ. — Տես յէջ 242. 254.

# Ն Ա Ի Ճ Ա Ի Ա Ն



**ՐԱԿԻՑ** երկուց մեծագոյն աշխարհաց Հայաստան երկրիս, Այրարատայ և Վասպուրականի, և յետնուսմ նախ սեփականեալ, ապա ընդ նա և ընդ Սիւնիս վիճի եղեալ առիթ, գաւառն ՆԱԻՃԱԻԱՆ:

յարեւելից կայ Այրարատեանն Շարուրոյ, ի հարաւոյ Ճահկոյ և յարեւմտից Երնջակայ. իսկ ի մտից հարաւոյ և բովանդակ ի հարաւոյ՝ սահման ունի զմեծ գետն Երասխ, որով և բաժանի ի Վասպուրական աշխարհէ, կամ գետոյն յայնժամ հիւսիսագոյն ունելով ընթացս և քերեւով զլեռնոտիք Ճահկոյ, և կամ քաղաքական ինչ պատճառաւ զատուցեալ ի բնական կցորդութենէ երկրին Սիւնեաց. յոր ըստ պատմական յիշատակաց յագեցաւ ի սկիզբն Ը դարու, յետ այրման և սպառման նախարարացն Հայոց՝ յեկեղեցւոյ նորին քաղաքի, յամի 708. և թէպէտ յերթ դարու անդրէն խնդրեցաւ ի տերանց Արծրունեաց՝ այլ ոչ դարձուցաւ առ նոսա, և մնաց յայնմհետէ, որպէս և կցորդութիւն դրիցն պահանջէր, ի բաժնի Սիւնեաց, զորով փարի Երասխ յարեւմտից և ի հարաւոյ:

Բնութիւն երկրին ոչ է համանման մեծի մասին աշխարհին Սիւնեաց, որ, որպէս տեսաք ի տեղագրութեանս, բարձրակոհակ երկիր է և ոչ սակաւ մասամբ անտառային. իսկ Նախնաւան՝ որ աղեղնաձեւ իմն տարածանի զԵրասխաւ, ցածագոյն և դաշտային, և լեռնագոյն կլիմայիւ. ունել ունի և լեռնաբլուրս ի սահմանս Ճահկոյ և Երնջակայ, մինչև 1000՝ բարձունս յերեսաց

դաշտին, այլ ոչ լեռինս և ոչ շարունակ պարս: Ի հասարակի կաւաքարեայ են լեռինքն և լեռկք, կարմիր, կապոյտ և կանաչ երանգօք. և մեծ մասն երկրին իրրեւ խորշակահար՝ անջուր անդալար, անչէն և ամայի. բարձունքն անրոյսք՝ օձից, կարճից և մողիզաց բոյնք՝ Թէպէտ և ի սահմանս քաղաքին և ուրեք ուրեք գտանին և այգիք բարեբերք, և արտորայք, անդք որիզոյ և բամբակի, իսկ պտուղ սակաւ: Ամայեգոյն եւս է արեւմտեան մասնն, որ յաջմէ գետոյն և քաղաքին. և գետն որ յանուն նորին Նախնաւանոչ կոչի, է ստորին և հարստագոյն մասն միացեալ գետոց Ճահկոյ և Շահապօնից, որ առ Ապասպատի Թագի Երասխ: Յահեկէ կամ յարեւելից ընդունի վտակս չորս մասունս, յաջմէն երկուս, յորոց ոմանք խորասուզին ի դաշտին և ոչ բաւեն յոռոգումն անդաստանաց և պարտիզաց վիճակին՝, վասն որոյ գուրս և ջրեղջ աւազանս հնարին արդ հայթհայթել: Բայց զամայութիւն արեւմտակողմանն խնդացուցանեն տակաւին ծաղկունք վայրի, Երկժաղիկ կակալք (Tulip-Biflora), և չքնաղն կովկասեան հիւրիկ կամ Շուշան վայրի (Iris caucasica), որում ազգակից է և իրերականե կամ Վլադիբեր, (Iris Iberica), և վկայի գտանել յայսմ մասին Հայոց և ի հիւսիսային Պարսից. իսկ յարեւելակողմն ի խոռոչս կաւուտ լեռնակացն, յառաջին աւուրս ապրիլի՝ զարմացմամբ նշանակէր բնախոյզ ոմն՝ բարգաւաճ բուսաբերութիւն գարնանային, Նոսարտակ տերեւախիտ (Lepidum perfoliatum), Մկնտիս կրկնատերեւ (Scilla bifolia) \*Երեկորնիկ ակրիկեան, (Hesperis africana), \*Սնանապար մեծորակ (Androsace maxima), Կաղաւթ արեւելեան, \*Հանուկրի (Holosteum umbellatum aff.), Թագաւորապակ եղջերաւոր (Tritillaria Cornuta aff.) Կատառախտ մկնունի (Nepeta muschini), Ճանդի (Scandix australis), Վարանդիս պնդատերեւ (Valantia pymeae), \*Խոզեղնիկ պայծաս (Scrophularia lucida), \*Պայտուն երինագոյն, (Lycopus variegata), Ագաստաղիկ կարճ պնդատերեւ (Carex stenophylla), և այլն. — Յայտ է թէ

1 Առ իջնանութեամբ Պարսից կարգեալ էր Զրպետ (Մերսադ) առ հաւասար բաշխումն ջրոյ գեղջեիցն, սակայն ոչ կարէր կամ

ոչ կամէր գոնացուցանել զնոսա և արգելուլ զկառ և զկուր և երբեք զհեղուքն արեան:

պատուականագոյն քան զժողովուրդն են սննդարար բոյսը կարեւորը ի դարման մարդկան և սնանոց, որք և յախոյն՝ ուր ուրեք յաջողէ ոռոգումն երկրի, որոյ հող ի դաշտակողմանս՝ աւազախառն և կրախառն է, ի վեր- նակողմանս՝ առատ սեւա բնահող, և ի մասին ուրեք ա- զային. և այս իսկ է նշանաւոր բնութիւն կամ կազ- մուած երկրին, որ ամբարեալ ունի զհռչակաւոր Աղա- հանքն Նախճաւանի, ի մասնուտ քարալերինս, որ և թուզ տաղը (Աղալեառն) կոչի յայլազգեսց, իբր վեց մը- ղոնաւ յարեւմտից հիւսիսոյ քաղաքին, և իբր ի 35 ուս մզոնայսփ (վերստ) տարածութեան, ի խորս և ի բլուրս: Չէ հարուստ իբրև զՎոդբայն, այլ բերքն առաւել քան զայնր թանկագին, վասն մերձաւորութեանն ի քաղաքն և ի սահմանս Պարսից, յոր և առաքի. վասն այնորիկ ի սկզբան գրաման երկրիս ի Ռուսաց, պետութիւնն ի վարձու տուեալ էր զաղահանան՝ 68,000 Ֆրանկաց, մինչ ի Կոզբայ և ոչ 80,000 պահանջէր: Մի կարգ միայն աղքարի է բրածն, ի կապստ և կարմիր մառնա- քարի, գոգ մի ընդարձակ փորեալ իբր 10 Չափ բար- ձրութեամբ, և իբրև 180 քայլ տրամագծաւ, ի սուր անկիւն յանգեալ ընդ հարաւակողմն. ստուար սիւնք իբ- րև 60 ի նոյն աղքարէ տաշեալք նեցուկ կան ձեղուան աղուա քարայրին, և թիւ նոցին աճէ ըստ յառաջիկ պե- ղածոյն: Զարդիս իբրև 7000 կենդինաւ, աղի հաննն ի տարւոյ, կամ ըստ չափու Ռուսաց իբր 300,000 պոտ, ընդ խոշոր և ընդ մանրեալ, որոց գին համարի 80 կամ 100,000 Ֆրանկ: — Յանյիշատակ վաղուց ժամանակաց լինել զսկիզբն աղահատութեան տեղոյն՝ վկայեն քա- րեղէն մուրճք և գործիք գտեալք ի հին փորածս:

177. Փաղաքական գէպք և պատմութիւն գաւառիս՝ գրեալքէ բովանդակին ի քաղաքի իւրում, յորմէ ընկա- լեալ է և զանունն, ըստ ոչ օրինի այլոց գաւառաց, վասն որոյ և ի տեղագրութեան նորին տեսցին. այլ յի- շեսցուք միայն զսկիզբն բնակութեանն, կամ զառաջին ստոյգ յիշատակ, թողլով զՆոյեաննն աւանդութիւն առ յապա: Ըստ պատմութեան Խորենացոյն՝ Հայկազնն Տիգրան ի Զ դարու նախ յան զՔրիստոս, յետ բարձ- ման ինքնակալութեանն Մարաց, զԱժդահակայ վեր- ջին թագաւորի նոցին զառաջին կինն Անոյ՝ բնակեցոց հանդերձ դստերզն և համարէն տամբն և ի նոյնս յարե- լովք և զերեօք, աւելի քան զբիւր մի մարդկան, յարե- ելից կուտէ Մասեաց՝ մինչեւ ի սահմանս Գողթան, և զեզերքք Երասխայ յաջմէն՝ « մինչեւ հանդէպ ամրոցին » Նախճաւանու », և ի վրնջուներս, ի Խրամ, ի Զուլա և ի Խօշակունիս. և « ի միւս կողմանէ (յահեկէ կամ ի » հիւսիսոյ) գետոյն՝ զբոլոր դաշտն, որոյ զլուխն Աժդա- » հական, մինչեւ ցնոյն ինքն սմուրն Նախճաւան »: Այս նակեցուք ի հարեւանցի, զի բանք պատմչիդ զՆախճա- աւան հպագոյն երեւեցուցանեն ի գետն քան որչափ այժմս է: Զարմնն Աժդահակայ կոչեցան Մարք կամ Մուրացան, և ընդարձակեցին զսահմանս իւրեանց՝ յաւէտ ընդ արեւմուտս, ուր հարթ և արձակ էր եր- կիրն, և խառնեցան ի դաշտն Շարուրայ. որպէս զի Մա- րակերտն հին՝ զոր շինեաց Արտուազդ Բ առ կենդա- նեաւ հօրն՝ ի դաշտի անդ, ի մէջ Մարաց կոչի, վասն

այն և անուն քաղաքին: Ոչ զԱժդահակայ տունն միայն, այլ թուի ոմանց թէ և զքոյր իւր Տիգրանուհի՝ աստ ի սոյն ի սահմանքս բնակեցոց Հայկազնն այն Երուան- դեան, շինեալ աստանօր յիւր անուն և զՏիգրանա- կերտ աւան:

Հին պատմութիւն մեր կամ հին ժամանակք և դարք բնիկ ազգային պայազատութեան, այլ իմն նոր և մեծ շնորհ ընծայեն գաւառիս Նախճաւանու, և որ շուրջ ըզ- նովաւ հարաւակողման Երասխայ. մեծ տոհմ մի, կամ մանաւանդ մեծ իշխանութիւն և պաշտօնակալութիւն ժառանգողաց երկրին, այն է Մարդպետութիւնն կամ Մարդպետական իշխան և գունդ, յորմէ Մարդպետ ունիք. նոյն կոչեցեալ է և Հայր իշխան, և երբեմն զոյգ երկաքին եւս կոչմուք Հայր-Մարդպետ: Եւս գումն կարեւոր և մեծի իշխանութեանն՝ դարձեալ ի Հայկազնն յայն Տիգրան ի դէպ գայ ելանել, և ի նորս- գողն թագաւորութեանն Հայկազնեաց՝ ի Վաղարշակ- և է ի յետագայ յիշատակաց գուշակել, զի Հայկազնն ի բնակեցուցանելն աստանօր զսիկնայսն արքայաշուքս, զՏիգրանուհի գքոյր իւր և զԱնոյ՝ առաջինն կանանց Աժդահակայ, իբրև չքոյր քան զնոսա ազնուագոյն յաշ- խարհի իւրում, զեմամող նոցին կամ զկողմնակալ եր- կրին՝ ի շնորհս նոցին վերապատուեաց քան զքնաւս. և որպէս թագաւորին տունն և սասան՝ գերագոյն էր յԱ- րարատեան աշխարհի, այսպէս և գաւառս այս համա- րեցաւ Տիկնայց ստանն, և այսպէս կոչէր նա և յետ բարձման թագաւորութեան Արշակունեաց. զայս ինձ նշանակէ և վերոյգրեալ բանն այն Խորենացոյ (Ա, 1.) « Եւ զՈստանն անուանեալ կողմանցն այնոցիկ . . . » իբր թագաւորական զարմ: Հաւանօրէն ի նոցին զար- մից տիկնայցն, և յայտնապէս ի Մարացոցն՝ կացին կողմնակալք և տեալք երկրին և Ոստանին այնորիկ. և եթէ ոչ յաւուրց Հայկազնոյն Տիգրանայ, ստուգապէս ի յարդարման աշխարհիս՝ յաւուրս Վաղարշակայ, կոչէր գաւառն որ ի հարաւոյ Նախճաւանի և Երասխայ՝ Մալ- դաստան, և պաշտօն կողմնակալին Մարդպետութիւնն. որ էր նախնարար զգուշութիւն և պահպանութիւն կե- նաց և սեփական ստացուածոց թագուհւոյ, և երկրորդ՝ նորին իսկ թագաւորի զանձուցն. ի ճակ գալով այսմ, ըստ յետին ժամանակի Պարսից և Թուրքաց Արաբիկ իշխանութեան, որ խնամակալ և հայրագոյնէ էր բուն թագաւորի և տեառն աշխարհին և առ մերայինս կոչէր Հայր իշխան. և որպէս յայտնապէս ասի ի հին պատ- մութեան մահուան Մեծին Ներսիսի, « Մարդպետն՝ որ » թագաւորաճայր կոչէր ». և զի նմա հաւատացեալ էր թագուհին, ըստ արեւելեայ և հեթանոսական նա- խսնձու՝ պատշաճ համարէր լինել նմա ներքինի. և փո- խանակ այսպէս ասելոյ՝ զլուխ ներքինեացն (որ ինքնին իշխան էր գաւառին) Մարդպետ կոչէր, ոչ զփոսմ առ հեճուկս, եթէ առ պատիւ, կամ թէ ի հին ժամանակո զայն նշանակութիւն եւս առանձինն ունէր Մարդ կո- չումն ի լեզուիս, որպէս մանկամարդ կոչումն նորահար- սին: Վկայէ այսմ ստուգիւ և հեղինակ կամ աւանդող Զօրահանդիսի Հայոց, (եթէ Անանիա Շիրակունին իցէ և թէ այլ ոք). « Մարդպետականն, որ է Ներքին (կամ

«Ներքինի» պահապան ի վերայ թաղուհւոյն և դան-  
 » ձուցն » : Կրկնակի վկայէ դարձեալ իրացս և տեղւոյ՝  
 պատմահայր մեր (Խորեն. Բ, Է), տեղով վասն Վաղար-  
 շակայ նախահօր Արշակունեաց, եթէ, և և Ներքինիս  
 » հրամայէ ի նոյն ազգէ (Թուի Հայկազանց) խզել, և  
 » նահապետ նոցա զՀայր իշխանն, մասին՝ յԱտրպա-  
 » տականէ մինչեւ ցձուաշ և Նախահաւան » : յորոց միջ-  
 ցի է և Մարդաստան գաւառ : Եւ յառաջ քան զնոստ՝  
 Բուզանդ (Գ. ծԷ) ասէ ուրեք. « Հայր Մարդպետ, այր  
 » ներքինի » : Այլ քանզի թագուհիք ընդ թագաւորի  
 բնակէին և յրջէին՝ հարկ էր և խնամակալի նոցին յար-  
 քունիս դեգերել. և ահա այսպէս տեսնեմք ի պատմու-  
 թեան, մանաւանդ ի Գ դարու, յաւուրց Տրդատայ  
 ցՊապ. և ոչ այլապի միայն, այլ յիւր և կայուածք  
 Մարդպետին կամ Հայր իշխանի ի կողմանս Տարոնոյ և  
 Անգեղ տան . սակայն այդ ոչ խափանէ սեփական տե-  
 ղւոյ իշխանութեան նորին լինել գաւառիս՝ զորմէ խըն-  
 դիրս է . որ և յաճախ փոխանակ այլոյ անունն՝ ՄԱՐԿ-  
 ՊԵՏԱՊՈՒՆ կոչի, կամ հաւասարապէս վարին ՈՍՏԱՆ ա-  
 նուն և Նախահաւան : Ճշգրտագոյն եւս կամելով ասել,  
 ոչ այնքան Մարդպետին էր կայուած Ոստանն և տե-  
 ղին, որքան թագուհւոյ, այլ ի կալ մեալ նորա ընդ թա-  
 գաւորի՝ Թերեւս առ փոքր փոքր պահապան նորին  
 Մարդպետն ժառանգեաց զերկիրն :

Վերոյգրեալ բանք Խորենացոյ կարծեցուցանեն ի  
 զարմիցն Հայկայ կարգել Վաղարշակայ ներքինիս և  
 տալ նոցա զերկիրն՝ նշանակեալ ի պատմչէն . այլ նոյն  
 ինքն անդէն յետ այն բանի, խստովանելով « Թէ որ-  
 » պէս է և ուր սորա (Հայր իշխանին) իրք՝ անցին անյի-  
 » շատակելի, ես ոչ գիտեմ », յարէ անընդմէջ . « Բայց  
 » յետ կարգելոյ զտուն թագաւորին, երկրորդ թագա-  
 » ւորութեանն լինէր ի զաւակէ Աժդահակայ, որ այժմ  
 » Մուրադանդ կոչի . . . և Թողու ի վերայ նորա զամե-  
 » նայն շէն » որ ի գերութենէն Մարաց » : Երիցս և չո-  
 բիցս յիշէ պատմիչդ զայս իրս և զիրս Մարաց . և զի  
 վերագոյն եւս եցոյց ներքինեացն կամ Հայր իշխանի  
 տուեալ զկողմանս Նախահաւանի, որ և Մարացուոցն սահ-  
 մանք են, հաւանելի է եթէ և առ Վաղարշակաւ և առ  
 յաջորդքն Մարդպետն և երկրորդ թագաւորութեանն  
 նոյն էր, միանգամայն և տէր կողմանցս : Թոռնորդւոյն  
 Վաղարշակայ՝ խրոխտն Տիգրանայ սաի գերկրորդական  
 պատիւ թագաւորութեանն տալ քեռառն իւրում Մի-  
 հրդատայ Պոնտացոյ . այլ յոյժ ընդ երկբայութեամբ  
 են պատմութիւնք ժամանակին և դորժք Տիգրանայ և  
 Միհրդատայ : Եւ յաւուր և յարուն յայտ է զի Արգամ նա-  
 հապետ տուին Մուրացան՝ էր աւագագոյն նախարա-  
 րաց Հայոց առ բռնակալ թագաւորութեամբ Երուան-  
 դայ, որոյ օրինաւոր յաջորդ Արտաշէս Բ ստուգապէս  
 կարգեաց զնոյն լինել երկրորդ իւր, ի վեր քան զամե-  
 նայն իշխանս և նախարարս . այլ որդի նորա Արտաւազգ  
 յաշաղեալ՝ « յաւելու եւս հանել և զՆախահաւան, և  
 » ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գիւղս, յորում և ա  
 » պարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգու-

» Թիւն : Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոյն Արգա-  
 » մայ, ընդդիմանայ նմա պատերազմաւ . բայց յաղթեալ  
 » արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգա-  
 » մայ, հանդերձ հարրն և որք միանգամ երեւելիք էին  
 » յազգէ Մուրացան . և զրուէ յինքն զէնս և զամե-  
 » նայն իշխանութիւնս նոցա : Եւ ոչ որ ապրեաց ի նո-  
 » ցանէ, բայց միայն աննշանաւորք ոմանք և կրտսերք՝  
 » փախուցեալ առ Արտաշէս, ապրեցան ի գրան ար-  
 » ջունի » : Մինչեւ ց՛Ղ դար այս ամենայն շէնք և գիւղք  
 տակաւին Աւանք Մարաց կոչէին, որոց և անուանք  
 իսկ (զէթ ոմանց, Խորամ, Զուղա, Խոշակունիք) խափա-  
 րաձայնք՝ ստարք ի յստակութենէ հայկականիս լինի,  
 Թերեւս և ի գերութենէն Հրէից՝ այսպէս խրթնացեալ,  
 որք յոգնաթիւ բնակեալ էին աստ գաղթիւ և գերու-  
 թեամբ, մինչեւ երդս 16,000 ի Նախահաւանէ կրկին վա-  
 րեալ եհան Շապուհ ի կէս Գ դարու, եթէ չիցէ վրիպակ  
 ի Թիւս : Տիրան Բ եղբայր Արտաւազգայ՝ զորոյ զվերջինն  
 կանանց առեալ էր Երախնաւու Անձեացի, սմա ետ  
 զերկրորդական գահն . և յետ այնր մարդպետութիւնն՝  
 որով և երկրորդի թագաւորութեանն լինել՝ ոչ հաստա-  
 տուն մնայր յազգատուհմի միում, այլ ըստ հաճոյս թա-  
 գաւորաց այսմ և այնմ լինէր տուեալ, որպէս երբեմն՝  
 իշխանաց Անգեղ-տան . զոր օրինակ է տեսնել յա-  
 ճախ առ Բուզանդայ և առ Զնորայ . որք սովորաբար,  
 որպէս և Խորենացի, առանց յատուկ անուան՝ միայն  
 Հայր մարդպետն կոչեն զնոսին . սակաւ ուրեք և յա-  
 նուանէ, որպէս Գլակն կամ Գլակ 1, և Դրասսուա-  
 մատն 2 : Ի բառնալ թագաւորութեան Հայոց՝ յայտ է  
 թէ բարձաւ և Հայր իշխանութիւնն, եւս առաւել Ներ-  
 քինի մարդպետութիւնն, և երկիր իշխանութեան նոցին  
 մնաց ում և մնաց . և նա այնուհետեւ կոչէր Մարդպե-  
 տական իշխան, կամ լաւ եւս՝ գաւառացիս Մարդպե-  
 տունիք, և երբեմն նաեւ Մարդպետունիք . և այս-  
 պէս լինի, մինչեւ ցկէս ԺԱ դարու, կամ ցբարձունմ  
 Բագրատունեացն եւս թագաւորութեան :

Որպէս առ հեթանոս թագաւորք՝ այսպէս և առ քրիս-  
 տոնէիք՝ իշխանն Մարդպետական կամ Մարդպետու-  
 թեան ի դասս նախարարաց առաջին կամ մերձաւոր ա-  
 ռաշոյն կարգի միշտ . Ազաթանգեղոս ի 16 աւագ իշ-  
 խանս՝ որք զՍ. Գրիգոր տարան ի Կեսարիա ի ձեռնա-  
 դրութիւն, Գ. կարգէ զՄարդպետութեան իշխանն,  
 քանզի երկրորդն առաջինքն Անգեղ տանն և Բղեաշին  
 Աղձնեաց՝ յայնժամ մեծ և տանուտերական ունէին  
 պատիւ, իբրեւ հպատակ թագաւորք . իսկ յընկերոջս Ս.  
 Ներսիսի ի նոյն դէպս՝ անյետադաս բնաւից առաջին  
 կարգեալ է Մարդպետականն . ընդ հակառակն՝ Մես-  
 րովպ երէց՝ որ վեր ի վայր առնէ զպատմութիւն ժամա-  
 նակիս, 14 իշխանացն առաքելոց յԱրշակայ դեսպանու-  
 թեամբ առ Վաղէս՝ վերջին կարգէ « զՀայր Մարդպետն  
 » Մարդպետական տանն », Թերեւս ըստ առակին ըզ-  
 վերջինն առաջին համարելով . նոյն և ի Գահնամակին ի  
 Թիւ 170 բարձից՝ ԺԶ կարգեալ է զՄարդպետունին,  
 որ դարձեալ ընդ նախագահան գտանի . այլ ի Գահնա-

1 Բուզանդ, Ե. Գ. :

2 Նոյն, Ե. Զ. :



մակին Սահակայ բնաւ ոչ յիշի Մարդպետն, բայց եթէ զնա իմանայ վերագոյն ամենեցուն և քան դառաջինն (Սիւնեաց Տէր) առաջնագոյն կարգելով « Խլխանն Հա. » յոց և Մաղխազն »:


Իբրեւ պահպան արքունի գանձուց և աշխարհատիկ նոյն՝ հարկ էր Մարդպետական իշխանին և գունդ մեծ զօրաց ունել. և զայս յայտ առնէ նախ վերոյիշեալ հեղինակ ցուցակի Զօրաբաժնին, և ապա Ղազար, որ յա նուանէ յիշելով զզօրս նախարարաց և տոհմից ընդ Ս. Վարդանայ երթելոց յԱլլուանս ի պատերազմ ընդդէմ Պարսից, իբրեւ առանձինն իմն դաս զօրաց յաւելու, « և այլ գռանդք ի զօրացն Մարդպետական այրուձիոյն »: միանգամայն յայտ առնելով զի բազմութիւն այսր զընդի հեծեալագօրն էր. Նոյն ասէ և ի մեծի ճակատամարտին Աւարայրի, Վարդանայ՝ միջին և մեծի գնդին զբլխաւոր վարիչս կարգել ընդ Տեառնն Արծրունեաց, « և » զՄարդպետն Միհրշապուռի »: Դարձեալ նոյն պատմիչ ծանուցանէ « և զՊաճնոկ ի Մարդպետական զընդի »: ընդ այլոց ումանց՝ ի Վահանայ Մամիկոնենէ իբրեւ ինչչացի այր պատգամաւոր առաքեալս Զայս գունդ յետ բազում ժամանակաց յաւուրս Թագաւորութեան Բագրատունեաց ի կէս Ժ դարու՝ յանկարծոյն իմն յերեւան հանէ Ուռայեցի պատմիչն, ասելով, յամին 951 - 2 « զօրաժողով առնէ զօրապետն Հայոց զՄարգպե. » սուկան գռանդն՝ 45,000 արանց քաջաց, զատ յարքու. » նական զնդէն »: որով յայտ է իմանալ ոչ ըստ առաջնոյն զլոկ միոյ տոհմի կամ նախարարի գունդ, այլ զկէս մասն մի զօրաց Հայոց, յերկուս մեծ բաժինս եղելոց ըստ հրահանգաց և օրինաց այնր ժամանակի, որք շնն մեզ քալ ծանօթք, այլ Թուր գումարեալ ի զօրաբաժնէ ազատացն Հայոց կամ պաշտօնէից դշխոյին. քանզի ի հնուան կոչր այն և Սեպիական գունդ, փոխանակ Մարդպետական ասելոյ, որպէս է ուսանել ի մակսկուշութենէ եպիսկոպոսոցն: Սակաւուք յառաջ ի սկիզբն այնր դարու՝ (Ժ) հանգիստնայր քաջութեամբ Պէտրոզ Մարգպետունի ի նետահար հալածել զհրոսակս հետեւողացն Բուսփայ և զերծուցանել զհամազգիսն:

Դար մի եւս յետոյ ի վերջ կոյս Թագաւորութեան Բագրատունեաց, անորոշ իմն կամ անծանօթ մեզ զէպս ազգէ Գր. Մագիստրոս ի միում ի Թղթոցն՝ առ մտերիմն իւր Սարգիս վարդապետ. « Զհնչ յաւուրս յայտու » սիկ բովանդակ տանս Մարդպետական եղեալ գործ. » առնութիւնս »: Ընդ հուպ բարձմամբ Թագաւորութեան Հայոց՝ լռէ իսպառ և անուն նախապատիւ տոհմին և տանն Մարդպետական:

Միջակ դիրք երկրին ընդ Հայս և ընդ Պարսս, և հունք անցից կամ կամուրջ ընդ Երասխ գետ ի կողմանս գաւառիս, կարեւոր յարդարեցին զտեղին, և բարգաւաճ զքաղաքաւանն՝ վաճառաշահութեամբ, վասն որոյ և կէտ մի բռնաբարութեան եղեւ աշխարհակալաց և առաւել աշխարհակերաց, որպէս յետ վերոյիշեալն Շապհոյ՝ յէ դարու Հերակլ կայսր ի վրէժ քինու Պարսից՝ աւերեաց զքաղաքն և զսահմանսն, և յետ սակաւուց Արարացիք յառաջին մուտս իւրեանց ի Հայս, « յաւարի » առնուն զՄարս, զՊողթն, զՆախճաւան »: յայնց ժաւ

մանակաց հետէ քաղաքացեալ աւանին՝ եղեալ էր Ոստան Վասպուրականի, և ապա մի ի գլխաւոր կայից օստիկանաց կամ ամիրայից Արարացուց, և յաջորդաց նոցին տիրողաց աշխարհիս մերոյ. յ՛ԺԲ դարու Արարիկ առնանեալ իշխողաց Ատրպատականի, որոց գլխաւոր Եշտնոզ ամիրայ. յետ նոցա Թաթարաց նիստ, ապա բռնաբարեալ ի Թուրքմանաց, մինչեւ տիրեցին Պարոզ և Օսմանեանք, և յիրերաց կորզէին, զօրոց զկողմնակալս սմանս յիշեցուք ի տեղագրի քաղաքին:

178. Զմեծ պատիւ և զնախագահութիւն գաւառին հաւաստէ աներկբայ և եկեղեցականն դասակարգութիւն, յորում գրեթէ զառաջին գահ ունի Մարգպետականն եպիսկոպոս. և այս բազում իրօք հաստատեալ է. նախ, զի Ս. Պրիգորէ վկայի կարգեալ յառաջին բարձի ի ձախմէն աթոռ եպիսկոպոսին Ոստանի, որ է Մարդպետականն, վեհագոյն քան զինքն ունելով միայն զալակողմեան նախագահն, որ էր յայնժամ եպիսկոպոսն Հարթայ, իբրեւ աթոռակալ կաթողիկոսին. բայց յետոյ ի ժողովս՝ ինքն Մարդպետականն կարգի առաջին, և յոմանս մերձ առաջնոյն, որպէս է տեսնել ի Պատմութեան ժողովոց կամ ի Կանոնագիրս: Դարձեալ, յըսկիզբն է դարու՝ յընտրութեան Արարահամու կաթողիկոսի, յորժամ կամեցան Հայք անուանել զնա պատրիարք և կարգել ընդ նովաւ արքեպիսկոպոս և մետրապօլիտ, Մարդպետական եպիսկոպոսին ետուն զմետրապօլիտութիւն, նախապատիւ առնելով զնա քան զամենայն եպիսկոպոսունս Հայոց, որպէս էրն և ի սկզբանս. այլ ի կամել նորա ունել ընդ ձեռամբ եպիսկոպոսունս ոմանս, խիթացեալ ի փառասիրութենէ նորին և ի հերձուածոյ, Սիւնեաց եպիսկոպոսին շնորհեցին զայն պատիւ: Այսգունակ իմն պատուատիրութեամբ սխալէ Ուրբէլեանն Ստեփանոս, (թէ և այլք յառաջ քան զնա), համարել առ մեծաւ Ներսիսի և կամօք Արշակայ արքայի զայսպիսի տնօրէնութիւնս եղեալ, և մետրապօլիտս կարգել զեպիսկոպոսունս Սիւնեաց, Վրաց ? և զՄարդպետականն: — Յայտ է թէ ի բաւելի պաշտաման կամ Մարդպետական նախարարութեան՝ կառուցեալ և վերագահութիւն եպիսկոպոսի նորին, որ յայնմ հետէ յանուն Նախճաւանի կոչի, որպէս և յառաջն երբեմն՝ զոյգ « Ոստանին Նախճաւանի և Մարգ. » պետականի »: Ոչ միայն այսր գաւառի այլ և ի վերայ մերձակայիցն երեւի ունել վերապատուութիւն եպիսկոպոսն Ոստանի, զի ոչ յիշին եպիսկոպոսունք յանուն նոցին, այն զի և փոքրատարածք իսկ էին. և աներկբայապէս նոյն ինքն էր և վերատեսուչ Մարդատան գաւառի, որոյ միակ յիշեալ եպիսկոպոս է Երեմիա յաւուրս ժողովոյն Արտաշատու (յամի 480), յորում ոչ յիշի, այլ եպիսկոպոս յանուն Ոստանի կամ Մարդպետականի, և դա է կարգեալ է յԵղիշեայ՝ ի Թիւ 17 եպիսկոպոսաց, և Թ ի Ղազարայ: Զստ յերից ազգ կողմանց եպիսկոպոսի վիճակիս՝ միւս եւս էր ի հնուան, որպէս յիշեցաք վերագոյն, այն է Սեփական զնդին եպիսկոպոս: Արդ միով կամ միւսով յայսոցիկ կողմանց յիշեալք և ծանօթք մեզ սակաւ եպիսկոպոսունք Նախճաւան գաւառիս՝ են, այսօրիկ:



135. Երբիւ կաւ Ալուարակ Աբարէկից Ի Նախնարան.

- 368 Քաջաջ
- 480 Երեմիա
- 510 Ներսէս
- 553 Գրիգոր
- 570 Յովհաննէս
- 605 Թէոդորոս
- 633 Յովհաննէս
- 688 Թադէոս
- 768 Գէորգ
- 850 Սահակ, եղբայր Ապուսահակ նահատակի.
- 976 Բաբգէն
- 1175 Խաչիկ
- 1321 Զաքարիա<sup>1</sup>
- 1541 Աթանաս
- 1544 Կարապետ
- 1660 Առաքել Բոպիկ
- 1706 Յակոբ

Աթոռ Մարդպետական եպիսկոպոսին՝ էր ըստ արժանւոյն յՈստանին Նախնականի, այլ ի սկիզբն Ժ դարու փոխադրեալ էր անտի ի Համրոյրազան աւան Մարդաստան գաւառի, որպէս աւանդէ մեզ Թովմաս Արծրունի պատմիչ: Յետ կիսոյ դարուն հաստատեալ էր եպիսկոպոս ի Մազարդայ վանս, որ առ եզերն Երասխայ, այլ թերեւս անդ իսկ էր և աւանն Համրոյրազան, որ այլուստ անծանօթ է մեզ:

Յանուն գաւառիս կոչեցան և Արքեպիսկոպոսունք Նախիջեանի վերատեսուչքն հռովմէական Միաբանողաց, այլ ոչ է յայտ ստոյգ ժամանակ կալոյ նոցին ի Նախնական քաղաքի և բարձմանն անտի, զի ի ԺԵ — ԺԷ

դարս ծանօթ եպիսկոպոսունք նոցին նստէին յԱպարաներ, որպէս և աւանդեցաք զնոցանէ ուրոյն դրուագաբանի:

Թէպէտ և անդստին ի սկզբանէ ը դարու (705) երկիրն Նախնական գրաւեցաւ ի Սիւնեաց, այլ որպէս տեսաք, ըստ եկեղեցական տեսութեան ունէր աւանձին եպիսկոպոս, և չէր հարկատու աթոռոյ մետրապօլիտին, վասն որոյ և ի ցուցակի հասոյց սորին՝ ոչ գտանին անուանք գիւղորայից գաւառիս, և ոչ այլուր. և ըստ նախակարգեալ սահմանադրութեան՝ չէ ինչ ընդարձակ գաւառ և ոչ բազմաթիւ գեօղք ի նմին, (և այս նա և սակա ամայութեան երկրին), այլ իբրեւ 30 իւ շափ աւելի կամ պակաս: Արրահամ կաթողիկոս Գ յառաջին կէս ԺԷ դարու յիշէ ուրեք « 82 կտոր գեօղս » Նախնականի, այլ հաւանօրէն պարագրելով և զձառնակ գաւառ ի նրմին, որպէս և այժմ է, և ըստ այսմ 100 իւ շափ լինին գեօղքն. այլ զի մեր խնդիր զբուն վիճակէ կամ զգաւառէ Նախնականի է, զգաւառն ի սահմանագրեալ վայրիդ նշանակեցուք. նախ զքաղաքէն ճառելով, և զգեօղիցն որ երկուստեք գետոյ նորին, յետոյ (Գ) զինատեղեացն, որ զեզերք Երասխայ, ուր երբեմն հին և մեծ աւանքն էին Խրամ, Շամբ, Տամբատ, Դաժգոյնք, Մազարդ, ապա Աստապատ, Շահկերտ, և այլն: Բայց արժան համարեցայ յարել և յաւելուլ ի միջի սոցին (Բ) զՌՈՔ վիճակ փոքրիկ, որ ի հարաւոյ պարարատեանն Շարբրոյ, որում և ըստ բնական դրից գիպողազոյն էր զսլ մասն. այլ ստուգիւ ոչ գիտեմ սորմ էր համարեալ ի հնումն՝ եթէ երկրոցն վերջին գաւառացոյ Սիւնեաց, եթէ արդեօք և գաւառի միոյ վաստուրականի:

### Ա. Ն Ա Խ Ճ Ա Ի Ա Ն

179. Երիւք մղոնօք յարեւելից հիւսիսոյ ափանց Երասխայ և կիսով շափ նորին յարեւմտից իւրոյ գետոյն (որ կոչի և Քօշայ — չայ յանուն Քօշայ — տիգրս գեղի), ընդ 39<sup>0</sup>, 12', 27" աստիճանաւ լայնութեան, և 43<sup>0</sup>, 3', 31" միջօրէին Պարիզու, յ'968՝ բարձու յերեսաց ծովու, իբր 10 կամ 11 բնամղոն շուրջ տարածութեամբ, կայ քաղաքն Նախնական կամ Նախջուան, եւս և Նախնուան գրեալ, և սխալակ կարծեօք յեղեալ ի Նախիջեան, որպէս յածի սովորաբար ի բերանս ամենեցուն այլ և ի գիրս. ի մերձաւորութենէ ձայնին ռամկօրէն ստուգարանելով, ոչ գիտեմ ո՞ր նախ՝ ի միջին և ի յետին դարս, և անտի ոչ միայն յազգի մերում ծաւալեալ և կարծեցեալ և հաւատացեալ եւս, այլ և առօտարս աւանդեալ, և ռմանց ընդունելի՝ այլոց ծիծաղելի եղեալ, որպէս և արժանն արդ պահանջէ ստուգասիրաց: Աւանդութիւնն՝

ըստ Թեքման ձայնին, ասէ Նախ — իջեան լինել նահապետին Նոյի՝ յելանելն ի տապանէն. որպէս պերճաբար գրի ի յիշատակարանի ուրեք յամի 1669. « ի նախահան » գիտ և ի նահապետակերտն յորջոյնեալ Նախիջեան » կոչմունսն » . աներկրայաբար համարձակագրէ և Ղազար Ձահկեցի (յետոյ կաթողիկոս), ի 1539 ամի աշխարհի (?) չինել Նոյի զՆախիջեան. և ճոխագոյն եւս Նախնան. « Յետ համատարած ջրհեղեղին նախկին քաղաքն » Հայոց եղև Նախնուան, զի եղև նախկին իջեան Նոյ » յեայ և որդւոց նորա, և կամ նախկին աւան եղև » չինեալ յորդւոցն Նոյի. և զի անտի իջին ի շաւել ընդ » այլ մասունս աշխարհի. և անդ ասի լինել գերեզմանն » Նոյի » . և մեղադրէ զօսմանեան հեղինակ Տիեզերագրութեան որ (ուղղագոյն եւս) Նազդի — ճիման (Նկար կամ Մաղիկ տիեզերաց) ստուգարանէր<sup>2</sup>: Մաղրագոյն


<sup>1</sup> Ծանօթ է սա իբր աղբակիսկոպոս Արտազու կամ Ս. Թադէի, այլ ի Թուզթու Յովհ. ին Պապի կոչի և յանուն Նախնականի:

<sup>2</sup> « Ճիւղանիւմայն 392 երեսն (ասէ Նախնան) կոչէ զնա Նազդի — ճիման, ոչ գիտելով զստուգարանութիւն Նախնուան ա-

եւս է ստուգարանութիւնն զոր Հ. Վիլլոզ քարոզիչ Յիսուսեան ասէ լուեալ ի Հայոց տեղւոյն, իբրու Նախ և չռան, որպէս թէ Նոյի շուանաւ չափեալ զյատակատեղին և կառուցեալ զքաղաքն <sup>1</sup>։ — Եթէ հնազոյն գրիչք մեր այսպէս գրէին զանուն քաղաքին կամ զգաւառիս՝ մարթ էր խնդրել զպատճառսն, այլ նոքա և ընտիրքն, Խորենացի և այլք, գրեալ է ց'ԺԲ և ց'ԺԳ դար գրեն միշտ Նախճաւան, և յայտ է թէ կցորդ բառն է աւան, որպէս բազմաց այլոց շինից աշխարհիս մերոյ, որով յայտնի ևս չափն, լինել միջակ ընդ գեօղ և ընդ քաղաք. իսկ առաջին և բուն մասն անուանն է Նախիճ, որով իմանի Նախճոյ-աւան զու տեղւոյն. իսկ ո՞ կամ զհնչ իցէ Նախիճն, հարկ է ի գիւանս Հայկազանց քրննել և յաւուրս Տիգրանայ Ա ելանել, որ ետն զայն հանդերձ այլովք՝ զարմից Աժդահակայ գերեւոց. թէպէտ պատմութիւնն իցէ ամենեւիմբ ստոյգ, ցուցանէ զհնու-

թիւն շինին վեց դարուք յառաջ քան զԹուական Փրրկչին. և այս եւս բաւական հնութիւն է հնասիրաց մերոց. առանց իսկ յաւակնելոյ ի դարս Նրհեղեղի, և ի կայս Նոյի յեւան ի տապանէն. որոյ եթէ էր շինեալ դադար, ըստ հին աւանդութեան, (զոր և Յովսեպոսն երբայցի յիշէ, ասելով այնպէս աւանդել Հայոց և Αποβατήριον (արովաղիրիոն) կոչել, այսինքն է Իշեւան), հարկ էր խնդրել զտեղին ի ստորոտս ուրեք տապանակիր լերինն, որ եթէ Մասիս էր, ասելի քան զ40 մղոն հեռի է անտի քաղաքս՝ զորմէ խնդիրս է, թէպէտ քաղ և գեղեցիկ նշմարի աստի լեռանն Արարատայ։ — Արդ թողեալ զընդունայն և զաղուական խօսսն, ի հաւանականոն յառեցուք և ի գրաւորս։

Առաջին յիշատակ և գրուած զՆախճաւանէ գտանի առ յոյն աշխարհագրին Պտղոմեայ, յառաջին կէս Բ դարու. որ զարմանալի իմն հանդիպութեամբ զոյգ է ժա-



136. Հին դղեակ ի Նախճաւան.

մանակին՝ յորում յետ վեց կամ եօթն դարուց աւանդութեանն, զառաջինն առ Բ Արտաշիսիս յերեւան զայ տեղիս և ի պատմութեան մերում. Պտղոմէոս Νάξουάνα (Նաքսուանա) գրէ զանունն, ոչ կարելով յունին ողջ բերել զհայկականն. այլ սակայն յայտ է և այդու՝ զի ոչ Նախիջեւան ձայնի է փոխադարձութիւնն, զոր ի գէպ էր գրել յաւելուածով այլոց եւս տառից, այլ մերձաւոր է հայկականս Նախճաւանի և պարսիկ և արաբացի կոչմանց, առ որս վաղ ծանօթացեալ էր տեղին, և գէթ յ'Թ դարէ գտանի նշանակեալ ի զիրս նոցին. Արարացիքդ գրեն յաճախ Նէշուի կամ Նէշիվի, մերձա-

ւոր թուրք նազը ձայնի, յորմէ ստուգարանէր աշխարհագիր նոցին, Նազըյի ձիւան, վասն գեղեցկութեանն. այլ գրեն եւս Նազձեփան Պարսք և Թուրքք՝ մերձաւորագոյն հայկականիս՝ Նախճեփան։

Առաջին յիշատակ Նախճաւանի՝ զոր ասացաք առ Բ Արտաշիսիս՝ յելս կոյս Ա դարու, էր գերծումն նորին այսր, ի ձեռն դայեկին իւրոյ Արաքսին Սմբատայ Բազրատունւոյ, որ « յասպատակէ թշնամւոյն և հինիցն Ե » բուանդայ երթայ գետեղի ի Նախճաւան աւանի յՈստանին վասպուրականի »։ Ըստ թովմ. Արծրունւոյ, յորմէ երեւի զի և յայնժամ՝ որպէս յետոյ՝ ունէր ա-

<sup>1</sup> նուան, թէ և յիբուի ծաղիկն է ամենայն աշխարհի. բայց այլազգէք ըստ լեզուի իւրեանց ստուգարանն զքաղում բառս, զի բանի մի ուրիշի՝ Կլարացին ։

1 Les habitans tiennent que le patriarche Noé dès qu'il fût descendu du mont Ararat après le déluge, en désigna lui-même le plan avec le cordeau, et la bâtit incon-

tinant après Erivan; ce qui lui fit donner le nom de Nakhitchuan, composé de deux mots arméniens, de tchuan, qui veut dire corde, et de nak qui signifie premier, pour marquer qu'après Erivan c'était la première ville du monde renouvelé. — VOYAGE D'UN MISSIONNAIRE. p. 192.

ւանն ամրոց. և դարձեալ զի բնիկ տերանց կամ տոհմին Վասպուրականի էր այն Ոստան<sup>1</sup>, որպէս միւս Ոստանն որ ի հարաւոյ ծովուն Վանայ՝ Ռշտունեաց կամ տերանց Արծրունեաց: Յիշեցաք ի վեր անդր զԱրտաւազդայ յինքն հանել զտեղին ի ձեռաց Մարացւոյն Արգամայ. և զի անհետ եղև զարմ սորա, Մարդպետքն օտարս. տոհմիկք ժառանգեցին զայն, մինչեւ յետ հարուածոց Շապհոյ և գերութեան բնակչացն՝ էանց մնաց ի ձեռս տերանց Վասպուրականի, որոյ և գաւառ մի համարեցաւ: Անդ էր ի կէս Ե դարու տէրն Արծրունեաց Սահակ՝ ընդ համանուանն Բագրատունւոյ, ուստի և զըրեաց առ Մովսէս Խորենացի խնդրելով ի նմանէ ըզպատմութիւն Պատկերի Տիրամօրն որ ի Հոգեաց վանս: Յելս կոյս Ձ դարու իշխանք ոմանք Հայոց՝ ապստամբութիւն խորհեցեալ յերկոցուն ինքնակալացն՝ Յունաց և Պարսից, եկին առ վայր մի ի Նախճաւան քաղաք. ապա քակտեալք ի միմեանց՝ մի ի նոցանէ՝ Ազատ Խորխուրունի՝ դարձեալ եկեալ այսր ապաստանեցաւ ի Պարսիկս (յամի 601). յայտ ուրեմն զի արդէն ամուր էր տեղին և նիստ կողմնակալի կամ բերդապահի Պարսից, որոց անշուշտ և ըստ դէնի իւրեանց յինեալ էր անդ տրուչանս. և ի սակս երկոցուն իսկ այսոցիկ իրաց՝ Հերակլ կայսր ի խաղալ իւրում ի վերայ Պարսից՝ աւերեաց ընդ այլսն և զՆախճաւան. այլ կամ ոչ իսպառ, և կամ վաղվաղակի նորոգեցաւ. զի յետ ոչ բազում ամաց ի սկիզբն արչաւանաց Արարացւոց՝ Թէոդորոս Ռշտունի եկն այսր, արգելուլ զանցս նոցա, որպէս և արարն. այլ նոցա ընդ այլ կողմն սպրդեալ և ասպատակեալ ի վերին սահման աշխարհիս՝ դարձան պաշարել զբերդն (յամի 643-4). «բայց սակայն ոչ կարացին » առնուլ զնա. (այլ) առին զբերդն Խրամայ, և սատա » կէին զնոսս սրով. զկանայս և զմանկունս գերի վարե » ցին »<sup>2</sup>: Թէպէտ այլ ոմն ի մերոց պատմչաց (Ղեւոնդ) համարի եթէ առին նոքա « ի գերութիւն զաւանս Մա » րաց և զգաւառն Գողթն և զԴաստակերտն Նախշաւա » նա »: Նոյն և յետ իբր տասն ամաց կամ աւելի, ասէ դարձեալ առաջ մի ասպատակի նոցա. « հասեալ ընդ » կողմն Վասպուրական աշխարհիս, առին զաւանս և » զամրոցս որ մինչեւ ի Նախճաւան քաղաք ». այլ Թուֆ յետ և յառաջ դասել զբերդսին դէպն. քանզի ստուգիւ յամի 654 անկեալ էր Նախճաւան ի բուն իսմայելացւոց, և ի գարնայնի միւսոյ տարւոյն՝ Մարտիանոս զօրավար Յունաց եկն պաշարել զբերդն և Թափել ի նոցանէ, այլ պարտեալ ի պատերազմին « փախտական » շքաւ և անկաւ ի վիրս »: Յայնմ հետէ եղև Նախճա-

ւան մի ի զլիւար և ամուր նստոցաց մահմէտական իշխողաց երկրիս մերոյ, որք փոխանակեցին զՊարսս. և յետ կիսոյ դարու, այն է, յամի 706 զգլխին ի նմա գործեցին գործ և զմի ի մեծագոյն հարուածոց ազգիս և տոհմից մերոցս նախնեաց, ի վրէժխնդրութիւն կուռին Վարդանակերտի, յորում հարին զնոսս Հայք նեղեալք ի հարստահարութենէ նոցին (703). յայս սակս եկեալ Մանվետ ոստիկան՝ եհար նախ զբանակն Յունաց ի Գերաշպետ գեղջ Վանանայ, և պատուէր առաքեաց առ կեսակ հրամանատարն՝ որ « ի կողմանս Նախճաւան քա » ղաքի, կոչել առ ինքն զնախարարս Հայոց, նոցին հե » ծելովք, իրեւ պատճառանօք եթէ անցուցանել ի հա » մարու արջունի, և առնուլ հասք և դառնալ: Եւ նոքա » ըստ օրինի պարզամտութեան իւրեանց՝ հաւատարիմ » համարեալ զննգութիւն զաղտասոյր որսոզացն, » վաղվաղակի անդր հասանէին. իրեւ ժողովեցան ան » դր, հրամայեցին յերկուս բաժանել զնոսս. զմանս » (800 ոգիս) հաւաքեցին յեկեղեցին Նախճաւանու, և » զկէսն (400 ոգի) յուղարկեցին յաւանն ի Խրամ, ար » հանէին յեկեղեցի նորա, կարգեալ ի վերայ պահա » պանս . . . հանին արտաքս զազատատունս յարգելա » նէն. և զորս ի սրբարանն արգելեալ էին՝ հրակէզ ա » րարին. և տոչորէին ի յարկսն աստուածային խորա » նին »<sup>3</sup>: Ի յիշատակ անյիշելի շարեացն՝ պատմիչք Արարաց՝ Ամ այրուակ կամ հրդեհի կոչն զտարին, յորում զայսպիսի կատարեցին եղևոն. ապա և զազատորեարն՝ նովին նենգութեամբ կապուտ կողպուտ արարեալ յըն » յից, սրով և կախաղանաւ սպառեցին, զմանկունս տղայս միայն ապրեցուցեալ, յորոց և Գողթնացին Վահան: Յետ այսր սպառուածի՝ Նախճաւան՝ սահմանօքն հան » դերձ գրեցաւ ի համար Սիւնեաց, որպէս և Գողթն՝ յետ նահատակութեան Վահանայ: — Այսպիսի իմն կսկծալի դէպք, այլ յանձին միոյ մանկան, եղեն աստ և 100 ամաւ զկնի կատարման Ս. Վահանայ, յամի 834. « Բաղիտիսի ոմն ամիրայ . . . ի Նախճաւան քաղաք, » անդ ըմբռնեալ մանուկ մի Յովիման անուն. . . սակս » հաւատոցն որ ի Քրիստոս շարաշար տանջեալ նահա » տակի ի սուրբ քառասներորդսն, մերձ յօր սրբոյ Պա » սեբին. որոյ նշխարքն լուսաճաճանչ փայլմամբ զԹըշ » նամիսն հիացուցանէր. զոր տեսեալ նոցա՝ անհետեցին » ի գիշերի. և ոչ ոք զիտաց զնա ի քրիստոնէից. պօս » կողին իւրում միայն մնայ յայտնութեան »: Այս ըստ Մովսիսի Կաղանկատացւոյ. բայց ոչ միայն մարմինն, այլ և մանրամասն դէպք իրացս ցարդ ոչ յայտնեցան յայլ » մէ պատմչէ, թէ և յիշատակ նահատակին կարգեալ է


1 Վկայն և արաքացի պատմիչք եթէ սա էր զլիւար քաղաք Վասպուրականի:  
 2 Այս ամենայն յիշատակք ըստ Սեբեոսի պատմութեան:  
 3 Ձոյս Ղեւոնդ պատմիչ. բայց ողորմագին եւս նկարագրէ նեղիակ բանի Նախճաւան Ս. Վահանոյ Գողթնեցւոյ: « Անդ » սպա Նոր որդեծնաց զուրբ աղիսն այրէր. և ի վերուստ ձեղըւա » նէն անկանէր կրակն և մանկանցն ի հանդերձս վառէր հուրն. » հարքն ի բաց կտրէին. զի առ նոցա ողորմանութիւնն՝ զիւ » րեանցն ոչ յիշէին, և զոյգ այրէին առհասարակ ամենեքեան . . . » Բազմամտաբար հրոյն պիտիիկ ի նիւթական մարդկան ձե » րաց բարձրացեալ, հրդեհակէզ եղեալ առաստաղակալ փայտա-

» կերան՝ այրեցեալ լինէր. հրդեհի մուրն ի վերուստ հասեալ ան » դերձ մախառն հրոյն, հեղձամղձուկ դառն պատուհասիւ ըզ » վախճան մահու անելով ի վերայ նոցա ամենեքեան, ժամկեաց » զբազմութիւնն զայն՝ անօգնական ի վերուստ: Եւ նոցա անգա » դար զուարանութիւնն ընդ սպառել ողորմ զառարեաց: . . . » Արդ ողորմ և զմերս, սուրբք Աստուծոյ, որ ասէիք, Մի առա » քեր զիս առ ժողովուրդսն. զի քոյգ ընդ զբերդմանական վայրք » փակեցաւ, և աչք քա ազբերանան արաստուղք վասն մեր: . . » Արաստուղք բազմաց մի հոգար, Երեմիա, որ զաշտ ազբեր » անգրէիք. ի մեր աշխարհս իսկ ժողովան արաստուղաց ազբերք: » — Սովինըք հայկականը. Նաս. ԺԳ:



ի Յայմաուուրու: Յետ մանկասպան ամիրային՝ սակաւ ամօք զկնի ամիրայ քաղաքին էր իրրահիմ անուն ի կէս Թ դարու, առ Բուդայիւ. և յայտ է թէ և այլք այսպէս յաջորդէին զիրեար: Բայց յիւս կոյս այնր դարու ի կանգնել թագաւորութեան Բագրատունեաց՝ նուաճեալ էր և Նախճաւան ընդ ձեռամբ նոցին. որպէս զի Սմբատ Ա պարզեւեաց զայն համանունան իւրում Սիտական իշխանի, որ « մտերմական ծառայութեամբ կատարէր գրուոր » ուղտասահարկութիւն նորա »: Իսկ գահասէրն Գագիկ Արծրունի « աղերսահայց յարքայէ Սմկատայ լեալ, » առ ինքն գթազաքն Նախջուան խոկայր դարձուցանել, » իբր թէ ի հաւու և ի հօրէ նոցունց իսկ տան և ազգի » պատշաճեալ և նուաճեալ ունէր զնա, և զրկութիւն » իւր գորտում քաղաքին առ յիւրմէ՝ վարկանէր: Իսկ » արքայ . . . ոչ կամեցաւ զձեռագիրն իւր ի ձեռաց իւր խանին (Սմկատայ) յափշտակել. և ոչ զընծայեալսն » նմա մեծարանս՝ յանարգանս արհամարհանաց դար-

անք բազմութիւն քրիստոնէից և համարձակութիւն, մինչեւ 800! եկեղեցիս ասել ոմանց լինել ի նմա ի Ժ, և ԺԱ դարս: Զայնու ժամանակաւ ի կոնգակի միում Մաղարդայ վանաց գրեւոյ ի Խաչկայ կաթողիկոսէ, յամի 976, կոչի ի թեմս նորա « առաջին հոյակապ և հոչա » կաւոր Մայրաքաղաքն Նախջուան » 3. զոր յետ սակաւուց յիշէ և Սարգիս կաթողիկոս յիւրում կոնգակի իրբու վիճակ մետրապօլտին Սիւնեաց. և ի յերկուս բաժանել աթոռոյն, Նախճաւան ընդ վայոց ձորոյ և ճահկոյ մնաց վիճակ աթոռակալին Նորավանից յԺԲ — ԺԳ դարս: — Աստանօր յետ առման Անուոյ զօրաժողով արար Ալի — Արալան յամի 1068, զօրաց ամենայն ամիրայից և իշխանաց նուաճելոց, և խաղաց նոքր ի կողմանս Վրաց: Ի սկիզբն ԺԲ դարու Երախարախ ռմն էր իշխող Նախճաւանի, յորմէ էառ Ղըրասէտտին որդի Մէլիք շահի յամի 1107. սորա որդին Մէլիք Թօղթաչ հալածեցաւ սնտի յասպատակաց Խաղրաց յամի 1131: Ասորք, այսինքն առ Սէլջուկեան սուլտանօք, սակ հարկի Նախճաւան գաւառի ի գանձ արքունի՝ էր 115,000 դենար սակի, ըստ արարացի պատմչաց. իսկ յառաջ մինչ գեա Վասպուրականի մայրաքաղաք էր, նահանգն այն վճարէր յարքունիս Ամիրապետաց 4,000,000 դրամ (տիրակ) ըստ նոցին հին պատմչաց: — Յետ այնորիկ կողմնակալն Ատրպատականի, կամ առանձին մեծ կուսակաւք նստէին ի Նախճաւան, յորս մեծագոր և առնունի եղև Ելտկոնզ Ա ի կէս ԺԲ դարու որ տիրեացն և Փանձակայ և այլոց կողմանց. և զի թագաւորեցոյց Պարսից զԱլլան շահ՝ կոչեցաւ ինքն Արարկի (Թագաւորահայր կամ Հայրազուխ): յորմէ և յաջորդք նորա նոյնպէս անուանեցան, և ինքն համարէր հազարապետ ամենայն թագաւորութեանն Պարսից. նուաճեաց նա և զայլ կողմանս Սիւնեաց, յետ բարձման թագաւորութեանն Բաղաց, Յաջորդ նորա և որդի Փահլաւան (1173) մարդասիրեաց առ Ելիկում որդի Լիպարտի Օրբելեան, և ետ նմա ըստ խնդրոյ նորա զԵրնջակ և զՃահուկ գաւառս և զՔարապարսն ի Նախճաւանի 4. ի քաղաքի աստ սնու և որդի սորա Լիպարտի, զոր ճարտարութեամբ գողացան Զարարեանք: Հաւանօրէն մինչև ցաղխարհակալութիւն Թաթարաց՝ մնաց Նախճաւան ի ձեռս Ելտկոնցեան Աթաբէկից, որոց դաստակերտք և զլիաւոր շինուածք աղիւսակերտք՝ ցարդ մնան կիսաւերք կիսականգունք, որպէս տեսցի ի ստորեւը: Սուղ յառաջ քան զտիրապետել Թաթարացն՝ փախուցեալ ի նոցանէ Ճէրաշտտին Խորազմ Շահ, արար և աստ աւերս, և յայնժամ թուին քանդեալք յուրվք յեկեղեցեացն, զորս մասամբ յետ սակաւուց վերականգնեաց Ռարսն Արա Ստորի 5, համարձակութիւն մեծ ունելով առ նոսա: — Զայսու ժամանակաւ յամի 1254 Ռիչարդիչ քարոզիչ զեպան՝ էանց ընդ քաղաքս այս, և սա է որ ասէր երբեմն 800 եկեղեցեաց եղեալ ի նմին, իսկ յայնժամ երկու միայն. եզրտ նա անդ զայլ ոմն Քարոզիչ Գոմինի-



137. Գերեզման Նոյի!

ն ձուցանել: Ընդ որ յաւէտ իմն իշխանին Գագկայ ո գժգմեալ դժոժութեամբ շարահաւակ առ արքայ լինէր 1 ո, և ի ձեռն Յուսիպ ինքեան թագ կապեալ, կամաւ կամ ակամայ շարի և սպանման թագաւորին Հայոց լինէր պատճառ: — Սակայն ոչ ընդ երկար մնաց քաղաքն ընդ ձեռամբ իշխանացն Սիւնեաց. զի յետ նա հատակութեան թագաւորին՝ տեսանեմք զՆարր փոխանորդ Յուսիպ նստեալ ի քաղաքին, ուր նոքա իրաւունս ի նմանէ խնդրէին վասն ժառանգութեան բաժնի իւրեանց վիճելով ընդ միմեանս 2: Եւ այսպէս թէպէտ և համարեալ ըստ Հայոց մասն հնոյ աշխարհին Սիւնեաց, այլ բունարարողաց երկրիս մերոյ այլազգեաց եղեալ էր աթոռ կուսակալի, թէ և ոչ միշտ նստէին անդ, և էր




1 Յովհաննէս կաթողիկոս:  
2 Սահեփ Օրբելեան, ԼԸ:  
3 Սահեփ Օրբել. ՄԵ:

4 Սահեփ Օրբել. ՀԱ:  
5 Ըստ Կիրակոսի (ԼԼ) « երկուգո՞ծ և աստուածապաշտ, կար տեսանեալ արքային նոցա, որ Խաղանն կոչէին »:

կեան (Հ. Բեռնարտ կատարան): Ի վերջ կոյս ԺԳ դա-  
 բու ի շիոթել պետութեան Թաթարաց բարձաձգու-  
 թեամբ զանիցն, Նառուզ որդի Ղազան զանի՝ ընդ  
 այլս ետ կողոպտել և « զՆախնուանու եկեղեցիս, (ուր) և  
 » գերեցին զբահանայս, և բազում շարչարանս՝ ածին ի  
 » վերայ. քարեցին զդրոնս քաւարանացն, ընկեցին և  
 » զսեղաննս. բայց մեծ գլխաւորքն ոչ թողացուցին քա-  
 » կել զեկեղեցիսն, ակն ածեալ ի Վրաց զօրացն. կո-  
 » ղոպտեցին և զվաներն որ ի գաւաւին Նախնաւա-  
 » նու »<sup>1</sup>. Բազում անգամ և յետ այնր կրեաց քաղաքն  
 աւերս. որպէս ի Թաթարաց Ազախու յառաջ քան  
 զգալուստ Լէնկթիմուրի, ի վրէժ Ահմէտ սուլտանի ճէ-  
 լայիրեան, որ անարգեալն էր զդեսպան Թօխթամիշ  
 զանի կամ թագաւորի նոցա. և նա առաքեաց զճանի-  
 պէկ զօրավար. որ ասպատակ սվուեաց ի Նախնաւան և  
 յամենայն երկիրն Սիւնեաց: Սոն ինչ մեկնեալ նոցա  
 եհաս Լէնկթիմուր հրոսօք իւրովք, և ապա անցեալ ընդ  
 Պարսս՝ և ընդ Ատրպատական, առաքեաց ի սահմանս  
 Նախնաւանի (1386) զԷլիաս Խօձայ, հետամուտ լինել  
 ճէլայիրեան սուլտանին Ահմէտի, որ և մարտ տուեալ  
 ի կողմանս Աղահանիցն՝ խոյս ետ. այլ ի քաղաքին բա-

զում արինհեղութիւնք և հրկիզութիւնք եղեն, ընդ որս  
 և արքունի ապարանքն Չիա - էլ - միշը՝ այրեցան առ  
 վրիժուց ուրումն զօրավարի անարգելոյ ի քաղաքապե-  
 տէն, և 15 հոգիք հեղձամիձուկք եղեն ի պալատանն:  
 Ընդ այսոցիկ արտաքին վրոյումանց ժամանակին՝ էին  
 և ներքին շիոթք ազգայինք ի Նախնաւան, ուր հաստա-  
 տեալ էր յայնժամ եպիսկոպոսական աթոռ Միաբանո-  
 ղացն, որով և վէճք նոցա ընդ անմիաբանն. և ի հակա-  
 ոակութեան անդ, ասէ Գր. Տաթեացի, պարագլուխ  
 միոյ կողման դաւեալ միւսոյն զԻսաւրիժ երէց քաղաքիս  
 ի մահ, այլ որպէսն ոչ է ինձ յայտ: — Յողջոյն ԺԵ դարու  
 ի հակառակ իշխանութեան դարմից Թիմուրի և Խոյա-  
 դրօջ Թուրքմանաց՝ ոչ գտանեմ յիշատակ ինչ զքաղա-  
 քիս և զվիճակին. այլ ի վերջ դարուն յամի 1499 կամ  
 1500, Շահ Խախայէշնորոգոյ թագաւորութեան Պարսից՝  
 ի դաշտի աստ Նախնաւանու եհար զԷլիսու շահ Թուր-  
 Ուզուն Հասանայ: Իսկ ի յաջորդ ԺԶ դարու, որպէս և  
 յետ այնր՝ ի հաստատել և զօրանալ կրկին պետու-  
 թեանց՝ Պարսից և Օսմանեանց, ընդ այլոց քաղաքաց  
 բազում անգամ և Նախնաւան կէտ կուուոյ և աւերա-  
 նաց լինէր. որպէս ի կէս դարուն (1554) յարչաւանս



138. Գերեզման որդոց Նոյի!

սուլտան Սիւլէյմանի, որ գրեթէ անապատացոյց ըզ-  
 քաղաքն և զսահմանս նորին հնգօրեայ տարածու-  
 թեամբ. որպէս և ազդու համառօտութեամբ ճշգրտա-  
 բանէ մի ոմն ի մերոց ժամանակակից ազգայնոց. « Հա-  
 » յոց թվին ՌԲ (1553-4) Խօնդքարն երեկ ի Նախ-  
 » յուանն. այրեաց, քակեաց, հրձիգ աշար »: Եւ ինքն  
 իսկ սուլտանն գրէր առ Հենրիկ Բ թագաւոր Փոան-  
 կաց, եթէ Շահն « ելիք առաջի յաղթական բանակաց  
 » մերոց զգահ իւր (ի Նախնաւանի) և զապարանս, որք  
 » յայրեաց յաւեր դարձան, մինչեւ չմնալ հետոց անգամ.  
 » քանզի զամենայն շէն բնակութեան քանդեցաք և  
 » հրկեզ արարաք շուրջ զՆախնաւանաւ, որոց և նշմարք  
 » անգամ ոչ երեւեցին »<sup>2</sup>. Այլ դիպան դիրք տեղոյն

վան անցից ճանապարհի և վաճառականութեան, փու-  
 թով վերականգնեցին զքաղաքն, որպէս զի և յետ ոչ  
 բազում ամաց՝ եւրոպէացի վաճառականք իրբու մեծ  
 շահաստան մի յիշեն զայն. զոր օրինակ վենետկեցի պա-  
 գամաւորն Ալեսանուոյի, յամի 1571, Մասինուան (Mas-  
 sinuan) գրելով զանուն տեղոյն, պատմէ զվաճառա-  
 կանաց ոմանց անդ կողոպտումն ընչից. և յայտնագոյն  
 եւս Նիշարի անգղիացի յամի 1581 (5 դեկտ.) եկեալ  
 այսր, առատացեալ տէ գտեղին՝ համբարօք: Եւ որպէս  
 օտարազգի եւրոպէացի վաճառականք դային այսր, նոյն  
 և աստի մերազգիք առ օտարս զնային յԵւրոպա, հան-  
 գոյն Չուղայեցոց<sup>3</sup>: — Բայց ընդ հուպ ի վերայ հասին  
 աւերածու պատերազմունք Շահ Աբասայ ի սկիզբն ԺԷ

1 Ստեփանոս Օրբել. Հ:  
 2 Հին իտալացի թարգմանութիւն թղթոյն. Abandonato al  
 nostro potentissimo esercito la sua sedia et suoi palazzi,  
 furono saccheggiate et abbruciate di maniera che non v'è

rimasto vestigio, avendo abrasciata e rovinata ogni cosa  
 da paese habitato intorno al predetto Nazovan, di modo  
 che le roture non si ritrovano.  
 3 Յորոց յէլի Պողոս ոմն սրբի Բարդէ կամ Պարզէ. (Baser

դարու, յորում Այի փառայ ոմն էր կուսակալ Նախնաւանի, ի վերայ որոյ առաքեաց Շահն (1603) զխան Չիւղֆ-իդար. մինչչեւ հասեալ նորա՝ Օսմանեանք ահարեկեայք լքին գթողաքն և փախեան յԵրեւան. այլ ի գալ Չլալ օղլի սպարապետի նոցին՝ նոյնպէս խոյս ետուն անտի Պարսիք, և եկն Օմար աղա ոմն ի Քուրդաց պահ ունել տեղւոյն. սակայն ի զօրանալ Պարսից՝ դարձան անդրէն, և Ամիրգիւնէ խան առաքեալ ի Շահ Աբասայ, եկն մարտեաւ. սպան զՕմար, կոտորեաց զզօրս նորա. « և » ինքն արձանացեալ նստաւ ի տեղի Օմար աղային, և » պահէր զերկիրն, որպէս և հրամայեալ էր նմա Շահն՝ : » Նոյն Շահ յետ ոչ բազում ամաց լուեալ ամբաստաւ » նաթիւնի գրնակչաց քաղաքին, հրամայեաց արտասահ » ման աւնել, վարել տանել ի քաղաքն Ֆահրապատ. և » գթողաքն Նախնուան աւերել, զտունսն և զամենայն » շինուածսն քանդել, և զպաշտասանսն կոտորել. որ » անխափան կատարեցաւ առ նոսա հրաման թագաւո » բին. զի զամենայն բնակիչսն հանեալ վարեցին ի Ֆա » հրապատ. իսկ ի բնակչացն Նախնուանայ արք ան » նչանք և սինլքօրք փախուցեալք ի չըտակայ գիւղորայսն՝ » թաքեան աստ և անդ » : — Միւս անգամ վերական » քնեցաւ քաղաքն յաթուս կուսակալաց կամ խանից Պարսից, և մնաց ի ձեռս նոցին, զատ ի կարճատեւ նուաճմանէն յՕսմանեանց. և յերկրորդ կէս Ժէ դարու կիսամանեայ շինութեամբ տեսին զնա եւրոպայացի վաճառականք և ուղեւորք, մանաւանդ Փռանկը. յորոց նախ Պոռլոյ Լրիուզ՝ յաւերակաց պարսպացն գուշակէր ընդարձակագոյն եղեալ քաղաքին քան գիւարէժ. իսկ Շարտէն ասէ աւանդել Պարսից, յաւուրս Սասանեանց վաւերամ Չուպին թագաւորի նոցա շինեալ անդ քաղաքս հինգ, և բնակել ի նմին 40,000 ընտանեաց. ինքն ետես զաւերակա բերդի մեծի և զմանունց. չէն էր սու նովաւ կամուրջն 11 կամ 12 ակնեայ ի վերայ գետոյն, որոյ արդ երեւին մնացուածք մերձ ի հունն (տես Թիւ 140): Յիշեն նոքա ի շինուածոցն զաշտարակն, (զորմէ ընդ հուպ լիցի բան), որպէս և իտալացի ուղեւորն Ճեմելլի ի վերջ կայս դարուն. — Յաւուրս շիւթից տէրութեան Պարսից յառաջնում քառորդի ԺԸ դարու, ի բռնանալ Մահմուտ խանի, օրինաւոր ժառանգն Շահ թահմուզ խոյս տուեալ ապաստանեցաւ այսր ի Նախնաւան, և աստի այլուր. յայնժամ ունէր զտեղիս Ասրաբագ Ղոչի խան. յորոյ վերայ եկն Դաւիթ բէկ հայախոսմբ զօրօք 6000 արանց, և բանակեցաւ ի վերայ գետոյն. իսկ խանն 12 կամ 14,000 զօրօք բազխեցաւ ընդ նմա, և ի պարտութիւն մատնեալ դարձաւ ի փախուստ. հետամուտ եղեն նոցա Հայք ժամս երիս և վաստակեցան. իսկ Պարսից ոգի առեալ դարձան ընդ կրունկն և հալածեցին ըզ-

Հայս մինչեւ ի գետն. և ի հապճեպ շտապելոյն յանցան՝ աւելի քան զհազար կամ 2200 ոգիք գետամոյն կորեան. իսկ Դաւիթ և զօրավարք իւր Աւտանտիլ և երկուքին կորկիք ամրացան ի վէժ մի յափն գետոյն, և գիշերայն գնացին ի Սիսիան: ի նմին ժամանակի տեսեալ Օսմանեանց զվրդով աշխարհին Պարսից, նուաճեցին զՆախնաւան առանց մարտի, զի անձնատուր եղին բռնակիչքն. այլ յետ ոչ բազում ամաց անդրէն յետս էառ հզօրն Նաթիր Շահ, առ որով յամի 1735 կողմնակալ էր վէլի դաշի խան, իչխանք Հայոց՝ Աստուածատուր և Խարիսիմոս, և տեղակալ խանին՝ Միրզե Ռագի ոմն, որոյ բազում զրկանս արարեալ էր Հայոց, վասն որոյ ամբաստանեալ յԱմբրահամէ կաթողիկոսէ՝ մատնեցաւ ի շարաշար գանս, և դարձեալ նորին աղաչանք զերծաւ, և յետս առ հայր իւր (Դաւիթ) դարձուցաւ աղիկն՝ զոր յափշտակեալ էր սպասաւորի միոյ Միրզէին: Նոյն կաթողիկոս ի դարձին իւրում ի Մուղանէ՝ ագաւ ի քաղաքիս աւուրս ինչ և մեծարեցաւ յոյժ ի խանէն և ի պաշտօնէէ Շահին որ Նայիպ ասի, և կոչէր Արս Հասան խորասանցի, որք և բազում սպասաւորօք յուղարկեցին զնա յԵմիլիսիս:

- Մանսթ կուսակալք Նախնաւանի են.
- 1577 Մանուկի խան
- 1603 Այի փառայ (Օսմանեան)
- Զիւլֆիղար (Պարսիկ)
- 1606 Ամիրգիւնէ խան
- 1620 — 30 Մագսուտ սուլթան
- 1668 Ալուղուկի խան
- 1669 Մուրատ խան
- 1678 Շէրէֆ կամ Շէրէզ խան
- 1691 Մահմաւ Ռիզէ խան
- 1722-3 Ասլամազ Սուլթան
- 1735 Ռիզէ խան
- 1736 Վէլի ղուկի խան
- 1813 Քէրիմ խան

180. Վերոյգրեալ դէպք մարտից, աւերութեանց հըրկիգութեանց շատ իսկ յայտ առնեն, զի քան զչէնս բազմագոյն են աւերք և փլածք ի Նախնաւան, որ ի տասն թաղ տրուի, յորս ամենայն օւրեք շուրջ և ի միջի երեւին հետք նախնի շինուածոց, պարսպաց և բնակարանաց. զարմանալի եւս է տակաւին կիսականգուն մնալ ոմանց յայնցանէ և սրժանի տեսութեան և քննութեան լինել: Գլխաւորքն կամ թէ բոլորն իսկ՝ նախայիշեալ դաստակերտքն են Աթարէկից կամ Նլտկուգեանց յ' ԺԲ դարու, ի հասարակի աղիւտակերտք և յախնապակեայ բուածով: — Նշանաւոր է ի սոսա ի հարաւակողմն քաղաքին Շիրիմ կամ գուռն Աբարէկից, սրանկիւն կա-

de Massivani) յամի 1593 ի վեհեալի, ուր գործակալ կարգեաց զՄարկոս Մուրատ առ ի պահանջել ի Տիրամայ Զուգա յեղւոյ 110 դուկատս:

- 1 Առաքել պատիւ:
- 2 Նոյն Առաքել. որ և յայնժամ ժամանակի պատմէ անդիպեալ ի Նախնաւանի քառանկի իմն դէպս զամբարիշտ առն միոյ, Ղուրաբոյ՝ կոչեցելոյ որ անիրաւութեամբ կեցեալ և հրանդացեալ իջրեւ խոտափանաւոր նորս յորդորէր զնա ի զեղլ, մերժեալ

նորս կոչեաց զմահէտականս և ընկալաւ զզնն նոցա, և չքով մեծաւ թաղեցաւ ի նոցանէ. այլ յետ չորից աւուրց տեսանէին զնա չըլել գիշերոյ ի քաղաքամիջի տրկեալ յու իւր զպատանս մարմոյն, և երթալ դարձեալ մասնել և կալ ի առնչեան ի զուր գերեզմանին. յորմէ զարհուրեալ քաղաքացեացն ոչ կլանէին արտաքս. բայց յետ եօթն աւուրց խորխուտեալ զինկոյս արտնջ՝ սրակոտոր արարին զգիտկն և զզուրկն ընկեցին ի տեղի նուաւոր:



մարաւ և երկուստեք նուրբ աշտարակօք կամ մերա-  
յիւք, ապակէքուռ աղիւսօք դրուագեալ, և մեծամեծ  
կապուտագոյն արարացի տառիւք գրեալ ի դրանդալն,

Ջգօն եւ արդար եւ վեմական արքայն եւ Աթա-  
բէկ Էպուճաֆար Մուհամմէտ որդի Ելտկուզ Աթա-  
բէկի, գորոյ Աստուած լուսաւորեսցէ զգերեզման.

Միւս եւս արձան ասէ.  
Եւ գործակալն Նուրէտտին հեծելապետ եւ հար-  
կահան վիճակագ Աթաբէկին շինեաց. Աճեամ որ-  
դի Էպիւպէքրի, ճարտարապետ Նախնաւանի:


Նշանաւոր եւս է ներքսագոյն Գմբէթ-Աշտարակն Ա-  
րարեկից, զի այսպէս կոչի, (Գիւնպէգի-Արարեկ), իր-  
րեւ 70' բարձրութեամբ և 96' շրջապատաւ, 12 անկիւնի,  
կամ 12 տափակ խորանաձեւ կողմամբք և քանդակա-  
զարդ շրջանակաւ. համակ գունագոյն և պէսպէս աղի-  
սօք ծածկեալ են երեւքն, և շուրջ պատէ բարձրաքան-  
դակ երկար գրուած. նոյնպէս և գրուով զմբէթին մե-

ծամեծ տառիւք գրեալ, այլ կիսով չափ ջնջեալ, զի  
միայն Ա, Բ, Գ, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, կողմանքն մասն ամ-  
բողջ. Ա կողմն է գուռնն որ և յայտ առնէ Շիրիմ լինել  
շինուածոյն, այսու արձանագրութեամբս.

Յանուն Աստուծոյ գեթածի եւ ողորմածի. պա-  
տուիրեսաց շինել զշիրիմս՝ զգօնն արդարն, աս-  
տուածապահն, յաղթողն, արքայն մեծ, արեգակն  
հաւատոց, օժանդակն իսլամի եւ Մսլիմանաց Մու-  
մինէ խաթուն, որում ողորմեսցի նմա Աստուած:

Բայց այլ օք ընթեռնու Շեմսէտտին գրինել տուող  
շիրիմն, և զնայն ինքն զԱ Ելտկուզ այսպէս կոչեցեալ:  
Յայլում կողման գրեալ է.

Շինեսաց Աճեամ որդի Էպիւպէքրի ճարտարա-  
պետ Նախնաւանի, յամի 882,  
Հիճրէթին, որ է 1186 ամ Փրկչին: Բայլ կողմանն  
գրեալ են տունք ինչ զուրանի: — Յիշեալ ճարտարա-  
պետդ երեւի վեհագոյն լինել յարուեստակիցս ժամա-



139. Նախնաւան. Աւերակ մեծի շինուածոյ.

նակին. որոյ շինած և գրուած գտանի և այլ ուրեք, որ-  
պէս ի շիրմի միում, յամի 1161, այսու գրութեամբ.

Շիրիմ ազնիւ եւ փառաւորեալ խօճայի օգնա-  
կանի հաւատոց եւ զարդու իսլամի . . . ի միան-  
ձանց դասուէ, Եուսուֆի որդւոյ. յամսեանն շէվ-  
վալ, յամի 887. Շինեսաց Աճեամ որդի Էպուպէքրի  
ճարտարապետ Նախնաւանի:

Իրրեւ սա յիշատակէ նախնեացն կամ դենակցաց, և  
յետ նուաճման երկրին ի Ռուսաց, կարգեալն ի նոցանէ  
կողմնակալ Պարսիկ Էքսան խան շինեսաց իւր ապարանս  
սա երի աշտարակին. որոյ որմամէջն անձուկ զատարկ  
է մինչեւ ի գագաթնն, առանց ելից սանդղոց, որով և

եւս հաւաստի շիրիմ լինել. բայց տապանն քայքայեալ  
կործանեալ է:

Ուղեւորք տեղագիրք Ժէ դարու (Դաւեանիէ, Ճեմել-  
լի) է ինչ յոր միաբանին ընդ նորոց և է որ ոչ. ամենեքին  
մի միայն յիշեն շիրիմ-աշտարակ, այլ նկարագիրքն զա-  
նազանին և երկուս ցուցանեն, (զսա ի դրանէն և ի  
նուրբ աշտարակաց նորին). որպէս զի Տիւպուա յընծա-  
յեն զպատկերն՝ (Թիւ 138) և ի ստորագրել, յաւելու ի  
ծանօթութեան եթէ չէ մարթ սմա նոյն լինել ընդ նկա-  
րագրելոյն ի Դաւեանեայ. զի սա ասէ՝ զաշտարակն նը-  
ման լինել ի ստորեւն չորից յարակցելոց զմբէթից, ի վե-  
րոյ՝ բրդաձեւ յերկուսասան մանունց. աշտարակաց հա-

1 On voit . . . une Tour dont l'architecture est des plus  
belles: ce sont comme quatre dômes joints ensemble, qui  
supportent une espede de pyramide qui semble estre com-  
poséé de douze petites tours; mais vers le milieu elle chan-

ge de figure, et montre quatre faces qui vont en dimi-  
nuant et finissent en aiguille. Tout l'édifice est de bri-  
que, et tant le dehors que le dedans est un beau vernis  
avec plusieurs fleurs de relief. — TAVERNIER. I. 40.

ւաքեալ ի միութիւն սրածայր, այլ ի միջավայրին ի շարիս երեսս տրոհեալ: Ճեմեքի եւս ութանկին ասէ և սրածեւ աւարտեալ<sup>1</sup>. Իսկ ըստ բարձրութեան և երկուց մերայիցն՝ համաձայնի վերոյ գրելոցս, ըստ Տիւպուայ մի միայն պատկերահանն գերմանացի Քէսդնէր աներկբայ կացուցանէ զերկուութիւն յիշատականոցացն. զի ուրոյն գծագրեալ է զպատկերն որ ըստ Տիւպուայ, և ուրոյն զայլ ինչ, բայց միայն զտեղին կամ զգիրսն ոչ ճշգրտէ որոշակի:

Սակաւօք հեռի յաշտարակէս սփռեալ կան աւերակք հնոյն Նախնաւանի, ընդարձակ տարածութեամբ, այլ իսպառ անկերպարան և դիակնացեալ իմն. յորոց միջի կիսականգուն կայ համբաւեան Գեղեզման Նոյի, կիսաքանդ գմբէթ, մէջն ութանկին իբր 10 կամ 12՝ տրամագծաւ, արտաքուստ մի կողմն միայն աղիւսակերտ բաւեալ կանգուն կայ, որպէս երեւի ի պատկերին (137). զոր ամենայն յաճախեն անդր ուխտաւորք քրիստոնեայք, հրէայք և մահմէտականք, խնկօք և լապտերօք, որոց և բեկօքը լցեալ են զմէջ յիշատականոցին, ճարպով և ծխով թխացուցեալ: Ոչ միայն զՆոյի այլ և զորդւոց նորին գերեզմանս կարծեն պարզամիտք տեսանել ի Նախնաւան (Թիւ 138): — Ընդ մէջ երկուցուն յիմացս, Նոյին և Աթաբէկաց՝ կան դոյզն մնացորդք մեծի և հոյակապ մզկիթի, այլ իսպառ անչքացեալ և հողոյ հաւասար: Ի հարաւոյ կուսէ անուանեալ շիրմին Նոյի ի կողս քարաբլրին փորեալ կան այլք, յորս պահեն Պարսկէք դագաղք զդիակունս մեռելոց իւրեանց, մինչեւ յուղարկեցին յանուանի ուխտատեղին ի Քեարբայլի: — Ոչ հեռագոյն յՍՆ. Հր. քաղաքին կայ այլօրինակ իմն գերեզման քարակոյտ, ընդ որով ծածկեալ է սրախողխող դիակն ուրացելոյն այնօրիկ Գարայօրակի: — Կանգուն շինուածքն են բարեձեւ դունագոյն աղիւսք երկու մզկիթք մերձակիցք բարձր մերայիք, յորոց մին կոչէր Չաշիէ, այլ խարխալեալք ի մեծէ սասանութենէ 1840 ամին: Ի միում ի սոցանէ կայ արաբացի զարդաձեւ գրուած: — Արահամ կաթողիկոս յիջեվանել իւրում ի Նախնաւան յամի 1736, յիչէ « ի մէջ քաղաքին » քեատրոնաձեւ տեղի մի, որոյ շորս կողմքն էին կրքոպակք, և անթիւ մարդիկ քանաչաձիք (զննողք). հրառ շիրեաց զմեզ խանն գնալ իւր անարարն ի պատիւ »: Ի դէպ է համարել զայդ՝ հրապարակ և շուկայ քաղաքին:

Չարդիս վայելչագոյն մասն քաղաքին է արեւմտակողմն, ուր կառուցեալ է եկեղեցի Ռուսաց, և ծառափողոց հանէ տանի անտի ի ըլուր մի ծառաւէտ և այգեւէտ, որ և զբոսատեղի է քաղաքին, յարդարեալ յամի 1873, ի բաց հանելով անտի զգերեզմանս մահմէտականաց: Ի փողոցի անդ մերձ յեկեղեցին կայ մնացուած անծանօթ շինուածոյ (Թիւ 139): Չէ հեռի անտի և Ս. Գեորգ եկեղեցի Հայոց կարծրաքար կոփածոյիք և աղիւսեայ գմբէթաւ: Յարեւելեան որմնն արտաքուստ գրբեալ է հայ, ռուս և պարսիկ լեզուաւ յիշատակ Քեալ:

1 Si vede un grand' edificio di mattoni vicino la città, alto più di 70 palmi, di figura ottangolare, che termina in modo di aguglia. Per una gran porta s'entra, e si monta per scale a lumaca a due alte torri, che sono a lati, senza

բալի խանի, որ պարգեւեաց Հայոց զտեղին, և սքա ի գաւթի նորին հաստատէին զվարժարան օրիորդաց, իսկ զմանկանցն ի գաւթի Ս. Երրորդաքիսն եկեղեցւոյ:

Հին մասն քաղաքին մթին, անձուկ և աղտեղի է, նոյն պէս և բաղանիքն. և սոն եւս ոչ առողջասուն, մանաւանդ յամարանի, յորում տագնապ հասանէ և ի խայթից մոծակաց և կարճաց, և ի տենդէ: Յայս սակա յոյժ ստորանկեալ է քաղաքն ի նախկին բարգաւաճանացն և ի բազմութենէ բնակչաց, որ արդ շեն աւելի քան զ'7000, երկու մասն այլազգի՝ Թաթար և Պարսիկ, և մի Հայ: Առուել եւս նուազի յոյս բարգաւաճանաց Նախնաւանի՝ յաւելմամբ բնակարանաց և քաղաքական շինուածոց ի Հինն Չուղայ, առ որով և յաճախեն անցք ընդ Երասխ. մինչ յառաջն երբեմն անդադար լինէին անցքն ընդ կամուրջ Նախնաւանի, ընդ որ և աշխարհակալք և աշխարհաւերք: — Միակ արգահատիչ քաղաքին մարթ է համարել զտարածութիւն պարտիզաց և ըզնորատունկ այգիան և զծառաստանս, և եւս առուել զերկոսին աղբերան՝ զորս ընդունի յարեւմտից կուսէ, և զորոց զուգախառնութիւն ասէ Տիւպուա անայլայլակ ամարանի և ձմերանի 12՝ Ռէօմ. Գայ և այլ աղբիւր կամ վտակ ի Հս. արեւելից, և մերձ ի քաղաքն ժողովի յիսի-կեօլ լճակ. ընդ բնաւ 10 աղբերք են, այլ սակաւուց ջուրք առողջասուն: Շատ եւս են մօրացեալ և նեխեալ ջրկալք, որք և առթեն պէսպէս ախտս և տենդս, մանաւանդ ի զօրանալ տօթոյ ամարանի: Նուազեալ է և առեւտուր վաճառականութեան. իբրեւ 1850 կրպակք միայն են ի շուկայս, սակաւ գործարանք խաղախի, 15 իջեվանք կամ պանդօկք, իբր 30 աղօրիք, 3 կամ 4 միայն բաղանիք: — Արտաքոյ քաղաքին ի վերայ ճանապարհին՝ հանդոյն համբաւեալ դերեզմանին Նոյի պատուի յուխտաւորաց վէմ մի սեաւ, ոտնաչափ և կէս ի բարձրութիւն, և ոտն մի ի լայնութիւն և կէս թանձր, մաշեալ ի բազում համբուրից, և թուի օղաքար անկեալ: — Ընդ շինուածս Նախնաւանի գրելի էր, թէ և արտաքոյ նորին ի վերայ գետոյն, զլաւմոտրջն այն 12 ակնեայ, զոր յիչէ Դաւեանիէ ի կէս Ժէ դարու, և առ որով հաստատեալ էր մաքսատուն, ուր առ ուղտաբեւն առնուին 10 սպասի ի պէտս պահպանութեան պողոտային:

181. Ի Հր. արեւմտից քաղաքին իբրեւ թաղ մի նորին է, փոքու իւրք անջրպետեալ, Գարայսան - պէկիչ գիւղ բազմաբնակ ի Հայոց, իբր 120 տամբք և միով եկեղեցեաւ: Ըստ դրիցն ի ճահ գայ սմա-լինել Եզդիսիա մեծ գիւղ, զոր Դաւեանիէ յիչէ և երկու փարսախաւ հեռի ասէ յԵրասխայ, ընդ մէջ նորա և Նախնաւանի, բնակեալ ի ճոխից Հայոց, որք մեծ առեւտուր առնեն մետաքթի, և շինեալ են եկեղեցի մի գեղեցիկ<sup>2</sup>: — Դոյզն ինչ աւելի (իբր կէս մղոնաւ եւեթ) ի հիւսիսոյ կուսէ քաղաքին ի կողս կրային քարալերին կայ այլ գիւղ հայարնակ, Սլիսպատ անուն, իբր 60 տամբք:

aver comunicazione con l' aguglia. Dicono che sia opera del Tamerlano, quando andò alla conquista di Persia. — GEMELLI, II. 19.

2 Il faut passer premièrement de Naxivan à un gros



Մզոնաւ կամ դոյզն աւելի ի Հր. Նախճաւանի և ի ստորոտս քարալեւինն՝ յաջմէ գետոյն և հուպ նմին է մեծ գիւղն Գոռնկոյ, որ է հաւանօրէն Տամբատն վազեմի, ի Հայկազնոյն Տիգրանայ տուեալ ի բնակութիւն զարմից Աժգահակայ. զի թէպէտ և գոյ և ի ստորոտս Փոքուն Մասեաց համանուն տեղի, այլ այսմ ի ճահ գայ յիշատակդ, և մերձ են ամին զոյգ յիշեալքն Խրամ, և այլք: Զունիմ ծանօթս զտեղւոյս, բայց զի աւելի քան 140 տունք են անդ Հայոց յուրմից գաղթականաց քան բնկաց, և 30 տուն Պարսից: — Աստի ընդ հարաւ կոյս մինչեւ ի մուտս գետոյն յԵրասխ՝ շիք այլ գիւղ յափունան, բայց միայն Եւախանա ի նմին կողման գետոյն (յաջմէ) և մզոնաւափ մի միայն հեռի յարեւելից Երասխայ. ի սմա եւս 110 տունք են Հայոց գաղթելոց ի Պարսից և 2 կամ 3 տունք այլազգեաց:

Ի հիւսիսոյ Տամբատայ, ընդ գետահովիտն ի վեր ելաւ ներսով գետոյք հինգ կամ վեց նշանակին մի ըստ միովէ յահեկէ գետոյն, որ է յարեւելից. նախ ֆօշա-տիգե,

մզոնաւ և դոյզն աւելի ի Հս. նախայիշեալ գեղջն և նոյնքան եւս ի Հր. արեւելից քաղաքին. ի սմա միայն 68 տունք են այլազգեաց: Ապա Շաքարապատ յորում 30 տունս Հայոց գրէր Շորէն գաղթեալ ի Պարսից, բայց արդ թաթարք բնակեն. մերձ նմին երկու գետոյք են Հաճիվար Հին և Նոր, յորս միանգամայն են իրբեւ 50 տունք Հայոց, և եկեղեցի մի: — Կից նոցին Պատաշխան 20 տամբք այլազգեաց: — Կիսով մզոնաւ և աւելի ի վերոյ՝ Եարիմէ գիւղ մեծ, յորում իբր 90 տունս Հայոց գրէր Շորէն, այլ աշխարհագիր 1873 ամի 150 տունս այլազգեաց ասէ: — Ի սմանէ մզոնաւափ կամ աւելի հեռի է ի Հս. Մ. և յաջմէ գետոյն՝ Շան կամ Շէյխ Մաննաւո մեծ գիւղ, արգասաբեր անշուք և այգեք, իրբեւ 130 տամբք Հայոց, որոց ոմանք բնիկք, յուրմէ եկք ի Պարսից, հին և ուխտական եկեղեցեաւ: Յամի 1860 հաստատեցաւ դպրոց ի գաւթի եկեղեցոյն, յորում պատուի Ս. Նշան անուն մասն յարձաթեայ բազկի: Բնակիչք գեղջս առ տէրութեամբ Պարսից պարտաւո.



140. Կամուրջ Նախճաւանի .

րեալ էին տալ կոռավարս ի վաստակ Աղահանիցն: — Կիսով մզոնաւ ի բացեայ յահեկէ գետոյն է Գոռնկոյ-տիգե գետոյ փոքր, 30 տամբք Հայոց, որոյ հանդէպ յայն կողմն գետոյն է Խալիլապատ նոյնպէս բնակեալ ի Հայոց 35 տանց գաղթականաց ի Պարսից: — Մզոնաւ ի Հս. սորա ի նմին աջակողման է Ուզուն օպա ստորին, 67 տամբք թաթարաց, և նոյնքան ի սորին հիւսիսոյ Ուզուն օպա վերին, յորում 32 տունք Հայոց և 22 այլազգեաց: — Սակաւուք ի վերոյ Վերնոյն Ուզուն օպայ՝ միանան գետակք ճահկոյ և Շահապունեաց, ուրանօր համարեցաք զհիւսիսային սահման Նախճաւանու:

Ի հանդիպոյ վերջին յիշեալ գեղջս՝ յահեկէ գետոյն կայ Մոլլա տիգե գիւղ փոքրիկ, և մերձ նմին ի Հս. կուսէ՝ Ստորին Քեալպ-Ալի Ուշուն կամ Քերպալափ օւրուն, 15 տամբք թաթարաց: Մզոնաւ եւս ի վերոյ Վերին

Քեալպ Ալի Ուշուն ի սահմանակցութեան Շահապունից: Ի հարաւոյ Մոլլատիգէի է այգեւէտն Մամարզա տիգե գիւղ, իբր 30 տամբք Հայոց և 15 թաթարաց: — Ի հարաւոյ սորին հանդէպ Ստորին Ուզուն օպայի և կիսով եւեթ մզոնաւ տարակաց՝ է Քիւլ թեփե գիւղ (Մուխրաբլուր), արգասաբեր սահմանօք, յորում 90 տունք էին Հայոց և ոչիք 750: Յամի 1875 յայտնեցան աստնըւխարք ինչ Սրբոց, և եղեւ մեծ ուխտատեղի, համարեալ լինել յոսկերաց Ս. Հռիփսիմեայ հանելոց ի Յիսուսեան Հարց յԵմիածնէ, և սաստիկ հրամանաւ Շահ Աբասայ յետս առ Հայս դարձուցելոց. յորոց առեալ մասն մի ճգնասէր վարդապետն Պօղոս Մոկացի, մի ի հիմնադրաց Անապատի, երբ ի գիւղս յայս, « և անդէն հիմն » արկեալ եկեղեցոյ, ետ ի հիմունս եկեղեցոյն զնըւխարն զայն. և ի վերայ նորա շինեալ աւարտեաց զե.

village appellé *Ecclisia*, où demeurent plusieurs riches Arméniens, qui font un grand negoce de soie, et qui ont bâti

une belle église. — TAVERNIER. X. — Անուն գեղջն Լեւոնցուցանէ զԵղեղեա, բայց ոչ յիշէ յայս կողմանս:

» կեղեցին, և յաւուր օծման եկեղեցւոյն՝ անուանեաց » զանուն եկեղեցւոյն Ս . Հօսփսիսեայ » . որպէս աւանգ զէ Առաքել պատմիչ, և յաւելու . « Եւ կան այժմիկ սա . » կաւ Հայազուն քրիստոնեայք ի գիւղն յայն՝ հաստա . » տեալ ի վերայ եկեղեցւոյն » :

Չատ ի յիշելոց գիւղորայիցս չիք այլ շէն ոչ յայսմ կողման գետոյն (յահեկէ), և ոչ յաջմէն . բայց լքեալ կարաւանատուն մի Գղըլ (կարմիր) փերփան - սերայ ա . նուանեալ, երիւք մղոնօք յարեւմտից Աղահանիցն, ի ստորոտս Էրքունի - քէփէ սարակի : — Ոչ յիշատակին և ի նախնեաց գիւղք կամ տեղիք առ Նախնաւանաւ, բայց միայն « Քալասարահն ի Նախնուան », զոր Աթարակն ետ Ելիկոսի Օրբեւանց, և չէ յայտ չէն մի էր եթէ վիճակ փոքր . քանզի յետ սակաւուց պատմիչն կրկնելով զնոյն բան՝ առէ . « Մեծ սիկելով և անանցական գրով

» ետ զՃահուկ և զՔալասարահն, և ի Նախնուան յառագ » փոշոցեն երեսուն կուղպակ, ազատ և թարխան յամե . » նայն հարկաց, փոքրիկ մանկանն Լիպարտի, իննել » նմա յազգէ յազգ հայրենիք » : Առաքել պատմիչ յիշէ և « զՇահակերտ գիւղ մերձ քաղաքին Նախնուանու », յորմէ էր Ազարիա վարդապետ ի ԺՁ դարու . ըստ ա . նուանն մերձաւորութիւն ունի ընդ Շաքարապատ գեղջ մերձաւորի քաղաքին, այլ ոչ գրտեմ զստոյգն : Եկեղե . ցին Շահակերտի նորոգեցաւ ի կէս ԺԷ դարու, ըստ բա . նից նորին պատմիչի :

Յիշատակի ի դիւանս մեր և Մկրտչի վանք անուն գիւղ մի Նախնաւանի, որպէս թուի մերձ ի քաղաքն, յորմէ էր Ղազար անուն Եղբայր մի մերոյ վանացս, (Վե . նետկոյ Ս . Ղազարու), կեցեալ և վախճանեալ աստէն յամի 1801), ամաց 78 :

Բ . Խ Ո Ք

182. Արեւմտեան մասն Ճահուկոյ որ ընդ մէջս է գե . տոյ նորին և Արփայ գետոյ Վայոց ձորոյ ի հիւսիսոյ, Շարուրայ՝ յարեւմտից և Նախնաւանի ի հարաւոյ, յայժ . մուս իբր առանձնակ վիճակ՝ կոչի Խոք . սակաւաթիւ գիւղորայիք, թէպէտ և երկիրն չէ փոքրատարած, այլ լեռնաւէտ և ամայի . բայց զիժ սահմանին յարեւմտից և ի հարաւոյ՝ անստոյգք են : Անուն վիճակիս թուի Խախ գեղջ հնոյ ցուցակին թերեւս և զոգ զաւառ կոնդակին Բարզենի (տ . յէլ 517) որիչ ի կողովտէ . այժմ Պարսք ասեն առ բազմութեան վայրենի խոզից այսպէս անուա . նել տեղոյն : Երկու մղոնու ի բացեայ ի ստորոտս լե . րին կան աւերակք մեծի մզկիթի :

Արեւելակողմն վիճակին է ձոր երկայնեալ ի Հս . ընդ Հր . գետակն զոր ի դէպ է կոչել Ազնաքեղոյ՝ ոչ ժամա . նեալ յԵրասխ՝ սպառի ընդ երկրաւ . յորոյ զլուխս կայ փոքրիկ և նոր գիւղն Գարադաշ, կիսով փարսախաւ ի Հր . Մ . Լիքերդի : Նոյնչափ հեռի է յիւրմէն Ազնա . քեղոյ, Ազնապիտոս կոչեցեալ յայլազգեաց, ի կիցս եր . կուց վտակաց գետակին . անունն և աւերակք շինից կամ փոքրիկ գիւղից՝ ի Հր . կուսէ նորին, յայտ առնեն գի նշանաւոր բերդ և աւան եղեալ է ի հնումն, թէպէտ և ոչ ի հին ցուցակին և ոչ առ պատմիչս գտանեմք զդա յիշատակեալ . բայց անակնկալ իմն հանդիպմամբ գը . տանի յիշատակարան մի դամբանական ի տար աշխար . հի, ի Գննուայ (Ճննովա) քաղաքի Խտայիոյ, որ ընդ անուան գեղջն՝ ցուցանէ եւս զայն Գողթան գաւառի պատշաճեալ յ'ԺԷ դարու . և է այս արձան սղալագիր, ի Ս . Բարդուղիմէ եկեղեցւոյ Հայոց, յամի 1687, Հայ . րապետի ուրումն .

Այս է տապան Հայրապետին՝  
Որ է որդի Անանիային .

Սա յերկրէն է Գոխտան տանին,  
Եւ ի գեղջէն Ըզնայբերթին .  
Վախճանեցաւ Հայոց Թվին  
Հազար հարիւր Էրեսուն իւ վեցին,  
Եւ ապրելի քսան և յսգին :  
Ով յանդիպի այս տապանին՝  
Հայր մեր յերկիրս շնորհին  
Վասն սիրուն Քրիստոսին .

Բնակիչք Ազնաքերդի բնիկ Հայք են և ոչ գաղթա . կանք, (տունք 43 առ Շորենիւ և ոգիք 221), ընդ որս և 10 տուն մահմէտականաց : — Երիւք մղոնօք ի Հր . Ազնաքերդի է Խանձառ կամ Խանձախի փոքրիկ գիւղ այլազգեաց (16 տուն ըստ Շորենի) . և իբր նոյնքան եւս ի Հր . սորին՝ մեծագոյն գիւղ Սոսոյ (22 տամբք, Ծ .) :

Յարեւմտեան մասն վիճակիս ցրուեալ գեղքն ինչ ի լեռնակողմանս՝ են, ի հիւսիսակողմն՝ թաւանաւ (12 տամբք այլազգեաց ըստ Շոր .) . թերեւս թաւանաշող գիւղ հին ցուցակին . — ի միջակողմն Գարապադաշար . որ նշա . նաւոր է բազմամարդութեամբն, այն է, 71 տունք այլ . ազգեաց, ի ժամանակի վիճակագրութեան Շորենի . թուրք նշանակ անուան շինին պաղ (այգի, ազարակ) յիշեցուցանէ զՍգարակ գիւղ հին ցուցակին . ի ներքոյ և արտաքոյ աւանին տարածանին այգիքն և անդաստանք . Չէ ինձ յայտ պատճառ մեծութեան տեղւոյս և մահմէ . տական բնակութեան, զի և արտաքոյ մնայ արքունի պողոտային, այլ թերեւս յառաջագոյն մտազոյնս ան . ցանէր սա . զի և յելս ԺԷ դարու Ճեմելի ուղեւոր իտա . լացի, որ Գարապա կոչէ (յ'7 յունիսի 1894) և ազաւ աստ, յիշէ առ նմին կարաւանատուն գեղեցիկ և մեծ, քառակուսի ձեւով . և աղբիւր վիժահոս<sup>1</sup>, զոր աւանդէին նմա Հայք՝ Սեմայ որդւոյ Նոյի հատեալ հանեալ ընդ

1 Andammo a pernottare in vicinanza del Karvanserà di Karaba . . Questa fabrica era quadrata, e delle più capaci e belle ch'io avessi vidute. V'è un abbondante sor-

giva di buone acque, che scaturisce da una pietra taglia-ta. Dicono gli Armeni che l'avesse fatta Sem figliuolo di Noè. — GEMELLI. II. 17.

վէմն. այլ Գաւեռնիէի ջրելով զկարծիսն, ասէ ջրոց աղբերն ժողովեալ ի գուրս քարանալ ի տասնամանայ ժամանակի և այնու քարամբք շինեալ զկարաւանատունն. և ստոյգ անուամբն կոչելով զգիւղն՝ Karabagler, ասէ ըզջրոյն գալ ի վտակէ բղխեցելոյ 3 կամ 4 փարսախաւ ի Հս. շինին, և կիսով ևւեթ փարսախաւ ի վերոյ նորին՝ զքարանալն: Չլուրն քաղցր ասէ, թէպէտ և ոչ ախորժելի բնակչացն. և զգետակն թափել յԵրասխա երկու փարսախաւ ի ներքոյ կարաւանատանն, որոյ շինութիւն աւարտէր յամի 1664: Յայտ է թէ գետակն է Ազնաբերդին, այլ բնութիւն երկրին այլայլեալ. թէպէտ և յայնժամ եւս խոպան էր և անմշակ, որպէս իտալացին այն վկայէ<sup>1</sup>:


Ի հարաւակողման՝ և մերձագոյն ի պողոտայն՝ ի Մ. Հս. են հանգրուանքն կամ գիւղիկք Գափոչուռ և Երուշի-Կիրատասար կամ Ղիթիտասար, 16 տուն այլազգեօք (ըստ Շորն.): Ի Հր. սորա երկու մղոնաւ ի բացէ՝ ի վե-

րայ արքունի պողոտային որ տանի յԵրեւան և ի Նախճաւան, առաջին գեօղ մեծ է Քիւլխախ, (56 տամբք այլազգեաց ըստ Շոր. ), յորմէ չորիւք մղոնօք յԵլ. Հր. երկրորդ իջեվան է Խոռք գեօղաւան, 46 տամբք այլազգեաց (ըստ Շոր.). անուանատու տանկարնակ վիճակիս, յորում միայն Ազնաբերդ է հայտնակ: Մղոնաւ ի Հս. գեղջն կայ բերդ փոքր. և սակաւ մի եւս ի վերոյ կարաւանատուն աւերեալ, առ որով առուակ մի իջանէ քերելով զբերդկան և անյանէ ընդ Խոռք. և մղոնաւ ի ստորեւ ընդ կամրջաւ, յորմէ նոյնքան և աւելի հեռի կան աւերակք հնոյն Խոռքայ: Աստի եւս երկուք մղոնօք ի ստորեւ՝ յԵլ. Հր. այլ կամուրջ կայ ի վերայ առուակին, և մերձ նմին Պեռնիչ-Տիչիւն, պահակատուն ի վերայ արքունի պողոտային, որոյ անուն յայտ առնէ զՏիւգիլն գեօղ ճահկոյ. — աստի եւս երկու մղոնաւ հեռի ըստ նոյն գրից (Ել. Հր.) կան աւերակք այլոյ կարաւանատան Գգըլ (կարմիր) կոչեցելոյ:

### Գ. ԱՓՈՒՆՔ ԵՐԱՍԽԱՆ

183. Մատիցուք արդ յեզր Երասխայ, յարեւմտից հիւսիսոյ ի սահմանաց նախադրեալ Խօք վիճակի, յարեւելս հարաւոյ ցտահմանս Ջուղայի: Յառաջին կէս այսր աղեղնաձեւ միջոցի, կամ մինչեւ ի մերձագոյն կէտ գետոյն ի Նախճաւան քաղաք, չիք գեօղ կամ շէն բազմաբնակ, այլ դուզնաքեայ հանգրուանք և պահակատունք

կամ իջեվանք. որպիսիք են ըստ ընթացից գետոյն խաղալով, Չատուր, Գայրալ, Վէլի-Իւլ-Միւն, Պեհտ-պայի, Քեանկեր-Իւլ-Միւն. առ յետնովս ամբառնայ թօփ տաղ լեռան յեզր Երասխայ, երկուք մղոնօք ի Մ. Հր. քաղաքին. յելից կուսէ լեռինն և ի ստորոտն կայ Գառաչուրա գիւղ տանկարնակ, 90 տամբք Թաթարաց. և



141. Աստապատ. — Բերդ Ապպատ Միրզայ.

առ երի նորին՝ յարեւելից՝ Պուչղան, նոյնպէս բնակեալ յայլազգեաց 80 տանց. առ որով և պահակատուն: Ընդ սոսա անցանէ փոքր վտակն բղխեալ ի հարաւոյ կուսէ քարալեռին քաղաքին, ունելով և կամուրջ ի վերայն: — Ի դետակցացս մինչեւ ցելս սահմանացն ի հարաւ կոյս, կարճագոյն է միջոց կամ լար ընթացից Երասխայ, այլ ի

միջոցի աստ են, կամ էին նշանաւոր տեղիք և վանորոտք կողմանցս. իսկ գիւղք չէնք երկու կամ երեք միայն են ի բովանդակ յահեկակողման աստ երկոցուն գետոցն. յորոց մղոնաչափ մի կամ նուազ եւս ի բացէ կայ Թազե-ճեհտ (Նորչէն) գիւղ մեծ և բազմաբնակ, 260 և աւելի տամբք Հայոց բնկաց և գաղթականաց ի Պարսից

1 Continuammo a camminare per campagne affatto incolte, andammo a pernottare, և այլն. — GEMELLI. II, 17.

մարզէ, իբր 1800 ոգիք, և 60 տունք այլազգեաց. ունի եւ կեղեցի թերեւս և դպրոց: — Ի հարաւոյ գեղջն անցանէ վտակ մի եկեալ ի կողմանց Երնջակեանն Կղնուտայ, և անկանի յԵրասխ հուպ ի խառնուրդս գետոյն Նախնաւանի: — Առ սովին վտակաւ է երկու մղնաւ յարեւելից Նորչինի՝ Նեղրամ կամ Նեհրեամ մեծ գիւղ կամ աւան այլազգեաց 340 տամբք:

Ի դէպ է զվտակս զայս կոչել յանուն Աստապատու, քանզի յանկեան անդ խառնըրդոցն յԵրասխ, որ է յահեկէ երկոցուն եւս, կառուցեալ էր Աստապատ գիւղաքաղաք, որ զառաջինն յիշի լոկ անուամբն ի թովմայէ Արծրունուոյ, յասելն զԵրասխայ լինել ի ներքոյ Աստապատոյ վանացն, և ի կոնդակի Բարգինի կաթողիկոսի յամի 976. ապա գտանեմ յիշեալ յՕրբեյեան պատմչէն գիտի կոչելով, և սու նովաւ ջրատոյզ լեալ յԵրասխ ի կէս ԺԲ դարու գթարսեղ եպիսկոպոս Սիւնեաց յանցանելն ջրուով, և հանեալ և թաղեալ ի Մաղարդայ վանս: Աս փոքր փոքր բարգաւաճեալ և բազմամարդացեալ՝ առ յեւտինս՝ գիշադարձար կոչի՝: Յճաւ կոչս ԺԴ դարու Մաղաքիս Ղրիմեցին հակառակորդն Միաբանողաց՝ հաստատեաց աստ դասատուն ընդ տեսչութեամբ Սարգսի վարդապետի, աստի էր յայնժամ Աւետիս վարդապետ աշակերտ Տաթեւացոյն:

Ի սկիզբն ԺԷ դարու Շահ Աբաս վարեաց և զքնակից Աստապատու ի Պարսս. և էսու ի նոցունց իբրեւ հարձ կին մի, Կիւզէլ (Գեղեցիկ) անուն, որպէս Չաքարիս պատմիչ նկարագրէ (Ա. Ի). յերթալ նորս ի Բաղ-

տատ, զգնացեալ կնոջն՝ եմուտ ի վանս հաւատաւորաց, և դարձ արարեալ շահին կոչեաց զնա և եթող ի կամս իւր, այլ և ոռնիկ կարգեաց. որ և յետ մահուան թագաւորին՝ դարձաւ ի հայրենիս իւր յԱստապատ, ոչ եղև ընկալեալ ի քահանայից. բայց Չաքարիս մեծահամբաւ վարդապետ Վաղարշապատեցի՝ շինեաց զմիտ ժողովրդեանն, և արձակեաց զնա յամենայն կապանաց. և նա ապաշխարող կենօք հանգեաւ անդ: — Եսաւջ քան զայն, ասէ սոյն վարդապետ, աշակերտակից իւր. « Երբունի մաքուր աղանին կուտութեամբ պերճացեալն » և հոգևով բարգաւաճեալն Յակոբ վարդապետ Աստապատեցի, որ և սա այս սրբանուէր եղբայրս մեր ըզմանքն Աստապատու՝ որ ի վերայ Երասխայ կայ ի կատարս քարանձաւին, շինեալ պայծառացոյց զբովանդակն, զպարիսպն և զեկեղեցին, և զամենայն զորս ի նմա կան շինուածք »: — Ի նմին ժամանակի երեւի նորոգեալ մեծ և հայտկոպ եկեղեցի աւանին Ս. Վարդան անուն. ուր, աղուաբար աւանդեն բնակիչքն, բերեալ և պատեալ զմարմինս նահատակացն Վարդանանց, վասն որոյ և Աստապատ կոչեցեալ, իբրու աստէն պատեալ, այլ Մակուեցոց բռնութեամբ բարձեալ և տարեալ զնոսին յիւրեանց աւան: Աղիւսաչէն է եկեղեցին որպէս և գաւիթ նորին, հաստատեալ ի վերայ չորեցուն սեանց, բարձրաբերձ գմբեթաւ, երկու աւանդատամբք, ունելով արձանագիր (զշինողին Խօջայ Սաֆարի) ի վերայ մեծի դրան տաճարին պէսպէս քանդակօք զբուրազելոյ յամի 1655.

**Ի թուականիս Հայոց ՌՃԴ կանգնեցաւ սուրբ դուռնս այս հրաշազան յօրինմամբ, որ յանուն Սուրբ Վարդան Զօրավարին ի վայելչութիւն աստուածապահ գիւղաքաղաքիս Աստապատու. զոր ետ կազմել Խօջայ Սաֆարն ի հալալ ընչից ի փրկութիւն հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց Միրիչանին եւ Նարինին եւ կողակցին Հռոմսին, եւ որդւոյն Պարոն Յովանիսին եւ Մարդարին եւ քուերն Խանուամին եւ . . .**

Ի վերոյ դրանն կայ քանդակ պատկեր Տիրամօր մանկամբ Յիսուսիս ի գրկին և այլովք, որպէս տեսանի ի պատկերիզ (Թիւ 143). յորում թերեւս շինող եկեղեցոյն կերպարանէ զինքն ծնրադիր առ ոտս Տիրուհոյ Կուսին: Աստի և անտի և ի վերոյ խաչարձանք են վերնագունին գիր նշմարի այսպէս.

**Սուրբ Խաչս յիշատակ Յովանիսին ծնողացն, քուերն Հռոմսին եւ . . . Թվ. ՌՃԵԻՆ.**

Ի ձախմէ պատկերի Տիրամօրն նովին թուականաւ գրեալ է պակասաւոր արձանո.

**Յիսուս Քրիստոս. Սուրբ Խաչս յիշատակ երեսփոխան իշխան . . . . . եւ դստեր Ռոմսիմին . . . . ամին Թվ. ՌՃ եւ Ե.**

1 Գննել է յԷջմաշին Ա. Կոտարան մի գրեալ յԱստապատ յամի 1309. (Թիւ մասնին 388):

Յաջմէ կամարի դրանն և յահեկէ խաչարձանին նշմա գրուածին, զոր ոչ կարացի որոշել և վերծանել ի լուսի միւս եւս գրուած, որ և թուի մասն աշակողմեան սաստպին.

**. . անաւանդ (յշ)տկ . . Ամիրդտէն Յայրապետն եւ որդին Դաւիթն .**

Յահեկէ կամարին և յահեկէ խաչքանդակին՝ դարձեալ ի նմին ամի (1656-7) գրեալ է.

**Սուրբ Խաչս յիշատակ դարբին Գրիգորին, կողակցին Մարիամին, որդոցն Անդրէասին, Ովանիսին. ԹՎ. ՌՃԵ.**

Իսկ յաջմէ խաչքանդակին՝ որպէս երեւի շարունակի արձանն՝ այսպէս.

**Եւ միւս որդւոցն Հայրապետին, Պօզոսին եւ ծնողացն Պօղոսին Գահրամին ? Օվանիսին .**

Իսկ ի ճակատ բեմին ի ստորեւ խաչին՝ գրեալ է յետ սակաւ ամաց, այն է յամի 1658-9.

**Սուրբ Խաչս բարեխօս է Ազնց Պետրոսին եւ ծնողացն Կիրակոսին, Խաթունջանին եւ կողակցոյն Նունումին, եւ դատերցն Շնորհֆորին, Ղզեթարին, Հերիքնազին. ԹՎին ՌՃ եւ է <sup>1</sup> :**

Ի վերայ աւազանին (որ ի սեաւ կճոյ) գրեալ է յամի 1681.

**Յիշատակ է սուրբ Աւազանս Բաբունենց Աստուածատուրին եւ Վէլումէնց Կարապետին որդի Աւետիքին. ԹՎին ՌՃԼ :**

Ի վերայ սեան միոյ գաւթին նորագոյն թուականաւ 1703 ամի, գրեալ կայ յիշատակս.

**Աշակերտ Տեառն Յովսեփայ մեծի բաբունապետի . Սուրբ Խաչս բարեխօս լիցի այսմ եկեղեցւոյս վերակեացու Մարտիրոս վարդապետին որ բազում երկամբք յաւարտ հասոյց . Յիչեցէք եւ Աստուած ողորմի ասացէք իւրն եւ ծնողացն Տէր Ներսէսին եւ Մարթային. ՌՃԾԲ ԹՎին .**

Կից յեկեղեցի Ս. Վարդանայ և անտի մտանելի՝ է գրելոցս՝ այլ ոչ գիտեմ յորում կողման եկեղեցեացս կամ այլ եկեղեցի փոքր յանուն Սրբոց Առաքելոցն Պետրոսի վանացս՝ են և ստորագրեալ արձանքս, յորոց գուշակի և Պօղոսի, սագաչէն, կարմիր աղիւսաք: Զատ ի վերոյ լինել և այլոց նոյնպիսեաց.

**Յիշատակ (է խաչս) Աբրահամի որդի Աղպակին. Աստուած ողորմի ասէք :**

**† Սուրբ Խաչս յիշատակ խջ Մարջինն . . . Յակոբն Մարտրսն. ԹՎ. ՌՃԻԷ.**

<sup>1</sup> Աւ սովաւ կարծեմ և զոյս արձան գուշակից թուականաւ առաջոյն (1656-7).

Յիսուս Գրիստոս. Սուրբ Խաչս յիշատակ վասն ծնողացն Խաչատրն Հոռոմանն իւր կողակցն. ԹՎ. ՌՃԵ.



† Սուրբ Խաչա յիշատակ Խ(ա)նր(է)կուն եւ ծնողացն Թողաթին Մամա խաթունին . որդոցն Ատումին , Բալասանին .

† Սուրբ Խաչա բարէխօս է Աթաճանին եւ կողակից Բէկոյն . ԹՎ . ՌԻԱ<sup>հ</sup> .

† Սուրբ Խաչա բարեխօս Խօջայ Հայրապետին եւ կողակցին Խանբէկին . ծնողացն Ամիրզատին , Բէկումին . որդ(ոյն) Ատումին :

† Սուրբ Խաչա յիշատակ Սարգսին եւ իւր կողակցին . . . . .

† . . . . . նոցին եւ ծնողացն Ավդենց Պետրոսին . . . . .

† Սուրբ Խաչա բարէխօս Վարդ Խաթունին եւ կողակցին Սահկ(ի)ն . որդ(ոցն) Աստուածատրին . Զաքարէ . ԹՎ . ՌՃ եւ Ե .

Կամօն ամենակալին Աստուծոյ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Արքոյ . Ես մե զայպարտ Պօզոս լոկ անուամբ վարդապետս յերկրէն Մոկաց . . . . .

Անգ է Թերութիւն կարեւորագոյն արձանիս . նոյնպէս և յետագայիս՝ որ հնագոյն է Թուականաւ (1481) .

ԹՎ . ԶԼ . Աստուած ողորմի . . . .

Ի սկիզբն ԺԸ դարու (1704) յիշին Խաչատուր և Մարտիրոս վարդապետք Աստապատցիք միաբանք Էջմիածնի , այլ և Փիլիպպոս Պարոն տէր , այսինքն եպիսկոպոս : Ի նմին ժամանակի (1701) յիշի և զլիսաւորն Թուրքմանաց կողման Աստապատու՝ Արիմապուրտ ? անուն . Ի զալ այդ Աբրահամու կաթողիկոսի (1735-6) որ և օրհնեալ գեղաբարձք և վանք Աստապատու կոչէ , խան տեղւոյն էր Զաճար (?) ՄԻճմէտ . և յայնմ ժամանակի դէպ եղեւ զԴաւթի Աստապատեցոյ դուստրն քարչել պաշտօնէի միջ Նախճաւանի , և բողբոջ կաթողեկոսին առ Շահն Պարսից : Ի կէս անցելոյ դարու աստի ընծայեցաւ Աբրա , համ արքեպիսկոպոս Զմիւռնիոյ (որ եկաց զամս 9) և յետոյ Սիւնեաց աթոռոյն : Բայց նուազեալ էր յայն ժամ Աստապատ ի շինութենէ և ի բնակչաց , վասն աւերանաց և մարտից յետ սպանման Նատիր Շահի , և եւս քան զեւս անչքանայր . որպէս զի յառաջին քառորդի դարուս Ապպաս Միրզա Թագաժառանգ Պարսից եհան անտի և զմնացեալ բնակիչսն և վարեաց անդրազոյն յարեւելս , իսկ զԱստապատայ չէնս մասամբ քակեալ շինեաց անդէն ամրոց մեծ ըստ խրատու և առաջնորդութեան փառնկ ճարտարապետաց , քառակուսի , ընդարձակ պարսպօք և խրամով , ուր և մթերէր զհամբար զօրուն և զհարկ գաւառին . և կոչեաց յիւր անուն Ապպասապատ , և զինեաց 30 հրետօք . յայնժամ եկեղեցին մեծակառոյց մնաց ի միջոցի ամրոցին և փոխեցաւ ի համարանոց : Այլ կարճատեւ եղեւ բողբոջ ամրոցին . նախ զի ոչ ըստ ճարտարութեան ձեւոյն և

կազմութիւնն եղեւ . փոխանակ հաստապիրզ վիմօք զհիմունսն և զստորտան ամրացուցանելոյ՝ զվերին կողմանս ծանրացուցին մեծամեծ վիմօք , վասնորոյ և փութով ըսկըսաւ քակտիլ . և ապա ի վերայ եհաս պատերազմն Ռուսաց , որք գրեաթէ անաշխատ տիրացան նմին յամի 1827 . և այժմ գրեաթէ լքեալ ամայացեալ է տեղին . ուր որպէս ի սկզբան դարուս և արդ 300 տունք ազգայնոց ասին լինել , և 100 տունք Պարսից :

Ի տարաշխարհիկ վաճառականաց Աստապատի յիշ խօջայ Յովնաննէս ոմն որդի Սահակայ ի վենետիկ , յամի 16 6 , ուր ի նորոգութեան Ս . Խաչ եկեղեցոյ ընծայեաց սիւնս երկուս : — Ժամանակակից են սորա և Բարսեղ , Թորոս և Առուիս վաճառականք նուիրատուք Ս . Աստուածածնի վանաց Գաղատիոյ , զորս Ազտապատեցի գրէ կոնդակն . նուէրք նոցա են անօթք և սպառք արծաթիք :


183 . Գետափնեայ դիրք Աստապատու առ Երասխաւ , ընդ որ և անցք լինէին (որպէս և յամի 1604՝ ի խաղաշն Զլալ օղլի բանակաւ ի վերայ Պարսից) , պահանջէին զբարգաւաճանս տեղւոյս , որպէս և Զուղայի , վասն առաւել մերձաւորութեանն ի Նախճաւան . վկայէ այսմ Դաւեանիէ որ ի կէս ԺԷ դարու աւուրս երկուս ազաւաստ , և կոչէ քաղաք փոքր այլ յոյժ գեղեցիկ , որոյ ամենայն տուն ունի աղբիւրս , և 4 կարաւանատունք են . սահմանքն յուրթի և այգեւէտ . և միակ երկիր յաշխարհին որ բերէ զկարմրաներկ արժատն Ռօնաս , Բոնաս , որով ներկանեն Հնդիկք զկտաւս իւրեանց <sup>1</sup> : Մերքս

1 Ce n'est qu'une petite ville, mais qui est très-belle: il y a quatre Caravanséras, et chaque maison a sa fon-

taine. L'abondance des eaux rend le territoire excellent, et surtout il y croist de très-bon vin. C'est le seul pays

շաւանդեն զվաճառականաց ինչ սեղւոյս կամ զայլ յաւ-  
ջողուածոյ. այլ առաւել քան զգիւղաքաղաքն հաշակեն  
զվանս նորին, ոչ զմերձաւորն Ս. Յովնաննէս, որոյ  
մնան դոյզն աւերակք, և թուի լինել կուսաստանն՝ զոր  
ետ քակել Ասլպաս Միրզա վասն շինութեան ամրոցին  
իւրոյ, և որոյ կմախք իմն մնան ողորմելի սեպեամբ. ի

կարմիր քարանց զողով կերտեալ, ի միջին մնան խորա-  
նատեղին, մուտք դրանն և աւազան մի ջերմնարոյժ. ու  
նէր և երկուս կիսատ աշտարակս: Վայելչութեան նորին  
վկայեն և բեկորք քարանց հանելոց անտի և որ ի նոսին  
արձանագրութիւնք, ցրուեալք արդ ի պարտիղի բերդին.  
Ի տապանագրի միում գրեալ երեւի.



142. Ս. վարդան եկեղեցի յԱստապատ.

**Այս է տապան Շա է տիպարի? կին խանոււմին դստերն խուումսին որ է  
յերկրէն Գենտուցի (?) գեղն ը? նեղայ <sup>1</sup>.**


Յայլում վիմի է պակասաւոր արձանագիրս ի կէս ժէ դարու (1652).

**Յիշա(տակ) է սիւնս Գ . . . . ճանի որդի . . . . ումին . ծնողացն Մար-  
գարին, որդւոյն . . . եւ թամարին կողակցին . Թ . ՌՃ .**

du monde qui produit le *Ronax*, dont il se fait un si grand  
debit en Perse et aux Indes. — TAVERNIER. I. 47. <sup>1</sup> Ա. երի սորին թուի գրեալ և այս արձան. Այս է տապան  
Ս...րու որդի թումիս:

Բուն և մեծ վանք Աստապատայ երկու մղոնաւ չափ հեռագոյն կայ ի հարաւոյ արեւելից, ըստ դրիցն զոր նշանակեցաք ի վեր անդր բանիւք Զաքարիայի Վաղարշապատեցոյ, յոր սակս և կոչի Քարատակի վանք, և վասն գունոյ քարանց շինուածոյն՝ կարմիր վանք, իսկ յանուն Սրբոյն որում նուիրեալ է՝ Ս. Ստեփանոս. դարձեալ և ըստ բարեխօսութեան սորին կոչի ուրեք խնդրակատար Ս. Ստեփանոս. ի միջավայրի քարագագաթանն կառուցեալ է եկեղեցին պարսպապատ

միջակ մեծութեամբ վիմահիմն և աղիւսակերտ, ի վերայ երկուց սեանց հաստատեալ, գմբեթաւ և երկու աւանդատամբք. ունի և ժամատուն հանդերձ զանգակատամբ: Յայտ է թէ հին է առաջին շինութիւն եկեղեցւոյս կամ վանացս, ըստ ոմանց ի Զ դարու կառուցեալ. յիշի ի Բարգենեան կոնդակի յամին 976. և գտանի նոյն թուականաւ խաչվէժ մի ագուցեալ յաջմէ դրան տաճարին, միայն զթիւն ունելով. ի թվ. ՆիՋ: Յայլում վիմի ԶիՋ (1277) թուական. իսկ նորագոյնք այսօրիկ են.



143. Կարմիր վանք Աստապատայ, Ս. Ստեփանոս.

**ԹՎ. ԶԻ. Աստուած ողորմի ապաշխարողին .**

Գոյ և թուական ԶիՋ, 1477. այլ արձանագիրն չերեւեցաւ: Միւս եւս արձանագիր է 1481 ամին.

**† ԹՎ. ԶԼ. Ես Յոհան կանգնեցի զ(խաչ)ս հաւր Աթանասի եւ մաւրն . . .**

Յետ այսօրիկ նորագոյն արձանագիրք ժէ դարու, որպէս յամին 1673 ի տապանի Յակոբայ վարդապետի

յիշելոյն ի Զաքարիայ վարդապետէ ուսումնակցէ նորուն՝ իբրեւ վերաշինողի վանացն, այսպէս.

Այս է տապան դամբարանի .  
Տեառն Յակոբայ վարդապետի ,  
Այս բարունոյս մերոյ վեհի .  
Էին ազինք արք երեքի ?

Աստուածատուր եւ Պալոն եւ Թեղոն <sup>1</sup>  
Ուրի սոցին ծախիւք վէմս կազմի ,  
Եւ կափարիչէն էլ շիրմի .  
ԹՎ. ՌՃԻԲ .

<sup>1</sup> Ի ստորեւ (տես յէջն հետհետաւ, 512) թեզոն գրի, կամ այսպէս ընթերցեալ է յընդօրինակողէն :

Ի կողմ շիրմին գրեալ են անուանն,

**Թեղոնի որդի Նուրիջան .**


**Պալոնի հայր Հայրապետ .**

**Աստուածատուրի որդի Ավար :**

Սակաւ ինչ հնազոյն քան զայս է յետագայ տապանագիրն 1660 թուականաւ .

**Այս է տապան Զաքարիա վարդապետին . ԹՎ . ՌՃԹ .**

Իսկ անթուական այլ հնազոյն եւս է արձանագիր վանացն . որ յերկուս զայն բաժանէ մասունս , յարեւել-  
դրանդուց միջնապարսպի կամ անջրպետ հողալէն որմոց լեան և յարեւմտեան .



144. Ս. Ստեփանոս եկեղեցի յԱտուպատ .

Ի ժամանակս Պարսից արքային Շահ Աբասի Պաշտու վարդապետս ,  
Թուռնայ եպիսկոպոս առաջնորդս . Մեք Աստապատեցի քահանայք եւ ժո-  
ղովուրդքն նորոգեցինք զպարսպս զայս : — Եւ ընկերօքս իմ շինեցիք ըզ-  
պարսպս ի հիմանց կամաւ ամենակալին Աստուծոյ . . . ճող քարերոյս զՅո-  
վանէս արք . . . :

Այս միջնապարսպ վան թուղութեան նիւթոյն քայ- կարմիր կոփածոյ քարանց՝ կանգուն կան , հանդերձ  
քայեալ է արդ . իսկ արտաքին պարսպէն որ ի մանր բրգամբք . յարեւմտեան մասին է եկեղեցին և բնակս .

բանքն քարաշէնք և կրկնայարկք, ձգեալք և զհիւսիսս կողմամբ. յարեւելեան մասին են այլ կարեւոր շինուածք վանացն և գուռք և ախոս 60 ձիոց բաւական: Յարեւելե-

լեան հիւսիսային անկեան է կամարակապ մեծ դուռն պարսպացն ի կոփածոյ քարանց, ունելով ի վերայն խաչվէմ, արձանագրաւս 1707 ամի.

**Սուրբ Խաչս բարեխօս է եւ յիշատակ է պարսպիս վերակացու Յովանէս վարդապետին եւ ծնողացն Մալխասոին, Ղզեթարին եւ քվերն Շահփարվարին. Թովին ՌՃԾԶ<sup>1</sup>:**

Զմասն մի պարսպացս եւս ետ քակել Ապպաս Միրզա ի պէտս շինութեան Ապպասապատի: — Յիշատակագիր ոմն ծանուցանէ ճշգրտիւ, զի յամի 1697 «սկիզբն» եղել շինութեան սուրբ Ուխտիս ի կողմն յարեւմը: «տեան, կոփածոյ վիմօք, ներքնատնօք և վերնատնօք» զարդարեալ կամարակապ: Նա և շինող և առաջնորդ «սուրբ ուխտիս Յովսէփի աստուածարան վարդապետ, «որ» և զՊատմագիրս զայս (Ագաթանգեղոս) գրել ետ.

«... Ես Սարգիս գծագրեցի»: Դարձեալ և այլուր ի նմին մատենի գրէ նոյն ինքն Յովսէփ վարդապետ. «Յի» շեցէք զստացող սուրբ զրոյս զքանքարակորուս Յովսէփ անուամբ եւեթ վարդապետ, և զծնողս իմ զԱւետիսն և զՄարիամն», և այլն: Այս Յովսէփ շինող բնակարանաց վանացն՝ թաղեալ կայ ի ժամատանն, և կճեայ կաթարիչ տապանին ունի զայս արձանագիր, թուականաւ 1706 ամի.

**Յայսմ տապանի կայ պահեստի Յովսէփ քաջ եպիսկոպոսն արհի, Որ է տեղեալ Աստապատցի Նորոգող բազմաչխատ այսմ ուխտի,**

**Աշակէրտն Յակոբայ մեծի, Որ կայ ի դուռն խորանի. Առ Տէր հանգեալ ՌՃԾԵ<sup>2</sup>, Յաւուր սրբոյ մեծի Զատկի<sup>3</sup>:**

Ոչ գիտեմ ո՞ է Մեծդ Յակոբ, կաթողիկոսն, եթէ աշակերտակից Մովսիսի կաթողիկոսի և Վաղարշապատեցւոյն. բայց էր և այլ Յակոբ աշակերտ սորին Զաքարիայ, որ և արեղայ փոքր էր ի ժամանակի արձակման վերոյիշեալ կէտօղէ կնոջ ապաշխարողի, վասն սրոյ մասնոց նա զպատարազն, և յետոյ եղել առաջնորդ վանացս: Առ մեօք Նիկողայոս վարդապետ առաջնորդ՝ յամի 1831 ետ նորոգել զհիմունս որմոց եկեղեցւոյն. որ հանդերձ այլովք շինուածովք ոչ սակաւ փնասեցաւ ի սասանութենէ 1840 ամին, և զանգակատունն հերձաւ. այլ ցարդ չէն է տեղին, ընդ տեսութեամբ ՆախճաւաՆու հոգաբարձուին: — Ի մօտ ամքս (1882) Յովակիմ եպիսկոպոս Տէր Գրիգորեանց էր առաջնորդ կարմիր վանաց, որ յետ Վ. Գեորգայ կաթողիկոսի կոչեցաւ յԷլմիածին՝ յանձն առնելով զտեղին ի Ստեփանոս Վ. Երընձակայ վանաց<sup>1</sup>: Զերկոսին եւս վանորայս Աստապատու՝ յառաջ քան զթուականն զտեալս արդ ի կարմիր վանս, յիշէ Վանանդացին Թովմաս յիւրում ուխտագրութեան.

կրեալ յԱրիստակիսէ որդւոյ Ս. Լուսաւորչին, այլ պահի նորին կամ այլոյ Խաչի ի կարմիրս յայս վանս՝ ոչ յիշի կարծեմ այլուր: — Արրահամ կաթողիկոս յայցեալութեան իւրում աստ (1736), հառաչէ ի տեսանելն միանգամայն զվայելչութիւն տեղւոյն և զամայանալն. «Իջի յանապատ օրհնեալ գիւղաքաղաքն և ի վանքն Առ տապատու, գեղեցկալէն և պատուական: Աւաղ ժա» մանակիս նեղութեան և նուազութեան ազգիս իմոյ» Արամեան. զի գալարին աղիք իմ ի տեսանելն զան» նման վանորայս և զսուրբ ուխտսն, վասն ոչ զօրոյ» թեմ և վիճակ. և թէպէտ գոն՝ բայց ամայի անլէն և» անմարդարնակ . . . : Այլ և յԱստապատ յաւուր» Մեծահրաչի կիրակէին՝ կատարելով զխորհուրդն սոս» կալի, ձեռնադրեցի երեք եպիսկոպոսս», և այլն:

Ի նոյն ամս գրէ և Այսիրքեան? ոմն Մուշեցի Տէր վրդանէս՝ անոճ շափարանութեամբ զտեղւոյս, ուր և Լատիկ անուն անապատ մի յայտնէ, եթէ այդպէս մարթ իցէ ուղիղ ընթեւնուլ և իմանալ զբանսն, և ոչ Շատիկ.

« Ի ՆախճաւաՆ յերկիր հասին,  
Եւ սուրբ Ուխտն Աստապատայ  
Կրկնակի վանքն որ անդ կայ.  
Սուրբ Յովհաննէսն որ գերակայ,  
Ստեփաննոս նախնի յըկայ,  
Եւ Սուրբ Խաչն գերահռչակ,  
Ռատակեպի սրբազոյակ »:

« Յաւուր յետնում ժամանակի  
Հանդիպեցայ յանապատի,  
Քարքրեալ խախտեալ կայր ամայի,  
Զկայր մեզի (միջի) կրօնաւոր մի.  
Որ և յերկրէ (Նախ) իջեւանեցի  
Գիւղաքաղաքն Աստապատին  
Ի յանապատին Լատիկեցի.  
Ի յերուսաղէմ գնալոց էի » . և այլն:

Սովորաբար վասն Գետարգել նշանին ասի երբեմն

Ի յերուսաղէմ գնալոց էի » . և այլն:

1 Արարատ օրագիր, ԺԶ, 70:

2 Յայնմ ամի Զատիկն կարեւոր է 24 մայիս:




Արբան և ամայացեալ իցէ ի շինից՝ անգեղ ըբրք բնութեան զուարթացուցանեն տակաւին զսահմանն ազգի ազգի պատուական մրգօք, յորս հռչակեալ է խնձորն արբունական, Սիպի առշրանի ըստ Պարսից, դեղձն պէսպէս գունով, տանձ և ծիրան:

Ի սահմանս Կարմիր վանացս ի կողս լեռինն երեւին քարայրք բրածոյք, համարեալք պահարանք գանձուց և գրոց:

184. Ի Կարմիր վանաց աստի ընդ հիւսիս մինչեւ հանդէպ Եամխանէ գեղջ, մահկաձեւ մասն մի երկրի յաջմէ՝ որ է յարեւմտից Երասխայ, իրբեւ երկու փարսախ լով քառակուսի, համարեալ է ընդ ձախակողմեան մասին գետոյն ի բաժին Ռուսաց պետութեան. զի որպէս յայտ է՝ աջակողմն Երասխայ աստանոր և մինչեւ իսպառ՝ բաժին է Պարսից պետութեան: Ոչ նշանակի չէն ի տեղուջ փոքու, այլ բլուրք ինչ. Սանկար քեփէ՝ առ ափն գետոյն, հանդէպ Ապպասապատու. և յարեւմտից հիւսիսոյ ի սահմանակցութեան բաժնից երկոցուն պետութեանցն՝ Պէշ քեփէ (չինգ գագաթն — ի վանաց

աստի մինչեւ յերս սահմանաց գաւառիս կամ մինչեւ ի Ջուղա՝ չիք այլ չէն, բայց յերից պահակատանց կամ իջեվանաց, որք կոչին յանուանս Նեղրամայ, Տարաշամբի և սորին վանաց. այլ միակ չէն՝ և այն յաջմէ Երասխայ, և ի Նախճաւան վիճակի համարեալ (որպէս և վերոյ գրեալ բլրաւէտ մասն երկրին), է Տարաշամբ գետոյն, և որ մերձ նմին Մաղարդայ վանքն՝ Ս. Ստեփանոս: Այլ հարկ է թէ յայտ ամայի միջոցի, որ ձգի ի Կարմիր վանաց ցսահմանս Ջուղայի՝ իրբեւ ընդ 10 մղոն, էին ոմանք յանուանեալ աւանացն Մարաց, որպիսիք Դաժգոյնք՝ իսպառ անծանօթացեալ, և Խրամ, ծանօթագոյն ի յիշատակս, այլ աւերեալ և անյայտացեալ: Այժմեան զրիչք մեր նոյն համարին զԽրամ և զՏարաշամբ, որ և Շամբ, ըստ բանից Վարդանայ աշխարհագրի, եթէ « Խրամ՝ Շամբի ձորն է », որպէս և բառակարգ աշխարհագիրն զրէ. « Խրամ քաղաքն ի հանրայ կողմանէ Նախուանայ՝ Շամբի ձորն է, առ ափն Երասխայ, ուր կայ Նախավկայն Ս. Ստեփանոս, նորոգեալն ի Բարգենայ ». այլ զի ձորն ոչ մի կէտ է



145. Միջոց Ջուղայի և Տարաշամբի.

կամ շինավայր, ի ճահ էր Խրամայ լինել ի Շամբի ձորի քան նոյն ինքն Շամբի ձորն, բայց եթէ զԽրամ եւս ոչ միայն չէն այլ և ձորավայր համարել ըստ նշանակութեան բառին: Թովմա Արծրունի ասէ վասն առանին Խրամայ, « է ի ներքոյ Աստապատոյ վանացն յեզեր Երասխայ ». Տարաշամբ վեց մղոնու չափ հեռի է ի վանացն յիջելոց, և ասելն ի ներքոյ նորին՝ թուեցուցանէ ինձ մտաւոցոյն նմին: Թողեալ զայս ի մանրագոյն խուզարկութիւն այլոց, յիշեսցուք մի անգամ եւս, զի Խրամ մի էր յաւանաց տուելոց ի բնակութիւն գերութեանն Մարաց և զարմից Աժդահակայ՝ ի Հայկազնոյն Տիգրանայ, յետ որոյ ցհազար և աւելի ամս լռեալ, յաւուրս արշաւանաց Արարացոց վերատին յայտնի, այլ զժխեմ տեսարանօք. զի սպա նախ յամի 643-644 « առին ըզ » Բերդն Խրամայ, և սատակեցին զնոսս սրով. զվանայս

» և զմանկունս գերի վարեցին »: Եւ յետ իբր 44 ամաց, « գունդ մի ասպատակութեամբ յարձակեալ . . . դոր » ծէին զանօրէնութիւնս յաւանս Մարաց, ի Խրամ, ի Ջուղայ և ի Խոջակունիս. զի զարսն հարկապահանջութեամբ խոշտանգէին, և զվանայսն զազրալից պղծութեամբ խորհէին խայտառակել ». բայց ի վերայ հասեալ նոցա իշխանապետն Հայոց Աշոտ Պատրիկ՝ եհար սատակեաց զբազումս և զայլս փախստական արար. այլ յ'առաւել հետամտելն զվնի նոցա օակաւ արամբք՝ վիրաւորեցաւ ի նոցանէ, և տարեալ յերկիր իւր ի Կոզովիտ՝ վախճանեցաւ (688): — Ընդ Նախճաւանի դատակնքեցաւ Խրամ յամի 708, ի հրածախ կորուստ ազատացն Հայոց, 400 արանց բոցակէզ և ծխախեղդ լինելով յեկեղեցւոյ իւրում, որպէս ուժ հարիւրքն ի Նախճաւանի: Գժպհի զիպուածովս անհետանայ ի պատմու-

թենէ խրամ, և հազիւ միւսանգամ ընդ աղօտ նըշմարի առ ի սպառսպուռ կորուստ: Երեւոյթն այն աղօտ՝ է հակիրճ և անբացայայտ յիշատակ աւերման նորին յամի 972. և նշանակի այս ինչ ըստ պատմութեան Առաքելի (ԽԳ), համառօտ գրուածով ի մագաղա՛մի եղելոյ ընդ նշխարաց Ս. Յովհաննու Կարապետին ի Զուղայ, ուր եզիտ այլազգի ոմն յետ վտարմանն Հայոց անտի, առ Շահ Աբասաւ, և էր գրեալն. « Այս » է մասն նշխարաց Սրբոյն Յովհաննու Կարապետին, » գոր Գրիգոր Լուսաւորիչն երեր ի Հայս, և եղ ի քա- » ղաքն խրամ. իսկ ի յաւերման խրամ քաղաքին ի Նիսի » թուին Հայոց՝ բերին ի Զուղայ »: Զամէն պատմա- հայր մեր ասէ յեղուզակաց յարձակեալ յայնմ ամի ի վասպուրական, հարեալ ի սուր սուսերի գրնակիչս խրամայ և յաւարի առեալ. այլ ոչ գիտեմ յորմէ՞ պատմէ՞ կամ ի յիշատակէ՞. բայց եթէ յայսմ ամի և թէ յառաջնուս, ահա ընդ անյիշատակ աւանս Մարաց դասի և սա. և արժան է խուզել զաւերակսն ի Հս. կուսէ Շամբի, կամ այնքան հեռի յայնմ կողմանէ ի վանից Մաղարդայ, որչափ հեռի է սա ի հարաւոյ Զուղայի, ըստ Յ. Շահխաթունեան:

Շամբիձոր, որ և պարզապէս Շամբ կոչի, և ըստ այլազգեաց թարգմանութեան Տերէի - Շամբ, նաեւ ի Հայոց Դարաշամբ, կայ յաջակողման եզերն Երասխայ, վեց մզոնաւ ի Հր. Աստապատու. ի միջոցի աստ գետն մեծ՝ ըստ Աբրահամու կաթողիկոսի, Կարմիր « վանից » առաջմէ անցանելով, մտանէ ի մէջ լեռանց և քար- » անձաւաց, և գնայ ի Տարաշամբն, ուր խառնի նմա և » Տղմուտս գետն . . . ուր վարդանանց մեծ պատերազմն » եղեւ . . . իսկ Տարաշամբն ի յԱրագու յայն կողմն » որ է յարեւելից . . . և անցանելով զՏարաշամբն՝ » լեռանամիջով հասանի ի Հին Զուղա »: Թողլով ըզ- քննութիւն Տղմուտ գետոյ և զճակատատեղին, որ ար- տաքոյ է դաւառիս և աշխարհիս Սիւնեաց, քննեցուք զՇամբ, մանաւանդ զվանս նորին Ս. Ստեփանոս. գի իբրեւ գիւղ կամ շէն գրեալն ոչ յիշի ի պատմութեան, կամ ոչ ինչ զէպք ի նմա: Ի Բարգենեան կոնդակին ի թեմս Մաղարդայ վանացն ասի, « Շամբ և իւր վանքն »: որ թուի որչիլ զվանս Մաղարդայ ի վանաց Շամբի- այլ մեզ չէ յայտ յետ Աստապատայն՝ բայց միայն մեծ վանքն Մաղարդայ. զարդիս գետոն՝ Տարաշամբ կոչի ի Հայոց, իսկ յայլազգեաց առանց վերջին տառին՝ Տարաշամբ. և է բնակեալ 30 տամբք, ուր երբեմն 700 տունք ասին լինել. եկեղեցին մեծ շինեալ կամ նորոգեալ է յամի 1626: Յելս ԺՁ դարու և ի սկիզբն ԺԷ էն անուանի եղեւ Շամբեցին Արիստակէս վարդապետ, ընկեր հաստատողաց անապատական կենաց և երկրորդ առաջնորդ մեծի Անապատին Տաթեւու, ուր և հանգեաւ: Ստարոտի իմն ասէ Դաւեանիէ ուղեւոր, որ երկիցս էանց ընդ այս տեղի, եթէ ամենայն Շամբեցի՝ այր և կին, 18 ամենի մոլեգնին, այլ անվնաս մոլեգնութիւն, և ասեն

զայն ի պատուհաս հալածանաց առաքելոցն Բարդողիմեայ և Մատթէի, զոր նախնիք իւրեանց յարուցին ի վերայ նոցա <sup>1</sup>:

Բազում հաւանութեամբ սերունդ Տարաշամբի է Փանոս կամ Ստեփանոս Շամբեցնց մականուանեալ, որդի Մարտիրոսի, որ գրեալ է ի կիսոյ ԺԷ դարու ցըվերջն կեցեալ է ի վենետիկ, և ծանուցեալ մի ի ճոխից վաճառականաց Հայոց, իբրեւ իննսնամենի վախճանեալ (1708, մայիս 7) և թաղեալ ի Ս. Խաչ եկեղեցւոյ ազգին. ամաւ յառաջ գրեալ զկտակ իւր հայերէն, (զոր վէջիճան որդի Հայրապետի թարգմանէ յիտալ, (բազում քառասունս պատարագեաց կտակէ այլ և այլ եկեղեցեաց քաղաքին, այլ և Շահվէլեանց եկեղեցոց Նոր Զուղայի և Կուսանաց վանաց նորին. « Մէր Շավալենց » եկեղեցուն 30 տուկատ պատարաքի աղարկէք. Մեր » Զողոյ կանաքոչ (կանանց) հանայպատին 40 տուկատ » աղարկէք, որ մեզ ողորմէն տայն »: վասն հոգւոյ իւրոց և ծնողացն և կնոջն, այլ և որդւոցն նախավախճանելոց, « մեր Զուգեփին (Յովսեփայ) հոգուն 40 պատարաքի փող տուէք . . . Սան Զուանի Նովին (S. Giovanni » Nuovo) եկեղեցուն՝ մեր Նիկողոսին հոգուն 40 պատարաքի փող տուէք »: Զատ յայլոց երիցանց Հայոց և Լատինաց, « իմ Խոսսյվանիուս (Խոստովանաճօր) վառ- » դապետին տէք 5 տուկատ: . . . Պարոն Թասալէ » դառավաչին (աղախնոյն) 5 տուկատ տէք: . . . Սան » Զուլիանայ եկեղեցուն մեր Խոջայ Նանիպետին 3 հո- » գուն 40 պատարաքի փող տէք: . . . Մեր դառայվաչ » վէթուրին (վիկտորիա) 30 տուկատ տէք. որ աղչէկ » Սթլուին (իւր աղչիկ Անճելային) 5 տուկատ տէք »: և այլն. սյսպէս և այլոց դատերաց և որդւոյ և թուանց աղախնոյն կտակէ զումարս: Զատ ի 150 դուկատ հոդադրամոյ գրեթեմանին ի Ս. Խաչ, և պատարագեաց՝ պատուիրէ երկուս կանթեղիկս արժաթեայս շինել պատկերի Տիրամօր ի նմին եկեղեցւոյ, վասն տօնական աւուրց, և երկուս պղնձեայս վասն լուր աւուրց: Ի գոյից ստացուածոցն յիշէ 5 կարկեհան ակունս և 6 ոսկի ակաւ նակապ մատանիս, և 160 ոսկիս կարեալ ի կամարի գօտւոջն, և այլն, և այլն: Իսկ տապանագիր նորին գրեալ է այսպէս.

**Այս է տապան Զուղայեցի Շամպեցէնց Մարտիրոսի որդի Փանոսին. որ փոխեցաւ առ Քրիստոս ՌձԾԷ.**

**Ապրիէլի ԻԵ.**

Տասն ամաւ յառաջ քան զվախճանն (1697) տուեալ էր նկարել յանկիւնս խորանի բեմին զպատկերս չորից

1 On trouve un gros village appelé Chambe, dont tous les habitans tant hommes que femmes dès l'âge de dix-huit ans entrent comme en folie, mais d'une espece de folie qui n'est pas mechante. Ceux du pays croyent que

c'est un châtiment du ciel depuis que leurs anceêtres eurent persécuté dans ces montagnes Saint Barthelemy et S. Matthieu. — TAVERNIFR, V. 42.

2 Այս է Նաւապետ Գուլնազար Ազուլեցի. տես յէջ 244:



աւետարանչաց (որպէս տեսանի ցարդ), և ի ստորեւ միոյ միոյ գրեալ մի մի տող զյիշատակն, այսպէս.

Յիշատակ է Պատկերքս Շամբեցէնց  
Մարտիրոսի որդի Փանոսին եւ  
Կողակցին Ըռոփանէ եւ

Որդոցն Նիկողոսին Յովսէփին: Թ՛ւն ՌճԽԶ:

185. Իբրեւ միտնաւ և կիսով յարեւելից հարաւոյ գեղջս, և կիսով այսր չափու յափանց Երասխայ՝ ի գող մի ասորոտի Մաղառաց կամ Մաղարդայ լերին ի դը-ժուարակոխ վայրի՝ կանգնեալ կայ հռչակաւոր մենա-ստանն համանուն, որ յումանց դ և յայլոց Թ տառիւ գրի-գտաւ ուրեք գրեալ եւս Մաղարամ: Ըստ աւանդու-

թեան կամ ըստ կոնդակի՝ Խաչկայ Ա կաթողիկոսի, զոր ետ ի ձեռնադրութեան Բարզինի եպիսկոպոսի վա-նացս և վիճակիս՝ յամի 976, յորում « եղև կատարում » շինութեան և նորոգման աստուածաբնակ Սուրբ Նա-» խավկոյիս, շանիւք և աշխատութեամբ Տեառն Բարգի-» նի, որ էր սա շինեալ սուրբ Առաքելոյն Բարդուղի-» մէոսի. և ի սուրբ տաճարիս կայ հանգուցեալ սեւեւ-» ուեալ Բենեան բազկացն Յիսուսի, և յարքայական » Թագից փոշ պսակին ձիւղ մի, և ի Քրիստոսի ձեռաց » Գ հաց (կամ հատ) մանանայն. և քաջմահառաք սրբոս-» քիւնքս որք աստ կան հաւաքեալ »: Քննաչարթ է յի-չատակ յիսուսական մանանայիդ, զոր յետ կոնդակիդ



146. Մաղարդայ վանք, Ս. Ստեփանոս.

գտանեմ նախ յիշեալ ի Միխայելէ Ասորոյ, ըստ հայ Թարգմանութեանն. « Երեք հատ Մանանայ բերեալ ի » Բարդուղիմէոսէ, և եղեալ տփով ի հիմն եկեղեցւոյն՝ » որ հանդէպ հայի Գողթան գաւառին, որ առ Երասխ » գետով, ի տեղուջն՝ զոր Մաղարթն կոչեն »: Այսպէս և Օրբելեանն աներկրայաբար յետ յիշելոյ զշինութիւն եկեղեցւոյն ի Բարդուղիմեայ, ասէ. « Եւ պահեցաւ » յորժ եկեղեցւոյն ի մանանայէն Խարայեչացոց Գ հատ, » զոր հաստատէ Միխայել պատմագիրն »: սակայն որ-պէս տեսաք՝ Միխայել զմանանայն միայն յիշէ և ոչ զիս-

րայեչացւոցն: Հաւանագոյն գրէ Ղազար Ճահկեցի, Թէ, « Երբ և Առաքեալն Բարթուղիմէոս երեք մասն յորն-» նեալ հացէն՝ զոր Քրիստոս անցոյց, և եղեալ ի հիմն » եկեղեցւոյ », և այլն: — Ըստ յիշեալ կոնդակիդ Բարգէն Սիսական իշխանազն կրօնաւորեալ՝ շինեաց նորոգ զառաքելահիմն եկեղեցին և զվանսն, և հրաւ-րեաց ի նաւակատիս՝ զթագաւորն Աշոտ Ողորմած և զԽաչիկ կաթողիկոս, յամի 976. որոց հաճեցեալ յետ եկեղեցւոյն օժանեն և կարգեն զնոյն Բարգէն՝ եպիսկո-պոս, Թեմ սահմանեալ նմա զկարգեալն, որպէս ասի


1 Կոնդակս հրատարակեալ նախ ի Շահխաթ. եպիսկոպոսէ (Բ. 305) ապա յԱրարատ օրագրի Էջմիածնի՝ լրագոյն եւս, Թե-

պէս և հին ասի, այլ ոչ Թուի ինձ վաւերական կամ հարողա-րնագրին, զի երեւին ի նմին տնկեղեք մեծաբանութիւնք:



անդ ի Մեծէն Ներսիսէ, « զհոյակապ և հոչակաւոր  
 » մայրաքաղաքն Նախուան, կող գաւառն բոլորովին,  
 » թոյ՛ որ է Զարեանդ գաւառն և ամենայն վիճակ իւր  
 » բոլորովին, մինչ ի Նուան, ի Ղարաղարան՝ ոչ բա-  
 » ժանի յԱռաքելոց երկրէն և գնայ մինչև ի Ղարա-  
 » թափայն, և բաժանի ի Սալամաստայ. ի Երաս-  
 » խայ մինչ ի Մարանդայ գրիւէն (?), Մարանդ իւր  
 » վիճակովն, Երիրնթալն (?) իւր վիճակովն, գնայ մինչ  
 » ի Դիւեակն թոսրովու ի յԱզատ և ի Գիրան, ի Զու-  
 » ղա և իւր վանքն, Աստապատ և իւր վանքն, ի Շամբ և  
 » իւր վանքն, և ի Զաղաց ատեղն և իւր վանքն, յԱ-  
 » ըարք և իւր վանքն »: Յայլում կեդակարծ հին գրուա-

ծի, որ է կտակագիր Հովհաննայ դստեր Թագաւորին  
 Աշոտոյ, յամի 981, ասէ նա վասն հոր իւրոյ՝ ընծայեալ  
 վանացս զատ յեկեղեցական սպասուց, և՛ զայս ինչ  
 նուէրս. « Սրբոյ Յակոբայ եկեղեցոյն դիմաց զԱյգոյ  
 » Բողն, և Շամբայ երեք չաղացն, և Հաղցի զլուխ Սեր-  
 » մամուտն՝ շորս հատովն, և զՆաւատեղն. զորս դրա-  
 » մով գնեալ շնորհեաց և ոչ բռնութեամբ, և ետ յիշա-  
 » տակ հոգւոյ իւրոյ և բարեպաշտ ծնողացն »: Իսկ ինքն  
 Հովհաննայ եկեալ հիւանդագին այսր յուխտ Ս. Գեորգ-  
 զայ, և ի դառնալն՝ յԱստապատ ծանրացեալ յախտէն,  
 կտակաւ գրէ. « Կուսութեամբ կեցեալ, ոչ ունելով յի-  
 » շտակ ի վերայ աշխարհի, զայս դաստակիրս գնեցի



147. Այլ կողմն Ս. Ստեփանոսի Մաղարդայ վանից.


» Աստապատ, և ետու յիշատակ հոգւոյ իմոյ, և ընծայ  
 » անքակտելի ի դուռն Սրբոյ Նախավկային Մաղարդայ,  
 » որ է սերմամուտ Ն (400) գրկի, որ է ճԾ (150) բե-  
 » ոան սերմամուտ. և է Աստապատու հիւսիսային  
 » կողմն, հանդէպ Եղիւանոււն, շորս հատովն (սահմա-  
 » նովն). մէկ՝ գետն Երասիս կողեցեալ, մէկ՝ Երեւանայ  
 » ճանապարհն, մէկ՝ Նախուանայ ճանապարհն, մէկ  
 » Տախտոյն: Զայս արտս գնեցի և ետու ընծայ սուրբ  
 » ուխտին Մաղարդայ, և տեղի շիրմի իմոյ, զի մի Թա-  
 » ղեցի յօտար ժառանգութեան և գերեզմանի, այլ ի  
 » մէջ ազարակիս Թաղեցեան զսպականացու մարմինս,  
 » զի մի անյայտ եղեցի: Եւ գրողորն ամ յամէ ցանեա-

» ցեն. և զարմտիսն ժողովեալ ի Ս. Նախավկայի ուխ-  
 » տն տարցեն, որպէս զի կրօնաւորք տեղւոյն վայե-  
 » լեացեն, և ընդ Թագաւորի հօրն իմում զիս եւս յիշա-  
 » տակեցեն փրկարար սուրբ պատարագաւ. և զգերեզ-  
 » մանն իմ անփոյթ մի արացեն, զի մի կորիցէ ժա-  
 » ոանգութիւն իմ »: — Բարքայական և կաթողիկոսա-  
 » կան գրուածին՝ ընդ եկեղեցեաց յիշին և այլ սուրբ.  
 « Հնձէքս և հայրենիքս և դաստակերտ և ընծայարան,  
 » հին Մաղարդայ վանից Ս. Ստեփանոս Նախավկային,  
 » Տիրամայր Ս. Աստուածածնին և Ս. Գեորգ Զօրավա-  
 » ղին »: Զերեսին զայսոսիկ յիշէ և Հովհաննայ ի կտակին,  
 և յայտնագոյն եւս ասէ. « Հայրն իմ Թագաւորն Աշոտ

» կոչեցեալն Շառն շառն՝ եկեալ էր ի սուրբ ուխտս Նա-  
 » խաւկային, հանդերձ մեծամեծ իշխանաք և ազատա-  
 » գունդ զօրօք. և տեսեալ զսուրբ ուխտին գերեք տա-  
 » ճարն խախտեալ, որ էր յանուն Ս. Նախաւկային, Ս.  
 » Աստուածածնին և Սրբոյն Գէորգայ, շինեալ և հիմնեալ  
 » ձեռամբ սրբոց Առաքելոցն Թաղէոսի և Բարթուղի-  
 » մէոսի, զոր վերստին ետ շինել Թագաւորն Շահանշահ՝

» հրաշագան եկեղեցի »: Յայտ է թէ էր հեռի ի սոցանէ  
 Ս. Բակորայ եկեղեցին այն զոր յիշէր սա: Իսկ արքա-  
 յատուր կալուածքն յիշեալք ի Հռիփսիմեայ, վաւե-  
 րանան այլ սոգք արձանագրաւ, գծեալ ի բուն խաչի  
 միոյ, որոյ սեռն երկաթեղէն է և ի վերայն ազուցեալ  
 ապակիս անկիւնաւորս, տասն կոտոր ընդ երկայնու-  
 թիւնն և ութ ի թեւնն.

**Յիշատակ է Սուրբ Խաչս Յովանէս Թագաւորին Հայոց եւ կողակից  
 Շուշան տ(իկ)կն(ոջ). Եւ որդի Աշոտ Թագաւորս բազում զաւրաւք եկի  
 ի սուրբ ուխտս. ետու Շամբա ջաղացներն, Երասխի Նաշն եւ Աստապա-  
 տու հողն սուրբ Նախաւկային. յիշատակ մեզ եւ ծնաւդաց. ԹՊՄ. ՆԺԵ.**



148. Ճակատ եկեղեցոյն Մաղարդայ.


Ունի և արծաթեայ օղ կամ մանեակ ի կապել պնդել  
 զխաչն ի ձող, ուր երբեմն ծածանէր անշուշտ վառ Թա-  
 գաւորին: Գրիգոր ԺԱ կաթողիկոս ի հաստատելն յամի  
 1541 զԱթանաս եպիսկոպոս, գրեաթէ ըստ Խաչկայ  
 կոնդակին գրէ զսահմանս թեմի վանացս, այլ զստ ի  
 Ս. Ստեփանոսէ ոչ յիշէ զերկոսեան միւս եկեղեցիսն,  
 զորս իբր 115 ամօք յառաջ քան զայն (1427) յիշէր զը-  
 րիշ ոմն, հանդերձ նշանակաւ սահմանին և որոշակի ա-  
 նուամբ, « գաշառիս Շամբիծորոյ, ի մենաստանիս որ

» մականուամբ Մաղարդի վանք կոչի. ընդ հովանեաւ  
 » քրիստոսահիմն և առաքելաշնորհ սուրբ խորանացս,  
 » Ս. Աստուածածնի, և Ս. Ստեփաննոսի Նախաւկային  
 » և Սրբոյն Գէորգեայ Զօրավարին, որ կառուցեալ կան  
 » ի հարաւակոյս կողմանէ՝ հանդէպ Երասխ գետոյ »:  
 Գրիչն այն է Արծկեցի ոմն Գրիգոր անուն, որդի Էրվե-  
 յիքի և Գոհարի. Թղթի կոկողն՝ քուերորդի նորա ՄԻ-  
 նաս, գրել տուողն Հայր Աբրահամ « բարեսէր և ա-  
 » տուածահաճոյ », որ և ընծայէ զիրան (աւետարան)



հոգեւոր որդւոյ իւրոյ Դանիէլի. և սա ինքն, որ կրօնաւոր և աշակերտ բանի կոչի, որդի Պտղոյ և Զմրուտի, եղբայր Թոսփի, Մարգարի և Խտղրչի, և հայր կուսակրօն Առաքելի: — Կաթողիկոսն Գրիգոր տուեալ է ըզկոնդակն ի ձեռնադրելն յեպիսկոպոս վանիցս և վիճակին « ղհեզահոգի բարեմիտ և սրբասէր կուսան և սուրբ » վարդապետն Տէր Աթանաս, որ է սնեալ և վարժեալ » ի Ս. Նախավկայի վանքն. և ուսեալ էր զիմաստս » կրթականս ի ձեռն Ստեփանոսի քաջ բարունապետ » աի Սալամաստեցոյ », (որ յետոյ կաթողիկոս եղեւ): Թիչ և զվանականս ժամանակին. « Եւ դուք սպասաւ » ւորք Սուրբ Նախավկայիդ, Յովնաննէս վարդապետ » և Մկրտիչ եպիսկոպոս, և Տէր Հերապետ եպիսկոպոս, և այլ մեծ և փոքր միաբանք սուրբ ուխտիդ, սի-

» ըով ընկալարուք զԱթանաս վարդապետդ ձեզ եպիսկոպոս, որպէս արժանաժառանգ այդմ աթոռի և գաւհի », և այլն: — Եւտ Աթանասի յիշին եպիսկոպոսունք կարգեալք, Մատթէոս յամի 1563, Մարտիրոս յամի 1587, և ի ժամանակի յայտնութեան Նշխարաց Սրբոյ Կարապետին՝ զոր ի վերդ յիշեցաք յառաջին կէս ժիշ դարու, էր ի վանսն Շմաւոն ոմն եպիսկոպոս, առ որ ետ այլազգին զնշխարսն. և իմացեալ Զուղայեցեացն զաղթելոց, ի ձեռն Խօջայ Նազարի ետուն բերել ի Սպահան. բայց Շմաւոն թագոյց զմեծ մասն մի զամս բազումս, մինչեւ ի կէս ժիշ դարու. յորում ժամանակի Յակոբ Զուղայեցի, յետոյ կաթողիկոս, « նորոգէր ըզնոյն վանքն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային. բաւ զում և անթիւ ծախիւք, և մեծաւ աշխատութեամբ



149. Դուռն Մաղարայ եկեղեցւոյն.

» սկիզբն արար եկեղեցւոյն ի հիմանէ մինչեւ ցկատաւ » ըռումն կոփուածովք վիմօք. այլ և զպարիսպն ամեւ » նայն, և զամենայն շինուածսն որք ի նմա՝ զամենայն ի » հիմանէ ձեռնարկեալ վերստին նորոգեաց <sup>1</sup>: Եւ եւ » պիսկոպոսն Շմաւոն եկեալ առ մեծ վարդապետն Յակոբ՝ ծանոյց նմա վասն նշխարացն. և ասաց թէ կա » միմ խաչ շինել յաղագս յիշատակի իմոյ և անդ հան » գուցանել զնշխարն զայն. իսկ վարդապետն ծանոյց » եպիսկոպոսին, թէ ոչ գոյ հրաման ի կանոնաց զնել » զնշխարս Սրբոց ի մէջ խաչի, այլ յայլ արկեղ. վասն » որոյ կազմեցին վասն նշխարացն զայլ իմն արկղ ար » ծաթեայ աղիւսածեւ, և արարեալ ոսկէզօծ, և ընդե » լուզեալ ակամբք պատուականօք, անդ հանգուցին

» զնշխար Սրբոյն Յովնաննու Կարապետին », յամի 1654: Եւարտ շինուածոյն ի վախճանել Փիլիպպոսի կաթողիկոսի՝ ընտրեցաւ Յակոբ փոխանակ նորա: Դաւեռնիէ ճանապարհագիր որ երկրորդ անգամ եկն ի վանքս յամի 1668 (43 փերր.) 30 ամաւ յառաջ ասէ սկսեալ զշինուածն: Դաստակերտ Յակոբայ ի դէպ է ասել զրովանդակ վանսն և զեկեղեցին, զի չիք արդ մնացորդ յիշատակի և արձանագիր հին. կրկին են պարիսպքն, մին արտաքին հասարակ քարամբք, չափաւոր բարձրութեամբ և բլրազամբք, միւսն պատեալ զեկեղեցեալն. յորոյ հարաւոյ կայ անշրպետ որմոյ, և ի միում ի կողմանց սորին են բնակարանք միաբանից և առաջնորդին, ի միւսումն

<sup>1</sup> Վիպէ և ող ժամանակակից (1646). « Բաբունապետն Յակոբ՝ որ է փոխանորդ Տեառն Փիլիպպոսի երջանիկ կայրաւ »

» պետի . . . զառաւոր Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային՝ որ է զորն Շամբի անուանեալ, շքեղազարդ յօրինուածով կառուց »:

տնտեստունք և գոմք խառն փայտաչէն և քարաչէն , կըր-  
կնայարկ և եռայարկ : Եկեղեցին քարաչէն է չափաւոր  
մեծութեամբ քառակուսի ձեւով հաստատեալ ի վերայ  
երկուց սեանց , ունի աւանդատունս երկուս և վերնա-  
տուն աղիւսաչէն յարեւմտակողմանն վասն հաւատաւոր

կանանց , քարեղէն սանդղօք երկուստեք . բայց ի ներքոյ  
նորին են մատրունք երկու . ի միումն պահին նշխարք  
գտեալք անդ ի բրեշն , վասն այնորիկ և անդրէն ի նմին  
տեղոջ զետեղեալք , արձանագրութեամբս ի վիմի . յա-  
մի 1658 .

**ԹՎին ՌՂ երկի  
Հիմնարկութեամբ այսմ տաճարի .  
Սուրբ Հազարաց նշխարքն յայտնի ,  
Չեւամբ Յակոբ վարդապետի ,**

**Որ յետ իննեակ եռակ ամի ,  
Կաթողիկոս Հայոց լինի .  
Դարձեալ ի տեղւոյս ամփոփի .  
Թ՛՛՛ն Ռձէ ամի :**

Ճակատ բեմին և կամարի սեղանոյն սպիտակ և սեաւ  
կճով յարմարեալ է , նոյնպէս և յատակ արեւմտեան  
մեծի դրանն կապուտագոյն սեաւ կճով , համբուրելի ուխ-  
տաւորաց : Գեղեցիկ յոյժ է կաթողիկէն յարեւելա-  
կողմն տաճարին , 16 անկիւնի իմն , քանդակեալ պատ-  
կերօք Տիրամօր , 12 Առաքելոց , և Սրբոց՝ Կարապետին ,  
Ստեփանոսի և Լուսաւորչին . յանկիւնամէջն պէսպէս  
զարդք և սատկերք կենդանեաց , յորոց բերանոյ հոսի

անձրեւաջուրն . ի հարաւոյ կուսէ ամբառնայ զանգա-  
կատունն կրկնայարկ և գմբեթարդ շորիք սեամբք ,  
բայց մեծապէս աղարտեալ ի սասանութենէ 1840 ամին ,  
որպէս և կաթողիկէք արեւմտեան և հիւսիսային կող-  
մանցն : Յարեւմտեան կողման պարսպի եկեղեցւոյն է  
դուռն մեծ երկբայիկ երկաթապատ . իսկ յարեւելեան  
հիւսիսային անկեան տանեացն գրեալ է հակիրճ յիշա-  
տակ շինութեան եկեղեցւոյն .

**ԹՎ . ՌՂԲ . Հիմնարկեցաւ . ԹՎ . ՌՁԴ աւարտեցաւ .**

որ է յամէն 1643 ցամն 1655 : ի դրանդոջ արեւմտեան դրանն ի պատուանդանի կճեայ խաչվիմի գրեալ է .

**Յիշատակ է եւ բարեխօս սուրբ Խաչս Նախիջեւանցի Աղամալին եւ կո-  
ղակցոյն Մարիամին , եւ ծնողացն Աղաջանին , Նանագուլին . որ սա է  
պատճառ արեւմտեան պատին նորոգութեանն . Թուին ՌձԾԳ :**

Ի ներքոյ նորին յայլում վիմի գրեալ է դարձեալ նմանաբան յիշատակ նորոգողին , զայս օրինակ .

**Կամօք եւ ողորմութեամբն Աստուծոյ նորոգեաց Սրբոյն Ստեփաննոս  
Նախավկայի եկեղեցւոյս արեւմտեան կողմիս դրսի երեսն Նախիջեւանցի Ա-  
ղամալն . յիշատակ իւրն եւ կողակցուն Մարիամին եւ ծնողացն Աղաջանին  
եւ Նանագուլին :**

Իսկ երկուստեք դրանն աստի և անտի գրեալ են , յերկուս բաժանելով այս բանք .

**Յիշատակ է դուռս Ագուլեցի Խօճայ Նիկողայոսին եւ կողակցացն Մա-  
րիամին և Մարգարտին , եւ պապին Բարդողիմէոսին , եւ ծնողացն Ղար-  
տաչպալունն եւ Չիչակին , եւ եղբօրն Նազարին , եւ որդւոց սոցին ,**

**Տէրունին , Յարութիւնին , Ահարոնին , Սամուէլին , Եղիային , Խաչատու-  
րին , Պօղոսին , Մովսէսին , Եղիազարին , եւ միւս Նազարին , եւ քրվերն  
Եղիսաբեթին . ԹՎ . ՌձԻԹ .**

Կից ի տաճարս յայս ի հիւսիսայ կողմանէ կայ փոքր եկեղեցի մի եւս օրոցանէ, յանուն Առաքելոցն Պե-

տրոսի և Պօղոսի, արձանագրութեամբս ի սեաւ կհի ի նակատ բնին.

### Յիշեցէք ի Քրիստոս Աստապատեցի Խօծայ Աստուածատուրն եւ ծնողացն Խօծայ Արղմանն եւ Գիւլիւխանն եւ որդի Վարդանն, եւ կողակիցքն. ՌՃՀԵ.

Շուրջ կողմանք վանատեղւոյն են զառ ի վայր, հաւրաւակողմն յեցեալ է ի կռան լիւրինն Մաղարդայ. սակաւուք հեռի ի պարսպաց կողմանս՝ յաւազուտ առապարի ամբառնան ժայռք, և ի ներքուտ նոցին բղխէ աղբիւր յորդ, և անցեալ ընդ ստորերկրեայ ազուգայս և ընդ յատակ հեղեղատի փոքու, ելանէ զառաջեաւ արեւ, մրտեան դրան պարսպին և հողովեալ զլրաղացն՝ իջանէ յաւազան մեծ, յոռոզումն ընդարձակ սյգեաց և ծառաստանի վանացն, յորս են մեծամեծ ընկուզենիք: — Չայս աղբիւր արանդեն բղխեցուցեալ Ս. Առաքելոյն Բարդողիմեայ<sup>1</sup>. ընդ գետնազնաց անձուկ մատս մարթ է գնալ լուսով ճրագի ց՝ ակն նորին, ուր ի պատուհաւ նաձեւ խորշ վիմի՝ ազուցեալ է խաչ երկաթեայ հին յոյժ, ի նմին առաքելայ շինեալ, ըստ աւանդութեան. առ որ սողոսկելով իմն գնան ուխտաւորք ի համրոյր<sup>2</sup>. Նոյնպէս ասեն լինել և զոր ի հիւսիսակողմն վանացն՝ անդր քան զայգիս և զծառաստանն՝ երեւին քանդակք խաչից յապառատ վէմս: — Ի բլրի միում առ երի վանիցն է և գերեզմանոցն:

Մենաստանս Մաղարդայ ունի և այժմ վանապահ և սակաւ միաբանս, և համարի ի թեմի արքեպիսկոպոսին Ատրպատականի, զի կայ ի սահմանին Պարսից: Եւ մէ 1820 ցամն 1840 առաջնորդն էր Սարգիս Դաւթեան եպիսկոպոս. որում յաջորդեաց Յովհաննէս Գալստեան. յամին 1882 իգնատիոս վարդապետ էր առաջնորդ, որոյ անփոյթ գտեալ՝ փոխանակ նորա կարգեցաւ Յովհաննէս վարդապետ Աշոտարակեցի:

Վանքս Մաղարդայ պատուի որպէս մի ի մեծագոյն վանորէից կամ ուխտատեղեաց, մանաւանդ ի տոնս Վերափոխման Ս. Աստուածածինն և Ս. Խաչի. յորս խուռն գիմեն ուխտաւորք կաքաւելով իմն գայթ ի գայթ թի ընդ անհարթ ափափայս և ընդ ծերպս անձուկս, և ոմակք բոկոտն իսկ մատչին. զի են անդ արդարեւ նըշխարք սրբազանք, և առաւել եւս էին յառաջնումն. գան և այլազգիք յուխտ Ս. Ստեփանոսի, մանաւանդ ան-

զաւակքն, հայցելով որդիս, և նուիրեն անօթս պղնձեղէնս, որովք լի է պահարանն և տնտեստունն: Չնչխարս Սրբոցն յիշէ և Վանանդեցին ի քերդուածի սրբազան տեղեաց, զոր և գրեաց յամի աւարտման վերսյինութեան վանացս ի Յակովբայ կաթողիկոսէ. յետ Աստապատայ վանաց եկեալ այսր, ասէ.

« Ի մենաստանն Ստեփաննոսի  
Եւ առաջին Մարտիրոսի,  
Մասըն նորին մեզ հովանի.  
Եւ Յովհաննէոս կարապետի.  
Պանտաչեռի մեծ բժշկի.  
Ընդ Գաւազանն Բարդուղիմի.  
Գլոշիս Ղուկասոս քարոզողի,  
Եւ Անդրէի նախակոչի,  
Մասն Հեփիսիմեան նահատակի,  
Եւ Գրիգորի Ալիսկանտի:  
Ալըն Սրբոց հայրապետաց  
Գրիգորիսեանց առաջնորդաց.  
Եւ Երանանդիցն Ալակերտաց  
Մասըն նոցին սուրբ նչխարաց.  
Ալ և մասն Կիրակոսի,  
Եւ սուրբ Սարգսի զօրավարի.  
Եւ Վարդանայ Սպարապետի.  
Եւրս եւ Խաչըն թաղեալի.  
Եւ Գերեզմանըն Հագարաց,  
Եւ Մանանայն որ է կենաց.  
Գեղարդըն սուրբ աստուածամուխ,  
Ալ և Բենեթըն ձեռնամուխ.  
Խաչըն Պարսաւանց ճրգնաւորին,  
Իւղն օրննոսրեան զկնի նորին.  
Աստուածածինն ամենօրհնեալ  
Ընդ Երից մանկանցն հրաշացեալ.  
Եկեղեցիսն Առաքելոց,  
Որ զկապարիչն ունի ի ծոց »:

Դաւեանիէ ճանապարհազիր յիշէ ի սրբութեանց սորին

<sup>1</sup> Յիշէ զպատիկ և Դաւեանիէ, լուեալ է Հայոց, այլ փոխանակ Բարդողիմեայ Մաթթէոս ասէ զառաքեալն աղբիւրանս: — Պատեւ նա յայնմ ժամանակի զթաղումն վարդապետի կամ եղիւ կողոսի միոյ նուիրակի Էլմիանի վախճանելոյ ի Զուգայ, զոր բերեալ թաղեցին ի գերեզմանատան վանիցս:

<sup>2</sup> Գաւազ Երեւանիս յամի 1842 (յօգոստոսի) եկեալ այսր յուխտ, այսպէս ստորագրէ զելան ի վերին կողմանս քարալիւրին, ի տես ճգնաւորի ուրուք՝ երբեմն աշխարհավարի և զօրավարի. Սեղացեալ անգլին լիւրան բարձրութիւնը յառաջս ելաւ, որ ներքեւիցն նայելի՝ այնքան զգալի չէր. էն կողմի էս կողմի մանր մուկը այսերը՝ սրտը ժայռերի պատառուածներում են՝ մեծ փորուածք էին, մեծամեծ քարանձառները, անտաշ քարափնէրը, խորուորուրդ մանր ձորերը, սփռեկ սփռեկ քարերը, ինչ և կը յուսանացնէին . . . ամէն քալլումս ոտքերս սպռտվում

էին. բոլոր լիւրան անտառս ամպի, բաց ի սաներիցս քալլում, փոխներէն և օգի անգարտութիւնից արձագանգներէն, ուրիշ ձայն չէր լսվում, որ ահ երկիւզ էին բերում ինձ էս տնտեսութ ձորերումը: Կաքաները ալ անեակս լիցն կղկղում էին, և զտնտառն տեսակ ճնշուկներն՝ որք ճուտեղելով վայրենի, լերկ ցանցառ քարերի ծայրերին նստած էին, զեղեցիկ իմ տեսարան էին երեւում աչքումս. այժմեիք երամ երամ, որ ինձ սընչի տեղ չէին տալում, աներկիւզ արձանացած տաս և անդ ինձ էին նայում . . . Քանի մի անգամ քերքերի վերայ նստեցայ, անգարտացայ բողէաչափ, և վերստին վեր կացայ շարունակեցի աննապարս . . . Պատահեցայ մին սկանակիտ աղբիւրի, որն որ կարծես թէ բնութիւնը բղխացնում է միայն ճգնաւորի կամ մար. կուացայ. ձեռներս և երեսս լուսեալ էն սուրբ լուովը »:

Աւագ-տ օր-փէր, ԺԶ, 537:

դՄնօս Ս. Ստեփանոսի, Գրոշի Ս. Մատթէի, յոսկերաց  
 փողի և մատիկ Ս. Կարապետին, ԱԼ Ս. Գրիգորի՝ Գ  
 շակերտի Ս. Գիտնիստի Արիստակազացուն, Կողով մի՝  
 մանր ոսկերաց Սրբոց Եօթանասնիցն, և Խաչ մի ի Կոնքոյ  
 Ոտնուային, յորոյ վերայ սպիտակ քար մի փոքրիկ,  
 զոր ասեն ի դնելն ի վերայ հիւանդին, եթէ չիցէ նա  
 ապրանաց՝ իսկ և իսկ հարկանի ի գոյն սեաւ, և յետ  
 մահուան նորին դառնայ յառաջին գոյնն սպիտակ: Ընդ  
 սոսին պահէին ի մենաստանիս և ձեռագիր մատենանք

պատուականք, զորս 40 թուով Ներսէս կաթողիկոս յա-  
 մի 1848 ետ փոխադրել յԵջմիածին, ընդ որս և զԱւետա  
 յանն փլոսկրապատ նկարէն գրեալ ի ՆԼԸ (989)  
 Թուականի՝ ի Նորավանս, ուր յիշեցաք (յէջ 203), և զդր  
 մէ գրեալ են բազում ինչ հնագէտք եւրոպէացիք: Խակ  
 ի բուն յայս վանս Մաղարդայ գրելոց մատենից՝ է և  
 Աւետարան մի գրեալ յամի 1427, որոյ մասն յիշտա-  
 կարանի ընթերցաւ վերագոյնդ, և մասն մի եւս փորա-  
 գրեալս է այս ճշգրիտ ըստ բնագրին.

**Ա**րդ գրեցաւ և աւ  
 արտեցաւ քնախօս  
 աւետարանս ի գաւ  
 առին շամբի ճորոյ  
 ի մենաստանին որ  
 մանրանտամբ մա,  
 դարդի վանք կոչի-  
 Ը նդ հովանեան քն  
 ահիմն և առաքելա  
 շնորհ սբ խորանանցս  
 սբ անձանի . և սրբ  
 բոյն ստեփաննասի  
 Կախաւկացի . և սրբ

բոյնգեորգեայ զօրա  
 վարին որկատոցցե  
 ալկան ի հարաւա  
 կոյս կողմանէ հան  
 դեպ երանիս գետոյ  
 ի Բազաւորութեն  
 ի սբանդարին յուսու  
 ք ոյ որդւոյ . Եւ յա  
 Բաւաղալութին կի  
 վիկեցոյ տեաւոն  
 տեղ սօղոսի . Եւ ի  
 Բըւակամութեն հոց  
 ոց . 97 30 .

150. Աւետարան գրեալ ի Մաղարդայ վանս, յամի 1427-8.









ԱԻԵՏԱՐԱՆ ԳԻԵԱԼ Ի ՄԱՂԱՐԴԱՅ ՎԱՆՍ Ի ԹՈՒԻՆ 929 (1427)

EVANGILE ÉCRIT AU COUVENT DE MACHART (ARMÉNIE ORIENTALE) EN 1427





ԱԻԵՏԱՐԱՆ ԳՐԵՍԼ Ի ՄԱՂԱՐԴԱՅ ՎԱՆՍ Ի ԹՈՒԻՆ 1427

EVANGILE ÉCRIT AU COUVENT DE MACHART (ARMÉNIE ORIENTALE) EN 1427





## Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Ք

15 (էջ) . Իշխան Սիւնեաց երիցագոյն քան զժաւնօթան՝ որք ի Գ դարէ և առ յապա, հաւանութեան թուի կարծիք եւրոպէացի բանասիրաց ոմանց, եթէ յիշեալ իցէ ոմն ի Պետրոսէ Պատրկէ յոյն պատմչէ . որ պատմէ յամի 297, յետ յաղթութեան Գալերիոսի, առաքեալ սորա և Դիոկլետիանու զՊառոս դեսպան առ Ներսէ՛ Քազաւոր Պարոյից Սասանեանց, կռել զայինս հաշտութեան ( քառասնամեայ ) . և սորա ընկալեալ զդեսպանն յաշխարհին Մարաց առ Զիական գետով (Ասպի-րուտ), ոչ զղք յաւազորերոյն թողուլ ի ներքին սենեկին խորհրդեան, բայց միայն զսպարապետն և զատենապետ, և զգրեալն ի պատմչէն հոլովականաւ անուանն, Βαρσαβώροσ . . . τῆν του Συμῶν εἶλεν ἀρχῆν . որ ըստ բնագրին լսի վարսաւորս՝ իշխան Սիւնիոյ, այլ ուղղելի Սիւնիոյ . իսկ անուն իշխանին՝ եթէ արդարեւ չիցէ վարսաւոր կամ վարձաւոր (զի գտանի յետինս այս անուն առ մերայինս), հաւանագոյն է լինել վարագ-Շապուհ, կամ Շաւարջ կամ Բուրգ . զի յաճախ լսին ի Սիսական և յԱռան տոհմն վարագաւ բարդեալ անուանն . որպէս, վարագվաղան, վարագտորգատ, վարագվաչէ, և այլն : Դարձեալ, ի դէպ զայ իրացն և ժամանակին՝ յարեւութիւն Սիւնեաց ի Պարոս (տես յէջ 1. 7.), մինչդեռ Տրդատ արքայ տեղի տուեալ յերեսաց բռնութեան սոցին, չեւ եւս էր միւս անգամ վերադարձեալ ի գահն : - Յիշեցի ի հարեւանցի և նմանութիւն խանգարեալ Պեռոսապի անուանն (ըստ Զուանչէրի վրաց պատմութեան) ընդ խանգարելունն ի Պատրկէն :

37. Արագունի . — Մէլիք Բէկ . — Խաչատուր եպիսկոպոս . — Յազգահամար Մէլիքաց Գեղամայ և Մարայ և յորդիս Ա Մէլիք Բէկի թերեւս պատշաճիցին Մարգար և Թադեոս, յիշեալք յարձանս Հերհերի . տես (յէջ 111) : — Հաւանագոյն եւս է թոռնորդի նորին Բ Մէլիք Բէկ լինել յիշեալն յամի 1666 ի յիշատակարանի աւետարանի գրեւոյ յայնմ ամի, յորում և Արագունի նշանակի անուն վիճակին՝ արեւելակողմանն ծովուն, այսու բանիւք . « Յիշեցէք . . . զխաչատուր վարդապետս, որ ի » յամին ՌճԴ վարդապետ եղա, և ի յամին Ռճ և Թ » եպիսկոպոս եղա և առաջնորդ ի վանքն Մաքիմեաց, » որ կոչի Ս . Աստուածածին, երկրին Գեղամա, Արա » գանայ վիճակի . և ի հայրապետութեան Տեառն Յա » կորայ կաթողիկոսի, և իշխանութեան Մէլիք Բէկին, » և բռնակալութեան Փոքր Շահապազին : Զսակաւ բանս

» որ գրեցի՝ էր թիւն ՌճԴ » : Խաչատուրս՝ որ յիշեալ է ի տեղագրութեանս (էջ 70), յիշատակի և յամի 1673 :

35. 38. Կաճ . — Ըստ համապատկեան անուանն և զոյզն յիշատակի՝ զոր կարգեցաք յ' 35 էջ մատենիս, մի ի հնագոյն գեօղից Գեղամայ թուի կած կամ կաճիք, և փափագելի գիւտ տեղոյն, մանաւանդ զի երեք եկեղեցիք յիշին ի նմին ի կէս ԺԵ դարու, ի գրչէ Ճաշոցի կամ Տարեգրոց, որ և պատմէ վասն անձին իւրոյ . « Ե » կեալ յԱրծկէ քաղաքէ՝ տարադէպ հանդիպեցաք ի » դաւառս Գեղարքունի, ի գիւղս որ կոչի կաճ, բարե » (բար) առնս Տէր Մանուէլի, և մոռացաք զօտարական » կեանս մեր . վասն յոյժ սիրոյ և փափագանսց սորա » ձեռն արկեալ սկիզբն արարաք սուրբ գրոցս, ի մեծի » աղուհացից պահոցն ի չորրորդ շարաթին, և աւար » տեցաք օժանդակութեամբ Ս . Հոգւոյն Աստուծոյ՝ » վերացման Ս . Խաչի տօնիս, ընդ հովանեաւ Ս . Աս » տուածածնիս և Ս . Գրիգորի և Ս . կարապետի, յե » պիսկոպոսութեան զաւառիս Գեղամայ՝ Տեառն Ստե » փանոսի, և վերադիտողութեան քաջ բարունայն » Սարգիս վարդապետի սուրբ ուխտիս Հրեմեի Հօր » : Բազում գովութիւնս կարգէ յառաջագոյն զՄանուէլէ և զմերձաւորաց նորին . « Ամենագովելի և երջանիկ ըն » տրեալ և պատուելի աստուածահանոյ, և ամենայն զո » վութեանց արժանաւորքն՝ Մանուէլ քահանայն և Տէր » Ստեփաննոս հարազատ նորին՝ զրել ետուն զսուրբ » տառս, ի Սանահնոյ օրինակէն . . . յիշտակ բարի » հոգւոյ իւրեանց և ծնողաց Տէր Մանուէլին՝ Պարոն » Ամիրպեկիկն և Գուլմէլիքին » . որդիք սոցա դեռարոյսք Տէր Ստեփաննոս, Ամիր Բէկ և Մարգարիտ . եղբարք Սոչբան Բէկ և Էլքիկ . սոցա առաջնոյն որդիք՝ Շահնազար և Խօշնադար, Մարգարե դպիր և Սանակ . երկրորդին՝ Եղիշէ, Ենովք և Մատթէոս . կին Տէր Մանուէլի՝ Եղիսաբեթ, որդւոյն Տէր Ստեփանոսի՝ Խոսրովիդուխտ, և ուլն . յետ յիշելոյ և զպլ արեւակիցս սոցա և զկանայսն (Եղիսաբեթ, Թուխթամ, Սոլթանբախտ, վարդատիկին, Թամար, Զիլագ, Ղազուլ ?) կնքէ զազգարանութիւնն, աղաչելով եւս « յիշել ի Քրիստոս՝ զպատուելի երիտա » սարդն զԱվրան Բէկ, որ է կնքահայր սոցա » : Ապա կարգէ զժամանակն . « Գրեցաւ սուրբ տառս որ կոչի » Տարե(կ)ան գիրք՝ ի դառնացեալ ժամանակիս, յորում » նեղիմք յանօրինաց բռնութենէ, եւս առաւել ի հարկա » պահանջութենէ . ի հայրապետութեան Տեառն Գրի-

» գորի ընդհանուր Հայոց կաթողիկոսի և պատրիարքի  
» Վաղարշապատու Էջմիածնի. և յաշխարհակալու-  
» թեանն Ջհանշայի որդւոյ Ղարա Ուսուֆին » :

49-50. Ղուլալի. — Փոխանակ Ս. Աստուածածին  
եկեղեցւոյ՝ յիշի նորաչնն յայնժամ եկեղեցի Ս. Գրիգոր  
յամի 1664-8, յաւետարանի գրեւոյ յայնմ ամի ի Հայ-  
րապետ սարկաւազէ, « ի յերկիրս Գեղամ, ի գեաւոս որ  
» կոչի Ղուլալի, առ դրան նորակնուք Ս. Գրիգորի » :

73. Բրտի այրք. — Առ կաղականտացւոյն (Բ. Ծ.)  
Պրտի այրք գրի, ըստ հնագոյն յիշատակողի, ի կէս է  
դարու, զորոյ բանս ընդօրինակէ, և է այս. « ի կաթու-  
» ղիկոսութեան Եգրի, ի սպարապետութեան Մուշեղի,  
» ի Սիւնեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկոպոսու-  
» թեան Մարոշառայի... զնացի ես Յովսէփ անապա-  
» տական, ի գաւառէ Գեղամայ, յԱնապատէ Պըր-  
» տիայրեաց, վասն շարութեան ժամանակին, որ ան-  
» իրաք զօրացեալք առ ոտն կոխէին ղեկեղեցիս, և ըզ-  
» տառապեալս հարկապահանջ նեղութեամբ և անառակ  
» զնացիք աւերեցին... Յայսպիսի նեղութեանց խոյս  
» տուեալ իմ՝ զնացի ի գաւառս Արցախայ, ի գեօղս  
» Յղերկս, առ ծերունի եպիսկոպոսն Միրհ. և նորա  
» ընկալեալ զիս », և այլն: Միւս եւս կարեւոր տե-  
ղւոյ ծանօթս տայ Անապատականդ, յիւրում բնիկ գա-  
ւառին, զոր յանուանէ միայն յիշեալ է մեր յէջ 22, ընդ  
նմանիսն. և պատմէ յետ բազում ամաց բնակութեան  
երթեալ յԵրուսաղէմ ի խնդիր նշխարաց Ս. կարապե-  
տին, երիք իւրովք « աշակերտք, ֆրիստոսատրով և  
» Գրիգորով և Սարգսով... և հաւանութեամբ ընտա-  
» նեաց իմոց՝ Յովհաննայ և Միսիսարայ կրօնաւորաց. և  
» ... մեծաւ տրտմութեամբ » դառնայ, զի գտանէ զամե-  
նեան հաւանեայս ժողովոյն՝ զոր ոչ անուանէ, այլ  
յայտնէ. « Որոց ողոյն անգամ ոչ տուեալ (ասէ), եկի ի  
» գաւառն իմ Գեղարունի, ի Պուհավանս, որոյ տե-  
» ղեակ ի մանգութենէ էի յինել անդ մասն ի նշխարացն  
» Յովհաննու: Եւ յոյժ տենչանք հայցեցի ի Գրիգոր-  
» կայ սպասաւորէն Սրբոյն. և ողորմութեամբն, Աստու-  
» ժոյ հաւանեալ նորա, երաց զտապանակն, և զտաք  
» անդ զՍ. Մկրտչին և զթռուսա սաւաքեալն, և զնա-  
» խավկայն Ստեփաննոս. զորս առաջնոց հարանցն բե-  
» ղեալ էին, յուղղափառաց օրոյն Երուսաղէմի: Ըն-  
» կալեալ իմ Յովսէփայ՝ բերի ի նոյն վկայարան », (Հա-  
մարիմ յԱրցախականն Յղերկս).. « Յետ այսր եղելոյ  
» հաճեցան սուրբք ամենայն որ ի գաւառին Գեղամայ,  
» բերին իւրաքանչիւր ոք անուամբ և զրով, և եղին ի  
» նմին եկեղեցւոյ » :

118. Արկազն. — Հին եկեղեցին Ս. Քրիստափոր՝

**Վասակ որդի Սմայաթայ. Շինեցաւ հրամանաւ թագաւորին Սմայաթայ ի ձեռն Շահանդուխտ թագուհոյ բարեպաշտի.**

Յաւելեալ է ի սոյն՝ որպէս գուշակի՝ ի յետնոց ոմանց համառօտ ծանօթութիւնս այս,

յիշատակի և իբր 900 ամք յետ հանգստեան մեծին  
Ստեփաննոսի, ընդ նմին և Ս. Աստուածածին եկեղեցի,  
յամի 1603-4, ի յիշատակարանի աւետարանի միոյ  
(այժմ ի Սեւան), զոր Տէր Մարտիրոս Վանեցի վաճառէ  
Պարոն Յովհաննու, « ի գեօղս որ կոչի Արգազ, ի  
» գրունս Ս. Աստուածածնի և Ս. Քրիստափորին » :  
Ճորգոշաք Տէր Տիրան գրող յիշատակարանիս կարգէ  
երկարօրէն և գանուանս ազգատոհմին Յովհաննու, ու-  
րոյ հայր Մկրտիչ, հաւն Գուշիկ, մայրն Շաղգադ, առա-  
ջին կինն Սուրբան Դիշառ, երկրորդն Գարիսանէ, զորոյ  
և զմարդասիրութիւն առ ինքն՝ չափարանէ.

« Աստուած ողորմի ասէք Գարիսանին՝  
Խաբռն աղին ձուագեղ բերին,  
Գրագրին մէկ մէկի մէկ շահի տուին:  
Յահեղ ու մեծ հրապարակին  
Պարզերես գան ի յատենին.  
Կարդա ու ասա դու զողորմին.  
Աստուած յիշայ ըզբեզ ի բարին » . և այլն.

209. Մուլք. — Մի ի գեօղից բնիկ Մղկոյ, որոյ ա-  
նուն ի յոգնականն՝ յատուկ ինչ նշանակել երեւի, այլ  
ինձ անյայտ մնայ իմաստն, որպէս և յուրովից այլոց գե-  
ղից և տեղեաց հին և զուտ հայկական անուանք. բայց  
սա է կարծեմ և յեզականն անուանեալ Մցի գիւղ, ըստ  
յիշատակարանի աւետարանի միոյ, զոր յամի 1458 տայ  
զրել տանուտէրն Ռէս Մանկտաւազ որդի Մարտի-  
րոսի և Գօհ(ար)ին, որոց որդիք (Բերամ, Թումա, Մու-  
րատ և երկու Մարտիրօք) « տարածամ կենօք փօխե-  
» ցան ի Քրիստոս ». յիշին և դատերն Զամալ և Քա-  
րամ, և այլ բազումք ի մերձաւորացն. յորս Դուխար  
կին եղբորորդւոյ իւրոյ Ստեփաննոսի՝ « օգնական եղեւ ի  
» զին աւետարանիս ». — Հայոց՝ քոյր Ստեփաննոսի կամ  
դուստր այլոյ եղբոր Մանկտաւազայ. — Քուրդ-ամիր,  
Տիրատուր, Շատարեւ, Խանդուտ, Վարդիսարուն, Մաւ-  
խարուն, Դագիկ, Շահայ, և այլն: Ստացողն Մանկտա-  
ւազ տայ զգիրսն՝ « վկայութեամբ՝ ի ձեռն Ղազար քա-  
» հանային ի Մցի գեօղն, ի վայելուքն անձին իւրոյ, զի  
» նորընծայ էր յաստիճան քահանայութեան ». և էր  
իսկ որդի տուողին, զի յաւելու գրիչն. « Յիշեցէք ի  
» Քրիստոս և զհայր Տէր Ղազարին՝ զԸնէս Մանկտա-  
» ւազն » :

217-9. Ս. կարապետ Վանք վաղադնի կամ Որո-  
տան, որոյ վկայեալ էր (յէջ 217) շինութիւն ի ղշխոյժ  
առաջնոյ թագաւորին Սիւնեաց, զոր հաստատէ և ար-  
ձանագիրն որ ի թիկանց արեւելակողման տաճարին, (ա-  
ռաքեալ ի լուսանկար Պ. Մատթէէ Փափաղեան, հան-  
դերձ այլովքն).



**Որ տաճկերէն Ամիրփիրի կ' ասուի .**

Ի վերայ դրան գաւթին արձանագրեալ է յիշատակ նորոգողի եկեղեցւոյն յամի 1436 - 7 .

**Ես Ամիր Սարգիս որդի Ղազիկին Անկեղակոթեցի շինեցի զգլուխ Սուրբ Կարապետիս այս, եւ Խաչն կանկնեցի աթոռակա(լութեա)ն Տէր Շմաւօն վարդապետին .**

Ի վերայ ներքին դրան եկեղեցւոյն երեւի արձանագիր նոր և թերատ, վասն խորտակման վիմին .

**Զօհաննէս մեղուցեալ Աստուած սիրող(ք) ազաչեմ յիշեցէք (եւ զ)ծնողքս .**

Բայց կարեւոր արձան յայտ (արեւմտեան) կողման է Օրբելեանցն՝ յամի 1316, այլ քննութեան կարօտի .

**Կամաւն Աստուծոյ . Մեր Բուրթէլս եւ Պուղտայս եւ որդիք Ելիկումին որդւոյ Տարսայիճին, եղբայր Սմբատայ, իշխանք տանս Սիսակայ, տեսեալ զձեռագիր նոցա զոր շինել կամելով զվաղինջուց աւերեալ եւ խաղտեալ վանս Վաղաղնու ի ձեռն Հայր Մխիթարայ, հատեալ էին սահմանք գետոմն ի Շրջանաքարն եւ Քայլիճն? Հայ Ծաղիկն է տվել իւրեանց հայրենեաց զԻրիմիս գեղ ու զգիւղ Շամպին հողերն իւրեանց սահմանոմն, եւ ի Շնհեր զԱզոջանց հողն եւ ջուր եւ զայգին ամենայն սահմանաւն . Եւ խընդրեալ արձանագրել յիշատակ, զոր անփոյթ արարեալ եհաս առ մեղ . եւ մեք կամելով սրճանագրեցաք վասն յիշատակի նոցին եւ վասն արեւշատութեան մեզ եւ զաւակաց մեր . եւ իշխողք տանս կարգեցին տարին մի քառասունք անխափան կատարել . Արդ եթէ դք ի մերոց կամ յաւտարաց զմեր զսահմանեալ տուրքս (եւ) խափանել զգիրս (Չանայ), մեր մեղացն պարտական լիցի, եւ առաջի Աստուծոյ ամօթերես ելցէ . իսկ եթէ Տաճիկ կամ այլ ազգ փոխի եւ հանել կամիցի, իւր Մահմետէն ապիզար լինի . եւ հազար հազար նահլաթ առնու . Թվ . ԶԿԴ .**

Տան ամաւ յետ այսր թուականի (1326) գրեալ է ի հիւսիսային կողմն եկեղեցւոյն ,

**Թվ . ԶԶԵ . Կամաւն Աստուծոյ . Ես Տէր Ստեփանոս Օրբելեան որդի Զալալին, արքեպիսկոպոս ի տանն Սիսական, եկի մեր հայրենի տունս՝ ի վանս Վաղաղնու, եւ տեսի զՀիւրանոցն զոր կ(եր)տեալ էր Հայր Սարգիսն վասն արեւշատութեան Բուրթէլին եւ զաւակացն իւր Բէշքէնին եւ Իվանեա, յիշատակ իւր . կամ եղև ինձ մասնակցել այնմ արդեանց եւ տվել զՎաղաղնի Աւխազա մորէն? զգիւղ մեր եւ Կիւրղի վանս, ազատ ի մեր**

յամեն . . . զի յառաջ տուած էր ժողովուրդ, եւ մեք զմեր բաժին հասն տվաք ի պէտս պրանդաշկին. արդ այսմհետէ չունի որ հրաման աթոռակալաց կամ Հայ իշխողաց զմեր տված ի սուրբ ուխտէս հանել կամ խափանել ջանայ, մեր մեղացն պարտական լիցի, եւ յերից սուրբ ժողովոյն որոշելցէ, մասն եւ բաժին ընդ խաչողացն եւ Յուդային առցէ. Ամէն.

Աղաւաղ կամ թերի և անթուական արձանագիր մի եւս նշանակի յարեւելեան կողման տաճարին.

**Մարտիրոս? Էջիկոմ, յիշխանութեան Սմաթայ եղբայր նորա Տարսայ՝ ճիս որ կրկին նորոգեցի զեկեղեցիս՝ յիշատակ ինձ.**

Արձան յիշատակի որդւոցն Ելիկոմի որ ի Թուրն ՉԿԻ. վկայութիւն ընծայէ հնութեան երկուց տեղեաց Լորաձորոյ, զորս յիշեալ էր մեր յէջ 221 մատենիս, այն է Շամբ և Իրիմիս, զոր ըստ այժմեայցս աւանդութեան Իմիրիս նշանակեցաք, և արդ յայտնի լինել Երեսմի գիւղ Մղկոյ (տ. յէջ 208): Սոցա հարկ է թէ մերձաւոր իցէ և Շրջանաքարն նշանական անուամբ, եթէ չէն և եթէ վէմ, և գուցէ դիւրաւ գտանելի ի նկատողաց տեղւոյն. որոց թողցի ստուգել և զոր յետ այնր երկուսին երկրայական անուանս արձանագրին, որոց առաջինն յանգի լիձ ձայնիւ, և զմիւսն որ յարձանագրի Տեառն Ստեփանոսի յիշի ընդ Վանաց Վալադնու, որոյ վերջին մասն՝ մտէն՝ թերեւս նշանակէ մորի, մայրի,

անտառակ, Նշանաւոր է յայսմ արձանի և Հիւրանոցն կամ Պանդոկն յինեալ ի Հայր Սարգոս՝ յառաջ քան զԷնութիւն Հոգետանն Սուրբմաձորոյ ի Չեսարայ՝ ազգականէ նոցին Բուրթելեանց (տ. յէջ 168):

241. Թէպէտ և ի կարգի պատմութեան առաջնորդաց թեմին Տաթեւու, յիշատակեալ էր համառօտի խոստովանողական հանգէս Ստեփանոսի եպիսկոպոսի, այլ քանզի թերեւս սակաւուց ոմանց ծանօթ իցեն իրքն, վասն ոչ գտանելոյ ի սովորական Յայսմաւուրս, ըզգտեալս մեր ի միում միայն՝ հրատարակեմք անթերի աստանօր. այն զի և նշանաւոր են գէպք, թէպէտ զըժընդակք ի կիրս և ի լուրս:

**« Յիշատակ Տէր Ստեփաննոս արևելակոպոսին Տարսայոյ :**

Վկայարանութիւն արհեսպիսկոպոսին Տաթեւոյ տէր Ստեփաննոսին, որ էր եղբորորդի մեծ վարդապետին Շմաւոնի, յազատ տանէ և ի մեծ ազգէ. որ և յետ հօրեղբորն իւրոյ՝ կալաւ զաթոռ մեծափառ ուխտին Տաթեւոյ: Ի սորա յաւուրն արեղայ մի շարժեալ ի սատանայէ շար ցանկութեամբ ի սէր աղջկան միոյ, և եղբարցն բազում անգամ խրատեալ զնա՝ և նա ոչ լուաւ նոցա. այլ գործակցութեամբն սատանայի այլ մեծագոյն շարի դիպեցաւ. զի առեալ զաղջիկն, և գնացեալ ի գեօղ մի այլազգեաց. և մտեալ ի տուն դատաւորին՝ տանկացաւ. Իսկ ազատորդին տէր Ստեփաննոս՝ քանզի ունէր բազում ճորտս այլազգիս՝ հեծեալ նոքօք ի ձի, և գնացեալ ի գեօղն յայն, քարչեաց զարեղայն և զաղջիկն բռնութեամբ, և բերեալ զարեղայն կացոյց ի տեղի իւր, և զաղջիկն եմոյծ ի կուսանոցն, և յանձնեաց ի հաւատար կանայան. և այնպէս արժանացոյց զերկօսինն ապաշխարութեան: Իսկ յետ այնորիկ ի ժամանակա Մաղուպ փատշահին՝ անցելոց ամաց ի վերայ, ի Թաւրէզ՝ տեղի գտեալ անօրինացն և կամեցան վրէժխնդիր լինել, և մատնեալ շարախօսեցին զնա առ իշխան այնմ կողմանն՝ որ էր Թաթակ և հայրագլուխ որդւոց փատշահին՝ որոյ անունն էր Սօֆի Խալիլ: Չոր յղեալ կոչեաց զեպիսկո-

պոսն սիրով ի պատիւ՝ նենգութեամբ. և ելեալ գնաց միամտութեամբ. տարաւ ընդ իւր և գըրէրորդին իւր, որ էր եպիսկոպոս, և քեռորդին իւր՝ որ էր արեղայ: Իսկ իբրեւ եմուտ նոքօք առ իշխանն, կանգնեցաւ իշխանն ի վերայ ոտից իւրոց՝ և եկն ընդ առաջ եպիսկոպոսին, կալաւ զձեռանէ նորա և տարաւ զի նստուցէ ի տեղին իւր. Իսկ նա յետս կացեալ՝ ասէ. Վասն Աստուծոյ մի՛ ա մաշեցուցաներ դիս, զի չեմ արժանի նստել ի բազմօցի քում: Իսկ նա ասէ. Վասն այնորիկ նստուցանեմ գքեզ ի բարձի իմում, զի գիտացես զկատարեալ օէրն իմ զոր ունիմ առ քեզ: Եւ եպիսկոպոսն ոչ լուաւ նմա, այլ նշուտաւ յաջմէ նորա, որպէս և սովոր էր յառաջմէ: Ասէ իշխանն. Վասն սիրոյ քո երգուեալ է իմ՝ զի գքեզ ինձ երկրորդ արարից, և զամենայն հուքմ իշխանութեան իմոյ տաց ի ձեռս քո, և կացուցից զքեզ վերակացու տան իմոյ և ընտանեաց, և տիրեսցես զանձուց իմոց և ստացուածոց. և քսան և երկու որդիքն իմ և ես՝ հեծելովք մերովք հնազանդ լինիմք քեզ. և քո այնն՝ այո լինի ի վերայ մեր, և ոչն ոչ: Եւ տաց զդուստր իմ քեզ կնութեան, և լինիս ինձ փեսայ գերազոյն ամենայն իշխանաց ի դրան փատշահին: Չայս ամենայն և առաւել քան զայս արարից քեզ՝ միայն թէ լուիցես ինձ՝ և զայցես

յօրէնսն մեր: Ասէ եպիսկոպոսն Ստեփաննոս. Այլ որ պիտի ինչ է. միթէ բան ինչ լուեալ է քս ի բերանոյ իմ, մէ վասն այդմիկ. կամ ի համբաւոյ ուրուք լուեալ է քս: Ասէ իշխանն, Ոչ. այլ ես ինչէն հրամայեմ քեզ կատարել զայդ զոր խօսեցայ: Ասէ եպիսկոպոսն. Քաւ լիցի, մի ասասցես ընդ իս զայդ: Ասէ իշխանն, իմ երկոտասան կինն յիսնէ թողած լինի՝ թէ այդ բանիդ այլ ճար կայ. կամ պիտի քեզ իմ բանիս հաւանել՝ և կամ չարաչար տանջանօք մեռանել:

Եւ ասաց բերել առաջի նորա ազնիւ հանդերձս սուկէնկարս, ընդ նմին՝ և անօթս տանջանաց. և ասէ ցնա. Չոր և կամիս՝ ընտրեալ: Ասէ եպիսկոպոսն. Ես պատրաստ եմ ի մեռանել վասն անուանն Քրիստոսի: Եւ հրամայեաց արկանել ի բանտ ընկերօքն. և թողին անսուաղ զաւուրս ութ. և ապա բերեալ առաջի իւր հարցանէր. և նա անվեհեր տայր պատասխանի և դաւանէր զՔրիստոս Աստուած: Եւ դարձեալ էարկ ի բանա, և եթող անսուաղ այլ եւս աւուրս երկոտասան: Եւ սուրբքն տանէին ուրտիս մտօք նեղութեանն. և ի փառարանութենէն Աստուծոյ ոչ դադարէին: Եւ դարձեալ կրկին բերեալ առաջի իւր, հարցանէր. և եզիտ զնոսա հաստա տուն ի հաւատս Քրիստոսի: Եւ ապա հրամայեաց եռացուցանել լի շրով կատասայ, և միւս կողմն հուր բորբոքել ուժգին. և ետ կապել զնորընծայ եպիսկոպոսն զբռէրորդի Տէր Ստեփաննոսին՝ պարսկօրէն զերկուս ասոն ի մի և երկուս ձեռնն ի մի. և անցուցանել զկապ ոտիցն ի պարանոցն և այնպէս որպէս զկծիկ արարին յեռանգս Նուրցն՝ ի մէջ պղընծին: Եւ զարեղայն որ էր քեռորդի Տէր Ստեփաննոսին՝ նոյնպէս կապեցին, և անցուցին երկայն ձող մի յոտոն և ի ձեռնն ընդ ողն. և կալեալ զնա երկուց արանց ընդդէմ կրակին. և այնպէս առաջի Տէր Ստեփաննոսին՝ զեպիսկոպոսն խարչեցին, և զարեղայն խորովեցին, որ մատուցան ուրբ ողջակէզ և զոհ ընդունելի և խունկ անոյլ տեառն Աստուծոյ. իբրեւ զպատարագն Աբելի, զԼոյի և զԱբրահամուն, յոր հոտոտեցաւ տէր Աստուած ի հոտ անուշից. և նաքա այնպէս կատարեցան ի Քրիստոս:

Իսկ զՏէր Ստեփաննոսն՝ դարձեալ արկին ի բանտ, և տային նմա հաց և շուր հոգեպահ, յետ երկուց և երից աւուրց: Եւ զմարմինս սրբոց վկայիցն առեալ ազգականացն՝ բազում կաշառտութեամբ, և տարեալ թաղեցին ի մեծափառ վանս իւրեանց ի Տաթել: Եւ վասն արհեպիսկոպոսին ցրուեցին յազում գանձս ի դուռն փառշահին աւելի քան զերկու հազար զահեկան կարմիր. և ոչ կարաց փատշահն ազատել զնա ի ձեռաց նորա, զի ասէր, թէ երդուեալ եմ՝ և ոչ կարեմ զիմ հալալն հարամ անել, և զկանայսն իմ թողուլ, որ են մարք որդեցն իմոց, վասն արեղայի միոյ:

Եւ յետ տարոյ միոյ՝ հանեալ զեպիսկոպոսն ի բանտէն տարեալ առաջի իւր հարցանէր ողորանօք՝ և ըսպառնալեօք. և նա՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ զոր ունէր յինքեան, համարձակ խոստովանէր զՔրիստոս Աստուած: Ընդ որ բարկացեալ իշխանն՝ և ետ բերել ատամնահանս, և քարչեալ զերեսուն և երկու ատամնա նորա, և հարին շուրջանակի ի գլուխ նորա կռա-

նով՝ որպէս զպսակ, և տարեալ արկին ի բանտ. և եկաց այնչափ ի բանտին՝ մինչեւ ողջացաւ ատամնահար վէրք գլխոյ նորա: Եւ դարձեալ կոչեաց առաջի իւր, հարցանէր, և նա զնոյն դաւանութիւն հաւատոյ դարձեալ երկրորդէր առաջի նորա: Եւ նա ետ բերել բեւեալքարչս և քարչել զմիս օսկերաց նորա՝ ի վաթսուն տեղաց. և այնպէս վիրաւորեալ մարմնով տարեալ արկին ի բանտ. և կացեալ այնքան մինչեւ ողջացաւ ամենայն վէրք օսկերացն: Եւ դարձեալ ածին զնա յատենի, և հարցանէին. և նա եւս պնդագոյն դաւանէր զՔրիստոս Աստուած. և ասէր ցիշխանն. Չի որպէս սալն դարձեալ ոչ հոգայ ի կուսուսուրաց, նոյնպէս և ես անհոգ եմ ի շարչարանաց. արա զինչ և կամիս: Եւ սրտմտեալ անիծեալն ետ հուր բորբոքել, և կապեալ ըստ նմանութեան արեղային՝ կալեալ ի վերայ կրակին խորովեցին զամենայն օսկերս նորա. և նա դեռ եւս կայր կենդանի զօրութեամբն Քրիստոսի, և այնպէս խորովեալ անդամօք տարեալ արկին ի բանտ. և կացեալ այնչափ ի բանտին՝ մինչ որ ողջացաւ ամենայն հրայրեաց վէրք մարմնոյն. բայց այնքան այլագունեցաւ մարմին նորա ազգի ազգի շարչարանացն՝ մինչ զի ոչ բաւէր ակն մարդոյ հայել ի մարմին նորա: Եւ այնպէս հինգ ամ բոլոր ի շարչարանս և ի բանտ կացեալ կապանօք սովով և ծարաւով տեւեաց այնքան տանջանացն: Եւ ապա բերեալ իշխանն առաջի իւր, և ասէ ողորանօք. Չանձրացաք և նեղացաք ի տանջելոյ զքեզ, և ի տեսանելոյ զաղիողորմն խորս վուժմ մարմնոյ քո՝ և գու ընդէր ոչ ողորմիս անձին քում. մին բան խօսեաց առաջի մեր, և զերծեալ ի մէնջ գնա ի տուն քո և պաշտեա զհաւատս քո: Ասէ սուրբն. Անհար է այդմ լինել՝ մինչ չունչս իմ առ իս է: Եւ նա հիացեալ զարմացաւ և ասէ, Մի թէ վիմանց է զօրութիւն սորա:

Եւ կոչեալ զմօլայն իւր և ասէ, Եկ Դանիւման, ի գրոց պատմեա մեզ նորագոյն տանջանս՝ զոր արարեալ են առաջին թագաւորքն: Եւ մօլայն հրամայեաց գերծուլ ըզգլուխ նորա, և օժանել մեղրով, և բերեալ զնստակորն՝ որ է սեաւ բըզէզն, և եզին յեօթն տեղի ի վերայ գլխոյ նորա. և պորեալ զընկոյզն՝ կործեցին զկորճն ի վերայ նորա, և պատեալ ծրարեցին: Եւ նաքա փորեցին յիւրաքանիւր դիմաց, և ծակեալ մտին ի գագաթ նորա. և յայնմանէ խիստ նուաղեցաւ սուրբն. զի քան զամենայն տանջանսն խիստ և դժբնդակ էր, մինչ զի քազեցաւ հոգի նորա, և ոչ մնաց ի նմա շունչ կենդանութեան. և այնպէս անկաւ յերկիր իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմաց ասել թէ մեռաւ. իսկ նա յետ պահու միոյ ուշաբերեալ դարձաւ ի հոգի: Եւ ընթացեալ քոյր սրբոյն՝ մեծաւ հառաչանօք և պաղատանօք անկաւ յոտս մօր փատշահին, ասելով. Թէ անպարտ իցէ եղբայրն իմ՝ ընդէր շարչարի զանազան տանջանօք՝ իբրեւ զպարտական. և եթէ ինչ վնասակար է կամ պարտական, աղաչեմ զքեզ վասն կենաց և յաղորութեան Փատշահին՝ հրամայեա փութով սպանանել զնա, զի ազատի յանհնարին տանջանացն: Եւ յուղարկեալ բահումն զվերակացու տանն իւրոյ՝ առ Սօֆի խալիլն լի բարկութեամբ, և ասէ. Քանի անձ ծաշահիս մեզ և զաւակաց մերոց և թեթեւութիւն հաւա-

տոց մերոյ. արձակեալ զայրդ անմեղ. զի զի՛նչ չա՛հ է մեզ ի հեղմանէ արեան դորա. Եւ նա ասէ. Ոչ կարեմ թողուլ վասն երդմանն իմոյ. այլ դու առաքեալ և հան զնա բռնութեամբ ի ձեռաց իմոց. զի անպարտ մնամ ես յերդմանէն: Եւ այնպէս արարեալ ազատեաց զնա ի ձեռաց նորա, և յուղարկեաց ի վանս իւր:

Իսկ նա յոյժ տրտմեցաւ, և մեղադրեաց քրւերն իւրոյ, վասն խափան առնելոյն նմա զստպարէզ նահատակութեանն իւրոյ: Եւ ասպա յետ տարոյ միոյ՝ գնաց փափազանօք յԵրուսաղէմ, և երկրպագեաց անօրինական տեղեացն Քրիստոսի. և դարձեալ եկն ի սեպհական աթոռն իւր ի Տաթեւ. և բարեձեռութեամբ և ճշմարտ առաքինութեամբ վճարեալ զմնացեալ ժամանակս կենաց իւրոց, փոխեցաւ յերկիրն կենդանեաց ի վերինն Երուսաղէմ, ի կարգս նահատակացն և ի համարս հայրապետացն: Գործեցաւ այս ի ՔՃԲ թուականիս մերում (1453), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ »:

300 - 1. — Եկտաստան և Շահումեանք. — Չանուն գեղը հայրենեաց Շահումեանց, մի «մե ի նոցանէ նշանու կեան յազգացուցակին (301) Նահապետ, գրէ Երազ-Թասթան, յոտանաւոր յիշատակարանի գրոցն անուանելոյ Դժոխք բացեալ, զոր ետ թարգմանել աշակերտաց Մխիթարայ Արթաշոր, յամի 1738, և տպագրել ի Վենետիկ. և ինքն յաւել չափաւ բանս ի գլուխ և յաւարտ մատենականն, որովք յայտնի և հոգեսիրութիւն նորա և ուսումնասիրութիւն. յորոց և այս տունը բանից.

... « Բարեւք ի միտ առէք զիրատն այս գրոյս, Չի խրատ սորա է ճառագայթ եւ լոյս. Մինչդեռ կենդանի էք՝ խոկացէք զԴժոխոց, Չի մի յետ մահուանն կորնչիք անյոյս: Թարգմանեցաւ գիրս այս ի յիտալացոց, Ի չա՛հ և ի յօգուտ ազգին մեր Հայոց. Աղբիւր է ելանօղ ի դրախտին գետոց, Որ չիլուցանէ զհուրն դժոխոց: Պատճառ թարգմանութեան այսքան մեծ բարեաց Եղեւ Պարոն Չաքարիայն վասն Հայկազնեայց. Եւ իմ՝ Նահապետիս սիրտն յոյժ ցնծոց.

Նահատակութիւն Նոր վկայիւն Քրիստոսի Ս. Մահակայ Բրուսնեցոյ:

« Բարմարեցից ճառս վկայաբանութեան Սրբոյն Սահակայ նոր վկային, որ վկայեաց վասն Քրիստոսի ի մէջ խոժաղուժ ազգին: Սա էր մանուկ ամաց եօթնեւտասնից յերկրէն Գողթնայ ի գեղջէն Բրուսու: Գայ ի սահմանս Ղրիմու ի պահնորդ քաղաքն Թուրքաց. որ կոչիւր ամենայն լեզուաւ Ազախ, վասն վաճառականութեան, զհետ իւրոյ մերձակայի: Սա ընալ դիմեցն գեղեցիկ, տիպեալ վայելուչ, հասակաւ երեւելի, տեսեամբն ազնուազոյն. նախանձին ազգն անօրինաց վասն գեղեցկութեան և դիմացն, հնարին հնարս շարութեան, և ասեն ընդ միմեանս. Ձի՛նչ արասցուք մանկանս այսորիկ՝ զի դարձցի յօրէնս մեր, և զհետ մեր եղիցի: Խրատատուն

Յօժարիմ հետեւել ընդ նորին կամաց: Թէպէտ վասն այս գրոյս դրամ շատ ծախեցաք, Սահակայն վասն այն ծախուց ոչ ինչ հոգացաք. Չի ցանկամք փրկութեան հոգւոցն մարդկանց, Չոր Քրիստոս Տէրն մեր իւր արեամբ զնեաց: ... Ի մեծն Վենետիկ քաղաք պատուական Աւարտեցաւ գիրս այս ցանկալի մարդկան. Քանզի հոգւոց ձերոց է յոյժ օգնական. Լաւ համարեցէք զայս՝ քան զբիւր ական: Թվին հազար հարիւր եօթանասուն ութին Եւ նոյեմբեր ամսոյն յաւուրն առաջին, ի հայրապետութեան Տեառն Վարապետին՝ Ի Սուրբ ԼՂմիածնայ աթոռ բազմողին: Այս ոտանաւորս՝ որ աստ կայ գրած՝ Յինէն Նահապետէս եղեւ շարադրած. Ի յորդոյ Մարութի ազգաւ Շահումեանց, ի յերկրէ Ղարանու գեղջէն Երազթասթանց: Թէ յոտանաւորս այս պակաս ինչ տեսիլք, Աղաչեմ զձեզ՝ զի ինձ ներստիք, Չի մանուկ եմ տիպ, ուսմամբ անիմաստ. Ես չնչին Նահապետս ծառայ ձեր նուատոս: Ի ցուցակի տաճին նշանակեցաւ զրոդդ 80 ամեայ ր յամի 1758, զիրքն տպագրեալ է յամի 1753. յայտ ուրեմն է զի բազում ամաբ յառաջ քան զայս յետին թուական՝ յօրինեալ է նորա զչափական բանսն:

345. Սահակ Բուհրուսնեցի մանուկ Նահատակ. — Ծանուցաւ փոքր ի շատէ ի տեղագրի հայրենեացն՝ նահատակութիւն մանկանս. այլ չքնաղ առաքինութիւն նորին և սրտառուչ ողորմամահութիւն, նա և զգայուն պատմաբանութիւն ականատես գրողին, միանգամայն և ցարդ բազմաց զանխուշն մեալ հուշակելի դիպացն, արդեօք և արեւական գոչումն արեանն ընդ յիսուսականին հեղաբանելոյ, պահանջեցին զլիակատար հրատարակութիւն վկայարանութեանն. Ի վերնագրին անուն գեղջն յաւելմամբ ն տառի՝ կարծեցուցէ Բրուսու կամ Բրոստե, ի կարգին Բրուսու. այլ զի ի Գողթն ծանօթ է միայն Բուհրուսու, աներկբայ սա է համարելի հայրենիք վկային:

ամենայն շարեաց սատանայ խրատէ զնոսա. ասեն. Հնարեցուք այսպէս և կացուցուք վկայս, թէ սա խոստացու պաշտել զօրէնս մեր և ուրանալ զիւրն. այսպէս վկայեցուք առաջի դատաւորաց և մեծամեծաց: Եւ հաճոյ թուեցաւ բանս ընդ միմեանս՝ զոր խորհեցանն խորհուրդ շար, և ոչ կարացին հաստատել, ըստ ասողին: Մինն ի խորհրդակցաց զնայ առ դատաւորն և ասէ, թէ, Սա խոստանայ զօրէնս իւր ուրանալ և դառնալ յօրէնս մեր, և ոչ առնէ. զի՛նչ պարտ իցէ առնել նմա: Ասէ դատաւորն. կամ դառնալ պարտ է յօրէնս մեր, և կամ սրով մեռանել: Ասէ անօրէնս. Մանուկ մի է

աստ ազգաւ Հայ յերկրէն արեւելեան, խոստացաւ պաշտել զօրէնս մեր, այժմ ուրանայ: Յայնժամ կոչեցին զսուրբ մանուկն յատեան Յուսուֆ ամիրային. և կացին սուտ վկայքն՝ որպէս խորհեցանն, վկայեցին թէ լուաք ի դմանէ որ ասէր, թէ յօրէնս ձեր դառնամ: Եհարց ամիրայն ցսուրբն Սահակ. Իբրաւի է զոր զքէն ասեն դոքա. յայնժամ լցեալ մանուկն Հոգւովն Սրբով, շարժեալ ի խնամոց վերնոյն, ի բաց ունելով զերկրւոյն սնտի, անվեհերապէս խօսեցաւ քողորածայն բարբառովն. Ամիրայ, ո՛չ գիտեմ զդոքա, և ոչ ճանաչեմ, և զոր խօսինն եւս չգիտեմ, բայց միայն զՔրիստոսն գիտեմ և ոչ զայլ ոք: Քանիցս անգամ դարձուցին զբանս սուրբ մանկանն, մանուկն անփոփոխ ունէր զդաւանումն որ առ Քրիստոս: Յայնժամ դատաւորն գրեաց զբանս սուտ վկայիցն, և հրամայեաց արկանել զսուրբն Սահակ ի բանդ: Ամենայն սր կացուցանէին առանձինն, ողբէին և խրսւտէին, և նա շնորհօք Քրիստոսի անշարժ կայր ի հաւատս և ի դաւանումն ի Քրիստոս:

Եւ յերրորդում աւուրն արար մեծ հանդէս հրապարակաւ իսուֆ ամիրայն՝ որ էր իշխանաց իշխան, հանդերձ դատաւորք և այլ մեծամեծք: Զգովելի մանուկն հանին ի բանտէն, խոնարհ ունելով զգլուխն, և կացին սուտ վկայքն. դարձեալ զնոյն բան առաջարկեն, թէ խոստացաւ զօրէնս մեր պաշտել և զիւրն ուրանալ: Մանուկն երանեալ կայր որպէս գառն ի մէջ յոքնակոյտ զայլոց, և զՔրիստոս դաւանելոյ ոչ դադարէր: Ասէ ամիրայն ցսուրբ Սահակ մեղմ մեղմ. Մանուկ, լուր զոր ասեմ. ահա վկայն վկայքն քո. զբանս վկայիցն գրեալ է. եկ որդի, դարձի՛ր յօրէնս մեր, և տամ քեզ պարգեւս բազումս, և զշնորհս զօրացս սուսով իմ, և զքեզ ինձ որդեգիր արարից. ապա թէ ոչ՝ կատամահ առնեմ զքեզ: Յայնժամ մանուկն հոգիաբարեկալ ասաց. Ո՛չ այդպէս, ամիրայ, եթէ մեռանել եւս հասանիցէ՝ որպէս ասեաք՝ ոչ ուրանամ զՔրիստոսն իմ. քանզի զնա գիտեմ և ոչ զայլ ոք. դոքա որք վկայն վասն իմ՝ սուտ վկայն, ես ոչ ճանաչեմ զդոքա: Եւ ոչ կարացին կասեցուցանել ի հաւատոյն զոր հաստատ ունէր անդրդուելապէս. քանզի հիմն ի վերայ վիմի էր, և ոչ կարացին հեղեղքն անօրէնք ստնանել և յատակել. այլ մնայր անսասան: Փա՛ռք բարերարին Աստուծոյ:

Եւ դարձեալ հրամայեցին արկանել զսուրբն ի բանդ. և անսուաղ պահէր զինքն. և ոչ ուտէր զկերակուր նոցին. և քրիստոնեայքն տալ ոչ կարէին. այլ կամաւ էր անսուաղութիւն նորա մինչեւ եօթն օր: Ամենայն օր ահացուցանէին զերանելի սուրբ վկայն, թէ ահա վաղիւն հատցեն զգլուխ քո. զայս առնէին վասն ահի մանկանն, որ ուրանայ. իսկ նա եւս առաւել պնդէր և զօրանայր: Եւ կոչեաց դատաւորն զմի առաջակայիցն քրիստոնէից, և ասէ. Ասացէք ցմանուկն, թէ այսպէս ասէ դատաւորն, միայն թէ ուրանայ և գնայ յիւր աշխարհն, և պաշտէ զհաւատս իւր: Եւ զայս բան դատաւորին ծանուցին սուրբ մանկանն. և նա ոչ էառ յանձն, ասելով. Թէ սպանցեն զիս վասն Քրիստոսի՝ պատրաստ եմ և ոչ

ուրանամ: Եւ եկեալ ծանուցին զբան սուրբ մանկանն՝ դատաւորին, թէ ոչ առնու յանձն զոր ասացեր: Եւ հնարեցին զայլ հնարս. գրեցին զվճիռն մահուն, և ըզհրաման ամիրային և զսուրբ առաքեցին առ սուրբ վրկայն Քրիստոսի, մինչդեռ ի բանտին էր. ասեն ցսուրբ մանուկն. Ահա վճիռն մահուն քո և հրաման ամիրայի, և ահա սուրն: Զայսուքիկ եղին առաջի սրբոյ վկային, և նա ոչ ինչ ասաց. զայս միայն, թէ. Պատրաստ եմ մեռանել վասն անուանն Քրիստոսի: Եւ զայս ծանուցին ամիրային, թէ ոչ ինչ երկեաւ, ոչ ի հրամանաց ձերոց և ոչ ի սրոյն: Եւ ի յեօթներորդ գիշերն շատ շարշարեցին զսուրբ վկայն Քրիստոսի, մինչ երկաթեայ ունելեաք փետտեցին զմարմինն: Եւ յեօթներորդ աւուրն յերրորդ ժամուն՝ զլուխ զօրուն՝՝ որ էր մեծ իշխան և զօրավար, և նա իրեւ զգազան ահագին կատաղեալ՝ կամեցաւ եւս դատ առնել սուրբ մանկանն. ոչ հանդուրժեաց ի դատարանին առնել, այլ ել ի հրապարակն փողոցին, և նստաւ յատենի, և ժողովեաց զզօրս իւր զամենայն: Եւ կոչեաց զգլուխ զօրուն ի նոյն ստեանն. զդատաւորքն զմեծամեծքն ամենայն. և եղև մեծ զղըրդումն ահագին. և ամենայն ժողով քաղաքին կուտեցան համանգամայն, հաւատացեալք և անհաւատք. և ամենայն եկքն ի միասին: Գլուխ զօրուն հարցանէ ցրատաւորն. Զինչ արասցուք մանկանս այսորիկ՝ եթէ ոչ դարձցի յօրէնս մեր: Ասէ դատաւորն. Ըստ օրինաց մերոց պարտ է կամ դառնալ յօրէնս մեր, կամ սրով մեռանել, որպէս գրեցան ըստ վկայիցն, ապա... և հրամայեաց... ՝ զօրէնս մեր որպէս խոստացարն: Պատասխանեալ մանուկն ասէ. Քա՛ւ լիցի ուրանալ զՔրիստոս իմ և դառնալ յօրէնս մեր. և ասէ զլուխ զօրուն. Թէ դարձցիս յօրէնս մեր՝ բազում ոսկի տաց քեզ և շատ բարութիւնս. ապա թի՛ ոչ դառնաս՝ մահու մատնեմ զքեզ: Եւ երանեալ մանուկն բացեալ զշնորհայի բերանն ասէր. Ո՛չ ուրանամ զհաւատս իմ. ձեր ոսկին ձեզ լիցի. պատրաստ եմ եթէ մատնես զիս մահու: Եթե՛ս ահագ զնոքս ըստ ասողին, զօրացեալ Աստուծոյ. և ոչ ի գանձուցն պատրեցաւ, և ոչ ի սրոյն երկեաւ, այլ յազութեաց երկուց կողման. ցածեաւ առաջի նորա ամենայն՝ որ ինչ յաշխարհին էր, ըստ Դաւթի. այլ խաղայր ցընծալով մանուկն հոգւով. ընդդէմ եկաց ճակատուն, պնդելով վանէր զախոյեանն շարին: Յայնժամ ասէ զլուխ զօրուն ցրատաւորն. Ահա ո՛չ դառնայ, հատ զվճիռն մահուն. յայնժամ եհատ դատաւորն զվճիռն: Եւ ել յօտին զլուխ զօրուն, և հրամայեաց ասելով սաստկազոյն ձայնիւ. Մերկացուցէք զդա և սպանէք. և շար զինուորքն մերկացուցին և զձեռս յետս կապեցին:

Ո՛վ երանեալ մանուկ. զայդ մեծ պատերազմ ուստի՞ ուսար. կամ ո՞ ցոյց քեզ. զիմորդ իշխես զայդ առնել. ո՛ւմ վասն մերկանաս. ո՛ւմ վասն կապեցար. ո՛ւր գնաս. քանզի յիշատակ մահուն դողացուցանէ զմեզ. փոխանակ կաթին բաժակ մահու ըմպես: Երանելի վկայն Քրիստոսի լցեալ անապական գինեաւ, զխորհուրդ անօրինացն որպէս լաւ գոեհաց կոխէր ճմլէր և նկուս առ-

1 Պակասէին յօրինակի մերում իբրև չորս տողք. ըզմալի է՝ որոց ունեցին այլ օրինակ՝ ընդ զթերին:



նէր. մերկացաւ, զի մերկ ընդ անմարմին թշնամոյն կը-  
 աւէր. երկնաւոր արքային հաճութեան կամաց զինու-  
 պատկեալ. այսինքն վահանն հաւատոյ. սալաւարտն յու-  
 սոյ, աւետարանական սմբովերարկուն, իրրեւ զկօշիկ  
 զարշապարացն ունելով գնայր աներկիւղ կօխելով զօձս  
 և զկարիճս, և զամենայն խորհուրդս շարին. զհետ մը-  
 տեալ հետոցն Քրիստոսի՝ յօրինէր և կազմէր զպատե-  
 րազմն. վառէր անշիջանելի վառմամբ սիրովն Քրիստո-  
 սի. ոչ զիտաց զինչ է գան, զինչ է տանջանք, զինչ է  
 երկիւղ, զինչ փառք. այլ զՔրիստոսն ի վերայ ամենայ-  
 նի լաւ և բարձրագոյն համարեցաւ, որպէս առաջին մար-  
 տիրոզն:

Եւ իրրեւ տարան ի տեղի կատարման՝ հանդէպ դրան  
 ամիրային, զինչ ի սպանդանոց զորովն Քրիստոսի, մերկ,  
 ձեռս յետս կապեալ, ոչ ինչ խօսէր, այլ զմայեալ էր  
 բաժակաւն մահուան. յայսկոյս և յայնկոյս հայելով՝ ի  
 գութ շարժէր զամենեանն: Ամենայն ազգ ժողովեալ  
 հայէին զկատարումն սուրբ վկային. Թուրքաց, Թաթա-  
 րաց, Հայոց և Հոռոմոց և Լուսսաց: Եւ դահիճն իրրեւ  
 վերացոյց զսուրն՝ թէ հատցէ զզուխ սուրբ մանկանն,  
 յայնժամ զողումն եմուտ ի նա, և ոչ կարաց հատա-  
 նել զպարանոցն, այլ ընդ մերկ թիկամբն եհար և ձեղ-  
 քեաց. և ել արիւն շատ: Եւ սկսաւ երանելին արտա-  
 սուել. քանզի զարտասուս ընդ արեան խառնէր: Ո՛վ  
 կարասցէ զաղէտս սուրբ մանկանս պատմել. ո՛վ պան-  
 շելեացս լուր. ո՛վ հիացման արժանի: Եւ մի ոմն ի գի-  
 նուորացն ձայնեաց առ դահիճն՝ իրր. ի գութ շարժելով.  
 Ո՛վ անիրաւ, ընդէր շարչարես. արագ հար: Այլ և վե-  
 րացուցեալ դահիճն զսուրն՝ թէ հատցէ. և ոչ կարաց  
 ի զողմանէն. ընդ սկանջն հանդերձ երեսօքն էառ. և  
 եղեւ մանուկն արեամբ ներկեալ. և ոչ ինչ խօսէր, որ-  
 պէս գառն նորածին, այլ զարտասուս ընդ արեանն հե-  
 ղոյր: Յայնժամ ամիրայն ոչ կարաց տանել զաղէտն.  
 ձայնեաց ի պալատէն ասելով, թէ, իրրեւ զոչխար զե-  
 նեա: Յայնժամ դահիճն իրրեւ զոչխար զենեաց: Գար-  
 ձաւ դահիճն՝ զսուրն եղ ի գետինն. քանզի այնպէս ա-  
 հագին ձայն վարհուրման ել ի սրոյն, որ ոչ կարացին  
 զձայնն տանել որք մերձն էին, փախեան ամենեքեան  
 յերկիր ընկնելով. և սկսաւ անձրեւ մանրամաղ տեղալ,  
 եւս և զօրանալ սաստկագոյն զերիս տիւս և զերիս գի-  
 շերս. զի մի պատուական արիւն սուրբ վկային լիցի կո-  
 խան անսրինաց, այլ լուացեալ ջնջեաց յերկրէ, և մնաց  
 մարմին սուրբ վկային անթաղ. և հրամայեաց դատա-  
 ւորն զմարմին սուրբ վկային ընկնելու ի գետն մեծ որ  
 կոչիւր Թէն (Soñ):

Արք երկիւղած: և աստուածապաշտք զնացին առ  
 դժգոհութիւն և ետուն դրամս բազումս, և առին հրաման  
 թարգմայ: Եւ մինչդեռ տանէին զսուրբ մարմինն սայլիւ՝  
 ի դիրն հանգստեան, տեսին անօրէնքն զի կանգուն  
 կայր. սուրբ մարմինն ի մէջ սայլին. հիւանալով յետս  
 դարձան. քանզի այնպէս երեւեցաւ յաչս նոցա: Եւ ե-  
 դին ի տապանին սաղմոսիք և օրհնութեամբ և երգօք  
 հոգեւորօք. և յիշատակն օրհնութեամբ եղիցի. ի տեղի  
 կատարմանն մինչեւ ի դիրն հանգստեան՝ լոյսն ծիրա-  
 նագոյն կամար կապեցաւ ի մէջ սաստկագոյն անձրեւին,

ակներեւ ամենեցուն: Այր ոմն քրիստոնեայ և աստուա-  
 ծապաշտ՝ բամպակով էա զսուրբ արիւն վկային, և ե-  
 տես ի գիշերին ի տան անդր իբր զկրակ անբոց: Գիշե-  
 րապահքն քաղաքին տեսին զլոյսն ակներեւ. եկեալ  
 պատմեցին քրիստոնէից, աւետիս տալով, թէ տեսաք  
 զլոյսն բոցաճաճանչ ի վերայ մանկանն. և երանեցին  
 քրիստոնէից զհաւատոյ պայծառութիւնն:

Ի Թուականիս հայոց ՌՃԿԳ ի հոկտեմբերի ԺԷ, կա-  
 տարեցաւ սուրբ վկայն Սահակ, ի փառք Քրիստոսի  
 օրհնելոյն. ամէն: Ի ձմեռայնի զբաղեալ սուղ ժամանա-  
 կի՝ երեւեցաւ վարդ մի փթիթ և զարմանալի և անուշա-  
 հոտ, որ ելից զտիեզերս ամենայն: Քեզ աւետիս եր-  
 կիրդ Գողթնաց, և ուրախ լեր, որ ունիս պրծապա բա-  
 բութեան և ճիւղս օրհնութեան. ուրախ լեր երկիրդ  
 Ղրիմու, որ Թուեաւ յարեւելից ակ մի պատուական, և  
 հանգեաւ ի քեզ:

Շնորհիւ հեղման սրբոյ արեան վկայիս, Տէր Յիսուս,  
 թող զյանցանս և զպարտիս զյարմարողի ճառիս, կրա-  
 ֆայեցոյ Ստեփանոսի տրուպ յետին բանասիրի:

367-8. Նորաշէն Երնջակայ. — Ի մատենին գրեւոյ  
 յամի 1669-70, զոր յիշեցաք յէջ 368, և է Աւետարան  
 (ի Սեւան) դեօղն կոչի Նորաշինիկ, α ի նաւահանգիստ  
 » և ի նահապետակերտն յորջորջեալ Նախիջեվան, և ի  
 » նորին նահանգան Երնջակայ վերասացեալ »:

468. — Հայք ի Սուրաթ եւ յԷքպարապատ (Էկրայ)  
 Հնդկաց. — Դաշիթ ոմն քահանայ ի կէս ԺԷ դարու, ա-  
 սէ ի յիշատակարանի Յայսմաւուրաց. « Գրեցի Ընդրս-  
 » տան, ի Սուրաթումն, ի դուռն Ալմենափրկիս, որ  
 » այժմ նոր յինեալ. և յինոզք սորա Մոռոտասի Բարսեղի  
 » որդի Մինասն... Ողորմի ասացէք ծնողաց իմոց Խաւ-  
 » սապ փոռասիկին և Սարգային: — ՌՃԺ. Էկրայ »:  
 Ուրոյն գրեալ է անուն քաղաքիս. գրեալ է այլուր և  
 անուն ստացողի գրոցն, որ Թուի նոյնպէս ի Հնդկիս լի-  
 նել, մանաւանդ զի կոչի « Պարոն Սարգիս, որ է վաճա-  
 քական ». որդի Խօջայ Դաւթի և Գուլբէրի, Թոռն Մար-  
 գարէի և Նունէի:

Այլ զք գրիչ յայլում մատենի, այլ մերձաժամանակ,  
 գրէ. « Գրեցաւ (Սաղմոս) ի յերկիրս Հնդկաց, ի ծովա-  
 » հայեաց արքանիստ քաղաքս Էքպարապատ, որ կոչի  
 » Էկրայ, որ է աթոռ Թագաւորին Հնդկաց. ի Թագա-  
 »ւորութեան Շահ Չհանին, և Պարոց Թագաւորին  
 » դեռարոյս մանկանն Շահաբասին... ի հայրապետու-  
 » թեան Տեառն Փիլիպպոսի », և այլն:

469. Հայք ի Չինաստան. ի Պուխարա. — Արժան  
 էր յիշել զՔ յորժամ յԺԳ դարու ուղեւորութեամբ և  
 տեղագրութեամբ Մ. Պոլոսի (Marco Polo) և հօր նո-  
 րա, և իտալացի քարոզչաց, և մերոյս Հեթմոյ Ա. Թա-  
 գաւորի, բացածանուցաւ հին աշխարհն շինաց, յա-  
 ւուրս տիրապետութեան Մողոլաց, յարեւմտեայց Catai  
 կոչէր, մանաւանդ արեւմտեան մասնն և Պուխարա-  
 նոյնպէս կոչէ և Հեքոռն Տէրն կոռիկոսի ի լատին կամ  
 փառնիկ թելադրութեան իւրում Սրեքեթեան պատմու-

քեանն. որոյ ժամանակակից Կիրակոս պատմիչ՝ Ղատա. յիջ գրէ բնակչօքն հանդերձ, այլ և Խարախորտայ, այս. ինքն Գարա խիդայի, որ յատկապէս զՓոքր Պուխա. րայն նշանակէ: Ի նմին դարու սոմարագիրք մեր գուշա. կարանք ըստ Արարացոց, յաճախ յիշեն զԽիդայի եր. կիրն. և սակաւ ինչ այլայլութեամբ լսի անունն և յետ

նոցա առ մերայինս. և որ կարեւոր է մեզ արդ ի գի. տելիս, երթեւեկ վաճառականաց մերոց անդր. յորս արժանի յիշատակաց է, նա եւ ըստ կրօնական զիպաց, տաղաչափ պատմեալն ի Գրիգորիսէ կաթողիկոսէ Ազ. թամարայ, յամի 1519-20. զոր և համարիմ ոչ անհա. ճոյ լինել ընթերցողաց:

**Տաղ Աստուածատուր Խրայեցոյ Նախառակին.**

Վաճառական մի Հայ և յոյժ ճարտասան՝  
Մխիթար Բաղիշեցի եւ աստուածածան,  
Գնաց նա ի սահմանս Ատրպատական,  
Ի Ղուժ և յԻրաղ եւ ի Խորասան.  
Եհաս ի Սամարխանտ և ի Բուխարա,  
Եմուտ ի Հինդիստան, եւ անտի գընայ  
Ի մեծ հաշակաւոր քաղաքն խրթա,  
Ուր մոշկն է պատուական երէոյ նաֆա.  
Խըթայ մերձ սահմանաց Չինումայինայ,  
Եւ անդ լինի առաւել, չըքնաղ յինին գա.  
Անդ է նահատակեալ Առաքեալն թովմա՝  
Հարեալ ի Մոշիկէ. այսպէս զըրեալ կա.  
Եւ են աշխարհն ամէն կռապաշտ հաւասար,  
Ոչ ճանաչեն զՈրդի, Սուրբ զՀոգին կամ զՀայր...  
Անտեզեակ ւանժանօթ են այսրմ շնորհի  
Աշխարհն թաթայու՝ զոր սյոժմ յիշեցի...  
Ելեալ ի թաթայու զօրքըն հեծելին  
Եւ դէպ ի յարեւելս չըեալ գընացին,  
Եւ ազգ մի բովանդակ զամէն գերեցին,  
Որ ի լեզուս իւրեանց թաղմուխ կոչէին.  
Զմանկուկըն գերեւոյն վաճառէին:  
Յորմէ առեալ տըղայ մի Մըխիթարին՝  
Տանէր խընամբ նորս զինչ իւր զաւակին.  
Ապա դէպ ի աշխարհըս մեր դիմեցին.  
Ըզժով եւ ըզցամաք նոքա կոխեցին,  
Եւ յԱլանաց երկիրըն ժամանեցին.  
Մատնեցին ըզտըզայն երկրի իշխանին.  
Եւ նա ընչիք իւրովք գընեաց երեքկին:  
Բերեալ ի բուն քաղաքըն Մըխիթարին  
Զբարի մանուկն ընտրեալ և յառաքինին,  
Հաճեալ հաւանեցու կամօքն իւրային,  
Ասաց, թէ « Մկրտիմ յանուն Յիւուսին.  
Հաւատամ ես ի Հայրն և Որդի նորին,  
Երկըրպագեմ հոգովս Հոգոյն ճշմարտին.  
Մի կամք և մի բնութիւն որ ոչ բաժանին ».  
Զանունն Աստուածատուր նորս կոչեցին:  
Ուսաւ լեզու և գիր նա վաղվաղակի  
Շնորհօքն աստուածատուր և Հոգոյն տեղի.  
Անձամբն էր վայելուչ, բնութեամբըն բարի,  
Տեսլիամբըն գեղեցիկ և զարմանալի:  
Զընթացս երանելւոյն տեսեալ սասանի՝  
Զհաւատքն որ աւ Քրիստոս և գնացքըն բարի,  
Լինէր հեղձամըղձուկ յառաջին շարի.  
Բորբօքեաց ըզնախանձ դառնութեան բոցի...  
Դըրդեաց ի բարկութիւն զորդիս Հագարի.

Ասեն ըզմանկանէն՝ Զաւակ է թուրքի:  
Գնացեալ առ ամիրայն շարախօսեցին.  
Եկեալ, զԱստուածատուրն յատեան կոչեցին...  
Ի բաց թող զՔրիստոս և զհաւատ նորին.  
Թէ ոչ տանջեմք ըզքեզ սաստիկ և ահագին...  
Ետուր նա համարձակ ըզպատասխանին.  
Թէ Քրիստոս է Աստուած, և ես ծառայ նորին,  
Ինձ ուրանալ զՔրիստոս է անհընարին...  
Բազում թախանձանօք զնա աղաչէին,  
Քաղցրութեամբ խօսելով, և ոչ կարացին.  
Կապեցին զձեռսն ի յետսն և հարկանէին.  
Տանէր նա խնդութեամբ տանջանաց նոցին:  
Յաւուրս ձըմերայնոյ զնա մերկացուցին.  
Բերեալ գետն ի ներքոյ սառին անցուցին,  
Որպէս սուրբ Քառասունքն ի Սեբաստիին.  
Անցաւ ընդ հուր և ջուր՝ ստ երգոյն սաղմոսին.  
Ապա ի թիկնամէջըն հուր վառեցին.  
Հըրով ըզհողաթափն ի յոտքն ագուցին.  
Սըրով զբոլոր մարմինըն ծակտեցին,  
Եւ կայծակունս հըրոյ ի յերկու ձեռին.  
Ոչ ինչ նա համարէր զկրակիծն ահագին.  
Սիրով էր նա վառեալ ի յոյսըն վերին.  
Արիարար եկաց դէմ Բելիարին.  
Եղեւ նա պատարագ Հօրն երկնաւորին:  
Բերեալ ըզբարեյաղթ վըկայն Քրիստոսի  
Ետուն զնա ի մալլայն զի օրէնք ուսցի.  
Ասեն, Մանկութիւն է դորա՝ փոխելի,  
Դառնայ ի Քրիստոսէ սա վաղվաղակի:  
Սովով և ծարաւով յոլով տանջեցին,  
Ի հուր չի ջուր ըզնա անցուցանէին.  
Ամիտըս ութ անխնայ զնա շարչարեցին.  
Շարժել ի հաւատոց զնա ոչ կարացին.  
Եկեալ ժողովեցան շարքն ի միասին,  
Պատեալ շուրջանակի և քարկոծէին.  
Քան զչուն և զգազան զնա գիշատէին,  
Էառ զվախճան անդէն ի յասպարիսին:  
Ամաց էր ութ՝ եւ տասն վըկայս գովելի՝  
Որ վըկայեաց անուանըն Տեառն Յիսուսի.  
Էր թիւն ինըն հարիւր վաթսուն և ութի՝  
Յորժամ Աստուածատուրըն նահատակի:  
Սու մեծ Բարունապետն ճառս այս յարմարի  
Որ և անուն նորս Գրիգոր յարջորջի.  
Սորին սպասաւորէ և աշակերտի՝  
Գրիգորիս, մականունս է Աղքատարցի:

469. Դրակից և բազում մասամբ նմանակից ձենաց՝ ծանօթ է ամենեցուն ձեարնաց աշխարհն կամ կըղզիք, յոր՝ գէթ առ վայր մի ներամտել Հայոց՝ ակն ունելի էր. և ահա յիշէ մի սմն յառաջնոց քարոզչաց Յիսուսեանց, Հ. Կոչեմ (Cochin) ի կէս ԺՉ դարու (1849), եթէ ի ժամու գրութեան թղթոյն. (յորում յայանէր զկարծիսն՝ թէ վաղ ուրեմն աւետարանեալ իցէ քրիստոնէութիւն յայնմ աշխարհի, և խափանեալ նենգաւ մուրեցուցչի ուրուք), եկն առ նա եպիսկոպոս մի Հայ ի Հնդկաց. և ասէր ընթերցեալ իսկ ի գիրս, զի Հայք յառաջին դարս քրիստոնէութեան քարոզեցին զայն ի կող-


մանն յայնուսիկ. զորս, եթէ և զՀնդկաստան իմանայցէ նա, և եթէ չիցէ եւս ստոյգ պատմածն, կամ զամս 40 չըլել իւր ի խորս անդ արեւելից, որպէս ասէրն, կամ լինել իւր եպիսկոպոս, սակայն աներկբայ մնայ ազգ իւր և գալուստ անդր ի ձեարն, յոր սակս և իցէ, և այնու գուշակի այլոց եւս համազգեաց երեւել ի ծագս անդր Ասիոյ: Միրանազգեացն Մուռլա յիշելով զայս, աներկմիտ յաւելու գովութեամբ. « Չեն զարմանք եթէ յազգէ » այտի (Հայոց) միշտ ճարտար, վաճառական և հեռա- » զնաց ճանապարհորդ, ընծայեալ իցեն անվեհեր ծա- » ւալող հաւատոցն՝ զար ընկալան ի Ս. Բարդուղիմեայ<sup>1</sup>»:



151. Տարագր այժմեան Սիսականաց.

Յաւարտ տեղագրութեանս և ծանօթութեանց Սիւնեաց աշխարհի, հարկ համարիմ յիշեցուցանել զասացեալս ի սկզբան գրոցս, զի են և ՓՌՔՐ ՍԻՒՆԻՔ՝ առանձնակ աշխարհ, որոյ և զխաւոր գաւառն կոչի Սիսական, արտաքոյ սեփական Սիսականիս մերոյ, մասն Արցախոյ, սակաւ ինչ և սորին իսկ, յուրոտս ծովուն Գեղամայ: Յիշատակագիր ոմն յամի 1313, թուէ գգաւառս Փոքուն այնորիկ, որոց տիրէր յայնժամ փեսայացեալն յԱսիա՝ դուստր Տարայսճի, խաչնեցին « Գրիգոր, մեծ իշխան Հայոց, տէր և պարոն ՓՌՔՐ ՍԻՒՆԵԱՅ, Հանդարերդոյ և Ականց և » բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Շաւղուազայ. և գաւառք մեր յանուանէ այս է. Սոթ գը- » լուխ, և Բերդաձոր և Ճոխանց, Հոսաբակս, Ատրենիս, Կալեր, Ուռեացիոր և Խորուագետ, Տփալանո- » ցէրքն, Մափուելիլանց, և այլ իւրեանց միջոց մագրէնովն. ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է, չորս սահմա- » նովն... Յայսմ ամի որ էր թիւս 94, փոխեցաւ յաշխարհէս Ասիայն առ Քրիստոս, և եղաւ ի շիրմի ի սուրբ » ուխտն Խաղայի վանս. վասն որոյ և մեծ տէր Գրիգոր նուիրէ գերեզմանի նորա ընծայս յուով, գեղորայս, այգիս և » անդաստանս. և զարդարէ զսուրբ ուխտն սպասիւք և հանդերձիւք ». և այլն. — Երեքին միայն գաւառք՝ Սոթ, Կալեր և Բերդաձոր են ի Մեծ Սիւնիս, տեղագրեալք ի մատենիս, այլքն՝ գրեաթէ անծանօթք. յայտնի է և հոչաւ կաւոր վանքն Խաղայի յարցախականն Սիսական կամ Սիսիանձոր Փոքուն Սիւնեաց, որ և վերին խաչէն:

1 « Nè è meraviglia che da codesta Nazione (Armena), sempre indubre, commerciante e dedita a lontani viaggi, siano usciti generosi propagatori della Fede ricevuta da essi da S. Bartolommeo » — CARDINAL ZURLA.



# Յ Ա Ն Կ Տ Ե Ղ Ե Ա Ց



Աբանդ. ա. Հարանդ  
 Աբասյան 196  
 Աբասբեկյան 184  
 Աբալաբ Լ. 26  
 Աբգայ վանք 21. 292. 302  
 Աբգյանք ա. Աբգյանք  
 Աբասի 275  
 Աբար զեռ, ձոր. ա. Աբարու.  
 Աբարանի, յԱրեւիս 299. 302  
 — Ի Բաղս 274  
 — Ճանուկ 480-1  
 — Խոք 505  
 — Հարանդ 255  
 — Վայոց ձոր 98  
 Աբարանիկ 208  
 Աբարանի ձոր 97. 185-6. 203-3  
 Աբարանու. դ. 4. 266. 373  
 Աբարբու 104  
 Աբարան դ. 265. 269  
 Աբգայ 6. 40  
 Աբգիւիսե Գեղարք. 52  
 — Սոգեթ 73. 75  
 — յԱրեւիս 168  
 Աբգոզու 77  
 Աբգոս. Աբգոբեհա. ա. Աբաբար  
 Աբգոզու 75  
 Աբգոբեհա 105  
 — յԱրեւիս 267-9  
 Աբգոբեհա, վերակ 323 —  
 — վերին 324 —  
 — Սարգիս 325 —  
 Աբգուկանց վ. ա. Ս. Թովմաս  
 Աբգուկու յԱրեւիս 275  
 — յԱրեւիս 76  
 Աբգուսի զերեզման 268  
 Աբ սու. դ. 4. 215  
 Աբ տերե 163  
 Աբ քենա 99. 163  
 — ա. Երբակոսիկ  
 Աբտերգի կամ Աբ քեօփրիս 99. 269  
 Աբ օղլան դ. 4. 254. 264  
 Աբա. ա. Աստ Թեփե  
 Աբամ Խան 53  
 — զեռ 27  
 Աբա վերին և Ներքին 346  
 Աբալի 271  
 Աբախ (Հայք յ) 440. 528  
 Աբաս 177. 190. 203  
 Աբաս աղբուր 139  
 Աբաս Գիրան 309. 344-6. 347  
 Աբաս քաղաք 38. 40. 66  
 Աբասուկ, Աբասուկ 98. 177-8  
 Աբիւ փաղեքանի 269

Աբիսու. ա. Աբիսու  
 Աբիսուբեք և Լ. 4. 302. 309. 478. 505  
 — զեռ 505  
 Աբիսուբեքի 344  
 Աբիսուս 60  
 Աբ դաշ 58  
 Աբխալ 275  
 Աբղէք 208  
 Աբղիդի 293  
 Աբղուկ 275  
 Ալազայս Գարաշալու 100  
 Ալակազ ա. Երեզնիք.  
 — զեռ, և Լ. 4. 20  
 Ալակեզ մարտ 488  
 Ալակեշ Լի 206  
 Ալամու Լ. 282  
 Ալանիկ Լ. 3. 90. 298  
 Ալաշիբու նոր 50  
 Ալաշիբու դղ. և դ. 60  
 Ալաշիբու Թեփե Լ. 27. 60  
 Ալասին (Արտին) 281  
 Ալաուս 100  
 Ալեազու (Ողտի) 344  
 Ալեաք (Հայաքս) 270  
 Ալեաքի դ. 4.  
 Ալեքսանդրոփակ 40  
 Ալէլուս 209. 215  
 Ալեւնա ա. Երեզնիք  
 Ալթուն, դղ. դ. և Լ. 49  
 Ալթունանց 287  
 Ալթունթախ 39  
 Ալթունի 100  
 Ալթուն սերայ 76  
 Ալիանու 100  
 — Պաշարաթ 100  
 Ալիազա 303  
 Ալիխան փայտի 166  
 Ալիզուս 58  
 Ալիզուի 243  
 Ալիզուի զլլախ 99. 263  
 Ալիզուի շէն 255. 262-3  
 Ալիզուի քենա 99. 104. 262. 270  
 Ալի Մանաս ձոր 381  
 — զլլաք 486  
 Ալիշար 104. 215  
 Ալիշալու 60  
 Ալիտերե 99  
 Ալլակեշ Լի 4. 26  
 — Լեւան 26  
 — զեռ 27. 65  
 Ալլակեշ զանալ 26  
 Ալլակեշի տիպ 338  
 Ալլաթեան ա. Ալլաթեան

Ալլասու 99  
 Ալու Լ. 3  
 Ալլատիք? 267  
 Ալապա 308  
 Ալապիս 38  
 Ալանիք 64  
 Ալիլու 178  
 Ալաթեան 209. 245  
 Ալիաշ 488  
 Ալանանք 182  
 Ալանիք, Ալապիք 40. 182  
 Ալանից 182  
 Ալանի 208  
 Ալանասուն 64  
 Ալանաք դ. 4. 90. 97  
 Ալանի ա. և Ալանի  
 Ալանաթա 77  
 Ալանա վերին և Սարգիս 176  
 Ալանախան 102. 276. 307  
 Ալանի 243  
 Ալոքի Լ. 21  
 Ալոքի 20  
 Ալանայ 28.  
 Ալանց դաւառ 532  
 Ալանք 209 — զեռ 70. 266  
 Ալարզան 253  
 Ալի 275  
 Ալիք սյուի 203  
 Ալիք 64  
 Ալու կամ Զակու 113  
 Ալուսի Ի ճանուկ 480. 486  
 — Վայոց ձոր 173. 189. 203  
 — զեռ. ձոր 175  
 Ալուզուր Կու 244  
 Ալուխալ 244  
 Ալեքսանի վ. ա. Հերմանի վ.  
 Ալմանիկ Լ. 26  
 Ալմուտեղուցի? սյուի 191  
 Ալաբուկանք 61  
 Ալաթմարաթ 208  
 Ալաթիք 255  
 Ալալանի Կու 122  
 Ալակեցիկ 326  
 Ալակեց դաւառ 265-71  
 Ալակի 209  
 Ալակուր 104. 275. 285  
 Ալապար Կայլասի 484  
 Ալան 209. 244  
 Ալալու Թեփե Լ. 60. 72  
 Ալալանի 299  
 Ալանայ զեռ 4. 181. 264. 272. 283-5  
 Ալաբաբուր 64  
 Ալաբիս 185. 205

Ազարակ 80  
 Ազերի խաչ 379  
 Ազերիկայ հող 117  
 Ազերիք վ. 130 ա. Գայլեմոր  
 Ազրին 227  
 Ազրին 101  
 Ազրու 480  
 Աշու 97  
 Աշտուրի մ. Ահեբեր  
 Աշտուրյանք 98 178  
 Աշտոյ սյուր 181  
 Աշտուրյանոց մ. Աշտուրյանք  
 Աշտուր 101. 209. 216  
 Աշտուրեան մ. Աշտուրեան  
 Աշտուրեան 269  
 Աշտի գ. 4  
 Աշտուր 275  
 Աշտուր բերդ 98  
 Աշտուր 93. 97. 168-9  
 Աշտուրյանք 168  
 Աշտուրյան հողի Շենքեր 525  
 Աշտուրի 255  
 Աշու 480  
 Աշտուրիք գ. 261  
 Աշտուր 120  
 Աշտուրեանք 267  
 Աշտուրի. մ. Աշտուր  
 Աշտուրի 116-7  
 Աշտուր 292  
 Աշտուր 266  
 Աշտի 358 Լ. և գ. 2 354  
 Աշտեան 242  
 Աշտեան. Աշտեան 278-80  
 գա. 274-6  
 Աշտուրի մ. Աշտուր 276  
 Աշտուր 268  
 Աշտուր 100. 276. 288. 293  
 Աշտուրյանք. Աշտուրյանք 180  
 Աշտուր 97. 184 ա. և Նորաշտուր  
 Աշտուրյան 515  
 Աշտուրյան վ. 21  
 Աշտուրի 38  
 Աշտեմ 291  
 Աշտուրյանք 232  
 Աշտուրի վ. Զուգարի 462  
 ——— վ. հուսանայ (Մանիկ) 366  
 Աշտուր 168  
 Աշտուրի 64  
 Աշտուրի 215  
 Աշտուրյանք (Հայք յ') 459  
 Աշտուր 489  
 Աշտուր մ. Աշտուր  
 Աշտուր հող (ի Մալաթի) 517  
 Աշտուր գաւ. 207  
 Աշտուրի (Ընծանք) 100  
 Աշտուրի Լ. 206  
 Աշտուր 270  
 Աշտուրյան. Աշտուրյան 51  
 Աշտուր 141  
 Աշտուր 139  
 Աշտի. Աշտուր Լ. 215  
 ——— գ. 4. 215  
 Աշտի վանք մ. Հայրուվանք  
 Աշտիկ. Էլիկ 58. 75  
 Աշտիկ Լ. 26  
 Աշտիկ գ. 4. 215  
 Աշտի 64  
 Աշտուր 274  
 Աշտուրյանք 274  
 Աշտուր մ. 180. 18 և 5. 205

Անապատ բ. Անապատ 326  
 անապատ 315. 319  
 Անապատ 68  
 Անապատ 203  
 վանք Բալթասերի մ.  
 վ. Գաբուր մ.  
 Անապատ 352  
 վ. Հայրանք 247-51 (Մեծ)  
 վ. Վարդանք մ.  
 վ. մ. Նորաշտուր  
 վ. հուսանայ յիւզեվան մ.  
 ——— Հայրանք 256-8  
 ——— Շենքեր 252. 258  
 ——— Հայրանք 269  
 ——— Նորաշտուր 49  
 Անապատի 207. 212  
 Անապատ 98. 159-60  
 Անապատ 91. 160  
 Անապատ (Հայք յ') 452  
 Անապատ. Անապատ 98  
 Անապատ 326  
 Անապատի 274  
 Անապատ. Անապատ 351. 361  
 Անապատ 265  
 Անապատ 437  
 Անապատի խաչ 172  
 Անապատ մ. Անապատ  
 Անապատ 255  
 Անապատի խաչ 211  
 Անապատ 282  
 Անապատ անապատ 60  
 Անապատի 64  
 Անապատ 64. 68  
 Անապատի 480  
 Անապատ 266  
 Անապատ Լ. 243  
 Անապատ 287  
 Անապատ 481  
 Անապատ 274. 276. 295  
 Անապատ 94. 166  
 Անապատի 97  
 Անապատի 351. 369-72  
 Անապատի գ. 207. 210  
 Անապատ 40  
 Անապատ 100  
 Անապատի մ. Անապատ 509  
 Անապատ անապատ 58  
 Անապատի 99  
 Անապատ 100  
 Անապատի մ. Անապատ  
 Անապատի 351. 376 —  
 Անապատ. Անապատ 291. 295  
 Անապատի 97  
 Անապատ 97. 108  
 Անապատ 6  
 Անապատի մ. Անապատ  
 Անապատ 245  
 Անապատի սյուր 139  
 Անապատի Պապի? 268  
 Անապատի կրկին 317  
 Անապատ 205  
 Անապատի գ. 4  
 Անապատ 98. 116-7  
 ——— ճիւղ 487  
 Անապատ 2. 9  
 Անապատ 38. 42  
 Անապատ 173. 181  
 Անապատ հող 38  
 Անապատի 40  
 Անապատ 287

Անապատ մ. Անապատ  
 Անապատի 381  
 Անապատի մ. Անապատի  
 Անապատ 64  
 Անապատ 262  
 Անապատ 99. 307  
 Անապատ 308-9  
 ——— սյուր 508  
 ——— հող 518  
 Անապատի վ. 64  
 վ. և Անապատ յիւզեվան 167  
 Գայլեմոր 134-7  
 ——— ի Հայրանք մ.  
 ——— Շենքեր մ.  
 ——— Նորաշտուր մ.  
 ——— Նապատ 487  
 ——— Շառապատ 481  
 ——— Ցառապատ 167  
 ——— Օժուր 483  
 Անապատ մ. Անապատ  
 Անապատ 270  
 Անապատի Լ. 76  
 Անապատի 54. 8 մ. Անապատ  
 Անապատ 98. 104-5. 107  
 Անապատ 274  
 Անապատի խաչ 532  
 Անապատի 64  
 Անապատ 179  
 Անապատի խաչ 1. 207. 210  
 Անապատ 351. 381  
 Անապատ 215  
 Անապատ 262  
 Անապատի խաչ 138  
 Անապատ 266  
 Անապատ անապատ մ. Հայրանք  
 Անապատ մ. Անապատ  
 Անապատ 402  
 Անապատ 245  
 Անապատ 269-70  
 Անապատի 169. 180  
 Անապատ Լ. 3  
 Անապատ. Անապատ 141-5. 496  
 Անապատի վ. 21  
 Անապատ 97  
 Անապատի վ. 21. 517  
 Անապատ  
 Անապատի 4  
 Անապատ. Անապատ, Անապատի 351. 361  
 ի Զուգարի 255. 264  
 Հայրանք 164  
 Անապատ 207  
 Անապատի 64  
 Անապատի և գ. 348. 354  
 Անապատ 287  
 Անապատի մ. Անապատ  
 Անապատի 38. 58  
 Անապատի մ. Անապատ  
 Անապատ (Որդուք) 387. 490  
 Անապատի (Որդուք) 244  
 Անապատի. Անապատի 39. 76-7. 525  
 Անապատ 98  
 Անապատ 208  
 Անապատ 298-308  
 Անապատ մ. Անապատ  
 Անապատ 101. 204  
 Անապատ 275  
 Անապատի Լ. և գ. 400  
 Անապատ մ. Անապատ  
 Անապատ 208. 225. 228. 246  
 ——— խաչ 27



Արխիվներ 26  
 Արժեք 208 · 210 · 247  
 Արժեք 438  
 Արժեքներ 99  
 Արդարացիություն 97  
 Արդարացի 98 · 118 · 524  
 Արդար 274  
 Արդու գեղ 480  
 Արժեքներ 287  
 Արժեքներ 274  
 Արժեքներ, Արժեքներ 302  
 Արժեքներ 116  
 Արժեքներ և դ. 480 · 486 - 7  
 Արժեքներ և դ. Հայոց Սովետական 463  
 Արժեք 64  
 Արժեքներ 266  
 Արժեք 97  
 Արժեքներ 209  
 Արժեք 227 · 274 · 277  
 Արժեքներ 269  
 Արժեքներ 481  
 Արժեք 102  
 — Միջ (Արժեք) 275 - 6 · 290  
 Արժեքներ 91 · 97 · 158  
 Արժեքներ 265  
 Արժեքներ, Արժեքներ 1 · 168  
 Արժեքներ 266  
 Արժեքներ, Արժեքներ 64 · 76  
 Արժեքներ 434  
 Արժեքներ 101 · 270  
 Արժեքներ 255  
 Արժեքներ 76  
 Արժեքներ, ա. Արժեքներ  
 Արժեքներ 98  
 Արժեքներ անարժեք 21 · 79  
 Արժեքներ 289  
 Արժեքներ 274 · 281  
 Արժեք ա. Արժեք  
 Արժեք դասակարգ 8 · 35 · 63 · 70  
 Արժեք 97  
 Արժեք 181  
 — բերք 217  
 — լիք 42 · 49  
 — դեպ 4 · 90 · 102  
 Արժեքներ 1 · 270 - 1  
 Արժեք 162  
 Արժեքներ 64 · 76  
 Արժեքներ 64  
 Արժեք 255 · 266  
 Արժեքներ 480 · 486  
 Արժեքներ 262  
 Արժեք անարժեք ի Գայլեր 138  
 Արժեքներ անարժեք, Արժեքներ 128  
 — իրար 122  
 Արժեքներ 64  
 Արժեքներ խոսք, Արժեքներ 223 · 258  
 Արժեքներ 274  
 Արժեքներ 480  
 Արժեք 275  
 Արժեք 173 · 189  
 Արժեք 265  
 Արժեքներ մորե? 525  
 Արժեքներ 275  
 Արժեքներ 38 · 42  
 Արժեքներ 299 · 306  
 Արժեքներ գայլեր 99  
 Արժեքներ 420  
 Արժեքներ, ա. Արժեքներ  
 Արժեքներ, ա. Արժեքներ  
 Արժեքներ 255

Արժեքներ 541  
 Արժեքներ 59  
 Արժեք 245  
 Արժեքներ 291  
 Արժեքներ 64  
 Արժեքներ 97  
 Արժեքներ վանք 21 · 275  
 Արժեքներ 100  
 — ի Լորանո 221  
 Արժեքներ 255  
 Արժեքներ 291 · 294  
 — դասակարգ 242 · 295  
 Արժեքներ քար Բ. և Վ. 21 · 294  
 Արժեքներ 223 · 273  
 Արժեքներ, ա. Արժեքներ  
 Արժեք 272 - 89  
 — Միջ 272  
 Արժեքներ և դ 116  
 Արժեք 480 · 489 ա. Արժեքներ  
 Արժեքներ 99  
 Արժեքներ կամ Արժեքներ 295  
 Արժեքներ 34 · 81  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ 102  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ 64  
 Արժեքներ 98  
 Արժեքներ 270  
 Արժեքներ Վ. (Սովետական) 22  
 Արժեք 64  
 Արժեքներ 79  
 Արժեքներ 274 · 276  
 Արժեքներ, Արժեքներ 64 · 75  
 Արժեքներ, 275 · 282  
 — դասակարգ 8 · 242 · 272 · 280  
 — դեպ 4 · 206 - 7 · 261  
 Արժեքներ 97 · 209  
 Արժեքներ? 223  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ 100 · 227 · 286 - 7  
 Արժեքներ 286 - 7  
 Արժեքներ 291 · 293  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ 291  
 Արժեքներ 38 · 40  
 — իրար 245  
 — Արժեքներ 284  
 Արժեքներ 172  
 Արժեքներ 270  
 — Սովետական 64  
 Արժեքներ 209  
 — Փոքր Սովետական 552  
 Արժեքներ անարժեքներ սյուր 232 · 303  
 Արժեքներ դեպ 43  
 Արժեքներ (Արժեքներ) 275 · 282 · 284  
 — Սովետական 351  
 Արժեքներ 208 · 220 · 225 · 247  
 Արժեքներ մայր 97 · 179  
 Արժեքներ 288  
 Արժեքներ Սովետական 7  
 Արժեքներ 81  
 Արժեքներ 287 · 289  
 Արժեքներ 379 · 489  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ 38  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ 99  
 Արժեքներ ա. Արժեքներ  
 Արժեքներ ա. Արժեքներ

Արժեքներ 99 · 283  
 Արժեքներ Վ. 21 · 209  
 Արժեքներ 209 · 212  
 Արժեքներ 379  
 Արժեքներ, Արժեքներ 208  
 — բերք և դ. 278  
 Արժեքներ? 191  
 Արժեքներ 208 · 215  
 Արժեքներ 284  
 Արժեքներ, և Վ. 21 · 98 · 130  
 Արժեքներ 147 · 281 - 2  
 Արժեքներ 214  
 Արժեքներ և դ 181  
 Արժեքներ սյուր 244  
 Արժեքներ 291  
 Արժեքներ 68  
 Արժեքներ, Արժեքներ 255  
 Արժեքներ 209  
 Արժեքներ և դ 116  
 Արժեքներ 286  
 Արժեքներ 97 · 178  
 Արժեքներ բերք 93  
 Արժեքներ 209 - 10  
 Արժեքներ 531  
 Արժեքներ 102 · 326 · 345  
 Արժեքներ  
 Արժեքներ 4 · 90  
 Արժեքներ 101  
 Արժեքներ 145  
 Արժեքներ, Արժեքներ 326 · 344  
 — վանք 21 · 344  
 Արժեքներ 270  
 Արժեքներ, և դ. 478  
 Արժեքներ 276  
 Արժեքներ 99 · 209 · 213  
 Արժեքներ 9 · 309 · 344  
 Արժեքներ մայր 154  
 Արժեքներ 61  
 Արժեքներ 38 · 72 · 524  
 — վանք 21 ·  
 Արժեքներ և դ 348 · 368  
 Արժեքներ 21 · 235 · 286  
 Արժեքներ 288  
 Արժեքներ սյուր 116  
 Արժեքներ և դ 3 · 223  
 Արժեքներ 254  
 Արժեքներ 103  
 Արժեքներ 99 · 270  
 Արժեքներ 91  
 Արժեքներ, և Վ. 359 - 60  
 Արժեքներ 97 · 166  
 Արժեքներ 268  
 Արժեքներ 118  
 Արժեքներ 73  
 Արժեքներ 173  
 Արժեքներ 480 · 484  
 Արժեքներ և դ 120  
 Արժեքներ և Վ. 98 · 130 - 7  
 Արժեքներ վանք 209  
 Արժեքներ 306  
 Արժեքներ (Վանք) Մեծ (և) 38 · 42  
 — ի վայր 98 · 179  
 — Սովետական 592  
 — (Նիստերի թուղթ) 435  
 — դեպ 27  
 Արժեքներ 39 · 42  
 Արժեքներ և դ 21  
 Արժեքներ 315  
 Արժեքներ 141  
 Արժեքներ, ա. Արժեքներ

Գառնակեր 39  
 Գառնի 154  
 Գասթրոլոգի 97. 270  
 Գաստանճիք 288  
 Գասրաբխաշ Լ. 76  
 Գասրաբէկի 99  
 Գասրազայա Կ. Լ. 3. 141. 220  
 Գասրազայա միւս 99  
 Գասրազայու 100  
 Գասրազիիսէ յԱլաւէն 271  
 — յԱլաւի 101. 210. 213  
 — Գեղարունի 39. 73  
 — Գալանուկ 99  
 — Կ. Ս. Կասրազեան Երնձակայ  
 Գասրազայու 99. 100. 268. 270  
 — Բազայ 282  
 — Կ. Գասրասազալ  
 Գասրազայու 187. 404. 489.  
 — Գեան Կ. Լ. 90. 379. 478  
 — Կոր 505  
 Գասրազայունու 284  
 — Ի Ձանկեազուր 73  
 — Ս. Խաշ 73  
 Գասրազայու. Կ. Գալուշտի  
 Գասրաիիւ 100  
 Գասրաիիեկ Լ. 76  
 Գասրա Իւլիանե Լ. 60  
 Գասրալ 42  
 Գասրալար 100. 178  
 Գասրախան պէկու 505  
 Գասրակէտլ լիւ 5. 207  
 Գասրակէտլուի Լ. 165  
 Գասրակաճիլ 100. 270  
 Գասրազու 276  
 Գասրազան Լ. 478. 480  
 Գասրաճալու 270  
 — Զէյնալու 100  
 — Կիւլապուր 100  
 Գասրամանլի 269  
 Գասրայիւ 270  
 Գասրանլիլի Կ. Կ. Կընուաներ  
 Գասրանլիլի Թէփէ Լ. 91. 262  
 Գասրաշահու 100  
 Գասրաշահան Կ. Կարշահան  
 Գասրաշիլէն 99  
 — Ի Բազա 278  
 Գասրաշուխա 506  
 Գասրապաշ 8. 18  
 յԱրեւիք 306  
 Գասրապաշուր 505  
 Գասրապաշիլի 270  
 Գասրապաշուրմու 100  
 Գասրապաշու 486  
 Գասրապաշու 70  
 Գասրապաշու 488  
 Գասրասազալ զշու 63  
 Գասրասու Կ. 183  
 Գասրասուպաշի 269  
 Գասրապան 21  
 Գասրասաշ Լ. 169  
 Գասրասեր 288  
 Գասրասուզա 102  
 Գասրաքանահա 282  
 Գասրաքէնա 282  
 Գասրաքէշիլ անապա 3  
 Գասրիպիւթաշ 268  
 Գասրուպ Լ. Կ. Գասրու  
 Գաւառ 305  
 — Կոր Պայէպ 9. 37. 42-6  
 Գաւառան աւառ 145

Գաւառն 34  
 Գաւառնի 64  
 Գաւոնու 506  
 Գաւոնու Լ. 3. 290  
 Գեալ Կ. Գալ  
 Գեհեիք 484  
 Գեղ Լ. 26  
 Գեղամ գաւ. Գեղամէ 34. 58  
 — Ժով 27-9. 78  
 — Լիւրիք 26  
 Գեղամաղակ 64  
 Գեղարունի 25  
 — Կերք 40  
 — Գեղ Բազայ 274. 278  
 Գեղեալի 288  
 Գեղերիքի 326  
 Գեղի Կ. Գեղուան  
 Գեղայ վանք 291-2  
 Գեղուանք վիճակ Կ. Գ. 8. 242. 276. 290.  
 292  
 Գեհեիքաթաշ. 245. 271  
 Գեհուա (Նայի Ի) 449  
 Գեհաղակ 64  
 Գեհաթաշ 99. 220  
 Գեհապիք 208  
 Գեհամ 309  
 Գեհամէլ 64  
 Գեհամվանայ ծովակ 64  
 Գեհասրալար 276. 290  
 Գեհաքար 16  
 Գեհաիկ (Սթիք) 64. 76  
 Վայոյ ձորայ 97. 108  
 Գեհաքի 326  
 Գեհապու 305  
 Գեհապապա զաշա 14  
 Գեհապու 38  
 Գեհ 292  
 Գեղ զշու 168  
 Գեղ զաշ 66  
 Գեղ Թէփէ Լ. 206. 269  
 Գեղ վանք. Կ. Արի վ. Մարիան Կ.  
 Գեղու 268  
 — յԵրնձակ 251. 331  
 — Բար 8  
 Գեղէլ 99. 104  
 Գեղ զուլաշ 70. 140  
 Գեղ զուլաշ Լ. 3. 206. 267  
 Գեղ ապա 26. 267  
 Գեղ քերվանսերայ 505  
 Գեղ (Ս.) 266  
 Գեղ զալէտի 74. 173  
 Գեղեան 270  
 Գեղ Լ. 206  
 Գեղ Կէտլ Լ. 3  
 Գեղ զուլաշ 71. 479  
 Գեղ վանք 209-10  
 Գեղաքեր 9. 104. 242  
 Գեղան. Գեղեան 344  
 Գեղեան 39  
 Գեղիսէ Խարազա 60  
 Գեղիսէ տէրէտի 173  
 Գեղիսէքէնա 104  
 — Ի Կովսական 288  
 Գեղեալաշ. Գեղեալաշ 271  
 Գեղեան Կ. 208. 225  
 Գեղեալաշ Կ. Գեղեալ Կ.  
 Գեղեան Կ. Ալաւ Գեղեան  
 Գեղեալ 101. 187  
 Գեղեալ 49  
 Գեղեալան 9

Գեղարունի 76  
 Գեղաքա 213  
 Գեղեալ 287  
 Գեղեալ վանք 284-5  
 Գեղեալ. Կ. Գեղեալ  
 Գեղեալ 107. 268  
 Գեղեան 110  
 Գեղեալ 209  
 Գեղեալ 234  
 Գեղեալ 255  
 Գեղեալ 105  
 Գեղեալ 205  
 { Գեղեալ. Գեղեալաշ 178-90. 205  
 } Գեղեալ  
 Գեղեալ (Գեղեալ) 63  
 Գեղեալ 209-10  
 Գեղեալ 210  
 Գեղեալայ Կ. 27. 66  
 Գեղեալ վանք 97. 105  
 Գեղեալ 21. 104  
 Գեղեալ 215  
 Գեղեալ? 285  
 Գեղեալ 309. 347  
 Գեղեալ 58  
 Գեղեալ վանք 21  
 Գեղեալ ապառակ. 64  
 Գեղեալ 59  
 Գեղեալ 81  
 Գեղեալ (Կեղեալ 209 215  
 — Զանգ 486  
 Գեղեալ 290  
 Գեղեալ 271  
 Գեղեալ (Գեղեալ) 58  
 — Վայոյ ձոր 98  
 Գեղ 287-8  
 Գեղ 3 3  
 Գեղեալ, Գեղեալ. Կ. 141. 228  
 Գեղեալ 255  
 Գեղեալ? 258  
 Գեղեալ 287  
 Գեղեալ քէնաի 269  
 Գեղեալ Կ. Գեղեալ  
 Գեղեալ վանք 504  
 Գեղեալ 274  
 Գեղեալ 64  
 Գեղեալ Լ. 102  
 Գեղեալ Լ. 75  
 Գեղեալ 270  
 Գեղեալ զուլաշ Կ. Գեղեալաշ 288  
 Գեղեալ 99. 100. 105  
 Գեղեալ 102  
 Գեղեալ 100  
 Գեղեալ տէրէտի 76  
 Գեղեալ 275  
 Գեղեալ 94. 109  
 Գեղեալ. Կ. Գեղեալ  
 Գեղեալ 39  
 Գեղեալ Խարազա 50  
 Գեղեալ քէնաի 167. 179  
 Գեղեալ զուլաշ 179  
 Գեղեալ 101  
 Գեղեալ Կ. Կեղեալ  
 Գեղեալ Կ. Կեղեալաշ  
 Գեղեալ 299. 302  
 Գեղեալ Կ. Կեղեալ  
 Գեղեալ մուշուլան 9  
 Գեղեալ Թէփէ Լ. 206  
 Ս. Գեղեալ վանք 21  
 Գեղեալ 98. 144  
 Գեղեալ 275

Գրամ 286  
 Գրուակ 208  
 Գրանդըրան 60  
 Գոյալու 282  
 Գորայք. Գորու 255. 261-2  
 Գաղէի վ. 21  
 Գամալիք 496. 504  
 Գալարիք 480  
 Գալարու 99  
 Գալք 287  
 Գախարհան 287  
 Գախն ա. Տախն  
 Գանեկոյ քար ա. Գայեկի  
 Գամալի 502  
 Գայեկի քար 168. 181. 198  
 Գայլուիւ 128. 487  
 Գալ ալիւ 128. 271  
 Գալ խաչ բլուր 179  
 Գալկով 100  
 Գալիան (Ծով Գեղամայ) 31  
 Գալ պաշի Լ. 309  
 Գալ պուլաք 348  
 Գալա (Ստորին Արուիկա) 226  
 ՚Գալաունի 299. 300  
 Գալաունի  
 Գալալիք 72  
 Գալ քենա (Բրաի պար) 72  
 ——— Ի Հարանք 263  
 Գաստակ 326. 338  
 Գաստակերա Ի Բազա 274  
 ——— Գեղար. 58  
 ——— Նախնուան 498  
 ——— Սեփան 209. 215  
 ——— Վանանք 338  
 Գալբէժ 465  
 Գարանակ. Գարանակուց գլ. 54. 64  
 Գարանք կամ Տարոնք 64  
 Գարաշաբ ա. Շամբ  
 Գարապա. Գարապա 99. 220  
 Գարապոփ 227  
 Գարբ 91. 107  
 Գարգիլի 99  
 Գարու Լ. 4. 198. 348. 409  
 Գաւարանք 64  
 Գաւթի բերք 256  
 Գաւրուս 271  
 Գափուց վանք 21  
 Գեղպանարա? 165  
 Գեկն 97  
 Գեղասար 341  
 Գեղձանք. Գեղձանք 223. 228. 246  
 Գեղձանազեան 64. 68  
 Գեղտին ա. Գալաունք  
 Գերբաժանք 21  
 Գերբն 91. 97. 107  
 Գիթնց պղի 1.9  
 Գիզա շեփար 241  
 Գիզակի Լուիֆալի 341  
 Գիզափայտու լեռնք 125  
 Գիղէ խրատվերաի 346  
 ——— Հիւսէին 346  
 ——— Մերգա Հասան 346  
 ——— Սուպազան 346  
 ——— Քեալանդար 346  
 ——— Քեարիմ զուլի 346  
 Գիլուու Մուսքանլու 100  
 ——— Սերայ 100  
 Գիկանքի? 99  
 Գիու Լ. 309  
 Գիսար. ա. Գեղասար

Գիվա ա. Տեւի  
 Գիտավանք Լ. 26  
 Գիտուոր սար 105. 490  
 Գիբի. ա. Տրեայ  
 Գից մայրի 287  
 Գիզանկի 39  
 Գիզակ խորովու 317  
 Գուլուան 181  
 Գուին 434  
 Գուինքի? Կոչ 118  
 Գումգուլ 504. ա. Տամբաս  
 Գումգուլու 99. 101  
 Գուրապա 285  
 Գարաբակ 64  
 Գանակերա 287  
 Գրախանի 76  
 ——— Ի Ճանուկ 480  
 ——— Գեա 27. 76  
 Գրունք (Ի Սոթ) 64  
 Վայոց ձոր 98  
 Եազմաթանց ա. Եկասասանց  
 Եաղուրա 174  
 Եազա գ. 4  
 Եաղուզամ 267  
 Եաղաին 101  
 Եաղին 270  
 Եաղիսու սիւնէի? 207  
 Եամիանա 504  
 Եայնի (Հողոցի) 101. 173  
 Ի Գողթն 3. 6  
 Հարթք 221  
 Եասթիւլու 39  
 Եավար 162  
 Եարթէփէ Լ. 91. 102  
 Եարթնէ 162  
 Եարթուլու 15  
 ——— Գեա 27  
 Եզլիսիա 505  
 Եզիպտոս (Հայք յ) 470  
 Եզատունք 480. 486  
 Եզնազանք 267  
 Եզի 285  
 Եզիսա 39. 98  
 Եեաի պուլաք ազբերք և լիճ 5. 214. 262  
 Ելանլու Լ. 348. 381 ա. Բալու սար  
 Եթովպիա (Հայք յ) 471  
 Ելին ա. Էլինի  
 Ելթի 346  
 Ելխարիթուլու գլ. Հայոց յիւնար. 463  
 Եկանկի 39  
 Եկան 97  
 Եկասասանց 300. 528  
 Եկազիբ ա. Ալանորք  
 Եկզիք 68. 98. 146  
 Եկզիկայ ձոր 8. 91. 140  
 Եկզանանք 99. 190  
 Եկուան 517  
 Ելէզն 228  
 Ելինգն 99. 274. 277. 283  
 Ելնարա 215  
 Ելնիա 152  
 Ելնիբոս. Ելնիբու խոռ Լ. 5. 266  
 Ելնիբոնիք 64  
 Եկնդի 98. 173  
 Եմաղու 101  
 Եկնիկէ յԱլանէն 270  
 Եկնիկ 363  
 Եորթե 179  
 Եուրլի կիլասար 506  
 Եաննիք 64

Երանոս ա. Չաք  
 Երգասանց ա. Եկասասանց  
 Երեկք 287  
 Երեժ ա. Երեժ  
 Երեմէս 267. 5..  
 Երեմի յԱլանէն 267  
 Ի Մալուկա 208  
 Երբի 64  
 Երբին 98  
 Երբուք 93. 97-8  
 Երբուք միւս 98  
 Երէզ 64  
 Երէժ 208  
 Երէց 28. 274  
 ՚Երեզայք 38  
 ՚Երեզայք  
 Երեմու 98  
 Երիւսա 35. 64. 71. 73  
 Երեցաթուր 101. 245. 275  
 Երեցակալեր 114  
 Երեցալէն 64  
 ՚Երեցու վանք 275. 280  
 ՚Երեցվանիկ  
 Երեցվանք 21  
 Երկաթաթեր 241  
 Երկայնարաի 98  
 Երկար խաչ 258  
 Երկասանից վ. 21  
 Երկասանց 299. 300  
 Երկյակ գաւառ. գեա 4. 348-478  
 ——— բերք 350. 363-6. 391  
 ——— աւան, քաղաք 361-4  
 Երուանդակերա 275  
 Երանակայ եռն 38  
 Եւեղի 276  
 Եթնաբերք գաւառ 217. 384  
 Զային կէտ Գ. 276  
 Զակոչ ա. Ակոչ  
 Զաղալու 65  
 Զաման 74  
 Զամիայ ա. Զեմի  
 Զայթուն քաղ. Զինաց 469  
 Զանկեալուր 9. 38. 102. 242. 283-60  
 Զանկեալան 99. 283  
 Զանքանակեան 271  
 Զաղասարու 214  
 Զաղուի. Զաղուկ 100. 268  
 ——— Սուս Զաղուկ 100  
 Զառազարակ 38  
 Զառիքան 278  
 Զառնասուն, Զռնասուն 486  
 Զառերիտակերա 274  
 Զարգիլի 74  
 Զարիտերէ 173  
 Զաւարի վ. 21. 361  
 Զեղիայ 97  
 Զեմի չայ գ. 254. 273  
 Զերիլա 64. 73  
 Զեու Բ. 207. 293  
 Զէթա ա. Զեղիայ  
 Զէյնէլ Սարալու 39  
 Զէյվա 100  
 ——— յԱլանէն 268  
 ——— Բաղք 282  
 Զիարաք 486  
 Զիբակ. Զիբաք 103  
 Զուար գ. 298. 302  
 ——— վանք և գլ. 22. 299. 302  
 Զուպալ 351. 361  
 Զանկ 486

Չրեակ 67  
 Չօթ ա. Սոչք  
 Չօլախաչ. Չօրախաչ 58  
 Չօկք 324  
 Չօսքելի 269  
 Չօր 282  
 Չիբին 168  
 ————— դեռ 4. 90  
 Չիթի Լ. 309. 366  
 Չիճա 274  
 Չիմալու 489  
 Չիմալու ա. խնորուս  
 Չճանան ա. Աճանան  
 Չճաշու 284  
 Չյիճէ. Չյիճէ 7.  
 Չյիճույ ա. Արի  
 Չուի 64  
 Չրդի. Չրդէ 179  
 Չրդի պաշի ձոր 179  
 Չրեհարո? 196  
 Չրեհան 243  
 Չրուսփին ա. Արուսփին  
 Չրեհի ա. Սրեհի  
 Չրոսնի թեփե 505  
 Չրուսկու 288  
 Չփեհաիւ 274  
 Չփեհաիւ 40  
 Չիւսքերդ. ա. Արիսքերդ  
 Չիւսք 168  
 Չիւր թեփե Լ. 268  
 Չիւսք 194. 224  
 ————— Ի Միջ. 206  
 ————— Հարանք 255  
 Չիւզի ա. Արի  
 Չիւզարթ 172  
 Չիւզարթ 364  
 Չիւզարթ 169  
 ————— ձորակ Ի Տաթև. 125  
 Չիւղա. հրո 479  
 Չիւղու Լ. 5. 128  
 Չիւղք քերթանուտայ 58. 165  
 Չիւղանայրի. 208. 214  
 Չիւղանի  
 Չուստանի 275  
 Չուղի 98  
 Չուրի խոռ 9. 37  
 Չուստար 308  
 Չուստանի 287  
 Չուստան 275  
 Չրիկանի 275  
 Չրվիք 97  
 Չարաւորամարդ 354  
 Չարաղի 245  
 Չարաղեհա Ի Գեղարք. 77  
 ————— Նախնական 506  
 Չարաւորան 270  
 Չարար 99. 271. 283  
 Չարիք 480  
 Չարուի գլուխ 77  
 Չարումարդ 287  
 Չարանիսի գալէսի Լ. 90. 179. 478  
 Չարան 275  
 Չարախար 282  
 Չարամարդի. Չարամի 104. 299-300  
 Չարարայ 255  
 Չարալու 255  
 Չարք 299. 303  
 Չաների հող 139  
 Չամաղաչ 480  
 Չամաղալի 4. 173. 505

Չամաղաչ ա. Չամաղաչ  
 Չամաղալ 38  
 Չամիք 282  
 Չամուր Մուսխանլու 99  
 Չամուր Լ. 91. 168  
 Չամուր ապի 49  
 Չարեքեճէ 104  
 Չաւարայի թախ 179  
 Չափարար Լ. 3. 222  
 Չաքիսայ տալուրան Լ. 120. 148  
 Չիւղի 489  
 Չիւղու ապի 142  
 Չիւղի ապի 203  
 Չիւղի լուր 285  
 Չիւ ա. Տեհի  
 Չիւլու 354  
 Չիւսք (Տրուսք) 64  
 Չիւրեք 488  
 Չիւրեք 276  
 Չիւրեքի տեղի. Չիւրեքի Լ. 91. 109  
 118. 127  
 Չիւսար 276  
 Չիւ ա. Չուս  
 Չիւի լի 70  
 Չիւիանի 275  
 Չիւ Լ. 4  
 Չիւի 24.  
 Չիւի 99. 299. 306  
 Չիւ 99  
 Չիւստար 179. 185  
 Չիւի 38  
 Չիւ 275  
 Չիւիսի Լ. (Մուսխան) 326  
 Չիւսուր 208  
 Չիւսուր ա. Վարդան  
 Չիւստանի 162. 486  
 Չիւստա ա. Չիւստ  
 Չիւստալու 271  
 Չիւստա Գիւրգէ 274  
 Չիւս Լ. 90  
 Չիւսար 283  
 Չիւսք 274  
 Չիւի գլուխ Լ. 484  
 Չիւիս 76  
 Չիւ 299  
 Չիւի աղակ Լ. 271  
 Չիւսաղ Լ. 91. 168. 275  
 Չարամուր 354  
 Չարամուրի ապի 244  
 Չիւս 306  
 Չիւսուր 480  
 Չիւիս 38. 50  
 Չիւս 99  
 Չիւսք 288  
 Չիւսիս 224 ա. Չիւսիս  
 Չիւիս Լ. 74  
 Չիւսիս 100  
 Չիւսիսի գ. 4. 261. 269  
 Չիւսիսի 54  
 Չիւսիսի գիւրգէ 58  
 Չիւիս ա. Չիւիս  
 Չիւսի 214  
 Չիւսի Մուսխան 99  
 Չիւսի 299

Չիւիս 287  
 Չիւսու 102  
 Չիւսուր քիւլու 99  
 Չիւսիս 525 (Չիւսիս)  
 Չիւսիս 275  
 ————— Վարդան 286  
 Չիւսուր 167  
 Չիւսուր 209  
 Չիւ գարաւու գալէսի 205  
 Չիւ թեփե. Չիւ թեփե Լ. 3. 39. 262  
 Չիւիս Լ. 26  
 Չիւսք 288  
 Չիւի 270  
 Չիւսի սնապա 22. 513  
 Չիւսիս 354. 364  
 Չիւ, Չիւ 299. 303  
 Չիւսա ա. Չիւս  
 Չիւի 299. 300  
 Չիւիսի Լ. 22. 209  
 Չիւիսի 274  
 Չիւս գ. Չիւս, 99. 299. 302  
 Չիւիս 22  
 Չիւիսի 108  
 Չիւսի Լ. 488  
 Չիւսի 489  
 Չիւ 99. 172  
 Չիւ 287  
 Չիւսիս 287  
 Չիւ 500  
 Չիւսիս (Չիւսի) 454  
 Չիւսիս 344  
 Չիւսիս ա. Չիւսի  
 Չիւի 99. 208. 224  
 Չիւսիս 270  
 Չիւսիս 86  
 Չիւ 99. 208. 220. 360  
 ————— դեռ 207. 220  
 Չիւսիս 220. 247. 526  
 Չիւսիս 255  
 } Չիւսիսի գալէսի 294-3  
 { Չիւսիսի  
 Չիւսք 266  
 Չիւ 96  
 Չիւսիս ա. Չիւսիս  
 Չիւ 271  
 Չիւսիսի գալէսի 532  
 Չիւսիս 287  
 Չիւսիսի ապի 48  
 Չիւսիս ա. Չիւսիս  
 Չիւսիս, Չիւսիսի գալէսի 534  
 Չիւսիսի 275  
 Չիւսիսի 104  
 Չիւսիս. Չիւսիսի 104  
 Չիւսիս 282  
 Չիւսիսիս 504  
 Չիւսիսի 5  
 Չիւսիսի 223  
 Չիւսիսի ճիւղի 122  
 Չիւսիս 487  
 Չիւսիս 255  
 Չիւսիս 379. 505  
 Չիւսիս 255  
 Չիւսիսի 66  
 Չիւսիս 274  
 Չիւսիսի ա. Չիւսիսի  
 Չիւսիս 432  
 Չիւսիս 270  
 Չիւսիս ա. Չիւսիս  
 Չիւսիսի 199  
 Չիւսիս 363

Խանազա յԵրեմի 581  
 Խանազե ճոխեր 244  
 Խանազա 260  
 Խանկա 100  
 Խանկա. Խանկախ 505  
 Խանուխ 271  
 Խանուսի. Խանգէք 100. 271  
 Խանք 209  
 Խանքեօփրիւ 268  
 Խաշած քար 258  
 Ս. Խաշ 75  
 Խաշ վ. 418  
 Խաշարայ վ. 22  
 Խաշափարախ 351. 381  
 Խաշեր արօպ 41  
 Խաշերոյ խոռ 9. 172  
 Խաշէնք վերին 532  
 Խաշի հող 244  
 Խաշի վ. 358. 341  
 Խաշիկ գլ. ձոր և լ. 98. 172  
 ՝ Խաշխոտփ պղէ 116. 275  
 ՝ Խաշափ  
 Խաշգլու լ. 3  
 Խաշերէնի 174  
 Խարալան 271  
 Խարաշօնք 97. 163  
 Խարապա դիւան 346  
 Խարապանի հող 106  
 Խարթանք 209  
 Խարթայ գլ. 184. 304  
 Խարուն լ. 309  
 Խաշանի լ. 173  
 Խաշալոր և. Խաշալոր  
 Խիքք 275  
 Խիւսաղէրտի պէկ տիգէ 346  
 Խլաթաղ 243. 275-6  
 Խմայլ 274  
 Խնածախ 255. 264. 268  
 Խնդրանք 243  
 Խնկանք 275  
 Խնկիթաք 38  
 Խնկարակ 486  
 Խնկարալուխ 295  
 ՝ Խնկարեակ 255. 263  
 ՝ Խնկարեսան  
 Խնկարու կապ 263  
 Խնկարու 98. 169  
 Խլլանաք 38  
 Խոզարք 271  
 Խոզանք 287  
 Խոզայ բլուրիկ 223  
 Խոզաւա 110  
 Խոզանալոր 100. 267-8  
 Խոզուղիւ 299  
 Խոզորտի 486  
 Խոժուարերդ 262  
 Խուլանք 22. 299  
 Խոկանին 38  
 Խոզուանք 232. 341  
 Խոզվանք 274. 281  
 Խոհիկ. 271  
 Խոնածախ և. Խոնածախ  
 Խոնթակաքակ 64  
 Խոչասայ ասփ 289  
 Խոպու 97  
 ՝ Խոսաափք 379  
 ՝ Խոսաառնիք  
 Խոռ Յուրայ և. Յուր  
 ՝ Խոռնի 480  
 ՝ Խոռունիք

Խոռք Անճառու 211  
 Խոսրոյն գլխակ 317. 517  
 Խովիա 208  
 Խոռ 223. 227. 255. 260  
 Խոսայ բլուր 258  
 Խոսազեա 251. 260  
 Խոսակերիք վ. 22. 98. 169  
 Խոսամարդ 258  
 Խոսանան 223. 274. 277  
 Խոսաափ. Խոսաափ. 190  
 Խոսի 275  
 Խոսորանք 275  
 Խոսորդի 98  
 Խոսուք 208  
 Խորամա 100  
 Խորասանաքակ 31. 63-4  
 Խորթազեա 64  
 Խորթանք և. Խորթանք  
 Խորթայ 64. 255  
 Խորխոռ 255  
 Խորկայ 97  
 Խորկար 275. 278  
 Խորոզմա 271  
 Խորոզոր անապատ 22  
 Խորոզակ Աստուածածին 53  
 Խորոն կամ Խորանի? 52  
 Խորուազեա գաւառ 552  
 Խորվաթիք և. Կորուաթիք  
 Խուլթի կապ 260  
 Խուժարու 101  
 Խուշինակ 144  
 Խուսգուլի լ. և ուխտ 3. 286  
 Խուրիք 208  
 Խուրա 344  
 Խուք 480. 496. 505-6  
 Խանթուղ 209  
 Խուրի լ. 108  
 Խալինակ 64  
 Խասորալու 130. 138  
 Խասուլի. և. Խուսուլի  
 Խաքք լ. 206  
 Խաքքու 99  
 Խաքանք 243  
 Խրամ 410. 492. 496. 514-5  
 Խրու 266  
 Խաղարտիք և. Խաղարտիք  
 Խոհազան 100. 283  
 Խոհա մուսախու 101  
 Խոյթուլ (Ղոյթուլ) 164. 166  
 Խոշակունիք 410. 449  
 Խոշակունիք Սոթիք 64  
 Խոշկաշէն 351. 366  
 Խոշէշմէ ք. 348  
 Խախկայ և. Խախկայ  
 Խածարդ 244  
 Խակք 244  
 Խակքար 39. 53. 145  
 ——— ձորակ 96. 125.  
 Խաղթանու 291  
 Խաղկանք 173  
 Խաղկայ 209  
 ——— միւս 58  
 Խաղկիւլայ պղէ 162  
 Խաղկիկ 231  
 Խանազու 287  
 Խասուրի կամուրջ 166  
 Խար ք. 37. 63  
 Խարայք. Խածարդ 208. 228  
 Խասուք 480  
 Խասիկ 275

Խափաթալք 64  
 ՝ Խիծառնեկու վ.  
 ՝ Խիծառու վ. 22. 266. 268  
 ՝ Խիծեռնակալք  
 Խիծառար 268  
 Խիքանալք 247  
 Խծախաշ 168  
 Խիքիկ և. Խուկրակ  
 Խլու 275  
 Խլուկք 17. 206 — 253  
 Խլրիկ և. Խուկրակ  
 Խմակ 37  
 Խնդկայնք երկիր 261  
 Խնիք 208  
 Խրիք 287. 289  
 Խուլ 258  
 Խուլիք հող 244  
 Խրարիք 266  
 Խուան 384  
 Խուկրակ 100. 179  
 Կաթաշէն 64  
 Կաթիկ 64  
 Կաթնուք 34  
 Կաթունիք 64  
 Կալ 282  
 Կալաւէր? 141  
 Կալեր 291. 299. 300  
 ——— և Սուր 64. 532  
 ——— գետ 70  
 Կալերի տիւղ 49  
 Կալերոյ վ. 22  
 Կախանաղիք 64  
 ՝ Կաթ 34. 38. 64. 525  
 ՝ Կաթիք  
 Կահուրք 291-2  
 Կաղմախի 38  
 Կահուրու 291  
 Կամախիք 38. 215  
 Կամաղանք 209  
 Կամարիւն 38  
 Կամաքար? 198  
 Կամպիլ լ. 222  
 Կամրլաթաղ 480  
 Կամրլախիք 181  
 Կամրլայ ձոր 97  
 Կայունեանի? 155  
 Կան, և ք 288. 290  
 Կանիսէ 60  
 Կաշկառու 275  
 Կաշկանք և. Գաղաթանք  
 Կաղան գաւ. (Ձորք) 290  
 ——— ք. և ք. 175. 294-6.  
 Կաղիւ 258  
 Կաղիս կամ Կաղիք վ. 20. 22  
 Կաղայ 97  
 ——— լեւան 110. 112  
 Կասուրի 298  
 Կասուլի լ. և. Գաղարայք  
 Կասակ և. Կասակ  
 Կաստորիք 266  
 Կասաղանք 235  
 Կասար. և վ. 22. 100. 278  
 Կասուրար 172  
 Կարակուղէ 163  
 Ս. Կարազեա անապատ 22  
 ——— Երեմիայ 378-81  
 ——— և. վաղաքի վ.  
 Կարքի ք. 61  
 Կարքիք 255. 263  
 Կարք 291-2



կարթաթաղ 299  
 կարկասան 266  
 կարճուան 228. 299. 305  
 կարճուան  
 կարմիր սաղբեր 39. 70  
 — գետ 27  
 — եկեղեցի 479  
 — լեն 38. 64. 66  
 վանք ա. Երեցվանիկ  
 յԱստաղատ 511  
 յԱյլախ 209  
 յՈրոտն 218  
 կարմիր քար Լ. 39  
 կարմունջ 64. 76 (ՃԿԼ)  
 կարմրահողում 275  
 կարա 437  
 կառակերտ 32  
 կառասանանց նոզեր 244  
 կառարա 274. 276. 278  
 կառարտի նոչ 114  
 կաքառադրեր 484  
 կաքառադրեր. կաքառադրեր 9. 242. 297  
 կաքառասար 25  
 կաքառարտի 209  
 կաքառուց սաղբեր 98. 166  
 կեալ ա. Գաղ  
 կեալի ա. կալեր  
 կեան ա. Գան  
 կեամուր գալէսի 8. 309  
 կեամամաղախ (կամրջաթաղ) 480  
 կեղցանանչ 275  
 կեմանց դաշա 288  
 կեննուղ 9. 299. 305-8  
 կենիք ա. Հենիկ  
 կեռամբալէսք 244. 246  
 կեռար 258  
 կերէն 289  
 կերոն 262  
 կղառուր սաղբեր 173  
 կղնուտ 351. 381  
 կղնուտներ 58  
 կղուիք 58  
 կէլաքու 278  
 կէլին գայա 172. 181. 215  
 կէթուկ 387  
 կէճանան 102  
 կէնիքի. ա. Գնիքի  
 կէնիք 99  
 կէլիլու ա. Բէլլու  
 կէյուտ 98. 103  
 կէվերիկ 100  
 կէտաղլու 282  
 կէրէնգուր ա. կուռնիձոր  
 կէրոյու 305  
 կէօլ 300  
 կէօլքէնա 53  
 կէօկէրէն 129  
 կէօտաղլար 100  
 կէօքառա 110  
 կէօք շայ գ. 42. 49. 75  
 ա. և Գնդամայ ծով  
 — լեռն 112  
 կիմանց վեր. և Սա. 60. 114  
 — գետ 60  
 կիձան 487  
 կիկիլու 100  
 կիկիսօֆիլու 100  
 կիկեան շայ գ. 309. 344  
 կիկեմանուց ձոր 145  
 կիրաթաղ 100

կիրակասար 98  
 կիրակոսիկ 209. 215  
 կից. կիցք 287. 292  
 — ձորք 291  
 կից վտակաց 214  
 կիզէլ տերէ գ. և Լ. 36 27. 60. 90  
 կիւլ վանք 137  
 կիւլիւ ախու 141  
 կիւմիւշխանէ 91. 107  
 կիւմիւշ պուլադ 158  
 կիւն 288  
 կիւնեիք? 282  
 կիւնեիք ա. Արեգունի 76  
 կիւնեմանք. ա. կիւնեմանք  
 կիւնեիքի. ա. Գուրգուս  
 կիւրդի վանք 525  
 կիւրդիլու 99  
 կլեանց 209  
 կկուռար 123-4  
 կլնչ 274  
 կնիկի ա. Գնիքի  
 կնիք 57  
 կնձուտ 34. 6  
 կշմասուք 277  
 կոգ (խոք) 505. 517  
 կոթ 50. 54. 68  
 — գետ 27. 54  
 — անաղատ 70  
 կոթակայ քար Լ. 26. 60  
 կոթաքար  
 կոթիկ սաղբեր 60. 68  
 կոծմակոթ 338  
 կողակադեա 27. 53  
 կողայ գետ  
 կողովարի 258  
 կոճարու 275  
 կոճանոր ա. Գոճանոր  
 կոջաց սյգի 142  
 կոռնիձոր 245  
 կոռոչոֆոր 209  
 կովսական 286-9  
 կովսական դիւք 274  
 կոտեմանք 274  
 կոտուր ա. Ղլթուլ  
 կորակիթ 275  
 կորասեղ 58  
 կորկիքի 299  
 կորզարակ 38. 50  
 կորէա. կորուտ 264  
 կորովի 209  
 կորոտիւք 97. 137  
 կորոնք 309  
 կուզիկ մամ 427  
 կուկի ա. կուքի  
 կուկի 64  
 կուլ 27  
 կուլիուք 64  
 կուռափայ վ. 22  
 կուռնիձոր 100. 255. 263  
 կուսական. ա. կովսական  
 կուսանաց անաղատ Ի Դաւառ 49  
 — Հալիձոր 257  
 — Շոռոթ 352  
 — Տեւի 344  
 աես Անաղատ  
 կուսակք 64  
 կուսեմիս 245  
 կուսկուս 100  
 կուսարակալանք 97  
 կուրազանք 22. 309

կուրազանք յԱրեգուն 299. 300  
 կուրխ 99  
 կուրուտ ա. կուրազանք  
 կուրի Լ. և վ. 22. 379. 486-7  
 կուրկած, կուրկիթ 53. 81  
 կուրազակ 9. 50  
 կուրէն 275  
 կուրազանի 286  
 կուրազա? 167  
 կուրազք 39. 228  
 կուրայ վ. 22. 270  
 կուրայ 255  
 կուրաք 97. 166  
 կուրազան 274  
 կութերիք 287  
 կոզուտ 168  
 կոզուտերէ 179  
 կորանք 254-64  
 — քերէ 261  
 կորուլ 29  
 կորարու գ. 4. 206. 270  
 կորք կամ կորք 38  
 կորարիւրուց խալ 520  
 կորիքարքերէ 248  
 կուլ 100  
 կուրաք 260. 270  
 կուլէ 18. 191. 255. 275  
 կուլիձոր  
 կուլիս 228. 256  
 կուլիսից գետառ 256  
 կուրնազար 270  
 կուկ 266  
 կուրուտ գաշա 244  
 կուրառ գուրի 264  
 կուրի Արեգուն 100  
 կուրիլու 99. 102  
 կուրի Մուրախ 40. 77  
 կուրի Մուրախան  
 կուրի Սամուլ 164  
 կուրիվար 504  
 կուրի սաղ Լ. 290  
 կուրի Գեղիքի պուլադ 348  
 կուրու 278  
 կուրամաքակք 64  
 կուրարի 64  
 կուրառ ա. կուրանք  
 — ք. ա. Զարանք  
 կուրալու 281  
 — արիւ 175. 281  
 կուրիլու 287-8  
 կուրուք  
 կուրարի 205  
 կուրիլու. կուրիլու 266. 270  
 կուր ծաղիկ? 525  
 կուրալէն ա. Շեկեր  
 կուրիաց տափ 180. 185  
 կուրիանաց տափ  
 կուրի 99. 266-7  
 կուր Մակար Լ. 368  
 կուր Յովաննիսի 40  
 կուրուվանք  
 կուրաքերիք գաւառ 532  
 կուրամէլ ա. Արեգուն  
 կուրիլէն 291  
 կուրիքովան 275  
 կուսանաղլար 59  
 կուսանքեա 140. 160  
 կուրառ շայ գ. ա. Արարու գ.  
 կուսասուք 274  
 կուրանց անաղատ 22. 247-50

Հարար 100-270  
 Հարթիկ 101  
 Նարթիկ 208-221-225-246-7  
 Նարեհ  
 Հարանավազ 225-252-3  
 Հացամարդ 244  
 Հացեաց աղբիւր 262  
 Հացիք 97  
 Հացնեան? 275  
 Հացուհիք-Հացուհիք 275  
 Հաուս դիւղ կամ Մէշէ 98-127  
 Հաուս. ա. Սէշ 98  
 Հաւասթաղք 76  
 Հպիւրիւ. Սպարլու 104  
 Հեծանայ 480  
 Հեղիթ 209  
 Հեղիկ 283  
 Հերեր 144  
 Հերմանի վ. 135-7  
 Հէշի 168  
 Հէրիկ. Հէրու. ա. Հայրի  
 Հին դիւղ 172  
 Հին վանք 169  
 Հիւնեաց ձոր 274  
 Հիւնուա 173  
 Հիւնէի խանայէկ տիպէ 346  
 — ուշադր 100  
 Հիւնէի թէփրի 282  
 Հիւնի քար 255  
 Հիւրատունք. (Հողաց տունք) 161-5-203  
 Հլուձոր 244  
 Հմանդրախա 277  
 Հնդկած 35  
 Հնդկաստան (Հայք է) 466-8  
 Հնդկիւղանց 243  
 Հողար 102-274-276  
 Հողարիմ 98-173-177  
 Հողանոց սպիւ 189  
 Հոյնոց ձոր 287  
 Հոնէր 244  
 Հոնիւնք 64  
 Նուշիք. Հոշանց 248-266-9  
 Նուշաք  
 — ք. 106-261  
 Հոսարակք գաւառ 532  
 Հոսուձոր ա լաու ձոր  
 Հոստուն ա. Ոստին  
 Հովուաթափք 64  
 Հովուաւայր 486  
 Հովուաց աղբարակ 38  
 Հոտած աղբիւր 64-70  
 Հորքաղիւ. Հորվաղիւ 157  
 Հորս. Հորք 97-161  
 — լեռան 94-168  
 Հուզս 351  
 Հունչար ա. Հոշանք  
 Հուսիսային 275  
 Հութիսիւէ ք. 348  
 Հասանց 275-6  
 Նրաշիւղիւր 92-98-169-180  
 Նրանիկայ բերդ  
 Հոշաւ Նոշէ ա. Հոշանք  
 Չաք Միձ և Փոքր 38-50  
 — քեա 27-50  
 Չազիձոր ք. բ. լ. 3-250-260-4  
 — քեա. ա. վարարակ 220-258  
 Չաղայ 480  
 Չեւասի վ. 22-232-289  
 Չիասար 262-268  
 Չիւնասար վ. 22-98

Չկնարած 209  
 Չղակայքանք 209  
 Չոր գաւառ 290-7  
 Չորք  
 Չորդիւղ 263  
 Չորեր 275  
 Չորի լազաց 73  
 Չորոյ վ. ա. Յրուանց  
 Չարէն 479  
 Չազանիւլ. լ. 3-290  
 Չազանի ա. Շրութ  
 Չազարակաղ 244  
 Չազի կիւրիւն լ. 263  
 Չազի ֆիւրտաղլու 270  
 Չաթար 275-278  
 Չառուշուր 269  
 Չարաղաղլու 39-242  
 Չարաղարա 516  
 Չարաթափայ 516  
 Չարաղուլ ա. Գարաղուլ  
 Չարաթիւն 293  
 Չարալուլու 256  
 Չարալուր ա. Քարալուր  
 Չարաթանթ 386  
 Չարիպանց 275  
 Չարաղարաղար 172  
 Չափախլու 141-173-178  
 Չափան դաւ. բ. 3-243-255 ա. Հարանք  
 Չեմանի ա. Սէշաղաւ  
 Չէիք. Ղիիք 38  
 Չէրուար 291-2  
 Չըրլարաղան 275  
 Չըրլուլու 276  
 Չըրլուլու բ. 276  
 Չըլախ 59-45  
 Չիկարլի կոչ 163  
 Չիկանի. Չիկանի 255  
 Չիրքաղիկ ա. Հորքաղիկ  
 Չուլաի 39-49-524  
 Չուլանցիւր 172 ա. Քուսակախաղաց  
 Չուլի 267  
 Չուլիպէկի սպա 265  
 Չուլուլ ք. 300  
 Չըլիկ (կէօլիկ) 282  
 Չըլիլու 164-166  
 Չըլուլուք (Յախաղար) 152  
 Չըլուլուլուք 73  
 Չըլախ ք. 4  
 Չըրաղիւ ա. խոստունիք  
 Չըրանիւ 264  
 Չըրիւլուլ ք. 4-269-70  
 Չիգուս սպի 203  
 Չիլի կոչ 73  
 Չիկուլ 275  
 Չիւնուկ գաւառ 478-90  
 — աւան 391-479.  
 Չաղաղաղի 179  
 Չաղաղուր ա. Չուսուձոր  
 Չաղաուս 271  
 Չաղրի ա. Չիւնուկ աւան  
 Չամալախ 351-384  
 Չամաղէրխալ 270  
 Չանգուլթարան լ. 3  
 Չանի Հին և Նոր 140  
 — քեա 4-90  
 Չանի դանախլ կամ Եանըզ լ. 146  
 Չանի քենա 480  
 Չանիկ կամ Եանըզ լ. 26  
 Չանի բերդ 288  
 Չաղաղիկ ք. և դիւղ 76

Չուսուձոր 169  
 Չիւնուրի տուն բ. 184  
 Չիւնուր (Հայք է) 532  
 Չէրաղուր (Չիւսար?) 268  
 Չէրան 102  
 Չիլ կամ Չիլ ա. կարմուշ  
 — ք. 27  
 Չիկիլի. Չիկիլի 100-265  
 Չիկիք 100-271  
 Չիլան 287  
 Չիխանց գաւառ 532  
 Չոկանուկ 197  
 Չուլ 108  
 Չիլի 243-288  
 Չոմուրլու 101-282  
 Մաղաղի 208  
 Մաղանդի 270  
 Մաղաղակ 270  
 Մաղանինց 192  
 Մաղի 275  
 Մաղա Սէշաղու ա. Մէշաղ  
 Մաղաղաղէն 99  
 Մարալան 99-270  
 Մալիւ ա. Մանիւ  
 Մալիբէկի 100  
 Մալիլու 127  
 Մալիլի 101  
 Մալու 298-302  
 Մալուլու ա. Մանիւ  
 Մալուլ 282  
 Մախաղաղաղք 285  
 Մախուլ 266  
 Մախուլու 101-270  
 Մախաղաց 243-255-263  
 Մ. կարաք 274  
 Մանուաղաղա 486  
 Մանուաղաղա 102  
 — է Չորս 292  
 Մանրասա 172  
 Մաղան 8-242-272  
 Մաղանիւղ 99-255-262-282  
 Մաղարա գլուք 486  
 Մաղարաթ լ. 516  
 Մաղարախանէ (սպք) 27  
 Մաղարաղայ լ. վ. 514-22  
 Մաղանասուր 275  
 Մաղաղաղ (Մաղաղուլ) 243  
 Մաղանաց լ. 516  
 Մաղրիլ 278  
 Մաճ 227-274-281  
 Մանկան 287  
 Մանուակաձոր 142-154-167  
 Ս. Մամա վ. և ուխտ 22  
 Մամար 100-228  
 Մամարաղա գլուք 103  
 — տիպէ 504  
 Մամէտի 100  
 Մայրաղուրք 97-108  
 Մանակայ 285  
 Մանաղա 299  
 Մանիլու 98  
 Մանիլուր 50  
 Մանիւ գղ. և վ. 22-304  
 Մանուակի մարք 287  
 Մաղաղուլ ա. Մաղաղաձոր  
 Մաղաղաղի բլուր 26  
 Մաուակաթ 286  
 Մաուաղաղ 289  
 Մաուի 287  
 Մարաղան 326

Մասրուց տնայադատ 22. 39  
 Մասսախուսեթ 275  
 Ս. Մասթէնու վ. Ի Բուսքաստան 469  
 Մասինա 58  
 Մասրահերա 266  
 Մասրալընա Լ. 77  
 Մասրալիզ 479  
 Մասրանին  
 Մասրահան փորակ 208  
 Մասրանդ 158. 517  
 Մասրանդայ գրիւ. ? 177  
 Մասրասուս (Մարտադար) 108  
 Մասրաց աւանք 495  
 Մասրաուս գալա 537  
 Մասրպ 165  
 Մասրպէշին ? 285  
 Մասրպարտայ այգի 198  
 Մասրպիզ Լ. 170  
 Մասրպ 260. 270  
 Մասրպալայր 208  
 Մասրպալանեկայ վ. 41  
 Մասրպաստան 492  
 Մասրպալանեկայ 492 - 4  
 Մասրպալանեկայ  
 Մասրպիզան 206  
 Մասրպիկերա 99  
 Մասրմա. տերէտի 179  
 Մասրմալի 283  
 Մասրուր 287  
 Մասրուրի (Հայք Ի) 456-7  
 Մասրվան. ա. Մասրվան  
 Մասրասիկերա 99  
 Մասրախրուս գլ. ք. և Լ. 90. 97. 174-6. 479  
 Մասրի 9. 242. 456-7  
 Մասուգի խաթուն 480. 488  
 Մափուսիլանց գաւառ 532  
 Մաքենեկայ ձոր և ք. 27. 65-6.  
 Մաքենոց վ. 64. 66-70. 323  
 Մաֆուսուլու 271  
 Մեգրէն 299  
 Մեհլ 290  
 Մեծամոր 209  
 Մեծամորք 274  
 Մեծաշեն 67. 387  
 Մեծիք 208  
 Մեծմոր 209. 235  
 Մեծով 487  
 Մեհուգայ 38  
 Մեղի 266  
 Մեղրամոր 203. 228. 259. 299  
 Մեղրի  
 Մեղրայ ք. 232. 503  
 ————— քեա 298  
 ————— վանք 299  
 ————— Փարք Թաղ 243  
 Մեհիկ 226  
 Մեսսինե (Հայք Ի) 455  
 Մերթսակերա 22. 275. 288  
 Մերթթար Լ. 283  
 Մեղրե յԱլլա 213  
 ————— յԵրնլակ 351  
 ————— Բաղաբերք 293  
 ————— Հարանդ 260  
 ————— Վայոց ձոր 179  
 ————— Սոգք 71-5  
 Մեղրե Ամուլա 282  
 Մեղրե գլ. և ք. 270  
 Մեղրուլ 99  
 Մեղրուլեկ 268  
 Մեղրե տիւրի 276

Մեխիթուխան Լ. ա. Մեխիթուխան  
 Մեմէտ աղալի (Առնեղ) 42  
 Մեմէտ գլուղք 487  
 Մեշիտ Լ. 290  
 Մետինա ա. Մասինա  
 Մթնանոր 299. 306  
 Միւլա 351. 361  
 Միւլիար 282  
 Միւլիթուխան Լ. 3. 269  
 Միւլար 100  
 Միննէլան 100-1. 283  
 Մինքէնա 101. 243. 267  
 Միշի ա. Միշի  
 Միշուգար 98  
 Միւր աղ Լ. 169. 181  
 Միւրա Հասան տիւր 546  
 Միւրա ճեմֆէր տիւր 337  
 Միւրիկ Հասանլու 100  
 Միւրիկե ա. Միւրիկ  
 Միւլէքու 99  
 Միւլք 202  
 Միւր 206. 209  
 Միւրայի գիւղ և վ. 22. 489. 505  
 Միւլանոր ա. Մանուկանոր  
 Միւշ 302  
 Միւի 266-7  
 Միշի 262. 269  
 Մշկանոր 208  
 Մշուլաշեն 144  
 Մուգար 208  
 Մուգք 275  
 Մուղաւան 98. 127  
 Մուշ  
 Մուղ Նուրի 109  
 Մուրով 179  
 Մուրշան 299. 302  
 Մուրոց 97. 215  
 Մուղէա 275  
 Մուշիք 266  
 Մուրենի 208  
 Մուխիթուխան Լ. ք. 4. 206  
 Մուխիթուխան  
 Մուղանլու 100. 271  
 Մուղասամ 288  
 Մուսնուի 261  
 Մուշուլան 283  
 Մուսուլման 4. 270  
 Մուսուլմանլու 100. 270  
 Մուրաշին. Մուրուշ Լ. 3. 220  
 Մուրաս Թեֆէ Լ. 102. 141  
 Մուրասուլ 100  
 Մուրասխանլու 101. 271  
 Մուրազուլի ք. 348  
 Մուրխուլ 101. 215  
 Մուրուշ ա. Մուրաշին և Մուրուց  
 Մուրք 209. 524  
 Մուսուլ 172  
 Մուսի 97  
 Մուրաք 255  
 Մուրուց 208. 215  
 Մուրուց վ. 22. 345  
 Մութ 524  
 Մուլալու 100  
 Մուլալուրան 100  
 Մուլա տիւր 503  
 Յալթայ այգի 200  
 Յարմարաստան ? 116  
 Յեւնակայ Կու. ա. Եւանակայ  
 Յովնեա 258  
 Ս. Յովնանեա շիման 43

Ս. Յովնանեա տնայադատ 22  
 Յուրանան խոս 230  
 Յուլապերիկ 58  
 Յոփեայ ձոր 58  
 Նապի Ներիկ 480  
 Նապարտալա 490  
 Նալ Թեֆէ Լ. 26  
 Նախանձոր 255  
 Նախասար 158  
 Նախիշուան ա. Նախանեան  
 Նախիտան 275. 283. 287  
 Նախիկարան  
 Նախանեան գաւ. 491-508  
 ————— քաղաք 496-503  
 ————— քեա 4. 491  
 ————— Աղանեք 492  
 Նախանեանիկ 275  
 Նախանար 275  
 Նապի խանէ բլ. 55  
 Նախա Ալի 159  
 Նամալ Ալի 163-4  
 Նամալ 100  
 Նախիտայոց 544  
 Նասիք 275  
 Նասիքայ ք. 261. 269  
 Նասուտի (Մաղարայ) 517  
 Նասու 299  
 Նափուկաշեն 255  
 Նապրամ. Ներիկամ 507  
 Նեհուլի 324  
 Նեֆթալի սուլաւան ա. լիւթվալի  
 Նեղիկ 329  
 Նեղուտի 100. 367  
 Նեղրուս 344  
 Նեանց ա. Նուշանց  
 Նեխարուց քեա 75  
 Նեխարք 64  
 Նուսու 479  
 Նուլար 109  
 Նուլու  
 Նորաբակք 64  
 Նորաբակ 367  
 ————— Չորոց 291  
 ————— Ճակայ 479  
 Նորակերա 347  
 ————— Արեւանց 299  
 Նորակերա այգի 156  
 Նորաշեն (Բաղա) 274. 278  
 Նորաշինիկ  
 ————— Ի Գեղարանի 38  
 ————— Երնլակայ 351. 367  
 Նովանան 226. 287-8  
 ————— Հարանդ 255  
 ————— Ճանուկ 354. 480  
 Նորաբակք Ամալու 184-203  
 ————— Բաղա 278  
 ————— Բզինոց 203  
 ————— Սթիք 75. 205  
 ————— Վայոց ձորայ 203  
 Նորիկ 275  
 ————— Ի Գեղար. 53  
 ————— Նովանան 287  
 Նորիք Մշիկ 208. 247  
 ————— Վայոց ձորայ 97. 179  
 ————— վանք 267  
 Նոր Պայեղան ա. Գաւառ  
 Նոր 484-6  
 ————— Մարոց 484  
 Նուարանի 270  
 Նուսի. Նուսիք 326

Նուշանց 299. 302  
 Նուշկեկ  
 Նուսնուս 326  
 Նուբարուս ա. Ներբարուս  
 Ներբեան. Ներբոյն բ. 93. 97. 168. 203  
 Նոթուխըլու 287  
 Նովար 109  
 Նովար Նովար  
 Նովու. տերէ 99. 109  
 Նարեքէնա 270  
 Նաչ. սայ 285. 270  
 Նաթիթազ 255  
 Նալմա 100  
 Նախասուզ. ա. Նիկանդոս  
 Նախավարու 100  
 Նանազայ բ. 484  
 Նանազանեանց ձոր 478-80  
 Նանազանիք 480. 488  
 Նանազանք 478-84  
 ——— վ. Ս. Ասատուծանի 22  
 Նանարիկ 100  
 Նանկերտ 346. 362. 505  
 Նանկելուի 162  
 Նանուզ. ա. Նանազանք  
 Նանուզուտ գ. լ. 60. 91  
 Նանվերտի 99. 260  
 Նանուզ լ. 26  
 Նազուս հ. վ. 209  
 ——— լիւ 5  
 Նաղիկբա 346  
 Նաղիկբար 270  
 Նազուս ա. Նասի  
 Նամբ. Տարաշամբ 514  
 ——— է Ղարամբ 231  
 ——— Ճանուկ 478-9  
 Նամբեկի ձոր 362  
 Նամբի հողեր շէնչ 525  
 ——— ձոր 514  
 ——— Ղազարք 518  
 Նամին? 480  
 Նամիուլ գ 27. 76  
 Նամքենա 270  
 Նամուզու 99  
 Նայիդլիւ 101. 288  
 Նաշիգան 287  
 Նաշին աչքիւր 49  
 Նաշկերա 101  
 Նապասիին 99  
 Նապուկի 266. 268  
 Նապուհաթազ 98  
 Նաշիենեց սյզի 138  
 Նասաի 98  
 Նասանեայ վ. 22  
 Նասանեց սյզի 198  
 Նասի 487  
 Նասի. Նասիկ 22. 98. 159  
 Նասիին  
 Նասոս 245  
 Նասլիւք 64  
 Նասովան 64  
 Նարաքայ 291  
 Նարիֆ աղալու 99  
 Նարիֆան 101. 271  
 Նարքեար 269-70  
 Նաւանանուզ 61  
 Նափալուխ լ. 173  
 Նաքար ա. Նաքար  
 Նաքարապատ 504  
 Նաքարեիկ 210  
 Նաքէ 209. 213

Նաքէ վանք 209. 215  
 Նեշկերա 101. 88. 300  
 Նեկք. Նեքք 276. 296  
 Նեկերեիկ 99. 102  
 Նեյի Մանուս 501  
 Նեքէր սու լ. 3  
 Ներեուրթ լ. 4. 298  
 Ներուար 101. 215  
 Ներարազալ? 288  
 Ներկակարքի 38. 144  
 Ներկանազ 101. 243. 287-8  
 Ներկանազամու 101  
 Ներնալուի 175  
 Ներնաթալ 99. 209. 220  
 Ներիք 64  
 Ներոսո 275  
 Ներուլի խան բ. 179  
 Ներրիթալ 317. 317  
 Ներվանջալու 99  
 Նուասփ 258  
 Նուրի 244  
 Նուրուս 297  
 Նուսուզ ա. Նիկանդոս  
 Նուրա ա. Ներուար  
 Նուրուկ 276  
 Նորթայք 480  
 Նիկեր. 23. 255. 258-60. 325  
 Նիդիք  
 Նիդուլի ձոր 179  
 Նիֆուր 27  
 Նիֆուլատ  
 Նոխովա 270  
 Նոպազայ 50. 532  
 Նոպուսազայ  
 Նոպակաթ 489  
 Նոսնոխայ 274  
 ——— է Ղարանդ 255  
 Նոսթ 231. 354-8  
 Նորահ 72. 76. 179  
 Նորանլի  
 Նուանի ձոր 243. 299. 308  
 Նորար 101. 209-10  
 Նուքար  
 ——— լեան 206  
 Նուան 262  
 Նուան սպրիւր 171  
 Նասասուք 286  
 Նրդի 302  
 Նրէլ լ. 168  
 Նրուական 267  
 Նրուանք 243  
 Նրուանեք  
 Նրուանեց 275  
 Նրլանդար 525  
 Նու լուր 184  
 Նորահ. Նորանլի ա. Նորահ  
 Նոր շէնչէ 348  
 ——— տերէ 278  
 Որովանիս 241  
 Ողիկի կամ Ողիկի 208  
 Ողմուք 64. 74  
 Ողիկի 480  
 Ոկուանիս 64  
 Ողան 258  
 Ողբեղ? սյզի 191  
 Ողան 97  
 Ողիկի 38  
 Ողիկ  
 Ողիկ. Ողիկի 286. 544  
 Ողիկի 291

Ողիկի 4. 293  
 Ողիկ  
 Ոյժ 216  
 Ոյժ ֆուրք 208  
 Ոնուս 61  
 Ոնի 274  
 Ողիկ 208  
 Ուկազայ սյզի 40  
 Ուկազէն 64  
 Ոսոսան 492-3  
 ——— վասպուրականի 497  
 Ոստիք 91. 98. 148. 152  
 ——— վանք 22  
 Ուլու 516  
 Որբարայ քար 266  
 Որբարեիկ 167  
 Որբանայք 209  
 Որբիչ վ. 299  
 Որբիք 216. 322  
 Որբուսազալ. 316-8  
 ——— քաղաք 318-9  
 Որբուք 479. 490  
 Որթիկ 64  
 Որձարեիկ 209  
 Որձարարի հող 116  
 Որսիկ 64  
 Որսան 208. 217-20  
 ——— զինակ 207  
 ——— դեան, ձոր 207. 218  
 Որսոք 64  
 Ուլ (Ոյժ) 101  
 Ուլի ձոր 97  
 Ուլուանեան կիլի 304  
 Ուլուան սպա 504  
 Ուլիքիան 38  
 Ուլուանիկի սպրիւր 112  
 Ուլուլու 202  
 Ուլուլիքէ 223  
 Ուլուլիան 269  
 Ուլուս լ. 209  
 Ուլուսքար 264  
 Ունանապատ 100. 302  
 Ունուս 341  
 Ունլի ձոր 64  
 Ունլուք 93  
 Ունակախազայ ա. ֆուսակախազայ  
 Ունական դեան. 207  
 Ունակարք 64  
 Ունանց փոր դասուս 332  
 Ունիք 98  
 Ունոք քար 169  
 Ունուս 172  
 Ունքի 172  
 Ունուլիք 309. 542  
 Ունկանազ 255  
 Ունուլու 99  
 Ուրուլու 100  
 Ուրուլու ա. Ումիս  
 Ուրուս ա. Որսան  
 Ուփի ձոր 180  
 Ուփի 480  
 Չաթու 291  
 Չալուտեր 288  
 Չալուտուան լ. 3. 254. 263  
 Չալքէնա ա. Գեորգի  
 Չախըրլու 90  
 Չանոյ կամ Չաշոյ 64  
 Չամըրլու 66  
 Չամոսուք 287  
 Չալքէնա 100. 108





Սար. Սարք 203  
 Սարալու 101. 288  
 Սարանոր Լ. 76  
 Սարալեն 275  
 Սարալու 39. 40  
 Սարի. աս. Սար  
 Սարի գյուղ Լ. 346  
 Սարիխաթախ 4. 101. 270. 284  
 Սարիխար Սըռալու 3. 90  
 Սարիլ 101. 274  
 Սարի պուլազ սարիւր 486  
 Սարի տաղը Լ. 478  
 Սարիտար. Սարիտէրէ 300. 307  
 Սարիղոզիք 98. 129  
 Սարմուսաղը Լ. 3  
 Սարու Լ. 488  
 Սափի անապատ 24. 64  
 Սաքու? 258  
 Սափիար 282  
 Սափիան 101  
 Սափուլու 288  
 Սեաւ լիճ 262  
 Սեզայի սյգի 155  
 Սեթանց 275  
 Սենեակ 247  
 Սերմամուս ի Մազարէ 517  
 Սեւան բ. 79  
 — Մով. աս. Գեղամայ ծով  
 — կղզի 6. 78-89  
 Սեւաշուր 225. 249  
 Սեւասան աւեր 305  
 Սեւասար 299. 305  
 Սեւաքար 99. 243. 275. 277  
 Սեւուար 284  
 Սեղանիկ 39  
 Սելուի 270-1  
 Սելիմ չոյ գ. 140  
 Սելիմի կարաւանատուն 164  
 Սեմէրու 268  
 Սեյդա 102  
 Սեյդէր? 269  
 Սեյիտէր ՍԱլաւէէք 101. 270  
 — ի Բազա 99. 278  
 — Գալֆուլու 101  
 Սեւ 188  
 Սըլան տաղ Լ. 26  
 Սըլանի 487  
 Սըլանըկ  
 Սըռալու աս. Սարիխար  
 Սիճուիք 267  
 Սիկուլազ 72  
 Ս. Սին անապատ 98. 113.  
 — վանք 216  
 Սիսական աշխարհ 6. 207. և այլն  
 — գաւառ փոքր Սիւնիաց 552  
 Սիսիան գւ. 101. 207. 214. 216. 242  
 — գետք 214  
 — գետ 4. 207. 214  
 — ձոր, գաւառ փ. Սիւնիաց 552  
 Սիվիթանիան 270  
 Սիրկիսայ սյգի 156  
 Սիրքեաղաղ աս. Սարիխաթաղ  
 Սիւլէյման սար 26. 37  
 Սիւլէյմանքէն աս. Գեթի Սասրիս  
 Սիւլիքիլ 100  
 Սիւնական աշխարհ 6  
 Սիւնի վ. 22. 212. 214  
 Սիւնիք աշխարհ 1. 6. և այլն  
 — Մեծ և փոքր 2. 9. 532  
 — գաւառ, Սիսիան 214

Սիւրգի (Շրջու) 344  
 Սիսարալէզ աս. խառնարալէզ  
 Սիկրո կամ Շահիրո 39  
 Սիկիթաթոց գաւառ 190  
 Սլաթաղք 287  
 Սմրատայ բ. 248  
 Սիւանար 64  
 Սիւանածոր  
 Սիսիակ 275  
 Սոռ. Սոռք 63. 532  
 Սոթք  
 — աւան, գետ, ձոր 74  
 Սոթիկ վանք 141  
 Սուտաթ 486  
 Սուտա 270  
 Սուտարանց 101. 209. 245  
 Սուլքան 480  
 Սուլքանքէկ 480  
 Սուլքան Սիւ շիւտը 255  
 Սուլքանլու 101  
 Սուլքանքէնա 102  
 Սուլքան Գեաւախ? 127  
 Սուլիմանար 164  
 — գլխակ 163  
 Սուլաղան ախլէ 346  
 Սուս 270  
 Սուսք 505  
 Սուսիակ 275  
 Սպիտակաշուր 267. 270  
 Սպիտակաւուր վ. 22. 137  
 Ստաթէի վ. աս. Տաթիւ  
 Ստերայ գաւառ 223. 247  
 Ս. Ստիֆանոս վ. Թանակտի աս.  
 — Աստաղատայ, աս.  
 — կարճաւանի 23. աս.  
 — Սողաղայ աս.  
 — փոքրաշառի 358  
 Սրկիլուք 22. 98. 129-31. 156  
 Սրկիլուք  
 Սրնակ 275  
 Սոյլան 128  
 Սուս պուլազ 262. 269  
 Սուսանլու 276  
 Սորալ 271  
 Սփիան 270  
 Սփուլու 101  
 Վամնատուք 286-7  
 Վամոց 38  
 Վամուիք 275  
 — ի Ձորա 291  
 Վախէ 164  
 Վախտանգանար 287  
 Վախտանգանց սյգի 138  
 Վահանու վ. 22. 295-6  
 Վահրատար 299. 302  
 Վաղաղի Լ. 22. 209. 217. 524  
 Վաղանգի  
 Վաղաղի 270  
 Վաղատու 255  
 Վաղարշապատ 454  
 Վաղաւեր ի Վաղաղք. 250  
 — Սոթք 63-4  
 — Վանանք 338  
 Վաղուտի 101  
 Վաղաւար 99  
 Վաղաղանոյ ուռոց սարք 159  
 Վայիկ 488  
 Վայմար 90-206  
 Վայոց ձոր  
 — բերդ 91. 205

Վանանք վիճակ 338  
 — աւան 338  
 — ի Բազա 274. 278  
 Վանանքայ ձոր 282. 338  
 Վանանքուիք 339  
 Վանանք 22. 38. 60  
 — ձոր 60  
 Վանաց ձոր 223. 247  
 Վանիվան 60. 144  
 Վանորայք Սիւնիաց 21  
 Վանոցայ 255  
 Վանք 101. 209. 300  
 Վանքի ախլէ 167  
 Վանքի 98  
 Վաշա 308  
 Վաշազան 243  
 Վաշէի բակք 64  
 Վաւաճաղաք 287  
 Վաւիոյ վ. 22  
 Վասակախար Մազոյ 209  
 — ՍԱլաւէէք 266  
 — ճաւուղ 480  
 Վասակալէն Գեղաք. 38  
 — Սոթ. 64. 71  
 Վարաղուն կերէք? 100  
 Վարարակ 4. 229. 254. 264  
 Վարդաբլուր 179  
 Վարդանարակք 64  
 Վարդանա՛որ 101. 299. 303  
 Վարդանատար 223. 247  
 Վարդանէա 98  
 Վարդանի բերդ 129  
 Վարդապետի լոզ 183  
 Վարդավանք 22. 274  
 Վարդափուլ 98. 179  
 Վարդէնիք Անապատ 59. 70  
 — ի Գեղաք. 38  
 — Վայոց 2. 97. 168  
 Վարդենոց գ. 27. 58  
 Վարդի ձոր 91  
 Վարդուա սյգի 203. 230  
 Վարթանէա 168  
 Վարժանիայ սարիւր 66  
 Վարժի գիւղ 177  
 Վարսի վ. 22. 287  
 Վարսի 38  
 Վենեաիկ (Ղուք ի) 443-9  
 Վեռն 326  
 Վերին ձոր 208. 220. 242  
 Վերին շէն 262  
 Վէլի աղայ աս. Շողուաղայ  
 Վէլի իւլ Մին 506  
 Վէյասի բ. 205  
 Վէյազան 100  
 Վէյաքէնա 287  
 Վէրաիլայի 179  
 Վիճանց 275  
 Վիճախ 101. 231. 243. 281  
 Վիճարիք 266. 270  
 Վլասայ ճակատ 244  
 Վրացալէն 39  
 Տաղաճայր 274  
 Տաթիւ 206. 222-4  
 — վանք 225-47  
 — գետ 4. 222  
 — Անապատ աս. Հարանց անապ.  
 Տալմալ 76  
 Տախն 275  
 Տախո կամ Տախաոյն 517  
 Տախտակք 180

Տակմաստիկու 102  
 Տաղրի տաղ Լ. Կ. Դարու  
 Տանկանոր 275  
 Տամալէկ 223. 245  
 Տամաշու Կ. Թամաշալի  
 Տամալէս 246  
 Տամբաս 496. 504  
 Տայլան 270  
 Տայմասազ 277  
 Տանասափ 262  
 Տանիլէր 271  
 Տանկաթաղ 122. 129  
 Տանկալար 102. 262. 274. 282  
 Տանկաւեր  
 Տանկասափ 209. 223. 264  
 Տանկափարախ 22. 278. 296  
 Տանկակ 255  
 Տանկի վեր. Կ. Սորո. 98. 200. 205  
 Տանկի սեռն 167  
 Տանկու յԱլաւէն 238. 266  
 ——— Ի Մղուկ 244  
 Տաշու 208  
 Տաշուկեր 230  
 Տաշուտ 299 Կ. Դաշուտ  
 Տաշուտի նոյ 244  
 Տաշան թէփէսի 369  
 Տասալու կամուրջ 179  
 Տասայ 275  
 Տասան 208  
 Տասի 487  
 Տասնեղիշէն 274  
 Տարաքանդ 144  
 Տարալաղը Կ. Վայոց ձոր  
 Տարալաղ 314-5  
 Տարալաղ 354  
 Տարեամբարիկ 344  
 Տարիքէնա 216  
 Տարվանոս. Կ. Տարվանոս  
 Տարօնք Կ. Դրունք  
 Տաւաթու Բ. 262  
 Տափեար յԱրեւիք 298  
 ——— Ի Բազմ 274. 276  
 Տաքեալան ? 100  
 Կառնաստեան 64  
 Տեիք 275  
 Տեի 299. 302  
 Տեղ 255. 263  
 Տեղի 235. 263  
 Տեռն 346  
 Տեռնափանք 22. 97  
 Տեռնիս 341  
 Տերոնզաս 274  
 Տեի 99. 326. 344  
 Տեիլ գարտալ 27. 39  
 Տեիլ Գարուիթի 77  
 Տելուէր 293  
 Տեկերէն 270  
 Տեմիր զընտան 490  
 Տեմիրի Լ. 206  
 Տեմիրիէր 282  
 ——— Ի Վայոց Ձ. 9. 108  
 Տեմիրի Պոլոս 77  
 Տեմէկէտ Լ. 3. 206  
 Տեմէտան 169  
 Տեր վ. 346  
 Տերէքէնա 175  
 Տերէն. Տերի 480. 506  
 Տերի Էլմալու  
 Տերանակեր (Ապարաներ) 492  
 Տիւնէր 39

Տիւթան 282  
 Տիկնասափ 299  
 Տիկիք 291  
 Տիկիս. Կ. Տեռնիս Կ. Կ  
 Տիկիս  
 Տիտիւր 490  
 ——— Դիւլէ 343  
 Տերի 101  
 Տերիլէն 343  
 Տերի Կ. Տերի  
 Տերիլիք քէնա Լ. 26  
 Տեր փելաքան Լ. 26. 140  
 Տեր. Տուրք 215  
 Տերք 205  
 Տերունք 208  
 Տիւրաքի 64  
 Տեպեր 326. 341  
 Տեկուլար 209  
 Տեկունակեր 275.  
 Տոգաղ 274  
 Տուրք Կ. Տուրք  
 Տուր 275  
 Տորի 274. 276  
 Տորի  
 Տորիք 208  
 Տորունք  
 Տորունկայ 208  
 Տուլանլու 288  
 Տուլու Կ. Տուրք  
 Տունարլու 101. 282  
 Տուտաղի 210  
 Տուտուտուք 40  
 Տրեպ 275. 285  
 Տրէտուք 64  
 Տրի 289  
 Տրունք 326. 338. 341  
 Տրունք ձոր 338  
 Տրունք Կ. Դրունք  
 Տրտուական գետ 206  
 Տփալանոցէրք գաւառ 532  
 Տօլնան Կ. Տէմէտան  
 Տօնակեր Կ. Տեպեր  
 Տօղ Ալիպէկ Դիւլէ 175  
 Տօլուլու 99  
 Տօլուլ 102  
 Բանմաքէնա 38  
 Բիւն 270  
 Բիւնի (Հայք Բ) 454  
 Բուկեր 98  
 Ճախայ քար վ. 98. 146. 152-7  
 Ճախայ —  
 Ճախայ քարի նոյ 154  
 Ճամբաքեր 78. 81  
 Ճաստի. Ճողոնի 255  
 Ճաղու 229. 244  
 Ճեթի 480. 483  
 Ճեթի 38  
 Ճից խալ 244  
 Ճիւն. Ճիւն 326. 342  
 Ճուր. Ճուրաղ 22. 208. 228. 244  
 ——— Խոռ 245  
 ——— Բար 245  
 Ճուրաղք վ. 22  
 Ճուր 244  
 Ճուր ձոր վ. 244  
 Ճուրաղ 64  
 Ճուր գետ 98  
 Ճուր քար Կ. Ճախայ քար  
 Ճողոնի 208  
 Փալանասուլ 111

Փական 275  
 Փայտակարան քղ. 13  
 Փանանան տերէսի 76  
 Փանաթաղ Կ. Փանաթաղ  
 Փաշալի 177. Կ. Փաշալ  
 Փաշալիք Կ. Փաշալ  
 Փաշաքէնա 42. Կ. Անիք  
 Փառակայ 326. 344  
 Փառակայք 38  
 Փառակեր 324  
 Փառակունի 64. 144  
 Փառանան 271  
 Փառանակ 274  
 Փառնան 281  
 Փառուարայ վ. 22. 286-7  
 Փարազա. Կ. Փարազա  
 Փաստուկ ԲԼ. 381  
 Փեթական 209  
 Փիլիս Լ. 290  
 Փիլիս 100. 292  
 Փիլիս 101. 270  
 Փիրտալուտան 102. 293  
 Փլաղայ 291  
 Փլաղայ (Հայք Բ) 450  
 Փլաղայք ? 287  
 Փլաղայք. Փլաղու 98. 128  
 Փլաղակ 38  
 Փլաղ 97. 177  
 Փոկա 184  
 Փողանք 91. 93. 107. 190  
 Փոնաթաղ 122. 124  
 Փորազա 358  
 Փորթափի նոյ 155  
 Փորակ 9. 63. 75  
 Փորակ = Սիւնի 214  
 Փուլ 267  
 Փուլէն 107  
 Փուլալ չայ Կ. 179  
 Փուլանլու 99  
 Փունազա 38  
 Փունայ 275  
 Փրակայ 97  
 Քաղի 400  
 Քաղի Գուրալու 101  
 Քալանք Դիւլէ 346  
 Քալասուլ 505  
 Քալասուլ Կ. Քալասուլ  
 Քալան ? Լ. 478. 480  
 Քալան ?  
 Քալասուլ (ամուր) 265  
 Քալասուլ 209  
 Քալասուլ 326. 341  
 Քամու խալ 488  
 Քամուլ Լ. 3  
 Քայլի ? 525  
 Քայլանլու 101  
 Քայլանլու 101  
 Քալասուլ Կ. 242. 265  
 ——— Դիւլ 266. 269  
 Քալասուլ 97  
 Քալասուլ 272. 280  
 Քալասուլ 102. 243. 294  
 Քասիլու 99  
 Քար 306  
 Քարալու 162. 267. 269  
 ——— Քալասուլ 275  
 ——— Դաշու 267-9  
 Քարաթաղի սյուր 114  
 Քարանանլ 223. 244. 262  
 Քարանլ



# Յ Ա Ն Կ Ա Ն Ձ Ա Ն Ց



- |   |   |   |
|---|---|---|
| <p>Ազգայն Ղան 420<br/>         Առաս էջք. Ա. Աշոտյ 82<br/>         Ազգարեանք 467<br/>         Ազդիու. Կրէց 130<br/>         Աբել (Տէր) Գաղեցի 360<br/>         Աբել վաճառական Կանցի 288. 427<br/>         Աբէժա կին Սարգսի ո. Սողոմոնի 184<br/>         Աբով մելիք 69. 74<br/>         Ազո<br/>         Աբխազով վանացիէց Բերդկաներիչյ 247<br/>         Աբուսուլ տէր Մեղրայ բերդի 252. 303<br/>         Աբրահամ Ա. Կթղ. 494<br/>         Աբրահամ Գ. Կթղ. 215. 225. 303. 334.<br/>             259. 496. 515. և այլն:<br/>             — Աստուգասցի 234<br/>             — վանանայր վանեկականյ 54. 61<br/>             — Քանանայ ո. Հայրուտի<br/>             — Մազկոզ է Սրկզոնս 130<br/>             — (Տէր) Սմբատեան 358<br/>             — Ղուլէլի 451<br/>             — (Հայր) է Մազարդայ վ. 518<br/>             — Առքեպ. Զմիւռնիոյ 503<br/>         Աբամ զորավար 296<br/>             — ո. Մարկոսի, վաճառական 304<br/>         Աբահան տուն է Լիվոնայ 452<br/>         Աբաս Խոսրոսունի 498<br/>         Աբարի առաջն. Գանձակ դեղ 42<br/>         Աբարիտ աշակերտ Հ. Անրմոնի 225<br/>             — առաջնորդ Սեւանայ 88<br/>             — Յրիտոն եպիս. Նախնաւանու.<br/>             371. 389. 393<br/>             — Եպս. Երմշակայ 379<br/>             — (Հ.) Զանկեցի 377. 399<br/>             — (Յրաս) է Ղարաղուչյ 489<br/>             — Ազուան 405-6<br/>             — վ. Ծանկերացի 505<br/>         Աբել Աբփայցի 184<br/>         Աբրի կամ Աբար Աբուլեցի 259<br/>         Աթանան † յԱստուգաս 509<br/>         Աթանաս Մակուցի առաջն. Սեւանայ 88<br/>             — կպիս. է Մազարդայ վանս<br/>             518-9<br/>             — Եպս է վանական 61<br/>             — և Գրիգոր Կղարաք եպիսկոպոս<br/>             պար Դոփեանք 74<br/>         Աթանէս ո. Միխիմարայ 177<br/>         Աթապէկ ո. Մարտիրոսի վ. 6. 86<br/>         Աթիկ Շոռոթեցի 357<br/>         Աթանակ 490. 497. 504. 514<br/>         Աեանանարի վիճել. տեղադիր 411. 500<br/>         Աեքոսան ո. Միքայի 47<br/>             — (Հ) Աեքոսանեան 403-4. 482<br/>             492</p> | <p>Աեքոսանեան տուն է Լիվոն. 452. 476<br/>         Աթոն Աեաիք Աստուգասցի 368<br/>         Աւանդէրտի բէկ 262<br/>         Աւանդ փաթշտ 76<br/>         Աւփասլան Նուրբատու 499<br/>         Աւթամար Աբփայցի 180. 201<br/>         Աւթամարեանք 181<br/>         Աւթիար Շոռոթեցի 356<br/>         Աւարոն Կրէց Նորեանք 247. 289<br/>             — առաջն. Երիցուվանից 281<br/>         Անրմոն առաջն. Հերմոնի վանայ 125<br/>         Ազարաթ Մեղրեցի 304<br/>         Ազարէկ մելիք Սալթաղայ 368<br/>         Ազարար ո. Խոթիբէկի 356<br/>             — Ըղուերմեցի 191<br/>         Ազան 182<br/>             — ո. Բալասանի Շահապու. 483<br/>         Ազամու Նախնաւանցի 380. 520<br/>             — Շոռոթեցի 358<br/>         Ազայ Մաթուս 452. 458<br/>         Ազմիր Ազարկունեցի 37. 377<br/>         Ազան Աթորուի 313<br/>         Ազալան Շահապոսեցի 482<br/>         Ազուէտ ո. Ազամուլի 333<br/>         Ազրասու 141<br/>         Ազրարու 147<br/>         Ազրերջակ Գեղամեցի 75<br/>         Աեքոսանք Մակուցի 433<br/>             — Ա. Թզր. վրաց 90<br/>             — Շոռոթեցի ո. Ազամուլի 358<br/>         Ազուժ Խոնանց 342<br/>         Անապիան դ. Գաշտեցի Դանիելի 336<br/>         Ամադին ո. վանանայ 146. 199<br/>         Ամբրոսիոս կոնստանդինոպոլս 391<br/>         Ամբրուժ Միքոնեան 401<br/>         Ամադէ կին Ազգան 150<br/>         Ամբրգինէ Խան 504<br/>         Ամիր Շոռոթեցի 356<br/>             — շան Նուրբատու 120<br/>             — Հասան ո. Էլաչյ 122. 138-9<br/>             — ո. Պոռոչյ 157-9 ո. Հասան<br/>             — վալէ ո. Սարգսի 181<br/>             — վանայ 145<br/>             — Թոնն Զուրջի Մանե. 200<br/>             — Փերի (Սմբատ Ա. Թզր. Սիւն.<br/>             — Նեանք ?) 525<br/>         Ամիրայ Մանեանեան Ա. և Բ. 93. 168. 181<br/>             200<br/>         Ամիկ 150<br/>         Ամադին 96<br/>         Ամասխուր 144<br/>         Ամամակուլ կնիւտեցի 34<br/>         Ամվայ խոջայ Շոռոթեցի 379</p> | <p>Անանիա եպոս. Սիւնեայ 7. 11. 20. 23. 150<br/>             — Կթղ. Մոկացի 19. 230. 295<br/>             — ո. Փանոսի 357<br/>             — վ. Համազասպեանց 313<br/>         Անգելուս. կպիս. Տփղեայ 383<br/>         Անգովի տէր Սիւնեայ 10. 11. 17. 210. 294<br/>         Անդրէաս Մանեկցի 306<br/>             — վայ Նախնաւանցի 530. 342<br/>             — առաջն. Շոռոթու 358<br/>             — միաբանող ծերունի 374<br/>         Անի Նուրբատու 123<br/>         Անիփիա կին Հեռուլի 62<br/>         Անձրու խոջայ Յղեանց 342<br/>         Անուժե դ. Փանիկէի 355<br/>         Անտոն (Հ) Նազարեան 377. 597-9<br/>             — (Հ) Ազարկունեցի 377. 396<br/>             — Բորի 451<br/>             — Արմինի, Թարգման 457<br/>             — ո. Հայրապ. է Կրանասա 458<br/>             — Շատի վանայ առաջն 160<br/>             — Չէլէպի. Պրուսացի 474<br/>             — Սուրեան Լարար է վեհե.<br/>             — տիկ 476<br/>             — Ֆեթիմանէլ Հայ յԵթով. 458<br/>         Անտ Ա. Թզր. Բազ. 15. 31. 32. 34. 55. 81<br/>             — Բ. Երկաթ 33. 57. 83<br/>             — Գ. 518<br/>             — Խլխան Սիւնի 15. 169. 170.<br/>             — 215. 227-8. 214-6<br/>             — Իլխանայ Իլխան (Սիւնի) 16.<br/>             — 227. 244<br/>             — ո. Բաւլկայ ? Նուրբատու 106<br/>             — ո. Սանկայ Սիւն. 110<br/>             — պատրիկ Իլխանայեան Հայոց<br/>             514<br/>         Անտանք (Ա.ադ) 16<br/>         Ապիկ 150<br/>         Ապլէէ 311<br/>         Ապուլուփ 311<br/>         Ապուս Միքայ 509-10. 513<br/>         Ապրամիկ դ. վարազարդաստայ 78<br/>         Ապրոյեանք 449<br/>         Ապրոյ Չէլէպի 452<br/>         Արան Նախնաւանցի Սիւնեայ 6. 9<br/>         Արաքէլ շինող կենդեղոյ 74<br/>             — Արեւան 288<br/>             — Եպոս. քեռորդի Գր. Տաթև.<br/>             — 29. 235. 239<br/>             — Եպոս. Արեւեանց (մին Սաղաւ.<br/>             — լու.) 194-5. 201. 237-8<br/>             — Գեղեկականայ առաջնորդ 106<br/>             — զորավար Մեղրեցի 304<br/>             — կանգնող խաչի է Թ. ՈՂԱ. 129.</p> |
|---|---|---|

Առաջին փորձայն Նրինչակայ 350-2-356  
 ————— Բաբուսակայ 355  
 ————— Գարսազեանց Ինչիլի 357  
 ————— Կ. Պաշտի 460  
 ————— Պատմիչ (յանախ յիշեալ)  
 Առաջին Աստուգատեցի Ի վիճեալի 509  
 Առաջին ? Ի ԶԻԶ. Թուր 177  
 ————— Ղափանցի Կ. Պաշտի 357  
 ————— Արարչեանց 449  
 ————— Շուրթեցի Կ. Պաշտի 357  
 Առաջին ախոյ ? Եռեքրատու 122  
 Առաջին Նոյնի, Թաթար 180  
 Աստուածատուր մէլիք Գաւառայ 45. 45  
 ————— Աստուգատեցի իսեայ 524  
 ————— Տէրաբու Գաղեցի 360  
 ————— Խթայեցի Եանասայ 534  
 ————— աւագ Ի Նախնաւան 504  
 Աստու Կ. Տարայիճի 37. 73. 116. 198. 532  
 ————— Կին Լիպարի Թրքէլեան 174.  
 ————— 188. 190. 193  
 ————— Կին Արթամարի 201  
 Ազրան բէկ 525  
 Ատի (զրոյ) 47  
 Ատուճի Իշխան Գողթնեայ 310  
 Արարեալ Կ. Փիլիպի Բ. 14. 17  
 ————— Կ. Սահի 32  
 ————— Կ. վասակայ Նաւակեան 282  
 Արարեալի Կ. վանաստեղծութիւն 457  
 Արարեալեան Ազուլեցի 318  
 Արեւիկ Կ. Խոյնայ 174-8. 485  
 Արեւնար Եռեքրատու 123  
 Արզու Կին Եղեկի 238  
 Արթուր մէլիք Չուլպու 422  
 Արիստակէս վ. Շամբեցի 247-50. 354. 514  
 ————— վ. Բարկուշայեցի 248. 280  
 ————— Կ. Միտիճարայ 177  
 ————— Կ. Ս. Լուսաւորչի 515  
 Արկաղիանց 115  
 Արուսե 114  
 Արմենիա տունք յԵրոզայ 477  
 Արշակ Բ. Թաղաւոր Արշակունի 40  
 ————— Կ. " " 14  
 ————— աշխարհագիր 476  
 Արշին Կրէց 130  
 Արուստեան 156  
 Արուստեան Կրէց. Ջուանչէր Իշխանի 277  
 Արուստեան Բաղրատունի 32  
 Արուստեան Կին Տարայիճի 235  
 ————— Կ. Սար Աւագ Սարգսի 319  
 Արսէն Զաքարեան 42  
 ————— Իշխան 140  
 Արտաշէս Բ Արշակունի 31. 358. 497  
 Արտաշատեցի Շաղապեցի 51. 211  
 Աւագ Կ. Չաքար. Արտաշատի 33  
 ————— Եռեքրատու 47  
 ————— Տէր. Ի Բաղրատեցի 130. 150  
 ————— Խաթուն Կ. վախտանայ 122  
 ————— Սարգսի Կ. Նեղուի 319  
 ————— Սուլիմ 123  
 Աւագեանց 93  
 Աւան խան Գովաննէս 218  
 Աւետիս (Տէր) 256-7. 295. 50. 304  
 ————— Կ. կամ Թոնն Խոյնագիր 152  
 ————— Տէր Մկրտչեան 337. 346  
 ————— Խոյնայ Իսմայիլ 329  
 ————— Զուլպուցի 473  
 Աւետիս (Եղբ. Օղոստեան) Արզուսեցի 389  
 Աւետիսի վարձար 501  
 Ավերբան 182  
 Բաբու Կ. Փիլիպի 182

Բաբան բոնակալ 14. 15. 31. 211  
 ————— (Պապէք) աղանդապետ 32  
 Բաբալէն Կ. վասակայ ուր. 12. 226  
 ————— Կ. Կղար որդի վասակայ Գաւառայ վ. աւագ. Կ. Տաթար. 217  
 ————— ուրացոյցի 13. 17  
 ————— Կ. տէր Արեւնայ 14. 17  
 ————— Կ. վասակայ Նաւակեան 15  
 ————— Կ. Փիլիպի 32  
 ————— Եղբ. Մաղարայ վանից 516  
 Բաբի Կ. Աւանի 357  
 Բաբիկ Ա. Բ. տեղք Սիւնեայ 11. 13. 17.  
 ————— 208. 211. 283  
 Բաբուսեանց Ուսակայ 356  
 ————— Աստուածատուր 508  
 Բաղարատ Իշխանայեան Հայոց 32  
 Բաթիմեանց Աւետիք Ի վիճեալի 454  
 Բաղասեանց Շահապունեցիք 482  
 Բաղուր տէր Արեւնայ 9. 17  
 ————— Բաղուր Ազնեայ 10  
 ————— Կղար որդի վասակայ Ուր. 13  
 Բաբի Կ. Հայրապետ 44  
 Բաղուր Կ. տունք Սիւնեայ 273. 290. 294  
 Բաղուր Կ. իշխան 273  
 Բաղուր Կ. Երուս. Ղափանցի 293. 360  
 Բաղուրատ  
 ————— զաշխարհ Կ. Խոյնայ պէկի 338  
 Բաղուր Նոյնի 215  
 Բաղասեանց 220  
 Բաղարիճեան Աւագեալ 299. 300. 312.  
 ————— 318 326. 583. 515-6  
 ————— Հ. Նաղար 568  
 ————— Եղբ. Գովանի 574-5.  
 ————— 584. 586. 479  
 Բաղարիճեան ? մէլիք 46  
 Բաղարիճեան աւագ. Սիւնեայ 28. 86  
 ————— Կ. Տաթար Կ. Տաթար 240  
 ————— Աւ. Ս. Արթունի 43  
 ————— Կրէց Մաղարատու 289  
 ————— Մեղրեցի Կ. 20. 258. 305.  
 ————— 507  
 ————— Կախկոպու Շերիման 477  
 ————— Կախկոպու Կ. Սահակայ 182  
 Բաբու 123  
 Բեն Կ. Սիւնեայ 122  
 Բենիման Ազուլեցի Կ. Արի 239  
 ————— Խաթունի 23  
 Բենարիճեան Կ. Մուրատու 449  
 Բերդակ Եռեքրատու 115  
 Բեկ Կղար Գրիգորեան 107  
 Բեշեան Ա. Կ. Բարկուշի Թրքէլեան 47. 95.  
 ————— 125. 202  
 ————— Կ. Ս. Սիւնեայ 96  
 Բեշեան Ազուլեցի 330  
 Բերդակ տիկին Սիւնեայ 7. 14. 118. 472  
 Բուքու կամ Բուքայի 123  
 Բուքու Կ. Իշխանայ Իշխան 18. 185-6  
 ————— Տէր Զաքարեան 158  
 Բուքու Օրբիկեան 197. 195. 202. 325  
 Բուքու Կ. Արարչայ Խոյնագիր 367  
 Բուքայի Կ. 164  
 Բուքու Եռեքրատու 139  
 Բուքու Ա. Օրբիկեան 95-6. 116. 125. 148.  
 ————— 152. 182. 199. 201-2. 525  
 ————— Կ. Օրբիկեան 47. 96  
 ————— Կ. Երեւանի Կ. Լիպարի  
 ————— 189-90. 192. 195  
 ————— Կ. Թոնն մեծին Տարայիճի. 202  
 ————— Կ. Սիւնեայ 201  
 Գաղարիկ Ա. Բաղրատունի 16. 61. 85  
 ————— Բաբ. Արթունի. 57. 228. 499

Գաղարիկ Կրէց Ի Հերեր 112  
 ————— ? Ի Տաղարատ 152  
 Գաղան Կրէց. Գորայ պարսիկ 214  
 ————— Կ. Տաթար. 217  
 ————— Շերիման 524  
 Գաղարիկ 114  
 Գաղարատ տունուր Գեղարիկ 50  
 ————— Կաշապեցի 336  
 Գաղարատ Եռուսե 217  
 Գաղարատ տէր Սիւնեայ 12. 13. 17  
 Գեղարատ Կ. Կրէց 10  
 Գեղարատ կայ Սիւնեայ 6. 17. 30. 31  
 Գեղարատ Կ. Կրէց. 51. 82. 281. 225  
 ————— Կրէց. Գով. Գովանայ 314  
 ————— Գարապետեան 302  
 ————— Արուսեցի 326  
 ————— Իշխան (Ի Նորիք) 247  
 ————— Խախտեան 103  
 ————— Մանուկեցի 306  
 ————— Մարգարատունի 494  
 ————— Մանուկեան 468  
 ————— Նորայեանցի առաջնորդ 278  
 ————— Երուստայ Armenia տունին  
 ————— Սիւնեայ 455  
 ————— Կ. Գրիգորի 110  
 ————— Կ. Մուրատու Սիւնեան 453.  
 ————— 477  
 ————— Սիւնեան յԵրեւան վ. 284  
 ————— վ. Երեւանցի 239  
 ————— վ. Տաղարատու 208  
 ————— վ. Ուսակայ 216  
 ————— Պաղարիկ Հայ-Խոյնայ Կրէցի.  
 ————— 449. 476  
 ————— Կրէց. Գով. Գովանայ 374.  
 ————— 384  
 Գիւլ աղայ (Գեղարիկ) 45  
 Գիւլ Կրէց. 150  
 ————— (Հայր) 280. 284-5. 340. 515  
 Գիւլեան Կ. վանական 64  
 Գիւլեան, Կին 175  
 Գիւլ Արշակունի 10  
 Գիւլեան զարմ 375  
 Գուրու կամ Գուրիկեան Կուսան 553  
 ————— Խաթուն Կ. Արար Մեծ. 200  
 Գուրու Կ. վանական Շահապուն. 113-6. 498  
 Գուրու պարսիկ զարմար 211  
 Գուրու Կ. Իշխան վանական 310  
 Գուրու (Հ.) Գովանի 383  
 Գուրու Կ. Արարատու 357  
 Գուրու 42  
 Գուրու Կին Կին Ռուստու 123  
 Գուրու Կ. վանական 204  
 Գրարիկ 156  
 Գրիգոր Ա. (Գրիգորի) Երեւանայ Սիւնեայ 11. 19. 247  
 ————— Կ " " 16. 20. 247. 264  
 ————— Կ " " 20. 194. 198.  
 ————— 232. 236  
 ————— Կ (Կրէցի) " " 20. 308  
 ————— Ա. Թաղար Սիւնեայ 16. 17  
 ————— Կ " " 16. 17  
 ————— Կ. Կրէց. վանական 470  
 ————— Կ " Փաղար վանական 304  
 ————— Կ " 518  
 ————— Սուրբ Ա. 29. 33. 230  
 ————— " Կ 33. 55. 68  
 ————— Ա Տէր Սիւնեայ 17. 289  
 ————— Կ. Քաղար Եռեքրատու 13. 14. 17  
 ————— Արարչայ Տաթարեցի 241  
 ————— Արար Արարչայ Իշխան 73



Գրեզոր Անկեղակոթեցի 212	Դասերի բշխան Վլայոց ձորոյ 92	Չուզա 47
— Ապերաս Տէր Շիրակոյ 295	— Սուսանայ թագաւոր 110	Չուհաթ 72
— Կրէց Եղվարդեցի 68	— Բարունապետ 134-5	Չրուանդաս կախկոպոս Գողթնեաց 312
— Իբաճէ? որդի 72	— Վեպասան 316	Չօհր 314
— Լուսաւորիչ, յանախ յիշեալ	— Շոտթեցի 357	Չօրուայ, Չօրուայ, Չօրուայ մէլիք ո. ֆեր- ւանդէի 42-50
— Կրօնաւոր է Հերեր 112	— Կրէց Նախնաւորի 502	— Գաղեցի 359
— Վարա, խաչնեցի 35-37-532	Գնկուղ Նորաշենեցի 368	— ո. ֆերթեկի 182
— Մեղրեցի 232	Գնդ նուիրատու 123-175-200	Էաշի թոնն Պոսի 117-136
— Մազիսարոս 55-313	Գլին բշխան խաղապետ 231-260	Էդիշու ասնուաւոր Ազուլեցի 326
— Ասպասայ որդի 163	Դլինեանք 204	Էլթիկ մայր Յով. Քանեցոյ 374
— Ս. կախկոպոս (է Պիտիլիէ Դոմինիկ Փանկեաց) 477	Դոմինիկ Շէրիման կախկոպոս 477	Էլիկուճ բէզ 177
— Սիւնեաց վարդապետ 226	Դոմինիկան (Հ.) Նազարեան 372-374	Էլիէ ո. Պուստի 34
— Վ. առաջնորդ Մաքենցոյց 70	— Մարիա վանաւոր խօշտէի 366	Էլի Յովանի. Միտի 304
— Տաթևացի 23-236-241- 376-481-և այլն	— Ասան 448	Էլիպեղէր՝ Եարաղ. Նախնաւոր 502
— Վկայ Արփայցի 184	— Տէր-Քուռ 566-7	Էլպրոմ խօշտ 422
— կախկոպոս Մեղրեցի 184	Դոլլաթ բէզ 75	Ըանանք ո. Գրեզորի 289
— Ապերաս բշխան Շիրակոյ 16	Դոսաթ խօշտ 362	Թաղէտ Առաքեալ 224-518-521
— նուիրատու Դոմինի 116-198	Դոմ յայր Չաքարեայ Սպասաւորի 35-37	— ո. Մէլիք բէզի 111-523
— Խալիթեցի 239	Դոմինեանք 35-37-74-165	— Շանապուհեցի է կաթա 482
— է Հերման վան 124-5	Եաղուղ բէզ 209	Թաղոս ո. Տէր Չաքարի 183
— նաւատակ 109	Եարաղուի մահատաթ 289	Թաննա կին 137
— Վ. Շոտթեցի 554	Եարի բէզ 34-57-72	Թաղա Չիթաղեան 84-5
— Սարու Շանկերացի 363	— Գաղեցի 360	— կաթ. Միտայ խաթանի 205
— ո. Վարամայ 112	Ելիկուճ ո. Լիպարի Օրբէլեան 93-146- 180-189-195-364-479-499	Թաղվերթի որդի Օվանէ 372
— (Հ) Երթորեցի 367-396-7	— ո. Տարայի 94-192	Թանէլիք, Թաղվիք 123-145
— Աստուածարեան կախկոպոս	Ելիկուճ Աթաբէզ 187-499-502	Թամազուլ 183
— Նախնաւոր 392	Ելիկուճ ո. Տէր Կրիստ 175	Թամազ դուստր Մալխասայ 546
— բարունապետ (է Ջիլ) 531	— Ալեքսանեան 476	Թամար 198
— Գերաթ Միտան 552	Ելիկուճ կախկոպոս 201	Թամաթ խաթան 167-192-5-195-201
— Գորդի խան զօրավար է Հըն- դիս 467	— Կրէց Կարիշ (քանդակիչ) 104-106	Թամիթի օրիորդ Օրբէլեան 193
— Նուաթ, կանոնիկոս 454	— Մէլիք 34-42	Թայիկ դուստր Սարգի 162
— Արծկեցի ո. Էլիէլիքի 518	— Տէր է ԶՂԳ. 145-150	Թանկ է Չժի 144
— ո. Սաքասայ 156	Ելիկուճ քանանայ 174	Թանկեր մէլիք 18
— Թոնն Դոմինի 198	Ելիկուճ Նորեցի 486	Թանկերուլի մէլիք 34
— և Մարիամ նաւատակ 183	Ելիկուճ կախկոպոս Գողթնեաց, յետոյ ԿԹՎ. 312	— Տէր Գուսնեայ 110
— զարբին Աստուապոսի 508	— Վ. Նշիկ 23-131-7-384	Թաշեր կին Հասանայ Պոսեան 121
Գրեզորէս նորագոյ Գնդեվանից 105-107	— Կարեանեանցի 305-354-578- 584	Թաշիան Գիթաշիկեցի 34
— (պատկերեալ) 133	Ելիկուճ ո. Յովաննու բէզի 420	Թեկիկ նուիրատու 122
Գրեզորիկ է Թոնն Նիլթ 110	— խօշտ 443	Թեոզոս կայսր Մեծն 294
— սպասաւոր Պուստիկեց 524	Երեմիա Վ. Մեղրեցի 303	Թեոզոսու Էդնոմուս Երիցու վանաց 281
Գրեզորի Վ. Յաղմանեցի 155-137	— Վ. է Ս. Կարապետ 379	— կաթորորդի կաթա. ԿԹՎ. 25
— Աղթամարցի կաթապետ 531	— կայս. Մարգարատանի 494	— զօրավար Ոչուանի 498
Դամոս 198	Երեմիի կին Արքիւրճի 75	Թերթիալ զ. Նաւապետի Գուլնապարայ 335
Դամոսրուաշ 162	Երեմի կուսան է Շներ 259	Թիմուր լէնկ 34
Դանիէլ Վ. Մեղրեցի 305	Երեմի (Հ.) կախկոպոս Սիւնեաց 13-214- 280-5	Թովման Յով. յիթովդեա 471
— Մառուկեան մարտապետ է Լե- ւասան 467	Երեմիի անիկն Կաղապոն 580-363	Թովմուս Առաքեալ 53
— Յղեացի ասնուաւոր 342	Երանթէտու աշակերտ Թաղ. առաք. 224	— Արեւան է Վինեանի 288
— Վ. Սիւնեցի 84-88	Զաւ Չիթաղեան 84-5	— Ալուիկեցի 364
Դանիէլ մաղապատ ո. Սանկայ 358	Զաքար Շէրիմանեան 446	— Ազուլեցի ապաղարու է Վե- նեանի 334-5
— ո. Պաղայ Մաղարդավանեցի 319	Զաքարիա Սպասաւոր 186	— կախկոպոս Տաթևայ 290
— ո. Դերվիշի 412	— Վ. Աղմեան 216	— Արթուրի պատմիչ 10-307- 514
Դարա ո. Բարկայ 11	— (Տէր) Շոտթեցի 351-395	— կաթայցի 241
Դասնոնիէ փոսնի անզադի 369-421-446- 502-515-521	— կախկոպոս 234-5	— Վ. Մեղրեցի 238-9
Դասթուկ քարեպ. Արծին 438	— Փլիկանց 355	— Մեծոփեցի 239-40
Դասիթ Բ. ԿԹՎ. 32	— Տիր, ո. Նուրիանի խօշտ- շիկեցի, 566-392-431	— կախկոպոս Աստուապոս 312
— Բ. կախկոպոս Սիւնեաց 223- 226-247-289	— ո. Դասիթ յԱմուսերում 459	— կայս. Նախնաւոր 388-9
— Բէկ է Գնդեվան 109	— Վ. Վաղարշապատեցի 507	— Ազարանեցի կախկոպոս Սու- տանիայ 370
— Բէկ Հալիթարեցի 18-218- 256-9-263-283-288-292- 300-314-312-331-501	— Շէրիման զօրավար 476	— Վիտալ 596
— կախկոպոս Գեղամեցի կամ Շոտթեցի 34-52-5-	Զաքարեանք 18-33-47-499	— ո. Սելուսուի յԱզարանեայ 372
— Շոտթեցի 34-52-5-	— Քաշ (Ջի) 71	— (Հ) Խալիկանեց 406-8
— 59-97-282	Զուսա նաւատակ 183	— (Հ) Թամուսեանց 376

Թովմաս Մար կան 466-475  
 — կառ. Հայոց յիտալիս 448  
 — Զանկեցի Միաբանող 489  
 Թարգմ 452  
 — զորավար Զանգուրեցի 278.  
 281-306  
 — ժողովուրդ Տարսեցի 183-188  
 Թուման սալու Գեղամեցի 44-5  
 Թուրք Սէլուկեանք 33  
 Ժանսեկց Միւրզայ 269  
 Իգնատիոս արքայ + ԶՂԵ 422  
 Եսայի Կ. Թարգմ 320  
 Իսրայէլ Որի Պաշտան 212-400-404  
 — Վ. Միւրզեցի 303  
 Իսահել Աթաղէ 18-46-7-93-143-168-  
 180-183-7  
 — Կ. Բուրժեի (Ա) 202  
 — Օրբելեան 93  
 — Կայր Եովհ. Որոտեցայ 247  
 — Կ. Զեարի 201  
 — Կ. Լիպարի 193  
 — Կրկու վաղամեծիկ 193-4  
 — Տէր Որոտան 218  
 Իսահել Կ. Բեշքեի 47  
 Լալայ Բար. Վրաց 143  
 Լեան Ա. Բար. Ռուբինեան 434-439  
 — Բ. Բար. Ռուբինեան 233  
 Լէնկ Թիմուր 364-479  
 Լիանոս 485  
 Լիբեր Ս. Հայ ՍԱԿԻՆ 452  
 Լիպարիոս մեծ Օրբելեան 92-103-180-505  
 — Կ. Եւսեբիոս Օրբելեան 93-  
 103-185-7  
 — Կառ. Միւրզայ խաթանի 203  
 Լուսիկ սալու. Բարդուղիմ. 299-300-312  
 Խաթան Կ. Խաչապուրի 198-9  
 Խաչապուր 120  
 Խաչապուրեանք 93-143  
 Խան Սուլթան պարոն 75  
 Խանի կին Խաթանի 282  
 Խանիքով Նիկ. Ռուս սեղապիր 262  
 Խանուս Ալէ կին Մէլիքբէկի 72  
 Խաչապուր Զուլպուրեցի 423  
 Խաչատուր Զուլպուրեցի բարոնապետ 35-69  
 — Լուսաշ աւագերէց Հայոց քա-  
 ղաք 463  
 — Կալիսիոս 70  
 — առաջ. Ս. Թովմասու վ. 326-7  
 — Կրէց Կ. Գուտեանի 111  
 — Կեչուեցի 134  
 — Խեթիսան + Ի Հերհեր 114  
 Խաչիկ Խաչայ Զուլպուրեցի 414-423-4  
 — ԿԹՊ. 499  
 — Կրանուր (Ի ԶԼԲ) 172  
 — Անարոնեանց վանաւակ. 503  
 Խարիբուզ Թոն Դեղկայ 176  
 Խարիսիմոս աւագ Ի Նախուան 501  
 Խարոն 479  
 Խիշա Կ. Բակրայ 10  
 Խանդաւ Կ. Խաչուրի 111  
 Խանդաւ կին Զուլպուր 122  
 Խանդար պարոն 138  
 Խարաւ Գ. Բար. Արշակունեաց 11  
 — Անուշահան 91  
 — Արարուրէ 13  
 — Ի զարմէ Գաղան Պարսիկ 211  
 — Կ. Շարիթայ Գաղթնաց. 310  
 — Կայր Ս. Վանանայ Գողթնացի  
 310-317  
 — Միւս Գողթնացի 311

Խարաւիկ Համանեան 479  
 — Տարսուրեան 116  
 Խարիշան կին Զեարու 161-165  
 Խարէն Իշխան Հաչապուր 9  
 Խոցաղեղ եռիբրատու 167  
 — վաղամեծիկ 108  
 — Կ. Օտարեկի 167  
 — Ի Յախայ քար 152  
 Խուզաթ Կ. Բովանեան 289  
 Խուժուրէկ 121-356  
 Խուժուր խաթան 197  
 Խուրշիթ Կ. Միւրզեցի 163  
 Խուժիկի առ. Ղեւնդազեանք 475  
 Խուժարէ Զուլպուրեցի 424  
 Խուզմիկար (Կին) Ի Շուրթ 359  
 Խաչ Կ. Դոսեանց վաչարանայ 148  
 Խաչար 120  
 Խաչայ Պապու վան. յԱնդրա. 459  
 Կամաճ կին Գրիգորի Ե. կառ. Սիւնեաց 303  
 Կարակ վաչարանաւոր 207  
 Կասա Կ. Սեփեքիթ Բար. Սիւնեաց 16  
 — քայր Շահանուխա Բազուկ  
 996  
 — Կ. Գրիգորի Բար. Սիւնեաց  
 16-17-295  
 — ? 40  
 Կարամիկէ զիւր 10  
 Կարապետ Փափազեան Հանգամիլեցի 518  
 — Վ. Պիւլպիւրեան 39  
 — Կուրաթու 116  
 — Բովանեանցի 375  
 — Կառ. Իշխանի Ի Սեւան 38  
 — Կանի սպասուոր յԱմուր. Հեթում Ա. 215-436-469  
 — սամ 459  
 — Մէլիք Թանկեան 213  
 — Շահնուրանեան 380  
 — Կ. Սիմոնի 357  
 — Վիւրանեց 508  
 — Վ. Սեւեթիկ 378-580  
 Կէշուանցի 105  
 Կերակոս Կաթիկի 60  
 — ԿԹՊ. 126  
 — Եւսեբիոս 134  
 — Կրէց Տրապիզոնցի 247-248-  
 269  
 — Կ. Ազարուրի 178  
 — Կառ. Ըրուբեանցի 235  
 Կերին առաջ. Նորալեանի 203  
 Կիւրէլ Աստուածայի սպայախոր 507-515  
 Կլեմէս Գալանոս 395  
 Կոզմի Պաշտ Ի Լիպունայ 451  
 Կուսիկ սալու. Ս. Բարդու. 312-326-329  
 Կոստանդին կայսր 14  
 — Միւրզեցի Կ. Արամայ 304  
 Կոստար Կ. Մարիան 474  
 Կորիկ զորավար 304  
 Կուզար Կ. Ախիմարի 201  
 Կուկոր 114-117  
 Կուրաթու Գանձակեցի 34-42  
 Կուրաթու սալու Հալեցի 256  
 Հախանուար Կարայր Մէլիքբէկի 72-248  
 Հախում Արուրեցի 330  
 Հաչապուրեանց կամ Խաչապուրեանց 18-92  
 Համադասայ. Կ. Սահակայ 289  
 Համասարուրէ Կ. Քանկեանի Սեւան 228-256  
 Համուր (Կին) 84  
 Համուր Ա. (մեծ) Բ. 17-184-274  
 Համուրեանք 17-188-274-479  
 Հայկազ Կ. Հախանուարի 248  
 Հայկազան Իշխանք Սիւնեաց 15-18-52

Հայր Իշխանք, Մարգարեանք 472-3  
 Հայրանուս ? 72  
 Հայրապետ կայսր. Սիւնեաց 20-117-232-3  
 236  
 — առաջ. Թանասի վ. 121-124  
 — Խաչայ Յանցի 242  
 — քանանայ Կ. Հայրուր 54  
 — առաջ. Արանեանց 142  
 — Շահանեան 301  
 — Կառ. + Ի ԶԼԲ 422  
 — (Հ.) Անարեթուրեցի 430-505  
 — (Հ.) Կառ. Ի Մարգարայ վ. 519  
 Հայր արուեստագէտք, բարերարք, Կ. սյւն,  
 յԵւրոպայ 473-7  
 Հալարի 200  
 Հասան Խաչիկի Բար. Սիւնեաց 16-17-295  
 — Ամուրեցի 197  
 — Կ. Ա. Համանեան 17-88-184  
 274  
 — Կ. Սեփեքիթ Բար. 200  
 — Կ. Գրիգորի Սիւնեաց 232-  
 289  
 — Կառ. Յովհ. Որոտեցայ 217  
 — Ամիր Կ. Պաշի 95-120-1-  
 159-174-7  
 — Կ. Կարապետի 232  
 — Ամիր Կ. Եւրայ 138  
 — Կ. Կարայ 221  
 — Օտարեկայ 167  
 — Ուրուս (Հասան) 91  
 Հասան-Դոսեանք 37-72-3  
 Հարոն ամիրայ 16-297  
 Հարոն Ա. 215-436-469  
 — Տէր Կոստանի 469-471  
 — Կարայր Ներս. Լամբրոն 461  
 Հեռուկ եռիբրատու 62  
 Հերակէ կայսր 14-210  
 Հերմեթեանք Ի Տրեան 462  
 Հմայեան կրէց վանանայ 289  
 Հոգեգիւ Կ. Աստու 259  
 Հոսիսիմէ Կ. Արտայ Շահնուրի 517-8  
 — վանապար Հալիմարայ կուսա-  
 նոցի 257  
 — Շահնուս ամիր Սիւնեաց 13-14-17  
 — Իշխան Բազայ 278  
 — Կ. Սահակայ Հայկազայ 18-  
 285-288  
 — քարայր վասակայ Նախ-  
 ալեան 282  
 — ամիր Կովականի 236-230  
 — (Հ.) առաջ. Նորալեանի 278  
 Հրանտի Իշխան 180  
 Հօլ սասիկան 32  
 Զառ կամ Զառիկ նահապետ 255  
 Զառիկ Ա. Բ. Գ. Ի. Իշխանք Բազայ 230-273  
 Զառիկեանք 18-255-273  
 Զապախ Կան Երեւանայ 75  
 Զապար կառ. Տարսու 287  
 — Զանկեցի ԿԹՊ. 160-316-ԿԿ.  
 — Ամարմին կառ. 453  
 Զարա Գրիգոր 35  
 Զարաշ Զուր. + Ռիւ. 423  
 — Կազմուր (քանդակող) 106  
 Զարարար + Ռիւ 117  
 Զաւրանիկ Կ. Յակոբայ Ի Լուրու 467  
 Զաւրան (Հ) Սահանեան 301  
 — վանաւակ. Ի Քաչուր 469  
 — վանանուրեցի 315-339-340  
 — Կուրաթու 178  
 Զուկաս (Ֆրա) Շահանուրեցի 482

Ղուկաս (Յրա) միւս 469  
 Ճար պարոն 370  
 Ճեմնի տեղադրող 421. 502. 505  
 Ճեմնի բէկ 262  
 Ճլուխի Մարգար 452  
 Ճուման Յովհ. Շանապենցի 482  
 Մազեարոս էջիան 174  
 Մամոն Ազոյ Տերտերեան 482  
 Մամբուկ եղբայր Շաշի 112  
 Մամբուս զբէլ և զարմ 212  
 Մամբուսոյ կոյ Սիւնեաց 20. 23  
 — անապիւրջ Ոյծոյ 289  
 Մալխոս Շաղկերացի 346 - 7  
 Մակար Ս. Հայ և կանգ 461. 477  
 Մանազուն Ի Թ. ՉՂԲ. 145. 201  
 Մանուկ 247  
 Մանուկեանք 168. 295  
 Մանուկ ոտորկան 31. 79  
 Մանուկ Սուլքան Սելուկ 204  
 Մանուկ կին Բ. Մէլք բէկի 35. 37  
 Մաղմուկիք Չուլոյու 422  
 Մաղաքիս Ղրիճիցի 559. 365-4. 378. 507  
 Մաղիսի իշխան 49  
 Մամբուսիան կին Էսայ 121. 156  
 — կին Գրիգորեանի 133  
 Մամբուս զ. Հասանայ Դոփ. 114. 142  
 Մամբուսի 161  
 Մամբուս կին Միքիմ. ո. Գեղիայ 176  
 Մամբուս զ. Տարապիճի 205. 113  
 — կին Հասանայ 75  
 — կին Առաքելի (ԺԳ զար) 74  
 Մայիլ բէկ ո. Մէլքբէկի 72  
 Մանան էջիան 221  
 Մանկիկ քորեպ Մշկոյ 208. 216. 226  
 Մանուկ Մամբուկ. զորավար 11  
 — վ. կիւմիւշիանցի 89  
 — ո. վրաց թգրի. 94  
 — քանանայ Ի Թանաթի վ. 124  
 — Ի կամ 523  
 — Փառայիցի ո. Տէր Ոսկանի 345  
 Մանուկ Բարեցի 128  
 — Նազար 424  
 Մանուկեան Տէր Յովսէփ Ի Տրեվիս 477  
 — Հ. Գոմիճի Ի վենետիկ 477  
 Մանուկ բէկ 53  
 Մանուկ Օրբէլեան 18. 224  
 — Ի Գիւլ. 109  
 Մաշոյ կթղ. 34. 81-2. 88. 284  
 Մասուղան իւլայ 240  
 Մասաթիս (Հ.) Ազրազուհեցի 372  
 — իւլայիցի 566  
 — (Ղ) Մուրաթ 396  
 — Արազիանի Շանապենցի 482  
 Մասթեոս Առաքել 515  
 — (Հ.) իւլայիցի 366  
 — վանական յիթոզիս 458. 474  
 — կոյ Յովանիսիցի 372. 390. 398-9  
 — կանցի 34  
 — վ. կիւմիւշիցի 57  
 — վանանդեցի 359. 340  
 — կիւմիւշիցի 131  
 — ոմ. 458-9.  
 — կոյ Գարիթու 134  
 — կոյ. Մաղաքայ վ. 519  
 — վ. Ի Մարտիրոս զեղլ. 176  
 — աշակ. Գր. Տաթև 280  
 — արքեպ. Ազրազուհեցի 361.  
 368

Մասթեոս Հ. վանական իւլայիցի 366  
 — Գոմեցի 370  
 Մարիամ զ. Ա. Աշոտյ Թգրի. 7. 33. 51. 52. 57. 60. 80. 83  
 — վկայուհի 185  
 — Կասաբուր Ի Շիկի 259  
 Մարգար կամ Մարգարե ո. Ղարիբջանի 557  
 — ո. Մէլք բէկի 111. 523  
 — Փշրկանց 335  
 — Առաքելից 457  
 — ո. Գաղկոյ կրիցոյ 112  
 — զպիւր Ի կամ 523  
 — վ. յՕծոյոյ 375. 483. 489  
 — վ. Կուրբասու 139  
 — յԵղեգիս Ի ՉԲ. 130  
 Մարգար Յիւնացի 242  
 Մարգարեան էջիանք և կոյք 492-6  
 Մարիս 117  
 Մարկոս կոյ. Ի Հերմոն 126  
 — — Երնջակոյ ? 358  
 — Ափուսով 367  
 — Պոլոս (Marco Polo) 469. 475  
 Մարութ Շանուհեան 528  
 Մարտիրոս Մասթեոսեան 103  
 — վ. ո. Աթաղեկի 86  
 — անաշ. Տաթևու 224  
 — Բնուցի 215-6  
 — Նորինց Աշուկեցի 333  
 — ո. Շաղկոյ 178  
 — Սոլոմոնեանց Ղափանցի 306  
 — Չերեզեան անաշ. Սեանայ 86. 88  
 — Կուրբասու Ի Յախաքար 155  
 — կոյ. Տաթևու 252  
 — կոյ. Մարտիրոս 458  
 — կոյ. Մաղաքայ վ. 519  
 Մելքոն Մէլքեան Աշուկեցի 333  
 — Բէկ ո. Մարգարեանի 74  
 — Բէկ ո. Մէլքբէկի 72. 75  
 — զարծար Ի Սեան 89  
 Մելքիսեթ Բէկ 34. 35. 62  
 — Տէր. ո. Մարգարեանի 74  
 — կթղ. 97. 330  
 — արքեպիսկոպոս 72  
 — քանանայ յԵղեգի 283  
 — անաշ. անապատին Հայկազոյ 237  
 Մերութ (Ս.) Մաշոյ 11. 23. 313  
 — կրէց պատիկ 177  
 — կոյ. 235. 258  
 — արքեպ. Սիւրբանց 358. 484-5  
 Մերութեան Արթուրի ուրացոյ 11  
 Մէլք Աթոլ 34. 69  
 — Սաֆուա 18. 212. 215  
 — Սանփանեան 276  
 — Թանկրի 18. 210  
 — Յարութիւն Մէլք Հիւսէի. Եան 262  
 — Յովան փարապան 19. 256  
 — Միգրեցի 304  
 — Բէկ ո. Աթոլ բէկի 61. 69. 71-2. 182. 528  
 — Բէկ միւս 35. 75  
 Մէլքեան շիւնոյ 178  
 Մէլքեց Գեղամայ և Կարայ 37. 72  
 Մէլքիսեթ Հ. Բխուսեան 58  
 Մէլքար ո. Փրիբէկի 144. 182  
 Միւսանոյ եղբայր 23. 350. 382-408. 480

Միւսանոյ կոյնկոպոսեանք 588  
 — կարգանարք 388  
 — վանանարք 375-7.  
 387. 392. 01-2. 404. 482  
 — Ի Չմիւսիս 406-8  
 Միւսայել Ասորի պատմիչ 516, և այլն  
 Միւսարատար տէր Սիւնեաց 13. 17  
 Միւսարատու ժողովուրդ 494  
 Միւս իսթուս 94. 151. 191-2  
 Միւսոն ո. Նուրիսայ 232  
 — կոյ իսթուսի (ՉԼԲ) 163  
 Միւսանոյ ո. Գարս Երուսաղէմ 364  
 — անուստեր Գեղար. 34. 43. 45  
 Միւսանց Պեար. շիւնոյ կարգաւորմանց Պե. զայ 450. 477  
 Միւսոյ ժանանց 169  
 — Գարեթցի 393  
 — Մէլք 34. 72  
 Միւսոյ շահ 74  
 Միւս կոյն. Յիւրիսայ 524  
 Միւսանեանք Ի վենետիկ և Լիւմանց 452. 458  
 Միւսիս ո. Պարոն Լուսի 133  
 Միւսթար զորավար 18. 237. 260. 263. 277. 281. 293. 300. 304. 319. 331  
 — ո. իւլայի 75  
 — Գոշ 76. 85  
 — կոյ. Սեանայ 88  
 — Աթոյ 88. 301. 535. 448. 460  
 — Բաղիւնցի 53  
 — Երնջակոյ 133. 135. 138  
 — կրէց Ի Ռիս 167  
 — Սեանցի 131. 134-6  
 — որդի Գեղիսայ 174-6  
 — քանանայ Կուրբասու 198  
 — վ. Տաթևուցի 238. 240-1  
 — անաշ. Թանաթի վ. 251  
 — վաղաթիւս վ. 525  
 — Յաղմուցի 134  
 — Ազրազուհեցի 132. 313. 359. 370. 390  
 — Փէնարեցի 47  
 — կոյ. Սեանայ 84. 88  
 — Միւս 88  
 Միւսթարեանք Ի վենետիկ և Ի Տրեվիս 462  
 Միւսթիս յԵրուսաղէմ Տաթևու 242  
 — Աշուկեցի ո. Միւսթիս 336  
 — վ. անաշ. Ս. Առաքելեան. անապատի 134. 137-9  
 — Աշուկեց 43  
 — ո. Միւսթիս 357  
 — արքեպիսկոպոս Շուսթեցի 358  
 — Հ. — Ազրազուհեցի 370  
 — կոյնկոպոս Ի Մաղաքայ վան 519  
 — Տէր, Ի Լիւսայ 258  
 — Ի Շուրուսայ 52. 60  
 Միւսթար իսթուսեցի Գաշուկեցի 336  
 Միւսթար ապաշխարոյ 199  
 Միւսթիս վ. 182. 195  
 Միւսթիս (Բ.) կթղ. 63. 208  
 — Տարեցի կոյ. Գոթեան 312  
 — (Գ.) կթղ. 248. 277. 282. 446  
 — վ. Երնջակոյ 137  
 — անաշ. Տանաթարայ վ. 280  
 — վ. Ի Շուսթի վան 159  
 Մուսկանց Գրիգոր 40  
 Մուսկ կոյ. Սիւնեաց 13. 20. 25. 280

Մուշե կայս. Է. ԿԹՂ. 280	Յովհաննէս Ժ. կայս. Սիւնեաց Օրբէլ. 96.	Նազան խաթուն 106
Մուսարէկ կամ Մուսի Աղուլեցի, 328. 334	181. 183. 194. 198	Նասարգուլի † 22. 114
Մուրատ խան ո. Եաղուզ Բէկի 209	կայս. Շապուհօղլի 21. 220.	Նաւարուզ ո. Ղազան զանի 800
— Զուլչայեցի 419	—	Ներսէս կայս. Սիւնեաց 21. 136. 236
— Դիւանբէկի ո. Ղազարի 356	—	Վ. ո. Մեղիկի Դոփեան 74
Մուրատեան ա՛՛նճան 475	—	— Մեծ 517
Մուրում Լեւազեցի 304	—	— կայս. Ի Սեւան 84. 88
Մրանն սասիկան 52	—	— Շնորհալի 70
Յաղք վիայ Սիւնեցի 12	—	— Սասնեցի 134-5
Յակոբ Վ. աշակերտ Յ. Որոտն. 544	—	— ո. Վարամայ Տարսնեցի 375
— Դուանցի Ա. կայս. Սիւնեաց	—	— Վ. Մուրացի 248. 288
20. 125-30. 228. 230.	—	— քանանայ Ի Թանաթի վ. 124
245-58. 295	—	— քանանայ յարքունիս Վիկնայ
— Բ. կայս. Սիւն. 245. 246.	—	461
258. 264	—	— վանահայր Յախապարի 156
— Դ. ԿԹՂ. Զուլչայեցի 250.	—	— կայս. 230
319-20	—	— Նեկա ? (շինող) 69
— արեղայ (Ի ՌժԸ) 146	—	— ո. Միհասայ (Ի Մարսիլիս) Նիկողայոս ա. Ֆրիտոն
— Կրէց (Ի ՉԿԹ) 118	—	367
— Միգրեցի ո. Տէր Զաքարեայ	—	— Միգրեցի 304
304	—	— Վ. Տէր Յարութիւնեան 107
— աւազերէց Ոյժայ 216	—	— ճոր վանառանկան 285
— Զ. Զահեցի 252	—	— կարբեցի ճանաչուց 159
— Զ. Կեօկացի 377	—	— (Տէր) կարանաւանեցի 308
— Զ. Բըստեցի 240	—	— Հուհար 23
— Մանգասի, վանառանկան 158.	—	— աշակերտ Յովճ. Որոտն. 344
160	—	— Հ. կապանեցի 285
— Վ. Աստաղապարի 507. 510	—	— Աղբահունեցի կայս. Երնջի. Նուշիկ, Կիւն Աղապարի 356
— Վ. † Ի ՉԿԹ. 109	—	— 350
— քանանայ † Ի ՉԿԹ. 171	—	— կայս. Ի Յովհաննու վանս 204
— առաջ. կարմիր վ. 513	—	— Խանդամիրեան 362. 363
— Թարգման 349. 374. 387	—	— կուկեցի նկարաբար 172
— Փիլիսոփայ Ի Տաթեւ 241	—	— Գանեցի 374. 375. 384. 386.
Յարութիւն յէլէք 19	—	— 387. 479
— մուծոյ Գաթէի Ի Բարիւղ 476	—	— Հ. - Վառույր վանական 289
Յեսու քանանայ Դուանեցի 63	—	— Զուլչայեցի ո. Մարտիրոսի 149
Յիսուսեանք 57. 572	—	— Վանահայր Ս. Թովմայի 331
Յովակիմ կայս. Տէր Գրիգորեանց 513	—	— կայս. առաջ. Ամենափրկիչ
Յովասափ կայս. Սիւնեաց 21. 202. 250	—	— վ. 421
— առաջ. Հայրավանից 40-1. 52	—	— Վ. Սահեցի 134
Յովհան Բէկ Լուղայեցի 420	—	— Վ. Զուլչայեցի 451
— Մէլիք Փարսազանեան 19	—	— Վ. Ստամբուլցի 334
— Եկեղեցապան պատմիչ 284	—	— ո. Առայ Մաթուսի 452
— վանահայր Ս. Թովմայի 327	—	— Վ. Ի Սպանիս յԺԳ դարու
— Տէր, ո. Սարուսի 357	—	— 457
— Յ. Մանուկ † Ի կաւա 435	—	— Սեդրոսեան 468
— մանուկ նահատակ 498	—	— Փահիկալ Տաթեւայ 240
— Աղուլեաց քաղաքար 328	—	— Յովհաննիսի վարդապետ 57
— Աղբահունեցի ո. Սեդրաբոյ	—	— Յովնաթան Նազալ Շուռթեցի 329. 331.
550	—	— 358
— Ե. — Ովայեցի 68-9. 363	—	— Աղուլեցի ո. Ոսկանայ 536
Յովհաննէս Զ. ԿԹՂ. 82. 83. 170. 171 228.	—	— Յովսէփ Երեց (ԿԹՂ.) 177
250. 245	—	— Անպարտական 524
— Վ. Ամասիացի Ի Հոլանդա	—	— Վ. Միհրանոզ 390
459	—	— Զուլչայեցի 419
— Մայրազանցի 63	—	— Վ. Աստուածախոս 144
— Թար. Բազրատունի 518	—	— կայս. Ի վանս կուղայ 487
— Վ. Դոփեան 37. 73-4	—	— Աստաղապարի 508. 513
— արեղայ նահատակ 76	—	— Զուլչայեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
— Վ. Արեւիշեցի Ոսպնակեր 131. Յուսէկ (Ի ՉԿ) 120	—	— Լորենկից յիտալիս 477
156	—	— Կիս 31. 210
— Կեր Սիւնեաց 13. 14. 17	—	— Շահմուրատ Աղուլեցի 330
— կարիկ Որոտնեցի 25. 134. Նազար Ղափանեցի 307	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
217-20. 236-7 378	—	— Շահնազ ո? Պուշայ 76
— Երնջացի 23. 131. 384	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
— արեղայնակոյս Տաթեւայ 241	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
— Ե. կայս. Սիւնեաց 20. 171. Նազարէթ ո. Մանգասի Յովնեփայ 354-5	—	— Շահնաթուր Կաւառի 43
227. 247	—	— Շահում Աղբահունեցի 379
— Ե. — — 195. 231.	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
235-6	—	— Լորենկից յիտալիս 477
— Նախապետ ԿԹՂ. 159	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
— Շահումեան 304. 528	—	— Կիս 31. 210
— Գուլչար 320. 334-5. 515	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 379
	—	— Շահումեան ժողովրդապետ Շահումեանք 300-2. 445. 528
	—	— Լորենկից յիտալիս 477
	—	— Շահմուրատ կամ Շահր Վարազ զորավար Պար
	—	— Կիս 31. 210
	—	— Շահմուրատ ո. Արդիմանի 481
	—	— Շահնազար ո. Մէլիքեցի 34. 72
	—	— Շահնազ ո? Պուշայ 76
	—	— ո. Սարգսի ո. Դոփայ 74
	—	— ո. Զաքար. Սպասալարի 126
	—	— Շահնաթուր Կաւառի 43
	—	— Շահում Աղբահունեցի 3

Շաֆուազ խօշայ 473  
 Շէրբրմանհանք 399. 446. 489. 461. 473. 476-7  
 Շերիշուազ? 149  
 Շիօշ խօշայ Ջուզլիսի 419. 442  
 Շմաւն եպօ. Մաղարայս վ. 481. 519  
 ——— բարունակեա 212. 525  
 Շնուր աղբար քարաբժ 174  
 Շորէն աշխարհաբէր 503-6  
 Շուշան կիս Աւոտայ Սիւնի. 7. 15. 169-74  
 ——— Թազուրի Բազրատունի 518  
 ——— Կաւառուր Կոյս Նորաշին-  
 ——— կիցի 354  
 Ոստիքիս առաջն. Սեւանայ 88  
 Ոսկան Շանուհան 301  
 ——— եպօ. 460  
 ——— Մեղրեցի ո. Պապուլուի 304  
 ——— ո. Ապուլի 333-4  
 Որոտլան Թոռն Լորայ 232  
 Ուառլայ? խաթուն 118  
 Ուզուն Հասան 365. 391  
 Ուլուբէկ 144  
 Ուլուխաթուն 111  
 Ումէկ վճռկն. յ'ժԳ դարու 473  
 Ումուտեան տուն յ'Անկոնա 454  
 Ուջալէկ 108  
 Ուռլիկ Օրբիլեան 97  
 Ուքան ո. Վարամայ 114. 122. 156. 159  
 Չալէի 124  
 Չեսար Օրբիլեան 161-4  
 Չիթագեանք 81. 85-7  
 Չորթման ամբոյս 295  
 Չորմազան 33  
 Պալի զորավար 286. 277  
 Պալան Աստապատի 511-2  
 Պանոկ մարզպետունի 494  
 Պայիսուր զորավար 304  
 Պաշարաթ Կոթիցի 58  
 Պապ Կալերցի զորավար 286. 277. 287. 288  
 Պապաք ո. Պուրլ 120. 174  
 Պարոն Լյա 133  
 Պարսաթ աքեղայ նուիրատու 138  
 Պելուսաթ? Սիւնի 10. 523  
 Պիտիկ (Պիտրոս) 363. 373. 398-9. 400  
 Պիտրոս փերթոզ եպօ. Սիւնեաց 20. 23. 208  
 ——— Վ. Ի Գաւառ 46  
 ——— Վ. առաջն. Դաշի վ. 33. 37  
 ——— եպօ. Աստապատի 159  
 ——— Մատաթեան 127  
 ——— ո. Սարգի 174  
 ——— Վ. շինող եկեղեցւոյ Գնդե-  
 ——— վանից 103. 108  
 ——— նուիրատու Թանաթ վ. 124  
 ——— կաթողիկոս 88  
 ——— արքեպօ. Ս. Թովմայի վ. 351.  
 ——— 340  
 ——— Վ. առաջն. Բառայ 544  
 ——— վանուայր Գանձակայ 321  
 ——— Արազանցի 374-5. 384. 387  
 ——— Բասիցի, մանգասի 160  
 ——— Փեհլեան 404  
 ——— եպօ. յ'Օթոպ 483  
 ——— ո. Մերանցի Ի Պիզա 450  
 ——— Մերզեցի Տէ Մարիա 373  
 ——— խօշայ Ջուզլիսի 473  
 ——— Հ. — Ղարան (Միքայիլ)  
 ——— 405  
 ——— Ոսկան վճռկն. Ի Հնդկիս 466.  
 ——— 474  
 ——— Տ. — Սէֆէր, կանոնիկոս 477

Պիտրոս Աբուհոյ? 508  
 ——— Հ. — Ջանկեցի 489  
 ——— Անան Բալասան 483  
 Պիտրաթ ասնուաթ Գնդաք. 34  
 Պէշքէն ո. Բէշքէն  
 Պիտիկ ո. Տիրարայ Նորեցի 486  
 Պիտիկ փրանկիսկոս Նէապոլիսիցի 373. 399.  
 ——— 400  
 Պիտից Կոզուր 160  
 Պուլէյ Լիզուլ տեղադիր 501  
 Պուլիկ մէլիք Գնդաք. 54  
 Պուլուայ ո. Բուլուայ  
 Պուլիաթ խօշայ Յընացի 342  
 Պուլախ 34  
 ——— զեղջուազ փոնայ 375  
 Պուշ խաղբահեան 18. 119-20. 140. 350  
 Պուշեանք 124. 479. 481  
 Պրակիցիք 105  
 Պոզոս առաջն. Ս. Մամասայ 163  
 ——— Աստապատիցի 160. 312  
 ——— Վ. Մուկացի 148. 313. 330.  
 ——— 347. 513. 504. 509  
 ——— Միքայի Ապարանեցի 371  
 ——— Պիրոմալի 372. 395. 397  
 ——— Միքոսիլ եպօ. Նախնաւանու  
 ——— 401  
 ——— Կոզմի 431  
 ——— Սիմիթիսարլի 454  
 ——— Շանակեցի 482  
 Չալալ ո. Տարսայի 191  
 Չիւսիսեան տոմ 306  
 Չնաբուլա? 119  
 Չուանշէր Ա. Բ. Իշխանք Բազայ 275. 295.  
 ——— 296  
 Չուանշէր ո. Սանակայ Սիւնեաց 227. 277.  
 ——— 287  
 Չուանշիթեանք 275  
 Չուլուպիցի վճռկն. 411-3. 419-20. 442-4  
 Չուլու ո. Էսայ 122  
 Չուրլ Մեհնաւանեան 181. 197  
 ——— Համուտեան 479  
 Խաքան Աթա (ասորի) 499  
 Խահիթ 289  
 Խաւատե տեղաբնի 278. 282. 303  
 Խափայէլ Եղուարդ Ղարամեան 467  
 ——— Հ. Ջանկեցի 393. 489  
 Խաֆֆի 300  
 Խեհան կիս փարսազանի 258  
 Խոտաթմ Օրբիլեան 18  
 ——— Աթապէկեան 33  
 ——— նուիրատու 123  
 Խուզուքան կիս Սմբատայ Օրբիլ. 171  
 Խոտադէս Ի Հերիւր 111  
 Խաթուն նուիրատու 115  
 Խալաթ Ի Գուտեանի 111  
 Խալարբէկ 356  
 Խալար խան Ջուզ. 427  
 Խակուանք 231  
 Խանակ տէր Սիւնեաց 13. 17. 32  
 ——— կղք. Մեծի Սմբատայ 18  
 ——— Գոզթիկեաց տէր 311  
 ——— Հայկազ 15. 16. 32  
 ——— ո. Գաբուաթ 33. 46. 57  
 ——— Գարդմանայ տէր 230  
 ——— Սեւազ 33  
 ——— Կրէց Ի Թ. Նի՛՛ 144  
 ——— Շամախեցի 159  
 ——— Նորեաց Կրէց 289  
 ——— Փշրկանք 356  
 ——— Բուհրուայցի 343. 328

Սանակ Աթորունի 498  
 ——— Է. Աւան ո. Աւազայ 340  
 Սանակազուխա 7. 23. 128  
 Սանակիս տիկին Սիւնեաց 7. 13. 214. 280  
 Սան Սմբատեան Առանշակի 32  
 Սանր բէկ ապիս Ապուլեաց 326  
 Սամ Գնթունի 11. 12. 17  
 Սամազալ 123  
 Սամեղ? ո. Բէշքէնի 47  
 Սամոն ո. Տէր Յովնանու 172  
 Սամուէլ Շոռոթիցի 355  
 ——— Մուրատ 467  
 Սամուխ 153  
 Սամիսան Կաւ Է. Թոռն 156  
 Սանդոկ Կրէց Ղազարայ 289  
 Սանդուզա կիս Պարոն Վարամայ 114  
 Սանէ 141  
 Սանշար ո. Տանազուր 200  
 ——— նուիրատու 123  
 Սարգսթանէ? քան. 129  
 Սարգիս Ղափանցի 75  
 ——— Վ. առաջնորդք (չորս) Սեւա-  
 ——— նայ 83. 88  
 ——— Վ. առաջն. Տաթեւու 249.  
 ——— 250  
 ——— Կրէց առաջնորդ Գնդեվանից  
 ——— 104-6  
 ——— Ա. Կթղ. 31. 52. 83. 92. 105  
 ——— 231. 265  
 ——— Բ. Կթղ. 150  
 ——— Ղարմիցի ո. Հոքիմի 125  
 ——— ճգնաւոր Ի Բուրբուքի 130  
 ——— առաջն. Հիթմոնի վ. 126. 359.  
 ——— 323  
 ——— Վ. առաջն. Շատի վ. 159. 166  
 ——— վերակացու Ի Հերիւր 112  
 ——— եպօ. Նորադանից 143. 176.  
 ——— 181. 185. 189. 194. 197. 525  
 ——— շինող աղբար (ՉԼԻ) 174. 203  
 ——— եպօ. Ամբարդացի 247. 248  
 ——— նուիրատու Վանազանայ 62  
 ——— Աւազ 319  
 ——— ո. Սողոմոնի 184  
 ——— Չէլէպի 452  
 ——— Փակակալ Տաթեւայ 252.  
 ——— Սարգսեան 324  
 Սարգսուկ 41  
 Սարի զորավար 30  
 Սարկաւազ քան. ո. Միքայի 107. 112. 190  
 ——— եպօ. Գոզթի 342  
 Սաֆար խօշայ ո. Մերիշանի 507  
 Սաֆար ո. Սէֆէր  
 Սաֆուազ Մէլիք 18. 215  
 Սեղոսեանք Ի վեհեանի 447. 468  
 Սեհեքերիմ Թար. Սիւնեաց 16. 221. 232.  
 ——— 46-7. 289. 295. 296. 472  
 Սեհեքերիմ Թար. Աթորունի 472  
 Սեթովթե տրեղայ Է. եպօ. նուիրատու 116  
 Սեւազա իշխանայ Իշխան 16. 217. 245  
 ——— ո. Սմբատայ Թար. 217  
 ——— Կայսիկ 15. 32. 208  
 ——— ո. Սեհեքերիմայ 16  
 Սեւառ իշխան 82  
 Սեւարդիք 6  
 Սեւուկ Նախապետ 6  
 Սէթ քեւուրդի Հ. Պոզոս Ի փարսազուլի 162  
 ——— խօշայ Գալուպի 327  
 Սէթա խաթուն 109  
 Սէլիթ Ուստա 471  
 Սէֆէր խօշայ Ջուզլիսի 419. 443. 507. 511



Սէֆէր Ստեփ 451	Ստեփանոս Մեծն կապ. Սրբնայ 23. 66.	---	Գ. — " 13. 17. 211
Սթեր. Սեթար, Կին 117. 123	91. 118. 127-8. 208.	---	Գ. Նոր Կառուցում Սրբնայ
Սիմէոն վ. Գաւառացի 43	251-2	---	14. 15. 52. 67. 146. 208
---	աշակ. Մաշտոց ԿԹՂ. 251	---	Ե. Իշխանիկ 15. 17. 92
---	կապ. Կղարարիկ Տր. Շմաւոնի	---	Զ. ո. մեծին Սմբատայ 16. 17
---	218. 241. 526	---	Կղարար Սմբատայ տեսան Սիւ-
---	կապ. Սրբնայ 21. 200	---	նայ 311
---	Սրբնայ տէր 13	---	Բար. Սրբնայ 16. 35. 75.
---	Գոթիան կապ. Գեղամայ 53.	---	251. 245. 295
---	37	---	Հաղթական կայր Պառայ 18.
---	Վանական Մարկնայ 68	---	180. 485
---	Գ. ԿԹՂ. 88	---	Գաբուռ Սրբնայ 30. 70. 71.
---	Ե. Սալամասեցի, ԿԹՂ. 519	---	80
---	Զուգարիկ ԿԹՂ. 241	---	ո. Գաբուռի 35. 54
---	Ե. Նորավան 113	---	ո. Խաղարկայ 143
---	Վ. Ի թանաթի վ. 120	---	Թոռն Պառայ 487
---	Սրբնայ ո. Կարապետ աղի	---	ո. Շարիթայ 310
---	144	---	(Հայր) Ի Տաթու 235
---	կապ. Գեղամայ 523	Վասակեանց տուն 31	
---	Կեանքի Յախոյ ճարի 152	Վարդապետ տիկին Սրբնայ 13. 113. 212	
---	Վ. Կաթայից 345	Վարդապետն ուրացող 12. 15. 17	
---	Եղիարարեան 184	Վարդապետ 289	
---	Վ. Լիցի 86	Վարդապետ Իշխան Սրբնայ 32	
---	Վանայի Ս. Թովմայի 326	Վարդ ո. Զարբէի 154	
---	Հայկազնայ, Կրօնաւոր 203	Վարդան վ. Կոնստանտին 144. 117	
---	Վարդապետ վանայի 217	Վարդէ Սեփեքիմանց 165	
---	Շահնախան 277. 301-2. 306	աշակերտ վանականի 131	
---	Շատի վանայ առաջնորդ 160	ո. Զեսարի 165	
---	ԿԹՂ. Աղուանից 296	Վ. Շոռթիցի 332	
---	Վ. Լեւոնի 305	(Տրա) ո. Յարութի 560	
---	Եղս. ո. Մէլիք բէկի 75	Վարդանեանց ո. Հաղթական	
---	Որոտնից 220	Վարդիկ վանայի Յախոյ ճարի 152. 154	
---	Փարիզի 184	Վարդաւոր ? Վարդապետ ? Սրբն 323	
---	Փանայի Ի կատարայ վ. 218	Վեթան ո. Վարդապետի 289	
---	ո. Զապայ 278	Վամ Գողթնայի 310	
---	Սրբային Արքեպիսկոպոս Ամրայ 414	Վրթանէս Քերթոզ կապ. Սրբնայ 23. 208	
---	Սքանաթ բէկ 96	(Տէր) Մուշիցի 313	
---	Սուլթան վալէ 427	կապ. Օծոպու վ. 410. 483	
---	Վախախ Կին Անի 123	Վրդր ո. Արապիտի Բ. 313	
---	Կին Բուրթիկ Օրբիւ. 182.	Տաթուանց 224	
---	202	Տաթու վանայ առաջնորդ 242	
---	Կանի Յով. Որոտնիցայ 217	Տաթուբէկ ո. Մէլիք բէկի 72	
---	Վանի Մամիկոնեան 12	Տաւուր 71	
---	Ի Չարու 177	Տաւուրան Կին Փերճամէլ Տէլիքի 42	
---	տէր Սրբնայ 13. 17	Տարայի Օրբիւն 94-5. 143. 151-4	
---	(Ս.) Գողթնայի 66. 92. 310-	180. 190-2. 196. 204.	
---	316. 339	221. 232. 260	
---	կապ. Սրբնայ, ապա ԿԹՂ.	տէր Եղիզայ 96. 148	
---	231. 277. 295-6	ո. Գորգուանի 148	
---	ո. Շարիթայ Գողթնայի 310	Մեծ 148. 150	
---	Ջուանիլիան 273-4. 280.	Տարայի ճեմար 94-6	
---	296	(Ս.) Տաթուայ Ի Լուկայ 477	
---	Վանայի ո. Վասակայ 113-4	Տէլուղարաւ առնուաւոր Գեղար. 34	
---	Կոնստանտին 159	Տէվուշ ո. Արապի 34	
---	Վարդապետի, Վախախ ո. Խալալանի 114.	Տէրուանկան կապ. Գողթնայ 312. 326	
---	122	վանայի ՍԱղարանի 370	
---	ո. Պարոն Ունիկի 149	Տէրուանկան Երուանդեան Հայկազնի 316. 472.	
---	Վարդանիկ Ա. տէր Սրբնայ 10. 17	497. 504	
---	Բ. " " 11. 17	Տէրուան ո. Զեւանի Իշխանի 277	
---	Վարդանի յիշուղայի 91	Ս. Արշակունի 472	
---	Վանական (Տէր) Ի Հայրավան 40	Բ. " " 472	
---	Երուանդարի 125. 246	Տէրուան Կառուցում Սրբնայ 230	
---	Ջուանիլայ ո. տէր Վարդանայ	Տէրուան ո. տէր Վարդանայ	
---	Ի Կուրի 487	Տէրուան ո. Աւարի 178	
---	Վանի մայր Օրբիւ Իշխանի 212	Տէրիկ Ի ԶԼ 369	
---	Վալուա Իշխան 370	Տէրիկ տիկին 116	
---	Վասանի ո. Փերճամէլի 182	Տէր Կրէտ Ի ԶԺԵ 175	
---	Վասակ Ա. տէր Սրբնայ ուրացող 11. 21.	Տէրուան վ. Հանար 23. 125-7	
---	17. 192	Վ. Կապանիցի 208	
---	Բ. — " 13. 17	(այր Խաթունի) 199	
Սուգի վասիլ 145			
Սուլեմ 164			
Սուլթան բէկ Ի ՊԶԱ 108			
Սուլթան Զիթազեան 75. 84-7			
Սուլթան Կին Բենայ 122			
Սուլթան (Հայր) 106			
---	ա. Գրիգոր		
Սուլթան (Հ.) Աղամուկեան 358			
---	Մոկայի Ի վեհեաիկ 458		
---	ո. Վարդանայ ո. Զապէի 451		
Սուլթան Գ. Գերեզնայ Արծրն . 7. 15. 103-4.			
---	125. 246		
---	մայր Սեփեքիմայ Բարի. 246		
Սուլթան Գ. Վարդապետայ 32			
Ստեփանոս ո. Սմբատայ 241			
Ստեփանոս Օրբիւն կապ. Սրբն. Պամբէլ			
---	49. 94-5. 113. 135.		
---	142. 144. 172. 193-6.		
---	204. 232-6		

Տերալի խան 178  
 Տերի 161  
 Տերիկ 161  
 Տերոս եղս. Սիւնեաց 20. 208-11  
 Տերոյ իշխան Սիւնի 289  
 Տոր? ո. Սարգսի 167  
 Տուր նախանայր Տրուսեաց 358.  
 Տրզաստ արքայ 10. 472  
 Բիււրիւք սեղազիբ 499  
 Փայիկ ո. Ասթուրի 204  
 Փայրազու ո. Լիպարսի 188-9. 193  
 Փանոս Ոյժեցի վանական 208. 216  
 — Ազալեանց Ազուլեցի 356  
 — Խալայ 467  
 — ո. Մարտիրոսի Շամբեցեանց 515  
 Փայլախանում 74  
 Փառանձեմ 10  
 Փասլուն ամիրայ 289  
 Փարալ ո. Չազկայ 231. 247  
 Փարսազան մելիք 18. 286. 287. 331  
 Փեհարեանք 47  
 Փիլիպպէ ո. Վասակայ Նաւապետի 15. 212.  
 226. 229. 247. 277

Փիլիպպէ Հայկազունի 18. 255  
 Փիլիպպոս Սիւնեաց տէր 13  
 — եղս. ՍԱստապատ 509  
 Փիրզուսէ 455  
 — Բաստամեանց 220  
 Փիրի Դաստակերացի 338  
 — ո. Ղուպաթի 34  
 Փիրի բէկ ո. Թումանազայի 44. 182  
 Փիրևամզէ Մէլիք Սիւնեաց 34. 42. 50  
 Փիրզուլի 350  
 Փիրվէլաթ ո. Առաքելի 182-3  
 Փլըկեանք 356. 358  
 Փլըրուկ Նազարապետ 356  
 Փռանկուլ մելիք 281  
 Փրանկիսկեանք 23. 382  
 Քաջալ կամ Քաջալոր 47  
 Քաւթար 176  
 Քերամ մելիք 18  
 Քիթուէնեց Թէոդորոս 454  
 Քլարէ (Քլուշ), կարգակայր Դամիսիկ .  
 401. 403  
 Քուպրիզուխա զ. Վասակայ Նաւ. 227. 285  
 Քրիտան Նիկիտ. 371. 392  
 Քրիտան Նիկիտ. 371. 392  
 — Ալարիա 571

Քուրդ ո. Վալէի 84  
 — ո. Չեսարի 165  
 Քուրդայ իշխան Սիւնեաց 13. 260  
 Քրիստափոր Հայր Գեղեղանից 106  
 — առաջն. Նորաժանից 278  
 Քրիստոսուսեր ո. Բզրիի. Պարսից 284. 285  
 Քարթ ո. կուկոր  
 Օգոստինոս Ազատուկան Թարգման 461-2  
 — Բաշեց եղս. Նախնաւանս .  
 348. 369. 372. 396-7  
 Օտարիկ 167  
 Օտարլան Թոռն խոյրանայ 175  
 Օրբէլ իշխան 216  
 — (Տէր) 186  
 Օրբէլեանք 84. 92-7. 146. 148. 152. 157.  
 217. 224  
 Օտարմուղ մելիք 19. 263  
 Օտարմանեց Ամիր. ո. Գրիգորի † Թ Գեհնու  
 450  
 Օռանկեանց տուն ՍԱպարանիք 377  
 Օռանկուլ մելիք 281  
 Օրբիտան Նիկիտ. 371. 392  
 — Ալարիա 571




# Ց Ա Ն Կ Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ց

## Ե Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ա Հ Ա Ն Ի Ց




- Ազգացուցակ թագաւորաց և իշխանաց Սիւնեաց 15  
Սարգիս և Ներսէս եպիսկոպոսք Սիւնեաց (ճկար) 30  
1 Խաչարձան Գրիգորոյ ի Կոթ (Մատր. փափագ.) 24  
2 Իշխանաձուկն (Сарго) 29  
3 Հայր - Յոհաննաւանք (Մ. փափագեան) 39  
4 Ս. Գրիգոր վ. յԱննիզ (Նոյն) 41  
5 Գաւառ = Նոր Պայէզիտ (Ն.) 43  
6 — Սպարս եկեղեցւոյն (Ն.) 44  
7 Նորատուս. Ս. Աստուածածին եկեղեցի (Ն.) 45  
8 — Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղ. (Ն.) 46  
9 — Գերեզմանք (Ն.) 48  
10 — Կամուրջ (Ն.) 49  
11 Շողուագայ, Ս. Պետրոս եկեղեցի (Ն.) 51  
12 Ռեւեռարձան յԱղամիսան (Սմբատեան արքեպ) 52  
13 Ծախքար բնակամուրջ (Մ. փափագ.) 53  
14 — Ս. Պողոս եկեղեցի (Ն.) 54  
15 Կոթայ վանք. եկեղեցի (Ն.) 55  
16 Կզնուտ = Ղարանլուխ. չիրիւք (Ն.) 56  
17 — Խաչարձան (Ն.) 59  
18 Ռեւեռարձան ի Կթանոց = Վանեվան (Սմբատեան) 62  
19 Համբար շեռնարակ Թաթարաց ի կողմանս Կոթայ (Մ. փափագ.) 65  
20 Ռեւեռարձան ի Զաղալու (Սմբատեան) 67  
21 Գեղամայ ծով և Սեւան կղզի (Մ. փափագեան) 77  
22 — Ծովափունք (Տիւրուա) 80  
23 Սեւան. Առաքելոց եկեղեցի (Մ. փափագ.) 81  
24 — Ս. Աստուածածին եկեղեցի (Ն.) 82  
25 — Հարաւային Գուռն Առաքելոց եկեղ. (Պետ. Երզրամ) 83  
26 — Ս. Առաքելք և Ս. Ստեփանոս եկեղեցիք (Մ. փափագ) 85  
27 — Մենաստան (Ն.) 87  
Տիրամայր Սեւանայ (ճկար) 88  
28 Խաչքանդակ ի Սեւան (Պետերդամ) 89  
Ազգացուցակ Օրբելեանց 92  
29 Փայիզա 93  
30 Գնդեվանք (Մ. փափագեան) 104  
31 Հերհեր. Ս. Սիոն եկեղեցի (Ն.) 115  
32 Արկազն. Ս. Խաչ եկեղեցի (Ն.) 119  
33 Թանատի վանք (Ն.) 121  
34 Նմանահան Չեռագիր Հերմոնի վանաց 125  
35 Գայլեձոր. Չեռագիր 131  
36 — Իսկազիր Եսայեայ Նշեցւոյ 132  
37 — Պիտոյից գիրք յամի 1278. 133  
38 — Զարդագիր կարմրագոյն 134  
— Տիրամայր և նուիրողք (ճկար) 134  
39 Նմանահան Չեռագրի Գայլեձորոյ յամի 1375. 138  
40 Զարդապատկեր ճակատ Չեռագրի ի Գայլեձոր 136  
41 Չեռագիր Գրիգորի Յաղմանեցւոյ ի Գայլեձոր 137  
42 Թարոսի Տարսնեցւոյ զարդանկար ի Գայլեձոր 138  
43 Սպիտակաւոր Աստուածածին վ. (Մ. փափագ.) 139  
44 Պաօյի կապ և Գնդեվանք (Ն.) 141  
45 Արատես. աւերակ եկեղեցւոյ (Ն.) 143  
46 Կնեվանք (Ն.) 146  
47 Պատկերքանդակ եկեղեցւոյ Եղեգեաց (Ն.) 147  
48 Ճակատագարդ (կարմիր) աւետարանի գրեւոյ յԵղեգիս 149  
49 Նմանահան ձեռագիր աւետարանի յԵղեգիս 150  
50 Սմբատայ բերդ (Մ. փափագ.) 151  
51 Խաչարձանք գերեզմանաց Յախաջբորի (Ն.) 153  
52 Յախաջբար = Ղոչայ վանք (Ն.) 155  
53 Աւերակ եկեղեցւոյ մերձ ի Յախաջբար (Ն.) 157  
54 Նմանահան ձեռագրի ի Շատիկ անապատի 158  
55 Սէլիմի կարաւանատուն (Մ. փափագ.) 165  
56 Արփա. Եկեղեցի (Ն.) 183  
57 Նորավանք Ամաղուայ, եկեղեցի (Ն.) 185  
58 — Ժամատուն շինեալ ի Սմբատայ Օրբ. (Ն.) 188  
59 — Եկեղեցի շինեալ ի Բուրթելայ (Ն.) 195  
60 — Վերնայարկ այսր եկեղեցւոյ (Ն.) 197  
61 — Քանդակ դրան սորին (Ն.) 199  
62 — Ծաղկաբանդակ անուն Բուրթելի (Ն.) 202  
63 Գարագիլիսէ 213  
64 Որոտն. եկեղեցի 218  
65 Իսկաձեւ ձեռնագրի Գր. Տաթեւացւոյ 219  
66 Տաթեւ. Քանդակ դրան եկեղեցւոյ 225

- 6 աթեւոյ վանք 227
- 68 — եկեղեցի և պարիսպք 229
- 69 — Գաւազան սիւնն 234
- 70 — Զանգակատուն 237
- 71 — Իսկաձեւ ձեռնագրի Գր. Տաթեւ. 238
- 72 — — Թովմայի Մեծոփեցւոյ 240
- Անապատական հաւատաւորք Ժէ դարու (ճկար) 259
- 73 Կորէս = Զանկեազօր 261
- 74 Լոր (տ. յէջ 221) Դուռն եկեղեցւոյն (Մ. Փափագեան) 264
- 75 Պնայ վանք 267
- 76 Պղնձահանք կատարոյ (Մ. Փափագ.) 279
- 77 Շիրիմ ի Խալիճան դարպաս (Տիւրքաշահ) 283
- 78 Դաւթի բերդ ի Հալիճօր 284
- 79 Զրվէժ մերձ ի Կապան 291
- 80 Նմանահան ձեռագրի ի Գեց 292
- 81 Խաչքանդակ յեկեղեցւոյ Տաթեւու վ. 297
- 82 Նիւղատի (Տիւրքաշահ) 307
- 83 Վազանդնի վ. յՈրոտն 308
- 84 Որդուատ. Սօսի հրապարակին 314
- 85 — Ապարանք 317
- 86 — Շուկայ աւերակ 319
- 87 — Աւերակ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ 320
- 88 Գանձակ գիւղ. Քանդակ 321
- 89 Քարավազք Երասխայ (Տիւրքաշահ) 322
- 90 Ագուլիս 323
- 91 — Այլ տեսարան 324
- 92 — Վէժ հանգստեան Թաղէի Առաքելոյ (Քեւ. դներ) 325
- 93 — Նմանահան գրուածոյ յԱգուլեաց վանս 326
- 94 — Արձանագիր մկրտարանի Ս. Թովմայ վ. (Քեւդներ) 327
- 95 — Ս. Թովմայի վանք 328
- 96 — — եկեղեցի 329
- 97 — — Նմանահան ձեռագրի 331
- 98 — Ս. Յովհաննէս եկեղեցի (Քեւդներ) 332
- 99 — — Դուռն եկեղեցւոյն (Ն.) 333
- 100 — Կամուրջ (Ն.) 334
- 101 Նահապետ Գուլնազար Ագուլեցի 335
- 102 Շիրիմ մերձ յՈրդուատ (Քեւդներ) 337
- 103 Շինուած մերձ յՈրդուատ 339
- 104 Մզկիթ և շիրիմ յՈրդուատ 341
- 105 Յղնա. եկեղեցի (Մ. Փափագ.) 343
- 106 Բուստ. Ս. Ստեփանոս եկեղ. (Ն.) 345
- 107 Ազա. Շիրիմ (Քեւդներ) 346
- 108 Զրաղացք յՈրդուատ (Ն.) 347
- 109 Բօլուսար = Ելլան տաղ Լ. (Ն.) 349
- 110 Շոռոթ. Ս. Յակովբ եկեղ. (Մ. Փափագ.) 353
- 111 Նմանահան ձեռագիր Շոռոթու կուսաստանի 354
- 112 Սղիտակ Խաչ ի Լոր (էջ 220) (Մ. Փափագ.) 360
- 113 Ապարաներ. աւերակ (Քեւդներ) 369
- 114 — Սահմանախաչ (Ն.) 374
- 115 Քանա. աւերակ վանքն (Ն.) 375
- 116 Երնջակ. եկեղեցի Ս. Կարապետ վանաց (Մ. Փափագեան) 378
- 117 — Խաչվէժ (Քեւդներ) 379
- 118 Դարուայ լերինք 381
- Միաբանող Հայ Դոմինիկեան (ճկար) 382
- 119 Կնիք Միաբանողաց Նախնական գաւառի 389
- 120 Կնիք Պետր. Մարտիրոսի եպիսկոպոսի Միաբանողաց 403
- 121 Աղիտու (տես յէջ 216). մասն շինուածոյ 408
- 122 Մահարձան մի Զուղայի 409
- 123 Նաւանցք Երասխայ (Մ. Փափագ.) 416
- 124 Մահարձան Խումարգէի ի Զուղա 416
- 125 Այլ մահարձան Գրիգորի ուրումն. 417
- 126 Միւս այլ Մահարձան 418
- 127 Մահարձան Սուլդան վալէի 420
- 128 Շիրիմ Խօճայ Մանուկ Նազարի (Տիւրքաշահ) 425
- 129 Մահարձան քանդակօք Աւետարանչաց 426
- 130 Կիւլիստան 426
- Քարացեալ ժժակք ի սահմանս Զուղայի (Ապիկ) 428
- 131 Մահարձան մի Զուղայի 428
- 132 Կնիք Շահապուռնեաց վանաց Միաբանողաց 482
- 133 Նմանահան ձեռագրի ի կուրքի 487
- 134 Սատանայի կամուրջն (Մ. Փափագ.) 490
- 135 Նախնական. Աշտարակ Աթաբէկաց (Տիւրք.) 495
- 136 — Հին Իղեակ (Քեւդներ) 497
- 137 — Գերեզման Նոյի (Տիւրքաշահ) 499
- 138 — Գերեզման Որդուոց Նոյի (Քեւդներ) 500
- 139 — Աւերակ անձանօթ շինուածոյ (Ն.) 502
- 140 — Կամուրջ (Ն.) 504
- 141 Աստապատ. Բերդ Ապաս Միրզայ (Ն.) 506
- 142 — Ս. Վարդան եկեղեցի 510
- 143 — Կարմիր վանք 511
- 144 — Ս. Ստեփանոս եկեղեցի 512
- 145 Երկրաբանական միջոց Զուղայի և Շամբի 514
- 146 Մաղարդայ վ. Ս. Ստեփանոս 516
- 147 — Այլ կողմն եկեղեցւոյն 517
- 148 — Ճակատ եկեղեցւոյն (Մ. Փափագ.) 518
- 149 — Դուռն — (Ն.) 519
- 150 — Աւետարան գրեալ ի Մաղարդայ վ. 521
- 151 Տարազք այժմեան Սիւնեաց 522
- 152 Խաչքանդակ Հայրապետի եպիսկոպոսի Սիւնեաց ի Տաթեւոյ վանս. 561



# Ց Ա Ն Կ

## Ն Ի Ի Թ Ո Ց Բ Ա Ն Ի Ց



- Յառաջարան, Ե
- 1 Սեփական տիպը Սիւնեաց աշխարհի 1
- 2 Բնագրութիւն. — Լերինք 3
- 3 Գետք 4
- 4 Լիճք. Աղբերք. Հանքք 4
- 5 Բուսականք. Կենդանիք. 5
- 6 Քաղաքական տեսութիւն — Պատմական. Մագուճ ազգին. Սիսակ 6
- 7 Բարք Սիսական սերունդոց. — Բերդորայք 7
- 8 Գաւառք և բաժինք երկրին 8
- 9 Պատմական յիշատակք 9
- 10 Նոր նահապետք և թագաւորք Սիւնեաց 10
- 11 — Վերջին դէպք. Դաւիթ Բէկ. Մէլիքք 17
- 12 Կրօնական տեսութիւն. Թեմք. Եպիսկոպոսք 19
- 13 Վանորայք 21
- 14 Դպրութիւն 23
- Ա. Բ. ԳԵՂԱՔՈՒՆԻ ՆԻ ՍՈՂԳ
- 15 Հանգամանք երկրին. Մովստափ Սեւանայ 25
- 16 Լերինք և Գետք 26
- 17 Գեղամայ ծով. Չկունք 27
- 18 Բերք երկրի. Բոյքք. Միջատք, և այլն 30
- 19 Պատմական 30
- 20 Դէպք վերջին դարուց 34
- 21 Աշխարհագրական բաժինք 35
- Ա. Գեղարքունի. Մմակ. Գաւառ
- 22 Գետք Գեղարքունեաց ըստ հին աշխարհագրի 38
- 23 Նոր Գետքք. Այրի վ. — Հայր Յովհան վանք 39
- 24 Ափատար. Գանձակ. Սոնեղ. Փաշաքէնտ 41
- 25 Գաւառ — Նոր Պայէգիտ 42
- 26 Նորատուս. Դափուց վ. Արփա լիճ. Շաշին, ևն. 45
- Բ. Կոթ. Կոզաբակ
- 27 Նոր Աւաղներա. Չագ. Շողագայ վ. 50
- 28 Մակքար. Կոթ — Ատիեաման. Կնիք 53
- 29 Կզնուտք. Գոլատակ. Անճից անապատ 58
- 30 Կոթակ. Վանավան — Կթանոց. Բեւեռարձան 60
- Գ. Սողք
- 31 Սողք. Վաղաւեր. Հին գետք Սողից 63
- 32 Չորահովիտ և վանք Մաքենեաց. Հ. Սողմոն 65
- 33 Գետահովիտ Սողից. Արտից գաւառ. Վասակա շէն 70
- 34 Մէզրէ գետք. Երիշատ 71
- 35 Սողից աւան. Զաղացաձոր. Սալկուտ. Փորակ 74
- Դ. Արեգունի
- 36 Սատանաղաճ. Շամփուր. Արտանիճ. Դրախտիկ 76
- Ե. Սեւան կղզի
- 37 Սեւան կղզի. Բնութիւն. Աւանդութիւն. Մաշտոց Հայր 78
- 38 Պատմական. Եկեղեցիք. վանք 83
- 39 Առաջնորդք. Վերջին դէպք 88
- Գ. ՎԱՏՈՑ ՁՈՐ
- 40 Բնութիւն երկրին 90
- 41 Պատմութիւն 91
- 42 Օրբելեանք 92
- 43 Բաժինք, վիճակք և հին գետք 97
- Ա. Վայոց ձոր Հիւսիսային
- 44 Անգանք. Զերմուկ. Կէշուտ 102
- 45 Գնդեվանք 103
- 46 Ատշար. Փողահանք. Գետիկ. Մայրադուրք 107
- 47 Չորահովիտ Գուտենոյ. Տէլիկ Թէփէ. Գուտենի. 109
- 48 Հերհեր. Կապոյտ բերդ. Ս. Սիոն վ. Առինճ 111
- 49 Հովիտ Մոզան. Արկազն. Ս. Խաշ 118
- 50 Քարէվանք. Թանատի վ. 119
- 51 Հերմոնի վ. Մալիչկա. Հաւու գղ. 125
- 52 Մոզն աւան. Ստեփանոս Գերդող. Աւագական աղբիւր 127
- 53 Գայլեձոր. Սրկղօնք. Բոլորաբերդ 129
- 54 Գայլեձոր վ. — Եսայի և այլ Վարդապետք 130
- 55 Սպիտակաւոր Աստուածածին. Կիւլվանք. Պաօշի կապ 137
- Բ. Եղեգեաց
- 56 Գոտուս վ. Արատէս 140
- 57 Կիւնէի վ. 145
- 58 Եղեգիք. Սմբատայ բերդ 146
- 59 Յախաց քար — Ղօշայ վանք 152
- 60 Արտարոյն. Ոստին. Շատին վ. Անգեղձոր 157
- 61 Սուլեմայ ձոր և գղեակ. Հորք. Քարազուխ. Խաւրաչիօնք 161
- 62 Հոգէտուն Զէտարի. Շաղատ. Մատուրի կամուրջ 166
- 63 Չորահովիտք արեւմտ. հիւսիսային Վայոց ձորոյ. — Սպանա. Ըղնաձոր. Ռինա 166



- 64 Զորակ Աղտպենոյ. Մահեւանեանք. Չուա 168
- 65 Արեւմտեան մասն Եղեգեաց. Խոտակերաց վանք կամ Քարկոփ 169
- 66 Խաչիկ. Աէշ. Ակոռի. Կզաւոր աղբիւր 173  
Գ. Հարաւային վայոց ձոր
- 67 Աղտարոյնք = Ախտա. Կապոյտ բերդ 174
- 68 Զորահովիտ Մարտիրոսի. Հողոցիմ. Փշօնք. 176
- 69 Զոր Գնիչայ. Բոր. Էրդէշ. Թմաձոր. Հայրենեաց տափ 179
- 70 Ամաղու ձոր. Հրաչկաբերդ 180
- 71 Արփա. Տարապիճ Օրբելեան 181
- 72 Նորավանք Ամաղուայ. Դամբարանք Օրբելեանց 184
- 73 — միւս. Համարի. Տանձիկ. Անապատ բ. 203  
Դ. ԵՂՈՒԿ
- 74 Լերինք. գետք 206
- 75 Ծղուկ նահապետ. Նախարարք և եպիսկոպոսք 207
- 76 Գեօղք Ծղկոյ 208
- 77 Վասակակերտ. — Բորտի. Գթի վանք. Շաքար 209
- 78 Շաղատ. Շաղատոյ վ. Սիւնի վ. 210
- 79 Անգեղակոթ. Շաքէ. Բունակոթ. Գարագիլիսէ 212
- 80 Զորահովիտք Սիսիանու և Ալրիչայի Սիսիան. Բընունիք 214
- 81 Ոյծ. Աղիտու. Արփա բ. Վաղանդնի գղ. և վ. 216
- 82 Որոտն. Յովհաննէս Կախիկ վ. 217
- 83 Լորաձոր. Գետաթաղ. Լոր 220
- 84 Սահմանք Տաթեւոյ 222
- 85 Տաթեւ գիւղ 224
- 86 Տաթեւոյ վ. եկեղեցիք. յիշատակք 225
- 87 — Այժմեան վիճակ. երեք եկեղեցիք 234
- 88 — Գրիգոր վ. Տաթեւացի 237
- 89 — Յետին դէպք 241
- 90 — Հին Թեմ և հասք աթոռոյն 242
- 91 Տանձատափ. Յուր բ. Տամալէկ. Նորիք 244
- 92 Անապատք. Մեծ կամ Հարանց անապատ 247
- 93 Թանահատի վանք. Հարսնավազ 251
- 94 Կուսանաց անապատ. Սատանայի կամուրջ 252  
Ե. ՀԱՐԱՆԴ
- 95 Բնութիւն երկրին 254
- 96 Պատմական. Գեօղք 256
- 97 Ա. Զոր Բարկուշատայ. Հալի ձոր. Դաւթի բ. 257
- 98 Շնհեր. Կուսանաց անապատ. Բոր 258
- 99 Բ. Չազեծոր. Հարանդ բ. Կորէս 260
- 100 Մաղանջուկ. Խնձորեսկ. Տեղ. Խնածախ 262  
Չ. ԱՂԱՆԷՔ
- 101 Սահմանք և բնութիւն երկրին 265
- 102 Վիճակք և գեօղք 266
- 103 Միւրքէնտ. Հայրի. Պինոյ. Ծիծառնավանք 267
- 104 Զոր և գիւղ Հոջանց 268
- 105 Զորահովիտք Ապարու. Գեօղք 269  
Ե. ԲԱՂԲ
- 106 Բնութիւն երկրին 272
- 107 Պատմական. Թագաւորք. Համտունեանք 273
- 108 Հին և նոր գեօղք Բաղայ 274  
Ա. Արեւմտեան Բաղք = Աճանան.
- 109 Աճանան. Աւաղու. Տորթն. Խոտանան. Հողար 276

- 110 Զափնիս. Խորձոր. Կաւարտ. Ղաթար. Նորավանք. Տանձափարախ 277  
Բ. Արեւելեան Բաղք = Քաշունիք
- 111 Երեցու (Կարմիր) վ. Աղահորդ. Վժանիս 280
- 112 Բարկուշատ. Մաճ. Տանձաւեր. Կալ. Խալիճան 281
- 113 Ստորին գետահովիտ Զաւընդուրի. Նակորդան. Հայր Գիւս 283  
Ը. ԿՈՎՍՏԱՆ
- 114 Բնութիւն երկրին. — Գեօղք 286
- 115 Բեխ. Փառաւորտի վ. — Բեխեւերէջ. Գոն. Արեւան տոհմ 287
- 116 Հովիտ Բուստ գետոյ. Շիկահողս. Բարդութաղս. Նորաչինիկ 288  
Թ. ՅՈՐԳ. ԿԱՅԱՆ
- 117 Բնական և Պատմական գիտելիք. — Գեօղք 290
- 118 Ա. Գեղուածոր. Դեղի. Կարդ. Կահուրդ. Գեց 292
- 119 Բ. Բաղաբերդ. Բուխրուտ. Աջարալ 293
- 120 Բաղաբերդ. Կապան 294
- 121 Վահանայ վանք. Շարուա 296  
Ժ. ԱՐԵՒԻԲ
- 122 Բնութիւն երկրին 298
- 123 Գեօղք և վիճակք 298
- 124 Ա. Մեղրածոր. — Լեչի. Թաղամայրի. Եկատասնց. Շահումեանք 300
- 125 Զուար վ. Տեհի. Լիճք. Լեւաղ. Արկայ վ. Վարդաւանձոր 302
- 126 Մեղրի. Կարճաւան 303
- 127 Բ. Կենաուգ. — Մանլեւ. Ափկիս. Ատաղօր. Նիւղատի 305  
ԺԱ. ԳՈՂՔԱ
- 128 Բնութիւն երկրին. Զորակք. Լերինք 309
- 129 Պատմական 309
- 130 Եկեղեցական 312
- 131 Դպրութիւն. Լեզու 313
- 132 Վիճակք. Գեօղք 315
- 133 Ա. Որդուատ. Գողթն. Խոտորու Դղեակ 316
- 134 Որդուատ քաղաք 317
- 135 Անապատ. Մասրեւան. Գանձակ. Նուսնուս. Գաւրափսք 319
- 136 Բ. Ազուլիք. — Դաստակերտ. Ազուլիք վերին. 322
- 137 Դաշտ = Ստորին Աղուլիք 326
- 138 Գ. Տրունիք = Վանանդ. Տասդին 328
- 139 Վանանդ. Թովմաս եպիսկոպոս և տպագրութիւն յԱմսդերտամ 328
- 140 Սաղ. Դեղսար. Տնակերտ. Տրունիք. Ս. Խաշ վ. 341
- 141 Դ. Տղնա = Զինանար. Բումիս 342
- 142 Ե. Բատածոր. — Բուստ. Փառակա. Բուհրուտ 344
- 143 Պեղեւ. Տէր. Աղատ Գիրան. Շաղկերտ. Թամամ նահատակ 345  
ԺԲ. ԵՐԵՂԱ
- 144 Բնութիւն երկրին 348
- 145 Պատմական 349
- 146 Գեօղեան 350
- 147 Ա. Զորակ Ժարաժուրի. — Շոթթ 351
- 148 Փորաղաշա. Գաղ. 358

- 149 Բ. Երնջակ առանձին. Գեօղք. Շահկերտ. Բեր-  
դիկ. Անդիր 361
- 150 Բերդ Երնջակայ 363
- 151 Խօշկաշէն 366
- 152 Նորաշէն. Սալթաղ 367
- 153 Ապարաններ 369
- 154 Քունա 374
- 155 Ապրակունիք 376
- 156 Ս. Կարապետ Երնջակայ 378
- 157 Կզնուտ. Խաչափորարխ. Ճամաղին 381
- 158 Դրուազ (Ա). Միարանող Եղրարք 382
- 159 Զուղա. պատմական յիշատակք 409
- 160 — Վաճառականք 410
- 161 — Ստարազգի տեղաքնինքնախ քան զաւերն 413
- 162 — Շահարաս. Գաղթ Զուղայեցւոց 414
- 163 — Տեղաքնինք յետ աւերածոյն 420
- 164 — Շինուածք 422
- 165 — Գերեզմանք և մահարձանք 424
- 166 Դրուազ (Բ). Վաճառականութիւն Հայոց 427  
ԺԳ. ՃՈՂՈՒԿ
- 167 Ընդհանուր տեսութիւն 478
- 168 Պատմական 479
- 169 Գեօղեան. վիճակք 479
- 170 Ա. Շահապունիք. — Քոյլք. Շահապօնք. 480
- 171 Օժոպ. Յեցիկ 483
- 172 Նորք. Սմբատեանց տոհմն. Լիանոսի վ. 484
- 173 Ակոսի. Գոմեր. Կժածոր. Եզնատուն. Բջնաղ 486
- 174 Բ. Ճահուկ = Մաւազի Խաթուն. Կամրջաթաղ.  
Բզղօն 488
- 175 Ճահուկ. — Ճաղրի 489  
ԺԴ. ՆԱԻՃԱՍԱՆ
- 176 Բնութիւն երկրին 491
- 177 Պատմական 492
- 178 Մարդպետական եպս. Բաժինք զաւառին 494
- 179 Ա. Նախնական առանձին. Պատմական 496
- 180 — Շէնք 501
- 181 Սահմանք Նախնականի. զեօղք 503
- 182 Բ. Խոք. — Ազնաբերդ 505
- 183 Գ. Երասխայ ափունք. — Ատապատ. Կարմիր  
վանք 506
- 184 Խրամ. Շամբ. Փանոս Շամբեցի 509
- 185 Մաղարդայ վ. Ս. Ստեփանոս 514
- ՅԱԻՆԼՈՒԱՅ
- Անժանօթ իշխան Սիւնեաց (էջ 15 բնագրին) 522
- Արեգունի և Մէլիք բէկ (37) 522
- Կաթ. Կածիք (35. 38) 522
- Ղուլալի գեօղ (49-50) 524
- Բրտի այրք (72) 524
- Արկազն (118) 524
- Մուցք (209) 524
- Վաղաղնի կամ Որոտան Ս. Կարապետ վ. (217) 524
- Ստեփանոս խոստովանող եպս. Տաթեւոյ (241) 526
- Սահակ Բուհրուտեցի նահատակ (345) 528
- Նորաշէն զիւղ Երնջակայ (367) 530
- Հայքի Սուրաթ և յէպէրապատ (468) 530
- Ի Չինաստան և Ի Պուխարա (469) 530
- Աստուածատուր Խթայեցի նահատակ 531
- Հայր Ի Ճեարն (469) 532
- Գաւառք Փոքր Սիւնեաց 532
- Յանկ Տեղեաց 533
- Անձանց 548
- Պատկերաց և Պատկերահանից 557
- Նիւթոց բանից 559



153. Խաչքանդակ Հայրապետի եպիսկոպոսի Ի վանս Տաթեւոյ. (տես յէջ 232. 236).

### ԱՓ ՅԱՓ ՈՅ ՅԱՒ Ե Լ ՈՒ ԱԾ

Մինչ գեռ այն ինչ աւարտեալ էր իսպառ տպագրութիւն մատենիս, հասին ի ձեռս մեր, շնորհելով Գերապ. Սեդրակեան Եպիսկոպոսի յիջմիածնէ, երկու յիշատակարանք գրոց, յորս գիտելիք են զվանորէից Շոռոթոյ, լրացուցիչք և ուղղիչք գրելոցս ի սմա յէջ 352-4: Մին յայնց ժանուցանէ՝ զի կուսաստանն Ս. Ստաւածածին շինեալ է 30 ամօք յառաջ քան որ կարծիք, յամի 1631 և ոչ 1660-1. յայտնելով և զշինողն՝ Տէր Վարդան. միւսն՝ զմիաբանս Ս. Գրիգորոյ վանաց: Իբրեւ պիտանի տեղեկութիւնս յանկարծագիւտ ի վերջին պահու և հաճոյս քննասիրաց, արժան համարեցաք հրատարակել, որք զտցեն ի նոսին թերեւս և այլ ինչ հետաքրքրական՝ յանուանեն յիշեցեալս, միանգամայն և հաւաստիս շնորհակալեաց բարեյսժար փութոյ առաքողին: Մի ի յիշատակարանացն աւանդեալ է ի գիրս Լուծմանց իմաստասիրական բանից Գաւթի Անյաղթի, ի Յովհ. Որոտնեցւոյ և ի Գր. Տաթեւացւոյ, որ պահիր ի կարմիր վանս Աստապատու (տ. 511), և ունի զայս բան... « Ես նուստ և յետին ի բանասէրս՝ Յովհ. » հաննէս, անուամբ եւեթ կոչեցեալ վարդապետ, որդի » Տէր Վարդան քահանայի, որ զՍ. Աստաւածածին Ա. » նսպարոս շինեաց ի գեօղաքաղաքս Շոռոթ, և ժողո. » վեաց քաղառ կուսան կրօնաւորս, և հաստատեաց և » լցոց ամենայն շինութեամբ և բարութեամբ անպա. » կաս, հոգեւորօք և մարմնաւորօք. և ինքն փոխեցաւ » առ յոյսն բնաւից ի տնելալին իւր: Ես Յովհաննէս » վարդապետ ետու գրել զիմաստասիրական գիրքս ... և » եղի զսա ի դուռն Ս. Աստուածածնի անապատիս մերոյ » Շոռոթու, յիշատակ հոգւոյ իմոյ, ի վայելումն ման. » կանց Սիոնի: Արդ մի ոք իշխեսցէ հանել զսա ի գրա. » նէ Ս. Աստուածածնի անապատէս... Յիշեալիք ի մա. » քրափայլ աղօթս ձեր միով Հայր մեղայիւ և Աստուած » ողորմի ասելով, զհայրն իմ զՏէր Վարդանն, որ մա. » ծաւ Լանիւ և բաղում աշխատութեամբ շինեաց զսուրբ » անապատս՝ ի հալալ արդեանց իւրոց, եթէ պարիսպ, » եթէ եկեղեցին, եթէ տնտեսուուն, խուցք և հիշարա. » տան, և այլ շինութիւնք. և ժողովեաց բազում կու. » սանս ի սմա. և հաստատեաց Անսպարոս, ի ժամանակս » Մովսէս կաթուղիկոսին, թվին ՌՁ ամին. — և զմայրն » իմ Ենհաւորն, զպապն իմ զՍօլթան պէկն, և զմամն » իմ զՄէհրիպանն. զհօրաքորսն իմ զկուսակրօն Մա. » ղիաւ Մայրապետ անապատիս, և զԵղիսաբնթն. և ըզ. » քորսն իմ զկուսակրօն մայրապետ Յոռիտայն, և զԳու. » լլստանն. զեղբայրն իմ զՀայկազն, և զհարսն իմ զԱն. » նայն. և զորդիս նոցա՝ զՎարդանն, զՍօլթան պէկն, » զՆազարէթն, զԼեւոնդէսն և զԾարվէլին. և զստերս » նոցին՝ զՀուրիկն, զկուսակրօն Եսրեղն և զՄարիամն, » և զայլ ամենայն առու արեան մերձաւորսն իմ »:...

Միս յիշատակարանն էր յաւետարանի կգնուտ գեղ Երնջակայ. գրեալ յԱւանց աւանի վանայ, յերս ԺՁ դարու, յամի 1600, և ի Շահլամ տիկնոջէ ընծայեալ Ս. Գրիգոր վանաց Շոռոթու, որպէս ծանուցանէ ընդօրինակողն. « Գրեցաւ սա ի թուարբերութեանս Հայոց » « Ռ և ԽԹ, և առաջնորդք սուրբ ուխտիս Վարագայ Տէր » » Ստեփանոս արքեպիսկոպոսին. ձեռամբ անարժան և » սուտանուն Մարտիրոսի անարուեստ գրչի և ուսուցչի » » իմոյ Տէր Գրիգորի: Արդ զստացող սուրբ աւետարա. » » նիս զհաւատարիմ կինն զՇահլամ, որ ի յայս դառնա. » » ցեալ ժամանակիս ցանկացուլ եղև այսմ աստուածա. » » շունչ բուրաստանիս և աստուածախօս մատենիս և » » լուսախայլ մարգարտիս, յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, » » և ծնողաց իւրոց՝ Բաղդին և Չիհանին, և կողակցին » » իւրոյ Թաթոսին, և որդւոյն իւրոյ Գաւթին, և կողա. » » կցին Գաւզալաղին, և որդոյն Տայուզիանին, և դստերն » » Նուբարին. ամէն:... Գարձեալ. Աստուած ողորմի ա. » » սացէք Շահլամին, որ ստացաւ զսուրբ աւետարանս ի » » հալալ արդեանց իւրոց, և եղ ի վանքն ի Շոռոթ ի » » դուռն Ս. Գրիգոր Լուսաւորչին և Ս. Ստեփանոս Եւա. » » խավկայիւ, յիշատակ իւրն և ամենայն արեան մերձա. » » որացն. մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ » » Ս. Գրիգոր Լուսաւորչին, ոչ ծախելով և ոչ գրօելով: » » Յիշեցէք զվանից միաբանքն, զՏէր Ազարիէն, զՏէր » » Փիլիպոսն, զՏէր Նախապետն, զՏէր Գրիգորն, զՏէր » » Սողոմոն, զՄարտիրոս մահատանն, որ բազում ամ է » » աշխատէ ի վանքս, և յայլ ամենայն միաբանիցս. որ » » յաւ խնամ տանիք ի վերայ սուրբ աւետարանիս, և » » պահէք ի հրոյ և ի ջրոյ », և այլն: » » Եւ արդ ես յամենաթշուառականս և անարժան նը. » » կարողս և կազմուլս մեղապարտ Չաքարէ ... աղաչեմ » » ... յիշել յերկնագնաց յաղաւթս ձեր, եղկելիս և ըզ. » » ծնողքն իմ՝ զՏէր Յովհաննէսն և զՈւլուխաթունն, և » » զկենսակիցն իմ զՄամիմունն, և զԵսաբոյս որդին » » իմ զԿարապետն և զԵղբարն իմ զԱշխիբէկն. և ամե. » » նայն արեան մերձաւորացն. ամէն: — Աւարտեցաւ » » սուրբ աւետարանս ի գեաղաքաղաքս որ կոչի Աւանց, » » ընդ հովանեաւ Ս. Գրիգոր Լուսաւորչին և Ս. Յովան. » » նէս Մկրտչին, և քահանայք գեօղիս՝ զՏէր Յակովբ ա. » » ւաքէրէցն և զՏէր Սարգիսն. և գեօղի տանուտէրքն » » զԸռէս Խէրապետն, զԸռէս Ախիպէկն, զպարսն Պե. » » տրոսն, զպար. Մկրտչն, զպար. Սանասարն և ըզ. » » խաւջա Մատուրն և զխաւջա Պաւղոսն և զՈւլիբէկն և » » զՊեարոսն, որ եկօ՞ զաւետարանի գին Լ (30) դա՞ջ » » կը՛ռեանց. և զաշակերտքն իմ՝ զՏէր Մարտիրոսն և » » զՊաւղոս սարկօագն, որ աշխատեցան ի կոկել թղթիս, » » և զՊաւղոսն և զրէս Սաւղոմոն և զԱստուածատուրն, » » որ միջնորդ եղեն այս բարի բանիս »:...

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂԵԼԻՔ

- 17 (Ա սիւն. թուականն) 403, վասակ. — 413, վասակ.  
 27 (Բ) այլայլութենէ. — այլայլութեան.  
 33 (Բ) եղբոր նոր. — նորա.  
 60 (Բ) գքեռն և գքեռառն. — գքեռն և գքեռորդւոյն.  
 76 (Ա) փայածան. — փանանան.  
 120 (Ի ժանօր. ուղղագրելի). Սրբանոցն տպագրեալ յընդօրինակողէն.  
 178 Արեւ (որդի խորանայ). — Արեւիկ.  
 218 (Ա) Հրթում. — Հեթում.  
 271 (Բ) թզենիս. — թթենիս.  
 281 (Բ) կեղեցին. — եկեղեցին.  
 351 (Ա) անդ է և նշանակեցան. — անդ և նշանակեցան.  
 374 (Ա) Դոմինիկն Ազարեան. — Դոմինիկ Նազարեան.  
 427 (Ա) անուանին. — անուանեն.  
 518 (Բ, վերջին տող) ընծայէ զիրան. — ընծայէ զգիրան.



12

















